891.99-13 7200
9-53. Эфрос
Иллюстрации.

29/V	3/VII	416
	12/XII	28

« ՀԱՑԱԳԻՏՈՒՄ » ՄԱՏԵՆԱՇԱՐ, ԹԻՒ 11

ՍԱՍՈՒՆԱԿԱՆ

SASSOUNACAN

Épopée Populaire Arménienne

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

ՎԻՊԻՒ ԲՆԱԳԻՐԸ

(Հեղինակին Լուսանկարովը)

ՓԱՐԻԶ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻՆ ԱԽԱՐՏՄԱՆԸ

«ՍԱՍՈՒՆԱԿԱՆ»Ի ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

«Բի՛ւր Ակ, Հազա՛ր Ակ…» դիրքիս կողքին վրայ ըսած էի, —

— *«Շուտով լոյս պիտի տեսնէ՝ երեսունհինգամեայ տքնութեանց արդիւնք՝ ՍԱՍՈՒՆԱԿԱՆ մեծ երկս: Ձախական պատմուածք՝ Հայ ժողովրդական Դիւցազնավէպին՝ «Սասմանց Տուն»ի ամբողջ ԵօԹը ձիւղին, բառատուն փոփոխակներէ բաղած:*

«ՍԱՍՈՒՆԱԿԱՆԸ,–ըսած էի–, Նոր Դարագլուխ կըբանայ Հայ Գրականութեան մէջ: Ինչ որ է Ռիկ–վէդԱ՝ Հնդիկներուն համար, ԻԼԻԱԿԱՆ–ՈՒԻՍԱԿԱՆԸ՝ Յոյներուն, ՄՇԱԿԱԿԱՆՔ–ԵՆԷԱԿԱՆ՝ Իտալիոյ, ՇԱՀՆԱՄԷ՝ Պարսիկներուն, Նիբելունգներուն–երգը՝ Գերմանիոյ, Chanson de Roland՝ *Ֆրանսայի, — նոյնը՝ եւ ամենէ'ն դերազանց՝ ՍԱՍՈՒՆԱԿԱՆՆ է՝ Հայերուս համար: Միւսները եթէ մէյմէկ Հեղինակի գործ են, մերը՝ բազմադարեան Հայութեա'ն գործն է, համաշխարհային Գրականութեան մէջ՝ իրեն արժանի բարձր տեղը դրաւելու կոչուած, Թարգմանելի՝ եւրոպական եւ ասիական լեզուներու»:*

Արդ, ահա՛ ՍԱՍՈՒՆԱԿԱՆԸ, — Սասմանց–Տան «լիակատար քերԹուածին՝ անդրանիկ մեծ վորձը» [Ցառաջաբան, էջ 46]:

☛ *Առանց նախապաշարումի եւ առանց քննադատելու՝ անոր Ցառաջաբանը կարդալէ վերջ՝ կարդացէք ԵօԹը ձիւղերուն ամբողջական բնագիրը* (1–956 Հատուած), *անկէ՛ յետոյ դատեցէք ու գնահատեցէք: Որովհետեւ՝ եթէ մեր զմայլելի՛ Դիւցազնավէպին ամբողջութեանը չ'Թափանցած՝ միայն Ցառաջաբանին քանի մը հարեւանցի ցուցմունքներուն վրայէն՝ աճապարանքո՛վ դատէք՝ կրնաք կանխակալ սխալներու մէջ իյնալ:*

ՍԱՍՈՒՆԱԿԱՆԻՆ բուն Հեղինակը՝ հինգհազարամեայ Հայութիւնն է, *ոչ Թէ զայն Ամբագրող ՉԻԹՈՒՆԻՆ:*

399

ՍԱՍՈՒՆԱԿԱՆ

ՍԱՍՈՒՆԱԿԱՆ

Բառասնեակ մը փոփոխակներու բնագիրներէն

Աւօխարհաբարի վերածուած

ՈՏԱՆԱՒՈՐ

Կոմիտաս Վարդապետէն Զայնագրուած Նոտերով

1907էն 1942՝ *Երեսունեւհինգ տարիներու անդուլ տքնութեանց արդիւնք*

☛ — « *Ոչ մէկուն ներելի է՝ անտեղեակ մնալ Նիբելունգներուն երգին* », — *ըսած է համաչխարհային գրական փառքերէն կէօթէ՝ Գերման ժողովրդական Դիւցազնավէպին համար :*

Ի՞նչ պիտի ըսէին հապա՝ տասնեակ կէօթէներ՝ երէկ ծանօթ ըլլային՝ Հայ ժողովրդական Դիւցազնավէպին, Սասմանց Տան, — ՍԱՍՈՒՆԱԿԱՆ-ի մէջ կոթողացած : Պիտի ըսէին անտարակոյս թէ, —

— « Ո՛չ մէկ Դիւցազներգ՝ կրնայ հաւասարիլ Հայ ժողովրդական Դիւցազնավէպին » :

Տպ. Առաքս - Թօփալեան - Փարիզ

1942



PHOTO PHÉBUS

391.09-13
Հ-53
սաս.
8

ՄՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՍԱՍՈՒՆԱԿԱՆ

Ա II 30376

SASSOUNACAN

ÉPOPÉE POPULAIRE ARMÉNIENNE

«ՍԱՍՄԱՆՑ ՏՈՒՆ», «ՍԱՍՄԱՅ ԾՌԵՐ»
ԿԱՄ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ»

Ազգային Էպոս

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՒՑԱԶՆԱՎԷՊԻՆ
ԵՕԲԸ ՃԻՒՂԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. ՍԱՆԱՍԱՐ-ԲԱՂԴԱՍԱՐ
2. ԱՌԻՒԾ-ՄԸՀԷՐ
3. ԴԱՒԻԹ-ՄԸՀԷՐ
4. ԹԸԼՈՒԼ-ԴԱՒԻԹ (Սասունցի Դաւիթ)
5. ՊԱՁՏԻԿ-ՄԸՀԷՐ
6. ՊԱՐՈՆ-ՏԷՐ-ՆԵՐՍԷՍ
7. ՀԱՄԶԱ-ՊԱՀԼԱՒԱՆ

ՓԱՐԻԶ



☛ Ներկած Հիւսէ՛ Անցեալէ՛ն·
Մխայն Այսօր Մի՛ Ապրիր·
Ապրէ՛ Վաղն Ու Ցաւիտեան:
Երէկ, Այսօր Ցիչելով՛
Կազմէ՛ Ձո Մեծ-Ապագա՛յ-ն:



ՍԱՍՈՒՆԱԿԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԻՆ
ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԵՐԿԵՐԸ

1·— 1905-ին, Պոլիս, «Վանքարբառ» կամ «Գաւառական Բառարան», 1585 մեծադիր էջ, 713 ձեռագիծ պատկերներով, Իզմիրեանց Ա. Մրցանակ:

2·— 1907-ին, Պոլիս, «Արեւելեան կամ Հայկական Խաղաչխարհ», 265 խաղերով: Տպուած Ա. եւ Բ. հատոր (384 էջ), Իզմիրեանց Բ. Մրցանակ:

3·— 1929-ին, Պոսթըն, «Պըճինկօ» երգը, Նորեան Ա. Մրցանակ: Արժանացած հինգ անուանի երգահաններու կողմէ յօրինուած հինգ տարբեր եղանակներու:

4·— 1929-ին, Նիւ-Եորք, «Հայ Աղջիկ» քանատեղծութիւնը, Պօյեաճեան Ա. Մրցանակ:

5·— ☛ 1914-ին, «Մասմանց Տուն» եւ «Ցէրան-Թուրան» երկու մեծ երկերը, 808+212 մեծադիր էջ, պատկերազարդ, քարտիսաւոր, Իզմիրեանց Մրցանակին արժանացած, բայց վերահաս Մեծ Եղեռնին պատճառով չյայտարարուած:

Այս գիրքէն տպագրուած է 25 օրինակ luxe Թուղթի վրայ՝
եւ Թուագրուած 1 էն 25:

Ա. ՊԱՏՄՈՒԹԻԱՆ ՄՇՈՒՇԻՆ...

●

Խրնցի. Ա. Ա. 15.
Ա. Զ. 38, 39, 44.

1. «Բաբէլոնի Աշտարակէն շատ առաջ,
Ու Մարդկային Լեզուներու խառնակուելէ՛ն ալ առաջ՝
Քսխսուեցաւ՝ Հայոց-Աշխարհ նաւարկելու օրերէն, —
Զըրուան, Տիտան, Յապետոսեան, —
Երեք Դիւցա՛զն Եղբայրները —,
Իշխան էին Աշխարհի...

2. Զըրուանն էր՝ Սիմ. Տիտանը՝ Քամ.
Յապետոսեանն՝ մեր Յաբեթ։

3. Զըրուան ուզեց գերիշխել, —
Տիտան, Յաբեթ՝ կըռի՛ւ տըւին Զըրուանին։
Քոյրը, Աստղիկ, մէջ մըտաւ՝
Ուխտ ու Դաշինք կապեցին, —
— «Զըրուան տիրէ մինչեւ մահ.
Իրմէ Արու չը պահեն,
Մընաճ Արուն ըսպանեն»։ —

4. Այս ամենը երգած են,
Ու երգեցին դարերով,
Արամազդի 1) Հին Մեհեր,
Բամբիռներու նըւագով,
Ցատկախաղով, պարերգով։

---

1) Արամազդի, Արամի, Արամեան՝ ազգէ։

5. Գիտցե՛ր նաեւ, — պատմուբեան ծ՚էլ հընաբմատ՝
Ամեն Ազգի Մագմեն շուրջ՝
կա՛յ ճշմարիտ, կա՛յ եւ սուտ՝—
Ինչպէս Ադամ նախաստեղծ՝
Եղաւ արդեօք Առաջի՞ն Մարդ՝ երկրի վրայ՝
Թէ՞ Նոյ նահապետ թագաւոր՝
Նոր շըրջանի մարդկուբեան։

6. Պէտք է գիտնա՛ս՝ որ Քո Ազգ՝
Հիներէ՛ն է. քա՛յ, բեղո՛ւն, —
Ոչ միայն Իր Խոհերով
Եւ պիտանի Միտքերով՝
Այլեւ մեծ ու փառաւոր,
Միշտ պանծալի գործերով։

7. Նոյէն, Հայկէն, Դիւցազներո՛ւ Դարերէն,
Արդոնաւորդ Արմենոսի օրերէն,
Բակտրիացի, Մար, Պարսիկ,
Բաբելացի, Ասորեստան, Եգիպտոս,
Հռոմայեցի, Յոյն, Հեւլէն՝ —
Եկան անցան Մեր Երկրէն,
Ու Մեր Ազգ դեռ կը մընայ՝
Բարձրագըլուխ Ամենէն »։ —

8. Ըստեղծագո՛րծ, Շինաբա՛ր, —
Աշխատանքի ծե՛ղն է Հայն...։

Բ. ՅՈՐԴՈՐԱԿ

9. Վերապրի՛ ..., —
Ո՛վ Հայորդի՛, 1)
Քու Մե՛ծ Ազգիդ՝ հի՛ն, Դարաւոր Պատմութիւն.
Արիական էջերով՝ ցեղիդ կեա՛նքը վերապրի՛:
Սիրէ՛ ցեղըդ՝ խո՛ր սիրով.
Մեր Պատմութեան Դու մօտեցիր երկիւղա՛ծ: —
Ցեղիդ Հոգին ճանաչելու միակ ճե՛ւը ապահով՝
Վերապրիլն է՝ Անոր Փառքի՛ էջերով:
Մօտեցի՛ր Դուն՝ Մեր Պատմութեան փառապանծ. —
Էջե՛ր ունի՝ որոց առաջ՝ գըլխաբաց՝
Օտա՛րն անգամ կը խոնարհի յարգանքով: —
Հերոսական էջերուն մէջ՝ անմոռաց՝
Կըրկին Դո՛ւն ես վերապրողը, Հայորդի՛...:

* * *

10. Մե՛ր Ազգային Պատմութիւն. —
Ցեղիդ կեանքին հայելի՝
Մէ՛ջը նայէ՛ ամեն օր: —
Տե՛ս այն Հըսկա՛յ Գոյամարտ՝ որ մղուեր է Հայութիւն՝
Բի՛ւր դարերու ընթացքին, Իր Սըրբազան Երկրին մէջ:
Օրինակէ՛ քաջաբար՝ Իր խոյանքներ Ցաղթական,
Ու թերացման դիծերէն՝ այսօր ու վաղ խըրատ ա՛ռ:

11. Ցեղիդ չըքնա՛ղ Պատմութի՛ւնը մեծադիր. —
Ան կը պատմէ Քեզ կըրկին՝ անցեալ կեանքի Մեր Փառքեր,
Որ երգեր են Մեր Պատմիչներ քաջագիր,
Ոսկի տառով քանդակեր:

12. Կարդա՛ նորէն ու նորէն, ու գո՛հ ըրէ՛ մըշտայուշ՝

---

1) Օգտուած եմ Հայրենիք օրաթերթի մէջ տպուած Գ. Նժդեհի յուշագրութիւնից:

Այն ամեն՝ ինչ վըսեմ է, եւ առնական ու հըպա՛րտ։
Աւանդէ՛ ան՝ Քու Զաւկի՛դ, Զաւակդ ալ Ի՛ր Զաւակին։
Ցանէ՛-Ցըրուէ՛ լիաբուռն՝ ցեղիդ Լոյսերն՝ ամենքին։
Այսպէ՛ս միայն կը կազմուին Քաջամարտիկ փաղանգներ,
Պատրաստ՝ Իրենց Գործերով՝ ցեղին Փա՛ռքը հիւսելու...։

13. *Ամեն մի օր՝ իր Սըրբազան Պա՛հն ունի.*
Եւ ամեն օր՝ այդ Սըրբազունէ Պահերուն, —
Երբ մըտովին՝ անհուն կարօտ մը կուրծքիդ՝
Դուն կըսկըսիս պըրպըտումներ կատարել
Մեր Հայրենի Անցեալ փառքի էջերում. —
Երբ քաղցրութեամբ կ'ոգեկոչես՝ բոլոր անմահ այդ ծոլքեր,
Արիութեան ու Մեծութեան՝ համբուրելի՛ այդ հետքեր,
Մեր Հայրենի Պատմութեան մէջ լուսապիծ,
Հայոց Մեծաց Աչխարհին, —
Ոգեխառնուէ՛ Դո՛ւն ալ հոգւովդ քաջազուն՝
Հայ Զինուորին, Զօրավարին, Գըրիչ Շարժող Հանճարին. —
Ու վերապրէ՛՝ Անոնց կեանքով՝ Ցաղթանակնե՛ր ցընծագին։

* * *

14. *Այսպէ՛ս միայն, եւ անդադա՛ր, — Հայորդի՛,*
Աճեցո՛ւր Դուն՝ Քո Ազգային Հըպարտութեան ըզգացում։
Մի՛ թուլանար. մի՛շտ կատարէ՛ մըտովին՝
Ամենօրեայ խորհըրդաւո՛ր Զօրակոչ՝
Մեր Պատմութիւն փառաբանող Քաջերուն.
Ու խօսեցո՛ւր, մըտի՛կ ըրէ՛՝ ի՞նչ կ'ըսեն։ —

15. *— « Զը մընաց ցեղ, ազգ, ժողովուրդ՝ աչխարհում,*
« Որ չըզգար Մեր Բազուկին Ոյժն ու Բախում. —
« Բաբելացին, Ասորեստան, Պարսն ու Մար.
« Պահլաւ, Պարթեւ ու Պոնտացին, Եգիպտացին, Մակեդոն.
« Ճոյն ու Հըռոմ, Բիւզանդացին ու Քուշան.
« Ըսկիւթացին, Ալան եւ Վիրք ու Գամերք.
« Եգերացին-Աճարացին, Բուլղար-Ջուղ.
« Արաբ, Մօնկոլ, Թուրքմէն, Թաթար, Թուրք ու Ռուս, —
« Այդ բոլորի՛ հետ՝ դարէդարո՛
« Հարուա՛ծ տըւինք...՝ եւ առինք..., —

« Ու դարերո՛վ՝ Մեր Բաղուկի Ցաղթանակները տօնեցինք :
« Դա՛ որքա՜ն երաւ՝ այդ պատմական ժամանակ,
« Երբ Մեր Ազգը՝ իբրեւ Ողկոյղ՝ հընձանի մէջ՝ ճմլեցա՛ւ : 1)

* * *

16. « Բարոյապէս սընանիկ է միշտ եւ ըստրուկ՝
« Նա՛ որ դուրկ է եւ անժառանգ մընացած՝
« Ազգային վե՛հ ըղդացումի աստուածային հո՛ւր չունէին,
« Աբրեցումի այն նեկտարէ՛ն զերազանց՝
« Որ կը ծըծէ Իր սեփական ու սըրբազան Մայր-Հողէն :
« Անոր ծոցին մէջ դարբնելով պինդ ու կուռ՝
« Ըստեղծագործ թըռիչներով Միտք ու Բուռ : —
« — Միտքը՝ հզո՛ր ու բանաստե՛ղծ ինքնավառ.
« Բուռ ու Բազուկ՝ պողպատէ :

17. « Մարդը նա՛ է, կը յաղթէ նա՛՝ ամենքին՝
« Որ Միտքին հետ՝ Սո՛ւր կը Թափէ անխընայ :
« Կը յաղթէ նա՛, ա՛յն Ազգ միայն, լիովին,
« Որ յաղթեր է ինքը Իրեն մըշտակայ. —
« Ինք Իր եսին, Իր Բընազդին, Իր Վախին :
« Կը պարտուի նա՛, ա՛յն Ազգ միայն՝ կարճատես՝
« Որ պարտուած է ինք իրմէն. —
« Ինք Իր եսէն, Իր Բընազդէն, Իր Վախէն :

18. « Մեծան'ց 2) Խօսք է, Դու լա՛ւ միտ առ, լա՛ւ քընէ. —
« Չուր չե՛ն ըսեր՝ « Խաչ զօրաւոր՝ տէ՛ր կ'ըլե՛ » :
« Խաչ՝ Քո միտքը. Խաչ՝ Քու Ոգին, Քո Ձըգտում.
« Քու կա՛մքն է որ՝ Քո Խաչ-Սուրը Փետրագին՝ 3)
« Կը դարձընէ անպարտում : 4)

19. « Արհամարհել Մահն իր վախով, իր Թոյնով, —
« Ահա՛ Ուժը-Ամենայաղթ, որու առջ լայնօրէն՝
« Բացուած են միշտ Ոսկի Դուռները ամբաւիակ՝
« Ցաղթանակի Տաճարին :

---

1) Չամչեան, Գ. 5։
2) Մեծան'ց, Մեծանաց, Մեծերու, Նախնեաց։
3) Խաչ-Փետրագին, Տե՛ս գործիս մէջ՝ հատուած 33։
4) Անպարտում, Որ պարտուիլ չի գիտեր. անպարտելի։

« Եւ Այդ Ուժը, — մե՛ծ դըլխագիր —, Անպարտելի, Ազգային,
Եղած է միշտ, ու կը մընայ՝ դարէ ի դար անխափան՝
« Հայրենի Հողն ու Ժողովուրդ, Իր Փառքերով սեփական »:

⁂

20· Վերապրէ՛..., — ո՛վ Հայորդի՛,
Քու Մե՛ծ Ազգիդ՝ հին, Դարաւոր Պատմութիւն:
Արիական Իր էջերով՝ Ցեղիդ կեանքը վերապրէ՛: —

21· Խորացի՛ր Դուն, ե՛լ բարձրացի՛ր՝ դարէդար. —
Տե՛ս, քանի՛ դար ետե՛ւ կ'երթայ՝ Ցեղիդ Պար:
Ու քանի՛ ցեղ՝ Ցեղի նըման, Ցեղի հետ,
Ցեղիդ չափով դար կը հաշուեն դէպի ետ:
Քանի՛ ցեղեր, — մեծ, փառաւոր, երջանիկ,
Կը նախանձին Քո Անցեալին անտարիք:
Դուն Ցեղ դըրիր հազա՛ր տարուց, երկհազա՛ր...,
Օտարը Ցեղ առայժմ կուտայ հի՛նգ հազար: —
Նոր Պեղումներ, ու Գիտուններ գանկաբան՝
Արմենոյիտ 1) Ցեղին հետքեր կը գըտնեն
Եւրոպ, Ասիա, ամենուրեք, անխափան:

22· Ո՛ւր է Աղբիւրն..., ուրկէ՛ Ծագում՝ Քու Ցեղիդ...:
Արեւմուտքէ՞ն՝ աչքըդ բացիր արեւին,
Ու քալեցիր դէպ Արեւելք դարերով,
Ցեղիդ Հանճար տարածելով ամէ՛ն դին, —
Թէ՞ Արեւելք՝ Ցեղիդ Որբան պինդ կապած՝
Թոռ, Թոռնորդի ուղարկեցիր դարէդար,
Երկրէ երկիր, մինչեւ Հեռո՛ւ Եւրոպներ:

23· Թէ՛ այս, Թէ՛ այն՝ մէկ բան պարզ է. լա՛ւ գիտցիր. —
Քաղաքակիրթ Որբաններէն առաջին՝
Կա՛մ Հընդկաստան, կա՛մ Եդիպտոս, կա՛մ Կովկաս, —
Այս երեքէն մէկն է եղած՝ անկասկած:
Ու Քո Ցեղիդ աճն ու Հասակ մինչեւ այժմ՝
Կովկասի՛ մէջ յաւէ՛ն արմատ է բըռնած:
Եւ ըստ ոմանց՝ Կովկա՛սն է հին՝ երեքէն՝
Եգիպտական Մըշակոյթին Հայրենիք:

---

1) Arménoïde անունով կ'որոշեն արդի գանկաբանները՝ Եւրոպայի եւ Փոքր-Ասիոյ պեղումներէն ելած գանկերը. իբր ամենահին բնիկներէ մնացած:

24. Աստուածներու անուններէն, պաշտօնէն,
Տեղանունի բաղդատական ուսումնքէն՝
Գիծը կ՚երթայ դէպի Նեղոս՝ կովկասէն: 1)
Սուրբգըրական աւանդութեան համեմատ՝
Նոյի Տապան իջաւ Նըստաւ Արարատ:

25. Արդեօ՞ք նաեւ Հընդկաստանէն ալ առաջ՝
Հիւսիսական Կովկաս որբան է եղած՝
Քաղաքակիրթ Հի՛ն Աղգերուն՝ մեծ ու փոքր.
Կամ դէթ երկուք՝ Նոյն արմատէ՞, ճիւղաւորը: —
Դիտէ՛ « արմատ » Մեր բառերուն կազմն ու միտք,
Նոյն ու նրման՝ ինչպէս հընդիկ Սանըսկրիտ:
Ու թէեւ Դուն, ո՛վ իմ Աղգը Հայեցի,
Հայրենիքովդ ճանչըցուած ես Ասիացի,
Բայց ծագումով Քո Մեծասքանչ Լեզուիդ՝
Եւրոպական լեզուախումբի՛ն ես հովիտ:

❦

26. Վերապրէ՛..., ո՛վ Հայորդի՛, —
Քու Մեծ Աղգիդ Բաղմադարեա՛ն պատմութիւն.
Արիական Իր էջերով՝ ցեղիդ կեա՛նքը վերապրէ՛: —

27. Ողնկոչէ՛ Մեծ Նախնիքներդ հի՛ն ու հին,
Հիքիթ, Խալդի, Ուրարտական Մեծ Տոհմին.
Արմենական ու Հայկազուն Մեր Քաջեր,
Արտաշունի, Արշակունի Արքաներ,
Բագրատունիք, եւ Արծրունի Իշխաններ,
Ու Կիլիկիոյ մեր Ռուբինեան Առիւծներ:

28. Ցիշէ՛ նաեւ՝ Անոնց կարդին անմոռաց,
Հազա՛ր ու բի՛ւր, յայտ ու անյայտ Մեր Քաջեր՝
Ազատութեան Մեծ Պայքարին մէջ ինկած...:
Անոնց ճիգովն ու քըրտինքով մեղուաջան՝
Մեր Հայրենիք, — ճոխ ու փարթամ Բուրաստան —,
Ծաղկահասակ Շըքեղ Կոյսի՛ էր նըման. —
Ո՞ր ամբարիշտ, հեռու թէ՛ մօտ, իր կարդին,

---

1) Եգիպտագէտ անգլիացի Փրոֆ. Ճլինաէրս Պետրին, Մեռելներու Գիրք (ցառաջ օրաթերթ, 16 Փետրուար 1930).

Պիտի չըղձար, չընախանձէր Մեր փառքին…,
Արտաշէսեան ճոխ օրերու Հայ-Աչխարհ՝
Պիտի չուզէր դարձընել հող ու մոխիր…: —
Աչխարհի սեւ օրէնքն է այդ, ըսկիզբէն. —
Գեղեցիկը կը փետըրտեն, կը դերւիեն միչտ՝ անխընայ…:

. . . . . .

✾

29. Այսպէս նաեւ Մեր Հայրենիք սըրբասուն,
Անցեալ բոլո՛ր իր փառքերուն հրապոյրով՝
Կըռուածաղիկ դարձաւ բոլո՛ր ցեղերուն. —
Եկան զարկին, կողոպտեցին դարերով…:

Հայկի Սերունդ՝ Հայկի նըման քաջաբար,
Ձակատը վեր, կուրծքը վահան, պար՝իպար,
Գըլխոհ տըւաւ ու ե՛տ վանեց Թըշնամին,
Պիղծ ոտքերը հազիւ դըրած սահմանին:

Եկան ուրիչ նոր հըրոսներ՝ նո՛ր ուժով,
Մէյմէկ կողմէ, կոհա՛կ-կոհակ, ինչպէս ծով…:
Հայը վազեց, ու կուրծքերով՝ թաւ, անբաւ՝
Խուժողահեղող քանդիչ ուժին թո՛ւմբ զարկաւ:

30. Եկան դարձեալ ուրի՛չ ուժեր սեւակուինչ. —
— « Հայոց Աչխարհ պիտի ընենք բընաջինջ »…:
Ու բընաջինջ իրե՛նք եղան տեղնիտեղ,
Բազուկներէն մէյմէկ հըզօր Տօրք Անգեղ:

Եկան նորեր՝ Արեւելքէն, հիւսիսէն…,
Եկա՛ն, եկա՛ն՝ Արեւմուտքէն, հարաւէն…
Եկան անդուլ, դարէդար՝ անդադար,
Սովալըլուկ զազանի պէս, դիւազէն,
Եկան անթիւ…՝ մէկը միւսին եռեւէն…:
Ու Մեր ցեղը՝ մէկ ձեռք գըրիչ, մէկը՝ Սուր,
Իր բազուկովն ու Հանճարով բընաւսուր՝

Ճակատ հարթեց՝ ամեն անգամ՝ քաջի պէս,
Գուալարեցաւ բոլոր ուժով, աղեկէզ։

. . . . . .

31. Բայց ո՞ր ուժն է, այս անիրաւ աշխարհում՝
Որ զերազանց
Ուժի առաջ՝
Դարէ՝ ի դար
Կըռիւ մըղէ անդադար՝
Ու չը մաշի՝ թիւով, անճով, անհատնում...։

Մեր Հայրենիք՝ բազմադարեան, զօրաւոր,
Բացառութի՞ւն պիտի կազմէր մինաւոր...։
— « Ձամչի հատ-հատ,
« Մեղրի մատ-մատ՝
« Տեղիկ դատարկ է մնացեր »։ —
Կ'ըսէ հընուց Մեր Առած...։

Մեր ցեղին ալ՝ թիւը, կամ՛ց ու կամ՛ց՝
Կըռիւներու եւ զարերու ընթացքին,
Նըւազեցաւ, հասաւ յետին համրանքին։
Սեւ ուժերը՝ ելան մէկի դէմ հազա՛ր,
Ըսպառեցին Ղեկավարներ Քաջ Ազգին, —
Ժողովուրդը զարկին տարան բիւր-հազա՛ր,
Ու ծանրածանր դըրին լուծը Մեր Վիզին...։ —
— « Ողբա՛մ ըզքեզ, Հայո՛ց Աշխարհ Դիւցազուն,
« Հիւսիսական Հանո՛ւր Ազգաց Վեհագոյն... » 1)։

❦

32. Վիրաւորեալ Հայաշխարհի Հա՛յ Զաւակ,
Ցաղթանակի հառնիլ կ'ուզե՞ս անսայթաք, —
Այս րոպէիս՝ աւելի քան ուրիշ օր՝
Պէտք ունիս Դուն՝ օրինակներ քաղելու,
Քո Անցեալի Վեհ Պատմութեան էջերէն։ —
Օրինակներ՝ Քո Դարաւոր Քաջ Նախնեաց
Ազատական Ոգիին մէջ մարմնացած։
Օրինակներ՝ Մատենագիր էջերէն,

---

1) Խորենացու Ողբը՝ իր Պատմութեան իբր վերջաբան։

Անոնցմէ չուտ եւ Անոնց հետ ապրուած՝
Ժողովրդի Ծօսուն Լեզուի Անգիրէն…:
Այդ Անգիրին լուսացընցուղ կոթո՛ղն է՝
« ՍԱՍՈՒՆԱԿԱՆ » այս Դարաւո՛ր Ցուչարճան, —
Երսունեւհինգ տարիներու տրքնութեամբ
Քեզ՝ ի նըւէր քանդակած, —
Ով Հայ Ազգ…:

Վաճ-կ. Պոլիս-Փարիզ

1907-1942

ՉԻԹՈՒՆԻ

ՍԱՍՈՒՆԱԿԱՆԸ

Մեր Ամենուս « ԲԱՐՁԻ ԳԻՐՔԸ » Պիտի Ըլլայ:

Գ. ՅԱՒԱՋԱԲԱՆ

ՀԱՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՒՑԱԶՆԱՎԷՊ

ԾԱԳԸ, ԱՃՆ ՈՒ ԿԵԱՆՔԸ

1. Ազգային Դիւցազնավէպ

Ան՝ նախ դիւցազնական է. սովորական վէպ մը (roman) *չէ՛: Հասարակ պատմուքիւն մը* (conte) *կամ զրոյց մը* (légende) *չէ՛: — Ազգային Դիւցազնավէպ է:*

Ազգի մը դիւցազնական վէպն աւանդող-պատմողը՝ մէկ անձ չէ: Դրագէտ մատենագիր մը չէ: — Անգիր-անդրագէտ, բայց զերազանց յիշողութեամբ եւ պատմելու կարողութիւնով օժտուած դիւղացին է այդ Վէպին Հեղինակը: Բնութեան մէջ ծնած-մեծցած՝ անանուն, անյայտ ըրջիկը, կամ թոնիրին նստակեան՝ ալեւոր պապիկն ու մամիկը. — ժողովո՛ւրդն է ան:

Որով Ազգային Դիւցազնավէպը՝ ժողովրդական Դիւցազնավէպ է:

Ամեն հին ազգերն ունեցած են իրենց Ազգային ժողովրդական Դիւցազնավէպը: — Հնդիկներն՝ իրենց Վէտաները. Հելլեններն՝ Իլիական-Ոդիսականը. Եբրայեցիք՝ Աստուածաշունչ. Պարսիկներ՝ Շահնամէ. Արաբներ՝ Հազարումէկ Գիշերներ. (Եգիպտացիք ունեցած են Փարաւոններու շրջանը. Հռոմայեցիք՝ Մշակական-Ենէական. Գերմանացիք՝ Նիբելունգներուն երգը. Ֆրանսացիք՝ Ռօլանի երգը, կամ կեղտական Կլիզամօր-Կարոլոս. Ռուսներ՝ Բուսլան-Իլիա-Մուրոլցեւ. Սպանիացիք՝ Սիտը, եւն. 1):

Ո՞րն է՝ ամենահին ազգերէն մէկուն, — Հա՛յ Ազգին՝ ժողովրդական Դիւցազնավէպը: — Անոր բազմադարեան ապրումներուն՝ կազմական ու հոգեկան դիմագիծը մարմնաւորող՝ ժողովրդական պատմական վէպը:

---

1) Վերջին երկուքէն զատ՝ միւս բոլորն ալ կարդացած եմ: Յ.

Հայ անհատասարելի պատմահայր Մովսէս Խորենացին՝ իր ա-
ւանդած Հայկազեան ու Արշակունի գանձերուն ու Գողթան երգերու
փոքրիկ բայց թանկագին փունջովը, Ագաթանգեղոս իր մեծավառ
Տրդատով, Փաւստոս-Բիւզանդ՝ ազգագրական չունչով հիւսած իր
Արշակ Բ.ի շրջանովը՝ չէին տուած մեզի՝ մեր Ազգային Վէպը: Եղի-
շէն՝ Աւարայրի իր անմահ կարմիր-Վարդանով, Թովմա Արծրունին՝
Վասպուրականի արծուեղբօր քաջերովը՝ չէին աւանդած համահայե-
ցի դիծը: Բագրատունի եւ Ռուբինեան իշխանատուներու ցանցառ
պատմիչները՝ չէին տուած՝ դարերու չունչով որոտացող հայ առիւ-
ծի մը դիմագիծը: Ոչ ալ Փարպեցին, Լաստիվերտացին կամ միւս
պատմիչներ:

Նոր դարերու Զամչեան՝ իր եռահատոր պատմութեամբ, Նոր Արե-
ւելեան Հայերէնի հայրը Աբովեան՝ իր « Վէրք Հայաստանի » աննման
վէպովը, Հ. Աբսէն Բագրատունի՝ իր Հայկ Դիւցազնով, Ալիշան՝ իր
Սանդուխտ Կոյսով, Րաֆֆին՝ իր հայաշունչ կրակոտ վէպերուն
խուրձովը, Մերենց՝ իր Կիլիկեան պատմավէպերով, Արիմեան Հայ-
րիկ՝ իր «Հրաւիրակ»ներովն ու «Պապիկ-Թոռնիկ»ով, եւ ուրիշներ՝
իրենց կարգին՝ ստեղծեցին հայ վիպական-բանաստեղծական դրակա-
նութիւնը: Նալբանդեան, Պատկանեան, Պէշիկթաշլեան եւ նմաններ՝
երգե՛ր հիւսեցին ազատութեան, եւն., եւն., եւն.: — Բայց ոչ մէ-
կը չկտակեց համազգային մեծ Պատմավէպ մը՝ որ մարմնացնէր Հայ
Ազգին հասակն ու հանճարը:

Այդ մեծադոյն հայ վիպասանը դեռ ծնած չէր, մինչեւ 70-ական
թուին:

Հայ ժողովուրդը ի՛նքը պէտք էր ըլլար՝ այդ սպասուած հան-
ճարը:

Ու մինչդեռ Գրիմ եղբայրները՝ մէկտեղ կը հանէին Գերման ժո-
ղովրդական Դիւցազնավէպը — « Նիբելունգներ » —: Մինչդեռ ա-
մեն հին ու նոր ազգեր՝ կը պարծենային իրենց ազգային վիպասա-
նութեան գլուխ-գործոցներովը: Մինչդեռ պարսիկ Շահնամէն՝ թարգ-
մանուած եւրոպական լեզուներու՝ Արեւելքէն Արեւմուտք հիացո՛ւմ
կ'առթէր դիտական-գրական աշխարհին: — Մեր Հայերուս մէջ՝ այն
կարծիքը տիրել սկսեր էր 50է 70 թուականներուն թէ՝ Հայ Ազգը
զուրկ է ազգային ժողովրդական վէպէ...:

Սխալ եւ անարդար կարծիք:

Ու ողբալի պիտի ըլլար՝ Հայուն պէս հնաբուխ Ազգի մը համար՝
եթէ այդ թիւր կարծիքը մնար ու հաստատուէր...:

Կարելի՞ բան էր: — Այն Ազգը որ հիւսեր, երգեր՝ ու աւանդեր
է Արտաշէս Բ.ի «Թուելեաց կամ Գողթան Երգեր»ը, միջնադարեան
զմայլելի Շարականները, նոր օրերու՝ բերնուց Հաբբրբրանները,

բազմալար՝ սիրային, դաշտային ու պարի երգեր, Խաղեր ու Տաղեր, հրաշահիւս Հէքեաթներ, Առակ ու Հանելուկներ, — այդ հին ու հանճարաւոր Ազգը՝ չէ՛ր կրնար չունենալ իր ազգային բազմադարեան կեանքին մաքո՛ւր դիմագիծն արփիացնող Անգիր Վէպը:

Ազգը՝ դեռ արթնցած-անդրադարձա՞ծ չէր՝ իր ունեցած անգին-Անգիրի գանձին. — ահա՛ բոլորը:

Բրո՛ց 1) մը պէտք էր՝ որ « Սէղա՛մ, բացուէ՛ » ըսէր-հնչեցնէր անոր Գանձին Դրանը, — Մրեիէրի՛ Դուռին, կամ Տապանին 2) որպէսզի պատուէ՛ր մէկէն, բացուէ՛ր Դուռը, ու թաւիէր հանո՛ւր աշխարհի առաջ՝ իր զարերու դիւցած անբաւ հարստութիւնները...:

Այդ հրաշքը կատարուեցաւ 1870 թուի արշալոյսին: —

— Հայ Ցեղին օրրանը եղող Վասպուրական Աշխարհի գրական ինքնաբոյս մշակներէն մէկը, Գարեգին Վրդպտ. Սրուանձտեան (Սանդուկց Գարեգին)՝ բախտ ունեցաւ այդ բրոցը զարնելու ճի՛շդ Գանձին: — Մուշի մէջ գրի առաւ 1873-ին, լոյս աշխարհ գրաւ 74-ին՝ իբր « Յաւելուած » իր փոքրիկ «Գրոց-Բրոց»ին, «Մասունցի Դաւիթ եւ Մհերի Դուռ» անունով կարճ զրոյցը: — Հայ ժողովրդական Վէպին անդրանիկ պատմուածքն էր այդ:

Ճամբան դռնուած էր այլեւս...:

2. Շարոցը

Սրուանձտեանի տուած «Մասունցի Դաւիթ եւ Մհերի Դուռ»ը «մէ՛կ հարուածով անհաւատները հաւատի բերաւ»: Բանիմաց եւ համալսարանական մէկ-քանի երիտասարդներ՝ լծուեցան սրբազան գործին: Անդրանիկ փոփոխակը թարգմանեցին օտար լեզուներու, մասնաւորապէս Ռուսերէնի: Ուսումնասիրութիւններ կատարեցին: Պանծացուցին մեր նորագիւտ դիւցազնավէպը: Երկար տարիներէ ի վեր անզուգական մնացած ընտանիքի մը մէջ՝ հրաշքով ծնած խոստմնալից երախայի մը վրայ գուրգուրացող հօր-մօր պէս՝ ամեն խնամք չտայլեցին հայ նորածին դրական սաղմին վրայ, որ դիւցազնի՛ ճեռ. 3) էր...:

Կծիկը քակուած էր այլեւս: Դարերու երեսին նետուած անճկաւլից հարցումները՝ գտած էին յուսալից պատասխան մը: — Փոքրիկ փաստ մը՝ մե՛ծ արժէքով: «Բարակ առու» մը՝ մե՛ծ ոտրողութեամբ ու վիժա՛ծ թաւիով:

Բայց ծնած սաղմը՝ դեռ անգլուխ էր. անհայր ու անմայր: Սկիզբըն ու ծագը յայտնի չէր: Նոր պատմուածքներ անհրաժեշտ էին:

Եւեւէ եւեւ ուրիշ բանահաւաքներ դրի առին ու լոյս աշխարհ դրին նոր պատումներ, նոր ճիւղաղրոյցներ: Որոց՝ մէջէն յանկարծ

---

1) Բրոց, բրիչ. 2) Ծմ. Մասն. Ծ.ր., էջ Ը., 3) ձեռ., ծեղ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

չողալ սկսաւ՝ Վէպին անդրանիկ ճիւղը՝ Սանասար ու Բաղդասար։ «Սասունցի Դաւիթ»՝ այլեւս անհայր ու անմայր, ծագումն անյայտ տղու մը նման չէր։ «Ո՞ւրկէ կ'իջնէր. որո՞ւ զաւակն էր», — այս հարցումին՝ ուշադիր նոր Սրուանձտեաններ՝ ժողովուրդէն քաղեր ու տուեր էին նոր ճիւղազրոյցներ, «Սասունցի Դաւիթ»ն օժտելով իր Ծննդոց Դիւրքովը։

Հայ Աղգային Վէպը, Լուսիկ կոյս Թադուհու Երկուորեակ Դիւցազներուն՝ Սանասար-Բաղդասարի հետ՝ իր լրութեան մէջ ծնած-յայտնուած էր...։ — Ձեզ ու մեզ՝ մե՛ծ Աւետիս...։

— Որդի՛ք Հայկեան, ցընծացէ՛ք, զի յայսմ աւուր յայտնեցաւ...,
Ոչ սերելով ի մարդէ...՝ Ծովի Ջրէ՛ն յըղացաւ...,
Ոչ մեկնելով յ'Արգանդէ...՝ 'ի Բերանէ՛ մեկնեցաւ...,
Ոչ ծընելով խաւարէ...՝ Լուսիկ-Կուսէ՛ ցաթեցաւ...։

Հայ Աղգային Վէպը՝ ծնած յայտնուած էր այլեւս՝ Վանայ պեղեցիկ ու Հայ Ծովակին ափը, դարերու մշուշին ծոցէն...։ Ու պիտի մեծնար, մէկ օրէն միւս՝ հսկայ դառնար՝ այդ աղի աւազանին չորս-բոլորը։ — Հայ Աղգային Բազինին բարի Ճաւերժահարսին՝ վարդամատն Աստղիկի չունչը դպեր, անմահութեան կնիքը դրեր էր մեր նորածին Վահագնի ճակտին։ — « Երկինէր Երկին եւ Երկիր..., Երկինէր եւ Ծիրանի Ծով..., Երկն ի Ծովուն ունէր գ'Կարմրիկ Եղէգնիկն..., Եւ 'ի բոցոյն՝ Պատանեկիկ վազէր... »։ — Հայ Աչխարհի Երկինքն ու Երկիր՝ երկնած էին այլեւս...։ Երկունքը՝ « մեծ եւ աքանչելի... ». Սաղմը՝ Երկուորեակ եւ Արու...։ Ան այլեւս ապրելիք էր եւ անմահ...։

Եռեւէ հեռու ուրիշ բանահաւաքներ՝ գրի առին ու տպեցին ուրիշ աւելի ճոխ պատմուածքներ եւ նոր ճիւղազրոյցներ, — բոլորն ալ այս կամ այն հայ գիւղական բարբառով։ —

Այնպէս որ՝ մինչեւ այս տողերուս Թուականը՝ երեսնեակ մը ժիր բանահաւաքներու չնորհիւ՝ փոփոխակներուն (variante) Թիւը քառասունը կ'անցնի։ Երեւանի մէջ 1936-ին տպուած «Սասնայ Ծռեր»ու Ա. Հատորին համաձայն՝ կը հասնի մինչեւ վաթսունի, — քառասնեակ մը պատմողներով եւ քսանեակ մը դաւառաբարբառով։ Տեսէք իմ կազմած ցանկերը, Թիւ Դ.—Ը.։

Հայ ժողովրդական Դիւցազնավէպը, ինչպէս կը տեսնէք, ըերան գլխէն փրթած ուսիի (avalanche) պէս, արագ Թափով մ'աճեցաւ, մեծցաւ, կարճ միջոցի մէջ վիթխարի՛ հսկայ արձանական մը դարձաւ։ Նման վէպին հերոսներուն՝ որ « Թէ ուրիշ տըղաք տար'է՛ կը մեծնային, Անոնք օրէ՛ կը մեծնային։ Դիւցազնի՛ ցեղ էին... »։ Մեր Աղգային Դիւցազնավէպը աճեցաւ, զարգացաւ, ստուարացա՛ւ, ուժական (dynamique) դարձաւ։ Նման՝ ու Թափովը՝ վիթխարի Սասուն-

ցի Դաւիթին, որ իր ախոյեան Գորգիզ-Համատլի ձեռքէն Գուրդն առաւ ու « էթալ (նետաց)···, ու դըլ հըլա՛ կ'ներթայ··· », — ըստ Վէպլին անդրանիկ պատումին յաւիտենապօր բացատրութեան:

3· Փոփոխակներուն «Թագուհին»

1874-էն մինչեւ 1907, եւ մինչեւ հիմա (1942), Հայ ժող· Դիւցազնավէպին պատմուածքները՝ դիւղացիներէ գրի առնող քառնեակ մ'անձերէն միայն մէկուն, — այս տողերը գրող Զէյթունին — վիճակուած էր տալ մեր Վէպին՝ ոչ միայն ամբողջական ծօթը ճիւղին լիակատար պատմուածքը, այլեւ գ'այն գրի առնել ամենահարազատ, ուժեղ ու վսեմ բարբառով մը, ճշմարիտ դիւցազնեբդական լեզուով մը, որ անկասկած կրնայ սեպուիլ Թագուհի՝ հայ գաւառաբարբառներուն: — *Սպարկերտի* 1) դիւղական բարբառովն ու մեծ խնամով իմ գրի առած վոփոխակն է այդ: Անոր դիւցազնավիպական բարձր արժէքն ու չքեղ բովանդակութիւնն է որ հիմնաքար եղած է ներկայ Սասունականիս քերթողական կառոյցին:

Անունն անդամ՝ այդ դերդաստանց պատումին մէջ է որ առաջին անդամ 2) *կը յայտնուի բովանդակիչ ձեւով մը*, — Սասմանց Տուն, *ինչպէս* Սասունցի Դաւիթի, Սանասար-Բաղդասար, Մհէր, Դաւիթ եւ Մհէր կամ Սասմայ Ծռեր ձեւերու, *որոնք մէկմէկ ճիւղաղբոյցներ միայն կը յատկանշեն, եւ* (*Ս· Ծռեր-ը*)՝ *կէս-ծաղրական կը հընչեն, առաջին տոհմով: Մինչդեռ* Սասմանց Տուն *կոչումը՝ կը բովանդակէ բոլո՛ր ճիւղաղբոյցներն ու անոնց հերոսները: Համարժէք կը դարձնէ մեր Վէպը՝ իշխանական տոհմի*, — dynastie: *Ինչպէս եթէ ըսէինք՝ Դիւան Հայոց Անգիր Պատմութեան, կամ Աղնանց Տուն, կամ Աղնանք* 3), *Հայունիք, Արմենականք: կամ՝ դարաշրջաններով՝ Հիթիթական, Ուրարտական, Խալդական, Հայկազունի, Արշակունի, Բագրատունի, Արծրունի, Ռուբինեան՝ Հարստութեան Պատմութիւնը:*

---

1) Վանայ Ծովին հարաւ-արեւմտեան լեռնամասը, որ հին աւեն կը կոչուէր Իշոց Գոմք, կամ Իշայր, Մոկք նահանգի մէջ: Ջմռունք որ՝ փոփոխակներուն մեծագոյն մասը՝ Մոկաց բարբառով են, ու Մոկսը դրացի է Սասունքի:

2) Գրի առած եմ 1907-ին, որուվ ժամանակագրօրէն իրաւունք ունիմ այդպէս ըսելու: Ս· Կանայեանի 3 պատումները՝ երեւցած են 1910-ին, ի Պոլիս եւ Վիեննա լոյս տեսած՝ իմ Սասմանց Տան Սպարկերտի փոփոխակին աշխարհաբարէն եւ Կառկառի բնագրին ու աշխարհաբարին չորս պրակներուն տպուելէն յետոյ:

3) ԱԶՆԱՒՈՒՐ կամ ԱԶՆԱՒՈՑ ՏՈՒՆ ընդհանուր անունին տակ՝ կազմելու վրայ եմ՝ մեր Ազգի ամբողջ անգիր եւ դրաւոր Պատմավէպը: Այն աւեն Սասունականը կը դառնայ անդրանիկ ճիւղը՝ Ազնանց Տունին:

Այդ Սասմանց Տուրը՝ գլուխ-գործոցն է մեր ժողովրդական Վէպին՝ իր ոճային գեղեցկութեան եւ ճոխութեան կողմէ։

Սպարկերտի հուժկու պատմիչ կանչօղ բերնէն իմ գրի առած այդ աննման փոփոխակին մէջ է նոյնպէս՝ որ կը հարստանայ մեր Աղգային Վէպը՝ զմայլելի գողթնային չունչով լի երգերուն դանճովը։ — Պատմողներուն «Ողորմի»ները, Ջէնով-Օհանի «Աւիտս»ները, Դաւիթի «կանչ»երը, Մհէրի «Ողբ»երը, — Վէպին կեդրոնական դիւցազներէն Ջէնով-Օհանի բերնովը երգուած։

Սպարկերտի այդ փոփոխակը՝ թագն ու պսակն է՝ ցարդ լոյս տեսած բոլո՛ր պատումներուն։ Զուր տեղ չէ՛ որ Մոսկվայի Լազարեան Ճեմարանի ուսուցչապետ եւ Լմբինեան Աղգադրական Ժողովածուի Խմբագիր-Վարիչ՝ ողբացեալ Փրոֆ. Գրիգոր Խալաթեանցի Նրման հեղինակաւոր դիտուն մը, «սքանչելի՛ գաւառական լեզու» որակումով մկրտած է անոր բարբառն ու պատմուածքը։ Իր դնահատական ընդարձակ նամակը պիտի տպուի Սասունականի Բ. Հատորովը։

Այդ փոփոխակը, ճակատագրի մէկ տարօրինակ խաղով, անտիպ մնաց 1907-էն ի վեր։ Հայ ժողովուրդն ու գիտնականը՝ զրկուած մնացին անկէ։ Ճակատին չկրցան վայելել անոր գերազանց չնորքները։ Հազա՛ր ափսոս, որ այդ գլուխ-գործոց պատմուածքը՝ իր քնիկ բարբառովը, — Սպարկերտի դիւղական լեզուովը —, դեռ լոյս չէ՛ տեսած, որ բոլո՛ր իմ լեզուակիցները, ինձ պէս, ըմբռչխնէին անոր վայելչութիւնները։ — Անոր լեզուական գանձե՛րն ըսեմ՝ թէ՞ ճոխութիւնները. երգե՛րն ըսեմ՝ թէ՞ վսեմ ոճը. պատկերալից ասութիւնները, հուժկու չեչտե՛րը, վիպողի ոլորուն դարձուածնե՛րը, հարուստ հոդի՞ն, ցեղային ու համամարդկային վեհ նկարագի՛րը...։

Վայելեցէք այս հատուածը (համար 182-196), որպէսզի կարենաք գաղափար կազմել անոր արձակ-ին կորովի ու հնչեղ ոճի մասին։ —

— « Մանուսար է՛լ չը կանգնա՛ւ. զ՛ուր Ջին խէճաւ՝ ու մօր ու ախպօր կաց-պարեւ էրաւ՝ « Դէ՛ Ծագիչ պարի, ըսաց. ախպէ՛ր, ըսաց. երս կ՛իյամ, ըսաց. կ՛իրիշկիս էրկինք՝ ինչ ժամանակ որ ըմ աստղ խաւարե՛ր ը՝ զի շատ՛վ խասնիս Պղընձէ-Բեաղաք...»։

« Ան էլ կանչեց զ՛ուր Աստուած, ընկիաւ ճամբան՝ ու գիընա՛ց։

« Շա՛տ գիընաց, քի՛չ գընաց՝ Աստուա՛ծ խաբար, գընաց տեսաւ որ մէ՛ ճիո՛ճ գիէտ մ՛ կըգեայ, մէկ մարդ մ՛ զ՛ուր ոտ մ՛ թալցեր գիտու է՛ն պըռուկ, մէկ թալցեր է՛ն պռուկ, պէրան տուեր գիտուն (գետին, ըրին), ատա գյետ զը՛մէ՛ն կ՛իյայ ա՛տու փոր։

« Ատա Զուր-Ծմողն էլ տեսաւ որ՝ մէ՛ ձիաւոր մ՛ գիընաց, կանչեց, — « Օ՛ ձիաւոր ճամբի մարդ, Աածո՛ւ սիրո՛ն, ըսաց. մէ՛ պուտ Զո՛ւր տաս երս խմիմ. երմ կազաքդյեր վառւե՛ր ը...»։

— « Վո՛ւյ, Աստած քիու տո՛ւն քիակը, ըսաց Մանասար, Ա՛ Դիւ՛ն՛ չ մարդ իս..., ի՞նչ վոժը՛ տե՛ր իս՝ որ ատա գիետ կ՛ըյայ քիու փոր՝ դիւ ճանէ

չի՛ւր կ՛ուզիս՝ ...» ։

« Ըսաց, = « Հը՛հը՛..., երբս ի՛նչ մարդ իմ, ի՞նչ վոժ՛ը տէր իմ...։ Ճի՛ժն էլ չիւր կ՛իմը՛...։ Վոժ՛ով ան մա՛րդն ը՝ որ անուն Մանասա՛ր՝ նո՛ր իլէր՝ բըռնէր զ՛Կուսպաշտ թագաւոր՝ զարկէր ամըռնայոր գիէտը՛ն՝ քիա՛ռսո՛ւն նետ գիացէր մանչ (մէչ) գիէտնուն...։ Վոժ՛ով է՛ն ը. էս ի՛նչ վոժ ունիմ. երբս չի՛ւր կ՛իմիմ... » ։

« Մանասարն էլ ը՛նցա՛ւ ու գիըննա՛ց...։

« Գիըննա՛ց խասաւ մէ՛ տեղ, տէսաւ՝ եօ՛թ չաղաց կ՛աղան, եօ՛թ փուռ խա՛ց կ՛թխին, մէկ մարդ նստեր զ՛ատա խացեր կ՛ուտը. այ՛կն ընգիաւ ատա ձիաւորին, — « Ա՛մա՛ն, ըսաց, ձիաւո՛ր, Աաե՛ւ սիրուն..., մէ՛ փշուր խաց տաս՝ երբս ուտիմ. էս անօ՛թի մեռա՛յ... » ։

« Մանասար ըսաց, — « Ասվա՛ծ քիու տուն աւրը՛, ըսաց.. Եօ՛թ չաղաց կ՛աղան, Եօ՛թ փուռ կը՛թխին դիւ կ՛ուտիս՝ ու ձեզնէ (ինձմէ) խա՛ց կ՛ուզիս...։ Ատի՛ դիւ՛ն՞ չ վոժը տէր ի՛ս...» ։

« = « Հը՛հը՛..., ըսաց Խաց-Ուտող. էս ի՛նչ վոժը տէր իմ. ճժե՛րն էլ, ըսաց, խաց կ՛ուտին. երբս ի՞նչ մարդ իմ...։ Ոժով ան մա՛րդն ը՝ որ անուն Մանասա՛ր՝ նո՛ր իլէր. բը՛ռնե՛ր զ՛Կուսրի-Խան-Թագա՛որ 1)՝ զարկեր ամըռնայոր գիէտըն, քիա՛ռսո՛ւն նետ (կանգուն) գիացեր գիէտնու տա՛կ...» ։

« Ան էլ իթոխ՝ գիըննա՛ց, ըսաց, — Օշնա՛լ ը՛ Ասվածե, երմ ձէն յա՛ստ էլ իկեր...» ։

« Ը՛նցա՛ւ ու գիըննա՛ց...։

« Գիըննա՛ց տէսաւ՝ ի՛նչ կ՛ըսը...։ — Մ՛էկ մարդ՝ մ՛էկ չաղցը՛ քիար մը-տուցեր է՛ն թեւ, մէկ՝ է՛ն թեւ, քիամուն կ՛ըսը՝ « Դիւ կ՛ասանաս պրակներ. ճամբա՛խ տու՝ երբս ընցնիմ...» ։ Զարմացա՛ւ Մանասար, ըսաց, — « Տօ՛ մարդ, ատիկ դիւ ի՛նչ վոժը տէր իս՝ որտէմ զ՛չաղցը քիարքեր էրեր իս քիու թե-ւէն, քիամուն կ՛ըսիս՝ « Դիւ կ՛ասանաս պրակներ, քյի յե՛տ տու՛, երբս ընց-նիմ...» ։

« Ըսաց. — « Երբս ի՛նչ վոժ՛ը տէր իմ..., քիա՛ր ը էրեր էմ ըմ թեւ-քիրոչ (թեւերէն)՝ ճամբա՛խ կ՛իյամ...։ Վոժ՛ով ան մա՛րդն ը՝ ինչ զ՛Կուսրի-Խան-Թագա՛որ բռնե՛ր ա զարկեր ամըռնայոր գիէտըն՝ քիա՛ռսո՛ւն նետ գիացեր գիէտնու տա՛կ... Երբս ի՞նչ վոժը տէր իմ...» ։

« Մանասար (ը)սաց. — « Օշնա՛լ Ասվածե, ըսաց. երմ ձէն յա՛ստ էլ ա իկեր...» ։

« Է՛թո՛խ ու գիըննա՛ց...։ Գիըննա՛ց խասաւ Պղնձէ-Քեաղքը Իադնը (պա-բիսպէ) յիրճեւ կանգնա՛ւ...» 2)։

---

1) Պատմողը շփոթեր է անունը. պիտի ըսէր Սինամ-Խան-Թագաւոր:

2) Տպագրական տառեր ու նշաններ, շեշտեր եւն. կը պակսին դժբախ-տաբար, որպէսզի կարելի ըլլար տալ բարբառին ամեն նրբութիւնները։

Ա.հա՛ ուրիշ մը (համար 149-154)։ —

— « Մնա՛ց, խ՚լէսուն լուսցա՛ւ, Մանասար (ը)սաց։ — « Պապի՛կ, ՚սաց. գիըտի՞ս քյ՚ի՚նչ յապով էյՀ (ենք) բէրի՛…, — ը՚քյի ա՚ն յապո՛վ էյՀ բէրի՝ վըրտա մի՚ տան՝ մէկ անո՛ւ՚ մ՚ դնէս. մէյք չը՚յՀ գյի՛տի դնինք ի՚նչ…։ Մի՚ տան անո՛ւ՚ մ՚ դի՛, մէյՀ քյի քիու մրազին կ՚խասցըցինք, ը՚քյի կ՚դնէյՀ ճամխու՝ կ՚էյա՛ս»։

« Ան էլ ի՚նչ էրաւ։ ադա խալխո՛ր։ — էլաւ դռան մէ՚ կշտընէն գիընաց՝ յըրկըւան ժամուն՝ մէկէլ կշտընէն իրի մտաւ տո՛ւն։

« Մանասար խառցնեց ՚սաց՝ ֆի, — « Պապի՛կ, էկի՛ր՛…»։

« Հսաց, = « Ի՛կի՛…»։

« — « Պապի՛կ, դի՛ բարո՛վ էկիր…, մի՚ տան անուն տը դնիս ի՚նչ։՛՛՛»։

« Հսաց, = «Ո՛րդի, ՚սաց. ասիկ տուն չի՛՛…, ասիկ Սա՛սո՛ւմ մ՚ի՛…»։

« Մանասար (ը)սաց. — « Վո՛ւյ, ապրի՛ս դիւ, պա՛պի՛կ. Աավազ քյի առ-քիաւուֆի՛ն տա՛յ, ՚սաց. մի՚ տան անու՛ մ՚ դրի՛ր՝ ու քա՛լէ դրիր…, — Սա՛սո՛ւմ ու Սա՛սո՛ւմ…»։

Դեռ ականջիս եւ ուղեղիս մէջ է ձայնը, — 1907էն մինչեւ այ-սօր (1942), երեսունեւհինգ տարիներու ահաւոր դէպքերէն ալ յե-տոյ —։ Ձայնը՝ երրորդ պատմիչիս, Սպարկերտի Ճաժվան գիւղէն՝ Մարտրկանց մեծատոհմ գերդաստանի զաւակ՝ Խաչօ՝ լաճ՝ Կանչօի։ Այդ անգիր-անգրագէտ՝ բայց բնագէտ ու բանգէտ գեղջուկ համա-լսարանականին, որ դիւցազնավէպ պատմելու արուեստին մէջ՝ մեծ կարողութիւնով օժտուած փրոֆէսէօրի մը պէս կը պատմէր Սաս-մանց Տան աննման դիւցազներուն զմայլելի՛ Վէպը։

Ինչպէ՛ս կ՚ուղղէր, կը նեռէր ան՝ իր հուժկու հարցականները։—

— « Խաբար յի՛ւստ տա՛նք։՞։՞։՞, — խաբար տանք Զէնով-Օհա-նէիի՛ց… »։

կամ, շեշտը փոխելով, ուրիշ տեղ մը, —

— « Դառնանք՝ խաբա՞ր յո՛ւստ տա՞նք։՞։՞։՞, — խաբար տանք Դաւ-թիի՛ց… »։

— « Ան էլ ի՚նչ ըսա՛ց… »։

կամ տարբեր առիթով մը։ —

—« Դու վո՞րն լեեե՛ս…, — Երս քյի՝ չը՛մ խի՝ դիւ (դու) խա՝ ձի կ՚խուսի՛ս։՞։՞։՞ »։

կամ, — « Դաւի՛թ…, Դաւի՛թ, դիւ քիու խօր՝ Մըհէրի տըղէն չի՞ս…, կանչը՛՝ Խաց-Գինին՝ Տէ՛ր-Կենդանին, Խաչ-Փետրազին վըր եըմ ա՛յ թեւին, Օձնակա՛ն կանչին Մասմանց Դաւթին…, ու ը՚քյի թա՛փ տու՝… »։

Ծայրէ ի ծայր դիւցազներգական չեշտեր, մէկը միւսէն զմայ-լելի, գոռում, աննման…, — Սպարկերտի բարձրաթռիչ փոփոխա-

կիս մէջ 1), — թագուհի՛ բոլո՛ր փոփոխականերուն:

Կեղծ համեստութիւն պէտք չէ՝ լուռ անցնելու՝ պատմուածքի մը վրայէն՝ որովհետեւ անոր դրի առնողը ես եմ:

Կանչօի պատմած «Սասմանց Տուն»ը՝ իր բերնէն դրի առած եմ ես ինքս անձամբս, Վանայ մէջ, 1907ին, այն թնախնդիր դիտական մեթոտով՝ ինչպէս հաղարաւոր էջեր կազմող ֆօլքլօրական ուրիշ նիւթեր, իրմէ եւ իրեն դիւղակից ուրիշ պատմիչներէ: — Անոնց հետ մտերմանալ՝ եղբօր պէս ըլլալէ յետոյ, ես ծխող ու խմող չըլլալով մէկտեղ՝ անոնց սիկար ,օղի, դինի, եւն. հրամցնելէ, կերցնել-խմցնելէ, սուրճ հրամցնելէ յետոյ, դրամապէս առատ վարձատրելով, ամառ՝ մեր պարտէզի մեծատարած խաղողի-բարունակին չուքին տակ նստած, ձմեռ՝ պատուհանին առջի ծնկածալ, — նախ անոնց պատմել տուեր՝ ու մտիկ ըրեր եմ, ականջներս ու միտքս լեցնելու համար: Ապա՝ պատմել տուեր եմ հատուած առ հատուած՝ դրի առեր եմ տետրակներու մէջ: Երրորդ անգամ պատմել տուեր՝ ու բաղդատեր եմ դրածիս հետ: Այս թնախնդիր գրարկումիս չնորհիւ՝ կըրնամ ապահովել որ՝ բա՛ռ մը փախցնել տուած չեմ պատմողներուն: Եթէ կտոր մը մոռնային առաջին պատմելուն առին՝ գրարկումի կարդին կը վերյիշէին: Եթէ առաջին կամ երկրորդ պատմելուն՝ բան մը մոռնալու տային՝ ես — կանխաւ մտիկ ըրած-իւրացուցած — կը յիշեցնէի: Այնպէս որ ձայնագիրի չափ լրիւ գրարկում մըն է եղած՝ դիւղացիներու բերնէն իմ դրի առած բոլո՛ր ազգագրական նիւթերուն: [Տեսնել իմ ձեռագիր «Սասմանց Տուն»ը՝ Ծանօթութիւններու բաժինը]:

Այսպէս է որ ես իւրացուցեր եմ Սպարկերտի բարբառն իր հարազատ ու հայեցի բարձր ոճովը: Եղանակով երգուած մասերը տպաւորելով՝ երգած եմ ու կոմիտաս Վարդապետ ձայնագրած է՝ էջմիածին եւ Պոլիս դտնուած ատեն: [Իր անդարմանելի հիւանդութեան վրայ՝ ձայնագրածները կորսուած ենթատելով՝ կրկին երգեցի 1921-ին՝ ի Փարիզ, իր սաներէն Մ.Հրան Թումաճանին, ձայնագրեց Վասպուրականի Երգերուն հետ:] Ապա՝ բնագիրը համարներու վերածելով, մաքուր ցօտրագիր դրած եմ՝ որպէսզի իմ անմիջական հսկողութեան տակ տպել եթէ կարելի չըլլայ ոեւէ ատեն՝ ձեռագիրէն տպագիրի անցած ատեն՝ վրիպակի տեղի չմնայ: Երկրորդ Մասին մէջ՝ համար առ համար՝ տուած եմ բազմակողմանի Ծանօթութիւններ: Փոփոխակ-

---

1) «Փոփոխակիս» կամ «իմ դրի առած Սպարկերտի փոփոխակին» ըսելով, կ'ուզեմ որոշել Երեւանի «Սասնայ Ծռեր»ու մէջ տպուած մէկ պատումէն՝ որ Սպարկերտի բարբառէն քիչ բան ունի եւ աւելի շատ՝ խառնուրդ մըն է Վանայ աղճատ լեզուի մը:

ներուն բաղդատութիւնը, անգիր եւ գրաւոր նչխարներուն համադրումները: Ապագայ ուսումնասիրութիւններ դիւրացնելու նպատակով՝ տուած եմ զանազան ցանկեր, բառթերթեր, աշխարհագրական քարտէս, պատկերներ ու լուսանկարներ: Մէկ խօսքով՝ առանց Սպարկերտի (եւ նոյնիսկ կարկառի) փոփոխակիս՝ կրնամ դիտակցօրէն պնդել թէ՝ Հայ ժողովրդական Դիւցազնավէպը, — թէ կոչուի Սասունցի Դաւիթ, Սասմայ Ծռեր, կամ բուլանղակիչ Սասմանց Տուն, — պիտի մնար անկասկած քիչ մը ստուեր-վէպ: Սպարկերտի բարբառով՝ կանչօք պատմուածքն է միայն՝ որ կը կանգնի իբր անկորնչելի աղնուական՝ կոթող՝ ժողովրդական դիւցազնական վէպին: Ան կը դեբազանգէ բոլոր ծանօթ փոփոխակներուն բարբառը, ոճը, հոգին ու խոյանքը: Աննման է՝ իր խրոխտ լեզուովն ու հարուստ բովանդակութեամբը: Պատումներուն պատումն է ան: Իր եօթը ձիւղերուն մէջ՝ գոհարներուն ամենէն վճիտն ու մաքուրը: Գրանցումի կողմէ՝ անհատասարելի եւ օրինակելի, զի գրի առնուած է Հայաստանի բրնիկ հողին վրայ՝ Հայաստանցիի ձեռքով, — երբ դեռ Հայ ժողովուրդը խլուած-մերկացած չէր իր կեանքի խարիսխէն՝ որ պապերէն ձգուած դարաւոր բնիկ Հայրենիքն է...:

4· Մատենագրական Փոփոխակ

Սրուանձտեանի անդրանիկ պատմուածքին ետեւէն՝ վէպին չուրջը արթնցած համազգային մեծ հետաքրքրութեան մէջ՝ շատեր ըսած էին թէ, — « Ո՛ւր էր որ մէկ-քանի հատ լինէր Դաւիթ Սասունցու նման », « Եւ կամ գոնուէր նորա չարունակութիւնը »:

Ու տեսանք որ՝ թէ՛ Սասունցի Դաւիթի նման, եւ թէ՛ անոր ծագումն ու չարունակութիւնը ետեւէ ետեւ մէջտեղ ելան, դրի առնուելով՝ տպուեցան:

Շատեր ալ՝ անձկութեամբ հարցուցին ու զարմանքի մէջ մնացին թէ՝ « Արդեօք մատենագրութեան մէջ ոեւէ նչմար մը չէ՞ պահուած մեր Ազգային Վէպին: կամ ի՞նչպէս բացատրել՝ Հայաստանի գրեթէ բոլոր գաւառներու մէջ տարածուած ու ծանօթ այդ քերթուածի պատմուած Վէպին գոյութիւնը՝ մատենագիրներուն պահած լռութեան քով:

Դարձեալ այս տողերը գրող Չիթունեի՛ն վիճակուած էր — յարատեւ պրպտումներու չնորհիւ — գտնել՝ մատենագրական անդրանիկ փոփոխակը՝ Հայ Ժ. Դիւցազնավէպի Առաջին Ճիւղին, Սանասար-Բաղդասարի:

Մեծարժէք գիւտ մ'ընողի արդար հրճուանքո՛վ էր որ ըմբոշխնեցի ես, 1931-ի ամրան, այդ փոքրիկ հատուածը: Որուն գրեթէ ակամայ յիշատակութիւնը կ'ընէ Զամչեան՝ իր եռահատոր Հայոց Պատմութեան Տանօթութիւններու բաժնին մէջ, թարգմանելով զայն

Յլօրանսցի լատին Անտոնինոս Եպիսկոպոսի մէկ Քրոնիկէն: Տեսնել այս մասին՝ իմ երեք յօդուածները՝ Պոսթընի Պայքար օրաթերթին մէջ, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1931, արտատպուած՝ իմ « Բի՛ւր Ակ..., Հազա՛ր Ակ... » դիրքին մէջ, Թիւ 13:

Մատենագրական այդ փոփոխակը՝ մեզի կուտայ Կիլիկեան Հայ Իշխանապետութեան շրջանի պատմական անցքերուն արձագանգը: Մանաւանդ պատմական Ղազան Խանի եւ Հեթում Բ.ի յարաբերութիւնները:

Գարեգին Արք. Յովսէփեան՝ որ ինքն ալ կանուխէն դրի առեր եւ տպեր է մեր ծ. Դիւցազնավէպին քանի մը ճոխ պատմուածքները, — Ամերիկահայ նորագոյն պարբերականներէն «Նոր Դիր»ի մէջ (1939, Թիւ 3, էջ 139)՝ հասկնալի մտատանջութիւնով մը կ'ըսէ, — « Զարմանալի կերպով՝ չեն երեւում Թաթարների իշխանութեան հետքերը՝ Վէպին մէջ »: Եթէ գիտակ եղած ըլլար Զամչեանի այդ փոքրիկ ծանօթութեանը, կամ իմ գրած երեք յօդուածները տեսած ըլլար՝ մեծահմուտ Սրբազան Հայրը՝ անշուշտ որ այդ զարմանքը պիտի չըլայտնէր ուղիղ տարի յետոյ՝ 1939-ին: Այդ կարճ պատմուածքը՝ ահա՝ Մատենագրական Փոփոխակն է Սանասար-Բաղդասարի ճիւղին, իսկ այդ երկուորեակ զաւակներուն հրաշալի ծնունդն ու իրենց մօրը Լուսիկ-Թագուհիի հարս տարուելու պարագաները՝ հետքերն են Թաթարներու շրջանին:

Շատ առիթներով չեչտած եմ ես. — Պէտք չէ հապճեպ վճիռ տանք, կամ զարմանք յայտնենք՝ ըսելով որ մեր ազգին մէջ այսինչ բանը չենք ունեցած, կամ դրացի ազգէ մը փոխ առած ենք: Համբերենք, պրպտենք, քրքրենք, ու մանաւանդ պեղումներու արդիւնքը փնտռենք, — ու պիտի տեսնենք որ՝ փոխ առնողը Հայ Ազգը չէ՛: Ընդհակառակն իրմէն է որ փոխ առեր են դրացի շատ ազգերը: Բիւզանդական եւ Արաբական անունով ճանչցուած ճարտարապետական ոճերը՝ Հայկական Ոճն ըլլալը՝ փաստերով հաստատուած է հիմա:

Հիթիթներն ուրիշ ցեղ մը կը կարծուէին, բայց նոր պեղումներն ու ազգաբանական բաղդատութիւնները կը ցուցնեն որ՝ անոնք Հայ-Արմէն ցեղին նախահայրերն են: Տեսնել Les Arméniens, *Փրոֆ. Ռ. Էքրումեանի, էջ 64, ուր կ'ըսուի բառ առ բառ, —* «Janson trouve (dans son *Hittiter und Armenier*) les rapports ethniques des Hittites avec les Arméniens tellement intimes qu'il n'hésite pas à considérer l'histoire des Hittites comme le premier chapitre de l'histoire arménienne »: *(Ականջը խօսի Ֆէմալական Թուրքիոյ՝ որ մեր հին դարերու ոսկրոտին անդամ իւրացնել աշխատեցաւ):*

Թերեւս շատ պիտի չուշանան ուրիշ փաստեր՝ որ պան հաստատեն հանուր աշխարհի թէ՝ Շահնամէհին հնիկ ու բնիկ աղբիւրները՝ բխած են Հայկական Բարձրաւանդակէն: Ցանդուգն վարկած՝ ուրիշ-

Ներու աչքին, բայց ինձ համար հեռանշմար իրողութիւն: — Պարսկական ճանչցուած Ռոստամ-Զալ կամ Ցէրան-Թուրան վէպը՝ *չեմ կասկածիր որ՝ ապագայ նոր փաստերով՝ հայկական ծագում ունենայ: Մեր ժողովրդական Դիւցազնավէպն՝ արդէն կուտայ ատոր մէկ-քանի հմմունքը:* —

— *« Էն մի՛ (մեր) ճիոճ պապիկ Սասում-կռալ՝ իվեր յաստա, անու քէրը՛ կո՛ղկն ը: Էլ Թախմի՛ն էրա՝ ան Սասում-կռալ քիանի՛ մ՛ ճիո՛ճ փալէվան էղեր...»:* [*Իմ գրի առած Սալթկերտի բարբառով ՅԵրան-Թուրան, հմր.* 288]:

— *« ... Գիէտնու խրիշտկները ըսցին՝ « Չէ՛է՛, աշխարհի վերջը չ՛ի՛. առնիկ Համզի՛-Փալավանի 1) կռիւն ը՛ »: Վերին խրիշտկները ըսցին՝ « Համզա-Փալավանի կռիւ չ՛ի՛. առնիկ Ծրամազի՛ կռիւն ը՛, — Ռոստամի լա՛ճ. Ռոստամ՝ Զալի՛ լաճ. Զալ՝ Կալի՛ լաճ. Կալ՝ Մալա-Ամունի՛ լաճ. Մալա-Ամուն՝ Սասո՛ւմ-Կռալի լաճ..., Ցէրանայ գիւղո՛ւն ը...»:* (*Անդ.՝ հմր.* 438):

— *« ... Քիանի մ՛ տարի վերայ կ՛ընցնը՝ Սանասար, Բաղդասար կը պաժվեն: Դալու-Բաղդասար կը թըղնը՝ կ՛ըհայ կ՛ելնը պարսիկ: Ռոստամ՝ Բաղդասարը՛ ճըղից կը յաւելնայ»:* (*Մասմայ Մռեր, Երեւ., էջ* 491):

— *« Մէկ քիանի մ՛ ժամանակ վերայ ընցաւ, Դալու-Բաղդասար էլաւ ըռըկաւ, էթող գընաց Իրան-Թուրանայ մէջ: յ՛Անդի՛ ուր խամար փսակւաւ: Անու տղէկներ էլան է՛մ՛էլ կռապաշտ: Էլաւ Կալ-Կալան. էլաւ Զալ-Զալից էլաւ Ռոստամ: Ռոստամ ուըր կ՛ըսին՝ Բաղդասարը՛ ցեղի՛ց ը»:* (*Մ մ. Մռր., Երեւ., էջ* 546): 2)

Այս քանի մը փաստերէն յետոյ՝ տեսանել դեռ եւս մեր Վէպին հրնուէթեան նոր ապացոյցները՝ քիչ վար, թիւ 9, Հազարամեակի Տօնը:

5. Մեր Վէպին Ակնարկութիւնը

Լաւ է ուշ՝ քան երբեք, ըսուած է: Կը թուի թէ այդ ճիշդ է՝ մեր Ազգային Վէպին համար: Ան շատ ուշ եկաւ աշխարհ: Նոյնիսկ բոլոր ծանօթ հին ազգերու Վէպերէն ամենէն ուշը: Բայց դերազանց քան զ՛ամեն: Չի մեր Ազգային Վէպին ածման ու զարգացման ընթացքին եւ ուրիշ ազգերու դիւցազնավէպերուն բաղդատութենէն՝ երեւան եկաւ նաեւ՝ ուրիշ կարեւոր պարագայ մը. — Միւս շատ ազ-

---

1) *Համզա-Փահլեվան՝ Սասմանց Տան Տօթը ճիւղին դիւցազներէն է:*

2) *Այս էջը՝ մամուլի յանձնած շաբթուն, Յունվարի առաջին կէսին (1942), առիթ ունեցայ կարդալու Փրոֆ. Ռ. Աէրումեանի փաստաւէից նոր երկը,* Les Arméniens: *Ահա թէ ի՛նչ կ՛ըսէ՝ էջ* 63, — « Les livres sacrés de la Perse (Avesta) parlent en divers points de la patrie aryenne, que plusieurs auteurs situent de ce fait en Arménie, dans la vallée d'Araxe,... Ragda (au nord-est du Lac de Van. ... Azerbeïdjan, ... aux sources de la Rahna (Tigre), etc.»

վերու ժողովրդական Դիւցազնավէպերը՝ Իլիական, Մշակական, Շահնամէ, եւն., հիւսուած են ոչ թէ հատաքարար՝ ազգէ մը կողմէ, այլ՝ մէկմէկ ազգային բանաստեղծի ղրչով, եւ անշուշտ՝ որոշ չափով անհատական ու ղրական կնիք կրած: Հայ ժ. Վէպին գերազանց արժէքը հո՛ն է որ՝ ան մեզի կուտայ մեր դարաւոր պատմական կեանքի ակերէն, — ժողովուրդի մխիթէն ու սիրտէն, իր խոհէներէն:

Ամբողջ սերունդներո՛ւ ստեղծագործութիւն է ան. ոչ թէ մէկ բանաստեղծի գանկէն բխած: Անոր հեղինակը՝ հայ Հոմերոս մը, հայ Վիրգիլիոս մը, հայ Ֆիրդուսի մը չ'է՛. — Ամբողջ Հայ ցե՛ղն է: Հայկէն, Արամէն, Արայէն, Տիգրանէն, Արտաշէսէն, Տօրք Անգեղէն մինչեւ Տրդատ, Արշակ, Վարազդատ, Վարդան եւ Վասակ Մամիկոնեաններ, մինչեւ Աշոտ ու Սմբատ Բագրատուններ, մինչեւ Համազասպ Պահլաւունի, Դաւիթ Կիւրապաղատ, Ռուբինեան առիւծներ, Լեւոն, Հեթում ու Թորոս, մինչեւ Իսրայէլ Օրի, Զէյթունի ու Մասնոյ, Վանայ, Ուրֆայի եւ Շապինգարահիսարի հայ քաջերը՝ վիպականացած հերոսներն են մեր Ազգային ժողովրդական Վէպին:

— « Ժողովրդական Վէպի վրայ, — կ'ըսէ Փրոֆ. Մանուկ Աբեղեան —, աշխատում են ամբողջ սերունդներ »:

Յովհաննէս Թումանեան ալ՝ կը պնդէ որ՝ Հայ Դիւցազներգութեան հեղինակը՝ ինքը հայ ժողովուրդն է: Դաւիթ, — կ'ըսէ ուրիշ տեղ մը —, կապ չունի միջնադարեան Դաւիթ Բագրատունիի կամ ոեւէ այլ իշխանի հետ: Ինքը հայ ժողովուրդն է խտացած այդ ազգային դիւցազներգութեան մէջ: — Դիւցազներգութիւնը շատ մեծ բան է, — կ'ըսէ ան —: Ե՛ւս առաւել մերը. — հարուստ, չքեղ ու բերրիս 1) աւելի մեծ՝ քան միւս ազգերինը: Համաշխարհային գրականութեան մէջ՝ մեծ տեղ է բռնում մեր Դիւցազնավէպը: Մենք ունենք մեր հոդու ներկայացուցիչը, — դա « Սասունցի Դաւիթ » վէպն է »:

Հայ անդրադէտ սերունդներ՝ հինը նորին կցեր, նորը անցեալին հիւսեր, շարեր-շարայարեր են, բերնէ բերան, որդոց-որդի պատմեր, վիպերգեր են՝ դարերու պատկառելի հնութենէն մինչեւ մեր օրերուն են բերեր աւանդեր՝ ամբողջ հայ ցեղին քաջութեան գործերն ու հոգեկան բարձրութիւնները, ճիրքերն ու ճգտումները:

Իր Ազգային Վէպին անանուն ու անմահ հեղինակը, միակ անհատասարելի մեծ բանաստեղծը՝ հայ ժողովուրդ ինքն է: Հայ ժ. Դիւցազնավէպին հեղինակը՝ ոչ մէկ մարդ է, ոչ մէկ կին: Անանուն քերթող մ'ու պատմող մը չէ՛: Ան՝ ազգային ստեղծագործութեան բազմահազարամեայ կնիքը կրող հրաշակերտ մըն է:

— « Հայ Դիւցազներգութիւնը՝ հայ ցեղին ապրած կեանքին ու

---

1) Առենը եկած է՝ այդ «Թերեւս»-ն ալ մէկդի նետելու: Չի մերը վէպը չունի իր նմանը: Անհատասարելի է՝ ամեն տեսակէտով: Չիթ.

հոգեկան կարողութիւնների հոյակապ դանձարանն ու իր մեծութեան անհերքելի վկայութիւնն է՝ աշխարհի առջեւ», — կ'ըսէ Թումանեան:

Այո՛, վէպերուն վէ՛պն է ան: Գոհարներուն ամենէն վճիտն ու կայծկլտունը:

Ահա թէ ինչո՛ւ թանկագին է եւ անմրցակից:

Ազգային Դիւցազնավէպը՝ ժողովրդական բանահիւսութեան ծաղիկն ու պսակն է:

Հայ ժողովրդական Դիւցազնավէպը, որ միակ մէկ աւձի ստեղծագործութիւն չ'է՛, այլ դարերու երկար շարոց մը համրող, Արեւելքի ամենահին եւ ուշիմ ցեղերէն մէկուն, Հայ Ազգին, ամբողջ հոգեկան ապրումին պատկերն է՝ սերունդներու չարունակական էջերովը ճոխացած, — Մեր Ազգային Դիւցազնավէպը, այս ՍԱՍՈՒՆԱԿԱՆ-ին մէջ վերականգնած, կը ներկայացնէ մեր ազգային ամենէն թանկագին գանձը:

«Ան՝ չտեմարանն է Հայ Լեզուի ճոխացման եւ կենդանութեան: Այդ կողմէց նոյնչափ արժէքաւոր՝ որչափ մեր դասական լեզուն գրաբարը: Ժողովրդական բարբառների քերականական ուսումնասիրութիւնները եւ բառամթերքը՝ օգնում են ոչ միայն Հայ Լեզուի դիտական հասկացողութեան, այլեւ առատ նիւթ մատակարարում՝ համեմատական լեզուաբանութեան». — ինչպէս հակիրճօրէն կը պարզէ Գրդն. Արք. Ծովսէփեան՝ «Նոր-Դիր»-ի մէջ:

Իսկ երբ թարգմանուի ցանւ օտար լեզուներու, Մեր Ազգային Վէպը՝ ուրիշ ազգերու միտքին ու հոգիին առաջ պիտի բանայ համամարդկային ընկերհաչտ գաղափարներու իր հարո՛ւստ գանձարանը, որ իր խո՛ր հնութեան հետ՝ ունի կոյս դիծերու անփոխարինելի առաւելութիւնը: —

Պիտի ծանօթացնէ Մեր Ազգի հոգեկան, մտաւոր ու կազմական պատկերը՝ իր խտացեալ, մաքուր, թխւրեղացած ձեւերուն մէջ:

Պիտի բանայ Մեր Գրականութեան համար՝ նոր ու լուսաչող լա՛յն հորիզոններ: Ու Մեր Ազգի հանճարը՝ իր փոքր աստղային ճաճանչովը՝ աւելի՛ ակնախտիղ պիտի չողայ՝ քան չատ լուսինները ցոլքը...: Նման նոր գտնուած աստղի մը, որուն լոյսը դեռ նոր կը հասնի՝ միլիոնաւոր դարերու ճամբորդութենէն, մինչեւ այդ՝ անուշադիր աստղադէտներու ոսպնեակին: Բայց որուն լոյսը՝ մէկէն կ'ողողէ, կը չողացնէ միջազգային մե՛ծ բեմերը...:

— «Մեր Ազգային Վէպին աքանչելի ձեւը, կ'ըսէ երիտասարդ Ահարոնեան (Վ.) [Հյրնք. Ամս. Ապրլ. 1936] —, կարող է մրցել միւս ժողովուրդների լաւագոյն դիւցազնավէպերի հետ: Իսկ իր ներքին բովանդակութեամբ, իր հիմնական գաղափարով, հերոսների նկարագրով՝ մեր Ազգային Վէպը ոչ միայն յետ չ'է՛՝ այլեւ բարձր է միւս ժողովուրդների Ազգային Վէպերից:.... Անշամ դիւցազնավէպ-

պէրի Թաղն ու պսակը՝ աստուածային Իլիականը՝ իր հիմնական զաղափարով տակար է Սասունցի Դաւիթին»:

« Որովհետեւ, — ինչպէս անմահ Թումանեանն ալ կ'ըսէ, — Հայ Դիւցազներգութիւնը՝ իր մաքառումներէն ու պայքարներէն խոհալոյծը՝ չի՛ սահմանափակուիր ազգային նեղ դիծերու մէջ, այլ ընդհակառակն համամարդկային խոհալներու կը կապուի: ... Եւ աւելի եւս մեծանում է « ազգային » կոչուած դիւցազներգութեան նշանակութիւնը նրանո՛վ՝ որ նա միաժամանակ ներազանցօրէն համամարդկային ստեղծագործութիւն է: Հայ Դիւցազնավէպն էլ թէեւ պատմական տարրեր ունի իր մէջ, թէեւ իր մէջ ամփոփում է հայ ժողովրդի մեծ մաքառումներն ու մեծ խոհալները, բայց ամենից առաջ նա համամարդկային չունչ ունի »:

Մեր փոքրիկ Ազգի մե՛ծ հոգին՝ տիեզերքի անհունին մէջ նետուած է՝ Հայկի աղեղին ու Սասունցի Դաւիթի դիւցազնակա՛ն թափովը..., որ կ'երթայ դարերէ ի վեր, ու ... « դեռ եւս պիտի երթայ... »:

6· Մեր Ազգային Իտէալը՝ Վէպին Մէջ Ցոլացած

Ժողովրդական Ազգային Վէպին արժէքը կը կայանայ այն կէտին մէջ, որ ան՝ երկու դիծով կուտայ պատկանած ազգին իտէալը: Ցովհ. Թումանեան՝ դիւցազներգութիւնը կը համարէ ազգային ոգիի արտայայտութիւն՝ բոլոր ժողովուրդներու համար: — « Ամեն մի ազգի ուժն ու ոգին՝ մարմնացած է իր ազգային դիւցազներգութեան մէջ, — կ'ըսէ ան: Ժողովուրդները ոչ մէկ բանի մէջ էնքան պարզ ու պայծառ չեն երեւում՝ ինչքան իրենց ազգային դիւցազներգութեան մէջ » (Ցոզ., 31 Մրտ· 1940):

Մեր Ժող· Վէպին մէկ ծայրէն միւսը՝ ոսկի թելի մը պէս՝ կը չողայ Մեր Ազգին ցեղային բնիկ յատկանիշը· — Շինարարութիւն եւ Անկախ կեանք: Եւ այդ մարդկային գիծը՝ խտացած կը գտնենք երկու կարճ տողի մէջ, — ղոյդ մ'սքանչելի՛ ծիածան՝ Հայոց Աչխարհին վրայ յաւի՛տ կամարած, զոր կուտայ, — վաթսունեակ մը փոփոխակներուն մէջ միակն ըլլալով —, իմ դրի առած կարկառուն բարբառով փուխոխակը (Հմր· 324):

Ահա՛ այդ չնաչխարհիկ զոհար-իտէալը· —

— « Ով ըը ղիներ քամկով տրնիկ՝
Ձի՛ քըներ մէջ՝ անուշ քընիկ... »:

Այս է՝ մեր Վէպին աւազ հերոս Սանասարի սրտէն բխած անդրանիկ խօսքն ու անմոռանալի կտակը՝ ուղղուած իր Պապուն, Աստղիկ-Թագաւորին, — երբ Կռապաշտի-Թագաւորը բռնել՝ « քառասուն կանգուն ամբոնաչոր գետին զարնել »էն յետոյ՝ Սամանց Տան

Վիթխարի քարէ հիմերը, — դուք ըսէք սարէ՛ հիմեր —, կը ձգէ, իր եղբօր Բաղդասարի հետ:

Այդ երկտողին մէջ կը տեսնենք ազգային անկախութեան գաղափարականը՝ անձնական ու հասարակաց աշխատասիրով խարբսխուած. սեփական հայրենիքի մէջ...:

Առանց անկախութեան՝ քուն չկայ. հանգիստ չկայ. կեանք չկայ, — ոչ անհատին, ոչ իր ընտանիքին ու ցեղին:

Առանց սեփական ցեղային հայրենիքի՝ անկախութիւն չկայ. տուն-տեղ չկայ. լեզու չկայ. կրօն չկայ:

Առանց անհատական ու համազգային միացեալ ուժի՝ ազդ չկայ. ցեղ չկայ. ընտանիք չկայ. քուն ու հանգիստ չկայ: — Որովհետեւ՝ ստրի կոտաւն՝ հոգ ու հայրենի յարկ չկայ: Թափառական, հալածական՝ ընդ-քա՛րշ սողալ միայն կայ...:

Ամբողջ վէպի ընթացքին, մէկ ճիւղէն միւսը, Սասմանց Տան դիւցազները՝ այս միակ սրբազան խորհրդին վրայ կեցած կը դործեն ու կը վարուին դրացիներուն հետ: — Աչխատանքով գոյ ըլլալու սիեղերակա՛ն սկզբունքն է իրենց ցուցադրածը: Եւ այս՝ ո՛չ միայն իրե՛նց համար, այլ ե՛ւ՝ իրենց հողին ու ջրին դրացի՝ միւս ազգերուն համար:

Իրենց հայրենի հողին անկախութիւնը պահանջելով ու պաշտպանելով՝ երբեք դրացիին կամ հեռաւորին վրայ չեն յարձակիր: Արիւն ու աւեր չեն սիրեր իրենց չուրջը: Աչխարհակալութեան չեն ելներ: Ուրիշին ունեցածը խլելու, դրացի երկիրն ու ժողովուրդն ստրկացնելու չեն վազեր: Բայց իրենց հայրենական սրբատուղ հողն ու օջախը՝ քաջօրէն կը պաշտպանեն թշնամիին դէմ:

Թումանեան ալ դիտեր է որ՝ « Հայ Դիւցազներգութեան մէջ՝ գոյութիւն ունի խաղաղասիրական ոգի, ազատ կեանքի եւ խաղաղ աշխատանքի հեռանկար 1), հարեւան ժողովուրդներու հետ հաչտ ապրելու տրամադրութիւն: Հայկական Դիւցազնավէպին մէջ, — կը գրէ ան —, մչտապէս անսասան կանգնած են Հայոց հսկային՝ Սասունցի Դաւիթի եւ Վրաց հսկային՝ Թորգալի (կամ Համտոլի) դէմքերը՝ իրար կողքի: Ուր Դաւիթը Թորգալին է տալիս իր բարեւը, Թորգալն էլ միայն Դաւթի բարեւն է առնում...: Նա՛ է Դաւթին զգուշացնում վերահաս վտանգի դէմ, եւ նրա՛ն է հաւատում Դաւիթն անվերապահ: Նրանց սրտերը երբեք չեն խաչաձեւում, եւ բացառաբար սիրոյ ու բարեկամութեան համար է Դաւիթ Թորգալի երկիրը գալիս»:

Ամբողջ մեր անցեալ պատմական կեանքին մէջ նոյն դիծը: — Նախահայրերէն՝ Հայկ Դիւցազն՝ Բէլի դէմ: Արամ, Արտաշէս, Տիգրան, Տրդատ, Արշակ՝ ամեն մէկը իր ջրջանի բռնակալ Բէլերու դէմ՝

---

1) *Այսինքն աւերի ճիշդ՝ իտէալ, սեւեռուն նպատակ, յարացոյց:* Ձ*ոթ.*

իրենց երկիրը պաշտպանելու համա՛ր միայն սուր հաներ են պատեանէն։

Հայը՝ յարձակողական ազգ չէ՛ եղած։

Ու երկրագնդի վրայ՝ թերեւս չկայ ուրիշ ազգ մը Հայոյն նման, որ իր ազգային ծագումէն մինչեւ վերջ՝ արիւնաքաղուած ըլլայ՝ նման ու նոյն դիմադիմը։

Հայը՝ խաղաղասէր ազգ է։

Իր քաղաքական անկօրութեան չրջանին, իր վրայ յարձակած են ամե՛նէն, — դրացի թէ հեռուէն խուժողներէն 1)։ Բայց ինք Հայ ժեղը՝ յարձակած չէ՝ ո՛չ մէկ ազգի վրայ՝ արիւնի կամ աւարի բնազդով։ Ինքզինքը պաշտպանելո՛ւ միայն նկրտած է։ Արշակ Ա. եւ Արտաշէս Ա. անգամ՝ այդ դիծէն անդին չեն անցած։ Նոյնը Տիգրան Բ.ի համար։

Ինչպէս մեր ժ. Դիւցազնավէպին մէջ կը տեսնուի՝ Հայը ի քնէ խաղաղասէր ըլլալով՝ եղած է նաեւ առաջնակարգ երկրագործ, արդիւնաբերող, բնապաշտ ու բնագէտ ազգ։

7. Վեհանձնութեան Գիծը՝ Վէպին Մէջ

Մեր Ազգային Վէպին հերոսները, ըլլան Սանասար-Բաղդասար, Աւիւծ-Մհէր, Թլոլ-Դաւիթ, Մհէր կամ Աստղիկ-Իշխան, Պարոն-Տէր-Ներսէս, կամ Համլա-Պահլաւան, — ամէն անգամ որ կռիւ ունին Թշնամի ուժին հետ՝ կը ցուցադրեն ասպետական վեհանձն ոգի։

Երբ Սանասար ու Բաղդասար՝ իրենց մայրը Լուսիկ-Թագուհին բռնի կնութեան առած Կռապաշտ-Թագաւորին կը յաղթեն, ու կ'առնեն իրենց մայրը՝ կը հեռանան Կռապաշտի քաղաքէն՝ անոր վայրագ Թագաւո՛րը միայն կը պատժեն։ Անմեղ ժողովուրդին չե՛ն դպիր։

Երբ Քառասուն-Ձիւղ-Մամ-Գոհարի քոյրը՝ Սանասարի ոյժը փորձելու մտքով՝ էրիկ մարդու ծպտումով անոր դէմը կ'ելնէ կռիւի, ու պարտուելէն ջղալով՝ իսկոյն ծիծերը մէջտեղ կը հանէ, — Սանասար՝ իր սուրը վար առնելով՝ կը պօռայ երեսին. —

— « Հէ՛յ Թշուառակա՛ն, քի՛չ էր մնացեր՝ քեզ սպանէի, ձայն իյնար աշխարհ թէ՝ « Սասմանց Տան մարդը գացեր՝ մէկ կնի՛կ մ' սպաներ է... » 2)։

Ցեղային աւանդութիւն։ Ազգային մեծոգի ըմբռնում։ Կին էակի վրայ ձեռք վերցնելը՝ հայ դիւցազներուն համար աններելի փոքրոգութիւն է։ — կինը տկար արարած է. կինը փափուկ է. կինը անյարձակելի է. կինը սրբազան է՝ մարդուն համար։ — Որովհետեւ կինը մայր է. կինը քոյր է. կինը դուստր է, ամէն բանէ առաջ։

---

1) Տե՛ս գործիս սկիզբը՝ Բ. «Ցորդորակ», հտ. 15-31։

2) Սասնց. Տն., Ձէթ., Սալկ. բրբռ., հմր. 310.

Նոյն յարգանքը՝ Դաւիթ-Մհէրի քով։ Նոյնը՝ Թլոլ-Դաւիթի, Մհէրի, Համզա-Պահլաւանի քով։ — Կինը՝ վեր է ամեն բանէ։

Երբ Թլոլ-Դաւիթ միամիտակ կ'երթայ Մըսրամէլիքի անհամար զօրքին դէմ կռուելու, որչափ որ հաստակող ազգի զաւակ, որքան որ փոքր ածուի սերմ՝ տարող չէ՛ սակայն։ Նենգութեամբ չէ՛ խորհիր թակարդ ձգել՝ նոյնիսկ իրմէ բիւր անգամ մեծաթիւ ու հզօր թշնամին։ Սարին գլխէն կը տեսնէ բանակած զօրքերը՝ վրաններու տակ, քնած կամ հոս-հոն առօրեայ պէտքերով զբաղած, — Անակընկալի չէ՛ բերեր զանոնք։ Մարդկային ղգացումով, ասպետի վայել քաջութիւնով՝ լերան գլուխէն ձայն կուտայ՝ կ'ազդարարէ. —

— « Է՛յ Մըսրամէլիքի զօրքե՛ր,
Ո՛վ քընած էք՝ ելէ՛ք ոտքի,
Ո՛վ արթուն էք՝ ձիեր հեծէ՛ք,
Ո՛վ անօթի՝ կերէ՛ք-խըմէ՛ք,
Ո՛վ ծարաւ էք՝ ջո՛ւր խըմեցէք. —
Ասօր չ'ելնէ՛ք ըսէք՝
« Դաւիթ գող եկաւ՝
Ու գողի՛ պէս յարձակեցաւ... » ,»
Ելէ՛ք հեծէ՛ք, պատրա՛ստ կացէք.
Ե՛ս եմ եկեր՝ ձեզ հետ կըռիւ ընելու... » *1)* :

Ահա՛ քաջի առնական վեհ կեցուածք, որ իր աւանդական դիծովը կը չողայ ամբողջ Վէպին մէջ, — ճիւղէ ճիւղ, դիւցազնէ դիւցազն։

Երբ Դաւիթ՝ Մըսրամէլիքի դէմ կռիւի կ'երթայ, ու զարնելու հերթը իրենն է, անոր մայրը՝ որ իրեն ալ մայրութիւն է ըրեր՝ դէմը կ'ելնէ եւ մայրութեան իրաւունքովը կ'ուզէ որ Դաւիթ առաջին հարուածն իրեն բաշխէ, — Դաւիթ չի՛ մերժեր։ Երբ քուրան ալ կը խնդրէ որ երկրորդ հարուածը բաշխէ իր քոյրութեան սիրոյն՝ Դաւիթ անոր ալ կը չնորհէ, ու միակ « մէ՛կ հարուած » կ'իջեցնէ Մելիքի դլխուն։ Հարուածը՝ Թո՛ւր-կէձակիին..., ու քաջի՛ հարուած...,

— կտրեց քառասուն գոմշի կաշին,
կտրեց քառասուն ջաղացի-քար,
կտրեց Մըսրամէլիքի Ջէնուզրաճ,
կտրեց Մելիքը մէջտեղէն ու անցաւ՝
Գընաց քառասուն կանգուն ալ դեռ գետնի տակ,
Մինչեւ Սեւ-Ջուրը՝ կանգնեցաւ... » 2):

---

1) Սամ. Մոր. Ցվսփեն., էջ 112։
2) Ջանազան փոփոխակներ։

8. Վէպին Գրական-Գեղարուեստական Արժէքը

Որ հնութեան կնիք կրող մեր Հայ ժող. Դիւցազնավէպը՝ անհամեմատ է իր բանահիւսութիւնովն։ —

Արձակին մէջ հոսուն, դըղէուն, գոռուն լեզու։ Աղաղակը՝ սարսէսար հասցնող, քարեր թնդացնող։ Իսկ երգուած մասերուն մէջ՝ հնարժէք, վեհ ու վսեմ, սքանչելի։ Եղանակը՝ տեղին ու լարին համեմատ՝ դիւցազներգութեան յատուկ ոգորուն, խորունկ ելեւէջներով։ Քերթող ու քնարող են մեր անգիր պատմողները։ Ջմայլելի են Վէպին այդ կանչերը, գրուած յատկապէս հաղներգու տիպն անճնաւորող Ջէնով-Օհանի բերնին մէջ։ —

— « Ափսո՛ս, ու հազա՛ր ափսոս,
— Հա՛ 'ւ ափսոս...,
Գընա՛ց մեր Սասնու՝ Գորգը-Մըճէ՛րին,
— Ու Մըճէ՛րին...,
Ափսո՛ս, ու հազա՛ր ափսո՛ս...,
— Հա՛ 'ւ ա՛փսոս.
Գընա՛ց մեր Սասնու՝ Թուրը-Կէծա՛կին,
— Ու Կէծա՛կին...
Ափսո՛ս, ու հազա՛ր ափսոս,
— Հա 'ւ ա՛փսոս.
Գընա՛ց մեր Սասնու՝ Քուռկիկ-Ջալա՛լին,
— Ու Ջալա՛լին... » 1)։

Եւ դեռ երկա՛ր Ափսոսներ, աւաղումներ՝ մխսմինակ կռիւի մեկնող պատանի անվորձ քաջին՝ Թլոլ-Դաւիթի, — Սասունցի Դաւիթի —, ետեւէն։

Ու երբ Հայ ցեղին յամառութիւնն ու խիզախութիւնն անճնաւորող հաստակող Դաւիթ՝ Թշնամի բանակին « երկնից աստղերուն ու ծովի աւազին Թիւովը » անթիւ-անհամար թագմութեան առաջ կը դառնէ դինքը, այս անգամ ինքն է որ կ'երգէ. —

— « Ասո՞նք ըլլան գառ, ես ըլլամ գայլ՝
Չեմ կը՛րնար ասոնք ուտել,
— Ու չեմ կը՛րնար...։
Ասո՞նք ըլլան գըզած բամպակ, ե՛ս ըլլամ կըրակ՝
Չե՛մ կը՛րնար ասոնք վառել,
— Ու չեմ կը՛րնար... » 2)։

---

1) Չէք.՝ Սպրկ՝ բրբռ. հմր. 495. Կարկռ. բրբռ. հմր. 522, եւ ուրիշ փոփոխակներ։

2) Չէք. Սպրկ. բրբռ. հմր. 517, եւ ուրիշ փոփոխակներ։

Կամ հակառակէն՝ Մըսրամէլիք ինքն է որ իր Աժդահակեան չա-
բաձոյժ երազը վեր կուտայ՝ երգով. —

— « Ասօր ես երազ մ'եմ տե՛սե՛ր,
— Հա՛ տե՛սեր...:
Մէկ ԱՍՏՂ մ'ելաւ Սասոնանց դե՛ֆէ՛ն,
— Հա՛ դեֆէն...:
Մէկ ԼՈՒՍՆԱԿ մ'ելաւ Էն Մըսրայ դե՛ֆէ՛ն,
— Հա՛ դե՛ֆէ՛ն...:
Էն Մըսրայ Լուսնակ՝ յառջեւ Էն Սասոնանց Աստղին
խաւա՛րա՛ւ,
— Հա՛ խաւա՛րա՛ւ... » 1):

Եւ կամ հօրմէն անիծուած Մհէրն է, — երկրորդ կամ նախնա-
կան տիպարը՝ պատմական Արտաւազդին, չարութեան խորհրդանը-
շան —, արգելափակ Վանայ Ակըռափու-Քարին ներքո, Մհէրի-Դուռին
եռեւը, իր հրեղէն ձիուն Քուռկիկ-Ջալալիին հետ: Որ՝ հոն հանելէ
առաջ՝ քաղխեր ու փակ էր գտեր հօրն ու մօր զերեզմանները, եր-
գով անոնց ծնողական գութին կը դիմէ, աղեկիզիկ իր անզօր կո-
չովը. —

— « Հէրի՛կ, վե՛ր ելիր, մերի՛կ, վե՛ր ելի՛ր,
Սասմանց Տունէն զիս դուրս են ըրեր...,
Իմ ֆացը Սասմանց սեղանէն են կըտրեր.... » 2):

Շա՞տ են երգերը, Հայ ժողովրդական զմայլելի Վէպին մէկ
ծայրէն միւսը, ճիւղէ ճիւղ, հերոսներէն մէկին կամ միւսին բեր-
նուիլը: Շատ են ու կարի՛ սրտառուչ, ոյսրուն, աննման՛ն: — « Բնա-
պաշտ ամենամեծ քերթողին գրիչը Թող կոտրի՝ եթէ հասած ըլլայ,
ոեւէ դարու մէջ, ա՛յսքան բարձրութեան: Ժողովրդի քնարէն աւելի
բախ չունի ոեւէ քերթողի գրիչը » (« Լէյլի Մէջրում, Միհրահար Աստ-
*ղեր », երես 14):

Մեր Դիւցազնավէպը՝ հսկայ մարտիկներու պողպատեայ դու-
պարումներու պատկերին մէջ՝ կը ցոլացնէ նաեւ ամենէն բնիկ Հով-
ուերգութիւնը, — Միհրոյ Երգը: Իրականին մէջ մէյմէկ քաղցր սի-
րերգութիւն են՝ Պղնձէ-Քաղքի Քառասուն-Ճիւղ-Մամ-Դոհարի ու Սա-
նասարի, Առիւծ-Մհէրի ու Դէվին ձեռքէն խլուած Թագաւորի Աղջը-
կան՝ Ասլխանի, Դաւիթ-Մհէրի ու Մըսրայ Տիկինի, եւ մանաւանդ
Թլոլ-Դաւիթի ու Ծանդուխ-Ծաթունի զմայլելի հանդիպումները: Կար-
դացէ՛ք այդ մեծ մասով նուագատար պատումները, ու տեսէք թէ ի՛նչ

---

1) Զէթ. հրկտ. բրբռ., հմր. 425: Մի քա փոփոխակները չունին այս կտո-
ր ը, եւ կամ տուած են ուրիշ ձեւերով: 2) Ձանազան փոփոխակներ:

արեւուտ էջեր կան անոնց մէջ։

Կայ դեռ ուրիշ դիմագիծ մը՝ Մեր Վէպին մէջ։ Այդ՝ տիեզերաձնական դիծն է, այլաբանօրէն նկարուած։ — Թուր-Կէծակին՝ Երկնից կայծակներն են։ Գորղը-Գոռոցին՝ Ամպրոպային Որոտումներն են։ Դիզձուն-Ծամ կամ Քառասուն-Ճիւղ-Ծամ-Գոհար՝ ճաճանչազեղ Արեւն է, յաճախ ծածկուած Պղնձէ-Քաղաքի՝ դուք ըսէք պղնձացած ամպերու՝ հետեւը։ Նոյն Պղնձէ-Քաղքի պալատին կամարէն առկախ Ոսկի-Մնձորը՝ Ոսկի Արեւն է։ Հրեղէն Քուռկիկ-Ջալալին՝ թեւաւոր Պէգասն է ու նոյն ատեն խորհրդանշան՝ պատմութեան մէջ ա՛յնքան համբաւաւոր հայկական հեծելազօրքին (Այրուձի), նաեւ՝ Միտհի թռիչքին։ Մհէրի-Դուռն ու Զարխի-Ֆելէկը՝ երկրագունդի թաւալումը կը պատկերեն։ Ու դեռ շա՜տ-շատ անմահ դիմագիծեր՝ որոց վայելքը՝ Սասունական-ին մէջ խորասուզուողին բաժինն է Թողուած առյաւէտ...։

Սասմանց Տո՛ւն, Սասմայ Ծռե՛ր..., ՍԱՍՈՒՆԱԿԱՆ՝ իր ամբողջութեանը մէջ, Մեր Հայ Ժող. Դիւցազնավէպը, — ի՞նչ աւելի վսեմ, աւելի չքե՛ղ մտքի ջահ՝ զոր ստեղծագործեր է մեր ժողովուրդը՝ դարերու արշալոյսէն մինչեւ այսօր։

Աւաղելի չէ՞ որ ա՛յնքան հրաշալիք ստեղծագործող, բերնէ-բերան անդիր պատմելու կարողութեամբ յայտնուող ազգ մը, — Հայ Աղգը —, հասնէր այս վիճակին։ Մարդ երբ կը կարդայ այդ վէպին ամբողջութիւնը, — Աղնանց Ցեղի, Սասմանց կամ Ջոլանց Տան, — Հայ Աղգին այդ դեղեցկազարդ գոհար-հիւսուածքը, — կ՚ուզէ խոնարհի՛, ծունկի դայ Անոր առաջ. Անոր աւանդած այդ Անմահ էջերուն առաջ։ Այդ կարկաջահո՛ս կենդանի՛ Ջուրին, Աղբիւրի՛ն, Ակին, — հապա՛ր ու բի՛ւր Աղբերակներուն առաջ...։

9· Հազարամեակի Տօնը

Արդարդ մը պատմագէտներ, արտաքինէն դատելով կամ պէտք եղած ուսումնասիրութիւններուն դեռ ծանօթ չըլլալով, մեր Աղգային Վէպին հնութիւնը հաստատեր էին հազիւ մինչեւ Ժ·րդ դար։ Ու 1939-ին, Մ· Հայաստանի մէջ Թէ՛ Արտասահման, ոտնեցին Սասմայ Ծռերու կամ Սասունցի Դաւիթի Հազարամեակը։ Մասնաւոր ցանկնաժողով մը՝ երեւանի մէջ, պետհրատի տպարանէն լոյս ընծայուած (3-4 տարի առաջուընէ համախմբուած ու տպուած)՝ Սասմայ Ծռերու Առաջին Հատորը (1200 էջ) տարածեց ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ։ Ամբողջական բնագիրը թարգմանեց Խորհրդային Երկիրներու քաղմաթիւ լեզուներով, — Ռուսերէն, Վրացերէն, Ուկրայներէն, Պելոռուսերէն, Թաթարերէն, Ադրպէյճաներէն, Ուզպէկերէն, Տաճկերէն, Թուրքմէներէն, եւն.։ Վէպը՝ Օփէրայի վերածուեցաւ։ Վէպին ի պատիւ՝ ա-

մեն տեղ մշակոյթի մասնաւոր հանդէսներ սարքուեցան 1):

Արձագանգը չուտով համատարած դարձաւ: Մոսկվա հրատարակուող Sovietland (Սովիէթլէնտ) անգլերէն պատկերազարդ ամսագիրը՝ իր 1939 Նոյեմբեր 11-ի թիւին առաջին էջին վրայ՝ տպեց չորս նկարներ Սասունցի Դաւիթէն, որոնցմէ մէկը Ս. Դ.-ի արձանը՝ հրեղէն նժոյգին՝ Քուռկիկ-Ջալալիի վրայ, Թուր-Կէծակին ձեռքը: Տալով նոյն առեն անգլերէնի թարգմանուած հատուածներ՝ մեր Դիւցազնավէպէն 2):

Հազարամեակ ըսին ու այնպէս գնաց:

Բայց ճիշդ չէր: Կը բաւէր միայն՝ եթէ կչխուին մէջ դնէին Պատմահայր Խորենացիի մէկ-երկու տողերը. — « ... (Սենեքերիմ) զոր սպանեալ որդւոց նորա Աղրամելայ եւ Սանասարայ՝ եկին փախստական առ մեզ, առ Սկայորդին մեր քաջ նախնին ... » (Խրն. Ա. ԻԳ, 106): — Այն առեն պիտի տեսնէին որ՝ Հայ ժող. Դիւցազնավէպին արմատները կը հասնին միջնադարեան նախաէրիստոնէական դարեր: Միջնադարեան բազմաթիւ հազար տարիներու խոր հնութիւնը: Միջնադարեան անյիշատակ նախապատմական, բեւեռագրական դարեր: Միջնադարեան դիւցազնական դարերու մշուշոտ արշալոյսները:

Նորագոյն վիպասեր ահա՝ կուգան մեզի՝ Հին Ասորեստանի մայրաքաղաքին Նինուէի աւերակներէն:

Ցարդ կարդացուած պնակիտներուն եւ գտնուած որմաքանդակներուն եզրակացութենէն կը տեսնուի որ՝ Սասմանց Տան կամ Հայ ժող. Դիւցազնավէպին առաջին հերոսները՝ իրապէս մխ ու ոսկրով ապրած ու գործած են երեք հազար տարիներ առաջ, Ասորեստանի Սենեքերիմ թագաւորի օրերուն, յիշուած նաեւ Աստուածաշունչի մէջ (Դ. Թագ.ց., Գլ. 19, հմր. 35—37):

Ահա թէ ի՛նչ կը գրէ Տօքթ. Ասատուր Ծակոբեան իր վերին աստիճանի հետաքրքրական ուսումնասիրութեան մէջ՝ «Սասունցի Դաւիթ» Դիւցազնավէպը՝ Բեւեռագիր Արձանագրութեանց Մէջ» խորագրով: (Հյրնիֆ. օրթ. Հոկտ. 1939): —

— « Աշխարհի մէջ գոյութիւն ունեցող ամենագրաւիչ վիպական երկերէն անդամ կը հինանայ: Բայց ազգային ժողովրդական հերոսները եւ անոնց չուրջը հիւսուած դիւցազնավէպերը՝ միշտ կ'ապրին, ու կը մնան յաւիտեան: Որովհետեւ այդ հերոսներն ու դիւցազնավէպերը բուն իսկ ժողովուրդի ծնունդն են »:

Ու գովելով մէկտեղ Խորհրդային Հայաստանի Կառավարութեան նախաձեռնութիւնը՝ մեր վէպին հազարամեակի տօնին առիթով, կը շեշտէ. —

— « Բայց պէտք էր տօնել Սասունցի Դաւիթի ոչ թէ մէ՛կ հազա-

---

1) Հյրնիֆ. օրթ. 5 օգ. 1939: 2) Անդ՝ 13 Մրտ. 1940:

բամեակը, այլ երկո՛ւ հազար եւ վեց հարիւրամեակը (2600)։ Որով-հետեւ՝ Սասունցի Դաւիթը, իր հայր Մհէր 1), իր որդին փոքր Մհէր, իր մեծ-հայրը Սանասար կամ Սարասար, իր մեծ-հօրեղբայրը՝ Բաղդասար կամ Աղբամելիք, իր մեծ-մայրը Ծովինար 2)՝ պատմական յայտնի անձնաւորութիւններ էին, որ կ՚ապրէին ասկից 2,650 տարի առաջ, ճիշդ Ասորեստանի Սենեքերիմ թագաւորին օրովը, որ է՝ Քրիստոսէն 700 տարի առաջ [Մրնցի. եւ Ասծչնչ.]։

« Այս պատմութիւնը (Սանասար-Բաղդասարի ճիւղը), առանց այլեւայլի կը կապուի Ասորեստանի Սենեքերիմ թագաւորին հետ, Քրիստոսէն առաջ՝ 700 թուականին, այսինքն 2650 տարի առաջ։

« Սենեքերիմի սպանման դէպքէն 2525 տարի վերջը, Նինուէի փլատակներուն տակէն դուրս եկան բեւեռագիր անթիւ կղմինդրներ, որոց վրայ գրուած են թէ՝ Աղբամելիք եւ Սանասար՝ իրենց հայրը Սենեքերիմ թագաւորը Նեսրոմերի տաճարին մէջ աղօթելու ժամանակ՝ սպաննեցին եւ փախան Հայաստան։

« Խորսապատի պալատին մէջ, կայսերական գահին դէմը, պատին վրայ, քանդակուած գտնուեր է մեծ նկար մը՝ որ ամբողջապէս հայ իշխանուհիին Հայաստանէն Ասորեստան հարս տարուելու պատմութիւնն է (Անդ թիւ 9)։ Եւ ատկէ՛ է որ ծագում կ՚առնէ Հայ Դիւցազնավէպը »։

Կ՚արժէ ուշադրութիւնով կարդալ Տոքթ. Ասատուր Ծակոբեանի այդ յօդուածաշարքը, թիւ 1—38։ Այն ատեն որոշ կ՚տեսնուի թէ՝ Հաղարամեակի տեղ՝ երեքհազարամեակ պէտք էր ոտնէինք։

Այդ փաստերով հիմնաւորուած՝ ուրեմն մեր Դիւցազնավէպը միւս ժողովուրդներու վէպերէն ամենէն հինն ալ կը հանդիսանայ թուականի կարգով։

Այդ բոլոր փաստերը մէկ բան կ՚ըսեն։ — Մեր Աղգը շատ հին ազգ է։ Շատ հին ազգերէ աւելի հին է։ Ուրիշներէ փոխ առնելէ աւելի՝ ի՛նքը փոխ տուած է։ Երեք-հազար չէ՝ թերեւս հինգ-հազար տարիներու հնութենէ մը կուգայ (դանկաբաններուն հարցուցէք՝ Arménoïde տիպի մասին 3)։ Վաղը՝ նոր-նոր պեղումներով կրնայ ապացուցուիլ որ՝ հինգ-հազար չէ՝ քանի մը հինգեակ-հազար տարիներու հասակով ազգ է Հայ Աղգը։ Ասիոյ բնիկը չ՚է՝ եւրոպակա՛ն ազգերու նախահայրերէն է Հայ Աղգը (Լեղուաբանները կը փաստեն 4)։ Եւն., եւն.։

Կարդացէ՛ք մանաւանդ՝ Մոսկուայի Մարդաբանական եւ Հնադիտական Ակադեմիայի փրոֆէսէօր՝ Ռ. Խէրումեանի նորագոյն հմտա-

---

1) Այսինքն Դաւիթ-Մհեր, Տնթ. Զիթ.։

2) Այսինքն Լուսիկ-Թագուհին, Տնթ. Զիթ.։

3) Տե՛ս գործիս սկիզբը, բ. «Ցորդորակ», հատ. 21։

4) Տե՛ս բ. «Ցորդորակ», հատ. 25։

լից ուսումնասիրութիւնը, Les Arméniens, մասնաւորի՝ Գլուխ IV. եւ V. ու պիտի տեսնէք բազմաթիւ ուրիշ փաստեր՝ մեր Ազգի մասին:

9ա. Փոքրիկ փակագիծ Մը՝ այդ Հազարամեակի հանդէսներուն առիթով. —

Հայ Ժող. Դիւցազնավէպի վրայ միտք ու ջանք թափողներուն ամենէն արդիւնաւորին, այս գործին հեղինակ Չիթունիին գրի առած «Սասմանց Տունը»ը՝ չատերուն ծանօթ էր 1907-էն ի վեր:

«Գրական Աստւիս. Երբ մեր սերունդն ալ երթայ» խորագրին տակ («Ճառաջ», 4 Նոյ. 1928)՝ Սիրունին կը գրէր այսպէս. — « Ո՞վ պիտի չհրճուի՝ փրկուած, լոյս աշխարհ եկած տեսնելով հայ ժողովրդական բանահիւսութեան դոհարներէն մէկը: Իր Սասմանց Տունը (որ Չիթունին մտաղիր է լոյս ընծայել)՝ հայ անպիր Վէպին ամենէն զմայլելի էջերէն մէկն է. գրեթէ ամենէն ամբողջականը: Ու Չիթունին մեզ թերեւս միակն է՝ որ կրնայ լոյսին հանել այդ անմշակ գոհարը, որ դարերուն խորէն կուգայ, սերունդներուն սրտէն անցնելով: ... Բախտ ենք ունեցեր որ Չիթունին հայ մամիկներուն չրթունքէն առեներն քաղեր է այդ հրաշալի Վէպը՝ որ հիմա չկայ »:

Իսկ հազիւ չորս ամիս վերջ, 17 Ապրիլ 1929, «Ալաղաւ» օրաթերթը կը գրէր թէ. — « Անցեալ հինգշաբթի իրիկուն՝ «Ճարդգող» Միութիւնը հրաւիրած էր ծանօթ փօլքլօրագան Պ. Տիգրան Չիթունին՝ բանախօսելու «Հայ Ժողովրդական Դիւցազնավէպ»ին վրայ: Հակառակ գէշ օդին՝ սրահը լեցուն էր: Պրն. Չիթունին քանի մը բառ ըսելէ յետոյ հայ ժողովրդական բանահիւսութեան ու հէքեաթներու վրայ ընդհանրապէս, ծանրացաւ մասնաւորի Հայ Ժող. Դիւցազնավէպ «Սասմանց Տուն»ին վրայ: Անոր առաջին ճիւղ՝ Սանասար-Բաղդասարի՝ Սպարկերտի քարբառով վարիանթէ մը (զոր ինքն իսկ հաւաքած եւ արտագրած է)՝ ընդարձակ կտորներ կարդաց ու մեկնեց: Այդ նիւթը շատ չահեկան ու կարեւոր ըլլալով՝ «Ճարդգող»ը ապագային անոր պիտի յատկացնէ ուրիշ երեկոյթներ եւս »:

Իսկ ես ինքս՝ բազմաթիւ յօդուածներով՝ գրած եմ Հազարամեակի տօնին առաջ, Արտասահմանի (Ֆրանսա, Իտալիա, Անգլիա, Ամերիկա եւ Պարսկաստան) հայերէն օրաթերթերու եւ պարբերականներու մէջ՝ Սասմանց Տունին չուրջը: Գիրքի ձեւով ալ 1909-10՝ լոյս տեսած էին իմ կարկատէ եւ Սպարկերտի փոխոխակները՝ գաւառաբարբառով եւ աշխարհաբարով: Լոնտոնի Massis անգլերէն ամսագիրը՝ հրատարակեց իմ մէկ ինամուած յօդուածը լուսանկարովս մէկտեղ: Նոյնչափ պարագայական յօդուած մը ինծմէ՝ տպուած էր Պոսթընի Հայրենիք Ամսագրին մէջ (Փետր. 1930): Կարճ գրուածք մ'ալ տպուած էր ինծմէ՝ Մկ. Պարսամեանի «Կեանք եւ Արուեստ» ամսագրին մէջ՝ 'ի Փարիզ:

Երեւանի մէջ կազմուած Սասմայ Ծռերու Ցանճնախումբը՝ Հա-ղարամեակի Տօնին տարբիներ առաջ՝ պաշտօնապէս դիմած էր ինծի 1) եւ առացած էր իմ Սասմանց Տան երկհատոր ձեռագիրը, որ պիտի տպուէր «Սասմայ Ծռեր» հատորին մէջ: Հատորը (Առաջինը) լոյս տեսաւ 1936-ին: Իմ փոփոխակներէն ոչ մէկը տպուած չէր անոր մէջ: Անդրանիկ պատումը՝ Սրուանձտեանի Մուշի բարբառովը՝ նոյնպէս տպուածներուն մէջը չէր: Հատորին մէջ՝ տեղ գտած փոփոխակները՝ քիչ բացառութիւնով՝ տակաւ պատումներն են: «Ինչո՛ւ»-ն եթէ փնտռենք՝ դրչէս չատ հեռուները պիտի տանէր այս Ցառաջաբանը: Պիտի սպասեմ Բ. Հատորին: «Սասնայ Ծռեր»ու Ա. Հատորին մէջ աչքի ղարնող առաջին ղարմանալի բանը այն է սակայն որ՝ հակառակ ա-հրաժեշտութեանը՝ ոչ մէկ ժամանակագրական թուական չէք տեսներ տպուած փոփոխակներուն: Ութսուն էջնոց խիտ ու մանր Ցառաջաբանին մէջ անգամ՝ Սրուանձտեանի անունը չկայ՝ երբ անդրանիկ դրի առնողը ժողովրդական Վէպին: Այնպէս որ՝ ընթերցողին հա-մար անյայտ կը մնայ թէ՝ մեր ղմայլելի Դիւցազնավէպը ո՞ր թուա-կանին եւ որո՞ւ ձեռքով դտնուած, դրի առնուած է առաջին անգամ: Պիտի կարծուի որ առաջին էջերուն վրայ երեւցող Փրոֆ. Մանուկ Աբեղեանի փոփոխակն է մեր Վէպին նախահայրը, որ ճիշդ չէ՛: Սա-սունցի-Դաւիթի ճիւաւոր դունաւոր նկարն ալ — անցողակի ըսեմ — անբնական եւ անճիշդ է:

Այս մէկ-քանի փաստեր ինչո՞ւ չիշեցի այստեղ, — բացատրե-լու համար թէ՝ անծանօթ մը չէի: Նոյնիսկ ինձմէ դատ ուրիշ մէկը, 1910-էն ասդին գոնէ, ինծի չափ ոչ զբաղած էր՝ ոչ ալ Մամուլի մէջ գրած՝ Հայ ժող. Վէպին չուրջը: —

Իսկ Հազարամեակի տօնի՞ն առեն, 1939-ին.՞.՞.՞ —

Թող նէրեն ինձ որ իմ ցաւը յայտնեմ ամեն անոնց որ այդ տօ-նին գաղափարը յղացան, մէջտեղ դրին, — Հայաստանի մէջ թէ Ար-տասահման —, ու Հազարամեակի փառաւոր տօն հռչակեցին, գիր-քեր տպեցին, առօրեայ թէ պարբերական մամուլին մէջ դրեցին, հանդէսներուն մէջ ճառեցին, խօսեցան, փառաբանել աշխատեցան Սասունցի Դաւիթին ու Հայ Վէպը: Ու մոռցան, բոլորովին անտես ը-րին այն կեդրոնական վաստակաւորը, որ երեսնեակ մը տարիներու անդուլ տքնութեան, խոր պրպտումներու եւ պաշտամունքի սրբազան տարիքայ դարձուցեր էր Հայ ժող. Դիւցազնավէպը, — Սասմանց Տուն կամ Սասմայ Ծռեր: Մոռցան անունն իսկ այն համեստ մշակին, որ Հայ ժող. Դիւցազնավէպի զմայլելի կառոյցին ամենէն կարեւոր ճարտարապետն է եղած, ճիւղագրութեան ու բարբառագրութեան կրկնակ արժէքներուն մէջ: Այն որ՝ անմրցելի խնամով ու արուես-տով դրի առնողն է եղած՝ Վէպին ամբողջական եօթը ճիւղերուն,

---

1) Նախագահին Փրոֆ. Մ. Աբեղեանի 1933 Մարտ 28, Մայիս 14 եւ Օգոստոս 3 նամակներովը, հրատարակելի Բ. Հատորովը:

Սպարկերտի «սքանչելի» բարբառովը: — Միակը՝ ամբողջ վաթսունեակ փոփոխականներուն մէջ՝ որ տուած է ճշմարիտ դիւցազներգական վախմ լեզուն մեր վէպին:

Աղջար ըլլալու համար ըսեմ որ՝ ամբողջ հայ Մամուլին մէջ՝ միայն Շաւարշ Նարդունին էր որ՝ հակիրճ ցանկի մը մէջ (Ցառաջ Օրերէ.), փոփոխականներու շարքին, յիշած էր Զէյթունին անունը՝ Սասմանց Տան աշխարհաբար տպուածին ակնարկելով:

Ու միայն Պոսթընի «Նոր Գիր»-ի խմբագրութիւնն էր որ հեռաւոր Ամերիկայէն յիշեց՝ այդ Հազարամեակին առիթով խօսելու ամենէն տելի իրաւունք ունեցողը, Զէյթունին: Դիմեց իրեն, խնդրեց որ Հայ ժող. Վէպի մասին լիակատար փոքր ուսումնասիրութիւն մը գրէ «Նոր-Գիր»-ի ընթերցողներուն համար: (1939, էջ 163-175):

Նոյն թերթին խմբագրութիւնը դրեց նաեւ հետեւեալը՝ Հազարամեակի բացառիկ թիւին Աշխատակիցներուն կարդին. — « Տիգրան Զէյթունի, Վասպուրականցի ծանօթ դրադէտը, իր յօդուածին մէջ լեցուն զաղափար մը կուտայ այն հսկայական աշխատանքի մասին՝ զոր ինք կատարեր է՝ հաւաքելով «Սասմանց Տուն» ժողովրդական վէպին եօթը ձիւղերուն ամբողջական պատմութիւնը, Սպարկերտի բարբառով: Զէյթունիի այս հոյակապ երկը դժբախտաբար անտիպ կը մնայ դեռ, սպասելով Մեկենասի մը աջակցութեանը:

« Կ'արժէր եւ պէտք էր որ՝ Զէյթունիի գործն ալ արեւ տեսնէր այս տարի (1939), Սասնայ Ծռերու Հազարամեակին առիթ. »:

Ամերիկահայութիւնն ալ, բնականաբար հիմնուելով Մորհ. Հայաստանի մէջ որոշուած տօնին վրայ, ինքն ալ Հազարամեակ ըսաւ ու տօնեց, բոլոր Գաղութներուն պէս:

Հազարամեա՛կ...: — Քանի՞երրորդ հազարամեակ: Ի՞նչ տուեալներով հազար տարի միայն մեղնէ առաջ կը դնեն ծագումը մեր Աղջային Վէպին: Ո՞վ ըսաւ թէ իններորդ կամ տասներորդ դարու ծնունդ է Սասունցի Դաւիթը, դուք ըսի՛ք Սասմանց Տուն, խօսելով քնիկ Հայաստան-Աշխարհի ժողովրդին բերնովը, առնելով բուն Վէպին փոփոխականներէն:

Ինչո՞ւ այդ դիւրին ու թիւր վճռումը: — Հերոսներէն մէկուն — ըլլայ նոյնիսկ կեդրոնական ամենէն փայլունին — Դաւիթի վրայ կանգ առնել. անով միայն մկրտել Վէպը՝ զայն պատմող ժողովրդի ըմբռնումին հակառակ: Անոր վրայէն միայն դատել, քննել ու վճռել...: Արդեօ՞ք անոր համար որ՝ անդրանիկ փոփոխակը (Սրուանձտեանին)՝ «Սասունցի Դաւիթ» անունով է լոյս տեսած: Բայց միթէ ներելի՞ է այդչափ սահմանափակ հորիզոնի մը առնել՝ ընդհանուր համազգային դիմագիծով ներկայացող մե՛ծ պատկեր մը: Չէ՞ որ այդ անդրանիկ պատումովն անգամ՝ Դաւիթէն առաջ տրուած է Սասնաբերի մ'եւ Աքամեղիքի մը զրոյցը, որ Վէպին ծագումը կը տանի

կը կապէ 2-3·000 տարի առաջ անցած դէպքերուն հետ, յիշուած հին մատենագիրներէ, — Աստուածաշունչ, Մորենացի եւ Ընդհանուր Ազդերու Պատմագիրներ…:

Մեր Վէպը հասարակ վէպ մը չ'է՛: Պարզ ղրոյց մը, հէքիաթ մը չ'է՛: Պատմական առանձին շրջանի մը պատկեր չ'է՛: Միայն մէկ շրջանի պատմագիրէ մը պատմուածք-ղրուած չ'է՛: Միայն հաղար, երկո՛ւ-հաղար տարիներ առաջուան ծնունդ չ'է՛: Սասնու իշխաններէն Դաւիթ-Կիւրապաղատի կամ Սասնոյ Լեռներու տեղադրութիւնն ու թատերավայրը չի՛ պարփակեր: Միայն այս ու այն հայ քաջին ու թաղաւորին գործերը չե՛ն 1): — Ամբողջ Հայկական Աշխարհի՝ բոլո՛ր պատմական ու նախապատմական դարերու թատերաբեմն է: Մարդեղութեան բաղմահաղար դարերու խորհրդաւոր ծննդոցի Անգիր Մատեանն է Հայ ժող. Դիւցազնավէպը:

Ի՞նչպէս չյիշել այստեղ, Վէպին մէջ քանիցս շեշտուած որակումներէն դոնէ մէկ-երկուքը: — Թլոլ-Դաւիթ երբ կը յաղթէ իր վրայ եկող շատ քաջ արքաներուն, եւ անոնցմէ երկուքը, Օղան, Տօղան թաղաւորները կը կապէ իրարու, կը յանձնէ հօրեղբօրը, կ'ըսէ այսպէս, եւ կապեալներուն բանակէն ճողոպրողներն ալ կը խօսին այսպէս. —

— « Ապա ֆասաւ՝ Օղան, Տօղան Թագաւորներն ալ բրունեց,
Ձեռ-ոտ կապեց՝ դըրաւ քարի մը գըլխին, —
— Դէ՛, ֆօրեղբա՛յր, — կանչեց Ձէնով-Օֆանին —.
Արեւ տաքցաւ, ֆոգիս տաքցաւ, քըրտնեցայ…:
Դուք ֆըսկեցէ՛ք՝, Օղան-Տօղան չըփախին,
ես մէկ երթամ Ջուրը մըտնեմ 2) ու դառնամ… »:

Այդ Ջօրքերու Գուշակներն ալ ի՞նչ ըրին. —
Բերին այդ տեղ՝ ու Թուղթ բացին՝ նայեցան. —
— « Ատոնց Ազգը. — ըսին Անոնք …, Ջըրէ՛ յըղացք է առեր…:
Ջըրէ ծընած՝ իրենց ուժը Ջըրէ՛ կ'առնեն ամեն ֆեղ…-
Ջըրեղէն ու ֆըրեղէ՛ն է Անոնց Ազգ…: —
Ջըրի ճամբան Ատոնց վըրայ Թէ կըտրեն,
Թէ չըԹողուն Ատոնց Մարդիկն երԹան Ջուր՝
Անոնք այլեւս ուժ չեն առներ՝ ու կ'իյնան…

---

1) Դժբախտաբար կարելի չեղաւ տպել այս գործս՝ ՍԱՍՈՒՆԱԿԱՆ՝ այն ձեւով՝ ինչպէս ծրագրած էի ձեռագրիս մէջ: Այնպէս որ պատմական ու բաղդատական Մանօթագրութիւններուս բաժինը կը մնայ գործիս Երկրորդ Հատորին: Այդ համադրումներովս պիտի տեսնուի որ մեր Վէպն ու Հերոսները կը մարմնացնեն մեր ամբողջ Անցեալն իր Անձերովը:

2) Վազո՛ւն Ջուրի, գետի, աղբիւրի՝ մէջ՝ լողանալ:

Անոնց Ազգին, տըւածուրիկ 1)՝ ա՛յդ է աիյա ըսկիզբէն. —
— Ջուրմ 2) իբիկուն կըդիւ կ՛ընեն, Թէ՛ վիրաւոր, մաիյամերմ, —
կ՛երթան Ջուրը, Աղբիւրի մէջ կը նետուին,
Անոնց վերքեր կ՛միաւորին, բուժ կ՛ըստանան ու կ՛ելնեն,
Առաւօտուն նորէ՛ն կուգան կը կըռուին...:
Հաւքն իր Թեւով Թէ գայ անցնի Իրենց վերքին ընդմէջէն՝
Անոնք երբեք «օ՛ֆ» չեն ըներ, կը ժըրին 3)... »:

Ջրէ յղացում. Ջուրի Ակին վրայ Տուն չինել. Ջրի, Աղբիւրի մէջ նետուիլ՝ ու կրկին ուժ ստանալ. Ջրի, Գետի, մէջ նետուիլ՝ ու վէրքերը բուժել, — ամբողջ Վէպին մէկ ծայրէն միւս՝ կուտան կեանքի թուական մը՝ որ ոչ պատմական է՝ ոչ ժամանակագրական, — տիեզերածնութեա՛ն թուականին հետ է կապուած: Ի՞նչպէս սահմանափակել զ՛այն հազար-տարուան մը մէջ: Որովհետեւ այդ թուականին՝ Սասնու իշխա՞ն մ՛ունեցեր ենք Դաւիթ անունով: Միայն այդ չէ սակայն: —

Վէպին ակն՝ի վեր բարձրանանք. —

Սասմանց Տան խորհրդաւոր ծօթը թիւին մէջ ազուցուած ծօթը-ճիւղերուն վերջիններէն դէպ Անդրանիկ ճիւղը՝ քննենք արագ ակնարկով մը. —

Համազ-Փահլէվան եթէ մեզի յիշեցնէ Համազասպ Պահլաւունին, Դաւնիկ-Որբիկ՝ Արծրունի Որբիկ Իշխան, կամ Դերենիկ, Ծարման եթէ մարմնացնէ արաբ Ամիրաներու եւ Անիշխանութեան դերեվար շրջաններըը, Դաւիթ եթէ անձնաւորէ մահմետական աշխարհի դէմ ոգորող Դաւիթ Սահառունին, — այս ամենը՝ հազարամեակ մ՛առաջուան գիծեր —, այս ամենուն եւ անոնց յարակից ու նախորդ ճիւղերուն մէջ՝ կը փայլի սակայն հին ու աւելի հին, հնագոյն շրջաններու Հայ ցեղին պատկերը, — աւելի թանկագին երանգներով:

Պարոն-Տէր-Ներսէս՝ կը յիշեցնէ հայ քաջագործ զօրավարը՝ որուն համբաւը մինչեւ Թրակիա հասած, հոն արմատ բռնած է: Բայց նաեւ անդրադարձ ցոլքն է՝ մեծ Հայրապետ Ներսէս Պարթեւի, նախապէս Սպարապետ Տրդատ Արքային, եւ ապա՝ արքունականներուն խնդրանքովը՝ սուրը Թողած, խաչը բռնած, հոգեւոր պետ դարձած:

«Կապոյտ-Բերդ»ին մէջ կը գտնենք Արտագերս ամրոցը: Եւ Ծանոթուտ-Ծաթունին մէջ՝ Փառանձեմ-Թագուհին ու Արշակ Բ.ի չըրջանը:

Առիւծ-Մհերը՝ եթէ ցոլացնէ Պարսից հետ մղուած պատերազմներուն այլաբանական պատկերը, Առաջին ճիւղին՝ Ջոջանց Մեծ

---

1) Տուածուրիկ, բնատուր, երկնաձէր:
2) Մինչեւ 3) Վերակենդանանալ:

Տան հիմնադիր Սանասար-Բաղդասար երկուորեակ եղբայրները՝ Քրիստոսի Թուականէն եօթը դարեր առաջ ապրած Աստրեստանի Սենեքերիմ-Թագաւորին հետ կապուած, ու Մովի-Լուսիկ-Թագուհին պէս՝ ջրէ յղացած-ծնածի պատկերովը՝ ապա ուրեմն Մեր Վէպը կը տանին կը հասցնեն արդեօք քանի՞ դար հեռուներ: Տիեզերածնութեան Առաջին Դարուն Թուականը գիտցուա՞ծ է երբեք:

— « Մարդը՝ միլիոնաւոր տարիներ առաջ՝ ծովէն է դուրս եկած, — կ'ըսեն բնագէտներ *): Ասոր համար ալ՝ մարդկային մարմնի բաղադրութիւնը կը նմանի միլիոնաւոր տարիներ առաջ ծովու ալի ջրին բաղադրութեանը: Մարդկային արեան հանքային աղերուն հարիւր համեմատութիւնը նոյնն է՝ ինչ որ այսօրուան ծովի ջրին մէջ եղածը՝ հանքային աղերու նկատմամբ, ինչպէս է նատր (sodium). քլօրին, կալի եւ կրածին: ... Մարդկային արեան հանքային աղերը՝ կ'արտացոլան հին ովկիանոսի ջրին քիմիաբանութեան մէջ, որուն ծոցը առաջին անգամ զարդացած է կեանքը »:

Իսկ Թումանեան կ'ըսէ. — « Ժողովուրդների դիւցազներգութեան մօտեցող մարդիկ՝ պէտք է լա՛ւ իմանան եւ միշտ յիշեն մի օրէնք, որ ժողովրդական դիւցազներգութեան համար՝ ժամանակ ու տարածութիւն երբէ կան, ապա կան հսկայակա՛ն չափերով. եւ միջավայր երբէ կայ՝ էդ էլ ամենից առաջ՝ ամբողջ մարդկային կեանքն է ու մարդկութեան պատմութիւնը... » [Ցոլ., 2 Ապրլ. 1940]:

Այս հարեւանցի տուեալներէն պարզ կը տեսնուի թէ՝ մեր Ազգային Դիւցազնավէպին հազարամեայ տարիք տալը՝ թէ՛ պատմական սխալ է, թէ՛ բնագիտական: Այնպէս որ Ե. Հայաստանի մէջ կազմուած Սասմայ Մոլորու յորելինական Ցանճնաժողովը՝ պէտք էր տօն հռչակէր չէ թէ Հազարամեակի, այլ՝ երկո՛ւ-հազար-հինգ-հարիւր-ամեակի, երե՛ք-հազար-ամեակի:

10. Կեդրոնական Սեւեռուն Նպատակը

Ի՛նչ ալ ըլլայ, ես՝ 1907-էն ի վեր՝ լծուած մեր Ժողովրդական Վէպին, նոյն պաշտամին յարաճուն թափովը՝ չարունակեցի անխոտոր՝ իմ ճամբուն վերելքը: — Տաժանքո՛ւ՝ բայց օգտակար:

Կանուխէն ու խորապէս զգալով՝ ինծի վիճակուած առաքելութեան բարձրութիւնը՝ իմ միակ կեդրոնական սեւեռուն նպատակիս հասնելէ զատ՝ ուրիշ ոեւէ բանով ժամանակս չկորուսի: —

1909-ի ամրան, Իզմիրլեանի կաթուղիկոսական օծման առիթովը, Էջմիածին, Թիֆլիս ու Պոլիս կատարած ճամբորդութենէս զարձին, Թիֆլիսէն դնած՝ հետս բերած էի ազգագրական դիրքերու եւ հանդէսներու կարեւոր հաւաքածոյ մը:

---

*) Հյրնք. Ամս., Օգոստ. 1935:

Վան հասնելուս պէս, սովածի նման այդ գիրքերուն վրայ ինկայ: Կարդացի ու խորացայ իմ ընտրած ազգագրական ճիւղին մէջ:

Սասմանց Տունի «կրակը» իմ սրտիս մէջ ինկած օրէն՝ մէկ մըտածում միայն զբաղած էր իմ ուղեղը, իմ ամբողջ էութիւնը, — Մեր Վէպը մշակուած տեսնել՝ փոփոխակներուն ամբողջութեանը մէջ ու գեղարուեստօրէն...: « Դա կը լինէր մեր ազգային բանաստեղծութեան մարգարիտը », — ինչպէս իրաւամբ կ'ըսէր Մանուկ Աբեղեան, իր համալից ուսումնասիրութեան մէջ, — « Հայ ժողովրդական Վէպ » (Ազգ. Հնդս., 1908, թիւ 2, էջ 23), որ առանձնապէս յագեցուցած էր Մեր Դիւցազնավէպին չուրջն իմ պատրաստած անվերջ հետաքրքրութիւնը:

Քա՛նի նոր պատումներ կարդացի, ու քա՛նի խորացայ փոփոխակներուն մանր ծալքերուն մէջ՝ ա՛յնքան եւ օրէ օր՝ իմ դրի առած ու մաքուրի քաշած Սասմանց Տան չորս փոփոխակներուն եւ մանաւանդ փոփոխակներուն «բագուհին» հանդիսացող Սպարկերտի պատումին բարձր արժէքն աւելի շեշտուեցաւ իմ աչքին. իսկ հոգիս կախուած մնաց Աբեղեանի ուսումնասիրութեան վերջաբանին: Սեպուհ Լերան Մանէ Այրին դլուխը կախուած անշէջ կանթեղին պէս՝ երկնային Աստղի մը նման՝ ան մնաց իմ մտքիս ու աչքիս առաջ, շարունակ, անմար ու կարմրավառ:

Ի՞նչ կ'ըսէր ան՝ այդ վերջամասին մէջ. —

— « Մենք վերջացրինք: Բայց երբեւ վերջաբան՝ աւելորդ չէ ասենք, որ սիրելի պիտի լինի մեզ համա՛ր եւս մեր Վէպը, որ մերն է. մեր սեպհականը, մեր ազգի դարաւոր պատկերը: Ժողովենք այդ Վէպի շատ պատմուածքներ. ուսումնասիրենք բազմակողմանի կերպով, եւ մենք կը գտնենք նրա մէջ մեր ժողովրդի հոգու խորքերը: Իսկ երբ մեր բանաստեղծներից մի հանճարեղը՝ այդ նիւթը նոյն ժողովրդական հոգւով մշակէ գեղարուեստօրէն, դա կը լինի մեր ազգային բանաստեղծութեան մարգարիտը: *Մի-երկու փորձեր եղել են 1), բայց պէտք է սպասենք կատարելագոյնին. մի երկի՝ որի մէջ երեւան դար մեր ազգի ամբողջ կեանքն ու հոգին, նրա անցեալը, ներկան ու ապագան: Ոչ մի նիւթ այնպէս յարմար չէ՛ այդպիսի մի ընդարձակ բանաստեղծական երկի՝ որքան մեր «Սասնոյ Ծռեր»ը: Սրա մէջ կան ամեն սաղմեր, միայն պէտք է աճեցնել ու հրաշակերտել արուեստով:*

« Ե՞րբ պէտք է ծնուի այդ հանճարը, որ խմելով հայրենի կենդանի աղբիւրից, ինչպէս Դաւիթն իւր հայրենական Անմահական Աղբիւրի ջուրը, մի անգամից աճէր, հսկայական դառնար, եւ մեր աղքատիկ գրականութիւնը այդ ուժով ու զօրութեամբ պատուէր, ու

---

1) Կ'ակնարկէ Թումանեանին ու Իսահակեանին. Զ.

նաեւ պարի բանար ընդհանուր ազգերի գրականութեան ծովին մէջ, *ինչպէս Սասնայ փոքրիկ դէսը, որ լեռներէն իջնելով՝ դալիս զարկում էր ահագին դեան մէջ, « ու կը կորչէր ղ'էդ դէսն, ու կը չերանէր՝ չուր 'ի մէջտեղ, ու հրպա մ'լէ կը խառնուէր մէջ էդ դէսին ու կ'երթէր »:*

« Այդ կը լինի այն ժամանակ, եւ կ'անէ նա', « Որն որ ղ'ըղա ջրի ակ դանէ, ու ղ'իւր տուն լէ՝ սուկէ (չինէ) վըր իդա ջրին »: Այն ժամանակ եւ « ընդրա ապադ լէ որ եղնէ, հմլա զօրեղ կ'եղնէ »: Ճիշդ է, այդ աղբիւրի ակը փոքր է, « լուլէ մի ջուր է », բայց « ջուրը զօրա՛ ջուր է », այդ « բարակ տունն՝ մեծ զօրութիւն ունի », եւ « որն որ իդոր ական ջուր խմէ՝ հմլա կորլճ կ'եղնի », եւ նա կ'աղաւթէ մեր Գրականութիւնն օտարների զերութիւնից, ինչպէս Դաւիթն իւր հայրենի Սասունը » [Ազգ. Հնդս. 1908, թիւ 2, էջ 23-24]:

Ես՝ անձկութեամբ սպասեցի՝ որ այդ «մէկ»ը, — « մեր բանասիւղծներից մի հանճարեղը » —, երեւան գար ու չողար՝ ուշացած հայ դիւցազներգութեան հորիզոնին վրայ: —

Ցովհաննէս Թումանեան փոքրիկ փորձ մ'ըրած՝ բայց կէս-ճամբան ձգած էր: 1913-ի Յունվարին, Թիֆլիս՝ իրենց բազմանդամ զերդաստանի սեղանին չուրջը դոնուելու պատիւն ունեցած էի, եւ այնտեղ՝ Դերենիկ Դեմիրճեանի, Խատիսեանի (Ալ. Խատիսեանի եղբօր) եւ ուրիշներու ներկայութեան՝ խօսք եղած էր այդ մասին: Բայց ան յոպնած կ'երեւար: Անկէ ետքը ես համոզուեցայ որ՝ եթէ Թումանեան ուղէր ալ՝ տուողը չէր այն՝ ինչպէս ես կը մտածէի: Անոր քնարը՝ թեթեւ ու կարճաշունչ երկերու համ երգերու միայն յատուկ է:

Իմ աչքը՝ Դանիէլ Վարուժանի վրայ էր: Ան ունէր դիւցազներգական բանաստեղծի մեծ չունչը: Թիֆլիսէն Պոլիս անցնելով՝ նոյն (1913) տարուան սկիզբներն ու վերջը, երեն հետ անձնապէս ծանօթանալով, ինչպէս որ յիշեր էի լրագրական յօդուածի մը մէջ, բերնուց ալ թելադրեցի իրեն՝ որ այդ մեծ գերթուածի մասին խորհի: Ան՝ պատրաստուած չէր այդ աշխատանքին: Մանօթ իսկ չէր մեր Վէպին բնագրերուն, — « բո՛ւն աղբիւրէն՝ չուր խմած չ'է՛ր »:

Առեն մը յուսացի որ՝ Կոստան Զարեան, Ա. Հարոն, Կ. Միտալ, կամ ուրիշ նոր մը՝ թերեւս կուտան մեզի այդ հրաշակերտը:

Ոչ ոք յայտնուեցաւ:

Մինչ այս մինչ այն՝ 1907էն մինչեւ այս պատերազմի առաջին օրերը, երեսնեակ մը տարիներէ ի վեր, ես կը մշակէի նախապատրաստական աշխատանքներ: Ես յաւակնութիւն չունէի անշուշտ թէ՝ « հանճարեղներից մէկն » եմ, բայց՝ « հայրենի կենդանի աղբիւրից խմող » միակ անձն էի թերեւս՝ որ 1907-էն սկսած՝ մեղուի պէս գըլուխս խոթեր էի Սասմանց Տան բազմահոյլ փոխոխակներէն կազմըւած ծաղկանոցին մէջ: Միակը՝ բաղդատական խորունկ ուսուածք-

ներով, եւ գաւառաբարբառներուն ծանօթ ըլլալով, անձամբ ալ՝ դեղեցկագոյն եւ ճոխագոյն պատումները գրի առած, — կը դտնէի ինքզինքս ձեռնհաս՝ եթէ ոչ հրաշակերտ մը տալու, այլ՝ լիակատար հերթուածին անդրանիկ մեծ փորձը մէջտեղ դնելու: —

1907-էն ի վեր անդուլ չանքերով ես «ժողովեցի մեր Վէպին շատ ու շատ պատմուածքները: Ուսումնասիրեցի բաղմակողմանի կերպով»: Սպասեցի նոյնիսկ որ՝ մինչեւ այդօր լոյս տեսածներէն զատ՝ ուրիշ նոր պատումներ ալ աշխարհ գան: Անո՛նք ալ ձեռք բերի, աւելի՛ խորը մտայ մեր Վէպին: Առաւել չափով ու որակով «գտայ անոր մէջ՝ մեր ժողովրդի հոգու խորքերը»: Սպասեցի՝ մինչեւ հանդարտ ու լայն ժամանակ ունենայի՝ կազմելու երեսնեակ տարիներու ծրագրածս մեծ ու ամբողջական երկը, Հայ ժողովրդական Դիւցազնավէպին քերթուածը, «որի մէջ երեւան գար մեր ազգի ամբողջ կեանքն ու հոգին, նորա անցեալը, ներկան ու ապագան»:

Ահաւոր եղեռնէն յետոյ (1914)՝ այլեւս ոչ մէկը չէի տեսներ այդ Մեծ երկին պատրաստութեան կարող: Ու նոր «մէկը» չէր յայտնուեր դժբախտաբար: Իսկ ես՝ վայրկեան մը չէի մոռնար՝ թէ ծանր պարտք մը կար դրուած «հայրենի կենդանի աղբիւրից խմած» իմ անձիս վրայ. թէ ահա՛, անզգալաբար, տարիքս կը թեւակոխէր վաթսունին մէջ, ուրեմն եւ՝ եթէ կրնայի դեռ բան մը տալ՝ պէ՛տք էր եւ ժամանա՛կն էր որ տայի:

Այդ սեւեռուն ու յարատեւն մտածումիս զաւակը պիտի ըլլար ահա՛ ՍԱՍՈՒՆԱԿԱՆԸ: Անոր խմբագրումի տքնալից աշխատանքը կատարելու հնարաւորութիւնը տուաւ ինծի, — զարմանալի հեզնութեամբ —, այս նոր Ընդհանուր Պատերազմին ստեղծած առեւտրական անդործութիւնը:

11. ՍԱՍՈՒՆԱԿԱՆ-ին Խմբագրումը

Պատերազմին առաջին ամիսը հազիւ անցած էր: Ես րոպէ մը չըկեցայ: 1939 Հոկտեմբեր 7-ին՝ որոշում տուի ու լծուեցայ այդ նուիրական բարձր աշխատանքին անխափան իրագործմանը:

Վաթսունամեայ հասուն տարիքովս՝ բայց երիտասարդական կորովով՝ խմբագրեցի գիշեր-ցերեկ, լմնա-կիրակին՝ թէ՛ տօն օր, հանդարտ պահերու՝ թէ՛ ահալից աղէտներու ընթացքին, ինչպէս ըրած էի նախորդ (1914-18) պատերազմին տեւողութեանը, ու վերջապէս վերջանիկ կը զգամ ինքզինքս որ՝ կարողացայ ոչ միայն աւարտել այդ վիթխարի աշխատանքը, այլեւ՝ զաւկիս ու հայրենակիցներու ալակցութեամբ՝ տպագրութեան լոյսին ընծայել, որ այսօրուան ու վաղուան սերունդները վայելեն մեր ազգային գմայլելի՛ Վէպին անմահական ջուրերը, եւ իրենք ալ մեծնան, հսկայ դառնան, Սասմանց փոքրիկ բայց հուժկո՛ւ Ձրի Ակէն խմած Ամանաւոր-Բաղդասարի պէս,

ու մեր Դրականութիւնը բացճակատ հանեն, արփիացնեն՝ համաշխարհային դրականութեան մեծ բեմերուն վրայ:

Անշուշտ ասկէ չի՛ հետեւիր թէ յաւակնութիւնն ունիմ ՍԱՍՈՒՆԱՒՆ-ս նկատելու Մանուկ Աբեղեանի բաղձացած «մեր բանաստեղծներից մի հանճարեղ»ին երկը: Բայց համոզումն ու դիտակցութիւնն ունիմ թէ՝ «համած ըլլալով հայրենի կենդանի աղբիւրից», ինչպէս Դաւթին ու Սանասար-Բաղդասար եւ իրենց կուսիկ մայրը Լուսիկ-Թաղուհին՝ իրենց «հայրենական Անմահական-Աղբիւրի ջուրը», — ես յաջողեցայ տալ անդրանիկ փորձը՝ այդ ապագայ մեծ երկին, որ պիտի կրնայ հանդիսանալ Ազնաւիւ կամ Ազնաւց Տուն:

Մինչեւ այդ՝ մեր Անմահ Աղբին այսօրուան ու վաղուան սերունդներուն՝ ես կը նուիրեմ իմ երախայրին ՍԱՍՈՒՆԱՒՆ-ը: Հայ Նոր Սերունդը՝ պէտք ունի նման գրուածքներու՝ որպէսզի պահէ իր ազգային զգացումը, ու Հայ մնայ:

— «Մեր ներկայ կեանքին մեծագոյն պահանջը՝ հարստութիւն չ'է՛, այլ մարդն է: Մարդ կ'ուզենք որ իր ներքին հաւատքէն ու կենսունակութենէն ուժ ու ներշնչում քաղէ՝ մեր դոյութեան ուղղութիւն մը պատրաստելու. խանդավառութիւն ու կեանք դնելու մեր ազգային կեանքին մէջ: Մա՛րդ կ'ուզենք՝ որ իր մականը զարնէ ժայռին՝ այն հաւատքով թէ՝ վճիտ ջուրն անկէ պիտի հոսի անապատին մէջ պապակող ժողովուրդը զովացնելու» («Պէր.»ի Խմբագրին., 21 Մրտ. 1936):

— «Երբ նոյնիսկ Ամերիկայի կամ Անգլիոյ մէջ ծնած հնդիկ եբրայեան կը կարդայ իր ազգային մեծ դիւցազներգութիւնները, ինչպէս Ռիկ-Վէյտաներ, — կը գրէ լեզուագէտ Արշակ Սաֆրաստեան (Ապգ., 12 Մյս. 1928), կամ արաբ եբրայեան կը կարդայ իր «Հազարումէկ Գիշերներ», — արեւելցի այդ եբրայեները կ'ոգեւորուին իրենց անցեալով: Ազգային մշակոյթն այնպէ՛ս կը կաղապարէ անոնց ոգին՝ որ յետագայ շփումը արեւմտեան քաղաքակրթութեան հետ՝ անոնց մէջ աւելի՛ կ'ուժեղցնէ ու կը հիմնաւորէ իրենց մանկական մտածողութիւնը:

«Մենք ի՞նչ կրնանք տալ Ֆրանսա կամ Ամերիկա մեծցող հայ պատանեկութեան՝ իրենց անցեալի մասին: Ողբաւոծով գրուած պատմութիւնները աւելի քան անպատճառ են (նոյնիսկ վէնասակար): Բարեբախտաբար մենք ունինք ազգագրական աքանչելի նիւթեր: Ա-նոնց թագն ու պսակն է՝ մեր Ազգային Մեծ Դիւցազնավէպը, «Սասմանց Տուն»:

«Կարդացած եմ թէ՛ մեր «Սասմանց Տուն»ը եւ թէ՛ հնդիկ, պարսիկ եւ արաբ դիւցազներգութիւնները: Եւ՝ առանց ցեղային նախապաշարման՝ համոզուած եմ որ մեր Ազգային Դիւցազնավէպը թէ՛ դրագիտական ստեղծագործութեան եւ թէ՛ պատմական հետաքրքրու-

թեան տեսակէտէն ետ չի՛ մնար մէս աղգերու դիւցազներգութիւններէն »:

* * *

Կ՚ուզէ մեղադրեն, կ՚ուզէ չմեղադրեն..., — մարդ ի՛նչպէս կը սիրահարի գեղեցիկ աղջկան մը՝ այնպէս ալ ես սիրահար կորած եմ մեր չնաչխարհիկ ժողովրդական Դիւցազնավէպին...:

Աւելի՛ն նոյնիսկ, եւ այս՝ փորձառաբար. — Ինչպէս որ յարմարդոյն զոյգ մը, — էրիկ ու կնիկ —, իրենց ամուսնական կենակցութեան ընթացքին ամեն օր քիչ մ՚աւելի խոր ու գիտակից թափով կը սիրեն իրար, կը սիրահարին իրարու՝ օրէօր աւելի՛ աճող փոխադարձ սիրով մը, — ես ալ՝ մեր Վէպին հետ երեսնամեայ անընդհատ ապրումիս ընթացքին՝ ամեն օր քիչ մ՚աւելի սիրահարած եմ անոր: Չի Վէպն ինքն ալ, ամեն օր, նո՛ր դաշճ մը բացեր է իմ սիրահար հոգիիս առաջ: Ամեն օր նոր գգուանքի անկիւն մը պարզեր է՝ իմ պաշտող աչքերուս...:

Իմ եւ Մեր Վէպին սիրահարութիւնը՝ այդ տեսակն է ահա..., — բազմամեայ, խորունկ ու փոխադարձ:

Կարդացէ՛ք, նորէ՛ն կարդացէք Մեր Ազգի Դիւցազնավէպը, — Սասմանց Տուն, ՍԱՍՈՒՆԱԿԱՆիս մէջ հաւաքուցած —, ու դո՛ւք ալ պիտի սիրահարիք Մեր Վէպին: Ան ձեզի՛ ալ պիտի բանայ ծալքերը՝ իր բոլոր թովիչ գգուանքներուն..., — դարերու ակներէն բխած:

ՍԱՍՈՒՆԱԿԱՆ-իս խմբագրումը եղաւ ինձ համար տաժանելի աշխատանք: Այն պարզ պատճառով որ՝ դործին գիտական պահանջներուն համաձայն տրւեաւներ չունէի:

Երբ առաջին անգամ գաղափարն ունեցայ կազմելու Մեր Վէպին ամբողջական շէնքը, առջեւս գտայ փուփոխակներու անհուն քանակն ու խառնակութիւնները: Առ հասարակ անխնամ դրի առնուած ըլլալու պարագան: Տողատումի կամ համարներու եւ անունացանկերու պակասը: Ճիւղաղրոյգ ճիւղաղրոյգ չփոթումներ, եւ սխալանցումներ: Բնիկ բարբառին մէջ խառնուած խորթ ասոյթիւններ: Տպագրական անխնամութենէ առաջ եկած եղջերուաքաղ բառեր (մանաւանդ Լալայեանի՝ Վանայ բարբառով որակուած անկապակից պատումը *), եւ անթիւ ուրիշ կնճիռներ: Դիւցազներգական ոճի ու ընդունի աղքատութիւն՝ զրեթէ բոլոր տպուած փուփոխակներուն մէջ...: Եւ իմ դրի առածներուն՝ տարաբախտաբար անտիպ մնացած ըլլալու պարագան: — Այս ամեն անյաղթելի դժուարութիւններուն առաջ կեցած՝ առաջին անգամ ես խորհեցայ մեր Վէպին լաւագոյն մասերուն ծաղկաքաղովը կազմել գիրքը:

Այդ պարագային՝ անշուշտ առանց Աղբիւրները յիշելու՝ քերթուածին ամեն մէկ տողին դէմ:

---

*) Այս մասին՝ գործիս երկրորդ Հատորովը:

1907-էն ի վեր խմբատրած, ծանօթագրած հարիւրատոր Քերթիկներս աչքէ անցուցի, պատրաստեցի առաջին սեւագիրը մը: Փոփոխակներուն վրայ նայելով, բաղդատելով՝ սրբագրեցի ու կրկին եւ կրկին փոփոխումներ ըրի, մաքուրի քաշեցի, ու նորէն վերհսումներու պէտք տեսայ՝ ամեն անգամ որ խմբագրումիս առաջացման ընթացքին՝ նոր մասեր կը դտնէի այս կամ այն պատումին մէջ տարատունկ. — այսինքն՝ Ա. Ճիւղին պատկանող կտոր մը՝ Բ.-ին, կամ Գ.-ին ու Ե.-ին մէջ յիշուած, եւ փոխադարձաբար:

Առաջին խմբագրումիս մէջօգին նկատեցի որ՝ փոփոխակները մեծ մասով անխնամ դրի առնուած ըլլալուն հակառակ, ամեն մէկի իւր բնագրին մէջ, կամ իր տեղը, անպէտ կամ աւելորդ երեւցած կտոր մը, ձեւ մը, դարձուածք մը, նոյնիսկ բառ մը, ձայնարկութեան ձեւիկ մը՝ իրենց անփոխարինելի արժէքն ու տեղն ունէին՝ վերակազմուելիք չէնքին լրացման աշխատանքին մէջ, երբ ամեն մէկ կտորը՝ ճի՛շդ իրեն յատուկ տեղը դրուէր: Նման՝ պեղումներէ հանուած յարդուփշուր արձանի մը, կամ որմաքանդակի մը եւ մեհենագիր արձանագրութեան մը: Անոնց ամեն մէկ կտորտուած բեկորը քով-քովի բերելէ յետո՛յ է որ մէջտեղ կ'ելնէ արուեստին լրիւ դիմագիծը: Մէկ կտոր մը պակսի՝ արձանը թերի կը մնայ:

Աշխատանքիս առաջին մաքուր օրինակին կէսը հասած, շուրջ 500 ձեռագիր մէջտակ էջ (մինչեւ Թլոլ-Դաւիթի՝ կռիւի երթալը), արդէն տաղտկացուցած, տեսայ որ դոհացուցիչ չէր այդ ձեւը: — Պէտք էր վերակազմել վէպը՝ իր բոլոր մանրամասնութիւններուն մէջ, եւ յիշել Աղբիւրները՝ ամեն մէկ տողին դէմ, տող առ տող, նոյնիսկ բառ առ բառ, որոշ կարգով: —

Այս անհրաժեշտութեան առջեւ՝ կէս ճամբան կեցած, բոլոր կորովս դրի կամքիս հետ ու՝ կէսէն անդին դէպ վերջը՝ շարունակեցի խմբագրումս այդ մեթոտով: Ձափական տողերս կազմեցի՝ փոփոխակներուն ամեն մէկ էջին, հատուածին եւ ամենափոքր զանակներուն խղճամիտ դասաւորումովը, եւ Աղբիւրներուն բառառբառ, տողատող յիշատակումովը: Այս անգամ՝ ամենափոքր զանակն՝ իր տեղը գտաւ ու դարձաւ մեծարժէք, անփոխարինելի: Իսկ աղբիւրները՝ ապացոյց կուտային թէ՝ այսինչ բառը, այսինչ խօսքը, այսինչ դարձուածքը՝ այս կամ այն փոփոխակին այսինչ էջէն կամ համարէն առնուած է, խմբագրողին — Ձիթունիին — ստեղծածը չէ՛: Անշուշտ որ՝ խմբագրողը իրմէ՛ ալ՝ անհրաժեշտաբար՝ տողեր, խօսքեր ու դարձուածքներ պիտի տար, քերթուածին կառոյցին մէջ, մէկ ծայրէն միւսը: Այդ կտորները՝ Աղբիւրներու կարգին ցուցուցի Ձ. սկզբնատառով:

Փոփոխակներէն եւ ո՛չ մէկը, — բացի իմ ձեռագիր չորս պատումները —, չունենալով դէմացանկ, անուանացանկ, ծանօթագրումներ եւ բառթերթ, ՍԱՄՈՒՆԱԿԱՆԻս խմբագրումի ընթացքին երբ հարկ ըլլար վերտառել բառ մը, անուն մը, հատուած մը՝ ինծի կը

մնար ապաւինիլ մխիթարիչ յիշողութեանս: Բարեբախտաբար՝ այդ կողմէն՝ Բնութիւնը զիս օժտած է մեծագոյն չափով մը: Միայն իմ կազմած անտիպ փուխրախակներն էին (ՁԿ., ՁՍ., ՁՎ. = Ձիթունի՝ Կարկառի՝ զոյգ փուխրախակ, Ձիթունի՝ Սպարկերտի եւ Վանայ փուխրախակները) որ կ'ընձեռէին ինծի ամեն դիւրութիւն: Իմ բնագրերուս մէջ՝ բառ մը, անուն մը, ասացք մը կը գտնէի բոպէապէս, չնորհիւ իմ կազմած համարատոր, գիտական եւ լրիւ ցանկերուն: Թողունք որ իմ գրի առածներս (300 էջ բնագիր)՝ ես գրեթէ գոց գիտեմ: Իսկ տպուածներէն ալ չատերուն՝ ո՛ր կտորը ո՛ր էջին վրայ գտնուիլը՝ մոքով գիտէի գրեթէ անվրէպ: Գաւառաբարբառները՝ ինձ համար նոյնչափ սահուն Հայերէն են՝ որչափ գրաբարն ու երկու աշխարհաբարները (Արեւմտեան եւ Արեւելեան): Այս կողմէն ալ՝ «կենդանի աղբիւրից խմած» եղողի ծանօթութիւններս չատ նպաստեցին վերականգնելու՝ վրիպակաւոր կամ չբացատրուած մասերը՝ այս կամ այն փուխրախակին:

Ի՞նչպէս կազմել պէտք էր, եւ ի՞նչպէս կազմեցի: —

Պէտք էր ունենալ Սասմանց Վէպին իւրաքանչիւր փուխրախակէն՝ երեքական օրինակ: Երկուքը (տպուած էջերուն քերումով) կտրելու-դասաւորելու համար: Մէկ օրինակը՝ անեղծ՝ կտրածներուն քովիկը, աչքի առաջ ունենալու համար: Այս կերպով մխայն կարելի կ'ըլլար չփախնդել ոչ մէկ տող, ոչ մէկ բառ, անկապ ու խառն փուխրախակներու բիւրաւոր տողերէն:

Անկարելի էր գտնել այդ սպառած գիրքերէն: Եթէ գտնուէր անդամ՝ դարձեալ նպատակի պիտի չծառայէր ա՛յնչափ՝ որչափով ծառայեց իմ գործադրած կերպը: — Պէտքը՝ դիւտին մայրն է: Ես գտայ միջոցը, ապերախտ ու դժնդակ անչուշտ, բայց անվրէպ: — Աշխատանքիս օրական ու շաբաթական մտամիտի ժամերուս համեմատ, հատուած առ հատուած ընդօրինակեցի փուխրախակները մէկիկ-մէկիկ՝ ձեռաչափ թերթերու մէկ երեսին վրայ: Կարգով չարեցի տախտակի մը վրայ ամրացուած խաւաքարտին երեսը: Ձախ կողմս՝ այդ չարժական թերթերը (փիշա), աջ կողմս՝ փուխրախակներուն դիրքերը (որոնցմէ ունէի մէկմէկ օրինակ, բացի Երեւանի «Սասմայ Ծռեր»էն՝ զոր ունեցայ չատ վերջը), եւ իմ փուխրախակներուս ձեռագրերը: Այս ամենը՝ մեծ սեղանի մը վրայ տարածուած:

Հատուած առ հատուած իմ բազդրելու չափաբերելու կարգն է: Ի՞նչ կ'ընեմ. — Երեսնեակ մը թերթիկներուն համապատասխան տողերը՝ կը ծծեմ աչքով, կը բազդատեմ մտքով, ու համապրելով՝ կը գրեմ, ճերթուածին չափերուն համաձայն՝ առաջին բառն ու ոտքը, ապա երկրորդն ու յաջորդները:

Եւ այսպէս հատուածէ հատուած, էջէ էջ, ճիւղէ ճիւղ՝ մինչեւ վերջը: Ու տող առ տող՝ բառաշարքին համաձայն՝ Աղբիւրները դնելով ձախ կողմի սիւնակին մէջ, աջէն դէպ ձախ:

Գարդուած այդ պայմաններուն մէջ, վերջնական կարծուած ձեւով, առաջ տարաւ ՍԱՄՈՒՆԱԿԱՆ-ին տաղաչափութիւնը՝ մինչեւ վերջին Մհէրի ճիւղին աւարտը: Եւ այս անգամ վերադարձաւ աշխատանքին առաջին կէսին վրայ: — «Մանասար եւ Բաղդասար»ի ճիւղէն սկսած ամբողջովին եւ նոր խմբագրեցի՝ Աղբիւրներուն յիշատակութիւնը եւ տող առ տող բնագիրներուն հետեւելու մեթոտով: Դարձեալ տասնապատիկ աւելի դժուարացաւ, դի այս անգամ՝ աչքիս առաջ ունեցայ նաեւ Երեւանի մէջ տպուած «Սասմայ Ծռեր»ու Ա. Հատորը, որուն բաղմաթիւ նոր դրի առնուած պատումները՝ ուրիշ նորութիւններ կը բերէին ՍԱՄՈՒՆԱԿԱՆ-ին չէնքին:

Անկէ առաջ, մէյ մը, փարիզի Նուպարեան Մատենադարանին մէջ, հապճեպով աչքէ անցուցած եւ քաղուածներ ըրած էի: Ու քիչ հաքը, բարեկամէ մը լինդի փոխ տրուած Հատորէն՝ ժամերուս ներածին չափ օգտուած էի մանաւանդ: Բայց բաւ չէի սեպած: Ճիգ ըրի՝ Հատորն ունեցայ եւ անոր նորադրյն պատումներն ալ կրկտեցի տող առ տող, 1941-ի աշնան: Միեւնոյն առեն մաքուրի կը քաշէի՝ տպագրան յանձնելի ձեւի մը մէջ:

Կը դնեմ հոս մէկ-երկու էջ՝ Աղբիւրներով կազմած առաջին մաքուր ձեռագրիս: —

1. (ՍԱՄՈՒՆԱԿԱՆ՝ Հատ. 1)

Հ· 403 — Ո՛ւր երթաիք՝ դառնաիք՝
2 (կ· 1) «Ողորմի»ն պիտի տաիք,
ճ·68·80,2կ·390Ա·*) = Հազա՛ր «Ողորմի»...,
Հ·19,403,խ·1,44,51 Մեր Սասունցց-Տաո Զո՛ղ-Սաճասարի՛ն,
լ· 61, Ա· 3, կ· 1 = Զո՛ղ-Սաճասարին,
ե·9,891,968,475,529,607 — Որ Դու Սաճասարն ե՛ս...,
2. = «Ողորմի» տըւէք..., Հա՛զար «Ողորմի»...:
2 (ե· 725)
2 (Հ· 403, կ· 1)

2. (ՍԱՄՈՒՆԱԿԱՆ՝ Հատ. 1)

2 (կ· 1), Հ· 403 — Ո՛ւր երթաիք՝ դառնաիք՝
2 (կ· 1) [«Ողորմի» տաիք...,
ճ·68,80,136,2կ·390,Ա· = Հազա՛ր «Ողորմի»...,
կ·1,խ·1,44,51,Ա·3

*) Տե՛ս նել յաջորդ երեսը:

Լ·61,Հ·19,403,Ե·9·
475,529,607,725,891·
Զ (Խ·1,51,Ե·9,Ը·80
Զ (Հ·19,403)
Հ· 403
Զ (Ե·725)
Զ (Ը· 80)

Ս· 137, ԶԿ· 56
Ե· 941, Կ· 105
Կ·2,Լ·6,12,ԶՍ·30
Ը· 63, Հ· 5, 405
Ե· 941, Լ· 63
Կ·2,Ը·63,ԶՍ·30
Ե·941, Լ·63, Հ·5
ԶՍ·30,ԶԿ·56,Ե·941
Ա·48,Ը·13,63,Ս·137
Հ·5,405,Կ·12,105
Լ· 7, 63

Տաճ մեր Սասմանց-Տաճ Թը՛լոլ-Դաւիթ-ի՛ն,
= Թա՛ղաւ-Դաւիթին,

— Որ Դու Դաւիթն է՛ս···,
Որ Անիկ՝ Դաւիթ-Մըհէրի որդին է՛ր···,

= Ալ՝ ա՛, Դաւիթ-Մհէրի որդին է՛ր:

3· (ՍԱՍՈՒՆԱԿԱՆ՝ Հատ·25)

Մընա՛ց, Անոր ժամանակը երբ հասաւ, —
Ինը ամիս, ինն օր, ինը ժամ, ինը՛ րոպէ՝ լըրացաւ՝
Աստուած տըւաւ, — Թագաւորի Դուստըր
[Լուսիկ-Թագուհին՝

Բերնէ՛ն մեկնաւ···, ծընաւ երկու
[Լաճ-Տըղայ, —

Մէկը լրիւ, մէկ՝ կիսատ···:

*) ԶԿ = Զիթունի՝ կարկառի փոխկ· հմր· 56: Ս = Սրուանձտեան՝ էջ 137: Կ = Կանայեան: Ե = Երեւանի «Սասմայ Մոնր»: ԶՍ = Զիթ·՝ Սպարկերտի փոխոխակ: Լ = Լալայեան: Հ = Հայկունի: Ը = Ըռվսէփեան: Ա = Արեղեան (Արտաշէս): Խ = Խալաթեան: Զ = Զիթունի՝ խմբագրած տեղն կարեւոր նկատած:

Աղբիւրները՝ այսպէս ձախ կողմի լուսանցքին մէջ՝ ամենամէկ տողին դէմ ցուցնելու ձեւով, ձեռագիր գրութիւնով եթէ քիչ թէ շատ կարելի դարձուցեր էի, բայց տպագրութեան յանձնելու կէտին հասած, եւ՝ ՍԱՍՈՒՆԱԿԱՆԷս անմիջապէս առաջ՝ « Բի՛ւր Ակ···, Հազա՛ր Ակ··· » նոր դիրքիս տպագրական փորձերը անձամբ կատարելուս ընթացքին՝ յայտնուեցան նոր դժուարութիւններ, — մասնագիտական այս անգամ, եւ՝ պատերազմի: — Պատերազմի՝ դի տպագրական անհրաժեշտ պիտոյքներ, տառեր, թուղթ, թել, եւն·, անկարելի էր գտնել, կամ նորեր բերել տալ Ամերիկայէն (տռզաշարի մասին է խօսքը): Մանագիտական՝ որուվհետեւ ՍԱՍՈՒՆԱԿԱՆիս Աղբիւրներուն՝ ամենամէկ տողի ձախ կողմը յիշատակելու կերպը՝ դրեթէ անկարելի կը դարձնէր տպագրումը:

Տուածս մէկ-երկու հատուածներուն օրինակէն կը տեսնէք: — Տողեր կան որ՝ յիշուած են միայն մէկ փոփոխակէ· տողեր կան որ

երկու, երեք· *տողեր կան՝ տասնեակ՞ վոխոխականերէ յիշուած: Շատ ու չատ հիմնական անցքեր՝ զոր յիշած են զրեթէ բոլո՛ր պատումներ՝ երկար համրիչի ձեւ կուտային նուազ եւ նուազ շարուած Աղբիւրներուն՝ անոնց յոկ սկզբնատառերուն եւ էջերուն անդամ: Հարկ պիտի ըլլար՝ տալ կա՛մ էջերուն երկայնքը լայնք ընելով, կա՛մ աղբիւրներով ծանրաբեռն տողերուն յաջորդող տողերը՝ մէկ-երկու դիծ աւելի վար քշել: Մէկ կամ միւս կերպով՝ անհաճոյ բացատներ կը կազմուէին տողէ տող, եւ թուղթի մախսումը՝ ներկայ պատերազմի սղմումներուն հետ չէր հաշտուեր երբեք:*

Ի՞նչպէս ընել:

Մանաւանդ որ՝ Աղբիւրներուն տող առ տող յիշատակումը՝ գիտնական տշխարհին համար եւ գործին լրջութեան տեսակէտէն եթէ անհրաժեշտ էր, միւս կողմէ՝ տառրէշի ծանօթութիւններուն մէջացած՝ ա՛յնչափ կը խճողէր էւրաքանչիւր էջը որ, այլեւս ժողովրդական ընթերցումի նպատակ ըլլալէ կը հեռանար: Մինչդեռ, ամեն բանէ առաջ, իմ նպատակս եղած է՝ գրել ՍԱՍՈՒՆԱԿԱՆը՝ ժողովուրդին համար:

Հարկ էր ուրեմն՝ անջատել, որոշ չափի մը մէջ, գիտականը՝ ժողովրդականէն, դիւրացնելով տպագրումի գործը:

Այս անդամ՝ լինճ կը մնար միայն մէկ միջոց· — կանխաւ ծրագրածս եւ Ա.է ԺԹ· տետրակներու մէջ ձեռագիր մաքուր գրած օրինակը, — բնագիր քերթուածը համարներու վերածուած, ձախ կողմ Աղբիւրները, վերջը՝ վոխոխականերու եւ գրաւոր-անգիր բաղդատութիւններու լայն Մանօթագրութիւններով բաժինը, ծանկեր, եւն· — բաժնել երկու հատորի: Ա· Հատորով տալ քերթուածը՝ թուակարգով Հատուածներու վերածուած· — ինչպէս է ներկայ տպուած ձեւը —, Բ· Հատորին վերապահելով թուադրեալ Հատուածներուն համաձայն տրուելիք Բաղդատութիւններուն ու Մանօթագրութեան բաժինները: Այս կերպով՝ կարելի է ըսել թէ՝ Ա· Հատորը կը կազմէ Ժողովրդական Օրինակը, Բ· Հատորը՝ Մանաւդիտական: Թէեւ Մանաւդիտականին Մանօթագրութեանց մէջ է որ կը պարզուի մեր տարածուն Դիւցազնավէպը՝ իր աշխատն ու վերին աստիճանի հետաքրքրական դիմադիծերովը: Այնպէս որ մէկ բաժինն առանց միւսին՝ թերի կը մնայ անկասկած:

Այդ վերջնական ձեւին յանգելէ յետոյ՝ աշխատանքս անդամ մըն ալ ծանրացաւ: Ստիպուեցայ նորէ՛ն (երրո՛րդ անգամ) ընդօրինակել ամբողջ ձեռագիրս, թուագրեալ Հատուածներու դրութեան վերածելու համար, որպէսզի կարելի ըլլայ դնել Աղբիւրները՝ ամեն մէկ Հատուածէ խորագրին տակ, վակագծէ մէջ, իրենց՝ գրի առնողներուն՝ անուան սկզբնատառերովը, — տպուածները՝ վոխոխականերուն էջերովը, իմ չորս ձեռագիր-վոխոխակաները՝ համարներով: Տեսնել՝ Ը·, Համառօտագրութիւնները, եւ 12· Խմբագրական Մանրամասնութիւններ՝ ԼԲ—ԼԶ·:

կարճ խօսքով, — ՍԱՍՈՒՆԱԿԱՆԻս ծրագրումն ու կազմաւորումը, իր անհամար մանր ու մեծ յարակից աշխատանքներովը, 1907-էն մինչեւ 1939՝ ինձմէ խլած է երեսուներկու տարի: Իսկ միայն չափաբերեալ քերթուածին խմբագրումը, — քաղ, համադրում, չափարերում, սեւագրում, երկիցս՝ երբեմն երիցս մաքուրի առնելը, հատուածներու վերածելը, տպագրական փորձերը —, չուրջ երեք տարի տաժանելի աշխատանք արժած է ինձի, առանց հաշուելու Բ. Հատորին նոր տքնութիւնները:

ՍԱՍՈՒՆԱԿԱՆԻս արտակարգ տաժանելի բայց նոյն ատեն անօրինակ հրապոյրներով ձգիչ խմբագրումի ընթացքին՝ ինքզինքս սըրտապնդած եմ միշտ այն համոզումով որ ամէն գործ մըն է որ կը գրեմ:

Այս համոզումն ու հաւատը մէջս՝ գիշերը ցերեկին խառնած, քուն, հանգիստ, վայելք՝ աչքիս չեկան: Միայն կազմաւորել, խմբել, խմբագրել, քաղել-մաղել, ընդելուզել մեր Գոհար-Վէպը՝ իր զմայլելի պրիսմակներուն մէջ, եւ օր առաջ մէկտեղ դնելու աշխատանքները եղան իմ կեանքիս վերջի ապրումները, — վաթսունամեայ տարիքիս մէջ:

Տարիքիս վախէն՝ կիրարկեցի նաեւ այս ձեւը: — 1939-1942-ի արհաւիրքից պատերազմին ամենօրեայ անակնկալներուն ենթակայ՝ ես մէկ կողմէն խմբագրեցի, մէկ կողմէն խնամով մաքուրի առի, սեւագիրը զա՛տ տեղ պահելով, մաքուր օրինակները զատ: Ամեն րոպէ մխքս կրծող մտածումը այն էր որ՝ կրնայի մէկ օրէն միւսը զոհ երթալ անակնկալներու, կամ քնական մահով իյնալ մեռնիլ, եւ աշխատանքս կիսատ մնար. դնէի աւարտած, մաքուրի առնուած մասերը կրնային օգտագործուիլ, վերապրող սերունդին՝ ի վայելումն:

Աշխատեցայ յարատեւօրէն, խնամով ու պաշտումի սիրով: — Եթէ նուազագոյն չափով յաջողած եմ ՍԱՍՈՒՆԱԿԱՆԻս կերտումի գործին մէջ, այդ կը պարտիմ մեծապէս՝ իմ երկարամեայ, ընդարձակ ու խոր ծանօթութեանս՝ ժողովրդագրական աշխատանքին (ֆոլքլօրի) մէջ, զոր՝ ի սպաս դրած եմ մեր Ազգային անծայրածիր մե՛ծ վէպն զգալու եւ բացատրելու դերազանցապէս վսեմ գործին: —

12· Խմբագրական Մաթրամառնութիւններ

Ա. Ամբողջ Վէպի ընթացքին, փուխրախներուն մէջ երեւցած խառն ու չփոթ պատմուածքներու եւ թեր ու դէմ միջադէպերու քառսէն ելնելու միակ տրամաբանական գիծը՝ ինձ համար՝ եղած է հետեւիլ դէպքերուն քնական զարդացման: Որով միայն յաջողած եմ խմբագրել՝ դէպքէ-դէպք՝ բոլոր կարեւոր անցքերը՝ այնպէս ինչպէս քնական է որ եղած ըլլան:

Բ. Մեր սքանչելի Ազգային Դիւցազնաւէպը՝ իրեն վայել դիւ-

ցաղնեւրդական ոճով ու հիւսուածքով տալու աշխատանքին մէջ՝ իմ ճիդը եղած է դնել ամեն բառ՝ ի՛ր ճիշդ տեղը· ամեն շեշտ՝ իր տեղը· ամեն պատկեր՝ ի՛ր տեղը· ամեն պատում՝ ի՛ր չափական գնացքը: — Եւ ամենէքը մէկ՝ միայն եւ միայն իրար լրացնող մեր բազմահարուստ փոփոխականերուն եւ ժողովրդական հուժկո՛ւ բարբառին՝ հարազատ աղբիւրներուն հետ խլեցնել-կարկաչել տալով: Զարդարանքի պէտք չկայ: Վէպն ինքնին՝ «իր ջուրովը»՝ անոման գոհար մըն է: —

— Ես եղայ լոկ՝ Սասմանց Տունի գոհարադրծ Ձիթունին. — Ամեն մէկ «քար»՝ ի՛ր տեղ դըրի՝ ՍԱՍՈՒՆԱԿԱՆ մեծ շէնքին:

Գ. Երկիս խմբագրումին մէջ՝ չանացած եմ որ պատմուածք մը մուխ չմնայ· տող մը բռնաղբօսիկ չթուի· քերթուածը չկաղայ· ամբողջ հիւսուածքն ու հերոսներուն դէմ-դէմի խօսակցութիւնները՝ հոսին այնպէ՛ս վճիտ եւ այնպիսի՛ թափով՝ ինչպէս անդրանիկ դիւցազներուն՝ Սանասար-Բաղդասարի՝ դառած «բարակ լուլէ առուն», եւ անոր երկնաբո՛ւխ Ակին վրայ իրենց չինած-սուկած Մասո՛ւմ Տունը· — պարզ, անպաճոյճ՝ բայց տոկուն, դարերո՛ւ հետ ապրող:

Դ. Ջանքս եղած է՝ դրել դիւցազնավիպական սահուն եւ ուժեղ բարբառով: Որչափ կարելի է դիւր, քաղցրահունչ, ներդաշնակ, առանց բաղաձայններու խժալուր կուտակման, կամ անտեղի ը-երու կաղացնող անթացուպերուն: Ոչ մէկ բռնաղբօսիկ տող՝ յանգի քերթուս համար, ինչպէս են՝ Ց. Թիրեաքեանի «Շահնամակը», կամ Հ. Արսէն Ղազիկեանի «Նիսկելունդներուն երգը» (երկուքն ալ թարգմանութիւն): Առաջինը՝ իր հմտալից Յառաջաբանին մէջ IV. եւ V. դծած ուղիէն չեղած, երկրորդին՝ անորակելի թարգմանութիւն մը:—

— «Գայմայէ՛, դու անոր աղջիկն ա՛ր քեզի,
Նորա գահ ու թագ ու դէղ դու վատք է գի՛»·
(Էջ 30, հմր· 727—8)

— «Մըխեցաւ խոր ի փոր դիրուկ գառան նետ,
Մըխըրճեցաւ խըրեցաւ խոր նա անհետ»·
(Էջ 45, հմր· 1097—8):

Հայերէ՞ն է, քերթուա՞ծ է՝ թէ՞ կոշկոռուտ, — չես գիտեր:

Ես այդպէս չեմ հասկնար քերթուածը: Առաւել չափով՝ դիւցազներդական ու ժողովրդական քերթուածը: Երգը՝ աղբերակ է· հոսուն ջրի պէս պէտք է գլորի, սահի, կարկաչէ: Ի՞նչ ըրած եմ ես՝ Մեր Ժողովրդական Դիւցազնական Վէպին երգը յօրինելու ընթացքին: — Ըստ ժողովրդի ասութեան, —

— Քարը քաղեր, աւազ մաղեր՝ ըստրկեր եմ մէկ առ մէկ,
Քառասնեակ մը փոփոխակի կոշկոռուտէն դէպի վեր՝
Մեծ տաժանքով ՍԱՍՈՒՆԱԿԱՆն եմ կազմեր:

Ե. Ինամով ու դրեթէ անփոփոխ՝ մէջ բերած չարահիւսած եմ՝

պատումներուն ժողովրդական, հարազատ-հայերեն բոլոր ինքնատիպ ձեւերն, ասութիւններն ու բառերը: Այնպէս որ, ՍԱՄՈՒՆԱԿԱՆը կը բովանդակէ քառնեակ մը պատումներու մէջ գրի առնուած նոյնչափ գաւառական բարբառները, բառերը, ոճերն ու ասութիւնները: Որով կը կազմէ գրեթէ բոլոր հայ բնիկ բարբառներուն ուղնուծուծը, լեզուական ընտիր գանձերն ու ակերը, — դիւցազներգական բարձրութիւններու վրայ, ու ցեղին դարաւոր խրոխտութիւնները վրնջելով, հրեղէն Քուռկիկ-Ջալալիին պէս...:

Ակնաղբիւրն է ուրեմն, — Անմահակա՞ն կաթնաղբիւրը, կենդանի՛ եւ վըժա՛ժ Ջուրը՝ Հայկեան Մեծասքանչ Լեզուին:

Զ. Ամբողջ փոխոխակներուն մէջ՝ Սպարկերտի պատումիս լեզուն՝ իբր դիւցազներգական լեզու՝ գերազանց ըլլալով, ՍԱՄՈՒՆԱԿԱՆիս մէջ ջանք թափած եմ՝ միւս պատումներէն առնուած մասերն ալ Սպարկերտի բարբառին. վեհութեան եւ ուժգնութեան վրայ ձեւաւորել:

Է. Ժողովրդի կենդանի լեզուին ամեն մէկ երանդին հաւատարիմ եւ ուշադիր, եւ առանց մեղանչելու քերթողական օրէնքներուն դէմ, — նախադասութիւնները չարած եմ իրենց բնական — այսինքն տրամաբանական — կարգովը, այնպէս ինչպէս կը կատարուի գործողութիւնը՝ խօսքին մէջ, սկսած կէտէն դէպի արարքն ու արդիւնքը: Օրինակ. — «Ձեռ տարաւ գօտին՝ որ դանակ հանէր»՝ խօսքին մէջ, մեր միտքը կը հետեւի բնական չարժումին. — ձեռքին չարժումը՝ դէպի գօտին. գօտիին մէջ՝ դանակին կոթը չօշափել, բռնելը եւ դուրս հանելը: Այսպէս՝ ամեն խօսքի համար:

Ը. Քերթողութեան մէջ՝ կարճ բառերն են նախընտրելի: Եւ այս՝ չափի, յանգի ու սահունութեան երթեակ տեսակէտներով: Մեր լեզուն՝ հակառակ դարաւոր յղկումներու եւ սղումներու՝ երկար, բազմավանկ բառեր շատ ունի: Այս կէտը՝ իրական արդելք մըն է քերթողին թռիչքներուն: Մղձաւանջ մը՝ որ անդրադէտ ժողովրդի համաստուն սղումներովը, չրջած տառերովը, յղկած ձեւերովը միայն կարելի է վանել: Ընթերցողն ինքը պիտի դատէ թէ ո՛րքան պէտքական եւ սահունութիւն կայ ժողովրդական ոճին մէջ:

Թ. Միեւնոյն տեսակէտով, ու չափական դրուածքի մարուելուն պէտքերուն տեղի տալով, — բնագրերուն մէջ երեւցած հինգ-վանկանի բառերը, անձի կամ տեղի անուններու, պարագային համեմատ կրճատելի եմ՝ չորս կամ երեք վանկի: Կամ՝ փոխարէնն՝ դրեր եմ համապօր ուրիշ կարճ ձեւը, անունին մէկ մասը միայն: Օրինակ՝ Մըսրայ-Մէլիք անունին տեղ՝ երբեմն միայն Մէլիք. Բաթմանայ-Բուղէն ըսելու փոխան՝ Բաթման-Բուղէն. Ճարբախար-Քամին անունին տեղ՝ Ճարբար-Քամին. Սանասարի տեղ՝ երբեմն Սան'սար. Բաղդասարի փոխանակ՝ Բաղ'սար. Քուռկիկ-Ջալալիին տեղ՝ Քուռկիկ-Ջալալ, կամ լոկ Քուռկիկ: — Ամենքն ալ ժողովրդի բարբառին սահ-

մանկէն դուրս չելլելու պայմանով:

ժ. Փոխոխակներուն մէջէն բաց թողած եմ ա՛յն հատուածները՝ որ դիւցազնավիպական չեն, այլ պարզ հէքիաթներու մասեր են, անհմուտ պատմողներէ չխոթուելեմ՝ Սասմանց Վէպին խառնուած:

ժԱ. Դիւցազնավէպի կալուածէն դուրս, կամ ճապաղ ու ոչ-անհրաժեշտ կրկնութիւններ (Օրնկ. 107, 110, 111)՝ զանց ըրած եմ, կամ համառօտ աւելի ուժեղ պատումներով հիւսած եմ:

ժԲ. Պատմուածքին մէջ՝ ստորակէտ, բութ, մէջակէտ, դիծ, դծիկ, ղոյղ-դիծ (=), չակերտ եւ նոյնիսկ վերջակէտ՝ չեն կասեցներ պրոյլին խաղացքը: Այդ կէտադրական նշանները, դրականօրէն նկատուած են իբր անհրաժեշտ: Ճաճախ տողավերջի մը ստորակէտէն, մէջակէտէն կամ վերջակէտէն յետոյ դրուած դիծը կը ցուցնէ թէ՝ խօսքը դեռ չէ՛ վերջացած, կը շարունակուի յաջորդ տող(եր)ովը:

Պէտք չէ՛ մոռնանք որ, դիւղացի անգրագէտ պատմիչներէն շատեր — օժտուածները —, առողանութեան աքանչելի վարպետներ են: Անձէ անձ, խօսքէ խօսք՝ կէտադրութեան կամ չակերտի ծանօթ չըլլալով եւ պէտք չղղալով, — դեռ՛ պէս իրար եռուէ կը հոսեցնեն կենդանի պատմուածքը: Դադարները, անոնց բերնին մէջ, կը եղանակաւորուին՝ նիւթին պահանջին համեմատ՝ ձայնի երեւոյթներով: Կարեւոր հանդրուանները կ'ղղացուին այն աեն՝ երբ նիւթը բոլորովին կը վոխուի:

ժԴ. Բերթողութեան մէջ՝ դրիչն ազատ է: Աւելի չափով իր իրաւունքն է պատչաճօրէն օգտագործել լեզուին բնական ճոխութիւնները՝ մանաւանդ պատչառաբանէս դիւցազնավէպի մէջ: Ահա թէ ինչո՛ւ ՍԱՍՈՒՆԱԿԱՆԻս մէջ ընդելուզեր եմ, տեղին համեմատ եւ ընտրողաբար, բառի, բայի եւ հոլովի այս կամ այն ձեւը, — տեսնել-տեսնալ, հնծնել-հնծնալ, այժ-ուժ, մխա-մխուա, տունէ-տան, քեզ-քեզի, ձեռք-ձեռքեր, ոտից-ոտաց-ոտքերուն, ա՛յ-է՛յ, կերթը-կերած, խմերխմած-խմուկ, թոյլ-թուլ, վրայ-վէր՛, թողուց-թողեց, աչքէն-աչու, երկինից-երկնուց-երկինքի-երկնի, ղատէն-ղատու-ղատնու, եւն., եւն.:

ժԴ. Տաղաչափութեան մէջ ներելի օրէնքով՝ այնտեղ ուր կարելի եղած չէ՛ դործածել բայի մը դրական ձեւը, դրած եմ ժողովրդական սղեալ ձեւովը, — ուստաւ՝ փոխան նստեցաւի, ուտաւ՝ նստեցան, կտրաւ՝ կտրեցաւ, մեկնաւ՝ մեկնեցաւ, եւն.: Մեղանչում չէ՛ այլեւրհաբարին դէմ, ոչ ալ դրեհկացում լեզուի: Գրաբարի մէջ քի՞չ են կրճատ ձեւերը, — Աբբէ՛ է 'ի սըմանէ. Մատո՛ ղ'աղաչանս, եւն.:

ժԵ. Զեռ, ձեռք, ձեռքեր, Ոտ, ոտք, ոտքեր, — դործածեր եմ իմաստի եւ լեզուի քաղցրութեան համեմատ: Այնտեղ ուր խօսքը մէկ ձեռքի, մէկ ոտքի մասին է՝ ձեռ, ոտ ձեւերը դործածեր եմ: Իսկ այնտեղ ուր խօսքը երկու ձեռքի, երկու ոտքի մասին է՝ դրեթէ եմ ձեռք, ոտք: Նոյն նաեւ երբ յաջորդ բառը բաղաձայնով կ'սկսի:

ԺԶ. Ջանացած եմ, առ հասարակ, յղկել բաղաձայններով խճող բառերը, դրելով աշխար՝ փոխանակ աշխարհի, սաիր՝ փոխանակ սանտրի, մաիր՝ փոխանակ մանտրի, եւն.:

ԺԷ. Մէյտ նախանձաւոր՝ լեզուի ներդաշնակութեանը, տողին համեմատ գործածելը եմ հոլովի, ածանցի կամ մակբայի այս կամ այն ձեւը, հոգ չէ թէ դրաբար, աշխարհաբար կամ գաւառական ըլլայ: Այսպէս, «երկը գոմշու կաշի» ըսած եմ բնաբարբառին պէս, փոխանակ «գոմշի կաշի» ըսելու, ուր քով-քովի երկու շի-շի ձայները խժալուր կը հնչեն: կամ «ձեռ գոցել» նախընտրած եմ՝ երկու ֆ-գ ձայներէն խուսափելով: Եւն., եւն.:

ԺԸ. Ըսաւ (կամ Ըսին) բայաձեւը, որ բնագրերուն մէջ ծայրէ ի ծայր գործածուած ամենազօր բայն է, եւ ես պիտի չփորձուէի փոփոխել —, տեղին համեմատ կը փոխարինէ դրեթէ ամեն բայ: Որով՝ Սահասարն ըսաւ, Մհէրն ըսաւ, Դաւիթն ըսաւ, Մարդիկն ըսին, եւն. խօսքերուն մէջ՝ ըսաւ ձեւովը կը հասկցուի, կ'իրարկուած հաւատացեալին համեմատ, — պատասխանեց, հարցուց, հրամայեց, խնդրեց, առարկեց, պնդեց, ընդմիջեց, սաստեց, ձայնեց, կանչեց, երդեց, ընդունեց, ցուցուց, ակնարկեց, մռլտաց, դուլեց, անիծեց, օրհնեց, հաւաստեց, հեգնեց, սահեցուց (խօսք մը), եւն., եւն. — բառդիրքին համրողջ բայերը:

ԺԹ. Այն դիրերը որ մակակէտ (՝) ունին ալջին, հասկնալի է որ չեն հնչուիր, բնիկին պէս: Այդ կերպով քերթուածին չափը ճիշդ կը մնայ: — « Ասի՝ ինձնէ ա՛լ աւելի արունք-աւեր պիտի ըլնէ»՝ արտասանելու է՝ «պիտի 'նէ», ոչ թէ պիտի ընէ»: Կարելի էր անշուշտ դրնել «պիտ' ընէ», բայց ախորժելի չ'է՛ ու կը չփոթուի «պիտ դընէ»ի հետ:

Ի. Ուշադրութիւն ☛՝ վանկերու կշռոյթին համար թծախրնդրօրէն կիրարկուած յենակ ը տառերուն: Այն տեղ ուր ը չ'է՛ դրուած՝ պէտք է հնչել իբր մէկ վանկ. — կ'զարնէ, կ'ջարդէ, կ'ծռէ, գնաց, գլուխ, վրայ: Մինչ ը ունեցող ձեւերը՝ երկու վանկի արժէք ունին, — կը զարնէ, կը ջարդէ, կը ծըռէ, գընաց, գըլուխ, վըրայ, է՛է՛, եւայլն:

ԻԱ. ՍԱՍՈՒՆԱԿԱՆԻս մէջ՝ տողերն անպատճառ յանդի բերելու պէտք չեմ տեսած: Սակայն յանդի դրելու իմ համոզումիս արձագանգը կուտայ Հ. Արսէն Բագրատունին՝ Մշակաճաճի մէջ (Ճոլքն. 15), — «Զանխայտնիք, աւելորդ կապանք եւ խոչընդոտն են քերթողին, եւ... բաղում վնասուց պատճառք, ոչ միայն հաւատարմութեան, այլեւ վսեմութեան եւ չարժողութեան տողից»:

ԻԲ. Տողերուն մէջ՝ չանացած եմ պահել բնագրերուն մէջ տիրող բնդհանուր չափը: Օրինակ. —

— Զուր դայ՝ Անոնց՝ խոտե՛րն ալ կըծան...:

— Ես Քու անուն ու համբաւը լըսեր եմ.
Քու նետէ՛ն եմ եկեր.
Ես Քո ո՛ւժը փորձեցի, —
Նայինք Դուն ի՛նչ մարդ էիր:

ԻԴ. Շեշտը (՛)՝ դրած եմ բառի ա՛յն վանկին վրայ՝ որ կը շեշտուի ժողովրդի խօսուն բարբառին մէջ, ոչ թէ պայմանադրօրէն դրբառոր լեզուին ծանօթ՝ կամ օրէնքներուն սխալ քերականուած ձեւերուն համաձայն: Ժողովրդի լեզուին մէջ, տեղին համեմատ, բային հրամայականը՝ շեշտ կ՛առնէ կամ չի՛ առներ ու կ՛փոխանցէ քովի բառին: Օրնէ. —

— Դի՛, դուն, — ըսաւ —, կեցիր այստե՛ղ ու դիտէ՛.
Այստեղ նըստէ՛, խա՛ղը դիտէ հետուէն:
— Մէկլիք կանչեց Հոլին դըլխէն, — Դաւի՛թ, դո՛ւրս եկ
[Հոլտունէն: Եան.:

ԻԴ. ՍԱՄՈՒՆԱԿԱՆԻս լեզուին համար դուցէ ըսուի՝ թէ ռամկաբանութիւններ չատ ունի: Ռամիկ ու դրանիկ բառերը՝ հիմա բարեբախտաբար՝ կորուսեր են իրենց հին միտքը: Անգիր-անդրագէտ մարդուն լեզուն ոչ նուազ մաքուր Հայերէն է: Նոյնիսկ աւելի՛ հարազատ է, թէեւ աղաւաղ: Այնպէս որ՝ բնագրերէն առնուած չատ դաւառականն բառեր՝ որ առաջին ակնարկով խորթ կրնան թուիլ եւ օտար կարծուիլ՝ իրենց խորքին մէջ Հայերէն են: Օրնէ. — թալել = թողել (ձգել, նետել). ուրկիլ = հակառակիլ. իրիշկալ, իրիշկել = երեսքալ, երեսքիլ. ըխել, 'խել, աիել = աչքել (նայիլ). պուտել = բռաել (ճմռել). չուր, չուրմ, չում = մինչեւ որ (մինչ՛ւ որ, մինչ՛ուր):

ԻԵ. Անծանօթ բառերուն բացատրութիւնը դրած եմ՝ ատորէն՝ ամեն անգամ որ գործածուած է միեւնոյն բառը՝ տասնեակ էջ հեռուս: Ընթերցողին դիւրութիւն մը: Ու մեծ մասին ստուգաբանական ձեւը դրած եմ վանգածի մէջ, օրնէ. — Դուր (դիւր), Սերսուր (սերսուրը), եւն., եւն.:

ԻԶ. ՍԱՄՈՒՆԱԿԱՆԻս, ինչպէս բոլոր ազգագրական ու դրական աշխատանքներուս մէջ, կիրարկած եմ հայ այբուբենը ա՛յն արժէքներով՝ որ դրաբարին, կովկասահայերէնին ու դաւառաբարբառին մէջ պահուած են, եւ ա՛յդ է ճշդագոյնը: Որով՝

— Դէն՝ հնչելու է dén, ո՛չ թէ թէն.
— Բարդի՝ bardi, ո՛չ փարթի.
— Գուրզ, Գորզ՝ gourz,gorz, ո՛չ fուրզ, fորզ.
— Բաղդասար՝ Baghdassar, ո՛չ Փաղթասար: Եան. եւն. եւն,:

ԻԷ. Գլխագրով դրած եմ՝ վէպին հերոսներուն անունին տեղ բռնող դերանուններըը կամ հոմանիշները, եւ առ հասարակ ատոնք թէ անբան էակի մը, վայրի մը, անշունչ առարկայի մ՛անուններըը: Այս կերպով Դիւցազնավէպին անձերն ու իրերը՝ մէ՛կ անգամէն ոգեւոր

դերակատարներու պէս կ'արձանանան մեր միտքին առաջ, կը դառնան դիւցազնավիպական ցայտուն խորհրդանշաններ: Ու մեր ուշադրութիւնն աւելի՛ կը դրաւեն այդպիսով: Գլխագրի դործածութիւնը, նաեւ, զերծ կը պահէ ընթերցողը կարդ մը չփոթութիւններէ: Օրինակ.—

— Դուն Բաղդասարն ես, ես ալ Սանասար:

Այստեղ ես էական բայի 2-րդ դէմքը չի՛ չփոթուիր ես տէրբայիին հետ, որ նոյն ատեն կը փոխարինէ Սանասար անունը, խօսողն ինքը:

— Հատիկը թափեց Անոնց դըլխէն վար,
Ու մէջը խառնեց Դանակ, Մատնի, Սանր:

Գլխագրովը աւելի շուտ կը հասկնանք որ Անոնց ըսելով՝ կ'ակնարկուի Մ.ին եւ Բ.ին: Ու անմիջապէս մեր աչքին կը դարնեն Հատիկին մէջ խառնուածները. — Դանակ, Մատնի եւ Սանր: Եւն., եւն:

Իբ. Օտար, մանաւանդ թուրք, արաբ, պարսիկ բառեր՝ անխըտնայ դուրս ձգած եմ ՍԱՍՈՒՆԱԿԱՆԷՆ: Մէկ-երկու տեղ միայն, հարկադրուած, կը մնան Աղա, Վէզիր, Դերվիշ բառեր: Թէեւ Վէզիրին ծագումը կրնայ հայ ըլլալ, թերեւս վէգ եւ վսեր բառերէն:

Իթ. Անդէպ ու խորթ տողադարձումներ չէք դտներ այս դործին մէջ: Այդ ձեւի հրէշային տողադարձութեան խառնարան է Հ. Արսէն Ղազիկեանի թարգմանած «Ընթերցուածներուն Երդը»: Օրինակներ՝ դրեթէ ամեն էջի վրայ:

Լ. Անձի կամ տեղի անուններու՝ վերցուցած եմ այն նախատիպ ձեւերով՝ որ փոփոխակներն ունին: Երբեմն՝ նայած մեծամասնութեան՝ միայն մէ՛կ ձեւով: Երբեմն, նաեւ քերթողական ճկունութեան սէրոյն, երկու ձեւով: Մերթ՝ թէ՛ մէկ եւ թէ՛ միւս ձեւով՝ տեղին համեմատ: —

Օրինակ. — Համոզ-Գորդիլ, կամ՝ Համոզ, կամ Գորդիլ: Զէնով-Օհան, կամ Զէնով-Օվան, Ճովան, Օհան կամ Օվան: Քուռկիկ-Ջալալին, Քուռկիկ-Ջալալ (քնադիրներէն ոմանց մէջ՝ Քուռկիկ-Ջալաք), կամ Քուռկիկ:

Լուսիկ-Թադուհի, Ծովի-Լուսիկ-Թադուհի:
Պալ-Աստղիկ, Աստղիկ, կամ Կումբիկ-Թադաւոր: Եւն., եւն.:

ԼԱ. Ինչպէս միշտ, ՍԱՍՈՒՆԱԿԱՆՆ ալ ես դրած եմ՝ աչքի առաջ ունենալով ժողովրդի մեծ զանգուածը: Գրած եմ կարելի եղածին չափ պարզ ու հասկնալի լեզուով: Ճարտասանութիւն ընկ՝ միտքս չ'է՛ անցած: Աւելի պարզ ու յստակ սիտի դարձնէի ՍԱՍՈՒՆԱԿԱՆԻՆ ոճն ու լեզուն՝ եթէ ժամանակ ունենայի՝ մամուլին յանձնելէ առաջ՝ կրկին ու կրկին կարդալու, վերհատումներ ընելու՝ ծայրէ ի ծայր: Ցաւանք թէ այդ աշխատանքը կարելի սիտի ըլլայ կատարել՝ եթէ դործս արժանանայ երկրորդ տպադրութեան: Այն ատեն թերեւս կարելիութիւն ունենամ նաեւ պատկերազարդելու ՍԱՍՈՒՆԱԿԱՆԸ:

Լ՛. Այբուբենները, այսինքն վոչխարկենները՝ իրենց գրի առնողներուն մականունին սկզբնատառովը յիշած եւ հատուածներուն տողերուն համընթաց չարած եմ: Անոնք իրարմէ տարբեր դիրերով կ՛սկսին ու երբեք չեն չփոթուիր: Այսպէս, — Աբեղեան = Ա.՝, Երեւան = Ե. (Երեւանի մէջ տպուած «Ասմունդ Տուրի», Ա. Հատոր), Լալայեան-Լեւոնեան = Լ.՝, Մալխասեան = Մ.՝, Կանայեան = Կ.՝, Հայկունի = Հ.՝, Ծովակեանեան = Ծ.՝, Զիթունի = Զ. (ԶԿ. = Զիթունի՝ Կարկառի բրբռվ.՝, ԶՍ. = Զիթունի՝ Սպարկերտի բրբռվ.՝, ԶՎ. = Զիթունի՝ Վանայ բրբռվ.), Սրուանձտեան = Ս.՝:

Լ՚Դ. Լոկ Զ-ով յիշուած մասերը՝ իմ կողմէ դրուած են, բնագրային ցուցմունքներու համաձայն, կա՛մ հատուածը պարզաբանելու մտքով, կա՛մ՝ բնագիրներուն մէջ նկատուած պակաս մը լրացնելու դիտումով, կա՛մ միտքին ուղղում մ՚ընելով ՍԱՄՈՒՆԱԿԱՆի խմբագրումի ընթացքին: Որով՝ յաճախ Զ. կ՚ընկերանայ բանահաւաքներուն անուան սկզբնատառերուն, — Զ.՝Լ.64, Ս.170, Զ., Զ.՝Ծ.122 եւն., առանց փակագծի կամ Զ(Լ.64), Զ(Ս.170), եւն.՝ միւսները փակագծի մէջ: Փակագծի մէջ դրուած պարագային՝ կը նշանակէ որ, ցուցուած վոչխարկը՝ ինչ մը տարբե՛ր ձեւով ունի պատմուածքը: Սակայ ալ՝ Զ.՝ բնագիրներուն ուղղութիւն տալէ յետոյ, տողերուն ոգքը չփոխարինելու համար աւելցուած, կրճատուած կամ վոխած մասերը կը ցուցնէ:

Լ՚Դ. Ամէն անգամ երբ հարկ էր Զ. դնել Ս.էն եւ Կ.էն (այսինքն Սրուանձտեանէն եւ Կանայեանէն) առաջ, ձախ կողմը, — դրած եմ աջ կողմը՝ որպէսզի ԶՍ.ի (ԶԹ.Սպրկրտ.ի) եւ ԶԿ.ի (ԶԹ.Կրկռ.ի) հետ չչփոթուի: Օրինակ., վոխանակ դեւտեղնելու Զ.՝ Ս.՝148 կամ Զ.Կ.121, — դրած եմ Ս.148՝Զ., կամ Կ.121՝Զ., եւն.:

Լ՚Ե. Փոխոխարինելէն ԶԿ., ԶՍ. եւ ԶՎ. (Զիթունի՝ Կարկառի, Սպարկերտի, Վանայ բրբռվ.) յիշուած թիւերը՝ ձեռագիրին համարները կը ցուցնեն: Միւսներուն՝ Ա., Ե., Լ., Մ., Կ., Հ., Ծ., Ս.՝ տպուած էջերը կը ցուցնեն:

Լ՚Զ. Աղբիւրները յիշատակելուն օգուտներէն մէկն ալ ա՛յն է որ՝ մէկ ակնարկով կը տեսնուի թէ ո՛ր պատումը ո՛ր պատումին հետ նմանութիւն ունի, եւ ո՛ր մասերուն մէջ: Նաեւ՝ ո՛ր պատումն է որ տուած է այսինչ կտորը՝ որ միւս պատումները չունին: Կամ՝ ուրէք ուսումնասիրութեան պարագային՝ իսկոյն կարելի է դտնել թէ՝ այսինչ հատուածը բնագրին մէջ ի՞նչ ձեւով է պատմուած բուն բարբառովը:

Գ. ՀԱՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՑՈՑԱԶՆԱՎԼՈՒՆ ՓՈՓՈԽԱԿՆԵՐԸ

ԻՐԵՆՑ ԳՐԻ ԱՌՆՈՒԵԼՈՒ ԵՒ ՏՊԱԳՐՈՒՄԻ ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՎ ՊԱՏՄՈՂ ԳԻՒՂԱՑԻՆԵՐՈՒՆ ՈՒ ԳՐԻ ԱՌՆՈՂՆԵՐՈՒՆ ՑԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՄԲ

1. *ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ կամ ՄՀԵՐԻ ԴՈՒՌ*, պատմող՝ Առնիստ դէուղացի Կրպօ, *Մուշի* եւ *Բաղէշի խառնուրդ բարբառով*, 1873-ին, *'ի Մուշ*: Գրի առնող՝ Գարեգին Վրդպտ. Սրուանձտեան, *մինչեւ էջ* 137-182՝ *տպուած* 1874-ին, Կ. Պոլիս: Թարգմանուած՝ Ռուսերէնի:

2. *ԴԱՒԻԹ եւ ՄՀԵՐ*, պատմող՝ Մոկացի Նախօ (Նհպտ.) Քեռի: Գրի առնող՝ Մանուկ Աբեղեան 1886-ին՝ *էջմիածին*: *Տպուած*՝ 1889-ին, *Շուշի*, *էջ* 11—16 *): Վերատպուած 1936-ին՝ *Երեւան* 1), Սասնայ Ծռեր-ի Ա. Հատորով, *մինչեւ էջ* 9—54, *Թիւ Ա.*:

3. *ՍԱՍՄԱՑ ԾՌԵՐ*, պատմող՝ Ժամհար Մուրադ, Աբարանի բարբառով: Գրի առնող՝ Գարեգին Սարկաւագ Յովսէփեան (*վերջ՝ Արքեպիսկոպոս*), *տպուած* 1892, *Թիֆլիս*, *մեծադիր էջ* 1—60:

4. *ՍԱՍՄԱՑ ԾՌԵՐ*, պատմող Մոկացի մը: Գրի առնող՝ Գ. Ս. Յովսէփեան, *տպուած* 1892, *Թիֆլիս*, *մեծադիր էջ* 61—151: Վրատպ. *Երեւան*, 1936, *էջ* 123—245, *Թիւ Գ., Դ., Ե.*:

5. *ՏՂԱՑ ԴԱՒԻԹ եւ ԱՂՋԻԿ ԽԱՆԴՈՒՏԻ ՀԷՔԻԱԹԸ*: Գրի առնող՝ Խաչիկ Վրդպտ. Դատեան, «*Ազատաւոր*» *ամսագր.* 1895, *Վաղարշապատ*, *էջ* 431—438, 484—487, Վանայ բարբառով:

6. *ՍԱՍՈՒՆԱՑ ԴԱՒԻԹ*, գրի առնող՝ Սարգիս Հայկունի, Խլաթի բարբառով. *տպ.* «*Արարատ*», *էջ* 520—525. *Վաղարշապատ*. 1898:

7. *ՍԱՍՄԱՑ ՓԱՀԼԻՒԱՆՆԵՐ կամ ԹԸԼՕՐ-ԴԱՒԻԹ եւ ՄՀԵՐ*, *պատմող՝ Խապոյենց Ջաւիկ, Մոկաց բարբառով*: Գրի առնող՝ 1898-ին՝ Բագրատ Խալաթեանց *'ի Վաղարշապատ*, *տպուած* 1899,

---

*) *Տե՛ս Ջոջանց Տուն կամ Սասմայ Ծռեր՝ Կանայեանի. էջ Ա-Դ, ուրկէ քաղաե եմ մաս մը ծանօթութիւններ այն փոփոխակներու մասին՝ որոնց բնագրերն իմ ձեռք չեն հասած:*

1) Սասնա Ծռեր, 1936 Երեւան, Պետհրատ:

Վաղարշապատ, մեծադիր էջ 1—74: Վերատպուած Երեւան, 1936, էջ 59—118, Թիւ Բ.:

8. *ՍԱՆԱՍԱՐ եւ ԲԱՂԴԱՍԱՐ, պատմող՝ Մոկացի Սախօ, Մոկաց բարբառով: Գրի առնող՝ Մ. Հայկունի, տպ. Էմինեան Ազգագրական ժողովածուի Բ. Հատորով, 1901-ին, մեծադիր էջ 3—14: Վերատպուած Երեւան, 1936, էջ 301—325, Թիւ Է.:*

9. *ԴԱՒԻԹ եւ ՄՀԵՐ, պատմող՝ Մոկացի Վարդան, Մոկաց բարբառով: Գրի առնող՝ Մ. Հայկունի, տպուած՝ 1901, Էմ. Ա. Ժղ.ի Բ. Հատորով, մծդր. էջ 19—50: Վրտպ. Եր. 1936, էջ 331—378, Թիւ Ը.:*

10. *ԴԱՒԻԹ եւ ՄՀԵՐ, պատմող՝ Մկրտիչ Յարութիւնեան, Շատախի բարբառով: Գրի առնող Մ. Հայկունի, տպուած 1902-ին, Էմ. Ա. Ժ.ի Դ. Հատորով, էջ 369—398: Վերատպուած՝ Երեւան, 1936, էջ 653—700, Թիւ ԺԳ.: Ե՛ւս նոյն ԴԱՒԻԹ եւ ՄՀԵՐ՝ (Ա. Բ. Գ., Մնար.-Բղդար., Մհեր եւ Դաւիթ. ու Դաւիթ եւ Մհր.), նոյն Էմ. Դ. Հատ.՝ էջ 403—411, 411—447 եւ 448—460, պատմողներ՝ Մուրատ Յովսէփեան եւ Բարսամ, Աբարատեան բարբառով: Գրի առնող՝ Մ. Հ.ի: (Երեւանի «Մ. Տոնէր»-ը չէ դրած Ա. Հատորին մէջ):*

11. *ԹԼՈՒԱՏ ԴԱՒԻԹ, պատմող՝ Ղազար Յովակիմեան, Մոկաց բարբառով: Գրի առնող՝ Արտաշէս Աբեղեան, տպուած Թիֆլիս, 1902, Ազգագրական Հանդէսի մէջ, մեծադիր էջ 3—75: Արտատպուած իբր դիրք: Վերատպուած՝ Երեւան, 1936, էջ 251—300, Թիւ Զ.:*

12. *ՍԱՄՆԱՑ ՏՌԵՐ, պատմող՝ Աստուրենց Մկրտիչ, Դովրի դիւղէն (Էջմիածին), Աբարատեան բարբառով: Գրի առնող՝ Արտաշէս Աբեղեան, տպուած 1902, Թիֆլիս, Ազգ. Հանդէսին մէջ, արտատպուած իբր դիրք, էջ 46—73:*

13. *ՍԱՍՄՈՑ ՏՌԵՐ, պատմող՝ Առաքել Շակոյեան, Նոր-Բայազիդի բարբառով: Գրի առնող՝ Ե. Լալայեան, տպուած 1906, Թիֆլիս, Ազգ. Հանդէսի մէջ, արտատպուած իբր դիրք էջ 1—48:*

14. *ՍԱՍՄԱՆՑ ՏՈՒՆ, պատմողներ՝ Կառվառի Բերկրի գիւղէն Խուդօ եւ Կծկուկ-Ակոբ, Կարկոու բարբառով: Գրի առնող՝ Տիգրան Զէթունի (ՍԱՄՈՒՆԱԿԱՆ-ին Հեղինակը), 1907-ին, Վան: Տպուած՝ դէմառդէմ դատաստարբերառումն ու աչխարարարով, Վիեննայի «Հանդէս Ամսօրեայ»-ի մէջ, 1909-ին, էջ 111—118, 186—190, 212—216 եւ 274—279: Նոյն տունն իբր դիրք արտատպուած էջ 1—48: Դադրեցուցի հրատարակութիւնը՝ ղի չափազանց վրիպակներով կը տպուէր: Բնագիրը՝ անտիպ՝ էջ 1—185+Տնքնք. 218 էջ:*

15. *ՍԱՍՄԱՆՑ ՏՈՒՆ, պատմող՝ Սպարկերտի Ճաժվան գիւղացի՝ գմայլելի՛ն Խաչօ-Լաճ-Կանչօ, Սպարկերտի բարբառով: Գրի առնող՝ Զէթունի, 1907-ին, Վան: ☛ Մխակ փոփոխակն է՝ որ լոյս տեսած բոլոր պատումներուն մէջ՝ կը հանդիսանայ իբր գերազանցապէս*

դիւցազնավիպական լեզու։ Տես Ցոլքնս.՝ 3· փոփոխակներուն «Թագուհիս»։ *Ինագիրը՝ անտիպ էջ* 186—319+*Մնթք.* 233 *էջ։ Իմ կողմէ աշխարհաբարի վերածուած օրինակը, տպծ.* 1910-*ին, կ. Պոլիս,* 132 *էջ։*

16· ***ՍԱՄՄԱՆՑ ՏՈՒՆ***, *պատմող՝ Շուշանցի Տիկին Շուշան, Վանայ բարբառով։ Գրի առնող՝ Զիթունի,* 1908-*ին, Վան։ Փոքրիկ պատում մը, անտիպ, էջ* 320—326։

17· ***ԹԼԼՕՀ ԴԱՒԹի ՀԷՔԻԱԹ***, *պատմող՝ Թառօ Կաղարեան՝ Հայոց-Ձորի (Վան) բարբառով։ Գրի առնող՝ անյայտ։ Տպուած* 1910-*ին, Վաղարշապատ՝ Կանայեանէ, մեծադիր էջ* 1—35։ *Վերատպուած* 1936, *Երեւան, էջ* 1027—1086, *Թիւ Ի.*։

18· ***ՋՈՋԱՆՑ ՏՈՒՆ***, *պատմող՝ Թումա Պետրոսեան, Մոկաց բարբառով։ Գրի առնող՝ Ս. Հայկունի, տպուած՝* 1910, *Վաղարշապատ՝ Կանայեանէ, մեծադիր էջ* 37—101։ *Արտատպուած* 1936, *Երեւան, էջ* 383—470, *Թիւ Թ.*։

19· ***ՋՈՋԱՆՑ ՏՈՒՆ կամ ՍԱՄՄԱՑ ԾՌԵՐ***, *պատմող՝ Եղիազար Յակոբեան, Գաւաչի (Վան) բարբառով։ Գրի առնող՝ Յարութիւն Աւետեան։ Տպուած* 1910, *Վաղարշապատ՝ Կանայեանէ, մեծադիր էջ* 103—123։ *Վերատպուած* 1936, *Երեւան, էջ* 835—869, *Թիւ ԺԹ.*։

20· ***ՋՈՋԱՆՑ ՏՈՒՆ*** (*Թըլհորիկ*) *կամ* ***ՎԱԹԱՆ եւ ՍԱՍՈՒՆ***, *պատմող՝ ...., գրի առնող՝ Գրիգ. Աւետեան, Սասունի բարբառով։* (*Տեսնել Կանայեանի «Ջոլանց Տուն» կամ «Սասմայ Ծռեր», էջ* 123—124, *Յաւելուած*)։

21· ***ՍԱՄՆԱՑ ՏՈՒՆ***, *պատմողը՝ չէ յիշուած (... աններելի զանցառութիւն՝ գրի առնողին կողմէ)։ Վանայ բարբառով, չափազանց աղճատ եւ անկապակից։ Գրի առնող՝ Յակիկ Լեւոնեան Վանեցի յայտնի բանասէրը, բայց տպուած՝ Ե. Լալայեանի անունով* 1), 1910 *՝ի Թիֆլիս, Ազգ. Հանդէսի մէջ, մեծադիր էջ* 61—101։

22· ***«ՀԱՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԱՂՋԻԿԸ ԵՒ ԹԱԹԱՐ ՂԱՋԱՆ ԽԱՆ»*** 2), *Մատենադրական առաջին փոփոխակ, պատմուած՝ Լատին նշանաւոր մատենագիր Ֆլօրանացի Անթօնին Եպիսկոպոսին կողմէ,* 1295 *Թուին։ Թարգմանարար յիշատակուած Հայր Միքայէլ Վրդպտ. Զամչեանէ՝ իր «Պատմութիւն Հայոց» եռահատոր գործին մէջ, Հատոր Գ., Մնթ. Ե., էջ* 379—380, *տպուած ՝ի Վենետիկ* 1786-*ին։ Գտած եւ լոյս աշխարհ ղրած — Բաղդասար Սանասարեան-Բաղդասարի ճիւղին հետ — Զիթունի,* 11 *Օգոստոս* 1931 *՝ի Փարիզ։ Երեք յօդուածով հրատարակած՝ Պոսթընի «Պայքար» օրաթերթին մէջ՝* 1931 *Նոյեմբեր* 26, *Դեկտեմբեր* 1 *եւ* 3 *Թիւերով։ Վերատպուած՝* 1941-*ին ՝ի Փարիզ, Զիթունիի «Բի՛ւր Ակ..., Հազա՛ր Ակ...» պիրքին մէջ՝ Թիւ* 13, *էջ* 83—98։

---

1) *Ես Զիթունիս՝ անձնապէս իրազեկ եմ այս կէտին, Կարեւոր ծանօթութիւններ Տեսնել գործիս Բ. Հատորին մէջ։* 2) *Խորագիրը՝ իմ կողմէն է։*

23· *ՍԱՄՆԱՑ ՓԱՀԼԻՒԱՆՆԵՐ*, պատմող՝ Վարդան Մ· Բազիկեան, Մոկաց բարբառով: Գրի առնող՝ Յարութիւն Դիլանեան, տպուած 1936, Երեւան՝ «Սասնա Ծռեր»-ի Ա· Հատորով, էջ 475—524, Թիւ ԺԱ·:

24· *ՍԱՄՆԱՑ ԾՌԵՐ*, պատմող՝ Վարդան Մ· Բազիկեան, Մոկաց բարբառով: Գրի առնող՝ Սեւնէքերիմ Տէր-Յակոբեան· տպուած 1936, Երեւան՝ «Սասնա Ծռեր»-ի Ա· Հատորով, էջ 529—600, Թիւ ԺԱ·:

25· *ՍԱՄՆԱՑ ԾՌԵՐ*, պատմող՝ Մանուկ Յարութիւնեան, Մոկաց բարբառով: Գրի առնող՝ Կարապետ Մելիք-Օհանջանեան, Երեւան, 1936, Ս· Ծ· էջ 607—648, Թիւ ԺԲ·:

26· *ԴԱՒԹի եւ ՎՀԱՔԻ ԿՌԻԻ*, պատմող՝ Մանուշակ Ջաղոեան, Շատախի բարբառով: Գրի առնող՝ Շահէն Կուժիկեան, Երեւան, 1936, Ս· Ծ· էջ 705—720, Թիւ ԺԴ·:

27· *ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ*, պատմող՝ Շատախցի Գրիգոր, Շատախի բարբառով: Գրի առնող՝ Սեւնէքերիմ Տէր Յակոբեան, Երեւան, 1936, Ս· Ծ· էջ 725—752, Թիւ ԺԵ·:

28· *ՍԱՄՆԱՑ ԴԱՒԹի ՀԷՔԻԱԹ*, պատմողներ՝ Ռաչօ Մուրադեան եւ Աւօ Ջաղոեան, Շատախի բարբառով: Գրի առնող՝ Կարապետ Մելիք Օհանջանեան, Երեւան, 1936, Ս· Ծ· էջ 759—784, Թիւ ԺԶ·:

29· *ԴԱՒԹի ԿՌԻԻ ՄԸՍՐԱՄԵԼԻՔԻ ՀԵՏ*, պատմող՝ Ազիզ Ղարիբեան, Շատախի բարբառով: Գրի առնող՝ Կրպտ· Մլք· Օհնչենն·, Երեւան, 1936, էջ 789—814, Թիւ ԺԷ·:

30· *ԹԼՈԼ ԴԱՒԻԹ*, պատմող՝ Սպարկերպոցի Տկն· Փառիկ, Սպարկերպոի եւ Վանայ բարբառներու խառնուրդով մը: Գրի առնող՝ Արամ Ղանալանեան, Երեւան, 1936, էջ 819—830 Թիւ ԺԸ·:

31· *ՍԱՆԱՍԱՐ եւ ԲԱՂԴԱՍԱՐ*, պատմող՝ Զարդար Տէր-Մխիթարեան, Գաւաշի (Վան) բարբառով: Գրի առնող՝ Արտաշէս Բարսեղեան, Երեւան, 1936, Ս· Ծ·, էջ 875—885, Թիւ Ի·:

32· *ԹԼՈՐ ԴԱՒԻԹ եւ ՄՀԵՐ*, պատմող՝ Մարգարիտ Սարգսեան, Գաւաշի (Վան) բարբառով: Գրի առնող՝ Մնքրմ· Տ· Ցկբեն·, Երեւան, 1936, էջ 891—933, Թիւ ԻԱ·:

33· *ՍԱՄՆԱՑ ԾՌԵՐ*, պատմող՝ Գրիգոր Փոխան Եղիազարեան, Գաւաշի (Վան) բարբառով: Գրի առնող՝ Մնքրմ· Տ· Ցկբեն·, Երեւան, 1936, էջ 939—977, Թիւ ԻԲ·:

34· *ՍԱՄՆԱՑ ԾՌԵՐ*, պատմող՝ Համբարձում Մսալո Գրիգորեան, Գաւաշի (Վան) բարբառով: Գրի առնող՝ Մնքրմ· Տ· Ցկբեն· Երեւան, 1936, էջ 983—1022, Թիւ ԻԳ·:

35· *ՍԱՄՆԱՑ ԾՌԵՐ*, պատմող՝ Յովան Զօհրաբեան, Կաճէտի (Շատախ) բարբառով: Գրի առնող՝ Կրպտ· Մլք· Օհնչենն·, Երեւան, 1936, էջ 1091—1126, Թիւ ԻԵ·:

☛ *Ասոնցմէ* fսաննէսիկց *պատում* (*փոփոխակ*, variante)՝ *տպուած* 1936-*ին*, *Ա*. *Հայաստանի Պետհրատին եւ Սասունցի Դաւիթի Հազարամեակի Յանձնաժողովին կողմէ*, *Երեւան*, «*Սասմա Ծռէր*»-*ի Ա*. *Հատորովը*, — *ճոխացած Բ*. *Հատորին մէջ տպագրուելիք նոյնքան մ'ուրիշ փոփոխակներով* —, *թարգմանուած են Նորհ*. *Ռուսիոյ գրեթէ բոլո'ր Հանրապետութիւններու ազգային լեզուներուն* (*Տե'ս Յառաջաբան*, *թիւ* 9)։

Ե. ՄԵՐ ԳԻՒՂԱՉՆԱՒԼՈՒՆ ՊԱՏՄՈՂՆԵՐԸ

---

1. *Ազիզ Ղարիբեան*, *Շատախցի* (*Վան*).
2. *Անտոնինոս Փլօրանսցի* ———
3. *Առաքել Շակոյեան*, *Նոր-Բայազիտ*.
4. *Աստուրենց Մկրտիչ*, *Դովրեցի* (*Էջմիածին*).
5. *Աւօ Ջաղօեան*, *Շատախցի* (*Վան*).
6. *Բարսամ Մանասէեան*, *Մոկացի* (*Նոյն՝ 28*).
7. *Գրիգոր-Փոխան Եղիազարեան*, *Գաւաշցի* (*Վան*).
8. *Եղիազար Յակոբեան*, *Գաւաշցի* (*Վան*).
9. *Զարդար Տէր-Մխիթարեան*, *Գաւաշցի* (*Վան*).
10. *Թառօ Կազարեան*, *Հայոց-Ձոր* (*Վան*).
11. *Թումա Պետրոսեան*, *Մոկացի*.
12. *Թամհար Մուրադ*, *Աբարանցի*.
13. *Խապոյենց Ջաւիկ*, *Մոկացի*.
14. *Խուդօ*, *Կարկառցի*.
15. *Կանչօ* (*Խաչօ-Լաճ*), *Սպարկերտցի*.
16. *Կծկուկ-Ակոբ*, *Կարկառցի*.
17. *Կրպօ*, *Մուշեցի*.
18. *Համբարձում-Խապօ Գրիգորեան*, *Գաւաշցի* (*Վան*).
19. *Ղազար Յովակիմեան*, *Մոկացի*.
20. *Մանուկ Յարութիւնեան*, *Մոկացի*.
21. *Մանուշակ Ջաղօեան*, *Շատախցի*.
22. *Մարգարիտ Սարգսեան*, *Գաւաշցի* (*Վան*).
23. *Մկրտիչ Աստուրենց*, *Արաբտեն*. *բրբռ*. (*Ա*. *Աբղ*. 46-73).
24. *Մկրտիչ Յարութիւնեան*, *Շատախցի* (*Վան*).
25. *Մոկացի Պատմիչներ* (*Անանուն*), *Մոկացի*.
26. *Մոկացի Սախօ*, *Մոկացի*.

27. *Մոկացի Վարդան, Մոկացի.*
28. *Մուրադ Բոլսեփեան, Մկրտ. (6), Ար. բր. (Հյկ. 399-462).*
29. *Յովհան Զօհրաբեան, Կաճաղցի (Վան).*
30. *Նախօ Քեհէ, Մոկացի.*
31. *Շատախցի Գրիգոր, Շատախցի (Վան).*
32. *Շուշանցի Տկն. Շուշան, Վանեցի.*
33. *Խաչօ Մուրադեան, Շատախցի (Վան).*
34. *Սպարկերտցի Փաւիկ, Սպարկերտցի (Վանի խառն).*
35. *Վարդան Մ. Բաղիկեան, Մոկացի.*
36. *Անյայտ Պատմողներ, Վանայ բրբռ. (Ազգ. Վ. Դտեն.).*
37. *Անյայտ Պատմող մը, Ալաշկայ բարբառ (Հայկունի).*
38. *Անյայտ Պատմող մը, Վանայ բարբառ? (Ե. Լէոն.).*

Զ. ՄԵՐ ԳԻՒՑԱԶՆԱՎԷՊԻՆ ԳՐԻ ԱՌՆՈՂ ՆԵՐԸ

1. *Արեղեան Արտաշէս, 2 փոփոխակ (Մոկաց եւ Արարատեան).*
2. *Արեղեան Մանուկ, 1 (2) փոփոխակ (Մոկաց բարբառ).*
3. *Աւչեան Յարութիւն, 1 (2) փոփոխակ (Գաւաշ եւ Սասուն).*
4. *Բարսեղեան Արտաշէս, 1 փոփոխակ (Գաւաշ).*
5. *Գիւլաննեան Յարութիւն, 1 փոփոխակ (Մոկաց բարբառ).*
6. *Դաւեան Աշխէկ Վարդապետ, 1 փոփոխակ (Վնյ. բրբռ.).*
7. *Լալայեան Երուանդ, 1 փոփոխակ (Նոր-Բայազիտ).*
8. *Լեւոնեան-Լալայեան, 1 փոփոխակ (Վան-Գաւաշ).*
9. *Խալաթեանց Բագրատ, 1 փոփոխակ (Մկց.).*
10. *Կուժիկեան Շահէն, 1 փոփոխակ (Շախ.).*
11. *Հայկունի Սարգիս, 5 փ. (Ալբ.՝ 1, Մց.՝ 2, Շխ.՝1, Ար.՝ 1)*
12. *Ղանալանեան Ադամ, 1 փոփոխակ (Սպարկերտ-Վան).*
13. *Յովսէփեան Գրգն. Սրկպ., 3 փոխիկ (Աբրնց.՝ 1, Մկց.՝ 2)*
14. *Չիթունի-Ջամչեան, 1 փոփոխակ (Մոնդրկն. փոխիկ.).*
15. *Չիթունի Տիգրան, 4 փոխիկ. (Կրկո.՝ 2, Սպրկ.՝ 1, Վն.՝ 1)*
16. *Տէր-Յակոբեան Մնթրմ., 5 փ. (Մկց.՝ 1, Շախ.՝ 1, Գչ.՝ 3)*
17. *Օհանջանեան Կ. Մէլիք, 4 փ. (Մկց.՝ 1, Շախ. 2, կճտ. 1)*
18. *Անյայտ Ոմն, 1 փոփոխակ (Հայոց Զորի).*

Ը· «ՍԱՍՈՒՆԱԿԱՆ»ԻՄ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

ՍԱՍՄԱՆՑ ՏՈՒՆ, ՍԱՍՆԱՑ ԾՌԵՐ, ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ
կամ ՍԱՍՄԱՑ ՓԱՀԼԻՒԱՆՆԵՐ

աճուռներով ծաւօք փոփոխակները 1)

որ Աղբիւր ծառայած են ՍԱՍՈՒՆԱԿԱՆ-ին

Հիմ բռնելով իմ չորս անտիպ փոփոխակներս, որոնցմէ Սպարկերտի պատում՝ իր դիւցազնավիպական ընտիր լեզուովն ու բովանդակութեամբը՝ անմոռնալի կը մնայ միւս բոլորէն։ —

		էջ	ձղ·	փխ·
1·	Սասմանց Տուն, *Սպրկբտի· բրբռ· Զիթունի ձռգր·*	123	6	1
2·	Սասմանց Տուն, *կարկատի բրբռ· Զիթունի ձռգր·*	73	4	2
3·	Սասմանց Տուն, *Վանայ բրբռ· Զիթունի ձռգր·*	4	1	1
4·	Սասմայ Ծռեր, *Մկց բրբռ· Ցվսփեն· Գ· Ս· տպծ·*	91	3	2
5·	Սասմայ Ծռեր, *Աբարանի բրբ· Ցվսփեն· Գ· Ս· տպ·*	48	4	2
6·	Սսնցի· Դ· կմ· Մի· Դռ· *Մչ·-Բղչ· բ· Սբռ· Գ· Վ·*	» 45	3	1
7·	Զջնց· Տն· կմ· Սսմ· Ծռ·, *Մկց բր· կնչն·(Հյկն·)*	» 65	2	1
8·	Զջնց· Տն· կմ· Սսմ· Ծռ· *Հ·Զր· բր· կնչն·(Անյ,)*	» 35	3	1
9·	Զջնց· Տն· կմ· Սսմ· Ծռ· *Գւչ· բ· կնչն·(Աւչն·)* *)	» 21	3	1
10·	Զջնց· Տն կմ· Սսմ· Ծռ· *Սսն· բ· կնչեն· (Աւչեն·)*	» 2	1	1
11·	Սսմչ· Փէհլվներ· *Մոկաց բարբառ Խալթեհան Բ·*	» 74	2	1
12·	Ս· եւ Բ·, Դ· եւ Մհր· *Մոկաց բրբռ· Հայկնի· Ս·*	» 43	3	2
13·	Դւթ· եւ Մհեր *Արարատեան բրբռ· Հայկունի Ս·*	» 58	4	1
14·	Դւթ· եւ Մհեր *Շատախի բարբառ Հայկունի Ս·*	» 30	2	1
15·	Թլւտ· Դաւիթ *Մոկաց բարբառ Աբեղեան Ա·*	» 43	3	1
16·	Սասնայ Ծռեր *Արարատեան բրբռ· Աբեղեան Ա·*	» 26	5	1
17·	Սասմայ Ծռեր *Արարատեան բրբռ· Լալայեան Ե·*	» 42	5	1
18·	Սասնայ Տուն, *Վանայ բարբառ, Լալայեան Ե·*	» 40	5	1
19·	Սասունայ Դաւիթ, *Խլթի բարբառ, Հայկունի Ս·*	» 5		1
		868		23

---

1) Փոփոխակ կամ Տարբերակ (երկուքն ալ կազմուած իմ կողմէ, ամենուստ ընդունուած եւ քաղաքագիտական իրաւունք ստացած), *Մ իւնոյն վէպին՝ տարբեր ունձերէ պատմուած կտոր· պատմուածք, պատում*, variante:

*) *Թիւ 9 եւ Պատում Ժ·-ի փոքր տարբերութիւններով՝ նոյն են։*

Վերոյիշեալ իմ անտիպներուն եւ միւս՝ առանձին դիրքով տըպուածներուն վրայ աւելցան 1940-ին սկսած՝ հետեւեալները, Երեւանի մէջ լոյս տեսած Սասնա Ծռեր-ի Ա. Հատորին մէջ. —

			Պատ.	էջ	ձղ.	փխ.
20.	Սասնա	Ծռեր	Ա. Մոկաց բրբռ. Աբեղեան Մնկ.	46	2	1
21.	»	»	Ժ. Մոկաց բրբռ. Գիլանեան Ճրքն.	50	3	2
22.	»	»	ԺԱ. Մոկաց բրբռ. Տէր Ճկրեն. Մնքրմ.	72	3	1
23.	»	»	ԺԲ. Մկց. բրբռ. Օհանջնեն. Մլք. Կրպ.	42	3	1
24.	»	»	ԺԴ. Շատախ բրբռ. Կուժիկեն. Շահէն	16	1	1
25.	»	»	ԺԵ. Շտխ. բրբռ. Տէր Ճկրեն. Մնք.	28	1	1
26.	»	»	ԺԶ. Շտխ. բրբռ. Օհանջնեն. Մ. Կ.	26	1	2
27.	»	»	ԺԷ. Շտխ. բրբռ. Օհանջնեն. Մ. Կ.	26	1	1
28.	»	»	ԺԸ. Սպրկրտի. բրբռ. Ղնջնեն. Արամ	12	1	1
—.	(9) »	»	ԺԹ. Գաւաշի բրբռ. Աւշեան Ճրքն. *)	35	2	1
29.	»	»	Ի. Գաւաշի բրբռ. Բարսեղեն. Արուշ.	11	1	1
30.	»	»	ԻԱ. Գաւաշի բրբռ. Տէր Ճակոբեն. Մ.	43	2	1
31.	»	»	ԻԲ. Գաւաշի բրբռ. Տէր Ճակոբեն. Մ.	39	2	1
32.	»	»	ԻԳ. Գաւաշի բրբռ. Տէր Ճակոբեն. Մ.	40	3	1
33.	»	»	ԻԵ. Կաճեաի բրբռ. Օհանջնեն. Մ. Կ.	36	4	1
				522		17
			Թիւ 1—19 պատումները՝	868		23
			Էջ՝	1390	փ.	40

34. *Աւելցնելու է այս ժողովրդական Աղբիւրներուն վրայ նաեւ՝ Մատենադրական Առաջին Փոփոխակը՝ զոր ես դասյ Զամչեանի Հայոց պատմութեան մէջ (Հտր. Գ., Մնք. Ե., էջ 379—380: Տեսնել իմ Բիւր Ակ···, Հազար Ակ···, էջ 83—89): Որով՝ Զէյթ.-Զմչ. —* 1 1

Իմ աչքէ աւաչ ունեցած վրիպակներն ընդամէն՝ 1391 էջ, 41 փ

35. *Կան դեռ քանի մ՚ուրիշ ձեռագիր պատումներ՝ Երեւանի Սասնա Ծռեր-ի Բ. Հատորովը տպուելիք, եւ 1895-ին Արարատ ամսագրի մէջ տպուած Տղայ Դաւիթ եւ Աղջիկ Խանգուրի Էֆիաթը՝ Հաչիկ Վրդպտ-ի, — որք ինձի անծանօթ են:*

Փարիզ, Դեկտեմբեր 1941 ԶԻԹՈՒՆԻ

Է. ՀԱՑ ԺՈՂՈՎՐԴ. ԴԻՒՑԱԶՆԱՎԼԻՔԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՆ ԿԱՐԳՈՎ

1. Այբենական ցանկ

Աբգարանի բրբռ.	1	փափկ.
Արարատեան բրբռ.	2	»
Բաղէշի (Տես Մուշի)	—	»
Գաւաշի բրբռ. (Վն.)	5	»
Խլաթի բրբռ. (Մշ.)	1	»
Կաճեաոի բրբռ. (Վն.)	1	»
Կարկաոի բրբռ. (Վն.)	2	»
Հայոց-Ձորի » (Վն.)	1	»
Մոկաց բրբռ. (Վն.)	10	»
Մուշ-Բաղէշ-Սանի.	—	1 »
Նոր-Բայազիտի »	—	1 »
Շատախի փխկ. (Վն.)	5	»
Սպարկերտի փ. (Վն.)	2	»
Վանայ փափկ. (Վն.)	3	»
	—	
Համագումար՝	35	փափկ.

2. Թուական ցանկ

29	Վանայ Նահանգին բրբռնրվ.
6	Մուշի եւ Արարատեան »
—	
35	փոփոխակ
=	

կամ՝ 3.

15	Վանայ բրբռվ. { Վն.3, Գւ.5, Հ.Ձր.1, Շտխ.՝ 5, Կճտ.՝ 1)
10	Մոկաց բրբռվ.
3	Արարատեան բրբռվ.
2	Սպարկերտի բրբռվ.
2	Կարկաոի բրբռվ.
1	Խլաթի բրբռվ.
1	Մուշ-Բաղէշ-Սանի. բրբռվ.
1	Նոր-Բայազիտի բրբռվ.
—	
35	փոփոխակ.

կամ՝ 4.

10	Մոկաց բրբռով.
5	Գաւաշի բրբռվ.
5	Շատախի բրբռվ.
3	Վանայ բրբռվ.
2	Սպարկերտի բրբռվ.
2	Կարկաոի բրբռվ.
2	Արարատեան բրբռվ.
1	Աբգարանի բրբռվ.
1	Խլաթի բրբռվ.
1	Կաճեաոի բրբռվ.
1	Հայոց-Ձորի բրբռվ.
1	Մուշ-Բաղէշ-Սասունի բրբռվ.
1	Նոր-Բայազիտի բրբռվ.
—	
35	փոփոխակ.

5.

Լեզուական Արժէքով

☛ *Սպարկերտի բարբառով, կանչօք պատմուած եւ Զէյթունէ դրի առնուած փոփոխակը՝ դիւցազներգական ուժեղ ու վսեմ լեզուի տեսակէտով՝ կը մնայ ամենէն գերազանցը, եւ «Թագուհի՝ պատումներուն» (Տես Ցուցակ, թիւ 3)։*

Ք. ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.

Ա. Արեղեան Ա. տպուած էջերով չի՛ շուած.
Բ. Երեւանի «Սասմա Ծռեր» Ա. Հտր. (պատում Ա.-ին). » » »
Լ. Լալայեան Երուանդ. (եւ Լեւոնեան Աշխէկ). » » »
Մ. Մալխասեան Բագրատ. » » »
Կ. Կանայեան Սեմիւան. (Աւչեան Ցրքն. եւ Հայկունի). » » »
Հ. Հայկունի Սարգիս. » » »
Ց. Ցովսէփեան Գարեգին Սարկաւագ. » » »
Չ. Չիթունի (Ամբապրումի ընթացքին ուղղութիւն տուող). —
ՉԿ. Չիթունի՝ Կարկառի բարբառ.
ՉՄ. Չիթունի՝ Սպարկերտի բարբառ. } Չեռագրին համարներովը չի՛ շուած
ՉՎ. Չիթունի՝ Վանայ բարբառ.
Ս. Սրուանձտեան Գրիգ. Վրդպ., «Գրոց-Բրոց»ին՝ էջերովը չի՛ շուած.

2.

Ազ. Ազաթանգեղոս.
Աբբ. Աբրահեան.
Աբծ. Աբծրունի Թումա.
Թ., Թրք. Թուրքերէն.
Ղզ. «Ղազախսարհ» Չիթունիի:
Արն. Արշակունեաց, Գլուխ..., Ա. Բ. Գ. Գիրքեր:
Մ. Մանօթագրութիւններ.
Կչկն. Կոչականը.
Համմտ. Համեմատել.
Ցրն. Ցրն. «Ցէղրան-Թուպան» Չիթունիի (Սպրկերտի բրբռվ.), ձեռգ.
Ջմչ. Պատ. Ջամչեանի «Պատմութիւն Հայոց», Գլուխ՝ Ա.Բ.Գ. Հտր.
Պ. Պրս. Պարսկերէն.
Ս. Սրբչ. Սուրբէչ.
փստ. Փաւստոս Բիւզանդ, Գլուխ..., էջ...:
փրֆ. փրոֆէսէօր:
Ֆր. Ֆրանսերէն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՃԻՂԻՆ

ՍԱՆԱՍԱՐ-ԲԱՂԴԱՍԱՐԻ

Ա. ՀԱՑԵՐԵՆԻ ՀՈՂԷՆ ԴՈՒՐՍ

		Հատուած
Ա.	Հայոց Ու կռապաշտ-Թագաւորին Յարաբերութիւնները	2
Բ.	Լուսիկ-Թագուհիին Հարսնութիւնը	16
Գ.	Սանասարի Ու Բաղդասարի Մանկութիւնը	27
Դ.	Սանասար Ու Բաղդասար՝ Երկրէ Երկիր Կըպատին	37
Ե.	Սանասար Ու Բաղդասար՝ Նորէն Երկրէ Երկիր Կըշրջին	48
Զ.	Կանաչ-Քաղքի Վիշապն Ու Թագաւորի-Աղջիկը	55
Է.	Կռապաշտ-Թագաւորի Զոհը	62
Ը.	Հայրենի Երկրին Ցուչերովը	90

Բ. ՀԱՑԵՐԵՆԻ ՀՈՂԻՆ ՎՐԱՑ

Թ.	Սանասար Ու Բաղդասար՝ Սեփական Տունի Ետեւէ	93
Ժ.	Սանասար Ու Բաղդասար՝ Ամուսնութեան Ճամբուն Մէջ	109
ԺԱ.	Սանասար՝ Դէպի Գունձէ-Քաղաք	126
ԺԲ.	Սանասար՝ Գունձէ-Քաղքին Մէջ	134
ԺԳ.	Բաղդասար Օգնութեան Կըհասնի Սանասարին	163
ԺԴ.	Սանասար Ու Բաղդասար՝ Գունձէ-Գաղքէն Դէպ Սատան	180

☛ Օփէրայի վերածելու առաջնակարգ ազգային նիւթ է ՍԱՄՈՒՆԱԿԱՆը։

ՍԱՍՈՒՆԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ՃԻՒՂ 1)

●

ՍԱՆԱՍԱՐ - ԲԱՂԴԱՍԱՐ

«ՈՂՈՐՄԻ»Ն 2)

Կ·1,2, Զ·(Կ·1), Հ·404, 403, 19, Զ(403), Լ·61, Զ(Լ·5), Զ·, Ե·968, 9, 475, 529, 607, 725, 891, Ե·968ատրջ· 969ա· 951ա· Զ(Ե·725), ՁԿ· 390ա·, 619, 40, (ՁԿ·617), Ց·68, 80, 136, 137, Խ·1, 44, 51, Ա·3, 63, 71, ՁՍ·7, 313, Ս·148, (Կ·7)·

— *Օրհնեա՛լ, բարերա՛ր Աստուա՛ծ, 3)*
Ում ընամը չա՛տ էր՝ Մե՛ծ-Թագաւո՛րին· 4)
= Մեծ-Թագաւո՛րին···: 5)

— *«Ողորմի»ն, «Աստուա՛ծ Ողորմի»ն,*
Առաջին «Ողորմի»ն պիտի տա՛մ,
= Հա՛զար «Ողորմի»···,
Մեր Կապուտ-Կողի Պա՛պ-Թագաւորի՛ն,
= Պա՛պ-Թագաւորին,
— Որ Դուռ Պապիկ է՛ս···:

— *«Ողորմի» տըւի՛ք···,*
= Հա՛զար «Ողորմի»···:

---

1) Ճիւղ, *Գլուխ, ճիւղաւորոյց, ճիւղաւորութիւն աղազաբանութիւն:*

2) «Ողորմի», *Այսինքն՝ «Աստուա՛ծ ողորմի» ըսելը, Աստուա՛ծ ողորմի··· իրենց, այդ ննջեցեալներուն:* Խ· 44՝ «Ողորմի»ն պէտք է կրկնուի ամեն մի ճիւղի սկզբում· — ՁԿ·390ա՝ «Ողորմի»ն կուտաճ՝ միայն մեծագործ Թլոլ-Դաւիթի պատմութիւնը սկսելէ առաջ· — Կ2՝ նթէ «Ողորմի» չի տաճ՝ մեղք է:

3) *Ամբողջ «Ողորմի»ն՝ սրտաբրաւ երգ է:*

4) *Մեծ-Թագաւոր, Աստուած, Տիեզերքի տէրը:*

5) *Զոյգ դէմիկով տողերը՝ իբր արձագանգ՝ Ա· եւ Բ· տողերուն:*

— Դառնամ՝ «Ողորմին կուտա՛մ...,
Մեր կապուտ-կողի Մա՛մ-թագուհի՛ն,
= Մամ-թագուհին...,
— Որ Դու Մամիկ ե՛ս...:

— «Ողորմի» տըւի՛ք,
= Հա՛զար «Ողորմի»...:
— Տա՛նք «Ողորմին»...,
= Հազար «Ողորմի»...,
Մեր կապուտ-կողի Լո՛ւսիկ-թագուհո՛ւն.
= Լո՛ւսիկ-թագուհուն,
— Որ Դու Լուսիկ ե՛ս...:

Որ Անիկ Սանասար-Բա՛ղդասարի Մա՛յրն էր.
= Ա՛խ, հա՛, Սանասար-Բաղդասարի Մա՛յրն էր:

— Ո՛ւր երթանք՝ դառնանք...՝
«Ողորմին» պիտի տանք,
= Հա՛զար «Ողորմի»...,
Մեր Սասումանց-Տան Ջո՛ջ-Սանասարի՛ն,
= Ջո՛ջ-Սանասարին,
— Որ Դու Սանասար ե՛ս...:
= «Ողորմի» տըւի՛ք..., Հա՛զար «Ողորմի»...:

— Դարձեալ «Ողորմի» մ՛...,
= Հա՛զար «Ողորմի»...,
Ճիշանք «Ողորմին»՝ այն Բա՛ղդասարի՛ն,
= Մո՛ւռ-Բաղդասարին,
— Որ Դու Բաղդասարն ե՛ս...:

— «Ողորմին...», «Աստուա՛ծ Ողորմին»,
= Հա՛զար «Ողորմի»...,
Տա՛նք «Ողորմին»՝ Քառասուն-Ճիւղ-Մամ-Գոհարի՛ն,
= Քա՛ռասուն-Ճիւղ-Մամ-Գոհարին,
— Որ Դու Գոհար(ն) ես...,
Որ Անիկ Սանասարի կինն է՛ր,
= Ա՛խ, հա՛, Սանասարի կի՛նն էր...:
— «Ողորմի» մ՛տանք...,
= Հա՛զար «Ողորմի»...,

Ցիշանք «Ողորմիծն՝ Դա՛ղձան-Յաթունիկ՛ն,
= Դա՛ղձան-Յաթունին,
— Որ Դու Դաղձան ե՛ս...
Որ Անիկ Բաղդասարի կինն է՛ր,
= Ա՛խ, հա՛, Բաղդասարի կինն է՛ր...:
— Դառնանք՝ «Ողորմիծն տա՛նք...,
= Հա՛զար «Ողորմիծ»...,
Մեր Սասումանց-Տան Ա՛ռիւծ-Մըհէրի՛ն,
= Ա՛ռիւծ-Մըհէրին,
— Որ Դու Մըհէրն ե՛ս...,
Որ Անիկ Սանասարի որդին է՛ր...,
= Ա՛խ, հա՛, Սանասարի որդին է՛ր...:

— «Ողորմիծ» տանք՝ Մըհէրի կին Շո՛ւշան-Յաթունին,
= Շո՛ւշան-Յաթունի՛ն,
— Որ Դու Շուշան ե՛ս...:

— «Ողորմիծ» տա՛նք, յի՛շանք «Ողորմիծ»...,
= Հա՛զար «Ողորմիծ»...,
Ցըռան-Վէրգօին, Ճընճղաւիսխիկին, Քեռի-Թորոսի՛ն,
Որ Բա՛ղդասարի տըղաներն էին,
= Ա՛խ, հա՛, Բա՛ղդասարի տըղաներն էի՛ն...:

— Տա՛նք «Ողորմիծն՝ Դա՛ւիթ-Մըհէրի՛ն,
= Դա՛ւիթ-Մըհէրին,
— Որ Դու Մըհէր ե՛ս....
Որ Անիկ Թըլո՛ւ-Դաւիթի հայրն է՛ր,
= Ա՛խ, հա՛, Թըլուլ-Դաւիթի հայրն է՛ր...:

— «Ողորմիծ» մ՝տա՛նք, յիշա՛նք «Ողորմիծ»...,
Այն Հուրի-Վարդին, որ Դաւիթ-Մըհէրի կինն է՛ր,
= Ա՛խ, հա՛, Դաւիթ-Մըհէրի կինն է՛ր...:

— Ո՛ւր երթանք դառնանք՝ «Ողորմիծ» տանք,
= Հա՛զար «Ողորմիծ»...,
Մեր Սասումանց-Տան՝ Զէ՛նով-Օհանի՛ն,
= Զէ՛նով-Օհանին,

— Որ Դուռ Օհան ես...,
Որ Անիկ Քե՛ռի-Թորոսի որդին կ՛ըլլայ,
= Ա՛խ, հա՛, Քեռի-Թորոսի որդին կ՛ըլլայ։

— «Ողորմի» մ՛տա՛նք՝ Գոհա՛ր-Խաթունէ՛ն,
= Գոհար-Խա՛թո՛ւնէ՛ն,
Որ Անիկ Զէյնուվ-Օհանի կինն կ՛ըլլայ,
= Ա՛խ, հա՛, Զէյնուվ-Օհանի կինն կ՛ըլլայ...։

— «Աստուածածին Ողորմի»ն չէ՛ տանք,
= Չէ՛ չէ տա՛նք...,
Մըսրամէլիքին, որ Անիկ Թլոլ-Դաւիթի խորթ եղբայրն կ՛ըլլայ։

— Ո՛ւր երթանք՝ դառնանք՝ «Ողորմի» տանք...,
= Հա՛զար «Ողորմի»...,
Տանք մեր Սասմանց-Տան Թլ՛լոլ-Դաւիթէ՛ն,
= Թա՛ռլան-Դաւիթին,
— Որ Դուռ Դաւիթն է՛ս....
Որ Անիկ՝ Դա՛վիթ-Մըհէրի որդին կ՛ըլլայ...,
= Ախ, հա, Դաւիթ-Մհէրի որդին կ՛ըլլայ...։

— Ճիշդ «Աստուա՛ծ «Ողորմի»ն,
= Հա՛զար «Ողորմի»...,
Տանք «Ողորմի»ն՝ Խա՛նդուտ-Խաթունէ՛ն,
— Որ Դուռ Խանդուտ է՛ս...,
Որ Անիկ Թլ՛լոլ-Դաւիթի կինն կ՛ըլլայ,
= Ա՛խ, հա՛, Թլլոլ-Դաւիթի կինն կ՛ըլլայ։

— Դառնանք «Ողորմի» տանք...,
= Հա՛զար «Ողորմի»...,
Մեր Սասունցի-Տան Պլ՛ոտիկ-Մըհէրէ՛ն...,
= Ճի՛տին Մըհէրէ՛ն,

— Որ Դուռ Մըհէրն է՛ս...,
Որ Անիկ Թլ՛լոլ-Դաւիթի որդին կ՛ըլլայ,
= Ա՛խ, հա՛, Դաւիթի որդին կ՛ըլլայ։
— Ո՛ւր երթանք՝ դառնանք՝ «Ողորմի»ն տա՛նք՝
= Հա՛զար «Ողորմի»...,

Տանք մեր Սամամց-Տան մեծին ու փոքրին,
= Ջո՛ջին ու պըղտիկին...:

* * *

— Անունն ելաւ Աղնա՛նց-Ձեղին...,
Ո՛վ լըսեր էր՝ չ'էր հաւատար..., —
Աչքով տեսան՝ հա՛ւատացին...:

— «Ողորմիդ տանք...,
= Համար «Ողորմիդ»...,
Ականջ-Ընողներու անցաւորաց հո՛գուն...,
= Հա՛յրին ու Մայրին...:
— «Ողորմիդ» տանք...,
= Համար «Ողորմիդ»...,
Մեր մեծ վարպետին, = Մե՛ր մեծ վարպետին...,
Ինչ մեղ ցոյց է տըւեր 1) այս ամեն բաներ,
= Մե՛յս ամեն բաներ...:

— Խաղանք Ճիւղէ-Ճիւղ՝ դանք՝ վեր՝ 2) եօ՛թ-Ճիւղին...,
Ըսենք Առաջին Ճիւղը՝ Սանասար-Բաղդասարին:

— Օրհնեա՛ւ, բարեբար Աստուա՛ծ...,
Ընտանը շա՛տ էր Մե՛ծ-Թագաւորին...,

— Օրհնութի՛ւն ու բա՛րեբարութի՛ւն...,
= Վեր՝ չէն Օճախին..., —
— Ջո՛ւմէն... 3):

---

1) Ցոյց տալ, Պատմել առաջնորդել (պատմելու):
2) Վեր՝, Վերայ, Վրայ:
3) Ջրմէն, Ամենայն ամեն, եղիցի եւ եղիցի առաւե՛լ...:

ՍԱՆԱՍԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ

Ա. ՀԱՑՐԵՆԻ ՀՈՂԷՆ ԴՈՒՐՍ

Ա. ՀԱՑՈՑ ՈՒ ԿՌԱՊԱՇՏ-ԹԱԳԱՒՈՐԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Հայոց-Թագաւորը, Իր Ընտանիքն ու Ժողովուրդը

ՉԿ·1,2, ՉՍ·1, Կ·103,2, Լ·5, Ե·476, 530, Չ(Ե·476, 530, 608), Հ·404, 3, Չ·

Մէկ ժամանակ՝ Թագաւո՛ր մ՚կար Հայոց-Աշղին, կապուտ-կող, —
Իր անունն էր Աստղիկ-Պապիկ, Գումբիկ, Գագիկ կամ Խաչիկ,
Կա՛մ Թէ՝ Պայտր-Ըսկայտրդի Հայկազուն...:
Ինքը ըսես՝ ծեր ալեւոր, — զօրեղ էր ու չա՛տ Հարուստ:

Տըղայ 1) չունէր Պարոյր-Արքան, իբր ժառանգ. —
Ունէր-չունէր՝ Աղջիկ մ՚ունէր մէկ հատիկ:

Այդ Աղջիկը չա՛տ տեսակով 2), սիրուն էր ու խօրուտիկ,
Շա՛տ յարդելի ու պատուաւոր, Հօրն ու Մօրը՝ անդին զանճ:
Ու կ՚ապրէին՝ Ժողովուրդին հետ՝ երջանիկ, բախտաւոր:

2. Կռապաշտ-Թագաւորը կըյարձակի Հայոց Վրայ

ՉՍ·1,2,3, Ե·61,13,62, Ս·137, Լ·61,5, Հ·404,3, Ա·48, Ե·530,476, Կ·103, ՉԿ·3, Չ.

Կար՝ կըռապաշտ-Թագաւոր մ՚ալ, Բաղդատ-Մըսըր կընըստէր.
Անուն՝ Սինամ-Խան-Թագաւոր, — Սեւեռքերիմ պատմական.
Շա՛տ զօրընդեղ 3) ու չա՛տ ուժով դուրս եկաւ 4): —
Զօրք հաւաքեց, դըլուխ վերցուց ու քալեց՝
Մեր Հայկազուն Թագաւորին վրայ կըռնիւ:

Մեր Թագաւոր՝ դէմը ելաւ Իր Զօրքերով քաջակամ. 5)

---

1) Տղայ, Արու զաւակ, մանչ. 2) Տեսակով, Տեսքով՝ աննըմանելի, գեղեցիկ, գեղատեսիլ, գեղանձն; 3) Զօրընդեղ, Շատ զօրեղ, զերզօր: 4) Դուրս գալ, Հանդիսանալ: 5) Քաջակամ, Քաջօրէն կռուելու կամք ունեցող:

Կրնիւ տրւաւ բոլոր ուժով, բայց չկրցաւ դէմ դընել։
Կրասպաշտի-Թագաւորը՝ չատ ուժե՛ղ էր այս անգամ. —
Մեր Պապ-Աստղիկ ծեր Արքայի Զօրքը ջարդեց, կոտորեց,

Շա՛տ Մեր Ազգը նըւաղեցուց ու նեղեց,
Անթիւ Գերի բըռնեց՝ քշեց իր Երկիր...։

Շա՛տ տուրք առաւ Մեր Արքայէն, շա՛տ կողոպտեց ու տարաւ.
Վերջապէս Մեր Ժողովուրդը՝ վա՛տ նեղութեան մէջ ինկաւ.
Որեւէ ճար՝ վըրան չմընաց, չխմարացան 1), մերկացան.
Ա՛լ վարուցան չկրցա՛ն ընել, քաղել, հընձել, ամբարել.
Ա՛լ տասէն մէկ՝ չէ՛ր կըրնար իր տունը մընալ ու ապրիլ. —
Ամէն մէկը՝ մէյմէկ տեղ մը ցը՛րուըտեցան ու գացին...։

Կրասպաշտի-Թագաւորը՝ ի՛նչ որ 2) ջարդեց, ի՛նչ քողուց,
ի՛նչ որ քշեց՝ գերի տարաւ, ի՛նչ որ ճամբան կոտորեց։ —
Այն որ մանըր երախայ են՝ կըլեցնէ մէջ ցեխերուն.
Մանըր բեւեռ հա՛ տ կը խառնէ
Տիղմերուն ու գամերուն մէջ՝ կուտայ կոխել-կոխըրճել 3),
Հաղարներո՛վ երախաներ՝ ըսպաննել...։

Այն որ մեծ են՝ տախտակ ծակել կուտայ՝ չորս տեղ՝ Անօրէնն,
Զորս Մարդու դլուխ՝ մէջ կը խոթէ ծակերէն,
Ինքը կ՚երթայ՝ վրան կընըստի, կրխըթխըթէ՝ որ տանին..., —
Մարդոց ուսեր կը ծակըրտին՝ կը մեռնին...։
Այդ կերպով Ան կ՚ուղէր Հայ Ազգ փըճացընել ու ջընջել։

Այն առնն ալ, — հին դարերէ՝ օրէնք էր —,
Ո՛ր Թագաւոր գօրեղ ըլլար ու յաղթող՝
Մէկալ տրկար Թագաւորէն տուրք կ՚առնէր։
Մեր Հայկազուն Թագաւորն ալ՝ այդ անգամ՝
Սեննեքերիմ-Թագաւորին եղաւ ազդով հարկատու։

---

1) Շիվարացալ, Շուար մնալ, անգօր մնալ։
2) Ինչ որ, Ինչքան որ, որքան որ (կրցաւ)։
3) Կոխրճել, Կոխտել։

4. Հայոց-Թագաւոր՝ Պայմանաժամ Կ'ուզէ՝ Ցուրբ Վճարելու

ՉԿ·4,5,6,7, Ե·476, 530·

Տեսաւ Պարոյր-Կոմբիկ-Արքան ալեւոր,
Իր ժողովուրդ անճար մընաց, չունեւոր,
Ելաւ Սինամ-Թագաւորին Մարդ ղրկեց,
Գացին Մըսըր 1)՝ կըռապաշտի-Թագաւորին, եւ ըսին. —
— «Ապրա՛ծ կենաս, Մեծ-Թագաւոր՝ վեր՛ 2) Գահին.
Կոմբիկ-Արքան բարեւ կ'ընէ ու կ'ըսէ՝
«Ընդիրք մ'ունիմ ես Քենէ»...:»
= «Ի՞նչ է...», — ըսաւ Սինամ-Խան:
Ըսին, — «Կ'ըսէ՝ «Իմ ժողովուրդ չա՛տ նեղուեր է, խեղճացեր..., Չի՛ կըրնար իր տուրքերը տալ, Գանձը լեցնել բաւարչափ. — Դուն ինձ լըսես, ժամանակ տաս, քանի մ'տարի, մեր առաջ, Մինչեւ ես իմ պարէնդ ընեմ, լեցընեմ, Եւ իմ Ազգն ալ՝ վար-ու-վիծկին 3) առաջուանին պէս բլուռնէ, — Որ Քո տուրքը կարենանք տալ ամէ-ամ 4)»:»
Կըռապաշտի-Թագաւորն ալ ի՞նչ ըսաւ. —
= «Ես եօ՛թ տարի պայման տըւի Ձեզ, - ըսաւ -.
Եօթը տարի ես Ձեր երկրէն տուրք չառնեմ...»:

5. Կռապաշտ-Թագաւորը Պատգամաւոր Կղրկէ Ցուրխուց Համար

ՉԿ·8,9, ՉՍ·4,5,6,7, Հ·3, Ե·61·

Եօթ տարին որ լըրացաւ՝
Կըռապաշտի-Թագաւորը, Սինամ-Խան՝
Ելաւ երկու Պատգամաւոր ղրկեց Հայոց-Արքային, —
— «Գացէ՛ք, - ըսաւ -, Հայոց Կոմբիկ-Թագաւորին մօ՛տ եղէք,

---

1) Մըսըր, Այժմու Մուսուլ, հին Ասորեստանի անունն էր, ո՛չ թէ Եգիպտոսի: 2) վեր՛, վերայ, վրայ:
3) Վար-ու-վիծկի, Աղօրաղրուքիեան. վիծկի՝ փոքր ափօր:
4) Ամէ-ամ, Տարուէ տարի:

Լսէ՛ք որ «Իմ տուրք պիտի տաս այս անգամ»· —
Եօթը տարուան տո՛ւրք ժողվեցէ՛ք ու բերէ՛ք···»:
Եկան առունք, - տուրք առնողներ-, համբայ ինկան ու գացին,
Գացին հասան՝ Հայկակըրօն-Թագաւորի Քաղքին մօտ,
Մուքը տըւաւ Անոնց վըրայ՝ մըտան Քաղաք, իւնչ տեսնեն···, —
Տեսան որ-քէ 1)՝ աշխա՛րք ամէն մուռ-մուք է,
Այդ Քաղաքը՝ օր-ցերեկուան պէս լո՛յս է···:

Եկան մարդու մ՝ մօտ՝ հարցուցին ու ըսին· —
— «Ասիկ ի՞նչ լոյս է՝ Ձեր Քաղաք՝ այս դիշեր···: —
Արեգակը մար է մըտեր, ու Լուսնակ դեռ չ՝էլ՝ ելեր···,
Ա՛ս ի՞նչ լոյս է՝ Ձեր Քաղաքին վրայ զարկեր···»:

= «Իրա՛ւ, Մեր-Թագաւորի Աղջկան լոյսն է աստիկա,
Զարկեր է Մեր Քաղքին վրայ···:
Իրիկուն ինչ 2) Արեւ կ՝մըտնէ, մուքը կ՝էյնայ ամէն կողմ,
Մեր սիրական Թագաւորի Աղջիկ կ՝ելնէ կը նըստի իր պատըշգամ,
Անոր լոյսը կը զարնէ Մեր-Քաղքին վրայ, ամէն դին,
Ամենք իրենց գործին վրայ կը նըստին ու կը բանին: —
Անկից՝ Անոր անունն ալ է՝ Մովի-Լուսիկ-Թագուհի»:

Ե. Պատգամաւորները կը տեսնեն Լուսիկ-Թագուհին

ՁԿ·3,9,10, Ձ(ՁԿ·9), Հ·3,4, Ց·61, Լ·5, Ս·137, ՁՍ·8

Առաւօտուն՝ ելան Մարդիկ՝ Թագաւորի Պալատին կողմ կ՝երթային,
Երբ կ՝անցնէին՝ լո՛յս մը Իրենց երեսց···: —
Իրիշկացին 3)՝ ու իւնչ տեսնեն Իրենց դէմ···, —
Մ՛ինպէս խօրտա, տեսքով Աղջիկ մ՛լուսադէմ···՝
Որ Արեւուն կ՝ըսէ՝ «Արե՛ւ, Դուն դուրս մ՝ե՛լներ՝ ե՛ս ելնեմ···»:
Այնքա՞ն խօրտա՝ որ նըման է՝ երկու-եօթնեակ Լուսինի՝
Ճանճը ճակտին վըրայ ման դայ՝ կ՝սահի կ՝էյնայ՝ ի դէտին, —
Ճանճին եօ՛թը կողաչարներ 4) կը կտորին···:

Ձի՞ս ըսեր որ՝ Թագաւորի Օրիորդ Դո՛ւստրն է, — Լուսի՛կ,
Խօրոտատես 5), տաս-տասներկու տարեկան,

---

1) Որ-քէ, Որ ահա, որ այդ(պէս), իբր թէ: 2) Ինչ, ինչ տեղ որ, երբոր: 3) Իրիշկալ, երես դարձնելով՝ նայիլ: 4) Կողաշար, կողոսկր: 5) Խօրոտատես, Գեղադէմ:

Իրեն Նաժիշտ-Աղջիկներուն հետ մէկտեղ՝
Թագաւորի Պալատէն վար իջան՝ կ'երթան դէպ Այգին,
Ուր արեւոտ Արքունական-Պարտէզին մէջ պըտըտին,
Ուրախութիւն ընեն, հըճուին, օ՛ր անցնի...:

Եպարգոսին ու Վէգիրին աչք որ ինկաւ այդ Աղջկան երեսին՝
Երկուքին ալ՝ գլուխներէն խելքը թըռա՛ւ ու գընաց...,
Անյուշ ինկան ու մընացին տեղնիտեղ...:

Մէկ պահէ մը՝ Թագաւո՛րն էր, — Մարդ ուղարկեց տեղին վրայ,
Եկան տուին՝ երկու Մարդերն ու հանեցին Իր Պալատ:
Մարդերն՝ այդտեղ՝ Թագաւորին այլեւս ոչ մէկ բան չըսին,
Ելան իսկոյն՝ տեղէն Թողին, լուտումանջ՝
Ձամբայ ինկան դէպի իրենց տիրոջ մօտ: —
Իրենք իրենց մէջ մտոք ըրին ու ըսին.
«Ո՛ր այս աղջիկ կին չըլլայ մեր Նաքանին՝
Մենք ոչ Անոր Մարդպետ 1) ըլլանք՝ ոչ ծառայ:
Որ Անոր Հայր՝ մեր Աշուրին 2) հարկատու է պարտադիր,
Այն Աղջիկը մեր Աշուրին կընիկ չըլլայ ու չիպայ՝
Թագաւորին առաջ այլեւս՝ Մենք չե՛նք մընար, չե՛նք դադրիր...»:

7. Պաեգամաւորները կ'երթան Եղպաեմին Եռապաեգի-Թագաւորին

ՋՍ·9,10, Ջկ·11, 6·61, Հ·4.

Գացին հասան իրենց տեղը, Թագաւորին դէմն եկան.
Թագաւորը հարցուց ըսաւ. — «Էֆ՞ր չուտ դարձաք...: Տուրք բերի՞ք»:
—«Ապրա՛ծ կենաս, տէ՛ր Թագաւոր, — ըսին —, Ֆո Տո՛ւն չէն մընա՛յ,
Տուրքն ի՞նչ պիտի ընես Դուն..., —
Ի՛նչ որ պէտք է՝ ունի՛ս Դուն..., —
Հարըստութիւն, Գանձ ու ինչքեր եւ ապրանք...,
Հող ու երկիր, անթառ զօրք ու բստրուվներ...:
Մենք այնպէ՛ս բան մ'ենք տեսեր..., —

---

1) Մարդպետ, *Մեծաւոր*: 2) Աշուր, Հին Ասորեստանի (Նինուէ) *ինքնակալներուն յատուկ տիտղոս*, — Աշուր Բանի-Բալ, Աշուր Նաղըր-Ապալ, եւն.:

Աղէկ որ դեռ չը մեռանք...:
Դուն ըլլայիր...՝ երե՛ք ամիս՝ անյուշ գետին կ՚իյնայիր...»:

— «Է՛, ի՞նչ տեսաք...»,— հարցուց Անոնց՝ Թաղաւորն ալ,
[անհամբեր:
= Հայակըրօն Թաղաւորին՝ մէկ այն տեսա՛ր Աղջիկ մը կայ...,
[տէ՛ր Աբքայ...,
Դիչեր-ցերեկ չուտե՛ս, չխըմե՛ս...՝ միայն տեսքի՛ն նայիս Դուն...:—
Այնպէ՛ս խօրտում..., այնպէ՛ս հրեղէն Աղջիկ մ՚որ...,
Ա՛լ Բեղի ի՞նչ պիտի 1)՝ անկէ աւելի... .—
Այդ մէ՛կ Աղջիկ՝ մինակ՝ կ՚արժէ ամե՛ն բան...:

Մենք դընացինք հասանք այնտեղ, Հայաստան,
Ճամբան՝ մութը տըւաւ Մեր վրայ, մըտանք ներս.
Մըտանք Բաղաք, Բաղաք լո՛յս էր օրուան պէս...:

Մէկ Մարդու մը հարցուցինք ու ըսինք թէ, —
«Ասիկ ի՞նչպէս՝ աշխարհ ամեն մուտ-մութ է՝
Ու ձեր Բաղաք՝ ցերեկւան պէս վառ լոյս է...».

Թէ՝ «Իրա՛ւ, մեր Թաղաւորն Աղջիկ մ՚ունի մէկհատիկ,
Որ Արեգակ ինչ կը մըտնէ, իրիկուն երբ մութ կ՚իյնայ՝
Անի կ՚երթէ իր առաջքին 2) ղէմ կը նըստի կը նայի,
Անոր լոյսը Բաղքին վըրայ կը զարնէ,
Ամեն մարդ իր դործին կ՚նստի՝ կը բանի 3)»:

Պէտք է՝ Դուն այդ Աղջիկ բերես՝ ընես Բեղի Թագուհի.
Անի բե՛ր Ձո տուրքին փոխան, ա՛լ Բեղի տուրք չը՛ պիտի:
Այն Թաղաւոր՝ Բեղ, տէ՛ր Աբքայ, հարկաւոր է պարտադիր,
Թէ չըբերես Անոր Աղջիկն ընես Բեղի Թագուհի՝
Մենք ո՛չ Ձու քով ծառայութեան կը մընանք,
Ո՛չ Ձու առջեւ կը կանդնինք...»:

---

1) Պիտի, Պէտք է: 2) Առաջք, Դուրս առաջացած լուսամուտ, պատշգամ: 3) Բանիլ, Աշխատիլ, գործել:

8. Կռապաօսի-Թագաւորը՝ Իր Աւագանիին Հետ Կրխոհրդակցի
Ձկ·12,13,14, Ձ·(Ձկ·13), 8·61, Լ·5, Ձ(Լ·5), Լ·62, Ձ(Ե·608), Ե·608, Ձ·՝Հ·4, 404·

Կռապաչոի-Թագաւո՛րն էր,— երբոր լըսեց ու ձայնն իմկաւ ականջին՝
Եկաւ ժողվեց Աւագանին, բերաւ Դիւան 1), Իրեն դէմ. —
— «Հայոց-Աղքան, - ըսաւ -, ունի խօրոտատես մէկ Աղջիկ·
Գէտք է երթամ՝ այդ Աղջիկը՝ Ինձի համար կին բերեմ:
Տըւաւ՝ տըւաւ·
Թէ չըտըւաւ...՝

Մ'ինք ըրեր եմ՝ երթամ Գահէն վա՛ր առնեմ,
Հայաստունը 2) հիմէն կըտրեմ..., Ազգը տեղով 3) չորցընեմ...: —
Առնոց Ազգը՝ արդէն ատո՛վ է վըճռեր...»:

Աւագանին, Մեծաւորներն իմ՛նչ ըսին. —
— Ապրա՛ծ կենաս, տէ՛ր Թագաւոր, — ըսին իրենց Աչուըին —.
Հայոց-Աղքան՝ իր Ազգն ամեն կուտայ կըտրել սըրահար,
Եւ իր Աղջիկ Մեզ չի՛ տար..., —
Անոնք՝ ըսես՝ հայակրօն են, Մենք՝ կռապաչտ...»:

— «Կամով չիտայ, — ըսաւ Աղքան —, կ'երթամ բըռնի կը բերեմ...:
Հա՛, կանգնեցէ՛ք..., Զօ՛րք ժողվեցէք...,
Գացէ՛ք՝ Աղջիկ չո՛ւտ բերէ՛ք...:
Աղջիկ կուտայ...՝ կուտայ· — չի՛ տար...՝
Տակը վըրա՛յ կ'ընէք Քաղաք,
Քարը քաղէք, աւազ մաղէք՝
Ի՛նչ կայ ժողվէ՛ք՝ ու բերէ՛ք...»:

9. Կռապաօսի-Թագաւորը՝ Թուղթ Կըղրկէ Հայոց-Աւրհայիս
Ձ·՝Հ·4, Լ·5,62, 8·61,62, Ձ(8·61), Կ·103,2, ՁԿ·15,16, 17, ՁՍ·11,12, Ե·530,476,608

Եկան որ Զօրք ժողվեն՝ երթան կապուտ-կողմ,
Կռապաչոի-Թագաւորը ղըրկեց քանի մ'իր Մեծեր,
Թուղթ մ'ալ ղըրկեց՝ հանեց տըւաւ Անոնց ձեռ, —
— «Գացէ՛ք, — ըսաւ — Ինձմէ բարե՛ւ տարէք Կումրիկ-Աղքային,
Ըսէ՛ք Թող իր Աղջիկն Ինձ տայ, իրարու հետ մա՛րդ ըլլանք 4)»:

---

1) Դիւան, *Մեծ սրահ՝ արքայական ունկնդրութեան յատուկ, դահլիճ*: 2) Հայաստուն, *Հայոց Տուն, Հայաստան-Աշխարհ*: 3) Տեղով, *Եղածին պէս, ամբողջովին*: 4) Մարդ ըլլալ, *Ինամէ դառնալ*:

Զօրականներն ելան դացին, կապուտ-կողի-Թագաւորին մօտ հասան, —
— «Մեր Թագաւոր Մեզ ղրկեր է, — ըսին Ամենք մէկբերան —,
Բարեւ կ'ընէ, կ'ըսէ որ «Քո Աղջիկն Ինձի կընիկ տաս,
Բարեկ'մանանք, իրարու հետ մա'րդ ըլլանք»:
Թէ որ չի տաս՝ քար կը քաղենք, աւաղ կ'մաղենք՝ կը տանինք...,
Ձեր ժողովուրդ ամեն մէկտեղ կը մորթենք...:
Մեր Թագաւորն այսպէ'ս կ'ըսէ», — ըսին Անոնք՝ ու կեցան:
Կումբի-Աստղիկ-Թագաւորն ալ ի՞նչ ըսաւ. —
= «Մենք հայկերօն՝ Դուք կըռապաշտ՝ ազգովին...
Ի՞նչպէս կ'ըլլայ որ իմ Աղջիկ՝ կըռապաշտի պիտի տամ...:
Աստուածապաշտ աղջիկ՝ երբեք՝ կըռապաշտի հարս կուտա՞ն...»:
— «Կամով ըլլայ՝ պիտի տաս,
Կըռւով ըլլայ՝ պիտի տաս...», —
Ըսին Սինամ-Թագաւորի Մարդիկները:
= «Կըռի՛ւ կ'ընեմ՝ ու իմ Աղջիկ չե՛մ տար ես...». —
Ըսաւ Կումբի քաջ Արքան:
Ապա դարձաւ՝ թէ «Դուք ձեր տեղ հանգի՛ստ կացէք քանի մ'օր,
Ես Ձեզ ըստոյդ պատասխան մը կուտամ՝ կ'ղրթաք ձիաւոր»:

10. Հայոց-Արաբաց՝ Կրխոռհրդակցի Ատզաճիին Հետ

Ձկ·18,19,20, ՁՍ·13,14, Լ·6, Ձ·՝ Լ·6·

Ելաւ ժողվեց իր Իշխաններ, Աւագանին ու Մեծեր, —
— «Ընկէք, ըսաւ —, այսօր Սինամ-Խան-Թագաւոր ղրկեր է՝
Իմ Աղջիկը՝ Իրեն համար կին կ'ուզէ...:
Նայինք տեսնենք՝ Դուք ի՛նչ կ'ըսէք, չէք ըսեր, —
Տա՞նք..., չի տա՞նք...:
Մեր Հայ-Աղգին վայել չ'է՛ որ՝ կըռապաշտին աղջիկ տանք...»:
Մարդեր ժողվե՛ց..., մէկն ըսաւ «Տա՛նք», մէկ՝ «Չի՛ տանք».
Մէկն ըսաւ թէ՝ «Կըռի՛ւ ընենք Անոր հետ».
Մէկ-քանին ալ ելան ըսին բարձրաձայն, —
= «Ապրած կենաս, տէ՛ր Թագաւոր, խնամատար.
Մենք մեզ Ամե՛նքս կըտրել կուտանք Քո սիրոյն,
Ու մեր Աղջիկ՝ կըռապաշտին չենք խտար 1)...: —
Ապա, — ըսին —, Աղջիկ Քո՛ւդդ է. Հայր՝ Դո՛ւն ես..., —

1) Չեմ խտար, Չենք յօժարիր 'ի տալ. չե՛նք տար:

Կուտա՛ս, չե՛ս տար...՝ Դո՛ւն դիտես...»:

Մէկը ա՛յպէս, մէկը ա՛յնպէս, վիճեցին՝ թեր ու դիմաց,
Վերջ՝ մէ՛կ կերպով՝ Անոնց խօսքը՝ մէկ մէկու վրայ չըդընաց...:
Առոր վըրայ՝ Մեր-Թագաւոր վերցուց Անոնց ի՞նչ ըսաւ. —
— «Աղէ՛կ, — ըսաւ —, Դուք լա՛ւ կ՚ըսէք Ամե՛նքդ ալ...,
Բայց ես հիմա Կըռապաշտի-Թագաւորին հետ կըռուելու ուժ չունի՛մ:
Որ 1) իմ Աղջիկ Իրեն չի տամ՝ Մեր Հայաստան կը կոտորէ, անիրաւ.
Իմ Ազգն ամեն կը տըրորէ ու կը կըտրէ արմատէն...,
Իմ տեղերը 2) բոլո՛ր պիտի դըրաւէ...»:

11· Հայոց-Ահրման՝ Կըխտհրդակցի Թագուհիին Ու Աղջկան Հետ

ՁՍ·14,15,16, Զ·՝Լ·62, Զ·՝ՁԿ·21,22, Լ·6, Ճ·62, Կ·103,104, Զ(Կ·104)·

Ելան բերին Թագաւորի Թագուհին, —
— «Դէ՛, Թագուհի՛, — ըսին —, արի՛ մէկ նայի՛նք...,
Սինամ-Ծանը ուղարկեր է՝ Մեր Աղջիկը հարս կ՚ուզէ.
Ժողովուրդը չի՛ Թողուր տանք..., նայինք Դուն ի՞նչ մըտքի ես...,
Դուն ի՞նչ կ՚ըսես..., տա՞նք՝ Թէ՞ չէ՛...»:

Թագուհի՛ն էր, — խօսեց ըսաւ համարձակ. —
= «Ապրա՛ծ կենաս, տէ՛ր Թագաւոր, Է՞ր չի տաս...: —
Մենք Սինամ-Ծան-Թագաւորին հարկատու ենք ու տըկար.
Աղջիկով մը 3)՝ աշխարք իրար չե՛ն ընք 4) խառներ...
Մէկ աղջիկ մ՚է..., պէտք է որ տանք ու երթայ...»:

Թագաւորն ու Ասպանին հետիհետ 5),
Շըտնորհակալ եղան Իրեն, ու ըսին. —
= «Երկա՛ր ապրի Թագուհին...,
Ա՛յսպէս բարի խօսեցաւ..., —
Աղջիկ մ՚ապով 6) Մեզ չը խառնեց իրար հետ.
Զար մըտքով չըխօսեցաւ...»:

Թագաւորի-Աղջիկ՝ կանգներ՝ մըտիկ կ՚ընէ երդիքէն. —
Ըսաւ, «Որ իմ Հայրը չափէր ու դիտնար... 7),

---

1) Որ, եթէ որ, թէ որ: 2) Տեղեր, երկիրներ: 3) Աղջիկով մը, Աղջկան մը համար, պատճառով: 4) Չե՛նք, Չենք կրնար: 5) Հետիհետ, Նոյնհետայն, իսկոյն: 6) Ապով, Պատճառով, (աղջկան մը) համար: 7) Այսինքն «Իր դիտին գալիքը դիտնար...»:

Ա՛յդքանի մեղք՝ չէր ձըգեր իմ չըլինքին…1),
Ձիս կուտար…»:

Թագաւորը զարճաւ իրեն իշխաններուն ի՞նչ ըսաւ. —
— «Պէտք է որ ես՝ իմ Աղջիկը կանչեմ իր կամքն ալ առնեմ…»:
Ելաւ դըրկից՝ ու հոն բերաւ իր Աղջիկ. —
— «Որդի՛, — ըսաւ —, քաղցրի՛կ զաւակս իմ, Լուսիկ.
Կըռապաշտի-Թագաւորը՝ ղըրկեր է՝ պիտ՝ տանի Քեզ…
Նայինք աս 2) Դուն ի՞նչ կ՝ըսես…:
Այս Ամենն ալ՝ կապուած են Քեզ, Քու խօսքիդ…:
Որ 3) Դուն չառնես Կըռապաշտի-Թագաւոր՝
Ան իմ ձեռքէս կ՝առնէ իմ Թագն ու Երկիր…»:

= «Կակո՛ 4), — ըսաւ —, ես Քեզ ըսեմ «Ձիս հա՛ն տուր…»,
Դուն պիտի 'սես՝ «Երթիկ կ՝ուզէ իմ Աղջիկ…»:
Ես Քեզ ըսեմ «Ձիս մի՛ տար…», —
Կըռապաշտի-Թագաւորը պիտի դայ…՝
Մեր ժողովուրդ ամե՛ն պիտի կոտորէ…,
Քու երկիրներն ու քաղաքներ ըզրաւէ…:
Աղէկն ա՛ն է՝ որ ես երթամ՝ այդ Ամենի ու իմ Հօր-Մօր փոխարէն…:
Ես մինակիկ մէկ Աղջիկ մ՛եմ, վերջապէս…,
Ա՛յնքան Մարդու մեղք ու արունք 5) չե՛մ իյնար…:
Ան ինչ Քու տեղն ու երկիրներ պիտ՝ երթան,
Ա՛յնչափ Մարդիկ պիտի իյնան թուրի տակ…, —
Թող մէ՛կ մարդու վընաս չըլլայ ինձ համար…,
Ես մինակուկ մէկ Աղջիկ մ՛եմ, ե՛ս կ՝երթամ…»:

12. Աւազանին Խորհուրդ Կուտայ Թագաւորին

ՀՍ·17, Հ·, Յ·62, Լ·6,62, Հ(Լ·62), Հ՝Լ·6, Կ·104,103, Հ(Կ·104), Հ·4,404, Հ(Հ·4)·

Այն ժամանակն ալ՝ այդ Մարդեր՝ Թագաւորին ի՞նչ ըսին. —
Պապ-Աստղիկի հետ խօսեցան ու ըսին. —
— «Ապրի՛ծ կենաս, տէ՛ր Թագաւոր բարեպաշտ,

---

1) Շլիմբ, Վիդ: 2) Ատ, Այդ կէտին մէջ, այդ խնդրին նկատմամբ: 3) Որ, թէ որ երթէ որ: 4) Կակո՛, Հա՛յր, Հայրի՛կ: Նոյն նաեւ Բաբո՛: 5) Արունք, Արիւնհեղութիւն:

Թէ որ տա՛ս ալ...՝ պէտք է որ՝
Այդ Սինամ-Խան-Թագաւորին Դուն լուր տաս, —
Եթէ Անոր տըղայ եղաւ այդ կապէնն՝
Մեր Երէցն ու Մեր Տիրացուն պիտի երթան Այդ Երկիր,
Ու Թոնիրի վըրայ կընքեն 1) մեր Տըղան: —
Թէ կ'ընդունի՝ Մեր Աղջիկը տա՛նք Իրեն.
Թէ չէ՝ չե՛նք տար մէկ ձեւով.
Ինչ որ կ'ընէ՝ թող ընէ..., —
Թող մեր Քաղաք աւրէ տանի այդ Խաբան...»:

Անկէ անդին՝ Աղջիկ վերցուց եւ ըսաւ. —
= «Ես իմ Հայու հաւատին մէ՛չ կըկենամ...,
Թէ չէ՝ ես Ան ո՛չ կ'առնեմ ու ո՛չ կ'երթամ...»:
— «Զաւակ՛ս, - ըսաւ Աստղիկ Հայրը՝ կըսկըծուր 2) -
Որ Դուն չառնես Կըռասպաչոխ-Թագաւոր՝
Մեր Ամենիս բանը պէշ է այս անգամ...: —
Ան պիտի գայ՝ մեր Գահն ու Հող պիտ՝ առնէ...,
Մեր ծողովուրդ ջարդէ-փըշրէ, տըրորէ...,
Եւ կա՛մ գերէ՝ տանի հետ...:
Եթէ Քեզ տամ...՝ Ան կըռասպաչոխ ու Մենք Հայ,
Քեզ ի՞նչպէս տանք, ու հարս երթաս կամաւոր...:
Բայց ի՞նչ կըրնանք..., կա՛մ պիտ՝ երթաս բախտիդ հետ,
Կա՛մ Մեր-Երկիր պիտի ընեն քանդ-աւեր...»:

Աղջիկն այնտեղ միտք ըրաւ ու ի՞նչ ըսաւ. —
«Որ Ես չերթամ՝ իմ Հօր-Երկիր կ'աւերեն...
Քար կըքաղեն, աւազ կ'մաղեն, կըտանին...:
Ես մէ՛կ անձ եմ..., լա՛ւ է երթամ՝ Ե՛ս զոհուիմ,
Քան ամբողջ Ազգ եւ իմ Հօր Գահ կորսըւին...»:

Աղջիկ լսեց Հօր աղաչանքն ու ըսաւ. —
= «Բաբօ՛, - ըսաւ -, կը տեսնեմ որ՝ թէ Ես չերթամ կամուին,
Այդ Ամենքը, Իմ պատճառով, պիտի Ջարդեն, կոտորեն,
Անոնց տըղաք պիտի մընան ողբ-անոյէր,

---

1) Հայաստանի մէջ՝ եկեղեցի չգտնուած տեղ՝ Թոնիրի վրայ կը կատարեն կնունք ու պսակ, Թոնիրը՝ տաճարի չափ սուրբ համարելով: Տե՛ս Հած. 26: 2) կըսկըծուր, կսկիծը սրտին:

Չիս անիծեն այդ Որբեր···,
Ցետոյ՝ Չի՛ս ալ պիտի բըռնեն ու տանին, —
Աղէկ ա՛ն է՝ որ ես երթա՛մ կամաւոր,
Չիս չանիծե՛ն այդչափ Որբ ու Երախայ,
Քո Գահն ու Քո Երկիրն ալ Քու ձեռք մընայ:

Որ կուտաս՝ տո՛ւր, Չիս կը տանին՝ Թող տանին···:
Մ'ինակ Թէ՝ ես հայակրօն եմ, Ան՝ կռապաշտ, —
Իմ Երէցիկ-Հայրը ղրկես Ինձի հետ,
Որ դայ այնտեղ՝ Ինձ ժամ ըսէ ձայնաւոր,
Ես իմ Հայու աղօթքն ընեմ ամեն օր···»:

Աղջիկն իր խօսք երբոր տըւաւ, ու Թագաւորն իմացաւ, —
— «Ուզեմ-չուզեմ, - ըսաւ -, պիտ'տամ ես իմ Աղջիկ, վերջացա՛ւ···»:

13. Թորոսի խորհուրդն, Ու Թագաւորին Պատասխանը՝
Կռապաշտի-Թագաւորի Դեսպանութեան

2(Լ·6), Լ·6, 2Կ·23,29, 2Մ·18, Կ·104, 2(Կ·104), Հ·404, Ե·530, 476, 608·

Այդ Աղջկան-Մայրը ունէր՝ Թորոս անուն մէկ եղբայր·
Շա՛տ խելացի, ճարտարամիտ մարդ էր Ան: —
Ելաւ Աստղիկ-Թագաւորին ինչ ըսաւ· —
— «Տէ՛ր Թագաւոր, եկո՛ւր, - ըսաւ -, պայմա՛ն դընենք այդ
[Մարդուն, —
Թէ՝ «Մեր Աղջիկ դեռ պըղտիկ է, չ'է՛ հասած 1),
Կըխընդրենք որ Դուն մէկ տարի՝ ժամանակ տաս, ըսպասես,
Որ Մեր Աղջիկ մեծնայ՝ ա՛պա Քեզ հարս տանք···»:

Թագաւո՛րն էր, — ելաւ կանչեց Կրօսպաշտի Մարդիկներ, —
— «Գացէ՛ք, - ըսաւ -, ձեր Արքային բարե՛ւ ըրէք եւ ըսէ՛ք, —
Թէ՝ «Ես Անոր մարդութիւնը 2) սիրեցի·
Մէկ աղջիկ է, մատա՛ղ ըլլայ Աչուրին·
Իմ Աղջիկը տըւի Իրեն կընութեան: —
Միայն՝ արդար խընդիրք մ'ունիմ Իր մօտէն· —

---

1) Հասած, Արբունքի հասած: 2) Մարդկութիւն, Բարեկամութիւն:

Իմ Աղջիկը դեռ պըզտիկ է, չ'է՛ հասեր,
Մէկ տարի Մեզ ժամանակ տայ, ըսպասէ,
Որ իմ Աղջիկ մեծնայ՝ ապա հարս ղըրկենք։

«Մինչեւ այդ օր, - ըսէ՛ք -, Դուն Քու պատրաստութիւն կը տեսնես,
Մենք ալ ատկին՝ մեր Աղջկան ձեռք ու ոտքը կը տեսնենք 1)
Նոր 2) հարսնառի կուգաս՝ կուտանք՝ կը տանիս...։

Իմ Աղջիկն ալ՝ Քո մարդկութեան որ ես տամ՝
Ան իր Աստուած պիտի պաշտէ՝ Մեր կրօնքով,
Դուն քո կուռքեր պաշտես՝ ինչպէս որ կ'ուզես...»։

Մէկ ալ՝ երբոր իմ Աղջկան ճիժ 3) ըլլայ՝
Մեր երէց գայ՝ Տըղան կընքէ, ե՛ւ դառնայ։
Թէ հաւան է՝ կուտանք, Թէ չէ՝ Ի՛նք պիտի..., —
Ի՛նչ որ կ'ուզէ՝ Թող ա՛ն ընէ, ա՛լ չենք տար...,
Կ'ուզէ կըռի՛ւ ընէ Մեզ հետ՝ Թէ չընէ...»։

14. Դեսպանութեան Դարձը Ու Կռապաշտ-Թագաւորին Հաւանութիւնը

ՉԿ·24, Լ·6, Չ·, Հ·404, ՉՍ·19, Ե·530, 476, Չ(Ե·608), Լ·62·

Անոնք եկան՝ գացին իրենց Թագաւորին եւ ըսին. —
— «Թագաւո՛ր, Դուն ապրա՛ծ կենաս յաւիտեան,
Հայոց Կումըրկ-Թագաւորը բարեւ ըղրաւ ու ըսաւ. —
«Քո մարդութիւն սիրեցի ու մէկ խօսքով՝
«Իմ Աղջիկը տըւի Քեզի կընութեան»...։ —
Մխայն Քեզմէ խընդիրք մ'ունի, տէ՛ր Աբքար,
«Իմ Աղջիկը փոքր է, - կ'ըսէ -, դեռ արբունքի չ'է՛ հասած,
«Մէկ տարի Դուն ժամանակ տաս, ըսպասես,
«Որ իմ Աղջիկ մեծնայ՝ ա՛պա Քեզ հարս տանք։
«Մինչեւ այդ օր՝ Դուն Քո՛ւ կողմէ պատրաստութիւն կը տեսնես,
«Մենք ալ Աղջկան ձեռք ու ոտքը կը տեսնենք,
«Նոր հարսնառի կուգաս, կուտանք, կը տանիս»։

Մէկ ալ կ'ըսէ՝ «երբ իմ Աղջկան ճիժ ըլլայ՝
«Մեր երէց գայ՝ Տըղան կընքէ, ե՛ւ դառնայ։

---

1) Ձեռք ու ոտքը տեսնել, *Օժիտի եւ ամուսնական պատրաստութիւնները տեսնել։* 2) Նոր, *Անկէ՛ յետո՛յ, ապա՛։* 3) Ճիժ, *երախայ, զաւակ։*

«Թէ հաւան է՝ կուտամ, թէ չէ՝ ի՛նք դիտէ·
«Ի՛նչ որ կ՛ուզէ՝ Թող ա՛ն ընէ, ա՛լ չեմ տար·
«Կ՛ուզէ կըռնէ ընէ Մեղ հետ՝ թէ չընէ»···:»

Կըռապաշտի-Թագաւո՛րն էր, — եւաւ դըրկեց ու ըսաւ· —
«Թող Իր ըսա՛ծն ըլլայ, - ըսաւ -, կ՛ընդունիմ·
«Ես մէկ տարի ժամանակով կ՛ըսպասեմ·
«Ու երբ Ինձի Իր Աղջիկէն ճիժ ըլլայ՝
«Ես ուղարկեմ՝ երէց բերեմ ու կընքեմ»:
Ըսաւ՝ «Դուն լոկ Քու Աղջիկը տո՛ւր Ինձի,
«Իմ անունը Քո Աղջկան անձին վըրայ Թող ըլլայ,
«Ինձ Թող ըսեն՝ «Հայոց Աստղիկ-Թագաւորի փեսան է», —
«Կը բաւէ՛···:
«Քո Աղջիկը Միշտ Իր Աստուա՛ծ Թող պաշտէ,
«Մենք ալ պաշտենք Մե՛ր Կուռքեր···:
«Ես պատրաստ եմ, մինչեւ անդամ, Իմ Պալատի դէմ-դիմաց՝
«Ժամ չինել տալ, Տէրտէրն ալ մէջ՝ Քո Աղջկան ժամ ըսէ»:»
Ասոր վըրայ՝ Աղջիկն այնտեղ մընաց տարի մ՝ նըշանած 1):

15. Լուսիկ-Թագուհու Հոգեկան Տագնապն Ու Ցեսիլը

Զ·՝Լ·6, Զ(Լ·6)·

Ասոնն անցաւ···, — Աղջիկ կեցաւ մխաք ըրաւ, —
«Լաւը ա՛յն է, - ըսաւ ինքնին, օրին մէկ -,
Որ ես երթամ Զիս ըսպանեմ՝ մէկ անգամ···,
Ոչ թէ երթամ՝ կըռապաշտին կի՛ն դառնամ···, —
Իմ լուս-հաւատ՝ ես իմ ձեռքով կորուսեմ···»:

Ըսաւ ու չըսաւ···՝
Ելաւ իՙնչ ըրաւ Լուսիկ-Թագուհին, —
Հուրի-հըրեղէն, հըրա՛շք-Աղջիկը Հայոց-Աշխարհին· —
Այն օրէն՝ի վեր՝ որ Պալատին մէջ,
Իր Թագաւոր-Հօր ու Թագուհի-Մօր,
Առաջնեին, Ամենո՛ւն առաջ՝
«Աղէկ այն է որ, - ըսած էր յաժար —,

1) Նշանած, Խօսեցեալ:

«Շատերու վոխան՝
«Ե՛ս երթամ մխայն», —

Այն օրէն ՚ի վեր՝
Լուսիկ-Թագուհու մխաքը Իրեն չէ՛ր։ —
— «Ես ի՞նչպէս թողում՝ իմ ծերունի Հայր,
Ինծի կաթ տըւած՝ իմ անուշիկ Մայր,
Կա՛մ երթամ մոռնամ՝ Մեր Հող՝ սըրբաւանդ,
Եւ իմ Պապերու լուսեղէն հաւատ...։
Լաւ է որ մեռնիմ՝ չը տեսնեմ այդ օր...,
Պարապ ե՛ս դառնան՝ Կանն ու Հարսնեւոր...»։

Կ՚ըսէր ու կուլար...՝
Ինք՝ Իրեն համար, —
Թէ՛ դըլուխ բարձին,
Կա՛մ դուրս՝ առանձին...։

Եւ օր մըն ալ, առտուն կանուխ,
Աչքերուն մէջ՝ արցունք բուխ-բուխ՝
Մատուռ-Սարի ճամբան ՚ի վեր
Ջալեց եկաւ՝
Մխրան ու հոգին կարեվէր։
— Մխաքը ի՞նչ էր...։
= Վա՛րչ տալ կեանքին...։
— Ի՛նքն ալ չ՚իտէր 1), այդ ժամին։

Ծանկարծ տեսաւ՝ ոտքին առաջ՝
Փոքրիկ Լուս-Ջա՛ր մը սընկած...։
Սխրտը թրտա՛ւ...,
Ու վայրկենին՝
Հրեշտակի պէս՝ երկու ձեռներ ափ-կըցած՝
Լուս-Ջարին ոտք՝ ծունըր դըրաւ՝ աղօթեց։

Լուսաթաց էր։ —
Աղօթքան կը ճօղճըղուէր 2)։
Շո՞ղն Արեգին՝
Թէ՞ Իր հոգին՝

---

1) Չ՚իտէր, Չը՛գիտէր, չէ՛ր գիտեր։ 2) Ճօղճղուիլ, ճիւղեր նետել, բացուիլ, ճաճանչել (արեւածագի)։

Լուս-Քարին ներս,
Մատուռի պէս,
Մո՛ւտ գըտան...:

Շողը իջաւ, ինքն ետուէն. —
Որանի մ'ղէմ կանդ առաւ...:
Աչքը ինկաւ Սուրբ-Մատունքին,
Պագից դըրաւ ճակատին: —
Ցաւը մոռցաւ...: —
Գըլուխ վերցուց՝
Լուս-Քարին ուր գըտաւ գ'ինք: —
«*Հըրա՛չք էր այս...՝ Քէ՛ չէ Տեսիլք...՝ սըրբալոյս: —*
Սիրտըս ամո՛ւր, հոգիս յօժա՛ր կըզդամ ես...:
Շատոց 1) *փոխան՝*
Հիմա յօժար՝
Իմ անձը զո՛հ կուտամ ես...»: —
Ըսաւ Լուս-Աղջիկ՝
Դէմքը չողակաթ...,
Ու մըրմունջ բերնին՝
Դարձաւ իր Պալատ 2)...:

Բ. ԼՈՒՍԻԿ-ԹԱԳՈՒՀԻՆ ՀԱՐՄՆՈՒԹԻՒՆԸ

16. Լուսիկ-Թագուհին Հարս Կ'երթայ

Ջ·, ՋԿ·25,26,27,28,29, 30,31, Հ·404,4, Ջ(Հ·4,404), Լ·62, Ե·476,530,608, Ճ·62·

Տարիներ անցաւ..., —
Կըռապաշտի-Թագաւորը՝ ելաւ կանչեց իր Մեծեր,
Ժողվեց բոլոր Աւազանին, երիտասարդ ու թէ ծեր,
Իր Հարսնառը 3) *կապեց՝ ղըրկեց որ երթան՝*
Հայոց-Աստղիկ-Թագաւորի Աղջիկ բերեն Իրեն կին:

---

1) Շատոց, Շատերու: 2) Հատուած 15-ը՝ բանաստեղծօրէն ընդլայնումն է Լ·6-ի փոքրիկ հատուածին: Համեմատել նաեւ Կ·2՝ հատուած 2-ի վերջին երկու տողերուն հետ, ուր խօսացած է՝ աղջկան ներքին տագնապին պատկերը:

3) Հարսնառ, Հարսը երթալ առնելու թափօր:

Հարսնեւորներ եկան հասան, ու հիւր եղան կապուտ-կող։

Պապ-Թագաւոր՝ իր Աղջկան ձեռ-ոտ տեսաւ, պատրաստեց, —
— «Լուա՛ի կ, աղջի՛կս, - ըսաւ դրթոտ ծերունին —.
Կրտսպաշտի-Թագաւորը՝ խօսք է տըւեր մարդու պէս՝
Քեզի համար Պալատ ու Թամ պիտի չինէ յատկապէս.
Մէջն ալ Քո ծեր Երէց կենայ՝ Թամ ըսէ Քեզ՝ իր կարգին,
Որ Քու Աստուած՝ Դուն ուզածիդ պէս պաշտես»։

Աւոր վըրայ՝ Աղջիկն այլեւս համբերատեցաւ ու չ'իլաց 1). —
«Մեծ է Աստուած՝ իր զօրութիւն...», - ըսաւ՝ իր կամք զօրացուց,
Թագաւորի ղըրկած Մարդոց հետ գընաց...։

Ելան քերին՝ ձի հեծուցին Մովի-Լուսիկ-Թագուհին,
Տըւին Աւոնց, Հարսը առին ու եկան։

Կումրի-Աստղիկ Հայ-Արքան ալ՝ իր Մարդերով, մեծաշուք,
Ճամբու դըրին Հարսն ու Հարսնառ՝ քանի մ'Թամու ճանապարհ։

Այդ Եպարգոսն ու իր Մարդեր՝ դարձան ապա՝ ի՞նչ ըսին. —
— «Կումրի՛կ-Արքայ, ա՛լ ե՛տ դարձիր, չընորհակալ ենք, - ըսին»։
Պարոյր-Աստղիկ-Թագաւորը՝ կեցաւ այնտեղ ու դարձաւ,
Կրտսպաշտի-Թագաւորի Իշխաններուն ի՞նչ ըսաւ. —
= «Ես խընդիրք մը պիտի ընեմ ձեր Աչուրչն, չի՛ մերժեր...»։
— «Լսէ՛ նայինք՝ ի՞նչ է, - ըսին -, Պա՛պ-Արքայ...»։

Մեր-Թագաւոր՝ Մեր-Երէցը դըրեր էր իր Աղջկան հետ,
Թէ՝ «Կ'երթաս իմ Աղջկան հետ Հարսնեղբայր 2),
Աղօթ կ'ըսես ամեն օր ու ամեն Թամ, —
Ձես Թողուր որ Աստուած մոռնայ Ինքնակամ», —
Վերցուց այդտեղ՝ Կրտսպաշտի Եպարգոսին խօսեցաւ, —
= «Իմ Խընդիրքս ա՛ն է, - ըսաւ -, որ այս Աղջիկ ինչ ծըներ՝
Մինչեւ հիմա՝ այդ Երէցն է եղեր Անոր չահացող ու պահացող 3),
Ահա՛ այդ ծեր, մօրուսաւոր, ինչ Մենք Տէրտէր կը կանչենք, —
Այդ Երէցը՝ իմ Աղջկան մօտ կենայ ու Թա՛մ ըսէ,
Գ'Անի պահէ ու խընամէ՝ մինչեւ մահ...։

---

1) Չ'իլաց, Չըլացաւ։ 2) Նորահարսին ընկերացող արիւնակից անձը՝ եթէ մարդ է՝ կը կոչուի Հարսնեղբայր, եթէ կին է՝ Հարսընֆոյր։ 3) Շահացող ու պահացող, Խնամող՝ դաստիարակող։

Չեր Թաղաւոր խօսք է տըւեր առաջուց՝
Որ ժամ չինէ՝ նոր Պալատի մ՛հետ մէկտեղ,
Որ իմ Աղջիկ՝ իր Աստուածը իր ուզածին պէս պաշտէ։
Նաեւ խընդիրք մ՛ալ ունիմ ձեր Աքանչէն, —
Մինչեւ եօթ օր՝ իմ Աղջըկան մօտ չերթայ···,
եօթ օր անցնի՝ ա՛պա երթայ Անոր մօտ···։
Իր երկրի կէսն ալ Մեզ կ՛ալան 1) պիտի տայ···»։

17. Լուսիկ-Թագուհին՝ Իր Նոր Պալատին Մէջ

Լ·62, Հ·4,404, ՀԿ·32,33,34,35,36, Ս·137, ՀՍ·20, Կ·104,2, Հ·

Աղջիկ Երբոր Կըտապաչուխ-Թաղաւորին մօտ հասաւ՝
Թաղաւո՛րն էր, —չատ դոհ մընաց, ուրախացաւ, խընդացաւ։
Իր Մարդիկներ՝ եւան Իրեն պատմեցին թէ՝« Տէ՛ր Արքայ,
Հայոց Կումբիկ-Թաղաւորը՝ բարե՛ւ ըրեր է Քեզի,
Կ՛ըսէ՝ «Ես մէկ խընդիրք ունիմ՝ որ այս Աղջիկ ինչ ծըներ՝
Մինչեւ հիմա՝ այդ երէ՛ցն է Զինքը չահեր ու պահեր 2)·
Այդ երէցը՝ իմ Աղջըկան մօտ կենայ ու ժա՛մ ըսէ,
ղ՝Անի չահէ՝ մինչեւ օրը մեռնելուն···»։

= «Գըլխո՛ւս վըրայ· ընդունեցի՛···», - ըսաւ Արքան՝ ակամայ։
— «Մէկ ալ, - ըսին -, Կումբիկ-Արքան կըխընդրէ՝
«Մինչեւ եօ՛թ օր՝ Թաղաւորը իմ Աղջըկան մօտ չ՛երթա՛յ»։»
= «Անիկ եօ՛թ օր թէ ըսեր է, - ըսաւ Արքան խընդալէն —,
Եւ քանի որ իմ մարդուքիւնն ալ սիրեց՝
Ու տէր եղաւ իր խօսքին, —
Իր Աղջիկը Ինձի տըւաւ, մա՛րդ եղանք՝
Անոր սիրոյն համա՛ր ըլլայ, ո՛ւխտ կ՛ընեմ՝
Չէ՛ թէ եօթ օր՝ Ես եօ՛թ տարի չ՛երթամ անոր անկողինն»։

Թաղաւո՛րն էր, — առաւ Աղջիկն ու պըսակեց Իրեն հետ·
Խաղ ու հարսնիս ղըրին ապա, եօ՛թ դիշեր ու եօ՛թ ցերեկ։
Աղջիկ ղըրաւ իր նոր չինած Պալատի մէջ՝ լուսաւոր,
Եօ՛թը դուռով՝ եօ՛թ սենեակէ Ներս փակած· —

---

1) կալաճ, փեսացուէն՝ հարսին հօրը տրուած նուէր։
2) Շահել-պահել, Խնամել, դաստիարակել։

Քառասուն-քառասուն Աղախինով, Նաժիշտով,
Ու երէցը՝ Մատուռին մէջ՝ իր սարքով։
Կապեց անոնց՝ հաց-կերակուր, ամեն բան, —
Ըսաւ, — «Կենա՛ք ձեր տեղ հանգիստ, ու Պալատէն դուրս չիգաք»։
Խօսքը բըռնեց, իր Նոր կընկան մօտ չը դընաց, չը տեսաւ...։
Մինակ Անոր հետ կըխօսէր՝ իր երդիքին Ավնատէն 1)։
Աղջիկ կանչեց իր Մեր-երէցն ու ըսաւ. —
— «Տէրտէ՛ր, - ըսաւ -, մեր հոգեկան հա՛յրն ես Դուն.
Ամեն օր ալ՝ մեզ ժա՛մ ըսէ՝ աղօթենք,
Մեր Հայրերու Աստուած պաշտենք՝ չը մոռնանք. —
Մինչեւ նայինք՝ ի՞նչ լոյս կաթի մեր գըլխուն...»։

18. Լուսիկ-Թագուհին՝ Երազ Մը կը Տեսնէ

Հ·404,405, Կ·104,2, ՉԿ·37, ՉՍ·21, Լ·62, Չ(Լ·62)·

Մնացին ատեն մ՝ Աստնք Իրենց ցաւին մէջ։
Մեր-երէցը՝ ամեն առաւօտ եւ իրիկուն ժա՛մ կ՝ըսէր·
Աղջիկ, Լուսիկ-Թագուհին ալ՝ աղօթք կ՝ընէր, կը ճըգնէր,
Իր Աստուածը կ՝օրհնաբանէր մինչեւ վերջ, —
Օր մ՝ալ նըստաւ՝ արցունք թափեց ու ըսաւ, —
— «Ըստեղծո՛ղ Տէ՛ր, ես ինկեր եմ Այս երկրին մէջ անօրէն,
Ինձի մէկ լոյս ու ճա՛ր մ՝ըրէ՝ ազատուիմ
Այս կրապաշտ-Թագաւորի ճանկերէն...»։

Տարի մը՝ թէ երկու՝ անցաւ՝ Իր հարս գալու օրերէն,
Մէկ գիշեր ալ, Աստուածմէ՛ էր, Աղջիկն երա՛զ մը տեսաւ։ —
Երազին մէջ Ալեւոր-Մարդ մը երեւցաւ ու ըսաւ. —
— «Ա՛խ, - ըսաւ -, քանի՛ տարի՝ հարս եկեր ես Աստուրին,
Բայց դեռ Անոր անկողինը չե՛ս դացեր։
Պէտք է որ Դուն՝ Թագաւորին խընդիրք ընես ու ըսես՝
Որ առաւ՝ մը՝ արգելք դընէ Քաղաքին՝
Որ՛ձ-որ՛ձեղէն ըսած մարդը՝ իրեն տունէն դուրս չ՝ելնէ,
Որ Դուն ելնես՝ քո քառասուն Նաժիշտներուն հետ մէկտեղ՝
Երթաս դաշտեր, ղիմացի սարն ու ծովափ...։

---

1) Ակնատ, Ակռնատ, փոքր պատուհան, բացուածք՝ ներսէն դուրս խօսակցելու կամ բան մ՝առնել-տալու համար։

Երբոր կ'երթաս՝ դիտացած ըլլաս որ այնտեղ՝
Անմահականաց-Աղբիւր մը կայ ինքնարուխ.
Հասնելուդ պէս՝ այն Աղբիւրին դլուխ կը նըստիս՝ կը հանդչիս.
Կը լըւացուիս, Անոր ջուրէն կը խըմես.
Այնտեղ կ'ուտես ու կը խըմես, կը հըրճուիս.
Ապա կ'ելլես՝ է՛ս կըզտնաս՝ կուգաս Տուն, —
Դուն Քու սըրտիդ փափաքներուն կը հասնիս...»:

19. Լուսիկ-Թագուհին՝ Առաջնորդութիւն Կ'ստանայ՝ Դուրս Ելնելու

2Կ·37,38,39,40,41,42,43, 3·62, 2(3·62), 2Ս·21, 2(Կ·2), Կ·104, 2(Կ·104), Հ·405,5, Լ·62·

Այդ մէկ օրն ալ՝ կըռապաչուխ-Թագաւորը ի՞նչ ըսաւ. —
«Ես ըսեր եմ որ «Մ՛ւսիս ըլլայ՝ ևօթը տարի չ'երթամ Անոր անկողինն»,
Արդէն ես Իր անկողինը չե՛մ երթար...,
Գո՛նէ երթամ տեսնելո՛ւ...:
Իմ կընիկն է. նայիմ տեսնեմ ի՞նչ դոյն է.
Աղէ՞կ է՝ թէ ի՞նչպէս է...»:

Ուղեց որ, դէ՛ 1), իր կընիկին մօտ երթայ, —
Մէկ տունի մէջ պառկէին:
Ելաւ դընաց՝ կընկան, Լուսիկ-Թագուհիի դըրան դէմ.
Աղջիկն այնտեղ իր մաղձ քամեց, նեղացաւ.
Երես դարձուց Թագաւորէն, ու լացաւ...:

— «Աղջիկ,- ըսաւ Թագաւորն ալ-, Քու դէմք ինչո՞ւ կախեր ես...
Ի՞նչ է պատճառ՝ սըրդողեր ես ու կուլաս...:
Քո Հայրն ինձմէ ևօթ օր խընդրեց՝ որ ես չի դամ Քու կողինք 2),
Ես ևօ՛թ տարի եմ ուխտեր..., —
Է՞ր կ'ըսըկիս 3) Դուն ինձմէ՞...»:

= «Զէ՛, տէ՛ր Արքայ,- ըսաւ Լուսիկ-Թագուհին -,
Ասի՝ ըսես՝ բա՛ն մը չէ՛ որ՝ ատոր համար սըրտնեղիմ...

---

1) Դէ՛, Դէ՛հ, ի՛նչ ըսես: 2) Կողինք, Անկողին:
3) Ընդկիլ, Սրդողիլ, վշտանալ, հակառակի դալ:

Չիս տըւեր են ֆեզի՝ որ Դուն իմ անկողին մըտնե՛ս ալ...
Ես անկողնի ապով 1) չե՛մ...»:
— «Հապա ինչի՞ ապով ես...»:
= «Մի՛թէ,- ըսաւ -, Ես Քըւչո՞ւն եմ՝ որ այսպէս՝
Չիս վանդակի մէ՛չ դըրեր ես Դուն այստեղ...,
Եօ՛թը դուռնով նե՛րս փակեր...:
Բրռնաւո՞ր 2) եմ...՝ Չիս դըրեր ես բանտի մէջ, —
Արեգակը՝ երդի՛նիվեր կը տեսնեմ,
Լոյսը կ՚առնեմ երդի՛նիվեր, այստեղէս...,
Չե՛ս թողուր որ՝ Տունէն դո՛ւրս դամ, օդ առնեմ...,
Երթամ մա՛ն դամ, աշխա՛րհ դիտեմ՝ մէկ անդամ...:

Իմ Հօր Քաղաք՝ մե՛ծ Արքունի-Պարտէ՛զ կար...,
Ես կ՚ելնէի՝ հո՛ն կ՚երթայի ամեն օր..., —
Մինչեւ իրկուն կըպըտտէի՝ կուզայի...:
Ա՛ք քանի՛ մէկ տարի է որ՝ Չիս դըրեր ես բանտի մէջ...,
Ես Պալատէն դուրս չե՛մ ելներ՝ մարդու պէս...»:

— «Ֆեզ իրաւո՛ւնք կուտամ,- ըսաւ Թագաւոր -,
Ելնես երթաս իմ Արքունի մեծ Պարտէզ,
Ընկերներուդ հետ պըտըտիս, զըւարճանաս մինչ՝ իրկուն,
Ինչպէս Քու կամք կ՚ուզէ, ազա՛տ, նորէն դառնաս՝ ու դաս տուն»:

= «Որ այդպէս է,- ըսաւ Լուսիկ-Թագուհին -,
Քաղաքին մէջ, վաղ, մունետի՛կ կանչել տաս, —
— «Արքունա՛ծ է. որճեղէն մա՛րդ իրեն տունէն դուրս չելնէ՛.
Թագաւորի-Կընիկն՝ այսօր՝ պըտըտելու պիտ՝ ելնէ»...:»

Թագաւորն ալ՝ Անոր խընդիրք բերաւ սիրով կատարեց, —
Քաղաքին մէջ կանչել տըւաւ ու արդիլեց, միւս 3) օր՝
Թէ՝ «Որճեղէն ըսած մարդը՝ իրեն տունէն դուրս չելնէ՛,
Թագաւորի-Կընիկն՝ այսօր՝ պիտի երթայ պըտոյտի»:

Արտօնութիւն տըւաւ Կընկան՝ դո՛ւրս ելնէ:

---

1) Ապով, Համար, պատճառով: 2) Բռնաւոր, կալանաւոր, բանտարկեալ, բռնի վար դրուած, արդելքի տակ:
3) Միւս եւ միւս ձեւերը կը գործածեմ՝ տեղին համեմատ:

20. Լուսիկ-Թագուհիճ Դէպ Ծովափ Ու Աղբիւրէճ Խմելը

ՉԿ·44,45,46,47,48, ՉՍ·24,25, Կ·2,104,105, Հ·5,405, Չ(Հ·405), Լ·63,6, Չ·(Լ·6), Ճ·62, (Ե·530), (Ե·476), Չ·՝Ե·940·

Առաւօտուն՝ ելաւ Լուսիկ-Թագուհին,
Կանչեց՝ իրեն քառասուն Նաժիշտ-Աղջիկները, —
— «Կապոյն առէ՛ք,- ըսաւ -, երթանք՝ ուրախութիւն ընենք դուրս,
«Ջաղաք չուտ դանք, նայինք ի՞նչ կայ՝ ներս ու դուրս....
Մա՛րդ Մեզ այստեղ չի՛ ճանչնար· լա՛ւ մը դիտենք ու պըտոյենք...»:

Դրընապաններ Պալատին դուռ լա՛յն-լայն բացին այդ առտու,
Լուսիկ-Թագ՛ուհին՝ Նաժիշտներով՝ դուրսը ելան պըտոյելու:
Հասան դաշտեր, Թագաւորի-Աղջիկն ըսաւ կիներուն. —
Գացէ՛ք Ամենքդ, ձեզի համար ուրախութի՛ւն ըրէք հոն»:

Ինք՝ չըրջեցաւ, դընաց լինկաւ Ծովի ափ,
Պըտըտեցաւ՝ անեղր, անվերջ կապոյտ-Ջըրի ափինիվեր·
Նայեցաւ Ծո՛վ...՝ չա՛տ զարմացաւ...: Իր Հօր Ջաղաք Ծով չունէ՛ր·
Աղջիկն երթէ՛ք՝ իր Հօր Ջաղաք՝ Ծով ըսած բան չ՛էր տեսեր: —
— «Արդեօ՛ք,- ըսաւ -, ասի կանաչ մարդասուա՞ն է, ի՞նչ է աս...,
Ծովենի՞ տրտ, ի՞նչ է աս...՝
Կապո՛յտ կուտայ՝ նազ՛ենաղ...»:

Գընաց կեցաւ Ծովի բերան, տեսաւ որ Ջո՛ւր է ու Ծո՛վ...:
Նայեց տեսաւ՝ այդ Ծովուն ալ՝ ո՛չ ծայր կար ու ոչ ալ վերջ· —
— «Մե՛ղք, այսքա՛ն Ջուր,- ըսաւ -, ի՞նչպէս ժողուեր՝ չատցեր
[է այստեղ...»:

Կըզուեցաւ 1) ու ձեռը պարզեց, ափով առաւ Իր բերան·
Առաւ բերան՝ ըսաւ «Մըմեմ...», տեսաւ որ Ջուրն աղի՛ է..., —
— «Ախո՛ս,- ըսաւ, այս Ջուր չ՛օր 2) է..., ա՛ղ են ձըզած
[ասոր մէջ...,
Ի՞նչ են ըրած՝ ասիկ ա՛յդքան չօրացեր է, չի՛ խըմուիր...
Երանի՛ թէ՝ այս Ջուրը որ ա՛յդքան շատ է՝ անո՛ւշ ըլլար՝ խըմէի»:

---

1) Կզուիլ, Տռուիլ, կուշ գալ: 2) Շօր, Աղի:

Նաժիշմանները՝ ման կուգային ծառերու տակ, դաշտի մէջ։

Ան ալ այդպէս՝ մըտմըտալով՝ գընաց Ծովու ափն՝իվեր։
Ամբան օր էր. չատ ծարաւցաւ, ի՞նչ տեսնէ..., —
Սա՛նկ մե՛ծ ջար մը՝ ոտքին առաջ տընկըւեր, —
Ճերմա՛կ, մարմա՛ր, տաշա՛ծ ջո՛ր մը՝ Ծովուն եզր...։ —

Ցանկա՛ծ, Աստծո՛ւ զօրութենէն, ջար բացուեցաւ՝ Ջո՛ւր ցայտեց,
Ցըստա՛կ Աղբիւր մ՝՝ ջարին գլխէն՝ Շատրուանի՛ պէս բըխա՛ց...,
Ու ջարն՝իվար՝ չորս-բոլորէն՝ վը՛ժա՛ց գընաց դէպի Ծո՛վ...։

Ինքն ալ, չո՛ւտ-չուտ, կուգը տըւաւ այդ Աղբիւրի Ջըրին դէմ՝
Մէկ կուց լեցո՛ւն եղաւ՝ խըմեց, կուշտուկուտ,
Մէկ ալ՝ կէսա՛ւ կուց խըմեց. —
Ջար գոցուեցաւ,
Աղբիւր կըտրաւ,
Ցամքեցաւ...։

— Ի՞նչ մեղք ունիմ,- ըսաւ Աղջիկ՝ հեւ՛ի՛հեւ -,
Որ բըխած Ջուր՝ կըտըրուեցաւ իմ առջեւ...»։

Ա՛յնքան քաղցր էր Աղբիւրին Ջուր..., ա՛յնքան քաղցր...՝
Կ՛ըսես իր Մօր ծըծի կա՛թն էր՝ կը խըմէր...։

21. Ջրէ Ճղացում

ՀԿ·49,50,51,52, ՀՍ· 25, 26, Հ·՝Հ·5, 405, Հ·՝Լ·6,7, Հ(Լ·7), Լ·63, Հ(Լ·63), Ճ·62, Կ·2,105·

Խըմե՛ց, պըրծա՛ւ, Թագաւորի-Աղջիկ՝ Լուսիկ-Թագուհին.—
Ի՛նչ խմեց՝ պէտցա՛ւ 1), գլորցա՛ւ իրեն անէ...։ —
Եղաւ սարի՛ նըման մէկ բա՛ն մ՛ահագին...,
Այլեւս մարդո՛ւ գլուխը 2) չէ՛ր գար՝ վիզին բոլորն ու ոտաց...։

---

1) Պէտ(ա)ճալ, *Ծոչորմալ, մեծնալ։* 2) Գիրկ, *երկու թեւերու բացուածք, գրկաչափ։*

Ելաւ դընաց՝ Արքունական-Պարտէզին մէջ՝ մըտաւ ներս,
Իրեն Նաժիշտ-Աղջիկները հոն դըտաւ.
Անոնք ալ Զինք երբոր տեսան՝ շա՛տ վախցան...,
Ամեն մէկը ինքզինք տըւաւ Թուփերու մէջ, հոս ու հոն.
Ո՛րն ալ Զինքը ցած պատերէն ձըղեց տակ, —
Փախա՛ն, ըսին՝ «Առիւծ չիպայ Մեզ ուտէ...»:

Աղջիկն՝ այդպէս՝ սիրտը պընդած եւ ուրախ՝
Կամաց-կամաց ելաւ դարձաւ իր Պալատ:
Կէս ճանապարհ հասա՛ւ թէ չէ..., —
Մէ՛կ ալ յանկարծ, ի՞նչ տեսնէ...: —
Իր Երազին մէջ երեւցած Ալեւորը դէմն ելաւ, —
— «Աղջի՛կ,- ըսաւ -, գիտցա՛ծ ըլլաս՝ որ Քո Մընուդ օրհնած է.
Քեզնէ ելած Տըղան պիտի Քեզ փըրկէ...»:

Ըսա՛ւ - չըսա՛ւ...՝
Ալեւորը անյայտացաւ հոն խակոյն...:
Թագաւորի-Աղջիկը շատ ուրախացաւ, ճամբան բընդեց՝ եկաւ Տուն:
Երէցն երբոր զ'Ինքը դիտեց...՝ մօտէն 1) վախցաւ ու ըսաւ, —
— «Աղջի՛կ,- ըսաւ -, ատիկ ի՞նչ է եղեր Քեզ...»:
=«Տէ՛ր Հայր,- ըսաւ -, վըրաս փորձանք մ'է եկեր...: —
Երբ նեղուեցայ՝ Նաժիշտներով երայ զացի ման զալու,
Ծուխին եզերք Աղբիւր մը կար՝ ինքնաբուխ,

Ջուրը նետեց՝ խըմեցի, —
Ես գիրցայ՝ եղայ այսպէս ահագին...,
Ա՛լ չե՛մ գիտեր՝ ի՞նչ էր հըրաշքն այդ Ջրին...»:

Գիտէ՛ր որ Ինք տըղո՛վ մընաց, խըմած Ջուրէն յըղացաւ,
Բայց չըսաւ թէ՝ յըղի էր Ինք՝ այդ Ծուխի Աղբիւրէն...:

22. Կոպատօի-Թագաւորին Պնդումները Ու Լուսիկ-Թագուհիին Պատճառաբանութիւնը

Ջ·, Հ·4,5, Ջ(Հ·5), ՋՍ·28,22,23,27,29, Ջ(ՋՍ·27,28), Ճ·62, Ջ·՝Ճ·62·

Ջըրո՞յն ուրկէ՛..., — կըտապաշտի-Թագաւորէն տանք զըրոյց: —

1) Մօտէն, Անոր մօտէն, անկէ:

Սիմամ-Յանին՝ քառասունէն-մէկ-պակաս 1) կընիկ ու հարճ կար։
Օրին մէկն ալ՝ եկաւ կեցաւ դուռը Լուսիկ-Թագուհուն, —
— «Այս իրիկուն՝ ինձի հիւր եմ...», — ըսաւ ուրախ ու ժըպտուն։

Հայտահատ Թագաւորի Աղջիկ դուռը չըբացաւ. —
= «Ապրա՜ծ կենայ մեծ Թագաւոր, — ըսաւ ներսէն՝ լուրջ-խընդուն.

Մենք հաւատով Աստուածապաշտ, իսկ Դուք՝ կուռքե՛ր կըպաշտէք։
Մեր Գիրքերուն համաձայն ու Մեր Հայրերուն օրէնքով՝
Մենք՝ քառասուն օր՝ fառո՛ւնf պէտք է որ բըռնենք...։
Մինչեւ քառասունք չըլրանայ, օր չի գայ՝
Դուն չե՛ս կրնար իմ անկողնին հիւր գալ ինձ։
Քառասուն օրէն յետո՛յ միայն՝ կուգաս իմ տունս՝ ինձի հիւր,
Մէկ անկողնի մէջ կը պառկինք՝ ես ու Դուն»։

Կըռապաշտի-Թագաւորը դարձաւ Լուսիկ-Թագուհուն, —
— «Ես չե՛մ կրնար առանց Քեզի ապրիլ,- ըսաւ -, քառասուն օր...»։
= «Քո տունն չ՝աւրի՛,- ըսաւ Լուսիկ-Թագուհին -.
Քառասուն՝ պակաս մէկ՝ կընիկ ու հարճ ունիս...,
Օրը մէկի մօտ գընա՛,
Զուր 2) քառասուն օր լըրանայ, —
Կարդը ինձի չո՛ւտ կուգայ...»։

Թագաւո՛րն էր, — ձա՛յն չըհանեց 3) ալ ա՛յնտեղ, —
— «Աղէ՛կ,- ըսաւ -, Քող Քո ուզա՛ծն ըլլայ վերջ 4)»։

Բերաւ՝ իր մէջ՝ ու Թագուհուն՝ մեծ վարդադոյր մը կապեց,
Օր մէկ անդամ կուգար իր Քեւ վարդադոյրին դէ՛մ կուտար,
Աղջկան հետ զրոյց կ՝ընէր, չունչը կ՝ելնէր՝ ու կ՝երթար։

Այդպէս ըրին՝ մինչեւ անցաւ եռասուն օր։

Դեռ ամիսը չ՝էր լըրացեր եռասուն օր՝
Կըռապաշտի-Թագաւորը՝ նորէն եկաւ Աղջկան մօտ՝
— «Այսօր Քեզի հիւր եմ,- ըսաւ -, մէկ անկողնի մէջ պառկինք»։

---

1) Քառասունէն-մէկ-պակաս, երեսուն եւ ինը։
2) Զուր, Մինչեւ (որ)։ 3) Զայն չըհանել, Զըպնդել։
4) Վերջ, Ի վերջոյ, ամենէն վերջ։

Թագուհին ալ վերցուց այդ տեղ ի՞նչ ըսաւ. —
= «Ապրա՛ծ կենայ, տէ՛ր Թագաւոր. ինչո՞ւ մեղաց տակ իյնանք...
Թէ որ Աստուած պարգեւէ ու Մեզի տայ՝
Դուռին ծակէն Դուն կը շընչաս Իմ քերան,
Ես կը շընչամ Ֆո՛ւ բերան՝
Մեզ՝ Աստուծո՛վ տըղայ կ՚ըլլայ, կըխընդանք 1)»:
— «Որ այդպէս է,- ըսաւ Աղջկան՝ Սինամ-Խան -,
Դուն ամեն օր կանդնիլ՛ երդիք, Ինձ հետ խօսի՛, Ֆո չունէ հա՛ն՝
Որ Իմ սիրտը բացուի այդպէս, ու կարենամ ըսպասել»:

Ու շընչացին՝ ականատէն՝ իրար բերան, դէմ-դիմաց,
Թագաւորը դարձաւ իրեն տեղ դընաց:

23. Աւագանիին Դէդումովը՝ Թագաւոր Կ՚ուզէ Սպաննել Լուսիկ-Թագուհին Ու Ծրէցը

Ց·62,63, Լ·6,7, Կ·105, Կ·105՝Զ·, ԶԿ·53,54, 55, Զ·՝ԶԿ·54, Հ·5, Զ·՝Հ·5, Լ·7, Զ·՝Ե·941·

Ժամանակ մը վերան անցաւ, — երկու, երեք, չորս ամիս —,
Աղջիկ տեսաւ որ տըղով 2) է մընացեր...,
Ու երախան յայտնի եղաւ փորին մէջ:

Թագաւորի Մարդերն ելան՝ Սինամ-Խանին լուր տըւին՝
Թէ՝ — «Ֆո կընիկ տըղո՛վ եղեր, յըղացեր է՝ ահագին...»:

Թագաւորը դարձաւ ըսաւ Մարդերուն. —
= «Ատո՞ր համար Հայրը Իրեն Աղջկան հետ Երէց դըրաւ ըսկիզբէն,
Որ Ինոր սերմն իյնայ Մեր մէջ՝ իմ Աղէ՝ Հայու հաւասին վրա՞յ
[դարձընեն...»:

Ելաւ դընաց Աղջկան դուռ՝ տեսաւ կընիկ՝ փոր լեցուն...:
Թագաւորը դէմք Թրթռուեցուց, կընկան Նայեց ու ըսաւ. —
— «Ա՛ս ի՞նչ բան է..., Ես Ֆու մօտը չե՛մ եկեր...՝
Այդ Ֆու փորը ո՞վ է լըցեր...՝ որ յըղի ես մընացեր...»:

= «Ֆո տուն չաւրի՛...,- ըսաւ Աղջիկ՝ հայհաւատ -.

---

1) Խնդալ, Ուրախանալ: 2) Տղով, Ծղի:

Ես այդ բանի տէրը չեմ...1)
Աստուած իր տեղ՝ ես իմ տեղն եմ անարատ..., —
Անունը մարդ՝ իմ քով չ'ե՛կեր Ձիս տեսեր...»:

— «Բա՛ 2) որ չ'եկեր...՝ այդ երախան ո՞ւրկից է...»:

= «Դուն չա՛տ զօրեղ մարդ ես,- ըսաւ Թագուհին -,
Ամեն օր ինչ 3) Դուն կուգայիր կըխօսէիր Ինձի հետ՝
Ձո բերնի գոլ 4) չունէը դացեր է իմ վիրս, —
Ձի՞ս ըսեր որ՝ ես ալ ատկէ տըղովցեր 5) եմ օրէօր...»:

Թագաւորի խելքին ինկաւ, եւ ըսածին հաւատաց:
Ելաւ գընաց իր Դիւանը նըստեցաւ,
կանչեց ըսաւ Եպարքոսին՝ Իրեն ցաւ, —
— «Ձի՞ս ըսեր որ այսպէ՛ս բան մը եղեր է...»:

= «Ապրած կենաս, տէր Թագաւոր,- ըսաւ Իրեն՝ Եպարքոս -.
Դուն վարդապետ կըղընես Ձո Հարսի քով,
Հարկաւ այդպէս բանե՛ր կ'ըլլան դաղտագող...»:

— «Ի՞նչպէս ընեմք ապա...»,- ըսաւ Թագաւոր:

= «Այդ երկուսի վիզն ալ պէտք է զարնել տալ...»:

Սինամ-Ջա՛ն էր, — Դահիճները կանչեց Դիւան ու ըսաւ. —.
— «Գացէք,- ըսաւ -, այդ Աղջկան վի՛զն ալ զարկէք Իրեն տեղ,
Երէցի՛ն ալ, ու եկէ՛ք...»:

Եկան ելան Աղջկան Դուռ՝ որ Աստուց վիզ կըտրէին, —
Աղջիկն ըսաւ, = «Ձէ՛..., օրէնքը չի՛ բըռներ.

---

1) Ես այդ բանի տէրը չեմ, ես այդ բանէն տեղեկութիւն չունիմ. աստը ի՛նչպէս տեղի ունեցած ըլլալը՝ ե՛ս ալ չեմ գիտեր:
2) Բա՛, Դէ՛հ, օ՛ն ուրեմն, ա՛պա: 3) Ինչ, ինչ ատեն որ, երբոր:
4) Գոլ, Գաղջ, եղկ: 5) Տղովնալ, Ծղի մնալ:

Այսօր Ծոցտր 1) կընի՛կ եմ ես· Ինձ սրդեղէն 2) չի՛ հանիր·
Գացէք ըսէք Թագաւորին, — «Դատ-դատաստան չըկա՞յ հոս···
Չի՞ դիտեր որ՝ Ծղի-կընիկ՝ երկո՛ւ հոգի ըսել է····
Տըղով-կընկան վիզը կըտրել՝ երկո՛ւ անգամ ոճիր է···:
Ըսպասեցէ՛ք, մինչեւ ես իմ ձիւթ բերեմ···,
Տեսնեն Ամենք, երախա՞յ է՝ թէ ինչ է···:
Օր-ժամանակս երբոր հասնի՝ կը տեսնէ՛ք, —
թէ ամեն կին՝ ինչպէս կ'մեկնի՝ ե՛ս ալ այնպէս մեկնեցայ···՝ 3)
Դուք Ամենքդ ալ՝ կ'իմանաք Իմ մեղքն ինչ է,
Իմ արիւն Ձեզ արդա՛ր կ'ըլլայ, զարկէ՛ք Իմ վիզ կըտրեցէ՛ք···:
Չէ՛, թէ որ ես ուրի՛չ կերպով մեկնեցայ···՝
Դուք կը դիտնաք՝ Աստուծմէ՛ է Իմ Ծըղոյթ···»:

Դահիճները՝ դարձան դացին՝ Թագաւորի մօտ, ըսին, —
— «Թագաւո՛ր, Դուն ապրա՛ծ կենաս, այսպէ՛ս է խօսք Ձո Հարսին»:
Նախարարներն ըսին, = «Աղէ՛կ եւ օրէնքո՛վ է խօսեր···
Թող մընայ՝ Իր Տըղան բերէ՝ անկէ՛ յետոյ Անոր վիզը կըզարնե՛նք»:

Ու ժամանա՛կ տըւին կընկան՝ մինչեւ բերէ Իր Տըղան: —
Բերին երկու կընի՛կ դըրին Անոր քո՛վը պահապան, —
— «Տեսնենք,- ըսին -, ի՞նչպէս պիտի մեկնի այս Ճար»
[Մընդղկան···» 4):

24. Աղջկան Հօր Վախն Ու Թորոսի Խրախոյսը

Զ(Լ·6,7), Զ·՝Լ·7, Զ·՝Լ·6·

Լուրը գընաց Աղջկան Հօր, կապուտ-Կողի Արքային, —
Թէ՝ Ձու Աղջիկ երեխով 5) է՝ դեռ Թագաւոր չըտեսած····
Թէ՝ Իր վիզը կըտրե՛ն պիտի···, երէցին ալ միասին···, —
Երբ Իր Տըղան աչխարհ բերէ՝ անարկած···»:

Հայոց Աստղիկ-Թագաւորի խնդրը Թըւաւ նըստած տեղ···,

---

1) Ծոցտր, *Սոխնջները կաթով լեցուած, յղի (կնիկ)*: 2) Սրխղէն, *Սուրով մահ, մահապատիժ*: 3) Մեկնիլ, *Զատակ աչխարհ բերել*: 4) Ընդղկան, *Ձեւի ծնունդ տուող կին*: 5) Երեխով, *Ծղի*:

Դահլիճին մէջ՝ Գահին վերայ՝ ինկաւ մընաց ուշադնաց . . . :
Քեռի-Թորոսն ու Մարդպետը քո՛վ հասան, —
— «Ատ ի՞նչ եղաւ Քեզի,- ըսին -, տէ՛ր Արքայ . . .» :

= «Մեր Աղջիկը երեխով է . . .՝ դեռ Իր էրիկ Սինամ-Խանը չըտեսած» :
— «Մե՛ւ տամ դըլխիս,- ձայնեց Աղջկան Մայրը՝ Մամիկ-Թագուհին -.
Հազի՛ւ կըտոր մ՝ հանդչէր էինք, Մենք ու Ազգը մխասին . . .,
Հիմա կ՝ուզե՞ս որ ելնէ դայ՝ Մեր Հայաստուն ո՛ղջ 1) բըրդէ . . .» :

= «Կասկա՛ծ չըկայ . . .,- ըսաւ Աստղիկ-Պապ-Արքան -,
Կըտապաշուխ-Թագաւորը կուգայ Ամե՛նքս կըջարդէ . . .,
Ձի՛ խընայեր՝ ո՛չ կին, ո՛չ մարդ, ո՛չ տըղայ . . .» :
— «Դէ՛, Թա՛գաւոր,- ըսաւ Թորոս -, Աստուած մե՛ծ է, մի՛ վախնար» :
Թագաւոր՝ Քէ՝ = «Ի՞նչպէս չվախնամ . . ., չիմացա՞ր . . ., —
Մեր Աղջիկը ճըժովցեր 2) է . . .՝ դեռ Իր էրիկ չըտեսած . . . :
Սինամ-Խանը՝ լուռ չի՛ մընար, կուգայ Մեր Ազգ կըկըտրէ . . .» :

Թորոսն ալ Քէ՝ — «Աստուածուքիւն՝ կարելի է՝ Մեզ այդպէ՛ս է [կամեցեր . . .» :
= «Այդպէս ի՞նչ է Մեզ կամեցեր . . .»,- ըսաւ Արքան՝ զարմացած :
Թորոս այնտեղ՝ վերցուց ըսաւ, — «Տէ՛ր Արքայ,
Կարելի է Քէ Մեր Աղջիկ՝ մէկ հատ Տըղա՛յ ունենայ . . .՝
Տըղան ելնէ 3)՝ կըտապաշուխ ղէմը կըռուի՝ ու յաղթէ . . .» :

25. Երկուռեակ Ծնունդ Եւ Թագաւորի Հրամանը Որ Սպաննեն Մայրն ու Տղաք

Զ·, Կ·105, 106՝Զ·, Կ· 105,106, Ս·137, Ե·941, Զ·՝Ե·941, ԶՍ·30, Լ·12,6,63,7, Կ·2,12 . Հ·5,405, Ց·63,13, ԶԿ·56,57,58,59,60, Ա·48·

Դառնանք հիմա՝ Թագաւորի-Դուստրը Լուսիկ-Թագուհուն :
Մեր-երէցը, Մատուռին մէջ, իր ժամ կ՝ըսէր աստուծուն, էրիկուն,—
Հայ օրէնքով ժամ-պատարագ կ՝ընէր Իրեն ու Աղջկան :

Մընա՛ց, Աէտր ժամանակը երբ հասաւ, —
Ինը ամիս, ինն օր, ին ժամ, ինը րոպէ լըրացաւ, —
Աստուած տըւաւ, — Թագաւորի Դուստրը Լուսիկ-Թագուհին՝

---

1) Ողջ, Ամբողջովին : 2) Ճժռվցնալ, Ճիժ (դաւակ) ունենալու վիճակին մէջ գտնուիլ, յղի ըլլալ : 3) Ելնել, Մեծնալ, ուժգնալ :

Բերնէ՛ն մեկնաւ... 1), ծընաւ երկու լաճ 2)-Տըղայ, —
Մէկը լըրիւ, մէկ՝ կիսատ...:

Կըտապաշտի-Թագաւորին՝ Սինամ-Խանին՝ լուր տըւին, —
— «Աստուած տըւաւ..., Քեզի եղաւ Զոյգ մը լաճ.
Քու կընիկը բերնէ՛ն մեկնաւ Իր Տըղաք...»:

= «Ես կը հաւատամ այն կուռքե՛ր միայն...՝
Որ Ե՛ս կը պաշտեմ...,- ըսաւ Սինամ-Խան -.
Պէտք չ՛է՛ որ Քողում մեծնան Այդ Տըղաք...,
Երկուքին վիզն ալ՝ պէտք է զարնե՛լ տամ..., —
Իմ մեծ կուռքերուն մատա՛ղ ընեմ ես,
Տեսնենք թէ Անոնց ճանչըցած Աստուած՝
Ի՞նչ պիտի ընէ Իմ կուռքերուն դէմ...»:

Սինամ-Խա՛ն էր, —
Դահիճ ըղրկեց, — «Գացէ՛ք,- ըսաւ -, այն Տըղեկներ մորթեցէ՛ք...,
Այն կընի՛կն ալ, Տէրտէրին հետ, ըսպանեցէ՛ք ու եկէ՛ք...»:

Գացին՝ պիտի ըսպանէին..., — Կոյս-Թագուհին ի՞նչ ըսաւ. —
— «Դուք մեր Աստուած չէ՛ք պաշտեր՝
Հարկաւ բա՛ն մը կըպաշտէ՛ք...:
Թագաւորին՝ օրէնք, կանոն, խիղճ չըկա՛յ..., —
Ծըծմայր 3) թէ որ ըսպանեն՝
Տըղաք ի՞նչպէս կըշահեն... 4):
Այս Տըղայոց՝ հիմա երբէ՛ք սուր-սըրեղէն չի՛ հասնիր....
Ինձի՛ ալ սուր չի՛ հասնիր...: —
Մինչեւ որ Իմ Տըղաք քիչ մը մեծնան՝
Նո՛ր Անոնց սուր ու սըրեղէ՛ն կըհասնի...:
Ես Իմ Տըղաք՝ հօ՞ 5) այս տեղէն չե՛նք փախիր...:
Ըսպասեցէ՛ք..., — երբոր Անոնք մեծնան՝
Նո՛ր ձեր Դահիճ Քող զայ ու Մեր վիզ կըտրէ...»:

---

1) Մեկնիլ, Ձաւակի ծնունդ տալ: ☛ *Հետաքրքրական է դիտել տալ որ՝ Նեղոս Գետի մէջ ձուկ մը կայ՝ որ իր քերնին մէջ կը տաղմնուկ եւ քերնէն կ'արձակէ իր ձագերը:* 2) Լաճ, Մանչ, արու (զաւակ): 3) Ծծմայր, Մին տուող մայր. տունդիաց: 4) Շահիլ, Դիւեցնել, խնամել: 5) Հօ՞, Վերջապէս, ի՛նչ ալ ըլլայ...:

Դահիճ գընաց Թագաւորին, ու պատմեց։
Թագաւորը՝ Աւազանին կանչեց բերաւ Իր Դիւան. —
— «Նայիմ,- ըսաւ ,- Դուք ի՞նչ կ'ըսէք···, օրէնքն ի՞նչ է այդ [մասին···»։
= «Ողորդ 1) կ'ըսէ այդ Թագուհին,- ըսին ամէնք՝ մէկ բերան -.
Հիմա Անոնց սուր չի՛ հասնիր՝ օրէնքով···,
Սըրեղէն 2) չի՛ բանցուցուիր 3) ····
Տաս-տասնըհինգ տարի Անոնց ժամանա՛կ տուր՝ Թող մեծնան, —
Նոր այն ատեն՝ Անոնց վիզը կըզարնենք···։
Անոնք երբեք ա՛լ այս տեղէն՝ ո՞ւր պիտ՝ երթալ կարենան···, —
Բըռնաւորի պէս Թող մընան Պալատին մէջ, դուրս չիգան···»։

26. Երկուորեակ Տղաքերուն Անուանադրութիւնը

Զ·, ՁՍ· 31,32,33,34,35, Ե·63,62,13, Զ·՝Ե·13, Հ·5 ,405, Լ·63,62, Զ·՝Լ·63, Զ(Կ·2), ՁԿ·62,61, Ա·48, Զ·՝ Ա·48, Կ·2,105, Ե·477,609, Ս·137·

Վըտանդն անցա՛ւ···, —
Շուտով եաւ Ինքն ալ Լուսիկ-Թագուհին՝
Իմաց տըւաւ Իր Հօր Աստղիկ-Թագաւորին, Հայաստան, —
Որ Թէ՝ «Ինձի երկու Տըղա՛յ է եղած,
Տէրտէր ղըրկես ու Տիրացու՝ հետ ձեռաց 4),
Գան ու Մեր սուրբ օրէնքովը Տըղաք կընքեն՝ ու դաստնան»։

Ա՛յն ժամանակ՝ Տէրտէրներն ու Տիրացուներն ալ՝ եկան,
Ճամբայ ինկան ու եկան, —
Մըտան Պալատ, առին երկու Նորածիններ միասին,
Որ Թոնիրի վրայ կընքեն 5).
Բայց չե՛ն դիտեր՝ այդ երկուորեակ-Տըղոց անուն ի՞նչ դընեն···։

---

1) Ողորդ, Իրաւ, ճիշդ, չիտակ, ուղիղ։ 2) Սրեղէն, Սուրով մահապատիժ։ 3) Բանցուցուիլ, Ի գործ դըրուիլ, կիրարկուիլ, դործադրուիլ։ 4) Հետ ձեռաց, Անյապաղ, շուտ մը, դարձուկս։ 5) Տե՛ս Հատ. 12։

Մ՛կ ալ՝ յա՛նկարծ···,
Թոնրին դըլխէն···՝
Այն Ալեւոր-Մա՛րդն երեւաց··· 1)՝
Ու կանչեց, —
— «Ջոջին անուն՝ ՍԱՆԱՍԱՐ,
«Պըղտիկին անուն՝ ԲԱՂԴԱՍԱՐ···»:

Մեր-երէցը՝ բերաւ խակոյն՝ վառքով կը՛նքեց Տըղաները, —
Այն լըրւիւին 2) անուն դըրաւ ՍԱՆԱՍԱՐ,
Ու կիսատին 2)՝ ԲԱՂԴԱՍԱՐ:

Այդ Տըղեկները՝ երկուքն ալ լա՛ճ տղայ էին:
Սենեքերիմ-Թագաւորն ինք՝ կռապա՛շտ էր,
Տըղեկները՝ Հա՛յ-հաւատ. —
Որովհետեւ իրենց Մայրը՝ Աստուածապա՛շտ աղջիկ էր:

Տէրտէրներն ու Տիրացուները՝ ելան տեղէն եւս դարձան, —
Ակընջկըլա՛յ 3) տարան Աստղիկ-Թագաւորին եւ ըսին. —
— «Քո երկուտրեակ-Թոռներն,- ըսին -, Տէր Արքայ,
Երեւելի՛ ու շա՛տ խօրո՛տ Տըղայ են···»:

Թագաւորն ալ՝ Ինք՝ շա՛տ ու շա՛տ ուրախացաւ, խընդացաւ, —
Թէ՝ «Իմ Աղջիկ՝ Տուիւ-Լուսի՛կ-Թագուհին
Բարո՛վ երկու Տըղա՛յ բերաւ, Մեր Օրէնքով կընքեցինք,
Նայինք վերջէն՝ ի՞նչ տեսակ մարդ պիտի՝ դուրս գան···, —
Երկուտրեակ ու Մա՛նչ-Տըղայ···՝
Ուժո՛վ-ո՛ւժ է ասիկա···»:

Ու նոյն օր ալ՝ Թագաւորի Աւազանին ու Ջոջեր՝
Եկան Պարա՛տ ժողվեցան, —
Կերուխումով, երգապարով՝ ըրին Անունք՝ մեծ խրախճանք:

---

1) Կ·2՝ Ինած պահուն է որ Հրեշտակ կուգայ՝ անուններըը կըզնէ Սաճասար եւ Բաղդասար:

2) Լրիւին ու կիսատին, *Այսինքն՝ իրենց Մօր՝ Լուսիկ-Թագուհիի խմած լեցուն կուշ ջուրէն եւ կիսատ կուշ Ջրէն ապրմնուած:*

3) Ակընջկլայ, *Աւետիս, բարի լուր:*

Գ. ՍԱՆԱՍԱՐԻ ՈՒ ԲԱՂԴԱՍԱՐԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

27. Երկուորեակ Եղբայրներուն Մանկական Խաղերը

ԶՍ·36, Զկ·63,64, ճ·63, Հ·5,405, Զ·՝405, ն·609, Լ·63, Զ·՝Լ·63, Զ(Լ·7), Զ(կ·2,3,4), կ·2,3 ,106, Ս·138՝Զ·, Զ(Ս·138).

Զըրո՞յցն ո՛ւրկէ տանք···, — Այդ երկու-Տըղայ՛ն —,
Սանասարէն ու Բաղդասարէն տանք···։ —

Թէ ուրիշի՛ տղաք՝ տար՛ո՛վ 1) կ՛մեծնային՝
Այդ երկո՛ւ-Տըղաք՝ օրէ՛ 2) կ՛ըսէնային. —
Աստըծու կա՛մքն էր···,
Մեղաց գաւակ չե՛ն···, —
— Հըրեղէնէ ու Զըրեղէնէ՛ են···։

Այդ Տըղեկները՝ Զըրէ՛ էին գոյացեր. —
Իրենց Մայրը, աղջիկ Լուսիկ-Թագուհին՝
Անմահական-Աղբիւրի Ջո՛ւրն էր խըմեր···։

Թէ մենք՝ տարեկան՝ հասակ կը քաշենք երկո՛ւ մատ 3) մէյն՝
Առնք՝ երկու մատ՝ օրէ՛ կըմեծնան.
Մէկ օրուան մէջ՝ մէ՛կ տարիի չափ կ՛աճին. —
Դիւցազնի՛-Աղէ են Անոնք···։

Աստծո՛ւ հրաշքով՝ Սանասա՛ր ու Բաղդասար՝
Ալինպէ՛ս պէտ 4) ու գէր էին···՝
Մարդ կ՛ըսէր թէ՝ երե՛ք տարու տըղայ են···։

Ո՛ր Տըղի հետ որ խա՛ղ դընեն ու խաղան՝
Խաղը կ՛ըլայ՝ տուգ-չիվա՛ն 5)···։
Ո՛ր Տըղի թեւ որ կըբըռնեն՝ ճխլը 6) տեղէն կը հանեն···։
Վիզը բըռնեն՝ գըլո՛ւխն ուսէն կըզատեն.
Ոտը բըռնեն՝ ճո՛ւտը 7) ծունկէն կըճըռւիւ՛ն··· 8)։

---

1) Տարո՛վ, *Տարիո՛վ, տարուէ տարի*։ 2) Օրէ, *Օրէ օր*։ ԶՍ·36՝ ծաւէ (*կը ջոլնայի՛ն*)։ 3) Մատ, *Մատնաչափ*։ 4) Պէտ, *Ոչըր, մեծդի*։ 5) Շիվան, *Ողրովոծ*։ 6) ձիւ, *Ամբողջ թեւ*։ 7) Ճուտ, *Սրունք*։ 8) Ճռւիել, *Փրցնել, պոկել*։

Ա՛ջը դառնան, ձա՛խ դառնան՝
Խաղընկե՛ր է՝ կ՚ընեն աչ-ձախ ցկրուցան..., —
Կիսամե՛ռ թէ խեղանդամ...: —
Փորձա՛նք դարձան Այդ Բաղաքի ճիժերուն...:

Տըղոց Տէրեր՝ լացո՛վ-լոցով՝ եկան դացին դանդատի՛. —
— «Վատ է,- ըսին -, թէ Մենք երթանք՝ Մեզ Տո՛վ ձըղենք Ամենքով,—
Բա՛նի որ այդ հայահաւատ երկու փիջեր 1) Մեր մէջ են, —
Մեր Տըղաները՝ խաղի առեն՝ չարդուվռտոր կըլիտեն...»:

Ու բերնէ՛ բերան՝
Գաղանի՝ Իրենց մէջ, —
— Այդ Բողի՛ ճըժեր...»:

Բերնէ բերան՝ կ՚ըլլայ գերա՛ն..., —
Մէկը ըսաւ՝ տըւաւ մխաին,
Փըսիխրացին, մըրմընջեցին, —
Մինչեւ ինկաւ Տըղոց բերա՛ն,
Տըղաքն ըսին՝ մէկ մխուաին, —
Եւ օր մըն ալ, խաղի առեն, Սանասարին, Բաղդասարին: —

Այդիի մէջ, Ծառերուն զոմ չուքերուն տակ՝
Ուրախ-ղըւարթ ու ոգեւոր՝ ճան կըխաղան. —
— «Ճո՛ւկ...», | — «Մա՛լ...»,
= «Թա՛ֆ...»: | = «Կո՛ւռ...»: —
Ու խաղին մէջ՝ մէկէ՛ն տակըցան Տըղաները, —
Սանասարի, Բաղդասարի վրայ թափեցան Ամենքով,
Մեծկըւեցան, կըռուըտեցան, կանչուըռտեցին ու ըսին. —
— «Ծո՛, Դուք փի՛չ էք..., անհայր, ու ո՛րբ Տըղաներ...,
Ինչո՞ւ կուգաք՝ Մեզ հետ կ՚ըլլաք խաղընկեր...»:

Սանասար ու Բաղդասարն ալ՝ երբ այդ խօսքեր լըսեցին՝
Լալով եկան Իրենց Մօր գիրկն, ու ըսին. —
— «Կա՛մ Մեր բո՛ւն Հօր էութիւնը Մեզ կ՚ըսես...,
Կա՛մ Մենք կ՚երթանք՝ ու Մեզ Տո՛վը կընեռնենք...»:

---

1) Փիչ, Թրք. Պոռնկորդի. անծանօթ հօրէ (կամ մօրէ) ծնած զաւակ:

Մայրը վերցուց՝ ի՞նչ ըսաւ. —
= «Ի՛մ Տըղեկներս, Դուք երկուքդդ՝ Հայր չունի՛ք...»:

Երկու ծրծկեր 1) եղբայրները Մօրն ըսին. —
— «Մենք հօ՞ 2) քարի, Քըսէի տակէ չե՞նք ելեր... 3), —
Ի հա՛րկէ Մենք մարդ-էակէ՝ մ՚ ենք ծըներ...»:

= Որդի՛, զաւա՛կ,- ըսաւ Մայրը ճարահատ -.
Մէկ օր ես Իմ Նաժիշտներո՛ւս հետ մէկտեղ՝
Դուրս ալըտոյտի՛ էլայ զացի Ծովեզերք,
Տարւըցայ ու Զո՛ւր խըմեցի Աղբիւրէ մ՚, —
Մէկ կուց լեցո՛ւն, մէկ՝ կիսա՛տ...:
Աստուած տըւա՛ւ...՝ Դուք այն Զըրկ՛ն յըղացաք: —
Դուն՝ Սանասա՛ր, այն լի՛ք կուցէն ես եղեր,
Բաղդասարն ալ՝ կիսա՛տ կուցէն է ահա՛...:
Թէ որ հարցնէք...՝ Տըղե՛կներս,
Իմ Հօր Տուներն որ 4) կո՛յսաղջիկ եմ եկեր՝
Մինէչև այսօր՝ այնպէս ալ կո՛յս մնացեր եմ. —
Անո՛ւնը մարդ՝ ինձ մօտ բընա՛ւ չ՚է՛ եկեր.
Մինակ՝ երկնուց 5)՝ Հրեշտա՛կն 6) եկաւ վերը՝ Թոնրին,
Զեր երկուքին անո՛ւն դըրաւ՝ ու գընա՛ց...»:

Տըղաքն ելան՝ Իրենց Մօր դի՛րկ նետուեցան.
Մօր դիմաքը 7) այնտեղն եկա՛ւ, դարճաւ Տըղոցն ի՞նչ ըսաւ. —
— «Որդի՛ք,- ըսաւ -, համբերեցէ՛ք մինչ՝ առաւուն,
Ձեզ կըղըրկեմ՝ Ձեր Հօր տո՛ղը եւ էութիւն ճանչընա՛ք...»:

Ու պառկեցան քընացան...:

---

1) Ծծկեր, Սինքէն կաթ ծծող երախայ, տանդիաց: 2) Հօ՞, վերջապէս, ի՛նչ ալ ըլլայ...: 3) Ելնել, Գոյանալ, բառնիլ: 4) Որ, Ինչպէս որ: 5) Երկինքէն: 6) Հուծ. 26՝ Աբեւոր-Մարդն: 7) Դիմաքը(գալ), ճաւ(զգալ), ցաւ(իլ), դժուարինս(գալ):

28. Սենեքերիմ-Թագաւորը՝ Երուսաղէմի Պաշարումին

Ս·138՝2·, 2(Ս.138), Ս·138, 6·13,14,2(6·13), 2·՝6·14·

Այդ դիւերը, իր քունին մէջ, երա՛զ տեսաւ Իրենց Մայրը· —
Տեսաւ որ-թէ 1)՝ «Իրեն՝ երկու-ձըրա՛գ կար···, —
կուզար առջեւ անցընելո՛ւն 2)՝ որ անցնէ՛ր···՝
Ու կըզառնար՝ հե՛ղ մը 3) նորէն՝ լո՛յս կուտար···»:

Երբ արթընցաւ՝ Մայրը՝ ելաւ առաւտուն,
Իր երազի եղելութիւն պատմե՛ց Իրեն Զաւէրուն· —
— «Տըղա՛ք,- ըսաւ -, այս դիւերը՝ երազի մէջ տեսա՛յ որ՝
Ձեր Հայրը չա՛տ նեղութեան մէ՛ջ է ինկեր,
Ու Ձեզ Մատա՛ղ կանչեր է Իր կուռքերուն···: —
Երբոր եկաւ 4)՝ Ձեզ Երկո՛ւքդ ալ կըմատղէ···»:

Եւ Ինքն Իրեն՝ դարձաւ ըսա՛ւ ցած ձայնով, —
«Ի՞նչ ճար գըտնեմ Ձեր գըլխուն···»:

Ձըրո՛յն ո՛ւրկէ···, — կըտասաչուի-Թագաւորէ՛ն տանք գըրոյց: —
Ձօրք հաւաքեր, ուղարկեր էր արեւմուտ(ք),
Երուսաղէմ-Քաղքի՛ բոլոր՝ չափըռներ 5) ու բըռնե՛ր էր:

Ու եղաւ որ՝ չա՛տ թանկութիւն ինկաւ Քաղքի Մարդոց մէջ: —
Թագաւորն ու Իրեն վէզիր՝ հազո՛ւստ հազան Դերվիշի,
Գացին Քաղաք՝ պըտըտեցան մխասին: —
Տեսան անդին՝ երկու կընիկ՝ իրարու հետ կըկըռուին: —
Մօտեցան ու հարցուցին թէ, — «Ա՛յ կիներ,
Ի՞նչ կայ Ձեր մէջ···, ինչո՞ւ համար կըկըռուիք···»:

կիներէն մէկ՝ վերցուց ըսաւ, = Դէ՛րվիշ բարա, դիտե՞ս ինչ···· —
Թանկութի՛ւն է ինկեր երկիր, ու Մեր հացը հատե՛ր է···: —
Իմ մէ՛կ հատիկ Տըղան բերինք՝ մորթեցինք ու Մենք կերանք···,
Հիմա Անիկ չի՛ բերեր որ՝ մորթենք ուտենք Իր Տըղան···»:

Թագաւորը դարձաւ Իրեն Մեծաւորին ի՞նչ ըսաւ· —
— «Թէ հարցընես՝ «Մեր իշխենն ալ իշխե՞լ է···», — չէ՛, բա՛րեկամ»:
= «Ապա,- ըսաւ Մեծաւորն ալ -, ճա՞րն ի՛նչ է···»:

---

1) Որ-թէ, Իբր թէ: 2) Անցընել, Մարիլ, առկայծիլ· 3) Հեղ մը, Անգամ մը: 4) Երբոր եկաւ, Երբոր գալու ըլլայ: 5) Չափըռել, Ձօրս կողմէն պաշարել:

— «Ե՛տ դառնանք, չո՛ւտ,- ըսաւ -, նըստինք Գահին վրա՛յ...»:

Եւ ըսկըսան բարի՛ք ընել, աղէկութի՛ւն, մաս-մասա՛ղ՝
Երբոր ըրին, ու ժողովուրդ գոհացաւ՝
Հրեշտակները՝ սուրո՛վ-թուրով իջան հասան Գաղքին չո՛ւրջ,
Կըռապաշտի-թագաւորի բանակ դըրած Զօրքին մէ՛ջ, —
Ու սըրահար զարկի՛ն Ամենք՝ կոտորեցին, փըռեցին...:
Մընաց մինակ՝ Սենեքերիմ-թագաւո՛րը Իր Ուղտո՛վ,
Ան ալ հազի՛ւ Իր Սեւ-Ուղտը հեծաւ՝ փախա՛ւ առանձին...:

Երբոր կ'անցնէր Հայաստանի-Հողերէն՝
Մեր Աղքը գ'Ինք շատ նեղ լըծեց այս անգամ...:

Այդ նեղութեան մէջ՝ Խալիփան՝ կանչեց Իր կուռքն ու ըսաւ. —
— «Ո՛վ Իմ Մեծ-Կո՛ւռք, Դուն Նեսրա՛ք 1),
Դուն Ձիս աղա՛տ ընես նորէն Այդ Աղքէն,
Ու երբոր ես՝ ողջ ու առողջ հասնիմ Քեզի՝ ծընրադրեմ՝
Երկու Գըզակ Տըղաներս ալ՝ պիտի Մատա՛ղ ընեմ Քեզ,
Անոնց անմեղ արիւնովը Քո Զոհարան պիտ՝ լըսամ...»:

29. Կուռքերը Մատաղ Կ'ուզեն...

Ց·14,63, Զ·՝Ց·63, Զ·՝Ց·14(Ց·63), Ե·477,532, ՁՍ·37,38,39,40, 41,42,43, Զ(ՁՍ·37), Զ·, Ա·48, Հ·406·

Ու Սենամ-Խան՝ եկաւ իջաւ 2), ու նըստեցաւ Իրեն Գա՛հ:

Դէ՛, ի՛նչ ըսես..., չա՛ր Թըշնամին մըտաւ Աստնց Կուռքին մէ՛ջ..., Կըռքարանէն՝ Կըռքապետին ձա՛յնը եկաւ Թագաւորին՝ ու ըսաւ. —
— «Կուռքեր՝ Քե(զ)նէ Մատա՛ղ կ'ուզեն, Տէ՛ր Արքայ...»:

Թագաւորն ալ՝ կանչեց Մեծերն՝ ի՞նչ ըսաւ. —
— «Բերէ՛ք՝ մէյմէկ անմեղ Տըղայ՝ Մատա՛ղ ընենք Ջոջ-Կուռքին...»:

Նախարարները, Մեծաւորները, Իշխաններն ու ժողովուրդ՝

---

1) Աստուածաշունչ՝ Դ. Թագ. Գլ. ԺԹ. հմր. 37: 2) Իջաւ, Իր ուղտէն եւ Հայկական բարձրաւանդակէն՝ դէպ Ասորեստանի տափաստանները:

Վերցուցին ու Թագաւորին լ՚ինչ ըսին. —
= «Ապրա՛ծ կենայ Թագաւո՛ր ...,
Այսօր ապա Մեր օր չ՚է՛ ..., —
Մեր Զոհի օր՝ շաբա՛թն է ...,
Պէտք է որ Մենք Մատաղ ընենք՝ շաբաթ օր ...»:

Թագաւոր Թէ, — «Ի՛նչ որ կ՚ուզէք՝ տարէք անի՛կ մատղեցէք ...»:

Մեծաւորները՝ դարճան այնտեղ՝ Իրենք Իրենց լ՚ինչ ըսին. —
— «Իրա՛ւի,- Թէ -, ասիկ լ՚ինչպէս կ՚ըլլայ որ՝
Մենք՝ կըռապա՛չտ, Կոմբրիկ-Աբքան՝ խաչապա՛չտ 1),
Մեր Թագաւորն Անոր Աղջիկ կա՛ր՚ն առա՛ւ,
Ու երէցը եկաւ ձըժ-եր մըկըրտեց ...:
Վաղ Այն Տըղաք Լոջանան,
Մեր Թագաւոր՝ հիւա՛նդ-լ՚ինայ ու մեռնի,
Անոնք նըստին Գահին վըրա՛յ՝ ու տիրեն,
Մեր Աղջ պիտի փըճի երթա՛յ ինքնիրեն, —
Մենք այնտեղ՝ Իրենց Հայու օրէնքին վրա՛յ կըղառնանք: —
Ասի բընա՛ւ Մենք չենք կըրնար ընդունիլ,
Թագաւորը պէտք է տանի կորսընցնէ՛ Այդ Տըղաք ...»:

Եըան՝ շուտ մը՝ Եպարգոսով՝ Թագաւորին լո՛ւր տըւին. —
Թէ, — «Թագաւո՛ր, Դուն Ինքդ դիտե՛ս լ՚ուլին,
Որ Քու կընիկ՝ խաչապաշտի աղջի՛կ է.
Մեր լըսածով՝ Սանտարն ու Բաղդասա՛րն ալ՝ Իրեն պէս՝
Աստուածապաշտ կըղարձնէ ...: —
Պէտք է որ Դուն՝ այդ երկու-ձի՛ժ կորսընցընե՛ս Մեր մէջէն:
Վաղ Դուն մեռնիս՝ Անոնք Քու տեղ որ նըստին՝
Իշխանութիւն պիտի առնեն Իրենց ձե՛ռք,
Վերջացընե՛ն ամբողջ Մեր Ազգն ու Օրէնք: —
Այդ կերպով՝ Մեզ՝ կըղարձընեն Հայու կրօնի՛ն, Հաւատքին,
Մենք կ՚աւրուի՛նք ու կ՚երթանք ...: —
Պէտք է որ Այդ երկո՛ւ-Տըղաք կորուսե՛նք ...:
Մենք՝ Հայակրօն Տըղայ՝ Մեր մէջ չե՛նք ուզեր ...:

---

1) Խաչապաշտ, Հայոց՝ իրենց հաւատքը ճանչցող, պաշտող, ոչ թէ քրիստոնէական խաչի կրօնքով:

Մեր կուռքերն ալ՝ այդ խաչապաշտ Երկու-Տըղա՛ն է կ՚ուզեն...,
Ուրիշ Մատաղ չե՛ն ուզեր...»:

Թագաւորն ալ, — Սինամ-Խանը —, ի՞նչ ըրաւ. —
Միտքը մըտքի՝ վերցուց-դըրաւ, մըտածեց, —
«Իրա՛ւի,- թէ -, Անոնց խո՛սքն է վերջ՚ի վերջ..., —
Վաղ ես մեռնիմ՝ Այս Տըղաքը նըստին Իմ տեղ Թագաւոր...,
Մեր Ազգն ամբողջ՝ կըղարձընեն Հայ-կրօնքին...:
Աղէկ չըրի՛՝ ես Այդ Տըղաք Թողի կընքեն Հայ-Մէսով...,
Չիս խաբեցին՝ Տէրտէր բերին՝ կընքեցին...»:

Ու դարձաւ Իր Իշխաններուն, Մեծերուն, —
= Աղէ՛կ,- ըսաւ -, դացէ՛ք, Թող Ձեր խօսքն ըլլայ..., —
Ձիշդն իմանամ՝ որ Իմ կընիկ՝ Երկու Ձիժով մխառեղ,
Մեր կուռքերուն չեն հաւատար, իրենց Աստուա՛ծ կըպաշտեն՝
Առաջ՝ ես Այդ Տըղեկնե՛րը կ՚ըսպանեմ...՝
Ցետոյ կընիկս՝ Անոնց Մայր...»:

Ձիշդն իմացա՛ւ Թագաւորը բերանուց.
Զար Թըշնամին մըտաւ մէ՛ջը՝ չարացուց. —
Ինքն ալ ելաւ՝ իմաց տըւաւ Տըղեկներու Մօրը Լուսիկ-Թագուհուն, —
Թէ, — «ես պիտի մորթեմ ուտեմ Իմ Տըղաք...»:

[Կռապա՛շտ էին, ապա, մա՛րդ ալ կ՚ուտէին...,
Ու ի՛նչ ըսես՝ կ՚ընէին...:]

Թագուհին ալ ի՞նչ ըսաւ. —
= «Ապրա՛ծ կենայ Թագաւորը,
Քու Տըղա՛ք են..., ի՛նչ որ ուզես՝ ա՛ն կ՚ընես...,
Կ՚ուտե՛ս..., կ՚նետե՛ս..., կ՚ըսպանե՛ս..., —
Քո Ձիժե՛րն են..., ի՛նչ որ կ՚ընես՝ Դո՛ւն դիտես...:
Բայց ես Քե՛նէ 1) խընդի՛րք կ՚ընեմ, Տէ՛ր Արքայ, —
Որ Իմ Երկու Տըղեկներուն ձեռ չի տա՛ս՝
Անոնց ծի՛ծ տամ ու տիրե՛մ..., 2),
Մինչեւ Անոնց Քառասո՛ւնքը լըրանայ՝
Նո՛ր եկո՛ւր տար՝ ի՛նչ որ կ՚ուզես՝ ա՛ն կ՚ընես...»:

---

1) Քեզնէ, Քեզնէ: 2) Տիրել, Դիտել, դիտեցնել, խնամել-մեծցնել:

Մինամ-Ա՛ննն ալ՝ Թագուհիին՝ Մա՛րդ ղըրկեց, —
— «Քառասունք չէ՛՝ երկո՛ւ-Քառասունք Քեզի,- ըսաւ -, ժամանակ·
Բայց ես՝ նորէն՝ պիտի ուսե՛մ, կորսընցընե՛մ Այդ Տըղաք···»:

30. Լուսիկ-Թագուհին Հայհոէն Կ'սուրվեցնէ Իր Ցղաճերուն,
Հասիկ Կ'խաւէ, Մասճիճները Փոխասճակել Կուտայ
Եւ Ցղաքը Կըղրկէ Դէպի Ծով

2U·44,45,46,47, Չ·՝Հ·405,(Հ·406), Չ(Ե·478), (Ե·480), Չ·՝Ե·531, Չ·, Չ(Ց·63)·

Զըրոյցն ո՞ւրկէ տանք···, — Թագուհի-Մօրմէ՛ն: —
Լուսիկ-Թագուհին՝ տեսաւ որ Տըղաք՝
Աստըծու չընո՛ւրհք, զօրութի՛ւն ունին,
Օր-աւուր կ'չոչնա՛ն, հըսկա՛յ կըղառնան, —
Կանչեց Մեր-Երէց՝ ու — «Տէ՛ր ողորմէ,- ըսաւ -·
Այս Տըղեկներուն դա՛ս տուր՝ թող կարդա՛ն,
Մեր Հօր, Պապերու՝ Լեզուն լաւ դիտնա՛ն···»:

Երէց դա՛ս տըւաւ Այդ Տըղեկներուն,
Ու գաղտուկ գըրել կարդա՛լ սորվեցան:

Տըղոց Քառասունքը՝ դեռ չէ՛ր լըրացեր,
Կըչըղան 1) արդէն՝ սըրսո՛ւռ 2) Աւտամներ···: —
Ելաւ մայրենի աւանդութեա՛ն պէս՝
Գարընցան 3)-Ձորե՛ն բերաւ ըսաղկեց,
Ջըրէ-ջո՛ւր անցուց 4), լըւաց ու մաքրեց,
Դըրաւ սանի մէջ՝ ու հատի՛կ խաչեց 5): —
Նուռը պըտըղտեց 6)՝ ու խառնեց հե՛տը·

---

1) Շղալ, Հատիկ-հատիկ՝ փայլիլ, երեւնալ:

2) Սրսուռ, Մարգարտաշարը եւ սուր:

3) Գարնցան, Գարնան ցանուած (ցորեն)՝ որ ամենէն ընտիրն է, — «Հաց՝ գարընցան, մաքուց թացան···»:

4) Ջրէ-ջուր անցուցնել, Քանի մ'անդամ նորոգուած ջուրով լուալ:

5) Ցորեն խաչելու, Ակռահատիկ ընելու սովորութիւն (Տե՛ս Բ. Հատոր): 6) Պտղտիլ, Հատ-հատ վերցնել, հատիկներու վերածել· պտղատեղ:

Կանչեց սիրական Երկուրեակ-Տըղաք,
Հատիկը թափեց Անոնց գըլխէն վա՛ր,
Ու մէկը խառնեց՝ Դանակ, Մատնէ, Սան՛ր։

Տըղաք խընդացին, չատ գըւարճացան. —
Հատիկն ափեցին 1)՝ կերա՛ն Նուռին հետ.
Դանակն ու Սանըը՝ քընեցին մէկ-մէկ,
Մատնիներն աւին՝ դըրին Իրենց Մատ։

Մայրը՝ քիչ յետոյ, — «Դէ՛, բերի՛ք, հիմա,
Փոխանակեցէ՛ք Ձեր Մատանիներ»։ —
Ըսաւ դորովով՝ Տըղոցն անհմայ 2)։

Տըղաք՝ թէ, = «Մարէ՛, ինչո՞ւ կ'ուզես որ՝
Մենք Իրարու հետ փոխենք Մատնիներ...»։

— «Օ՛ր է, տարի՛ է 3), Ձատակներո՛ւս -, ըսաւ -,
Կ'երթաք աղ ու ձախ՝ Իրարմէ հեռի, —
Թէ Ձեղնէ մէկը փորձանքի՛ իյնայ՝
Մէկալը՝ Մատնին Իր Մատի՛ն վըրայ
Թէ սեւցա՛ծ տեսնէ՝ օձնուքեա՛ն հասնի»։

Տըղեկներն բերին՝ Իրենց Մատերէն
Հանեցին Մատնիք՝ փոխանակեցին. —
Սանասարն Իրեն տըւաւ Բաղ'սարին 4),
Բաղդասարն Իրեն տըւաւ Սան'սարին 4)։

Մայրը Երկուքին Խոպոպներն չոյե՛ց,
Վառվառ Աչերուն չաղեց 5) համբոյրնե՛ր,
Ու դարձաւ մօր մը դորովոտ ձայնով, —
— «Տըղեկնե՛րս,- ըսաւ -, երէք՝ դո՛ւրս գացէք՝
Որ քիչ մը արեւ, արեւո՛յս տեսնէք...։

---

1) Ափել, Ափով զարնել-առնել։
2) Անհմայ, Իմացականութեան դեռ չհասած, անխելահաս։
3) Օ՛ր է, տարի՛ է, Առեղ կուգայ որ..., կրնայ պատահիլ որ...։
4) Վանուց մէջ՝ Բաղդասար եւ Սանասար անուններուն կրճատ ձեւերը։ 5) Շաղել, Ջօղի պէս փակցնել, սրտագին ու վրայէ վրայ համբուրել, սիրել։

Զեզ՝ Ձեր Քաղքի մէջ՝ մա՛րդ չի՛ ճանչընար,
Գացէք Ծովի ա՛ի՝ կա՛ն եկէք դարվար 1),
Ու դարձի՛ք՝ եկէք...»:

Մայրն ալ ի՞նչ մըտքով կըղըրկէ Տըղաք, —
Ա՛ն ալ դիտէ որ՝ Տըղաք պիտ՝ երթան,
Այն Մարմար-Քարի՛ն պիտի հանդիպին,
Աղբիւրը բացուի՝ Անո՛նք ալ խըմեն...,
Անո՛նք ալ Աստծու զօրութիւն առնեն...: —
Այն մըտքո՛վ կ՚ճամբէ...:

31. Սաճասար Ու Բաղդասար Կ՚երթան Ծովափ Ու Կ՚հանդիպին Աղբիւրին

ՋՍ·48,49,50,51, Կ·106, 107,3,2, (Կ·106)Զ·, Հ·406,6, ՋԿ·64, 65,66,67,68,69,70, 71,72,73,74, 75, Ե·480,532,534, Ց·63,Զ·

Տըղեկնե՛րն ալ՝ ելան գացին Քաղքէն դո՛ւրս, —
Տեսան այնտեղ Այգի՛ մը կար, դուրն ալ բա՛ց..., —
Նե՛րս վազեցին. պըտո՛ւղ կերան, խաղացի՛ն,
Անկէ՝ Ծո՛վը 2) տեսան մէկէն..., — կապո՛յտ Ծով...,
Բայց չե՛ն գիտեր Թէ ի՞նչ բան է Ծով ըսած: —
— «Անիկ արդեօք ի՞նչ է...»,- ըսին, զարմացած:

Սաճասարը մե՛ծ եղբայրն էր, Բաղդասարը՝ Իր պըզտիկ·
Ջոջ եղբայրը՝ վերցուց ըսաւ պըզտիկին· —
— «Ի՛ Բաղդասա՛ր, արի՛ երթանք ու նայինք՝
Այն կապոյտը՝ ի՞նչ է կուգայ 3)՝ ա՛յնքան չատ...»:

Վազեցին ու գացին կ՚երթան Ծովուն մօ՛տ,
Եւ Իրարու կ՚ըսեն, — «Ի՛՞նչքան աղուոր է այս ցորնի արտ...»:
Բըռնաւուր 4) են, դուրս չե՛ն եկած, ու չե՛ն տեսած ոչ մէկ բան...:

Գացին հասան Ծովուն քերան, Նայեցան որ Ջուր է ան:

---

1) Դարվար, Վեր ու վար, աղէնս-անդէնս:

2) Ծով· Ժողովրդի լեզուին մէջ՝ լայնատարած գետն ալ ծով է, մեծ լիճն ալ: 3) Գալ, Խաղալ-գալ, Ծփծփալ:

4) Բռնաւոր, Կաշանաւոր, արգելափակ:

Սանասարը՝ վերցուց ըսաւ իր եղբօր. —
— «Էյ՛ բաղդասա՛ր, արի խըմե՛նք այդ պաղ Ջուր...»:

Ափը զարկին՝ խըմեցին, —
— «Ախո՛ս,- ըսին -, որ այս Ջուրը աղի՛ է...,
Երանի՛ թէ՝ քաղցր ըլլար...: —
Ա՛յդքան Աղը ի՞նչէ 1) են բերած, ճրդած մէջը՝ չօրցուցած...?:

Բաղդասարը՝ դեռ այդ Ջուրէն չէ՛ր կըշտացեր՝ կըխըմէ՛ր:

Ելան ապա՝ Երկո՛ւ-Եղբայր, ձեռքեր դըրին վեր՝ մէմէկի 2) թեւերուն,
Եւ այդ Ծովու ափերուն հետ՝ կա՛ն 3) եկան...:
Ծովին բերնով 4)՝ գացի՛ն-գացին, այդ քարափի՛ն մօտեցան.
Գացին ուրդան 5) այդ ըսպիտակ Մարմար-Քարի Աղբիւրին:
Քարը՝ Աստծու զօրութենէն՝ մէ՛կէն կըրկին բացուեցաւ,
Քարին դըլխէն Ջուրը բոխա՛ց, վեր-վե՛ր նետեց՝ Ծովուն մէջ...:

Ջոջ-Եղբայրը Սանասա՛րն ալ ի՞նչ ըսաւ. —
Ըսաւ, — «Եղբա՛յր, Դուն կեցի՛ր,
Ես ծարա՛ւ եմ, երթամ չո՛ւտ մը այդ Աղբիւրէն խըմեմ՝ գա՛մ.
Դուն ալ յետո՛յ գընա խըմէ՛, թէ կ՛ուզես»:

Սանասա՛րն էր, — չո՛ւտ մը վազեց՝ հո՛ն դընաց,
Հասաւ Քարին, ձեռը տըւաւ Ջըրին դէ՛մ,
Կուզը զարկաւ՝ Իր ուզածով խըմե՛ց-խըմե՛ց այդ Ջըրէն:
Քա՛նի խըմեց՝ այնքա՛ն մեծցաւ, չընո՛ր մըտաւ Իրեն ներս, —
Եղաւ ինչպէս տա՛ս մարդու չափ ու հասակ...,
Բերդի՛ նըման մէկ բա՛ն մը...: —
Ա՛յնչափ ջոջցաւ ու պէտացաւ 6) Սանասար,
Որ մարդ նայէր՝ կըվախնա՛ր...:

Դարձաւ կանչեց Իր փոքր Եղբօր, —
— «Բա՛ղդասա՛ր...,

---

1) Ի՞նչէ, Ի՞նչպէս: 2) Մէմէկի, Իրարու, մէկը մէկուն(վրայ):
3) Կաց(գալ), Շրջապայ(իլ), պատ(իլ), ման(գալ):
4) Բերնով, Ափին, եզերքին: 5) Ուրդիլ, Հանդիպիլ:
6) Պէտացնալ, Մեծնալ, խոշորնալ:

Է՛ Բաղդասա՛ր, արի՛ դէսվեր 1), քաղցըր Զո՛ւր կայ, ու խըմէ՛...»:
Բաղդասարն ալ եկաւ հասաւ՝ ինչ որոնեց 2) Սանասար...՝
Զարմա՛նք մընաց..., ու վախցա՛ւ իր եղբօրմէն..., —

— «եղբա՛յր,- ըսաւ -, ա՛խ, Դուն այդ ի՞նչ ես եղեր...,
Քեզ ի՞նչ եղաւ՝ որ Դուն ա՛յդքան չոլացար...»:
= «եղբա՛յր,- ըսաւ -, չէ՞ Ես եկայ այս Աղբիւրէն խըմեցի,
Եւ այս տեսա՛կ խոչորցա՛յ...:
Դընա՛ Դո՛ւն ալ խըմէ՛՝ եկո՛ւր, Դո՛ւն ալ ինձ պէս կըմեծնա՛ս...»:

Բաղդասարն ալ՝ ձեռքը պարղե՛ց, կուշը զարկաւ Ջըրին դէ՛մ,
Կ'ելա՛ւ կուշ մը Զուր խըմեց· —
Ինք Ծովին Զուր չա՛տ խըմեր էր՝ ծարաւ չէ՛ր·
Ա՛լ չըկըրցա՛ւ Սանասարի չափ խըմէր,
Ա՛ն ալ պէտցաւ՝ բայց՝ մէ՛կ կերպով Սանասարի չափ չեղա՛ւ·
Իր Մեծ-եղբօր կէ՛սը խըմեց, եղբօր կէ՛ս ուժն ունեցաւ·
Սանասարը՝ երկու անգամ Բաղդասարի չափ եղաւ:

Խըմելո՛ւն պէս...՝ Մարմար-Քարը զոցուեցաւ,
Աղբիւրին Զուր կըտրեցաւ...:

Երկու-եղբայր՝ այնտեղ մեծցա՛ն, խոչորցա՛ն...: —
Այդ Աղբիւրէն Զուր չըխըմած՝ երկուքն ալ դեռ ճի՛ժ էին·
Երբ խըմեցին՝ զարճան եղան մէյմէկ Հրեղէ՛ն Տըղամարդ...:
Իրար եկան՝ նայեցան...՝
Թէ՛ խընդացան՝ թէ՛ լացին...: —
— «եղբայր,- ըսաւ Սանասար -·
Ասկէ յետոյ կըտապաշտի-թազաւոր՝
Ի՞նչպէս կըրնայ ո՛ւժ բանեցնել Մեր վըրայ...: —
Մենք բըռունցքով ու ոտքով ալ՝ զէնքի տեղ՝
Զ'Անոնք ամե՛ն կը կոտորենք անխընայ...»:

32. Սանասար Կ'երթայ Ծովուն Մէջ

ԶՍ·51,52,53, Զկ·76,77,78, 79, Զ(Զկ·78), Հ·6, Զ(Հ·406), Ց·63, Ե·480, Զ(Ե·480,534), Կ·107, (Կ·107,106)Զ·

Երան եկան Ծովուն ափ..., —

---

1) Դէսվէր, Դէպ այս կողմը: 2) Որոնել, Ջննել, ուշով նայիլ:

Սանասարը վերցուց ըսաւ, — «Բա՛ղդասար,
Արի՛ տանք վեր՝ այս Տովուն,
Նայինք մարդ կըխըրուի՞ մէջ…:
Աղէ՛կ է որ Մեզ թալենք 1) Ջուր՝ քան երթանք
Կըսպասէ Թագաւորը Մեզ մատղէ իր Կուռքերուն…»:

Բաղդասարը սիրտ չըրաւ 2)…,
= «Եղբա՛յր,- ըսաւ -, ես՝ իրաւի՛ չե՛մ իշխեր… 3):
Հոգին քա՛ղցր է քան ամէ՛ն բան, ա՛յ եղբայր, —
Ես Չիս Տովը չեմ ճըղեր…»:
Ու դըլուխը դըրաւ եղբօր Սանասարի ծունկին վրայ՝
Տովին եզերք քընացաւ…:

Գահ մը յետոյ՝ Սանասարը վերցուց ըսաւ, — «Տէ՛ր վըկայ…,
Ես պիտ՝ ելնեմ՝ քըշե՛մ երթամ Տովուն վրայ…:
Երբոր ես մէջ չըխըրուեցայ, ու գացի՝
Բաղդասարն ալ՝ կըրնայ ելնել՝ ինձ պէս գալ.
Թէ խըրուեցայ՝ Բաղդասարն ա՛լ չի գար ու ո՛ղջ կը մընայ…»:

Սանասարն էր, — քիչ յետոյ…՝
Տեսաւ որ ի՛նչ…, — Տով բացուեցաւ Իր առաջ: —
Ան ալ՝ կ՝ըսես՝ քունէն դեռ նո՛ր ելածի պէս՝ չըփոթած…,
Ակռքներէն լըսեց ձայն մը՝ որ կ՝ըսէր. —
— «Է՛յ Սանասա՛ր…, Սանա՛սար…,
Արի՛ ես Քեզ տանիմ Տովուն խո՛ր՝ կըղգի՛ն…: —
Մատո՛ւռ մը կայ Տովին կեդրոն՝ Քարայրի մը ծոցն՝իմար…,
Աստուծով՝ ես Քեզի կուտամ այնտեղէն՝
Թա՛չ-փետրազին՝ ու Թըրի՛կը-կէծակին.
Ոսկի-Գուդի՛ն՝ ու Ջըրե՛հը-Քաջախին.
Գո՛րզ-Գոռոցին, Թա՛մբա-Արծըթին,
Հրեղէն Գուռիկ՛ և-Ջալալին…:

Դուն ուժո՛վ ես, Գորզ-Գոռոցին կըբերե՛ս…:
Ու Դարպասի Ջուրին մէջ ալ՝ լողանա՛ս՝

---

1) Թալել, Զգիլ, Թող տալ՝ իյնալու, նեռել, տապալ տալ:
2) Սիրտ չընել, Քաջութիւն չունենալ:
3) Իշխել, Համարձակիլ, Ժոխլ:

Կըզօրանաս եօ՛թն անգամ…, —
Կըջոջանա՛ս, կըլեցուիս՛…, —
Մէկը՝ կ՚ըլլայ եօ՛թն անգամ…»:

Սանասարն էր, — աչքը չըփրեց՝ ու ըսաւ, —
— «Այդ երա՞զ էր…՝ տեսայ ե՞ս…՝
Թէ՞ սուտ, կամ թէ՝ չիտակ էր…»:

Ան ալ եղբօր դըլուխ՝ յուշիկ՝ վա՛ր դըրաւ,
Ելաւ քալեց՝ գ՚ինքը տըւաւ վեր՝ Տովին·
Աստծու մէ՛կ անուն տըւաւ աչխուժով,
գ՚ինքը վերցուց՝ չալապատիկ 1) ձըգեց՝ ինկաւ մէջ Տովին…, —
Աստծո՛ւ կամքով՝ ինչպէս թէ չո՛ր գետնի վրայ՝
Գընաց մըտաւ այդ ճանապարհ՝ ինչ 2) բացուեցաւ Տովին մէջ…:
Ապարէզ մը գընա՛ց-գընա՛ց, կորսըւեցաւ, չերեւաց…:

38. Հրեշտակները՝ Տովին Մէջ՝ Սանասարին Կուտած Դիւցազնի Զէն-ու-Զարդերը

ՀԿ·81,82,83,84,86,87,88,89,90,91,85,92, (ՀԿ·83), Հ·՝ՀԿ·87, (Կ·107,3), Հ·, Հ·6,406, Հ(Հ·6,406), Հ(Ե·480), Ե·783,767, ՀՍ·54,55, 56,57, Հ·՝ՀՍ·54, Ճ·63, Լ·7, Կ·111, Կ·111՝Հ·

Զի՛ս ըսեր որ՝ Հրեշտակնե՛րն են՝ Սանասարը կըտանին…:
— «Լ՛ Սանասա՛ր,- ըսին Երկնից-Հրեշտակները՝ Տովուն մէջ —·
Դուն որ եկար՝ Բաղդասա՛րը ինչո՛ւ գետ հետ չըբերիր…»:
— «Իրա՛ւ, թէ, ես Անո՛ր ալ ըսի «եկո՛ւր», Ան չեկա՛ւ…»:
Սանասարն ալ գընաց հասաւ Տովուն տա՛կ…,
Նայեց տեսաւ…՝ ի՛նչ տեսնէ…, —
— Այգիի մէջ, ինչպէս 3) պըղտիկ մէկ Մատուռ,
Իրեն առաջ՝ ե՛տ բացուեցաւ՝ Տովուն մէջ…,
Ու Հըրեղէն-Զի՛ս մ՚ ալ այնտեղ՝ վալփըլլուն,
Զինած, թամբած, խըրխընջան 4)՝
Կէծականը-թուր վըրան կախ…, —
Աղբիւրի մ՚ քով քըշքըշան… 5):

---

1) Շալապատիկ, Գլխիվայր, գլխակոնծի: 2) Ինչ, Որ:
3) Ինչպէս, Սա՛նկ, (պզտիկ մատուռի) նմանող բան մը:
4) Խրխնջաձի, խրխնջալու ձեւին մէջ, խրխնջացող:
5) Քչէչաճ, կարկաջուն, դղրդող:

Սանասա՛րն էր, — քա՛յլ մը առաւ, դընաց պիտի մըտնէր ժա՛մ...՝
ժամը վըրան կանչեց ըսաւ, — «Սանասա՛ր...,
Քու ոտքերուդ Տըրեխները հանէ՛՝ ապա՛ մըտիր ներս...»:
Ան ալ դարձաւ՝ կանչեց ըսաւ, = « Դուն ո՞վ եեե՛ս..., —
Ես կընայիմ՝ քեզ չե՛մ տեսներ..., Դուն ինձի հետ կըխօսի՛ս...»:

— «Ես,- ըսաւ Զայն՝ խորունկէն -,
Քառասո՛ւն-Մորան-Ասպարածին Մասո՛ւնքն եմ...:
Քո Մօր արցունք՝ ինչպէս խունկը վեր՝ կրակին՝
Ելաւ հասաւ առ Աստուա՛ծ...:
Վերցո՛ւր,- ըսաւ -, այդ Ոսկի ինչ այդ Պատուհան,
Համբուրէ՛՝ դիր Քու ա՛ջ Թեւին՝ ու յիշա՛ 1). —
— «Հայց ու Գինին,
Տէ՛ր-Կենդանին 2),
Քառասո՛ւն-Մորան-Ասպարածին,
Ա՛ջ-Փետրազին՝ Իմ ա՛ջ Թեւին, —
Օգնակա՛ն կանգնիք Սանասարին...»:

Սանասարն ալ՝ Պահարանէն՝ Ոսկէը վերցուց՝ համբուրեց,
Դըրաւ վեր՝ Իր Ա՛ջ-Թեւին:

Հրեշտակները ելան ապա ի՞նչ ըրին, —
Թուր-Կէծակին՝ Երկինքէն,
Գորզ-Գոռոցին՝ Ամպերէն, —
Բերին տըւին Սանասարին եւ ըսին. —
— «Եւ Քո Զին ալ..., —
Մովէն քաշած՝ Հրեղէն Քուռկիկ-Ձալալին՝
Դուն Քու ձեռքո՛վ պիտի բըռնես Մովուն մէջ,
Ու այդ Ոսկէ-Սանձը դարնես Բերանին...»:

---

1) Ցիշալ, Անունը տալ, յիշատակել՝ (անով ուժ առնելու):
2) ☛ ե.767,779, 780,783՝ «Ոչն .կենդանին»: Խէճ = Հայ, ☛ Անհաւ Հայոց թիւը:

Սանասարն ալ՝ չա՛տ զարմացաւ…, —
Դեռ Քառասունքի Տըղա՛յ էր —·
Զարմանացա՛ւ…, հարցուց ըսաւ տըղուս պէս, —
— «Այս երկար կե՞ռն ինչ է որ…՝
Կըթակի պէս կըգըրվըրա՛յ 1)՝ կըխաղայ…»:

= «Թուր-Կէծակի՛ կ'ըսեն անոր,- ըսին Երկնից-Հրեշտակներ ..

Երբոր երթան կըռիւ ընեն մէկուն դէմ՝
Ան կըկապեն՝ կ'երթան կռիւ:
Անի երբոր իր կալանէն 2) քաշեն-հանեն ու զարնեն՝
Ի՛նչ որ ըլլայ՝ կըթըրատէ 3), կըտրէ-նետէ դէսուդէն…:
Մէ՛կ հարուածով՝ երկա՛թին անգամ կըկըտրէ…,
Մէ՛կ փարատես 4)՝ հազա՛ր-հազա՛ր կըջարդէ…»:

— «Է՛, այս կըլո՞ըն ինչ է…»,- ըսաւ Սանասար:
= «Ան ալ Գո՛րզ 5) է· — Գորզ-Գոռոզի՛ն է անուն·
Նապէս-նապէս կըբռնեն ձեռ՝ կըզարնեն· —
Ուժով մարդեր կ'առնեն կ'երթան կըռիւ,
Կ'զարնեն՝ Իրար կ'ըսպանեն…:
Մէ՛կ զարնելուն՝ հազարաւո՛ր մարդ կըփըռեն աջ ու ձախ…:
Կ'զարնեն՝ Բերդե՛ր կ'աւերեն…, —
Սա՛ր-քա՛ր կ'Թընդա՛յ…, կըփըլի՛…»:

— «Ան՞կ ի՛նչ է…», — հարցուց Տըղայ Սանասար:
=« Խաչ-Փետրազի՛ն կ'ըսեն անոր անունն ալ:
Եւ այդ Խաչի զօրութիւնն ալ ա՛յն է որ՝
Արժանաւոր Մարդ ըլլայ՝
Այդ Խաչն Անոր Այլ-Թեւին վրա՛յ Թէ ըլլայ՝
Աչքա՛րհ ժողուին՝ Այն Մարդ յաղթել չե՛ն կըրնար…»:

---

1) Գրվրալ, *փայլկտիլ, աղամանդի պէս՝ լոյսի խաղեր ընել·* ջէհ-վէրլէմիշ *ըլլալ:* 2) Կալան, (կալնուլ *քայէն*), Պատեան՝ *սուրի,* gaine : 3) Թրատել, *թուրով կտրել, երկուքի բաժնել, կտրտել:*
4) Փարատել, *թափով եւ աջ-ձախ, վեր-վար շարժել:*
5) Գորզ, գուրզ, գիւրզ, *Հնչել՝* Gorz, Gourz, *ոչ Թէ* fորզ *կամ* fուրզ: *Երկաթէ կլոր ծանր լախտ:*

— «Ապա սիվտակ 1) այդ Ոսկո՞րը ի՛նչ բան է...»:
= «Ան ալ ան է, — թամբն-Արծըվի՛ն է անուն,
Ինչ 2) կըդընեն Հրեղէն-Ձիու մէջքի՛ն վըրայ՝ կըհեծնեն:
Հրեղէն-Ձին ալ՝ նապէ՛ս-նապէ՛ս կըհեծնեն...: —
Այնպէ՛ս Ձի մ՛է՝ որ նեղի գայ՝ կըբարձրանայ երկնուց հետ...,
Ո՛չ Թուր կ՛հասնի, ո՛չ Դորզ կ՛հասնի, ո՛չ ալ Նետ...: —
Երկրի վըրայ՝ Թո՛ւ 3) բան մ՛իրեն չի՛ հասնիր...,
Հաւքի 4) նըման կըԹըռի՛...,
Հովէն արագ կըսուրայ, —
Ո՛ւր ուզես՝ Քեզ կըհանէ 5),
Ծովայի՛ն-Ձի է անիկ...:

Բաղդատարը չեկա՛ւ,- ըսին -, Թէ որ Ա՛ն ալ Քեզ հետ գար՝
Մենք Անո՛ր ալ այսչափ մը բան կուտայինք, —
Ա՛լ երբեք մա՛րդ Ձեր երկուքիդ առջեւ կանգնիլ չէ՛ր կըընար,
Աչխա՛րհ պիտի յաղԹէինք...:
Բայց Թէ որ Դուք մա՛րդ ըլլաք՝
Մարդու տըղա՛յ Թէ ըլլաք՝
Այսչա՛փն ալ Ձեզ կըբաւէ...:
Ձեր նըշա՛նն ալ՝ երկինքց երես՝ ա՛յս լինի, —
Ամպը երկինք երբ կանչէ՝
Նեղութեան մէջ գըտնըւողին՝ մխուա Եղբայր չո՛ւտ հասնի...»:

84. Սասնասար՝ Ծովուն Մէջ՝ Կըբռնէ Հրեղէն Գուռկիկ-Ձալալիճ Եւ Հեռը Կըխօսի

(Կ·107,111)Ձ·, Հ·6,406, (Հ·406,6), Ձ(Ե·480), Ձ·՝Ե·879,Ե·879, 481, Ձ·՝ՁՍ·57, ՁՍ·58,59,60,61,62,62ա,63,64,65, Ձ·՝ՁՍ·65, ՁՍ·66,67, Ձ(Լ·63), (Կ·3)Ձ, Կ·3, (ՁՍ·109) ,Ց·63,64, ՁԿ·93.

Ձայնը վերէն կըտրեցաւ...:
Հրեշտակները ա՛լ չըկան: —
Սասնասարն ալ զ՛ինքը նետեց Աղբիւրին մէջ՝ լողացաւ.

---

1) Սիվտակ, Սպիտակ: 2) Ինչ, Որ: 3) Թո՛ւ, Բնա՛ւ, երբե՛ք: 4) Հաւք, Թռչող Թեւեր ունեցող Թռչուն: 5) Հանիլ, Տանիլ-հասցնել:

Ի՛նչքան որ ուժ ունէր ինքը իր վրան՝
Մէկը՝ եղաւ եօ՛թն անգամ...:

Երբոր եկաւ այդ Աղբիւրէն՝ ու նայեց, —
Աչքը ինկաւ Ծովուն ճամբան, — ի՛նչ տեսնէ..., —
— Տեսաւ որ մէկ Հրեղէ՛ն Զի մը՝ իր առջեւ..., —
Ծովին մէջէն՝ այդ ճանապարհ դո՛ւրս ինկաւ... 1):

Զի՛ մը հրեղէն..., —
Փըրփուր Բերնի՛ն,
Ռունգը հուլո՛ւտ,
Բա՛ղը տընկած,
Աչքեր կայծա՛կ,
Պոչ ցըցկըտուն,
Մէջքը բարակ,
Ինք՝ սըլվըլիկ 2),
Սըմբակները՝ շա՛նթ ու որոտ, կայծակուն...,
Աղամանդի՛ պէս չողուն,
Եւ ամենմէկ Սըմբակին ալ՝
Զոյգ մը թեւո՛ւվ ծըփծըփուն, —
Անարխո՛ւն 3) մը խըրխընջալով՝
Փընչփընչալով,
Հովի՛ թափով՝
Ծովին ճամբան՝ դո՛ւրս թըռաւ...:

Սանասա՛րն էր, — հասա՛ւ բըռնեց Զիուն բաշ.
Բա՛ղը բըռնե՛ց...,
Բըռնելո՛ւն պէս՝ թըռաւ Զիու քամակի՛ն,
Սանձը զարկաւ Բերանի՛ն...:

Զի՛ն էր, — կըտրիճ վեր-վեր թըռաւ, խըրխընջաց...,
Դէ՛ս վախաւ ու դէ՛ն վախաւ,
Իր եռեւի Ոտքերուն վրայ կանգնեցաւ, —

---

1) Դուս իյնալ, *Մէկէ՛ն մէջտեղ յայտնուիլ եւ աւերալ, վախիլ:*
2) Սլվլիկ, *Լպրծուն ու փալփլուն, աչխոյժ, անհանգստարար:*
3) Անարխուն, *Ամեհի:*

Սանասարը Իր կըռնակէն գետին նետել չըկըրցա՛ւ,
Հանդարտեցաւ ու կեցաւ...։ —

Դարձաւ Տըղուն, լեզո՛ւ ելաւ ու ըսաւ. —
— «Վ՛ Հողածին Տըղա՛յ,- ըսաւ -, ունի՞ս այնքան զօրութիւն՝
Որ Դուն ելնես Իմ Քառակ.... —
Քեզ կըհանեմ երկնուց հե՛տ...՝
Արեգակի՛ն կուտամ Քեզ ու կըվառե՛մ...»։

= «Է՛հ՛,- ըսաւ Սանասար -,
Դուն Ձիս հանես՝ Արեգակի՛ն Քէ տաս Ձիս՝
Ես կըխաղամ Քու փորի՛ տակ..., Քու քառա՛կը կըվառուի՛...,
Դէ՛, ինձի ի՞նչ կ՛ըլլայ որ, —
Ես կը մընամ ողջ-առո՛ղջ...»։

— «Քեզ կըվերցնեմ՝ կըզարնեմ Ծով՝ կըխեղդե՛մ...»։
= Ես կըխաղամ վեր՝ Քու քառկին,- ըսաւ Ան -,
Դուն կըխեղդուիս՝ Ես կըմընամ նորէն ո՛ղջ...»։

— Քեզ կըզարնեմ Սարեր-Քարեր՝ ու կ՛ըսպանե՛մ...»,- ըսաւ Զին։
= «Դուն ո՛ր կողըդ զարնես,- ըսաւ, Սար ու Քար՝
Ես կը խաղամ մէկա՛լ կողմ...»։

Ի՛նչ որ այդ Զին՝ Տըղուն ըսաւ...՝ ու փորձեց՝
Տըղան՝ Զիուն՝ Իր պատասխան չո՛ւտ տըւաւ. —
Հըրեղէն-Զին՝ Տըղուն վրայ չըկըրցա՛ւ... 1)։

Զին որ տըւաւ Արեգական՝ Քէ խաչէր՝
Սանասարը՝ Ինք՝ չըրջուեցաւ փորին տակ։
Երբոր վերցուց՝ որ զարնէր ու տանէր Ծովուն խոր անդունդ՝
Սանասարը Ինքզինք տըւաւ Ձիուն քառակ՝ ո՛ղջ մընաց...։

Տըղան ալ Զին քաշեց բերաւ Ծովուն ափ։ —
Զին կանդնեցաւ՝ ըսաւ։- «Տըղայ, ասկէ ետք՝
Ես Քեզի Զի՛, Դուն Ինձ տէ՛ր...։

---

1) Վրան չկրնալ, Գերազանցութիւն չկրնալ ցուցնել, չյաղթել։

Ապա, դիտնա՛ս, ես չորայիկն 1) չե՛մ բանիր,
Ծովակ՛ին-Ձի եմ հրեղէն...:
Ե՛լ իմ պոչէն քանի մը մա՛զ քաշէ ա՛ռ,
Ու Ձիս թո՛ղ տուր՝ մըտնեմ Ծո՛վ. —
Ի՛նչ ժամանակ նեղ էյնաս՝
Իմ Մազը հա՛ն՝ տուր կըրա՛կ, —
Ո՛ւր որ ըլլաս՝ ես Ջիզի չո՛ւտ կըհասնիմ...:
Իմ անուն ալ՝ կ՛ըսեն Քուռկի՛կ-Ջալալին: —
Իմ կողերն ալ՝ ապիկի՛ ևն., լա՛ւ դիտնաս...,
Երբոր ելնես Ձիս հեծնես՝
Քու Ոտքերը չըզարնե՛ս իմ կողերուն..., —
Քեզ կըզարնեմ Սարեր-Քարեր՝ կ՛ըսպառնե՛մ...,
Ծովէ՛ն Ծով կըզարնեմ Քեզ՝ կըխեղդե՛մ...»:

Սանասարն ալ՝ ըսաւ, = «Քուռկիկ-Ջալալի՛ն,
Որ այդ տեսակ Ձի՛ ես Դուն...՝
Եւ այդ բաներ կ՛իմանաս... 2)՝
Այնպէս մ՛ը՛ներ՝ որ իմ Ոտքեր ես զարնեմ Քու կողերուն՝
Մենք Իրարմէ սըրդողինք...»:

Սանասար՝ Ձիէն քանի մ՛Մազ առաւ՝ ու դըրաւ Իր Ծոց,
Սանձը համբուրեց, դըրաւ ու պահեց Կապոյտ-Քարին տա՛կ.
Քուռկիկ-Ջալալին Թըռաւ մըտաւ Ծով:
Ինքն առաւ Իր Թո՛ւր, Իր Ա՛ղեղն ու Իր Գո՛ւրզ,
Դարձաւ ու եկաւ Ծովուն ափ՝ ա՛յն տեղ՝
Ուր Եղբօր դըլուխ՝ գետին էր դըրեր:

35. Սանասար՝ Իրե՛ց կուլայ՝ Կաճ կուլայ, Բաղդասար՝ Իրե՛ց...

Զ·,ՁՍ·69,70,67,68,71,72,73,74,75, 76,77,78, 79,97,98, 80,81, ՁԿ·80,93,96,95, Զ(ՁԿ·94,96,70) , Հ·6,7, Զ(Հ·7), Ն·481 , Ճ·64, Զ·՝Ճ·64, (Կ·107,110)Զ·

Ձըրույցն ո՞ւրկէ տանք..., — Բաղդասարէ՛ն տանք: —
Այն ժամանակ որ՝ Սանասար զացեր՝ ու Ծովն էր մըտեր,
Բաղդասար՝ քընած՝ ղ՛Ինքը չէ՛ր տեսեր, —

---

1) Զորայիկ, ծամաքայլին, ցամաքէն, երկրէ՝ վրայ:
2) Իմանալ, գիտնալ, հասկնալ:

Քունէն ելաւ վե՛ր՝ ու Աչքը բացա՛ւ՝
Տեսաւ որ եղբայր՝ Սանասար չըկա՛յ…, —
կըսկըծո՛ւ 1) Իր խելք դըլուխէն գընա՛ց, ինկաւ Ծովուն ափ…:
Ծովու Լափինը 2) զարկաւ երեսին,
Ու Սիրտը չոյեց, —
Բաղդասարի ուշքն Իր վըրա՛յ եկաւ,
Ան ալ ելաւ վե՛ր,
Լացա՛ւ ու ինկաւ՝ այդ Ծովուն երկայնք,
Ու Ափիներն՝ ի վեր՝
Կա՛ն կուգայ երեր…:

Սանասար Ինքն ալ՝ ինչ 3) եկաւ Ծովափ,
Ախտեղ ո՛ւր որ Իր եղբայր քըներ էր, —
Տեսաւ որ եղբայր՝ Բաղդասար չըկա՛յ…, —
Ա՛ն ալ՝ այդ Ծովուն ափինիվար ինկաւ…,
Լացա՛ւ…՝ կա՛ն եկաւ…:

Սանասար՝ Իրե՛ն կուլայ, կա՛ն կուգայ…,
Բաղդասար՝ Իրե՛ն կուլայ, կան կուգայ…: —
երկուք՝ մա՛ն կուգան Իրարո՛ւ ետեւ…,
Դէմ-դէմի՛ կ՝երթան…:

Սանասար նայեց՝ որ Մարդ մը վերէն՝ կուլա՛յ ու կուգա՛յ…,
Բաղդասար Ի՛նքն ալ՝ նայեց որ վարէն՝ Մէկ 4) կուլա՛յ կուգա՛յ…:
Եկան ու ելան մէկ-մէկու առջեւ, —
Իրար չե՛ն ճանչնար…: —

Բաղդասար տեսաւ…՝ Սա՛ր մը ելեր է Սարի՛ մը վըրայ…, —
Ըսաւ, — «Աղէ՛կ էր…՝
կըտոց-թագաւոր Ձիս տանէր մատղէ՛ր…՝
Գան թէ Այս Գազան՝ զարնէր՝ Ձիս ուտէր…»:

Սանասար ճի՛ժ էր՝ երբոր մըտաւ Ծով.
Ծովէն ինչ ելաւ…՝

---

1) կսկըծու, կսկիծէն:
2) Լափին, թեթեւ ճղփացող ու եկող մանր ալիք:
3) Ինչ, Ինչ ատեն որ: 4) Մէկ, Մէկ մը, մէկ մարդ մը:

Լեցուեցաւ՝ դարձաւ՝ Սարի՛ նըմանակ…,
Հրեղէ՛ն մէկ Տըղայ…։

Սաֆասար հարցուց, — «Ա՛յ Տըղայ,- ըսաւ -,
Դուն ինչո՞ւ կուլաս…»։
Բաղդասարն ալ Թէ՝
= «Կուլամ՝ որ ապա՝ Եղբա՛յրս է կորսուեր…։
Ես եմ՝ մէ՛կ Երբայր…, —
Ես չիլամ, ա՛յ Մարդ 1), ապա ո՞վ 'տի 2) լայ…։
Թագաւոր պիտի Մեղ տանէր մատղէր…,
Եղբօրս հետ մէկտեղ՝ վիսանք հո՛ս եկանք…,
Իմ Եղբայրը գ'ինք ձըղեց Ծով՝ գընա՛ց…, —
Ծեղդուեցա՛ւ…, մընա՛ց…, —
Ես ալ մնացեր եմ այստեղ մխա-մինակ…,
Ես չիլամ,- ըսաւ -, ապա ո՞վ 'տի լայ…։ —
Հիմա Թագաւոր կուդայ Զիս տանի,
Կուռքերուն առաջ՝ Մատա՛ղ կ'ընէ Զիս…»։
Ու դարձաւ ըսաւ, = «Դո՞ւն ինչո՞ւ կուլաս…»։
Սաֆասարն ալ Թէ, —
— «Ապա՝ Իմ Եղբա՛յրն ալ կորսըւեր է…»։

[Իրար չե՛ն ճանչնար. մեծացեր էին]։

Սաֆասար հարցուց, — «Ա՛յ Տըղայ,- ըսաւ -,
Քո Եղբայր՝ հիմա՝ տեսնես՝ կըճանչնա՞ս…»։
= «Հապա չե՞մ ճանչնար…, —
Իմ Եղբայր՝ Ինձմէ Լոկ էր քանի մէկ լա՛ր… 3)։
— «Անո՞ւն…»։
= «Սաֆասար…»։
Ապա Քո Եղբօր անո՞ւնը ի՛նչ է…։ —
— «Իմ Եղբօր անուն,- ըսաւ -, Բաղդասար…։
Ա՛յ Տըղայ,- ըսաւ -, ես Քո Եղբա՛յրն եմ…,
Ապա՝ չէ՞ որ Մենք՝ Երկու Եղբա՛յր ենք…, —

---

1) *Սաֆասար այնքա՛ն մեծցեր էր՝ որ Բաղդասար զինք մեծ մարդու տեղ կ'առնէ։* 2) *Տի, Պիտի։* 3) *Լար, Մէկ լարի չափ, երկու Թելերուն բացուածքին չափ։*

Դուն Բաղդասա՛րն ես՝ ես ալ՝ Սանասա՛ր...»:
Բաղդասար նայեց՝ զարմացա՛ւ, ըսաւ՝ Իր երեսն՝ ի վեր, —
= «Իմ Եղբայր ճ՛իւ էր...,
Դուն խոչոր մարդ ես...:
Իմ Եղբայրն՝ ըսես՝ Զէնքե՞րն ո՛ւր դըտաւ...,
Հագո՞ւստն ո՛ւր դըտաւ...»:
Սանասարն ըսաւ, — «Ես Քու Եղբա՛յրն եմ,
Մի՛ լար..., մի՛ վախնար..., —
Կըռոց-Թագաւոր՝ Աստուծով՝ ա՛լ Մեզ չի՛ կըրնար մատղել...»:
Հասան՝ մէկըզմէկ այնտեղ դըրկեցին,
Իրար պաղեցին եւ ուրախացան Իրարու վըրայ:

Բաղդասարն ըսաւ, — «Եղբա՛յր, ո՞ւր գացիր...,
Ինչ 1) Ես Իմ քունէս վե՛ր ելայ՝ տեսայ՝
Դուն Իմ քովէ չէիր...՝ Ինձ կըսկի՛ծ եկաւ...,
Ինչ մընաց՝ Իմ խելք դըլուխէս երթա՛ր...»:

Սանասարն ըսաւ, = «Եղբա՛յր, Ես գացի՝ մըտայ Տունն մէջ,
Հրեշտակներն՝ այս Թո՛ւր, այս Խա՛չն ու այս Գո՛րգ,
Ու Զի մ՛ալ՝ Տունէն՝ բերին տըւին Ինձ:
Թէ որ Դուն գայիր՝ Քե՛զ ալ կուտային...»: —

Ու պատմեց Եղբօր՝ Թէ այդ Բաներն 2) ալ ինչի՞ համար են:

Այնտեղէն ելան՝ բերին այս անգամ՝
Տեղ մը փորեցին այդ Տունն բերան,
Ու Աւազի մէջ՝ Զէնքեր պահեցին,
Դարձան ու եկան Իրենց Տօրը մօտ:

86. Կռոց-Թագաւորը՝ Ե՛ւզէ Մորթել Իր Ցղամ,
Իրենց Մայրը Կըյտորտոռէ Որ Փախին
ՉՍ·82,83, Կ·106, Չ·, Հ·6,406, (Հ·406), Չ·՝Ա·48, Ց·14, Ս·138,Չ·

Ինչ եկան՝ դուռը բացին Մըտան Նէ՛րս՝
Մայրն ինչ էրիւկեց 3)՝ տեսաւ Տըղեկներ՝
Ա՛յնպէս խոշորցեր ու մեծցեր էին...՝

---

1) Ինչ, Ինչ ատեն որ, երբ: 2) Բաներ, Զէնուզարդերը:
3) Իրիւկել, Դառնալ նայիլ:

Որ ինք՝ իր Տըղաք հաղի՛ւ ճանչըցաւ…, —
Ուրախացաւ ու մըտքէն ի՞նչ ըսաւ. —
— «Օրհնեա՛լ է Աստուած…,- ըսաւ զոհ սըրտով –.
Իմ Տըղեկները՝ Իրենց չնորքն առեր…,
Ջուրը խըմե՛ր են…»:
Ու հարցուց ըսաւ, — «Այդ ի՞նչ եղաւ Ձեզ…՝
Որ այդպէս ջոջցեր ու խոչորցեր էք…»:
Սանասարն ըսաւ, = «Մովի-Աղբիւրէն՝ Մենք Ջո՛ւր խըմեցինք՝
Ա՛յսպէս խոչորցանք…»:
Տըղեկները որ մըտան ներս, եկան ներստան Մօր կըշտին, —
Բաղդասարը՝ Մօր Ձա՛խ-Թեւին նըստեցաւ,
Սանասարը նըստեցաւ Մօր Ա՛ջ-Թեւին, —
Առին 1) Իրենց Մօր Մխիթերը կըծըծեն…: —
Սանասարը Ա՛ջ-Ըստինքը կըծըծէր,
Բաղդասարն ալ՝ Ձա՛խ-Թիթը. —
Դեռ Քառասունքի Տըղա՛յ են…:

Կըռապաչուխ-Թազաւո՞րը լ՛ինչ ըրաւ. —
Ելաւ եկաւ՝ Թազուհիին դուռ կեցաւ, —
— «Թազաւորի՛-Աղջիկ,- ըսաւ –, դիտես այսօր Քէ ի՞նչ կայ…»:
= «Է՛, ի՞նչ կայ որ…, Տէ՛ր Աըքայ…»:
— «Ձե՞ս ըսեր որ…՝ Մատա՛ղ կ՛ուզեն Իմ Կուռքեր…»:
= «Քո տո՛ւն չաւրի՛…, Նե՞ղն ես որ…, —
Երի՞նչ չունիս…, Ոչխա՞ր չունիս…՝ Քէ՞ Տասար…,
Քեզ պէս հարո՛ւստ Թազաւոր…, —
Ա՛ռ տար զենէ՛ ու մատղէ՛…»:
— «Չէ՛, չէ՛,- ըսաւ –, Մա՛րդ կ՛ուզեն…»:
= «Է՛, Մարդ կ՛ուզեն…՝ Չըկա՞յ անտէր որբ Տըղայ…, —
Ա՛ռ տար զենէ՛ ու մատղէ՛…»:
— «Չէ՛, չէ՛,- ըսաւ Թազաւոր –.
Մե՛ծ Կուռքերն են այս անգամ…,
Իմ Տըղեկնե՛րն է կ՛ուզեն…»:
= «Քո տո՛ւն չաւրի՛…,- ըսաւ Աղջիկ-Թազուհին –.
Իմ Տըղեկները՝ Քո Տըղեկներ՝ նոյնը չե՞ն…, —
Ա՛ռ տար զենէ՛ ու մատղէ՛…»:

---

1) Առիթ, Սկսան:

Տըղոց Մայրը ի՛սկ 1) հասկըցաւ՝ Թագաւորի միտքն ա՛ն է. —
Պիտի տանի իր Տըղաներն՝ զոհէ Իրեն կուռքերուն...:
Մընաց մինչեւ կէս-գիշերին, Քաղաքն ամենք մըտան քո՛ւն, —
Մայրը Լուսիկ-Թագուհի՛ն էր, — կանչեց Տըղաք Իրեն մօտ, —
— «Որդի՛,- ըսաւ -, ելէք առէք սա՛րկ մը Ոսկի՝ ու փախէ՛ք...:
Կըռապաշտ-Թագաւորը՝ Ձեզ կուռքերուն զո՛հ կ'ընէ...:
Ելէք փախէ՛ք, Ձեր գըլուխին ճա՛ր գըտէք...»:

Դ. ՍԱՆԱՍԱՐ ՈՒ ԲԱՂԴԱՍԱՐ ԵՐԿՐԻ ԵՐԿԻՐ ԿԸՊՏՏԻՆ

37. Սանասար Ու Բաղդասար՝ Կ'երթան Երուսաղէմի-Թագաւորին

Ս·138, (Կ·107,3)Ջ·, Ջ·՝Ե·14,15, ՋԿ·98·

Սանասար ու Բաղդասարն ալ՝ Իրենց Աստուա՛ծ կանչեցին,
Ելան առին մէկ պարկ Ոսկի՝ ճամբա՛յ ինկան ու գացին:
Եկան հասան Մովսէս եղերք՝ ուր պահեր են այդ Ջինքերը, —
Սանասարը չուռ տըւաւ Ֆար, տակէն հանե՛ց Ձիուն Սանճ,
Բերաւ զարկաւ Մովսէս մէ՛ջը, Ֆուռվիկ-Ջալալ եկաւ դուրս, —
Չեծան Երկուս, ու քըշեցին, փախան գացին՝ մինչեւ լոյս...:

Լոյս բացուեցաւ, ինկան ու շա՛տ պըտտուեցան դէ՛ս ու դէն.
Ջարկին եկան զատո՛ւ 2) տեղ մը՝ ելան դո՛ւրս: —
Գացին հասան Երուսաղէմ, Թագաւորին դէ՛մն ելան,
Գլո՛ւխ իջուցին, բարե՛ւ տըւին՝ ու կանգնեցան Իր առա՛ջ:

Թագաւորը հարցուց Աստնց, — «Որդի՛, Ձեզի ի՞նչ պիտի... 3):
Երկու-Եղբայր՝ դարձան ըսին, = «Թագաւո՛ր,
Վերեւ՝ Աստուա՛ծ յոյս ենք ըրեր, վարը Քեզի՝ ու եկեր, —
Դուն Մեզ պահես ու պահպանե՛ս՝ զաւկի պէս.
Ետեւանցման 4)՝ Աստուած Մեզ Թող չ'ամբէշտնէ՛ Իրարմէ...»:

Թագաւորը վերցուց ըսաւ՝ Քէ, — «Դուք որո՞ւ Տըղաքն էք»:
= «Մենք Երկուքս ալ,- ըսին Աստնց մէկ-բերան -,
Մենեքերիմ-Թագաւորի Տըղա՛ն ենք»:

---

1) Ի՛սկ, ճիշդ ու ճիշդ, իս՛կ եւ իսկ, ըո՛ւն տեղէն:
2) Զատու, Հեռու: 3) Պիտի, Պէտք է:
4) Ետեւանցման, Ժամանակ անցնելէ յետոյ:

— «Ո՛ր այդպէս է···,- ըսաւ Արքան սարսափած···, —
Մենք չե՛նք կըրնար Զեզ պահել···, —
Ելէք դացէ՛ք Մեր-Երկրէն···»:

38. Սաճասար Ու Բաղդասար՝ Կ'երթան Մուշի-Թագաւորին

Ջ·՝Ե·15,14·

Ե՛տ դարձան Այդ Քաղաքէն, —
Գացին ճամբու վըրա՛յ կեցան՝ ու մի՛տք ըրին միասին, —
Թէ, — «Ո՞ւր երթանք՝ Մեզ պահեն···»:
= «Երթանք,- ըսին -, Մուշի կողմեր· հո՛ն է Մուշեղ-Թագաւոր»:

Ու դէ՛մ ըրին՝ զարկին հասան Այդ Քաղաք,
Գացին ելան Թագաւորի Գահին առաջ, կանգնեցան,
Գլո՛ւխ իջուցին եօ՛թը տեղով, բարեւեցին ու կեցան:

— «Ի՞նչ պակսութիւն 1) ունիք, Ո՛րդի՛ք,- հարցուց Մուշեղ-Թագաւոր:
= Պակսութիւն մը չունինք,- ըսին -, Տէ՛ր Արքայ,
Վերեւ՝ Աստուա՛ծ յոյս ենք ըրեր՝ վարը Քեզի, ու եկեր,
Որ Մեզ պահես ու պահպանե՛ս՝ զաւկի պէս·
Ջու բարեկամ Ակէ՝ հովանի՛ ըլլայ Մեր վրայ՝ մինչեւ վերջ,—
Եաեւանցման՝ Աստուած թող Մեզ չ'ամըչցընէ՛ Իրարմէ՛···»:
— «Ո՛րդի՛ք,- ըսաւ -, բայց Դուք որո՞ւ Տըղաքն էք···»:
= «Մենեքերիմ-Թագաւորի Տըղանե՛րն ենք Մենք»,- ըսին:
— «Մենք չե՛նք իշխեր *) Զեզ հոս պահել,- ըսաւ Մուշեղ-Թագաւոր -·
Ձեր Հայրը չա՛տ զօրըշնդեղ է, կուգայ Մեր վրայ կըռիւ···,
Մեզ կըքշէ, եւ առաւփախ՝ սմե՛ն զէրի կըտանի···,
Շո՛ւտ ե՛տ դարձէ՛ք· Մենք չե՛նք կըրնար Զեզ պահել···»:

39. Սաճասար Ու Բաղդասար՝ Շինուրեան Կրձեռնարկեն Ջուրի Մը Մէջ

Ե·15, Զ·՝Լ·12,13, (Լ·12), Ս·138,139,140, Զ·, (Ս·139)·

Ելան նորէն՝ ինկան ճամբա՛յ ու զացի՛ն···: —
Ընկան ու չա՛տ պըտըտուեցան, զարկին եկան մէկ Երկիր···, —

---

1) Պակսութիւն, կարօտութիւն, պէտք, խնդիրք:
*) Իշխել, ժտիլ, համարձակիլ, իշխանութիւն ունենալ:

Եկան՝ գացին՝ ջոջ Ձորի մը մէջ կեցան. —
Շէն-չինուԹիւն բընա՛ւ չըկար այդ վերքեր *):
Սանասարը՝ մէկ օր վերցուց՝ եղբօրն ըսաւ, — «Բաղդասա՛ր,
Եկո՛ւր՝ այտուեղ՝ շէն-չինուԹիւն մը չինենք...»:
Ան ալ ըսաւ, = «Ինչի՞ համար պիտ՝ չինենք...»:
Սանասար՝ ԹԷ, — «Ա՛լ Մենք այտուեղ՝ Մեր Հօր Ֆաղաք չե՛նք
[դառնար,
Որ այն կռապաշտ անօրէ՛նն Հայր՝ Մեզ մորԹէ...»:
= «Ապա մեր Մա՛յրն ի՛նչպէս ընենք...», — դարձաւ Հարցուց
[Բաղդասար:
— «Շէնը *) չինե՛նք՝ երԹանք առնենք՝ ու հո՛ս դանք:
Ապա *)՝ կ՛ուզեմ մէկ Բե՛րդ չինեմ՝ նո՛ր երԹանք...:
Ես տուն չինեմ, պատաչար *) եմ, — վերցուց ըսաւ Սանասար —.
Ֆա՛ր կըտաչեմ՝ կըբերեմ...»:
= Ես ալ,- ըսաւ Բաղդասար -,
Որս ընող եմ, Ո՛րս կ՛ընեմ, —
Անուշ կ՛ապրինք Երկուսով...»:
Որոշեցին, — մինչեւ կէսօր՝ Ո՛րս կ՛ընէին մխաին,
Կէսօրէն ետք՝ կուպայէին որ Իրենց Շէ՛նը չինէին:
Կարճ ատենէն՝ երկո՛ւ Հարե՛ւր Տուն չինեցին՝ Երկու Եղբայր մխաին:
Տաս-քըսան օր՝ այդ Շէնին վրայ ըանեցան: —
Սանասարն ալ՝ մէկ օր եկաւ տեսաւ որ՝
Բաղդասարը ԹաչկԷ՛ր *) էր ու քունը անցե՛ր էր վըրան. —
ԱբընԹաԹախ *) Որսերն այնպէս՝ անեվեզ՝
Թողեր էր հոն գետնի վըրա՛յ՝ ու քըներ, —
Շա՛տ կըսկըծաց ատոր համար, ու ըսաւ, —
— «Եղբա՛յր,- ըսաւ -, Բաղդասա՛ր,
Ելիր երԹա՛նք...,
Ա՛լ մինչեւ ե՞րբ պիտի մընանք Մենք այտուեղ..., —
Եւ անլի *) Մխա պիտի ուտենք՝ առանց հաց...,

---

*) Վերք(եր), Վերնակողմ(եր), բարձունք, բարձրաւանդակ տեղ(եր): *) Շէն, ՇինուԹիւն, տուն, գիւղ: *) Ապա, Սակայն, մխայն ԹԷ...: *) Պատաչար, Պատ չարող, որմնադիր: *) ԹաչկիԹ, Ծոգնիլ, պարտասիլ, Թասիլ: *) ԱբընԹաԹախ, Արիւնոտ, արիւնի մէջ ԹաԹխուած: *) Անլի, Անաղ:

Աստուած որ տար՝ Մեր Հօր Պալատն ու իր Թա՛հը կուտար Մեզ…։
Այստեղ չորէ՛ ալ կըտրեցանք, ա՛յ Եղբա՛յր,
*Երթանք՝ տեղէ մ՚ չո՛ր *) ճարենք…»։*

40. Սաճասար Ու Բաղդասար՝Կ՚երթան Էրզրումի Եւ Կարսի Նստոդին

Ս·140՝Զ·, Ս·141·

Երկու-Եղբայր՝ ելան հեծան մխսին,
Ու դէ՛մ ըրին, գացին ելան Էրզըրում-Ն-ըստոդին։
Եկան գացին այդ Քաղաքի Մեծաւորին դէմն ելան·
Երկուքը մէկ՝ բարեւ տըւին, ու կանգնեցան Իր առաջ։ —
Ահագին ու սարսափելի Տըղամա՛րդ են երկուքն ալ։
Էրզըրում-Մեծիկ նայեց՝ ախո՛րժ ըզդաց Անոնցմէ։ —
Հարցուց Անոնց ծագն ու ցեղը, եւ ըսաւ, — «Դուք ի՞նչ Մարդ էք…»։
Սաճասար՝ ըսէ, = «Մենք Բաղդադ-Ի-Ալիֆայի Տըղա՛քն ենք»։
Ամիրան ալ՝ օձի՛ք Թոթուեց Առոնց մօտէն ու ըսաւ· —
— «Հա՛յ, հա՛յ, հա՛յ, հա՛յ…,
Մենք Այդ երկրի մեռելներէ՛ն կըփախինք…, —
Հիմա Առոնց կենդանիի՛ն դէմ կուգանք…։
Մենք ուժ չունի՛նք՝ Ձեզ պահենք…,
Ու չե՛նք կըրնար՝ այստեղ Ձեզի տէր ըլլալ…, —
Ո՛ւր որ կ՚ուզէք՝ հո՛ն գացէք…»։

Անկէ դարձան…, —
Ու եռեւէն՝ զարկին գացին՝ դէպ կարս Նըստող Ամիրան
*Ա՛ն ալ այդ նոյն պատճառ *) տըւաւ այդ Տըղոց։*

41. Սաճասար Ու Բաղդասար՝ Խորհուրդ Կ՚ընեն Որ Պլիւս Իրենց Հօր Աճուցը Ձիւռն

Ս·140՝Զ·, Ս·140,141, Զ·՝Ե·16, Ս·141՝Զ·

Ելան դարձան…,
Սաճասա՛ր էր, — վերցուց ըսաւ Իր Եղբօր· —
— «Եղբա՛յր,- ըսաւ -, Մենք այդ Մեր Հօր երեսէ՛ն է կըփախինք,
Առոր անունն ա՛լ Մեր վըրայ ինչո՛ւ համար դըրեր ենք…»։

---

*) Շար, Լաթ, Հագուստեղէն։

*) Պատճառ, Հարց-փորձէ յետոյ՝ պատճառաբանեալ մերժում։

Ճամբան՝ խորհուրդ ըրին մէկտեղ ու ըսին. —
— «Արի՛՝ Մենք այդ չան անունը ա՛լ չի տանք....
Քանի որ Մենք Աստո՛ւն է կուտանք՝
Մեզ ներս առնող, շահող-պահող՝ մէ՛կ չըկայ...:
Ասկէ յետոյ՝ ո՛ւր որ երթանք, ո՛վ որ հարցում ընէ Մեզ՝
Պիտի ըսենք՝ «Մեզ բա՛ն չըկա՛յ..., ո՛չ Հայր, ո՛չ Մայր, ո՛չ
Տուն-տեղ..., —
Թերեւս Մարդիկ Մեզ տէ՛ր ըլլան այս անդամ...»:

42. Սաւասար Ու Բաղդասար Կ'երթան Հիւր Կ'ըլլան Պառաւի Մը

Ջ.՝Լ.13.

Օրերէն մէկ՝ ելան նորէն՝ ինկան ճամբայ, ու գացի՛ն. —
*Մուքը տըւաւ *)՝ գացին մէկ դուռ տըփեցին *). —*
Մէկ Պառաւ-կին եկաւ դո՛ւրը ու նայեց. —
— «Մամի՛կ,- ըսին -, Մեզի տե՛ղ մը տո՛ւր՝ նըստինք.
*Այս դիշերը ծըւարկըտինք *)՝ առտուն ելնենք՝ ու երթանք...:*

Մամիկ հարցուց՝ թէ, = «Ո՞ւստ էք Դուք, ա՛յ Մարդի՛կ...»:
— «Դէ՛, Մենք,- ըսին -, անտուն-անտեղ Մարդի՛կ ենք...»:
= «Եկէ՛ք,- ըսաւ -, Ինձի Տըղա՛յ ընեմ Ձեզ —
Ու իմ Տո՛ւնը մընայէք...»:
Անոնք ալ թէ, — «Մամի՛կ, հա՛,
Մէկ-քանի օր մընանք, տեսնենք՝ Մեր խօսք իրար հետ կուգա՛յ...)»:*

Մէկ՝ վեց-եօ՛թ օր՝ մնացին այնտեղ, Պառուս Տուն. —
Սաւասարը Բաղդասարին ըսաւ, — «Եղբա՛յր, ղէ՛, ըա՛ւ է.
*Մենք որ *) կեցանք այս Պառի մօտ՝ մէկ ժամանակ կըմընանք, —*

---

*) Մուքը տուաւ, *Մուքը կոխեց, դիշերուան ժամը մօտեցաւ:* *) Տփել, Մեծել (դուռը): *) Ծուարկըտիլ, Գէշ-աղէկ՝ ապաստան մը գտնել, տեղաւորուիլ, իջեւանիլ, դիշերել: *) Խօսք իրար հետ գալ, Բնաւորութիւն բնաւորութեան յարմարիլ, միասին կարենալ ապրիլ, համաձայնիլ: *) Որ, Քանի որ, եթէ յարմարեցաւ որ...:*

Թէ լաւ եղաւ ամեն կերպ՝
Կ'երթանք Մեր Մայր կ'առնենք բերենք Այս Գաղաք...»:

43. Սանասար Ու Բաղդասար՝ Գաղամի Թագաւորին Առաջ

Չ.՝Լ.13, Ս.141.

Մէկ ժամանակ մնացին այնտեղ՝ պատւին հիւր: —
Այդ Գաղաքի Թագաւորի Սըրճարարն ալ մեռե՛ր էր.
Թագաւորը եկաւ կանչեց Իր Մեծաւորն ու ըսաւ, —
— «Գընա՛ մա՛ն ևկ Գաղքի մէջ,
Ինձի մէկ լաւ Տըղայ գըտի՛ր, ա՛ռ ու բե՛ր...»:

Գընաց Մարդը՝ պըտոտեցաւ, եկաւ կեցաւ Պատի դո՛ւռ,
Սանասար ու Բաղդասարն ալ՝ Պատւին դուռ Ընստած են,
— «Մամի՛կ,- ըսաւ -, այդ Երկուքէն մէկը տո՛ւր՝
Որ դայ Պալատ՝ Թագաւորին տո՛ւրճ եփէ»:

Պատաւ վերցուց Թագաւորի Մեծաւորին ի՞նչ ըսաւ. —
= «Ես՝ Իմ Տըղաք՝ ինը տարի Իմ փորիս մէ՛ջ եմ պահեր,
*Ու տասներկու տարի *) ալ է՝ պահպաներ եմ Ջուրէ, կրակէ, ձըրադէ.*
Ես՝ Իմ Տըղաք՝ չե՛մ տար երթան Թագաւորին տուրճ եփեն...»:

Մեծաւորը եկաւ գընաց Թագաւորին Թէ, — «Այսպէ՛ս...»:
*Թագաւորն ալ հարցուց, = «Ի՞մալ *) Տըղայ է...»:*
— «Շա՛տ խօրամիկ, կըտրիճ Տըղա՛յ է,- ըսաւ -.
Կըրնամ ըսել՝ որ այստեղեր այնպէս Տըղայ չի՛ ճարուիր...»:
= «Գընա՛,- ըսաւ -, ամիս քառասուն քըսա՛կ տո՛ւր,
Այդ Տըղեկներ ա՛ռ ու բե՛ր»:

Եկաւ ըսաւ, — «Մամի՛կ,- ըսաւ -, ամիս քառասուն քըսակ կուտամ Քո Տըղուն,
Գայ՝ Սո՛ւրճ եփէ՝ ու կըրա՛կ տայ Իմ Տիրոջ...»:

Պատաւ-կինն ալ հարցուց Երկու-Տըղայոց. —

---

*) Սանասար ու Բաղդասար՝ թէեւ դէռ քառասունքի տղայ՝ բայց տասը-տասներկու տարեկան տղայի երեւոյթ ունէին, — պատմողին բացատրութիւնովը (Լ.13): *) Ի՞մալ, ի՞նչպէս, ի՞նչ տեսակ:

— «Սանասա՛ր, Դո՛ւ՝ քէ՞ Բաղդասար, — ո՞ր մէկդ կ'երթաք այդ գործին»:
= «Որ Մեզ ղըրկես,-՝ ըսին Անոնք -, կ'երթանք երկուքս մէասին...»:
Ելան գացին Թագաւորին դէմ՝ կեցա՛ն: —
Ան ալ նայեց՝ ըսաւ, — «Տըղա՛յ, Ձեր անուններն ինձ ըսէ՛ք»:
Ջոջը ըսաւ, = «Իմ անունն է Սանասար,
Պըղտիկ-եղբօրս՝ Բաղդասար»:

Թագաւորին չա՛տ դուր *) եկան Այս Տըղաք,
Մէկ ժամանակ մ'այնտեղ կեցան, այդ Պալատ. —
Սանասարը՝ Թագաւորին Կրա՛կ-Տըւող,
Բաղդասարն ալ՝ Անոր առջեւ Սուրճ-Եփող:

44. Սանասար Ու Բաղդասար՝ Թագաւորին Կրյայօնեն Թէ Մայր Մ'Ունին Ու Գեղի Մը, Եւ Թուղր Կըզրեն Գեղէ-Թորոսին՝ Որ Իրենց Գով Գայ

Ս·141,142, Լ·13,14, Զ·(Լ·13,14), Զ·՝Լ·14, Ս·142՝Զ·

Օրերէ՛ն մէկ՝ Սանասարը դարճաւ եղբօրն ու ըսաւ. —
— «Ա՛յդ չէ՛սի խընամք թափեցինք հոն, ու Մեր չինած՝ կէ՛սն մընաց...:
Ա՛լ բաւ է ինչ հոս մընացինք՝ Թագաւորին ծառայող. —
Լուսուն,- ըսաւ -, ո՛չ Դուն այլեւս Սուրճ եփէ,
Ու ո՛չ ալ ես՝ Թագաւորին կըրակ տամ...; —
Առաւօտուն՝ չերթա՛նք Իրեն երեւան...: —
Մեր Մայրն ու Մեր Գեղէ-Թորոս՝ անմահակա՛ն են Իրենք..., —
Երթանք Անո՛նք պահենք Մենք...»:

Թագաւո՛րն էր, — առաւուն կանուխ իմացաւ՝
Ո՛չ Ան կայ ու ո՛չ ալ Ան..., —
Այդ հեղ *) կանչեց Այդ Մարդիկ,
Առաւ եկաւ Թագաւորը՝ ու ըսաւ. —
— «Մըդի՛, չէ՞ որ ես առջէ՛ն Զեզ ըսի՝
«Զեզի ի՞նչ կայ, Հա՞յր, Մա՞յր...»՝ ու Դուք պատմեցիք՝
Թէ «Մեզի Հայր ու Մայր չըկա՛յ, մա՛րդ չունինք...», —
Դուք Ձեր քէնը ինչի՞ վըրայ ըրեր էք...»:

Սանասարը վերցուց ըսաւ, = «Ապրա՛ծ կենաս, Թագաւո՛ր,

*) Դուր, Հաճելի: *) Այդ հեղ, Այդ պարագային, Իսկոյն:

Ողո՛րդ է, Մենք Հայր-Մայր չունինք, բա՛ն չունինք···, —
Քեզնէ՛ պահենք···՝ բայց Աստուծմէ՞ ի՛նչ պահենք···, —
*Մի քիչ խընա՛մք տըւեր ենք ու աւերա՛կ *) մը չիներ ենք,*
Ու թողեր ենք՝ հո՛ս եկեր···»: —

Ու պատմեցին Իրեն՝ ի՛նչ որ չինած են···: —
Մէ՛կ ալ,- ըսին -, Քեռի՛ մ՝ ունինք՝ որ անունը Թորո՛ս է,
Կ՛ուզենք երթանք՝ ղ՛Ինք պահենք···»:

*Թագաւորի սիրտը կըռնա՛ց *) Աստոնց վրայ՝ ու ըսաւ. —*
—«Մինչեւ հիմա ինչո՞ւ Ինձի չէիք ըսեր՝ Քեռի՛ ունիք, Տի՛ւն ունիք»:
= «Դուն Մեզ, ըսաւ ,- չէի՛ր հարցներ, Մենք ալ Քեզի բան չըսինք»:
— «Որ այդպէս է, Որդի՛ ,- ըսաւ -, Ձեզ չե՛մ ղրկեր՝ երթաք հոն.
Եթէ գացիք՝ Դուք ա՛լ չէք դար այս կողմեր····
Մա՛րդ կ՛ուղարկեմ՝ Ձեր Մայր, Քեռին կըբերեմ···: —
Ո՞ւր տեղ է Ձեր Բընակավայր, Հայրենիք···»:
Թէ, = «Մեր-Երկիր, Բընակավայր՝ Կապուտ-Կո՛ղն է, Տէ՛ր Աբքայ»:

*Մա՛րդ կանչեց *) հոն՝ ու Թո՛ւղթ գըրեց՝ տըւաւ ձե՛ռ,*
Կապուտ-Կողի վըրա՛յ ղրկեց, տարաւ տըւաւ Թորոսին. —
— «Շա՛տ-շա՛տ բարեւ Քեզի,- ըսին՝ Սանասար ու Բաղդասար —·
Այստեղ՝ Մենք լա՛ւ տեղ չիներ ենք՝ երկո՛ւքս ալ, —
Կըխընդրե՛նք որ Դուն Մեզ սիրե՛ս՝ գաս այստե՛ղ···»:

45. Քեռի-Թորոս՝ Սանասար-Բաղդասարի Հով կուգայ

Ջ·՝Լ·14·

Քեռի-Թորոս կանչեց Իրեն Մարդիկները,
Հրաժե՛շտ առաւ, — «Մնացէք բարո՛վ, Ամե՛նքդ ալ,
Թէ՝ ես կ՛երթամ դէպ Մեր Երկու-Տըղեկնե՛ր···»:
Աստոնք ըսին, = «Քեռի՛-Թորոս, Դուն որ գացիր հեռացար՝
Իմա՛լ կ՛ըլլայ Մեր վիճակ···»:
— «Որ ես գացի՝ տեսայ այնտեղ Քէն լաւ է՝
Կ՛ուղարկեմ՝ Ձեզ կը տանիմ···»:

---

*) Ավերակ, Անբնակ(եալ) չէնք: *) Կռչալ, Թունդ եղնել, ցաւ ղրկալ: *) Թագաւորն է կանչող եւ գրել տուողը՝ Սանասարի ու Բաղդասարի բերնով:

Ելաւ Ան ալ, Քեռի-Թորոս, գընաց հասաւ այդ Քաղա՛ք.
Գընաց մըտաւ, Թագաւորին ձեռք տըւաւ: —
Թագաւորն ալ՝ Աւոր յաւուէ Տուն-տե՛ղ տըւաւ, նըստեցուց,
Ու շա՛տ սիրեց Քեռի-Թորոս, Անոր խօսքերն ու բընոյթ:

46. Քեռի-Թորոսի Եւ Սանասար-Բաղդասարի Խօսակցութիւնները
Լ·14,15, Զ·՝Լ·14,15, Զ·(Լ·16), ՁԿ·188, (Կ·110)Զ·

Մէկ ժամանակ՝ Անոնք մնացին այդ Քաղա՛ք.
*Քեռի-Թորոս տեսաւ որ չէ՛, իրենց ապրուստ *) չի՛ ելներ..., —*
— «Տըղա՛ք,- ըսաւ -, Մեր Գերիներ մընացեր են հո՛ն՝ Մըսը՛ր,
Մենք եկեր ենք՝ հանդի՛ստ այստե՛ղ ենք նըստեր...»:
*= «Բա՛ *) ի՞նչ ընենք, Քեռի՛-Թորոս...»,- ըսին երկու-եղբայրներ:*
*— «Ձեզնէ մէկը պէտք է կարդուի՝ որ ցեղական *) հարս մը գայ *)»:*

Սանասարն ալ՝ վերցուց՝ Քեռուն ի՞նչ ըսաւ. —
*= «Դեռ Մենք նո՛ր ենք եկեր Աչքարհ, կաթած Պըտուղ-Խունկի *) պէս,*
Հիմա Մեր ի՞նչ կարդըւելու ատենն է որ, Մօրեղբա՛յր...: —
Բայց Դո՛ւ գիտես..., ըրէ՛ ինչպէս Դուն կ՝ուզե՛ս...»:

Անկէ յետոյ՝ Քեռի-Թորոս եկաւ Իր Տուն նըստեցաւ,
*Մի՛տք ըրաւ ու մի՛տք ըրաւ *)...: —*
Սանասար ու Բաղդասարը դարձան ըսին, — «Մօ՛րեղբայր,
Ի՞նչ է՝ այդպէս՝ մըտածումի մէջ թաղուե՛ր ես, միտք կ՝ընես...»:
= «Կը մըտածեմ,- ըսաւ Անոնց՝ Քեռի-Թորոս՝ առակով -,
Որ՝ աշխարքի է՞դը չատ է՝ թէ՞ չէ Որճ...»:

Սանասարն ալ վերցուց ըսաւ, — «Մօ՛րեղբայր,
Ի՞նչ բան ունիս այդ բանի հետ, վերջապէս...»:

---

*) Ապրուստ, Ապրելու պարմանները: *) Բա՛, (Ա.)պա: *) Ցեղական, Ազնուացեղ, դիւցազնի ցեղէ: *) Քեռի-Թորոսի բաղձանքն էր՝ որ Սանասար-Բաղդասարի պէս դիւցազն տղաք՝ օր-առաջ ամուսնանան եւ իրենցմէ սերունդ ձգեն: *) Պտուղ-Խունկ, Ճերմակ խաղողի հատիկի պէս ողորկ՝ խունկ: Անմեղ, անապակ, կոյս: *) Միտք ընել, Մտմտալ, մտածել, խորհիլ:

= «Ձեր մըտքովը՝ ո՞ր մէկն է չատ···»,- պընդեց նորէն Մօրեղբայր:
Վերցուցին ու երկու-եղբայր մէ՛կ *) ըսին. —
— «կարելի է՝ Որթը չատ է քան թէ էդ···»:
Քեռի-Թորոս դարձաւ այնտեղ իւ՛նչ ըսաւ. —
= «Ո՛ր այդպէս է՝ Մենք ալ է՛դ ենք···, Արու չե՛նք···»:
— «ինչո՞ւ էդ ենք···», — զարմանք յայտնեց Սանասար:
= «Ա՛յսչափ Արու Թոռնե՛ր ունինք,— ըսաւ Թորոս՝ համբերովՀ —,
Ու երեք ալ՝ ըսէ Մե՛նք···՝
Ու եղած ենք կընկայ-կընիկ···, ու կընիկէ՛ ալ վատքար···»:

Սանասարն ալ ըսաւ, — «ինչո՞ւ կընկայ-կընիկ ենք եղեր···»:
= «Անոր համար ենք եղեր որ՝ Մեր Գերիներ՝ ամենքն ալ՝
Թողեր ենք հո՛ն ՚ի Մըսըր, —
Մենք եկեր ենք օտարի՛ դուռ՝ ծառայութեա՛ն ենք մըտեր···: —
Այս Ջուր,- ըսաւ Քեռի-Թորոս -, զօրեղ չ՚է՛···
Ձեր երախան ու Ձեր Սերունդ՝ այստեղ կըտրիճ դուրս չե՛ն գալ···:
Գացէք,- ըսաւ -, Թագաւորէն խընդրեցէ՛ք,
Աւրօնէ Մեզ՝ որ Մենք երթանք Մեր-Աչխարհ···: —
Շնորհակա՛լ ենք· ի՛նչ որ մնացինք՝ կըբաւէ՛···»:

47. Սաֆասար Ու Բաղդասար՝ Թագաւորի Ցուած Ջօչին Հետ՝ Կ'երթան Իրենց Ճէնը

Չ(Լ·16), Չ·՚Լ·16, Ս·142,143, Չ·

Սանասարն ու Բաղդասարն ալ՝ ելան գացին ՚ի Պաբատ,
Թագաւորին դէմ՝ կեցա՛ն. —
Թագաւորը հարցուց ըսաւ, — «ինչո՞ւ կեցաք իմ առջեւ···»:
= «Կ'խընդրենք,- ըսին -, Տէր Թագաւոր, բարեկամ,
Մեզ արտօնես՝ երթանք երթանք Մեր-Երկիր···,
Բա՛ւ է՝ ինչքան ծառայութիւն որ ըրինք···»:
— «ինչո՞ւ ինձմէ կըսըրդողիք, — վերցուց ըսաւ Թագաւոր —·
Կեցէ՛ք կանչեմ Քեռի-Թորոս՝ նայինք Անիկ ի՞նչ կ'ըսէ···»:

Կանչեց բերաւ Քեռի-Թորոս,
Ըսաւ, — «ինչո՞ւ Դուն նեղացեր ես Ինձմէ···»:

---

*) ՄԷԿ, Միաբերան, մէկտեղ:

Ան ալ վերցուց ըսաւ թէ, —
= «Շընորհակալ եմ Քեզնէ՛ ալ, Աղջի՛դ ալ, —
Միայն կ՚խընդրենք որ Մեզ այլեւս հրամա՛ն տաս,
Ելնենք երթանք Մեր-Աչխարհ...»:

Թագաւորի սիրտը կըռչաց *) Աստնց վրայ եւ ըսաւ. —
— «Մը այդպէս է՝ առաւօտուն Զեզի քանի մ՚ Տո՛ւն *) կուտամ
Գացէ՛ք Ձեր տեղ, ու Ձեր Շէնը չինեցէ՛ք»:

Ելաւ այնտեղ՝ Այդ Թագաւոր՝ տըւաւ Աստնց քառասո՛ւն Տուն,
Հէ՛յ քեզ Տո՛ւն... *), —
Քառասուն մ՚ը՛սեր..., — երկո՛ւ-հարիւ՛ր ըսէ Դուն..., —
Ամենամէկին մէ՛կ ձախարակ ու մէ՛կ էշ, —
Դըրաւ հետները *)՝ ու ճամբեց:

Առաւօտուն՝ ելան քարձին Իրենց Տըներ՝ ու գացին.
Երկու-Եղբայր՝ հա՛ *) դէմ ըրին Իրենց Շէնին՝ ու գացին:

Գացի՛ն-գացի՛ն..., — ճամբու մէջտեղ՝ Սանասարը ու Բաղդասար՝
Այդ Բազմութեան առաջ կեցա՛ն երկուքն ալ: —
— «Ինչո՞ւ կեցաք...», — Քեռի-Թորոս հարց տըւաւ:
Անոնք ալ թէ, —
= Այդ Զորի մէջ՝ Շէ՛ն մ՚ենք չիներ, հո՛ն երթանք.
Երկու-Հարիւր Տուն ենք չիներ, ու Բերդին ալ հի՛մ ձըգեր...»:
Քեռի-Թորոս վերցուց ըսաւ, — «Աւոր ճամբան ո՞ր դէհն է...»:
= «Ա՛յսպէս,- ըսին -, Սարին թեւէն զարնենք երթանք՝ այնտե՛ղ է»:

Գացին ելան Իրենց Շէնին, Իրենց Բերդին հիման *) վրայ: —
Սանասարը վերցուց այդտեղ՝ Բաղդասարին ի՞նչ ըսաւ. —
— «Եղբա՛յր,- ըսաւ -, առալ Մեր այդ Բե՛րդը չինենք աւարտե՞նք՝
Թէ՞ չէ այդ հէք Քօչտրներու *) աւանները...»:
= «Առալ,- ըսաւ Բաղդասարը՝ Մեծ-Եղբօր -,
Շինենք այդ խեղճ Քօչտրներու աւանները,

---

*) Կռչալ, Շարժիլ, յուզուիլ: *) Տուն, Ընտանիք, գերդաստան, քօչ, ծուխ (բաղկացած երբեմն 20, 30 եւ աւելի անդամներէ):
*) Հետները, Անոնց հետ, հետերնին: *) Հա՛, Ե՛ւ, ուղղակի:
*) Հիման, Հիմին, հիմունքին: *) Քօչտր, Գաղթական:

Ու նո՛ր չինենք՝ կանգնեցընենք Մեր Բերդը. —
Այդ Թըշուառներ՝ չե՛ն կըրնար հոս՝ բոց-արեւին տակ կենալ...»:
Եւ ըսկըսան Աւաններ...:

Սանասարը ա՛յնքան զօրեղ, ուժով էր՝
Որ օրուան մէջ՝ տա՛սը Տան տե՛ղ կըփորէր,
Ու տասը Տուն կըշինէր:
Այն մէկալն ալ՝ Բաղդասար՝
Փա՛յտ կըբերէր իր Ուսով, —
*Ու բանուածքը *) կըշինէին Երկուսո՛վ:*

Զորս օրուան մէջ՝ քառասուն Տո՛ւն ալ կանգնեցուցին Զոյղ-Եղբայր: —
*Այդ Քօչէրներ մըտան մէջը՝ տեղաւորեան *), լըմընցան.*
Իրենց համար ժամ չինեցին՝ նըստեցան:

Ե. ՍԱՆԱՍԱՐ ՈՒ ԲԱՂԴԱՍԱՐ ՆՈՐԷՆ ԵՐԿՐԷ ԵՐԿԻՐ ԿԸՇԻՋԻՆ

48. Սանասար Ու Բաղդասար՝ Կ'երթան Խլաթի Թագաւորին

Ս·141, Զ(Ս·141), Ց·16, Զ(Ց·16), Զ(Զկ·107).

Օրերէ՛ն մէկ՝ այդ տեղէ՛ն ալ՝ դէ՛մ ըրին, —
Դարձան զացին դէպ Խըլաթ: —
*Այդ Քաղաքի Թագաւորին անուն՝ Մելքո՛ն-Թագաւոր *):*
Սանասար ու Բաղդասարը մխասին՝ Թագաւորին առջե՛ւն ելան
[կանգնեցան,
Եօթը տեղով գլո՛ւխ խոնարհեցին՝ երկուքն ալ,
*Ուր քայլ եռով *) ձեռ կապեցին*)՝ ու կեցան:*

*Թագաւորը հարցուց, — «Որդի՛, ի՞նչ պակսութիւն *) մ'ունիք որ»:*
Զոյղ-Եղբայրը Սանասարն ալ՝ վերցուց ըսաւ, = «Թագաւո՛ր,
Վեր՝ Աստըծո՛ւն ենք յոյս ըրեր, ու վարէ դին ալ Քեզի՛···, —

---

*) Բանուածք, կառոյց, շինութիւն: *) Տեղաւորեան, Տեղաւորուեցան: *) Ց·16, ստրջ.՝ «Մխիթար Թգր.»:

*) Եռով, ետ-ետ երթալով, դէպ ետ: *) Ձեռ կապել, Ձեռքերը վրէն վրայ խաչաձեւել՝ (յարդանքի իբր նշան): *) Պակսութիւն, կարօտութիւն, պիտոյք:

Դուն Մեզ պահես ու պահպանես՝ զաւկի պէս,
Հովանիի պէս Քու աչքը Մեր երկուքիս վրա՛յ լինի,
Նախանձմամբ *)՝ Աստուած Քող Մեզ չ'ամբէցընէ՛ Իրարմէ...»:

Թագաւորին չատ դուր եկան Սանասարի այդ խօսքերը,
Ախորժ լզգաց Անոնց մօտէն, ու դարձաւ դէպ Տըղեկները,
Հարցում ըրաւ՝ թէ, — «Դուք որո՞ւ Տըղաքն էք...,
Ուստի՞ց կուգաք, ի՞նչ ունիք ու ի՞նչ չունիք...»:
Տըղեկները ալ՝ վերցուցին հոն ի՞նչ ըսին. —
= «Մենք բա՛ն մըն ալ չունինք...,- ըսին երկուքն ալ -.
Մենք եղեր ենք,- ըսին -, ո՛չ Հայր տեսեր ենք Մեզ՝ ո՛չ ալ Մայր...
Ո՛չ ցեղակից, ո՛չ ծողովուրդ՝ չունի՛նք Մենք...
Մենք Մեզ այնպէս՝ անհայր Տըղայ ենք տեսեր...»:

Թագաւորն ալ՝ վերցուց այնտեղ՝ Մեծաւորին ի՞նչ ըսաւ. —
— «Տա՛ր այս Տըղաք՝ սեննա՛կ մը տուր՝ Քող նըստին»:
Տարան դըրին յարկի մը մէջ, լայն ու բաւ,
Ու պահէ-պահ՝ հաց-կերակուր կըտանէին առանձին:

49. Թագաւորը՝ Սանասար-Բաղդասարի Ուժը Նըփորձէ

2(8·16), 2·՝8·17,18,18ստրջ·

Առեն մ՝ այդպէս պահեցին...: —
Օրերէն մէկ՝ Մեծաւորը Թագաւորին ի՞նչ ըսաւ. —
Թէ, — «Թագաւո՛ր, ինչո՞ւ ձըրի՝ հա՛ց կերցընես Այդ-Մարդոց...»:
= «Ապ՝ ի՞նչ ընենք, վէգի՛ր *)»,- ըսաւ Թագաւոր:
— «Օր մը բերես՝ փորձե՛ս Առնք. տեսնենք չընորք կա՞յ՝ թէ՞ չէ՛»:
= «Աղէ՛կ կ'ըսես...», — Թագաւորն ալ ըսաւ Իրեն վէգիրին:

Ու կանչեցին՝ Թագաւորի Դիւա՛ն բերին Տըղեկները:
Թագաւորն ալ Առնոց ըսաւ, — «Որդի՛, դիտէ՞ք թէ ի՞նչ կայ...,
Լուսուն պիտի եբնենք երթանք կըռիւի...»:

Տըղաները ելան տուին՝ գացին իրենց յարկին մէջ:

Մնացին մինչեւ լուսացաւ...: —

---

*) Նախանձմամբ, ժամանակ անցնելէն յետոյ: *) վէգիր, նպարեղես, մեծաւոր (թերեւս վաճառ բառէն):

Լուսուն բերին՝ ամենամէկին մէյմէկ Ձի՛,
Մէյմէկ ճեռք ալ Ձի՛նք տըւին։ —
Ձիանք հեծան՝ ու քըշեցին գացին դա՛շտ.
Թագաւորն ալ՝ եկաւ հասաւ Բանաձով. —
Ձիուն վրայէն վերցուց ըսաւ, — «Սանասա՛ր,
Դուն առ Զօրքը՝ մէ՛կ դէհ *) կեցիր՝ դա՛շտին մէջ,
Ես, Բաղդասար ու Եպարզոս՝ մէ՛կ դէհ կենանք՝ Ձեր դիմաց»։

Սանասար Թէ, = «Այդպէս չ'է՛ կերպ, Թագաւո՛ր...»։
— «Հապա,- ըսաւ -, ի՞նչպէս է...»։
= «Ես, իմ եղբայրը՝ մէ՛կ դէհ,- ըսաւ -, կըկանգնինք,
Դուն, Քու Բանակ՝ մէկա՛լ դէհ...»։
— «Քու խօ՛սքն ըլլայ...», — պատասխանեց Թագաւոր։
Ու դէմ-դէմի՝ Իրա՛ր եկան՝ կըռիւի...։

Թագաւորը՝ մէ՛յ մ'ալ տեսա՛ւ...՝ ոչ Զօ՛րք կայ ու ոչ Բանա՛կ..., —
Ամէնն ջարդած, կոտորա՛ծ են Այդ Տըղաք...։ —
— «Վէզի՛ր,- ըսաւ -, Քո տո՛ւն աւրի..., [ինչ *) Դուն Իմ Տո՛ւն
[աւրեցիր....
Մինչեւ հիմա՝ այդ Տըղեկները դիտէին՝
Մեր Ազգին մէջ Որճ Մա՛րդ կայ..., —
Հիմա Աւոնք՝ Աւրու Մա՛րդ են, Մենք՝ կընի՛կ...»։
= «Որ այդպէս է,- ըսաւ Վէզիր -, Քաղքէն հանէ՛՝ Քող երթանք»։

Երկու-Եղբօր ընկերներէն՝ Տըղայ մ' գընաց ու ըսաւ, —
— «Թագաւորը բարկացե՛ր է Ձեր վըրայ,
Ձեզ Քաղաքէն դո՛ւրս կ'ընէ...»։
Անոնք ալ չո՛ւտ ելան եկան՝ Թագաւորին դէ՛մ՝ կեցան,
Գլո՛ւխ իջուցին եօ՛թը տեղով, ուր քայլ ետով կանգնեցան, —
— «Ի՛նչ Թագաւո՛ր,- ըսին-, այսօր Մեզի ի՞նչ մեղք կըգըտնես...,
Որ Դուն կ'ուզես՝ Մեզ Քաղաքէն դուրս ընել...»։
= «Որդի՛ք,- ըսաւ -, խօ՛սք է՝ ելի՛ր է բերնէս...,
Պէտք է որ Ձեզ՝ Իմ Քաղաքէն դո՛ւրս ընեմ...։
Գացէ՛ք Ձեր տեղ՝ ու մի՛տք ըրէ՛ք *) միասին, —
Ո՛ր կողմ կ'ուզէ՛ք՝ տա՛մ Ձեզ՝ գացէ՛ք հոն նըստէ՛ք...»։

---

*) Դեհ, կողմ։ *) Ինչ, ինչպէս։
*) Միտք ընել, Յորհիլ, որոշում տալ։

Տըղեկներն ալ՝ մխոք ըրին ու ըսին թէ, —
«Երթանք այնտեղ՝ ուր հիմնադի՛ծ ենք ձըղեր,
Երթանք այնտեղ՝ չէնցընե՛նք...»:

50. Սանասար Ու Բաղդասար՝ Նոր Քօչով՝ Կ'երթան Իրենց Շէնը

Ջ.՝Ե.18.

Մնացին մինչեւ լուսացաւ: —
Լուս որ բացուաւ՝ Թագաւորին առջեւն եկան կանգնեցան.
Ու Թագաւորն ըսաւ, — «Որդի՛, ո՞ր կողմ նըստիլ ուզեցիք...»:
Թէ, = «Թագաւո՛ր, այնինչ տեղը՝ այնինչ կողմ՝
Ախինչ Աղբրի քով, Ձորի մէջ, Շէնի մը հի՛մ ենք ձըղեր,
Կըխընդրենք որ՝ տաս Մեղի հետ՝ քառասուն-յիսուն Տուն-Քօչեր,
*Այնտեղ երթանք՝ տընաւորուինք *) »:*

Թագաւորն ալ՝ Իր Մեծաւորն ելաւ ճամբեց Քաղքին մէ՛ջ,
*Քիսուն Տընաւոր՝ քօչել տըւաւ *) այնտեղէն,*
*Ու Տըղեկներն ալ Քօչին *) հետ՝ իննան ճամբա՛յ՝ ու գացին.*
Գացին հասան Իրենց հիմնած մե՛ծ Շէնին:

*Քօչեր *) իրենց Տո՛ւն կըշինեն որ նըստին,*
Սանասար ու Բաղդասարն ալ՝ հե՛տ կ'օգնեն: —
Օր՝ մէկի Տուն ճաչի՛ կ'երթան երկուսով,
Որի՛ Տուն որ ճաչի երթան մխասին...՝
Անոր տաշտա՛մաղ կը կախեն...):*

51. Սանասար Ու Բաղդասար՝ Քեռի-Թորոսէն Հրաժեշտ Կ'առնեն Ու Կըմեկնին

Ջ.՝Լ.12.

Քեռի-Թորոս մընաց Երկու-Որբին հետ: —

Սանասար ու Բաղդասարն ալ՝ երկուքով՝
— «Քեռի՛-Թորոս,- ըսին օր մը -, ի՞նչ ընենք...,
Աղքատացեր մընացեր ենք տունքով...»:

---

*) Տնտրուիլ, Տուն-տեղ կազմել, բնակութիւն հաստատել:
*) Քօչել տալ, Գաղթեցնել: *) Քօչ, Գաղթող բազմութիւն:
*) Քօչեր, Գաղթածներ, գաղթական եկած մարդիկ:
*) Տաշտա՛մաղ կախել, Ամբողջ հացի եւ ուտելիքի պաշարն ապահովել:

Վերցուց ըսաւ, = «Որդի՛,- ըսաւ -, պատճա՛ռ կայ···, —
Տարիներով առուզերի՛ են տարեր···,
Ա՛լ երկրին մէջ հարըստութիւն ու ժողովո՛ւրդ կըմընայ···»։

Մանասար ու Բաղդասարն ալ՝ թէ, — «Քեռի՛, Մենք կըխորհինք՝
Մեղ իրաւո՛ւնք տաս որ երթանք՝ տեղի մ՝ վըրայ աշխատինք···»։
Ան ալ ըսաւ, = «Որդի՛,- ըսաւ -, աղէ՛կ, բա՛յց···,
*Դուք որ գացիք *)՝ խօրոտատես *) Տըղա՛յ էք···,*
Որո՛ւ քով ալ երթաք իյնաք՝ Դուք երկուքդ՝
Ետ չէ՛ք դառնար, Ձիս կըմոռնաք՝ ու չէ՛ք գար···»։

Սանասարը վերցուց ըսաւ, — «Մօ՛րեղբայր,
Թէ մոռանանք՝ երկո՛ւ աչքով կուրանա՛նք····
Չե՛նք մոռնար Քեզ, մի՛ վախնար···»։

Ապա ելան ձեռքը պագին Մօրեղբօր,
Հրաժե՛շտ առին, ինկան ճամբայ՝ ու գացին։

52. Սանասար Ու Բաղդասար՝ Կաճաչ-Քաղքի Թագաւորի Ախոռապետին Գով

ՁԿ·99,100,101,102,103,104,105,106,107,108,Ձ·, Կ·107·

Գացի՛ն-գացի՛ն···, ու մէկ կանաչ-քաղա՛ք մ՝ եկաւ Անոնց դէմ։
Մըտան գացին Այդ Քաղքին մէջ, մա՛ն եկան, —
Տեսան որ մէկ երիտասարդ Մա՛րդ մը Ամօթ ըլլար դո՛ւրս,
Նըստեր է դո՛ւռ, ու Մըխամո՛րճ կըքաշէ···։ —
Երկու կանգուն՝ Անոր փայտին երկայնքն էր,
*Անոր սաթն *) ալ՝ մէկ չողղամի՛ նըման էր։*

*Մարդն իրիշկեց *)՝ ըսաւ, «Տըղա՛յ, Դուք ի՞նչ Մարդ էք, կա՛ն [կուգաք···»։*
Սանասարն ալ ըսաւ, = «Շիտա՛կ, Մենք դըրսեցի խե՛ղճ մարդ ենք,
Մեր Ձիու սանձ Թող տըւեր ենք՝ ելեր ինկեր ենք աշխարք···,
Եկեր ենք որ՝ դատինք-բանինք, հա՛ց մ՝ ուտենք···»։

---

*) Դուբ որ գացիբ, եթէ եղաւ որ գացիք, եթէ երթաք։
*) խօրոտատես, Գեղադէմ, տեսքոտ, դրաւիչ, կրակոտ(Հուր-ոտ)։
*) Սաթ, ֆէհրիւպար, Ագուցուած է ծխամորճի ա՛յն ծայրին՝ որ ծխողին բերնին դէմը կուգայ։ *) Իրիշկեց, Ուշով, Նայիլ, զննել։

— «Դուք ի՞նչ գիտէք,- ըսաւ Մարդը -- արհեստ մ՝ կուզա՞յ Ձեր
[ձեռքէն...»:
= «Աղա՛ *),- ըսաւ Սանասարն ալ՝ այդ Մարդուն —,
Ի՛նչ որ ըսես՝ մենն կուգա՛յ Մեր մօտէն...:
Ի՛նչ արհեստ որ ուզես Դուն՝
Մենք երկուքս ալ կըրնա՛նք ընել՝ ու չա՛տ լաւ...»:
Մարդն ալ ըսաւ, — «Ա՛յ Մարդեր,
Ես Մեր երկրի Թագաւորին Ախոռապե՛տն եմ,- ըսաւ -,
Դուք Ձի կըրնա՞ք խընամել....
Ձիաղարման չէ՞ք ըլլար...»:
= «Հա՛ա՛,- ըսաւ, Ջոջ-եղբայրը Սանասար -,
Մենք Ձի կըրնա՛նք խընամել...: —
Նայէ՛ այս Ձին..., ի՞նչպէս Ձի է..., ու չուիէ՛..., —
Կաղողի համա՛ կըընդմանի այս Մեր Ձին...: —
Այդ ահա՛ Մե՛նք ենք տիրեր *)...: —
Մենք՝ թէ հարցնես՝ Ձիու-Տիրո՛ղ *) ենք ցեղով...»:

Թագաւորի-Ախոռապետն ալ ըսաւ, —
— «Է՛, աղէ՛կ է. կացէ՛ք հիմա՝ Դուք այդտե՛ղ,
Ես ալ երթամ՝ Թագաւորին հրամա՛ն առնեմ Ձեզ համար,
Գամ Ձեզ տանիմ՝ Թագաւորին ձիաղարմա՛ն ընեմ Ձեզ»:

58. Ախոռապետը՝ Թագաւորին Հրամանովը Ձիաղարման Կըվարձէ Սանասարն Ու Բաղդասարը

ՁԿ·109,110,111,112,113,114, Ճ·16,65,Կ·107·

Ախոռապետն երթաւ դընաց Թագաւորին, ու ըսաւ. —
— «Ապրա՛ծ կենաս, Թագաւո՛ր...,
Երկու այնպէ՛ս Մարդ են եկեր Մեր Քաղաք...՝
Որ Աչխա՛րքը ինչ կինած է ըսկիզբէն՝
Ո՛չ այնպէս Մա՛րդ Աչխարհ եկեր է երբեք,
Ո՛չ ալ պիտի գա՛յ նորէն...:
Թէ Դուն ինձի հրաման կուտաս..., Տէ՛ր Աըքայ,
Ես Այն Մարդերը՝ Ձիաղարմա՛ն բերեմ ընեմ Քեզ համար...»:

---

*) Աղա, Թ. Տիար, տէր: *) Տիրել, Տնամել: *) Ձիու-տիրող, Ձի խնամանող, ձիավոյծ (Տե՛ս Բ. Հայր.):

Թագաւորը վերցուց այդտեղ Զիապետին ի՞նչ ըսաւ. —
— «Ախոռապե՛տ,- ըսաւ Իրեն, բարկացած -,
Զիաղարմա՛ն պէտք է Քեզի՝ գընա՛ բըռնէ՛ Այդ Մարդը...,
Ինչո՞ւ Ինձի կըհարցընես՝ պարապ տեղ...»:

Ան ալ ելաւ՝ դարձաւ եկաւ Սանասարին ու եղբօր: —
Սանասարը հարցուց թէ, —
— «Ի՞նչ ըսաւ Քեզ՝ Թագաւորը...»:
= «Բան մը չըսա՛ւ..., ելէ՛ք երթանք Ինձի հե՛տ...», —
Վերցուց ըսաւ Զիապետ:

Ելան դացին Ախոռատուն, հաց-մաց բերաւ ու կերցուց: —
Սանասար ու Բաղդասարը՝ կերան, հազի՛ւ կըշտացան...:
Ելան դացին Ախորին դուռ, Զիուն քով·
Քուռկիկ-Ջալալ՝ դըռնով չանցաւ..., կամար փըլցո՛ւց ու մըտաւ...:
Հազա՛ր Զի՛ կար Ախորին մէջ, հազա՛ր ցեղ,
Սանասար Իր Զի՛ն ալ կապեց Անոնց քո՛վ:

54. Սաճասար Ու Բաղդասար՝ Իրենց Զիի Քուռկիկ-Ջալալին Ու Թագաւորին Զիերը Կըխեղդեն

ՁԿ·114,145, (Կ·107), Կ·107,108, (Կ·108)Ձ·, Ձ·(ՁԿ·145)·

Մընաց մինչեւ իրիկուան դեհ, Ախոռապետն ի՞նչ ըրաւ. —
Ելաւ օթախեց Իր Թեւերը՝ տըւաւ վե՛ր,
*Քերոցն առաւ ձե՛ռքը բըռնեց՝ որ Զիերը քերոցէ *), —*
Սանասարը ըսաւ, — «Աղա՛, ատիկ,- ըսաւ -, ի՞նչ կ՚ընես...»:
*= «Ձէ՞ Զիերը պիտի քորեմ *)», — ըսաւ Ան ալ՝ զարմացած:*
Ըսաւ, — «Ձէ՛է՛..., Մենք եկեր ենք այստեղ՝ որ Մե՛նք քերոցենք»:
= «Մէյ մը Քեզի ցոյց տամ,- ըսաւ -, որ Դուք տեսնէք ու սորվիք...»:
Սանասարն ալ ըսաւ, — «Ձէ՞ որ՝ Մենք ըսկիզբէ՛ն սուվոր ենք...:
Դուն հանգի՛ստ մը նըստէ՛ Քու տեղ՝ Մենք թիմրենք»:

*Ախոռապետն ելաւ այնտեղ Ականատէն *) Քերո՛ց մ՚առաւ ձըգեց վա՛ր·*
*Սանասա՛րն էր, — Քերոցն առաւ Իր ձեռքին մէջ՝ ու պըղնդեց *),*
Այնպէ՛ս սըղմեց...՝ ըրաւ մոխիր, թափեց վա՛ր..., —

---

*) Քերոցել, Քորել, Քերոցով քերել, թիմրել: *) Ականատ, Պատի մէջ բացուածք՝ դարակի պէս: *) Պնդել, Սղմել:

— «Աղա՛,- ըսաւ -, այս Քերոցը կոտրո՛ւիլ է...»:
= «Նո՛րը կայ հոն,- ըսաւ Ան ալ -, նո՛ր մը առ...»:

Սանասարն ալ՝ ձեռքը զարկաւ Պատուհան,
Ի՛նչքան Քերոց որ բռնեց ձեռ՝ ու ինքեց *)՝
Քերոցները մէկիկ-մէկիկ սըղկըռեցա՛ն ափին մէջ..., —
Եղան մոխիր, տախտին վըրա՛յ թափեցան...:

Ախոռապետն ելաւ՝ այնտեղ՝ Ախոռին մէջ կա՛ն եկաւ,
Ժամանակւէ *)՝ մէկ Հըսկայի Քերո՛ց մը կար՝ հոն ձըգուած,
Զո՛ր մէկ պըղինձ *), կամ թէ երկաթ՝ Քերոցի պէ՛ս պատրաստած,
Մէջը փայէն *) լեցուցած են, Զիերուն տա՛կ փըռելու, —
Բռնեց փայէն՝ պարպեց գետին, մէկ անկիւն,
Քերոցն առաւ՝ Սանասարի ձե՛ռք տըւաւ, —
Իր մըտքին մէջ ըսաւ՝ «Նայինք՝ տեսնենք՝ Ասիկ ի՞նչ Մարդ է...»:
Սանասարը պը՛նդե՛ց...՝ ա՛ն ալ կոտըրտեց...:

Ախոռապետն՝ այս անգամ՛ս՝ ելաւ փընտռեց, ի՞նչ ըրաւ. —
Երկաթէ մե՛ծ Գո՛ւռ *) մը կար հոն, ինչ *) Զիերուն ջո՛ւր կուտան,
Բերել տըւաւ, տա՛ս հագիւով, ձըգեց Տըղուն աչքին տակ:
Սանասարը՝ գետնէն ղ՛անի վե՛ր վերցուց, —
Ըսաւ, — «Աղա՛, իրա՛ւ այդ Ջանք չէ՛ր արժեր....
Աս աղէկ է..., բայց ասիսո՛ր որ աստա՛մ չունի այս Քերոց...:
Ասիկ,- ըսաւ -, վընաս չունի..., այսօր անով կըփորձենք..., —
Մինչեւ լուսուն *)՝ խարտե՛լ կուտանք, աստա՛մ կ՛հանենք այս Գուռին,
Ու նո՛ր կ՛թիմրենք այս Զիեր...»:

Ախոռապետ՝ Աւել մըն ալ բերաւ ձըգեց ոտքին քով, —
— «Ի՞նչ կըթիմրես՝ անով ալ թա՛փ տուր »,- ըսաւ:
Սանասարն ալ ըսաւ, = «Աղա՛, անիկ չեղա՛ւ. այդ Աւելը պըզտիկ է»:
Բաղդատա՛ր էր, — Ախոռէն դո՛ւրս նետուեցաւ,
Նայեց տեսաւ՝ քիչ մը անդին՝ կաղնի ծառե՛ր կան դիզած,
Բերաւ մէկ տա՛ս-տասնըհինգ հատ՝ հա՛ստ փայտերէն միացուց,

---

*) Թնքել, Սանկ ընել (տղմել, պնդել): *) Ժամանակւէ, Հին ատեններէ ի վեր: *) Պղինձ, Պղնձէ մեծ կաթսայ: *) Փայէն, Ձիու՝ չոր ու մանր աղբ: *) Գուռ, Երկաթէ, քարէ, փայտէ՝ փորածոյ մեծ ու երկարաձեւ աւազան, որուն մէջէն՝ ձիերը ջուր կըխմեն: *) Ինչ, Ինչ ատով, որմով...: *) Լուսուն, Արշալոյսին, առաւօտն:

*Ոլրեց, մտնեց, ըրաւ ողոր *), պընդե՛ց ըրաւ ծախաւել,*
Բռնեց իր ձեռք, եկաւ Ախոռ՝ նղբօր քով։

Սանասար հոն՝ եւաւ թեւերը տըւաւ վե՛ր,
Գուռը բռնեց իր ձեռքին մէջ, ու ըսաւ· —
= «Աղա՛,- ըսաւ -, առ՝ Քին անգամ իմ Զի՛ն թիմրեմ՝ Դուն տեսնես,
Որ չըսես թէ՝ «Զի՛ քերոցել չի՛ դիտեր», —
Ապա դառնամ Թագաւորի Զիւերուն վրա՛յ, քերոցեմ»։

Սանասարը՝ այն պահուն ինչ Գուռը բռնած իրեն ձեռ՝
*Քերոցի պէս կըպըռտէ *)՝*
Հրեղէն Գուռվիկ-Ջալալիի քամկին վրայ՝
Քին իր մէջքը կ՝բարձրացնէ,
Իր ոտքերը կ՝զարնէ ա՛յս պատ՝ ու ա՛յն պատ,
Կըրակ ոտքէն կըցայտէ՛···։

Ախոռապետ՝ պապանձեցա՛ւ···, սըմքեցա՛ւ իր կեցած տեղ···,
*Սանասարի երեսնիվեր պըշկեցա՛ւ *)···, —*
Ա՛լ չըկըրցաւ ղըրօյց տար հետ ու խօսէր···։

*Անիկ *) թիմրեց, պըրծաւ, ըսաւ, — «Բաղդասա՛ր,*
Դէ՛, արի՛ Դուն քա՛ւ տուր հիմա փոշիները»։
*Բաղդասարն ալ՝ այդ շըլակ *) ծախ՝ զարկաւ Զիւն քամկին վրա՛յ,*
Զարկաւ ա՛յս կողմ, զարկաւ ա՛յն կողմ, փոշիները քա՛ւ տըւաւ,
— «Աղա՛,- ըսաւ -, տեսա՛ր ի՛նչպէս կըղարմանենք Մեր Զիւերը···»։

Ախոռապետ պապընձե՛ր է···, ա՛լ չի կրնար ղըրուցել···։

Սանասա՛րը ի՛նչ ըրաւ···, —
Այս անգամ՝ Թագաւորի Զիե՛րն առաւ քերոցել։ —
Այն տեղն ինչ Գուռը վերցուց որ Զիւերը քերոցէ՝
Որի՛ քամկին վըրայ ուժով դըրաւ մէկդիէր ու պըռտեց···՝

---

*) Ոզոր, Խրճաձեւ հիւսած ցախ։ *) Պռտել, Ուժգին քսել-քորել, չիւել (բրուտի կաւին պէս՝ աւիին տակ ճմռել, բրտել)։ *) Պշկիլ, Պուշ-ապուշ նայիլ մնալ։ *) Անիկ, Այսինքն Սանասար՝ իր ձին թիմրեց։ *) Շլակ, (Մէկ) Շալակցու, կռնակին վրայ կրելու չափով։

*Կաչին քամկէն լօպկի՛ց *) տարաւ՝ պոչին վրայէն հանեց դո՛ւրս...,—*
— «Դէ՛, Բաղդասա՛ր, հիմա,- ըսաւ -, Դուն քա՛փ տուր...»:

Բաղդասարն ալ՝ չըլակ ցախը ո՛ր Զիւռն վրայ կըզարնէ՝
Արիւն դէ՛ս-դէն կըցըրքըռւի..., կըցըրքռւի պատ, վէր ու վա՛ր..., —
Զին տեղնիտեղ գետին կ՝իյնայ՝ կըպառկի...:

Թէ հազա՛ր Զի կայ՝ Թէ քանի՛ մ՝ հազարներ՝
Ամեն Զին ալ՝ այնպէս Անոնց դարմանին տակ պառկեցան...:

Ախոռապետ չի՛ իլլեր որ ձայն հանէ...:

Սանասա՛ր էր, — «Աղա՛,- ըսաւ -, տեսա՞ր ի՛նչպէս Թիմրեցինք...,
Ամենամէկը ի՛նչպէս հանդիստ իրեն տեղը պառկեցաւ...,
*Մէկ Զի չըկայ՝ կանգնած իր տեղ անքերել *)...,*
Հանդիստ՝ ամենք իրենց տեղը պառկեցան ու չի՛ն շարժիր...,
*Մինակ մեր Զի՛ն՝ գըլուխ բըռնած՝ արճիճ-գարին *) կըկըտրէ...»:*

Ախոռապետ՝ ինք իր մըտքին մէջ կ՝ըսէ, —
*«Աստուած Ձեր տո՛ւն աւրէ, Տըղա՛ք..., ինչ *) Դուք իմ տո՛ւն*
[աւրեցիք...»:
—«Աւիկ,- ըսաւ -, Դուք ի՞նչ ըրիք, ա՛յսքան ընտիր Զիւռուն...»:
=«Աղա՛,- ըսաւ -, Սանասարն ալ -, Մենք Ջո ձի՛ր Թիմրեցինք...»:
*— «Աստուած Ձեր տո՛ւն աւրէ,- ըսաւ -,... ո՛ղջ *) ըսպանե՛ր*
[էք Ձիւռ...»:
Սանասար Թէ, = «Ա՛յ Մարդ, հօ՛ Մենք Ջեզ Թըշնամի չե՞նք եկեր...,
Մեր Զին ալ Ջո Ձիւռուն պէս Թիմրեցի՛նք...»:

Ախոռապե՛տն էր, — անլեզու ելաւ դընաց Թաղաւորին ու ըսաւ. —
— «Թաղաւո՛ր, Դուն ապրա՛ծ կենաս, Դահիճ բե՛ր ու իմ վիզն
*ա՛ռ *)...»:*
Թաղաւորը զարմանք մընաց..., ու պըշկեցաւ երեսին..., —

---

*) Լօպկել, Ջերթել-հանել: *) Անճեռնել, Առանց Թիմարի, չըքերոցուած: *) Հրեղէն ձիերու (ինչպէս է Ջուռվիկ-Ջալալին) կերած գարին՝ արճիճ (կապար) է, ըստ ժողովրդական վէպին, — ՀԿ·634-5, ՀՍ·740: *) Ինչ, Ինչպէս որ: *) Ողջ, Ամբողջ, բոլոր, ամեն: *) Առնել, Ջարնել, կտրել, սուրով առնել (վիզը):

= «Ես Քու վիզը,- ըսաւ -, ինչո՞ւ պիտի առնեմ ան-պատճառ *) ...»:
— «Եղելութիւնն ա՛յս է,- ըսաւ -, ապրա՛ծ կենաս, Թագաւո՛ր, —
Այն երկու-Մարդ՝ այսպէ՛ս-այսպէ՛ս թիմարեցին Քու Զիւր...,
Մէ՛կ Զի չմընաց..., ածդպահա՛ր են Այդ Մարդերը...»:
Ու ամենը՝ մէկի՛կ-մէկիկ՝ Թագաւորին ճիշդ պատմեց:

Թագաւորն ալ՝ դարձաւ այնտեղ Զիապետին ի՞նչ ըսաւ. —
= «Զէ՛ է՛,- ըսաւ -, Անոնց համար՝ ես Քու վիզը չե՛մ զարներ
Այն երկու-Մարդ՝ օր մը ինձի պէ՛տք կուգան...:
Զիո՞ւն ի՛նչ... *)
Վաղ կ'ուղարկեմ Բահարիստան՝ հազարներո՛վ Զի՛ կուգայ....
Ամեն տեղէ Զի՛ կըբերեմ՝ Ախոռ կըրկին կըլեցնեմ...: —
Թէ Այդ Մարդոց ամսականներ հինգհարիւրո՛վ ես կապեր՝
Ամենմէկին հազա՛ր ըրէ՛..., հի՛նգ-հազարի բարձրացուր. —
Արժէքաւո՛ր մարդ են Անոնք..., ինձի օր մը պէ՛տք կուգան...»:

Զ. ԿԱՆԱՉ-ԲԱՂԲԻ ՎԻՇԱՊՆ ՈՒ ԹԱԳՈՒՀՈՐԻ-ԱՂՋԻԿԸ

55. Թագաւորի-Աղջիկը՝ Վիօսպին Կրօսճիճ

Ս·141, Չկ·146,147,148,149, 150,151,152,153,
կ·108, (կ·108,109).

Մէկ ժամանակ մ՝ Աւոնք այդպէս մընացին: —
Օրերէն մէկ՝ Սանասար ու Բաղդասար՝
Մա՛նկ կեցեր են դուռին մէջ, —
Նայեցան որ՝ ինչպէս հարիւր հոգու մը չափ բազմութիւն՝
Քաղաքն ի վեր կըբարձրանան դէպի Սարի նեղ ճամբան
Բա՛ն մը կ'տանին Քաղքէն դո՛ւրս...: —
Դաս մը *)՝ տրխուր՝ նըւագարա՛ն կըզարնեն,
Դաս մը՝ կուլա՛ն ու կ'երթան...:

Ջոջ-Եղբայրն ալ, Սանասարը, Բաղդասարին ի՞նչ ըսաւ. —

---

*) Ան-պատճառ, Առանց պատճառի, առանց դատ-դատաստանի:
*) Զիո՞ւն ինչ..., Զիուն ի՞նչ կարեւորութիւն կայ որ..., ձիու համար հոգ ընելդ ի՞նչ կ'արժէ որ...: *) Դաս մը, Մէկ մաս, խումբ մը:

— «Եղբա՛յր,- ըսաւ -, այդ Բազմութիւնն ի՞նչ է՝ կ'երթան
[Քաղքէն դո՛ւրս...,
Մէկ բա՛ն մ'առեր իրենց մէջտեղ..., մէկ Աղջի՛կ մը կըտանին...»:
= «Ե՛ս ալ չդիտեմ...»,- ըսաւ Եղբօր՝ Բաղդասար:

Սանասարն ալ՝ Մարդու մ' հարցուց՝ թէ, — «Եղբա՛յր,
Այդ Բազմութիւնն ո՞ւր կ'երթայ...,
Կէսը կուլա՛ն ու կ'երթան...,
Միուս կէսն ալ՝ նըւագելո՛վ է կ'երթան...»:

Ըսաւ, = «Մեր Սար՝ Գազա՛ն մ' եկեր՝ բըռներ է,
Մեր Քաղաքի Ջո՛ւրը կըտրեր՝ թո՛ղ չի տար...,
Օր՝ մէ՛կ Աղջիկ պիտի տանի՛նք այդ Գազանին որ ուտէ.
Որ չըտանի՛նք՝ կուգայ կ'աւրէ՛ Մեր Քաղաք...:
Մենք ալ Անոր ահ-սարսափէն՝ Ալբիւր երթալ չե՛նք կըրնար....
Եւ այսօր ալ՝ հերթը Դեղձուն-Մամի՛ն է, —
Թագաւորին-Աղջի՛կն, —
Թագաւորին-Աղջի՛կն է որ՝ այդ Գազանին կը տանին,
Անոր համար՝ նըւագնե՛րով է կըտանին, ու կուլա՛ն...»:

Մարդ մ'այն կողմէն վերցուց ըսաւ, — «Կըտեսնե՞ս...,
Թագաւորի Զիճո՞ն է որ կ'ըսպանէ՛ք..., —
Թէ Դուք Մարդ էք՝ դայլե՛ք այդ Մար՝ այն Գազա՛նը չարդեցէ՛ք...»:

Սանասար ու Բաղդասարը՝ քովէ՛քով՝
Այդ Բազմութեան հետ ըզնացին ու Քաղաքէն դո՛ւրս ելան:
Սանասարը Եղբօրն ըսաւ, — «Բա՛ղդասար,
Այս հաց Մեղի անարդա՛ր է՝ ինչ կ'ուտենք....
Ասիկ արդպէս հեղնա՛նք մըն է՝ տըւաւ Մեզ...»:

Անոնց վրա՛յ ալ՝ այնքան իննկաւ *), չիմացա՛ն,
Որ ա՛լ չդարձան դէպի Իրենց Թո՛ւր ու Գո՛րգ, —
Իսկոյն իննկան Ամբոխին հե՛տ՝ ու գացին...:
Ու Մէկ՝ Մէկուն ի՞նչ կ'ըսէ, —
— «Եղբա՛յր,- կ'ըսէ -, ինչո՞վ երթանք այդ Գազանին դէմ կըռւի»: —

---

*) Ինչ, Որ: *) Այնքա՛ն իննկաւ, Ա՛յնքան չուտ անցաւ ժամանակը որ..., ա՛յնքան չանդրադարձան, մխտքերնին չինկա՛ւ որ...:

56. Սանասար Ու Բաղդասար՝ Զիքաղացի Փարեղը Կրեաճեն-Կ'առնեն՝ Իր Ձէմ

ՀԿ·154,155, Կ·109, Հ(Կ·109)·

*Աւեր Զիք'ղա՛ց *) մ' կար Բաղաքին կողնիվեր,*
*Սանասար շուտ՝ վազեց զարկաւ՝ բըռունցքովը փայտ *) հանեց,*
*Զիքաղացի Փարակ *) վերցուց՝ առաւ Իր ձեռք՝ ու ըսաւ. —*
— «Ի՛ Բաղդասա՛ր, ես դըտա՛յ Ինձ մէկ զարկոց...»:
Բաղդասարն ալ՝ մի՛ւս Փարակ վերցուց ըսաւ, = «Աս ալ Ի՛նձ.
Երկու Փարերն ալ կըլլոր են՝ ու մէջ ծա՛կ.
*Մեր Թեւերուն կըմըտցընենք *)՝ ու խաղալով՝ Սա՛ր կ'երթանք...»:*

Անոնք երբոր Փարերն առին՝ ու Թեւերուն անցուցին՝
Զիքաղացի Տէրերն եկան Թագաւորին մօտ գանգա՛տ, —
Թէ, — «Մենք ա՛յսքան դրամ ծախսեցինք Ատոնց վրայ՝
Հազի՛ւ բերինք այդ Փարերը...,
Ատոնք տարան՝ կընետեն Սար, ա՛լ չե՛նք կըրնար ներս բերել...»:
Թագաւորն ալ՝ վերցուց ըսաւ, = «Վախ հանեցէ՛ք Ձեր մըտքէն,
Այդ Երկու-Մարդ՝ Ձեր Փարերը նորէն կ'առնեն կըբերեն...»:

57. Վիճապը Կուգայ...

ՀԿ·156-164, Կ·109, (Կ·109)Հ·

Սանասարն ու Բաղդասարն ալ՝ առին Փարեր ու գացին
Թեւերուն վրայ՝ անխիլ պէս դարձընելով, խաղալով՝
Ելան Հասան Սարին գլո՛ւխ:

Մինչեւ Հասան՝ Աղջիկ Ծառին կապա՛ծ էին ու փախած...:

Աղջիկն ալ որ Անոնք տեսաւ՝ Ինք իր մըտքով ի՛նչ ըսաւ. —

---

*) Զիք-ղաց, Զիքաղաց, կոտաստէն ձէթ հանելու յատուկ ագօրի եւ տուն: *) Փայտ, Զիքաղացի քարակին մէջտեղն ագուցիկ գերան: *) Փարակ, Փարէ անխիլ, ծանր ու հաստ երկանաքար՝ մէջտեղը գերան անցնելու չափ լայն ծակով: *) Համեմատեցէ՛ ճիւղիս վերջը՝ Հտծ. 129՝ Սանասարի դէմն եկող Զաղղի-Փարերը Թեւերուն անցուցած՝ եւ հովէն արագ սուրացող մարդուն հետ:

«Ես թողնեմ ու փախիմ երթա՛մ..., Վիշապն Ասոնք դա՛յ ուտէ՛...՝
Մե՛ղք է...,- ըսաւ -, Ասոնք կըտրի՛ճ Տըղայ են...:
Աղէկն ա՛յն է՝ որ Զի՛ս ուտէ..., ես մինա՛կ մէկ Աղջիկ եմ...»:

Ան ալ լացա՛ւ..., կանչեց ըսաւ համարձակ, —
— «Եղբա՛յր,- ըսաւ -, Աստծո՛ւ սիրոյն..., փախի՛ր դացէ՛ք,
[Մի՛ կենաք....
Այն Գազանը հիմա կուգա՛յ՝ Զիս կ'ուտէ...,
Ձեզ ալ չուտէ՛ Ինձի հետ...»:
= «Աղջի՛կ,- ըսին -, Դուն մի՛ վախնար..., մինչեւ Անիկ Մեզ չուտէ՝
Աստուծով Մենք չենք Թողուր որ Անիկ դայ ու Քեզ ուտէ...»:

Ծօգը դեռ եւս բերանին մէջ...՝ մէկ ալ նայինն՝ լի՛նէ տեսնան..., —
Արեգակի երես բըռնե՛ց..., դուրսը մըթնե՛ց, խաւարա՛ւ...,
Մէկ ամպակի՛ քամի մ՝ իրար տըւաւ..., հա՛յյ..., —
Մէկ բա՛րկ հո՛տ մը ևկաւ դէմէն..., դո՛ղտո՛ցն լինկաւ Սա՛ր ու Ձոր,
Երկինք-գետինք կ'երերա՛յ..., —
կ'ըսես թէ չո՛րթ պիտի ըլլայ ահաւոր +)...:

Սանասարը ըսաւ, — «Եղբա՛յր, է՛ Բաղդասա՛ր, պատրա՛ստ կաց...,
Ամն Գազա՛նն է..., աս Անոր հո՛տն է եկաւ...»:

Ֆիչ մը առեն մընա՛ց թէ չէ..., — դեռին Թընդա՛ց, դըղըրդա՛ց, —
Այդ Գազանը զատու *) եկաւ Ֆըշշալէն +)...:

Սանասա՛ր էր, = «Է Բաղդասա՛ր,- ըսաւ -, Քե՛զ տուր *) այն
[մէկ դե՛հ,
Ես ալ Զիս տամ այս մէ՛կ դեհ...,
Մէկըս ճամբուն վե՛րը կենանք, Մէկըս վա՛ր:

Ե՛ս ճամբայի՛ ներքեւ կենամ՝ Դուն վերե՛ւ...: —
կը վախնամ որ վերեւ կենամ՝ Քար զարնեմ՝

+) Վիշապին գալը՝ համեմատելի՛ մեր օրերու «Քաղաքակըրթութեան Վիշապ»ին, — երկաթուղիի կառաչարին՝ ժամանումի պահուն՝ առաջ բերած դղրդիւնին ու վայրաշարժին փչած բոցոտումխեբուն ու հեւոցին հետ: *) Զատու, Հեռուէն: *) Տո՛ւր, Զգէ՛ (ինքզինքդ):

Դուն իմ Քարը չկըրնա՛ս բըռնես՝ գըլորուի՛...։
Դարձաւ ըսաւ՝ Ես ճամբայի ներքե՛ւ կենամ՝ Դուն վերե՛ւ. —
Մխայն թէ Դուն ըզդոյշ եղիր Քու կողմէդ՝
Քարեր չերթա՛ն՝ Զորեղուն մէջ կորսըւին...»։
— «Շա՛տ լաւ, եղբա՛յր, — պատասխանեց Բաղդասար։

Ու տեսա՛ն որ՝ Գազանն եկա՛ւ..., — ի՛նչ Գազա՛ն մը ահագին...,
Մէկ Գոմէշէն աւելի՛ բարձր..., հի՛նգ Գոմէշի չափ երկա՛ր...։

Որ այդ Գազան եկաւ հասաւ Անոնց մօտ՝
Բաղդասա՛րն էր, — Իր Քար զարկաւ մօտէմօտ,
*Քարը բըռնե՛ց *) Գազանին՝*
*Բայց կենդանին չը ձըգեց *)...։*
կանչեց, — «եղբա՛յր, Իմ Քար բըռնէ՛՝ չերթա՛յ Զորեր կորսըւի...»։

Սանասա՛րն էր, — կանչեց ըսաւ մէ՛կ ձայնով, —
— «Օ՛ Տէր Աստուա՛ծ..., Դու ստեղծեր ես Քու չունչո՛վդ...՝
Մեղի տըւած Քո Լո՛ւսոհոգին չկորսուա՛ս...»։ —

Ու դէ՛պ ըրաւ՝ Իր Քար զարկա՛ւ ներքեւէն. —
*Քարը դընաց՝ չիտակ դըպաւ՝ մէջ Վիշապի երկո՛ւ Աչք *)...,*
Իր եղբօր մօտ չըգընաց...։
Վիշապ՝ զարձաւ ոռի՛ն վըրայ, գըլխո՛ւն վըրայ, ոլըրտա՛ւ...,
Գլուտակեցա՛ւ-գլուտակեցա՛ւ...՝ ու ինկա՛ւ..., —
*Ինչպէս Զինար *) Մառ մը կըտրես՝ այնպէս գետի՛ն փըռուեցաւ...։*

*Մօտըհասցան *)՝ ու Քարերով Վիշապին գլուխ չարդեցին,*
Քարերն առին՝ եկան այնտեղ՝ Մառին կապած Աղջկան մօտ,
Աղջիկ Մառէն արձըկեցին, ըսին՝ — «Աղջի՛կ, ե՛լ գընա՛,
Մենք չե՛նք գիտեր ո՞ր կողմ կ՚իյնայ Քու Հօր Տունն,
Դուն ելի՛ր ու՝ ա՛զա՛տ Քու Հօր Տո՛ւն գընա՛»։

---

*) Բռնել, Դպիլ, հանդիպիլ։ *) Ձգել, Տապալել։ *) Վիշապի երկու աչքին մէջտեղը, ընդմէջ... երկու աչքին։ *) Չինար, Նոճի, սեկվի· *Քերեւս պէտք է ըլլայ՝* Բարդի։ *) Մօտըհասնիլ, *Մօտը հասնիլ, մօտենալ*։

58. Սանասար Ու Բաղդասար՝ Ձիթաղացին Գարերը Կբռնեն՝ Ցեղը Կրդնեն

Կ·109,110, (Կ·110)Զ·

Բաղդասարը՝ ըսաւ, — «Եղբա՛յր, Սանասա՛ր,
*Այդ Գարերը թալենք *) այդ Զոր՝ ու երթանք...»:*
*Սանասարը ըսաւ, = «Եղբա՛յր, չէ՞ որ մեղք են Այդ Հայեր *)....*
Ձե՛ն կըրնար այդ Գարեր Սարէն վա՛ր բերել·
Ի՛նչպէս բերինք՝ այնպէ՛ս տանինք՝ իրե՛նց տանք»:

Գարերն առին՝ բերին դըրին Ձիթաղացի դուռին դէ՛մ. —
Տէրերն ըսին, — «Տըղա՛ք, բերի՞ք Մեր Գարեր...»:
— «Ահա՛,- ըսին -, քերեր՝ դուռը դըրեր ենք·
Եկէ՛ք առէ՛ք, տարէ՛ք իրենց տե՛ղ դըրէք·
Մենք չե՛նք գիտեր՝ ի՛նչպէս դընենք իրենց տեղ...:
Մինչեւ այստեղ Մենք բերե՛ր ենք Ձեր Գարեր, —
Հիմա տարէ՛ք՝ մէկ-մէկ իրենց տե՛ղ դըրէք»:

Անոնք ըսին, = «Մենք չե՛նք կըրնար տանիլ ներս...»:
*— «Բա՛ *) առաջէն,- ըսին -, ի՞նչպէս, ո՞վ է բերեր դըրեր ներս...»:*
= «Առաջ,- ըսին -, Գոմէչներ ու Ձիեր լըծած՝ քաշած են: —
*Զո՛րս լուծ Գոմէչ՝ Ներքեւակին *), չո՛րս ղոյդ ալ Ձի՝ Գարակին,*
Լըծած քաշած՝ այդ Գարերը հազի՛ւ այս տեղ են բերած....
Այդ Գարերը՝ ծախքո՛վ բերեր ու չիներ են Ձիթաղաց...»:

= «Որ այդպէս է, — վերցուց ըսաւ Սանասար —,
Եկէ՛ք Մեզ հետ, դուռներ բացէ՛ք, տեղը Մեզի ցո՛յց տըւէք,
Մենք Գարերը տանինք դընենք իրենց տեղ...»:
Տէրեր տարան՝ Գարերուն տեղ Սանասարին ցոյց տըւին:
Սանասար ու Բաղդասարն ալ, մէկը՝ ոտքի, մէկ՝ չոքած,
*Ներքեւակը տեղը դըրին, Գարակն ալ իր Սըռնակին *),*
*Ձիթաղացը՝ աչքախըփոց *)՝ առաջուան պէս կազմեցին...:*

---

*) Թալել, Զգել, Թող տալ (որ իյնայ): *) Հայեր, Մարդեր, այդ քարերուն տէրերը: *) Բա՛, Հապա, ապա, որ այդպէս է...: *) Ներքեւակ, Տակի երկանաքար: *) Սռնակ, Սռնի, Անիւի ծակին մէջ մտած փայտ: *) Աչքախփոց, Աչքը գոցել-բանալու չափ արագ, ակնթարթի մէջ:

Այս որ տեսան՝ զարմանացա՛ն Գիւղացիք…, —
— «Այս ի՞նչ ուժ է…, — փըսփըսացին, մէկ մէյնուկ ականջին —.
Մա՞րդ են Աստնք…՝ թէ՞ չէ Ջին…)»:

59. Կանաչ-Բաղի Թագաւորին Որոնումը

ՁԿ·165,166,167,168,169,170,171,172,173,174, Ձ·, (Կ·110) Ձ·

Թագաւորի-Աղջիկն ըսաւ՝ վազեց դընաց Հօր Պալատ,
Ջուրն ալ փըրթաւ եկաւ Քաղաք՝ ամեն օրուան պէս առատ:
Իմաց տըւին Թագաւորին՝ թէ, — «Քու Աղջիկ Դեղձուն-Ծամ՝
Դարձաւ եկաւ՝ ողջ-առողջ…»:
= «Տարէ՛ք,- ըսաւ -, Աղջիկն այնտեղ Նորէն Ծառի՛ն կապեցէք· —
Հիմա Գաղանն ո՛ւր է ո՛ւր չէ՛՝ կը հասնի…,
Կուգայ՝ Քաղաք՝ ամե՛նը մէկ կ՛աւերէ…»:

Ելան գացին Դեղձուն-Ծամին, Թագաւորի-Աղջկան,
Աղջիկն ըսաւ թէ, — «Իրա՛ւ, երկու կըտրիճ Մարդ եկան,
Զարկին՝ վիշապն ըսպանեցին տեղնիտեղ…:
Թէ չէք հաւատար՝ երկու հոգի՛ ղըրկեցէք Սար՝ Քող տեսնան»:

Աղջիկն անոնց պատմեց ըսաւ՝ ինչ որ տեսած էր իր տեղ:

Ելան Երկու-Մարդ ղըրկեցին, գացին Սար·
Գացին տեսան՝ որ այդ Գաղան՝ Սարի՛ նըման մէկ բան մ՛ է…,
Սատկեր ինկեր ճամբուն մէջտեղ՝ ինչպէս ղար…: —
Դարձան եկան՝ Թագաւորին պատմեցին: —
Թագաւորը կանչեց իր Դուստր, ըսաւ, — «Աղջի՛կ, ըսէ՛ ինձ,
Դուն կըճանչնա՞ս Այն Մարդերը…»:
Աղջիկն ալ Հօր ըսաւ թէ, = «Հա՛, կը ճանչնամ…»:
Թագաւոր-Հայրն ի՞նչ ըսաւ· —
— «Աղջի՛կ, որ Դուն՝ Այդ Մարդերը կը ճանչնաս՝
Այս Թաշկինակ ձեռքը՛դ բըռնէ, դընա՛ նըստիր Պատըշգա՛մ,
Ես՝ Մունետիկ կանչել կուտամ Քաղքի մէջ, —
*«Ի՞նչքան Մարդ կայ՝ գայ առաջքիդ *) տակէն անցնի՝ ու երթայ».*

---

*) Ջին, արբ· Գերբնական ուժի տէր էակ, génie. *) Առաջք, Առաջացած մաս՝ պատուհանի, պատշգամ:

Ո՛ր Մարդն է որ ըսպաներ է այդ Գազան՝
Դուն Քու ձեռքիդ Թաշկինակը՝ վերէն ձըդես Անոր վրայ։»

Մունետիկը կանչեց կանաչ-Քաղքի մէջ. —
Ի՛նչքան Մարդ կար այդ Քաղաք՝
Եկան անցան՝ Դեղձուն-Ծառի Պատըշգամի ներքեւէն,
Թաշկինակը մընաց Աղջկան ձեռքին մէջ։

Թագաւորը հարցուց ըսաւ, — «Ա՛լ մարդ մընա՞ց՝ որ չեկա՞ւ...»։
Ըսին, = «Մինակ Ախոռապետն է մնացեր,
Եւ իր երկու Զիաբոյծ...»։
Թագաւորն ալ ի՞նչ ըսաւ. —
Ըսաւ, — «Ես իմ Ախոռապետ շատո՛նց է որ կըճանչնամ...,
Անոր մօտէն ըընա՛ւ այդպէս բան չի՛ դար...,
Անիկ ոչի՛նչ...։ Բայց գացէ՛ք այն երկու Մարդեր կանչեցէ՛ք,
Թող դան անցնին Պատըշգամին տակէն՛իվար»։

60. Սանասար Ու Բաղդասար Կուգան Կ՚անցնին Պատօգամին Տակէն

Չկ·175,176,177,178,179,181,185,183, Չ·՝Չկ·182, Չ·՝Չկ·183·

Գացին Ախոռ, երկու Եղբօր ձայն տըւին։
Ախոռապետն ելաւ ըսաւ, — «Էյ՛, Մանասա՛ր, Բաղդասա՛ր,
Ելէ՛ք գացէ՛ք միասին,
Թագաւորի պատուհանին տակէն անցէ՛ք ու գացէ՛ք,
Ձեղի պարզեւ պիտի տան...»։

Ելան գացին Ախոռին դուռ՝ դո՛ւրս եկան.
Սանասարը հարցուց ըսաւ Բաղդասարին, — «Էյ՛ Եղբայր,
Դուն գիտե՞ս թէ Թագաւորի Տունը ո՛ւր է, ո՞ր մէկն է...»։
= «Չէ՛, չե՛մ գիտեր...», — պատասխանեց Բաղդասար։
— «Դուն չես գիտեր, — վերցուց ըսաւ Սանասար —
Ու ես ինչա՛ս ալ չեմ գիտեր..., —
Երթանք՝ ո՞ր կողմ Թագաւորի Տուն գըտնենք...»։
[Ալ՝ ի՞նչ գիտեն՝ Պալատն ի՛նչ է, կամ թէ ի՞նչ է Թագաւոր...] *)։

---

*) Անկիւնաւոր [ ] փակագծի մէջ երբեմն երեւցած խօսքերը՝ պատմող գիւղացիներուն՝ իրենց կողմէ իբր բացատրութիւն աւելցուած են։

Տեսան որ մէկ Ալեւոր Մարդ՝ անդիէն՝
Երկու վայրէ *) վրայ ինկեր՝ ու կ'երթայ. —
Հարցուցին ու՝ ըսին, — «Պապի՛կ, ո՞րտեղ կ'երթաս մխա-մինակ»:
= «Ո՛րտեղ կ'երթամ..., — ըսաւ Պապիկ հեզնօրէն... —.
Զի՞ք դիտեր թէ ո՛ւր կ'երթամ..., —
Պիտի երթամ՝ Թագաւորի-Աղջկան մեծ չէնքին քով,
Պատըշգամին տակէն անցնիմ ու երթամ,
Երեւա Աղջիկ իր Թաշկինակ վերէն ձըգէ Իմ վրայ...»:
= «Պապի՛կ,-ըսին-, իրա՛ւ, Մե՛նք ալ պիտի երթանք այդ մըտքով,
Բայց օտար ենք, ու ճար-ճամբան չենք դիտեր,
Դուն Մեր առջեւ անցիր քալէ՛, Քեզ հետ երթանք երեքով»:

Պապիկն անցաւ Աչոնց առաջ. ելան գացին դէպ Պալատ,
Դեղձուն-Ծառի պատուհանին տակէն անցան երեքն ալ, —
Աղջիկ վերէն իր Թաշկինակ ձըգեց վար...:

Թաշկինակը որ ձըգեց...՝
Սահասարը անցած պահուն՝ գետին ինկաւ Թաշկինակ,
Ան ալ շուտ մը կըզուեցաւ *) որ՝ Թաշկինակը վերցընէ, —
Պապիկն այնտեղ չերեւցաւ. —
Ըսաւ, — «Անիկ այս Թաշկինակ ձըգեց իմ վրայ՝ ինկաւ վար»:

Աղջիկ վերէն կանչեց ըսաւ, — «Ա՛յ Պապի՛կ...,
Թաշկինակը Թող Քե՛զ մընայ, ա՛ռ պահէ՛,
Բայց այդ Երկու Մարդիկն են որ ըսպանեցին այն Գազանը»:

61. Սաճապար Ու Բաղդասար՝ Աղջիկէն Զատ՝ Ուրիշ Վարձատրութիւն Չեն Ուզեր

ՀԿ·184,185,186,187,188,189,190,191,192, Հ·՝(ՀԿ·186), Կ·110, (Կ·110,111,117), (Լ·15), Ե·19, Ս·145, (Հ·406,7).

Թագաւո՛րն էր, — ելաւ կանչեց այդ Երկու Մարդն ու ըսաւ. —
— «Եկէ՛ք նայիմ, Դուք ի՞նչ կ'ուզէք աշխարքի վրայ, որ տամ Ձեզ,
Իմ Գա՛հն անգամ եթէ ուզէք՝ պիտի տամ...»:

---

*) Այսինքն՝ անթացուպի (վրայ): *) Կգուիլ, Մոխլ դէպ գետին (քանի մը վերցնելու):

= «Ջու գահն,- ըսին -, բարո՛վ ջեզի՛ թող մընայ...,
Իշխանութիւն պէտք չ'է՛ Մեղի, Թագաւո՛ր,
Մենք ալ հարկաւ մէկ մարդու մը տըղա՛յ ենք...,—
Մեզ՝ թէ որ տաս՝ քո Աղջիկն է մինաւոր *)...»:

Կանաչ-Քաղքի Թագաւորն ալ՝ վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ.—
— «Աղջիկէ մը ի՞նչ կ'ըլլայ որ, ա՛յ Մարդիկ...*),
Իմ Աղջիկը՝ Դուք ձեր Թուրքին ուժո՛վն արդէն առեր էք...»:

Սանասարն ալ վերցուց ըսաւ իր կողմէն,—
= «Իրա՛ւ, Մենք քու Աղջիկէն աւելի բա՛ն չենք ուզեր,
Մենք մինաւոր քու Աղջիկը՝ Դեղձուն-Ծամն է որ կ'ուզենք...»:

* * *

Մէկ ժամանակ՝ երկու-եղբայր այդ Քաղաքին մէջ կացին *),—
Ցետոյ ըսին՝ «Մէյ մը երթանք մեր Մօր մօտ՝ ու երէցին.—
Կարօտցեր ենք. նայինք տեսնենք ի՞նչ կ'ընեն...»:

Ելան այնտեղ Թագաւորէն կամք ուզեցին՝ որ երթան.
Կանաչ-Քաղքի Թագաւորը ի՞նչ ըսաւ.—
— «Որ թէ կ'երթաք *)՝ Դեղձուն-Ծամն ալ առէ՛ք տարէ՛ք Ձեզի հետ»:

Սանասա՛րն էր,— վերցուց ըսաւ,= «Թագաւո՛ր,
Մենք քու Աղջիկ՝ հօ՛ առուփախս *) չե՛նք տանիր....
Մենք ալ մա՛րդ ենք..., մարդու-տըղա՛յ ենք հարկաւ...,—
Կ'երթանք Մեր Տուն, յետո՛յ կուգանք՝ ու մեր Հարսը կըտանինք...:
Մենք ալ կորուստ *), անտուն-անտէր մարդեր չե՛նք...,—
Կուգանք այստեղ՝ առօք-փառօք *) ու պատխո՛վ կըտանինք....
Մենք այսօր դեռ պըտակուելու միտք չունի՛նք...»:

---

*) Միճաւոր, Միմիայն, միայն եւ միայն: *) Սանասար ու Բաղդասար թէեւ դեռ տղայ՝ բայց իրենց խմած ջուրէն մեծցած՝ մեծ մարդու տպաւորութիւն կ'ընէին: *) Կացին, Մնացին: *) Որ թէ կ'երթաք, եթէ որոշած էք՝ պիտի երթաք...: *) Առուփախս, Առնել փախչելու ձեւով: *) Կորուստ, Կորսուած, կորստական տեսութիւնք, անչայտ, անծանօթ, պատահական: Առօք-փառօք, Առքով-փառքով, վայել շուքով ու հանդէսով:

Սանասար ու Բաղդասար՝
Ա՛լ կաց-բարով ըրին այդտեղ ու ելան,
Ինկան ճամբայ՝ գացին իրենց Մօր Քաղաքին մօտհասցան։
Սանասարը եղբօրն ըսաւ, — «Բաղդասա՛ր,
Դուն առջևէն գընա՛ հասիր, իմա՛ց տուր,
«Ակընկկըլա՛յ» տար մեր Մօր ու երէցին,
Ես ալ վազեմ ու երթամ՝
*Մեր բանները *) ինչ հորեր *) ենք մէջ աւլին՝*
Առնեմ՝ գամ...»։

Ի. ԿՈՒԱՊԱՇՏ ԹԱԳՈՒՀՈՐԻ ՋՈՀԸ

69. Կուապաշտի-Թագաւորը՝ Ջorfbr Դrbr ճամբուն վ.rայ Ու Կբռեսնէ Բաղդասարի Գալը

ՁԿ·193,194,195, 8·20,64, (8·20) , Ձ·՝Լ·63,Ս·145 և (Ս·145 Ս·146՝Ձ·, Է·7·

Ըսե՛ս որ այդ կըռապաշտի-Թագաւորն ալ իմացեր՝
Որ Սանասար ու Բաղդասար վերադարձեր եկեր են....
Անոնց ուժն ու զօրութիւնը լըսե՛ր է...։ —
Ելաւ իր Զօրք՝ ըսեմ հազա՛ր ու հազար՝
Քաղքէն հանեց՝ տարաւ դըրաւ մեծ ճամբան,
Որ Սանասար ու Բաղդասար երբոր գան՝
Ըսպանեն ու չըթողուն որ մըտնեն Քաղաք՝ ու տիրեն...։

Սանասարն ու Բաղդասարն ալ զօրացեր,
*Մեծացեր են ու պատ-կըտրիճ *) երիտասա՛րդ են դարձեր։*

Բաղդասարը գընաց հասաւ Քաղքին մօտ, —
Տեսաւ որ այդ Մարդեր կուգան Իր վրայ, —
*Զինք զարնելու *) կըհըտպին *)...,*
*Ինքը գիտէ *) որ Իր վրայ կըհըրճուին...։ —*

---

*) Բաներ, Զէնքեր։ *) Հորել, Հողի մէջ պահել, թաղել։ *) Պատ-կըտրիճ, Պատի պէս ուղղորդ եւ ամրակազմ, ուժեղ ու բարձրահասակ։ *) Զարնել, Սպանել, կորուսանի մատնել։ *) Հտպիլ, Հետապնդել (գ'հետապնդել), ճգնիլ։ *) Գիտէ, կը կարծէ։

Ան ալ կ'հըրճուի Անոնց վըրայ՝ փոխադարձ, —
*Որու վըրայ որ խընդանայ *), ձեռքը դընէ մէկուն վրայ,*
Իյնայ մէկուն վիզնիվեր...՝
*Ան կը մընայ իրեն տեղ... *):*

Կըռապաչախ-թագաւորն ալ՝ նըստած իրեն պատըշգամ, —
Իր կուռքերը չե՛ն թողուր որ Ան հանդչի. —
Տեսաւ որ իր Տըղաներէն մէկ կուգայ,
Ճանչըցաւ ու վերցուց այնտեղ լո՛նչ ըսաւ. —
— «Է՛յ իմ Մեծ-Կո՛ւռք, քու չընորքի՛ն մեռնիմ ես..., —
*Ի՛մալ *) որ Դու՝ քո մէկ մատաղ քաչեցիր ու բերիր հոս՝*
Ե՛րբ եղեր է՝ մէկալ եղբայրն ալ կը քաչես՝ կըբերես...»:

Ու դառնալով դէպ Բաղդասար որ կուգար, —
— «Շա՛ն լակոտներ,- ըսաւ -, ինչո՞ւ չուտ չեկաք...»:
Բաղդասար թէ՝ = «Որ մեր Մօրէն ծըներ ենք՝
Դեռ աչխարքը չե՛նք տեսեր...,
Աչխարհ տեսանք՝ մոռացանք...»:

— «Քու եղբա՛յրդ ո՛ւր է հապա...»:
= «Իմ եղբայրը՝ դեռ ճիժ է...,
*Եսի-Եսի *)՝ Ա՛ն ալ կուգայ կը հասնի...»:*

Ըսաւ, — «Ա՛րի՛ Քեզ մատղեմ...,
Մ՛ուր էիք Դուք...: — Չէի՞ք դիտեր՝ որ ո՛ւրտեղ ալ երթայիք՝
Իմ Զոլ)-կուռքը՝ Ձեզ կը քաչէր կը բերէր...»:*

68. Սանասարը Բաղդասարին Օգնութիւնը Կռիւնեցի

Ս·146՝Զ·, Չկ·196,197,198,199, 200, 201, 202, կ·111·

Տըղեկներու Մայրը լուսիկ-թագուհին ալ նըստեցաւ՝

---

*) Խնդացնալ, Հրճուիլ, ուրախանալ: *) Մնալ իրեն տեղ, Տեղն ի տեղ· իյնալ մեռնիլ, կ՚ինալ: *) Ի՛մալ, Ի՛նչպէս: *) Եսի-Եսի, Համաց-համաց, եսեւէն: *) Զոլ, Մեծաղօր, ամենակարող:

Աբցունք թափեց Անոնց համար գաղտուկէն···։

Ջոջ-եղբայրը Սանասար՛ն էր, — եկաւ հասաւ, ի՞նչ ըսաւ· —
— «Եղբա՛յր, ատիկ ի՞նչ է կ՛ընեն այդ Մարդեր···»։
Բաղդասարն ալ, = «Եղբա՛յր,- ըսաւ -, չէ՛մ գիտեր···,
Անոնք,- ըսաւ -, կըխընդանա՛ն իմ վըրայ···,
Ես ալ որո՛ւ վըրայ հըրճուիմ, ձեռքըս դընեմ իր վըրան՝
Իսկոյն իր տեղ կըմընայ···»։
— Տըղա՛յ,- ըսաւ Սանասար -,
Աախ Քու վրայ չէ՛ն հըրճուիր···, —
Մեռցընելո՛ւ կըհըտային···»։
= «Լ՛հը՛,- ըսաւ Բաղդասարն ալ զարմացած -,
Որ այդպէս է՝ ես երթա՛մ ու դուռ բըռնեմ,
Մարդ չըփախի՝ մըտնայ ներս,
Դուն ալ հեծի՛ր Քո Քուռա՛կ,
Մէկ ճոթէն *) գա՛րկ, մա՛րդ չըփախի···, առնեն մէկտեղ կոտորենք»։

Ան ալ գընաց Քաղաքին մեծ դուռ բըռնեց՝
Որ մա՛րդ չմըտնայ Քաղքէն ներս· —
Սանասարն ալ՝ Իր Ձին հեծա՛ւ, քըշեց ինկաւ Ջօրքին մէ՛ջ···,
Ա՛յդքան Ջօրքը առի՛ն ջարդեց···, մէ՛կ մարդ ըսես չըճըռնչաց···։

Ա՛լ այս անգամ՝ եկան գացին Իրենց Մօր մօտ, երէցին *)։
Մայրն ու երէց հարցուցին Թէ, — «Այսչափ առեն ո՞ւր էիք···»։
= «Ապա-, ըսին -, գացեր էինք երկրէ երկիր մա՛ն գալու *)····
Գացեր էինք՝ կա՛ն կուգայինք *)· ա՛ն *) եկանք···»։

64. Լուսիկ-Թագուհին Իր Ցղեկներուն Միտքը Կըբանայ
ՀՍ·85,86,87,88,89,90,91, Հ՝ՀՍ·85-88, Հ·՝Ն·942·

Թագուհի՛ն էր, — եկաւ այնտեղ ի՞նչ ըրաւ· —

---

*) Ճոթ, Մայր, կողմ, գլուխ։ *) Այսինքն՝ իրենց Մօր ու երէցին մօտ։ *) Մաճ գալ, կաճ գալ, գտտիլ, չըվիլ։ *) Ա՛ճ, Ահա՛ հիմա, ահաւասիկ։

Կըռապաչուի-Թազաւորին մա՛րդ ուղարկեց եւ ըսաւ. —
— «Ես չե՛մ Թողուր որ Իմ Տըղոց Քառասունքը լըրանայ...,
Թող գայ առնէ Իր Տըղեկները՝ ու տանի.
Թէ կ՚ուտէ՛ ու Թէ կ՚ըսպանէ՝ չե՛մ դիտեր..., —
Ի՛նչ որ կ՚ընէ Թող ընէ՛...՝
Միայն Թէ Ես չըտեսնե՛մ...»:

Իմաց տըւին Թազաւորին ու ըսին. —
— «Քու Կընիկը կ՚ըսէ «Թող գայ՝ Իր Ճըմփերը Թող տանի...,
Քա՛նի որ Ինձ օգուտ չեն տար, զուր պիտ՝ անցնի Իմ Խընամք՝
Ես չե՛մ դիտեր՝ Մինչեւ Անունք մեծանան,
Թող գայ տանի Իր Տըղաք...»:

Տըղա՛ք ըսես՝ Սանասա՛ր ու Բաղդասա՛ր՝
Կըտեսանեն որ՝ Իրենց Մայրը՝ քա՛նի երթայ՝ կըմաչի, —
Դարձան Իրեն, — «Մարէ՛,- ըսին -, ի՞նչ է եղեր որ՝ Քեզի...,
Դուն օրէօր, ըստիկ-մընջիկ կըհալիս ու կըհատնիս...,
Եւ աչքերուդ արտասուքը՝ Իր աղբիւրէն *) չի՛ ցամքիր...:
Մենք կընայինք՝ Աստուածաւրհնութիւն Քեզ տըւեր է ամե՛ն բան. —
Ջորդ մը տըղայ՝ Մեզի նըման Աղնաւուր *)...,
Ու Դուն երբե՛ք պակսընդրդ *) բա՛ն մը չունիս...: —
Արքայական-Աղջի՛կ ես Դուն, Թազաւորի ալ կընի՛կ...
Քո ցաւն ու վիշտ ի՞նչ է որ Դուն օր-ատուր՝
Կըկոտորուիս *), կըմաչիս...»:

Մայրը զարձաւ՝ Իր լաճերուն ի՞նչ ըսաւ. —
= «Որդի՛,- ըսաւ -, Ես չըմաչիմ՝ ա՛լ ապա ո՞վ պիտ՝ մաչի...,
Այսօր կամ վաղ, ուշ Թէ կանուխ, Թազաւորը պիտի գայ...,
Ձեզ Երկուքըդ առնէ տանի՝ մորԹել տայ...»:

Սանասա՛րն էր, — ա՛յս որ լըսեց...՝ տեղէն ցատկե՛ց ու ըսաւ. —
— «Օ՛ Մարէ՛..., Դուն... այդ ի՞նչ խօսք է որ ըսիր..., —

---

*) Աղբիւր, Աչքերուն՝ քիԹի կողմի բացուածքը, ուրկէ արցունք կըվազէ: *) Ագնաւուր, Դիւցազն. Ագնանց Ցեղէն. Աղնաւուր: *) Պակսընդրդ, Պակասող, պակասելիք, կարօտութիւն: *) Կատորուիլ, Նուազիլ, Նիհարնալ, Ծխրիլ, կտոր-կտոր պակսիլ (վեռանքէ):

Թագաւորը դայ Մեզ տանի... մորթի՛լ տայ...»:
= «Մո՛րտուն *), - ըսաւ -, թագաւորը՝ Ձեր հա՛յրն է...,
Պիտի դայ Ձեզ տանի զենէ *) եւ ուտէ...»:
— «Մարէ՛, - ըսաւ -, ի՞նչ պատճառով Մեր Հայրը Մեզ պիտի զենէ
[եւ ուտէ...»:
= «Ապա, Որդի՛ք, — ըսաւ Մայրը, ցած ձայնով —·
Ձեր «Հայրը» ըսած՝ կըռապա՛շտ է Իր Ազգով,
Եւ Իմ Հայրը՝ հա՛յհաւատ...:
Երբոր Իմ Հայր՝ Ձիս տըւաւ Ձեր Հօր կընիկ՝
Ըսաւ «Երբոր Տըղա՛յ բերէ Իմ Աղջիկ՝
Իմ Երէցը պիտի ղըրկեմ՝ դայ կընքէ»:
Հիմա Երէցն եկեր ու Ձեզ կընքեր է,
Ձեր Հօր Քաղաք՝ կըռապա՛շտ են ամէնն ալ·
Դուք Երկո՛ւքդ՝ Ինձ պէս կընքուած ու Հա՛յ էք·
Իմ Հօր Երկրի հայ օրէնքո՛վ վըրայ էք:
Ան ալ, Ձեր Հայր, ի՞նչ պատճառով պիտի դայ՝
Ձեզ Երկուքդ տանի մորթէ եւ ուտէ՝
Որ Ձեր մօտէն *) զատակ չ'երթա՛յ, չ'աւելնա՛յ,
Ու չընըտի՛ Մըսրայ-Երկրի Գահին վրայ,
Աստուածապաշտ, հայհաւատ չըղտնա՛ն...:
Ատոր համա՛ր է ահա...՝
Կըռապաշտի-Թագաւորը պիտի դայ
Ձեզ Երկուքդ տանի մորթէ եւ ուտէ...»:

Մանասա՛ն էր, — Մօր այդ խօսքեր երբ լսեց՝
— «Մարէ՛, - ըսաւ -, հիմա Դուն Մա՛րդ ղըրկեր ես...՝
Կըռապաշտի-Թագաւորը պիտի դայ...՝
Պիտի տանի Մեզ ուտէ՞...»:
= «Հա՛մ, Որդի՛...», — ըսաւ Մայրը վըշտաձայն —·
Թէ ուտէ՛՝ Թէ ըսպանէ՛...», —
Վերջապէս Ձեզ պիտի տանի՝ կորուսէ՛...»:
Մանասարն ալ, — «Մարէ՛, - ըսաւ -, դէ՛, որ կուգայ՝ դուռը բա՛ց՝

---

*) Մօրտուն, Մօր հոգւոյն՝ էութիւն, կեդրոն, բոյն: Կչկճ.՝ Հոգեա՛կ: *) Զենիլ, Զենուլ, մորթել, վիզը կտրել: *) Ձեր մօտէն, Ձեր ցեղէն, ձեր սերունդէն:

Թագաւորը ներս գայ որ ես գ'ինչ տեսնեմ...,
Նայիմ ի՞նչպէս պիտի տանի՝ Մեզ ուտէ...»:

65. Սանասար՝ կռապաօթի-Թագաւորը կըրտնի Ու Սիւնիճ կըկապէ

ՀՍ·92,93,94,95,96,97,98,99,100,101,102, Հ·՝ՀՍ·101, (Հ·5), Հ·7,Ց·64,65, (Ց·65), Հ·՝Ց·65·

Այդ խօսքին հետ՝ Թագաւորը եկաւ վե՛ր,
Դուռը բացաւ մըտաւ ներ՛ս...,
*Իրիշկաց *) ու ի՞նչ տեսնէ...: —*
— Երկու խոշո՛ր ահագի՛ն Մա՛րդ՝ քէ՞ Տըղայ...՝
*Մէկը նըստած՝ Մօր ա՛յն կըշտին *), մէկը՝ այն,*
*Մանուկի պէս ծի՛ծ կ'ուտեն... *):*
Թագաւորն ալ՝ ինք զարմացա՛ւ ու վախցա՛ւ...:
Ինքիրենը՝ միտք ըրաւ հոն ու ըսաւ. —
«Այս ի՞նչ բան է...,-ըսաւ, որ Այդ Տըղաներ՝
Դեռ Քառասունքը չ'էի՛ լըրացեր...՝ ա՛յս հասակի՛ն եղած են...»:
*Թագաւորը կեցաւ իր տեղ..., նայի՛ց..., պ'աղա՛ւ *) ու մընա՛ց...:*

Թագուհին ալ՝ վերցուց ըսաւ, — «Թագաւո՛ր,
*Ի՞նչ միտք կ'ընես *)..., արի՛ ա՛ռ տա՛ր Տըղեկները...,*
Քու լաճե՛րն են..., չե՞ս տեսներ...»:

Որ այդ ըսաւ... ու լըսեց՝
Թագաւորը ո՛ւռ մը նետեց տախտին մէ՛ջ...,
Որ պիտի զար Տունէն ներ՛ս...: —
Սանասարը ոտքի՛ ելաւ՝ կանգնեցա՛ւ..., —
— «Մարէ՛,-ըսաւ, Մեր երկուքիս Հա՛յրն է Աս....
Ասիկ հիմա Մեր Հա՛յրն է..., —

---

*) Իրիշկալ, երես դարձնելով նայիլ: *) Կշտիճ, կողքին, քովը: *) Հայաստանի մէջ՝ սովորական երեւոյթ է՝ որ երախան ծիծէ չեն կտրեր՝ մինչեւ մէկ տարի: Երբեմն նոյնիսկ մինչեւ մէկուկէս-երկու տարի՝ տղան ծիծէ չկտրող մայրեր կան: *) Պաղաւ, պաղեցաւ, սպուշ կտրեցաւ, քարացաւ: *) Միտք ընել, մտածել, մտմըտալ, խորհրդածել:

Պիտի տանի՝ Մեզ ուտէ՞...»:
= «Հա՛մ, որդի՛..., Ա՛դ է Ձեր Հայրը...,-ըսաւ Մայրը.
Ձեր Հայրն Ադ է...: Ձեզ երկուարդ պիտի տանի ու մորթէ՛...»:

Սանասարն ալ՝ դարձաւ այնտեղ ի՞նչ ըսաւ. —
— «Ի՞նչ վընաս ենք տըւեր Քեզի, Հա՛յր..., ըսէ՛..,
Որ Դուն պիտի առնես տանիս՝ Մեզ ուտես...:
*Դէ՛, Հա՛յր,-ըսաւ, արի՛ մօտհաս *)՝ որ Քու ձեռը ես պագեմ...,*
Ես՝ Քեզ տըղայ, Դուն՝ Ինձի հայր..., վերջապէս..., —
Նոր կըտանիս՝ Ձիս կըմորթե՞ս..., ի՞նչ որ կ'ընես՝ Դո՛ւն գիտես...»:

Կըտապաչուխ-Թագաւորը՝ այնտեղ վախցա՛ւ Տըղայէն...,
Դարձաւ...՝ ուզեց որ փախչի՛ր..., —

Սանասա՛րն էր, — խելոյն հասա՛ւ՝ ամուր բռնե՛ց Քեւերէն...,
Բերաւ Աչոր քամակ տըւաւ Տան մէջտեղի մեծ Սիւնին,
Հաստ չըղթայով՝ Թագաւորը ոտքէն-գըլուխ՝ փաթուքեց,
Փաթուքեց ու կապկըպեց...,
Տախտակ անցուց Գըլուխին...,
Ձըրագ դըրաւ Գըլխուն վրայ եւ ըսաւ. —
*— «Մարի՛,-ըսաւ, Մենք Ձըրագտե՛ղ *) չունէ՛ինք...,*
Աւիկ Մեզի լաւ Ձըրագտե՛ղ մը եղաւ..., —
Նըստիս տալնե՛ւ՝ Մեզի համար կա՛ր ընես...»:

*Թագաւորը՝ սիրնվե՛ր կապտվ՝ մընաց այնտեղ Ձըրագտա՛ն *)...:*
Իրենք Նըստան հանգի՛ստ անոր լոյսին տակ՝
*Նըստան *) գինին՝ աչքին առաջ խըմեցին ու հաց կերան...:*

66. Սանասար Ու Բաղդասար՝ Վիքիարի Լափիկ-Գարի Հետ Կըխաղան

Զ·(Լ·65), Զ·, Զ՝Ե·943, Զ·՝Ե·944·

Անկէ յետոյ, ամեն օր,
Սանասար ու Բաղդասար,

---

*) Մօտհաս, Մօտիկ, (ինձի)հասնելու չափ մօտ: *) Ձրագտեղ, Ձրագպան, Վրան ճրագ դնելու գործնիք, ճրագկալ: *) Նըստ, Նուռի:

Քառասունքի ձիժ՝ սակայն հըսկա՛յ բարդի ծառ,
Լուս-աղօթքրան *) բացուելուն պէս, թեւթեւի, —
Որսի կ՚երթան, կա՛մ կըխաղան՝ դէմդէմի։
Եւ ամե՛ն օր՝ իրենց Մօրը դիրկէն դեռ դուրս չըփախած՝
Կըրկին-կըրկին կըպատուիրեն ու կ՚ըսեն, —
— «Մարէ՛,-կ՚ըսեն-, չելնե՛ս խաբուխս այդ անհոգի Անօրէնին
[խօսքերէն,
Ու թուլցընես, կա՛մ թէ քակես զ՚ինք իր ամուր կապերէն...»։

Նետաղեղով Որսի կ՚երթան՝ օր մը ա՛յս լեռ, օր մը ա՛յն. —
Լոր կըբռնեն, սարի մարալ *), վէրի-ոչխար *) ու հաւքեր,
Ուսին դրած՝ տուն կըդառնան, կըխորովեն ու կ՚ուտեն,
Իրենց Մօր ու երէցին հետ միասեղ՝
Սեղան նըստած՝ նրոտն զինին կըխըմեն։

Մայրը ըսես՝ թագուհին ալ, թագաւորն ալ՝ ի՛նք դարճած,
Իր երկւորեակ-Տըղեկներուն նոր արեւո՛ւն *) է կ՚երդուի. —
— «Դէ՛, Զաւակնե՛րս,-կ՚ըսէ Անոնց-, Հայու ճըրագ վառեցէ՛ք...,
Ո՛ւր ալ երթաք՝ մի՛ մոռնաք, Ձեր Մայրն ու Պապ յիշեցէ՛ք...»։

Երկու-եղբայր՝ Սանասար ու Բաղդասար,
Ելան օր մը, արշալոյսին, Իրարու հետ Դա՛շտ դացին։ —
Տեսան այնտեղ՝ պատի նըման Գա՛ր մը՝ կանգնուի՝ մէջ Դաշտին։
Դէ՛հ, տըղա՛յ են, խելքը խաղի, սատանան ալ դըրդըռնիչ *)։ —
— «Էի՛ Բաղդասար,-ձայնեց մէկէն, Սանասարը Իր եղբօր-,
Եկո՛ւր՝ այս Գար հանենք տանինք, ընենք Մեզի Լափիկ-Գար *)»։

Երկու-Եղբայր՝ ձեռք նետեցին պատի նըման Լափիկին, —
Սանասա՛րն է, — Գարը կուտայ Բաղդասարին՝ որ չալկէ,
Բաղդասարը չի՛ կըրնար որ Գար չալակին վրայ վերցնէ։

Բաղդասարը չի՛ կըրնար տալ Սանասարին՝ որ չալկէ.

---

*) Լուս-աղօթքրան, Լուսացոյց աղօթարանի պահ, արշալոյս, ա-
րեւածագ։ *) Մարալ, եղնիկ, վայրի երէ։ *) Վէրի-ոչխար, եղ-
ջերու, քարայծ (վայրի ոչխար)։ *) Արեւ, կեանք։ *) Գրգռնիչ,
Դրդիչ, գրգիռ տուող, թեւլեզող։ *) Լափիկ-Գար, Տափակ ձեռ-
նաքար՝ ճաններ կամ կօկօղ թռցնելու։

*Սանասարն ալ՝ ինքը մինակ՝ կուտայ վըրան *) որ չալկէ՝*
Ինքերենը չի՛ կըրնար որ Քար կըռնակին դարձընէ...: —

Մինչեւ իրկուն՝ արիւն-քըրտինք՝ չարչարուեցան Քարին հետ,
*Ու վերջինքին *)՝ առանց Որսի՝ ելան դարձան Օրը քով:*

Մայրը վերցուց ըսաւ, — «Որդի՛(ք), ի՞նչ եղած է Ձեզ այսօր..,. —
Քըրտինքի մէջ թաթխուած էք..., վըրայ-գլուխ պատռտուած...,
Լուսուն գացիք, ներս կըմըտնէք՝ մուրճն ինկած...:
Ո՞ւր է Ձեր Որս..., ի՞նչ դըրծ ըրիք՝ ամբողջ օր...»:

= «Մարէ, դիտե՞ս,-ըսաւ այնտեղ Սանասար-.
Դաշտի մէջտեղ, գացինք՝ մէկ մե՛ծ Քա՛ր տեսանք.
Նայեցանք որ՝ խօրտո Լափիկ կ'ըլլար անի Մեզ համար,
Ըրի՛նք որ տանք Մեր չալակը՝ ու բերենք Տուն, չկըրցա՛նք. —
Հա՛ Ես կուտամ Բաղդասարին, Ան չի՛ կըրնար որ չալկէ.....
Բաղդասարը չի՛ կըրնար տալ Իմ չալակը՝ որ բերեմ:
Հա՛ Ես կ'ընեմ մխա-մինա՛կըս, — Քարը չալկել հընար չ'է՛...: —
Մինչեւ իրկուն՝ արիւն-քըրտինք՝ այդ Քարին հետ կըռուեցանք,
Առանց Որսի՝ ելանք Մենք ալ՝ դարձանք Տուն...»:

Մայրը այդտեղ ալ խմացաւ, մխաք ըրաւ ու ի՞նչ ըսաւ —
*Հը՛..., Սանասար իլիճ *) կուգա էր, ու Բաղդասար՝ կիսա՛տ կուց»:*
Նորէն գիտցաւ՝ որ Սանասար Բաղդասարէն ուժե՛ղ էր.
Թէ Բաղդասար՝ Իր Մեծ-եղբօր կէսը հազի՛ւ ուժ ունէր:
Դարձաւ Տըղոց, ու ժըպտալէն ի՞նչ ըսաւ. —
— «Որդի՛,-ըսաւ, մի՛ մըտածէք. բան մը չ'է՛...,
Առտուն գացէ՛ք՝ Թող Բաղդասար Իրե՛ն չափով Քար բերէ,
Ու Սանասարն՝ Ի՛ր չափով...»:

Մայրն ալ ինչո՞ւ այդպէս ըսաւ՝ ակամայ, —
Որ Երկուտրեակ-Եղբայրներու սիրտն Իրարմէ չըմընա՛յ...:

---

*) Այսինքն՝ Իր կռնակին վրայ: *) վերջին՛, Իրիկնապահ, եւ-րեկոյ: *) Իլիճ, Լեցուն, լի, լիք, 'ի լին: *) ժպտալէն, ժպտա-լով ժպտուն ձեւով:

67. Սանասար Ու Բաղդասար՝ Եղնիկի Եռեւէ

Ջ·(Հ·8,ե···?)·

Առաու մըն ալ, ելան նորէն ու գացին։ —
*Գացին տեսան՝ որ սուլուլիկ *) խո՛ւմբ մը եղնիկ՝ ճո՛րնիվար,*
Հեղեղատին ջուրը ծըծած, ինչպէս Իրենք՝ Մօրը կաթ, —
Դունչը տընկեր՝ կըհոտուըտան մէջ օդին···։
— «Էյ՛ Բաղդասա՛ր···, Որսն իր ոտո՛վն է եկեր···»։ —
Կանչեց եղբօր՝ Սանասար։

*Ու հովի պէս՝ երկուքը մէկ՝ պըլըլկուեցան *) ճորնիվար···։*
*Իրենք՝ թէ հով, եղնիկ *)՝ հովէ՛ն ալ արագ, —*
Ոտ մ՛ ունէին՝ ոտ մ՛ ալ առին ու Քըռա՛ն···,
Նեաթ նըման անյայտացան Սարն՝իվեր···։
*Տըւին առջեւ *)՝ ու քըշեցին երկուսով, —*
Սար ու Սարակ, Ձոր ու Ծըմակ, Անտառներ։ —
Եղնի՛կը ո՛ւր···, —
*Թէ դըրեր ես՝ արի՛ տա՛ր··· *)։*

68. Պապ-Թագաւորը՝ Գիր Կըղրկէ Իր Թոռնիերուն

Ջ·՝Չկ·288, Չկ·288, ՉՍ·103,104,105,106,107,108, Հ·7,8,(Հ·7),
Ջ·՝Հ·7, կ·117,4, Ջ·՝կ·4, 8·65, Ջ·՝8·65·

Ժամանակ մը՝ այնպէս մնացին Այդ Տըղաք։ —
Այն մէկ օր ալ՝ Ջոջ-Եղբայրը Սանասար՝
Պըլտիկ-Եղբօր դարձաւ ըսաւ, — «Բա՛ղդասար՝
Ամե՛ն առեն՝ Մեր Մայրն ու Մեր Երէցիկ՝
Այդ Կումբի-Պապ Թագաւորի խո՛ւջ կ՛ընեն, —

---

*) Սուլուլիկ, *Սուրացող, վազող եւ փալփլուն, գեղեցիկ։ *) Պըլլըկուիլ, *Սըրնթաց վազել։ *) Եղնիկ, *եղնիկ ըսածը, եղնիկ ըսուած կենդանին, եղնիկները։ *) Տալ առջեւ, *Շիտակ խոյանալ դէպ առաջ։ *) Թէ դրեր ես՝ արի՛ տա՛ր, *Հեռքովդ դրած ալ ըլլաս՝ չըկա՛յ, անհետացեր է···։*

Շատ կըդովէն, կ'ըսեն՝ «Աղէ՛կ, լա՛ւ մարդ է»։ —
Դուն կա՛ց այստեղ, ես երթամ ու տեսնեմ՝ գամ...»։

Անոնք այնտեղ՝ թող Իրենց այդ մըտադրութեան մէ՛չ ըլլան,
Մենք դառնանք ու ղըրօյցը տանք ո՞ւրտեղէն։ —
Ձըրօյցը տանք կապուտ-Կողի ծեր Թաղաւոր Պարոյրէն, —
Որ Սանասար-Բաղդասարի Պապիկն *) է։ —

Լուրը հասաւ Իրեն ակա՛նջ, թէ «Երկուորեակ Իր Թոռներ,
Սանասար ու Բաղդասարը՝ զօրացեր են ու մեծցեր...»,
Թէ՝ «Սիհամ-Խան Թագաւո՛րն ալ՝ բըռներ կապեր են սիւնի՛ն», —
Իրենց Մօր հետ՝ նըստած այնտեղ, ուրախութի՛ւն է կ'ընեն»։ —
Այն ալ վերցուց իւ՛նէ ըսաւ. —
— «Աստուած,-ըսաւ, ես Այն Տըղաք տեսնէի...՝
Նո՛ր Իմ հոգին առնէր...»։ —

Ելաւ մէկ Թուղթ գըրեց տըւաւ Քամիին, —
— «Քամի՛,-ըսաւ, այս Թուղթը տա՛ր ու հասցո՛ւր՝
Իմ Թոռներուն, Սանասարի-Բաղդասարի ձե՛ռքը տուր։ —
Ես չատ ջոջերը, ալեւորցեր եմ այլեւս...,
Շատ կեանք չ'ունի՛մ ասկէ ետք...,
Պիտի մեռնիմ..., մահկանացու մարդ եմ ես ալ՝ վերջապէս...,
Կ'աղաչե՛մ որ այդ Իմ երկու-Թոռներէն մէկ՝ գայ Իմ մօ՛տ,
Որ ես տեսնեմ Իմ Աչքով,
Ու Իմ սըրտի փափաքն առնի՛մ՝ նո՛ր մեռնիմ...,
Դառնան երթան Իրենց տեղ...»։

Քամին բերաւ Թուղթը հասցուց այդ Քաղաք,
Ականատէն Սանասարի ձե՛ռք ձըգեց։
Սանասարն ալ՝ Թուղթը բացաւ ու կարդաց. —
— «Շա՛տ-չա՛տ բարեւ՝ Իմ Թոռներուն սիրելի,
Սանասարին, Բաղդասարի՛ն կըդըրեմ,
Որ Իմ Թուղթը Ձեր երկուքիդ ձե՛ռք հասնի՝
Ձեր երկուքէդ մէկը ելնէ՝ գայ այստե՛ղ, —
Ես Ձեզ տեսնեմ՝ նոր *) մեռնիմ...»։

---

*) Պապիկ, Մեծ-հայր, պապ։ *) Նոր, Թեսոյ, ապաս։

Սանասա՛րն էր, — դարձաւ այնտեղ՝ Իրենց Մօրը ի՞նչ ըսաւ. —
— «Մարէ,-ըսաւ, Դուն Քո Հօր Տուն գիտե՞ս ո՛ւր է՝ որ երթանք»:
= «Գիտե՛մ,-ըսաւ, կապուտ-Կողի Աչխա՛րհն է»:
— «Դէ՛, որ գիտես՝ արի հեծնենք՝ մէկտեղ երթանք Մեր Պապո՛ւն»:
Մայր խըրատեց, ըսաւ, = «Ոըդի՛, Սանասա՛ր,
Դուն գընա՛ տե՛ս, դարձի՛ր եկո՛ւր՝ նոր Մեզ տա՛ր...»:
Սանասարն ալ՝ վերցուց ըսա՛ւ Իր եղբօր, —
— «Է՛ Բաղդասա՛ր, Մեր Պապիկը Մեզի Գի՛ր է ուղարկեր, —
Կուզես՝ ելի՛ր Դո՛ւն գընա,
Կ'ուզես՝ ելնեմ ե՛ս երթամ..., —
Մէկ տեսութիւն մ' ընե՛մ՝ գա՛մ...»:

Բաղդասարն ալ՝ ըսաւ, — «եղբա՛յր, Դո՛ւն գընա»:
Սանասարը, ասոր վըրայ, Ի՛նքն ալ ըսաւ, — «Ես կ'երթամ...,
Ապա՝ չելնե՛մ ու չիմանա՛մ՝ որ Այդ Գաղան Դուն Քո՛ղ տաս,
Կամ Քեզ խաբէ՝ ելնես Անիկ արձըկես, —
Քեզ ըսպանեն՝ ա՛լ ես Քեզի չըհասնիմ...:
Զըխաբուի՛ս՝ ո՛ւնք բա՛ց ձըգես...:
Բայց Մեզի ալ՝ նըշանաբան այս մէ՛կն է. —
Ամպը երկինք որ կանչէ՝
Նեղն ինկածին՝ Իր եղբայրը չո՛ւտ հասնի...»:

Այդկերպ պատուէր տըւաւ եղբօրն՝ ու գընաց:

69. Սանասար՝ Իր Պապուն Գաղաթը Կ'ուրթայ

ՋՍ·109,110,111, 112,113, (Կ·3,4)Զ·, (Հ·8),Կ·4, (Կ·4) Զ·,
Հ·8, ՋԿ·289,300,301, Ց·65, Զ(Ց·65), Կ·117, Զ·՝Լ·10·

Սանասա՛րն էր, — գընաց Ծովափ, Մազը հանե՛ց՝ տուաւ կըրա՛կ,
*Աղնաւորի *) կապոյտ-Քար մը չուռ տըւաւ *).*
Քարին տակէն Ոսկի-Սա՛նձ մը հանեց դուրս,
Սանձը զարկաւ Ծովուն մէ՛ջ..., —
Ծով վերվերեցա՛ւ..., Ատծո՛ւ կամքով բացուեցա՛ւ, —

---

*) Ազնաւուր, Դիւցազն, հսկայ մարդ: *) Շուռ տալ, Շրջել, դարձընել:

Քուռկիկ-Ջալալ՝ փըրփո՛ւր բերնին՝ դո՛ւրս թըռաւ...:
Սանասա՛րն էր, — Սանճը զարկաւ, հեծաւ Իր Ձին ու դընաց...:

Գընաց հասաւ Իր Քեռհօր *),
Կապուտ-Կողի Թաղաւորի Քաղքի կո՛ւշտ *):
Սանասարն ալ՝ Ձին թո՛ղ տըւաւ՝ դընաց Ծո՛վ,
Ինքը ելաւ՝ քալեց դընաց դէպ Քաղա՛ք:

Սանասար ինչ *) ելաւ դընաց ու մօտեցաւ Քաղաքին՝
«Ակընկկըլա՛յ» տարան Մեծ-Հօրն ու ըսին. —
Թէ՝ — «Սանասար, Քու մեծ Թոռը եկե՛ր է...»:— —
Ելաւ առաւ Նախարարները, ու Քահանայ՝ խաչվառով,
Ամենը մէկ՝ գացին առաջ, առին տարան դէպ Պալա՛տ:

Աստղիկ-Արքան ալեւոր,
Որ Իր Աղջկան համար այնքա՛ն չատ լացե՛ր էր մինչ՝ այն օր,
Իսկոյն՝ Անոր նըմուշի՛ն վրայ՝ Սանասարը ճանչըցաւ:
Երբոր տեսաւ, Տըղան *) եկաւ մօտեցաւ, —
Հասաւ գըրկե՛ց Սանասարը, ու պապա՛ւ: —
Տեսաւ որ չա՛տ չընորքտան *) է Իր Թոռնիկ,
Ուրախացաւ, չա՛տ խընդացաւ ինքիրեն, —
Հարցուց ըսաւ, — «Որդի՛,-ըսաւ-, դէ՛, պատմէ ինձ՝ ու տեսնենք,
Քո Մայր Լուսիկ, ու Քո Եղբայր Բաղդասարը՝ ի՞նչպէս են....
Ո՞ր Երկիրներ գացեր էիք մա՛ն գալու....
Կըտապաչախէ-Թաղաւորը ի՞նչպէս ըրաւ Ձեզի հետ...
Դուք որո՞ւ հետ կըռիւ ըրիք՝ ուրիշ տեղ...»:

Սանասարն ալ՝ ի՛նչ որ դըլխէն անցե՛ր էր՝
Իր Քեռհօրը պատմեց ըսաւ՝ մէ՛կ-առ-մէ՛կ

Բայց Թաղաւոր երբոր տեսաւ՝ Իր Թոռան հետ մա՛րդ չըկար,
Տըղան՝ մինա՛կ՝ ճամբայ ինկե՛ր եկեր էր՝
Շատ տըրտմեցաւ ինքիրեն...:

---

*) Քեռհայր, Մօրը հայր, (քեռիին, մօրեղբօր հայր): *) Կուշտ, Քով, մօտ: *) Ինչ, Ինչ աստեն որ, երբոր, այն ժամանակ որ: *) Տղաճ, Այսինքն՝ իր աղջկան տղան: Պատանին: *) Շնորհուն, Շնորք ունեցող, արժանիքներով օժտուած, շնորհունակ

Սանասարն ալ՝ հարցուց ըսաւ Իր Պապուն. —
— «Պապօ՛,-ըսաւ-, ինչո՞ւ այդպէս տըրտմեր ես...»:
Թագաւորը պատասխանեց Սանասարին՝ թէ, = «Որդի՛,
Դուք այդ Քաջանց-Թագաւորի Լաճե՛րն էք...,
Պարզ ծընողքի զաւակ չ՛է՛ք..., —
Արքայորդի՛-Տըղայ էք..., —
Պէտք էր Ձու հետ՝ երկու-հարիւր Ձիաւորած Մա՛րդ ըլլար...,
Կա՛յ ու չըկայ՝ Դուն խըռովե՛ր եկեր ես...»:
Ըսաւ, — «Պապօ՛, ես՝ Իմ Եղբայր՝ Մենք խըռոված չե՛նք բընաւ...
Ու Մենք որ կանք՝ հըրեղէնէ-ծովեղէնէ՛ ենք ծընած...:
Ձո Աղջիկը՝ մինչեւ հիմա՛ ալ՝ կո՛յս է..., —
Անոր համար ալ Մեր-Մայրը չո՛ւտ ճըղեցին երեսէ *).
Մեզ ալ ըսին՝ թէ «Դուք երկուտե՝ անհարազա՛տ Տըղայ էք...:

Ու կըռապաչտ-Թագաւորն ալ՝ Մեզ մորթելու մի՛տք ունէր...,
Մենք ալ ելանք՝ գացինք Ծովա՛ւի, այս ու այն կողմ՝ մա՛ն եկանք.
Մեր Մօրն ալ չա՛տ խընդրեցինք թէ՝ «Մեր Հօր մասին Մեզ լո՛ւր
[տուր».
Մեր Մայրիկն ալ՝ այդ պատասխան տըւաւ Մեզ...: —
Մենք ալ բըռներ՝ Թագաւորը կատկըտեր ենք Տան Սիւնի՛ն,
Ըրեր ենք Մեզ՝ լա՛ւ ձըրագվել, Գըլուխն անցած Տախտակին...:
Ակռէ չետոյ՝ ա՛լ մի՛ վախնար Այդ անօրէն Գազանէն....
Քաջանց-Երկրէն ալ չեն կըրնար գալ Ձու Երկիր աւերել, —
Աւուրերի զարնել-տանիլ Ձու Հողէն...»:

Այս խօսքին վրայ՝ Թագաւորը ուրախացա՛ւ, հըրճուեցա՛ւ, —
= «Կաց Մեզի մօ՛տ,-ըսաւ Անոր ալ՝ Սանասարին՝ Իր Թոռան..
Մենք ալ նայինք՝ ուրախանանք Ձու վրան...»:
Ու մտանատուր մեծ Սեղեակի մ՝ մէջը դըրաւ Սանասար:
Թոռը՝ Մեծ-Հօր սիրտ չըկոտրեց, մընաց այնտեղ քանի մ՝ օր:

Սանասարի գործն ալ ինչ էր՝ Իր Պապուն ու Մամուն քով. —
Մինչեւ իրկուն գըրոյց կ՝ընէր, ճա՛ն կըխաղար հաճոյքով. —

---

*) Երեսէ ձգել, Շնորհաղուրկ ընել:

*Այնպէս որ ա՛լ խօսքի լինկաւ *)՝ մոռցաւ Իր Մայրն ու Եղբայր…:*

Անոնք այնտեղ՝ Իրենք Իրենց՝ թող ուրախնա՛ն ու խօսի՛ն.
Մենք զըրոյցը ո՞ւրկէ տանք. —
Կըռապաշտի-Թագաւորէ՛ն, — որ Սիւնն ՚ի վեր կապո՛ւկ է, —
Բաղդասարէ՛ն ու Երէցէ՛ն զըրոյց տանք:

70. Բաղդասար՝ Կռապաշտ-Թագաւորը Կ՚արձակէ Իր Կապերէն

Հ·8,6, Զ·(Հ·8), Կ·117, ՁՍ·113,114, Ը·65·

Բաղդասար ու Մերուկ-Երէց՝ ամե՛ն օր,
Կ՚ելլեն Կ՚երթան վայրի Որսի, սար ու քար·
Օրը մէյմէկ վէրի)- եղնիկ կըզարնեն,*
Կ՚առնեն կուշան ու կընըստին սեղանի,
Ուրախութեան ճաշ Կ՚ընեն…:

Օր մ՚ալ երբոր՝ Անոնք զարճալ ելան գացին Սար՝ Որսի՝
Կըռապաշտի-Թագաւորը՝ սիւնվեր կապուկ Իր տեղէն՝
Վերցուց ըսաւ Կապուտ-Կողի Թագաւորի-Աղջկան՝ —
— «Թագ՚տրտողի՛կ, չէ՞ Ես խեղճ եմ…, Քու Թագաւոր-Էրի՛կդ եմ,
Քո տուն չաւրի՛…, քիչ մը Թուլցո՛ւր Իմ կապերս…»:
Թագաւորի-Աղջիկն այնտեղ՝ չըլըսելու ձեւ ըրաւ…:

Մընաց, օր մ՚ալ՝ Պըղտիկ Տըղուն՝ Բաղդասարի՛ն ապաչեց· —
— «Է՛յ Բաղդասա՛ր, Տըղա՛ս,-ըսաւ-, չէ՞ որ Դուն Իմ Զաւա՛կն ես…,
Որդի՛, եկի՛ր Ձիս արձըկէ՛ կապերէս, —
Երթանք՝ Քեզի Իմ Գանձերը ցուցընեմ…
*Իմ արքունի ամե՛ն բաներ՝ հանեմ Քեզի նըշա՛նց տամ *)…, —*
Որպէս զի վաղ՝ երբ Ես իյնամ ու մեռնիմ…՝
Դուն իմ տեղը նըստիս Երկրին Թագաւոր…:
Արի՛՝ Ձիս Թո՛ղ, երթանք Մեւ-Սա՛ր՝ միատեղ,
Վէրի-ոչխա՛ր, վէրի-տաւա՛ր կայ այնտեղ…,

---

*) Խօսքի իյնալ, Խօսքի, զրոյցի՝ բռնուիլ: *) Վէրի, Վայրի:
*) Նշանց տալ, Ցուցնել:

Ո՛րս ընենք հոն..., ճաշի՛ նըստինք Մեզ համար...,
Ուրախութիւն եւ գինեխո՛մ...՝ մինչեւ որ գայ Քու Եղբայր...»:

Շա՛տ աղաչանք ըրաւ Տըղուն, Բաղդասարի խելք գողցա՛...: —
Դէ՛, Բաղդասար դեռ պըզտիկ էր, խելքը չատ բան չէ՛ր կըտրեր, —
Խաբուեցաւ ու ցաւեցաւ Իր Հօր վըրայ,
Ելաւ կապերն արձըկե՛ց ու թո՛ղ տըւաւ...:

71. Կառապաս-Թագաւոր՝ Բաղդասարը Հարսնիքի կըկանչէ, Սար Կթսանի՝ կ'արբեցնէ, կբարկոծէ

Հ·8,9, Ջ·(Հ·8,9), ՁԿ·290,291,292,293,294,295,296,297,298,299, Կ·117, Կ·117՝Ջ·, Ե·478,479, ՁՍ·116,115,117,118,119,120,121, Ջ·՝Ե·65,66, Ե·65,66·

Մենեքերիմ-Թագաւորն էր, — ինչ կապերէն ելաւ դո՛ւրս՝
Գընաց ելաւ Իրեն Պալատ, Մեծաւորները հաւաքեց,
Եւ Անոնց հետ խորհուրդ ըրաւ ու ըսաւ. —
— «Եկէ՛ք տեսնեմ՝ Դուք ի՞նչ կ'ըսէք..., ի՞նչ ընենք...,
Մեծ Եղբայրը Սանասար՝
Ելեր՝ ու Իր Պապուն Քաղաքն է գացեր...,
Պըզտիկ Եղբայր Բաղդասա՛րը՝ մընացեր է մինաւոր...,
Մենք ի՞նչ ընենք՝ որ Այդ Տըղան կորուսանենք...:
Մէկ-մէկ չըլլայ՝ Մենք չե՛նք կըրնար երկուք մէկէն վերցըներ...)»:*

Մէջերնէն մէկ՝ վերցուց ըսաւ, = «Նախ Բաղդասա՛րն ըսպանենք...»:
Մէկն ալ ըսաւ, = «Մենք չե՛նք կըրնար Անիկ դիւրին ըսպանել...,
Դանչենք այստեղ, լա՛ւ խըմցընենք, գըլուխ քաշէ հին գինի...,
Տանինք ձըգենք վոսի մ' մէջ,
*Փուշ-մուշ *) ժողվենք՝ դիզենք վըրան, Թող մեռնի՛...»:*

Ելան երկու Մարդ ղըրկեցին՝ գացին Տըղուն՝ եւ ըսին. —
— «Է՛ Բաղդասա՛ր, Թագաւորը պիտի Իր լաճ պըսակէ,

---

*) Վերցնել, Անհետացնել, փճացնել, սպանել: *) Փուշ-մուշ, փուշ-փշախոտ, ցախ ու խոտ:

Կ'ըսէ՝ «Մինչեւ Բաղդասարն ալ Հարսանիքի մէջ չիպայ՝
Ես իմ Տըղան չե՛մ պըսակեր առանց Ան...». —
Դուն պէտք է դաս հարսնիքին...»:
= «Աղէ՛կ, կուգա՛մ...», — ըսաւ այնտեղ Բաղդասար:

Երբոր ելաւ պիտի երթար Անոնց հետ, —
Երէցն ըսաւ, — «Ա՛ Բաղդասա՛ր, լըսէ՛ Մեզ,
Քո Մեծ Եղբայր՝ Ինքն ալ հոս չէ՛, մի՛ երթար..., —
Քեզ կըտանին կ'ըսպանեն...»:

Բաղդասարը ականջ չըրա՛ւ, ոտքի ելաւ ու դընաց:

Կըռապաշտի-Թագաւո՛րն էր, — ի՛նչ ըրաւ. —
— «Եկէ՛ք,-ըսաւ Իր Մարդերուն-, ու գացէ՛ք,
Եօ՛թ ուղտաբեռ՝ եօ՛թը տարուան քացախ-գինի՛ բեռցուցէք,
Եօ՛թը տիկ ալ՝ եօ՛թը տարուան քա՛ղցր գինի, —
Առէ՛ք տարէ՛ք Ահ-Մահի-Մա՛ր *) հանեցէք,
Որ ես՝ լուսուն՝ Բաղդասա՛րը խաբեմ բերեմ գինեխում...,
Գինին քաշենք Իրեն դըլո՛ւխ, արբեցընենք՝ ըսպանե՛նք...»:

Մարդերն ելան՝ այնպէս ըրին չուռուչուռ,
Բաղդասարն ալ Հարսնիքի մէջ կանչեցին...:
Կըռապաշտի-Թագաւո՛րն էր, — քովը եկաւ՝ ի՛նչ ըսաւ. —
— «Ի՛ Բաղդասա՛ր, գիտե՞ս ի՛նչ կայ...», — ըսաւ Անոր ականջին:

= «Ի՞նչ կայ,-ըսաւ, խօսէ՛ նայիմ, Թագաւո՛ր»:
Ըսաւ, — «Ա՛յնպէս որպէս տեղ մ' եմ գըտեր..., ո՛ր...,
Վէրի-Եղնի՛կ, Այծ ու Ոչխա՛ր, այնտեղ եկեր լեցուե՛ր են...:
Վաղ հո՛ն երթանք, բըռնենք բերե՛նք այդ տեղ...»:
= «Երթա՛նք,-ըսաւ Բաղդասարն ալ-. Թող ըսածիդ պէ՞ս ըլլայ...»:

Մէկալ օրը, հետ լուսուն *),
Կըռապաշտի-Թագաւորն ու Իր Մարդերը՝
Ելան առին Պըղտիկ Տըղան Բաղդասար,
Հեծան Ամենք Իրենց Ձիանք *), Տունէն ելա՛ն ու գացին:
Ձըսե՞ս տարան Գետի մ' պըռուկ *), կանաչուտի մը ափին,

---

*) Հ.8՝ Ախմախոտ Սար, թուրքերէնով կընշանակէ՝ Տխմարի լեռ: *) Հետ լուսուն, Լուսադացին, արշալոյսին: *) Ձիաւք, Ձիեր: *) Պռուկ, Ափ, եզերք:

Թագաւորը՝ ի՛ր Մարդերով, ու Բաղդասար միասին. —
Ելասեցան հո՛ն, առին իրենց դիմեխո՛ւմ...: —
Դըրեր են հոն, եօ՛թը տիկով՝ եօ՛թը տարուան հի՛ն գինի.
Աչուշ գինին լեցուց խըմեց Թագաւորը,
Եօթը տարուան քացախ-գինին՝ տաշտերով՝
Լեցուց տըւաւ Բաղդասարին՝ ու խըմցո՛ւց...:
Մեծաւորներն իրենց կարգին, ա՛յս կողմէն ու ա՛յն կողմէն
Գինու բաժակ՝ իրենց ձեռքով՝ Բաղդասարի՛ն կըպարզեն:
Մարդ չի խըմեր, Ամենք կուտան Տըղային, —
Ան կըճայնէ՝ «Հազա՛ր քարին՝ Բաղդասար...*)»,
Ան կըճայնէ՝ «Հազա՛ր բարին՝ Բաղդասար...»:
Ամեն դեհէն՝ ա՛յնքան տըւին՝ խըմցուցին, —
Բաղդասարը հոն խաբեցին տըղու պէս,
Եօ՛թը տարուան գինին դըլո՛ւխս կապեցին...:

Բաղդասարն ալ՝ վերցուց պահէ մ՝ ու ըսաւ, —
— «Ձեր «Հազա՛ր»-ը կըտրի...,-ըսաւ, լըցէ՛ք տաշտեր՝ Ես խըմեմ»:

Ու Բաղդասար՝ ա՛յնքան խըմեց..., խըմե՛ց, խըմե՛ց, արբեցաւ, —
Որ գինին Իր դըլուխ բըռնեց, — անյուշ ինկաւ ու մընաց...:

Մըտածեցին՝ այդտեղ՝ ըսին Ամենքով
— «Ի՞նչպէս ընենք՝ որ Այս Տըղան մեռցընենք...»:
Թագաւորը կանչեց տեղէն՝ ու ըսաւ. —
= «Դէ՛, Գուրզերը առէ՛ք եկէ՛ք՝ հարուածե՛նք...»:
Մէուանները՝ = «Բերէ՛ք,-ըսին-, քարկոծե՛նք...»:

Ջաչքըշեցին՝ տարան անդին, ու ձըղեցին փոսի մ՝ մէջ...,
Փուշ-մուշ ու ցախ՝ բերին՝ վըրա՛ն լեցուցին.
Դարձան ապա՝ հողո՛վ-քարով քարկոծեցին, ըրին դէ՛ղ...:
Ա՛յնքան ցախ, փայտ, հող ու քարեր դիզեցին վրան հանեցին *),
Որ Այդ Տըղուն ինկած տեղը՝ եղաւ Բերդի՛ նըմանակ...:

Այս անգամ՝ կըտապաշտի-Թագաւորը ի՞նչ ըրաւ. —

---

*) Այսինքն՝ «Հազար բարին՝ Բաղդասարին՝ կըմաղթենք»:
*) Հաւնել, բարձրացնել, վեր հանել:

Հնծաւ Իր Զին, Գորդը բըռնեց Իրեն Ձեռ,
Գընա՛ց դընա՛ց՝ ասպարէզին դըլուխ հասաւ ու դարձաւ,
*Իր Զին լեցուց *), քըշե՛ց թափով, ու եկաւ,*
Իր Գորդ զարկաւ՝ որ Բաղդասարն ըսպանէ...:
Թագաւորն ու Իրեն Մարդերը, մէ՛կ ու մէ՛կ,
Ա՛ինքան զարկին Բաղդասարի չորս դեհէն,
Իրենց Գորդով ա՛ինքան փոսեր բացին Անոր չորս կողմեր՝
*Որ քառասո՛ւն նետ *) խորո՛ւնկ փոսե՛ր եղան աջէն ու ձախէն:*

Տըղան լինկած, քարուփայտի տակ թաղուած...,
Հրեշտակն եկեր՝ ընըսեր Իրեն Գըլխուն վրա՛յ, —
Ի՛նչ ատեն որ Անոնք Իրենց Գորդերն ուժով կըզարնեն՝
Ատծո՛ւ կամքով՝ մէ՛կ Գորդ անդամ Բաղդասարին չի՛ դըպիր..., —
Այդ Հրեշտակը՝ Իր Ձեռ կուտայ Գորդին ղէ՛մ՝
Կ՛ուզուէ ու կըղարձնէ՝ ուրի՛չ Սարի կըդըպի...:

Ան՝ Թող այդտեղ Իր վիճակին մէ՛չ մընայ, —
Մենք դառնանք ու ղըրոյցը տանք որոցմէ՞, —
Սահասարէն եւ Իր Մեծ-Հայր Պապ-Արքայէ՛ն ղըրոյց տանք...:

72. Սաճասար Իր Եղբօր Օգնութիւն Կըհասցի

ՁԿ·302,303,304,305,306,307,308,309,310, Ձ·՝ՁԿ·303,308,306,309, (ՁԿ·63),ՁՍ·122,123,124,125,Կ·118, Կ·118՝Ձ·, Ճ·66, Ձ·՝Ճ·66, (Ճ·66), Հ·8, Ձ·՝Հ·9, Ձ·՝Ն·479·

Առուր մէկին, Սահասար ու Պապ-Թագաւոր, Թագուհին,
Ելան դացին Արքունական-Պարտէզի՛ն մէջ պըտոյտի:
Պարտէզի՛ն մէջ, Աղբիւրի՛ն վրայ, երեք մէկտեղ ընըստա՛ծ են. —

Սահասարը տեսաւ՝ յանկա՛րծ՝ Ամպը կանչե՛ց երկինքէ մէջ..., —
Մէկէ՛ն եկաւ՝ կանգնեցա՛ւ...:

---

*) Զին լեցնել, Սահմարձակ վազքի մղել-թողուլ՝ ձին: *) Նետ, Նետաչափ, կանգնաչափ:

Պապ-թագաւորն ըսաւ, — «Որդի՛, Մանասա՛ր,
Ի՞նչ եղաւ ինձ..., յանկարծ ելար կանգնեցար...»:
= «Իմ Եղբայրը՝ վախնամ հատե՛ն *) է,-ըսաւ:
Կա՛մ հասնիմ՝ կա՛մ չըհասնիմ...»:
— «Ի՞նչպէս դիտցար Դուն...», — ըսաւ:
Ըսաւ, = «Զէ՞ Ամպ՝ երկինք կանչեց ու կ'երթա՛յ...»:
— «Է՛,-ըսաւ Պապ-թագաւոր-,
Ի՞նչպէս է որ՝ Մենք չե՛նք լսեր, Դուն մինակըդ կլսես...»:
= «Կո՛ *),-ըսաւ, Ես կլսեմ...
Մենք ծովեղէն ու հրեղէ՛ն ծընունդ ենք,
Մեղաց սերմի զաւակ չե՛նք..., —
Մենք կլսե՛նք՝ Աստուծով.
Դուք ամենքդըդ հողածի՛ն էք՝ չէ՛ք լսեր...»:

Երեկոյեան ժա՛մն էր, ելաւ ու դո՛ւրս դընաց նայեցա՛ւ,
Ըսաւ՝ «Նայիմ Իմ Եղբօր Աստղն ի՞նչպէս է՛...»:
Իրիշկաց *) որ՝ Բաղդատարի Աստղը՝ երկինք խաւա՛ր է...,
Ա՛լ լոյս չըկա՛յ Ամպի մէջ..., —
Նըշաղե՛ր է՝ ու մըթնե՛ր...:
Ձեռքն ալ երբոր Աղբիւրին դէմ կըլըսար՝
Տեսաւ որ Իր Եղբօր Մատնին՝ Մատին վըրայ սեւցե՛ր է...:
Սիրտն ելաւ...*): —
Դարձաւ եկաւ՝ մըտաւ Տո՛ւն,
Իր Պապիկին ըսաւ, — «Ա՛յ, վա՛յ..., չո՛ւտ Իմ Ձի՛ն...:
Մնացիք բարի՛, Ես պիտ' երթամ...,ըսաւ, Քեռհա՛յր ու Քեռմա՛յր.
Իմ Եղբայրը ձեռքէ գընա՛ց..., ա՛լ Իմ Եղբօր չե՛մ հասնիր....
Իմ աչքերը կուրցուցեր *) է Իմ Եղբայր....
Ես Իմ Եղբօր կամ դիակի՛ն հասնիմ եւ կա՛մ՝ դազաղի՛ն...»:
Պապ-թագաւոր ի՞նչ ըսաւ. —
= «Քո տուն չաւրի՛..., Քու Եղբայրը՝ հիմա հանդի՛ստ Ներսեր է՝
Իր Մօրը հետ՝ ու Երէցին, սեղանի չո՛ւրջ, դինեխո՛մ...,
Կա՛մ գըլուխը դըրեր Իր Մօր երկու ծըծի մէջ՝ քընե՛ր...:

---

*) Հատեն (Հասնելու՝ վրայ, մօտիկ), ճգնաժամի մէջ: *) Կո՛, Գո՛, Ահա՛, է՛հ: *) Իրիշկալ, Դառնալ-նայիլ: *) Սիրտն հլճել, Ծուռուիլ, սիրտը վեր ցատկել: *) Կուրցնել, Խաւարեցնել:

Դուն կա՛ց Մեր մօտ՝ Մենք խընդանա՛նք Քու տեսքով»:

Սանասարը չըհամբերեց...: Ա՛լ չըլըսեց Պապուն խօսք, —
Ցատկեց ելաւ, հրաժե՛շտ առաւ Քեռհօրէն ու Քեռմօրէն,
Վազեց ելաւ Քաղաքէն դո՛ւրս, կըրակ տըւաւ Քիւն Մա՛զ...,
*Քուռկիկ-Ջալալ հասա՛ւ Իրեն, բաշը *) բըռնեց ու ըսաւ. —*

*— «Մուրա՛տ Աստուած, մուրա՛տ *) Ձի...,*
Ձիս մինչեւ ե՞րբ կըհասցընես Իմ նպատ...»:
= «Մինչեւ Քու ոտ ասպանդակին մէ՛ջ դընես՝
Ու մէկալ ոտ՝ մեւս կողմը դարձընես...»:
— «Բերանդ կոտրի՛...,-ըսաւ Քիւն՝ Սանասար..
Իր դիակի՛ն՝ թէ՞ դազաղին հասնիմ ես...»:
*= «Աչքերդ խըփես *) ու բանա՛ս...», — ըսաւ Ձին:*

Սանասա՛ր էր, — Ձիուն դըլուխ համբուրեց,
Աչքը խըփեց ու բացաւ...՝

Քուռկիկ-Ջալալ՝ քառատո՛ւն աւուր ճամբա՛յ դընաց Հովի՛ պէս,
Գընաց իջաւ Սանասարի Մօր Քաղա՛քը՝ կանգնեցաւ...:
Սանասարն ալ՝ վազեց հասաւ Մօրը քո՛վ, --
Տեսաւ որ Մայր՝ մինակ աչխատող նըստո՛ր է...:

*Մայրը հարցուց, — «Որդի՛, ինչո՞ւ այդպէս վըրազ *) եկա՛ր Դուն»:*
= «Մարի՛,-ըսաւ, Իմ նպատ Աստղ մըթնե՛ր է...,
Ամպը՝ երկինք կըգտա՛ր ու կըկանչէ՛ր...,
Մարի՛, ո՞ւր է Բաղդասար...»:
— «Ապա, Որդի՛,-ըսաւ Մայրը-,
Ես չե՛մ գիտեր Ան ո՞ւր է...:
Այդ անհաւատ՝ խաբեց Տըղայ-Բաղդասար...,
Ի՛նչ որ ըրի՝ ինձ չըլըսե՛ց..., Թագաւորը արձըկե՛ց...,

Ուղարկեցին՝ գ'Ինքը տարան..., ա՛լ չե՛մ գիտեր՝ ի՞նչ ըրին...:
Այն օր ինչ Դուն ելար գացիր Կապուտ-Կող՝
Բաղդասարն ալ՝ աւելի տարան Հարանիքի, —
Մինչեւ այսօր չ'էկ՛ եկած...:

---

*) Բաշ, Վիզին մազերը, ցցուն: *) Մուրատ, Փափաք լրացնող, բաղձանքներուն հասցնող: *) Խփել, Գոցել, փակել: *) Վրազ, (վեր-ա-հաս) Շտապով:

Եկո՛ւր, Որդի՛, նըստի՛ քիչ մը հանդի՛ստ առ,
Քու հացը *) կե՛ր, Ձին ալ տանինք՝ զատ կապենք, —
Ապա կ՚երթաս՝ Դուն՝ կըգըտնես Բաղդասար...»:
= «Չէ՛, Մարի՛, չէ՛...,-ըսաւ Իրեն՝ Սանասար..
Հաց չե՛մ ուտեր..., Ձիէն ալ վար չե՛մ իջներ...,
Իմ Թուր, իմ Գորզ՝ բերէք ինձի՛..., Ես պէտք է որ չո՛ւտ երթամ...»:
Մայրը ըսաւ, — «Ես չե՛մ կըրնար բերել Քո Թո՛ւրն ու Քո Գուրզ...»:
= «Մարի՛,-ըսաւ, իմ Ձիու գլուխ Դուն բըռնի՛՝
Ես երթամ ու՝ չո՛ւտ մը բերեմ իմ Ձէնքեր...»:
Մայրը Ձիուն գլուխը բըռնեց. Սանասարն ալ՝ չուտ դարձա՛ւ,
Իր Ձին հեծաւ, քըշեց ինկաւ Քաղքին մէջ: —
Կա՛ն եկաւ ու Իր Եղբա՛յրը կըփընտռէ...:
Մ՚ընքան փընտռեց՝ չըդըտա՛ւ..., —
Քըշեց ելաւ Քաղաքէն դուրս՝ դէպ Սեւ-Սա՛ր:

73. Սանասար՝ Եղբայրը Կրգտնի Ու Կրտանի Ծուն

Ջ·, Ջ(ՋՍ·125), ՋՍ·126,128,129,130, Կ·118՝Ջ·, Կ·118, ՁԿ·310, 311,312,313,314,315, Հ·9, Ց·66, (Ե·479), Ե·479, Ջ·

Սանասարը՝ քըշեց ելաւ Սեւասա՛ր..., —
Նայեց որ լ՚ինչ..., — Հըսկա՛յ Մարդեր, ձիաւորա՛ծ *) ու Գորզո՛վ,
Կանգներ են հոն, հըրապարա՛կ, ու կարգով՝
Կ՚երթան-կուգան՝ Իրենց Գո՛րզը կըզարնեն..., —
Փոշու ա՛մպը կըպարճրանայ երկինքց հե՛ւ...,
Կ՚իջնէ գետին..., նորէն կ՚առնէ ու կ՚երթա՛յ..., —
Ու մէկ տե՛ղ մ՚ալ՝ ահագին ցա՛խ ու քա՛ր ու վա՛յտ են դիզած...:
Քիչ մը կեցա՛ւ, տեսաւ որ այդ փայտի Դէ՛զը որ հո՛ն է՝
Կըպարճրանա՛յ, կըցածրանա՛յ ինքիրմէ...:
Մէզեց *) ըսաւ, — «կա՛յ ու չըկայ՝ Իմ Եղբայրը այս Դէզին տա՛կ [պիտ՝ ըլլայ...»:
Ձիէն իջա՛ւ, դընաց ելաւ Դէզին գլուխ,
Այդ փուչե՛րն ու փայտի Խուրձեր նետեց դէ՛ն. —
Ըսաւ՝ վախնամ՝ ըսպանե՛ր են Իմ Եղբայրը...՝

---

*) Հաց, Հացկերոյթ, ճաշ: *) Ձիաւորած, Հեծեալ, ձիու վրայ:
*) Մէզել, Մտածել, խորհիլ:

Այս վուշերու տակ թաղե՛ր...»:

Մէկ-քանի ՝ո՛ւրճ մընաց՝ մինչեւ եղբօր մարմնին վրա՛յ իջնէր, —
*Տեսաւ որ թէ՝ Իր եղբա՛յրն ալ՝ ինչ *) Իր Շունչը կը հանէր՝*
Ուրճեր կ'ելլնեն՝ կըբարճրանա՛ն, կըցածնան..., —
«Աստուա՛ծ վըկայ,-ըսաւ Իր մէջ-, դեռ Իմ եղբայր չ'է՛ մեռած...,
*Ուրճերն ահա՛ իրար կ'առնեն *), կըշարժին...»:*

Առաւ Ուրճեր՝ անդի՛ն նետեց..., տեսաւ եղբայր քըրտներ է...,
*Պըտու՛ղ-պըտուղ *) քըրտինք կանգներ երեսին...: —*
Կանչեց ըսաւ, — «Եղբա՛յր,-ըսաւ-, ելիր վե՛ր...,
Աւիկ Դուն ի՞նչ վիճակի մէջ ես ինկեր...»:

Նայեց տեսաւ՝ որ Բաղդասար վէրաւոր չ'է՛, մինակ այնտեղ ինկած է.
*Ինքն ալ չո՛ւռ-չո՛ւռ՝ եղբօր ճակա՛ն ու սիրտ մաժե՛ց *) ու լացա՛ւ:*

Բաղդասարը իր եղբօր ձայն որ լըսեց՝
Ուշաբերաւ, դըլուխ վերցո՛ւց ու ելաւ վե՛ր՝ նըստեցաւ. —
*= «Հա՛յ *) Քո Տունը չ'աւերի՛...,-ըսաւ-, չըթողիր որ քընանամ...:*
Ես ի՞նչ անուշ քըներ էի՝ այս անգամ...»:
— «Հա՛յ տընաշէնն..., ելի՛ր Քո չո՛ւրջ նայէ՛,-ըսաւ Մանասար-.
Աղէ՛կ էիր քըներ Դուն...,
*Արբեցուցեր՝ դըրեր են Քեզ այդ փոսին մէ՛ջ, ու հողեր *)...,*
Իրենց Ձիանք հեծե՛ր են ու ծա՛նր Զորզեր կըզարնեն...,
Հալի՛ւ հասեր՝ Քեզ ազատե՛ր եմ մահէն...»:

Բաղդասարը վերցուց այնտեղ, — «Եղբա՛յր-,ըսաւ-, երնէկ Քէ՝
Դուն ալ այստեղ ըլլայիր ու տեսնէիր՝
Կըտապաշուխ-Թագաւորը՝ ի՞նչ պատուհա՛ր ըրաւ Ինձ..., —
Ամեն կողմէ՝ Գինու հեղե՛ղ..., Քէ՛ բաժակով՝ Քէ՛ տաշտով...,
Ան կըլեցնէր՝ կուտար կ'ըսէր՝ «Հազա՛ր բարին՝ Բաղդասա՛ր»,
Ա՛ն կըլեցնէր՝ «Հազա՛ր բարին Բաղդասա՛ր...»:

---

*) Ինչ, Ինչ ատեն որ, երբոր: *) Իրար առնել, երերալ, շարժիլ: *) Պտուղ-պտուղ, կայլակ-կայլակ, չիթ առ չիթ: *) Մաժիլ, Շփիլ, մարձիլ: *) Հա՛յ, է՛յ, հէ՛յ: *) Հողել, Հողի քարի տակ ծածկել, թաղել:

= «Տնա՛ւեր,-ըսաւ, Աչքերդ մէկ *) բա՛ց, նայինք Դուն ատ
[ի՞նչ կ'ըլլաս....
Դէ՛, բա՛ց տեսնե՛մ՝ Քու Աչքերդ...»:
Բաղդասարը բացաւ Աչքեր, նայեց Իր չորս կըշտըներ *),
Տեսաւ որ Իր կողուկուշտը՝ խորո՛ւնկ փոսեր են եղած, —
— «Եղբա՛յր,-ըսաւ, աղէ՛կ որ ես չե՛մ մեռեր...՝
Ա՛յսքան փայտի ու Քարի տակ՝ ինչ Իմ վըրայ կոլոնա՛ծ *)...»:

Սանասա՛րն էր, — հանեց եղբայր, վերցուց դըրաւ Ձիուն վրա՛յ,
Շո՛ւտ տարաւ Տո՛ւն, ու պառկեցուց տեղաց *) մէ՛ջ.
Եղբօր մէջը չունչ կա՛ր՝ ապա *)՝ Գինին Դըլուխ չէ՛ր Թողած:
«Վազեմ երթամ՝ կըռուի՛մ...,-ըսաւ Սանասար-,
Վախնամ թէ Իմ եղբայր մեռնի՝ լեզուին ձայնը ես չառնե՛մ..., —
Մընամ,-ըսաւ, Իմ եղբօր մօ՛տ, տեսնեմ վիճակն ի՞նչ կ'ըլլայ...՝
Նո՛ր եկնեմ ու՝ երթամ կըռի՛ւ Ատոնց հետ...»:

74. Բաղդասար Կ'սպսպի Եւ Կ'ուզէ Թօշամիներն Սպաննել

Կ·118,119, Կ·118, 119՝2, 2(2Կ·316), 2Կ·316,2Ս·133,131,2·

Մընա՛ց՝ մինչեւ լուսու դէմ *), —
Գինովութիւն եղբօր Գըլուխ երբ Թողուց, —
Բաղդասարը Աչքեր ճմռե՛ց, ըսթափեցա՛ւ ու նըստաւ,
Սանասարը հարցո՛ւց նորէն, — «Ե՛ղբայր, այդ Քեզ ի՞նչ ըրին,
Որ Դուն այդպէս անյուշ մնացեր էիր մէջ Մարին...»:
Բաղդասար Թէ, = «Ես անո՛ւշ մը քըներ էի՝ այս իմ վախուկ
[տեղիս մէջ...,
Դուն ինչո՞ւ Ձիս արթընցուցիր, անուշ քունէս հաներ *) վեր»:
— «Եղբայր,-ըսաւ Սանասար-,
Որ ես Քեզ վեր չըհանէի բերէի՝
Դուն այնտեղը կըմեռնէիր Դէղին տակ...»:
= «Ինչո՞ւ պիտի մեռնէի ես..., ու ո՞րտեղի Դէղին տակ...»:

---

*) Մէկ, Մէյ մը: *) Կշտըներ, Քովեր, բոլորտիք: *) Կոլոնած, Կուտակած, դիզած (colonne լտն.՝ columna): *) Տեղ, Անկողին, Կողինք: *) Ապա, Թէեւ, բայց եւ այնպէս...: Լուսու դէմ, Լուսաբացին, արշալոյսին, առաւուան դէմ: *) Հաներ, Հանեցիր:

— «Ապա՝ չէ՞ Քեզ դինովցուցեր՝ դըրեր էին փոսի մէջ,
Փուչերը, ցախերը, քարուվայրեր ղիղեր էին Քու վըրադ...,
Ես Քեզ հասայ, եւ այն փոսէն հանեցի՛...,—
Թէ չես հաւատար՝ երթանք այնտեղ Սեւասար,
Քարուվայրի, փուչերու Դէզ՝ ցո՛յց տամ Քեզ.—
Ո՞րտեղ Քո Գլուխ, ո՞րտեղ Ոտներդ դըրած էին այդ Մարդիկ»:

Բաղդասա՛րն էր,— այս անգամիս՝ դարձաւ եղբօր՝ լ՞ինչ ըսաւ.—
= «Որ այդպէս է՝ ելի՛ր երթա՛նք՝ Քաղաք-Քաղքով *) աւերենք...:
Տըղա՛յ, ո՞ւր է Այդ Անհաւատ...»,-ըսաւ եղբօր; բարկացած:
— «Ինչ մ՛ ըսպասէ՛ս ու կըտեսնե՛ս,-ըսաւ, այնտեղ՝ Սանասար...»:

75. Դահիճները կուգան Որ Երկու Ցղաճերուն Ու Մօրը Վիզ Կտրեն

Չ., Կ.111՝Չ., Կ.112՝Չ., Չ.

Չըրո՞յցն ո՛ւրկէ...,—
Կըտապաշտի Սենեքերիմ-Թագաւորէ՛ն տանք զըրոյց:—
Երկու-Տըղոց եւ Իրենց Մօր պահմանաժամ լըրացաւ,
Ելաւ ղըրկեց Իր Դահիճները՝ որ զարնել տայ Անոնց վիզ:

Մայրը՝ լացով՝ ըսա՛ւ Տէրուվ-Երէցին.—
— «Ե՛լ պատարա՛գ մ՛ ըրէ, Տէրտէ՛ր, ու Սըրբութի՛ւն *) տուր Մեզի.
Այդ Անօրէն՝ Մեր վիզերը այսօր կըտրե՛լ պիտի տայ...»:

Երէցն ելաւ՝ ժամ-Պատարա՛գ ըրաւ, Անոնք Մա՛ս *) առին:
Դահիճները եկան մըտան՝ որ տանին.—
Մանասար ու Բաղդասարը՝ նըստած՝ կ՛ըսեն-կը խընդան.
Իրենց Մայրը հոն կուլայ...;
Ներս որ մըտան՝ Դահիճներուն Մեծն ըսաւ,—
— «Այսօր Ձեր վիզ պիտի՝ կըտրենք...»:
= «Աղէ՛կ,-ըսաւ Մայրը լալով-, Իմ վիզ այսօր կըկըտրէ՛ք...,
Բայց Իմ Երկու-Տըղեկներուն՝ Ձեր ձեռ կ՛երթա՞յ *) որ զարնէք...»:

---

*) Քաղաք-Քաղքով, Ամբողջ քաղաքը՝ իր բնակիչներուն ու շէնքերովը: *) Սրբութիւն, Մուրբ հաղորդութիւն, մաս: *) Ձեռ երթալ, Սիրտ ընել, քաջութիւն ունենալ, ուզել-ընել:

Դահճապետ թէ, — «Մե՛ր ալ ձեռքը Գու Տըղոց վրայ չի՛ երթար…,
Բայց ի՞նչ ընենք…, թագաւորի հրամա՛ն է…»:

Մայրը լալով վերցուց ըսաւ, = «Քիչ մը կամա՛ց խօսեցէք…՝
Որ իմ անմեղ Տըղեկները չըվախնան…
Դուք ալ՝ քիչ մը՝ նըստեցէ՛ք ու հանդչեցէ՛ք…,
Իմ Տըղեկներ ուրախանան ու խաղան…»:
— «Ձէ՛, թա՛դուհի,-ըսաւ Դահիճ-, Մեզ արգիլուա՛ծ է նըստիլ·
Շո՛ւտ երթանք դո՛ւրս…, թէ չէ՝ այստեղ Ձեր վիղերը կըզարնենք,
Ձեր արիւնը գալառի մէ՛ջ կըթափի…»:
Պօռաց ըսաւ՝ «Շո՛ւտ ըրէք…»: —
Ձայնը եկաւ՝ Սանասարի ակո՛նէն լինկաւ, դուռ բացաւ,
Նայեց տեսաւ՝ մէկ-քանի Մարդ՝ դուռ կեցեր են, Թուրերով, —
— «Դուք ի՞նչ Մարդ էք…», — ըսաւ Անոնց՝ անխըռով:

Մայրը ծածուկ խընդրեց ըսաւ, — «Իմ Տըղայոց չըսէ՛ք թէ՝
«Թագաւորի հըրամանով՝ եկեր ենք Ձեր վիղ կըտրենք»…, —
Իմ Տըղաներ՝ գալատէն դո՛ւրս հանեցէք…,
Դահիճ մ՝ կենայ դըրան ա՛յն կողմ, մէկ՝ ա՛յն կողմ, —
Ձարնեն մէկէն՝ Իմ Տըղոց վիզ Թըռցընեն…,
Մէկը Մեւսի մահ չըտեսնէ ու վախնայ…: —
Ապա՝ առաջ՝ Ի՛մ վիզ զարկէք, Նո՛ր Իմ Երկու Տըղայոց…»:

Դահիճն ըսաւ, — «Դէ՛, ելէ՛ք որ՝ երթանք դո՛ւրս,
Ձեր արիւնը գալատին մէջ չըթափի…»:
— «Ո՞ւր պիտ՝ երթանք…, Մարէ՛…»,-ըսաւ Սանասար:
Ըսաւ, = «Որդի՛, դուրս պիտ՝ երթանք՝ պիտի դա՛նք…»:
— «Մարէ՛,-ըսաւ-, քա՛ն մը կա՛յ հոս…, Ինձ չըսես…, —
Մինչեւ այսօր՝ Դուն բըռնաւոր *) էիր ներս…,
Այսօր ի՞նչ կայ…՝ որ եկեր են՝ տանին Քեզ…»:

76. Սանասար՝ Դահիճապետը կ'սպանէ, Թագաւորը՝ Վախէն Ձայն Ձիհաներ

Հ·(Կ·112,113)·

Մայրը չուզեց Տըղեկներուն բան մ՝ ըսել…՝

*) Բռնաւոր, Բռնէ՝ վար դրուած, պահուած, կալանաւոր:

Սանասարը չըթողուց որ Մայրն երթայ· —
Ըսաւ, — «Մէկ բա՛ն կայ, անկասկած, որ Դուն ինձմէ չե՛ս ըսեր···»:
Մօր սըրտին ալ դըպա՛ւ այդտեղ···, ըսաւ, = «Ոըդի՛, ի՞նչ պահեմ,
Ճի՛շդ որ կ'ուզես՝ թագաւո՛րն է ղըրկեր Աստնք Մեր վըրայ,
Որ Իմ ու Ձեր վիզ կըտրեն···»:
— «Կըտրո՞ղն ո՛վ է որ···», — ըսաւ:
= «Այս Դահիճնե՛ր···», — ըսաւ Մայրը:

Սանասարը Դահճապետին մօտեցաւ,
Ու պօռալով՝ ըսաւ, — «Դո՞ւն ես որ Իմ վիզը պիտ՝ կըտրես···»:
Դահիճն ըսաւ, = «Թագաւո՛րն է հրամայեր՝
Որ Ձեր վիզը պիտ՝ կըտրենք···»:

Սանասա՛րն էր···, — ա՛լ այնտեղ՝
Այնպիսի՛ մէկ ապտա՛կ վահկցուց Դահճապետի երեսին՝
*Որ Գըլուխը Թը՛ռաւ գընաց···, մարմին մընաց՝ տեղ կայնուվ *)···:*

Այս որ տեսան Մէկալներ···՝
Թողին փախան, գացին ղո՛ւրս, —
Թագաւորին պատմեցին Թէ, — «Քո Տըղան···՝
Մէկ այնտեսա՛կ ապտակ զարկաւ Մեր Պետին՝
Գըլուխ Թըռաւ···, մարմին մընաց տեղնիտեղ···»:

Թագաւոր հոն չա՛տ բարկացաւ···, կանչեց Իրեն Զօրապետ, —
— «Ա՛ռ Քու Զօրքեր, գընա՛,-ըսաւ-, Այդ Տըղաները կոտորէ՛···»:
Զօրապետն ալ՝ Թէ, = «Թագաւո՛ր, Մենք Այնոց վրայ չե՛նք կըրնար·
Աղէկ ա՛ն է՝ կըռիւ չերթա՛նք՝ Քու Զօրքերն ալ ըսպանեն···: —
Անուշութեամբ կանչենք թերենք կըռքատան մէջ՝ զո՛հ ընենք···»:
Թագաւորը խորհեց տեսաւ՝ որ իրա՛ւի՝ ճար չկայ···,
Կըռիւ Իրեն վընա՛ս է···, —
— «Աղէ՛կ,-ըսաւ-, Մենք դործ չունի՛նք Անոնց հետ···»:

77. Ցոց Մայրը Խրատ Կուտայ՝ Թէ Ի՞նչ Պէտք Է Ըլլեն

Զ·, Ա·48, (Ա·48)·

Զըրո՞յցն ո՛ւրկէ, — ըըսաւ տանք Տըղաներու Մօր մօտէն: —

*) կայծուկ, կանդնած, կանգնած:

Ի՛սկ *) հասկըցաւ ու դիտցաւ՝
Որ կըռապաչո-թագաւորը պիտի մօրթէ՛ Իր Տըղաք,
Իրիկուն երբ Տուն եկան ու պառկեցան,
Գիշեր՝ Անոնց ականջնիվար սորվեցուց՝
Թէ, — «Առաւօտ՝ քունէն ելնէք կ՝երթաք դո՛ւրս,
Երբ Թագաւոր Ձեզ կըտանի՝ Իր կուռքերուն զոհելու՝
Ձեր Ջէնուղարդ Ձեր Հագուստին տա՛կ պահէք. —
Այն պահուն որ Թագաւորը Ձեզ կ՝ըսէ, —
«Եկէ՛ք Ինձ հետ՝ Իմ կուռքերուն ծո՛ւնկ չորքէք», —
Դուք ըսէ՛ք Թէ՝ «Մենք չե՛նք դիտեր..., Դուն անդամ մը ծունկ չորքէ՛,
Որ Մենք տեսնենք՝ ի՞նչպէս կ՝ընես, Մենք ալ սորվինք՝ ու ընե՛նք»։—
Դուք՝ այնատեն՝ ի՛նչ որ պէտք է...՝ ալ կ՝ընէք..., —
Մեզ Ամենքըս՝ Աւօրէնին ձեռքէն այնտեղ կ՝աղատէք...»։

78. Բաղդասար՝ Երազի Մէջ կըտեսնէ Մեծ-Կուռքը՝ Ձայնի Կերպարանքով

Զ·(Ը·19), Ը·19, Զ(Է·7)·

Այդ գիշերն ալ, երազի մէջ, Պըղտիկ Եղբայր՝ Բաղդասար՝
Մէկ ալ տեսաւ՝ Ջոջ-Կուռքն եղաւ՝ մէկ Այծի՛ մը օրինակ...,
Եկաւ կեցաւ դըլխուն վրայ՝ մըկմըկա՛ց ու մըկմըկա՛ց..., —
Ու մինչեւ լոյս՝ չըթողուց որ աչքը դոցէր՝ քընանար..., —
Նորէ՛ն-նորէն այդպէս ըրաւ, քըշեց մինչեւ լուսաբաց...։

Առաւօտուն՝ Մա՛յրն ու Եղբայր՝ նայեցան ու ի՞նչ տեսան. —
Դեղնուքի՛ւն է թափեր-ինկեր Բաղդասարի դէմքին վրայ...։ —
Պըղտիկ Եղբայր հիւա՛նդ է...։

Սանասարը հարցուց Եղբօր, — «Բա՛ղդասար,
Ի՞նչ եղաւ Քեզ..., հիւանդացար Դուն այդպէս..., —
Անքո՞ւն կացիր՝ Թէ՞ վախցար...»։

Բաղդասարն ալ՝ վերցուց պատմեց՝ Թէ ա՛յսպէս. —
= «Այս գիշերը՝ Ջոջ-Կուռք երբե՛ք չըթողուց որ քընանամ...,
Եղաւ Այծի՛ մ՚օրինակ...՝
Եկաւ կեցաւ դըլխուս վրայ, մինչե՛ւ առաւուն մըկմըկաց..., —

*) Իսկ, Իսկապէս, ստուգապէս։

*Զրթողուց որ՝ աչքերս գոցեմ ու կընքամ... *)»:*
Ապա դարձաւ՝ Մօրն ու եղբօր ի՞նչ ըսաւ, —
= «Ես ալ կ'երթա՛մ..., — կա՛մ թագաւոր Չխս կըզոհէ իր կուռքին,
Կա՛մ ես՝ գ'ինքը մատա՛ղ կ'ընեմ՝ Ի՛մ փոխան...»:
— «Որ այդպէս է,-ըսաւ եղբօր՝ Սանասար-,
Ես ալ՝ չէ՞ Ֆո Մեծ եղբայրն եմ..., մի՛ վախնար, —
Ելի՛ր երթանք Այդ անհաւատ թագաւորին դէմ կանգնի՛նք,
Թէ ուժ ունի՝ Մեզ թող այնտեղ մատա՛ղ ընէ Իր կուռքին...»:

79. Երկու Եղբայր Կ'երթան Հոգ-Թագաւորին

Չ· (Ս·145), Ս·146: Ց·20, (Ց·64)·Չ·՝Ա·48·

*Ելան՝ մէկտեղ՝ ու դէմ ըրին գացին մինչեւ Թագաւոր *):*
Թագաւորի աչք որ լինկաւ Սանասարին՝ Մեծ եղբօր, —
*Ճանչցաւ ու՝ —«Է՛յ մեռնիմ Ֆեզ, Մե՛ծ-Կուռք,-ըսաւ ուռելով—· *)*
Ինչպէ՛ս ալ Ֆու մէկալ Մատաղ քաշեցիր ու հո՛ս բերիր...»:
Ու դառնալով Սանասարին՝ ի՞նչ ըսաւ·—
— «Տըղա՛յ,-ըսաւ-, Դու չըդիտցա՞ր որ ո՛ւրտեղ ալ երթայիր՝
Իմ Ջո՛ջ-Կուռքը Ֆեզ կըքաշէր կըբերէր...: —
Պէ՛տք է երթանք՝ Իմ կուռքերուն երկըրպագէ՛ք Ինձի հետ...»:
Սանասարն ալ՝ Թէ, = «Թա՛գաւոր, իրա՛ւ ես...,
Ֆո Ջոջ-Կուռքը՝ չա՛տ զօրաւոր Կուռք է եղեր՝ խոկապէս...:
Գիշե՛րն անգամ՝ չէ՛ր Թողուր որ՝ Մենք Մեր տեղը Հանգչէինք...:
Մեզ տար Ֆեզ հե՛տ՝ երկրըպագե՛նք Կուռքերուն...»:

80. Թագաւոր՝ Սանասարն Ու Բաղդասարը Կ'առնէ Կ'երթայ Դէպ Կռաւուն

Ս·146, Է·6,406, Չ·՝Է·406, (Ե·532)·

Թագաւո՛րն էր, -Թուրը կապե՛ց, Տըղաքն առա՛ւ՝ ու գացին:
Գացին մինչեւ Ճամբուն կէս, —
Ֆա՛նէ Աւոնք կ'երթային՝
Այն Մեծ-Կուռքը Իրենց դէմէն կըվախէ՛ր...:

---

*) Կնքել, *փոքրիկ քուն մառնել*: *) Մինչեւ Թագաւոր, *Մինչեւ Թագաւորի մօտ*: *) Ուռելով, *Պարծենալու ձեւով*:

*Թագաւորը կանչեց Կուռքին, —«Է՞ր *) կըփախիս Մեր դէմէն...,*
Ես Այս Տըղաք բերեր եմ որ՝ Մատա՛ղ ընեմ Քու առաջ...»:

Կուռքի մէջէն ձա՛յն դուրս եկաւ՝ ու ըսաւ, —
= «Մորթէ՛ այդ տե՛ղ..., մի՛ բերե՛ր..., —
Ինձ՝ այդ տե՛ղ ալ՝ ընդունելի է Մատաղ....
Մօտ մի՛ բերեր Այդ Տըղաք..., —
*Ատոնց զօրը *) կուգայ ու Ձիս կըջըչէ՛...»:*

81. Թագաւորը՝ Սաճասարի Խորհուրդովը՝ Ժողովուրդը Կռաւուն Պըհրաւիրէ

Զ.՝Հ.406,6, Զ.՝Հ.7, Ս.146, (Ց.65), Ե.532, Զ՝(Ե.880,881).

Տըղաք այնտեղ լմացան որ Հայրը գ'Իրենք պիտ՝ մորթէ...:
Թագաւորը եկաւ բըռնեց Բաղդասար,
Դըրաւ գետին, ըսաւ, — «Տըղա՛յ, դէ՛ եկո՛ւր,
Երկըրպագէ՛ Մեծ-Կուռքին որ Քեզ մատղեմ..»:

Բաղդասարը պըղտիկ էր դեռ, խելքը բանի չէ՛ր հասներ,
Սանասարի խելք ամե՛ն բան կըկըտրէր, —
կանչեց ըսաւ, — «Այդ ի՞նչ կ'ընես..., Թագաւո՛ր...»:
Ըսաւ, = «Գէտք է՝ Զեզ երկո՛ւքդ ալ՝ Մատա՛ղ ընեմ Մեծ-Կուռքին»:

Սանասարն ալ՝ վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ. —
— «Տէ՛ր Թագաւոր, Մատաղ ըսած՝ Հարսնի՛ք է..., —
Հայր մ' իր Տըղոց Հարսանիքը չուքո՞վ կ'ընէ՝ թէ՞ դաղտնի...;
*Մենք ալ չէ՞ որ Արքայական-Տըղայ ենք... *), —*
Քեզ չի՛ վայլեր՝ որ Քու Տըղաք՝ այստեղ մինա՛կ մատաղես...»:
= «Հապա ի՞նչպէս կըվայլէ՞.՞.՞.»:

---

*) Է՞ր, Ինչո՞ւ: *) Զօր, Զօրութիւն (չունչի, նախուածքի, քաջութեան, համբաւի):

*) Բաղդասարէ՝ Խորենացիի հետեւեալ տողերուն հետ (Գ. Մեծ. 504, Վնտկ. 1827). — «Այլ երբեմն՝ ի մականակաւն խաղալն՝ երկիցս պատահեաց Շաւասպայ Աբծրունւոյ, զ'զնդակն հանել ի Շապհոյ: Եւ նորա ածեալ նմա մականաւն՝ ասէ, Ծանի՛ր զ'քեզ: Իսկ նորա պատասխանեալ, Թէ, Այո՛, ասէ, ցանայիմ եւ զիս արբայորդի՝ ի սերմանէ Սաճասարայ»:

— «Ինչ կըվայլէ, Տէ՛ր-Թագաւո՛ր,-պատասխանեց Սանասար-,
Որ Դուն՝ ի՛նչքան ժողովուրդ կայ Քաղքին մէջ՝
Կանչես բերես Կըռքարան, —
Գան ու տեսնեն՝ Պատուոյ Ջոհը՝ Ձո կուռքերուն, ու փա՛ռք տան...»:

Կըռապաշտ-Թագաւո՛րն էր, — չա՛տ հաւնեցաւ այս խօսքին,
Արքայական հրամա՛ն հանեց, կանչել տըւաւ Քաղքին մէջ, —
— «Քաղաք-Քաղքով, Գիւղ-Գիւղական՝ մի՛ահամուռ, Ամե՛ն Մարդ,
Ժողովին ու դան՝ մեծահանդէս՝ Թափին Դա՛շտ. —
Ես Իմ Երկու-Տըղաները պիտի մատղե՛մ հանդէսով.
Եկէ՛ք տեսէ՛ք, ու փա՛ռք տըւէք Կուռքերուն...»:

Ժողովուրդն էր, — հազար ու բիւր Մարդ Թափեցան հետհետին *),—
Ու լեցուեցան Հըրապարակ, Դա՛ր-Դա՛շտ ու Ձոր, մինչեւ Տո՛վ...,—
Ասե՛ղ Թալեն *)՝ չ՛ի՛նար դետին..., ա՛յնչափ շատ է Բազմութիւն:

88. Կուռքերը՝ Ոսկի Սայլերով Դէպի Զոհատեղ

Ջ·(ե·881)·

Թագաւորն ալ՝ ելաւ առաւ Իր Կուռքերը՝ մեծ ու փոքր, —
Դըրաւ Ոսկի-Սայլերու վրայ, լըծած ձերմակ-եզներով,
Տարան դըրին Դաշտի գլուխ՝ սարի նըման բա՛րձր տեղ,
Մարդ ղըրկեցին՝ որ այդ Երկու-Եղբայրները մ'հասին՝
Բերեն դընեն Սայլերուն տակ, ակները *) տան վիզերուն,
Վիզը կըտրի՝ արիւն ցայտէ, Մատա՛ղ ըլլան Մեծ-Կուռքին...:

Սանասա՛րն էր, — առաւ Եղբայր՝ Բաղդասար,
Քըշե՛ց գընաց՝ այդ Բազմութեան մէջտեղէն,
Գընաց հասաւ՝ Թագաւորին առջե՛ւն ելաւ կանգնեցա՛ւ: —

89. Սանասար՝ Թագաւորէն Կըխնդրէ Որ Կուռքերուն Սրկրպագելու Կերպն Իրեն Ցուցնէ

Ջ·՝ը·20, Ջ·՝Հ·7, Ջ(ե·882), Ս·146, Ջ·՝Ս·146·

Թագաւորը պօռաց ըսաւ, — «Բերէք մէյմէկ Զոջ Տըղայ *)՝
Որ Զո՛ջ-Կուռքին Մատա՛ղ ընենք հոս, հիմա...»:

---

*) Հետեւորդ, Նոյնհետաքրքրուած, անյապաղ, խմբով: *) Թալեղ, Զգեղ:
*) Ակ, Սայլի անիւ (հաստ կոճղով եւ ծանր): *) Զոջ տղայ, Աշնուազարմ, երեւելի ընտանիքէ զաւակ:

Բերին մէյմէկ իչխանազուն Մեծի՛ Տըղայ՝ որ գոհեն, —
Թագաւո՛րն էր, — գարձաւ դէպի Սանասարը եւ ըսաւ. —
*— «Դէ՛ *), Ջոջ-կուռքին երկիրպագէ՛· կո՛ւզ եղիր *) որ ֆեզ*
[մառղեմ...»:

= «Տէ՛ր Թագաւոր,-ըսաւ Իրեն, Սանասար-.
Մարդ՝ իր Մառաղ՝ սուրբի՛ դուռը կըմառաղէ՝ թէ՛ սար տեղ...:
Թէ ֆո կուռքեր չաս կըսիրես՝ ըսէ՛ Ինձ, —
ֆո կուռքերը կըգարա՛նն են՝ թէ՛ ա՛յտեղ...»:
— «Իրաւի՛, ֆու խօ՛սքն է,-ըսաւ Թագաւոր-.
Եվի՛ր երթանք կըտատուն...»:

Առաւ Տըղան, ելան գացին՝ մէկտեղ մըտան կըգարուն: —
Սանասարը գարձաւ այնտեղ ի՛նչ ըսաւ. —
*= «Աբօ՛ *),-ըսաւ-, չէ՛ Դու դիտես, որ Մենք գացինք՝ ման եկանք,*
Մենք տակաւին պըղտի՛կ էինք այն ատեն,
Չէինք դիտեր ֆո Մեծ-կուռքի զօրութիւն...
Մինչեւ այսօր՝ դեռ չենք պիտեր՝ իրաւէն՝
Ի՛նչպէս պէտք է երկրպագել կուռքերուն...: —
Դէ՛, Դուն արի՛ կըղուի՛ր առջեւ, երկրպագէ՛ ֆո կուռքին,
Նայիմ տեսնեմ՝ թէ Դուն ի՛նչպէս կըկըղուիս,
ֆեզմէ սորվիմ՝ ե՛ս ալ ընեմ ֆեզի պէս...»:
Թագաւոր՝ թէ, — «Այսպէ՛ս, Տը՛ղայ...», — ու կըղուեցաւ դէպ
[դեսին:

84. Սանասար՝ կըբռնէ կռապաշտի-Թագաւորը՝ կըզարնէ Ամենայոր Դեհին՝ Ու Ջառասուն Նեռ՝ Դիւեցի Ցակ կըտանի

Ս·147՝Զ·, Զ(Ս·147), Զ·՝Ա·48, (Ա· 48), Հ·406,7, Զ·՝ Հ·7, Զ(Հ·406), (Ց·20,65,66)Զ·, ԶՍ·127,131,132, (Լ·10).

Տըղան ըսաւ, = «Աբօ՛, ֆո կուռք ի՛նչ զօրաւոր կուռք է որ...՝
*Երբ կըղուեցար երկիրպագիր՝ իմ աչքերը մըթընա՛ց... *), —*
Ես չըտեսա՛յ՝ ի՛նչպէս ըրիր՝ Ես ալ ֆեզ պէ՛ս ընէի...:
[Չէ չըհասա՛ւ իր զա՛րկը տար՝ այդ առաջի՛ն անգամէն.
Իր Շապիկին կոճակները չարձակուեցա՛ն առեն]:

---

*) Դէ՛, Դէ՛հ, օ՛ն: *) Կուզ ըլլալ, Ծռիլ դէպի դետին: *) Աբօ՛, Հա՛յր, Հայրի՛կ: *) Մթնոտալ, Մթնիլ, մչուշտիլ, տես երեսալ(աչքին):

Աբօ՛,-ըսաւ, Աբօ՛, հէ՛ղ մ՚ալ երկէրպագէ՛ Քո կուռքին,
Նայիմ տեսնեմ ի՞նչպէս կ՚ընես՝ ե՛ս ալ ընեմ Քեզի պէս...»:

*Ու հէ՛ղ մըն ալ՝ երբոր կըճաւ *) Սենեքերի՛մ-Թագաւոր,*
*Այն ժամանակ որ չոքերը *) տըւաւ գետին, ծըռեցաւ,*
Որ Իր կուռքը համբուրէր՝
Սանասարը կանչեց բոլոր Իր ուժով. —
— «Հա՛ցն ու Գինին, Տէ՛ր-կենդանին...,
Է՛ր ըստեղծող Տէ՛ր-Աստուած...,
Դու ստեղծեր ես՝ չըկորուսե՞ս Դու Քո տըւած լո՛ւս-հոգին...»:—

*Եւ աքո՛ւց *) մը զարկաւ այնտեղ, մէկ թափով...՝*
Գետին կըզուած Թագաւորի յետոյքին...՝
*Որ՝ Իր վըրայ՝ երե՛ք անգամ չալապատիկ *) չո՛ւռ գալով՝*
Գըլորուեցաւ՝ մէջ տախտի՛ն..., —
Ե՛ւ-ե՛տ գընաց՝ կըռքարանէն դո՛ւրս ինկաւ...:
Բաղդասարն ալ՝ վազեց գընաց որ մեծ քար մը ձեռք ձըգէ,
Զարնէ կըռոց-Թագաւորի գըլուխին,
Ու փըշըրտէ..., ընէ Իր տեղ չանաստակ..., —
Սանասա՛րն էր, — հասաւ բըռնե՛ց Թագաւոր,
*Բըռնելո՛ւն պէս...՝ վերցուց զարկաւ՝ ամբռնաչոր *) պի՛նդ գետին,*
*Ու քառասո՛ւն նետ *) մըտցո՛ւց տարաւ գետնի տակ...:*

Բաղդասարը դարձաւ եկաւ՝ Գորգի նըման Քար մը ձեռ, —
— «Ե՛ղբայր,-ըսաւ Սանասարին-, ի՞նչ եղաւ Այդ Անհոգին...»:
Սանասար Թէ, = «Թուէն բըռներ՝ ու վերցուցեր զարկե՛ր եմ,
*Քառասո՛ւն նետ՝ ամբռնաչոր գետինի տա՛կն է գացեր...»: *)*

---

*) Կռնիլ, կուճ գալ, ծռիլ: *) Ձոխեր, Ծունկեր: *) Աքուց, Ոտքի հարուած, աքացի: *) Շալապատիկ, Թաւալգլոր:

*) Ամբռնաչոր, Ամրան բարկ արեւին տակ չորցած, խի՛ստ կարծրացած (գետին): *) Նետ, Մէկ նետի չափ, կանգնաչափ: *) Այս գերմարդկային ուժի գործը՝ կատարուած Զոհի Հանդէսին ներկայ անհամար բազմութեան աչքին առաջ՝ անկասկած որ բերնէ բերան պիտի տարածուէր հասնէր երկրէ երկիր, աշխարհէ աշխարհ: Աւտր ապացոյց՝ Պղնձէ-Քաղքի ճամբուն վրայ՝ Սանասարի հանդիպած Գետ-Ծմողին, եօթ Փուռի Հաց Ուտողին եւ Քամիէն Արագ Վազողին զարմացական խօսքերը: Տեսնել Հատ. 127-129:

85. Սանասար Ու Բաղդասար՝ Կուռիերը Կրփօրեն Ու Զօրքը Կբջարդեն

U·147, 6·20,65, ՉԿ·316,317, ՉU·134, (Ն·479), Կ·119, (Լ·10), Հ·7·

Սանասա՛րն էր, —
Ա՛լ այս անգամ՝ առաւ Իր Դօրգ՝ ու ինկա՛ւ մէջ կուռքերուն···, —
Զարկաւ ջարդեց ու կոտրտեց, փըշրե՛ց ամեն՝ փըռեց հոն···: —
— «Ելի՛ր,-ըսաւ-, Բաղդասա՛ր···,
*Քաղաքին մէկ ճօթէն *) Դո՛ւն զարկ, ես ալ մէ՛կ, —*
Մարդո՛ւ հասնիս, Տաւրի՛ հասնիս՝ թէ կատուի, հաւասար,
Ինչ ալ որ Մեր ղէմը գայ՝
Ջարնե՛նք, փըռե՛նք, կոտորե՛նք···, —
Կըտապա՛չտ են Ամենքն ալ···,
Մէ՛կ չըթողնենք ողջ մընայ···»:

*Ելան տըւին *) այդ Կըտապաչտ-Քաղքին վրա՛յ···: —*
Բաղդասարը ըսաւ, — «Եղբա՛յր, Դուն ինձմէ չա՛տ ուժեղ ես,
Քո թուրն ի՛նձ տուր՝ ես կըտըրտեմ ու բըրդեմ, —
Դուն Քու Գօրգով զա՛րկ տըրորէ՛՝ լմընցո՛ւր···:—
Միայն, ե՛ղբայր, ըզգո՛ւշ եղիր, ո՛ր կողմը որ ես կ՛երթամ՝
Դուն այն կողմը մի՛ զարներ, —
Մինչեւ որ ես դուրս գամ՝ ապա՛ զա՛րկ այն դէհ···»:

Սանասարն ալ՝ կանչե՛ց Աստուած՝ ու տըւա՛ւ այդ Զօրքին մէջ···,—
*Մէկ-երկու ղէր *) գընաց-եկաւ՝ այնպէ՛ս բըրդեց, կոտորեց···՝*
*Ինչ *) ձին կըտրէ իր գարին···: —*
Ո՛րը ինքն է կըջարդէ,
Որն ալ Իր Ձին՝ Քուռկիկ-Ջալալ՝ ոտքերուն տակ կո՛խ կուտայ,—
Ո՛րը վախի···, ո՛ր ջարդըւի···, ո՛ր մընայ··,:

*Մէկ եղբայրը մէկ կուչտէն *),*
Ու մէկ եղբայր՝ մէ՛կ կըչտէն, —
Աւելն բըրդե՛լ այդ Կըտապաչտ Մարդիկներ···:
Է՛գ ու որձը, Շո՛ւն ու կատուն, Մա՛րդ-մարդու ցեղ չըթողին, —
Ամե՛նը մէկ՝ կըտրեցին ու բըրդեցին···:

---

*) Ձոք, Մայր: *) Տալ, Ցարձակիլ, խուժել, զրոհ տալ: *) Դիք, Հեղ, անգամ: *) Ինչ, Ինչպէս (որ): *) Կուշտ, Գով, կողմ:

86. Սաճասար՝ Ու Բաղդասար՝ Աչխարճ Արիւճած՝ Իրարու Դէմ Կուգան

Կ·119, 8·78, (Կ·6,7), Հ·13, 2·

Այդ կերպ զարկին՝ երկու-եղբայր՝ դէմ-դէմի, —
Մուխն այդ Քաղքէն ու Տուներէն կըտրեցին···:
Մ՛ընքան անթիւ Զօրք ջարդեցին, փըռեցին՝
Արիւն ելաւ՝ Դիակները քըշեց տարաւ յորդի պէս···:

Ան՝ ա՛յն կողմէն զարկաւ կըտրեց, Բաղդասարն ալ՝ ա՛յն կողմէն,
Երկուքն եկան, եկան Հասան Իրարու,
Մարդ չըմընաց, կոտորուեցան Ամե՛նքն ալ:

Երկուսին ալ աչքեր կարմրեր, այնպէ՛ս արիւն էր լեցուեր՝
Որ ա՛լ Իրար չըճանչըցան այդ մութին,
Գիչերուան մէջ՝ վաթթըռեցան մէկմէկու,
Իրա՛ր պիտի ըսպաննեն···: —

Ուժ չըյաղթեց որ Մէկ Միուս ըսպաններ,
Նոր ճանչըցան թէ եղբայր են Իրարու···:

87. Ժողովուրդն Ու Գաղափարքի՝ Սաճասարի Հրաւէրին Վրայ՝ Անոր Աստուածը Կրնանչնաւ Եւ Սաճասար Իրենց Թագաւոր Կ'ընտրեն

8·20, 2·՝8·65,20, Լ·10, 2՝Լ·10·

Զօրք ջարդեցին ելան դո՛ւրս. —
Սանասարը կանչեց ըսաւ Քաղքցոց, —
— «Ով որ՝ Ձեր մէջ՝ Իմ Աստուածը կըպաչտէ՝
Թող դայ այստեղ՝ Թուրիս տակէն Թող անցնի···»:

Քաղաք-քաղքով՝ այնտեղ եկան Քափեցան·
Եկան բոլո՛ր այդ Քաղաքի Ժողովուրդ, —
Իրենք զ՝Իրենք Սանասարի Ձիուն ո՛տը Ճըղեցին, —
Ըսին Թէ, = «Դուն որ Աստուած ո՛ր կըպաչտես՝
Մենք ալ պաչտենք ա՛յն Աստուած···,
Մեր հոգիները ազատեցի՛ր Այդ Գաղանին ճանկերէն···»:

Ու Սանասարն ընդունեցին Իրենց Երկրին Թագաւոր:

88. Սաճատար՝ Թագաւորին Գլուխն Իր Մօր Կբսանի

Կ·119, (Կ·119)117, (Ց·66,20), Զ(Հ·406), Զ(Լ·10), (Լ·10), Ս·147, (Հ·7), Հ·406,9·

Դարձան եկան Իրենց Մօր մօտ, եւ պատմեցին ամեն բան: —
Սանասարն ալ ի՞նչ ըրաւ, —
Ի՛նչ ատեն որ՝ կըռապաշտի-Թագաւորը ըսպանեց՝
Անոր Գըլուխ քաշեց կըտրեց գետինէն,
Ու կուռքերուն Արծաթները իր Հագուստին դո՛ղ լեցուց՝
Առաւ բերաւ՝ տըւաւ իր Մօր եւ ըսաւ. —
— «Մարէ՛, Առնիք զա՛րդ ըրէ Քեզ՝ ու պահէ՛...»:

Մայրը վերցուց, = «Որդի՛,-ըսաւ, Այն կըռապաշտն ի՛նչ ըրիք...»:
— «Մարէ՛,-ըսաւ, Ան կ՛ուզէր Մեզ Մատա՛ղ ընէր Իր կուռքին՝
Ես բըռնեցի՝ վերցուցի գ՛ինք՝ զարկի տարայ գետնի տակ..., —
Ու Քեզի ալ ընձա՛յ բերի՝ ուսէն կըտրած Իր Գըլուխ...»:

Մայր՝ կըզուեցաւ քիթքերնի վրայ, երկըրպագեց ու ըսաւ. —
— «Գոհանա՛մ Քեզ, երկնի-երկրի Ըստեղծող...,
*Գա՛յ որ... *), Մեզ ալ՝ ազա՛տ ըրիր Բըռնակալին ձեռքերէն...:*
Ապրի՛ք,-ըսաւ, Սանասա՛ր ու Բաղդասա՛ր,
Զոյգ աչքիս լո՛յս Զաւակներս...»:
Ան ալ եկաւ՝ բերաւ պատուեց Իր Տըղաք,
Սանասարը՝ Արեւելոց-Թագաւորի Աղջկան հետ նըշանեց,
Դըրաւ երկրի Գահին վրայ՝ Անոր «Հօր» տեղ Թագաւոր:

89. Սաճատար Ու Բաղդասար՝ Իմաց Կուտան Իրենց Մեծ-Հօր Կապուտ-Կողմ...

Չկ·320,321,Չ·

Ելան ապա՝ իմաց տըւին Իրենց Մեծ-Հօր, Կապուտ-Կողմ, —
Թէ՝ «Մենք այստեղ՝ Կըռապաշտի-Թագաւորն ու Իր Զօրքեր՝
Ամեն մէկուեղ ըսպաներ ենք, կոտորեր ենք ու յաղթեր...:
Որո՛ւմ որ ինչք, ապրանք պէտք է՝ Թող գայ տանի իր համար»:

Քաղաքացիք եկան գացին ասարի, —

---

*) Գա՛յ որ..., Վերջապէ՛ս..., Հազա՛ր փառք քեզի որ..,:

Կըռապաշտի-Թագաւորի հողերէն՝
Ի՛նչ կար-չկար՝ պիտանի՝
Քաչեցին ու առին բերին՝ Իրենց Տուն, —
Մ՛յղքան տարուան Իրենց Տուրքի փոխարէն...:

Ը. ՀԱՑՐԵՆԻ ԵՐԿՐԻՆ ՑՈՒՇԵՐՈՎԸ

90. Լուսիկ-Թագուհին Իր Հայրենի Երկրին Ցուցերովը

Չ. եւ «Սասուն». *)

Անցաւ ժուկ մ՛ ու ժամանակ մ՛...: —
Տերեւաթափ ու Աչուն.
Զիւնը ծածկեց Արար-Աչխարհ,
Հաւք ու Մաղիկ մըտան քուն:

Զիւնհալ ինկաւ, —
*Ու «Մարտի վեց՝ Զիւնը եղաւ Զիւնին ցեց» *):*
Քիչ մ՛ալ՝ ահա՝ «Մարտի քըսան՝
Գարնան նըշան» աւետեց:: —

*Արար-Աչխարհ գարնահոտաւ *),*
Մարդ ու Տաւար՝ Հող հերկե՛ց, —
Հողին հոտով՝ Թոք ու ոտնդը լիացաւ...:

Դէ՛հ, բոլո՛րս ալ՝ Հողածի՛ն ենք. —
*Ըստիր *) Չաւակ՝ Մեր Հող-մօր *).*
Ո՞ր Չաւակն է՝ ու ո՞ր Հողին՝
Որ դիմանայ, չըկարօտնայ Իր Ողրան: —

Հողէն խըլուած, բըռնի տարած փափո՛ւկ կիր, —
*Երկուտրեակի կուսմայր *) Լուսի՛կ-Թագուհին՝*
Ինքն ալ՝ երբէ՛ն կարօտ ունէր Իր Հողմօր...:

---

*) «Սասուն» դրքոյկ՝ Տոմարչէկի: *) Այսինքն՝ ձիւնը հալեցուց ձիւնը, հալն սկսաւ սիլ՝ ձիւն ը՛ձիւն մաչեցուց, կերաւ, ինչպէս ցեցը՝ բրդեղէնը կ՛ուտէ: *) Գարնահոտիլ, Գարնան հոտով՝ լեցուիլ, արբչիլ: *) Ըստիր, ստիր, Հարազատ (զաւակ): *) Հողմայր, Հողը՝ որ ամենուս ծնող-մայրն է. Մայր-Հող, հայրենիք, երկիր: *) կուսմայր, կուսամայր, մայր՝ որ կոյս է:

«Քար քաշիկ *), աղքամաշիկ *), ու յուչի՛կ»՝
Քանի՛ Ամառ, քանի՛ Գարուն էր սահեր...: —

Ամեն Գարնան, ամեն Ամրան,
Կամ Աշունին ու Ձմրան՝
Ինչպէ՛ս Իրեն աչքին դէմ ու մըտքին մէջ՝
Եղանակէ եղանակ՝
Արեւին հետ բացուեր էին՝ ու արեւին հետ դոցուեր,
Հայրենիքին քաղցրը յուշեր՝ Մօրը չունչին տակ սահած...: —

— Կըյիշէր Իր Հօր-Հէրանին *)՝ ու կըկարծէր Թէ հո՛ն էր: —

Երբ Իր Կատուն՝ Հանդարտօրէն՝ վերայ-դըլուխ կըլիզէր՝
Կըմըրմընջէր, — «Հի՛ւր պիտի գայ, կ'ըսէինք Մենք, Տանը մէջ»:
Իսկ երբ լըզէր մըռմըռալով՝ «Թըշնամի են եկողները»:

Դուրս կընայէր Պատըշգամէն՝ Արքայական-Պալատին. —
Երբ կըտեսնէր որ Տաւերուն տերեւները կըշարժին,
Քամի չըկայ, օդը տաք է, — «Նըշանակ է Անձրեւի»:

Կա՛մ Թէ Ամպեր արագ-արագ՝ դէպ հարա՛ւը հոդմաւար,
Ջուր՝ հիւսիսէ՛ն են խըմեր...՝
«Անձրե՛ւ պիտի գայ, անկասկած»:

Իսկ երբ տեսնէր՝ Ծիծեռնակներ վերի՛ն-վերի՛ն կըթըռչին՝
Կըյիշէր որ՝ «Օդի պարզա՛ն է նըշան»:
Բայց Թէ վարէն՝ սարսափահար՝ Թըռչըտին չորս-կողմէն՝
«Շատ վերահաս Փոթորիկի՛ նըշան էր»:

Պարտէզին մէջ պըտոյտ ելած, Նաժիշտներուն հետ մէկտեղ՝
Երբ կըտեսնէր՝ Տուղտի-Մաղիկ *) իր բաժակը կըդոցէ՝
Տո՛ւն կըդառնար. — «Կարկո՛ւտ գալու նըշան է»:

Կա՛մ Թէ տեսնէր՝ Հաւնոցին մէջ՝ որ Հաւերը չո՛ւտ կ'ուտեն,
Կա՛մ Մեղուներ՝ փեթակէն դուրս չեն ելներ,
Կով ու Եզը՝ վիզ երկարած՝ օդին մէջ կըհոտոտան, —

---

*) Քար Քաշիկ, Մանր քար՝ քաշելու, կրելու չափ դժուար: *) Աղքամաշիկ, Աղիքները մաշեցնող, երկար տեւող: *) Հօր-Հէրանի, Հայրենիք եւ անոր պարագաներ: *) Տուղտ, Malva, Mauve.

Այս ամենը՝ «Անձրե՛ւ դալու նըշան է»։

Իսկ երբ Ձիեր՝ ուռնդը պարզած՝ երկիւղալի խըրխընջան՝
«Փոթորիկի ու կարկուտի՛ նըշան է»։

Որոտմունքը՝ Սատանային սարսափահար դոչի՛ւնն է՝
Գաբրիէլեան կայծակ-Թուրին երկիւղէն»։

*Մըհնելոյղէն՝ Ծուխը երբոր չէ՛ր բարձրանար դէպի վեր *)՝*
«Մաղմաղ Անձրեւ» կա՛մ «Փոթորիկ է» կ՚ըսէր։

Երբոր Անձրեւ չափն անցունէր՝ մէկ տարի, —
*«Հաչերկաթը *) կըճըզէ՛ինք Անձրեւին տակ՝ որ դադրի»։*

Իսկ երբ Անձրեւ՝ ժըլա՛տ ըլլար, երաշտութիւն երկարէր,
*Երկնից սիրտը պըղընձացած *)՝ կաթիլ մը Ջուր չըթափէր՝*
Կ՚ըսէին թէ՝ «Նոր մեռելի մ՚ դըլուխ տարէ՛ք՝ թաղեցէ՛ք
Աւելի մը եղը, Գետի բերան, եւ կա՛մ Թուխի մը տակին, —
Երկնից Դուռները †) այդպէս՝ չուռո՛վ կըբացուին,
Ու Անձրեւը առա՛տ կ՚իջնէ Արտերուն»։

Եւ կա՛մ՝ Ւ՛նչպէս, Տունէ-Տուն, Թաղէ-Թաղ, Գարունին՝
*Խումբ-խումբ Տըղաք՝ երգէ-երգան՝ Հունձկուլուլու *) կ՚ընէին...։*

«Արեւ-Լուսին՝ Երկնից Դուռնե՛րն †) են բարեբեր», սորվեցանք.
Ու «Միածնա-Անձրեւահաս՝ Աստծու-Գօտին եօթներանգ»։
«Անոր տակէն անցնող Տըղան՝ Արեւ-Աղջի՛կ կըդառնայ,
*Իսկ Աղջիկը, իրեն կարդին, երիտասարդ քա՛ջ Տըղայ» *)։*

Ու դեռ՝ Ւ՛նչպէս, Աշնան հովին, տարմադընաց կըտունկներ՝
*Գարնան չունչով երբ դառնային՝ — Ինքը կարօ՛տ *) կընայէր, —*

---

*) Համեմատել՝ «Մ՚ տայր լինճ գ՚ծուխ ծխանի...» Ռրատչէսեան աւազանքին հետ։ *) Խաչերկաթ, Թոնիրի բերնին դրուելիք խաչաձեւ երկաթ գործիք։ *) Պղնձացած, Պղինձի պէս կարմրած, պղընձացող ամպերով ծածկուած։ †) Երկնից տահանքներ, անձրեւաբեր ակներ։ *) Հունձկուլուլու, Աւելի մը վրայ քուրջ ձգած՝ իբր հարս դուռէ-դուռ կը պտոյտներ, երգելով՝ «Հունձկուլուլուի Երգը»։ Տես-նել իմ Խոշխորհ։ *) Համեմատել Պղնձէ-Քաղքի մէջ՝ Սանասարի հանդիպած Ալեւորին հսկած Երեք Աղբիւրներուն մէջ Նետուողին կերպարանափոխութեան պատկերին հետ։ *) Կարօ՛տ, կարօտով։

Հայրենիքէն՝ նո՛րինորոյ՝ քաղցըր լուրե՛ր կըհայցէր…։
Իրաւունքո՛վ եւ օրէնքո՛վ՝ քանի՛-քանի՛ անգամներ, —
Իր չի՛ք էրիկ-թագաւորէն արտօնութիւն ուղեր էր՝
*Որ «ղարճ» երթայ *) Իր Մըննողքին, Մըննավայրին ու ցեղին,*
Ամեն անգամ մէյմէկ ձեւով՝ յետաձըգած էր տարին…։

* * *

Այսպէս ահա, ամե՛ն տարի, Մըննավայրին յուշերով, —
Գարնան նորածիլ թեւերուն հետ՝ Մինեոնակին վերադարձ,
*Լըծի-լըծին *) իր դայլայլով, ու Գուքընուր *) դաշտին ծոց…, —*
Կոյս-թագուհու սի՛րտն ալ բացին՝ կըտընտռցուին Իր երկրին…, —
Լար ու լսեղն Թըրթռացուցին՝ իր Հայրենի երգերով։ —
— «Աղջիկ էի՝ ու Հարս եկայ…՝
Օտա՛ր, հեռո՛ւ Աչխարհներ…։
Ամեն հարսը «ղարճի՛ կ'երթայ», —
Աչխարհո՛վ է այս օրէնք…։
Իմ «ղարճ»իս օրն ու Թըւական
Ինչո՞ւ դեռեւս ուշանայ…»։ — †)

91. Լուսիկ-Թագուհին Կըյորդորէ Իր Երկուտրեակ Տղաներ՝ Որ Միասին Հայրենիք Դառնան

Ջ·, Հ·406, Ջ·՝Հ·406, Ճ·66, Ջ(ՋՍ·133), Ջ(Լ·16).

Երգեց Իր սըրտով, Լուսիկ-Թագուհին,
Ու ղարճաւ՝ օր մը՝ զարնան լարերով

---

*) Դարձ երթալ, նորահարսի մը՝ տարուան ընթացքին քանի մ' անգամ՝ իր ծնողաց տուն հիւր երթալու սովորութիւնը։ Կը մնայ մէկ-երկու շաբաթ՝ ու նորէն էրկան տունը կը դառնայ։ *) Լծի-լծի, Գարնանային թռչնիկ մը՝ որ իր երգովը՝ իրր թէ կըճայնէ երկրագործին՝ «լծէ՛, լծէ՛, արօ՛ր դիր ու հերկէ՛»։ Parus Major, Charbonnière (Mésange). *) Գուքընուր, Գուքանով հող հերկող, արօրադիր։ †) Այս 90-րդ Հատուածը՝ հիւսուած է իմ կողմէ։ Ընդհանուր հայրենագիտական ծանօթութիւններու հետ՝ միացուցած եմ Սասունի չուրջը եղած հրատարակութիւններէն աւանդութիւններ։

Թըրթռացուց նաեւ իր Տըղեկներուն ղոյզ սիրտն ու հոգին:

Դարձաւ՝ օր մը՝ ի՞նչ ըսաւ, —
*— «Որդի՛,-ըսաւ-, այստեղ նըստիլ՝ այլեւս Մեզի ձեռ չի՛ տար *).*
Այստեղուանքը՝ երթի՛ք Ձեզ Տուն չի՛ դառնար···: —
Ելի՛ք բառնանք, հեծնենք երթա՛նք՝ այս անպիտան Քաղաքէն·
Երթանք ապրինք ա՛յնտեղ՝ որ Մեր Հայրենական Երկի՛րն է···: —
Հո՛ն, այն Ծովի կապո՛յտ ափեր՝ Սարերու մէջ զըրկըւած···:
Դուք՝ Ա՛յս Երկրի ծոցէն ծընած Զաւակ չէ՛ք···,
Ձեր Հայրենիք վե՛րն է, այնտե՛ղ՝ Սարի գո՛գ···:
Այս Ջուրը որ Դուք կըխըմէք՝ զօրեղ չ'է՛···,
Ձեղմէ գալիք երախան ալ՝ օտա՛ր պորտի ծընունդ է···»:

98. Սանասար Կ'առնէ Իր Եղբայրը, Մայրն Ու Հետեւորդները՝ Կըմեկնին Դէպի Հայրենի Երկիրը

Զ·, (ԶՍ·133), ԶՍ·133, 134, Զ(Լ·15,64), Լ·64, Ե·479, ԶԿ·319, Ց·66, Ա· 48, Հ·407·

Մայրը որ այդ խօսքն ըրաւ,
Զոլ-Եղբայրը Սանասարն ալ ի՞նչ ըսաւ· —
— «Ի՛ր Բաղդասա՛ր,-վերցուց ըսաւ Իր եղբօր-·
Իրաւունքով խօսքին երբեք ո՞վ ի՛նչ կրնայ ըսել որ···: —
Դէ՛, Աղբարի՛կ, ելի՛ր-, ըսաւ-, քըշե՛նք երթանք Մեր Երկիրը:
Ելի՛ր հեծնենք առնենք Մեր Մայրը, երթա՛նք այս դէշ Քաղաքէն»:

Ըսաւ՝ եաւ՝ Զոլ-Եղբայրը Սանասար,
Մեծ մը՝ իր տեղ Գահին վըրայ՝ դըրաւ Իրեն փոխանորդ,
Առաւ Եղբայրն ու Իրենց Մայրը՝ Ծովի-Լուսիկ-Թագուհին,
Շատ Մարդերով, Ծառաներով մխասին,
Առին Իրենց՝ Ինչքն ու ապրանք, Տաւար-Ոչխար, ամէ՛ն բան, —
Ու Քաղաքէն դո՛ւրս ելան, —
Ճամբայ ինկան՝ Ամեն մէկտեղ՝ Դէպի Իրենց Ջոլանց Տուն:

---

*) Ձեռ չի տալ, Ձեռնտու չըլլալ, չբաւել:

Բ. ՀԱՑՐԵՆԻ ՀՈՂԻՆ ՎՐԱՑ

Բ. ՍԱՆԱՍԱՐ ՈՒ ԲԱՂԴԱՍԱՐ ՍԵՓԱԿԱՆ ՏՈՒՆԻ ԵՏԵՒԷ

98. Ճամբան Աճձրեւի կըրնուիճ Ու Գարէ Խղիկ Մը կըօիճեճ

Զ·, ՁՍ·135, Է·10, (Ա·48), Լ·64, Զ·՝Լ·64, (Ց·66)·

Սանասար ու Բաղդասար եւ Իրենց Մայր՝
Կըտոց-Երկրէն ելան ճամբայ ու գացի՛ն···, —
Շատ ու քիչը՝ Աստուա՛ծ դիտէ՝ Իրեն տեղ, —
*Գացին Հասան Մարութայ *) Բա՛ղձըր Սարին։*

Ցա՛նկարծ սաստիկ Անձրեւ մ՚ բըռնեց ամեն կողմ,
*Անոնք ալ չո՛ւտ՝ գացին մըտան Ջո՛ղ պալի *) մ՚ տակ ու կեցան։*

Մովի-Լուսիկ-Թագուհին ալ ի՞նչ ըրաւ, —
Տեսաւ որ չէ՛, այս Անձրեւը չի՛ դադրիր, —
*Ինքն ալ վազեց, Ջո՛ղ Գար մ՚ առաւ՝ բերաւ դըրաւ Պալին կուշտ *),*
Ապա վերցուց Իր Տըղայոց՝ Սանասարին Բաղդասարին ալ ըսաւ, —
— «Մատաղ ըլլամ,-ըսաւ, ես Ձեր արեւին···,
Դի՛ւհ, գընացէ՛ք՝ մէկմէկ Գար ալ Դո՛ւք բերէք,
*Որ մէկ՝ մէկի վըրայ դընենք՝ տակը մըտնենք՝ ծըւարինք *),*
Մինչեւ՝ առաւն՝ Անձրեւ կըտրի, նոր երթանք···»։

Սանասար ու Բաղդասարն ալ՝ գացին մէկմէկ Գա՛ր բերին,
Իրար վըրայ դըրին՝ այնտեղ՝ Ամպհովանի չինեցին,
Տակը մըտան՝ ծըւարեցան, մինչեւ Անձրեւ կըտրեցաւ. —
Գիշեր կեցան այդ Սարի մէջ, առաւն առաւ տեղ···։

---

*) Մարութայ՝ Maroutas ձեւով՝ Քրիստոսէ 1750 տարի առաջ Բաբելոնի տիրապետող Kassite ցեղին պաշտած Աստուածներէն մէկի անունն է, ըստ Փրֆ. Ակրոմեանի (Les Arméniens 60)։ Սասունի Լեռներէն մէկը կըկոչուի Մարաթուկ։ Իսկ Սասունի հիւսիս՝ Շատախի մէկ գիւղը՝ Կաճիոտ՝ արդեօ՞ք Kassiteի հետ կապ ունի։ *) Պալ, Մեծաղանգուած քար, ժայռ։ *) Կուշտ, Քով։ *)Ծուարիլ, Պատըսպարուիլ։

94. Լուսիկ-Թագուհիի Ցեսած Երազը

Չ.՝Լ.64, (Ե.481), Հ.407, ՉԿ.319.

Այդ դիշերն ալ, երազի մէջ, տեսաւ Լուսիկ-Թագուհին, —
Որ Մերունի-Մարդ մը՝ յանկարծ՝ այնտեղ Իրեն երեւաց, —
Ըսաւ, — «Աղջի՛կ, ի՞նչ կ՚ընէք...»։
Մովի-Լուսիկ-Թագուհին ալ՝ ըսաւ, = «Պապի՛կ, բան մը չ՚է՛...,
Ասածու չնորքով՝ Տո՛ւն մ՚ եմ չիներ, Տըղեկներուս հետ մէկտեղ.
*Իրիշկա՛ տես *), Դուն կըհաւնի՞ս Մեր Խըղիկ...»։*

Պապիկն՝ այնտեղ՝ ըսաւ, — «Աղջի՛կ, չըմոռնաս,
Այս Քարերով՝ այստեղ Մատո՛ւռ չինել տաս...»։

*Առաուն ելան ու նըշնեցին *) այդ Խըղիկին չուրջ-բոլոր,*
*Իչան Սարին *) մէկալ կողմէն՝ դէպ հայրենի կապուտ-կող,*
Գացին Իրենց Պապուն քով։

95. «Ով Զըօիճեր Քամկով Ցընիկ՝ Չի՛ Քրճեր Մէջ Աճուս Քրնիկ»

Կ.119, Կ.119՝Չ., ՉԿ.322, 323, 324, Չ(Հ.9), Չ.՝ ՉԿ.324.

Մէկ տարի՞ մը՝ թէ ի՛նչքան..., —
Ժամանակ մը մընացին. —
Աւուր մէկին՝ Չոլ-Եղբայրը Սանասար՝
Վերցուց ըսաւ Թագաւորին՝ Իր Մեծ-Հօր.—
*—«Ապրա՛ծ կենաս, Տէ՛ր-Թագաւոր ու Քեռհայր *),*
Քեղնէ մէկ բան մ՚ պիտի խընդրենք՝ Ես ու Եղբայրս Բաղդասար...»։
Թագաւորն ալ ըսաւ, = «Ի՞նչ...»։
Ըսաւ,— «Մեղի տե՛ղ մը ցոյց տաս՝ Տո՛ւն մը չինենք Մեզ համար»։

---

*) Իրիշկա՛ տե՛ս, Նայէ՛ տե՛ս։ *) Նշնել, Տեղը գիծ քաշել, որոշել. չրջագծել։ *) Այդ Սարը՝ հաւանաբար կորդուաց Լեռներէն Աղբակի մէկ բարձունքն է, կամ Արտօս-Եղերումն է, Վանայ Մովին արեւելահարաւ, որուն բարձր կատարին վրայ է՝ մըրկոտ եւ ճամբորդներու ապաստան՝ Փուքկու Մուրը Գէորգ Վանքը։ Շուրջը՝ Ընճաքի Սար կամ կապուտ-կող, եւ քիչ անդին՝ Սասուն։ *) Քեռհայր, Քեռիին (մօրեղբօր) հայր, մօր կողմէ մեծ-հայր։

Պապ-թագաւոր՝ դարձաւ ըսաւ Իր Թոռան.—
= «Որդի՛,-ըսաւ-, Տուն ի՞նչ պիտի ընէք որ...,
Տունը չէ՞ որ չինո՛ւկ *) է..., —
Ես Տըղայ ու ծառանգ *) չունի՛մ, բա՛ն չունիմ...,
Չէ՞ իմ Տըղան ալ՝ Դո՛ւք էք...,
Իմ մահէն վերջ՝ իմ երկիրն ալ Ձեզի՛ է,
Եղած-չեղած՝ ամե՛ն բան ալ՝ չէ՞ որ Ձեզի՛ կըմընայ,
Կ'ըլլայ Ձեզ Տուն, Դուք նըստեցէ՛ք իմ Գահի վրայ Թագաւոր»:

Սանասարը վերցուց ըսաւ, — «Ապրա՛ծ կենաս, Թագաւո՛ր,
Քեզնէ պահենք՝ Աստուծմէ՞ ալ ի՞նչ պահենք..., —
Մեզ համար զա՛տ *) տեղ կ'ուզենք...: —
Այն Տուն ինչ Մենք Մե՛ր Քամակով *) չըշինենք՝
Մեր քունը չի՛ տանիր մէջ.... —
Ջոջանց*) առած է, կ'ըսէ, —
— « Ով չըօխներ Քամկով Ցընիկ՝
« Չի՛ Քրներ մէջ՝ ամուս Քընիկ...».—
Տե՛ղ մը տուր Մեզ՝ Տո՛ւն չինենք...,
Չերթա՞նք ուրիշ Հողի վրայ՝ Տուն մը չինենք ու նըստինք»:
= «Որ այդպէս է, Որդի՛,-ըսաւ Թագաւոր-,
Ելէ՛ք գացէ՛ք՝ Իմ Հողի մէջ՝ կա՛ն եկէք,
Ձեզի ո՛ր տեղ որ պիտանի երեւայ՝
Ա՛յնտեղ Ձեր Տուն չինեցէ՛ք..., —
Մեզ տեղ չա՛տ...»:

96. Սանասար ու Բաղդասար՝ Սարէն Փրած «Քարակ Առու»ին Դէմ կուգան

ՁԿ·325, Կ·119, Ա·48, Լ·12, Ձ·՝Լ·12, Ս·138,139, (Ե·481,609), Հ·10, Ճ·15, Ձ·՝615, (Ճ·68).

Սանասար ու Բաղդասարն ալ՝ ելան գացին՝ կա՛ն *) եկան,

---

*) Շինուկ, Շինուած, պատրաստ: *) Ժառանգ, Գահաժառանգ, մանչ զաւակ: *) Զատ, Առանձին, սեփականեալ: *) Քամակ, Կրնակ: *) Ջոջանց, (Ջոջանց), Մեծեր, նախնիք, փորձառուններ *) Կան գալ, Շրջիլ, պտտիլ:

*Գիւղէ 'ի Գիւղ, Քաղքէ Քաղաք ոլըրտեցան *) ու գացին, —*
Մէկմէկ'ն՝ բարակ ձամբայ մ' ինկաւ Իրենց առաջ՝ դէպ ի վեր,
Ջո՛ր մէկ Ջորի մէջէն գացին՝ բարձրացան,
Ու տեսան որ՝ մէկ դուրան տեղ՝ կանաչ մա՛րդ է, Մարգաստա՛ն.
*Քարափըրթա *), չորս-բոլորը ղար է՝ ինչպէս սեղան-սար *) : —*
Այդ մէ՛կ ձամբան է որ Իրենք բըռներ են ու կըգալեն... :

Գացի՛ն գացի՛ն...՝ այդ տեղեր..., —
*Եփրատ-Գետի *) մէջը Քաւիղ՝ վըժժան *) Ջուրի մ' դէ՛մ եկան : —*
Ի՛նչ տեսան..., —
Տեսան որ մէկ Բարա՛կ-Առու մ'՝ Քաւիղ՝ վ կ'իջնէ Ջորն 'ի վար,
Կուգայ կ'զարնէ այդ ահագին Գետի մէջ...,
*Կըկըտրէ Գետ..., ու կըշերտէ չուր *) մէջտեղ...,*
Ու նորէն ալ՝ կըխառնըվի այդ Գետին հետ՝ ու կ'երթա՛յ... :

Երկու-Եղբայր՝ զարմա՛նք կըտրած...՝ դարձան Իրար հարցուցին.—
— «Այդ բարակի՛կ, նեղ Առուին զօրութիւնը ի՞նչ է որ...՝
Կուգայ-կըտրէ՝ կըխառնըվի այդ Գետին հետ՝ ու կ'երթա՛յ...» :

Սանասարը վերցուց՝ եղբօր՝ Բաղդասարին ի՞նչ ըսաւ. —
— «Ով որ դըտնէ այդ Ջուրին Ակ՝ ու խըմէ՝՝
*Իրեն Տունը այդ Ջըրին վրա՛յ թէ սուկէ *)՝*
Ի՛նքն ալ այդպէս կըտրի՛ճ կ'ըլլայ ու հըսկա՛յ...,
*Իր սերունդն ալ՝ որ ունենայ՝ հըմլա *) զօրե՛ղ դուրս կուգայ...» : *)*

97. Սանասար Ու Բաղդասար Կըբարձրանան՝ Ջուրին Ակը Կըգտնեն

Ջ., Ց.16,66, Ս.139, (Ս.139),Լ.12, Ջ.՝Ե.481, Կ.119, Ջ.

*Ելա՛ն առին *), երկու-եղբայր, բըռնեցին այդ նեղ Առուն,*

---

*) Ոլրտիլ, Շուրջ դառնալ, չրջան ընել : *) Քարափրթա, Քարքարուտ, խորտուբորտ՝ տեղ : *) Սեղան, Սեղանի ձեւով, բոլորչի, լայն ու հարթ : *) Ց.15 տարբ.՝ Մուրատ Գետ : *) Վժժան, Ուժգին Քաւիղով վիժող, քարէ 'ի քար ղարնուող, վըրփրահոս (ջուր) : *) Ջուր, Մինչեւ : *) Սուկել, Ջուդել, չինել, կառուցանել : *) Հըմլա (իմալա), Այդ կերպ, աւոր նման : *) Տեսնել Հատուածին աւորէջ, ծնթ., Յորենացիի խօսքերը : *) Ելան առին, Այս անգամ չարունակեցին :

Գացին ելա՛ն ու բարձրացա՛ն՝ դըսա՛ն Ջըրին Ակն-Աղբիւր: —

Այդ Ակի Ջուր՝ լուլէ՛ *) մը ջուր է ինքնին, —
Կուգայ չիտա՛կ, ու կըկըտրէ՛ իր տակի Գետ՝ ու նորէն՝
Կըդառնայ ու նորի՛ն կ՚խառնուի այդ Գետին...:

Նըստեցան հոն, Ակին վըրայ, հանգչեցան: —
Այդ կողմերուն չա՛տ հաւնեցան, նորի՛ն-նորէն դիտեցին. —
Տեսան որ Սար՝ հոյաղըլուխ՝ սի՛ւն է զարկեր երկինքին...,
Ու Ջըրին Ակ, — «լուլէ՛ մը Ջուր», պաղորա՛կ՝
Որ կը՛բըխայ այդ վէրունի *) բա՛րձըր Սարի ըստինքէն,
— Ինչպէս կաթը՝ Մօր լանչէն —,
Ու կըվազէ՛, վա՛ր կըփըչչայ..., տակի Գետը կըճեղքէ՛..., —
Ապա մէջը կըխառնըւի ու կ՚երթա՛յ...: —

— «Է՛ լուլէ Ջո՛ւր...,
Անմահակա՛ն կաթնաղբիւր....
Ակը փոքրիկ՝ զօրե՛ղ Ջուր...» *). —
Կանչեց ըսաւ Սանասարը, բերան Ջըրի Ակին դէմ..., —
Մինչ Բաղդասարն ալ իր կարգին՝ ծունկի կուգար դէ՛մուդէմ...:

98. Սանասար Ու Բաղդասար Կըգիւտեն Սարին Գլուխ

Ջ., Ջ(ՋՍ.135).

Մինչեւ ելան Ակը դըսան Նետ-Ջուրին՝
Արեւ քաշեց ոսկի ծոպերն իր ջահին.
Լուսին փըռեց իր արծաթէ չողիքները: —
Երկու-Եղբայր՝ Մեծ-Սանասար՝ ու Բաղդասար զօրընդեղ՝

---

*) Լուլէ, Մորակ, պող: *) Վէրունի, վայրենի, անբնակ, ամայի ու ամեհի, սարսափ ազդող: *) Համմտ.՝ Մորենացիի խօսքը՝ — «Թէպէտ և եմք ածու փոքր եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, ... սակայն բազում գործք արուեստեան զառանին գործեալ եւ՝ ի մերում աշխարհիս» (Ա.Գ.20): Կըթուի թէ՝ այս «Անմահական կաթնաղբիւր»ն էր որ հանդստատեղը գարձաւ Սանասարի յաղթողներուն, Ա-ռիւծ-Մհէրին ու Թլոլ-Դաւիթին, որ կուգային հոն կըհանգչէին ու կը լողանային՝ կուխի երթալէ առաջ: Տեսնել՝ Հատ 225:

Մընացին հոն, դիչերեցին այդ վէրունի Սարին գլուխ, —
Առանց տուն ու առանց տեղ...:

Վերը՝ Աստղեր՝ կանթեղ-կանթեղ պըլպըլուն, —
*Հոս՝ Ցարդգողիկ *), Տիգրանի-Թագ *) ու Բազումք *),*
*Հոն՝ Քար-Կըշիռ *), Բոյլք *) ու Գուբեան *) եւ Արօր *),*
*Լէյլի-Մէջրում *), կըլոր Սեղան-Եօթնեղբօր *) —:*
Վարը՝ անհո՛ւն, խորունկ ու մութ անջրպետ,
*Ջրմոց *) Սարին, վէմ-քն Առուին՝ դէպի Գետ: —*

Գըլուխ դըրին մէյմէկ քարի, ու քընացան Սարին ծոց,
Մե՛ծ Բընութեան չողուն կամարն իրենց վըրայ վառ ծածկոց...:

Այդ դիչերը՝ Սա՞րն էր հըպարտ՝ քան դ'ամե՛ն Սար բարձրագահ՝
Թէ՞ երկուորեակ եղբայրները, — հըրաչք-ծընունդ ու անվախ...: —
*Երկնից Ջաղաց՝ իր վառելրով *)՝ դարձաւ Սարի լոյն ուսին,*
Մութը աղաց՝ մանրեց Աստղերն ու Լուսին, —
Ճերմակ ալիւր՝ երկնի երես՝ լոյսի նըման ցըրցընեց..., —
Լուսին վախաւ, Բնութեան գահը կըրկին Թողուց Արեւին:

Երկու-Եղբայր՝ Սանասար ու Բաղդասար՝
Արշալոյսի չողերուն հետ երբոր բացին Իրենց Աչք՝
Ընքանչացա՛ն տեսարանին՝ որ կըսիրուէր անսահման...՝
Իրենց բարձրիկ դիտարանին քըղանցն 'ի վար ոսկեման...:

99. Սանասար Կ'բան՝ «Աւրի Մեզի Ցուն Մը Շիմեմի՝ Նսթիմի Մէջ»

ՀՍ·136, Հ·10, (Ե·481), Ե·609,481, Զ·՝Ը·66,16,68, Ա·48, (Լ·12), Զ·

Ու՝ հե՛տ լուսուն, — «Էֆ' Բաղդասա՛ր,-կանչեց ըսաւ Սանասար...

---

*) Ցարդգողիկ՝ *Մէր-կաթին*, La Voie Lactée, Տիգրանի-Թագ՝ *Հայկ հմսողին*., Orion, Բազումք, Բոյլք՝ Les Pléiades, Քար-Կշիռ՝ La Balance, Գուբեան՝ Մեծ Արջ, La Gr. Ourse, Արօր՝ Փոքր Արջ, La Pet. Ourse, Լէյլի-Մէջրում՝ *Երկուորիք*, Les Gémeaux, Եօթնեղբօր-Սեղան՝ La Coupe ? : *) Ջրմոց, *Ծուլ՝ դանդիւն, բղղիւն, աղմուկ, արձագանգ՝ (լերան)*: *) Փան, *Ջաղացի քարի առանցքին չուրջ փետուրներու պէս շարուած տախտակիներուն ամենամէկը. հոս՝ համաստեղութիւնները՝ փառ-փետուրի նմանցուած:*

Եղբա՛յր, այստեղ անո՛ւշ տեղ է..., անուշ Ջըրե՛ր..., Մաղիկնե՛ր,
Ծօրո՛տ տեղ է..., անուշ պա՛ղ-պաղ Աղբիւրնե՛ր....
Ու այստեղեր՝ չէն-չինուքիւն, մա՛րդ չըկայ...: —
Արի՛՝ Մեզի՝ Տո՛ւն մը չինենք, չէնցընենք ու նըստինք մէջ...»:

Ըսի՛ն-չըսին..., — երկու-եղբայր՝ իրար հետ
Խորհուրդ ըրին՝ որ միուս օր Իրենց Բերդի հիմ դընեն:

Սանասարը՝ առաուն ելաւ՝ Արեւելքի՛ կողմ դընաց,
Ինչ կըտրելու բերելու,
Բաղդասարը՝ Արեւմուտք:
Սանասարը Բաղդասարի՛ պատ քակեց,
Բաղդասարը Սանասարի՛ պատ քակեց...: —
Մէկ՝ Միուսէն լուր չունի՛...:

Ճեռոյ ըսին, — «Այս ի՞նչ բան է...՝ Մենք Իրարու Տո՛ւն կ՚աւրենք»:
Ելան այնտեղ՝ այս անգամ՝
Քարեր բերին դիզեցին, —
Ու ձեռք-ձեռքի, միակամ՝
Իրենց Աստուած կանչեցին
Իրենց Տունը՝ զոյգ միատեղ չինեցին: —

100. Սանասար Ու Բաղդասար՝ Իրենց Բերդը Կըշինեն՝ Կըքարձրացնեն

ՀԿ·325,326,327,328, ՀՍ·137, Հ·, Ե·609,481, Կ·119, Ճ·68,66,18, Հ·՝Ճ·68, Ա·48, Հ·՝Ա·48, Հ՝·10, 407, Ս·143, Ս·143՝Հ·, Լ·16, (Լ·16,13).

Ելան՝ բաց տեղ մ՚՝ Ջորս Քար ըրին՝ չորս անկիւն,
*Առին մէջը *)՝ Հիմ բացին: —*
*Սարին մէջէն, կըտրածուրիկ *) ջո՛ղ Քարեր՝*
Ջառեցին ու բերին Իրենց Կըռնակով...,

---

*) Առնել մէջ, Ջորս կողմերը՝ հիմին տեղը գծել, որոշել:
*) Կտրածուրիկ, Տաշած, յղկած, կուփածոյ:

*Բան'լ պատ մ' ու բերդ մ'...., տըրդատական *), մեծամեծ....:*
Դարձան գացին, ո'րտեղ ինչ ջոջ Ծառ ու Գերան որ գըտան՝
Կըտրեցին ու դըրին Իրենց Ուսերուն վրայ՝ ու բերին,
Որ Իրենց Տուն պիտ՝ չինեն: —

*Սանասարը եղաւ «վարպետ»-պատաշար *),*
*Բաղդասարն ալ՝ յաջող քարտաշ *), ծեփարար *):*
Զևռ-ձևռքի տուին, Իրենց Աստուա'ծ կանչեցին,
Բերին դըրին՝ Իրարու հետ չարեցին: —

Մ'ինքան գործել էին որ...՝
Սանասար ու Բաղդասար՝
Սկսին՝ քարէ սի'ւն գարկին, —
Շարեցին ու՝ մէ'կ օրուան մէջ՝ Իրենց Տունը չինեցին,
*Զագ *) թալեցին *), ու ծածկեցին, լըմընցուցին մինչեւ վեր, —*
Բերդի՛ նըման՝ հըսկա՛յ Տուն մը կանգնեցին....:

*Բերդը երբոր գըլուխ եկաւ, լըրացուցին վեր՝ Հիման *)՝*
*Երկու-Եղբայր՝ այդ Ակին վրայ՝ իրիկուան Հաց *) նըստեցան. —*
Տան անունը՝ չըգիտցան ի՞նչ դընէին....:

101. Սանասար Ու Բաղդասար՝ Իրենց Պապէն Կըխնդրեն Որ Իրենց Բերդին Անուն Մը Դնէ

ՁԿ·328, Ե·944, Ս·143, 144, (Ս·144), Զ(Ց·19,68), Կ·120, Զ(Լ·16)·

Այժըմ կ'ըսեն, — «Մարդ մը գըտնենք՝ անո'ւն դընէ մեր Տունին:
Տուն չինեցինք, կանգնեցուցինք Բերդի՛ պէս, —
Մէկը երբ գայ՝ Մեր Տան անուն ի՞նչ է՝ որ գայ՝ ու գըտնէ....».

Սանասա'րն էր, — եւաւ եկաւ կապուտ-կոզի իր Պապուն, —

---

*) Տրդատական, *Տրդատ Թագաւորի գերմարդկային ուժին արժանի, մեծազանգուած* (քար): *) Պատաշար, *պատ շարող, որմնադիր*: *) Քարտաշ, *քար տաշող, քարկոփ*: Ծեփարար, (*պատի*) *Մեխ շաղղող, վարնող*: *) Զագ, *Շեղ-սիւն՝ պատէն կամ մայր-սիւնէն դէպ առաստաղը գարնուած*, Contrefiche: *) Թալել, *Զարնել, գետեղել, կոթնցնել*: *) Հիման, *Հիմին*: *) Հաց, *Սեղան, ճաշ, ընթրիք*· Նստիլ հաց՝ *ճաշի, սեղանի նստիլ*:

— «Քե՛ռհայր,-ըսաւ, Մենք երկուքս ալ քու թոռներն ենք ու տըղաք,
Շիներ ենք ու լըմընցուցեր՝ Մեր Տուն՝ Բերդի նըմանակ,
Եկեր ենք Քեզ՝ խընդիրք կ՚ընենք՝ որ դու գաս,
Անո՛ւն դընես Մեր Բերդին....
Քեռի-Թոռո՛ւն ալ մէկտեղ գա՛յ՝ յարմար անո՛ւն մը դընենք...»:

Պարոյր-Աստղիկ Թագաւորն ալ ի՞նչ ըսաւ.—
= «Դուք Ձեր Բերդին անուն դըրե՛ր էք անչուշտ,
Ու՝ դիտումով Ձիս կըկանչէք՝ որ փորձէք...»:
Սանասար՝ թէ, — «Ապրա՛ծ կենաս, Թագաւո՛ր,
Վըտա՛հ եղիր՝ որ մեր Բերդին դեռ անուն մը չենք դըրեր.
Ա՛ն գիտենք որ՝ Բե՛րդ մը չիներ, կանդնեցուցեր ենք մէկդին...»:
= «Ո՛ր այդպէս է, Որդի՛,-ըսաւ Թագաւոր..
Գացէ՛ք ճամբու մէջտեղ կեցէ՛ք՝ նայեցէ՛ք, —
Աղբա՛տ ըլլայ, հարո՛ստ ըլլայ..., ի՛նչ ըլլայ՝
Բերէ՛ք Ձեր Տուն, հացկերութիւն *) թող ընէ,
Ընէ՝ Ձեր Տան անուն դընէ՝ ու երթայ...»:

102. Ով Որ Բերիճ՝ Մէ՛կը Չկրցաւ Անուն Դնել Իրենց Տան

Չ·, 8·66, Հ·10, ՉԿ·329, Կ·120, Չ(Հ·407), ՉՍ·138.

Քանի՛ տաեն՝ Աստուա՛ծ միայն ի՛նք գիտէ,
Մարդ չեն դըտներ՝ որ Տան անուն մը դընէ:
Ո՛վ որ եկաւ՝ ճամբէն անցաւ՝ բըռնեցին ու նե՛րս բերին, —
Ըսին՝ «Մեր Տան անո՛ւն դըրէք ու գացէ՛ք», —
Մ՛էկ չըկըրցաւ տեղեակ անուն մը դընէր.
Կամ թէ ըսին՝ «Անուն չըկա՛յ այս Տունին...»:
Քանի՛-քանի՛ մարդ որ բերին՝ հարցուցին՝
Անոնց բերան բըռնըւեցաւ *), չըգիտցան ի՞նչ ըսէին...:

Անցաւ նորէն քանի մ՚ օր,
Մէ՛կը չինկաւ Անոնց ձեռք՝
Անուն դընէր Իրենց Տան...: —

---

*) Հացկերութիւն, ճաշ, հացկերոյթ: *) Բռնուեցաւ, Այսինքն՝ պախմացան, սարսափեցան կամ չուարեցան:

103. Բաղդասար՝ Սանասարի Ծուցմունիով՝ Ճամբու Վ.րայի Պապիկը Կըրկէ՝ Որ Անուն Դնել Իրենց Տան

Ց·67,68, Զ·՝Ց·67, (Ց·67), ՉԿ·330,331, ՉՍ·138,139,140,141,142, 143,144,145,146, (ՉՍ·)147,148, Չ·՝ՉՍ·146, Չ·, Հ·10, (Հ·408), Կ·120,Ե·609,(Ե·610)·

Աւուր մէկին՝ Սանասարը ելաւ դուրս,
Բևբդին դըլխէն նայեցաւ վար, Դաշտին մէջ,
Տեսաւ որ մէկ բարակ Մուխ մը՝ Ձորէն կ՝ելնէ դէպ երկինք,
Ներքեւէն ալ՝ մէկ Մարդ՝ ինկեր ճամբու վրայ՝ ու կ՝երթայ, —
Կանչեց եղբօր, — «Է՛ Բաղդասա՛ր, տե՛ս,-ըսաւ,
Մէկ Մարդ ինկեր՝ ճամբայ՝ կ՝երթայ ներքեւէն,
Արի՛ հասիր, ա՛ռ ու բե՛ր հոս՝ Մեր Տան անուն մը դընէ»:

Բաղդասա՛րն էր, — հեծաւ Իր Ձին՝ ու քըշեց,
Գընաց հասաւ ճամբորդ Մարդուն, նայեց որ՝
Մէկ ալեւոր ծեր Պապիկ մ՝ է, քանի՛ հարիւր տարեկան...,
*Կո՛ւշտ մը *) ցան-ցախ *) լըցեր այնտեղ, կըրակ դըրեր՝ կըվառէ,*
Ձեռքեր կուտայ բոցերուն դէմ՝ ու կ՝ըսէ, —
*— «Ըխո՛շ, ըխո՛շ, ըխո՛շ է... *)»:*

*Ըսե՞ս Հրեշտակ-Աստծո՛ւ էր..., դ՝ինչ ըրեր էր մարդակերպ... *),*
Եւ ինկեր էր Իրեն ձեռքի փայտին վրայ,
Սանասարի աչքին առաջ էր եկե՛ր...:

Բաղդասարն ալ զարմանացա՛ւ ու հարցուց, —
— «Պապի՛կ,-ըսաւ, այդ ի՞նչ կ՝ընես Դուն այդտեղ...»:
= «Դէ՛, կըրա՛կ է՝ կըվառեմ...,
Ա՛ս ալ՝ իմ Տունն է...», ըսաւ:
— «Արի՛,-ըսաւ, երթանք Մեր Տուն՝ Քեզ պահենք...»:

---

*) Կուշտ մը, Շատ մը, դէզ մը: *) Ցան-ցախ, Անասունի չորցուած աղբի եւ փայտեղէնի խառնուրդ՝ վառելիք: *) Ըխոշ, Օխ ի՛նչ ա-նուշ (է), ի՛նչ հաճելի (է): (*) Հրեշտակ-Աստծու, մարդակերպ, Որհրդատու, ծեր: Ձմմալ՝· Խիկար Իմաստունի հետ, որ հայազգի նպարգոսն էր Ասորեստանի Սեննեքերիմ Թագաւորին (Տքթ· Ա.Ց կքն· Հյրնք· օրթ· 1939):

Մերունին ալ՝ ի՞նչ ըսաւ. —
= «Քո Տունն Ինձի Տուն չի՛ ըլլար..., ա՛յ Տըղայ...»:

Պապի՛կն ըսես՝ վախցա՛ւ Մարդէն..., ու փախա՛ւ...,
Ան կըկարծէ՝ թէ դ'Ինք պիտի կողոպտէ՛...:
Բաղդասարը կանչեց ըսաւ, — «Պապի՛կ,-ըսաւ-, մի՛ փախիր,
Արի՛,-ըսաւ-,Քեզ Իմ Զիւռ վրա՛յ դընեմ,
Երթանք՝ այնտեղ Մենք մէկ Տո՛ւն մը չիներ ենք,
Երթանք Մեր Տուն՝ Մեզի հիւր,
Ես Քեզ Նորէն կըվերցընեմ՝ կըբերեմ հո՛ս կըդընեմ...»:
Պապիկն ալ թէ, = «Աստծո՛ւ սիրոյն, մեռնիմ Քեզի, ա՛յ Որդի՛...,
Չես չըսպանե՛ս..., Ես չունեւոր մէկ Մա՛րդ եմ...,
Ո՛չ հաց ունիմ, ո՛չ դըրամ...,
Չես ըսպանել՝ երբեք Քեզի օգուտ չ'է՛...,
Ա՛ղջ, չըքաւո՛ր Մարդ եմ Ես...»:

Պապիկ չի՛ դար բըռնըվի՛լ...,
Չի դադրիր որ՝ բըռնըվի՛...,
Կըփախի՛...:

Բաղդասարն ալ՝ հասաւ լուռմունջ՝ բըռնեց Պապիկ՝ թեւերէն,
Վերցուց դըրաւ Զիւռն գաւակ, առաւ բերաւ Իրենց Տունն:
Պապիկ նայեց՝ տեսաւ երկու Տըղայ-Մարդ են մինակուն,
Փըշուր մ'՝ այնտեղ սիրտ առաւ...*):

Մանասարն ալ ըսաւ, — «Պապի՛կ, մի՛ վախնար,
Դուն Հայրիկ ես, Մենք ալ Քեզի Տըղա՛յ ենք...:
Արի՛ ներստի՛ր, Քեզի հա՛ց կեր, ու ե՛լ պառկէ՛ Դուն Քու տեղ,
Մինչեւ լուսաւն՝ Քեզ կըտանինք, Նորէն Քու Տո՛ւն կըդընենք»:

Այն ժամանակ այդ Պապիկի սըրտէն մէկ քիչ ահն ելաւ, —
Ըսաւ՝ «Ատոնք՝ իրա՛ւ Չես չեն ըսպաներ...»:

Այն իրիկուն՝ բերին՝ պատիւ ու հացկերո՛յթ ըրին հոն:

---

*) Պատումին մէջ (ՀՄ.146)՝ Մայրը նախապէս հոն բերուած՝ բնակեցնօրէն ըսուած է այսպէս, — «Պապիկ նայեց տեսաւ որ երկու մարդ են՝ մէկ կնիկ՝ փշուր մ' սիրտ առաւ»:

104. Սանասար կը յայտնէ Պապիկին՝ Թէ Չիմ Իճչո՛ւ Բնաւ Եմ

2Ս·149, Ց·67,68, Հ·10,408, (Հ·408), Ե·610,482, (Ե·610), Զ·՝Ե·482, (ԶԿ·331), (Ա·48), Զ·(Կ·120), Կ·120·

Մընաց լուսուն, Սանասարը Պապիկ բերաւ Բերդի դուռ, —
*Ըսաւ, — «Պապի՛կ, դիտե՞ս,-ըսաւ, Քեզ ի՞նչ ապով *) ենք բերեր»,*
Պապիկն ալ Թէ, = «Ինչի՞ համար էք բերեր···»:
— «Մնո՛ր համար Քեզ բերեր ենք,-վերցուց ըսաւ Սանասար-,
Որ Դուն Մեր Տան յարմար անուն մը դընես···,
Մենք չե՛նք գիտեր՝ դընենք ի՛նչ···:
*Դուն ջոջիկ *) ես, ինկած-կայնած, շատ աչխարհնե՛ր ման եկած···,*
Արի՛ Մեր Տան բոլորտիքը պըտըտէ՛, —
Մէկ անո՛ւն մը դիր Մեր Տունին, — նայինք պիտի ի՞նչ դընես, —
Մենք ալ Քեզի՝ Քու փափաքին կըհասցընենք, Աստուծով,
Քեզ կըտանինք նորէն Քու Տուն, Թոնիրիդ քով կըդընենք»:

Մարդը ելաւ որ պըտըտէր Տան բոլոր,
Սանասարը ըսաւ, — «Պապի՛կ, ա՛ռ հաց մը տա՛ր Քեզի հետ,
Ճամբան ուտես՝ որ անօթի չըմընաս,
Մինչեւ Մեր Տան մէկալ կողմէն՝ դառնաս՝ դուռին առաջ գաս»:

Ըսաւ, = «Պապի՛կ մեռնի Ձե՛զ···,
Ես ամի՛ս մ՛ալ՝ չեմ կընար Ձեր Տան բոլորտիք պըտուտ գա՛լ···,
Ու չե՛մ տեսներ՝ Թէ Ձեր Տունը ի՛նչքան է···, —
Ի՞նչպէս պիտի Ձեր Տան անուն դընեմ ես···»:

Պըտրիկ Եղբայր Բաղդասարն ալ՝ ի՞նչ ըսաւ· —
— «Պապի՛կ,-ըսաւ-, արի՛ ես Քեզ չալկեմ առնեմ Իմ քամակ,
*Մեր Տան բոլոր *) կան ածեմ *),*
*Դուն տե՛ս՝ ու նոր *) անո՛ւն դիր···»:*

---

*) Ապով, Նպատակով, Մտքով, Դիտումով: *) Ջոջիկ, Տարէքոտ եւ վորձառու: *) Բոլոր, Բոլորտիք: *) կան ածել, Պըտըտցնել, Չրջեցնել: *) Նոր, Ապա՛, յետոյ:

105. Ալեւորից «Ասիկ Սասո՛ւմ է...» Զարմացական Խօսքին Վրայ՝ Տաճ Աճուցը Մնաց «Սասուց» կամ «Սասմոնց Տուն»

ՁՍ·150,151,152, 153,154, Հ·408,10 (Հ·10), ՁԿ·334,335,336, 337, Կ·120, (Ս·144)Ձ·, Ս·144, Ց·67,68,19, Ե·482,610,536, Ձ·՝ Ե·482,610, Լ·64,17, (Լ·64), Ա·49,48·

Ան ալ՝ Պապիկ՝ ելաւ այդտեղ հացն առաւ,
Դըրաւ Իր ծոց, դընաց դուրս·
*Բաղդասարը գ'Անի չալկեց, վաթ մը *) Տան չուրջ կա՛ն ածեց։ —*
Երդին դըրան այն մէկ կըշտէն՝ լուսաբացին դուրս ելաւ,
Բոլորտիքը պըտըտեցուց չորս դիհէն,
*Ճաշին *) հասան մինչեւ կէս,*
*Իրիկունը՝ հըրամենցին *)՝ մէկալ կուշտէն Տուն դարձան, —*
Երաւ նորէն՝ Իր չալկած տեղ՝ դեսին դըրաւ Բաղդասար,
Ու Պապիկին ձեռք պագաւ։

— «Պապի՛կ, եկա՞ր...,-հարցուց Իրեն Անասար-·
Ու Մեր Տունին բոլորտիքը ման եկա՞ր...»։
= «Եկա՛յ...»,-ըսաւ Ալեւոր։
— «Պապի՛կ, դէ՛ բարո՛վ եկար...,
Մեր Տան անուն դընես ի՛նչ...»։

Ըսաւ, = «Որդի՛, Պապիկը Թող Ձեզ մեռնի՛...,
Աստուած Ձեր Տուն օրհնէ՛ ու չէ՛ն պահէ մի՛ չո...,
Ասիկ՝ Տուն չ'է՛...՝ չիներ էք...,
*Աս ի՛նչ սասո՛ւմ *) Քարեր քերած դըրած էք...,*
Քարէ սիւնին՝ սիւն զարկեր...։ —
Ասիկ,-ըսաւ, ալ Տուն չ'է՛...,
Ասիկ՝ ալ Տան հաշիւ չ'է՛... —
*Ասիկ Սասո՛ւմ է..., Սասո՛ւմ... *)· —*
*Ըվա՛ *),-ըսաւ,... սա՛-սո՛ւմ Բե՛րդ մ՛ է՝ չիներ էք...»։*
— «Վո՛ւյ, ապրի՛ս Դու..., Պա՛պի՛կ,-ըսաւ, Անասար-·

---

*) Փաթ մը, Շրջան մը, անդամ մը։ *) Ճաշին, կէսօրին։ *) Հրամենցին, Նախընթերիքի պահուն։ *) Սասում, (երբեմն նաեւ ցասում), Սասանելու չափ՝ մեծ, խոշոր, վիթխարի, սարսափելի, սասիկ մեծ· Համմտ·՝ «Սասում սարեր» (Առիւծ-Մհէր, Հտծ· 229)։ *) Ըվա՛, ի՛հէ՛, հէ՛...։

Աստուած Քեզի Ա՛րքայութի՛ւն տայ···,-ըսաւ·
Դուն Մեր Տունին՝ անուն մ՛ դըրի՛ր ու դըրի՛ր···, —
Սասո՛ւմ է Ա՛ս, ու Սասո՛ւմ···, —
*Մեր Տան անուն՝ ՍԱՄՈՒՄ *) է···»:*

Անկէ յետոյ՝ այդ Քաղաքի անուն մընաց՝
*ՍԱՄՄԱՆՑ-ՏՈՒՆ *),*
*կամ՝ ՍԱՄՈՒՆ *)···:*

106. Սանասար կ'առաջարկէ Ալեւորիճ՝ Մնայ Իրենց Գով, Բայց Ան Չի կենար

Չ·՝Հ·10, ՉՍ·155, Չ·

Բերդին անուն երբոր դըրին ու պըրծան,
Սանասարը՝ — «Պապի՛կ,-ըսաւ, արի՛ մնացիր Դուն Մեր գով
Մենք Քեզ չա՛տ լա՛ւ կըպահենք···»:
Հալւոր վերցուց ի՞նչ ըսաւ· —
= «Որդի՛,ըսաւ, Աստուա՛ծ Թէ որ կըսիրես՝
Ձիս կըտանիս՝ նորէն կ'դընես Իմ Տան դուռ,
Իմ կուչտ կըրա՛կ †) կըվառես հոն, ձըդես որ ծուխն երկինք վեր···: —
*Ան՝ վաքան *) է···, Իմ մանկութեան Ընկերայրը···,*
Ես ուրիշ տեղ համբերութիւն չե՛մ դըտներ···»:

Այն ժամանակ՝ Սանասարն ալ, — դէ՛, Բաղդասա՛ր, ե՛լ,-ըսաւ,
*Տուրիկ *) մ՛ էլիճ *) Ոսկի՛ ըրէ, ու բե՛ր տո՛ւր մեր Պապիկին,*
Ձինքը հեծցուր Քո Ձիուն վրա՛յ՝ ա՛ռ ու տա՛ր,
Այնտեղ ինչ Դուն՝ մեր Պապիկը բըռներ էիր ու բերեր՝
Այնտեղ նորէն, կըրակի՛ն գով †), դի՛ր գետին,
Երթայ Իր Տուն, Աստուած Իր քա՛ն աջողէ···»:

---

*) Փոփոխակէ, փոփոխակ՝ Սասում, կա՛մ Սասուն, Սասմանց Տուն, Սասունանց Տուն, Սասնայ Քաղաք (Տեսնել *մանրամասնութիւններ՝ Բ. Հատոր*): *) Վաքան, Մենդալայր, հայրենիք, հողմայր: *) Տուրիկ, Քսակ, տոպրակ, պարկիկ: *) Իլիճ, Լեցուն: *) կուշտ, Գով մօտ: †) կրակի, տան օջախ՝ պաշտամունք:

107. Բաղդասար՝ Պապիկը Կբռնցի Կրկնէ Իր Ցեղը

ՁՍ·156,157,158,159, 160, Հ·10,408, Կ·120,Ց·68, (Ց·19).

Բաղդասա՛րն էր, — չուտ մը ելաւ կանգնեցաւ,
Տուրիկ մ՝ Ոսկի լեցուց, այնտեղ, բերաւ տըւաւ Պապիկին,
Տըւաւ նաեւ ճամբու հա՛ց, —
Վերցուց Պապիկն՝ առաւ դըրաւ Ձիուն դաւակ, ու դացին,
Տարաւ Պապիկ՝ դըրաւ ա՛յնտեղ՝ ինչ բըռներ էր ու բերեր,
*Նորէն այնտեղ դըրաւ դեռին, ցանի կուշտ *),*
Կըրակ վառեց՝ դըրաւ դէմ...:
Ալեւորն ալ՝ Իր դըդակը վար առաւ՝
Օրհնեց Իրենք, Իրենց Տուն...:

Բաղդասարը ըսաւ, — «Պապի՛կ, դէ՛ դընա՛,
Աստուած Քու հետ Քող ըլլայ:
Քու Ոսկին ալ՝ աղատ դիր Քու Թեւին վըրայ՝ ու դընա՛,
Մի՛ երկիւղիր. Մենք այստե՛ղն ենք. ո՛չ ոք Քեզի չի՛ դըպիր.
Ով որ Մեր ձայն ու Մեր անուն լըսեր է՝
*Ա՛լ աստեղուանք՝ մա՛րդ այն բաներ *) չի՛ ըներ.*
Քալէ՛ դընա՛..., մի՛ վախնար...»:
Պապիկն ալ, = «Դէ՛հ, մնացիր քարի՛, Որդի՛»,-ըսաւ ու դընաց: —
Բաղդասարը դարձաւ եկաւ Իրենց Տուն:

108. Սանասար Եւ Բաղդասար՝ Իրենց Բոլոր Ազգասիրը Սասուն Կըբերեն Ու Ժամ Ալ Կըօրհնեն

ՁԿ·339, Ա· 48, Ձ·՝Ա·48,49, Կ·120,Կ·120՝Ձ·, (Կ·120), Լ·64, Ձ(Ց·68).

Անկէ յետոյ՝ ելան առին Իրենց Մայրն ալ՝ ու բերին,
Իրենց եղած բոլոր բաներն ալ՝ քաշեցին բերին հոն:
Մայրը վերցուց ըսաւ, — «Որդի՛, դացէ՛ք Ձեր Մեծ-Հօրը քով,
*Բերէ՛ք այստեղ՝ որ Ձեր Քաղաք Ճոխանայ ու Հաստատուի *)»:*

---

*) Կուշտ, Քով, *մօտ*: *) Այն բաները, Զարիք, յարձակում, *աւազակութիւն*: *) Հաստատուիլ, Հաստատ դառնալ, Հիմնաւորիլ, *մայրաքաղաքի երեւոյթ ստանալ*:

Սանասար ու Բաղդասարը՝ դացին իրենց Պապուն քով, —
Շընորհակա՛լ եղան Իրեն, երկուսով, —
«Որ դ'Իրենք մեծ սիրով պահեր ու շահեր էր ըսկիզբէն,
Իրենց չինած Տան ծախքերն ալ տըւեր էր...»:
Հանեցին Պապ եւ Իր Մարդիկ ամենն ալ,
Ազգատոհմով առին եկան Սասմանց Տուն:
Մէկ Պալատ ալ՝ Թագաւորին համար այնտեղ չինեցին,
Ուրախութիւն ըրին, կերան ու խըմեցին, Ամենքով, —
— «Շընորհաւո՛ր ըլլայ...,-ըսին-, Բերդի նըման Ձեր նոր Տուն»:

Սանասարը ըսաւ, — «Քե՛ռհայր, նըստինք մինչեւ իրիկուն»:
Որ նըստեցան, Քեռհայր Աստղիկ-Պապ Արքան՝
Ըսաւ, = «Երթանք՝ ժամը աղօթք ընենք՝ դանք»:
Ըսաւ, — «Քեռհա՛յր, ժամ մոռցեր եմ՝ չե՛մ չիներ...,
Ո՞րտեղ պիտի աղօթք ընենք Մենք հապա...»:

Ելաւ Պապը ճամբու դըրաւ, ղըրկեց դընաց Իր Պալատ,
Ինքը եկաւ իր Մօր քով:

Մայրը՝ Լուսիկ-Թագուհին ալ՝ այն ժամանակ ի՞նչ ըսաւ. —
— «Մենք մարմնաւոր տուն չինեցի՛նք, ա՛յ Որդի՛,
Պէտք է որ մեր հոգեւոր տո՛ւնն ալ չինենք...»:

Հրաման հանեց, ու Ժողովուրդ, Ամենք եկան Ժողվեցան,
Սանասար Ինք՝ դընաց Քաղաք, Վարպետ բերաւ Իրեն հետ,
Ինչպէս Տուներն ու Բերդ չինեց կանգնեցուց, —
Այնտեսակ ալ, Բաղդասարի հետ մէկտեղ,
Ժամը չինեց՝ բարձրացուց: —
*Մէկ օրուան մէջ՝ Թագըստեցին *), կազմեցին,*
Մէկալ օրը՝ օծեցին ու ժամ-պատարագ ըրին մէջ...:

Անկէ յետոյ, օր-օրի, —
Ժողովուրդն՝ ցեղ-ցեղական՝ տընուր եղան, բազմացան,
Քրսանով ու երեսունով՝ դիւղ շըտկեցին, զօրացան, —
*Հազա՛ր-հազա՛ր Ծուխերդիսով *)՝ Սասմայ-Երկիր լեցուցին...:*

---

*) Թագըստել, Ամեն պակասները լրացնել: *) Ծուխերդիս, Ընտանիք, գերդաստան:

Ժ. ՍԱՆԱՍԱՐ ՈՒ ԲԱՂԴԱՍԱՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՄԷՋ

109. Սանասարի Ու Բաղդասարի Ցիրապեսուբեան Սահմանին Ու Աւղարուբեան Համբաւը

Ս·144-145՝ Չ·, Չ(Լ·64), Չ(Ե·945), (Հ·408,407), Ճ·68,69·

Երկու-եղբայր՝ Սանասար ու Բաղդասար՝
Շատ զօրացան ու տիրեցին ամեն կողմ, —
Բոլոր հողեր՝ Սեւ-Սարի չուրջ, Մըծմակայ-Ֆիթ, մինչեւ Մուշ,
Սեղան-Սարի Գօտին՝ ի վար, մինչեւ դուրան Ճապաղջուր:
*Տարածուեցան՝ գացին հասան մինչեւ Մուսուլ *) ու Բաղդատ. —*
Այդ կողմերու բոլո՛ր հողեր՝ Սանասարի ձեռքն էնկան:

Ա՛յնպէս կըտրին, արդար եղան՝ Սանասար ու Բաղդասար,
Որ Անոնց ձայն՝ աշխա՛րհ բըռնեց ամեն դին: —
Ու շատ Մարդեր ի՞նչ ըսին. —
— «Իրա՛ւի, Մենք ինչո՞ւ այստեղ նըստեր ենք..., —
Գող-աւազակ մարդեր կուգան, օրցերեկով թէչ դիշեր,
*Կըկողոպտեն ու կը տանին մեր Տաւարն *) ու մեր Ինչքեր...:*
Մենք պէտք է որ՝ երթանք այդ Սասուն: —
Երկու՝ կըտրին, Դիւցազն եղբայր կան՝ կըտիրեն Այդ երկիր,
Մա՛րդ մարդու ինչք եւ ունեցած չի՛ կողոպտեր, չի՛ տանիր...»:

Այսկերպով ալ՝ եկա՛ն, եկա՛ն, լեցուեցան ու բազմացան...,—
Երկիր չէնցաւ, Սասուն դարձաւ մե՛ծ Քաղաք:

Երկու-եղբայր, իրենց Մայրն ու իրենց Պապ՝
*Ամեն մէկուեղ՝ օր երեք ժուամ *) աղօթ ու ժամ կ'ըսէին:*
Իսկ Իրենք ալ՝ ամեն օր՝
Երկուք մէկուեղ՝ Սարը որսի կ'երթային:

---

*) Մուսուլ կամ Մըսըր՝ Հին Ասորեստանի անունն է: *) Տաւար, Դուարը, պետեղնաւոր ընտանի անասուններ: *) ժուամ, Պահ, ժամադամ:

110. Մեծերը՝ Այս Անգամ Աղջիկ Կրփնեռեն՝ Որ Սանասար Ու Բաղդասար Ամուսնացնեն

Ջ(Ե·67), Ջ·՝Ե·19,69, Հ·10, ՋԿ·203,ՋՍ·161, Ե·536, Ջ·

Ա՛լ այս անդամ Մեծերն ըսին, — «ի՛նչ ընենք ու ի՛նչ չընենք···, —
Պէտք է բերենք՝ Սանասարն ու Բաղդասարը պըսակենք···»։
Ու՝ «Որտեղէն Աղջիկ բերենք»՝ երբ ըսին, —
*Անոնց Ջոջիկ *) Քեռի-Թորոսն ի՞նչ ըսաւ· —*
*— «Ձեզ արժան է, Որդի՛,-ըսաւ, ո՛րտեղ Եօթ-Ճիւղ *) քոյր որ կայ՝*
Եօթը-Ճիւղէն աղջիկ բերենք ու պըսակենք Ձեր վըրայ»։ —
Ու կան եկան՝ որ Եօթ-Ճիւղէն Քոյր գըտնեն···։

Անոնք՝ այնտեղ՝ Եօթ-Ճիւղէն Քոյր Թող փընտռեն, —
— Ժամանակ մը վրան անցաւ — ···
Ջըրոյցն ալ Մենք ո՞ւրկէ տանք···, —
— Պղընձէ-Քաղքի՛ն ղըրոյց տանք· —
Ձին-Մա-Ձինու Թագ՝ւորաղջիկ՝ Քառասուն-Ճիւղ-Մամ-Քոհարէ՛ն···։ —

111. Պղնձէ-Քաղքի Թագաւորի Աղջիկը՝ Երազի Մէջ Կըսիրահարի Սանասարին

Ջ·, Կ·113,4, (Կ·113,4), ՋԿ·203,204, Հ·10,408, (Հ·408), Ե·482,610, ՋՍ·161·

Սանասարի քաջութեան ձայն՝ օրէօր՝
Տարածուեցաւ՝ լինկաւ բոլո՛ր երկիրներ, —
*Խօսքն ու ղըրոյց՝ բա՛րձըր ելաւ այս հետին *)· —*
Թէ՝ «Սասունէն երկու-կըտրի՛ճ են ելեր···,
Մէկի անուն Սանասար է, մէկի անուն՝ Բաղդասա՛ր···,
կըռապաչուխ-թագաւորը՝ բըռներ՝ զարկեր են գետի՛ն···,
Քառասո՛ւն կանգուն գետինի տա՛կն են տարեր···, —
Ա՛յսպէս, ա՛յսպէս, ա՛յսպէս բա՛ն···»։

---

*) Ջոջիկ, *Մեծաւորը, կարգադիր*։ *) Թերեւս՝ *ըսել կ'ուզուի՝ եօթը պորտի հետաւորութեամբ՝ աղջիկ*։ *) Այս *հետին, Այս ան-գամին*,

Զըսե՞ս ապա՝ երկի՛ր մ՚ալ կայ՝ շատ հեռո՛ւն, —
Այն երկրի Տէր, Թագաւորն ալ՝ Աղջիկ է՛...,
Իր անունն ալ՝ Քառասուն-Ճիւղ-Ծամ-Գոհար է՛ ...: —
Համբաւն հասաւ Ջին-Մա-Ջինու Թագաւորի Աղջկան, —
Գընձէ-Քաղքի Քառասուն-Ճիւղ-Ծամ-Գոհարին: —
Լըսեց որ թէ՝ այդ կերպ կըտրիճ Մարդ մը ելեր է աշխարհ...,
Եւ անունն ալ Սանասա՛ր...,
Երազի մէջ՝ Անի տեսաւ, ու չա՛տ սիրուա՛ծ եղաւ...:

113. Գընձէ-Քաղքի Թագաւորի Աղջիկը՝ Սիրու Գիր Կըղրկէ Սանասարին

Կ·4,113 (Կ·4,113), Հ·408,10, Զ(Հ·10), (Լ·66), Լ·66, ԶՍ·161,162, (ԶՍ·161), Ճ·69, ԶԿ·205, (ԶԿ·205), Ե·482,610,483, (Ե·483), Զ·

*Աղջիկն այս բան *) երբոր լըսեց՝ իմացաւ, —*
Ելաւ՝ Ան ալ՝ առաւ մէկ կուժ լի՛քը Ջուր՝
Բերան Խընձոր մը դըրած·
Առաւ մէկ ալ դատա՛րկ կուժ՝
*Բերան Խընձոր մը զարկած *)·*
Գիր մ՚ալ դըրեց՝ իր լեզուէն ու սիրով...,
*Իր Պատկերն ալ՝ հանեց *) դըրաւ Թուղթին մէջ,*
կանչեց Քամին ու Աղջիկ մը, — Թուղթը տըւաւ Աղջկան ձեռ,
— «Քամի՛,-ըսաւ, ա՛ռ այս երկու նոր կուժեր,
*Աղջի՛կ, Դուն ալ եղընկենի՛դ *) ել հագիր, —*
Առ՛ք կուժերն ու այս Գիր,
Տարէ՛ք Սասո՛ւմ հասցուցէք,
Եւ աջակողմ երդիքէն՝
· Սանասարի բարձին քո՛վը ձըղեցէք· —
Սիրու-Ծաղիկ Քըթին տըւէ՛ք՝ ու եկէ՛ք· —
Որպէսզի Ան՝ թէ կըտրիճ է՝ դա՛յ այստեղ,
Ու Ջիս տանի Իրեն համար, — ըլլանք էրիկ ու կընիկ...:

---

*) Այսինքն՝ «Սանասար անունով կտրիճ մարդու մը՝ աշխարհ իջնալու համբաւն» երբոր լսեց...: *) Զարկած, Տեղաւորած, ապուցած: *) Հանել, Գծագրել տալ (պատկեր, դէմք): *) Եղունգնկենիկ, Եղունգիկի, աղաւնիի փետրագրեստ· աղաւնենի:

Զերնե՛մ ,-ըսաւ, ու չիմանա՛մ՝ թէ խաբուիք՝
Բաղդասարի անկողինին քով դընէք···»:

118. Աղջիկն Ու Քամին՝ Գիրն Ու Կուժերը Կըտաճին Սասուն, Սանասարի Ու Բաղդասարի Ծոդիէն Վար Կրնգլեն

ՀԿ·205,206, Հ·, (Ե·483), Ե·610,483, (Լ·66), ՀՍ·162, Ց·69,70, Հ(Ց·69), Կ·4,113, (Կ·113,4)Հ·, Հ·10·

Աղջիկն ըսես՝ կախարդ-կընիկ, եղուընկենին որ հադաւ՝
Դարձաւ եղաւ Աղաւնիի նըմանակ,
Քաւասուն-Ճիւղ-Մամ-Դոհարի թուղթին առաւ բըռնեց իր կըտուց,
Քամին՝ կուժեր թեւերուն վրայ վեր վերցուց, —
Թըռան եկան, հասան Սասում, ու Պալատին դէմ կեցան: —
Աղակողմի երդիքին վրայ գընացին ու իմնչ տեսան· — .
*— Տեսան որ մէկ անկողնի մէջ՝ վարդն երեսին փըթըթած *)՝*
Պատկերի՛ պէս, երիտասարդ, կըտրիճ Տըղայ մ՝ քընացեր, —
Աչնպէ՛ս քընտներ, կարմըրցե՛ր է Իրեն դէմ՛ք···,
*Որ Արեւուն կ՝ըսէ «Դուն կա՛ց՝ ե՛ս ելնեմ»··· *):*
Չորդ մ՝ Աչտանակ՝ գըլխո՛ւն կողմը կըվառի,
Չորդ մ՝ Աչտանակ՝ ոտներուն կողմ կըվառի,

Սիրու-Թուղթը բերողներէն †) մէկն ըսաւ· —
— «Քուրի՛կ †),-ըսաւ-, երթանք մէկա՛լ երդիսէն վար խրիչկանք),*
Կըրնայ ըլլալ՝ Սանասարը Աւիկ չ՛է՛···»:
Գացին մէո՛ւս երդիքէն վար նայեցան, —
Տեսան որ մէկ անկողնի մէջ՝ ուրի՛շ Մարդ մը քընացեր·
Աչնպէ՛ս քընտներ՝ կարմըրցե՛ր է···՝ որ Ան՝ մէկա՛լ Տըղայէն
Տասնապատի՛կ աւելի շատ խօրոտ է···:

Քամին ըսաւ, = «Քուրի՛կ †), Ա՛ս է Սանասար,

---

*) Վարդն երեսին փթըթած, *փթթած վարդի պէս՝ վառ-կարմիր երեսներով: *) Ելնել, Ծագիլ, երեւալ(արեւի): †) Կարելի է ենթադրել որ՝ Աղաւնի-Աղջիկն ու Քամին՝ երկու կախարդական տուրհանդակներ եւ էգ էակներ են, ժողովրդի ըմբռնումովը: *) Իրիշկալ, Նայիլ-տեսնել:

Գիրն ու կուժեր՝ Աստ՛ր բարձին քով դընենք...»:
Աղջիկն ըսաւ, — «Աստուա՛ծ վըկայ՝ այս Մարդ լա՛ւ է՝ քան Մէկալ,
Բայց Երկուան ալ՝ պառկած են ու քընացած, —
Ա՛լ չե՛մ դիտեր, Ա՞ս է՝ թէ՞ Ան՝ Սանասար...»:
Մուքն էր՝ չդիտցան թէ ո՞ր մէկն էր Սանասար,
կամ՝ ո՞ր մէկը՝ Բաղդասար, —
Ու ձըգեցին, — Գիրն ու կուժեր —, Բաղդասարի բարձին քով:
Դարձան դացին Իրենց տեղ:

114. Բաղդասար Կ'առնէ Գիրը Կըկարդայ

ՁԿ·207, Ճ·70,69, Ձ·՝Ճ·69,70,Կ·113,114, (Կ·114), Կ·5, Ե·483,610, 536, (Ե·483), ՁՍ· 162, (ՁՍ·162), (Լ·66), Ձ·

Առաւօտուն Ամենք ելան հագուեցան,
Լըւացուեցան՝ որ ժամ երթան՝ աղօթքին, —
Նայեցան որ՝ Բաղդասարը մէջտեղ չըկայ, չ'է՛ եկած...:
*Դու մի՛ ըսեր...՝ Բաղդասարը քունէն զարթեր *) ելեր է՛...: —*
Դարձաւ տեսաւ՝ որ Թո՛ւղթ մը կայ բարձին քով.
Առաւ բացաւ, կարդաց...՝ որ ի՛նչ դըրած էր այդ Թուղթին մէջ: —
— «Ձին-Մա-Ձինու Թագաւորի Աղջիկն,
«Պղընձէ-Քաղքի Քառասուն-Ճիւղ-Մամ-Դոհարէն՝
«Շա՛տ-չա՛տ բարեւ՝ Սանասարին Բաղդասարին,
«Մանաւանդ Թէ՝ Սանասարին, Սանասարին...:
«Սանասա՛ր Տղայ, —
«Ես՝ Դոհարըս՝ Պղընձէ-Քաղքի Թագաւորի Աղջիկն եմ.
*«Իմ Սիրտ՝ քան այս Դառապկ-Կուժը սերսուռ *) է.*
«Իմ Գըլուխը՝ քան այս Լիք-Կուժ լեցուն է.
«Ամեն տեսակ Աստծու-Չնորքով լըցուկ եմ.
«Քառասուն տեղէ՝ Քառասուն-Կըտրիճ՝ եկած են Ձիս ուզելու,
«Ես Իմ Ինսքը չեմ տըւեր, —
«Երազով Քե՛զ եմ տեսեր..., —
*«Ինձի շա՛տ դուր *) կուգաս Դուն...,*

---

*) Զարթիլ, Արթնալ: *) Սերսուռ (սերտ-սուրբ), Մաքուր, անապակ, կոյս: *) Դուր (դիւր), Հաճելի, բաղձալի:

«Արի՛ Ձիս տա՛ր Քեզ համար, —
«Ընկանք էրիկ ու կընիկ...:
«Այս Թուղթ՝ Քեզի՛ է կըղըրեմ, Սանասա՛ր, —
«Ու Պատկերիս հետ կըղըրկեմ Քեզ համար...»:

115. Բաղդասար՝ Գիրը Կըկարդայ Ու Կըխոհրդածէ

ՀՍ·163, Ե·70, Հ·՝Ե·70, ՀԿ·208, Հ·(ՀԿ·208), Ե·610,483, Հ·՝Ե·483, Կ·114, Հ·11·

Երբ Բաղդասար կարդաց այս Գիրը՝ որ Իր Եղբօր եկեր էր,
Ու տեսաւ որ՝ Եղբօր՝ բարեւ երե՛ք անգամ է գըրեր՝
Իր մըտքին մէջ խըռովեցաւ..., — «Է՛յ, հա՛յ,-ըսաւ, ա՛ս նայէ
Ա՛յս ի՛նչ բան է..., Իմ Եղբայրը եղեր այսպէս անարդար...,
Առանց Ինձի՛ դո՛րծ կըբռնէ ծածուկէն..., —
Իմ Եղբայրը կըպըտակուի՛...՝ Ես անտեղեակ եմ գործէն...:
Անիկ ու Ես՝ եղբայր ըլլանք երկուորեակ՝
Երե՛ք անգամ բարեւ գըրէ Սանասարին, մէկ՝ Ինձի՛...:
Լա՛ւ, Սանասար՝ Ջոջ Եղբայրն է..., առաջ Անո՛րն է գըրեր..., —
Ինչո՞ւ սակայն՝ երե՛ք անգամ բարեւն Անոր է գըրեր...:
Որ այնպէս է՝ Ես ալ Անոնց ժամ ազօթքի չե՛մ երթար...,
Պիտի դարձնեմ՝ Սանասարը ըսպանեմ...՝
Երթամ բերեմ այդ Աղջիկը՝ Ինձ համար...,
Կա՛մ թէ եղնեմ՝ Իմ Ձին հեծնեմ ու փախի՛մ...,
Երթամ կորսուիմ՝ ուրիշ հեռո՛ւ մէկ աշխարհ..., —
Տեսնեմ Աստուած ի՞նչ կուտայ Ինձ, այս անգամ...»:

116. Բաղդասարի Ուշը Կ'երթայ՝ Ի'ինայ. Մայրը՝ Սանասարը Կըդրկէ Որ Եղբայրը Ժամ Բերէ

Հ·11, Ե·483, ՀԿ·209, ՀՍ·163, Հ·,Կ·5, Կ·5՝Հ·, Ճ·19 [illegible]

Բաղդասարը Իր սըրտի մէջ խո՛ց ըլաւ...,
Դէմքը կախեց ու նըստեցաւ..., չելա՛ւ երթար ազօթքի: —
Ա՛լ Եղբօրը ցոյց չըտա՛ւ եկած Թուղթ,
Սանասարին չըխօսեցա՛ւ այդ մասին, —
Դարձուց Գիրը՝ ու մէկ դիր ալ նայեցաւ,

Թուղթի վրայի պատկեր տեսաւ, Գիրը ծալեց՝ դրաւ ծոց, —
Հեւքը դընաց..., արիւն քիթէն փըրթաւ եկաւ..., ու ինկաւ...:

Սանասար ու Բաղդասարն ալ՝ թէ ըսես՝
Երբոր իրենց կընիկ առին՝ կարգուեցան,
*Իրարմէ չոկ *) սենեակի մէջ կըպատկէին-կ'ելլէին. —*
Մինչեւ այդ օր՝ երկու-եղբայր՝ կըպատկէին միատեղ:

Մայրը տեսաւ՝ որ Բաղդասար չեկաւ ժամը՝ աղօթքի՝
Դարձաւ ըսաւ Սանասարին, թէ, — «Որդի՛,
Գընա՛ տե՛ս թէ՝ Բաղդասարը ինչո՞ւ չեկաւ այս առտուն.
*Կըրնայ ըլլալ՝ որ չարախաբ *) է եղեր...:*
Որդի՛, ըսաւ, գընա՛ ըսէ՝ թող գայ ժամը՝ աղօթքի...»:

117. Սանասար Կ'երթայ Եղբայրը Կանչելու, Ա.ճ Ձի'զար

Կ·5,114, (Կ·113), Ց·70,71, Զ·Ց·70,71, Զ(Ց·77), (ԶԿ·210), ԶԿ·211·

Սանասարը ժամէն ելաւ դուրս՝ տեսաւ՝
Որ Իր Եղբօր Աստղը՝ երկինք նայեր է..., —
Հաղիւ կըտոր մ' հոգի մնացեր է Իր մէջ..., —
Վազեց դընաց՝ Բաղդասարի դուռ ծեծեց, —
— «Բարե՛ւ, եղբա՛յր,-ըսաւ, ինչո՞ւ այսօր չե՛ս գար աղօթքի...,
Ե՛լ երթանք ժամ, փառաբանե՛նք Մեր Աստուած,
Ապա երթանք՝ հա՛ց ուտենք»:

Բաղդասարը խըռովեր է..., ձայն չի՛ տար...,
Եղբօր բարե՛ւն անդամ չառա՛ւ՝ ու ըսաւ, —
= «Գընա՛..., չե՛մ գար ես Ձեր ժամ...»:

Սանասարն ալ՝ դէմքը կախեց, ելաւ եկաւ Իր Մօր քովՀ,
*Սիրտը լեցուած՝ ըսաւ, — «Մարէ՛, Իմ Եղբայրը ոբկեր *) է...,*
Չո՛ւզեր ժամ գալ..., Դո՛ւն գընա...»:

---

*) Չոկ, Չաւտ, առանձին: *) Չարախաբ, Չար ոգիներէ խաբուած: *) Ոբկի, Սրտոտիկ:

118. Բաղդասար վէճ կրփնեռէ Եղբօր հետ

2Ս·164,165,166,167,168,169, 2Կ·211,212,213,214, 2·, Ե·483,610, 611, (Ե·611,484), 2(8·71), Հ·11, Կ·114·

*Մայրը ելաւ՝ կէսօրուան ու հըրամենցին *)՝ հա՛ց *) բերաւ,*
— «Տըղա՛յ,-ըսաւ, հացի պա՛հ է, Որդի՛, եկէ՛ք՝ հա՛ց կերէ՛ք»:
Սանասարը եկաւ հացի նըստեցաւ,
Բաղդասարը սըրդողեր է, չեկաւ նըստէր՝ հաց ուտէր...:
Մայրը ըսաւ՝ չըխօսեց....
Սանասարը ի՛նչ որ կ՛ըսէ՝ Անոր չի՛տար պատասխան...:
Ան ալ կանչեց, — «Եղբա՛յր,-ըսաւ, մեռնիմ ջե՛զ
Ինչո՞ւ չես գար՝ հաց ուտենք....
*Ի՞նչ է եղեր՝ որ Դուն այդպէս լեցուեր *) ես...»:*

Բաղդասարը դարձաւ ըսաւ, — «Ձու հաց կերա՞ր, Սանասա՛ր...»:
= «կերա՛յ...,-ըսաւ, բայց խո՛ց կերայ..., ա՛յ Եղբայր....
Երբ ես կ՛ուտեմ ու Դուն այդտեղ կըպըշկիս...՝
Ես չե՛մ գիտեր՝ իմ վո՞ր գըլնաց՝ Քէ՞ քամակ...»:
— «Զէ՛, խրա՛խ,-ըսաւ Եղբօր՝ Բաղդասար..
Անո՛ւշ կերար Դուն ձու հաց...: —
Բայց ա՛յն Ադուաձ որ Զիս ու ձեզ ըստեղծեր...,
Եւ ա՛յն Խաչը-Փետրակին՝ ինչ ձո թեւին..., —
Այսօր՝ Երէցն ու Մեր Մայր՝
Խունկ ու կըրակ պիտ՝ բերեն
Կա՛մ Իմ նորոգ դերեզմանի՛ս վրայ ծըխեն՝
Կա՛մ ձուկին...)»:*

*Սանասարը ըսաւ, = «Եղբա՛յր, գըլխո՛ւդ մատաղ՝ արեւո՛ւդ *)...*

---

*) Հրամենցին, Նախընթրիքի պահուն: *) Հաց, ճաշ, սեղան:
*) Լեցուիլ, ձկին ընել, ներսը ոխով լեցուիլ: *) Խունկ ու կըրակ բերել գերեզմանին վրայ..., երդմնաձեւ՝ որով երկուքէն մէկուն մահը կը պայմանաւորէ, եւ ակնարկութիւն՝ նոր ննջեցեալի դերեզմանին վրայ խունկ ծխելու սովորութեան: *) Գլխո՛ւդ մատաղ՝ արեւո՛ւդ..., Մատա՛ղ ըլլամ, մեռնի՛մ՝ գլխուդ եւ արեւուդ:

Ինչո՞ւ այդպէս կ'ըսես Դուն...,
Ի՞նչ է եղեր Քեզ այսօր...։ —
Կըսի՛ւ կ'ուզես՝ ելի՛ր երթանք՝ կըռապաչտի՛ հետ կըռուինք...,
Մէկ ճոթէն Դո՛ւն, մէկ ճոթէն Ես՝ զարնենք ամեն կոտորե՛նք.
Ինչո՞ւ Իրար ըսպանենք..., —
Օտարները խընդացընենք Մեր վըրայ...»։
— «Աստուա՛ծ վըկայ,-ըսաւ Նորէն Բաղդասար-,
Մինչեւ որ հոս կըռի՛ւ մ' չընենք Ես ու Դուն՝
Ես այդ հացը չե՛մ ուտեր...։ —
Պէտք է ելնենք՝ կըռի՛ւ ընենք՝ Ես ու Դուն...»։

Մայրը խընդաց, ըսաւ, — «Որդի՛, Սանասա՛ր
Ելի՛ր Դուն ու Բաղդասարը՝ զացէք քիչ մը խաղացէ՛ք,
Թող Տըղուն սիրտ բացուի, նայինք՝ այսօր ի՞նչ է խմացեր...,
Գուցէ երա՛զ է տեսեր..., —
Անոր սիրտը թող բացուի...»։

119. Սանասար Ու Բաղդասար Թէմիրէմի Կըկռուին

ՁԿ·215,216, Կ·114, Հ·11, (Հ·11), Ե·484,611, (Ե·484,611), ՁՍ·170, 171,172,173·

Ճար կըտրեցաւ Սանասարի վըրան ալ,
«Կ'ըլլայ,-ըսաւ, որ Իմ Եղբայր բան մ' է լըսեր՝ ու տըրտմեր,
Ելնեմ առնեմ Իմ Եղբայրը՝ երթանք Դաշտ,
*Ու քըչիկ մը Զիւթողսի *) խա՛ղ խաղանք,*
Որ Իմ Եղբօր սիրտը թեթեւս քիչ մ' իջնէ...»։ —
— «Դի՛է, է՛լ,-ըսաւ, երթանք դուրսը Զիւթողս...»։
Ելաւ առաւ Իր Եղբայրը՝ ու զացին։

Սանասարն էր, — ելաւ Իրեն Ձին հեծաւ,
Բաղդասարն ալ Իրե՛ն Ձին,
Ահին Գուրզեր՝ քըշեցին ու զացին ելան Հրապարակ,
Եկան՝ Գորզով՝ մէկմէկի հետ կըռիւ...։

Ինչ Մեծ Եղբայր Սանասարն է՝ պիտէ որ պարզ կատա՛կ է...։

---

*) Զիւթ-ողս, Զի վազցնելու խաղ, ձիարշաւ։

*Ինչ Բաղդասար, Պըղտիկ Եղբայր, ըսպանելո՛ւ կըխըտպէ *)···, —*
Սըրտո՛վ կ՚զարնէ···, կ՚ուզէ Եղբայրն ըսպանէ···: —
Դորլը ձեռն է, Սանասարի երկու աչքի՛ն կըզարնէ·
Սանասարը կատակ կ՚ընէ, Իր Դորլ բարձրէ՛ն կ՚անցունէ···:
Ա՛յն ժամանակ՝ Սանասարը միտք ըրաւ, —
«Ասիկ,-ըսաւ, Իմ Եղբայրը՝ Ինձ իրաւէ՛ն կըզարնէ···,
Ու Ձիս այստեղ ըսպանելո՛ւ կըխըտպէ···»: —
— «Էյ՛ Բաղդասա՛ր, Եղբա՛յր,-ըսաւ, Ի՞նչ կ՚ընես···,
Չըլլայ թէ Ինձ ըսպանելո՛ւ կըզարնես···»:
= «Հա՛ա՛···,-ըսաւ, ասօր կա՛մ Ես Քեզ կ՚ըսպանեմ, կա՛մ
[Դո՛ւն Ձիս···»:
Սանասարն ալ, — «Տըղա՛յ,-ըսաւ, Թէ Քո միտքը այդպէս է՝
Առաջին զարկ՝ կըռիւ ուզող մարդո՛ւն է,
Ու կըռիւը Դո՛ւն կ՚ուզես· —
Առաջ Դո՛ւն զարկ Քու հարուածդ···,
Դուն իմ պըղտիկ Եղբա՛յրն ալ ես, վերջապէս···»:

130. Մայրը կըդիտէ Իր Տղոց կռիւը Ու կ՚ատպէ

Հ·՝882-883, Հ՝Ե·538, Հ(Ե·484), Հ(Ց·133)·

Անոնց Մայրն ալ, Մուխի-Լուսիկ-Թագուհին,
*Որ կըդիտէր Անոնց կըռիւ՝ իր Առիջքին *) դէմ նըստած, —*
— «Փո՛ւճ Թող ըլլայ պատճառ եղող-,ըսաւ գըլուխ ծեծելով··
*Որ Իմ Ջուխտակ *) Նայիկ *) Տըղաք՝ լուսաթացէն արեւպատ *)՝*
Աբիւն խըմող Թըշնամու պէս՝ բերաւ-օձիք-օձիքի· —
Պիտի զարնեն՝ մէկ միւսի գըլուխն ուտէ՝ տո՛ւնս աւրեն···»:

Ան ալ ձեռքեր ծունկին զարկաւ ու կանչեց †)· —

— «Օ՛ Դուխ Սարեր, Քար ու Թուփեր, Քամիննե՛ր···,
«Շո՛ւտ լո՛ւր տարէք Իրենց Պապուն՝ Ըսկայորդի-Աբէյին,
«Թող գայ հասնի Իր Թոռներու կըռիւին···:

---

*) Խտպիլ, Հետամտիլ, Ձգնիլ, Նպատակ ունենալ: *) Առէջք, Պաշտպան: *) Ջուխտակ, Զոյգ, երկուորեակ: *) Նայիկ, Նապէտ, այդպիսի, այդ տեսակ (հազուագիւտ, կորնճ՝ տղաք): *) Աբեւպատ, Արեւամայր, երիկուն: †) Երգով:

«Օ՛ դուխ Ծովեր, օ՛ Դընդեղներ *), օ՛ Գետե՛ր...,
«Շո՛ւտ լո՛ւր տարէք Իրենց Պապուն՝ Հայոց-Ցուն, —
«Թող գայ հասնի՝ միջնո՛րդ ըլլայ Թոռներուն...»:

121. Կռիւ Մէջ-Բաղդասար Կ'իյնայ

ՁԿ·217,218, Կ·114, Զ·՝Հ·11, (ՁՍ·176), ՁՍ·174,175, Ե· 485,611,582-3·

Սանասա՛ր էր, — Ձին զաոնացուց ու գընաց,
*Նըշանքարի *) գլուխ կեցաւ:*
Բաղդասարն ալ՝ ասպարէզ մը առաւ, ոլրեց ու եկաւ,
Սըրտա՛նց կ'ուզէ՝ որ Իր Եղբայր ըսպանէ:
Երե՛ք անգամ, երե՛ք հարուածՙ Սանասարի կողմ զարկաւ,
Սանասարին քա՛ն չըկըրցաւ որ ընէր..., —
Գորզը գընաց՝ գըլխուն վրայէն վա՛ր ինկաւ: —
Սանասարն ալ՝ Գորզը վերցուց՝ Բաղդասարի դէ՛մ ձըգեց.
Կամա՛ց նետեց, Իր Եղբօր մօտ չըհասցուց, —
— «Եղբա՛յր,-ըսաւ, Ես չե՛մ ուզեր զարնել Քեզ.
Դուն զա՛րկ ու Ձէս ըսպանէ՛...»:

Ա՛ն չափ խաղցին...՝ մէկմէկու վրայ չըկըրցան,
Ձիուն վրայէն վա՛ր ցատկեցին, իջան աւին Գօտեմարտ,
Սանասարը վերցուց այնտեղ՝ Բաղդասարը դրաւ գետին.
Ա՛լ իր սըրտէն չըհանե՛ց որ հարուա՛ծ զարնէր Իր Եղբօր, —
*Դիժարացաւ *), զայրոյթն եկաւ Եղբօր դէմ,*
Մէ՛կ ապտակ մը զարկաւ Եղբօր երեսին,
Ու Ոտ տըւաւ՝ Գորզը ոտքով դէ՛ն հըրեց:
Իր ուժին չափ չե՛մացաւ,
Գորզն ուղակի Բաղդասարին չըդըպաւ, —
Գորզի երկաթ օ՛ղը դըպաւ մէկ ոտքին, —
Բաղդասարի ուշքը գընաց՝ ինկաւ այնտեղ՝ ու մընաց...:

---

*) Դընդեղ, Դնդող, Ալիք, կոհակ, ծփանք: *) Նշանիքար, Նշանակէտ: *) Դիժարանալ, Սիրտը դառնանալ:

128. Սանասար՝ Եղբայրը Կ'առնէ Կրտսերի Ցուց. Բաղդասար Ուսոպերած՝ Գիրը Եղբօր Կուտայ

2(2U·176), 2U·176, 177, 179, ե·485, 583, կ·114, (կ·5), Հ·11, (Հ·11), 2կ·219, 220, ց·71·

Սանասա՛րն էր, — պօռա՛ց կանչե՛ց..., եղբօր վերա՛յ փըռուեցաւ,—
— «Է՛յ վա՛խ,-ըսաւ, ես իմ ձեռքով՝ իմ աչքե՛րը կուրցուցի...,
Իմ ձեռաց թափ չըգիտցայ...՝
Ըսպանեցի՛ իմ եղբայր...»:

Սանասարն ալ՝ եղբայր չալկեց՝ առաւ բերաւ՝ ձըգեց Տուն,
Նըստեցաւ քով, մինչեւ առաւոն, ձեռքը մըտցուց եղբօր ծոց,
*Սիրտը մաժեց *), պօրտն ոլորեց ու չո՛ւր զարկաւ երեսին:*
Լոյս բացուեցաւ, խելքը եկաւ եղբօր վրան,
Հանեց իր տեղ նըստեցուց, —
Ըսաւ, — «եղբա՛յր, ի՞նչ էր եղեր Քեզ՝ որ այդպէ՛ս ըրիր Դուն...»:
Ըսաւ, = «Ինչ՛, իմ ոտ ցաւեցաւ՝ ուշքըս գընա՛ց գըլուխէս...»:
— «Դուն,-ըսաւ Իմ զարկիս առջեւ՝ գիտե՛ս որ չես դիմանար»:
Բաղդասարն ալ՝ Իր ձեռ տարաւ դէպի ծոց,
Թուղթը հանեց՝ Սանասարի ձե՛ռ տըւաւ, —
= «Ա՛ռ ու կարդա՛,-ըսաւ, եղբա՛յր,... տե՛ս թէ ինչո՛ւ
[չեմ զոր ժամ...,
Ես ի՞նչ սըրտով պիտի երթեմ ու ժամ գամ...:
*Ե՛ղբայր,-ըսաւ, ես չէ՛...՝ Դո՛ւն *)..., —*
Թէ Դուն ըլլաս՝ կ'ընդունի՞ս որ այդ Քառասուն-Ձիւղ-Մամ-Գոհար՝
Երե՛ք անգամ բարեւ Քեզի՛ ուղարկէ...՝
Մէ՛կ՝ Ինձի...»:

129. Սանասար Թուղթը կը Կարդայ Ու Եղբօր Կըրացատրէ Որ Իճի Աճեղեակ Է Աճցած-Թարմածէճ

2U·178, 162, 178, 180, 181, (2U·162), ց·71, 72, 2·՝ց·71, 72, Հ·11 2·՝Հ·11, կ·113, 114, կ·5՝2·, 2կ·207, 220, 221, ե·536, 483, 485, (ե·483), 2·

Սանասարն ալ՝ թուղթը առաւ՝ կարդաց տեսաւ որ ի՞նչ է..., —

*) Մաժել, Շփել, մարժել: *) Ես չէ՝ Դուն, ես չըսեմ՝ դո՛ւն ըսէ, եթէ դուն ըլլայիր իմ տեղ...(ի՞նչ պիտի ընէիր):

— Ա՛յսպէ՛ս բան մ՛..., —
— «Զին-Մա-Զինու Թագաւորի Աղջիկէն,
«Պղընձէ-Քաղքի Քառասուն-Ճիւղ-Մամ-Գոհարէն, —
«Շատ-շատ բարեւ՝ Սանասարին, Բաղդասարին,
«Մանաւանդ Թէ՝ Սանասարին, Սանասարին...:
«Սանասա՛ր տղայ,
«Ես՝ Գոհարը՝ Պղընձէ-Քաղքի Թագաւորի Աղջիկն եմ...,
«Իմ Սիրտ՝ քան այս Դատարկ-Կուժը սերսո՛ւռ է.
«Իմ Գլուխը՝ քան այս Լիք-Կուժ լեցո՛ւն է.
«Ամեն տեսակ Աստծու-Չնորքով լըցո՛ւկ եմ.
«Քառասուն տեղէ՝ Քառասուն-Կըտրիճ՝ եկած են Զիս ուզելու,
«Ես Իմ Խօսքը չե՛մ տըւեր. —
«Երազով Քե՛զ եմ տեսեր..., —
«Ինձի չա՛տ դուր կուգաս Դուն...,
«Աըի՛ Զիս տա՛ր Քեզ համար, —
«Ըլլանք Էրկիկ ու Կընիկ...:
«Այս Թուղթ՝ Քեզի՛ է կըգըրեմ, Սանասա՛ր, —
«Ու Պատկերիս հետ կըղըրկեմ Քեզ համար...»:

Սանասա՛րն էր, — Այս երբ կարդաց, ու Պատկերն ալ մէջ տեսաւ՝
Ըսաւ, — «Ե՛ղբայր, այս Գիր ապո՞վ *)՝ չէիր խօսեր Ինձի հետ...,
Եղեր էիր Ինձ Թըշնամի, Զիս ըսպանե՛լ կ՚ուզէիր...:
Այս մէկ դարտակ *) բարե՞ւն ապով՝ կըկըռուէինք Իրար հետ...»:

= «Հա՛ա՛,-ըսաւ, Անո՛ր համար՝ եղեր եմ Քեզ Թըշնամի...,
Որ մինակ Քե՛զ անուն կայ մէջ Աշխարքին՝
Ինձ՝ չըկա՛յ...: —
Պղընձէ-Քաղքի Քառասուն-Ճիւղ-Մամ-Գոհարէն
Քեզի հրաւէ՛ր է եկեր...՝
Ինձ՝ չըկա՛յ...»:

— «Ե՛ղբայր,-ըսաւ Սանասար..
Մէթէ Ես հո՞ն եմ եղեր...,
Ես այդ Աղջիկ տեսե՛ր եմ...,
Գիտե՞մ՝ Գոհար ո՛ր մէկն է....

---

*) Ապով, Պատճառով: *) Դարտակ, Պարապ, փուճ, գաւառիկ:

Ա՛ն է դըրեր···, ի՞նչ ընեմ···։ —
*Այն կենդանի՛ «Առէ՛ք կերէ՛ք» *) վըկա՛յ է՝*
Ես այդ բանէն տեղեակ չե՛մ····
Ես ինչնէ՛ ալ՝ չատ բարկացայ այդ դրծէն···, —
Ելի՛ր, եղբա՛յր, մատա՛ղ ըլլամ ես քու աչքին, երեսի՛ն···,
Այդ թուղթ՝ ինչի՛ եմ տըւեր,
Գընա՛ ու բե՛ր Բառսաւն-Ճիւղը՝ ինձ համար·
Անիկ,-ըսաւ- ինձի մա՛յր ու քո՛յր կենայ···, —
*Քանի՛ իմ Աչք դեռ ջուր *) կայ՝*
Անոր եռեւ պիտի մա՛ն դամ ու գըտնեմ,
Այն Աղջիկը առնեմ բերեմ ինձ համար,
Ինձի պէտք չէ՛ այդ Գոհար···»։

124. Երկու Եղբայր՝ Երիաւսուին

Զ·222, Ց·72,71, Զ·՝72, Ե·485,611, Զ·՝Ե·485,611, Հ·11·

Բաղդասարն ալ՝ ըսաւ, = «Եղբա՛յր, Սանասա՛ր,
Որ այդպէս է՝ ես ինձ մեղա՛յ···, Քո Աստըծուն ալ մէկտե՛ղ,
*Մըտքովս *)՝ ե՛ս ալ ուժ ունէի ինձի չափ···, —*
Չէի՛ դիտեր՝ Դուն Աստուծմէ չընո՛րհ ունիս, ո՛ւժ անչափ···։
Ես՝ քու պըղտի՛կ···, ա՛լ քու վըրայ ձեռք չըվերցնեմ ոչ մէկ տեղ·
Ասկէ յետոյ ի՛նչ որ ըսես՝ ինձի լըսե՛մ, Սանասա՛ր···։
Ելի՛ր դընա՛, այդ Աղջիկ բե՛ր ինձ համար·
Նայինք ի՛նչպէս կըյայտողի՝ որ բերես···։
*Դէ՛, մի՛ դադրիր, Եղբա՛յր,-ըսաւ-, ել քու հող ու քա՛րն ըրէ *),*
Քո Ձին հեծի՛ր, կանչէ՛ Աստուած, քո Նըշանած գընա՛ բե՛ր·
Ո՞վ է լըսեր, ո՞վ է տեսեր որ երբեք՝
Եղբայր Եղբօր Նըշանածը ինք առնէ···»։

Հաշտըւեցան, ելան իրենց հաց-մաց կերան, նըստեցան։

---

*) Առէ՛ք կերէ՛ք, Հաղորդութիւն, մաս («Առէ՛ք կերէ՛ք, ա՛յս է մարմին իմ···»)։ *) Ջուր, (Աչքի) Լոյս, Հիւթ։ *) Մտոքվս, ես այնպէս կը խորհէի, կը կարծէի թէ···։ *) Հող ու քարն ընել, Պատրաստութիւն տեսնել։

125. Սամասար Կ'ուզէ Երթայ Պղնձէ-Քաղաք. Մայրը Կը Տարհամոզէ Զինք, Բայց Ան Ելոր Կ'երթայ

Չկ·223,222,224, Չ·՝Չկ·222,223, կ·114,5, (կ·5, 116՝համ·՝93), ե·485,486,612, Հ·11,408, Չ(8·72), 8·72, ՉՍ·182,183·

*Օր մը՝ երկու *) որ անցաւ, —*
Սանասարը վերցուց ըսաւ, — Բա՛ղդասար,
Ես պիտ՝ երթամ՝ այն լիրբ կընիկ խըրատեմ..., —
*Քիչ էր մնացեր՝ որ մէկ Դիւցազն-Մարդու մ՝ զըլուխ պիտ՝ ուտէր *),*
Զիս՝ իմ Եղբայր՝ իրար ձեռքով զարնել տար..., —
Թըշնամիներ խընդացընէր Մեր վըրայ...:
Ե՛ղբայր,-ըսաւ-, Դուն կաց այստե՛ղ, Ես կ'երթամ. —
Բայց Մեր Նըշան այն է որ՝
Ամպ Երկինէ մէջ որ կանչէ՝
Աստղը մըթնի, Մատանին ալ թէ սեւնայ...՝
Պէտք է Հանդի՛նք Իրարու...»:

Բաղդասարը մընաց Իր Տուն, Ինկաւ Իրեն Նաղին Հետ,
Սանասարը Ելաւ Զընաց Իր Մօր Մօտ, —
— «Մարէ՛,-ըսաւ-, Քե՛ր Ջու Ձեռքը Համբուրեմ,
Պատրաստուէ՛ Ճամբուն տես Ինձի, —
Օտարութե՛ան Պիտի Երթամ՝ Զին-Մա-Զինու Երկրի Դէմ. —
Պղընձէ-Քաղքէն Թո՛ւղթ է Եկեր Իմ Եւեա...»:
Մայրն ալ Վերցուց Լո՛նչ Ըսաւ. —
= «Որդի,՛-ըսաւ-, Սա՛նասար,
Ինձի Լըսէ՛՝ Մի՛ Երթար..., —
Այդ Անօրէն Երկիրներէն Հազի՛ւ Վերթանք ու Եկանք...»:
Սանասարն ալ՝ Լո՛նչ Ըսաւ, —
— «Պիտի Երթա՛մ, Մարէ՛,-ըսաւ-, Թէ Զըլո՛ւխս ալ Զացեր է...»:

Մայրը Ելաւ՝ պատրաստուե՛ւն տեսաւ այնտեղ՝ Խընամով,
Մէկտեղ բերաւ ամեն բան: —
Սանասարը ա՛լ Չըկեցաւ, Հեծաւ Գուվիկ-Ջալալին,
Մօրն ու Եղբօր՝ Իր «Կաց-բարեւն» Ըրաւ Հոն, —
— «Մնացէ՛ք բարե՛...,-ըսաւ-, Ե՛ղբայր, Ես կ'երթամ..., —

---

*) Օր մը՝ երկու, Մէկ-երկու օր, օր մը՝ երկու օր: *) Գլուխն ուտել, (Մէկու մը) մահուան պատճառ ըլլալ:

Կ'նայիս երկինք, — ի՛նչ ժամանակ որ Իմ Աստղը մըթներ է՝
Ինձի՝ չուտո՛վ՝ Պղինձէ-Քաղաք կը հասնի՛ս...»:

Ան ալ կանչեց մէկիկ Աստուած, ինկաւ ճամբայ՝ ու գընա՛ց...:
Ո՛չ Թուր առաւ ու ո՛չ ալ Գորգ՝ Իրեն հետ. —
Քշեց ղէպի Զին-Մա-Զինու երկիրները...:

ԺԱ. ՍԱՆԱՍԱՐ ԴԷՊԻ ՊՂՆՁԷ-ՔԱՂԱՔ

186. Սանասար Կբհանդիպի Ճամբաներ-Բաժնող Ալեւորիցն Որ Իրեն Խրատներ Կուտայ

ՁՍ·184, Կ·5՝Ձ·, Ձ(Կ·5)·

Սանասա՛րն էր, —
Գընա՛ց, գընա՛ց..., — չա՛տ գընաց՝ թէ քի՛չ գընաց..., —
Գընաց հասաւ Ձորս-Ճամբայի խառնուրդի մ՚ —
Տեսաւ որ մէկ Ալեւոր-Մարդ՝ նըստեր այնտեղ, ճամբուն մէջ: —
— «Բարե՛ւ քեզի, Պապի՛կ,-ըսաւ Սանասար:
=«Աստծու բարի՛ն, քեզ, Սա՛նա՛սա՛ր..., -պատասխանեց Ծերունին,
Դէ՛ քու Ձիէդ իջիր վա՛ր, —
Քեզ խօսք մ՚ունիմ ըսելու...»:
— «Պապի՛կ,ըսաւ, Դուն ո՞վ ես որ՝ Ձիս կըճանչնաս անունէս,
Սանասարն եմ ես..., գիտես...»:
= «Հրեշտակ-Աստծո՛ւն եմ., ըսաւ,
Նըստեր եմ հոս՝ ու Ճամբանե՛ր կըբաժնեմ...:
Ո՞ւր պիտ՝ երթաս, Սա՛նասար...»:
— «Կ'երթամ,-ըսաւ, Զին-Մա-Զինու Երկիրները....
*Ինձի բարի մէկ Ճամբա՛յ մը նըշանց *) տուր...»:*

Ան ալ ըսաւ, = «Ա՛յս Ճամբայէն թէ երթաս՝
Կ'երթաս կ'ըլլաս Թագաւոր...:
Մէկալ Ճամբան թէ երթաս՝
Վաճառականի՛ն կըդառնաս...:
Բայց թէ երթաս Զին-Մա-Զինու երկիրները՝
Այնտեղ՝ վրնա՛ս կըքաշես...»:

---

*) Նշանց տալ, Ցոյց տալ, ցուցնել:

Սանասարն ալ ըսաւ, — «Այն դէ՛հ կ՛երթամ ես...՝
Եթէ գիտնամ որ Իմ Գլուխս երե՛ք տեղով կրկըտրեն...: —
Թէ որ ուրի՛չ խըրատ մ՝ ունիս՝ ըսէ՛ Ինձ...»:

Ան ալ ըսաւ, = «Որդի՛,-ըսաւ-, որ կ՛երթաս՝
Ճամբուդ վըրայ՝ ի՛նչ որ Գեղի հանդիպի, —
Թէ՛ Գար, թէ՛ Թուփ, թէ՛ Անասուն, թէ՛ Գաղան՝
Ամենուն ալ՝ բարե՛ւ տաս...,
Զանցնի՛ս առանց բարեւի...:
Թէ մոռացար, անցար առա՛նց բարեւի՝
Այն Երկիրը կախարդա՛ծ է չորս կողմէ՝
Շա՛տ-չա՛տ վընաս կուգայ Գեզ...»:

*Սանասա՛րն էր, — չընորհակըեց *) Պապիկին,*
«Մնացիր բարո՛վ» ըսաւ, եւաւ՝ հեծաւ Ձին,
Գըշե՛ց գընաց դէպի Պղընձէ-Գաղքի կողմ...:

127. Սանասար՝ Ճամբուն վ.րայ՝ Կրնացողիպի Գեռ-Խմողին

ՁԿ·225, ՁՍ·184,185,186,187,8·72, Ե·486,612, Կ·114, Հ·11, Ձ·՝Հ·11·

Ինկաւ Ճամբայ ու գընա՛ց..., —
Թէ որ՝ ըսենք՝ քառասուն օրուան Ճամբայ էր՝
Սանասա՛րը կըտրեց գընաց՝ երե՛ք օրէն, ու հասաւ, —
*Գընաց եզրեց *) Քառասուն-Ձիւղ-Մամ-Գոհարի հող՝ դո՛ւրս եկաւ:*

Տեսաւ որ մէկ կո՛չ Գետ կուգայ անդիէն,
*Մէկ Մարդ՝ իր Ոտ Ճըգեր Գետի ա՛յն կըտուկ *),*
Մէկը Ճըգեր ա՛յն կըտուկ, —
Ու կըղուեր է՝ բերան տըւեր Գետի դէմ՝
Այդ Գետ՝ ամեն՝ կ՛երթայ կ՛ւեցուի Աւազ փո՛ր..., —
*— Եօ՛թ Ջաղցի Ջուր *)՝ Ինքը մինա՛կ կըխըմէ...:*

Այդ Գետ-Խըմող՝ տեսա՛ւ որ Եթէ մէկ Զհաւոր Մարդ՝ կ՛երթայ, —
Կանչեց ըսաւ, = «Օ՛ Զհաւոր, Ճամբո՛ւ Մարդ

---

*) Շնորհակալել, Շնորհակալութիւն յայտնել: *) Եզրել, Սահմանին հասնիլ: *) Կտուկ, Երթուն, եզերք, ափ: *) Եօթ ջաղցի ջուր, Այսինքն՝ եօթը Ջաղաց դարձնելու չափ մեծ (գետ):

Աստծո՛ւ սիրոյն···, մէ՛կ պուտ ջուր տաս՝ ես խմե՛մ···,
*Ծարաւ մեռա՛յ···, իմ Աղիքներ վառուե՛ր *) են···»:*

=«Վո՛ւյ, Աստուա՛ծ ինու տո՛ւնը քակէ,-կանչեց ըսաւ Սանասար··
Աթէ Դուն ի՛նչ ուժի տէր ես···, ի՛նչ Մարդ ես···, —
Որ այդ Գետը կ՚երթայ Քու վիզը կըլեցուի···՝
Ու դեռ ինձմէ ջո՛ւր կ՚ուզես···»:

— «Հէ՛հը՛···, ես ի՛նչ Մարդ եմ,-ըսաւ Գետ-Ծմոզ··
Ես ինչ ուժի տէր եմ որ···,
Ձիւե՛րն ալ ջուր կըխմեն···: —
Ուժով՝ միայն ա՛յն Մարդն է՝
Որ անունը Սանասար···, —
Դեռ նո՛ր մէջտեղ է ելեր՝
Հասեր բլուններ կըռապաչուի-Թագաւոր,
Ու զարկեր է ամբունաչոր սլինդ գետին,
*Քա՛ռասո՛ւն նետ *) ալ՝ Գետնի տա՛կը տարեր է···:*
Ուժով Ա՛ն է···,
Ես ի՛նչ ուժի տէր եմ որ···, —
Ես՝ ջո՛ւր է որ կըխըմեմ···»:

Սանասարն ալ՝ քըշե՛ց անցաւ՝ ու գընաց···:

128. Սանասար՝ Կ՚երթայ-Կ՚երթայ՝ Կրնանդիպի Եօթ-Փուռի Հաց-Ուռողին

ՉՍ·188,189,190, Հ·11, Չ·՝Չ(ՉՍ), Ս·189·

Գընաց հասաւ մէկ տեղ մը, —
Տեսաւ որ Եօ՛թ-Ջաղաց՝ կ՚աղան, Եօ՛թը-Փուռ՝ Հա՛ց կըթըխեն,
Մէ՛կ Մարդ նըստեր՝ այդ ամե՛ն Հաց՝ ի՛նք կ՚ուտէ՛···:
Աչքը ինկաւ Ձիւտրին՝ որ կ՚երթար, —
— «Է՛հ՛է՛,-ըսաւ, Աստծո՛ւ սիրոյն, Ձիւտր՛,
Փըշուր մ՚ Հա՛ց տաս՝ ես ուտեմ···,
Ա՛լ անօթի մեռա՛յ ես···»:

*Սանասարն ալ,=«Հա՛յ, հա՛յ,-ըսաւ, Աստուա՛ծ Քո Տո՛ւն աւերէ,— Եօ՛թը-Ջաղաց՝ Աղուն *) կ՚աղան, Եօ՛թը-Փուռ՝ Հա՛ց կըթըխեն···,*

*) վառուիլ, ծամքիլ, չորնալ: *) Նետ, Նետաձիգ: *) Աղուն, (Աղալիք)Ցորեն:

Նըստեր՝ մինակ Դո՛ւն կ՚ուտես, —
Ու դեռ ինձմէ Հա՛ց կ՚ուզես...,
Աչիկ Դուն ի՛նչ ուժ ունիս...»:

— «Հը՛հը՛...,-ըսաւ Եօթը-փուռի Հաց-Ուտող-.
Ես ի՛նչ ուժի տէր եմ որ...,
Ճի՛ժն ալ ինձ պէս Հա՛ց կ՚ուտէ....
Ըսաւ՝ Ես ի՛նչ Մարդ եմ որ...,
Ուժով՝ ա՛յն մարդն է մխայն,
Որ՝ անունը Սանասար..., —
Դեռ նո՛ր մէջտեղ է ելեր,
Ու բըռներ է Սեննէքերիմ-Թագաւոր,
Ուժով զարկեր ամբռնաչոր պլինդ գետին,
Քա՛ռատ՚ան նետ ալ՝ գետնի տակը տարեր է...»:

Սանասարն ալ՝ թողուց գընաց, ու ըսաւ. —
— «Օրհնեա՛լ Աստուած..., Իմ Ձայն հո՛ս ալ եկեր է»:

189. Սանասար՝ Կ՚երթայ-Կ՚երթայ Կըհասնի Պամիէճ-Շուս Վազողին

ՋՍ·191,192,193,194,195, Զ·՝ՋՍ·192,193·

Քը՛չեց անցաւ ու գընա՛ց..., —
Գընաց նայեց՝ ի՛նչ տեսնէ..., —
Մէկ Մարդ՝ Ջաղջի-Քար մ՚ անցուցեր ա՛յն Թեւին,
Մէկին՝ անցուցեր ա՛յն Թեւին,
Քամուն կ՚ըսէ՝ «Դուն կ՚ատանաս *) Պըրակներ *),
Ձամբա՛յ տուր Ինձ՝ ես անցնիմ...»:

Սանասարն ալ՝ զարմանք մընաց, ու ըսաւ. —
— «Ես՛ Մարդ, ատիկ Դուն ի՛նչ ուժի տէր ես որ...,
Ջաղջի-Քարեր՝ ըրեր ես *) Քու Թեւերէն,
Քամուն կ՚ըսես՝ «Դուն կ՚ատանաս Պըրակներ,
Քեզ ե՛տ տուր որ՝ ես անցնիմ»...:»
— «Փէ՛հէ՛...*),-ըսաւ՝ Քարեր Թեւին Շուտ-Վազող-.

---

*) Ատաձել, կառչիլ, բռնուիլ, փակիլ, ապրիլուիլ: *) Պրակ, Անասուն, Ծառնոց, պուրակ: *) Ընել, կախել, անցունել, մտցնել: *) փէհէ՛, Այդ ալ բա՞ն է..., ի՛նչ կարեւորութիւն ունի...:

Ես ի՛նչ ուժի տէր եմ որ···, —
Քա՛ր եմ կախեր թեւերէս···՝
Կ՚ելլամ ես իմ ճամբայէն···:
Ուժով ըսես՝ ա՛յն Մարդն է՝
Ինչ Սինամ-Խան-Թագաւորը բըռներ է,
Ու զարկեր է ամբռնաչո՛ր պինդ գետին,
Քառասուն նետ ալ՝ գետնի տակը տարե՛ր է····
Ես ի՛նչ ուժի տէր եմ որ···»:
— «Օրհնեա՛լ Աստուած···,-ըսաւ այնտեղ՝ Սանասար-·
Իմ Ձայն հո՛ս ալ է եկեր···»:
Թողուց, քըշե՛ց ու գընաց···:

130. Սանասար Կ՚երթայ-Կ՚երթայ՝ Կրիասդիպի Սարէ Սար Ծատկող Աղուէսին

Է·11, Ձ·՝Է·11·

Շա՛տ գընաց՝ թէ քի՛չ գընաց···, —
Նայեց տեսաւ որ Աղուէս մը՝ անդադար՝
Ա՛յս մէկ Սարէն՝ ա՛յն մէկալ Սար կըցատկէ,
Կ՚ըսէ՝ «Կարվա՛ն···, խելքըս միտքըս կարվա՛նն է···»:

Սանասարը քըշեց Իր Ձին՝ ու գընա՛ց···:

131. Սանասար Կ՚երթայ-Կ՚երթայ՝ Կրիասդիպի Ծօր-Դէվիրուն

Ձ·, Է·11

*Տեղ մ՚ալ տեսաւ՝ ծո՛ր-Դէվ *)*
Բոլորչի մը նըստած են,
Մէ՛կ Ա՛ընձեր կայ Իրենց ձեռք,
Ան կը նետէ Ան՛ո՛ր ձեռք,
Ան՝ կընետէ Ան՛ո՛ր ձեռք,
Ու մէկ կ՚ըսէ մէկալին, —
— «Ա՛ռ Քեզ հազա՛ր, բի՛ւր բարին···»:

Սանասարը ականջ չըրաւ,-պըրծաւ՛, քըշե՛ց ու գընաց···:

---

*) Դէվ, Հայաստանցի Հայը՝ կըհնչէ Dev, ոչ թէ Քէվ կամ տէվ:

182. Սաճասար՝ Կ'երթայ-Կ'երթայ՝ Կրիասդիպի Սարի-Հովիւին

ՁԿ·225,226,227, 228,229, Կ·114,115, (Կ·114)Ձ·

Գընա՛ց գընաց...՝ Սանասար,
Ձամբան ինկաւ՝ մէկ ահագի՛ն Սար մ' ի վեր...։
Նայեց՝ Սարն ալ՝ ա՛յնքան Ոչխար, ա՛յնքան Ոչխար կ'արածան՝
Աչեղ ձըգես՝ չ'իյնար գետին..., — աւազի՛ չափ անհամար...
Եւ այդ ամեն Ոչխարին ալ՝ մէ՛կ Հովիւ կայ Պահապան...։
Մի՛ ըսե՛ր որ՝ այդ Հովիւն ալ՝ Թագաւորի՛ Հովիւն է...։ —
Ան ալ՝ կանչեց Սանասարին՝ ի՞նչ ըսաւ. —
— «Կըտրի՛ճ,-ըսաւ, նայիմ այդ Դուն ո՞ւր կ'երթաս...,
Արի՛ իմ քով՝ նո՛ր գընա...»։
*= «Ես վըռա՛զն *) եմ..., կ'երթամ,-ըսաւ, իմ ճամբան...,*
Ձիս կըկանչես՝ ի՞նչ ունիս ինձ ըսելու...»։
— «Տէ՛ր ը վըկայ, կըտրի՛ճ,-ըսաւ, մինչեւ չիգաս Դուն իմ մօտ՝
Դուն չըգացիր ասկէ վեր...»։

Սանասարն ալ՝ իջաւ գընաց Հովիւին քով։ —

183. Հովիւ՝ Իր Կաթի Փորձին Կ'ենթարկէ Սաճասարը

ՁԿ·229,230,231,232,233,234, Կ·115·՝Ձ·

— «Հովի՛ւ,-ըսաւ,- Դէ՛ եկիր որ կըռի՛ւ ընենք ես ու Դուն...»։
Ան ալ՝ թէ — «Ձէ՛, ես Հովի՛ւ եմ..., կըռիւ ընող Մարդիկ չե՛մ...։
Ես գիտե՛մ թէ՝ Դուն ի՞նչ մըտքով՝ ո՞ւր կ'երթաս..., —
*Ապա՝ Ինձի փորձելաբա՛ն *) մ' կայ այստեղ...»։*
= «Ի՞նչ է...»,ըսաւ Սանասար։
Հովիւն ալ՝ թէ, — «Արի՛ նըստի՛ր, ա՛յ Տըղայ,
Կաթ մը կըթեմ, կե՛ր՝ ու եկի՛ր նո՛ր գընա՛...։
*Տը՛ղայ,-ըսաւ, ես այս կօտը *) կա՛թ կըթեմ,*
Հաց բըրդեմ մէջ, ու դըզալը տամ Գու ճեռ,
*Մինչեւ որ ես՝ իմ Ոչխարի պըտուտ *) մա՛ն գամ, փաթ *) մը տամ,*

---

*) Վռազն եմ, կ'աճապարեմ, անիպողական գործ ունիմ։ *) Փըրձելաբան, փորձելիք մի՛ջոց, բան։ *) Կօտ, փայտէ՝ պնակ, տաչտ (մի՛ակտուր կոճէ փորուած)։ *) Պտուտ, Շուրջը, բոլորքը։ *) Փաթ տալ, Շրջան ընել, բոլորտիքը գառնալ։

Թէ Դուն այդ կաթ ամէն կերար ու պըրծար՝
Բարո՛վ երթաս, ե՛լ դընա՛...:
Թէ չըկըրցա՛ր կերեր էիր, պըրծուցեր՝
Մե՛ղք ես..., դարձի՛ր, եկած ճամբէդ ե՛տ դընա...»:

= «Ես վըտա՛ղն եմ..., կ'երթա՛մ»,-ըսաւ Սանասար:
Հովիւն ըսաւ, — «Չէ՛..., այստեղէն երթըցողին ճա՛ր չըկայ..., —
*Անակթուտել *) չե՛մ թողներ որ Ան երթայ...»:*
Բըռնի՛ բերաւ նըստեցուց: —
Մէկ կո՛ղջ Տաչտ մը կար Իր հետ,
Մէջը՝ չո՛րս Մարդ՝ հա՛նդիստ կըրնան լողանալ..., —
*Հովիւն ելաւ՝ այդ կօտ իլին *) կաթ կըթեց,*
Հայց բըրդից մէջ, դըրաւ առջեւ, ու դըզա՛լ մը տըւաւ ձեռ,
Ինքը ելաւ՝ իննկաւ իրեն Ոչխարի չուրջ՝ պըտոտի...:
Այդ Հովիւի միտքն ալ ի՞նչ է, հոն կեցեր, —
Կ'ուզէ վտրձէ՛ Անցնողներ. —
«Տեսանի՛ք Անոնց ուժն ու չընորք ո՛րչափ է...»:
Այդ մէկ Տաչտի կաթ ուտելով՝ Ան կըհասկնա՛յ Անոնց ուժ:
Ո՛վ որ կ'երթայ այդ ճամբայով դէպի վեր՝
*Այդ Հովիւը՝ այդցե՛ղ *) կ'ընէ Անոնց հետ,*
Այսպէս կ'ըսողաւ երթան իշնեն դաւառը Գոհար-Խաթունին, —
Այնտեղ Անոր Ըմբիշները՝ Ատոնք կ'բռնեն՝ կ'ըսպանեն,
Գըլուխները կըկըտրեն ու կ'ընեն Բերդ...:

Հովիւ՝ երբոր՝ Տաչտը իլին կաթ լեցուց,
Սանասարի առջեւ դըրաւ որ ուտէ,
Ինքը դընաց Ոչխարին չուրջ կա՛ն գալու, —
Մէկ վախ դեռեւս կան չ'էր եկած պըրծուցած՝
Սանասարը կանչեց ըսաւ, — «Հովի՛ւ, Հովի՛ւ, ա՛լ կա՛յ՝ բե՛ր...,
Կուշտ չըկերայ..., արի՛ Քու կօտ վերցո՛ւր տա՛ր....
Մնացիր բարո՛վ, Ես կ'երթա՛մ...»:
Հովիւն եկաւ տեսա՛ւ որ՝
Սանասարը կաթ կերե՛ր...,

---

*) Անկաթ-ուտել, Առանց կաթ ուտելու, կաթ չըկերած: *) Իլին, Լեփլեցուն: *) Այդցեղ, Այդկերպ:

*Կօտը կործեր *) դըրեր իր տեղ՝ ու կ'երթայ, —*
= «Ծըղա՛յ,-ըսաւ,- չէ՛, ա՛լ չըկայ···, հիմա ելի՛ր ու դընա՛·
Բարո՛վ երթաս···, Աստուած Քու բա՛ն աչողէ····
Ո՛ւր որ երթաս, լի՛նչ մըտքով ալ որ երթաս՝
Քու խընդիրքը կըկատարուի՝ ե՛ւ կուտաս····
*Մարդ *) Քեզ յաղթել չի՛կըընար, —*
Երթաս բարո՛վ···, մի՛ վախնար···»:

ԺԲ. ՍԱՆԱՍԱՐ ՊՂՆՁԱՀ-ՔԱՂՔԻՆ ՄԻՋ

134. Սանասար Կրնասնի Պղնձէ-Քաղքի Պարիսպին Առաջ Ու Կրնասի Հոն Կեցողներուն Հետ

ՁԿ·235, ՁՍ·196, Ց·72, Զ(Ց·72), Կ·5, Հ·11,408, Ե·486,612,Զ·

Սանասարն ալ՝ ելաւ քըչե՛ց ու դընաց, —
Գընաց հասաւ Պղընձէ-Քաղքի Պարիսպին տակ՝ կանգնեցաւ: —
Այդ Քաղաքն ինչ՝ Չին-Մա-Չինու Քառասուն-Ճիւղ-Մամ-Գոհար՝ մէջ:

Նայեցաւ ու տեսա՛ւ որ, —
Քառասուն Մերուկ-Չիաւոր···,
Մէջքէն՝ ի վեր մարդո՛ւ պէս···,
Ու մէջքէն վար՝ քա՛ր կըտրած···, —
*Սիւտկամօրուք, կարմրամօրուք, Թուխմօրուք *)···,*
Քառասունին ալ Հաղուստները դեղինցած···, —
Արեւին ու Անձրեւին տակ՝ այդ Քաղքէն դուրս՝ կեցեր են···, —
Մէկ՝ Մէուսին կը ճայնէ,
Ու Մէկալն ալ՝ պատասխա՛նը կըղըրկէ, —

---

*) Կործել, Բերնի վրայ դարձնել, չրջել: Այս մէջադէպէն է, Թերեւս, ժողովրդի հեգնական առածը, — «Ամենքն ալ fասա կործող, բուռմա կըրծող···», անօգուտ տեղ եւ միայն իրենց փորը լեցնելու համար ապրող մակաբոյծներու ակնարկուած: *) Մա՛րդ, Ո՛չ ոք, ո՛չ մէկ մարդ: *) Թուխ, Գորշ, սեւորակ:

— «Չը՛բը՛լբը՛լա՛ն...» *):
= «Զուա՛մ *) կէ՛սը մարդ...»:
— «Չը՛բը՛լբը՛լա՛ն...»:
= «Զուա՛մ կէ՛սը քար...»:

Սանասարն ալ՝ զարմա՛նք մընաց այդ բանին.
Վէրցուց ըսաւ Մարդերուն, —
«Բարե՛ւ Զեզի, Ամենուդ,
Սիմսիկամօրուս, կարմրամօրուս ու Թուխմուրո՛ւս Մարդիկները...»:

Անոնց մէջէն՝ մէկ Ալեւոր՝ բարեւն առաւ ու կանչեց, —
= «Ասածու բարի՛ն, է՛յ վախ, է՛յ վա՛խ, կանա՛չ-կըտրիճ նո՛ր Տըղայ,
Դո՞ւն ալ եկար՝ Այս կախարդին ձե՛ռքն ինկար...:
Ըսպասէ՛ Դուն՝ վաղը մինչեւ կէսօրին՝
Դո՛ւն ալ կուգաս Մեր օրին...»:
— «Ի՞նչ կ'ըլլայ որ... *), Պապի՛կ»,-ըսաւ Սանասար:
= «Ո՛րդի՛,-ըսաւ, հիմա՝ քիչ մը համբերէ՛,
Այս կախարդին՝ մէկ այնտեսա՛կ Հաւք մը կայ...՝
Կուգայ այստեղ՝ Պատին վրայ կըճռայ...՝
*Դուն ալ այսպէս՝ Մեր հասակի՛ն *) կըղառնաս...»:*

135. Ռուսկիկ-Զալալին Կրթուի՝ Սանասարը Պոնձէ-Բաղէի Պարիսպէն Ներս Կ'իջեցնէ

Ջ·, ՋՍ·197,198,199,200,Հ·408, Ջ(Հ·408), (Ց·78), Ց·72,73·

Սանասարն ալ՝ Պարիսպին չուրջ՝ ոլո՛րտ տըւաւ Իր Ձիով,
Նայեց տեսաւ՝ Դուռ չկա՛յ որ ներս երթայ,
Մըտմըտուքը դ'ինչ առաւ...: —
— «Ի՛ Սանասա՛ր, ի՞նչ միտք կ'ընես...»,-ըսաւ Ռուսկիկ-Զալալին:

= «Ո՛չ Դուռ կայ՝ ու ո՛չ Ճամբայ...,-
Ըսաւ Ձիուն՝ Սանասար-ը
Գո՛րշ ալ չունիմ՝ զարնեմ՝ Պատը փըլցընեմ..., —

---

*) Զըբըլբըլաց (հնչէլ Zebelbelan), *անուն է: Այս կտորն առաւ եւ Զըբըլբըլաց անունով հէքիաթէ մը:* *) Զուա՛մ, *Մինչեւ:* *) Ինչ կ'ըլլայ որ, *Ի՞նչ պիտի տեղի ունենայ որ (այդ քու ըսածիդ պէս փոխուի՞մ ես):* *) Հասակ, *Տարիք:*

Ապա ի՞նչպէս ընեմ ես...»:
— «Քեզ պիտի բըռնէ վեր՝ իմ Քամկին,-ըսաւ Ջին-,
Ես կըթըռիմ՝ Քեզ կըհանեմ Քաղքին ներս...»:

Սանասարն ալ՝ իսկո՛յն որ Իր Ձիուն սանձը ոլորեց՝
Ասպարէզ մը արձակ թողուց, զ'Ինք պինդ բըռնեց Թամբին վրայ՝
Դարձաւ կանչեց Իր Աստուած,
Ասպանդակով Ձիուն կողեր խըթխըթեց, —
Քուռկիկ-Ջալալ մէ՛կէն Թըռաւ ու ելաւ,
Պղընձէ Պարիսպն անցաւ՝ իջաւ Քաղքին մէջ...:
[Ջէ՞ որ Քաղաք՝ դուռ չունէր,
Պէտք էր Թըռէ՛ր ու անցնէր...:]

186. Սանասար Կըպտօի Քաղքին Մէջ, Կըտեսնէ Որ Քաղաքն Ամբողջ Քար Է Դարձեր

ՁՍ·201, Հ·11, Ե·486·

Ան ալ՝ Իր Ձին տեղ մը կապեց, ինկաւ Քաղաք՝ մա՛ն եկաւ: —
Նայեց տեսաւ՝ որ Այդ Քաղաք զարմանալի բա՛ն մ' ունի..., —
— Ամենք իրենց Յանուխին մէջ նըստուկ են ու կընայի՛ն...,
*Դարբիններըը՝ իրենց կըռան *) իրենց ձեռքին՝ կանգնո՛ւկ են...,*
Ջօրականներ՝ իրենց Թուրեր իրենց վըրայ՝ կանգնո՛ւկ են...,
Ամեն Մարդեր՝ իրենց գործին՝ կանգնո՛ւկ են..., —
*Ինքը գիտէ՛ *) Թէ ողջ են..., —*
կըմօտենայ՝ ձեռքը կուտայ՝ ու կըտեսնէ որ Քա՛ր են..., —
Քաղաք-քաղքով՝ Քա՛ր է դարձեր իրեն տեղ...:

187. Սանասար՝ Պառաւի Մը Հիւր Կ'ըլլայ

ՁՍ·202,203, Ց·73, (Ե·486), (Հ·11).

Սանասարն ալ՝ չա՛տ կան եկաւ Քաղքին մէջ, —
Իր ուզածով տեղ չըգըտա՛ւ որ Նըստէր,
Եկաւ Հասաւ՝ Քաղաքի կուչտ՝ մէկ Պառաւի մ' տո՛ւն գըտաւ,
Գլնաց մըտաւ տունէն ներս...:

---

*) Կռան, Մուրճ: *) Գիտէ, կըկարծէ:

Պառաւ նայեց՝ ու պըշկա՛ւ... *), —
— «Տօ՛ Մարդ,-ըսաւ, Դուն ո՞վ ես...,
Ո՛ւսկից եկար՝ մըտար այս Մեր Քաղքին մէջ...:
Այս Քաղաքին՝ ճամբայ չըկա՛յ..., դուռ չըկա՛յ...,
Դուն Հրեշտա՞կ ես..., ի՛նչ ես...՝ եկար մըտար ներս...»:

= «Մամի՛կ,-ըսաւ Սանասարն ալ՝ այդ Պառաւուն..
Ո՛չ Հրեշտակ եմ, ո՛չ Սատանայ...,- հե՛ռ *) Քենդ..
Ես ալ Քեզ պէս՝ մէկ մարդ մըն եմ, ու Ձիս այստե՛ղն եմ տեսեր...»:

138. Սանասար՝ Պառաւէն Տեղեկութիւններ Կըքաղէ

Զ., Է.408, ՉՍ.204,205,206,207, Ն.486.

Սանասար հոն այդ Պառաւին հիւր եղաւ,
Ընտան Իրենց հաց-մաց կերան, խըմեցին, —
Սանասարը ըսաւ, — «Մամի՛կ, զարմա՛նք է...՝
Որ այս Քաղաք՝ ի՛նչ է դարձեր Այե՛ն Մարդ...»:

= «Մամի՛կ մեռնի Քեզ...,-ըսաւ..
Այս Քաղաքը Մա՛րդ չըկա՛յ..., —
Կախարդուքի՛ն են ըրած...՝
Քաղաք-քաղքով ըրած Ի՛նչ...: —
Ո՛չ Դուռ կայ ու ո՛չ Ճամբայ՝
Որ Քաղաքին մէջը գայ...:
Ու Քաղաքին Բանալիները՝ Ծովուն մէ՛ջը ձըգած են...,
Վիշապն ալ՝ իր Գլուխ դըրեր վըրան՝ պառկեր Ծովուն մէջ...,
Ոչ Մարդ կայ որ՝ Բանալիները վեր բերէ,
Ոչ ալ Դուռները կըբացուին որ ելնեն դուրս...»:

— «Մամի՛կ,-ըսաւ Սանասարն ալ՝ Պառաւին..
Այս Քաղաքը ուրեմն, բընաւ Մա՛րդ չըկա՛յ...»:
= «Մէկ Քառասուն-Մամ կայ,-ըսաւ,
Թագաւորի Աղջի՛կ է...,
Կա՛յ ալ Անոր՝ Քառասուն-Դէ՛ւ...՝
Անոր առջեւ կանգնա՛ծ են, —

*) Պշկիլ, Ո՛ւշ-պուշ նայիլ, զարմանալ: *) Հե՛ռ, Հեռո՛ւ:

Անոր Դըրան պահապան են ու ծառայ...:
Ա՛ռ է,-ըսաւ, ա՛լ Մա՛րդ չըկայ այս Քաղաք...»:

139. Սանասար՝ Նօր-Փուռի Հացը Եւ Նօր-Աղբիւրի Ջուրը Կըվարձէ Իրեն Համար

Չ·՝6·73·

Սանասարն ալ՝ եկաւ դընաց՝ Քաղաքին մէջ կա՛ն եկաւ
Նօթ-Փուռի հետ պայման կապեց ու ըսաւ. —
— «Ձեզ օրական ի՞նչ կ՛ուզէք...»:
= «Է՛ Մարդ,-ըսին-, տասը քըսակ արծա՛թ ըլլայ՝ Մեր պայման»:
Սանասար թէ, — «Ես Ձեզ կուտամ՝ քըսա՛ն քըսակ՝ օրական,
Այդ Հացերը ամե՛ն ինձի՛ կըղըրկէք...»:
*Ապա դընաց՝ Նօթն-Աղբիւրէ՝ Նօթ-Ջուր-Բերող ալ բըռնեց *),*
եկաւ մէկ Հաց առաւ Փուռէն, դարձաւ եկաւ Պաուի Տուն:

140. Սանասար՝ Քաղքին Մէջ Կրնացդիպի Երեք-Աղբիւրցիոու Ալեւորին

ՁՍ·208,209,210,211, Հ·11, Չ(Հ·11)·

Այս անգամ ալ՝ Իր Ձին Քուռկիկ-Ջալալին՝
Սանասարին ի՞նչ ըսաւ. —
— «Ելի՛ր-ըսաւ, ու կա՛ն եկուր Այս Քաղաք...»:
Ան ալ եկաւ ու կա՛ն եկաւ, դընաց նորէն Քաղքի մէջ, —
Տեսաւ որ մէկ Ալեւոր-Մարդ՝ Հոն նըստեր...,
Երեք-Աղբիւր Ջուր՝ քովէքով՝ Իր առջեւ...,
*Կանաչ Վարոց *) մ՝ ալ Իր ձեռ...,*
կարգով կ՝զարնէ՝ մէջ այդ Երեք-Աղբիւրին: —
Կըզարնէ այդ մէկին մէջ,
Ապա կ՝զարնէ մէկալին,
Ցետոյ՝ մէկա՛լ Աղբիւրին..., —
Մինչեւ իրկուն՝ ա՛յդ է Անոր բան ու գործ...:
Սանասարն ալ հարցուց ըսաւ, — «Պապի՛կ, ատ ի՞նչ բան է որ...՝
Դուն այդ Վարոց՝ մէկ Աղբիւրէն մէկալին մէ՛ջ կըզարնես.

---

*) Բռնել, Վարձել: *) Վարոց, Դալար փայտ, Ճպուռ:

Կըզարնես այդ մէկի՛ն մէջ,
Ապա կ՚զարնես մէկալին,
Ցետոյ՝ մէկա՛լ Աղբիւրի՛ն·՛·՛·՛»:
= «Որդի՛,-ըսաւ, դէ՛հ *), այս երեք-Աղբիւրնե՛ր···, —
*Այս կըշտի՛ն *) մէջ Քեզ ձըգես՝*
Կ՚ըլլաս աղուոր եղբընիկ·
Այն մէկալին Քեզ ձըգես՝
*Կ՚ըլլաս աղաբ *) մէկ Աղջիկ····*
Այդ մէկալին՝ Քեզ ձըգես՝
Ինչքան ուժ որ ունիս Դուն՝
Երկո՛ւ այնքան դեռ ո՛ւժ կուգայ Քու վըրայ···»:

141. Սաճասար գ՚Իճի Կրծգէ Երեք-Աղբիւրներուն Մէջ, Կրզօրացայ, Ապա Հարցփորձ Կ՚ընէ Ծերունիին

ՁՍ·212,213,214,215,216,217Ձ·

*Սաճասա՛ր էր, — գ՚Ինք տըկլոզցուց *) հետհետին *),*
Այն առաջի՛ն Աղբիւրին մէ՛ջ ձըգեց գ՚Ինք՝
Դարձաւ եղաւ Աղաւնի···:
Ապա մէկի՛ն Աղբիւրին մէ՛ջ ձըգեց գ՚Ինք՝
Եղաւ կըտրիճ մէկ Աղջիկ···:
Ձըգեց կըշտի Աղբիւրին՝
Եղաւ հըսկա՛յ մէկ Ըմբիշ···, —
Որ ի՛նչքան ուժ Քէ ունէր Ան Իր վըրայ՝
Երկո՛ւ այնքան՝ դեռ Անոր ուժն աւելցաւ···:

Սաճասար հոն՝ դարձաւ Պապ՚ակին ի՞նչ ըսաւ, —
— «Պապի՛կ,-ըսաւ, Թող Տէր-Աստուած արքայութի՛ւն տայ Քեզի,
Շա՛տ ապրիս Դուն՝ որ այս բաներ Ինձի այսպէս ցո՛յց տըւիր···»:
Ապա ըսաւ Ծերուկին, —
—«Պապի՛կ, -ըսաւ, Դուն մի՛նչեւ ե՞րբ պիտի մընաս այդ Քո տեղ»:

---

*) Դէ՛հ, Դէ՛հ ի՞նչ ընենք···, պատմելէն օգուտ չկայ՝ բայց քու բաղձանքիդ գոհացում տալու համար՝ պատմեմ···: *) Կշտին, Քովընդի եղածին, աջին (կամ ձախին): *) Ազաբ, Նորատէ, կոյս (աղջիկ): *) Տկլոզցնել, Մերկացնել մարմինը, հագուստներն հանել: *) Հետհետին, Նոյնհետայն, իսկոյն:

= «Որդի՛, -ըսաւ-, ես մահ չունի՛մ..., ա՛ն-մա՛հ եմ...,—
Աստուա՛ծ գիտէ՝ թէ ե՞րբ պիտի ես մեռնիմ...»:
— «Պապի՛կ, -ըսաւ-, ի՞նչ ապուվ Դուն անմահ ես...»:
Ըսաւ, = «Պապիկ՝ որ Իր զըրոյց Ինձ ընէ՛...՝
Աչխարք հո՛ւր ու կո՛ւր *) կ'ըլլայ...:

142. Պապիկն Իր Զրոյցը Կ'ըսէ Սանասարին

ՀՍ·218, Հ·

Ըսա՛ւ..., — ե՛ս ալ՝ Ըմբիշ էի Իմ օրին·—
Աչխարքի մէջ՝ Ինձմէ զօրեղ մա՛րդ չըկա՛ր...:
Զի մ'ալ կար Ինձ՝ անուն Քուռկի՛կ-Ջալալին...,—
Հարի՛ւր տարի՝ ես այն Զիուս քամկին վըրայ՝ կա՛ն եկայ...:
Աւուր մէկը՝ Աստուած առա՛ւ Իմ մօտէն..., —
Ի՞նչ ըրի ես..., — Զիուս մօտէն ուրկեցայ... *) ,—
Ասպանդակով զարկի Զիուս կողերուն՝
Որ թէ Իմ Զին՝ կըտրի՛ճ վազէ, թա՛փ *) երթայ...:
Է՛հ, Իմ Զին ալ ի՞նչ ըրաւ· —
Զին Իր քամկէն Զիս վա՛ր նետեց՝ ու ըսաւ,—
— «Հը՛հը՛..., -ըսաւ-, հարի՛ւր տարի Դուն Իմ քամկիս վըրա՛յ ես՝
Ոչ մէկ տեղն Քու Ոտնոցներ *) Իմ կողերուն չե՛ն առեր...,
Այսօր ի՞նչպէս Դուն այդ բանը Ինձ ըրիր..., —
Քու Ոտնոցով զարկիր Իմ կող կոտրեցիր...,
Ապիկի՛ են Իմ կողեր...,
Ա՛լ Զիս աչքովդ չե՛ս տեսներ...»:

Ան է՝ աս է՝ Զին Զիս Թողուց՝ մըտաւ Ծով...:
Ախ հարի՛ւր տարի կ'ըլլայ որ ես այստեղ նըստեր եմ,
Աստուծմէ՛ ալ՝ այս մէ՛կ խընդի՛րքն եմ ըրեր, —
«Մինչեւ՝ Իմ Զին՝ Ես չըտեսնեմ՝ չըմեռնի՛մ...».
Աստուած ալ՝ Ինձ ո՛չ մահ կուտայ որ մեռնիմ...,
Ո՛չ ալ Իմ Զին Ծովէն կ'ելնէ՝ որ տեսնեմ, —
Մընացեր եմ հոդ ա՛ն-մա՛հ...»:

---

*) Կուր ըլլալ, Կորսուիլ, վհատանալ, կործանիլ, (քնադրին մէջ՝ «հուր ու քուր»): *) Ուրկիլ, Մրդոդիլ: *) Թափ, Թափով, արագ, շուտ: *) Ոտնոց, Ոտքերը մէջ դնելու գործիք, ասպանդակ:

143. Սանասար՝ Ջիւսի խորհուրդովը՝ Նորէն կ'երթայ Ալեւորիկ Գով

ՁՍ ·219 ,220 ,221 , 222 ,223 ,224 ·

Պապիկն՝ այնտեղ՝ Իր պատմութիւն Անոր ըրաւ ու պըրծաւ։
Զըրոյցն ո՞ւրկէ···, — Զիէ՛ն, Գուռկիկ-Ջալալիէ՛ն տանք գըրոյց։
Ի՞նչ պատճառով Սանասարին խօսեցաւ,
Ըսաւ «ելի՛ր Այդ Գաղաքը կա՛ն եկուր», —
Այդ Պապիկի՛ն պատճառով···։ —
Որ՝ Սանասար՝ նայինք տեսնէ՝ դայ Իրեն ի՞նչ լուր կուտայ···։

*Սանասար ինչ *) դարձաւ եկաւ Պաւուի Տուն՝*
Զին ալ հարցուց թէ, — «Սանասա՛ր, ի՞նչ տեսար···»։
Ըսաւ, = «Իրա՛ւ, բա՛ն չըտեսայ,··· մէկ Մերունի-Մարդ տեսայ···»։
Եւ այդ գըրոյց՝ ինչ ես Զեզի պատմեցի †)՝
*Տըկմա՛նց *) ըրաւ *) Իր Զիւնն։*

Զին ալ վերցուց Սանասարին ի՞նչ ըսաւ. —
— «Է՛յ Սանասա՛ր,-ըսաւ, ելի՛ր՝ այդ Պապիկին մօ՛տ գընա···»։
*= «Ինչի՞ համար երթամ,-ըսաւ մօտ Պապիկ *)···»։*
— «Գընա՛ ըսէ՛՝ «Պապի՛կ, որ ես այն Զին քերեմ հոս, Գու մօտ,
Դուն Գու նախկին երիտասարդ ժամանակի ուժերովդ՝
Այն Գուժակի քամակ պիտի քերուցե՞ս ու խընամ տաս···»։
Թէ ըսաւ որ՝ «Պիտի քորեմ»՝ արի՛ Զիս տա՛ր Իրեն մօտ։ —
Իսկ Թէ ըսաւ՝ «Չե՛մ կըընար»՝
Թող կենայ հոն, մինչեւ վերջին Դատաստան, —
Ես Անոր աչք չե՛մ երևեր···»։

144. Սանասար՝ Ալեւորի Պատասխանին Վրայ՝ Կ'առնէ Իր Զին Կըռանի. Ալեւորն Իր Ուժը Կըցուցնէ

ՁՍ ·225 ,226 ,227 , 228 ,229 ,230 ,231 , 232 ,233 ,234 ,235 ·

Սանասարը ելա՛ւ նորէն այդ Պապիկին քո՛վ գընաց,
Ըսաւ, — «Պապի՛կ, որ ես երթամ այս անգամ՝

---

*) Ինչ, ինչ առեն որ, երբոր։ †) Պատմող գիւղացին է ըսողը։
*) Տըկմանց, Տակէն, ակիզբէն, ամբողջովին։ *) Ընել, Պատմել։
*) Մօտ Պապիկ, Պապիկին մօտը, քովը։

Ֆու Զին՝ Ֆուռկիկ-Ջալալին՝
Առնեմ բերեմ՝ Ֆեզ ցո՛յց տամ, —
Դուն Ֆու առաջ *) երիտասա՛րդ ժամանակի ուժերով՝
Ֆո Զին պիտի քերոցե՞ս...»:
Պապիկ լացա՛ւ..., ու ըսաւ. —
= «Առջի ուժէն ա՛լ աւելի կըտրիճ դարմա՛ն պիտի տա՛մ...»:

Սանասարը դարձաւ եկաւ Զիուն մօտ,
Ըսաւ, — «Այսպէ՛ս կ'ըսէ Մարդ»:
Զին ալ ըսաւ, = «Դէ՛ եկ՛ Զիս առ՝ ու երթա՛նք...»:

Ելաւ չուտ մը իր Զին հեծաւ՝ ու դացին:
Գացին հասան Մերուվին. —
Ալեւորը Զին երբ տեսաւ՝ հոն լացա՛ւ...,
Ելաւ բռնեց՝ Զիուն ճակատ համբուրեց, —
— «Տըղա՛յ,-ըսաւ,- դէ՛հ, այդ թամբը դէ՛ր դետին...»:

Սանասար որ *) թամբը վերցուց դըրաւ վար՝
Ալեւո՛րն էր..., —
Իր ձեռ նետեց Զիու վիզին եսեւի կողմ՝ բամբ *) բըռնեց,
Մէկ ալ ձեռքով՝ Զիուն Ֆամակ պըՓտե՛ց *) դընաց դէպի դո՛ւրս...,
Կաշին այնպէ՛ս չօպկեց *) քեղուե՛ց, տարաւ պոչէն հանեց դո՛ւրս...՝
Որ այն հրեղէն ալանկի՛ր *) Զին՝ դետի՛ն տըւաւ Իրեն վոր..., —
Ա՛յնքան որ այդ Ալեւորը ուժով էր...:

Սանասար Ինք՝ պօ՛ռա՛ց...՝ ըսաւ, — «Վա՛յ Պապի՛կ,
Իմ Զին, իր տեղ, ըսպանեցի՛ր..., կըբաւէ՛...»:
Պապիկ դարձաւ՝ ձեռը նետեց Զիու պոչին՝ ու քա՛շե՛ց..., —
Ա՛յնպէս քաշեց...՝ քիչ էր *) Զիու մէջքը կըտրէր ու տանէր...:
Սանասարն ալ՝ ձեռը նետեց Պապիկի Թեւն ու ըսաւ. —
= «Աստծո՛ւ սիրոյն..., հերի՛ք է..., Թո՛ղ..., իմ Զիու մէջք
[կըտրեցա՛ւ...»:

---

*) Առաջ, Առաջուան, առջի: *) Որ, երբոր, ինչ տեսեն որ:
*) Բամբ (Պամփ), վիզին արմատը՝ ծոծրակի կողմէն: *) Պրտել, ճմռելով՝ դէպ դուրս տանիլ: *) Լօպկել, Քերթել-հանել: *) Ա-
բանիկներ, Անզսպելի, կրակոտ: *) Քիչ էր, Քիչ էր մնացեր...:

Քուռկիկ-Ջալալ՝ դարձաւ ըսաւ, «Սանասա՛ր,
Տեսա՞ր հիմա՝ ուժով Մարդ…: —
Դուն ալ կ՚ըսես՝ «Մ՛ուժ ունիմ…». —
Հարի՛ւր տարի՝ ես Անոր տա՛կ մընացի՝
Ու ձիւթի՛ն ըրի ես՝
Իմ խընամքը այդկե՛րպ էր…:
Հարի՛ւր տարի ալ՝ այս Մերին եռեւէն՝
Ես անխընա՛մ մընացեր եմ Ծովո՛ւն մէջ,
Այս մէկ-քանի ժամանակ ալ՝ ահա՛ Քու ձե՛ռքն եմ ինկեր, —
Դեռ նո՛ր խընամք տեսայ ես…,
Իմ քամակի փուչիները նո՛ր ելան…: —
Սովրի՛,-ըսաւ, ասկէ յետո՛յ՝ ա՛յդկերպ խընամ տուր Ինձի,
Որ ձիւթի՛ն ընեմ Քեզի, մընամ Քու տակ, Քեզ տանի՛մ…»:

145. Ալեւորը՝ Կոյս Մը Հող Կըդառնայ՝ Կըկեցուի Գետին, Սանասար Անոր Անիւը Կըբաղէ

ՉՍ·236,237,238, Հ·11, (Ց·73).

Չին որ այդ խօսքն ըսաւ այդտեղ՝ ու պըրծաւ՝
Ալեւո՛րն էր…, —
Իր տեղ եղաւ մէ՛կ կողով-Հող…՝ ու լեցուեցաւ գետնի վրայ…:

Չին ալ՝ ըսաւ, — «Գիտե՞ս ինչ կայ, Սանասա՛ր…, —
Դուն պէտք է որ՝ այդ Կոյս-«Հող»ը՝ հոս թաղե՛ս….
Այս Մերուներն՝ Ինձ համա՛ր էր մընացեր,
Եղեր էր «Հող»՝ չէ՛ր մեռներ…:
*Հողը փորէ՛, Կոյսը լեցո՛ւր Հորի *) մէջը՝ ու ծածկէ՛…»:*

Սանասարն ալ ելաւ փորեց, այդ «Հող» հորեց ու ծածկեց,
Առաւ Իր Չին՝ դարձաւ եկաւ, Չին կապեց,
*Եկաւ այդտեղ՝ Պառաւի Տուն՝ նըստեցաւ ու հա՛ց *) կերաւ:*

---

*) Հոր, Փոս. [Կըթուի Թէ՝ հին առեն՝ հորի ձեւով խորունկ փոս կը փորէին՝ մեռելները մէջը թաղելու՝ ոտքի կեցած վիճակի մէջ]:
*) Հաց, ճաշ, ընթրիք:

146. Սանասար՝ Ծեղեկուբիւճճեր կբմաղէ Պառաւէճ

Ջ·, Հ·11,12, Ջ·՝Հ·11, Ջ·՝Հ·12, (8·73), Ջ·՝8·73,74·

Դեռ դիշե՛ր էր···։ —
Սանասարն ալ՝ ըսաւ, — «Մամի՛կ, դըրո՛յց մ՚ըրէ՝ ես լըսե՛մ···»։
Պառաւն ըսաւ, = «Ես ի՞նչ գիտեմ որ ըսեմ···»։
— «Մամի՛կ,-ըսաւ, ես մէկ հարցո՛ւմս ընեմ ֆեզ···»
Ըսաւ, = «Որդի՛, ի՞նչ հարցումս···»։
— «Այս ֆաղաքի անունն,-ըսաւ, ի՞նչ կ՚ըսեն···»։
= «Որդի՛,-ըսաւ, Պղընձէ-ֆաղա՛ֆ է անունը այս ֆաղքին»։
— «Պղընձէ-ֆաղաք,-ըսաւ, ուրեմն այս տե՞ղ է···»։
= «Հա՛, այստե՛ղ է, Որդի՛»,ըսաւ Պառաւն ալ։
— «Մամիկ,-ըսաւ Սանասարը Պառաւին··
*Այս ֆաղաքի թագաւորի Աղջիկն խմա՞լ *) աղջիկ է···»։*
Պառաւն ըսաւ, = «Ա՛յ Որդի՛,
Դուն ի՞նչ ունիս Թագաւորի-Աղջկան հետ···, —
Ինչպէս կ՚ըլլայ՝ Թող ըլլայ···, —
Դուն տակաւին տըղա՛յ ես···»։
Ըսաւ, — «Մամի՛կ, մըտքէս անցաւ՝ կըհարցընե՛մ, ի՞նչ կ՚ըլլայ»։
= «Որդի՛,-ըսաւ, Մեր Թագաւոր՝ ինքն աղջիկ է ու կախա՛րդ·
Ֆանի՛-ֆանի՛ Թագաւորի Տըղաներ՝ ···
Այստեղ եկան որ առնէին Իրենց կինը,
*Ճուտութ ըրաւ՝ Թալեց *) Մարեր ու Զորեր· —*
Մէկը՝ Աղուէ՛ս է ըրեր···,
Մէկ՝ Շուտ-վազող՝ քամու պէս···,
Մէկն ալ՝ Եօթը-Ջաղացքի Ջո՛ւր կըխըմէ՝
Կ՚ըսէ՝ «Մարաւ մեռա՛յ ես···»։
Մէկ՝ Եօթ-Փուռի Հաց-Ուտող···,
*Եօթը՝ Դէ՛վ ու Թըռանա՛յ··· *)· —*
*Մէկը դէնա՛ *), մէկ՝ դէնա՛··· *)։*
Ըլլա՞յ Թէ Դուն եկեր ես որ Ան առնես···։
Ես կընայիմ՝ Դո՛ւն ալ՝ ափսո՛ս Տըղայ ես···։

---

*) ԽմաՀ, ի՞նչպէս, ի՞նչ տեսակ։ *) Թալել, Ձգել, Նետել, ցրուել։ *) Թռանալ, Ձեռքէ ձեռք բան մը նետելով եղած խաղ։ *) Դէտա, Հոս, այսկողմ։ *) Դէնա, Հոն, այնկողմ։

Որդի՛, թէ Դուն Անոր համա՛ր ես եկեր՝
երե՛ք անգամ այս տընակով մեղք ունեննամ՝ Քո վըրի՛ն..., —
*Թո՛ղ՝ ե՛ս դարձիր..., խե՛ղճ ես *) Դուն...»:*

147. Պառաւը Սանասարին Ցեղեկութիւններ կուտայ՝ Թագաւորի-Աղջկան Դէվերու Մասին

ՉՍ·238,239,240, (ՉՍ·240), Չ· , ՉԿ·239, (Ե·488)·

Սանասարն ալ՝ վերցուց ըսաւ Պառաւին. —
— Քո՛մ Մայր,-ըսաւ-, ուղի՛ղն ըսեմ ես Քեզի. —
Գիտե՞ս ինչո՛ւ եկեր եմ ես Այս Քաղաք..., —
ես եկեր եմ՝ որ Քառասուն-Մամ առնեմ տանիմ Ինձ համա՛ր...»:
Պառաւն ըսաւ, = «Որդի՛,-ըսաւ-, Դուն չե՛ս կըրնար տանիլ Ան...»:
— «Ի՞նչ պատճառով չեմ կըրնար...»:
= «Որդի՛,-ըսաւ Պառաւն ալ-.
Այդ Աղջիկը քա՛ռասո՛ւն դըռնով նե՛րս կըկենայ՝ Իր Պալատ.
Քառասուն-Առի՛ւծ՝ թէ՞ Դէվ ըսես..., — մարդ չէ՛ տեսեր՝ լըսեր է —՝
Ամեն դըրան մէ յմէկ Առիւծ կա՛մ մէկ Դէվ՝
Անոր առջեւ Պահնո՛րդ են:
*Երկու Դէվ ալ, — մէկը Ալն է, մէկն՝ Անդալ *) —,*
Դուռէն նե՛րսը կըհըսկեն...:
Ալն Քառասուն-Դէվ՝ ինչ ուժ ունին քառասունով՝
Այդ Երկու-Դէվ՝ Անոնց հետա՛ր են ուժով:
Ալն երկու մեծ Դէվերը՝
*Դէ՛վի-Ալ ու Դէ՛վի-Անդալ *)՝ երէք չեկան դէպի Քեզ՝*
Ալն Քառասունը՝ ամե՛նն ալ դան Քու վըրայ՝
Ըզ՝Քեզ յաղթել չե՛ն կըրնար...:
Բայց այն երկուք թէ որ դան՝
Շա՛տ ուժով են ու կըրնան Քեզ ըսպանել...»:

148. Սանասար՝ Պառաւէն Կ՛իմանայ Թէ Անոնց Հետից Ի՞նչպէս Է

ՉՍ·241,242, Չ(ՉՍ·261)·

Սանասարը հարցուց, — «Մամի՛կ, Անոնց կըռիւն ի՞նչպէս է...»:

---

*) Խե՛ղճ ես, Մե՛ղք ես, կըմեղքենամ Քեզ: *) Անդալ, հնչել Andal ոչ թէ Անթալ: *) Պատմողս կ՛ըսէր անվուխոխ՝ Դէ՛վի-Ալ, Դէ՛վի-Անդալ:

= «Անոնց կըռիւ, Որդի՛,-ըսաւ, ա՛յսկերպ է. —
Թըշնամի մը երբոր ելնէ Անոնց դէմ՝
Անոնք Շըղթա՛յ մը ունին, —
Քըսան-Դէվը մէ՛կ դըլուխէն կըբըռնեն,
Քըսան-Դէվը՝ մէ՛կ ծայրէն, —
Քառասո՛ւն մէկէն՝ կուգան Շըղթան Թըշնամու վի՛ղ կընետեն,
Այն Շըղթայով՝ այն Թըշնամին կըբըռնեն. —
Որ բըռնեցին ու դըսպեցին՝ ա՛լ անկէ վերջ կ'ըսպանեն...:
Թէ չըկըբցան Շըղթան ձըգել Անոր վիզ՝
Անոնք տըխմար ու անխելք են, կըռիւ ընել չե՛ն կըրնար, —
Այն Մարդն ալ որ՝ Թէ ուժ ունի՝ հասնի՝ Անոնք կ'ըսպանէ...: —
Մինչեւ որ այն Քառասուն-Դէվեր չըսպանուին՝
Այն Երկու-Դէվ,- Դէ՛վի-Անդալ՝ Դէ՛վի-Ալը-, չե՛ն դար դուրս,
Թըշնամու դէմ չե՛ն ելներ...:
Մէկ ալ, Որդի՛, ինձմէ խըրա՛տ ըլլայ Քեզ՝
Առիւծի պէս Այդ Մարդոց հետ ի՛նչ կըռիւ ալ որ ընես՝
Կըռիւ ըրէ՛, մի՛ վախնար....
Բայց Անոնց հետ՝ Գօտեմարտի չըմըտնե՛ս..., —
Զի՛ւդ վըրայ՝ Քու կըռիւը առաջ տար...»:

149. Պառաւը՝ Թագաւորի-Աղջկան Պալատը Սանասարին Ցոյց Կուտայ

Չ., 8.74, Ե.486,612, Չ(Հ.12).

Սանասարն ալ՝ չա՛տ աղաչանք ըրաւ այդտեղ Պառաւին, —
— «Մամի՛կ,-ըսաւ, ի՞նչ կ'ըլլայ որ ինձ ըսես,
Անոր Դըղեակն ու Պալատը՝ ցո՛յց տաս ինձ...,
Ե՛ս ալ տեսնեմ իմ Աչքով...: —
Ես օտա՛ր եմ, երբոր երթամ Մեր-Երկիր՝
Պատմեմ ըսեմ՝ Թէ այսպիսի Քաղա՛ք մը կայ այս կողմեր...»:

Մամիկն առաւ Սանասարը տարաւ դո՛ւրս, —
Ձեռը պարզեց՝ ըսաւ, = «Այն Սեւ-Լուսամուտներ կըտեսնե՞ս...»:
Ըսաւ, — «Մամի՛կ, կըտեսնե՛մ..»:
= «Այդ Երդիքը,-ըսաւ Պառաւ ցուցնելով-,
Թագաւորի կախարդ Աղջկան Բընակարա՛նն է ահա...;

Անիկ,-ըսաւ, Սև-Վարազո՛յը կապած է Իր երդիքին
Որ Մա՛րդ դուրսէն չըտեսնայ...»:

Տըղան հարցուց, — «Մամի՛կ,-ըսաւ Պառաւին.
Անիկ ի՞նչ է՝ վեր՝ Տանիքին՝ ճըրագի՛ պէս կըվառի...»:
= «Որդի՛, անիկ՝ Ոսկի-Ոչնճո՛ւն է,-ըսաւ.
Գորգ մ՚ալ՝ Անոր երդիքներուն ներքի՛ն է,
Հասա չըղթայով՝ Բերդի դըլխէն վա՛ր կախած...: —
*Ուժով մէկ Մարդ՝ թէ այդ Գորգը *) վերցընէ՝*
Ու ղրնէ՝ այն Ոսկի-Ոչնճոր բերէ տակ՝ ու ղընէ ծո՛ց, —
Կըտրի՛ճ ըլլայ՝ կըռի՛ւ ընէ՝ ու յաղթէ՝
Այդ Աղջկան կախարդանքը մէ՛կ անգամէն կ՚աւըրուի..., —
Աւտուն էլնէ՝ Այն Աղջիկը Սենեակին մէջ կըտեսնէ, —
Ֆառսուն-ձիւղ-Ծառ՝ Իրեն համար կըտանի՛...»:

— «Մամի՛կ, ապա, Անոր Ճուտուք լոկ ա՞յդ է», —
Հարցուց Պառաւին՝ Սանասար:
=«Որդի՛,-ըսաւ, Անոր՝ ուրիշ Ճուտո՛ւք մ՚ալ կայ, թէ կ՚ուզես. —
Բանալի՛ն է՝ Մատնիով, —
Եօթը-Ծովու-Կըղզին ձըղած, ու Վիշապի բերնի՛ն մէջ...,
Հրեղէն-Մա՛րդ մը պիտի ըլլայ՝ որ երթայ՝
Ծո՛վը մըտնէ, խըլէ բերէ այդ Վիշապի՛ բերանէն, —
Այս Ֆաղաքի կախարդութիւն՝ մէ՛կ անգամէն կ՚աւըրուի...»:

150. Ձին Խրաս Կուտայ Սանասարին Որ Գնացայ

ՁՍ·243,244, Զ·, Է·12, (Է·12), Ը·74, (Ը·74).

Պառաւ որ Իր զըրոյցն ըրաւ ու պըրծաւ՝
Ձին՝ հոն՝ կանչեց՝ Սանասարին ի՞նչ ըսաւ. —
— «Է՛ Սանասա՛ր, քընի՛ր,-ըսաւ, մեր դէմ երկար ճամբա՛յ կայ...»:

Սանասարն ալ վերցուց ըսաւ Մամիկին. —
— «Մամի՛կ, այլեւս ձայնըդ կըտրէ՛,-ըսաւ, ինձի՛ քո՛ւն կուգայ...
Ես ի՞նչ եմ որ՝ այդ բաներուն ձեռ զարնեմ..., —
Հարցմո՛ւնք մըն էր՝ ըրի՛ Քեզ...: —
Կ՚երթամ ուրիշ երկիրները՝

---

*) Գորգ, Gorze, Գունդ:

կըպատմեմ թէ՝ «Պղընձէ-Քաղաք ա՛յպէս ա՛յպէս Քաղա՛ք է...»։

Պառաւն իր տեղ քընացաւ,
*Սանասարն ալ՝ իր տեղ *) ձըղեց՝ պառկեցաւ։*

151. Ջին Կ'արբցնէ Սանասարը՝ Որ Երթայ Ծովուն Մէջ
ՋՍ·244,245·

Մընա՛ց՝ երկու ժամէն ետք, —
Սանասարին կանչեց իր Ջին ու ըսաւ. —
— «Ելի՛ր,-ըսաւ, մի՛ քընանար, Սանասա՛ր...»։
= «Ելնեմ,-ըսաւ, ի՞նչ ընեմ...»։
— «Ելի՛ր,-ըսաւ, երթա՛նք դէպի Բանլիքները, Ծովուն մէջ...։
Մինչեւ որ այն Բանալիները չըբերենք՝
Անոնք երբեք չե՛ն իմանար որ Մենք այստե՛ղ ենք եկեր·
Գողի պէ՛ս ենք՝ Մենք այստեղ։
Անոնք Մեր դալ թէ իմացած ըլլային՝
Կուգային ու Քեզ հետ կըռի՛ւ կ'ընէին։
Ելի՛ր,-ըսաւ, երթա՛նք բերե՛նք Բանլիքները, —
Որովհետեւ բա՛ն կըբացուի՝ այն Բանլիքին ետեւէն. —
Կըհասակընան՝ կ'ելնեն կուգան Մեր վըրա՛յ,
Կըռի՛ւ կ'ընեն Քեզի հետ. —
Նո՛ր այնատեն Քառասուն-Եամը կըտանի՛նք...»։

152. Սանասար՝ Ջիւն Վրայ՝ Կ'իջնէ Ծովուն Մէջ Որ Վիսապէն Բանլիքները Խլեն
Ջ·, Հ·12, ՋՍ·246·

Սանասա՛րն էր, — ելաւ դընաց պիչերով,
Գընաց առաւ քառասուն ուղտի բեռ Գինի,
*Տարաւ ձըղեց Ծովին պըռուկ *), իջեցուց,*
Ուղտեր դարձան, Ինք մընաց, —
Այդ քառասուն բեռ Գինին լեցուց Ծովին մէջ,
Վիշապ իր տեղ պինովցուց...։
Ինքն ալ ելաւ՝ հեծաւ իր Ձին՝ հրեղէն Քուռկիկ-Ջալալին, —

*) Տեղ, Անկողին։ *) Պռուկ, Ափ, եզր, շրթունք։

— «Ինչ պի՛նդ բլունէ Իմ քամկի՛ վրայ,-ըսաւ Զին-,
Կ՚երթանք կ՚իջնենք Ծովուն մէջ...: —
Չելնե՛մ սակայն ու չիմանա՛մ որ,-ըսաւ-,
Դուն Ֆո ձևոքը պարզես դէպի Բանալին՝
Ըսես՝ «Պիտի ե՛ս առնեմ»: —
Թէ Դուն Ֆո ձևոք պարզես դէպի Բանալին՝
Վիշապ այնտեղ իր խոր քունէն կ՚արթննայ,
Ու կ՚ելնէ՝ Մեզ կըկլլէ.... —
Ես իմ մըտքով *) կամա՛ց կ՚առնեմ՝ Անիկ իր տեղ չի՛մանար..., —
Թէ՛ հրեղէն, թէ՛ ծովայի՛ն Զի՛ եմ ես...»:

153. Զին՝ Բանալիները Վիշապէն Կը խլէ

ՀՍ·247,248,249, Հ·12, (Հ·12)·

Ելան գացին, Սանասար ու Իրեն Զին: —
Զի՛ն էր..., — Քըռաւ՝ դընաց՝ իջաւ Ծովուն տա՛կ,
Տեսաւ այնտեղ՝ որ ահագի՛ն մէկ Վիշապ...՝
Գլլուխ բարձըր՝ Ծովուն յատակ պառկած է...,
Բանալիներն ալ գըլխին...:
Զին պարզունցաւ *)՝ բերնով գողցաւ այդ Բանլիքներն՝ ու Քըռաւ՝
Սանասարն ալ՝ Իրեն վըրայ՝ Պղընձէ-Քաղքի մէջ իջաւ...:

154. Սանասար Դուրզով Կըզարճէ՝ Ոսկի-Խնձորը Բերդին Գլխէն Վար Կըբերէ

Զ·, Ճ·74,76, Ե·541,612,487, ՀՍ·249, Հ·12, Զ·՝487·

Սանասա՛րն էր, — կանչեց Աստուած՝ եւ իր Նաչը-Փետրազին,
Ինչեց գընաց դէպի Դորգ...: —
Լուսնակ գիշեր, ինչպէս ցերեկ՝ պայծառ օր, —
Գընա՛ց-եկաւ, իր Զին տաքցուց՝ ու Թափկան *)՝
Ա՛յնպէս խաղցուց ու վեր հանեց՝ հրեղէն Գուռկիկ-Զալալին,
Բուրջին *) գըլխէն Գուրզը քաշեց, ոլրեց չըղթան՝ ու փըրցուց,
Աստծու կամքով՝ Գուրզը եկաւ՝ փետուրի պէս ա՛յն ինկաւ...:

---

*) Մտքո՛վ, Շրթունքո՛վ: *) Պարզուիլ, Երկարիլ: *) Թափկան, Թափով, արագութեամբ: *) Բուրջ, Բուրդ, բերդի կատար:

*Երեք անգամ ծո՛ւռըր դըրաւ՝ դէմքը դէպի Աղօթրան *),*
Գորգը գարձուց, գարկաւ Բերդին՝ Ոսկի-Մընձոր բերաւ տակ,
Գորգը գընա՛ց...՝ դունդի՛ նըման՝ սարէ՛ խասր, հե՛ռուներ...,
Կանգո՛ւնուկէս գընաց մըտաւ ամրոնաշոր գետնի մէջ...:
Ինքը ելաւ՝ Ոսկի-Մընձոր դըրաւ ծո՛ց,
Եկաւ իջաւ Պառւի Տուն, —
Կո՛ւզ եղաս հոն՝ քընացաւ...:

Պառաւն իր տեղ դեռ քընած է միամիտ,
Չ'է՛ իմացեր որ այդ բաներ՝ Սանասարի ըրա՛ծն է...:

155. Վիշապը երգայրացայ՝ Ծովը երծփէ՝ Աճձրեւի պէս կըթափէ Քաղքին վրայ, ճամբաները կըթացուին, Թագաւորի-Աղջիկը Լուսամուտներէն կըտեսնուի

ՀՍ·250,251, Զ·, Հ·12, Զ·՝Ե·541, Զ·՝Ց·75·

Դառնանք՝ ըղըոյցն ո՞ւրկէ տանք, —
Զըրոյցը տանք Վիշապէ՛ն...: —

Լուսուն՝ Վիշապն իմացա՛ւ որ Բանալիներ տարած են..., —
*Է՛..., կատղեցա՛ւ..., ա՛ն է *)՝ Քաղաք պիտ՝ կ'ըլլէ՛...,*
Գոչէր գարկաւ Ծովուն մէջ..., —
Ծով վերցուեցաւ՝ եղաւ Անձրե՛ւ..., տեղա՛ց Պղընձէ-Քաղքի մէջ...
Հեղե՛ղ ելաւ..., Քաղաք քակեց՝ քըշեց տարաւ՝ լեցուց Ծո՛վ..., —
Քաղքին դըռներն ու ճամբաներ բացուեցա՛ն...:

*Սանասարն ալ՝ երբոր՝ լուսուն՝ վեր ելաւ *)՝*
Դարձաւ նայեց Քառասուն-Ծամի Պալատին, —
Տեսաւ՝ Անոր Պառուհաններ, վարագոյրներ բացա՛ծ են...,
Լոյսը տըւեր Քաղքին վրա՛յ...,
Աղջիկն ալ՝ իր Պատըշգամէն՝ քա՛ց ու լուսուս կ'երեւա՛յ...: —
*Անոր Ցուռուքն *) ուրե՛ր էր...:*

---

*) Աղօթրան, *Արեւելակողմ*, աղօթարան: *) Ա՛ն է, *Քիչ է մընացեր...*: *) Վեր ելլել, *Արթննալ*: *) Ցուռուք, *կախարդանք, հմայութիւն*: *Հմմտ.՝ «Ցուռուքս..., ուլունք Շամիրամայ 'ի Ծով»* [*Ազն. Ա. ԺԸ. 90*]:

156. Քառասուն-Ճիւղ-Ծամ՝ Բարկացած՝ Կրկանչէ Իր Դէվերը՝ Որ Գտնեն Ու Իրեն Բերեն Այդ Բաճերն Ընողը

8·75, 2·՝8.75, 2U·252, 253, (Հ·12), 2·՝Հ·75·

Լոյս բացուեցա՛ւ, Ամենք ելան՝ իրենչ տեսնեն···, —
Քառասուն-Ճիւղ-Ծամ-Գոհար նայեց տեսաւ որ···՝
Քաղաքին կէս՝ Հեղեղ տարեր լըցեր Ծո՛վ···,
Ու Դուռները բոլո՛ր մէկէն բացուե՛ր են···, —
Մխիթ ըրաւ ու դարձաւ այդտեղ իրենչ ըսաւ· —
— «Կըլա՛յ-Չըլա՛ր՝ Աս՝ Սանասա՛րն է,-ըսաւ,
Եկեր մըտեր Իմ Քաղաք···»:
Ու բարկացա՛ւ···, կանչե՛ց ըսաւ, — «Դէ՛վի-Անդա՛լ, Դէ՛վի-Ա՛լ···,
Հո՛ղ ու մոխի՛ր Ձեր գլխին···,
Ես Ձեղ երկուքդ նե՛րս կըբռնեմ, Քառասունն ալ դո՛ւրս կըպահեմ···,
*Ու կըտեսնեմ՝ «Գո՛ղ» *) է եկեր մէջ Քաղքին···: —*
Ելէ՛ք՝ Քաղաք մտե՛ն եկէք···,
Տեսնեմ իրենչպէս Մարդ է Ան···՝
Եկեր զարկեր, Իմ Արընճորը կոտրեր առեր տարեր է···,
Ու Վիշապին բերանէն ալ՝ — չեզա՛ծ բան···՝
Բանալիներն ու Մատանին հաներ է···:
Ա՛, հա՛···, կ՛ուզեմ չուտ գըտնէ՛ք···, —
Բըռնէք բերէք այտտեղ՝ Անոր վիզ կըտրէք···»:

157. Դէ՛վի-Ալ, Դէվի-Անգալ, Քաղաքին Մէջ Սանասարը Կրփնտռեն Ու Կրմտնեն Պառաւին Տունը

2U·254,255, 256, 2·՝2U·254, 8·75, 2·՝8·75, (8·75), Հ·12, (Հ·12), 2·

Է՛, կանդնեցա՛ն Դէ՛վի-Անդալ՝ Դէ՛վի-Ալ···,
Ինկան Քաղաք՝ մտե՛ն եկան···: —
Շա՛տ կան եկան Քաղաքին մէջ՝ վեր ու վար,
Օտարական մէ՛կ չըտեսան նոր եկած: —
Գացին հասան Պառաւի Տուն, հարցուցին, —
— «Պառա՛ւ,-ըսին-, այտտեղ Տատար Մարդ չըկա՛յ···:

---

*) Գող, Գողտուկ Ներս սպրդած մարդ:

Ան ալ թէ, = «Չէ՛, այստեղ օտար Մա՛րդ չկայ…: —
[Այն Տըղան *)՝ Իր աչքին ա՛յնքան օտար չ՚էր՝
Որ Ի՛ր տըղու տե՛ղ կ՚առնէր…] ՝
Չէ՛,-ըսաւ, հոս Մա՛րդ չկայ…»:
Դէ՛վի-Ալ ու Դէ՛վի-Անդալ՝ մըտան Տունը՝ նայեցան, —
Տեսան որ մէկ կըտրիճ *) Տըղայ մ՚ պառկեր է հոն՝ քընացեր…,
Հրեղէն Ձի մ՚ ալ Իրեն կուշտ… *),
Ըսին, — «Պառա՛ւ, ատ ի՞նչ Մարդ է՝ Ձո Տան մէջ…»:
= «Իմ Տըղա՛ս է,-ըսաւ Պառաւն ալ այնտեղ,
Ինչպէս ինկեր՝ այնպէս քընաւկ է Իր տեղ…»:
— «Ի՞նչպէս կ՚ըլլայ, Պառա՛ւ,-ըսին Անոնք ալ-,
Մեր ձիացածով՝ մինչեւ այսօր տըղայ-մըղայ չկա՛ր Ձեզ…՝
Այսօր Ձեզի Տըղա՛յ կայ…: —
Այդ Մարդ գո՛ղ է՝ եկեր է Մեր Քաղքին մէջ…»:

Մանասարն ալ՝ պառկած տեղէն՝ գըլուխ վերցուց ի՞նչ ըսաւ. —
— «Մամի՛կ,-ըսաւ, ինչո՞ւ օտար Մարդ չկայ…,
Չէ՞ ես այստեղ օտա՛ր եմ…»:

Պառաւն Իրմէն չա՛տ բարկացաւ, — «Սո՛ւս կաց,-ըսաւ, ա՛յ Ողի՛,
Ձեզ կըտանին՝ կ՚ըսպանեն…»:
Ու երդուեցաւ՝ Թէ «Իմ Տըղա՛ն է Ասիկ…»: —

156. Դէ՛վի-Ալ Ու Դէ՛վի-Անդալ Կըմեղբեցան Սանասարին, Ան՝ Առանց Վախի՝ Իր Ըրածները Կըպատմէ

Ե·75,76, Չ·՝Ե·75, Չ(Հ·12), Չ·

Մանասարն ալ՝ այն Մարդերուն ձայնեց ըսաւ, — «Ե՛ղբայրներ,
Ի՞նչ հարցմունք է՝ կ՚ընէք այդտեղ…, Ես օտա՛ր եմ Քաղքին մէջ»:

Մարդիկ տեսան՝ Այդ Տըղան ալ՝ այնպէ՛ս կըտրիճ Տըղա՛յ մ՚է…՝
Անոնց արիւն եռա՛ց վրան…, այդ Տըղային մեղքեցա՛ն…, —
— «Տըղա՛յ,-ըսին-, ափսո՛ս ես Դուն…, Ձեզ պահե՛նք…: —
Թագաւորին առջեւ մի՛ գար, մի՛ ելներ…»:
= «Թագաւորին ի՞նչ կ՚ըլլայ որ…,-ըսաւ-,չիգամ Իր առջ…»:

---

*) Տղան, Այսինքն՝ Մանասար: *) Կտրիճ, Երիտասարդ եւ ուժեղ: *) Կուշտ, Քով, քովիկ:

— «Տըղա՛յ,-ըսին-, դիտե՞ս ի՛նչ…, —
Եկած զարկած՝ Թագաւորի-Աղջկա՛ն Ալընճոր տարա՛ծ են…,
Թագաւորէն հրամա՛ն է *), —
Ինչ Մարդու մօտ՝ այն Ալընճորը որ տեսան՝
Եթէ այդ Մարդ կըտրիճ եղաւ՝ կըռիւ ըրա՛ւ…՝ հո՛ *) պըրծաւ. —
Իսկ եթէ որ կըտրիճ չեղաւ՝ Անոր գլուխ կըզարնեն…»:

Մանասարն ալ՝ վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ. —
— «Շատ երկիրներ՝ ես ման եկայ՝ ողջ աչխար(հ),
Բայց չըտեսա՛յ ոչ մէկ Քաղաք՝ Պղընձէ-Քաղքին հատասար…,
Ան ի՛նչ Պարիսպ…, Շուկա՛յ, Պարէ՛զ, Աղբիւրնե՛ր…: —
Մե՛ղք որ մէյն՝ Բանալիներ՝ Ծովուն յատա՛կն են ձըգեր…:
Բերդէն կախած Ծանրիկ-Դուրդն ալ՝ գիշերանց՝
Տըղայ մ՝ զարկեր՝ առեր նետեր սար ու քար…,
Ոսկի-Ալընճոր Թրոցուցեր է, Շամամէ *) պէս դըրեր ծոց
Ըսա՛ւ-չըսա՛ւ…՝ ձեռ տարաւ ծոց, Սանասար,
Բուռ մը Ոսկի հանեց տըւաւ Մարդերուն,
Մէկ ծոցէն ալ՝ Ոսկի-Ալընճոր հանեց՝ Անոնց ցո՛յց տըւաւ, —
— «Ի՛նչ եղբայրնե՛ր,-ըսաւ Անոնց-. ա՛յնքան Ինձի մէջո՛ց տաք՝
Իմ Ձին հեծնեմ՝ երթամ հասնիմ այն Գուրգին…: —
Դուք ալ դացի՛ք պատմեցի՛ք Ձեր Թագաւորին ու ըսի՛ք, —
Թէ՝ «Քու Ոսկի-Ալընճոր տանող՝ տեսե՛ր ենք…», —
Ի՛նչ որ կուգայ Իրեն ձեռքէն՝ Թող ընէ՛….
Ե՛ս եմ ըրեր այդ բաները…»:

159. Թագաւորի-Աղջիկը կըկանչէ Իր Գառասուն-Դէվեր՝ Որ Սանասարը Գտնեն Բերեն. Սանասար՝ Կռիւ Կ'ուզէ Թագաւորէն

ՁՍ·257,258,259, Ց·76, Զ·Ց·76,, Զ·, (Ե·487).

Դի՛վի-Ալ ու Դի՛վի-Անդալ՝ ելան դացին այնտեղէն՝
Գառասուն-Ծամին լո՛ւր տըւին, —
— «Իրա՛ւ,-ըսին-, Թագաւո՛ր *),

---

*) Հրաման է, Հրամանը ելած է: *) Հօ՛, Արդէն, ինչեւէ, լա՛ւ: *) Շամամ, Սեխի՝ հոտաւէտ կլոր տեսակ մը, մշկասեխ: *) Թագաւոր, ժողովուրդ՝ քիչ տարբերութեամբ՝ թագաւոր կ'ըսէ այր կամ կին տիրապետի:

Երիտասարդ Տըղա՛յ մը կայ՝ Պաուի Տուն՝
Պառաւ կ՚երդուի՝ կ՚ըսէ որ «Իմ Տըղան է»...,
Բայց այն Մարդը՝ այս Քաղքէն չ՚է՛՝ Իր կազմով...,
Ուրիշ հեռո՛ւ տեղացց *) է։ —
Կա՛յ ու չըկայ՝ ա՛յդ Մարդն է մեր Քաղքի դող..., —
Ոսկի-Ջընճոր տարող Մա՛րդն է՝ տեսած ենք...»։

Քառասուն-Ճիւղ-Մամ-Գոհար Աթոռն այս անդամ՝
Ա՛լ դիտցաւ որ՝ Սանասա՛րն է այդ կըտրիճ. —
Կանչեց իրեն Քառասուն-Դէվեր, Ալն ու Անդալ Ներսեցան.
Կանչեց Քառասունն, — «Ա՛, հա՛,-ըսաւ բարկացոտ,
Կ՚ուզեմ բերէք՝ վիզը կըտրէ՛ք Այդ Մարդուն...։ —
Այսօր եկեր՝ Իմ Դուռները քացեր է...,

Եկեր մըտեր է Իմ Տուն..., —
Ոսկի-Ջընճոր զարկեր տարեր՝ դիշերուան մէջ լուսընկայ...,
Ու Իմ Քաղաքն աւրեր է...։
Գացէ՛ք ըսէ՛ք՝ այստե՛ղ գայ..., —
Թագաւորին գերի՛ է...»։

Եկան ըսին Սանասարին, — «Թագաւորին գերի՛ն ես,
Պէտք է որ Քեզ տանինք այնտեղ՝ բանտարկուիս...»։
Սանասարն ալ՝ դարձաւ Աշոնց ի՞նչ ըսաւ. —
— «Թագաւո՞րը..., ի՞նչ Թագաւոր է Ատիկ...,
Մենք՝ Տէր-Աստուա՛ծ մ՚իսկ դիտենք *) Թագաւոր...։
Հա՛-հա՛ *),-ըսաւ, Թագաւորէն կըվա՛ւ կ՚ուզեմ ես հիմիկ... *).
Գացէ՛ք ըսէ՛ք Թագաւորին՝ «կըվա՛ւ կ՚ուզեմ ես Իրմէն...», —

Է՛հ, Աստուա՛ծ ալ՝ կա՛մ Ի՛նձ կուտայ՝ կա՛մ Իրեն....
Ինչո՞ւ պիտի ես զամ ու Ձեր Թագաւորի բանտ մըտնեմ..., —
Կըվա՛ւ կ՚ուզեմ...՝ որ կըտա՛ւ մ՚է...։ —
Ձեր Թագաւոր՝ Թող Զօ՛րք ժողվէ՝ որ կըտա՛ւնք...»։

---

*) Տեղաց, Տեղերէ, ☛ հեռո՛ւ-տեղացի, ուրիշ երկրացի։ *) Գիտնալ, ճանչնալ, ընդունիլ։ *) Հա՛-հա՛, Օ՛ն անդը, գէ՛հ չուտ, անդրանդաղ։ *) Հիմիկ, Հիմա իսկ, անմիջապէս, իսկոյն։

160. Սանասար, Մարզակեր-Պառաւն Ու Բառասուն Դէվեր՝ Արհուճի-Պարտէզին Մէջ

(ՉԿ·236), ՉԿ·236,237,238, 239,240,241,242, (ՉԿ·239,241), Չ·, (Կ·5,115), Կ·115, ՉՍ·260, 262, 263,264, Ե·488, Չ·՝Հ·12·

Սանասարն ալ՝ քըշե՛ց դընաց Բաղքին մէջ, —
Դընաց հասաւ Թագաւորի Պալատին,
Տեսաւ որ մե՛ծ Դուռ մը՝ բա՛ց էր այնտեղը,
*Նայեց որ ինչ···, — աղուոր Այդի մ՚՝ եւ աշխարքով *) պըտուղ՝ մէջը։*
Ան ալ Իր Ձին քըշեց դընաց Այդին ՚ի վեր, մըտաւ նե՛րս։

Ըսե՛ս որ այդ՝ հազա՛ր բարիք մէջը լեցուն Այդին ալ՝
Բառասուն-Ծամի Արքունական-Պարտէ՛զն է····
*Պարտիզպանն ալ՝ մէկ Մարդակեր *)-Պառա՛ւ մ՚է···։*
Պառաւ՝ վերէն նայեց տեսաւ որ մէկ Մարդ՝
Իր Ձին թողեր Այդիին մէջ կ՚արածայ···,
Ինքն ալ ինկեր Պարտէզին մէջ, վեր ու վար, —
Գէ՛չ-գէ՛չ այնտեղ աւերուքի՛ւն կ՚ընեն մէջը···, —
— Վկեցի՛ր···,-ըսաւ, Դուն անօրէ՛ն, անըղձա՛մ···,
Ես ելնե՛մ ու քեզ արժանի պատիժ տա՛մ···»։

Ան ալ դընաց՝ Բառասուն-Ծամի Բառասուն-Դէվեր կանչեց հո՛ն,
Եկան մըտան Այդիին մէ՛ջ, Դուռը գոցեց ու դընա՛ց···։

Բառասուն-Դէվեր ,-Բառասուն Աւի՛ւծ-Ըմբիշներ-,
Շըրթան առին՝ հասան Ամեն մէ՛կ դեհէն,
Սանասարի վըրայ եկան ժողվեցան,
Զորս-բոլորը բըռնեցին՝
Որ Անոր վիզ Թըռցընեն···։

Սանասարն ալ՝ Իրեն հետը ո՛չ Գորզ առեր՝ ո՛չ ալ Թուր···, —
Իր մըտքին մէջ ի՞նչ ըսաւ···, —
«Ատոնք ,-ըսաւ, Բառասուն՝ մէկէն՝ վըրաս եկան կըռիւի,
Ես ալ ինձ հետ ո՛չ Թուր ունիմ՝ ո՛չ ալ Գուրզ···, —

---

*) Աշխարհով, Աշխարհ լեցնելու չափ առատ։ *) Մարդակեր, Արիւնարբու, անգութ։

Ինչո՞վ պիտի կըռիւ ընեմ Անոնց հետ…։ —
*Լա՛ւ է,-ըսաւ, Քառասո՛ւն՝ մէկէն *)՝ ո՛չ մէկ-մէկ…»։*

Քառասուն-Դէվեր որ եկան՝
*Մէկ Անոնցմէ՝ մէկ Իրմէ *)…, —*
Կըպան կըռի՛ւ Իրար հետ։
Ելան գացին մէկ բա՛ց տեղ, —
*Հաւնելուն պէս՝ Քառասուն-Դէվեր՝ իրենց Շըղթան *) նետեցին,*
Ինկաւ մընաց՝ Սանասարի ճի՛շդ վըզին…։

*Սանասարն ալ՝ անուսո՛ւմ էր, այդպէղ *) կըռիւ չէ՛ր ըրեր, —*
Քըսան-Դէվեր ա՛յս մէկ կըշտէն, ու Քըսան-Դէվ՝ մէ՛կ կըշտէն,
Շըղթան ամո՛ւր կըքաշքըշեն վար ու վեր՝
*Ու չե՛ն կըրնար Սանասարի վիզ կորել *)…։*
*Սանասար Ինք՝ վիզը չըտեր *) կեցեր է,*
*Ձին ալ՝ գըլուխ զարկեր սըրտին *)՝ սի՛ւն տըւեր… *),*
*Ու ոտքերը ասացուցեր *) քարի դէմ…,*
Քարը վորեր՝ մըտեր մէ՛ջ…, —
*Որ Սանասար մօտէն *) չ՛խըլե՛ն ըսպանեն…։*

161. Սանասար՝ Քառասուն-Դէվերէն Ծուսըվեցը կ՛ապաւէ

Կ·115, ՉՍ·265, ՉԿ·242,243, Չ·, (Ճ·76)·

Քառասուն-Ձիւղ-Մամ-Գոհարն ըսես՝ Պատըշդամէն կըդիտէ…։
Սանասարն ալ՝ Խաչ-Փետրազին ալ Թեւին,
Մոլորե՛ր է Ինք Իր մէջ՝
Չի՛ գիտեր որ կանչէ Իր Խաչ, յիշայ՝ ու գ՛Ինք ազատէ…,

---

*) Քառասուն՝ մէկէն, *Քառասունը՝ մէ՛կ անգամէն*, քառասունը միասին։ *) Մէկ աւուցմէ՝ մէկ իրմէ, *Մէկ խօսք ու գրգռութիւն մէկ կողմէն, մէկ խօսք միւս կողմէն՝ արտասանուելով…։ *) Շըղթայ, Հաւանաբար հիւսուած վոկ, լաւս։ Համմալ.՝ «Շիկավոկ պարանո-ի հետ (Որնցկ.)։ *) Այդպէղ, Այդկերպ։ *) Կորել (կօռել), կորացնել, ծռել։ *) Շտեղ (չխտակ-ել), Պիրկ բռնել, ցցել, տնկել։ *) Սիրտ, կուրծք, լանջ։ *) Սիւն տալ, Նեցուկ ըլլալ, ամրացընել, դիմադրել։ *) Ասացնել, Ամրապէս կոթնացնել, դէմ տալ։ *) Մօտէն, Ձիուն վրայէն, հեծած տեղէն։

Միայն ոտքո՛վ ու բըռունցքո՛վ կըզարնէ···:
Քառասուն-Դէվեր՝ Իրենց վախէն՝ Անոր մօտ զալ չե՛ն կըրնար:
Մինչեւ իրկուն՝ այդ վիճակով կըռուեցան,
Քըսան-Դէվեր՝ բըռունցքով ու ոտքով զարկա՛ւ ըսպաննեց:

Ըմբիշները՝ կըռիւ ըրին դիշե՛րն ալ, —
«Մըթնի,-ըսին-, կըզարնենք ու կ՚ըսպաննենք···»:

Մինչեւ լուսուն՝ տասն ըմբի՛շ ալ դեռին փըռեց Սանասար,
Առաւօտին մինչեւ իրկուն՝ կըռի՛ւ ըրաւ անդադար՝
Զարկաւ վեցն ալ ըսպաննեց, —
Մնացին մէկայն չո՛րս Դէվեր: —
Երսունըվեց Դէվի դիակ՝ խնկան չո՛րս կողմ՝ Մարդին վրայ,
Արիւն ելաւ՝ ու մէջտեղը կայնեցաւ···:

Սանասարն ալ՝ ճարը վըրան կըտրեցաւ···,
Արիւնի մէջ կեցաւ այնտեղ ու մընաց···:
Արիւն ա՛յնքան դ՚ինք բըռնեց···՝
Ա՛լ ոչ ի՛նքը կըրցաւ դուրս դալ արիւնէն՝
Ոչ այդ Դէվեր կըրցան դ՚ինքը ըսպաննել···:

162. Սանասար՝ Նոր Օր Կերաւ-Խըմեց Կուտեցաւ, Նոր Օր Ալ՝ Աճօթի-Ծարաւ Կուտեցաւ

Չ·՝Ճ·76,77, ՉԿ·244, Կ·115, (Կ·115), Հ·12,409, ՉՍ·266·

Սանասար՝ հոն՝ այդ վիճակին մէ՛ջ ինկած՝
Եօ՛թը դիշեր ու եօ՛թ ցերեկ՝ կըռի՛ւ ըրաւ անդադար,
Եւ իր վարձած այդ Եօթ-Փուռի հացը մինակ ի՛նք կերաւ,
Եօթն-Աղբիւրի ջուրը մինակ ի՛նք խըմեց, —
Չըթողուց որ այդ Քաղաքի Քաղքցիք՝
Ոչ հա՛ց ուտեն՝ ո՛չ կաթիլ մը ջո՛ւր խըմեն····
Անոնց վըրայ պա՛հք ըրաւ, —
Ինքը մինակ՝ կերաւ-խըմեց՝ կըռուեցաւ···:

Թագաւորի ճարը հատաւ, ի՞նչ ընէ···,
Իր Մարդերէն չատերն ալ հոն՝ առանց հացի՝ կըմեռնին···, —
Հրամա՛ն հանեց այդ Քաղաքի Փուռերուն

*Եւ Աղբիւրի-Ջրբերներուն *) ալ վրայ, —*
Թէ, — «Արգիլուա՛ծ է՝ այս օրէն՝ հաց թրխելն ու ջուր բերել...:
Այն Մարդիկները որ հա՛ց թրխեն ու ջո՛ւր բերեն՝ ասկէ ետք՝
Անոնց տուն-տեղ, ինչքն ու ապրանք՝ ամեն մէկ՝
Ո՛չ արքունի՝ ո՛չ անհատի բաժին է, —
Գրակի՛ կուտանք՝ կըվառե՛նք...»:

Սանասարը եօ՛թ օր այնտեղ կերա՛ւ-խըմե՛ց՝ կըռուեցաւ, —
Ու եօ՛թ օր ալ՝ անօթի՛ ու ծարա՛ւ այնտեղ կըռուեցաւ...:

Անիկ այնտեղ Իր կըռւին մէ՛ջ թող մընայ,
Մենք ալ դառնանք ու զըրոյցը ո՞ւրկէ տանք, —
Գըզուիկ Եղբայր Բաղդասարէ՛ն զըրոյց տանք: —

ԺԳ. ԲԱՂԴԱՍԱՐ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿԸՀԱՍՆԻ ՍԱՆԱՍԱՐԻՆ

163. Բաղդասար՝ Նօսճճեռէճ Կրիասկճայ Որ Սանասար Վ.ասճգի Մէջ է՝ Կրմենկճի Դէպ Պղճձէ-Քաղաք

Ջ·, (Ճ·77, Կ·6,116), Հ·409,6,12,13, ՋՍ·267,268, Կ·246,247, 245, 248,249,250, Ե·489, Ճ·77·

Բաղդասա՛րն էր, —
Առաւօտուն ելաւ դո՛ւրսը, եւ Իր Ձեռքե՛ր կըլըսար, —
Աչքը ինկաւ Սանասարի Մատնիչին՝
Ինչ Եղբօր հետ փոխեր էր,
Նայեց տեսաւ որ Մատնիչին կէսը սեւնա՛լ էր առեր..., —
— «Հէ՛յ, վա՛խ,-ըսաւ, Իմ Եղբայրը՝ նեղութեան մէ՛ջ է ինկեր...,
Ա՛յսքան ատեն չեկա՛ւ չելաւ-երեաց...»:

Ելաւ Երդիս՝ ու նայեցաւ Աստղերուն, —
Տեսաւ որ իր՛նչ..., — Իր Եղբօր Աստղ նըւաղե՛ր է ու մըթնե՛ր...,
*Եւ Թէ Ամպը՝ Երկինք *)՝ կանչեց ու կ՛երթա՛յ...:*
Ան ալ վազեց Մօրը՝ Լուսիկ-Թագուհուն, —
Երէցին հետ՝ Իր Սենեակին դուռ նըստած —:
Մայր ու Երէց ըսին, — «Տըղա՛յ, ատ Դուն մէկէ՛ն ի՛նչ եղար...»:

---

*) Ջրբեր, Ջուր բերող, Ջրկիր: *) Երկինք, Երկնից մէջ:

*Ան ալ կանչեց, = «Մարէ՛,-ըսաւ, դէ՛ իմ Զի՛ն··· *),*
*Իմ Զին բեր դո՛ւրս···, ձեռքէ դընա՛ց *) իմ եղբայր···,*
Ա՛լ ես,-ըսաւ, իմ եղբօրը չե՛մ հասնիր···,
Սահասարը նեղն է ինկեր այս ժամին···,
Իմ եղբօր Ասող՝ նըւաղե՛ր է···, մնացեր փըշուր մ՝ Իր հոգին····
Ամպը երկինք՝ կըդոռա՛յ ու կըկանչէ՛···,
Եւ Իր Մատնին՝ մատիս վըրայ սեւցե՛ր է····
Պէտք է երթամ ես իմ եղբօր օգնութեան,
Տեսնեմ եղբայրս ի՞նչ եղաւ···, —
Կա՛մ հասնիմ ես, կա՛մ չըհասնի՛մ Իր չունչին···»:
Ըսին, = «Որդի՛, ատիկ ի՞նչպէս կանչեց որ Մենք չիմացանք···:
Սահասարը՝ հիմա Պղընձէ՛-Բաղքի մէջ՝
Բառասուն-Ձիւղ-Մամ Գոհարի ծոց քընե՛ր է···,
Վայելքն Անոր վայե՛լքն է···, —
Եկ հանդի՛ստ կաց Դուն Քու տեղ···»:
Բաղդասարն ալ՝ վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ· —
— «Զի՛չ···,-ըսաւ, Ամպը կանչե՛ց երկինէ մէջ·
Դուք չե՛ք լըսեր, բայց ես ահա՛ կըլըսե՛մ···, —
Մենք մարմնաւոր զաւակ չե՛նք····
Մենք կըլըսենք···, եւ Իրարու պիտ՝ հասնինք····
Իմ եղբայրը նե՛ղն է ինկեր, պէտք է որ ես չո՛ւտ երթամ···»:
Դարձաւ ապա դէպ Իր Մայր, —
— «Մարէ՛,-ըսաւ, այստեղ ի՞նչ Զինք է թողեր···»:
= «Մէկ վոքրիկ ու թեթեւ Գորգիկ···»,-ըսաւ Մայր:
Առաւ Նիզակ՝ դըրաւ թեւին, Բաղդասար, —
— «Դէ՛, կա՛ց բարո՛վ,-ըսաւ, Մարէ՛, ես կ՝երթա՛մ···»:
*Ու Զին հեծաւ, կանչեց Աստուած, պըլըլկուեցաւ *) Իր ճամբան····*
Մոռցաւ՝ հա՛ց ալ չըկերաւ···:

164. Բաղդասար՝ Դէմ Կուգայ Ծօր-Ջաղջի Ձուր-Խմողին Եւ Անոր Գլուխը Կըթռցնէ

ՁԿ·251, Կ·6, Ց·77, ՁՍ·269, 270, 271, Հ·13·

Քըչե՛ց դընաց՝ Բաղդասարն ալ՝ Իրեն եղբօր օգնութեան: —

---

*) Դէ՛ իմ ձիս, Օ՛ն, չո՛ւտ՝ իմ ձին կ՝ուզեմ որ բերեն հո՛ս: *) Ձեռքէ գնաց, Լմնցաւ, հոգեվարքի մէջ է: *) Պլկուիլ, փոքրիկի պէս քշել, սուրալ, խուժել:

Թէ Սահասար՝ երե՛ք օրէն՝ պղընձէ-ֆաղաք հասեր էր՝
*Բաղդասարը՝ աչքախըվոց *)՝ գընաց մէ՛կ օր ու մէ՛կ ճաչ *):*

Գընա՛ց գընա՛ց...՝ ու դէ՛մ եկաւ այդ Մարդուն՝
Ինչ ես օ՛թ-Ջաղցի Զո՛ւր կըխըմէ՝ կ՚ըսէ «Մարաւ մեռա՛յ ես...»:
Գետ-Ըմմողը՝ կանչեց ըսաւ, — «Օ՛ Զիաւո՛ր ճամբու Մա՛րդ,
*Աստծո՛ւ սիրուն... *), մէ՛կ պուտ Զո՛ւր տաս՝ ես խըմե՛մ...,*
Իմ աղիքներ չորցե՛ր են...»:
Բաղդասարն ալ, = «Տօ՛ անաստուա՛ծ Մարդ,-ըսաւ,
Մէկ ահագի՛ն Գե՛տ մը կ՚երթայ Քու փորնիվար՝ կըխըմե՛ս...,
Աչխարհ ծարաւ կըչորցընես՝ կըճըղնես...,
*Զուր չե՛ս թողուր՝ երթայ՝ Աչխարհ *) ապըրուին...,* —
Ու դեռ Ինձմէ Զո՛ւր կ՚ուզես....
Դէ՛ կեցի՛ր ես Քեզի Զո՛ւր տամ...՝ Դուն տեսնես...»:

Ըսա՛ւ թէ չէ՛՝ Թո՛ւր մը զարկաւ՝ վիզ կըտրեց, —
— «Ան ինչ,-ըսաւ, պիտի խըմես Դո՛ւն մինակ՝
Լա՛ւ է՝ Աչխարհ ամե՛ն խըմեն՝ ու լիանան Մարդո՛ւ պէս...»:

Անկէ անցաւ՝ ու գընա՛ց...:

165. Բաղդասար Դէմ Կուգայ Սօթը-Փուռի Հաց-Ուռողին Ու Անոր Գլուխը Կըթռցնէ

ՀՍ ·272,273,274, Հ ·13, Զ ·՝Հ ·13·

Գընաց հասաւ այդ Մարդուն
Ինչ Ես օ՛թ-Ջաղաց Ծորե՛ն կ՚աղան, Ես օ՛թ-Փուռով Հա՛ց կըթըխեն,
Ինքը մինակ Նըստեր կ՚ուտէ՛ այդ Հացեր, —
*«Ես անօթի մեռա՛յ...»՝ կ՚ըսէ մէկ-բերան *):*

Մարդը կանչեց, — «Օ՛ Մարդ,-ըսաւ, հեռու ճամբէ՛ կուգաս Դուն,
*Հիմա հարկաւ Քու տուրիկիդ *) մէջ Հա՛ց կայ..., —*

---

*) Աչխախոց, *Ակնթարթի մէջ*: *) Ձաղ, *կէսօր*: *) Սիրուն, *Սիրու համար, սիրոյն*: *) Աշխարհ, *Ամեն մարդ, ամենք*: *) Մէկ-բերան, *Մէխալար, անդադար*: *) Տուրիկ, *Փոքր տոպրակ, մախաղ*:

Բե՛ր տո՛ւր Ինձի՝ ես ուտեմ...,
Սուրճ մեռա՛յ ես այստեղ...»:

Բաղդասարն ալ, = «Աղէ՛կ...,-ըսաւ, նըստա՛ծ տեղ...՝
Դուն այդ եօթ-փուռ Հաց կ՝ուտես՝
«Ես անօթի մեռա՛յ...» կ՝ըսես՝ ու դեռ Ինձմէ Հաց կ՝ուզես..., —
Եօթ-փուռի Հաց՝ եօ՛թը Բաղաք կըկըշտացնէ օրական, —
Կեցի՛ր ես Քու վի՛ղը կըտրեմ, Ամե՛նք ուտեն՝ կըշտանան...»:

Թուրը նետեց՝ Անոր վի՛ղն ալ կըտրեց, անցաւ ու գընաց:

166. Բաղդասար Դէմ Կուգայ Քամիէճ Առագ Վազողին Ու Անոր Գլուխը Կըթռցնէ

ՀՍ·274,275·

Գընաց Հասաւ այդ Մարդուն Ինչ Ջաղցի-Բարեր Թեւերուն՝
Քամուն կ՝ըսէ՝ «Քեզ ե՛տ քաշէ՝ ես անցնիմ...,
Դուն կ՝ասանաս Պըրակներուն, Ծառերուն...», —
— «Տօ՛ կա՛ց,-ըսաւ,- ատիկ Դուն ի՞նչ Մարդ ես որ...՝
Քամուն կ՝ըսես՝ «Քեզ ե՛տ քաշէ՝ ես անցնիմ...»,
Կեցի՛ր,-ըսաւ, Թո՛ւր մը նետեմ՝ ու Քու վիղը ես կըտրեմ, —
Ճամբանե՛րը Թող բացուին...»:

Չարկաւ Ա՛ն աչ ըսպառնեց, —
Շատ ու քիչը Աստուա՛ծ դիտէ՝ քըշե՛ց դընաց Իր ուղին:

167. Բաղդասար Դէմ Կուգայ Աղուէսին Ու Եօթը-Դէվերուն

Ջ·՝Հ·13·

Գընաց Հասաւ այդ Աղուէսին որ անդուր՝
Այս մէ՛կ Սարէն՝ ա՛յն Սարին վրայ կըցատկէ՝
Կ՝ըսէ՝ «Կարվա՛ն..., խելք ու միտքըս կարվա՛նն է...»:

Բաղդասա՛րն էր, — ի՞նչ ըրաւ..., —
— «Կեցի՛ր,-ըսաւ, կարվա՛ն մ՝ ցոյց տամ Ես Քեզի...,
Հոդը Ի՛մն է՝ երա՞զ Ըուկդ...

Թուրը գարկաւ՝ Աղուէսի վի՛ղն ալ կըտրեց,
Մէկ կըտորը Բըռնուց գընաց Աթեւելք...,

*Մէկալ կըտորն՝ Արեւպատաք... *),*
Քըչե՛ց անցաւ՝ ու գընա՛ց...:

Գընա՛ց, գընա՛ց..., հասաւ այն Եօթ-Դէվերուն,
*Զիէն իջաւ՝ ու նըստեցաւ Անոնց կուչտ *),*
*Այդ Խընճորն ինչ *) կը նետէին մէկ-մէկու՝*
Կարգը եկաւ հասաւ Իրեն՝ ու բըռնեց՝
Խընճորն խակոյն դըրաւ Իր ծոց, ելաւ հեծաւ՝ ու քըչե՛ց...:

168. Բաղդասար Դէմ Կուգայ Սարի-Հովիւին

ՁԿ·251,252,253,245, 255, Կ·116, (Կ·116)Ձ·

Գընա՛ց, գընա՛ց՝ ու դէ՛մ եկաւ՝ Սարի մէջի Հովիւին:
Այն վիթխարի՛ Հովիւ նայեց՝ ի՞նչ տեսնէ... †), —
Մէկ Զիւռո՛ր մ՝ փըրթի՛ր կուգայ Ջամո՛ւ պէս..., —
«Կա՛յ ու չըկայ՝-ըսաւ՝ Ասի Սանասարի եղբա՛յրն է...»: —
Գընաց առջեւ, կանչեց ըսաւ, — «Է՛յ Զիւռոր ճամբո՛ւ Մարդ,
Այսքան տաեն ես այստեղ եմ՝ Մա՛րդ Ինձմէ վեր չ'է՛ անցեր,
Քե՞զ է մնացեր որ անցնիս...: —
Տէ՛ր վըկայ՝ Դուն պիտի դաս իշնես Իմ մօտ՝ նո՛ր երթաս...»:

Բաղդասարն ալ՝ մօտը գընաց ու ըսաւ. —
= «Հովի՛ւ,-ըսաւ, դէ՛ ե՛լ եկո՛ւր հրապարա՛կ,
Ես ու Դուն ալ նայինք ինչո՞վ պիտի կըռուինք Իրար հետ...»:
*[Անիկ գիտէր *)՝ կըռի՛ւ կ'ուզէր այդ Հովիւ:]*
Հովիւն ըսաւ, — «Ես Հովի՛ւ եմ, կըռիւ չունի՛մ Քեզի հետ...,
Միայն՝ այստեղ՝ փորձելաբան մ՝ ունիմ Ես,
Անիկ ընեմ՝ նո՛ր գընա...»:
= «Ի՞նչ է...»,-ըսաւ Բաղդասար:
— «Աբի՛,-ըսաւ, Ես այս կօտը կա՛թ կըթեմ ու գընեմ հո՛ս,
Հաց բըրդեմ մէջ՝ ու Դըզալ մը տամ Քու ձեռ,
Մինչեւ Ես Իմ Ոչխարի փաթ՝ պըտուտ տամ, —

---

*) Արեւպատո՛ք, *Արեւմուտք*, այն կողմը՝ ուր խաւարն արեւը կը պատէ: *) Կուշտ, Քով, կշտին, կողքին: *) Ինչ, Որ: †) Հովիւի մէջաղէպին մէջ յիշուած անծանօթ բառերու մասին Տեսնել Հատ. 132-133 ստրջ.: *) Գիտէր, կըկարծէր:

Թէ Դուն կ'երար ու պըրծուցիր այդ կօտ կաթ՝
Բարո՛վ երթաս..., կրկատարուի՛ Քու խընդիր·
Թէ չըկըրցա՛ր կերեր էիր...՝ մե՛ղք ես Դուն, —
Եկած ճամբէդ ե՛տ դարձիր...»:

Բաղդասարն ալ վերցուց այդտեղ լո՞նչ ըսաւ, —
«Մատանա՛յ ես..., լո՞նչ ես...,-ըսաւ-, ճամբուս վըրա՛յ ես եկեր,
Իմ եղբայրը հիմա հասեր մահուան դուռը...՝
Դուն ինձ կ'ըսես՝ «Աբի՛ այստեղ՝ ու կա՛թ կեր....
Ես վըտա՛նգ եմ..., ահա՛ կ'երթամ..., ճամբա՛յ տուր...»:

Հովիւն ըսաւ, — «Տըղա՛յ,-ըսաւ-, ճա՛ր չըկայ...,
Մինչեւ այս կօտ կաթը չուտես Դուն հիմա՝
Ես չե՛մ թողուր որ Դուն երթաս այստեղէն»:
Բաղդասարն ալ՝ տեսաւ որ չէ՛, կըսի՛ւ կ'ելլէ այս բանէն, —
Ձիէն իջաւ՝ նըստեցաւ:

169. Հովիւը՝ Կաթի Փորձէն Ցետոյ՝ Կբխրատէ Բաղդասարը Որ Իր Մեծ Եղբօր Խօսքէն Չ'ելլէ

ՉԿ·256,257,258,259,260, Կ·116, (Կ·116)Չ·

*Հովիւն ելաւ՝ այդ կօտն իլլեն *) կա՛թ կըթեց,*
Հաց բըրդեց մէ՛ջ, Դըզալ տըւաւ Անոր ձե՛ռ,
Ինքը վազեց՝ Իր Ոչխարի բոլորտիքը չուռ դալու:
*Մէկ փաթ ու կէս *) պըտոտ տըւաւ Իր Ոչխարին չուրջ-բոլոր՝*
Նո՛ր Բաղդասար այդ կաթ կերաւ լըմընցուց...:

*Կերաւ պըրծա՛ւ՝ կօտը կոլծեց *) բերնի վրայ, —*
Կանչեց ըսաւ, — «Հովիւ,-ըսաւ-, ալ կա՛յ,-ըսաւ-, քե՛ր ուտեմ...,
Աբի՛,-ըսաւ-, կօտը վերցո՛ւր, ես կ'երթամ...» :
Հովիւն եկաւ, = «Տըղա՛յ,-ըսաւ-, չէ՛, ա՛լ չըկայ· ե՛լ դընա՛,
Բարո՛վ երթաս, Աստուած Քու բա՛ն աչողէ...»:

Բաղդասարն ալ՝ ելաւ հեծաւ որ երթայ՝
Հովիւ դարձաւ՝ — «Տօ՛ Մարդ,-ըսաւ-, անցած օր՝

---

*) Իլիւ, Լեցուն: *) Կ·116՝ «եօթը փաթ»: *) Կոթծել, Դարձնել, Շրջել:

Մա՛րդ մը եկաւ՝ Քու նըմանակ՝ անցաւ գընաց այստեղէն, —
Նայիմ այն Մարդ Քեզ ի՞նչ էր...»:
= «Անիկ,-ըսաւ, չէ՞ որ Իմ Ջոջ-եղբայրն էր...»:
— «Որ այդպէս է,-ըսաւ Հովիւ, խըրա՛տ մը տամ Ես Քեզի.—
Ջըլա՛յ որ Դուն Քու Ջոջ-եղբօր դէ՛մ կենաս,
*Խօսքէն ելնես, ցատկես Անոր երեսին... *).*
Դուն Անոր կէ՛ս ուժն ունիս....
Անոր կիսու-կէ՛սն ես Դուն....
Քու Մեծ-եղբօր պատիւն աղէ՛կ բըռնես Դուն....
Ել ու գընա՛, Քու եղբայրը ըսպաններ է եւսունըվեց ըմբիշներ,
Մընացեր են չո՛րս Ըմբիշ, —
Անոնք ալ Դո՛ւն կ'ըսպանես,
Ե՛տ կըգառնաք ու կուգաք..., —
Մա՛րդ Ձեր երկու-եղբօր վըրայ չի՛ կըրնար,
Մի՛ վախնաք...»:

170. Բաղդասար Կրիասճի Պղճէ-Քաղքի Պարիսպին Տակ. Ալեւորք Տեղեկութիւններ Կուտայ Իրեն

Ջ., Կ·116 ՁՍ·276, ՁԿ·261, (ՁԿ·261), (Հ·,13,409), Հ·13, Ե·489, 612,543, Ց·77,78,(Ց·78).

Բաղդասա՛րն ալ՝ «Մընաս-բարո՛վ» ըսաւ Հովիւին՝ ու քըշե՛ց... .—
Քըշե՛ց գընաց Պղընձէ-Քաղքի Պարիսպին տակ կանգնեցաւ:
*Նայեց տեսաւ՝ Քառասուն-Հալւոր *)՝ կարդով կեցած են այնտեղ,*
Ա՛յնքան ճերմակ, ալեւորցա՛ծ են Անոնք՝
Որ հազուստներ, մուրուս, գլուխ, ամէ՛ն՝ ղեղի՛ն է դարձեր...:
Բարեւ տըւաւ Ներկաներուն՝ բոլորին,
Բարեւն առաւ նորէն այդ Մեծ-Ալեւորն, —
— «Հէ՛յ վա՛խ,-ըսաւ, կանաչ-կըտրիճ, քա՛յ Տըղայ...,
Դո՞ւն ալ եկար՝ երթաս խլնաս այդ անօրէնն կընկան ձեռ...»:
= «Ի՞նչ կայ,-ըսաւ Բաղդասա՛րն ալ՝ Մերուվին-,
Որ Ես պիտի անօրէնի ձե՛ռն խլեմ...»:
— «Ողջի՛,-ըսաւ, մէ՛կ ժամ մընաս՝ կըտեսնես: —
Այն կախարդին՝ մէկ հա՛ւք մը կայ՝ կուգայ այստեղ կըճըւայ...,

*) Ցատկել մէկուն երեսը *կամ* երեսին, *կարեւորութիւն չտալ, թերեւութեամբ վերաբերուիլ:* *) Հալւոր, Ալեւոր, Ծեր:

*Դո՛ւն ալ Մեղ պէս՝ Մեր հասակին *) կըդառնաս...»:*
Բաղդասարը՝ = «Պապի՛կ,-ըսաւ-, Դուն ա՛յն ըսէ Ինձ հետս, —
Ասկէ առաջ՝ կըտրիճ Տըղա՛յ մ՝ եկաւ Ձեր այս Ձին-Մա-Ձին...,
Այդ կըտրիճը ի՞նչ եղաւ...»:
— «Որդի՛,-ըսաւ-, կրակէ՛-Ձի էր Անոր Ձին,
Թըռաւ իջաւ Բաղքին մէջ...»:
= «Ի՞նչ կըսես է..., Պապի՛կ,-ըսաւ Բաղդասար-,
*Ի՞նչ տրնկաբնկոց... *), ի՞նչ ձայն է այս՝ Բաղքին ներս...»:*
— «Որդի՛,-ըսաւ-, ես ի՞նչ գիտնամ ի՞նչ է ան....
*Բո նըմուշէն *) Ձիաւոր մ՝ էր որ եկաւ, —*
Ա՛ս ոք մը Անկէ՝ խա՛ս ոք մ՝ Անոնցմէ՛՝ կըսուեցան:
Քանի՛ օր է՝ այն կըռի՛ւն է՝ կըկըռուին...,
Ամեն կողմէ՝ Ըմբիշներու ձա՛յն կուգայ...,
Ա՛լ չենք գիտեր՝ ի՞նչ եղաւ այդ կըտրիճ Տըղան եւ Իր Ձին...: —
Մինչեւ երէկ՝ գետ ո՛ւշ առեն՝ լրիկուան, —
Բաղքին մէջ՝ Անոնց կըռւի ձայն կուգա՛ր...»:
= «Է՛յ, վա՛խ,-ըսաւ Բաղդասարն ալ՝ Ձիուն վրայ-,
Ա՛չքըս կուրնար..., ի՛մ եղբայրն է Այդ Տըղան...»:

171. Բաղդասար՝ Ծառին վրայէն կըխրախուսէ Եղբայրը
Որ «Ճիւտմ»-ն Ըսէ Ու գ'Ինի Թափ Տայ

ՁՍ·277,278, Ձկ·262, (Ձկ·262,243), կ·6,116, (կ·116), (Ճ·78), Ձ·

Հիմա Անոր Ձին չի՛ կըրնար յաւակնիլ իջնալ Բաղքին մէջ. —
Բաղդասարն ալ՝ զարճաւ նայեց, ի՞նչ ըրաւ. —
Տեսաւ մէկ կո՛ղջ ահագին Ծառ մ՝ Դաշտին մէջ՝
Այդ Պարիսպին երեսնիվեր կանգներ է,
Վազեց գընաց այդ Ծառն'իվեր, ճիւղերուն մէջ բարձրացաւ,
Նայեց տեսաւ Իր Եղբայրը Սանասար՝
Արիւնի մէջ թաթխուեր է՝ ու ինկեր...,
Այդ նեղութեան մէջ բըռնըւած՝ Ձիուն վըրայ կեցեր է...: —
Բառասուն-Դէվեր՝ Շըղթան ձըղած՝ մէյմէկ կողմէ քաշեր են՝

---

*) Հասակ, Տարիք: *) Տնկտնկոց, Գոռ ու գոչում, աղմուկ (կռիւ): *) Նմուշէն, Դիմապիծէն, (քեզի) նմանող:

Ու չե՛ն կըրցեր Սանասարը Ձիուն վրայէն վա՛ր բերել...։ —
Երսունըվեց Դէվերը այդտեղ ըսպաներ՝ ու փըռներ է...,
Ու մընացած Զորըն ալ Իր չուրջ կա՛ն կուգան՝
Որ Սանասար ըսպաննեն...։ —
Ան ալ այնտեղ, արիւնի մէջ, Ձիուն վըրայ ղ՚ինք բըռնած՝
Իր ոտքերով ու բըռունցքով՝ հազի՛ւ մօտէն ե՛տ կուտայ..., —
*Ա՛յնքան յոդներ, նեղացեր *) է Սանասար...։*

Բաղդասա՛րն էր, — կա՛նչ մը կանչեց Ծառին գըլխէն ու ըսաւ, —
— «Է՛ Սանասա՛ր,-ըսաւ, եղբա՛յր, բերանդ կապուա՛ծ է,-ըսաւ.
Չէ՞ Ձո Խաչը՝ Ձու աչ Թեւիդ վըրա՛յ է..., —
Ըսէ՛ «Ճիչա՛մ Հա՛ց ու Գինին՝
«Տէ՛ր-Կենդանին,
«Քառասուն-Խորան-Ասպարածին,
«Խաչ-Փետրաղին Իմ ա՛չ Թեւին, —
«Օգնակա՛ն կանգնիք Սանասարին», —
կանչէ՛,-ըսաւ, ու Քեզ Թա՛փ տուր մէկ անդամ...»։

172. Սանասար «Ճիչամ»ը կ՚ըսէ՝ Իւիզիւիզը կ՚ազատէ. Բաղդասար՝ Պարիսպը Փլցնելով՝ Եզpor Օգնութեան կըհասնի

2(6·78), 2(կ·7,116,117), կ·117, 2U·279,280,281, (2U·281), ն·489, (ն·489), 2կ·263, 2·

*Սանասար ինչ *) Բաղդասարի ձայնն առաւ, —*
Ինքն ալ կանչեց եղանակով՝ ու ըսաւ. —
— «Օրհնեա՛լ բարերա՛ր Աստուած...,
«Ընտմքը չա՛տ էր Մեծ-Թագաւորին...։ —
*«Ձէնիկը *) նըմա՛ն էր՝ Ծուռ-Բաղդասարին...,*
*«Թափիկը *) նըմա՛ն էր՝ Մեր-Բաղդասարին...»։*
Ու մէ՛կ ձայնով՝ Ան ալ կանչեց ու ըսաւ. —
— «Օրհնեա՛լ Աստուած..., Իմ օգնակա՛նս է հասաւ...
«Ճիչա՛մ,-ըսաւ, Հա՛ց-Գինին,
«Տէ՛ր-Կենդանին,

---

*) Նեղացեալ, Ծոգնիլ, պարտասիլ։ *) Ինչ, Ինչ առեն որ, երբոր։ *) Ձէնիկ, Ձայնիկ. կ·7՝ պարագային համեմատ՝ տոպիկ (հարուած)։ *) Թափիկ, Ուժգնութիւն։

«Քառասուն-Յորան-Ասպարածին,
«Ոսկէ-Փետրազին՝ իմ ա՛լ թեւին, —
«Օդնակա՛ն կանդնիք Սասմոնց Սանասարի՛ն...»: —
[Օդնական ու պահապա՛ն կենան՝ ակա՛նջ ընողներուն...]
Ըսաւ՝ ու դ՚ինք թա՛փ տըւաւ..., —
Ամէն Շղթայ՝ մէյմէկ կըտոր՝ մէյմէկ աշխա՛րհ ցըրուեցաւ...:

Բաղդասարն ալ՝ զարկաւ Գարզով՝ Պատը չըրջեց, մըտաւ նե՛րս,
Հասաւ խոհոյն՝ Իր բըռունցքով զարկաւ Ձոր-Դէվն ըսպաննեց,
Թուրը քաշեց՝ Քառասունի՛ն ալ վիզերը կըտրեց՝ ու թողուց, —
Եկաւ՝ Եղբօր ձեռքը բըռնեց ու տարաւ՝
Աղբիւրի վրայ ձեռք ու երես, լաթեր լըւաց ու մաքրեց:
Եղբօր Աչքերը՝ ա՛լ բացուեցան, առին Իրար հարցուփորձ...: —
— «Ո՞ւր են,-ըսաւ այդ Ձոր-Դէվեր ածդահար *)...»:
= «Ես այն Ձո՛րն ալ ըսպանե՛ր եմ, Եղբա՛յր»-,ըսաւ Բաղդասար:

178. Սանասար Կրպտծէ Մարդակեր Պառաւը

ՉԿ·264,265,266,267·

Այդ Մարդակերպառա՛ւն ըսես՝ ելաւ եկաւ, ի՞նչ ըսաւ· —
«Երթամ,-ըսաւ, այդ Նորմանուկ-Մարդուն դիակ նետեմ դո՛ւրս»:
Եկաւ տեսաւ՝ Պարտէզին մէջ՝ մէկ Մարդն եղեր է երկու..., —
Քառասուն կըտրիճ Առիւծ-Դէվե՛րն ալ՝ մէյմէկ ղէհ՝ պառկա՛ծ են...:
Սանասարը կանչեց ըսաւ, — «Արի՛ տեսնե՛մ, ա՛յ Պառաւ...,
Այս լաւութիւն ինչ Դուն ըրիր Ինձ համար՝
Արի Քեզի վառո՛ւ *) տամ...»:

Պառաւ զընաց մօտհասցաւ *),
Սանասարն ալ՝ բըռնեց Պառաւ՝ տըւաւ իրեն Եղբօր ձեռ, —
— «Բըռնէ՛,-ըսաւ-, չըփախի՛...»:
Ինքը ելաւ՝ երկու երկայն ծընօ՛տ *) բերաւ՝ երկաթէ,
Բըռնեց Պառաւ ծիծեր ղըրաւ ղըլխին վրայ,

---

*) Ածդահար, Գերակայ ուժ ունեցող: (Համմալ· Ածդահակ անուններին հետ, եւ Մարաց ու Հայոց զարաւոր թշնամութիւնը): *) Փառռու, Պարզեւ, վարձատրութիւն: *) Մօտհասնալ, Մօտահաս ըլլալ, մօտկենալ: *) Ծնօտ, Սակ, ցից:

Ու ձեռքերն ալ՝ վըրայէն,
Երկու սեպեր զարկաւ Անոր գըլխուն մէջ, —
*Բուկին *) տակէն դո՛ւրս տըւաւ..., —*
— «Դէ՛, ե՛լ,-ըսաւ-, դընա՛ ըսէ՛ քու Մեծին՝
«Ասիկ ահա՛ իմ փառո՛ւն է, Այն Մարդե՛րը Ինձ տըւին»...»:

174. Մարդակեր-Պառաւը Կըչորնայ Իր Ցեղ. Դէ՛վի-Ալ Եւ Դէ՛վի-Աճղալ Կըբռնուն Որ Սասնասար Ներս Մօճէ

ՁԿ·268,269,270,271,272, ՁՍ·281,282·

Պառաւ դարձաւ՝ գընաց ելաւ Քառասուն-Ճիւղ-Մամ-Դոհարին. —
Դոհարն ըսաւ, — «Ասիկ ի՛նչ է, ա՛յ Պառաւ...»:
= «Անիկ,ըսաւ-, Իմ փառո՛ւն է..., Այդ Մարդե՛րը Ինձ տըւին...»:
*Ան ալ ըսաւ, — «Ինչ Քու ընել՝ ինչ Անոնց *)...՝*
Դեռ Քեզի հետ քի՛չ են ըրած Այդ Մարդերը...»:

Պառաւ այնտեղ փա՛յտ կըտրեցաւ, լըմընցաւ...:

Սանասարն ալ՝ քըշե՛ց գընաց դէպի Դէ՛վ-Ալ, Դէ՛վ-Անդալ: —
Դէ՛վի-Ալն ու Դէ՛վի-Անդալ ի՞նչ ըսին. —
— «Մենք Քու չափին՝ Քեզ հետ կըռուող չե՛նք»,-ըսին-,
Մենք եղբա՛յր....
Աբի՛ մըտի՛ր՝ նե՛րս գընա...»:

175. Քառասուն-Ճիւղ-Մամ-Դոհար՝ Սասնասար Ու Բաղդասար Ներս Կըհրաւիրէ

ՁԿ·273,274,275,276,277,278,279, ՁՍ·284,285, (ՁՍ·283-4), Կ·5, Ե·613·

*Քառասուն-Ճիւղ-Մամ-Դոհարն ելաւ իր առէջը *),*
Կանչեց ըսաւ, — «Այդ մինչեւ ե՞րբ պիտի նըստիք Դուք այդտեղ՝
Թէ՛ անօթի՝ թէ՛ ծարաւ..., —
Ինչո՞ւ համար չէք գար վեր...»:
Սանասա՛րն ալ, — «Է՛ Բաղդասա՛ր, ելի՛ր,-ըսաւ-, վըրանք վե՛ր»:

---

*) Բուկ, կզակ: *) Ինչ Քու ընել՝ ինչ անոնց, Քու ըրածին փոխարէն՝ անոնց ըրածը երբ նկատի առնենք...՝ (դեռ քի՛չ է): *) Լ ուէջ՝, Պառշդամ:

= «Չէ՛, Սանասա՛ր, եղբա՛յր,-ըսաւ-, Անի մէկ լուրը կընիկ է·
Մենք ելեր ենք՝ ա՛յսքան ճամբայ եկեր ենք՝
Ան իր վրայ չի՛ առներ դայ՝ անցնի առաջ՝ որ երթանք···»:

Դի՛ր մ՛ ալ *) կանչեց, — «Դէ՛ հրամեցէք վե՛ր···»,ըսաւ:
Սանասարն ալ՝ վերցուց ըսաւ, այս անգամ, —
=«Դուն արմա՛ո*) մ՛ես, Մենք ելեր ենք՝ ա՛յսքան ճամբայ եկեր ենք,
Դուն Քու վրայ չե՛ս առներ դաս՝ անցնէս առջեւ՝ Մեզ տանիս···»:
— «Հա՛, երա՛ւ,-ըսաւ Գոհար-, չա՛տ իրաւունք ունիք Դուք···»:
= «Այս քանի՛ օր ու դիշեր է,-ըսաւ այնտեղ Սանասար-,
Որ ահա ես այդ նեղութեան մէ՛ջ էի,
Ու Ձիս այստեղ բըռնա՛ծ էին Քու Դէվերը, —
Դուն Ձիս բըռնա՛ւ չըմեղքըցա՛ր, չըսե՛ր «Այս Մարդ ափսո՛ս է՝
Ինչ այս Դէվերը՝ այդկե՛րպ կ՛ընեն իրեն հետ»···»:
Ան ալ ըսաւ, — «Է՛ Սանասա՛ր, ես Քո ո՛ւժը փորձեցի···, —
Նայիմ Դուն ի՞նչ մարդ էիր···»:
Ու վա՛ր լըսաւ՝ եկաւ Գոհար՝ Քառասո՛ւն Աղջիկ-Նաժիշտով,
Եկաւ անցաւ Անոնց առաջ, տարաւ ներս: —

176. Քառասուն-Ճիւղ-Ծամ-Գոհար՝ Սանասարի Հետ Կբռնակցի Աղբիւրին Վրայ՝ Եւ Անոր Կրկին Փորձել Կուտայ Իր Ուժը

Չ·, Կ·5,6, (Ն·487,613,488), Չ·՝Ն·487,613,488·

Քառասուն-Ճիւղ-Ծամ տարաւ նե՛րս,
Պարտէզին մէջ, Աղբիւրին վրայ, նըստեցա՛ն հոն՝ դէմ-դէմի: —
Նայեց տեսաւ՝ որ Սանասար՝ ա՛յնպէս խօրոտ կըտրիճ մ՛ է՛ր···՝
Երազի մէջ Իր տեսածէն եօթնապատի՛կ աւելի···: —
Վերցուց ըսաւ, — «Հաղա՛ր ափսոս Քո քաջութեան, Սանասա՛ր, —
Որ ելեր ես՝ Իմ եռեւէ՛ն ես եկեր···»:
= «Ի՞նչ պատճառով ափսոս կ՛ըսես···»,-հարցուց Իրեն Սանասար:
— «Այն պատճառո՛վ,-ըսաւ Գոհար՝ ցաւը սիրտ-,
Որ կըվախնամ՝ զարնեն ու Քեզ ըսպանեն···: —
Այս Երկիրը կախարդութեան երկի՛ր է···»:

---

*) Դիր մ՛ ալ, Անդամ մ՛ ալ: *) Արմատ, կին-էակ:

Սանասարն ալ,= «Աղջի՛կ,-ըսաւ, երկար խօսքի պէտք չըկա՛յ...,—
Թէ որ կուգաս՝ ե՛լ Ջիուս վրայ՝ գեղ տանիմ.
Եթէ չե՛ս գար՝ վերջին խո՛սք տուր՝ ես ե՛տ դառնա՛մ ու երթամ...»:
— «Ի՞նչպէս չիգամ,-ըսաւ Քառասուն-Ծամ-Գոհար-,
Ինձ հոգի մ՝ կայ՝ գեղի համա՛ր է միայն...: —
Ես կանչեցի՝ գեղ հո՛ս բերի՝ որ իմ աչքով գեղ տեսնե՛մ,
Ու երբ հասնիմ՝ գեղ հե՛տ գամ...:
Ես իմ աչքովս պէտք է տեսնեմ, ո՛չ լըսածիս հաւատամ: —
Թէ Դո՛ւն ես իմ Ոսկի-Մընձոր Բերդին դըլխէն թըռցուցեր՝
Վերցո՛ւր հիմա, նետէ՛ իր տեղ՝ Բուրջին վըրայ՝ ես տեսնեմ...»:

Սանասարն ալ՝ ծոցէն հանեց Ոսկի-Մընձոր՝ ու նետե՛ց..., —
Մընձոր գընա՛ց Բերդին դըլուխ՝ ճի՛շդ իրեն տեղ նըստեցաւ:

— «Կ՛ուզեմ որ այժմ՝ Գո՛րգը գըտնես,-ըսաւ Քառասուն-Ծամ-Գոհար-,
*Աչքիս առջեւ՝ ձըդես երթայ՝ կախուի իր տեղ՝ մէջ կամար *) ...»:*

Սանասարն էր, — Ջիուն վըրայ կայծակի՛ պէս սըլացա՛ւ...,
*Գորգը գետնէն հանեց բերաւ՝ նետեց տարաւ *) իրեն տեղ. —*
= «Հիմա տեսա՛ր ես ի՛նչ մարդ եմ..., հաւատացի՛ր...»,
*Ըսաւ Իրեն *) Սանասար:*
Գոհարն ալ թէ, — «Աչքո՛վս տեսայ՝ հաւատացի՛, Սանասա՛ր..., —
Բայց ես Գեղի՝ ղեռ չըտեսա՛ծ՝ ուղարկեցի Սիրոյ-Գիր...»: —

177. Սոճասար՝ Քառասուն-Ճիւղ-Ծամի Ջեռքով Իրենց Առաջուան Վիճակին Փոխել Կուտայ Հմայուածները

ՁԿ·280, Ե·613,490,614,545, Զ·՝490,613 ,(Ե·490) ,Զ·՝Ճ·78, (Ճ·78), ՁՍ·286·

Առաւ գ'Անոնք՝ տարաւ վե՛ր, —
Ա՛լ այս անգամ՝ կերա՛ն այնտեղ, խըմեցին ու խընդացին.
— Ձեզ Ամենիդ՝ անուշնե՛ր... —.

---

*) Մէջ կամար, կամարին մէջտեղը: *) Տանիլ, Հասցնել:
*) Իրեն՝ Այսինքն Ք-Ճ-Ծ-Գոհարին իրե՛ն:

Երկու օր մը՝ Քառասուն-Մամին հի՛ւր կեցան,
Երրորդ օրը՝ ասին Դոհար, — «Դէ՛, ե՛լ,-ըսին-՝ ու երթա՛նք»:

Ասին Քառասուն-Ճիւղ-Մամ-Դոհա՛ր, ելան ճամբա՛յ՝ որ երթան, —
Եկան այնտեղ, այդ Քառասուն Ծեր-Մարդերու մօտ իջան: —
Սահասարը դարձաւ ըսաւ Քառասուն-Ճիւղ-Մամ-Դոհարին. —
— «Թաղ՛ւորաղջի՛կ, այս Քառասուն-Մարդ՝ Բեղի համա՛ր եկած են,
*Հետո՛ւ երկրէ՝ Բեղ ուղղնկան *) Քո՛ Ցուռութով կախարդուած: —*
Պէ՛տք է որ Դուն Այս-Մարդերը հանե՛ս Իրենց քար-կոճէն,
Ու դարձընես ա՛յն տարիքին՝ ի՛նչ տարիքով եկա՛ծ են. —
Թէ չէ՝ ես Բեղ չեմ տանիր...»:

Դոհար-Խաթուն՝ վերցուց ըսաւ, = «Մահասա՛ր,
Ատոնք ամէն՝ Ինձ համա՛ր են ելեր Լինելր սարէսար...:
Եթէ Անոնք՝ Ես ժըրցընեմ՝ կ'ելնեն Ձեզ հետ կըկըռուին, —
Վախնամ Երկո՛ւքդ ալ ըսպանեն՝ դան Ձիս խըլե՛ն ու տանին...:
Եկէ՛ք Ինծի մըտի՛կ ըրէք, Ձիեր հեծնե՛նք ու թըռի՛նք...»:
— «Ձէ՛, Քառասուն-Մա՛մ, արե՛ւդ վըկայ,-վերցուց ըսաւ Սահասար-.
Ցուռութք ըրեր՝ Դուն Այդ-Մարդեր դարձուցեր ես՝ ըրեր Քա՛ր,
Մինչեւ որ Դուն Այդ Խեղճերը չըդարձընես Մեղի պէս,
Դուրս չըհանես Քարի մէջէն, ազա՛տ ձըդես որ երթան, —
Ես Բեղ Ինձ հետ չե՛մ տանիր...,
կա՛մ թէ՝ այստեղ՝ Բեղ կըբըռնեմ՝ ոչխարի պէս կըմորթեմ,
Քո արիւնը տա՛ք-տա՛ք կ'առնեմ իմ ափով՝
*Կըցըրցընեմ *) Անոնց վրայ՝ ու կ'երթամ...»:*

*Քառասուն-Մա՛մն էր,— զարի նետուց *), կանչեց բերաւ իրեն Հաւք,—*
*Հաւքն ինչ *) ճըլաց...՝ Քառասուն-Մերեր տե՛ղնիտուղը փոխուեցան,—*
Ի՛նչ տարիքով եկած էին Այդ Քաղաք՝
Նորէն Իրենց Քարմ հասակին եւ ուժերուն մէ՛չ դարձան...:

---

*) Ուզնկան, Ամուսնութեան Թեկնածու (աղջկան համար): *) Ցրցնել, Ցրցան՝ սրսկել: Տաք-տաք արիւն՝ քարացած մարդու վրայ ցրցնելով ողջցնելու մասին՝ Տեսնել իմ դրի առած «Լէյլօ եւ Պապէ-Ծուընկ» հէքիաթը, Ամիտ· 1929, Թիւ 4: *) Գարի նետել, Գարիով համայութիւն ընել: *) Ինչ, Ինչ առեն որ:

178. Սանասար՝ Քառասուն Ուզընկանցներուն Հաւանութիւնը Կը Դիմէ

Չ՝8·79, (8·79), ե·490,491·

Սանասարն ալ՝ այդ Քառասունէ ձեռքէն բռնեց ու բերաւ՝
Կեցուց այնտեղ, մէ՛կ կարդէ վրայ, Քառասուն-Մամն ալ Անոնց մէ՛ջ,—
Բաղդասարը մէ՛կ կողմ կեցաւ, Ինքն ալ կեցաւ մէկա՛լ կողմ· —
— « Թագ՛ւո՛րաղջիկ,-դարձաւ ըսաւ Քառասուն-Ճիւղ-Մամ-Գոհարին-,
Ե՛ս եմ որ Քեզ Քու Երկիրէն դո՛ւրս կը հանեմ՝ Քո՛ւ կամքով·
*Աստուա՛ծ կ՛սիրես՝ Դուս մէ՛ր ըսեր թէ՝ «Սանասար աղէ՛կ *) է···,*
Ես Անո՛ր հետ պէտք է երթամ իբրեւ կին···»: —
Քառասունմէկ Այս Մարդերէն՝ Քո սիրտ որի՛ն որ կ՛ուզէ՝
Աստուա՛ծ կ՛սիրես՝ Անոր Զեռը ազա՛տ բռնէ՝ ու դընա՛···»:

Երե՛ք անգամ այսպէ՛ս ըսաւ Սանասար, —
Երե՛ք հեղն ալ՝ Գոհար գընաց՝ Սանասարի ձե՛ռ բռնեց:

Սանասա՛րն ալ՝ վերցուց ըսաւ Մարդերուն, —
— «Ա՛յ իմ օտա՛ր եղբայրնե՛ր,
Դուք հասա՞ն էք՝ որ Այս Աղջիկ՝ Ես առնեմ ու Ի՛նձ տանիմ
Ռաբախանամ, կեա՛նք վայելեմ Ատոր հետ···»:

Այդ Քառասուն-Մարդ՝ դարձան ըսին, = «Սանասա՛ր,
Մենք չա՛տ ու չա՛տ չընորհակա՛լ ենք Քենէ,
Որ Մեզ Նորէն՝ երիտասարդ Մեր հասակի՛ն դարձուցիր·
Տա՛ր Քեզ համա՛ր···, բարո՛վ վայլես Քու Գոհար···»:

Սանասարն ալ՝ ըսաւ, — «Աղջի՛կ, դէ՛ արի՛՝
Այդ Քառասունէ ձեռը բռնէ՛, Քառասունէ՛ն ալ հրաժե՛շտ առ»:
Զեռքը բռնեց՝ հրաժե՛շտ առաւ Քառասունէն: —
Անոնք եկան՝ հեծա՛ն Զիեր, դարձան դացին Իրենց տեղ···:

179. Սանասար՝ Դէ՛վի-Ալ Ու Դէ՛վի-Ածղալ Կը Դնէ Պղնձէ-Քաղքին Մեծաւոր, Եւ Ճամբայ Կ՛իյնաճ Երեքով

ՁՍ·287,288,289,290,293, (ՁԿ·287), (Հ·410), Հ·14, 410, (Լ·80), Լ·80, Չ(ե·613), ե·613,614,545, Կ·6, Կ6՝Չ·

Սանասարը դարձաւ՝ ապա՝ Քառասուն Մամին ի՞նչ ըսաւ· —

---

*) Աղէկ, (Ամենէն) քաջ, լաւագոյն:

— «Գոհա՛ր,-ըսաւ-, այդ երկու-Դէվ՝ Դէ՛վի-Անդալ, Դէ՛վի-Ալ՝
Ըսպանե՞մ...՝ թէ՞ թողնեմ մընան Իրենց տեղ...»:
= «Այն երկու-Դէվ,-ըսաւ Գոհար-, Քեզ մէկ վընաս տըւա՞ծ են....
Քեզ հետ կըռիւ ըրա՞ծ են...՝
Որ Դուն Անոնք ըսպանես...»:

— «Ապա,-ըսաւ-, ի՞նչ ընենք...»:

Սանասա՛րն էր,-ականջեց ըսաւ, — «Դէ՛վի-Անդա՛լ, Դէ՛վի-Ա՛լ,
Այս Տո՛ւնուտեղ, Բե՛րդ ու Պալատ, այս Քաղա՛ք՝
Մընայ Ձեղի՛..., — Նըստէ՛ք՝ կերէ՛ք, խըմեցէ՛ք...,
Բարով վայլէ՛ք՝ մինչեւ օրը մեռնելուն...»:

Անոնք դըրաւ այդ Քաղաքին Մեծաւոր: —
Ելան այլեւս հրաժե՛շտ առին մէկմէկէ,
Քառասուն-Ճիւղ-Թամ-Գոհարի հետ, որ երթան, —
Քառասուն-Ճիւղ-Թամ-Գոհար վերջուց ի՞նչ ըսաւ. —
— «Գիտե՞ս,-ըսաւ-, գիշե՛ր երթանք՝ որ Քաղաքը չ՝ա՛րթընայ...,—
Որ արթընայ՝ Քաղաքացին Թող չի՛ տար որ Ձես տանիս...»:
Սանասարն ալ՝ դարձաւ Անոր ի՞նչ ըսաւ. —
= «Ես չե՛մ գիտեր վախը ի՞նչ է, ա՛յ Գոհար..., —
Օր-ցերեկո՛վ պիտի երթամ Իմ ճամբան...» *):

Ըսա՛ւ թէ չէ՛՝՝՝ Թրռաւ հեծաւ իր Քուռակ,
Քառասուն-Ճիւղ-Թամ Գոհար-Ալաթունն ալ դաւակ,
Ու Բաղդասարն ի՛ր Ձիով *), —
Նաժիշտներով, ծառաներով, բեռներով, —
Երեք մէկտեղ՝ ինկան ճամբայ՝ ու գացին:

---

*) Համեմատել Շահնամէի Հերոսին՝ Ռոստաշէր Փափակեանի վախկոտութիւնը՝ Սանասարի անվախութեան հետ. (Կարնամակ՝ էջ 10, համ. 15): *) Բաղդասարի Ձիուն անունը՝ փոփոխականներէն չի՛ յիշուիր: Իմ գրի առած «Ցէրան-Թուրան»ի պատմողը կ՝ըսէր թէ՝ Սեւ-Լազիճ է անունը: Տեսնել իմ «Սասմանց Տուն»-ի բնագիրը, Ծնթ. Ակբ. 83/85:

ԺԴ. ՍԱՆԱՍԱՐ ՈՒ ԲԱՂԴԱՍԱՐ ՊՂՆՁԻ-ՔԱՂՔԻՆ ԴԻՊ ՍԱՍՈՒՆ

180. Բաղտաքցիք Կըխտւժեն Կ'իյնան Սանասար-Բաղդասարի Եռեւէն

Կ·6, Կ·6՝Զ·, Ե·613, ՉԿ·281, Զ·

Ճամբուն վըրայ՝ ի՛նչ որ Իրենց դէ՛մ եկաւ, —
Թէ՛ ֆար, թէ՛ Թուփ, թէ՛ Գաղա՛ն կամ Անասուն,
*Մինչեւ եկան ու եղբեցին *) Այդ երկիր, —*
Սանասարն ու Բաղդասարն ալ՝ բարե՛ւ տըւին Ամենուն: —
*Մէկ տեղ միայն՝ Սեւուկ-Հաւք *) մը դէմ եկաւ՝*
Ի՛նչպէս եղաւ...՝ Անոր բարեւ չըտըւին...: —
Սեւուկ-Հա՛ւքն էր..., — ղ՝ինքը հանեց երկնուց հա՛ս...՝
Բա՛ռքը ճայնով կանչեց ըսաւ,— «Հա՛ տարա՛ւ, հա՛, հա՛ տարա՛ւ,
Սանասարը՝ Քառասուն-Ձիւղ-Ծամ Գոհար-Խաթուն՝ հա՛ տարա՛ւ...»:

Այս ճայն երբոր ֆար լըսեց
Ֆարը տըւաւ Թուփերուն,
Թուփը Ծառին, Ծառը տըւաւ Գաղանին..., —
Ձայնը դընաց՝ հասա՛ւ մինչեւ այդ Քաղաք..., —
Քաղաք-Քաղքում՝ մէկ-մէկ կալին լո՛ւր տըւաւ..., —
*Հեծնել *) հեծա՛ւ, բաղմացա՛ւ...,*
Այդ Քաղաքը, աղէ՛կ-աւեր, Մարդ, կընիկ, —
Ելան ինկան Սանասարի՛ եռեւէն,
*Իրենց Աղջկան հաւարին *), —*
Թէ՝ «Ան ի՞նչպէս Մեր Թագուհին կը տանի...»:
Ծովու ափի Աւազի՛ն ալ՝ հաշիւ կա՛ր...,
Երկնից Աստղին՝ հաշիւ կար..., —
Գետնի Բոյսին՝ հաշիւ կա՛ր...,
*Այդ Հեծելին *) ո՛չ հաշիւ կար՝ ո՛չ համար...:*

181. Սանասար Ու Բաղդասար Կըհամաձայնին՝ Որ Քառասուն-Ծամր Սանասարի՛ն Կնիկ Ըլլայ

ՉԿ·282,283,284,285,286, ՉՍ·291,292, Կ·117,7, (Կ·117)Զ·

Մինչեւ այն օր՝ Սանասարն ալ կըմբոստանա՛ր ու կ'ըսէր, —

*) Եզրել, եղերքը հասնիլ, սահմանին մօտենալ: *) Հաւք, թռչուն: *) Հեծնել, Ձիաւոր, հեծելազօրք: *) Հաւար, Օգնութեան հասնելու կոչ եւ հասնիլը: *) Հեծնել, Անթիւ բազմութիւն (հեծեալ ու հետի):

Ինչպէս ընենք Մենք հիմա…, —
Դոհար-Ֆաթման՝ երե՛ք անգամ ինձի՛ դըրած էր բարեւ՝
Ու մէ՛կ միայն ի՛մ եղբօր, —
եղբայրս՝ ինձ հետ կըմի՛ւ կ՚ընէր, քի՛չ մընաց՝ Զիս ըսպանէ՛ր…, —
Ապա հիմա որ Այս կընիկ կըտանինք,
Անիկ՝ «ինձի՛» պիտի ըսէ, ես՝ «ինձի՛»…»:
Ա՛լ չէ՛ր դիտեր որ այդ Հովիւ՝ Անոր խըրա՛տ էր տըւեր՝
Ըսեր էր թէ՝ «եղբօրդ երես չըցատկե՛ս»…:
Ան ալ դարձաւ իր եղբօրը՝ Բաղդասարին՝ ու կանչեց. —
— «եղբա՛յր,-ըսաւ-, Դո՛ւն ու Դոհար՝ առէ՛ք ելէ՛ք վեր՝ Սարին,
ես դառնամ այդ Զօրքը չարդեմ՝ կուգամ՝ Զեզի կըհասնի՛մ…»:
Բաղդասարն ալ՝ = «Չէ՛, իրաւի՛, եղբա՛յր,-ըսաւ Իր կողմէն-,
Մ՚ո՛ւ Քու կընիկ՝ Դուն քալէ՛,
ես դառնամ այդ Զօրքը չարդեմ՝ կուգամ՝ Զեզի կըհասնի՛մ…»:

Սանասարի սիրտ հանդչեցաւ այն առեն,
Ըսաւ՝ «Չէ՞ որ՝ ահա՛ կ՚ըսէ «Մ՚ո՛ւ Քու կընիկ՝ ու քալէ՛»…, —
Մենք հայրակըօն ու եղբայր,
Մէկ կընիկին երկո՛ւ էրիկ…՝ այս բան Մեր մէջ չի՛ըլար…»:

Քառասուն-Ճիւղ-Մամ-Դոհարն այնտեղ ի՞նչ ըսաւ. —
— «Մի՛չ Դո՛ւն դարձիր, ո՛չ ալ Ա՛ն.
*Ինչո՞ւ պիտի Մա՛րդ *) կոտորէ՛ք՝ մըտնէ՛ք Անոնց մեղաց տակ…,*
Ես կըղառնամ՝ Անոնց վըրայ Թափաւո՛ր մը կըղընեմ,
Կուգամ Զեզի կըհասնի՛մ ու նո՛ր կ՚երթանք…»:

Սանասարը վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ. —
— «եղբա՛յր,-ըսաւ,- Քառասուն-Ճիւղ-Մամ Քեզի՛ է.
Անի՛ք էր՝ որ Քու ձեռքով Զիս ըսպանե՛լ պիտի տար…»:
Բաղդասարն ալ՝ ըսաւ թէ՝ = «Չէ՛…, Դոհար-Ֆաթման Քեզի՛ է…,
Ան՝ երե՛ք հեղ բարեւ Քեզի՛ է դըրեր…, —
Դո՛ւն պիտի՝ առնես…, կըսի՛ւն ալ Դո՛ւն ես ըրեր…:
Ես որ առնեմ՝ կանա՛չ-Քաղքի Դեղձան-Ֆաթո՛ւնն է Իմ Կին, —
Ան Աղջիկ որ՝ Մենք Վիշապէն ազատեցինք Մեր ձեռքով»:

---

*) Մարդ, Մարդիկ, մարդեր, բազմութիւն:

Ու Գոհարի Ձեռքը տարաւ՝ դըրաւ Եղբօր Ձեռքին մէջ,
*Աչքով ըրաւ Քառասուն-Ծամին՝ որ պայ Իրեն Եղբօր Ձեռք *):*
Գոհար-Խաթուն ըսաւ, — «Այդ Դուն ի՞նչ կ՚ընես...,
Ինչո՞ւ Իմ Ձեռ կ՚դնես Եղբօրդ Ձեռքին մէջ...»:
Ըսաւ, = «Գոհա՛ր, Քեզ բերեր ենք Իմ Եղբո՛ր·
Սիրո՛վ ըլլաք Իրար հետ... .
Աստուած ալ՝ Ձեզ՝ Թող Իրարու դըլո՛ւխ պահէ՝ մինչեւ վերջ·
Ա՛լ ասկէ ետք՝ Դուն Իմ Եղբօր կընի՛կն ես»:

Քառասուն-Ծամն ալ՝ չո՛ւտ մը հասաւ՝ Սանասարի Ձեռք պագաւ:

189. Սանասար կրխուժէ Զօրքին Վրայ Ու կըջարդէ

Կ·6,7, Կ·6,7՝Չ·, (Կ·7), Չ·, ՉԿ·285, (ՉԿ·287), (Ե·614), Հ·14,410, ՉՍ·294·

Սանասարը առաւ Գոհարն ու Իր Եղբայր Բաղդասար,
Տարաւ հանեց՝ բա՛րձըր Դարի մ՚ գլո՛ւխ դըրաւ, —
— «Գոհար,-ըսաւ, Դուն Իմ Եղբօր հագուստները դի՛ր լըսա՛,
Վարչէն եկող այդ Զօրք մընաց Իմ բաժին...»:

Ըսա՛ւ թէ չէ՛՝ Եղբօր Նիզակն առա՛ւ դըրաւ Իր թեւին,
Իջաւ գընաց դէպ Հեծելը...: —
Կանչեց վերէն ու ըսաւ. —
*— «Ցիշա՛մ...՝ Հա՛յ ու Գինին, *)*
«Տէր-Կենդանին,
«Քառասուն-Խորա՛ն Ասպարածին,
«Խա՛չ-Փետրագին՝ Իմ ա՛լ Թեւին, —
«Օգնակա՛ն կանգնիք Սանասարին...»: —

*Կանչեց ըսա՛ւ...՝ ու տըւա՛ւ *) մէջ Հեծելին...: —*
Ինքը զարկաւ Նիզակով...,
Իր Ձին Լարդի՛ց ոտքերով...: —

---

*) Գալ(մէկուն)ձեռքը, Համբուրել մէկուն աջը: *) «Ցիշամ»-ը կ՚ըսուի երգով: *) Տալ, Խուժել, գրոհ տալ:

Կըսրե՛ց բըրդե՛ց այդ Հեծելը՝ մինչեւ վերջ, —
Մէկ լըսրաբեր մ՝ չըպըրծուց···,
Մընաց միայն՝ ա՛ն որ տունէն չէ՛ր ելած···:

Դարձաւ եկաւ Գոհարի ու եղբօր քո՛վ· —
Անոնք հեծցուց՝ առաւ ինկաւ ճամբու վըրայ՝ ու գացին:

Շա՛տ գացին՝ թէ՝ քի՛չ գացին, —
Մինչեւ կէսօր Իրենց Ձիեր քըշեցին,
Մէկ հա՛րթ ճամբով՝ ելան մըտան Սարի մէջ,
Ձիաններէն իջան տակ՝ ու հանդչեցան: —

183. Գառւսուն-Ծամը կըկուի Սեւ-Ձիաւորին Հետ, Բայց Ձկրճալով Ցաղթել՝ Սաճասարին Կըդիմէ

2·,2Ս·295,296,297,298,299,300,301, Հ·410,14, Կ·6·

*Ինչ որ, հէմա, Բաղդասա՛րն էր՝ Լո՛ռկ *) պառկեցաւ ու քընաւ·*
Ինչ Սաճասար՝ Մեծ-Եղբայր՝
Գըլուխ դըրաւ Գառւսուն-Ծամի Ծունկին վըրայ՝ քընացաւ:
Գիշերուան մէջ՝ Գառւսուն-Ձիւղ-Ծամն իւնչ տեսաւ· —
Տեսաւ որ մէկ Սե՛ւ-Ձիաւոր †)՝ հե՛ռուէն···՝
*փըրթիր կուգա՛յ···՝ մէջ երկինք ու մէջ՝ գետինք *)···:*
Գառւսուն-Ձիւղ-Ծամ Գոհար-Ֆաթման՝ հոդ վախցա՛ւ···, —
«Ես ի՞նչ ընեմ···,-ըսաւ-ըսաւ, այդ Մարդերը վե՛ր հանեմ···՝
Պիտի ըսեն՝ «Գոհար վախցաւ եկողէն···»· —
Չըհանե՛մ վեր···՝ կըհաւատամ Աւիկ դայ՝ Մեղ ըսպանէ···»:

Ան ալ այնտեղ ի՞նչ ըրաւ· —
կանչեց Աստուած, Իր Մարդուն դլուխ՝ յուչի՛կ դըրաւ 'ի գետին,
*Իր Ձին հեծաւ, ու քըշեց դէ՛մ Արաբին *):*
Զարկին Իրար, ու երե՛ք ժամ կըռի՛ւ ըրին Իրար հետ:

---

*) Ջոկ, Ջատ, առանձին: †) Հ·14՝ կապոյտ ձիաւոր: *) Մէջ երկինք՝ ու մէջ գետինք, *երկինք գետինք իրար խառնած, փոթորկոտ թաւիւղ, սրարշաւ:* *) Արաբին, *Այսինքն՝ դիշերուան մէջ սեւ երեւցող ձիաւորին:*

Քառասուն-Ձիւղ-Մամ-Դոհար վախցա՛ւ· դիտցա՛ւ պիտի կոտորուէր,
Ձիէն իջաւ, եկաւ էրկան գլխո՛ւն վրայ նըստեցաւ,
Քըրտինք թափեց Սանասարի ճակտին վրայ,
Սանասարը Աչքեր բացաւ՝ ըսաւ, — «Ինչո՞ւ կուլաս Դուն...»:
*= «Զե՛մ լար,-ըսաւ, Իմ Մարմի՛նս է քըրտընքուն *)...,*
Ելի՛ր,-ըսաւ,- մէկ անհոգի Սեւ-Ձիաւոր մ՝ է եկեր,
Կ՝ըլլայ որ Ձիս ըսպանէ...
Մ՛յնքան կըռիւ ըրեր եմ հետ՝ դիչերով՝
Որ Իմ Մարմին՝ քըրտինքի մէջ վառուե՛ր է...»:

184. Բաղդասար՝ Իր Կարգին՝ Կըկռուի Սեւ-Ձիաւորին Հետ, Բայց Ձկրճալով Ծաղրել՝ Կըդիմէ Սաճասարին

ՀՍ·302,303,304, Զ·, Հ·14,410, Զ·՝ Հ·410,14, (Հ·14)·

Սանասարն էր-,դարձաւ եղբօրն ու ըսաւ·. —
— «Եղբա՛յր,-ըսաւ-, Դուն ու Դոհար այս Ձիերը նայեցէ՛ք,
Ես չուտ երթամ՝ տեսնեմ Այդ Մարդ ի՛նչ կ՝ըսէ...»:
Բաղդասարն ալ՝ վերցուց եղբօրն ի՞նչ ըսաւ, —
*= «Ծօ՛ դըրո՛ղ-տուն *), ամեն անգամ Դո՞ւն պիտ՝ երթաս կըռիւի...,*
Եղբա՛յր,-ըսաւ-, այս անգամ ալ՝ թող Ինձի որ ե՛ս երթամ...:
Դուն չա՛տ զարկիր-զարնըւեցար..., ե՛տ քաշուէ,
Ես յոգնած չե՛մ, ե՛ս կ՝երթամ հետ կըկըռուիմ...»:
Սանասարն ալ ըսաւ, — «Եղբա՛յր, ինչո՞ւ պիտի նեղանաս...,
Այս անգամ ալ՝ Դո՛ւն դընա...»:

Բաղդասա՛րն էր, —
Շո՛ւտ մը առաւ Իր Նիզակը՝ դըրաւ ուսին՝ ու դընաց:
Երե՛ք օր ու երե՛ք դիչեր՝ զարկին Իրար, կըռուեցան,
Տեսաւ որ այդ Ձիաւորէն Ի՛նքն ալ պիտի կոտորուէր, —
Ձիէն իջաւ՝ վազեց դընաց եղբօր մօտ,
Քըրտինք թափեց Սանասարի ճակտին վրայ, —
Իր եղբայրը Աչքեր բացաւ, — «Ի՞նչ է,-ըսաւ-, Ի՞ր կուլաս...»:
= «Զե՛մ լար,-ըսաւ-, ելի՛ր՝ մէկ տե՛ս՝ Քէ ի՞նչ է...

---

*) Քրտինքով, Քրտինքի մէջ թաթախուած: *) Գրո՛ղ-տուն, Գրողի՛ տարած, գրողը քեզ չըտանի (հմմտ.՝ մօրտուն):

Երե՛ք օր է՝ այսօր՝ կըսի՛ւ կ՚ընեմ ես, —
Այդ Անօրէն՝ Զէս յաղթեց...:
Ելի՛ր որ այդ Սեւ-Ձիաւոր չիդա՛յ ու Մեզ ըսպանէ...»:

185. Սանասար՝ Իր Կարգին՝ Կը կռուի Սեւ-Ձիաւորին Հետ Ու Կըյաղթէ:

ՀՍ·305,306,307,308, 309,310, Հ·14,410, Ջ·՝Հ·410,14, (Հ·410).

Սանասա՛րն էր, — ցաւակեց ելաւ, հեծաւ Քուռկիկ-Ջալալին,
Քըշէ՛ց դընաց՝ Սեւ-Ձիաւոր Մարդուն դէմ:
Երե՛ք դիշեր ու երե՛ք օր՝ զարկին Իրար, երկուքով,
Ճա՛ր չըտարան Իրարու. —
Երկուքի ոյժ, կըսըրճուէին՝ հաւասա՛ր են մէկմէկու. —
Անոնց ուժեր մէ՛կ էին...:
Սեւ-Ձիաւոր՝ կանչեց վերէն՝ Սանասարին ի՞նչ ըսաւ. —
— «Ա՛յ անօրէն..., այդ Քաստունիդ՝ Ի՛մ չափին է, ո՛չ Թէ Ձեր.
Ո՞ւր առեր էք կըտանիք..., —
*Իմ կըռի՛ւն է՝ ու Ձերին... *), —*
կա՛մ Աստուածը կուտայ Ինձի՛, կա՛մ Ձեղի...»:

Երեք օր որ լըրացաւ՝
Սանասարը վերցուց ըսաւ Այդ Մարդուն, —
— «Արա՛ը,-ըսաւ-, արի՛ Ձիէն իջիր տա՛կ.
*Այս Մեր Ձիեր չե՛ն դիմանար, սատկեցա՛ն... *)*
Արի՛ իջնենք՝ Գօտեմարտո՛վ կռիւ տանք...»:

Ծօսք մը Անկէ, մէկ՝ Անկէ, —
Իրենց Ձիէն իջան տակ,
Ձիանք Թողին, հասա՛ն Թըռան դէպ Իրա՛ր...: —
Երեք օր ու երեք դիշեր՝ կըպան Իրար կըռուեցան,
Մէկըզմէկը չըԹողին...:
*Սանասարը մէկ դիր *) զարկաւ՝ Ձիաւորը և՛ս հըրեց.*
Ձիաւորը Սանասարի վրա՛յ դարձաւ՝
Ու մէկ դիր ալ՝ այնպէ՛ս Թափով Ի՛նք զարկաւ՝

---

*) Իմ կռիւս է՝ ու ձերիս, Դուք ինձի՛ է որ հաշիւ պիտի տաք, մեր կռիւն ատո՛ր համար է: *) Սատկելու վրայ են, պիտի սատկին:
*) Դիր, Անգամ, հեղ:

Սանասարի Մօր ծրծի կաթ՝ պինչէն եկաւ՝ դո՛ւրս կաթեց...:

Սանասարն էր, — կանչեց ըսաւ՝ մէ՛կ ձայնով, —
— «ես ի՞նչ օրուան համա՛ր կ՚ապրիմ՝ ասկէ ետք...»: —
Ու խոյացա՛ւ՝ հասա՛ւ՝ բռնեց Չխաւոր,
Վերցուց դըրաւ՝ ի դետին,
*Ջոքը *) զարկաւ վէր՝ սըրտին,*
Դանակ քաշե՛ց՝ պիտի դընէր՝ վիզ կըտրէ՛ր՝
*Ան իր փողպատ *)՝ պատվածծ տեղէն՝ ձեռքը նետեց ու ձեւեց *),*
*Իր Մխծերը թալեց *) դուրս...:*

Սանասարն ալ ի՞նչ ըսաւ..., —
Ատոր Կո՛ւրծքը որ բացուեցաւ ու Ծրծուերը դո՛ւրս թըռան՝
*— «Հա՛յ *), Դուն,-ըսաւ, օտարոտի՛ չո՛ւն Աղջիկ...,*
Կընիկ-արմա՛տ էիր եղեր..., ինչպէ՞ս ալ ես չիմացայ...,
Քի՛չ էր մնացեր՝ Քեզ զարնէի՝ արիւնի՛դ մէջ վըռէի..., —
Ու ձայն իյնար արա՛ր-աչխարհ՝ ամե՛ն կողմ...՝
Թէ «Սասմանց Տան Սանասա՛րը՝ մէկ կընի՛կ է ըսպաներ»...»:
= «Է՛... Սանասա՛ր,-ըսաւ կընիկ-Չխաւոր..
Ես Քու անուն ու համբա՛ւը լըսեր եմ,
Քու եռեւէ՛ն եմ եկեր...:
Ես Քո ո՛ւժը փորձեցի, —
Նայինք Դուն ի՛նչ մարդ էիր...»:

186. Սեւ-Չխաւորը՝ Զրեհ-Պողոսս՝ Իր Պատմութիւնը Կ՚ընէ Սանասարին

Հ·410, (Հ·410), Զ(ՉՍ·310), ՉՍ·310, Զ·՝ՉՍ·310, (Լ·64,101), Հ·14, Զ·՝Հ·14, (Հ·14), Ե·752·

Սանասա՛րը Թողուց՝ կընիկ եկաւ վե՛ր, —
— «Աղջի՛կ,-ըսաւ, անո՞ւնդ ի՛նչ է..., ո՞վ ես Դուն...»:
= «Իմ անունը՝ Զըրեհ-Պողվա՛տ †) է,-ըսաւ·
Կընիկ-արմա՛տ եմ իրաւ·
Ես ալ ապա՝ Թաղաւորի-Աղջիկ եմ

---

*) Ջո՛ք, Մունկ: *) Փողպատ, Օձիք: *) Ձեւել, Ձեղքել, պատռելով բանալ: *) Թալել, Ձգել, հանել, մէջտեղ դնել: *) Հա՛յ, Հէ՛յ, ձմրկ·: †) Տեսնել՝ Հատ· 231, եւ Բ· Հար· Մնթդրթնր·

Ու քաւո՛ւն ճիւղ դնդճա՛ն ծամի տէ՛ր ալ եմ·
Անի որ Դուք կըտանիք՝
Իմ պըղտիկ Ո՛ւրբն է Անիկ·
Ահա՛ հօ՛Թը տարի՛ է որ՝ Անոր ցաւէն փախեր եմ···, —
Որ Ան այդպէս՝ Մարդո՛ց վըրայ կախարդութի՛ւն կըձըդէր···:
Ես ալ փախեր դացեր էի՝ ա՛յս Սարի մէջ, ա՛յն Սարին, —
Եղեր էի աւազա՛կ···, —
Անցնող-դարձող ճամբորդի վի՛զ կ՚առնէի···: —
Այսօր որ ես լըսեցի թէ՝ Անոր Ծուռութի՛ւն աւրեր էք,
Բաղդասարի համար աւեր՝ Քառասուն-Ճիւղ-Ծամ բերեր էք՝
Ես ալ ևա՛յ Քե՛զ համար···:
Ես հօ՛Թը Մարդ ըրեր եմ, —
*Իմ Մարդերը խիթ ունէին չուռւէշուռ *),*
*Ես ալ չուռ մը՝ Անոնց կողինջ *) կըքաշէի որ հանդչին, —*
Անոնց Թևեր՝ աջը ձախէն, ձախը աջէն՝ մեղմաբար՝
Դէպի հոս՝ կըքաշէի Մունկիս դէմ,
*Անոնց Թևեր՝ արկմա՛նց *) կուզար՝ ու Իմ ձե՛ռքը կըմընար···:*
*Ես ալ աղջկուց *) Երդո՛ւմ ըրի ու ըսի, —*
«Ի՛նչ Մարդ Իմ մէջք դնեին չիտայ Իր ուժով՝
Ես այն Մարդուն կընիկ չըլլա՛մ ու չըպահի՛մ Անոր քով···»: —
*Այսօր Դուն Իմ մէջքը տըւիր *) չոր դնեին,*
Քո ուժն եղաւ Իմ ուժէն ալ աւելի···, —
Դուն Ինձի Մա՛րդ՝ Ես Քեզ Կին···»: —

187. Սամասար Արմեռժէ Զրեհ-Պողոսի Առաջարկը, Ս.ն Ալ Արծգէ Ն՚երթայ (†)

Զ·՝Լ·64,67, Զ·, Զ(Հ·410), Զ·

Այդ Աղջիկն ալ՝ Ալաթայ-Երկրի 2) քաջ ու կըտրիճ Իշխանն 3) էր·

---

*) Շուռւէշուռ, Գալուն պէս, դիս տեսնելուն պէս, աւազասաի դիշերն խակ: *) Կողինջ (կօլինջ), Խիթ, կողացաւ, եւ ցաւին դործածարանը· համմալ·՝ ֆր· collique *) Տկմանց, Տակէն, Հիմէն: *) Աղջիկուց, Աղջկնութեան(ս), աղջիկ վիճակով: *) Տալ, կոխել, զարնել: †) Այս Հատուածը, հօթևերորդ տողէն սկսած, անհրաժեշտ տեսայ աւելցնել՝ Իմ կողմէ՝ պատումին ընդհանուր կապը պահելու համար: Փոխհատհնները համաձայն չե՛ն՝ Սանասարի հետ

Երբոր ելնէր կըռւի՛ երթար՝ Պողպատ Հազուստ կըհագնէր, —
Ո՛չ Սուր ո՛չ Թուր Անոր վըրայ չ'է՛ր բաներ։
*Այս Թագաւոր *)՝ ո՛չ մէկ դեհէ վախ չունէ՛ր, —*
Անոր վախը՝ միայն Սասմա՛յ-Դեհէն էր։
Մինակ Այդ Տան կըտրիճնե՛րը գ'Ինք ըսպանել կըրնային։

Սանասարն ալ՝ ձեռք ու երես լըւաց՝ դարձաւ Աղջըկան։ —
— «Աղջի՛կ,-ըսաւ, Զըրեհ-Պողվա՛տ պատուական,
Ես ճակտի դիր այն չ'է՛ դըրուած՝ որ Դո՛ւն ըլլաս Իմ Կընիկ։ —
Իմ Կընիկը՝ Ես գըտեր եմ՝ Ի՛մ անունով ու կըռւով։
Երկրէ Երկիր Ես վազեր եմ ու բերեր եմ Ի՛մ ուժով։ —
Պղընձէ-Քաղքի Քառասուն-Մա՛մն է Իմ Կընիկ,
*Որ Ինձ հետ է, Իմ Եղբօր քով, այդ ղընարէն *) կընայի։*
Անոր Ծունկին՝ Իմ գըլուխը դըրեր էի կ'հանդչէի,
Ու Դուն եկար՝ խանգարեցիր Մեր հանդիստը ու Մեր քուն...։
Ես ճակտի դիր՝ այն չ'է՛ նաեւ՝ որ Իմ Եղբօր Կին դառնաս։ —
Իմ Եղբօր Կին՝ Կանաչ-Քաղքի Թագաւորի-Աղջիկն է,
Ինչ Վիշապէն Մենք խըլեր ենք Մե՛ր ձեռքով, —
*Եւ օրէ օր Իր Հարսնառի՛ն *) կ'ըսպասէ։*
Գեղ կըմընայ, Զըրե՛հ-Պողվատ,-ըսաւ ապա Սանասար-,
Որ քալի պէս՝ երկրէ երկիր Դուն մա՛ն դաս,
Ես ուժին չափ ու Ես սըրտով Մա՛րդ մը գըտնես Գեղ համար...»։
Զըրեհ-Պողվա՛տ Սեւ-Ձիւտր՝ սիրտը խորո՛ւնկ վիրաւոր՝
Վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ. —
= «Բարո՛վ վայլես, է՛ Սանասա՛ր, Քառասուն-Ճիւղ-Մամ Ձու Գոհար,
Մընաս բարո՛վ՝ հազա՛ր տարով, Սասմանց կըտրի՛ճ Սանասա՛ր»։—

Ըսա՛ւ-չըսաւ...՝ Թըռաւ հեծաւ Իր Սեւ-Ձին,
Քըշե՛ց գընաց...՝ փոշու ամպը Իր ետին...։

կռուող վերջին հերոսուհիի անձին ու անունին չուրջը։ 2) Քառասուն-Ճիւղ-Մամ Գոհարի քոյրն ըլլալու հանդամանքովը՝ պիտի ըսուէր Պղնձէ-Քաղաքէն էր ինքն ալ։ Բայց հին դարերու մէջ, եւ բազմակնութեան այդ օրերուն, երկու քոյրերէն մէկը կրնար իշխել ուրիշ տեղ մը։ Տեսնել նաեւ Հուծ. 231։ 3) Իշխան, Իշխանուհի։ *) Թագաւոր, Թագուհի։ *) Ձնար, (Մնար), Սարի գագաթ, բարձունք։ *) Հարսնառ, Հարսը ծնողքին տունէն առնելու եկող Թափօր։

188. Սաճասար Ու Բաղդասար Կանչ-Բաղամ Հարսնառի Կ'երթան

Զ·, ՉՍ·311, Ց·19,79, (Ց·18), Հ·14,410, Ե·614, Կ·117՝Զ·, ՉԿ·318, (ՉԿ·318,340), Ս·144՝Զ·, (Լ·15)·

Զրոյցն ո՞ւրկէ տանք հիմա···, —
Սանասարէն՝ Բաղդասարէ՛ն դրոյց տանք: —
Ելան տէն Գոհար-Խաթուն, Զիանք հնծան՝ քըչեցէ՛ն,
Ինկան ճամբայ՝ ու դէ՛մ ըրին դէպ Սասուն· —
Բառսուն-Ճիւղ-Ծամ Գոհար-Խաթուն՝ Իրենց Մօր մօտ կըբերեն:

Եկան հասան Կանա՛չ-Բաղաք, Իրենց Հա՛րսը առնելու· —
*Կանաչ-Բաղքի Թագաւորը՝ չա՛տ խընդացաւ *) ու ըսաւ· —*
*— «Գա՛յ որ *) Զէս ու Իմ Աղջիկը չ'է՛ք մոռցեր···»:*
Ու ելաւ Իր այդ Աղջիկը,-հարսնացուն-՝
Ինչ Սանասար ու Բաղդասար խըլեր էին Վիշապէն, —
Դևդաւն-Ծամը՝ Բաղդասարին կ'ին տըւաւ:

189. Լուր Կ'երթայ Սասուն, Մեծ Շուխով Դիմաւորելու Կուգան Սանասարին-Բաղդասարին Ու Իրենց Կիներուն

ՉՍ·311,312, Հ·14, Կ·7, (Կ·7)Զ·, Զ·՝Լ·80, (Լ·80), ՉԿ·287, Զ·՝Ե·491, Զ·

Ելան ապա ճամբուն վրայ՝ Երկու Կընիկ, Երկու Մարդ,
Նաժիշտներով, Ծառաներով, բեռներով:
Ճամբու կիսուն՝ առաջադէմ Մա՛րդ ղըրկեցին՝ ձիաւոր,
*Գընաց Սասուն, ակընչկըլա՛յ *) տարաւ Մօր,—*
Թէ՝ «Քո Տըղաք՝ Սանասար ու Բաղդասարը հա՛ կուգան,
Բառսուն-Ճիւղ-Ծամ Գոհար-Խաթուն՝ Պղընձէ-Բաղքէն բերե՛ր են···,
Դևդաւն-Ծամը՝ Կանաչ-Բաղքէն բերե՛ր են···,
Փող ու թըմբուկ պատրա՛ստ ըրէք՝ Իրենց Հարսնիք չո՛ւտ ընենք···»:

Այս որ լսեց Մայրը՝ Լուսիկ-Թագուհին՝
Ելաւ առաւ Քեռի-Թորոս եւ Իշխաններ մեհասին, —

---

* Խընդացնալ, *Ուրախանալ* (Խինդ-անալ): *) Գա՛յ որ, Գոհ եմ որ, փա՛ռք Աստուծոյ որ: *) Ակընջկլայ, *Աւետիս*, բարի լուր:

*Քառասուն-քառասուն փող *) ու Թըմբուկ ու Զուռնա *),*
*Քառասուն կիթառ, Պարկապզուկ *), Տամբլաբազ *),*
Քառասուն-քառասուն Տաւիղ, Սըրինգ, Ծընծըղայ, —
Ժողվեց Ամեն Քաղաքացիք, Գիւղացիք,
*Ու Խաչերով, Խաչվառներով՝ Հարսի-Հեծել *) կազմեցին,*
Առին ելան Քաղքէն դո՛ւրս. —
Հազա՛ր տեսակ ուրախութեամբ ու երգով,
*Գացին առին Զոլ-Սանասար, Քառասուն-Ճիւղ-Ծամ՝ Իրենցով *),*
Ու Բաղդասար, Դեղձուն-Ծամն ալ՝ Ի՛ր Մարդերով՝ միասին,
*Առաք-փառաք՝ եկան մըտան Սասունանք *):*

190. Սանասարի Եւ Բաղդասարի Հարսանիքն Ու Սանասարի Թագաւոր Օծուիլը

Ջ·՝Լ·80,64, (Լ·80,64), ՁՍ·312, (ՁՍ·312), Ճ·79,67, Ա·49, Կ·7, (Կ·7), ՁԿ·340,341, Հ·14, 411, Ս·147, (Ս·144), Ջ·, (Լ·12).

*Բերին ապա՝ աշխարաժողով *) ըրին հոն, —*
Սանասարն ու Բաղդասարը պսակեցին: —
Սանասարը առաւ Պըղնձէ-Քաղքի Քառասուն-Ծամ Գոհար
Ու Բաղդասար՝ Կանաչ-Քաղքի Դեղձուն-Ծամ. —
Խաղ ու Հարսնիք ըրին եօ՛թ օր՝ եօ՛թ գիշեր,
Ուրախութիւն ըրին, կերան, խըմեցին,
[Մեզի բան մը չըտուին...].
Պա՛ր բըռնեցին, ցատկեցին ու երգեցին. —

1.— *Դո՛ւրս ա՛րի, հա՛յ, դո՛ւրս ա՛րի՛,*
Թա՛գւորի-Մա՛յր, դուրս ա՛րի.
Քեզ ի՛նչ ու ի՛նչ ենք բերե՛ր,—
= Զո՛յգ Աղաւնի՛ ենք բերեր...:

2.— *Դո՛ւրս ա՛րի, հա՛յ, դո՛ւրս ա՛րի՛,*
Թա՛գւորի-Մա՛յր, դուրս ա՛րի.
Տե՛ս Քե՛զի ի՛նչ ենք բե՛րե՛ր, —
= Մե՛ծ Սանասա՛ր-Բաղդա՛սարի՛
Թագն ու պըսա՛կն ենք բերեր...:

---

*) Փող, կարճ սրինգ: *) Զուռնա, Շեփոր: *) Պարկապզուկ, Ուռեցուած մորթով սրինգ մը, Cornemuse; *) Տամբլաբազ tamblabaz: կթոց-թմբուկ, double-basse: *) Հեծել, Հեծեալ ձիաւոր՝ բաղմութիւն, թափօր: *) Իրենցով, Իրենց հետեւորդներով: *) Սասունանք (Սասունանք), Սասնոյ երկիր, Սասունանց՝ Հոդ, կեդրոն: *) Աշխարհաժողով, Մեծ բազմութեամբ հաւաքոյթ, աշխարհազունդ հանդէս:

3.— Թագո՛ւր, ի՞նչ բերե՛մ Քո՛ նըման՝,
Քո կանա՛չ ա՛րեւո՛ւ նըման. —
= Լո՛ւս աղօթքա՞ն որ կը՛բացուի՛, —
Բա՛ցուէր Քո ա՛րեւ Թագաւոր...:

4.— Թագո՛ւր, ի՞նչ բերե՛մ Քո՛ նըման՝,
Քո՛ կանա՛չ ա՛րեւու նըման, —
= Վա՛րդ ու Ըրհա՛ն որ կը՛բացուի՛, —
Բա՛ցուէր Քո ա՛րեւու նըման...:
5.— Ա՛յն էր Ա՛յ...՝ —

Ա՛յ-Փեւրաղի՛ն էր խա՛չ ու մա՛չ, —
= Արե՛ւդ էր կանա՛չ...:
— Կանաչ լուսո՛ւ դէ՛մ կայներ է՛ս, —
Բարո՛վ Քո Թա՛գուհ վայելես...:

6.— Է՛դ *) բա՛րեւ, հա՛յ, է՛դ բարե՛ւ,
= Թա՛գաւորի՛ն *) չա՛տ ա՛րեւ...:
— Է՛դ բարե՛ւ, հա՛յ, է՛դ բարեւ...,
= Թագո՛ւհիի՛ն *) չա՛տ արե՛ւ...:

Այսպէս՝ վառքով ու պատիւով՝ հասան Իրենց վախքին:
[Դուք ալ հասնիք Ամենքդդ Ձե՛ր վախքին]:

Բերին նորէն մեծ հանդէսով, ուրախութեամբ ու երգով՝
Ջոջ-Սանասար օծեցին ու դըրին երկրին Թագաւոր.
Բաղդասարն ալ՝ մի՛չտ Օդնական Իր եղբօր, —
Քեռի-Թորոս՝ Խորհըրդական երկուսին:

Նոր նըստեցան այնուհետ Իրենց Սամանց-Տուն, —
Իրենց Մեծ-Հայր՝ Կաթուղիկոսի Պապ-Աստղիկին մահէն ետք †),
— Որ թագեցին Իրենց չինած ժամուն մէջ —,
Այլեւս Իրե՛նք էլան մէջտեղ՝ Թագաւոր..., —
Կըռապաշտներ կորուսին...:

---

*) Էգ, Այդ, արշալոյս, առաւօտ: *) Հայաստանի մէջ՝ նորապսակ զոյգերուն՝ թագաւոր եւ թագուհի մականունը կուտան: †) Տեսնել Առիւծ-Մըհէրի ճիւղ՝ Հատուած 207, իսկ Սանասարի մահը՝ Հատ. 222:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՁԻՒՂԻՆ

ԱՌԻՒԾ-ՄԸՀԷՐԻ

		Հատուած
Ա.	*Առիւծ-Մըհէրի Մանկութիւնը*	191
Բ.	*Առիւծ-Մըհէրի Պատանեկութիւնը*	202
Գ.	*Առիւծ-Մըհէրի Արկածները՝ Սիվտակ-Դէվին հետ*	209
Դ.	*Առիւծ-Մըհէրի Ամուսնութիւնն Ու Մեծագործութիւնները*	220
Ե.	*Առիւծ-Մըհէրի կռիւները Զրհոյ-Պողվատի հետ*	227
Զ.	*Առիւծ-Մըհէրի Վախճան*	234

ՍԱՍՈՒՆԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՁԻԿՂ

ԱՌԻՒԾ–ՄՐՒՀԷՐ

(Առիւծաձեւ-Մրուէր, Զօջիկ-Մրուէր, Զօջ-Մրուէր, Մեծ-Մրուէր)

Ա. ԱՌԻՒԾ-ՄՐՒՀԷՐԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

191. ՈՂՈՐՄԻՆ *1)*

Կ·1, (Կ·1)2·, Լ·61, 2(Լ·5), Ա·3,63, 2·՝Ա·71, Հ·403,19, Ց·80, 69,136, Ց·80՝ստրջ·, (Ց·136), Խ·1,44,51, Ե·9, 475,529,607,725, 891,968, 2·, 2Կ·40,390 ա·, 2Ս·7·

— *Օրհնեա՛լ բարեբա՛ր Աստուած* *),
= *Երկնամբ չա՛տ էր Մեծ-Թագաւորին։*
— *Դառնանք՝ «Ողորմի»ն տանք,*
= *Հապա՛ր «Ողորմի»···, —*
Մեր Կապուտ-Կոպի Պա՛պ-Թագաւորին,
Մամ-Թագուհին, Լուսի՛կ-Թագուհուն,
Մեր Սասմանց-Տան՝ Զո՛չ-Մանասարին՝
Ու Բաղդասարի՛ն···։

Ապա՛նք *) *ճիւղէ-ճիւղ՝*

---

1) *Տեսնել «Ողորմի»ն՝ Հատուած 1՝ ստորեւ։ Երգել «Ողորմի»ն՝ Հուշ· 1-ի բազմաձայն ձեւովը։ «Պատմողը երգով կը պատմեայ՝ անցեալ նշանաւոր Հերոսներուն «Ողորմի» կուտայ՝ որ նոր իր պատմութիւնն ընէ։ ··· «Ողորմի»ին մէջ կը յիշուին բոլոր նախորդ նշանաւոր Հերոսներուն անունները»* (Ե· 9՝ ստրջ)։

*) Խաղալ, պատմելով առաջանալ։

Գանք դադրինք՝ վեր՝ Զո՛լ-Մըհէրի ձիւղին, —
Ըսենք զըրոյցը՝ Առի՛ւծ-Մըհէրին, —
Որ Անիկ Սանասարի Տըղան էր:

Անունն ելա՛ւ Աղնա՛նց-Ֆաջին,
= Հա՛ Ֆաջին...: —
Ով լըսեր էր՝ չ'էր՛ հաւատար..., —
Աչքով տեսան՝ հաւատացի՛ն...:

192. Սանասարի Ու Բաղդասարի Զաւակները

Կ·7,121՝Զ·, ՉԿ·342,620, 621,642, Զ·՝ՉԿ·342, Հ·14,411, (Հ·411), Ծ·20, Լ·15, 80,17,81,83, Ն·491,614, Ս·148, Ս·148՝Զ·, ՉՍ·314, Զ·

Ժամանակէ՛ մը յետոյ ..., —
Սանասարին եւ իր կընիկ Ֆառսուն-Ձիւղ-Ծա՛մ Գոհարին՝
*Աստուած տըւաւ՝ առջինեկ *) մէկ Լա՛ճ-Տըղայ,*
*Բերին Տըղան կընքեցին ու անուն դըրին ՋՈՋ-ՄԸՀԷՐ *):*

Բաղդասարի կինն ալ երբոր պառկեցաւ՝
*Լաճ *)-Տըղայ մ՝ ալ Ա՛ն բերաւ,*
*Տարան կընունք՝ ՑԻՎԱՆ *) դըրին իր անուն:*

Մէկ ժամանա՛կ մ՝ անցաւ մէջ՝
*Առնց մօտէն՝ քանի մ՝ Տըղա՛յ ալ դուրս եկան Սասմանց-Տուն *),—*
Անուններըը՝ ՁԸՆՁՂԱՓՈՒԻԿ, ՎԸԺԻԿ, ՎԵՐՕ, ՁՈՐ-ԿՈՒՐՒԻԿ
ՑԸՌԱՆ-ՎԷԳԻ, ՎԱՐԴԱՆ, մէկ ալ՝ ԽՈՐ-ԳՈՒՍԱՆ:

Այդ մանրումեծ Տըղաներէն Ձընճղափոխիկ, միւսները,
*Ցըռան-Վէգին՝ իսկի՛ *) բանի պէտք չէ՛ն գար. Թո՛յլ եղան...:*

---

*) Առջինեկ, Անդրանիկ: *) Մըհէր անունի մասին՝ Տեսնել բ. հատորին մէջ: *) Լաճ, Մանչ, արու (զաւակ): *) ՑԻՎԱՆ անունի մասին՝ Բ. Հատորով: Ջըչփոթել Ձինով-Օհանի հետ: *) Դուրս եկաւ Սասմանց-Տուն, Սասմ. Տան մէջ՝ ծնան, աշխարհ եկան: *) Իսկի՛, Բնա՛ւ, երբե՛ք:

Մէկ Տղան ալ՝ «ԱՍՏՂԻԿ-ԻՇԽԱՆ» կրկանչէին Իր անուն՝
Աստղերէ՛ լաւ կը հասկընար, դընաց հետ Իր Աստղերուն…, —
Սասմանց-Տան մէջ՝ մնացին Մրեխը ու Ցէվան: —

193. Մրեխի Ուժն Ու Մանկական Խաղերը

Ջ., 3·20,21, Կ·121՝Ջ., Ջ·՝Լ·7·

*Ինչ Մրեխին էր՝ օ՛րը գ՝աւուր *) ջոջացաւ,*
Ելաւ Իր Հօր՝ Սանասարէ՝ ո՛ւժն առաւ: —
*Մէ՛կ ամիսը՝ մէ՛կ տարւան չափ պէտրցաւ *)…:*
Երբոր Եղաւ հազի՛ւ թէ մէ՛կ տարեկան՝
Տա՛ս տարեկան Տղոց չափէ՛ն բարձրացաւ…:

Այդ Մրեխ՛ին է, — որ Տղի հետ ո՛ր խաղայ՝
Կըզարնէ ու՝ ձեռ, ոտ, դըլուխ կըջարդէ՛…: —
Տղոց ակռեր՝ Սանասարին կ՝երթան կ՝ելնեն գանգըտուր, —
Թէ՝ «Մրեխ՛րը Մեր Տղաններ կըջարդէ՛ ու կ՝ըսպանէ՛…»:

Սանասարէ ճա՛ր կըտրևցաւ, — ի՞նչ ընէ…, —
Կանչեց բևռաւ Քևռէ-Թորոսն ու ըսաւ, —
— «Մրեխը դի՛ր մէկ Ձիու վըրայ՝ Թող երթայ՝
Ընկերներուն հետ Ո՛րս ընէ սար ու քար, —
Իր սէր ճըղէ Ձիո՛ւն վըրայ, Տղանները չըջարդէ՛…»:

Բևռին մէկ Ձի՛ տըւին Իրեն՝ Մրեխին, —
Ելաւ հեծա՛ւ՝ Ընկերներով՝ դընաց Սարեր՝ Ո՛րս ընէ: —

194. Մրեխը Կ՝ուզէ Դպրոցը Թողուլ՝ Երթալ Որսի

Ջ·՝Լ·72, (Լ·72), Ջ·՝Լ·91·

Մրեխը Երբոր Եղաւ Եօ՛թը տարեկան՝

---

*) Օրը գ՝աւուր, *Օրէ օր, օր՝ օրի, օր՝ աւուր Եաեւէ:* *) Պէտ(ը)-նալ, *Պէտանալ, Մեծնալ, Խոչորնալ:*

Բերին դըրին Վարժարան։
Աստծո՛ւ կամքով՝ քի՛չ ատենէն՝ ամե՛ն բաներ սորվեցաւ, —
Ամեն տեսակ չընորքներով լեցուեցաւ։

Աւուր մէկին՝ Վարժատունէն Մըհէր երբոր Տո՛ւն դարձաւ՝
Տեսաւ Տըղաք ժողովուեր են փողոցի մէջ կըխաղան։ —
Տըղաներէն մէկը՝ այնտեղ՝ պըղտիկ Դո՛ւրզ մը չիներ էր,
Ընկերներուն հետ՝ այդ Դուրզով՝ կըռիւի-խա՛ղ կըխաղար։
*Մըհէրին ալ՝ չա՛տ դուր *) եկաւ այդ նոր խաղ, —*
Ըսաւ, — «Ե՛ս ալ խաղալ կ՛ուզեմ Ձեզի հետ...»։

Մինչեւ իրկուն՝ Տըղայոց հետ խաղալէ՛ն վերջ՝ դարձաւ Տուն,
*Եկաւ Մօրը, ըսաւ, — «Մարէ՛, ա՛յ Մարէ *),*
Հերիք չէ՞ որ՝ այսպէս մընամ ես այստեղ...,
Ի՛նչ որ ուսայ՝ ա՛ն ալ ինձի կըքաւէ՛...,
Ա՛լ չե՛մ երթար Վարժատուն...,
Հիմա՝ պէտք է՝ որ ինձի տաք՝ մէկ Նետաղեղ ու մէկ Դո՛ւրզ,
*Երթամ Սարեր, Ընկերներուս հետ միասեղ՝ Հաւքի-Որս *),*
Ու Մարդու մէ՛չ մըտնեմ՝ ես ալ՝ Մեծերու պէս մա՛րդ ըլլամ...»։

Մայրն ալ ըսաւ, = «Որդի՛, Դուն դեռ պըղտի՛կ ես...,
Չես կըրնար դեռ ընել այդ Քո ըսածները... .
Քանի մ՝ տարի ալ համբերէ՛՝ ապա ըրէ՛ Անոնց պէս»։ —

195. Մըհէր Զինավարժութիւն Ու Որսի Ելեւէջ

Ջ.՝Լ.72,91, Ջ(Լ.72), Ջ.՝Ճ.21.

Մըհէր սակայն մի՛չտ կըկըրկնէր Իր խընդիրքը ու կ՛ըսէր. —
— «Քա՛նի որ Մեր-Տուն մա՛րդ չըկայ՝ Մեզ նայի՛
Կ՛ըլլայ՝ օր մը՝ Դէվեր դան Մեզ վընա՛ս տան,
Իրենց դիմաց՝ մա՛րդ չըտեսնեն կըռուելու, —
Աղէ՛կ է որ՝ հիմակուընէ՝ ես պատրաստուիմ ու կըթուիմ,
Վաղ-մէկալ օր՝ Թըշնամու դէ՛մ կայնելու...»։

Քառասուն-Ճիւղ-Ծառ Գոհար-Խաթուն ի՞նչ ըրաւ, —

---

*) Դուր, Ախորժելի, հաճելի։ *) Մարէ՛, կէկն. Մայրի՛կ։
*) Հաւքի-որս, Թռչնորսութիւն։

*Երբ տեսաւ թէ չիկըրնար Իր Տըղուն վրայ *), —*
Ելաւ բերաւ՝ Նետադի՛ղ մ՝ ու Գո՛րդ մը տըւաւ Մըհէրին,
Թիկնապահով, Ընկերներով դըրկեց Դա՛շտ:

Հիմա Մըհէր ի՞նչ ըրաւ. —
Ընկերներու հետ քանի մ՝ օր խաղալէ՛ետքն՝ ալ ըսաւ, —
— «Ես պիտ՝ երթամ՝ ուրի՛շ Սարեր Որս ընեմ...»:
Ու ելաւ չո՛ւտ՝ Իրեն համար Զի՛ մը սարքից ու հնծաւ
Որս ընելո՛ւ կ՝երթար Սարեր, ամեն օր: —
Ցերեկ կ՝երթար Ո՛րս կըզարնէր Իր համար,
Գիշեր կուգար՝ կ՝իյնար Իր տեղ՝ քընանար...:

196. Մրիէր՝ Սարի-Մաստուրին Կըհաճդիպի՝ Ու Երազ Կըտեսնէ:

Չ.՝Լ.7.

Եւ օր մըն ալ՝ Մըհէր դընա՛ց, դընա՛ց ելաւ Սարի մ՝ վրայ, —
Գընաց՝ այնտեղ՝ մէկ Մաստուրի՛ մ՝ դէմ եկաւ.
*Զին իր մէջքը Թալից *)՝ մէ՛կէն՝ դէպ վեր-վեր,*
Տըղան ինկաւ քիթ-բերնի՛ վրայ, ուշք դընա՛ց...: —

Ու եղա՛ւ որ՝ այն Մաստո՛ւրը՝ երա՛զ եկաւ Մըհէրին, —
Ըսաւ, — «Տը՛ղայ, Ես անունը Մըհէ՛ր է.
*Ես Մեծ-Մայրի *) արտասո՛ւքն ալ՝ ելաւ հասաւ ատ Աստուած՝*
Ինչպէս Ո՛ւնկը Մաստոցին: —
Տըղայ,-ըսաւ, Աստուած Քեզի տըւե՛ր է,
Ես անունը Մըհէ՛ր է.
Հիմա կ՝երթաս Պապ-Թագաւոր Ես Մեծ-Հօ՛րը ու կ՝ըսես՝
Տաս հաս անծին երի՛նջ առնէ ու բերէ,
Ֆահանանի՛ն ալ մէկտեղ,
Որ Պաստարա՛զ ընեն այստեղ, դուրը բացուի՛ Մաստուրին, —
Ներս մըտնե՛ս ու ազօթե՛ս,
Հըմայի՛կը դընես ծո՛ցդ,

---

*) Չկրնալ մէկուն վրայ, Չդօրել, չկրնալ յաղթել, համոզելու անկարող ըլլալ: *) Թալեր, Նետեր, ձգել: *) Այսինքն Լուսիկ-Թագուհին: Լ.7՝ Ես մօր:

Թո՛ւրը ձգըեաս Քո թեւի՛դ,
Ծանրիկ-Դորգը վերցընես, ու բըռնես ձե՛ռդ։ —
*Ու Քո Զին ալ Այրին մէ՛ջն է, անուն՝ Քուռկի՛կ-Ջալալին *),*
Աստուած Ատիկ Քեզի՛ արժան է տեսեր, —
Հեծնե՛ս երթաս՝ Թըշնամու դէմ կըռիւ՛,
*Որ Մեր՝ Հայու *) լուս-հաւա՛տը չըկորի՛...»։*

197. Մրհէր Կուզայ՝ Իր Մօրը Կըպատմէ՝ Ցեսած Երազը

Ջ·՝Լ·7,8, Ջ·

Մըհէրը ելաւ՝ դընաց Մօր մօտ, Քեռի-Թորո՛ան ալ կանչեց, —
— «Ես դընացի,-ըսաւ-, ելայ Սարին մէ՛ջ,
Ու Մատուռի մ՝ դէ՛մ եկայ.
Ձին մէջէն թալե՛ց՝ ես Ինկա՛յ...,
Ուշքըս դընաց..., ու ես տեսայ՝ Երազո՛վ՝
Մատուռն ըսաւ, — «Քո անունը Մըհէ՛ր է.
Գընա՛ տաս հատ անծին երի՛նջ բեր մատղէ՛, —
Որ Քո վախաք կատարուի...»։
Մայրն ալ ըսաւ, = «Որդի՛, ի՞նչ է Քո վախաք...»։
Մըհէրը թէ, — «Մարէ՛, Մատուռն ինձ ըսաւ՝
Որ մատղեցիր ու պըրծար՝
Երեսդ լըսա՛ այն Մատաղի արիւնով՝
Որ չո՛ւտ առնես Քո վախաք...։
Թէ Քու մաղթանք կատարուի՝
Մատրան Դուռը կըբացուի՛...։ —
Այն Մատո՛ւռն ալ՝ Միրանաւոր †)-Աստղարածի՛ն է անուն. —
*Քո Թաղ, Վակաս *), ու Քո Գո՛ւրգը՝ այնտե՛ղ է.*
*Քո Հըմայե՛կն *) ալ հո՛ն է. —*
Կըվերըցնես Հըմայեկը դընես Ծո՛ցդ։

---

*) Մատուռ, Այր, Քուռկիկ-Ջալալին, զոհ...՝ Մըհէրի անունին հետ կապուած՝ կըյիշեցնեն պատմա-աւանդական Մըհէրի-Դուռը, եւն.։ Տեսնել Բ. Հոր.։ *) Հայու, Հայութեան, Հայ Ազգի։ †) Պզտիկ-Մըհէրի ճիւղին մէջ՝ Մըհէրի-Դուռ անունով յայտնի՝ աբեղդէմ Զոհարան-Ցիչատակարանին պատչաճեցնելով։ *) Վակաս, Վիզի պահպանակ։ *) Հմայեկ, Զարքերու դէմ պահպանակ, talisman։

Որ Հըմայեկ դըրիր Ծոցդ՝
Ոսկի-Գօտին կապես Մէջդ,
Թաղը դընես Գլուխիդ,
Ծանրիկ-Դուրդը Ձո՛ւդ առնես,
Հնձնես Քուռկի՛կ-Ջալալին՝
Քո Թըշնամու հետ կըռուիս,
Որ Դու մի՛շտ ալ՝ աղա՛տ պահես Քու-Երկիր...»:

Հիմա,-ըսաւ-, ես եկեր եմ Այդ Սարէն՝
Որ տասն անծին երի՛նջ տանիմ ու մատղեմ...: —
Նայիմ այդ Դուք ի՞նչ կ'ըսէք...»:

198. Մրիէր Մատաղ Կ'ընէ Մատուռին Առաջ

Ջ.՝Լ.8.

Մայրը ելաւ՝ դընաց տեսա՛ւ Պապ-Թաղաւոր Մեծ-Աբգան, —
— «Թողըդ,-ըսաւ-, Որսէն դարձեր եկե՛ր է,
Տա՛սը անծին երի՛նջ կ'ուզէ՝ որ տանի՝
Մատուռին դէմ մատաղէ...»:

Պապն ալ ըսաւ, = «Քառասո՛ւն երինջ Թող տանի...»:

Ապա ելաւ՝ պոռա՛ղ տըւաւ մէջ Քաղքին, —
— «Ելէ՛ք երթանք Ասպարտածին-Մատուռքար,
Խաչ-Խաչվառով, Քահանայո՛վ մխասին,
*Մատա՛ղ ընենք՝ Անոր զօրքին *) հաւասար...»:*

Ժողովուրդն ալ ըսաւ, = Այդ ի՞նչ Մատաղ է...»:
Թաղաւորը վերցուց ըսաւ, — «Մըտէ՛ր՝ երա՛ղ է տեսեր,
Պէտք է տանինք՝ Մատա՛ղ ընենք Մատրան-Դուռ»:

*Ելան տարին՝ Քառասուն-Երինջ ու Պըղինձ *),*
*Գեղախըռիկ *) դացին ելան Մատրան-Դո՛ւռ,*
Գացին այնտեղ՝ որ մատղեն: —

---

*) Զօրք (զէօրք), Գերբնական, հրաշագործ՝ ուժ, չնորհք:
*) Պղինձ, Պղնձէ մեծ կաթսայ՝ սովորաբար չորս կանխով՝ որու մէջ կ'եփեն մատաղի մխը: *) Գեղախոիկ, Գիւղացին ալ խառն, դիւղով մէկտեղ:

Ինչ որ Տէրտէր-Տիրացո՛ւն են՝ Մաս-Պատարագ է կ՚ընեն.
Ինչ Մըհե՛րն է՝ Մատա՛ղ կ՚ընէ երինջներ՝
Ու Մատաղին արիւնովը՝ երե՛ս կ՚լըլայ՝ Ջրի տեղ: —

Ասպարածնի Դուռն՝ Աստըծո՛ւ հրամանով՝
Բացուեցաւ ու՝ Տըղայ-Մըհէր նե՛րս մըտաւ. —
Թագը դըրաւ Իր Գլուխ,
Գօտին կապեց Իր Մէջքին,
Մանրիկ-Գուրզը առաւ Ձե՛ռ, —
Ըսաւ, — «Վա՛ւ էր՝ որ այս Գուրզի դըլուխին՝
*Իրեն չա՛փ ալ՝ Արճի՛ճ *) ըլլար լեցուցած,*
Որ ես՝ ինչպէս կըտրի՛ճ Մարդ՝
Իմ ուժ յաղթէր՝ վերցընէի գլխի՛ պէս...»:

Գեղի-Թորոս ա՛յս որ տեսա՛ւ ու լըսե՛ց՝
Հասաւ պալե՛ց երեսնե՛րը՝ եւ ըսաւ. —
— «Ապրի՛ Մըհէր, Մեր Տըղան..., —
*Ես գիտե՛մ որ Մեր Թըշնամուն կըյաղթէ *)...»:*

Ապա ելան՝ կանչեցին թէ, — «Մըհէ՛ր, արի՛ Մատա՛ղ կեր...»:
= «Շնորհակա՛լ եմ,-ըսաւ, Ինձի պէ՛տք ալ չ՚է.
Կերէ՛ք, անո՛ւշ ըլլայ Ձեզ...»:
Ըսին, — «Ինչո՞ւ..., չէ՞ որ Դուն ալ անօթի՛ ես, արի՛ կե՛ր...»:
Ըսաւ, = «Աստուած՝ այնպէ՛ս է Ինձ կամեցեր,
Սիրտըս արդէն լեցուե՛ր է ու կո՛ւշտ եմ ես...: —
Երթամ՝ Իմ Ձին դո՛ւրս քաշեմ...»:

199. Մրիէր Ձին Կրնեծճէ Կ՚երթայ Սար՝ Ու Ոտ Կըրնէ

Ձ·՝Լ·8,9, 8·24 ստրջ·, Ձ·

Գընաց՝ Իր Ձին՝ Փուռկիկ-Ջալալ քաշեց դո՛ւրս,
Վերցուց ըսաւ, — «Գեղի՛-Թորոս, ի՞նչ ընեմ,
Սանձ ալ չըկայ՝ որ Իմ Ձիուս բերնի՛ն զարնեմ ու հեծնեմ...»:

Գեղի-Թորոսն ալ ի՞նչ ըսաւ Մըհէրին, —

---

*) Արճիճ, կապար: *) կըյաղթէ, Պիտի կարենայ յաղթել:

= «Մէջբր Թալուկ *) Ձիու Սանձը բերնէն հան՝
Իւ՛ր ու Բուռկիկ-Ջալալիին բերան զարկ,
Ու Թամբն ալ բե՛ր՝ դիր մէջքին...»:

Մըհէր բերաւ՝ Սանձը դարկաւ, Թամբ ըզրա՛ւ: —
Մէ՛կ ալ՝ վերէն՝ ձա՛յն տըւին թէ, — «Ա՛յ Մըհէր,
Անօթի՛ ես, արի՛ հա՛ց կեր՝ նո՛ր ըզնա...»:
Ան ալ վերցուց բաւ թէ, = «Չէ՛, չե՛մ ուտեր...»:
Այդ Մարդերը հարցուցին թէ, — «Ո՞ւր կ'երթաս...՝:
Ըսաւ, = «Իմ պապ՝ Ասպիկ-Աբբան՝ կ'բակէր՝ «Գրնա՛ Ո՛րս 1) ըրէ»,—
Հիմա ես ալ՝ կ'ուզեմ երթամ՝ Ո՛րս ընեմ...»:

Ելաւ՝ Իր Ձին հնծաւ ըշնե՛ց ու ըզնա՛ց: —
Գրնաց Սարեր, պըտըռնցա՛ւ վար ու վեր,
Ու Որսի 2) տեղ *)՝ Գայլ ու Գազա՛ն ժողվեց առաւ ու եկաւ 4):

Քեռի-Թորոս կանդնեցաւ դէ՛մ, բաւ, — «Այդ ի՛նչ ես բերեր...»:
Մըհէրն ալ թէ, = «Ո՛րս 2) եմ բերեր Սարերէն...»:
— «Տըղա՛յ,-բաւ-, աւի Որս չ'կ'. Սարի Գազա՛ն են Առանք...,
Ժողովուրդը չա՛տ կըվախնայ Առնցմէն...»:

Մըհէր Թողուց՝ այդ Գազաններ փախան պացին իրենց տե՛ղ: —
Անկէ յետոյ՝ բըշնց ըզնաց Թըռչնորսի *):

200. Մրիէր՝ Առիւծին Դէմ Կ'ուզէ Երթալ

2.՝3.21.

Ու եղաւ որ՝ Առաւանց դէհ՝
Մէկ Առի՛ւծ մը յայտնըւեցաւ Ճամբաներուն վեր ու վար,
Եկող-գացող ամէ՛ն կըսպնց..., մա՛րդ չէր կրնար դալ-երթալ:

Սանասար ու Իշխաններըբ՝ մէկտեղ նըստած՝ մի՛տք ըրին. —
— «Ի՞նչպէս պիտի ապրինք այլեւս Մենք ամենքս. —

*) Թալուկ, Նետած, Ձգած, Թալ-Թալ-ած: 1) Որս, Որսորդութիւն, որս զարնելը: 2) Որս, Որսի կենդանի: *) Տեղ, Փախչելն, փախան: 4) Նման՝ Թալ-Դաւիթին: *) Թռչնորս, Թռչունի որսորդութիւն (8.24 առջ.՝ ավուխուշ):

Թանկութիւնը ինկաւ Սասմայ-երկրին մէ՛ջ...»:

Մըհէր հարցուց Իրեն Հօր, —
— «Թանկութիւնը ինչէ՞ն կ'իյնայ երկրին մէջ...»:
Հայրն ալ ըսաւ՝ թէ, = «Աւի՛ւծ մը յայտնըւեր է ճամբուն վրայ,
Ճամբորդ կըտրեց, եկող-գացող ա՛լ չըկայ...»:
— «Ի՞նչպէս Աւիւծ..., Աւի՞ւծն ի՛նչ է»,- ըսաւ Մըհէր՝ զարմացած:
= «Մեծ Գազա՛ն մ' է, ու Մա՛րդ կ'ուտէ»,-ըսաւ Հայրը՝ Սանասար:
— «Հեռուէ՞ն է որ Մա՛րդ կ'ուտէ՝ թէ՞ մօտէն...»:
Հայրն ալ վերցուց թէ, = «Չէ՛,-ըսաւ-, որ մօտեցար՝ քեզ կ'ուտէ»:
— «Որ այդպէ՛ս է,-ըսաւ-, Մըհէր խընդալէն-,
*Լուսուն *) կերթամ՝ Զիս թող չարդէ *) Այդ Գազան...»:*

Հայրը զարճաւ՝ ըսաւ, = «Որդի՛, մի՛ երթար..., —
Քեզ բըռնե՛լ ու պատրուե՛լը՝ մէ՛կ կ'ընէ...»:

Ականջ չըրաւ Տըղայ-Մըհէր, ու գընա՛ց...: —

201. Մըհէր՝ Աւիւծը Կրճեդէ Եւ Աճուկը Կրմնայ Աւիւծաձեւ-Մըհէր

Ծ·21,22, Չ·՝Ծ·21,22, Չ·՝Ե·614·

Գընաց Մըհէր՝ ու մօտեցաւ Աւիւծին.
Աւիւծն ալ որ տեսաւ թէ Մարդ մ' ելեր կուգայ ի՛ր դիմաց՝
Ցատկե՛ց եկաւ՝ Աւոր առա՛ջ նետուեցաւ...:

*Երկու-Մա՛րդ ալ՝ Մըհէրի հետ գացած են որ գ'ինք նային *). —*
Այն Երկու-Մարդ՝ վախէն՝ հեռո՛ւ կանգնեցան:
Տըղան՝ մինա՛կ՝ քըշե՛ց գընաց դէպ Գազան, —
Ինք ու Աւիւծ՝ առին իրար՝ գըրկախառն...: —
Մըհէր՝ Աւիւծ բըռնելո՛ւն պէս՝ տապալեց,
Ֆաշե՛ց ձեռքով՝ երկո՛ւ կըտոր ըրաւ, ձեւեց †), նետեց դէն...: —
Մէկ կըտորը՝ դըրաւ ճամբուն ա՛յն եղերք,

---

*) Լուսուն, Արշալոյսին, առաւոտն, վաղը: *) Զիս թող չարդէ, հեղինակ., Թող դայ զիս չարդէ՝ ես ալ տեսնեմ: Թող դայ՝ նայինք ի՞նչպէս կրնայ չարդել...: *) Նայիլ, Հսկել: †) Ձեւել, երկու ձեռքով քաշել՝ մէչտեղէն՝ վերէն վար՝ ճեղքել-պատռել, ինչպէս կարուելիք-ձեւելիք կերպասը կ'ընեն:

Մէկ կըտորը՝ ա՛յն եղերք…։
Այն երկու-Մարդ՝ որ Իրենն հետ դացեր էին Թիկնապահ՝
*Եկան կեցան Մրհէրի կուշտ *), ա՛լ անվախ…։ —*
Մէկն ալ՝ վազեց իմա՛ց տըւաւ Մրհէրի Հօր՝ 'ի Սասուն,
Թէ,— «Ահչըդ լո՛ւս…, Տըղայ-Մրհէր՝ Առիւծ ձեւե՛ց տեղնիտեղ…,
Մրհէր՝ Առիւծն ըսպանե՛ց…»։

Մինչեւ այդօր՝ ՄՐՀԷՐ էր, կամ ՋՈՋ-ՄՐՀԷՐ, —
*Ա՛յդ օրուընէ՝ անուն մընաց՝ ԱՌԻՒԾԱՁԵՒ ՋՈՋ-ՄՐՀԷՐ *)։*
Ու ժողովուրդ՝ անկէ յետոյ զ'ինք կանչեց՝
ԱՌԻՒԾ-ՄՐՀԷՐ, Ջոջիկ-Մրիէր. Մեծ-Մրիէր։

Բ. ԱՌԻՒԾ-ՄՐՀԷՐԻ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆԸ

ՋՕՋ. Առիւծ-Մրիէր՝ Կռապաշտի Դէմ Կռիւ Կ'ելլայ

Ջ·՝Լ·9·

Օր մ' ալ՝ Մրհէր՝ Պատուէ մը դասեր առած՝ ի՞նչ բսաւ· —
— «Հացն ու Գինին՝
Տէ՛ր-Կենդանին՝
Կ'ելլեմ կըսես…, չե՛մ կենար…»։

Պապն ալ կանչե՛ց Քեռի-Թորոս՝ ու բսաւ· —
— «Թորո՛ս,-ըսաւ-, ես չե՛մ կրընար համոզել,
*Դուն Այդ Տըղուն բան մը բսէ՝ ու յաղթէ՛… *)»։*

Ան ալ ևկաւ բսաւ, — «Որդի՛, Մրհէրի՛կ,
Ծուռ մի՛ ըլլար, ան՛պըղ կաց…»։
Մրհէրն ըսաւ,= «Զ'ը՛լլար,-ըսաւ-, Տէ՛ր դիտէ՝
Կա՛մ ես պիտի ըսպանե՛մ Զիս՝ վերջանայ…,
Եւ կա՛մ պիտի ևլնեմ երթամ՝ կրտսպաշտի հետ կըռի՛ւ…»։

Քեռի-Թորոս՝ վերցուց բսաւ, — «Ա՛յ Տըղայ,

---

*) կուշտ, Քով, մօտ։ *) Առիւծաձեւ, Առիւծ ձեւող, ճեղքող, պատռող, երկու կտոր ընող, ո՛չ թէ առիւծա-կերպ· Տե՛ս Ձեւել՝ ծնթբն. †։ *)Ցաղթել, Համոզելու յաջողիլ։

Դէ՛հ, որ կ՚երթաս՝ Զօ՛րք տամ Քեզի՝ ա՛ռ գընա՛...»:
Մըհէրն ալ թէ, = «Զէ՛, ես Զօրքով չե՛մ երթար: —
Ըսաւ՝ ես իմ կըտըրճուքի՛ւն †), Թորոսի՛կ, —
Իմ թուր կո՛ղս է, ու Հըմայեկն Իմ Ծո՛ցս է..., —
Ես մինա՛կըս պիտի երթամ կըռիւ...»:

203. Քեռի-Թորոս՝ ճամբայ կ՚ցուցնէ Մըհէրին

Չ՝Լ 9,10.

Ելաւ Մըհէր՝ ժողովուրդէն հրաժե՛չտ առաւ՝ եւ ըսաւ. —
— «Երթալն Իմ ձե՛ռ,-ըսաւ, գալը՝ Աստծո՛ւ ձեռ...:
Ցո՛յս ունիմ որ, Քեռի՛-Թորոս, կըտըրճուքի՛ւն ընեմ ես...»:
Քեռի-Թորոս՝ այնտեղ ըսաւ, = «Մըհէրի՛կ,
Ելնեմ՝ մէկ Զի ե՛ս հեծնեմ,
Ու Քո Զի՛ն ալ Դո՛ւն հեծնես՝
Երթանք՝ ճամբան ցո՛յց տամ Քեզ...»:

Ինկան ճամբա՛յ ու գացի՛ն, —
Թորոսի Զին՝ հետ Մըհէրի Զիուն երթալ չի՛ կըրնար..., —
Ատոր համար՝ Մըհէրն ըսաւ Թորոսին. —
— «Քեռի՛-Թորոս, Քու Զին քըշէ՛՝ հասցուր Ի՛նձ»:
Թորոսն ալ թէ, = «Տըղա՛յ, Քո Զին հրեղէ՛ն է...,
Երբե՛ք Իմին նըման չ՚է՛...»:
Մըհէր վերցուց՝ ու, — «Զէ՛,-ըսաւ, Դուն դարձի՛ր»:
Թորոսն ալ թէ, = «Մըհէ՛ր, ես Քեզ մինակ Թողնել չե՛մ կըրնար»:
Մըհէր վերցուց՝ ու, — «Զէ՛,-ըսաւ, Դուն դարձի՛ր»:

Քեռի-Թորոս՝ ելաւ այնտեղ՝ ճամբան Իրեն ցո՛յց տըւաւ,
Շըրջեցա՛ւ որ ե՛տ դառնայ՝
Մըհէր հասաւ՝ Թորոսի Ձեռ համբուրե՛ց..., —
Ըսաւ, — «Քեռի՛, օրհնէ՛ Զիս...»:
Ան ալ ըսաւ, = Աստծո՛ւ օրհնէ՛թ(ք) վըրա՛դ ըլլայ, ա՛յ Տըղայ,
*Աստուած Քու բա՛ն աչողըննէ՛, ե՛լ գընա՛...»: *)*

---

†) *Այսինքն՝ Թողուցի՛ք իմ Քաջութեան, ես կը վստահիմ միայնա՛կ ալ երթալու:* *) *Այս Հատուածը նմանութիւն ունի Թլոլ-Դաւիթի եւ Ձէնով-Օհանի միջադէպին հետ (Հատ. ....):*

204. Առիւծ-Մրիէր՝ Թուրմանցիներու Թագաւորին Գլուխը Նուէր Կբերէ Իր Պապուն

Ջ՚Լ.10,23, (Լ.23).

Մըհէր այլեւս ինկաւ ձամբայ՝ ու դընա՛ց…:
*Դընա՛ց, դընա՛ց…, անահո՛ւն *) չա՛տ օտար Ջօրքի դէմ ևկաւ, —*
*Ջօրքը կըարի՛ց *) ու դընա՛ց,*
Դընաց՝ Ջօրքին մի՛ւս կողմէն դո՛ւրս ելաւ: —
Հարցուց թէ, — «Մ՚ևր կ՚երթաք Դուք…»:
Ըսին, = կ՚երթանք Սասմանց վըրա՛յ՝ կըռիւի…»:
Մըհէր հարցուց, — «Ի՞նչ մարդ էք…»:
*Ըսին թէ, = «Մենք՝ Թուրքմաններու *) Թագաւորի Ջօրքի՛ն ենք»:*
Մըհէր հարցուց, — «Թագաւորն ալ ևկե՞ր է…»:
= «Հա՛, ևկի՛ր է,-ըսին-, այնտեղ՝ առա՛ջն է»:

Ջոջ-Մըհէ՛րն էր, — դարձաւ ե՛տ,
Մըտաւ կըռի՛ւ՝ Ջօրքին հետ…: —
Հրմայևկին վըրա՛յ դըրաւ Իր Ա՛ջ Ձեռ,
կանչեց ըսաւ,— «Ծիրանաւո՛ր Ասպարածին, մեռնի՛մ ինչ…,
Ինձի ո՛չ տուր՝ կըռի՛ւ ընեմ Ասոնց հետ…»:

Ըսա՛ւ՝ մըտաւ Ջօրքերուն մէ՛ջ՝ ու ջարդե՛ց… . —
Որը Ի՛նքն է կըջարդէ…,
Որն ալ Իր Ձին՝ Իր Ոտքերուն տա՛կ կուտայ…,
Որը վախաւ, որը Իր տեղ ջարդըւեցաւ ու մընաց…: —
Մըհէր հասա՛ւ՝ Կըռապաշտի-Թագաւորի Գլուխը կըտրեց ու առաւ:
Առաւ բերաւ ու տըւաւ Իր Պապիկին, —
— «Հրամմէ՛,-ըսաւ-, Պա՛պ-Աբքայ,
Կըռապաշտի-Թագաւորի Գլուխ բերի Քեզ ընձա՛յ…»:
Պապն ալ ըսաւ, = «Թող չա՛տ ապրի Իմ Մըհէր·
Աստուած Իր Սուր Կըտրո՛ւն ընէ մինչեւ վերջ…»:

*Ապա դարձաւ՝ ու ի՞նչ ըսաւ Իր Թոռան *). —*

---

*) Անահուն, Անհուն, անհամար: *) կտրել, ձնդքել, մէջտեղէն անցնիլ: *) Լ.10՝ Կռապաշտ Թագաւորի. Լ.23՝ Թուրքման: *) Առիւծ-Մըհէր՝ Թոռնորդին է Պապ-Աբքային:

— «Որդի՛,-ըսաւ, եպարքոսը՝ իր Տէրէ՛ն ալ զօրեղ է…,
Անոր Գլո՛ւխն ալ կըտրէ՛՝
Որ իմ սիրտը հանդարտի…» *):

Մըհէրն ալ թէ, = «Ճո՛յս ունիմ որ, Աստուծով,
Տարին չ'անցած՝ Անոր Գլո՛ւխն ալ կըտրեմ առնեմ ու բերի՛մ…»:
Պապը ըսաւ, — «Ինչո՞ւ տարին լըրացընել կըխորհիս…»:
Մըհէ՛րն ալ թէ, = «Որ Ան երթայ ու նոր Զօրքե՛ր հաւաքէ՝
Երթամ Զօրքին հետ կըռուի՛մ, —
Թուրքման հիմէ՛ն աւերեմ…»:

205. Առիւծ-Մըհէր Կ'երթայ Թուրքմաց՝ Վրաց Երզարձէ Կ'պառկի

Ջ·՝Լ·10,11,23·

Երբոր տարին լըրացաւ՝
Առիւծ-Մըհէր՝ ելաւ դընաց դէպ Թուրքման †): —
Գընաց այնտեղ, Վըրա՛ն զարկաւ Քաղքէն դո՛ւրս,
Իր Ձին կապեց Վըրանին դուռ՝ ու եկաւ՝
Անվախ մըտաւ Վըրանին տակ՝ պառկեցաւ:

Մէկը դընաց՝ Մեծաւորին լո՛ւր տըւաւ, —
— «Տէ՛ր իմ,-ըսաւ, մէկ Վըրա՛ն մը զարկած են Քո Հողին մէջ…»:
Մեծաւորը խմացա՛ւ որ՝ Ատի Սասմայ Մըհէ՛րն է…, —
Տա՛ւ Ձիաւոր հեծցուց ճամբեց՝ ու ըսաւ. —
— «Գացէք տեսէ՛ք՝ ի՞նչ տեսակի Մարդ է Ան…»:

Եկան տեսան՝ որ Վըրանի մէջ պառկեր է ու քըներ, —
Կէսը դո՛ւրսն է՝ կէսը նե՛րս…,
Ու Վըրանն ալ՝ Իր Շունչէն՝
Կըթարթրանա՛յ՝ ու կ'իջնէ՛…:

Գացին Իրենց Մեծաւորին լուր տալու. —
— «Հը՛, ի՞նչ Մարդ է…», — հարցուց Անոնց՝ Մեծաւոր:

---

*) Կըթուի Թէ՝ Եպարքոսը յաջողած էր վախչիլ՝ նոր զօրք հաւաքելով՝ Կրկին յարձակելու Սասնու վրայ: *) †) Լ·10՝ Մըսըր· Լ·23՝ Թուրքման:

*Ասոնք ալ Քէ, = «Զրհասկըցա՛նք, չա՛տ պէ՛տ *) Մարդ է, իրա՛ւ որ.*
Կէսը վրանին նեղքի՛ւն է,
Կէսն ալ՝ դո՛ւրսն է Վրրանէն... .
Ու Վրրանն ալ՝ իր Շուշէին՝
Կըրարձրանա՛յ՝ ու կ՚իջնէ՛...»:

206. Առիւծ-Մբիէր՝ Մեծաւորն Ալ Կ՚ապաքէ Եւ Կճիկը Կ՚առնէ

Ջ.՝Լ.11.

Մեծաւո՛րն էր, — ըսաւ, — «Մարդի՛կ, դէ՛ ելէ՛ք,
Ի՛նչքան Ջօրք կայ՝ դացէ՛ք Անոր չորս-բոլորը բըռնեցէ՛ք...»:

Եկան Ջօրքեր՝ Վրրանէն չուրջ՝ պարիսպի պէս բըռնեցին:

Առիւծ-Մըհէր ելաւ վե՛ր,
Ան ալ կանչեց, — «Տէ՛ր-Կենդանին, Դուն ո՛ւր տո՛ւր...»:
Ու Զին հնծա՛ւ, քըշե՛ց դրնաց Ջօրքին մէ՛ջ. —
Ջա՛րդ մը ալաւ..., Ջա՛րդ մը ալաւ՝ այդ Ջօրքին..., —
*Քըշե՛ց տարաւ՝ հասցուց մինչեւ երկրին նե՛րս *):*

Որ կոտորի՛ց ու պըրծա՛ւ...՝
Վազեց դրնաց՝ Մեծաւորին Գլո՛ւխն ալ զարկա՛ւ ու կըտրեց...:
Կըտրե՛ց պըրծաւ...՝
Կ՚ուզէր Գըլուխն առնէ տանի Իրեն հետ՝
Նըւէ՛ր ընէ Իր Մեծ-Հօր..., —
*Աչքը ինկաւ Մեծաւորի Կընիկին *),*
Տեսաւ որ չա՛ռ խօրոտի՛կ է Այդ Կընիկ...:
Մեծաւորի-Կընի՛կն ըսես՝ ի՞նչ ըրաւ. —
Անուշ խօսքով Իրեն քաշեց Առիւծ-Մըհէրն ու ըսաւ. —
— «Ես Ինձ առնեմ, մնացէ՛ր այստե՛ղ, Թագաւորն ալ Դո՛ւն եղէր»:
Առիւծ-Մըհէր՝ սերե՛ց Կընիկն ու մընաց: —

---

*) Պէտ (Պետ), Խոշոր, Վէթխարի, Հսկայ, յաղթանդամ: *) երկրին Ներս, Լ. 11՝ Մըսրայ մէջ: *) Հին առեն՝ Թագաւորներն իրենց բանակին հետ կը տանէին նաեւ իրենց կիներըը, կամ կիներէն մէկ-քանին:

207. Առիւծ-Մրիէր՝ Հակառակ Սիրուհիին Պնդումներուն՝ Իր Երկիրը Կը դառնայ Ու Եպարգոսին Գլուխը Նուէր Կը տանի Իր Պապուն. Պապը զ'Ինք Կ'օրհնէ Ու Կը մեռնի

Չ.՝Լ.11,12, Չ(Լ.10).

Մընաց այնտեղ՝ տասնըհի՛նգ օր՝ թէ՛ գըսան՝
Աւուր մէկին՝ Առիւծ-Մըհէր՝ վերցուց ըսաւ ինքն իրեն. —
*— «Ինչ մարդութիւն *) ի՞նչ է այլեւս, ա՛յ Մըհէր,*
Որ Դուն՝ այստեղ՝ կըտապաշտի կընիկ առե՛ր՝ նըստե՛ր ես...:
Ելնեմ,-ըսաւ-, նորի՛ն Քեռի-Թորոսի քո՛վ դառնամ ես...»:

Այդ Տիկինն ալ՝ ըսաւ, — «Մըհէ՛ր, ինչո՞ւ թողուս ու երթաս...,
Արքայ ըլլալ՝ դի՞չ է արդեօք՝ որ չե՛ս ուզեր հո՛ս մընաս...»:
Մըհէրն ալ թէ, = «Զի՛, ես կ'ուզեմ՝ ելնեմ երթամ իմ-երկիր»:
Ան ալ վերցուց՝ ըսաւ, — «Մըհէ՛ր, մի՛ երթար..., —
Այնտեղ Քո Պապ՝ կա՛մ թէ Քո Հա՛յր՝ թագաւո՛րութիւն թող ընեն,
Դուն ալ ըրէ ա՛յստեղը...»:
Մըհէր թէ, = «Զի՛, պիտի երթա՛մ..., չե՛մ կենար...»: †)

Ու վե՛ր ելաւ, քըշեց գընաց կապուտ-կող, —
— «Հրամմէ՛,-ըսաւ-, Պա՛պ-Թագաւոր, մե՛ծ Արքայ,
Աս այդ Քո թըշնամիի Մեծաւորին Գլո՛ւխն է՝
Կըտրեցի ու բերի Ինձմէ Քեզ ընծա՛յ...»:
= «Շնորհակա՛լ եմ,-ըսաւ Մեծ Հայր՝ Պապ Արքան-,
Հիմա հոգիս հանգըստացաւ, Քեզ կ'օրհնէ...»:

Որ այս ըսաւ՝ չունչը փըչեց հանգի՛ստ սըրտով, ու մեռաւ, —
Պապ-Թագաւոր, Հայրը Լուսի՛կ-Թագուհուն: —
Մե՛ծ հանդէսով վերցուցին ու թաղեցին՝
Սահասարի, Բաղդասարի՝ Իրե՛նց չինած ժամուն մէջ: +)

Մըհէր՝ այնտեղ՝ Իր Զին հեծա՛ւ ու քըշեց՝
Գընաց նորէն Ո՛րս ընելու՝ Սար ու Քար...:

---

*) Մարդութիւն, Առնութիւն, կտրճութիւն, մեծութիւն: †)Նըմանութիւն՝ իր որդի Դաւիթ-Մըհէրի միջադէպին հետ (Հատ. 249-251): +) Տեսնել Ա. Ճիւղ՝ Հատուած 190:

208. Առիւծ-Մրիէրի՝ Թուրքման Ցիկլճէճ Ուճեցած Զաւակը

2.՝Լ.-11.

Մրնա՜ց, անցա՛ւ մէկ ժամանակ, տարի՛ մը. —
[Տարին դարձա՛ւ, վերջապէս] , —
Այդ Թուրքմանի Մնծաւորի այրի կինն՝
Տղո՛վ մրնաց Մեր Մրհէրէն, ու մանչ Զաւա՛կ մը բերաւ:
Մրնաց, Տղան երբոր հասա՛ւ Իր չափին՝ †)
Իրեն Մո՛ր հետ՝ Իրենց երկրին Թագաւոր ու Տէ՛ր եղաւ:
Տղան կ՛երթայ Իր տարեկից Ընկերներու հետ խաղի՛, —
Ո՛ր մէկին որ հասնի դարնէ Իր Ձեռքով՝
Ոտ կը կոտրէ, թէ՛ւ կը ջարդէ, կ՛ըսպանէ . . . :

Եկան Իր Մօր դանդըռաւոր, —
Թէ, — «Քո Տղան՝ Մեր Տղաներ կ՛ըսպանէ . . . : —
Նայինք ինչո՞ւ կ՛ըսպանէ Ան՝ Մեր Տղաք . . .» :

Մայրը կանչեց Իրեն Տղան՝ ու ըսաւ, —
— «Որդի՛, ինչո՞ւ Դուն կըզարնես՝ աչ ու ձախ՝
Քո Դրկիցի կամ Ընկերի Թեւը կոտրես, Ոտ ջարդես . . .» :
Ան ալ ըսաւ, = «Ա՜խ, Մարէ՛, ի՞նչ ընեմ . . . , —
Այդ Տղաներ Ինձի կ՛ըսեն՝ «Անհաւատի Զաւա՛կ ես . . .», —
Քո Մայր գայեր՝ օտար Սիրո՛ղ է ասեր . . .» :

Երբոր ըսաւ «Օտար Սիրո՛ղ է ասեր» . . .՝
Մայրը վերցուց՝ ըսաւ, — «Որդի՛, Սատնայ-Մըհէր Եկաւ հո՛ս,
Զօրքը Ջարդեց, յաղթե՛ց Քու Հօր, դարկաւ կրտրե՛ց Իր Գլուխ,
Եկաւ ու Ձիս առաւ սիրեց՝ Էրկան պէս, —
Դուն ալ՝ Սատնայ Այդ Կրտրիճի սեռմէ՛ն ես . . .» :
= «Մարէ՛,-ըսաւ Այդ Տղան ալ՝ Իրեն Մօր.
Որ այդպէ՛ս է՝ ո՛ւրիս ըլլայ Իմ Անձիս վրայ՝
Որ քա՛նի ես ո՛ղջ մրնամ՝
*Հայաստանը *) Ջարդե՛մ, բրդե՛մ, կոտորե՛մ . . .՝*
Վրէ՛ժ առնեմ Այդ Երկրէն . . .» :

---

†) Լ.-11՝ «Անուն (դրին) Մըսրամելիք» : *) Հայաստուն, Հայոց-Աշխարհ, Հայոց-Տուն :

Գ. ԱՌԻՒԾ-ՄՐՀԷՐԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ ՍՊԻՏԱԿ-ԴԻՒԻՆ ՀԵՏ

209. Առիւծ-Մրհէր խորհուրդ կ'ուզէ Իր Մօրմէն

Զ.՝Լ.12, (Հ.411), (Ս.144), Զ.՝Ճ.21, Զ.(Լ.76,86).

Գանք՝ Մըհէրէ՛ն զըրոյց տանք. —
Շա՛տ զօրընդեղ, կըտրիճ Տըղա՛յ էր Մըհէր։ —
Երբոր եղաւ տաս-տասնըհինգ տարեկան՝
Առաւօտ մը ըսաւ Իր Մօր՝ Ֆառաւն-ձիւղ-Ծամ Գոհարին. —
— «Մարէ՛,-ըսաւ-, Պըղտիկները՝ ամեն հեղ՝
Իրենց Մեծի խորհուրդներուն պէ՛տք ունին..., —
Դուն ալ ինձի՝ մէկ խելացի խըրա՛տ տուր. —
Ի՞նչպէս ընեմ՝ որ Թըշնամու առջեւը՝
Շարունակ ալ՝ բա՛րձըր մընայ Իմ Գլուխ...»։

Ֆառաւն-Ծամն ալ՝ դարձաւ Տըղուն ի՞նչ ըսաւ. —
= «Մըհէ՛ր, Որդի՛, երբ այդ խօսքեր Դուն ըսիր՝
Ես ալ Քեզի պէտք եղածներն ըսեմ՝ աղէ՛կ մի՛տքդ դիր. —
*«Երբոր Սեղա՛ն կընըստիք որ Ընկերներով Հա՛ց *) ուտէք՝*
Կերակուրին՝ Քեզնէ՛ առաջ՝ Մէկը Իր Ձեռք թէ պարզէ՝
Այն Մարդ չընե՛ս Քեզ Ընկեր»...»։
— «Պատճա՞ռն ի՛նչ է...»,-ըսաւ Մըհէր Իրեն Մօր։
= «Որդի՛,-ըսաւ-, դիտե՞ս ինչ..., —
Այն Մարդը որ Քեզնէ առաջ Ձեռ կըպարզէ Սեղանին՝
Այդ նըշա՛ն է՝ որ Ան Քեզի հընազանդիլ չի՛դիտեր...»։
Ապա դարձաւ, = «Տըղա՛ս,-ըսաւ Մըհէրին-.
Սասմանց-Տունի կըտրիճները՝ Ընկերի՛ ալ պէտք չունին.
Իրենց Ընկեր՝ Իրե՛նք մինակ պէտք է լինին՝ ու յաղթեն. —
Կըթաւէ՛ որ Աստծու ճամբէն չըշեղին —.
Այն ժամանակ, ահա՛, Որդի՛,-ըսաւ Մայր-,
Քո ձեռք,միշտ ալ, Քո Թըշնամու վըրայ բարձըր կըմընայ...»։

210. Առիւծ-Մրհէր՝ Մօրմէն կըլսէ Սիվեակ-Դէվի Տարած Աղջկան Մասին

Զ.՝Լ.76, Զ(Լ.81).

— Մէկ ալ,-ըսաւ-, դիտես՝ որ Քո պըտակուելու առեն է։ —

---

*) Հաց(ուտել), ճաշ(ընել), ճաշի նստիլ։

Քեզի ըսեմ՝ Թէ ի՞նչ աղջիկ պէտք է առնես Քեզ համար: —
Կ'ելնես կ'երթա՛ս՝ վեր՝ ճամբային կըկայնի՛ս, —
Այնտեղ Սիմսակ-Դէվ մը պիտի Քու ղէմ գայ·
Այդ Դէվ, ահա, ութ-տաս տարի կ'ըլլայ որ՝
Աւելի անուն մէկ Աղջի՛կ է փախցուցեր,
*Տարեր Իր Ցէր *)՝ ու կրպահէ բըռնաւոր *),*
*Սակայն իսկի՛ *) Անոր քովը չ'է՛ դացեր, —*
Կո՛յս է մնացեր Այդ Աղջիկ:
Անի՛ մինակ պէտք է առնես Քեզ կընիկ...»:

Մըհէր՝ այնտեղ՝ վերցուց Իր Մօր ի՞նչ ըսաւ· —
=«Դուն ի՞նչ) դիտես՝ որ Այն Աղջիկ փախցուցե՛ր է՝ ու տարեր...»:*
— «Մրդի՛,-ըսաւ Իր Մայրն ալ-,
Ժամանակին Այդ Աղջըկան Ծընողքն եկան Ինձ դանդա՛տ. —
Թէ՝ «Սիմսակ-Դէվ՝ Մեր Աղջիկը դարկաւ տարաւ Մեր դըրկէն»: —
Ասկէ՛ դիտեմ որ Այն Աղջիկ՝ Իր կամքովը չ'է՛ դացեր:
Երթաս, Որդի՛, Այդ Աղջիկը ապառնե՛ս Դուն այդ Դէվէն՝
Առնես բերես՝ Քեզի կին...»: †)

211. Առիւծ-Մրիէր Ն'երթայ Կըիտնդիպի Երեք-Եղբայր-Դէվերուն

2(Լ·77,92,91), Լ·91,73,92, 2·՝Լ·91,73,92, (3·21), 2·

Առիւծ-Մըհէր ա՛լ չըկենցաւ մէկ վարկեան. —
Յաւուկց հնծաւ կապոտ-Լապին՝ քամու նըման Իր Քուռակ,
*Ինկաւ ճամբայ՝ քըշե՛ց դընաց չուր *) դիմացի Սարե՛ր մէկ...:*

---

*) Ցէր, Այր, քարանձաւ, փորածոյ տուն: *) Բռնաւոր, կապած, կալանաւոր: *) Իսկի՛, երբե՛ք, բնաւ: *) Ի՞նչ, Ինչէ՞ն, ուրկէ՞, ի՞նչ առոյգ միջոցով: †) Մըհէրի մայրը՝ Թերեւս դիտմա՛մբ իր տղան կըղրկէ արկածալից ճամբաներ՝ որպէսզի Մըհէր վրտանդնելու մէջ Թրծուի, անվախ կարիճ դարձած՝ եւս դառնայ: Գուցէ անոր դէմ եկած երեք ախոյեաններն ալ՝ իր կախարդած մարդիկն են: Զի՝ չմոռնանք որ ինքը՝ Պղնձէ-Քաղքի կախարդ իշխանուհին՝ Քառասուն-Ճիւղ-Մամ Գոհարն է: Տե՛ս նաեւ Հմդ. 212: *) Ջուր, Մինչեւ:

Տըւեր առաջ՝ ու կ՚երթա՛յ, —
Ի՛նչպէս եղաւ՝ Առիւծ-Մըհէր մոլորեցա՛ւ Իր ճամբան,
Այդ դիւերը դո՛ւրս մընաց՝
*Անվէրվէրի *) Սարերու մէջ միս-միմա՛կ...:*

Մէ՛կ ալ՝ յա՛նկարծ...՝ երե՛ք-եղբայր-Դիւվեր ելան Իրեն դէ՛մ...:
Մեծը վերցուց ըսաւ, — «Բարո՛վ, օ՛ Մըհէր...,
Դուն ալ այդչափ ջոջացե՞ր ես...՝ որ եկեր ես Սար՝ Որսի...:
Գիտցա՛ծ ըլլաս՝ որ այս անդամ՝ Ջըրեհ-Պողվատ Մեր Իչխան՝
Մեզ ղրկեր է ճամբու վըրայ՝ որ Քեզ այստեղ ըսպաննենք...»:
Առիւծ-Մըհէրն ի՞նչ ըսաւ. —
*= «Դէ՛, չա՛տ աղէ՛կ..., որ Դուն *) ա՛յդչափ ո՛ւժ ունիս*
Զա՛րկ ըսպաննէ՛ Զիս այստեղ...»:
Երեք-Դիւվե՞րն ի՛նչ ըրին. —
Մըհէրի հետ չո՛ւտ մը կըռուի՛լ ըսկըսան...:
Մըհէր քաշեց Իր Նետաղեղ՝ ու զարկաւ,
Երկու Դիւվեր ըսպանե՛ց հոն, Մէկն ալ ըրաւ վիրաւոր.
Վիրաւոր Դիւվ՝ փախա՛ւ դընաց Սարի մէջ:
Մըհէր Անոր՝ արեան հետքով՝ ինկաւ Անոր ետեւէն,
Գընաց հասաւ մէկ բա՛րձըր տեղ, Այրի մ՚ գով,
*Տեսաւ որ ի՞նչ, — Պառաւ *) մ՚ այնտեղ՝ Այրին նե՛րս՝*
Ծունկի եկեր՝ այդ վիրաւոր Դիւվին մօտ, —
Անոր արի՛ւն կըսըրբէ...:
Պառաւն իր աչք վերցուց ըսաւ, — «Ա՛յ կըտրիճ,
Երկուք զարկի՛ր, այս մէկ Որդիս խընայէ՛...,
Քո թըշնամին ուրի՛շ տեղ է. այստեղ չ՚է՛...»:
= «Մամի՛կ,-ըսաւ Մըհէրն ալ-,
Անոնք մէկէ՛ն վըրա՛ս եկան՝ մուխ դիւերը,
Ես ալ հա՛նի Իմ Նետաղեղ՝ ու զարկի...:
Երկուք մեռա՞ն՝ Թէ՞ մընացին՝ չե՛մ գիտեր.
Այս Միու՛ռն ալ՝ վիրաւո՛ր է, կ՚երեւի...:
Վէրքը կապէ՛..., չե՛մ ըսպաններ, մի՛ վախնար...»: —

---

*) Անվէրվէրի (*Անվայրի*), *Ամայի եւ ահալից:* *) Դուն, *Ծօսքը՝ Երեք-Դիւվերէն մեծին է ուղղուած:* *) Պառաւ, *Տարիքն ա-ռած կին:*

212. Պառաւ՝ Տեղեկութիւններ Կուտայ Մբիէրին

2., 2(1.-78,89,81,82,76), 2.'1.-79,81,76,82.

Պառաւ վերցուց եւ ի՞նչ ըսաւ Մբհէրին. —
— «Որ Դուն այդպէս աղէկութի՛ւն կ'ընես,-ըսաւ-, Ինձի հետ՝
Ես ալ պէտք է աղէկ ճամբա՛յ մ' ցոյց տամ Քեզ: —
*Որդի՛,-ըսաւ-, երբոր կ'երթաս՝ ճամբա՛յ կ'երթաս աջ *) կողմէն՝*
*Կ'երթաս մինչեւ Փըրէ-Բաթմա՛ն *) կըհասնիս,*
Ճամբան կ'իյնայ մէկ Սեւ-Մարի մ' վըրայէն: —
Այնտեղ Սիվասակ-Դէվ մը պիտի տեսնես Դուն.
Այդ Սիվասակ-Դէվ՝ արեւի՛ պէս Աղջիկ մ' առեր տարե՛ր է,
Այնտեղ Բարդի-Ծառի մ' կապած կըպահէ: —
*Է՛... այնտեղա՛կ հուրնի-հրեղէն *) մէկ Աղջի՛կ..., —*
Որ մարդ չուտէ՛ ու չբխմէ՛...՝ նայի Անոր երեսին...:
Տա՛ս տարի է՝ որ Սիվասակ-Դէվ՝ փախցուցե՛ր է Այդ Աղջիկ.
*Ապա *) Աղջիկն Ան չի՛ սիրեր՝ մօտն երթալ,*
Դէվն ալ խակի՛ չէ՛ մօտեցնէր Աղջիկան: —
Աղջիկ Դէվուն ի՞նչ կ'ըսէ. —
— «Ի՛նչ ժամանակ որ Դուն կըլլայ քաջարար՝
Սատնու-Մբհէր կա՛մ Դաւիթը ըսպանէ՝
Այն ժամանակ ես Քեզ կ'առնեմ Ինձ էրիկ. —
Թէ չէ՝ Աչխա՛րք իրար անցնի...՝ չի՛մ առներ...»:
Պիտի ըսես որ՝ «Այն Աղջիկ ի՞նչ պիտէ Թէ մեր՝ երկրես՝
Սատնու-Մբհէր կա՛մ Իր Որդին կա՛ն-չկա՛ն», —
Գիտնա՛ս որ Ան՝ երա՛շ մ' տեսեր է, կ'ըսեն,
Այդ երազի մէջ ըսե՛ր են Աղջիկան՝
Թէ՝ «Մի՛ վախնար. չա՛ար պընաց՝ քի՛չ մընաց..., —
*Առածո՛ւ կամքով՝ Մըհէր անուր *) մէկ կըսրիճ,*
Կա՛մ Թէ Դաւիթ՝ Իրեն Տըղան՝ պիտ՝ ելնէ՝
Սիվասակ-Դէվը պիտի սպանէ, ազատէ Քեզ՝ ու տանի...»:

= «Մամի՛կ,-ըսաւ Առիւծ-Մբհէր՝ այդ Դէվերու Մայրիկին.

---

*) Աջ՝ Ընդունուած՝ միշտ՝ իբր նպաստաւոր, բախտաբեր: *) Փրէ-Բաթման, կամուրջ՝ համանուն դետի վրայ (Տիկրիսի օժանդակ): *) Հուրնի-հրեղէն (հուր-ևեի), Աննման դեղեցիկ: *) Ապա, Սակայն, բայց ապա: *) Անուր, Անունաւոր, անունով:

Շընորհակա՛լ եմ ֆենէ. —
Մէկ խըրա՛տ մ՝ ու խորհուրդ մ՝ ունի՞ս՝ ինձի ըլլայ պիտանի»:
— «Որդի՛,-ըսաւ, իմ խըրատն ալ՝ ա՛յն է ֆեղի, թէ կ՝ուզես՝
Որ առաջ՝ ֆո Մօր կա՛մքն առնես՝ ապա՛ երթաս Աղջկան մօտ.
Թէ չէ՛՝ կ՝վախնամ՝ Դուն չա՛տ վընա՛ս կըտեսնես...»:
= «Մամի՛կ,-ըսաւ Ջոջ-Մըհէ՛րն ալ՝ պատասխա՛նեց.
Իմ Մօր կամքը՝ ես առա՛ծ եմ՝ ճի՛շդ ալ այսօր, առաւօտ,
Ու եկեր եմ՝ Սիվատակ-Դէվին հետ կըռի՛ւ,
Որ Այդ Աղջիկ՝ Աբըլխանը՝ տանիմ ընեմ Ինձի կին»:

Նըստան՝ կերան, խըմեցին,
Ելան ապա՝ քընացան:

818. Առիւծ-Մըհեր կ'երթայ Սիվատակ-Դէվին Այրը՝ Աղջիկը Կրգօնէ

Չ·՝Լ·79,82,76, Չ(Լ·82), Չ·

Լուսուն ելաւ Առիւծ-Մըհէր, հրաժե՛շտ առաւ Մամիկէն,
Հեծաւ իր Ձին, ինկաւ ճամբա՛յ ու քըշեց,
Փրէ-Բաթմանի ճամբա՛ն բռնեց, ու Սեւ-Սարին վերելքէն՝
Գընաց հասաւ մէկ ջո՛ղ Այրի մ՝ դո՛ւռն իջաւ: —
*Տեսաւ որ այդ Ծէրին *) բերնէն՝ ահագին բո՛ց մ՝ կուտար դուրս....*
Գընաց Այրին դո՛ւռը կեցաւ, պօռաց, — «Օ՛ Դէվ..., Սիվատա՛կ-Դէվ,
Աբի՛ դո՛ւրս ել, ես եկեր եմ ֆեղի հի՛ւր...»:

Այն ժամանակ՝ Աղջկան մը ձա՛յն լըսուեցաւ հոն՝ խորունկէն, —
Կանչեց, = «Ա՛յ Մարդ, ո՞վ ես,-ըսաւ, հողածի՛ն,
Օձն իր պորտով, Հա՛ւքն իր թեւով՝ չի՛կըրնար դալ Այստեղը...,
Դուն ո՞վ ես որ՝ եկեր հասեր ես այստեղ...:
Փախի՛ր՝ քանի Սիվատակ-Դէվը չ'է՛ եկեր..., —
Թէ չէ՝ ֆո մեծ կըտոր՝ Ակա՛նջ կըթողու...,
Ֆեզ կըբըրդէ՛ տեղնիտեղ...»: —
*Ու խորա՛նդըր *) «Ա՛խ» մը եկաւ՝ Ջոջ-Մըհէրի ականջին...:*

Մըհէր վազեց՝ ձայնին եկած կո՛ղմ դարձաւ, —
Տեսաւ որ ի՛նչ..., — իչխանական մե՛ծ Դըղեա՛կ մը՝ ու Այրի մ՝...,

---

*) Ծէր, Այր, քարանձաւ: *) Խորանգդր, Խորունկ(էն):

Շէնքին դէմն ալ՝ Պարտէզի մէջ՝ բարձրիկ մէկ ջո՛ջ Բարդի-Ծառ…,
*Ու Ծառին ալ՝ կապուկ *) պահած՝ հուրնի՛-հրեղէն մէկ Աղջիկ մ՛…:*

Աղջիկ երբոր այդ կըտրիճ ու խօրոտ Մարդը հոն տեսաւ՝
*Խելքայրնա՛ց *) եղաւ վրան, իրեն տեղ…, —*
*Մ՛ինչպէս որ Ան՝ իրեն սրտի մէջ ճըղփաց… *):*
Շա՛տ զարմացաւ, ըսաւ, — «Կըտրի՛ճ, ասի կ՛ըլլայ տա՛ս տարի՝
Որ ես այստեղ կըտանջըւի՛մ այս անիրաւ Դէվի ձեռ…:
Մէկ կըտրիճի դէմք տեսնալու՝ ես կարօ՛տ եմ մընացեր…:
Ձըլլա՞յ որ Դուն՝ Սասնու-Մըհէր կա՛մ իր Տըղան Դաւի՛թն ես…»:
= «Աղջի՛կ, -ըսաւ Մըհէրն ալ-·
Դուն ո՞ւրկէ ես…, անունդ ի՞նչ է…, ի՞նչպէս ինկար Այստեղեր»:

Աղջիկը ծա՛նր հոգոց հանեց՝ ու ըսաւ, —
— «Ա՛խ, կըտրի՛ճ Մարդ…, ա՛լ մի՛ հարցներ…, երկա՛ր կ՛ըլլայ՝
[պատմեմ ինչ…: —
Իմ անունն է՝ Ասըլխան·
*Մըսրայ-Տիրոջ *) Աղջիկն եմ· —*
Մէկ անօրէն Սիվոսակ-Դէ՛վ կար, կըտի՛ւ եկաւ վեր՝ Իմ Հօր…,
Ես այն առեն՝ փո՛քր Աղջիկ՝
Արքունական-Պարտէզին մէջ մա՛ն կուգայի Իմ Մօր հետ…: —
Մէկ ալ՝ յա՛նկարծ՝ Սիվոսակ-Դէվը հասաւ Ինձի ձեռք նետեց,
Ու Ձիս բըռնել՝ Ձիուն վրայ փախցընելը՝ մէ՛կ ըրաւ…,
Բնաւ Այստեղ՝ ու Ձիս կապեց այս Ծառին…: —
Ասի եղաւ տա՛ս տարի է՝ որ ես այստեղ կըտանջուիմ…,
Անօրէնին կամք չե՛մ ըներ՝ որ ես դառնամ Իրեն Կին…»:

214. Սիվոսակ-Դէվը՝ Տարիճ Քառասուն Օր՝ Կ՛ներքայ Սեւ-Սար Ուխտի

Չ·՝Լ·79,82, (Լ·82,79)·

Մըհէրն ըսաւ, = «Աղջի՛կ, ո՞ւր է այդ Քու ըսած Սիվոսակ-Դէվ…»:
— «Սիվոսակ-Դէ՛վը, -ըսաւ Աղջիկ-, Իմ պիտնալս, այստեղ չ՛է՛,

---

*) կապուկ, *կապած*: *) խելքագնաց, *Ուշադնաց*: *) ճըղփալ (*չիփալ*), *Ալրտում առաջ բերել, յուզել, սիրելի, բաղձալի դալ*: *) Մրսր, *Մուսուլի երկրամաս* (*Հին Ասորեստան*) կա՛մ Մըսըր (*Եգիպտոս*, *Միւրիա*):

Սեւ-Սա՛ր գացեր է, դիտեմ... *) :—
Սովորութի՛ւն ունի Այդ Դէվ՝ տարին մէ՛կ դէր Իր օ՛րն է,—
Կ՛երթայ Սեւ-Սար, Իր Ուխտ կ՛ընէ՝ կըդառնա՛յ.
Քառասո՛ւն օր՝ Սա՛ր կըմընայ, վերջ՝ կըդառնա՛յ Իր Ուխտէն:
Ասի եղաւ եռասունին օր՝ ինչ Ան ելեր գացեր է,—
Մէ՛կ օր միայն մնացեր է որ ե՛ւս դառնայ...»:

Մըհէրն ըսաւ,— «Ապա երբ Ան՝ քառասուն օր այստեղ չ՛է՛՝
Դուն ինչո՞ւ չես փախիր-երթար ազատուիր...»:
— «Կըտրի՛ճ,-ըսաւ Աղջիկն ալ-,
Ես այդ փորձը՝ քանի մ՛ անգամ ըրե՛ր եմ,
Սակայն Ինձի չ՛ա՛ջողուիր...,—
Կ՛ելնէ կ՛իյնայ եռեւէս,
Ես, ի՛նչքան ալ փախած ըլլամ՝ ու զատնացած այս տեղէն՝
Ինձ կըհասնի՝ ու կըբռնէ՛ Անօրէնն...»:—

215. Սիվտակ-Դէվի Հալուճի-Թուրճ Ու Սեւ-Եզան Ցուտուրը

Ջ.՝Լ.79,80,82, Ջ(Լ.64,72,84).

Մըհէրն ըսաւ,— «Աղջի՛կ, Ասլի՛կ, ապա ի՞նչպէս ճար ընենք...»:
*Աղջիկն ալ թէ,— «Սիվտակ-Դէվը՝ մէկ Հալուճի-Թո՛ւր *) ունի...,*
Թէ որ այդ Թուր կըրցա՛ր առնել Իր ձեռքէն՝
Անով զ՛Ինքն ալ կըրնա՛ս զարնել ըսպանել.
Թէ չէ՝ ուրիշ ո՛րեւէ Սուր՝ Անոր վըրայ չի՛ բանիր...:—
*Անոր Երկաթ-Հալուճին *) տա՛կն ալ՝ անկէզ՝*
*Շապիկ մ՛ունի՝ հիւսած ամուր կաշիէ *). —*
Ան ալ ուրիշ ո՛չ մէկ բանով չի՛ կըտըրուիր ու ծակուիր,—
Անի մինակ Հալուճի-Թո՛ւր կըկըտրէ...»:
= «Ամեն ա՞յս է...», — հարցուց Մըհէր՝ Աղջկան:
Ասըխան՝ թէ,— «Մէկ ալ՝ Գեղի ըսե՛մ որ...,—
Սիվտակ-Դէվի ուժին Ցուտուր՝ մէկ Սեւ-Եզան վըրա՛յ է.

---

*) Գիտեմ, Գիտցածս ան է, կըկարծեմ: *) Հալուճի-Թուր, Առասպելական հատու սուր՝ հին դարերու դիւցազներուն ծանօթ: Համմալ. Նիբելունգներու Balmoung Թուրին հետ: *) Հալաւ, Հագուստ, շապիկ: *) Կաշիէ, Լ.80՝ «կամիշէյց գործուած», որ սխալ է. Տեսնել Բ. Հատորիս մէջ:

Երբ Այն եղը կը հնձնէ...՝
*Ա՛լ կըղառնայ ժողահա՛ր... *), —*
*Կ՚երթայ՝ բոլո՛ր Աչխա՛ր-երկի՛ր կը պըրտէ *)՝ կ՚աւերէ՛... †),*
Մնոր առջեւ ա՛լ մարդ կանդնիլ չի՛կրնար...:
Առա՛ր համար, կըսե՛ր, պիտնաս՝ թէ ո՛վ որ՝
Ցաջողի Այդ եղն ըսպանել՝ Իր Թուրով՝
Այն ժամանա՛կն է որ կ՚յաղթուի Սիվաակ-Դիվ...»:

216. Սիվաակ-Դիվը Կուգայ, Առիւծ-Մրիէր Դէմ Կ՚ելնէ

2·՝Լ·83,80,68,78,81, 2(Լ·68,83)·

Անցա՛ւ պիշեր, ու մէկալ օր երբ լուսցաւ՝
Սիվաակ-Դիվը՝ նկաւ մըտաւ դաւուն նե՛րս·
Առիւծ-Մրհէր դէ՛մը ելաւ, բարե՛ւ տըւաւ ու կեցաւ:
Սիվաակ-Դի՛վն էր..., — երբ հո՛ն տեսաւ Ջոջ-Մրհէր՝
Վէրցուց այնտեղ եւ ի՞նչ ըսաւ ժըպտերես, —
— «Վա՛յ, Դուլ-ըսաւ-, հապա՛ր բարով ես նկեր... ·
Հոդածինը՝ Ի՛ր արիւնով՝ Ինծի մատա՛ղ է նկեր...: —
Այդ ո՞ր քամին փըչեց՝ Քեզ ալ հո՛ս բերաւ... ·
Ի՛չ նախաճաշ, ո՛չ ալ ճաշ ես, խե՛ղճ Տըղա՛յ..., —
Այսքան առնն ո՞ր տեղ էիր մընացեր...: —
*Ինչի՞ համար կըպատռտիս Այտուղրանք... *)·*
Զըլա՞յ քէ Դուն՝ Սատմանց-Երկրի Մրհէ՛րն ես...»:
Առիւծ-Մրհէրն ի՞նչ ըսաւ. —
— «Ես՛ ես եմ այդ Քու բուռ Մրհէր՝ Մեր Սասունցոց Ջոջ-Տունէն...,
Դէ՛, արի՛, ե՛լ հրթռտպարա՛կ, կըռի՛ւ բնենք դէ՛մ-դէմի..., —
Տեսնենք, Աստուած՝ կամ Ի՛նձ կուտայ, կամ Քեզի՛...»:

Սիվաակ-Դիվը երբոր լըսեց այս խօսքեր՝
Սարսա՛փ մ՚ եկաւ անձին վրայ, ու դողալով ի՞նչ ըսաւ. —
*— «Մուտ մի՛ ըսեր..., Դուն Մրհէր չե՛ս...՝ կը հաւատամ... *)·*
Ազամօրդին,-ըսաւ-, հո՛ւմ կաթ է ծըծեր...,

---

*) Աժդահար, Հրաշունչ, անպարտելի՝ վիշապ: *) Ոլրտել, Արտ՝ խուժել, դատնալ, բոլորել, շրջել, վոխոտրկել: †) Համեմատելի՝ վոխոտրկելից սեւ մրրիկին՝ ու իր աւերներուն: *) Այտեղրանիք, Այս տեղեր, այս կողմեր: *) Կրհաւ՚տամ, կըկարծեմ, կը փորձեմ հաւատալ:

Անոր խօսքին վըստահութիւն չի՛ ըլլար... .
Արի՛ չիտա՛կ ըսէ Ինձի՛, ա՛յ Տըղայ..., —
Դուն ճի՛շդ Սասնայ Սանասարի Տըղա՞ն ես... .
Երազով ալ՝ Մեր Թըշնամին մինակ Ա՛ն է կըմընայ...»:
= «Հա՛, իրա՛ւ,-ըսաւ Մըհէր-. ճի՞շդ կ՛ուզես՝
Ես՝ Սասմանց-Տան Սանասարի Տըղա՛ն եմ..., —
Եկեր եմ հոս՝ որ Քու ձեռքէն Աըլխանը ես առնե՛մ...»: —

217. Սիվտակ-Դէվ՝ Բարդի-Ծառը Կըթապալէ Մըհէրի Վրայ. Մըհէր Կըվազէ՝ Սեւ-Եզն Ու Դէվը Կ՛սպանէ

Չ.՝Լ.80,83,84, Չ.

*Սիվտակ-Դէվը պըռո՛ւվ խածեց... *), վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ.—*
— «Թող Քո ուզած՝ Աղջի՛կն ըլլայ..., մէկ չէ՝ քանի՛ մ՝ Աըլխան.
Այն Աղջիկը՝ արդէն Քեզի՛ է արժան...;
Աի եղաւ՝ տա՛ս տարի որ՝ Իմ մօ՛տն է Ան, թէ կ՛ուզես. —
Ապա՝ ի՛նչպէս որ եկեր է՝ այնպէս «աղջի՛կ» է մնացեր...:
Անոր սիրով զարնըւած եմ չըկարծե՛ս...,
Իմ Աղջըկան պէ՛ս պահեր եմ, մեծցուցեր...,
Հիմա Քեզի՛ կուտամ..., նայէ՛ Իրեն կո՛ղմ...,
Թէ կըհաւնիս՝ ա՛ռ տա՛ր, Մըհէ՛ր..., տա՛ր ու բարո՛վ վայելես...»:

Ըսա՛ւ թէ չէ՛...՝ Սիվտակ-Դէվը՝ Իր Ձեռք Նետեց Բարդի-Ծա՛ռ,
*Ճը՛ռւիե՛ց *) ճիւղով ու արմատով՝ բերաւ վա՛ր, —*
Մըհէր Ծածկեց Անոր տակ,
*Ու դէ՛մ ըրաւ *) դէպի Սե՛ւ-Սար՝ Իր Սեւ-ե՛զ...:*

Մըհէ՛րն ըսես, — «Հա՛ց ու Գինին, Տէ՛ր-Կենդանին, հէ՛յ...»,-ըսաւ՝
*Մէ՛կ Ինքզինքը Իրա՛ր տըւաւ *) Ծառին տա՛կ...: —*
Թափ տալո՛ւն պէս՝ այդ ահագին հաստ Բարդի-Ծա՛ռ կոտրեցա՛ւ,
Երկու կըտո՛ր եղաւ...՝ ինկաւ մէկմէկ կողմ..., —
Ինք Մըհէրը՝ տակէն ելա՛ւ՝ ողջ ու առողջ՝ կանգնեցաւ...:
Թագաւորի գերի Աղջիկն այս բանի վրայ ի՞նչ ըսաւ. —
— «Սասնա՛յ կըտրիճ Մըհէ՛ր,-ըսաւ, ի՛նձ լըսէ, —
Ի՛նչքան որ Դուն ազատուեցար՝ ու վե՛ր եկար առանց ցաւ՝

---

*) Պռուկ խածնել (Շրթունք խածնել), Զայրոյթը հազիւ զսպել: *) Ճռւիել, Քաշել փրցնել, գերւիել: *) Դէ՛մ ընել, Շիտակ դիմել (Ապատակին): *) Իրար տալ, Շարժել, Թօթուել:

Ապա Դուն չե՛ս կըրնար յաղթել Սիվտակ-Դէվ…,
Քու զօրծն ա՛ն է՝ չո՛ւտ մը հասնիս այդ Սեւ-Սար՝
Զարնես Սեւ-Եղն ըսպանես…, —
Որ Քու կըտիւ այդ Դէվէ հետ դիւրանայ…»:

Ջոջ-Մըհէ՛րն էր…, — Թո՛ռա՛ւ Զիւռն քամա՛հն ելաւ՝ ու քըշե՛ց, —
*Մինչեւ Սեւ-Սար մէ՛կ լար *) գընաց, ու տեսաւ՝*
Այդ Սարի մէջ, շամբուտ տեղէ մ՚, Սեւ-Եղ մ՚ելաւ Իրեն դէմ…:

Մըհէր՝ եղբ տեսնելո՛ւն պէս՝ Իր «Ճիչամ»-ը որ ըսաւ՝
Քաշե՛ց Իր Թուր, — Թո՛ւր-կէնճակին—, ու Սեւ-Եզան վո՛ր խոթեց:—
Այդ հըրեղէ՛ն Սեւ-Եզն այնտեղ դեռ ի՛ն ինկաւ՝ փըռուեցաւ…,
Սիվտակ-Դէ՛վն ալ՝ Իր տեղ չորցաւ, չունչ փըչեց…:

218. Առիւծ-Մբիէր՝ Կ՚առնէ Աղջիկն Ու Անգին Մատնին Եւ Կ՚երթայ Մըսըր

Ջ·՝Լ·84,80,92, Ս·145,Ջ·՝Ս·145, Հ·411, Լ·10, Ջ(8·22).

Մըհէր նորէն քըշե՛ց Իր Ձին՝ մինչեւ Աղջի՛կ մէկ՝ հասաւ,
Կապը քակեց, Աղջիկն առաւ ելաւ դո՛ւրս որ երթայէն՝
Աղջիկ վերցուց ի՞նչ ըսաւ. —
— «Սիվտակ-Դէվը՝ Իր Արկղին մէջ՝ անդին Մատնի՛ մը ունի…, —
Պէտք է առնես այն Մատանին՝ երբեւ օժի՛տ Իմ կողմէն: —
Ես՝ քանի որ՝ տա՛սը տարի՝ այստեղ աղջի՛կ մընացի՝
Այն Մատանին Ինձի օժի՛տ կըհասնի…:
*Ապա՝ դիտնա՛ս՝ որ Այս Մատնին դեղ Թաւիչ *) ալ Մ՚ի ունի…,*
*Ի՛նչ տանն որ տե՛ղ մը երթաս՝ Հա՛ց ուտես *)՝*
*Պէտք է որ Այս Մատնիին Մի *) տաս Բերնի՛դ՝*
Անի՛կ յետոյ Հաց ուտես…»:

Առիւծ-Մըհէր՝ Այդ Մատանին առաւ դըրաւ Իր Մատին,
Մ՚ալ չըսպասեց աւելի,
Ելաւ հեծա՛ւ Իրեն Ձին,

---

*) Մէկ լար, *Մէկ ղծով, մէկ չունչով, մէկ թռիչքով, միանգամ:*
*) Դեղ-ափ, *թոյնի դէմն առնող, թունաթափ. բնագրին մէջ՝ Լ·80՝ փանգպահար:* *) Հաց ուտել, *ճաշի նստիլ:* *) Ան, *դոհար (մատնիի):*

*Աղջիկ թալեց *) Ջիուն գաւա՛ղն՝ ու քըշեց, —*
*Ինկաւ ճամբա՛յ, զարկաւ դընաց չուր *) Մըսըր··· †):*
Մըսրայ-երկիր տիրապետեց, Ինքը այնտեղ նըստեցաւ.
Այդ Աղջիկն ալ՝ Ասլի-Մէլիք անունով՝
Անոր Հօ՛ր տեղ՝ դըրաւ երկրին թագաւոր: —

Ան ալ ելաւ ի՞նչ ըրաւ. —
Բեռներ կապեց, Ընճաներով, ղըրկեց տարան 'ի Սասուն:

219. Սամանց Սերունդն 'ի Մըսր, 'ի Բաղդաս Եւ Իրան

(8·22), 2·, լ·11, U·145, 2·՝U·145, 2·՝411, Ե·546,491·
2·՝ցրն·-Թրն·՝2,438·

Առիւծ-Մըհէր՝ Ինքը մընաց Թադուհու մօտ՝ ու սիրեց, —
Տըղա՛յ մ՝ եղաւ Մըհէրի Այդ Կընիկէն·
Ասլի-Մէլի՛քն ալ գիտցաւ որ՝ Մըհէրէ՛ն է Այդ Տըղան
Բերին անուն՝ Ասլիկ-ի տեղ՝ Մըսրա՛յ-Մէլիք կոչեցին:

[*Այսպէս է որ՝ Մըսրամէլիք երբ կ'ըսեն՝*
*Անի՝ Սամանց-Կըտրիճներէ՛ն դուրս ինկաւ··· *), —*
Զոլ-Մըհէրէն ու Մէլիքի մէկ Աղջիկէ՛ն է ելաւ: —
*Ինչպէս Ռոստամ՝ Բաղդասարի ձիւղէ՛ն *) ինկեր է Աչխար(հ), —*
Երբ Ան գընաց՝ Բաղդատ-Քաղաք չինեց մեծցուց Իր համար: —
*Բաղդասարէն՝ կալէ-կալա՛ն *) է ծըներ,*
Կալէն ալ՝ Զալ, Զալէն՝ Ռոստամ մե՛ծ Ֆէրզ···: +)]

---

*) Թալիլ, վերցնել, դնել (գաւակը): *) Չուր, Մինչեւ: †) 8·22՝ *Այս միջադէպը պատմուած է Ասլիմէլիքի անունով, որ Բաղդասար անունին հետ չփոթութիւն մը կազմեր է:* *) Դուրս իյնալ, Աչխարհ գալ, ծնիլ, սերիլ: *) Ճիւղ, Սերունդ: *) Կալէ-Կալան անունը՝ համեմատելի՝ Քարաֆօրամ, Քարաֆօրում տեղանունին հետ: Իմ դրի առած Հէքիաթներէն մէկին մէջ՝ կըլսիւուի Կաւէկաուանի-Բերդ մը: +) «Ցէրան-Թիւրան» հայ-քրդական դիւցազնավէպիս մէջ (համար 2 եւ 438) քրդերէնով կըլսիւուի այսպէս. — «Ռոստամ՝ կոռէ Զա՛լ, Զալ՝ կոռէ Կա՛լ, Կալ՝ կոռէ Մալա-Ամո՛ւն, Մալա-Ամուն՝ կոռէ Սա-սո՛ւմ-Կրռալ···, սար բլը՛նդէ ցէրան (Ռոստամ՝ որդի Զալի, Զալ՝ որդի Կալի, Կալ՝ որդի Մալա-Ամունի, Մալա-Ամուն՝ որդի Սասում-

Մինչդ մը վերջ՝ Առիւծ-Մբհէր՝ իրմէն ծընած Տըղան Թողուց
[Իրեն տեղ,
*Ինքը նըսաւ՝ դարձաւ Սասուն՝ Իր Հօր կուչտ *):*

Դ. ԱՌԻՒԾ-ՄԲՀԷՐԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ՈՒ ՄԵԾԱԴՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

220. Սանասար՝ Իր Որդի Առիւծ-Մբիէրի Համար Կիւ Փնտռելու Եռեւէ

2., 2·3·22,23.

Զըրույցն ուրկէ՞..., — ղըրույցը տանք Սասունէ՛ն: —
Սանասար ու Իր Իշխաններ՝ ժողվեցան հոն՝ նըստեցան, —
Սանասարին ըսին, — «ինչո՞ւ՝ Տըղաղ Մբհէր չես կարդեր»:

Մընաց լուսուն..., լուսուն ելաւ Սանասա՛ր,
Բըլո՛ց ղընաց՝ դէպ Մեծ-Իշխան Մելքոնի Բերդ՝ հի՛ւր եղաւ, —
Ըսաւ, — «եղբա՛յր, Մեծ Տանուտէր եւ Իշխա՛ն,
*Մէկ հօրսրդի *) Աղջի՛կ ճարես, ցեղը լա՛ւ, —*
Քաղքէ՛ն ըլլայ, Շէնէ՛ ու Թէ Գիւղերէն, —
Գըտնես՝ տանինք՝ Մբհէրի հետ պըսակենք»:

Մելքոն-Իշխան, Մեծաւորն ու Սանասար՝
Ամենը մէ՛կ՝ հեծան Ձիեր, ինկան ճամբայ՝ ու գացին,
Մանճկերտի-Բերդ վեր ելան: —

*Մանճկերտու-Բերդ՝ Թեւա-Թորոս *) Իշխա՛ն կար.*
Գացին ելան Թեւա-Թորոս Իշխանի Տո՛ւն՝ հարցուցին. —
— «Թեւա-Թորոս Իր Տունն է՞»:
= «Թեւա-Թուրոս,-ըսին-, հի՛մայ՝ վան ղընաց»:

*Ակռաստի *) պահ՝ գացին վան՝ ու հարցուցին. —*
— «Թեւա-Թորոս այդտե՞ղ է»:

Թաղաւորի, կամ՝ Սամանց-Թագաւորին, — Ճէրանի դլխաւորը, պետը»). Տեսնել ՍԱՍՈՒՆԱԿԱՆ-ից Ճոլքն.՝ Հատուած 4-ի վերջը:
*) Կուշտ, Քով, մօտ: *) Հօրսրդի, Մաքրարիւն, լաւ ընտանիքէ, հարազատ ծնունդ, պարկեշտ, պատուաւոր: *) Ակռաստ, Նախահաճիկ: *) Թեւա-Թորոս, Թեւա-Թուրոս, Համեմատելի՝ Թէոդորոս անունին եւ թեւաթոռոյց (Թեւ ունեցող՝ Թռող, արընթաց) ձեւին հետ:*

Առունք ալ թէ, = «Չէ՛, Մեր Բերդի հի՛մը ձըզեց, քիչ առաջ,
Ակռասա կերաւ, քըշե՛ց ղընաց դէպ կարին»:

Կէսաւուր հետ՝ ելան գացին կարնոյ-Բե՛րդ,
Հարցուցին թէ, — «Թեւա-Թուրոս այդտե՞ղ է»:
Բերդի հի՛մը ձըզեց,-ըսին-, կէսօր *) կերաւ՝ ղընաց կարս»:

Ելան գացին Կարսա՛յ-Բերդ,
Հարցուցին թէ, — «Թեւա-Թորոս այդտե՞ղ է...»:
Ըսին, = «Բերդի հի՛մը ձըզեց, Հրամենց †) կերաւ քիչ առաջ,
Ու Մանձկերտու-Բե՛րդ ղընաց»:

Եկա՛ն, եկա՛ն՝ ու Մանձկերտի-Բե՛րդ հասան: —
Իմաց տըւին Թեւա-Թորոս ճարտարապետ Իշխանին՝
Թէ՝ «Սանասար, Մելքոն-Իշխան ու Մեծաւոր միասին՝
Ահա՛ Քեզի հի՛ւր կուգան...»:

Ան ալ ելաւ՝ Մարդիկ ճամբեց Անոնց առջեւ, քիչ մը տեղ.
Ինքն ալ ղընաց՝ առաւ բերաւ Իրեն Տուն: —
Մանասարի տեղ չո՛ւկ *) սարքեց, յարդարեց,
Մեծ Տանուտէր Մելքոնի տեղն առանձի՛ն,
Մեծաւորին՝ առանձի՛ն:

Բերին այնտեղ՝ Մեղա՛ն ղըրին, Հաց-մաց կերան՝ լմընցան,
Հաց վերցուցին, Թեւա-Թորոս Հարցուց Մելքոն-Իշխանին, —
Թէ, — «Դուք յորի՞ *) եկեր էք...»:
= «Եկե՛ր ենք որ՝ խընամութի՛ւն ընենք,-ըսաւ-, Իրար հետ»:
— «Ի՞նչ խնամութիւն», — Թեւա-Թորոս Հարցուց՝ Մելքոն-Իշխանին:
= «Քու Աղջիկը,-ըսին-, պիտի տաս Մեր Տըղուն, Մըհէրին»:
Ըսաւ, — «Մըհէր՝ Զեզմէ որո՞ւդ Տըղան է...»:
= «Սանասարի Մե՛ծ-Տըղան է»,-ըսաւ Մելքոն Մեծ-Իշխան-:
— «Մելքո՛ն-Իշխան,-ըսաւ՝ այնտեղ՝ Թորոսն ալ-.
Որ եկե՛ր էք...՝ Աղջիկ մ՝ ընճա՛յ ըրէ Զեզի, լմընցա՛ւ...»:

Ու բերին՝ հոն՝ Օղի՛-Գինի՛ ղըրին մէջտեղ, խըմեցին,

---

*) Կէսօր, Կէսօրուան ճաշ: †) Հրամենց, Նախընթրիք:
*) Ջոկ, Ջատ, առանձին: *) Ցորի՞, Ի՞նչ բանի համար, ինչո՞ւ:

Ուրախացան, «Շընորհաւո՛ր» ըրին, պըրծան՝ ու ելան,
*Պառկեցան, հոն, մէ՛մէկ *) Իր տեղ, քընացան: —*

221. Առիւծ-Մբիէրի Ամուսնութիւնն Ու Զաւակները

2·՝3·23, Կ·7, 2Կ·617,343, (Լ·12), Լ·12, 2·՝Լ92, (Ս·148), Ե·993·

Մընա՛ց լուացաւ, —
Լուսուն ելա՛ն՝
Բերին Աղջիկ, Շուշան-Մաթուն, հնծցուցի՛ն ու կայնեցան:
*Ըսին Թէ, — «Մո՛վ դընենք հետը՝ Հարսնեղբայր *)...»: •*
= «Բերենք Բեռի-Թորոսի՛կը դընենք Իր հետ՝ Հարսնեղբայր»:
*Շնորհակըլնին *), առին Շուշան՝ Իրենց Հարսը՝ ու ելան,*
Ինկան ճամբա՛յ՝ դէպ Սասուն:

Եկա՛ն, եկա՛ն, հասան Սասուն, ու Զիերէն իջան տա՛կ: —
Բերին Մըհէր եւ Շուշանը +) պըսակեցին Իրար հետ.
Աշխարժօղով հանդէ՛ս եղաւ, եկան՝ կերան՝ խըմեցին.
Եօ՛թը ցերեկ ու եօ՛թ գիշեր՝ Հարսնի՛ք ըրին, պարեցին...:

Պըսակեցին, Հարսնիք ըրին՝ ու պըրծան, —
Մելքոն-Իշխան՝ Իր Մեծերով՝ դարձան ետ,
Դարձան դացին Իրենց Բերդ:

Քաշեց տարի՛ մ՝ ժամանակ, —
Մըհէրի կին պառկեցաւ,
*Ու բերաւ մէկ լա՛ճ *) Տըղայ:*

Մըհէրին ալ՝ Սասունի մէջ՝ եղաւ ամեն՝ երե՛ք Լաճ †), —
Մէկի անուն Ցրտաձ-Վէգօ, մէկին՝ Փոխրիկ-Ճընճըղուկ,
Ու պըղտիկին ալ Դաւիթ:

---

*) Մէ՛մէկ, *Ամեն մէկը, իւրաքանչիւրը*: *) Հարսնեղբայր, *Նոր-*
բահարսին ընկերացող պաշտպան անձ (այր մարդ): *) Շնորհակալել, *Շնորհակալութիւն յայտնել*: +) Կ·7՝ Սիմամ, Լ·12՝ վաճայ մէկ աղջիկ, Զկ·617՝ Շուշան (*թէև Դաւիթի իբր կին յիշուած*): *) Լաճ, *Արու, մանչ(զաւակ)*: †) Լաճ, *Մանչ զաւակ*:

ՀՀԲ. Սանասարի Վերջին Օրերը, Խոռասներն Ու Մահը

Զ·, Զ·՝Լ·90,91,76,86, Զ(Լ·77), Ս·149, (Ս·149), Զ(Լ·12), Ց·24, Զ·

Զըրույցն ո՞ւրկէ···,
Սասմանց Տունի հի՛մը դընող Սանասարէն +) տանք զըրույց։ —
Շա՛տ ծերացած, ալեւորա՛ծ էր այլեւս,
կանչե՛ց Իր մօտ՝ Իր Տըղաներ, եւ օրհնելով՝ ի՞նչ ըսաւ· —
Ըսաւ, «Ես իմ չափն առե՛ր եմ···, այսօր կամ վաղ՝ ա՛լ չըկամ···,
Երբոր մեռնիմ՝ լըմընամ՝
Ու Ձեր երեք եղբայրներէն ո՛րն որ Իմ տեղ կընըստի՝
Իմ ըսկըսած ժամ թող չինէ անպատճառ։
*Քուռկիկ-Ջալալ Իմ Ձիո՛ւն ալ՝ Դուք աղէկ չահ ու պա՛հ *) տաք···։*
*Ձեր Թընդամու *) հետ Դուք բընա՛ւ խարդախութիւն մի՛ ընէք· —*
Կըտրիճի՛ պէս կըռիւ ըրէք Անոնց հետ· —
Ու չըմոռնա՛ք, կըռիւի՛ Ձեր «Ցիչամ»ն ըսէ՛ք՝ նո՛ր կըռուիք։
Դէ՛, Ջաւակնե՛րս, Աստծո՛ւ Աչք վեր՝ Ձեզ ըլլայ անպակա՛ս···,
*Ու Ձեր ձեռքը՝ Ձեր Թընդամու *) վըրայ մի՛շտ ալ բա՛րձր մընայ···»։*

Ժամանակ մ՝ ալ՝ ապրելէն ետք, միշտ առողջ,
Մահու օրը երբ եկաւ՝
Մեռա՛ւ Սասմանց Զո՛րչ Տուն չինող Սանասար։ —
Իր Տըղաներն ու ժողովուրդ, մեծ ու փոքր,
Ժողովուեցան եկան այնտեղ, չա՛տ լացին ու ողբացին···, —
Վերցուցին ու թաղեցին մե՛ծ հանդէսով···։ —

ՀՀԳ. Առիւծ-Մրիէր՝ Թագաւոր Կրնսի Իր Հօր Տեղ

Զ·՝Լ·91, Զ·՝Ց·24, Զ·՝Լ·12, (Հ·411,369)·

*Այն ժամանակ՝ Աստղիկ-Իշխան *)՝ կանչեց ըսաւ Ցէվանին †)· —*
— «Մըհէ՞ր՝ Թէ՞ Դուն՝ Սանասարի տեղ՝ Թագաւոր կընըստիք···»։

+) Լ·90՝ Ճոչ-Միկիոն։ *) Շահ-պահ, Ինամ, հոգածութիւն։ *) Թընդամի՝ յոքնակիի խմասան ալ ունի, որով՝ Թընդամիներ։ *) Աստղիկ-Իշխան՝ Սասմանց Տան կրտսեր տղաներէն է։ Տեսնել Հատ. 192։ Զչփոթել Պապ-Աստղիկ Թագաւորի հետ։ †) Լ·91՝ Զէնով-Օվան (Տե՛ս Հատ. 192՝ ստրկ·)։

Այդ Ցխվան ալ՝ վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ· —
= «Քո՝ անունը,-ըսաւ-, վըրա՛դ է արդէն †)···,
Պէ՛տք է որ Դո՛ւն նըստես Գահ···»:
— «Հէյ՛···, ես արդէ՛ն Թագաւոր եմ···,-ըսաւ Աստղիկ խընդալէն··
Նոր Թագաւոր դառնալու ալ պէտք չըկայ··· ·
*Մէկ ալ՝ որ ես ճողուած *) եմ···, —*
*Քանի որ օր մ՝ Սանասարի Գուրզ վերցուցի որ Թալեմ··· *), —*
Ճիդէն խակոյն ճողուեցայ···»:

Ապա՝ մէկտեղ՝ նըստեցան ու Խորհուրդ ըրին Իշխաններ, —
*Սանասարի տեղ՝ առջինե՛կ *) Իր Տըղան՝*
Առիւծ-Մըհէր՝ դըրին Իրենց Թագաւոր:

Հայնը դընաց Մըսրայ-Երկիր եւ ըսին, —
— «Մէկի՛ք,-ըսին-, աչքըդ լո՛յս···,
Սանասարը մեռեր է···, —
Ի՛նչ որ կըրնաս՝ ան ըրէ՛···»:
Ան ալ վերցուց ըսաւ, = «Աղէ՛կ···, բայց Մըհէրը դեռ ողջ է···,
Ես Մըհէրի վըրայ քըշել չե՛մ կըրնար···»:

224. Առիւծ-Մրեխէրի Նուաճումները Ու Որսերը

Հ·, Յ·21, Յ·24՝ ստրջ·, Հ(Յ·24 ս·), Ս·144, 145՝ Հ·, Հ·411, Կ·121՝ Հ·, Կ·121, (Հ· էջ 449՝ ծոգր·), Հ·՝Լ·9, Ե·614, Հ·

Առիւծաձեւ-Մրեխէրի դործն ալ ի՞նչ էր· —
Չի՛ կըհանձնէր՝ Որսի՛ կ՝ երթար ամեն օր,
*Ու կըսրեւէր՝ Որան ու Հաւքեր՝ Սասունցոց վրա՛յ կըցըրուէր *)*

Առիւծ-Մրեխէր՝ չա՛տ զօրընդեղ Ըմբի՛շ էր ու Թագաւոր:
*Իր Հօր ամե՛ն Բըռնաւորներ *)՝ որ բըռներ էր Սասնոյ մէջ՝*
Ազա՛տ ըրաւ, արձակեց:

---

†) *Աստղիկ, «քո՝ անունը վըրա՛դ է արդէն», ակնարկութիւն՝ Սասմանց Տան նախահայրերէն Պապ-Աստղիկ Թագաւորին:* *) *Ճողուած, Ամօթ ելլը՝ կախուած, ինկած, վհչտանկ:* *) *Թալել, նեմել, ձգել:* *) *Առջինեկ, Անդրանիկ:* *) *Ցրուել, Բաժնել:* *) *Բռնաւոր, Բանտարկեալ, կալանաւոր:*

Աչխա՛րք՝ բոլոր՝ տիրե՛ց ուժով, գըրաւեց։ —
Սեւ-Սարի չուրըն ու բոլորտին, մինչեւ Ծըծմակ՝ Մուշի վեր,
Սեղան-Սարի Գօտին 'ի վեր, մինչեւ դուրս,
*Ճապաղ-Ջուրը *) եւ Քոթէն *)...,*
Նըւաճեց ու չա՛տ տուրք առաւ Ամենքէն։

Այդ ամե՛ն տեղ՝ Պատ ու Պարիսպ քաշել տըւած՝ փակած էր,
Ու չորս հատ ալ՝ Դո՛ւռ թողած էր Պարիսպին։ —
*Մի՛շտ-հանապազ *) Իր Դուռները կըզարնէր *)՝*
*Կ'լինար Որսի, հեծած Իրեն Կապոտ-Լազին՝ քամու *) Զին, —*
Ի՛նչ Վայրի-Հաւք, Վէրի-Ոչխար, Կինճ ու Գազան որ կայինի՝
Կըզարնէր Իր Նետաղեղով, կամ կըբըռնէր՝ կըբերէր, —
Սասունցոց ու Աղքատներո՛ւն կըբաժնէր։

Օրերէն մէկ՝ Պատա-Կընիկ մ՝՝ դէմը ելաւ Մըհէրին,
*Ըսաւ, — «Որդի՛, Մըհե՛ր,-ըսաւ, չա՛տ չնորհակա՛լ ենք Քենէ *)*
= «Ինչի՞ համար,-ըսաւ, Ինձմէ չընորհակալ կ'ըլլաս Դուն...»։
Ըսաւ, — «Մըհե՛ր, ան՛ո՛ր համար չընորհակալ ենք Քենէ՝
Որ այս քառասո՛ւն տարի +) է որ՝ Մեզ կըշահես կըպահես,
Որսերդ ամեն՝ Սասմանց վըրա՛յ կըցըրուես»։

Մըհէր լըսեց՝ քըշե՛ց Իր Զին ու գընաց...։

225. Առիւծ-Մըհէրի Պողվըտէ-Սիւնը («Նօսնը-Մըհէրին»), Եւ Կաթնով-Աղբիւրը («Հանգըստատեղ-Մըհէրին»)

Զ·, Զկ·527, ԶՍ·657-670, ճ·108, խ·29, ն·574, 631, 716, 513, 22, կ·67·

Առիւծ-Մըհէր՝ Իրեն համար՝ Դաշտի մէջ՝
Մէկ Պողվատէ-Սիւն էր տընկեր, հաստ ու մեծ։ —
Երբոր ելնէր՝ կըուի՛ երթար Զօրքի դէմ՝
Իր Թեւի-ուժն ու Իրեն Թուր՝ Այդ Սիւնի վրա՛յ կըփորձէր։ —

---

*) Ճապաղ-Ջուր, ճ·24ա·՝ Ճապըղջուկ (գուցէ՝ Ճապըղջ-ը-ուկ)։ *) Քոթէ, *Քոյթ*։ *) Միշտ-հանապազ, *Ամեն օր անխափըր, միշտապէս*։ *) Զարնել, Ներս մտնել եւ գոցել (դուռը)։ *) Քամու, *Հովի պէս* *) *արագ-շուռ (ձի)*։ *) Քենէ, *Քեզնէ*։ +) Լ·9՝ *Տաճեր-կու տարի, թմնեն.՝ «Սանցի· Դէթ·» 3, ե·614՝ քառասուն տարի*։

Թէ որ կըտրէր Պողվըտէ-Միւն՝ ու նետէր՝
Իրեն դործը յայո՛ղ կ'երթար,— կ'ելնէր կ'երթար կըռխիւ։
Որ չըկըտրէր՝ և՛ա կըղտոնար՝ կուդար Տուն...։ —
— Որ չըկըտրէր.՞.՞.՞,
= Ապա մի՛չո ալ կըկըտրէ՛ր...։

Այդ փորձանիկ Պողվըտէ-Միւն՝ Իրմէ՛ վերջ՝
Կոչուեցաւ ու մընաց «Նըշա՛ն-Մրիէրին»։

Աղբիւր մըն ալ ունէր Մրհէր, Սարի՛ մէջ, —
Անուն՝ կաթնիկ կամ թէ կաթնո՛վ Աղբիւր էր, —
Ջուրը քաղցր էր կաթի՛ պէս,
Ու Մեղրի չափ ո՛ւժ ունէր...։
Երբոր կ'ելնէր՝ համբա՛յ երթար, կըռխիւ,
Մինչեւ չերթար՝ կաթնով-Աղբիւր չընըստէր,
Ինչ մը այնտեղ չըհանդչէր †) ու Ջուրէն խըմէր, լողանար՝
Երբեք համբայ չէ՛ր երթար։ —
Այդ տեղին ալ՝ անուն՝ մընաց ու կ'ըսուի՝
*«Հանգըստատեղ-Մրիէրի»...։ *)*

226. Առիւծ-Մրիէրի Մեծագործութիւնները Ու «Ջոջ-Մրիէր» Ցիշդոսը

Ջ.՝Լ.92, Ջ(Լ.92,94), Ջ.՝Ե.614, Ջ.՝Ց.24ա., Լ.9, (Ց.22).

Առիւծ-Մրհէր՝ երբ Թագաւո՛ր եղաւ Սասմանց Ջո՛ջ-Տունին՝
Իր երկիր չա՛ս առաջացուց, Դըպրոցներ ու ժա՛մ չինեց։
Ինչ առնէին՝ պարմանալի՛ առա՛ջ տարաւ ժողովուրդ.
Ու հոգեւոր ամե՛ն գործին՝ մե՛ծ ուժ տըւաւ երկրին մէջ։

Մրհէր այնպէ՛ս չահից-պահից Իր Սասուն՝
Որ Թըշնամիք՝ կոտրտըլուխ՝ կըղդղայի՛ն անունէն։ —
Ա՛լ Իր վախէն՝ մա՛րդ չէ՛ր դըպիր Սասունին։

---

†) Աղբիւրի վրայ հանգչիլ, *Ամփոփուելու եւ ուժգնութիւնը որոշելու*, նաեւ վաղուն Ջուրի մէջ լողանալով՝ ուժերը վերստանալու համար. Տես Ծ.Ջէրն. Հատ Ցա, էջ 41-42։ *) Ե.716՝ Հանգստատեղիք (հանդստատեղիք, դադար առնելիք վայրեր)։

Արքայական իր պալատին դէմն ու քով՝
Տընկել տըւաւ՝ Արքունական մե՛ծ պարտէզ, —
Ներսը լեցուց՝ Աստծո՛ւ ստեղծած ամե՛ն բերք ու բարիքով. —
*Ծառ ու Ծաղիկ, Հաւք *) ու երէկ, ճիւռ ու եզ:*

Ֆառատն տարի, այսպէս՝ քարի Հօր մը նըման, քաջաբար,
Սասմանց-Մըհէր՝ ծաղիկի՛ պէս պահեց իրեն ժողովուրդ:

Մինչեւ այդ օր՝ Առիւծաձեւ կամ թէ Առիւծ-Մըհէր էր՝
*Հիմա նաեւ՝ իր ժողովուրդ՝ գ'Ինքը կանչեց Զո՛յ-Մըհէր *)*
* * *

Ե. ԱՌԻՒԾ-ՄԸՀԷՐԻ ԿՈՒԻՆԵՐԸ ԶՐԵՀ-ՊՈՂՎԱՏԻ ՀԵՏ

227. Առիւծ-Մըհէր՝ Կ'երթայ Զրեհ-Պողվատը Փնտռելու

Զ.՝Լ.92,72,64,67, Զ(Լ.64,92), Զ.՝Լ.77.

Աւտար մէկին, Զոյ-Մըհէր՝
Մի՛տքը բերաւ՝ թէ «Իր Հայրը՝ Սանասար՝
Ժամանակին՝ դէ՛մ եկեր էր՝ Զըրեհ-Պողվատ Ըմբիչին, —
Որ Ծըլաթայ կընիկ-արմատ Իշխանն էր —,
Հետը կըռուէր, զարկեր զետին, ու բա՛ց թողեր էր կըրկին...»:
*Թէ՝ «Աւտր ու Թուր՝ Անոր վըրայ չէին քաներ *)՝ հաւասար...».*
Թէ՝ «Այդ Ըմբիչ՝ ո՛չ մէկ դեհէ վախ չունէ՛ր...,
Անոր վախը՝ Սասմա՛յ-Դեհէն էր մէյն..., —
Մինակ Այդ Տան կըտրիճնե՛րը գ'Ինք ըսպանել կըրնային...»:

Ան ալ,-Մըհէր-, ելաւ հադա՛ւ իր Պողվըտէ-Հադուստներ,
Հայրենական Թուր-Կէնճակին կապեց Մէջք,
Հեծաւ Քուռվիկ-Ջալալին,
Քըշե՛ց գընաց Ծլաթայ-Երկրի սահմաններ, —
Զըրեհ-Պողվա՛տ կըփընտռէր...:

Շա՛տ գընաց թէ քի՛չ գընաց..., —
Հասաւ բա՛րձրը Սարի մ' գլուխ՝
Զրեհ-Պողվատի Երկրին սահման, ու կեցաւ:

---

*) Հաւէ, Որսի թռչուն: *) Զոյ (հնչել djodj), Մեծ, մեծա-գործ: *) Բանիլ, Ազդել, զօրել:

*Եղանակը նոր Գարուն էր. պայծառ երկինք, ու կանա՛չ... *),—*
Սար ու Ձորը՝ հաղարաւո՛ր Ծաղ-Ծաղիկով զարդարուկ...,
Ու թևաւոր թռչ՛ կըճղակով Որսեր առած ու անբաւ...: —
Ասոր համար՝ Զրհ-Պողվանն ալ՝ իր Մարդերուն հետ մէկտեղ՝
*Այդ Սարի վրայ՝ նկեր՝ Զօզան *) էր նըստեր:*
Մըհէր՝ յանկա՛րծ, Սարի՛ն դըլուխ, տեսաւ Վէրի մէկ Ոչխար,
Ուղեց զարնէր՝ եղնիկ Սարէն վա՛ր բերէր՝
Վէրի-Ոչխար՝ չո՛ւտ մը վախաւ կորսըւեցաւ դըլխիվար,
Գընաց մըտաւ Զրհ՛հ-Պողվըտի Վըրաններ:

Ձի՞ս ըսեր որ՝ Վէրի-Ոչխարն ալ այնպէ՛ս մէկ Ոչխար մ՛էր՝
Որ իր պըղտիկ տարիքին մէջ, կանուխէն՝
Կըրթըւած էր, բա՛ն կըհասկնար՝ Մարդու պէս..., —
Դուն ըսէ՛ որ...՝ Զրհ՛հ-Պողվըտի Լըրտեաններէն մէ՛կն էր Ան... .—
Կ՛ելնէր Սարեր՝ կըպըտտէր գ՛օր-գիշեր, —
Երբ Թըշնամի մ՛ տեսնէր՝ որ դար դէպ Զօզան՝
Շուտ կըփախչէր՝ կ՛երթար մըտնէր Վըրաններ: —
Զրհ-Պողվա՛ն ալ կըհասկընար՝ Զօրքը կ՛առնէր կ՛ելնէր դուրս,
Այդ Թըշնամու նկած կողմը կըվազէր...:

ՀՀԸ. Զրհի-Պողվանի Երազը

Հ.՝Լ.77,67.

Զըրհ՛հ-Պողվան՝ այդ առաւօտ՝ Որսի՛ ելած էր կանուխ.
Ու գիշերն ալ՝ չո՛ւտ գէշ երազ մ՛ էր տեսեր...: —

Երազի մէջ տեսեր էր որ՝ Իր ձախ կողմ՝
Զարնըւած էր՝ ու սուգեր...,
Կին մ՛ ալ Իրեն երեւցած էր ու ըսեր էր իրր Գուշակ՝
Թէ՝ «Դու ո՛չ մէկ Մարդու մօտէն վախ չունիս..., —
Ունիս-չունիս՝ Քո վախ՝ Սամայ-Կըտրիճներէ՛ն է մ՛ինակ»...:

Այդ կընիկը՝ երիտասա՛րդ տարիքին՝
*Զրհ՛հ-Պողվըտի հետը նըստեր-ելեր էր *)...,*

---

*) Վանուհի, կանաչուհի: *) Զօզան (աստուա հանող), Լերան բարձունքներուն վրայ՝ զովոց, ամարանոց: *) Նստիլ-ելնել, Մտերմութեամբ տեսնուիլ: Լ.67՝ «Զանխօլատէ եարն էր եղեր»:

Զրեհ-Պողվըտին ալ ըսեր էր՝ թէ «Դուն ա՛յնչափ կըտրիճ ես...՝
Որ Աչխա՛րհ ու Երկի՛ր ջեզմէ կըդողա՛յ... .
Ա՛լ Դուն որմէ՞ վախ ունիս...»:
Զրեհ-Պողվա՛տն ալ՝ Անոր ըսե՛ր էր ապա՝
«Ձէ՛, ես ուրիշ ո՛չ մէկ ղեհէ վախ չ'ունի՛մ, —
Իմ վախ՝ Սասմայ-Կըտրիճներէն է մինակ...,
Եւ իմ մահը երբոր գայ՝
Սանասարէն, Ջոլ-Մըհէրէն, կամ Դաւիթէ՛ն պիտի գայ...»:

229. Առիւծ-Մըհէր՝ Զրեհ-Պողվատի Աղբիւրին Վրայ

Ջ·Լ·92,93,65,73, Ջ·

Մըհէ՛րն ըսես՝ ճամբուն վըրայ, վեր ու վար,
Երթալ-գալով՝ չա՛տ ծարուըցեր՝ ու բերանը չորցեր էր·
Իր երթըցած ճամբաներուն վըրայ երբե՛ք Ջուր չըկար·
Ան ալ սաստիկ սըրտնեղեցաւ այդ բանէն...,
Երբ տեսաւ որ մութ կըկոխէ՝ եւ Աղբիւր մը չիգըտներ՝
Շուտ մը ելաւ՝ հեծաւ Իր Ձին, ինկաւ Սարեր ու Ձորեր՝
Որ Աղբիւրի Ակ մը դըտնայ՝ Ջուր խըմէ:
Փընտռեց-փընտռե՛ց՝ Աստծու կամքով քիչ ետք հասաւ Աղբիւրի մ', —
Բայց տեսաւ որ՝ ահագի՛ն Դէվ մ'՝ Գոմչու-Տիկ մը Ջուր լըցեր,
Ու կայներ էր այդ Աղբիւրի Ակին վրայ:

Մըհէր քարեւ տըւաւ Դէվին ու ըսաւ, —
— «Քիչ մը տեղ տաս՝ որ Աղբիւրէն ես պըտիկ մը Ջո՛ւր խըմեմ...»:
= «Ձէ՛,-ըսաւ Դէվ՝ անդիէն-,
Այս Աղբիւրին՝ «Զրեհ-Պողվըտի Աղբի՛ւր» կ'ըսեն, այս կողմեր, —
Անորմէ զատ՝ ուրիշ մէկի հրաման չըկայ՝ Ջուր խըմէ այս Աղբիւրէն»:
— «Ողորմա՛ծ հայր...*),-ըսաւ Մըհէր-, այստեղ Սար է եւ անջուր,
Զրեհ-Պողվատն ալ հեռո՛ւ է այստեղէն...,
Ան ի՞նչ *) պիտի իմանայ որ՝ ես ասկէ Ջո՛ւր եմ խըմեր...»:
= «Ձէ՛,-ըսաւ Դէվ-, Անիկ Մեղի մեծ երդումնե՛ր է տըւեր,
Ու Մեզ այստեղ կեցուցեր է Պահապան՝

---

*) Ողորմա՛ծ հայր, Հօրդ հոգիին Աստուա՛ծ ողորմի: *) Ի՞նչ, Ի՞նչպէս, ի՞նչ կարելի է որ...:

Որ ի՛նչ աւանն օտար Մարդ մը դալու ըլլայ այստեղրանք՝
Իրեն լուր տանք, Ինք Իր Մարդիկ իմանան: —
*Չի այս սասո՛ւմ *) Սարերու մէջ՝ այս Աղբի՛ւրն է, ա՛լ չըկայ...»:*

Զբրևհ-Պողո՛ս ալ՝ երազի՛ այդ օրէն՝ †)
*Ամէն կողմեր՝ համբարեբան *)՝ մէյմէկ Հըսկո՛ղ դըրեր էր,*
Որ ամէն օր՝ ևկող-դացող Ճամբորդներէն լո՛ւր առնեն,
*Սասնայ-Երկրի Կըարիճներու Ել-մուտի *) չուրջ իմա՛ց տան:*

Մըհէր դարձաւ՝ Դևվուն ըսաւ, — «Եղրա՛յր, -ըսաւ, Ինձ նայէ...,
Քեզի կ'ըսեմ՝ «Մէկդի՛ կեցիր Աղբիւրէն՝
*Պըտիկ *) մը Ջուր խըմեմ՝ երթամ Իմ Ճամբան...:*
*Քո Հօր հոգու համա՛ր ըլլայ..., ու Քեզի ալ հո՛ *) վարձք *) է...»:*

Ո՛չ մէկ կերպով՝ այդ Դևվի հետ ճա՛ր չեղաւ..., —
Անիկ Երկի՛ք մըտիկ չըրաւ, Ամէն անդին չըլըսնա՛ց...: —
Ու Մըհէրի համբերութիւնն ա՛լ հատաւ,
Հասաւ չո՛ւտ մը բըռնո՛ց այդ Դևվ, Ձևոք ու Ոտներ կապկըպեց,
*Դըրաւ այնտեղ Քարի *) մ՝ տակ. —*
Ելաւ դընաց Աղբիւրին վրայ, ուղածին՝ չափ Ջո՛ւր խըմեց:

Այդ Դևվին ալ երբ հասկըցաւ որ իրա՛ւի՝
Իր ճանչըցած Հողածիններն ու Այս Կըարիճ՝ մէկ բան չե՛ն...՝
*Ի՛նչ կար՝ չկար, տեղնիտեղը *) ամե՛ն պատմեց Մըհէրին: —*

= «Կ'տեսնե՞ս, -ըսաւ, Մեր դիմացի այս Ճըրագ..., —
Ան՝ Մեր Տիրոջ՝ Զրե՛հ-Պողոսի՝ Մե՛ծ Վըրանին Ճըրագն է:
*Ամէն տարի՝ Գարնանացին *)՝ Զօրա՛ն կուգայ *) այստեղը,*
Իր Որս կ'ընէ, ուրախութիւն ու կերուխում, ամե՛ն բան...:
Գիտնա՞ս որ Ան՝ երբ Քո գա՛լը իմանայ՝

---

*) Սասում, *Սարսափելի եւ ամայի, ահարկու, բարձրաբերձ:* Տես Հատ. 105: †) Հատ. 228՝ Զ.-Պ.ի երազը: *) Ճամբաբերան, *Ճամբանկերու՝ բաժնուած տեղ, մուտք:* *) Ել-մուտ, *Դուրս ելնել՝ նոր մտնելը:* *) Պտիկ, (մէկ) *Պուտ, կաթիլ (մը):* *) Հօ՛, *Չէ՞ որ, վերջապէս:* *) Վարձք, *Աղեկութիւն, բարիք:* *) Քար, *ժայռ, ժայռի մեծ ու ծանր կտոր:* *) Տեղնիտեղը, *Մանրամասն:* *) Գարնանացին, *Գարնան եղանակին:* *) Զօրան գալ, *Ամառանոց ելնել:*

Կ'ելնէ՝ ինձմէ՛ ալ աւելի ուժեղ Դէվ մը կըղըրկէ հոս Լըրաբեր,
Ա՛լ այն առեն...՝ վա՛յն է եկեր՝ Քեզ տարեր...:
Պիտի ըսես՝ «Ինչի՞ համար այս խըրատը կուտամ Քեզ...,—
Գիտցա՛ծ ըլլաս՝ որ Մեր Դէվե՛րն ալ չե՛ն սիրեր Զրեհ-Պողվատ,
Կ'ուզեն որ Ան՝ ըսպաննըւի՝ ու ա՛լ վերնայ մէջտեղէն...»:

230. Առիւծ-Մրիէր՝ Զրեհ-Պողվաթի Դէվապեթին Դէմ

Զ., Զ(Լ.94,67,73), Զ.՝Լ.93,94, Զ(Ս.169).

Դառնանք զըրոյցն ուրկէ՞ տանք. —
Զրեհ-Պողվատէ՛ն զըրոյց տանք: —
Որսէն դարձաւ, կերաւ-խըմեց՝ ու նո՛ր Զուրի ըսպասեց: —
Շա՛տ աչքեց՝ թէ քի՛չ աչքեց *)՝
Տեսաւ որ Իր Զըրքեր *) Դէվը կ'ուչանայ, —
Ելաւ ուրի՛չ Դէվ մը ղըրկեց՝ դընաց Անոր եառէն:

Ան երբ եկաւ՝ տեսաւ որ Մարդ մ՝ Աղբիւրին վրայ նըստե՛ր է,
Հրեղէն-Զի մ՝ալ՝ թողեր այնտեղ կ'արածա՛յ...,
Դէվ-ընկերն ալ՝ Լոջ Պալի *) մ՝ տակ կըտըքա՛յ...: —
Ան ալ զատու պզտաց ըսաւ, — «Հողա՛ծին,
Օձն իր պորտով, Հաւքն իր թեւով՝ չե՛ն կըրնար դալ այստեղեր...,
Դուն ի՞նչ ուժով՝ եկեր այստե՛ղ ես հասեր...»:

Մըհէրն ալ թէ, — «Այն Մարդը որ մինչեւ այստեղ եկեր է՝
Իր ուժին վրայ վըստահութիւն ունի՛ անշուշտ, ա՛յ Զը՛րկիր»:
— «Իմ Ընկե՞րը ո՛ւր է...», — հարցուց այդ Դէվն ալ:
Մըհէրն ըսաւ, = «Գընա վերցո՛ւր այդ մեծ Պալ՝
Ու թէ կըրնաս՝ Քարին տակէն դո՛ւրս կըհանես Քո Ընկեր...»:
—«Վա՛յ,-ըսաւ Դէվ-, այդ Դուն ո՞վ ես՝ որ այդ տեսակ բան ընես...,
Չե՞ս գիտեր որ՝ Զրեհ-Պողվըտի Դէվապետն եմ ես այստեղ...,
Անոր առջեւ՝ Սարե՛ր-Քարե՛ր կըդողան ու կըզըմա՛ն..., *) —
Աչխարհիս մէջ՝ Անկէ ուժով Մա՛րդ չ'կ՛եղեր այս կողմեր... .
Դուն չե՞ս վախնար Իր մօտէն...: —

---

*) Աչքել, Ակնկառոյց՝ նայիլը, սպասել: *) Զրքեր, Զուր բերող, Ջրկիր: *) Պալ, Մեծկակ՝ տափակ՝ քար, ժայռի կտոր: *) Զմայլ, Ծուլ դանդխնով՝ հեծնել, լալ, կսկծալ:

կեցէ՛ր Քեզի Դո՛ւրդ մը դարնեմ...՝ որ հասկընա՛ս՝ ես ո՞վ եմ...»:

Լսելո՛ւն պէս՝ Դո՛ւրդ մը դարկաւ Մըհէրին... :
Առիւծ-Մրհէր՝ ձևոքը նետե՛ց՝ Դուրն ալ բացեց իր առին..., —
Դուրդը դընա՛ց դըլո՛ր-դըլո՛ր..., ու դևս կ'երթա՛յ Սար ու Ձոր...:
Ինքը հասաւ՝ բռնե՛ց կապեց՝ ու կապկըպեց Դէվապետ,
Քաշեց տարաւ՝ ձըղեց մէկալ Դէվու քով...:

231. Առիւծ-Մրհէր՝ Զրեհ-Պողվատի Դէմ

Հ.՝Լ.94, Հ.

Զըրհ-Պողվատ՝ որ կերեր ու խըմեր էր...,
Իր վայելքը հասունցուցե՛ր էր լըրիւ...,
Շա՛տ ծարաւցեր, ամե՛ն բոպէ Ջուրը կ'աչքէր՝ որ խըմէր, —
Շա՛տ ըսպասեց՝ քի՛չ ըսպասեց՝ անհամբեր,
Տեսաւ որ Իր Դէվապե՛տն ալ չըդարձաւ, —
Ինքը Իրեն՝ մխոք ըրաւ ու ի՞նչ ըսաւ. —
— «կա՛յ ու չըկայ...՝ որ այսօր՝
Իմ Դէվերը հանդիպեր են չա՛տ գօրաւոր մէկ Մարդու...»:
Ըսա՛ւ-չըսաւ՝ չո՛ւտ մը ելաւ հնծաւ Իրեն Քամու-Ձին,
Ի՛նչ-որ գընաց՝ դէպ այդ Սարի Աղբիւր մէկ... †): —
Ու տեսաւ որ...՝ մէկ ահագի՛ն Սարի նըման՝ կըսրի՛ճ Մարդ...՝
Նըստեր է հոն, վեր՝ Աղբիւրին Հա՛ց կ'ուտէ...,
Ձին ալ՝ արձա՛կ՝ թողեր այնտեղ՝ կ'արածա՛յ...: —
Վերցուց ըսաւ, — «է՛յ Հողածին, կըսրի՛ճ Մարդ,
Օձն իր պորտով, Հաւքն իր թևովը՝ չի՛կըրնար դալ այստեղրանք...,-
*Դուն ի՞նչ սըրտով *) մինչեւ այստեղ ես եկեր...»:*

Մըհէրն ըսաւ, = «ինչո՞ւ այդպէս, Հողածի՛ն..., —
Մինչեւ այսօր՝ ինձմէ սըրտոտ Մարդ չէ՛ եկեր այս կողմեր...»:
— «Հա՛, եկեր է,-ըսաւ այնտեղ, Զըրհ-Պողվատ՝ Մըհէրին..
Շատ առաջներ՝ Սամսայ-Երկրէն մէկ կըսրի՛ճ մը եկեր է,
Որ անունը Սանասար, —
Ան Իմ Մօր հետ կըռի՛ւ ըրեր՝ դեռին զարկե՛ր է Իմ Մայր +)

---

†) Դէպ... Աղբիւր մէկ, Քշել՝ եւ դէպ այդ Աղբիւր երթալը՝ մէ՛կ ըրաւ: *) Սրտով, Յանդգնութիւնով: +) Զրեհ-Պողվատի Մօր եւ Սանասարի կռիւը՝ Տե՛ս Հատ. 186 եւ 187:

Ես ալ հիմա Այդ կըտրիճի Տըղան Մըհէր կըփընտռեմ՝
Որ Անոր հետ կըռի՛ւ ընեմ անպատճառ, —
Իմ Մօր վըրէժ՝ ես առնեմ...»:

= Դէ՛, ես այդ Ֆո փընտռած Մըհէ՛րն եմ,-ըսաւ.
Եկեր եմ հոս՝ կըռի՛ւ ընենք Իրար հետ..., —
Որ հասկընաս թէ Սասմանց-Տան կըտրիճներ՝
Աչխարհի վրայ՝ մարդո՛ւ մօտէ չե՛ն վախնար...:
= «Դէ՛, ե՛լ,-ըսաւ, ես՝ Դու կըռուի՛նք Իրար հետ,
Եւ Ֆու ձեռքէդ ի՛նչ որ կուգայ՝ մի՛ խնայեր...»:

ՋՁՁ. Ջրեհ-Պողվատ Կ'ուզէ Թակարդ Ձգել Մրհէրը

Ջ.՝Լ.94.

Ջըրեհ-Պողվատ՝ այս որ լըսեց Մըհէրէն՝
Սարսափ կոխեց Իրեն վըրայ..., Ձեռք ու Ոտքը Թուլացան...,
Բայց սուտ-ուրախ դէմք առնելով՝ վերցուց ըսաւ Մըհէրին. —
— «Վա՛յ, դէ՛, բարով, հազա՛ր բարո՛վ եկեր ես Դուն, ա՛յ Մըհէր.
Ելի՛ր երթանք Իմ Վըրանիս տակ Նըստի՛նք,
Ուտենք, խըմենք՝ մինչեւ լուսը տայ Երկինք, —
Այն ժամանակ՝ տեսնենք Աստուած որի՞ս կուտայ որ յաղթէ...»:

= «Մեր Ջոջանքը,-ըսաւ Մըհէր-, Մեղի պատուէ՛ր են տըւեր՝
Որ Թըշնամու դէմ զալո՛ւն պէս՝ կըռի՛ւ ընենք Անոր հետ...,
Ես չե՛մ ուզեր զալ Ֆու Վըրան՝ նոյն Սեղանէ հա՛ց ուտել...»:

Որ այդպէս է,-ըսաւ Ջըրեհ-Պողվատն ալ-,
Այս Իմ Երկու Դէվեր դո՛ւրս Հան Ֆարին տակէն, Թող երթան՝
Իմ Վըրանէն հաց-մաց բերեն՝ այստե՛ղ ուտենք ու խըմենք...»:

Առիւծ-Մըհէր՝ Անոր խօսքը՝ ա՛լ այս անգամ ընդունեց,
Ելաւ Հանեց Ֆարին տակէն՝ Անոր Երկու Խեղճ Դէվերը: —
Անոնք չո՛ւտ մը զացին Հասան Վըրաններ,
Հաղա՛ր բարին առին բերին Հետ-Իրենց
Բերին այնտեղ, Աղբիւրին քով փըռեցին, —
Ջըրեհ-Պողվատ ու Մըհէրը՝ Նըստեցան Հոն կերուխում: —

233. Առիւծ-Մբիէր՝ Կ'սպասէ Զրեհ-Պողվաան Ու Կ'իջնէ Ելաթի Վրայ

2.·94,95,101, 2(Լ.·73), Յրն.-Թրն. (2.438), 2.

Հաց-մաց կ'երան, կարգը եկաւ կըռուելու։ —
Մըհէրն ըսաւ, — «Հիմա կ'ընենք դէմ-դիմի,
Ի՛նչ որ կուզա՛յ Քու ձեռքէդ՝
Ա՛յ Դէվ, դեռին մի՛ թողուր...»։
= «Չէ՛,-ըսաւ հոն Զրեհ-Պողվաան՝ Մըհէրին †)
Դո՛ւն ես եկեր իմ վըրաս,
Առաջ՝ պէտք է՝ որ Դո՛ւն զարնես Քո հարուածդ,
Անկէ յետոյ՝ թէ որ ես ո՛ղջ մընացի՝
Ե՛ս կըզարնեմ՝ Իմ հարուածդ..., —
Է՛հ, Աստուածն ալ՝ կամ Ի՛նձ կուտայ՝ կամ Քեզի՛...»։

Այն ժամանակ՝ Մըհէր թըռաւ՝ հեծա՛ւ Իր Ձին հըրեղէն,
Զրեհ-Պողվաան ալ՝ Իրեն Ձին, —
Ու քըշեցին դէ՛մ-դիմի...։
Երե՛ք օր ու երե՛ք գիշեր՝ անդադար՝
Երկուս կըպան Իրարու հետ կըռիւի...։

Կ'ըսես՝ Երկնից Ամպե՞րն են որ կըգոռան..., —
Չէ՛..., Ամպ չըկա՛յ..., ու Որոտում չի՛ լսուիր...,
— Առիւծ-Մըհէր, Զրեհ-Պողվա՛ան են՝ դէմ-դիմի, —
Կ'երթան-կուգան՝ Քու վըրայ՝ կէծակ-Թուրով կըխաղան...

Երե՛ք գիշեր ու երե՛ք օր՝ կըռի՛ւ կըպան Իրար հետ, —
*Վէր՝ երեքին *)՝ Առիւծաձեւ-Մըհէ՛րն էր..., —*
Կանչե՛ց «Ճիչամ»...՝ եւ Իր Թուրը մէ՛կ նետեց..., —
Զրեհ-Պողվըաի Գլուխն առաւ՝ վա՛ր ձըղեց...։

Լուր չո՛ւտ գընաց Ալաթայ-Երկիր, Գիւղ-Քաղաք,
Ու Ալաթի Ժողովո՛ւրդն ալ՝ մեծ ու պզտիկ համօրէն՝
Աւար համար ուրա՛խ եղան չո՛ւտ ու չատ,

---

†) Լ.·94-95՝ Զրեհ-Պողվըաի (Զանթիօլատ) եւ Մըհէրի այս կռիւը՝ չվոխուած է Մըսրամէլիքի եւ Թըլ-Դաւիթի կռիւին հետ։ *) վէր՝ երեքին, երեք օրուան վրայ, երեք օրէն յետոյ։

— «Որ Այդ Հըրէչն ըսպանուեցաւ՝ վերցըւեցա՛ւ մէչտեղէն...». —
Ու թափօրով ելան եկան «քաչ» Մըհէրին ընդառաչ, —
Առիւծ-Մըհէր տարան դըրին Իրենց Երկրին Թագաւոր...:

Դ. ԱՌԻՒԾ-ՄԸՀԷՐԻ ՎԱԽՃԱՆ

224. Առիւծ-Մրհէր կ'երթայ Մըսըր Իր Կինն Ու Զաւակը Ցեսնելու

Չ(8·24), Չ·՝8·24, Չ·

Մընա՛ց առեն մ'..., — Մըհէր ելաւ Սասունէն,
Ու դէմ ըրաւ՝ դընաց հասաւ 'ի Մըսըր: —
— «Երթամ,-ըսաւ-, կինս ու Տըղաս տեսնե՛մ ու դա՛մ, քիչ օրէն»:

Մըսրամէլիք որ իմացաւ՝ Իր Հայր Մըհէ՛րն է կուգայ՝
Ելաւ առաւ սիվտակ *) ծըրար մը կըտաւ,
Զարկաւ Իրեն Թեւին տակ,
Թուրը կապեց՝ ու Մըհէրի դէմ դընաց·
— «Աբօ'*),-ըսաւ-, Իմ Քաղաքին՝ Դուն մի՛ դըպչիր այս մէկ դիր *),
Ահա՛ Իմ Թուր՝ ահա՛ Իմ Վիզ..., զա՛րկ ու ա՛ռ...,
Այս Կըտաւն ալ՝ Չիս մէ՛չ վաթթէչ ու Հո՛ղ դիր...»:

Մըհէրն ըսաւ, = «Չէ՛, Որդի՛, չէ՛, Ես Քու Քաղքին չե՛մ դըպչիր... .
Ես այդ մըտքով եկած չե՛մ...»
— «Ապա,-ըսաւ-, ինչի՞ համար Ես եկեր...»:
= «Քեզ ու Քո Մայր տեսնեմ,-ըսի-, քանի մ'օր՝
Ապա դառնամ Իմ Երկի՛ր...»: —

225. Առիւծ-Մրհէր՝ Իր Մըսրայ Զաւակը Երկանչէ Ու Պայման Կ'րնէ Հետը

Ս·148,149, Չ·

Օրին մէկն ալ, Առիւծ-Մըհէր ի՞նչ ըրաւ· —
[Ալեւորա՛ծ էր այրեւս...], —
Նըստեցաւ ու Ինքնունքը *) միտք ըրաւ, —

---

*) Սիվտակ, *Սպիտակ*: *) Աբօ', *Հէզ, Հեղ*. Հա՛յր: *) Դիր, *Հեղ, անգամ*: *) Ինֆունֆիֆ, *Ինքնիրեն*:

«Աչխարհ,-ըսաւ, Մեր չորս-կողմը՝ եղան ինձի Թըշնամի...,
Իմ անցումին *) յետոյ այլևս ո՞վ է որ՝
Իմ ձիժերուն պիտի ընէ տիրութիւն... *): —
Թէ որ ընէ՝ Մըսրամէլի՛ք պիտի ընէ մինաւոր,
Ա՛լ ուրիշ Մարդ չի՛ կըրնար՝
Իմ Թըշնամեաց դիմանալ...»:

Ծեր առիւծն էր, եւս կանչեց Մըսրամէլիքն ու ըսաւ. —
— «Մէլի՛ք, Որդի՛, Դուն ալ իմին Զաւակս ես.
Թէ ես Քեզի չուտ մեռայ՝
Իմ ձիժերը Քե՛զ աւանդ.
Թէ Դո՛ւն Ինձմէ չուտ մեռար՝
Քո՛ւ ձիժերը Ինձ աւանդ,
Ես կըշահեմ, կըպահեմ...»:

236. Առիւծ-Մրիէր՝ Իր Հոգիվարքի Օրերուն

Ջ.՝ Յ·25,26,25 ստրջ., Ս·149, Ջ.

Քանի մ՝ օրէն՝ Առիւծ-Մըհէր †) դարձաւ եկաւ՝ Ի Սասուն,
Կըակիծուրաւ, կըակիծ տըւաւ Իրեն սիրտ,
Մահու օրը եկաւ, ինկաւ ու մեռաւ:

Մահէն առաջ՝ տարաւ Իր Թուր՝ Ի՛ր Ձեռքով
Զարկաւ Կըպրէ-Կարասի մէջ, իր կալ՛նով *), —
Թէ, — «Իմ մէջքիս Տըղաք կ՛ելնեն վաղ-մէկալ *),
Գուցէ Իրենց պէ՛տք կուգայ...»: —
Ու մահէն վերջ՝
Չէնուպարդերն ալ մաճնաւոր Սընաուկի մը մէ՛ջ դըրին:

Առիւծ-Մըհէր՝ Մըսրայ Իրեն աւաքենի քաջ կընկան

---

*) Անցում, Անցնիլ-երթալը, մեռնիլ, մահ: *) Տիրութիւն, Թնամականութիւն, պաշտպանութիւն: †) Ս·148-149՝ Մրամէլիք: *) Կալան (կալանալ), Գաւեան՝ սուրի: *) վաղ-մէկալ, վաղը՝ մէկալ օր, այսօր-վաղը, քիչ առնէն:

Խորո՛ւնկ սէրով ու յուշերով կապուած էր։ —
[Մառին կապուկ՝ ու տա՛ս տարի կոյս մընացած Ասլխան՝
Ջէ՛ր իր ձեռքով Սիվտակ-Դէվէն խըլած էր...] : —
Ասո՛ր համար՝ մահուան օր՝
Մըսրայ Որդո՛ւն *) ուզեց թողուլ ամեն ինչ։
Դաւիթի Մայրն *) իմանալով Անոր միտք՝
Վազեց գընաց Իր հոգեվարք էրկան մօտ,
Աղաչեց որ Իր Զաւկի՛ն ալ բան մը տայ։ —

Առիւծ-Մըհէր՝ վերջուց կընկան ի՞նչ ըսաւ. —

— «Խուտկիկ-Ջալալին, **)
«Ա՛չը-Փեհրազին,
«Թըրիկ-Կէնճակին,
«Գուտիկը-Ոսկին,
«Գորգը-Մըհէրին, —
«Ան ալ բաժին՝ Պարոն-Դաւթին...», —
Ըսաւ Մըհէր՝ ու աւանդեց Իր հոգին...։

Տանք «Ողորմի»ն՝ Իր հոգուն...,
Ու Սասմանց-Տան Մեծերուն...։

---

*) Մըսրայ Որդին, *Մըսրամէլիք*։

*) Դաւիթի Մայր, Շուշան-Խաթուն, *Առիւծ-Մըհէրի հարազատ կինը [Մանճկերտի Թեւս-Թորոս Իշխանին աղջիկը]*, որմէ Մըհէր *ունեցաւ երեք զաւակ, փոքրին անունը՝ Դաւիթ, — եղբայրներուն մէջ միակը՝ որ Միսէ-Ալաչ ունէր Թեւին. Տե՛ս Հատուած 221 եւ 239։*

**) Երգ է։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐՐՈՐԴ ՁԻՒՂԻՆ

ԴԱԻԻԹ-ՄԸՂԷՐԻ

		Հատուած
Ա.	*Դաւիթ-Մըղէրի Մանկութիւնը*	237
Բ.	*Դաւիթ-Մըղէրի եւ Մըսրայ-Տիկինի Յարաբերութիւնը*	241
Գ.	*Դաւիթ-Մըղէրի եւ Իր Կնկան Յարաբերութիւնը*	258
Դ.	*Դաւիթ-Մըղէրի Վախճանը*	264
Ե.	*Անիչխանութեան Շրջանը՝ Դաւիթ-Մըղէրի Մահէն Վերջ*	269

ՍԱՍՈՒՆԱԿԱՆ

ԵՐՐՈՐԴ ՁԻԿ

ԴԱՒԻԹ-ՄԸՀԷՐ

(Դաւիթ, Մըհէր, Պաւոն-Դաւիթ, Ջոջ-Դաւիթ †)

Ա. ԴԱՒԻԹ-ՄԸՀԷՐԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

238. «ՈՂՈՐՄԻ»Ն *)

Կ·1, Ջ·, Լ·61, Ջ(Լ·5), Ա·3, 63, Ջ·՝Ա·71, Հ·403,19, Ց·80, 68, 136, Ց·80 ատրջ·, (Ց·136), Խ·1,44,51, Ե·9,475,529,607,725,891, 968, Ջ(Ե·969), ՋԿ·40,390 ա·, ՋՍ·7·

— Օրհնեա՛լ բարեբա՛ր Աստուած,
= Ընտանը չա՛տ էր Մեծ-Թագաւորին։

— Դառնանք՝ «Ողորմի»ն տանք,
= Հազա՛ր «Ողորմի»···, —
Մեր կապուտ-Կողի Պապ-Թագաւորին,
Մամ-Թագուհիին, Լուսիկ-Թագուհուն,
Մեր Սասումանց-Տան՝ Ջո՛ջ-Մանասարին՝
Ու Բաղդասարի՛ն···։
Տանք «Ողորմի»ն՝ Ախուծ-Մըհէրի՛ն···,
Խաղանք ճիւղէ-ճիւղ՝
Գանք դադրինք՝ վեր՝ Դաւթի ճիւղի՛ն,
Լսենք զըրոյցը Դաւիթ-Մըհէրի՛ն, —

---

†) Լ·96՝ «ճոչ-Մըհէր», *այսինքն՝* Ջոջ Դաւիթ՝ որդի Մըհէրի, Դաւիթ՝ Մըհէրեան։ *) «Ողորմի»ն, *երգել Հատուած 1-ի բազմաձայն ձեւովը, եւ Տեսնել նոյնի Մանօթութիւնը։*

— Որ Անիկ Ախուծ-Մըհէրի Տըղան է՛ր···:

Անունն էլաւ Աղնանց-Քաջին,
= Հա՛ Քաջի՛ն···:
Ով լըսեր էր՝ չէր հաւատար, —
Աչքով տեսան՝ հաւատացի՛ն···:

338. Քեռի Թորոս՝ Ծնած Մանչուռւց Ականջները Կըդնէ

2(24·343), Կ·7,8՝ 2·, 2(Լ·15,83, 85), 2·՝Լ·15,17·

Սասմանց-Տան մէջ՝ Սանասարէն ուղղակի,
Եւ Իր Եղբայր Բաղդասարի սերունդէն, —
Շատ ու չատ են՝ տարուէ տարի աշխարհ եկած Տըղաներ:
Անուններն ալ՝ մէկ մխուսի վըրայէն *)՝
Ճիւղէ՛ ի ճիւղ՝ Մեզ ալ չըփո՛թ են հասեր:

Ախուծ-Մըհէր՝ երբ չափն առաւ՝ կարդըւեցաւ օրէնքով,
Այդ Ցէվան *) ալ՝ պըսակուեցաւ իր կարդին:

Տարի մ՝ չանցած՝ Անոնց կիներ պառկեցան,
Լուրը շուտո՛վ տարան Պալատ՝ ամենուն,
Աչքալուսո՛ք *) ըսին Քեռի-Թորոսին, —
— «Դէ՛, ե՛կ, ըսին, Քեռի՛-Թորոս, աչքըդ լո՛յս···»:
= «Ինչի՞ համար աչքալուսո՛ք կուտաք Ինձի···», ըսաւ Ան:
Ըսին, — «Հարսներդ պառկեր են ու՝ մէյմէկ Տըղա՛յ են բերեր»:
Քեռի-Թորոսն ալ ըսաւ թէ, = «Գացէ՛ք՝ Հարսը տարէք ղէ՛ն *),
Ես դամ այնտեղ՝ երախանէրս մէկ տեսնե՛մ···»:

Եկաւ տեսաւ, մէ՛կը սըրտին դիւր *) չեկա՛ւ, —
Թողուց դընա՛ց այնտեղէն:

Բերին Տըղաք կընքեցին,

---

*) Մէկ՝ մխուսի վրայէն, *Մէկը մխուէն փոխ առնուած, ընտանեքին մէջ՝ մխուսոյն անունը պահուած, չարունակուած:* *) Ցէվան, Կ·8՝ Զէնով-Ցովան· Տեսնել Հատ· 192: *) Աչքալուսէք, «Աչքդ լո՛յս» ըսելը, ցնծալուր: *) Դէն, Անդին, մէկ կողմ: *) Դիւր, Հաճելի, բաղձալի:

— «Քեռի՛-Թորոս,-ըսին-, անուն ի՞նչ դընենք...»:
Ըսաւ, = «Մէկին՝ Ծըռան-Վէգի, կամ Վէթօ...,
Մէկալին ալ՝ Բըռնած-Կուռիկ, Ճոռ-Կուռիկ...»:
Ըսին, — «Ինչո՞ւ այդպէս տըզեղ անուն դըրիր Մեր Տըղոց...»:
Ըսաւ, = «Եկայ՝ Տըղաք տեսա՛յ Իմ Աչքով՝
Ինձի բընա՛ւ դիւր չեկան...»:
— «Ինչո՞ւ դիւրըդ չեկան...,-ըսին Ամենքով-.
Տըղա՛յ կ'ուզես՝ Քեզ Տըղա՛յ... *)»:

Քեռի-Թորոս վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ. —
= «Մեր Ազգի մէջ՝ հինգէն մէկը մի՛այն կըտրիճ դուրս կուգայ...,
Աւտնք անպէ՛տք Տըղայ են...»:

289. Քեռի-Թորոս՝ խազալով՝ Նորածինին Անունը «Դաւիթ» Կըդնէ

Ջ·՝Լ·15,17, (ՋԿ·344), ՋՍ·313,314,Ճ·80, ատլ·, Ճ·23, Ջ(Ճ·23), Ս·148, Կ·121·

Մէկ տարի՛ ալ անցաւ վըրան՝ այդ օրէն,
Ու Մըհէրի կընիկ Նորէն պառկեցաւ,
Նորէ՛ն Տըղայ մը բերաւ:
Քեռի-Թորոս եկաւ տեսաւ՝ անուն դըրաւ Թար-Ճընճղուկ: —
Ու այս անգամ չա՛տ տըխրեցաւ խորունկէն:
Ներկաներն ալ †)՝ այնտեղ՝ զարճան ի՞նչ ըսին. —
— «Քեռի՛-Թորոս, ինչո՞ւ այդպէս տըխրեցար...»:
= «Կ'ուզեմ,-ըսաւ-, Մըհէրի՛ պէս Տըղայ լինի՝ որ խընդամ..., —
Կըտրի՛ճ ըլլայ՝ Մեր Թըշնամու դըլուխ կըտրէ՛ ու յաղթէ՛՝
Որ Իմ Հոգին հանդարտի...»:
— «Աստուած մե՛ծ է, Թորո՛ս,-ըսին-, մի՛ վախնար *)»:

Մընաց՝ մէ՛կ թէ երկո՛ւ տարի՝ Հարսը Նորէ՛ն պառկեցաւ,
Նո՛ր Երախայ մը բերաւ: —
Դո՛ւրս կանչեցին Քեռի-Թորոս՝ եւ ըսին.

---

*) Տղայ կ'ուզես՝ ես տղա՛յ..., Ուզածդ մանչ զաւակ էր՝ ահա՛ քեզի մանչ զաւակ..., ա՛լ ինչու դժդոհ ես: †) Լ·17՝ Աբրահամլիք:
*) Մի՛ վախնար, Ծոյզդ մի՛ կտրեր:

— «Հարար պառկիր՝ մէկ երախա՛յ է բերէք···»։
*Ելաւ դընաց՝ Տըղան տեսա՛ւ պառկած տեղը՝ փաթաթուն *),*
*Շխակից *) Տըղան վեր՝ փորին, —*
Տեսաւ որ՝ հա՛···, Մըսէ-Սաչը Թիկունքի՛ն է Այս Տըղուն···, —
Թուեր վերցուց՝ ու խաղա՛ց···։
Ըսին, — «Ինչո՞ւ կըխաղաս···»։
Ըսաւ, = «Աստծուն փա՛ռք ըլլայ···, —
Սասմանց-Տունի Ճըրագ կըպա՛ւ···՝ այս անդամ···»։

Ելան ասին՝ որ կընունքի՛ տանին Տըղան, մըկըրտեն,
— «Բեռի՛-Թորոս,-ըսին-, անուն ի՞նչ դընենք··· †)»։
= «Աւտար անուն,-ըսաւ-, Դաւի՛թ կանչեցէք···»։ —
*Ու Դաւիթ *) ալ մընաց անուն՝ Ջոջ-Մըհէրի Այդ Տըղուն,*
Որ Իր երկու եղբայրներուն մէջ՝ ամենէն պըղտիկն էր։
Երկու մնծեր, — Ցըտան-Վէգոն, Փոքր-Ճընճղիկ՝
Իսկի՛ բանի պէտք չէին դար· անպէտք էին երկուքն ալ։
Ինչ Դաւիթն էր՝ կըտրի՛ճ Տըղայ դուրս եկաւ,
Մըսէ-Սա՛չ կար Իր Թիկունքին, Հօրը պէս։

240. Չէնով-Օհան Ու Իր Շնորհներ

2Կ·343, Ճ·25, 2՝Ճ·25, 2·՝Լ·12,81, (Է·411), (2Ս·314), (Ս·148), Ս·148՝2·, 2(Կ·121)·

Սասմանց-Տունը՝ Մըհէրէն առաջ՝ Բեռի-Թորո՛ան է ելեր։ —
Առիւծ-Մըհէր՝ Սասուն դարձին երբ մեռաւ՝
*Սասունցիներ՝ Բեռի-Թորոս *) բերին դըրին Իրենց Մեծ։*

Բեռի-Թորոս ունէր երկու Լա՛ճ Տըղայ, —
Մէկի անուն՝ Խո՛ր-Մանուկ,
Մէկին՝ Չէնով-Օհա՛ն էր։

---

*) Փաթաթուն, *Սանձարուբի մէջ։* *) Շիտկել, Դարձնել (կըռնակէն՝ փորին վրայ)։ †) Կ'երեւի թէ՝ Բեռի-Թորոս՝ Սասմանց Տան մեծ կնքահայրն է, անունադիր նահապետը։ *) Դաւիթ անունի մասին՝ Բ· Հատորով։ *) Բեռի-Թորոս· Այստեղ՝ հասուն տարիքով երեւցած Բեռի-Թորոսը՝ հաւանաբար Առիւծ-Մըհէրի հարսնառին միացող Հարսնեղբայր Բեռի-Թորոսին է· Տե՛ս Հատուած 221։

Ինչ Մանուկն էր՝ անպէտք էր.
Ինչ Օհան էր՝ Ան օրէօր կըմեծնար,
Ինչպէս Դիւցազն Տըղաներ:
Այնպէս որ երբ՝ ոտն երկուքէն երե՛ք տարուան մէ՛ջ նետեց՝
Դու կ՚ըսէիր՝ ո՛ւթ տարեկան Տըղայ է…, —
*Այն տեսա՛կ որ պէտ–բերդա՛կ *) էր այդ Օհան:*

Երկու–երեք տարիէն վերջ՝ Օհան դըրին վարժատուն: —
Այնպէ՛ս խելքով, իմաստուն էր՝ պըղտիկուց՝
Որ շատ կանուխ–ժամանակէն՝ առաջացաւ ինքնուսոյց:

Եւ Իր Զայնն ալ՝ ա՛յնտեսակ քաղցր էր ու բարձր՝
Որ թէ պօտար՝ Զայնը կ՚երթար հեռուները՛րը, եօ՛թն–Աչխարհ…,
Մինչեւ քառո՛ւն օրուան ճամբայ կըհասնէր…:

*Ա՛յնպէս Զէնով *), այնպէ՛ս չունչով Տըղա՛յ էր՝*
*Որ եօ՛թ Գոմշու կաշի կ՚թալէր *) կը չորցընէր արեւին,*
*Կըվաթթէր ղ՚Ինք *)՝ ու կըպօտար, որ չըլլայ թէ պատըռուէր…:—*
Անոր համար՝ «Զէնով–Օհան» մըննաց Իրեն անունն ալ:
Եւ ասոր հետ՝ աստուածաւա՛ղ էր Օհան, —
Ոչ մէկ մարդու չարութիւն ու դէչութիւն ալ չէ՛ր ըներ:

Բ. ԴԱԻԻԹ–ՄԸՀԷՐԻ ԵՒ ՄԸՕՐԱՑ ԻՍՄԻԼ–ԽԱԹՈՒՆԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

241. Սասունի Եւ Մբասայ Իօխաղնեերը

Զ·, ԶԿ·365, Կ·8,37, Ց·80, Ց·80 ա·, Ց·81, Հ·369, 19, Զ(Հ·369), Ա·4, (Ա·4), Լ·72,97, Զ·՝Խ·1, Ե·615,491·

Զըրոյց հիմա ո՞ւրկէ տանք…, —
Զըրոյցը տանք Դաւիթէ՛ն: —
Անցա՛ւ քանի մ՚ ժամանակ, —

---

*) Պէտ–բերդակ, *Մեծդի, վիթխարի, բերդի պէս յաղթակազմ:* *) Զէնով, *Զօրեղ ձայն ունեցող, ձայնեղ: Վէպին ընթացքին, Թլոր–Դաւիթի չրջանին, իբր Սասմանց Տան երիցագոյն անդամ՝ նաեւ՝ խօսքը կշիռ ունեցող:* *) Թալել, *Զգել, փոռել:* *) զ՚Ինք, *Ինքզինքին, ինք իր անձին:*

Դաւիթ Ի՛նքն էր՝ Իր կընիկ·
Դեռևս Տըղայ չունէին:
Մըսրամէլիք՝ Մըսըր կ՚ընտէր Թագաւոր·
*Մըսրամէլիք *) ու Դաւիթն ալ՝ Եղբա՛յր էին Հօր կողմէ:*
Դաւիթ Երբոր մեծացաւ ու չափն առաւ,
Իրեն Հօր տեղ՝ ընտաւ Սասուն Թագաւոր՝
Մըսրայ մէջը՝ այդ օրերուն՝ Մըսրամէլիք կըմեռնէր:

Մըսրայ-Մէլիք որ մեռաւ՝
Իրեն տեղն ալ՝ Իսմիլ-Խաթուն՝ Իր կընիկ
*Ընտաւ Մըսը՛ր Թագաւոր *):*

242. Իսմիլ-Խաթուն՝ Անգաւակ Մնացած՝ Կըխոռիի Սասմաց Կտրիճի Մասին

Ց·81, (Կ·8), Կ·8՝2·, Հ·369,370, 2(Ե·491,615), (Լ·96), 2·՝96·

Իսմիլ-Խաթուն այրի մընաց երիտասարդ հասակէն †)·
Եւ Իրեն ալ Զաւակ չըկա՛ր ժառանգորդ: —
Ան ալ՝ Իր մէջ՝ միտք ըրաւ ու ի՞նչ ըսաւ. —
«Ես ևիժ չունիմ..., Ինձմէ Տըղայ մ՚ դուրս չկա՛ւ...՝
Ընտաւ երկրին Թագաւոր՝ ու՝ Թըշնամիներն հալածէ...: —
Պէտք է ևընեմ Իմ ժողովուրդ հո՛ս կանչեմ,
Դիմեմ Իրենց խորհուրդին, —
Կարգադրութիւն մ՚ընեմ այսուհե՛տ՝ Ինձ համար...,
Որ Տըղա՛յ մը ևընէ Ինձմէ՝ ու տէ՛ր կանգնի Մեր Աղին..., —
Մենք չըմընանք խեղճ չիմար...:
*Սերմըս վոխեմ... *), Տըղա՛յ մ՚ըլլայ մէկ տեղէ մ՚*
Ըլլայ երկրին Թագաւոր, —
Նորէ՛ն կանգնի Մըսրայ-երկրի Պետութիւն...:
Բայց Ինձ պէտք է՝ կըտրիճ Ըմբի՛շ մ՚ ըլլայ որ՝

---

*) Մըսրամէլիք, *Այսինքն Առիւծ-Մըհէրի խորթ զաւակը (Ասըլխանէն ունեցած)*. *Տե՛ս Հատ 219:* *) Թագաւոր, *Թագուհի (ժողովուրդ՝ Թագուհիին ալ թագաւոր կ՚ըսէ):* †) *Կ·8՝ Մըսրամէլիք ինքը ողջ է, եւ ի՛նքն է որ Դաւիթ-Մըհէրը կըկանչէ Մըսըր, ու կըպնդէ որ իր կնկան հետ պառկի՝ որպէսզի իրեն ժառանգ մը ծնի:* *) Սերմ վոխել, *Աւելի ժողովրդական հայերէն է ըսել՝ Բարձ փոխել:*

Անոր մօտէն ուժեղ Տըղայ մ՝ գայ աչխարհ…»։
Ու մըտմըտաց՝ լ՛ինչ ըսաւ. —
«Երկրէ երկիր, արա՛ր–աչխարհ կըխօսին՝
Թէ՝ «Քա՛ջ Ըմբիշ, դեղեցի՛կ Մարդ՝ Սասնայ–Երկիր միայն կայ»։—
Ելնենք ճամբենք Դաւիթի մօտ՝ ու խընդրենք,
*Որ գայ Իմ կուշտ *)՝ ձի՛ժ մ՛ունենամ Իր մօտէն…, —*
Ու Մըհէրի զօրութիւնը՝ Իմ Սերունդէս մէ՛չ անցնի…, —
Սասնայ Ցեղի ուժ՝ պահի…»։ —

243. Իմիլ-Խաթունի Առաջարկը՝ Իր Մեծաւորներէն Կ՛ընդունուի

Զ·՝Լ·96·

Թագուհի՛ն էր, — կանչեց Իրեն Մեծաւորներ՝ ժողովի, —
— «Մարդի՛կ,–ըսաւ–, Սասնայ տուրքը տալու առեն եկեր է,
Գանձն ալ՝ այնքան դըրամ չըկա՛յ այս տարի։ —
*Ա՛յնչափ տըւինք՝ որ Մեր վըրայ կըտրեցաւ… *)։ —*
Ա՛լ մինչեւ ե՞րբ Անոնց տուրք տանք Մենք այսպէս…։ —
Աղէկ է որ՝ Մա՛րդ ուղարկենք Սասնայ Դաւիթ–Մըհէրին,
*Կանչենք այստեղ, խաբկըւթիով *) Թուղթ մը առնենք Իր ձեռքէն*
Որ ազատուինք՝ ա՛լ տուրք չիտանք Սասունին. —
Մինչեւ՝ Մեր մէջ՝ մէկ զօրաւոր Մա՛րդ ելնէ՝
Անոնց վըրայ կըռւի՛ երթայ՝ ու յաղթէ…»։
Այնտեղ, չո՛ւտ մը, ընդունուեցաւ Թագուհիին այս խորհուրդ,
Որոշեցին որ Թո՛ւղթ դըրուի՝ ղըրկուի Սասուն, Դաւիթին,
Իրենց հի՛ւր գայ՝ երկու ամիս՝ 'ի Մըսըր…։

244. Իմիլ-Խաթունի Գիրը՝ Դաւիթ-Մըհէրին 'ի Սասուն

Ե·81, Զ·՝Ե·81, (Ե·81), ՁԿ·365, Է·19,370, Կ·37,8, Զ·՝Կ·8, Խ·1, Ա·4, (Ա·4), Ե·491, (Ե·615)·

Ան ալ ելաւ, Իմիլ–Խաթուն, Ի՛ր կողմէ(ն),
*Գի՛ր մը գըրեց, եւ կօտիկին *) ու Լաչակին *) հետ մէկտեղ՝*

---

*) Կուշտ(ը), Քով, մօտ։ *) Վրան կտրիլ, Սպառիլ, այլեւս տալու կարողութիւն չմնալ։ *) Խաբէութիւնով, Խաբէութիւնով, խաբելիք ձեւերով։ *) Կօտիկ, փայտէ չըլմանակ՝ գլուխի ծիրին չափ՝ որուն վրայ կը փաթթեն կիներու գլուխը ծածկելիք լաչակը։ *) Լաչակ, Լաչիկ, Նուրբ թաչկինակ՝ իբր կիներու գլխանոց։

Երկու Մարդով՝ Թուղթը ճամբեց 'ի Սասուն։

Գացին ելան Սասնայ–Քաղաք՝ Մեր Թագաւոր Դաւիթին, —
Ըսին, — «Դաւի՛թ, Տէ՛ր–Թագաւոր Սասունայ,
Իմիլ–Խաթուն Մեզ ճամբեր է Քեզ համար,
*Ընդհրդք կ'ընէ՝ որ «Դաւիթը ելնէ անսուտ *) այստե՛ղ գայ,*
Ես Անոր հետ դո՛րծ ունիմ..., —
*Ինձ ալ Տըղայ՝ վէր՝ աչխըրքին չըկըտրի *)...»։*

Ու տըւին Թուղթ, կօտիկ, Լաչակն ալ մէկտեղ։ —

Գըրած էր թէ, — «կըտրիճ Դաւի՛թ Սասունցի, —
Պէտք է որ Դուն ելնես անսուտ այստեղ գաս,
*Չես առնես ու Գըլուխդ Ինձ հետ մէ՛կ ընես *),*
*Որ Իմ չունչը Քեզ հետ ելնէ, հովանայ *)...։*
*Ան ինչ *) Սասուն Քու ձեռքն է՝*
Մըսըրն ալ Քո ձեռք մընայ... †),
Մըսըրին ալ Թագաւորը Դո՛ւն ներսիս...»։

Դաւիթ–Մըհէրն ալ ի՞նչ ըսաւ Այդ Մարդոց· —
— «Դէ՛հ, Դուք գացէ՛ք,–ըսաւ–, Աստուած Զեզի հե՛տ,
Ես Իմ Կընկան կամքը կ'առնեմ՝ կուգամ՝ մինչեւ երեք օր»։

Այն Երկու–Մարդ՝ դարձան գացին 'ի Մըսըր։

245. Դաւիթ-Մըհէր՝ Խոհուրդ Կը հարցնէ Իր Մեծ-Մօր. Ան Առաջնորդը Նայելով՝ Կը հաստոզէ Թողը Որ Չերթայ

Հ·370, Ջ·՝Հ·370, Ջ·՝Լ·96, (Կ·8), Ջ·

Դաւիթ տեսաւ՝ Կօտիկ–Լաչիկ ուղարկեր է Իր համար

---

*) Անսուտ, *Անպատճառ, առանց մոռացումի, հաստատեաւ։* *) Տղայ վ· ա· չկտրի, *Ժառանգ չպակսի, անժառանգ չմնամ։* *) Գլուխը մէկ ընել, *Մէկտեղ պառկիլ, ամուսնանալ։* *) Հովանալ, *Զովանալ։* *) Ան ինչ, *Քանի որ։* †) *Երկու մեծ գետերու, Տիգրիսի ու Եփրատի՝ բղխած ու թափած երկիրներուն, — Սասունի եւ Առրեստանի —, մէկ մականի տակ մնալու անտեսական մեծ կարեւորութիւնը եւ այդ երկու երկիրներու դարաւոր մրցակցութիւնը պատկերացուած է այս երկտողովը։*

Եւ ըսեր է, — «Որ *) ես կօտիկ ու Լաչիկը ղրկեր եմ, —
Դաւիթ չէղայ՝ քան Ձիս ալ շա՛տ կընի՛կ է…», —
Ա՛յտեղ Դաւիթ հասկըցա՛ւ ու ի՞նչ ըսաւ. —
«Որ Ան՝ այդ խօսքն ըսեր է՝
Գէտք է երթամ…, ճա՛րն ի՛նչ է…»:

Ելաւ դընաց՝ պատմեց Իրեն Ջոջիկ–Մօր *), —
Քառասուն–Ձիւղ–Ծամ Գոհարին —,
Ան ալ՝ Աստղո՛ւնք նայեցաւ ու ի՞նչ ըսաւ. —
— «Դաւի՛թ, Որդի՛, պէտք չ'է՛ երթաս…, վընա՛ս կուգայ Քո Անճէին,
Աստղերն այնպէ՛ս նըշանց կուտան *)՝ այս դիծով †)…: —
Թէ որ երթաս՝ Տուն դառնալէդ քառա՛սն օր վերջ՝ կըմեռնիս…
Եթէ չերթաս՝ Դուն չի՛ս մեռնիր այդ ճամբով…»:
= «Վընասու՛մ թէ չըվընասուիմ,—ըսաւ Դաւիթ իր Մեծ–Մօր—,
Պիտի երթա՛մ…, պէտք չ'է՛ կոտրիմ Անոր խօսք…»:

Քառասուն–Ձիւղ–Ծամ ի՛նչքան խընդրեց՝ ճա՛ր չեղաւ, —
Դաւիթ–Մըհէր՝ մըտիկ չըրա՛ւ Իր Մեծ–Մօր:

Մեծ–Մայրն ելաւ՝ դընաց Դաւիթի կընկան մօ՛տ, —
Այս բան՝ Անոր յայտնեց ըսաւ՝ մէկ առ մէկ: —

246. Դաւիթ–Մրհէր՝ Իր Մեծաւորներուն Կըյայտնէ Մըսըր Երթալու Իր Կամքը

Զ·՝Լ·96, (Պ·8), Կ·37՝Զ·, Զ·՝Չ·19, Զ·

Դաւիթին ըսես՝ ի՞նչ ըրաւ. —
Ելաւ կանչե՛ց Մեծաւորներն ու Տէրտէր,
Բերաւ այնտեղ *), ժողո՛վ կազմեց՝ ու ըսաւ. —

---

*) Որ, երբոր: *) Ջոջիկ–Մայր, Ջոջ մամա, մեծ մայրիկ, հօրը մայր (Մօրը մայր = Քեռմամա): *) Նշանց տալ, Ծուցնել: †) Ցիչենք որ՝ Քառասուն–Ձիւղ–Ծամ Գոհար՝ Պղնձէ–Քաղքի Թագաւորի աղջիկը՝ կախարդ էր (Հատուած 257–296): *) Այնտեղ, Պատմողներուն քերնին մէջ՝ շատ յաճախ կրկնուող բառ մը՝ որ տեղին համեմատ՝ կըփոխարինէ մտքով հասկցուելիք ուրիշ բառ մը, օրինակ՝ հոս՝ պալատ, դիւան, դարպաս, եւն.:

— «Մըսրայ–երկրի Իսմիլ–Խաթուն՝ Թո՛ւղթ է ճամբեր իմ եռեւ,
Ես կ՚երթա՛մ…»։

Իչխաններն ու Տէրտէրն այնտեղ ի՞նչ ըսին· —
= «Դաւի՛թ,–ըսին–, որ Դուն կ՚երթաս՝ Մենք չե՛նք ըսեր
[«Մի՛ երթար»·
Քու կա՛մքն է…։ —
Կ՚երթաս՝ գընա՛…, Դո՛ւն գիտես…։
Մենք չե՞նք ուզեր որ երթաս…, —
Մըսըրէն զատ՝ ուրիշ տե՛ղ ալ՝ դեռ կ՚ուզենք որ գըրտես…։
Ահի Մըսըր որ կուտայ Քեզ՝ առանց կըռիւ, առանց բան *)՝
Ա՛լ Դուն ինչո՞ւ չես երթար…։ —
Չէ՞ որ չատեր կըռտո՛վ կ՚առնեն…, ատ՝ իր ուռո՛ւմն է եկեր…,
Ե՛լ չուտ գընա՛…, մի՛ կենար…»։

Գիրը այնտեղ որ կարդացին, խօսք եղաւ, —
Իչխաններէն մէկ–քանին ալ՝ դարձան Դաւիթին ի՞նչ ըսին· —
— «Իսմիլ–Խաթուն այլազգի՛ է…, պէտք չէ՛ որ Դուն հոն երթաս»։

Դաւիթ այնտեղ ի՞նչ գըրուցեց Այդ Մարդուց· —
= «Հո՛ղ տամ Անոր Կօտիկ *)՝
Որ կուտայ Գուդիկ *)՝
Ջառնէ Կօտիկ…»։

247. Դաւիթ-Մըհէր՝ Իր Եղկաց Հետ Կըվիճի՝ Իրեն Եկած Հրաւէրին Համար

Ա·4, Զ·՝Ա·4, Զ·՝Ե·492,951,969,547,948,966,615, ՉԿ·366, 367, Խ·1,2, Կ·37, (Կ·8), Հ·370, Զ·՝Հ·370, (Ե·492), Զ·

Դաւիթ ելաւ՝ գընաց Իրեն Կընկան մօտ, —
Ըսաւ, — «Կընի՛կ, ե՛լ Իմ լաթերս լըա՛, չորցո՛ւր, պատրաստէ՛, —
Մըսը՛ր պիտի երթամ ես…, —

*) Առանց կռիւ, առանց բան, Անկռիւ, անվէճ։ *) Կօտիկ, Գըլուխ (այստեղ՝ այր մարդու գլուխ)։ *) Գուդիկ (գդակ), Կնկայ գլխանոց եւ՝ փոխաբերաբար՝ կնիկ աքարած։

Մէլիքի–կին Չիս կ'ուղէ՛...»:

Դաւիթ ելաւ որ երթայ՝
կինը Հուր–Վարդ ի՞նչ ըսաւ. —
Ըսաւ, = «Դաւի՛թ, Դուն կ'երթա՞ս...»:
— «Հա՛մ՛,–ըսաւ–, Ես կ'երթա՛մ...»:
= «Ինչո՞ւ կ'երթաս,–ըսաւ կինը–.
Այ՛ Մարդ,–ըսաւ–, մի՛ երթար...: —
Ան՝ աչքազգ է, անօրա՛յ *) է..., օտրի կի՛ն...,
Դուն Հա՛յ ես ու Հայակրօ՛ն..., —
Աղէկ բան չ'է՛ Քեզ համար...,
Պիտի խաբէ՛ Քեզ Այդ Կնկիկ՝ ու խառնըվիս Իրեն հե՛տ...»:

Դաւիթն ըսաւ, — «Կընի՛կ,–ըսաւ–, Չիս կանչեր է, պիտ՝ երթա՛մ, —
Կ'ըլլայ որ այդ Մըտրաչ–Խաթուն բա՛ն մ՝ ունի Ինձ ըսելու...»:
=«Ինչո՞ւ երթաս,–ըսաւ Կընիկ–, եւ Անոր հետ Քո դըլուխը մէ՛կ
[ընես...»:

Դաւիթ՝ այնտեղ՝ վերցուց Կընկան ի՞նչ ըսաւ. —
— «Կընի՛կ,–ըսաւ–, հարցո՛ւմ մ՝ ունիմ..., խօսքս ամօթ..., —
Կընիկ–ադմատ, Թագաւորի–Դուստր ու Կընիկ ըլլալով,
Իր Կօտիկն ու Իրեն Լաչակ՝ Եղնէ Մարդո՛ւ ուղարկէ,
Ըսէ՝ «Եկո՛ւր Իմ Ծո՛ց մըտիր ու Չիս ա՛ռ...,
Թէ որ չիգաս՝ այս Կօտիկն ու Լաչին գըլխի՛դ վայել է...,
Քան Չիս,–ըսէ–, ա՛լ աւելի կընի՛կ ես Դուն ու տըկար...», —
Այդ Էրիկ–Մարդ՝ յանցանք ունի՞ ալ այդտեղ...: —
Պէ՞տք է երթայ այդ Կընկան՝
Թէ՞ չէ Անոր ղըրկած Կօտիկն ու Լաչակ՝
Գըլխի՛ն առնէ՝ Անոր տեղ...: —
Հո՛ղ այն Մարդու գըլուխին...՝
Ինչ *) Կընիկ տայ՝ Մարդ չառնէ...:
Կընի՛կ,–ըսաւ–, պէտք է որ Ես հո՛ն երթամ...: —
Թէ Ես չերթամ ու չառնեմ՝
Ես ալ Անոր պէս Կընի՛կ եմ, ըսել է...: —

---

*) Աճօրա(յ), Անօրէն, անհաւատ: . *) Ինչ, Ինչ առեն որ, երբ, երբոր:

Ո՛ւխտ եմ ըրեր Աստծու հետ,
Որ իմ Ուխտը ես չընեմ՝
Ես իմ Ուխտով կըմեռնիմ…:
Ձերթամ՝ չըլա՛ր…, պիտի երթա՛մ, ճա՞րն ի՛նչ է…»:
=« Չէ՛, Դաւի՛թ, չէ՛, մ՝ երթա՛ր,–ըսաւ Հուրի–Վարդ–·
Ան ֆեզ տեսե՞ր է…, Գիտէ՞ Դուն ի՛նչ ես…, —
Խօրո՛տ ես, գէ՛չ ես…, կա՞ղ ես՝ թէ՞ կոյր ես…:
Անիկ այլա՛զգ է,
Ֆեզ պիտի խաբէ՛…՝
Ֆու խելքը առնէ…: —
Ֆո կըտըրճուքիւն լըսեր է Ան ալ՝
Կ՝ուզէ որ Տըղա՛յ մ՝ ունենայ Ֆեզնէ՝
Ելնէ՝ Մըսըրի ճըրագը վառէ…,
Սատունին մարէ՛…, —
Ինչո՞ւ պիտ՝ երթաս՝
Այդ օտարի հետ Դըլուխդ մէ՛կ ընես…»:

248. Դաւիթ-Մըհէր՝ Իր Կնկաց Պնդումին Հակառակ՝ Կըմնկճի Դէպ Մըսըր

Ց·81, Կ·37, Խ·1,2, Ա·4, Չ(Ե·548,493,492), Չ·՝Հ·20,370,Չ·՝Լ·96, ՉԿ·368·

Ու երեք օր՝ Դաւիթ այսպէս Իր Կընկան հետ վիճեցաւ·
Կընիկն Անոր հաւանուքիւն չըտըւաւ· —
— «Դաւի՛թ,–ըսաւ–, ես Հա՛յ եմ ու Ան օտար,
Դուն Ա՛ն կ՝ուզես՝ հիմա՝ ու Ձես կըթողնես…: —
Թէ Դուն երթաս այդ այլազգի՛ն խառնըւիս՝
Ա՛լ Դուն մ'ինչեւ քառո՛ւն տարի՝ Իմ անկողին պիտ՝ չիգաս…
*Դուն Իմ վըրայ պա՛ս *) ըլլաս ու Ինձ եղբա՛յր ու մա՛յր մընաս…»:*

*Դաւիթ *) նորէն մըտիկ չըրաւ Իր Կընկան,*
Ելաւ առաւ Իրեն երկու Ըմբիշներ՝

---

*) Պաս, պահք, փէհրիզ: *)Դաւիթ, Ց·81, Խ·2, Ա·4, Հ·20, 370՝ Մըհէր, Լ·96՝ Ճոչ–Մըհէր, — բոլորն ալ պէտք է հասկնալ Դաւիթ–Մըհէր:

Բաթման–Բուղէն, ձարպաբ–Քամէն Իրեն հետ,
Սասուն Թողուց՝ Իր Կընիկէն զաղտնաբար,
Զիեր հեծան, ինկան ճամբայ՝ դէպ Մըսըր։

249. Մըսրայ-Ցիկլիը Կըպատրաստուի Ընդունելու Դաւիթ-Մըհէրը

Հ·, Հ·՝Լ·96, Հ·՝Ե·949·

Մըհէրի Լաճ Դաւի՛թն էր· —
Ճանապարհի կէսը հասա՛ւ–չըհասաւ՝
Թուղթ մը գըրեց՝ ղըրկեց Իամիլ–Խաթունին՝
Թէ՝ «Ես ահա՛ կըհասնիմ...»։

Իամիլ–Խաթուն երբ լմացաւ Դաւիթ–Մըհէր կըհասնի՝
Ելաւ հանեց Իր Իշխանները՝ ու թաւիօրով ղըրկեց դէ՛մ։ —
Ինքն ալ ելեր, Մըսրայ–Խաթուն, լո՞նչ ըրեր· —
*Ճամբաները՝ քար քաղեր է, աւազ մաղել է տըւեր... *),*
Մէկ ժամո՛ւ ալ ճանապարհ՝
Թանկագին ու ծա՛նրը Գոլգեր է վըռեր...,
Մաղկուն կամա՛ր է յարդարեր ամեն դին...,
Լոյսեր վառե՛ր վերէն վար..., —
Դաւիթ–Մըհէր կախարդե՛լ է Իրեն միտք...։

Ինքն ալ ելեր նըստեր է Իր Պատըշգամ՛մ...։
*Աչքեր դեղե՛ր *), Գանգուրները հաներ կախեր երեսի՛ն...,*
Հագուած–սըգուա՛ծ, անուշ հոտե՛ր ալ քըսուա՛ծ...,
Աչք բըռներ է Դաւիթի եկած ճամբային...։ —
Տեսաւ հեռուէն՝ քամո՛ւ նըման մէկ Ձիաւոր մ՛ կըհասնի..., —
«Կա՛յ ու չըկայ...,–ըսաւ–, ասի Սասմայ–Մո՛ւռն է որ կուգայ...
Մըհէրի Լաճ՝ Դաւիթ Ի՛նքն է՝ որ կուգայ...»։

250. Մըսրայ-Ցիկլիը՝ Դաւիթ-Մըհէրը Կըգիւռվցնէ

Հ·՝Ե·949,950,615,492, Հ·՝Լ·96, Հ·

Դաւիթ–Մըհէր՝ Իր Ձիուն վրայ՝ եկա՛ւ հասաւ, քամո՛ւ պէս,
Քըշե՛ց գընաց Պատըշգամին տակ՝ կեցաւ, —

---

*) Քար քաղել, աւազ մաղել, Հարթել, կոկել, մաքրել։ *) Դեղել, Ծարուր քաշել (աչքերուն)։

— «Մըսրա՛յ–Խաթուն,–կանչեց ըսաւ՝ վարչէն վեր–.
Ի՞նչ ունիս ինձ ըսելիք...,
Ըսէ՛, ես ալ չո՛ւտ լըսեմ...»:
= «Աղէ՛կ,–ըսաւ Մըսրա՛յ–Խաթուն՝ զարմացած–.
Այդպէս վարչէն–վեր չի՛ խօսիր...՝ հիւր ըսածդ...
Ձիէդ իջիր, արի վե՛ր..., —
Ուտե՛նք–խըմե՛նք՝ նո՛ր ըսելիքս ինձ պատմե՛մ...»:
— «Ձե՛մ գիտեր ես...,–ըսաւ Դաւիթ՝ իր տեղէն–.
Ի՛նչ որ կ'ըսես՝ չո՛ւտ ըսէ...: —
Ո՛ւխտ եմ ըրեր Աստըծու հետ, այս անգամ,
Որ ես իմ Ոտ Ասպանդակէն չըհանեմ,
Ըսելիքըդ լըսեմ՝ չուտով ե՛տ դառնամ...»:

Մըսրա՛յ–Խաթուն վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ. —
= «Իրա՛ւ, կ'ըսեն, «Հաստակո՛ղ է Սասմեցին»... *).
Տնաշէ՛ն,–ըսաւ–, կըրակ չըկա՞ր Ձեր թոնիր...,
Որ Դուն եղեր եկեր ես հոս կըրա՛կ տանիս Ձեր–Երկիր... †).
Եկո՛ւր Ձիէդ վա՛ր իջիր, սա՛նկ, ձեւաւոր...,
Սո՛ւրճ մը խըմէ՛, նորէն ելի՛ր ու քըշէ՛..., —
Այդքան ալ չատ աճապարե՞լդ ի՛նչ է .որ...»:

Ու տեսա՛ւ որ՝ չէ՛, հաստակո՛ղ է Դաւիթ,
Մառնապանին աչքով ըրաւ, հասկըցուց, —
Վազեց չո՛ւտ մը՝ եօ՛թը տարուան Գինի՛ բերաւ հըրամցուց,
Դաւիթն ալ՝ իր Ձիուն վըրայ՝ առաւ խըմեց լի՛ք ու լիք...: —
Դէ՛, ծարաւ էր. ճամբէ՛ կուգար, ու յոգնա՛ծ...,
Խըմե՛ց խըմե՛ց՝ եօ՛թը տարուան հի՛ն Գինին...: —
Ու Գինին էր, — բըռնե՛ց Դաւթի յոգնած Գլուխն ու ճակատ...,
Ինք իր կամքով՝ իջաւ Ձիէն, եկաւ տակ:
Մեծ պատիւով՝ Դաւիթ–Մըհէր առին տարան դէպի վեր,
Պալատին մէջ՝ հի՛ւրը եղաւ Իսմիլ–Խաթուն Տիկինին:

---

*) Սասմեցի, Սասունի բնիկ, Սասունցի, Սասմեցի: †) Ակնարկութիւն՝ Կրակ–Տարագիկ խաղին (Տեսնել իմ Արեւելեան Խաղաշխարհ, Թիւ 99), եւ տունէ տուն, գիւղէ գիւղ՝ ջահ փոխադրելու սովորութեան:

Ախտեղ կերան ու խըմեցին, — Ձի՛ղ անուշ..., —
Մըսրայ-Խաթուն չըճըվե՛ց որ՝ Դինին Թողնէր Դաւթի Գլուխ..., —
Դիներեսում մէ՛չ պահեց մ'իչտ, Անոր ուղեղ Թըմրեցուց...:

251. Դաւիթ-Մըհէր Ու Մըսրայ-Ծիկին՝ Այր եւ Կին

Ջ.՝Լ.96, (Լ.96), Ջ(Կ.8), Կ.37, ՋԿ.368, Խ.2, Ե.492, Ա.4, Հ.20, .370, ՋՎ.1, (Հ.370, Ճ.81).

Երբոր եղաւ Էրիկուն՝
Իսմէլ-Խաթուն վերցուց Դաւթին ի՞նչ ըսաւ. —
— «Մինչեւ այսօր, երիտասարդ իմ տարիքիս հակառակ,
Ու՝ հանդուցեալ, տարիքն անցած իմ Էրիկիս պատճառով,
Աստուած Ինձի Ժառանգ Զաւակ Չըտըւաւ: —
Այս գիշերը՝ իմ Անկողին հի՛ւր գաս Դուն,
Գաւակիս Իմ Քով, Ես ալ Տըղա՛յ մ՝ ունենամ,
Ելնէ օր մը՝ իմ Երկիրները Թըշնամու Դէմ պաշտպանէ...»:

= «Ախիկ Չ'եղա՛ծ Բան Է,–ըսաւ Դաւիթ-Մըհէր՝ Իսմէլին–.
Դուն այլազգ ու այլակըրօն..., Ես Քու Կողմէնք) ի՞նչպէս գամ...»:*
— «Դաւի՛թ,–ըսաւ Իսմէլ-Խաթուն–, Ես Քեզ սըրտով սիրե՛ր եմ...,
Կամո՛վ ըլլայ՝ պիտի գա՛ս Իմ Անկողին...,
Բռնի՛ ըլլայ՝ պիտի գա՛ս...»:

Դաւիթ տեսա՛ւ որ ճար Չըկայ՝ ընդունեց,
Այն գիշերը գընաց Անոր Անկողին,
Խառնըւեցաւ Կընկան Հետ...,
Մըսրայ-Խաթուն կընի՛կ տաւ՝ ու քընացաւ Անոր մօտ... †)
*Քառասո՛ւն օր *) այդպէս մընաց Անոր քով,*
Ինչպէս Էրիկ ու Կընիկ՝
Դաւիթ-Մըհէր՝ Իսմէլ-Խաթուն մէկըզմէկը սիրեցին... 1): —

---

*) Կոդվէճ, *Անկողին*: †) ՋՎ.՝1, «*Թլոլ-Դաւիթի մայրը որբեւայրի կ'ըլլայ, կ'երթայ Մըսրամէլիքը կ'առնէ, Դաւիթն ալ հետ*»: *) Լ.96՝ Քառասուն օր, ՋԿ.368՝ մէկ ամիս մը, Ճ.81՝ ութ օր, Հ.370՝ երկու գիշեր կամ երեք գիշեր: 1) *Համեմատել՝ Հատուած* 241–242 *եւ՝ յաջորդին*՝ 244–251 *Հատուածները՝ Առիւծ-Մըհէրի նման արկածին հետ, Հատուած* 206–207:

252. Մբսրայ-Ցիկիճ՝ Ցղայ Մ՚ Կ՚ուճնճայ Դաւիթ-Մրհէրէճ

Ճ·81, Զ·՝Ճ·81, Ճ·81 ատրչ·, Ե·492,615,726, Հ·20,370,Զ(Հ·370), Զկ·369, (Զկ·398), Խ·2, Ա·4, Կ·8,38, (Լ·97), Լ·87·

*Իմիլ–Խաթուն՝ ինչ *) ուխ օրը լըրացաւ, —*
Երազո՞վ թէ՞ իրաւէն՝
Իմացա՛ւ որ՝ Ինքը Տըղով պիտի (ը)լայ·
Արթընցաւ թէ՝
*Ինքը եղաւ երկու հոգով *), այնտեղ Դաւիթն յըղացաւ· —*
Ըսաւ, — «Դաւի՛թ, կ՚ուզես՝ հիմա՝ ա՛լ դարձի՛ր Քու Տո՛ւն գընա,
Բայց Քու կընկան մի՛ ղըրուցեր՝ ինչ որ անցաւ ու դարձաւ···»:

Ինը ամիս, ինն օր, ին ժամ, ին վայրկեան որ լըրացաւ՝
Աստուած տըւաւ, —
Ու Դաւիթէն Տըղա՛յ մ՚ եղաւ՝ Իմիլ–Խաթուն Թագուհուն:

Դաւիթ ուզեց մըկըրտել–տալ Իր Տըղան,
Իմիլ–Խաթուն թոզ չըտըւաւ, Մկիւֆ դըրաւ Իր անուն, —
Իբր յիշատակ՝ Անոր մեռած Մբսրամկիւֆ Հօր անուան: —

253. Դաւիթ-Մրհէր՝ Մբսրայ Ցիկիճիճ Դիտաւմճաւոր Երգը Կըլսէ

Խ·2, Ա·4, Զ·, Զ·՝Ե·492,493,547,615,548·

Աչխարքի Տղաք թէ տարիէ՛ կըմեծնան,
Մբսրամկիւֆ, — Դաւիթի՛ սերմ —, Անիկ օրէ՛ կըմեծնար···, —
Դիւցա՛զն Մարդու Տըղայ էր···:
Քառասունքի ճի՛ժ էր Մէկիւֆ՝
Դաւիթ, օր մը, Որսի դարձին, ի՞նչ տեսաւ· —
Դուրսէն լըսեց ու տեսաւ որ՝ Իմիլ–Խաթուն տիկինիկ՝
Ոսկեձարուրով Տըղան բըռներ գիրկին մէջ,
Մէ՛կ կըխաղցնէ ու մէ՛կ կ՚երգէ ինքնաբաւ· —

— «Մկի՛ֆ, Մկի՛ֆ, Մբսրա՛յ–Մկիւֆ···, †)
*Մատա՛ղ Քեզի՝ Քու Մէրիկ *)*

---

*) Ինչ, երբ: *) Երկու հոգով, Հոյդ չնչաւորիւնով (իրեն ու սաղմին): †) Երգով: *) Մէրիկ, Մայրիկ:

Սասմայ ձըրագ մարեցի,
Մըսրայ ձըրագ վառեցի...»:

Դաւիթ–Մըհէր՝ այս որ լըսեց իր տեղէն,
Ներս մըտաւ ու ի՞նչ ըսաւ. —
*— «կընի՛կ,–ըսաւ–, դեռ Աւտ ճի՛ժ է՝ մէջ ձըւին... *),*
Աւտ ի՞նչ խօսք է որ Դուն կ՚ընես այդ Տըղուն...:
*Ըսել է թէ՝ Այս Տըղան որ մեծնայ՝ բըռնէ իրեն բեռ *)՝*
Անոր ձեռքով Դուն իմ Ազգը պիտի կըտրե՛ս մինչեւ բուն..., —
Սասմանց–Տունը վըճացընե՞ս հիմնովին,
Մըսրայ–Երկիր կանդնեցընե՞ս Անոր տեղ...: —
*Ալ այս օրէն՝ Դուն ինձ մա՛յր ու քո՛յր մընաս...»: *)*

Իսմիլ–Խաթունն ալ՝ ի՞նչ ըսաւ Դաւիթին. —
= «Է՛հ, Դո՛ւն դիտես..., ա՛լ կ՚ուզես կաց, կ՚ուզես ելի՛ր ու գընա՛,
Ես ուզեցի Քեզնէ Տըղա՛յ մ՚ունենայի՝ ունեցա՛յ...: —
Դիւցազն Մարդէ՝ դիւցազ՛ն Տըղայ կը ծընի...: —
Այս Մեր Տըղան պիտի ելնէ՝ Մըսրայ ձըրագ վա՛ռ պահէ...»:

254. Դաւիթ-Մհէր կբախճէ Ծոյլ-Մելիքը՝ Նռջերու Մը Թեւին

Զ·(Ա·4), Ա·4, Զ·՝Ա·4·

Հազիւ քանի մ՚ ամսական †),
Մելիք գընաց՝ ձա՛ն կըխաղար Տըղոց հետ...:
Երբոր եղաւ վե՛ց ամսու +)՝
Տըղայ–Մելիք Որսի՛ կ՚երթար օրն ի՛ բուն:

Օր մ՚ալ Որսի երբ գընաց՝
Վէրի–Ոչխա՛ր մ՚ զարկաւ դըրաւ Թեւին վըրայ՝ եկաւ Տուն:
Դաւիթ–Մըհէր այս որ տեսաւ վերեւէն, —
— «Հէ՛յ–վա՛խ,–ըսաւ–, ես ի՞նչ ըրի իմ ձեռքով..., —

---

*) Մէջ ձըւին, Ձուին, սաղմին մէջ: *) Իր բեռը բռնել, Ուժովնալ, զօրանալ: *) Մայր ու հո՛յր մնաս, (Ինձի համար) այլեւս կին չե՛ս. մօր ու քրոջ պէս անմատչելի նուիրականութեան հանգամանք ունիս ասկէ եաքը: †) Ա·4·՝ Որ տարին լմնցաւ: +) Ա·4՝ Որ երկու տարին անցաւ:

*Հայու ճըրագ հանդուցի··· *),*
Օտ'րի ճըրագ վառեցի···»։ —
[Չէ՞ որ ինքը՝ Հուրի–վարդէն, — օրհնաւոր կընիկէն՝
Չաւակ չունէր տակաւին···։]

255. Դաւիթ-Մըհէր կըտեսնէ Ցղայ-Մէլիքը՝ Երկու Դամէօ Թեւերուն Տակ Չարկած

Չ·՝ճ·81 ստրչ·, ճ·82 ս·, կ·38, Հ·20, Չ·՝խ·2·

Ուրիշ օր մը, Դաւիթ–Մըհէր՝ Տանիքի վրայ կանգնած էր,—
Տեսաւ որ թէ՝ Տըղայ–Մէլիք Տուն կուգայ՝
*Մէկ Դամէշը *) ա՛յն մէկ Թեւին տակ զարկած,*
Ու մէկ Դամէշ՝ զարկած մի՛ւս Թեւին տակ †)։ — ·

Դաւիթ–Մըհէր՝ վերցուց այնտեղ ի՛նչ ըսաւ· —
— «Հէ՛յ–վա՛խ, հէ՛յ–վա՛խ···,– ըսաւ իր մէջ, մըտածկոտ–·
Ասի ի՞նչպէս ես իմ Տունը քանդեցի···,
Իմ աչքե՛րը կուրցուցի···, —
Եկայ այստեղ՝ Մէլիքի կինն առի ես···։
Վաղ–միւս օր՝ Անոր Տըղան ջոջանայ՝
Մըսը՛րն ալ կըխըրացնէ, Սասունի՛ն ալ կըտիրէ···։ —
*Ես ի՛մ ձեռքով՝ իմ ճըրա՛գը անցուցի···, *)*
Անոր ճըրագ վառեցի···»։

256. Դաւիթ-Մըհէր կըտեսնէ Ցղայ-Մէլիքը՝ Սայլը Ցեխէն Կըհանէ, Իբրեւ Ալ Ձղջալով Կըդառնայ Սասուն

Չ·՝Հ·370,20,411, Չ(ե·493,492), ե·493,615, Չկ·370, կ·8,37, 38՝Չ·, (կ·38,37), Ա·4, ճ·82 ս·, լ·96, խ·2·

Դաւիթ–Մըհէր՝ ուրիշ օր մ՝ ալ կեցեր էր՝
*Երեսպաց *) վերին յարկէն կընայէր, —*

---

*) Հանգուցի, Մարեցի։ *) Դամէշ, ցեղն աւելի մեծդի եւ ընդհանրապէս սեւամորթ՝ ընտանի անասունը, buffle։ †) Ինչպէս կ'ըսեն հովիւները՝ նոր ծնած գառնուկներէն մէկմէկ հատ՝ իրենց Թեւերուն տակ զարնելով, որ առնեն տուն բերեն։ *) Անցուցի, Մարեցի։ *) Երեսպաց, Դէմը չծածկուած՝ երկար նրբանցք, տան մը արեգդէմ կողմին վրայ, véranda։

*Տեսաւ մէկ Սայլ՝ թաց մարգին մէջ լըլուեցաւ *)։ —*
Ինք կըտեսնէ՝ իրմէն ծընած Տըղայ–Մէլիք լ՛ընէ կ՛ընէ. —
*Մէլիք գընաց՝ ձամբը *) բըռնեց ու վերցուց,*
Բեռցած Սայլը՝ լըլուա՛ծ տեղէն հանեց դո՛ւրս…։ +)
*Դաւիթ այնտեղ բախտակոծուաւ *) ու ըսաւ. —*
«Իմ ա՛չք կուրնար…, ես գընացի օտարին արտ ջըրեցի…,
Ան կանաչաւ…՝ իմ արտ այնտեղ չոր մընաց…։
Տեսա՞ր,–ըսաւ–, ի՛նչպէս կընկանես խօսքն եղաւ…, —
Իմ կընիկը ըսաւ «Մ՛ ե՛րթար», ես իր խօսքին միտ չըրի…»։ —

Ու մի՛աքն եկաւ Իրեն Տուն–տեղ, Իր երկիը, —
Ըսաւ՝ «Ա՛յքան ժամանա՛կ է՝ ես Իմ Տունէն ելեր եմ,
*Երթամ Սասուն, մէկ աչք մը տամ *)՝ նորէ՛ն գամ…»։*

Ես առաւն մ՛ ալ՝ ելաւ հեծա՛ւ, հրաժե՛շտ ուղեց Իսմիլէն,
[Այնտեղ Ինքը մընացեր էր մէ՛կ տարիէն աւելի †)],
Ելաւ՝ լուռ–մունջ՝ Մըտըր Թողուց, ինկաւ դո՛ւրս,
Ու դէ՛մ ըրաւ, Իր Մարդերով, քըշե՛ց եկաւ Սասմայ–Դէհ,
Դարձաւ որ գայ Իրեն Տո՛ւն։

257. Դաւիթ-Մըհէրի Երդումը՝ Հըմաճիճ

Չկ·371,372,373,374,375,376,377, կ·38, Չ·

Դաւիթ ելաւ ճամբուն վըրայ, դէպ Սասուն, —
Հմբիչ մէկ Մարդ՝ յանկա՛րծ Իրեն դէ՛մն եկաւ։

Այդ Հմբիչը վերցուց Դաւթին լ՛ընչ ըսաւ. —
— «Տօ՛ Մարդ,–ըսաւ–, Դուն լ՛ընչ մարդ ես, ո՞ւր կ՛երթաս…»։

---

*) Լլուիլ, Լիլի, տիղմի մէջ՝ խրիլ։ *) Ճամբայ, Սայլի առնա-կին՝ երկու կողմէն՝ յեցած ձգաններ։ +) Ճիշել որ՝ 253–256 Հատուածներու մէջ իր դերազանց ուժովը ներկայացուած Մըսրամէլիքն ու մեր Վէպին Ջորըրդ Ճիւղին հերոսը Թլոլ–Դաւիթը՝ մեհենոյն հօր — Դաւիթ–Մըհէրի — զաւակներն են, որ վերջէն խոտոր Թշնամի կըդառնան։ *) Բախտակոծուիլ, Բախտին դէմ դժգոհիլ։ *) Աչք տալ, Նայիլ, քննել, հսկել։ †) Տեսնել Հատուած 254՝ Մնթթին. † եւ +, նաեւ Հատուած 283։

= «Ես Դաւի՛թն եմ՝ Սասմանց–Տունէն»,– ըսաւ Դաւիթ՝ այդ
[Մարդուն։
Ըմբիշն ալ թէ, — «Ո՛ր Դուն Սասմանց–Տան Դաւիթին ես իրաւէն՝
Ես ալ՝ չէ՞ որ՝ Հըմա՛ն եմ... *),
Ու Դաւիթի հառե՛ն է կան կուգամ...։ —
Արի՛, ես–Դուն կըռի՛ւ մ՝ ընենք իրար հետ...»։
Դաւիթն ըսաւ, = «Ես վըռա՛զն եմ *), կ'երթամ Տուն.
Բայց ո՛ւխտ ըլլայ վեր՝ իմ Անճախ, Հոգւիս՝
Երեք օրէն կուգամ հո՛ս,
Դուն ալ այստեղ պըտնըւիս, —
Կըռի՛ւ ընենք ես ու Դուն...»։

Դաւիթ այնտեղ ծա՛նր երդումներ ըրաւ Ըմբիշ–Հըմանին,
Զըզիտցա՛ւ ու Մըսէ–Խաչո՛վ երդուեցաւ, —
Ըսաւ, = «Իրա՛ւ, երեք օրէն ես կուգա՛մ...»։

Ելաւ անկէ՝ քըշե՛ց եկաւ դէպի Տուն,
Այն երդումներ չուտով ելա՛ն իր մըտքէն...։

Գ. ԴԱՒԻԹ–ՄԸՀԷՐԻ ԵՒ ԻՐ ԿՆԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

258. Դաւիթ–Մըհէրի կինը՝ Դուռն էրիկին Դէմ Կըփակէ
Չ.՝Խ.2,1, Հ.20, Չ.՝Հ.20, Չ.՝Ա.4, Ց.82, Չ.՝Ց.82, Չ.՝Ե.493,
548,615, ՉԿ.386.

Դաւիթ ելաւ՝ Մըսրայ–Դեհէն՝ եկաւ հասաւ Սասմայ–Հող.
Լուրը բերին Իրեն Կընկան՝ Հուրի–Վարդին †), եւ ըսին. —
— «Հո՛ւր–Վարդ,–ըսին–, Դաւիթ կուգա՛յ. աչքըդ լո՛յս...»։
Կընիկն ելաւ Դուռները հողեց *) ու փակեց, —

---

*) Հմանի՛ եւ Դաւիթ–Մըհէրի հանդիպումին նման մի՛ջադէպ մը կըտեսնուի ՉՍ. 706–715՝ Թլոլ–Դաւիթի անունով։ Տեսնել նաեւ «Սասմանց Տուն» դրծիս ճեռագիրը՝ Մնձբին. Ակճ. 371–374՝ Հըմանի–Դումանի հէքիաթը։ *) Վռազի՛ եմ, կ'աճապարեմ։ †) Հ.20՝ սխալով՝ Քառասուն–Ճիւղ–Մամ, որ Սանասարի կնկան անունն է։ *) Հողել, Հող դիզել՝ փողոցի մեծ դուռներուն ետեւը, մուտքն ապզիւելու համար։

Ձըթողո՛ւց որ Դաւիթ գար ու մըտնէր ներս։

Մո՛ւթ էր երբոր Դաւիթ եկաւ՝ տեսաւ դուռ–մուռ չ'ե՛րեւար...,
Դարպասները *) փակուկ են ու ալի՛նդ գոցո՛ւկ...։ —
Վերցուց ըսաւ, — «Պատճա՞ռն ի՛նչ է՝ Դուռներ փակ են իմ վըրաս,
Ձեն թողուր որ՝ իմ կընկան մօտ՝ Տո՛ւն երթամ...»։ —

Դուռը ծեծեց, կանչեց ըսաւ փողոցէն. —
— «Բարե՛ւ, Հո՛ւր–Վարդ, Դուռը բա՛ց...»։
Կընկիկ նայեց՝ տեսաւ Դաւիթ–Մըհէրն է, —
= «Աստծու բարի՛ն,–ըսաւ–, Իմ հա՛յր, Իմ եղբա՛յր...»։
— «Կընի՛կ,–ըսաւ–, չէ՞ որ ես Քու Գըլխատո՛րն եմ, Քու էրի՛կ...,
Ինչո՞ւ ինձի կ'ըսես «Իմ հայր, Իմ եղբայր»...։ —
Մա՛րդ է...՝ կ'խաբուի՛...., — ես ալ գացի՝ խարուեցա՛յ...., —
Ինչո՞ւ համար Դուռ փակեր ես Իմ վըրայ...»։
= «Չէ՛, չէ՛, Դաւի՛թ,–ըսաւ կինը–, ես Քեզ երդո՛ւմ ըրեր եմ՝
Այդ բան *) Քեզ հետ չե՛մ ըներ...։ —
Քառասո՛ւն տարի՝ Դուն Ինձ հա՛յր ես ու եղբա՛յր...,
Ա՛լ Դուն Ինձի էրիկ չե՛ս...,
Դուռ չե՛մ բանար Քու վըրադ,
Ու Քո հետն ալ՝ ո՛չ կընըստիմ, ո՛չ կըկանգնիմ ասկէ ետք...»։
Ապա՝ ըսաւ, = «Անո՛ր համար Դուռ գոցեր եմ Քու վըրադ՝
Որ գացեր ես՝ Օտար կընկան հետ խառնըւեր՝ եկեր ես...։
Ես կանուխէ՛ն երդուեր եմ Քեզ՝ ըսեր եմ, —
«Թէ Դուն երթաս Այդ Օտարին խառնըւիս՝
Ա՛լ Դուն մ'ինչեւ քառասո՛ւն տարի՝ Իմ Անկողին չըմըտնես»։
Հիմա պիտի քառասո՛ւնք պահես՝ Դուն չորս անգամ տաս տարի, —
Ապա՛ Իմ մօտ գալ–պառկելու Թոյլտըւութիւն կայ Քեզի...»։ —

259. Դաւիթ-Մըհէր կըհամոզէ Կիներ՝ Որ Եղածը Մոռնայ Եւ Իրարու Հով Պահ

Հ.՝Ե.493, Հ.՝Ճ.82,83, (Ճ.82), Հ.20, Հ.՝Հ.20, Ա.4,5, Հ.՝Ա.4,5, Խ.2, Հ.՝Խ.2, Կ.38, Հ.՝Կ.38.

Դաւիթ–Մըհէր՝ չիվար *) մընաց ու ըսաւ. —

---

*) Դարպաս, Մեծ դուռ՝ փողոցի վրայ։ *) Այդ բան, Ամուսնանալն միւսորում, մերձենալ։ *) Չիվար, Շուար, չուարած, անճար։

— «Կընի՛կ,–ըսաւ–, եկո՛ւր հիմա այդ բան այդպէս մի՛ ըներ···,
Եօ՛թը տարի···՝ բանը բանէն կ՛անցնի՛ ալ···, —
Մըսրայ–Մէլիք՝ մա՛րդ կըղտնայ կատարեալ···:
Կընի՛կ, Հո՛ւր–Վարդ···, Հայու Ճըրագ մարե՛ր ենք···,
Օտա՛րի Ճըրագ վառեր ենք···:
Թողնես՝ ես զամ Գու կողմէնք, —
Թերեւս Աստուած Մեղ Տըղա՛յ մ՛ տայ օրէնքով, —
Հայու Ճըրագ չ՛անցընի՛···,
Նորէն վառե՛նք Մեր Ձեռքով···»:

Կընիկն ըսաւ, — «Ձէ՛, Դաւի՛թ, չէ՛, ուխտ եմ ըրեր կանուխէն՝
«Որ Դուն զացիր խառնըւեցար այլազգին՝
Գառան տարի պիտի չեզա՛ս Իմ Կողինք»···:
Ու հիմա՛ ալ՝ երդո՛ւմ կ՛ընեմ ես նորէն՝
Գառա՛ն տարի ես պա՛հք պահեմ՝ ու Գո կուշտը չըպահիմ»:

Երկուան ալ հոն երդըւեցան՝ նո՛ր Իր Կընիկ դուռ բացաւ:
Բացա՛ւ՝ Դաւիթ գընաց նե՛րս,
Շա՛տ աղաչեց, խընդրեց այնտեղ, ու ճա՛ր չեղաւ Կընկան հետ. —
Ձի՛ Թողուր որ երթայ պահվի Անոր կուշտ···:
— «Կընի՛կ,–ըսաւ–, Մեր Հայու Աստղ՝ մըշուշ–խաւա՛ր է այսօր···
Հայու Ճըրագ կըմարի՛···:
Արի՛ Մենք բան մը գըտնենք···՝
Հայու Ճըրագ չ՛անցընի՛···:
Եկո՛ւր մէկտե՛ղ զանք Նորէն, —
Թերեւս Աստուած Մեր Ճըրագը կըպցընէ՛ *),
Մեզի ելնէ մէկ Տըղայ *)՝
Որ այլազգի Ճըրագ փըչէ՝ անցունէ, —

---

*) Կպցնել, Բռնկցնել, վառել: *) Տղայ, Արու զաւակ, մանչ:
— կարելի է ենթադրել որ՝ Դաւիթ–Մըհէր Մըսըր երթալէն առաջ զաւակ եթէ ունէր՝ մանչ չէր, այլ աղջիկ զաւակ էր՝ Հուր–Վարդէն ունեցած· այդ պատճառով ալ՝ «անզաւակ էր» ըսուած է պատմողներէն, ու կըյիշուի միայն իր արու զաւակը՝ Թլոլ–Դաւիթ, զոր կ՛ունենայ Մըսրէն դարձին: Նկատի առնենք որ՝ Լուսիկ–Թագուհիէն զատ՝ ոչ մէկ աղջիկ–զաւակի անուն չի յիշուիր Մասմանց Տան հերոսներու շարքին մէջ:

Օտար չ'ելնէ՛ կըտըրճանայ Մեր վըրայ·
Որ Մեր Հայու ձըրագ նորէն փալփըլի՛ ...»:

Կընիկն ըսաւ, = «Ձէ՛, ես երդո՛ւմ ըրեր եմ՝
Քառասո՛ւն տարի Մենք մխատեղ չըքընենք...»:
Ըսաւ, — «Կընի՛կ, եկո՛ւր մըտի՛կ ըրէ ինձ, —
Տարի մ՝ հաշուենք մէ՛կ գիշեր...,
Ու տարի մ՝ ալ՝ մէկ ցերեկ...,
Ամիս հաշուենք մէկ շաբաթ...,
Ու շաբաթն ալ՝ օր մ՝ ու ժամ, — †)
Քառասուն տարին կըլըմընա՛յ մէկ անգամ...,
Ու քառասուն ալ դեռ աւելի՛ կըմընայ...,
Մեր երդումը չի՛ մընար..., —
*Ես ալ կուգամ Քու կողվէնք *)...»: —*

260. Դաւիթ-Մըհէր՝ Հոգեւոր Պահերն Ու Խօսակիցները Միջնադդ Կըճգէ

Ջ.՝կ·38, (Հ·20), (Ե·493,616), Ե·614, Ջ(Ե·82). (Ջկ·398).

Տեսաւ որ ճար չըլլար հետ...՝
*Դաւիթ ճամբեց՝ Հոգեւորները *) բերաւ հոն՛,*
Իշխան-Մարդեր ժողվեց հո՛ն,
Վերցուց՝ Անոնց լո՛նէ ըսաւ. —
— «Ես գընացի Մըսըր,–ըսաւ–, Մըսրայ-Աթոռն կի՛ն առի,
Ինձմէ Անոր Տըղա՛յ մ՝ ելաւ, անուն Մըսրայ-Մէլի՛ֆ է: —
Ա՛յնպէս կըտրիճ ու զօրընդդէմ Տըղա՛յ է՝
Հաւատացէ՛ք, որ Իր չափին երբեր հասնի Այդ Տըղան՝
Աչխա՛րհ Անոր դէ՛մը կանգնող մա՛րդ չըկայ...: —
Երբեր մեծնայ՝ Մըսըրի՛ն ալ կըտիրէ,
Սասունի՛ն ալ տէր կըղառնայ Այդ Տըղան...,
Իմ Ազգ նորէն տըկար ու խեղճ կըմընայ...: —
Ժառանգ չունիմ..., Ինձմէ յետոյ ո՞վ պիտ՝ վառէ Սասմայ ճրագ...:

---

†) *Որով՝ 40 տարին հաշուած 20 գիշեր եւ 20 ցերեկ, 40 օր (1 ամիս եւ 10 օր)՝ հաշուած 1 շաբաթ· 1 շաբաթը հաշուած 1 օր: Փո-փոխականերուն հաշխին մէջ՝ չփոթութիւն կայ:* *) *Կողվէնք, Անկողին:* *) *Հոգեւորներ, Կ·38՝ տէրտէր, Հ·20՝ վարդապետներ:*

Հիմա ես չա՛տ ղըղջացեր եմ՝ ու եկեր,
Բայց իմ կընիկ պա՛հս է ըրեր՝ ու երդուեր, —
Չի՛ թողուր որ երթամ իր մօտ...՝ Ինձի Տըղա՛յ մը ելնէ...»:

*Վարդապետները *) եւ Իշխաններ երբ լսեցին այս խօսքեր՝*
Ինկան մէջտեղ՝ ի՞նչ ըրին. —
Տէրտէրն ելաւ՝ քանի մ՝ հոգի Իշխան-Մարդեր առաւ հետ,
Գացին Դաւիթ-Կընկան մօտ,
Հաւկըցուցին՝ ինչի՞ համար եկած են,
Ու հարցուցին, —
— «Կընի՛կ,—ըսին—, քանի՞ տարի պահ ես ըրեր Գու էրկան...»:
= «Քառասուն տարի...»,—ըսաւ Հուր-վարդ՝ այն կողմէն: —

261. Մեծհռուց Որոսումովը՝ Դաւիթ-Մըհէր Իր Կնկաց Գովը Կ'ԻՐԲայ

Չ·՝Կ·38, Կ·38, Խ·2, Չ·՝Հ·20, (Հ·20), Ե·549, Չ·՝Ե·494,616·

Այդ Տէրտէրն ու այդ Իշխաններ՝ բերին այնտեղ ի՞նչ ըրին. —
*Քառասուն տարին՝ քառասուն ամիս կեցուցին *)...,*
*Անոնցմէ՛ ալ Ջոջիկ-Մարդեր *)՝ խօսեցան ու ի՞նչ ըսին. —*
— «Քառասուն ամիս՝ չա՛տ է,—ըսին—, է՛ Մարդիկ...,
Քառասուն օրուա՛ն իջուցէք...»:
*Երէցն *) ալ թէ, — «Քառասուն օրը՝ քառասուն ժամի՛ կապեցէք...»:*

Բերին այնտեղ Ամե՛նք մէկ՝
«Օրէնք՝ ի՛ ձեռս Աստուածորդա՛ց է» ըսին, —
Տարի մ՝՝ գիշե՛ր մ՝ հաշուեցին,
Ու տարի մ՝ ալ՝ մէկ ցերեկ,
Քառասուն տարին՝ քառասուն ամի՛ս կեցուցին,
Քառասուն ամիս՝ քառասուն օրուա՛ն իջուցին,
Տարին՝ ամիս, ամիս՝ շաբաթ, շաբաթն ըրին օր ու ժամ, —
*Քառասուն օրը՝ քառասուն ժամի՛ կապեցին... *):*

Երէց վերցուց՝ ըսաւ, — «Դաւի՛թ, այս աղէ՛կ...,

---

*) Վարդապետներ, Հոգեւոր պետեր: *) Կեցնել, իջեցնել, վերածել: *) Ջոջիկ-Մարդեր (Կ·38՝ ֆաճ գ'էճ ճոչ մարդեր), Երիցագոյններ, Եկեղեցւոյ... *) Երէց, Թերեւս Հայրապետ, գերագոյն Հոգեւոր-պետ: *) կապել, Ճանդեցնել, եզրակացնելով վերջացնել:

Աստծու կամքով՝ Քեզի Տըղա՛յ մ՝ պիտ՝ ըլլայ, —
Բայց դիտնա՛ս որ…՝ Դո՛ւն ալ՝ ու Քո կընիկն ալ՝
Պիտի մեռնիք՝ երբ աշխա՛րհ գայ Ձեր Տըղան,
Ու Ան պիտի ո՛րբ մընայ…»:
= «Վընաս չըկայ,–ըսաւ այնտեղ՝ Դաւիթն ալ–·
Մենք երկուքս ալ երբ մեռնինք…՝
Տըղան ճամբէք Մըսրայ–Խաթուն Իսմիլին,
*Ան կըպահէ՛ *) Իմ սիրոյն…»:*

368. Դաւիթ-Մըհէր՝ Կ՚ըսէ Իր Կնկան.- «Զաւակ Որ Ունենանք՝ Մեր Ցաւն Անուշը Չի՛ Կորսուիր»

Չ(Հ·20), Հ·20, Ե·494,614, Չ·՝Ե·614, Չ(Ց·82), Ց·83, Չ·՝Ա·5, Ա·5, Խ·2,3, Չ·

Քառասուն ժամը որ լըրացաւ՝ Դաւիթ–Մըհէր ի՞նչ ըրաւ.–
Ելաւ գընաց Իր կընկան Դուռ, կանչեց, – «Հո՛ւր–վարդ, դուռը բա՛ց»:
Կընիկն եկաւ Դուռը բացաւ՝ ի՞նչ ըսաւ· —
= «Մարդը որ կայ՝ Գըլո՛ւխ է,
Կընիկ որ կայ՝ Ձեռ–Ո՛տ է, —
*Չի կըրնար Դուռ փակա՛ծ պահել վեր՝ *) Մարդուն:*
Դուռ կըբանամ՝ կուգաս Տո՛ւն…,
Թոյլտըւութիւն ունի՛ս՝ որ գաս Իմ կողվէնք…,
Ա՛յ Մարդ,–ըսաւ–, Դո՛ւն դիտես…:
Բայց ի՛նչ ատեն Աստուած Մեղի Զաւա՛կ տայ՝
Մենք երկուքս ալ՝ չ՚ուրախանա՛նք Իր վրայ…, —
Ե՛ս ալ՝ Դո՛ւն ալ՝ կըմեռնինք…,
*Ու Մեր Տըղան պիտի մընայ վեր՝ ցըղին *)…,*
Որբ ու անտէր պիտի մընայ այս աշխարք…»:

Դաւիթ դարձաւ՝ Կընկան նայեց ու ըսաւ· —

— Թող ըլլա՛յ՝ թող որբո՛ւկ կեցայ վեր՝ ցըղին †)…

---

*) Պահել, Ինամել: *) Վեր՝, Վրայ, վերայ: *) Մնալ վեր՝ ցըղին, Որբ մնալ· (ցօղ՝ ցըղի = ծորենի ցօղուն): Համեմատի· Խորենացու Որբ-ի-ին· Տեսնել Բ· Հատ·· †) Երդով:

Մէկ տիրոջ *) մը՝ պիտի ըլլա՛յ Մեր Տըղին...:
Աստծու պահած Գառնուկը՝ Գայլ չի՛ ուտեր...»:

Ապա դարձաւ՝
—«կընի՛կ,–ըսաւ–, դէ՛, որ Մենք կանք՝ պիտի մեռնինք այս աշխարհ,
Օր մ՝ ծընե՛ր ենք՝ օր մ՝ ալ անշուշտ պիտ՝ մեռնինք...,
Բայց երբ Մեզնէ Տըղա՛յ մընայ Մեր փոխան՝
Մենք նորէն ո՛ղջ կըյիշուինք...: —
Մեր Զաւակը որ ելնէ Մեր Անճին պէս՝
Մեր Տան անուն չի՛ կորսուիր...»:
= «Երդումկոտո՛ր *) կ՛ըլլանք,–ըսաւ–, Դո՛ւն դիտես...»:
Դաւիթն ըսաւ, — «Աստուած Տըղա՛յ մ՝ տայ Մեզի՝
Երթայ Մըսըր, եւ Մէլիքի օճիք բըռնէ ու թոթուէ...,
Հայու ձըրագ չըհանդի՛...»:

263. Դաւիթ-Մըհէրի Կինը Ցոի Կ՛մճայ Եւ Իր Երդումը Կըկրկնէ

Խ·3, (Ձկ·386,387), Զ·՝Ձկ·388, Ե·494, Հ·20,370, Ց·83, Զ·

Դաւիթ ելաւ դընաց Կընկանն Անկողինն: —
*Էրիկ–Կընիկ որ իրարու կո՛ւշտ *) գացին՝*
*Կընիկ այնտեղ տըղո՛վ *) մընաց Դաւիթէն: —*
Ան ալ, Հուր–Վարդ, երդում ըրաւ՝ ու ըսաւ. —
— «Դաւի՛թ,–ըսաւ–, ես կըխընդրեմ Աստուծմէ՝
Որ ծընելիքն՝ Աղջի՛կ ըլլայ կամ Թէ Մանչ՝
Աստուած առնէ՛ Իմ Հոգին
Անի չպահե՛մ ու չըտիրե՛մ վեր՝ աշխըրքին, մէջ երկրին...»:

Դ. ԴԱՒԻԹ-ՄԸՀԷՐԻ ՎԱԽՃԱՆ

264. Դաւիթ-Մըհէր՝ Լողացած Աեռն Կըտեսնէ Որ Իր Թուի Մըսէ Խաչը Սեւցեր Է

Զ·, Ձկ·378,379,380,381,382,383,384, Զ·

Դառնանք զըրոյց ո՛ւրկէ տանք, —

*) Տիրող, *Ինամող*, դիտող, դիտեցնող: *) Երդում(ցա)կոտոր, երդմնազրուժ: *) Կուշտ, *Քով*, քով–քովի: *) Տղայ, *Ցղի*:

Զըրույցը տանք Դաւիթէ՛ն։
Լուսուն ելաւ՝ կընկան ըսաւ, — «Հուրի՛–Վարդ,
Ասօր՝ պուտ մը ջուր դիր տաքցուր՝ լողանամ...»։

Կընիկն ելաւ՝ ջուր տաքցուց ու կանչեց ըսաւ էրիկին. —
= «Արի՛, Դաւի՛թ, ջուր տաքցուցի՛, եկո՛ւր որ ֆեզ լոգցընեմ»։
Դաւիթ–Մըհէր՝ լաթեր հանեց՝ ի՞նչ տեսաւ, —
Աչքն ինկաւ Իր ձախ Թեւին... †)՝
Նայեց տեսաւ՝ որ Իր Թեւի Մըսէ–Խաչը սեւցեր էր..., —
— «Կընի՛կ,–ըսաւ–, Թէ Իմ վըրաս մէկ պակասութիւն *) մը տեսնես՝
Զըլա՛յ որ տաս Իմ երես...»։

Կընիկ երբոր ջուր լեցուց վրան՝ որ լըսար՝
Տեսաւ՝ Դաւիթ Մըսէ–Խաչը սեւցեր էր՝
= «Վա՛յ, Մա՛րդ,–ըսաւ–, ֆու Խաչն ինչ ֆու ձախ Թեւին էր՝
[սեւցե՛ր է...»։
Ըսաւ, — «Կընի՛կ, չէ՞ ես ֆեզի առաջուընէ՛ խօսեցայ,
Ըսի՝ «Որ մէկ պակասութիւն մը Թէ տեսնես՝
Զըլա՛յ որ տաս Իմ երես...»։

Նո՛ր՝ Դաւիթի մըտքին եկաւ՝ ըսաւ, — «Վա՛յ...,
Ես Այն Մարդուն *) ո՛ւխտ ըրի ու երդուեցայ՝
Երեք օրէն պիտ՝ երթայի կըտիւ...,
Ու չըգացի երդումիկուտո՛ր եղայ ես..., —
Անո՛ր համար Իմ Մըսէ–Խաչ սեւցեր է...»։

Ըսաւ, — «Կընի՛կ,–ըսաւ–, չէ՞ ես ըսի ֆեզ՝
«Ի՛նչ որ տեսնես՝ չըլա՛յ որ տաս Իմ երես»...,
Ինչո՞ւ ըսիր՝ ու տըւիր Իմ երեսին...»։
Կընիկ՝ Հուրի–Վարդն ալ՝ ըսաւ, = «Ապա չէ՞ որ ինձ չըսիր՝
«Այսպէս յանցանք մ՝ եմ ըրեր՝
Զըլա՛յ որ տաս Իմ երես»..., —

---

†) Զկ·380–381՝ աչ թեւին։ Բայց ԶՄ·655–ի մէջ որոշ կ՚ըսուի, — «Վեր՝ իմ ձախ թեւին՝ Մըսէ–Խաչ ունիմ, վեր՝ իմ աջ թեւին՝ Խաչ–Փետրազին ունիմ»։ Ու բոլոր «Ճիշամ»ներուն մէջ ալ՝ աչ թեւին՝ Մի–ա՛չ–Խաչը չ՚է, այլ Խաչ–Փետրազինը։ *) Պակասութիւն, Թերութիւն, յանցանք։ *) Այն Մարդ, Այսինքն Հման։

Ես ըսի թէ՝ «Կ'ըլլայ որ մէկ ուրի՛շ յանցանք մը կ'ըլլայ՝
Զիտա՛մ ես Քու երեսին…»:

265. Երդմնակոտոր Դաւիթ-Մըհէրի Մահը

ՁԿ·385,389, Ձ·՝ՁԿ·389, Ա·5, Ձ·՝Լ·97, (Հ·20), Հ·20,411, Խ·3, (Ճ·25), Կ·38,8, Ե·549, 616,759, 952,993·

Դաւիթ–Մըհէրն ալ՝ անկէ ետք՝ ամեն օր՝
Կըմըտածէր՝ կ'ըսէր, «Հէյ–վա՛խ…, ասիկ ի՞նչպէս ես մոռցայ՝
Զըգընացի՛ Ան Ըմբիշին, — Հըմանկին,
Իր հետ կըռի՛ւ ընէի…, —
Այսպէս ահա երդումկոտո՛ր եղայ ես…»:

Ան ալ, Դաւիթ, երբ ո՛ւխտ ըրաւ ու երդում,
Երեք օրէն պիտի երթար վեր՝ Հըմանկի՛ն կըռիւի,
Մոռցաւ չըշնաց, երդումկոտո՛ր էր եղեր,
Անոր Թեւի Մըսեղէն–Ծայէն ալ սեացաւ, —
Շա՛տ իր Սըրտին դըրաւ Դաւիթ, հիւըծեցաւ, —
Մըսրէն դարձի քառասուներորդ օրէն վերջ՝
Ինչպէս որ Իր Ջոջ–Մայր Քառասուն–Մամ–Դոհարը ըսած էր †)
*Ողորդմա՛նց *) ալ՝ Դաւիթ–Մըհէր կըսկըծուրաւ *) ու մեռաւ: —*
Աստուած հոգի՛ն լուսաւորէ՝ Մըհէրի Լաճ Դաւիթի՛ն…:
[Դէ՛, Սասմանց–Տան Մարդերուն՝
Զարը–ըսպանում չ'էի՛ եղեր, —
Իրենց մահո՛վ են մեռեր:]

266. Դաւիթ-Մըհէրի Կռակը՝ Իր Մահէն Առաջ

ՁՍ·315, (ՁՍ·315), Ձ·՝Հ·20, Հ·20, (Խ·3), Ա·5, (Ա·5), Ճ·83, Ձ·՝Ճ·83, Ե·494,616, (Ե·1094).

Դաւիթ–Մըհէր իմացա՛ւ որ պիտի՝ մեռնէր,
Մահէն առաջ՝ կըռակեց ու ի՞նչ ըրաւ· —
Կանչեց քերաւ Քեռի–Թորոս +), պատուէ՛ր տըւաւ ու ըսաւ· —

---

†) Տեսնել Հատուած 245: *) Ողորդմանց, Իրապէս, աստուքիւ, գուշակուածին համաձայն: *) Կսկծուտրիլ, կսկիծի մէջ իյնալ, վըշտակրիլ: +) Խ·3, Ա·5՝ Չէնով–Ճովաճ, ՁՍ·315՝ Եղբայր՝ Մանուկ: Տեսնել նաեւ Հատուած 240:

— «Ինձի Զաւա՛կ մ՝ պիտի ըլլայ, Աստուծով,
Թէ մանչ ըլլայ՝ Դաւի՛թ դընէք իր անուն.
Ես՝ իմ կընիկ՝ Մենք երկո՛ւքս ալ պիտ՝ մեռնինք, —
Այստեղ՝ Անոր՝ չահող–պահող մէ՛կ չըկայ···,
Իմ Տըղային չըկերցընէ՛ք ուրիշ ծիծ,
Առնէք տանիք Մըսրայ–Խաթուն Իամիլին, —
Սիրոյս համար՝ Ան իմ Տըղան կըպահէ՛՝
Մինչեւ ծիծէն կըտըրուի···:
Ու մինչեւ որ Մեր Տըղան ալ մեծանայ՝
Քեռի՛–Թորոս, Մեր Տըղայի Խընամակալ՝ հո՛ Դուն ես,
Իմ Տըղայի մեղք ու վարձքը Քո՛ւ վիզն է···, —
Քանի կըմնաս՝ լա՛ւ պահես
Մեր Զօլանց–Տան Սասմայ Ճըրագ չըմարի՛···»:

Դաւիթ որ Իր կըտակն ըրա՛ւ ու պըրծաւ՝
Երդումկոտո՛ր եղաւ, ինկաւ ու մեռաւ: —
Մեծ հանդէսով վերցուցին զ'Ինք՝ ու թաղեցին 'ի Սասուն:

267. Դաւիթ-Մրհէրի Զաւկին Ծնունդն Ու «Դաւիթ» Կոչուիլը

ՁԿ·391,343, Ձ(Հ·411), Հ·20,370,411, Ե·1094,616,861,759, 861–Կ·38, Ե·952,494, Ե·549,993,726,707, Ը·83, Խ·4, (Խ·3), Ա·5,53,64,54, Կ·38,8, (Կ·8,38), Լ·97, (Լ·97).

Անցա՛ւ մէջոց մ՝ ու տարեն մ՝, —
Ինը ամիս, ինն օր, ին ժամ, ինը վայրկեան լըրացա՛ւ, —
Դաւիթ կընիկ՝ որ երեխո՛վ մընացեր էր՝ պառկեցաւ,
*Աստուած տըւաւ՝ Դաւիթին եղաւ մէկ Տըղայ *): —*
Բերին Տըղան մըկըրտեցին, կընքեցին: —
Տէրտէր հարցուց, — «Քեռի՛–Թորոս, Տըղի անուն ի՞նչ դընենք:»
Ան ալ ըսաւ, = «Քա՛նի որ Այդ Տըղան որբ է եւ անտէր,
Հայրիկ չունի՛, եղբայր չունի՛, Մէ՛կ չունի, —
Շա՛տ դառնութեամբ պիտի անցնէ իր օրեր, —
Անոր համար՝ Աստր անուն՝ Դաւիթ–Որբիկ †) Թող կոչուի···»:

---

*) Տղայ, Մանչ զաւակ: †) Ա·54՝ Դաւնիկ–Որբիկ, թերեւս ա–զաւաղը՝ Դաւիթ–Որբիկի,, զի՝ Ա·53–58 եւ 59–61 էջերով յիշուած դէպքերը՝ որք ծնած Թլոլ–Դաւիթի հետ է որ կապ ունին:

Անուն դըրին ԴԱՒԻԹ, Իր Հօր՝ Ջոջ–Դաւիթի՝ անուան վրայ, —
— «Հօր անունը,–ըսին–, գետին չըմընա՛յ»:

268. Դաւիթ-Մրհէրի Ծեւէն՝ Իր Կնիկն Ալ Կրմեռնի, Ցղաճ Կ'մնայ Որբ

Կ·8, Կ·8՝2, Կ·38, Հ·370,20,411, 2·՝Հ·411, Լ·97, Խ·3, Ե·494,549, 616, 861,952,1094,993, (Ե·10,616), 2·՝Ա·5, (Ա·64)·

Տըղայ–Դաւիթ Քառասունքը դեռ լեցուած չէ՛ր՝
*Մայրը՝ Հուր–Վարդ՝ բալուլ *) թողուց տախտին մէջ *), —*
— «Դաւիթ՛ն յետոյ,–ըսաւ–, ինձի արեւալոյս վայել չ'է՛ր···»,
Ու եօ՛թ դուռնով նե՛րս փակուեցաւ, սո՛ւգ պահեց:

Տըղան երբոր կընքեցին ու բերին Տուն՝
Դաւթի կինն ալ՝ հիւանդացաւ ու մեռաւ,
Տըղան մընաց որբ–անտէր···:
Որբ էր մնացեր Իր Հօրմէն՝
Հիմա այլեւս Իր Մօրմէ՛ն ալ որբ մընաց···:
*Երկուսին ալ, — Հօր Մօր —, վախճանք *) հասած էր՝*
*Երկուքն ալ չուտ *) ինկան մեռան, Իրենց Զաւակ ո՛րբ մընաց···, —*
Քեռի–Թորոս, Ծրուան–Վէգին՝ Այդ Երախան կըպահեն···: (Ծ)

Ե. ԱՆԻՇԱՒՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ՝ ԴԱՒԻԹ-ՄՐՀԷՐԻ ՄԱՀԷՆ ՎԵՐՋ

269. Մրսոյ Զօրապետը՝ Սասունցի Վրոյ Կուգայ Եւ Առ-ու-Գիւրի Կրօտանի

2·, (Ա·54), 2·՝Ա·54, Ա·5, (Լ·72,12,17,15), Լ·12,72,73,97,17, 15, 2·՝Ե·789,1095,952, (Ե·952,789), Ս·149, 148,151, (Ս·151,148, 147,145)՝2·, Ճ·24, Կ·121, Հ·411, Խ·2, (ՀԿ·299, ՀՍ·103)·

Ջըրո՞յն ուրկէ՛ տանք հիմա, —

---

*) Բալուլ, *Խանձարուր*: *) Թողուլ տախտին մէջ, *Մէջտեղ՝ անտէր ձգել*: *) Վախճանիլ, *Վերջ, վախճան*: *) Շուտ, *Անժամանակ, վաղահաս*: (Ծ) *Սասմանց–Տան փուխրախակներու բաղդատութենէն կ'երեւի որ՝ Թլոլ–Դաւիթի ճիւղը՝ իր վրայ հաւաքեր է բոլոր խոջ արաբիները: Այնպէս որ իր հօր Դաւիթ–Մհէրի ճիւղը աղքատ է մնացեր դիւցազնական գործերէ: Շատ հէքիաթներու մէջ խառն երեւցած դիւցազնական մասերէն՝ կարելի է նիւթեր հանել Դաւիթ–Մհէրի ճիւղին համար:*

Մըսրայ–Եըկրի Զօրապետէն՝ կուզ–Բադինէ՛ն †) պըրոյց տանք։ —
Եըթըր տեսաւ Սասունի մէջ Մա՛րդ չըկայ, —
— «Եըթանք,–ըսաւ–, առ ու դերի՛ ընենք՝ գան՛ք։ —
Առիւծ–Մըհէր ու Դաւիթը մեռե՛ր են +),
Մընացեր են մինակ պըղտիկ Տըղաները...»։

*Ան ալ՝ եկաւ՝ Թուղթ մը գըրեց Հողին *) մէջ,*
Ի՛նչքան ցեղեր որ ունի Իր Թըրի տակ՝
Հրամա՛ն հանեց ամեն կողմ, —
*— «Անուն՝ ինչքան Որճեղէ՛ն *) կայ՝ փայտ–բռնող *),*
Գի՛տք է գայ...»։

Ու Զո՛րք ժողվեց..., — ա՛յնքան ժողվեց, ա՛յնքա՛ն Զօրք...՝
Որ Աստղերուն հաշիւ կ՛ըլլայ, Զօրքին հաշիւ չէ՛ր ըլլար...։

Կուզ–Բադի՛ն էր, — չո՛ւտ մը եկաւ, քըշեց Իր Զօրքն ու եկաւ,
Եկաւ Սասնոյ Հորս–Կողմն առաւ՝ նըստեցաւ։ —
Լուր ուղարկեց Սասմանց Գեղի–Թորոսին, —
Թէ, — «Մարդ ունի՞ս՝ ղըրկէ՛ որ գայ՝ կըռի՛ւ ընենք մխասին...,
*Թէ չէ՝ Գաղաքդ առուզերի *) կ՛ընեմ՝ կ՛առնեմ ու կ՛երթամ...»։*

*Գեղի–Թորոս լուր տըւաւ Թէ, = «Դաւիթ–Մըհէր *) մեռեր է...,*
*Տասնըհինգ օր ժամանա՛կ *) տաս Դուն ինձի,*
*Մէկ պատասխան մ՛ կուտա՛մ Գեղի, ինչպէս է *)...»։*

Ան ժամանակ՝ Մըսրեցի՛ն էր, — քըշեց եկաւ Գաղքին վրա՛յ...,
Տիրեց Սասուն, ու տո՛ւրք կապեց տարեկան,
Եօ՛թը տարուան տուրքն ալ առաւ ոսկիո՛վ..., —

---

†) Ա.54՝ Բադդադի խալիֆան, Լ.72՝ Մըսրամելիք։ +) Ա.54՝ Արլազը մեռեր է, Լ.72՝ Սանասար մեռեր է։ *) Հողին, *Իր Երկրին, Պետութեան, տիրապետութեան չրջանակին (մէջ)։ *) Որճեղէն, էրիկ մարդ, այրեղէն։ *) Փայտ–բռնող, *փայտ մը, զաւազան մը բռնելու ուժ ունեցող։ Կ՛ըսուի մանաւանդ՝ դգալ–բռնող։ *) Առուզերի, *Առ ու զերի, առեւանդ ու զերեվարութիւն։ *) Դ. Մհէր, Ա.54՝ Արլազ։ *) Տասնըհինգ օր ժամանակ, Լ.73՝ երեք տարի պայմանաժամ (*Խանդութ–Խաթունն է ուզողը*)։ *) Ինչպէս է, *ինչպէս ալ ըլլայ։*

Գերի՛ քըշեց ու տարա՛ւ...,
Տարաւ կընի՛կ ու Աղջի՛կ...,
*Տարաւ Ձիեր *) ու չո՛ւ Գառնճ...,*
Բըռնեց տարաւ՝ եօթ †) ճիժեր, —
Ծըռան–Վէգին, Ճընճղափոխիկ +), Խոր–Գուսան·
Բըռնած–Կուռիկ, Ճոռ–Կուռիկ ու Վըժիկ–Մըխօ եւ Վարդան §)
Այդ Տըղեկները՝ եօ՛թը մէկտեղ՝ պատանդ առաւ՝ ու գընաց:

*Մըսրայ–Մէլիքն *) ալ՝ այս հետին *) տիրեց բոլո՛ր Մըսրայ–Տէղ,*
Երկիրն՝ ամեն՝ դարձուց Իրեն Թըրին տա՛կ·
Իր ժողովուրդ չէնցուց, պահեց, պաշտպանեց· —
Նըստաւ Երկրին Թագաւոր:

Ան թող մընայ Իր Մըսըր..., —
Մենք ալ դառնանք՝ զըրոյցն ընենք Սասնոյ Թըլոլ–Դաւիթին:—

---

*) Ձիեր, *Լ*·12՝ տարաւ Քուռկէ ջալաթը: †) *Ս*·151, *Ե*·24՝ եօթ (տղաները): +) *Լ*·17 եւ 18՝ Թար–Ճնճղուկ կամ Թաո–Ճնճղուկ, *Ե*·23 եւ 26՝ Ճնճղիկ–Փոքրիկ կամ Փոքրիկ–Ճնճղիկ: §) *Փոխարէ–ները՝ համաձայն չե՛ն այս անուններուն չուրջը:* *) Մըսրայ–Մէլիքէն, *Այսինքն՝ Մըսրայ–Տիկինը Իսմէլ–Խաթուն՝ որ խնամակալ էր· Տե՛ս Հատուած 274:* *) Այս հետին, *Այս անգամ:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՉՈՐՐՈՐԴ ՁԻՒՂԻՆ

ԹԸԼՈԼ-ԴԱՒԻԹԻ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

		Հուծ.
Ա.	Թըլ.–Դաւիթի երախայութիւնը (Սաուլոյ եւ Մըսրայ մէջ)	270
Բ.	Թըլ.–Դաւիթի Մանկութիւնը (Մըսրայ մէջ)	283
Գ.	Թլ.–Դաւիթի Պատանեկութիւնն Ու Հոլի–Խաղը (Մըսրայ մէջ)	291
Դ.	Սաամանց–Տան Անիչխանութեան Շրջանին	322
Ե.	Թըլ.–Դաւիթի Պատանեկութիւնը (Մըսրայ մէջ) Շրնկէն.	331
Զ.	Թըլ.–Դաւիթ՝ Դէպ Իր Ծննդավայր Սասուն	339

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՀԱՑՐԵՆԻՔԻՆ ՄԷՋ

՝Է.	Թըլ.–Դաւիթի Պատանեկութիւնը (Սասունի մէջ)	355
՝Ը.	Թըլ.–Դաւիթ՝ Գառնարած Ու Նախրորդ	367
՝Թ.	Թըլ.–Դաւիթ Ու Կիրակոս. Հարիսա, Ձին Ու Գանձ	389
՝Ժ.	Թըլ.–Դաւիթ Ու Կորեկ–Արտի Պատուը	408
ԺԱ.	Թլ.–Դաւիթ եւ Մարութայ–Վանքի Շինութիւնը	425
ԺԲ.	Դաւիթ Կ՝պատուհասէ Պիրդէն.ը եւ Քոչէրները Ետ Կ՝բերէ	458
ԺԳ.	Դաւիթ Կ՝պատուհասէ Կղզին. եւ Կուխի Կ՝հրաւիրէ Մմլք.ը	486
ԺԴ.	Մմլք. Զօրք Կ՝ժողվէ՝ Դաւիթի Վրայ Կուխի Գալու Համար	514
ԺԵ.	Դաւիթ՝ Իր Հայրենի Ջէն–Ու–Զարդերովը Կ՝գինուի	541
ԺԶ.	Դէթ. Իր Հօր Կթնդրէն. Ու Փրծանն. Անցնլվ. Կ՝երթայ Կուխ	589
ԺԷ.	Դաւիթի Կռիւը՝ Մըսրամէլիքի Հետ	614
ԺԸ.	Կուխէն Ցետոյ՝ Պետական Կարգուսարք	688

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԱՄՈՒՍՆԱՑԱԾ

ԺԹ.	Խանդուտ–Խաթունի Սէրոյ–Գիրը՝ Դաւիթին	712
՝Ի.	Դաւիթ՝ Դէպ Խանդուտ Երթալու Ճամբուն Վրայ	727
ԻԱ.	Դաւիթ եւ Խանդուտ–Խաթուն Քովքովի	737
ԻԲ.	Դաւիթ՝ Խանդուտի Թշնամիներուն Դէմ	767
ԻԳ.	Դաւիթ եւ Իր Որդին Մըհէր. Դաւիթի Մահը	786

ՄԱՄՈՒՆԱԿԱՆ

ՉՈՐՐՈՐԴ ՃԻՒՂ

ԹԸԼՈՂ-ԴԱՒԻԹ

(Թըլոլ Դաւիթ, Թառլաճի-Դաւիթ, Ցղայ-Դաւիթ, Ծուռ-Դաւիթ, Ջահէլ-Դաւիթ, Մըհէրի-Ցիօսեակ-Դաւիթ, Եօր-Ճիւղ-Դաւիթ, Սասմայ-Ծուռը, Սասմաճց-Դաւիթ, ՍԱՍՈՒՆՑԻ-ԴԱՒԻԹ †)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ա. ԹԼՈՂ-ԴԱՒԹԻ ԵՐԱԽԱՑՈՒԹԻՒՆԸ (ՄԱՄՆՈՑ ՈՒ ՄԸՍՐԱՑ ՄԷՋ)

ՋՐՕ. «ՈՂՈՐՄԻ»Ն *)

Կ·1, Չ·(Կ·1, Կ·1 ստրջ·, Կ·7), Լ·61, Ե·968,968 ա·, 969 ա·, 9,725, 969, (Ե·969,969 ա·,951), ՉԿ·390 ա,619,40, (ՉԿ·617), Չ(Լ·5), Ց·80,Ց·80 ա·, Ց·137, (Ց·136), Խ·1,44,51, Ա·63,3,71, Չ·՝Ա·71, ՉՍ·7, Հ·403,19, Չ(Հ·403), Ս·148, Եւ՝ Հատ· 1–ի Աղբիւրը·

— Օրհնեա՛լ, բարեբա՛ր Աստուա՛ծ,
= Երբեմը չա՛տ էր Մե՛ծ–թագաւորին։

—«Ողորմի»–ն, Ա՛ստուած «Ողո՛րմի»–ն՝
Առաջին «Ողորմի»–ն պիտի տամ,
= Հա՛զար «Ողո՛րմի»···՝
Մեր կապուտ–կողի Պա՛պ–թագաւորին։

---

†) Դաւիթ *անունի մասին լուսաբանութիւնները՝ Բ. Հատորով։ Տես եւ Հատուած 311 ստրջ.։* *) «Ողորմի»–ն *երգել՝ Հատուած 1–ի բազմաձայն ձեւովը, եւ Տեսնել նոյնի ստորէջ Մնեքինը.։ Ողորմիին անծանօթ քառերուն բացատրութիւնը՝ Տեսնել նոյնպէս Հատուած 1–ի ստորէջը։* ☛ *Սասմանց–Տան զրոյցին ընթերց առաջ՝ ամեն մէկ ճիւղին սկիզբը առանձին, իսկ Թըլոլ–Դաւիթին մասնաւորապէս՝ պիտի տամ այս «Ողորմի»ն։ Առանց «Ողորմի»ի՝ մեզք կը սեպեն սկսիլ՝ մեծազօր ու մեծազործ Թըլոլ–Դաւիթի զրոյցը։*

— Դառնամ «Ողորմի»-ն կուտամ՝
Մեր կապուտ-կողի Մա՛մ-թագուհիին: †)

— Տանք «Ողորմի»-ն..., հա՛զար «Ողո՛րմի»...՝
Մեր կապուտ-կողի Լո՛սիկ-թագուհո՛ն,
Որ Անիկ Սանասար-Բաղդասարի Մայրն էր:

— Ուր երթանք՝ դառնանք՝
«Ողորմի»ն պիտի տանք, հա՛զար «Ողո՛րմի»...,
Մեր Սասումանց-Տան Ջո՛ջ-Սանասա՛րին:

— Դարձեալ «Ողորմի» մ՝..., հա՛զար «Ողո՛րմի»...,
Մեր Սասնանց-Տան Տո՛ւտ-Բաղդասա՛րին:

— Տանք «Ողորմի»ն՝ Քառասն-Ձիւղ-Մամ Գոհարին,
Որ Անիկ Սանասարի կինն էր:

— Ճիշանք «Ողորմի»ն՝ Դեղձան-Խաթունին,
Որ Անիկ Բաղդասարի կինն էր:

— «Ողորմի»ն տանք..., հա՛զար «Ողորմի»,
Ցըռան-Վէգօին, Ճըլնճղափոխիկին, Քեռի-Թորոսին,
Որ Անոնք Բաղդասարի Տըղաներն էին:

— Դառնանք ««Ողորմի»ն տանք, հա՛զար «Ողորմի՛»,
Մեր Սասմանց-Տունի Առիւծ-Մըհէրին,
Որ Անիկ Սանասարի Որդին էր:

— «Ողորմի» տա՛նք..., հա՛զար «Ողորմի՛»,
Մեր Սասմանց Տունի Շո՛ւշան-Խաթունին,
Որ Անիկ Առիւծ-Մըհէրի կինն էր:

— Տանք «Ողորմի»ն՝ Դա՛ւիթ-Մըհէրին,
Որ Անիկ Առիւծ-Մըհէրի Որդին էր,
Ու Թըլոլ-Դաւիթի Հայրն էր:

— «Ողորմի» մ՝ տանք՝ այն Հուրի-Վարդին,
Որ Անիկ Դաւիթ-Մըհէրի կինն էր,

†) Ծանոթանք եւ կրկնութենէ խուսափելով՝ կըղրկեմ (երգահանները) Առաջին ձիւղին սկիզբը՝ Հատուած 1ով ցուցուած «Ողորմի»-ին՝ ձեւերուն:

Ու Թղլը-Դաւիթի Մայրն էր:

— Ուր երթանք՝ ղառնանք՝ «Ողորմիկն պիտի տանք,
Մեր Սասմանց-Տունի Ջէնով-Օհանին,
Որ Անիկ Քեռի-Թորոսի Որդին էր :

— «Ողորմիկ» մ՝ տանք Գոհար-Խաթունին,
Որ Անիկ Ջէնով-Օհանի կինն էր :

— Ո՛ւր երթանք՝ ղառնանք՝ «Ողորմիկ»ն տանք,
Մեր Սասումանց-Տան Թղլը-Դաւիթին,
Որ Անիկ Դաւիթ-Մըհէրի Որդին էր:

— Ճիշանք «Սատուած Ողորմիկ»ն՝
Մեր Սասմանց-Տունի Խանդուտ-Խաթունին,
Որ Անիկ Թղլը-Դաւիթի կինն էր:

* * *

Խաղանք *) ՃԻՒՂԷ-ՃԻՒՂ՝
Գանք դադրինք՝ վեր՝ Թղլը-Դաւիթի ՃԻՒՂին,
Լսենք զըրոյցը Սասմանց-Դաւիթին:

Անունն ելաւ Ազնանց-Քաջին,
= Հա՛ Քաջին...:
Ով լըսեր էր՝ չէ՛ր հաւատար,
Աչքով տեսան՝ հաւատացի՛ն...:

271. Սասմանց Տունի ՃԻՒՂահամարը

ՉԿ·343, 2·

Սասմանց-Տունը՝ եօ՛թ-ՃԻՒՂ են· —
Սանասարէն (Ա) ծըռնաւ Աւիւծ-Ջոջ-Մըհէր (Բ)·
Մըհէրէն ետք՝ Դաւիթ-Մըհէ՛րն (Գ) է ելեր·
Դաւիթէն ետք՝ Թղլը-Դաւի՛թն (Դ) է ելեր: —

---

*) Խաղալ, պատմելով կամ երգելով՝ առաջանալ: (Ա) = Առաջին ՃԻՒՂ: (Բ) = երկրորդ ՃԻՒՂ: (Գ) = երրորդ ՃԻՒՂ: (Դ) = Չորրորդ ՃԻՒՂ:

Թըլոլ-Դաւիթ՝ Սասմանց Ջոջ-Տան՝ Ջորըտրդ-Ձիւղի կըտրիճն է։ —
«Ղորմէ՛ն տանք իր Հօրն ու Մօր, Պապերուն,
Ջըրոյցն ըսենք՝ քալ ՍԱՍՈՒՆՑԻ-ԴԱՒԻԹԻն։

272. Նորածին Դաւիթը՝ Աճիայր Ու Աճմայր, Ծօղի Վրայ Մնացած

Հկ·391,343,392,393, ՀՍ·316, ե·10,616,549,952,861,993, (ե·494, 952,1094), (Ս·148)·

Սասմանց-Տունի Մեծ-Դաւիթը երբ մեռաւ՝
Մընաց՝ մէկ ժուկ ու ժամանակ որ անցաւ..., —
Դաւթի կընիկ լա՛ճ մը բերաւ, այս անգամ,
Հօր անունը վըրա՛ն դըրին՝ ԴԱՒԻԹ դըրին Տղուն անուն։
Աստծու առալ՝ ո՛ւխտ էր ըրեր այդ կընիկ, —
«Ի՛նչ տեսնէ որ Տըղան ծընի՝ ես մեռնիմ,
*Ըզ մընա՛մ ու չըծընեցնե՛մ *) ես Անիկ...»,* —
Տըղան ծընաւ՝ ինչ մեռաւ...։ —
Կընիկ տարան վերցուցին,
*Տըղան մընաց վեր՝ ցըղին *)...,* —
*Իրեն Մօր խիժ *)՝ Իրեն բերան չը վազեց։*

Սասմանց-Տունը ժողովուեցան ու ըսին, —
— «Մենք այս ի՞նչպէս պիտի ընենք Տըղուն հետ...,
Ո՞ր տեղ ղըրկենք Այս Տըղան՝
Մի՛ծ տան Տըղուն՝ չը մեռնի՛...։ —
Մենք չե՛նք կրնար Դաւթին այստեղ խընամել...»։

273. Քեռի-Թորոս՝ Ծրծմօր Կըյանցնէ Նորածին Դաւիթը

ե·616,494,952,993, Զ·՝ե·892, Ա·54, Զ(Ա·54)·

Քեռի-Թորոս տեսաւ Տըղան որբո՛ւվ մընաց վեր՝ ցըղին,
Կը վախնար որ Տըղան պիտի վընասուէր, —

---

*) Ծծեցնել, Ստինք տալ, կաթ Ջամբել (երախայրին), դիեցնել։ *) Ցօղ (ցըղի), Ծորնուի չորցած ցօղուն՝ իբր խշտի։ Մնալ վեր՝ ցըղին, Որբ անտէր մնալ։ *) Խիժ, Ջաւակ ծնած մօր ծիծերուն առաջին խէժոտ կաթը։

— «Մըծմէ՛ր *) մ՛ բըռնենք,–ըսաւ–, կա՛թ տայ Այս Տըղին»։
Գիտէ՛ր որ Ան երբ մեծանայ եւ աճի՝
Աղնանց–Ցեղէն է, չատ ուժով պիտ՝ դուրս գայ,
Երթայ Բաղդադ *)՝ կըռապաշտի հետ կըռւի։ —

Ելաւ՝ այնտեղ՝ Մա՛րդ ուղարկեց Գիւղի մէ՛ջ, —
— «Տեսէ՛ք,–ըսաւ–, որո՞ւ կընիկ նո՛ր ազատուեր է օրերս,
Ու երախա՛յ բերեր է՝
Անոր Մարդը կանչեցէ՛ք Թող գայ այստեղ»։

Գացին տեսան՝ խեղճ Մարդու մը կընիկ նո՛ր է ազատուեր,
Երախան ալ մեռեր է, —
կանչեցին ու բերին այդ Մարդ՝ կուշտը *) Քեռի–Թորոսին.
— «Այս երախան ա՛ռ տա՛ր,–ըսաւ–, Քո կընիկը Թող ծիծ տայ·
Քեզի հաց ու դըրա՛մ կուտամ, ու Քո վարձքը լիուլին»։ —
Բայց Թէ մէ՛կ բան պատահի այս Մեր Տըղուն՝
Ալ Իմ ձեռքէն երբեք չունի՛ս ազատում...»։

Այդ Մարդ ելա՛ւ՝ Տըղան տարաւ Իր կընկա՛ն,
կընիկն առաւ Այդ Երախան՝ որ կա՛թ տայ՝
Դաւիթ կո՛ւմ *) մը ծիծ որ քաշեց՝ կին մեռաւ...։
Մէ՛կ ալ բերին՝ Ա՛ն ալ այղպէս՝ չըդիմացաւ ու մեռաւ...։
Սամսոյ Քաղաք՝ ի՛նչքան Մըծմէր որ գըտան՝
Տըղայ–Դաւիթ տըւին Մըծմօր՝ որ դիեն, —
Տըղան ո՛չ մէկ Մըծմօր ծիծը չըվերցուց։ —
Ըսին, —«Զո՛ւր է..., ամեն Մըծմէր չի՛դիմանար Այս Տըղուն
Դիւցազնի ձե՛ւ *) է Ասիկ...»։ —

274. Նորածին Դաւիթը՝ Մըսրայ-Ցիկինին Ղրկել Կ'որոշեն

Զ·՝Հ·411, (Հ·370), Ե·494,892,952,820, (Ե·494,952,616,10,1094), (ՉՎ·1), ՉԿ·394,398,395,396, Չ(Ս·148), Ս·148, Չ(Ց·24), Ց·24 և ստրջ·, Լ·97, Կ·39,8, Չ·

Տեսան որ չէ՛, Տըղան պահել չի՛ն կըրնար,

*) Ծծմէր, Մէծ տուղ մայր, ծծմայր, սոնդիաց։ *) Բաղդադ եւ Մըսըր անուններըը՝ փոփոխակէ փոփոխակ՝ կըյիշուին իբր հին Ասորեստան։ *) կուշտը, քովը, մօտը։ *) կում, Ռամպ։ *) ձեռ, ձիւղ, ցեղ, տերունդ։

Մխաք ըրին ու լ՚ինչ ըսին. —
Թէ,— «Տըղուն Հայր՝ Դաւիթ–Մըհէր՝ Մըսը՛ր դընաց մէկ առեն,
Մէկ լիքի Մօր հետ նըստեցաւ՝ կայնեցաւ,
Ըսին, էրա՛ւ, Իսմիլ–Խաթո՛ւն ալ՝ մէկ Տըղա՛յ քերեր է,
Եւ Իր Տըղուն ծի՛ծ կուտայ, —
Ղըրկենք երթայ Անոր մօ՛տ,
Ծի՛ծ տայ՝ տիրէ *) Այս Տըղան...:
Այստեղ պահող ու կաթ տըւող մէ՛կ չըկայ...,
Ու չորս–կողմը՝ Թըշնամի՛ են եղած Մեզ...,
Որ տիրուքիւն *) ալիւր ընէ Մեր Տըղուն...:
Բերենք ղըրկենք Մէկլիքի–Մօր՝ Թող պահէ:
Թէ որ պահէ՝ Մըսրայ–Տիկի՛ն ալիւր պահէ,
Ա՛լ ուրիշ մէկ չի՛ պահեր..., —
Չէ՞ որ Ան ալ՝ Ջոջ–Դաւիթի կընիկն է...»:

Եկան՝ այնտեղ՝ Մա՛րդ ղըրկեցին Մըսրայ–Տիկին Իսմիլին, —
— «Այս Տըղուն Մայրն,–ըսին–, կանուխ մեռե՛ր է...,
Այս երախան մընացեր է վեր՝ ցըղին...,
Ճամբենք Տըղան՝ գայ այդ տեղ,
Մի՛ծ տաս Իրեն, խընամես, —
Ի՛նչ որ ուզես՝ կուտանք Քեզ...»:

Իսմիլ–Խաթուն Տիկինն ալ՝
Որ Իր էրկան մահէն վերջ,
«Մըսրամիլիւ» անունով,
Թագաւոր էր Մըսրայ մէջ, — †)
Եկաւ՝ Սասուն լո՛ւր ղըրկեց, —
Ըսաւ, = «Տըղան ղըրկեցէք գա՛յ՝ ես պահեմ.
Ծովասարը, ճապաղջուրն ու Քոթէն կուտաք պահողչէք...»:

Դաւիթ այնտեղ որ չըկըրցա՛ն պահէին, —
Շատակեր էր, ծի՛ծ տըւո՛ղ ալ չունէին,
Եկան ըսին Թէ, — «կուտա՛նք...»:

---

*) Տիրել, Դիպել, դիւեցնել, խնամել: *) Տիրուքիւն, Հոգածուքիւն, խնամք: †) Տեսնել Հատուած 269:

— «Մ՛ով տանէ, ո՛վ չըտանէ···»:
= «Զէնով–Օհա՛ն, թէ՞ Ջալալի–Զին տանէ···»: †)

275. Զէնով-Օհան՝ Կ՛առնէ Ցոյց-Դաւիթը Կըռացնի Մըսըր

Ձ4·397, Ե·861,494,549,616,1094,550,495, (Ե·1094, 494,549,550), Ց·83, Լ·97, Հ·20,371,411, (Հ·371), Խ·3, Ա·5, Կ·39,8, (Կ·8), Ս·148՝2·, (2Ս·316)·

Ելան՝ Դաւիթ՝ Մըսրայ–Տիկին Իմխլի մօտ կըճամբեն· —
*Զէնով–Օհան վերցուց Տըղան՝ բալուլի *) մէջ վաթուքեց,*
Դըրաւ Տոպրակ՝ ճըղեց Թեւ,
Տիկ մը կարագ բեռցուց, ու մէկ տիկ ալ Մե՛ղր,
Առաւ Իր հետ՝ Դաւիթի Հօր ծառաներէն Երկու–Մարդ, —
Բաթման–Բուղէն, Ճարպ՛ար–Քամին Ըմբէշները,
Հեծաւ Իր Ձին, լինկաւ ճամբայ, գընաց իջաւ ՝ի Մըսըր,
Առաւ տարաւ Մըսրայ–Տիկին Իմխլին,
Որ Դաւիթը չահէր–պահէր՝ մինչեւ քըչիկ մ՝ ջոջանար···»:

Ճանապարհին, եօ՛թը ցերեկ՝ եօ՛թ գիշեր,
Դաւիթ անծիծ էր մնացեր· —
Զէնով–Օհան եւ Ըմբէշներ որ հե՛տն են՝
*Մանուկ–Դաւիթին՝ ծիծի փոխան՝ ընտիր Դազպին *) կերցուցին,*
Մինչեւ Իր տեղ հասցուցին:

Երբոր հասան՝ Զէնով–Օհան ըսաւ Իմխլի–Խաթունին· —
— «Եղբօ՛ր–կընիկ +), Հա՛րսս +),–ըսաւ–, Դաւիթ ձի՛ժն է Ախկա:
Դաւիթ՝ Իր կին՝ մեռա՛ծ են,
Այս երախան մընացեր է որբ–անտէր,
Ա՛ս ալ՝ սեպէ՛՝ Քու Որդի՛ն է, ա՛յ կընիկ,
Սատանի մէջ գ՛Ինքը պահող մէ՛կ չըկայ···,

---

†) Տեսնել Հատուած 276 սորիչի Մնթիին·: *) Բալուլ, Խանճարուր: *) Գազպին, Մեղրահամ կանաչ հիւթ մը՝ ծառի տերեւներուն վրայ թանձրացած, որ շատ ուժեղ անունդ է· մանանայ: +) Եղբօրկնիկ կամ Հարսս մակդիրովը կը կոչեն՝ առհասարակ՝ իրենց հօրեղբօր կին և անոր տեղը բռնող ասն հարսը:

Ա՛ռ՝ Մըհէրի †) սիրոյն համար՝ խընամէ՛,
*Մինչեւ քէչ մը ճըլտորի *) ու մեծնայ,*
Իմաց տա՛ս ու դանք տանինք...:
Այնքան չհեռ՝ մինչեւ հա՛ց–մաց, կե՛ր ուտէ՝
Նորէն ղըրկէ՛՝ Մենք պահենք...»:

Իսմէլ–Խաթուն ուրախացաւ Դաւթի վըրայ եւ ըսաւ. —
= «Բարո՛վ եկաք, հաղա՛ր բարով, ընդունեցի՛ ես,–ը
Վընաս չըկա՛յ..., սեպէ՛՝ Ա՛ս ալ Իմ Տըղա՛ն է, կըպահեմ...: —
Մըհէր Ինձի աղէկութի՛ւն է ըրեր,
*Անոր սիրուն՝ Իր Տըղան ալ՝ երկո՛ւ տարի կըշահեմ *):*
Իմ Մինձերը դեռ կա՛ք կայ,
Մէլիքես հետ՝ Դաւիթին ալ՝ կաք կուտա՛մ ու կըպահե՛մ...»:
Իր մըտքին մէջ ալ ի՞նչ ըսաւ ինքիրեն, —
«Հէ՛յ, Ա՛ս Տըղան պիտի մեծնա՛յ..., երթայ Սասուն, մա՛րդ դառնայ:
Շահեմ–պահեմ՝ մընայ այստեղ, ըլլան երկու եղբայրներ՝
Մըսըր, ամբո՛ղջ երկիրները դըրաւեն...»:

276. Մէլիքի-Մայր Ի՞նչ Ար Կ՚ըլլէ՝ Դաւիթ Իր Մինձ Զի՛տուներ

Խ·3,5, Ե·495, 550,759, Ճ·83, Պ·39,8, Կ·39՝2·, Կ·8՝2·, Հ·20, Ա·5·

Զէնով–Օհան՝ ա՛լ Դաւիթը Մըսըր թողուց՝ ե՛ւ դարձաւ.
Բաթման–Իւզան, Ճարպա՛ր–Քամին հո՛ն կեցան: +)

Իսմէլ–Խաթուն ելաւ վերցուց Տըղայ–Դաւիթ՝ որ Մի՛ծ տայ,
Առաւ Իր գիրկ, Մինձը հանեց՝ Տըղուն քերա՛ն կըդընէ, —
Ի՛նչ որ ըրաւ՝ Մանուկ–Դաւիթ Անոր Մինձը չըճըճե՛ց...:—
Մէլիքէ–Մայր՝ Դաւիթ Դըլուխն ա՛յս Մինձի վրայ կըթերէ՝
Դաւիթին Իր Գլուխ մէկալ դի՛ւը կը չըրջէ...:
Ա՛ռ՝ Մըհէրի †) սիրոյն համար՝ խընամէ՛,

†) Այսինքն Դաւիթ–Մըհէրի: *) Ճլտորիլ, կազմը հաստատուիլ, ուժգնանալ: *) Շահիլ, Դիտել, դիտեցնել, խնամել: +) Մանուկ–Դաւիթը՝ Մըսըր տանելու պաշտօնը՝ ըստ Ե· 892–894, 952–953 եւ 993–994 պատումներուն՝ Քուռկիկ–Ջալալին էր յանձնուած: Զին կը տանի Դաւիթը կը յանձնէ Մըսրամէլիքի Մօրը: Կ՚ուզեն՝ առիթէն օգտուելով՝ Զին պահեն Մըսըր: Բայց Քուռկիկ–Ջալալին պարխպէն թռչելով՝ կ՚անցնի կուգայ Սասուն: Տեսնել այդ էջերը՝ ծանոթագրութիւններուն մէջ եւ Հատորած 348-350:

Ծըծմէջը՝ մէկա՛լ Մէծին վըրայ կըբերէ՝
Ան՝ մխուս կո՛ղմ կ'փախցնէ···։ —
Ինչ որ կ'ընէ՝ Տըղան Մէծը չի՛ բըռներ···,
Անոր Մէծը չի՛ ծըծներ ու չի՛ ծըծներ···։

Երե՛ք օր ու երե՛ք դիշեր՝ Դաւիթ բա՛ն մը չկերաւ
Օտար Ծըծի կաթ չկերա՛ւ, Անոր Մէծը չի՛ծըծեց···։ —
Մէլիքի–Մայր՝ չըսա՛ր մընաց, ու կուլա՛յ···,
Ա՛լ չի՛գիտեր՝ Դաւիթի հետ ի՞նչ ընէ···։

277. Մելիքի Նախանձն Ու Մօր Հետ Վիճելը

Ա·5, 12·՝Ա·5, Ե·83,84, Զ·՝Ե·84, Է·20,21, Կ·8,39, Զ(Կ·39,8), Ե·759,760, (Ե·760)·

Մըսրամէլիքն ալ դացեր է Թըւչնորսի,
*Որսէն յետոյ՝ Նիզակ–խաղով դարձաւ եկաւ *) մըտաւ նե՛րս, —*
— «Մարէ՛,–ըսաւ–, աս ի՞նչ Տղա՛յ է՝ Դուն Ֆո գիրկը առեր ես··»։
Ըսաւ, = «Որդի՛, Ֆո եղբա՛յրն է Ասիկ ալ···։ —
Ֆո Հայրն ու Իր մի՛ու կընիկ՝ Սասունի մէջ մեռա՛ծ են,
Ինձ զըրկեր են Այս Որբ Տըղան՝ որ պահե՛մ···, —
Ես Մէծ կուտամ՝ չի՛ ուտեր···»։
— «Դուն օտա՛ր ես,–ըսաւ Մէլիք Իրեն Մօր–·
Անոր համար՝ Ան Ֆու Մէծը չի՛ ծըծեր···։
Անի Հա՛յ է՝ Մենք կըտապա՛չտ, հարկաւ Ֆո Մէծ չի՛ ուտեր»։

Մայրը դարձաւ Իր Տըղայ՛ին,= «Մէլի՛ք, Որդի՛,–ըսաւ հոն–·
Ի՞նչ ընենք Այս Տըղու հետ···, —
Ասիկ կ'ըլլայ երե՛ք դիշեր երե՛ք օր՝
Իմ Մէծ չ'ո՛ւտեր Այս Տըղան···։
Որ անօթի այսպէս մընայ՝ կըմեռնի···, —
*Մենք տմօթա՛նք *) կ'ըլլանք Անոր տէրտէր մօտ···։*
Ի՞նչպէս ընենք տպա Մենք Այս Տըղուն հետ···, —
Ինչո՞վ պահեմ···՝ քանի որ Իմ Մէծ չ'ո՛ւտեր···»։

— «Ֆո տուն չ'աւրի՛···,–ըսաւ Մէլիք՝ Իրեն Մօր–,

---

*) Ե·83՝ Ուրմ խաղալուց եկաւ։ *) Ամօթաւիճ ըլլալ, *Ամօթով մնալ*։

Ինչքը չա՛տ է Աստը Հօր…,
Զունի՛ Մեղըր…, չունի՛ կարագ…, անո՛ւշ–անուշ չա՛տ բաներ. —
Անի բերող Ըմբիչները որո՞նք են…»:
= «Բաթման–Բուղան ու Ճարպահար–Քամի՛ն են»:
Ըսաւ, — «Անոնք մէ՛կ ալ դարձո՛ւր՝ երթան է՛ւ,
Ելնեն երթան Իր Հօր Տուն,
Մէկ բեռ †) կարա՛գ, մէկ բեռ ալ Մե՛ղր Թող բերեն,
*Եղումեղրով խորխս(խ) կ'ընես *) Դուն այստեղ,*
Կուտաս ուտէ՛ Այդ Տըղան…, —
Աստր Հօրը սէրո՛ւն համար կըպահես…,
Մենք ալ՝ Անոնց վորձանքներէն կըպըրծընինք պարզերես: —
Մեծով–վոքրով՝ Անոնք վորձա՛նք են Մեզի…»:
= «Որդէ՛, Մէկի՛ք,–ըսաւ Մայրը Իր Տըղուն–.
Ինչո՞ւ պիտի վորձանք ըլլան Մեզ Անոնք…, —
Հօր կողմանէ՝ Ասիկ Քեզի Եղբա՛յր է…»:
— «Ասիկ,–ըսաւ–, Ինձի Եղբա՛յր չի ըլլար…,
*Եւ ի՛նչ վընաս ու վըտանգ ալ՝ Ինձ ուրդի *)՝*
Աստր մօտէ՛ն պիտի՛–ըլայ…:
*Մարէ՛, Այդ Աղջ՝ հաստակո՛ղ *) Աղջ է,–ըսաւ–.*
Ան՝ Մեր գըլխուն՝ պատիժ–վորձա՛նք կըղտնայ…:
Բայց ի՞նչ ընես…, ինկեր ենք մէ՛ջ, ճար չկայ…»:

278. Մէլիքի-Մայր՝ կոտոշով կաթ կրկերցնէ Գաւիթին Եւ Սասունցւոց Մեղր ու կարագ Բերել Կուտայ Անոր Համար

Ց·84, (Ց·84), Ա·5, Զ(Ա·5), Հ·21, Զ·՝Հ·21, Կ·39,8՝Զ·, (Կ·39).

Մէլիքի–Մայր՝ ելաւ ճամբեց Ըմբիչներ, —
Բաթման–Բուղան ու Ճարպահար–Քամին եկան 'ի Սասուն:

---

†) Ա·5՝ Մէկ տիկ մեղր, մէկ տիկ կարագ, Հ·21՝ Երկու տիկ մեղր ու կարագ, Ե·760՝ Քառասուն տիկ մեղր, քառասուն տիկ կարագ: *) Խորխս(խ), *Միջուկ–հայս՝ կարագով, խորոված ալիւրով եւ մեղրով զանգած, որ բաղարջի մէջ ալ կըղնեն՝ իբր միջուկ: Ց·84՝ կըշիներս եղր–մեղր: *) Ուրդիլ, Պատահիլ, Հանդիպիլ: *) Հաստակող, Ճամառ, Համակոր:

Մինչեւ Անոնք դացին Սասուն ու դարձան՝
Մէլիքէ-Մայր՝ ելաւ այնտեղ լ՞ինչ ըրաւ· —
*Տաւարն *) կաթ կըթեց՝ լեցուց կոտոշն մէջ՝ ու բերաւ՝*
Տաքուկ կերցուց Դաւիթին՝ որ՝ անկէ յետոյ՝ ձայն կըտա՛ց:

Բաթման-Բուղան ու Ճարպահար-Քամին՝ Սասուն որ հասան՝
*Տըղայ-Դաւիթ Հօրեղբայրը *)՝ տըւաւ Անոնց ամե՛ն բան· —*
Մէկ բեռ կարագ, մէկ ալ Մեղր,
Ինչ ուտելիք որ պէտք էր, —
Ըմբիչները առին բերին՝ ի Մըսըր,
Տարան դըրին կընկան առաջ՝ որ Դաւիթին կերցընէ:
Մըսրայ-Մէլիք, Ինքն ալ տըղա՛յ տակաւին,
Այս որ տեսա՛ւ Իր Աչքով՝
Վերցուց Իր Մօրն լ՞ինչ ըսաւ· —
— «Մարէ՛, տեսա՞ր Դուն հիմա···,
Այդպէ՛ս ընուիր, անո՛ւշ բաներ ո՞րտեղ կայ···, —
Տո՛ւր Թող ուտէ Այդ Որբ Տըղան՝ ձայն չհգա՛յ···»: —

279. Մէլիքի-Մայր՝ Մեղր-ու-կարագով Եւ Իր Կաթովը Սնոյց Դաւիթը

Ջ·՝Կ·39, Ճ·84, Ա·5, (Ա·64), Լ·97, Ջ·՝97, Ե·953,994, ՋԿ·399, ՋՎ·1.

Այս անգամիս՝ Մէլիքէ-Մայրն՝ ամե՛ն օր,
Մեղր ու կարա՛գ կերցուց Դաւիթին ու պահեց: —
Ձէ՞ որ Ան ալ՝ Իր Տըղան պէս՝ Մըհէր-Դաւիթ սերմէ՛ն էր:
*Մէլիքէ-Մայր՝ Դաւիթ թալեց *) Իր Մըծեր,*
Աստծո՛ւ կամքով՝ Իր Մի՛ծերը կա՛թ եկաւ, —
Դաւիթ բըռնե՛ց Իր Մի՛ծեր: —
Մի՛ծ ալ տըւաւ Մէլիքի հետ միասին,
*Իր Տըղան ու Դաւիթ մէկտեղ ծըծեցուց *): —*
Ա՛լ Մի՛ծ կուտայ Մէլիքին,
Ձախը կուտայ Դաւիթին:

---

*) Տաւար, կաթնատու անասուն (գոմէշ, կով, այծ, էշ, եղջերու, եւն·): *) Հօրեղբայր, Այսինքն հօրեղբայր սեպուած, հօրեղբօր տեղ բռնող՝ Քեռի-Թորոսը կամ Ձէնով-Օհանը: *) Թալել, Ձգել, առնել (սովնքներուն): *) Ծծեցնել, Մի՛ծ տալ, դիեցնել:

280. Տղայ-Դաւիթի Օրորոցին կապերը...

Հ.՝Հ.371.

*Տըղայ-Դաւիթ՝ դեռ երախայ ու ծըծկեր *),*
Ա՛նքան զօրեղ Տըղայ էր՝
*Որ իր Պինդեր *) կըկըտրըտէր՝ կընետէր...:*
*Մէլիքի-Մայր՝ ելաւ բերաւ՝ Շըղթա՛յ ըրաւ Պընդխել *),*
*Դաւիթ ա՛նքան ուժ ունէր որ՝ ծըմըրկըտա՛ց *) մէկ անդամ՝*
Շըղթաներն ալ չըդիմացան առաւել..., —
Կըտրըտեցան ու ցըրուեցան մէյմէկ կողմ...:

Ի՛նչ որ բերաւ՝ ճա՛ր չեղաւ...: —
*Նոր այս անդամ՝ բերաւ Ռուանք *)՝ ու դըրաւ փո՛ւխըր *) մանեց,*
Հիւսեց ըրաւ թոյլ պընդխել՝ որ բընեց...:
Նո՛ր այն ատեն՝ Դաւիթ երբ չունէ կըհանէր՝
Ռուանքի՛-պինդ կըկըծկըէր դէպ Օրրոց·
Երբ չունէ քաշէր դէպի ներսը իր Անձին՝
Բուրդէ-կապը կըտարածուէր ու կ՝երկընար դէպի վեր:
*Որ ճըլտորաւ *)՝ ա՛լ փոքր եկաւ Օրօրոց,*
Այլեւս բերին՝ Օրօրոցէն հանեցին:

281. «Ա՛յս Տըղան..., Համօլի Գրող՝ Ա՛յս Տըղան...»

Հ.՝Ե.988,989, Հ.

Մէլիքի-Մայր ամեն անդամ որ կըդիտէր Այս Տըղան,—
Զհոգին վըրայ վե՛ր կընետէր, կըխաղըցնէր ու կ՝երգէր.—

— «Ա՛յս Տըղան..., Ա՛յս Տըղան..., +)
Համօ՛ղի-Գրող..., Համօ՛ղի-Գրող՝ Ա՛յս Տըղան...:
Ա՛յս Տըղան..., Ա՛յս Տըղան...,

---

*) Ծծկեր, Մինչ ուսող, դիեցիկ: *) Պինդ, Պընդխել, Օրրոցի կապ: *) Ծմրկտալ, Ծռմռկոիլ, պրկմրկուիլ, անդամները՝ տարաձել, ընդլայնել: *) Ռուանիք, Բուրդի ամենէն դէշ մասեր, թափթըփուք (երկրորդ, երրորդ գզուածքէն մնացած) *) Փուխր, Թուլկիկ, պատճառական ըլլալու ձեւով: *) Ճոտորիլ, Վրայ գալ, կազմըւիլ: +) Երգով:

Համօ՛լի-Գրող՝ Ա՛յս Տըղան...» †):

Չէ՛ր գիտեր որ՝ պիտի դառնար «Մէլիքէ՛-Գրող», Այս Տըղան...:

282. Մէլիքի-Մօր Խնամքն Ու Դաւիթի Աճումը

Ե.84, Լ.97, Չ.՝Լ.97,17, (Ա.54), Ա.5, ՉՍ.317, Ե.1094,820,495, 616,760, Չ.՝Ե.953, Հ.21,371, Կ.8,39.

Երէ՛ք տարի՝ Մէլիքէ-Մայր՝ Դաւիթ պահեց, խընամեց,
Մինչեւ մեծցաւ, եղաւ երէ՛ք տարեկան,—
Ծըծէ կըտրեց, դո՛ւրս հանեց:

Թէ հողեղէնք՝ ամի՛ս-ամիս կըջոջնան,—
*Անոնք *) Հրեղէ՛ն-Ջըրեղէ՛ն են՝ կըջոջնային օրէօր:*
Ուրիշ Տըղաք մէ կըմեծնան տարիով՝
Սասմանց-Դաւիթ կըմեծնար մէ՛կ օրէն:
Ինչպէս Իր Հայր՝ Դաւիթ-Մըհէր՝ իւ՛ր օրին՝
Մէկ ամսու մէջ՝ մէ՛կ տարուան չա՛փ կոջացաւ,—
Տըղայ-Դաւիթն ալ կոջացաւ՝ մէ՛կ ամսու մէջ՝ մէ՛կ տարով:

Բ. ԹԼԼՈԼ-ԴԱՒԻԹԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ (ՄԸՍՐԱՑ ՄԷՋ)

283. Մըսրամէլիք Ե՛ւրթայ Դպրոց, Դաւիթ Ե՛ւմճայ Փոդոցներ

ՉԿ.400,401, Ե.495,954, Կ.8, Հ.21, (Հ.370), Լ.97, Չ.՝Լ.97, Խ.2, Չ.

Վըրան անցաւ ժամանակ մ՛,—
Մըսրամէլիք ու Դաւիթն ալ կոջացան:
Մըսրամէլիք՝ տարիուկէս հազի՛ւ մեծ էր Դաւիթէն,
Բայց կըսրիճ էր՝ ո՛ւթ տարեկան Տըղո՛ւ չափ:
Ան ալ Սասմանց-Դաւիթի սերմն էր, չո՛ւտ կոջացաւ, ուժովցաւ:

Երբոր մեծցաւ՝ եղաւ եօ՛թը տարեկան՝
Մէլիքի-Մայր՝ Տըղան դըրաւ Վարժատուն:
Դաւիթ փոքր էր՝ չը դըրաւ.—
Անոր համար՝ Դաւիթ կ՛իյնար դէս ու դէն,

---

†) Համոլ. Համուամած : *) Անոնք, Դաւիթի պէս դիւցազնի սերունդ ըսուներ:

Եւ փողոցի Տըղաներուս հետ կըխաղար օրն ի բուն,—
Այդ պատճառով՝ Դաւիթ Ինքը մըննաց անուս եւ անկիրթ,
*Եղաւ անդուսպ փողնի-տըղայ *) մ՝ անառակ։—*

284. Տղայ-Դաւիթ՝ խաղընկերներուն վրայ կուտայ. Մէլիք Կ՚ուզէ զ՚Անի Սպաննէ, Մայրը Չիքողուր

Ը.84, Չ.՝Ը.84, Ե.953,861,820,760,616,954, Չ.

Երեք տարին հազի՛ւ անցեր էր Դաւիթ՝
Ելաւ՝ օր մը՝ Բաղաքին մէջ կա՛ն կուգայ։—
Ատոր ըրած բա՞նն ի՛նչ է.—
Բաղաքին մէջ մա՛ն կուգար՝
Ի՛նչքան որ ո՛ւթ, տա՛ս տարեկան Տըղայ կայ՝
Կ՚առնէր Իր հետ՝ կ՚երթար Դաշտեր խաղալու։

*Դիր մ՚ալ գացին՝ Ճա՛ն *) կըխաղան՝ տաս-տասերկու Տըղի հետ.*
Տըղաքներըը՝ ութ տարեկան, տա՛ս տարեկա՛ն են Ամենք,
Ինքը՝ երե՛ք տարեկան։—
Ճանի վըրայ կըռուըտեցան Իրար հետ,
Դաւիթ Իր Ձեռ որո՛ւ Թևին որ ուլաւ՝
Թևեր Թըռան Ուսերէն...։
Որո՛ւ Ոտքին որ զարկաւ՝
Ոտ կոտրեցաւ, կախուեցաւ...։—
Երեք Տըղու Ոտքեր փըրթան, կոտրեցան...։

Տըղաք ելան՝ լալով դարձան Իրենց Տուն։
Գանգա՛տ ըրին Իրենց Հօր-Մօր՝ եւ ըսին.—
— «Մըսրամէլիք մէկ Որբ-Տըղա՛յ կըպահէ,
Ա՛ն էր զարկաւ Մեր Թևերուն ու Ոտքին,
Մեր Թևերը տեղէն Թըռա՛ն, ու Ո՞տք է որ կոտրեցաւ...։

Առանց Հայրեր՝ ելան գացին Մէլիքի մօտ գանգատի,
Մըսրայ-Մէլիք չա՛տ բարկացաւ՝ երբ լըսեց,

---

*) Փողնի-տղայ, Փողոցային, անկիրթ՝ տղայ։ *) Ճան, վէգ (ոչխարի կամ դուարի ոտքի ոսկորը)՝ որմով կըխաղան զանազան խաղեր. Տեսնել իմ Ծաղաշխարհ՝ ՃՈՆ, Թիւ 104։

Եւս քշեց Դաւթի վերայ, ղ'Անի պիտի ըսպաննէր,—
Մայր չբծղուց, ըսաւ,— «Տըղա՛յ է Դաւիթ,
Այդ Որբի խելք՝ բա՛ն չի՛ կըտրեր տակաւին...,
*Ի՞նչ կ'ուզես Դուն՝ Այդ անիմայ *) Տըղայէն...»։*

Այդպէս անցա՛ւ այդ մէկ օր։

285. Դաւիթ՝ ճանի խաղին Մէջ՝ կըյաղթէ Մէլիքին

Զ.Ղ.97.

Օր մ' ալ երբոր Մըսրայ-Մէլիք ու Դաւիթ՝
Մէկտեղ նըստած՝ ճանի-խա՛ղ կըխաղային,—
Դաւիթ տարաւ †) Մէլիքին։
Մէլիք նորէն չա՛տ բարկացաւ, վերցուց Դաւթին ի՞նչ ըսաւ.—
— «Վա՛յ,-ըսաւ-, ես՝ Մէլի՛ք ըլլամ Մըսըրին...,
Դուն Որբ Տըղայ մ' ես օտա՛ր...՝
Չիս տանի՛ս...†)»։

Ան ալ՝ չո՛ւտ մը՝ եւս գընաց իրեն Մօր մօտ գանգատի։
*Մայր երբ տեսաւ՝ չա՛տ դորովեց *)՝ որ իր Տըղան հանդարտի.*
Մէլիք հաղի՛ւ ղ'Ինքը ղբսպեց այս անգամ...։

286. Դաւիթ՝ ճարպիկ Որսորդ Դարձած՝ Մէլիքի Նախանձը Կ'ծարժէ

Զ.Ղ.97,98.

Մըսրամէլիք Իր Դըպրոցին ու կարդալո՛ւ եաւէշ՝
Տըղայ-Դաւիթ՝ փողոց ու դաշտ՝ Խաղի՛, Որսի՛ կըվազէ...։
Ճանի-Խաղով՝ քիչ մը Դըրա՛մ ձըղեց ձեռ,
Այն Դըրամով գընեց մէկ հատ ամուր պըզտիկ Նետաղեղ։—
Նետաղեղը Թալեց Թամակ, ինկաւ ղէս-ղէն, դար ու դաշտ,
Իրեն համար Լոր, ճընճըղուկ, վայրի Բաղ-մաղ կըզարնէ։
Այս կերպով ալ՝ Դաւիթ դարձաւ Նըշանառո՛ւ քա՛ջ Որսորդ։

---

*) Անիմայ, Բան չիմացող, դառուամէ դէռ զուրկ։ †) Տանել, Խաղի մէջ չահիլ, յաղթել։ (Ժողովրդի լեզուով՝ տանել կամ տանիլ բայը՝ թէ՛ հայցական, թէ՛ սրական կ'առնէ)։ *) Դորովել, Անուշ-չուքիւնով համոզել, մեղմելու ջանալ (զայրոյթը)։

Տըղայ-Մէլիք երբոր տեսաւ Իր Խորթ-եղբայր Ո՛րս կ՛ընէ՝
Ուղեց Ինքն ալ՝ Դաւիթի պէս՝ երթայ Արտեր՝ Լո՛ր զարնէ։
Ելաւ դընաց՝ Նետաղեղ մը ուղեց Իրեն Մօր մօտէն,
Զըղեց Քամակ, դընաց Արտեր, Ո՛րս ընելու Դաւթի հետ։

Այն օր՝ Դաւիթ՝ Լոր-Ճընճըղուկ զարկաւ տաս ու քըսան հատ,
Ինքը Մէլիք չ՛աջողեցա՛ւ զարնէր մէկ Հաւք ու մէկ Բադ...։
Այդտեղ նորէն՝ չա՛տ նեղացաւ իւրովի,—
«Ճանին,-ըսաւ-, ես տարուեցայ՝ հերիք չ՛է՛ր...,
Որսի մէ՛չ ալ՝ ես Դաւիթէն ե՛տ մընացի, ամբչցայ...։
Ի՞նչպէս ապա պիտի ըլլայ Իմ վիճա՛կը..., չե՛մ գիտեր...։
Երբոր «Այս Որբ» չոչանայ ու մեծ դառնայ՝
Ա՛լ Իմ Գըլխուս ի՛նչ փորձանքներ չի բերեր...»։—
Ըսաւ Մէլիք, լալով նորէն դընաց Մօր մօտ դանդաղի,—
Երբոր Դաւիթ՝ Իր զարկած Լոր-Ճընճուղներ՝
Հըպա՛րտ-հըպարտ՝ Մօրը *) առջե՛ւ կըթափէր...։

Դաւիթ երբոր Իր Որսերը ձըզեց Մօր քո՛վ ելաւ դուրս,
Տըղայ-Մէլիք դարձաւ Մօրն ու ի՞նչ ըսաւ։—
— «Ես ի՞նչ պիտի ընեմ հիմա Այս Որբին հետ..., ա՛յ Մարէ.
Անիկ Ինձի եղբայր չ՛է՛ր...,—
Թըշնամի՛ է Ան՝ Ինձի...։
Ես չե՛մ ուզեր «Ալդ եղբայրը»..., կըբաւէ՛...»։
= «Չէ՛,-ըսաւ Մայր-, մեռնի՛մ Քեզի, արեւո՛ւդ,.. *),
Մի՛ բարկանար, Որդի՛,-ըսաւ-, համբերէ՛...,
Օր մ՛ալ կ՛ըլլայ՝ Դա՛ւն կ՛աջողիս, ա՛ւչ թէ չուտ...»։
— «Չէ՛, Մարէ, չէ՛,-ըսաւ Մէլիք Իրեն Մօր-.
Ա՛լ այս օրէն՝ ես չե՛մ երթար վարժատուն...,
Ի՛նչ որ ուսայ՝ ան ալ Ինձի կըբաւէ՛...։
Ակէ յետոյ՝ ե՛ս ալ կ՛երթամ՝ մինչ իրկուն՝
Ըմբիշներու հետ մարզանքնե՛ր ընելու...»։

Իսմիլ-Խաթուն Մայրն ալ ելաւ Չի՛ մը տըւաւ Իր Տըղուն,

---

*) Մօրը, Այսինքն՝ մօրուին, խորթ մօրը։ *) Մեռնի՛մ Քեզի, արեւո՛ւդ, Քեզի եւ քո արեւի՛դ (կեանքիդ) մեռնիմ։

Ձիուն հետ ալ՝ նետաղեղ մ՚ ու պըզտիկ Գուրզ մ՚,—
= «Դընա՛,-ըսաւ-, ի՛նչ որ կ՚ուզես՝ ա՛ն ըրէ...»։

287. Կուզ-Բադին՝ Երկրին Ցէր Դարձած՝ Մէլիքի Ու Դաւիթի Մահը Կըբաղձայ

Զ.Ղ.98.

Մըսրայ-Երկրի Մեծաւորն ալ, Կուզ-Բադին,
Թագաւորի մահէն յետոյ՝ ամրաց Անոր կընիկին,—
Իսմիլ-Խաթունն ըրաւ Իրեն սիրուհի։
Անոր համար՝ ի՛նչքան որ Դահն Անոր ձե՛ռքն էր օրէնքով,
Ու կընըսաէր՝ մեռած Երկան տեղը՝ Երկրին Թագուհի,
Եւ Իր Տըղան՝ Մանուկ-Մէլիք՝ ժառանգորդ,—
Բայց Բադի՛նն էր Երկրին Տէր,
Ի՛նչ որ ուզէր՝ ա՛ն կ՚ընէր...։

Այդ պատճառով՝ ձեռքի տակէ, օրէ օր՝
Դաւիթ՝ Մէլիք իրարու դէ՛մ կըլարէ,—
Որ Երկուքին մէջ դըժուարութիւն հանել տայ,
Մէկ՝ Միւսին ըսպանել տայ անվրէպ...։

288. Դաւիթ՝ Դուռը Ցեղէն Կ՚հանէ, Ընկերները Ծառի Վրայ Հեծցնելով՝ Ծառը Թող Կուտայ...

Ը.85, Զ.՝Ը.85, Հ.371, Զ.՝Հ.371, Ե.820,954.

Մէկալ օրը՝ Մէլիք Ելաւ Դա՛շտ կ՚երթայ,
Մօրը ըսաւ,— «Մի՛ թողուր, Մա՛յր, որ Այդ Տըղան դո՛ւրս ելնէ,
Երթայ փողոց՝ շիժերու հետ խա՛ղ խաղայ...»։

Լուսաբացին՝ Մայրը ելաւ՝ փակեց Դուռը Դաւթի վրայ,—
Ըսաւ՝ «Տունէն դուրս չ՚ելնէ...»։ —
Դաւիթ՝ քընուկ՝ թողուց Տան մէջ, Իրեն տեղ,
Դուռը վըրան ամուր փակեց՝ ու դընաց։

Դաւի՛թ ես դուն...՝ Դաւիթ չըլլաս †)...— Շաչին երբոր արթնցաւ՝
Ելաւ Ձեռքը թաւեց Իըրան՝ որ բանայ...,—

---

†) *Այսինքն, թէ Դուն իրապէս ա՛յն Դաւիթն ես որ կըճանչըննանք, Դաւիթ չըլլա՛ս՝ եթէ քեզնէ սպասուած չնորհքը չցուցնես...։*

Դուռը՝ շեմքով, ճակատնոցով *)՝ թըռաւ եկաւ Իրեն Ձի՛ոք...
Ինք եկաւ դո՛ւրս, կանչեց ժողվեց Ընկերտանք,
Առաւ գընաց, մեծ Այդիի մ՛ մէ՛չ մըտան։
Տըղաք ըսին,— «եկէ՛ք այտեղ՝ վեր՛ Ծառերուն խա՛ղ գընենք»։
Դաւիթ ա՛յնքան ուժով էր որ՝ Բարդի-Ծառեր *) կըկօռէր *)։
Երբ մըտան այդ մեծ Այդին՝
Դաւիթ բերաւ ի՞նչ ըրաւ.—
Ձեռքը նետեց ջո՛ւր Բարդի-Ծա՛ռ մ՛՝ ու կօռեց,
Ծայրը բերաւ դէպ դեպին,
կանչեց ըսաւ,— «Տըղա՛ք, աղաւոր խա՛ղ կ՛ուզէք...,—
եկէ՛ք հեծնենք այս Ծառին վրայ միասին,
Տըընկուզա՛ *) խաղանք մենք...»։

Տըղեկներն ալ, տա՛ս-տասնըհինգ Տըղա՛յ են,—
եկան Ամենք՝ Ծառին վըրայ հեծնելո՛ւ պէս չարուեցան։
Ծուռ-Դաւի՛թն էր..., — Ծառին ծայրը քա՛ց թողուց...,
Ծառ կանգնեցա՛ւ... հետ երկնո՛ւց...,—
Տըղաք թալե՛ց..., ամենամէկը մէյմէկ փողոց վա՛ր իևկան...։
Որ իևկան տակ...՝ այդ Տըղաք...,—
Բանի՛-քանի հատ մեռան...,
Մընացածներն ալ՝ ըսէք...՝
Որա՛ւ Գլուխ, որա՛ւ Մէջքը կոտրեցաւ...,
Որա՛ւ Թեւը, որա՛ւ Ոտքը չարդուեցաւ...,
Որա՛ւ Աչքեր կուրացան...,
Ու չատերն ալ՝ վիրաւոր՝
Բա՛ց մընացին Բերաններ...։
Ինքը Դաւիթ ի՞նչ ըրաւ...,—
Շո՛ւտ մը վազեց Անոնց քով,
Աւա՛զ նետեց՝ բաց մընացած բերաններ...
— «Հա՞..., Դուք Փոխի՞նդ *) կ՛ուզէք...,-ըսաւ խընդալով-.

---

*) Ճակտնոց, Դրան չրջանակի վերի փայտը։ *) Բարդի–ծառ, Peuplier. 6·85՝ Սպինդար, Հ·371՝ Չինարի ծառ. Փոխոխակներու մեծ մասին մէջ՝ Բարդի ծառ։ *) Կօռել, Ծայրը ծռել, կորացնել (ծառը)։ *) Տրընկուզա, Տատանախաղ, Տեսնել իմ Խաղաշխարհ, թիւ 135։ *) Փոխինդ, Խորոված ալիւր (զոր կարագով կը ճմռեն ու կ՛ուտեն)։

Առ՛ք, ահա՛, Ձեզի Փոխի՛նդ եմ բերեր···»:

289. Մէլիքի-Մայր՝ Դարձիւ Ցեսաւ՝ Ոչ Դուռ Կայ՝ Ոչ Դաւիթ...

2·՝Ճ·85, 2·

Մէլիքէ–Մայր՝ երբոր դարձաւ՝ եկաւ Տուն,
Տեսաւ որ լ՛ինչ···, — ո՛չ Դուռ կայ հոն՝ ո՛չ Դաւիթ···: —
Դուռն իր տեղէն՝ չըլչանակով՝ հանած նետած են գաւիթ···:
— «Չ՛ըլլա՞յ գողցան, Դաւի՛թ, Որդի՛»,–կանչեց Մօր պէս հոգատար:
*«Դաւիթ Որդի»–ն՝ թէ դըրե՛ր ես՝ արի՛ տար *)···:*
Մըտաւ նե՛րսը, «Դաւի՛թ» կանչեց, աչ ու ձախը նայելով·
Մարդիկ դըրկեց՝ «Գացէ՛ք, դըտէ՛ք, Տըղան բերէ՛ք Ինձ չուտով»:
Մանուկ–Դաւիթ երբոր բերին, ճակատը վեր, համարձակ,
— «Որդի՛, Դաւի՛թ,–հարցուց Մօրուն դորովալի, անուշիկ–·
Քունդ ուտե՞ն՝ ո՞վ եկաւ հոս, Դուռը հանեց իր տեղէն···:
Քեզ ո՞ւր տարին···, լ՞ինչ հարցուցին···, լ՞ինչպէս քաղին քեզ նորէն»:
= «Ապա, Մարէ՛,–ըսաւ Դաւիթ տըղամիտ–,
Ճաշի պահուն՝ ալթընցա՛յ որ՝ Դուռը բանամ եկնեմ դո՛ւրս, —
Տեսայ Դուռը՝ ամո՛ւր–ամուր դոցեր էին իմ վըրայ,
Ես ալ հասայ՝ Դուռն իր տեղէն հանեցի ու քըռայ դո՛ւրս»:
Մէլիքէ–Մայր ապշած կեցեր, ո՛չ ան է լայ՝ ո՛չ խընդայ···, —
— «Որդի՛, դաւա՛կ,–վերցուց ըսաւ մեղմօրէն–,
Ասկէ յետոյ՝ մէ՛յ մ՛ ալ չընե՛ս այդպէս բան···»:
= «Աղէ՛կ, Մարէ՛, ա՛լ չե՛մ ըներ···, եթէ Դուռը չըփակեն···»: —
Եղաւ Տըղայ–Դաւիթի սըւած պատասխան···:

290. Մէլիք Ն՚ուզէ Դաւիթը Սպանել Իր Ըրածին Համար՝ Մայրը Դէմ Կըդնէ Ու Կըխրատէ Դաւիթը

2·, 2·՝Ճ·85,86, Հ·371, 2·՝Հ·371, Ե·820,954,2·՝Ե·820,954·

Ձըրո՞յցն ուրկէ, — այդ ձիժերէ՛ն՝ ինչ Փառ նետեց իր չորս–դին: —
Վիրաւորներ(ն) հաւաքեցին ու տարան,
Ամեն մէկը՝ Իրեն Հօր Տո՛ւն յանձնեցին.
Մեռածներն ալ՝ վերցուցին որ թաղել տան··· †):

---

*) Թէ դրեր ես՝ արի՛ տա՛ր, *Անյայտացեր է, չկայ:* †) *Ճ·85՝ Մեռածներն ալ՝ տարան մզկիթի դուռը դրին:*

Տըղոց տէրեր՝ ելան գացին Մէլիքի մօտ գանգատի ×), —
Թէ, — «Այդ Տըղան ծո՞ւռ է՝ ի՞նչ է..., Մեր Տուները աւերեց...,
Այս երկու դիր *)՝ Մեր ձըժերը՝ խաղի մէջտեղ՝ կոտորեց...:
Ի՞նչի համ ալ՝ Մե՛ծ–Մարդու Տղայ ըսպաներ է Այդ Տըղան...:
Մէկ պատուէ՛ր տուր՝ դիր մ՚ ալ չընէ՛ այդպէս բան..., —
Թէ չէ՝ կ՚աւրե՛նք Մեր Տունուտեղ՝ ու կ՚երթանք...»:

Մըտրամէլիք այս որ լըսեց՝ կատղեցա՛ւ...,
Թուրը քաշեց՝ որ գայ Դաւիթին ըսպանէ: —
— «Ա՛լ ճար չըկա՛յ..., պիտի ըսպանեմ ղ՚Այն,–ըսաւ–.
Իմ Հաց ու Ջուր *)՝ Ան կորուսեց չատոցէ՛ *)...:
Ես՝ մէկ անտէր, ո՛րը Տըղայի պատճառով՝
Ամբողջ Գաղաք մ՚ չե՛մ աւերեր անիրաւ...»:

Մայրը ելաւ՝ առջեւ կեցաւ, ըսաւ, = «Պիտի չըսպանե՛ս...»:
Ապա դարձաւ՝ ամո՛ւր–ամուր պատուէ՛ր տըւաւ Դաւիթին. —
— «Որդի՛, Դաւի՛թ,–ըսաւ անուշ՝ Մօր մը պէս–,
Ինչո՞ւ կ՚երթաս՝ ուրիշ Տըղաք Ծառի վըրա՛յ կըշարես՝
Ապա Ծառը թո՛ղ կուտաս...:
Այլեւս այդպէս բան մի՛ ըներ ոչ մէկին..., —
Թէ չէ՝ Գըլխուդ չա՛տ մեծ փորձա՛նք կըբերես...»:
Դաւիթն ըսաւ, = «Մարդէ՛, ի՞նչպէս ընեմ ես...,
Անոնք կուգան՝ ինձ հե՛տ կ՚իյնան ու կ՚ըսեն՝
«Արի՛, երթա՛նք՝ վեր՝ Ծառերուն խա՛ղ դընենք.
Դուն ուժո՛վ ես, Ծառը կօգէ՛՝ Տըրընկուզա՛ տանք վըրան...». —
Ես ի՞նչ ընեմ..., Թող չիդա՛ն...»:

Օր մը՝ երկո՛ւ *)՝ այդպէս ըրաւ, չա՛տ ձիժութիւ *) վընասեց,
Տըղոց տէրերն ալ, ամեն օր, գանգա՛տ կուգան Մէլիքին. —
— «Թէ Դուն ամուր պատուէր չի՛տաս Այդ ձըժուն՝
Մենք Մեր Տուները *) պիտի հանե՛նք այս տեղէն...»: —

×) Ը·85՝ կ՚երթան իրենց կրօնապետին. ան գիր կըգրէ Մըտրամէլիքին: *) Դիր, Հեղ, անգամ: *) Հաց ու ջուր, Ընտանիքով ու ըրախտիք: *) Շատոցուէ, Շատ առենէ ՚ի վեր: *) Օր մը՝ երկու, Օր մը, երկու օր: *) ձիժ–ըիժ, Մանրամասն տղայ: *) Տուներ, Ընտանիքները, գերդաստան:

Որ այդպէս չա՛տ վընաս տըւաւ Ամենուն՝
Մըսրայ-Տիկին ա՛լ չըթողուց Տըղայ-Դաւիթ դո՛ւրս երթալ՝
Տըղաներու հետ խաղալ...:

Դ. ԹԼՂԱԼ-ԴԱՒԻԹԻ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀՈԼԻ-ԽԱՂԸ (ՄԸՍՐԱՑ ՄԻՋ)

291. Մելիքի Եւ Դաւթի Աճիւն Ու Մելիքի Քարէիալը

Ջ.՝Ա.3, Ջ.՝Ե.953,495,894,790,861,954,550,1095,994,616,895,10, 955,727, (Ե.1095), Հ.21,411,372, Ջ.՝Հ.411, Ա.5, ՋՍ.318, ՋՎ.1, (Լ.98), Կ.39.

Մըսրայ-Տիկին՝ Իսմէլ-Խաթուն՝ Մէլիքի հետ հաւասար,
*Տըղայ-Դաւթին լա՛ւ չահ տըւաւ *) ու պահեց:*

Առեն մ՝, այսպէս, Դաւիթ մընաց Իսմէլ-Խաթուն Տիկնոջ քով: —
Դաւիթ մեծցաւ ու զօրացաւ, հասուցաւ,
Եղաւ երեք տարեկան †):
Մըսրամէլիքն ալ՝ ջոջացեր եղեր չորս-հինգ տարեկան †), —
Իրենց Քաղաք Բըռնապետի պէս կըպահէ Ձեռքին տակ:

Անոր գործը ի՞նչ էր,—ըսէք—, ի՞նչ կ՝ընէր. —
Այդ Քաղաքի ճիժերուն հետ՝ Հոլ-Խա՛ղ ×) կ՝ընէր մէջ-Դաշտին,
Գո՛րզ ×) կըթալէր չարունակ:

Առոնց կարգ ու կանոն ա՛յս էր՝ այդ խաղին. —
*Մըսրամէլիք՝ Քարէկա՛լ *) էր չինել տըւեր Դաշտի մէջ,*
Ամեն չաբթուն †)՝ կ՝առնէր կ՝երթար Իր իշխաններն ու Իր Զօրք,
Լուսաբացէն մինչեւ իրկուն՝ Հո՛լ կըզարնէր մէջ-Դաշտին, —
Իրկուն նո՛ր կուգար Տուն: —

---

*) Շահ տալ, Ինամք տալ: †) Դաւթի եւ Մըսրամէլիքի տարիքի մասին՝ Բ. Հատորով: ×) Հոլխաղ, Հոլ-Խաղ, Ակօսի մէջ գունդ դլորելու խաղ: Ի.3՝ Հոլէ, Հ.21՝ Հոլիկ, Ե.790՝ Հոլաճի (Հոլոցի՛...), Ե.894՝ Գուրզ, Լ.98՝ Մարզանք, Ի.3, Ե.616,550՝ Հոլի խաղ, Հոլոցիկ, Հոլոց, Հոլ. Տեսնել իմ Խաղաշխարհ, Թիւ. 185: *) Քարէկալ, Քարէ Կալ, (Ե.727), Հոլխաղի յատուկ տեղ, Հոլտուն: †) Հ.411՝ Ուրբաթէ ուրբաթ:

292. Մըսրամէլիխի Հոլն Ու Գորգը...

Չ.՝Հ.411,412,22, ՉՍ.319, Կ.8, Ա.5, Ե.1095.

Զորս–հինգ տարի՝ այսպէ՛ս էր Իր խաղցած խաղ. —
Մըսրամէլիք Հեծեաձներուն պատուէ՛ր կուտար պահէպահ,
*Իրարու Հո՛լ *) կընետէին Դաշտի մէջ:*

*Անոր Հոլի ճամբա՛ն ըսես՝ քառասո՛ւն նետ *) էր, ակօսած:*
*Անոր Գորգն *) ալ՝ քառասո՛ւն լիտր էր, մէկը կապա՛ր լեցուցած:*
Օր երե՛ք դիր՝ կըզարնէր ու կ՝տանէր–հանէր Սարի դլուխ,
Չիւտրներ կ՝երթային ու Մէլիքի Հոլ կ՝բերէին:
Իր Գուրգին դէմ՝ մա՛րդ չէր կըրնար Զե՛ռք զարնէր, —
Տըղա՛յ թէ՛ Մա՛րդ՝ ո՛վ որ իյնար՝ կըմեռնէր...:

293. Դաւիթի Ու Մէլիքի-Մօր Խօսակցութիւնը՝ Հոլխաղի Մասին

Խ.3,4, Չ.՝Խ.4, Ա.6, Կ.8,39, Չ.՝Կ.8,39, Հ.21, Չ.՝Հ.21,Ե.894, 994, 955,550,616,495,727,790, (Ե.861,955,894), Չ.՝Ե.894.

*Օրին մէկը, Տըղայ–Դաւիթ ի՞նչ ըսաւ Իր Մօրուն *). —*
— «Մարէ՛,–ըսաւ–, Իմ Եղբայրը՝ Իր Զօրքով՝
Ո՞ր տեղ կ՝երթայ՝ մինչեւ իր՝կուն, ամեն օր, —
Իրիկուն՝ նոր ՝կըդառնա՛յ...»:
Ըսաւ, = «Կ՝երթայ՝ Հո՛լ կըխաղան Դաշտի մէջ.
Գո՛րգ կըթալեն՝ Ընկերներով մխասին»:
Դաւիթն ալ թէ, — «Ապա ինչո՞ւ Չիս ալ Իր հետ չի տանիր,

---

*) Հոլ, Հ.414՝ Գուրգ: *) Նետ, Նետաչափ, կանգնաչափ: *) Գորգ, Հ.22՝ Քառասուն լիտր արոյր էր, Ա.5, Հ.412՝ Երեքհարիւր–վաթսուն (Ա.5, Հ.366) լիտր երկաթ էր: Ա.5՝ տարբ.՝ «Հոլ խաղալ,— *վայտով կ՝զարնեն մէկ փայտագնդի՝ կըհեռացնեն». պէտք է ըսել՝ մետաղէ–գունդ, Գուրգին փոքր տեսակը: Արդի ժամանակներու* Billard *կամ* Polo, *զոր հին դարերուն՝ կըխաղային քաց դաշտի մէջ: Հիմա կայ հրապարակի վրայ խաղցուած խաղ մը (Ֆրանսա)՝ մետաղէ ծանր գունդերով,* Jeux de boules, *որ աւելի կըմօտենայ հին օրերու Հոլխաղին կամ Գուրգ նետելուն:* *) Մօրս, *Խորթ մայր:*

Որ Իմ չունչը բացուի, տեսնեմ Անոր Ճաղ։
Ես կլմընամ մինակ, ներսը, տունն ի վեր, —
Մա՛րդ չունի՛մ որ հետ զբօսնեմ ու խաղամ…։
Մարէ՛,–ըսաւ–, խընդիրք կ՚ընեմ որ Իմ եղբօր Դուն ըսես՝
Վաղ առաւօտ Զի՛ս ալ տանի Իրեն հետ,
Դընէ այնտեղ, Հոլխա՛ղ ընեն, ե՛ս ալ դիտեմ ու տեսնեմ, —
Նայիմ ի՞նչպէս կ՚խաղան…»։
= «Որդի՛,–ըսաւ–, Դուն դեռ ճի՛ժ *) ես, չի՛ս կընար· —
Կ՚ըլլայ՝ մէկ Դո՛ւրդ կրդըլլի Քեզ՝ կմտեռնիս…։
Կամ թէ Անոնց Զիանք կուտան *) Քու վրադ…՝
Քեզ կը ճըղմեն, ճըղտորեն *)…։
Մինչեւ հիմա՝ Քեզ չահեր ենք, պահեր ենք,
Հիմա կ՚իյնանք ամօթի տա՛կ, ա՛յ Որդի՛…»։
Դաւիթ լացաւ, ըսաւ, — «Մարէ՛, Քեզ ըսե՛մ, —
Թէ վաղ Մէլիք Զիս չըտանի՛ Իրեն հետ՝
Ես պիտի լամ՝ երթամ Անոր եռեւիս…։
Մարէ՛,–ըսաւ–,դէ՛, ի՛նչ կ՚ըլլայ, Ես կ՚երթամ՝ գո՞ւ կըկենա՛մ…»։

294. Մայր՝ Կ՚համոզէ Մէլիքը՝ Որ Դաւիթը Իր Հետ Հոլի Ցանի, Մէլիք Զի՛ուզեր

Ն·894, 994,995,495,550,728,895,955,10,727,760,790, (Ն·727,955), Զ·՝Ա·6,4, Հ·21, Խ·3,4, Կ·39,40, Զ·՝Կ·40, Ց·86, Զ·՝Ց·86,ՉԿ·404, 405,406, (ՉԿ·405), Զ·

Մէլիքի–Մայր՝ մինչեւ իր՝կուն համբերեց, —
Իրիկուն որ Մէլիքն եկաւ մըտաւ Տո՛ւն
Մայրը վերցուց իր՞նչ ըսաւ· —
— «Մէլի՛ք,–ըսաւ–, առաւօտուն երբոր կ՚երթաս Քարէկալ՝
Դաւի՛թն ալ տար, Քեզ հետ թող դայ, Հոլխա՛ղ դիտէ ու սորվի։
Դէ՛, ի՞նչ կ՚ըլլայ…, Ան ալ եղբա՛յր է Քեզի…։ —
Մ՛մնքան լացաւ երեսս ի վեր, աղաչեց…, —
Ա՛ռ տա՛ր Քեզ հետ, Քու Աչք պահէ Իր վրա՛ն,
Որ չ՚երթա՛յ ու կըռիւ չընէ՛ Տըղոց հետ…»։
= «Մէլի՛կ,–ըսաւ–, ես չի՛մ իշխեր *)՝ տանիմ հետս…,

---

*) ճիժ, երախայ, մանուկ։ *) Տալ, Խուժել։ *) ճղտորել, փճացնել։ *) Իշխել, Համարձակիլ։

Անդադար ո՛րդ է Այդ ձիւ՛..., —
Կուգայ կ'իյնայ Մեր Զեռաց ու Ոտից մէ՛ջ..., —
Հո՛ւլ կըլըպէ՛..., *Դո՛ւրդ կըլըպէ՛...,* *Ի՛նչ դիտնամ...:* —
Տանիմ՝ վախնամ մէկ վընա՛ս մը պատահի՛...՝
Անոր Հօր–Մօր՝ ի՞նչպէս պիտի՝ Մենք պատասխան տանք այլեւս:
Մենք ամօթո՛վ կ'ըլլանք, կ'իյնանք մեղաց տա՛կ...,
Մեր անունն ալ, Մեր խընամքն ալ կըկորսի՛...:
Չէ՛, չէ՛մ տանիր, Մարէ՛, Դաւիթ դեռ տըղա՛յ է, չի՛ կըրնար...:
Առնեմ տանիմ, դընեմ այնտեղ Քարէկալ՝
Չիանք դան ու վեր՝ փորին տան՝ ըսպանեն...,
Կամ Հո՛ւլ դըպի՛՝ Տըղան իր տեղ ըսպանէ..., —
*Այլք *) ինձ երես պիտ՝ տան՝ ըսեն «Տարաւ դըրաւ Խաղի մէջ,*
*Չիանք տըւին Տըղուն վըրայ, պըճըղտեցին *), մեռցուցին...,*
Որը տըղա՛յ էր՝ Մէկիկ չուզի՛ց խընամել,
Եւ կամ դիտամա՛մբ ըսպանեց...»:
— «*Որդի՛*,–ըսաւ–,*հեռո՛ւ տեղ դիր, Հոլոցին մէջ՝ բա՛րձըր տեղ մ՛,*
Դուք Հո՛ւլ խաղցէք, Դաւիթ Իր տեղ Քող դիտէ՛:
Դուն տա՛ր, Տըղան Քող չի լա՛յ..., —
Մեղք Իրեն վի՛ղ..., *դըպի՛–չդըպի՛,* *ըսպանի՛...»:*
= «*Մարէ՛*,–ըսաւ Մէկիկն այնտեղ դըրդըռուած. —
Անիկ,–ըսաւ–, *Մըհէր–Դաւիթ Տըղա՛ն է...,* —
*Անոնց Աղդը՝ չորակո՛ղ *) են, Դուն դիտե՛ս...:*
Գայլի ձագը՝ Զիու քուտակ չի՛ դառնար...: —
Անոր՝ մինակ Աչքերկ՛ն ալ յայտնի է...:
Անիկ Մեզի ուժ–օգնական չի՛ լինիր...:
Վա՛յ թէ դայ հոն, վընա՛ս քաշենք Այդ Տըղայի երեսէն...:
Չէ՛, Մարէ՛, չէ՛..., *Ես չե՛մ կըրնար տանիլ հետս...»:* —

295. Դաւիթ կ'ապաչէ՝ Բայց Մէլիք Չի՛ուզեր Իր Հետ Ցանել

Ջ·՝Հ·21,411,412, (Հ·411), ՋՍ·320,321, Ջ·՝ՋՍ·320, Լ·98, Ջ·՝Լ·98, Ե·727,728,995,790,760, Ջ·՝Ե·790, (Ե·727), Ջ·, ՋԿ·405, Կ·8·

Մընաց առաւօն, երբոր Մէլիք կ'երթար Իր Հո՛ւլ զարնելու՝

---

*) Այլք, (Ե·495՝ արբ· խակ), *Ուրիշներ*, օտարներ: *) Պճըղտել, *կտոր–կտոր ընել՝ ամբակնեղուն տակ կոխոտելով*: Ե·495՝ փըրճըխկել, Ե·551՝ պճղոցել: *) Չորակող; *Ցամաք, կամակոր*:

Դաւիթ եկաւ՝ դէմ-մը կեցաւ, աղաչեց, —
— «Եղբա՛յր,–ըսաւ–, այսօր Զի՛ս ալ տար Քեզ հետ,
*Ե՛ս ալ տեսնեմ Դրախտ նետել *)···»:*

Մէլիքն այնտեղ ի՞նչ ըսաւ· —
= Դաւի՛թ,–ըսաւ–, երանի՛ Դուն այդ խօսքն Ինձի չըսէի՛ր···:—
Դուն տըղա՛յ ես· Ինձ հետ մի՛ դար· կըվախնա՛ս···:
Այստեղ Մըսրայ-Քաղա՛քն է ···,
Հաղա՛ր-հաղա՛ր Զիւռրնե՛ր դուրս կուգան···, —
Ես Քեզ տանիմ Քարէկալ՝
Վա՛յ թէ Զիանք՝ Քեզ տան Իրենց Ոտից տա՛կ···:
Քեզ չըտանիմ···՝ չատ մարդ պիտի Մեզ ըսէ՝
« Որբ Տըղայ է, Մէլիք ականջ չի՛ դըներ)···»:*
Տանիմ-չ'տանիմ՝ չե՛մ դիտեր···:
*Տըղա՛յ,–ըսաւ–, Դուն խե՛ղճ ես ու անիմայ *)···,*
Դուն գաս այնտեղ՝ պիտի Իյնաս այն Մարդկերու ոտքին տա՛կ՝
Քեզ ըսպան'են 'ի զուր տեղ···»:

Դաւիթ՝ թէ, = «Չէ՛···, այսօր ե՛ս ալ պիտի գամ··· .
Պիտի գա՛մ ու Հո՛լ խաղամ···»:

*Ուղեց որ հոն, Իր երեսով *), Մէլիքի հետ երթայ Դա՛շտ*
Մէլիքն ըսաւ,— «Թէ՛հէ՛···, Տըղա՛յ, Դո՞ւն պիտի գաս Ինձի հետ···:
Ես որ՝ այստեղ՝ Թագաւորի մ՝ Տըղա՛յ եմ···,
Դուն ո՛րբ–անտէր, ու փողոցի՛ երախա՛յ մ՝···: —
Ես Քեզ այնտեղ չե՛մ տանիր·
Դուն տըղա՛յ ես· Դուն չե՛ս կըրնար Հոլո՛ց †) խաղալ Մեզի հետ»: —

396. Մայրը Կ'յայտնի Համոզել Մէլիքը՝ Որ Դաւիթ Իր Հետ Տանի

Հ·412,371,21, Զ·՝Հ·371,412, Զ·՝Կ·9,40, (Ե·727), Ե·895,727, Զ·՝Ե·550,496, Ա·6, Ց·86, ՁԿ·406·

Մէլիքի-Մայր շա՛տ խելացի կընիկ էր·

*) Գորգ ձետել եւ Հոլ զարնել՝ դրեթէ նոյն խաղն են փոփոխակնեբուն մէջ: *) Ականջ չ'դնել, կարեւորութիւն չիտալ: Անիմայ, Անդէտ, անպիտակից: *) Իր երեսով, Իր պղտումովը, յամառաբար: †) Հոլոց· Ե·790՝ Հոլաձի, որ՝ հաւանաբար՝ պիտի ըլլայ հոլոցի:

Ըսաւ, — «Որդի՛, Ինձի՛ լըսէ այս անդամ, —
Բե՛ր երկու հատ Ըմբիշ–Մա՛րդ դէր Դաւթի հետ,
Թող Ձեռ ու Ոտ կապեն տանին՝ դընեն բա՛րձըր Դարի մ՝ դը՛ւխ,
Տըղան նըստի, խաղը դիտէ՛ այնտեղէն.
*Ըմբիշներն ալ՝ կո՛ւշտը *) կենան, Աչքը Դաւթի վրա՛յ բըռնեն *),*
*Չ'եղնէ՛ վար դայ, Ձիան *) Ոտի տա՛կն իյնայ...»:*

Մէյնէքն ըսաւ, = «Մարէ՛, Դաւիթ թող չիգա՛յ...
Ան՝ պատուհա՛ս պիտի դառնայ Մեր դըլխուն»:

Մայրը տեսաւ՝ երեք օր է՝ Դաւիթ կուլա՛յ չարունակ,—
*Դարձաւ Տըղուն հետ կըտուեցա՛ւ *), ըսաւ, — «Տա՛ր...:*
Կ'ելնես կ'երթաս Ըմբիշներու հետ Հոլոցի(կ) կըխաղաս, —
Քո եղբա՛յրն է, ճի՛ժ է, կուլա՛յ..., բա՛ն չ'ը՛նեը...,
*Տար Քեզի հե՛տ, Ա՛ն ալ աստուր *) թող տեսնէ...:*
Թող Մըշակները չալկեն տանին՝ խաղ դիտէ՛, —
*Իրիկունը թալեն Իրենց Ձիու Քամքը *)՝ ու բերե՛ն.*
Քեզ ի՞նչ վընաս ունի որ...: —
Տըղան կ'ըսէ, — «Երթամ՝ եղբօրս Խաղ դիտե՛մ...»,
Անիկ ճի՛ժ է. երախա՛յ է. անխա՛յ է. տար Քու հե՛տ.
Մէ՛կ Հօրէ է՛ք..., Անիկ ալ Քու եղբա՛յրն է...,
Քու Հօրմէն է Դաւիթն ալ...:
Հապն ինչ հա՛ւ է՝ ո՛ւր կուտ ուտէ՝ այնտեղ ալ իր ճո՛ւն կ'ածէ..., —
Ա՛լ ասկէ ետք՝ նոր՝ Ան Սասո՞ւն պիտի երթայ..., որո՞ւ մօտ..., —
Ախտե՛ղ մեծցաւ, Դո՛ւն՝ Ա՛ն եղբա՛յր պիտ՝ ըլլաք...»: —

297. Մըսրայ-Մէլիք՝ Կ'ուզէ Բարձր Տեղ Մը

Կ·40, Զ·՝Կ·40, Ճ·87, Ե·728,895,496,760,995,727,550,617,616,
Հ·412,372,21,371, Չ·՝Հ·21, Չ·՝Խ·4, Ա·6,ՉԿ·407·

Մըսրամէլիք՝ Մօրը կամքէն դուրս չելա՛ւ.

---

*) կռւշտը, Քովը, մէկ եւ մէւս կողմը: *) Աչքը վրան բռնել, Ուշադիր հսկել, «մուդիաք կեցալ»: *) Ձիան, Ձիերուս, ձիանց: *) Հետը կռուիլ, Բարկանալով խօսիլ, յանդիմանելու ձեւով ըսել: *) Աստուր, Աչխարհ եւ աշխարհային զուարճութիւն: *) Թամբ, Թամբը:

Իր Մօր սիրոյն համար ըսաւ, այս անգամ, —
= «Ադէ՛կ, Մարէ՛, Դուն լա՛ւ ըսիր···, կըտանի՛մ···»։
Առաւ Դաւիթ՝ տարա՛ւ իր հետ, երկու Ըմբիշ մխասին,
Չ'իշխե՛ց դընէ Իրեն մօտիկ, Խաղին տեղ, —
Չեռ–Ոտ կապած՝ առին տարան արտաչափ մը դա՛ռ մէկ տեղ,
Դաւիթ դըրին բա՛րբըր Քարէ մ' Թէ Սարէ՛ մ' դլուխ)՝ Հոլի*) կուշտ·*
Դէմը հագի՛ւ նըւաղ բան մը կըտեսնըւի դէպ 'ի վար···։
*երկու Ըմբիշ կեցան Իր քով Պահացող *),*
Որ Դաւիթը չ'ներթա՛յ սահի քար մ' ի վար,
եւ իյնայ տակ՝ ու մեռնի···։

Մէլիք՝ այտուո՛ղ թողուց Դաւիթ· ա՛լ չըտարա՛ւ Իրեն հետ, —
Ըսաւ, — Դաւի՛թ, չերթա՛ս այս կողմ ու այն կողմ···,
կեցիր այտուո՛ղ, Քեզի համար խա՛ղ խաղա·
Այտուո՛ղ կեցիր, Չիանք չիտա՛ն Քու վըրայ·
Եւ այտուղէն՝ լա՛ւ մը դիտէ՛ Մեր խաղալ,
Մինչեւ իր'կուն Ես կուգամ՝ Քեզ կըտանիմ···»։ —

298. Մըսրամէլիի՝ Իր Մեծաւորներով Ու Զօրքով՝ Հոլխադի Մէջ

Ա·4, Զ·՝Ա·4, Ա·6, Ե·895,727,728,496,760,761,790,955,550,551, 616, (Ե·550), Հ·371,412,21, (Հ·371), Զ·՝Հ·412, Կ·41·

Մէլիքն առաւ Իր Մարդերն ու Իրեն Զօրք,
Իջան դացին Քարէ–Կալը, Հոլին տեղ։

Քարէ–Կալը՝ խաղավայրն էր Մէլիքին· —
Գացին Դ'աշտ որ՝ Ըմբիշներով Հոլխա՛դ ընեն մխասին։
*Մըսրամէլիք թարխանապզը *) տըւաւ զարնել մեծ թաւիով· —*
Անթիւ Մարդիկ ժողվան եկան Դաշտին բոլոր՝ դիտելու։
Մըսրայ–Քաղքի Զիաւորներն ալ այդ պահին դո՛ւրս եկան,
Ամենք հեծան՝ դացին Դաշտի Հրապարակ, —
*Զիաթռոլս *) ու տեսակ–տեսակ խա՛ղ խաղցին,*

---

*) Սարի մ' գլուխ, Հ·412՝ դարի գլուխ· Ե·616՝ վեր' էն կնդան (կունդին)· Կ·407՝ բարձր տեղ մը։ *) Հոլի, Ե·727՝ Կալի կուշտ։ *) Պահացող, Պահապան, Հսկող։ *) Թարխանապզ (Թրք·), Պաշտօնական նուագ, եւ մեծ Թմբուկ, grosse-caisse. *) Զիաթռոլս, Զիարչաւ։

Հոլ Թըռցուցլին, մինչեւ իր՝կուն չարունակ։ —

Մըսրայ–Մէլիք՝ Հո՛լ կըթալէ՝ կ՚երթայ կ՚իյնայ մէջ փոսին,
*Հոլտունին *) մէջ կըկենա՛յ։*
Երե՛ք անգամ կըզարնէ,
Անոր ուժեր ո՛չ կ՚աւելնան, ո՛չ ալ երբեք կըպակսին...։

999. Դաւիթ Սղոցած՝ Տուն Կուգայ, Մօտուին Կ՚պատմէ Մէլիքի Հրածը

Ջ.՝Հ.21, Հ.21,371,372, Խ.4,6,5, Ջ.՝Խ.4, Ջ.՝Ա.6,4, Կ.40,
Ջ.՝Կ.40, Ե.497,550,617, 895, 551,496, Ջ.՝Ե.497,895, (Ե.551).

Դաւիթն ըսես՝ մինչեւ կէսօր կեցաւ Իր տեղ ու նայեց,
*Աչքն–ճախէն՝ ա՛յնքան նայեց, իսկի՛ *) բան մը չըտեսա՛ւ,*
Սըրդողեցաւ՝ ելաւ տեղէն՝ որ գայ Տո՛ւն։
Երկու Ըմբիշ՝ չո՛ւտ մը Դաւթի մէյմէկ Թեւէն կախուեցա՛ն,
Զըկըրցան դ՚Ինք զըսպէին..., —
Մանուկ–Դաւիթ՝ քիթբերնի՛ վրայ քաշեց տարա՛ւ Ըմբիշներ,
Մինչեւ Տունը մէ՛կ՝ բերաւ †)...։

*Դաւիթ ոըկաւ *)՝ եկաւ Տո՛ւն,*
Գըլուխն այնտեղ գետի՛ն դըրաւ՝ պառկեցաւ...։
Մէլիքէ–Մայրն ըսաւ, — «Դաւի՛թ, ինչո՞ւ այդպէս չո՛ւտ եկար...
Պատմէ նայի՛մ, լաւ դիտեցի՞ր..., ի՞նչ տեսար՝ ի՞նչ չըտեսար...»։
Բերաւ Հաց–մա՛ց դըրաւ առջեւ՝ որ ուտէ,
Դաւիթն ըսես՝ քէ՞ն է ըրեր, չի՛ ուտեր...։
Մէլիքէ–Մայրն ըսաւ, — «Դաւի՛թ, ի՞նչ է եղեր Քեզ, այսօր
Քու Եղբայրը Քեզ տարեր է մօտըհաս...,
Լաւ դիտեր ես Անոնց Ծաղը՝ Դաշտի մէջ..., —
Ինչո՞ւ նորէն ոըկեր ես...
Զե՛ս գար՝ Հաց ու բան ուտեր...»։
= «Մարէ՛,–ըսաւ–, Չես չի՛ դըներ Իրեն կուշտ...,
Դէ՛... հեռունե՛ր կըդընէ...։

---

*) Հոլտուն, Հոլին բոյն, կեդրոնի փոս։ *) Իսկի՛, Բնա՛ւ, երբե՛ք։ †) Հ.371–2, Ե.496,550 եւն., Մըրսմէլիքն է որ կուգայ՝ Դաւիթ իր տեղէն կ՚առնէ կըբերէ տուն։ *) Ոկիլ, Սրդողիլ, վշտանալ, քէն ընել։

Ապա, Մարկ՛, Մէլիք–Եղբայրս Զիս տարաւ՝
Հանեց բա՛րձրը Դարի մ՝ ծայր···,
Հե՛ռու տեղ մը դըրաւ Զիս···,—
Անօթի՛ ու ծարա՛ւ Թողուց Սարի դլու՛խ···,—
Ինքը Թողուց՝ դընաց Դա՛շտը՝ Հոլխաղի···,
Ես՝ Դայլերու, Աղուէսներու, Գաղաններու երկիւղէն՝
Ոչ քընե՛ր եմ, ոչ դադրե՛ր եմ···,—չե՛մ դիտեր···։
Վարչէն՝ Երդի, Նըւագներու ձա՛յն կուգար †)
Ա՛յնքան դարձայ՝ Իրիշկացի), նայեցա՛յ···,*
Ես իմ տեղէն չէի՛ տեսներ՝ Անոնք ի՞նչ կըխաղային···,
Ա՛յնպէս Նըւագ կընըշմարէր) Հաղի՛ւ–հազ···։*
*Իրիկուան դէմ՝ Մէլիք–Եղբայրս՝ Ջո՛ղ Ջաղցի–Քար *) մ՝ Նետեց Հոն,*
Քարը դընաց Փոսին մէ՛ջ···,—
Անիկ ի՞նչ էր···, ա՛յ Մարկ՛···»։
—«Ոըդի՛, –ըսաւ–, Ան Իր ո՛ւժն է կըսիրծէ···,—
Ոչ կ՝աւելնայ, ոչ ալ երբէք կըպակսի···»։
=« Իրաւի՛, Մա՛յր, –ըսաւ Դաւիթ՝ սըրդոդուկ)–·*
Ես ալ խելի՛ բան չըտեսա՛յ իմ տեղէն···,—
Ա՛յնչափ տեսայ՝ որ կ՝երթայինն ու կուգայինն իրար մէջ··· ·
Ալ՛ Ես Անոնք չէի՛ ճանչնար ու ջոկեր)···,—*
Ելայ Թողի՛ Հոյ Տուն···։
Թող Զիս տանէր՝ դընէր մէջտեղ, մէկ անկիւն···» ։
Մէլիք–Մայր բարկացաւ···։—

800. Մէլիքի Եւ Մօր Վէճը՝ Դաւիթ Հոլխաղի Ծանելու Մասին

Կ·40, Ա·6, Ե·4,5, Զ·՝Ե·5, Է·21,372, Ը·496,551,497,617,955, 498,728, Զ·՝Ը·497, 551,617, Զ·

Մըսրամէլիք որ Տուն Հոյ՝ Իրիկուն՝

†) *Ե·5 տարբ·՝ Գիւղացի պատմիչ Զաւրիկի ըսելովը՝ «Ծաղի տաեն՝ կը նուագէին Աչուղներ»։* [Աշուղ = *Աստղ, երդով պատմող· Մնթ· Զ·*]։ *) Իրիշկալ, *Դառնալ–նայիլ՝ բան մը տեսնելու, որոնել։* *) Նշմարել, *Նշմար տալ, հետաքրքրութեան հաղիւ տեսանելի ըլլալ։* *) Ջոջ ջաղցի–քար, *Այսինքն Գուրգ, (երկաթէ դունդ) որ մեծ երկանաքարի մը պէս է երեւցեր մանուկ–Դաւիթի աչքին։* *) Սրդոդուկ, *Սրդոդածի, քէն ըրածի՝ երեւոյթով։* *) Ջոկել, *Զատել, որոշ տեսնել։*

Մայրը Իրեն դէմ չ'ելա՛ւ..., —
Բարկացե՛ր էր, քէնով նըստեր՝ իր անկի՛ւն...:

Մէկիք վերցուց՝ ըսաւ, «Մարէ՛, ինչո՞ւ այդպէս Դուն այսօր՝
Քէ՛ն ես ըրեր Ինձի՛ դէմ..., —
Նըստեր ես հոդ՝ ու չե՛ս ելներ Իմ առջեւ...»:
*Մայրն ալ կըսաւ Տըղուն օձի՛ք *), կըսի՛ւ ըրաւ Անոր հետ. —*
= «Ինչո՞ւ,–ըսաւ–, Քու եղբայրը չտարի՛ր Քեզ հետ՝ Հոլին տեղ,
Ա՛ն ալ տեսնէր, դիտէ՛ր Խաղն ու Խաղցողներ...:
Տարար դըրիր տարի դըլո՛ւխ..., բա՛ն չըտեսաւ՝ ու եկա՛ւ.
Դուն իջար Դա՛շտ, գացիր Խաղի՛, Քու Զօրքով...,
Դաւիթ՝ այնտեղ՝ Գազաններու ահէն վախցեր՝ չի՛ քընիր»:

Մարէ՛,–ըսաւ Մըսրամէկիք, կամակոր–.
Քեզի կ'ըսեմ՝ «Կըրնայ վըճա՛ռ դալ Անոր»...,
Ցամա՛ռ Ազդ է Այդ Տըղան ...,
Ծօսքիդ մըտիկ չի՛ ըներ...: —
Հոլ որ դըզալ ըսպանէ՝
Ուրիչները պիտի ըսեն՝ «Դաւիթ եղաւ հաց ուտող՝
*Մըսրայ–Մէկիք՝ Իր հացն ապով *)՝ Տըղան տըւաւ ըսպանել»...*
Իմ Մարդերէն՝ չէ՞ որ ամօ՛թ է Ինձի՛...»:

*Մայրը ըսաւ, = «Մէկի՛ք, մօրտո՛ւս *), ինչո՞ւ այդպէս կ'ընես Դուն,*
Չէ՞ Քու եղբա՛յրն է Ան ալ...,
Տա՛ր դիր Քո կուշտ, մօտհաս տե՛ղ մը, թող դիտէ.
Որդի՛,–ըսաւ զորովոտ–.
Վաղ Դու(ն) կ'ըլլաս մեծ Թագաւո՛ր՝ Քո Հօր տեղ,
Դաւիթ մինա՛կ կըմընայ՝
Կ'երթայ Իրեն Ընկերներուն հետ կըխաղա՛յ այն տեղն...:
Որ կըտանէս՝ տար Քու հե՛տ. —
Զատ մի՛ դըներ..., տա՛ր Քու կըշտիդ հե՛տը դիր,

---

*) Կպիլ օձիք(ի՛ն), Օձիքէն փակիլ, յանդիմանելով խօսք ուղղել (մէկու մը): *) Ապով, Պատճառով, վասն, համար: *) Մօրտո՛ւն, Սիրակա՛ռս, հոգեա՛կս:

Ան ալ տեսնէ, Հոլխա՛ղ ընէ սովորի ···, —
Կ՚առնես բերե՛ս իրկուն ···:
Դուք եղբա՛յր էք···, վաղ՝ ո՛չ կուտաք Իրարու··· †)»:

Մէկիկն ըսաւ, — «Մարէ՛, թո՛ղ տուր···, օձու ձա՛գ է Այդ Տըղան ···
Օձու ձագը +)՝ Ձիու քուռակ +) չի՛ դառնար···:
*Ան հիմակէ՛ որ այդ տեսակ կը ուրկի *)···, —*
Ան՝ Ընկեր կամ օդնող եղբայր չէ՛ Ինձի···, —
Ան Իմ Դըլխուս նուէ՛ն է կըպըտակ···»:

Մայրն ալ ըսաւ, = «Որդի՛, Մէկի՛ք, վընաս չըկա՛յ, եղբա՛յրդ է,
Տար դիր մօտհա՛ս՝ թող դիտէ՛···, —
*Թէ չէ՝ Մեղի՝ ուրիշները երե՛ս կուտան *), կ՚ամօթե՛ն··· *)»:*
— «Աղէ՛կ, Մարէ՛,–ըսաւ Մէկիք՝ այս անգամ–,
Վաղ կըտանիմ՝ Խաղին մէջտե՛ղ կըդընեմ···՝
*Ձիանք թող դան՝ տան վորին վրա՛յ, պըճըղտե՛ն *)···, —*
Այդ չան Որբը ըսպանին···»:

301. Հոլիճ Տեղը՝ Դաւիթ՝ Դղակով Աւազ Կըչափէ
Կ՚ըսէ «Մէ՛կ...»

Խ·5, Զ·՝Խ·5, Ա· 6, Հ·372,21,412, Զ(412), Ե·551,497,617,727, 790–1,·995,552,895, (Ե·861,727),Զ·՝Ե·497,895,995, Կ·40, Զ·՝Կ·40, Զ(Կ·9), Ճ·87, Լ·98, (ՁՍ·332–333), ՁՍ·323, ՁԿ·408·

Առաւօտուն՝ Մըսրամէկիք եկաւ վե՛ր,
Առաւ Դաւիթ, տարաւ իր հետ՝ Հոլին տեղ·
Դըրաւ այնտեղ, Իրեն քովը, կալին կուշտ,
Քարէկալի ճիշդ մէջտեղն ու զարկին ղէ՛մ···, —
Այնտե՛ղ՝ ո՛ւր որ Ձիանք կ՚երթան ու կուգան, —
— «Դէ՛, Դուն,–ըսաւ–, կեցիր այստե՛ղ՝ ու դիտէ՛»:

---

†) *Բաղդատեէ՛ երկու տարբեր տեսակ եղբայրութեան գոյզ պատկերները՝ Մեր Վէպին մէջ· — Սանասարի ու Բաղդասարի եղբայրութիւնը՝ մէկ հօրէ մէկ մօրէ, եւ Մըսրամէկիքի ու Դաւիթի եղբայրութիւնը՝ մէկ հօրէ՝ բայց տարբեր մայրերէ, եւ տարբեր հետեւանքներով:* +) *եւ* +) «Մէկը զղուելի, միւսը աղնիւ ցեղէ» *ըսել կ՚ուզուի:*
*) *Ուրկիլ, Բէն ընել, ոխ պահել:* *) *Երես(իկ) տալ, Մեղադրել:*
*) *Ամօթել, «Ամօ՛թ է» ըսել:* *) *Պճղտել, Պճեղ–պճեղ ընել, բզքտել:*

Դարձաւ ասպա՝ ըսաւ, — «Դաւի՛թ, կըտեսնե՞ս այդ Քարէկալ †)
Շա՛տ գէ՛չ բան է, ու շա՛տ ծանր է այդ Գորգն ալ...,
Մարդու առնէ՝ Մա՛րդ կ'ըսպանէ՝ կըփըրա՛...:
Զըլա՛յ թէ դաս՝ մըտնես մէ՛ջ...:
Այստեղ նըստէ՛, Ծաղը դիտէ՛ հեռուէն...»:
Ու մըտքին մէջ՝ «Հո՛ս թող կենայ Այս Լակոտ... *),
Չիանք թող գան՝ տան փորին վրայ, պըճըղտեն...»:
= «Աղէ՛կ, եղբա՛յր,–ըսաւ Դաւիթ՝ Ըմբիշներէն կապկըպուած–.
Քու խօ՛սք կ'ընեմ..., հո՛ս կընըտիմ՝ կըդիտեմ...»:

Դաւիթ դըրաւ ճամբուն մէջ...,
Մըսրամէլիք քըշեց Իր Ձին՝ դընաց մըտաւ Զօրքին *) մէջ.
Ընկերներով Հո՛ւլ խաղացին՝ մինչեւ ճաշի ժամանակ:

Անոնք, ասպա, Ըմբիշներով կըրնա՛ն խաղալ, սովրո՛ւկ *) են.
Մէյտ խաղցո՛ր են՝ վընաս չե՛ն տար մէկ՝ մէկու(ն): —
Հուլի ճամբան՝ Քարը եօ՛թ գաղ *) խորունկցեր, —
Գետին՝ Մայլի աղուրին *) պէս բացուեր էր...:

Դաւիթն ըսես՝ քիչ մը Քար *) ու Աւա՛զ ժողվեց՝ նըստած տեղ,
Քարերուն ու Աւազին հետ կըխաղայ...: —
Իր Ոտքերը՝ Աւազին †) մէ՛ջ է պարզեր,
Հե՛տ *) Աւազը կ'առնէ կ'լեցնէ՝ Ոտքերուն վրա՛յ կըդիզէ,
Հե՛տ *) կըխաղայ այդ Քարերով՝ ու Հուլի–Ծա՛ղ կըդիտէ...:

Ծա՛կ Գոլոզ *) մ' ալ Իր Գըլխին,
Նըստած տեղը՝ Աւա՛զ կ'չափէ Գոլոզով, —
Կ'ըսէ՝ «Մէ՛կ...»:

---

†) Կ·40՝ Հոլ, ե· 727՝ Քարէ կալ: *) Լակոտ, Շան ճագ: *) Զօրք, Բանակ եւ Աւազանի խումբ: *) Սովրուկ, Սովորած, վարժ: *) Գազ, Կանգուն: *) Աղուր, Մայլի անկիւնին պեղած՝ ուղղ, ճամբայ, ակօս: *) Քար, Խիճ: †) Նկատեր կուտամ որ՝ Վանայ մէջ, ձիարշաւի ծառայած դաշտի մը՝ Ազրնոց անուն կըտըրւէր: Եթէ տեղին աւազուտ գետինէն չ'է՝ կրնայ աղաւաղն ըլլալ Ասպրնոց (ձիանոց) ձեւի մը: *) Հե՛տ, Թէ՛ մէկ կողմէն... (Թէ՛ միւս կողմէն: *) Գոլոզ, Երկարաձեւ կամ կիսակլոր՝ Թաղիքէ գլխարկ (պրաթար Ղոլ–ոց բառէն):

Քա՛նի չափէ՝ կ'ըսէ՝ «Մ՛էկ···»։
Դեռ չի՛ կըրնար ըսել՝ «երկո՛ւ», ու «երե՛ք»։

302. Մէլիմ՝ Դո՛րգ կ'խաղցնէ, Դաւիթ՝ կապերը Թօթուելով կ'երթայ Հոյտունին Մէջ կ'ուսի

Ա·6, Կ·40, 9, (Կ·40), Ե·552,497,727, 728,760,790, 791,761,994, 895,861,955,1095, (Ե·994), Զ·՝Ե·955,895, ՉՍ·324,319, Հ·21,412, (Հ·412), Զ·՝Հ·412, Ց·87, Ե·5, Ա 6, Լ.98, Զ.

*Կէսօր կոտրաւ *), հերթը եկաւ Մէլիքին։ ···*
Ուրիշները Հո՛լ կըթաքին, Մէլիք Իր Դո՛րգ կըթաքէր։
Մէլիք Իր Դորգն առաւ ելաւ Հոլին դո՛ւրս···, —
Դորգ մը ունէր Իրեն Ձեռք՝
*Քառասուն *) լի՛տր էր, արճըճած···։*
Ձեռքին Մէջը Իր Օղակէն կախ տըւած՝
Կըխաղցընէ՛ր կըտանէր ա՛լ Ձեռքին Մէջ,
Ու կըրնէր նորէն Իր ձա՛խ Ձեռքին Մէջ···,
*Աչքախըփոց *) կըղարձընէր՝ կ'ուղղակըտէր Իրեն Դուրգ, —*
Եօ՛թ կիլոգրամնոց կրա՛կ կըթափէր դեռևիններ···։ +)
Դաւիթ՝ Իր տեղ՝ նայե՛ց–դիտե՛ց այս ամեն,
*Սիրտը՝ Իր տեղ՝ հանդիստ չըրա՛ւ ու չըտարա՛ւ *) տեսածներ։ —*
Իրեն հըսկող Ըմբիշներուն դարձաւ խընդրեց ու ըսաւ· —
— «Ի՞նչ կ'ըլլայ որ՝ արճըկէ՛ք Իմ Ձեռքեր···»։
Կաման, Ասան Ըմբիշներ Թէ, = «Թաղաւորի հրամա՛ն է,
Մենք Ինչ պիտի պահենք այստե՛ղ, եւ կապա՛ծ, —
Չ'երթա՛ս իյնաս Ձիանեերու Ոտքին տա՛կ···»։

Դաւիթն էր, — ա՛լ մըտիկ չըրա՛ւ Այդ Մարդոց,

---

*) Կէսօր կոտրաւ, կէսօրը քիչ մ' անցաւ, հաղի՛ւ կէսօրը անց։ *) Քառասուն լիտր, Հ·412՝ երեք հարիւր վաթսուն լիտր էր,, Ե·994՝ քառասուն կտրանոց երկաթ էր (լիտր = լիտր, կտրանոց = լտրանոց)· Տես եւ Հատ· 292 տողէ։ *) Աչքախփոց, Աչքը խփել (դոցել)՝ բանալու չափ մէջտց, ակնթարթ։ +) Արեւմին տակ՝ մեսրոպ Գուրգին փայլփլումներուն պատկերալից նկարագրութիւնը։ *) Չ'տանիլ, Չ'հանդուրժել։

*Թեթեւիկ մը իրա՛ր տըւաւ *) ղ՚ինք այնտեղ…,*
Կապած Գարան՝ կըտրե՛ց՝ ելաւ կանդնեցա՛ւ…, —
Տարա՛ւ–բերաւ՝ երկու–ըմբիշն իրա՛ր կապեց այդ կապով,
Ինքը դընաց՝ Հոլի ճամբուն մէջ կեցա՛ւ,
*Հաստակո՛ղ էր, մըտաւ Հոլտուն *) նըստեցա՛ւ, —*
Ա՛յնտեղ՝ ուր Հոլ կ՚երթար կ՚իյնար փոսին մէ՚ջ †): —

803. Դաւիթ՝ «Փը՛ստ-Փը՛ստ» Ընողին Ապտակ Կ՚զարնէ

ՉԿ·409,410,411, (ՉԿ·402,403), (Հ·372)·

*Այն առեն ինչ *) Մէլիք Իր Գո՛ւրզ Կըթալէր՝*
*Խաղին Փայեակ՝ «փը՛ստ–փը՛ստ» *) Կ՚ընէր՝ Կըկանչէր, —*
Որ Թէ Գորզը Չ՚երթա՛ր Դըպէր Մարդերուն,
Կամ Մարդերը Ձիաններու Ոտքերուն տակ Չիյնայի՛ն,
Դընաց Հասաւ Դաւիթի մօտ, «Փը՛ստ–Փը՛ստ» Կանչեց Անո՛ր ալ,
Դաւիթ դարձաւ ըսաւ, — «Շո՛ւն Մարդ, ի՞նչ Կ՚ըսես…,
*Ես փո՞ւշտ *) եմ որ՝ Դուն Ինձ «փո՛ւշտ–փո՛ւշտ» Կըկանչես»:*
Տեղէն ելաւ՝ երկու ապտա՛կ զարկաւ Մարդուն երեսին.
Մարդը վազեց՝ դընաց Խաղի Մեծաւորին գանգատեց,
— «Այդ Ձիժն,–ըսաւ–, ի՞նչ Իրաւունք ունի Հոս…,
*Ես Հա՛ *) «Փը՛ստ–Փը՛ստ» Կըկանչեմ որ՝ Մէ՛կը Չիյնայ Հոլին տակ,*
Անիկ Ելնէ՝ ապտա՛կ զարնէ Երեսիս…»:
Ամե՛ն դէհէ՝ Մարդիկ ըսին, = «Չէ՞ որ Անիկ տըղա՛յ է…, —
Անոր խելքը չի՛ հասնիր…»:

804. Մէլիք՝ Մարդ Կ՚ղրկէ Որ Դաւիթ Հոլտուն Հաճեն, Ան Չ՚ելնար Ու Ծակ Գդակով Աւազ Կ՚չափէ

Չ·՝Լ·98,(Հ·412),Հ·21,22,Կ·40,Ե 861,896,955,790,Չ·՝Ե·896,861,Չ·

Մըտրամէլիք՝ Հոլին Գլխէն՝ Դէպի Դաշտը Կը Նայէր, —

---

*) Իրար տալ, Շարժել, ցունց տալ: *) Հոլտուն, Գուրզի կամ Հոլի ակօսին մէջտեղը՝ ուր Կըդրուէր կամ Կուգար–Կ՚իյնար գունդը: †) Լ·98՝ Դիտմամբ ննտեցաւ այնտեղ՝ ուր Մըտրամէլիքին գորզը Կ՚իյնար: *) Ինչ, Որ, երբոր: *) Փը՛ստ–Փը՛ստ, Տեսնել՝ Մնթ·՝ Բ. Հատորով: *) Փուշտ, Թրք·, Մրիկայ: *) Հա՛ (Ահա), Այսպէս:

Տեսա՛ւ որ †) Թէ՝ Հոլաունէն մէջ՝ մէկը նըստեր–կեցեր է,
Հարցուց վըրնտռե՛ց, իմացաւ որ Դաւի՛թն է, —
Ա՛լ կատղեցա՛ւ···, ի՛նչ ընելը չի՛ դիտեր···: —
— «Ազէ՛կ է որ՝ զարնեմ,–ըսաւ–, սատկեցընե՛մ Այդ Լակոտ···,
*Բայց նորէն Իր Հօրեղբօրը *) չնո՛րհ կ՛ընեմ···»:*
Անոր համար՝ ելաւ Ըմբի՛չ մ՝ ուղարկեց՝
Որ երթայ հոն, Դաւիթ հանէ Հոլաունէն: —
— «Գացէ՛ք,–ըսաւ–, Դաւիթ Հոլէն հանեցէ՛ք,
Որ Իմ Հոլը չ՛երթա՛յ Դաւիթն ըսպանէ»:

*Մարդիկ դացին՝ Դաւթի ճիւէն *) բըռնեցին՝*
Ըսին, — «Դէ՛, չո՛ւտ, հեռո՛ւ դընա այդ տեղէն···»:

Ի՛նչ որ ըրին՝ չ՛ելա՛ւ վեր···,
Ու չըկըրցա՛ն Դաւիթ Հոլէն դուրս հանեն···:
Դաւիթ Անոնց ի՞նչ ըսաւ· —
*= «Մէլիք,–ըսաւ–, Թող Իր Գորդը տանի ուրի՛շ տեղ Թալէ *)···, —*
Ես Իմ տեղէն չե՛մ ելներ···,
Պիտի նըստիմ ես՝ այստեղ···»:

Մըտիկ չըրա՛ւ Անոնց խօսքին, մընաց հոն· —
Ու նորէն Իր ծա՛կ Քոլոզով հո՛ղ կըչափէ՝ ու կ՛ըսէ՝
*— «Ինա *) «Մէ՛կ···», Ինա «Մէ՛կ···»: —*

805. Մէլիք Զորս Մարդ Կ՚ղրկէ, Զօրճն Ամբողջ Կուգան՝ Ձեռ Կրճար Դաւիթը Հոլտունէն Հանել

Ջ·՝Լ·98, Կ·9, Խ·5, (Ճ·87), Ճ·87, Ա·6, Հ·412,22, Ջ·՝Ե·895, (Ե·728), ՁՍ·325,327,328,326,324·

Ըմբիչները եկան ըսին Մէլիքին·
Մէլիք այնտեղ չա՛տ բարկացաւ···, ի՞նչ ընէ···, —
Ելաւ՝ հիմա՝ Զորս Մարդ ղըրկեց՝ որ Դաւիթը դո՛ւրս հանեն: —

---

†) Հ·412՝ Մըսրամէլիք դիտակ դրաւ աչքին՝ նայեց տեսաւ···: *) Հօրեղբօր, Այսինքն՝ Քեռի–Թորոսին կամ Ձէնով–Օհանէին: *) Ճիւ (ճիվ), Օճիք, Թեւ: *) Թալել, Նետել, Ձգել: *) Էնա, Անի, տե–նիկ, անիկա:

Ա՛յնքան ըրին, ճիդ թափեցին..., չկըրցան՝
*Դաւիթ տեղէն իրար տան..., *) —*
Ինչպէս որ մարդ՝ չի՛ կըրնար Ծառն իր արմատէն դո՛ւրս քաշել...:

Այդ Զօրքն ամեն՝ եկան՝ չ՛կըրցա՛ն Դաւիթ փոսէն հանէլին...:
Մէլիք կանչեց Հոլին դըլխէն, — «Դաւի՛թ, դո՛ւրս ել Հոլտունէն.
Ասօր իմ Գուրզ ես կըզարնեմ՝ մէ՛կ թափով...,
Հող ես՝ նորէն հո՛ղ կըդարձնեմ Քեզ պէս Որք...»:
Դաւիթ չ՛ելա՛ւ, ըսաւ, = «Մէլի՛ք, Դուն Քու տեղէդ Հոլը զա՛րկ.
Մինչեւ որ Քու Հոլը հասնի՝ դայ այստեղ՝
Ես ակօսէն կ՛ելնեմ կ՛փախիմ..., Գուրզը ինձի չի՛ դըպիր...»:
Մէլիք նորէն կանչեց ըսաւ, — «Ծըղա՛յ, Դաւի՛թ, Հոլէն ե՛լ...,
Դո՛ւրս ել Հոլիս ճամբայէն..., —
Իմ Գուրզ կուզայ Քեզ կ՛ըսպանէ՛..., խե՛ղճ ես Դուն...:
Մինչեւ ասօր Քեզ չահեր եմ ու պահեր..., —
Քեզ կ՛ըսպանեմ՝ Իմ վարձն ու Իմ աղէկութիւն կըկորսի՛...,
Դուն խե՛ղճ–որբուկ տըղա՛յ մըն ես, անհայր–անմայր եւ անտուն»:—

306. Դաւիթի Ճանդուգն Պատասխանը Մէլիքին

ե·895, Զ·՝ե·895,955, Զ·՝է·412·

Մըսրամէլիք՝ երե՛ք անգամ կանչե՛ց Դաւիթին՝ որ ելնէ:—
*Դաւիթն ըսես՝ չըլսուիլան *) դըրեր վըրան, լո՞նչ ըսաւ·—*
Զա՛յն տըւաւ Իր կեցած տեղէն — Հոլտունէն, —
= «Մէլի՛ք,–ըսաւ–, դէ՛ զա՛րկ Քող զա՛յ՝ այդ Քո Գուրզ... .
*Երկմըտանի *) մի՛ ըլլար... · —*
Այնպէս դըրւած չ՛է՛ Աստուծմէ՝ որ Մեր Աղէ՝
Ձեր Աղէի դէմ փախո՛ւստ տայ...: —
Ես ալ այստեղ՝ Քու առջեւդ՝ չե՛մ փախիր...»:

Մըսրամէլիք լըսե՛ց Իր տեղ՝ այս խօսքեր:
Ըմբիշնե՛րն ալ չըւարեցան..., լո՞նչ ընեն..., —
Զարնե՞ն...՝ կ՛դըպի՛ր Դաւիթի՛ն...,

---

*) Իրար տալ, Շարժել, երերցնել, խախտել: *) Չ՛լսուքիւն, Չ՛լսել ձեւացնելը· անլսուքիւն, կամաւոր խլութիւն:*) Երկմտանի, Երկու միտքէն, երկմիտ, տատամսոտ:

Ու չըզարնե՛ն...՝ Անոնց Խաղը աւրեցա՛ւ...:

Հիմա՛՝ Անոնք՝ չխմարացան ու կեցա՛ն· —
Ի՛նչ որ կ՚ընեն՝ Տըղայ–Դաւիթ չ՚ն՛ըներ վեր...: —

307. Մէլիք գայրացած՝ Նուագները Հընչեցնել Կուտայ Եւ Իր Գաւրզ Կ՚զարնէ...

Հ·412,22,372,413, (Հ·372),ՀՍ·329,330, Յ·87, Խ·5, Ե·955, 896, 497,760,862,552,617, Զ·՝Ե·955, (Ե·955), Զ·, Ա·6, Զ·՝Ա·6, Կ·9, 40,41, Զ·՝Կ·41, Լ·98,99, (Լ·99),Զ·

Մըսամէլիք ա՛լ բարկացաւ, գայրացաւ...,
Կանչեց ըսաւ, — «Տըղա՛ք,–ըսաւ–, Զեղ ալէֆ դէ՛ն, ու զարկէ՛ք·
Նըւագները Հընչեցուցէ՛ք զօրաւոր...,
Այդ Օձո՛ւ Զաղ, Որբուկ Տըղան՝ Հիմա Մեր Խաղ Խանգարե՛ց...:
Ես Իմ Գործը ա՛լ Կըզարնեմ՝ Թող Երթա՛յ...,
Ա՛լ Ի՛նչ Կ՚ըլլայ՝ Թող Ըլլա՛յ...: —
Թէ որ գըզաւ՝ ու Դաւիթը ըսպաննէց՝
Դուք Զիս այլեւս Չըմեղադրէ՛ք, ու Չ՚ըսէ՛ք՝
«Մէլիք զարկաւ Այդ Որբ Տըղան †) ըսպաննեց»...:
Դուք Ձեր Աչքո՛վ Կըտեսնէք...:
*Ես գիտե՛մ որ՝ Իմ Գըլխակո՛ցն *) է Անիկ..., —*
*Աղէ՛կ է որ՝ Ինք Իր ոտնո՛վ Ինկաւ ակնաւտ *), այս անգամ...,*
Պէտք է զարնեմ ատակեցընեմ Այս Տըղան,
Մէ՛կ անգամուվ Ես ազատուի՛մ Իր Ձեռքէն,
Չ՚ելնէ՛ վերջէն վտըձա՛նք դառնայ Իմ Գըլխուն...:
Կ՚երթամ՝ զառնու՝ Հո՛ւ կըզարնեմ մէ՛կ Թափով...,
Կըմեռնի՝ Թող Հիմա՛ մեռնի, մընայ Իր տե՛ղ, այս օրէն... .
Ես Իմ Գործը պիտի զարնե՛մ Այս Տըղուն...:
Ես Իմ Մօրը ըսի՝ «Մարէ՛, Ես Դաւիթը Չե՛մ տանիր...,
Ես գիտե՛մ Թէ՝ Այդ Որբուկի բընութիւնը Ի՞նչ կերպ է»...:
Կեցէ՛ք,–ըսաւ–, Ես Իմ Գուրզը Նետեմ՝ Անիկ ըսպանէ..., —
Ե՛րբ Հզեր է՝ Դաւիթ պիտի Իմ Գըլուխը ցաւցընէ...,

---

†) Ա·6՝ Իր Եղբայրը: *) Գլխակեր, Գլուխ ուտող, Թշնամի, ոսոխ: *) Ակնաւտ, Ակնառու, Թակարդ:

Աղէկ ա՛ն է՝ հիմա՛ զարնեմ՝ մեռցընե՛մ...։ —
Որ Ան մեծնայ՝ չա՛տ ու չա՛տ բան պիտի հանէ Իմ Գլուխս...»։

Ըսա՛ւ–չըսաւ..., — Մէկիկ քըշե՛ց Իրեն Ձին,
Մէկ ժամու հալի ճամբա՛յ դընաց՝ զատնացա՛ւ...,
Նըւազները զարկին ամուր, գոռացին...,
Ընկերներն †) ու այնքա՛ն Մարդեր՝ գ'Իրենք տըւին ա՛լ ու ձա՛խ,
Մէկիկ քըշե՛ց եկաւ հասաւ Հոլին ծա՛յր,
Ու մէ՛կ թաւիով՝ Իր Գուրզ նետեց դէպ Հոլտուն...։
Իր Գուրզ այնպէ՛ս մը զարկաւ..., —
Ըսաւ՝ — «Դաւի՛թ, հո՛ղ էիր ու հո՛ղ դարձար...»։

Մէկիկ Իր Գուրզ որ նետե՛ց...՝
Գորզը լնկաւ դետին–ի–վար, ու պըզ՛զ...՝ դընաց դէպ Դաւիթ...։
*Այնտեղ թաւիած *) բոլո՛ր Մարդեր կանչեցին, —*
— «Անդո՛ն...,–ըսին–, անդո՛ն փախիր..., ա՛յ Տըղայ..., —
Գուրզը եկա՛ւ..., ահա Քեզի՛ կըդըպի...»։

Դաւիթն ըսես՝ մըտիկ չըրա՛ւ Անոնց խօսքին՝ ու կեցա՛ւ։

808. Դաւիթ՝ Մըսամէլիի Գորզը Կ'բռնէ Ու Գնդակի Պէս Վեր-վեր Կ'նետէ Ջեռիքն Մէջ

Ց·87, Ա·6, Հ·372,22,413, Զ·՝Հ·22,372,413, Զ·, ՁՍ·331,Ե·497, 617, 896,955,995,552,761,791,862,1095, Լ·99, Խ·6, ՁԿ·413,412,414,415, 416,417, Զ·՝ՁԿ·414, Կ·41,9, ՁՎ·1,2·

Գորզը Հոլտո՛ւն պիտի դար...՝
Իջնէր Դաւիթի Գլխուն վրա՛յ..., —
Դաւիթն ընէր Ջա՛րդ ու բո՛ւրդ...։

Երբոր եկաւ Դաւիթին մօտհա՛ս, ու վըրայէն պիտ՝ անցնէր...՝
Դաւիթ հալի՛ւ արթընցաւ ու նայեց տեսաւ որ Երկնուց...՝
Կո՛ւնդ–կըլոր բան մ՝ +)՝ Իրեն Գլխուն վրա՛յ կ'իջնէ..., —

---

†) Ե·896՝ կակաո, Աւլան։ *) Թաւիած, Համբուած, հաւաքուած։
+) Ե·896՝ «ջաղցի էար», որ ճիշդ չ'է՛· գի ջաղացի քարը՝ տափակ անուածեւ է ու մէկտեղը ծակ, մինչ Գուրզը՝ կլոր գնդակ է՝ օղ–բըռնելիքով մը դարձածելի։

Թըքե՛ց Իր Ամ..., ու փոսին մէջ նըստած տեղէն՝ Ձեռ նետե՛ց...՝
Աստծո՛ւ կամքով՝ զարկաւ բըռնե՛ց Մէլիքի Գորգն՝ Ախի՛ն մէջ...:

Ա՛յդքան Մարդիկը չէի՛ն կըրցած Մէլիքի Գորգ բըռնէին..., —
Դաւիթ մի՛նակ՝ ինքը բըռնեց՝ մէ՛կ ձեռմանց *)...:
Դաւիթ՝ ապա *)՝ Մէլիքի Գուրգ երկու Ձեռքով չըբըռնե՛ց, —
Ձա՛խ Ձեռ *) միայն դէ՛մը տարաւ՝ ու բըռնեց...:

Որ Գուրգ բըռնեց Ձեռքին մէ՛ջ...՝
Մանր ու թեթե՛ւ ըրաւ, խաղցո՛ւց Ձեռքին մէջ, —
Ըսաւ, — «Ախո՛ս..., մէկ քաշ թեթե՛ւ է Այս Գորգ...: —
Բառա՛ն լիտըր Արճի՛ճ ըլլար՝ հալէ՛ինք՝ մէ՛ջ լեցնէ՛ինք...՝
Նո՛ր կ՚ըլլար մէկ ծանրի՛կ Գորգ...»:

Ապա՝ Գո՛ւրգը՝ Ձեռքով դարձուց, պըտուտակեցո՛ւց խաղի պէ՛ս,
Ա՛յ ձեռքովը նետեց հաննց երկնուց հե՛տ,
Ձախով բըռնեց, ու նորէ՛ն՝
Մէկ՝ մէկալիետեւէն՝
Ձախով կ՚նետէ դէպի վե՛ր,
Ա՛յ Ձեռքովը կըբըռնէ...,
Այ՛ով կ՚նետէ դէպ երկի՛նք՝
Ձախ Ձեռքովը կըբըռնէ...:

Դաւիթ՝ այնտեղ՝ Մէլիքի Գորգ որ բըռնեց՝
Ըմբիշները՝ ամէն մէկը մէյմէկ դիհէ՝ կանչեցին. —
Մէկ մասն ըսին, — «Մէլի՛ք, Մարդի՛ը, ա՛յ, հասէ՛ք...,
Գուրգը Դաւիթն ըսպանի՛ց...»:
Ուրիշներ ալ կանչեցին թէ, — «Մինչեւ օրս՝
Մէ՛կ չէ՛ր կըրցեր Մեր Մէլիքի Գորգ բըռնէր...,
Հիմա՝ ահա՛ բըռնեցին...»:

Մէլիք հարցուց՝ ըսաւ, «Հօլա՛..., այդ ո՞վ էր Իմ Գորգ բըռնեց...»:
Ըսին, = «Դաւիթ՝ Քու եղբա՛յրն էր որ բըռնեց...»:
Մէլիքն ըսաւ, — «Ո՛ր Իմ եղբայրն էր Անիկ...՝

---

*) Ձեռմանց, Ձեռքով, (մէկ) ձեռացի: *) Ապա, Պէտք է դիտնալ, հասկնալի է՝ որ...: *) Ձախ ձեռ, ե.955՝ «ջաբ ձեռ», որ պիտի ըլլայ «ձախ ձեռ». միւս վոխոխականները՝ «մէ՛կ ձեռք»:

Ինչո՞ւ բըռնեց Ան իմ Գորգ...»: +)
*= «Քու եղբա՛յրն էր..., դէ՛ *), բըռնե՛ց...»:*

Մըսրամէլիքն ալ տըրտմեցա՛ւ..., ըսաւ, — «վա՛յ...,
Ա՛յսքան աստեն՝ մա՛րդ իմ Գորգը չ'է՛ր բըռնած...,
Ի՞նչպէս բըռնեց Այդ Տըղան...:

309. Ըմբիօճներ՝ կ'ուզեն Դաւիթի Ձեռէն Գորգն Առնեն, Ան՝ կ'ընտէ Ջորին Մէջ ու Գաղթէ Դուրս...

Հ·372,22,413, Զ·, Կ·9,41, Զ·՝Կ·9, (Կ·41), Ե·617,995,727,728, 552,896,955,497,760,761,862–(Կ·41), (Կ·41), 791,Զ·՝Խ·6,ՁՍ·331, 3·87, Ա·6, Լ·99·

*Ըմբիչներէն քանին *) եկան՝ իւ՛րենց տեսնեն..., —*
Դաւիթ Գուրգը առէր–բըռներ Ձեռքին մէ՛ջ...,
Ալ Ձեռքովը դէպի երկի՛նք կընտէ,
Ձախ Ձեռքովը կըբըռնէ...:
Ձախ Ձեռքովը դէպի երկի՛նք կընտէ,
Ա՛լ Ձեռքովը կըբըռնէ...:
Ըմբիչներն ալ՝ ուզեցին որ Գորգը առնե՛ն Դաւիթէն,
Դաւիթ Գորգը դըրաւ պահեց՝ Մունկին տակ...:
Երբ պըղնդեցին որ Մէլիքի Գորգը տայ՝
*Դաւիթ՝ ախտաեղ *)՝ Մունկին տակէն՝ Գորգը քաշեց հանեց դո՛ւրս, —*
— «Հո՛լ, Հո՛լ..., հարի՛ւր անգամ Հո՛լ...», — ըսաւ,
Հոլը՝ մէկէ՛ն վերվե՛ր ըրաւ, դարձուց եասե՛ւ՝ ու նետե՛ց...: —
Գորգը նետեց երկնուց երես, Ջօրքին մէ՛ջ, —
Հարիւր †) հատ մը ըսպանեց...,
*Գորգը դընաց՝ քաւոտ'ւն նետ *) ալ՝ Հոլի ճամբէն դո՛ւրս ելաւ...,*
Երկո՛ւ–հարի՛ւր հոգի ալ հոն՝ վիրաւորեց ու փըռեց...,
Ու Մէլիքի Գըլխուն վրայէն ալ անցա՛ւ..., —

+ Հմմտլի՛՝ Արտաշիր Փափակեանի ճոկան-գնդակի խաղին եւ իր թոռան՝ Շապուհեան Որմիզդի՝ հաւնիլ-խլելուն հետ [Գրնմկ՛՝ էջ 31-32]:*) Դէ՛, ի՞նչ վնաս ունի, դէ՛հ ինչ ընենք...: *) Գանիճ, գանիներ: *) Այծտեղ, Այսինքն՝ տեսաւ որ ալ ճար չէրկայ...: †) Կ·41՝ Նօթ մարդ սպաննեց, Հ·22, Ե·87՝ Երեք հարիւր ձիաւոր փէրզի փախիւտւն սպաննեց, Խ·6՝ Երկու հարիւր մարդ՝ հոլին առջեւ սպաննեց: *) Նետ, Նետաչափ, կանգնաչափ:

*Աւուր մ՚ *) Համբայ՝ դընա՛ց ինկաւ Քաղքէն դո՛ւրս···:*
Որքան Մէլիք որ զարկեր էր անդիէն՝
Դաւթի նետած՝ երկո՛ւ այնքան դեռ աւելի է՛ա դընաց +)···,
Քանի մ՚ աղքատ Տուներ փըլա՛ն Գորղին տակ···,
Քանիներն ալ՝ տեսան որ Գորղ եկա՛ւ–եկա՛ւ դէպ երկի՛նք···,
Ու երե՛ք օր՝ երե՛ք դիշեր Հաղիւ թէ՝
Այդ Գորղ՝ երկնուց՝ եկաւ հասաւ ՚ի Գետինք···: —
Մ՚ինչափ ուժով էր Դաւիթ···:

Զիաւորներ՝ Դաշտերուն մէջ չա՛տ փընտռեցին՝ որ գըտնեն՝
Մէլիքի Գորդն՝ ինչ Դաւիթը բըռնե՛ր էր ու նետեր էր···, —
Շա՛տ փընտռեցին, բայց չըգըտա՛ն ոչ մէկ տեղ···:

310. Տեսնողներ՝ Կ՚ծաղրեն Ու Կ՚խրատեն Մէլիքը, Սա Կ՚ուզէ Դաւիթը Սպաննել…

Կ·9,41, Հ·372, Ե·552,498,617,995,896,727,760,790,728, (Ե·727,729), Զ·՝Ե·552, Խ·6, Զ·

Մըսամէլիք այս որ տեսաւ ու լըսեց՝
Մ՚ինչէ՛ս Ծա՛ղրը եկաւ Իրեն···, դէմքը կախեց, տըխրեցաւ···:
Այդ Մարդիկներ Ծաղրեցին դ՚ինք եւ ըսին· —
— «Մէլի՛ք, Մէլի՛ք, Դու կ՚ըսէիր՝ «Ես ուժո՛վ եմ, Ես յա՛ղթ եմ···»,
Դուն՝ Քո զա՛րկը մեզի ուժով դիտէիր···: —
Տեսա՞ր ի՛նչպէս՝ Դաւիթը դեռ պըղտիկ ձի՛ժ···՝
*Նըստըմանց *) ու մէ՛կ Զեռմայ *)···,*
Զարկաւ Քու Գորդ՝ անցուց Բեղմէ՛ ալ հեռու···»:

Մէլիք այնտեղ «վա՛յ–վա՛յ» կանչեց···, Թուրը քաշեց ու եկաւ,
Պիտի զարնէր՝ Դաւիթ Իր տեղ ըսպաննէր···, —.
Տարէց Մարդիկ վրա՛ն թափեցան, եկան առաջ՝ չըթողի՛ն: —
— «Մըսրա՛յ Մէլիք,–ըսին–, այդ Դուն ի՞նչ կ՚ընես···,

*) Աւուր մ՚, *Մէկ օրուան*: +) ԶՍ·331՝ Քառասուն ձետ՝ այն ճամբէն ելաւ դուրս, զա՛տ գնաց, Ե·896՝ Քանի գ՚Մըսրայ Մէլիքին՝ հօ՛ր գազ յառնել կ՚անցուցնէ, Ե·760՝ Քառասուն գազ, Ե·761՝ վաթսուն գազ, Ե·497՝ ժամուան մը ճամբայ, Ե·995՝ երկու վերս՝ (*ոտանէրէն*՝ վերստ): *) Նստմանց, *Նստած վիճակով*: *) Զեռմայ, *Զեռքով*:

Մէկ չխվար, Որբ Տըղա՞յ մ՝ պիտի ըսպանես...: —
Ուրիշները՝ Քու երեսին պիտի տան ու ըսե՛ն Քեզ՝
«Մըսրայ–Մէլիք՝ Իր Հա՛յն ապով՝ Որբուկ Տըղա՛յ մ՝ ըսպանեց»:
Պէտք է որ Դուն՝ քա՛նի կըրնաս՝ աղէկութի՛ւն ընես լոկ, —
Որ Դուն այսօր Իշխա՛ն ես,
Վաղ–մէկալ օր՝ չէ՞ Քեզ կ'ընեն Թագաւո՛ր...:
Որ կ'ըսպանես Այդ Տըղա՛ն՝
Գէթ այսու՛ղ մի՛ ըսպաններ...,
Ա՛ռ տա՛ր Քո Տուն, ի՛նչ որ կ'ընես՝ ան ըրէ՛...,
Ան տըղա՛յ է..., ո՛րբ է..., մե՛ղք է..., մ՝ը՛սպաններ...:
*Անոր խելքը դեռ չէ՛ հասնիր այդ դործին *), —*
Աւտր համա՛ր Քու Գորղ Թալեց ղէպ Երկինք(ք)·
Ինչո՞ւ կ'ցաւիս Իր մօտէն...:
Ան չ'է՛ր կըրնար Քու Գորղ Թալել մէ՛կ–ձեռմայ..., —
Աւէ, Մէլի՛ք, Աստուծմէ՛ էր..., Հրեշտա՛կն էր Քու Գորղ Թալեց»:—

311. Ծաղրուած, Սիրտ Կոտրած՝ Մըսրամէլիք Շո՛ւտ Խաղ-Թող Կ'ըլնէ Այդ Օր

Ջ·՝Ե·761,727–8,862,498,552, 790,617,955,729, ՋՎ·1, Ջ·՝Հ·372,22, Հ·372,413,22, ՋՍ·332,333, Ջ·՝ՋՍ· 332, Կ·41,9, Ջ·՝Կ·41, Ճ·87, (Ճ·87), Ա·7

Մէլիքի սիրտ չա՛տ կոտրեցաւ...՝ քա՛նի լըսեց այդ խօսքեր·
Ձարմացաւ ու տարտափեցա՛ւ Եղբօրմէն. —
*— «Հէ՛յ վա՛խ,–ըսաւ–, Նարիկ *) Իմ Թագն ու Իմ Գահը չի՛ ձըդեր,*
Պիտի առնէ՛ Իմ Ձեռքէն...:
Պէ՛տք է որ Ես Նարիկ զարնեմ ըսպանեմ... .
*Իմ Գլուխը Թէ՛ որ ցաւի *)՝ Այս Տըղայէ՛ն է մխայն...»:*

Մեծաւորները՝ ծաղրի՛ առին Իր Ըմբիշներն ու ըսին. —
— «Շընորքն ա՛ն է՝ որ Դուք Ձեր Գորղ այդպէ՛ս զարնել կարենաք...:
Անիկ 1) Անոր 2) հօրմէ՛ն 3) է..., —

---

*) Այդ գործին, *Այսինքն՝ Գործ բռնել–նետելու, քեզի հակառակելու՝ գործին:* *) Նարիկ, Անիկ, աստիկ, աստիկ, նա տղան:
*) Գլուխը ցաւիլ, Վտանգ զալ (մէկէ մը): 1) Անիկ, Դաւիթ, 2) Անոր, Մէլիքի: *) Հօրմէն, Դաւիթ–Մըհէրէն:

Հարկա՛ւ Անոր 4) ո՛ւժն ունի…։
Այդ երկուքը՝ եղբա՛յր են, —
Անշուշտ՝ Մէկը ուժո՛վ կ՚ըլլայ քան Մէկալ…»։

Ըսին Անոնք *), խօսեցան, —
Զրթողի՛ն՝ որ Մէլիք՝ այնտեղ՝ զարնէր Դաւիթին ըսպանէր։

Սակայն՝ Մէլիք՝ այնպէ՛ս լեցուեր *), սըրտնեղեր էր Դաւիթ դէմ՝
Որ չըկենցաւ. Հոլ դադրեցուց, կանչեց ըսաւ Մեծերուն. —
— «Արի՛ք *)–ըսաւ–, ա՛լ մի՛ խաղաք, ա՛լ Մեզ խաղալ չի՛ վայլեր…»։

Այդտեղ Անոնց սիրտ կոտրեցա՛ւ. ա՛լ Գորգ ու Հոլ չըխաղցի՛ն, —
Ըսին, — «Մէլի՛ք, Մենք եկանք որ Հո՛լ դընէինք՝ խաղայինք, —
Դու դիտէի՛ր՝ Դաւիթ մէկ Ծո՛ւռ *) Տըղա՛յ էր…, —
Ինչո՞ւ բերիր՝ որ ա՛յսքան Մարդ ըսպանէր…։
Հիմա ի՞նչպէս Մենք առնենք այդ ըսպանուկներն ու տանինք…, —
Քաղա՛ք-քաղքով պիտի ըսեն, — «Ա՛յ Մարդի՛կ,
Տունէն գացի՛ք՝ Ա՞ղ խաղալու՝ Թէ՞ չէ Մեզ սո՛ւդ բերելու»…։
Վա՛յ Մէլի՛ք…, վա՛յ Մէլի՛ք…, —
Այդ Դուն ի՞նչ էր որ հանեցիր Մեր գլխիկ…»։

Մէլիքն ըսաւ, — «Գացէ՛ք Ձեր տեղ նըստեցէ՛ք…, —
Իմ եղբա՛յրն էր, զարկաւ՝ Ինձի քանի մ՚ծառա՛յ ըսպանեց…։
Դաւիթ՝ հանեց Իմ Գլուխիս *), ո՛չ Թէ Ձե՛ր…։ —
Դաւիթ՝ դըպաւ Իմ Պատիւին, ո՛չ Թէ Ձե՛ր…։ —
Գացէ՛ք Ձեր տե՛ղ, Ամենքդ ալ.
Որ դառնամ Տուն՝ ես Դաւիթը կ՚ըսպանե՛մ…»։

Այդ օրուան խա՛ղ, ուրախութի՛ւն, ուսել-խըմել՝ դադրեցա՛ւ…
— «Ի՞նչպէս ընենք…, ի՞նչպէս չընենք…»։
= «Պէտք է Դաւիթին ըսպանե՛նք…»։
Դարձան ասպա՝ Մէլիքին, —
Ըսին, — «Այստեղ մի՛ ըսպաներ Այդ Տըղան…, —
Տա՛ր Քու Մօ՛ր քով, Նոր կ՚ըսպանեն՝ Դո՛ւն դիտես…»։

---

1) Անոր, Դաւիթ–Մըհէրի։ *) Անոնք, Մեծաւորներ։ *) Լեցուիլ, Բէկնուիլ։ *) Արի՛ք, Եկէ՛ք։ *) Ծուռ Տղայ, Ծուռ Դաւիթ՝ անունին բուն էտիմոլոգիան՝ Բ. Հաստորով լուսաբանուած։ *) Մէկուն գլուխը հանել, Փորձանք բերել մէկուն, վնաս տալ։

*Ամենք՝ սիրտակախ *)՝ խաղթող ըրին *)՝ երկու ժամու չափ կանուխ ,—*
*Ելան առին Մհռածները , լալով սարսան գոռեցին *)...:*

818. Դաւիթ՝ Մօրուին կ'պատմէ Թէ Ի՞նչպէս Մէլիքի Գորգը Բռնեց Ու Նեռեց

Լ.99, Զ.՝Լ.9, Խ.6, Զ.՝ Ե.896,729,862,995, Զ(Ե.1095,1096), Հ.22, Զ.՝(Հ.22), Ա.6, Կ.41, Զ.

Դաւիթն ըսես՝ չո՛ւտ մը եկաւ Հոլտունէն ,
Ինք առաջուց քըշեց եկաւ դէպի Տուն...,
ղ'Ինքը նեռեց Մօրը գի՛րկ †)...:
Մէլիքի-Մայրն ըսաւ ,— «Որդի՛ , Դաւի՛թ , ինչ է եղեր քեզ... .
Ինչո՞ւ այդպէս չուտ եկար...»:
Ըսաւ ,= «Մարէ՛ , հիմա Մէլիք կուգայ իմ վիզ կըկըտրէ...»:
Ըսաւ ,— «Ինչո՛ւ պիտի գայ քու վիզ կըտրէ...»:
Դաւիթ այնտեղ իր ղըրոյցը Մօրն ըրաւ ,—
*= «Մարէ՛ ,-ըսաւ- , ասօր ես մէկ անուշ *) Ա՛ղ մը խաղացի...:—*
Ասօր ես Դա՛չտ նըստե՛ր էի Հոլտան մէջ...,
Մէկ ալ տեսայ՝ երկնուց կըլոր բա՛ն մ' իջաւ...:—
Շո՛ւտ մը հասայ՝ բըռնեցի՛ այդ կըլոր բան...,
Քիչ մը Ձեռքես մէջ դարձուցի՛ , խաղացի՛...,
Ու նեռեցի Քաղքին վրա՛յ...,
*Քանի մ' Տուներ՝ անոր ապով *) փըլեցա՛ն...,*
Ես ալ փախայ՝ եկայ Տո՛ւն...»:
Մէլիքի-Մայրն ալ հարցուց ,—
— «Տըղա՛յ , Դաւի՛թ , Դուն ո՞ւր էիր՝ որ այդ բաներն ըրի՛ր Դուն»:
= «Դէ՛ , ես,-ըսաւ-, նըստեր էի ճիշդ այնտե՛ղ՝
*Որ Մէլիքի Թալած *) Գո՛ւրզը պիտ' իջնէր...»:*
— «Է՛ , Դուն ինչո՞ւ Մէլիքի Գուրզ բըռնեցիր +)...»:
= «Ինչո՞ւ չըբռնեմ... ,-ըսաւ Դաւիթ իր տեղէն-.

---

*) Միտկախ , Սրտաբեկ : *) Խաղթող ընել , Խաղը դադրեցնել : *) Գոռալ , Գոռը դնել (այլազգ մը) , Թաղել : †) Ե.896՝ Մօրը փէշ (քղանց) : *) Անուշ , Հաճելի , ղուարճալի : *) Ապով , Պատճառով : *) Թալած , Նեռած , արձակած : +) Ե.1095-6՝ Հարցնողը՝ Մըսրա-մէլիքն է , ոչ թէ Մայրը :

Ես Մէլիքէն պակա՞ս կըտրիճ Տըղայ եմ...,—
Ե՞ս ալ կ'ուզեմ Հոլիկ խաղամ Իրեն հետ...»։—

313. Մըտամէլիճ Զայրացած՝ Կըզանգաթի Մօրը Ու Կ'ուզէ Դաւիթը Սպանել

*Հ.՝ե.*896,791,729,862,761,498.553,955,552,790.1096, *Զկ.*418, *Ե.*6, *Հ.՝Ե.*6, *Կ.*41,9, *Հ.՝Կ.*9, *Հ.*22,413, (*Հ.*372), *Ը.*87, *ՀՍ·*333, *ՀՎ.*1.

Տըղայ-Դաւիթ մինչեւ որ Իր զըբոյցն ըրաւ ու պըրծաւ՝
Մէլիք ելաւ Իր Ձին հնծաւ, դէմքը կախած՝ եկաւ Տ՛ունն։—
Ա՛լ աւելի Թըշնամացա՛ւ Դաւթի հետ,
Կ՛ուզէր Դաւիթն ըսպանէ՛ր։
Մայր դէ՛մն ելաւ, ըսաւ,— «Որդի՛, դէմքդդ ինչո՞ւ կախեր ես...»։
*= «Մարէ՛,-ըսաւ-, Դուն Իմ Աչքեր կուբցուցի՛ր *)...,—*
Իմ Աղդի մէջ՝ Դուն Ձես ըրիր սեւերե՛ս...։—
Ես Ինչ ըսի՛ «Մարէ՛, Դաւիթ Ինձ հետ Հոլի չե՛մ տանիր...,
Ան՝ յամա՛ռ է..., մարդո՛ւ մըտիկ չի՛ ըներ...»։—
*Տարայ Ինձ հե՛տ, Ան այդ բաներ հանեց ահա Իմ Գըլո՛ւխ *)...*
Աախ,-ըսաւ-, Ինքը չըրա՛ւ, Դո՛ւն ըրիր... .
Դո՛ւն էիր որ Իմ Գըլուխը հանեցիր...։—
Մըտաւ Հոլտուն՝ նըստեցա՛ւ,
Ի՛նչ որ ըրի՝ դուրս չ'եկա՛ւ...։
Ես ալ ըսի՝ «Հոլը զարնենք, Ինչ գայ դըպի՝ ըսպանէ»,—
Իմ Հոլ բըռնեց, Ձօրքերու մէջ՝ Գըլխուս վրայէն թալեց դո՛ւրս...,
Քանի՛ հարիւր Մա՛րդ ըսպանեց Իմ Դուրզով...։—
Մեր Խաղն ու Մեր ուրախութիւն՝ խանգարեց...,
Ու Ձես ա՛յդքան Մարդերու մէջ ամբչցուց...»։
Դեռ տըղա՛յ է՝ որ այս բաներ Ինձ հետ կ'ընէ՛ Այդ Որբուկ...,
Ձես պէ՛տ ըրաւ, խայտառակե՛ց, Իմ Դարդ բըռնե՛ց ու նետե՛ց...,—
Վաղ որ մնծնա՛յ՝ ինչո՞ր պիտի Ան չըհանէ Իմ Գըլուխ...։—
Իմ Տուն-տե՛ղն ալ, Իմ երկի՛րն ալ՝ պիտի առնէ՛ Իմ Ձեռքէն...։
Գէաք է մորթե՛մ ես Այդ Տըղան անպատճառ...։

---

*) Այլեւ կուրցնել, Ամօթահար ընել (մէկը)։ *) Բան հանել մէկուն գլուխ, Փորձանք հասցնել մէկուն։

Մինչեւ որ ես՝ Անոր Արիւն չլխլմեմ...՝
Իմ Սիրտ երբե՛ք չի՛ հոգնար...»։—

314. Մըսրամէլիք Կ'ուզէ Աճդահա-Լարով Խեղդէ Դաւիթ, Մայրն Իր Կուրծքը Բացելով Կ'արգիլէ

Կ.41, Զ.՝Կ.41, Ա.7, Զ.՝Ա.7, Ե.729,1096,896,498,552,790,862,995,553, 617, (Ե.995), Զ.՝Ե.617,1096, Ը.87, Հ.413, Զ.

Մըսրամէլիք Նե՛րս որ մըտաւ այն տունն,
*Տեսաւ Դաւիթ զ'ինք պահեր *),*
*Ինկեր է հոն՝ Քուռսիին *) տակ՝ քընե՛ր է...,—*
*Վազեց՝ պատէն Անեղն *) առաւ, Անդան Լարը արձկեց,*
Բերաւ այնտեղ՝ որ Դաւիթի Վիզը խեղդէր այդ Լարով...,
Մայրը վազեց Տըղուն դէմ,
Դուռնէն ըսաւ,— «Մէլի՛ք, Որդի՛, ի՞նչ կ'ընես...»։
Մըսրամէլիք՝ Իր Մօր վերայ բարկացա՛ւ.—
= «Մարէ՛,-ըսաւ-, ձըգէ՛ այդ չո՛ւն՝ անհոգի...,
Ես այդ չա՛ն Որը պիտի խեղդե՛մ այս պահուս...,
Այդ Շո՛ւն-Որբը՝ ճի՛ւղ պիտի տայ եւ աճի՛...,—
Պիտի մորթեմ՝ որ անորմէ ժառանգ չ'ելնէ՝ իմնայ դուրս...,
Գայ վերի՛ Մըսրայ, փորձա՛նք դառնայ Մեր-երկրին...։
Ինձ հարիւրա՛վ Մա՛րդ ըսպանեց Այս Լակոտ...։
Ես՝ ամօթու՝ ա՛լ չե՛մ կըրնար իմ Գլուխը դո՛ւրս հանել...»։

Մէլիքի-Մայր՝ տեսաւ՝ այնտեղ՝ բարկացեր է Իր Տըղան,—
Կ'ուզէ զարնել՝ Դաւիթն այնտեղ ըսպանել...,—
Իր Ծիծերը բացաւ՝ դընաց Տըղուն դէմ,—
Ըսաւ,— «Մէլի՛ք, թէ Դու Դաւիթն ըսպանես՝
Այս Ծըծիս կաթ՝ խո՛ց †) Թող ըլլայ Քու վըրան...։
*Մօրո՛ւն *),-ըսաւ-, Ան չի՛ կըրնար քու Գորզ բըռնել ու նետել...*
Քու Գորզն եկեր՝ պիտի դըպչէր՝ Դաւիթն Իր տեղ ըսպաներ՝
Հրեշտակնե՛րը Ձեռ տըւեր են՝ Գորզը բըռներ՝ ու նետեր...՝

---

*) Պահել, Ծածկել։ *) Քուռսի, Աթոռաձեւ կրակարան՝ վերմակով ծածկուած։ *) Անեղ, Ադեղ։ †) Ա.7՝ Խարամ։ *) Մօրո՛ւն, Մո՛րը սիրական։

Որ չըլըպի՛ Այդ Տըղային ըսպանէ...։
Ան տըղա՛յ է. խելահաս չ'է.— տըղան չուտ բան կըըրոնէ...։
Բա՛ն չ'է տեսեր, բա՛ն չի դիտեր, անղէտ տըղայ է Դաւիթ։
Դէ՛, խելք չրկայ՝ հարկաւ անխե՛լք բան կ'ընէ...։—
Ինչո՞ւ պիտի մորթես Ան,—
Քու եղբա՛յրն է, հա՛ ծուռ չե՞ս...։
Ես չե՛մ թողուր որ Դու Դաւիթ ըսպանես...
= «Մարէ՛,-ըսաւ Մըրամէլիք՝ Ինք իր մէջը նախանձոտ-.
Ուրիշները իմ Հոլի տակ թէ որ իյնան՝ կըմեռնին...,
Դաւիթ զարկաւ իմ Դարդ բըռնեց...՝ չըմեռա՛ւ...»։
— «Որդի՛,-ըսաւ-, աղէ՛կ որ Քու Հոլ բըռնեց...,—
Դաւիթն ալ Քու եղբա՛յրն է,
Մըհէր-Դաւթի Որդին է...։
Քո Հայր Մըհէր՝ չա՛տ ջոջ Ըմբիշ է հղեր.
Դո՛ւն ալ կ'ըլլաս մեծ Ըմբիշ,
Դաւիթ Ինքն ալ՝ Ըմբի՛շ կ'ըլլայ՝ երբ մեծնայ...։
Քու եղբայրը՝ աղէ՛կ ըրաւ՝ որ բըռնեց։
Որդի՛,-ըսաւ-, Մարէ՛ն մնանի արեւի՛դ,
Դաւիթն ալ Քո եղբա՛յրն է...,
Քո Մէջքի Թո՛ւրն է Անիկ...,
Վաղ Քու եղբայր՝ Ինչ պէս Ըմբի՛շ կըպատնայ,
*Մէկ-Մէկիալի քամա՛կ կուտաք *)՝ կըկանգնի՛ք...,»։*
= «Մարէ,-ըսաւ-, չե՛մ ընդունիր ես այդ բան...։
Չէ՛, ես Ինձի այդպէս եղբայր չե՛մ ուզեր...,—
Դաւիթի Վիզ պիտի զարնե՛մ անպայման...»։—

315. Մըրամէլիի՝ Բաղրի խելոք-Մարդուն կ'դիմէ՝ Որը Հետ Իր Վէճը Հարթելու

Կ.41,42. Կ.41՝Ջ., Ե.729,996, Ա.7, Ջ.

Որ այդ ըսաւ, Մէկիքն ալ Մօր չա՛տ բարկացաւ, Ելաւ գո՛ւրս,
Ճամբուց այնտեղ՝ Բաղաքի մէջ՝ քանի մ' խելքով-Մա՛րդ բերաւ,—
— «Եկէ՛ք,-ըսաւ-, այսօր Իմ դա՛տն ու Իմ Մօր գա՛տն ըրէ՛ք դուք,—
Տեսնենք այդ Դուք ինչ կ'ըսէք...»։

---

*) Քառակ տաղ, Օդնել, աջակցիլ։

Դէ՛հ, Անոնք ալ՝ Աստուածասէր, խելքո՛վ-Մարդ են, ի՞նչ ըրին.—
Մէկ մասն եղան Մէլիքի՛ դէհ, մէկ՝ Դաւթին,
Մէջտեղ ինկան ու չըթողի՛ն ըսպանէր։—
= «Մէլի՛ք,-ըսին-, Անիկ աւօր Քու Մայ՛րն է.
Հարկաւ՝ Քու Մօր խելքը՝ քան Քոն աղէ՛կ է.
Ան Քու Մա՛յրն է, Դուն ալ Անոր Տըղա՛ն ես.
Քու Մայրն ի՛նչ որ Քեզի ըսէ, պատուիրէ՝
Դուն պէտք է որ՝ Անոր խօսքը կատարե՛ս։
Այն Տըղան որ Իր Հօրն ու Մօր չըլըսէ՝
Անոր կ'ըսեն՝ «Քու-Մո՛ւռ է»...,—
Ա՛լ այն Տըղուն վըտահութիւն չե՛ն ընե՛ր...»։
Մըսրամէլիքն ալ՝ մի՛տք ըրաւ՝ այնտեղ՝ Անոնց ի՞նչ ըսաւ.—
Ըսաւ, = «Ձեր խօ՛սք պիտի ընեմ ասկէ ետք...»։—

316. Մօր Եւ Տղուն Վէճը Ն'սասկանայ

Կ.42,9, Կ.44՝Ձ., ՁԿ.419, Մ.6, Հ.413,22,372, Ձ.՝Հ.22, Ե.956,820,995, 498,553,896.728, ՁՄ.334,335, Ա.7, Ը.86, Ձ.

Մէլիք ելաւ եկաւ Տո՛ւն,
Ըսաւ,— «Մարէ՛, ասի տըւի Քո սիրոյն...»։
Մայրն ալ՝ այնտեղ՝ ուրախացաւ ու ըսաւ,—
= «Մէլի՛ք, Որդի՛, Դուն որ Իմ խօսք կատարես՝
Ես ալ՝ հա՛րկաւ՝ կ'ուրախանա՛մ Քու վըրայ։
Ապա որ Իմ խօսք չընես՝
Քեզ չե՛մ ճանչնար Ինձ Տըղայ...։
Որդի՛,-ըսաւ-, Դաւ իթ դեռ եւս տըղա՛յ է...,—
Ան չի՛ գիտեր ի՞նչ կ'ընէ.
Իր ըրածին՝ խելք չի՛ հասնիր. յիմա՛ր է...։—
Որ ջոջացաւ)՝ խելքո՛վ կ'ըլլայ Այդ Տըղան։*
Ան ալ՝ չէ՞ որ Քու Եղբայրն է, օտար չի՛ է... .
Ինչո՞ւ այդպէս զէշ կըվարուիս Քո Եղբօրը՝ Դաւթի հետ,—
Ա՛յդքան Քո Սիրտ չո՛ւտ կ'առնես...։—
Այն Հայր՝ ինչ քեզ վատըկեր է Իր ուժով՝
Ան) ալ այնտե՛ղ*) վատըկեր է՝ Քեզի պէս։*

---

*) Որ ջոջացաւ, Երբոր մեծնայ։ *) Ան, Այսինքն՝ «Քու եղբայր՝ Դաւիթը»։ *) Այնտեղ, Այսինքն՝ Սասունի մէջ։

Ան ո՛ր Մէջ էն որ ինկեր է՝ Դուն ալ այդ նոյն Մէջէ՛ն ես։
Ինչո՞ւ պիտի կորսընցրնես Մեր չհուպահն ու Մեր վարձ…։
*Այստեղ բանի՛ ժամանա՛կ է՝ դ'Անի տիրեր *)՝ պահեր ենք, —*
Հիմա ինչո՞ւ կորսընցրնես Դուն Մեր վարձ…։
*Թէ կըշահես *)՝ լա՛ւ շահէ·*
*Թէ չէ՛՝ ճամբէ՛ երթայ Իր Հօր–Հէրանի՛ն *), —*
*Նախորդը ըլլայ կամ դառնարած, բանով մ' պահէ՛ *) Իր Գլուխ»։*

Մըտամէլիք նորէ՛ն բսաւ, — «Մարէ՛,–բսաւ–, կ'ըսպանե՛մ…,
Մեր Գլուխը թէ որ ցաւի՝ մէջ աշխըրքին՝ վեր՝ երկրին…՝
Այս Տըղայէ՛ն է, Մարէ՛…։ —
Ու թէ վրնա՛ս մ' ալ տայ Մեկի՝ Այս Տըղա՛ն է, լա՛ւ մխտ առ…։
Չէ՛, Մարէ՛, չէ՛…, մի երկմտիր, Օձու–Ձա՛գ է Այդ Տըղան…, —
Օձու–Ձագը՝ Չիու–Քուտակ չի՛ դառնար…։
Այդ Որդուկ–Ձիժ՝ չարութենէ՛ն այդպէս ըրաւ իմ Գլխին·
*Եր՛բ որ ըլլայ Անի՛կ է իմ գլխակեր *)…։*
Պիտի գարնի՛մ՝ սատկեցրնե՛մ ես՝ Այդ Տըղան, անպատճառ…, —
Հիմակուընէ՛ Ինձի Գլուխ չի՛ ծրևեր…։
*Ան՝ Իմ Գլխու հաւէ՛ն է կա՛ն կուդայ *)…,*
Անոր մխտը չա՛ր է, կ'ըսեմ· Իր Աչքերէ՛ն յայտնի է…, —
Առո՛ր համար՝ Իմ Հոլ բրտնեց ու նեսեց…»։

Մայրն ալ բսաւ, — «Մէկի՛ր, ի՞նչպէս Դուն կ'ըսպանես Որբ Տըղան…,
Օրէնքո՛վ ու պատասխանո՞վ՝ թէ՞ բրտնի…։
Այս Քաղաքի Մեծեր Թող դան՝ վրճիռ կըտրեն՝ ես տեսնա՛մ…»։ —

317. Քաղքին Մեծերը՝ կ'առաջարկեն Ոսկիով Ու Կտակով Փորձել Դաւիթը

Հ·22,372,373,413, (Հ·372), ՁՍ·336, Ա·7, Զ·՝ Ե·956,995,498,727, 728,790,820,896, 1096_7,553,1097,791,499, Յ·86, (Յ·86), Զ·

Քաղքին Մեծեր՝ ևկան այնտեղ որ վրճռեն։ —

---

*) Տիրել, *խնամել, դիմել*։ *) Շահիլ, *խնամել, պահել*։ *) Հօր–Հէրանի(ն), *Հայրենի երկիր, տուն, հայրենիք*։ *Ա·7՝ Իր հօր երկիր։ *) Գլուխը պահիլ, *Ապրուստ ճարել*։ Գլխակեր, (*Գլուխն ուտող*), *Մահուան պատճառ, փորձանք հասցնող*։ *) Գլխու(ն) հաւէն կամ գալ, *Մէկը սպանելու հետապնդել*։ *) կապել, *եղրակացնել, որոշում տալ*։

*Այն ժամանակ՝ ի՞նչ կապեցին *) Անոնք ալ։ —*
Ա՛յն Մարդիկ որ Մէլիքի՛ դէհ կըբռնեն՝
Անոնք եկան՝ մէջտե՛ղ ինկան եւ ըսին,
*— «Մէլի՛ք,—ըսին—, Քո Սիրտ մ՝ ա՛ռնեը *) աւոր համար՝ այս բանէն,*
Մէկ բա՛ն մ՝ ըրէ Դուն այստեղ. —
Ելնե՛նք բերենք ու փորձե՛նք...»։
Ըսաւ, = «Ի՞նչսպէս պիտ՝ փորձենք... †)»։
Ըսին, — «Այսպէ՛ս կ՝ընես Դուն. —
*Բե՛ր մէ՛կ Պընա՛կ *) կըրա՛կ լեցուր, ու մէկ Պընա՛կ ալ Ոսկի՛ *).*
Դաւիթ կանչենք, կըրակ–Ոսկին դընենք առջեւ՝ ու նայինք. =
Նայինք տեսնենք՝ Ան ո՞րմէկին Ձեռ կուտայ...։ —
Թէ որ Անիկ՝ չարութենէն՝ Ձեռը պարզեց դէպ Ոսկին,
Ոսկին վերցուց՝ կըրակ թողուց իրեն տեղ՝
Արդէն Անոր խելքը բանի կըհասնի..., —
Դիտամամբ ըրաւ այդ բանը... ,—
Իրաւո՛ւնք է՝ Անոր Գլուխ Քըցընել...,
Ի՛նչ որ կ՝ուզես՝ ան կ՝ընե՛ս...։
*Թէ որ Ձեռը տարաւ պարզեց դէհ *) կըրակ՝*
Կըրակն առաւ, Ոսկին թողուց իրեն տեղ՝
*Այն ժամանակ կ՝իմանա՛նք որ՝ Անիկ ճիժ *) է, չի՛ դատեր, —*
Անոր համա՛ր Հոլը նետեց երկնուց երես՝ դէպի վեր ,—
Մե՛ղք է Անոր ըսպանելն...,
*Ուրիշները պիտի ըսեն՝ «Հաց–Քացն *) ապո՛վ ըսպաննեց»..., —*
Ազա՛տ է Ան. ղըրկէ՛ երթայ Իրեն տեղ...»։

318. Մրարամէլիի՝ Մօր Կ՝ասիպէ Որ Կրակի Ու Ոսկիի Փորձին Եցթարկէ՝ Դաւիթը

Զ·, խ·6,7, ե·11,617,760,956,1096,553,618,761,618, կ·9,44, ՁԿ·420, ց·86, Հ·413,372, Ա·7·

Մէկիկն ալ՝ Մօր՝ դարձաւ ըսաւ, — «Ա՛յ Մարէ՛,

*) Սիրտ(ին) առնել, վիշտի, մտմտուքի մէջ՝ մաշիլ, ներսը ճըղել (հոգ մը)։ †) ց·86, Հ·372, ե·498,896,995,1096՝ Մայրն է որ կ՝առաջարկէ Ոսկիի–կրակի փորձը։ *) Պնակ, ե·498,553՝ խոզ (հողէ հին աման)։ *) Ոսկի, Հ·372՝ Արծաթ, կ·9, ե·760,790, 1097՝ չամիչ։ *) Դեհ, Դէպի, դէպ։ *) ճիժ, երախայ, մանուկ։ *) Հաց–քացց, Ուտելիք–խմելիք, խնամք։

Որ կ'ըսես իմ՝ «Ան պըղտիկ է, Անոր խեթը տեղ չ'ը՛ներ···», —
Դէ՛ նայի՛մ· բա՛ր, այստեղ փորձե՛նք Այդ Տըղան···,
Հիմա Անոր պըզտիկութիւնն ու ջոջութիւն կըտեսնե՛նք···: —
*Պընակ *) մ՝ Ոսկի՝ ու մէկ՝ կըրա՛կ՝ լեցնենք դընենք իր առջեւ·*
*Կանչէ՛ ըսէ՛, — «Այս դեղինէն *) մէկ՝ վերցո՛ւր»:*
Թէ Չեռ պարզեց դէհ կըրա՛կ՝
Ես կըվիտնա՛մ որ Ան տըխմար, տըղա՛յ է, —
Խելքը բանի՛ չի՛ հասնիր···:
Թէ Չեռ տարաւ դէպ Ոսկին՝
Անիկ չա՛ր է· խելքն ամէն բան կըկըտրէ՛···, —
Անոր վիզը պիտի առնե՛մ, լա՛ւ դիտցիր··· —
Ինձի փորձա՛նք է Անիկ···»:

319. Ոսկիի Ու Կրակի Փորձին՝ Դաւիթ «Թլլոլ» Կըղտաւնայ

2Ս·337, 2Կ·421,422, Ց·86, Խ·7, Կ·9,44, Հ·372,413,22,23, 2·՝Ե·11,499,553,618,791,897,956,1097,996,761,820,796, Ա·7, (Ա·7), 2·

Ելան բերին՝ Պընակ մ՝ Ոսկի ու մէկ կըրա՛կ լեցուցին·
Դաւիթ քունէն վե՛ր հաննցին ու բերին,
Կանչեցին ու Դաւիթն եկաւ Դուռէն նե՛րս,
Պընակ մ՝ Ոսկին ու կըրակը տարան դըրին իր առջե՛ւ,
Մէյ մէյ–մայրն ըսաւ, — «Դաւի՛թ, արի՛ այստե՛ղ մօտեցիր,
Այս երկուքէն ո՛ր մէկ՝ Քու Սիրտ որ կ'ուզէ՝
Անի վերցո՛ւր՝ ա՛ռ Քեզի···»:
*Դաւիթ եկաւ մըտաւ ներսը, երիշկաց *),*
*Տեսաւ՝ այնտեղ՝ սա՛նկ երկու բան կըպըսպըղա՛յ *) իր առջեւ,*
Մայրն ալ քովը նըստա՛ծ է···,
Ու Մէյ–մէյն ալ՝ քանի մ՝ Մարդով նըստա՛ծ են:
Դաւիթ Իր Չեռ պարզեց դէպի Պընակնե՛ր,
Չեռը տարաւ դէպի Ոսկին՝ որ առնէր, —
Անտե՛ր մընայ կարմիր Ոսկին ու Դըրամ···,

---

*) Պնակ, Խ·7, Ե·11,760՝ Սինի, Կ·9, Հ·372, Հ· 413՝ Ամաո, Կ·44՝ Ափսէ: *)Դեղինէն, Ե·553՝ «Այս կարմիրներէն»: *) Իրիշկալ, Նայիլ: *) Պսպղալ, Փալփլիլ:

Դէ՛, Դըրամը քա՛ղցր է Մարդուն···, կըքաշէ՛···,
Թէ՛ կըտանի Արքայութիւն՝ թէ՛ Դըժոխք···, —
Երբոր Դաւիթ Ջեռը պարզեց դէպ Ոսկին՝
Հրեշտակները երկնուց իջան՝ Ջեռն ոլրեցին դէպ կըրա՛կ։
Մանկութենէ՝ Դաւիթն ալ միշտ Մատները բերա՛ն կըդընէր, —
Ջեռքը թա՛ց էր՝ երբոր դըպաւ կըրակին, —
*Աստծու կամքով՝ կըրակ *) մ՛ կըպաւ Դաւթի Մա՛տ,*
Մատն այրեցա՛ւ կըրակէն,
Ա՛լ միտք չըրա՛ւ՝ Մատը թա՛փ տար՝ կըրակ Մատէն վա՛ր իյնար,
*Եւ կամ պըռտէր *) գետնի վրայ, —*
Մատը՝ չո՛ւտ–չո՛ւտ՝ կրակով վերցուց՝ ե՛տ քաշեց,
*Ջեռքը այնպէս կըրակախա՛ռն *) տարաւ ճըղթեց *) Իր Բերա՛ն.*
Մատը պըռտեց Իր Լեզուին,
Մատին վակած կըրակը հետ՝ դընաց առաւ Լեզուին,
*Լեզուին ծայրը, ու Մատն ալ հետ, մըրկեցա՛ւ ու պօղօճկա՛ւ *),*
Վը՛ժա՛ց, լացա՛ւ···, կըրակ Բերնէն թըքեց դո՛ւրս···,
*Եղաւ թըլոլ *)···, այլեւս «թըլո՛լ» կըխօսէր †)։ —*
*Ան՛որ համար՝ անուն մընաց *) Թլո՛լ–Դաւիթ։*

Մէլիքէ–Մայր՝ հասաւ Դաւիթն առաւ Գո՛ւրկ,
Ի՛նքն ալ լացաւ Ան՛որ հե՛տ···, —
Այդ ձեւո՛վ ալ՝ Մէլիք Թողուց՝ եկաւ դո՛ւրս···։ —

---

*) կրակ, *Ե*·791՝ փալ մ՛ կրակ։ *) Պռտել, *Քսել*։ *) կրա–կախառ(ն), *Ե*·897՝ կրակ–աք–ախ։ *Բնաբարբառին մէջ՝ ուղղելի՝* կրակաք–ք–ախ, *կրճատուած՝* կրակաք–աք–ախ *ձեւէն*։ *) ճղթել, *Խոթել*։ *) Պօղօճկիլ, *Ջրուռեց կազմել, այտնուլ*։ *) Թըլոլ, Թլոլ, *Թլուատ, Թոթովախօս*։ — *Ջկ*·422՝ Թլոլ եւ Թլէօլ, *Ը*·86՝ Թլոր, *Խ*·7՝ Թըլօր, *Ա*·7՝ Թլուատ, *կ*·9՝ Թլօլ, *Ե*·11՝ Լալ եւ Թլոր, *Ե*·499,553, 761՝ Թը–լոր,, *Ե*·618՝ Թլոր։ †) *Ե*·791՝ Ա՛լ չ՛կրցաւ լաւ խօսեր էր։ *) Ա–նուն մընաց, *Ը*·86, *Ա*·7, *Ե*·11,791,820,956,996՝ Անուն դրին, *կ*·9՝ *կ՛ըսուի*, *Հ*·372՝ կանչեցին։

320. Մայրը Կ'համոզէ, Որպէս Կ'յամառի...

Ց·86, Կ·44,9, Հ·372,413,23,373, Չ·՝Հ·373, Հ·414, Ե·897,499, 553,996, Չ·

Մայրն՝ այս անգամ՝ ըսաւ,— «Մէկի՛ք, դո՛ւր տեղ ինկանք մեզաց [տակ···:—

Դո՛ւն ալ տեսար որ Դաւիթը տըղա՛յ 1) է,
Ինչքը բանի չէկըսրւո՛ց···:
Ես որ Քեզի կ'ըսէի թէ՝ «Այն ճի՛ժ 1) է···,
Քու Գործդ բլոնկէն Աստուծմէ՛ է, Դաւիթի Ի՛ր ուժէն չէ՛···»,
Դուն կ'ըսէիր՝ «Չէ՛, տըղայ չէ՛, ··· մնծցա՛ծ է,
Դաւիթ Իրեն չարութենէ՛ն է կ'ընէ···,
Ես Դաւիթը կ'ըսպանո՛մ»···, —
Դէ՛, տեսա՛ր որ մխամի՛ր է, մէ՛ղք է Աստոր ըսպանել(ն)···, —
Չըտարբերուց···, Ի՞նչպէս Իր Հետ պարզուց տարաւ Կըրակէն,
Մտան այրեցա՛ւ Կըրակէն, —
Չըխորհեցա՛ւ՝ Մտաը քըսէր դեռնի վրայ,
Կըրակ տարաւ Իր Բերա՛ն,
Տըղայի թէ՛ Մա՛ռն այրեցաւ, թէ՛ Լեզո՛ւն, —
*Եղաւ բըլոլ···, բըլոլ-բըլո՛ւլ *) կըխօսի···: —*
Որ Աստոր խելք բանի հասնէր՝ Աստի այդպէս բան կ'ընէ՞ր···»:
Մըտամէկիքն ըսաւ, — «Մարէ՛, չե՛մ գիտեր···,
*Ես տեսայ որ՝ Հետը տարաւ Ոսկին *),*
Բայց Հրեշտակներ ոլորեցին դէպ Կըրա՛կ···»: —

321. Դաւիթը՝ Սեւ-Ջամիչի Ու Բոլոնի Փորձին Կ'ենթարկեն

ՀՍ·338,339,340,341, Չ·՝ՀՍ·339, Խ·7, Չ·, Ե·728, 956,897, (Ե·956), Հ·373,414, Ց·86, Չ·

Մէկիք նորէն դոհ չըմընաց, սէրտը վըրան չըտաքցաւ †)···,
Ըսաւ, — «Գէտք է ըսպանե՛մ···»:
Ելան ըսին, = «Չո՛ւլար, Մէկի՛ք, շա՛տ մեղք է···, —

---

1) Տղայ, ձիժ, երախայ, մանուկ: *) Թըլու-բըլու, *Թոթով-թոթով, Թլուատ կերպով*: *) Ոսկի, Կ·9՝ Ջամիչ, *զոր Տեսնել Հատուած 321ի մէջ*: †) *Այսինքն՝* Դաւթի վրայ չտաքցաւ:

Բե՛ր այս անգամ մէկ Պընակով Սե՛ւ-Ջամիչ,
Մէկ Պընա՛կ ալ՝ Սեւ-Բոլո՛ճ *) դիր՝ ու փորձէ՛...»։
Լեցուցի՛ն ու դըրին առջեւն ու ըսին,—
— «Նայինք տեսնենք՝ որ Ջամիչը առա՛չ վերցուց ու կերաւ՝
Ի՛նչ որ կ՚ուզես՝ ա՛ն ըրէ...։
Որ բոլո՛ճը կերաւ առաչ՝ անդիտակ,—
Հո՛ գիտես որ դառում չունի՛, սըղա՛յ է...»։

Բերին այնտեղ՝ մէկ Պընակով Սե՛ւ-Ջամիչ,
Մէկ Պընա՛կ ալ՝ մուխ տեղերու Սե՛ւ-Բոլոճ,
Կանչեցին հոն բերին Դաւիթն՝ ու ըսին,—
— «Դաւի՛թ,—ըսին-, ո՛րը կ՚ուզես՝ ա՛ռ ու կե՛ր...»։
Տըղայ-Դաւիթ՝ Սչէք պըտըտցուց Բոլոճներէն Ջամիչին,—
Տեսաւ որ ի՛նչ..., — երկու Պընակ՝ սե՛ւ բաներ...,—
Աղին՝ ահա՛՝ ճիվեր բացած՝ պիտի երթան Պընակէն...,
Անդին՝ սե՛ւ-սեւ կըքընանան..., փախող չըկա՛յ Ամանէն...։
Դաւիթն ալ չուտ վըրա՛յ հասաւ, Ձեռքը զարկաւ Բոլոճին *),
Մըտքէն ըսաւ՝ «Ոտովը ուտենք, անվոտն արդէն Մեզ ծառա՛յ...»,
Բոլոճն առաւ Մատներուն մէջ՝ դարձո՛ւց-դարձուց՝ նայեցաւ...,
Տուիկներէն, չօշափուկէն՝ քաշեց փըրցուց՝ մէյմէ՛կ հատ...,
Սեւ-Միջատը դարձուց՝ այսպէս՝ Սեւ-Ջամիչի՛ նըմանակ,
Տարաւ խառնեց Ջամիչներու կոլոնին *)...։ —
Ընդունք փըրթաւ Ներկանէրուն մէջ համակ...։ —
Այս անգա՛մ ալ՝ Դաւիթ պըրծաւ Եղբօր Ձեռքէն՝ ու մընաց։
— «Որդի՛, տեսա՞ր,—ըսաւ Մայրը՝ Մէլիքին-.
Ձի՞ժ է Դաւիթ...՝ թէ՞ ճիժ չէ՛...»։
Ան ժամանակ՝ Մէլիքն ըսաւ, = «Դէ՛, Մարի՛,
Այսօր այսպէ՛ս ալ թող կենա՛յ՝ այսքանով,
Բայց՝ վերջապէս՝ ե՛րբ որ ըլլայ՝ պիտի զարնեմ ըսպանե՛մ...»։ —

Անկէ յետոյ, Մըսրամէլիք, ամեն օր՝
Ա՛պըռ տըւաւ *) Մօրն օճիքին՝ եւ ըսաւ. —

---

*) Սեւ-Բոլոճ, ՀՄ·339՝ Թըսք-ան-Բոլոճ, *Մեռելամճի*, Blaps mortissaga, որ գէշ հոտ մը կըհանէ եւ սեւ է։ *) Բոլոճին, *Բոլոճներու* վախող խումբին։ *) Կոլոճ, *կոյտ*; դէզ։ *) Ապռ տալ, (*Օճիքին*) փակիլ, յարձակում տալ։

— «Ապա, Մարի՛, չեղա՛ծ բան է..., ի՞նչպէս ընենք Աստը հետ...:
Անիկ՝ այլեւս՝ պէտք չէ՛ մընայ իմ առջեւ...: —
Իմ Սիրտ Արի՛ք չի՛ ընդունիր՝ ասկէ ետք՝
Այս Օձո՛ւ-Զաղ մընայ այտուղ, իմ աչքիս դէմ, ամեն օր...: —
Ի՞նչպէս ըլայ՝ օր մը չէ՛ օր մ՚ ես Դաւիթը կ՚ըսպանեմ...»:

Դ. ՍԱՍՄԱՆՑ-ՏԱՆ ԱՆԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ

322. Սասմանց-Տունը՝ Dօքնամեայ Սուգին և իւր

2., Ս.149՝ 2., Ց.25.

Անոնք այնտեղ՝ Մըսըրի մէջ թող մընան, —
Դառնանք ղըրոյցն ո՞ւրկէ տանք, —
Սասմանց-Տունի Մեծաւորէ՛ն ղըրոյց տանք: —

Մըհէր-Դաւիթ †) մեռնելէն ետք՝ մինչ այդ օր՝
Եօթը տարի՝ Սասմանց-Տունը տո՛ւր մընաց:
Օրերէն մէկ՝ Իշխաններն ու Տէր-Հայրն էլան ժողուեցան,
Ու Գնդապետ մխասին, —
Եկան Քեռի-Թորոսի +) կուշտ, Սեղան ղըրին՝ նըստեցան:
Գնդապետ՛քն են, — դարձան ըսին Թորոսին. —
— «Քեռի՛-Թորոս, Մեր Տըղեկներ հալւորա՞ն...,
Մեր Աղջկըտիք պատըրաստ՞ն..., —
Թէ Դու դիտես *) որ եօ՛թ տարի տուր պահելով ու լալով՝
Դաւիթ-Մըհէր կը աղջըկայ ու կուգայ...՝
Եօ՛թ տարի ալ դուն աւելի տո՛ւր պահենք...»:

Քեռի-Թորոս արտօնութի՛ւն տըւաւ Անոնց եւ ըսաւ. —
= «Կարդեցէ՛ք Ձեր Տըղեկներն ու Աղջկըտիք..., —
Տուր պահելով՝ բա՛ն չ՚ը՛լլար...»: —

323. Սասմանց Գինեխումին՝ Քեռի-Թորոսի Բաժակաճառը

2., Ս.149,150, 2.՝ Ս.149,150, 2., Ց.25,26, (Ց.26).

Սասմանց-Տունն է,

---

†) Ս.149՝ պատուհին ընդունելով՝ «Ափամէլիճի» (*մեռնելուց առաջ*): +) Ս.149՝ Քեռի-Թորոս, Ց.25՝ Քեռի-Թորոսիկ: *) Գիտես, կը կարծես, կը յուսաս, կը հաւատաս:

Դըրին Իրենց Գինեխո՛մ, —
Ուրախութի՛ւն պիտի ընեն Իրենց մէջ. —
Բերին Գինի՛ տըւին Տէր-Հօրն՝ ու ըսին, —
— «Տէ՛ր-Հայր,-ըսին-, «Հոգո՛ց» մ՝ ըսէ Մըհէրին...»:
Տէր-Հայրն երբոր «Հոգոց»ն ըսաւ ու պըրծաւ՝
*Գինին առին լեցընել *) ու տըւին Քեռի-Թորոսին, —*
Մէյմէկ կողմէ՝ — «Դէ՛, խըմէ՛...»:
Քեռի-Թորոս առաւ Գաւաթ՝ բըռնեց Ձե՛ռ,
Կեցաւ Իր տեղ՝ մի՛տք ըրաւ. —
«Իմ Որբերը մինչեւ չ'երթամ չըբերեմ...՝
Այդ Բաժակը Ես Իմ բերան չըտանի՛մ...»:
*Մի՛տք կ'ընէ ու ոչ կըխըմէ՝ ոչ Իր Բաժակ կըդընէ *)...:*
*Իրեն Տըղան †) Խոր-Մանուկն *) ալ՝ դարձաւ Իր Հօր ձա՛յն տըւաւ.—*
*— «Աբո՛,-ըսաւ-, Սասնոյ-Ծըռե՛րն *) են Ատոնք...,*
Հիմա կ'ելլենն՝ պակաս խօ՛սք մը կ'ըսեն Քեզ...:
Կա՛մ ա՛ռ խըմէ՛, կա՛մ դի՛ր դեռին՝ ու քալէ՛..., —
Արտօնութի՛ւն տուր Այդ Մարդոց՝ Թող երթան»:
Քեռի-Թորոսն ալ՝ հոն վերցուց՝ ի՞նչ ըսաւ. —
— «Հէ՛յ անիրաւ, Մենք Նըստինք Հոդ՝ ընենք այսպէս կերուխում...,
Մըսրայ-Մէլիք՝ դա՛յ Մեր Ձիժերն առնէ տանի պերութի՛ւն...:
*Բաղդասարի +) ու Մըհէրի Տըղեկները Թըրթըփէ՛... *), —*
Մենք Նըստինք Հոդ, ընենք այսպէս Գինեխո՛մ..., —
Ամօթ չ'է՞ Մեզ՝ Ամենքիս որ այստեղ ենք...: —
Հա՛ցն ու Գինին,
Տէ՛ր-կենդանին..., —
*Քան այդ Բաժակ *) Ես աւելի չըխըմե՛մ...,*

---

*) Առին լեցնել, *Լեցնել սկսան*: *) Դնել, *Վար առնել, սեղանին վրայ դնել*: †) *Ս*·149՝ Թորոսի տղան, *Ե*·26՝ *Խոր-Մանուկ*: *) Խոր-Մանուկ, *Խոր՝ հաւանաբար* Խոռ *կամ* Գոռ = *քաջ, կտրիճ*: *) Սասնոյ Ծըռեր, *Ծուռ՝ ո՛չ թէ* խեղճ, խելքը թռուցած *խմաստով՝ այլ* արտակարգ, սովորականէ վեր, *քաջ, կտրիճ, յանդուգն,* brave, *ո՛չ թէ* fou: +) *Ս*·150՝ *Աբամէլիքի*: *) Թրթփել, *Տանջել, չարչարել, ճնշել (Թուր-Թափ-ել)*: *) Քան այդ բաժակ, *Այդ բաժակէն (աւելի)*:

*Ելնեմ երթամ իմ *) ճըժկըռուն երեան *)...»:*

Աբռօնութի՛ւն տըւաւ Մարդոց, Անոնք ելան ու գացին: —

324. Քնոխ-Թաոռոս Դէպ Մրսբր՝ Ու Բաղդադի Մնծաւորին Գիրը

Ց·26, Ս·150, Զ·Ի·17,18·

Մընաց մինչեւ լուսացա՛ւ, —
Քնոխ-Թորոս ելաւ ինկաւ ճանապա՛րհ,
*Սատնու *) զարկաւ *) իչաւ գընաց դէպ Մրսբ՛ը·*
*Գընաց Բաղդադ, հոն Նըստողին *)՝ ու ըսաւ, —*
*— «Ալի՛ֆ, գիտես *), որ այս քանի՛ տարի է՝*
Մրսրայ-Մէլիք †)՝ իմ ծողովուրդն ու իմ Որբեր՝ տարի՛ է...»:
Բաղդադի-Մեծ՝ վերցուց ըսա՛ւ Թորոսին. —
*— «Կրսրա՛կ թաւիլ Ձեր հաստակող Ազգի Դըլխին, հա՛-հանէ՛ք *),—*
*Ամենը Ձեր Ազգի չոռո՛ւմն *) է կըհասնի Ձեր-Ցեղին...»:*
= «Ինչո՞ւ համար...», — ըսաւ Քնոխ-Թորոսիկ:
— «Ապա, — ըսաւ Ալիֆին ալ —,
Սատնու-Մրհէր՝ ելաւ դընաց 'ի Մրսբր,
*Մէլիք-Մայր սիրո՛ղ ըրաւ *) Իր համար,*
*Մրսրամէլիքն Անկէ՛ ելաւ *), ևկաւ Ձեր Ազգ կոտորեց...»:*

---

*) Իմ, *Այսինքն այն տղաներ՝ որ աւազութեանս իրաւունքովը՝ ի՛մս կը սեպուին, իմ խնամակալութեանս տակն են:* *) Երեւաւ (*երթալ ճըժկըռուն երեան*), *երթալ երեւնալ տղոց, երթալ տեսնել:* *) Սատնու, *Սատունէն:* *) Զարնել, *Արագ ճամբայ երթալ:* *) Նըստող, *Իչխող:* *) Գիտես, *Գիտի ծանօթ է որ...:* †) *ՍԱՄՈՒՆԱԿԱՆ ընթերցողները կ'ենթատեսեն անշուշտ որ՝ Մրսրայ-Մէլիք ձեւը կը դրծածեմ՝ երբ խօսքը Մրսրի (Հին Աստրեսատանի, Նինուէ-Բաղդադ-Մուսուլի) իշխանապետութեան մասին է: Իսկ Մրսրամէլիք (երբ մէկ անուն)՝ երբ Դաւիթի խորթ եղբօրը կ'ակնարկուի:* *) Հա՛-հանչիկ, *Իրաւցընէ՛, ահա՛ թէ ինչո՛ւ...:* *) Շոռոյր, Շոռ, *Անհամ եւ անուռկի արարք՝ ծանր հետեւանքներով:* *) Սիրող, *հոս՝ Սիրուհի: Կրնայ հասկցուիլ նաեւ այսպէս, — «Մէլիքի Մայր՝ հրապուրեց Դաւիթ-Մրհէրը եւ սիրող դարձուց իրեն»:* *) Ելնել, *Ծնիլ, աչխարհ գալ:*

= «Շխտա՛կ ըսիր…,–վերցուց ըսաւ Թորոսն ալ–.
Մխայն թէ Դուն՝ ինձ ճամբա՛յ տուր՝ երթամ տեսնեմ ես Մէլիք…»:
Խալիֆ բերաւ Թո՛ւղթ մը դրրեց եւ ըսաւ. —
— «Գըլխի՛դ մատաղ, Մըսրայ–Մէլիք, մե՛ծ իշխան,
Ժողովո՛ւրդն ալ ինձի մատա՛ղ թող ըլլայ…
Գա՛նձն ալ ինձի մատաղ ըլլայ մըչտական…, —
Մխայն՝ Իրենց Որբերը տո՛ւր՝ առնէ գայ…:
Թէ որ չիտաս՝ Դուն առենին պատրա՛ստ կաց,
Ե՛ս ալ կ՚ելնեմ՝ կըռի՛ւ կուգամ Քու վրրայ…, —
Այդ եօթ–Որբերն՝ Իմ Թոռնե՛րն են, սեպէ՛ Թէ…»:

885. Քեռի-Թորոս՝ Մէլիքի Մօրը Քով. Մէլիքի Պահանջը՝ Որ Թուրին Ցակէճ Ածցնի

Զ·՝Լ·18·

Քեռի–Թորոս՝ այդ Դիրն առաւ՝ դընաց Հասաւ ՚ի Մըսրը,
Տարաւ տըւաւ Մէլիքի–Մօր՝ Մըսրայ–Տիկին Իսմիլին:
Մայրը կանչեց Տըղան բերաւ՝ ու ըսաւ. —
— «Մատա՛ղ ըլլամ Քեզ, Մէլի՛ք,
Այդ Որբերը տո՛ւր Թող առնէ Քեռի–Թորոսն ու տանի՛»:
= «Ինչո՞ւ, Մարի՛, տամ Որբերը որ տանի…, —
Զի՛, չե՛մ տար…»:
— «Ինչո՞ւ չես տար…»,–ըսաւ Մայրը:
= «Անո՛ր համար չեմ տար,–ըսաւ Մէլիքն ալ–,
Որ այդ Սասնո՛ւ †) վաստակները *)՝
Մէկ մխուէն չորակո՛ղ են ու յամառ…, —
Դաւի՛թ՝ Ամե՛նքն է անցեր…:
Դեռ երի՛կ էր, եկաւ Իմ կուչտ *) նըստեցա՛ւ,
Մօրուքս բըռնեց ու ցըցխեց *),
Մօրուքս բըռնեց ու ցըցխեց *),
Ուղեղս՝ Իր տեղ՝ իրա՛ր եկաւ *), երերաց…:

†) *Օտարներու բերնով՝* Սասնու, Սասնայ, Սասնայ· *Հայերու բերնով՝* Սասմանց, Սասոնցոց, Սասմանց–Տան՝ *ձեւերովը գործածեր եմ ՍԱՍՈՒՆԱԿԱՆԻս մէջ: Բացատրութիւն՝ խժալուբ հանդիպումներուն, Տե՛ս Հոծ. 359:* *) վաստակ, *Զառակ, սերունդ:* *) կուշտ, *Քով:* *) ցցխել, *Քաշել՝ ցնցկտել, Թոթուել:* *) Իրար գալ, *Շարժիլ, ցունց առնել:*

Ուղեցի որ զարնէի դ'ինք մեռցընէի՛ տեղնիսեղ,
Ըսին «Մի՛ղք է Այդ Տըղան»...:
Անոր համա՛ր չեմ Թողներ...՝
Որ վա՛խ ունիմ՝ Ինձ վընասէ՛ Այդ Տըղան...»:
Մայրն ալ ըսաւ,— «Թող՝ Թող Երթա՛ն, Մէլիք,–ըսաւ–, բան չըկայ):*
*Ակա՛նջ ըրաւ *) Իրեն Մօր, —*
Ըսաւ, = «Մարէ՛, Թող ըլլա՛յ..., —
Իմ Թուր քաշեմ՝ բարձրացընեմ, դան ու անցնին Իր տակէն, —
Արտօնութի՛ւն տամ՝ երթա՛ն...»: —

326. Քեռի-Թորոս Ու Մբարամէլիի Կ'ընտիր Աստծու Դաստաստան

Զ·, Ս·150, Զ·՝Ս·150, Ց·26, Զ·՝Ց·26·

Իմա՛ց տըւին, Քեռի–Թորոսն առին տարան Մէլիքին·
Գընաց այնտեղ, Մէլիքի կուշտ նըստեցաւ: —
Ծօսակցեցա՛ն Ինք ու Մէլիք, եւ ըսաւ, —
— «Ինչ՛ւ, ես ու Դուն՝ նըստինք Աստծու–Դատաստա՛ն· —
Իրա՛ւ է որ՝ Դուն ու Մըհէր պայմանուեր էք Իրար հետ †),
Բայց Գերեզին պի՛ն ալ ըլլայ՝ Իրեն տէրո՛ջ կը հաւանի...:
*Հիմա բեր տո՛ւր Իմ *) Տըղեկներ՝ ես տանի՛մ· —*
Ի՛նչքան որ Դուն հոս պահեցիր՝ կըբաւէ...»:

Ելան գացին Դատաստան՝
*Տըղաներըը *)հասան Քեռի–Թորոսին:*

327. Մբարամէլիի Պայմանը՝ Թուրի Տակէն Անցընելու, Դաւիթի Պատասխանը

Զ·, Ս·150,151, (Ս·151), Ց·26, Զ·

Մէլիքի Աչք չատ կըվախնայ այդ Սասունի ձիժերէն: —
Ան ալ վերցուց՝ ըսա՛ւ Քեռի–Թորոսին, —

---

*) Բան չկայ, Վնաս չունի, վատնդ մը չկայ: *) Ականջ ընել, Մտիկ ընել: †) Պայմանի մասին՝ Տես Հատ· 235 և 328: *) Իմ Տղեկներ, Տե՛ս Հատ· 323՝ սորջ·: *) Տղաներ, Ախինքն՝ ձնճղաւոխիկ, Որ–Գուսան՝ (Մ·148), Թռո–ձնճղուկ, Վիժիկ–Մրխո, Բռնած–Կուռիկ, ձոռ–Կուռիկ՝ (Լ·18), եւ Վարդան՝ (Կ·121):

— «Քու Տըղեկներ քե՛ր Իմ Թըրի տակէն անցո՛ւր՝ ա՛ռ դընա՛»։
Քեռի-Թորոսն ալ՝ ըսաւ, = «Թող դան անցնինն»։

Ելաւ եկաւ՝ Քեռի-Թորոս՝ Տըղաներուն բացատրեց, —
— «Թէ որ չիդաք՝ Անոր Թըրի տակէն անցնիք ու երթաք՝
Մըսրամէլիք Զեղ Ամե՛նքդ ալ կ'ըսպանէ...»։
Ծըռան-Վէգին ըսաւ,= «Երթա՛նք Բոլորս ալ,
Անցնի՛նք Իրեն Թըրին տակէն՝ ու երթա՛նք»։
Մէկալ Վե՛ցն ալ՝ այդ ձեւով.—
Սակայն Դաւիթ՝ Թըլոլ-Թըլոլ*) ի՞նչ ըսաւ.—
= «Որ կ'ըսպանէ՝ դէ՛հ այսօ՛ր Թող ըսպանէ՝
Որ Ուրիչներ՝ ըսեն «Տըղա՛յ մ' ըսպանեց»...։
Ո՛չ մէկ առեն՝ ես Մէլիքի Թըրի տակէն չե՛մ անցնիր...
Այդպէս կ'ընէ՝ որ վաղ*) երբոր ես մեծնամ՝
Սուր չըքաշե՞մ Իր վըրան...»։—

328. Ծըռան-Վէգին Ու Միւսները Կ'անցնին Մէլիքի Թրին Տակէն, Դաւիթը Չի՛անցնիր

Ջ., Մ.151,149, Ջ., Ծ.26, Ջ.Ծ.26, Ջ.Վ.18, (Լ.18).

Իրեն ահէն՝ Քեռի-Թորոսն ալ այն առեն ի՞նչ ըրաւ.—
Առանք ժողվեց որ տանի ու Թըրի տակէն անցունէ։

Մըսրայ-Տէրն ալ՝ ինչո՞ւ համար Այդ Տըղեկներ բերեր էր,—
Որովհետեւ Իրեն Մեծ-Հօր ղըրած պայման չէ՛ր մոռցեր †)...,—
Ինչ ըսեր էր Առիւծ-Մըհէր՝ Իրեն Ջաւակ Մէլիքին,—
«Թէ ե՛ս Քենէ չուտ մեռայ՝
Իմ ձիժ՛ըը Քեզ ուտանդ.
Թէ Դո՛ւն Ինձմէ չուտ մեռար՝
Քու ձիժ՛ըը Ինձ ուտանդ,—
Ես կըշահեմ՝ կըպահե՛մ...»։

Մըսրամէլիք՝ Թուրը քաշեց եկաւ Դո՛ւռ,

---

*) Թըլոլ-թըլոլ, Թոթով լեզուով։ *) Վաղ, Ապագային, աւելի ետքը։ †) Հեդնական է խօսքը. դի գիտենք որ պատանդ տարուած էին այդ տղաները։

Տղեկներն ալ՝ եկան պիտի՝ Թուբին տակէն անցնէին,—
Մեծ-Տղան, հոն, Ցրտան-Վէղին է առաջ,
Նո՛ր Դոմչի ո՛չ ունի...,—
*Եկաւ խա՛որ *) չուտ անցաւ...:*
Ձրնճղատխոխիկ †)՝ նո՛ր Դոմչի ո՛չ ունի...,—
Ա՛ն ալ վազից ու անցաւ:
Թառ-Ձրնճղո՛ւկն ալ անցաւ...,
Վրժիկ-Մրխո՛ն ալ անցաւ...,
Բրնտած-Կուռի՛կն ալ անցաւ...,
Ճոռ-Կուռի՛կն ալ, ու Վարդա՛ն ալ՝ Անոնց պէս՝
Եկան անցա՛ն Թուբին տակէն ու գացին:
Հերթը եկաւ Դաւիթի՛ն,—
*Դաւիթ ղընկամա՛ւ *) ու կեցաւ...,*
Չի ուզեր որ Թըրի տակէն գայ անցնի:
Քեռի-Թօրոսն ըսաւ,— «Դաւի՛թ, դէ՛ արի՛,
Դո՛ւն ալ անցիր Թըրի տակէն՝ ու երթա՛նք...»:
= «Ես չե՛մ անցնիր...» ,-ըսաւ Ան:
Քեռի-Թօրոսն ըսաւ,— «Ինչո՞ւ չես անցնիր...»:
= «Ես ու Աաիկ ,-ըսաւ Դաւիթ-, Հող ու Ջըրի ընկե՛ր ենք·
*Օր-տարի՛ է *)..., տաե՛ն կ՛անցնի Մեր վըրայ...,—*
Եղա՛ւ որ թէ՝ վէ՛ճ բացուեցաւ, կըռի՛ւ ըրինք Իրար հետ,
Աաի՝ Թըրով Ինձ զարկաւ...,—
Ես ալ Իրեն չըղարնո՞ւմ...:
Չէ՛, Ես Աասր Թըրի տակէն չե՛մ անցնիր...:

899. Դաւիթի ճկոյթը կ'դպի Քարին՝ Ու կրա՛կ կուտայ...

Ջ., Ս.151, Ճ.26,27, Ջ.Ճ.26, Ջ(լ.18), լ.18, Ջ.

Քեռի-Թօրոս՝ Ջեռը նետաց Դաւիթի Կռնի ու քաշեց,
*Հըլաւո՛ց *) որ՝ բըռնի տանէր՝ Թըրի տակէն չանցաւնէր,*

---

*) Խառ(ը), Ջեռ-ուած իրար խառնած, հալճեպով մը, փութանակի: †) Ճ.26.՝ Փոռիկ-Ձնճղիկ, տասրէչ՝ Ձնճղիկ-Փոռիկ: *) Ջրնկուիլ, Թլուխ ցցել, ամուր կենալ իր տեղ: *) Օր-տարի է, Օր է՝ տարի է, Օր կուգայ, տարի կուգայ, ուրէ տանեն կրնայ պատահիլ՝ որ...: *) Հլոտել, Հրել, մղել· քշել:

Դաւիթ չանցա՛ւ Թրի տակէն...,—
Գօռա՛ց, կանչե՛ց, թա՛փ տըւաւ...

Թոթռուե՛ց Քեռի-Թորոսիկ,
Քեռի-Թորոս գըլորուեցաւ ինկաւ դէ՛ն։—
*Դաւիթ՝ կըշտով *)՝ չեղ անցաւ,*
Իր ճըկոյթը առաւ Քարի՛ն, կըրա՛կ ելաւ եղունգէն։

Մըսրամէլիք երբոր տեսաւ կըրակ տա՛լ՝...
Շա՛տ-չատ վախցաւ ու ըսաւ.—
«Ասի դեռևս պըզտի՛կ է որ ա՛յսքան է... †),
Որ մեծցաւ ապա պիտի ի՛նչ դառնայ...։
Թէ որ Ինձի վընաս մը գայ՝ աչխարքի մէջ, երկրի վրայ...՝
Այդ Տըղայի մօտէն է...»։

880. Մըսրամէլիք Դաւիթը Վար Կ'դնէ, Քեռի Թորոս Միւսներն Առնելով՝ Սասուն Կ'դառնայ

Չ.(Ս.148), Ս.151, Չ.Ն.18, Չ.՝ՉԿ.423, Կ.44, Չ.,Ճ.27.

Մըսրը բերուած Տըղեկներէն ամենէն փոքր՝ Դաւիթն էր.

Ճըռան-Վէգին, ճընճղափոխիկ, Խոր-Գուսան,
Ու միուս Չորս Տըղաները՝ բոլո՛րն ալ՝
*Անկարո՛ղ են..., խակի *) բանի պէտք չէ՛ն դար...։*
*Սակայն Դաւիթ քան զ'Ամենն ալ չընորքա՛ւն *) է ու ճարպիկ.*
Իր զօրութիւնն ալ՝ լեզուով նըկարագրել չի՛ըլար...։
— «Քեռի-Թորոս,-ըսաւ Մէլիք՝ բարկացած-.
Դաւիթ ինչո՞ւ չեկաւ անցնէր Թուրխ տակէն՝ ու երթար...»։
Ըսաւ, = «Դաւիթ՝ երախա՛յ է, կը վախնա՛յ...»։

Մէլիքին ալ՝ չատ դէշ եկաւ այդ եղած.
Դաւիթի ահ՝ սըրտին մէ՛ջն է, ու մօտէն չա՛տ կըվախնայ։—

---

*) Կշռով, կուշտէն, քովընտի։ †) Այսինքն՝ ուժը (այսքան է), ա՛յսքան ուժեղ է։ *) Իսկի, բնա՛ւ, երբե՛ք։ *) Շնորհուճ, Շնորհ՛ք ունեցող, ձիրքի, ուժի, կարողութիւններու՝ տէր։

«Որ Ան պրպտիկ չ'ըսպանեմ...՝
Երբ Ջոջանայ՝ Ինձ բըռնութի՛ւն պիտի (ը)նէ...»։
Ան ալ վերցուց՝ ըսա՛ւ Բեռի-Թորոսին,—
— Որ այդպէս է՝ ես ալ Դաւիթ Թող չե՛մ տար...,
Թուրիս տակէն չ'է՛ անցած...,
Հոս կը պահեմ՝ մինչեւ մնծնայ, խելօքնայ...։
Միւսներդ կ'ուզես տանիս՝ ա՛ռ ու տար»։
Բեռի-Թորոս՝ առաւ միայն մէկ մէկներ,
Դարձաւ եկաւ 'ի Սասուն,
Ծըռան-Վէրին՝ իր Պապուն տեղ՝ Սասմանց Բերդին Մե՛ծ *) ղըրաւ։

Ե. ԹԼԼՈԼ-ԴԱՒԻԹԻ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆԸ (ՄԸՍՐԱՅ ՄԷՋ)

(Շարունակ.)

321. Մելիքի Բելճէն վախճալով՝ Մայրը Իր Եօթ Եղբայրներուն Կ'յանձնէ Դաւիթը

Ջ·Լ.18. Ջկ.423, կ.42, Ջ.

Մըսրայէլիք դարձաւ նորէն ըսաւ Մօր,—
— «Մարէ՛,-ըսաւ-, այն Դաւիթ որ ես տեսայ...՝
Ան կ'ըսպանէ Ձիս մէկ օր...»։
Մայրն ալ ըսաւ, = «Որդի՛, Անիկ երախայ է՝ վախցա՛ւ,—
Ան ի՞նչ է որ Քեզ ըսպանե՛լ կարենայ...»։
Մէլիք սակայն Իրեն քէնը դըրաւ նե՛րս,
Կ'ուզէր Դաւիթ կորսընցընէ՛ր օր-առաջ *)։
Մայրն ալ ըսաւ՝ Թլղոլ-Դաւիթ Մէլիքէն չատ կըսիրէ.
[Անոր Հօրը՝ Մըհէր-Դաւիթի նըմա՛ւշն է]։
Իր Տղային վրատահութի՛ւն չի՛ընար,—
Կ'ըսէ՝ «Իմ լաճ Մէլիք խի՛տա է ու քէնոտ...,
Վախնամ՝ Դաւիթ ըսպանէ...»։
Ան ալ այնտեղ ի՞նչ ըրաւ.—
Ելաւ գընաց իր Հօր Տունն.
Ինքն ալ ունէր եօ՛թ-Եղբայր,—

---

*) Մեծ, Մեծաւոր, իշխան, Ս.151՝ մեջ (ղրաւ)։ *) Օր առաջ, Մէկ օր աւելի չուտ, անյապաղ։

Ըսաւ, — «Գիտէ՞ք, Աղբարիկնե՛րս, ինչո՛ւ համար եմ եկեր,—
Մէկիկ՝ Դաւիթէն սըրդողեր է, վախնամ իրար վընասեն...,
Ես կ՚ուզեմ որ՝ Դուք ամեն օր՝ Դաւիթ տանիք միասեղ,—
Առնէք տանիք Սար՝ Որս ընէ Զեզի հետ»:

332. Տղայ-Դաւիթ՝ Բռուցցով Կ՚ապացէ Վայրի Եզը

Կ.42, Ջ.՝ ՋԿ. 411 *տարջ.*

*Մէկալ օրը՝ Քեռիքն *) եկան՝ Դաւիթին առին՝ տարան Սա՛ր:*
*Երբ դարուվա՛ր ինկած էին *)՝ Վէրի-Ոչխար փնտռելու,—*
*Վայրի-եզ *) մը՝ անկարծակի՝ փըրթաւ եկաւ վեր՝ Դաւիթին:*
*Մօրեղբայրներ *) մէյմէկ կողմէ կանչեցին,—*
— «Դաւի՛թ,-ըսին-, չո՛ւտ ե՛տ տուր Քեզ՝ ճամբայէն...,
*Գազանն եկաւ *) Քու վըրա՛դ...»:*
*Ան ալ՝ Քեռին՝ հող կըդիզեր, Քարափոսի՛կ *) խաղալու,—*
*Դարձաւ մէկէն՝ ինչ որոնե՛ց *) Վայրի-եզին,—*
Այնպէ՛ս Բըռունց մ՚ զարկաւ եզի ճակտին մէ՛ջ...՝
Որ ամեհի վայրի Գազան՝ Փիղի †) նըման վիթխարի,—
Ետ-ե՛տ գընաց, թաւալգըլո՛ր զարձաւ Ոռին՝ Գըլխուն վրա՛յ...,
Գլոռւտակեցա՛ւ-պլոռւտակեցա՛ւ՝ ու ինկաւ...: ×)

333. Մօրեղբայրներ՝ Դաւթի Որսը Քեռիէն Առնել Կ՚ուզեն, Եօթն ալ Կ՚բռնէ Կ՚զարնէ Գետին

Ջ.՝Կ.42,43, Կ.43, Ջ.

Երկու չաթթ՝ Մօրեղբայրներ՝ Դաւիթին ալ հետ միասին՝

---

*) Քեռիք, (Մէլիքի) *մօրեղբայրներ:* *) Ինկած հին, Կ՚թափառէին: Վայրի-եզ, ՋԿ.411 *ս.՝* Ֆիլ (փիղ †), *որ պէտք է հասկըննանք՝ Թերեւս՝ վայրի-գումէշ, վայրի-եզ կամ կինճ:* *) Մօրեղբայրներ, Այսինքն՝ Դաւիթի *խորթ մօրեղբայրներ, կամ Մըսըրամէլիքի հարազատ մօրեղբայրներ:* *) Եկաւ, Ահա՛ կուգայ, կուգա՛յ-կոր: *) Քարափոսիկ, Մանկական խաղ մը, Տե՛ս իմ Խաղաշխարհ, Թիւ 138: *) Որոճել, Սուր աչքով նայիլ, մէկ ակնարկով չափել-չափչփել, կշռել: ×) Համեմատելի՝ Սանասար-Բաղդասարի սպանած Կանաչ-Քաղքի Վիշապի դէպքին հետ, Հած. 57:

Դացին-եկան՝ ու Մ'րա ըրին՝ Նեռաղեղով ու Տէզով։—
Առաուն դացին ու իրիկուն Ամէն մէկտեղ՝ Տո՛ւն դարձան։
Մէկ օր՝ Մայրը՝ վերցուց Դաւիթին ի՞նչ ըսաւ,—
—«Դաւի՛թ, Դուն ալ Որս կ'ընե՞ս...»։
=«Հա՛, Մա՛յր,-ըսաւ-. Ե՛ս կըզարնեմ Վայրի-Այծեր՝ ամէն օր,
Ես կըշալկեմ ու կըբերեմ մինչեւ Քաղքին մօտիկները,—
Կուտամ՝ Քեռիք կըտանին»։
—«Որ այդպէ՛ս է՝ վաղը մի՛ տար,-ըսաւ Մայրը-,
Ես՛ր այս անգամ Մե՛զ համար...»։
Դաւիթն ալ թէ, =«Անդի՛կ, Մարէ՛, վաղ կըբերեմ Մե՛զ համար»։
Լուսաբացին՝ Քեռիքն եկան՝ ըսին,—«Դաւի՛թ, Ե՛լ երթա՛նք»։
Դացին ելան Սարն 'ի վեր,
Դաւի՛թն էր,— հոն կա՛ն եկաւ *),—
Մէկ ահագի՛ն Վէրի-Ոչխար մ'ըսպանեց...։
Քեռիք տեսան՝ ապշեցան ու մընացին.—
Դաւթի Թամա՛կ տըւին Ոչխարն՝ չալկեց եկան դէպի Տո՛ւն։
Իրենք առաջ, Դաւիթ իրենց հետեւէն.
Քալեցին ու եկան մինչեւ Քաղքի-Դո՛ւռ,—
Մօրեղբայրներն ըսին, — «Դաւի՛թ, ա՛լ դիր գետի՛ն, Դուն գընա՛,
Ասկէ անդին՝ Մենք կըտանի՛նք Եօթը-Եղբայր միասեղ,
Դաւիթ այնտեղ ի՞նչ ըսաւ,—
= «Հարի՛ւր Ձեզ պէս Քեռի՛ ըլլայ իմ առջեւ՝
Այս մէկ Ոչխար Ես չե՛մ տար...»։
— «Ինչո՞ւ չես տար, Դաւի՛թ»,-ըսաւ Մեծ-քեռին։
= «Դէ՛հ, այսքան օր՝ Ես միշտ ըերի՝ տըւի Ձեզի՝ Դուք տարա՛ք,
Այս մէկ՝ չե՛մ տար..., պիտի տանիմ Ինձ համար...»։
Երկրորդ եղբայր՝ վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ.—
—«Կ'ըսէին որ՝ «Իրա՛ւ ծուռ է Մեր Դաւիթի մէկ երակ»...՝
Ու մենք չէ՛նք հաւատար...,
Հիմա այլեւս յայտնի՛ ըրաւ՝ բացարձակ...»։
Մէկն ալ ըսաւ, — «Դաւիթի խօսք՝ մէ՛կ է, երկու չի՛ ըներ...,—
Որ ըսաւ «Հա՛» *)՝ «Հա՛» է ըսածն.
Որ ըսաւ «Ձէ՛»՝ «Ձէ՛» ու «Ձէ՛»...։
կեցէ՛ք, թէ որ բըռնի չ'առնենք Իր Ձեռքէն՝

---

*) կան գալ, Շրջիլ, պտտիլ։ *) Հա՛, Այո՛։

Դաւիթ չի՛ տար Իր կամով…։
Եօթ-եղբայրը՝ խօսքերն այնտեղ մէ՛կ ըրին,—
Երկուս Դաւիթ բըռնեցին,
*Հինգն ալ՝ խելքով *)՝ վէրի-Ոչխարն Անոր Ձեռքէն պիտ՝ առնեն…։*
Դաւիթ տեսաւ՝ բըռնի ուժով կըտանին,—
Ըսաւ,— «Ա՛ս ի՞նչ կ՛ընէք Դո՞ւք…»։
= «Ի՞նչ պիտի (ը)ննենք, Դաւի՛թ,–ըսին–, Դուն չե՛ս տար՝
Մենք ալ ուժով պիտի խըլե՛նք ու տանի՛նք…»։
Եկան որ՝ հո՛ւփ, զարկած Ոչխարն Դաւթի Ձեռքէն խըլէին՝
Դաւիթ Իր Ձեռ(ք) նետեց այն մէ՛կ Գեղիին՝
Վէրցուց այնպէ՛ս զարկաւ տըվին չոր գետին՝
Որ Մարմինը, մինչեւ կէս-Մէջք՝ գընաց մըտաւ Հողի մէջ…։
*Աչքը դարձա՛ւ…. *), ա՛լ չընայեց չուրջ-բոլոր,—*
Եօ՛թն ալ՝ մէ՛կ-մէկ՝ վերցո՛ւց զարկաւ գետնի մէ՛ջ…,—
*Առաւ Վէրին *) ձըղեց Բամա՛կ՝ եկաւ Տո՛ւն…։—*

334. Մէլիքի-Մայրն Ու Մէլիք Իրազեկ Կ'ըլլան Դաւիթի Ըրածին

Զ.Կ.43,44, Զ., Զ.Հ.413.

Եկաւ Տո՛ւն…,—
Մայրը հարցուց՝ ըսաւ, — «Դաւի՛թ, Ձու Գեղիքն ալ Որս տարա՞ն»։
= «Չէ՛, Մա՛յր,–ըսաւ–, մ'իսկ ա՛ռ է այսօրուան.
Ա՛յդ է՝ ինչ Ես զարկի՛ բերի Գեղ համա՛ր»։
— «Է՛, Ձու Գեղիք չըխօսեցա՞ն, բան չըսի՞ն…»։
= «Ապա, Մարէ՛, մ'իտք ունեցան՝ Վէրին խըլե՛ն Իմ Ձեռքէն՝
Ես բարկացա՛յ…, ու բըռնեցի՛ Գեղիները՝
Մէյմէկ ղեհ մը թալեցի…,
Վէրի-Ոչխար՝ դըրի Թեւի՛ս՝ ու եկա՛յ…»։
Մայրը ելաւ գընաց Տըղուն՝ Մէլիքի մօտ՝ ու ըսաւ. —
— «Մէլի՛ք,–ըսաւ–, Դուն Դաւիթը չէի՛ր հաւներ…, արի՛ տե՛ս…՝
Վէրի ի՛նչ մեծ Ոչխար մ' զարկեր՝ բերեր է…»։
Մէլիք եկաւ՝ տեսաւ որ ի՛նչ կըտեսնէ…, —
Մէկ ահագի՛ն Վէրի մ'՝ զարկած՝ հոն փըռուե՛ր…, —

---

*) Խելքով, Իրենց մտքով, իբր թէ, կըխորհէին որ…։ *) Աչքը դարձաւ, Սաստիկ զայրացաւ։ *) Վէրի, Վայրի ոչխար, եղջերու։

Ըսաւ, — «Դաւի՛թ, որ Դուն նկար՝ ապա Քեսի՞ն ո՛ւր գացին…»:
— «Մէլի՛ք, եղրա՛յր,–ըսաւ Դաւիթ–, դիտե՞ս ի՛նչ…, —
Եկանք հասանք Քաղքի–Դո՛ւռ…,
Իմ Քեսիներ՝ Վէրի–Ոչխարն կըխըլէ՛ն իմ Ձեռքէն…,
Ես ալ Անոնք՝ մէ՛կ–մէկ առի՝ չըպըրտեցի դէ՛ս ու դ՛էն,
Վէրի–Ոչխարն առի՝ չիտա՛կ եկայ Տո՛ւն…,
Քեսիք մնացին Իրենց տեղը…՝ կըխընդա՛ն…»:
Մէլի՛քն ըսես՝ Սըրտի՛ն առաւ, սարսըռա՛ց…, —
— «Մարէ՛,–ըսաւ–, Քու եղրայրնէրն ըսպանե՛ր է Այս Տըղան…»:
Մէլիքի–Մայր չըհաւատա՛ց այդ բանին…:
Ինչ Մէլիքն էր՝ վալե՛ց ելաւ Քաղքէն դո՛ւրս,
Գընաց տեսաւ՝ Քեսիք իր՛ նչպէս Եօթն ալ զարկեր Գետնի մէ՛ջ…,
Մինչեւ Մէջքը ընացեր են մէջ Հողի՛ն…, —
Ընացեր են բերան–բե՛ց…, —
*Սիվտա՛կ *) կուտան Առատներ…:*
*Մէլիք հասա՛ւ՝ նայեց՝ Քեսիք չորցա՛ծ *) են…, —*
Ելաւ՝ անկէ՝ լալով դարձաւ եկաւ Տո՛ւն, —
— «Մարէ՛,–ըսաւ–, Աստուած Քո Տո՛ւն աւերէ…,
Քու եղրայրներ՝ Եօ՛թն ալ այնտեղ ըսպանե՛ր է Այս Տըղան…»:
*Իմաց ալաւ, զացին առին՝ Քեսիք բերին հորեցին *):*

Մէլիք այնտեղ ա՛լ՝ կատղած…՝
Եկաւ մըտաւ Տունէն նե՛րս, —
Տեսաւ Դաւիթ քըներ է, —
Թո՛ւրը քաշեց՝ որ Դաւիթը մէ՛կ անդամէն ըսպանէր…, —
Իրեն Մայրը՝ Խամել–Խաթուն Տիկինն ալ՝
Մէկ ժամանակ՝ Դաւթի Հօր հետ սիրով նըստեր–կայներ էր…,
Սիրտ կըցաւէր Դաւթի վըրայ՝ որ Մըհէրի †) Տըղա՛ն էր,
Ու Դաւիթն ալ՝ չա՛տ կըսիրէր Սըրտին մէջ…, —
Ձըխողո՛ւց որ ըսպանէր…:

---

*) Սիվտակ, *Սպիտակ*, ճերմակ: *) Զորցած, *Պաղած*, *սառած*, դիակ դարձած (անդրկն.): *) Հորել, *Թաղել*: †) *Այսինքն՝* Դաւիթ–Մըհէրի:

335. Մելիքի Սպառնալիքները Վրայ՝ Մայրը Կ'բերադրէ Դուրսը Գրկել Դաւիթ

Ջ.՝Կ.44,45,9, Կ.44,45,9, Ջ.՝Հ.414, 373, Հ.414,373, (Հ.373), Ճ.86,87, Ջ.՝Ճ.87,27, Ե.618,499,553,956,957,820,996,1097,862, 729,761,896,897, (Ե.618,1097),Ա.7, Խ.7.

*Ախտեղ Մէլիքն ու Իր Մայրը՝ տըւին–առին *) Իրար հետ: —*
Մայրը լացաւ եւ աղաչանք ըրաւ Տըղուն՝ ու ըսաւ. —
— «Դաւիթ ճի՛ժ է..., խելք չի՛ կըտրեր ըրածին...,
Ապա Անոր խելք որ հասնէր՝ Իմ եղբայրներ կ'ըսպանէ՞ր...:
Դառում չ'ըներ. երախա՛յ է. մե՛ղք է Անոր ըսպանել...:
Թող մընայ Ան Իմ կըշտի հետ՝ մինչեւ մեծնայ դեռ մէկ–քիչ...»:
Մէլի՛ք,–ըսաւ–, Իմ եղբայրնե՛րն է ըսպաներ, Քեզի՞ ինչ...»:
Ըսաւ, = «Մարէ՛, Ան տղայ չ'է՛, խելք կըհասնի՛ ըրածին,
Բայց յամառ է, հաստակող է, դիտմա՛մբ կ'ընէ այդ բաներ...:
Պիտի մորթեմ՝ օձիքս ձեռքէն ազատե՛մ...:
Մինչեւ Անոր Գըլուխ չառնե՛ն Իմ առջեւ...,
*Մէկ Գոմէշի–կոտոշով *) ալ՝ Անոր Արիւն չըխըմեմ...,*
Եւ Շապիկն ալ Իր Արիւնին մէ՛չ չըթաթխէք ու չըքըսէ՛ք Իմ երես՝
Իմ Սիրտ երբե՛ք չի՛ հովնար...:
Այդ Օձու–Զա՛գ...՝ ա՛լ չե՛մ ուզեր Անոր երես տեսնամ ես...»:
Մայրն ալ ըսաւ, — «Մէլի՛ք, Որդի՛, հա՛ց մը կ'ուտէ Այդ Որբուկ՝
*Քո Աչքերուն բար *) չի՞ տար..., —*
Քե՞ս ուզեր որ հա՛ց մը ուտէ Քեզի հետ...:
Որդի՛, Մէլի՛ք, մի՛ ըսպաներ Այդ Տըղեկ..., —
Անոր մեղքը՝ զուր տեղ Վըզիդ մի՛ ձըգեր...»:
= «Քե՛մ դիտեր ես,–ըսաւ Մէլիք, բարկացոտ–.
Այդ Օձո՛ւ–Զագ՝ Իմ առջեւէն պէտք է երթայ կորսըւի՛...,
Ես երդո՛ւմ եմ կերեր,–ըսաւ–, Թէ որ Դաւիթ հո՛ս մընայ՝
Օր մը չէ՝ օր մ' պիտի զարնեմ ըսպանե՛մ...:
Ո՛ւր որ կ'ուզես՝ հո՛ն ղըրկէ, —

---

*) Տալ–առնել, *բուռն վիճիլ, խօսքով կռուըտիլ:* *) Գոմէշի կոտոշի գործածութիւնը՝ դիւղացիներու մէջ՝ Բ. Հատորով: *) Բար տալ: Գոհունակութիւն տալ:*

Այդ վտրձանքը իմ Գըլուխէս հեռացո՛ւր···:
Ալ բաւական ջոջացո՛ր է, կըրնա՛յ Հեռքով հաց ուտել···,
Լուսուն 1) դըրկէ՛ Քող երթայ Իր Հօր Աչխարհ:
Ինձի վրնաս մ՚ըլ որ հասնի՝ Իմէն է· —
Երբոր ըլլայ՝ Դաւիթ այդ խաղ պիտի հանէ՝ Իմ Գըլուխ···»:

Ճարը հատած՝ Մէլիքի–Մայր վերցուց ըսա՛ւ Տըղային· —
— «Ա՛յա, Որդի՛, ան որ պիտի ըսպաննես,
Ա՛լ չե՛ս ուզեր դ՚Ինք պահել, —
Տա՛ր Իմ Հոգւէն–Ջըրէն դո՛ւրս հան, Եօթը–Սարի 2) ետեւներ,
Կ՚ըսպանո՛ս ու ինչ որ կ՚ընես՝ ան ըրէ՛···,
Իմ Աչքիս դէմ մի՛ ըներ···: —
Ես՝ Անո՛ր ալ՝ Մըծխս քաղցը կա՛ճն եմ տըւեր՝ կերո՛ր է···,
*Իմ Միրս կ՚Ուլի՛ *), կը մըրմըռա՛յ *) Անոր Հետ···:*
Մէլի՛ք, Որդի՛, Դուն չըսպանո՛ս՝ մեղքը իմ Գլխայ Գո վըղին···, —
Երկու ուժեղ Ըմբի՛շ դըտիր, բե՛ր այստեղ,
Դի՛ր Դաւիթը Անոնց Հե՛տ ,—
Անոնն տանին Եօ՛թ–Կարմընջի վըրայ կըտրեն Անոր Վիզ,
Որ Անոր ձայն չիզա՛յ տանէ Իմ Ականջ···՝
Ես պատռիմ···;
*Կանչէ՛ ալստեղ՝ Անոր Հօրը երկու ուժեղ Ըմբիշներ *),*
Դի՛ր Անոնց Հետ, ուղարկէ՛ Քող երթայ Իրեն Հօր երկիր,
Ըր մըռա՛յ Գու Աչքին դէմ···: —
Առնեն Դաւիթ՝ տանին Մուրատ–Ջըրի Ա՛փ,
Բաթմանայ մեծ կամուրջին վրա՛յ Քող հանեն,
Վիզը կըտրեն՝ Թալեն Գե՛տ···»:

336. Մէլիք Ս. Իր Մայրը՝ Անջրատարար՝ Արխուրիկ Ըմբիշներու Հետ Դրկել Դաւիթը

Ե·11,761,729,499,897,996,791,554,957,1097, Զ(Ե·897), Զ·՝Ե·1097, Հ·23,414, Կ·44,45, Զ·՝Կ·44, (Կ·45), ՁՍ·342,343, ՁԿ·423·

Մըտամէլիք՝ ալ չըպահեց Դաւիթը·

---

1) Լուսուն, *վազ առաուն*: 2) Եօթը–Սար, *համառօտ*·՝ *կարնամա–կի մէջ յիշուած Հափթը–Թանգ–ի հետ*: *) Երիւ, *Այրիւ, վառիւ, ցա–ւիւ*: *) Մրմռալ, *կակծալ*: *) Ըմբիշներ, *Կ·9*՝ *մշակներ*:

Ելաւ հիմա ի՞նչ ըրաւ. —
Ինքը Իրեն՝ մի՛տք ըրաւ որ՝ դըտնէ դիւրին մէկ ճամբայ՝
Մօրմէն ծածուկ՝ ղըրկէ Դաւիթ՝ ըսպանէ...:
Ելաւ կանչեց՝ հաւատարիմ կական, Ասլան *) Ըմբիշներ,
— «Ի՞նչպէս ընենք,—ըսաւ Անոնց—, որ Դաւիթը կորուսանենք...»:
Մէկալ Ըմբիշ՝ որ կականի *) Ընկե՛րն էր,
Անոր կ'ըսեն Ասլա՛ն–Դէվ *),
Ցըրէննկնկրուս հեռու երկրէ՛ն է եկեր, —
Անիկ ըսաւ, = «Մենք լա՛ւ կըրնանք կորուսել...,
Բայց Ցու Մայըր չի՛ ճըգեր...»:

Մէլիքի–Մայրն ալ մէկ բարի կընի՛կ էր,
Հասկըցա՛ւ Իր Տըղուն միտք,
Ի՛նքն ալ Իր տեղ՝ մի՛տք ըրաւ, —
«Թէ իրա՛ւի, ես Այս ձիւթը պէ՛տք է ղըրկեմ Իր երկի՛ր,
Երթայ Սասո՛ւն՝ Իր Հօրեղբօր մօ՛տ կենայ.
Թերեւս՝ այսպէս՝ եղբօր Զեռքէն ազատուի՛...,
Երթայ Հօր Տուն՝ ապրո՛ւստ դըտնէ Իր համար...»:
Ելաւ կանչեց Բաթման–Բուղէն Ձարպար–Քամին՝ Իր Ընկեր,
Դաւիթի–Հօր Ըմբիշներ, —
— «Մարդի՛ր,—ըսաւ—, Աստծո՛ւ սիրոյն՝ ու Ձեր Մօ՛ր,
Դաւիթ այստեղ ա՛լ չի՛մ կըրնար ես պահել,
Այս Ձիւթ առնէ՛ք տանիք Սասո՛ւն՝ Ե՛տ դառնաք, —
Ես Ձեզ կուտամ՝ ամեն Մէկիդ՝ մի՛կ Ոսկի,
Դուք ալ Անոր Լաթերն անյատեղ կըհանէ՛ք,
Մէկ Դաղանի՝ թէ՛ Ոչխարի Արիւնին մէ՛չ կըթաթխէք,
Անոր Շորեր կըբերէք,
Որ Մէլիքին ես ալ ցո՛յց տամ եւ ըսեմ, —
«Ահա՛՝ Դաւիթ ուղարկեցի՝ ճամբան տըւի ըսպանել»:

---

*) Կակաճ, Ասլաճ (*ե*·897), *Հ*·414՝ երկու Ֆու հաւնած ըմբիշ, *ե*·821՝ Զորս մարդ: *) Կականի (*ե*·897), *կ*·44՝ Բաթ-ման–Բուղի ընկերն էր: *) Ասլան–Դէվ (*Զ*·՝*կ*·44), *կ*·44՝ «փրէնկի դէվ», որ ազատաղն է թերեւս փէլէնկ = *Ասլան ձեւին*, *Զ*·:

337. Մէյիր Ըմբիօճեռուն Կ'պատուիրէ Սպանել Դաւիթ՝ Բաբմանայ-Կամուրջին Վրայ

Կ·45,121, Կ–121–Ե·862, Զ·Կ·45, Զ·Ե·897,821,729,791, Ե·618,554, 499,821,791,761,729,996,857,862, 897,957, (Ա·7, Խ·7), Խ·7, Ա·7, (Հ·23,414,373), Զ·Հ·414, Զ·Հ·373, Հ·414,23, Զվ·1,2·

Ասլան–Դիվը ևկաւ ըսաւ Մէլիքին· —
— «Դուն Մեզ ըսիր՝ «Գէտք է տանիք ըսպանէք···»,
Բա Մայր կ'ըսէ՝ «Տարէ՛ք Սասուն յանձնեցէք ու Ե՛ս գարձէք»:
Մէլիքն ալ թէ, = «Այդպէս չա՛տ ալ աղէ՛կ եղաւ, Դէ՛վ–Ասլան···»:
Բռանեց երիւս Մա՛րդ ալ ղըրաւ Անոնց հետ·
Մէլիք՝ այսպէս՝ Զորս Մա՛րդ ղըրաւ ծածուկէն·
Եւ այս պատուէ՛ր տըւաւ այդ Զորս Ըմբիշին· —
— «Բաբման–Բուղի հետ Դուք †) կ'տանէք՝ Դաւիթ կ'տանիք դէպ
[Սասուն,
Դո՛ւրս կրհանէք Մրսրայ Հողէն ու Ջուրէն,
Կրսպանիք Եօ՛թ–Սարի հաւեր՝ կ'իջնէք վա՛ր,
Բաբման–Գետի +) Կամուրջին վրայ երբ հասնիք՝
Երկու կողմը ×) կըրըռնո՛ւք,
Մէկըդ տաջի՛ւ, մէկդ ալ հաւե՛ր կըկենաք,
Կրհասնիք՝ մէջ կ'տանէք գ'Ինք, —
Անոր Վիզը կը մորթի՛ք,
Անոր Մարմին կրթալէք Գե՛տ 1)՝ երթայ կորսի՛ Ջրին հետ,
Ականջները Ինձի նըվէ՛ր կըրերէք 2),

---

†) Կ·121–Ե·862՝ «Կիին–Բաբմաճ եւ Գամուսէ–Գաշան» (*որ Ճէ-բան Թուբան կամ Ռուսամ–Ջալ վէպին կը պատկանի*), Ե·499,554՝ Բաբմանայ–Բուղէն, Ձաբպանայ–Գէբրզ, Ե·618՝ Բաբմանայ–Բուղէն, Ձարտու–Գէբրզ, Ե·897՝ Կակաճ եւ Ասլան, Ե·821՝ Զորս մարդ: +) Խ·7 *տարբ·*՝ Գետ՝ Սասունի մօտ, Հ·414՝ Անգղայ Գետ, Ե·499՝ Գբա–Բաբման: ×) Կ· *տարբ·*՝ ամեն կողմը (հէր դին): 1) Կ·45՝ Ջրի մէջ: 2) *Հմմտլի·*՝ *Կուշ–Բաղնիի՝ Մարուքայ Բարձր Աստարա-ծին Վանքի վրայ յարձակելու եւ «Դաւիթի դլուխը կտրեր եմ, ահա՛ Իր ականջները» ըսելուն հետ·* Տե՛ս Թլոլ–Դաւիթ՝ Հատ· ···:

*Տի՛կ մ՝ ալ *) Անոր տա՛ք Արխունէն կըլեցնի՛ք,*
Կ՝առնէք–բերէք ինձ համա՛ր…, —
Որ ես խըմե՛մ Անոր Արխուն՝ եւ իմ Սիրտը հովանա՛յ…:
Ողջ չըտանի՛ք ու հասցընէք մինչ Սասուն, —
Ըսպանեցի՛ք, և Իր բաճկոն †) Արխունին մէ ջիթաթխեցէք ու բերէք ինձ.
Որ ես հաւատա՛մ՝ թէ Դուք Դաւիթ մորթե՛ր էք…, —
Դուք ալ կուգա՛ք՝ նորէն Իմ քով Ձեր պաշտօնը կ'ըստանձնէ՛ք:
Այս տեղը,–ըսաւ Մէլիք–, ծածո՛ւկ ըլլայ Իմ Մօրմէն…,
Ի՛նչ որ ուզէք՝ կուտա՛մ Ձեզ…:
Որ Իմ խօսքն ու պատուէրն այդպէս թէ չընէք՝
Ձեր երկուքիդ վիզերն այստեղ կ'առնե՛մ ես…»:
Ըսին, = «Մէլի՛ք, շա՛տ աղէկ…,
Քու ըսածին պէ՛ս կ'ընենք…»:

338. Մէլիքի-Մայր՝ Դաւիթը ճամբու կ'դնէ Դէպ Սասուն

Չ·՝կ·45, կ·45,121, ե·897,957,11,96,1097, Չ·՝ե·897, (ե·862)·

Մէլիք ելաւ դընաց Տո՛ւն,
Մայրն ալ ըսա՛ւ Դաւիթին, —
— «Դաւի՛թ, Որդի՛, մատա՛ղ Քեզի, արեւո՛ւդ… ×),
Մինչեւ այսօր Քեզ չահեցինք–պահեցինք, —
Այսօր գընա Քու Հօր Տո՛ւն…»:
= «Աղէ՛կ, Մարէ՛,–ըսաւ Դաւիթ–, ես կ'երթա՛մ…»:
Անոնք ալ հոն՝ պատրաստութի՛ւն կըտեսնեն որ ուղարկեն: —
Մըտայ–Տիկին ելաւ Ան ալ ի՛նչ ըրաւ. —
Քառասո՛ւն աւուր հաց–մա՛ց Թըխեց, կեր–կերակո՛ւր պատրաստեց,
Դըրաւ երկու–Ըմբիշներուն հետ մէկտե՛ղ. —
Ըսաւ, — «Դաւիթ՝ տանէք Իրեն Հօր երկի՛ր,
Ցանճնէք Սասո՛ւն՝ Իր Հօրեղբո՛ր՝ ու դառնա՛ք»:

Դաւիթ ելաւ՝ Ձեռքը պագա՛ւ Իր Մորթ–Մօր,
— «Մընաս քարո՛վ, Մա՛յր»,–ըսաւ:
Մայրն ալ՝ Դաւիթ համբուրե՛ց ու դըրաւ ճամբայ՝ ու գացի՛ն: —

---

*) Ա·7՝կ·45՝ մէկ ամաճ, Հ·23՝ մէկ շիշ: †) ե·729՝ «Դաւթի վրայ՝ չուխա եղակ կար»: ×) Մատա՛ղ ըլլամ Քեզի և Քու կեանքիդ:

Զ. ԹԼԹԼ-ԴԱՒԻԹ՝ ԴԻՊ ԻՐ ԾՆՆԴԱՎԱՅՐ ՍԱՍՈՒՆ

339. Զէնով-Օհան՝ Տրազի մէջ կ'ասպնէ Ռ՝ Սասմանց ճրագը կպեր է

Զ.՝Ե.957,997,958,791,897,793, Ե.997.

Դէ՛, հիմա որ Դաւիթ Մըսրէն գա՛ւրս հանին՝
Զէնով-Օհան՝ Դաւիթի վրրայ երա՛զ մ՝ տեսաւ այն գիշեր,—
Աւթընցաւ ու ելաւ ըսաւ,— «Ասուա՛ծ դիտէ՝ որ այսօր՝
Մեր Դաւիթը՝ կա՛յ ու չըկայ՝ Մեր Հողին մէ՛ջ է մըտեր...:—
Ողջ է Մեր ձի՛ժ՝ ելեր կուգայ Մեր երկի՛ր...»:
Կանչեց կընկան, ըսաւ,—«Դոհա՛ր, ելիր վե՛ր...»:
= «Ի՞նչ է, Հալւոր...,-ըսաւ Դոհար՝ Իր Մարզուն-.
Չես թողներ որ մի քիչ հանգիստ քուն քաչենք...» 1):
— «Ա՛խ, Դու կընի՛կ,-ըսաւ Զէնով-Օհանն ալ-.
Ինչքան ըլլայ՝ չէ՞ որ օտար զարմէ ես,—
Բեզի՝ մէ՛կ տեղ չի՛ ցաւիր...,
Դուն ա՛լ Ի՛մ Սիրտ բա՛ց ու տե՛ս...:—
Դէ՛, վե՛ր ելիր, վե՛ր ելիր,—
Երա՛զ մ՝տեսայ այս գիշեր,—

*«Մեր Սասմայ Բուրջն *) ու Պարիսպը կայնե՛ր էր †)...,*
«Մեր Համբիչը՝ կանաչներ էր հա՛տ ու հատ...:
«Մեր Մեծ-Ջահը՝ Բերդին Դըլուխ վառուե՛ր էր...,
*«Մեր Պարտէզի Բլբրուլ նորէն կըկանչէ՛ր... *):—*
«Կայ ու չըկայ՝ Մեր Որբն եկեր՝ Մեր Հողին մէ՛ջ է մըտեր...:
*«Սասմայ ձըրագ կըպեր է *)...,*
*«Կընի՛կ, վե՛ր ել՝ Դաւթի համար տե՛ղ *) չինէ...,—*
*«Տըղա՛յ մ՝կուգար...՝ ճամբակորուս *) կըքալէր,—*
«Անի Մեր Ծուռ-Դաւի՛թն էր...»:

---

1) Յոգնակի ձեւին մէջ (...քուն քաչենք)՝ պիտի հասկնանք թեթեւ՝ երախաձերով մեկտեղ՝ ամբողջ ընտանիքը, որ կըքնանայ մէկ սենեակի մէջ: *) Բուրջ, Բերդ, բերդի դիմաւոր ամրոց, միջնաբերդ: †) Երգով: *) կանչել, երգել, խօսիլ, դայլայլել, կրպ-(ճ)իլ, բռնկիլ, վառիլ, նչուլել: *) Տեղ, Անկողին, պառկելիք տեղ: *) ճամբակորուս, ճամբան կորուսած, ծուռ ու մուռ քալող:

340. ձմեռու Ընթացքին՝ Դաւիթի Ծուռ-Մուռ Գալը

Հ.23,414,373, Զ.՝Հ.373, Զ.՝Ծ.87,88, Զ., Խ·7, Կ.45,9,121, (Կ.9), Զ.՝Կ.121 Ե.499,554,729,791,958,618.897.1098,821.862,996, Զ.՝Ե.996,554, ՁՄ.344, (ՁՄ.343), Ա.7,

Այդ երկու-Դէվ †);— Բաթման-Բուղէն ու ձաթպահար-Քամին ×) ալ,
Դաւիթի Հօր՝ Մըհէր-Դաւիի՝ Դէվե՛րն էին առեւնով,
Ելան առին Տըղայ-Դաւիթ, ինկան ճամբայ՝ դէպ Սասո՛ւն,
Որ Դաւիթը տանին Սասո՛ւն՝ ու յանձնեն Իր Հօրեղբո՛ր *):
Առին ելան ճանապար(հ),—
Դէ՛, Դաւի՛թն է,— Սամայ-Ծո՛ւռը, ճի՛ժ հոդի...,—
Ա՛լ այդ երկու-Ըմբիշներուն հետ չ՚ե՛րթար,—
Մէկ Լապըտար՛կ *) թէ տեսնէ որ կըփախի...՝
Կըզարնէ ու կ՚ըսպանէ՛...:
Մէկ Լո՛ր տեսնայ՝ կ՚ըսպանէ...:
Կ՚իյնայ Սա՛ր-Քար, Զո՛ր ու Թուխ,—
Գազաններու եւ Հաւքերու եռեւէ(ն).—
Ականջ չ՚ը՛ներ Ըմբիշներուն ու կռիւին:—
Զի՛ զըրուցեր, կ՚երթա՛յ-կ՚երթայ խաղալէն,
Մէյ մը այսպէս, մէյ մը այնպէ՛ս կը քալէ:—
Մէկ կրվազէ՝ երկու ժամու ճամբայ է որ կրկըտրէ՛,
Մէկ ալ տեսնես՝ ե՛տ կըմընայ դէս ու դէ՛ն...:
Ըմբիշները՝ ճամբային հե՛տ կը քալեն,—
Դաւիթն ըսես՝ միշտ դո՛ւրս կ՚ելնէ ճամբային:
Անոնք՝ թափով, յառաջադէ՛մ *) կը քալեն,—
Տըղայ-Դաւիթ չի՛ ուզեր որ թափ *) երթայ.
Միշտ եռեւանց, ճամբակորո՛ւս կը քալէ...:
Երբոր անոնք կըդադրին՝
Դաւիթ կ՚երթայ՝ կըհասնի,—
Նորէն կ՚ելնեն՝ իրենց ճամբան կը քալեն:
Մինչեւ իրկուն՝ կա՛ն կուգայ ու խաղ կ՚ընէ.—
Ըմբիշները կ՚երթան մէ՛կ ժամ առաջուց,

---

†) Կ·9՝ (Հօրը) մշակներ: ×) Կ.121՝ Գլխի-Բաթման, Քաւուսէ-Քաշան. (Տե՛ս Հատ. 337՝ սարչ. Ծնթ. †): *) Հօրեղբօր, ՁՄ. 343. 344՝ Մանուկին, Ե.1098՝ Զհնով-Օհանին: *) Լապտարակ, Նապաստակ: *) Ցառաջադէմ, Առաջ անցնելով. աւելի արագ (քալել): *) Թափ, թափով, արագ:

*Տըղայ-Դաւիթ՝ զատ *) կըմբնայ Անոնցմէ,*
Քարի-Թուխի հետ խաղալո՛վ կըքալէ...։—

341. Դաւիթ Կրճալէ՝ Կէս-Աճօթի, Կէս-Ծարաւ

Ե.958,959,960, Չ.՝Ե.958, Չ(Ե.959), Ա.7. Խ.8, Հ.23, Չ.

Այդ Ըմբիշներ՝ կըննըստին որ Հա՛ց ուտեն,
Մեղմ Դաւիթին Հաց-մաց չե՛ն տար որ ուտէ †)։
Թէ պատահէր որ տային՝
Ան ալ կ՚առնէր ու կ՚ուտէր։
Աւանն կ՚ըլլար՝ երե՛ք օր ալ Հաց չէ՛ին տար որ ուտէ,—
Դաւիթ կ՚մնար խեղճ, անօթի, անսըւաղ։—
Ան ալ կ՚ելնէր ի՞նչ կ՚ընէր։—
Բանջար-մանջա՛ր կը քաղէր ու ա՛ն կ՚ուտէր.
*Կ՚իյնար Արտեր՝ Կանդո՛ղ *) կ՚հանէր ու կ՚ուտէ՛ր.*
*Ի՞նչ խոտ, ի՞նչ բան՝ որ իյնար Ձեռ՝ անօթութենէ *) ա՛ն կ՚ուտէր։*
Այդպէս՝ բանջար. խոտ ուտելով՝ ծո՛ւռ դարձաւ,—
Գըլուխն այլևս խելք չըմբռնա՛ց, Անասունի պէ՛ս եղաւ ×)։
Մէկ միջոց մը՝ այդպէս ճամբայ որ եկան,
Այդ Ըմբիշներ նորէն Հացի՛ նըստեցան,
— «Դաւի՛թ,-ըսին-, արի՛ Հա՛ց կեր Մեղի հետ»։
Ըսաւ, = «Իմ Մայր քառասուն աւուր Հա՛ց դըրեր էր Մեղի հետ,
Դուք կերա՛ք ու Ինձի բընա՛ւ ոչ հաց տըւի՛ք ու ոչ թա՛ց.
Այսօրէն ետք՝ Իմ Հօր Հողն ու Ջո՛ւրն ինկայ,
Ա՛լ չե՛մ ուզեր ես Ձեր Հաց...»։

Հինգ օր, վեց օր՝ ճամբա՛յ դացին †)՝ թէ ի՛նչքան,—
Այդ Ըմբիշներ՝ ուշադրութիւն չըրի՛ն բընաւ Դաւիթին,—
*Մէ՛կ օր չ՚ըսին՝ «Տըղա՛յ, Դաւի՛թ, նեղացե՞ր *) ես, յոգնե՞ր ես...,*
Անօթի՞ ես, ծարա՞ւ ես...»։
Դաւիթն ալ իր հաճոյքին հետ կ՚երթայ Անոնց ետևէ՛ն...։—

342. Բարմաճոյ-Կամուրջին Առաջ

Ե.88, Չ.՝Ե.88, Հ.373,414,23, Ե.500,554,821,897,958,996,729,618, 761,791,862,730,762, (Ե.791), Խ.8, Չ.՝Խ.8, Ա.8, Կ.45, Չ.՝Կ.45.

Շա՛տ եկան՝ թէ քի՛չ եկան,—

---

†) *Սպասուելիք անձի տեղ դրեր էին, աւելորդ կ՚սեպէին կեր-բակրել։* *) *Կանդող, Ուսուցի՝ վայրի դեռնախնձոր մը, տառ։* *) *Անօթութենէ, Անօթութենէն, անօթի ըլլալուն համար։* ×) *Համմտ.՝ Տրցաս թագաւորին վերապրուած խողացեալ, խելացնոր վիճակին հետ։*
†) *Խ.8՝ Շաբաթ մ՚եղու զնացին։* *) *Նեղանալ, Ծոդնիլ, խռնգիլ։*

Եկան՝ Մըսրայ Սահմաններէն ելան դո՛ւրս,
Մըտան Դաւթի-Հօ՛ր Սահման ×)։—
Եկան հասան մինչեւ Մուրատ-Գետի +) ա՛ւի,
Սառմայ քամակ, մէկալ դի՛ հ,—
Սահմանագիծ՝ Սասմայ-Երկրին ու Մըսրայ —,
Բաթմանն-կամո՛ւրջն է այնտեղ,—
Գետը կ՚անցնի իր տակէն։
*Գացին իջան ու մօտեցան այդ Բաթմանայ-կամուրջին **)։*
Կամուրջին մօտ՝ կակաո, Աւլան կանդնեցան,
Մէկը ըսա՛ւ Միւսին.—
— «Դէ՛ Դաւիթը չի՛ իմանար Մեր խօսած..., —
Աւրի Մէկըս անցնինք եռե՛ւ, Մէկս՝ առաջ,
Երբոր երթանք հասնինք մէջտեղ կամուրջին՝
*Դաւիթ բերենք՝ տա՛նք *) Մեր մէջ,—*
Մէկս առջեւէն ոլորւինք գանք վերի՝ Դաւթին,
Մէկս՝ եռեւէն՝ Դաւիթ բըռնենք՝ թալէնք Ջուր...»։
Իրենց խօսքեր մի՛կ ըրին,—
Մինչեւ այնտեղ՝ Այդ Ըմբիշներ առա՛ջ էին Դաւիթէն՝
Դաւիթ անոնց եռե՛ւն էր,—
Որ մօտեցա՛ն կամուրջին՝
Մէկը հիմա մըննաց Դաւթի եռեւէն,
Մէկն ալ՝ անցաւ առջեւէն,
*Մէկը ելաւ կամուրջի՛ն վրայ, մէկը մըննաց կարմընջո՛ւտ *)*

×) Կը թուի թէ՝ Սասուն եւ Մըսըր (հին Ասորեստան)՝ իրարու հետ բաւորովին թշնամի չէին, միայն երկիրները բաժներ էին իրենց մէջ։ +) Հ.414՝ Մինչեւ Անգոյ Գետ։ **) Ե.791 ա.՝ «Բաթմանայ-Կամուրջ՝ Դիարբէքիրի կողմն է», Ե. 821 ա. «Բաշուրայ Գետ. հաւանաբար դա Սասնոյ Գետի (Բաթման Սու) գետաբերանի մօտ, արեւմտեան Տիգրիսի մէջ թափուող Բիչերի կամ Բչերի գետն է, Տիգրանակերտի նահանգի համանուն գիւղի անունով, որ աղաւաղուելով դարձեր է Բաշուրայ», Ե.958՝ Լեռնայ Գետ (Սասմայ Քամակ)։ *) Տալ, Զգել, չրջափակել։ *) Կարմընջուտ, Ականջ, կամուրջի գլուխ, տուտ, tête de pont.

Այդ երկու-Դէմ՝ Դաւիթն յուսով՝ այդտեղ կեցան կ'ըսպասեն,
Ըսին, — «Դաւի՛թ, արի՛ անցիր Մեր առջե՛ւ,
Որ Քեզ Զուրկն անցուննե՛նք···:
Արի՛ այստեղ, Մեր երկուսի մէջէն անցի՛ր որ երթանք···,
Մենք Քեզ բրանննք՝ չըվախնա՛ս ու չէյնա՛ս Գետ»:
Դաւիթ նկատ հասաւ այնտե՛ղ, Անոնց մօ՛տ,
Նայե՛ց տեսաւ՝ երկու-Ըմբիշ՝ կամուրջին վրայ կեցե՛ր են,
Դաւիթին ալ հոն միտք բրաւ ու ի՞նչ ըսաւ· —
«Աստուած բարի՞ն ընէ»,–ըսաւ՝ Ինքնիրեն–,
Ասի քանի օր †) է որ Մենք ճամբա՛յ կուզանք միասին՝
Որ մը չելա՛ն Ձես կանչէին Իրենց մօ՛տ···, —
Ասոր ինչո՞ւ Ձես կըկանչեն Այս Մարդիկ···, —
*Կա՛յ ու չըկայ՝ Անոնց միտքը աւե՛ր *) է···»:*
Ըսաւ, = «Մարդի՛ր, Աստուած բարի՞ն ընէ,–ըսաւ–, աս ի՞նչ է···,
Ինչո՞ւ համար՝ հոդ կայներ էք՝ չէ՛ք երթար···»:
Մէկ Դէմն ըսաւ, — «Մատա՛դ հոդուդ, արեւո՛ւդ,
Մըտամէլիք պատուէ՛ր տըւաւ Մեզ խըստիւ, —
«Դաւիթ տանիք՝ ապէ՛կ անցնէք կամուրջէն՝
Որ չըվախնա՛յ՝ չէյնա՛յ Զուր»···:
Հասանք այստե՛ղ, այստեղ Գե՛տ է, կամո՛ւրջ կայ···,
Դուն տըղա՛յ ես···, կըվախնա՛նք որ կ'ընկնաս Գե՛տ···,
Ու մէկ վտրճա՛նք կըհասնի Քեզ, ակամայ···,
Այստեղ նկիր՝ Քո յոյսովը կեցե՛ր ենք···,
Կ'ուզենք առաջ Քե՛զ անցուննենք այս Գետէն՝
Որ Դու չէյնա՛ս Գետին մէջ···»: —

348. Աստիճ Զոյգ-Ըմբիշին Ու Դաւիթի Վէճը

Ա·8, Զ·՝Ա·8, Հ·373,23,414, Զ·՝Հ·23,373, Ց·88, Խ·8, Զ·՝Խ·8, Ն·897,554,958,618,959,821, Զ·

= «Ծո՛ Մարդիկնե՛ր,–ըսաւ այնտեղ Դաւիթն ալ–·
Այդպէս չէ՛՝ բայց՝ ըսէնք այդպէ՛ս թող ըլլայ···: —
Մինչեւ հիմա՝ քանի՛ օր է՝ ճամբա՛յ կուզանք միասին՝
Մըտայ նկանք՝ հասանք մինչեւ այստեղե՛ր···,

---

†) Խ·8՝ երկու շաբաթ: *) Աւեր, Ծուռ, չար:

Ինձմէ այնքան ետ ու առաջ կըմըտայիք Ամենքդ ալ,
Ձիս Ձեր ետե՛ւ կըթողնէիք, Դուք առջեւէն կ՚երթայիք...,
Իմ ուսելիս՝ խոտ բանջար է(ր)...,
Ես ձամբէն դո՛ւրս կըքալեմ...,
Դուք Ձիս մէ՛կ օր չէի՛ք կանչեր, ըսեր՝ «Դաւի՛թ, ի՞նչպէս ես...,
Նեղացե՞ր ես..., անօթի՞ ես..., ծարա՞ւ ես...»:
Այս ճամբաներ Գա՛յլ կայ, Մ՚րջ կայ..., ամեն տեսակ Գազա՛ն կայ...,
Ձըսի՛ք՝ «Դաւիթ երախա՛յ է՝ կըվախնա՛յ...», —
Ասօր Դուք Ձիս ինչո՞ւ համար կըկանչէք...,
Այդ կամուրջի մօտ կեցե՛ր էք, չէ՛ք երթար...:
Դուք կեցեր էք՝ որ Ձիս բըռնէք՝ թալէք Գե՛տ...»:
[Տըղան խելքո՛վ, լմաստո՛ւն էր, կըհասկընա՛ր Անոնց մէտ(ը)]:
Երկու Ըմբիշն ի՞նչ ըսին. —
— «Ապա, Դաւի՛թ, մինչեւ այսօր՝ Մըսրայ Հողն ու Ջո՛ւրն *) էինք,
Հիմա Քու Հօր Հող–Ջո՛ւրն ենք,
Շուտով կ՚երթանք կըհանձնինք Քու Հօր Քաղքին,
Անոր համար Քեզ կըկանչենք Մեզի մօտ՝
Որ Քեզ աղէկ պահպանելո՛վ Գետն անցնենք,
Տանինք Սասուն՝ Քու Հօրեղբօր †) ձե՛ռք յանձնենք,
«Ակընկկըլայ» մ՚ասյ Մեզի...,
Ու Մենք դառնանք՝ ետ երթանք...»:
= «Ա՛յսքան օր +) է,–ըսաւ Դաւիթ–, ճամբա՛յ ելեր՝ կուգանք Մենք,
Ծովերո՛ւ ափ, Գետերո՛ւ ափ՝ երբե՛ք Ես չե՛մ իյնար Ջուր...., —
Հիմա՝ այստեղ՝ ինչո՞ւ պիտի Ջո՛ւր իյնամ...:
Ասի՝ բան մը կա՛յ այստեղ...՝
Որ Դուք ինձի՛ կ՚ըպատսէք,—
Կ՚ըսէք՝ «Դաւի՛թ, արի՛ անցիր Մեր առջեւ...»:
Ինձի համար մի՛ կենաք.
Ես չե՛մ անցնիր Ձեր առջեւ...,
Դէ՛, Դուք եկէք՝ անցէք առա՛ջ՝ ու գացէ՛ք... .
Դուք քալեցէ՛ք՝ կամուրջն անցէ՛ք՝ Ես ալ կուգամ կը հասնի՛մ...:
Թէ որ կ՚ուզէք՝ Մէկըդ անցէք առջեւէ՛ն՝
Մէկըդ կացէք ետեւէ՛ն, —

*) Հող–Ջուր, Երկրամաս, սահման, պետութիւն: †) Ա.8՝ Ձէ–նով–Օհանիսի: +) Հ.414՝ երեք օր (է):

Ես կը մընամ Ձեր մէջտեղ·
Թէ չէ՝ որ ես մէյ մը դարձայ Ձեր՝ վըրայ···՝
Ձեր մէնծ կրասը՝ Ձեր Ականջնե՛ր կըմընայ··· †)։ —

244. Դաւիթ Կ՚րուճէ Երկու Ըմբիշներն Ու Գնաին Մէջ Կ՚Ընէ։

Հ·23,373,414, Ջ·՚Հ·373,(Հ·373), Ա·8, Ջ·՚Ա·8, Խ·8,9, Ջ·՚Խ·8, (Ց·88), Ց·88,89, Ջ·՚Ց·88, Ե·500,554,618,897,996,,730,791,792, 762,997,821,862,959,619,550, Ջ·՚Ե·792,730,500,554, (Ե·897,829, 821), Կ·9,10,45,46, Ջ·

Մէկ Ըմբիշը ինկաւ Դաւթի՛ առջեւէն,
*Առաջացաւ կամուրջի վրայ՝ դէպ ա՛յն Տուտ *),*
Մէկ Ըմբիշը՝ մընաց Դաւթի հետեւէ՛ն,
Ու Դաւիթն ալ՝ Անոնց մէ՛ջ, —
Որ կամուրջին վըրա՛յ տանին ու մօրթեն···։
Դաւիթն ըսա՛ւ Ինքիրեն· —
«Մինչեւ հիմա՝ ինչո՞ւ համար Այս Մարդիկ՝
Իմ առջեւէ՛ս կըքալէին երկուքն ալ,
Հիմա Մէկը անցաւ առաջ, Մէկը մընաց հետեւս··· ·
Մէկ չարութիւն մ՚, բա՛ն մ՚ կա՛յ Անոնց մըտքին մէջ···,
Անոնք պիտի Ինձ վընասե՛ն անպատճառ···»։
*Դաւիթ պիտացա՛ւ *) որ դ՚Ինք կ՚ուզեն թաղել Ջո՛ւր, —*
Ըսաւ, — «Ինչո՞ւ Մէկըդ կ՚անցնիք Իմ առաջ,
Մէկդ Իմ հետեւ կըմընաք···,
Բան մը կա՛յ Ձեր մըտքին մէջ···»։
Այս որ ըսաւ՝ Դաւիթ հասկո՛ւ Կամուրջին կէ՛տն էր հասած, —
Ըմբիշները մէ՛կէն դարձան դէպ Դաւիթ· —
*Առջեւի Մարդ՝ դարձաւ վըրա՛ն *), հետեւի Մարդն ալ հասա՛ւ,*
Մէկ՝ ա՛յն կողմէն, Մէկն ալ Նկաւ մե՛ւս Տուտէն· —
Իրենք մե՛ծ էն, Նկան հասան դէպ Դաւի՛թ,
Մէկ՝ Մեուսին աչքո՛վ ըրաւ՝ մօտեցա՛ւ, —

---

†) Ձեղ կուռ–կուռ կ՚ընեմ, բիկ–բիկ կ՚ընեմ ձեղ, ականջի չափ մանր կոտրտուռ կը վերածեմ ձեղ։ *) Տուտ, Գլուխ (կամուրջի), համմար՝ tête (de pont). *) Գիտցաւ, Հասկցաւ, կռահեց։ *) Դառնալ վրան, կրունկին վրայ՝ դէպ հետ չըքնաղել։

Ձեռ նետեցին Դաւթի Օձիք՝ բըռնեցին՝
Որ Դաւիթը կամուրջի՛ վրայ պիտի մորթեն՝ թալեն Գե՛տ...,
Ի՛նչ որ ըրին՝ Տըղայ–Դաւիթ դեռին դըներ չէկըրցան...:

Դաւիթ այնտեղ ի՞նչ ըրաւ. —
— «Ա՛մ ի՞նչ կ՚ընէք Դուք...»,–ըսաւ:
Անո՛նք ալ թէ, = «Մըսրամէլիք Մեզ պատուիրեր ըսե՛ր է՝
Պիտի մորթե՛նք ֆեզ այստեղ՝
Բըռնենք թալենք Գետի մէջ..., —
Ֆո արիւնը տանինք Մըսր,
*Մէլիք խըմէ՝ որ Իր Սիրտը հովանայ *)...»:*

Դաւիթ ասի չըլըսէ՛ր..., —
*Կանչե՛ց Աստուած, մէկ Ձեռ նետեց Մէկո՛ւ Սիրտ *),*
Մէկ Ձեռ թալեց Մէկո՛ւ Սիրտ, —
— «Վա՛յ..., Դուք,–ըսաւ–, կ՚ուզէք որ Ձիս թալէք Ջո՛ւր...», —
Զարկաւ Իրար †), վերցուց նետեց Գետին մէջ, —
— «Գացէ՛ք,–ըսաւ–, Ձեր Մէլիքին լո՛ւր տարէք՝
*Այսպէս Մա՛րդ կայ աստըւոր... *).*
Այստեղա՛կ Մարդ էր ղըրկեցիր Դուն Սասում..»:

Անոնք երթան թող Ջուվերուն հետ լողա՛ն..., —
Ու Մենք դառնանք՝ այն մի՛ւս Ջորս Ըմբիշներէ՛ն պըրոյց տանք: —

345. Դաւիթ Կ՚բռնէ Երկրորդ Ջոյզ-Ըմբիշը՝ Կռնակ-Կռնակի Կ՚զարնէ

Ջ.՝Հ.414, Հ.414.

Դաւիթ տեսաւ՝ մի՛ւս Երկուք մօտեցան,
Հասա՛ւ բըռնեց Այդ Երկուսի Օձիքէն,

---

*) Հովանալ, Հանգստանալ, հանդչիլ: *) Սիրտ, կուրծք, լանջ, օձիք (հագուստի՝ որ կուրծքի վրայ կը կոճկուի): †) Ե.821՝ «Դաւիթ բռնեց երկուսի փողպատ, տարաւ այն մէկուն Երկուսին, չորսն ալ զարկաւ իրարու, ականջները կտրեց՝ զարկաւ ճակտի վրան, առաւ քաշեց՝ զարկաւ վրան..., — որ չփոթուին է՝ կուռքապաշտի մէջբերին հետ. Տեսնել Հատ....: *) Աստուր, Աշխարհ, երկիր, յ՚աստխ:

Բնբաւ Անոնց Թամակները այնպէ՛ս զարկաւ Իրաբու՝
*Որ երկուսի կողաշարներ *)՝ մըտան մէկը միւսին մէջ···:*
Դաւիթ նրրոր Իր Ձեռք քաշեց Անոնցմէ՝
*Առանք այլեւս չըպոկուեցա՛ն *) Իրարմէ·*
Երկուսովը եւան ուռքի՛ կանդնեցան,
Արտուեցա՛ն ու զարձան, —
Մէկը Մեռա՝ ասկէ մինչեւ այն Ծառի՛ըը կըշալիկէր,
Որ կըյողնէր՝ գընէր Գետին, այն Մէկալը կը չալիկէր···:
Դաւիթ նայեց՝ տեսաւ Առանք չե՛ն բաժնըւիր Իրարմէ՝
*Ըսաւ, — «Այդպէս Սընդուկ–Պընդո՛ւկ *) խաղացէք,*
Դացէք Մըսը՛ր՝ Թաղաւորին լո՛ւր տըւէք···»:
— «Դաւի՛թ,–ըսին–, ապա ի՞նչպէս պիտի ըլլայ Մեր վախճան···, —
Մենք երկուքըս չըպոկուեցանք Իրարմէ···»:
Դաւիթն ըսաւ, — «Չէ՛, չէ՛ք պըրծիր Իրարմէ՝
Մինչեւ օրը՝ Ձեր մահուան···»:
—«Դաւի՛թ,–ըսին–, արի՛ քաշէ՛՝ ու Մեզ փըրցուր Իրարմէ՝,
Մենք քա՛նի ողջ, կենդանի ենք՝ Քեզ ծառայենք Մեր Անձով †),
Առածու առաջ ո՛ւխտ ըլլայ···»:

Դաւիթ ղընաց՝ քաշեց փըրցո՛ւց Իրարմէ···: —

346. Դաւիթ Կ՚բռնէ Սուրդ Զօղ-Ըմբիօր՝ Կըկախէ Կամուրջին Կողէն

2·, Կ·46,121, 2·՝Կ·121,46, (Կ·46), Ե·500,554,730,762, 792,862, 897,959,619,898,794,996,555,793,954, 997, (Ե·730), Ա·9, Հ·23,22, 2·՝Հ· 23, Ց·88, Ա.·8, (Ա.·48)·

Դաւիթ զարձաւ՝ այս անգամ՝ մո՛ւս երկու–Ըմբիշին, —
*Ձեւ մը նետեց Մէկի՛ վրայ *), Ձեւ մը նետեց Մէկալին,*
Պիտի զարնէր Իրարու հետ՝ թալէր Զո՛ւր···՝
— «Դուք չէ՛ք պիտեր Մարդ թալել Զո՛ւր,–ըսաւ հոն–,
Ձեզի ցո՛յց տամ՝ Դուք նորէ՛ն Մարդ ձըզէք Զուր···»:

---

*) կողաշար, կողոսկր, (côtes)· *) Պոկուիլ, փրթիլ, զատուիլ, անջատուիլ: *) Սընդուկ–Պընդուկ, Պատանեկան խաղ, Տե՛ս իմ Խաղաշխարհ, թիւ 133· Հ·414՝ Սանդուխչա, բիր բռնչայ: †) Համեմատելի՝ Սուրբ Կարապետի եւ Հոգւոց Վանից Կաղ–Դեվի աւանդութեան հետ, Տեսնել Բ· Հատորին մէջ: *) Փողպատ, Օձիք, վիզ:

= «Դո՛ւ՝ Ֆո Աստուա՛ծ...,–ըսին Անոնք–, Ֆու Բա՛խան ենք... *),
Մեզ մ՝ ը՛սպաները..., մի՛ թալեր Ջուր, մե՛ղք ենք Մենք...
Կընիկ–տըղի *) տէ՛ր ենք Մենք...»:
Դաւիթն այնտեղ ի՞նչ ըրաւ. —
Վերցո՛ւց դըրաւ այդ կամուրջի երկու կո՛ղ(մ),
Մէկ Ըմբիշը կախեց ա՛յն կողմ, Մէկ Ըմբիշը՝ մէկա՛լ կող(մ), +)
Մէկ Ծունկ զարկաւ Մէկո՛ւն Սըրտին, մէկ Ծունկ զարկաւ Մէկալի՛ն,
Ըսաւ, — «Երկուս՝ մէկի վոխա՛ն է հաղիւ...»:
Արիւն Անոնց պընչի ծակէն *) նետեց դո՛ւրս..., —
Այնքան ուժե՛ղ էր Դաւիթ...: —
Ու Ձեռ տարաւ՝ կալնէն *) հանե՛ց Իր Դանակ՝
Որ երկուան ալ պիտի մորթէր՝ նետէր Գետ...,
Այդ երկու հին Ըմբիշնե՛րը չո՛ւտ մ՝ըսէն, —
= «Դաւի՛թ,–ըսին–, Մենք Ֆու Հօրը հին Ըմբիշնե՛րն †) ենք եղած,
Դուն Մեզ թո՛ղ տուր, ելնենք չիտա՛կ խօսինք Ֆեզ»:
Դաւիթ Աոոնք քաշեց վե՛ր,
Երկու Ըմբիշն ելան այնտեղ՝ կամուրջին վրայ նըստեցան,
Ժա՛մ մը Անոնց խելքը չեկա՛ւ Իրենց Գըլուխ՝ որ խօսին...,
Ա՛յնքան ամուր բըռընցքե՛ր *) էր, Ծունկով ճընշե՛ր էր Դաւիթ:
Դաւիթն ըսաւ, — «Ես՛չ *), Դուք չիտակ չըխօսիք...՝
Ձեզ երկո՛ւքդ ալ այս Գետին մէ՛չ կըթաւեմ...»:
Նո՛ր քիչ մը չո՛ւնչ եկաւ Անոնց, յո՛յս առին, —
= «Դաւի՛թ,–ըսին–, հոգո՛ւդ մեռնինք՝ արեւո՛ւդ...,
Ֆեզնէ՛ պահենք...՝ Աստուծմէ՛ ալ ի՞նչ պահենք...,
Ի՛նչ կայ՝ չըկայ Մեր Սըրտի մէջ՝ Ֆեզ պատմենք...»: —

---

*) Ֆու բա՛խտն եմ, Ֆո բարեսրտութեա՛ն կըդիմենք: *) Կընիկ–տղայ, Ընտանիք: +) Ե·762 ս·՝ «Ձեռքով ցոյց կուտայ (պատմողը)՝ կամուրջին կողմերը»: *) Պընչի ծակ, Բթի ծակ: *) Կալան, Պատեան (դանակի, սուրի), (gaine): †) Ե·862 (Կ·121)՝ Մշակներ: *) Բռընցքով զարնել–բռնել: *) Ես՛չ, Ես՛չը վրկաց, Ես՛չը գիտէ, խաչով երդում կ՝ընեմ որ...:

347. Դաւիթ կ'ուներ Ըմբիշներուն Ու Միասին Սասնոյ Ճամբան Կ'բռնեն

Հ·23,21,20,414, (Հ·23,21,20), Զ·՝Հ·414, Կ·46,121, (Կ·45,8,39, 46), Ե·619,862,898,997,495,550,959,730,762,792,500,554,555,731, 1098, Զ·՝Ե·495,550,898,997, (Ե·1097,898,762), Ց·88,89, Զ·՝Ց·88, 89, (Ց·89), Ե·3,5,9, Զ·՝Ե·9, (ՉՍ·343), ՉՍ·344, (Ա·5), Ա·8, Զ·՝Ա·8·

Ըմբիշներն ալ՝ այնտեղ Դաւթին ի՞նչ ըսին· —
— «Մենք Քու Հօրը հին Ընչականե՛րն †) ենք», — ըսին։
Այն Մէկն ըսաւ, — «Ես որ կամ...՝
Իմ անունը Բաթման-Բուդա՛ կըկանչեն,
Քու Հօր Տունէն սեղանին վրա՛յ եմ մեծցեր»։
Այն Միւսն ալ՝ թէ, — «Իմ ցեղը Ադա՛ր է,
Ճարպար-Ռամի՛՝ իմ անուն· —
Ես Մէլիքի Հօ՛ր առջեւի Մա՛րդն էի»։
*Ու երկո՛ւք մէկ *), —*
— «Քա՛նի որ Քու Հայրը ո՛ղջ էր՝ Սասունի ու Մըսրա՛յ մէջ՝
Մե՛նք էինք Քու Հօր Ըմբիշներ՝ Իր առջեւ։
Իսկ Քու Հայրը երբ մեռաւ՝
Ա՛լ Ամոր պէս ուրիշ կըտրիճ Մա՛րդ չկար,
Մըսրա՛յ-Մէլիքն ալ՝ Մեզ պահեց Իր Ձեռքին տակ՝ 'ի Մըսըր,
Մենք ալ դացինք՝ ծառա՛յ եղանք Մէլիքին +)։
Մե՛նք էինք որ՝ Քեզ Սասունէն՝ Մէլիք-Մօր քո՛վ տարանք։
Այսքան տաեն՝ Մենք Մէլիքի՛ն ծառայութիւն է կ'ընենք,
Մէլի՛քն է որ՝ բլունի՛ դըրաւ Մեր Վըղին,
Մեզ կանչե՛ց ու դըրաւ Քեզ հետ միասին,
Որ Մենք զարնենք Քեզ ըսպանենք՝ նեռենք Գե՛տ +)։
Ինք իր բերնո՛վ ըսաւ Մեզ, —
«Տարէ՛ք այնտե՛ղ, կամուրջի վրա՛յ երբ հասնիք՝

---

†) Ե·897՝ կակաղ, Ասլան, Կ·46՝ ծառա(ներ)։ *) երկուք մէկ, երկուքը՝ միասին, միաբերան (ըսին)։ +) Տեսնել՝ Հատ. 275, 276, 277, 278 եւ 336, 337, — որով՝ դիւրին է հասկնալ թէ՝ Զորս Ըմբիշները՝ Մէլիքի կամքին ենթարկուելէ էին, հակառակ որ Բաթման-Բուդան ու Ճարպար-Ռամին անոր Մօ՛րը խօսք տուեր էին։

«Անոր վիզը կըտրեցէ՛ք,
«Աչքունէն ալ՝ Տի՛կ մը լեցուն առէ՛ք բերէք Ինձ համա՛ր,
«Որ ես խըմեմ՝ եւ իմ Սիրտը հովանա՛յ.
«Անոր Մարմին նետեցէք Ջո՛ւր՝ ու դարձէ՛ք»:
Թէ չէ՝ Մենք Քեզ ոեւէ՛ բան չե՛նք ըներ:
Հիմա,—ըսին—, որ Աստուած Քեզ այդ չընորքը տըւե՛ր է,
Որ Դուն այդպէս ուժեղ ես,
Այդ քաջութիւն Քու փորը կա՛յ, կըտրի՛ճ ես, —
Մենք ապա չե՞նք ուրախանար Քու վըրադ...:
Աստուածմէ՛ է Քո այդ ուժ:
Մենք՝ Քու վըրադ՝ խեռութիւն *) մը չըտեսա՛նք.
Ու չէի՛նք ալ գիտեր որ Դուն՝ Քու Հօրմէ՛դ ալ ուժով ես.
Մենք ալ՝ այդպէ՛ս Մարդ կ՛ուզենք.
Ա՛լ Մէլիքին ծառայութիւն չե՛նք ըներ.
Դուն Մէլիքէն ուժո՛վ ես:
Քո Աստուածը հըզո՛ր է.
Քո ուժ՝ յաղթե՛ց Մեր ուժին, —
Մեզ կախեր ես կամուրջէն:
Ինչպէս առաջ Քու Հօր Ըմբի՛չն էինք Մենք՝
Հիմա Քու Հօր սիրոյն համար՝ Քե՛զ ալ ծառայ կ՛ըլլանք Մենք:
Որչափ ատեն Դուն ժի՛ր ես,
Քանի որ Մենք առո՛ղջ ենք՝
Մենք Քեզ մըշա՛կ, Դուն՝ Մեր Տէ՛ր: —
Քու Հօր երկիր՝ Մենք ալ Քեզի ցո՛յց կուտանք,
Մենք Քեզ Սասո՛ւն կըտանինք...»:
Ա՛լ քիչ ղե՛ղչ *) լինկաւ Դաւիթի Սըրտին մէջ՝
Այլեւս այդ Զոյգ Ըմբիշներուն խընայե՛ց:—
= «Որ այդպէ՛ս է,—ըսաւ Անոնց Դաւիթն ալ—,
Ուրե՛ք ելէք՝ ու երթա՛նք...»:
Թողուց ելան՝ ու կանդնեցա՛ն երկուքն ալ.
Ելան երկո՛ւք՝ Դաւիթի հետ մէկ-մէկո՛ւ Գլուխ պագեցի՛ն,
Բաթման-Բուղէն, Ճարպար-Քամին Ըմբիշներ՝

---

*) Խեռութիւն՝ Ակնարկուած իր «ծուռ» մակդիրին (Ծուռ-Դաւիթ, Սասմայ Ծուռը): *) Ձեղչ, Ձղչում, դուբ:

Ելան Դաւիթ Ձեռ բռնեցին ու դացին։
Քիչ մը դացին՝ հասան Դաւիթ չալկեցին,
Ա՛լ չբողին որ քալէր,—
Փոխնիփոխը՝ գ՚ինք չալկեցին մինչ Սասուն,
Սո՛ւն Դաւիթ, ինկան առա՛ջ, դացին Սասայ սահմաններ.
Ողջ ու առողջ եւ ապահով՝ Դաւիթ բերին ՚ի Սասուն,
Տարան Անոր Հօևերդրօրը յանձնեցին։—

248. Քուռկիկ–Ջալալին՝ Սասայ Գիրք և՚ռանի Մըսր †)

Ջ., ե·1098,892,952,953,993,893,(ե·993,892), Ջ.՚ե·892, Ջ.

Ըմբռչնները՝ Դի՛ր մ՚ալ առին, դըրուած Ջէնով–Օհանէն,
Որ չուտ դըրկեն՝ Մէլիքէ–Մօր՝ ՚ի Մըսըր,—
Որ թէ՝ «Դաւիթ ո՛ղջ ու առողջ ևկաւ հասաւ ՚ի Սասուն»։
— «Դիրն ո՞վ տանի, ո՞վ չըտանի ՚ի Մըսըր», —
Ըսին,—«Քուռկիկ–Ջալալի՛ն տանք տանի»։
Ելան այնտեղ Քուռկիկ–Ջալալ դո՛ւրս քաշեցին Ախուէն,
*Լա՛ւ մը խընա՛մ *) տըւին Իրեն, կերցուցին ու խըմցուցին,*
Դիրը դըրին կաշիի մէջ՝ ու կապեցին Թամբին վրայ։—
Ջէնով–Օհան ըսաւ,—«Քուռկի՛կ–Ջալալին,
Քե՛նէ կ՚ուզեմ Այս Դիր տանիս ՚ի Մըսըր։—
*Գետ չբթալի՛ս, Թուխ չբթալի՛ս *), Քար *) չըզարնես Սասայ–Դիր.*
Մէլիքէ–Մօր Ձի՛ոքը յանձնես՝ ու դառնաս»,

Քուռկիկ–Ջալալ Հրեղէն–Ձիՙն էր, — առա՛ւ Թուղթը ու Թըռա՛ւ,
*Մէջ–երկինք ու մէջ–Գետինք *)*

---

†) Քուռկիկ–Ջալալի Մըսր երթալ–դառնալու այս պատագրաւ պատկերը՝ ե·892ի մէջ պատմուած է՝ Մանուկ–Դաւիթը Մըսր տանելու առիթով։ Բայց որովհետեւ փոփոխակներուն մեծ մասը՝ այդ պաշտօնը տուած են Ջէնով–Օհանին, եւ այնպէս ալ պատմուած է ՍԱՍՈՒՆԱԿԱՆԻ մէջ (Հմմ. 274–275), ուստի յարմար տեսայ հոս դնել այդ դմայլելի դրուագը Քուռկիկ–Ջալալիի աւրիհանդակի՛ դերովը։ *) Խնամ, ե. 892՝ Թիմար։ *) Թալել, Ձգել։ *) Քար, Լեռ, սար ու քար։ *) Մէջ–երկինք ու մէջ–գետինք, Օդին մէջէն, օդապատ (աւրալ)։

Սուրա՛ց գընաց 'ի Մըսըր։
Մէլիքէ–Մայր Խամէլ–Խաթուն՝ պատըշդամէն նայեցաւ,
Որոնեց ու տեսաւ որ հա՛, Մըհէրի Զի՛ն է կուգայ...,—
Փոշի՛ մ'կ'ելնէ Դաշտի մէջէն՝ դէպ երկինք...,
Կըրա՛կ Գետնի երեսէն վեր՝ կուտայ երկինք՝ կըցոլա՛յ...։
Ան ալ ըսաւ,—«Ասի Ամպ չ'է՛..., աս ի՛նչ է...։—
Կա՛յ ու չըկայ,–ըսաւ–, ասի՝ Սասնայ Քուռվիկ–Ջալա՛լն է...
Անոր Ոտաց կըրա՛կն է այս...՝ կա՛յծ կուտայ...»։
Ան ալ կանչեց,—«է՛յ Դըռնապա՛ն, Դարպասի–Դուռ՝ վազէ՛ բա՛ց...,
Զի՛ մը ահա՝ Քաղաքին Դո՛ւռ կըհասնի...,
*Անի Սասնայ Մըհէրի *) Զի՛ն է՝ եկաւ... *)։*
Նայէ՛ ի՞նչ կայ՝ վեր՝ այդ Ձիու Քամակին...,—
Մէկ բա՛ն մը կայ իր վըրան...,
Ա՛ռ բեր ինձի՛, չըբանա՛ս...»։

Դըռնապանը՝ վազեց բացա՛ւ Դարպաս–Դուռ,
Տեսաւ Քուռվիկ–Ջալալի՛ն էր՝ եկաւ հասաւ Քաղքին–Դուռ,
*Բա՛ն մը կապուկ *) Քամակի՛ն...։*
*Զին Իր Գըլուխ կօռեց *) քերաւ դէպ առա՛ջ,*
Ան ալ՝ կապոց(ն) Ձիու Քամկէն առաւ վա՛ր,
Տարաւ յանձնեց Մէլիքի–Մօր Իրեն Զի՛ո...։—

349. Կ'ուզեն Քուռվիկ-Ջալալին Պահեն Մըսր, Ան՝ Պարիսպը Կ'ածցնի Կուգայ Սասուն

Զ.՝ Ե.893,993,994,953, (Ե.953), Զ.

Մըսրայ–Տիկին բացաւ նայեց՝ որ մէկ թո՛ւղթ...,
Գըրած՝ ղըրկած Ձիուն հե՛տ...։
Ան ալ վերցուց ու Մէլիքին ի՞նչ ըսաւ, —
—«Որդի՛,–ըսաւ–, Այդ Հըրեղէն–Ձին Քեզի՛,
Աս՝ Ինձի՛...»։
Այնտեղ Մէլիք՝ չուտ արթընցա՛ւ, տեսաւ առիւծն էր յարմա՛ր,—
*—«Տըղա՛ք,–ըսաւ–, Դարպասները չուտ զարկէ՛ք *),*
Որ՝ Սասմա՛յ–Տան Քուռվիկ–Ջալա՛լ՝ Մեր Ձի՛ն լնկեր Իր ուտո՛վ՝

*) Միհէրի, Այսինքն՝ Դաւիթ–Միհէրի։ *) Եկաւ, Ահա՛ կուգայ կոր։ *) Կապուկ, Կապուած։ *) Կօռել, Կորացնել, դէպ վար ծռել։ *) Զարնել, Ամուր գոցել։

Հանգինք բլոնենք Մեղ համար: —
Այդ Ձի՛ն է որ՝ Մեր–երկիրը քակե՛ր է Իր Պայաերով…» †)

Հասան՝ այնտեղ՝ Դարպասները չուտ զարկի՛ն…,
*Ձիաւորնե՛ր՝ Նկան Իրար *), Ձիուն չո՛ւրջ, —*
Իրենց մլաքով՝ պիտի բլոնե՛ն… Հրեղէն Քուռկի՛կ–Ջալալին…:
Քուռկիկ–Ջալալն ալ ի՞նչ ըսաւ ինքիրեն, —
Թէ՝ «ես ի՞նչպէս Առնոց մօտէն պըրծընիմ…»:
Պարխպին մէջ՝ դընա՛ց–եկաւ դէ՛ս ու դէն՝
*Ըսաւ՝ «ես ալ՝ պիտի զարնեմ Պարխպի՛ն *)…,*
Թէ անցնի՛մ ու թէ մընա՛մ…»:
Ու Քուռկի՛կն էր, — ցո՛ւնց մը տըւաւ Իր Պոչին,
Բա՛շը տընկից, Հնծաւըներուն մէջէն սուրա՛ց՝ Թըռաւ բա՛ց,
Զարկա՛ւ ելաւ՝ քաւսուն կանդուն Պարխպն անցաւ մէկալ դէն,
Թըռա՛ւ՝ փախա՛ւ ու դընա՛ց…:
*Դիշեր–ցկընկ մէ՛կ–լար *) վազե՛ց ու դընա՛ց…,*
Դընա՛ց՝ Սասուն՝ կանդնեցաւ…:
Մըտամտելէն ըսաւ, — «Ախո՛ս, դընա՛ց Քուռկիկ–Ջալալին…,
Պըրծա՛ւ դընա՛ց Մեր Զնոքէն…»:

350. Ձէնով-Օհանի Ու Քուռկիկ-Ջալալի Հարց-Պատասխանը

Ձ·, Ե·893,994,894,953, Ձ·՝ Ե·893,994,894,953 (Ե· 894), Ձ·

*Ձէնով–Օհան ալ՝ Տանէ՛ն է, Բերդէ Գըլխէն կ՚էրեչկա՛յ *),*
Ա՛չքը բլոներ Ձիուն Ճամբա՛ն, — Ե՞րբ կուգայ…:
Իրիկուա՛ն դէմ՝ տեսաւ որ հա՛…՝ մէջ–երկինք ու մէջ–Գետինք՝
Ամպի փոշի՛ մ՝ կըբարձրանայ՝ կըմածնայ…,

---

†) Հայոց Այրուձիուն (հնծեվազօր բանակին) տարածած սարսափին ակնարկուած: Այլաբանօրէն՝ նաեւ Հայկական Բարձրաւանդակէն պոռացող–իջնող եւ Ասորեստանի տափաստաններուը յաճախ ողողվող աւերմ՝ Տիգրիս–Եփրատ գետերուն: *) Նկան իրար, Ընդունցան, շրջանակ կազմեցին: *) Պիտի զարնեմ Պարիսպին, Պարիսպի՛ն իվեր պիտի թռիմ՝ անցնելու փորձ ընեմ: *) Մէկ–լար, Ուղիղ դիծով, միալար, անդուլ: *) Իրիշկալ, Դիտել, ակնկառոյց նայիլ:

Նայեց՝ Քուռկիկ–Ջալալի՛ն է որ կուգայ…, —
Թամբին վըրայ՝ բա՛ն չըկա՛յ…, —
— «Է՛հ՛…,–ըսաւ–, ո՛վ գիտէ ո՞ր Սարն է թալեր իմ Թըղթիկ,
Կամ՝ ո՛ր Թուխ…»:
Քուռկիկ–Ջալալ՝ եկաւ հասաւ Դուռին դէ՛մ,
Չէնով–Օհանն ըսաւ, — «Քուռկի՛կ, մատա՛ղ Քեզ… *),
Իմ Թըղթիկը Սա՞րն ես թալեր՝ Քէ՞ չէ Թուխ…:
Ո՛վ գիտէ՝ ո՞ր Հովն է տարեր, կամ ո՞ր Ջուր…»:
Քուռկիկ–Ջալալն ըսաւ, = «Օհանո՛ն, մի՛ վախնար,
Քո Թուղթ՝ ես ոչ Սա՛րն եմ թալեր՝ ոչ ալ Թո՛ւխ… .
Ոչ Քամի՛ն է զարկեր–տարեր՝ ոչ ալ Ջո՛ւր…, —
Տարեր եմ ես՝ հասցուցեր եմ Իրեն տէ՛ր,
Մէլիքէ–Մօր Ձե՛ռն եմ տըւեր՝ ու դարձե՛ր… .
Ու հաղի՛ւ Քէ պըրծե՛ր՝ Թըռեր, եկե՛ր եմ…: —
Դարպասները զարկին վըրա՛ս, քիչ մընաց՝ Չիս բըռնէ՛ին…,
Քառասո՛ւն կանդուն Պարխպին անցեր՝ եկե՛ր եմ…»:
Չէնով–Օհան՝ Թուր նետեց՝ Չիուն Գըլուխ համբուրե՛ց, —
Ըսաւ, — «Առի՛ք՝ լաւ մէկ զարմա՛ն *) տըւէք Քուռկիկ–Ջալալուն,
Տարէ՛ք Իր տեղ՝ Անձաւին մէջ կապեցէ՛ք,
Դուռներ ամուր հողեցէ՛ք,
Անոր Խոտ, Ջուր՝ Երդիկն'իվար կախեցէ՛ք՝
Մինչեւ որ Մեր Տըղայ–Դաւիթ մեծնայ…:
Աստծու անէ՛ծք Քեզի,–ըսաւ–, Տան–տեղաց *) վրայ ա՛յն Մարդուն՝
Որ Այս Չիուս տեղ՝ կանուխէն իմ Սերունդին համա՛ր տայ…»:
Քուռկիկ–Ջալալ՝ կապեց Եօ՛թը–Դըռնով Նե՛րս,
Դուռներ զոցեց վե՛ր՝ Չիուն,
Անոր կերն ու Ջուր, ամե՛ն բան՝ Երդիկն'իվա՛ր կուտայէին:

Ան Թող մընայ Իրեն տէ՛ր, —
Մենք ալ դառնանք՝ Ըմբիշներէ՛ն զըրոյց տանք: —

---

*) Մատա՛ղ ըլլամ Քեզի, սիրակա՛ն ձի: *) Դարմանի, Ինամք (թիմար) եւ անուանդ: *) Տուն–տեղ, Բնակարան եւ բնակիչները, ամեն բան:

351. Երկու Ըմբիճներ՝ Նապաստակի Որիւնին Մէջ Կ'թաթխեն Դաւիթի Շապիկը Որ Մէլիխին Ցանին

2·(20·344), 2·՝ 20·344, կ·10, 2·՝կ·10, ե·959,730,762,792,731, 2·՝ե·959, (ե·762,731)·

Երկու Ըմբիչ՝ կ'ըսեն Դաւիթին հրաժե՛չտ աւին՝ որ երթան
Դաւիթ Անոնց, — խապի՛ համար —, ի՞նչ ըսաւ· —
—«Մարդի՛կ,–ըսաւ–, դէ՛, Դուք տեսաք՝ որ ես մէկ խո՛ղճ ալլայ եմ,
Չես մի՛ մօրթիք···, ես մե՛ղք եմ··· .
Իմ վախտէրն՝ Դաւա՛ն մ՝ ղլտէք, մօրթեցի՛ք,
Անոր Արիւն՝ տարէք տըւէք Մէլիքին,
Որ խրմէ եւ Իրեն Սիրտը հովանա՛յ···:
Իմ Շապիկն ալ՝ այդ Դպանի Արիւնին մէ՛չ թաթխեցէք,
Ըսէք՝ «Դաւիթ ըսպանեցի՛նք, ահա՛ արիւնտ Իր Շապի՛կն»,
Որ՝ անվրնա՛տ Անոր Զեռքէն ազատուի՛ք···»:
Երկու Մարդիկ՝ հաւանեցան այս խօսքին, —
Ըսին, — «Դաւի՛թ, Մեզ Քու բախտի՛ն ենք թալէ···,
Դուն Քու Շապիկ տաս Մեզի՛,
Երթանք երթանք՝ մէկ Նապաստա՛կ մ՝ ըսպաննենք,
Քու Շապի՛կը թաթխենք Անոր Արեան մէ՛չ,
Առնենք տանինք Մէլիքին,
Որ Մէլիքը պիտա՛յ թէ Դուն ըսպաննուեր ես Մեր Զեռքով·
Որ հաւատա՛յ՝ Մեզ չ'ըսպանէ՛ Այդ Դպան:
Քու Հօր–երկիր՝ Սաանայ Դէ՛հն է, քիչ վերա՛վ, —
Քեզ ցո՛յց կուտանք՝ Դու կ'երթաս Քու Հայրենիքդ»:
Եւան՝ չորս կողմ իրիչկային, Դպան մ՝ չտեսաւ այն տեղրա՛նք·
Դաւիթ տեսա՛ւ՝ որ ա՛յն դէհէն Նապաստակ մը կըխախէ՝
Ելաւ վերթաւ Նապաստակին հետէ՛ն,
Հասաւ բռնե՛ց Լապտարակը, վէր կրտրե՛ց,
Կոտոշ մ՝ լեցո՛ւց Նապաստակին Արիւնո՛վ,
Իր Շապիկն կրատր մըն ալ՝ այդ Արիւնին մէ՛չ թաթխեց,
Տըւաւ Անոնց, — «Տարէ՛ք,–ըսաւ–, Մէլիքին···»:

352. Զոյգ-Ըմբիշներ՝ Դաւիթի Շապիկը Մբար Կ'ածին

Չ., Ե·959,792,862, (Ե·792,731), (Ճ·89 ա·), Չ.՝ ՉՍ·344,345, Չ., ՉՍ·344,345, Կ·10·

*Անոնք առի՛ն այդ Արիւնը *) եւ Շապի՛կ,*
Ինկան ճամբա՛յ՝ դարձան դացին 'ի Մըսը՛ր,
Բերին տըւին Մէլիքի–Մօրն առանձին.
Անցած–դարձած՝ մէ՛կ–մէ՛կ իրեն պատմեցին:
Մայրն ալ՝ Շապիկ տարաւ յանձնեց Իր Տըղո՛ւն, —
— «Մէլի՛ք,–ըսաւ–, Դուն ալ ի՛նչ Մարդ մ' եկար դուրս...,
*Որ Մեր վա՛րձն ու չահ–պահն *) այսպէս կորուսի՛ր...:*
Ես չըթողի՛ որ Դուն Անիկ Իմ Աչքիս դէմ մորթէիր...,
Ու ես այդ բան տեսնէի՛...», —
Ես Ան տըւի երկու–Դահճի՝ տարան Սարը ղեկեցի՛ն,
Ահա՛ն Քեզի Իր Շապիկ...՝
Իր Արիւնին մէջ թաթխա՛ծ...»:
= «Մարէ՛,–ըսաւ Մըսրամէլիքն անդիէն–.
Շա՛տ ալ աղէկ ըրիր Դուն... .
Մեր Գըլուխը թէ որ ցաւէր՝ մէջ Աչխըրքին՝ վեր՝ երկրին՝
Այդ Տըղայի՛ն էր անշուշտ...»:
Ու կոտոշով Արիւն խըմե՛ց՝ «Օ՛խ» մը քաշեց՝ հանդչեցաւ...:

353. Գետը Ջգուած Զոյգ-Ըմբիշներուն Դիակները՝ Միհրնեւ Մբար Կ'երթան

Չ.՝ Հ·373·

Մէուս երկու–Ըմբիշնե՛րը՝ այդ Ջուրին †) հետ դընացի՛ն,
Գընացին ու Մըսրա՛յ–Քաղաք դո՛ւրս ընկան...:
Քաղաքացիք՝ Ջըրին մէջը տեսա՛ն երկու–Ըմբիշներ,
Դիակները Գետին մէջէն հանեցի՛ն,
Ու Մէլիքին ցո՛յց տըւին...:
Մըսրամէլիք տեսա՛ւ թէ չէ, — «վա՛յ անպիտան Որ՛բը...,–ըսաւ–.
Իմ Ըմբիշներն ըսպանե՛ր...՝
Ինքը ո՛ղջ է..., պըրծե՛ր դացե՛ր Իմ Ձեռքէն...»:

---

*) Արիւն, Ճ·89 *տարբ.*՝ շաւ լակոտի արիւն: *) Շահ–պահ, *Ընտանեաց:* †) *Այսինքն Բաթմանայ Գետին:*

354. Մրջոտմէլիքի Երազը

24·425,426, 2·

Ու պիչե՛րը՝ Մրջոտմէլիքը՝ քընաու՝ երա՛զ մը տեսաւ,
*Լուսուն՝ ելաւ՝ իր երազը վե՛ր տըւաւ *) ու ի՞նչ ըսաւ· —*

— « Ասօր ես երա՛զ մ՚ եմ տե՛սե՛ր···, †)
= Հա՛ տե՛սեր···:
Մէկ Ա՛ստ(ը)ղ մ՚ելաւ Սասունցից–Դե՛հէ՛ն,
= Հա՛ Դե՛հէ՛ն·
Մէկ Լուսնակ մ՚ելաւ այն Մրջոյ–Դե՛հէ՛ն,
= Հա՛ Դե՛հէ՛ն·
Ան Մրջո՛յ–Լուսնակն՝ առջեւ Սասունցից–Աստղին խաւա՛րա՛ւ···,
= Հա՛ խաւա՛րա՛ւ···» +):

Մրջոտմէլիքն ըսաւ այնահղ, — «Տէ՛ր վըկայ···՝
Որ Ան Աստղը՝ Դաւի՛թն է···,
Ու Լուսնակը ե՛ս ի՛նքս եմ···: —
Իմ ցաւն՝ ասա՛՝ Անոր մօտէ՛ն պիտի ծընի, ե՛րբ որ է···, —
*Անիկ պիտի լինի՝ ու Չիս խաւարցընէ՛, կա՛յ–չըկայ *)···»:*

---

*) Վեր տալ, Պատմել, կրկնել՝ ու մևկնել (երազը): †) Երդում: Տե՛ս իմ երգած՝ ու կոմիտաս Վարդապետի ձայնագրած՝ կտորը: +) Մրջոտմէլիքի երազը՝ համեմատելի Ամպահակի տեսած երազին հետ (Խորենացի Ա· ԻՉ·, 112–113): *) Կայ–չըկայ, կը թուի թէ, շատ հաւանական է···:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԹԸԼՈԼ-ԴԱՒԻԹ

ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԷՋ

Է. ԹԸԼՈԼ-ԴԱՒԻԹԻ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆԸ (ՍԱՍՈՒՆԻ ՄԷՋ)

355. Սասմանց-Ծուռէն Մեծ Շուրով Ընդառաջ Կուգան՝ Կ'առնեն Դաւիթ՝ Կ'տանին Գաղրա

Ջ.՝ՁՍ.346, (ՁՍ.344), Հ.373,23,Ջ.՝Հ.23, Ա.8,Ջ.՝Ա.8, Ե.960, 1098,997,555,793,500,961, (Ե.960), Ջ.՝Ե.960,997,793,555, Կ.46, (Կ.46,10), ՁԿ.424.

Ջըրոյց՝ հէմա՝ ո՞ւրկէ տանք...,
Ջըրոյցը տանք Սասունէ՛ն. —
Դառնանք ու գանք՝ վեր՝ Դաւիթի՛ գըրոյցին: —
Տըղայ–Դաւիթ՝ Ըմբէշներուն հե՛տ մէկտեղ՝
Երբոր Սասմանց–երկիրներէն նե՛րս մըտաւ՝
Այնտեղ՝ Հովիւ, Դառնապածներ, Նախրորդներ՝
Տեսա՛ն Դաւիթ՝ ու ճանչըցա՛ն Հպատաստէն. —
[Չէ՞ որ Ջոջանց–Տըղէ՛ն է,
Իշխանական Հպատաստնե՛ր կան Իր վըրայ].
Մխոք ըրին ու՝ «կա՛յ ու չըկայ,–ըսին–, Ասի Դաւի՛թն է»:
Ու ձայն գընաց Սարէ ՚ի Սար, լուրը հասաւ մինչ Սասո՛ւն:
Երբոր գացին՝ Սասնոյ Գաղթի՛ն մօտեցան՝
Լուրը գընաց հասաւ Դաւիթ Հօրեղբօր, —
Մէկն «Ակընկկա՛» տարաւ Գաղա՛ք, Սասմանց Զէնով–Օհանին †), —
— «Ակընկկա՛ս տո՛ւր..., Դաւիթն եկաւ ու հասա՛ւ...»:
Զէնով–Օհան ուրախացա՛ւ ու ըսաւ. —

†) ՁՍ.344՝ Հօրեղբօր Մանուկին:

— «Դաւիթն ևկա՞ւ . . . , բարե՛վ ևկաւ . . . , Աչքըդ՛ուս է Ամենուս . . . ,
Փա՛ռք Աստծուն՝ որ Մեր Տըղան՝ ողջ ու առողջ՝ Մե՛զ հասաւ»:
Դեղ–Դեղացին ու ժողովուրդ կանչից այնտեղ եւ ըսաւ, —
— «Աստուածո՛ւթիւն Մեղի՝ նորէն՝ կըտրիճ Տըղա՛յ մ՛ է տըւեր,
Եյլ՛ք երթանք Մեր Դաւիթին ընդառաջ . . .»:
Ամենք գացին որ տեսնեն թէ՝ ի՞նչպէս Մարդ է այդ Դաւիթ·
Դիտե՛ն որ թէ՝ Իր Հօրմէ՛ն ալ կըտրիճ է:
Եյան առին Զիւռնաներ, Դեղ–Դեղական, Բազմութիւն,
Ու Դաւիթի դէ՛մ գացին:
Իրարու մէջ կըհարցընե՛ն ու կ՛ըսեն· —
«Դաւիթ ո՞րն է . . . : Մ՛րն է Դաւիթ . . . , հը՛ ո՞րն է . . .»:
Ձէնով–Օհան՝ տեսա՛ւ Դաւիթ հեռուէն, —
Դաւիթ կուգա՛ր . . . ,
Կորընկանի *) Արտերո՛ւն մէջ կըվազվզէր դէ՛ս ու դէ՛ն, —
Նայեց՝ ըսաւ, — «Այս Մեր Ո՛րբն է որ կուգայ . . . ·
Մըտայ–Երկի՞ր ո՛ւր կ՛իյնայ . . .՝
Սատմայ–Քաղա՞քն ալ ո՞րտեղ . . . †)»:
Օհանի Սիրտ ճեղքըւեցա՛ւ Տըղուն վրա՛յ . . . , —
— «Կա՛յ ու չըկայ,– ըսաւ–, Ախ Մեր Որբ–Դաւի՛թն է կուգայ . . .»:
Ճանչըցա՛ւ որ Դաւի՛թն է,
Իր Մեծ եղբօր Որբ մընացած Տըղա՛ն է, —
Գընաց առա՛ջ, հասա՛ւ՝ յայտ՝ Դաւիթ Գըլուխ համբուրե՛ց:
Դեղացիք ալ՝ կըմօտենան՝ ու Զի՛ռ կուտան Դաւիթին, —
— «Բարո՛վ ևկար, Դաւի՛թ»,– կ՛ըսեն՝ ու կըխոհուե՛ն Իրեն Չեռ:
Դաւի՛թն ըսես՝ բա՛ն չ՛ի՛մանար, գընդլը՛ն–գընդլը՛ն *) կըքալէ՛ . . . ·
Չի՛ դիտեր թէ՝ Աստունցի՛ք են այդ Ամեն, —
Պատի՛ համար Իրեն առջե՛ւ ևկեր են:
Ի՞նչ գիտնան որ՝ Դաւիթ ա՛յնքան անօթի՛ է մընացեր . . .՝
Քի՛չ է մնացեր որ Իր խելքը թըսցընէ՛ . . . :
Ուրախութի՛ւն, աւօ՛ք–վաւօք, Դաւիթն առին ևկան Տո՛ւն: —
Ձէնով–Օհան՝ ևրե՛ք գէր Ձեռք տըւաւ Դեսի՛ն, գոհացա՛ւ, —

---

*) Կորնկան, Sainfoin: †) Այսինքն՝ Մըտայ Երկիրը չա՛տ հեռու կ՛իյնայ այլեւս· Դաւիթ այնտեղէն ազատուած ու Աստուն հասած է արդէն: *) Գընդրը–գընդրը, Տնտնալով:

— «Փա՛ռք տանք,–ըսաւ–, Մեր Աստծուն՝ Ամենո՛ւստ, —
Մինչեւ այսօր կորսըւա՛ծ էր Մեր Տըղան,
Այսօր գըտանք Մեր Կորուստ՝
Ա՛յսպէս կըտրիճ ու խօրոտ...:
Փա՛ռք Քեզ, Աստուա՛ծ,–ըսաւ ապա՝ Ինքիրեն–.
Դի՛ր *) մ՝ ալ տեսայ ես Քու մօտէ՛ն *)՝ այս մեծ փառք...: —
Մէկ Պուրա՛կ մը ելաւ Սասմանց–Տա՛ն վերեւ.
Սասմանց–Ճըրագ չ՝էի՛ մարեր»:
Ու չա՛տ եւ չատ ուրախացա՛ն Դաւիթի վրայ,
Ելան առին՝ եկան Տո՛ւն:
Գեղ–Գեղացիք չատ «Աչքըլո՛յս» ըրին Ջէնով–Օհանէն:
Ջէնով–Օհան ըսաւ, — «Փա՛ռք Մեր Աստըծուն,
Այս Մէկ Զաւակ՝ նորէ՛ն ելաւ կանդնեցա՛ւ.
Մե՛ղք որ դեռեւս չիմար է... .
Մենք ըսինք թէ՝ «Կըտրիճ Մա՛րդ էր Մեր Դաւիթ...», —
Խե՛ղճ չիմարիկ Տըղա՛յ մ՝ է...»:
Շատ խօսեցա՛ն, գըրո՛յց ըրին՝ ներկայ եղող Գիւղացիք.
Ելան ապա՝ Ամէն Մէկ Իր Տո՛ւն գընաց,
Մնացին Օհան ու Դաւի՛թ, —
Ջէնով–Օհան՝ տարաւ Դաւիթ Իրեն Տո՛ւն,
Շահեց–պահե՛ց՝ այնպէ՛ս ինչպէս Իր Որդին:

356. Ցղայ-Դաւիթ՝ Կ'վարժուի Իր Նոր Միջավայրին

Ե·731,762,1098,66,500,555,707,898,619,792,763, (Ե·792), Զ·՝Ե·1098, Լ·17, Զ·՝Լ·17, Հ·373, 374,24, Ե·9, Զ·, (ՉԿ·427,428), Կ·46·

Տըղայ–Դաւիթ՝ գընաց հասաւ Իր Հօր–երկիր՝ Սասնոյ–Տեղ,
Իր Հօրեղբայր՝ Ջէնով–Օհան †) ը՛ինք պահեց. —
Վե՞ց տարի՝ թէ քանի՛ տասն՝ Դաւիթ պահեց, չըհացուց:
Իրիկուն որ Ջէնով–Օհան եկաւ Տուն՝
Գընաց Դաւիթի Գըլո՛ւխ պաղեց, ուրախացա՛ւ վեր՝ Տըղուն, —
Եւս բերաւ՝ ձեռք մը խօրոտ *) լաթ հագցուց,

---

*) Դիր, Անգամ: *) Մօտէն, Շնորհիւ: †) Լ·17՝ Քեռի–Թոռ–բոս: *) խօրոտ, Աղուոր, լաւ, ընտիր:

Տղան Եղաւ քրքրախիկ *) ։
Մէկ ամիսէ մ՝ չափ՝ ինչքան՝
Վրան անցաւ ժամանակ մ՝, —
Մինչեւ Անոր օտրութիւնը *) կտրեցաւ,
Դէ՛, Դաւիթն ալ՝ հիմ է ասպա* *), կ՝երթայ դէս-դէն՝ կամ Փողոց,
Որ ճիժ Երան հետ խաղայ ։ —
Բայց Տղաք՝ Եկան խումբ-խումբ՝ Իրեն վրայ թափեցան,
Ուրախութիւն ըրին Իր հետ, ատին գացին Այդինէր ։
Ժամանակ մը՝ Դաւիթ այսպէս անվընաս՝
Սատոյ-Բաղքի Տղաներուն հետ խաղաց ։

357. Դաւիթ՝ Ծառի-Նայ Կ՝դնէ Տղոց Հետ

2Ս·348,349, 2·՝2Ս·347, Կ·46, Ե·898,762,792,1098, 731,763,619, (Ե·731,898,1098,619), 2·՝Ե·792, 1098, 2Կ·428, (2Կ·428), Հ·24, 374, (Հ·374)·

Մէկ օր՝ Դաւիթ՝ լուսուն *) Եղաւ Իր Տեղէն* *),
Դրնաց Փողոց, Տղաներուն ինչ ըսաւ ։ —
— «Տղա՛ք,–ըսաւ–, Եկէ՛ք Երթանք՝ խա՛ղ գընենք···»։
Ճիժ Երան ատաւ՝ գացին Բաղքէն դո՛ւրս Եկան,
Գացին Հասան Այդինէր,
Նայեց տեսաւ՝ քանի մ՝ Տղայ՝ Տրրընկուզա(լ) *) կբխաղան։
Դաւիթն ըսաւ, — «Տղա՛ներ,
Այս Խաղ Մե՛նք ալ կբխաղայինք Մըսրայ մէջ՝
Բայց Խաղի ձեւն այդպէ՛ս չ՝Էր···»։

---

*) Քրխուխիկ, Լեցուն մխամորքով, դիրդ, անուշիկ։ *) Օտրութիւն (Հ·373՝ դարիպութիւն), Օտարացում, Հայրենիքէն Հեռացած Ըլլալով՝ միջավայրը դէս օտար Թուիլը, dépaysement։ *) Ապա, Դեռ Եւս, տակաւին, չէ՞ որ։ *) Լուսուն, Աւտուն, լուսադացին։ *) Տեղ. Անկողին։ *) Տրընկուզա, Տրընկուզալ, (2Ս·349՝ Տրընգիւզա, Հ·374՝ Դոնկեոզա, Ե·615՝ Դրրրընգոզալ, Ե·731՝ Խաբնազուզէ, Ե·792՝ Խաւնակուզա, Ե·762՝ Խրրրընգոզալ, Ե·898,1098՝ Տրրընգուզալ), Տատանախաղ, Bascule։ Տե՛ս իմ Խաղաշխարհ, Թիւ 135, [Մուղաբանութիւն՝ Թևբևաս՝ Տրը՛նկ՝ հո՛ս զա՛րկ···, տրընկ՝ հո՛ս զա՛րկ···, ինչպէս և խաղին բնոյթը]։

Ճըժէրն ըսին, = «Ապա ի՞նչպէս կըխաղայիք Դուք այնտեղ.՞.՞.՞»։
— «Կեցէք,–ըսաւ–, Ձեզի ցո՛յց տամ՝ որ սովրիք...»։
Դաւիթն այնտեղ ի՞նչ ըրաւ. —
Երկնախըռուից *), մէկ նորահաս՝ Բարդի–Ծա՛ռ կար այնտեղը,
Դաւիթ հասաւ՝ Ձեռքը թալեց դէպ Բարդին,
Բըռնեց Ծառը, զօրե՛ց-զօրե՛ց *)՝ ծայրը կօտեց՝ բերաւ տակ։
Ծառը կօտե՛ց՝ հասցուց Գլուխն ՚ի Գետի՛ն,
Ամուր բըռնե՛ց Ծառին Ծայր,
[Այդ Ճըժէրն ալ՝ կը դիտե՛ն],
— «Տըղա՛ք,–ըսաւ–, դէ՛, չո՛ւտ եկէ՛ք՝ Ծառին վըրա՛յ չարուեցէ՛ք†),
Ճիւղերն ամուր բըռնեցէ՛ք,
Ես՝ Ծառին Ծայր՝ վե՛ր վերցընեմ՝ ու դընե՛մ,
Տըրընկուզա՛ տըւէ՛ք +) Դուք։

358. Դաւիթ՝ Ծառը Ձեռքէն կ'թողնէ, Ցոյժ Զարդուբուդ կ'ըլլաց

ՁՀ.՝24, Հ.՝24,374, Ձ(Հ.24),Ե.763,898,731,1098,793,732,1099,619,899, Ձ.՝Ե.898,619,763, (Ե.619), Կ.46,47, Ձ.՝Կ.47, (Կ.47), (ՁԿ.428), ՁԿ·428, ՁՄ.350, Ձ.

Տըղանե՛րն ալ՝ ա՛ս-տասնըհինգ ճի՛ժ էին,
Ամենը մէկ՝ ուրա՛խ-ուրախ՝ եկան Դաւթի Ձեռա՛ց վըրայ ×)
[Թափեցան,
— «Դէ՛, հա՛, նըստե՛նք, Տըրընկուզա՛ տանք»,–ըսին։
Եկան էլան վեր՝ Ծառի՛ն,
Ճիւղերուն վրա՛յ բաժնուեցան՝ չարուեցա՛ն։
Դէ՛, Տըղա՛յ են,— որ չարուեցա՛ն վեր՝ Ծառին՝
Դաւիթ կանչեց՝ ըսաւ,— «Տըղա՛ք, այսպէ՛ս է որ կըխաղան»։ —
Ու քանի մ՝ դիր §)՝ Բարդի–Ծառին Ծա՛յրը վերցուց ու դըրա՛ւ,

---

*) Երկնախռուից, Երկնահաս, երկար՝ (Ե·731,762), ուղիղ՝ (Հ·24, Հ·374՝ չինարի) եւ բարձր։ *) Զօրեղ, Ուժ տալ, ճիդ ընել։ †) Հ·374՝ ճաթէ՛ք՝ ուղղելի՝ ճտէ՛ք։ +) ՁՄ·349՝ Տրընգիւզա՛ դրէ՛ք, Հ·374, Ե·731,1098՝ Տ·խաղանի՛ք, Ե·619,898՝ Տ·տանի՛ք, Ե·763՝ Տ·տուէ՛ք։ ×) Այսինքն՝ Դաւթի բռնած-ծռած ծառի՝ ծայրի՛ն կողմը, այսպէսով աւելի՛ ծանրացնելով անոր գործը՝ ծառը վերվարած աւելն։ §) ՁՄ·350՝ երկու դիր։

Տըրընկուդա՛լ տըւաւ Անանց, խընդացան.
Վէր՝ երեքին †) կանչից բսաւ, — «Դէ՛, Տըղանո՛ր, իջէք վա՛ր...»:
Ճըժէր երթէք Դաւիթի ձայն կըլըսէն...:
Դաւիթ մէ՛կ ալ ադաչի՛ց ու պադասա՛ց, —
— «Տըղա՛ք, սակէ իջէք վա՛ր...»:
Տըղաքն ալ թէ, = «Դաւի՛թ, ինչո՞ւ վար իջնենք...,
Այսահեղ ադաւո՛ր խա՛ղ կը խադանք Ամենքս ալ»:
Չե՛ն պիտեր որ՝ Ծառ կուգեր էֆ Դաւիթի Չես կըցաւի...:
Տըղաք որ չե՛ն իջներ սա՛կ
Դաւիթ Չեռքերն ալ՝ բըռնելով՝ Թուլացան...,
Ըսաւ, — «Տօ՛ ես պիտի Թողնե՛մ Ծառին Մայր...»:
Տըղաներէն սանո՛ն մէկը՝ կանչից, = «Դաւի՛թ, ես Քու բա՛խտ *),
Կա՛ց ես Ծառէն իջնեմ սակ ու նորէ՛ն *) Թող...»:
Ա՛ն կ՚ըսէ «կա՛ց...», Ա՛ն կ՚ըսէ «կա՛ց, ես իջնեմ»...՝
Է՛, Դաւիթը սըրդոզեցա՛ւ՝ ա՛լ այնտեղ...,—
— «Ձըժո՛ւր,-ըսաւ-, դէ՛, ամէն մէկդ՝ Ձեր Տունն Ինձի ցո՛յց տըւէք»:
Մէկն ըսաւ որ՝ «Այսինչ տո՛ւնն է Մեր Տունը»,
Մէկն՝ «Այնինչ տո՛ւնն է Մեր Տունն»:
Տըղաք՝ Դաւիթին որ ցո՛յց տըւին Իրենց Տունն՝
Դաւիթ՝ մէկէ՛ն Բարդի-Ծառը բա՛ց Թողուց...,—
— «Ամենամէկդ, գացէ՛ք,-ըսաւ-, Ձեր Տուներ...»:
Դաւիթ այնտեղ որ բա՛ց Թողից Բարդի-Ծառ...,
Ծառ՝ կանդնեցա՛ւ հասակով...,—
Այդ Տըղաներ՝ ամե՛նամէկը՝ ձիւղերուն հետ բարձրացո՛ւց...,
Վերցուց հանից հետ-երկնո՛ւց...
Թալից Ամեն մէկմէկ կո՛ղմ...,—
Տըղաներր՝ վերէն Ամենք եկան տա՛կ...,
Ամենամէկ ձիւ՝ կողմ մը իններ՝ Դեռեն վըրա՛յ տըխուսցան *), —
Ո՛ղջ-ողջ իններ՝ բըրդո՛ւճ-բըրդուճ Ջարդըւեցա՛ն՝ խեղճ Տըղաք:
Որ Բարդիէն վա՛ր իններ...՝
Որքեր՝ Մէ՛ջքը փըրթեցաւ...,

---

†) Երբորդ անգամին: *) Ես Քու բա՛խտ, կ՚ապաւինիմ Քու խըղճմտանքիդ, կ՚ապրիմ: *) Նորէն, Ապա, յետոյ: *) Տիտուիլ, Բոլոր ծանրութիւնովն իյնալ:

Որին՝ կո՛ղը պատռեցաւ...,
Որին՝ թե՛ւը եւ կամ Ձե՛ռը կտրեցաւ...,
Որ մէկին ալ՝ Ա՛չք կուրցաւ...:
Որուն՝ Ո՛տքը չարդուեցաւ...,
Որուն՝ Գլո՛ւխ փըչրեցաւ...:
Կէսին՝ Վի՛զը կըտրեցաւ...,
Կէսին՝ Փո՛րը ճեղքուեցաւ...,
Մէկը՝ Քարի՛ դըպաւ եղաւ չա՛րդուբուրդ...,
Որը՝ Գետի՛ն ինկաւ՝ մեռա՛ւ տեղնիտեղ...: —
Մէ՛կ չըպըրծաւ անվընաս...,
Ձըժերն Ամեն կոտորուեցան Իրենց տեղ...: †)

359. Դաւիթ՝ Փոխինդ կ'ելցնէ Մեռածներուն Թուռը. Ցէրեր՝ Ցղայ Մը Կ'ուարցաֆճճնե

Հ·374, Ե·763,619, Զ·՝Ե·732, Զ·՝ՁՍ·351, Կ·47, Զ(Կ·47), Զ·

Դաւի՛թն ըսես...՝ ղէ՛, ճի՛ժ է ղեռ, խելքը բանի չի՛ կըտրեր,
Այսպէ՛ս՝ խաղո՛վ՝ Տըղեկներուն չա՛տը այդտեղ կոտորե՛ց...,
*Տըղեկներուն ա՛րմը *) կըտրեց Սասնայ ×) մէջ...:*
Ան ինչ Ծառէն ինկան տա՛կ՝
Բերաններըը բա՛ց մընացին, Լեզուները դո՛ւրս կախուած՝
Դաւիթ Անոնց Բերաններըը Աւա՛զ կ'նետէ ու կ'ըսէ, —
— «Փոխի՛նդ կ'ուզէք..., առէք Ձեզի լա՛ւ Փոխինդ...»:
Աւազ նետեց՝ ու տըղո՛ւ պէս՝ դարձաւ եկաւ՝ նըստաւ Տո՛ւն:
Սատմայ Ձըժեր որ կոտորեց, վընասեց՝
Զայնը դընաց Քաղաքին մէջ, խմաց տըւին Ամենուն, —
— «Վա՛յ, չուտ հասէ՛ք, Ձեր Տըղաներն Ամեն մեռա՛ն, լըմընցա՛ն»:
Եւ ամեն մարդ՝ Տընէն ելաւ սարսափած,
Վազեց, ըսաւ՝ «Շուտո՛վ հասնիմ Իմ Տըղայրին օդնութեան.
Ա՛ս ի՞նչ բան է՝ այսօր եկաւ Մեր Գլխուն...»:

---

†) 358 եւ 359 Հատուածներըը՝ համեմատէ՛ 288–րդին հետ: *) Արմ, Արմատ, հմմ, էէօf: ×) 325րդ Հատ·ին ստորէջ (†) Տա–նօթութեանը հակառակ՝ «Սասնայ» ձեւով կըգրեմ հոս՝ «Սասմայ մէջ» մայ–մէ խժալուր ձեւէն խուսափելով:

Կ'երթա՜ն՝ բայց չե՛ն հաւատար···։
Եկան հասան Տըղանեբուն, տեսան որ ի՞նչ···, իրա՛ւ է···։ —
*Մարդկե՛ր՝ ամէնն՝ եկած թափած *) են այնտե՛ղ·*
Առաջ՝ ո՛վ գիտէ՝ որ չո՛ւտ պացեր է ու հասեր՝
Մէկ–մէկ ժողված՝ հոն դըրա՛ծ են Տըղանեբուն դիակները,
Եւ ամէն Հայր՝ նրստեր կուլա՛յ Տըղուն վրայ···։
Կանչեցին մէկ Տըղա՛յ բերին Իրենց քո՛վ,
Հարցուցա՛ն ըրին, — «Տըղա՛յ,–ըսին–, Դուն Խաղաւո՛ղն էիր, չէ՞···»։
= «Հա՛, Խաղաւո՛ղն էի»,–ըսաւ Այդ ճիժն ալ։
— «Մեր Տըղեկները՝ ո՞վ ըսպաննեց, տեսա՞ր Դուն···»։
= «Բարձրահասա՛կ, պարեխո՛ւ Տըղա՛յ մ' կայ Նորեկ···»։
— Դաւիթ չըլլա՛յ···»,–ըսին այնտեղ՝ Անոնք ալ։
= «Հա՛, Դաւիթն էր ըսպաննեց···»։
*— «Վըրէ՞ *)»,–ըսին–, Մեզ թըշնամի՞ էր Դաւիթ···»։*
= «Չէ՛, բայց այդ Ծառ կըտեսնա՞ք···»։
— «Հա՛, կըտեսնանք···, Ծառը սակայն ի՞նչ առիթ···»։
= «Դաւիթ Այդ Ծառ կօտէ՛ց բերաւ 'ի Գետին,
Ամէնք եկան՝ ճիւղերուն վրա՛յ չարուեցան,
Իրենց համար Տըրընկուզա՛ խաղցին,
Մենք ալ՝ տա՛սը–քրսան Տըղայ՝ կրխաղայինք հոս, Գետին,
Քիչ մը վեր–վար ընելէ՛ ետք՝ Դաւիթն ըսաւ՝ «Իջէ՛ք տա՛կ»։ —
Տըղաք Իրեն ականջ չըրի՛ն, չիջա՛ն տակ·
Դաւիթն ալ Ծառ թողո՛ւց Գնաքէն, Ծառը մէկէ՛ն կանդնեցաւ,
Տըղաները վե՛ր բարձրացան՝ ինկան Գետին ցի՛ր ու ցա՛ն·
Հասա՛նք Իրենց՝ Գնո՛ւ որ տըւինք···՝ մեռե՛ր էին Ամէնն ալ···։
Մենք ալ ինկանք՝ չուտով Գնդի լո՛ւր տըւինք···»։

360. Մեռածներուն Տէրերը Դաւիթի կուգան Զէյնով-Օհանի Մօտ

Ե·793,619,1099,555,899,763,732, Չ·՝ Ե·793, Հ·374,24, Չ·՝ Հ·24, ՉՍ·351, Կ·47,48, Չ·, ՉԿ·429, Չ·՝ ՉԿ·429, Չ·

Լուրը՝ դընաց՝ նաեւ Դաւիթի Զէյնով–Օհան Հօրեղբո՛ր, —
[Դաւիթ–Մըհէր ինչ մեռե՛ր էր, անկէ վեր՝

*) Թափած, Թռնուած։ *) Վրէ՞, Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով։

Սասունի մէջ՝ Ա՛ն էր երկրին Մեծաւորը] , —
Թէ՝ «Մեր Սասմայ Քաղաքի՛ն մէջ՝ երիտասա՛րդ մ՝ է եկեր,
Մեր Տըղաները՝ ամեն Չարդեց, կոտորե՛ց . . .» :
Դըրացիները , Քաղաքացի՛ն, Գիւղակա՛ն, —
*Տըղոց Տիրուանք *) , այդ ձըժերու Հայրն ու Մայր՝*
Ամենք՝ այնտեղ՝ ժողովուեցան՝ ի՞նչ ըսին. —
— «Այսկերպ չեղա՛ւ . . . ,–ըսին Ամենք՝ մէ՛կ բերան–.
Մեր Տըղեկները՝ խաղով Չարդեց ու փըշրե՛ց . . . :
Գէաք է ,–ըսի՛ն–; որ Մենք երթանք՝ այդ չի՛ք Դաւիթն ըսպանե՛նք.
Ինչո՞ւ Դաւիթ Մեր Տըղաներն ըսպանեց . . .» :
*Լուսուն *) ելան՝ լալո՛վ–լոցով գացին դանգա՛տ Հօրեղբօր †) . —*
Զայնեցին Թէ , — «Զէնո՛վ–Օհան, Դաւիթն ո՞ւր է . կանչէ՛ դայ . . .» :
= «Ինչո՞ւ համար կանչեմ Դաւիթ , ա՛յ Մարդի՛կ» :
Ըսին , — «Մի՛թէ՛՝ այդ Դաւիթը՝ Թըշնամի՞ էր Մեր Տըղոց՝
Որ Մեր ձըժերն ամե՛ն Չարդեց ու մեռցուց . . . :
Դուն Այդ Ծուռը՝ բերիր Քաղա՛ք, ձըժերուն մէ՛չ ձըդեցիր ,
Ա՛ ի՞նչ բան էր՝ որ այդ Դաւիթ՝ Մեր ձըժերուն հետ ըրաւ . . . :
Երէկ առեր՝ Տըղաք դո՛ւրսը տարեր է ,
Բարդին կօտեր՝ Ամենք վըրա՛ն է չարեր ,
Ծառը Չեռքէն բա՛ց Թողեր է՝ ձըժերն ամե՛ն կոտորեր . . . :
Դուն ի՞նչ կ՝ընես , ի՞նչ չես ըներ , Տէ՛ր Օհան ,
Այդ Դաւիթին խըրա՛տ մը տուր՝ խելօքնա՛յ .
Մէկ բա՛ն մ՝ըրէ , գործի՛ մը դիր՝ երթայ գոնէ աչխատի՛ ,
Չիգա՛յ այլեւս Մեր ձըժերուն վընասէ . . . :
*Աստըծո՛ւ սէր *) , Դաւիթ Սասմայ Քաղքի ձըժեր կոտորե՛ց» :*

361. Զէնով-Օհան՝ Կ՝խրատէ Ծոյլ-Դաւիթը

Կ·48, Զ·՝Կ·48,47, ՉՍ·352,353,354,355,356, Զ·՝ՉՍ·353, Ե·619, 555,1099,793,500, (Ե·731,899), Զ·, Հ·374,Զ·՝Հ·374·

Զէնով–Օհան ×) վախցա՛ւ այնտեղ· ի՞նչ ըրաւ· —
Ելաւ գընաց Դաւիթի մօ՛տ ,

---

*) Տիրուանի՛ , *Տէրեր* : *) Լուսուն , *Լուսաբացին* , *առաւոտն* :
†) *ՉՍ*·351՝ Հօրեղբօր՝ Ռէս–Մանուկին : *) Աստըծո՛ւ սէր՝ *Աստուածոյ սիրոյն համար* : ×) *ՉՍ*·352՝ (Ռէս)–Մանուկ :

— «Աստուած Ինձ Տո՛ւն չ՚աւրէ՛,–ըսաւ–, ա՛յ Տըղա՛յ,
Աստուած Ինձ Տո՛ւն չ՚աւրէ՛...,
Ալ Դուն ինչո՞ւ Քարքի ձըմեռն ըսպանես Եա՝ Ցաղի մէջ...»:
= «Վ՛..., *) Հօրեղբա՛յր, ես չա՛տ ըսի՝ ականջ չըրին այդ ճիժեր.
Ես՝ հօ՛,–ըսաւ–, դիտմամբաւոր չե՛մ ըրեր.՚.՚.՚»:
— «Տո՛ հաստակո՛ղ Դաւիթ,–ըսաւ Հօրեղբայր–.
Դուն այդ ճըմեռն ինչո՞ւ այդպէս ըրեր ես...»:
= Դէ՛, Հօ՛րեղբայր,–Դաւիթն ըսաւ պարզերես–,
Ես ի՞նչդ *) ընեմ..., ի՞նչ մեղք ունիմ ես այնտեղ...: —
Դացինք՝ Ծառի–խա՛զ ղըրինք...,
Ծառը պըրծա՛ւ Իմ Ձեռքէս...,
Ճըմեռ Քալե՛ց՝ ու մեռան...,
Ինձի ի՞նչ մեղ(ք) կայ այնտեղ...»:
— «Ապա, Որդի՛...,– Ձէնով–Օհա՛նն է կ՚ըսէ †)·–
Այն Տըղաներ՝ Ամե՛նն ալ...՝
Տէր–Աստուա՛ծը պիտի տա՛յ...՝
Դուն Թաղաւո՛ր պիտի ըլլաս Քաղաքի՛ն...,
Այդ ճըմեռը պիտի ըլլան Քեզի Ձիւնո՛ր՝ Ամե՛նն ալ...,
Այն ճըմեռս Թեւո՛ւմն է որ՝ Դուն ալ պիտի ապրուի՛ս...»:
Հօրեղբայրն ալ՝ Իր Սրբոյ՛ մէջ՝ իմացա՛ւ որ «Այս Տըղան»՝
Շընո՛րք ունի Աստուծմէ, —
Ըսաւ, — «Որդի՛, մատա՛դ Քեզի Հօրեղբայրդ...,
Ալ մէկ դէր ալ՝ այնպէս բաներ մի՛ ըներ...,
Քեզ կ՚ըսպանե՛մ...՝ եթէ ընես այդ բաներ...»:
= «Ապա՝ Հօրա՛ր *), ա՛լ այդ բաներ չե՛մ ըներ...»:
Օհանն ըսաւ, — «Քարքի Մարդերն Լիակա՝ Դուռը բըռնա՛ծ են,
Եկի՛ր տեսնենք՝ ի՞նչ պատասխան կուտաս Դուն»:
Դաւիթն Ելաւ Եկաւ Դո՛ւռ,
Տեսաւ ա՛յնքան Մարդ են Եկեր Կեցեր Դո՛ւռ:
Շատեր կա՛ն որ՝ դեռ Դաւիթը չե՛ն տեսած,

---

*) Է՛..., Բայց, սակայն: *) Ի՞նչդ, Ի՞նչպէս: †) ՁՍ 354, Հայրական վաղաքուչ ու հանդխաւոր ձայնով, ըստ Սպարկերացի պատմողիս: *) Հօրաղբ, Հօրեղբայր (կրճատ, վաղաքչական–ընտանեկան):

Ան՛նք ալ հոն՝ եկած են որ՝ տեսնե՛ն Դաւիթ՝ ճանչընան։
Շատե՛ր ալ կան՝ եկած են որ՝ Դաւիթին այնտեղ ըսպանեն...։
[Տըղայ–Դաւիթն ըսպանե՞ն..., —
Որի՞ ուժը Դաւիթ ուժին կըհասնի որ՝ մօտենան...]։
Դաւիթ երբոր եկաւ դո՛ւրս՝
[Դեռ երեք–չորս տարու էր],
Ա՛յդքան Մարդիկ՝ Տըղայ–Դաւիթ որ տեսան՝
Այնպէ՛ս կըտրիճ եւ հուժկո՛ւ..., —
Անոր ահէն դողացի՛ն ու գաղտուկ ըսի՛ն Իրարու. —
— «Այս Տըղային Չեռ մի՛ տաք...,
Որ բարկացաւ...՝ Մեզ Ամե՛նքս ալ կ՛ըսպանէ...»։
Չէնով–Օհան՝ վերցուց ըսա՛ւ Մարդերուն. —
— «Գացէ՛ք՝ կարգո՛վ ու օրէնքո՛վ՝ Ձեր Մեռելներ վերցուցէ՛ք.
Ես Դաւիթին կըպատուիրե՛մ, ասկէ ետք՝
Ա՛լ այնտեսակ բան չ՛ը՛ներ...»։
Առաւ Դաւիթ՝ տարաւ նե՛րս,
*Բերաւ քիչ մը Ջամիչ, կոգով *) ու ձա՛ն լեցուց Իր Գըրպան,*
Գըլուխ պազեց՝ ու ըսաւ, —
— «Դաւի՛թ, Որդի՛, այս ձաներով կըխաղա՛ս Դուն, խելօքիկ...»։
Տըղոց–Տէրեր՝ մի՛ւս օր՝
Ամենմէկն Իր Տըղան վերցուց սըգալով,
Որին Հա՛յր կար, որին Հո՛յր կար՝ թէ Եղբայր՝
Եկան լացին ամենքով,
Ուղարկեցին՝ Տէրտէ՛ր բերին ժամաբար,
*Մաս–Մաստաղով՝ տարան Տըղաք հորեցին *)։*

368. Ցայլ–Դաւիթ՝ ճանճի–խայիճ Մէջ։ «Վիզը Աղա՞ղ Եմ Դրած...»

ՀՍ·357,358,359,360,361, Հ·՝ՀՍ·357,361, (ՀՍ·357,358), Ե·898, 555,731,707,500,556, Հ·՝Ե·500,555,898,731, Հ(Ե·707), Հ·415, Հ.՝Հ.415, Ա·55, (Ա·55).

*Քանի մ՝ օր վերջ †)՝ Դաւիթ եկաւ հետ–լուսուն *)։*

---

*) կոգով, *կոկով*, ընկոյզ, coco։ *) Հորել, թաղել։ †) ՀՍ·357՝ Մէկէղ օր, Ե·898՝ Շատ–քիչ կը մնայ, Հ·415՝ Էս հետին։ *) Հետ–լուսուն, (խը՛լիսուն), Լուսաբացին, լոյսը բացուելուն պէս։

Իրեն Տեղէն կաւ դընաց՝ կըպրաբաի Փողոցներ,
Տեսաւ †) Սաամայ-Տեղայ ձըժեր՝ ժողովուեր են՝ կըխաղան: —
Դաւիթն բաւ, — «Այդ ի՞նչ խաղ է՝ կըխաղաք...»:
*Առինք ալ թէ, = «Մենք ճանոցի՛ *) կըխաղանք»:*
Դաւիթ դընաց՝ իր ճաներով՝ այդ ձիժերուն հետ խաղաց:
Որ խաղացին՝ Տղայք ճանի մէջ վարպե՛տ ×)՝
*Դաւիթ՝ ճաներն ամեն տարա՛ն *) Իր մօտէն:*
Ինք չկըրցա՛ւ դէմն առնէր, —
Դաւիթն բաւ, — «Իմ ճաները ինչո՞ւ կ՚առնէք..., տըւէ՛ք ինձ»:
Առինք ալ թէ, = «Մենք տարե՛ր ենք, ինչո՞ւ տանք...»:
Առո՛ր վըրայ՝ դէ՛, տըղա՛յ են, — կըուըանցա՛ն Իրար հետ,
*Դաւիթն կաւ՝ ապտա՛կ մ՚ իջուց *) մէկ Տղուն,*
Անոր Վիզը վըրթա՛ւ Քըսա՛ւ Դըշխուն հետ...:
*Նայեց...՝ բաւ, — «Այս Տղայքն +) Վիզը ազա՞ղ *) են դըրած...,*
Ի՞նչ են բրած..., որ այսպէս...՝
Թըսա՛ւ դընա՛ց Անոր Վիզ...»:
Ապա դարձա՛ւ ու բաւ, —
«Կեցիր նայի՛մ՝ մէկալ Տըղի Վի՛զն ալ այսպէս Թուլիկ է...,
Պէտի վըրթի՛ ու ևրթայ.՞.՞.՞»:
Զարկաւ մէկա՛լ Տըղու Վիզին՝ ու տեսաւ՝
*Անոր Վի՛զն *) ալ այնպէս Քըսաւ ու դընաց...:*
*Ա՛լ Դաւի՛թն էր, — ինկաւ կա՛րգ... *), —*
Այդ ձիժերու Վիզեր Քըսո՛ւց մէկառմէկ...: —
Ո՛ր Տըղային որ դարկաւ՝
Վիզը տեղէն վըրթեցաւ...:
Որուն՝ երե՛ս դընաց ետեւ, ծըռուեցաւ,

---

†) Ա.555՝ Դաոնիկ-Որբիկ, այսինքն Դաւիթ: *) Ճաոնոցի, Ճաոնոցիկ, *ճանի խաղ*, Osselets, Տեսնել իմ Ազգաչխարհ՝ Թիւ 104: ×) Ե.555՝ Ձրժեր լէր ըրին (խարդախութիւն ըրին): *) Տանիլ, Շահիլ, առնել, դրաւել: *) Իջուց, Փակցուց: +) ՁՍ.358՝ Աս շունշաոնորդու (վիզը): *) Աղաղ դնել, Ազի մէջ պահածոյ դնել: *) Վիզ՝ դլուխի տեղ առնուած (վիզը՝ դլուխով մէկտեղ): *) Ինկաւ կարգ, կարգով փորձել սկսաւ:

Որմէկո՛ւն ալ՝ Ականջները բըռնըւեցան, եղաւ խո՛ւվ,
*Որին՝ Լեզո՛ւն կապկըպեցաւ *), ահէն դողցուց *)՝ հիւրընդցաւ։*
*Է՛, վե՛րջապէս՝ տըվի՛ց *)՝ ցաւցո՛ւց Ամենուն...։*
Ապա՝ վերցուց այդ ճիժերու ճաներն ամեն հատաքե՛ց՝
Առաւ լեցուց Իր Գըրպան՝
Դարձաւ եկաւ՝ նըստաւ Տո՛ւն։

363 Տղոց Տէրերը՝ Զէնով-Օհանին Ռաղոհիու Կ'երթան

Չ.՝ Հ.415, Հ.415, ՉՍ.362, Ե.500,556, 555,707, Չ.

Սասնոյ Մարդերը՝ ինչ Քաղքին մէջ մա՛ն կուգան՝
Ո՛ր Տուն մըտան՝ տեսան ի՛նչ..., —
Տըղի Լեզուն բըռնըւեր է՝ չի՛ խօսիր... .
Ականջները խըլցե՛ր են... .
երես Ծըռեր՝ եռեւն առջե՛ւ է եկեր... .
Որը՝ հխանդ պառկեր է..., —
— «Աս ի՞նչ եղեր է Աստնց.՞.՞.՞»։
Թէ, = «Այդ Դաւի՛թն է զարկեր,
*Ապտա՛կ տըւեր՝ ու տըվո՛ց...» *)։*
*— «Որ այդպէ՛ս է՝ դէ՛ արի՛ք *)՝*
Ժողվի՛նք երթա՛նք Հօրեղբօ՛ր. —
Ինչո՞ւ այդպէս պիտի ընէ Մեր ձիժերը...»։
*Տըղոց *) Տէրերը՝ լալո՛վ–լացով՝ գացին գանգա՛տ Օհանին, —*
— «Զէնո՛վ–Օհան †), Աստծո՛ւ սիրուն, ի՞նչ կ'ընես,
Կըխընդրենք որ՝ պատուէ՛ր մը տաս Այդ Տըղուն...։
Եղբօրդ–Տըղան՝ Մեր Տուները աւերե՛ց..., —
Մեր ձըժերը՝ մէկիկ–մէկիկ կ'ըսպանէ՛...։
կա՛մ Ուսումի՛ տըւէք Ձեր ձիժ՝ կա՛մ ղըրկեցէք ուրիշ տե՛ղ.
Զարկեր է Մեր Տըղեկներուն՝ ըրեր հխանդ, խեղանդա՛մ ×),
Ապտակելով՝ ըսպանե՛ր է տեղնիտեղ։
Այդ Որը Տըղան ինչո՞ւ բերիր Մեր Քաղաք...,

---

*9 կապկպ(ու)իլ, Բռնուիլ, անդամալոյծ դառնալ։ *) Դողցնել, Զերմոռիլ։ *) Տփել, Մեծել։ *) Տփոց, Մեծ։ *) Արի՛ք, Եկէ՛ք։ *) Տղոց, Հ.415՝ էրեխայ՝ ուղղելի էրեխոց։ †) ՉՍ.362՝ Ռէ՛ս–Մաճուկ։ ×) Ե.500, 556՝ սախկտեց։

Մեր ձիժերը ամէն մէկէն ջարդուած ×)...։—
Մենք՝ ասկէ ետք՝ չ'ենք ընդունիր այդ բաներ»։
= «Աստուա՛ծ առնէ այդպէս Տըղան,–բսաւ այնուհետ՝ Հօրեղբայր-.
Մենք ի՞նչ ընենք, մենք կ'ուզե՞նք որ Անիկ ընէ՛ այդ բաներ»։—

364. «Անիկ Սասմաց ձրագն է»

2U.363. 2.՝2U.363, (Հ.415), Ե.501, 2(Ե.899), 2.՝Ե.898.

Հօրեղբայրը՝ Զէնով-Օհան՝ ա՛լ բարկացա՛ւ Դաւիթին.—
կանչեց բսաւ,— «Աստծո՛ւ փորձանք, ա՛յ Տըղա՛յ...,
Դու է՛ր կ'ընես այդ բաներ...»։
= «Հո՛րեղբայր, ես ի՞նչ ընեմ...,—
ձանի-ձադին՝ ձիժերուս հետ կըռուեցա՛նք,
ես մէկ ապտա՛կ զարկի Տըղուս մ' երեսի՛ն,
վիզը տեղէն փըրթեցա՛ւ...։ —
Ըսի՝ «կեցի՛ր, այս Տըղայի վիզը ապա՛ղ են ղըրած,
ի՞նչ են ըրած՝ որ այսպէս թո՛ւլ վի՛ղ ունէր...».
ես ալ ըսի՝ «կեցի՛ր նայիմ՝ այն մէկալի՞ն ի՞նչպէս է...,
ուժո՞վ է՝ թէ՞ ուժով չ'է՛...».—
Չեռ տըւի՝ ու չըտըւի՛...՝
Անոր վի՛ղն ալ՝ այնպէս թըռա՛ւ ու գընա՛ց։
Ես ալ՝ այնուհե՝ ինկայ կա՛րգ...,—
Ամենո՛ւ վիզ փորձեցի...,
Ամենո՛ւն ալ մէ՛կ էին...,—
վիզեր թըռա՛ն..., մնացին առանց Գըլուխ...,—
Դէ՛, Հո՛րեղբայր, Անոնք ի՞նչ Մարդ էին որ...»։
Զէնով-Օհան՝ ի՛նքըիրեն՝ այնուհե՝ բսաւ այս անգամ,—
«Զո՛ւր է այլևս...), ա՛յ Օհան...,*
Տըղան իրմէ Մե՛ծ ունի՛ բայց՝ ես՛ւքը վըրան եկած չ'է՛.
Մնձել փեսով՝ անօգո՛ւտ եւ անառակի՛...,—
Անիկ Սասմաց ձրագ՛ն է...»։—

×) Ե.500,556՝ Սախկեց։ *) Զուր է այլևս, Այսինքն՝ աւելորդ մեղապրանքի արժանի չ'է՛. արտակա՛րգ տղայ է այս տղան. իր բռածներուն տէր չ'է՛. իր ուժին բնական մղումի՛ն է կ'ընէ այդ բաները։

365. Զէյնով-Օհան՝ Դաւիթը կ'գրկէ Ուսումի Եւ Արհեսթի

Զ(Ա.64), Զ.՝Ա.64, Զ(Հ.415), Զ.՝Հ.415, Ե.27, Զ.՝Կ.48, (Ե.1099), Զ.՝Ե.556.

Զէնով-Օհան՝ ապա վերցուց ի՞նչ ըսաւ,—
— «Զ'ը՛լար,-ըսաւ-, բերինք Տըղին Ուսո՛ւմ տանք
կարդայ-գրէ, Ուսմունք սովրի քիչ Թէ չատ»։
Եւ ըսկըսաւ †) Տըղայ-Դաւիթ կարդալո՛ւ տալ Տէրտող մօտ։
*Դաւիթ դիւրքի պըլուխ չունէ՛ր. չըսորվաւ *)։—*
Ծուռ-կռա՛կ էր..., ու «Ծուռ-Դաւի՛թ» կ'ըսէին։
Դըրկիցնները ×) ըսին,— «Օհա՛ն, ևկուր ուրի՛շ քան մ' ըրէ։—
Բե՛ր այս անդամ՝ Դաւիթը դի՛ր Արհեսթի՛ մ'.
Աի՛ թէ որ մէկ Արհեսթի մ' չըպրնես՝
Աստըծո՛ւն օր՝ ուխրուքի՛ւն պիտի ընէ Քաղքին մէջ»։
— «Արհեսթի՛ տա՛նք..., -ըսին մէկալ Մեծիկներ-՝
Վա՛յ թէ օր մ' ալ՝ Դաւիթ զարնէ՝ իր վարպետին վընա՛ս տայ...»։
Զէնով-Օհան՝ ըսաւ,— «Պարզ է. Դաւիթ երթայ Քաղքի մէջ,
Ու Փողոցներ պըտըտի՝
Ձամբուն վըրայ՝ ձիւժեր պիտի վընասէ՝
Փորձանք պիտի իյնամ ես...»։
Ա՛լ ըսկըսաւ Դաւիթը տալ Արհեսթի՛.—
— «Թող երթա՛յ եւ Արհեսթա սովրի Թեւե՛ւըս...»։
Ի՛նչ Արհեսթի որ ղըրաւ՝
Մէ՛կը ղըլուխ չըհանեց...։

366. Զէնով-Օհան՝ Դաւիթը կ'գրկէ Ուլարած-Դառճարած

Ե.66,793,,899,619,1099,501,556,732, (Ե.793,732), Զ·՝Ե.899,1099,556, 501, Զկ.430, Հ.374,415.24, Զ.՝Հ.415;374, Զ(Հ.24), կ.48,10, Զ(կ.48), Զ.՝կ.48,10, Զ.՝ԶՍ.364, ԶՍ.364,Ե.89, Ս.8, Ե.9.

Ժամանա՛կ մը վրան անցաւ,
Մընա՛ց մինչեւ նո՛ր Գարնան,—
Ա՛լ Հօրեղբօր ճա՛րը վրան կըտրեցա՛ւ,
Զնո՛վ-Օհան՝ իր միանիվեր ի՞նչ ըսաւ.—
«Ասի,-ըսաւ-, զո՛ւր է, ի՞նչպէս ընեմ ես...»

---

†) Ա. 64՝ Քեռի Թորոս (փոխան Զէնով-Օհանի)։ *) Զըսորվաւ, Չը սովորեցաւ։ ×) Հ.415՝ Հօրեղբայրներ, Ե.1099՝ Դրկիցներ։

Որ Դաւիթը քաղաքի մէջ չըմընայ՝
Վընաս չիտա՛յ ուրիշներու ձիժերուն…:
*Իմ ուժ՝ չըհո՛ *) Անոր ուժին չի՛ հասնիր…:*
Ջ'ը՛լլար ,–ըսաւ–, բերեմ ընեմ Ուլարած †),
Թող երթայ Սա՛ր, ի՛նչ որ կ'ուզէ՝ թող ընէ՛·
Մենք չե՛նք կըրնար՝ Անի պահել քաղքին մէջ:
Երթայ Դար–Դա՛չո՝ Ուլերուն հետ օ՛ր անցնէ,
Հանդի՛ստ ձըղէ Տըղաները»:
Լուսուն՝ ելաւ Ջէնով–Օհան, կանչեց քեր՛ւ Դըրկիցներ ×),
Ժողովուեցա՛ն՝ բոլոր՝ եկան Իրեն մօտ,
Ըսաւ, — «Գիտէ՞ք ես ինչո՞ւ Ձեզ կանչեցի +),
Որ Դուք ուզէք՝ Տըղայ–Դաւիթ բերենք ընենք Գառնարած,
Քաղքի Ուլերն առնէ տանի՝ արածէ,
Որ ձիժերը հանդի՛ստ ձըղէ իրենց տեղ»:
Անոնք ալ հոն՝ խելքը խելքի տըւին ըսին, = «Հա՛, ընե՛նք·
Դաւիթին ընենք Ուլարած ու Գառնարած,
Երթայ Սար–Քա՛ր՝ որ չըմընա՛յ Քաղքին մէջ…»:
Ու չաուակեր մէկ Տըղա՛յ էր Դաւիթին ալ,
Ջէին կըրնար կըշտացըներ Քաղքին մէ՛ջ,
Քաղաքացիք ամենն ալ հոն խո՛սք տըւին,
Որ Դաւիթը բերեն ընեն Գառնարած:
Ջէնով–Օհան՝ ելաւ կանչեց՝ Դաւիթ քեր՛ւ՝ ի՞նչ ըսաւ· —
— «Որդի՛ ,–ըսաւ–, մատա՛ղ Քեզի Հօրեղբա՛յրդ,
Տըղա՛յ, Դաւի՛թ, ի՞նչ կ'ընես Դուն այս օրեր…»:
*= «Բա՛, *) ի՞նչ ընեմ, Հօ՛րեղբայր…,*
Բա՛ն մը տուր Ինձ, մէկ Գո՛րծ մը դիր՝ ես ընե՛մ·
Գործ մը չըկա՞յ՝ Ինձ յանձնես…»:
— «Դաւի՛թ ,–ըսաւ–, արի՛ ընեմ Քեզ Քաղաքին Ուլարած·
Ուլ ու Գառներն առնես տանիս եւ արածես Սար ու Քար:
Կ'ուզե՞ս՝ թէ՞ չէ՛…, ի՞նչ կ'ըսես…»:
= «Հա՛, Հօ՛րեղբայր, կ'ուզե՛մ» ,–ըսաւ Դաւիթին ալ–:

---

*) Ըհո՛, Ջէ՞ որ, արդէն: †) ՁՍ·364՝ Հովիւ, Հ·374, Ե·793՝ Գառնարած: ×) Ց·89՝ Գեղական: +) Կ·48՝ Կանչողները՝ դրացի–քաղքցիներն են: *) Բա՛, Ապա՛, դէ՛հ:

— «Հովւութիւնը †)՝ ազէ՛կ բան է, ա՛յ Որդի, —
Թէ վա՛րձ կ՚առնես, թէ հա՛ց կ՚ուտես՝ կըշտանաս...»:
Դաւիթն լսաւ, = «ես կ՚ըլլա՛մ Ձեզ Դառնարած»:
Օհանն ալ թէ, — «Դաւի՛թ, Մեր Հայց պահա՛ն է.
Մեզ կութ *) չըկա՛յ այս տարի. —
Աբի՛ Բաղքին Հովւութիւնը Մենք առնենք,
Դառներ տանինք արածելո՛ւ՝ ես ու Դուն. —
Մէկ–քանի չափ Ցորե՛ն կ՚առնենք տալան մէջ,
Բանէ մ՚ չափ ալ՝ կարեկ կուտայ, տանինք ընենք Մեզ Սամիր *),
Որ այս Ձմեռս՝ Մենք անօթի չըմընանք»:
Տըղայ–Դաւիթ՝ հաւանեցա՛ւ այս խօսքին, —
= «Ապա,–ըսաւ–, ա՛լ Դո՛ւն դիտես, Հօ՛րեղբայր,
Ազէ՛կ կ՚ըլլայ, Մեզ կո՛ւթ առնենք այս տարի.
Հովիւ կ՚ըլլա՛մ Բաղաքին. —
Պէտք է միայն՝ որ Իմ Վարձը ա՛յս դըրուխէն *) կանխի՛կ տան»:
Ձէնով–Օհան՝ կանչե՛ց Բաղքի Մարդիկներ. —
Անոնք ըսին, = «Ազէ՛կ, Օհա՛ն, կ՚ընդունի՛նք,
Մենք՝ ա՛յս դըլխէն՝ Անոր Վարձը լըրիւ կուտանք Ամէնքս ալ,
Մինակ՝ Թող Ան՝ Բաղաքի մէջ չըկենայ»:
Ըսաւ, — «Լուսուն՝ Ձեր Դառները բերէք Բաղքի Դարպաս–Դո՛ւռ,
Ես Դաւիթը կըճամբե՛մ որ՝ ժողվէ ամեն՝ ու տանի.
Դուք էվարին *)՝ ամե՛ն մէկըդ կուգաք Դուռ՝
Ձեր Դառնուհիներ կըջոկէ՛ք ու կը տանիք»: —

Ը. ԹՐԼՈՒ-ԴԱՒԻԹ՝ ԴԱՌՆԱՐԱԾ ՈՒ ՆԱԽՐՈՐԴ

367. Դաւիթ՝ Իր Վարձը Կանխիկ Կ՚ուզէ՝ Ու Դառնարածութեան Կ՚սկսի

Ե·732,11,501,556,821,1099,997, (Ե·793,763,556,900, Զ·՝Ե·1099, Կ·49,11, Զ·՝Կ·49, Զ·՝Հ·415,24, Հ·374,24, Ճ·90,ՉԿ·431, Լ·19·

Դաւիթ լուսուն որ ելաւ՝

---

†) ՁՍ·364՝ Հովիւ (*ըլլալը*), Հ·374՝ Դառնարածութիւն: *) Կութ, *Բերք* (*համմալ*· թրք· ղըդա): *) Սամիր, *Կորեկով, կաթով ու կարագով՝ խիւսաձեւ կերակուր մը*: *) Այս գլուխէն, *Սկիզբէն*: *) Էվարին, *Իրիկուան, երեկոյին*:

Ամենք Իրենց Գառները առին՝ բերին Քաղքի Դարպաս–Դուռ,
Ու Դաւիթի Իրեն առջե՛ւ քըշեցին,
Ըսին, — «Դաւի՛թ, Քեզ ըրեր ենք Գառնարած †)·
Մեր Ուլերն ու Գառներն աղէ՛կ նայիս Դուն»: —
Դաւիթն ըրին Գառնարած:
Դաւիթ այնտեղ ի՞նչ ըսաւ· —
= «Դուք Ձիս կ՚ընէք Գառնարած···,
Որ Դուք կանուխ Ձիս դո՛ւրս հանէք Իմ դործէն՝
Ես Իմ Վարձը լըմա՛ն կ՚առնեմ Ձեր մօտէն··· ·
Թէ Ձեր դործին կուգա՛յ՝ ըրէ՛ք Գառնարած·
Եթէ չի՛ դար՝ մի՛ ընէք···»:
Քանիներն ալ՝ ըսին, — «Աղէ՛կ, բայց Դաւիթը բոպիկ է·
Ատոր Ոտքին ի՞նչ կ՚ուղէք որ դիմանայ···՝
Հաղնի երթայ Սասմայ–Սարեր արածէ,
Ոչխարները պըտըտցընէ ու դառնայ···»:
*Ջէնով–Օհան՝ բերաւ այնտեղ կօ՛ղ *) մը տըւաւ Դաւիթին,*
*Զոյդ մ՚ալ աղէկ Կաչիէ–Սօ՛լ *)՝ եւ Տուրիկ *)·*
Դաւիթ հագա՛ւ Իր Սօլեր,
Մախաղ ձըդեց կըռնակի՛ն,
Փայտը բըռնեց Իրեն Ձե՛ռ,
Ուլ ու Գառներ ժողվըտե՛ց որ տանի Դա՛շտ:
Դաւիթ եղաւ Գառնարա՛ծ···: —
Մարդերն այնտեղ որ Դաւիթի ձեւ տեսան՝
Ըսին, — «Օհա՛ն, Տէ՛րը վրկայ, կըվախնա՛նք···, —
Մեր Գառները պիտի սպանէ՛ Այս Տըղան···»:
Ջէնով–Օհան դարձաւ Դաւիթին ի՞նչ ըսաւ· —
— «Որդի՛, Դաւի՛թ, Մենք դըրկի՛ց ենք ու բարեկա՛մ Ամենով·
Ուլ ու Գառներն աղէ՛կ նայէ՝ չըսպանե՛ս·
Ապահով տա՛ր՝ իրիկուն բե՛ր ապահով···»:
Դաւիթն ըսաւ, = «Դէ՛, Հօ՛րեղբայր, անհո՛դ եղիր, ծուռ չե՛մ Ես·
Այդ Գառները՝ ծաղիկի պէ՛ս կըպահեմ···»:

---

†) Հ·415՝ Հորթ-արած: *) Կօղ, Գլուխը ծռած [գլխատուռ Ր–ի ձեւով] մահակ (հովիւի): *) Սօլ, Կօչիկ (համմտ· Ֆր· soulier): *) Տուրիկ, Մախաղ:

Ելան՝ Դաւիթ ու Հօրեղբայր՝ Գառնէրն առին Ուղերով,
*Մէկ–քանի օր հըտրաց *) գացին ու Եկան։*
Անկէ՛ յետոյ՝ Զէնով–Օհան բաւ, — «Դաւի՛թ, ի՛նձ լըսէ.
*Գառներն այլեւս ամենք իրա՛ր են ընկած *).*
Ա՛լ մէ՛կ հոգի մինակ կըլնա՛յ սրտիդ.
Դուն մինաւոր՝ կըլնա՛ս տանիս տակէ վերջ»։
.ամոհդ՛օշ ՝յ՛իգոտոհ ոգ ՝–ոտոհ–՝կ՛ինդ» =
Բայց ես բոլիկ չե՛մ կըլնար.
Ինձի համար՝ դո՛յզ մը նոր Մօ՛ր կարել տաս,
Որ ես իմ Գործ լա՛ւ տեսնեմ...»։ —

868. Դաւիթ՝ Պողվթէ–Սօլերը Ն՛հազճի, Մահակն Ու Մախաղը Ն՛առնէ՝ Որ Գառները Տանի Դաշտ

2Ս·365,366,367,368,369, 2·՝2Ս·368, Ե·11,67,619, 763,1099,997, 12,707,961, (Ե·11,1099,66,619,793), 2Կ·433,434,435, (2Կ·435), Խ·9,10, (Ա·64), Ա·8, Լ·17, Հ·374, Կ·11, Ց·94.

Զէնով–Օհան ի՞նչ ըրաւ. —
*Ան ալ մէկդէց *) Իր մխան–լինե *) եւ ըսաւ. —*
*Ամեն տաւն ես չե՛մ կըլնար Անոր Հազի՛ստ *) չինել տար,*
Մէկ անդամով՝ Պողվըտէ մէկ Հազի՛ստ մ՛ առնեմ՝ թող հաշնի,
*Զըկըտըրտուի՛, երթայ իյնայ *) Սար ու Ձոր»*
*Ելաւ դընաց մօտ–Դարբինն *),*
Մէկ դոյզ Պողվատ–Մօ՛ր †) ապըսպրեց որ չինէ.
*Մէկ կոճա՛ղն *) ալ՝ կօտել տըւաւ Պողպատէ՛ի՝*
Առաւ բերաւ՝ տըւաւ Ատոնք Դաւիթին, —
Ըսաւ, — «Որդի՛, հիմա հազի՛ր այս Պողվատէ–Հագեստները,
Անոնք ալ չե՛ն կըտըրտուիր,
Ձու Ոտքերն ալ՝ մէկէն հանդի՛ստ կը մընան։

---

*) Հըտրաց (հետ–իրերաց), Միասին, մէկտեղ։ *) Իրար իյնալ, կարդի մտնել։ *) Մէզիկ (միտս–ածել), Մտածել։ *) Միտքիններ, Մտքին մէջ։ *) Հագեստ, Ոտքի հաղնելիք, տրեխ, հեսկ։ *) Իյնալ, Թափառիլ, ման դալ։ *) Մօտ–դարբին, Դարբինի մօտ։ †) Լ·17՝ Տրեխ։ (Պողվատ–Մօլ՝ այսինքն երկար գամերով)։ *) Կոճաղ, Հաստ մահակ՝ ծայրը ծռած, կօտ։

Այս կոճանն ×) ալ՝ ա՛ռ Քու Ձեռ,
Որ Դուռ հանդի՛ստ տանիս Գառներն արածես»։
= «Աղէ՛կ,–ըսաւ–, Հօ՛րեղբայր»։
Տըղայ–Դաւիթ՝ առա՛ւ կոճան՝ ու Պողվըտէ նոր Սօլե՛ր,
Ուրախացա՛ւ վըրան, ըսաւ, = «Հօ՛րեղբայր,
Ասիկ ի՛նչքան խօրոտ բան ես չինել տըւեր Ինձ համար···»։
— «Որդի՛,–ըսաւ–, ասիկ չինե՛լ եմ տըւեր՝
Որ եօ՛թ տարի ՀովիւուԹի՛ւն ընես Դուն,
Կենա՛յ Քու Ոտ, չըկըտրըտուի՛ն Քու Սօլեր»։
Նոր Սօլերուն, Իր կոճանին ու Գառներո՛ւն երազով՝
Լուսուն՝ Դաւիթ կանո՛ւխ ելաւ Իր քունէն,
Սօլեր հաղաւ, Պողվատ–կոճան բըռնեց Ձե՛ռ,
Ու Հացէ–Պարկն անցուց կախեց Իր Թեւէն,
Գընաց Գոմէ–Դուռ կեցա՛ւ· —
Կանչեց ըսաւ, — «Դըրկի՛ցներ,
Ձեր Գառները հանեցէ՛ք···,
Ձեր Ուլերը Թո՛ղ տըւէք···,
Բերէ՛ք՝ տանիմ Սամսայ–Սարեր՝ արածե՛մ···»։
Ամենք ելան՝ առին Ուլերն ու Գառներ՝
Բերին Դարպաս–Դուռին դէ՛մ,
Հօրեղբա՛յրը՝ Ոչխար Թողուց Իր առջե՛ւ,
*Ըսաւ, — «Որդի՛, դէ՛ լաւ աչք տաս *)՝ Ես տեսնեմ·*
Ոչխար տանիս՝ այդ Դաշտերը արածե՛ս,
Առնես բերե՛ս իրիկուն, —
*Ես ճաշոցին *) Հա՛ց կը բերեմ՝ Դուռ կ՛ուտե՛ս···»։*
Դաւիթն ըսաւ՝ — «Աղէ՛կ կ՛ըլլայ, Հօ՛րեղբայր···»։
Ձէնով–Օհան՝ Դաւիթ դըրաւ այդ Գառներու Հօտին դէ՛մ,
Ինքն ալ դարձաւ՝ դընաց Տուն։

×) ՁԿ·434՝ կօտ։ *) Աչք տալ, Նայիլ, հսկել։ *) ճաշոցին, ճաչի պահին, կէսօրին։

369. Դաւիթ՝ Ուլեր Ու Դառներ Սար Կ'ուգայի Առածէն Ու Կ'ուզայի Ծուռ Կ'օրհնէ Իրեն Համար

Ձկ·432,435,436, Ե·12,619,1099; ,997,961 ,501,556,732,763,707,793, 821, (Ե·900,707,821,997,732), Զ·՝Ե·707,793,501,12,Ա·8, Կ·11,10, 49, Զ·՝Կ·49, Ճ·94, ՁՍ·370,371, Զ·՝ՁՍ·370, Խ·10, (Խ·10), Հ·374·

*Հիմա՝ Դաւիթ՝ Ուլ–ու–Դառներն ա՛լ մինաւոր *) կըսանէ։*
Քաղքի՛ Դառներն ամէ՛ն տրաւ իր առա՛ջ,
Քըշե՛ց տարաւ դէպի Դա՛շտ,
Ինքաւ Դաշտը լի՛ք ըրաւ։
*Որ հասա՛ւ այդ Լորայ–Դա՛շտ *),*
Քըշե՛ց հաննց՝ բա՛ր ձըրը մէկ Սա՛ր †) կայ այնտեղ։
Այդ Սարե՛րն ալ՝ լեցո՛ւն Գազան ու Դա՛յլ կայ։ —
Մա՛րդ չէ՛ իշխեր՝ Տաւար տանէ տրածայ։ —
Ա՛յնքան որ չա՛տ Վայրէ–Գազան եւ Անասո՛ւն կայ այնտեղ։
Դաւիթ՝ Դառներ քըշե՛ց տարաւ այդ Սարե՛ր։ —

*— ։...ՀՀՀ

Ու նըստաւ հոն, Գետնի՛ վըրայ, Տո՛ւն կը չինէ Իր համար ×)։
Գառներ այնտեղ թողուց բա՛ց,
Գացին ա՛ջ–ձախ ու զատացա՛ն Դաւիթէն,
Ամեն մէկ Գառ՝ Իր ուզած տեղ ցըրուեցա՛ւ ու արածաց։
Դաւիթն ալ Իր Տո՛ւն չինելու հաճոյքին հետ ըզբաղեալ՝ +)
Կամա՛ց–կամաց՝ քուն Աչքերո՛ւն ծանրացաւ,
Գլուխ գետի՛ն դըրաւ այնտեղ, Դաշտին մէջ,
Ու պառկեցաւ՝ քընացաւ…։

270. Բհուորցիները Կուգան Սար՝ Ոչխարը Կթելու, Ոչխարցիները Ծռուած Են

Ջ·՝ Ե·707,708,793,732, Ե·501,732,556,793,733, Ջ(Ե·732), Կ·10, Ա·8·

*Բերի *) ատեն՝ Բհուորները *) դացին Ոչխար կըթելո՛ւ,*
*Աչքեցին *) թէ՝ «Ա՛հա՛, Դաւիթ՝ հի՛մա Գառները կըբերէ…,*
Հա՛ մէկ պահէ՛ մ՝ կըբերէ…, —
Դաւիթ չըկա՛յ, չ՝ե՛րեւիր…։
Բհուորն այնտեղ կանչեց, — «Դաւի՛թ, հէ՛յ Դաւիթ…,
*Գառները *) բե՛ր որ կըթե՛նք…»։*

Ա՛լ կէսօրուան ճաշի պահը եկա՛ծ է…, —
Դաւիթ քունէն ցառկե՛ց ելաւ կանգնեցա՛ւ,
Իրիկւայ որ ի՛նչ տեսնէ…, —
*Ամե՛նմէկ Գառ, ամե՛նմէկ Ուլ՝ Ի՛ր գըլխու *),*
Տեղ մը գացեր՝ կորսըւե՛ր են Իր վըրայ…։
Ա՛յս կողմ նայեց՝ Գառ չըկա՛յ…,
Ա՛յն կողմ նայեց՝ Գառ չըկա՛յ…։ —
Դաւիթն ալ հոն ի՞նչ ըրաւ, —
Կեցաւ՝ պօռա՛ց ու կանչե՛ց…։

×) Ե·997՝ Նատաւ խաղաց։ +) *Տնարարութեան, ապագայ մեծագործութեան՝ ցեղային գիծ։* *) Բեր (բէր), *Մակաղում (ոչխարի հօտին, կթելու համար)։* *) Բհուոր, *Մակաղատեղին վրայ՝ ոչխար կթող։* *) Աչքել, *Նայիլ՝ մնալ, սպասել։* *) Գառ՝ *ընդհանուր ձեւով՝ հասկնալի է թէ՛ Գառ, թէ՛ Մաքի, թէ՛ Ոչխար՝ ըստ տեղին։* *) Իր գլխու, *Ինքնագլուխ։*

Տեսաւ այնտեղ Ա՛յր մը կաթ,
Վազից ղընաց Այրին կողմը՝ դէպի վի՛ր,
Տեսաւ քանի մ՝ Ուլ ու Գա՛ռ,
Ըսաւ, «Տօ՛, ւ՞րբ Իմ Գառներըը մինչեւ այստեղ են եկեր»:
Համրից տեսաւ որ քի՛չ են...,
Մխաք ըրա՛ւ ու ըսաւ՝ «Իրա՛ւ, Աստնց Վարձը որ հաշուեն՝
Քի՛չ կըըլանէ՝ ու չի՛նք կըրնար աղէկ պահել Մեր դըլուխ,
Գէաք է երթամ՝ այս Սարերէն քիչ մը Ուլ ու Գա՛ռ ժողվեմ...»: —

371. Դաւիթ՝ Վայրի Գազանները Կ'ժողվէ Կ'խաւսի Իր Հօտին

ՀՍ·372,373, Կ·49,10, Հ·՝Կ·49, Հ·24,374, Հ(Հ·24), Ե·793,708, 733,557,763,501,556,619,962,620,1099,12,794,961, (Ե·501,733,961, 556), Ա·8, Խ·10, (Խ·10), Ճ·94, Հ·՝Ճ·94, ՀԿ·432,436, Հ(ՀԿ·432, 436), Հ·՝ՀԿ·432, Հ·

Ան ալ — Դաւիթ —, երբ այնտեղ ի՞նչ ըրաւ. —
Մէկ Բարդի–Ծա՛ռ քաշից դըրաւ Իր Թեւի՛ն,
Ինկաւ Սար–Քա՛ր, ինկաւ Ձո՛ր, —
Ու կա՛ն եկաւ՝ չո՛րս կողմ՝ Անոնց եաեւնե՛ր:
Տեսաւ որ մէկ Նապաստակ՛ի մը Քըռաւ դո՛ւրս՝
Ըսաւ՝ «Մ՛ւըՀ, այդ Ուլ ինչպէ՞ս կըվախի...», —
Ինկաւ Անոր եաեւէ՛ն...:
Մէջից մը եաք՝ մէկ Աղուէսի՛կ վախաւ Իրեն առջեւէն,
Նորէն ըսաւ՝ «Վա՛յ Քո Տիրու Հէ՛րն օրհնած... †),
Այս մէկ Գառը՝ ինչպէ՞ս ալ չո՛ւտ կըվախի...», —
Ինկաւ Անոր եաեւէ՛ն...: —
Իր Ոտքերուն ձա՛յն որ եկաւ վար ու վե՛ր՝
Ինչքան Վայրի Գազա՛ն որ կար Սար ու Ձոր՝
Նապաստակներ, Գայլ ու Արջեր, Աղուէսներ, Կուղ ու Մուղ՝
Սարէն–Քարէն եկան, Թողին ամենամէկը Իրեն Բոյն,
Եկան վախա՛ն, Հա՛ կըվախին մինչեւ օրս...,
Դաւիթն ըսես՝ այդ Ամենու եաեւէ՛ն...: —
Եկաւ–իջաւ եօ՛թ–Սար դէ՛ն..., —
Ժողվեց Արջե՛ր, ժողվեց Գայլե՛ր, Նապաստակնե՛ր, Աղուէսնե՛ր,

---

†) Վա՛յ քո տէրոջ Հայրն ամիծեա՛լ ըլլայ, հընկն. է:

Վէրի–Ոչխար, տեսա՛կ–տեսակ ուրիշ ամե՛ն Գազաններ, ×)
Ծառնեց իրա՛ր, տըւաւ առջեւ՝ ու քըշե՛ց,
Ամեն ժողվե՛ց ու բերաւ,
Բերաւ լեցուց Գառներուն մէ՛ջ՝ ու մընացած Ուլերո՛ւն,
*Մակա՛ղ ըրաւ *) Դաշտի մէջ։*
Մինչեւ կէսօր՝ չարչարուեցա՛ւ այդ կերպով·
Ոչ Հա՛ց կերաւ, ոչ Ջո՛ւր խըմեց, ոչ նըստաւ։ —
Ո՛ր Քարի ու Փըշի՛ տակէն Նապաստա՛կ մը որ փախէր՝
Ո՛ր ծակէն որ Գա՛յլ ու Գազան, Աղուէ՛ս մ՝ ելնէր ու փախէր՝
*Ո՛ր գընարէն *) Վէրի–Ոչխա՛ր, Եղնիկ ու ե՛զ որ փախէր՝*
*Կո՛ւզ ու Կըտրա՛ն *) որ փախէր…՝*
Իրեն մըտքով՝ Ուլե՛րն էին, Գառնե՛րն էին՝ կը փախին, —
Կ՛իյնար Անոնց եաեւներէ՛ն՝ կը քըշէ՛ր,
Կօտ կըզարնէր՝ կըբերէ՛ր ու Գառներուն մէ՛ջ կըխոթէր·
Կամ՝ քըսանո՛վ ու երսունո՛վ՝ այնտեղ Գետին չո՛ւռ կուտար… .
Ոչ Ա՛րջ Թողուց, ոչ Գա՛յլ Թողուց Իր առջեւը, Սար ու Քար։ —
Մէկը՝ մէ՛կ ղէն, մէկ՝ մէկա՛լ կողմ կըփախին·
Դաւիթն ալ Քա՛ր կըվերցընէ կըզարնէ՝
Որուն Մա՛տը կըկոտրէ…,
Որն ալ փախի՝ կամ իյնայ…։ —
Ամենմէկուն Ա՛չքը հանեց, Մա՛տը կոտրեց, հալածեց։ —
*Ա՛յնչափ Թողեց *) եաեւները…՝*
Այդ Գազանները՝ ա՛յնքան նեղեց, չարչարեց՝
Որ Լեզուներն Քի՛ղ մը Իրենց Բերաններէն կախեցին՝
*Առին զարնուիլ *) այդ խեղճեր…։*
Տըղայ–Դաւիթ կոճանի՛ն †) ու Իրեն Ձայնի՛ն սարսափէն՝
*Այդ Գազանները չե՛ն իշխեցար *) որ փախին։*

×) Նման՝ իր մեծ հօր՝ Առիւծ–Մըհէրին, Տես Հատ· 199։
*) Մակաղ ընել, Մակաղել· Ե ·794՝ մաղալ։ *) Զեռր (Մնար), Սարի սեղ կառար։ *) Կտրաճ, Վայրի խոզ, կինճ։ *) Թողել, (մէկուն եաեւէն) Թափով հետապնդել։ *) Առին զարնուիլ, Սկսան հեւալ, կողերը ուռեցով–իջնելով՝ չարչարուեցան։ †) Երկաթէ մահակին՝ Քէ՛ քաշած՝ Թեւին դրած Մատին։ *) Իշխեցար, Իշխել, համարձակիլ։

Մէկ կողմէ՛ն ալ՝ թէ որ վախի՛ն մէկ–երկո՛ւք՝
Մէկա՛լ կողմէն՝ Դաւիթ ուրի՛չ կըրնէ՛ :
Որ Ա՛րջ մ՝ Իրեն դէ՛մ կուգայ՝
Տըմիլով կը խելօքցընէ՝ Գառներուն մէ՛չ կըխոթէ՛ :
Գա՛յլ կուգայ դէմ՝ կըրնէ՛ ու կըմրոցընէ մէջ–հօտի՛ն.
Աղուէ՛ս մանէ՝ կըրնէ՛ ու կըխոթէ մէջ–Գառներո՛ւն.
Մէկ Նապաստակ մանա՛յ թէ չէ՝ վրէ դին՝
Այնպէ՛ս կ՛վազէ՝ կըթողնէ այդ Նապաստակին հաւէն՝
Լապըտարակը Լեղուն կ՛թողո՛ւ՝ կըդարձի՛ . . . , —
Դաւիթ կ՛րնէ՝ կը մրոցնէ մէջ–հօտին :
*Է՛, վերջապէս, ի՛նչ կայ՝ ժողվեց՝ բերաւ տըւաւ *) իրար մէ՛չ,*
Իր Գառներուն թիւը չատցո՛ւց, մեծացուց . . . .
Որքան Ո՛ւլ կայ ու Գառնուկ՝
Այնքան ալ՝ Ինք՝ Գաղա՛ն խառնեց Անոնց մէջ :
Մինչեւ իրկուն՝ քըրտինքի՛ մէջ թաթխուած՝
*Շա՛տ ժողվըրաեց *) Անասուններ՝ ու բերաւ՝*
Կեցաւ առջեւ, մըտաւ մէջը՝ կա՛ն եկաւ, —
Այդ Գաղաններ՝ Գառնուկի՛ պէս մեղմացան,
Դաւթի ահէն՝ չե՛ն իշխեր որ մէկ–մի՛ուսի հետ կըռուին.
Ա՛լ մէկ–մէկի չե՛ն դըպիր . . . : —

372. «Բալթալուսիկ Ուլեր»՝ Դաւիթը Շա՛տ կ՛չարչարեցնէ

Չ·՝ե·708,794,620, ե·763,794,961,708,733,620,501, 12,962,764, 900, (ե·12,764,501,900), կ·49,50, Չ·՝կ·50, Ա·8,9, (Ա·8), խ·10, Հ·24,374, Չ·՝Հ·25, ճ·94.

Բերուորները եկան որ դան՝ լո՛ւր տան Ձէնով–Օհանին,
Ձէնով–Օհան՝ Դաւթի համար Հա՛յց կըթերէ կէսօրին, —
*Գացին ըսին, — «Ձէնո՛վ–Օհան, հո՛ւտ Քո Աստծո՛ւն *), ի՞նչ կ՛ընես,*
Ի՞նչ Գառնաբած ես բըռներ Դուն Մեզ համար . . . :
Դաւիթ՝ ի՛նչքան Գայլ ու Գաղա՛ն կայ Սարեր՝
Գառներէ՛ն չատ՝ ժողվեց բերաւ՝ Ոչխարներուն մէ՛չ լեցուց . . . ,
Ի՛չ է մնացեր՝ Մեզ պատըռտե՛ն . . . , ուռե՛ն Մեզ . . .

---

*) Տուաւ, Խառնեց : *) Ժողվըտել, Մէկտեղ բերել, հաւաքել, համախմբել : *) Հե՛տ fo Աստծուն, Աստծու սիրոյն համար ըլլայ :

*Ճիվի՛ *) կ՚ընենք՝ Դուն Դաւիթը նըստեցուր *)»։*
Զէնով-Օհան դընաց առջե՛ւ, մօտեցաւ,
Դաւիթ ձայնեց՝ ըսաւ, — «Մի՛ դար, հեռո՛ւն կեցիր, Հօ՛րեղբայր,
Այդ Ուլերուն մօտ մի՛ դար···,
Ուլեր Քենէ կըվախի՛ն···»։
Հօրեղբա՛յրն է, — Հօտին մօտիկ եկաւ՝ նայե՛ց հեռուէն,
Տեսաւ ի՛նչքան չա՛տ են Գառներն ու Ոչխար···, —
«Զարմա՛նք···, –ըսաւ–, ան ի՞նչ է···»։
Կանչեց ըսաւ, = «Դաւի՛թ, Որդի՛, Քու վիճակը ի՞նչպէս է···,
*Անո՞ւշ *) բան է Հովուութիւն··· †),*
*Գառներու հետ ճամբայ կըրնա՞ս երթալ *) Դուն···»*
— «Հա՛, Տէ՛ր վըկայ, –ըսաւ Դաւիթ–, անո՛ւշ է։ —
Սեւ Ուլերը օրհնա՛ծ են ×),
Ճամբայ կ՚երթա՛մ Անոնց հետ,
*Մինակ՝ այդ դորչ՝ բալբալուսիկ *) Ուլերը Չիս կընեղե՛ն,*
Անիծա՛ծ են այդ Ուլեր···»։
Զէնով-Օհան՝ դընաց այնտեղ՝ մօտի՛ն նայեց ու տեսաւ,
Ինչքան Գա՛ռ է՝ այնքան ալ Գայլ ու Գազա՛ն է մէջ խառներ,
Որչափ Գազա՛ն կայ՝ ամե՛նն ալ Դաւիթ բերեր Իր կօտով՝
Ուլերու հետ մակաղե՛ր···։
Զէնով-Օհան վախցա՛ւ այնտեղ՝ ու կեցա՛ւ։ —
Կանչեց, = «Դաւի՛թ, եկո՛ւր Քո Հաց տա՛ր ու կե՛ր·
Ծերացե՛ր եմ, Ես չե՛մ կըրնար գալ այդտեղ···։
*Մատա՛ղ Քեզի, վախնամ չա՛տ ես նեղացեր *)»։*
*— «Հա՛, Հօրեղբա՛յր, այդ խըլուզիկ *) բա՛լ Ուլեր՝*
Ջե՛ն գազարիր Իրենց տեղ,
Շա՛տ կը փախին դէ՛ս ու դէ՛ն,

---

*) ճիվի, իվի, *Խնդիրք, աղաչանք։* *) Նստեցնել, *Հանգիստ՝ տուր-նը թողուլ· գառնարածուքենէ դադրեցնել։* *) Անուշ, *Հաճելի։*
†) Հ·24,374՝ Գառնարածուքիւն։ *) Ճամբայ երթալ, *Ծարմարուիլ։*
×) Հ·24՝ Հանդարտ են։ *) Բալբալուսիկ, *Փալփլուն աչքերով, տըն-կուած երկար ականջներով, խառուտիկ մորթով.* (*Հմմտ. Լուսան,* lynx)։ *) Նեղանալ, *Ծոդնիլ, խոնջիլ։* *) Խլուզիկ, *Երկար, տնկած ականջներով։*

Ըսաւ՝ Դուն Հայց Դի՛ր այդտեղը ու դընա՛,
Ես կուգա՛մ ու կ՚առնե՛մ իմ Հայց՝ կըսառնիմ»։
Զէնով–Օհան Հայը դըրաւ Քարի մ՚վըրայ, դընաց դա՛ռ),
Դաւիթ ակաւ՝ նըսաւ կնքա՛ւ Իրեն Հայ.—
Ըսաւ, — «Հօրա՛ր, այն սեւ Ուլերն Առաւաւտ օրհնէ՛ Իր Բերնով,
Այն բա՛լ Ուլերն անիծէ՛…, —
Անանք Չիս չա՛տ կըշարչարեն, կըվախեւ՛ն…»։
= «Մ՚րմէկ Ուլը, Տըղա՛յ», –ըսաւ Հօրեղբայրը–։
— «Նա՛ այս Քարի տակ պահուըտած՝ Ախանջները խըլուղիկ,
Երկարականջ, բալըլուտան չա՛ր Ուլեր…»։
= «Ան բալուտան Ուլե՛րն,–ըսաւ–, Թո՛ղ որ Երթան Իրենց տե՛ղ,
Մ՚ի՛ յնար Անոնց հետեւէն…,
Ո՛րմէկ Ուլը որ կըմընայ՝ Անի՛կ բեր.
Մխուանները գա՛րկ, դա՛րկ՝ ապուռը խըրատէ՛…»։
Դաւիթն ըսաւ, — «Անոր Տէրը՝ Ինձմէ պիտի Ո՛ւլ ուզէ…,
Ինձ Ուլ չըկա՛յ՝ ես տամ Անոր Ուլին տե՛ղ,
Ա՛ը ես Անոր ի՞նչ պատասխան պիտի տամ…»։
Մէկ Լապըտրակ մ՚ Քարի տակէն ու Դառնըրէն ինկաւ դո՛ւրս՝
*Դաւիթ Անոր հետեւէն ալ՝ չա՛տ էր ինկեր, նեղացեր *),*
Նապաստա՛կն ալ՝ Լեղուն հաներ կախեր դո՛ւրս,
Դաւիթն ըսաւ, — «Թէ կամենաս՝ հրամա՛ն տուր Ինձ, Հօ՛րեղբայր,
Ես այդ մէկ Ուլն ըսպանե՛մ…,—
Անիկ չա՛տ շատ չարչարեր է Իմ Հոգին…»։
Հօրեղբայրն ալ՝ կանչեց, = «Դաւի՛թ, մատա՛ղ ըլլամ Քու Գլխին,
Քեզի հրամա՛ն…, դա՛րկ այդ մէկ Ուլն ըսպանէ՛…»։
*Դաւիթ Իր կօտ՝ ատ՚նկ անթօրկեց *) ու ղարկա՛ւ,*
Փայտը ղըպաւ Նապաստակի ճի՛շդ Մէջքին,—
Նապաստակը երկու կըտոր †) ըրաւ Քըցուց մէյմէկ դի՛ն,—
Մէկ կըտո՛րը ղընաց դէպի Արեւե՛լ,
Մէկ կըտորը՝ Արեւմուտ…։
Զէնով–Օհան՝ ելաւ դարձաւ եկաւ Տո՛ւն,

---

*) Անգրող, Առանց մահու հրեշտակի, պարզապէս։ †) Ե֊520՝ Նեղացուցին։ *) Զատ, Հեռու։ *) Նեղացեալ, Ցոդնիլ, պարտասիլ։
*) Անթորկել (անթուլկել), Օդի մէջ ղարձդարձելով նետել (փայտը)։ †) Պ֊50՝ Հազար կտոր։

Դաւիթ մընաց Իր Գառներուն հետ մէկտե՛ղ։

373. Ձէնով-Օհանի Հրահանգիճ Վ.րայ՝ Գաղաթացիք Դուռները Կ՚փակեն

Կ·50, Զ՚Կ·50, Ե·764, Զ·՚Ե·764, Զ·՚Հ·24, Հ·24,25, (Հ·25), Զ·

Ձէնով–Օհան դարճաւ Գաղաք՝ լո՞նչ ըրաւ·—
Կանչե՛ց այնտեղ՝ ու պատուիրե՛ց Մարդերուն,—
— «Դուռները,–ըսաւ–, պի՛նդ փակեցէ՛ք ×), Դարպասները գոցեցէ՛ք,
Գիտէ՞ք Դաւիթ լո՞նչ է հաներ Մեր Գլուխ···,—
Որչափ Աղուէ՛ս, Գա՛յլ ու Գազա՛ն կայ Սարեր՝
Ժողվեր բերեր՝ Գառներուն մէ՛ջ է խառներ···,
Պիտի քըշէ՝ բերէ լեցնէ Գաղքին մէ՛ջ···,
Մարդեր՝ ամե՛ն՝ պիտի ուտե՛ն՝ պատըռտե՛ն···։
*Իրկուն որ *) Դաւիթ կուգայ Գաղքէ–Դո՛ւռ՝*
Կ՚ըսէ՝ «ելէ՛ք՝ Ձեր Գառները տարէք Ձեր Տուն գոմեցէ՛ք՝ +)
Դուք Գառներուն առաջ չ՚երթա՛ք՝ Դուռ քանաք,
Դաւիթ պիտի սըրդողի՛ ու մըտնէ Տո՛ւն։ —
Որ կուգայ Տո՛ւն,— Դո՛ւռը կենաք Թէ Տանիք՝
Կըտեսնէք որ՝ Գաղան §) Կ՚երթայ՝ Տաւարն §) իր տեղ կըկենայ՝
Կ՚երթաք այլեւս Ձեր Գառները կը տանիք»։
Գաղքըցի՛ք են,— Դուռներն ամեն գոցեցին,
Դարպասները ամուր զարկի՛ն ու կեցան։—

374. Դաւիթ Սարերէն Նոր Աճապուճներ Կ՚ժողվէ Կ՚բերէ Գաղամ

Զ·, Ե·794,997,1099,12,501,557,620,764,733, 1100,962, (Ե·997,1099, 900,501,733), Զ·՚Ե·732,794,12,733, Ե·11,10, (ՁԿ·433,437), Զ(ՁԿ· 433), ՁԿ·437, ՁՍ·374, Ա·8, Լ·17, Կ·10,50, (Կ·10), Հ·374, (Հ·374,25), Ց·95·

Գառնանք՝ զըրոյցն ո՞ւրկէ տանք, —
Հովիւ–Դաւիթ՚ն զրոյց տանք։—

*Անգըրող *)՝ Իմ հոգին կ՚առնեն †) մինչեւ վերջ···։*

×) Կ·50՝ Շինեցէ՛ք։ *) Որ, *երբոր*։ +) Հ·25–ի այս հատուածը պակասաւոր է (Նկատուած՝ ե՛ւս Ե·340 *տողչ*·)։ §) Կ·50՝ Հարամ, *հալալ*։

Դաւիթ մընաց Իր Գառներուն հե՛տ մէկտեղ՝
*Ու նըստաւցաւ՝ դի՛ր մ՚ալ *) այնտեղ Տո՛ւն կըշինէ Իր համար։*
Ամե՛ն Գարան՝ վախա՛ւ դընաց Իրեն տե՛ղ,
Մ՚ալ–ու–Գառներ՝ ցըրուըտեցա՛ն Դաշտ ու Ձո՛ր,
Դաւի՛թն ըսես՝ ա՛լ լուր չունի՛ Գառներէն...։
*Մընա՛ց մինչեւ արեւմըտո՛ց *) ժամանակ,*
Տըղա՛յ–Դաւիթ Իր Գըլուխը վերցուց վե՛ր՝
Տեսաւ՝ ոչ Գա՛ռ, ոչ Անասո՛ւն է մնացեր,—
Բարդի–Ծա՛ռ մը քաշից ինկաւ Սարերու մէ՛ջ՝ կա՛ն ևկաւ։—
Ի՛նչքան Աղուէ՛ս, Լապտըտրա՛կ ու Գարան՝ որ կար այդ Սարեր՝
Դի՛ր մ՚ալ ժողվից՝ բերաւ լցուց, Գառներու հետ մակաղե՛ց։
Ի՛նչ Լապտըտրա՛կ որ վախաւ՝
Դաւիթ ինկաւ ետեւէ՛ն,—
Տարաւ ա՛յն Սար, բերաւ ա՛յն Ձոր՝ հալածե՛ց,
*Դարձուց բերաւ՝ Ուղերու հետ մէկտեղից *)։*
*Ա՛լ ոչ Հաղո՛ւստ մընաց վըրան՝ ոչ Հաղեստ *),—*
Գողվաս–Սօլերն՝ Իր Ոտից տակ՝ չըդիմացա՛ն ետեւի,—
Կըտըրտուեցա՛ն, բոլո՛ր մընաց Սարին մէջ։—
Այդ Գողվըտէ–Հաղե՛ստն եղեր՝ ամե՛ն մէկը տա՛ս բըրդուճ...),*
Ա՛յնքան մաշեր կըտըրտուեր են՝ մինչեւ Ծունկե՛րն են եղեր †),
*Կօտը մաշե՞ր՝ մընացեր է Կօտատո՛ւն *),*
*Ինչ *) բըռներ էր Ձեռքին մէ՛ջ։*
Ա՛ն ալ,–Դաւիթ–, վերցուց այնտեղ ի՞նչ ըրաւ.—
*Գողվաս–Սօլեր Հանդուրցե՛ց *) ու կախեց Կոճնէ՛ն՝ Թալեց Թե՛ւ,*
Այդ Գարաններ տըւաւ առջե՛ւ՝ քըշե՛ց բերաւ դէպ Գաղա՛ք։
Իրեկո՛ւն ×) որ՝ Գա՛ռ ու Գարա՛ն առաւ բերաւ Գաղքե–Դո՛ւռ՝ +)

---

*) Դիր մ՚ալ, *Անգամ մ՚ալ*։ *) Արեւմտոց, *Արեւամայրէ*։ *) Մէկտեղել, *Համախմբել*։ *) Հագեստ, *Հօշիկ, ոտքի հագնելիք, հեակ(ք)*։ *) Բրդուճ, *Կտոր*։ †) *Ակէ պէտք է հետեւցնել որ՝ կօշիկները երկաբաւոր մոյկեր էին (չիզմէ, պօթ)՝ հապճեպով, Տե՛ս յաջորդ չորրորդ տողը՝ «Սօլերը հանդուցեց՝ կախեց Թեւէն»*։ *) Կօտատուն, *Մահակին գլուխը, ափին մէջ բռնուելիք ոլորուն մասը*։ *) Ինչ, *Որ*։ *) Հանգուցել, *Հանդոյց ընել*։ ×) *Կ·10,5, Հ·374՝ Էվարիճ*։ +) *Կ·10,ե·557,733՝ Գիւղի մօտ, Գիւղի գոմ, ե·764՝ մօտ Բաղէի գերեզմանոցներ*։

Որ տանի ու գումէ Տ՛ուն,—
Բերաւ հասցուց Գերեզմաններ՝ Քաղքին մօտ,
Բըլնց բերաւ՝ լեցուց ամեն՝ Քաղքի մէջ,
*Տեղաւորեց ըրաւ Դո՛մ *),*
Ջաղցի-Բա՛րը տըւաւ Դըրա՛ն, կեցաւ դէմ։
Քաղաքացիք +) Դուռներ փակա՛ծ, Դարպասները զարկա՛ծ են,
Մէկը չ՛ելներ՝ Իր Դառները ջոկէ տանի Իրեն Տ՛ուն.
Կընային որ՝ Դառներո՛ւն մէջ՝ ի՛նչ ցեղ Դաղան բսես՝ կա՛յ...,—
Արջ՝ կա՛յ մէջը...,
Գայլ՝ կա՛յ մէջը...,
Խոզ՝ կա՛յ մէջը...,
Կուզ՝ կա՛յ մէջը...,
Աղուէս՝ կա՛յ մէջ...,
Վէրի՝ կա՛յ մէջ...,
Լապըղարակ՝ կա՛յ Հօտին մէջ...,
Որքան Ո՛ւլ կար ու Դառնուկ՝
Երկո՛ւ այնքան Սարի-Դաղա՛ն է բերեր։—
Երախաներ, չատեր՝ տեսան ու վախցա՛ն,
Քանիները դո՛ւրս որ ելան՝ ահէն ինկան մահացա՛ն...

375. Դաւիթ Ն՛ձայեն Քաղաքացիներուն՝ Որ Դան Իրենց Դառները Տանին

*Խ.*11, *Զ.Խ.*11,.*Ե.*1100,997,794,998,733,962, *Զ*(*Ե.*733),*Կ.*50,(*Հ.*25).*Հ.*25.

Իշխան-Մարդեր †) ելան գացին մօտ-Օհան,
Գանգատեցա՛ն, ըսին, — «Օհա՛ն, աս չեզա՛ւ...,—
Դուն այդ Մուտը ինչո՞ւ բրիր Ուլտած,
Գա՛ռ ու Դաղան, Լապըտարակ եւ Ուլ՝ իրարմէ չի՛ զատեր ×),
Աս ի՞նչ բան է..., ա՛յնչափ Դաղա՛ն է բերած...,
Անոնց ահէն՝ չատեր վախցա՛ն, ու մեռա՛ն Մեր Տըղաներ...

---

*) *Ընել գում, Դումել, ներս փակել։* +) *Ե.*733՝ *Ժողովուրդ, Ե.* 997, *Հ.*25՝ *Գեղական։* †) *Ե.*1100՝ *Դրկիցներ, Ե.*997՝ *Գեղական։* ×) *Զատել, Զանազանել։*

Մենք այս բանը Մեր մէջ երբէ՛ք չենք ուզեր . . . .
Թո՛ղ , թող երթայ՝ պարապ մա՛ն գայ Իր համար» :
Դաւի՛թն ըսես՝ երբոր մըտաւ Քաղքի մէ՛ջ ,
Գօռաց վերէն , կանչեց բաւ Ամենուն , —
— Հէ՛յ Դերասի՛ք, ակէ՛ք տարէ՛ք Ձեր Դառնուկներ եւ Ուլեր .
*Վիր *) երկո՛ւ է(ր)՝ ըրեր եմ չո՛րս .*
Որին չո՛րս է(ր)՝ ո՛ւթ եմ ըրեր .
Որուն ութո՛ն է(ր)՝ եղեր քրսա՛ն .
Վիր քրսան է(ր)՝ քառասո՛ւն դարձեր .
Վիր յիսո՛ւն է(ր)՝ եղեր հարիւ՛ր ,
Վիր հարիւ՛ր է(ր)՝ ես ըրեր եմ երկո՛ւ հարիւր .—
Ձեր Դառները՝ ես չատցուցո՛ր եմ այդքան . . . ,
Եկէ՛ք տարէ՛ք Ձեր Ոչխարներ դումեցէ՛ք . . . :
Երկայնականո՞ց այդ Ուլերը որո՞ւն են ×)՝
Ձո՛ւմ ճանչընար , կը վախի՛ն . . . ,
Տըփելո՛ւ եմ ըսերը խաւներ Դառներուն . . . .
կըմեռցընե՛մ . . . , ակէ՛ք տարէ՛ք՝ չը սատկի՛ն . . . » :
Մէ՛կ Մարդ չ՛ելա՛ւ , Դուռ չըբացա՛ւ , չելա՛ւ դուրս ,
Մա՛րդ չի՛ իշխեր՝ որ դո՛ւրս գայ ,
Ու Դառներուն դէ՛մ երթայ . . . :
Դաւիթ այնտեղ սրդողեցաւ իրաւէն ,—
*Ըսաւ ,— «Վըրէ՞ *) չէ՛ք դար տանիր Ձեր Դառներ .՞.՞.՞ ,*
Ես Դաշտերէն ազատե՛ր եմ ըսերը Տո՛ւն ,
Տէր չէ՛ք ըլլար հիմա Դուք Ձեր Դառներուն .՞.՞.՞ ,—
Դէ՛ , Ձեր Թլա՛խն ուսէ ,-ըսաւ-, Իմ ի՞նչ հոգ . . . ,
Որն ինչ Ձերն է՝ ակէ՛ք տարէ՛ք Ձեր Տուներ ,
Որն Աստըծուն՝ Սարերն ՚ի վե՛ր Թող երթան . . . ,
Հոդիս առի՛ն այդ Ուլեր . . . ,
Ո՛ւր որ կ՚երթան՝ Թող երթա՛ն . . . :
Ա՛լ չե՛մ ըլլար Ձեզի համար Դառնասած . . . ,
Ի՞նչ որ ուզեր էք՝ ակէ՛ք Ինձմէ ե՛ւ առէ՛ք . . . » :

×) *Այսինքն՝ Ձեզմե՞ն են :* *) *Վրե՞ , ինչո՞ւ , ի՞նչ պատճառով :* *) *Վիր , Որուն որ :*

376. Տանիէլ՝ Զէնով-Օհանի խօսակցութիւնը Դաւիթի հետ

Ե.557,501,620,12,764,962,900, (Ե.900,12,502,507,501), Զ.՝Ե.501, ՁՍ.375,376, Զհ.438,439,440, Կ.50,10, Ա.8, Հ.375, Զ.

Զէնով-Օհան գընաց առաջ, ելաւ Տանիա, ի՛նչ տեսաւ·—
Նայից տեսաւ՝ Դաւիթ Իրեն Գողվատ-Սօլեր կըտըրտե՛ր···,
Կըցեր իրար՝ կախեր Կօռէն՝ ու թալեր է վեր՝ Թեւի՛ն,
Ոտքեր բոպի՛կ մընացեր···,
Կօռին վերը †) կըտըրտուե՛ր՝ եղեր ինչպէս բարակ օ՛ղ···,
*Մայրը մալե՛ր՝ մնացեր մինակ Կօռատուն *),*
Ինքն ալ այնպէ՛ս քըրտինքի մէջ մոլորե՛ր···՝
Ինչպէս որ Մարդ բըռնեն թաթխեն մէջ-Ջուրի՛ն···։—
Մ՛ընչաւ որ Ան՝ կա՛ն է եկեր Սա՛ր ու Զո՛ր···,
*Լարեր *) է այդ Գազաննեբուն եռեւէն···։*
Ու տեսա՛ւ որ՝ ինչքան Ո՛ւղու Գառնո՛ւկ առած տարա՛ծ էր՝
Երկո՛ւ այնքան չատցուցե՛ր է ու բերեր···։
Զէնով-Օհան հարցուց ըսաւ,— «Դաւի՛թ, Որդի՛, մատա՛ղ Բեզ,
Ատի՛ Բեզ ի՞նչ է եղեր···՝
Որ Դուն այդպէս քըրտներ ես··· +)»։
= «Ա՛խ, Հօրեղբա՛յր,-ըսաւ Դաւիթ-, չե՛ս գիտեր···,
*Տէրամեռի՛ *) այդ՝ զաբլապուզ *), բալբալուսի՛կ չա՛ր Ուլեր՝*
Զե՛ն թողուր որ ես հանդչիմ··· ·—
Մինչե՛ւ իրկուն Հոգիս կ՛առնե՛ն, չե՛ն դադրիր մէջ-Գառներուն,
*Կըտրո՛ւկ կենան *) բոլոր այդ Գու բալբալուսիկ չա՛ր Այծե՛ր···»։*
— «Ծո՛, մեղ՝ո՞ւսկէ բալբալուսիկ Ուլ ու Այծ.՞.՞.՞.
Որդի՛,-ըսաւ-, Մեղ բալբալուս Ուլ չկա՛յ···»։
Դաւիթ գընաց՝ մօտեցա՛ւ ×),—
= «Չէ՛, Հօրեղբա՛յր, կա՛յ,-ըսաւ-՝ մէկ-քանի հատ··· .

---

†) Այսինքն՝ Կօռ(ա)տուն։ *) Կօռ(ա)տուն, Կօռին վերի կլոր դրաճած մասը։ *) Լարել, Վազելով հետապնդել։ +) Ե.502,507,900 Նեղացեր ես (յոգներ)։ *) Տէրամեռ, Տէրը մեռնելիք։ *) Գաբլապուզ, Ականջները անկած. (համմոլ.՝ Ապլապուզ՝ Վանի բարբառին մէջ)։ *) Կտրուկ կենալ, Չի՛ք ըլլար, սպառին, կորին լմնան։ ×) Կ.10՝ Գնաց մօտ-Բեռին։

Դառներո՛ւն մէջ՝ բալբալուսա՛ն քանի մը հատ չար Ուլ կա՛ն.
Շա՛տ կըփախչին, չաբչարկիլ՛ն, Հոգիս ազի՛ն այդ Ուլեր։
Ա՛լ չե՛մ կըրնար՝ վազ այդ Դառներ առնիլ հետս.
Այն Ուլերը՝ որ առաւօտ՝ Դառներէն դո՛ւրս չըհանես՝
Ես չե՛մ երթար Հօտին առաջ Դառնարած...»։
— «Ելիր երթա՛նք,-ըսաւ Օհան-, Դառները մէյ մ՝ դո՛ւրս հանէ,
Բալբալուսիկ այդ Ուլերը ես տեսնե՛մ...»։—

377. Դաւիթի Եւ Ջէնով-Օհանի խօսակցութիւնը՝ Դոմին Առջեւ

Կ.10, ՀՍ.379,380,381,382,377,378,375,383,384,385, Հ.375, Ե.900, 557, 962,502, (Ե.900,557), Ճ.94, Ա.8, Հ.՝Ա.8, Զ.

Ելան գացին Դոմի-Դո՛ւռ,
Տեսաւ որ մէկ Ջաղացի՛-Բար՝ Դաւիթ տըւեր Դըրան դէմ,
Հօրեղբայրը ապա կըրնա՞յ Ջաղցի-Բարը վերցընէ...,
Ուժ ունի՞ որ վերցընէ...,
Մէկ կողմէ՛ն ալ՝ կըվախնա՛յ...,—
Ջաղցի-Բարի ծակի՛ն մէջէն նայեց տեսաւ որ ի՛նչ է,—
Ամէն Արջի՛ր, ամէն Գայլե՛ր, ամէն Աղուէ՛ս, Լապըղտրա՛կ,
Ուրի՛շ-ուրի՛շ Դազաններ...
*Դաւիթ բերեր՝ ու մըտեր *) է Դոմի մէ՛ջ.—*
Ամէ՛ն Դազան՝ մէ՛կ Ֆիղ Անոնց լեզուները դո՛ւրս թողած,
*Հըլհըլոցը *) իւրեանց մէ՛ջ...,*
Ու Տիկի՛ պէս կըզարնըւի՛ Անոնց փոր...,—
Ա՛յնքան Դաւիթ չարչարե՛ր է այդ խեղճեր։
— «Աստուա՛ծ Քո Տո՛ւն չ՛աւրէ՛, Դաւի՛թ,-ըսաւ այնտեղ Հօրեղբայր.
Ա՛ս ի՞նչ բան է՝ Դուն ըրիր...։
Փորձա՛նք լինկանք Աստ Ձեռք,
Ասիկ չա՞տ բան պիտի բերէ Մեր Գլո՛ւխ...»։
Կանչեց,— «Որդի՛, Դաւի՛թ,-ըսաւ-, արի մո՛տ»։
Դաւիթ եկաւ՝ = «ի՞նչ է,-ըսաւ-, Հօ՛րեղբայր»։
— «Տօ՛ Աստուա՛ծ Քո Տունը չաւրէ՛..., ա՛յ Տըղե՛կ,
Ա՛ս ի՞նչ բան ես ըրեր Դուն...»։
= «Ապա, Հօրա՛ր, ես ի՞նչ ընեմ...,-Դաւիթն ըսաւ Օհանին-,

---

*) Մղել (մղել), Խօթել, մտցնել։ *) Հղիոց, Հեւոց, հեւհեւոց։

Այդ տեսակի Ոչխա՛րն է որ խօրո՛տ է·
Այն Մէկալներ՝ որ տըւիր՝ ես տարե՛ր եմ՝
Իսկոյն այնտեղ կ՚իյնայի՛ն իմ Ոտից տակ···,
Կը տատկէի՛ն այդ Ուղեր··· ·
Մէկն ալ չըկա՛ն, Ամե՛ն զարկեր ըսպանե՛ր եմ Սարն ՚ի վեր»։
— «Ի՞նչպէս զարկեր ըսպաներ .՞.՞.՞»։
=«Ապա՝ Հօքա՛ր, Անոնց ես իմ Ձե՛ւս կուտայի՝ կ՚իյնայի՛ն···,
Ո՛ւ կուտայի՝ կ՚իյնայի՛ն···,
Կո՛ւ կուտայի՝ կ՚իյնայի՛ն···,
Ի՞նչ կ՚ընէի՝ կը տատկէի՛ն տեղնիտեղ,
Ան ի՞նչ տեսակ Ոչխար էր···,
Ես՝ Ինձ համար՝ աղէ՛կ Ոչխա՛ր եմ բերեր,
Ատոնք ուժե՛ղ ու տոկո՛ւն են, չե՛ն տատկիր···։
Մ՚ինչքան Անոնց տեւունեերէն լարե՛ր եմ ես՝ դէ՛ս ու դէ՛ն···։
Իմ Սօլե՛րը կըտըրտուեր՝ կախուե՛ր են···։
Հազի՛ւ Անոնք ժողվեր-բերեր՝ Գառներուն մէջն եմ բերեր···։
Դէ՛, այդ տեսա՛կ Ոչխար կ՚ըլլայ, Հօ՛րեղբայր,
Այն Մէկալներ՝ ի՞նչ են որ···»։
«Տօ՛ անիծո՛ւկ,-ըսաւ այնտեղ Հօրեղբայր-.
Ինձի համար՝ եօթը տարուան Սօ՛լ եմ տըւեր՝ ես՝ կարել,
Դուն՝ ատ մէ՛կ օր՝ կըտըրտեցի՛ր լըմընցա՛ր···,
— Դաւի՛թ,-ըսաւ-, Դըլխո՛ւդ մեռնիմ՝ արեւո՛ւդ,
Օրը մէ՛կ Սօլ կարել տամ՝
Քո վարձն այդքան չի հաներ·
Մ՚ի Մեր օգուտն ի՞նչ է որ···»։
=«Ես ի՞նչ ընեմ,-ըսաւ Դաւիթ-, այդ Ուղերը ինձի հանդիստ չըտըւի՛ն»։
Այն ժամանակ՝ Հօրեղբայրը խընդաց այնտեղ, ի՞նչ ըսաւ·—
— «Քո Տո՛ւն չ՚աւրի՛, Տըղա՛յ,-ըսաւ-, սրի՛ Դուն այս Դուռը բա՛ց»։
= Էհ, Հօրեղբայր,-Դաւիթ կ՚ըսէ-, ես յոգնա՛ծ եմ· է՞ր բանամ·
Մըտիր Դո՛ւմբ՝ ու դիտէ՛···»։
— «Որդի՛, սրի բա՛ց այս Դուռը, թող որ երթ՛ան Գազաններ,
Անոնք Մեզի օգուտ չեն տար՝ մէ՛կ բանովը»։
= Հօ՛րեղբայր, դէ՛հ, սրի Դո՛ւն բաց՝ թո՛ղ երթա՛ն,
Ես յոգնե՛ր եմ, չե՛մ կըրնար···»։
Հօրեղբայրն ալ՝ — «Աստուած Քո Տուն չ՚աւրէ՛-ըսաւ-, ա՛յ Տըղայ,

Ես կըրնա՞մ որ Ջաղցի-Քարը ա՛ս տամ Դաւթին առջեւէն,
Արի թա՛լ *) ա՛ս՝ թող երթա՛ն . . . .
Ասիկ Սարի Դաղանները են՝ Դուն ժողվե՛ր ես ու բերե՛ր,
Թող որ երթա՛ն այն չխլարի՛կ Դաղանները,
=«Չէ՛, Հօրեղբա՛յր,-ըսաւ-, Առանք ժողովուրդի Ուլե՛րն են,
Ինչո՞ւ Թողում՝ երթան Սարեր կթսըրին . . . .
Չէ՛, ես Անոնք չե՛մ Թողներ . . .»:
-- «Դուն դլնա Տա՛ւն, չա՛տ յոգներ ես, հանդըստացե՛ր քըչիկ մը,
Ես կը տանիմ Մեր Դառնուկները ամէն մէկը Իրեն ա՛ղ:
Միւսանները, Որդի՛,-ըսաւ-, Անոնք Ուլ չեն, Դազա՛ն են.
Գայլ ու Աղուէս, Ա՛րջ, Նապաստա՛կ են Անոնք.
Անոնք ինչո՞ւ ժողվե՛ր՝ Սարէն բերե՛ր ես . . . .
Ե՛լ՝ Ջաղցի-Քար ա՛ս տուր՝ երթա՛ն այդ խեղճեր,
Մենք Դառնները կըպահենք...»:—

378. Դաւիթ՝ Աճապարներ Դոմէն Դուրս Կ'հանէ

ՁՄ.386, կ.10,50, Զ(կ.10), կ.10՝Զ., Հ.375, (Հ.375). Ե.764,962,557,502 794,708,(Ե.557,502,12,620),Զ.՝Ե.962,764,557, Ձկ.442, Ճ.95, Ա.9, Ի.11.

Դաւիթ եկաւ Դոմի-Դուռը, Ջաղցի-Քարը Թալից ա՛ս,—
Ըսաւ, — «Հօրա՛ր, Դուն մըտիր նէ՛րս, Դառներ հա՛ն,
Ես Ուլերը կըբըռնե՛մ.
Դուն չե՛ս կըրնար Անոնք բըռնել. կըփախչե՛ն . . .»:
=«Որդի՛, - ըսաւ Հօրեղբայրն ալ - Դուն պըղտի՛կ ես հասակով,
Դուն մըտիր նէ՛րս, քըշէ՛ դո՛ւրս դան Ախոռէն,
Ես կը բըռնե՛մ Դառնուկները,
Ու կըտեսնե՛մ բալըլուսիկ այդ Ուլերը . . .»:
— «Լա՛ւ, Հօրեղբա՛յր, - ըսաւ այնուհե՛տ Դաւիթն ալ -.
Դուն կեցիր Դո՛ւռ, Ես երթամ նէ՛րս, Դոմին մէջէն հանեմ դո՛ւրս.
Միայն, Հօրա՛ր ադէ՛կ նայէ՛ չը փախցընե՛ս իմ Ուլերը . . .»:
Դաւիթ մըտաւ Դոմէն նէ՛րս,
Փա՛յտ մը ղարկաւ՝ մէ՛կ այն Սիւնին, մէ՛կ՝ Պաալ՛ն, —
Գա՛յլ ու Աղուէ՛ս, Նապաստակնե՛ր՝ դո՛ւրս ելան:

*) Թա՛լ, Նետ՛:

Զէնով-Օհան անսա՛ւ այնտեղ՝ որ Դաւիթ՝
Աղուէսներո՛ւն, Նապաստակի՛ն՝ «Բալքալուսիկ Ու՛լ» կ՚ըսէ՝
Կանչէց, = «Դաւի՛թ..., Թո՛ղ՝ արի՛...,
Թո՛ղ՝ դո՛ւրս արի, Թող՝ արի՛...,
Ատ Քու բան չէ՛..., Թո՛ղ՝ արի՛....
Թո՛ղ արի՛ ու երթանք Տո՛ւն...
Ատ Քու բան չէ՛, ա՛յ Որդի...
Դուն լոկ ըսէ՝ «Մաքուրները *) մընացէ՛ք,
Անմաքուրներ *) գընացէ՛ք·
Մաքուրները մընացէ՛ք,
Անմաքուրներ կորսընգէ՛ք գընացէ՛ք»...»:
Դաւիթ ներսէն որ Գառները դո՛ւրս ըրաւ՝
Աղուէսնե՛րն ու Նապաստակները՝ փախան գացին մէյմէկ Սա՛ր:
Դաւիթ այնտեղ սրրդողեցա՛ւ Հօրեղբօր, —
Ըսաւ, — «Հօքա՛ր, ինչո՞ւ Դուն իմ «Ուլերը» Թողիր՝ գընացին...»:
=«Որդի՛, Անոնք Գայլ-Գաղա՛ն են· մաքուր Ուլ չե՛ն· Գառնուկ չե՛ն»:
Դաւիթն ըսաւ, — «Դէ՛, Դուն որ իմ Բալքա՛լ-Ուլերը Թո՛ղ արիր՝
Ա՛լ ես Գաղքի Ոչխարները չե՛մ տանիր...»: —
Սըրդողեցա՛ւ՝ եկաւ Տո՛ւն:
Որ եկաւ Տուն՝ մաքուր մընա՛ց, անմաքուրը գընաց Սա՛ր, —
Ամեն Մարդիկ՝ ելան բացին Իրենց Դուռ-ու-Դարպասներ,
Իրենց Գառնե՛րն Ուլերը տարան գոմերի՛ն..., —
Թողին՝ հանգի՛ստ՝ Իրենց Մայրերը ծըծեցին...:
Մէկ-քանին ալ՝ սըրտոտներէն՝ հասան կօռով ու Փայտով,
Ամենամէկէն որչափ կըրցա՛ն՝ բըռնեցին,
Կո՛ւզ, Նապաստակ, Ա՛րջ ու Աղուէս, բսպանա՛ծ թէ թակարդով,
Տարան Իրենց Ուլերո՛ւն հետ՝ Իրենց Տո՛ւն, —
Նապաստակը մորթեցին ու կերան Ուլի պէս համե՛ղ,
Կուզն ու Աղուէս՝ ըրին Մուշտա՛կ՝ ու հագա՛ն: —
Այն առենէն՝ մինչեւ հիմա՝ Նապաստա՛կն ալ կը մորթե՛ն,
Հա՛ կը մորթեն՝ հա՛ կուտեն·
Կուզն ու Աղուէս՝ կ՚ընեն Մուշտակ՝ կը հագնին:

---

†) Ե.764՝ հաղալ(ներ), հարամ(ներ):

Ձէնով-Օհան՝ ելաւ դընաց Իրեն Տո՛ւն,
*Ըսաւ, «Անի փոխածուրիկ *) Տըղա՛յ է . . . ,*
Անիկ ծո՛ւռ է . . . , ա՛լ չե՛մ ըներ Գառնաբած . . . ։
Ա՛ս ի՞նչ մո՛ւր էր որ քըսեցինք Մեր Նբես . . .
*Ծաւռ, Թալասիկ *) Մեր այս Տըղա՛յ-Դաւիթը՝*
Ո՛րչափ Գազան որ սեւե՛ր է Սար ու Քար՝
Ժողվեր-բերեր ու լըցե՛ր է Հօտին մէ՛ջ . . . » ։
Այնտեղ Դաւիթ Նըստաց՛ աց ,
Այլեւս չըրա՛ւ Գառնաբած , —
Ըսաւ՝ «Առաւօն Թող Ուլերը չըտանի՛,
Ձո՛ւր է. Դաւիթ՝ Ո՛ւլ , Նապաստա՛կ, Գա՛ռ ու Աղուէս թէ՛ Գազան՝
Մէկ-մէկալէն չի՛ ջոկեր ։—
Բերեր ընենք Հօրթ†)արա՛ծ » ։—

379. Դաւիթ Անգործ, կամ Տէրտէրին Տուն՝ կարդալու Եսեւէ

կ.50՝Ձ., ե.962,963,998,1100, Հ.25, Ձ.՝Հ.25, Ց.95ա.

Ձէնով-Օհան ելաւ կանչեց՝ Քաղքի Մարդեր ժողվեց հա՛ն,
Ըսաւ , — «Մարդի՛կ, Աստծո՛ւ սէ՛ր,
Լուսուն՝ Դաւիթ ա՛լ չըզընէ՛ք Ձեր Գառներուն հե՛տն երթայ .
Դաւիթ ծո՛ւռ է . . . , Գա՛ռն ու Գազան չի՛ ջոկեր » ։
Անո՛նք ալ թէ՝ = «Իրա՛ւ, Մենք ա՛լ Դաւիթը չե՛նք ուղեր .
Ա՛լ չե՛նք ղըներ Մեր Գառներուն հետն երթայ .
Անիկ ծո՛ւռ է. Գա՛ռն ու Գազան չի՛ ջոկեր . . . ,
Ո՛րչափ Գազան որ կա՛յ Սարեր՝ կը ժողվէ՝
Կ՛առնէ-բերէ՝ կըխոթէ մէջ-Քաղաքէն . . . » ։
*Հօրեղբայրն ե՛րն ալ ըսին թէ , — «Բան չկա՛յ *),*
Վաղը ըկերնք՝ Նախըռդ ընենք՝ Թող երթա՛յ » ։

---

*) Փոխածուրիկ, Փոխած՝ տեղը չար դրուած . ե. 557՝ Բադալ ։ Համմալ.՝ Արտաւազդի մասին Խորենացիի ըսածը (Բ. ԿԱ. 287) «...Վիշապազունք դողացան դ՝մանուկն Արտաւազդ՝ եւ դեւ փոխանակ եղին» ։ *) Թալասիկ, Թալթալ տասրիւն ունեցող, Թոթով-ասիկ, Թլուատ, Թըլոլ ։ †) կամ՝ Նախռոդ ։ *) Բան չկայ, Վնաս չունի ։

Մընաց լուսուն, Դաւիթ ելաւ իր կոճանը առաւ Ձո՛ւռ,
եկաւ կեցաւ Քաղաքի՛ն մէջ՝ ու կանչեց, —
— «Դառներ Թողէ՛ք՝ որ տանի՛մ...»։
Քաղաքացիք ըսին, = «Դաւի՛թ, Մենք Դառները չե՛նք Թողուր։
Ձեզ չե՛նք ըներ Դառնապած...»։
Ընաւ, — «Ինչո՞ւ Ձեր Դառները չէք Թողուր.՞.՞.՞»։
= «Դուն Դազաննե՛րն ու Դառնե՛րը մէկ-մէկալէն չե՛ս ջոկեր.
Սարի-Դազան՝ Դառներո՛ւն հետ կ՚առնես-բերես Քաղքին մէ՛ջ,
Մեր Տըղաներ կը վախնա՛ն...
Գընա Քո Տո՛ւնն՝ ու նըստի՛ր...»։
— «Որ այդպէ՛ս է՝ ես առջի՛ն օր պայման ըրի Ձեզի հե՛տ,
Բերէք տըւէ՛ք իմ վարձքեր...»։
Բըռնեց այնտեղ՝ իր վարձն առա՛ւ Անոնցմէ։
Դըրացիներ՝ Իրենց Ուլերն ու Դառները չըհանեցի՛ն որ տանէր.
Դաւիթն այլեւս Հօտին առջեւ չը դըրի՛ն.
Մէկ-քանի օր՝ մընաց պարա՛պ, Փողոցները կը չրջէ՛ր,
Կամ թէ կ՚երթար Տէրտէրին Տուն՝ կարդալ-դըրի՛լ կը սորվէր։

380. Ձէնով-Օհան՝ Դաւիթը Կ՚բնէ Նախատող

Կ.11, Լ.18, (Լ.18), Զ.Ղ.18, Խ.11, Զ.Ն.11, Ծ.95,94,89, Զ.Ծ.94,89, (Ծ.90), Հ.415,25, Ե.899,1099,1100, Զ.

Աստե՛ն անցաւ, տեսան Դաւիթ չա՛տ կ՚ուտէր՝
Իրենց ապրուստն ալ չի՛ եղներ, կը նեղուի՛ն, —
Ձէնով-Օհան Դաւիթին ըսաւ, — «Ա՛յ Որդի՛,
Ապա Դուն ի՞նչ պիտի ընես ասկէ վերջ...»։
Ըսաւ, = «Հօքա՛ր, Ինձի մէկ Սո՛ղ մ՚կարել տուր,
Որ ես հագնիմ՝ երթամ Դա՛շտ»։
= «Ոչ Սո՛ղ կարել տամ Քեզ համար, ըսաւ Իրեն Հօրեղբայրը-,
Ոչ ալ հագնիս՝ Ուլեր առնես տանիս Սա՛ր...,
Ձէ՞ կը տեսնեմ՝ որ չե՛ս կըրնար Հովիւութիւն ընել Դուն։
Դաւի՛թ, Որդի՛՝ Ուղ մի՛ տանիր. Ուլեր Քեզ չա՛տ կը նեղեն...

Նախի՛րն առ առ՛ք ըրէ *) Դա՛շա,
Պառկէ՛ աչնաւզ՝ քընացի՛ր,
Մինչեւ որ ես՝ ձայնի Բեղի Հա՛ց ըրեմ...:
Արի՛, — ըսաւ — Դիւղի նախրո՛ց ընենք Բեղ,
Հօրթեր *) առնես՝ ու պահե՛ս.—
Թէ վա՛րձ կ'առնես, թէ՛ Տաւն երկու Հա՛ց առնելավ՝ կո՛ւշա կ'ուտես.
Զաի մ'երկո՛ւ ալ՝ Կորնկ կուզայ՝ կ'ապըրուինք..., —
Մենք ալ, Որդի՛, ապրատացո՛ր ենք այլեւս...,
Մ'լ չե՛նք կրնար ապըրուիլ...:
Տաւար պահել՝ կրնա՞ս թէ՛ չէ չե՛ս կրնար.
Կուզե՞ս ըլլաս Հօրթարած...»:
Դաւիթ՝ այնտեղ՝ ընդունե՛ց, —
— «Աղէ՛կ, — ըսաւ —, ինչո՞ւ չըլլամ, Հօ՛րեղբայր.
Առաւօտուն՝ Գաղաքին մէջ՝ կանչէ՛լ ուր,
Տաւար բերեն Նախրատեղ *).
Կ'ըլլա՛մ Նախրապետ, Տաւար առնեմ՝ արածո՛ւս»:
Ձէնով-Օհան՝ լուսուն եղաւ ու կանչեց,
Բերաւ այնտեղ՝ երսո՛ւն արնաւոր *) Գեղացիք,
Ըսաւ, — «Մարդի՛կ, նայեմ թէ Դուք ինչ կ'ըսէք.—
Դէ՛, Աննիկ ծանո՛թ է որ՝ Տըղայ-Դաւիթն ևկա՛ծ է,
Ձեր Նախիրը մարդո՛ւ չի ուզ՛ած այս տարի.
Ես մեր Դաւիթ պիտի ընեմ Հօրթարած.
Բերեն՛ք դրնեն՛ք Նախրի առաջ՝ Թող տանի՝
Գիւղի Հօրթերն իւ՛նք պահէ՝ —
Տաւրի՛ գլուխ *) մէ՛կ կօա *) Կորնկ, մէ՛կ կօա Ցորեն՝ վա՛րձ
[կուտաք,

---

*) Ընել, Հանել: *) Հորթեր, կամ՝ Գառներ, Ուղեր՝ կ'յիշեն ժողովրդական անդիր Պատմողները՝ այդ ընտանի անասուններուն փորիկ տեսակներուն անունը տալով, Դաւիթի տղայ տարիքին պատշաճեցնելով: Բիչ անգամ կ'ըսեն՝ Ոչխար, Այծ, Կով կամ Եզ ու Գոմէշ, որ խոշոր են: *) Նախրատեղ, Նախիրին հաւաքավայրը՝ ուր կ'երթայ Նախրապետը կ'քշէ տաւարը՝ կրտանի դաշտ: *) Ցնուոր, Տունէ բաղկացած: *) Տաւրի Գլուխ, Ամեն մէկ տաւարէ հաշուով: *) Կօս, Չափ (արմաւիքի):

Շաբթուն՝ օ՛ր մ՛ալ՝ Տուն մէկ Հա՛ց, —
Դաւիթ ընենք Զեղ Նախրորդ,
Զեր կովերը տանի Դա՛շտ,
Ինքն ալ տուով ապրուի՛...»։
Գիւղականը հաւանեցա՛ւ, ըսաւ, = «Հա՛,
Նախիր դընենք Դաւթի առջեւ՝ տանի Դա՛շտ.
Դաւիթ ընենք Մեզ Նախրո՛րդ»։
Դըրին Իրենց Նախրին առա՛ջ, Դաւիթն ըրին Հօրթաբած։

381. Դաւիթ՝ Նախիրը Կ՛տանի Սիվեակ-Գար՝ Ի Սամսայ-Սար

Չկ.443, Խ.11, Ճ.90,89,27, Չ.Ճ.89,90,27ա., Հ.375,416,415,25, Չ.՝Հ. 416,(Հ.375), (Ա.64), Ա.64,9, Ե.620,708,557,12,899,998,503,1100, Չ՝Ե.708,503,(Ե.557), Ս.151, Լ.18.

Զէյնով-Օհան՝ մէկա՛լ օրը՝ ելաւ տպա իՙնչ ըրաւ.—
Զոյգ մը նոր Սո՛ւլ կարել տըւաւ՝ Գողպատէ,
Նոր կօռի՛ մ՛հետ՝ տըւաւ Դաւթին՝ ու ըսա՛ւ.—
— «Դաւի՛թ,-ըսաւ-, Գեղ՝ այս անգամ՝ Գիւղի Նախրո՛րդ եմ ըրեր,
Նախրորդութիւն անո՛ւշ բան է, ա՛յ Տըղայ.—
Աբի՛ գընա՛՝ Նախրորդութի՛ւն ըրէ՝ մօտիկ Գիւղին մէջ,
Անոնց Նախիր՝ Դուն պահէ՛.
Տաւրի՛ դըլուխ՝ մէ՛կ կօտ կորեկ, մէ՛կ չափ ծորեն՝ վա՛րձ կուտան.
Շաբաթական մէ՛կ անգամ ալ՝ Տուն մէկ Հա՛ց»։
= «Աղէ՛կ, Հօքա՛ր, — ըսաւ Դաւիթ —, Ես կ՛երթամ»։
Հօրեղբայրն ալ՝ Գեղի Նախրո՛րդ ըրաւ Դաւիթ, այս անգամ. †)
Հօրթիկներուն հե՛տ ղըրկեց։
Լուսաբացին՝ Զէյնով-Օհան որ ելա՛ւ, —
Կանչեց ըսաւ, — « Տաւար բերէք Նախրատե՛ղ,

---

†) Դաւիթի՝ Քաղքին Ուլարած կամ Գեղին Նախրորդ կարգութիւը՝ այլաբանական վիպական ձեւն է՝ Քաչաքապետի եւ Գիւղապետի պաշտօններուն, որոց մէջ Դաւիթը պէտք էր մարզուէր՝ Պետութեան ղեկը ձեռք առնելէ առաջ։

Թող Դաւի՛թը Նախիրն առնէ ու տանի՛»։
Գեղականը՝ Հորթեր թողին Նախրատե՛ղ,
Դաւիթ Տուն էկաւ գլխաց Նախրի դէ՛մ,
Տըւին տարաւ՝ որ պահէ։
Դաւիթն ըսաւ, — «Եկէք երթա՛նք՝ որ իմ վարձը սակարկե՛նք»։
Գացին այնտե՛ղ, Դաւիթ վերցուց իւնչ ըսաւ.—
— «Դուք Ձիս բերի՛ք՝ ըրիք Ձեզի Հորթարա՛ծ,
Տանիմ պահե՛մ Ձեր Հորթերը.—
Օրէն առա՛ջ՝ երէկ Ձիս դո՛ւրս հանեցիք՝
Լըմա՛ն կ՚առնե՛մ իմ վարձքիս...»։
Պայմա՛ն ըրաւ՝ ու Գեղականն ընդունե՛ց.—
Ըսաւ, — «Դաւի՛թ, լըրիւ կուտա՛նք Մենք Քու վարձ,
Դուն ա՛ռ գընա՛ Մեր կովեր, —
Միայն՝ Գիւղին վընաս մի՛ տար, Աստծո՛ւ սէր՛...»։
Ձէնով-Օհանն ալ իւնչ ըսաւ Դաւիթին.—
— «Որդի՛, — ըսաւ —, որ Նախիրը կը տանիս՝
Բարձրացընես տանիս վե՛րը, Սասմայ-Սարի Մարդավա՛յր,
Թող այնտեղը արածա՛ն։
Այնտեղ Սիվտակ-ի՛ր մը կայ, —
*Սիվտակ-Քարի տա՛կ որ հասնիս՝ մէկ դըղըլան *) Աղբի՛ւր կայ, —*
Քո Նախիրը կըհաւաքե՛ս էկօրին
Այն Աղբիւրին վըրա՛յ կուգաս՝ կըհանդչի՛ս. — ‡)
Ես՝ Ձաշոցին Հա՛յց կըբերեմ Քեզ համար»։
Հօրեղբօրն ալ՝ միտքը իւնչ է, — որ Դաւիթ՝
Սար-Քա՛ր իյնայ, կըտըրճուքիւն մի՛չտ պահէ,
Մինչեւ մեծնայ՝ վանէ՛ Սասմայ թըշնամիք...։
Դաւիթն ըրին Հորթարած ×).
Մէ՝ տե՛ս իւնչպէս Հորթարած...։ —

---

*) Գլգլան, կարկաչուն։ ‡) Տե՛ս գործիս Ցառաջաբան, ցա. էջ 41, Ջուրի մասին չեչտուածը, քերթուածին ու ստորէջի Մանօթութեան մէջ։ ×) Բնագրերուն մէջ՝ Նախրորդ։

382. Դաւիթ՝ Նոր Սօլով, Նոր Կօռօվ՝ Սարի Գազաններու Տեսիլը

Հ·416,375,25, (Հ·25), Ց·90,27, Զ·՝Ց·90,27, Խ·11, Զ·՝Խ·11, (Ե·708), Զ·՝Ե·12,557, Ե·557,620,899,998,1100,708,12,733, Ա·64, 9, (Ա·9), Զ·՝Ա·9, Զ·, Կ·11, Զ·՝Կ·11, (Լ·18), Ս·152·

Դաւի՛թն էր ալ, — Իր Պողվրտի՛–Սօլ հագա՛ւ,
Երկաթէ նոր Կո՛ռը բռնեց Իրեն Ձե՛ռ,
*Մէկ Բարդի՛–Ծառ՝ քաշե՛ց դըրաւ վերՙ փխճին *),*
[Անով Նախի՛ր կըջըշէ],
Եկաւ՝ Նախիրն առջե՛ւ տըւաւ ու քըշե՛ց;
Հորթերն առաւ՝ ելաւ Սար–վեր ‡)՝ որ Նախի՛րը արածէ···:
*Հիմա, Նախիրն ինչ *) տարա՛ւ···՝*
Ինչ՛ց հանեց Սարն՝իվե՛ր···, —
*Ա՛լ Դաւի՛թն էր, — որ Կօպա՛լ *) մը կըզարնէր այդ Հորթերուն՝*
Քառասո՛ւն Հորթ ալ՝ կըդըլորտէր միասի՛ն···:
Մէ՛յ մ՚ ալ՝ Դաւիթ՝ Նախիր համրեց տեսա՛ւ որ···՝
Հարիւր–յիսո՛ւն հատի չա՛փ էր Իր Տաւար, —
*Է՛լմէլ *) այնտեղ մի՛տք ըրաւ, —*
«Այս Տաւարը քի՛չ է ֆ,–ըսաւ–, իրա՛ւի,
Աւոր վարձը ըսես՝ ի՞նչքան պիտի դայ···՝
Որ Մենք ուտենք՝ կառավարուի՛նք այդ վարձով··· .
Երթամ՝ քի՛չ մ՚ ալ դըտնեմ բերեմ՝ մէ՛յը տամ՝
Դէ՛, որ իմ վարձն ու իմ Հացը չա՛տ ըլլայ···»:
Ան ալ Հորթեր թողուց այնպէ՛ս, ինչքը ինկաւ Սա՛ր ու Ձոր, —
*Ինկաւ Սարե՛ր, քանդակնե՛ր *),*
Ու կա՛ն եկաւ վե՛ր ու վար···: —
Դաւիթ երբոր Ոտքը Գետի՛ն կըզարնէր՝
Գետին կ՚թնդա՛ր Սար ու Քար···:
Դիր մը որ Հոն կըպօռա՛ր ու կըկանչէր՝
Անոր Ձայնէն Գազանները կըդողայի՛ն Քարի տակ···:
Ինչքան Ա՛րջ կար, ի՛նչքան Առի՛ւծ ու Գայլե՛ր,

---

*) Փէճ (փխճի), Ուսին՝ վերի կլոր մասը: ‡) Ա·9՝ տարաւ Իօլայ Դաշտ: *) Ինչ, ինչ առեն որ, երբոր: *) Կօպալ, Հասո ձեռնափայտ, բիր, մահակ: *) Էլմէլ, Նորէն: *) Քանդակներ, Քարուքանդ տեղեր, փուլեր, աւերակներ:

*Ինչ Աղուէ՛ս կար, վա՛դը ու վէրի *), Նապատատա՛կ,*
*Ինճ ու կըտրան *), ամէ՛ն տեսակ Գաղաններ,*
Անոր ահէն՝ ելան փախան տ՛ղ ու ձախ...: —
Դաւիթ Ինքն ալ՝ ինկաւ Անոնց եռեւնե՛ր...,
Որու հասա՛ւ ու կեցուց՝
Ձարկաւ ժողվեց, բերաւ լեցուց Նախրին մէ՛ջ, —
*Գիտէ *) Թէ Իր Տաւարնե՛րն են կըփախեր...:*
Այնպէ՛ս Թափով կըվազըներ՝ կըթըռուցէ՛ Գաղաններ,
Նապատատակնե՛ր, վէրինե՛ր...՝
Որ այդ խեղճերն Իրենց Լեղուն կըթափեն դա՛ւրս՝ կըղաղրեն,
Ան կըբըռնէ՝ կըթրէ՛ւ ե՛տ՝ ու կըխառնէ Նախրի՛ն:
Աստուա՛ծ դիտէ տ՛ղ ի՞նչքան..., —
*Անոնք՝ փախա՛ն...՝ Դաւիթ Թողուց *) փախողներուն եռեւէ՛ն...,*
Գաղաններըը յոգնեցան ու անդօր եղան, դադրեցան...,
Դաւիթ բըռնեց՝ բերաւ խոթեց Նախրին մէ՛ջ: —
Առիւծ մէ՛կ կողմէն բերաւ, Ինճը մէ՛կ կողմէն բերաւ.
Գայլը մէ՛կ դահէն բերաւ, Վագրը մէ՛կ դահէն բերաւ.
Արջը մէ՛կ կողմէն բերաւ, Աղուէս մէ՛կ կողմէն բերաւ.
Խողը մէ՛կ կողմէն բերաւ, Կուղը մէ՛կ կողմէն բերաւ.
Վէրին մէ՛կ դահէն բերաւ, Նապատատակ մէ՛կ դահէն բերաւ. —
Ամենայն ցեղ Գազան՝ ժողվե՛ց ու բերաւ,
Դաշտը լե՛ք ըրաւ...: —
Տաւարները՝ Գաղաններո՛ւ ահէն կեցած են,
Գաղաններըը՝ Դաւթի՛ ահէն կեցած են..., —
Դաւիթ առաջ կայնե՛ր է...: —
Ան ինչ Գայլե՛րն են՝ կ՛հաւանին դէհ Հորթեր որ ուտեն,
Դաւիթ կըհաւանի՝ Պոչէն կըբռնէ՝ կ՛վերցնէ կ՛զարնէ Գետի՛ն:
Ան ինչ Հորթերն են՝ կ՛երիւկան դէհ Գայլեր՝
Ահէն չե՛ն պրածար...,
*Ժողվեր *) են Իրար վրա՛յ, կեցեր են այնտե՛ղ...: —*

---

*) վէրի, վայրի ոչխար, երէ: *) Կտրաճ, վայրի խող, կինճ: *) Գիտէ, կըկարծէ: *) Թողուլ, Սլանալ, արագ վազել: *) Ժողվեր են, Ժողովուեր են:

382. Ջէնով–Օհան՝ նէաօրի ճառ ե՛րեէ Դաւիթին

Հ·416,25, Ջ·՝Հ·416, Ց·27,90, Ա·9, Ջ·՝Ա·9, Կ·11, (Խ·12). Խ.12, Ջ(Խ.12).

Դաւիթ ա՛յնքան վազեր էր ու նեղացեր…, —
Ոսից Պողվատ–Սօ՛ղը հանեց՝ ծակուե՛ր էր…։
Կօ՛ռն լինէ իր Ջեռ բըռնե՛ր էր ու վազվըռտեր՝
Ֆըսուե՛ր–ֆըսուեր՝ մաշե՛ր էր…։
Օրը՝ կէսօ՛ր որ եղաւ, —
Ճա՛չոցին, —
Ժողվե՛ց Նախիր՝ քըշեց Դա՛շտ,
Բերաւ Սիվոտակ–Ֆարի տա՛կ,
Վեր՝ Աղբիւրին նըստեցաւ, —
Նայեց տեսա՛ւ՝ որ Հօրեղբայր՝ Հա՛ց կըբերէ կէսաւուր։
Ջէնով–Օհան ղընաց ելաւ Ֆարի դըլուխ, իրիշկա՛ց,
Տեսա՛ւ Նախիր՝ հեռուէ՛ն,
Թէ Տաւարը չո՛րս–հարիւր էր՝ եղեր հիմա ո՛ւթ–հարիւր…,
Դաւիթ ա՛յնչափ Գա՛յլ ու Գազա՛ն Ժողվեր է ո՛ր՝ Տէ՛ր փըրկէ…։
Անմաքո՛ւր ու մաքո՛ւր Տաւար՝ խառներ իրա՛ր, հաւաքե՛ր,
Բերեր՝ բոլո՛ր՝ լեցուցեր է մէջ–Նախրի՛ն։
Իր սարսափէն՝ մէ՛կ չի՛ կըրնար իրար դըպչիլ, վընասել։
Ո՛ր մէկն ալ թէ իրա՛ր դըպչին ու վախին՝
*Դաւիթ այնպէ՛ս կուտայ *) Գետին՝ որ կըմըտնեն Գետիններ…։*
Փախողնե՛րն ալ՝ չէ՛ն ազատուիր իր Ջեռքէն…, —
Կըղարձընէ իրարու վրա՛յ կըբերէ…։
Ա՛յնքան վազեր՝ վազվըռտե՛ր է Սար ու Ֆար՝
Պողպատ–Սօլեր կըտըրտըռե՛ր՝ ծակուե՛ր են…։
Ջէնով–Օհան վախցա՛ւ այնտեղ, ի՞նչ ըսաւ. —
Կանչեց Դաւթին ըսաւ,— Դաւի՛թ, մատա՛ղ ջեզի՝ Հօրեղբայրդ,
Շերացե՛ր եմ, չէ՛մ կըրնար գալ. արի՛ ջա՛ռ ու տա՛ր»։
Դաւիթն ըսաւ՝ «Ա՛հա՛, իրա՛ւ, իմ Հօրեղբայր վախեցա՛ւ…։
Ըսաւ,= «Հօքա՛ր, Դուն քե՛ր դիր մօա–Աղբիւրին.
Ես չե՛մ կըրնար այդտեղ գալ.—
Բալքալուսա՛ն այդ Ուլիկներ կըփախչի՛ն»։

---

*) Տալ, Ջարնել։

Ան ալ ըսաւ,— «Տէ՛րը վըկայ, ես չե՛մ գար.
Այդ Քու բերած Դաղանները կըվախնա՛մ...»։
Իր Զեռքի՛ Փայտ ալ՛նկից Դեամին, Հացը կապից Կօռին ծա՛յր †),
Ըսաւ,— «Նկո՛ւր՝ Քու Հաց ատ՛ր...»։
Դընաց Իրեն Հացը առա՛ւ ու բերաւ՝
Աղբիւրին մօր նըստեցա՛ւ՝ Իր Ճաչն ըրա՛ւ։

384. Զէնով-Օհան Նորէն Արպատուրէ՝ Գիւղացիի Դուռները Կ'փակեն

Զ.՝Ա.9, Ա.9, Ե.12, Կ.11, (Կ.11), Զ.՝Կ.11, Հ.25,416,26, (Հ.26), Զ.՝Հ.416, (Ե.620), Ե.899, Զ.՝Ե.899, Զ.

Զէնով-Օհան՝ պարձաւ Հկաւ Մըտաւ Տո՛ւն,
Կանչո՛ւ տըւաւ Գիղացի Մեծ Իշխաննե՛ր,
Ու ի՞նչ ըսաւ Ամէնուն.—
Աստծո՛ւ սիրուն բլլայ,—ըսաւ—, Ձեր Դուռները հողեցէ՛ք....
Դարպասները փակեցէ՛ք...,
*Դըրան հետ՝ մէյմէկ Գերա՛ն *) քաշեցէ՛ք...*
Դաւիթ ա՛յնչափ Գաղա՛ն ժողվեր՝ բերեր խառներ Տաւրի մէ՛ջ...՝
Իրիկուն որ Աախ բերաւ մէջ-Գաղքին՝
Մայրը Մանուկ կ'ուրանա՛յ... ,)*
Մէկ անգամէն պիտի ուտո՛ւն Մեզ Ամենքս...,
Գիւղ ու Գաղաք աւերե՛ն...
Դաւիթ կանչէ՝ Թէ չըկանչէ՝ մըտիկ մ'ը՛նէք Իր խօսքին.
Կը սըրդոզի՛ ի՞նչ որ կ'ընէ՝ Թող ընէ՛՝
Դուք Ձեր Դուռներ մի՛ բանաք.
Մինչեւ որ այդ Գաղաններըը փախին երթան Սա՛րն 'ի վեր՝
Ելէք բերէ՛ք Ձեր Տաւարը գոմեցէ՛ք»։
Գիւղակա՛ցն է,— բերին Դուռներ հողեցի՛ն,
Դարպասները փակեցի՛ն,
Մինչեւ իրկուն կեցան Տանիս նայեցան ու ի՞նչ կ'ըսեն.—
— «Տեսանե՞ք Աախ ×) Նախիր պիտի Տուն բերէ՞՝ Թէ՞ չըբերէ...»։—

---

†) Թերեւս ասկէ է ժողովրդի ասացքը,— «Կօռը կայ, Կօռտիկը կը կա՛յ, Բաբո՛ չըկա՛յ» [Բաբօ = պապ, հայր, Կօռտիկ = կուրդիկ՝ բաժակ]։ *) Գերան, Գրկափակ, կամ Սողնակ, Դուռին հետևը՝ մէկ պատէն միւս պատին մէջ մանող փականք։ *) Մայր՝ մանուկը կ'ուրանայ. Անպատմելի իրարանցում կ'ըլլայ։ ×) Այսինքն՝ Դաւիթ։

385. Դաւիթ՝ Նախիրը Շատցուցած Կ'բերէ

ՁԿ·443, Կ·11, Կ·11՝Ձ·, Խ·12, Ձ·՝Խ·12, Ց·27,91,92,93, Ձ·՝Ց·93,92, Հ·375,416, 26,417, Ձ·՝Հ·417, (Հ·375), (Ե·708,998,502, 557,621, 899), Ե·899,1100,12, 620,557,998,900,558, Ձ·՝Ե·899,557, Ա·9, Ձ·՝Ա·9·

Դաւիթ՝ այնօ՛ր ալ՝ որ եղաւ իրիկուն՝
Ժողվե՛ց մաքուրն ու անմաքուր՝ մէկտեղե՛ց *),
Առաւ Նախիր՝ քըշեց Սարէն բերաւ տա՛կ,
Բերաւ մինչեւ Գիւղին մօտ,
Տեսաւ որ Մա՛րդ Գիւղին մէջէն դուրս չ'է՛լներ՝
Ան ալ կանչեց ձայն տըւաւ Թէ, —
— «Է՛յ Գիւղակա՛ցի, ‡)
Վե՛ր ելէք, դէ՛, վե՛ր ելէք,
Ելէք բացէ՛ք Ձեր դուռներ,
Ձեր Տաւարներ տե՛ղ ըրէք,
Ո՛վ Հորթ չունէ՛ր՝ Հո՛րթ եմ բերեր,
Ո՛վ Նզ չունէ՛ր՝ Ե՛զ եմ բերեր,
Կով չունեցող՝ Կո՛վ թող բըռնէ,
Որուն մէ՛կ էր՝ ըրեր եմ զո՛յգ·
Որուն երկո՛ւ՝ ըրեր եմ չո՛րս·
Ով չո՛րս ուներ՝ ըրեր եմ ո՛ւթ·
Որին հի՛նգ էր՝ ըրեր եմ տա՛ս·
Որուն տա՛ս էր՝ տանի բըռա՛ծ·
Որուն բըռա՛ծ՝ եղեր բառատա՛ւծ·
Վիր *) յիսուն էր՝ եղեր հարիւր·
Ձեր Տաւարը շատցուցե՛ր եմ·
Ձեր Հորթերը դեռ հուս օտա՛ր են Ձեզի·
Եկէ՛ք այսօր՝ Ձեր Տաւարներ տարէ՛ք Տո՛ւն·
Ի՛նչ որ Ձերը անձնակա՛ց է՝ բըռնեցէ՛ք·
Մէկալներըը թողէ՛ք երթան Իրենց Բոյն·
Բարով վայլէք Ձեր Տաւար»:
Ա՛յնչափ կանչեց, Ասո՛ր ըսաւ՝ Մարդ չ'ելա՛ւ,
Անո՛ր ըսաւ՝ Մա՛րդ չըլըսեց եւ Իր Տունէն դուրս չելա՛ւ,

*) Մէկտեղել, *Համախմբել*· [Կ·11՝ խոզար՝ *ուղղելի* խալալ (*մաքուր, հարազատ*), մէկ տեղից՝ *ուղղելի*՝ մէկտեղեց]; ‡) *Երգով*:
*) Վիր, *Որուն որ*:

Մա՛րդ չըտեսա՛ւ Գիւղին մէջ,
Ահէն՝ մէ՛կ Մարդ Դուռ չըբացա՛ւ չելա՛ւ դուրս:
Դաւիթ տեսաւ որ Գիւղական՝ Մա՛րդ դուրս չե՛ն ելներ Իր Տունէն՝
Որ դայ տանի Իր Տաւար, —
Սիրտը այնտեղ կոտրեցա՛ւ. —
— «Հէ՛յ դու Աչխա՛րհ..., արի՛,—ըսաւ—, աղէկութի՛ւն ըրէ Դուն...:
Ես՝ ամբո՛ղջ օր՝ արիւն–քըրտի՛նք թափեմ մինչեւ իրիկուն,
Սա՛ւ–ու–Զորէն Տաւա՛ր ժողվեմ՝ առնեմ բերի՛մ Զեղ համար,
Դուք Իմ յարդը չե՛ւմանա՛ք... .
Կ՚ելնէ՞ք,—ըսաւ—, թէ՞ չէ՝ բարով չե՛ւնէ՛ք դուրս...,
Ես Իմ Տաւար կըթողնե՛մ...»:
Զէնով–Օհան դընաց առջեւ, իւ՛նչ տեսնէ..., —
Զայդ մը Պողվատ–Սօլ ալ՝ այնօ՛ր թալեր *) է... .
Ի՛նչքան վայրի Գազա՛ն որ կայ Սա՛ր ու Զոր՝
Գա՛յլ ու Աղուէ՛ս, Նապաստա՛կ, —
Դաւիթ խառներ Նախիրին մէ՛ջ՝ բերեր տա՛կ...:
Դաւիթ՝ Սօլեր վերցուց նետեց Իր Հօրեղբօր Աչքին տա՛կ,
Ըսաւ, — «Հօրա՛ր, ես Քեզ ըսի՝ «Աչխատա՛կ Սօլ մ՚ կարել տո՛ւր՝
Որ մէկ տարի՝ Իմ Ոտքերուն տակ դաղրի՛...».
Ախիկ լուսո՛ւն հագեր եմ՝
Մինչեւ ճաշին կըտըրտուեցա՛ւ լըմընցա՛ւ.
Ա՛լ կըտրներն Իմ Ոտքերը չե՛ն դաղրիր...»:
Զէնով–Օհան Իր միանդիկեր ըսաւ՝ «Քո Տո՛ւն չաւերի՛...,
Ես Պողվըտ–Սօ՛լ տըւեր եմ կարել Քե՛զ՝
Ժա՛մ մը Քու Ոտ չըկեցա՛ւ...»:
Ան ալ կանչեց՝ ըսաւ, — «Դաւի՛թ, մատա՛ղ Քե՛զ...,
Ո՛ր Տաւարը որ դուրսէ՛ն *) է՝ դո՛ւրս ղրկէ,
Որ՝ տունէ՛ն *) է՝ ա՛ռ բեր Տուն...»:
Դաւի՛թն է ալ..., — փայտ մ՚ ա՛ն Արջու Քամակին,
Փայտ մ՚ ա՛ն Գայլի կըռնակին,
Զարկա՛ւ ըսաւ, — «Դուրսէն եկած՝ դո՛ւրս դացէ՛ք,
Տունէն եղած՝ դացէ՛ք Տո՛ւն...»:

---

*) Թալել, Լմնցնել, կտրաել: *) Դուրսէն, Վայրէ: *) Տունէն, Ընտանի:

Ու Նախիրը Թո՛ղ տըւաւ···, —
Պօռաց ըսաւ, — «Մաքուր մնացէ՛ք, անմաքուրը դացէք Սա՛ր»։
Ու դառնալո՛վ Գիւղացուն, —
— «Աստուած Ձեր Տո՛ւն չ'աւրէ,–ըսաւ–, Գիւղակա՛ն,
*Դուք Թող կուտաք՝ ամբողջ կըլլաւ *) Տաւարները վախին Սա՛ր՝*
Նիհարնե՛րը մընան այստեղ՝ Ձեզ համար··· ·
Ա՛լ ես Ձեզի Նախրորդութիւն չե՛մ ըներ···»։ —
Ըսաւ Դաւիթ, սըրդողեցաւ, Թողուց դընաց մըտաւ Տո՛ւն,
*Գախանակը *) կործեց *) Գըլուխ, կող եղաւ *) հոն՝ քընացաւ։*

896. Գիւղականը կ'երթայ Ջէնով-Օհանի Մօտ՝ Գանգատի

Չ·՝Ա·9, (Ա·9), Ե·12,1100,899,620,900,708,998, (Ե·558), Չ·՝Ե·708,13,621, Ճ·93, Չ·՝Ճ·93, Հ·375,417,26, Չ·՝Հ·417,375,26, Խ·13,12, Կ·11, Չ·

Դաւիթ երբոր Գազանները Թո՛ղ տըւաւ՝
Ժողովուրդը՝ Ամենք՝ վախցան, ու զարմացա՛ն այս բանին···։
*Գիւղերուն մէջ՝ ձիժով–կիներ *)՝ Գազաննե՛րը որ տեսան՝*
*Ախտո՛ց *) առին, Իրենց ձիժերն անցուցին··· *)։*
Գիւղականը ելաւ նայե՛ց՝ ի՛նչ տեսնէ···, —
«Ա՛ս Տաւար չե՛ն, ասիկ Սարի Գազաննե՛ր են ամենն ալ···։
կէս՝ Տաւա՛ր է, կէսը Ա՛րջ է, Գայլ ու Աղուէս, Նապաստա՛կ···»։
*— «Ասիկ չեղա՛ւ···, ըսին Ամենք· ողորդմա՛նց *) ծո՛ւռ է Ասիկ։*
Այս ընտաւե՛ր իսկի՛ Մարդու չընորք չունի Իր վըրայ···,
Ի՞նչ է ասի···, Մեր Տաւարները՝ որը ահէ՛ն պիտ՝ սատկին···,
*Որը՝ պիտի ընկեցկըտին *)՝ լըմընա՛ն···»։ —*
Նախի՛րն ըսես՝ ան ինչ Սարի Գայլ–Գազա՛նն էր, անմաքուր՝
Քաշուեցան ու վախան դացին Սարն 'ի վե՛ր,
Ան ինչ մաքուր Տաւարնե՛րն են, Հորթ ու Կով՝
*Մնացին կայնուկ *)՝ Գիւղին կեդրոն՝ Իրենց տեղ,*

---

*) կլաւ, Գէր, պարարտ։ *) Գախանակ, Թաղիքէ վերարկու, լօպ (Հովիւի)։ *) Կործել, Վրան քաշել։ *) Կող ըլլալ, Ընկողմանիլ, Թեք դալ՝ պառկիլ։ *) Ձիժով–կիներ, Ճղի կիներ։ *) Ախտոց առնել, Մաստիկ վախէն՝ յանկարծ ցաւեր զգալ եւ հիւանդ իյնալ։ *) Անցուցնել, Վիժել։ *) Ողորդմանի(ց), Ուղիղ որ, ճիշդ որ։ *) Ընկեցկտիլ, Վիժել (անասունի)։ *) Կայնուկ, Կանգնած, կեցած· *) Կտրել, Զուրկ ձգել։

Նոր՝ Ամե՛ն Մարդ ելաւ քացա՛ւ Դուռ-Դարպաս,
Ամե՛նմէկը Իրեն Տաւար բռնեց բերաւ Իրեն Տո՛ւն։
Մընաց լուռուն՝ այդ Գիւղական Իշխան-Մարդեր՝ մէ՛կ եղան,
Ձէնով-Օհան Հօրեղբօրը մօ՛տ գացին,
*— «Ձէնո՛վ-Օհան,—ըսին—, Դու Մեզ պիտի կըտրե՛ս *) Տաւարէ...,*
Դուն՝ այդ Տո՛ւրը՝ օր մը կ՛ընես Ուլարա՛ծ...,
Օր մը՝ Գիւղին Հարթաբած..., —
Գաղան-Տաւար՝ չի՛ որոշեր իրարմէ...։
*Բիվի՛ կ՛ընենք *), ասանկ մ՛ը՛ներ Մեզի հետ... .*
Եղբօրդ-Տըղան ‡)՝ Մեր Գիւղերը կ՛աւերէ...։ —
Մեր ո՛չ մէկին՝ Տաւար չ՛ե՛կեր, բան չ՛ե՛կեր... .
Գայլ-Գաղանի՛ աւելի բան՝ չ՛ե՛կեր կանդներ Մեր Դըրան...։
Մենք կըվախնա՛նք այդ Աըջերէն, Գայլերէն... ×)։
Այդ Տո՛ւռ Տըղան՝ թող Մեր Նախերն ա՛լ չըտանի արածէ...,
կըթաւէ՛... .
Ա՛լ չե՛նք ուղեր՝ Դաւիթ տանի Մեր Նախեր... .
Ո՛ւր որ կ՛ուզէ՝ թող երթա՛յ...»։
= «Որ այդպէ՛ս է,—ըսաւ Օհան—, հանդի՛ստ կացէք Դուք Ձեր տեղ,
Ես Տուն կ՛երթամ, պատուէ՛ր կուտամ Դաւիթին,
Ա՛լ այդ տեսակ բան չընէ՛...»։ —

887. Ձէնով-Օհան՝ Հայրաբար խրատ կուտայ Դաւիթին

Կ·12,11, Կ·50՝Զ·, Կ·11՝Զ·, Ճ·27, Զ·՝Ճ·27, Ե·13,708, 1100,558, 998, (Ե·557), Զ(Ե·557), Զ·՝Ե·708, Հ·375, Զ·

Ձէնով-Օհան չա՛տ բարկացաւ Դաւիթին,
*Լարեց *) Անոր եռեւէ՛ն. —*
Դաւիթ վախա՛ւ՝ դընաց մըտաւ Տէրտրոլ Տո՛ւն,
Գիրք բռնեց Ձեռ՝ կըկարդա՛յ...։
Հօրեղբայրն ալ՝ դընաց՝ Դաւիթ բերաւ Տո՛ւն,
Դաւիթ այնտեղ նըստեցո՛ւց,
Ուտելիքի Բանալիները տըւաւ Դաւիթին +)՝ ու ըսաւ. —

---

*) Ցիվի ընել, Ինդրել։ ‡) Ե·12՝ Քո տղան։ ×) Ե·12՝ «գիլե-բաց»՝ ուղղելի «գէլերուց» (գայլերէն)։ *) Լարել, Ուժեղել, վազել։ +) Այսինքն՝ Հիւրասիրած կարգեց։

— «Ի՛նչ Հիւր կուգայ, Որդի՛,–ըսաւ–, Հա՛յց կուտաս,
Կ՚ուտէ՝ ճամբո՛ւ կըղընես…»:
Ապա դարձաւ՝ ըսաւ, — «Որդի՛, Նախորդութիւն Ֆո բան չ՚է՛·
Թո՛ղ այդ Գործը՝ նըստիր Տո՛ւն·
Մի՛ երթար հետ–Հորթերուն·
Ես Նախիրը պիտի ղըրկեմ ուրի՛շ Մարդով՝ ուրի՛շ Սար:
Ես չե՛մ կըրնար, ա՛յ Որդի՛,
Օրը մէկ Սո՛լ, ան ալ Պողվա՛տ–Սօլ կարել տալ Քեզ համար:
Դուն որ այդպէ՛ս կ՚ընես, Դաւի՛թ, Քեզ ըսե՛մ, —
Ա՛լ չե՛մ կըրնար՝ Ես Քեզ չահել ու պահել…:
Որդի՛, Քու Հայր՝ Դաւիթ–Մըհէր՝ Ջո՛ջ Մարդ էր·
Այսպէս մ՚ը՛ներ· մե՛ծ ամօ՛թ է Մեզ համար· —
Գեղ–Գեղացին, Քաղաքացին՝ ի՞նչ կ՚ըսէ…»:
Ջէնով–Օհան մընաց չիվա՛ր…, «Զո՛ւր է,–ըսաւ Ինքիրեն–·
Այս Ծուռ–Տըղան՝ օր մը՝ պիտի երթայ Սարեր՝ իմնայ տա՛կ… ·
Կըտրի՛ճ է՝ բայց…՝ Ծո՛ւռ է, դեռեւս խելք չըկա՛յ…,
Գըրո՛ղ–մահը ղ՚ինք տանի՛…,
Թող մընայ ու պարապ մա՛ն դայ Իր դըլխէ… ·
Ո՛ւր որ կ՚երթայ՝ Թող երթա՛յ…,
Նախորդութիւն՝ Իրեն համար չ՚է՛ խակի *),
Դընենք ուրի՛շ Արհեստի…»:

288. Դաւիթ Իր Վարձքը Կ՚առնէ՛ Գիւղացիներէն

Ց·27, Հ·417,26, Զ·՝Հ·417, (Հ·26), Զ·, Ե·900,1100, Զ·՝Ե·900·

Մընա՛ց լուսո՛ւն, —
Լուս բացուեցա՛ւ, Դաւիթ քունէն ելաւ վե՛ր,
Գընաց Նորէն Նախրադընան *) ու կեցա՛ւ, —
Կանչեց ըսաւ, — «Տաւար հանէ՛ք՝ որ ես տանիմ ու պահե՛մ»:
Գիւղականը՝ այդ օր Նախիր չըթողուց· —
Ամենք ըսին, = «Եղբա՛յր, Մենք Քեզ ա՛լ Հորթարած չե՛նք բըռներ»:
Ըսաւ, — «Ինչո՞ւ չէք բըռներ·՞·՞·՞»:
= «Ի՞նչպէս բըռնենք, Դաւի՛թ,–ըսին Գեղացիք–,

---

*) Խակի, Երբեք, բնաւ: *) Նախրագնա(յ), Այնտեղ՝ ուրկէ Նախիրը կը մեկնի:

Արջևը, Գայլևը կ'ժողվևս–բևրևս՝ կըվեցըևս Գիւղին մէջ՝
Թէ Մեր Հօրքևր՝ Դուն սօ՛ր ալ տանիս Սար՝
Գաղանևերու ահէ՛ն Անոնք կը սատկի՛ն... .
*Մեր ձիժերը՝ մէկ օր՝ Ամեն կըկըտրին *)»:*
— «Ըսե՛լ է՝ Դուք չէ՞ք բըռևներ...»:
Ձա՛յն տըւին հոն Ամեննքո՛վ թէ, = «Չե՛նք բըռևներ»:
Ան կ'ըսէ՝ «Իմ կո՛վը իր տեղ ընկեցկըտե՛ր, թալե՛ր է».
Ան կ'ըսէ՝ «Իմ Հո՛րքը ահէն սատկեր է...»:
Դաւիթ ելաւ եկաւ Տո՛ւն,
— «Հօրա՛ր,–ըսաւ–, ե՛լ կօտն ու Պարկ ա՛ռ՝ երթա՛նք»:
Ձէնով–Օհան ելաւ առաւ կօտն ու Պարկ ‡),
Դաւիթ ինկաւ Իրևն առաջ՝ ու գացի՛ն:
Գացի՛ն Տուևնը՝ մէ՛կ ու մէկ,
Դաւիթ կ'ըսէ, — «Քո Տաւարը հա՛ն դուրս՝ տանիմ ու պահեմ»:
Ըսի՛ն, = «Մենք Քեզ՝ Գիւղին Նախրորդ չե՛նք բըռևներ»:
— «Որ չե՛ս բըռևներ՝ Իմ վարձ տո՛ւր...»:
Ամբողջ Գիւղը՝ այդպէս Տո՛ւն–Տուն պըտտեցա՛ւ,
Իր վարձքևրը լըմա՛ն ժողվեց՝ եկաւ Տո՛ւն:
Ա՛լ Նախիրը չըթողի՛ն, —
Դաւիթ նորէն մնաց պարա՛պ: —

Թ. ԹԸԼՈՂ-ԴԱՒԻԹ ՈՒ ԿԻՐԱԿՈՍ ; ՀԱՐԻՍԱ, ՁԻՆ ՈՒ ԳԱՆՁ

389. Դաւիթ Նորէն Նախրորդ Կ'ընեն՝ Ըսկերի Մը Հետ

Հ·417, 2(Հ·417), 2·, 8·27,90, 2·՝Հ·27,90, (8·27,90), Ս·152, 2·՝Ս·152, 2·՝Լ·19, Լ·19, Ա·64·

Մընա՛ց, Նորէն դընաց Փողոց՝ ձիժերու հետ խաղալու,
*Նորէ՛ն այդ խաղ *) Տըղոց դըլխուն որ խաղա՛ց՝*
Ամենք ժողվան՝ եկան ըսի՛ն Օհանին, —
Թէ, — «Այդ Դաւիթ՝ Մեր Տըղաներ կոտորե՛ց...,
Ի՛նչ որ դիտես՝ ան ըրէ՛..., —
Ուսումի՛ դիր, կամ՝ Թող երթայ ուրի՛շ տեղ...»:

---

*) Կտրիճ, վախէն յանկարծամահ ըլլալ: ‡) Պարկեր: *) Այդ խաղ, *Այսինքն՝* Տրըճկուզա եւ ձանոցի խաղերը· *Տե՛ս* 357–359 եւ 362-363 *Հատուածները*:

Քաղաքացին ու Գիւղական՝ մեծ ու փոքր՝
Ժողովուեցան՝ խորհո՛ւրդ ըրին միասին,
Ըսին, — «Աղէ՛կ, Դաւիթն ըրինք Գառնաբա՛ծ ու Հորթաբա՛ծ՝
Մինա՛կ՝ ղըրինք Նախրին հե՛տ·—
Հիմա բերենք՝ Ընկե՛ր մ՝ ղընենք Իրեն հետ,
Նորէն Դաւիթ Նախիրն առնէ ու տանի՛»:
Կանչեցին ու ըսին, — «Դաւի՛թ, Մեր Նախիրը նորէն ա՛ռ,
Նայէ՛ միայն՝ Նախիրին մէջ Գա՛յլ ու Գազան չը լեցուի՛···»:
*Լուսուն՝ է՛լմէլ *)՝ Դաւիթ եկաւ՝ Նախրին առաջ կանգնեցա՛ւ,*
Ժողվեց Տաւար՝ քըշեց Դա՛շտ,
*Տարաւ Նախիր՝ որ պահէ *),—*
Քըշե՛ց Հորթեր՝ հանեց Սարի մէկ գըլո՛ւխ:
Այնտեղե՛րն ալ՝ Գագուխ անուն Գի՛ւղ մը կար,
Առանց Նախրո՛ւրդն ալ Տաւարը կըրնկրէր՝
Ու կ՛արածէ՛ր այդ տեղեր:
Կէսօրուան մօտ՝ մէ՛կ ալ՝ Դաւիթ տեսա՛ւ որ՝
Ուրիշ Գեղէ՝ մէկ Նախի՛ր մ՛ալ եկաւ Սար՝
Որ այնտեղեր արածայ:
Գընաց հասաւ՝ այդ Նախիրի Տաւարն ամեն ժողվըտեց՝
Քըշե՛ց բերաւ՝ խառնեց Իրեն Տաւրին հե՛տ:
Դարձաւ տեսաւ՝ Հորթարածի մէ՛կն ալ կուգայ անդիէն,
Իր Հորթերուն կըհայհոյէ՛ ու կուգայ···:—
Ան ալ –Դաւիթ–՝ վազէվազ այդ Նախրորդին դէ՛մ դընաց,
— «Օ՛ Մա՛րդ,–ըսաւ–, Դուն Ինձի՛ կը հայհոյե՞ս···,—
Կեցի՛ր Ես գա՛մ՝ մէկ Կօպա՛լ մը զարնեմ Քե՛զ···՝
Կեցած տեղըդ սասանե՛ս···»:
Ան ալ ըսաւ Դաւիթին, —
= «Գըլխո՛ւդ մեռնիմ՝ արեւո՛ւդ···,
*Ես՝ Քու Պապու *) Գեղի Նախրո՛ւրդն եմ այստեղ,*
*Այդ Տաւա՛րն ալ՝ Ռամկի *) Հորթե՛րն են Ինձ հետ··· ,—*
*Առանք յօրի՞ *) Դուն քըռնեցիր ու խառնեցիր Քու Նախրին···»:*
Ըսաւ,— «Ձէ՛, աղ Իմ երէկուայ Տաւարէ՛ն է մնացեր հո՛ղ···»:

---

*) է՛լմէլ, Դարձեալ, նորէն: *) Պահել, Պահերուն համեմատ՝ հսկել: *) Պապ՝ Ս.152 պատուհովը՝ նաեւ Հայր: *) Ռամիկ, Ժողովուրդ, գիւղացի: *) Ցօրի՛, Ինչո՞ւ:

= «Չէ՛,–ըսաւ– ան՝ իմ Տաւա՛րն է· Քուկդ չ՛է՛...»։
Դաւիթ հարցուց թէ՝ — «Ո՞ր Գիւղի Նախրդ ես»։
= «Ես՝ Քիլէ՛ն եմ»,–ըսաւ Ան։
— «Անո՞ւնդ ի՛նչ է...»։
= «Կիրակո՛ս...,—
Ըսաւ, — Դո՞ւ ո՛ր տեղէն ես...»։
— Ես՝ Սասունա՛յ *) եմ»,–ըսաւ։
= «Քո անո՞ւնը բա՛ ի՞նչ է...»։
— «Իմ անունը Դաւի՛թ է։—
Ապա զարձաւ–, էլ Կիրակո՛ս,–ըսաւ նորեկ Նախրորդին–,
Արի՛, ես՝ Դուն՝ եղբա՛յր ըլլանք մէսսին...»։
Երկուսն այնտեղ եղբայր եղան Իրար հե՛տ,
Ու Հո՛ւլ խաղցին մէսսին։—

390. Դաւիթ Կրճատայ Ընկերոջ Գինած Ամպոխոցիին Տակ

Ա·64, Լ·19, Զ·՝Լ·19, (Լ·19), Ս·152, Ց·28·

Դաւիթ Աստր պատուէ՛ր տըւաւ՝ որ,—«Աստըծո՛ւ Իրեն օր՝ *)
Քո Տաւարը կ՝առնես–բերես այս կողմե՛ր,
Որ Հո՛ւլ խաղանք մէսսին»։
Ապա՝ վերցուց՝ ըսաւ Աստր,— «Կիրակո՛ս,
Ես Հորթերու պահը աղէկ չե՛մ դիտեր·
Իմ Հորթե՛րն ալ Դուն պահէ· †)
Ու Նախիրը տանելու պահ որ կուգայ՝
Տո՛ւր Իմ առաջ՝ ես տանի՛մ»։
Կիրակոսն ալ ըսաւ, = «Ինչո՞ւ ես պահեմ.՞.՞.՞»։
Ըսաւ — «Ապա, Իմ Հօրեղբայրը ասօր քեչ մը ե՛տ մընաց *),
Գացեր է՝ դեռ չ՛է՛ եկեր...»։
Ան ալ ըսաւ, = «Դէ՛, չ՛է՛ եկեր՝ չ՛է՛ եկեր,
Ես ի՞նչ ընեմ, ա՛յ Ընկեր...»։
Դաւիթն ալ թէ, — «Քունը Աչքերս լեցուե՛ր է...»։
= «Է՛,–ըսաւ–որ քունը Աչքերդ լեցուեր է՝

---

*) Սասունայ, Սասունէն։ *) Աստըծու իրեն օր(ը), Ամեն օր։
†) «Արածէ՛ գիտես իմ...», Դաւիթի՝ Հօտապետ ըլլալու հանգամանքը պատկերացնող։ *) Ետ մընաց, Ուշացաւ։

Ես ի՞նչ կըրնամ ընել որ· · · ·
Ես օտար՝ ու Դուն օտա՛ր· · ·»:
— «Հա՛ցն ու Գինին, Տէ՛ր-Կենդանին,—ըսաւ Դաւիթ՝ կօտը վեր,
Մէկ կօպա՛լ մը կըզարնեմ· · ·՝
Կ՚իջնես մինչեւ Անդունդները· · ·»:
= «Դէ՛,—ըսաւ—, որ այդպէ՛ս է՝
Ես կըպահե՛մ Քու Հորթերը· մեղա՛յ Քեզ· · ·:
*Արի՛,—ըսաւ—, Հո՛վ *) մը չինեմ Քեզ, Դաւի՛թ,*
Դուն կո՛ղ եկուր՝ քընացի՛ր,
*Ես ամեն օր՝ չո՛ւրմ *) իրիկուն՝ Քու Տաւարը կըպահե՛մ»:*
Հո՛վ մը չինեց՝ ու Դաւիթը մէ՛կ մըտաւ,
*Կօտը տընկեց, Թաղիք *) քաշեց Իր վըրան,*
Ու պառկեցաւ՝ քընացաւ· · ·: —

391. Դաւիթ՝ Իրիկուան Պահին՝ Նախիրը Գիւղ Կ՚բերէ,
Ու Կ՚ըսէ Որ Իր Շնորհը Չ՚Է՛...

Չ·, Ց·28, Չ·՝Ց·28, Չ·՝Լ·19, 21, Ս·152,153, Ս·153՝Չ·, Չ·՝Ն·732·

Կիրակոսն ալ՝ Տաւարն այնտեղ պահեց մինչեւ իրիկուն,
Ժամն ու պահը որ եկաւ՝
Ելաւ եկաւ՝ Դաւիթ քունէն հանեց վե՛ր, —
Թէ, — «ե՛լ, Հորթերդ ա՛ռ ու գընա՛· մո՛ւթ է ալ»:
Բերաւ Տաւար Ջոկե՛ց տըւաւ Դաւիթին,
Դաւիթ Հորթեր տըւաւ առաջ՝ ու քըշե՛ց,
Այդ օր առաւ Հորթեր քերա՛ւ պահի հե՛տ,
Եկաւ մըտաւ Գիւղին մէ՛ջ:
Ջէնով-Օհան՝ ճամբու վըրայ՝ եկաւ դէ՛մ,
Ուրախացա՛ւ, ըսաւ, — «Որդի՛, այսպէս կարգո՛վ ու պահով՝
Արի՛, գընա՛ ամեն օր· · ·, —
Նախիր՝ պահին ա՛ռ ու բե՛ր· · ·»:
= «Աո՛ւ,—ըսաւ—, Իմ չընորք չէ՛ր, Հօ՛րեղբայր· · ·»:
Եւ ի՞նչ կ՚ընէ մէկ կողմէն· —
Մէկ Հորթիկի Պո՛չն ու Ո՛տը կըբընէ՝

---

*) Հով, Հովանի, ամպհովանի: *) Չուրմ, Մինչեւ: *) Թաղիք, Գափանակ, Հովիտներուն թաղիքէ վերարկուն:

Մէկալ Հորթի Գլխուն վըրա՛յ կըտըմէ *) ...:
— «Դաւիթ,–ըսաւ Ջէնով–Օհան–, աս ի՞նչ կ'ը՛նես Դուն նորէն,
Մէկ Հորթիկը կըվերցընես՝ կըտըմես վէր՝ մէկալին...,
Ուրիշներու Հորթերն ամեն կ'ըսպանես...»:
Դաւիթն ալ Թէ, = «Սիրաս ‡) ուրա՛խ է, Հօ՛րեղբայր»:
— «Ի՞նչո՞վ Սիրտըդ ուրախ է...»:
Ըսաւ, = «Քիլէն՝ Ինձի եղրա՛յր մ' եմ բըռներ,
Ան իմ Հորթեր պիտի պահէ՛ ամեն օր»:
— «Անունն ի՞նչ է Քու եղբօր...»:
= «Կիրակո՛ս է, Հօ՛րեղբայր...,
Կօպալս այնտեղ կըտընկե՛մ՝
Թաղիքս վըրա՛ն կըքաշեմ,
Կըպառկիմ տա՛կ, կըքընանա՛մ հանդարտիկ...:
Ես չե՛մ գիտեր Նախրի պահը, Հօ՛րեղբայր,
Իմ նոր եղբայր Կիրակոս՝
Իմ Հորթերը կըպահէ,
Իրիկուան դէմ՝ չուքը երբոր երկարի՝
Կուգայ Ձիս վե՛ր կըհանէ:
Մ'ալ ասկէ ետք՝ աղէ՛կ պիտի տիրապետեմ *) Իմ Հորթեր.
Դուն ա՛լ մի՛ դար, Հօ՛րեղբայր,
Ես կըպահե՛մ Մեր Հորթեր,
Եւ ամե՛ն օր՝ կ'առնեմ–բերե՛մ այդ պահուն»:
Ջէնով–Օհան ուրախացա՛ւ ա՛լ այնտեղ,
Իրիկունը՝ բերաւ Դաւիթ լողացո՛ւց,
— «Դէ՛, յողնա՛ծ ես, Որդի՛,–ըսաւ–, քընացի՛ր»:
Ըրաւ Իր Տեղ՝ քընացաւ: —
Ջէնով–Օհան չա՛տ հոդատա՛ր էր Դաւթին:

392. Կիրակոսի Ուսանալուն Պատճառը

Ց·28,90,91, Չ·՝Ց·28,90,91, (Ց·28,90), Չ(Ց·90), Չ(Լ·19), Չ·՝Լ·20,21, (Լ·20,21), Լ·20, Չ·, Ս·153, (Ս·153), Ա·64,65, (Ա·65), Չ·՝Հ·417, Հ·417,418·

---

*) Տփել, Շպրտել, զարնել: ‡) Արտասանել իբր մէկ վանկ:
*) Տիրապետել, Տէր դառնալ, խնամել, պահել:

Մընա՛ց մինչեւ լուսաբա՛ց, —
Լուսուն՝ նորէն ելա՛ւ Դաւիթ՝ նախիր տըւաւ իր առա՛ջ,
Գըչե՛ց տարաւ՝ հանեց Սա՛ր,
Իր Ընկե՛ր ալ †), Կիրակոս,
Մէկա՛լ դեհէն իր նախիրը բերաւ հո՛ն,
Ու խառնեցին իրար հե՛տ:
Մէկ ժամանակ՝ Դաւիթ այսպէս՝ իր նախիրը լաւ պահե՛ց,
Լուսուն տարաւ՝ եւ իրիկուն բերաւ ե՛տ:
Օրերէ՛ն մէկ՝ այդ Գաղուխի Նախըո՛րդ Ընկեր՝ Կիրակոս՝
*Շատ ե՛տ ինկաւ, անդընդացաւ *),*
Եւ ո՛ւշ բերաւ իր Նախիր:
Այդ Տըղա՛ն ալ՝ մի՛ ըսեր որ՝ Իրենց Գիւղ՝
*Ցասման–ժա՛մ *) է· Մա–Գաւառա՛դ է եղե՛ր,*
Ան ալ՝ այդ օր՝ աւոր համա՛ր անդընդե՛ր···: —
Երբոր եկաւ ու հասաւ՝
Տեսաւ որ Թէ՝ Ան ալ Գըլուխ բա՛ց կուգայ, —
Դաւիթ այնտեղ բարկացա՛ւ ‡),
Ըսաւ, — «Աւօր՝ Դուն Իմ Զեռքէն իմա՛լ պիտի ազատուիս···,
*Ինչո՞ւ այսքան ետըցար···, *)*
Գունը Աչքերս կըճընչէ՛··· ·. —
*Մէկ Փա՛յտ կուտամ *)՝ կ՚իջնես մինչեւ Անդունդները···»:*
Ապա ըսաւ, — «Ինչո՞ւ այդպէս Գըլո՞ւխըդ բա՛ց ես եկեր···»:
Տըղան ըսաւ, = «Դաւի՛թ, Գըլխո՛ւդ ու արեւո՛ւդ մեռնիմ Ե՛ս···,
Ես Քո ահէն՝ քիչ մ՚առելի չըկեցա՛յ··· ·.
Ցասման–Ձաչէն՝ դըղա՛լ մ՚անգամ չը դըրի Իմ Բերանիկ···,
Առի՛ Հորթերն ու քըշեցի՝ չուտ եկա՛յ···, —
Անոր ապո՛վ անդընդեր եմ՝ մէկ քըչիկ···:
Աւօր Մեր Գիւղ՝ Ցասման–ժա՛մ է(ր)· Մեռե՛լ կար·

---

†) Ճ·28՝ Եղբայրն ալ: *) Անգըննալ, Անագանիլ, ուշանալ: *) Ցասման կամ Սասման ժամ, ճաշ, Աւանդական ճաշ, մատաղ ընել–ցրուելու ձեւով, Բնութեան մէկ ցասումը մեղմելու հաւատքով, եւ կամ մեծաւորի մը մահուան իբր հոգեճաշ: ‡) Մ·153՝ Վիրաւորաւ: *) Ետընալ, Ուշանալ, ետով գալ: *) Տալ, Զարնել, հարուածել–ջեցնել:

*Ու Հարխամ՝ էլեն դըրած՝ հոգնճաշ *), —*
Ըսի թևրևս ժամ-պատարագ որ դա՛ւրս գայ՝
Հարխանն ալ հասնի՝ ուտեմ՝ ու նո՛ր գամ...:
*Տեսայ որ չէ՛, կ'ետնըվի *), —*
Ես ալ՝ նախիր չուտ քըշեցի՛ ու եկայ.
Ահա այսպէս եղբա՛յ...,
Հարխամ ալ չըտըվի՛ն...»:
Դավիթ դարձաւ՝ նայեց տեսաւ՝ Մուխ մը կ'ելնէ Դաշտին մէ՛ջ,
Ըսաւ, — «Ընկե՛ր, այդ ի՞նչ Մուխ է մէջ-Դաշտին...»:
Թէ, = «Ի՛րա՛ւ, մէկ իշխան-Մա՛րդ ×) է մեռեր,
*Անոր համար ժա՛մ *) կ'ընեն»:*
— «Կըրնա՞ս,-ըսաւ-, երթաս մէկ-քիչ Մեղ Հարխամ՝ բերես Դուն...:
Ես քաղցա՛ծ եմ, կ'ըսակո՛ւս...,
Ապա Մենք ի՞նչ պիտի ուտենք երկուքս ալ...»:
= «Տընաշէ՛ն, ես ի՞նչքան պիտի բերեմ որ Դուն կուշտ ուտես...,
Արի՛ Դուն ել՝ դընա՛ Մեր Գիւղ՝ ու Հարխանն կո՛ւշտ մը կե՛ր,
Դուն ինձմէ՛ շատ քաղցած ես.
Գընա կե՛ր ու Իմ բաժինս ալ ա՛ռ ու բե՛ր,
Որ երկուքս ալ՝ կուշտ ուտե՛նք...»:
Դավիթն ալ թէ, — «Ի՛րա՛ւ,-ըսաւ-, Դուն չե՛ս կրնար ճաշ բերել.
Ե՛ս կ'երթամ...:
Դէ՛, Դուն Նախիր լա՛ւ նայէ,
Նըստիր այդտե՛ղ, Մեր Տաւարն ու Հօրթիկը լաւ պահէ՛ Դուն,
Ես երթամ Գիւղ՝ ու Հարխամ՝ առնեմ բերեմ՝ Մենք ուտե՛նք»: —

393. Դավիթ՝ Հարխայի Թոցիրից Մօս

Հ·418, (Հ·418), Ց·28,91, Զ·՝Ց·28,91, Ա·65, Զ·՝Ա·65, Ս·153, Զ(Ս·153), Լ·20, Զ·՝Լ·20, Զ·(Ե·502,558).

Ան նայեցա՛ւ,
Դավիթ եկաւ՝ կօպալ դըրաւ վեր՝ Թեւին,

---

*) Հոգեճաշ, Ննջեցեալի հոգւոյն համար տրուած սեղան:
*) Ետնուիլ, Ետ մնալ, ուշանալ: ×) Հ·417՝ Հարուստ մարդ:
*) ժամ, Պատարագ ու մատաղ:

Ինկաւ ճամբա՛յ՝ որ երթայ ու ճա՛շ բերէ։
Զարկաւ ինկաւ՝ ի Ռամի՛կ,
Գընաց Քիւչէն ելաւ դո՛ւրս,
Մըտաւ այդ Գիւղ, անուն Գազուխ, ինչ Հարխա՛ են դըրած,
Հասաւ Գիւղը՝ ա՛յն պահուն որ՝ Մարդիկ ժամէն դո՛ւրս կ՚ելնեն,
Որ դան նըստին Հարխայի Սեղանին։
Հարցուց Մարդոց՝ թէ, — «Հոգեճաշ ‡) ո՞ր Տուն է»։
*Նըշանց տըւին *) Դաւիթին,*
Դաւիթ գընաց Նընջեցեալի Տունին մո՛տ,
Նայեց տեսաւ՝ որ քառո՛ւն Լոկ)՝ մեծ, մարդաչա՛փ*) Պուտուկներ՝*
Ամենը լի՛ք Հարխա՛ է դըրած են,
*Թոնրի վրայէն հանած՝ կա՛լը *) բերած են,*
Պըղինճներով կրակի վըրայ դըրած են որ չըպաղի,
Կարագ Իւղն ալ՝ Պուտուկներով հալուկ՝ քովը դըրո՛ւկ է։
Ծողովուրդը նըստա՛ծ է·
[Տէրտէրներն ու Տիրացուք դեռ չե՛ն եկած]։
*Պառաւները *) առած են Ա՛ղն ×) ու լօչ *) Հա՛ց՝*
կեցած են որ լեցնե՛ն ու տա՛ն Հարխան։
Ըսաւ, — «Աս ի՞նչ հացկերոյթիւն է կ՚ընէք···»։
*Անոնք ալ թէ, = «Մա՛րդ է մեռեր, ժա՛մ *) կ՚ընեն···»։*
Դաւիթն ըսաւ, — «Քուրի՛կ, Աստուած լուսաւորէ՛ Նընջեցեալի
[լո՛ւս հոգին,
Հարխայէն քիչ մը լըցէ՛ք՝ տըւէք ուտե՛մ՝ ու երթա՛մ,
Իմ Հօրքեռուն ես հասնի՛մ։
Ճամբորդ +) Մա՛րդ եմ, անօթի՛ եմ այս պահուս։
Քիչ մ՚ալ տըւէ՛ք՝ տանիմ Եղբօ՛րս †)՝ Ա՛ն ուտէ»։
Մարդերէն մէկն ըսաւ, = «Տըղա՛յ, համբերէ՛,
Մինչեւ Տէրտէ՛ր–Տիրացուներ գան նըստի՛ն,

---

‡) Ա·65՝ Պատարագատուն։ *) Նշանց տալ, Ծուցնել։ *) Լոկ, Թրծած հողէ՝ խոշոր պուտուկ։ *) Մարդաչափ, Մարդու հասակին չափով բարձր ու խորունկ։ *) կալ, կալառեղ։ *) Պառաւ, կին (որոշ տարիքի հասած)։ ×) Լ·20՝ Եղը։ *) Լօշ, Բարակ եւ լայն (հաց)։ *) ժամ, Մաս–մասուղ։ +) Ա·65՝ զարիր։ †) Ճ·91՝ Ընկեր։

*Հաց քաշէն *) ու Հաց *) օրհնե՛ն,*
*Դուն ալ ուտես՝ Քո քառասո՛ւն Պա՛տն *) ալ ուտէ՝*
Այդ Հարխան չի՛ հասնիր»։
*Ժամհա՛րն ալ հոն կանգնեցա՛ւ ու ըսաւ, = «Որդի՛, դադարէ՛ *),*
Պատարագը վերջանա՛յ,
Երէցնիրը դա՛ն ու օրհնե՛ն Հարխան,
Թէ Դո՛ւն կուշտ կե՛ր, թէ ա՛ռ ու տար Քու եղբո՛ր»։
*Ըսաւ, — «Չէ՛, ես վրսա՛ն եմ... *),*
Նախիր կ'երթայ Ուրիշներու վընասո՛ն... .
Հիմա՛ կ'ուտեմ՝ կըտանիմ...»։
*Տանտիկինը՝ բերաւ կովկիթ *)՝ լեցուց լի՛քը Հարխա,*
Ինչ մը կարա՛ղ լեցուց վրան, ու բերաւ՝
Զորս-հինգ ալ հա՛ց՝ տըւաւ Դաւիթին ու ըսաւ. —
*= «Որդի՛, ա՛ռ ու՝ տարէք կերէ՛ք, Չեզ անո՛ւշ *)...»։*
Դաւիթն ալ Իր Պարկը մէջքէն արձրկո՛ց,
Իր Հա՛ցն ալ դուրս հանեց նըսաո՛ւ, այդ Հարխան հոն կերա՛ւ։ —

394. Դաւիթ՝ Հարխայի Կտրսաց Ու Կողով Մը Հաց Կ'ծալկէ Կ'տանի

Ջ.,Ա.65, Ջ.՝Ա.65,(Ա.65), Ճ.91.28, Ջ.՝Ճ.28, Ե.558,502,559, (Ե.502,559), (Լ.20), Ջ.՝Լ.20, Լ.20, Հ.418, Ջ.՝Հ.418, (Ս.153), Ս.153, Ջ.՝Ս.153,Ջ.

Դաւիթ այնտեղ այդ մէկ ամսան որ կերաւ՝
Դարձաւ ըսաւ,— «Աստուած հոգի՛ն լուսաւորէ Մեռածին...,
Ջրկըշտացա՛յ..., մէկ ամա՛ն ալ տըւէք Ինձի, Տա՛նտիկին»։
Մէկ ամա՛ն ալ լեցուցին ու տըւին Ձի՛ուս.
կերաւ պըրծաւ՝ ըսաւ,— «Մէ՛կ ալ լեցուցէք,
Ջրկըշտացա՛յ..., չա՛տ համեղ է Հարխան...»։

---

*) Հաց խաշել, Թոնիրին կողերէն՝ թարմ, եփուած չօթերը հանել՝ լաթին վրայ փռել։ *) Հաց, Սեղան։ *) Քառասուն Պապ, Պապի՝ քառասուն սերունդը։ *) Դադ(ա)քիլ, Սպասել։ *) Վռազն եմ, կ'աճապարեմ։ *) Կովկիթ, Կովը կթելու աման, կճոց։ *) Չեզ անո՛ւշ, Չեզի համար անո՛ւշ ըլլայ. անուշ-անուշ կերէ՛ք։

= «Ջըխկո՛ւմն *) ուտես..., ա՛լ ամենը Դո՛ւն կերար,
-Լսաւ. այնտեղ Տանտիկինն-,
Պատարագի Մարդիկ որ դան՝ ապա Անոնք ինչ ուտեն...»։
Որ չըտըւին այս անգամ
Դաւիթ այնտեղ սրդողեցա՛ւ ինքիրեն,
Ելաւ. Պարկը կապից Մէջքին՝ կանգնեցա՛ւ,
— «Մամի՛կ,-ըսաւ-, ապա Ձեր Հաց ո՞րտեղ է...»·
= «Դէ՛, այնտեղը դարսո՛ւկ *) է.
Հացն առա՛ւ է Մեր Տուներ...»։
Դաւիթ Դուռէն ելաւ դո՛ւրս,
Գընաց այնտեղ՝ մէկ դարմանի *) կողո՛վ կար՝,
Շալկեց ևկաւ՝ այդ Հացերը ծալծալ վերցուց՝ պըրաւ մէջ,
Ձեռքը տըւաւ Հարիսայի Պղինձէն մ՝ †),
Կրակին վրայէն դո՛ւրս հանեց,
Մէկ Լոկի Իւղ՝ տա՛ք-տաք վերցուց՝ Հարիսի վրան չո՛ւռ տըւաւ,
Փայտը *) ձրգեց մէջ՝ խառնե՛ց,
Իր Կօպալին կեռը անցուց Պղինձին երկու կանթերուն,—
Այդպէս լեցո՛ւն՝ վերցուց կախեց իր Ուսէն,
Ու կողովով Հացն ալ՝ զարկաւ Ունքին *) տա՛կ,
Կանչեց ըսաւ,— «Այս մէկն Ինձի՛ կըտանիմ,
Մէկալները մընայ Ձեզի՛՝ կըբաւէ...·
Տէրտէրն ալ Թող Հացն օրհնէ՛՝
Ջուր *) ես երթամ՝ դառնամ գա՛մ»։
Ըսաւ՝ առա՛ւ ու քալե՛ց...։

395. Նեռկաճերը Կ՚մռըլտան՝ Բայց Դաւիթէն Կ՚վախնան

U.153,154, Հ.418, Զ.՝Հ.418, Զ(Հ.418). *Ա*.65, (Լ.20), Լ.20, *b*.502, 559, 503, (*b*.502), *Ճ*.91, Զ.

Զարմացա՛ն այդ ամէն Մարդիկ որ տեսան՝
Այդ Կողով-Հացն ու Հարիսան ամե՛նը մէկ ինչ չալկեց...։—
Երկու հոգով՝ այդ Հարիսի-Աման չարժէր չե՛ն կըրնար՝

*) Ջիկուն, Լեղի պտուղ, արաբ. qaffūn. (համմալ· ձագում)։ *) Դարսուկ, Դիզած։ *) Դարման, Ծարդ։ †) *U*.153՝ Ջոռս կանթեն պղինձ մը, *Ճ*.91՝ Մեկ լոկ։ *) Փայտ, Հարիսայի թնդոց (ողորկ ձեռնաչափ փայտ՝ որմով հարիսա կ՚զարնեն)։ *) Ունք, Անուք, Թևին տակ։ *) Ջուր, Մինչեւ որ։

Տըղայ-Դաւիթ Ինքը մինա՛կ որ չալկեց՝
Այլեւս՝ ահէն՝ Մ'կը այնտեղ՝ ձայն չկըբըցա՛ւ որ հանէր...,
Առաւ տարաւ դէհ Ընկեր ,—
Մարդկրէն Մ'էկ՝ նո՛ր պօռաց ,— «Հէ՛...,Աւի տարա՛ւ Հարխան †)»։
Բաւ մ' Ուրիշներ ×) որ հոն նըստած՝ ուրախութի՛ւն կ'ընէին,
Տեսան Դաւիթ ձայը առեր՝ կըտանի ,—
— «Նէ՛ք,-ըսին-, երթանք բըռնե՛նք այս Տըղա՛ն՝
Ապա՛կ մ'զարնենք երեսին...,
*Այդ Հարխան մօտէն *) խըլենք՝ ու առնե՛նք... .*
Ան ո՞վ է որ՝ այս Լոկ ձայը կըտանի...՝
Ժողովուրդը առանց ձայի՛ կըթողնէ...»։
Մէկ Տէրուկ-Մարդ այնտե՛ղն էր ,—
Այդ Մեծաւորն ի՞նչ ըսաւ.—
— «Առըծո՛ւ սէր , ձայն մի՛ հանէք. դործ չունի՛ք... .
*Ան՝ Մըհէրի սերմէն *) է...,*
Չ'երթա՛ք ևէնէք Իր առջեւ ,—
Կըզարնէ՝ Ձեզ կ'ըսպանէ՛...»։
Բահանան ալ՝ վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ.—
*Երկու խոշոր Պըղինձ-Պաւտուկ *)՝ այդ կըրակին վըրայէն՝*
Դուք չո՛ւրս Մարդով՝ կըրնա՞ք ձայով դուրս հանէք...,—
Թէ Դուք կըրցա՛ք մէ՛կ Լոկ ձայը վերցընել՝
Դայէ՛ք..., թէ չէ՛ մի՛ երթա՛ք...,
Աւի Սասմայ-Ծըռերէ՛ն է, կըղառնայ՝ Ձեզ կըջարդէ՛... .
Դէ՛, Դուք խո՛ղճ էք , ա՛յ Մարդիկ...,—
Ձեզ անպատի՛ւ կ'ընէ Ամէնքդ՝ կըճըդէ.
Գըլո՛ւխին ուտէ , թող տանի՛»։
Այդ Մարդերը՝ ա՛լ չըդացին , լո՛ւռ կեցան։—

396. Դաւիթ Կ'հասնի Ընկերոջ Գով՝ Կ'տեսնէ Որ Ան Կուլայ

Ս.154, *Ս*.154՝*Զ*., *Ե*.559,503, *Ճ*.28,91,30,29, *Զ*.՝*Ճ*.28, (*Ճ*.91,29), *Ա*.65,66, *Զ*.՝*Ա*.65, *Լ*.20, *Զ*(*Լ*.20), (*Լ*.20), *Հ*.418,419, (*Հ*.419), *Զ*.

†) *Ս*.154՝ Պղինձը։ ×) *Ե*. 559՝ Բրո. ըմ. (բաւ մը), *Ե*. 502՝ Տաս կտրիճ։ *) *Մոսկն*, Թուղէն, ձեռքէն։ *) *Սերմ*, *Զաբմ*։ *) Պղինձ-պուտուկ, Պղինձէ՝ աման, կաթսայ, սան։

Դաւիթ առաւ պըղինձը լիք Հարիսան՝
Տարաւ Սա՛րը, դընաց հասաւ Իրեն Ընկեր Նախրորդին,
կանչեց ըսաւ, — «Արի՛, Ընկե՛ր, կիրակո՛ս,
Աստուած հոգի՛ն լուսաւորէ այդ Մարդուն...,
Արի՛, ի՛նչքան Հարիսա՛ կայ՝ բերե՛ր եմ..., —
Արի ուտենք ես ու Դուն...»:
Նայեց տեսաւ՝ որ Եղբայրն ալ ի՛նչ ըրեր..., —
Ինկեր այնտեղ՝ քիթ-բերնի վրայ՝ ու կուլա՛յ...: —
Հարցուց ըսաւ, — «Ինչո՞ւ կուլաս, կիրակո՛ս...
Հարիսան է՝ բերե՛ր եմ...,
Հաց ու Իւղը՝ բերե՛ր եմ..., —
Ցորի՞ն *) կուլաս..., ուրկե՛ր ես.՞.՞.՞
Թող պատառ մը քի՛չ ուտէիր՝ որ Քու փորը չըցաւէր...»:
Ան՝ Իր Ձեռքով Իր Գըլուխը կըտըրէ դեռ՝ ու կուլա՛յ...:
= «Ուտելչէն չ'է՛, Դաւի՛թ,կ'ըսէ–, մատա՛ղ Քեզ...»:
— «Բա՛ ինչէ՞ն է..., ա՛յ Տըղայ...
Հէ՛, հէ՛,–ըսաւ–, դիտե՛մ յորի կուլաս Դուն..., —
Քու մըտքովըդ՝ ճաչը առեր բերե՛ր եմ...,
Աղն ու կարագ՝ չե՛մ բերե՛ր..., —
Ան ապո՛վ է կուլաս Դուն...:
Արի՛,–ըսաւ–, Հարիսան կե՛ր Դուն հիմա...,
Իրկուն գընա՛՝ Աղն ու Իւղը վըրա՛ն կե՛ր...»:
Նախրորդն ըսաւ, = «Դաւի՛թ,–ըսաւ–, Գըլխո՛ւդ մեռնիմ՝ արեւո՛ւդ,
Աղն ու Իւղը եւ Հարիսան ի՞նչ ընեմ...,
Կուլա՛մ,–ըսաւ–, որ Իմ Հորթե՛ր տարած են...»:
— «Ո՞վ տարաւ...»:
= «Դուն այստեղէն երբոր գացիր դէպ Մեր Գիւղ՝
Մէկ քառսո՛ւն ‡) Դէվ Ձիաւորներ, ցերեկո՛վ,
Եկան զարկին՝ քառսո՛ւն կովեր ×) Իմ Նախիրէն ջոկեցին,
Գըրկեցի՛ն ու առին տարա՛ն, ու գացի՛ն..., —
Ես չի լսա՛ ա՛լ ո՞վ 'տի լայ..., —
Մենք՝ իրիկուն՝ ի՞նչ պատասխան պիտի տանք...»:
— «Տըղա՛յ,–ըսաւ–, դէպ ո՞ւր տարան՝ ու գացին...»:
= «Այսպէ՛ս,–ըսաւ–, դէ՛ս գընացին..., ի՞նչ դիտնամ...,

*) Ցորի՛(ն), Ինչո՛ւ: ‡) Ը.91՝ Տասը: ×) Հ.419՝ Ռէսի Եզը:

Աչքն տարան՝ Սարէն անդի՛ն չըրջուեցան»։
*— «Դէ՛, Դուն,–ըսաւ–, հոգա՛ *) կեցիր, կիրա՛կոս,*
*Մեր այստեղի Հորթի՛ն ալէ *) ու ձա՛շ կեր, —*
Ես ալ կ՚երթամ՝ Մէկալնե՛րը գտնեմ...՝
*Առնեմ–բերեմ՝ նոր կրնըսեմնք ձա՛շ *) կ՚ուտենք»։*
Նախրորդ–Ընկերն եկաւ նըստաւ՝ մըտաց հո՛ն,
Դաւիթ վերցուց կօտլոյ դըրաւ Իր թեւի՛ն,
Ձամբան տըւաւ Իր առա՛ջ,
Ինկաւ Աստնց ‡) հետէ՛ն...։ —

397. Դաւիթ Ս՚ելեն։ Քառասուն-Դողերուն Այրը Եւ Անոնց Քառասուն-Կաճքէլը Պղինձովն Իր Ուժը Ս՚փռելն։

Ա·66, (Ա·66), Ց·29,91, Զ·, Լ·20, Զ·՝Լ·20, Հ·419, Զ·՝Հ·419, Ս·155,154,156, Զ·

Դաւի՛թն էր, ա՛լ, — քըշից դընաց ×)՝ Սարի ա՛յն կողմ չըրջուեցաւ,
Աստնց հետքը բըռնից դընաց՝ ու տեսաւ՝
Այրի մ՚ մէջէն Մա՛ւխ մը կ՚ելնէ դէպի վեր, —
Գընաց եկաւ Սարի գլուխ՝ այդ Ծէրի)–Դուռն՝ ու կեցաւ։*
*Դէվեր տեսա՛ն որ Դաւի՛թն է՝ կուգայ կ՚ելնէ՝ Քամո՛ւ *) պէս...՝*
Փախան մըտան Ծէրին մէջ,
Ու Ջաղջխ–Քար մ՚ ալ՚ւին դէմը՝ ու կեցա՛ն։
Դաւիթ գընաց՝ տեսաւ որ չ՚ինէ, — Այդ Մարդիկ՝
Քառասուն կոմն ալ զինած կըտրա՛ծ են այնտեղ †),
*Ու կաչխո՛վ, Ոտո՛վ, Գլխո՛վ, բաներո՛վ *)՝*
Քառասուն–Կանթէլն §) պըղընձէ մէ՛ջն են լըցած,

---

*) Հոդա, Հոդ, այդտեղ։ *) Աշէ՛, Նայէ՛, հսկէ՛։ *) Ճաշ, Հաբխաս։ ‡) Ս·154՝ Հորթերուն, Ց·91՝ Դեվերուն։ ×) Ա·66՝ Այրին մէջէն Քուռկիկ–Ջալալին ձեռք բերած ու հնծած է որ կըհետապնդէ Գողերը։ *) Ծէր, Այր, քարանձաւ։ *) Քամու, Քամիի, Հովի։ †) Ա·66՝ Տաւարի մէկը մորթեր են, 39–ը ողջ են, Ց·91՝ Տաս եզը զեռած կտրած (են)։ *) Բաներով, Անե՛ն մասերովը։։ §) Ց·91՝ Տաս կանթէն, Լ·20՝ Ութ կանթանի [*կանթանի = ունկ, կանթ ունեցող*]։

Զորս–հինդ Շոճի *) հա՛սա Գերանները թալեր են վեր՝ կըրակի՛ն,
Անկուրդ *) չինած, Բառասուն–կանթէն Պղինձ դըրած են վըրա՛ն,
Բըլբլան կ՚ելի՛ր...՝ որ ուտեն...:
Դաւիթ այնտեղ իրիկո՛ւց ու տեսա՛ւ որ՝
Այդ Պղինձին՝ Բառասուն կա՛նթ կայ, հա՛սա ու ծա՛նր,
Ըսաւ՝ «Ես իմ ուժը պիտի այս Պղընձին վրայ փորձե՛մ, —
Տեսնեմ կըրնա՞մ այս Պղինձը վերցընեմ՝
Գետի՛ն դընեմ լեվ–լեցուն...»:
Ձեռքը տըւաւ՝ վերցո՛ւց Պղինձ՝ կըրակէն,
Դըրաւ Գետին՝ առանց թաւիել՝ լե՛վ–լեցուն...,
Գետնէն վերցուց՝ նորէն դըրաւ վեր՝ կրակին, —
Բառասո՛ւն Հորթով ու Ջուրո՛վը լե՛վ–լեցուն...:
Դէվերէն Մէկ՝ ինչ Բառասունին կե՛ր կ՚ելիէր ‡)՝
Տեսաւ Դաւթի այս ըրածն,
Վաղեց դընաց՝ Ընկերներուն ի՞նչ ըսաւ, —
— «Ձեր Տո՛ւն չինուի՛ր,–ըսաւ Լեղուն կապ առած–,
Բառասուն հոգով՝ Մենք հազի՛ւ թէ՝ դատարկ Պղինձ կըբըռնենք՝
Կրակի վըրա՛յ կըդընե՛նք... . —
Կըտրիճ ×) ըզա՛յ մ՚ է եկող, —
Հորթերը մէ՛ջ,
Գլուխները մէ՛ջ,
Ոտները մէ՛ջ,
Կաշին ու Ջուր՝ լի՛քը մէջ՝
Բառասուն–կանթէն Պղինձ վերցո՛ւց Ինք մինակ,
Կրակին վրայէն առաւ վա՛ր,
Գետնէն վերցուց՝ նորէն Կրակին վրա՛յ դըրաւ...»:

398. Դաւիթի Զայճէն՝ Դէվերը Կ՚ուտեցնի

Զ·՝Ց·29, Ց·29, (Ա·66), Ա·66, Զ·՝Ա·66, Ս·155, Զ·

Դաւիթն ալ հոն՝ դընաց կեցաւ Այրին–Դո՛ւռ,

---

*) Շոճի, Ջամի ծառ, իւղոտ եւ դիւրավառ ըլլալու յատկութիւնովը ծանօթ: *) Անկուրդ, Օջախ (կերակուրի, խորովածի), սովորաբար՝ երկշարք կամ բոլորակ կղմինտրներով կազմուած: ‡) Այսինքն Բառասուն Աւազակներէն՝ խոհանոցի գործով զբաղող ընկերը: ×) Լ·20՝ ջահիլ (= դեռատի):

Ջաղգի–Քարը քաշո՛ց դէմէն՝ Թալեց դէ՛ն,
Ու մէկ ձայնով պօռաց ըսաւ, — «Մէկի–մէկ եկէ՛ք՝ ելէք դո՛ւրս,
Տեսնեմ Դուք ի՞նչ մարդեր էք . . .
Իմ Հօրքեկրը ե՛ս տըէք . . .»:
Դաւթի այդպէս որ պօռա՛ց . . .՝
Սարսափն ինկաւ վրէ՝ այդ Քառասուն–Դիվերո՛ւն . . ., —
*[Իմալ որ *) Մեր Քրիստոսի ձայնն ինկաւ Դժոխքի Անգունդներ,*
*Ու Սատանէք *) հարգըլան . . . *)]:*
Այդ Քառասուն–Դոզևրու Մեծ(ն) երբոր լսե՛ց Դաւթի ձայն՝
— «Հէ՛,–ըսաւ Իր Ընկերներուն–, Ասի՝ պիտնաք՝ Դաւի՛թն է . . .,
Սանասարի ‡) Տըղա՛ն է . . .
Ելէք տեսէք Ա՞ն է՝ Քո՞ չէ . . ., ի՞նչ կ՛ուզէ . . .:
Ընդի՛րք ըրէք՝ բերէք այստե՛ղ, սիրտն առնե՛նք.
Բարկութիւնը Քէ որ բըռնէ՝ Մեզ Քառասո՛ւնն ալ կ՛ըսպանէ . . .
*Տըւածուրի՛կ *) է Աստոնց . . .»: —*
Այդ Քառասունէն Մէկը ելաւ՝ եկաւ դո՛ւրս,
Տեսաւ Քէ «Հա՛, կըտրի՛ճ խօրո՛տ մէկ Տըղայ ×)՝
Իրենց Այրին Դո՛ւռը կըտրի՛ր կեցե՛ր է . . .»,
Դարձաւ դընաց Իրենց Մեծին՝ ըսաւ Քէ, —
*= «Այսպէս կըտրի՛ճ, խօրո՛տ Տըղայ մ՚՝ Այրին–Դուռը բըռնե՛ր է *),*
Կ՛ըսէ՝ «Դի՛, չո՛ւտ՝ Իմ Տաւարը ե՛ս տըէք» . . .»:
Մխտնե՛րն ալ՝ ելան տեսան՝ որ Սասունայ Ծուռ–Դաւի՛թ . . ., —
Եկան Իրենց Մեծին ըսին՝ Քէ, = «Սասնոյ Ծուռ–Դաւի՛թն է»:
— «Ելէ՛ք,–ըսաւ–, ծառայութի՛ւն ըրէք Իրեն, Աստծո՛ւ սէր,
Որ չ՛եղնէ՛ Մեզ ըսպանէ . . .»:

899. Դաւիթ Մէկ-մէկ Կ՛սպաննէ Քառասուն-Դիվերը, Կ՛մտնէ Այրը՝ Դռդափեցը Ալ Նետը Զօրցած Կ՛գտնէ

Ց·29, (Ց·91), Ս·155, Զ·՝Ս·155, Լ·20,21, Հ·419, Զ(Հ·419), Զ·

Դիվերը՝ մէ՛կ–մէկ՝ եկան Ցէրէն դո՛ւրս ելան,

*) Իմալ որ, *Ինչպէս որ*: *) Սատանիէք, *Սատանայք, սատանաներ*: *) Հարգելիլ (*հա՛ր–գլիլ*), *Զարնուիլ–Թափուիլ, խափանուիլ*: ‡) *Ս·155՝ Աբամէլիէֆ: *) Տուածուրիկ, *Բնաւուր, երբնց ցեղին յատուկ, երկնաճիր*: ×) *Ա·66՝ Պատումին բերումով՝ Ձիու վրայ նստած: *) *Բռնել, շրջապատել, անցքը փակել՝ կենալ*:

Դաւիթ քաշեց իր կօպայը կեցաւ Աստնց Գըլուխին,
Մէյմէկ կօպա՛ղ զարկաւ՝ չըրջեց Իրենց տեղ,
Ֆառսունի՛ն ալ Գըլուխները մէ՛կ–մէ՛կ Թըռան ու գացի՛ն···,
Մարմիննե՛րը մընացին···։
*Դաւիթ՝ Աստնց Ֆառսունի՛ն ալ՝ Ականջները լո՛վ *) կըտրեց,*
Տարաւ Այրին Դըրան մօտիկ՝ մե՛ծ Ֆարի մը տակ պահեց,
Ինքիրենը միտք ըրաւ Թէ՝ «Հօրեղբայրին նըշա՛նց տամ»·
*Ապա իր կօտ ողմեցուց *) Դո՛ւռ՝ մըտաւ դընաց Ճէրին մէ՛ջ ‡)։*
Ու դարձա՛ւ որ բարե՛ւ տար՝
Տեսաւ որ այն Ֆառսուն–Գողի Մեծաւորն՝
— Մեր, ըսպիտակ, ալեւոր —,
*Վախէն չորցա՛ւ *) տեղնիտեղ···,*
Բերանն ալ՝ բա՛ց է մընացեր, կընայի՛···, —
Դաւիթ կարծեց Թէ Իր վըրա՛յ կըխընդայ,
Եկաւ՝ Ձեռը տըւաւ Անոր՝ Թէ, — «Ի՛մ Հայր,
Է՞ր կըխընդաս Իմ վըրայ···»։
Տեսաւ չորցեր՝ եղեր վա՛յտ···, —
Այդ Մեր–Դէվի Մօրուքին մէջ՝ Բանալի՛ մ՝ ալ կար պահուած,
Դաւիթ առաւ այդ Բանալին ու բերաւ՝
Մէկ պըղտիկ Դո՛ւռ կար՝ բացա՛ւ,
*Տեսաւ որ ի՛նչ···, — այդ նըստըւածք *)՝ կօլօն *) մ՝ Ոսկի, մէկ՝*
[Արծաթ ×)···
Աչխըրքի՛ Ինչք ու Ապրանք՝
Բերած են հո՛ն լեցուցած···։
Ի՛նչքան Արծա՛թ, Ոսկի՛ ուղես՝ այդտեղ կա՛յ···։
*Քա՛նի որ Իր Պա՛պը *) մեռեր գացեր է՝*
Աստնք՝ ըսես՝ աւերուքի՛ւն ըրած են ու լըցած Ճէ՛ր···։ —

---

*) Լո՛վ, թափով ու ճշդութիւնով։ *) Ողմեցնել, կոթնցնել։ ‡) Ա·66՝ Աւազակներն իրենք են որ կ՛խնդրեն ու Այրէն ներս կ՛բերեն Դաւիթը, դրամ տալով կըհամաձայնին։ *) Ջորնալ, Արիւնը ցամքիլ, խկոյն մեռնիլ։ *) Նստուածք, (Այդ Այրին) դրաւած տարածութեան չափ տեղ։ *) Կօլօն, կոյտ, դէզ, չեղջ։ ×) Այսինքն՝ մէկ կոյտ ոսկի, մէկ կոյտ արծաթ։ *) Պապ, Ս·155՝ Մուշի բարբառովը՝ հայրը, այսինքն Դաւիթ–Մըհէրը, իսկ դրական Հայերէնով՝ հօրը–հայր, որով՝ Առիւծ–Մըհէրը։

400. Քառասուն Ձիերն Ու Քուռակ-Ձին

Լ·20,21, Զ·՝Լ·21,22, Մ·155, Զ·՝Մ·155, Ց·29, Զ·՝Ց·29 ս·, Զ·

Գանձն առա՛ծ էր Այրին մէջ,
Դաւիթ ականջ չընկախեց…։ —
Գընաց դարկաւ՝ երե՛ք Դուռ ալ՝ իրար վրայ հո՛ն ջարդեց,
Մըտաւ նե՛րսը, տեսաւ Առոնց Դամին մէջ՝
Քառասուն հատ Ձի՛ էր կապուկ։ —
Ո՛ր մէկին որ Համիկին վրայ Ձեռ կոխե՛ց՝
*Իր Ձեռքին տակ սըղդեցաւ *)։*
Գընաց նե՛րսը, տեսաւ որ մէկ Քուռա՛կ ալ՝
Ախոռին վե՛ր՝ կապուկ էր. —
Կօսը նետեց ու բըռնեց,
*Երե՛ք անդամ՝ Ձեռը ճըղթեց *) վեր՝ Համիկին՝*
Ձիուն Համակ՝ իր Ձեռաց հետ բարձրացաւ՝
Ոտքեր նետեց՝ դարկաւ Այրի կըռուրին…։
Դաւիթն ըսաւ, — «Ըհա՛, Առի Իմ Ձին է ‡)… .

Հա՛ցն ու Գինին՝
Տէ՛ր–կենդանին…, —
Ո՛վ մօտենայ Իմ Քուռկին՝
Կօպա՛լ մ՚ կ՚իջնեմ Իր Վըզին…»։ ×)

Ապա դարձաւ՝ Ինքիրենը ի՞նչ ըսաւ. —

— «Հօրա՛ր Օհան ×)
Այդ Գանձերն ու Ինչէ՛ Քեզի՛,
Այս մէկ Քուռակ *) տաս Ինձի՛… .
Կուտա՞ս՝ կուտա՛ս…, —
Թէ չի տա՛ս…՝
Քե՛զ ալ՝ ահա՛՝ Ատոնց *) օրի՛ն կըբերեմ…»։

---

*) Տղգիլ, տզգիլ, *Մէջքը ծռիլ*, ճկիլ։ *) Ճղթել, *կոխել*, ճըղնել։ ‡) *Այսինքն՝* Իմ ուզած, իմ տակ դիմանալիք *ձին՝ ա՛յս միայն կրնայ ըլլալ*։ ×) Երգով։ *) Քուռակ, Ց·29 ս·՝ Քուռկէ–Չալաթին, Մ·155՝ ջանավար։ *) Ատոնց, *Այսինքն՝ Քառասուն Ասազակներուն*։

Ու հե՛ղ մըն ալ՝ ինք իր Գըլխուն՝ կըճայնէ ×)· —

= «Տըղա՛յ, Գա՛նճն ալ, ինչ՞ըն ալ՝ Քեզի՛ քոզ ըլլայ,
Այդ Քուռա՛կն ալ՝ Քեզ ըլլա՛յ··· ·
Ես ի՞նչ ըսեմ Այդ Բաներ···, —
Բոլո՛րն ալ Դո՛ւն ես գըտեր···»:

401. Դաւիթ Կ՚ելլէ Քառասուն-Կանթէն Պղինձը՝ Եփած Հորթերը Մէջ՝ Ու Կ՚զառնայ Իր Ընկերոջ Մօտ

Զ·, Զ·՝Հ·419, Հ·418, Զ·՝Ճ·29,92, Ճ·29,91,30, (Ճ·30), Լ·21, Զ·՝Լ·20,21, (Լ·20), Ս·155,156, (Ա·66), Ա·66,65, Զ·՝Ա·65, Զ·, Ե·559, (Ե·503)·

Դաւիթ Թողուց Զին ու Ապրանք Իրենց տե՛ղ,
Բուռ մը Ոսկի՛ առաւ լեցուց Իր Գըրպան,
Դարձաւ Այրէն ելաւ դո՛ւրս,
Ջաղջխ–Քարը քաշեց տըւաւ Դուռին դէ՛մ,
Տեսաւ որ ա՛լ Մա՛րդ չըկար՝
Այդ Դիակներ վերցուց տարաւ Այրին եռեւ՝ ձըգեց հո՛ն,
Եկաւ այնտեղ Կրակին մօ՛տ,
Ձեռը տըւա՛ւ՝ Քառասուն–Կանթէն Պըղինձ բըռնե՛ց ու դարձուց,
*Ճիրեց *)՝ վազցուց մէջի Ջուր,*
*Մխը մէջ՝ դեռ կխսաեփ *),*
Քառասուն Հորթերը՝ Գըլուխ, Ոտներն ու Կաշիներ Թողուց մէ՛ջ,
Իր Կօպալը մըտո՛ւց Պղինձին Կանթերէն՝
Վերցո՛ւց դըրաւ Իր Փիճին,
Շալկե՛ց ամէն միասին՝
Առաւ կ՚ելթայ դէպ Նախիր:
Առաւ բերաւ Հորթերուն ու Իր Ընկերոջ մօտ՝ կեցա՛ւ:
Տեսաւ Եղբայր դեռ կուլայ···՝
Ըսաւ, — «Մինչեւ ե՞րբ պիտի լաս, ա՛յ Ընկեր··· ·
Բերե՛ր եմ Ես Քու Հորթեր···»:
Ըսաւ, = «Բա՛ ո՞ւր են ապա·՞·՞·՞»:
Դաւիթն ալ թէ, — «Հո՛ս է· Պըղի՛նձն եմ լըցեր···»:

×) երգով: *) ճիրել, Քամել, վազցնել (Ջուրը): *) կխսաեփ (Ճ·91՝ կխսաեփել), *կխսովին հազիւ եփած:*

Ըսաւ, = «Թո՛ղ՝ որ ալածա՛ն...»։
— «Ի՞նչպէս Թողնեմ..., կըխախէ՛ն...»։
= «Ես այստե՛ղ եմ, կը նայի՛մ...»։
— «Դուն Հօրթևրուն նայէ՛,–ըսաւ–, ես տանիմ տամ Տէրբո՛ւն»։
Մէկ ալ տեսաւ՝ որ Հօրևդրայր՝ Հա՛ց է բերեր կէսօրուայ, —
Դարձաւ ըսաւ, — «Դէ՛, Հօրևդրա՛յր, ես Հարխա՛ եմ բերեր,
Արի՛ նըստինք, կե՛ր՝ պընա՛»։
Զէնով–Օհան, նախրորդն ու Ինք՝ ձա՛ղ կերան,
Կիրակոսը չաս քի՛չ կերաւ. ե՛ւ քաշուեցաւ Սկսանէն.
Դաւիթ Ինքը եւ Հօրևդրայր՝ կերա՛ն բոլոր Հարխան,
*Աղո՛ւ մ՝ *) մընաց, բերաւ Հօրթեր վերա՛ն Թողուց՝ ու կերա՛ն։ —*
Զէնով–Օհան ելաւ դարձաւ՝ պընաց Տուն։

402. Դաւիթ՝ Քառասուն-կաճրէն Պղինձը՝ Հորքերով՝ Դիւղը Կ'բերէ Ու Տէրերը Կ'գոհացնէ

Ա·65, Զ·՝Ա·65, Ե·559, Զ·՝Հ·418, Հ·418,419, Զ·, Զ·՝Ց·29,92,91, 30, Զ(Ց·91), Ց·29,91,92,30, Ս·156, Լ·21, Զ·՝Լ·21·

Կերան պըրծան՝ Դաւիթ վերցուց Իր Ընկերին Ի՞նչ ըսաւ. —
— «Ես բերե՛ր եմ այդ Պըղինձ՝
Դուն ալ ա՛ռ տար՝ Իրե՛նց տուր»։
Ընկեր՝ դիտէ՛ր որ Հացն ամեն բերե՛ր էր,
Ի՛ւղն ալ՝ ամեն բերե՛ր էր,
Հարխան ալ՝ ամե՛նը մէկ՝ բերե՛ր էր, —
Ըսաւ, = «Դաւի՛թ, ես չե՛մ կրընար չալկել տանիլ այդ ամեն.
Ե՛լ՝ նորէն Դո՛ւն ա՛ռ ու տար»։
— «Զե՛ս կրընար, հէ՞...,–ըսաւ Դաւիթ, անդիէն–.
— «Ծօ՛ կիրակո՛ս, Գուբան կ'երթա՞ս...».
= «Ի՞նչպէս երթամ, մա՛տ մը տըղա՛յ եմ...».
— «Տօ՛ կիրակո՛ս, Սամիր կ'ուտե՞ս...».
*= «Է՞ր չեմ ուտեր, զաղա՛ն մ, *) տըղա՛յ եմ ‡)...». —*

---

*) Աղու մ՝, կտոր մը [աղու–զղու = թոյն, աղի· այսինքն՝ կարծես թոյն ըլլար այդ կտորը՝ չկարենար ուտել]։ *) Զագան մ՝, գազանի մը չափ խոշոր, մեծ։ ‡) Կակօ–Մրտօ խաղին երգամատն է, թերեւս Դաւիթի այս ընկերին անունէն ու գործէն առնուած։

Այդ կիրակոս՝ Դուն ես, հէ՞ . . . , —
Հա՛ցն ու Գինին, Տէ՛ր–Կենդանին,
Փայ՛տ մը զարնեմ . . .՝ երթաս լիշես Անդունդնե՛ր . . .»:

Դաւիթ ելաւ՝ Հարիսայի Պղինձ–Պուտուկ բըռնեց Ձե՛ռ,
Բերաւ դըրաւ մէկ մե՛ծ Քարի մ՝ դագաթին,
Կօպալովը զարկաւ Պուտկին եւ ըսաւ· —
— «Եկէք առէ՛ք Ձեր Պուտուկ . . .,
Աստուած Ինքը լուսաւորէ՛ Ձեր Մեռելի լո՛ւս Հոգին . . .»:
Զարկաւ ցըրուե՛ց այդ Պուտուկ, —
Կըտորները՝ Աստուա՛ծ դիտէ ո՞ւր գացին . . . :
Ապա ելաւ՝ կօրը անցուց Քառասո՛ւն–Կանթէն Պղինձին,
Քառասուն Հորթի Մխան ու Կաշիք միասին,
Ու ձըգե՛ց Իր Ուսին վրա՛յ,
Իջաւ եկաւ՝ ի Րամիկ,
Զարկաւ դընաց ա՛յն Գիւղ՝ ուրկէ Հարիսա՛ էր տարեր՝ Ի՛նք,
Եկաւ Սասման–Ժամու Տո՛ւն,
Եկաւ տեսաւ՝ Հացկերոյթիւն ըրա՛ծ են ու լըմընցած,
Տէրտէրները Սեղան կ՚օրհնեն՝ կըզոհանան որ վերցնեն. —
Ատոնց ըսաւ, — «Զայն մի՛ հանէք, ես Ձեզի մէկ բա՛ն ըսեմ . . .»:
*Կանչեց բերա՛ւ այդ Հորթերու Տիրուըտանք *),*
Պօռա՛ց, ճըչա՛ց, — «Եկէք տարէ՛ք Ձեր Հորթեր . . .»:
= «Ո՞ւր են,–ըսին–, Մեր Հորթեր . . .»:
— «Հո՛ս են,–ըսաւ–, լեցուցեր եմ Այս Պղինձ . . .»:
Ըսին, = «Դէ՛, թո՛ղ՝ Մենք տեսնե՛նք»:
— «Թողնեմ,–ըսաւ–, կըվախի՛ն . . ., —
Ա՛լ չե՛մ կըրնար որ բըռնեմ . . . :
Եկէ՛ք, մէյմէկ Օտ Կորեկի Վա՛րձք կայ, տըւէ՛ք Իմ Եղբօր,
Որ Ձեր Հորթեր Հանեմ՝ տա՛մ . . .»:
Ըսին, = «Դէ՛, հա՛ն՝ ու դիր Գետի՛ն, Մենք կուտա՛նք»:
— «Որ չըտըւիք,–ըսաւ Դաւիթ–, մէ՛կ Օտ Կորե՛կ ալ մընայ՝
*Այդ Կո՛տն ապով *) Ձեր Գեղ կ՚ընեմ քարուքա՛նդ . . .»:*
Որ բերա՛ւ ու դըրաւ ցա՛ծ,
Կաշիք հանեց՝ Թափեց դո՛ւրս,

---

*) Տիրուըտանք, Տէրեր: *) Ապով, Պատճառով:

Ամենմէկը իր Տաւարի կաշին այնտեղ ճանչցա՛ւ, —
Տեսան որ ի՞նչ…, — ախո՛ւի է…: —
= «Դուն,–ըսին–, ադ ի՞նչ ես հաներ Մեր Գլուխ…, —
Մեր Հարթիկը ըսպանո՛ր ես, լըսեր Պըղինձ՝ ախե՛ր ես…»:
Ան ալ թէ, — «ես չե՛մ ըսպաներ, ա՛յ Մարդիկ,
Քառասուն–Դէվե՛րն են տարեր…,
Առէ՛ք,–ըսաւ–, այս մե՛ծ Պըղինձ՝ վրէան Ձեր վո՛ւքր Պըղինձին,
Տարէ՛ք ծախէ՛ք, բաժին ըրէ՛ք՝ Ձեր Տաւարի Մխին տո՛ղ,
Այս Մխերն ալ՝ Հարիւսայի՛ն վրէսարէն՝
Ինչ ես տարեր՝ կերե՛ր եմ… .
Ու կաշիքն ալ՝ անճարնե՛րը թող հաղնին՝
*Միշտ ալ վա՛րձք *) է Ձեզ համար:*
Վա՛յն է ինձ Ձեր Գլխուն…՝
*Թէ որ մէ՛կ ճանկ կարնկ կըտրէք *) Դուք իմ եղբօր Վարձքերէն…*
Ձեր Գեղ կ՛ընեմ քանդ «Դաւիթ-ի աւերած»…»:
Ըսին, = «եղբա՛յր, ա՛ռ Քու վարձանք՝ ու հեռացի՛ր Դու Մեղնէ.
Մենք չե՛նք կըտրեր՝ Քու Ընկերի ո՛չ մէկ Վարձ…»: —

403. Դաւիթ Նորէն ճաշկել Ցեռոյ՝ Կուզայ Ընկերը Կ՛դրկէ Վարձքերը Դանձելու

Ձ.՝Ց·92,93 Ց·92,93,30, (Ց·30), Հ·418, Ձ.՝Հ·418, Ձ., Լ·21, Ձ.՝Լ·21, (Լ·21).

Դաւիթ՝ այնտեղ՝ ամեն յանձնեց Տէրտէրի՛ն,
Տեսաւ Թոնիր նոր մո՛ւխ դըրեր՝ կըվառեն,
Նոր կերակո՛ւր կ՛եփեն որ տան Ուրիշներու՝ որ ուտեն,
Ըսաւ, — «Տէրտէ՛ր, ձա՛յ տըւէք ինձ՝ ես ուտե՛մ.
Այն տարածը՝ հաղիւ Նախրորդն ու Հօրեղբայրս ուտէին»:
Գեղականը երդուած էր թէ՝ «Որ Այն Տըղան Մենք տեսնենք՝
*Պիտի բըռնենք ու տըփե՛նք … *)»:*
Տէրտէրն ըսաւ, — «Այս Տըղային Ձեռ չէ տա՛ք ‡),
Մեր Ամանը թէ տարա՛ւ ալ՝ դարձուց փոխան ե՛տ բերաւ. —

---

*) վարձք, վարձատրութիւն, բարեբարութիւն: *) կտրել, Ձեղչել, պակաս հաշուել: *) Տփել, Մեծել, ափոց տալ: ‡) Ց·92՝ «Էս տղէն ձէն չ՛տէք»՝ ուղղելի՝ «Էս տղին ձեռ չ՛տէք» (հղպ՛ք):

Հա՛ց ալ կուտաք որ ուտէ,
Ելնէ երթայ Իր գործին»։
Դաւիթ դընաց նըստեցաւ,
Երկու լո՛կ ալ ճաշ կերաւ, —
Ըսաւ, — «Շա՛տ–չատ չընորհակա՛լ եմ Ձենէ·
«Ողորմի»՝ Ձեր Մեռելներու լո՛ւս Հոգուն, —
Այսօր կերա՛նք կո՛ւշտ ու կո՛ւտ...»։
Շընորհակըլեց, ելաւ դարձաւ Նախերին քով։
Ըսաւ, — «Եղբա՛յր, կիրակո՛ս,
Ե՛լ դընա՝ Ֆո կորեկ ժողվէ՛ Մարդոցմէն· —
Պատուիրե՛ր եմ՝ «Մէ՛կ ճանկ կորեկ չըկըտրե՛ն Ֆու Վարձքերէն»,
Որ կըտրեցին՝ չըտըւին՝
Ըսէ՛ Ինձի, Ես կ՚երթամ...՝
*Անոնց Գիւղը կ՚ընեմ «Դաւթի աւերած»... *)։*
Այո՛ եկաւ Հորթիկներու Տէրերուն, —
Ամենմէկը մէ՛կ կօտ կորեկ բերաւ տըւաւ Իրեն Վարձ,
Դարձաւ եկաւ Դաւթի քո՛վ։

404. Հոլը Ծակի Մը Մէջ Կ՚իյնայ՝ Դաւիթ Կ՚իջնայ Կ՚հանէ, Նախիրը Կ՚առնէ Կուգայ Գիւղ

Ա·65, Չ·՝Ա·65,66, (Ա·66), Չ·, Ց·30, Չ·՝Ց·30, Ս·156, Չ·՝Ս·156, Ե·559,503, Չ·՝Ե·559,503, Լ·21, Չ·՝Խ·13·

Ելան ապա՝ Հո՛լ խաղցին, —
Դաւիթ զարկա՛ւ Իր Հոլիկ· —
Մէկ Ձորի մը բերնի՛ն էր· —
Այնպէ՛ս զարկաւ ու թըռցուց՝
Հոլը դընաց՝ մէկ Ծա՛կ կար՝
Ինկաւ մըտաւ Ծակին մէ՛ջ։
Դաւիթ դընաց՝ որ այդ Ծակէն հանէ դո՛ւրս,
Ինչ որ ըրաւ՝ տեսաւ խորո՛ւնկ է այդ Ծակ՝
Ընկերն ըսաւ, — «Արի՛, եղբա՛յր, ուրի՛չ Հոլ մը կը չինենք»։
Դաւիթն ալ թէ, = «Չէ՛, Ես Իմ Հոլ չեմ թողներ որ մընայ տա՛կ·
Պէտք է հանե՛մ այս Ծակէն... .

---

*) Դաւթի աւերած, Հիմնայատակ աւերումի գործ։

Դու նայէ՛ Մեր Տաւարները՝
Մինչեւ հանեմ՝ առնեմ դամ...»:
Դաւիթ դընաց՝ Իրեն ցնղէն *) ին–տաս Տըղա՛յ բերաւ հոն,
Ու մէկ հատ ալ՝ Սայլի–ձոպա՛ն *) բերաւ հետ՝
Որ կապէ Իր Թեւերուն տակ՝ կախուի Իջնէ Հորին տա՛կ:
Որ եկան հոն՝ Մահին վըրայ կանգնեցան՝
Ճոպան կապեց Թեւատակէն՝ ու կախեցին Հորին մէ՛ջ:
Որ Իջաւ այդ Հորին տակ՝
Գընաց գըտաւ Իր Հոլիկ:
Առաւ եկաւ՝ Իր Ընկերոջ մօ՛տ եկաւ, —
Ըսաւ, — «ելի՛ր՝ Իմ Տաւարը Ջոկէ՛ տուր որ ես տանի՛մ»:
= «Դեռ կէսօ՛ր է, Դաւի՛թ,–ըսաւ–, այս տեղն ո՞ւր կըտանիս»:
— «Զէ՛, ե՛լ,–ըսաւ–. պիտի Ջոկես Իմ Նախիրը՝ ես երթա՛մ»:
Ջոկե՛ց Նախիրն, ու մընացա՛ծ Հորթերով՝
Տըւաւ առաջ՝ ու քըշե՛ց. —
Կէսօր անցած՝ կանուխ բերաւ՝ լեցուց Գի՛ւղ:
Տաւարներուն Տէրերն եկան՝ լի՛նէ որ պըտան՝ տանիմէկ՝
Իրենց Հորթերն ու Կովերը առին տարան՝ դամեցին:
Մէկ Տաւարի Տէրն ըսաւ Թէ, — «Իմ Հորթ չըկա՛յ. չէ՛ եկած»:
Դաւիթն ըսաւ, = «Աւտր Հորթը կորսուա՛ր եմ. չե՛մ բերեր. —
Գինը ի՞նչ է՝ ըսէ՛ք՝ տա՛մ...»:
Գինը դըրին «տա՛ս ‡) ոսկի», —
Հանեց տըւաւ Տասնըհի՛նգ:
Ժողովուրդը՝ էվարին *)՝
Ամեն եկան՝ լալով դացին դանդաւեցա՛ն Օհանին, —
Թէ, — «Դուն Այդ Որբ՝ բերիր այս Գի՛ւղ ձըդեցիր,
Օր մը փորձանք պիտի բերէ Այս Տըղան՝
Իր վըրան... .
Իր վըրա՛ն ալ, ու Մե՛րն ալ...»: —
Ջէնով–Օհան ա՛լ չըթողուց՝ Դաւիթ Նախիր տանէր Դա՛չտ:

---

*) Ցեղէն, Տեսակէն, նման: *) Ճոպան, Հաստ չուան: ‡) Ա.66՝ Տասընհինգ: *) Էվարին, Երեկոյին:

405. Դաւիթ՝ Հօրեղբօրը Կ'ըսէ «Երթանք Աշխարհի՛ Դանձը Տամ Ինձի»

Ց·30, Շ·՝Ց·30, Շ·՝Ց·30 ա·, Շ·, Շ·՝Ա·66, Շ·՝Ս·155,156, Ս·156, Շ·՝Լ·22, Շ·՝Հ·420·

Ձէնով–Օհան եկաւ առա՛ջ՝ ու բարկացա՛ւ վէր՝–Դաւիթին· —
*— «Ծօ անպիտա՛ն, Պըլէճկերի *) ճի՛ժ,–ըսաւ–·*
Հիմա Նախըի առե՞ն է որ՝ Դուն առի՛ր ու բերեր ես···»:
Դաւիթն ըսաւ, = «Կ'աղաչե՛մ Քեզ, Հօ՛րեղբայր,
Տա՛ր՝ Ամենուն Իրեն Տուար՝ տուր Իրեն,
Ա՛լ Ձիս ազա՛տ ըրէ Դուն···, —
Նախորդութիւն ա՛լ չե՛մ ըներ ասկէ վերջ····
Ա՛լ Նախիրը չե՛մ տանիր··· · —
*երթա՛նք այնտեղ՝ Աշխըրքի՛ *) Ինչքն ու Գանձե՛րը տամ Քեզի···»:*
Ու չա՛րունակ ի՞նչ կ'ըսէ· — ‡)

— «Հօրա՛ր Օհան ×),
Այդ Գանձերը ու Ինչ է Քեզի՛,
Միայնակ՝ Այդ Ձիը տաս Ինձի՛···»:

Ձէնով–Օհան չի՛ հասկընար՝ ի՞նչ կ'ըսէ··· +):
Դաւիթ դարձաւ՝ ապա՝ ըսաւ, — «Հօ՛րեղբայր §),
Որձեղէ՛ն) Մարդ՝ ու ո՛րձ*) Տաւար՝ դուրս չըթողո՛ւս վաղ առաւուն,*
Որ ես առնեմ՝ տանիմ հե՛տս: —
*Քալէ՛ դընա՛՝ մէկ–քըսա՛ն հատ *) Զորի՛ ա՛ռ,*
Վաղը երթանք՝ ու Գա՛նձ բերենք···, անթի՛ւ Գանձ, —
*Որ Դուն ուտե՛ս, ու Քո Եօ՛թ–Պորտն *) ալ ուտէ՝*
Զը հատնի՛··· · —
Ալ մինչեւ ե՞րբ պիտի մընամ Հօրթարած···:
Դէ՛, Հօ՛րեղբայր,–ըսաւ Դաւիթ երդելով· — †)

---

*) Պլէճկեր, *Գոմէշի միս ուտող* [Պլէճ = գոմէշի ճագ]: *) Աշխրքի, *Աշխարհի չափ ամբաւ, աշխարհը լեցնելու չափ շատ*: ‡) Երգով: ×) Ց·30՝ Քեռի–Թորոս: +) *Այսինքն՝ Դաւիթ՝ ի՞նչ ըսել կ'ուզէ· Տե՛ս Հատուած 407*: §) Ս·156, Ց·30, Լ·22՝ Քեռի–Թորոս (համաձայն իրենց պատումներուն: *) Որձ(եղէճ), *Արու (սեռ)*: *) Մէկ–հատ–հատ, *Քանի՛ չափ, քանակ մը*: *) Եօթ–պորտ, *Եօթը սերունդ*: ‡)Երգով:

Ես Իմ Ոտո՛վն եմ գացեր.
Իմ Ձեռո՛վը Դուռ բացեր.
Ես Իմ Աչքո՛վն եմ տեսեր.
Ոսկին, Արծաթ՝ Մեմ բերե՛մ՝
Շէնե՛ր շինեմ՝ շէնցընե՛մ: —
Օրհնութիւն ու բարի՛ թափի երկիմքէն՝
Ան՛ց վըրայ՝ որ ներկա՛յ եմ՝ կըլըսե՛մ...»:

Ձէնով–Օհանն ալ՝ ըսաւ, = «Դէ՛, չո՛ւտ, քալէ՛... .
Քալէ՛ տեսնեմ ի՞նչ Դանճ է...»: —

406. Մարդերով Ու Դրասեներով Կ'երթան Քառասուն-Դողերուն Այրը

Ձ., Ս.156,157, Ձ.՝Ս.156, Ձ.՝Լ.22, Լ.22, (Ե.503), Ց.30.

Միուս առաւօն՝ բերին Ջորիք, եղ ու Մարդիկ՝ որ երթան, —
Այդ Մարդիկներ՝ ևկան ինկան Օհանի Ոտքն ու ըսին. —
Թէ, — «Այդ Տըղան Մեզ չըսանի՛ վըճացնէ Սար ու Քար...
Աղաչէ՛ Մեզ՝ Աւոր Ձեռքէն..., կըվախնա՛նք...»:
Ձէնով–Օհանն ալ՝ ըսաւ Թէ, = «Հանգի՛ստ կացէք, մի՛ վախնաք,
Ես Ձեր հե՛տն եմ՝ հաւասար»:
Բերին եղներն ու Ջորիներ Թամբեցին,
Տըղայ–Դաւիթն ինկաւ առա՛ջ, Ձէնով–Օհանն ալ հոե՛ւ,
Ու Դեղականն Անոնց հե՛տ, —
Գացին ելան այդ Մեծ–Սար.
Գացին հասան այդ Դէվերու Այրին մօ՛տ:
Ձէնով–Օհան մէ՛կ իրիկնեց՝ ի՞նչ տեսնէ՛...., —
*Տեսաւ որ այդ Քառասո՛ւն–Դէվերը՝ պիծած *) են այդ Ցէրե–Դո՛ւռ,*
*Ուռա՛ծ են ու ամենմէկը եղած քան'զ *) Պող–Բլուր ‡) ...:*
Ան ալ վախցա՛ւ..., Իր Ձին ×) պըրծո՛ւց ու փախա՛ւ...:
Դաւիթն ըսաւ, «Մօ տը՛նաւեր Հօրեղբայր,
Առանց ցեղի Ողջերէ՛ն ես չե՛մ փախիր,

---

*) Պիծել (բիծել), Պիծակիւ նման՝ իրար վրայ կուտուիլ: *) Քան'զ, Ի չափ, դերթ, ինչպէս, (Պող–Բլուրի) չափ: ‡) Տեղի անուն է, (ինչպէս վանայ մէջ՝ Շեղջան–Դար [Տես իմ «Բիւր Ակ, Հազար Ակ», Թիւ 9, էջ 64]: ×) Ս.156՝ Ջորին:

Դէ՛, Դուն Աստոնց Մեռածներէն յօրի՞ այդպէս կըփախիս···։
Թէ չե՛ս հաւատար որ մեռա՛ծ են այդ Դէվերը՝
*Դարձիր եաե՛ւ(դ), նայէ՛ այդ մեծ Պալին *) տակ՝*
*Ամենո՛ւն ալ Ականջները կըտրեր՝ հոդի՛ *) եմ դըրեր···»։*
Ջէնով–Օհան՝ դարձաւ տեսաւ Ականջները Պալին տա՛կ,
Եկաւ առա՛ւ Ջորիները՝
Քըշեց գընաց՝ մըտան ‡) ՃԷ՛ր։
Այդ բազմութիւն՝ ինչ Իրեն հե՛տ էր եկած՝
Ջէնով–Օհան տեսաւ Անո՛նք ալ՝ Իրեն պէս՝ կըփախի՛ն, —
Ըսաւ, — «Մարդի՛կ, ինչո՞ւ այդպէս կըփախիք···»։
= «Ապա,–ըսին–, Ան որ ա՛յսքան Դէվեր մէկտեղ՝ ըսպաններ է ու [վըռեր՝
Մե՛զ ալ կըընայ բերել խառնել Աստոնց հե՛տ···»։
— «Չէ՛, մի՛ վախնաք,–ըսաւ Օհան–, աս՝ Գանձերու ՃԷ՛րն ×) է ալ։

407. «Այդ Գանձերն Ու Ինչի Հնգի՛, Միճակ Այդ Մէկ Ջին Ինձի՛»

Լ·22,21, Զ·՝Լ·22, Զ(Լ·21,22), Զ·՝Ս·157, Ս·157, Զ·, (Ճ·31), Ճ.95, Զ·՝Ճ·31,30, Ճ·30·ս·, Ճ·31,28, Հ·420, Զ(Հ·420)·

Մըտան նե՛րս, —
Դաւիթն ըսաւ, — «Հօ՛րեղբայր,
Այս Գանձերը կըտեսնե՞ս···, —
Ի՛նչքան որ Քո ո՛ւժը յաղթէ՝ վերցուր ա՛ռ,
Ինչ կը մընայ՝ Աղքատներուն բաժի՛ն ըրէ Իմ կողմէս»։
Ի՛նչ կար–չկար՝ ժողվեցին ու Իրենց Բեռներ կապեցին,
Քառասո՛ւնն ալ մի՛ կար ՃԷրին մէջ,
Քառասո՛ւնն ալ դո՛ւրս քաշեցին,
Այդ Քառասո՛ւնն ալ բեռցուցին։
Դաւիթ Ինքը՝ Քուռակին մօտ կեցե՛ր է,
Ու չ՛արունակ ա՛յս կ՛ըսէ· — +)
— «Հա՛ցն ու Գինին, ՏԷ՛ր–Կեցցացինն,

---

*) Պալ, Մեծկակ քար, ժայռի կտոր։ *) Հոդի, Հոդ, այդտեղը։ ‡) Ինք ու Դաւիթ մտան (Այրին մէջ)։ ×) Լ·22՝ տէր՝ ուղղելի յէր (այր, քարանձաւ)։ +) Երգով։

Հօրա՛ր–Օհան,
Որ մօտեցար *) Իմ Քուռակին՝
Կօպա՛լ մ' կ'իջնեմ Քու վրդին՝
Կ'երթ-աս մինչեւ Անդունդներ...:
Հօրա՛ր–Օհան,
Այդ Գանձերն ու Ինչէ՛ Քեզի՛,
Միանակ այդ մէ՛կ Ձին՝ Ինձի՛..., —
Կուտա՞ս՝ կուտա՛ս...,—
Թէ չէ՛տաս...՝
Քե՛զ ալ՝ այդպէս՝
Կըհասցընեմ Այդ Դէվերու սեւ օրի՛ն...»:

Զէնով–Օհան երբոր տեսա՛ւ Քուռակ–Ձին՝
Նոր այհատո՛ն դըլխու ընկաւ՝ Թէ Դաւիթը ի՞նչ կ'ըսէր ‡), —
Դարձաւ ըսա՛ւ Դաւիթին. —
= «Տըղա՛յ,–ըսաւ–, Գանձն ու Ինչքե՛րն ալ Քեզի,
Այդ Քուռակ–Ձի՛ն ալ Քեզի: —
Ես ի՞նչ ընեմ այդ բաներ...,
Բոլորն ալ Դո՛ւն ես դըտեր...»:
Ապա ըսաւ, = «Որդի՛, Դաւի՛թ, Ես ալ Քեզի բա՛ն մ' ըսեմ...»:
— «Ի՞նչ է,–ըսաւ–, Հօ՛րեղբայր...»:
*= «Որդի՛,–ըսաւ–, ամէն Քուռակ *) չի՛ դիմանար Քո Ազդին *).*
Քո Պապու Ձին՝ ու Քու Հօ՛րն ալ՝ Աստծո՛ւ տըւած մէկ Ձի էր,
Անուն՝ Քուռկի՛կ–Ջալալին... . —
*Անի՝ նըւէր տըւեր եմ ես՝ Քո Քեռո՛ւն *)...»:*
— «Հէ՞...., ի՞նչ կ'ըսես, Հօ՛րեղբայր...»:
Ըսաւ, = «Ձեռդ ճըղթէ՛ Ձիու Քամակին վրա՛յ,
*Թղ տըղղեցաւ *)՝ տո՛ւր Աղքատներ Թող տանի՛ն,*
Աստուած Քեզի կըհասցընէ՛ կըտրիճ Ձի մ'...»:
*Դաւիթ է՛լմէլ *) Ձեռը ճըղթեց Քուռակ–Ձիու Քամակին՝*
Այդ Քուռակ–Ձին՝ չըտըղղեցաւ Ձեռքին տակ.
*Ոտներ Թալե՛ց՝ զարկաւ Ցէրի կըտուրին *)...:*

---

*) Որ մօտեցար, *Թէ մօտենաս:* ‡) *Տե՛ս Հատուած 405:*
*) Քուռակ, *Նորատի Ձի:* *) Ազգ, *Ցեղ:* *) Քեռուն, *Քեռիին, մօրեղբօր:* *) Տղզիլ, տզզիլ, *կքիլ:* *) Է՛լմէլ, *Նորէն. Լ·22՝ Էն մէկէլ՝ ուղղելի Է՛լմէլ:* *) Կտուր, *Առիք, ձեղուն, առաստաղ:*

Զէնով-Օհան՝ ըսաւ.= «Դէ՛, ե՛լ, Ֆո Զին քաշէ՛ ու երթա՛նք»։
Երբոր Դաւիթ այդ խօսքն առա՛ւ իր Հօրեղբօր Բերանէն՝
Այբին մէջէն դո՛ւրս քաշեց Իր Ֆուռակ-Զին,
Ցատկե՛ց ելաւ ու հեծա՛ւ,—
Ա՛ռ կուտայ ու՝ մէկ կ'երթայ դէ՛ս, մէկ ալ՝ դէ՛ն...։
Ֆուռակ-Զին ալ՝ Զի չ'է՛ ո՛ր...,—
Լեզուով Աւտար զօրութիւնը չի՛ ըսուի՛ր...,—
Հրեղէ՛ն Զի է՝ Այդ Ֆուռակ...։
Ելան բարձին՝ Ե՛զ ու Ջոբի՛ ու Զիւ՛ր,
Այդպէս Ինչքո՛վ, Հարբասուբեա՛մբ, Գանձերո՛վ,—
Ինկան Ճամբա՛յ՝ եկան հասան 'ի Սասո՛ւն։
Արծաթ-Ոսկին տարան լըցին Թագաւորի Գանձատա՛ւն,
Ամենամէկն ալ՝ Իրեն բաժին տարաւ լեցուց Իրեն տուն...,
Այդ կորսըւա՛ծ թէ մարթըւած Հորթերուն դի՛ւնն ալ տըւին։
Դաւիթ՝ այլևս՝ թողուց Հորթերն ու Նախիր,
*Գընաց մէկ Թա՛մբ՝ ու Սա՛նձ առաւ ուզածով *),*
Սէրը ձըղեց վեր'-Զիւսն։—
Ու մէկ-մէկ ալ՝ կ'երթա՛ր-կուգար Տէրտրոջ Տո՛ւն,
Գիրք †) կ'առնէր Ձեռ՝ կը կարդա՛ր։

Ժ. ԹԼՂՈԼ-ԴԱՒԻԹ ՈՒ ԿՈՐԵԿ-ԱՐՏԻ ՊԱՌԱԻԸ

408. Դաւիթ Անգործ Մնալով՝ Զէնով-Օհան Անոր համար Նեռ-Աղեղ Մը Շինել Կուտայ

Զ.՝Ե.765, Ե.963,965,1098,503,621,559,708,733,900, Զ(Ե.621,966), Զ(Հ.26,375), Հ.26,375, Զ.՝Հ.26, Զ.՝Ի.15, Ի.15,16,13, Զ(Ի.16), Զ., Ա.9, Զ.՝Ա.9, (Ա.64,9), Կ.50, Ճ.95, ՁՍ.387, Զ.՝ՁՍ.387.

Մընա՛ց, ատո՛ւն մ' վրան անցաւ.—
Մէկ ժամանակ՝ Դաւիթ այնպէս մընաց անգործ ու պարապ.

---

*) *Ուզածով, Իր ուզածին պէս։* †) Ճ.28,31,95ա.՝ *Սաղմոց։*

Դաւիթ հաղիւ տասը տարու Տըղայ է.
Օր մ՚ իրիկուն՝ նըստա՛ր են.—
Ըսաւ,— «Հօրա՛ր, ապա ինչպէս պիտի ըլլայ Իմ վիճակ...,
Այս Գեղական՝ այլեւս Ինձի Նախրապետութիւն չըտա՛լ»։
=: «Որդի,—ըսաւ—, Աստծո՛ւ չնորհիւ՝ ու Քու Հօ՛րը Դամբանին †)՝
Մ՚ինչքան ունինք...՝ ուտենք, խըմենք՝ չուր մնանինք...»։
Դաւիթն ալ թէ,— «Աստուած քո Տո՛ւն չ՚աւրէ,—ըսաւ—, Հօ՛րեղբայր,
Մ՚ինչքան Ոսկի կար Մեղի...՝ ×)
Դուն Զիս ըրիր Ուլարած ու Տաւարած...
Մ՚ինչքան Դուն Զիս տանչեցի՛ր...»։
Ջէնով-Օհան ըսաւ,= «Որդի՛, Դըրո՛ղը քեզ չըտանի՛ +).
Այդ Ոսկիներ Մեղի չի՛ն... .
Մըսրայ-Մէլիք կուգայ Իրեն Տո՛ւրք կ՚առնէ...»։
Օր մ՚ ալ Օհան ի՞նչ ըսաւ,—
— «Զո՛ւր է,—ըսաւ—, աս չեղա՛ւ.
Դաւիթ պարապ չի՛ կենար... .
Բերենք հիմա ի՞նչ ընենք...»։
Մարդուն մէկը ըսաւ,= «Օհա՛ն, զիտե՞ս ի՛նչ...,—
Բե՛ր Նետ-Աղե՛ղ մ՚ չինել տուր, §)
Տո՛ւր Դաւիթին՝ թող Դա՛շտ երթայ, ձըմեռուղ զարնէ իր համար։
Ձըմեռուղ ըսած՝ չա՛ր *) Թըռչուն է. չո՛ւտ-չուտ՝ հոս-հո՛ն կըթըռի,
Դաւիթն ալ հետ կը չարչարուի մինչեւ իրկուն, արեւին,
Կուգայ Տունը՝ կ՚իյնայ հանդարտ կըքընի՛...»։
— «Այդ աղէ՛կ է,—ըսաւ Օհան իր կողմէն—.
Բերենք աղուոր Նետ-Աղե՛ղ մը չինել տանք,
Տանք Դաւիթին,
Մէկ՝ չորս-հի՛նգ ալ՝ յարմար Ընկե՛ր դընենք հետ՝

---

†) Այսինքն՝ Աստծու եւ քո հօր գերեզմանին չնորհիւ։ ×) Ակնարկելով՝ 40 Գողերուն դիզած գանձին. Խ.15՝ Կուզբադինի տուեալ ոսկինեերուն, զոր ինքը Դաւիթ ե՛տ խլած էր։ +)Խ.16՝ «գըբողս քի»՝ ուղղել «գըրող զ՚քի»։ §) Ե.1101 եւ՝ չափով մը՝ Ս.158՝ Դաւիթի Նետաղեղը ձեռք բերելու միջադէպը կը պատմեն՝ «ափի մէջ տաք աւազ լեցնելու» փոփոխակովը, որ չիոթում մըն է՝ հայրենի Ջէն ու Ջարդերը Հօրեղբօրմէն ուզելու դէպքին հետ. Տեսնել Հատուած....։ *) Զար, անհանդարտ, միշտ ոտոռտոզ։

Երթայ Դաշտեր՝ Իրեն համար լո՛ր զարնէ,
*Նէֆի՛ր *) ընէ՝ դայ հանդարտիկ Ընտան Տո՛ւն»։*
Զէյնոլ-Օհան կանչէ՛ց Դաւիթ՝ բերաւ Տո՛ւն,—
Ըսաւ,— «Որդի՛, մատա՛ղ Քեզի Հօրեղբայրդ,
Տաւար-մաւար ա՛լ չըկա՛յ·
Ի՞նչ պիտի ՚նեմ Դուն այլեւս.—
Արի՛,—ըսաւ—, Նեռ-Աղե՛ղ †) մը տամ Քեզի,
Ա՛ռ ու գընա՝ Արտերու մէջ լոր ու ճընճղո՛ւկ ըսպանէ,
Նէֆի՛ր ըրէ Քեզ համար»։
= «Հա՛, Հօ՛րեղբայր, ըսաւ Դաւիթ–, լա՛ւ Իմ բանն է այդ ըսածդ»։
Հօրեղբայրն ալ ի՞նչ ըրաւ.—
Ելաւ գընաց Քաղաքի մէջ, մօտ–Դարբին՝
Մէկ Պողվըտէ՛ Նետաղեղ մը ×) չինել տըւաւ Դաւիթին,
Ելաւ դարձաւ՝ եկաւ Տո՛ւն։

409. Դաւիթ Իր Հօր Նետաղե՛ղը Կըգտնէ

Ե.900,901, Զ.՚Ե,901, (Ե.14), (Հ.415), (Կ.50).

Մընաց՝ լուսուն՝ Դաւիթն ըսաւ Իր Հօրեղբօր Կընիկին,—
— «Մարէ՛ +),–ըսաւ–, անօթի՛ եմ, Հա՛ց ուտենք»։
= «Մարէ՛ն մեռնի Քե՛զ,–ըսաւ–.
*Ելիր գընա՛ քիչ մը ցո՛ւն *) բեր Ծանոցէն *),*
Թոնիր վառենք, Քեզի կո՛ւտ) մը պահեր եմ,*
Տամ Դուն ուտես՝ կըշտանա՛ս»։
Դաւիթ ելաւ՝ որ Ծանոցէն քիչ մը պիտի ցո՛ւն բերէ՝
Նայեց տեսաւ՝ բա՛ն մը Պատէն կախո՛ւկ է . . . ,—
*Կօռուկ *) Փա՛յտ մ՚ է, փոշոտած . . . ։*
Առաւ բերա՛ւ Ծանին հետ ,—

---

*) Նեմիր, (նախմիր), Որս , որսորդութիւն։ †) Ը.95՝ տիրկաւվուն՝ ուղղել՝ տիրկավան ,պրակ· թիր-ֆիտան=նետ-աղեղ։ ×) Տե՛ս Հատ. 409՝ տոորէջի Ծնթթն. †։ +) Հօրեղբօր կնկան՝ մայրիկ կը կանչէ։ *) Ցան, Վառելիք· *) Ցանոց, Վառելիքի խուց· *) Կուտ, կտոր մ՚ ուտելիք· *) Կօռուկ, Կորած, Ծռած , կամարաձեւ դարձուցած։

Ըսաւ,— «Մարէ՛, ան ինչ է..., այս կօտուկ Փայտ...»։
= «Ես չե՛մ դիտեր. Ռու Հօրեղբա՛յր դիտէ,-ըսաւ-, ա՛յ Որդի»։
Կո՛ւտ մը տըւաւ՝ Դաւիթ կ՚ուտէ՛ Իրեն առէ,
Ձէնով-Օհան դըրսէն եկաւ՝ նե՛րս մըտաւ։
Դաւիթ հարցուց՝ ըսաւ,— «Ան ինչ կօտուկ Փա՛յտ է, Հօ՛րեղբա՛յր»։
Ըսաւ,= «Որդի՛, դէ՛հ, Դուն եղիր վո՛րձ ըրէ.—
Թէ ան Թելը *) Դուն ձըգեցիր այդ կեռին՝
Ինչ կ՚ըսե՛մ.
Թէ չըկըրցար՝ չե՛մ ըսեր...
Տըղայ-Դաւիթ՝ ինչ *) Ձեռ տըւաւ՝ ու քաշե՛ց...՝
Լարը ձըղեց իր կեռին։
Ձէնով-Օհան չըչկըռեցա՛ւ *) Իրեն առէ... .—
«Ամոր Հայրը,-ըսաւ-, մէկ ժա՛մ կըբանէր՝
Նո՛ր կըձըդէր կեռին մէջ.
Ախ մէկ դիր Ձեռ տըւաւ՝
Լարը ձըղեց իր կեռին...»։
Ան ալ դարձաւ՝ ըսաւ, = «Դաւի՛թ, դիտե՞ս ի՛նչ..., —
Ասի Ռու Հօր Նետաղե՛ղն է սեւլական †),
Ինչ կ՚երթար ու Նէճի՛ր կ՚ընէր Իր համար»։
Դաւի՛թն էր ալ,— ուրախացա՛ւ, խընդացա՛ւ,
Հօր Նետ-Աղեղ թալեց Իր թե՛ւ՝ ու դընա՛ց,
Ելաւ Լինկաւ Դա՛ր-ու-Դա՛շտ...։

---

*) Թել, Լար։ *) Ինչ, Ինչ առեն որ։ *) Շըշկռիլ, Սասիկ զարմանալ, ապշիլ մնալ։ †) Նետ-Աղեղ՝ կեռ ձգանով՝ ուրեմն arbalète, Պարսանետ, «պողպատէ չինուած», որ ծանօթ էր հին Հայ Դիւցազներուն։ Պարզ Նետաղեղ երթէ եղած ըլլար՝ Դաւիթին զարմանք պիտի չ՚առթէր, քանի որ՝ թէ՛ Մըսրայ մէջ, թէ՛ ի Սասուն՝ պարզ Նետաղեղով որսորդութիւն չա՛տ ըրած էր։ Ու Ձէնով-Օհանի Նո՛ր չինել առածն ալ՝ պողպատէ էր, հաւանաբար՝ arbalète։

410. Դաւիթ՝ Նեռաղեղով՝ Դաւսերը Ոսկի Կ'երթայ

Զ(Ճ.31). Ճ.31, Զ(Խ.503,733,765), Զ.Ե.708, Ե.559,733,503,621,998, 902,14,1098, Զ(ՁՍ,387), ՁՍ.387,388, Կ,50,12, Զ,Կ.50, (Հ.26), Հ.26, 415. Խ.13.16, ՁՎ.1, Լ.22, Զ(Լ.22), Ս.157, Ճ.31, (Ա.67,9), Ա.67, Զ.

Միւս օրն ալ՝ Զկնով-Օհան չուտ բերաւ՝
Շինել տըւած Պողպըտէ նո՛ր Նետաղեղ՝
Տըւաւ Դաւթին ու ըսաւ.—
— «Որդի՛,—ըսաւ—, մատո՛ղ Բեզի Հօրեղբայր(զ),
Ա՛ռ Բնդի այս Նետ-Աղեղ,
Գընա՛ Դեպի բերնին հե՛տ,
Դընա՛ ինչքան կըտեսնես,—
Գընա՛ Դեպի-Ճընճո՛ւղ զարկ,
Կա՛ց Դաշտի մէջ՝ Լոր-Ճընճղո՛ւկ զարկ Բեզ համար,
Նէճի՛ր ըրէ Սար ու Քար...։
Մեր այս տարուան Զըմրան Միսը †) պակա՛ս է.
Այս Նետ-Աղեղ Բեզի համա՛ր բերեր եմ՝
Որ Դուն երթաս ու Ո՛րս ընես Դաշտի մէջ՝
Բերես ուտենք միատեղ»։
Ու. միան 'ի վեր՝ ըսաւ «Տըղան ուժո՛վ է,—
Երթայ Դաշտեր՝ Իրեն համար թող ման գայ...»։
Դաւիթ այլևս չըհամբերե՛ց, ելաւ վե՛ր,
Բաթման-Իուղէն, Ճարպ'ար-Քամին դըրաւ Տուն ×),
Իր Նետ-Աղեղն առաւ Թալեց Իրեն Թե՛ւ,
Իրեն համար՝ Զեռքի-Թըռչուն՝ աղէկ Բազէ մ' ալ գըտաւ +),
Մէջքը զարկաւ Իր Կօպալ,
Գընաց դուրսը՝ Ո՛րս ընելու Պըրակներ.
Գընաց Դաշտեր, Սահմանին մէջ, Ո՛րս ընելու Իր համար։
Հիմա, Դաւիթ, ա՛լ ի՛նչ կ'ընէր ամեն օր,—
Առտըծո՛ւն օր՝ Որսի կ'երթար Սրտ ու Սի,
Մինչեւ իրկուն կըպըտտուէր Սար ու Ձոր,
Իր Ձին հեծա՛ծ՝ Թէ ան-Ձի,—

---

†) Կ.50՝ կավըրմեն (գավուռմա, ձմրան իբր պաշար՝ եփած ու իւղով ծածկուած միս)։ ×) Իրեն թիկնապահ երկու Ըմբիշներն էին։ +) Ճ.31, Ա,67՝ Քուռկիկ-Ջաղաքին դուրս հաշեց ու հեծաւ։

Իրեն համար կաքաւ ու Լոր, կամ ձընճըղո՛ւկ կըզարնէր, —
Եւ իրիկուն Տո՛ւն կուգար.
Անո՛վ կ՚ընէր իր ապրուստ:
Քեռի–Թորոսն ալ՝ խաղալով՝ կուգար առաջ, իրիկուն,
Ձիուն Սանձը կըբռնէր,
Դաւիթ կ՚իջնէ՛ր Իր Ձիէն,
Ան ալ Անոր երեսնո՛ւրը կը պաչէր,
— «Կեցցէ՛,–կ՚ըսէր–, Իմ Դաւիթը, Ո՛րս է բերէր Մեզ համար»,
Կ՚առնէր Դաւիթ կըզոյցընէր՝ ու կըսառնէր որ պառկի: —

411. Դաւիթ՝ Պառաւի Կորեկ-Աւրին Մէջ

Ս·157, Զ·՝Ս·157, Ն·503,559,1098,621,733,902,998, (Ն·503,733), ՉՍ·389, (Հ·415,26), Չվ·1, Յ·31,95, Խ·13,16, Կ·12,50, (Կ·50), Ա·9, Զ·

Օրերէ՛ն մէկ՝ Դաւիթ գընաց հետ այդ Գետի բերանին.
Ցածրացաւ ու իջաւ Գետի բերան–վա՛ր,
Գընաց Աւտեր, — Պառա՛ւ մը կայ Սասման մէջ,
Անոն ալ կայ՝ եօ՛թ Աղջիկ.
— Ինքն ալ՝ ութ Անձ ընտանիք —,
*Ունի՛–չունի՝ եօ՛թը կորի *) Կորե՛կ ունի Իր համար —,*
*Դաւիթ գընա՛ց՝ Լինկաւ մէջ–այդ չիվա՛ր Պառւի Կորեկին *):*
Կորե՛կն է ալ, — ուռճացե՛ր է, բարձրացե՛ր,
Մարդ չի՛ կըրնար մըտնել մէջ:
Է՛, Կորեկի Աւրին մէջ ալ՝ Լորեր շա՛տ...,
Հաւ–ու–ճիւեր, ձընճղուկ շա՛տ..., —
Դաւիթ տեսաւ՝ ձընճըղուկներ խումբով իջան Աւրին մէ՛ջ,
Ինքն ալ գընաց՝ Կորեկ–Աւրին մէ՛ջ մըտաւ: —
Նայեց տեսաւ՝ Լո՛ր մը թըռաւ Կորեկէն՝
Ու նորէ՛ն ալ՝ Կորեկին մէ՛ջ թառեցաւ, —
«Լհը՛,–ըսաւ–, այդ ձընճըղուկ քան՚զ Մխուաներ խոշո՛ր է·
Պիտի երթամ՝ այդ խոշորնե՛ր զարնեմ Ես»:
Հասաւ այնտեղ՝ Նետ–Աղեղով զարկաւ Լորեր ըսպանե՛ց,

---

*) Կարի, Ակօս, չարք: *) Կարեկ, Կորեկի արտ. կորեկ = տարբը, millet:

Բազէն Թողուց Կորեկին մէջ, բաւական ալ Ա՛ն բռնեց,
Առաւ Լորեր՝ ու ե՛տ դարձաւ, եկաւ մըտաւ Տէրտրոջ Տո՛ւն,
Լորերն այնտեղ խտրկեցին, կարագի մէջ եփեցին,
Տըւին Իրեն՝ ու կերաւ, —
Ըսին, — «Այդպէ՛ս, հա՛ Գետին հե՛տ գընա Դուն,
Ջըրի–ճընճղո՛ւկ ըսպանէ·
Անոնք որ մէջ–Կորեկին են՝ մի՛ զարներ»: —

412. Պառաւի Կոռեկառոը Դաւիթի Ոտիքն Տակ Կըփճաճայ

Լ·22, Զ(Ա·67), Ե·708,709;903,621,503,998, Ց·95, Ց·95ա·,31, (Ց·31), Զվ·1, ՉՍ·390,391, Խ·16, Հ·375, Ս·157,158; Զ·

Մէկ ժամանակ՝ այդպէ՛ս ըրաւ ու գընա՛ց···: —
Բայց արի՛ տես՝ որ Դաւիթն ալ՝ ինչ կ՚երթար ու Ո՛րս կ՚ընէր,
Գալո՛ւատեն՝ այդ Որբ կընկան Արտ որ կար՝
Դաւթի ճամբուն վըրա՛յ էր, —
Աստըծո՛ւ օր՝ կուզար կ՚անցնէր ‡) Արտին մէջէն, Տո՛ւն կուգար:
Այդ Կորեկի Արտին մէ՛ջ ալ՝ Լոր–ճընճըղո՛ւկ կըզարնէր,
Այնտեղերը կըխաղար···:
Դաւիթ սորվաւ՝ Կորեկին մէջ Որսի՛ կ՚երթար ամեն օր: —
Գընաց–եկաւ, Լո՛ր ըսպանեց, թաւալեցաւ Արտին մէ՛ջ,
*Կորեկները Իր Ոտքին տակ տըրորե՛ց ու փըրճըղկե՛ց *),*
*Մինչեւ իրկուն՝ Պառաւի Արտն ըրաւ կա՛լ *): —*
Եօթ կորի՛ էր, չորսը աւրե՛ց, մնաց երե՛ք···:
Օր մ՚ գընաց չէ՛, երկու օր՝ չէ՛, երեքին···՝
Մէկ Մարդ եկաւ՝ լմա՛ց տըւան Պառաւին ×), —
— «Ո՛ Տո՛ւն չաւրի՛···, մէկ ե՛լ,–ըսաւ–, գընա Արտիդ երեւա՛ն···,—
Չորսը աւրե՛ց, մընաց երե՛ք Կորիներդ···,
*Գիշեր *) կուգայ՝ երեք Կորին՛ն ալ կ՚աւերէ այդ Տըղան···»: —*

---

‡) Ց·31, Ա·67, Լ·22՝ Քուռկիկ–Ջալալին ևեծած: Որ սակայն ա–պազայի իր հրեղէն Քուռկիկ–Ջալալին չ՚է՛, այլ անոր անունով կո–չած Քուռակ–Ջին՝ որ 40 Դողերու Այրէն բերած էր, «Իր Պապու (հօրը) ձիուն անունը՝ դրեր էր իր ձիուն վրայ»՝ Լ·22: *) Փրցընել, փչրել, փճացնել: *) Կալ, կալատեղի պէս հարթ· կալ ընե–լու պէս: ×) Ս·157՝ հալտրուն (ալեւտրին): *) Գիշեր, Իրիկուն:

413. Պառաւն Իր Աւթին Մէջ՝ Դաւիթի Հետ Դէմ-դիմի

Ս·158,157, Ճ·31,95, Չ·՝Ճ·95, Հ·26,375,415, (Հ·375,26,415), Ե·903,560,621,1098,998,709,503,733,963,1101, (Ե·709,1098,733, 903), Չ·՝Ե·733,621, Ա·9,67, Չվ·1, Կ·12,51, ՉՍ·391, (Խ·16), Խ·16·

*Մէր Մամի՛կն է, — առաւօտուն այն դըլխէն *)՝*
Իր Աղօթքը ‡) կ՚ընէ ու Հա՛յց կըթըխէ,
*Կ՚ըսէ «Երթամ՝ Իմ Կորեկին ա՛չք մը տամ» *) : —*
Ելաւ դընաց որ տեսնէ՛ Իր Կորեկները,
Կ՚իրիկնայ որ ի՛նչ տեսնէ՝ . . . , —
Կորեկն ամեն ճըխմըրան՛ը է՝ ու տըրո՛ր . . . .
*Տախ–սաղա՛ղ *) է ըրեր Աբա . . . . —*
Զորս ×) կորիններ տըրտա՛ծ է՝ ըրած է հարթ Գետնի պէ՛ս : —
Շա՛տ բարկացաւ այդ Մամիկ, —
*— «Աստծո՛ւ մէկիկ *)՝ բարով,–ըսաւ–, Կորկի Տըրտղ դէմը՛ս դար» :*
Պառաւ նայեց՝ մէ՛կ ալ տեսաւ՝ որ Դաւիթ՝
*Բաղէն իր Ձի՛ս, հեծուկ Քուռա՛կ, Տըղանի՛ր *) ալ միասին՝*
Կորկի մէ՛ջը ինկեր են . . . , —
Նետաղեղով՝ Լոր, ճըռնճըղո՛ւկ կըղարնեն . . . : —
*Այնպէս կոխեր–կոխըրճո՛ր են Կորիններ *),*
Հա՛տ մը Կորեկ չ՚էր՝ մընացեր Աբուին մէջ . . . :
Պառաւն Սիրտն այրեցա՛ւ . . . , —
Հասաւ առա՛ջ, Բըռո՛ւնց վերցուց Դաւթի վրայ,
Անիծե՛ց ու ըսաւ, — «Դաւի՛թ, Գըրո՛ղ–Մահը Քեզ տանի՛ . . . +),
Թաւիշ՛ Քու Մորթ, Թաւիշ՛ Քու Մէան ու Ոսկո՛ր . . . ,
*Փըռե՛մ ու լա՛մ Քու Աբե՛ւ . . . , *)*
Ոչ–բարո՛վ Դու ծըներ էիր Քու Մօրէն . . . ,

---

*) Այն գլխէն, կանուխէն, վա՛ղ առաւօտէն : ‡) Ս·158՝ «չուր աղօթք»՝ ուղղել՝ «զ՚ուր աղօթ-ք» : *) Աչի մը տալ, Ակնարկ մը նետել, քննելու պէս նայիլ : *) Տախ–սաղաղ, Հարթ հաւասար : ×) Ճ·31՝ երեք : *) Աստծու մէկիկ, Մէկ Աստուած ի՛նքը յաջողցնէր . . . (որ իմ արտ տրտղը դէմս դար) : *) Տղաներ, Ընկերներ՝ (իրեն պէս տղա՛յ տարիքով) : *) Կորիւններ, Ակօսներ : +) Ճ·31, Ճ·95՝ «դրողս քի, մախս քի»՝ ուղղել՝ «դրող զ՚քի, մահ զ՚քի» (տանի) : *) Աբեւ, կեանք մարդեղութիւն, անձ : .

Շաղգմակե՛ր *) Ծուռ–Դաւիթ···,
Ցօրի՞ն Դուն իմ կորիւնները տըրորեցիր՝ աւրեցիր,
Ըրիր ինչպէս հա՛րթ Գետին···:
Աստուածմէ՞ ալ չես վախենա՛ր Դուն խակի՛ *),
Ես եմ՝ անմարդ մէկ կընի՛կ՝
Ես՛թը անտէր Որբ–Աղջիկ···, —
Ես՛թը կորի՝ կորե՛կ ցաներ էի Ես,
Իմ ապրուստս *) ա՛ռ է մնացեր· առ կորե՛կ, —
Ան՝ իմ կո՛ւթը, իմ Լամո՛ւտ *)· —
Այդ փըչո՛ւրն էր այս Ձմեռուան իմ պաշար,
Ան ալ վըրաս կըտրեցի՛ր,
Կորիւներըս ըրիր Գետնին հաւասա՛ր···, —
Ձորան աւրե՛ր ես՝ երիք կորի՛ն է մնացեր···: —
Փորո՛վ փորցրի՛ս··· *), Թղլո՛ղ–Դաւի՛թ···, Ծո՛ւռ ես Դու···,
Ատ ի՞նչ կ՛ընես···, ինչո՞ւ եկեր ինկեր ես Իմ Արաի մէջ···»:
= «Մամի՛կ,–ըսաւ Դաւիթն ալ–,
Մի՛ անիծեր Զիս այդպէս···,
Ինչո՞ւ Գըրող տանի Զիս···,
Ես ի՞նչ կ՛ընեմ որ Դուն այդպէս կ՛անիծես···,
Այս Արաի մէջ չա՛տ Լոր կայ, —
Լոր կըզարնեմ Ինձ համար,
Չե՛մ թողուր որ ձըրնճուղները զան ուտե՛ն Քու կորեկները···»:
— «Վերցրի՛ս Դու, Տըղա՛յ,–ըսաւ–, Լորը Քեզի ի՞նչ օգուտ···,
Թէ Որսո՛րդ ես՝ ելիր գընա Քու Հօր Սա՛ր, —
Նէճիր կ՛ուզես՝ Նէճիր շա՛տ···, —
Վէրի–Ոչխա՛ր, Եղնի՛կ ու Ա՛յծ, ի՛նչ որ ուզես՝ կա՛յ այն Սար·
Ի՛նչ ես մնացեր Դուն այստեղ···, —
Գընա Քու Հօր Նէճրատե՛ղ *),
Զարկ ըսպանէ՛, Նէճի՛ր ըրէ՝ բեր ու կե՛ր·
Բեր՝ Քեզ համար ապրո՛ւստ ըրէ՝ կըշտացի՛ր, —

---

*) Շաղգմակեր, Շաղգամ (չատ) ուտող: [Մատուռցիներ շաղգամ — navet — չատ կ՛ուտեն, երկրին գլխաւոր բանջարեղէններէն է]: *) Խակի՛, Երբեք: *) Ապրուստ, Ուտելիք, ապրելու նիւթ: *) Լամուտ, Ապրուստ: *) Փորով՛ փորձուի՛ս, Փորդ փորցաւ լյնա՛յ···: *) Նէճրատեղ, Որսավայր:

Մի՛ դար իմ Աբա ճըխմըրտեր,
*Պուճուր *) Լորեր ըսպաներ: —*
Այդ Քեզ համար ապրուստ չ'է՛'
Որ իմ կորեկի տըրորե՛ս... .
Դու Պառաւի կորեկարտին Լորերո՞վ պիտ՝ կըշտանաս...»:

414. Պառաւը Դաւիթի Հօր Ոսի-Սարի Մասին Կ'խօսի

Ե·1098,733,1100,963,998,621,503,1101,996, (Ե·733,), Զ(Կ·12), Կ·12, ՁՍ·392,391, Հ·375,376,26,415, (Հ·376), Զ·՝Հ·26, Զ·՝Հ·375, Զ·՝Ց·31, Ց·31, Զ·՝Խ·16, Ա·9,67, (Ա·67), Ս·158, ՁՍ·391,392·

Դէ՛, Դաւի՛թն էր, — ականջ չըրա՛ւ Պառաւին, —
Իր Ո՛րս կ'ընէր Աբտին մէջ·
Նորէն կաքա՛ւ, Լոր, ճընճըղո՛ւկ կը զարնէր,
Ճընճուղներն ու կորեկ՝ մէկտեղ՝ կըժողվէր՝
*Կը բերէր՝ հոն՝ բարդո՛ց *) կ'ընէր Աբտին մէջ:*
Պառաւն ըսա՛ւ, պօռա՛ց, կանչե՛ց՝ անօգո՛ւտ..., —
— «Տօ՛ վերուկ՛մ Քեզ..., լա՛մ Քու Աբեւ, ա՛յ Դաւիթ,
Գըրո՛ղ–Մահը Քեզ տանի՛...,
*Աստծու–կըրա՛կն ըլլայ *)...,ըսաւ–, մէ՛կ հատ կորեկ չե՛ս թողեր·*
Դուն ինչո՞ւ իմ կորեկին այսպէ՛ս ըրեր ես... .
*Գիտէ դայիր՝ վեր՝ Պառաւի կորեկարտի՞ն Քու բըռոխքը *) թափէիր»:*
= «Ա՛լ հերիք է...,–պօռաց Դաւիթ՝ Պառաւին–,
Նետաղեղըս հիմա վեր՝ Քե՛զ կըղարճընեմ՝ կ'ըսպանե՛մ...:
Մամի՛կ,–ըսաւ–, ա՛լ ես ապա երթամ ո՞ւր...,
Քու կորեկի մէջ չիդա՛մ՝
Ա՛լ ո՞ւր երթամ Նէճիր ընեմ Ինձ համար...»:
*— «Գըլո՛ւխդ հորեմ *), Թըլո՛ւ–Դաւիթ,–վերցուց ըսաւ Պառաւն ալ–,*
Որ Դուն այդքան կըտրի՛ճ ես...,
Ու Ո՛րս կ'ուզես Քեզ համար...՝
Ինչո՞ւ Քու Հօր Նէճրատեղը չե՛ս երթար...,
Ճապաղ–Ջուրն ու Քոթէնն՝ ուժով չե՛ս առներ.՞.՞.՞, —

---

*) Պուճուր, Մանր, փոքրիկ: *) Բարդոց, Դէզ (*խոտեղէնի*): *) Աստծու–կրակն ըլլայ (...քու բաժինը), Աստուած իր չա՛նթը տեղայ դլխիդ: *) Բռոխք (*բուռն ոխ*), Վրէժ, ոխ: *) Հորիլ, Թաղել:

Եկեր ես Դու՝ խե՛ղճ Պառաւի մ՝ կորեկին մէջ Ո՛րս կ՛ընես…:
Քո վախտքին չըհասնիս Դու, հա՛հանչի՛կ…),*
Իմ կորեկին վըրա՞յ միայն կըտիրճ ես…:
Ես եմ՝ անտէր Ո՛րբ–կընիկ…,
Ես՛ըր Աղջի՛կ կըպահեմ… .
Իմ ապաւէն՝ այդ կորե՛կն է, Քու Ոտից տակ ջարդեցի՛ր… .
Իմ կորեկի Արտին մէ՞ջ է եկեր մըտեր Քու Նէճիր…:
Դուն մինչեւ ե՞րբ իմ Հասկերը պիտի Թափես, տըրորես.
Ամենը Քու Ոտներու տակ փըշրեցան ու Թափեցան.
*Էզուց *) ա՛լ ես՝ ի՞նչ պիտի տամ որ ուտեն Իմ Որբուկներ…:*
Որ Դու այդպէս կըտրի՛ճ Որսորդ Տըղա՛յ ես՝
Սասունայ–Սար՝ Ծովասա՛ր կայ, Քու Հօր Որսի–Սա՛րն է Ան, —
Գընա այնտե՛ղ Որս ըրէ… .
Ի՞նչ ես եկեր՝ Իմ կորկի մէջ՝ Լոր–Ճընճըղո՛ւկ կ՛ըսպանես…»:
Դաւիթն ըսաւ, = «Մամի՛կ, ի՛նչ–ի՞նչ·՞·՞·՞, ի՛նչ ըսի՞ր·՞·՞·՞»:
Ըսաւ, — «Ի՛նչ–ի՞նչ…, Գըլո՛ւխդ հորե՛մ, Թըռ՛ղ–Դաւիթ…».
Դարձաւ՝ մէ՛կ ալ ըսաւ՝ — «Տըղայ, Ծո՛ւռ–Դաւիթ…»,
Աչխար՝ Քու Հօր Մըհէր–Դաւիթ ըզբօսալայր Սա՛րը կայ…, —
Թաղաւորի Աւազ–Սա՛ր… ‡).
Մարուքայ Բա՛րձր Ասպարածին՝ Գանճասա՛ր, —
Քու Հօր Որսի Սա՛րն է Ան…»: —

415. Պաւիր Կ՛վարձաւոր Կորեկարօի Պառաւը

ՋՍ·392,393,394, Ց·95,31, (Ց·95), Ջ·՝Ց·31, Կ·51,12, (Կ·51), Ջ·՝Կ·12, Ջ(Հ·376), Հ·376,26, (Հ·376), Ե·903,998,621, (Ե·903, 998), Ս·158, (Ս·158), Ջ·

Դաւիթ այնտեղ չո՛ւտ մը դարձաւ ի՞նչ ըսաւ· —
= «Մամի՛կ,–ըսաւ–, մատա՛ղ ըլլամ Ես Քու Հոգուդ, Արեւո՛ւդ,
Իմ Հօր Որսի Սարն ×) ո՞ւրտեղ է՝ Ինձ ցո՛յց տուր…»:
— «Քու Հօր Սա՛րը, Որդի՛,–ըսաւ–, գընա՝ այդ Մարդ +) լա՛ւ գիտէ·
Այդ Աւետրն ինչ Իր Արտին առաջ կեցեր՝ կըբանի՛·

---

*) Հաճաւչի՛կ, Ահա՛ բոլոր մաղթանքս…: *) Էգուց, Վաղը, գալիք օրերուն մէջ: ‡) ՋՍ·392,394 եւն., Ե·621,503,998՝ Սեւ–Սար: ×) Հ·376՝ Աւագ–Սար: +) Ց·95, Կ·51, Հ·26, Ե·621,998,903՝ Օհաճ:

Քեզ կը տանի՝ նըշա՛նց կուտայ Քու Հօր Սար։
Կըսրի՛ճ ես Դու՝ դընա Քու Հօր Ճապաղ–Ջուրն ու Քոթէ՛ն առ,
*Որ Մըծմակայ–Գըլխէն կ՚Ելքայ՝ Սեղան–Սարի *) Գօտիներ»։*
= «Որո՞ւ Ձևն է,–լսաւ–, Իմ Հօր Ճապաղ–Ջուրը ու Քոթէն»։
— «Մըսրայ–Տէրոջ Ձեռքն են Առոնք վաղուցէ.
Մըսրայ–Մէլիք գըրաւո՛ր է՝ ու կ՚ուտէ՛... .
Գընա Ա՛ն առ..., Դուն Իմ վըրա՞յ ես կըսրիճ...»։
Տըղայ–Դաւիթ՝ Ձեռ տարաւ Ծոց՝ ու հանեց՝
Բուռ մը Ոսկի՛ տըւաւ Պառւոն եւ ըսաւ, —
= «Տա՛ր Քու Որբեր պահէ՛, Մամի՛կ, ու Ձիս այլեւս մ՚ ա՛նիծեր...»։
Պառաւ օրհնեց ու դընա՛ց.
Ու Ան զարկաւ Իր Բազէ՛ն։ —

416. Հինած-Հինող Ալեւորին Ծուցմուցիները

Հ·415,26,376, (Հ·27,376), Կ·12,51, (Կ·12), Զ·՝Կ·12, Ց·32, Ց·32ա·, Ե·965,966,621,503,1098,1101,504, Զ(Ե·998), Զ·՝Ե·504, (Ա·9,10), Ա·10,67, Զ·7Ա·67, Զ·, (ԶՍ·392,394), ԶՍ·392, Լ·23, Զ·՝Լ·23·

Դաւիթն ելաւ Արտին մէջէն՝ քըշո՛ց դընաց դէպ Հալաւր(ն),
Տեսաւ որ մէկ Մերո՛ւկ–Մարդ՝
*Դուռին առաջ Իր Հինա՛ծը *) կըհինէ։*
Բա՛նի Անիկ Իր Թել տարա՛ւ ու բերաւ՝
Դաւիթ մէկ հատ Թել կըսրի՛ց...։
Ջուլհակին Աչք Դաւիթ Երես որ ինկաւ՝
Ճանչըցա՛ւ որ Ա՛ն էր մըտեր Կորեկ–Արտ,
Կանչե՛ց վերէն՝ ըսաւ, — «Դաւի՛թ, Հոգո՛ւդ մեռնիմ, Արեւո՛ւդ,
Ինչո՞ւ այդպէս կըկըսրատես Իմ Թելեր...»։
*Ըսաւ, = «Իմ Հօր ի՛նչ կայ–չըկայ *)՝ Ինձի՛ նըշա՛նք պիտի տաս *)»։*
Մերուկն ըսաւ, — «Դաւի՛թ, Որդի՛, Քու Հօր գիտե՞ս թէ ի՛նչ կայ.—
Քու Հօր կայ մի՛ծ Որսավայր...,

---

*) Սեղան–Սար, *համմալի.՝* Զըղանա–Դաղ եւ Սիփան–Սար *անուն–ներուն հետ (Տե՛ս բ. Հար.)։* *) Հինած, *կտաւի թել, ոստայն։* *) Ի՛նչ կայ–չկայ, *Ունեցած ամե՛ն բաներ։* *) Նշանի՛ *կամ* նշանց, *կամ սղեալ՝* շանի՛ *ու* շանց *(տալ), Ծուցնել, ցոյց տալ։*

[Ու մեղմելով Իրեն Զայն]՝
Գանձասա՛ր… ‡)։ —
Դու որ երթաս Քու կըտրի՛ճ Հօր Որսի-Սա՛ր…՝
երթաս այնտեղ՝ ու մա՛ն դաս…՝
Նէճի՛ր ընես Քեզ համար՝
Դուն կըհանիս Քու Հօր հըսկա՛յ Հասակին †)…»։
Դաւիթ հասաւ մօտ-Հալւոր,
Դանակ(ը) քաշեց՝ ու ըսաւ.—
= «Պապի՛կ,–ըսաւ–, կա՛մ Քո Հինած *) կըկըտրեմ…՝
կա՛մ իմ Հօրը Գանձասարի ×) ճամբան Ինձի ցո՛յց կուտաս… .
Ըսէ՛, Պապի՛կ +), ո՞ւր է Իմ Հօր Որսի-Տեղ…»։
— «Որդի՛,–ըսաւ–, ասօր չ՛ըլլա՛ր. Ես գո՛րծ ունիմ վեր՝ Ձեռքիս.
Վաղ առաւօտ՝ կիրակի՛ է, բա՛ն չունիմ,
Քեզ կ՛ուղարկեմ՝ կ՛երթաս կ՛ելնես Մովսա՛ր,
Մարուքթայ Բա՛րձր Ասպարանին Քու Հօր ժա՛մ,
Ու Քո Հօրը եւ Պապերու Որսի-Սար…։—
Քու Հայր՝ Անոր բոլորտի՛քը Պողվատ-Պարիսպ է քաշեր.
Վէրի-Եղներ *)՝ Անոր նե՛րսը փակեր է… .
Ա՛յնչափ Գազան, Վէրի-Ոչխար՝ զ՛Իրենք վերէն թալե՛ր են՝
Այն Պողվըտէ-Պարիսպին մէջ՝ ու չե՛ն կըրցեր դո՛ւրս ելնել։
Բայց արի ա՛ւ՝ որ Քու Հայրը այն օրէ՛ն ինչ մեռեր է՝
Մըսրայ-Մէլիք եկեր խըլեր՝ ա՛լրե՛ր է…,
Վա՛նք-Մարուքին՝ քակե՛ր է.—
Ջոջ-Մըհէրը գընաց Թուրքման աւերե՛ց 1),
Ժողովուրդը քըշեց բերաւ Մեր կողմեր.—

---

‡) Այսինքն՝ Գանձասար անունով, կամ՝ ’ի Գանձասար, Գանձասար Լերան վրայ: †) Ակնարկութիւն՝ Սասմանց-Տան Ջոջերուն յաւուկ Անմահականաց-Կաթնաղբիւրին, որուն Ջուրը կըխմէին՝ կ՛աւժողնային՝ ապա՝ կ՛երթային կռիւի. Տե՛ս Հատ. 225։ Դաւիթն ալ պիտի երթայ այդ Աղբիւրին վրայ — Ջէնով-Օհանի ցուցմունքովը —, Մարամէլիքի հետ կռուելէ առաջ. Տե՛ս Հատ. ։ *) Հինած, Ոտայն, հիւսուածք, հէնք։ ×) Կ.12՝ Մովսասրու Մարուքայ բարձր Աւետուածածնայ (ճամբան)։ +) Ա.10, Հ.26,376՝ Պառաւ։ *) Վէրի-Եզներ, Վայրի եղջերու՝ մեծ կոտոշներով, կամ վայրի գոմէշ։ 1) Տե՛ս Առիւծ-Մըհէրի Ճիւղը, Հատ. 202-208։

Մըսրայ-Մէլիք եկաւ քանդէ՛ց սմէն բան…,
Տարաւ Թուրքման ժողովուրդ,
Տարաւ Մամիկդ ու Ձեր Դա՛նձ…,
Ձեզ Ամո՛ւնքդ ալ՝ Դերի՛ առաւ ու տարա՛ւ… †)·
Տարաւ Քեռուդ քերած ճեղ… ×),
Բըլնո՛ց մինչեւ Արաբըստան +), հեռուներ՛…,
Հիմա՝ Դուն ալ՝ թէ կըտրի՛ճ ես Քու Հօր պէս՝
Զօղ-Մըհէրի՛, Սանասարի 1) թո՛ռն ես Դուն՝
կըտրըճուքի՛ւն պիտի ընես՝ որ տեսնո՛ւք…։—
Քենէ՛ առաջ՝ Ձեր Զօղանց-Տան կըտրիճները Ամո՛ւն ալ՝
Տիրո՛ւ են այդ Ծովասար·
Ամո՛ւն տարի, Ամառնկուն, այնտեղ Զովա՛ց կ'երթայինք·
Որս կ'ընէինք մեծ ու փոքր…։
Եթէ Քու Հօր մէջքի՛ Տըղա՛ն ես Դուն ալ՝
Բըլնէ՛ դընա Ծովասա՛ր…՝
Ու Մէլիքի Ձեռքէն ա՛ռ… ·—
Ի՞նչ ես կեցեր՝ ու չե՛ս երթար՝ Ա՛խ տուներ,
Որ հոն երթաս՝ նէհի՛ր ընես քեզ համար…,—
Օրը մէ՛կ հատ այդ Որսերէն զարնես բերես՝ ու ուտես։
Լաւ, ճընճըղուկ՝ Քեզ չե՛ն կըրնար կըշտացընել ամէն օր,
Որ Դուն կուգաս Կարեկի մէջ՝ Քեզ ճընճըղո՛ւկ կըզարնես·—
Ճընճուղի մէջ ի՞նչքան Միս կայ որ ուտես…։
Գընա Սեւ-Սար 2), մէկ տա՛ս հատ մը Վէրի-Ոչխա՛ր ըսպանէ,
Բե՛ր՝ Ջրմեռնան Պաշա՛ր ըրէ, կե՛ր ու կե՛ր…,—
Անիկ իսկի՛ չի՛ հաւնիր…»։

---

†) Տե՛ս Դաւիթ-Մըհէրի ճիւղը, Հատուած 269։ ×) Տե՛ս Սասնասար-Բաղդասարի ճիւղը, Հատ. 47 եւ 108։ +) Լ.23՝ Արաբստուն (Արաբաց՝ Պետութիւն, Տուն)։ 1) Լ.23՝ Աբամելիքի (որ Սանասարն է)։ 2) Պատումէ պատում՝ Սեւ-Սար, Ծովասար, Սասունայ-Սար, Ս-ւագ-Սար, Գանձասար, Մեղան-Սար, Դաւիթի Հօր՝ Որսի-Սար, Ջրօսա-վայր (սեյրանստեղ)՝ անուններէն մէկ կամ միւսովը կըյիշուին։

417. Դաւիթ՝ Լսածները կ'ասուզէ Եւ՝ ըճկերճերով՝ կ'երթայ Սեւ-Սար

Չ·Ա.67, Ա.67,10, Չ(Ա.10), ՉՄ.395,396,394, Ե.966, Չ.՝Ե.966, Չ., Կ.12, Չ(Կ.12), Ճ.32ա., Ճ.32.

Տըղայ-Դաւթի հոգիին՝
Ո՛ր ցաւ եղաւ Ալեւորին այդ Խօսքեր··· ·
Կանչեց իրկուն Զէնով-Օհան †), հարցմո՛ւնք ըրաւ Իր մօտէն.—
Դաւիթ տեսաւ՝ որ այդ բաներ ուղի՛ղ են,
Այդ Պառաւին ու Մերուկին Խօսածները չիսա՛կ են։—
Ան ալ եկաւ գընաց գըսա՛ւ Ընկերներ,—
— «Տըղա՛ք,–ըսաւ–, պատրա՛ստ կացէք առաւօտ՝
Որսի՛ կ'երթանք Մովսասար···»։
Տըղաներն ալ՝ պատրաստութի՛ւն տեսան այնտեղ Ամենով,
Առաւօտուն Դաւիթ եկաւ իր Նետաղեղ Թաղեց Թի՛ւ,
*Գընաց առաւ Իր Ընկերներ, Ձիաւորան *) միատեղ,*
*Հինած-Հինող *) այդ Պապիկն ալ Իրենց հետ ×),*
Ու գընացին Մովսասարը՝ Թըռչնորսի +)։
Մարդը տարաւ՝ տեղը ցուցուց ու ըսաւ,—
— «Ռու Հօր Սա՛րը, Որդի՛,–ըսաւ–, այդ տե՛ղն է···,—
Ճամբան բըռնէ՛՝ գընա՛ կ'եվնես այն Սեւ-Սա՛ր·
Ռու Հօր Որսի տե՛ղն է Ան։
*Հոն է նա՛եւ՝ Մարութենի Ասպարածին *) Բա՛րձր վանք,*
Ինչ Ռու Հայրը՝ Դաւիթ-Մըհէր՝ չինե՛ր է.—
Գընա այնտե՛ղ՝ ի՛նչ որ կ'ուզես՝ ան ըրէ՛»։
Մեր Ոստայնանկ՝ նըչա՛նց տըւաւ, դարձաւ եկաւ Իրեն տե՛ղ։
Դաւիթ քըշե՛ց գընաց Սեւ-Սա՛ր 1), ու կա՛ն եկաւ այդ Սարեր,
Գընաց եկաւ Իր Հօր Սա՛րը, Գանձասար,—
Շա՛տ անուշ ու աղէկ տե՛ղ էր. լեցուն Ծաղի՛կ, Աղբիւրնե՛ր···,—
Ինկաւ այնտեղ՝ Սարերու մէջ՝ մա՛ն եկաւ···։—

---

†) Ա.67՝ Քեռի-Թորոս։ *) Ձիաւորան, Ձի հեծան, ձիաւորեցան։ *) Հինած-հինող, Ոստայնանկ։ ×) Ա.10՝ Զհնով-Օհան (իրենց հետ)։ +) Ա.10՝ Ավ-դուշ։ *) Ասպարածին՝ Արդեօ՞ք Ասպարազեն, եւ ոչ թէ Աստուածածին։ 1) Ճ.32՝ Քոդի(ճ)՝ ուղղելի՝ Քոթի(ճ) = Խոյթ։

418. Դաւիթ՝ Քոչւորներու Ցեղապետին Վրանին Տակ

Չ.՝Ա.67,68,50, Ա.67, Ճ.32.

*Դաւիթ դընաց՝ տեսաւ այնտեղ՝ որ մէկ Քոչւոր *) Ժողովուրդ՝*
Եկեր այդ Սար՝ այնպէ՛ս վըրան է զարկեր՝
Որ Աւազին ու Աստղերուն հաչիւ կա՛յ,
Առանց զարկած վրաններուն՝ թիւ չըկա՛յ...։
Ան ալ՝ իր Ձին քըշե՛ց դընաց դէպ առա՛չ,
Ցեղապետի Մեծ-վրանին Դուռն իջա՛ւ,—
Եկան՝ իր Ձին քաշեցին հո՛ն, տարան Ծառի՛ մ' կապեցին։
Դաւիթ վերցուց ըսաւ Առո՛նց,— «Ո՛վ Իրաւունք տըւաւ Ձեզ՝
Որ եկե՛ր էք՝ վրա՛ն զարկեր էք այստեղ...»։
Տեսան Սասմայ-Մըռունկ՛ն է այս Տըղան՝
*Նորէն՝ Մէկը՝ Իրենց մէջէն՝ եկեր լինկե՛ր է լոյսին *)՝—*
Ելան ըսին,= «Մատա՛ղ Դըլխո՛ւդ, Արեւո՛ւդ...,
Անունդ ի՞նչ է..., ո՞ր Դեղէն ես Դու, արդեօ՛ք...»։
Ան ալ թէ,— «Ես՝ Սասունցի՛ եմ. Իմ անունս ալ՝ Դաւի՛թ է.
Մեր հայրենի, պապենական Տե՛ղն է այս.—
Ի՞նչ Իրաւունք կայ Ձեզի որ՝ եկեր՝ այստե՛ղ իջեր էք...»։
Այդ Մարդերն ալ՝ մի՛ աք ըրին որ՝ «Իրենց այդտեղ Ձօրք չըկա՛յ,
Թաղաւորն ու Իրեն Ձօրքը Մըսըրն ևն»,—
*Այդ Մեծի Տուն *) ինչ Դաւիթը իջեր էր՝*
Առի՛ խօրտա Աղջի՛կ մ' ունէր՝ Խանդուտ-Խաթո՛ւն †) անունուր,
Այդ Աղջիկն ալ՝ նըշան ղըրուած՝ Հարսընցո՛ւ էր Մէլիքին.—
Խորհո՛ւրդ ըրին՝ թէ՝ «Ըսենք որ Այս Աղջիկը կուտանք Քե՛զ»,
Խաբե՛նք, թերեւս ճամբո՛ւ ղընենք՝ ու երթա՛յ...»։—

---

*) Քոչւոր, Եղանակին հետեւելով տեղէ տեղ գաղթող, վրանաբնակ։ *) Գալ իյնալ լոյսին, Մնիլ, գոյութիւն առնել, աչքարհ գալ։ *) Տուն, Վրանը, վրանին դուռը կամ ներսը։ †) Որ թերեւս՝ վերջէն, Մըսրամէլիքի սպանուելէն յետոյ, Դաւիթին կին դարձող Խանդուտ-Խաթունն է։

419. Քոչուորներու Ցեղապետին Աղջիկը՝ Դաւիթին Իբր Հարսնցու Կուտաճ

Ջ·՝Ա·68, Ց·32, Ջ·՝Ց·32·

Այդ Մարդիկները՝ եկան ըսին Թէ, — «Դաւի՛թ,
Գըլխի՛դ մատաղ, Արեւի՛դ…,
Ասի Մըսրայ–Մէլիքի տե՛ղն է հիմակ… ·
Մենք ալ՝ Աստր ժողովո՛ւրդն ենք, հըպատակ·
Ապա եթէ Մենք դիտնայինք որ Քու Հողն է՝ չէի՛նք գար…:
Այս մէ՛կ անգամ՝ ներողութի՛ւն կ՚ընես Մեզ, —
Մէ՛կ ալ որ դանք՝ Մեզ կըջարդես…՝ Դո՛ւն գիտես…:
Այս Աղջիկն ալ՝ կուտանք Քեզի՝ Հարսընցու·
Ու մէ՛կ ամիս՝ Մեզ ժամանա՛կ կուտաս Դուն՝
*Մեր Աղջկան Ձեռ ու Ոտը կըտեսնե՛նք *),*
կուշտս՝ կարդով եւ օրէնքով Քո Հարսնացուն կըտանիս… ‡)·
*Մենք ալ՝ ասկէ՝ քոչենք–կ՚երթանք *), ա՛լ չենք գար»:*
Բերին ×) այնտեղ խօսքկա՛պ +) ըրին, Դաւթի հետ,
Ցեղապետն ալ կանչեց Իրեն ժողովուրդ,
Եկան Իրեն Մեծ–Վըրանին Դըրան առաջ կայնեցա՛ն,
Ըսաւ, — «Մարդի՛կ, Ասի Մեր հի՛ն Մեծաւորի Տըղա՛ն է·
Ամե՛նմէկը՝ Ձեր Տուներու կարողութեա՛ն չափին մէջ՝
Ընծա՛յ բերէք Մեր հի՛ն Տիրոջ Տըղայինն»:
Ամենմէկը՝ Իրեն չափով՝ Նըւէ՛ր բերաւ Դաւիթին·
Դաւիթ հարցուց Թէ, — «Ա՛ստ ի՞նչ է կուտաք ի՛նձ…»:
Ցեղապետն ալ՝ ըսաւ Թէ, = «Դուն Մեր հի՛ն Տիրոջ Տըղա՛ն ես…,
Ելեր այստե՛ղ եկեր ես…, —
Քեզի Ընծա՛յ կուտանք Մենք…»:

420. Սեւ-Սարի Ոտը Թեւիճ՝ Դաւիթ Ցուց Կուգայ

Ջ·՝Ա·68, ՋՍ·396,397,400,398, Ե·903,999, Ջ·, Կ·12·

Դաւիթ ելաւ Իր Ձին հեծա՛ւ ‡)՝ Թողո՛ւց Քոչը՝ ու գընաց·

---

*) Ձեռ ու ոտը տեսնել, *Օժիտ պատրաստել*: ‡) *Բաղդատել Հատուած 61–ի հետ (Մնար·–Բղդար·ի ճիւղը) եւ Տեսնել Հուն·. … (այս մէկնոյն Թլ·–Դաւիթի ճիւղը)*: *) *Քոչել; Քոչը վերցնել, մեկնիլ*: ×) Ա·68՝ Պարեցին՝ ուղղել Պերեցին (բերին): +) Ա·68՝ Նշանադրութիւն: ‡) Ա·68՝ Կ՚պակսի հեծաւ բայը:

Գըտըռեցաւ, զարկաւ մէկ ջո՛ջ վէրի–Ոչխա՛ր մ՚ըսպանեց,
Նետաղեղին ծայրէ՛ն անցուց՝ թալեց Թե՛ւ,
Ընկերներով դարձա՛ւ՝ քըշե՛ց եկաւ Տուն:
Չէնով–Օհան իրիշկե՛ց ու իւ՛նչ տեսնէ..., —
Սեւ–Սարի Որս՝ Տըղայ–Դաւիթի Թեւին վըրա՛յ..., ըսպանո՛ւկ...:
Չէնով–Օհան բարկացա՛ւ..., —
կանչեց այնտեղ իւ՛նչ ըսաւ, —
— «Դաւի՛թ,–ըսաւ–, Քու վի՛ղ կտորի..., ատիկ Դուն իւ՛նչ ես ըրեր.
Ատիկ որ Քէ՝ Մըսրայ–Մէլիք արքընցաւ *)...՝
Կուգայ՝ Սասուն քարքա՛նդ կ՚ընէ..., կ՚աւերէ՛ Մեր Տունուտեղ...
Ծովասարը Անոր Սա՛րն է, Մենք չե՛նք կըրնար Հոն երթալ.
Այօր գացիր՝ վաղ չերթա՛ս...:
Դաւի՛թ, Որդի՛,–ըսաւ Օհան մեղմացած–.
Աստծո՛ւ սիրո՛ւն, մէյ մ՚ալ չերթա՛ս Դուն այդ Սար..., —
Մըսրայ–Մէլիք՝ Քէ որ՝ Իր Տեղ՝ իմանայ...՝
Ա՛լ աղաւնիմ չըկա՛յ Մեղի՝ Իր Զեռքէն...»:
Դաւիթն ալ Քէ, = «Չէ՛, Հօ՛րեղբայր, որ այնպէս է՝ չե՛մ երթար»:
Առաւ Վէրին, տարաւ նե՛րսը, Իր Հօրեղբօր կընիկին,
— «Ա՛ս եփեցէ՛ք՝ ուտե՛նք,–ըսաւ–, Մենք այսօր,
Վաղն ալ կ՚երթամ՝ Ծովասարի Իմ Հօր Վանքէ՛ն կըբերեմ»:

481. Դաւիթի Տեսած Երազն Ու Երգով Իր Հօրեղբօրմէն Խնդրածը

ՉՍ·399, (ՉՍ·399), Ս·159, Չ(Ց·95–96ս·), Ց·95,32ս·,95ս·,96ս·, Չ·, Ե·612,903,709, (Ե·709,621), Հ·27,376, Խ·16, Կ·51, Չ(Ա·67).

Մընաց մինչեւ լուսաբաց, —
Այդ գիշերը՝ Դաւիթ քընաւ՝ երազին մէջ տեսաւ որ...՝
«Իր Հօր Սարին բոլորտիքը՝ բալաք *) Բուրջե՛ր *) են կապած...»:
Քունէն ելաւ՝ ու լալելէն *) գընաց Իրեն Հօրեղբօր,
Ձայնով կանչեց՝ ու ըսաւ. — ‡)

---

*) Որ... արքնցաւ, Որ իմանայ: *) Բալաֆ (բալ–որակ), ձեր–մկորակ, սպիտակի զարնող: *) Բուրջ, (բուրգ), Բերդի, պարիսպի՝ աշտարակ·tour, donjon: *) Լալելէն, Լալով, լալիւնով: ‡) Երգով:

— «Հայրահո՛տ *) Հօրեղբայր, հայրահո՛տ Հօրեղբայր,
Հայր չունի՛մ՝ ըրէ՛ ինձի Հայրութիւն···,
= Ըրէ՛ ինձի Հայրութիւն:

Սեւ–Սա՛րն եմ տեսեր՝ բալաբ Բո՛ւրջ՝ բոլոր··· *),
= Բալաբ Բո՛ւրջ բոլոր:

Ով Իր Աստուա՛ծ կ'սիրէ՝ երթ-ասիր տե՛ս *) Աշոր,
= Երթ-ասիր տե՛ս Աշոր···»:

— «Դէ՛, Հօրեղբա՛յր,–ըսաւ Դաւիթ–, Ձիս կըտանիս Իմ Հօր Սար»:
= «Որդի՛ի,–ըսաւ Ձէնով–Օհան–, Քեզ խաբե՛ր են· սո՛ւտ կ'ըսեն··· ·
Քու Հօր Որսի Սար չըկա՛յ···»:
— «Ձէ՛, Հօրեղբա՛յր, ես դիտե՛մ կայ· ես պիտ՝ երթա՛մ· չե՛մ կենար»:
= «Որդի՛,ըսաւ–, շատ հեռո՛ւ է, Մենք չե՛նք կըրնար հոն երթալ·
Գիշեր պիտի դո՛ւրսը մընանք՝ Սարին մէ՛ջ···, —
Դուն պըզտի՛կ ես, կըվախնա՛ս···»:
Դաւիթն ալ թէ, — «Մեռնի՛ս ալ՝
Ես հոն նորէ՛ն պիտի երթամ, Հօրեղբա՛յր,
Քեզ ալ ինձ հե՛տ կըտանիմ···,
Դեռ տա՛ս Մարդ ալ՝ կ'առնեմ տանիմ Իմ Հօր Սա՛ր,
Կ'երթամ այնտեղ՝ Ո՛րս կ'ընեմ···»: —

422. Ձէնով-Օհան Արգելքներով Կ'ուզէ Ես Կեցնել Դաւիթը

Ց·96,95, Զ(Ց·96), Ե·999,621,903,765,734,709,966, (Ե·765),
Զ(Ե·621), Ա·67, Զ·, Է·376,27, (Կ·51), Կ·51, Խ·16·

Ձէնով–Օհան վերջուց ըսաւ, — «Ա՛յ Որդի՛,
Ինչ Քու Հայրը մեռե՛ր է՝
Մըսրայ–Մէլիքն ալ՝ Մեր մօտէն խըլե՛ր է այդ Աւազ–Սար···,
Ա՛լ չե՛նք իշխեր՝ հոն երթանք···»:
Ըսաւ, = «Հօրա՛ր, Իմ Հօր Որսի Սարը Ինձի Նըշա՛նց տուր·
Վաղ առաւօտ՝ Ձիս տար Իմ Հօր Աւազ–Սա՛ր,
Նէճի՛ր ընեմ Ինձ համար···:
Վէրի–Ոչխա՛ր, Եղնի՛կ զարնենք ու բերենք···:
Ճընճուղն ի՞նչ է· — մէկ բըրդո՛ւճ է· Անով ի՞նչպէս կըշտանանք···:

*) Հայրահոտ, Հօր հոտ ունեցող, հայրը փոխարինող· (Հօրեղբայր՝ որմէ իմ հօր հոտը կ'առնեմ): *) Բոլոր, Բոլորտիքը:
*) Տես, Տեսնելու, 'ի տես:

Այդ Սարին մէջ՝ իմ Հայը ա՛յնքան Վէրի–Ոչխա՛ր է փակեր, —
Երթանք բերենք՝ Զըմրան Պաշա՛ր Մեզ համար...»:
— «Որդի՛,–ըսաւ–, Դուն դեռ վո՛ւր ես, չե՛ս կրընար·
*Վըրա՛դ կուտան *)՝ Քեզ կ՚ըսպանե՛ն Սարն՚իվեր...»:*
Դաւիթ նորէն, = «Ի՛հէ՛,–ըսաւ–, ես պիտ՝ երթա՛մ, Հօ՛րեղբայր·
Դուն Ինձ ցո՛յց տուր՝ կըրնա՛ն Քող դան՝ Զիս ըսպանեն Սարի մէջ·
Գոնէ Քեզ չեն ըսպաններ...»:
Դաւիթ այնտեղ չա՛տ բարկացաւ Հօրեղբօր,
Ըսաւ, = «Հօրա՛ր, կա՛մ Սեւ–Սարի ձամբան Ինձի չա՛նք կուտաս,
Կա՛մ Քու Վիզը կըկտրե՛մ...:
Աստուծմէն Թէ չըվախնայի՛ այս պահուն՝
*Ես Ապտա՛կ մը պիտի տայի...՝ Քու Վիզ *) Քըսէ՛ր Իր տեղէն...:*
Երբոր այդպէ՛ս ըսաւ Դաւիթ՝ Զէնով–Օհան վախեցա՛ւ, —
Զա՛յն չըՀանեց՝ ա՛լ այնտեղ..., —
— «Քեզի այդ քան սոսկեցնողի Բերա՛ն կուտրի Քող,ըսաւ–.
Դէ՛, ել պատկէ՛՝ վաղ կ՚երթա՛նք...»:
Ապա վերցուց, —« Որդի՛,–ըսաւ–, Ինձ լըսէ՛..., —
Վաղը մընանք, մէկալ օրը նո՛ր կ՚երթանք...»:
= «Այդ աղէ՛կ է,–ըսաւ Դաւիթ–, պատրաստուէ՛ն կըտեսնես,
Մա՛րդ տեղ չերթա՛յ միւս օր՝
*Լուսուն *) կ՚երթանք Ծովասարը Նէճերի»: —*

423. Զէնով-Օհան՝ խոռհդակցելով՝ Մուճեխիկ կանչել կուտայ

Կ·51, Չ·՝Կ·51, Ա·67, Չ·, Խ·16, Ե·563, Չ(Ե·733).

Զէնով–Օհան չա՛տ միտք ըրաւ, ելաւ դընաց Քաղքին մէ՛ջ,
Մարդիկ տեսաւ, հարցուց փընտռեց՝ ու ըսաւ, —
— «Ե՛ս չե՛մ գիտեր՝ Սեւ–Սարի տեղն ո՞վ է Դաւիթին ցոյց տըւեր....
Ասոր Դաւիթ Ինձ կ՚ըսպիսկէ ու կ՚ըսէ՝
«Պիտի երթանք Ծովասարը Ո՛րս ընենք...,
Իմ Հայր ա՛յնքան Վէրի–Ոչխար ու Եղնիկ է փակեր Հոն...,

---

*) Վրայ տալ, Յարձակիլ: *) Վիզ, Գլուխը՝ վիզով մէկտեղ (Քըսէր Իր տեղէն՝ այսինքն ուսէն): *)Լուսուն, (Միւս օրը) լուսաբացին:

Պիտի երթանք ու բերեն՛ք…»։
Ֆաղքի Մարդեր՝ Ամենք ըսին՝ մէկբերան· —
= «Զէնո՛վ-Օհան, որ Դուն երթաս՝ Մե՛նք ալ Ֆեզ հետ պիտի գանք,
Այնտեղ դիտենք ու տեսնենք…։ —
Այնտեղ՝ մե՛ծ-մեծ կենդանինե՛ր կան հիմա…,—
Արջե՛ր, Գայլե՛ր, Վէրի-Ոչխա՛ր ալ կայ մէջ…,—
Դէ՛, Դաւիթը տըղայ է դեռ, չըվախնա՛յ… ·
*Տեսնենք Անի՛կ ի՞նչպէս կ՛որսայ ու կ՛ըսպանէ Վէրիներ…, *) »։*
Զէնով-Օհան †)՝ ա՛լ տեսա՛ւ որ խելքովցե՛ր է Մուռ-Դաւիթ,
Ա՛ Անոնցմէ ×) կըտրի՛ճ կ՛ըլլայ, Մովսասրը ե՛տ կ՛առնէ,—
Ելաւ գընաց՝ կանչե՛լ տըւաւ Ֆաղքին մէջ,—
— «Դաւի՛թ կ՛ըսէ՝ «Մա՛րդ տեղ չ՛երթա՛ք ո՛չ մէկ կողմ,
Առաւօտուն պիտի երթանք Նէֆիրի»։
Ելան Իրենց պատրաստութի՛ւն տեսան Ամե՛նք Իրենց Տո՛ւն,
Որ՝ մէկալ օր՝ պիտի երթան մե՛ծ Որսի…։—

424. Կորեկարեի Պառաւը Նորէն Խորհուրդ Կուտայ Դաւիթին

b.999,733,734, *Զ*.՝*b*.733՝ *Ծ*.96, *Զ*.՝*Ծ*.96, *ՁՄ*.399,402.

Ըընան՝ մինչեւ առաւօտ,—
Լուսուն՝ Դաւիթ ելաւ քունէն՝ Նետաղեղը թաղեց թե՛ւ,
Դըլուխ կօռե՛ց ու գընա՛ց·
Գընաց դի՛ր մ՛ալ՝ որ Պառաւի Կորեկին մէջ Լո՛ր գարնէ,
Պառաւն եկաւ, ըսաւ,— «Դաւի՛թ, փո՛ւճ ըլլա՛…,
Թաւիր Ֆու Մորթն ու Ֆո Մի՛ս…,
Կը բաւէ՛ Լոր ըսպանես…,—
Իմ Ճըժերու ապրուստն ու կութ կըտրեցի՛ր…,
Ատ Լոր՝ Ֆո մէկ պատա՛ռն է…։
Կըտրի՛ճ Մարդ ես՝ գընա՛ Ֆու Հօր Որսի-Սա՛ր,
Վէրի-Ոչխա՛ր, Ֆօ՛չ ըսպանէ՛ բե՛ր ու կե՛ր…,—
Օգո՛ւտ ըլլայ Ֆեզ համար…»։
Ըսաւ,= «Մամի՛կ, Մըսրամէլիք հօ՛ Մըսըրն է՝ ու Մենք հո՛ս,

---

*) Վէրի, Վայրի Ոչխար, եղջերու։ †) Ա.67՝ Ֆեռի-Թորոս։
×) Այսինքն՝ Մովսասրը գրաւողներէն (աւելի՛ ուժով կ՛ըլլայ Դաւիթ)։

Ի՞նչ բան ունի իմ Հօր Որսի Սարին հետ...»։
— «Որդի՛,-ըսաւ-, եթէ կըտրի՛ճ ըլլաս Դուն՝
Ան՝ ինծ Հո՛րն է. Մըսրայ-Մէլիք բըռնի խըլել չի՛ կըրնար...»։
Դաւիթ՝ այդ օր բա՛ն մը չ՚ինկաւ Իրեն Ձեռ՝
Լոր, ձըկնճըղուկ չըտեսա՛ւ,—
Կա՛ն եկաւ այդ Դար-Դաշտեր՝
Մուխ որ ըլլաւ՝ եկաւ Տո՛ւն՝ ու քընացաւ։

ԺԱ. ԹԼՈՂ-ԴԱՒԻԹ ԵՒ ՄԱՐՈՒԹԱՑ ՎԱՆՔԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

425. Դէպի Սեւ-Սար, Ու ձըղւօրի խաղը

Ց.96,96ա., *Ե.797,506,621,709,563,999,765,903,966,734,507,564,* (*Ե.506*), *Խ,16*, *Հ.27,419*, (*Հ·376,419*), (*Կ.12*), *Կ.51,12*, *Ա.10*, *Զ.*

Մէկ օր անցա՛ւ,— մէկա՛լ օր՝
Ձար որ կըտրա՛ւ Հօրեղբօր՝
Առաւօտուն էլաւ առաւ Դաւի՛թն ու չատ Մարդիկնե՛ր,
*Ամեն ժողւածն *), կարգադրեցին միաառէղ,*
Իրենց Ձիանք դուրս քաշեցին ու հեծան,
Ելան ճամբայ՝ պիտի երթան Մալասար·—
Դաւիթն առաջ, Ամենք Դաւթի ետեւէն—,
Ինկան ճամբայ, ժողովուրդն ալ միասին...†)։
Ճամբո՛ւ կէսին՝
Մէկ Բարդի-Մա՛ռ եկաւ դէմ,
Դաւիթ Իր Ձեռ զարկաւ Մառին՝ ու կօտո՛ց,
Բերաւ քիչ մը ցածրացո՛ւց,
*Ձըղւո՛ր *) կուտայ Իր համար,—*

---

*) Ժողուած, ժողուեցան, խմբուեցան։ †) Կ.12՝ Դաւիթն է «Զէյնով-Օհան եւ Թաւլան-Վէրքօն» Մալասար տանողը։ *) Ձըղւոր (ճիւղ-օրօր, ճըղ-օրրել), Տատանախաղ, որըն կուգա· Տե՛ս Հատ. 375։

Չէնով–Օհան ըսաւ, — «Տըղա՛յ, Թըչուառակա՛ն Մուռ–Դաւիթ,
Այդ Խաղ՝ ինձի ի՛նչքան անուշ երեւաց···,
*Թող՝ քըչիկ մ՚ալ որ ե՛ս ինձի ճըղլօր տամ···» *):*
Դաւիթն ըսաւ, = «ելուր տո՛ւր···»: —
Զեռը Թողուց վեր՝ Մառին,
Չէնով–Օհան եկաւ՝ ճըղէն կախուեցաւ· —
Դաւիթ այնտեղ Մառը բըռներ՝ կանգնե՛ր է· —
Չէնով–Օհան ըսաւ — «Դաւի՛թ, Զեռըդ Թո՛ղ,
Ես ճըղլօ՛ր տամ, երթամ–գա՛մ·
*Ի՞նչ է···, դիտես *) ես ուժ չունի՛մ Քեզի պէս···»:*
Ըսաւ, = «Հօքա՛ր, Մառէն իմ Զեռ որ Թողնեմ···՝
*Մառը պիտի Թալէ՛ *) Քեզ···»:*
Չէնով–Օհան՝ Թէ, — «Թո՛ղ, Թո՛ղ···,
Մի Թէ Քեզ չափ կըտրի՞ճ չե՞մ···»:
Ան ալ,–Դաւիթ–, քիչ մը Իր Զեռ Թուլացո՛ւց···, —
Մառը առաւ բարճրանա՛լ···,
Մեր Օհանի Ոտներ Գետնէն կըտրեցա՛ն···:
Դաւիթ նորէն Զեռը տարաւ՝ կօտեց Մառ,
Չէնով–Օհան քիչ մը ճըղլօր տըւաւ հանդարտ՝ իջաւ վա՛ր,
Ճամբա՛յ ելան՝ ու գացին···: —

426. Դաւիթ՛ Իր Հօր Որսավայրի Պարիսպին Առաջ

Հ·27,376, (Հ·376), Ց·32ա·,96, Ց·33ա·, Զ(Ց·96), Ե·507,564,903, 999,564,966,621, (Ե·564), Զ·՝Ե·999, 507,564,903, Կ·51,12, Խ·16; Ա·10·

Գացին հասան Մովսասար ‡), —
Դաւիթի Հօր Որսի–Սա՛ր, —
Չէնով–Օհան՝ ըսաւ, — «Դաւի՛թ, Ա՛ս է Քու Հօր Որսի–Սա՛ր:
Ելան Սարեր կա՛ն եկան,
*Դաւիթ տեսաւ՝ Սարին ×) չորս–կողմ *) Պողվատ–Պարի՛սպ է քաշած,*

---

*) Ճղլօր տալ, Տատանեցնել, ճղլօր խաղալ: *) Գիտես, Կը կարծես: *) Թալել, Նետել, Հեռո՛ւն ձգել: ‡) Հ·376՝ Աւագ Սար, Ե·966՝ Գաճաճասար: ×) Կ·12՝ վաճի՛ի: *) Չորս–կողմ, Բոլորտիք:

Մինակ մէկ Դո՛ւռ ‡) կայ վերան։
Դաւիթ հարցուց իր Հօրեղբօր, ըսաւ, = «Այս ի՞նչ Պարխապ է...»։
Օհանն ալ թէ, — «Ռու Պապու ×) եւ Ռու Հօր քաշած Պարի՛սպն է,
Որ Թըշնամիք չիդայի՛ն ու Վայրի–Որսեր պարնէին ու տանէին»։
Դաւիթ տեսաւ՝ Պարխապէն ներս ամեն տեսակ Նէճիր +) կա՛յ. —
*Որ Պարխապին Դուռը բըռնեն *) մէջ մըտնեն՝*
Ի՛նչ որ ուզեն՝ կ'ըսպանեն, —
Ալ մէկ տեղէ մ' չեն կըրնար որ դո՛ւրս վախչեն։ —
Այն օրէ՛ն որ՝ Առիւծ–Մըհէր եւ Իր Հայրը մեռեր են՝
Ի՛նչքան եղնիկ, Սարի Ոչխար եւ Այծ կայ՝
Որ եկեր են՝ թաւիւեր են մէջ, ա՛լ չեն կըրցեր դուրս ելնել. —
Լեցուցեր՛ են Որսի–Սար †)։
Դաւիթ դարձաւ իր Հօրեղբօր՝ հարցուց ըսաւ, = «Հօ՛րեղբայր,
Ասա այստեղ Որսը ի՞նչպէս կ'ընէին...»։
*— «Երկո՛ւ Ըմբիշ §),–ըսաւ Օհան–, կը լարէի՛ն *) այդ Որսեր,*
Կըբերէին այս մէկ դի՛ն,
Ռու Հայր կ'դարնէ՛ր՝ կ'ըսպանէր»։
= «Վա՛յ, վա՛յ,–ըսաւ–, Իմ Հայր ի՞նչքան մեղք է ըրեր այս կերպով,
Որ այս բոլո՛ր կենդանիները՝ բերեր այստե՛ղ վակեր է...»։
Ոտքով 1) գարկաւ՝ Դո՛ւռը կոտրեց 2)՝ մըտաւ ներ՛ս,
Չէնով–Օհան՝ ըսաւ, — «Դաւի՛թ, ինչո՞ւ այդպէս կոտրեցիր...»։
= «Ապա,–ըսաւ–, ես այստեղը գերի՛ պիտի ըսպանեմ..., —
Անոնք գերի՛ են Ամեն(ք)...»։ —

427. Դաւիթ Ապա՛ն կ'բռնու Որսի Կենդանիները

Խ·16,17, Ա·10, Հ·27,376, Չ·՝Հ·27,376, (Հ·27,376), Ե·621,507, 564,999, (Ե·507,621), Չ·՝Ե·507,621, Կ·51,52,12,Չ·

Դաւիթ այնտեղ Դուռ որ բացաւ՝ մըտան ներ՛ս՝

---

‡) Հատուած 224՝ Առիւծ–Մըհէր՝ չորս դուռ (*թողած էր*)։ ×) Այսինքն՝ Առիւծ–Մըհէրի, Տե՛ս Հատ· 224։ +) Ե·621՝ ամեն ցեղ գազան, Կ·51՝ շատուր կենդանի։ *) Բռնել, *փակել, դոցել*։ †) Հ·27՝ Ծովասար։ §) Ե·903՝ կակաչ, Ասլան, [*որ սակայն՝ Մըսրամէլիքի՛ ըմբիշներն էին*]։ *) Լարել, *հալածել, քշել*։ 1) Կ·12, Հ·376, Ե·999՝ լանկէ մ' (*լանկա = աքացի*) գարկաւ։ 2) Ճ·33ս·, Կ·12,51, Հ·376՝ պարիսպ *թակեց*։

Այն Մարդիկները որ Իրեն հետ զացեր են՝
Ամենք հասա՛ն՝ պիտի զարնեն ըսպանի՛ն այդ Ոչխարները,
— Ամենմէկը Իրեն համար Ո՛րս ընէ —՝
Չէնով-Օհան՝ ըսաւ, — «Դաւի՛թ, մատա՛ղ Քեզի Հօրեղբայրդ,
Վէրի-Ոչխա՛ր մ՝ զարկ ըսպանէ Քեզ համար»:
Դաւիթն ըսաւ, = «Հօքա՛ր, Ասոնք դերի՛ են... .
Մարդ Իր գերին կ՝ըսպանէ՞...»:
Նայե՛ց-նայեց...՝ դարձաւ Մարդոց՝ ու կանչեց· —
— «Մի՛ մօտենաք Որսերուն... .
Արուեստութիւն չըկա՛յ,–ըսաւ–, որ մէ՛կ հատ մը ըսպանէք...:
Իմ Հայրն Ասոնք Գարիսպէն Նե՛րս վակեր է,
*Ասոնք Իմ Հօր բըռնաւորներ *), գերինե՛րն են Ամենն ալ·*
Ասոնց Միսը չի՛ ուտուիր... . —
Ես չե՛մ Թողներ՝ Դուք զարնէք...:
Այդպէս չ՝ը՛լլար, ա՛յ Մարդիկ,
*Կամա՛ց... *)՝ Ես մէկ Ասոնք Թող տամ՝ դո՛ւրս ելնեն,*
Մե՛ղք են Ասոնք, մընացեր են ներս վակուած,
Ես կըԹողում՝ ազա՛տ երթան Սա՛ր ու Քար, —
Ով կըտրի՛ճ է՝ Իրեն համար Թող բըռնէ՛...»:
Դաւիթ այնտեղ ի՞նչ ըրաւ. —
Իր Գըդակը ‡) հանեց նետեց Երկինք-վե՛ր,
*Կանչեց՝ «Հօ՛յ, հօ՛յ...», ծա՛փ զարկաւ ու կե՛ռ ըրաւ *),*
— «Ի՛ն, Դուք,–ըսաւ–, Ձեզ այդ Դուռնէն ե՛տ տըէք...»:
Կենդանիները հոն խըրտչեցո՛ւց, քըշե՛ց բոլոր՝ հանեց դո՛ւրս,
— «Գացէ՛ք,ըսաւ,– ազա՛տ կերէ՛ք ու խըմեցէ՛ք՝ Սար ու Ձոր,
Աղո՛Թք ըրէք Իմ Հօր Հոգուն ու Պապուս...»:
Ու դեռ Ի՛նքն ալ՝ այդ Գարիսպին Նե՛րսն էնկաւ՝
Ի՛նչ Գարի տակ կամ Թըւխի՛ տակ՝ մէկ Անասո՛ւն որ տեսնէ՝
«Ձըլլա՛յ,–կ՝ըսէ–, քընուկ ըլլայ՝ վեր չ՝ելնէ՛ ու չըփախի», —
Կըմեղքեննայ՝ Ա՛ն ալ կ՝հանէ՝ դուրս երթայ...:

---

*) Բռնաւոր, կալանաւոր, բանտարկեալ: *) Կամա՛ց, կեցէ՛ք, Սպասեցէ՛ք: ‡) Ե·621՝ Կոխուն ?, անծանօթ ծագումով բառ մը, Ե·564՝ պիհիւ՝ ուղղելի՝ հաւանաբար արախսիհիւ, գդակ· արբ.՝ ա-բագչիհի: *) Կեռ, կանչ, պօռոց:

Դաւիթ բևրաւ այդ Ամե՛նն ալ բա՛ց Թողուց,
Անոնք ելան՝ փախան գացին դէպ Սարեր,
Մարդիկ ինկան Անոնց ետեւ Նէճիրի· —
Ով կըսրի՛ճ էր՝ գընաց Իրեն Ո՛րս ըրաւ·
Ով ինչ քո՛յլ էր՝ ե՛տ մընաց,
Զրկըրցաւ մէկ Որս ընէր···:

428. Դաւիթ կ'ուզէ Գիտնալ Իր Հօր Մարը

Ե·507,564,622,734,999,797,765, (Ե·765,797,999,903), Զ·՝Ե·797, 507, Կ·12,52, (Կ·12), Զ·՝Կ·52, Հ·376,27,419, Զ·՝Հ·376, (Հ·376, 419), Ա·10, (Ճ·97, Ճ·97ա·), Ճ·96, Խ·17, (ՁԿ·446)·

Դաւիթ զարկաւ մէկ–քանի հատ վէրի–Ոչխա՛ր ըսպաննեց,
Երկու հատը մատա՛ղ ըրաւ Աստծուն,
Բերաւ ըսաւ, — «Աթի ընենք Մեղի Ընթրիս՝ կըրաւէ՛»:
*Ելան կըրա՛կ կըսկուցին *),*
*Նըստեցան հոն՝ կրակին կո՛ւշտ *),*
*Այդ Ոչխարէն *) ձիւղ–Խորոված՛ծ *) ըրին այնտեղ՝ կո՛ւշտ կերան:*
Որ եփեցին՝ տա՛ք–տաք կերան Խորոված՝
*Զուրմ էվարին *) պըսպըտեցան Սարին մէ՛ջ:*
Շուքերն ինկան, օրը եղաւ իրիկուն, —
Այդ Մարդերը՝ դարձան գացին Իրենց Տո՛ւն. —
Օհան ըսաւ, — «Դաւի՛թ, Որդի՛, ելիր Մենք ալ Տուն դառնանք»:
Դաւիթն ըսաւ, = «Հօրա՛ր, Իմ Հայրն այստեղ շա՛տ է կան եկեր. —
Ես՝ այս դիշեր՝ հո՛ս կըմընամ Հօրս սիրուն»:
Ըսաւ, — «Որդի՛, Մա՛րդ դիշերը դուրս չի՛ մընար այս տեղեր.
Գիշեր կ'երթայ Իրեն Տո՛ւն:
Տեսա՛ր որ այդ՝ Քաղքի՛–Մարդեր՝ Ամենք ելան դընացին՝.
Մե՛նք ալ պէտք է երթանք Տուն»:
Ըսաւ, = «Հօրա՛ր, չէ՞ որ Իմ Հօր Տեղրա՛նքն են···,

---

*) կպուցնել, *բռնկցնել, վառել*: *) կուշտ(ը), *Քով, մօտ*: *) Ոչխարէն, *Ոչխարներուն (որսացած երէններուն) միսէն*: *) ձիւղ–խորոված, Շիշ Էշպապ, *Դալար ամուր ճիւղեր իրր շամփուր դրած եւ միսի կտորներ վրան անցուելով՝ կրակի վրայ խորոված*: *) Զուրմ էվարին, (*մինչեւ արեւամայրին*) *Մինչեւ իրկուն*:

Ես այս գիշեր հոս կըմընամ՝ չուր *) լուանայ·
Որ Դուն կ'ուզես՝ Տո՛ւն գընայ»:
— «Դաւի՛թ,–ըսաւ–, որ Դուն մընաս՝ ես ալ ինձ հե՛տ կըմընամ,
Գառիկինք այստեղ, մինչեւ լուանայ՝ նոր կ'երթա՛նք»:
Ա՛լ՝ իրիկուն՝ մնացին այնտեղ, Մովսասա՛ր ‡)·
Զըկըրցա՛ն գալ Իրենց Տուն:
Ելան այնտեղ Այրի նըման տե՛ղ մը ×) գըտան՝ նըստեցա՛ն: —

429· Դաւիթ՝ Ցեղապետի Աղջկան մասին Կ'ԽօսքՀօrեղբօրը +)

Ե·564, Զ·՝Ե·507, Զ(Ա·68), Զ·, Զ·՝Ա·68, Ա·68·

Մի՛շտ մը վերջ, Զէնով–Օհան յա՛ր *) քուն ունէր՝ կըքընէր·
Դաւի՛թն ըսես···՝ քո՛ւն չունէր···: —
Մէկ պահէ մը՝ վերցուց ըսաւ, — «Հօ՛րեղբայր···»:
= «Ի՞նչ է,–ըսաւ–, ինձ՛ մատա՛ղ···»:
— «Իրաւի՛ թէ···, ինձմէ՛ պահեմ՝ Աստուծմէ՛ ալ ինչ պահեմ···,—
Ինչ ես գացի Մովսասար···՝
Մըսրայ Քուչո՛ւր մէկ ցեղի մը դէմ՛ եկայ··· ·
Այդ ցեղի մէջ՝ Մեծիկ հարո՛ւստ մէկ Մա՛րդ կար···,
Աստր Աղջիկ՝ նըշաներ եմ ինձ համա՛ր···:
Աստնք ալ ինձ խո՛սք են տըւեր Ամենքով՝
Որ թէ՝ «Այս մէ՛կ անգամն է՝
Այլեւս չիգա՛ն Մովսասար»···»:
Զէնով–Օհան վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ, —
Ըսաւ, = «Դաւիթ, է՛յ Որդի՛···,
Դու գընացիր՝ Մեր Գըլուխը փորձանքի տա՛կ ձգեցիր···:
Դէ՛, եղածը՝ եղա՛ծ է ալ, ա՛յ Որդի···,
Ե՞րբ պիտ՝ երթաս՝ Քո Նըշանած բերես Տո՛ւն···»:
Ըսաւ, — «Ապա՝ ժամանա՛կ են տըւեր ինձի՝ մէ՛կ ամիս,
Որ հո՛ն երթանք՝ Իմ Նըշանածն առնենք՝ գա՛նք···»:

---

*) Ջուր, Մինչեւ որ: ‡) Ե·709՝ վաճիճ (կ'մնան կ'քնանան): ×) Ե·765՝ ազըլ, թերեւս ախոռ: +) Տե՛ս Հատուած 418 եւ 419:
*) Ցար, Մի՛շտ, շարունակ:

Ու խօսեցան դէմ երկա՛ր ... †) —

430. Դաւիթ Գուշ Ձուլի՛... †)

Ե·564,507,622,903, Զ(Ե·507), Զ·՝507,622, Կ·52, Ա·10, Զ·

Օհան ըսաւ, — «Դաւի՛թ, Որդի՛, ա՛լ մըթնեցա՛ւ, քընացի՛ր ... .
Հօրեղբա՛յրը մատաղ ֆեզի, քընանալու առե՛ն է ...»:
Դաւիթ այնտեղ ի՞նչ ըսաւ. —
Ըսաւ, = «Հօրա՛ր, կըրա՛կ կ՝երթայ իմ Աչքերէն ..., քուն չունի՛մ»:
[Սեւ–Սարն այնպէ՛ս սարսափելի, անահո՛ւն ... .
Կըծկըծո՛ցը ինկե՛ր է այդ Սա՛ր ու Ձո՛ր ... .
*Մո՛ւթ մառախո՛ւղ ..., Մարդու Լեղին *) կըկըտրի՛ ...:]*
Ձէնով–Օհան՝ քունը կուգայ՝ չի՛ իյնար որ չուտ քընի. — ‡)
Մընացեր է հոն՝ նըստո՛ւկ. —
Իր մէտն 'ի վեր կ՝ըսէ՝ «Հիմա՝ ի՞նչպէս ընեմ Աստր հետ ...,
Որ Այս Տըղան դաժարի. —
Երախա՛յ է, վախնամ երթայ՝ վորձա՛նք մը դայ Իր վըրան»: —
Է՛, Դաւիթը կըղաղրի՛ ..., —
Հօրեղբայրը դիտէ՛ այդ. —
Վերցուց ըսաւ, — «Դաւի՛թ, Որդի՛, մատա՛ղ ֆեզի Հօրեղբա՛յրդ,
Բե՛ր Իմ Գըլուխ դընեմ Ծունկիդ՝ քիչ մը այդպէս քընանամ,
Երբոր ֆեզի քո՛ւն կուգայ՝

---

†) եւ †)՝ Այս երկու Հատուածները — դեռատի դիւցազնը՝ իր Նշանածին ու իր Հօր վատաւոր անցեալին պատկերը աչքին առաջ, եւ ապագա՛յ մեծ ծրագիրներ մտքին մէջ, խորհրդաւոր գիշերուան մը Հրաշքովը յղի, աւանդութիւններու ձայնով չընչող բարձր Լերան վրայ, Հօրեղբօրը հետ խօսելով — ի՛նչ զմայլելի բանաստեղծութեան նիւթ ...:

*) Լեղի, Լեղապարկ:

‡) Վայելեցէք այս վըրձնագեղ սքանչելի՛ պատկերը՝ իր բնիկ բարբառին մէջ, պատմուած՝ աճգրագէտ Հայ Գիւղացիէն (*Մոկացի Վարդան Մուխսի–Բաղիկեան, դործիս Ցոյզն.՝ Դ.՝23, Ե·507*). — «... կը Ծան Էնտեղ, քա՛նի մ՝ կը նստին՝ յիրիկուն Դաւիթ չըքը՛նը։ Խրոխպէը կ՝ըսը, — Դաւի՛թ, Խրոխպէ՛ը կըբան ի քի, քընը՛, քընը՛։ Դոբսէն Դաւիթ կ՝ըսը, — Խրոխպէ՛ը, կրա՛կ կ՝երթայ իմ աչքերուց, ձի քուն չի՛ դայ։ Միվ Սարն ընցկո՛ւն սարսափելի։ կըծկըծո՛ւց ինկե նա սար-ծուր, մո՛ւթ։ Մարդու Լեղին ընցկո՛ւն կը կտրը՛։ Խրոխպօը քուն կը դայ, չըգը՛շխը քընը...»։

Այս անգամ ալ՝ Ձիս վե՛ր հանէ՝ Դո՛ւն քընացիր Իմ Ծունկիս…»։
Դաւիթն ալ թէ, = «Իմ քուն չի՛ գար, Հօ՛րեղբայր,
*Եթէ որ Դուն նեղացե՛ր *) ես՝ քո՛ւն ունիս՝*
Ես Իմ Ծունկը կըդընեմ՝
Դուն Ջո Գլուխ քեր դիր վըրա՛ն՝ քընացե՛ր…»։ —

431. Գիտեցուած մէջ՝ Դաւիթ Կանայ-Կարմիր Բոց Մը Կ՛տեսնէ Հեռուն

Ա·10, Հ·27,376,419, Ե·622,709,797,507,564,903,999,508,765,734, 821, Չ·՝Ե·765,508,709, (Ե·821,765), (Կ·12), Կ·12,52, Ճ·97, Չ·

Քունի տակն որ եկաւ՝
Հօրեղբայրը Գլուխ դըրաւ Դաւթի Ծունկին՝ քընացա՛ւ։
Դաւիթ նըստեր, մուխ դիւե՛ր է, կընայի՛…։ —
Գահ մը ‡) անցաւ, Դաւիթ նայե՛ց, իրիկնա՛ց…, —
Մէ՛կ ալ նայեց…՝ Իրեն դիմաց՝ Սարին վըրայ՝ ի՛նչ տեսնայ…, —
*Տեսաւ՝ զաւնո՛ւ *)… մէկ կըրա՛կ մ՝…,*
Կանայ–կարմիր Բո՛ց մ՝ ×) երեւաց Իր Աչքին…։
Ան ալ՝ մըտքով՝ ըսաւ «Ախ ի՞նչ կըրակ է Սարի մէջ…, —
Մինչեւ հիմա բա՛ն չըկար…,
Հիմա՝ այդպէս՝ մէկէ՛ն եղաւ Բո՛ց–կըրա՛կ…»։
Դաւիթ տեսաւ՝ Լոյսը կ՛ելլէ՛ ու կ՛իջնէ,
Սարի՛ն վրայ +)…, —
Հօրեղբօրը ձայնեց ըսաւ, — «ե՛լ, ե՛լ,–ըսաւ–, Հօ՛րեղբայր,
Ե՛լ տե՛ս,–ըսաւ–, Ան ի՞նչ Լոյս է՝ կ՛ելլէ–կ՛իջնայ՝ կըվառի՛…՝
*Նը՛հա՛ն *) այդ Մեւ բա՛րձրը Սարի Գլուխը…»։*
= «Որդի՛,–ըսաւ–, քընացի՛ր… · —
Սարի Հովի՛ւ, Գառնարա՛ծ ու Նախրո՛րդ են…,
Ես ի՞նչ գիտնամ ո՞ր մէկն է…, —
Կըրա՛կ կ՛ընեն՝ Անոր Լո՛յսն է որ կ՛ելլէ…»։

---

*) Նեղացնել, *Ծոգնիլ, խոնջիլ*։ ‡) Ե·564՝ բո մ՝ (*պահ մը*), Ե·821՝ կէս օր՝ *ուղղել՝ կէս գիշեր, Ճ·97, Ա·10, Կ·12,52, Հ·27,419, Ե·622,999՝ կէս գիշեր, գիշերուան մէջ։ *) Զատնուլ, *Հեռուն*։ ×) Ե·765՝ ջո՛ջ լոյս մը։ +) Ե·709՝ վաճիխի վրայ։ *) Նըհան, *Ահա՛ հոն, ահա՛ այնտեղ (մատով ցուցուած)*։

*Հօրեղբայրը դիտէ՛ ի՞նչ է...՝ խա՛բըս կուտայ *) Դաւիթին։*
Դաւիթն ըսաւ, — «Ձէ՛, Հօ՛րեղբայր, ես կըտեսնե՛մ իմ Աչքով՝
Մարդու կրակի նըման չ՚է՛ Այդ կըրակը...»։
*Ձէնով–Օհան նորէն ըսաւ, = «Հօրա՛ր մեռնի՛ր Ռո թերէ՛ն *),*
Ան՝ այդ Սարի Գառնարածնե՛րն են այնտեղ...,
Իրենց համար Ընթրի՛ս կ՚ընեն, կըրակի չուրջ բոլորած...»։ —

429. Ձէնով–Օհան՝ Ցնծալու Առնո՝ Իր Ցակը Կ՚ղեկ Դաւիթի Ղրանցը

Ձ.՝Հ.27, (Հ.419), ՁԿ.447, (ՁԿ.447,448), Ե.622,765,709,797,734, 798,999, Ձ.՝Ե.622,966, (Ե.765,734), Խ.17, Ց.97, (Ց.97), Կ.52, 12, (Կ.52), Ա.10.

Ձէնով–Օհան դարձաւ այնտեղ ի՞նչ ըրաւ. —
Դաւիթի վըրայ Պարեզո՛տ կար Ղըղանցով,—
«Բերեմ,-ըսաւ-, Դաւիթի Ղրղանց Իմ Գլուխիս տա՛կ դընեմ,
Վըրա՛ն պառկիմ՝ որ Այս Տըղան դադարի...,
Չ՚երթա՛յ՝ գիշեր՝ Ցարի մ՚, Թուխի մ՚ վըրայէն՝
Իյնայ տա՛կ...՝
Ու մեռնի... .
կամ հեռանայ՝ Սարի մէջ...՝
Գազաններըը ղ՚Ինք ուտեն...»։—
Ելաւ բերաւ՝ Դաւիթն Իր քո՛վ պառկեցուց,
*Անոր կապի *) Ղըղանց ժողվեց՝ գողտուկ դըրաւ Իրեն †) տա՛կ,*
«Որ գիշերը՝ Դաւիթ չ՚ելնէ՝ մէկ կո՛ղմ երթայ՝ հեռանայ...,
Իրեն վըրայ կոտըրւի...»։—
Ինքն ալ՝ Մարմնով ծա՛նրըը Մարդ...՝
*Ղըղանցին վրայ՝ կող-վեր *) ինկաւ՝ պառկեցա՛ւ,*
Ու քուն տարաւ՝ քընացաւ...։
Դաւիթ Ինքը դեռ քուն չ՚ուներ, մըտածմունքի մէ՚ջ ինկեր...,—

---

*) Խարս տալ, *Խուսափիլ*, դիտմամբ զգուշանալ՝ ուղղակի պատասխանելէ։ *) Թերէն, *վոխարէն*։ *) Կապա (կապայի, կապի), *Մինչեւ պճեղներն իջնող հագուստ. պարեզօտ*, էնք-արի։ †) Հ.419՝ «Հօրեղբայրները, մէկը՝ մէ՚կ կող, մէկը՝ միւս կող, կ՚պառկին Դաւիթի ղրանցքին (փէշ–երուն) վրայ»։ *) Կող–վեր, *Ընկողմնածի պէս, կէս–կողի՝ կէս–մէջքի վրայ*։

Աչքը մնացեր՝ վեր՝ Այն Սարի Տեսիլքին··· ·—
Իր Սըրտի մէջ՝ չ՛Է համոզուած Իր Հօրեղբօր ըսածին···:—
Կը դաղարի՞ ալ Դաւիթ···,—
Քուն չ՛ունի՛···,—
Մընաց մինչեւ կէս-գիշեր՝ ×)
Որ Հօրեղբայր քընացաւ՝
Դաւիթի քո՛ւնն ալ Իր Կոպերուն ծանրացաւ,
Ինկաւ Իր տեղ քընացաւ:—

488. Դաւիթ Երազի Ու Տեսիլքի Մէջ

Ե·966,999,508, ՀԿ·448,449, Հ·՝ՀԿ·448, Հ·՝Ճ·97ա·, Ճ·97, Կ·52, Հ·27,419, Հ·

Որ քընի(աց)ա՛ւ···՝
Հրեշտա՛կ–Ամածու՝ Երա՛զ եկաւ Դաւիթին, —
Ըսաւ, — «Դաւի՛թ, ելի՛ր,–ըսաւ–, Քո քունէն···:
Տառընշի՛նդ քայլ՝ Քենէ հեռու՝ մէկ բա՛րձրը տե՛ղ մ՝ կայ անդին, —
*Մարութեայ–Բա՛րձր–Ասպարածնի Հըրա՛չքն *) է··· ·*
Այնտեղ սո՛ւրբ է···, եւնե՛ս ու ժա՛մ չինել տաս··· ·—
Քառասո՛ւն Խորա՛ն ձըգես մէջ···,
Քառասո՛ւն Երէ՛ց դընես մէջ···,
Քառասո՛ւն Աւազ–Սարկաւա՛գ···,
Ու Քառասո՛ւն ալ Վարդապե՛տ···, —
Գիշերուան մէջ՝ ընես քառասո՛ւն Պատարա՛գ···՝
Ապա՛ Նորէն Լոյս բացուի···՝
Որ Այդ Շէնքը՝ Հիման վըրայ դաղարի՛···, —
Եթէ ո՛չ···՝
Քա՛նի չինեն՝ կըփըլի՛···»:

· · · · · · · · · · · · · ·

Մէ՛կ ալ տեսաւ՝ Ինք կըմբռնէ Բալաք–Բուրջով Վանքի մ՝ մէջ···,
Ամածո՛ւ կամուր՝ Իրեն առաջ Վանքին Դուռները բացուեցան···
Դաւիթ Ինքը մըտաւ Նե՛րս···, —
Տեսաւ այնտեղ՝ չո՛ղջ–չեղջ Ոսկի եւ Արծա՛թ···,
Տեսաւ ժամու Հանդերձնե՛ր··· ,

×) Հ·27՝ գիշերուայ ժամանակի մէկը»՝ ուղղել՝ մէջը: *) Հըրաշք, Նշխարք, մասունք, սրբավայր, ☛ Մեհեան, Արեւածագի ու պաշտամանի բարձրավայր···:

Անդին թագե՛ր, Բուրվառնե՛ր...,
Անդին Խաչե՛ր, Շուրջառնե՛ր...,
Ու Ոսկեկող շատ Գիրքե՛ր... ‡)»: —
Դաւիթ՝ այնտեղ՝ քունին մէջէն վե՛ր թըռաւ...: —

434. Դաւիթ՝ կաճաչ-կարմիր Լոյս կ'ոսնկէ Սասմայ-Սարիկ Գլուխը

8·97, Ա·10, Զ·Ա·10, (Ա·10), Կ·52,12, (Կ·52), Հ·27,419,376, (Հ·376,419), Ե·967,904,564,966,508,622,709,798,999,734, (Ե·821, 734,507,966,798), Զ·՝Ե·966,622,999,904, ՁԿ·449, ՁՍ·402, Ե·17, (Ե·17).

Դաւիթ քունէն վե՛ր թըռա՛ւ..., —
Աբթընցա՛ւ ու ելաւ թիկնեց Իրեն տե՛ղ...,
Աչքեր բացաւ իրիկո՛ց..., —
Նայեց շուրջը բան չըկա՛յ...,
Լոկ երա՛գ է Իր տեսած...:
Մէ՛կ ալ նայեց՝ ի՞նչ տեսաւ..., —
Զատնո՛ւ...՝ թէ՞ չէ Իրեն տեղէն քիչ անդին...,
Սասմայ-Սարի՛ Գըլուխին ×),
Պըրակներու մէջտեղէն...՝
Մէկ տեղ մ՝ կըրա՛կ +) *կը վառի...,* —
Կանաչ-կարմիր Լո՛յս §) *մը՝ նորէն՝ մուխին մէջ՝*
Կ'ելնէ՛՝ կ'իջնէ՛..., *Կ'ելնէ՛՝ կ'իջնէ՛...՝ Խաչի պէս...:*
Ան ալ — *Դաւիթ* — *ի՞նչ ըսաւ...,* —
«Իրա՛ւ, ես պիտի երթամ՝ նայինք աս ի՞նչ կըրա՛կ է...՝
Ա՛ս գիշերով կըվառի՛ն...:
Տեսնեմ Ատոնք ի՞նչ Մարդիկ են...՝ Սարին Գլուխ Որս կ'ընեն...:
Տէ՛ր Աստըւա՛ծ..., ի՞նչ ճըրագ է այդ ճըրագ...:
Այդպէս կըրա՛կ կ'ըլլայ որ... †)»:

---

‡) 8·97ա՝ աւետրանիստեր: ×) Ա·10՝ Սարի պրակին մէջ, Հ·419, Ե·798՝ դաշտի մէջ: +) Հ·27՝ ճրագ մ՝: §) Հ·376, Ե·507,734, 798՝ բոց: †) *Մէթէ գոյութիւն ունի՞ այդպէս կրակ:*

435. Դաւիթ՝ Գղաճցը կըկարէ Ու Կ'երթայ Դէպ Սարի Բոցը

Կ·52, Հ·27,376,419,420, (Հ·27,376,419,420), Զ·՝Հ·376, Խ·17, Ջ·՝Խ·17, Ճ·97, Ե·798,999,564,622,904,903,734,765,709,508, (Ե·564,622,904,508), Ա·10, ՁԿ·449,450, ՁՍ·403·

Տըղայ–Դաւիթ՝ այնտեղ՝ ելա՛ւ որ կանգնի…՝
Ելնէ երթայ դէպ կըրա՛կ՝
Բո՛ցը դիտէ մօտիկէ՛ն…, —
Վէր–վա՛ր ըրաւ ‡)՝ որ ելնէ…՝
[Հօրեղբայր դեռ քընո՛ւկ է]
Տեսաւ՝ նըստիլ չի՛ կըրնար…, —
Հօրեղբայրը՝ իր Գըղանցին վըրայ ինկեր՝ պառկեր է…։
*Մէղեց *) ըսաւ՝ «Ո՛վ Տէր–Աստուա՛ծ…, ի՞նչպէս ընեմ ես հիմա՝*
Որ ելնեմ վեր՝ ու երթամ…։ —
Իմ Գըղանցը թէ քաշէ՛մ…՝
Գիտի զարթնի՛ Հօրեղբայրս,
Զըթողնէ՛ որ ես երթամ։
Իմ Հօրեղբայր Իրեն քունէն վե՛ր հանե՛մ…՝
Վա՛յ թէ ըսէ՝ «Դաւիթ ճի՛ժ է, վախցա՛ւ ու Զիս վե՛ր հաննց…»։
*Թէ Իմ կապի Թելի՛նք *) կըտրե՛մ…՝ ափսո՛ս է…։*
–Մըտքով ըսաւ–՝ հո՛գս…՝ թէ որ ափսոս է…։
Վեր չըհանե՛մ…՝ Իրեն տակէն Իմ Գըղա՛նցը դուրս չիգար…։ —
Տէ՛րը վրկայ…,–ըսաւ Դաւիթ–, ես Իմ Գըղանց պիտ՝ կըտրե՛մ…
Հօրեղբօրըս Գըլուխ Թողում Կապիս վրայ՝
Որ Հօրեղբայրս չարթընայ, —
Ելնեմ երթամ՝ տեսնեմ ան ի՞նչ կըրակ է…»։
Ան ալ — Դաւիթ —՝ Ձեռքը տարաւ Գօտիին՝
Դանակ ×) հանե՛ց Իր Մէջքէն՝
Դըրաւ Իրեն կապայիս վրա՛յ՝ ու քաշե՛ց,
Իր Հագուստին Թելինք կըտրե՛ց կամացուկ,
Գըղանց Թողուց Իր Հօրեղբօր Մէջքին տա՛կ,
[Հօրեղբայրը քընո՛ւկ է]

---

‡) Ա·10՝ Էլաւ՝ ուղղելի՝ էրաւ (ըրաւ)։ *) Մէղել (*միտս ածել*), Մտածել։ *) Թելիմ (*թելեր*), կերպասի թելերուն դիծը, քղանց, փէշ, համմալ·՝ թելիմ, թելիմ։ ×) Ե·709՝ խանջալ (*խէնջար*)։

Ինքը ելա՛ւ կանդնեցա՛ւ. —
Նետաղները յուչի՛կ մ՝ առաւ ձըղնց Թե՛ւ,
Կամացուկ մը քաշուեցա՛ւ ու ելաւ դընաց մուքին մէջ,
Դէ՛մ ըրաւ այն Սարի Բոցին ‡)՝ ու դընա՛ց։

486. Դաւիթ՝ Սարի Կանայ-Կարմիր Լոյսին Առաջ

ՁԿ·450,451, Ձ·՝ՁԿ·450, Խ·17, Հ·27,420,376,377, Ձ·՝Հ·376, Ե·765, 564,735,798,622,734,508,565,904, Ձ·՝Ե·564,765,904, (999), Ա·10, Կ·52,12, (Կ·12), Ը·97, Ձ(Ը·97), Ը·98ա·, ՁՍ·404·

Դաւիթ համրեց տասնըհի՛նգ քայլ՝ ու դընա՛ց,
Գընաց հասաւ Մարութայ–Բա՛ղըր–Սարին·
*Ինչ *) մօտեցա՛ւ այդ տեղին ու քո՛վ դընաց…՝*
Սարսափեցա՛ւ…, դողը բռնե՛ց իր Մարմին…, —
Հոդ՝ վախցա՛ւ…։
Գընաց, դարձա՛ւ ու եկա՛ւ…՝
Գընաց հասաւ Կանա՛չ–Կարմիր այդ Բոցին…։
Նայեց որ ի՞նչ…, — ահագի՛ն մեծ Գերեզմա՛նք…,
Կամ թէ պըղտիկ մէկ Ծըղի՛կ…, —
Քարեր չարած բոլորտիք…, —
Թէ՞ Մարութայ–Բարձրիկ–Վա՛նք…։
Գընաց կեցաւ այդ Տեղի՛ն վրայ ×), Կանաչ–Լո՛յսը կըդիտէ,
Մօտեցա՛ւ ու տեսաւ որ ի՞նչ…, — Կըրակ չ՚է՛…։ —
Ձեռը տըւաւ այդ Բոցին՝
Բոցը Իր Ձեռ չէ՛ այրեր… .
Ախով վըրան Հո՛ղ նետեց՝
Չի՛ մարիր… . —
Այդ Կըրակը վա՛ռ Լոյս է…՝
Կանգներ է վեր՝ Ծըղիկին… +)։

---

‡) Ե·709՝ Վանիին, Ա·10, Կ·52՝ կրակին, Ը·97՝ լոյսին։ *)Ինչ, երբ, ինչ տեսն որ։ ×) Ե·765՝ Իր հօր Վանիին վրայ։ +) Համեմատեցի՛ Սեպուհ Լերան Մանէ Այրին վրայ կախուած՝ Լուսաւորչի աճիշէջ կանգնեղին աւանդութեանը հետ։ Տեղագրապէս ալ՝ նոյնը պիտի ըլլան Սեպուհ եւ Աւազ կամ Սեւ–Սարերը։

Նո՛ր իր խելքին մէջ մըտածեց ու ըսաւ, —
«Մարութեայ-բա՛ր-Ասպարաձի՛ն է Աբիկ···,
Եւ իմ Հօրըս Գերեզման···»։
Դաւիթ այնտեղ կանգներ է վրա՛ն՝ կընայի··· ։
Աչքեր չըվե՛ց ու նայե՛ց···,
Նայեց տեսաւ որ այն բա՛ր-Ծըղիկին
Ահագի՛ն մեծ՝ Մարմար-Քարի կէս՝ պատռեր, —
կանա՛չ-Կարմիր Բոցը ‡) մէջէն վե՛ր կ՚ելնէ···՝
Կըրակ Գետնէն կըբոխա՛յ··· ×)։
Լուա-Կամարը կանգներ վրան···,
Նաչի ձեւով կըպարճրանայ՝ կ՚ելնէ վե՛ր,
Նորէն կ՚իջնէ Քարին վրա՛յ···։
*կալի *) մ՚ չափ ալ բոլորա՛կ տեղ՝ Այդ Լոյսէն՝*
Եղեր ինչպէս օր-ցերե՛կ···, —
Վանքին Հի՛մը բացեր է···։
Ըսես՝ Երկինց Լո՛յսն է Ան···՝
Իջեր կանգներ Վանքին վրան···։
Տըղայ-Դաւիթն ալ չի՛ դիտեր որ Լո՛յս է,
Անի գիտէ թէ Բո՛ց է···, —
Գերեզմանէն այդ Ծըղիկէն վե՛ր կ՚ելնէ···։ —

427. Դաւիթ Կ՚լսէ Պատգամը՝ Սարի-Լոյսէն Ելած

ՁՍ·405,406, ՁԿ·448, Ե·508,999, Զ·՝Ե·999,966, Զ·

Ան ալ դընաց՝ պիտի մըտնէր Հիւղին մէ՛ջ,
Այդ Լոյս՝ կանչե՛ց Իրեն վըրայ, — այդ Ծըղի՛կ—,
Ըսաւ, — «Դաւի՛թ, Քու Տըրեխներ Ոտքէդ հա՛ն՝
Ու Նո՛ր արի Ինձի մօտ··· ·
Մո՛ւրբ է հոս···»։
*Դաւիթ այնտեղ կըսըրսըփա՛յ *), չի՛ իյխեր որ մօտհաս գայ···,*

---

‡) Ե·97՝ Լոյսը։ ×) կայ ծաղիկ մը — Համասփիւռ, Լօշտակ, Քիմիա խոտ —, որ գիշեր լոյս կուտայ· «՚ի գիշերն պայծառագոյն երեւի ՚ի յայս խնդրողաց» [Հին Հառք·, Ալիշան, էջ 84], բացատրըւած՝ իմ «Հայ-Բուսանց» ընդարձակ գործիս մէջ (անտիպ)։ *) Կալ, կալատեղ։ *) Սըրսըփալ, Սարսռիլ, քամմնիլ։

Գիշե՛ր է…։
Դարձաւ, = «Ապա, Դու ո՞րն *) եկե՛ս…»։
— «Մարութայ-Բարձր-Աստարածի՛նն եմ,—ըսաւ.
Ես Քու Հօր վանքն ու ժա՛մն եմ…։
Քառասո՛ւն †) տարի որ Քու Հայրը ×) մեռեր է…՝
Մըսրայ-Մէլիք եկեր՝ ու Զիս քակո՛ր է… .
Քառասո՛ւն տարի՝ Իմ Զօրն *) այստեղ նըստա՛ծ է…,
Դուրս չ՚է՛ եկեր Իր Տեղէն… .
Անոր պէս ալ՝ ես չե՛մ չըմրեր *) ու գացեր… .
Խաչ-Փետրաղի՛ն ալ՝ այստեղը պահա՛ծ է…+)·
Անոր Զօ՛րն ալ՝ չ՚է՛ թողած որ տեսնային՝
Ան Խաչ՝ Մըսըր տանէին…։
Մ՛ա այն Խաչը՝ ու դի՛ր վեր՝ Քու Մ՚ջ-Թեւին,—
Կանչէ՛ ուժով եւ ըսէ՛.— §)

— «Հա՛ցն ու Դիւնին, Տեր-Աստուա՛ծդ-Կենդանին…,
Մարութայ-Բարձր Աստարածին…,
Խաչ-Փետրազին՝ վեր՝ Դաւիթի Մ՚ջ-Թեւին…,
Ուժ-Օգնական՝ կանգնին Սասունց-Դաւիթին…»։

Մ՛ւխտ ըրէ հետ Քո Աստրծուն՝ Քու Հօր Վանքը Դուն չինե՛ս…,
Թէ չըշինես՝ Դու Քո Ուխտով կըմեռնի՛ս…»։

438. Դաւիթ՝ Վանիին Հիմերը կըգծէ

Ե.798,765,767,711,565,508,904,709,735,622, Զ(Ե.767,798,735), Զ.՝Ե.904,765, Ա.10, Հ·420,27, Կ.12,52, Զ(Կ.12), Զ., ՁՍ.407, Զ.՝Ճ.33ա., Ճ.97, ՁԿ.452, Խ.17.

Դաւիթ՝ Ծունկեր զարկաւ Գետին ու գընա՛ց…,

---

*) Ո՞ր, Ո՞ր մէկն, ո՞վ (ես)։ †) եւ ×) ՁՍ.406ա.՝ Մեծ հայրը՝ Առիւծ-Մրմեր, կամ հայրը՝ Դաւիթ-Մրմեր։ *) Զօր, (զkorf), Զօրութիւն, մասունք, նշխարք, հրաշագործ կարողութիւն։ *) Շմռեղ, Լքել, Թողուլ-հեռանալ։ +) Կ՚երեւի թէ՝ հին հայ իշխանաւորներու դամբաններըը՝ վիմարան էին միեւնոյն տեղն։ կամ՝ իրենց գործածած Զէնուզարդերը՝ իրենց հետ կը պահուէին՝ իրենց դամբարաններուն մէջ, Ճ·25 տարի՝ Առիւծ-Մրմէրի մահուան տարիովը՝ կ՚ըսուի նոյնպէս «Գեստեր (զգեստներ) չե դրին սնոկի մէջ»։ §) Երգով։

Ձեռներ զարկաւ՝ գետին պագաւ, համբուրեց...։
Երե՛ք անգամ համբուրե՛ց այդ Լոյսին Տեղ(ն)։
Խաչ-Փետրազին առաւ պագեց՝ ու դրաւ Իր Ա՛ջ-Թեւին,
Փառաւորուա՛ւ *) կեցած տեղ... ։
Ան ալ կանչեց ու ըսաւ.— 1)

— «Հա՛ցն ու Գինին, Տէր-Աստուա՛ծը Կենդանին 2),
Մարութայ-Բա՛ռ-Աստուածին,
Խաչ-Փետրազին †)՝ վեր՛ իմ Ա՛ջ-Թեւին,
Ուժ-Օգնակա՛ն կանգնին Սատմանց-Դաւիթին... ։
Ո՛ւխտ կ՚ընեմ Իմ Աստծուն՝
Իմ Հօր Վանքը ես շինե՛մ...»։

Ան ալ — Դաւիթ — կանգնեցա՛ւ,—
Իսկոյն Իրեն Նետաղեղին մէկ ծայրով՝
Խազե՛ց ×) Լոյսին չորս բոլոր։
Երե՛ք անգամ Գի՛ծ քաշեց այդ Մարմար-Բարին բոլորթիք,
Տեղը փորեց, քիչ մ՚ նըշանեց ու Թողուց։
Քանի մը Բար բերաւ չարեց Հիմին տեղը բոլորակ,
Ըսաւ՝ «Նըշան մ՚ ընեմ՝ Տեղը՝ չըմոռնամ»,
Ըրաւ ինչպէս Տունի մ՚ ա՛ղ։
Ապա դարձաւ՝ ի՞նչ ըրաւ։ —
Ա՛ռ իր տեսած Լուսոյ ձեւով, Իրենց տեղ,
Խորաններուն՝ Կամա՛ր գըծեց մէ՛կ ու մէ՛կ։—
Քառասո՛ւն-Խորան գըծեց +) հոն —,
Ժամու Վէմին ա՛ղ գըծեց,—
Սեղանաբա՛ն *) ալ գըծեց,—
Ըսաւ՝ «Այսպէ՛ս պիտի չինուի Ասոր Շէնք...»։
[Վանքը այդպէ՛ս էր խոնարհեր Իրեն Տեղ]։

---

*) Փառաւորուաւ, Փառաւորուեցաւ։ 1) Երգով։ 2) Ե.767 զ՚Հեն Կենդանին. [Հեն = Հայը]։ Այս փոփոխակին մէջ՝ Դաւիթ իր հօրեղբօրն է որ կ՚երդուի վերոյիշեալ երգովը։ Ու կ՚սկսի Ողորմիով, — «Տամ Ողորմին՝ Ջէնով-Օհանին»։ †) Ե.767՝ Խաչ-Պատարագ։ ×) Ե.565՝ խաչեց՝ ուղղել՝ խազեց (գիծ քաշեց)։ +) Կ.12՝ հաշեց (գիծ քաշել)։ *) Սեղանաւոր, Սեղանի տեղ։

Ելաւ ապա՝ իր Նետ ‡) հանե՛ց՝ նըշա՛ն զարկաւ Վանքին Տեղ ×),
Թողուց դարձաւ ու եկաւ. —
Աղօթքան դեռ բացուած չ՚էր: —

439. Դաւիթ՝ Երզով՝ Ե՚ուզէ Ապրցնել Իր Հօրեղբայրը

ՁԿ·453, (ՁՍ·407), Խ·17, Ա·10,11, (Կ·13,53), Կ·52,53, Ձ·՚Կ·13, (Հ·377,420), Հ·27,377, Ե·565,735,765,798,904,508,622,709,1000, 766,710,967,734, (Ե·966), (Ը·97), Ը·98ա·, Ը·97ա·, Ձ·

Դաւիթ ելաւ եկաւ մօտ Իր Հօրեղբայր,
Եկաւ կեցաւ Իր Հօրեղբօր Գըլխուն վրայ +)·
Տեսաւ որ Իր Հօրեղբայր դեռ քընուկ †) է···,
Ուղեց քունէն վե՛ր հանէ Իր Հօրեղբայր, —
Ան ալ — Դաւիթ —, Ձայնը ձըղեց Իր Գըլուխ,
Երգով այս Տա՛ղն ըսաւ Իրեն Հօրեղբօր· —

— «Վե՛ր ելիր, հայրահո՛տ Հօրեղբայր, վե՛ր ելիր·
Հա՛յր չ՚ունիմ՝ ըրէ՛ Ինձի Հայրութիւն:

Հայրահո՛տ Հօրեղբայր, վե՛ր ելիր,
Դու Քու աճուշ Քունէն վե՛ր ելիր·
Ասօր Դու Ինձ համար ըրէ՛ Հայրութիւն:

— Վե՛ր ելիր, հայրահո՛տ Հօրեղբայր, վե՛ր ելիր·
Հա՛յր չ՚ունիմ՝ ըրէ՛ Ինձի Հայրութիւն·
Մա՛յր չ՚ունիմ՝ ըրէ՛ Ինձի Մայրութիւն:

— Վե՛ր ելիր, հայրահո՛տ Հօրեղբայր, վե՛ր ելիր·
Տէ՛ր չ՚ունիմ՝ ըրէ՛ Տիրութիւն *)·
Եղբա՛յր չ՚ունիմ՝ ըրէ Ինձ(ի) Եղբայրութիւն:
— Օրհնեա՛լ բարերար Աստուա՛ծ,
Խըճամբը շա՛տ է Մեծ–թագաւորին §)·
Վե՛ր ելիր, Հօրեղբա՛յր, կայնէ՛, ալ լո՛ւս է···, —
Ելիր տե՛ս՝ այդ Լերան Գլուխն ի՞նչ Բոց է՝ կ՚ելնէ···»: —

---

‡) Ե·735՝ դաճակը, Ե·709՝ խէնջարը: ×) Ե·735,798՝ գերեզմանին տեղը, Ե·798՝ բար մը (*զարկաւ գերեզմանին տեղը*): +) Հ·377՝ ու Քեռուս: †) Հ·97՝ արթնցեր է: *) Տիրութիւն, *Պաշտպանութիւն*: §) Ա·10՝ Աստրծուն:

440. Դաւիթի Ցեսած Երազը Կրկրկճուի

Զ·՝ Ե·508,565,798, Ե·509,508,565, (Ե·798,767), Հ·28,377, (Հ·377), Ա·10, Զ·

Երե՛ք անգամ՝ Դաւիթ երգով որ կանչեց՝
Հօրեղբայրը՝ Ձայնը լսեց, Գլուխ վերցուց մեղմաբար, —
= «Ջընի՛ր, ըսաւ–, Որդի՛, քընի՛ր, գիշե՛ր է··· ·
Ի՞նչ է՝ նորէն՝ տեղը հանդարտ չե՛ս կենար···»:
— «Տնաւե՛ր,–ըսաւ–, ի՞նչպէս հանդարտ կենամ ես···,
Այդքան քունն ալ,–ըսաւ–, ինչի՞ համար է··· ·
Ելիր կայնէ՛, ալ լո՛ւս է···»:
Դաւիթ այնտեղ ա՛լ յոգնած էր, նըստեցա՛ւ,
Ուշքը գընաց՝ ինկաւ Իր տեղ քընացա՛ւ:
Աչքը փակե՛ց՝ չըփակեց, —
Իր քունին մէջ՝ Դաւիթ նորէն ի՞նչ տեսաւ· —
Մարութեայ–Բա՛րձր–Ասպարածնի Հըրաչքն եկաւ Իր երա՛զ ‡)՝
Ըսաւ, — «Դաւի՛թ, այնտեղ ինչ Քու Նետաղեղի Նետ զարկիր՝
Այնտեղ Սո՛ւրբ է· ժա՛մ չինես···: —
Քառասուն Խորա՛ն ձըղտես մէջ·
Ամեն Խորան՝ մէկ Վարդապե՛տ, մէկ Երէ՛ց,
Մէկ Սարկաւա՛գ կեցընես: —
Քառասուն Խորան՝ քառասուն–քառասուն որ կայնին՝
Դեռ չըլուսցած՝ ընեն Քառա՛սն Պատարա՛գ՝
Հիմ՝ վեր՝ Հիման կըղադրի՛··· · —
Թէ չէ՝ քա՛նի որ չինեն՝
Շէնքը կ՝աւրի՝ կըփըլի՛···»:
Թէ հարցնե՛ս ալ···՝
Մէ՛կ գիշերուան մէ՛ջ պէտք է որ աւարտի···, —
Հի՛նգ հարիւրով ու հազարով՝ Քար–Կըտրո՛ղ,
Հի՛նգ հարիւրով ու հազարով՝ Կաւ–Ըրո՛ղ,
Հի՛նգ հարիւրով ու հազարով՝ Ամե՛ն Տան
Պէտքն ու պիտոյք ցո՛յց կուտաս, —
Որ ապա՛ Թէ այդ Քու ժամը՝ գիշերուան մ՛ մէջ աւարտի···»: —

---

‡) Ե·767՝ Կորեկարտի Պառա՛ն է այն խորհուրդները տուողը:

441. Դաւիթ Նորէն Երգով Կ'ուզէ Վեր Հանել Հօրեղբայրը

Հ.՝ Ե.565,509, Ե.565,622,904,508,566,509, (Ե.904), Ց.98ա., Կ.13.

Դաւիթ քունէն վե՛ր թըռաւ,
Նայեց տեսաւ դեռ Հօրեղբայր քընո՛ւմ է. —
*Ան ալ այնտեղ՝ հե՛տ *) լացաւ ու հե՛տ Ման՛ղ *) ըսաւ՝ ու կանչեց. —*
— «Վե՛ր ելիր, հայրահո՛տ Հօրեղբա՛յր, վե՛ր ելիր...,
Ասօր ես երազ մ'եմ տեսեր..., —
Մէջ երազի՛ն եմ զահահուրեր *)...:
— «Վե՛ր ելիր, հայրահո՛տ Հօրեղբա՛յր, վե՛ր ելիր...,
Հա՛յր չ'ունիմ՝ ըրէ՛ Ինձի Հայրութիւն... .
Ասօր ես երա՛զ մ'եմ տեսեր..., —
Մէջ երազի՛ն եմ զահահուրեր...»:
[Ըսա՛ւ թէ՝ «ես դացեր եմ»,
Ըսաւ՝ «երա՛զ եմ տեսեր»...:]
Ջէնով–Օհան՝ Ձայնը լսե՛ց՝ արթընցա՛ւ ու նըստեցա՛ւ,
Ըսաւ, = «Դաւի՛թ, մատա՛ղ է Քեզ Հօրեղբայր(դ),
Ան ի՞նչ երազ ես տեսեր..., Որդի՛,
Պատմէ՛, Քու երա՛զդ 'ի բարին...»:
Դաւիթ նորէ՛ն ըսաւ. — ‡)
— «Հայրահո՛տ Հօրեղբայր, վե՛ր ելիր,
Քո ամո՛ւշ ըունէն վե՛ր ելիր.
Հա՛յր չ'ունիմ՝ ելի՛ր ըրէ Հայրութիւն»:
Հօրեղբայրը՝ Ջէնով–Օհան ալ ըսաւ. —
= «Մատա՛ղ է Քեզ Հօրեղբայր(դ),
Ապա՝ ես Հա՛յր եմ Քեզի. —
Պատմէ՛ Ինձի Քու երազ(դ)...» : —

442. Դաւիթ՝ Երազի Ձևին Տակ Կ'պատմէ Իր Տեսածը

Ե.566,904,967,509,622,766,710,735,734, Հ.՝ Ե.566,509,904,798, 734,766, (Ե.1000,735,), Հ.420,28,377, (Հ.420), Հ.՝ Հ.27, Կ.53, 13, Ա.10,11, Ց.97ա., Ց.98ա., Խ.17.

Դաւիթ այնտեղ երգով ըսաւ՝ ու կանչեց. — ×)

---

*) Հե՛տ... հե՛տ, Թէ՛... Թէ՛: *) Խազ, Երգ: *) Զահահուրիլ (զ'ահի հարիլ), Զարհուրիլ: ‡) Երգով: × Երգով:

— «Հայրահո՛տ Հօրեղբայր, վե՛ր եկիր, հայրահո՛տ Հօրեղբայր·
Օրհնեա՛լ բարերար Աստուա՛ծ, խըճամբը շա՛տ է Մեծ–Թագաւորին·
Ես ֆուճ մը ֆըճեր եմ, երա՛զ մ' եմ տեսեր··· ·
Երազիս մէջ՝ ես բա՛ճ մ' եմ տեսեր···, —
Մարմար–ֆա՛րճ է բացուեր՝ Լուս–կամա՛ր կապեր ‡) մէջ Տովասարին:

— Հայրահո՛տ Հօրեղբայր, վե՛ր եկիր, հայրահո՛տ Հօրեղբայր·
Հա՛յր չ'ունիմ՝ ըրէ՛ ինձի Հայրութիւն,
Մա՛յր չ'ունիմ՝ ըրէ՛ ինձի Մայրութիւն··· .—
Մարմար–ֆա՛րճ է բեկուեր *)՝ կանաչ–կարմիր Լո՛ւսճ է կանգներ՝
[վեր՝ Մարմար–ֆարիճ:

— Հայրահո՛տ Հօրեղբայր, վե՛ր եկիր, հայրահո՛տ Հօրեղբայր·
Հա՛յր չ'ունիմ՝ եկի՛ր ըրէ Հայրութիւն· —
Մարութայ–Բարձր–Ասպարածնի Հըրա՛շքն եմ տեսեր··· · —
Երե՛ք անգամ իր Նըշա՛ճը համբուրեր ու եկեր եմ··· ·
Վաճի՛ն Հի՛մը՝ չորս–բոլոր բացեր եմ···:
Վե՛ր եկիր, Հօրեղբայր, մէկ վե՛ր եկիր···, —
Լուսցա՛ւ՝ Այն կըրակ դեռ հոն կըվառի···,
Վե՛ր եկիր՝ ես շա՛ճ տամ Քեզի··· · —
Տե՛ս, այն կանաչ–կարմիր Բոցն ի՞նչ է՝
Կ'ելնէ՛ ու կ'իջնէ՛···, —
Իրիկուն՛ է՛ ի վեր՝ ճըրագի՛ պէս կ'վառի··· ·
Հօրեղբա՛յր, կ'խնդրե՛մ ես Քեզմէ՝
Ըսէ՛, Այն Սարի–Գլուխ՝ ո՞վ է կրա՛կ կ'ըլնէ···»: —

448. Զէնով–Օհանի Ու Դաւիթի Տրամախօսութիւնը

Զ(ե·734,735,564,508,710), ե·734,710,735,709, Զ·՝ե·710,709, Հ·420, Զ(Հ·420), Զ·՝Հ·420, ԶՍ·411·

*Հօրեղբայրը գիտէ՛ թէ Ան Իր *) Հա՛յրն է···,*
Իր †) Գերեզմա՛նն է···, —
Լոյս՝ մէջէն կ'ելնէ՛···, —
Ջո՛ւղեր որ Դաւիթն երթայ՝ նայի Գերեզման,
Ծօսքը չըրջե՛ց այնտեղ, վերցուց ըսա՛ւ Դաւիթին· —

‡) ե·766՝ կաքեր: *) Բեկուիլ, ձեղքուիլ, պատռիլ, բացուիլ: *) Իր, Անոր (Դաւիթ): †) Անոր (Դաւիթ Հօր):

— «Քե՛ղ մեռնիմ, Դաւի՛թ, չէ՞ որ ան Մա՛րդ է··· ·
Հովի՛ւ կայ, Հի՛ւղ կայ, Որսորդ ու Մա՛րդ կայ···, —
Անոնց կրա՛կն է կ՚վառի···»:
Եւ Ինքիրեն ի՞նչ ըսաւ· —
«Ասիկ,–ըսաւ–, չա՛տ խաղ խաղաց Մեր Գըլխո՛ւն···:
Որ Մըտրայ–Մէլիք վաղն ասոնք լըսէ՛···՝
Ալ Մեզ ազատում չըկա՛յ Իր Ձեռքէն···:
Աս մէ՛կ Տըղայ է···,
Մըտրայ–Մէլիք՝ վաղ՝ որ եկաւ *) Մեր վըրան՝
Անոր Զօրքին դէմը՝ մինակ՝ ի՞նչ պիտի (ը)նէ մէ՛կ Տըղան···, —
Մենք հո՛ *) չենք կըրնար կըռուիլ Անոնց դէմ···»:
Դի՛ր մ՚ալ Դաւիթ նայեց՝ այդ Գերեզմանի՛ դէհ, —
= «Ջէ՛,–ըսաւ–, չէ՛, Հօրա՛ր, ես հո կըռեանե՛մ···, —
Հովիւ, Որսորդի, Տունի կրակ չէ՛ ան·
Մարդու–Կըրակի նըմո՛ւշ է՛ Այն կրակ···, —
Մէկ ուրի՛շ Լոյս է՝ ինչ ես կըռեանամ···»:
— «Որդի՛,–ըսաւ Օհան–,
Ո՞վ դիտէ՝ Գուբա՞ն 1) է՝ թէ՞ կարւանկորուս 1)···,
Վար–Ընո՞ղը 1)՝ թէ՞ Ջըրկալն 1) ու Կոյս 1)···»:
Ըսաւ, = «Մէ Գուբա՛ն է, ոչ կարւանկորուս·
Ոչ Վար–Ընո՛ղն է, ոչ Ջըրկալն ու Կոյս···, —
Ջաանո՛ւ՝ թէ մօտէ՛ն եմ տեսեր՝
Իմ Հօր Բանձրի՛կ Վանքի Լոյս···»: —

444. Դաւիթ՝ Լոյսին Իջած Ցեղը Կ՚փորէ, Հօրեղբայրը Կ՚ելնէ Գովք Կ՚ուզայ

ՁԿ·453,454,455,456, Զ·՝ՁԿ·455, Ե·1000,798,709, (Ե·1000,709), (Կ·13), Կ·13, (Ա·10), Ա·10, Ց·97, Հ·420·

Դաւիթն ալ հոն մի՛տք ըրաւ՝
«Ծո՛ ատիկ ես ի՞նչ ըրի···, —
Կըրնայ ըլլալ՝ լուսուն Մէ՛կը կ՚երթայ հոն՝
Այն Ֆարեըը կըվերցընէ՝ ուրիշ տե՛ղ մը կըղընէ· —

---

*) Որ եկաւ, եթէ գայ, երբոր գալու ըլլայ: *) Հօ, Արդէն, չէ՞ որ, պարզ է որ···: 1) Համաստեղութեան անուն են:

Երթամ Տէ՛ր վտրեմ ես…»։
Ելաւ առաւ իր Պողվատէ հաստ կոճանը՝ ու դընա՛ց·
Գընաց նորէն՝ Սարի այն բա՛րձր Լուսո՛ա–Տեղ,
Առաւ փորե՛լ չուրջ–բոլորն,
Ցամեցա՛ւ…, —
Ա՛յնքան՝ մինչեւ Հօրեղբայրը արթընցաւ,
Ելաւ նայեց՝ ու տեսաւ որ՝ Դաւիթ չկա՛յ որ չկա՛յ…։
«Զարմա՛նք,–ըսաւ–, ես իր Քրղանց իմ տա՛կ դրրի պառկեցայ…,
Անիկ ի՞նչպէս վեր ելեր է՝ ու գացեր…՝
ես իմ տեղը չե՛մ ալ երթիք իմացեր…»։
Տեսաւ որ ի՞նչ…, — Քրղանց կըտրուվ՝ Իր տա՛կն է…,
Դաւիթ ելեր՝ ու գացե՛ր…։ —
Ելաւ դընաց եռեւէն, —
Ըսաւ՝ «Երթամ՝ Դաւիթ գըտնե՛մ ուր որ է,
Եւ իմ եղբօր ‡) վանքին ալ մէկ ա՛չք մը տամ…» ×)։ —
Գընաց տեսաւ՝ Դաւիթ Հօրը առեր Ձի՛ո(ք),
Այնտեղ Գետի՛ն կըփորէ…։
Ըսաւ, — «Դաւի՛թ, Գըլխուդ մեռնի՛մ Արեւո՛ւդ…,
Աւ՝ դիչերով՝ ի՞նչ կ՚ընես Դուն, ելեր այստե՛ղ ես եկեր…,
Կըշարչարուիս, այդտեղ Գետի՛ն կըփորես… ·
Ծօ, Ծո՛ւռ–Դաւիթ, ինչո՞ւ համար կըտրեցիր Քու Քրղանցդ՝ներ…»։
Ու տեսաւ որ՝ Լուս–Կամարը վանքին վըրա՛յ է կապեր,
Կըթարճրանա՛յ ու կ՚իջնայ· —
*Դաւիթն ալ այդ Լուսաւ ձեւով՝ Ե՛ռ *) է քաշեր չուրջ բոլոր,*
Յորան–խորան՝ վանքին Հի՛մը կըթանայ…։

445. Դաւիթ՝ Հօրը Դամբանին Վրայ Կ՚ասցի Հօրեղբայրը

Ե·904,735,710,766,508,967,565,622,509, (Ե·623,566,904), Զ·՝Ե·904,710,622, Ը·97,98ա·,97ա·, ԶԿ·462, (ԶԿ·458–461), Հ·27, (Հ·420), Զ·՝Հ·420, Խ·17, Զ·՝Կ·53, Կ·53, Ա·10,11,Զ·

Դաւիթ առաւ Իր Հօրեղբայր՝ բերաւ վեր՝ Հօր Դամբանին,

‡) Զէնով–Օհան՝ Դաւիթի հօր եղբայրը չէր, բայց անոր տարեկից ըլլալով՝ [Տե՛ս Հատ· 239 եւ 240] Դաւիթի համար հօրը տեղն է, հօր–եղբայր կոչուեր է, եւ հոս ալ — պատմողին բերնովը — եղբայր կոչուած է Դաւիթ–Մըհէրին (Թլոլ–Դաւիթի հօրը)։ ×) Ե·709՝ պակասաւոր է հատուածը։ *) Ե՛ռ, Գիծ։

Գևրեղմանը իր Հօրեղբօր ցո՛յց տըւաւ,
Ըսաւ,— «Հօքա՛ր, դէ՛, իրիշկա՛, կըտեսնե՞ս այդ կանաչ-Լոյս...,
Եւ Այս Քարը՝ որ հո՛դ է...,—
Ըսէ՛ ինձի, Ան ի՞նչ է...»։
Ու բարկացած՝ ի՞նչ ըսաւ.—
Ես Աստուծմէ չըվախնայի՛ այս պահուս...՝
Ախո՛վ պիտի զարնէի՛ ես՝ ակամա՛յ...՝
Քու վիզ Քըռէր ու երթար...։—
Այնտեղ ինչ Դուն տեսար որ ես փոքա՛ծ եմ՝
Այնտեղ Սո՛ւրբ է, Հօ՛րեղբայր...
Այստեղ ես ժա՛մ պիտի չինեմ իմ Հօր պէս»։
Ապա վերցուց՝ երդով ըսա՛ւ Օհաննէս.— †)

— «Հայրահո՛ս Հօրեղբայր, իմ հայրահո՛ս Հօրեղբայր,
Հա՛յր չ'ունիմ՝ ըրէ՛ ինձի Հայրութիւն.
Մա՛յր չ'ունիմ՝ ըրէ՛ ինձի Մայրութիւն.
Տէ՛ր չ'ունիմ՝ եւ ըրէ՛ ինձ Տիրութիւն։

Մարմար-Քա՛րճ է բացուեր,
Լուս-Կանա՛րը վրան է կանգներ.
Ես իմ Ոտո՛վն եմ եկեր...
Իմ Ձեռո՛վը Դուռ բացեր...
Ես իմ Աչո՛վն եմ տեսեր...,—
Դուն ինձ ինչո՞ւ խա՛բըս կուտաս, Հօ՛րեղբայր,
Այս Լուսու-Տեղն՝ իմ Հօր Վանքն է՝ չէ՛ս ըսեր...»։—

446. Հօրեղբայրը Գոհացում կուտայ, Դաւիթ Իր Ուխտը Կըկրկնէ

Ջ.՝Հ.420, Հ.420, Կ.13. *ե*.798,566,623,904,821,735,822,710,966,967, 711,1000, (*ե*.798,735,100ՈՈ,711,), Ջ.՝*ե*.735,904,966,967. Ջ(*Ե*·18), *Ե*.18, Ջ·

Հօրեղբայրը՝ ա՛լ հասկըցաւ որ Դաւիթը տեղեա՛կ է...,—
*Մըտքո՞վ ըսաւ՝ «ես Այս Տըղի խօրհուրդ *) պէտք է կատարեմ»։*
Դարձաւ Դաւիթին՝
Պատմեց Իրեն, ըսաւ, — «Որդի՛, մատա՛ղ է Քեզ Հօրեղբայրդ,

†) *Երդով*։ *) *Խորհուրդ, Մըտքիը, մտադրութիւն*։

Ատ Սարի-Հովիւ կըրակ ու Բոց չ'է՛…, —
Անի՝ Քու Հօր Մարութայ-Բարձր-Ասպարածնի ‡) Հըրաշքն է·
Քու Հօր Վանքն է՝ որ Ի՛նք չինել տըւեր է·
Անի Քու Հօր Գերեզմանն է, ա՛յ Որդի,
Սասմանց-Տունի «Դաւիթ-Մըհէր» որ կ'ըսեն՝
Քու Հա՛յրն է…:
Որդի՛,-ըսաւ-, ինչ Քու Հայրը մեռեր է ×)՝
Մըսրայ-Մէլիք եկեր զարկեր՝ ամեն քանդեր տարեր է… ·
Անոր ահէն՝ ա՛լ չենք կրընար որ չինենք…:
Վանքին մէջը կայինՔառասուն Վարդապետ·
Քառասուն Երէց ու Քառասուն ալ Մարկաւագ· —
Մըսրայ-Մէլիք՝ այդ ամենն ալ ըսպանե՛ց,
Վանք կողոպտեց, առաւ տարա՛ւ ամեն բան…,
Անոր Տեղը՝ Լո՛յս կ'ելնէ…»:
Դաւիթ այնտեղ դիժա՛րն եկաւ, Զայնով ըսաւ Հօրեղբօր· — §)

— Տօ Հօ՛րեղբայր, մեռնի՛մ Քեզի, Հօ՛րեղբայր,
Աստուած կուտա՛յ Արեւէս *)՝
Դէ՛մ կըկայնիմ այդ ամօրէ՛ն Մէլիքին,
Կըկորուսե՛մ՝ թէչպէս օրը երէկին…»:

Քո՛ւն եմ բըներ՝ Ես երա՛զ մը տեսեր եմ· —
Աստըծու հետ Ո՛ւխտ եմ ըրեր հաստատուն՝
Աստըծու-Ուխտ վըրա՛ս ըլլայ, Հօրեղբայր՝
Պիտի շինե՛մ Խաչ-Մարութայ-Ասպարածի՛ն-Բարձըր-Վանք· —
Քառասուն-Խորա՛ն ձըգեմ մէջ,
Ամեն *) Խորան՝ մէկ Վարդապե՛տ դըներմ մէջ·
Ամեն Խորան՝ մէկ Երէցի՛կ դըներմ մէջ·
Ամեն Խորան՝ մէկ Սարկաւա՛գ դըներմ մէջ·
Ուրբաթ օրը Հի՛մ ձըգեմ,
Շաբաթ օրը աւարտեմ +),

---

‡) «Սասունի կողմերը՝ համանուն (Մարաթուկ) Լերան վրայ», ըստ պատմող Զատիկին՝ Ի· 18ա·: ×) Քու Հօր մեռնելէն ի վեր: §) Երգով: *) Արեւ, կեանք, ողջութիւն: *) Ամեն, Ամեն մէկ, իւրաքանչիւր: +) Ե·711՝ Շաբաթ օր՝ անբիծ [անբիծ = հոգեճաշ]:

Լուս–կիրակիի՝ մէջ Պատարա՛գ մատուցեմ,
Մաս–Սըրբութի՛ւն առնեմ մէջ... . —
Թէ չըշինեմ՝ ես իմ Ուխտով կըմեռնիմ...»: —

447. Դաւիթ՝ վարպետնե՛ր կ'ուզէ վաճխին Շինութեան Համար

Ե·766,622,623,735,967,566,509,710,798,904, (Ե·623), Զ(Կ·53,

13ա·), ՉՍ·407, Հ·28,377, Զ·՝Հ·377,28, Զ(Հ·420), Զ·

*Չէնով–Օհան՝ ըսաւ, — «Դաւի՛թ, Հօրա՛ր մեռնի՞ս թերէն *),*
Ըսէ՛, ինչի՞ պէտք է...»:
Դաւիթ նորէն երդով ըսա՛ւ Հօրեղբօր· — ‡)

= «Հայրապետո՛ւ Հօրեղբայր, հայրապետո՛ւ Հօրեղբայր,
Ինծի կ'ուզեմ՝ վարպետ, Սարակ ու Բանւոր,
Որ Իմ Հօր վաճխ ես շինեմ...»:

Չէնով–Օհան դիտէ՛ր «Դաւիթի խօսք մէ՛կ էր·
Մէկը՝ երկու չէ՛ր ըներ...», —
Ապա՝ Օհան՝ Անոր խօսքին կըլըսէ՛ր· —
Ըսաւ, — «Որդի՛, համբերէ՛...,
Ես Սասմանց–Տան Չէնով–Օհա՛նն եմ,–ըսաւ–,
Մի՛ վախնար..., —
Քառասուն աւուր ճամբա՛յ կ'երթայ Իմ գոռ Զայն..., —
Ես կըվանչեմ՝ եօ՛թ–Գաւառէ, եօ՛թ–Աշխարհէ կըժողվե՛մ,
Հարիւրներով՝ վարպետ, Սարակ՝ կըջոկե՛մ ու կըբերեմ,
Կ'աշխատցընեմ՝ վանքը նորէ՛ն կըշինեմ...:
Հոգ չէ՛ թէ ծախք չա՛տ կ'ուզէ...՝
Սասմայ–Գանձը, Դաւի՛թ,–ըսաւ–, Քու առջեւը պատրա՛ստ է· —
Դու Քո Ոտքո՛վն ես գացեր...,
Քու Ձեռքո՛վը Դուռ բացեր...,
Դու Քո Աչքո՛վն ես տեսեր... ×)· —
Ոսկին, Արծաթ՝ Մենք բերե՛նք՝
Մարուքայ–Բա՛րձր–Աստպարածին չէնցընե՛նք...»:

---

*) Թերէն, *փոխան*, *փոխարէն*: ‡) *Երդով*: ×) *Ակնարկութիւն՝ Քառասուն–Գողերու Այրէն՝ Դաւիթի բերած անբաւ գանձերուն. Տե՛ս Հատ· 405–407:*

*Դաւիթ՝ այնտեղ՝ խաղով *) ըսա՛ւ Օհանին· — +)*

= «Է՛ Հօրեղբայր, մեռնի՛մ ինչի Հօրեղբայր,
Քենէ կ՚ուզեմ՝ Հարի՛ւր վարպետ՝ Քա՛ր-Տաշող···,
— Որ կ՚ուզե՛մ···:
Քենէ կ՚ուզեմ՝ Հարի՛ւր վարպետ՝ Փա՛յտ-Տաշող···,
— Որ կ՚ուզե՛մ···:
Քենէ կ՚ուզեմ՝ Հարի՛ւր վարպետ՝ Քա՛ր-Շարող···,
— Որ կ՚ուզե՛մ···:
Քենէ կ՚ուզեմ՝ Հարի՛ւր վարպետ՝ Պա՛տ-Շարող···,
— Որ կ՚ուզե՛մ···:
Քենէ կ՚ուզեմ՝ Հարի՛ւր վարպետ՝ Տե՛ր-Ընող···,
— Որ կ՚ուզե՛մ···, —
Որ Իմ Հօր Վանք՝ Մարութ-այ-Բա՛րձր-Աստպարածին՝ ես շինեմ···,
— Որ շինե՛մ···»:

*— «Որդի՛,–ըսաւ Զէնով-Օհան՝ Դաւիթին· —
Մատա՛ղ է Քեզ Հօրեղբայր···,
Այդ Վանքն ի՞նչպէս պիտի չինես, գիտե՞ս Դուն···»:*
= «Ի՞նչպէս,–ըսաւ–, Հօ՛րեղբայր···»:
*— «Այդ Վանքն,–ըսաւ–, ուրբաթ պիտի Հի՛մ ձըգես,
Շաբաթ օրը աւարտե՛ս,
կիրակի՝ մէջ՝ պատարա՛գը մատուցես,—
Ապա այդ Վանք կըչինուի՛ ‡)»:*
Դաւիթն ալ թէ, = «Ամեն ա՛յդ·՛·՛·՛»:
— «Հա՛)···»,–ըսաւ: —*

448. Դաւիթ Բանտարկե՛ր կ՚ուզէ Վանքին Շինութեան Համար

Զ(կ·13,53), կ·53,13, Զ·՝ն·509, 508,766,904, ն·766,566, 623,767, 798,710,735,508,509,799,904, (ն·566,767,1000,799), Զ·, Հ·28, Զ(Հ·28), (Հ·28), Ա·11, (Ա·11), ԶՍ·407, ճ·98·

Դաւիթ նորէն Զայնը ձըգեց՝ ու ըսաւ· — ×)

— «Հայրահո՛տ Հօրեղբայր, հայրահո՛տ Հօրեղբայր,

*) Խազ, Երգ: +) Երգով: ‡) Շո՛ւտ պէտք էր չինուէր՝ քա՛նի Մըսրամէլիքին լուր դացած չէր· Թէ ոչ՝ կըղըրկէր՝ քակել կուտար:
*) Հա՛, Ահա՛ այդ է ամենը: ×) Երգով:

Մեռնի՛մ Քեզի, Հօրեղբա՛յր,
Ինչի՞ս պէտք եմ այդ խօսքեր…, —
Ինձի համար Քենէ պէտք է՝ շո՛ւտէշուտ *)՝
Քանի՛ հարիւր՝ համա՛ր–հազար *)՝ Քա՛ր–կըտրող…,
Քանի՛ հարիւր՝ համա՛ր–հազար՝ Քա՛ր–կըրող…,
Քանի՛ հարիւր՝ համա՛ր–հազար՝ Քա՛ր–Տըւող…,
Քանի՛ հարիւր՝ համա՛ր–հազար՝ Հո՛ղ–Մաղող…,
Քանի՛ հարիւր՝ համա՛ր–հազար՝ Ջո՛ւր–Կըրող…,
Քանի՛ հարիւր՝ համա՛ր–հազար՝ Կա՛ւ–Ըճող…,
Քանի՛ հարիւր՝ համա՛ր–հազար՝ Կա՛ւ–Կըրող…,
Քանի՛ հարիւր՝ համա՛ր–հազար՝ Կա՛ւ–Տըւող…,
Քանի՛ հարիւր՝ համա՛ր–հազար՝ Խի՛ճ–Քերող…,
Քանի՛ հարիւր՝ համա՛ր–հազար՝ Խի՛ճ–Տըւող…,
Քանի՛ հարիւր՝ համա՛ր–հազար՝ Փա՛յտ–Կըրող…,
Քանի՛ հարիւր՝ համա՛ր–հազար՝ Փա՛յտ–Տըւող:
Է՛ Հօրեղբա՛յր, Իմ հայրահո՛տ Հօրեղբա՛յր,
Ինձի համար՝ ճարէ՛ այսման ‡) Բանւո՛ր, Սարակ ու վարպետ,
— Որ քերի՛ս…՝
Ձեռ ձրգեմ ու վաճէը շինե՛մ՝ Դուն ու ես… . —
Ուրբաթ օրը Հի՛մ փորեմ 1)
Շարաթ օրը գո՛ւխ քերեմ,
Պատեմ *)՝ իրկուն աւարտե՛մ,
Զանգակները՝ կախեմ մէ՛ջ,
Լուս–Կիրակի՝ Մաս–Պատարա՛գ մատուցեմ,
Օրէ՛մ առնեմ՝ երթամ Մեր Տեղ †)՝ ու ճըստի՛մ.
Ուրբաթէ՛ն Շարաթ՝
Կայնի՛ Իմ Հօր վաճէ…»:

Դարձաւ՝ ասպա՝ նորէն ըսա՛ւ Հօրեղբօր· — §)

— «Հայրահո՛տ Հօրեղբայր, մեռնի՛մ Քեզի, Հօրեղբա՛յր,

*) Շուտէշուտ, *փութով*: *) Քանի՛ հարիւր՝ համար–հազար, *Հարիւրով ու հազարով…*: ‡) *ՁՍ* ·407՝ բառարան: 1) *Կ* ·53՝ խըմփուրքեմ՝ *ուղղել՝* խիմ փորեմ (*ճշդուած նաև Ե* ·504–505): *) Պատել, *Պատեր չինել՝ կանգնեցնել, որմափակել*: †) *Ա* ·11՝ «*երթանք մէջտեղ նըստինք*» *ուղղելի՝* «մեր տեղ»: §) *Երգով*:

Որ Հա՛յր չունիմ՝ ընե՛ս Ինձի Հայրութիւն,
Որ Տէ՛ր չունիմ՝ ընե՛ս Ինձի Տիրութիւն…»: —

449. Դաւիթ՝ Վարդապետ, Երէց Ու Սարկաւագ Կ'ուզէ Վանիին Համար

Ե·767,623,768,710,735,799,711,736,904,905, Զ·՝Ե·767,768,904,905, (Ե·736), Զ·, Կ·54,13, Ճ·98, (Ճ·98), ՁՍ·410, (ՁՍ·410)·

Օհանն ըսաւ, — «Հօրա՛ր մեռնի Քո թերէ՛ն…,
Ըսէ՛ Քեզի ի՞նչ պէտք է…»:
Դաւիթն ալ թէ, — երդելով —,

= «Հայրաւո՛տ Հօրեղբայր, Իմ հայրաւո՛տ Հօրեղբայր,
Քենէ կ'ուզե՛մ որ կ'ուզեմ՝ կ'ուզեմ Քառսուն ‡) Վարդապե՛տ·
Քենէ կ'ուզե՛մ որ կ'ուզեմ՝ կ'ուզեմ Քառսուն ալ Երէ՛ց §)·
Քենէ կ'ուզե՛մ որ կ'ուզեմ՝ կ'ուզեմ Քառսուն Սարկաւա՛գ 1)·
Քենէ կ'ուզե՛մ որ կ'ուզեմ՝ կ'ուզեմ Քառսուն Փոքրաւո՛ր 2)·
Որ ուղարկես՝ շուտո՛վ գաւ·
Տանիմ դրնեմ՝ Մարուք-այ–Բա՛րձր–Ասպարածին–վանիին մէ՛ջ,
Սուրբ եւ անմահ Պատարագը մէջ ընեն…:

Աւօր,–ըսաւ–, Հինգշաբթի՛ ×) է, Հօ՛րեղբայր,
*Դու՝ ձէնահա՛ս *) կանչես բերե՛ս այդ Մարդիկ,*
Ուրբաթ օր դա՛ն Վարպետները,
Իմ Վանք չինեն ու աւարտե՛ն չաբաթ օր,
Կիրակի մէջ Պատարա՛գը մատուցեն,
Օծեն ու Ձիս ընեն երկրին Թագաւոր…»: —

450. Ձէնով Օհան՝ Դաւիթին Կ'ըսէ՝ «Դու Շինէ՛, Սամայ-Դանձը Քու Առջեւ Բա՛ց Է»

Ե·509,566,967, Զ·՝Ե·566,509,967, (Ե·905), Զ·՝Հ·377, Հ·377· Զ·, Կ·13,53,54, Զ·՝Կ·13,53·

Ձէնով–Օհան՝ ըսաւ, — «Որդի՛, Հօրա՛ր մատաղ է Քեզի…,

‡) *Ե·735՝* հարիւր, *Ե·623՝* հօր: §) *Ե·768,799, Ճ·98, Կ·54՝* տէր–տէր: 1) *Ե·799, ՁՍ·410՝* տիրացու, *Ե·768՝* փոքր սարկաւագ, *Ե·623՝* Աւագ սարկաւագ: 2) *Ե·768՝* փոքր սարկաւագ: ×) *Ա·11՝* ուրբաթ: *) Ձէնահաս, *Ձայնը հասնելո՛ւ չափ մեծ (կանչել, պօռալ), որչափ տեղ որ Ձայնը հասնի: Կամ՝* Ձայնը հասցնող փողով (*կանչես*), *Հմմտ·՝* Փող–Պղղոտիին, *եւ* Olifant *՝ Ֆր· Թօլանի երգին:*

Դու չինէ՛ . . . , —
Սասայ-Դաւնձը բա՛ց պատրա՛ստ է Դու առաջ . . . ։
Ես՝ Սասանց-Տան Զէնով-Օհա՛նն եմ,-ըսաւ-,
Մի՛ վախնար *) . . . ,
Քառասո՛ւն աւուր ճամբա՛յ կ՛երթայ իմ գոռ Ձայն ,=
Ես կըկանչեմ՝ Եօ՛թ-Դաւառէ , Եօ՛թ-Աշխարհէ կըժողվեմ ,
Հարիւրներով՝ Վարպետ , Սարակ ու Բանւոր՝
Կըջոկե՛մ ու կըբերե՛մ ,
Կ՛աշխատացընե՛մ ,
Վանքը Նորէ՛ն կըշինեմ . . . ։—
Ուրբաթ օրը Հի՛մ ձըգեմ ,
Վանքը չինե՛մ ու աւարտե՛մ չաբա՛թ օր ,—
Քառասուն-Եօթա՛ն ձըգեմ մէջ ,
Քառասուն-քառասուն Վարդապետո՛վ , Սարկաւագո՛վ , Երէցո՛վ ,
Լուս-Կիրակի՛ մէջ Պատարա՛գ մատուցեմ ,
Դուն Սըրբութի՛ւն առնես մէջ ,
Ես Քո Ո՛ւխտը կատարեմ ,
Օծեմ ու Քեզ ընեմ երկրին Թագաւոր . . . ։
Հիմա Դու ե՛լ՝ եօ՛թ †) հատ Վէրի-Ե՛ղ զարկ առնենք ու տանինք ,
Երթանք Քաղաք , պատի՛ւ ընենք Քաղքցոց ,
Այն ժամանակ՝ Վարպետնե՛րն ալ , Վարդապետներն՝ ամե՛նն ալ՝
Կըժողովուին , Վանք կըշինուի , կըկանգնի ,—
Դուն ալ Սըրտիդ փափաքներուն կըհասնիս» ։
Դաւիթ ելաւ ինկաւ Սարեր ու Ձորեր ,
Գըտաւեցաւ, զարկաւ եօթ հատ Վէրի-Եղ ։—
Զէնով-Օհան ըսաւ , — «Դաւի՛թ , հիմա ելիր երթանք Տո՛ւն ,
Վարպետ , Սարա՛կ ճարենք Մեզ» ։
= «Զէ՛ , Հօրեղբա՛յր,-ըսաւ Դաւիթ՝ Օհանին-,
Ես Տուն չե՛մ գար . ալիսի երթամ Մարմար-Քարի մօ՛տ կենամ ։
Դու չուտ գընա՛՝ Վարպետ , Սարա՛կ ղըրկէ Ինձ ,
Դուն ալ արի Իրենց հետ» ։—
Դաւիթ Ինքը՝ այն գիշեր՝
Կեցաւ Սարը , ծամուն մէջ . . . ։—

---

*) Մի՛ վախնար, հոգ մի՛ ըներ ։ †) Կ.13՝ վեց:

451. ՋԷՆով-Օհան կրկանչէ՝ Վարպետ Ու Սարակ Կ'ժողվէ

Կ.53,54,13, Զ.Կ.13,Զ(Կ.119), (Ա.18), Ա.18, Ը.98, (Ը.98), Ե.1000,766, 566,967,905,567,735,799,509,767, (Ե.1000,768,711), Զ.Ե.1000,905, (Հ.420,28), Հ.28,377, Ա.11, ՁԿ.463, ՁՍ.409.

Օհան եկա՛ւ այնտեղէն,
Շալկեցին այդ վէրի-եղներ՝ առին եկան Քաղքի մէջ,
*Պատի՛ւ *) տըւին Քաղքըցոց։—*
Ինքն ալ դարձաւ դընաց Տո՛ւն։
Լուսուն՝ եկա՛ւ Ջէնով-Օհան՝ իՙնչ ըրաւ.—
Կանչե՛ց ամուր Իրեն Զայնով՝ Եօթը-Դաւառ, Եօթ-Աչխարհ,—
*Թո՛ւղթ մ' ալ գըրեց՝ ղրկեց Գեղրանք *)՝ ու ըսաւ.՝—*
*— «Ով ինչ *) Աստուա՛ծ կըսիրէ՝*
Թող եկնէ գա՛յ իր կամով.—
Սասմայ-Ձըրագ վառուե՛ր է...,
Մարութայ-Բա՛րձր-Աւազարածին պիտի չինենք Ամենքովս.
Եկէք չինե՛նք ըշտապով...։
Ով գայ բանի՛ վանքին վրայ՝
*Մէյմէկ Ոսկի՝ օրակա՛ն *) է Վարպետին,*
Մէյմէկ Արծաթ՝ օրակա՛ն է Սարակին։
-Ըսաւ-՝ որքան Վարպե՛տ կան՝
Ուրբաթ օրը կանուխ գան,
Վանքը չինեն՝ լըրացընեն Շաբաթ օր,
Լուս-Կիրակի՝ մէջ Պատարա՛գ մատուցեն,
Դաւիթ օծեն՝ ընեն երկրին Թագաւոր»։
Ջէնով-Օհան որ պօռաց՝
*Անոր Զայնը՝ չուր *) Եօ՛թ Քաղաք լըսեցին.—*
Եօ՛թ Քաղաքի Վարպետներն ու Բանուորները, ամե՛ն Մարդ՝
Ելան եկան Դաւթի Տուն †)։—
Հաղա՛ր-Հազար Վարպետ, Սարակ ու Ժողովո՛ւրդ Թափեցան,
Սասմայ-Մըռեր՝ ամե՛ն եկան ժողվեցան.—
Եւ իրա՛ւ ալ՝ Դաւի՛թ ինչպէ՛ս Հօրեղբօրմէն ուզեր էր՝

---

*) Պատիւ, Խնջոյք, Հացկերոյթ։ *) Գեղրանմ, Գիւղեր։ *) Ինչ, Որ։ *) Օրական, Օրավարձ։ *) Ջուր, Մինչեւ։ †) Դաւիթի իշխանական ապարանքը, պատկան վարչատունը։

Այնպէսով ալ կատարուեցա՛ւ. Ան պատրաստուց ամէ՛ն բան.
Ջոկեց ժողվեց հարիւրաւո՛ր վարպետներ,
Այնքան վարպետ ու Սարակիններ՝ Օհան առաւ ղընաց Սա՛ր,
Եւաւ բերաւ Ամեն տըւաւ Դաւիթին,
Որ Իր Հօր Վանք՝ հոն չինէ:

45Ջ. Դաւիթ՝ Հսկայ Քարեր Կ՚դնէ Պաշերուն

Ե·905,1000., Զ·՚Կ·53, Կ·53, Զ(Կ·119), Զ·՚Հ·28, Հ·28, (Հ·28), Զ·

Ուրբաթ օրը ժողվեցան,
Որ Մարութայ–Աստվածին–Վանք չինեն.
Եւ ըսկըսան Հի՛մ վորել ‡):
Ախա Դաւիթ ի՞նչ է ըրեր միամիտակ, —
Նետաղեղովն ու կոճանով՝ ժամսան Հիմը վորե՛ր է···,
Գացեր՝ Սարէն՝ մեծ–մե՛ծ Քարե՛ր է բերեր՝ †)
Հիմերուն տե՛ղ դըրեր է,
*Պատը՝ մէ՛կ մէջէ *) բարձրացուցեր՝ հաներ է···: —*
Վարպետները որ այս տեսան՝ շա՛տ զարմացան Իրենց տեղ. —
Այնպէ՛ս ըո՛ղ–ըոզ Քարեր բերեր՝ ու դըրեր է Հիմին մէջ···՝
[Ամե՛ն մէկ Քար՝ մէ՛կ հասակի չափ կանղնած]՝
Որ այդ բոլո՛ր Սարակինները մէկտեղ Թէ գան՝ ժողվըրտին՝
Այդ Քարերը այնտեղ բերել չե՛ն կըրնար···:
Վարպետները տեսան Քարերն ու ըսին՝ †)
*— «Մենք չե՛նք կըրնար այս Քարերը իրար տալ *),*
Ախա ի՞նչպէս պիտի չարենք Իրար վրայ···»:
Դաւիթն ըսաւ, = «Դէ՛, Վարպե՛տ,
Քար բերելը՝ Ի՛մ վըրա՛յ,

---

‡) Ե·1000՝ խորել, ուղղելի փորել: †) Այնպէս՝ ինչպէս մեծագօր Տրդատ Թագաւորը, Ագաթանգեղոս, էջ 570 (Տե՛ս Բ. Հատոր): *) Մէջէ, Մէջքի բարձրութեան չափ: §–§) Կ·119 (համար 114–115)՝ այս հատուածը — պատմողի՛ն՝ թէ՞ դրի առնողին վրէպովը — դըրած է Սանասար–Բաղդասարի ճիւղին մէջ, Սասում Բերդի չինութեան առիթովը, մինչ Կ·53 (համար 105–106)՝ յիշուած է իր բո՛ւն տեղը, Թլոլ–Դաւիթի ճիւղին մէջ, Մարութայ Վանքի չինութեան առիթովը: *) Իրար տալ, Շարժել, տեղէն խախտել, երերցնել:

Շէնք չինելը՝ Քու վըրայ, —
Դուք Լարե՛րը կապեցէք,
Տե՛ղ չըտկեցէք ու կեցէ՛ք՝
Ես Քար դընեմ Իրեն տե՛ղ…»:
Այդ կերպով ալ չինեցին. —
Վարպետները՝ Պատին վըրա՛յ կանգնեցան,
Դաւիթ ելաւ՝ Ձեռքը կուտայ Քարերուն, —
— Տըղաատակա՛ն ջո՛ղ Քարեր —,
Կըվերցընէ՝ կ՚բերէ–դընէ Իրենց տեղ…:
Ոչ Սարակնե՛ր կըրնան քերել այդ Քարեր,
Ոչ Վարպետնե՛ր կըրնան վերցնել դընել տե՛ղ… §):
[Ալ հաշուեցէ՛ք՝ ի՛նչքան մեծ էր Դաւթի Ուժ…]:

453. Դաւիթ՝ Երազին Ցուցմունքով՝ Վաճրին Հիմք Իր Դաշոյնին Վրայ Կ՚դնէ

Ց·98, Ա· 11, ՉՍ·410, Հ·377, Չ·Հ·377, Չ·՝Ե·565, Ե·565, (Ե·623), Չ(Ե·623)·

Ուրբաթ առաւօն՝ Ժամը չինել ըսկըսան·
Այն Գիչերը որ քընացան ու ելան՝
Տեսան որ ի՛նչ…, — Մարութայ–Բա՛րձր–Ասպարածի՛ն է՝ չըկա՛յ,—
Քար՝ իր տե՛ղն է դընացեր…,
Հող՝ իր տեղն է դընացեր…,
Աւազ †)՝ իր տե՛ղն է դացեր…,
Կաւ՝ իր տեղն է դընացեր…,
Ի՛նչ որ բերուած ու պատրաստուա՛ծ էր այնտեղ՝
Ամեն մէկը՝ իրեն տե՛ղն է դընացեր…:
Գիչեր երբոր քընացան՝
Դաւիթ Իր Տեղ ի՞նչ տեսաւ. —
Մարութայ–Բարձր–Ասպարածին՝ երա՛զ եկաւ քունին մէջ՝
*Ըսաւ, — «Դաւի՛թ, Քու Դաշոյնը քաշէ հանէ՛ Քու Մէջքէդ *),*
Վանքին Հիմը Քու Դաշոյնին վըրա՛յ դիր,

§) Տես նախորդ ստորէջի ծննթինը· §–§: †) Աւազի ներկայութիւնը՝ չինանիւթերու կարգին՝ ապացոյց է որ հասարակ կաւով ու ապիւսով չէր որ կըկատարուէր չէնքին կառոյցը, այլ կրածեփ շաղախով (ֆիրէճ խորասան, տեսակ մը ciment): *) Մէջք, Քօսի:

*Վանքն ու Մատուռ օրէ՛ *) չինէ՝ լըմընցուր,*
Քառասուն Խորան մէջ,
Ամեն Խորան՝ մէկ Վարդապետ, մէկ Սարկաւագ, մէկ Երէց,
Քառասուն-Խորան՝ քառասուն-քառասուն կանդնեցո՛ւր,
Դեռ չըլուսցած՝ ըրէ Քառասո՛ւն Պատարագ՝
Որ ասա՛ թէ՝ Իմ Հիման վրայ ես կանդնի՛մ...,
Թէ չէ՝ քա՛նի որ չինեն՝
Շէնքը կ՚աւրի՝ կըփըլի՛...»:
Դաւիթ՝ այնտեղ՝ ցաւակ՛ց եղաւ իր քունէն,
Զայնով կանչե՛ց Իր Հօրեղբօր՝ ու ըսաւ,— †)

— «Հօրեղբա՛յր, Մարդի՛կ, ‡) Ձեր աճուշ ֆուսէն վե՛ր եկէ՞... .
Ասօր Մարութ-այ-Թարձր-Ասպարածի՛ն եկեր Ինձ Երազ... .
Ես Իմ Մէջքէն՝ Իմ Դաշո՛յնը կըճաշեմ,
Վանքին Հիմը Դաշոյնիս վրա՛յ կըդրնեմ,
Վանքն ու Մատուռ օրէ՛ կ՚շինեմ՝ կ՚աւարտե՛մ,
Դեռ չըլուսցած՝ Պատարա՛գը մէջ կ՚ընեմ,
Որ Իմ Վանքը Իրեն Հիման վրա՛յ կանգնի... .
Թէ չէ՝ ճա՛նի որ շինեմ՝
Շէնքը կ՚աւրի՝ կըփըլի՛...»:

Զէնով-Օհան ըսաւ, = «Դաւի՛թ, քընացի՛ր,
Ես՝ Սասմանց-Տան Զէնով-Օհա՛նն եմ,—ըսաւ—,
Լուսուն կ՚ելնեմ կըկանչե՛մ՝
Նորէն Սարակ ու Վարպետնե՛ր կըհաննեմ,
Վանքն ու Մատուռ՝ օրէ՛ շինեն՝ աւարտեն...»:
Առաւօտուն եկան վե՛ր,
Զէնով-Օհան մէ՛կ ալ պօռաց Իր Տեղէն, —
Հաղա՛ր-հազար Սարա՛կ եկան Թափեցան,
Հարիւրներով Վարպե՛տ եկան կանդնեցան,
Դաւիթ քունէն վե՛ր եղաւ,
Դաշոյն քաշե՛ց Իր Մէջքէն, —
Վանքին Հիմը՝ Դաշոյնին վրա՛յ ձըգեցին...: —

---

*) Օրէ՛, *Մէ՛կ օրուան մէջ*, *ե*·623՝ Մէ՛կ գիշերուան մէջ: †) *Երդով*: ‡) *Հ*·377՝ Քեռի՛:

454. Վարպետները Ու Սարակները Մարուքայ-Վաճէն Կ'օթեն

Զ(Ա·11), Կ·13, (Կ·54), Զ·՝Կ·54, (Ե·822), (Հ·28), Զ·

Հիմա՝ Ամենք Զեռք Նետեցին՝ Վանքին Շէ՛նքը Կըչինեն· —

Քար–Կըտրողներ Կըկըտրե՛ն՝ ‡)
Ու Քար–Տաշող Վարպետները Կըտաշե՛ն,
Քար–Կըրողներ՝ Պըղտիկ Քարեր Կըբերե՛ն,
Քար–Տըւողներ՝ Քա՛ր Կուտան, —
Ու Քար–Շարող Վարպետները՝ Ջո՛ջ Քարերու Միջոցնե՛րը Կըդընեն:

Հող–Մաղողներ Կըմաղե՛ն,
Ջուր–Կըրողներ Կըկըրե՛ն,
Կաւ–Ընողներ Կա՛ւ Կ'ընեն,
Կաւ–Կըրողներ Կըկըրե՛ն,
Կաւ–Տըւողներ Կա՛ւ Կուտան, —
Ու Պատ–Շարող Վարպետները՝ Քարը Քարի՛ Կըհիւսեն:

Խիճ–Բերողներ Կըբերե՛ն,
Խիճ–Տըւողներ՝ Խի՛ճ Կուտան, —
*Վարպետները Քարերու Մէ՛ջ *) Կըդընեն,*
*Շեփ–Ընողներ՝ Անոնց Քոլոր *) Կըծեփե՛ն:*

Փայտ–Տաշողներ Կըտաշե՛ն,
Փայտ–Կըրողներ Կը բերեն,
Փայտ–Տըւողներ Փա՛յտ Կուտան,
Վարպետները՝ Իրենց տե՛ղը Կըդընեն:

455. Վաճէն Կ'օթեն, Դաւիթը Թագաւոր Կ'օծեն

Զ(Ե·567,711), Ե·567,967,509,623,767,799,905,1000,711, 736,768, Զ·՝Ե·567,967, Զ·՝Հ·378, Հ·28,420,378, (Հ·28), Կ·54,13,53, ԶԿ·463, ԶՍ·410, (ԶՍ·412), Ը·33ա·, Ը·98, Ա·10,11, Զ·՝Ա·11, Զ·

Այդպէս առտուն ըսկըսա՛ն,
*Նորէն Վանքը պատեցի՛ն *),*

‡) *Տե՛ս Հատուած* 447 *եւ* 448՝ *Վարպետներուն ու Սարակներուն կարգը:* *) *Մէջ, Մէջտեղը:* *) Բոլոր(ը), *Բոլորտիքը:* *) *Պատել, Պատ քաշել, Շրջափակել:*

Քառասուն Խորան նորէն մէ՛ջը ձըգեցին ‡),
*Շէնքը օրէ՛ *) կանդնեցին,*
Աւարտեցին՝ ծածկեցին։ —
*— Եօ՛թ Գաւառի Մարդիկ վըրան բանցուցին *)։ —*
Առաուն՝ Հիմե՛ր փորեցին,
Քարեր, փայտեր, ամե՛ն բաներ մօ՛տ բերին,
Պատրաստեցին, չարեցին,
Մուրը Գետի՛ն որ տըւաւ՝ †)
Շէննեցին ու կանդնեցին,
Մեծ Ջանդերը կախեցին։
Ջէնով-Օհան կանչեց՝ բերաւ՝ Քառասուն-Քառասուն ×) Վարդապե՛տ,
Տէրացո՛ւ եւ Սարկաւա՛գ
Գառրաստեց ու տարաւ հասցուց Դաւիթին,
Դաւիթ ելաւ՝ Ա՛չ մը զարկաւ Վանքին Գլուխ,
Ժամը խակոյն օրհնեցին,
Ամէն Խորան՝ մէ՛կ Վարդապե՛տ կեցուցին,
Ամէն Խորան՝ մէ՛կ Սարկաւա՛գ կեցուցին,
Ամէն Խորան՝ մէկ ալ Երէ՛ց կեցուցին, —
Կանդնեցուցին Ամե՛նմէկը Իրեն Տե՛ղ, —
Մէջ Գառաբա՛գ մատուցին,
*Օրէ՛նք *) առին Մեծ ու Փոքր,*
Դաւիթ այնտեղ մե՛ծ հանդէսով օծեցին,
Եղաւ Երկրին Թագաւոր, —
Նո՛ր՝ Մարութայ-Աստաբածին Իր Հիման վրայ կանդնեցա՛։
*Դեռ Արեւը չէր դըպեր *), —*
Աղօթքան նո՛ր կըբացուէ՛ր...։ —

---

‡) Հ·378՝ պատի մատուռ մ'ալ մէջ կը շինեն։ *) Օրէ, *Մէկ օրէն, մէկ օրուան մէջ։* *) Բանցնել, *Աշխատցնել։* †) *Իրիկուն որ եղաւ։* ×) *Այսինքն՝ ամեն մէկէն քառասունական՝* (40 *Վրդպտ·*, 40 *Տրց·*, 40 *Սրկ·*)։ *) Օրէնք, *Հաղորդութիւն։* *) Դպիր, *Մաղիր*, Ե·736՝ որ լուս տուեց շաբաթ։

456. Դաւիթ՝ Վաճիին Միաբանութիւնը Կրկազմէ Եւ Շինուբեան Աշխատողներուն Վարձքեր Կ'վճարէ

Ե·822,768,620,905,967,968,1000,567,509, Զ·՝Ե·509, Է·378,420,28, Զ·՝Է·420, ԶԿ·464, (ԶՍ·413), Խ·18, Զ(Խ·18), Ա·11, Ճ·33ա·, Կ·13, Զ(Կ·54), Զ·

Դաւիթ այնտեղ ժամ որ չինեց ու պըրծաւ՝
Ձեռքը զարկաւ Ա՛ղ–թեւին,
Ըսաւ, — «Ճիշ՛մ որ յիշամ...՝
Մարութայ–բա՛րձր–Աստպարածին,
Ա՛խ–փետրազին վէր՝ Իմ Ա՛ղ–թեւին», —
Աչը մընաց Իր թեւին:
Նո՛ր ժողվեց Իր վանքին մէջ՝
Դըրաւ Քառասուն Վարդապետ,
Դըրաւ Քառասուն Տիրացու,
Դըրաւ Քառասուն Սարկաւագ,
Ամեն Խորան՝ մէ՛կ Վարդապետ, մէ՛կ Սարկաւագ ու երէց,
Քառասուն–Քառասո՛ւն ամենն ալ·
Դըրաւ Բանւոր ու Միաբան՝ Իր սարքով· —
Ամեն կազմեց՝ դըրաւ մէ՛ջ:
*Կապեց *) Անոնց՝ Ամսակա՛ն *) եւ կերակուր, —*
— «կերէ՛ք,–ըսաւ–, ու խըմեցէ՛ք, միաբան,
Ժամ, Պատարա՛գ ըրէք Ձեզ,
Ու «Ողորմի՛» ‡) տըւէք Սամանց–Տան Ջոջերուն ու Հոգուն»:
Մարութայ–Վանք որ չինեցին ու պըրծան՝
Դաւիթ Քաղքէն Ոսկի՛ բերաւ Բեռներով,
Կանչեց †) ըսաւ Հօրեղբօր, — ×)
— «Հայրաեռո՛տ Հօրեղբայր, Իմ հայրաեռո՛տ Հօրեղբայր,
Հա՛յր չ'ունիմ՝ ըրէ՛ ինձի Հայրութիւն· —

---

*) Կապել, *Ծատկացնել*: *) Ամսական, *Ամսաթոշակ*: ‡) «Ողորմի»–ն՝ *ամբողջութեամբ հոս կրկնելէն աւելորդ դատ, Տեսնել Հատուած* 1, 191, 237, 270 եւն·, *ամեն ճիւղին սկիզբը*: †) Կանչել, *ձայնով ըսել, երգել՝ համարժէք սեպելու է՝ Արքայական Հրամանի, Հրամանագրի, Գաւազանագրի, Մունետիկով կանչուած եւ Դիւանադպրի ձեռքով շարագրուած*: ×) *Երդով*:

Բեր վարձքե՛րը տուր այդ վարպետներուն... .
Բեր վարձքե՛րը տուր այդ Սարակներուն... .
Ո՛չ մէկ բանւոր առանց վարձքի մի՛ թողուր... .
Որ չըկա՛յ ալ՝ ուրիշ տեղէ փո՛խ առ տուր...»:

Բերին՝ այնտեղ՝ մէյմէկ Ոսկի տըւին ամեն Վարպետին,
Մէյմէկ Արծաթ՝ տըւին ամեն Սարակին,
Իրենց վարձքեր տըւին ամեն Բանւորին,
Ո՛չ մէկ Բանւոր՝ առանց Վարձքի չըթողին: —

457. Դաւիթ՝ Վանիին Պահապանները Կ'ղեկ, Ցուց Կ'դառնայ՝ Գինեխառնի Կ'ճաթի

Ե·711,623,567,736,509,799,768,1000,967,767,905, (Ե·768,905,799),
Զ·՝Ե·1000, Զ(Ե·33ա·), Ը·98, Ա·11, 10, Խ·18, Հ·28,421,378,
Զ·՝Հ·421, Կ·54, Զ(Կ·54), ՁՍ·413·

Դաւիթ ապա դարձաւ ըսա՛ւ Օհանին ‡)· —

— «Տօ՛ Հօրեղբա՛յր, մեռնի՛մ Քեզի, Հօրեղբա՛յր,
Հա՛յր չ'ունիմ՝ ըրէ՛ ինձի Հայրութիւն·
Ինձի՛ պէտք է՝ Բաթման-Բուղէն, ճարպար-Քամին՝ որ հո՛ս գան՝
Կենա՛ց վանիին Դրունապան...:
Ինձի՛ պէտք է՝ Աղրակեցի-Օհա՛նն ալ՝
Կենա՛յ վանիին Վերակացո՛ւ-Պահապան...»:

Բաթման-Բուղէն, ճարպար-Քամին Ըմբիշներ†)՝
[Օրը մէ՛կ Տիկ Մեղր ու կարագ՝ այդ երկուսի ուտե՛ստն էր]՝
*Բերաւ դըրաւ Իրեն Վանքին պահացող *),*
— «Վանքը,—ըսաւ—, Ձեղի աւա՛նդ: Աղէ՛կ չահէք-պահեցէք:
Ի՛նչ որ պակսի՝ եկէք Ինձի լո՛ւր տըւէք...»:
Ու Բուղայէն՝ պատուէ՛ր տըւաւ ու ըսաւ· —

‡) Երգով: *Ամեն անգամ որ Դաւիթ ըսելիք ու ընելիք մ' ունի՝ իր Հօրեղբօր Ձէնով-Օհանին է որ կ'ուղղէ իր պատգամը, կարծէք Տըղատ Թագաւոր լ'ինքն է որ Հրամաններըը կ'արձակէ իր դիւանադպրին, — Ագաթանգեղոսին...* [*Տես Բ. Հատ.*]: †) Ե·905՝ կա-կաց, Ասլան [*որ սակայն Մըսրամէլիքի՛ ըմբիշներն էին*]: *) Պահացող, Հսկող, պահնորդ, պահակ՝ (Պետի հանգամանքով):

— «Աւեր *) Մարդիկ Թէ որ գան՝
Դուռ Անոնց վրայ չբանա՛ս. . .
Ուխտաւոր ու չուա՛ր *) Մարդիկ Թէ որ գան՝
Դուռը բանաք՝ կերակրէ՛ք...»: ×)
Բաթման–Բուղէն, Ճարպար–Քամին՝ մնացին Վանք,
Այն օրէն ալ՝ այդ երկու քալ Ըմբիշներ՝
Մարուքթայ–Բա՛րձր–Աստղարածնի Դըրան եղան Պահապան:
Դաւիթ ա՛յնքան ուրախացաւ Իրեն չինած ժամուն վրայ՝
Որ մէ՛կ Շաբաթ մընաց այնտեղ, կերա՛ւ, խըմե՛ց, խընդացա՛ւ:
Ապա ելաւ՝ Վանքը Թողուց՝ եկաւ Տո՛ւն ‡), —
Եկաւ Նըստաւ Սասմանց Զո՛ր–Տուն՝ գինեխում †),
Եօ՛Թը տարան Ներա՛ն–Գինին §) դըրաւ խըմեց ուզածով,
Քառասո՛ւնք բըռնեց Իր համար:—
Դաւիթի Խելքն՝ ա՛յս հետին ալ՝ տե՛ղը եկաւ կատարեալ,
Մարդո՛ւ այլևս չէ՛ր դըպիր:
Զայնը լինկաւ Քաղքէ–Քաղաք՝ Թէ «Դաւիթ՝
Մարուքթայ–Բա՛րձր–Աստղարածին չինո՛ւր է ու չէնցուցո՛ւր...», —
Եւ Ամե՛ն Մարդ չա՛տ խընդացաւ՝ ուրա՛խ եղաւ Իրեն մէջ:

ԺԲ. ԹԼՈԼ-ԴԱՒԻԹ Կ'ՊԱՏՈՒՀԱՍԷ ՊԻՐԱԲԱԴԻՆ ԵՒ ՔՈՋԻՈՐՆԵՐ ԵՏ Կ'ԲԵՐԷ

458. Մըսրամելիք Կ'իմացայ Որ Դաւիթ Վանքը Շիներ Է

ՋՍ·414,415, Կ·13,54, Ե·736,567, 509,623,905,1001, (Ե·509,567), Ց·99ս·, (Ս·159), Հ·28,378,421, (Հ·28), Ջ·՝Հ·28·

Ջըրո՞յցն ուրկէ՛, — ղըրոյցը տանք Մըսրայ–Տեղի Մէլիքէ՛ն· —
Օր մ՛ ալ՝ Անոր Որսորդները եկան Սեւ–Սար՝ ի՛նչ տեսնեն..., —

---

*) Աւեր, Անպէտ, վնասակար, վտանգաւոր: *) Շուար, Խեղճ, չքաւոր, անճար: ×) Վանքը՝ օժտուած Ապաստանի, Իջեւանի, Օթեւանի հանդամանքով, ինչպէս Տրդատ մեծագործ Թագաւորին օրով: ‡) Ե·736՝ հօրեղբօր տուն, Ե·1000՝ իր տան մէջ: †) Հ·378՝ գլուխ դրաւ նոյն գինին, Ե·967՝ տօնախմբութեան, գինեխմութեան: §) Նուռի՝ կամ կարմիր գինի:

«Որ Սեւ–Սարի Մեծ–Պարխալը քակի՛ր են...,
Թէ այդ ժամը՝ Վա՛նք–Մարութին՝ չինի՛ր են...,
Վարդապետներ ու Տէրացուք դըրեր մէ՛ջ...,
Շէնցուցի՛ր են՝ ու եղեր է աւահի՛... *)՝
Նըստած մէ՛ջ...,
Բաթման–Բուղէն ու Ճարպահաւ–Քամին ըրած Դըռնապա՛ն...,
Տըղայ–Դաւիթ դըրաւի՛ր է Մոլասա՛ր...,
Ու Սասմանց–Տան Թագաւո՛ւրիւն հաստատի՛ր...,
Ինքը գացեր՝ Քառասո՛ւնք բըռներ է Սասո՛ւնք... *),
Այսպէ՛ս–այսպէս, այսպէ՛ս բա՛ն...»:
Անոնք ալ չո՛ւտ՝ եկան դարձա՛ն այդ տեղէն,
Գացին Մըսըր՝ ու լո՛ւր տըւին Մէլիքին, —
— «Մըսրա՛յ–Մէլիք, ի՞նչ ես նըստեր..., ի՞նչ կ'ընես...,
Սեւ–Սարի մէջ ժա՛մ են չինած՝ շէնցուցա՛ծ...,
Քառասո՛ւն–Քառասուն Վարդապետ ու Տէրացո՛ւ են դըրած մէ՛ջ...»:
= «Ո՞վ է չիներ...»:
— «Ինք Դաւի՛թ... . —
Աւագ–Սարը ինչ Դու տեսկեր՝ Որսե՛ր դըրեր էիր մէջ՝
Դաւիթ գացեր՝ Պարխալ քակեր, Որսերն ամեն թողի՛ր է...,
Իր Հօր ժամը Վա՛նք–Մարութին չինի՛ր է...,
Դաւիթ այնտեղ Ջոջացի՛ր է Երկրին մէջ՝
Եղեր՝ հիմա՝ Սասնայ–Երկրին Թագաւո՛ր...,
Այսպէ՛ս, այսպէ՛ս բանի՛ր ըրեր Իր գլխէ...»:

459. Մըսրամէլիքի Եւ Մօր Վէճը Կըկրկնուի

Ց·33ս·, 99ս·, (Հ·421), Հ·421, Զ·՝Հ·421, Ե·711,1103,567,623, Զ(Ե·567), Զ·՝Ե·567, Զ(Կ·54), Կ·54, Զ·՝Կ·54,Զ·

Մըսրամէլիք որ իմացա՛ւ Դաւիթի այս արարմունք *)՝
Թէ Հօր վանքը չինի՛ր է...,
Օծուեր եղեր Թագաւո՛ր..., —
Իր նախանձէն՝ ա՛լ աւելի Թըշնամացաւ Դաւթի հետ,
Բարկացա՛ւ...:

---

*) Աւահի (ոգի), Ոգեւորուած բան մը: *) Սասունք, Սասմանց մէջ, ՚ի Սասուն(ք): *) Արարմունք, Արարքներ, գործեր:

[Նայինք՝ դէ՛ր մ՚ալ պիտի չիդա՞յ՝ Վանք կողոպտէ ու տանի]։
Ու Մէլի՛քն է, ոտքի՛ ելաւ, ասդի՛ն դընաց, անդի՛ն գընաց՝ ու եկա՛ւ,
Վերցուց Իր Մօր ի՞նչ ըսաւ. —
— «Մարէ՛, տեսա՞ր..., որ Ես այն օր կըմորթէի՛ այդ Շան–Որբ՝
Դուն չըթողի՛ր, դէ՛մ կեցար..., —
Հիմա Անիկ այդպէս մէկ Մա՛րդ է եղեր...,
Ճի՛ւղ է տըւեր այդ Որբուկ...։
Վաղ–միւս օր՝ Ես Աստր հետ ի՞նչպէս պիտի գլո՛ւխ ելնեմ... *),
Դէ՛, հիմա Դուն կըրնա՛ս՝ գընա՝ մի՛ Թողուր...»։
Մէլիքի–Մայրն ըսաւ, = «Մէլի՛ք, ա՛յ Որդի...,
Դուն չե՞ս ուզեր՝ Քեզի այնպէս կըտրի՛ճ Եղբայր մ՚ ունենաս...։
Սասնոյ–Նահանգ՝ Անո՛ր բաժին Թող ըլլայ,
Մըսրայ–Երկիրն ալ՝ Քեզի՛։ —
Դուք Եղբա՛յր էք..., ի՞նչ կ՚ըլլայ...»։
— «Մարէ՛,–ըսաւ–, Ես Մըսրեցի՝ Անիկ Հա՛յ...,
Ո՞ւրկէ Ինձի Եղբայր եղաւ Այդ Տըղան... ‡)։ —
Ես կըռնի՛ պիտի երթամ Իր վըրան...»։
= «Տըղա՛յ,–ըսաւ–, մ՚ ե՛րթար կըռնիւ՝ Դաւթի վրայ...,
Ինձի մըտի՛կ ըրէ Դուն...»։

460. Մըսրամէլիք՝ Պիտաբադից Կ՚ղրկէ Վաճիճ Վրայ

Զ(Ց·99ս·), Զ·՝Ց·33,33ս·, ԶՍ·416, (ԶՍ·416), Զ·՝Ե·623,567,1002, 568,968, (Ե·1002,509), Ե·1002,567,1103,568,623,905,968,624, Է·421,378, Զ·՝Է·421, (Է·378,421), Կ·13,14, Զ·՝Կ·14, (Կ·14), ՁԿ·483, Զ··

Մըսրամէլիք մըտիկ ըրաւ Իրե՛ն Մօր·
Ան ալ ելաւ ի՞նչ ըրաւ. —
Ելաւ այնտեղ Իր Ըմբիշներ կանչեց բերա՛ւ դիչերով,
Ջա՛ոը ձըղեց *) Անոնց վրայ, եւ ըսաւ. —*
— «Արդեօք Մարդ կա՞յ Մըսրայ–Քաղաք՝ որ երթայ՝

---

*) Գլուխ ելնել, վարուիլ (մէկուն հետ)։ ‡) Մէկ հօրէ, երկու տարբեր մայրերէ առաջ եկած երկու ցեղ, մէկը Հայ–Հեթանոս, միւսը Հայ–խաչապաշտ։ *) Ջառ ձգել (ջարջառ), ճնշում բանեցնել։

Դաւթի Գըլուխն Ի՛նձ բերէ՛ . . . . —
Ո՛վ որ բերաւ՝ մորթած, գարկած, կամ թէ ողջ՝
*Կուտա՛մ Իրեն՝ ի՛նչ որ բըռնէ Իր Լեզուն *) . . . :*
Թէ չէ՝ կ՚ելնեմ՝ կ՚առնե՛մ Հեծել՝ ու կ՚երթամ՝
Վանք–Մարութին քակեմ առնեմ ու բերեմ,
Որ Անոնց Ցեղն ու Գետութիւն չըրազմանա՛յ՝ գօրանայ . . .» :
Այն կողմերն ալ՝ Բուրդ Ցե՛ղ մը կար զօրաւոր,
Ցեղապետն ալ՝ այդ Մէլիքի Փեսա՛ն էր,
Պիրաբադի՛ն †) անունով,
Վերցուց ըսաւ, = «Ապրա՛ծ կենայ Թագաւոր,
Ինչո՞ւ Հեծել ընես Դուն . . . . —
Մենք վե՛ց–հազար Հոդի՛ ենք . . . ,
*Կ՚երթանք այնտեղ, Մովսասարի Զօրաններ *),*
Մեր Վըրաններ կըզարնենք ու կընըստինք,
Մարութայ–Վանք կըկողոպտենք՝ կ՚աւերենք,
Մէջի Մարդեր՝ Դաւթի հետ՝ կ՚ըսպաննենք,
Ականջները կըկըտրե՛նք ու կըբերե՛նք . . .» :
Մըսրամէլիքն ըսաւ, — «Ապրի՛ս, Պիրաբադին ‡), լա՛ւ ըսիր·
Այդպէս բան մը որ ընես . . .՝
Քաղաքի մ՚ Պե՛տ կ՚ընեմ Քեզ . . . :
Արի՛՝ որքան Զօրք ալ կ՚ուզես՝ ա՛ռ Քեզ հետ,
Քըշէ դընա՛՝ Վանքն աւերէ՛, մէջի Մարդերն ըսպանէ՛,
Կողոպտէ՛ ժամն՝ ա՛ռ ու բե՛ր . . . : —
Վանքը Ի՛մն է . . . , Իմ Հօր Վա՛նքն է ×) Մարութան . . .» :
Ելաւ ղըրկեց՝ Պիրաբադին՝ Իր Զօրքով՝
Որ երթան ու Վանքն աւերեն, վըրէ՛ժ լուծեն Դաւթէն . . . :

---

*) Ի՛նչ որ բռնէ իր լեզուն, *Ի՛նչ որ ուզելու ըլլայ* : †) Պիրաբադին՝ հնչել վերջին մասը՝ badine ։ *) Զօրավար, *Ամարանոց* : ‡) *Պատմիները՝ մեծ մասով՝ Կուզբադինի անունովը կ՚պատմեն՝ թէ՛ Մարութայ–Վանքին վրայ յարձակելու եւ թէ՛ Սասունէն եօթը տարուան տուրք գանձելու միջադէպերը : Բայց աւելի ճիշդ է՝ առաջինը պատմել Պիրաբադինի անունովը — ինչպէս են Ը·33–34 եւ Ը·99ա· —, իսկ երկրորդը՝ Կուզբադինի անունով* : ×) Նոյն հօր՝ երկու տարբեր կիներէ ունեցած զաւակներու վէճ ու կռիւ :

— «Գացէ՛ք,–ըսաւ–, Սասնայ–Երկիր· Քաղքէն դո՛ւրսն է Անոր Վանք,
Տըւէք վըրա՛ն, կոտորեցէ՛ք Մեծ ու Փոքր, —
Կըտրեցէ՛ք Քառասուն Վարդապետները՝ մէջ Իրենց Յորանին,
Կըտրեցէ՛ք Քառասուն Սարկաւագները՝ մէջ Իրենց Խուցին,
Կըտրեցէք Վի՛ղը Լուսաբարին,
Աւերեցէ՛ք Վանք–Մարութին ու Իր Ժամ՝
Քակեցէ՛ք տարէք վեր՝ Հիման,
Կողոպտեցէ՛ք, առէք դարձէ՛ք ու եկէ՛ք՝
Որ Դաւիթը հոն վախնայ...»:

461. Պիւրաթադին՝ Վաճխին Առաջ

Ե·1002,799,1103,711,770,800,1003,568,905,738,(Ե·905),Զ·՝Ե·800, 738, Զ(Կ·14), (Կ·57), Կ·57, (ԶԿ·488), (Հ·378,421,30), Հ·421,30·

Պիւրաթադին ‡) առաւ Իր Զօրք ճիւաղ,
Ինքը առաջ, Իր Հեծելը քամակէն,
Քըշեց դընաց դէհ Սասուն:
Ելաւ եկաւ ու մօտեցաւ Սասունին,
Վախցա՛ւ հոն...: —
Կեցա՛ւ քիչ մը Սասնոյ կուշտ,
Ա՛լ Իր ահէն չի՛ իլլեր գայ ու տայ *) Սասնոյ–Քաղքի վրայ,
Ու մըտածե՛ց Ինքզինք *),
Ըսաւ՝ «Որ Ես երթամ Սասնոյ–Քաղքի վրայ՝
Դաւիթ չուտով կ'իմանայ ու՝ մէ՛կ Մեր մօտէն չի՛ թողուր †),
Մեզ Ամենքս ալ պիտի բըռնէ՝ կոտորէ ...:
Մենք կարող չե՛նք՝ երթանք մըտնենք Սասնոյ մէջ, —
Քար ու կապա՛ն է Սասուն...: —

---

‡) Ե·705–720՝ Պիւրաթադինի տեղ կ'յիշուի Վրիաք, որ Մըսրամէլիքն է: Իսկ էջ 719՝ Վըհարը որակուած է Վրիաք–է–կոր: Կոր (կօր, պրս· կիւրբ)՝ քրդերէն կը նշանակէ գայլ: Արդ, Վրիաք եթէ աղաւաղումն է Վահան անունին՝ կ'ունենանք ուրեմն Գայլ–Վահան, վեցերորդ դարու նշանաւոր Մամիկոնեան Իշխանը, որ իր անօրինակ քաջութեանը համար՝ կոչուած էր Գայլ: *) Տալ, Գրոհ տալ, յարձակիլ: *) Ինքզինքին: †) Այսինքն՝ Մեզնէ մէ՛կը չի կրնար պրծիլ Անոր (Դաւիթի) ձեռքէն:

Լաւը ա՛յն է՝ որ ես երթամ Վանքի՛ն վրայ,
Սարի մէ՛կն է առանձին..., —
Քարքա՛նդ ընեմ, լի՛նէ կայ՝ չըկայ՝ առնեմ տանիմ Մէլիքին»:
Ձամբուն մէկն ալ՝ տեսաւ Ըմբիշ Մարդու մ՝ Գլուխ, ‡)
Ականջները կըտրեց ձըդեց իր Գըրպան,
«Ասի,–ըսաւ–, նըւէ՛ր տանիմ Մէլիքին,
Ըսեմ «Դաւթի Ականջնե՛րն են՝ կըտրեր եմ»...»:
Ան ալ առաւ իր Զօրքերը,
Ու դիւերով դողդո՛ղ քըշեց՝ դընա՛ց ելաւ Ծովասար †),
Եկա՛ւ որ տայ Վանքին վրայ...,
Որ կողոպտէ ու տանի՛...՝
Ասպարածին–Բարձըր–Վա՛նքը–Մարութայ:
Պիրաթաղին եկաւ չիտակ, ու պիտի դայ դէպի Վա՛նք,
Բաթման–Բուղէն ելաւ դուրս,
Նայեց հեռո՛ւն, Դաշտի մէջ՝
Տեսաւ որ մէկ քանի մ՝ հարիւր Ձիաւոր՝
Դաշտին մէջէն՝ կուգան դէպի Վա՛նքն ի՛ վեր..., —
Ըսաւ՝ «Ասի՝ Բոշա՞ *) է՝ թէ՞ Ուրի՛շ Մարդ...,
Որ այդ կողմէն կուգան Վանք... .
Աս ի՞նչ Մարդ են՝ այդպէս կուգան դէպի Մե՛ղ...: —
Որ ըսեմ թէ «Ուխտաւո՛ր են... այս Ամեն...»՝
Ուխտաւորի նըմա՛ն չեն... . —
Ուխտաւորը ամեն այդպէս ձիաւորած չի՛ ըլլար... .
Մաս մ՝ ձիաւոր, մաս մը կ՝ըլլան ոտաւոր...:
Ես պիտ՝ ելնեմ՝ Դուռ դոցե՛մ...,
Դարպասները ամուր զարնե՛մ՝ Իմ Քամակ տամ Դուռին դէ՛մ:
Թէ որ Ասոնք Ուխտաւո՛ր են՝ բարո՛վ գան. —
Դուռ կըբանամ՝ մըտնեն Վանք:
Թէ Ուխտաւոր չե՛ն՝ ու աւե՛ր, վընասակա՛ր Մարդիկ են՝
Արդէն Դուռը չե՛մ բանար. —
Երկո՛ւ այնքան ալ ըլլան՝
Դուռը բանալ ու ներս մըտնել չե՛ն կըրնար.

---

‡) Ե.1003՝ կենդանիի մ՝ (ականջները կտրեց): †) Կ.57՝ Սասնայ–Սար, Ե.624 (դէպ) Սասուն, Ե.568՝ Սեւ–Սար: *) Բոշա, վաչկատուն ցեղախումբ, բազմութիւն՝ թափառիկ ցեղերու:

Ու կըրնա՞ն՝ թող ղի՛ր մ՝ ալ գան…»։
Բաթման-Բուղէն՝ ելաւ չուտ մը գոցե՛ց Դարպասն ու Դուռները,
Իր ֆամակը տըւաւ Դըրան՝ ու կեցաւ։

468. Պիւրաբաղին՝ վանքը խաբէութիւնով Դրաւելու Մասին Կըխօրհի

Զ·՝ե·800,738,905,770,1003,510, ե·738, 1003,800,905,770,771,568, 52,510, (ե·568,770,509,738,510,905), կ·57,14, (կ·14), Զ·՝կ·14, Հ·30,378, (Հ·30,378), Զ·՝Հ·378, Զ((Հ·378),ճ·100,(ճ·100), ճ·100ա·, (ճ·100ա·), Զ·՝ճ·100ա·, Զ·՝ճ·33ա·) Զ(ճ·33ա·), Զ·՝Զվ·8, Ա·14, (Ա·14), խ·19·

Պիւրաբաղին եկաւ Իրեն Զօրքերով,
Եկան հասան Վանքին Դո՛ւռ, —
Տեսան որ չէ՛, Վանքին Դուռը չե՛ն բանար·
*Բաթման-Բուղէն, Ճարպար-Ֆամին Պահացո՛ղ *) են Դըրան դէմ,*
Չե՛ն Թողներ…։
*Մեռա՛ն, պաճա՛ն *)՝ ի՛նչ որ ըրին այդ Մարդիկ՝*
Զրկըրցա՛ն որ Վանքին Դուռը բանայի՛ն…,
Ու ներսէն ալ՝ չըրացուեցա՛ւ Իրենց վրան·
Բաթման-Բուղէն, Ճարպար-Ֆամին ‡) չըԹողի՛ն որ մըտնեն Վանք,
Առիւծի՛ պէս +) պօռալըռացի՛ն, կանչեցի՛ն…,
— «Մենք չե՛նք Թողներ,—ըսին—, որ Դուք նե՛րս մըտնէք»·
ՉըԹողի՛ն որ ներս մըտնեն…։
Որ չըկըրցա՛ն Վանք մըտնել՝
Ըսին, — «Ապա՝ ի՞նչէպէս ընենք որ Դուռ բացուի Մեր վըրայ»,
*Այդ Զօրքին մէջ՝ մէկ խելքաւորը *) Մա՛րդ մը կար,*
Ըսաւ, = «Բերէ՛ք՝ մէկ Լապըստրա՛կ †) մ՝ ըսպասենք,
Ու մէկ Ա՛րջ մը զարնենք՝ կըտրենք Ականջներ,
*Դաւթի նըման Շո՛ր *) մը գըտնենք՝ Թաթխենք անոնց Արեան մէջ,*
Նիզակի մը ծայրին զարնենք՝ տընկենք Վանքին Դըրան դէմ

---

*) Պահացող, Հսկող, պաշտպան։ *) Պաճիլ, բաճիլ, Խաչիլ, այրիլ (արեւին տակ)։ ‡) Ե·905՝ կակաճ, Ալաճ (*Տե՛ս սակայն Հատ·* 426՝ *ստրջ·* § *Մնթթնը*·։ +) Ա·14՝ Գոմշի նման։ *) Խելքաւոր, Խելացի։ †) Հ·30՝ Խելքի զարնենք՝ ուղղել Թիլքի զարնենք, ազուէս զարնենք։ *) Շոր, Հագուստ, լաթեղէն։

կամ թէ նետենք Գարխապն 'ի վեր ×)՝ երթայ նե՛րս,
Բաթման–Բուղէն, ձարպար–Քամին թող տեսնեն,
Ըսենք՝ «Ահա, Մենք Ձեր Տէ՛րն ենք ըսպաներ +),
Ա՛լ Դուք ո՞րտեղ կըմընաք··· .
Նայինք ա՛լ ի՞նչ պիտի ընէք ասկէ վերջ··· .
Ա՛լ Ձեր յոյսը վերջացա՛ւ···, —
Կ'ուզէք՝ ելէք Դուռը բացէ՛ք, կ'ուզէք խակի՛ մի՛ բանաք···՝
Ձուր Սեւ–Կուպրը սիմսրկի՛··· ‡)». —
Բաթման–Բուղէն որ տեսնէ թէ Դաւթի Հազո՛ւստն է ատի՝
Դարպասները պիտի բանա՛յ Մեր առաջ,
Մենք նե՛րս մըտնենք՝ երթանք ժամ···»:

[*Մորթեցին,*
Ելան այնտեղ՝ Սարին մէջէն՝ Լապըղտրա՛կ †) մը բըռնեցին ու
Արջ մ՝ ալ դարկին՝ Ականջնե՛րը կըտրեցին,
Սիմսրակ–Շապիկ մ՝ թաթխեցին մէջ Արիւնին,
Ու Մատակի մ՝ Գըլո՛ւխն ալ հետ մխատեղ՝
Առին եկան Վանքին մօ՛տ,
Բերին Վանքի Գարխապն 'ի վեր՝ նետեցին ու դընաց նե՛րս,
Ձայն տըւին ու ի՞նչ ըսին· —
Ըսին, — «Հա՛յ–հօ՛յ···, Դըռնապաննե՛ր, Մխաբաննե՛ր, որ նե՛րսն էք,
Դուք ա՛լ ի՞նչպէս պիտի պըրծիք Մեր Ձեռքէն··· .
Է՛յ չխմարներ, Դուռ չ'է՛ք բանար՝ ա՛լ ի՞նչ պիտի ընէք Դուք··· .
Այդ կըռիւը որո՞ւ համար է այլեւս···, —
Մենք Ձեր Տէ՛րը ղենե՛ր ենք հոս, կըտեսնէ՛ք··· .
Վանքին Տիրոջ՝ Դաւթի Վի՛ղն է առեր ենք···,
Ատիկ ահա՛ Անոր Շապիկն ու Գըլուխ···,
Ականջներն ալ՝ Մեր Գըրպա՛նն են, թէ չ'է՛ք հաւատար՝ նա՛ տեսէ՛ք···,
[*Ու հանեցին՝ Ականջները ցո՛յց տըւին*],

×) *Ե·738՝ երդիքն 'ի վեր:*

+) *Կ·14՝ Մենք գնացիմք Սասնու Հայը սպանեցիմք:* ‡) *Մինչեւ սեւ կուպրը ձերմըկի, եթէ սեւ–կուպրը մնալով կըճերմկի՝ դուք ալ դիմադրելով, սպասելով՝ կրնաք յուսալ թէ ազատուիք:* †) *Ե·509՝ պղունձ մը, Հ·378՝ մէկ մատակ (էգ–գոմէշ)* դրամով նախընթացներէն առին: ☛ *Դաւիթի դլուխին ու ականջներուն խոշորութիւնը՝ համեմատուած գոմէշի եւ արջի հետ:*

Տանինք պիտի՝ ու նըշա՛նց տանք Մէլիքին.
Ալ Դուք ո՞րտեղ կ՚երեւաք որ՝ Դուռ չ՚կ՚ք բանար Մեր վըրայ.
Ճամբա՛յ ը՛ռէք, կամուկ թողէք մըտնենք վա՛նք,
Ասկէ յետոյ՝ Դուք Մէլիքի՛ Ծառաներն էք՝ Ամենքդ ալ...»:
Բաթման–Բուղէն, Ճարպար–Ռամին՝ առա՛ջ եկան՝ նայեցան,
Տեսան Դաւթի Հագո՛ւստն է...,
Հաւատացին թէ Դաւիթը ըսպանա՛ծ են Այդ Մարդիկ,
Ըսին, — «Որ Մեր Դաւիթ Տէրը ըսպանե՛ր են՝ ու մօրթեր...,
Սասմայ–Ռաղաքն աւրե՛ր են...,
Մենք այլեւըս ի՞նչ ընենք...,
Ինչո՞ւ մընանք վեր՝ Աչխըրքին՝ ու ապրինք...»: —
Իրենց Վիզեր ծռեցին...,
Ու քաշուեցան մէկ եզերք...,
Վանքը Թողին անպաշտպան...:
Վերակացու՝ Աղբակեցի–Օհա՛նն ‡) ալ՝
Ահէն ելաւ՝ ու սահեցաւ դիշերով՝
*Փախաւ դընաց՝ յանձնըւեցաւ Պիրաբադնին, Իր բախտին *):*
Բաթման–Բուղէն՝ կուց մը Մոխի՛ր նետեց Գըլխուն՝ ու վազեց՝
Ճարպար–Ռամո՛ւ հետ մէկտեղ՝
Դուռը բացին՝ Թողին բա՛ց, —
Փախան դացին Սարե՛րն ՚ի վեր՝ ու Քարի մը տա՛կ մըտան,
*Վանքը մընաց մըշմուր *), անմեծ, անպաշտպան...:*

468. Պիրաբադին Վանքի Մարդիրը կըկոտրէ, Ժամը Կ՚աւերէ Կ՚ապանի

Ջ (Խ·19), Խ·19, Ջ·, Ե·624, 968, 1103, 770, 568, 510, 800, 738, 905, 1003, 906, 739, 52, (Ե·739), Ջ(Ե·799), ՋՍ·417, Կ·57, 14, Հ·30, 378, 421, 422, ՋԿ·488, (ՋԿ·488), Ա·14, Ց·100, 101, Ց·33ա·, ՋՎ·8·

Այն ժամանակ՝ Պիրաբադին եւ Իր Զօրքերն ի՞նչ ըրին. —
*Խաբելութեամբ *) երբոր բացի՛ն Վանքին Դուռ՝*

‡) Օհանին՝ Աղբակեցի կոչուելու Հանգամանքը խորհիլ կուտայ որ՝ գուցէ՝ Մարութայ Վանքը եւ Աղբակի Բարդուղիմէոս Վանքը նոյն են, վերջինը մանաւանդ իր սահմանապահ դիրքովը՝ Հայաստանի եւ Հարաւային դրացի Ասորեստանի մէջտեղ: *) Խախտ, Վհանճանութիւն, մեծապատութիւն: *) Մշմուր, Մարած, հանգած, ամայի: *) Խաբէութեամբ, Խաբէութիւնով:

*Ելան Ամենք՝ ու բըռնեցին *) վեր՝ Վանքին...:*
Պիրաբադին Ինքը կեցաւ Վանքին Դո՛ւռ,
Իր Մարդերը Նե՛րս մըտցուց...: —
Այդ Չխաւոր Ըմբիշները մըտան դացին դէպի Նե՛րս:
Որ մըտա՛ն Ներս՝ Մարութայ-Բա՛ղձր-Աստարածին-Վանքին մէջ՝
Ըսպանեցի՛ն ամեն Երէց ու Վարդապետ, Սարկաւագ, —
Կըտրեցի՛ն Գառաուն Վարդապետ՝ մէջ Ռո՛մանին...,
Կըտրեցի՛ն Գառաուն Երէց՝ վեր՝ Սեղանին...,
Կըտրեցի՛ն Գառաունէն մէ՛կ պակաս Սարկաւագ՝ մէջ Սե՛ղանին...,
Գառաուն-Գառաո՛ւն կըտրեցին... .
Կըտրեցին Վիզը Լուսաբարին...,
Վանքի Մարդերն ամեն այնտեղ ըսպանեցին, մորթեցին..., —
[Ալ չե՛ն դիտեր Թէ մէ՛կ Հոգի պահուըտեր է մէկ անկիւն,
Գիտեն որ Թէ՝ «Ամեն ա՛ռ է՝ պըրծուցինք...»]
Մարութայ-Բա՛ղձր-Աստարածին քանդեցին,
*Թալանեցի՛ն-Թախթըփեցի՛ն *) Վանքն ու ժամ...:*
Պիրաբադին՝ Իր Մարդերուն կ'ըսէ, — «Հապա՛, չո՛ւտ ըրէք...,
Ժամատան բաներն առնենք երթա՛նք՝ ժամ առալ՝
Գա՛նի Դաւիթ չ'է՛ արթընցեր ու եկեր...»:
Ի՛նչ կար-չըկար՝ կողոպտեցին, առին տարան Իրենց հետ,
Ելան՝ չո՛ւտ մը՝ փախան գացին դէպ Մըսըր: —

464. Ագաւուած Սարկաւագը՝ Գուժը Կ'բերէ Սասուն

ՁՍ·418,419, Ձ(կ·14), կ·57,58,14, Հ·422,30,378, (Հ·378,422), Ձ·՝Հ·422, ե·510,624,770,800,906,968,1003,1103,610,568,739,801, 52,53,(ե·739,770,510,509,1002),Ձ·՝ե·906,Ձկ·489,ճ·33ա·,Ձ·՝ճ· 33ա·,ճ·100,101, Ձվ·8,9, Ձ·, խ·19, (խ·19), Ա·14·

Մէկ Սարկաւագ ‡) ինչ գացեր էր Ջո՛ւր բերելու Աղբիւրէն՝
Անի՛ միայն ազատուեցաւ, գ'Ինքը ծածկեց մէկ անկիւն †),

---

*) Բռնեցին կամ թալեցին, Ռու ժեցին, դրոհ տուին (Վանքին վրայ):
*) Թալանել-թախթփել, Թոթուել, Հիմէն կողոպտել: ‡) ՁՍ· 418՝ Ձկ·489, Ձվ·8, Հ·422, ե·800,1103՝ տիրացու, ե·739՝ փոխրա- ւոր, ե·1003՝ տէրտէր: †) ՁՍ·418, Ձկ·489, Հ·378, ե·739,800,52, 1003,770, խ·19՝ մէջ դիակներուն, Ա·14, ե·770,624,568, Հ·30, կ·57՝ մէջ փսխաքներուն (խըսիր), ե·1103՝ ջրի ծակ:

Ինչպէ՛ս եղաւ՝ գ՝ինք չըտեսան, չըսպանուեցաւ, ո՛ղջ մընաց,—
Երբոր գացին ու գտնացա՛ն այդ Ջօրքեր ×),
Այդ փոքրաւոր՝ լուսուն ելա՛ւ ու նայեցաւ՝ Մարդ չըկա՛յ՝
Ամենք թողեր գացեր են,
Գընաց մըտաւ Վանքին մէջ,
Նայեց որ բ՛նէ···, Վարդապետնե՛ր, Սարկաւագնե՛ր, Երէցնե՛ր՝
Ամենն այնտեղ ըսպանե՛ր են ու թողե՛ր··· ·
*Վանքն ու ժամը *) կողոպտեր են ու տարե՛ր···,*
Մընացեր է միայն մէկ հա՛ն վարագոյր ու մէկ Շապիկ···:
Ան ալ առաւ ժամու–Շապիկն +)՝ Անոնց §) Արեան մէ՛ջ թաթխեց,
Դըրաւ Իրեն Թեւին տա՛կ՝
[Որ տանի հետ՝ ու նըշա՛նք տայ Դաւիթին]
Արընթաթախ գըրկեց Շապիկ՝ դէ՛մ ըրաւ դէպ Դաւթի Տուն ‡),
Վաղեց գընաց՝ որ լո՛ւր տանի 'ի Սասուն:
Եկաւ հասաւ Սասմայ մէ՛ջ,
Սասմայ–Քաղաք որ մըտաւ՝
Ալ չէ՛ գիտեր՝ Դաւիթ ո՞ւր է, որ Ինք չիտակ երթայ հո՛ն,—
Գընաց հարցուց, — «Մեր Տէր՝ Դաւիթ ո՞ըտեղ է···»:
Ըսին, = «Դաւիթ Հի՛ւր է գացեր 1), Գինեխո՛ւմ···»:
Դաւիթն ալ Ինք ի՞նչ է ըրեր այդ մէկ օր···, —
Դաւիթ եղեր տաս–տասնըհի՛նգ տարեկան †),
Եւ կերուխո՛ւմ ունէր այնտեղ, երբ Սարկաւագ գուժ բերաւ:
Սարկաւագը ելաւ եկաւ այդ Հիւրի–Տան Դրա՛ն վըրայ,
Ըսաւ, — «Դաւիթ կանչէք դո՛ւրս գայ, բա՛ն պիտի՛սեմ ես Իրեն»:
Դըրան վրայի Պահապաններն ըսին, = «Գընա Իրեն Տո՛ւն,
Թէ Խունկ թէ Մո՛մ՝ ի՛նչ որ պակսեր է ժամուն՝
Տունէն ուզէ՝ ա՛ռ ու տա՛ր,
Ի՞նչ գործ ունիս Դաւթի հետ···» : —

×) *Ե·770՝ եկաւ Լորա Դաշտ:* 1) *Ց·101՝ Պառաւի տունը:*
*) *Վաճառը, Տաճարը, Դպրատունը, Սպասները, Զարդերը, Հանդերձները, եւն·:* +) *Ե·968՝ Շապիկը Լուսարարին:*
§) *Այսինքն՝ մորթուածներուն:* ‡) *ՁՄ·418՝ հօրեղբօր տուն:*
†) *Թերեւս «իր տարեդարձի տօնը կը կատարէին՝ խնջոյքով»:*

465. Սարկաւագը Գինեխումին Ցեղը՝ Դաւիթի Հետ Դէմ-Դէմի

Զ·՝Հ·422, (Հ·30), Հ·378,30, Զ(Ե·906), Զ·՝Ե·906,801, Ե·906,1103, 53,510,568,739,801,770,624, ԶԿ·489, ԶՍ·419, Կ·58, ԶՎ·10,Զ·Ց·101, Խ·19,20, Ա·15·

Տիրացուն ալ՝ տեսաւ որ չէ՛, դ՚ինք չե՛ն թողուր երթայ ներս՝
Չե՛ն ալ կանչեր՝ որ Դաւիթը ելնէ դուրս՝
Ան ալ դընաց՝ Չէնով–Օհա՛ն ուղեց տեսնել իրեն տեղ։
Չէնով–Օհան հարցուց ըսաւ, — «ի՞նչ է եղեր, Սա՛րկաւագ...»։
= «Ապա...՝ Մեր վանք կողոպտեցին ու տարա՛ն...»։
Չէնով–Օհան Ապտա՛կ մ՝ զարկաւ Տիրացուին, վըրընտեց։
Դաւիթ նայեց եւ անդիէն՝ ըսաւ, — «Հօբա՛ր, ի՞նչ կայ որ...,
Իմ Տիրացու Փոքրաւորին ինչո՞ւ այդպէս տըփեցիր...»։
Օհանն ալ թէ, = «Ապա դիտե՞ս Քու Տիրացուն ի՞նչ կ՚ըսէ...,—
«Մեր Թագաւոր Ծո՛ւռ է,–կ՚ըսէ–, եկեր այստեղ նըստեր է»...»։
Դաւիթ կանչե՛ց Սարկաւագը՝ որ կեցեր էր Դուռին մէջ, —
— «Եկուր այստե՛ղ, նայիմ,–ըսաւ–, ի՞նչ կ՚ըսես...»։
Ան ալ դընաց Դաւթի մօտ,
Նայեց տեսաւ որ Դաւիթը՝ Սեղան ‡) դըրեր՝ նըստե՛ր է...,
*Նըստարանը դըրեր՝ այսպէ՛ս *)՝ նըստեր վրա՛ն...,*
Ոտը ձըդեր վեր՝ Ոտի՛ն...,
Եօ՛թը տարեան Նըռա՛ն–Գինին լըցեր Գաւաթ՝ բըռներ Չե՛ռ...,
Մէկ հատ ալ Սագ խորոված է՝ դըրած այնտեղ՝ Փիլաւով...,
Մէկ կողմէն հոն կարմիր–Գինի՛ն կըխըմէ՛ ու կըխըմէ՛...,
*Մէկ կողմէն ալ Հա՛ց *) կ՚ուտէ...։ —*
Խըմե՛ր, խըմե՛ր..., խո՛ր դինովցե՛ր է այնտեղ...,
Իր Մարդերուն հետ Գինեխո՛ւմ կ՚ընէ հոն...։
Այնպէ՛ս խըմեր է Դաւիթը՝ որ խելք չըկա՛յ Իր Գըլուխ...,
Եւ Աչքերը չե՛ն բացուիր...,
Ատըտորէն լո՛ւր չունի՛...։ —

---

‡) Ե·801՝Դիվան (ընկերներով կերուխում, խնջոյք)։ *) Այսպէս, Սա՛նկ մը, թեք ինկածի պէս։ *) Հաց, Հաց եւ հացի հետ ուտելիք (պանիր, միս, համեմեղէնք եւն.)։

466. Սարկաւագը Երգով Կ'խօսի Դաւիթին

Ե·624,1103,968,510,624, (Ե·770,769,624), Զ·՝Ե·968,569,Կ·58,
Հ·30, 378,31, Զ·՝ՁՍ·419, ՁՍ·419, Զ(ՁԿ·490), ՁԿ·490,491,
Զ·, Ճ·101, Խ·20, (Խ·20)·

Սարկաւագն ալ դընաց կեցաւ Դըրան դէմ,
Զայնը ճըդեց ու ըսաւ· — †)
— «Խըմէ՛ Դաւի՛թ, որ խըմէ՛···, կարմի՛ր Նըռաճ–Գինի՛ճ··· ·
Քո վա՛ճիճ եճ խակած՝ տարած վեր՝ Հիմաճ···,
Քու վարադպետճ(երճ) ու Տիրացո՛ւիճ եճ ըսպաճած վեր՝ Դըրաճ···,
Դու խըմէ՛ Քո աճուշ Գինիճ, որ խըմէ՛···,
ես ըսեմ §) «Ամո՛ւշ՝ Մեր Դաւի՛թիճ»···»:
Դաւիթի Աչքը Տիրացուի՛ն որ առաւ՝
= «Բարի՛ ըլլայ, է՛ Տիրացու,–ըսաւ՝ Անոր նայելով–·
Ինչո՞ւ համար ես եկեր···,
Ձըլլա՞յ վանքին մէկ պակսութի՛ւն մ՝ կայ այսօր··· ·
Ով՞ընկ է կ'ուղես···, Ձէ՞թ է կ'ուղես···, ի՞նչ է պէտք···,
*Շո՛ւտ առ դընա՛ որ Քու ժամէն *) ետ չ'իյնա՛ս»:*
Դարձաւ ապա Իր Հօրեղբօրն ու ըսաւ, —
— «Հօրա՛ր,–ըսաւ–, մէկ նայէ տե՛ս՝ թէ Վանէից ի՞նչէն է պակաս···,
Սարկաւագը եկե՛ր է, —
Ով՞ընկն է պակաս, Մո՞մն է պակաս, Ձէ՞թն է պակաս՝ թէ՞ Հաց–Ջուր,
Տըւէ՛ք Իրեն՝ թող տանի՛···»:
Եւան բերին՝ Ով՛ընկ, Մոմ ու Ձէ՛թ՝ Տիրացուին Ձե՛ռք տըւին,
Ըսին, = «Ել ա՛ռ՝ ու դընա՛···»: —

467. Սարկաւագն Իր Երգը Կըկրկնէ

ՁԿ·492,489,493, Զ·՝ՁԿ·493, ՁՎ·10, Ե·1103,770,Հ·378, Ա·15,
Ճ·101, Խ·20·

Սարկաւագը նորէ՛ն ըսաւ կանչելով· — ‡)
— «Շա՛տ մը բարիճ՝ Մեր Պարոնիճ,
Մեր Տէր ընտիր Սուրբ–Սեդաճիճ †)
Ձեռճ է բըռներ Նըռաճ–Գինիճ, ‡) —

†) *Երգով*: §) Ե·968՝ *ես անուշ էնեմ՝ ուղղելի՝* ըսեմ:
*) *Ժամ, ժամասացութիւն*: ‡) *Երգով*: †) *Ճաշի սեղանը Հայաչխարհին մէջ՝ սուրբ, ընտիրակա՛ն կըճանչցուի*: ‡) *Համեմատէ՝ առաջին երկու տողերը՝ Մնուճդի Ալէլուին հետ՝* [*իմ «Բի՛ւր Ակ, Հազա՛ր Ակ», էջ 193, Բ·*):

Չ'ը՛սեր եկաւ առիւ Մարութ-այ-Բա՛բր-Ասպարածին...,
Վարդապետներն ըսպանեցին, Տիրացու՛ մա՛ն կոտորեցին...:
Դաւի՛թ, բարո՛վ ես ընստեր՝ կըխմե՛ս անուշ կարմիր-Գինին...,
Եկին՝ Մարութ-այ-Բա՛բր-Ասպարածին խակեցին...,
Վա՛նէն ու Ըսպասներ կողոպտեցի՛ն ու առին...,
Քառսո՛ւն-Քառսուն կըտրեցին՝ գացին...»:

Դաւիթ կ'լմկ *) *չըթախիեցա՛ւ, չըհասկըցա՛ւ ի՞նչ կ'ըսէ·*
Նորէ՛ն պօռաց, = «Ո՞ւնկն է պակաս, Մո՞մն է պակաս, Սա՛րկաւագ,
Ըսէ՛՝ տան...»:

468. Սարկաւագ՝ Երդոյ Անգամ Կըգուժէ Վանիին Ադէտը

Ե·510,624,568,569,1003,801,770,739, 53, (Ե·510,1003,739),
Չ·՝Ե·510, Ճ·101ա·, Ճ·101, Ա·15, Խ·20, Չ(Հ·421), Հ·31·

Սարկաւագը կեցաւ դի՛ր մ' ալ՝ խաղով ըսաւ Դաւիթին· — ‡)

— «Վե՛ր եկիր, Դաւի՛թ, վե՛ր եկիր,
Վա՛նէն են կողոպտեր..., ըսպանե՛ր են Վարդապետներ՝
Ինչ Ոսկի, Գանազա՛ն կըբըռնէին,
Քարոզ կուտային ժողովուրդին, —
Ափսո՛ս, հազա՛ր ափսո՛ս..., ըսպաներ են Վարդապետներ,
Վեղարնե՛րը մէջ ժամուն անտէ՛ր մընացեր...:

— Վե՛ր եկիր, Դաւի՛թ, վե՛ր եկիր,
Վա՛նէն են կողոպտեր..., ըսպանե՛ր են Մեր Երէցներ՝
Ինչ Ոսկի Սըկին *) Ձեռքը բըռնած՝ Սըրբոյ-Խա՛չն կուտային
[ժողովուրդին,
Աւետա՛ռն կըկարդային՝ մէջ Տաճարին, —
Ափսո՛ս, հազա՛ր ափսո՛ս..., ըսպանե՛ր են Մեր Երէցներ,
Փիլոնները՛ մէջ ժամուն անտէ՛ր մընացեր...:

— Վե՛ր եկիր, Դաւի՛թ, վե՛ր եկիր,
Վա՛նէն են կողոպտեր..., ըսպաներ են Սարկաւագներ՝
Ինչ Ոսկի Բուրվա՛ռ կան կ'ածէին †) մէջ ժողովուրդին, —
Խո՛ւնկ կըծըխէին առջեւ Խորանին·
Ափսո՛ս, հազա՛ր ափսո՛ս..., ըսպանե՛ր են Մեր Սարկաւագներ,

*) Է'լմէկ, *Դարձեալ*: *) Սկի, *Սկիհ*, *Հաղորդութեան աման*:
‡) *Երգով*: †) *Ե·569՝ կան կըցցեն՝ ուղղելի՝ կան կ'ածըցէն*:

Շապիկնե՛ր մէջ ժամուն արնո՛տ մընացեր...»:

Դաւիթ նորէ՛ն դըլխու չ՛ինկա՛ւ՝ թէ ի՞նչ կ՛ըսէ Տիրացուն.
Նորէ՛ն ըսաւ, = «ի՞նչն է պակաս՝ իմ Վանքին,
Ո՞ւնկն է պակաս, Մո՞մն է պակաս, Զէ՞թն է պակաս՝ թէ՞ Հաց-Ջուր,
Տըւէք տանի՛ Տիրացուն...»:

469. Սարկաւագն Այս Անգամ Արեւոտ Շապիկը Կ'ընտրէ Դաւիթի Առաջ

Զ·՝Հ·378,Հ·378,422,31,(Ե·569,510),Ե·510,569,739,624,906,968,53, 770,801,1003, Զ·՝Ե·1003,801,770,968, ՁԿ·494, Կ·58,14,Ճ·33ա·, Զ·՝Ճ·33ա·, Ճ·101,Զ՝Ճ·101, Ա·15, (Ա·15), Խ·20·

Սարկաւա՛գն էր, — տեսաւ գինո՛վ է Դաւիթ,
Երի՛ք անգամ այդպէս ըսած չըհասկըցա՛ւ ու չելաւ՝
*Վեր՝ երեքին *)՝ Ան ալ վերցուց ու ըսաւ. — §)*

— «Դաւի՛թ, բարով չընըստի՛ս Գինեխում..., ×)
Անուշ չըխմե՛ս այդ կարմիր Նըռան–Գինին...,
Եկաք Մարութ-այ-Բա՛րձր–Ասպարածին Բակեցին...,
Գառսո՛ւն–Գառսուն կըտրեցին՝ գացին...»: —

Ըսա՛ւ թէ չէ՝ չըսա՛ր մընաց, Սարկաւագի ճար կըտրաւ,
Տեսաւ Դաւթին խօսք հասկըցնել չի՛ կըրնար՝
*Ան ալ ժամու արնո՛տ Շապիկ՝ հանեց նետեց Իր *) առջեւ ‡),*
Լացաւ՝ ըսա՛ւ մէկ կողմէն. —
— «Կըրա՛կ իյնայ Քո Ու՛նկ, Քո Մո՛մն ու Քո Զէ՛թ...,
Աստուած Քո Տուն չ'աւերէ՛...,
Բա՞ն պակաս է Քու Վանքին..., —
Ոչ Ունկ, ոչ Զէթ, բա՛ն պակաս չ'է՛ Քու Վանքին..., —
Ո՞ւր են այն Քու Վարդապետները՝ Քառասուն...,
Ո՞ւր են այն Քո Տէրտէրները՝ Քառասուն...,
Ո՞ւր են այն Քո Սարկաւագներ՝ Քառասունէն մէ՛կ պակաս...,
Ո՞ւր են այդ Քո Բաթման–Բուղէն եւ Օհան..., —

---

*) վեր՝ երեքին, *երեքի վրայ, երրորդին*: §) *երգով*: ×) ՁԿ· 489,494՝ գինեխում: *) Իր, *Դաւթի իր առջեւը*: ‡) Ե·739՝ *հատուած մը կ'պակսի 455–456 տողերուն մէջ*:

Դու նըստե՛ր ես այստեղ Քո Հացն ու Գինի՛ն...,
Ու լուր չունի՛ս Քու Վանքէն..., —
Եկան խաբեցի՛ն Օհան-Աղբակեցին...,
Մարութ-յա-Բա՛րձր-Ասպարածին աւերեցին ու տարան...,
Քառասուն Վարդապետ կըտրեցին՝ մէջ Խո՛րանին...,
Քառասուն Երէց ըսպանեցին՝ վեր՝ Սե՛ղանին...,
Քառասունէն մէ՛կ պակաս Սարկաւագ կըտրեցին՝ մէջ Մա՛տուռին...,
Ես մինա՛կ եմ պըրծե՛ր—եկեր Քո Վանքէն...,
Դիակներուն տա՛կ պահուեցայ՝ Չիս չըտեսա՛ն Դահիճներ...,
Թէ չե՛ս հաւատար՝ ահա՛ արնոտ Շապի՛կը Լուսաբարին...»: —

470. Դաւիթ Կ'սպաւի Ու Կ'հարցաքննէ Սարկաւագը

Ե·53,739,906,510,569,968,770,801,1003, Զ·՝Ե·906, (Ե·906), Հ·422, 31, Զ·՝Հ·422, (Հ·31,422), Կ·58,14, Զ·՝Կ·14, ԶԿ·495, Ճ·33ա·, Զ·Ա·15, (Ա·15), Խ·20,21, (Խ·20,21)·

Արնոտ Շապիկն ինչ Սարկաւագ նետեց այդպէս Իր առջեւ...՝
Դաւիթ որ հոն ժամարարի Շապիկ տեսաւ արիւնո՛տ...՝
Գըլխո՛ւն զարկաւ..., ըսաւ, — «Ո՛ւհ...,
Իմ Վանքն աւերա՞ծ..., կողոպտա՞ծ...,
Վարդապետներն ըսպանա՞ծ..., —
Իմ Տիրացուք ըսպանա՞ծ..., —
Այսպէ՞ս կ'ըսես Դուն, ըհը՞...»: —
Գինին Գըլխէն որ Թողո՛ւց՝
Ըսթափեցա՛ւ, Խելքը եկաւ Իր վըրան,
Դիժարացա՛ւ, լացա՛ւ՝ ըսաւ, — «Սա՛րկաւագ,
Ատ ի՞նչ բան է՝ եղեր է...,
Ի՞նչ են ըրած..., ո՞վ ըրաւ...,
Ո՞վ էր, ո՞վ չէր այդ ընողն ու ըսպանող...»:
Սարկաւագն ալ՝ եղելութիւն մէկ-մէկ պատմե՛ց Դաւիթին,
Ըսաւ, = «Բա՛, ես ի՞նչ դիտնամ...,
Կուզրադի՞ն էր..., Պիրաբադի՞ն Թէ ի՛նչ ցաւ... *), —
Զօ՛րքը մէկէն նե՛րս փըրթաւ...,
Զարկին այնտեղ ըսպանեցին ու մորթեցին Ամենն ալ...,
Վանքն աւրեցին, կողոպտեցին ու տարան...
Մա՛րդ չըմընաց Ինձմէ զատ..., —

*) Ի՛նչ ցաւ, Ուրի՛շ ցաւի զալիք մէկը, զահրումա՛ր...:

Ես ալ հազի՛ւ փըրթայ–փախայ՝ եկայ որ ֆեղ լո՛ւր բերեմ…»։
Դաւիթ այնտեղ Սարկաւագին չա՛տ բարկացաւ եւ ըսաւ· —
— «Ինչո՞ւ Վանքին Դուռը բացիք Առոնց վրայ…»։
Ան ալ պատմեց թէ ի՞նչ տեսակ խաբեբայութի՛ւն բացին Դուռ…։
Դաւիթն ըսաւ, — «Տըղա՛յ թէ Դուն ո՛ւխ մ՛ ունէիր Ինձի հետ՝
Թող Իմ Վիզը առնէի՛ր…
Ա՛ռ ի՞նչ լուր †) էր որ տըւիր…։
Թէ առնելի՛ք մ՛ ունէիր Դուն Իմ մօտէն՝
Անոր փոխան՝ Թող Իմ Վի՛զը առնէիր…,
Այդ լուրն Ինձի չիտայի՛ր…»։ —

471. Դաւիթ՝ «Ողորմի» կուտայ Սասմանց-Ցաւ Զօջիրուն

Զ·, Զ·՝ *ե*·968,969ա·, *ե*·968,969,968ա·, 969ա·, Զ(կ·1)·

Դաւիթ այնտեղ նորէ՛ն դըտաւ Իր առաջուան լըրջութիւն,
Եւ ըսկըսաւ «Ողորմի՛» տալ Սասմանց–Տունի Զօջերուն, — §)

— «… «Ողորմի»ն, «Աստուա՛ծ Ողորմի»ն…,
Առաջի(ն) Ողորմին կուտամ այն Գո՛ւմբիկ–Թագաւո՛րի՛ն։
— Ողորմի՛ն, Աստուա՛ծ Ողորմին·
Առաջի(ն) Ողորմին կուտամ Անհա՛տ–Գոհա՛րի՛ն 1),
Որ Անիկ Սաճասար–Բազդա՛սարի Մա՛յրն էր…։
— Ողորմի՛ն, Աստուա՛ծ Ողորմին·
Առաջի՛ Ողորմին կուտամ Սաճասար–Բազդա՛սարի՛ն։
— Ողորմի՛ն, Աստուա՛ծ Ողորմին·
Առաջի՛ Ողորմին կուտամ Քառասուն–Ձի՛ւղ–Ծամ–Գոհա՛րին…,
Որ Անիկ Սաճասարի Կի՛նն Է՛ր…։
— Ողորմի՛ն, Աստուա՛ծ Ողորմին·
Առաջի՛ Ողորմին կուտամ այն Դեղձա՛ն–Խաթո՛ւնին 2),
Որ Անիկ Բազդասարի Կի՛նն Է՛ր…։
— Ողորմի՛ն, Աստուա՛ծ Ողորմին·
Առաջի՛ Ողորմին կուտամ Առի՛ւծ–Մըհէրի՛ն… 3),
Որ Անիկ Սաճասարի Որդի՛ն Է՛ր… 4)։

---

†) *ե*·739՝ գէնչգէլէ՝ *ուղղելի՝* ակնչկլա (*լուր*)։ §) *Երգով*։
1) *Այսինքն* Լուսիկ–Թագուհիին։ 2) *ե*·969՝ Խանդուտ Խաթունին։ 3) *ե*·969՝ Թառլան Մըհէրին։ 4) *ե*·969*ա*·՝ որ Էնիկ Դաւթի

— Ողորմի՛ն, Աստուա՛ծ Ողորմին՝
Առաջի՛ Ողորմին կուտամ վառվառ–վարդա՛նին... 5),
Որ Անիկ Բաղդասարի Որդի՛ն Է՛ր...:
— Ողորմի՛ն, Աստուա՛ծ Ողորմին՝
Առաջի՛ Ողորմին կուտամ այն Շո՛ւշան–խաթունի՛ն 6)
Որ Անիկ Առիւծ–Մըհէրի կի՛նն էր...:
— Ողորմի՛ն, Աստուա՛ծ Ողորմին՝
Առաջի՛ Ողորմին կուտամ այն Նազենիին 7)՝
Որ Անիկ վառվառ–վարդանի կի՛նն Է՛ր...:
— Ողորմի՛ն, Աստուա՛ծ Ողորմին՝
Առաջի՛ Ողորմին կուտամ Դաւիթ–Մըհէրին,
Որ Անիկ Իմ սիրելի Հա՛յրն էր...:
— Ողորմի՛ն, Աստուա՛ծ Ողորմին՝
Առաջի՛ Ողորմին կուտամ այն Հուրի–վարդին՝
Որ Անիկ Իմ սիրելի Մա՛յրն էր...:
— Ողորմի՛ն, Աստուա՛ծ Ողորմին՝
Առաջի՛ Ողորմին կուտամ այն Քառասուն–վարդապե՛տի՛ն...:
— Ողորմի՛ն, Աստուա՛ծ Ողորմին՝
Առաջի՛ Ողորմին կուտամ այն Քառասուն–երէցին 8):
— Ողորմի՛ն, Աստուա՛ծ Ողորմին՝
Առաջի՛ Ողորմին՝ Քառասունէն մէկ պակաս Սարկաւագի՛ն:
— Ողորմի՛ն, Աստուա՛ծ Ողորմին՝
Առաջի՛ Ողորմին կուտամ այն ամէն Լուսարա՛բի՛ն...:
= «Ողո՛րմի», հազա՛ր «Ողորմի՛»...: —
Վերջին Ողորմին կուտամ Սպասանց–Տաճ Զօրին ու Պզտկին,
— «Ողորմի՛» հազա՛ր «Ողորմի՛»... ‡):—

որդին էր *ըսուած է՝ սխալումով*: 5) Վառվառ, վառիկ *կամ* վարի՝ վարդան անունը՝ — *իմ դրի առած ընդարձակ եւ մեծարժէք դիւցազնէին մէջ՝ ի յայտ եկած եւ տպուած Մոկիսան Կանայեանի Քաջանց Տուն երկին մէջ — մեծ լոյս կ՛սփռէ Արշակունեաց եւ Մամիկոնեանց պատմութեան վրայ. Տե՛ս դրծ. Բ. Հատ.*: 6) *Ե.*969՝ Գալփէր(ի)ին:: 7) *Ե.*969՝ Նազուին:

8) *Ե.*969՝ Քառասուն Սարկաւագին (*փոխան* 39–*ի*): ‡) Ողորմին՝ *Տե՛ս նաեւ Հատուած* 1, 191, 237 *եւ* 270:

472. Դաւիթ Կ'վճռէ Ու Պառաւէն Տեղեկութիւն Կ'առնէ

Կ·58, Հ·31,422,379, (Հ·422), Ե·739,801,733,734,906,1102, 969, Զ·՝Ե·739,906,733,734, Զ(ՋՍ·420), ՋՍ·420,421,Զ·՝ՋՍ·420, ՋԿ·496, ՋՎ·10, (ՋՎ·10), Ը·33ա·, Զ· Ը·102, (Ը·102), Ա·16, Զ·

Դաւիթ ապա հարցուց ըսաւ, — «Մա՛րկաւագ,
Այդ Զօրքերը չատո՞նց է որ գացեր են…»:
*= «Անոնք-ըսաւ- վանքն աւրեցին՝ գացին դէ՛ն *),*
*Ես ելեր եմ՝ դէ՛ս *) եկեր… .*
Գընա հասի՛ր այդ Զօրքին՝
Իրենց Զեռքէն ա՛ռ Ինչքեր…»:
Դաւիթ այնտեղ ա՛լ չըկեցաւ մէկ րոպէ…,
Գինու Գաւաթ Գետի՛ն դըրաւ՝ ու ըսաւ· —
— «Ցիշա՛մ †),-ըսաւ-, Հացն ու Գինին, Հա՛յր-կենդանին,
Խաչ-փետրազին՝ վեր՝ Իմ Ա՛յր-Թեւին, —
Մինչեւ չ'չինեմ Մարութեայ-Բա՛րձր-Աստարածին՝ Իմ Հօր Վանք՝
Ներսան-Գինին թող պահք կենայ Իմ Անձին…:
Տըղա՛ք,-ըսաւ-, Դուք խըմեցէ՛ք ու կերէ՛ք,
Ես ալ՝ ահա՛ դընացի…»: —
Դաւիթ չո՛ւտ մը ելաւ այնտեղ կանգնեցա՛ւ·
*Իր Թեւերը տըւաւ վե՛ր *),*
Կանչե՛ց Աստուած՝ եւ անպատրա՛ստ վազեց դընաց դէպի դո՛ւրս §),
*Ոչ բան *) հագաւ, ոչ Շապիկ…:*
Վազեց դընաց մօտ Պառաւ ×),
Ըսաւ, — «Մամի՛կ +), Դո՛ւ ըլլաս ու Քո Աստուա՛ծ,
Ըսէ՛ Ինձի, Ես ո՞ր դեհ-վեր ‡) երթա՛մ որ՝
Գիր՛քաղինի առջեւ կըտրեմ՝ չըփախչ…, —
Ան Իմ Վա՛նքը կողոպտեր է, թախթըփեր է ու տարեր…»:
Պառաւ Ճամբան ցո՛յց տըւաւ· —
*= «Կ'երթաս,-ըսաւ-, ահա՛ այդ Մե՛ծ-Քարի *) կողմ,*

---

*) Հնչել dén, déss: †) Ե·739՝ Իշամս խէր կենդանիից՝ ուղղել՝ Ցիշամ զ՝ խէր կենդանին: *) Թեւերը տալ վեր, Թեւերը աօքտել: §) Ե·801՝ գեղի կուշտ(ը): *) Բան, Ջէն ու զրահ: ×) Ե·969՝ Ծերուհին, Ե·1102՝ Զէնով-Օհան: +) Ե·969՝ Պապի՛կ: ‡) Ե·906՝ ո՞ր տեղ վէ՛ր՝ ուղղել՝ ո՞ր դեհ- վե(ր), դէպի ո՞ր կողմը: *) Քար, Լեռ, սար:

Քու Հօր Որսի–Սա՛րն ու վա՛նքն են այդտեղեր. —
Արդընի՛ն 1) է. Ամբայ–Հողին 1) մէ՛ջ կ՚իյնայ.
Մըսրայ–Մարդը ո՛ր կողմէն ալ որ անցնի՝
Պիտի գայ եւ պիտի անցնի այդտեղէ՛ն։
Կըսրի՛ճ Մարդ ե՞ս՝ դընա Քու Հօր Մարութայ–Վանք, Մուհասար»։
Ու մըտքին մէջ՝ ըսաւ «Ըհը՛, նոր փորձանքի՛ պիտի դանք... .
Այս Մուռ–Տըղան՝ պիտի երթայ՝ նո՛ր ծըռութիւն պիտի ընէ
[*անպատճառ.*
Վանքը նորէն պիտի չինէ՞՝ թէ՞ քանդէ...»։ —

478. Դաւիթ կ՚ողբայ Իր վաճառն Ու Միաբաններըն

Ե.1102, Զ(Ե.1102), Է.378,422,31, (Է.31), Զ.՝Է.422, ԶԿ.496, Ը.33ա., (Ը.102), (Ա.16), Ա.16, (ԶՎ.10).

Մուռ–Դաւի՛թն էր, — ինկաւ ճամբայ ու դընա՛ց,
Խարզանով 1) չուաւ իջաւ Գէնջ 2),
Ու Փասուրով 3) եկաւ հասաւ Մուֆարղին 4),
Գընաց Ամիթ 5), դընա՛ց եկաւ Արղնու–Վա՛նք 6)։
Տեսաւ Վանքը աւերա՛ծ...,
Վարդապետներ, Սարկաւագներն ու երէցներ՝ ըսպանա՛ծ...,
Ժամ կողոպտա՛ծ՝ ու տարա՛ծ... ։ —
Դաւիթ այնտեղ Գըլխո՛ւն զարկաւ, ու խաղով ալ ի՞նչ ըսաւ. — ×)

— «Ձեռքի՛կ, Դու կոտո՛ր մընայիր, չըզարնէի՛ր Իմ վարդապետներն
[*սպաննէիր...*
Աչքեր՝ կո՛յր պիտէր *) Դաւթին ‡)..., —
Ըսպաննում չ՚տեսնէի՛ր Իր վարդապետներուն...,
Ինչ Ոսկի Գաւազա՛ն կ՚առնէիր Իրենց Ձեռ՝

---

1 և 1) Արղնի կամ Արծն, եւ Ամիթ կամ Տիգրանակերտ՝ Աղձնիք Նահանգին մէջ կ՚իյնան։ Ուր՝ Մուռ–Դաւիթ,–ըստ պատումին (Ե.1102)–, «ճամբայ ինկաւ գնաց, իջաւ Խարզանով Գէնջ, Փասուրով եկաւ Ֆարկին, գնաց Համիթ, գնաց Առղընու Վանք» (Հուշ. 473)։ 1) Հին՝ Խորճան, Արգն։ 2) Գղի։ 3) Հազրոյ։ 4) Մեծոփք։ 5) Տիգրանակերտ։ 6) Պաղնատուն։ ×) Երգով։ *) Պիտէր, վայել էր, արժանի էր։ ‡) Է.31՝ Հազար ափսոս, հազար ափսոս իմ վարդապետներ, եւն.։

վնդար կըդըմէին՝ Քարո՛զ կուտային Հայոց Իշխանութիւն...:

— Ձեռնի՛կ, Դու կոտո՛ր կենայիր, չըզարնէի՛ր Իմ Տէրտէրներն
[ըսպաննէիր...

Աչ՛եր՝ կո՛յր պիտէր Դաւթին..., —
Ըսպաննում չ'տեսնէի՛ր Իր Երէցներուն...,
Ինչ Ոսկի–Սըկի՛ն կ'առնէին Իրենց Ձեռ՝
Շարա՛թ–կիրակի՝ Պատարա՛գ կ'ընէին Հայոց–Հաւատին †):

— Ձեռնի՛կ, Դու կոտո՛ր կենայիր, չըզարնէիր Իմ Տիրացուներն
[ըսպաննէիր...,
Աչ՛եր՝ կո՛յր պիտէր Դաւթին..., —
Ոսկի Բուրվա՛ռ կ'առնէին Իրենց Ձեռ՝ Խո՛սնկ կ'ծխէին՝ մէջ
[ժողովուրդին...»:

Դաւիթ այնտեղ ա՛լ չըկեցաւ մէկ րոպէ,
*Ինկաւ Աստնց *) ետեւէ՛ն...: —*

474. Դաւիթ՝ Պիտարադինի Ետեւէն

Զ.՝Հ.31,422,423, Հ.31,379,422, (Հ.379), Ե.53,906,1003,510,569, 739,801,907,823, (Ե.53), Զ.՝Ե.907, ՁԿ.496, Կ.58, Զ.՝Կ.58, ՁՎ.8, Զ(Ճ.33), Ճ.102, (Ճ.102), Խ.21, Ա.16, Զ.

Ինչպէ՞ս ինկաւ Դաւիթ Աստնց ետեւէն. —
Վազեց մըտաւ Պըրակի մ՝ մէ՛ջ, այդ ճամբան,
Ձեռը զարկաւ մէկ ահագի՛ն Բարդի–Ծառ §)՝
*Մըզեղախա՛ռ *) քաշեց ‡) դո՛ւրս,*
Ափ քըսեց վրան՝ ճիւղեր լոպկե՛ց մերկացուց,

---

†) Հ.31՝ Օրէնք կուտային իմ ժողովրդին: *) *Աստնց՝* Ճ.33ա., թշնամիներու(Ճ), ՁԿ.496՝ կուզրադինի: §) Ե.569՝ այն աւուր ձղլօրի Ծառ՝ ինչ ինք ձղլօր տուեր էր (*Տե՛ս Հատ.425*), Ճ.102՝ պատու ա(Ճ)թարոց՝ ինչ թոնիր կ'խառնեն (*առաւ ինկաւ գօրքին ետեւէն*), Խ.21՝ չինարի մ՝ ծառ, Ե.906՝ կախմախի ծառ: *) Մզեղախառ(Ճ), *Արմատներով մէկտեղ, արմատաքի:* ‡) Ե.906՝ *կը քաղի՝ ուղղել՝ կը քաշի (կըքաշէ):*

*Ըրաւ Իրեն Դերանի՛ պէս Բալանդա՛րկ *),*
Դըրաւ Ուսին՝ ու դընա՛ց...:
Շուտ վաղելով՝ դընաց Զօրքինմօտհասաւ,
Վազեց հասաւ Բաթման-Գետի կամուրջին †),
Գնաց այդ Ջոջ-Քարի տակ:
Պիրաբադին դիտէ՛ր թէ ի՞նչ էր Դաւիթ..., —
Անոր համար՝ ինքը կ՝երթար մէջտեղէն,
Զօրքին կէսը՝ իր առջևէն, կէսն ալ Իրեն ետևէ՛ն,
Որ Դաւիթը չիդա՛ր հասնէր մինչեւ Ինք:
Դաւիթ դընաց՝ կեցաւ այդ Ջոջ-Քարի տա՛կ,
Մէկ նեղ Ձորի մ՝ բերանին,
Անոր անուն ալ «Մըռնէլայ Կապան» կ՝ըսեն Գեղացիք...
կեցաւ քիչ մը՝ ու նայեցաւ, Ակա՛նջ տըւաւ Հովերուն՝
Թէ՝ «Դոռդըռոց ×) մ՝, ձայն մը չի՞ դար Իր Ականջ...,
Նայինք,–ըսաւ–, Անոնք ևիսած ու անցա՞ծ են այս ճամբան...»:
Ու լըսեց որ...՝ Պիրաբադին կըհայհոյէ՛ ու Ի՛ըսէ. —
— «Դաւիթի՛ Հա՛յրն...՝ այսպէ՛ս ընեմ..., ու այսպէ՛ս... .
Թէ՛ Իր Վա՛նքը կողոպտեցինք, քակեցինք...,
Թէ՛ Վարդապետ, Տէրացուն է՛ր կըտրեցինք...,
Դէ՛հ, որ կըրնայ՝ Թող դայ բըռնէ՛ Մեր առջեւ...»:
Դաւիթ նայեց՝ տեսաւ որ Զօրքն ի՞նչ ըրեր. —
*Ինչպէս Վանքի Աբօ՛ան *) ըլլայ՝ տակի Դաշտ +)՝*
Պիրաբադին իր Զօրքն առեր՝ նըստեր հո՛ն +)...: —
Իրենց Ձիանք՝ բա՛ց թողեր են՝ կ՝արածա՛ն...,
Որը Հագո՛ստ կըմաքրէ...,
Որը Իր Ձի՛ն կըքերոցէ, կըլըսայ...,
Որը կ՝երգէ, խա՛ղ կ՝ընէ...,
Ու որմէ՛կն ալ՝ քընած է...: —
Զօրքին կէսը՝ հո՛ն, առջեւ,

---

*) Բալանդար(կ), հնչէլ ... dar: (բաղանտ), Արդն, նիզակ, չիրիտ:
†) Հ·379՝ Լուրայ դաշտ: ×) Ե·907՝ դըրդըռոց՝ ուղղելի գըրգըռոց (դոփիւն՝ ձիաւոր զօրքի): *) Աբօտ, Աբօտավայր, մարդ, դաշտ, կալուածք, Հ·422, Լ·10՝ զօռուխ: +) Հ·379՝ այս դաշտը կոչուած է Լուրայ Դաշտ, ուր պիտի գայ վերջէն՝ Մըսրամէլիքի բանակը՝ Դաւիթի հետ կռուելու:

Մխուա կէսը՝ հո՛ս, եսեւ,
Անոնց Մեծը՝ Պիրաբադին ալ՝ կէ՛ս–տեղ···։ —

475. Դաւիթ՝ Բարդի-Ծառովը Կ'ջարդէ Պիրաբադինի Զօրքը

Զ·՝Ե·1003,569,740,823,53,907,510,801,739, (Ե·907,53), Զ·՝Ե·740, Է·31,423,379, Զ(Է·423), Զ·՝Է·423, (Կ·58), Կ·58, ԶՎ·8, Ճ·33ա·, (Ճ·102), Ճ·102, Խ·21, (Խ·21), Ա·16·

Դաւիթ այնտեղ ի՞նչ ըրաւ· —
Վաղեց իջաւ Զըխտաձորիկ ‡)՝ առջեւ կըտրե՛ց այդ Զօրքին,
Ա՛լ տեղ չըկա՛յ որ փախին···։
Այդ Բարդի–Ծառ՝ որ դըրած էր Իր Թեւին՝
Բըռնե՛ց Իրեն ձիւղերէն,
Գերանի՛ պէս ըրաւ Իրեն Բալանդա՛ր,
Իջա՛ւ փըրթաւ այդ Զորին մէջ՝ ու Զօրքի՛ն···։ —
Ծառին Արմատ՝ աջո՛ւ դարձուց, ձախո՛ւ դարձուց՝ Թուրի պէս,
Թա՛փ տըւաւ ու՝ ա՛յսպէս զարկաւ, ա՛յնպէս զարկաւ †), փարատեց,
Մէ՛կ վարկեանին՝ տա՛ս–տասնըհինգ, քըսա՛ն Հոգի դըլորեց, —
Որի Վիզին ու Գըլխի՛ն է որ դըպաւ՝
Թըռցուց տարաւ մէկ ժամ տեղ··· .
Որի Մէջքին ու Ոտքերո՛ւն է դըպաւ՝
Զարդ–բո՛ւրդ ըրաւ՝ Թաւալցուց··· .
Որի Ձիո՛ւն է դըպաւ՝
Զարդե՛ց, բըրդե՛ց, պատկեցո՛ւց···։
Մընացողներ՝ քըշե՛ց տարաւ՝ լեցուց Գե՛տ···,
Ու կամուրջի՛ն ալ վըրան՝
Ա՛յս կողմէն է՝ չո՛ւռ տըւաւ Զո՛ւր, վա՛ր թափեց,
Ա՛յն կողմէն է՝ չո՛ւռ տըւաւ Զուր, թափեց Գե՛տ,
Ու Գե՛տ տարաւ, կամ խեղդե՛ց···,
Այդ Զօրքն ու Ձին՝ ամեն այնտեղ լըմընցուց··· .
Աղբակեցի–Օհանն ըրաւ երկո՛ւ կըտոր՝ ձըղեց հո՛ն ··· .
Պիրաբադին մինա՛կ պըրծաւ այդ Ջարդէն···,
Ըսթափեցա՛ւ, իրիչկաց ե՛տ ու տեսաւ՝
Որ Դաւիթը՝ մէկ Բարդի–Ծառ ×) Ձեռքին մէջ՝

‡) Զխտաձորիկ, Ձոյգ ձոր(եր)։ †) Ձեռքով՝ աջէն ձախ, ձախէն աջ՝ ցոյց տալով։ ×) Հնչել bardi, ոչ թէ փարթի։

Իր Զօրքերը աջէ՛ն–ձախէ՛ն վարատեց . . . , —
Ինքն ալ իր Ձին քըշե՛ց–վախցուց՝ ու կ՛երթայ . . . :
Բայց ո՞ւր պիտի կըրնայ երթալ՝ Դաւթի Ձեռքէն ազատուիլ . . . :

476. Դաւիթ Կ՛պատուհասէ Պիրաբադինը

Զ., կ.58,59, Զկ.496,497,498, Զ(Զկ.496), ե.907՝823,824,511,510,569, 907,740,569,801,1004,570, (ե.1003,801,740,823,510,569,511,570), Զ.՝ե.823, Հ.423,31,379, (Հ.423), Զ.՝Հ.423, Զ(Հ.423), Զվ.8, Զ,ի.21, (ի.21), լ.26, Ա.16.

Դաւիթ այնտեղ ի՞նչ ըրաւ , —
Դարձաւ նայեց՝ թէ «Ուրիշ Մարդ ա՛լ չըմընա՞ց այդ Զօրքէն»,
Տեսաւ՝ առջեւ՝ Դաշտի մէջէն՝ Պիրաբադին կըփախի՛ . . . ,
Ինքն ալ ինկաւ եաւէ՛ն . . . :
Պիրաբադին Ձի՛ վ էր ,
Եւ իր Ձին ալ՝ վեցոտնէ՛ն էր , կըթըռի՛ր . . .
Զոլ-Քարի §) քով՝ Գետն անցեր էր միուս կո՛ղմ . . . ;
Դաւիթ կանչեց , — «Պիրաբադի՛ն †), ո՞ւր պիտ՝ պըրծնես իմ Ձեռ-
[քէն . . .
Ես կըրնա՛մ գալ՝ Քե՛զ ալ զարնել՝ բսպանել . . . ,
Առաքինըրդ քաշել զարնել Ճակատիդ . . . ,
Բայց կեցի՛ր Դուն . . . » : —
Ու տեսա՛ւ որ՝ Բարդի-Ծառը ծանրութի՛ւն է Ձեռքին մէջ՝
Ըրդեց Գետին , վազեց դէպի Թըշնամին . . . Ծ.).
Ու հասէ՛հա՛ս եղաւ այնտեղ՝ Պիրբադինի՛ն ու Ձիուն , —
*Իր Հազուստը ×) ճեղքե՛ց Թալեց *) Փակի՛ պէս ,*
Ճի՛շդ կառչեցուց +) Թամբի՛ն մէջ ,

---

§) Ա.16 Ճիւզ՝ ուղղել՝ ճիւղ (Ջոլ քարի): †) կ.58՝ ձիո՛ւ skr: Փոփոխակներն՝ առ հասարակ՝ Կուզբադինի անունով կ՛պատմեն. Տես-նել սակայն Հատ. 460՝ սրջ.ի ‡ Ծնեբինը.: Ծ) Տե՛ս Ծ.՝ քիչ վա-րը: ×) Հասկնալի անշուշտ՝ որ «մէջքէն գօտին արձկեց ու նե-տեց»՝ Աբռաշէսի Շիկափոկ-Պարանին նման. մեր օրերու lasso-ն: *) Թաղել, Թափով դէպ առաջ նետել, արձակել: +) Հ.423՝ կաղնեց [= կալնել, բռնեցնել, կառչեցնել. Զ.]:

Զին՝ քամակէն՝ ետ–ե՛տ քաշեց, զօրա՛ց *) հասցուց Իրեն մօ՛տ,
Զեռը նետեց Զիւն Պոչին՝ ու քաշե՛ց...:
Պիրաբադին խըթե՛ց Իր Զին, ասպանդակե՛ց՝ որ պըրծի...,—
Զիւն Պոչը՝ իր արմատէն՝ փըրթաւ մընաց Դաւթի Զեռ(ք),
Զին ալ՝ պըրծա՛ւ, աբընկըւիկ *)՝ ու փախա՛ւ... Ծ.):
Դաւիթ տեսա՛ւ՝ Պիրաբադին Իրեն Զեռքէն կըպըրծի...,
[Զէ՞ Սնոր Զին վե՛ց-ոտնէն էր, կըթըռէ՛ր †)],
Ան ալ հասա՛ւ՝ Գետնէն վերցո՛ւց Բարդի-Ծառ,
Ըրաւ Իրեն Բալանդար,
Ու մէ՛կ թափով՝ զարկա՛ւ նետեց Պիրբադինի եռեւէն...:
Բարդին գընաց ինչպէս Նե՛տ...՝
Սնոր Արմին մըղեղ *) ղըպաւ՝ Պիրբադինի Փոր պատռե՛ց...,
Աղիքները թափեց դո՛ւրս...:
Ելաւ այդպէս Աղիքները Զեռքը բըռնած խոթած՝ ներս՝
Է՛լմել փախաւ գընաց Մըսր...: —
Դաւիթ պոռաց Իր եռեւէն ու ըսաւ.—
— «Դէ՛, գընա՛ Դուն՝ բարե՛ւ ըրէ Մէլիքին՝
Ըսէ՝ «Այսպէս մա՛րդ է՝ գընաց ի Սասուն...
Անդամ մըն ալ չ'ելնէ՛ ու գայ Իմ վըրայ...,—
Դեռ չ'է՛ մեռեր Սասմայ-Ծուռ(ն)...»:

Է՛..., Պիրբադին կ'իյնէ՞ դառնայ՝ որ պատասխա՛ն տայ Դաւթին,—
Զարկա՛ւ Զիւն, փախա՛ւ կ'երթայ դէպ Մըսըր...:

---

*) Զօրեղ, ճիւղով քաշել, ձգաել: *) Աբընկըւիկ, Արիւնլուայ: Ծ-Ծ.) Հ.423-ի այս հատուածովը տրուած զմայլելի պատկերին մէջ՝ մեր Ազգային ժողովրդական Դիւցազնավէպին Զորրորդ Ճիւղին հեղինակը՝ Թլղ կամ Ծուռ–Դաւիթ՝ կը նոյնանայ իր մարմնաւորած պատմական քո՛ւին անձին՝ Տրդատ Հաչագործ Թագաւորին հետ. (Փաստացի մանրամասնութիւնները՝ գործիս Բ. Հատորովը): Համեմատէ՛ Խորենացիին ըսածները, Բ., Ձե., Բազաց Թագաւորը՝ ճիւղն վրայ՝ ետ–ետ քաշելով՝ «ցանցելով» իրեն մօտեցնել–ապանելու մասին: Որ՝ զբաթաբերն աշխարհաբարի վերածող Ներս. Վ. Սահակեանն՝ կ'ընդունի թէ չիմք է, ու չէ կրցած պէտք եղած կերպով բացատրել՝ ոչ բնագրին մէջ, ոչ 499-րդ Մանօթութեանը մէջ: Մեր վէպին այս կտորը՝ չա՛տ լաւ կը լուսաբանէ Խորենացու յիշեալ չիմք մասը: †) Վեցոտնեան այս ձին՝ Կուզբադինին է՝ այս անգամ զարձած եօթ-ոտնեան, ըստ փոփոխակներու: Տեսնել Հատ. 493-494: *) Մզեղ, Սաւր ծայր(ը):

477. Դաւիթ Երկին Կ'օչնցնէ Մարութայ-Վանիք

Հ.31, Զ.՝Հ.31, Ե.53,803,771,1102,624,768,625, (Խ.24), Խ.24, Կ.14, ՁՍ.421, Ճ.102ա., Ձկ.614.

Դաւիթ ելաւ՝ ժողվեց այնտեղ՝ վանքին եղած ամէն բան,
Աւարն առաւ դարձուց բերաւ դրաւ վա՛նք,
Տեսաւ որ վանքն ամէն քակեր, աւերե՛ր են ու ձրգեր...,
Դիակները ամէն վերցուց ու թաղեց,
*Կանչեց Մարդեր՝ վանքն ու ժամը սեռըրեց *),*
Նոր Վարդապետ ու Երէցներ, Սարկաւագնե՛ր կանչեց հոն,
Լըրի՛ւ-լըրիւ՝ Քառասնե՛ն-Քառասուն՝ տարաւ դրաւ ժամուն մէ՛ջ,
Դաւիթ դե՛ր մ՛ալ՝ վանքը չինեց, առաջուան պէս, ու չէնցո՛ւց,
Նոր Գաւառա՛դ ըրաւ մէջ,
— Ձեր Ամենուդ խղճերուն ալ տա՛յ լըրո՛ւմ...—,
Հաստատե՛ց ու Իրեն Տեղը կանգնեցո՛ւց,
Ուժն աւելցուց, խըճամե՛ց...,
Բաթմանի-Բուղէն, Ճարպար-Քամին դրաւ Նորէն Դրռնապա՛ն,
Գաւուէ՛ր ըսաւ որ՝ «Վանքին Դուռ առա՛նց Իրեն Հրամանին՝
Մէկո՛ւ մ՛ վրայ չըբանա՛ն»:
Գիշեր՝ Դաւիթ մըննաց այնտեղ, Իրեն վանք,—
Գիշերուան մէջ՝ Նորէն՝ Դաւթի Ալ-Թեւին վրայ չինուեցաւ՝
Մարութայ-Բա՛րձր-Աւագրածնի Սուրբ-Նըշան՝ Խա՛չ-Փետրագին,—
«Մխէ-Խաչը՝ վեր՝ Դաւթի Ա՛լ-Թեւին»...,—
Աս(ա)ծու Հրամա՛նն էր այդպէս:

Աստուծոյն Դաւիթ ելաւ՝ դարձաւ որ դայ Իրեն Տուն:

478. Դաւիթ՝ Ամիթի Ծուրբ Կ'յառկացնէ Վանիքն

Զ.՝Ե.803, ՁՍ.421, Խ.24, Զ.՝Ե.1102,1103, Ե.1102,1103.

Աստուծոյն՝ Դաւիթ ելաւ դարձաւ կուգար դէպ Սասուն,
Ճանապարհին՝ քըշեց գընաց դէպ Ամիթ,
Հարցուց ըսաւ, — «Մի՛վ կըտիրէ Այս Տեղեր.՞.՞.՞»:
Անոնք ալ թէ, = «Մըսրամէլիք՝ Քո եղբա՛յրն...»:
— «Իմ եղբայրը Մըսրամէլի՞ք, կ'ըսէք Դուք... .

---

*) Սերտրել, Մաքրել:

Մըսըր Անո՛ր Թող ըլլայ,
Այս Տեղրանք ալ՝ Ի՛նձ մընան...,
Ի՞նչ կ'ըլլայ...,—
Աչխար(հ) հո՛ չի՞ աւըրուիր.՞.՞.՞»։
Ելաւ կանչե՛ց այդ Քաղաքի Մեծաւորն,—
— «Ասկէ յետոյ,-ըսաւ-, բա՛ն մը չէ՛ք տար Մըսրայ-Մէլիքին...։
Թէ որ տըւիք՝ կուգամ Ձեր Վիզ կըքաշե՛մ...։
Ի՛նչ Տուրք որ տաք՝ տըւէք միայն Իմ Վանքին»։ —

479. Զէնով-Օհան՝ Դաւիթը կ'ղրկէ Արաբըստանի Ռոչը Բերելու

Զ(Լ.24), Զ.՝Լ.24, Լ.24.

Վերադարձին՝ Դաւիթ մէկ ալ տեսա՛ւ որ՝
Հօրեղբօր †) Ձին՝ Իր Ձիուն հետ չի՛ քալեր...։
— «Բըշէ՛,-ըսաւ-, Հօրեղբա՛յր»։
Ըսաւ, = «Իմ Ձին չի՛ երթար...»։
— «Ինձի ճամբան ցո՛յց տուր,-ըսաւ-, ես կ'երթա՛մ...»։
Զէնով-Օհան միտք ըրաւ ու ի՞նչ ըսաւ,—
*«Ղըրկեմ Մըսը՛ր...՝ վա՛յ թէ *) Մէլիք զարնէ Դաւիթն ըսպանէ...*
Անփորձ Տըղա՛յ է Դաւիթ...»։—
Ան ալ ըսաւ, = «Դաւի՛թ, Դու դուս՝ այս անգամ՝.
Ելնես երթաս Արաբըստուն՝ +) ու դառնաս...»։
—«Ինչո՞ւ...»-,ըսաւ Դաւիթն ալ։
= «Որդի՛,-ըսաւ-, երկո՛ւ-հազար Տունի չափ ալ Ռոչ-ուրներ՝
Արաբըստա՛ւն են տարեր...,—
Գընաս քաշէ՛՝ ա՛ռ արի՛...։
Արաբըստուն՝ մէկ Տանուտէ՛ր կայ ուժեղ...՝
Գեղէն երի՛ք ժամ հեռա՛ւ է Իրեն Տեղ...։
Մխալաք-Վըրանն ալ՝ զարկած է՝ մըտած մէ՛ջ։
Ոսկի-Խընձոր ×)՝ Գլու՛խն է...։ —
*Եթէ կըրցար՝ Ռոչ-ուրները *) ե՛տ դարձուր՝ ու ա՛ռ եկո՛ւր»։ —*

---

†) Լ.24՝ Քեռի-Թորոսի։ *) Վայ թէ, կ'վախնամ որ, կրնայ պատահիլ որ։ +) Արաբըստուն՝ Արաբիստան-(Արաբիա)-ի հետ կապ չունի. համմալի. Արաբիսոս եւ Էրպիսաւն անուններուն հետ, ի կապա-դովկիա [Առջն. Հայք]։ ×) Համեմատել՝ Պղնձէ-Քաղքի Քառասուն-Ճիւղ-Շամ-Գոհարի Պալատին մէջ կախուած Ոսկի-Խնձորին հետ, — Հատ. 149,154,156,158,159,176։ *) Ռոչ-ուրներ, Գաղթած բազմութիւնը։

480. Դաւիթ՝ Աւրաբքսուն Դաղթածներու Տանուտիրոջը Հով

Լ.24,25, Ջ.՝Լ.24,25, Ջ.

Դաւիթ դընաց՝ տեսաւ Հոչը այնտե՛ղն է։ —
Բարե՛ւ տըւաւ Տանուտիրոջ, ըսաւ,— «Բարե՛ւ Ամենուդ»։
Մարդիկ ելան,-սովորութի՛ւն էր ապա-,
Դաւթի Ձիու Գլուխն խկոյն բըռնեցին.
Դաւիթ Ձիէն իջաւ վա՛ր.
Բերին Գորգե՛ր փըռեցին,
Բազմո՛ց դըրին, Բարձեր վըրա՛ն չարեցին,
Դաւիթ եկաւ նըստեցաւ։
*Տանուտէրը հարցուց ըսաւ — «Դուն ո՞ւստ *) ես...»։*
*= «Ես՝ Սասունա՛յ *) եմ»,-ըսաւ։*
— «Մո՞ր Ազգէն †)...»։
Ըսաւ թէ, = «Պապ-Թագաւորի Ազգի՛ն եմ...,
Մըհէր-Դաւթի ×) Տըղա՛ն եմ...»։
— «Ա՛յ Քեզ մատա՛ղ ըլլամ Ե՛ս...,
-Ըսաւ այնտեղ՝ Տանուտէրն-
Կ՚ըլլայ որ Դու Դաւի՛թն ես...»։
Ապա, = «Հա՛, Ես Դաւի՛թն եմ...,
Սանասարի Թոռ՝ Դաւի՛թ...»։
Ելան բերին՝ հաց-մաց դըրին, Սեղա՛ն տըւին փառաւո՛ր,
Դաւիթ կերաւ, խըմեց, պըրծաւ՝ ելաւ այնտեղ քընացաւ։

481. Տանուտէրը Նուէրներ Կ՚հաւաքէ Դաւիթի համար

Ջ.՝Լ.25, Լ.25.

Տանուտէրը ղըրկեց կանչե՛ց Իր Մարդեր,
Ըսաւ, — «Մարդի՛կ, Ասի,-ըսաւ-, Դաւի՛թն է.
*Մեր իւ՛սկ Երկրի *) Թագաւորին Տըղա՛ն է։*
Մըսրայ-Մելի՛ք՝ եկաւ Առնի՛ք Գերի՛ առաւ ու տարաւ +),

---

*) Ո՞ւստ, Ո՞ւրկէ, ո՞ր Երկրէն։ *) Սասունցի, Սասունէն։ †) Ազգատոհմէ, տունէ։ ×) Լ.25՝ Աբրահիմի։ *) Մեր իւ՛սկ Երկրի, Մեր բնի՛կ Երկրի, մեր հայրենի Երկրի։ +) Տե՛ս Հատ. 269, եւ համեմատե՛ Հատ. 324-ի հետ։ Աբրբքսաունի Տանուտէրն ու Բաղդատի Խալիֆան — այդ չրջանին մէջ — կը նոյնանան, կարծէք։

Հիմա ելեր՝ Մեր Թոչերուն այցելութեա՛ն է եկեր.—
Բերեր՝նք Ամենքս՝ մէյմէկ Ընծա՛յ տանք Իրեն,
*Թող տանի ու լիանայ *)»։*
Ելան Ամենք մէյմէկ կըտոր բա՛ն բերին.—
*Տաւա՛ր *) տըւին, Ոչխա՛ր տըւին, Թաղի՛ք տըւին, Բա՛ւրդ տըւին,—*
Բերին այնտեղ Տանուտիրոջ Դըրան դէմը դիզեցին †).
Դաւիթ քունէն վե՛ր ելաւ,
Կոնք ու Շըռնիա բերին առաջ՝ լըւացուեցաւ, սըրբուեցա՛ւ,
Ելաւ գընաց դէպ Իր Զին.
Գընաց՝ զարճաւ ու եկաւ, —
— «Մարդի՛կ, - ըսաւ -, ասի ի՛նչքան բան ու ապրանք բերեր էք՝
Ու դիզեր էք Դուք այստեղ...»։
Տանուտէրն ալ, թէ, = «Ընծա՛յ ենք բերեր Քեզ...»։
— «Ի՞նչպէս Ընծա՛յ էք բերեր...»։
=« Շա՞տ է, - ըսաւ -, չա՛տ ընդունէ Մեր կողմէն,
Քի՞չ է՝ նորէն չատի փոխա՛ն ընդունէ...
Աղքատ Մարդի՛ր ենք այստեղ։—
Մէյ մը քանդուեր՝ ու Բաղդատէն ելեր եկեր ենք Սասո՛ւն,
Սասունէն ալ՝ Մըսրայ-Մէլիք ×) առեր բերեր է այստեղ...», —
Կըխընդրենք որ՝ Մեր քիչովը չատանաս...»։ —

488. Դաւիթ՝ Արաբքսուցի Ծոչտարները Ու Կ'քերէ

Զ.Ի.25, Ի.25, Զ.Ծ.32, Ծ.32.

Դաւիթն ըսաւ, — «ելէք բարձէ՛ք՝ ու երթա՛նք, —
Ես եկեր եմ որ Զեզ տանիմ Ինձի հա՛տ»։
Ատոնք ալ չա՛տ աղաչեցին՝ թէ = «Մեր Տունը կ'աւըրուի՛...»։
Ու հո՛ն ծընած, հո՛ն մեծցածներ՝ ոտքի՛ ելան՝ որ չ'երթա՛ն...։
Դաւիթն այնտեղ ի՞նչ ըսաւ։—
— «Հա՛ցն ու Գինին՝ Տէ՛ր-Կենդանին՝ Զեզ Ամե՛նքդ ալ կը չարդեմ...

---

*) Լիանալ, Գոհ մնալ։ *) Տաւար, կճղակաւոր կամ սմբակաւոր մեծ անասուն (կով, եզ, գոմէշ, ձի, ջորի, էշ)։ †) Համեմատել 119րդ Հատուածին հետ։ ×) Տես Հատուած 324՝ ստորէջի Ծանօթութիւնը (†) Մըսրայ-Մէլիք եւ Մըսրամելիք ձեւերու մասին։

Դուք իմ Հօրը ծողովո՛ւրդն էք, Ձեղ քըշեր են՝ բերեր հա՛ս...,
Շուտ կապեցէ՛ք Ձեր Բեռները՝ որ երթա՛նք...»։
Առանց Ձօղեր ոտքի՛ ելան ու ըսին.—
— «Թէ որ Սաի կըտրիճ չ'ըլլայ և իր Հօր պէս Տըղամարդ՝
Մըսրայ-Տիրոջ Ձեռնէն ասօր Մեղ չի՛ խըլեր ու տանիր...»։
Ելաւ Դաւիթ՝ հեծա՛ւ իր Ձին, իննկաւ առա՛ջ, ու քաշեց՝
Ինչք ու Ոչխար միասին՝
Այդ Բոչըրներն առաւ դարձաւ, բերաւ լեցուց 'ի Սասո՛ւն։
Ձէնով-Օհան եւ միւս Մեծ Իշխաններ՝
Տարան այնտեղ՝ նըստեցուցին ամեն մէկը իր Տան մէջ։

Ճանապարհին՝ քանի մ' կիներ՝ չո՛ւ յոզնեցան, մըռնացին,
Նըստեցան հոն Աղբրին վրայ։

493. Դաւիթ՝ Եղնիկին Հետևովը Խլաթի Ցեղին Կ'հասնի Եւ Սուրէ Կ'անցուցնէ

Զ(Ա.68), Ա.68, Զ.՝Ա.68, Զ., Կ.14,15, Զ.՝Կ.14,15, (Կ.14), Ճ.33ա., 32, Զ.՝Ճ·33ա., Զ(Ճ.32).

Զըրո՛յցն ուրկէ՛..., — զըրոյցը տանք Բոչըրներուս Աղջիկէ՛ն՝
Ինչ Հարսընցո՛ւ արևեր էին Դաւիթին †)։
Երբոր Ամիս լըրացաւ՝
Դաւիթ առաւ Ձէնով-Օհան եւ քանի մ'ալ Ձիաւոր,
Ելան գացին՝ որ Հարսընցուն առնեն բերեն 'ի Սասուն։
Գացին հասան այդ Զօղաններ՝ ինչ Դաւիթը ելեր էր,
Տեսան որ ի՛նչ..., — Մարդիկ գացեր, տեղը պարա՛պ է մնացեր...։
Դու մի՛ ըսեր որ այդ ցեղն ու Ցեղապետ՝
Դաւիթ՝ այնօր՝ խաբեր՝ ճամբա՛ւ դըրեր են,
Ելեր քոչեր՝ գացե՛ր են...։
Այդ Աղջկան Հայրն ու Բոչն ալ Խլաթցի՝
Հըպատա՛կ են Մըսրայ-Տիրոջ Մէլիքին։

---

†) *Տե՛ս Հատուած* 418,419,429։

Զէնով-Օհան †) ըսաւ,— «Որդի՛, ես այն օրը Քեզ չ'ըսի՞՝
Որ Առոնցմէ վորձա՛նք կուգայ Մեր Գլխին... .
Ահա տեսա՛ր որ Առոնք Քեզ խաբե՛ր են...,
Քոչը բարձեր ու գացե՛ր են ուղղակի...»:
Դաւիթ այնտեղ չա՛տ բարկացաւ ինքիրեն.
Իր Նետաղեղ Թեւէ՛ն կախեց՝ գընաց Սարը Նէճիրի:
Մէ՛կ ալ տեսաւ՝ վէրու-Եղնիկ ×) մ' Իր առջեւէն կըփախի՛...,
Ինքն ալ ինկաւ այդ Եղնիկին ետեւէ՛ն...: —
Տարաւ անդի՛ն, բերաւ ասդի՛ն, ու չա՛տ լարեց ետեւէ՛ն՝
Եղնիկն անցաւ Ծովասարի միուս կողմ,
Մինչեւ գընաց՝ հասաւ մէկ տեղ մ' ՝ քիչ հեռուն՝
Մըսթայ-Տիրոջ ժողովըրդի վըրաններ +),
Այդ ծեղին մէջ՝ որ աւերե՛ր էր Իր Հօր Վանք 1)·
Դաւիթն ըսաւ,— «Կա՛մ Իմ Եղնիկ դո՛ւրս կը հանեք Ձեր մօտէն՝
Կամ թէ Ձեր ծեղ՝ ամեն Թուրչ կ'անցուներմ... .
Ես եկեր եմ՝ որ եօ'թ տարուան Տո՛ւրք ալ առնեմ Ձեր մօտէն»:
Անոնք ըսես՝ զարմացան թէ՝ «Աւ՛ա ո՛վ է...՝
Որ եօ'թ տարուան Տո՛ւրք ալ կ'ուզէ Մեր մօտէն»:
Այդ պուլուլիկ *) Տըղու խօսքին՝ խընդացի՛ն...,—
Առին Փայտեր՝ ու Դաւիթի վրա՛յ եկան...,—
= «Տըղա՛յ,-ըսին-, Մեր ծեղն լո՛ւնչպէս Սըրէ պիտի անցուներս... .
Քու Եղնիկն ալ՝ հա՛ս այստեղ է՝ ու չե՛նք տար...»:
Դաւի՛թն էր ալ,— Եղնիկ թողուց, քաշե՛ց Իր Թո՛ւրն ու ըսաւ,—
— «Ցիշա՛մ Քեզ, Հա՛յր-Կենդանին,
Մարութայ-Բա՛րձր-Աստուածին,
Խաչ-Փառքաղին վեր՝ Իմ Ա՛ջ-Թեւին...» ,—
Եւ ինկաւ այդ ծեղին մէ՛ջ... ·—
Այդ ծեղն ամեն քաշեց Սո՛ւր...,
Մէկի Աչքը, մէկի Թեւը՝ տեղէն հանեց ու ձըգե՛ց...,
Մէկի Ծամերն ու Ծիծ *) կըտրեց, կըտըրտե՛ց...,—
— «Գացէ՛ք,-ըսաւ-, Ձեր Մէլիքին ըսէք Թող գայ Իմ կըռի՛ւ... .

---

†) Ա.68՝ Քեռի-Թորոս : ×) Ծ.33ա.՝ Վայրի խոզ կամ խոյ:
+) Համեմատել Հատուած 227-ի հետ (Աւիւծ-Մըհէրի եւ Վէրի-Ոչխարի դէպքը): 1) Տե՛ս Հատուած 460: *) Պուլուլիկ, Դեռատի, փոքր: *)Ծիծ, Կուրծքի վանդակ, իրան:

Թէ որ չիգայ՝ կընկան Լաչակն Իրեն Գըլխո՛ւն Թող ըլլայ...»։
Այդ ծեղն ամեն կոտրե՛ց...,
Մինակ մէ՛կ կաղ կընի՛կ մ՝ պըրծաւ՝ ո՛ղջ մընաց՝
Ինչ գացեր էր վերի Աղբիւր՝ դէպի Ջուր,
Փախաւ դընաց Մէլիքի մօտ՝ի Մըսըր,
Ճըչաց ըսաւ թէ,— «Սասնոյ-Հայ՝ Թըրէ՛ անցուց Մեծ ու Փոքր ...»։

484. Դաւիթի Եւ Գեղի-Թորոսի Վէճը

Հ.Ծ.32, Ճ.32.

Դաւիթ ելաւ հեծաւ Իր Ձին, կանդնեցա՛ւ,
Այդ տեղին ալ 1) Տաւար-Ոչխար տըւաւ առաջ՝ ու քըշեց՝
Առաւ բերաւ՝ի Սասուն։
Երբոր բերաւ լեցուց Սասուն՝ այդ Ոչխարներն ու Տաւար՝
Գեղի-Թորոս եկաւ առաջ ու ըսաւ, —
— «Ա՛յ անիծած, պըլէճկերի Ծուռ-Տըղա՛յ...,
Ասի դուն ի՞նչ ես ըրեր...»։
= «Ի՞նչ եմ ըրեր, Գեղի՛...», - ըսաւ Դաւիթն ալ։
Ըսաւ, — «Ծօրի՞ն ելար գացիր Ճապող-Ջուրը 2) աւրեցիր...»։
Դաւիթն ըսաւ, = «Թէ աւրեցի՝ իմ Հօր կալուա՛ծն աւրեցի...»։
— «Թէ Գու Հօրը կալուա՛ծն է որ աւրեցիր՝
Վաղ-մէկալ օր՝ Մըսրայ-Տիրոջ ի՞նչ պատասխան պիտի տաս...
Ես կ'ելնեմ ու կ'երթամ Բարձրիկ-Մարաթուկը Աղօթքի...»

485. Դաւիթ Կ'ուզէ Երթալ Մըսրայ Վրայ, Ջէնով-Օհաճ Կ'արգիլէ, Դաւիթ Կ'իյնայ Կեռուխոտմի Եեեւէ

Ե.1104,562,567, Զ(Ե.1104), Հ.Ե.1104,562,567, Ա.68, ՁՍ.421, Հ.Ծ.32, Հ.Կ.56, (ՁԿ,465), ՁԿ.465,466, Հ.ՁԿ.466·

Դաւիթ ուզեց քըշե՛լ երթալ դէպ Մըսըր,
Ի՛նչ որ Անոնք ըրին Իրեն ու Վանքին՝
Անոր փոխան՝ կոտրե՛լ, ջարդե՛լ, կողոպտե՛լ...,
Առնել բերել՝ի Սասո՛ւն..., —

---

1) Ճ.31-32՝ այս դէպքը պատմուած է Գոքէ-Ճապաղջուրի անուանով։ 2) Հին՝ Հաշտեպնիւ, նոր՝ Ջիկեն։

Ջէնով-Օհան չա՛տ աղաչեց՝ չըթողո՛ւց։—
— «Դաւի՛թ, - ըսաւ -, մատա՛ղ Քեզի Հօրեղբայրդ,
Դեռ Պըղտի՛կ ես Դուն հիմա...,
Արի՛ մ՚ըներ..., մի՛ երթար Դուն Մըսրայ դէմ...,
Այս տարի՛ ալ թող մընայ...,
Նայինք դեռ ինչ պիտի ըլլայ մինչ այն օր...»։
Համոզեց ու Դաւիթ կեցուց իրեն տեղ.
Ելան դարձան՝ եկան Տո՛ւն։
Դաւիթ գընաց Տէրտէրոջ Տուն, Գիրքն 1) առաւ Զեռ ու կարդաց։
Ապա ելաւ եկաւ դո՛ւրս,
Գընաց ինկաւ կերուխումի եւ Որթ...։ —
Կ՚երթայ Սարեր, Վէրի-Քոչի՛ր*) կը զարնէ,
Կըբերէ Տուն, Ընկերներու հետ կ՚ուտէ։
Հիմա Գինին կըխըմէ՝
Մինը կ՚ուտէ վըրայէն...։

Դաւիթ առաջ երբեք Գինի չէ՛ր խըմեր.
Գինին ինչ է, ինչ համ ունի՝ չէ՛ր գիտեր.
Հիմա չէ՝ որ Ոսկին չառցա՛ւ Իրեն քով,
Ու Գինին ալ ճանչըցաւ, —
Ինկաւ Իրեն հաճոյքին ու վայելքին...։
Աւեն մ՚այսպէս որ անցաւ՝
Դաւիթ ա՛յնքան լեցուեցաւ*),
Այնպէս չէնցաւ*), գիրացաւ.

Խիզա՛ր*) մ՚ նեռեն՝ Անոր վիզը չի՛ կըտրեր...։

Դաւիթը Թող այդ վիճակին մ՚էջ մընայ, —
Մենք ալ դառնանք՝ ղըրոյցն ընենք Մըսրէն։—

---

1) Ց. 32՝ Սաղմոց։ *) Վէրի-Քոշ, Վայրի այծ, քարայծ։ *) Լեցուիլ, Գիրնալ։ *) Շեւենալ, Աճիլ, խայտալ (կազմական առողջութիւնով)։ *) Խիզար, Երկու հոգիով գործածուելիք մեծ սղոց՝ լաստակերտի վրայ պրկուած հաստ գերաններըը տախտակի վերածելու յատուկ, hausart.

ԺԳ. ԹԼՈՂ-ԴԱՒԻԹ Կ'ՊԱՏՈՒՀԱՍԷ ԿՈՒԶԲԱԴԻՆԸ ԵՒ ԿՌԻՒԻ Կ'ՀՐԱՒԻՐԷ ՄԸՄՐԱՄԷԼԻՔԸ

486. Պիւրաթադին Կ'հաճդիպի Աղբիւրի Կիներուն

ՁՍ.422, Զ(ՁԿ.498), Զ.՝ՁԿ.498, Զ(ՁՎ.7), Կ.59, Զ.՝Կ.59, Ճ.102, Հ.31, 423, (Հ.423), Ե.1004,907.

Ձըրոյցն ո՞նց տանք,— Պիւրաթադինէ՛ն ղըրոյց տանք,
Ինչ վեր՛ Զիւն, Փոր բըռնած,
Փախեր կ'երթայ դէպ Մըսըր 1)։—
Պիւրաթադին դընաց հասաւ Մըսրայ-երկրի Սահմաններ,
Եկաւ անցաւ այդ Աղբիւրի ճամբայէն՝
Ինչ կընիկներ — Քոչին մէջէն —՝ յոգներ էին ու ինացեր։
Իրկուն էր.
Կընիկներ ու Աղջիկներըը կուգան Աղբիւր՝ Ջուր տանին,
Պիւրաթադին տեսաւ կիներ ժողովուեր են Աղբրին վրա՛յ՝
Իր ամօթէն՝ Զիւն Գլուխ դէ՛ն դարձուց՝
Որ ուրի՛չ մէկ ճամբով անցնի ու երթայ...։
Կընկատիք տեսան՝ Պիւրաթադի՛ն է կուգայ,—
*Ըսին.— «Ըհը՛, վերէն կուգա՛յ ու խա՛ղ *) կ'ըսէ Պիւրաթադին ...»։*
Մէկալներն ալ՝ ըսին թէ, = «Չէ՛..., մինա՛կ է ...»։

487. Կիները Կ'ծաղրեն Պիւրաթադինը

Կ.59,16, Զ.Կ.59, (Կ.59,16), Հ.423,31,32, (Հ.423,32), Զ(Հ.30), Զ.՝Ե. 1004, Ե.907,772,570.511,1004, (Ե.965,907,772), ՁԿ.498, (ՁԿ.499), ՁՎ.7,8, Ճ.103,102, (Ճ.103), Մ.161,162, Զ(Մ.161,162), Զ,՝Ա.17, (Ա.17), Ա.17, Լ.26, (Լ.26), Զ.՝ՁՄ.590.

*Այդ կիներու Մարդեր *), Տըղաք, Եղբայրներ՝*
Վանքին վըրա՛յ գացեր էին Առոր հետ,—
Շատերու Աչք՝ Անոնց ճամբա՛ն կ'ըսպասեն,
Որ Տըղայէն կամ Էրիկէն ու Եղբայրէն լո՛ւր մ' առնեն...,
Տեսան որ չէ՛, Իրենց Մարդիկ հետը չէ՛ն՝
Դարձան այնտեղ՝ պօռացին ու կանչեցին.— 2)

---

1) *Տե՛ս Հատուած 476։* *) *Խաղ, Երգ։* *) *Մարդեր, Էրիկներ։* 2) *Երգով, [կանչել, երգով ըսել]։*

— «Պիր(ա)բադի՛ն 1) Լսկշաբերա՛ն ..., *)
Ուսի՞ կուգաս Լերան-Լերա՛ն *),
Բերանդ ի բաց՝ բան՛զ Պատուհա՛ն,
Ձանձեր՝ վրան կապած Կարվան ...»:

Պիրաբադին ալ՝ հոն վերցուց՝ այդ կինեբուն ի՞նչ ըսաւ.—

= «Մե՛ւ ըմ *) կապի՛ֆ, Դուֆ, Հարսնե՛ր եւ Աղջիկնե՛ր ...,
Ես չզգիտցա՛յ՝ Զրխտաձորիկն եր նեղա՛բերան,
Սատում-Բաղամ կար Սատմա՛ն-Ծրուեր՝
Զեռ կրթալեր Բարդի-Ծառ՛եր,
Վի՛ր *) որ զարներ՝ կ՚ըներ Փողան... *):
Նոր ճի՛ժ մ՚ եղեր՝ դիվանական 2),
Նե՛ս կար Իր Զեռ՝ գերանակա՛ն 3),
Կըզարներ մե՛կ՝ կ՚ինգեր † իրա՛ն... 4)
Բերան *) կ՚բացուեր բան՛զ Պատուհա՛ն 5) ...:
Այն Մանկըտիֆ *) որ հե՛տս էին՝
Ժողվան լեցուան ՚ի Խարտան *) ...»:

---

1) Փոփոխակները՝ խառնած են Պիրաբադինի եւ Կուզբադինի միջադէպերն ու ծաղրական երգը։ ՍԱՄՈՒՆԱԿԱՆԻՆ մէջ, ինչպէս կ՚տեսնուի, ես տուած եմ զատ-զատ։ Կուզբադինի վերաբերեալ մասերը Տեսնել Հատ. 497,498,515,516։ *) Լսկշաբերան (լսկաչ-բերան), լայնաբաց, խոշոր բերանով, Կ. 16՝ շակշայ բերան՝ ուղղէ՝ լսկշայ-բերան. պատուհանները՝ մեծ մասով՝ բախերան։ *) Լերան-լերան, Թափթփած վիճակի մէջ, ցրուած, պատռտած, տատան-տատան։ *) Ըմ, Մը (սեւ մը)։ *) Վի՛ր, Որո՛ւ, որի՛։ *) Փողան, Փողոց-փողոց բացուածք, նաեւ՝ պէտքարան եւ յետոյք. անարգական՝ բերան, հոմանիշ՝ պատուհան։ 2) ՉԿ.499՝ նաեւ՝ Մարդ եր եղեր Սատուանական, մէկ պատուհանները՝ գազանական, Ե.772՝ կազակն ուղղէ՝ գազանական։ 3) ՉԿ.499՝ Նեղեր կուգային բան՛զ բանական, ՉՍ.590, Ը.103՝ Անոնց նեղեր կուգային ինչպես գերան, Մ.162՝ Իրենց նեղ կայ՝ բան՛զ ձիրցի գերան, Կ.16՝ Նեղերն ի՛ր խոխական, Ե.511,570՝ Նեղեր կուգար՝ մէկտեղ գերան, Ե.772՝ Անոնց բերե՝ կեծական, Ե.907,1004՝ Դաւիթի նեղեր կուգար՝ կախարդի գերան եր։ 4) Լ.26՝ Ղրբի մ՚ կ՚ձգէ հազարական։ *) Բերան, Այստեղ՝ անարգական՝ յետոյք, փոր, աղիք։ 5) Կ.59, Հ.32՝ կ՚զարներ՝ ես (յետոյք) կ՚բանար բան՛զ պատուհան։ *) Մանկտիֆ, Նօթագիր դիւրորներ։ *) Խարտան, ուղիղը՝ Գարատան, Կիլիկիա կամ Տաւրոս Լեռներ, Ամանոս կամ Սեաւ Լեռ. Մեր Դիւցազնավէպին Սեւ-Սարը. Թուրքերէն գարատան = գարա-Ատան-ոս (Տեսնել նաեւ Բ. Հատորով)։ †) Կ՚ինգեր, կը ձգէր։

Հասաւ այնտեղ Պիր'բադին,
Ու Զին քընչեց, անցաւ գընաց Իրեն Տուն...—

488. Պիրաբադին գ'Իճի Կ'ծածկէ Մէլիքէն

Զ.Ղ.26,27, Լ.26,27, Հ.30, Ե.907,908.

Այդ Կընիկներ՝ անցան գացին 'ի Սասուն.
Պիրբադին 1) ալ՝ գընաց Մըսըր՝ Իրեն Տուն,
*Ու կըսկըծու *)՝ գընաց Սեննեակ՝ ինկաւ Գըթին ու Բերնին։—*
Ալ չկըրցա'ւ երթալ՝ Լեղւով՝ Իր Մէլիքին իմա'ց տալ,
Թուղթ մը գըրեց, Գիրը տըւաւ Իր Եղբօր.
Ան ալ նայեց՝ տեսաւ որ Թէ գըրուկ է,—
— «Ես, Պիրբադին, Մըսրամէլ'քի Փեսա'ն եմ.
Ա'լ ամօթէս՝ չե'մ կըրնար որ երթամ ելնեմ Իր երես,
Չիս պահեցէ'ք եւ ըսէք Թէ՝ «Պիրբադին՝
Ըսպանուե'ր է մէջ կըռւին,
Իր Զին փախեր՝ եկեր է»...»։
Գացին ըսին Մըսրայ–Տիրոջ Մէլիքին,
Մըսրամէլիք ելաւ այնտեղ Մա'րդ ղըրկեց՝
Առին բերին Իրեն Զին,
Ըսաւ,— «Ա'յ, հա'յ..., աս ի՞նչ բան է կըտեսնեմ...,—
Զիւն Գոչն ալ՝ հետը մէկտեղ կերե'ր է...,
Պիրաբադի՞ն ապա ի՛նչպէս եղեր է...»։
Թէ, = «Զըկա'յ...»։
— «Մո'ւտ է...,ըսաւ— Մըսրամէլիք—, Իր Տունն է...
Ըսէք գա'յ...»։

489. Պիրաբադին Իր Գլխին Եկածը Կ'Պատմէ Մէլիքին

Զ.՝Լ.27, Զ.՝Ե.908, Ե.908, Զ., Կ.60, Զ.՝Կ.60.

Պիրաբադին առին բերին Մէլիքին,
Ըսաւ,— «Ասի ի՞նչ է եղեր..., Պի'րբադին...»։
Ան ալ իրեն ղըրո'յցն ըրաւ ու ըսաւ.—
= «Եկանք հասանք մինչեւ այնինչ Ձորի մէ'ջ 2),

---

1) Լ.26՝ Ղոզբէկ։ *) Կսկիծու, կսկիծէն, կսկիծը սրտին մէջ։ 2) Ե.906՝ տող 500–502, էջ 907՝ տող 505–515, 530, եւ էջ 908՝ տող 539; Ի.21 եւ Ա.16՝ որոշ կ'ցուցնեն Թէ՝ Դաւիթ ի՞նչ նեղ կիրճի մը — Սրուճէլայ–կապաճ կամ Ջըխտաձորիկ — քով է որ յարճակեր է Պիրաբադինի եւ իր զօրքերուն վրայ ու ջարդեր. Տե'ս եւ Հատ. 478 եւ 487։

Դաւիթ հասաւ՝ զարկաւ իմ Ջօրք ըսպանեց·
Լարեց ապա՝ իմ եռեւէն, Զի՛ս ալ պիտի ըսպաներ,
Ըսաւ՝ «Քի՛ղ ալ ես կըբըռնեմ կըմօրթե՛մ,
Բայց Դուն դընա՛ Քո Մէլիքին իմա՛ց տուր՝
Թէ որ Անի չիգա՛յ Դաւթի կըռւիւին՝
Իր Գըլուխով ցե՛խ 1) ուտէ»···:
Մէլի՛ք,–ըսաւ–, Դաւիթ ա՛յնքան կըտրիճ է՝
Որ հազա՛ր ալ 2) այնպէս երթան Դաւթի վրայ՝
Դաւիթ նոյնպէ՛ս կըկոտորէ ու կ՝ըսպանէ՛ Ամէնն ալ···»:
— «Սուտ մի՛ ըսեր···,–պօռաց Մէլիք–, Դուն վախե՛ր ես աւջեւէն···,
Գահուըրտե՛ր ես՝ ու եկեր··· .
Ես գիտե՛մ որ՝ Դուն Դաւի՛թն ալ չես տեսեր···»:
= «Ի՞նչպէս ես թէ «Ես Դաւի՛թն անդամ չեմ տեսեր»···, —
Ես առաջէն կուգայի՝
Տեսայ Դաւիթ՝ որ եռեւէն կըվազէ՛, —
Ջո՛ղ ահագի՛ն Ծառ մը հաներ՝ արմատով՝
Ծայրը բըռներ Իրեն Ջե՛ռ,
Արմատովը՝ մէկ ա՛ղ զարկաւ, մէկ ձա՛խ զարկաւ՝ փարատեց,
Իմ Ջօրքերը՝ Ամե՛նն ալ հոն ըսպանե՛ց···,
Լեցուց այնտեղ Գետի մէ՛ջ···:
Դաւիթ չատ–չա՛տ կըտրիճ Տըղա՛յ եղեր է,
Այնպէս կըտրիճ՝ ա՛լ չըկայ···»:
Այդ ըսպանուած Մարդոց Տիրուանքն ալ ըսին, —
— «Ապա, Մէլի՛ք, Մենք ի՞նչ ըսենք Քու խելքին··· .
Քու վէճն ի՞նչ էր Սասնու հետ···,
Պիրրադինի խօսքին մըտի՛կ ըրիր Դուն՝
Մեր կըտրիճներ 3) ամեն տարաւ տըւաւ այնտեղ ըսպանել···»:

490. Մէլիքի վէճն Իր Մօր Հետ Կ՝ընորոգուի

Զ.՝Կ·60, Կ·60, Զ·

Մըսրամէլիք ելաւ եկաւ իրեն Տուն,

---

1) *Ե·908՝ fmf:* 2) *Այսինքն՝* հազարաւոր ուրիշ զօրքեր ալ՝ *եթէ զրկուին (··· անօգուտ է):* 3) *Կ·60՝* կտրիճ մարդ իր՝ *ուղղել՝* մարդեր:

Ըսաւ, — «Մարէ՛ *), ա՛խ Մարէ՛...,
Ես այն օրը Դաւիթ պիտի ըսպանէի՛, չըթողի՛ր... .
Հիմա ալ Ան՝ Մեր Գըլուխին այսպէս բանե՛ր կըհանէ...»:
= «Հը՛...,–ըսաւ Մայրն–, Դուն իմ Խօսքը չըրի՛ր ո՛ր...,
Գիրքադինի՛ Խօսքն ըրիր...»:
— «Ես Քու Խօսքը,–ըսաւ–, ի՞նչպէս ընէի...»:
= «Ո՛ր Դուն,–ըսաւ–, Իմ Խօսքն ընել ուզէիր՝
Քու փոքր եղբայրն էր Դաւիթ,
Տարին մէ՛կ կամ երկո՛ւ անգամ՝ պիտ՝ երթայիր՝ տեսնէիր... .
Դեռ Դաւիթն ալ՝ պիտ՝ կանչէիր Մըսըր՝ Քո Տո՛ւն բերէիր. —
Այն ժամանակ՝ կ՚ուրախանար՝ կ՚ըսէր «Ինձի եղբա՛յր կայ»...՝
Ու Քո վըրայ՝ Մա՛րդ չէր կըրնար ա՛լ խօսիլ...»:
— «Մարէ՛,–ըսաւ–, Ես Մըսրեցի՝ Դաւիթ Հա՛յ,
Ինչո՞ւ կ՚ըլայ Ինձ եղբայր...»:
= «Մէկի՛ք, Որդի՛,–ըսաւ Մայր–,
Դեռ Քու խելքը չի՛ կըտրեր..., —
Շատերը՝ Քուրդ կամ Թէ Հայ 1)
Մէկը մէկի Տո՛ւն կ՚երթան,
Շա՛տ Իրարմով ո՛ւժ կ՚առնեն...:
Այն Դաւիթն ալ՝ չէ՞ որ Մեր Տան չահած–պահած Տըղան էր.
Որ Դուռ Դաւիթի հետը աղէ՛կ ըլլայիր՝
Դաւիթ Քու Խօսք պիտի ընէր եղբօ՛ր պէս...:
Աղէ՛կ...,–ըսաւ–, Դուն չըղացի՛ր Դաւիթ մօտ...,
Դաւիթն ալ մէյ մ՚ չըկանչեցի՛ր բերիր Տուն...: —
Ա՛լ Քու վէ՞ճը ի՛նչ էր Տըղայ–Դաւիթի հետ՝
Որ Դուռ ելար՝ Մա՛րդ ղըրկեցիր Իր վըրայ...՝
Անոր ծա՛մը քակեցիր...:
Քո ըրած որ Դո՛ւն ըրի՛ր...՝
Դաւիթ դեռ ի՞նչ ըրեր է որ Քուռ հանդիպ...,՝
Անոր ըրած դեռ քի՛չ է...»:

---

*) Մարէ՛, *Մայրի՛կ*: 1) *Այսինքն՝* ցեղակից կամ օտար...:

491. Մայրը՝ Դաւիթը կ'պատպանէ Տղուն Դէմ

Կ.61, Զ.՝Կ.61

Գանգատ չառցա՛ւ Մօրը քով՝
Ա՛լ Տըղային — Մէլիքի — մօտ չէ՛ն երթար.—
Մէկ կ'ելնէ դուրս, երկու հոգի կ'երթան նէ՛րս,
Երկու-ք կ'ելնեն՝ չո՛րս հոգի նէ՛րս կը մըտնեն՝
Թէ՝ — «Քու Տըղան այսպէ՛ս ըրաւ Մեր գըլուխ...»։
Ուղարկեցին Պիրաբադին բերին նէ՛րս,
Մէլիքի-Մայրն ըսաւ, — «Ինչո՛ւ գընացիր՝
Այդպէս աւեր բա՛ն ըրիր...»։
Ըսաւ, = «Մէլի՛քն ինձի այդպէս հրամայեց...»։
Մէլիքն ալ թէ, — «Ես Քեզ ըսի՝ «Գընա՛՝ վանքը կողոպտէ՛»
Ձըսի՛ «Գընա՛՝ վանքին Մարգերն ըսպանէ,
Քառասուն-քառասուն վարդապետներ, Սարկաւագներ կոտորէ՛»։
Ինչո՛ւ համար Դուն գընացի՛ր՝ այդպէ՛ս ըրիր վանքի հետ,
Դաւիթն ալ հոն սըրդողեցաւ՝ ջարդեց բոլոր Մեր Մարդերը»։
Մայրն ալ ըսաւ, = «Մէլի՛ք, Քեզի՛ ա՛լ Դաւթի հետ գործ չըկա՛յ.
Փախին տեղը՝ փոխը ելա՛ւ, ա՛լ գործ չունիս Դաւթի հետ.
Ես կ'ելնեմ մէկ Թա՛ղթ կը ճամբեմ Դաւիթին,
Դաւիթ ու Քեզ կը հաշտեցնե՛մ Իրար հետ...»։
Է՛, Մէլիքը կը կենա՛յ...,—
— «Մարէ՛,—ըսաւ—, քա՛նի Քու Խօսքն ըրի ես՝
Վընա՛ս տեսայ Քու ապով *). —
Կամ ես Դաւի՛թ կ'ըսպանեմ,
Կամ Դաւիթ Զի՛ս կ'ըսպանէ...»։
= «Մէլի՛ք,—ըսաւ Իրեն Մայրը—, մըտի՛կ ըրէ Իմ Խօսքին,
Դուն չե՛ս կըրնար՝ զարներ Դաւիթն ըսպաներ»։
Մայր որ ըսաւ՝ «Դու չե՛ս կըրնար զարներ Դաւիթն ըսպաներ»՝
Մըտամէլիք չա՛ս զայրացաւ..., ի՞նչ ըրաւ,—
Ելաւ այնտեղ Պիրբադինի Ձեռքէն բըռնե՛ց ու ըսաւ,—
— «Ե՛լ երթանք...»։

*) Ապով, Պատճառով։

498. Մըսրամէլիք Կ'խոռհրդակցի Աւագանիին Հետ

Ջ.Ե.1103,967,1104,736,968, Ե.625,967,711,1104,799,736, Ե.737, (ՁԿ.316,345), Ջ-ՁԿ·345,467, ՁԿ.467, ՁՄ.422,Կ.54, (Մ.159), Ա.11,14, (Ա.14), (Հ.28), Հ.28,379, Լ.27,84, (Լ.84).

Անցա՛ւ չաբաթ մ' ու երկուք,
Բայց Մէլիքի գայրոյթ չ'իջա՛ւ մէկ կէրպով,—
Իր նախանձոտ Սիրտը երբէք չըհովցա՛ւ...,
Այդ օրէրն ալ՝ Մէլիքի Տուրք-Առնաղնէրը՝ Ամիթէն՝ 1)
Բեռը դատարկ՝ ելան փախան՝ ե՛տ եկան,
Եկան ըսին,— «Ամիթայ Գարան Տուրք չըտըւաւ ու ըսաւ՝
«Դաւիթ Մեզի պատուիրեր է՝ «Ի՛նչ Տուրք ըլլայ՝ տաք Վանքին,
Ա՛լ բա՛ն չէք տար Մըսրայ-Տիրոջ Մէլիքին.
Մըսրայ-Երկիր Թէ Անուն է՝ Այս-Տեղերն ալ Ինձի՛ ևն» 2)»:
Մըսրամէլիք ելաւ այնտեղ ի՛նչ ըրաւ.—
Որ իմացաւ Դաւիթ ողջ է՝ եւ այդ բաներն Ա՛ն կ'ընէ՝
*Ելաւ կանչեց Իր քո՛վ բերաւ՝ Իր Առջեւի-Մարդիկներ *),*
Աքո՛ռ դըրին, Մեծերն եկան չարուեցա՛ն, —
*Ըսաւ,— «Նայիմ՝ Դուք ի՛նչ գիտէք, ի՛նչ լըսեր էք Սասունէն *),*
Դաւիթ՝ «Այսպէ՛ս, այսպէս բաներ է ըրեր...,
Գիրաքաղին 3) ե՛տ դըրկեր է այս ձեւով...»:
Մըսրայ-Տէրն ալ՝ ես՛թ տարի էր որ Տո՛ւրք կ'առնէր Սասունէն:
Այդ Մէլիքի Մարդերն այնտեղ ի՛նչ ըսին.—
Քու Հօր ատեն՝ Սասմանց-Տունէն Մենք Տուրք ու Հա՛րկ կ'առնէինք՝
Ինչ Քու Հայրը մեռեր է՝
Մինչեւ հիմա՝ Տուրք չե՛ն տըւեր Սասունէն.
Ես՛թ տարի է՝ որ Մեր Տուրքը Պետե՛ր է.—
Մա՛րդ ուղարկէ՝ Դաւթի մօտէն ես՛թը տարուան Տո՛ւրք ուզէ.
Տեսնենք կուտա՞յ՝ թէ՞ չի՛ տար...,
Թէ որ վախնայ՝ Տուրք կուտա՛յ...,

---

1) Տե՛ս Հատուած 472, Ծնթ. 1: 2) Տե՛ս Հատ. 478: *) Առջեւի Մարդիկներ, Առաջաւորներ, մեծամեծներ, աւագանին: *) Սասունցիք, Սասունի մասին: 3) Ե.968՝ Կոզբադին:

Թէ չըվախնայ՝ հօ՛ չի՛ տար...։
*Որ չըկըցանք վեր՝ Վանքին *)՝*
Պէտք է երթանք Տո՛ւրք բերենք...»։—

493. Կուզբադինի Եօթ-Ոռնէն Ձին

Զ., *ե*.795,736,1104,510,568,823, Զ.՝Ա.11, Ա.11,14,16, Զ.՝Հ.30,421, Հ.421,423, ԶԿ.484, Կ.54, Ի.21, Լ.86, Զ.՝Լ.87, (Լ.84).

Մըսրամէլիք չա՛տ հաւնեցաւ Իր Մեծերու այս Խօսքին,—
Վերցուց Անոնց ինչ ըսաւ.—
— Վանքը,—ըսաւ—, Մըհէրի՛ն 1) է, Ի՛րն ըլլայ...։
Մենք ուղարկենք՝ Մեր Տո՛ւրքն առնեն՛ք Սասունէն.
Պէտք է որ՝ Մէկդ՝ եվնէք երթաք՝ Մեր եօ՛թ տարեան տո՛ւրք բերէք։
Կանչեց ըսաւ, — «Ո՛վ պիտ՝ երթայ այդ Սասունէն Տո՛ւրք բերէ»։
*Կուզբադի՛ն կար, Մըսրայ-Տիրոջ Զօրավարին *), Մեծաւոր.*
Շատ ուժեղ ու Մեծ-Ըմբիշ էր Կուզբադին. —
Ալէքը չիլ էր եւ ծուռուտմո՛ւռ կը նայէր 2).
*Ձի մ՛ալ ունէր՝ եօ՛թ-ոտնէն *)...։*
Այդ Կուզբադին ալ՝ ինչ կերպով Մեծ-Ըմբիշ մը դարձեր էր.—
Տըղա՛յ առեն՝ օր մը՝ Այս Մարդ՝ կըպըտըտի Ծովու-Ափ,
Մէ՛կ ալ՝ անդին՝ կըտեսնայ որ՝ Նախիր մ՛ եկեր՝ կ՛արածա՛յ.
Նախիրին մէջ կըտեսնէ որ՝ Մատա՛կ Ձի մ՛՝
Ծովուն Ափը պառկա՛ծ է՝
Ու ծընելու վըրա՛յ է...։—
Ինչ մը յուսայ՝ տեսաւ որ այդ Մատակ-Ձին՝
Գուռակ մ՛ ծընաւ ո՛ւր-ոռնեն...։
Բայց մինչեւ որ Տուն հասուցին այդ Գուռակ՝
Մըրջիւնները Անոր մէկ Ոտ կերան, մընաց եօ՛թը ոտ...։
Այդ Կուզբադի՛նի Հայրն ալ՝ տըղա՛յ տարիքէն՝
Ձիու Նախրո՛րդ ըլլալով՝

---

*) Այսինքն՝ Ֆաթի որ վանիը գրաւել չկրցաւ...։ 1) Այսինքն՝ Դաւիթ-Մըհէրին (Թլոլ-Դաւիթի հօրը)։ *) ԶԿ.484՝ Զօրավորին։ 2) Հ. 421՝ շաշ ու փսաո էր։ *) Եօթ-ոռնեն, եօթը ոտք ունեցող, եօթնոտանի. Հ.421,423, Ի.21, Ա.16, *ե*.510,568,823՝ վեցոռնեն. Տե՛ս Հատուած 476՝ Մնթ. †։

Գիտէ՛ր թէ այդ Մալուն մէջը Հրեղէ՛ն կար.
Թէ Հրեղէն-Զին երբոր Մալա՛ի ելնէր դուքսը՝ ծընելու՝
Պէտք էր Անոր ծընած Քուռակ՝ Մալուն-Ջուրով լըւային՝
Որ Մըրջիւններ չ'ուտէին...:
Բայց Կուզբադին 1)՝ ինք այս բանէն լուր չ'ունէ՛ր,
Որ այդ ծընած Հրեղէ՛ն-Քուռակ՝ Մալուն-Ջուրով՝ հոն լըւար.—
— «Է՛հ, ինչ որ է,-Կուզբադինի Հայրն ըսաւ-,
Այս Զին նորէն չէ՞ որ Հրեղէ՛ն Քուռակ է,—
Ո՛վ որ տէրէ *) այս Քուռակ՝
Ան կրգառնայ կ'ըլլայ հըզո՛ր մէկ Ըմբիշ...»:
Ասոր համար՝ Իր Տըղային պատուիրեց՝
«Ուրիշ բաներ չըկերցընե՛ն այդ Զիւն,
Ապա՝ մինակ՝ Թո՛ւզ ու Խըմո՛ր տան ուտէ»:
Շատ չըքաշեց՝ Անոր հալւոր Հայր մնաւ.
Կուզբադին ալ աղքա՛տ էր՝
Ա՛լ չըկերցաւ Թուզ ու Խըմոր կերցընէր,
Քանի մ' չաքաթ՝ Ասո ու Գարի՛ միայն կերցուց Իր Զիւն:—

494. Կուզբադին՝ Զիւն Շնորհիւ՝ Զօրավար Կ'ըլլայ Սասնայ Քաջերուն

Ջ.Ղ.87, Ե.799.

Այդ օրերուն՝ Մըսրամէլիք՝ առաւ Իրեն նոր Զօրքեր՝
Ելաւ Դա՛շը՝ որ հոն մարդա՛նք տայ ընկել:
Կուզբադի՛ն էր, — երբ այս բանը իմացաւ՝
Շուտ մը ելաւ՝ Իր Եօթ-Ոտնէն Զին հնծա՛ւ,
Ինկաւ գընաց Մէլիքի նա՛ր Զօրքին հետ:
Դա՛շտ որ հասաւ Կուզբադին՝
Արշա՛ւ ըրաւ Իր Զիով,—
Ամենէ՛ն ալ առա՛ջ անցաւ ու յարձակեց,
Մէ՛կ Զիաւոր չըկերցա՛ւ որ հասնէր Անոր Քուռակին:
Մըսրամէլիք որ այս տեսաւ՝ շատ խընդացաւ, զարմացաւ,
Վերցուց ըսաւ, — «Ի՞նչ զարմանք է, իրաւի՛..., —
Ո՞վ էր տեսեր Եօ՛թը Ոտնէն այսպէս Զի՛...»:

---

1) Կուզբադին—որդին: *) Տիրել, Ունամել, պահել:

Ան ալ,–Մխիթ–, չո՛ւտ մը եկաւ իր մօ՛տ կանչեց Կուզբադին,
Հարց–փո՛րձ ըրաւ, ըսաւ, — «Ի՞նչ է այս Քո Զին...՝
Որ ոչ Զիո՛ւ կընըմանի՝ ոչ Եզա՛ն... :
Կուզբադին ալ՝ պատմե՛ց Անոր՝ բոլոր եղածն ու չեղած, —
= «Պէտք էր,–ըսաւ–, որ այս Զիուն՝ մխիթայն՝
Թուղ ու Ծըմո՛ր կերցընէի ամեն օր·
Ապա մե՛ղք որ՝ աղքա՛տ էի՝ չկըրցայ· —
Թէ չէ՝ Իմ Զին երկո՛ւ անգամ հիմակուանէն լա՛ւ կ՝ըլլար» :
Այն ժամանակ՝ Մըսրամէլիքն ալ ըսաւ, —
— «Ա՛լ Դո՛ւն դիտես, Կուզբադի՛ն,
Ա՛ռ Քեզ այսչափ ամասկան՝
Ասկէ յետոյ՝ դընա՛ Քու Հօր պատուիրածին պէ՛ս ըրէ,
Թուղ ու Ծըմո՛ր կերցուր մինակ՝ Քո Զիուն·
Մէկ ալ՝ ահա՛ դիտցա՛ծ ըլլաս, Կուզբադի՛ն, —
Այս օրուընէ՝ Զօրավա՛ր ես իմ Զօրքին» :

495. Կուզբադին Կ՚ուսումնասիրէ Երբայ Դաւիթը Սպանելու Եւ Սասունէն Տուրք Բերելու

Ջ·՝Հ·30,29, Հ·30, 421,28,29, Ջ(Հ·421), Ե·1104,736, Ջ·՝Ե·1104, (Ե·738), Ա·14,12, Ջ·՝Ա·14,12, Ջ(Ա·14), ՋԿ·484, Ջ(ՋԿ·484), Ս·160, ՋՍ·457, Ջ·՝ՋՍ·457·

Մըսրամէլիք երբոր ըսաւ՝ «Ո՞վ պիտ՝ երթայ այդ Սասուն՝
Ու եօ՛թ տարուան Տուրք Բերէ»՝ 1),
Այս Կուզբադին եկաւ Դիւան, կեցաւ մէջտեղ եւ ըսաւ· —
*— «Մըսրամէլի՛ք, տո՛ւր Ինձ Չոկուած *) Երկո՛ւ–հազար Ձիաւոր 2),*
Ես պիտ՝ երթամ Դաւթի Ձեռքեր պիտի կապեմ Իր եռեւ...՝
Առնեմ բերեմ՝ յանձնեմ Քե՛զ...,

---

1) *Տե՛ս Հատուած* 493: *) Չոկուած, *Ընտրուած*: 2) Ա·14՝ 300 չոկովի ձիաւոր, Հ·421՝ երկու հազար, Ե·100՝ երեքհարիւր մարդ, Ա·11՝ տասը ոստիկան, Լ·25՝ մէկ հազար ձիաւոր, Լ·88՝ քսանի մ՚ հարիւր ըմբիշ, Կ·15, Ե·823՝ քառասուն ըմբիշ, Կ·55, Ե·717՝ հինգ հարիւր կտրիճ մարդ, Հ·28՝ եօթ մարդ, Հ·30՝ քառասուն ձիաւոր, Ե·799՝ երեք հարիւր յիսուն ձի·, Ե·1104՝ աղթու աւհամագ զօրք:

կամ Գըլուխն ու Ականջները կըտրեմ բերեմ Քեզ նըւէր...»:
Մըսրամէլիքն ալ ի՞նչ ըսաւ Բադինին, —
= «Բադի՛ն,–ըսաւ–, որ Դուն այդչափ կըտրի՛ճ ես...՝
Ու Դաւիթը՝ ողջ կամ մեռած՝ բերես ի՛նձ...՝
Ես Իմ երկրի տէրութեան կէս՝ կուտամ Քե՛զ...»:
— «Կ՝երթա՛մ...»,–ըսաւ Կուզրադին 1):
Որուհեղին որ Կուզրադին ելնէ երթայ՝ ի Սասուն՝
Եօթը տարուան Տուրքերն 2) առնէ ու բերէ: —
— «Մըսրայ Տուրքերն ու Տուդանքն ալ,–ըսին–, ի՞նչ են Սասունէն,—
Եօթ տարի է՝ Տուրք չ՝էր տըւեր Մեզ Սասուն.
Քառասուն Ուղտի բեռ 3) Արծա՛թ է ու Ոսկի.
Քառասուն կոլոտ Կընիկ՝ (որ) Երկա՛նք աղան.
Քառասուն երկայն Կընիկ՝ (որ) Ո՛ւղտ բառնան՝.
*Քառասուն Կուս–Աղջիկ՝ արմազան *).*
*Քառասուն 4) բուղիկ *) Աճառ *)՝ Լըծ(կ)ան *).*
*Քառասուն Կարմիր–Կուվեր՝ կըթան *).*
*Շատ Մըրջան *), չա՛տ Ապըրջան... *): —*
Այս ամենը,–ըսին Ատոնք–, Սասնայ Տո՛ւրքն է՝ Մըսրին: —

496. Մըսրամէլիք Եւ Կուզրադին՝ Միակամ՝ Սասնոյ Դէմ

Կ·15,54,55, Զ(Կ·15), Ե·799,736,738,1001,822,823,568,795,625, 769,626,713, (Ե·568,1001,795,738,625), Զ·՝Ե·823, Ճ·99ա·, (Ճ·99ա·,100), Ա·14,11, (Ա·12), Հ·421,379,29,28, Զ·՝Հ·29, ՁՈ·422, Զ(ՁՈ·457), ՁԿ·468,470, Խ·13, Լ·25,84,88, Զ·՝Լ·25, (Լ·84,88,27), Զ(Ո·160).

Կուզրադինը վերցուց ըսաւ, — «Մէկի՛ք, ի՞նչ է այդ Տըղան...,

---

1) *Պատումներն ունին՝* Կուզ–Բադօ, Կոզրա(յ)դին, Կոզմադին, Ղոզրադին, Խոզրադին, Կոզ–Պատիին, Կօզրահտին, Ղոզրէկ, Խօլրաշի(ն) *ձեւերը:* 2) *Փոփոխակներ՝* Խարջ–Խարաջ: 3) Հ·2)՝ *Եօթ ուղտի բեռ:* *) Արմազան, (*Թրք·*), Նուէր, ընծայ:* 4) Հ·29՝ *Եօթը:* *) Բուղիկ, *Արու:* *) Աճառ, *Արջառ, եզ (2–3 տարեկան):* *) Լծ(կ)ան, *Լուծի յատուկ:* *) Կթան, *Կթելու յատուկ,* Հ·29՝ *Նաեւ՝ Քառասուն ամծիւն Երինջ՝ մատաղի [որ տեղին չէ՝ ըստ իս]:* *) Մրջան, *արբ·՝ մէրջան, Բուսա:* *) Ապրջան, *Ապարանջան, որ՝ կըթուի՝ Հայ արհեստաւորներու չինած եւ արտածած ապրանքներէն է եղեր:*

Կ'արժէ՞ այդչափ՝ որ մըտածես իր վըրան··· : —
*Դուն տո՛ւր ինձի այդ ի՛մ ուզած ջոկովի *) Զօրքն ու Մարդեր՝*
Առնեմ երթամ՝ բո՛ւն Սասունայ Քաղքին մէ՛ջ,
*Սասում երեր՛ում *) պիտի բերեմ Թալա՛ն.*
Եօթը տարեան Տուրք ու Ասար առնեմ բերեմ Քեզ համա՛ր.
Բերեմ Քառասուն Կոյս–Աղջիկներ՝ արմադան †).
Քառասուն կոլոտ կիներ՝ (որ Քեզ) երկա՛նք աղան.
Քառասուն երկայն կիներ՝ (որ Քո) Ուղտե՛ր բառնան.
*Քառասուն ազար *) Տըղայ բերեմ՝ Հո՛լ խաղան.*
Քառասուն Ճաո բերեմ լըծան.
Քառասուն կարմիր Կովեր՝ կըթան.
*Քառասուն Ջափ *) ալ Տուրք բերեմ Քեզ՝ ղեղին–Ոսկի եւ Արծաթ.*
Ու Դաւիթն ալ՝ Հոն կ'ըսպասեմ՝ Գըլուխ բերեմ Քեզ համար»:
Մըսրամէլիք Հաւան եղաւ ու կատարե՛ց Անոր կամք, —
Կուզբադինին տըւաւ ուղած Իր Մարդեր,
Ելաւ ղըրկե՛ց Իր քա՛ղ Ծառան՝ Կուզբադին 1),
Ղըրկեց երթայ վեր՝ Սասունայ–Քաղաքին՝
Որ Տո՛ւրք բերէ՝ ու Դաւիթն ալ ըսպանէ··· :—
— «Քեզ իրաւո՛ւնք տըւի,–ըսաւ–, Կո՛ւզբադին,
Ա՛ռ Քու Մարդեր, ելիր գընա՛ 'ի Սասուն,
Եօ՛թը տարուան Տուրքն ու Ասար՝ ա՛ռ ու բե՛ր 2).—
Կ'ուզեմ Քենէ՝ Քառասուն ազար Աղջիկներ···,
Քառասուն ազար Տըղաներ···,—
Ու Դաւիթն ալ՝ Անոնց Հե՛տ···,
Քառասուն կարճ Կընիկներ բե՛ր՝ երկա՛նք աղան···,
Քառասուն երկայն Կընիկներ բե՛ր՝ Ո՛ւղտ բառնան···,
Ոսկին ալ Տուրք կ'առնես Կօտով ու Ջափո՛վ··· :
Պատճառ կ'ընես այն Ճիժե՛ր՝

---

*) Ջոկովի, *Ընտիր*: *) Սասում երերում, *Ամբողջ Սասում*: †) Կ·15՝ *սորջ*· *ծնթքին*·*ը* սիրուն՝ *ուղղել* ընծայ, նուէր, Ե·738՝ Աղջիկներ բերեմ տամ էրկան (էրիկի): *) Ազար, *Ամուրի, դեռատի*: *) Ջափ *կամ* Կօտ, *Արմտիք չափելու փայտէ աման*: 1) Ե·625՝ Կուզբադին, Մալաճ Ջարխադին, Ց·99՝ մէկ Բադին, մէկ Կոզբադին, մէկ Սիւդին, մէկն էլ Ջարխադին, Ց·33ա·՝ Պիրհալ: 2) Կ·55՝ *քի* (*քեզի*)՝ *ուղղել* ձի (*ինձի համար*):

Տուրքն ու ձիժեր կ'առնես–բերես մխատե՛ղ,
Որ Դաւիթն ալ մէ՛կն ըլլայ...,—
Բերես այստե՛ղ մէկ անդամ...՝
Աղջիկներն ու ձիժեր այստեղ թո՛ղ կուտանք՝
Երթան Սասուն՝ Իրենց Տո՛ւն,
Դաւիթ այստե՛ղ կըբլոնենք ու այս անդամիս կ'ըսպանե՛նք...՝
*Անոր մէնէն *) կ'աղատուինք...:*
Դէ՛, Քե՛ղ տեսնեմ, կո՛ւզբադին,
Այնպէ՛ս ընես՝ որ Աչխըի մէջ՝ Մենք ամօթով չը մընա՛նք...»:
*= «Գըլխո՛ւս վըրայ *), Մէլի՛ք,–ըսաւ կուզբադին–,*
Կ'ելնեմ կ'երթամ՝ Տո՛ւրքն ալ կ'բերեմ, դեռ Աւա՛ր ալ մխասին...»:

497. Աղբիւրին Կիներն Ու Կուզբադինի Երգը

Կ·55, Ե·1104,625,626,795,823, (Ե·568,823,1104), Ճ·100,102ա·, (Ճ·100,33), Չ(Հ·421), Չ·՝Հ·421, Հ·29,426,421, Չ(Ա·14), ՉԿ·485, 486,487, Չ·՝ՉԿ·486, ՉՍ·423, Ս·159,160, Չ·՝Ս·160, Լ·88,25,26, Չ·՝Լ·26·

Կուզբադին է՛ր, — ելաւ կեցաւ Քաղքին դո՛ւռ՝
Ժողվեց առաւ՝ ամենմէկը մէ՛կ տարեան նո՛ր պըսակուած՝
Երկո՛ւ–հազար կըտրի՛ճ Տըղայ՝ չոկովի,
Ելաւ առաւ Իր այդ Զօրքեր՝ կանդնեցա՛ւ,
Չհանք հեծան՝ տըւին ճամբայ՝ որ երթան վեր՝ Սասունայ 1):
*Ինչ *) կուզբադին ինկաւ ճամբայ՝ ու Քաղաքէն դո՛ւրս ելան՝*
Մէկ Աղբի՛ւր կար Քաղքին կուշտ,
Անցաւ կ'երթար՝ Իր Զօրքերով՝ Աղբիւրն՝ի վեր՝ Իր ճամբան,
Նայեց տեսաւ՝ քանի մ' կիներ վեր՝ Աղբիւրին կանդնած են,
*— «Ձեզի,–ըսաւ–, Պա՛ր *) ըսէք ու խաղացէ՛ք... *), —*
Մինչեւ ես ալ՝ Սասուն երթամ ու դառնամ...»:

---

*) Մէնէն (անորմէն), Մօտէն, քովէն, ձեռքէն: Գլխո՛ւս վրայ, Այսինքն՝ քու հրամանը՝ համբուրելով կ'ընեմ գլխուս վրայ ու պիտի գործադրեմ՝ գլխուս գնովը: 1) Ճ·33՝ Պիրաբադին ու խոզբադին են եկողները՝ զօրքի հետ, Ճ·99ա·, 100՝ եկողը Քոսէն է [Թերեւս՝ կոզ, կուզ ձեւին աղաւաղը], Ս·159՝ Խօլբաշին: *) Ինչ, Ինչ տեն որ, երբոր: *) Պար, Պարերդ: *) Խաղացէ՛ք, Պարեցէ՛ք:

*Կընանիքն *) ալ՝ Զո՛ւր կըլեցնեն՝ որ առնեն ու տանին Տո՛ւն,*
Տեսան որ Հա՛, կուզբադին է՝ երկո՛ւ-հազար Հեծելով, —
Ըսին, = «Ապա՝ մենք ի՞նչ ըսենք ու խաղանք· · ·
Մենք չե՛նք գիտեր ի՞նչ ըսենք· · ·»—
Բա՛, կուզբադի՛ն, սա ո՞ւր կ'երթաս, Տէր աշողէ Քու ճամբան»:
Կուզբադին ալ Անոնց ըսաւ երգելով· —

— «Կ'երթամ Սասուն՝ բեռ-բեռ Ոսկի 1) բերեմ թալան·
Կոլոտ կիներ բերեմ՝ երկա՛նք աղան 2)·
Երկայն կրնկտիք բերեմ՝ Ուղտե՛ր բառնան 3)·
Միջնավարներ *)՝ Հարս ու Աղչիկ՝ Զե՛զ արմադան· · ·:
Մուղալ *) եզներ բերեմ՝ լըծան·
Կարմիր կովեր բերեմ՝ կըթան,
Շինէք առատ Իւղ *) ու Զորքան *)· · ·»:

= «Բարե՛ ըլլայ· · ·, Ղո՛զբէկ,–ըսին–, դէ՛ գընա· · ·»:
Ու նըստեցան Իրենց տեղ,
«Ա՛լ ո՞ւր երթանք,–ըսին ապա Իրենց մէջ–,
Ղոզբէկ հիմա կ'երթայ Դաւիթ կ'ըսպանէ՝
Ժողովուրդը ե՛տ կըբերէ Սասունէն· · ·»: 4)

498. Աղբիւրիս կիներուն Երգը

Ս·160, Զ·՝Ս·160, Զ·՝Ե·1104,823, Ե·1104,823, (Ե·823), ՉԿ·487, Լ·26, Զ·՝Ճ·102ա·, Ճ·102ա·

Կուզբադի՛ն էր, —
*Մէ՛կ ալ՝ Նայեց՝ որ կընկըտիք-աու՛ կ'ըսեն կըխաղան *)· — —*

— «Մեր Զօրապետ կ'երթայ Սասուն Ի բա՛ն· · · 5)·

---

*) Կնանիք, *կիներ*: 1) Ե·1104՝ Քառասուն բեռ: 2) Լ·26՝ տախտ ալեն: 3) Լ·26՝ գովընդ Քաշեն (*պար բռնեն*): *) Միջնավար, *Միջահասակ*· Նաեւ ՉԿ·487, Ե·1104՝ Ազար *աղջկունք ձեզ* արմադան: *) Մուղալ, *Հատնաբար մարալ* (*գիրուկ, ուժեղ, աղուր*), Ս·160՝ մուղալ՝ *ուղղել* մուղալ *կամ* մարալ, Հ·421՝ տես եզներ: *) Իւղ, *կարագ*· *) Զորքան, *Քամած՝ չորցուած մածուն* (*ճմրան՝ հարելով ապուր ընելու համար*): 4) *Տե՛ս Հատ*· 482*ի վերջին տողերը*: *) Ընել, խաղալ, *երգել ու պարել*: 5) *Երգով*:

Բեռ–բեռ Ոսկի բերէ թալաճ... .
Կարճ Կըճիկներ՝ Երկա՛ճ ապաճ... .
Երկայն Կըճկտիճ՝ Ուղտե՛ր բառնաճ... .
Կուս–Աղջիկներ՝ Մեզ արմաղա՛ճ... .
Սեւուկ Եզներ բերէ լըծա՛ճ... .
Կարմիր Կովեր բերէ կըթա՛ճ... .
Շիճեճ առատ Ի՛ւղ ու Զորթա՛ճ...»:

Ապա դարձան՝ Իր եռեւէն ի՞նչ ըսին. — 1)

— «Կուզրադի՛ճ ցեխաբերաճ...,
Մուրուս բրոնեմ՝ ցէթեմ *) Բերաճ..., —
Կ'երթաս Սասուճ՝այդպէս շօրօրաճ... 2).
Դէ՛, գրճա՛ Դուն ըսկիր Շէկ–Տըղի *) Ձեռ...՝
Կըտեսնե՞ս Դու Սասմայ Սարերու սէյրաճ..., *)
Աղէ՞կ կըրերես թալաճ...»:

499. Կուզրադին Կուգայ Սասուն՝ Ձէճով-Օհաճէճ Ցուրֆ Կ'ուզէ

Ս·160, Ե·795,625,736,1104,823,626,1001, (Ե·711,712), Հ·29,421, 426, (Հ·426), ՁՍ·424, Լ·88,26, (Լ·27), Ճ·34, (Ճ·33ս·), Կ·55,15, (Կ·55), ՁԿ·468,469, Խ·13, Զ·

*Ա՛լ Կուզրադին 3) քըչե՛ց եկաւ 'ի Սասո՛ւն,
Վըրան զարկաւ, Զօրքը չարեց Դաշտի մէջ.
Գընաց մըտաւ Քաղաքէն ներս 4), կանչե՛ց Ձէնով–Օհանին. —
— «Ձէնո՛վ–Օհան,–ըսաւ–, դէ՛ չո՛ւտ նըստիր հաշի՛ւ ըրէ Դուն,
Քանի՞ տարի Տուրք չե՛ս տըւեր Դուն Մեզի՝
Մըսրամէլիք Ձես ղրկեր է՝ եւ Իր Տուրքն ու Հարկ կ'ուզէ՛»:*

---

1) *Երգով*: *) Ցէթել (*ցայտել*), *Թքնել, խնչել, խլինք նետել*: 2) Ճ·102ս·՝ շորերաճ՝ *ուղղելի՛* շօրօրաճ (*սիգալով*): *) Շէկ–Տղայ, *Շիկահեր տղայ, Դաւիթը*: *Ժողովուրդ՝ փոխաբերաբար՝* Արեւին ու հաւկիթի դեղնուցին կ'ըսէ Շէկ–Դաւիթ, Դեղին–Դաւիթ· *համեմատե–լի՝ «Վահագն խարտիշագեղ պատանեկիկ..., նա հուր հեր ունէր, եւ աչքունքն էին արեգակունք»· Տես· Բ· Հարտ·*: *) Սէյրան, *արբ·, Տեսարան, զուարճութիւն*: 3) Ճ·33ս·՝ Պիրհաչն է եկողը՝ տասը մարդով: 4) Հ·426՝ Զ·–Օ·ի կուշտ(ը), Ցոան–Վեգոյի կուշտ(ը):

Զէնով–Օհան ալ՝ թէ, = «Անի՝ դիտէ՛ քանի՞ տարի է՝
Թող գայ Իրեն Տուրքը առնէ՝ ու տանի…»:
Կուզբադին ալ՝ ի՞նչ ըսաւ. —
— «Կ՚ուզեմ Քենէ՝ եօթը տարւան Տուրք ու Հարկ 1),
*Համրանքով չ՚է՛, — կօտո՛վ *) պիտի չափես տաս…:*
Կ՚ուզեմ Քառասուն Կո՛յս–Աղջիկները՝ արմադան·
Քառասունմէկ Տըղա՛յ՝ որ դան Հո՛ւլ խաղան·
Քառասուն անծին Մաքի՛ կ՚ուզեմ բերես տաս·
Քառասուն անծին Երի՛նջ կ՚ուզեմ՝ մատաղցո՛ւ·
Քառասուն Ուղտ–բեռով Ոսկի՛ եւ Արծաթ·
Կօտով չափես՝ բերես տա՛ս·
Քառասուն կոլոտ Կընի՛կ կ՚ուզեմ՝ (որ) Երկա՛նք աղան·
Քառասուն երկայն Կընի՛կ կ՚ուզեմ՝ (որ) Ո՛ւղտ բառնան· —
Կ՚ուզեմ Քենէ՝ որ հիմա՛ չո՛ւտ բերես տաս ու՝ Ես երթա՛մ…»:

500. Կուզբադինի Մարդիկ՝ Պատանիները Կ՚հաւաքեն, Զէնով-Օհան՝ Տուրք Կ՚չափէ

Զ·՝Ա·12, Ա·12, Զ·՝Կ·15, (Կ·15), ՉՍ·425,426,427,428,429,430, (Հ·29,426), Հ·29,379,426, (Լ·27), Լ·27, Ե·625,795,15,736,1001, 712,822, (Ե·712,15,822), ՉԿ·471·

Ոստիկաններն ելան ինկան Քաղքին մէ՛ջ,
Իրենց ուզած Տաւարները՝ ջոկ–ջոկ տան մէ՛ջ դժեցին·
Քառասո՛ւն Աղջիկ հաւաքեցին՝ մէ՛կ Տունի մէջ լեցուցին·
[Կորեկարտի Պառւի Աղջիկն ալ Ատոնց հետ մխասին]·
Քառասուն Տըղայ ժողվեցին ու մէկ Դոմի մէ՛ջ փակեցին·
Քառասուն կոլոտ Կընիկները՝ մէ՛կ Տունի մէջ լեցուցին·
Քառասուն երկայն Կընիկներ ալ՝ մէ՛կ Տունի մէջ լեցուցին·
Ու Դուռները Անոնց վըրայ կըղպեցին: —
— «Ապա՝ Դաւի՞թն ո՛ւր է,–ըսաւ Կուզբադին–·
Ա՛ն ալ բերէք ու խառնեցէ՛ք այդ Ճըժերու հետ մէկտեղ»:
Օհանն 2) ըսաւ, = «Դաւիթ այսօր դացեր է Մա՛ր, դեռ չ՚է՛կեր… ·

---

1) Հ·426՝ Քառասուն բեռ դրամ: *) Կօտ կամ Չափ, *Արմտիք չափելու վայրէ աման, միակտուր գլանաձեւ (Ս տառի ձեւով, երկու կանթով), կամ խորանարդ: 2) ՉՍ·427՝ Ռէս–Մաճուկ:

Որ դայ՝ Ա՛ն ալ կըբերնէք ու կ՛ընենք մէ՛ջ...»:
Կուգըադին ալ, — «Դէ՛, Մենք,–ըսաւ–, երթանք նե՛րս ու Տո՛ւրք [չափենք՝
Մինչեւ Դաւիթ Սարէն դայ...»:
Դուռներ վակե՛ց Տըղոց վըրայ, բանլիքներըը դըրաւ Մո՛ց:
Ձէնով–Օհան չըւարեցա՛ւ..., կը վախնա՛ր... —
Առաւ բադին՝ ելան գացին՝ մըտան Բէ՛րդ·
Ձէնով–Օհան 1) Դուռը բացաւ՝ մըտաւ Ոսկու Գանձատուն 2),
Ատոնք 3) ելան վեր՝ Աբոռին նըստեցան,
Ինքն 4) ըսկըսաւ՝ կօտով Ոսկի՛ կըչափէ ու կ՛լեցնէ Պարկ, —
*Որ բե՛ռ բըռնէ *)՝ եւ Տո՛ւրք տայ...:*
Այդ ձիժերու Տէրե՛րն ըսես...՝ կե՛ռ ու կըռոց դըրա՛ծ են՝
Ու լա՛ց ու լո՛ւց..., ու կուլա՛ն...:

501. Դաւիթ Եողգամի-Աւթին Մէջ, Եւ Կորեկաւթի Պառաւը

Ե·1001, 1104,901,902,768,771,766,767,824,1105,15,712,736,795, 14,1108,504,625,627,1107,560,737,963,964,738, (Ե· 771,625,794, 14,15,711,626,901,768,766,767,736,737,627, 1001,560,712), Չ·՝Ե·963,964,1108, ՉԿ·472473,474,475, (ՉԿ·473), Հ·29,426,379, (Հ·379,426,29), Չ·՝Հ·379, Կ·15,55, Չ·՝Կ·15, (Կ·55), Ց·98,99, Չ·՝Ց·98, Ա·12,55, (Ա·12), (Լ·23), Լ·23, Խ·13,14, Խ·13ա·, Չ·՝Խ·13ա·, Չ·՝Ս·160, Ս·160, ՉՍ·431·

Դառնանք հիմա վեր՝ Դաւիթին· —
Չ'ըսե՞ս Դաւիթն ալ այդ մէկ օր՝ Տունը չ'է՛ր·
Ան ալ ելեր ի՞նչ ըրեր է այդ մէկ օր...,—
Նետաղեղը առեր գացեր՝ Սարեր–Ձորեր Ո՛րս կ'ընէ՛ր...:
Դաւիթ Սարէն որ տա՛կ իջաւ՝ Վէրի–Ոչխար վեր՝ Թեւին,
Եկաւ մըտաւ այդ Պառաւի Աբոռին մէ՛ջ,
*Թո՛ւ *) լուր չ'ունի՛ եղածէ՛ն...:*

---

1) Լ·27՝ Ցոռն–Վերօն: 2) Ե·736՝ դրամի մառան: 3) *Սինքն՝* կուգըադին եւ իր Թիկնապահները: 4) Հ·426՝ Ցոռն–Վէգոն: *) Բեռ բռնել, Ջոյգ պարկ ընելով՝ բերան բերանի քով բերել՝ կարել (բեռցնելու՝ դրաստին երկու կողերէն կախ): *) Թո՛ւ, Բնա՛ւ, երբե՛ք:

Ձեռ տըւաւ մէկ ժանգո՛տ Շեղբիկ *) ու ինկաւ՝
Այդ Պառաւի Արտին մէջը՝ Շողգա՛մ քեղուեց *) ու կ՛ուտէ՛ ... .—
Արտին դըլխէն բըռնեց կերաւ Շողգամները՝ մինչեւ վե՛րջ...:
Կորեկարտի Պառաւն այդօր իր Հաց թըխեց ու պըրծաւ,
Ելաւ դընաց որ իր Արտին ա՛չք մը տայ *):
Այս Պառաւն ալ՝ Մարաթուկի Տէր–Երէցին Աղջիկն էր,
Դաւիթի Հօր — Մըհէր–Դաւիթ — սիրեկանը եղեր էր 1),
Սիրտ կըցաւէ՛ր Դաւիթի վրայ,
Աչքը միշտ ալ՝ Դաւիթի վըրայ կըպահէր, —
Ելաւ դընաց՝ Դաւիթ եառեւ կա՛ն եկաւ,
«Դաւիթն ո՞ւր է,–ըսաւ–, այսօր չ՛երեւար.՞.՞.՞».
Ու մէկ կողմէն անէ՛ծք կուտայ Դաւիթին՝
Թէ «Քոռ ապով՝ Մըսրամէլիք Իմ Աղջի՛կն ալ բըռներ է,
Մէկալոնց հետ՝ կ՛առնեն՝ Գերի՛ կըտանին»:
Մէյ մ՛ ալ՝ Պառաւ՝ իրիկնո՛ց որ լո՛ւսին տեսնէ...,—
Այդ եօ՛թ Աղջկայ Մայր՝ Պառաւը 2)՝ ինչ*) Աղջի՛կն ալ տարեր են —,
Տեսաւ Դաւիթ վերէն կուգայ՝ Վէրի–Ոչխար վեր՝ Թեւին,
Ինկեր է իր Շողգամին մէջ՝ կըկեղեւէ ու կ՛ուտէ՛...,
Ան ալ կանչեց, — «Վա՛յ, Գըրո՛ղ Գազ 3) տանի,–ըսաւ–, Թլո՛լ–
[Դաւիթ,
Թափէ՛ Քու Մէս, Թափէ՛ Քու Մորթ 4), Դու Տէրտո՛ր բալաքուր *),
Դու ոչ–բարո՛վ Քու Մօր մօտէն ծընէ՛ր...,
Շընորհուորը *) տըփեմ վըրադ, չաղգըմակե՛ր *) Մո՛ւռ–Դաւիթ.
Ա՛ս ի՞նչ սեւ *) էր որ Դուն բերեր Մեր Գըլխուն 5),
Գերի՛ ըրեր Մեզ Ամենքըս, Մեր Տունուտեղ քանդեցեր... 5).
Դու պիտ՝ ելնես Քու Հօր տեղը՝ Մեզի օգո՛ւտ պիտի տաս... .
Իմ Կորեկը տըրտըրեցիր հերիք չ՛է՛ր՝

---

*) Շեղբիկ, Անկոթ դանակ· հմմտ. serpe : *) Գեղուել, կեղուը հանել, սակել: *) Աչք (մը) տալ, Ակնարկ (մը) նետել: 1) Հ·426՝ հետը ըըստեր էր կայցեր էր: 2) Տե՛ս Հատ· 411–413: *) Ինչ, Որու: 3) Ե·14,16,24, Բ·15՝ գրողն քի՛՝ ուղղել՝ գրող գ՛ քի (քեզ՝ տանի): 4) Հ·426՝ բէհուրա՛տ մեռցիս: *) Տիրամօր բալաֆուր, Մորթային գէշ վէրքերով ծածկուած հիւանդ: *) Շնորհուր, Քաղցկեղ: *) Շաղգմակեր, Շողգամ ուտող, Բ·766,767,771՝ շաղգամ կերող: *) Սեւ, Սուգ: 5) Բ·1107՝ ըսողը Զէյնով–Օհաճն է:

Հիմա ալ այդ մէկ Արտ Շողգա՛մն էր մընացեր Իմ ապրուստ՝
*Այդ փըշուր 1) կո՛ւտն *) ալ Իմ վըրայ կըտրեցիր։*
Որ Դու այդչափ ո՛ւժ ունիս ու կըտրի՛ճ ես՝
Գընա տեսի՛ր՝ որ Թըշնամին Քաղքի չորս կողմն առե՛ր է,
Անթիւ Զօրքով՝ Վըրաններըը զարկեր են... .
Քու ան մէկալ Եղբայր ղըրկե՛ր Կուզբադին՝
Աղջիկ, Տըղայ՝ Ամենք ժողվեր՝ կ՝առնէ Գերի՛ կըտանի...»։
Դաւիթն ըսաւ, = «Ի՛նչ-ի՛նչ..., Մամի՛կ, ի՞նչ ըսիր.՞.՞.՞ .
Ինչո՞ւ Ինձի «Գըրո՛ղ տանի» կ՝ըսես Դուն.՞.՞.՞ .
Աբի՛ նայինք ի՞նչ է կ՝ըսես Դուն այդտեղ... .
Ո՞վ կըընայ զալ՝ Գերի՛ տանիլ Իմ երկրէն...»։
Ըսաւ, — «Ի՛նչ-ի՛նչ..., Գըլո՛ւխդ, Հօրեմ, Ծո՛ւռ-Դաւիթ...,
Փըռե՛մ ու լամ Քու Աչեր՛..., «Ի՞նչ...» կ՝ըսե՛ս... .—
Ես կ՝իշխե՞մ զամ մօտ-Քեզի...,—
Չէ՞ որ Դու Ծո՛ւռ-Դաւիթն ես...»։
Ըսաւ, = «Չէ՛, չէ՛, բա՛ն չեմ ըներ Քեզ, Մամի՛կ,
Աբի՛, ես Քու Շողգամի 2) դի՛նն ալ կուտամ...»։
Մամիկն եկաւ Դաւիթին մօտհաս՝ ու ըսաւ. —
— « Մըսրամէլիք՝ անթիւ Զօրքով ղըրկեր է Իր Կուզբադին՝
Սասմանց-Տունէն եօ՛թը տարւան Տո՛ւրք կ՝ուզէ. —
Որ բեռներով Ոսկի՛ տանի՝ ղընդղընգան... .
Կոլոտ կիներ՝ Երկա՛նք աղան... .
Երկայն Կընկախիք՝ Ուղտե՛ր բառնան... .
Կոյս-Աղջիկներ առնէ տանի՝ Մըսրայ-Տիրոջ արմաղա՛ն 3)...»։

503. Կորեկաւթի Պառաւին Չեկոյցը

ՁՍ·431,432, (Հ·426,29), Հ·29,426,427, Զ·՝Հ·426, Ե·1108,824, 14,15,964,902,560,737,504,713,625,963,768, 795, (Ե·902,625,712, 560,824), Ճ·98,99, Զ(Լ·84), Խ·14, (Խ·14ս·), Խ·14ս·, ՁԿ·473, Ա·12, (Ա·12)·

Պառաւն ապա՝ լացաւ գընաց Դաւթի առջեւն ու ըսաւ. —

---

1) Խ·14՝ *փշուտ՝ ուղղել՝ փշուր (կտորիկ մը)։* *) *Կուտ, Ուտելիք դոյզն բան։* 2) Ե·964՝ *կորեկի։* 3) Ճ·99ս·՝ *արմաղան՝ գեղեցիկ՝ ուղղել՝ նուէր, ընծայ· Ե·504,560,777՝ շարմաղան՝ ուղղել՝ արմաղան։*

— «Դաւի՛թ, Որդի՛, մեռնի՛մ կանաչ Արեւո՛ւդ...,
Աստծո՛ւ սիրուն, դարձիր փախի՛ր՝ դընա Սա՛ր...»:
= «Ի՞նչ կայ, Մամի՛կ,—Դաւիթ կ'ըսէ—, այդ ի՞նչ գըրոյց է կ'ընես.
Ի՞նչ Մարդիկ են՝ կըպըտրատին Մեր երկիր...»:
— «Ապա՝ Որդի՛, գիտե՞ս ի՞նչ...: —
Ձու՛ Հօրը չա՛տ Ինչք ու Ապրանք ու Գա՛նձ կար.
Ինչ Ձու՛ Հայրը մեռեր է չուրմ *) այս տարի՝
Ձու՛ Հօրեղբայրը՝ Մըսրայ-Տէրոյ Տուրք չէ՛ր տար.
Մըսրամէլիք՝ հիմա ելեր՝ ուղարկե՛ր է Կուզբադին 1)
Քառասուն անծին Մաքի՛ կ'ուղէ՝ որ տանի.
Քառասուն անծին երի՛նչ կ'ուղէ որ տանի.
Եօ՛թը տարուան Տո՛ւրք կ'ուղէ... .
Կ'ուղէ Քառասուն ազա՛ր Աղջիկ, Քառասուն ազար Տըղաներ,
Քեզ ալ հետներ *)՝ պիտի տանի ի Մըսր՛ր...:
Հիմա ժողվեր՝ Քառասուն 2) Աղջիկ ու Տըղայ՝
Լեցուցեր են Տուներու մէ՛չ եւ ըրեր են Գո՛մ-ինե *)...,
Դուռը փակեր՝ Բանալիները դըրեր Ծո՛ց...,
Քեզ համա՛ր է դադարեր *) որ Դուն ալ գաս՝
Ք'եզ ալ խառնէ Անոնց մէջ ու տանի Մը՛սր...,
Եւ կամ կըտրէ Քո Գըլուխ...:
Հիմա ալ հոն՝ Ձու՛ Հօրեղբօր Տո՛ւնը նըստեր Զօրքերո՛վ...՝
Ձափը դըրեր՝ Ձու՛ Հօր Գանձէն Ոսկին Կօտո՛վ կըչափեն...:
Դէ՛, Դուն Մա՛րդ ես՝ դընա՛ այնտեղ՝ մի՛ Թողներ,
Տուրք-Առնողներ Տունէն հա՛ն...,—
Մենք Անոնց Տուրք տըւո՛ղն ենք...:
Ոսկին Իրենց դըլո՛ւխն ուտէ..., ա՛յ Որդի..., —
Բայց Աղջիկնե՛ր բըռներ կ'տանին արմաղան...,
Տըղամարդե՛ր բըռներ Մըսրը կըտանին,
Որ Ամեն(ք) մէկ՝ ըսպանեն...,
Մեզ Ամենքս ալ Գերի՛ առնեն ու տանին...,—
Ապա ի՞նչպէս պիտի ըլլայ Մեր վիճակ...»:
Քառասուն այնտեղ Դաւիթին ըսաւ այդ խօսքեր: —

---

*) Ձուրմ, Մինչեւ: 1) Ե.625՝ Կուզբադին, Մալաճ Զարխադին: *) Հետներ, Անոնց հետ, հետերնին: 2) Հ.426՝ տասը: *) Ինե (՛ի ներքս), Մէջ, ներսը: *) Դադարիլ, կենալ, սպասել:

503. Պառաւը Դաւիթին Կ'ցուցնէ Պատանդներուն Տեղը

Հ.՝Ե·1108,562, Ե·1108,15,737,795,1001,504,562, Հ(Ե·964,1001, 737), Խ·14, ՀՍ·432,433, Ճ·99, Հ·379,29, (Հ·379), Ա·12, (Ա·12), Հ.՝Կ·55,56, Կ·15,55,56, Հ(Ս·160)·

Դաւիթ այնտեղ ի՞նչ ըսաւ· —
— «Մամի՛կ,–ըսաւ–, Դուն մի՛ վախնար, հոգ մ՚ընէր··· ·
Ձի՞ որ ես Ծուռ–Դաւի՛թն եմ···, —
Ես կ՚երթամ հոն՝ ու պատասխա՛ն կուտամ Մըսրայ Ջօրքերուն։
Մամի՛կ, գիտե՛ս, քանի մ՚ Լոր ու Ճընճըղուկ՝
Ես զարկեր ու ըսպանե՛ր եմ՝ Ֆու Կորեկի Արտին մէջ, —
Անո՛նք ալ Լոր ու Ճընճղո՛ւկ են···, — կուզրադի՛ն ու իր Մարդեր···։
Մամի՛կ,–ըսաւ–, այն Ճըժերը ո՞րտեղ են,
Ինկիր առջեւս՝ երթանք Ինձի նըշա՛նք տուր որ ես տեսնե՛մ»։
Եւ Իր Ծոցէն՝ ա՛փ մը Ոսկի հանեց տըւաւ Պառաւին,
Ըսաւ, — «Մամի՛կ, այս՝ Իմ կերած Շողղամներո՛ւն փոխարէն·
Ասկէ ետք ալ՝ ի՛նչ որ ըլլայ՝ Ինձի իմա՛ց տուր Նորէն»։
Պառաւն ըսաւ, = «Ֆու Հօրեղբօր 1) մի՛ ըսեր՝ Ձիս կըճեճէ···,
*Հոն, Ձեր Տան քով, մէկ աւերակ Մարա՛գ *) կայ,*
Աղջիկներ ու Կիներ Ժողվեր՝ այդ Գոմին մէջ փակեր են··· ·
Գընա հարցո՛ւր Ֆաղաքին մէջ՝ կըտեսնե՛ս···»։
Դաւիթ բըռնեց Պառաւին Ձեռքն ու տարաւ,
Ըսաւ, — «Մամի՛կ, Դուն եկ Ինձ հետ միասի՛ն,
Ցո՛յց տուր այն Դուռ՝ ուր Աղջիկներ Ներսը գոմեր փակեր են,
Ես Ֆու Աղջիկ կ՚ազատե՛մ···»։
Պառաւ բերաւ՝ սա՛նկ Հեռուէն կանգնեցո՛ւց,
= «Դաւի՛թ,–ըսաւ–, Իմ Ձեռը Թող՝ որ ցո՛յց տամ·
Որ չըԹողնես՝ չե՛մ ըսեր···»։
Դաւիթ այնտեղ Պառուս Ձեռը որ Թողեց՝
«Հո՛ն է ահա···,–ըսաւ Պառաւ–, կըտեսնե՛ս···»։
Դուռներն ամեն ցո՛յց տըւաւ՝
Ու չնաւի՛կ մը փախաւ գընաց մըտաւ Տո՛ւն,
*Եւ Իր Դըրան Գըրկափակը *) ամուր քաշեց եռեւէն։ —*

---

1) Տե՛ս Հատ· 444՝ Ծնթ· ‡։ *) Մարագ, Ցա՛րդանոց, գոմ։ *) Գրկափակ, Մեծ գերան՝ դուռի եռեւը մէկ կողմէն միւսը պատին մէջ անցնող, եւ որ դուռը մէջտեղէն գրկելով կը փակէ, սողնակ, նիգ։

504. Դաւիթ՝ Տուճերու Մէջ Բռնուած Պատանիներն Ու Դոմուած Աղաասուհիները Բաց Կ'ըողոր

Ջ.Լ.27, Լ.27, (Լ.84), Խ.14, Ճ.99, 100, ՋԿ.475. Ն.795, 1104,1105՝ (Ն.504,560,625,964), (Հ.426) ,Հ.426, Ջ.՝Հ.426, ՋՍ.433,434, Ջ.՝ՋՍ.433, Կ.15,55, Ջ.՝Ա.12, Ա.12.

Դաւիթ եկաւ որ Քաղաքէն Նե՛րս մըտնէ՝
Նայեց տեսաւ որ Քաղաքին չորս-բոլո՛րը բըռներ են...,
Կըրակ-ճըրա՛գ 1) կըվառէ...,—
Երկի՛ղ ըրաւ, ըսաւ՝ «Ի՞նչ է...՝ աս եկեր են Իմ վըրա՛յ...»։
Ան ալ գընա՛ց, գընա՛ց հասաւ այդ Դոմերուս Դուռներուն,
Նայեց տեսաւ Հալսներ կուլան ու կ'ողբան,
Ըսաւ,— «Ինչո՞ւ կուլաք Դուք...»։
= «Մենք որ չիլանք,-ըսին-, ապա ալ ո՞վ լայ...,—
Կուղբադինը եկե՛ր է...,
Վըրաններըը Քաղքին բոլոր զարկե՛ր է...,
Տըղայ, Աղջիկ Ժողվեր լըցեր են Դոմե՛ր...,
Ու հիմա ալ՝ եկեր կ'ուզեն Ասկի տանին բեռներով»։
Դաւիթ այնտեղ ի՞նչ ըրաւ.—
Աքացի՛ մը զարկաւ Դըրան՝ Դուռը կոտրեց ու բացաւ,
Այդ Տըղաներ Դոմէն բոլոր դո՛ւրս թողուց,
— «Շունչառորդի՛ք, Դուք Ոչխա՞ր էք,-ըսաւ-, որ Ձեզ ըրեր Դո՛մ,
Խոտ բերեն տան՝ Դուք ուտէ՞ք...։
Արի՛ք գացէք Ձեր Տունե՛ր,
Ձո՛թք ըրէք Ինձ համար...»։
Աղջիկներուն Դուռը բացաւ՝ թո՛ղ տըւաւ՝
— «Ցոյրեր,-ըսաւ-, Գացէք Ձեր Տո՛ւն՝ աղո՛թք ըրէք Ինձ համար»։
Կընիկներուն Դո՛ւռն ալ բացաւ՝ եւ ըսաւ՝
— «Մայրե՛ր,-ըսաւ-, գացէք Դուք ալ՝ աղո՛թք ըրէք Ինձ համար։
*Ես կ'երթամ հո՛ն...՝ ու Ձեր Չարը կըտանիմ *)։*
Ինձ հոգի մ' կայ՝ Ձեզ համա՛ր է, մի՛ վախնաք...»։
Ճիժ ու Աղջիկ՝ ուրախացա՛ն, խընդացին ու օրհնեցին,
Ու վազեցին՝ գացին Ամենք Իրենց Տո՛ւն։

---

1) Լ.27՝ շատ չըաղ՝ ուղղել՝ չամ չրաս։ *) Չարը տանիլ, Չարիքը հեռացնել։

*Ելաւ գընաց՝ Տաւարներու Դո՛ւռն ալ բացաւ ու թողո՛ւց *)*
Կանչեց ըսաւ,— «Է՛յ Աստըծու Տաւարնե՛ր...,
Գացէ՛ք,—ըսաւ—, ամենամէկդ ձեր Տէրերուն Դուռ կեցէ՛ք...»։

505. Դաւիթ՝ Պահակներն Սպանելէ Ճեռոյ՝ Կուզբադիճի Դէմը Կ'ելլէ

ՁՍ.435,436, Ա.12, Ձ.Ա.13, Ի.14, Կ.15,16,56 Ձ.Կ.16,56, (Կ.56), Հ.427, 380, 29, (Հ. 380), Ե.768,795,902,1105,560,964,504,737,625,712,1002, 1105,(Ե.504,1002,560,737,15), Ձ (Ե.1105), Լ.27, (Լ.28,84,85), Ձ. (Լ.27), Ը.99, ՁԿ.476.

Դաւիթ ապա ի՞նչ ըրաւ.—
Վալէ՛ց գընաց՝ հասաւ Բերդի Գանձատունն 1),
Նայեց տեսաւ Գանձարանի Դուռը բա՛ց...,
Ու բազմութիւն չո՛ր-բոլոր...,—
*Կուզբադինի Մարդերէն ալ՝ Տա՛սը-Հոգի 2)՝ Թուր չըլտած *)*
Դըբան առաջ՝ կէսը մէ՛կ կողմ, կէսը մէ՛կ կողմ նըստե՛ր են։
Դաւիթ Անոնց բարե՛ւ տըւաւ ու հարցուց,—
Թէ,— «Արդեօք Իմ Հօրեղբայրներ՝ Բերդին մէջը ի՞նչ կ'ընեն...»։
= «Ինչո՞ւ համար կըհարցընես»,-երբ ըսին՝
— «Երթամ ե՛ս ալ՝ Անոնց օգնե՛մ» ,ըսաւ Դաւիթ՝ Այդ Մարդոց։
= «Անոնք ներսը ի՞նչ ըրին որ...՝ Դուն ալ երթաս ի՞նչ ընես...»։
Այս խօսքին վրայ՝ Դաւիթ այնտեղ բարկացա՛ւ,
Հասաւ բըռնեց՝ այն Տանին ալ՝ Վիզը Փորէն դո՛ւրս քաշեց,
Ինչպէս որ Մարդ՝ Հաւու Վիզը դո՛ւրս քաշէ...։
Ապա վազեց՝ գընաց մըտաւ Բերդին ներսը, Գանձատունն,
Սարէն ղարկած Վէրի-Ոչխար՝ վեր՝ Թևերին,
Նայեց՝ այնտեղ՝ ի՞նչ տեսնէ...,—
Եկողները՝ մէկ Բադին կամ Կո՛ւզբադին...,
Մէկ Զարխադին, մէկն ալ Սիւդին՝ կանգնա՛ծ են...
Կուզբադինը՝ Աթոռ ըրեր՝ տեղաւորուեր նըստե՛ր է...,
Ոտքը թալեր վեր՝ Ոտքի՛ն...,

---

*) Թողուլ, թողնել, Արձակել (անասուններըը)։ 1) ՁՍ.435՝ իր հօրեղբօր տուն, Ի.14՝ հօրեղբօր մօս, Լ.27՝ եկաւ ձին տուաւ Քեռի-Թոռոսին։ 2) Ա.12՝ ինը ուսիկան, Կ.15՝ իսուսուն փահլիվաններ, Ե.964՝ չորս փհլիվան։ *) Զլուած, Մերկացուցած։

*Ամին տիրիկ *)՝ կայղոն *)՝ գըլո՛ւխ, լեցուցե՛ր... 1),*
*Կըրակ դըրեր կայղոնին ու կըրակե՛ր... *).*
*Հի՛նգ կանգուն ալ՝ Անոր Մարճը *) երկա՛ր է... 2).*
*Աթոռին վրայ դրե՛ր է ու կը քաշէ՛ *)...:*
*Հօրեղբայրն ալ, Զէնով-Օհան, Ռոչը Գետի՛ն է տըւեր *)...,*
Բըրտինք ճակտէն կըթափի՛...,
*Կօտով Ոսկի՛ կըչափէ՛ 3)... ու կը լեցընէ Թեռան *) մէջ...,*
Ծըռան-վիզն 4)՝ Պարկին բերա՛նն է բըռներ...,
Կուզրադին ալ կըկանչվըռաէ,— «Զէնով-Օհա՛ն, չո՛ւտ չափէ...»:—

506. Զէնով-Օհան Կ'վախնայ Որ Դաւիթը Բռնեն Ծանիւ

Ե.737,625,902,1002,769,795,822,964,712, (Ե·504), Զ(Լ.84). Զ.՝Լ.27, Լ·27, ՀՍ.437,438,439,440, Զ.՝ՀՍ.437, Կ.56,16,55, Զ(Կ.55), Հ.29,427, ՉԿ.476, Ը.99, Ա.13.

Զէնով-Օհան երբոր Ոսկին կ'չափէր կ'ըսէր՝ «Աս երկո՛ւ...»,
Կուզրադինը կ'ըսէր՝ «Մէ՛կ...»:
Դաւթի Աչքը երբոր ինկաւ Այդ Մարդերուն Երեսին...՝
*Մ'լ պիտցո՛ւ որ... *)՝ Գանձատունը կըկողոպտեն կըտանի՛ն...:*
Դաւիթ այնտեղ որ մըտաւ ներս՝ ի՞նչ ըրաւ,—
Գընաց կեցաւ Ոսկու-Հորի բերնին վրայ՝
Գո՛ռաց... ճըչա՛ց մէ՛կ ձայնով,
Կանչեց ըսաւ,— «Հո՛րեղբա՛յր...,
Աւիկ Դուն ի՞նչ է կ'ընես... .
*Մըսրայ Հեծել *)՝ Մեր Գաղաքը աւերե՛ց...»:*

---

*) Տիրիկ, տիրըկ՝ գուցէ՝ սաթ. յաամիկէ ծխափող՝ սաթէ գլուխով: *) կայղոն, ղայղոն, Ծխափողի կրակարան, լիւլէ: 1) Այսինքն՝ ծխախոտով լեցուցեր: *) Կրակել, վառել, բռնկցնել: *) Մորճ, Ծխափող: 2) Տե՛ս նաեւ Հատուած 52 (Ա. ՃԻՒՂ): *) Գաշել, Խմել, ծծել, ՀՍ.435՝ կը խմէ: *) Ռոչը գետին տալ, Ծունկը գետնի վրայ զարնել, ծունկի գալ· 3) Կ. 56՝ Վէրգօն է չափողը: *) Թեռ, Մեծ պարկ: 4) ՀՍ.436՝ Գլխ (Մեծաւորին երկրորդը), Կ.56՝ Օհանն է պարկ բռնողը: *) Գիտցաւ որ..., Կարծեց թէ, իրեն այնպէս թուեցաւ որ...: *) Հեծել, Գիաւոր զօրք, հեծելազօր(ք):

Հօրեղբօր Սիրտ վառուեցա՛ւ...,—
Դաւթի համար կը վախնա՛ր...,
Դողա՛ց այնտեղ՝ Հօրեղբայր...,—
«Ա՛յ, հա՛յ...,-ըսաւ Իր Մըտքին մէջ-, ի՞նչ ընեմ...,
Դաւիթ եկաւ մըտաւ նո՛ր՝
Կռւզբադինը հիմա Ա՛ն ալ պիտի բըռնէ ու տանի... .
Եւ կամ Դաւիթ՝ Կռւզբադինի վըրա՛յ մէկէն յարձակի...»։
Ան ալ կանչե՛ց *) վեր՝ Դաւիթին,= «Կորսէ՛,-ըսաւ-, մի՛ դար Տուն...,
Ամո՛թ է...։
Գընա Դաշտեր՝ Լոր, ձընճղո՛ւկ զարկ Գետ համար.
Դուն Տըղա՛յ ես, Ոսկի չափել չե՛ս գիտեր...»։
Դաւիթ այնտեղ վերցուց ըսաւ,— «Հօ՛ րեղբայր,
Է՛ր *) ես Հա՞րս եմ...՝ որ «Ամո՛թ է, չիգա՛մ Տուն»...»։
Հօրեղբօր Սիրտ վառուեցա՛ւ... .
Դաւիթէն ալ կըվախնա՛յ...,
Մըտքին մէջը կ՛ըսէ՝ «Ասի հաստատո՛ղ *) է, Այս Տըղան...,
Գիտի գայ ներս՝ եւ Կռւզբադին Ա՛ն ալ բըռնէ ու տանի...,
Մեր Աչք պիտի կռւբցընէ՞ *)...»։—
Անոր համա՛ր կըբարկանայ վեր՝ Դաւթին...։

507. Ծռան-Վէգօն՝ Վախէն Առիւծն Կ՛փակի Ու Վրան Կ՛ընէ

Զ(Լ.27), Զ.՝Լ27, Լ.27, Կ.56, (Ե.1002), Ե.1002,796, (Հ.427), Հ.427, Ս13.

Ծռան-Վէգօն ալ որ այնտեղ կեցե՛ր էր՝
Զըտեսա՛ւ որ Դաւիթ եկաւ մըտաւ՝ ներս,—
Ինչ Դաւիթը պօռա՛ց յանկարծ «Հօ՛ րեղբա՛յր»...՝
Պօռալո՛ւն պէս՝ Ծռան-Վէգօն Իր երկիւղէն վե՛ր թըռաւ՝
Կըպաւ Առիւ՛ ընկաւ Գետին՝ ուշաթա՛փ...,
Վախէն՝ Փորը վըրան դընաց, ապականե՛ց Իր Վարտիք...։
Ծռան-Վէգօն ուշքի՛ եկաւ՝ նըստեցաւ,
Սա՛նկ նայեցաւ՝ տեսաւ Դաւիթ Իրեն Գըլխուն վրա՛յ կայնուկ՝
Ըսաւ,— «Դաւի՛թ, Դո՞ւն էիր...
= «Հըրամա՛ր ես, ըսաւ Դաւիթ-, ե՛ս էի ...»։

---

*) Կանչել, Սասունլով, պօռալով՝ խօսիլ։ *) Է՛ր, Մէթէ։ *) Հաստատող, Ծամառ։ *) Աչքը կուրցնել, Սուգի մէջ թաթխել (մէկը)։

— «Դաւի՛թ,-ըսաւ-, մէկ անգամ ալ Քու Հայրը պօռաց Իմ վերայ՝
Ու ես՝ այսպէս՝ վարաիքիս մէջ ցըռեցի...*),
Մէկ ալ՝ այսպէս՝ Դո՛ւն պօռացիր՝ Փորըս գընա՛ց Իմ վերայ»։
Դաւիթ հասաւ՝ վերցո՛ւց Վէգօն նետեց դո՛ւրս,
= «Գընա՛,-ըսաւ-, ցրտա՛ն Վէգո..., լըսացուէ՛ ոչ լողացի՛ր»։
Ձէնով-Օհան, ցըռան-Վէգին ու Քաղաքին Մարդիկներ՝
Մըսրայ-Տիրոջ ահէն այնպէ՛ս կզդողան...՝
Ինչպէս Ուռին՝ Ջրի մէջը կզդողայ...։

508. Դաւիթ՝ Ձէնով-Օհանիճ Կ'ըսէ՝ «Դուն Ոսկի Զափել Չես Գիտեր, Թո՛ղ՝ Ես Չափեմ»

Լ.27, Զ(Լ.27), Չ.՝ՉՄ.441, Ե.15, 1105,795,712,902,504,625,769,1002, 737,560,768,964,822, (Ե.15), Հ.29,380,427, Ձկ.477,478, Կ.56, 16, (Ի.14), Ի.14, Ճ.99, Ա.13.

Դաւիթ հարցուց այդ Բազմութեան,— «Դուք ինչո՞ւ էք հոս եկեր»։
Թէ, = «եկեր ենք՝ տասին մէկը Տո՛ւրք կը տանինք Մէլիքին.
Քառասուն-քառասուն Հարս ու Աղջիկ ու Տըղայ ալ միասի՛ն»։
Դաւիթ այնտեղ չտա բարկացա՛ւ..., ա՛լ չիմացա՛ւ, չըլըսե՛ց...,
Բարկութենէն՝ Արի՛ւն լըցաւ Իր Աչքեր....
Հասաւ Գըղրի Թև՛ը բըռնեց ու Թալե՛ց...,
Հօրեղբօրը Թև՛ւն ալ բըռնեց՝ կամացուկ մը դէ՛ն քաշեց,
Ըսաւ,— «Հօքա՛ր, այդ կերպ Ոսկի չե՛ն չափեր՝
Ինչ կերպ որ Դուն կըչափես... .
Ատ ի՞նչ բան է՝ Դուն կ'ընես.՞.՞.՞»։
= «Որդի՛,-ըսաւ-, այդ Քու Թևի 1) քաքո՛րն է որ կը մաքրեմ...»։
— «Ա՛յ Հօրեղբա՛յր,-ըսաւ Դաւիթ Օհանին».
Ո՞ւր են որ Իմ Թևի քաքեր..., բա՛ն չըկայ...»։
= «Նայէ՛,-ըսաւ Ձէնով-Օհան-, Թևիդ վերան՝ տես ի՞նչ կայ»։
Դաւիթ՝ այնտեղ՝ Թևին վրայէն՝ Վէգի-Ոչխար դէ՛ն նետեց,
Ըսաւ,— «Դուն չե՛ս կըրնար սըրբել Իմ քաքեր... .
Վե՛ր եկիր որ Ես սըրբե՛մ...։
Հօքա՛ր,-ըսաւ-, Դուն այդ ի՞նչ է կըչափես... .

---

*) Ցռեղ, Ապականել (վարաիքը, փորհար վիճակով, կամ յանկարծական վախէ)։ 1) Ե·795,822՝ Քու Հօր։

Ինչո՞ւ համար այդ Ոսկիներ իրենց տեղէն կը հանես...»։
Ըսաւ, = «Ջէ՞ որ Մըսրամէլիք ուղարկեր է Տուրք կ'ուզէ,
Անոր Տո՛ւրքն է կըչափեմ...»։
Դաւիթն ալ թէ,— «Այ Հօրեղբա՛յր, իմ եղբայրը ղըրկեր է՝
Ինձմէ Տուրք ու Հա՞րկ կ'ուզէ.. 1)։
Դուն ելիր դո՛ւրս, նըստիր Քու տե՛ղ։ խե՛ղճ ես Դուն...։
Դուն հալո՛ւր ես, նեղացե՛ր ես, քըրտնե՛ր ես,
Դուն չե՛ս կըրնար չափել Սասմանց Ոսկիները...,
Թող ի՛նձ՝ որ ե՛ս չափեմ լեցնեմ այդ բեռները,
Իմ եղբօր Տուրքն ու Հարկը ե՛ս պիտի տամ... ։
Այդ կերպ Ոսկի չե՛ն չափեր... ։
Իմ Հօր Ոսկին ու Արծա՛թն է, իմ գիտնալս...,
Կօտն Ինձի՛ Տուր՝ կըտրի՛ճ-կըտրիճ չափե՛մ ես... ։
Թէ չըվոխի՛մ՝ Ինձ սըրվեցո՛ւր, Հօ՛րեղբայր...»։—

509. Դաւիթ՝ կօտը օրջած՝ Ոսկի կ'չափէ

ՁԿ.479, Ե.99, (Ե.99), Կ.56,16, (Կ.56), Ի.15, Հ.380,427, Ձ.՝Հ.427, (Հ.29,380), Ա.13, Ե.769,504,560,625,712,737,795,964,1002,1105,902, 822,15,505,561,626,796,16,1102, Ձ(Ե.504,964,560,796,737), Ձ.՝Ե.561, ՁՍ.442,443,444,445,446,447, Ձ.՝ՁՍ.445, (Լ.28), Ձ.՝Լ.28, ՁԿ.479.

Դաւիթ հասաւ՝ կօտ 2) Հօրեղբօր Ձեռքէն խըլե՛ց ու առաւ,
Ինչ որ այնտեղ չափեր էին՝ Գետի՛ն թափեց պարկերէն,
Իր ծօչերը զարկաւ Գետին, Գանձին առա՛չ նըստեցաւ,
— «Գըզի՛ր,-ըսաւ-, բըռնէ՛ Պարկը՝ ես չափեմ...»։
Գըզիր բըռնեց, Դաւիթ Ոսկին լեցուց Ձափը՝ լի՛ք ըրաւ,
Վերցուց թափեց Պարկին մէջը եւ ըսաւ.—
— «Այս մէկը թող Քեզի՛ ըլլայ, Հօրեղբա՛յր,
*Դուն մեծացեր, ջոջացե՛ր *) ես, ա՛լ չե՛ս կըրնար աշխատիլ...»։*
Այդ մէկ Ձափը լեցուց տըւաւ Հօրեղբօր։
Մէկ կօտ ալ լի՛ք ըրաւ՝ ըսաւ, — «Հօրեղբա՛յր,
Պարկը բըռնէ՛, այս մէկ չափն ալ Ի՛նձ համար,—

---

1) Դառն հեգնութիւն..., եղբայր եղբօրմէն տուրք կըպահանջէ։ 2) Ե.1105՝ կիտո՝ ուղղել՝ կօտը։ *) Ջոջանալ, Տարիքն առնել, ալեւորիլ։

Ես ալ պիտի նո՛ր պըսակուիմ, կընիկ-Տըղի տէ՛ր ըլլամ...»։
Այդ մէկ Չափին ալ՝ լեցուց Պարկը՝ Ի՛ր համար։
[Կուզբադինն ալ՝ կը նայի՛...]
Ապա դարձաւ Կուզբադինին եւ ըսաւ,—
—«Պարկը առ բե՛ր՝ որ հիմա ալ՝ եղբո՛րս համար չափեմ ես ...»։
Պարկը բերին մօտահաս՝
Գըղիրը որ Պարկը բըռնեց իր առաջ՝
Դաւիթ վերցուց կօտը չըրջեց բերնին վրա՛յ,
Բերան գընաց վեր՝ Դեռնին,
Ոռքը եկաւ դէպի վե՛ր,—
Ոսկին առաւ՝ կօտի Ոռին վրա՛յ լեցուց,
Չափին փայտը զարկա՛ւ քըսեց Չափին վըրայ՝ քը՛ռ) սըրբեց,*
[Ապա Ոսկին Չափի Ոռին կը կենա՛յ..., —
Խը՛ռ) կը լըղայ՝ կուգայ տա՛կ...],*
Ոսկիները մէ՛կ չըմընաց Չափին վրայ...,
Ամէն թափեց տարաւ տա՛կ...,
Դատարկ կօտը վերցուց չըրջեց Պարկին մէ՛ջ,
[Կուզբադինն ալ՝ կը դիտէ՛...]
Բա՛րձրը ձայնով ըսաւ,—«Աս՝ մէ՛կ, երկո՛ւ»,
Կուզբադինի պէ՛ս կը չափէ՛..., մէկը՝ երկո՛ւ կը հաշուէ...։
Մէկ ալ չափեց՝ դատարկ կօտը տարաւ Պարկին ու ըսաւ,
—«Աս երկո՛ւ...»։
Մէկ ալ չափեց, դատա՛րկ կօտով—«Աս երե՛ք...։»
Երե՛ք անգամ այպէս ըրաւ ու չափեց՝
Ապա ըսաւ թէ, — «Բա՛ւ է...,
Այս ալ եղբօրս՝ Մըսրամէլ՛քի՝ Տուրքի՛ն տեղ...»։—

§10. Կուզբադին Կ՚բարկացայ Դաւթի վրայ

ՁՍ,448, Կ,16,56, (Կ.16), Ե.737,1105,964,505,769,796,902,16,626,561, 823, (Ե.902,823,965,1002,769,505), Ձ., Ճ.99, Ա.13, Ձ՚Ա.13, (Հ.29), Հ.427,380,29, Ձ(ՁԿ.480), ՁԿ.480, Խ.15, Ձ՚Խ,15, (Խ.15), Ձ(Լ.28), Լ.28.

Այն ժամանակ լո՞ւռ եղաւ...,—

---

*) Ըը՛ռ, Ըերելով, քը՛ռ ձայնով։ *) Խըռ ղռաղ, Խ՛ըռռ ձայնով սահիլ-վար թափիլ (ոսկիի եւն.), Ե.769՝ Կ՚խոկայ՝ ուղղել՝ կըխռռայ։

Կուղբադի՛ն էր ,— 'Դաւթի Իրեն ծաղր ընե՛լը որ տեսաւ՝
Զը դիմացա՛ւ ալ այդտեղ,
Բարկացաւ ու պօռա՛ց Դաւթի երեսին,—
— «Տօ ծո՛ւռ...,-ըսաւ-, այդ ինչպէ՞ս ալ չոջիկ-չոջի՛կ կըլլաս դուն*)
Գընա նըստէ Քու տեղը՛դ... ,
Թէ չէ՝ հիմա՝ կ'ելնեմ Գլո՛ւխդ կը չարդեմ...»։—
Ըսա՛ւ թէ չէ...՝
Ամին Տիրիկն Իր Կայլոնի Գըլխէն հանե՛ց Կուղբադին՝
Ու մէկ զարկաւ Դաւիթին 1),
— «Շունչա՛նորդի Տըղայ,-ըսաւ-, ի՞նչ բան է որ Դուն կ'ընես.
Այդ ի՞նչ տեսակ չափել է... ,—
Կօտը չիտա՛կ դիր՝ չափէ»։
Ապա զարձաւ դէպ Օհան՝
Մըտի՛ակ մ'զարկաւ 2) Անոր Վիզին՝ արցունք Աչքէն եկաւ տա՛կ ,
Ըսաւ ,— «Հալէ՛ւո՛ր , այդ Ծուռն ի՞նչ ես ներստեցուցեր Դուն այստեղ,
Իրեն խելքով՝ Տո՛ւրք կըչափէ Ինձ համար,—
Մեզ ըրեր է Իրեն ծա՛ղր... ,
Կօտը պարա՛պ կըչափէ ու դեռ ալ կ'ըսէ թէ «Բա՛ւ է...».
Մէջը բան կա՞յ որ բաւէ... .
Ատիկ խե՛նթ է... , տարէք դէ՛ն... ։
Մենք Քու ծա՞ղրն ենք , չա՛նորդի... ,
[Ծօսքն ուղղելով Դաւիթին]
Իմ Թագաւոր Քու ծա՞ղրն է ... ։
Կուտա՞ս՝ եվիր չուտ չափէ տո՛ւր՝ եօ՛թը տաբուան Տուրքն ու Հարկ՝
Բեռներ բըռնենք ու երթա՛նք։
Թէ չէ՝ կ'երթամ...՝ Մըսրամէլիք որ լըսէ...՝
Կ'ելնէ կուգայ՝ Սասմայ-Քաղաք կ'աւերէ...՝
Կ'առնէ-տանի՝ Նոր Քաղա՛ք մը կը չինէ՝
Մըսրայ-Քաղքի քամակը ...» ։

---

*) Ջոջիկ-ջոջիկ ըլլալ , Մեծի ձեւերով խօսիլ , մեծ-մեծ չարդել ։
1) Կ.16՝ Գուրզն առաւ որ Դաւիթին զարնէր , Ե.965՝ մէկ ապտակ զարկաւ։ 2) Ե.626՝ ապտակ մ' զարկաւ։

511. Դաւիթ Կ'պատժէ Կուզբադինը եւ Կ'դրկէ Մարամէլիին

Հ·29,427,380,30, (Հ·380,427), Ջ·՝Հ·380, Ջ·՝Կ·56, Կ·16,56,58, (Կ·16), Ջ·, Ե·1105,769,16,712,737,902,965,505,526, 1106,506,561, 796,15,570,740,1003,771,801,823,511,907,1002, (Ե·769,1002,505, 15,624,907,712,740,771,801,561, Ջ·՝Ե·505,16,965, Ջ·, ՋԿ·481,482, 482ա·, (ՋԿ·482ա·,481), Ջ·՝Խ·15, (Խ·15), Խ·15,21,22, Ա·13, (Ա·13), Ս·160,161, Ջ·՝Ս·160,161, (Ս·161), ՋՍ·449, Ջ·՝ՋՍ·449, Ց·102,34,33ա·, (Ց·100), Ջ·՝Ց·102, (Լ·85,28), Լ·26,85·

Դաւիթ այնտեղ ի՞նչ ըրաւ,—
Զբթողո՛ւց որ Զէնով-Օհան պատասխա՛ն տար Բաղինին,
Վիղ ծրտելով՝ ա՛յսպէս նորէն Կուզբադինի դէ՛հ նայեց՝
Ըսաւ,— «Ինչո՛ւ կը զարնես···,
Հեծել Բաղաքն աւերո՛ր է···՝
Անոր համար՝ ես ալ այսպէս չըփոթեր եմ՝ ծո՛ւռ դարձեր···:
Կ'ըսէք «Մո՛ւռ եմ», ու չէ՞ք հաւնիր իմ չափել···՝
Ես ալ ահա մէ՛կ կուտ անգամ չե՛մ տար Ձեզ···»:
Ըսա՛ւ-չըսաւ···՝ չա՛տ բարկացաւ Դաւիթն ալ,
Կօտը վերցուց՝ Թըռաւ ելաւ՝ կանգնեցա՛ւ,
Կանչեց ըսաւ,— «Հա՛ցն ու Գինին, Տէր-Կենդանին···»՝
Ու Ոսկի-Կօտը նետեց Կուզբադինի Գլխուն կողմ··· 1):
Կուզբադինը Գլուխ կօտեց, Կօտ չըդըպա՛ւ Իր Գլխին,
Դըպաւ Պատին՝ Պատը փըլցուց, քառասո՛ւն Պատ ալ մխաւին 2)·
Ու Կօտին ալ կըտորները՝ մէկալ կողմէն դո՛ւրս գացին···:
Դաւիթ հասաւ ամո՛ւր բըռնեց Կուզբադինը Թեւերէն,
Ապտա՛կ մ՝ զարկաւ Երեսին,
*Վիղ ծրտեցաւ՝ Մըռութ *) դընաց վեր՝ Ոսին,*
Մըռվի՛ղ մընաց Կուզբադին···:
*Ապա ելաւ տըփեց *) Գետին, պառկեցուց···,*
Ոտը դըրաւ վեր՝ Փորին···,

---

1) ՋՍ·449՝ պատէն կախած Կռճաճովը զարկաւ Կուզբադինի գլխուն, Ց·100՝ մէկ չլխտրիկ (*ապտակ*) զարկաւ: 2) Հ·380՝ Բառուսի պատ՝ առջեւ կըխրուի, Ա·13՝ պատը բիւրեղ էր՝ ճղուաւ, ոսկին եկաւ թափաւ սենեակը՝ լիճ եղաւ: *) Մռութ, *Շրթունք*: *) Տփեց, *Թափով զարկաւ (գետին), գ'գետնեց:

Մէկ Ձեռովը կուզբադինի Բերան սըղմե՛ց ու բացաւ,
Բըռնեց Լեզուն՝ արմատովը քաշեց Բերնէն՝ ու վըրցուց,
Վերի Շըրթունք քաշեց հասցուց ճակատին 1),
Ու Լեզուն ալ դըրաւ վրա՛ն...,
Ատամները՝ մէկ–մէկ քակեց՝ հանեց դո՛ւրս...,—
Եռաւն–երկո՛ւ Ատամները մէ՛կ–մէկ քաշեց ու հանեց —,
Բեւեռի՛ պէս զարկաւ Ատոր ճակտին վըրայ՝ երկո՛ւ չարք,
Ականջներն ալ՝ կէսը ճեղքե՛ց, կէս՝ Թողո՛ւց...,
*Երեսաջուրն *) ալ քեղուե՛ց...,*
Ա՛ղբ–խայտառա՛կ ըրաւ այնտեղ՝ կուզբադին,
Բերան մընաց կիսաբա՛ց 2),
Ձեռները կապե՛ց՝ կրնակէն,
*Վերցուց այնպէս՝ ետե՛ւ–առջեւ *) դըրաւ Իրեն *) Ձիուն վրա՛յ,*
Ոտքեր տարաւ՝ կապեց Ձիուն Փորին տա՛կ:
Կուզբադին ալ՝ կակա՛զ–կակազ՝ կըպաղատա՛ւ ու կ'ըսէ· —
— «Ձիս չըսպանե՛ս, Քո ժամո՛ւ բա՛խտ..., ա՛յ Դաւիթ...»:
Դաւիթն ըսաւ, = «Է՛յ կուզբադին, Ես կըրնա՛մ Քեզ ըսպանել,
Բայց ապա Քեզ ո՛ղջ կըճըդեմ..., մի՛ վախնար...,
Դուն ել դըրնա՛ւ լո՛ւր տար Եղբօրս Մէլիքին,—
Ըսէ՝ «Դաւիթ մա՛րդ է եղեր այս տեսակ...,
Թէ՝ մէ՛կ ըստակ Տո՛ւրք ալ չէ՛մ տար Ես Իրեն,
Դէր մ' ալ չիդա՛յ՝ Սասմանց–Տունէն Կընիկ, Աղջիկ, Տո՛ւրք ուղէ·
Սասմանց–Տունը դեռ չ'է՛ քանդուեր, աւերուեր...,
Որ Ինք դըրկէ Տո՛ւրք ուղէ... .
*Աւեր *) բանէն ի՞նչ կ'ըլլայ... .—*
Կըտրի՞ճ Մարդ է՝ Թող Զօ՛րք ժողվէ՝ գայ Իմ վըրայ կըռիւի՛ 3)
Բարե՛ւ ըրէ՝ ըսէ՛ Մըսրայ «Մէլիքին»...՝
«Իրեն ձեռքէն ի՛նչ որ կուգայ՝ չըխընայէ՛ այս անգամ...՝

---

1) Զանազան պատումներով՝ Ականջները, բիքը, պռկըները (շըրթունք), ճեռբեր, ծուռկերը՝ կտրեց, աչք մը փորեց, թեւ մ' ալ կոտրեց: *) Երեսաջուր, Երեսի մորթը, կաշին (քերթեց): 2) Ե·965՝ մնաց բաշ՝ ուղղել՝ մնաց բաց: *) Ետե–առջեւ, Դէմքը՝ Ձիուն պոչին կողմը հեծցուցած: *) Իրեն, Այսինքն՝ Կուզբադինի (ձիուն): *) Աւեր, Գէշ, Թշնամական (գործ): 3) Պատումներէն քանիները՝ անհաւրկի դեհկիկ ձեւեր ունին այս սպառնալիքներուն մէջ:

*Զուր *) ես գա՛մ...»:*
Թո՛ւղթ մ՝ ալ դըրեց տըւաւ Զե՛ռ,
*Ապա Նիզակն ըրաւ քանըզ *) Շան-Խառան *),*
Կուզբադինի Վիզէն կախեց՝ թո՛ղ տըւաւ,
Եւ Անոր Զին քըշեց դէպի Մըսրայ դեհ,
— «Գընա՛,–ըսաւ–, ինչ կըղըրկեմ Նըւէ՛ր Մըսրայ Փու Տիրոջ,
Երթաս՝ խորոտ այդ նըմուշովդ՝ Թագաւորիդ դէմ կանգնի՛ս...»:

512. Դաւիթ՝ Կուզբադինի Թիկնապահներն Ու Զօրքերը Կ'ջարդէ

2·՝ Ե·712, Ե·505,823, (Ե·965,561,769), Ս·160, 2·՝Ս·161, (Ճ·34), Ճ·34, (Կ·56), 2(Հ·29), (Հ·29), Լ·26, 2·՝Լ·26, 2(Լ·26)·

Զարխադին ու Սիւդին ըրի՛ն որ փախին...՝
Դաւիթ հասաւ՝ Դըրան մէջը՝ դէմ կըտրե՛ց,
Բըռնեց երկուք, զարկաւ իրար, մարմնեց 1) Անոնք Իրենց տեղ,
Վերցուց նետեց՝ Մարմիններըը զացին ինկան Բերդէն դո՛ւրս,
Ու Գըլուխները՝ Բակին մէ՛ջը մընացին...:
Վաղեց ասպ՝ Քաղքին բոլոր՝ Վըրան զարկած Զօրքերուն,
Ու Բըռունցքո՛վ Թէ Կոճանով զարկաւ փըռեց Ամենն ալ:
Քեռէ-Թորոս որ Դաւիթի կըռիւ ընել չէ՛ր տեսեր՝
Գընաց եկաւ Մել-Գալի 2) գլուխ ու նայեց,
Տեսաւ որ ի՛նչ..., — ինչպէս Ցորնի-Ագաի՛ մէջ՝
Մանգաղովը Հասկեր զարնեն ու կըտրեն, —
Դաւիթն ալ Հոն 3) Կուզբադինի Զօրքը ամեն կըբըրդէ՛...:
Քեռէ-Թորոսն ալ՝ «Փա՛ռք տըւաւ Աստըծուն»,
Զօրքը Հատաւ, Ինքը եկաւ եկաւ Տո՛ւն:

513. Դաւիթ՝ Գաճնի Համար Կ'տեսնէ Զէնով-Օհաճէճ

2·՝Ե·506, Ե·561,562,506, Ա·13, 2·՝Ա·13, (Կ·56), 2·՝2Ս·593, 2Ս·594, 2·՝Լ·27,85, Լ·27·

*Դաւիթն ալ ինչ *) Զափը նետեց Կուզբադինի Գըլուխին,*

---

*) Զուր, *Մինչեւ:* *) Քաւի՛զ, *Ինչպէս, նման:* *) Խառան, *Շանը փայտ, անզուսպ եղի կամ չունի վիզէն՝ ոտքերուն մէջ կախ ինկած:* 1) Մարմնել, *Մարմինը գլուխէն զատել:* 2) *Ժայռի մ՝ անունը:* 3) Ճ·34՝ Քուռկիկ-Զալալին դուրս ֆշեց ու հեծաւ՝ ֆշեց զօրքին մէջ: *) Ինչ, *Ինչ առեն որ:*

Կըտորները՝ Գանձարանի Պատի՛ն դըպան՝ ծակեցին,
Պատ բիւրե՛ղ էր՝ ճեղքեցաւ...,—
Շողը ինկաւ Գանձատան ներս, չէնքին մէ՛ջ,
Գանձը եկաւ երեւցաւ, Տախտին մէջը լիք եղաւ, —
Դաւիթ ելաւ մըտաւ նե՛րսը՝ Գանձատուն,
Նայեց տեսաւ՝ քա՛նի կ՚նայի՝ Ոսկի՛ է...,
*Ոսկու թեղը *) ելեր Զեղո՛ւն է հասեր...,*
Շա՛տ խընդացաւ, ուրախացաւ, ի՞նչ ըսաւ. —
Ըսաւ, — «Հօրա՛ր, Դըլո՛ւխդ ուտէր այդ Դըրա՛մ...,—
Իմ Հօր ա՛յդքան Գանձ ու Դըրա՛մ կայ եղեր...՝
Դուն կ՚ըսէիր՝ «Մենք չիվար ենք ու աղքատ...,
Ու մէկ օր Դուն Ձիս կ՚ընէիր Ուլարած...,
Մէկ օր Նախրորդ, Լոր–Ճընճղղո՛ւկ ըսպանո՛ղ...»:
Հօրեղբայրն ալ ըսաւ, = «Դաւի՛թ, Դըլխի՛դ մեռնիմ, Աչեւի՛դ...,
Այդ Դըրամը Մեզի ունի՛նք՝ ահա այդ օ՛րն ալ ունինք...,
Տարին Քառասուն կօտ՝ Տո՛ւրք կուտանք Մէլիքին...»:
Զէնով–Օհան՝ Դաւիթի հետ ելան եկան Իրենց Տո՛ւն,
Դաւիթ բերաւ Ծըռան–Վէգին դըրաւ Իր տեղ Թագաւոր,
Ինք Զին հեծաւ, Ընկերներով դընաց Որսի՝ Սար ու Ձոր...:

ԺԴ. ՄԸՍՐԱՄԻԼԻՒՔ ՁՕՐՔ Կ՚ԺՈՂՎԻ, ԴԱՒԻԹԻ ՎՐԱՑ ԿՈՒԻԻ ԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ

514. Կուզրադին Եւ Կծան-Խոսք

ՁՍ·586,450,587, Ձ·, Ձ·՝ Ն·511,824, Ն·511,737,771,1106,740,505, 627,823,801, (Ն·712,902,796,626,627), Ճ·34,33ա·, Չ(Ճ·34, 100), (Հ·427), Հ·30, ՁԿ·482, ՁՎ·7, (ՁԿ·482ա·), (Լ·85,26), Լ·26, Խ·15,22, (Ա·13), Ա·13,16·

Դառնանք ո՞ւրկէ տաք գըրոյց, —
Կուզրադինէ՛ն տանք կըրկին,
*Որ Հազարի–Գլխաւո՛րն *) էր՝ Մըսրայ–Երկրի Զօրքերուն: —*
Դաւիթ այդպէս՝ այլանդակած՝ Կուզրադինը ե՛տ դարձուց՝
Որ ելնէ ու երթայ Մըսըր՝ Եւ լո՛ւր տանի Մէլիքին, —

---

*) Թեղ, Դէզ, չեղջ: *) Հազարի–Գլխաւոր, Հազարապետ:

Թէ այս տեսակ Մա՛րդ է եղեր Սասնայ մէջ…։
Կուզրադի՛ն էր, — Ծըռվիլ-Ծըռվի՛լ, հեծած Իրեն Ձիուն վրայ՝
Ազատեցաւ, ելաւ փախա՛ւ ու գընաց,
Ճամբան բըռնեց դէպ Մըսըր…։
Գընաց քիչ մը զատնացաւ,
Կապեր քակեց՝ իջաւ վա՛ր, —
Ձոր մը կար հոն, մըտաւ այդ Ձոր որ պահուըտէր, ծածկըւէր՝
Մինչեւ Դաւիթ հեռանար…։
*Պահէ մ՝ ուղեց որ պողէր *)՝*
*Այդ Ձորին մէջ՝ Եղիճ *) անուն Ո՛տ մը կար,*
Դըպաւ Իրեն բաց Ցեսոյքին՝ ու կըծեց… ·
Ձեռը տարաւ՝ քորե՛ց Ոդին ցաւած տեղ՝
Ձե՛ռն ալ խածեց այդ Եղէճ…։
Կուզրադին ալ՝ Իր Ձեռ քաշեց ու ըսաւ. —
— «Վո՛ւյ, վո՛ւյ,—ըսաւ—, Աստնց Ոտե՛րն ալ կըծան են, Իրենց պէս»։
Ելաւ նորէն Իր Ձին հեծաւ ու փախաւ…։ —

§15. Կուզրադիի Եւ Ադրիւրի Կիճերուն Մրգը

Կ·16,56,57,59, Ջ·՝Կ·16, (Կ·56), Ե·570,770,740,769,771, 965,1106, 802,824,902,16,511,627,907,1004,772, (Ե·16,740,1004,570,1106, 907), Ջ·՝Ե·802, (Հ·380,379), Հ·30,31,32,380,379,423, ՋՍ·588, 589, Ջ·, Խ·22, (Խ·22), (Ս·161), Ս·161, Ջ·՝Ս·161, Ա·16,17, Լ·26, (Լ·26), ՋԿ·499, Ճ·102ա·, 102,103, ՋՎ·7·

Ձին որ Մըսրայ ճամբան դիտէր՝ չիտակ գընաց 'ի Մըսըր·
Գընաց մինչեւ Մըսրայ-Գետի բերա՛ն հասաւ՝ ելաւ դո՛ւրս։
Կուզրադին ալ՝ տեսաւ Մըսրայ Քաղքի կիներ ու Հարսներ՝
Եկեր են հոն՝ Գետի-Բերան 1)՝ Թե՛լ կըմանեն, լըսա՛ցք կ՝ընեն միասին,
Դարձան տեսան որ Կուզրադին զատու կուգայ, բերանբա՛ց,
Կը ծըծղա՛յ ու կուգայ այնպէս այլանդա՛կ…, —
— «Ըհը՛…,—ըսին—, Կուզրադի՛ն է՝ կուգայ ուրախ, կըծըծղա՛յ)…,*

---

*) Պոզել, *Մխել*։ *) Եղիճ, Եղէճ, *Այթող խոտ մը*, ըսըրդաճ, Ortie։ 1) Ե·771, 965, Խ·22, Հ·379, Ս·161՝ Ադրիւրի վրայ։
*) Ծծղալ, *Ծիծաղիլ*, *խնդալ*։

Աստուած բարի՛ն աջողէ... .
Եօ՛թը տարւան Տուրք բերեր է՝ ու կուգա՛յ...»:
Երբոր դընաց մօտեցաւ...՝
Տեսան որ ի՛նչ..., — Պրռուկները կըտըրտա՛ծ...,
Ատամները քաշած գարկած ճակատի՛ն...,—
*Բերան ուռեր՝ քէթըրուա՛ր... *),*
Արիւն–թարախ Իր Բերանէն Ջուրի՛ նման կըթափի՛...,
Արիւնէն ալ՝ Իր Աչքերը չի՛ն բացուիր, —
Մէկ այլանդակ բա՛ն մը կուգայ այն կողմէն...:—
Մըսրայ կիներ՝ կուշրադինի ճամբուն վըրա՛յ թափեցան,
Խընդացին ու Գա՛ր պարեցին եւ ըսին. — 1)

— «Է՛յ կուշրադին՝ ծաղրաբերան... 2),
Մո՛ւրուս բըռնեմ՝ խընչեմ *) Բերան... .
Ի՞նչ ես եկեր լէրան–լէրան... 3)՝
Ատամներըդ ճակտիդ վըրայ շարան–շարան:
Բերանդ է բաց՝ բան՛զ Գեհեն *) Շան...,
Ջուր կըթափի՝ բան՛զ ճռռոթան... *).
Ճանճեր վըրան կապած կարվան... .
Որդերն եկած՝ մօտէն կ՛երթան... .
Գըլուխդ Գոմշի, Ոտներդ Ուղտի՝ Պոչըդ Ջորու... .
Ականջներդ՝ ընման Իշու...:
Քեզ գովէիր Շահի Դիւան, —
«Կ՛երթամ Սասուն՝ բերեմ թալան... .
Շատ Մըրջան, շատ Ապըրջան... .
Սեւուկ Ոզներ բերեմ լըծան... .
Կարմիր Կովեր բերեմ կըթան... .
Քառատուն Էշ բերեմ՝ զըռա՛ն...:
Կարճ Կընիկներ բերեմ՝ Երկա՛ճեմ ադան... .
Երկայն Կընիկտիմ՝ Ուղտե՛ր բառնան... .
Կոյս–Աղջիկներ բերեմ Մըսըր՝ տամ էրկան...»:

---

*) Քէթրուիլ, *Ծռուիլ*: 1) *Երգով*: 2) *Փուխրախներէն մեծ մասը՝ բաբարերան, Հ·379՝ պան–պան*: *) Խընչել, *Քիթը պարպել*: 3) *Ե·771՝ վէրան–վէրան՝ ուղղել՝ լէրան–լէրան (տատանուելով)*: *) Գեհեն, *կլափ, բերան*: *) ճռռոթան, *Տանիքէն անձրեւի ջուրը վար վազցնող խողովակ՝ ակօսի ձեւով (ճռռ–վոթան)*:

Ելար գացիր բաե՛զ Գէղ-Գազաե *)... .
Դարձար եկար բաե՛զ Շուե-Վազաե...,
Նիզակդ է վիզդ՝ բաե՛զ Շահ-Խառաե *)... .
Մեր Մարդե՞րը ո՛ւր եե պպա...՝
Ոչ կա՛ե՝ ոչ կ'երեւա՛ե...»: — 1)

516. Կուզրադիճի Երգը՝ Ազբիւրի Կիներուե Ուղղուած

ՁԿ·499, ՁՍ·590,591, Ս·161,162, Ց·103, Կ·16,59, Ձ·՝Կ·16, Հ·32, 379,423, Ձ·՝Հ·32, (Հ·423,379), Ե·16,511,570,740,802,907, 965, 1106,713,772,967,824,628,1004,796, (Ե·802,824,963,570,712), Ձ·՝Ե·713, Լ·26ս·,26, (Լ·26), Ա·17, Խ·22, ՁՂ·7·

Կուզրադին ալ ի՞նչ ըսաւ· — 2)

— «Ա՛յ աքըզգամ, ձեխա՛ծ կըճկտեր՝ մազմազակա՛ե... 3),
Ես գիտցայ՝ Սասուե դաշտ էր ու դուրա՛ե... .
Ի՞ե չ գիտեցայի՝ շըղթայորիկ *) փար էր ու կապա՛ե...:
Գացի տեսայ՝ Սասում բոլոր փար էր ու կապա՛ե... .
Տեսայ՝ Օհաե չ'Է՛ր, եորահաս ծուռ Տըղա՛յ մ' էր...,
Մարդ էր եղեր գազաեակա՛ե...,
Մէկ կըզարձեր՝ կ'իճգէր բըսաե... .
Ձուր *) գայ հասնի՝ Աեոեց խոտե՛րե ալ կըծա՛ե:
Մի՛ ըսէք՝ «կուզրադիճ, ի՞ե չ ես եկեր լէրաե-լէրաե».
Ես դեռ եկա՛յ լէրաե-լէրաե..., —
Ձեր էրիկներ իեկած եե Լորայ-Դաշտ՝ կը հեծնեծա՛ե... .
Կեցէ՛ք,—ըսաւ—, Ձըմրաե՝ Ձի՛ւե կուգայ,
Գարնաե՝ Աեձրե՛ւ կուգայ, խոտեր բացուի՛ե՝
Սասոյ-Դեհէե Հեղե՛ղ կ'իջե՛...՝
Ձեր Մարդերու ճուե-ու-պլորներ 4) կըբերէ,
Ըրէք Ձեզի Խղ ու Ձորք-աե...»:

Այդ կիներն ալ՝ ի՞նչ ըրին· —

---

*) Գէղ, *Գայլ*: *) Խառաե, *Վիզէն ուրքերուն մէջ կախուած փայտ*: 1) *Տե՛ս եւ Հուշ*· 487: 2) *Երգով*: 3) Ե·1106՝ շատախօսաե: *) Շղթայորիկ, *Շղթայի ձեւով*, (լեռնա)շղթայ: *) Ձուր, *Մինչեւ*: 4) ՁՂ·7՝ իե կայ չկայ (*եղած-չեղածը*):

Կուզրադինի վըրայ ինկան, տըփոց տըւին ու ըսին. —
= «Հո՛դ Գու Գըլխի՛ն... †),
*Դուն եկար Մեզի սերմա՛ն... *): —*

517. Կուզրադին, Իր Կինն Ու Դրացուհին

Ե·570,511,571, Զ·՝ Ե·570, Զ·

Կուզրադի՛ն էր,— զարկա՛ւ Զիւն, պըրծաւ գընաց Իրեն Տուն.
Ա՛լ Մէլիքին չ՛երեւա՛ց...:—
Կուզրադինի Կընիկն ելաւ Տանը Դո՛ւռ,
Տեսաւ Էրիկ, վազեց Զիէն առաւ տա՛կ,
*Տարաւ Ներսը, Իր Տեղաց *) մէջ պառկեցուց,*
*Կուզրադինը անյուշ *) ինկաւ Քընացաւ:*
Լուսաբացին Կինը ելաւ՝ Թոնիր վառեց, Ջո՛ւր տաքցուց,
Դըրացիի Կընիկն եկաւ Անոնց Տո՛ւն,—
— «Կուզրադինի՛–Կընիկ,–ըսաւ–,ի՞նչ Ձուտ Թոնիր վառեր ես»:
Ան ալ ըսաւ, = «Ձե՛մ դիտեր...»:
Այդ Կընիկը նայեց ըսաւ,— «Այդ ո՞վ է՝ Հոդ պառկեր է...,
Ձըլա՞յ Էրիկդ Կուզրադինը եկեր է .՞.՞.՞»:
Կուզրադինի–Կինն ալ՝ լալով՝ ըսաւ,=«Հա՛...»:
Այդ Կընիկը դընաց մօտիկ՝ Ձեռը տըւաւ ու վերմակը տարաւ դէ՛ն,
Նայեց տեսաւ՝ Կուզրադինը՝ այդպէս եղեր այլանդա՛կ...՝
Ելաւ լալով ու պօռալով դընաց դո՛ւրս,
Ու մէկմէկու լուր տըւին...:

518. Մըսրամէլիք՝ Կուզրադինը Բերել Կուտայ Իր Առջեւ

Ե·712,796,802,1002,627,740,511,571,713,824,741, Զ·՝ Ե·802 712,796, (Ե·796), Խ·22, Կ·59, Կ·59՝Զ·, Ա·17·

Մընաց քիչ մը ժամանակ,
Մըսրամէլիք որ տեսաւ թէ Կուզրադինէն լուր չ՛ելաւ՝
Ելաւ կանչեց՝ հարցուց Իրեն Մեծերուն՝
Թէ, — «Կուզրադին գընաց Սասուն՝ որ Մեզ համար Տո՛ւրք բերէր,
Աս ի՞նչ եղաւ..., դեռ չ՛եկա՞ւ...»:
Անոնք ալ թէ,= «Կուզրադինը քանի օր է՝ եկեր է...».

---

†) Երդով: *) Սերմաց, Սերմի համար, սերմնցու: *) Տեղ, Անկողին: *) Անյուշ, Խոր ու ծանր, հիւանդագին (քուն):

Գանգատ ըրին Մէլիքին Թէ՝ «Իրենց Մարդեր չե՛ն եկած…,
Կուզբադինը Ամե՛ն տըւեր ըսպանել…»։
Նոյն առեն ալ՝ կիներ լալով եկան հոն՝
Ու լո՛ւր տըւին Մէլիքին Թէ՝ «Կուզբադինը եկե՛ր է,
Գացեր մըտեր իրեն Տո՛ւն…»։
*Մըսրամէլիք որ արթընցաւ *) ու լսեց Թէ եկեր է՝*
Ըսաւ, — «Գացէ՛ք Կուզբադինին ըսէք Թող գայ Իմ Դիւան·
Ա՛ս ի՞նչ գործ է…, Կուզբադինը գարճեր է…՝
Ինձի լմաց, չե՛ն տըւած…»
Ու Մարդ ղըրկեց Բադինի Տուն՝ որ կանչեն։
Ելան գացին՝ կանչեցին,
Կուզբադի՛ն է, — Իր ամօԹէն չ՛ուզե՛ր գալ…։
Մըսրամէլիք չորս Մա՛րդ ղըրկեց ետեւէն,
*— «Գացէ՛ք,–ըսաւ–, բըռնի՛ առէք՝ ու տըվեք ու *) բերէք Ի՛նձ»։*
Այդ Մարդերն ալ՝ գացին ըսին,— «Կո՛ւզբադին,
Մըսրամէլիք հրամա՛ն կ՛ընէ՝ «Պէտք է գաս»… ·
Որ Դու չիգա՛ս Քու կամով՝
Քեզ տըվեր ու՛վ կըտանինք…»։
Ելաւ Բադին՝ ինկաւ Աւտոց ետեւէն,
Դըրին կառքը ու բերին…։—

519. Մըսրամէլիք Կ՛ծաղրէ Կուզբադինի Խայտառակ Վիճակը

Զ(Կ·56,57), Կ·17,59,57,60, (Կ·56,57), Զ·՝Կ·59, Զ·՝Ա·13, Ա·13, 14,17, Ց·103,34, ՉՍ·451,452,453,454,455, Ե·713,627, 16,802,769, 17,772,1004,571,626,741,628,796,902,824, (Ե·965), Զ·՝ Ե·965,802, ՉԿ·500, Հ·423,30,380, (Հ·30), Խ·22,23, Լ·27,26, Զ·

Մըսրամէլիքն ալ՝ Դաշտի մէջ՝ Վըրան զարկեր՝ ծա՛ռեր նըստեր…,
Դիտակ առեր Իրեն Ձե՛ռք…,
Աչքի՛ն դըրեր՝ ու կընայի՛ հեռուէն։ —
Նայեց տեսաւ՝ որ Կուզբադին՝ ճամբան կուգա՛յ, կըխընդա՛յ…,

---

*) Արթնցնալ, Դիտակ ըլլալ, տեղեկանալ։ *) Տփել, Մեծել (taper)։

Վերցուց այնտեղ — Մըսրամէլիք — ի՞նչ ըսաւ. —
— «Ահա՛ն,–ըսաւ–, Տէ՛ր վրկայ, Տուրք բերեր է Կուզբադին...,
Կը ծիծաղի՛ ու կուգա՛յ...:—
Քառասուն Աղջիկ բերեր է Մեզ պրմադաձ...,
Քառասուն կոլոտ կիներ՝ երկա՛նք աղան...,
Քառասուն երկայն կընկտիք՝ որ Ո՛ւղտ բառնան...,
Սասմայ Աւար բերե՛ր է...»:
Դէմքը կախած՝ եկաւ հասա՛ւ Կուզբադին,
Գընաց այնտեղ՝ ու Մէլիքի վըրանին դէմ կանգնեցաւ,
Առին տարան Իր Դիւա՛ն,
Մըսրամէլիք նայեց որ ի՛նչ...,— Կուզբադին այդ ձեւին մէ՛ջ...,—
Մըռութ քաշած վեր՝ ճակտի՛ն...,
Աստմանները չարած վըրան՝ ու գամա՛ծ...,
Այլակերպա՛ծ, խայտառա՛կ բա՛ն մ՝ են ըրեր...՝
Ու ղըրկեր են Իր վրա՛յ...:—
Ան ալ՝–Մէլիք–, զարմացա՛ւ ու ըսաւ, — «Սա ի՞նչ հաչիւ է»:
Մէլիք այնտեղ չա՛տ վախեցաւ, կանչեց ըսաւ, — «Կո՛ւզբադին 1),
Սա ի՞նչ օրի ես ինկեր... .
Այդ Հայերը ի՞նչ են ըրեր Քեզի հետ... .
Շատո՞ր էին՝ չկըրցա՞ր...:
Թէ Քաղաքը ամեն եկան Ձեր վրայ...՝
Ինչո՞ւ Ինձի լուր չըտուիր՝ Ե՛ս գայի...»:
Կուզբադի՛ն է, — պատասխանել չի՛ կընար...:
Մէլիքն ըսաւ, — «Կո՛ւզբադին,
Ապա Դուն չա՛տ կըտրի՛ճ էիր Իմ Դիւան... *),
Կ՝ըսէիր՝ «Ես պիտի երթամ Սասուն բերեմ Մեզ թալա՛ձ...,
Քառասուն Կուս–Աղջիկներ բերեմ պրմադա՛ձ...,
Քառասուն կոլոտ կընիկ՝ երկա՛նք աղան...,
Քառասուն երկայն կընիկ՝ Ուղտե՛ր բառնան...,
Ու բեռներո՛վ Ոսկի–Արծաթ՝ Սասնոյ Տուրքը եօթ տարա՛ն,
Բերի՛ր՝ թէ չէ դատա՛րկ դարձար ու եկար.՞.՞.՞:
Հը՞..., ըսէ՛..., —
Ինչո՞ւ Սասմայ Տուրքն ու Աւար չըբերիր...:

---

1) Կ·57՝ Կուզբադին ինքն է կը հարցաքննէ՝ Սասուն ղրկած իր պատգամաւորը: *) Իմ Դիւանս, Իմ Դահլիճիս մէջ:

Ապա այդքան կըտրի՛ճ Մարդեր որ տարիր...՝
Ո՞ւր են ապա այդ Զօրքեր...»:

520. «Մէկ Ցղայ Մ'Է Ելեր Հայոց Ազգին Մէջ»

Հ·380, (Հ·379), Զ·՝Հ·30, Զ·՝Լ·26, Զ·՝Ա·14, Ա·17, (Ե·796), Ե·628, 772,824,802,796,769,803, Զ·՝Ե·628, Ճ·100, (Ճ·34), Զ·՝Ճ·100, Խ·23, ՁԿ·347,482ա·, ՁՍ·590, Զ·՝ՁՍ·590·

Կուզրադին ալ՝ պատասխանել չի՛ կըրնար...,—
Դաւթի դըրած Թուղթը հանեց՝ ու Մէկիկի Ձի՛ու տըւաւ:
Մըսրամէկիկ՝ Դիրը կարդա՛ց, պօռա՛ց, կանչե՛ց, բարկացա՛ւ·
Շա՛տ անպատիւ բա՛ն էր դըրած՝ Թուղթին մէջ...:
*Կուզրադին ալ ըսաւ, — «Մէկի՛կ, մընչէ՛ *) որ Ես ըսե՛մ Քեզ·—*

— «Ես կ'ըսէի՝ Սասուն Դաշտ էր ու դուրա՛ն... 1)·
Չէի՛ գիտեր՝ Քար էր ու կապա՛ն... ·
Գնացի տեսայ՝ Քար էր ու կապա՛ն...,
Մարդ մ' էր Ելեր՝ գազանակա՛ն...,
Անոր Թըրիկն էր կէծակա՛ն...,
Կը զարնէր մէ՛կ՝ կ'իմզէր էըսա՛ն... ·
Զուր *) գայ Անոնց Խոտե՛րն ալ կըծա՛ն..., —
Ես ի՞նչ պիտի ընէի՝ հետ այդ Մարդկան...:

Մէկի՛կ, Մէկի՛կ,—ըսաւ այնտեղ Կուզրադին—,
*ԴԱՒԻԹ անուր *) մէկ Տըղա՛յ մ' է Ելեր Հայոց Ազգին մէջ՝*
Ու կայնե՛ր է՝ Մասուն տիրեր՝ բըռներ Իրեն Զեռքին մէ՛ջ... ·
Ան Քեզ այլեւս Տուրք չի՛ տար...:
Դաւիթն ըսաւ՝ «Մէ՛կ ըստակ ալ՝ Տուրք չե՛մ տար Ես Մէկիկին·
Ի՛նչ որ կ'ուզէ Թող ընէ...,
Ես Անոր դէմ կանգնա՛ծ եմ...»:
= *«Տուրք չըտըւա՞ւ...,—պօռաց Մէկի՛կ Բադինին—,*
Ըսէ նայե՛մ...՝ ինչո՞ւ համար չըտըւաւ...»:—

---

*) Մնջել, Լռել: 1) Երդով: *) Զուր, Մինչեւ: *) Անուր, (Անունաւոր), Անունով:

521. Կուզբաղին Կ'պատմէ Իր Գլխին Եկածը

Հ·423,30,379, (Հ·432,30), Զ·՝Ե·1106, 1107,505, Ե·16,1107,17,902, 505,769,796,713,803, (Ե·1002,505,1107,902,796,713), Զ(Ե·1002), Կ·57, Զ·՝Կ·57,Զ(Կ·57),(Կ·57), Ա·14, ՁԿ·482,347,Զ·՝Ճ·100,Խ·15.

Կուզբաղինը ըսաւ, — «Մէկի՛ք, ո՛ղջ մընա՛ս...,
Իմ Գլուխէս անցած–դարձած՝ պատմե՛մ ինչ.—
— Քաղքի Մարդը 1)՝ Մեզի բընաւ բան չըսա՛ւ. 2)
Գանձի Տէրը †)՝ ելաւ ժողվեց ու բերաւ՝
Մեզի համար կընիկները ու Աղջիկները,
Ամեն բաներ պատրաստե՛ց ու դացինք մըտանք Գանձատուն,
Ոսկին չափեց՝ որ Մեր բեռները բըռնէինք ու բերէինք:
Մարդիկ Մեզի նոյնիսկ պատի՛ւ կըպահէին ամեն կերպ 3).
Մընացեր էր մէ՛կ Բեռ Ոսկի՝ որ չափէին՝ լըմընար՝
Մէկ ալ յանկարծ՝ Ծուռ–Տըղա՛յ մը եկաւ ներս՝
Վէրի–Ոչխար՝ իր թեւին.
Հա՛ կ'ըսէին՝ «Դաւի՛թ, Դաւի՛թ...», չ'գիտեմ ի՛նչ... .
Ծուռ–Տըղա՛յ մ' էր, ներս մըտաւ ու որ պօռաց՝
Այդ Հայերը՝ Ամենք՝ մօտէն վախեցա՛ն... 4).
Բըռնեց Ամենք հանեց դո՛ւրս,
Ինքը մըտաւ Գանձատուն,
Ոսկու–Չափը առաւ դարձուց բերնի վրա՛յ,
Մեր բեռներէն Ոսկին լեցուց Չափի Ոռին ու սըրբեց՝
Ամեն բերաւ թափեց տա՛կ...:
Ես բարկացայ, ըսի՝ «Օհա՛ն, այդ Ծուռ–Տըղան հանէք դո՛ւրս».
Ասոր վըրայ՝ այդ Ծուռ–Հայը, այդ Դաւի՛թ՝
Ոսկու–Չափը վերցուց զարկաւ Իմ Գլխին 5),
Ես Իմ Գլուխ չուտ ծըռեցի՛...՝ կօտ չըդըպա՛ւ Իմ Գլխին,
Գընաց դըպաւ Պատերուն... .
Ես ալ՝ ըսի՛ որ փախիմ...՝
Դաւի՛թ հասաւ՝ բըռնե՛ց՝ Գետի՛ն զարկաւ Զիս,

---

1) Քաղաքացին(երը): †) Գանձապահը, Զէնով–Օհան: 2–4) Պաշտօնական մեծերը՝ ոչ–յանցաւոր, անպաշտօն քաջ մը (Ծուռ)՝ մեծերէն առաջ՝ կատարուած իրողութիւն մը կ'դնէ մէջտեղ: 5) Տե՛ս Հատուած 511:

Իմ Աստմներ մէկ-մէկ քաշեց՝ դամեց այսպէս ճակատիս…,
Այս վիճակի մէ՛ջ դըրաւ Զիս՝ ու ղըրկեց,
Ըսաւ՝ «Դէ՛, ե՛լ, գընա Մըսը՛ր, բարե՛ւ ըրէ Մէլիքին,
Ըսէ՛ Իրեն՝ Ինքը Թող գայ՝ Տո՛ւրք տանի… .
Ես Դաւի՛թն եմ…, Տուրք տըւող չե՛մ Իմ Եղբօրըս Մէլիքին… .
Մըսըր՝ Անոր, այստեղ Սասունն ալ՝ Ինձի՛… .
Ա՛լ Իմ վըրայ Թող չիգա՛յ եւ Տուրք ուղէ·
Ան՝ Ի՛ր Երկրին Թագաւոր է, Ի՛ր գործերուն խառնըւի,
Ես՝ Ի՛մ Երկրին, Ի՛մ գործերուս կըխառնուիմ… .
Չէ՛, չէ՞ ուղեր…, — ի՛նչ որ կ՛ուզէ՝ Թող ընէ…»: —
Այսպէ՛ս ըսաւ՝ ու Զիս Թողուց, Իմ Զօրքն ամե՛ն կոտորեց…,
Մեր Ճըրա՛գը մարեցուց… .
Ես ալ՝ մինակ՝ հազի՛ւ պըրծայ ու եկայ…:
Դաւիթ, ահա, այս Ա՛ղ հաննեց Մեր Գըլխուն…:
Դուն առենին չըսպաննեցի՛ր այդ Տըղան,
Ան ալ ասօր Տուրք չի՛տար… .
Ա՛լ Իմ գործ չ'է՛ Տուրք բերելը…, Դո՛ւն դիտես… .
Ա՛լ կըռիւի պատրաստուի՛ւն տես, Մէլի՛ք…,—
Քեզ ուրիշ ճար չի՛ մընար…»: —

ՃՁԶ. Մըսրամէլիք՝ Մօրը Կ'ըսէ «Այս Ամեն Քու Ըրածդ Է»

ԶԿ·500, Ե·741,902,1106,511,1002,769,965,505,1004,571, (Ե·769, 965), Զ·՝Ե·511,571, Ճ·34,35,100, Զ·՝Ճ·34,45, Զ·, Հ·380,423, Լ·27, Զ·՝Լ·27, Կ·60·

Բաղէն՝ այսպէս՝ ի՛նչ որ եկած էր Գըլխին՝
Դիւանին մէջ՝ Իր Պատմուի՛ւն մէկ-մէկ ըրաւ Մէլիքին·
Դաւի՛թ մասին դանդա՛ղ ըրաւ չատ ու չատ,
Ըսաւ, — «Մէլի՛ք, Դաւի՛թն է Զիս այս կերպ ըրեր՝ ու ղրկեր»:
Մըսրամէլիք երբոր լըսե՛ց Կուպրադինի ըսածները,
Ու դէշ վիճակն ալ տեսաւ՝
Բախտակոծուա՛ւ, Ձեռքը զարկաւ Ճակատին,
— «Ա՛յ, վա՛յ…,—ըսաւ—, այդ Դաւիթը ելնէ՝ այսպէս բաներ հանէ 1)
[Իմ Գըլուխ… .

---

1) Հ·380՝ ի՛ՆԵ՝ *ուղղել՝* ԷՆԷ (ընէ):

Դաւիթ ըսածդ՝ չէ՞ երէկի երախա՛ն է վերջապէս... .
Ամի ի՞նչպէս Զեզ այդ տեսակ է ըրեր...»:
Ըսաւ, = «Գիտես՝ թէ այստեղի Դաւի՛թն է...,
*Մէկ անճնահո՛ւր *) մ՝ է դարձե՛ր ո՛ր...՝ այդ Դաւի՛թ...»:*
= «Բա՛ Մինք այլեւս,–ըսաւ Մէլիք–, ի՞նչպէս ընենք Ամոր հետ... .
Նոյն Դաւի՛թն է..., ուրիշ Մարդ չէ՛ Թըչնամիս... .
Չէ՛,–ըսաւ–, ես՝ պիտի կըռուի՛մ Անոր հետ...»:
Մէլիք ելաւ՝ կանչեց Իր Մայրն ու ըսաւ. —
— «Դէ՛, արի տե՛ս՝ թէ Քու Դաւիթն ի՞նչ է հաներ Իմ Գըլուխ...»:
Մայրն ալ ըսաւ, = «Ես ի՞նչ ընեմ, ա՛յ Որդի՛...,
Դուն ճամբեցիր՝ եօ՛թը տարւան Տուրք ու Տուգա՛նք ուղեցիր,
Քառասուն–քառասուն Կընիկ, Աղջիկ, քառասուն Տըղա՛յ ուղեցիր,
Ինչո՞ւ ըրիր այդ բաները...»:
Մէլիքն ալ հոն վերցուց ըսաւ, — «Ա՛յ Մարէ՛,
Այս ամէնը՝ Քո ըրա՛ծն է..., Քո ըրա՛ծ...,—
Դուն Իմ հոգուն պատի՛ժ կ՝ըլլաս ամեն տեղ...:
*Ես կ՝ըսէի՝ «Օձի–Զա՛ղ է, բեր Գըլուխը ջընջըխե՛նք... *)»,*
Դուն չըթողի՛ր ես Իմ սըրտո՛ւն ընէի...:
Այն ժամանակ որ թողնէիր ես Դաւիթը մորթէի...՝
Ասօր այս բան Մեր գըլուխը չէ՛ր հաներ...:
Տեսա՞ր ի՛նչպէս՝ Ան բըռնութի՛ւն կըբանեցնէ Իմ վըրայ.
Հիմա այլեւս ի՞նչպէս կըրնամ գըլուխ ելնել Ամոր հետ...:
Ա՛լ այս անգամ՝ ամեն երկրի թագաւորէն Զօ՛րք կ՝ուզեմ,
Կ՝երթամ կըռի՛ւ Դաւթի վրայ...»:
*Մայրը ըսաւ, = «Մէլի՛ք, մօրտո՛ւն *), Ձեռ ե՛տ քաշէ, մի՛ երթար.*
Այնտեղ՝ Անոր, այստեղ՝ Քեզի՛ Թող ըլլայ...»:
Մէլիքն ալ թէ, — «Ի՞նչպէս ընեմ որ չ՝երթամ... .
Չ՝երթամ՝ կուգայ Մեզ Ամենքըս կըբըրդէ՛...:
Կարելի չէ՛, Մարէ՛,–ըսաւ Մըսրամէլիք՝ այս անգամ–,
Անոր Տեղը ես չըտիրեմ՝ չէ՛ ըլլար... .
Չէ՛, Մարէ՛, չէ՛, Քեզի կ՝ըսեմ՝ Հընար չէ՛...»:

---

*) Անճնահուր, Անճուռը՝ հուր ու կրակ, կրակուրց (տղայ), կամ Քերեւս՝ ազնաւոր (դիւցազն): *) Զնջխել, ճղմել: *) Մօրտո՛ւն, Սիրելի՛ս:

528. Խելով Մարդեուց Եւ Ա.Ճխելքներուն Ծուած Խոհուրդը

Ե·626,1107, Զ·՝Կ·61,62, Կ·61,62, Ա·18, Խ·23, Զ·

Մէկիկ ըներաւ ի՞նչ ըրաւ· —
Կուզբադինի վէրքերուն վրայ դեղե՛ր քըսեց՝ ժըրեցուց,
Առաւ դընաց, Քաղքի մէջէն Խելքով-Մարդեր հաւաքե՛ց, —
Իր Զոլերը տարաւ Դաշտը, Վըրան զարկաւ ու նըստա՛ւ·
Նախ այդ Խելքո՛վ-Մարդիկներուն հարցմունք ըրաւ, պըրպըտեց:
Շատեր կան որ՝ աւերուքին չե՛ն ուզեր, —
Ըսին, — «Մէկի՛կ, Դաւիթ Քեզի երբեք վընաս տըւե՞ր է··· ·
Ան՝ միամիտ՝ Իրեն Տունը նըստա՛ծ էր·
Դուն ի՛նչդ ես որ՝ աւերուքի՛ն ես ըրեր,
Ու նորէն Դո՛ւն չես դադրիր···»:
Մէկիկ այլեւս այդ Մարդոց 1) հետ չըխօսեցա՛ւ այդ մասին·
Գընաց ուրի՛չ Մարդերու հետ զըրուցեց, —
Ըսաւ — «Նայիմ Դուք ի՞նչ կ՛ըսէք այս բանին,
Մենք ալ ահա՝ պիտի երթանք Դաւիթի հետ կըռուի՛···»:
Այդ Մարդիկներ ի՞նչ ըսին· —
= «Մէկի՛կ,–ըսին–, ասօր Դաւիթ դեռ տասնըչորս տարո՛ւ է,
Կըռուին ի՞նչ է՝ չի՛ դիտեր··· ·
Եթէ երբեք Դուն Անոր հետ կըռուիս չընե՛ս այս օրուէ՝
Ու Դաւիթը չըսպանես՝
*Երբոր Դաւիթ եղաւ *) եոսո՛ւն տարեկան՝*
*Անի Քե՛զ ալ կըտըրուէ *), Քու Քաղքին ալ կըտիրէ՛: —*
Լաւը ա՛յն է՝ Քու Զօրքերը հաւաքես՝
Երթաս կըռի՛ս Դաւիթի վրայ···:
Եթէ Մեզի ակա՛նջ դընես՝ այդ ատենէն աղէ՛կ է·
Դուն այս տարի որ չերթաս՝
*Ա՛լ Դաւիթի վրայ չե՛ս կըրնար *)···»:*
Մըսրամէկիկ՝ մըտիկ ըրաւ ա՛յդ Մարդոց 2)·
Դարձաւ Խելքով-Մարդիկներուն եւ ըսաւ· —

---

1) Խելացի, իրատես խմբակին: *) Եղաւ, Ըլլայ (ըսենք որ՝ եղաւ): *) Տրտրիլ, Ոտքի տակ տալ, փճացնել (ցեղով): *) Դաւթի վրայ չես կրնար, Դաւիթը յաղթել չե՛ս կրնար: 2) Անմիտներուն, անհեռատես խմբակին:

*— «Դացէ՛ք՝ Ձեր հող ու քա՛րն ըրէք *) այս օրէն,*
Պիտի երթանք՝ Դաւթի վըրայ կըռիւ՛...»:
Ըսին, = «Մէլի՛ք, ասօր Դու Մեր թագաւորն ես՝ ու Գըլո՛ւխ·
Նորէն ինչո՞ւ կ՚ըսենք՝ «Մ՚ե՛րթար Դաւթի վըրայ կըռիւ՛... ·
Բայց թէ կ՚երթաս՝ ա՛լ Մենք ինչո՞ւ ըսենք... ·
Մէլի՛ք, ա՛հա՛...,—ըսին Ատոնք՝ Իրենց Բեխեր բըռնելով— 1)՝
Պիտի զըղջա՛ս երթալուդ... ·
Կ՚ուզես՝ դընա՛..., ա՛լ Դուն դիտես..., ի՞նչ ըսենք... ·
Դէ՛հ, Ամենքը որ եկան՝
Մե՛նք ալ կ՚երթանք..., ի՞նչ ընենք...»: —

524. Մըսրամէլիի Զօրաժողովին Ցափերը

Ց·11ս·,112ս·, Չ·՝Ց·112ս·, Ե·511,803,17,970, (Խ·23)·

Մըսրամէլիք՝ Դիւանին մէջ՝ նըստած Իրեն Գահին վրայ,
Իր Մեծերուն ներկայութեան՝ վերցուց ըսա՛ւ երգելով· —

— «Պիտի ժողվեմ՝ հազար հի՛նգ–հարիւր համար *) Թո՛ւխ–Մուրուս,
Պիտի ժողվեմ՝ հազար հի՛նգ–հարիւր համար՝ Խա՛ռ–Մուրուս 2),
Պիտի ժողվեմ՝ հազար հի՛նգ–հարիւր համար՝ Սիվտա՛կ–Մուրուս,
Պիտի ժողվեմ՝ հազար հի՛նգ–հարիւր համար՝ Անբեխ–Անմուրուս,
Պիտի 3) ժողվեմ՝ հազար հի՛նգ–հարիւր համար՝ Նորպուկ–Մաճուկ*),
Պիտի ժողվեմ՝ հազար հի՛նգ–հարիւր համար՝ աև ինչ Փեսա՛յ է վեր՝
[Տախտին *),
Պիտի ժողվեմ՝ հազար հի՛նգ–հարիւր համար՝ աև ինչ Հօրէ–Մօրէ
Պիտի ժողվեմ՝ հազար հի՛նգ–հարիւր համար՝ Թըմբկահար, [մէ՛կ է·
Պիտի ժողվեմ՝ հազար հի՛նգ–հարիւր համար՝ Փողահար 4),

---

*) Հող ու քար ընել, *Պատրաստութիւն տեսնել*: 1) *Երդմնաձեւ մը, այսինքն՝ այս բեխերը պիտի կտրենք նեռանք, այր մարդ չըլլանք՝ եթէ մեր ըսածը սխալ ելնէ*: *) Համար, *համրանք, չարք*· Ե·970՝ *Թառուն հազար*: 2) Ե·970՝ մէջ–մէջ մարդեր: 3) Ե·17՝ Թը՝ *ուղղել* տը (*պիտի*)· էր եւ լա՝ [*տրջ·*]՝ *բացատրութիւն չեն· ուղղել*՝ ալ (*այսչափ ալ, այնչափ ալ...*): *) Նորպուկ–Մաճուկ, *Նորատի դինուոր*, Ե·823,970՝ երիտասարդներ: *) Տախտ, (*թահթ*), *Փոքրիկ գահաթոռ՝ նորապսակ ամուլին յատուկ*: 4) Ց·112ս·՝ զուռնաչի:

Պիտի ժողվեմ՝ հազար հի՛նգ–հարիւր համար՝ վիճահար 1)։ —
Պիտի ժողվեմ՝ պիտի երթամ՝ վեր՝ Դաւիթին կըռիւի՛…»։ —

525. Մբսրամէլիմ Իր Առիւծովը Գիր Կըգրէ՝ Օգնական Զorf Խնդրելու

Չ·՝ Ե·626,511,571, Ե·628,713,908,1004,511,571,741,772,771 (Ե·571,772,908,741,511), Չ·՝ Հ·424, Հ·424, (Կ·17), Կ·17·

Մբսրամէլիք ելաւ ապա՝ որ Չօ՛րք ժողվէ Զորս–Դեհէն,
Դարձաւ այնտեղ՝ Իր Մարդերուն ի՞նչ ըսաւ· —
— «Գացէք,–ըսաւ–, առէք մէկ ջոջ Տա՛չտ մը բերէք Ինձ համար»։
Գացին՝ մէկ ջոջ Տա՛չտ մը առին՝ բերին տըւին Մէլիքին։
Մէլիք այնտեղ ի՞նչ ըսաւ· —
Թուրը զարկաւ Իր Սըրունքի Դընդերին 2),
Մէկ Տաչտ լեցուն՝ Արի՛ւն առաւ Իր Չիստէն,
Բերել տըւաւ դէ՛զ մը Թուղթ,
Կանչեց այնտեղ՝ երկու աղէկ Գիր–Գըրող 3),
Ձաղով ըսաւ, — «Դէ, ես ըսեմ՝ Դուք 4) գըրեցէք Իմ Արնէն…,
Ես Իմ Գիրը ցըրուեմ Զորս–Կո՛ղմ Աշխարհին.— 5)

— «Թղթի՛կ մ՝ Իմ Արնէ՛ն գրեցէ՛ք՝ զըրկեմ Բաբէ–Ֆըրընդին 6),
Թղթի՛կ մ՝ Իմ Արնէ՛ն գրեցէ՛ք՝ զըրկեմ Աստղիկ–Պարոնին·
Թղթի՛կ մ՝ Իմ Արնէ՛ն գրեցէ՛ք՝ զըրկեմ Իրանի–Շահին·
Թղթի՛կ մ՝ Իմ Արնէ՛ն գրեցէ՛ք՝ զըրկեմ Թուրքման–Խանին 7)· —
Ասօր Ես շատ նե՛ղն եմ իննկեր…,
Ինձի պէ՛տք է, Ձեզնէ կ՛ուզեմ՝ ամենմէկէն՝ Օգնական՝
Հազար հի՛նգ–հարիւր համար 8)՝ երես Մազ բուսած չըլլա՛յ 9)·
Ինձի պէ՛տք է, Ձեզնէ կ՛ուզեմ՝ ամենմէկէն՝ Օգնական՝

---

1) Ե·112ս·՝ սագրաճդ։ 2) Հ·424՝ բուտ (*դիստին ետեւի կակուղ միսը*), Կ·17՝ ածելի մ՝ զարկաւ իր ճակատ, Ե·511,571,628՝ դաճակ թալեց՝ իր ձեռ կտրեց, Ե·713՝ մատը, Ե·741՝ ճկոյթը, Ե·1004՝ իր սիրտը՝ ճղեց։ 3) Դիւանագպիր։ 4) Ե·511,571՝ Մօրս ուղղելով խօսքը։ 5) *Երգով*։ 6) Հ·424՝ Բաբա ֆրէնկին, Ե·908՝ Ֆրանկ–սըզին· Չ·՝ Ֆըրընդ (*Փարանդայի մելիքութիւն, իշխանապետութիւն*)։ 7) Հ·424՝ Սուլթան Մուրատին։ 8) Հ·424՝ Քառասուն հազար, *եւ նուազեցնելով՝* 35, 30, 25, 20՝ *հազարական՝ յաջորդ տողերուն մէջ*։ 9) Ե·741՝ անբեխ–անմուրուս գիւղար։

Հազար հի՛ց–հարիւր համար՝ Բեխեր ճո՛ր մըրած *) ըլլայ 10)·
Ինձի պէ՛տ է, Ձեզնէ կ՚ուզեմ՝ ամենմէկէն՝ Օգնական՝
Հազար հի՛ց–հարիւր համար՝ Մուրուս ճո՛ր թողած ըլլայ 11)·
Ինձի պէ՛տ է, Ձեզնէ կ՚ուզեմ՝ ամենմէկէն՝ Օգնական՝
Հազար հի՛ց–հարիւր համար՝ Մուրուս ալեխա՛ռն *) ըլլայ·
Ինձի պէ՛տ է, Ձեզնէ կ՚ուզեմ՝ ամենմէկէն՝ Օգնական՝
Հազար հի՛ց–հարիւր համար՝ Նուագածո՛ւ ըլլայ: —
Ատեն 12) որ լրացաւ՝ ժողովի՛ գահ այստե՛ղ· —
Առջի Շարք որ գայ՝ Ծովերու Ձո՛ւրը խըմէ·
Մէջտեղի Շարք որ գայ՝ ի՛նչ–ֆաճ Գետ–Լիճ որ կա՛յ՝ խըմէ·
Ինչ–ֆաճ Առո՛ւ որ կայ՝ խըմէ՝ ամեն Ձուր հատնի՛·
Ետի Շարք որ գայ՝ ա՛լ Ձուր չըգըտնէ՝
Ձուրի տեղ՝ Աւա՛զ թող նետէ Բերան···:
Այդչափ Ձօրի՛բով, ես՛ թը–Երկիրէ՝
Իրենց Հեծելով *)՝ Ինձ օգնութե՛ան գան, —
Ձօրի առնեմ երթ–ամ վեր՝ Ան Հայուկին 13)·
Օրհնեա՛լ, Արարի՛չ Թագաւոր Տէ՛ր,
Օրհնութիւն, բարեբարութիւն՝
վեր՝ Ականջ–Դըրռոզա՛ց, Ներկայ–Նըստոզա՛ց ըլլայ···»:

ՃՁԵ. Մըսրամելիք՝ Իր Թուղթը Կ՚ղրկէ Ձորա–Կողմ Աշխարհին

Ձ·՝Ա·18, Ա· 18, Կ·17, Ձ(Կ·17), Ե·511,571,713,741,908,1004, (Ե·1004), Ձ·՝772, Հ·32·

Մէլիք՝ այսպէս՝ Իր Արիւնով Թուղթե՛ր Գըրեց ու Ցըրուեց: —
Մէկ Թուղթ Գըրեց՝ Արեւելքի–Թագաւորի՛ն ուղարկեց·
Մէկ Թուղթ Գըրեց՝ Արեւմուտքի–Թագաւորի՛ն ուղարկեց·
Մէկ Թուղթ Գըրեց՝ Հիւսիսայի՛ն–Թագաւորին ուղարկեց·
Մէկ Թուղթ Գըրեց՝ Հարաւայի՛ն–Թագաւորին ուղարկեց·

---

*) Մրած, *Սեւցած*, *աղուամազը հագիւ բուսած*: 10) Ե·772, 741՝ Ճոր–մաճուկ տղայ: 11) Ե·741,771՝ թուխմուրուս գինուր: *Տեսնել սակայն՝ Հատուած* 524 *եւ* 528: *) Ալեխառն՝ Հ·424՝ ալուխառ (*սեւուճերմակ*), Ե·741,772՝ սիվտակ–մուրուս գինուր: 12) Հ·424՝ Ամիս: *) Հեծել, *Հեծելազօրք*: 13) Ե·511,571՝ Գեավուրին:

Թուղթ մ' ալ գըրեց՝ ղըրկեց Զօրս-կո'ղմ Աչխարհին, —
Եօ'թը Քաղաք՝ եօ'թ Մեծի, —
*Թէ՝ «Ինձ այսքան Մա'րդ է կըտրեր *)՝ Դաւիթ անուր Սասունցին,*
Ինձ Օդնակա'ն տըէք երթամ կըռի'ւ ընեմ Անոր հետ...»:
Երեք կողմը Աչխարհին՝
Անո'ր Չեռքն էր, — Մէլիքի'ն,
Մինակ մէ'կ կողմ՝ Դաւթի Չեռն էր տակաւին:

522. Մունեթիկներ՝ Քաղքին Մէջ, Նուզբաղին՝ Երկրին Մէջ՝ Զorf Կ'ժողվեն Մելիքի Համար

8·103, 2·՝8·103, Ե·17, 1004,741,571,628,908, (Ե·14), (Ա·54), Ա·54, 2Ս·456, 457,458,459,460,461, 2·՝2Ս·459, 2·՝2Կ·501,487

Մէլիք ելաւ՝ Մունեթիկնե'ր ձըղեց Քաղաք՝ որ կանչեն՝
Թէ՝ «կըռի'ւ է..., իմ Զօրքերը ժողվէք ամեն մէկտեղ,
*Անուն ի'նչքան որձեղէն *) կայ՝ Իմ Հողի մէջ՝ փայտ-Բըռնող *)՝*
Տասերկուքէն մինչեւ վաթսո'ւն տարեկան՝
Այսպէս ամեն ի'նչ որ գըտնէք՝ հասնիք ժողվէք ու բերէք...»:
Մունեթիկներ խսկոյն ելան կանչեցին,
Զօրք ժողվեցին՝ Մըսրայ-Քաղքի Հըրապարակ կեցուցին:
Մըսրամէլիքն ալ ի՞նչ ըրաւ անկէ ետք, —
Ելաւ կանչեց՝ բերել տըւաւ Նուզբաղին,
Թուղթ մը գըրեց Իր Հողին մէջ՝ ի'նչ ժողովուրդ որ ունի՝
Տըւաւ Իրեն, ձըղեց Աչխարհ՝ ամե'ն կողմ,
— «Գրնա', —ըսաւ—, Չինո'ր ժողվէ, երթանք Սասուն վեր՝ Դաւթին»:
Նուզբաղի'ն էր, — ելաւ ինկաւ Մըսրայ-երկիր՝ ամե'ն կողմ,
*Առաւ *) Իր Զօ'րք հաւաքել...,—*

— «Ելէ'ք, —ըսաւ—, երթանք Սասուն տա-թալա'ն 1).
Բերեմ կարճ կըճկտիք՝ երկա'մ ազան.
Երկայն կիներ՝ Մեզ Ո'ւղտ բառնան.
Միջնավարներ՝ Մեզ արմաղան:
Կարմիր կովեր բերեմ՝ կըթան.

---

*) Կտրել, Սպանել, կոտորել: *) Որձեղէն, Արու սեռէ մարդ: *) Փայտ-բռնող (կամ դռալ բռնող), Չէնք կրել կրցող: *) Առաւ, Սկսաւ: 1) Երգով:

Չեղալ *) եզներ՝ լըծաւ.
Բերեմ շատ Մըրջաւ, շատ Ապըրջաւ» 1):

Կըխարէ՛ այդ բազմութիւն...: —
Ով որ ունի մէ՛կ Տըղայ՝
Կ'գարնէ՛ Գըլխուն ու կ'ըսէ, —
— «Գըլո՛ւխդ հորեմ..., ելիր գընա՛՝ Մեղ Աւա՛ր բեր Սասունէն»:
Որ՝ կընի՛կն է՝ էրիկը դո՛ւրս կը մըղէ՝
— «Գընա՛,—կ'ըսէ—, Մեզ Աւա՛ր բեր Սասունէն:
Զե՛ն դիտեր որ այդ Կուզբադին կըխարէ՛,
Պիտի տանի ըսպանե՛լ տայ այդ Մարդեր...:—

528. Մըսրամէլիք՝ Եկած Չօրհրուն Համրաւիը Կ'քնէ Երգով

Ց·35, Կ·62, (Կ·17,18), Չ·՝Կ·17,18, Ե·17,511,571,772,713,741, Չ·՝Ե·713, (Ե·970), Հ·32,380,425, Չ·՝Հ·425, Չ(Հ·425), ՉԿ·501, Ա·18,54·

Մըսրամէլիք ելաւ այսպէս հաղա՛ր–հազար Զօրք ուղեց,
*Ուրա՛ն–Թուրան հայյի՛ տըւաւ *), ե՛թ–Աչխարհէ Չո՛րք կապեց *),*
Պիտի երթայ վեր՝ Մասունայ, վեր՝ Դաւթին...:
Ե՛թը տարի 2),–ղէ՛, լըսեցինք...)–, Մըսրամէլիք Զօրք ժողվեց:*
Ե՛թը տարի ժողվեց–ժողվե՛ց՝ Նո՛ր Զօրքին Պոչ լըմընցաւ, —
Ա՛յնչափ որ Զո՛րք եկան հասան Թափեցան...,
Վըրա՛ն զարկին, Բանա՛կ դըրին Քաղքին չուրջ:
Ա՛յնքան Քինւոր ու Զո՛րք ժողվեց, հաւաքեց՝
Քան'ղ Աստղ Երկինք՝ Մա՛րդ հաւաքեց ու բերաւ,
*Որ Աստղերուն՝ հաչիւ կ'ըլլա՛յ ու համար... *)՝*
Իսկ այդ Զօրքին ո՛չ հաչիւ կար՝ ոչ համար...:
Մըսրամէլիք երբոր տեսաւ Իր Զօրքեր՝
Ու չորս կողմէն Օդնականներ եկան հասան Իր Քաղաք՝

---

*) Չղալ (ղալի՛ց, ղո՛ւտ, ջեհէ՛լ, ջահիլ = դեռատի), Ցաղթ, ուժեղ ու դեղեցիկ: 1) Տե՛ս նաեւ Հատ· 495–499 եւ 515, 519: *) Հայյի՛ տալ, Իրար անցունել, չարժման մէջ դնել, Ծփել: *) Զօրք կապել, Բանակ կազմել: 2) Ե·741՝ երեք տարի ու կէս: *) Դէ՛, լսեցինք, Տեսած չենք, բայց լսած ենք: *) Համար, Համրանք:

Ուրախացաւ, այս Ա՛ղն ըսաւ մեծ ձայնով 1)·—

— «Եկա՛ն որ եկան, Զօրք թափան *) եկան,
= Եկա՛ն որ եկա՛ն···:
Եօ՛թ Թագաւորէ՝ եօ՛թ-Բանակ եկան,
= Եկա՛ն որ եկա՛ն···:
Գառստո՛ւն-հազարէն չուր *) էըսա՛ն-հազար՝
Զօ՛րք ու Օգնական՝ ժողվեցա՛ն եկան,
= Եկա՛ն որ եկա՛ն···:
Եկա՛ն որ եկա՛ն՝ Լերկի՛կ-Տըղաներ 2),
= Եկան՝ հարի՛ւր՝ հազա՛ր *) համար···:
Եկա՛ն որ եկա՛ն՝ Թար(մ)-Բեխ Տըղաներ՝
= Եկան՝ հարի՛ւր՝ հազա՛ր համար···:
Եկա՛ն որ եկա՛ն՝ Մուրուս-Կըռնտուկներ *),
= Եկան՝ հարի՛ւր՝ հազա՛ր համար···:
Եկա՛ն որ եկա՛ն՝ Ցախ *)-Մուրուտուրներ,
= Եկան՝ հարի՛ւր՝ հազա՛ր համար···:
Եկա՛ն որ եկա՛ն՝ Զա՛ռ-Կըրկըզուկներ *),
= Եկան՝ հարի՛ւր՝ հազա՛ր համար···:
Եկա՛ն որ եկա՛ն՝ Թըմբռ՛ուկ-Զարնողներ,
= Եկան՝ հարի՛ւր՝ հազա՛ր համար···:
Եկա՛ն որ եկա՛ն՝ Սըրի՛նգ-Փըչողներ,
= Եկան՝ հարի՛ւր՝ հազա՛ր համար···:
Եկա՛ն որ եկա՛ն՝ Շաւի՛ռ *)-Քաշողներ,
= Եկան՝ հարի՛ւր՝ հազա՛ր համար···:
Եկա՛ն որ եկա՛ն՝ Ծըռնծղա՛յ-Զարնողներ,
= Եկան՝ հարի՛ւր՝ հազա՛ր համար···:
Եկա՛ն որ եկա՛ն՝ Եօ՛թը-Իշխաններ՝ Զորս Կողմ Աշխարհէն,
= Եկա՛ն որ եկա՛ն···:
Եկա՛ն որ եկա՛ն՝ Խե՛ղճ Մէլիքին օգնական···»: —

---

1) *Երգով*: *) Թափան, *թափեցան, խուժեցին*: *) Չուր, *Մինչեւ*: 2) Կ·17՝ Լոտրիկ (*տղաներ*): *) Հարիւր հազար, *Հարիւրով ու հազարով* (*իբր համբանք*): *) Կնտուկ, *Ածիլած*: *) Ցախ, *կարծր*, Կ·17՝ ծազ (*ծազկեալ*)՝ *ուղղելի՝ ըստ իս՝* ցախ: *) Զառ-կրկզուկ, *Զառամեալ ալեւոր*: *) Շաւիռ, *Տաւիղ, Ջութակ*:

579. Մքսամէլիխի Բանակն Ու Հեծելը՝ Գետեր Կ'ցամքեցնեն

Զ.՝Կ.18, Կ.18, (Հ.425), Հ.425, Զ(Հ.425).

Ա՛յնքան անթիւ ու անհամար հեծեալ եկաւ ու անցաւ՝
*Որ Անգեղայ–Գե՛տը *) հասած ժամանակ՝*
Առջի եկողներ՝ Ջըրին կէ՛սը խըմեցին.
Մէջին եկողներ՝ մնացած Ջուրն ամբո՛ղջ խըմեցին.
Ետի՛ եկողներ՝ Գետի սիկեր լըզեցին,
Հեծելները՝ անջուր, ծարա՛ւ մընացին...:
Ա՛յդքան Զօրքը՝ եկաւ իջաւ՝ Բանա՛կ դըրաւ Դաշտի մէջ 1).
Ու երկընքի Աստղերուն ալ՝ հաշիւ կա՛ր,
Գետնի Ջարին, Ծովի Աւա՛զին հաշիւ կա՛յ, —
Այդ Բանակի մեծ ու պըզտիկ Վըրաններուն 2) թիւ չըկա՛ր...:
Երկինք, Գետինք՝ Բանակին դէմ կըդողայի՛ն այս անգամ...,
Սարսա՛փ ընկաւ Մըսրայ–Քաղաք՝ ամեն կողմ...:
Ելան այնտեղ լո՛ւր ղըրկեցին Մէլիքին՝
— «Մեր Թըշնամին ո՞վ է, ըսէ՛՝ կըռի՛ւ ընենք Անոր հետ...»:

580. Մէլիքի Մօր Ցեսած Առաջին Երազը

Կ.18, Զ.՝Կ.18, Զ.՝Ա.18, Ա.18, Հ.425,383, Զ.՝Հ.425, Ե.571,741, 628,773,572,512, Զ.՝Ե.741, Զ.

Այդ գիշերն ալ ի՞նչ եղաւ. —
Որ առաւօտ պիտի երթան Սասմայ վըրան կըռիւի, —
Մէլիքի–Մայր՝ Իսմիլ–Խաթուն՝ երա՛զ տեսաւ Քունին մէջ.
Քունը փախաւ, վազեց եկաւ գիշերով,
Ու Մէլիքի բարձին վերեւ նըստեցաւ,
Ըսաւ, — «Որդի՛, երա՛զ մ՝ տեսայ Քեզ համար...»:
= «Երազդ բարի՛ն, Մարէ՛,–ըսաւ Մէլիքն ալ–.
Գաւմէ նայի՛մ՝ ի՞նչ տեսար...»:
*Մայրն ալ այնտեղ Ձա՛ղ *) ըսաւ. —*

---

*) Անգղ կամ Խօշապ՝ գետակ Վանայ Լիճին հարաւը, Տե՛ս եւ Հատ. 537: 1) Կ.18՝ Պզէրկայ դաշտ (Դատվանայ կողմերը): 2) Ե.17, Խ.23, եւն.՝ չատըր–խէվաք (արբ.՝ խայմէ՝ մեծ վրան): *) Խազ, (Ողբ)երգ:

— «Որդի՛, ես (մէկ) երազ մ՚ եմ տեսեր· —
երազի՛ս մէջ 1) զահահուրեր եմ···: —
Գիշեր՝ երազիս մէջ ես տեսայ՝
Սասմայ–Ճըրագ կըպո՛ւկ *) էր,
Մըսրայ–Ճըրագ աճցուկ էր···:
— Սասմայ վըրայ՝ լո՛ւս–Արե՛ւ էր, տա՛ք էր···,
Մըսրայ վըրայ՝ մո՛ւթ–Գիշե՛ր էր, Ա՛մպ էր, Մը՛ժ *) էր···:
— Սասնայ–Աստղը՝ լո՛ւս–պայծա՛ռ էր՝ վեր՝ Սասնայ,
Մըսրայ–Աստղը՝ մո՛ւթ–խաւա՛ր էր 2) վեր՝ Մըսրայ···:
— Լուսնակ՝ վեր՝ Սաս(ը)մայ պայծա՛ռ էր,
վեր՝ Մըսրայ՝ Ա՛մպ ու խաւա՛ր էր···: —
կարկո՛ւտ ու կըրա՛կ կըթափէր Մըսրայ Գըլխուն···
Հեղե՛ղ ելաւ՝ կաճգնեցաւ *) Դաշտեր···,
Ջուրը դարձաւ Արի՛ւն···՝
Դիակնե՛ր՝ մէջ կըտաճէր···, —
ե՛ս եմ զահահուրեր, զահահուրե՛ր···:
Մէկի՛ֆ, Որդի՛, մի՛ երթար Այն–Կըտրիճին վրայ···»:

Մըսրամէկիք վերցուց Իր Մօրն ի՞նչ ըսաւ. —
= «Մարէ՛,–ըսաւ–, քուն կը քընես Քե՛զ համար՝
Երազ կ՚տեսնես ի՞նձ համար··· .
Քու Սիրտը շա՛տ կըցաւի այդ Դաւթի վրայ··· .
Գիտի երթամ Իր վըրա՛յ···»:
— «Երթաս վըրան,–ըսաւ Մայրը–, պիտի գըղջա՛ս, ա՛յ Որդի՛»:
Մէկիկն ըսաւ, = «Գիտի երթամ Իր վըրա՛յ···», —
Բայց այդ օրը չըգընա՛ց···:

531. Մըսրամէկիի Մօր Տեսած Երկրորդ Երազը

Ջ.՝Ե·628, Ե·571,572,512,511,628,741, Ջ.՝Ա·18, Ա·19, Կ·18, Հ·425·

Որ Աչխա՛րքը հաւաքուեցաւ ու եկաւ,
Մըսրամէկիք պիտի երթար կըռիւի՝

---

1) Ա·18՝ էրազըմի՝ *ուղղել՝* էրազ–իմի (*երազի մէջ*): *) կպուկ, *վառած, վառ*: *) Մըժ, *Մէգ, մշուշ*: 2) Ե·512՝ մթըմկայ (*հա–կանիշ՝* լուսըմկայ): *) կաճգնեցաւ, *բարձրացաւ*:

Մայրը նորէն երա՛զ տեսաւ այդ Գիշեր,
Լուսաբացին՝ ելաւ վազեց Մէլիքի մօտ ու ըսաւ.—
*— «Մէլի՛ք, մօ՛րաւուն *), արի մ՚ե՛րթար կըռխւի...»:*
= «Մարէ՛,—ըսաւ—, ինչո՞ւ չերթամ կըռխւի...»:
— «Այս գիշերը,—ըսաւ Մայրն ալ—, մէկ նոր երա՛զ տեսայ ես.—

— Սասնայ-Ձիւն կըխաղա՛ր; Որդի՛ 1),
Մըսրայ-Ձիւն՝ դէմը կըփախէ՛ր...:
— Ես տեսա՛յ՝ Որդի՛, Մըսրայ-Ձիւն փախէփա՛խ էր,
Սասնայ-Ձիւն հետւ հասէհա՛ս էր,
կուգար կըզարնէր՝ Մըսրայ-Ձիու Մէջքը կը կոտրէ՛ր:
— Մէկ ալ տեսա՛յ, Որդի՛, Սասնայ-Խոյը կուգար կ'զարնէր՝
Մըսրայ-Խոյի վի՛զը կըկոտրէ՛ր...՝
Կ'տանէր Անդունդ՝ կը կորսընցընէ՛ր...:
— Որդի՛, արի՛ Ակո՛ջ ըրէ Իմ խօսքին, —
Մի՛ երթար՝ վեր՝ Այն Հայուն 2) կըռխւի...»: —

ՃՁՁ. Մէլիքի-Մօր Խրատն Ու Ցոյն Ցամառութիւնը

Կ·18, Չ·՝Կ·18, Չ(Կ·18), Ա·19, Չ·՝Ե·823·

— «Մէլի՛ք,—ըսաւ Մըսրամէլիք՝ Իրեն Մօր—,
կարելի՞ է՝ Սասնոյ վըրայ կըռխւիս չ'երթամ այս անգամ... .
Թող կանուխէ՛ն ըսէ՛ր Ինձ՝ այդ բոլոր... .
Քա՛նի այդ Զօրք չէ՛ր ժողովուեր ու եկեր... .
Որ այդքա՛ն Զօրք ու Եօ՛թ Իչխան՝ եկա՛ն Իրենց Հեծելով՝
Ի՞նչ պատասխան պիտի տամ ես այդ Մարդոց...»:
= «Շատ դիւրի՛ն է,—ըսաւ Մայրը՝ Մէլիքին—.
Այդչափ Զօրքը պիտի կտեսնես՝ երթաս վեր՝ մէկ Տըղայի՞... 3),
Դուն բե՛ր՝ Ատոնք նըւէրներով դոհացո՛ւր,
Ձամբա՛յ հանէ՝ Իրենց Զօրքով դառնան երթան Իրենց Տե՛ղ:
Երբ Քեզ ըսեն թէ՝ «Ապա՝ Մեզ ինչի՞ համար կանչեցիր...»՝
Դուն ըսէ՝ «Ես չէի՛ դիտեր՝ Ինձի այսքան Զինուոր կար,
Հիմա որ Զեզ հո՛ս կանչեցի՝ իմացա՛յ՝

---

*) Մօրտա՛ւն, *Միրելի՛ս*: 1) *Երգով*: 2) *Այսինքն*՝ Դաւիթին: 3) Ե·823՝ *ըսողը* կուզրադին է (*պատումին բերումովը*):

Ա՛լ ասկէ ետք՝ երբ թագաւորը մ՝ ելնէ ու զայ Իմ վրաս՝
Ես գիտե՛մ որ՝ Իմ այս ուժով՝ կըրնա՛մ յաղթել Թըշնամիս· · · ·
Դէ՛, ելէ՛ք ու զարձէք գացէք Ձեր Տեղեր·
Բարո՛վ եկաք՝ ու բարով ալ ե՛ւ դառնաք· · ·»:
Մըսրամէլիք՝ եւաւ որ այդ Մեծաւորներն ու Զօրքերը ե՛ւ ղըրկէ՝
Իշխաններէն Մէկը զարճաւ՝ Մէկալներուն ի՞նչ ըսաւ· —
— «Գիտէ՞ք,–ըսաւ–, Մըսրամէլիք Մեզ ինչո՞ւ եւս կըճամբէ· · ·»:
= «Չէ՛· · ·, ինչո՞ւ· · ·»:
Ան ալ պատմեց Ընկերներուն՝ թէ՝ «Սասնոյ մէջ Հա՛յ մը կայ, —
*Մէկ պուլուլիկ *) Տըղա՛յ մ՝ է, —*
Անոր վըրայ կըռի՛ւ պիտի երթայինք,
*Մըսրամէլիք չ՝իշխեցա՛ւ· · · *),*
Անոր համար՝ Մեզ ալ ահա՝ ե՛ւ կըճամբէ՝ Մեր Տեղեր»:
Այս Խօսքն ըսես՝ ի՛նչպէս եղաւ՝ Մըսրամէլիք իմացա՛ւ· · ·,—
Ան ալ ինքզինք ա՛լ չըկոտրե՛ց Առոնց քով· · ·,—
Եկած Զօրքեր հո՛ն պահեց,
Ըսաւ, — «Մարդի՛կ, Իմ կըռիւը կըռի՛ւ է· · ·,
Ամենմէկըդ Ձեր տեղե՛րը նըստացէք,
Գիտի երթանք Սասնոյ վըրայ կըռիւի՛· · ·»:

528. Մըսրամէլիքի Մօր Ցեսած Երազը

ՁԿ·349, Ձ(Կ·62), (Կ·62), Կ·62, Ձ·՝Հ·425, Հ·425,383, Ձ·՝Ն·571, Ն·512,628,773,571·

*Մէկալ օրը ելա՛ւ Մէլիք՝ Իր Հո՛ղն ըրաւ ու Իր Ֆար *),*
Որ Իր Բանակն առնէ երթայ դէպ Սասուն,
Մայրը նորէն դէ՛մը եկաւ ու ըսաւ·—
— «Մէլի՛ք, Որդի՛, արի թափէ՛ Ֆու Հողն ու Ֆար 1), Ի՛նձ լըսէ·
Դուն այդ Զօրքեր ամեն ժողվեր բերեր ես,
Է՛, հոգ չ՝է՛· · ·,
Իմ Խօ՛սքն ըրէ՝ Այդ Կըտրիճին վըրայ կըռւի մի՛ երթար· · ·,

*) Պուլուլիկ, պլլուլիկ, պլլուզիկ, *փոքրիկ, մանրիկ, դեռատ*: *) Իշխել, իշխեցնել, գլշիլ, *համարձակիլ, ժտել*: *) Հող ու Ֆարը ընել, *Ռազմական պատրաստութիւններ տեսնել*: 1) *Այսինքն՝ Մտադրութենէդ ե՛ւ կեցիր, ռազմական պատրաստութիւններդ մէկ կո՛ղմ թող*:

Այս դէշե՛ր ալ, Որդի՛, չատ դէշ երա՛զ մ՚ տեսայ՝ Քեզ համար...,—

— Սամայ Գետեր յըստա՛կ էին, տեսայ ես 1),
Մըսրա՛յ Գետեր՝ ինչպէս Արի՛ւն կուգային...,—
կ՚ըսէմ «Արի՛ մ՚ ե՛րթար վեր՚ Այն կըտրիճին»...»:—

534. Մըսրամէլիքի Մօր Նոր Խրատը

Չ(Ն·512), Ն·512,628,773,572, (Ն·628), Չ·՝Ն·773,512, Հ·425, Ա·19, Չ(Լ·73), Չ(Կ·62), Կ·62, Չ·

Մէլիքէ–Մայր վերցուց ասպա ի՞նչ ըսաւ· —
— «Որդի՛, Մէլի՛ք, Այնտեղ՝ Անո՛ր, Այստեղ՝ Քեզի՛ թող ըլլայ·
Եղբայր մ՚ Դո՛ւն ես, Մէկը՝ Ա՛ն...»:
= «Մարէ՛,–ըսաւ Մէլիքն ալ–·
Քուն Քեզ համա՛ր կըքընէս՝
Երազ կ՚տեսնես Ուրիշի՛ն...,—
Օդուտ չ՚ը՛ներ Քու ըսել...,
Ա՛յդքան Զօրքը ես ժողվե՛ր եմ՝ ու բերե՛ր,
Ա՛լ չեմ ցըրուեր ու ճամբեր... .
Ինձ ամօ՛թ է Ամենքէն... .
Ուզե՛մ–չուզեմ՝ պիտի երթամ Դաւթի վըրայ կըռիւ՛...:
Մէրի՛կ,–ըսաւ–, ես՝ ժողվեր եմ այս ահագի՛ն Բանակներ...,
Ան՝ մէ՛կ Տըղայ՝ ու մինա՛կ է մընացեր...,—
*Ի՞նչ պիտի ՚նէ *)) Ան Ինձի՛...»:*
Մայրն՝ այս անգամ՝ ըսաւ, — «Որդի՛, Դուն մի՛ երթար Զօրքին հետ·
*Մէկ Մա՛րդ բըռնէ *) Քու փոխան՝*
Բանակին առնէ՝ երթայ Սասուն կըռիւ՛... .
Ինչո՞ւ համար Դուն երթաս...»:
= Մարէ՛,–ըսաւ Մըսրամէլիք–, ես չերթամ...՝
Ուրիչ մէկը պիտի երթայ՝ կըռի՞ւ ընէ Ինձ համար·՞·՞·՞:
*Ա՛յսքան Զօրքեր ես ժողվե՛ր եմ..., ի՞նչպէս թողնեմ առանց Տէր *)·*
Չէ՛, Մարէ՛, չէ՛, պիտի երթամ Անոնց հե՛տ...»:
Մէլիքէ–Մայր տեսաւ որ չէ՛, ճար չըկա՛յ...՝

---

1) Երդով: *) Պիտի ՚նէ, Պիտի ընէ: *) Բռնել, վարժել, նըշանակել: *) Տէր, Պետ, Հրամանատար:

— «Որդի՛,–ըսաւ–, որ Դուն կ'երթաս՝ Ե՛ս ալ կուգամ Քեզի հետ.
Ես Քեղ մինակ չե՛մ թողներ...»:
= «Դուն կընի՛կ ես,–ըսաւ Մէլիք–, Դուն մի՛ գար.
Ես բանակով ու Մարդերո՛վ է կ'երթամ...»:
Մայրը ըսաւ, — «կուգա՛մ..., Մէլի՛ք, չե՛մ կենար...»:

535. Մէլիքի-Մայրը Պարունիներ Կ'առնէ Հետը

Չ(Կ·62), Կ·62, Չ·՝Կ·62, Չ(Ե·718).

Մէլիքի–Մայրն ալ ի՞նչ ըրաւ այս անգամ...,—
Ելաւ ժողվեց Քառասո՛ւն Աղջիկ, ու Քառասուն ալ Նորահարս,
Կանչեց բերաւ երկու ձեռք *) ալ՝ Շաւեռ–Քաշող *), Փող–Փըչող:
Ան ալ ըսես ի՞նչ պատճառով կըբերէ՝
Այդ Կընիկներ Խաղի՛ *) համար կըբերէ,
Որ Դաւիթի առջեւ պարե՛ն՝ հրապուրե՛ն...,—
Կըռիւ չ'ընէ՛ Տղուն հետ...:

536. Մբսրամէլիք Դիր Կ'ղրկէ Սասուն

Չ(Ե·103,111ա·), Ե·103, Չ·՝Ե·103, (Ե·796,803), Ե·796,803,
Չ(Ե·713), Կ·18, Խ·23, Ա·18, Չ·

Մբսրամէլիքն ա՛լ չըկեցա՛ւ այս անգամ...,—
Թո՛ւղթ մը գըրեց՝ Սուրհանդակի Ձե՛ռ տըւաւ,
Ելաւ ղրկեց Սասնոյ–Հայո՛ւն, Օհանին [ու Դաւիթին],—
Թէ՝ Պատրա՛ստ կաց..., Ես պիտի գամ կըռիւի՛...,—

— Պիտի աւցուներ՛մ, առջե՛ւըս տամ՝ ու բերե՛մ 1)՝
Հազար հի՛նգ–հարիւր համար՝ Անբեխ–Անմօրուս... .
Պիտի աւցուներ՛մ, առջե՛ւըս տամ՝ ու բերե՛մ՝
Հազար հի՛նգ–հարիւր համար՝ Նորալո՛ւկ–Մանուկ... 2).
Պիտի աւցուներ՛մ, առջե՛ւըս տամ՝ ու բերե՛մ՝
Հազար հի՛նգ–հարիւր համար՝ Նորաբոյս–Մօրուս... .
Պիտի աւցուներ՛մ, առջե՛ւըս տամ՝ ու բերե՛մ՝
Հազար հի՛նգ–հարիւր համար՝ Թո՛ւխ–Մուրուս... .

---

*) Ձեռք, Խումբ: *) Շաւեռ Քաշող, Տաւղահար: *) Խազ, Պար: 1) Երգով: 2) Ա·18՝ Նորափեսայ [Մանուկ = Չինւոր]:

Պիտի աճցունե՛մ, առջի՛ւըս տամ՝ ու բերի՛մ՝
Հազար հի՛նգ–հարիւր համար՝ Խա՛ռ–Մորուս··· 1).
Պիտի աճցունե՛մ, առջի՛ւըս տամ՝ ու բերի՛մ՝
Հազար հի՛նգ–հարիւր համար՝ Սիվտա՛կ–Մօրուս··· .
Պիտի աճցունե՛մ, առջի՛ւըս տամ՝ ու բերի՛մ՝
Հազար հի՛նգ–հարիւր համար՝ Թըմբկահար··· .
Պիտի աճցունե՛մ, առջի՛ւըս տամ՝ ու բերի՛մ՝
Հազար հի՛նգ–հարիւր համար՝ Փողահար··· 2).
Պիտի աճցունե՛մ, առջի՛ւըս տամ՝ ու բերի՛մ՝
Հազար հի՛նգ–հարիւր համար՝ Ֆնարահար··· 3).

Դէ՛, պատրա՛ստ կաց Քու ժամին,
Ահա կուգամ ես Քու վըրայ կըռիւի՛···»:
Սուրհանդակը — կասօն — ելաւ՝ թուղթը առաւ ու գընա՛ց,
Տարաւ տըւաւ Սասմայ–Քաղքի Մեծին Ձե՛ռք:

537. Մըսրամէլիք Իր Բանակով Ի Սասուն

ՁԿ·349, 502, Հ·425,32,380, (Հ·380), Ձ·՝Հ·32, Կ·62, (Կ·62), Լ·27,73, (Լ·73), (Ց·35), Ց·35, Ձ(Ց·35), Ե·17, 512,572,741,773, 908, 1005,571,970,1107,713,628, (Ե·970), Ձ·՝Ե·970, Ա·54,19, (Ա·54), Ձ·, Խ·23, Ձ·՝Խ·23·

Մըսրամէլիք Իր Զին Հեծաւ Զօրքն առաւ,
Քաչեց Քաղքէն՝ ու գիշերով ելաւ դո՛ւրս, —
Ընտանիքով, Մայրն ու Քոյրերն ալ մէկտեղ —:
Ա՛յդչափ Զօրքեր տըւաւ առջեւ՝ ու քըշե՛ց,
Գիշե՛ր քըշեց, ցերե՛կ քըշեց, հա՛ քըշեց···,—
Քըշե՛ց՝ դընաց վեր՝ Սասմայ··· 4):
Անոր Զօրքը ա՛յնքան չատ էր, ա՛յնքան չա՛տ···՝
Որ Բաթմանայ–Գետի 5) Ափը երբ հասաւ
Առջի եկող՝ Ջուրը խըմեց, ու խըմելով՝ Գետ չորցա՛ւ··· .
Միջի եկող՝ Քարը քաղեց՝ Աւազ մաղեց՝ ցամքեցո՛ւց····
Ետքի Մարդերն ալ՝ մընացին առանց Ջուր··· 6):

---

1) Խ·23՝ Մէջմարդ մաճուկ: 2) Ա·18՝ Զուռնաչի: 3) Խ·23՝ Սազրաճգ: 4) Լ·73՝ *Սխալումով՝* խանգարք խաթունի վրայ: 5) Կ·18՝ Անգղայ Գետ (*Տե՛ս Հատ·529*): 6) *Համմայ· Հատ· 529ի հետ:*

Զօրքը քշեց՝ եկա՛ւ, եկաւ՝ հասաւ Դաւթի Սահմաններ,
Եկաւ հասաւ Սասմայ–Քաղքէն աւուր մ՚ ճամբայ հազի՛ւ զատ՝
Լորայ–Դա՛շտ 1),
Իր Բանակը դըրաւ այդ մե՛ծ Դաշտին մէջ 2)·
Մեծ ու պըղտիկ Վըրաններըը՝ չարա՛ն–չարան հոն զարկին,
Սասնոյ չորս–կողմ՝ Զօրքը բըռնեց՝ նըստեցաւ· —
Այնպէ՛ս պատեց՝ որ Զօրքն եկաւ՝ իրա՛ր առաւ չորս–բոլոր·
Երկնուց երես՝ ի՛նչքան Աստղեր կըճըվըլան անահմար···՝
Ա՛յնչափ անթիւ ու անհամար Վըրաններ՝
*Զարկած էին Լորայ–Դա՛շտ *)·*

538. Մըսրամէլիք Վ.նրջնագիր Կ՚ղրկէ Զէյնով-Օհանին

Կ·62,18,63, ՉԿ·348, Չ(ՉԿ·348), (ՉԿ·502), Ե·17,572,628,741,908, 970,1005,713,512, (Ե·713,572,908,741), Չ(Ե·17,713), (Լ·73,27), Լ·73, Ա·19,54, Հ·32,425,426, Չ·՝Հ·426, Չ(Հ·426)·

Մըսրամէլիք բերաւ Թո՛ւղթ մ՚ ալ դըրեց Զէյնով–Օհանին 3),

---

1) ՉԿ·349,502՝ Լհօռայ, Խ·23՝ Լիւռայ, Ա·19՝ Ռօլայ, Հ·32՝ Լորուայ, Հ·379՝ Լուրայ, Ե·741,773՝ Լռռայ, Ե·970՝ Լեռվայ՝ Դաշտ: *Իսկ* Ե·572,512՝ Հովայ Դաշտ, 512 *տըրջը·՝ հետեւեալ զրոյցովը· — «Հովայ Դաշտ, Մոկսէն դէպ Բաղէշ (Պիթլիս)՝ Մամըրտանէք գաւառին մէջ, կանաչաւէտ դաշտ է:*

*«Մարդ մը կուգայ Հովայ Դաշտ, կ՚ուզէ կով մը առնէ (գնէ): Կովը կըկթէ· երկու կթոց կաթ կըկթէ: Ի՛նչ որ կովու տէրը կ՚ուզէ՝ կուտայ, կ՚առնէ (կովը)՝ կ՚երթայ իր տուն: Քանի մ՚ օր վրան կ՚անցնէ, կովը կըկթեն, կաթը կ՚պակսի: Ամէն օր կաթը կ՚պակսի: Այդ մարդը կ՚ելնէ կովը կը տանի ծախողին մօտ, կ՚ըսէ· — «Ա՛յ մարդ, դուն զիս խաբեր ես· քու կովն այնքան կաթ չի՛ տար· կեղծիք կար մէջը»: Մարդն ալ կ՚ըսէ, = «Ա՛յ մարդ, ես քեզի կո՛վ ծախեր եմ, Հով (Հովայ Դաշտի աբօտն ու իր ուժը) չե՛մ ծախեր»···»: Տե՛ս Հատ· 369 եւ 474՝ Ծնթ·, եւ Բ· Հտր·: 2) Ե·970՝ վեր՝ Լեռվայ Գետին (անչուշտ սխալումով): *) Լորայ Դաշտ, Խ·23՝ «Մըսրայ եւ Սասունի մէջտեղն է»: 3) ՉԿ·348, Ա·19, Հ·32, Ե·512,572,628, 908՝ Դաւիթին, Ա·54՝ Քեռի–Թորոսին, Կ·18՝ Սասնոյ գեաւուրին, Լ·73՝ Խանդուրին:

Ըսաւ,— «Հա՛–հա՛...*)՝ իմ եօ՛թ տարւան Տուրքը կուտա՞ս՝ տո՛ւր [կամով,
Ու Սասուն ալ Ի՛նձ յանձնէ. —
Թէ որ չիտաս՝ Քու Հողն ու Քար պատրա՛ստ ըրէ այս օրէն,
Թէ Մարդ ունիս՝ ղըրկէ՛ դան ու դէ՛մս ելնեն...
Կամ պիտի դաս՝ զարնենք Իրա՛ր՝ ես ու Դուն,
Կըռի՛ւ ընենք Իրար հետ...,
Այլեւս ուրիշ ճար չկա՛յ...
Աստուածն ալ, դէ՛, կա՛մ կուտայ Ինձ, կա՛մ՝ Քեզի...:
Մինչեւ եօ՛թ օր՝ Քեզ ժամանա՛կ կուտամ Ես...,
Թէ որ չիտաս Իմ Տուրքեր՝
Կուգամ–Քալեմ *) Քաղքի վըրայ, դիշերո՛վ...,
Ի՛նչքան Որճ կայ՝ կ՚ըսպաննեմ...,
Էգերն ամեն ա՛ուրդերի կ՚ընեմ՝ կ՚առնեմ ու կ՚երթա՛մ...
Կրա՛կ կըթողնեմ Սասնոյ–Քաղաք՝ կըվառե՛մ...,
Հըրո՛վ–Ջըրով, Ջըրհեղեղով կ՚անցունե՛մ...,
Քար–քա՛նդ կ՚ընեմ, Հողն ու Քարը կըվերցընեմ՝ տանիմ Մը՛սր,
Մըսրայ–Քաղքի չուրջ–բոլո՛րը՝ նոր Քաղա՛ք մը կըշինեմ...,
Աւարները՝ Մըսրայ վըրա՛յ կըբաժնեմ...:
Ջըսե՛ս՝ «Ինձի՝ Մըսրամէլիք՝ իմաց չըրա՛ւ կանուխէն».
Շուտ պատասխա՛ն տուր Ինձ, Օհա՛ն, կ՚ըսպասե՛մ...»:

Մէլիք այս Թուղթ որ դըրեց՝
Կանչեց Քրսա՛ն Զիաւոր,
Գիրը տըւաւ՝ ղըրկեց Զէնով–Օհանին,
— «Գացէ՛ք,–ըսաւ–, Սասունէն ալ՝ Ոսկի՛ բերէք քըսան բե՛ռ,
Ցըրուեմ Զօրքիս՝ Իրենց ծախսե՛ր Թող ընեն,
Ուտեն, խըմեն, ուժովնա՛ն,
Ելնենք ու տանք Քաղքին վըրայ՝ մէ՛կ անգամէն կոտորե՛նք...,
Բըռնե՛նք Դաւիթ եւ ըսպանե՛նք տեղնիտեղ...,
Թողունք երթանք Մեր գործին...»:

---

*) Հա՛–հա՛, Ահա հիմա՛, անմիջապէս, իսկոյն: *) Թալէ, Յարձակիլ:

539. Մէլիքի Գսան Զիաւորներն Ու Զէնով-Օհանի Ճոյսը

Ջ·՝Հ·426, Հ·426, (Ց·103), Ե·572,17,970, (Ե·970), Ջ·՝Ե·970, Ջ·

Այդ Զիաւոր Գըսա՛ն Մարդեր՝ ելան եկան՝ ի Սասուն,
Գացին գըտա՛ն Զէնով–Օհան, Ճըռան–Վէգօն՝ եւ ըսին, —
— «Դէ՛, Մէլիքի հրամա՛նն է այս, Ոսկի՛ տըւէք քըսան բեռ,
Առնենք տանինք՝ Իրե՛ն տանք···»։
Մէլիքի այդ Թո՛ւղքին ալ երբոր Սասման մէջը կարդացին՝
Հասկըցան որ՝ Մըսրամէլիք Բանակ կապեր՝ եկեր է, —
Զէնով–Օհան, Ճըռան–Վէգին շըտարեցան մընացին·
Դաւիթ դեռ եւս լուր չ՛ունի։
Զէնով–Օհան վերցուց ըսաւ, — «Ա՛յ Մարդեր,
Մըսրամէլիք՝ աս ո՞ւմ վրայ՝ եկեր կուգայ կըռիւի···
*Ունինք–չունինք՝ ծուռ–թալասիկ *) Դաւի՛թ մ՛ է···,*
Մենք չե՛նք կըրնար կըռիւ ըներ Աստնց հետ···։
Ա՛յսչափ Զօրքեր որ ժողվեր է ու եկեր՝
*Ոչ Մա՛րդ կայ Մեզ՝ ոչ ալ Զօ՛րք կայ՝ հետ *) կըռուին··· ·*
Թէ որ կըռուի՝ այդ Ծուռ–Դաւի՛թն է մխայն···»։
Զէնով–Օհան՝ այսպէ՛ս կ՛ըսէ ու կուլա՛յ···,
Օրուքն ՝ի վար տա՛ք–տաք Արցո՛ւնք կըթափէ···,։
— «Հէ՛ բարերար Աստուա՛ծ,–կ՛ըսէ–, Դո՛ւն Մեզ հասնիս՝ մէկ
[կերպով···»։

540. Մըսրամէլիք՝ Հարսներ Եւ Աղջիկներ Կ՛ուզէ Սասունցէն

Լ·27, Ջ·՝Լ·27, (Լ·27), Հ·425, Ջ·՝Հ·425, ՋՍ·462, Ե·1004·

Մըսրամէլիք ելաւ՝ ապա՝ Սասո՛ւն ղըրկեց Տա՛սը Մարդ 1),
— «Գացէ՛ք,–ըսաւ–, Տա՛սը Նորհարս, Տաս(ն) ալ Աղջի՛կ բերէք Ինձ,
*Տասը Հարսներ՝ Իմ Ոտնե՛րը Թող մաժեն *),*
Տաս(ն) Աղջիկներն ալ երեսիս Ճանճե՛ր քըշեն՝ վախցընե՛ն··»։
Ելան այդ Տաս Զիաւորներ՝ եկան Զէնով–Օհանին,
Ըսին, — «Օհա՛ն, Մըսրամէլիք Մեզ ղըրկեց՝

---

*) Թալասիկ, *Թալ–Թալ ասուքիւնով, Թլուատ–լեզու, Թոթովախօս։ *) Հետ, *Այսինքն՝ Մըսրամէլիքի, Թշնամու, Աստնց։ 1) Լ·27՝ ութսուն հոգի։ *) Մաժել, *Փափկօրէն շփել, շոյել։*

Տասը ազար Աղջի՛կ կ՚ուզէ Քաղաքէն,
Երբոր քընի՝ Իր երեսի ձանճե՛ր քըշեն՝ փախցընեն… .
Տաս ալ Նորհարս՝ Ոտքեր մաժեն՝ քընանա՛յ…»:
Ելան բերին Սասմայ-Քաղքէն՝ ու տըւին,
Տաս Նորահարս ու Տա՛ս ազար Աղջիկներ,
Առին տարան՝ տըւին Մըսրայ Մէլիքին:
Մըսրամէլիք երբոր պառկէր քընանար՝
Տա՛ս Աղջիկները՝ հինգը մէ՛կ կողմ կըկենային, հինգ՝ մէ՛կ կողմ,
Ուրխ-Տերեւ Իրենց Ձեռքին մէ՛ջ բըռնած՝
Կը քըշէ՛ն ճանճերն Իրեն երեսէն…:

Մըսրամէլիք՝ Դաշտին մէջը՝ Թող Իր Բանա՛կ պատրաստէ,
Մենք ալ դառնանք՝ զըրոյցն ո՞ւստ տանք, — Դաւիթէ՛ն:

ԺԵ. ԴԱԻԻԹ ԻՐ ՀԱՑՐԵՆԻ ՋԷՆՈՒ-ՋԱՐԴԵՐՈՎԸ Կ՚ՋԻՆՈՒԻ

541. Դաւիթ՝ Անմախիար, Մըսրամէլիք՝ Սպառնացող

Ձ.՝է·32, կ·62,63, Ձ.՝կ·62,63, Ձ.՝լ·72,73, Ձ(լ·73), Ձ.՝ն·742, ն·742·

Դաւիթն ըսես՝ ի՞նչ ըրեր է այդ օրեր· —
Այն օրէն որ՝ Իր չինած ժամ քակեր էին ու վառեր,
Սարկաւագները, Վարդապետներն ու Տէրտէրներ ըսպաներ՝ 1)
*Իր կըսկիծէն՝ եղեր է գէժ *), ա՛լ չի՛ գիտեր ի՞նչ կ՚ընէ…:—*
Առաուն կ՚ելնէ, կ՚երթայ Արտ-ափ, մինչեւ իրկուն Ո՛րս կ՚ընէ,
Լ՚որ, ճընճըղո՛ւկ կ՚ըսպանէ…,
Ճընճուղներու հե՛տ կ՚ըզբաղի· ա՛տ է Անոր բան ու գործ·
Ուրիշ ոչ մէկ բանուգործէ չի՛ նայիր… 2):
Մըսրամէլիքն ալ գիտնալով որ Մարդ չըկա՛յ Սասնոյ մէջ,
Դաւիթ-Մըհէր չատնց արդէն մեռեր է,

---

1) Տե՛ս Հատ· 458–476: *) Գէժ, Տխմարացած, գլխին զարկած պէս, խենթ կտրած: 2) Համեմատել՝ Տրդատ Թագաւորի գիժացած վիճակին հետ, Հռիփսիմէ-Գայեանէի եւ հաւատակից խումբին նահատակութենէն յետոյ:

Մինակ պըզտիկ Տըղայ-Դաւի՛թն է մընացեր Սասմանց-Տուն, —
Շուտ մը ելեր՝ քաշեր է Զօրքն ու եկեր է Սասման վրայ.
Թո՛ւղթ գըրեր է՝ ղըրկեր Զէնով-Օհանէն 1), —
— Ինչո՛ւ Ինծի՛ կը յանձնես՝ կամ դո՛ւրս կուգաս՝ կըռի՛ւ կ՚ընես Ինծի հետ...»:
Զէնով-Օհա՛ն ալ ըսես՝
Սըրտէն չի՛գար որ Դաւիթին ըսէ՝ երթայ կըռուի:
Թուղթ որ եկաւ Օհանէն՝
Այդ Կորեկի-Աբտի Պառաւն իմացա՛ւ:
Ան ալ չէ՞ որ Իր Կորեկին ու Շողղամին համար է՝
Դաւթի եաեւ կան կուգա՛յ...:
Այդ Պառաւը՝ Դաւիթի Հօր՝ Մըհէր-Դաւթի Սիրողն էր, —
Դաւիթ որբ է, սիրտը վըրան կըցաւի.
Կ՚ուզէ Դաւթին սորվեցընէ՛ ամեն բան՝
Որ Մա՛րդ ըլլայ, կըտրի՛ճ դառնայ Որբ-Դաւիթ:
Այդ Պառա՛ւն է, — կըհարցընէ ու կըփընտռէ՛ Դաւիթը,
Ասղին-անդին՝ Անոր եաեւ կա՛ն կուգայ:

542. Դաւիթն Ու Առտի Ջրուորը

ե·797, 1101, 714, 773, 1005, 562, 572, 629, 742, (ե·562, 908, 963), Լ·22, 23, Ջ·՝Լ·22, 23, Ջ(Լ·84, 22, 23), խ·24, (խ·24), ՋՎ·1, Ա· 19, (Հ·380)·

Դաւի՛թն ըսես՝ աւո՛ւր մէկին, առաւօտ,
Դիր մ՚ ալ առե՛ր Նետաղեղն,
Եւ տարեկից Ընկերներու հետ միասին՝ գացեր Դա՛շտ,
Ո՛րս ընելու Իրեն Քեռի-Թորոսին...,
Ու գացեր է՝ նոյնն մըտեր այդ Պառաւի Աբտին մէջ:
Դաւիթ տեսաւ որ Մըշակ մը այնտեղ Աբտը կըջըրէ 2):
Աբեւ երբոր բարճրացաւ՝
Դաւիթ եկաւ ու կ՚անցնէր,
Մէկ լո՛ր թըռաւ այդ Ջրուորի կուշտն՝ ի վեր·

---

1) Լ·73՝ սխալով՝ Խանդուդ-Խաթունին: 2) Լ·84՝ Դաւիթ Պառաւին կ՚հանդիպի՝ Աղբիւրի մը վրայ:

Դաւիթ զարկաւ ու բըռնեց։
Մէ՛կ ալ Թըռաւ՝ ա՛ն ալ զարկաւ ու բըռնեց։
Քիչ մը անդին՝ մէ՛կ ալ Թըռաւ՝ ու բըռնեց.
Ելաւ՝ Ձիով՝ պըտըտեցաւ այդ նոր Ջըրած Արտին մէջ.
Ցե՛խ Արտ՝ ամեն արմատահա՛ն ըրաւ Դաւիթ՝ Ոտքին տակ...։
Ջըրտրն ըսաւ, — «Ասի այնինչ Պաուի Ա՛րտն է, ա՛յ Դաւիթ.
Եօթ †) ո՛րբ ունի, այս մէկ Ա՛րտն է իր Ապրուստ.
Մե՛ղք է Պաուին..., դո՛ւրս արի...»։
Ան ալ — Դաւիթ —՝ վերցուց ըսաւ Ջըրտրին. —
= «Հա՛ցն ու Գինին, Տէ՛ր–Կենդանի՛ն...
Կըզարնեմ Քեզ՝ կ՛իջնես մինչեւ Անդունդները...,—
Թող Ո՛րս տանիմ ես իմ Քեռի–Թորոսին...»։
Ան ալ Բահը դըրաւ Ուսին՝ դարձաւ դէպի Պաուի Տուն։

543. Կոռիկարթի Պատուը՝ Լաւրիր Կուսայ Դաւիթին

Չ·՝Ա·19, (Ա·19), Չ·(Ա·19), Չ·՝Լ·23,84,85, (Լ·84), Լ·23,84,85, Ե·1005, 572,714,742,797,629,562,773,506, (Ե·562,629,797,506, 572,714), Չ·՝Ե·742, (Կ·63), Կ·63, Չ·՝Կ·63, Խ·24, Հ·32,426, Չ·՝Հ·32, ՉՎ·1, (ՉՍ·463).

Պատուն Իր Հաց Թըխեց՝ առաւ որ դայ Արտին Ա՛չք մը տայ 1),
Այդ Ջըրտրին դէ՛մը եկաւ ու ըսաւ.—
— «Անտա՛չ,—ըսաւ—, ինչո՞ւ դարձար ու եկար...»։
Ըսաւ, = «Դաւիթ՝ Արտին Հասկերն ամեն հանեց Երկինքները...»։
— «Դէհ,—ըսաւ—, Դուն նըստիր այդտեղ՝ Քու Հաց կե՛ր՝
Ես ալ կ՛երթամ Դաւիթի քով...»։
Պատուն եկաւ Դաւիթի կուշտն ու տեսաւ՝
Դաւիթ նորէն Իր Ընկերներն առեր Ինկեր Արտին մէջ,
Ու Հո՛ն, ահա՛ 2), Իրեն Համար Լոր, Ճընճըղուկ կ՛ըսպանէ,
Պօռա՛ց, կանչե՛ց, Դաւթի վըրայ Ձե՛ռք վերցուց,
Ըսաւ, — «Դաւի՛թ, Դըրող–Մա՛հը տանի Քե՛զ...,
Թափի՛ Քու Մօրթն ու Քո Մի՛ս...,
Հէ՛, Դուն նորի՛ն եկեր ես՝
Իմ Արտի մէջ Լոր, Ճընճըղուկ կը զարնես...։

†) Լ·23՝ երեք։ 1) Տե՛ս Հատ. 501։ 2) Ե·797՝ գոհա՛ց (կո՛–ահա՛–հո՛ն)։

Իմ Ճիւժերու Զըմրան Պաշարն ու Կուտան ամեն կըտրեցի՛ր…:
Գըրո՛ղ–Մահը Քեզ վերցընէ՛, չաղըմակեր Տո՛ւռ–Դաւիթ… .
Դու ոչ–բարո՛վ ծըններ էիր Քու Մօրէ՛ն… .—
Աղէ՞կ ըրիր՝ Մըսրայ–Տիրոջ Մարդերն ամեն Ջարդեցիր… .
Հիմա Ան ալ Ելեր–եկեր՝ Բանա՛կ կապեր Սասմայ շուրջ,
Մեր Մարդերը՝ Ամե՛ն պիտի կոտորէ…:
Դուն ալ՝ ապա՝ պիտի ելնես՝ Քու Հօր տեղը Մեզ ո՞ւժ տաս…:
Լոր, ձընճըղուկ Քեզ ի՞նչ կ'ընէ՝ որ Իմ Արտը կ'աւերես…:
Թէ որ Քեզի Նէճի՛ր պէտք է, Ո՛րս կ'ուզես…՝
Գընա Սեւ–Սա՛ր՝ ու Ո՛րս ըրէ Քեզ համար…,—
Վէրի–եղնիկ, Արջ ու Գաղան, ի՛նչ որ ուզես՝ այնտեղ կա՛յ,
Գընա՛՝ Քեզի ի՛նչ որ պէտք է՝ ըսպանէ՛…:
Ապա՝ որ Դուն չատ ուժո՛վ ես՝ ու կըտրիճ՝
Քո Եղբայրը՝ Մըսրամէլիք՝ Բանա՛կ կապեր եկե՛ր է,
Կըռի՛ւ կ'ուղէ Զէնով–Օհան Հօրեղբօր'Էդ ու Քենէ,
Ելի՛ր դընա՛՝ կըռի՛ւ ըրէ Մէլիքին ու Զօրքին հետ…»:
Ան ալ ըսաւ, = «Մամի՛կ, ո՞ւր են այդ Զօրքեր»:
Ըսաւ, — «Որդի՛, Մըսրամէլիք Բանա՛կ դըրեր Լօրայ–Դա՛շտ,
Ի՛նչքան Աստղ Երկինքը երես կըճըվըլա՛ն, կըփայլին՝
Այնքան չատ ալ՝ մեծ ու պզտիկ Վըրաններըը զարկեր է,
Քի՛չ է մնացեր՝ որ գայ Սասմայ Հող–ու–Քարը տըրորէ՛…,
Ջարդէ, վըշրէ՝ ու տանի՛…:
Թո՛ւղթ է ճամբեր Քու Հօրեղբօր Օհանին՝
«Եկէք՝ կըռի՛ւ ընենք Մենք…,
Չէ՞ք գար…՝ Ես ալ կուտամ Սասնայ Քաղքի վրայ՝
*Ի՛նչքան Մարդ կայ՝ Որձ–որձեղէն *) կ'ըսպանեմ,*
*Էգեղէնը *) կըտանիմ…,*
Կրա՛կ կըթողնեմ՝ Քաղաքն ամբողջ կը վառի՛մ…»:
Դէ՛հ, ըսէ՛ ալ, տեսնենք Թէ Դուն ի՛նչ կ'ընես…՝
Մըսրամէլ'քին ու Իր քաշած բերած ա՛յդքան Զօրքին հետ…»:
=«Մամի՛կ,–ըսաւ–, Ես ի՞նչ պիտի կըրնամ ընել Անոնց դէմ…,
Անոնք կըտրիճ Փէհլիվա՛ն են…, Հի՛ւր են եկեր Մեր Քաղաք…»:
*Պառաւ՝ Գըլուխ տարաւ–բերա՛ւ *) խընդալով,*

---

*) Որձ–որձեղէն, Արու սեռունդ: *) Էգեղէն, Էդ սեռունդ:
*) Տանիլ–բերել, Ջլ ու ձախ երերցնել (գլուխը՝ զայրոյթի ձեւով):

*Ըսաւ — «Թէհէ՛…, ողորմած Հա՛յր *), ի՞նչ կ՚ըսես…,*
Անոնք ելեր՝ Տո՛ւրք առնելու են եկեր…,—
Մէկ տարւան չէ՛՝ քանի՛ մ՚ տարւան մխաւեղ… .
*[Որովհետեւ Զէնով–Օհան 3) «Օ՛ր *) ուզեր էր Մէլիքէն,*
Մինչեւ Սասմայ Տըղաները մեծնային ու Տուրք տային»:
Անոր միտքն ալ ա՛յն էր որ՝
Տըղաները երբ մեծնային, հասնէին՝
Մըսրայ–Տիրոջ հետ կըռւէին եւ այդ Տուրքը չիտային 4)]:

544. Դաւիթին Ու Պառաւին Զրոյցը՝ Կռիւի Չէնթիրու Մասին

Ջ·՝Ա·19, (Ա·56), Ա·19, Հ·32,427,426, (Հ·426,427,428,32,380), Ջ·՝Հ·32, (ՋՍ·463), ՋՍ·463,464, (Ե·15,804), Ջ(Ե·804,742,773, 1101,971), Ջ·՝Ե·742,17,1005,714,970,506, Ե·1005,18,804,572,773, 629,627,742,714,963,908,1108,1109,971, 970,1101,506,824, Խ·24, Ջ·՝Խ·24, Ճ·104, (Ճ·104), Կ·19,63, (Կ·19,63). Ջ(Կ·63), (ՋԿ·507), ՋԿ·508, 509, ՋՎ·1·

Պառաւն այդպէս որ լո՛ւր տըւաւ Դաւիթին՝
Դաւիթն ալ հոն ըսաւ, — «Մամի՛կ, Մըսրամէլիք եկե՞ր է…,
Ես ալ կ՚երթամ կըռւի՛…,
Կըզարնեմ ու կըզարնուի՛մ…,—
Դէ՛հ, Աստուած ալ կա՛մ Ինձ կուտայ, կա՛մ Անոր…:
Որ չկըրցայ…, Մամի՛կ, ես ալ ի՞նչ կ՚ըսեմ…,—
«Հո՛դըս…՝ թէ Ձեզ ամե՛նքդ դերի կըտանի…,
Թէ Սասնոյ մէջ՝ մինակ ես եմ կըռւո՛ղ Մարդ…»:
Դաւիթ ելաւ՝ Իր Նետ–Աղեղ առաւ բընեց Ձեռքին մէ՛ջ,
Որ վազէ դէպ Լորայ–Դա՛շտ †),
Մամիկն ըսաւ, = «Որդի՛, Դաւիթ, ո՞ւր կ՚երթաս…»:
— «Կ՚երթամ կըռի՛ւ…»,–ըսաւ Դաւիթ՝ անդիէն:
= «Ինչո՞վ…»,–ըսաւ Մամիկն ալ:

---

*) Ողորմա՛ծ հայր, է՛յ դուն, որուն հօրը հոգւոյն՝ Աստուած ողորմի, կամ՝ ո՛վ ողորմած Տէ՛ր–Աստուած: 3) Լ·85՝ Սաղդուխ–խաթունն: *) Օր, Միջոց, պայմանաժամ: 4) Ժամանակ չհաճելու ազգային քաղաքականութիւն, Տես եւ Հուշ· 4՝ Ա· Շիւղ, Սանասար–Բաղդասար: †) Ե·804՝ Խաղճի կուչտը:

— «Նեռ–Աղեղո՛վս, Մամի՛կ, չէ՞ որ կըտեսնաս... .
Դանա՛կ մ՝ անգամ չ՚ունի՛մ ես,
Որ մէկ Մարդ մը դընեմ Գետին ու մոքի՛մ...
Այսպէս դատարկ՝ ի՞նչպէս երթամ կըռի՛ւ ընեմ ես՝ ապա...»:
= «Դըրո՛ղ–Մահը ինչ չըտանի՛, չաղդըմակեր 1) Տո՛ւռ–Դաւիթ 2),
Նեռ–Աղեղո՛վ պիտի երթաս Մէլիքի դէմ կըռիւ...»:
Ըսաւ, — «Մամիկ, ապ՝ ի՞նչ ընեմ..., էշ մը չըկա՞յ, մէկ Անթրոց [մը *), որ հեծնեմ 3),
Շերե՛պ մը տուր՝ բըռնեմ Զե՛ռս...,
Շեղփիկ *) մ՝ չըկա՞յ...՝ զարնեմ իմ Մէջք՝ ելնեմ երթամ կըռիւի»:
Մամիկն ալ թէ, = «Պառ՚ւի Խնոցի՛ն *) հեծիր դընա կըռիւի 4).
Տէ՛րը վըկայ՝ բա՛ն մը չունիմ՝ տամ ինձ երթաս կըռիւի...»:
Պառաւն ալ որ այդպէս ըսաւ ու ծաղրեց՝
Դաւիթ իր տեղ բարկացաւ, —
Անուն Աստծո՛ւն ըրաւ 5)՝ գընաց ձամբու կուշտ 6),
Ձեռքը զարկաւ Բարդի–Ծառի մ՝, քաշեց հանե՛ց Մըղեղէն *),
[Այն Ծառին պէս՝ ինչ նետէր էր Պիր–Բաղինի եռեւէն 7)]
Ծառն արմահա՛ն *) ըրաւ այնտեղ, վերցուց դըրաւ Իր Թեւին 8),
Ու կ՚երթա՛յ...:
Պառաւ՝ կանչեց, = «Դաւի՛թ, Դաւի՛թ..., Ի՛նձ նայէ... .
Քա՛նի որ Դուն այդպէս չիմա՛ր ու խե՛ղճ ես...՝

---

1) Շաղգըմակեր, Շողգամ չաստ ուտող, շողգամասէր: 2) Քանի մ՚անգամ եռեւէ եռեւ կրկնեցէ՛ք Տո՛ւռ–Դաւիթ, Տո՛ւռ–Դաւիթ՝ կ՚ունենաք Տըռ–Դատ եւ ապա՝ Տըր–Դատ՝ Տրդատ (Մնթ.՝ Բ. Հատորով): *) Անթրոց, Թոնիր խառնելու ձող՝ զոր տղաք ձիու պէս հեծնելով՝ կ՚խաղան (Տե՛ս իմ Խազաշխարհ՝ Ձիաթրոց): 3) Դաւիթ՝ կատակ կ՚ընէ Մամիկին հետ: *) Շեղփիկ, կոտրած դանակ, serpe: *) Խնոցի, Մածունէն կարագ հանելու հողէ աման, ճաում, baratte: 4) Մամիկն՝ իր կարգին՝ կըհեգնէ Դաւիթը: 5) Աստծու անունը կաւչեց: 6) Ե·804՝ ճամբի կուշտ(ը), Հ·427՝ վաճխին կուշտ(ը): *) Մըզեղ, Սուր ծայր, իլաճեւ արմատ: 7) Տե՛ս Հատ. 475–476: *) Արմահան (էէօfահան) ընել, Արմատով քաշել դուրս հանել: 8) ՁԿ·507՝ մէկ կօպալ մ՝ բռնեց իր ձեռ:

Մըսրամէլիք 9) *կըռւի՛ կուգայ Քու վըրայ…:*
Որդի՛, Դուն այդ Բարդի–Մառո՞վ պիտի երթաս կըռւիւ… .
Տընաւե՛ր Տո՛ւռ, Դերանով ալ կըռիւ կ՚երթո՞ն Զօրքի դէմ…:
Մէլիք՝ երկիր Մարդ չ՚է՝ թողեր՝ ժողվեր աւեր բերե՛ր է…,
Դուն մինակուկ, Փայտո՞վ կ՚երթաս Իր վըրայ…»:
Դաւիթն ալ թէ, —
— «Ապա, Մամի՛կ, ես ի՞նչ ընեմ…, ինչո՞վ երթամ կըռիւ… .
Մըսրամէլիք 10) *եկեր Սասուն՝ կըռի՛ւ կ՚ուզէ Մեր մօտէն…,*
Ես Զէնք չ՚ունի՛մ, Նիզակ չ՚ունի՛մ, Թուր չ՚ունի՛մ ու Զի չ՚ունի՛մ…,
Ո՛չ Զօրք կայ Ինձ, ո՛չ ալ պըղտիկ պատրաստութիւն մ՚ունիմ ես,
Ա՛լ ի՞նչ ընեմ…, այս Դերանո՛վ պիտի երթամ կըռիւ…»:

Մամիկ պօռա՛ց, վաղեց Դաւթի եռեւէն,
= «կեցի՛ր, Դաւի՛թ…, մի՛ երթար…, —
Ինչո՞ւ չունիս Զէնք ու Զի… .
Ան ինչ Քեզ կա՛յ՝ ո՛չ մէկ ուրիշ Մարդու կայ… .
Մեռնի՛մ ես Քու Արեւո՛ւն *)…,*
Մառով, Փայտով…՝ այդպէս մ՚ ե՛րթար Դուն Մէլիքի կըռիւին.
Դաւի՛թ, Դաւի՛թ…, ա՛խ Դաւիթ…,
Քու Հօր արդեօք ի՞նչ չըկայ…:
Գըրո՛ղը Քեզ չըտանի՛…,
Կ՚երթաս կըռիւ՝ եկո՛ւր Քեզի մէկ բա՛ն մ՚ ըսեմ՝ նո՛ր *) դընա.—*
Քու Հօր՝ ամէ՛ն Սարքը 11) *կայ… .*
Քու Հօր Զէնքերն ու ու Զըրահն առ՝ նո՛ր դընա… .
Հեծի՛ր Քու Հօր Կըռւո՛ւ–Ձին ալ,–հրեղէն Քուռկի՛կ–Ջալալին,
Այնպէ՛ս դընա…, Տո՛ւռ–Տըղայ… . —
Դուն այդպէս մերկ ո՛ւր կ՚երթաս որ՝ առանձին… .
Չէ՞ որ Դուն դեռ մանո՛ւկ ես…,
Դուն՝ Սասմանց–Տան պատիւ պիտի դընես ջո՛ւր… .
Ախսոս չ՚է՞ որ՝ այդ Հօր Տըղա՛ն ըսեն Քեզ…»:

---

9) *Տես ստորէջ Մնթ.* †՝ *Հատ.* 324: 10) ՀՍ 463՝ Մըսրայ Երկիր: *) Արեւ, կեանք, էութիւն: *) Նոր (նորէն), Ապա՛, յե–տո՛յ: 11) Սարք, Զէնուազարդի ամբողջութիւն, թախում, թաքըմ. (*Տեսնել այս մասին՝ Բ. Հատորով՝ Քրոֆ. Գրիգոր Խալաթեանցի մակագրութիւնը՝ իմ Սասմանց–Տուն ձեռագրին վրայ*):

Դաւիթ՝ Ձեռքէն՝ Բարդի–Մառը նետեց անդին, մօտեցաւ,
Ըսաւ, — «Մամիկ 12), ի՞նչպէս ընեմ ես՝ հիմա··· .
Երթամ կըռիւ 13)՝ ինչո՞վ զարնեմ ես առանց Գորզ, առանց Թուր:
Մամի՛կ, ղէ՛, չո՛ւտ ինձի ըսէ՛՝ ի՞նչ կայ իմ Հօր՝ ի՞նչ չըկայ···,—
Թէ չէ՝ կ'ըսե՛մ···, «Մարուքթայ–Բա՛րձր–Ասպարածին Ա՛ստ չըկայ···՝
Դաւիթ Գոռ Վիզ կուտայ դո՛ւրս···:
Իմ Հօր ի՞նչ կայ՝ ինձ ըսէ՛···,—
Որո՞ւ մօտն են՝ Իմ Հօր Ձէնքերն ու Զրահ 14)···»:
Դաւիթ հանեց՝ Աչի մը Ոսկի՛ դըրաւ Պառաւի Ձեռքին մէջ,
— «Աս՝ Գոռ Արտի վըրնասներո՛ւն վոխարէն·
*Ոչ Հա՛յր ունիմ, ոչ Մա՛յր ունիմ, տէր–տիրական *) մէ՛կ չ'ունիմ···,*
Մամի՛կ, Մամի՛կ, ի՞նչ ընեմ···,—
Ի՛նչ որ Իմ Հօր կա՛յ ուրիչ տեղ՝ ինձ ըսէ՛···,
Ինձմէ բան մը մի՛ ծածկեր···»: —

545. Դաւիթի Հայրենական Ձէն-Ու-Զարդերը

Զ·՝Ե·971,908, Ե·971,1109,1005,629,804,715,825,572,18,19,714,742, 774,909,999,573,1111,1114,773, (Ե·971,825,1005,581,673), ՉՍ·464, 495, Զ·՝ՉՍ·464, ՉԿ·510, Զ·՝ՉԿ·510, (Ա·19), Ա·20,55,19, (Ա·20), Հ·428,32,381, Զ·՝Հ·428, Խ·25,25ա·, Զ·՝Խ·25, (Լ·24), Լ·24, Ճ·104,104ա·, Զ·՝Ճ·104,104ա·, 105, Կ·64, 19,63, ՉՎ·1, Զ·

Մամիկն †) ըսաւ, — «Դաւի՛թ, Որդի՛, ի՞նչ ըսեմ··· .
Գոռ Հօրեղբայր՝ անէ՛ծք դըրեր է վըրան՝
*Ո՛վ որ Գոռ Հօր Բաներ *) Գեղի նըշա՛նց տայ···: ‡)*
Ես Թէ ըսեմ՝ այդ անէ՛ծքին տա՛կ կըմ ընամ, ա՛յ Որդի···:
Գոռ Հօրեղբայր Օհա՛ն դիտէ՝ ո՞ւր են Գոռ Հօր Ձէն ու Զրահ···»:
Դաւիթ հարցուց՝ ըսաւ, = «Մամի՛կ, ի՞նչ է Իմ Հօր Ձէն ու Զրահ»:
Պառաւն ալ Թէ, — «Դաւի՛թ, Որդի՛, մեռնի՛մ ես Գոռ Աբեւուդ,
Գիտե՞ս ինչ են՝ Գոռ ողորմած Հօրը Ձէնքերն ու Զարդեր· —

---

12) Ե·970՝ Պապի՛կ (*պատումին բերումովը*): 13) Ե·1101՝ Սար: 14) Ե·1101՝ Նետաղեղ: *) Տէր–տիրական, *Պաշտպան*: †) Ե·971՝ Պապիկ: *) Բաներ, *Ձէնուզարդեր*: ‡ *Տե՛ս Հուշ·* 350–ի *վերջը*:

Քու Հօր չըկա՞յ ‡)՝ Գո՛ւրգ–Մըհէրիճ 1)·
Քու Հօր չըկա՞յ՝ Թո՛ւր–Կէծակիճ 2)·
Քու Հօր չըկա՞յ՝ Խա՛չ–Փետրազիճ՝ վեր՝ Ա՛յ Թուխիճ 3),
Որ հարուածը Քեզ չ՚առնէ·
Քու Հօր չըկա՞յ՝ Զրա՛հ–Պողվըտիճ 4)·
Քու Հօր չըկա՞յ՝ Ոսկի–Գիւդի՛կ Երկնայիճ 5)·
Քու Հօր չըկա՞յ՝ Կապէճ–Կուրտի՛կ–Ծիրանիճ 6)·

---

‡) Ճ·104՝ Քու հօրը կայ, Ա·19, Ե·629՝ Քու հօր ունի՝ *ուղղել՝* Քու հայր ունի, Իմ հայր ունի, *կամ՝* Քու հօրը կայ, Իմ հօրը կայ:

1) ՀՍ·464,495՝ Գորգոնը–Մհէրիճ, ՀԿ·510՝ Գորգ, 522՝ Գորգն–ը–Մհէրիճ, Խ·25ա·՝ Գուրգ–Հազարիճ, Ա·20՝ Գիւրգ–Ֆէրըզիճ, Ճ·107՝ Գիւրգն–ի–Փէրիզիճ, Հ·381, Ե·1005՝ Կիւրգիկ–Ֆէրըզիճ, Ե·617՝ Կուռդ, Ե·705–6՝ Զոմի, Ե·715՝ Ծանդր·Գորգ, Ե·825՝ Գորգ–Ռըմման (*Թերեւս՝* Գորգն *ու* Ռըմն = Նիզակը), Ե·1109՝ Գուրգն ու վահան:

2) Հ·428՝ Թուր–Կայծակիճ, Հ·381, Ե·572՝ Թրիկ–Կէծակիճ, Ե·742՝ Թուրն–ի–Կտրաճիճ, Ե·715՝ Թուր–Կէծակաճ:

3) ՀԿ·510՝ Խաչ–Պետրազիճ *կամ* Փետրազիճ, ՀՍ·՝ 265,278,714՝ Խ·–Պատրազիճ *կամ՝* Պատարազիճ (*բացատրուած՝ Սպարկերոցի կանչօչէն՝ «Պատերազմի խաչ՝ որ կուգի մէջ՝ մարդ չի կրնար վրան»*, Խ·25՝ Խ·–Պատրազիճ, Ճ·104ա·՝ Խաչն–ի–Պատրազիճ, Ա·20, Ե·18, 19՝ Խ·–Պատ(ա)րազիճ, Ե·999՝ Խ·–Պատերազմիճ, Կ·19՝ Խաչն–Պատարագիճ, Կ·64՝ Խ·–Պատրաստիճ:

4) ՀՍ·464՝ Զրեխ–Պօղվըտիճ, Խ·25ա·, Ա·20, Ե·909՝ Շապիկ–Զրեխ(լ)իճ, Հ·381՝ Զռնեխեղէճ–Շապիկ (*վրիպակով՝* Զռնեղեխէճ) = *դեղին ծիրանի*, Ե·573՝ Զրեխլը–Շապիկ, Ե·1005,1006՝ Զըրեխ–Սէլմանիճ (*սխալով՝ նաեւ* Սէլամիճ, = Սալմանի՞ն), Ե·1109՝ վրայի–Զրեխ, Ե·1111,1114՝ Շապիկն–Զըր(ե)խեճիճ:

5) ՀՍ·464՝ Կաու՚–Խոդայիճ՝ որ կ՚դնէ գլուխը, ՀԿ·510՝ Գիւդիկ (*դդակ*), Ճ·104, Կ·64, Հ·32, Ե·629՝ Գիւտիճ *կմ*· Կիւտիկն–ի–Գլխիճ (Գուդի = *դդակ*, *թագ*), Խ·25ա·՝ Թագն–ի–Զրեխիճ, Լ·24՝ Թագը, Ա·20՝ Խօդէճ–ի–Գլխիճ (= *կիւդին*), Ե·18,825,909,971,1005,1109՝ Գլխու–Գիւտիճ, Կուտիճ, Փիւթիճ, Ե·742,743՝ Գիւտիճ–Մհէրիճ, Ե·804՝ Գլխու–Գիւտաճիճ, Ե·1005՝ Կայուխ–Կապըճիճ՝ *ուղղելի՝* Կայուխ–Խուդայիճ *կամ* Կապէճ–Կապըճիճ (*Հմմտ*· ՀՍ·464 *եւ* Ճ·104, 104ա·), Հ·381՝ Ղավուխ–Ղադիճիճ՝ *նոյնպէս*: ՀԿ·510՝ Փիլախ:

6) Ճ·104,104ա·՝ Կապէճ–Կապըճիճ, Խ·25, Ե·18՝ Կ·ճ–Խաբխակիճ

Քու Հօր չըկա՞յ՝ Ոսկի՛–Գօտին՝ Իր Մէջէին 7)·
Քու Հօր չըկա՞յ՝ Գըրվըռուն Շալվա՛րն ՚ի Ոտին 8)·
Քու Հօր չըկա՞յ՝ Մոյկ–Ծալովին 9)՝
Պողվըտէ–Պայտերն ՚ի տակին·
Քու Հօր չըկա՞յ՝ Մըհէրի Փո՛ղ–Պըղլորին 10)·

(*զգեստ*), Խ·25ս·՝ Զուրէն–ի–Թաթարին, Ա·20, Հ·428, Ե·804՝ Կն·–Աբըրին (*քափուճ*), Հ·32՝ Կն·–Աբմաճին, Կ·64՝ Կուրտիկ–Աբմաճին (*կարճ, անթեւ, մաղեզատ հագուստ*), Ե·573՝ Գիւտիկ–Բեազախին, Ե·971՝ Կն·–Ամետին, Հ·381՝ Բիւրբ–Ղաբըբին (☞ Աբըրին *ձեւըը՝ ուղղելի՝* խարուբին = *քափուճ, կերպաս, ասուի*), Ա·55՝ Բէ–նավարին, բանավարին (*ծիրանի*)։ Ե·514ս·՝ Գուրդիկ գրահած։ կուրդիկ, *հին* վերտ–ը, casaquin։

7) ՀՍ·464՝ Բեամարն–ը–Զեռին (*դէբի՝ քրդ·՝ ոսկի*), Ց·104՝ Բեամարնը–Ոսկին, Խ·25՝ Ոսկի–Բեամար, Խ·25ս·՝ Մէջկապն–ի–բեա–լաբանդին, Ա·20, Կ·64, Հ·32 Ե·18,715,804,971՝ Բեամարն–ի–Մէջ–բին, Ե·629՝ Բեամարն–Զրեխին՝ *ուղղելի՝* Զերին (= *ոսկի, հմմտ·* ՀՍ·464), Ե·742։773,804՝ Բն·–ի–Մհէրին, Ե·825,1005՝ Մէջաց–Բեա–մար, Ե·909՝ Բեամար–Պողպըտին, Ե·1109՝ Մէջբի–կապ, Կ·19՝ Բմր·–Ցէհրսին (*կարմիր*), Ց·107՝ Գօտիկն–ի–Մէջբին, ՀԿ·510՝ զայիշ (*կաշիէ գօտի*)։

8) Գրըվըրուն Շալվար, *Աղաւնիի կուրծքի պէս ծիածանափայլ, լայն, գունաւոր տափատ*։

9) Ծալովի, *Ծալ–ծալ իրարու վրայ իջնող*, Ց·104՝ Զըզմէն–ե–զան–Կաշին, Ց·104ս·, Կ·64՝ Զն·–ի–Ոտին, Խ·25ս·՝ Զն·–ի–Ֆանարին (*ծալ–ծալ*), ՀԿ·510՝ Զըզմա, Հ428, Ե·774,804՝ Զն·–Մհէրին, Ե·573՝ Ճըզմա–Բիւսուլին, Ե·629՝ Զն·–Ոտեերուն, Ե·825՝ Ոտաց–Զըզմէբ, Ե·715՝ Զբն·–ի–Ոտաց, Ե·971,909՝ Զն·–Ոտնին, Ե·1109՝ Ոտբի–Զեր·, Հ·381՝ Ճզման–Արզըրզմին (Կարին–Էրզրում)։

10) Ե·804,805՝ Սազն–ի–Մհէրին, *հմմտլի·՝* Ե·581,637՝ Խոր–բում, բուրգում, Հ·428՝ Փող–Պըղլորին, *հմմտլ·* Chanson-de-Ro-land-*ի* Olifant-*ին հետ, եւ Հուժ·* 449՝ Ձէնահա-*ին հետ*։ Պղլոր՝ *Պոկ–ոլոր*, ոլորուն փող, Գալարափող, *պիւքմէ* պօռու։ Պուկ, պոկ, (*երգեհոնի*) *եղէգէ փողը*, բուկ՝ *կոկորդ, լանջն·* bucca. *ուրեմն* Փող–Պըղլորին՝ *Պուկոլոր–Փող, Գալարափող՝ որպէս եւ պատերազմի մէջ դործածուած*։

Ֆու՛ Հօր չըկա՞յ՝ Տէ՛գ–Ջոջային 11)·
Ֆու՛ Հօր չըկա՞յ՝ Թամբն–Արծըքին 12)՝
Ոտնոցները *) երկու կողէն կախուկ Ոսկին·
Ֆու՛ Հօր չըկա՞յ՝ Հրեղէն Քուռկի՛կ–Ջալալին 13)՝
Պողվըտէ–Սանձ՝ Թերաքին,
Ադամանդէ Պայտերը Ջորս–Սըմերուն *)·
Ֆու՛ Հօր չըկա՞յ՝ Ոսկի–կաճառ՝ Բազուկին 14),
Հըմայեկ Սուրբ–Խաչ՝ Մարուքայ–Բա՛րձր–Ապարածին 15)։ 16)

Ամոնք Ֆու՛ Հօր կըսուի–Չէնքե՛րն են ահա...։
Դաւի՛թ, Որդի՛,–ըսաւ Մամիկ–, ի՞նչէն է պակաս Ֆու՛ Հօրը...,
Ու Դուն կ՚ըսես՝ «Ինձ բա՛ն մ՚ չըկայ՝ որ ես կ՚երթամ կըռիւի՛»·
Ան ինչ Քեզ կայ՝ Ֆու՛ Հօրմէն՝
Վեր՝ Աչխըրքին Մա՛րդ չունի...·
Գընա ուղէ՛ Հօրեղբօրմէդ, ա՛յ Տըղայ·
Թէ կուտայ...՝
Դուն ալ գընա կըռիւի՛...»։

---

11) ՉՍ·495՝ Ռըմ–Ճօճային (ջոջային, Սասմանց Զո՛չ *Տան յատուկ· Թերեւս նաեւ՝* ճօճուն, ճկուն), Հ·381՝ Ռըմիկ–Ջոջանիին, Ե·714՝ Նիզակ, Ե·715՝ Բուղում–Ռըմ (*բուղում՝ յօդաւո՛ր*), Ե·825՝ Գորգ–Ռըմանի (*Տե՛ս Մնթն.՝* Գուրգ)։ Ռըմ, *արբ.՝* բումի, *սէգ, դէղարդ*։

12) Ե·104՝ Չինը–Սագափին (չին՝ *թամբ*), Ե·104ա·, Կ·19՝ Թամբն–ի–Սագափին (սագափ, սէտէֆ՝ *սատափ*)։ *) Ոտնոց, *Ասպանդակ*, Ե·104՝ Ռըէրներ (ասպանդակ) մօտէն կախուկ ոսկին։

13) ՉՍ·467, Ե·825՝ Ջուռկիկ–Ջալալին, Հ·428, Ե·572,774,909, 1109՝ Քուռկին–Ջալալին, Ե·629՝ Քորկու–Չլլն· (*ուղղել՝* Քուռկու, *ինչպէս են՝* Կ·19, Ե·742,1005)։ Ե·804,774՝ Քուռկէ–Ջալադին, Քուռկին–ի–Ջալադին (*Համառ.՝* Կ·64ա·՝ ճալալ, ճալաթ՝ *ամենքը ոտքի տակ զարնող, սպանող, կոտորող*), Ե·1005՝ Քուռկու–Մայրին (*մայր* = մավի՝ *կապոյտ*, մահի՝ *լուսնանման, ճերմակ*)։ Ա·20՝ Կապուտ–Քուռակ (*Տե՛ս Մնթ. Բ. Հատր.*)։ *) Սրմ, *Սմբակ*։ *Քուռկիկ–Ջալալիի մասին՝ տեսնել նաեւ Հատուած* 34 *եւ* 588։

14) Ե·971՝ Բազրանդներն–Թուին։

15) Լ·24՝ Մարութենի–Մայրամ–Աստուածածին, Ե·18՝ Մարութայ–Բարձրիկ–Աստվարածին։

16) *Երգով ալ կ՚ըսուի ամբողջ Հատուածը*։

546. Դաւիթ Իր Հօր Ձա՛յնը Կ'լսէ

Զ(Խ·25Ա·), Զ·՝Խ·25Ա·, Զ·՝Ա·55, Կ·19·

Դաւիթին ալ՝ այնտեղ այնպէ՛ս եկաւ թէ՝
Իր Հօր Ձայնը կըլըսէ··· ·
Թէ Իրեն Հայր՝ Գերեզմանէն Ձայնը ճըգեր՝ ու կ'ըսէ 1)·—

— «Որդի՛, Դաւի՛թ, ա՛ռ Իմ Փուտկիկ-Ձալալին 2),
Թո՛ւր-կէծակին, Զրա՛հ-Պողվըտին···,
Ոսկի՛-Գօտին, Ոսկի՛-Գիւդիկ(ն)···,
Թա՛մբն-Աբծըքին, Մո՛յկ-Ծալովին···,
Ծաղրիկ Գո՛ւրզը-Մըհէրին,
Խա՛չ-Փետրազին՝ վեր՝ Ա՛ջ-Թևին
Որ հարուածը Քեզ չառնէ՛·
Կուրտի՛կ-Ծիրանին, Հմայեկ Սուրբ-Խա՛չ՝ Մարութայինն···,—
Ա՛ռ՝ ու գընա՝ կըռի՛ւ ըրէ Մըսրայ դէմ···»:

547. Պատաւը Կ'դրդէ Որ Դաւիթ Երթայ՝ Հօրեղբայրէն Ուզէ Իր Հօր Զէն-ու-Զարդը

Զվ·1,2, ՁՍ·465, 466, Զ·՝Հ·33,427,380,428, Հ·428,380, Կ·64, Զկ·511,512, Ե·18,1109,804,773,1005,19,629,714,573, 774,506,1101, 909,562,742, Զ·՝Ե·1109,506,562,1102, (Ե·562,1101,824,742, 629), Զ·՝Խ·25, Խ·25, (Ա·56,20), Ա·20, Կ·64,19, Զ·՝Կ·19, (Կ·19)·

Դաւիթ դարձաւ Պատաւին Թէ, — «Մամի՛կ, ո՞ւր են Այդ-Բաները·
Զէ՞մ չե՛մ դիտեր՝ Այդ-Բաներուն տեղն ո՞ւր է···»:
Պատաւն ըսաւ, = «Որդի՛, Դաւի՛թ, Քո Տո՛ւն չ'աւրի···, Քեզ ըսե՛մ·
Քու Հօրեղբա՛յր մխայն դիտէ՝ ո՞ւր են Քու Հօր Զէն-ու-Զարդ»:
Դաւիթն ըսաւ, — «Մամի՛կ, Աւոնք Իմ Հօրեղբայր Ինձ չի՛տար·
Անոր մօտէն ի՞նչպէս պիտի առնեմ Ես···»:
= «Գընա՛,—ըսաւ—, Քու Հօրեղբօր 1) օձիք բըռնէ՛ եւ ուզէ՛·
Ան կըտանի նըշա՛նց կուտայ Քեզ ամենք:
Կամով չիտայ՝ բըռնի՛ առ··· ·

---

1) Երգով: 2) Բաներ՝ որ անդիմադրելի կերպով կ'յափշտակեն իր տարիքի դիւցազն տղաներու երեւակայութիւնը՝ միւս մասերէն աւելի: 1) ՁՍ·466՝ Մանուկի:

Ֆու Հօր Զէնքերն ու Զին Թող տայ՝ ա՛ռ՝ նո՛ր զընա կըռւի»:
— «Բըռնի ի՞նչպէս պիտի ըլլայ, ա՛յ Մամի՛կ՝
Որ Հօրեղբայրս Իմ Հօր Զէնքերն Ինձի՛ տայ...»:
Պառաւն ալ Թէ, = «Մեռնի՛մ Ֆեղի, Թըլո՛ր-Դաւիթ, Մո՛ւռ-Դաւիթ,
Գընա Նեղէ՛ Ֆու Հօրեղբայր 2)՝ եւ ուղէ՛... .
Զեռքը Թոթուէ՛՝ ըսէ «Ինձի Ներո՛ղ Եղիր, Ես պիտ՝ Երթամ Կըռւիւ»,
Թեւը պընդէ՛ ու Ճըղմէ՛...՝
Ան Ֆեղ Համար Դո՛ւրս Կը Հանէ՝ Ֆու Հօր Կըռւի Հագուստները.
Ֆու Հօր Ինչքն են այդ Ամեն...»:
— «Ի՞նչպէս Նեղեմ, ա՛յ Պառաւ...»:
*= «Գընա՛,–ըսաւ–, Ուղէ–Աղա՛նձ *) Մ՛ Չինել տուր Ֆո Հօրեղբօր,*
Ըսէ «Ֆիւչ Մը տո՛ւր Ես Թալեմ Իմ Ամոթի Մէջ, Չա՛տ Կ՛եռայ».
Թէ Շերեփով Կամ Դըզալո՛վ Կուտայ Ֆեղի՝ Դու Չ՛առնե՛ս,
Մինչեւ Ափո՛վ տայ Ֆեղի...:
*Ինչ *) Ափ Կուտայ՝ Աղանձ Կ՛առնէ Կըբերէ՝*
Դուն Իր Ափը Խըփէ՛ Ամուր՝ ու Սըղմէ՝
Մինչեւ Զէնքեր Ֆեղ ցոյց Չիտայ՝ Մի՛ Թողներ...:
Թէ որ Նորէն ցոյց Չիտայ՝
Գընա Ֆաղաք՝ Եօ՛Թը 3) տարւան Եօ՛Թ Տիկ Գինի ա՛ռ ու Բե՛ր,
Բե՛ր Խըմցուր Ֆու Հօրեղբօր 4)՝
Թող աղէ՛կ Մը Գինովնայ...,
*Անոր սիմսակ Մուրուսին Մէջ Կա՛ն Եկուր *), —*
Ֆառ՛ասուն Բալնի՛ս Կըգըտնես...,
Ֆառասուն Դո՛ւռ Կըբանաս... 5):
Ի՛նչ որ Կ՛ուզես՝ Կըտեսնես...,—
Հագուէ՛–կապուէ՛, Հեծի՛ր Ֆուռվիկ–Ջալալին,
Այնպէ՛ս գընա Մէկիւքի Դէպ Կըռւիւ...»:—

---

2) Ե·1101՝ Հօրաքոյր: *) Աղանձ, *Բոլած ցորեն*, Զվ·2, Ա·56, Ե·506,562,573,629,1101՝ Աւազ, *կամ* աւազէ Աղանձ, կաղանձ, *որ չի ոթքուիքիւն մ՛ է՝* Աղանձ–Աւազ *բառերուն նմանաձայնութեանը, նաեւ՝* Ա·56–ի *Մօր եւ Տղու մէջ խաղցուած դաւին:* *) Ինչ, *Ինչ առեն որ, երբոր:* 3) Հ·380՝ Ֆառասուն: 4) Ա·20՝ Գընա՛ Ֆաղի՝ իշխանները ժողվէ, մէկ օղի՛ տուր խմեն, Հօրեղբօրդ մօտէն Ֆու Հօր զէնքերն ուզէ՛: *) Կաճ գալ, *Փնտռել:* 5) *Տես Հատուած* 557:

548. Դաւիթ՝ Պառաւին Հետ՝ Դէպ Հօրեղբօր Տունը

Ա·56, (Ա·56), Զ·՝Լ·23, Լ·23, Զ·՝Խ·25ա·, Զ·

Դաւիթ դարձաւ Պառաւին,
Ա՛նպէ՛ս խընդաց ու ճըչա՛ց…՝
Որ Պառաւի ուշը գընաց ու ինկա՛ւ…:
Վերցուց հանեց, ըսաւ, — «Մամի՛կ, իմա՛լ Ինձի՛ որ ըսէր՝
Ա՛րի՛ երթանք՝ Իմ Հօրեղբո՛րն 1) ալ ըսէ»:
Առաւ Մամիկ՝ դըրաւ Զիւռն Գաւակին,
Ի՛ըչեց դէպի Իր Հօրեղբօր կեցած Տուն:
*Դաւիթ Իր Զին այնտեղ լեցուց *)՝ Իրեն սըրտին զայրոյթէն·*
Ու մի՛կ կ՛երթայ՝ մի՛կ կըերդէ Հօր Դամբանէն լըսածները, —
«Որդի՛, Դաւի՛թ, ա՛ռ Իմ Քուռկիկ-Ջալալին,
Դուրդ-Մըհէրին, Զրահ-Պողվըրին ու Թըրիկը-Կէծակին,
Ոսկի-Գօտին, Թամբն-Արծըթին, Կապէն Կուրդի՛կ-Միրանին…»:
Չէնով-Օհան 2) ճամբու վըրայ կեցա՛ծ էր,
Նայեց տեսաւ՝ Զիւռը մը փըրթեր կուգայ հեռուէն,
Ո՛չ երկինքն է՝ ո՛չ Գետինք…,—
Ա՛նպէ՛ս կուգայ կըքըշէ՛…:
Ինքը փախաւ՝ Պըրակներու մէ՛ջ մըտաւ,
Փայտը քաշեց՝ վերցուց եռեւ՝ որ ըսպանէ այդ Եկողն:
Դաւիթ Ինքը գընաց չիտա՛կ ճամբայով·
Չէնով-Օհան Պըրակներու մէջէ՛ն զարկաւ 3) գընաց Տուն:

549. Գաղաթի Մարդերուն Վախն Ու Ընթացքը

Կ·63, Զ·, Ե·34,35, Զ(Ե·34,35), ԶԿ·503, (ԶԿ·503), Ա·55, Զ·՝Ե·17, Ե·17·

Գաղա՛թն 1) ըսե՛ս՝ ինչպէ՛ս կ՛դողան, ինչպէ՛ս կ՛վախնան Մէլիքէն:—
Ճըռան-Վէդոն 2) լուսուն ելաւ՝ լըսացուելո՛ւ գընաց դուրս,
Նայեց տեսաւ՝ Աստղին հաշիւ-համար կա՛յ,
Գաղթին չուրջը բըռնած Զօրքին ո՛չ հաշի՛ւ կայ՝ ո՛չ համա՛ր,

1· Ա·56՝ Քեռի-Թորոս: *) Լեցնել, *Սրարշաւ քշել* (ձին):
2) Լ·23՝ Քեռի-Թորոս: 3) *Այսինքն՝ Ծածուկ ճամբաներէ:*
1) *Այսինքն՝* Գաղաթացի: 2) ԶԿ·503՝ Չէնով-Օհան:

Դարձաւ փախաւ մըտաւ նե՛րս,
*Ու Դարպասները տըւաւ հողել ու քարել *),*
Որ Քաղքի մէջ Զօրք չըմտնէ՝ ու դէշ-ուբի՛ւն ընեն ներս։
Սասնոյ-Քաղքի չորս-բոլորը Պարի՛սպ կ՚ըլլայ, չորս ալ Դո՛ւռ.
Ցըտան-Վէդոն հողե՛լ տըւաւ այդ Դուռները։
Ինքը Քեռի-Թորոսի՛կն ալ՝ դընաց դո՛ւրս՝
Տեսաւ որ ի՛նչ..., — երկնից Աստղին հաչիւ կա՛յ 3),
Այդ Զօրքերուն՝ թիւ չըկա՛յ...,—
Եկաւ կեցաւ Տէրտրոչ Դո՛ւռ,
Ու Դաւիթի՛ն կ՚ըսպասէ...։
Ամենք կ՚ըսեն՝ «Մենք չե՛նք կըրնար կըռիւ ընել Աստոնց հետ.
Թէ որ ընէ՝ Դաւի՛թն է 4)...,—
Կեցէք՝ Դաւիթի՛ն հարցընենք...»։

550. «Ազգացը Ցեղ էր՝ Ի՞նչպար Կռիւ Կ՚ըլլէր Անց»

Ա·55, Զ·՝Ա·55,56, Զ(Ա·55), (ՁԿ·503,504), Ե·17,18·

Դաւիթ-Որբիկ 1) նայեց տեսաւ որ Քաղաքի Մարդիկները՝
Խումբ-խումբ եղած՝ խորհո՛ւրդ կ՚ընեն, կըխօսին,
Մ՚ը Խումբի մօտ որ Ինք գընաց՝ այն Խումբ լըռեց, ցըրուեցաւ։ —
Զըկեցան որ Տըղան այնտեղ բա՛ն հասկընար ու լըսէր·
Կըխըղճայի՛ն, չ՚էի՛ն ուղեր որ եղածներն իմանար· —
*«ԱՉՆԱՆՑ-ՑԵ՛Ղ էր 2), ճակատո՛վ *) էր, կ՚երթար կըռի՛ւ կ՚ընէր Ան»·*
Կամով չէ՛ր տար՝ Տուրք ու Պատա՛նդ 3) տանէին։
Կ՚ըսէին՝ «Տա՛նք Տուրք ու Պատանդ՝ Թո՛ղ տանին,
Մեղնէ երթան՝ հեռանա՛ն...» 4)։
Այն մէկ Խումբէն Տըղայ մ՚ ըսա՛ւ կամացուկ, —

---

*) Հողել, Քարել, Պատնիչել· Ա·55՝ Քեռի-Թորոսն է դուռները հողել տուողը։ 3) Կ՚հասկցուի որ Մըսրամէլիքի յառաջապահները գիշերով եկեր մօտեցեր էին քաղաքին։ 4) Այսինքն՝ մինակ Դաւիթն է որ կրնայ կռուիլ· Տես Հատուած 539։

1) Ա·55՝ Դառնիկ-Որբիկ։ 2) Տես Ցառաջագաւն 3 (էջ 19ա· Ազնանց Տան մասին)։ *) Ճակատով, Ճանդուքն, կտրիճ։ 3) Ա·55՝ Պատուհին բերումովը՝ «որ իր մայրը տանէին»։ 4) Մըսրամէլիքի Հարկահաւաքներն ու Պատանդ ուղողները։

— «Մեր Թըլլնամին՝ եկեր Քաղքի չորս–բոլորը առե՛ր է· · · ·
Դաւթի համար 5)՝ կ՚ուզէ Քաղաքն առ–ու–գերի՛ տանի հետ»:
Դաւիթ դընաց Հօրեղբօր 6) քովն ու ըսաւ· —
— «Ի՛մ Հօրեղբա՛յր, այսպէս բա՛ն մ՚ կայ՝ Դուն ինձ ապա չե՛ս ըսեր»:
= «Որդի՛,–ըսաւ–, մի՛ հաւատար ամեն Բերնէ խօսուածին· · ·»:
— «Ի՞նչպէս· · ·,–ըսաւ, Դաւիթն այնտեղ՝ Հօրեղբօր–,
Աստղին, Հողին, Քարին հաշիւ–համար կա՛յ՝
Եկած Զօրքին չըկա՛յ հաշիւ ու համար· · ·»:
Զէնով–Օհան երբ տեսա՛ւ որ՝ Դաւիթ դիտէ՛ ամեն բան,
— «Որդի՛,–ըսաւ–, ե՛կ Մէլիքի ուղած Տուրքն ու Հարկը առ՛նք՝
Առնէ երթայ՝ Մեր օճիքէն Ձեռ քաշէ՛· · · ·
Դուն դեռ փոքր ես· կըռիւ ընել չե՛ս կրընար· · ·»:
— «Չէ՛, Հօրեղբա՛յր,–ըսաւ Դաւիթ–, ճար չըկա՛յ· · ·,—
Քա՛նի որ ես ո՛ղջ եմ Սասմանց Տունին մէջ՝
Ես Մէլիքին Տուրք ու Պատանդ տըւող չե՛մ· · · ·
Երբ Ձիս զարնեն ըսպանեն· · ·՝
Նոր թող տանին՝ ի՛նչ որ կ՚ուզեն ու կրընան· · ·,
Թող Իմ Աչքը չըտեսնէ՛· · ·»:
Զէնով–Օհան ի՛նչ ճար ու դեղ որ ըրաւ՝
Տեսաւ դըլուխ չե՛ը լներ հետ՝
Ըսաւ, = «Որդի՛, որ այդպէ՛ս է՝ Դո՛ւն գիտես· · ·,—
Կըռի՛ւ կ՚ընես՝ եղ ըրէ՛· · ·,
Շուտով կուգան կըթալեն Մեր Քաղքի վըրայ՝ կ՚ապերե՛ն· · ·»:
— «Լա՛ւ, Հօրեղբա՛յր,–ըսաւ Դաւիթ–, Դուն գընա Տուն՝ քընացի՛ր,
Ես՝ լուսու հետ *) կ՚երթամ կըռի՛ւ կ՚ընեմ Դաշտը՝ Զօրքին հետ»:

551. Մըսրամէլիի վերջնագրին՝ Դաւիթ կ՚պատասխանէ «Ես եկա՛յ…»

Ձ·՝Ց·111,104,112, Ց·104,111,112, Ա·54, Զ·՝Ա·54, (Ա·51), (Լ·86,73), Լ·86·

Մըսրամէլիք Թո՛ւղթ էր գըրեր՝ ճամբեր Զէնով–Օհանին 1), Եօ՛թ օր 2) միայն միջոց տըւե՛ր ու ըսեր, —

---

5) Ա·55՝ Մօր(ը) համար, պատուհին բերումով: 6) Ա·55՝ Քեռի–Թորոսի: *) Լուսու հետ, Լուսաբացին, առաւօտն:

1) Տես Հատ· 538 եւ 541: 2) Ց·111՝ տաս օր:

«Ես՝ Իմ Զօրքեր ժողվեր առեր եկե՛ր եմ,
Լորայ–Դաշտի մէջ զարկե՛ր եմ Վըրաններ.
Եօ՛թ օր Քեզի ժամանա՛կ...,—
Եկա՞ր՝ եկա՛ր..., որ չ'եկա՛ր...՝
Կուգամ կ'զարնեմ՝ Քու Քաղաքը կ'աւերե՛մ,
Հողն ու Քարը ամեն կ'առնեմ կըտանի՛մ...,
Սասմայ ճըրա՛գ կը մարեմ...:—
Մինչեւ ասօր՝ Դաւիթ Ինձի եղբա՛յր էր,
Ասօր Ինձի Ան Թըշնամի՛ է զարձեր...»:

Գիր–Տանողը՝ դընաց՝ ճամբան՝ պատահեցաւ Դաւիթի'ն.
Դաւիթ առա՛ւ Գիրը կարդա՛ց, տեսաւ Մէկիք դըրե՛ր է.— 3)

— «Հազա՛ր–համար Զօ՛րբ ունիմ Ես՝ Անբեխ–Անմուրուս.
= Ա'խ, դեռ Անբե'խ–Անմուրուս:
Հազա՛ր–համար ալ ունիմ՝ Բեխո՛վ–Մուրուսով.
= Ա'խ, դեռ Բեխո՛վ–Մուրուսով:
Հազա՛ր–համար ալ ունիմ՝ Թո՛ւխ–Մուրուս են.
= Ա'խ, դեռ Թո՛ւխ–Մուրուս են:
Հազար–համար ալ ունիմ՝ Սիվտա՛կ–Մուրուս են.
= Ա'խ, դեռ Սիվտա՛կ–Մուրուս են»:

Դաւիթ կարդա՛ց Մէկիքի Թուղթ, ու պատասխանն ալ դըրեց՝
*= «Ես եկա՛յ... *)»:*

552. Դաւիթ Պաեիրազմական Խորհուրդի Կրկանչէ Իջեցնելը

ՀՍ·467, (Ե·104), Ե·105,34,35, Զ·՝Ե·35,34, Զ(Ե·35), Խ·25, Ե·19, 512,629,714,742,774,804,909,971,1109,1107, (Ե·969, 1105,1107), Զ·՝Լ·23,81,85, Զ(Լ·23,85), Լ·81,85, Ա·20, (Ա·55), Զ·՝Ա·20, Հ·33, Ս·185,159, (Ս·158), (Կ·19), Կ·19՝Զ·

Դաւիթ Իր Զին քըշեց դընաց՝ մըտաւ Քաղաք եւ իջաւ.
Վերցուց Պառաւ՝ Զիուն վրայէն՝ դըրաւ վա՛ր,
Ըսաւ, — «Մամի՛կ, դէ՛ խօսէ՛...»:
Պառաւ՝ այնտեղ՝ Լեզուն կապուած, մեռելի պէս կեցե՛ր է...:

---

3) Երդով: . *) Ես եկա՛յ, Ահա կուգամ, շուտով պիտի գամ:

Դաւիթ ելաւ կանչե՛ց բոլոր Իշխաններն ու Հօրեղբայր,
*Դիվա՛ն *) ղըրաւ, ըսաւ, — «Մարդի՛կ, Զօրքն եկեր է Լորայ-Դա՛շտ.*
Մըսրամէլիք ի՛նքն է եկեր, կըռի՛ւ կ՚ուզէ Մեր մօտէն: —
Իմ Հօր Զէնքեր տըւէ՛ք՝ կապե՛մ, որ ես երթամ կըռիւի՛...:
Իմ Հօր կալուածն ու ինչք կ՚ուտե՛ն ուրիշներ...՝
Ու Դուք ինձի չէ՛ք ըսե՛ր...»:
= «Երթալդ աղէ՛կ...,–ըսին այնտեղ՝ Ամենքն ալ–,
Բայց զուր տե՛ղ է, Դուն չե՛ս կըրնար Անիկ յաղթել, ա՛յ Դաւիթ»:
— «Զէ՛,–ըսաւ հոն՝ Դաւիթն ալ–,
Ի՛նչ ալ ըլլայ՝ պիտի երթամ կըռի՛ւ ընեմ Անոր հետ...»:
= «Քիչ կըրըննէ՝ ու շա՛տ տեսակ չարչարանքով կ՚ըսպանէ՛»:
— «Պիտի երթա՛մ,–ըսաւ Դաւիթ–, ճար չըկա՛յ...,—
Տեսնենք՝ Աստուած կամ ի՛նձ կուտայ, կամ Անո՛ր.
Ես ուրիշ Մարդ չե՛մ ուղարկեր Իր վըրայ...»:
Անոնք ալ՝ երբ՝ տեսան Դաւիթ պատրաստուե՛ր է որ երթայ՝
= «Պէտք է,–ըսին–, որ Մե՛նք երթանք՝ Մէլիքի հետ կըռիւի... .
Դուն Քո տեղը հանգի՛ստ նըստէ, դեռ պըղտի՛կ ես՝ չե՛ս կըրնար»:
*Դաւիթն ըսաւ, — «Դուք ի՞նչ *) պիտի երթաք կըռիւ՝ Իր վըրայ...*
Այնքան կըտրիճ Ըմբի՛շ ունի..., Զօ՛րք ունի... .
*Ինք Մէլիքն ալ՝ քան՚ղ Աժդահար մ՚ աժդահա՛ր *) է՝ ու հըսկա՛յ...,—*
Ոչ մէկ կերպով կարելի չէ՛ զըսպել Ան...»:
Զէնով-Օհան, Ցըռան-Վէդոն՝ ղէ՛մ ղըրին, —
Ըսին, = «Դաւի՛թ, Մեր ո՛չ մէկուն ձեռքէն չի՛ զար որ կըռուինք... .
Թէ Դուն ունի՛ս Քեզ հետ եկող Ընկերներ՝
Գացէ՛ք մըտէք Զէնքի-Տուն՝
Առէ՛ք ինչքան Զէնք որ պէ՛տք է Ձեզ համար,
*Ու հեծէ՛ք Ձեր քամու-Ձիանք *) ու գացէ՛ք...:*
Մինակ՝ Քեզի խըրա՛տ մը տանք, ա՛յ Դաւիթ,
Աղէ՛կ մըտիկ ըրէ Դուն այս խըրատին, —
«Դուք ճըննդղուկ զարնելու չէ՛ք որ կ՚երթաք...».
Բայց թէ պընդես Դուն նորէն՝՝
Քեզի կ՚ըսենք, ա՛յ Դաւի՛թ, —

---

*) Դիվանճ, Ատեան, Նիստ: *) Ի՞նչ, ի՞նչպէս, ի՞նչ ուժերով, ձեր ո՞ր ուժովը, ձեր մէջէն ո՞վ է այդչափ կարիճը... (կէս հեգնական): *) Աժդահար, Ահարկու գազան: *) Քամու ձիաճիւ, Հովի պէս սրընթաց նժոյգներ:

«Ի՛նչպէս որ Դուն աղտոտեցիր այդ գործեր...՝
Այնպէս դընա՛ Դուն մաքրէ՛...»:
Քեռի–Թորոսն եկաւ կանչեց ու ըսաւ. —
— «Մօ՛ Տըղա՛յ...,
Ա՛ս ի՞նչ խաղ էր որ հանեցիր Մեր Գըլուխ...»:
= «Ի՞նչ եմ ըրեր, Քեռի՛»,–ըսաւ Դաւիթն ալ:
— «Գացիր,–ըսաւ–, ձապաղջուրն ու Քոթէն այնտեղ աւրեցիր,
Կ՛ըսես դեռ՝ «Ի՞նչ եմ ըրեր...:
Գիտես՝ Ամի 1)՝ Պիրաբադի՞ն, Կուզբադի՞ն է՝ եկեր են....
Ամի,–ըսաւ–, Մըսրամէլիքն է՝ եկեր է Մեծ Զօրքով....
Հընդայ–երկրի Ամիրա՛ն է, ու Բաղդադի–Խալիֆա՛ն...,—
Քու Մեծ–եղբա՛յրն է Անիկ....
Ի՞նչպէս պիտի պատասխան տաս Դուն Ամոր...»:
Դաւիթն ըսաւ, = «Քեռի–Թորո՛ս, թէ աւրեցի՝ Իմ Հօր կալուա՛ծն
[աւրեցի 2)...»:
Ըսաւ, — «Քու Հօր կալուա՛ծն է որ աւրեցիր՝
Բայց այս անգամ՝ Մըսրամէլի՛քն է Զօրք քաշեր՝ առեր–եկեր Քու
[վըրայ·
Դաւիթն ալ թէ, = «Քեռի՛–Թորոս, եղածն այլեւս եղե՛ր է...,
Բա՛ն է, Տնաշէ՛ն, պատահե՛ր է..., Ի՞նչ ընենք...,—
Ես ալ կ՛երթամ՝ կըռի՛ւ կ՛ընեմ Անոր հետ...»:
Ամոուածն ալ կամ Ինձի՛ կուտայ, կա՛մ Անոր...»:
— «Ես ալ կ՛երթամ,–ըսաւ Քեռի–Թորոսիկ–,
Մարութայ–բա՛րձր–Ասպարածին Քու Հօր վա՛նք,
Մէկ Սուրբ–Նըշա՛ն մ՛ կայ այնտեղ,
Հանեմ առնեմ ու բերե՛մ...»:
Քեռի–Թորոս ելաւ դընաց Մարաթուկ,
Աղո՛թք ըրաւ Վանքին մէջ,
Որ Սուրբ–Նըշան հանէ բերէ այնտեղէն՝
Բերէ ու տայ Դաւիթին...:

---

1) Այսինքն՝ Մըսրամէլիքը: 2) Տե՛ս Հատուած 484:

553. Դաւիթ Իր Հօր Զէն-ու-Զարդերը Կ'ուզէ Զէնով-Օհանէն

Ց·106,105ա·, (Ե·1101,909,742,1109), Ն·1109,629,909,715,774, 714,1005,19, Կ·19,64,65, Շ·՝Կ·64,65, Շ·՝Հ·33,Հ·33, Ս·158,159, (Ս·159), Խ·25,26,27, Շ·՝Խ·26·

Դաւիթ ելաւ պընաց դըտա՛ւ Զէնով-Օհան Հօրեղբայր 1),
վերցուց ըսաւ, — «Դէ՛, Հօրեղբա՛յր, ոչ Զէնք ունիմ՝ ոչ ալ Զի՛ . . . .
Ինձ Զէ՛նք տըւէք, ու Զի՛ տըւէք՝ որ ես երթամ կըռիւ՛ . . . :
Դաւիթ ո՛ղջ է, դեռ չ'է՛ մեռեր՝ որ Մէկիկ գայ՝ Տո՛ւրք ուղէ :
Դաւիթ կ'երթայ՝ կըռիւ մէջ կըսպանուի . . .՝ 2)
Նոր՝ այն ատեն՝ ի՛նչ կուտաս տո՛ւր՝ Թող երթա՛յ . . .
Դաւիթ ողջ է՝ բան մը չի՛տար Մէկիկին . . .» :
= «Ողջի՛,–ըսաւ Զէնով-Օհան–, Մեզ Զէնք չըկա՛յ, բա՛ն չըկա՛յ . . .» :
— «Ի՞մալ չըկայ . . .,–ըսաւ Դաւիթ–, Իմ Հօր Զէնքերը պահե՛ր ես . . . .
Լըման հանէ՛՝ բեր տուր Իմ Զե՛ռ, Իմ Հօր Զէնքերն ու Հագուստ՝
Հագնիմ երթամ կըռիւ՛ . . . :
Տօ՛ Հօրեղբա՛յր, Հօրեղբա՛յր . . .,
Կուտա՛ս կամով՝ Թէ չէ կ'առնեմ Իմ ուժո՛վ . . .» :
Հօրեղբայրն 3) ալ՝ վերցուց ըսաւ, = «Գըրո՛ղ տանի Քեզ, Դաւի՛թ,
Ի՞նչ է կ'ուզես՝ չե՛մ տար կամով, որ Դուն առնես Քո ուժով . . .» :
Դաւիթ այնտեղ նախ աղաչեց ու ըսաւ, — 4)

— «Հայրահո՛տ 5) Հօրեղբայր, Հա՛յր չ'ունիմ՝ ըրէ՛ Հայրութիւն·
Հայրահո՛տ Հօրեղբայր, Եղբա՛յր չ'ունիմ՝ ըրէ՛ Եղբայրութիւն·
Հայրահո՛տ Հօրեղբայր, Տէ՛ր չ'ունիմ՝ ըրէ՛ Ինձի տիրութիւն·
Հայրահո՛տ Հօրեղբայր, տո՛ւր՝ Ինձ՝ Քուռկի՛կ–Ջալալին . . .
Հայրահո՛տ Հօրեղբայր, Տո՛ւր Ինձ՝ Թո՛ւրը–Կէծակին . . .
Հայրահո՛տ Հօրեղբայր, տո՛ւր Ինձ՝ Գո՛րզը–Մըհէրին . . .
Հայրահո՛տ Հօրեղբայր, տո՛ւր Ինձ՝ Գուդի՛կն–ի–Գըլխին . . .
Հայրահո՛տ Հօրեղբայր, տո՛ւր Ինձ՝ Կուրդի՛կ–Սիրաքին . . .
Հայրահո՛տ Հօրեղբայր, տո՛ւր Ինձ՝ Զըրա՛հ–Պողվըտին . . .

---

1) Ե·1101՝ Հօրաքոյր(ը) 2) *կը հեղնէ . . .* : 3) Ս·159՝ Ցռանվէգին: 4) *Երգով* : 5) Կ·64ա·՝ «խէրախիւտ, *Թրք·*՝ բարի, բարեգութ»՝ *ուղղել՝* հայրահոտ = *Հօրը հոտն ունեցող, Հօրը պէս բարեդութ* :

Հայրահո՛տ Հօրեղբայր, տո՛ւր ինձ՝ Գօտի՛ը–Ոսկին... 6).
Հայրահո՛տ Հօրեղբայր, տո՛ւր ինձ՝ Շալվա՛րը–ի–Ոտին... .
Հայրահո՛տ Հօրեղբայր, տո՛ւր ինձ՝ Մո՛յկը–Ծալովին... .
Հայրահո՛տ Հօրեղբայր, տո՛ւր ինձ՝ Խա՛չը–Փետրազին... .
Հայրահո՛տ Հօրեղբա՛յր, ո՛րբ եմ՝ ըրէ՛ Հայրութիւն, —
Բե՛ր ինձի տուր՝ իմ Հօր կրնա՛ւ այդ Բաներ... .
Կուտա՛ս կամով՝ թէ չէ՝ կ'առնեմ Իմ ուժո՛վ...,—
Կուգամ կ'մարմնեմ *)՝ Գլուխդ կ'երթայ, Մարմինդ կ'մնայ Իրեն
[տէ՛ղ...»:—

554. Ջէնով-Օհանի Դիւռումճեան Պատմախաղը՝ Դաւիթին

Ե·909,19,506,1109,805,1111,969,775,629, (Ե·774,1101), Զ·՝Ե·19, 909, Զ·՝Խ·26, Խ·26,27, Կ·19,65ա·, Ա·56,20,55, Ց·106,105, (Ց·106), (ԶԿ·459), Լ·75, Զ·՝Լ·23, Լ·23, ԶՍ·467, Զ·՝ԶՍ·467.

Ջէնով–Օհան հասկըցա՛ւ ու ի՞նչ ըսաւ հոն՝ ինքիրեն, —
«Հա՛–հա՛...,–ըսաւ–, Դո՛ւն ալ մեռնիս, անո՛ւնդ ալ...,
Դեռ զօրացած ու ամա՛ծ չես...՝ կըչորնա՛ս...:
Բերա՛ն կոտրի Քեզի նըշանց տըւողի՛ն... .—
*Բանե՛րն ալ ու Տըղա՛ն ալ մէկ՝ գընացի՛ն... *):*
*Ան ի՞նչ *) Ջի՛ն է՝ նըշանց չե՛մ տար Դաւիթին,*
Ինչ որ Խա՛չը–Փետրազին է, Թագ ու Նիզա՛կ, Թուրն ու Գո՛րզ՝
Արկղին մէ՛ջ է 1)՝ Անո՛նք ալ դուրս չե՛մ հաներ...,—
Այլեւս մէկալ Բաներովը՝ կըռիւ չե՛ր թար Այս Տըղան... .
Հընո՛ւց այնտեղ մնացեր են...,
Բան չե՛ն կըտրեր այդ Բաներ...»:
Ու դառնալով Դաւիթին՝
Ըսաւ, — «Դաւի՛թ, այդ Քու գիտցած բաներ չե՛ն...,
Քեզ ուսուցող Վարպե՛տ կայ... .
Բերա՛ն կոտրի Ըսողին... .
Ես չե՛մ գիտեր՝ ո՞ւր են այդ Քո ըսածները...:

---

6) Ս·158՝ էմալ, *ուղղելի՝* էմաձ = *նետաղեղ, կամ՝* էմէր = *գօտի:* *) Մարմնել, *Գլուխն իրանէն փրցնել, դուրս քաշել:* *) Գնացին, *կորսուեցան, գոհ գացին, ահա կ'երթան:* *) Ինչ, *Որ:*
1) Խ·26ա·՝ սանդուղի տակ՝ *ուղղել՝* սնտուկի մէջ:

Որդի՛, Դաւի՛թ, այն տարիէն որ Քու Հայրը մեռա՛ր է՝
Դուրս չե՛մ հաներ իր Զէն Քուռկիկ–Ջալալին . . .
Այդ Մէլիքի ահէն՝ Զէն ալ Ախոռին մէ՛չ է մնացեր,
*Դուռը չարեր *) գոցեր եմ . . .*
Անոր կերն ալ, — թուղ ու Ծըմոր 2) ու Գարի՝
Ծըմած Ջուրն ալ՝ Անմահակա՛ն–Աղբիւրէն, —
*Ականատէն *), Երդիսէ՛ն վար եմ տըւեր . . .,*
Մարդ չի՛ կըրնար՝ մօտ երթայ . . . 3)»:
Դաւիթ դարձաւ իր Հօրեղբօր, ըսաւ, = «Հօքա՛ր, աս ի՞նչ է,
Չես կ՚ուղարկես Որսի՛ երթամ Սար ու Քար . . .՝
Թըշնամու դէմ չե՛ս ղրրկեր . . .»:
Զինով–Օհան 4) ալ՝ ըսաւ, —
— «Ես ապա Քեզ ինչի՞ համար կըպահեմ . . .,—
Մեր Թըշնամո՛ւ համար է . . . .
Սակայն Դուն դեռ տըղա՛յ ես . . .»:
Դաւիթն ըսաւ, = «Տըղայ չե՛մ ես, Հօրեղբա՛յր . . .,
Իմ Աստուա՛ծը պիտի կանչեմ՝ պիտի երթամ կըռիւի՛ . . .
Ես Զէն վար չե՛մ իջնար . . .»:
Ըսաւ, — «Այդպէս մերկ երթա՞ս . . .»:
Դաւիթ այնտեղ վերցուց ըսաւ, = «Հօրեղբա՛յր,
Ապա քա՞լ երթամ ես . . .,—
Դէ՛, դիտե՛ս որ՝ Մըսրամէլիք Մեր Քաղքի վրա՛յ պիտի գայ . . .,
Չես ըսպասէ՝ քակէ–աւրէ՛ Մեր–Եկեղը . . .
է՛, Հօրեղբա՛յր 5), Իմ Հօր ի՞նչ կայ՝ ցո՛յց տուր Ինձի՛՝ ու հան
[դո՛ւրս»:
Ըսաւ, — «Որդի՛, բան մը չըկա՛յ, կ՚ըսեմ Քեզ . . .
Քու Հօր ի՞նչ կայ՝ որ հանեմ դուրս ու բերեմ . . .»;—

555. Բոլած Ցար Աղաճով Դաւիթ կ՚սպիտէ Հօրեղբայրը Որ Խօսի

Հ·380, Ե·506,573,629,563,1101,825,909,512,630,774, (Ե·629,1101, 506,563,825), Կ·19,64, ՉՎ·2, (Ա·56), Ա·56,57, Չ·՝Ա·55,56, ՉԿ·461,513,514,515, Չ(ՉԿ·513,400,515), (ՉԿ·460)·

Դաւիթ ելաւ՝ ու Պառաւին ըսածներուն պէ՛ս ըրաւ· —

---

*) Շարել, Քարերով պատ բարձրացնել, փակել: 2) Չմմալ՝ կուղբադինի ճիւն հետ, Հմմտ. 493: *) Ականատ, Դէպ վեր բացուղ՝ փոքրիկ պատուհան, բոլորչի կամ ճուաձեւ: 3) Տե՛ս Հմմտ. 350: 4) Լ·23՝ Քեռի–Թորոս: 5) Ե·1101՝ Հօրաքո՛ր:

~~Ես հոգ չունէ՛ կոչ՝ որ տանեմ գլուխս ու գնամ...~~

Գրնաց առաւ եօ՛թը տարուան 1) հին Գինի,
Պատի՛ւ *) տրուաւ, բերաւ խըմցո՛ւց Հօրեղբօր,
Աղաչեց ու ապա ըսաւ, — «Հօրեղբա՛յր,
Այսօր կ՛եռա՛ն իմ Առամներն ու Լինտեր... .
Ելիր քիչ մը Աղա՛նձ չինէ՝ ես ուտեմ որ ցաւն իջնէ...»:
Ըսաւ, = «Դաւի՛թ, մատա՛ղ Բեղի՝ Հօրեղբայր(դ),
Ինչո՞վ Աղանձ չինեմ Բեզ...»:
— «Գետեզերքի Ջարդու–Բարո՛վ 2) չինէ...», — ըսաւ Դաւիթն ալ:
Դաւիթ ելաւ՝ աղու մ՝ *) Ցորեն լեցուց Գըդակ, բերաւ Տո՛ւն.
Ձէնով–Օհան՝ Իւղը քակեց 3), Տապակ դըրաւ Կըրակի՛ն,
Ցորեն լեցուց Տապակին մէ՛ջ, խառնեց Իւղով, կարմըրցուց *):
Դաւիթն ըսաւ, — «Դէ՛, Հօրեղբա՛յր, փըչուր մը տուր՝ ես ուտե՛մ,
Նայիմ տեսնեմ՝ աղէկ բովե՞ր է՝ թէ՞ չէ՛...» 4):
Ձէնով–Օհան՝ Դըգալով մը՝ Աղանձն առաւ ու տըւաւ,
Դաւիթ չ՛առա՛ւ. ըսաւ, — «Այդպէս աղէկ չ՛է՛...,—
Ձեռքո՛վդ վերցուր՝ չո՛ւտ մը լեցուր իմ Բերան...»:
Օհան ըսաւ, = «Տօ, չէ՞ իմ Ձեռ կըմըրկի՛...»:
— «Շուտ մը Ձեռ տո՛ւր, — ըսաւ Դաւիթ—, այնպէս լեցուր Ախէս մէ՛ջ»
Ձէնով–Օհան Գետի՛ն դըրաւ Իր Տապակ,
Ձեռը տըւաւ՝ Ամպն առաւ մէջ–Ախին,
Որ լեցնէ Տըղայ–Դաւթի Բերնին մէջ, —
Դաւիթ հասաւ Անոր 5) Լըպը *) ամո՛ւր բռնեց ու կըքե՛ց *),
Ձեռը նետեց՝ Փողպատ *) բռնեց՝ թա՛փ տըւաւ,
Ոսքեր Գետնէն կըտրեցան...:
Ձէնով–Օհան ըսաւ, = «Դաւի՛թ, ա՛յ..., Իմ Ձեռը մըրկեցա՛ւ... .
Աստծո՛ւ սիրո՛ւն... *), Եղունդներըս թափեցա՛ն ու եկան դո՛ւրս...

---

1) Հ·380՝ Ғառաուն տարուան: *) Պատիւ, *Ինչոյք*, *հացկերոյթ*: 2) Ջարդու–բար, *կայծքար (որմով զինուած է կամնասայլը՝ ցորենի հասկերը ջարդելու պաշտօնով)*. Դաւիթ հեգնելով է կ՛ըսէ: *) Աղու մ՝, *Քիչ մը*: 3) *Սառած* կարագը՝ ամանէն հանելու կ՛ըսեն Ғակել: *) Կարմրցնել, *Խորովել* (կարագի մէջ): 4) Ա·56–57՝ *Աղանձի մէջադէպը՝ հէքիաթացած ձեւով է պատմուեր, Մօր եւ Տղու մէջ անցած, եւ Աւազէ պատրաստուած*: 5) Ե·1101՝ Հօրաքոյրին: *) Լըպ, *Ախ*: *) Կբել, *Խփել–սղմել*: *) Փողպատ, *Օձիք*: *) Սիրուն, *Սիրոյն* (*համար*):

Քո Տո՛ւն չ՚աւրի՛ ..., բսպանեցի՛ր ..., Թո՛ղ տուր Զիս ...»:
Դաւիթն ըսաւ, — «Հա՛ցն ու Գինին, Տէ՛ր-Կենդանին ...,
Ես ուղէի՝ կըրնայի՛ Քեզ զարնէի պա՛տ, Հօրեղբա՛յր,
Բայց Դուն՝ չէ՞ որ Իմ Հօրա՛րն ես, — չե՛մ ըներ ... .
Ամո՛ւսք տուր մէյն՝ Իմ Հօր ի՛նչ կայ 6)՝ Հանես տա՛ս: —
Իմ Հօր Թո՛ւրը, Իմ Հօր Գո՛ւրզն ու Իմ Հօր Զի՛ն,
Իմ Հօր Գուդի՛կ, Փող-Պըղըրի՛ն ու Մո՛յկերն,
Իմ Հօր Սա՛րբը-Մըհէրին 7)՝
Տո՛ւր որ պինուիմ՝ ելնեմ երթամ կըռիւի՛ ...:
*Իմ Հօր Սարքի *) տեղը չըսես՝ ու Բանլիքներ Ինձ չիտաս՝*
Ես Քու Զեռը չե՛մ Թողներ ...»:
Զէնով-Օհան՝ «Ա՛յ, վա՛յ» ըրաւ, ու կանչեց, —
= «Քու Աբեւո՛ւդ մեռնիմ, Դաւի՛թ, Իմ Զեռը Թո՛ղ՝ ըսե՛մ Քեզ ...
Ուղէ՛՝ Քեզի ի՞նչ պէտք է ... .
Ամսքըս խո՛սք է, Քեզի ցո՛յց տամ՝ ի՛նչ որ կայ ...,
Ա՛ռ ու պընա՛, Քեզ չըտեսնե՛մ ..., ի՛նչ որ պիտես՝ ան ըրէ՛ ...»:—

556. Դաւիթ՝ Երգով՝ Նորէն Կ՚դիմէ Հօրեղբօրը

Ե·563,1101,1102,714,715,804,19,909,1005,774,971, 805,742,512, 825, (Ե·506,742,581,512,637), Զ·՚Ե·714,825,805,971,715,Ց·105, 105ա·, Խ·26, ՀՍ·467,495, Հ·33,381,428, Ս·158, Շ·՚Կ·64, Կ·64·

Դաւիթ այնտեղ Հօրեղբօր Զեռ Թո՛ղ տըւաւ,
— «Դէ՛, Հօրեղբա՛յր,—ըսաւ—, հիմա Գետի՛ն Թափէ այդ Աւա՛զ»:
Գետի՛ն Թափեց, ու Դաւիթն ալ՝ խաղով կանչե՛ց ու ըսաւ· —

— «Տո՛ Հօրեղբա՛յր, մեռնի՛մ Քեզի, Հօրեղբա՛յր,
Քեզնէ կ՚ուզե՛մ՝ որ կ՚ուզե՛մ,
Գընա՝ դո՛ւրս հան, ու դո՛ւրս հան, —
Ինձի պէ՛տք է՝ Իմ Հօր Թո՛ւրը-Կէծակին 1)·
Ինձի պէ՛տք է՝ Իմ Հօր Գո՛ւրզը-Մըհէրին·
Ինձի պէ՛տք է՝ Իմ Հօր Զրա՛հը-Պողվըտին·

---

6) Շկ·460՝ Իմ Հօր Գանձը: 7) *Հմմտլ.*՝ Թախտումն-ը-Մըհէրին, *փրֆ· Գր· Խալաթեանցի մակագրութիւնով, իմ* Սասմանց-Տուն *ժողովրդին վրայ* (էջ 449) [Ռ· Հասրատ]: *) Սարք, *Ամբողջութեան սարուածք, Զէն ու Զարդերուն ամբողջ ծանօթ մասերը:*

1) Ե·742՝ Թուրն-ի-Կտրանին, Ե·913,916,923՝ Թուր-Պարնաղկին:

Ինձի պէ՛տ է՝ իմ Հօր խա՛չը–Փետրազին·
Ինձի պէ՛տ է՝ իմ Հօր Գուդի՛կ–Երկնային·
Ինձի պէ՛տ է՝ իմ Հօր Գօտի՛ը–Ոսկին·
Ինձի պէ՛տ է՝ իմ Հօր Մոյկե՛ր–Ծալովին, —
Պողվատ–Պայտերն ի տակի՛ն·
Ինձի պէ՛տ է՝ իմ Հօր Կուրդի՛կ–Ծիրանին 2)·
Ինձի պէ՛տ է՝ իմ Հօր Փո՛ղը–Պըղնորին·
Ինձի պէ՛տ է՝ իմ Հօր Տէ՛գը–Ջուչային·
Ինձի պէ՛տ է՝ իմ Հօր Ոսկի–Կաբա՛ւ՝ Բազուկին·
Ինձի պէ՛տ է՝ իմ Հօր Շալվա՛րն–ի–Ոտին 3)·
Ո՞ւր է Իմ Հօր Հրեղէ՛ն Ձին՝
Որ *) անուն Քուռկի՛կ–Ջալալին, = Ա՛խ, դեռ Քո՛ւռկիկ–Ջալալին,—
Պողվըտէ–Սա՛նձ Բերանին, Շողուն Պայտե՛ր՝ Սըմերուն·
Թա՛մբն–Արծըթին՝ վըրան դըրած ու պըրկած,
Ոսկի՛–Ոտնոց՝ կախած երկու կողերէն: —
Բե՛ր, Հօրեղբա՛յր, դո՛ւրս հան Իմ Հօր Ձէն–ու–Ձարդ,
Հագուիմ–կապուի՛մ, հեծնեմ–երթամ կըռիւի՛...»:

557. Ձէնով-Օհանի Խուսափողական Նոր Պատասխանը

ՁՍ·468, Ե·742,971,1109,715,1111,909,19,774,1005, Ե·805,1102, 1110), (Կ·65), Կ·65,19, (Ա·21), Ա·21,57, Ս·159, Հ·428,33, (Հ·380, 428), ՁՎ·2, (ՁՎ·2), ՁԿ·516, Ց·106,105, (Լ·75), (Խ·26)·

Հօրեղբօր լացն եկա՛ւ այնտեղ՝ ու ըսաւ· —
— «Երանի՛ թէ՝ Քո Հօր Գուրզը, Թուրն ու Ձըրահ վերցընէի՛ր [Դու, Տըղե՛կ,
Դեռ պըղտի՛կ ես, Դուն չե՛ս կըրնար որ վերցընես, ա՛յ Տըղեկ...»:
= «Դէ՛, Հօրեղբա՛յր, Ինձի ցո՛յց տուր այդ Ձէնքեր,
Նայինք ի՞նչպէս ես չեմ կրրնար վերցընել...»:
Ձէնով–Օհան 1) վախցա՛ւ Դաւթէն, ու տեսաւ որ Ճար չըկայ,
Ձըդխմացա՛ւ Ափին մէջի մըրկող բոլած Աւազին,
Ձատնու ցուցուց, ըսաւ, — «Մըդի՛, Քո Հօր Ձէն ու Ձըրահները,

---

2) Խ·26՝ Կապէն–Խաբխակին՝ *ուղղել՝* Կ· Խադխափին: 3) *Այս նկարագրութիւնովը՝ կարելի է վերակազմել հին հայ ասպետներուն տարազը:* *) Որ, *Որու, որ* (Ք· Ջալալին անուն ունի):

1) Ե·1102՝ Հօրաքոյր:

Շապիկ, Գօտին, Գլխոց–Գուդիկն ու Մոյկեր՝
Պահարա՛նն են 2), հոն Բուրջն՝իվար, քառասուն կանգուն Գետնի տա՛կ·
Քու Հօր Քուռվիկ–Ջալալիի Ոտքին տա՛կն են, Գոմին մէ՛ջ····,—
*Հող, Քար ու Կորճ *) լցուած–ղիղած են վրան····:*
*Քառասուն Մատով *) Սանդո՛ւխ պիտի իջնես վար՝*
Ապա նոր Քու Հօր Ջէնքերուն կը հասնիս····:
Ես ալ, Որդի՛, կարողութիւն չ՛ունի՛մ՝ Ատոնք հանեմ դո՛ւրս,
Թէ դուն կըրնա՛ս՝ դընա հան դո՛ւրս այնտեղէն····:
Որ վերցուցիր՝ կըրնա՛ս կըռուիլ· Թէ չէ՝ մ՛ե՛րթար, չե՛ս կըրնար····:
Վա՛յ, Բերա՛նը կոտրէր Քեզի Ըսողի՛ն····,—
Որ այդ Բաներ չըսորվեցնէ՛ր Ան Քեզի····
Աի՛ ո՞վ է Քեզի այդպէս ուսուցեր····»:
Դաւիթն ըսաւ, = «Ա՛լ խօսք չ՛ուզեր, Հօրեղբա՛յր·
Կամո՛վ ըլլայ՝ Թէ բըռնի՝
Պիտի առնե՛մ ես Ատոնք····»:
— «Որդի՛, ըսաւ Ջէնով–Օհան՝ Դաւիթին–,
*Ատոնք Քեզի որ ձեռ կուտան *)՝ դընա բե՛ր:*
Ինչ որ Թո՛ւրն է՝ Քու Մեծ–Հայրը 3) Կըպրէ–կարա՛ն է զարկեր 3)»:
Ըսաւ Օհան, ու Բանլիներ Հանեց տըւաւ Դաւիթի՛ն 4),
Նորէն ըսաւ, — «Բերա՛նդ կոտրէր՝ Դուն այդ խօսքեր չ՛ըսէի՛ր····»:

558. «Ձուճի՛մ Իմ Մէջքիս-Որդին», — «Ե՛ս Եմ Քու Մէջքս-Որդին»

Ջ·՝Կ·19,20, Կ·19,20, Ջ·՝Ե·825,742, (Ե·775,969,573,909), (ՋԿ·515)·

Ջէնով–Օհան՝ յետոյ դարձաւ ու երգով ալ ի՞նչ ըսաւ· —

— «Դաւի՛թ, Դաւի՛թ····, Է՛ Տըղայ····,
Ձուճի՛մ Իմ Մէջքիս–Որդին՝

---

2) Ե·1111՝ փայտաձ՝ *ուղղել՝* փայտախ (*փարախ, ախոռ*): *) Կորճ, *կեղեւ* (*ծառի*), ՋԿ·516՝ կըռշ, *համմալ*· écorce: *) Մատ, *Աստիճան* (*սանդուխի*): *) Ձեռ տալ, *բաւարարութիւն տալ*: 3) *Տե՛ս Հուշ*· 236, Ե·909՝ Քու Հայրը: 4) Հ·380՝ *Մամիկին ցուցմունքովը* (*Հուշ*· 547)՝ *Դաւիթ իր հօրեղբօր մօրուքին մէ՛ջ կըզտնէ բանալիները, որ հէքիաթային գիծ է:*

Որ պակա՛ս 1) ըմէ շո՛ւնչը Մէլիքին...:
Ջուրի՛մ իմ Եղբօր–Որդին 2)՝
Որ պակա՛ս ըմէ շո՛ւնչը Մէլիքին...:
Ջուրի՛մ իմ Քրո՛ջ–Որդին՝
Որ չի՛f–ու–ո՛չ ըմէ շունչը Մէլիքին...»:

Դաւիթ վերցուց ինքն ալ երգով ի՞նչ ըսաւ. —

= «Օրհնեա՛լ բարերար Աստուա՛ծ...,
Խնամքը շա՛տ էր Մեծ–Թագաւորին.
Հոգ մի՛ ըներ, Հօրեղբա՛յր, ե՛ս իմ Քո Մէջաց–Որդին՝
Որ պակա՛ս ընեմ 3) շո՛ւնչը Մէլիքին...:
Ե՛ս իմ Քու Եղբօր–Որդին՝
Որ պակա՛ս ընեմ շո՛ւնչը Մէլիքին...:
Ե՛ս իմ Քու Քրոջ–Որդին՝
Որ չի՛f–ու–ո՛չ ընեմ շունչը Մէլիքին...:
Հաճ դո՛ւրս, հաճ դո՛ւրս, Հօրեղբա՛յր...,
Իմ Հօր ամեն Զէն–ու–Զարդեր բեր հաճ դո՛ւրս.
Դո՛ւրս հաճ Իր Ձին՝ Կրուի Քուռկիկ–Ջալալին,
Խաչ–Փետրազի՛ն, Իմ Հօր Թո՛ւրը–Կէծակին, —
Հագուի՛մ–սրգուի՛մ, Հեծնե՛մ երթա՛մ Մէլիքի դէմ կըռիւի՛...»:

559. Դաւիթ՝ Ու Մէլիքի Ուրուն Հարկապահանջները

Ե·562,17, (Ե·713), Չ·՝Լ·27,28, Չ(Լ·27,86), Լ·27,28, Չ·, Չ(ՉԿ·504,505), ՉԿ·505, Կ·62·

Դաւիթ Հլաւ՝ Ամ մը Ոսկի՛ Լեցուց Իր Ծոց ու Գընաց:
Ճամբան տեսաւ Ուրուն Հոգի՝ Ձիաւոր՝
Կ՛երթան դէպի Սասնոյ–Բե՛րդը, սըրընթաց:
Դաւիթ կանչեց այդ Մարդերուն ըսաւ, — «Ինչո՞ւ եկեր էք...»:

---

1) Կ·19ա·՝ Ճիմ (*պրսկ·*) դէմ՝ *ուղղել՝* չի՛f, պակաս, աճգոյ (*ըլլայ*): 2) *Ուրիչ տըւեալ մը՝ որ Ձէնով–Օհան՝ Թլոլ–Դաւիթի հօրեղբայրը չ՛է՛, այլ հօրեղբօր տեղ սեպուած. Տե՛ս Հատ. 278ա. եւ 444ա·* ‡): 3) Կ·20՝ կէնամ՝ *ուղղելի՝* կ՛ընեմ (*կ՛ընեմ, պիտի կարենամ ընել*):

Ըսին, = «Ապա, Մըսրամէլիք Մեղ ղըրկեր է որ երթանք՝
*Սասնայ–երկրի Մեծաւորին տասին–մէկը *) Տո՛ւրք առնենք.*
Տա՛սը Աղջիկ ու Նորահարս՝ առնենք տանինք՝ Իբե՛ն տանք»:
*Աչքը դարձա՛ւ *) Դաւիթին...,—*
Ձիուն Սանձը տըւաւ Քեռի–Թորոս՛կին 1),
Հասաւ մըտաւ այդ Հեծելի Մարդոց մէ՛ջ...,
Ու Ձիերէն իջուց տա՛կ,
Ուխտուն Հողին կանչեց տարաւ Բերդէն դո՛ւրս: —
Հանեց դո՛ւրս՝
Բերաւ մէ՛կ–մէկ Բերդի կուշտը կանգնեցո՛ւց.
Ճիտուն Հողին բըռնեց մէ՛կ–մէկ նետեց Բերդի մէկալ կո՛ղմ 2),
Ճիտունն այդպէս ըսպանե՛ց...:
Մնացին Եոտո՛ւն Զինուորներ. —
Դաւիթ վերցուց լո՛նչ ըսաւ. — 3)
— «Ես կըրնայի՛ Ձեր Թեւերը կըտրէի...,
Կամ Ձեր Կողեր ծակէի ու Թեւերը մէ՛ջ խոթէի....
Ձեր Աչքերը մէկ վորէի հանէի՝
Ու մէկ–մէկ ալ՝ թողնէի...: —
Ձեր երկրին մէջ՝ ես այդ բաներ չա՛տ տեսայ...,
Բայց Դուք մե՛ղք էք, չե՛մ ըներ....
Ելէք դարձէ՛ք ու լո՛ւր տարէք Մէլիքին ...՝
Թող Իր Հողը ու Քա՛րն ընէ այս անգամ, —
Վաղ այս տեղն՝ Իբեն Հի՛ւր եմ՝ Լորայ–Դաշտ,
Կըռի՛ւ կուտամ Իբեն հետ...»:
Այդ Եոտուն Մարդ՝ ելան դարձան գացին ե՛տ,
Ու Մէլիքին լո՛ւր տըւին...:
Ան ալ՝ Իր Մեծ Վըրանին Դուռ նըստա՛ծ էր,
Շա՛տ զարմացաւ ու բարկացաւ Դաւթի այս կերպ վարմունքին:

---

*) Տասին–մէկ, Տասանորդ (տուրք): *) Աչքը դառնալ, Սատիկ զայրանալ: 1) Կ'թուի թէ՝ Քեռի–Թորոսիկ՝ Դաւիթի Թիկնապահն էր: 2) Չմմալ.՝ Վարազդատի ըրածը՝ «Հաւասար Տրդատայ»՝ «Հօթնեւտասն այր... հարեալ՝ ... հոսեաց միմեանց գ'կնի» [Խրնըճ. Գ., խ.464]: 3) Լ.28՝ բարբարոս յօշոտումներու պատկեր մը կուտայ, որ Դաւիթին վերագրելը սխալ է: Պատմողը խառներ է դէպքերը: Այդ ձեւի պատիժներ՝ աստրակա՛ն են, Տե՛ս Հուշ. 3 (Ա. ՃԻՒՂ):

560. Դաւիթ Դէպի Պահարան

Զ(ե·1101,910), (ե·805,775,19,630,573,715,774,1005), ե·805, 1110,742,1111,1102, Զ·, Զկ·517, (ԶՍ·469), Զ·՝ ԶՍ·469, (խ·26), խ·28,27, Հ·427,33,428, (Հ·33), Զ·՝Հ·381, (Ա·21,57), Ա·57,21, (ճ·106), ճ·106, (Լ·85)·

Ծուռ–Դաւիթն ալ՝ ի՞նչ ըրաւ· —
Օհանի հետ՝ գընաց այնտեղ՝ ինչ Հօրեղբայր ցո՛յց տըւաւ,
Տեսաւ որ ի՛նչ···, — Գորգ–Մըհէրին 1)՝ հոն ըրած են Հաւի–թա՛ռ···
Հաւեր վըրան ծըրտե՛ր են··· 2),
Ու թառին տակ՝ Մերոն ալ թի՛ղ մը թանձրացե՛ր···
Մանրիկ–Գուրգը Մերոին մէջը կորսըւե՛ր···:
Բահով՝ չո՛ւտ մը Հողն ու ծախեր նետեց դէ՛ն·
Մաքրեց՝ մինչեւ այդ Մառանին վրա՛յ հասաւ: —
Տեսաւ պըզտիկ Դո՛ւռ մը կար հոն կըղպըւած·
Դաւիթ՝ վրատա՛հ՝ Դուռը բացաւ՝ իջաւ գընաց Պահարան 3)·
Տեսաւ՝ Իր Հօր բոլո՛ր Զէնքեր՝ Պատ ծի՛ց զարկած ու կախած···:
Մէկ–մէկ առաւ, գըրկեց 4) բերաւ՝ հանեց դո՛ւրս 5)·
Բերաւ՝ նըշա՛նց տըւաւ Զէնով–Օհանին:
Զէնով–Օհան ուրախացա՛ւ, ըսաւ Ինքը Իրեն մէջ՝
Թէ՝ «Թերեւս» Դաւիթ Իր Հօր տեղ բռնէ· —
Ես՝ Սասնամայ Մըհէր–Դաւթի եղբա՛յրն եմ՝ 6)
Ես՝ մինակս՝ չէի՛ կրնար այդ Զէնքերը դո՛ւրս բերել,
Դաւիթ գըրկեց բերաւ դո՛ւրս···»: —

561. Առիւծին Մէջի Հագուստներն Ու Զէնքերը՝ Ծաճր Կուգան Դաւիթին

Զ(ե·909,971,825,910,20,774), ե·774,20,775,910,Զ·՝ե·910, Զ(կ·19), (կ·19,65), Զ·՝կ·65,20, կ·65, (Հ·428), Հ·33, Զ·՝Հ·33, (Ս·159), ԶՍ·471,470,472,473, (ԶՍ·472), (Ա·57), Ա·57·

Ոսկի–Ա՛րկղ մ՝ ալ կար այնտեղը՝ Պատին տա՛կ,
Զէնով–Օհան՝ Բանալիով բացաւ վերցո՛ւց կափարիչ: —

---

1) ե·805՝ Ձին: 2) Հ·381՝ ծռտաճ վերէն՝ *ուղղել՝* ծռտած վէրէն (*ծրտած են վրան*): 3) ե·1110՝ Զարգամին (*գետնափոր սենեակ*): 4) ե·1110՝ կրգեց՝ *ուղղել՝* գրկեց: 5) խ·26, ե·573,630, 715,774,805,1005՝ Զէնով–Օհանն է դուրս հանողը: 6) Պէտք է հասկնալ՝ ազգատոհմէն եմ, կամ՝ Մըհէր–Դաւթին տարեկից եմ:

Դաւիթի Հայր՝ Ջոջ–Դաւիթը՝ Իր Հաղուստներ ամե՛նն ալ՝
Գըլխու–Գուդիկ, Մէջքի–Գօտին, Իր կուրդի՛կը–Մէրանին՝
Ի՛նչպէս ծալեր ու դըրեր էր Աբկղին մէջ՝
Այնպէս այնտեղ մնացե՛ր էին անվընաս։
Ջէնով–Օհան՝ դըրկեց բերաւ՝ տըւա՛ւ Դաւթի ուղածները 1)։
Դաւիթն ըսաւ, — «Դէ՛, Հօրեղբա՛յր, Թո՛ւրը բեր···»։
Ջէնով–Օհան՝ կըպրէ–կարա՛ս ցոյց տըւաւ,
Ըսաւ, = «Մըդի՛, դընա վերցո՛ւր՝ կապէ վըրա՛դ՝ թէ կըրնաս··· 2)»։
Դաւիթ վազեց՝ Ձեռ նետեց Թո՛ւր՝ որ առնէ՝
Ինչպէս Ձեռ տան՝ Մաղ Խըմորէն քաշեն դո՛ւրս՝
Այնպէս այդ Թուր՝ կըպրէ–կար՛սէն քաշեց դո՛ւրս 3)։ —
Աւաւ նայեց՝ ի՛նչ տեսնէ···, —
*Եղունիկի *) վիղի՛ նըման՝ կըգըվըրա՛յ *), կըհալի՛···։*
Երեք անգամ՝ Թուրը պտղեց, վերցուց դըրաւ Իր Գըլխուն։
Եկաւ՝ ապա՝ Հօրեղբօր հետ՝ Գուրզը Թառէն տա՛կ բերաւ·
Ի՛նչպէս ըրաւ՝ Դաւիթ չ'կըրցա՛ւ Գուրզը Գետնէն վերցընէր···։—
Հօր Ջէնքերը ծա՛նր էին···՝
Դաւիթ չարժել չէ՛ր կըրնար···։
Ջէնով–Օհան տեսաւ որ ի՛նչ···՝ ճար չկա՛յ···, —
Տըղայ–Դաւիթ չի՛ կըրնար որ Հօր Ջէնքերը վերցընէ··,։
Շապիկ բերաւ, — Զրա՛հ–Պողվըտին 4) —՝ չի՛ կըրնար որ վերցընէ։
Դաւիթ ելաւ որ Գուրզի՛կը պիտի դընէ Իր Գըլուխ՝
Այնպէ՛ս մեծ է՝ կուգայ կ'իջնէ Թեւերուն···,
Գըլուխ, Աչքեր՝ մէ՛ջ կըմըտնեն ամենն ալ···։ —

ՃԳԶ. «Այս Թաւիեր՝ Ձին է Պիտի Վերցընէ»

ՋՍ·474,475,476, Լ·75, Ե·910,1110,714,742,774,909,825, Ջ·՝Ե·910, (Ե·775), Խ·27, (Խ·27), Հ·33,427, (Հ·380,428), Ճ·105, Ա·20, (Կ·66), Կ·19, ՋՎ·2·

Այն ժամանակ՝ Հօրեղբայրը Ջէնով–Օհան 1) ի՞նչ ըսաւ· —

---

1) Ս·159՝ *Ծոան–Վէգի՛ն է կ'բերէ կուտայ Քեռի–Թորոսին, Ք·–Թորոսն ալ Դաւիթին։* 2) Ա·57՝ նետ ու աղեղ։ 3) *Տե՛ս Հատ·* 236։ *) Եղունիկ, *Աղաւնի։* *) Գրվրալ, *Փալփլիլ։* 4) Ա·57՝ Նետ ու աղեղ։
1) ՋՍ·474՝ Մաճուկ։

— «Որդի՛,–ըսաւ–, Դուն կարող չե՛ս Այդ–Բաները վերցընես...»:
= «Ապա ի՞նչպէս պիտի ըլլայ, Հօրեղբա՛յր...»:
— «Այս Բաները՝ Ձի՛ն է պիտի վերցընէ... .
Գիտնաս որ Ան՝ Քու Հօր Ձի՛ն է՝ Հըրեղէն,
Ամեն տեսակ չնորքով ալ լեցո՛ւն է: —
Դիւցազնի–Զո՛ւր կայ,–ըսաւ–,
Մինչեւ այն Զուր չըխըմես՝
Շնորք չե՛ս առներ՝ որ Այս–Բաներ վերցընես 2).
Ինչ ատեն որ Դուն Այդ–Զուրը խըմեցիր *)՝
Նոր այն ատեն Զօրութիւնը Տէր–Աստծուն կ՚առնե՛ս Դուն,
Նոր՝ Քու Ձէնքեր կըվերցընես, — Գորդն ու Թո՛ւր...»:
Տըղայ–Դաւիթ այդ Հաղուստներն ու Ձէնքեր՝
Վերցուց հանեց Բուրջէն դո՛ւրս,
Ըսաւ,= «Հօրա՛ր, դո՛ւրս բեր տեսնեմ՝ ո՞ւր է Իմ Հօր Քուռակ–Ձին»:
— «Որդի՛,–ըսաւ Ձէնով–Օհան 3)–, մատա՛ղ Քեզի՝ Հօրեղբայր.
Գընա՛ մըտիր Մեր Ախոռ՝
Քառասո՛ւն 4) հատ Ձի, քըսան մէ՛կ շարք, քըսան՝ մէ՛կ,
Ախոռին մէջ՝ քառասո՛ւն Դուռ ներս՝ կապո՛ւկ են.
Ո՛ր Ձին որ Քու Սիրտը կ՚ուզէ՝ Քեզի համար ա՛ռ հեծի՛ր: —
Չեռ դիր Մէջքի՛ն, որո՛ւ Քամակ որ իջաւ՝
Այն Ձին՝ Քու Հօր Քուռակ չ՚է՛...:
Ո՛ր Ձին՝ ինչ Չեռ դընես Մէջքին ու կոխես,
Վեր–վե՛ր Թըռի, քացին 5) զարնէ պատերուն,
Կըրա՛կ ելնէ Ոտքերէն...՝
Այն Ձին՝ Քու Հօր Քուռա՛կն է 6). —
Ա՛ն է Քուռկիկ–Ջալալին...»:

---

2) Այլաբանականը՝ իրական պատկերին քով.— Ամպերը մինչեւ որ Ջուրով չլեցուին՝ որոտում, փայլակ ու շանթ չեն տար...: *) Խըմեցիր, եղաւ որ խմեցիր, երբ խմես: 3) Ե·714՝ Մամիկ: 4) Ե·105՝ երեք հարիւր, Ե·714՝ հինգ, Ե·742՝ երկու: 5) Ե·714՝ ասկիմ՝ ուղղել՝ ասացին: 6) Քուռկիկ–Ջալալիի սերունդէ՛ն է:

562. Քառատուն Զիներն Ալ՝ Դաւիթի Հետիհն Տակ Կրկրիհն

Ց·105, Չ·՝Ց·105, Ա·20, Ե·774,1110,805,19,742,775,806,909,1111, 630, (Ե·971,805,1111,909,743,774), Չ·՝Ե·909, Խ·27, Չ·՝Խ·27, Կ·66,19, Հ·428,33,427,380,381, (Հ·33), Չ·՝Հ·380,33, 428, Չ·

Դաւիթ ելաւ դընաց Ախոռ, Դուռը բացաւ մըտաւ Նէ՛րս·
Քառասո՛ւն Դուռներ՝ մէկ–մէկուսի՛ ետեւէն՝
Մէկ–մէկ բացաւ՝ դընաց Նէ՛րս, —
Տեսաւ ամեն Դուռնէն ներսը՝ մէյմէկ Ձուռակ՝ կապուկ է,
*Քառասուն Ձուռակ՝ Իրենց Գարի՛ն կրկըտրեն *):*
Չի՛ դիտեր թէ՝ ո՞ր մէկ Զին է Իր Հօր Ձուռկիկ–Ջալալին···:
Դաւիթ դընաց՝ Ձեռը կոխեց այդ Զիերու Քամկին վրա՛յ, —
*Ո՛րմէկ Զիու Մէջքին վըրայ Ձեռ ճըղքեց *)՝*
*Այդ Զիու Պորտն իջաւ հասաւ չուր *) Գետի՛ն···:*
Ան ալ — Դաւիթ — ի՞նչ ըրաւ···,—
Շարքը բըռնեց՝ դընաց ելաւ մինչեւ Ծայր,
Քառասուն Զիուն Մէջքին կոխե՛ց Իրեն Ձեռ՝
*Քառասունին ալ՝ Քամակ ճըմա՛ւ *), մէ՛կ Զին անգամ չըտոկա՛ց···,—*
Քառասո՛ւն Զին ալ՝ Իր Ձեռքին տակ տըզղեցա՛ն···:
*Դիժարացա՛ւ *) Դաւիթ, ըսաւ՝ «Ատոնք Իմ Հօր Զիեր չե՛ն··· ·*
Կըուլ–Զի չե՛ն այս Զիեր — ·
Ո՞ւր է Ձուռկիկ–Ջալալին···»:
Ախլքը բանի չըկըտրե՛ց այդ Զիերէն 1)՝
Եկաւ ելաւ Դըրան կո՛ւշտ:
Դաւիթ ելաւ Ախոռէն դո՛ւրս, դարճաւ եկաւ Հօրեղբօր,
— «Է՛յ Հօրեղբա՛յր,–ըսաւ Ջէնուվ–Օհանին–,
*Դուն Չի չե՛ր որ պահած ես *) ···,—*
*Երկարակա՛նչ *) ես պահած···:*
Ես դընացի մըտայ Ախո՛ռ, Քառասուն Զիերն ալ տեսա՛յ·

---

*) (Գարի) կտրել, *Ըրփը՛ռ–խրփըռ ուտել* (ձիու): *) Ճղքել, *Թէթեւ կոխել:* *) Զուր, *Մինչեւ:* *) Ճմլել, *Կքիլ, տափակնալ, փոսանալ:* *) Դիժարացնել, *Դառնասրտիլ:* 1) *Հասկցաւ որ անոնց–մէ օգուտ չկայ:* *) Պահել, *Խնամել, բուծել:* *) Երկարականչ, *Էշ:*

Ո՛րմէկ Զիւռ Քամկին վըրայ Զե՛ռ դըրէ՝
Փորը տըւաւ չուր Գետին...:
Այն Զին որ Իմ Զեռքին տակը չի՛ տոկար...՝
Այդ Զին կ՝երթայ կըռիւ՛...:
Ելիր՝ Ինձի Զի՛ տուր հեծնեմ՝ որ Զիս տանի կըռիւ՛...,—
Քեզնէ կ՝ուզեմ՝ երթաս բերե՛ս Իմ Հօր Քուռկի՛կ–Ջալալին...»:—

564. Զէճով-Օհան՝ Քուռկիկ-Ջալալիին ցեղը կ՝ցուցնէ Վ. Բրջապէս

Ե·715,630,1111, (Ե·1111,630), Զ·՝Ե·630, Ա·55, (Հ·428), ՉՍ·476, 477, Չ·՝ՉՍ·477·

Զէնով–Օհան տեսաւ ուրիշ ճար չըկա՛յ՝
*Ըսաւ, — «Որդի՛, Զին փախեր է կո՛ *) Սեւ–Սա՛ր...:*
Ա՛յսչափ տարի ինչ Քո Հայրը մեռեր է՝
Անոր Քուռկիկ–Ջալալի Զին՝ պահեր էինք Թառին տակ...,
Տարիներով 1)՝ Հաւեր վըրան ծըրտա՛ծ են...,
Իր ահէն ալ՝ Մենք չե՛նք կըրցեր մօտ երթալ...:
Հիմա՝ այդ Զին փախե՛ր եղեր է Սեւ–Սար,
Ա՛լ Մենք Անիկ չե՛նք տեսեր...»:
= «Ապա,–ըսաւ–, ի՞նչ պիտի–՛լլայ, Հօրեղբա՛յր...,
Որ Մենք այդ Զին դըտնենք, առնենք՝ ու բերենք.՞.՞.՞»:
Զէնով–Օհան ի՞նչ ըսաւ.—
— «Տըղա՛յ,–ըսաւ–, այս Հինդշաբթի օր կ՝առնես՝
Մէկ Տիկ Գինի՛, մէկ Տիկ Ա՛ղ,
կ՝երթաս կ՝ելնես այդ Սեւ–Սա՛ր:—
Այնտեղը կայ՝ մէկ Աւազա՛ն, մէկ Աղէ՛ղ·
Գինին կ՝լեցնես Աւազա՛ն,
Աղն ալ Աղէ՛ղ կըցանես:
կը գատանաս՝ փո՛ս կը փորես՝ կը մըտնես այն Փոսին մէջ,—
Որպէս զի Զին երբոր գայ՝
Անոր Քամին Քեզ չընեսէ՛՝ ըսպանէ՛...,—
Այն ժամանակ՝ կ՝ելնես այն Զին կըբռնե՛ս:
Այն Զին որ Դուն չըբռնե՛ս ալ՝ Քու Զեռքով՝
Աըղէն Ան որ Աղն ուտէ՝

---

*) Կո՛, Ահա՛ հոն: 1) Ե·630՝ երք տարի կար:

Ու Գինին ալ՝ խըմէ Աղին վըրայէն՝
Ինքը կուգայ՝ Քեզ կըգըտնէ՝ ո՛ւր որ ես,—
Կ՚ելնես առջեւ, ու՝ թէ կըրնաս՝ այդ Զին կա՛ռնես՝ ու կուգա՛ս»:

ՃՁՃ. Դաւիթ Սեւ-Սարէն Կ՚բռնէ Քուռկիկ-Ջալալին

ՀՍ·478,479,480,481,482,483, Հ·՝ՀՍ· 478,479,481, (Կ·66), Հ(Ա·57,51), Ա·57,60, (Ա·51), Հ·՝Ա·65·

Հինգշաբթի օր՝ Դաւիթ ելաւ ու առա՛ւ՝
Մէկ Տիկ Գինի՛, մէկ Տիկ Ա՛ղ,
Գընաց ելաւ Սեւ–Սարի Գլուխ՝ Իր Հօրեղբօր ըսած տե՛ղ,
Աղը փըռեց Աղէգին վրա՛յ, Գինին լեցուց Աւազա՛ն,
Ու քըչիկ մ՚ որ զատնացաւ՝
Դարձաւ մէկէ՛ն՝ ու ըսաւ,—
«Ծօ՛ Առիկ ի՞նչ Զի ըլլայ որ...՝ Անոր Համին Հիս նետէ՛.՞.՞.՞»:
Ան ալ երբեք Փոս չըփորեց՝ մըտնէր մէջ,
Ինքիրենը՝ քիչ մը հեռուն՝ պըպըղեցաւ՝ ըսպասեց:
Զին հոտն առա՛ւ, — Գինիին հո՛տն ու Աղի՛ն...,—
Ու եկա՛ւ...:
Զին որ եկաւ՝ Զիուն Համին՝ Դաւիթ նետեց Բերնի վրա՛յ...:
Զին ալ եկա՛ւ ու հասա՛ւ...,—
Տեսաւ որ Աղ լըցած Աղէգ, Գինին լըցած Աւազա՛ն,
Հասա՛ւ Աղէգ 1), Աղը լըզեց ու կերա՛ւ,
Աւազանէն Գինին խըմեց ու ըսաւ.—
— «Օրհնեա՛լ Աստուա՛ծ...,
Տասը տարին 2) լըրացա՛ւ...՝
Որ ձեւ–չափով, երախտիքով՝ Կե՛ր եմ կերեր, Ջո՛ւր խըմեր... .
Այօր հազի՛ւ՝ առանց չափի՝ Կե՛ր եմ կերեր, Ջո՛ւր խըմեր...»:
Ու Զին ելաւ՝ ինկա՛ւ այդ Մե՛ծ Սարին մէջը՝ կա՛ն եկաւ.—
Գընաց տեսաւ՝ որ Տըղայ մը՝ Բերնի՛ վըրայ ինկեր է·
Ան ալ — այդ Զին —՝ Մըռուի՛ք) տըւաւ՝ Տըղան չըտակեց վեր՝ Համկին:*
Դաւիթ այնտեղ՝ երբոր ղարձաւ Համկին վրա՛յ՝
Տեսաւ առջեւ Զի՛ մը կայ,—

---

1) Աղէգ՝ համեմատեալ Արալէզ–ի հետ: 2) ՀՍ·481՝ հառաւած տարին: *) Մռուք, Շրթունք (մասնաւորի՝ վարին):

Մէկ հըրեղ՛էն Քուռա՛կ–Ձի՛ . . .,—
Աչքը լինկաւ Ձիուն երես՝ նայեցա՛ւ,
Ու ներքեւէն, պառկո՛ւվ տեղ,
*Ձեռքը նետեց՝ բըռնե՛ց Ձիուն Ոսկի Բաշ *):*
Ձին խըրխընջա՛ց՝ ելաւ երկու Ոտքին վրայ 3):
Տըղան՝ «Օրհնեա՛լ, բարերա՛ր Տէր» ըսաւ այնտեղ ու դարձաւ՝
Ձիուն ճակտին 4) այնպէ՛ս կըռուվի մ՝ իջեցուց . . .՝
Որ Ձին՝ իր տեղ՝ Տըղուն Ձեռքէն դասն առա՛ւ . . .,—
Տըղի Ձարկը մէ՛կ անդամէն ճանչըցա՛ւ . . . :
Դաւիթ այնտեղ բը՛ռռաւ ելաւ Ձիուն վրայ :—

ՃԿԸ. «Թըլսան-Դաւիթ»

Ձ.՝ Ե.52ա.

Տըղայ–Դաւիթ չընորքներէ՛ն է եղեր՝
Շա՛տ լաւ բըռչիլ ու ցատկել . . . .—
Անոր համար՝ ԹԸՌԼԱՆ–ԴԱԻԻԹ է կոչուեր : —
Դեռ երախա՛յ ժամանակ՝
Երբ իր Ծընողք 1) Ձեռքի վըրայ խաղցընելո՛ւ եղեր են՝
Դաւիթ դէպ վե՛ր, դէպի երկի՛նք կըբռչի ու վա՛ր կ՛իջնէ . . .2) :

---

*) Բաշ, վիզի ցցուն մազերը : 3) Պէտք է հասկնալ՝ ետեւի՛ երկու ոտքերուն վրայ բարձրացաւ : Ա.57՝ եկաւ տղի վրէն (պատումին բերումովը) : 4) Ա.57՝ գլխուն, Ա.60՝ երկու ականջին մէջտեղը :

1) Ծնողք՝ այստեղ՝ պէտք է հասկնալ Մայրը (*մէկ ամիսի չափ մնայն. Հայրը մեռած էր եւ Մայրն ալ ետեւէն մեռաւ ու Դաւիթ որբ մնաց, Տե՛ս Հատ. 267,268,272*), կամ՝ *Մեծ–Մայրը*, եւ կամ դինք խնամող ազգականները. *Նոյնիսկ Մըսրամէլիքի Մայր՝ Խամիլ–Խաթունը, Տե՛ս Ծնիք. 2* : 2) *Հատ. 280՝ Օրօրոցի մէջ՝ չունչին ուժէն՝ կապերուն վեր ելնել՝ վար իջնելու պարագան՝ հաւանաբար՝ ծնունդ տուած է քռչիլու այս զրոյցին, որ Թեւա–Թորոս Իշխանի պէս [Հատ. 220] արուաշարժութեան, արտակարգ ճկունութեան այլաբանական պատկերն է (Ե. Ծոլքն.՝ էջ ԺԴ.)* : *Համեմատել նաեւ՝ Թըլ–հըրիկ կոչումը՝ Սասմայ Քաջերու համար (Ցվնծ. Կ.123)* :

567. ՋԻՈՒՑ ԵՒ ԴԱՒԻԹԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ջ·,Հ·380,428,33,381,34,429,Ջ·(428,381,33),(Ց·106),Ց·106,Ե·910,19, 743,775,805,1111,776,745,634,806,20, Ջ·՝Ե·1111,19,20, Ջ(Ե·1111, 19,805,775,743,776), (Ա·20,66), Ջ·՝Ա·20,21, Ա·20,66,21,36,(Կ·66, 19), Կ·19,66,22,68, (ՋԿ·517), ՋԿ·518, Խ·28, Ջ·՝Խ·28, (Խ·28), Ջ·՝ՋՍ·484, ՋՍ·484,485,486,487,488,489,490,491,492·

Դաւիթ տեսաւ՝ Իրեն առջեւ եկեր կեցեր՝ մէկ Ֆուռակ…,—
Կապոյտ, հրեղէ՛ն մէկ Ֆուռա՛կ… 1),
Որ Աչխըրքի վըրայ չըկա՛յ Իր նըման…:
*Դաւիթ որ *) Ձեռ տարաւ Ջիուն՝ Թըռաւ Անոր Ֆամկին վրայ՝*
*Ձին խըրխընջա՛ց, տըրճի՛կ տըւաւ *), վեր–վե՛ր նետեց իր Ոտքեր…,*
Ըսճանչըցա՛ւ որ Մըհէրի Տըղա՛ն էր դ՚Ինք Հեծնողը,
*Ֆամակ վերցո՛ւց՝ տըփեց *) կապոյտ Ոճորքնե՛ր… *), —*
*Մա՛ղ մը *) Ձեղուն՝ տարաւ ղէ՛ն… 2).*
Սըմեր դարկաւ Քարէ–Քա՛ր…,
Կըրա՛կ ու բո՛ց գընաց Ոտքին առջեւէն…:
*Աքուց *) չ՚առա՛ւ Դաւիթին…,*
Դըպաւ Սարին ու Քարի՛ն…,—
Սարը փըլա՛ւ, Քարը փըլա՛ւ…, ժայռեր տեղէն չըրջեցա՛ն…:
Մէկ Ոտքին ծայր՝ դըպաւ Դաւիթի ճակատի՛ն,
Դաւիթ ճակատ(ն) արիւնեցա՛ւ քիչ–մը–տեղ…:—
Դաւիթ լացա՛ւ, գոռա՛ց, կանչե՛ց ու ըսաւ· —

---

1) ՋՍ·476—484–ը՝ *միակ փոփոխակն է որ կուտայ Ֆուռկիկ–Ջալալին Սեւ–Սարէն բռնել–բերելու պատմուածքը: Միւս բոլոր փոփոխակները կ՚պատմեն ուրիշ ձեւով. —Ֆառաւուն Ջիերու Ախոռին ներսը՝ առանձին տեղ մը կապուած է Ֆ.–Ջալալին, եւ Դաւիթ Ախոռէ՛ն է որ դուրս կ՚բերէ զ՚այն:* *) Որ, *Ինչ առեն որ, երբոր:* *) Տրճիկ տալ, *Ետեւի ոտքերը վեր–վեր նետել (աքացի զարնելու):* *) Տփել, *Զարնել:* *) Ոճոր[է], *Բարձունք, կամար, ձեղուն:* *) Մաղ մը, *Մէկ հիւսուածք, մէկ ձեղնամաս, հմմտ· maille = հիւսք, ցանց:* 2) Խ·28, Հ·428, Կ·66, Ե·19՝ *Ախոռի մասին կըխօսուի: Պատշաճ է նաեւ՝ բաց օդի, երկնքի համար:* *) Աֆուց, *Աքացի,* Ե·775՝ *ասկի՝ ուղղել՝* աֆացի:

— «Ես ի՞նչ *) ընեմ, է՛յ իմ Քուռկիկ–Ջալալին...,
Ես գիտէի *) որ Դուն պիտի ազատէի՛ր Ձիս կըուէն... 3)»:
Ձին ի՞նչ ըսաւ Դաւիթին...,—
Ատծո՛ւ կամքով՝ Ձիուն լեզո՛ւ եկաւ հոն,
Ձին՝ Դաւիթի հետ գըրուցե՛ց ու ըսաւ.—
= «Տըղա՛յ,–ըսաւ–, Սասունա՛յ Տուռ, հոդածին,
Դո՞ւն ալ եկար՝ գըտար Ձիս... .—
Աստուած ալ Ձիս՝ Քեզի՛ արժան ըրեր է.... .
Ես ուզենամ՝ մէ՛կ օրւան մէջ բոլո՛ր Աչխար կըքանդե՛մ...,
Եւ ուզենամ...՝ կը չինե՛մ...:
Դուն իմ Տէր չե՛ս..., Դուն ատ պիտի ի՞նչ ընես...»:
— «Քեզ պիտ՝ հեծնեմ,–ըսաւ Դաւիթ–, քըշեմ երթամ կըռւի՛ր...»:
= «Դուն այդչափ ալ կարողութիւն ունի՞ս՝ կ'ելլես իմ Քամակ.՞.՞.՞»:
— «Ունի՛մ,–ըսաւ–, Աստուծով...» 4):
= «Քեզ կըխաղցնեմ Ամպերուն ու Երկինքց հե՛տ...,
Կըհանեմ Քեզ՝ Արեգակին՝ կըվառե՛մ...,
Մոխիրի պէ՛ս կ'ընեմ Քեզ...,—
Ապա Դուն ի՞նչ պիտի ընես՝ վեր՝ Քամկիս...»:
— «Ես կըխաղամ 5) Քու Փորի 6) տակ 7), Քու Քամակը կըվառուի՛,
Ես կը մընամ ողջ–առո՛ղջ...»:
= «Քեզ կըզարնեմ անտակ *) Ծովեր՝ կըխեղդե՛մ...8),
Ձուկեր ուտե՛ն Փոր–փըսորդ...,—
Ի՞նչպէս պիտի Դուն պահուըտիս Փորիս տակ...»:
Դաւիթին ըսաւ, — «Ես կըխաղամ՝ կ'ելնեմ՝ վեր՝ Քու Քամակի՛ն 9),
Դուն կըխեղդուիս՝ Ես կըմընամ Նորէն ո՛ղջ...»:
= «Քեզ կըզարնեմ Սարեր–Ձորեր՝ կըցըրուե՛մ...10),
Կուտամ Քամուն՝ հող ես՝ Քեզ հո՛ղ կըդարձնեմ...,
Դուն չե՛ս կըրնար Ձիս հեծներ...»:

---

*) Ի՞նչ, Ի՞նչպէս: *) Գիտէի, Կը կարծէի: 3) Այսինքն՝ կըռիւի մէջ իմ ունեցալիք դժուարութիւնները պիտի յաղթէի՝ Քու շընորհիւ: 4) Սանասարի պէս (Հատ. 34): 5) Ե.806՝ Կ'ոլըրուիմ: 6) Հ.428՝ Վիզի: 7) Հ.381՝ Մէջ Քու երկու թեւ: *) Անտակ, Անյատակ, Խորունկ: 8) Հ.428՝ Քեզ կ'զարնեմ գետին, Ծօթը տապակ կ'երթաս գետին: 9) Ե.743՝ պիտի մտնեմ Քու բիբ: 10) Ե.806՝ պիտի զարնեմ Քարերու, Ծառերու մէջ՝. պիտի փշրեմ, Կ.68՝ «Կը յաղթեմ» ուղղել՝ «Կը ցրվեմ»:

Դաւիթն ըսաւ, — «Դուն ո՛ր կողը զարնես Սար՝
Ես կըխաղամ մէկա՛լ կողմ,
Կ՚ըլլամ մէկ Մազ՝ ու կըկախուիմ Քու Պոչէն...,
Կորեկի-Հա՛տ պիտի դառնամ՝ ու մըտնեմ ես Քու Ականջ 11)»:
= «Է՛յ Հողածին, Շունչըս հանեմ՝ Շունչիս առջեւ կըքըսի՛ս...»:
— «Ես ալ կ՚ըլլամ մէկ Զիւռը՝ կը հեծնեմ Քու Քամկին վրա՛յ»:

Այնտեղ՝ Զին ալ՝ ուրախացա՛ւ 12), Մէջքը վերցուց ու ըսաւ.—
= «Տըղա՛յ, Դաւի՛թ, դէ՛հ,—ըսաւ—, որ այդպէ՛ս է՝
Հարի՛ւր տարի՝ ես Քու Հօր տա՛ւն եմ կեցեր,
Ու ճիւքի՛ւն եմ ըրեր...:
Հարի՛ւր տարի,— աւելի՛ ալ —, Քե՛զ ճիւքիւն պիտի-Ընեմ...,—
Ես Քեզի Զի՛, Դուն Ինձ Տէ՛ր... 13).
Իմ անո՛ւն ալ՝ կ՚ըսեն ՔՈՒՒԿԻ-ՋԱԼԱԼԻ(Ն)...:
Տըղա՛յ,—ըսաւ—, ա՛յսքան տարի՝ ինչ Քու Հայրը մեռա՛ր է՝
Քու Հօրեղբայր 14) Զիս չէ՛ պահած խընամած...,
Առանց Գարի՛ եմ մնացեր...,
Բանդի պէս են պահեր Զիս...,—
Ի՞նչպէս կըսի՛ տանիմ Քեզ...»:
Ու երգելու պէս ըսաւ.—

= «Այն օրէն ինչ Դաւիթ-Մըհէր մեռա՛ր է՝
Ես աչխըճա՛մ եմ կեցեր... .
Այն օրէն ինչ Դաւիթ-Մըհէր մեռա՛ր է՝
Անկեր, աչքո՛ւր եմ կեցեր... .
Կ՚ելնես՝ լա՛ւ մը խըճա՛մ կուտաս Դուն Ինձի,
Քըշե՛ս՝ երթաս կըռիւի՛...»:

Դաւիթ այնտեղ ուրախացա՛ւ, հասաւ պագե՛ց Զիուն Գլուխ,
«Թէ ճիւքի՛ւն ընէ Ինձի՝ ահա այս Զի՛ն է»,—ըսաւ,
*Բռնե՛ց Մազերն Իրեն Զիուն, մաժե՛ց *) Աչքերն ու Գլուխ,*
Ու Զիուն ալ՝ ի՞նչ ըսաւ.— 15)

---

11) Ե·806՝ Պիտի մտնեմ Քու բերան: 12) Հ·428՝ լացաւ: 13) Ե·20՝ Ես Քե՝ դու ձը տես՝ *ուղղելի՝* Ես Քե ձի, դու ձը (*ինձի*) տէր: 14) Ե·20՝ Քո հօրեղբայրներ (*զիս չեն պահած*): *) Մաժել, *Շոյել*: 15) *Երգով*:

— «Դալխի՛դ մեռնիմ, Իմ Հօր Քուռկի՛կ–Ջալալին…,
Աստուած Արե՛ւ է տըւեր՝
Քեզ Տէր չըկա՛ր՝ ես կայներ եմ Քեզի Տէ՛ր… .
Քեզի խրճամբ տըւող չըկա՛ր՝ ես խրճամո՛ղ եմ Քեզի… .
Քեզ կեր ու Ջո՛ւր տըւող չըչկա՛ր՝ ես կեր տըւո՛ղ եմ Քեզի…»:

Զին իր Քիթը պարղեց՝ հոտոտա՛ց ու ճանչըցա՛ւ Իր Նոր Տէր,—
«Ասի այլեւս Զիս հեծնո՛ղ է»,–ըսաւ այնուեղ՝ ու կեցա՛ւ:

568. Դաւիթ Կ'լուայ-Կ'խնամէ Իր Զին

Ց·106, Զ·՝Ց·106, Ա·20,21, Զ·՝Ա·20, (Ա·21), Ե·1111,20,910,806, 775,630,715, Զ·՝Ե·20,630, (Ե·1111,630,775), (Կ·19), Կ·66, Զ(Կ·66,20), Հ·33,381, Զ·՝Հ·381, Հ·381, Խ·28, Զ(Լ·75,76), Լ·76·

Դաւիթ ելաւ՝ Զին քաշեց դէ՛ն, Զեռը տըւաւ Ֆամակին՝
Նայեց տեսաւ՝ Հաւ ու Հաւքեր վըրան ա՛յնչափ Ծըրտած են՝
Մէկ Թիզ Մե՛րտ էր Բըռներ Քուռկիկ–Ջալալի Ֆամակին…,
«Պէտք է,–ըսաւ–, առնէ այս Զին լըւամ–մաքրեմ, կերակրեմ,
Ու լաւ նայիմ՝ որ Թըշնամիք չիգա՛ն խըլեն ու տանին»:
Ան ալ քաշեց իր Զին բերաւ Սասմանց–Տուն.
Բերաւ կեցուց Պառ՛ւին Դուռ:
Պառաւ երբոր Քուռկիկ տեսաւ՝ ուրախացաւ ու ըսաւ.—
— «Որդի՛,–ըսաւ–, ահա ա՛յդ է Քու Հօր Քուռկիկ–Ջալալին»:
Դաւիթ Ծոցէն ափ մը Ոսկի՛ հանեց տըւաւ Պառաւին,
Ըսաւ, = «Մամի՛կ, Դուն կ'երնես՝
*Երկու Գըղինճ *) Ջո՛ւր կըդընես–տաքցընես,*
Հօրեղբայրս ալ՝ մեծ կըտոր մը աղիկ Օճա՛ռ առնէ գայ՝
Իմ Զին լա՛ւ մը կըլըւա՛նք ու կը մաքրե՛նք»:
Պառաւ բերաւ՝ երկու Գըղինճ Ջո՛ւր տաքցուց,
Դաւիթ գընաց Հօրեղբայրը հանեց վե՛ր,
Ձէնով–Օհան Ա՛չքեր բացաւ՝ տեսաւ Դաւի՛թն է՝ կեցեր.
Ելան եկան Գետի Մե՛ջ: —
Դաւիթն ըսաւ, — «Դէ՛, Հօրեղբա՛յր, Դուն Իմ Ձիուն Գլուխ բըռնէ՛,
Մամիկն ու Իր Աղջիկն ալ Ջո՛ւր լեցընեն՝
Որ ես Իմ Զին լա՛ւ մը լըւամ օճառեմ»:

---

*) Պղինձ, Սան, կաթսայ:

*Օհան ըսաւ, = «Ես չե՛մ իշխեր *), ա՛յ Տըղա՛յ··· .*
Այդ Զի՛ն ըսես՝ Աժդահա՛ր է···, Ինձ կըզարնէ՝ կըճըդէ՛···»:
Դաւիթ զարճաւ մէկ Զեռնուվը Զին բըռնե՛ց,
Մէկ Զեռնով ալ՝ Զո՛ւր լեցուց ու Զին լըւաց:
Զին կեցե՛ր է, ձայն չի՛ հաններ, չի՛ շարժիր:
*Դաւիթ տեսաւ իրար չ՚ա՛ռներ *) Իր Քուռակ՝*
Զիւն Դըլուխ թո՛ղ տըւաւ,
Օճառ բըռնեց մէկ Զեռը,
Մէկ Զեռնով ալ Աման զարկաւ Զըրին մէ՛ջ,
Զուրը լեցուց Զիւն վրա՛յ, —
Այդ մէկ կըսոր Օճա՛ռն ամբողջ՝ Զիւն վըրայ տըրորե՛ց,
Փըսոր մ՚ Օճառ չըթողո՛ւց··· .
*Եօ՛թ դիր *) լըւա՛ց, մաքրեց, սանրեց 1) Իր Քուռակ:*
Ըսաւ, — «Գացէ՛ք, կօտ մը Գարի, Թուղ ու Խըմո՛ր բերէք Ինձ»:
Զինով–Օհան ղըրկեց իսկոյն, բերե՛լ տըւաւ Զիւն կեր(ն),
Դաւիթ վերցուց՝ ղըրաւ Իրեն Զիւն առաջ՝ որ ուտէ:
Զին Իր Գարին թող կըտրէ հոն, Մինք ալ զառնանք Դաւիթին: —

569. Քեռի–Թորոսին Ծուցմունքները

Ա·57, 2(Ա·57), 2(Լ·75), 2·՝Լ·75,24, Լ·24, (Ս·159), (Ե·574), Ե·574,20,19, Խ·29, (Խ·20).

Դաւիթ ելաւ՝ գընաց գըտա՛ւ Քեռի–Թորոսն ու ըսաւ.—
— «Քեռի՛–Թորոս, Բանլիքները առե՛ր եմ···,
Իմ Հօր Սարքի Դո՛ւռն ու Աղկղը բացե՛ր եմ···,—
Կըռւիւ–Զին՝ հրեղէ՛ն Քուռկիկ–Ջալալին ալ բերե՛ր եմ···,—
Վեց–եօթ Հոգի՝ Մա՛րդ ուղարկէ՝ Թող երթան՝
Ի՛նչքան Սարք 1) կայ՝ բերեն այստե՛ղ բոլորն ալ:
Ա՛լ քանի որ այդպէս Քուռակ մ՚ ու Թո՛ւր մ՚ ինկաւ Իմ Զեռքը 2)՝
Հիմա այլեւս ժամանա՛կն է, Մօրեղբա՛յր,
Որ Ես երթամ Մէկիքի 3) դէմ կըռւիւ··· .—

---

*) Իշխել, Համարձակիլ: *) Իրա՛ր առնել, Շարժիլ, երերալ: *) Դիր, Անգամ: 1) Ե·1111՝ արաբի թ-իմար մը տուաւ:

1) Զկ·Ծնթ· 83–85՝ թ-ախտումնը–Մըհէրիմ: 2) Լ·75՝ Պատումին բերումովը՝ Դաւիթ Ջոջ–Միխոճ (? Ջոջ–Մըհէր)ին է կ՚ըսէ: 3) Լ·75՝ Ջանիզատի (որ Մըսրամէկիքն է):

Ho՛սք եմ տըւեր ես Անոր…»։
Քեռի–Թորոս՝ դարձաւ այնտեղ Իշխաններուն ի՞նչ ըսաւ. —
— «Բերէ՛ք,–ըսաւ–, Դաւիթ–Տըղան՝ վանահայրին քո՛վ ճամբենք,
Հոն, Մարութայ–Աստպարածին–Բարձրիկ–վա՛նք,
Երթայ օրհնէքն առնէ՝ դա՛յ…»։
Ու դառնալով Դաւիթին, —
Ըսաւ 4), — «Որդի՛, ա՛լ ի՛նչ կ՛ուզես՝ ա՛ն ըրէ,
Բայց ես ի՛նչ որ ըսեմ Քեզի՝ ան ընելու չմոռնա՛ս… .—
Առաւօտուն վե՛ր կ՛ելնես՝
Կ՛առնես Քառասուն 5) Անծին–Երինջ՝ կըտանիս՝
Մարութայ–Բարձր–Աստպարածին՝ Իրեն Դո՛ւռ…,
Քահանայով, ժողովուրդով՝ Մաս–Պատարա՛գ կ՛ընես հոն… 6),
Մատա՛ղ կ՛ընես Քառասուն Անծի՛ն–Երինջներ… .
Կ՛երթաս՝ Ոսկի–Արկղին առջեւ՝ Քո Ծունկ Գետի՛ն կըզարնես…,
Քո Աստուա՛ծը կըկանչես…,—
Թէ որ Դո՛ւն ալ՝ Քու Հօ՛ր նըման՝ արժանաւո՛ր կըտրիճ ես՝
Արկղին Դուռը իրմէն կ՛բացուի՛ Քու վըրայ,
Աջ–Փետրազին կ՛ելնէ կուգայ՝ Քու Աջ–Թեւի՛ն կը կենայ.
Թաղը դընես Գըլուխի՛դ…,
Թուր–Կէծակին կախես Կո՛ղդ…,
Ծանրիկ–Գուրզը բըռնես Ձե՛ռդ…,
Հըմայեկ Աչ Մուրբ–Նըշա՛նը դընես Մո՛ցդ…,
Հեծնե՛ս Քու Ձին՝ հրեղէն Քուռկի՛կ–Ջալալի՛ն…,—
Նո՛ր Դուն երթաս կըռւի՛ւ…»։

570. Քեռի-Թորոս՝ Դաւիթը կ՛ուսոի վանահօր

Զ(Լ·24), Զ·՝Լ·24, Լ·24, (Լ·8), Զ(Ս·159), Ս·159, Կ·121, Զ·՝Ա·57, Ա·57, (Ա·21), (Հ·33), (Ե·574)·

Ա՛լ Դաւիթն էր…,—
Մէկալները տըփե՛ց հանեց Ծունէն դո՛ւրս,

---

4) Լ·75՝ Մամիկը։ 5) Լ·24՝ տասը հատ։ 6) Պատկերը դրեթէ նոյն է՝ Տրդատ թագաւորի եւ պալատականներու՝ հեթանոսութենէ քրիստոնէական կրօնին դարձի հանդիսաւոր արարողութիւններուն հետ։

Քեռի-Թորոս բերաւ կեցուց Դուռին դէմ,
Իր Ոտ ճեղքեց՝ ճանկ մ' Ա՛ղ լեցուց Վէրքին մէջ՝
*Որ մըրմըռայ *)՝ չըքնի...,*
Հըսկէ՝ մինչեւ Լոյս բացուի...:
Քո՛ւն թէ արթուն՝ Դաւիթ տեսա՛ւ երազով՝
Որ Մարութայ-Աստպարածին Իրեն կ'ըսէ՛, — «Է՛ Դաւիթ,
Քու թեւիդ վրայ՝ Վէ՛րք կըբացուի՝ չըվախնա՛ս...,—
Մըսէ-Ա՛չը կըպատուաստուի 1) կըմընայ Քու Զա՛խ Թեւին 2)...»:

Առտուն որ Լոյս բացուեցաւ՝
Բերաւ լըսա՛ց Ոտքին Վէրքը, Դե՛ղ դըրին ու կապեցին:
Քեռի-Թորոս՝ առաւ Դաւիթ՝ եկաւ դո՛ւրս,
Քահանաներն ու Ժողովուրդ՝ բերին Քառասուն-Երինջներ,
Առին դացին Մարաթուկի Աստպարածին Բարձրիկ Վանք 3):
Քեռի-Թորոս՝ Վանահայրին Ո՛տն ինկաւ 4),
Ըսաւ, — «Եօ՛թ օր՝ ժամանա՛կ է մնացեր Մեզ՝
Որ Բաղդատի Կըռապաչո՛ւի Թագաւորը, այդ Մէկին՝
Մեր Քաղաքը՝ առ-ու-գերի՛ ընէ՝ առնէ ու տանի...:
Այս Եօթ օրը, դիշեր-ցերեկ, Աղո՛թք ընես Մեզ համար,
Ու Պատարա՛գ մատուցես՝
Որ Այս-Տըղան լեցուի՛ Աստծու չընորքով,
Քըշէ երթայ՝ պատասխա՛ն տայ Թըշնամուն 5)...»:

571. Դաւիթ Կ'լեցուի Աստծու Շնորհներով

Ա·57, Ա·21, Զ·՝Ա·21, Ց·106, 35ա·, 36ա·, 37, Ե·574, 20, 512, Զ·՝Ե·512, 574, Ս·159, Լ·24, Հ·33, Զ·՝Հ·33, Խ·29, 29ա·, Չ·

*Վանահա՛յրն էր, — առաւ *) այնտեղ լացո՛վ-լոցով աղօթել·*

---

*) Մրմռալ, կսկծիլ: 1) Պատուա՞ստ՝ Ախի ձեւով, մուխսի՞, հաջի..., Թէ՞՝ պատերազմի մէջ՝ բնական վիրաւորման ակնարկութիւն: 2) Կ·121՝ աջ թեւին: 3) Տե՛ս Հատ· 198 (Առձ· Մհր·): 4) Հմմտ·՝ Տրդատ Թագաւորի՝ իր մեծաւորներով երթալ Գր· Լուսաւորչի Վիրապը, ու խնդրել որ ելնէ դայ, Աստուածմէ դիւթիւն խնդրէ իրենց համար: 5) Հմմտ·՝ Աւարայրի ճակատամարտին օրը՝ Վարդանանց հսկումի ու հաղորդութեանը հետ:

*) Առաւ, Սկսաւ:

Գիչե՛ր–ցերեկ՝ Աստուա՛ծ կանչել, աղաչել,
Որ Այդ–Տըղան՝ Դաւիթ՝ լեցուի՛ Սուրբ Հոգով։
Ան ալ՝ Դաւիթ՝ ի՞նչ ըրաւ, —
Գընաց այնտեղ՝ Սուրբ–Նըշանի Դուռին առաջ կանդնեցա՛ւ,
Պատարագով Մատա՛ղ ըրաւ՝ Քառասուն Անծի՛ն–երինջներ,
Անոնց տաք–տաք Արիւնին մէջ լողացա՛ւ 1),
Խոստովանաւ, Օրէ՛նք *) առաւ իր համար,
Երկու Նըշխա՛րք առաւ դըրաւ Իր Մախաղ,
Եօթ դիր՝ Ծունըը Գետի՛ն դըրաւ՝ աղօթե՛ց,
Իր Աստըծու երեսն ՚ի վեր չա՛տ աղաչեց ու լացաւ, —
Իջաւ Երկնուց 2)՝ *Իրեն համար՝ Սուրբ–Նըշա՛ն մը ու մէկ Սանտր* 3),
[Ու հիմա՛ ալ՝ այդ Սուրբ–Նըշան այնտե՛ղ է, —
Զօրիկի Տուն, ՚ի Գաւա՛ռ]։
Դաւիթ առա՛ւ այդ Սուրբ–Նըշան՝ համբուրե՛ց՝
Դըրաւ Իր Ալ Ծոցի կողմ 4),
Սան՚ըը դըրաւ Զա՛խ Ծոցը 5)։
Ապա դընաց՝ Արկղին առջեւ՝ Գետին զարկաւ իր Ծունկեր,
Մաղթա՛նք ըրաւ Խաչ–Փետրազի՛ն Աստուածմէն,
Լացա՛ւ, գոռա՛ց, աղաչե՛ց...,—
Աստծո՛ւ կամքով՝ Արկղին Դուռը ինքիրենը բացուեցա՛ւ,
Խաչ–Փետրազին Թըռաւ եկաւ վեր՝–Դաւիթի Ա՛ջ–Թեւին,
Իջաւ մինչեւ Մէջկապին *),
[Դաւիթ դեռեւս փոքրի՛կ էր՝
Խաչ–Փետրազին Թիկունքին վրայ չըկեցա՛ւ,
Իջաւ մինչեւ Իր Մէջքին] 6)։
Մըսէ–Խաչ մ՚ալ չինուեցաւ հոն՝ վեր՝–Դաւիթի Զա՛խ–Թեւին 7),

---

1) *Տաք Արիւնի մէջ լողանալու, կամ Արիւն խմելու մասին՝ Տես–նել Հատ. 177՝ ստորէջ, 197, 198 եւ 337։* *) Օրէնք, *Հաղորդու–թիւն։* 2) *Ե.36ս.՝ «եկաւ եկեղեցին համբուրեց, շիտկաւ, պատ փը–լաւ, մէկ հատ Սըբ Նշան դուրս եկաւ»։* 3) *Կոստանդիանոս Կայսրի Խաչին պէս («Այսու յաղթեսցես»)։* 4 եւ 5) *Ալ եւ ձախ կողմեր դրուած այդ Հմայեկները կրնան անջատ զէնքեր սեպուիլ, կամ նոյնն ըլլալ՝ Խաչ–Փետրազինի եւ Մըսէ–Խաչի հետ։* *) Մէջկապ, *Գօտի, մէջքին՝ կապի յատուկ մասը։* 6) *Տե՛ս Հատ. 573։* 7) *Ե.512,574՝ ալ թեւին։*

Դաւիթ ելաւ եկաւ ըսաւ, — «Մօրեղբա՛յր 8),
Մըսէ-Ա՛ստ՛ւած մը եղաւ վէր՛-իմ Զախ-Թեւին...»:
Քեռի-Թորոսն 8) ալ Դաւիթին ի՞նչ ըսաւ. —
= «Մարութայ-Բա՛րձր-Աստղարածնի Հըրա՛չքն է որ Քեզ հասաւ.
Մ՛ել մի՛ վախնար ոչ մէկ բանէ, հէ՛ Դաւիթ...»:—

572. Քեռի-Թորոսը Կ'օրհնէ Ու Կրճաջալերէ Դաւիթը

Ա·57, Ց·36,37, Զ·՝Ց·36, Ս·162, Զ·՝Լ·76,75, Լ·75, Զ(Ե·19), Է·429, (Է·380).

Քեռի-Թորոս՝ Վանահայրէն չընորհակա՛լ եղաւ հոն,
Ելաւ առաւ Տըղայ-Դաւիթն ու տարա՛ւ,
Հարցուց ըսաւ 1), — «Որդի՛, Դաւի՛թ, ի՞նչպէս կ'երթաս կըռիւի...»:
Դաւիթն ալ թէ, = «Է՛հ, Իմ Քեռի՛ Թորոսիկ,
Ուխտ ըլլայ ինձ՝ մինչեւ որ ես Մէլիքի հետ՝ եօ՛թը օր՝
Կանաչ-կարմիր Վըրանին տակ չընըստիմ,
Գառու-Մխով Բըրինձ-Փիլաւ 2) ես չ'ուտեմ՝
Ու Գինին ալ չըխըմեմ՝
Մէլիքի հետ ես Իմ կըռիւ չե՛մ ըներ...»:
Քեռի-Թորոս 3) ուրախացա՛ւ, օրհնե՛ց Դաւիթն եւ ըսաւ. —
— «Ապրի՛ս, Որդի՛, դէ՛ հիմա եր՛ Տո՛ւն դընա,
Պառկէ քընի՛ր, եւ առաւօտ ելիր վե՛ր,
*Հագուէ-սըգուէ՛ Հօրդ Մըհէրի Հալաւներուէն *) ու Սարքով, —*
Նետ-Աղեղն ու Վահան ձըգէ Քամակի՛դ,
Մանրիկ-Գուրզը բըռնէ Ձե՛ռդ,
Հեծի՛ր Քու Ձին՝ հրեղէն Քուռկի՛կ-Ջալալին,
Կանչէ՛ Աստուած՝ ու դընա՛. —
Աստծու Աչքը, Որդի՛, վըրա՛դ Թող ըլլայ...
Դուն Քու Աղօքն 4) ու Ամուսնքը 5) ոչ մէկ առեն չըմոռնա՛ս.
Ամեն անգամ որ նեղութեան մէ՛ջ իյնաս՝
Կանչես ըսե՛ս Քո «Ցիշամ»...»:—

---

8) Ե·574՝ Հօրեղբայր՝ Զէնով-Օհան:

1) Ց·36՝ Քեռի-Թորոսիկը: 2) ԶԿ·552՝ ձաւար (*պուլղուր*): 3)Լ·76՝ *պատուհին բերումովը*՝ Մամիկ: *) Հալաւ, *հագուստ*, *զգեստ*: 4) Լ·76՝ Ներսէսի (*աղօթքը*, = «*Հաւատամ, խոստովանիմ*»...): 5) *Այսինքն*՝ Ցիշամ-ը:

573. Դաւիթ՝ Հօր Սարք Կ'փորձէ

Ե·18,804,805,910,630,573,775,574,715,825,971, 1006,1110,20,743, 972,21, (Ե·804,574,630,715,1110,512,825,910,1106), Զ·՝Ե·971, Հ·380,381,33,429, Զ·՝Հ·429, (Հ·429), Զ·՝Ճ·36,106, (Ճ·106), Զ·՝Ճ·106, Ա·57,21,68, Զ·՝Ա·57, (Ա·21,57,68), (Կ·67), Կ·65, (Խ·28), Խ·27,26, (ՁԿ·519), ՁԿ·519, ՁՍ·494, Լ·24, Զ·՝Լ·24, Զ·

Ա՛լ այդ Գիշեր՝ Դաւիթի քուն չըտարաւ.
Առաւօտուն կանուխ ելա՛ւ Իր Տեղէն,
Անուն Աստծո՛ւն ըրաւ հոն,
Վազեց դընաց՝ բերել տըւաւ Իր Ձին՝ Քուռիկ–Ջալալին.
Ձէնով–Օհան 1) ելաւ ղըրկեց վեց–եօ՛թ Մարդ,
Անոր Հօր Սարք,–Ձէնուղարդերն–առին բերին դըրին հո՛ն,
Որ հաղցընեն Տըղայ–Դաւթին, ելնէ երթայ կըռիւի՛:
— Դաւիթ վերցուց նախ Մօյկե՛րը որ հագնի,
*Հօր՝ Մըհէրի՝ Մօյկերն ա՛յնքան մեծ էին որ՝ եկան հասան Իր [ճըռնե՛ր *).*
Քառասուն Լիտրը 2) Բամպա՛կ բերաւ կոխեց մէջ՝
Նոր Իր Ոտքեր Անոնց մէջը դաղրեցան,
*Ծալծուն *) Փողը *) դեռ Ոտներէն կա՛խ մընաց...:*
*— Շըլվար *) քաշեց Ոտներուն,*
Եօ՛թը տեղով փաթթըւեցաւ, ծալւեցաւ...:
— Զրա՛հ–Պողվըտէ Շապիկ բերին ու հագաւ՝
Ա՛յնքան լայն էր ու երկար որ՝ ելաւ մինչեւ Իր Ոտներ,
Քառասո՛ւն Կանդուն 3) դընաց Գետի՛ն փըռուեցաւ,
Ծալեց՝ ժողվեց, Քառասուն Կոճակ քաշեց վե՛ր՝
Նո՛ր Գետինէն կըտրեցաւ,
*Տարաւ վեր–վեր՝ Սըրտին վըրայ ծալմըլկեց *),*
Նո՛ր Կոճակներ իրար եկան՝ բռնեցին...:
— Ոսկի–Գօտին 4) առաւ կապեց Իր Մէջքին,

---

1) Ա·57՝ Քեռի–Թորոս: *) Ձուռ, Ձռներ, Ազդր(եր): 2) ՁԿ·519ս·, Կ·65, Ե·711,775,971՝ Եօթ լիտր, Ե·630,910՝ Երեք լ·, Ե·805՝ տաս լ·: *) Ծալծուն, Ծալածոյ, Ծալուղ: *) Փող, Վերի մաս, վիզ (կօշիկի, հեսկի, դուլպայի): *) Շլվար, Տափատ (մեռաքսէ կամ բուրդէ հիւսած): 3) Ա·21՝ Եօթ փաթ: *) Ծալմկել, Ծալ–ծալ ծալել: 4) Հ·381՝ Թրի կաշիները, Ե·743,775,805՝ Քեամար Մըհէրին:

Ինչ մէ՛կ փաթ էր Հօր Մէյքէին՝
եօ՛թ 5) փաթ բերաւ Մէյքէին բոլոր պըտըցո՛ւց ու նո՛ր կապեց։
— Թուր–կէծակէին 6) առաւ կախեց իր կողէն,
Ա՛յնքան երկար էր Թուրը՝
*Ինչղ *) Բարդէ–Ծառ՝ Գետին–է–վար քա՛շ երթայ՝*
*կալանէին *) Ծայր՝ եօթ նետ 7) քերքա՛շ *) էր Գետին,*
*Բուռը *) կ՛երթար՝ Գլլուխն՝իվեր երե՛ք կանգուն 8) կ՛աւելնար·*
Թուրը կալնէն չի՛կըրնար որ դո՛ւրս քաշէ···։
— Հօրը Կուրդիկ–Միրանի՛ն 9) էր՝ որ հագաւ՝
Բերաւ մէկ Լիտր Բամպա՛կ դըրաւ ամեն Ծոց՝
Դեռ չատ լա՛յն էր՝ կոճակները կոճկելու· —
Հաննց նետո՛ց Բամպակները՝
*Ելաւ՝ Կուրդիկ եօ՛թ տակ *) ըրաւ՝ հագի՛ւ մէջը ծածկեցաւ,*
[Ինչպէս պըղտիկ երախայ մը դընես մեծկակ Շորի մէջ···],
Ժողվեց բերաւ Մէյքէին բոլոր՝ նո՛ր կոճկեց,
Բըղանց՝ Գետին քա՛շ դընաց···։
— Խաչ–Փետրաղին ու Նետ–Աղեղ՝ վերցուց կապեց Ալ–Թեւին,
*Ա՛յնչափ մեծ էր՝ որ հո՛վ *) ըրաւ Իր Անձին···։*
— Հօր Գլլխանոց 10)՝ Ոսկի–Գուդիկ՝ վերցուց դըրաւ Իր Գլլուխ՝
Ա՛յնչափ մեծ էր՝ իյաւ մինչեւ Իր Աչքեր,
Կ՛ըսես Գլլխէն վա՛ր կ՛իյնար,
Գլլուխ, Աչքեր՝ ամեն ծածկեց՝ եկաւ նըստաւ Ուսերուն·
Քառասուն Լիտըր 11) Բամպա՛կ բերաւ դըրաւ մէջ՝

---

5) ՉՍ·494, Խ·27, Հ·381, Ե·20,1110՝ fառսուն, Հ·429, Ե·573, 910՝ երեք։ 6) Ե·743՝ Թուր–կտրաւիճ։ *) Ինչղ, *Ինչպէս*, *զերթ*։ *) կալաւ, *Պատեան* (*սուրի*)։ 7) ՉՍ·494՝ fառսուն վեց, Ց·106՝ եօթ փաթ, Հ·429՝ մէկ գազ, Ե·630,775՝ մէկ վեց, երեք գազ։ *) Քերքաշ, *Քեր՝լ քեր քաշելի*, Ե·20՝ գետնաքաշ *կ՛երթար*, Ե·743՝ գետինն ի քաշ։ *) Բուռ, *երախակալ* (*սուրի*, *դանակի*)։ 8) Ե·805՝ մէկ մարդահասակ։ 9) Ա·55,57՝ բ(է)ան(է)ավարիճ (*Միրանին*), Հ·429՝ արխալուխը։ *) Տակ, *Շալ*, Խ·27՝ fառսուն փաթ։ *) Հով, *Շուք*, *սառուց*։ 10) Ա·57՝ Քօղը, Լ·24, Ե·805՝ Թագը (*սաղաւարտ*), Ե·775՝ Գիւդին–ի–Միէրին։ 11) Չկ·519ա·, ՉՍ·494, Ե·775,971՝ եօթ լ·, Հ·429՝ մէկ լ·, Հ·33՝ երկու–երեք լ·, Ե·630՝ երկու լ·, Ե·910՝ երեք լ·, Կ·65՝ մէկ կարար (*մեծ պարկ*)։

Հաղիւ եղաւ Իրեն չափով՝ ու դադրեցաւ Իր Գըլուխ…։
— Դէ՛, վերջապէս, Հօր ամե՛ն Սարք՝ չի՛ յարմարիր Տըղային։ —
Ապա՝ Դաւիթ դեռ պըզտի՛կ էր տարիքով ու հասակով,
Քառասուն–քառասուն Լիտրը Բամպա՛կ դըրին Հօրը Սարքին մէջ՝
Անկէ՛ յետոյ յարմարեցաւ Տըղային։
*— Ոսկի–կաքաւ Թեւնոցները *) առաւ կապեց Թեւերուն *),*
Հըմայեկ Աչ Սուրբ–Նըշանը դըրաւ Ծո՛ց,
— Հօր՝ Մըհէրի՝ Փող–Գըղլորին առաւ կախեց Իր Ձախ Կող,
Ու ելաւ Հոն կանդնեցաւ…։—

574. Դաւիթ Ի՞նչպէս Կրկապէ Ձիուն Կապերը

Ե·1006,574, 806,743,825,971,1014,1111,630,826, (Ե·630, 715), Զ(Ե·826,17,1112), Ա·21,22, Զ·Ա·21, ՁԿ·519, Հ·429, (Ը·106), Ը·106, Խ·28, Զ·Խ·28, Կ·67,20, Զ(Կ·20), (Կ·20,67), Զ·

Դաւիթ երբոր Իր Հօր Բաներ ամեն Հաղաւ ու կապեց՝
Դո՛ւրս քաշեց Ձին, հրեղէն Քուռկի՛կ–Ջալալին,
Կանչեց ըսաւ, — «Հօրեղբա՛յր,
Քեզնէ կ՚ուզեմ՝ Իմ Հօր Ձիու Թա՛մբն–Աբծըքին՝ որ բերե՛ս»։
Ձէնով–Օհան բերաւ Թա՛մբը–Աբծըքին,
Դարձաւ Իր չուրջ եղողներուն ի՞նչ ըսաւ, —
*— «Տըղա՛ք,–ըսաւ–, լաւ վարավո՛ւրտ *) ըրէ՛ք,–ըսաւ–, ու տեսէ՛ք,*
Անոր Հայրը՝ Ջո՛ջ–Դաւիթ՝
Թամբը երբոր Ձիուն վըրայ կըդընէր,
*Փորկապերը կըքաշէր ու կըպընդէր *)՝*
Ձին՝ առջեւի երկո՛ւ Ոտը 1) կըվերցընէ՛ր Գետինէն։
*Թէ Դաւիթն ալ՝ Ձիուն Կապեր քաշած ատեն՝ վե՛ր վերցուց *)՝*
*Իր Հօր նըման կըրցա՛ւ *) ըլսպել այդ Քուռակ՝*
Թերեւս բան մը յայղղընէ 2), կըրնա՛յ երթալ կըռւիւ…։

---

*) Թեւնոց, բազուկի պըրկազարդ եւ ինքնութեան յայտանիշ, բազրանդ։ *) Թեւ, բազուկ, դաստակ։ *) Վարավուրտ ընել, վեր–վար ուշով նայիլ, զննել։ *) Պընդել, պրկել, ամրացնել։

1) Կ·67՝ մէկ ոտ։ *) Վերցուց, երէք կրցաւ վերցնել։ *) Կրրցաւ, երէք կրցաւ, երէք կարենայ։ 2) Ա·21՝ բաշարի՝ ուղղել՝ բէջարի, պէջէրմէէ *թրք.* բառէն։

Թէ որ Գեանէն չըկըտրեցուց՝ կըուիւ ընել չի՛ կըրնար…,
Կ՚երթայ՝ զո՛ւր տեղ կ՚ըսպանուի…»:
Նայեցան ու լաւ վարաւո՛ւրտ ըրին Առոնք՝ տեսան որ՝
*Ողորդմա՛նց ալ՝ Դաւիթ երբոր թամբը զարկաւ *) վեր՛–Ձիուն՝*
Փորի–կապերն ինչ պըրկեց՝
Այնպէ՛ս քաշեց եւ ամրացո՛ւց կողին վրայ 3)՝
Որ իր Ձիուն Զո՛րս Ոտքերն 4) ալ՝ չո՛րս Թիլ Գեանէն կըտրեցան,
Հասան մինչեւ իր Ծունկեր… .
Ու փոկերը՝ եօ՛թ փաթ բերաւ Ձիուն փորին՝ նո՛ր կապեց…:—
Ձէնով–Օհան ուրախացա՛ւ վեր՛–Դաւիթին,
— Օ՛ Տէր–Աստուա՛ծ, տեսա՛յ,–ըսաւ–, Մեր Դաւիթը կըտրի՛ճ է,
ՍԱՄՄԱՆՑ–ՏՈՒՆի ճըրագն,–ըսաւ–, Թէ վառէ՝
Այս Տըղա՛ն է պիտ՝ վառէ…»:
*Ամէնք այնտեղ Աչքալուսէ՛ք *) ըրին Ձէնով–Օհանին:*
Ան ալ դարձաւ ու Դաւիթին ի՞նչ ըսաւ. —
— «Քո Տո՛ւն չ՚աւրի՛, Տըղա՛յ,–ըսաւ–, Ասիկ հրեղէ՛ն Քուռակ է,
Լա՛ւ խընամես, լըւա՛ս–մաքրես, Գըլուխ պաղես՝ ու կե՛ր տաս. —
*Թէ չէ՝ Ան Քեզ՝ Արեգական հե՛տ *) կըհանէ՝ կըվառէ՛…»:*
Դաւիթն ալ Թէ, = «Ես Քու խօսքը պիտի ընե՛մ, Հօրեղբա՛յր»: —

575. Դաւիթ՝ Ձին Հեծած՝ Անցք Մը Կըկտտարէ

Հ·429,33,381, (Հ·381,430), Ց·106,36,36ա·, (Ց·36ա·,106), Կ·67, 2(Կ·67), (Ա·21,68), Ա·22,68, ՉԿ·519, (ՉԿ·519), ՉՎ·2, Ե·20,512, 630,575,743,806,910,972,1006,1014, 1111,825,715, Չ·՝Ե·825, Լ·24, (Լ·24), Չ·՝Լ·24, Խ·29,30, (Խ·30), (ՉՍ·494).

Դաւիթ վերցուց Պողվրակ–Սանձ 1) զարկաւ Ձիուն Բերանին,
Հաց–Պանիրի Մախաղ դըրաւ Իրեն Ձիուն Գաւակին,
*Որը դըրաւ Ասպանդակին, Ձիուն Բաչն *) ու Թամբ բըռնեց՝*

---

*) Զարնել, վերցնել դնել, տեղաւորել: 3) Ընդհանրապէս՝ ձա՛խ կողին: 4) Ե·574՝ մէկ ոտը: *) Աչքալուսէք, Աչքըլոյս, շնորհաւորանք, աչքդ լո՛յս ըլլայ (ըսին): *) Արեգական հետ՝ Մինչեւ արեգակը:

1) Կ·67՝ «վազաւ, 67ա·՝ Ալա՛ւ = կեր»՝ սխալ է, ուղղել՝ սանձ: *) Բաշ, վիզին ցցուն մազերը:

Ելաւ հեծաւ հրեղէն Քուռկիկ–Ջալալին.
Քառասո՛ւն Հոգի հազի՛ւ Գետնէն Գուրգ–Մըհէրին վերցուցին՝
Դըրին Ձիուն Վիզին կողմը՝ Դաւթի Իրեն Ձեռքին տակ.
Տէդ–Ջոջային բըռնեց Ձե՛ռ,
Դըրան առջեւ՝ Գլուխ մ՝ *) դընաց ու եկաւ,
Ուզեց ճամբան բըռնէ երթայ՝ Մէկիկի դէմ կըռւի։ —
Քեռի–Թորոս կանչեց ըսա՛ւ ետեւէն. —
— «Դաւի՛թ, Որդի՛, արի Հայց կե՛ր՝ նո՛ր դընա...»։
Դաւիթն ալ Թէ, = «Անունը Հայ՝ Իմ Բերանը չի՛ մըռներ՝
Մինչեւ որ ես Իմ Թըշնամու Գլուխ կըտրեմ ու նետե՛մ...»։
Քեռի–Թորոսն ալ ի՞նչ ըսաւ Դաւիթին, —
— «Մէկ Թեթեւիկ, երկայն Բարդի–Ծա՛ռ մ՝ունիմ,
Նորէն դընեմ փիճիս *) վըրայ՝ երթամ Բարձրիկ Մարաթուկ...»։
Ու դընաց հոն, Մարաթուկի Բա՛րձրը Վանք,
Ծառը դըրաւ Կըշտին հե՛տ,
Աղո՛թք ըրաւ՝ որ Դաւիթի գործը բարով յալղի՛...։

576. Ձէնով-Օհան՝ Կ՚երգէ «Ափսո՛ս, Ու Հազա՛ր Ափսոս...»

Զ.՝Խ·29, Զ(Խ·29), Խ·30,31, (Հ·381,430), Հ·381,430,382, 34, Զ.՝Հ·381,430, Զ.՝Ե·575, Ե·575,1111,630,21,631,574,910,1006, 1112,911, (Ե·910,1006,1112,631), Կ·67, ՁՎ·2, ՁԿ·520,521,522, 524, Զ.՝ՁԿ·50, ՁՍ·495, Զ(ՁՍ·495), Ց·106,107ա·,107,108, Զ(Ց·107), Ա·22·

Դաւիթ այնտեղ՝ Ձիո՛ւն վըրայ՝ չի՛ր երեւար· չա՛տ փոքր էր·
Վերցուց ըսաւ, — «Է՛ Հօրեղբայր, Իմ Հայրահո՛տ Հօրեղբայր,
Քո Ձեռը տո՛ւր որ ես պաղեմ· ես՝ ա՛լ կ՚երթամ կըռւի Դա՛շտ·
*Եղաւ՝ եկա՛յ, եղաւ՝ չ՚եկա՛յ *)՝ Ինձ Թողուքի՛ւն տուր այստեղ·*
Մնացիր բարո՛վ, Հօրեղբա՛յր...»։
Ձէնով–Օհան երբոր դարձաւ ու նայեց՝
Տեսաւ Դաւիթ այդ Ձեւի մէջ՝ ու պըղտիկ,
Հազած Իր Հօր՝ Մըհէր–Դաւթի՝ Հադուստներ,

---

*) Գլուխ մ՝, Մէկ գլուխէն միւս գլուխ, մէկ անգամ՝ ծայրէ՝ի ծայր։ *) Փէճ (փիճ), Ուս։ *) Եղաւ եկայ, եղաւ չ՚եկայ, կըրնայ ըլլալ որ դառնամ գամ, կրնայ ըլլալ որ ողջ ետ չդառնամ։

Չէն–ու–Չարդէրն ալ կապա՛ծ,
Հնծած իր Հօր հրեղէն Քուռկիկ–Ձալալին՝
Պիտի երթայ կըռիւ՛...,
«Կոտրէ՛ր,–ըսաւ–, այն Բեբա՛ն՝
Որ այդ Բաները Տըղայ–Դաւթին ցո՛յց տըւաւ...»:
Ապա վերցուց կանչեց ըսաւ Իր Ձայնով· —
— «Դաւի՛թ, կեցի՛ր՝ Քեզ բա՛ն մ՚ ըսեմ՝ նո՛ր գընա...»:
*Դաւիթ դարձա՛ւ Տան քամակէն *)՝ ու կեցաւ Իր Ձիուն վրա՛յ,*
Ակա՛նջ ըրաւ, «Նայիմ,–ըսաւ–, Իմ Հօրեղբայր ի՞նչ կ՚ըսէ...»:
Այն ժամանակ՝ Չէնով–Օհան՝ նայե՛ց Դաւթին, ու նայե՛ց...,
Սիրտ մըրմըռա՛ց) , ու հե՛տ*) լացաւ՝ հետ խա՛ղ կանչեց մէկ ձայնով·*

1.– Ա՛փսո՛ս..., ու հա՛զա՛ր ա՛փսո՛ս..., = Ո՛ր 1) ա՛փսո՛ս... *),
Գընա՛ց Մեր Սասնու՝ Քուռկիկ–Ձալա՛լի՛ն, = Ու Ձալա՛լի՛ն 2),—

---

*) Քամակ, *կռնակ, եռեւի կողմ, անկիւն (տունի)*: *) Մրմըռալ, *կսկծալ*: *) Հետ, *թէ*: 1) ՁՍ·495՝ գէօ՛ ափսոս, Չկ·522՝ Հա՛ ՚ւ ափսոս: *) Ափսո՛ս, *եղո՛ւկ, աւա՛ղ*:

2) Չկ·522, Ա·22՝ Ափսոս, որ հազար ափսոս, հա՛ ՚ւ ափսոս,
Գընաց Քուռկիկ–Ձալալին՝ Սասմանց Տըղէն,
[Հա՛, Տըղէն:
Ց·106–107, Հ·430՝ Ափսոս, հազար հէ՛ֆ ափսոս՝ Քուռկիկ–
[Ձալալին, Ա՛խ դեռ Ք· Չն·, *եւն. եւն.*
Հ·382՝ Հազար ափսոս, Ելաւ Սասմանց Տըղէն՝ Ք·–Չն·, *եւն. եւն.*
Ե·575՝ Ափսոս, հազարըմէկ ափսոս, Սասնայ Տըղէն հասնեցին
[Ք· Չն·, *եւն. եւն.*
Ե·631՝ Ափսոս կ՚ըսեմ, հազար ափսոս, Ք· Չն·, որ հասնեցին
[Սասնայ Տըղէն, *եւն. եւն.*
Ե·911՝ Հազար ափսոս, Ք· Չն·, Հազար ափսոս, Թրիկ–
[Կէծակին, *եւն. եւն.*
Ե·1112՝ Ափս·, հէյ վախ, հզր· ափս·, գնաց Սսոյ· Տըղէն՝
[Ք· Չն·, — Ախ, Ք· Չն·, *եւն. եւն.*

☛ *Բազմաձայն երգի համար՝ կարելի է դնել այսպէս.—*
Ափսո՛ս..., — Ու հազա՛ր ափսոս, = Որ ափսո՛ս,
Գընաց Մեր Սասնու՝ Քուռկիկ–Ձալալին, = Ու Ձալալին,
[*եւն. եւն. եւն.*:

Ընձա՛յ պիտի ըմէի Թա՛րէ–Ֆըրը՛ղի՛ն, = Ու Ֆըրը՛ղին 3)···:
2.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գընա՛ց Մեր Սասնու՝ Թո՛ւրը–Կէձա՛կի՛ն, = Ու Կէձա՛կի՛ն···,—
Ընձա՛յ պիտի ըմէի Իրանի Շա՛հին, = Ու Շա՛հին···:
3.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գընա՛ց Մեր Սասնու)* Գո՛րգը–Մըհէ՛րին, = Ու Մըհէ՛րին···:
Ընձա՛յ պիտի ըմէի Աստղիկ–Պարո՛նին 4), = Ու Պարոնին:
4.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գընա՛ց Մեր Սասնու՝ Խա՛չը–Փետրա՛զին, = Ու Փետրա՛զին···:
5.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գընա՛ց Մեր Սասնու՝ Տէ՛գը–Զոջա՛յին, = Ու Զոջա՛յին···:
6.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գընաց Մեր Սասնու՝ Փո՛ղը–Պըղլո՛րին, = Ու Պըղլո՛րին···:
7.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գընաց Մեր Սասնու՝ Գուդի՛կ–Երկնա՛յին, = Ու Երկնա՛յին:
8.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գընաց Մեր Սասնու՝ Զըրա՛հ–Պողվը՛տին, = Ու Պողվը՛տին:
9.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գընաց Մեր Սասնու՝ Ո՛սկի–Գո՛տին, = Ու Գո՛տին···:
10.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գընա՛ց Մեր Սասնու՝ Կուրդի՛կ–Ծիրա՛նին, = Ու Ծիրա՛նին:
11.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գընա՛ց Մեր Սասնու՝ Շըլվա՛ր–ի–Ո՛տին, = Ու Ո՛տին···:
12.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գընա՛ց Մեր Սասնու՝ Մո՛յկը–Ծալո՛վին, = Ու Ծալո՛վին:
13.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գընա՛ց Մեր Սասնու՝ Թա՛մբը–Արծը՛բին, = Ու Արծը՛բին···:
14.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գընա՛ց Մեր Սասնու՝ Ա՛սպանդակ–Ո՛սկին, = Ու Ո՛սկին···:
15.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գընա՛ց Մեր Սասնու՝ Սա՛ճը–Պողվը՛տին, = Ու Պողվը՛տին:
16.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,

---

3) *Տե՛ս Հատ.* 525՝ *ստրջ.* ծնթ. 6: *) Սասնու, *Սասունէն*, *նաեւ՝ Սասունի*: 4) Է. 430՝ Փոդ–Պղլորին է *նուիրելի՝* Աստղիկ–Պարոնին:

Գլնա՛ց Մեր Սասնու՝ Թեւնո՛ցը–Ո՛սկին 5), = Ու Ո՛սկին:
17.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գլնա՛ց Մեր Սասնու՝ Հըմայեկ Խա՛չ–Մարո՛ւքին,
= Ու Մարո՛ւքին···:
18.– Ա՛փսո՛ս···, ու հազա՛ր ա՛փսո՛ս···, = Ո՛ր ա՛փսո՛ս···,
Գլնա՛ց Մեր Թառլան Նոր–Մա՛նուկ՝ Սասմանց Տը՛նէն,
= Հա՛, Տը՛նէն···:
Ասօր գլնա՛ց Թառլան–Դա՛ւիթ՝ Սասմայ–Ե՛րկրէն 6),
Ձըրագն անցա՛ւ *) Սասմայ–Տո՛ւնէն 6), = Հա՛ Տո՛ւնէն···» 7):

577. «Այդ Մէկ Խօսքը Չ'ըսէիր...»

2(Հ·34,382,430), Հ·34,382,430, (Ե·631,972), Չ·՝Ե·911,575, Ե·21, 575,631,911,1112,972, (Խ·30), Խ·30,31, Ց·107,108,106, Չ·՝Ց·107, 108,(ՉԿ·523),ՉԿ·523,525,ՉՍ·496,Չ·՝ՉՍ·496,Ա·22,Չ·՝Ա·22,Կ·67·

Չէնով–Օհան՝ չէ՞ որ այդքան Բանե՛ր յիշեց՝ ափսոսաց՝
Դաւիթ իր տեղ, Չիո՛ւն վըրայ, Չեռը տարաւ իր Թուրին,
Մըտքով ըսաւ՝ «Մո՛ւհ, ինչ որ կար՝ ափսոսաց···,
Թէ Հօրեղբայր՝ կըտըրճուքիւնս ալ չ'ափսոսա՛յ Անոնց հետ՝

---

5) Ե·971՝ Բազբաղդ(ներ): *) Անցնիլ, *Մարիլ*: 6) Հ·430՝ Օջաղէն:
7) ՉԿ·524՝ Ափս· ու հզր· ափս·, — հա՛ 'ւ ափս·, — Գնց· Թառլան–
[Դ·՝ Սասուամանց Տնէն, — Ջա՛նըմ, հա՛ Տնէն·
Խ·31, Ե·21՝ ···· Ցորալուկ մէկ տակ Մանուկ (*մէկ տակ* =
[ամուրի, *նաեւ*՝ մէկ հատիկ):
Ց·108՝ Ափս· հզր· հէ՛ֆ ափս·, մեր Թռլան–Դ· — Ախ դեռ
[Թռլն·–Դ·
Ց·108ա·՝ ····· Իմ քանգ Թռլան–Դւք·
Ե·575՝ Ափս·, հզրմկ· ափս·, Սսնյ· Տնէն պ· երթյ·կորսուի՝
[նա քօռ կամուր ջրհէլ·
Ե·631՝ Ափս· կ'ընեմ· հզր· ափս·, Դաւիթին, հոգիկ ջրհէլ՝
[հլաւ գնց· Սսնյ· Տնէն·
Ե·911՝ Հզր· ափս· իմ Թառլն·–Դ·՝ հլաւ Սասմ· Օջախից·
[Թռլան՝ *Տե՛ս Հատ·* 566]·
Ե·1112՝ Ախ, ափս·, հզր· ափս·, գնց· Սսնյ· Տնէն՝ Թլոլ–Դ·
[ցորահասակ:

Պիտի զարնեմ առաջ դ'Ի'նքը ըսպանեմ,
Ա'պա երթամ կըռիւի...»:
Ու Թուր կալնէն պիտի քաչէը զարնէը Իրեն Հօրեղբօր: —
Ձէնով–Օհան երբոր ըսաւ՝ «Գընա՛ց Թաւլան Մեր Դաւիթ»՝
Այն ժամանակ՝ Դաւիթն ըսաւ, — «Հօրեղբա՛յր,
Այդ բաները որ Դուն այդքան «Ափսո՛ս» ըսիր՝ մեղքեցար,
Քու Բերա՛նը թէ կոտրէը...՝
Վերջի այդ մէկ խօսքը թէ որ չ'ըսէիր...՝
Տէր՛ը վրկայ...՝ ես նախ Քու Վի՛զ կըզարնէի՝՝ Իմ Թուրով,
Կ'ըսպանէի՛ Քեզ այստեղ,
Ա'պա Մըսըր *) պիտ՝ երթայի կըռիւի... —
Ու թէ դայի, թէ չիդայի՛..., Հօրեղբա՛յր: —
Դու կըմեղսա՛ս *) Գուրդն ու Թուր...,
Դու կը մեղսա՛ս Ոսկի–Գօտին՝ ու Զըրա՛հը–Պողվըտին,
Դու կը մեղսա՛ս Իմ Հօր Ոսկի–Գուդիկը...,
Դու կը մեղսա՛ս Իմ Հօր Քուռկի՛կ–Ջալալին...,
Դու կը մեղսա՛ս այդ ամեն...՝
Ու Դուն Ձիս չէ՛ս մողոսա՛ր...:
Տօ Հօրեղբա՛յր, է՛ ապա ես չէի՞ արժէր Այդ Բաներ...՝
Որ նախ Անո՛նք ափսոսացիր՝ ապա՛ Ձիս... .
Արդեօք այդ Ինչէ՞ չա՛տ աւելի են Ինձմէ...:
Այդ մէկ խօ՛սքն ալ որ Դուն չէի՛ր տըւեր Ինձ՝
Պիտի Քո Վիզ ես զարնէի՛ Իմ Թուրով...,
Գուրդ մ' ալ՝ Թաւիով պիտի տայի՝ այդ Քո Բե՛ղրը քակէի...,
Բերդն ու Տուները, Հիմն ու Պարիսպ՝ ամեն իրա՛ր խառնէի...,
Նո՛ր երթայի Մէլիքի դէմ կըռիւի...:
Հիմա որ Դուն Իմ անո՛ւնն ալ տըւիր ու Ձիս մեղքեցար՝
Ես ալ կուտամ Քո սիրոյն 1)...,
Ալ չե՛մ զարներ ըսպաներ...:
Աղո՛թք ըրէ, Հօրա՛ր, այդ Քո մէ՛կ խօսքին...:
Ինչո՞ւ առաջ Դուն այդ Բանե՛ր մեղքեցար՝

---

*) Մըսր, Մըսըր (*Մուսուլ*), *այստեղ՝ իբր* Մըսրամէլիքի Բաճակ, Մըսրայ ուժը՝ *որ Սասնոյ վրայ էր եկած*: *) Մեղսալ, Մոդոսալ, *Մեղքենալ, ափսոսալ*: 1) *Այսինքն՝* Քեզ սիրելուս համար՝ քեզ չե՛մ ըսպաներ, քեզ յարգելուս՝ կը ներեմ:

Ցեսո՛յ Ձիս.՚.՚.՚: —
Առաջ Թող Ձի՛ս ափսոսայիր՝ նո՛ր Անոնք... .—
Ե՞ս եմ ափսոս՝ Թէ՞ Թո՛ւրը–Կէծակին.՚.՚.՚.
Ե՞ս եմ ափսոս՝ Թէ՞ Իմ Հօր Դուրդն ու Գօտին.՚.՚.՚.
Ե՞ս եմ ափսոս՝ Թէ՞ չէ Քուռկիկ–Ջալալին.՚.՚.՚.—
Հէ՞ 2), Հօրեղբա՛յր, ես Անոնցմէ վեր չէ՞...»:
= *«Որդի՛, Դաւի՛թ,–ըսաւ Օհան–, Գըլխի՛դ մեռնիմ՝ Արեւի՛դ...,*
Մերացո՛ր եմ..., խելքըս այլեւս ցընդո՛ր է... .
Թող Քո Սիրտը չըմընա՛յ... 3). —
Չէ՞ որ ես ալ՝ Քեզի՛ համար է կ'ափսոսամ ու կուլամ...»:
Դաւիթ այնտեղ ցատկեց Ձիէն իջաւ վա՛ր,
Լացը եկա՛ւ, վազեց գըրկե՛ց, Գըլուխ պագա՛ւ 4) Հօրեղբօր,
Ըսաւ, — «Հօրա՛ր, տո՛ւր Քո Ձեռը ես պագե՛մ... .
Արժա՛ն ըրէ՝ ինչ խընամ որ Դուն Թաւիե՛ր ես Ինձ համար»:
Չէնով–Օհան ալ՝ Դաւիթի Գլուխ բըռնեց՝ համբուրեց,
Հրաժե՛շտ տըւաւ եւ աղաչե՛ց Աստծուն, —
«Դուն օդնակա՛ն ու պահապա՛ն կանգնիս,–ըսաւ–, Մեր Դաւիթին»:

578. Դաւիթ Հրամիոս Կ'առնէ Սասմանց Ցիկիճճիրէճ

Ե·575,1113, Զ·՝Ե·911,715,1006, (Ե·1113), Զ·՝Հ·430, Զ(Հ·429), Հ·430,429, Խ·30, Ճ·108, Զ·՝Ճ·108, Զ(Ա·21), Զ·

Դաւիթ այնտեղ Իր Հօրեղբօր Ձեռ պագեց,
Ու «կաց–բարո՛վ» ըրաւ խաղով՝ Իր Հօրեղբօր, Ամենուն. —

— «Հայրահո՛տ Հօրեղբայր ու Բարեկամնե՛ր,
Դուխ կացէք բարի՛՝ չուր *) հազա՛ր տարի...,
= Ջուր հազա՛ր տարի՛...:
Ե՛ս եմ երթալու, Դո՛ւխ էք մընալու...,
= Դո՛ւխ էք մընալու... 1):

---

2) Ե·575՝ Վրէ՞... (*ըսէ՛, հէ՞...*): 3) *Այսինքն՝* Ինձմէ վշտացած չմնայ: 4) Ե·972՝ ձեռն ու մուրուսը պագաւ: *) Ջուր, *Մինչեւ*:

1) *Հմմտ.՝ Հարսի երգի մը հետ, — «Շեմմի՛կ, մի՛ ժաժար, ե՛ս եմ ժաժալու: Տախտի՛կ, մի՛ թընդար, ե՛ս եմ թընդալու: Աստղե՛ր, մի՛ ցոլաք, ե՛ս եմ ցոլալու» եւն.՝ «Բուլանըխ կամ Հարք Գաւառ» Բենսէի, Ազգ. Հնդս. Ե. 106:*

Հօրեղբայրներ, Ծըռան–Վէդին, եկան առաջ մեծ խումբով.
*Հարսներ *) եկան՝ դէմ'ը կեցան, խաղով ըսի'ն Դաւիթին.* —

= «Դաւի'թ, ֆա'ջ Դաւիթ, Մեր Եղբա'յր Դաւիթ,
Ըրթալ Քեզ չ'ըլլա'յ, դառնա'լ Քեզ ըլլայ··· .
Դառնա'լ Քեզ ըլլայ, Մեր Եղբա'յր Դաւիթ···:
Մինչեւ հիմա՝ Քեզ հարսնութի'ւն չե'նք ըրեր,
Նո'ր պիտի Մենք Քեզ հարսնութի'ւն ընէինք *),
= Մեր Եղբա'յր Դաւիթ···:
Նո'ր պիտի Մենք Զո'ւր լեցնէինք Քու Ձեռքին,
= Մեր Եղբա'յր Դաւիթ···:
Քու Ոտքին առաջ Սո'լ պիտի դնէինք 2),
= Մեր Եղբա'յր Դաւիթ···:
Նո'ր պիտի Մենք՝ Քեզ հարսնութի'ւն ընէինք···»:

Դաւթի Սիրտն ալ վըլա'ւ այնտեղ, դարձաւ Անոնց ու ըսաւ.—

— «Հարսնե'ր, Մայրեր, Աղջիկներ,
Սաամանց–Տունի՛ Տիկիններ,
Ո՛վ Քոյրիկներ, կացէ'ք բարո՛վ, Ինձ Քուրութի'ւն էք ըրեր.
Ո՛վ Մայրիկներ, կացէ'ք բարո՛վ, Ինձ մայրութի'ւն էք ըրեր.
Բարի՛ Դըրացի'ք, կացէ'ք բարո՛վ, Ինձ դրացութի'ւն էք ըրեր.
կացէ'ք բարո՛վ՝ մեծ–ու–պզտիկով···:
— Տանտիկիններ'ը, ինչ *) Հա'ց կըթըխէ՝ Դաւիթը մէջ յիշեցէ'ք 3).
Տըղամարդե'ր, ինչ խրախճա'նք կ'ընէ՝ Դաւիթը մէջ յիշեցէ'ք···»:
կանչեցէ'ք Տէր–Աստուած՝ ճա'ր ընէ, —
Ըրթալ չ'ըլլա'յ, դառնա'լ ըլլայ··· .
Թէ որ դարձայ ու եկայ···՝

---

*) Հարսներ, *Գերդաստանին նորահարս տիկիններըն*: *) Հարսնութի'ւն ընել՝ *Տե'ս յաջորդ Ծնթ.ը՝* 2: 2) *Հայաստանի մէջ, նահապետական գերդաստաններու նորահարսները՝ իրենց հարսնութեան ընթացքին, յարգանքի իբր նշան՝ շնխոտով ջուր կ'լեցնէին տան այրերուն ձեռքին, ճաշէն առաջ ու վերջ, հոդաթափիները կամ կօշիկները անոնց ոտքին առաջ կ'դնէին՝ տունէն ներս մտած առեն, եւ պարագայական ուրիշ ծառայութիւններ կ'ընէին՝ քօղն իրենց երեսին կախած: Ասոր կ'ըսէին՝ «հարսնութի'ւն ընել»:* *) Ինչ, *Ինչ առեն որ, երբոր:* 3) *Այսինքն՝ Դաւիթի բաժինը մի՛ մոռնաք:*

Ձեզ կ'ընեմ Սասմայ-Տաճ Տիկին...:
Ընթրիչ Տէր-Աստծու խնամքը շա՛տ ըլլայ...,
Օրհնութիւն, բարեբարութիւն՝ Մեզ ու Ամենքին»:

Ու դառնալով Մխուաներուն՝ ի՞նչ ըսաւ. —

— «Դո՛ւռ-Դրկիցներ *), Բարեկա՛մ ու Ընկերներ,
Ես շա՛տ եմ Ձեր երես թըռեր... *),
Ես ալ կ'երթա՛մ տարով, ինձ ներո՛ղ եղէք...»:

Թէ՛ Մեծերէն, թէ՛ Փոքրերէն, — Ամենքէ՛ն՝
Հրաժե՛շտ առաւ Տըղայ-Դաւիթ՝ ու ելաւ:

579. Ծռան-Վէգոյի կինը՝ Կ'ծաղրէ Դաւիթը

ՁԿ·528, Ե·18,829, Ձ·՝Ե·829, Ձ·՝Ճ·108, Ճ·108, Խ·29·

Հօրեղբայրը՝ Ծըռան-Վէգին՝ եւ Իր Կընիկն ալ մէկտեղ՝
Եկած էին որ հրաժե՛շտ տան Դաւիթին:
Երբոր ըսաւ՝ «Մնացէր բարի՛, Հօրեղբա՛յր,
Ես ալ կ'երթամ Մէլիքի դէմ կըռիւի», —
*Հօրեղբօր-կին՝ հե՛դըն տըւաւ *) Դաւիթին,*
Միծաղեցաւ ու ըսաւ. —
— «Դաւի՛թ,-ըսաւ-, մատա՛ղ Դըլխիդ, Արեւո՛ւդ,
Դէ՛հ, որ կ'երթաս Մէլիքի դէմ կըռիւի՝
Մըսրամէլիքն ըսպանես...՝
Անոր ձա՛խ Ձուն *) բերես ընենք Աչքի-Դե՛ղ...»:
Հե՛դըն կուտար, ծա՛ղրը կ'ընէր Դաւիթին. —
Թէ՝ «Ի՛նչ..., Դուն ալ պիտի երթաս՝ Անոր Ջօրքը կոտորե՛ս...,
Մըսրամէլիքն ըսպանե՞ս.՞.՞.՞» 1):
Ծըռան-Վէգոն Ինքն ալ վերցուց եւ Օհանին ի՞նչ ըսաւ. —

---

*) Դուռ-դրկից, Դրան դրացի, մօտիկ դրացի: *) Երես թոնիլ, Շփացածութիւններ ընել: *) Հեգն տալ, Հեգնել, ծաղրել: *) Ձու, Մորքմիք: 1) Ե·13-14՝ պատմուած է Ձէնով-Օհանի կնկան սէրը Դաւիթի հանդէպ եւ Դաւիթի մերժումը: Բայց սխալ է· այդ միջադէպը կըվերաբերի Թլոլ-Դաւիթի որդի՝ ՊԶՏԻԿ-ՄԸՀԷՐի ճիւղին: Տեսնել անդ՝ իր կարդին (5-րդ ճիւղ):

— «Ղըրկէ երթա՛յ, Օհա՛ն 2), ղըրկէ թող երթա՛յ...», —
Քառասուն Լիտըր Մըսրամէլ՛ըն Զախ Զո՛ւն է,
Պիտի կըտրէ՝ առնէ բերէ՝ Քեզ ընձա՛յ...»:

58Ո. Զէնով-Օհան Ու Դաւիթի Մեծ-Մայրը՝ Սուգէ Կ'ելնեն

Ձ.՝Կ·20, Կ·20, (Կ·8,20), Ձ.՝Ե·743,17,806, Ե·743,775,806, (Ե·743).

Զէնով-Օհան Հօրեղբայրը Ի՞նչ Ըրաւ. —
Այն օրէն որ Դաւիթի Հայրը՝ Մըհէր-Դաւիթ՝ մեռեր էր՝
Սո՛ւգ էր պահեր Զէնով-Օհան, ու Սասունցիք՝ Իրե՛ն հետ:
Երբոր տեսաւ որ Դաւիթը կըտրի՛ճ է,
Սասմանց ճըրագ Թէ որ վառէ՝ Անի՛կ է՝
Ելաւ կանչեց՝ զարնե՛լ տըւաւ 1) Մըհէր-Դաւիթ Մեծ-Թըմբուկ 2),
Փող ու Շեփոր հընչե՛լ տըւաւ՝ «Դաւիթ կ'երթայ կըռիւ՛...»:
Ամենք ըրին ուրախութիւն, ցընծութի՛ւն.
Մեծ Տո՛ն եղաւ Ամենուն...:
Մարդեր դացին ու պատմեցի՛ն ամեն կողմ...:
Մէկն ալ վազեց՝ դընաց Դաւիթի Մեծ-Մօր 3) Տո՛ւն,
«Ակընչկըլա՛ տըւէք,—ըսաւ—, Մեծիկ Շուշա՛ն-Խաթունին 4),—
*Ի՞նչ *) է մըտեր եօ՛թ Դուռնով 5) ներս՝ ու փակուեր... .*
Թող դո՛ւրս ելնէ, նայէ տեսնէ Թէ ի՞նչպէս՝
Դաւիթ ելեր՝ Իր Հօր չափի՛ն է հասեր... . —
Իր Հօր Քուռակ հեծե՛ր է...,
Թուրը կապեր՝ պիտի երթայ վեր՛-Մէլիքին կըռիւ՛...»:
Դաւիթի Մամիկն 6) ալ՝ ա՛յն օրէն ինչ Մըհէրը 7) մեռեր էր՝

---

2) Ե·829՝ «Դաւիթին երկու Հօրեղբայր կար· մէկ՝ Զէնով-Օհան, մէկ՝ Սէվդօ» [Վէրգօ-ին աղաւաղը]· *Տե՛ս սակայն Հատ·* 238,239,240:

1) Ե·743,806՝ *Նուագարաններ զարնել տուողը՝ Դաւիթ ինքն է:* 2) Կ·20՝ ճաղարա, Ե·743՝ ջոջ սազը, Ե·806՝ հօր սազը: 3) Կ·20՝ *Դաւթի մօր, որ սխալ է· զի Դաւիթ որը էր մնացեր հօրէ ալ մօրէ ալ, Տե՛ս Հատ·* 268: *Իսկ* Ե·806 *պատումը որոշ կ'ըսէ՝ «Անոր (Դաւիթի) Մամիկ (Մըհէրի մայրը)»:* 4) Կ·20՝ Սիմամ-խաթուն, Ե·775,776՝ Մամիկ եւ հօրաքոյր: *Տե՛ս Հատ·* 1 եւ 221: *) *Ի՞նչ, Ի՞նչ բանի համար, ինչո՞ւ:* 5) Կ·20՝ հօր-ուտանի մէջ՝ *ուղղել՝* հօր օտայի (սենեակի) *մէջ, ինչպէս է* Կ·8՝ հօր օտով ներս: 6) Ե·775ա·՝ հօրքոյրը: 7) *Այսինքն՝* Դպիր-Մըհէր՝ *իր որդին, թէ—Դաւիթի հայրը:*

Եօ՛թը Դուռնով Նե՛րս վակուեր էր՝ Տանը մէջ,
Արեւալոյս Իր Գլխուն վրայ չէ՛ր առեր,
Սո՛ւգ էր բլռներ, ո՛վխտ էր ըրեր՝ Սենեակէն դուրս չէ՛ր ելներ,
Ըսեր էր որ՝ «Մինչեւ Սասմանց Տան Նոր–Մանուկ մը չ՛ելնէ,
Իմ Մըհէրի 8) տեղը բլռնէ՝ ելնէ երթայ կըռիւի՝
Ո՛վխտ ըլլայ ինձ՝ որ ես չ՛ելնե՛մ արեւլոյս»։—

581. Նաժիշտը Լուր կ՛տանի Դաւիթի Մեծ–Մօրը

Ե·806,776,743,807,Զ·՝Ե·806,807, Զ(Ե·806),Զ·՝Կ·20,Զ·՝Լ·71,Լ·71·

Մեծ–Մօրն ալ մէկ Ծառա՛յ մը կար՝ Հա՛յ կըտանէր ամեն օր։
Այն օրը որ Զէնով–Օհան ելաւ կանչեց Սասմայ մէջ,
Մեծ–Թըմբուկը 1) զարնել տըւաւ, դոռացուց,
Աղախինը՝ որ այդ օ՛ր ալ՝ Դաւթի Մեծ–Մօր Հա՛յ տարաւ՝
Մամը ըսաւ, — «Աղջի՛կ, ասօր ի՞նչ հաշիւ է Քաղքին մէջ...,—
Մըհէրիկիս Մեծ–Թըմբուկի ձա՛յնը կ՛առնէ իմ Ականջ...»։
Նաժիշտն ըսաւ, = «Տիկի՛ն,–ըսաւ–, չե՞ս հասկըցեր թէ ի՞նչ է·
Ակընջկա՛լ Քեղի..., ալ ի՞նչ կեցեր ես...,
Եօ՛թը–Դուռնով ներս՝ սուզի՛ ես մըտեր... .—
Դո՛ւրս եկուր նայէ՛, — Դաւիթը ի՛նչպէս՝
Իր Հօր հասակին, չափի՛ն է հասեր·—
Գլխուն դըրեր է՝ Գուդի՛կ–Երկնային,
Հագեր է Իր Հօր Զրա՛հ–Պողվըտին։
Մէջքին կապեր է՝ Իր Ոսկի՛–Գօտին,
Կախեր է Կողէն՝ Թո՛ւրը–Կէծակին։
Ծիրանի–Կուրդիկ վըրա՛ն է քաշեր,
Թեւէն կախեր է Փո՛ղը–Պըղտորին։
Թամբը–Արծըթին դըրեր է Ձիուն,
Քուէն կախուկ է Ասպանդա՛կ–Ոսկին։
Սանձը զարկեր է՝ Պողվա՛տ ու Արծաթ,
Մըհէրի–Գորգը Ձեռքի՛ն է բլռներ,

---

8) *Այսինքն իր որդի՝ Դաւիթ–Մըհէրի, կամ իր էրիկ՝ Առիւծ–Մըհէրի։*

1) Ե·743՝ Մըհէրի ջոջ սազ, Ե·776՝ թաթխանման, *Տե՛ս Հատ.* 298 *տարբ.*։

Հօրը վահանն ալ կապեր է վրան,
Ելեր հեծեր է Իր Հըրեղէն Ձին՝ Քուռկի՛կ–Ջալալին...,—
Մա՛րդ պիտի որ դիտէ՛ Դաւիթն ու Իր Ձին...»:
Մամիկն այնտեղ զարմացա՛ւ...,
— «Աղջի՛կ,–ըսաւ–, հէ՞, ի՞նչ կ'ըսես, այդ ի՛նչ բաներ կըպատմես»:
= «Ապա՞..., Տիկի՛ն,–ըսաւ Նաժիշտ՝ մէկ դէր ալ–,
Դաւիթն ելեր՝ Իր Հօր Լաթեր հագե՛ր է...,
Հօր Ձէնքերը հաներ՝ կապեր Իր վրա՛յ...,
Քուռկիկ–Ջալալ Իր Հօր Ձին ալ հեծե՛ր է...,
Իր Հօր Թըմբո՛ւկն է՝ կըզարնէն Քաղքին մէջ՝
Տըղայ–Դաւիթ պիտի երթայ Մէլիքի դէմ կըռիւի...»:
Այս որ լըսե՛ց Շուշան–Խաթուն՝ Դաւթի Մամ՝
Թողո՛ւց Իր սուդ, ելաւ դո՛ւրսը՝ արեւլո՛յս՝
Որ Դաւթի անցնիլ տեսնէ Իր Աչքով:—

§88. Մամը՝ Ձիուն Կ'յանձնարարէ Դաւիթը՝ Ու Կ'օրհնէ

Ե·807,743,776,744,777, (Ե·776,777), Ջ·՝Ե·743, Ջ·՝Կ·20, Կ·20,21, Ջ(Կ·21)·

Դաւիթն ալ որ պիտի երթար կըռիւի՝
Իրեն ճամբան պիտի անցնէր Իր Մամիկին Դուռն՝ի վեր·
Ձիով պիտի գար ու անցնէր այնտեղէն:
Դաւիթ՝ Ձիով եկաւ անցաւ Պատըշգամին տակն՝ի վեր
Մամիկն ըսաւ՝ «ելնեմ տեսնեմ՝ ի՞նչպէս կ'երթայ կըռիւի...»:
Ելաւ Իր տեղ կայնեցաւ,
Որ ելաւ վեր՝ Անոր Շորեր փըտե՛ր էին նըստած տեղ...,—
Վա՛ր թափեցան Հագուստները, կէսը Գետի՛ն մընացին...:
Մամիկ՝ Գըլուխ Լուսամուտէն դո՛ւրս հանեց,
Նայեց տեսաւ՝ մէկ Նոր–Մանուկ՝ Մըհէրի Ձին հեծեր է,
Պատըշգամին տակէն պիտի անցնի երթայ կըռիւի...:
Ձիուն անուն Մա՛րդ չէ՛ր գիտեր թէ ի՞նչ էր,
Մինակ Ի՛նքը գիտէր՝ անուն Մուրազ 1) էր·

---

1) *Ժողովրդական վէպերու մէջ՝ յաճախ կ'յիշուի «Մուրազ Ատամած, մուրա՛զ ձի» ասութիւնը, այսինքն՝ ամենէն դժուարին փափաքները հասցնող սրաթռիչ նժոյգ:*

Պատուհանէն կանչեց ըսաւ,— «Մուրա՛զ, Մուրա՛զ 2), ո՞ւր կ'երթաս»։
Զի՛ն էր, այնտեղ, Պատուհանին տակ՝ կեցա՛ւ։
Դաւիթ իր տեղ զարմացա՛ւ...։
Մամիկն 3) ըսաւ, — «Մուրա՛զ, Մուրա՛զ, մեռնի՛մ Քե՛զ...,

Դաւիթ Հայր չ'ունի՛՝ ընե՛ս Հայրութիւն 4)... ։
Դաւիթ Մայր չ'ունի՛՝ ընե՛ս Մայրութիւն... ։
Դաւիթ Եղբայր չ'ունի՛՝ ընե՛ս Եղբայրութիւն... ։
Դաւիթ տանիս՝ Իր Հօր կաթնով–Աղբի՛ւրը... ։
*Դաւիթ իջնէ Հանգելատեղ *)՝ Ջուրը խըմէ՛ ու հանգչի՛... ։*
Դաւիթ տանիս Իրեն Հօրը Փորձառ՛ր 5)... ։
Դաւիթ այնտեղ Իր Թուր գարնէ ու փորձէ՛... ։
Առանց փորձի՝ չ'առնես տանիս Կըռւի–Դաշտ...։
Մեռնի՛մ Քեզի, Մուրա՛զ–Ձի...,
Իմ Նոր–Մանուկ Դաւիթ աւա՛նդ է Քեզի...»։

Դաւթին երբոր լմացուցին՝ «Իր Մեծ–Մա՛յրն է կըկանչէ»՝
Շուտ մը Ձիէն վա՛ր թըռաւ,
Վազեց դընաց՝ Իր Մեծ–Մօրը Գի՛րկն ինկաւ։ —
Մամն ալ բըռնեց՝ Թոռը գըրկեց համբուրեց,
Իր Բերանով օրհնե՛ց Դաւիթն ու Իր Ձին,
Եւ անիծե՛ց Մըսրայ–Ջօրք...։
Դաւիթ այնտեղ՝ — «Մնացիր բարի՛, Մամի՛կ,–ըսաւ Իր Մեծ–Մօր–,
Ես ալ ահա գընացի՛...»։

588. «Սասմանց-Ծռեր Դառը՝ Օսար Դայլէ Զի՛վախեար»

Կ·21, Լ·24, Զ·՝Լ·24; Ե·1113,743, Զ·՝Հ·382, Հ·382,430, ՉՍ·497, (ՉԿ·525), Ա·68·

Դաւիթ Իրեն պատրաստութիւն որ տեսաւ՝
Քանի մ' տարէց Մա՛րդ ժողվեցին՝ տըւին Ընկե՛ր Դաւիթին,
Ու ճամբեցին Դաւթի հե՛տ։
Դաւիթ խըղճա՛ց Անոնց վըրայ, կանչեց Եոսուն Տընտրներ 1),

2) *Եւս՝* Մուրատ։ 3) Ե·776՝ Չէնով–Օհան։ 4) Երգով։ *) Հանգելատեղ, *Հանգստավայր*։ 5) *Տե՛ս Հատ.* 225 *եւ* 587, 601։

1) *Թերեւս այն քոչտրները որ Դաւիթ ինքը բերած էր Արաբըստունէն (Հատ.* 482)։

Հրաժե՛չտ առաւ, ըսաւ Անոնց Ամենուն.—
— «Դուք գընացէք Մովսասարի Մարաթուկայ–Բա՛րձըր–Վանք՝
Աղո՛թք ըրէք Ինձ համար...,—
Ես ալ կ՚երթամ Մէլիքի դէմ կըռիւի՛...,—
Երթալն Իմ ձե՛ռ, գալն Աստծո՛ւ ձեռ, Եղբայրնե՛ր...»:
Զէնով–Օհան 2) նորէն եկաւ Իր առջեւ,
= «Տըղա՛յ,–ըսաւ–, արի մ՚ ե՛րթար կըռիւի...
Սասմանց–Տունը՝ ի՛նչ ըսես կա՛յ Քեզ համար... —
Գանձ ըսես՝ կա՛յ, ինչէ ըսես՝ կա՛յ, Հարըստութիւն ըսես՝ կա՛յ,—
Կուտանք ու Քեզ կ՚ազատե՛նք...
Արի մ՚ ե՛րթար Մէլիքի դէմ կըռիւի...»:
Դաւիթն ըսաւ, — «Չէ՛, Հօրեղբա՛յր, պիտի երթա՛մ 3), ճա՛ր չըկայ.
Ես Սասմանց–Տան Գա՛ռն ալ ըլլամ՝ օտար Գայլէ չե՛մ վախնար.
Ճամբան Ինձի ցո՛յց տուր մ՚իայն, Ես երթա՛մ.
Դուն չի գա՛ս Իմ կըռիւին...»:
Հօրեղբայրն ալ՝ = «Չե՛մ գար,–ըսաւ–, Քու կըռիւ.
Իմ Ձին հեծնեմ՝ երթանք ճամբան ցո՛յց տամ Քեզ»:
Դաւիթ այնտեղ Գըլո՛ւխ խոնարհ Հօրեղբօր,
«Մընաս–բարի՛» ըսաւ, հեծա՛ւ Իրեն Ձին,
Կանչե՛ց Աստուածՙ ու Հօրեղբօր հետ գընա՛ց: —

584. Մէլիքի Նոր Վերջնագիրը

ՁՍ·498, Ե·512,1006,1112,21,972, Լ·24,28, Կ·66, Զ(Կ·66), Զ·՚Կ·66, Է·34,382, Ա·22, Խ·30·

Հօրեղբայրն ալ լացաւ Ինկաւ Տըղայ–Դաւթի Ետեւէ՛ն:
Գացին Հասան Կապուտ–Կող՝
Զէնով–Օհան ըսաւ, — «Որդի՛, ա՛յս է Մեր Հին Հայրենիք 1).
Աղէ՛կ տեղ է· դէշ տեղ չէ՛...»:
Դաւիթն ալ Թէ, = «Բա՛ Դուք ինչո՞ւ ելեր Սասո՛ւն գացեր էք...»:
— «Որդի՛,–ըսաւ–, Մըսրայ–Տիրոջ ահէ՛ն է որ փախեր ենք...»:

---

2) Է·382՝ Քեռի–Թորոս: 3) Է·382՝ Համ՝ Նօտր տպած իբր օտար բառ՝ ուղղել՝ (Է)համ = երթամ:

1) Լ·24՝ վաթաճ· Տե՛ս Կապուտ–Կող՝ Հուշ· 2:

Մէկ ալ տեսան որ Մէլիքը Թո՛ւղթ է գըրեր Հօրեղբօր, —
— «Զէնո՛վ–Օհան, կուգա՛ս կըռիւ իմ վըրայ՝
Դէ՛ արի՛··· · —
Զիզա՞ս՝ ես ա՛լ չե՛մ կենար···,
Զօրք կըքաշեմ Քաղքի վըրա՛յ···»:
Դաւիթ վերցուց Թուղթ–Բերողին ի՞նչ ըսաւ· —
= «Շա՞տ վըռազն 2) է Քու Մէլիք·՞·՞·՞·
Վաղ այս առեն՝ Իրեն Հի՛ւր եմ անպատճառ··· ·
Գընա՝ Իրեն բարե՛ւ ըրէ Իմ կողմէ՝
Ըսէ՝ «Դաւիթ վաղ այս առեն պիտի գա՛յ···»:
Ու Զին քըշե՛ց՝ դընաց դէպի Իր ճամբան: —

585· «Սասմանց–Ցունի Կռիւներէ Օգնականի Պէտք Ցունին»

Ե·1112,1014,631,1006,716,715,512, (Ե·776,21,716), Զ·՝Ե·743, 1112, Զ·, Զ(Լ·9), Լ·76,75,85, ԶԿ·525,526,527, Ց·108, Ա·22, Խ·29, Կ·67, Հ·382,34·

Զէնով–Օհան 1) տեսաւ Դաւիթ Զին քըշեց՝
Ինքն ալ կանչեց, — «Դաւի՛թ, Դաւի՛թ, հոգո՛ւդ մեռնիմ, Արեւո՛ւդ·
Սասմա՛յ–Ճըրագ Թաւլան–Դաւի՛թ, Դուն կ՝երթա՞ս···»:
*= «Հա՛ *), Հօրեղբա՛յր, պիտի երթա՛մ,–ըսաւ Դաւիթ–, չե՛մ կենար·*
Հօ դիտե՛ս որ՝ Մեր Թըշնամին եկեր Դուռը կայնե՛ր է···,
Ես պէտք է որ երթամ կըռի՛ւ Անոր հետ···»:
— «Որդի՛,–ըսաւ–, դէ՛հ, որ կ՝երթաս անպատճառ՝
Զօ՛րք տամ Քեզի, Մա՛րդ տամ Քեզի՝ այնպէ՛ս դընա կըռիւի»:
Դաւիթ այնտեղ ի՞նչ ըսաւ· —
= «Զէ՛, Հօրեղբա՛յր, Մարդ չե՛մ ուզեր· Զօրք չեմ ուզեր Ինձի հետ·
Ես մի՛նա՛կըս պիտի երթամ Մէլիքի դէմ կըռիւի···
Սասմանց–Ցունի Կըտրիճները՝ օգնականի պէ՛տք չ՝ունին»:
Զէնով–Օհան տեսաւ որ չէ՛, ճա՛ր չըկայ՝
Ըսաւ, — «Որդի՛, կեցիր Քեզի մէկ բա՛ն մ՝ ըսեմ՝ նո՛ր դընա»:
— «Ի՞նչ է,–ըսաւ–, Հօրեղբա՛յր···»:

---

2) Կ·66՝ Շա լաղն ի, 66ս·՝ Շատ տեղն է, յարմար՝ *ուղղել՝* Շա՞տ վռազն է = Շա՞տ կ՝աճապարէ (*թող սպասէ՝ վաղը կուգամ*):
1) Ե·1014՝ Խանդուտ–Խանում: *) Հա՛, Ահա՛, այո՛:

Դաւիթ կեցաւ, Ակա՛նջ տըւաւ Հօրեղբօր։
Չէնով-Օհան 2) վերցուց ըսաւ, = «Դաւի՛թ, Որդի՛, որ կ՚երթաս՝
Քու Հօրեղբօր այս մէկ խըրատ լա՛ւ լըսէ՛...,—
Լոր, ձընճըղուկ զարնելու չ՚է՛ որ կ՚երթաս...»։
— «Ականջս քեզի՛ է, Հօրեղբա՛յր, դէ՛ ըսէ՛...»։ —

586. Չէնով-Օհանի Ցուցմունքները՝ Կաբճաղբիւրի Մասին

ՉՍ·498, Լ·62,75,85,76,86, (Լ·62,75,85,76), ՉԿ·527, Խ·29, Ե·574, 716,1006,21,513,826,631,1112, (Ե·1112,716,21), Կ·67, 21, (Կ·68), Չ·՝Կ·67, Ա·22,23, Հ·382,34, Չ·՝Հ·382, Ճ·108, (Ճ·108)·

— «Որդի՛,—ըսաւ Չէնով-Օհան—, ո՛ր տեղ որ Դուն ծարաւընաս՝
Ցածըր չիգա՛ս Քու Չիէն...։ —
Ձամբո՛ւդ վըրայ՝ Սարի մէջտեղ՝ Աղբի՛ւր մ՚կ՚ելնէ Քու Դիմաց·
Անմահական-Կաբնաղբի՛ւր է Իր անուն· —
Ջուրը քաղցր է կաթի՛ պէս...,—
Քու Հօր 1) Կաբնիկ-Աղբի՛ւրն է,
Հանդըստատեղ ու Դիտարա՛ն Մըհէրին 2),
Դուն չե՛ս դիտեր, Քու Չին դիտէ՛ ո՞րտեղն է·
Քու Հայր՝ ամեն ճար ու ճամբան ցո՛յց տըւեր է Քո Չիուն·
Քո Չին դիտէ՛ ամեն բան,
Քեզ կըտանի՝ Քու Հօր Կաբնիկ-Աղբիւրի տե՛ղ կըՀանէ։
Դաւի՛թ, Քու Չին ո՛ւր որ երթայ՝ չըղարճընե՛ս Իր Գըլուխ·
Այնտեղ ինչ Չին Իր Ջոքերը կուտայ Գետին՝ կըկենայ՝
Այնտե՛ղն է...,—
Ջըմոռնա՛ս...։
Ինչ տաեն որ Քու Հայր երթար կըռիւի՝
Մինչեւ չ՚երթար՝ այն Աղբիւրը՝ չընըստէր ու չըՀանդչէր՝
Չ՚է՛ր երթար...։
Կ՚երթա՛ս՝ Դուն ալ, Քու դէ՛մ կուգայ այդ Աղբիւր·
*Ինչ ժամանակ որ Դուն տեսար *) Քու Չին կեցաւ, չի՛ քալեր,*

---

2) *Փոփոխակէ փոփոխակ՝* Չէնով-Օհան, Քեռի-Թորոս, Հօրեղբայր, Սանդուխ, կամ Չիճ (Ք·-Ջ·ճ)։

1 և 2) Հօրն ու Մեծ-Հօրը, Տե՛ս Հատ· 225։ *) Տեսար, կ՚տեսնես։

Իր Ծունկերը զարկաւ Գետին՝ ու կեցա՛ւ՝
Այնտեղ Ծո Զին Ասպանդակով մի՛ խըթեր·
*Ծո Զին Բենէ կ՛ըսըկի՛ ... *) :*
Նայէ՛ ո՞ր տեղ Ծու Զին կեցաւ ու չ՛ե՛րթար,
Բերան մըտցուց Աղբիւրին մէջ՝ Ջո՛ւր խըմեց՝
Այնտեղ միա՛յն կրկենաս· —
*Մուրազ տըւող *) Աղբի՛ւր է :*
Այն ժամանակ չո՛ւտ մը կ՛իջնես՝ Գետի՛ն կուգաս Ծու Զիէն·
Զիուն Թամբը՝ Թամակէն վա՛ր կըբերես·
Սանձը կ՛առնե՛ս Անոր Բերնէն եւ աղէ՛կ մը կը Ջըրես·
Ծու Զեռքով ալ՝ Աղբիւրին մէջ կըլուա՛ս, —
Զի Ծու Հայրը՝ ինչ մեռե՛ր է՝ մինչեւ օրս՝
Ծուռկիկ–Ջալալ չ՛էՙ լողացեր Այդ–Ջուրով, —
Կըլողցընես՝ կըթողուս որ Աղբիւրին եղը արածա՛յ :
Դուն ալ կ՛երթաս վեր՛–Աղբիւրին՝ Ծու Զեռ–երես կըլըւա՛ս,
Ծու Գօտիին Կոճակները կըքակե՛ս,
Ու Ծո Բերան՝ Ջըրի–Ակի՛ն կըդընես 3)՝
Կո՛ւշտ կըխըմե՛ս Այն–Ջըրէն,
Այն ժամանակ՝ Քեզի վրնաս չի՛ըլլար :
Որ Ծու Կոճակ չըպըրծուցե՛ս՝ Ջուր խըմես՝
*Այն առեն Դուն կ՛ուռի՛ս, կ՛պըթքի՛ս *), կըմեռնի՛ս ... ,—*
Դիւցաղնի–Ջո՛ւր է Այդ–Ջուր ... ,
Քեզ կ՛ըսպանէ՛՝ որ Ծու Մէջկապ կապո՛ւկ եղաւ Ծու Մէջքին·
Արձըկէ՛ ու Նո՛ր խըմէ ... :
Ու կըհանուի՛ս՝ կըլողանա՛ս Ջուրին մէջ 4),
*Ապա կ՛ելնես՝ կընըստիս Հոն, նըչխարք մ՛ *) կ՛ուտե՛ս Ծու Հացէն :*
Որ Հաց կերա՛ր ու պըրծար՝
Ալ Ծո Զիուն չորս Ոտքերուն մէջ կըպառկի՛ս, կըքընես,
Այնտեղ աղէ՛կ կըհանդչիս :
Ու երա՛զ մ՛ ալ կըտեսնես, —

---

*) Ռըկիլ, ըռըկիլ, Սրդողիլ, վչտանալ, խրտչիլ : *) Մուրազ տուող, *Ամեն փափաքի գոհացում տուող :* 3) *Փորի վրայ գետին փռուելով՝ Աղբիւրի Ջուրէն խմելու՝ նախնական պարզ միջոցը :* *) Պքիլ, ճաքիլ, պայթիլ : 4) *Տե՛ս* Ծոջրն· ցա·՝ էջ 41–42 : *) Նշխարք մ՛, Կտոր մը, քիչ մը :

Շընո՛րք կ՚առնես Աստուծմէ՝
Քունէդ կ՚ելլես՝ Ձիդ կը հեծնես ու կ՚երթա՛ս։ —
*Ու կը տեսնես՝ Դո՛ւն ալ, Ձին ալ՝ ի՞նչ *) էք եղեր երկուքդ ալ...։*
Դաւի՛թ, Որդի՛, քէ որ Իմ խօսք Դուն ընես՝
Քո փափաքին կը հասնիս ու՝ բարո՛վ երթաս կը դառնաս... .
Թէ չե՛ս ըներ՝ Քու բան աչող չի՛ անցնիր...,—
Դարձիր եկո՛ւր՝ երթանք Տուն...»։
Դաւիթն ալ թէ, = «Ես Քու խօսքը պիտի ընե՛մ, Հօրեղբա՛յր»։ —

587. Զէնով-Օհանի Ծուցմունքները՝ Պողվրէտ-Սիւնի Մասին

Ե·1014,1112,745,778,972,574,631,513,716,808,1114,1012,22,973, 777,911,21,576,1007,1113,744, Զ·՝Ե·574,631,(Ե·972,745,778,973), Կ·67,68,29,62, Զ(Կ·21,29,67), ՉՍ·657,658,499,504,ՉԿ·527,529, Ճ·108,109, Զ·՝Ճ·108, Ե·29,30,31, Ա·23, Զ·՝Ա·23, Լ·75,76, (Լ·86), Հ·430,34,382·

Զէնով-Օհան 1) վերցուց ըսաւ, — «Ա՛յ Դաւի՛թ,
Մէկ ալ,–ըսաւ–, որ վե՛ր կ՚ելլես ու կ՚երթաս՝
Կ՚հասնիս Սար մը, — Քարէկա՛լ է իր անուն, —
Պողվրտէ-Սի՛ւն 2) մ՚ կայ վեր՝-ձամբուն,— Քու Հօր Նըշա՛ն-
[Մըհէրին 3),
*Տընկած 4) Նըհան *) Դաշտի մէ՛ջ,—*
Երկնուց իջեր մինչ Գետին... .
Անի Քու Հօր Փորձասի՛ւնն 5) է՝ ձամբուն մէջ 6)։
Քու Հայր՝ Դաւիթ-Մըհէ՛րը՝
*Քու Մեծ-Հօրը՝ Առիւծաձե՛ւ-Մըհէրի *) պէս՝ ի՞նչ կ՚ընէր· —*

---

*) Ի՞նչ (*ինչ-ցեղ*), *Ի՞նչ ձեւ*, *ի՞նչպէս*։

1) Ե·972՝ մէկ հալւոր մը։ 2) Ե·972՝ դիրակն դամուրիճ։ 3) *Տե՛ս Հատ.* 225։ 4) Ա·23՝ ընկած՝ *ուղղել*՝ տնկած։ *) Նըհան (*նա՛, ահա՛-ն*), *Այնինչ, ահա հոն՝ այնինչ (դաշտին մէջ)։ 5) ՉՍ·658՝ չըռաբաեար = *փորձելիք բան, փորձելու յատուկ արուեստական սիւն (արբ.՝ թէչրիւբէ-էն)։ 6) Եւսեբիոսի Քրոնիկոնին մէջ՝ I. 178՝ կ՚յիշուի «Ոսկի Սիւն Առաքական՝ *՚ի Մեհենին Աբամաղդայ, զոր կանգնեաց Իրոմոս* (Hiromus) *թագաւոր*»՝ *Տիւրոս-Լիբանի։ *) Առիւծաձեւ, *Առիւծ ձեւող, պատռող, առիւծահերձ*։

Երբոր երթար կըռիւի՝
*Թուր կըղարնէը Պողվըտէ-Սի՛ւն *)՝ կըփորձէ՛ր, —*
Թէ որ կըտրէ՛ր ձըգէը ետ՝
*Անոր բանը *) աչո՛ղ էր, —*
Կ՝ելնէ՛ր կ՝երթար կըռիւի:
Որ չըկըտրէր՝ կըղառնա՛ր ու ե՛տ կուգար·
[Ապա մի՛չտ ալ կըկըտրէ՛ր···]:
Դուն ալ կ՝երթաս՝ Պողվատ-Սիւնը կըտեսնե՛ս, —
Ճամբուդ վըրայ, Դաշտին մէջը տընկա՛ծ է·
Կըկանչե՛ս Նաչ Մարութայ-Խարճը-Ասպարածին Սուրբ-Նըշան,
Ու Քո Թուրը՝ Թո՛ւր-կէծակին՝ կըքաշե՛ս ու կըղարնե՛ս· —
Մէ՛կ հարուածով՝ թէ որ կըտրե՛ց Պողվըտէ-Սիւն՝ ու նետեց՝
Քու բան աչո՛ղ է այլեւս·
Կանչէ՛ Աստուած՝ ու դընա՛ Քո կըռիւին,
Գիտցիր որ Դու, Քո Թըշնամին կըյաղթես···:
Թէ չըկըտրեց՝ չ՝երթա՛ս կըռիւ· դարձի՛ր տեղէն՝ արի Տո՛ւն· —
Քու բան աչող չի՛ երթար···,
Մէկիկ թող գայ՝ ի՛նչ կըտանի՝ թող տանի···»:

Տըղայ-Դաւիթ 7) այս խըրատը որ լըսեց՝
Է՛հ, այս անգամ հրաժե՛չտ առաւ Օհանէն ·—
= «Դէ՛, Հօրեղբա՛յր, մնացիր բարի՛,-ըսաւ-, ահա ես կ՝երթա՛մ»:
Իր Ձին քըշե՛ց ուրախ-ուրա՛խ, ու Քամիի պէս դընա՛ց: —
Աղաւնիի պէս կըթըռէ՛ր Իրեն Ձին: —

588. Ծովէն Ելած Հրեղէն Քուռկիկ-Ջալալին

Չ·՝Կ·63ա·,64ա·, Չ·

Հրեղէ՛ն Ձի էր՝ Դաւթի Քուռկիկ-Ջալալին· —
Դաւթի Հայր 1)՝ դընաց Ծովափ՝ մա՛ն կուգար՝

---

*) Զարնել սիւն, Զարնել սիւնին: *) Բան, Գործ, ձեռնարկ:
7) Լ·75՝ Ճոչ-Միլիոն:
1) Հասկնալու է՝ Դաւթի մեծ-պապ, ցեղապետը, Սանասար, Հաւծ· 32, 34:

Տեսաւ մէկ Զի՝ Ծովէն եկաւ ելաւ դո՛ւրս 2),
Վազեց գընաց Նախիրին մէջ՝ աղուոր Մատակ–Զիու *) մ՝ վրա՛յ։
Դաւիթ–Հայրը՝ Ինքն ալ հասա՛ւ ուզեց բըռնել այդ Ջուռակ,
Ոչ մէկ կերպով այդ Զին բըռնել չկրցաւ՛...։ —
Զին՝ դէ՛ս փախաւ, ու դէ՛ն փախաւ, գ՛Ինք չըտըւա՛ւ Անոր Ձեռ 3)։
Ան ալ դարձաւ՝ այն Մատակ–Զին տըւաւ առջեւ՝ տարաւ Տո՛ւն 4)։
Որ տարաւ Տուն՝ Մատակ–Զիուն Տէրը կանչեց Իրեն մօտ,
Ըսաւ, — «Ա՛յ Մարդ, Ջիու գինն ի՞նչ է՝ ըսէ՝ վրճարե՛մ...»։
Մարդն ալ ըսաւ, = «Դաւի՛թ 5),–ըսաւ–, Իմ Զիու գին թէ հարցնես՝
Ցիսուն կարմիր Ոսկի՛ է...,
կուտա՞ս՝ աղէ՛կ, չե՞ս տար՝ Իմ Զին կըտանի՛մ»։
Դաւիթ–Հայրը՝ հարի՛ւր Ոսկի հանեց տըւաւ այդ Մարդուն,
Ըսաւ, — «Ա՛յ Մարդ, գընա՛ ու Զիս չ՛անիծե՛ս...՝
Որ այդ Զինէն աղէկութի՛ւն տեսնամ Ես...»։
= «Հապա՛ր անգամ աղէկութիւն տեսնես,–ըսաւ–, Քո Զինէն.
Ես վախցա՛յ որ՝ Դուն Ինձ Դըրամ չէ՛ր տար...,
Ա՛լ որ այսքան Դըրա՛մ տըւիր՝ կ՛օրհնե՛մ Քեզ...,
Իմ ձիւժե՛րն ալ Քեզ կ՛օրհնեն...»։
Կ՛առնէ՛ Դըրամն ու կ՛երթայ։
Դաւիթ–Հայր՝ տարաւ պահեց այդ Մատակ–Զին, խընամեց.
Մինչեւ որ Ան իր Քուռակը չըբերաւ *)՝
Իր Տունէն դուրս չըհանե՛ց։
Շա՛տ կը սիրէր այդ Քուռակ. —
Անոր անուն դըրաւ ՔՈՒՌԿԻ՛Կ–ՋԱԼԱԼԻՆ 6)...։ —
Ամեն բաներ այդ Քուռկիկին ցո՛յց տըւաւ,
Այնպէ՛ս ինչպէս որ Վարժապետ՝ Տըղեկներուն դա՛ս կուտայ,
Վարժատան մէջ դրել–կարդա՛լ կ՛ուսուցէ։
Մեծ–Դաւիթը որ *) մեռաւ՝

---

2) Վանայ մէջ՝ անպէտ ձի մը երբ տեսնէին՝ հեգնօրէն կ՛ըսէին՝ «Ծովո՛ւց են քաշեր դուրս», եւ մանաւանդ՝ «Արճակո՛ւ Ծովուց» [արճակ՝ Վանայ հիւսիս–արեւելք]։ Ակնարկութիւն՝ անչուշտ՝ Դիւցազնավէպին հրեղէն Զիուն։ *) Մատակ, էգ։ 3) Ձըյանձնուեցաւ։ 4) Հմմտ.՝ կուզրադինի եօթ–ոտնիկ Ջիուն հետ, Հատ. 493։ 5) Մեծ–Դաւիթ (Թլոլ–Դաւիթի հայրը)։ *) Բերել, Տնել։ 6) Քուռկիկ–Ջալալի անունի մասին՝ Բ. Հատորով։ *) Որ, երբոր։

Ալ Մա՛րդ չ՚իչխե՛ց որ մօտենայ այդ Ձիուն.
Ձէնով–Օհան՝ Տոպրակի մէ՛չ կըլեցընէր իր Գարին՝
Ձիէն հեռո՛ւ կըդընէր.
Ձին որ Դըլուխ խոթէր մէ՛չ՝
Տոպրակին կապ՝ Անոր Դըլխո՛ւն կ՚անցունէր:
Օհան ո՛ր օր որ Տուն չըլլար՝ Ձին կը մընար անօթի...:
Մա՛րդ չէր իչխեր՝ Անոր կեր ու Ջուր տանի. —
*Ձին՝ Օհանը ճանչըցե՛ր էր՝ ձայն չէ՛ր տար *):*
Ձէնով–Օհան չէ՛ր իչխեր որ խընամէր,
Ձին անխընամ կըմընար:
Այնքան աւեն որ անխընամ եւ աղտի մէ՛չ մնացեր էր,
Անկեր, անջուր մնացեր էր՝
Ձին չատ նիհա՛ր էր դարձեր: —
Երբոր անցաւ Դաւթի Ձեռ՝
Դաւիթ լա՛ւ մը չահեց–պահե՛ց Իրեն Ձին, —
Հրեղէ՛ն Քուռկիկ–Ձալալին...:

ԺԶ. ԴԱՒԻԹ ԻՐ ՀՕՐ ԿԱԹՆԱՂԲԻՒՐԻՆ ՈՒ ՓՈՐՁԱՊԻՒՆԻՆ ԱՆՁՆԵԼՈՎ Կ՚ԵՐԹԱՑ ԿՌԻՒԻ

589. Դաւիթ Կ՚հասնի Կարճաղբիւրից Ցեղը

ՁՍ·504,505,506,500,507, Ե·744,513,576,632,911,972,1113,808,1007, 21,777, Ձ·՝Ե·632,1113, (Ե·911,1113), Լ·63,72,75,86,76, (Լ·63,72, 76,86), Ձ(Լ·86,76), Կ·21,68, (Կ·68), Հ·430,34, Ա·23, Խ·31, Ճ·109·

Հօրեղբօրը «Մընաս բարո՛վ» ըսաւ Դաւիթ՝ ու քըշե՛ց: —
Շա՛տ դընաց ու քի՛չ դընաց՝
Եօ՛թը աւուր ճամբա՛յ դընաց մէկ ժամէն՝
Դաշտերու մէջ՝ ու Մարուքթայ Սարերուվ, —
Դաւիթ սաստիկ ծարաւցաւ.
Այնպէ՛ս սաստիկ ծարաւցա՛ւ որ՝ ա՛լ ուժ չ՚ունէ՛ր երթալու...:
Իր Ձին տե՛ղ մը չըկեցա՛ւ որ ինքը իջնէր՝ Ջո՛ւր խըմէր:

---

*) Ձայն չէր տար, Ձէր խրտչիր:

Հօրեղբայրն 1) *ալ՝ ոտնատուտ* 2) *կ'երթայ Դաւթի տեւէն* : —
Գիտէ՛ որ Ան հաստակո՛ղ *) *է, Մէկլէի–Գօտին չ'ա՛րձրկեր,*
Պիտի խըմէ՝ Ջուրը Տըղան ըսպանէ :
Դաւիթ ինքը չի՛ նայիր որ իմանայ՝
Թէ Հօրեղբայրը կուգայ Իրեն տեւէն :
Դաւիթ քըշե՛ց՝ դընաց Իր Հօր Գանձասար, —
Մէկ կանաչուտ Ըրդընայ *) *տե՛ղ մ' կար այնտեղ,*
Տեսաւ որ հոն, ձամբո՛ւն վըրայ, Աղբի՛ւր մ' 3) *եկաւ Իրեն դէմ.*
Ջըվիտցա՛ւ թէ՝ ա՛յդ է Իր Հօր կաթնաղբիւր. —
Հասաւ Ախի՛ն մօտեցաւ,
Մէկ ալ տեսա՛ւ՝ որ Զին յա՛նկարծ խըրխընջաց,
Գընաց այնտեղ՝ Աղբիւրին դէմ կանդնեցա՛ւ,
Հասնելո՛ւն պէս՝ Գետի՛ն զարկաւ Իր Ծունկեր,
Փը՛ռաց՛ ու չուտ Բերան խոթեց մէջ–Ջըրին...,
Ալ չըդընա՛ց Իր ձամբան...,
Չ'ուզե՛ց անցնիլ այդ բարակիկ Առուէն :
Դաւիթն ալ չուտ իջաւ Զիէն, կո՛ւչտ Ջուր խըմեց ու ելաւ,
Նորէն հեծաւ որ քըշէր՝
Զին չի՛ երթար..., Իրեն տեղէն չի՛ չարժիր... : —

590. Դաւիթ Ասպանդակով Կ'Ջարնէ Զիուն Կողնուն

Ե·777,21,808,22,513,576,632,744,912,1113,972, (Ե·1113), Զ(Ե·912), Խ·31, Զ·՝Խ·31, Ճ·109, Կ·21,68, (Կ·68), Ա·60, Զ·՝Հ·382, Հ·430,34,382·

Զին որ այնտեղ կաթնաղբիւրին վրայ կեցաւ,
Գետի՛ն զարկաւ Իր Ծունկեր,
Չ'ուզե՛ց անցնիլ Այդ–Ջուրէն, —
Դաւիթ այնտեղ չա՛տ բարկացաւ Իր Զիուն,
Մոռցա՛ւ Իրեն Հօրեղբօրը խըրատներ,
Զիէն չ'եկա՛ւ իջնէր տակ,

---

1) Լ·86՝ Հալիւոր(ն) : 2) ՁՍ·500՝ Ոտնատուտու, *քայլ առ քայլ* : *) Հաստակող, *ճամառ, կամակոր* : *) Ջրգնայ, *Ջուրի գնացքով օժտուած, ջրոռոգ* : 3) Հ·430՝ Փոս մը, Ե·1113՝ Իր հօր աղօթատեղ, Կ·21՝ Բարակ առու մը :

Ուղեց քըշել՝ որ անցնի՛ր Այդ-Առուէն, —
Մէկ այնպէ՛ս դոյդ Ասպանդակով զարկաւ Զիւս կողերուն՝
*Որ Իր Զիւսն կողաշարներ *) կոտրեցա՛ն...,*
*Մէկ կօտ *) մը կաթ՝ Զիւսն Իւթէն դո՛ւրս նետեց...:*
Զին Իր տեղէն վեր չ'ելա՛ւ...:
Դաւիթ այնտեղ սըրդողեցաւ. դիտցաւ թէ Զին յոգնեցաւ.
Կանչեց ըսաւ, — «Հէ՛յ վա՛խ, Գուռկի՛կ-Ջալալին..., —
Մէկ ժամ չըկա՛յ 1) որ Դուն ձամբա՛յ կըգալես,
Շուտ յոգնեցար, Գետի՛ն զարկիր Գո Ծունկեր...:
Այստեղն ալ որ՝ այսպէ՛ս կ'ընես Դուն ինձ հետ...,
Ալ ես ի՞նչպէս պիտի երթամ Մէլիքի դէմ կըռիւ...:
Ա՞ս է կ'ըսեն՝ «Զին մուրա՛զ է՝ կըտանի...». —
Ես պիտ՝ երթամ ըսպանուի՛մ...:
Գու վի՛ղ կոտրի..., անունը Զի՛, հրեղէ՛ն Գուռկի՛կ-Ջալալին...
Ես կ'ըսէի՝ «Դուն Զիս պիտի Արնէ-Գետի՛ր անցնէիր..., —
Ա՛ս՝ պո՛ւտ մը Ջուր՝ ձամբուն մէջը՝ դէ՛մ եկաւ՝
Դուն չի՛ս կրընար Զիս անցունել, կըկենա՛ս...
*Ա՛ս ի՞նչ շուտ ալ մոնացար *)...»: —*

591. Զին Լեզու կ'ելնէ՝ կ'խօսի Դաւթի Հետ

Զ·, ե·1113,972,632,808,22,513,576,744,912,577, (ե·777,744,1007, 22,972,513,577,808,912,632, Զ(ե·632,577,513), (ԶՍ·508), (Ա·23), լ·72, Զ·՝լ·72, (լ·75), (Հ·430,34,382), Հ·382,430,34, Զ·՝Հ·34, (կ·68), խ·31,32, (խ·31).

Ու Դաւիթն ալ՝ Թուրը քաշեց..., — մինչեւ կէսը դո՛ւրս քաշեց
Պիտի զարնէր կըտրէ՛ր այնտեղ՝ Զիւսն Վիզ...՝
Դէմի կողմէն 1) Քամի մ' զարկաւ Իր ճակտին,
Զիւսն վըրայ Քունը տարաւ, գըլորուեցաւ ինկաւ վա՛ր,
Գընաց ինկաւ՝ դէ՛մ անդին...:
[Շա՞տ մընաց հոն՝ այնպէս Քնմրած 2), քի՛չ մընաց...՝

---

*) Կողաշար, կողոսկր, ե·744,777՝ փարասուն՝ ուղղել փորասիւն: *) Կօտ, Աման: 1) ե·576՝ Քանի օր է եկար: *) Մոնացալ, Զարանալ, չկամութիւն ցուցնել:

1) ե·1113՝ էնդեհից (անդիէն): 2) ե·1113՝ շատ ճնաւ, ինչ ճնաւ:

Ձե՛մ գիտեր..., —
Ես հոն չ'էի՛, չե՛մ տեսեր...], —
Զարթաւ ելաւ՝ նըստեցա՛ւ,
Աչքեր ճըմռեց, իրիկնա՛ց *)...,
Ըսաւ՝ «Ողո՛րդ, իմ Ձին ինձմէ իմաստո՛ւն է, չե՛մ գիտցեր...
Երանի թէ չէի՛ զարկեր իմ Ձիուն...»:
Դաւիթ տեսաւ փոսի մէջէն՝ Ջուրը ելեր՝ ու կ'երթա՛յ..., —
Մէյ մը կ'երթա՛յ՝ կըկենա՛յ... 3):
Նըստաւ այնտեղ՝ քիչ մը խաղա՛ց Ջուրին հետ,
Ձեռը զարկաւ ֆար մը չըրջեց՝ կանգնեցո՛ւց,
Բըխբըխալով՝ Ջուրը ելաւ ու դընա՛ց..., —
Ֆար վըրան էր՝ Ջուրը բըխբըխ *) չէ՛ր երթար:
Աստծու կամով՝ Ձիուն այնտեղ Լեզո՛ւ եկաւ ու ըսաւ. —
— «Դաւի՛թ,–ըսաւ–, ինչ Ֆու Հայրը մեռեր է՝
Այս Աղբիւրը՝ մինչեւ հիմա չորցե՛ր էր.
Ասօր ահա Դուն որ եկար Այս–Տեղեր՝
Ջուրը բըխա՛ց՝ դո՛ւրս տըւաւ...:
Այս Ջուր,–ըսաւ–, Անմահակա՛ն–Աղբիւր է...:
Տըղա՛յ,–ըսաւ–, ես կըրնա՛մ Ֆեզ Արեւի՛ն տամ *)՝ իրիցեմ *),
Զարնեմ Գետին՝ պըճըղտեմ... *),
Բայց Դուն անփորձ տըղա՛յ ես դեռ, կո՛յր Գառնո՛ւկ մը անիմայ 4),
Ես կուտամ Ֆու Հօր սիրո՛յն..., —
Որ Ֆու Հայրը՝ ինձ չատ խընա՛մ տըւեր է:
Այդ Ֆու Մ'խաքը ի՞նչքան ալ չո՛ւտ կապուեցաւ...՝
Ինձի այսպէս Ասպանդակով խըթեցիր,

---

*) Իրիշկալ, երեսը չրչել՝ նայիլ: 3) Հմմտ. Հուծ. 96 եւ 97–ի հետ: *) Բըխբըխ, Բուխ–բուխ, բխելով: *) Տալ, Հանել բարձրացնել, հասցնել (արեւի կիզիչ չողերուն): *) Իրիցել (այրուց–ել), Այրել, խանձել. Ե·513՝ «հաճեմ արեգական. Հետ տամ գետին»՝ ուղղել՝ «հաճեմ արեգական հետ. Տամ գետին»: *) Պրճըղտել, Պճեղ–պճեղ, կտոր–կտոր ընել: 4) Անիմայ, Անգէտ, դեռ չըղատող. Ե·577՝ «վա դու դալ փալիդ իս, կուր կավրափէ մ'»՝ պակասաւոր է. ուղղելի՝ «...կուր կավըր, փէ՝ մ' չ'Ե՛նի (դատում չի՛ ըներ) քու հօր խաթրին՝ քեզ կըխնայեմ», ինչպէս է՝ Ե·912, տող 659:

Իմ փորասիւն 5) կոտրեցի՛ր...:
Քու Հօրեղբայր չէ՞ Քեզ ըսա՛ւ, պատուիրե՛ց, —
«Աղբի՛ւր մը կայ Քու առջեւը՝ Քու Հօր կաթնիկ-Աղբի՛ւրն է.
Ձին ո՛ր տեղ որ Գետին գարնէ Իր Ծունկեր՝
Այնտեղ Դուն ալ՝ վա՛ր իջնես.
Կըլողանա՛ս, Քու Հաց կ'ուտե՛ս, Ջուր կըխըմե՛ս՝ կըպառկի՛ս.
Կըքընանա՛ս, կըհանգչի՛ս,
Կ'ելնես Քու Ձին կըհեծնե՛ս ու ապա կ'երթաս կըռւի՛ւ...»:
Դաւի՛թ,–ըսաւ–, ա՛յս է Քու Հօր կաթնաղբիւր...,
Անմահութեա՛ն-Ջուր է այս...,—
Քու Հօր ու Քո Մուրազատե՛ղն ու Մուրազի-Աղբի՛ւրն է.
Ո՛վ որ Անոր Ջուրէն խըմէ՝ կըտրի՛ճ-Դիւցա՛զն կըղառնայ: —
Ինչ ժամանակ Քու Հայր երթար կըռւի՛ւ՝
Մինչեւ չիզար այտեղ իջնէր՝ Աղբիւրին վրայ չըհանգչէր,
Ջուր չըխըմէր, Հաց չ'ուտէր,
Զըպառկէր ու քընանար,
Ձին ալ թողնէր՝ արածար՝
*Տե՛ղ *) չէր երթար կըռւի՛ւ...:*
Դաւի՛թ,–ըսաւ–, ել՝ կանգնէ՛,
*Պուտ մ' այդ Ջըրէն ա՛ռ ու քըսէ Իմ կողրա՛նք *),*
Իմ կող ժըրի՛, ելնեմ ես ալ՝ արածա՛մ ու Ջո՛ւր խըմեմ. —
Ասի՝ քանի՛ տարի 6) է որ՝ այս Ծաղիկներ չե՛մ կերեր....
Այս Աղբիւրէն Ջուր չե՛մ խըմեր, չե՛մ արածեր այս Արօտ...
Ես եղեր եմ անպէտ Դըրա՛ստ..., ուժիս կէսը չ'է՛ մնացեր... 7):
Ե՛լ Այդ Ջուրի մէջ լողացի՛ր, Քու Հաց կե՛ր ու Ջուր խըմէ՛,
Պառկէ քընի՛ր, երբ արթընանա՝ կըտեսնե՛ս ի՞նչ է եղեր...: —
Ասածու չընորք ամեն կուզայ Մեր վըրա՛յ.
Դո՛ւն ալ, ե՛ս ալ՝ Այդ Ջուր խըմենք՝ ուժվնա՛նք.
Իմ թառըն առ վա՛ր, Սանձը հանի՛ Բերանէս.
Ես ալ՝ դէս–դէն՝ երթամ ու գամ՝ արածա՛մ.
Իմ կողաչարն ալ կըժըրի՛՝ կ'աղէկնա՛յ, —

---

5) Ե·744՝ փարասուն իմ՝ *ուղղել՝* փորասիւն մը (*կողոսկր*): *) Տե՛ղ, *Ո՛չ մէկ տեղ*: *) Կողրանիք, *կողեր*: 6) Ե·513,577՝ *տառասուն տարի*: 7) Ե·577՝ պէտիիր եւ խիրաք *օտար բառերը՝ ուղղելի՝* պէրկիր (*դրաստ*) եւ խէյրաք (*ոյժ, ճիգ*):

Կ'ելնենք կ'երթանք կըռիւի՛... . —
Թէ ոչ՝ Տըղա՛յ, ես Քեզ կուտամ Արեգական՝ կըվառե՛մ...»:—

592. Դաւիթ Աղբիւրին Ջուրը Կ'խմէ, Գօտին Ու Կոճակները Չ'Բակած Կ'Ըլլան

Կ·68,21, Ե·632,22,1007,808,577,777,972,1113,513,744,912,633,826, (Ե·809,972), Զ(Ե·574,1007), Ը·109, Ի·31,32, Լ·60,23, Հ·34,382, 431, Ձ·Հ·430, ՁԿ·530,529, (ՁԿ·530), Ղ·63,72,75,76, (Ղ·63,72, 75,76,86), ՁՍ·508·

Չին որ այսպէ՛ս խօսեցա՛ւ...՝
Նոր՝ Դաւիթի մի՛տքը ինկան Իր Հօրեղբօր Ըըրատները·
Չըղջա՛ց, ըսաւ՝ «Իմ Հօրեղբայր լաւ Որհուրդնե՛ր տըւաւ Ինձ,
*Անոր Խօսքը՝ Գետին պիտի չիտա՛մ ես *)»:*
Ելաւ չոյե՛ց Ձիուն Գըլուխ 1)՝ ու ձակատը համբուրե՛ց,
Ըսաւ, — «Քուռկի՛կ, Գըլխի՛դ մեռնիմ, Արեւի՛դ...,
Ես չ'իմացա՛յ որ Դուն այդքան Շընորքներու տէ՛ր էիր...,—
Թէ գիտնայի՝ այն Ասպանդակ Ես չէի՛ տար Քու Կողին...»:
Սանձը հանեց, քաշեց տարաւ Կաթնաղբիւրի Ակին վրա՛յ,
Ափով առաւ՝ Ջուրը զարկաւ Կողաշարի Վէրքերուն,
Կողաշարը զարմանուեցաւ, լաւացա՛ւ,
Իր Ձին լա՛ւ մը լողացուց,
Ձին Ջուր խըմեց, կըշտացա՛ւ,
Բերաւ Ձիուն կե՛ր տըւաւ ու թամբը հանեց դըրաւ հո՛ն,
*Արձակ թողուց այդ Մարգերու Խոտաւին *) մէջ՝ արածա՛ց,*
Ինքը եկաւ կաթնաղբիւրին մօտ նըստա՛ւ:
Հագուստները չուտ մը հանեց՝ մըտաւ Ջուրը՝ լողացա՛ւ 2)՝
Քիչ մը Ջուրին հետ խաղա՛ց,
Ելաւ նորէն հագուեցա՛ւ:
Անօթի՛ էր, իր Մախաղէն Նըշխա՛րք մ՝ հանեց ու կերա՛ւ.
Ըսաւ՝ «Նորէն ծարա՛ւ եմ... .

---

*) Գետին տալ, *Արհամարհել, ոտքի տակ առնել:* 1) Կ·68՝ երկու ականջի մէջ: *) Խոտաւ, *Խոտնոց, արօտավայր:* 2) Վազուն *Ջուրի մէջ մտնել լողանալու մասին՝ Տե՛ս* Ցառաջաբան՝ 9ա·, էջ 41–42:

Չէ՞ որ Ասիկ իմ Հօր Կաթնիկ–Աղբի՛ւրն է,
Անմահակա՛ն–Աղբիւր է…»· —
Բուռով՝ նորէ՛ն՝ Այդ–Աղբիւրի Ջուրէն խըմե՛ց կուշտուկո՛ւռ,
Մ՛ինչեան որ չատ ծարաւցեր էր ու պասքե՛ր…:
Ելաւ ապա՝ Իր Զէն բերաւ Ջըրին քո՛վ·
Իրեն Աղօ՛թն ալ ըրաւ, —
Հանդիստ ինկաւ Իրեն Զիւռն չորս Ոտաց մէջ՝ պառկեցա՛ւ,
Աղբիւրին մօտ՝ քընացա՛ւ…: —
Մոռցաւ՝ Գօտին ու Կոճակները չ՛արձրկե՛ց…;
Այնպէս կապո՛ւկ, Կոճակներով՝ ինկաւ այնտեղ քուն տարաւ,
Զէն ալ կեցաւ Արեւի դէմ՝ ու հո՛վ ըրաւ Իր վըրայ… 3):

593. Դաւիթ՝ Աղբիւրին Վրայ՝ Երազ Մը Կ՛տեսնէ

ե·1113,577,744,632,513,22,912,777, Չ(Հ·34), Չ(ՉՍ·660), Չ·, ՉԿ·530, Կ·21, (Կ·21)·

Դաւիթ այնտեղ չա՞տ քընաւ թէ քի՞չ քընաւ, —
Մ՛իայն Աստուած Ի՛նք գիտէ…,—
Չե՛նք տեսեր, բայց լըսա՛ծ ենք, —
Երե՛ք օր ու երե՛ք գիշեր 1) քընացաւ…:
Մարութեայ–Բարձր–Աստղարածնի Պատարագը որ պըրծան 2)՝
Դաւիթ ադին՝ քունի՛ն մէջը՝ Երա՛զ տեսաւ Իր Համար· —
Հրեշտա՛կ–Աստծու՝ Երա՛զ եկաւ՝ ու ըսաւ· —
— «Տըղա՛յ, Դաւի՛թ, ելիր գընա կըռիւի՛…,
Մի՛ վախնար… · —
Դուն՝ Աստուծով՝ այդ Ջօրք պիտի կոտորե՛ս…»: —

---

3) Համմալ· Խորենացիի (Բ·, է·, 165) «զ՝առաստաբլացն բաջաղանս…՝ մանկան Աիրհելոյ՝ անձրեւ եւ արեւ հակառակեալ, եւ հովանի թռչնոյ՝ պատանւոյն թալկացելոյ»: Հոս՝ Քուռվիկ–Ջալալին՝ իբր թռչող ձի, թեւաւոր էակ, հոն՝ թռչունը (արծիւ):

1) ե·513,577՝ երեք օր, ե·22՝ մէկ ժամ, ե·632՝ երկու ժամ, ե·912՝ ֆիչ մը, ե·777՝ միջեւ իրիկուն: 2) Այսինքն՝ Մ· Վանքի պատարագի պահուն:

594. Դաւիթ Կ'արթնցայ Կ'ելլէ՝ Հսկա՛յ Դարձած

Ե·1007,972,744,1113,22,513,577,633,777,808,826,912, (Ե·809,632, 577,1113), Ց·109, Զ(Ց·109), (Ց·109), Կ·68,21, Լ·76,86, Հ·34,382, 430,431, ՉՍ·509, Խ·32, ՉԿ·531, Ա·23·

Մէ՛կ ալ, պահէ՛ մ', Դաւիթը որ արթընցաւ ու թըռաւ վեր՝
*Թըրըխկո՛ցն ու կըփկըփո՛ցը *) ինկաւ Դաւթի Մարմնին մէ՛ջ....*
Պըտպըտո՛ցը ինկաւ Իր Մէ՛ջը· ինկաւ Գըլո՛ւխն ու Ոտնե՛ր...:—
Ծըմած Ձուրը երբոր իջաւ Իրեն փո՛ր՝
Ուռեցա՛ւ ու խոշորցա՛ւ.... 1)·
Երբոր ելաւ ու նըստեցաւ Իրեն տեղ՝
*Մէկ դիր *) այնպէ՛ս փըրընգտաց...,*
Պօ՛ռա՛ց, ելաւ որ կանգնէր, —
Տեսաւ՝ Իրեն Գըլխանոցը Գըլխէն Թըռեր՝ գացե՛ր է՝
Ասկէ՝ մինչեւ Նըհան տե՛ղ...:
Ինքն ալ՝ Աստծու Շընորքովը՝ լեցուե՛ր է, —
Վըրան ա՛յնքան ուժ է եկեր, հաստացե՛ր ու ջոջացեր՝
Քի՛չ կըմընայ որ Լաթերուն մէջ պայթի՛ր... 2):
Ոտաց–Մօյկերն այնպէ՛ս կըքեր՝ որ Իր Ոտներ կըցաւին... .
Քի՛չ է մնացեր՝ որ Մէջքի–կապն ու կոճակներ կըտըրտի՛ն...,
Հագուստները ամեն մէյմէկ կո՛ղմ ցըրուին...:—

595. Ձէյնով-Օհան Կ'հասնի Կ'արձրկէ Կոճակները

Զ(ՉՍ·500), ՉՍ·509,510,511, Զ·՝ՉՍ·510, (Լ·86), Ե·916, (Ե·826,716), Զ·

Դաւիթ այնտեղ որ պօռաց...՝
Հօրեղբայրը՝ որ եռեւէն ոտնաոտի եկած էր՝
Շո՛ւտ հասաւ...:—
Հասա՛ւ Օհան՝ ու Գօտիին կոճակները արձրկե՛ց:

---

*) Թրխկոց, կփկփոց, պտպտոց, *կտրուելու, պայթելու՝ ձայն:*
1) *Համմալ· Հատ* 31 *եւ* 141՝ *Սանասարի եւ Բաղդասարի պարապան:*
*) Դիր, *Անգամ, հեղ:* 2) Խ·32ա·՝ «փաթլամիշ էղի = ծեղացել է»՝ *ուղղել՝* պայթի:

Որ արձրևեց՝ Մէջկապ Թուլցա՛ւ, բացուեցա՛ւ,
Դաւիթի ուշքն այնտեղ դընա՛ց ու ինկա՛ւ...։—
Մէկ ժամու չափ այդպէս մընաց՝ նո՛ր եկաւ.
Աչքը բացաւ՝ վերցուց նայեց, ի՞նչ տեսնէ...,—
Հօրեղբայրը՝ Գըլխուն վրայ նըստե՛ր է։
*— «Տօ՛ *) հաստակո՛ղ Դաւիթ,–ըսաւ Հօրեղբայր–.*
Չէ՞ քեզ ըսի՝ «Մէջքիդ Գօտին արձրևէ՛»
Անկէ՛ յետոյ Ջուր խըմէ...».
Որ ես այստեղ չըհասնէի՝ հիմա մեռե՛ր էիր Դուն...»։
Ան ալ — Դաւիթ — ի՞նչ ըսաւ. —
= «Շնորհակա՛լ եմ, չա՛տ շնորհակալ եմ քենէ,
Իմ հայրապո՛ւթ Հօրեղբայր...»։—

596. Հօր Սարք՝ Հիմա Փոքր Կուգայ Դաւիթին

ՁՍ·512, Զ·՝ՁՍ·512, Ե·577, 744, 809, 912, 716, 972, 1007, 513, 633, 777, 826, 1114, 22, (Ե·716, 826, 912, 809, 777, 744, 577, 1007), Զ·՝Ե·513, Զ·՝Լ·76, 63, Լ·76, 72, (Լ·63, 72, 86), Զ·՝Խ·32, Խ·32, Զ·՝Կ·68, 65, 21, Կ·68, 21, (Կ·68), Ա·23, 57, 58, Ց·109, ՁԿ·531, Հ·382, 431, 34, Զ·՝Հ·431, (Հ·382).

Ելա՛ւ Դաւիթ՝ կանգնեցա՛ւ. —
Տեսաւ որ Ինք եւ Իր Ձին՝
Որ այնտեղը գալէն առաջ՝ չատ փոքր էին ու նիհար՝
Աղբիւրին Ջուր խըմելուն պէս՝ փոխուե՛ր էին Մարմինով. —
Շնորք՝ Աստուծմէ երկուքին ալ վերայ Թափեր՝ լեցուե՛ր էր.
*Ա՛յնքան գիրցեր, պէտացե՛ր *) են, — եղեր են մէկ Սարի՛ մ՝ չափ...։*
*Թէ Ինք թէ Ձին՝ այդ Աղբիւրի Ջըրին շնորքով լեցուեր *) են։*
*Ձի՛ն ալ՝ ըսես՝ Հրեղէ՛ն *) Քուռկիկ–Ջալալին՝*
Այլեւս խօսքով չի՛ պատմըւիր..., այնտեսա՛կ մէկ Քուռակ է...,—
Ու եղեր է քան՛ըզ երկո՛ւ առաջեան....
Ինքը զարձեր՝ եղեր Կըտրի՛ճ Դիւցազուն... 1)։ —
Աստծու կամով՝ Իր Հօր չափի՛ն է հասեր...։

---

*) Տօ՛, Ա՛յ դու, ո՛վ դու, ծօ՛։ *) Պէտանալ, Ծոչորնալ։ *) Լեցուիլ, Գիրնալ, մեծնալ։ *) Հրեղէն, Շատ զեղեցիկ։ 1) Լ·86՝ ֆէրըզ–փայլէվան։

Դաւիթ այնտեղ չա՛տ զարմացաւ, վերցուց ըսաւ, — «Տէ՛ր Աստուած,
Մենք որ եկանք այս Աղբիւրին վրա՛յ հասանք՝
Ես ու Իմ Ձին նիհա՛ր էինք երկուքս ալ...,—
Հիմա՝ այստեղ՝ ի՞նչ եղաւ որ՝ մէկէն այսպէս փոխուեցանք...»:
Ու դարձաւ Իր Հօրեղբօրն ալ 2) կըպատմէ՛ այդ հրաշալիք...:—
— «Որդի՛,—ըսաւ Ձէնով-Օհան— 3), մի՛ զարմանար այդ քանին...
Մեզ 4) Գի՛րք մը կայ՝ Անոր մէջը որոշ դըրո՛ւկ է արդէն 5), —
Թէ՝ «Մի՛վ որ այդ Անմահակա՛ն-կաթնաղբիւրի Ջուր խըմէ՝
Զօրութիւն ու Շընո՛րք կ՚առնէ ինքիրեն...».—
Անոր համա՛ր է որ, ահա, Որդի՛, Քէ՛ Դուն՝ Քէ՛ Ձո Ձին՝
Այդպէս մէկէն փոխուեցաք...»:
Դաւիթ ելաւ՝ Ձէն-ու-Զարդեր 6)՝ ամեն հանե՛ց վըրայէն,
Անոնց մէջի բամպակները հանեց դո՛ւրս, —
Մինչեւ այդ պահ՝ ամեն Շորեր եօ՛թ փաթ էին Իր վըրայ՝
Նորէն հագաւ՝ հիմա եղան ճիշդ մէ՛կ փաթ: —
*— Հօր Մօյկերը՝ ինչ Քառասո՛ւն Լիտր բամպա՛կ կոխեր էր ինե *),*
Նո՛ր Իր Ոտքեր զադրեր էին Անոնց մէջ՝
Հանեց նետե՛ց, կոճակները արձըկեց՝
Հագի՛ւ Ոտքեր մըտան մէջ,
Իր Ոտքերուն դեռ պըղտի՛կ ալ կուգային,
Քիչ էր մնացեր՝ չորս-հինգ տեղով ճեղքըւէին, բացուէին...:
— Հօր Շըլվարը՝ որ եօ՛թ տեղով վե՛ր քաշեր էր ու կապեր՝
Դեռ նե՛ղ եկաւ Իր վըրայ,
Քիչ է մնացեր՝ որ կապերը կըտըրտուին...:
— Զրա՛հ-Պողվրտին՝ որ Քառասո՛ւն Նետ) Գետին կ՚երթար կըփըռւէր՝*
Քառասուն Օղակ լա՛յն Թողուց՝
*Ելաւ նետեց Իր Ծունկերուն, եղաւ մէ՛կ *) Իր Հասակով...:*
— Ոսկի-Գօտին՝ եօ՛թ փաթ կուգար Մէջքին չուրջ,

---

2) Լ·72՝ Տուն գնաց՝ ամենին ալ պատմեց: 3) Լ·72՝ Պատուհասին խառնակութեան բերումովը՝ Սանդուխ: 4) Լ·72՝ Մի՝ ուղղել՝ Մե(զ): 5) Մեր Դիւցազնավէպին խոր ուսումնածքէն՝ մարդ այն եզրակացութեան կուգայ — եւ վերի կտորը փաստերէն մէկն է — Թէ՝ Սասմանց Տան վէպը գրաւոր ալ գոյութիւն ունեցեր է Հայաշխարհին մէջ: Եւ հօրմէ որդի՝ կարդացուած ու պատմուած է, գրուածքը կորսուելէ առաջ ու յետոյ: 6) Տե՛ս չարքը՝ Հատ. 545 եւ 573:
*) Ինե, Մէջը: *) Նետ, կանգնաչափ: *) Մէկ, ճիշդ ու ճիշդ:

Քառասո՛ւն Օղակ ոլորեր էր՝ վե՛ր քաշեր՝
Մէ՛կ փաթ եկաւ՝ հագի՛ւ հասաւ ծայրը–ծայրին՝ ու կոճկեց···:
— Թուր–կէծակին՝ եօ՛թ նետ՝ Գետին քա՛շ կ՚երթար՝
Կապեց Մէջքին՝ Մե՛ծ Ըմբիշի Նըմանակ՝
Ծայրը չ՚ինչա՛ւ իր Ծունկերուն, դեռ կա՛րճ կուգայ Հասակին,
Բուռը 7) հագի՛ւ Մէջքէն քիչ մը բարձրացաւ···:
*— Հօրը Կուրդիկ–Միրանին ալ՝ որ եօ՛թ տակ *) էր Իր վըրայ՝*
*Եօթ տակ քակեց՝ ըրաւ մէ՛կ տակ՝ հագի՛ւ բըռնեց *) Պըճեղներ,*
Բամակէն ալ՝ մէկ–երկու տեղ պատռեցաւ, —
Մ՚ինչափ որ այդ Կուրդիկ–Կապան կարճըցաւ···:
— Աչ–Փեսրաղին որ հո՛վ կ՚ընէր Իր Անձին,
Իջեր էր Իր Մէջկապէն՝
*Ելաւ կըպաւ *) Թեւին վրայ՝*
*Ինչպէս Աուտիը ըընես Պուտկի *) Բերանին···,—*
Ալ չի՛ չարժիր ու չ՚ի՛ր եր՛, ա՛լ չուք չ՚ը՛ներ Իր Անձին:
— Հօր Գըլխանոց՝ Ոսկի–Գուդիկն առաւ Ձեռ,
Որ Քառասո՛ւն Լիտր Բամպա՛կ կոխեր՝ այնպէ՛ս դըրեր էր Գըլուխ՝
Այդ Քառասուն Լիտր Բամպակ հանեց ու թափեց՝
Հագի՛ւ մըտաւ Իր Գըլուխը, կեցաւ մէջտեղ Ճակատին,
Ըրհասա՛ւ Իր Ականջներ···,—
Մ՚ինչափ որ Ինք զօրացա՛ծ էր, հուժկո՛ւ դարճած՝ Այդ Զուրէն:
Առաջ փո՛քր էր, ուժն ալ քի՛չ, —
Քան Իր Հայրը ա՛լ աւելի ուժե՛ղ դարճած էր հիմա·
Իր Հօր հաղած Զէն–ու–Զարդեր՝ եկան եղան Ի՛ր չափին,
Դեռ պակա՛ս ալ կըմընային, Սարքեր չէի՛ն աւելնար: —

597· Դաւիթ Իր Փափուխին Հասած

Ց·109, (Ց·109), Ե·809,1114,1007,22,513,578,633,744,777,808,912, 972,826, (Ե·1114,777), Կ·21,69, Հ·382,431,34, (ՉԿ·531), ՉԿ·531, Չ·, ՉՍ·513,512, Ա·57,59,23,58, (Ա·59,57,58), Չ·՝Ա·58, Խ·23·

Բարի–Լո՛յս որ բացուեցաւ···՝
Դաւիթ ելաւ՝ անուն Աստծո՛ւն ըրաւ այլեւս ու յիշո՛ց· —

---

7) Ե·744՝ կոթը (*երախակալ՝ սուրի*): *) Տակ, Մալք: *) Բըռնել, Հանիլ: *) Կպիլ, Փակիլ, ճիշդ չափովը գալ: *) Պուտուկ, Պոյտ, աման:

— «Հա՛ցն ու Գինին, Տէ՛ր–Կենդանին,
Մարութ-այ–Բա՛րձր–Աստուածին,
Խաչ–Փետրազին՝ վեր՝ Դաւիթի Այ Թեւին...»:

Գուռկիկ–Ջալալ՝ եկաւ կեցաւ Իրեն մօտ,
Ելաւ Իր Ձին Գըլխէն բըռնեց ու պագա՛ւ,
Թամբն–Արծըթին զարկաւ վըրան՝ ու կապերը ամրացո՛ւց, —
Անոր փոկեր՝ մէկ փութ հազի՛ւ եկան Փորին բոլորտիք:
Սանձը դըրաւ Գըլուխին 1),
Քաշեց բերաւ Հօր Ձէնքերու Սարքին քով,
*Նետ–Աղեղը խաչփակ *) նետեց Ուսերուն,*
Որը դըրաւ Ասպանդակին՝ Թըռաւ հեծա՛ւ Իրեն Ձին:
*Գորգ–Մըհէրին՝ որ մէ՛կ ձեռմայ *) զարկաւ բըռնեց՝ բարձրացուց՝*
Ասեղի մ՝ պէս Գետնէն վերցուց՝ դըրաւ Իրեն Ձիուն վրա՛յ:
Այն ժամանակ՝ զարճաւ ըսաւ, — «Հօրեղբա՛յր,
Այլեւս զարճիր՝ դընա Տո՛ւն, —
Իմ փափաքին ես հասա՛յ...,—
Տո՛ւր Քու Ձեռը ես պաղնե՛մ...»:
Ծըռուեցա՛ւ ու Հօրեղբօր Ձեռ համբուրեց:

598. Ձէնով-Օհանի Փորձառու խրատները.
«Ինչ խաղ խաղաս՝ ճապաղխաղ Ջխաղա՛ս»

Ա·58,59,60, Ջ·՝Ա·59, Լ·86, Ջ·՝Լ·86, Ջ·, ՋՍ·500, Ե·574,575, Ջ(Ե·1114), Ջ·՝Ե·828, ՋՎ·4, Ջ·՝Կ·67, Ջ(Կ·67).

Հօրեղբայրն ալ՝ Ձէնով–Օհան՝ ի՞նչ ըրաւ. —
Օրհնե՛ց Դաւիթ եւ Իր Ձին՝
Հրեղէն Գուռկի՛կ–Ջալալին, —
— «Գընա՛, Որդի, Աստուած Քեզ հե՛տ ըլլայ,–ըսաւ–, ամեն տեղ.
Ու Քո Ձեռը՝ Թըշնամու վրայ բա՛րձր ըլլայ:
Կըտրի՛ճ եղիր. Թըշնամիէն մի՛ վախնար...:—

---

1) Սանձը գլուխին դնել (ոչ թէ բերանին) ձեւը՝ կ'ցուցնէ որ՝ Թերեւս հին ատեն՝ ձիու գլուխին կ'անցունէին սանձը, առանց բերանին մէջ երկաթ անցունելու: *) Խաչփակ, Խաչաձեւ նետած: *) Մէկ ձեռմայ, Մէկ ձեռքով:

Քա՛նի ողջ ես՝ կըռի՛ւ կ՚ընես Քաջի պէս, —
Մինչեւ իրկուն՝ Սուր–ու–Թո՛ւր է՝ կըխաղցընես ա՛ղ ու ձախ:
Բանակին մէջ չե՛ս մընար· —
Ք՚ընուկ տեղը՝ դաւով՝ յա՛նկարծ՝ Քեզ կըբռնեն կ՚ըսպանե՛ն:
*Ինչ *) Արեւը կըմըտնայ՝*
Ձիդ կըքըշես՝ կ՚ելնես բարձրը Սարի մ՚ Գլո՛ւխ,
Հոն կըհանդչիս· արթո՛ւն կ՚ըլլաս· չե՛ս քընիր·
Չի Ք՚ո Չիու հետք կըբռնե՛ն՝ Քեզ կըդըտնե՛ն քընած տեղ,
Նետաղեղով Քեզ կըզարնեն կ՚ըսպանե՛ն †):
Մէկ ալ,–ըսաւ–, կ՚երթաս այնտեղ 1), ա՛յ Որդի՛,
Գետի մէջո՛վ դարկ ու անցիր՝ ու գընա՛···,—
Մըսրամէլիք Գետին փորեր՝ վըրան Կապե՛րտ փըռեր է,
Ու վըրան ալ Հո՛ղ է քաշեր՝ որ Դուն իյնաս Հորին մէջ···:
*Ծաղի առեն՝ ի՛նչ Ծաղ խաղաս՝ Ճոպանխաղը *) չըխաղա՛ս:*
Կըռիւի մէջ՝ ամեն առեն՝ կանչես ըսե՛ս Ք՚ո «Ցիշամ», —

— «Հա՛ցն ու Գինին, Տէ՛ր–Կենդանին,
Մարութայ–Բա՛րձր–Ասպարածին,
Խաչ–Փետրազին՝ վեր՚ Դաւիթի Աչ–Թեւին, —
Օգնակա՛ն կանգնիք Սասմանց–Դաւթին···»:

Որ մոռնաս ու չըկանչե՛ս Դու Ք՚ո «Ցիշամ»՝
Ք՚ու բան աչող չի՛ երթար, —
Կըվընասուի՛ս կըռիւի մէջ, ամե՛ն ժամ···»:

599. Նշանաբան «Նիւ–Աղեղ»

ՉՍ·501,502,503, Կ·69·

Դաւիթ այնտեղ ուրախացաւ, կանչեց ըսաւ, — «Դէ՛, Հօրա՛ր 1),
Մնացիր բարո՛վ, ես գլիտ՝ երթամ Մէլիքի դէմ կըռիւի՛»:
*= «Որդի՛,–ըսաւ Ձէնով–Օհան–, երթաս բարի՛ *), Տէր Քեզ հե՛տ·*

---

*) Ինչ, *Ինչ առեն որ*: 1) ՉՍ·500՝ Մըսրը, *Հասկնալի՝ Մըսրայ Բանակ*: *) Ճոպանխաղ, Ե·828՝ Ճոլան–ճոփան, *Տեսնել իմ* ՀԱՇԽԱՐՀ, *թիւ* 191: †) *Տե՛ս Հուշ*· 643–646:

1) ՉՍ·501՝ *Դաւիթ գնաց հասաւ Քեռուս դուռը, կանչեց*, — «*Քեռո՛ւ···*» [*Քեռի = Մօրեղբայր*]: *) *Երթաս բարի՛, Երթալէդ՝ ի բարին ըլլայ*:

*Տըղա՛յ,–ըսաւ–, Նըչանաբան *) մ՚ չունի՞ս՝ տուր Ինձ՝ նոր դընա՛,*
Նեղ որ իյնաս՝ կը հասնի՛մ...»:
Ան ալ՝ Դաւիթ՝ նետ Աղեղը իր հե՛տն էր,
Հաննց տըւաւ Հօրեղբօ՛ր 2)·
Հօրեղբայրն ալ՝ տարաւ կախեց Իր Պատէն:

600. Դաւիթ Հրաժեշտ կ՚առնէ Ծովասարի Աղբիւրներէն, Սարերէն Ու Հովերէն

ՀՍ·514,659, Կ·69,21, Ե·911,633,716,744,777,808,972,973, Հ·՝Ե·911, Հ·, Հ·34,444·

Դաւիթ դարձո՛ւց Ձիուն Գլուխ՝ ու քըշե՛ց· —
Մէկ գընա՛ց ու մէկ նայեց ե՛տ, ալ ու ձա՛խ,
Հրաժե՛շտ առաւ Ծովասարի Աղբիւրներէն, Սարերէն ու Հովերէն,
«Մընաք բարե՛» ըսաւ խաղով՝ ու կանչեց 1)· —

— «Ծովասարի պա՛ղ Աղբիւրնե՛ր, մնացէ՛ք բարո՛վ, բարի՛ մնացէ՛ք·
Ես կ՚երթամ կռի՛ւ՝ կըծարւըմա՛մ, Դուք առա՛տ 2) մնացէ՛ք...:
— Ծովասարի պաղ–պա՛ղ Հովե՛ր, մնացէ՛ք բարո՛վ, բարի՛ մնացէ՛ք...
Ես կ՚երթամ կռի՛ւ՝ կըշոգանա՛մ *), Դուք հո՛վ *) մնացէ՛ք...:
— Սարե՛ր, Ձորե՛ր, Դուք կացէ՛ք բարո՛վ,
Ես կ՚երթամ տարով *), Ինձ արդա՛ր ըրէ՛ք...:
— Ծառե՛ր, Թուփե՛ր, Աղբիւրնե՛ր, Դուք կացէ՛ք բարո՛վ՝
Ձուր *) հազար տարով... 3)»:

Ըսա՛ւ Դաւիթ, արագ քըշե՛ց ու դընա՛ց...:—

---

*) Նշանաբան, *Ծուշարարի դեր կատարող իրեղէն*: 2) ՀՍ·503՝ Գեղուն (*մօրեղբօր*): *Տե՛ս Հատ*. 634:

1) *Երգով*: 2) Կ·21՝ կարօտ (մնացէ՛ք): *) Շոգանալ, *Քրտնիլ*: *) Հով, *Զով, պաղուկ*: *) Տարով, *Տարիի հաշուով, տարւան մը համար*: *) Ձուր, *Մինչեւ*: 3) *Հմմտ.՝ Մուշի ժողովրդական մահերգի մը հետ*, — «Ես Ձիս դըրի հազա՛ր տարու,
Ղափի՛լ եկաւ օրիկս մահուս·
Ձիս կու գատե՛ն ամեն բարու,
կացէ՛ք բարո՛վ, բարեկամնե՛ր»:

601. Դաւիթ Իր Թուրը Կ'զարնէ Պողվըտէ-Սիւնին

2U·660,661, 2Կ·531, Ե·22,575,632,716,777,972,973,1113, 513,744, 778,1114,1014,1015,745,808, 2·՝Ե·1113,1114, (Ե·778), Ճ·109, 2·՝Ճ·109, Ա·23, 2·՝Ա·23, 2(Ա·23), Խ·32, Կ·122,69,29,30, (Կ·122), 2·՝Կ·29,122,69, Հ·444,34,35, 2·՝Հ·444·

Է՛, Դաւի՛թն էր···, — չա՛տ դընաց՝ թէ քի՛չ դընաց···՝
Այդ Քարէկալ Սարին վըրայ՝ քըշեց ինկաւ մէջ–Դաչտին·
*Նայեց տեսաւ՝ մէկ Պողվըտէ–Սիւն մը 1)՝ ողո՛ւդ *)՝ ձամբուն մէ՛ջ,*
Երկնուց իջեր մինչ Գետին· —
Այ՛նչա՛փ հասա որ՝ Զըւան չէ՛ դար բոլորտիք 2)···:
Դաւիթի մըտքէն ալ ելե՛ր էր··· · Պողվըտէ–Սիւն որ տեսաւ՝
Հօրեղբօրը բոլո՛ր Ծօսքեր՝ մի՛տքն ինկան, —
— «Ա՛հա՛,–ըսաւ–, Իմ Հօրեղբօր ըսած տե՛ղն է այս տեղիկ··· ·
Հօրս Մըհէրի Փորձասի՛ւնն է, կանդնած այստեղ՝ Դաչտի մէջ»:
Ու չա՛տ Մարդիկ եկեր էին, չէ՛ին կըրցեր Ան կըտրել···:
Դաւիթ՝ այնտեղ՝ քըշե՛ց Իր Ձին, դընաց կեցաւ Սիւնի՛ն մօտ.—
Կըռւի Իրեն Աղո՛ւթն 3) ըսաւ ու կանչեց· —

— «Ցիշա՛մ՝ Հա՛ցն ու Գինին, Տէ՛ր–Կենդանին 4),
Մարութ–յա–Բա՛րձր–Աստվածին,
Խաչ–Փետրազին՝ Իմ Աջ–Թեւին, —
Զարնեմ Թո՛ւրը–Կէծակին՝
Կըտրէ Սի՛ւնը–Պողվըտին, —
Զուր չըտանի՛ Իմ Ձեռաց Ուժն ու Փառին 5).
Կըտոր կայնի՝ վեր՛–կտորի՛ն· —
Իմ գոհա՛ր աՅուն՝ չաւրի՛ մէջ–Աշխար՛հն:
— Թեւի՛կ, Ինձ Քեզնէ խընդի՛րք է՝ չուր *) բազմո՛ւմ ժամանակին,
Ձեռ կըթալեմ *)՝ հետ Թո՛ւր–Կէծակին *),

---

1) Ճ·109՝ առն վրայ՝ *ուղղել*՝ սաճ (*սեան, սիւնի*) *վրայ*: *) Ո–ղորդ, *Իրա՛ւ, իսկապէս*: 2) *Այնչափ հասա է որ՝ պարանով հազի՛ւ կ'չափուի իր ծիրը*: 3) Հ·34՝ «Հաւատամ խոստովանիմ»: 4) Ա·23, Ե·1114՝ Ցիշեա՛ կմ. Եա՛՝ խէր (*հայր*) կենդանի(ն), Ե·778՝ կ'յիշայ զ'ֆեզ Որդին: 5) Կ·122՝ ֆիւսն ու ֆամին (*քամի = ձեռքի թափը, ուժը*): *) Զուր, *Մինչեւ*: *) Թալել, *Նետել*: *) Հետ Թուր–Կէծակին, *Դէպի Թուր–Կէծակին*:

Կըտրե՛մ Սիւնը–Պողվըտիճ,
Կըտոր կայցի՝ վեր՝ կտորիճ, —
Իմ գոհա՛ր աճուն չ'ապրի՛ մէջ–Աշխըրհիճ»:

Ըսա՛ւ Դաւիթ, Իր Ձին խաղցո՛ւց ասպարէզ մ'՝
Գընաց–եկաւ՝ Իր կէծական–Թուրը քաշեց ու զարկա՛ւ...: —

602. «Ձեռնի՛կ, Դու կոտո՛ր կենցայիր...»

Հ·444,35,378, (Հ·444), (Ե·632), Ե·1015,1114,22,513,575,632,716, 745,23,778,808,973,576,809, Զ·՝Ե·973,716,575, (Ե·808,777,745, 778,809,1114,632,576,513), (Կ·69,30,122), Կ·69,30,122, ՁՍ·662, 663,664,665, Զ·՝ՁՍ·664, ՁԿ·531, Ը·109,110,110ա·, (Ը·110ա·), Խ·32, Զ(Խ·32), Ա·23,24, (Ա·23).

Դաւիթ այնպէ՛ս ուժով զարկաւ Այդ Սիւնին,
Թուրը Այն Սիւն՝ կէսէն՝ի վեր՝ այնպէ՛ս կըտրեց ու անցաւ՝
*Կըտուր *) մընաց վեր՝–կըտորին՝ չուռ 1) չ'եկա՛ւ: —*
Երկաթ–Սիւնը՝ չէ՞ որ մէջէ՛ն անցաւ Թուր(ն)՝
Զըչարժեցա՛ւ՝ որ կըտուրը իյնար տա՛կ,
Վերի կըտուր՝ վարի մասին վրա՛յ կեցաւ, —
Ճը՛ռտո՛ց մ' ինկաւ այդ Պողվըտէ–Սիւնին մէ՛ջ...:
Դաւիթ այնտեղ չ'իմացա՛ւ որ Թուրը կըտրեր անցեր էր,
Կըտուր՝ կտորի վրա՛յ էր նըստեր, Հօրը պէս, —
Ինք կարծեց որ չ'է՛ր կըտրեր...,—
*Սէրտը կըռչա՛ց *),— «է՛յ–վա՛խ,–ըսաւ–, չըկըտրե՛ց Թուր–Կէծակին,*
*Աստուած կոտրէ՛ Ձեռը՝ ֆո մուխ *) տըւողին...»:*
*Իրեն մըտով *)՝ Իր Ձեռ ուժով չէ՛ր զարկած՝*
Ջ'Ինքն անիծեց, խաղով կանչեց ու ըսաւ. — 2)

— «Ձեռնի՛կ 3), Դու կոտո՛ր կենցայիր, = Ա'Խ, դեռ կոտո՛ր կենցայիր, Դու՝ Պողվըտէ–Սիւնն անկըտրել չ'թողնէի՛ր... .

---

*) Կտուր, *կտրուած մաս, կտրոն*: 1) Ե·576՝ չուռ աճէր՝ *ուղղել*՝ չուռ առնէր: *) Կռչալ, *ծաւալ զգալ*: *) Մուխ, *Պողվատին կարծրութիւն տուող մի ջոցը (չիկացած՝ թաթխել ջրի մէջ)*: *) Իրեն մտով, *Ըսա իրեն, ինք կարծեց թէ*: 2) *Երգով*: 3) Խ·32՝ Ձեռնիր, Աչքիր, Բաժնիր՝ *ուղղելի*՝ Ձեռնիկ, Աչքիկ, Բաժնիկ (*հասակ*):

= Ա՛խ, դեռ Սիւնի անկըտրել չթողնէի՛ր...: —
Ի՛նչ զարկ էր զարկիր այս Փորձաքարին՝
Զկըտրե՛ց Նըշանը–Մըհէրին, = Հա՛, Մըհէրին...:
Իմ գոհա՛ր անուն մէջ–Աշխըրհին աւրեցի՛ր...:
Ինչպէս որ զարկի՝ Դու Պողվըտէ–Սիւնը կըտրէի՛ր,
Կըտուր կտորի վրա՛յ դադրեցնէիր, —
Աշխըրհի մէջ Ձիս անպատիւ չընէի՛ր...՝:

Ձեռ կոտրեցա՛ւ..., Թևը չորցա՛ւ՝ ու կախուեցաւ իր մօտէն 4). *Նորէն ըսաւ.* —

— «Աչէի՛կ, Դու խաւա՛ր կենայիր...,
Մէջի՛կ 5), Դու չո՛ր դառնայիր...,
Բըրի՛կ, Դու բաղի՛ս դառնայիր 6)..., —
Ի՞նչ զարկ էր զարկիր Այս Փորձաքարին,
Զկըտրե՛ց Նըշանը–Մըհէրին, = Ու Մըհէրին...:

Աչքն ալ կուրցա՛ւ 7), *Մէջքը Թուլցա՛ւ...* .—
— *Ձեռ մը չորցա՛ւ..., Աչք մը կուրցա՛ւ...:*
Այն առեն ալ՝ Արդար–Մարդը ի՛նչ ուղէր՝
Կըկատարուէ՛ր Անոր խօսք...: —
Դաւիթ այնտեղ Թողուեցա՛ւ...,
Դիժարացաւ *), *դէմքը կախեց ու լացա՛ւ...,*
Վերցուց՝ ձայնով ի՞նչ ըսաւ. —

— «Ոտնի՛կ, Դուն թո՛ւլ կենայիր, Ձիգայի՛ր այստեղ հասնէիր... 8),
Որ Թուր զարնէիր Այս Սիւնին՝ Զկըտրէր՝ Իմ Սիրտ թողոմէր.

---

4) *Սասունիկ յուղումի ու զայրոյթի մէջ՝ մարդուն Թևերը Թուլնալ–կախուելու ի՛նչ բնական պատկեր*, եղածի պէս ցուցուած: 5) Ե·745՝ ձեռն ի կը, մէջքն ի կը, *ուղղել՝* ձեռնիկը, մէջքիկը, *եւ* ձեռն ի կանայ աչեր, մէջքն ի կանաչ աչեր՝ *ուղղել՝* ձեռնիկ՝ կանաչաչեր, մէջքիկ կանաչաչեր (կանաչաչաբ): 6) *Վանայ բարբառին մէջ կայ՝* Թաղսէ Թուր *առուքիւն մը՝ ակնարկուած՝ կամքէ դուրկ մարդու, որ վճռակամ, կորուկ չ'է՛:* Կ'ըսուի *մանաւանդ դիրքի տէր՝ բայց Թոյլ իշխանաւորի համար:* 7) Կ·30՝ կոտացաւ՝ *ուղղել՝* կուր(ա)ցաւ: *) Դիժարացնել, *Վիշտ զգալ, սրտին ծանր գալ:* 8) Ե·576՝ խանէի՝ *ուղղել՝* խասնէր (*հասնէր*):

Աս ի՞նչ էր ըրիր հետ–Դաւիթին…:
Ձեռը կոտրէ՞ր Դաւիթին· Աչքը կուրնա՞ր Դաւիթին· Ոտը թուլնա՞ր [Դաւիթին,
Որ Դաւիթը Թուր չըթալէր՝ երթար Իր Ուժն ու Քամին… :

Աստծու կամքով՝ Դաւթի Որ՛ն ալ Թուլացաւ,
*Եղաւ դոդի *), մըննց այնտե՛ղ՝ քիչ մ՛ ատեն…:—*

603. Ձին Կ'ըսէ «Դաւի՛թ, Քամի՛ Մ' Ուզէ Երկինքէն»

Զ·՝Ե·110, Զ(Ե·110), Զ(Հ·444), Ե·1114,23, (Ե·23), Զ·՝Ե·23, ՁՍ·666, Զ·, Զ·՝Խ·33, Խ·33, Կ·30, (Կ·30)·

Դաւիթն ալ հոն՝ միտք ըրաւ որ ետ դառնար ու երթար Տուն,
Իր մէջ ըսաւ՝ «Իմ Հօրեղբօր ըսածն եղա՛ւ, ե՞տ դառնամ…»:—
Ուժո՛վ փըչեց՝ դէպի Սիւնը՝ որ չըրչէր··· 1),
Ու Ձին քըշեց Դաշտին Գըղո՛ւխ, դարձաւ եկաւ դէպի Սիւն՝
Ուզեց այնտեղ մէկ ա՛լ ղարնէ որ կըտրէ, —
Իր Ձին ըսաւ 2), — «Դաւի՛թ, Բերանդ կոտրե՞ր է···,
Քամի՛ մ՝ ուզէ երկինքէն…»:
Դաւիթ այնտեղ նորէն կանչեց ու ըսաւ, — 3)

— «Օրհնեա՛լ բարերար Աստուած, Քո խըճամբն 4) էր շա՛տ···,
Հրամա՛ն ընես՝ Հարաւ–Քամին ալ 5) իջնէ՛ր,
Այս Պողվըտէ–Սիւնը՝ երե՛ր տար *)՝ ձըգէ՛ր…:—
— Սարե՛ր, Քամի՛ մը կ'ուզեմ· — Ձորե՛ր, Քամի՛ մը կ'ուզեմ…՝
Որ այս մէկ տակ *) Սիւնը շո՛ւռ տան Ձեր Հովեր…» 6):—

---

*) Դոդի, *Անդամները կծկատած, անդամալոյծ*:

1) Ե·110՝ «դարձաւ փչեց դեհ Սիւն, կտորը թռաւ գնաց»: 2) Ե·23՝ լեզու եկաւ՝ *ուղղել*՝ լեզու եղաւ: 3) երգով: 4) Ե·23,24՝ հրամանքն: 5) Ե·23ա·՝ «է՛ր, լա՛, բացագանչութիւն երգի՛ մէջ»՝ *ուղղելի*՝ ալ, *ինչպէս է*՝ էսա սուն լէ (*տող* 431 = *այս սիւնն ալ*: *) երեր տալ, *երերցնել*: *) Մէկ տակ, *Մերկ մէջտեղ կեցած*: ☛ 6) *Այս եւ նախորդ Հատուածներուն մէջ՝ երգերուն տողերը խառնուցած եմ — եւ ասկէ ետք ալ ստիպուած եմ այնպէս ընելու՝ (պատերազմի) Թուղթի չգոյութեան պատճառով: Եղանակ յօրինողները կրնան տողատել՝ չափերուն համաձայն:*

604. «Ձևռնի՛կ, Դու կաճա՛չ կենայիր՝ Որ կարեցի՛ր Նշանը-Միհրին»

2Կ·532,533,533ա·, (2Կ·532), Ե·23,513,576,632,745,809,973,1015, 1114,778,777, (Ե·23,973,778,809,1114), 2·՝Ե·973, Խ·32,33, Կ·69, 30,122, (Կ·122), 2·՝Կ·122, Հ·35,444,445,379, (Հ·35,379,445), Ա·24, (Ա·24), 2·՝Ա·24, (Ց·110), Ց·110, 2(Ց·110), 2(2Ս·667, 669), 2Ս·667,668,669·

Աստծու կամով՝ Հարաւային 1) Քամին եկաւ կանդնեցա՛ւ,
Ալ ո՞վ դիմէ՝ Դաւթի՞ չունէին, Ձիո՞ւն թափէն՝
Թէ՞ Հարաւի Ծովասարի՞ Քամիէն՝
*Մէկ ալ տեսաւ՝ փոթորիկ *) Հո՛վ մը եկաւ այն կողմէն՝*
Եկաւ զարկաւ Պողվըտէ–Սիւն չո՛ւռ տըւաւ ու գըլորեց,
Սիւնին Գըլուխ չըրջեց վա՛ր. —
Վերի կըտուր որ կըտրեր էր՝ վա՛ր ինկաւ,
*Վարի կըտոր մընաց իր տեղ՝ Թըրահար *)···:*
Դաւիթ այնտեղ նո՛ր հասկըցաւ Թէ Իր Սուրը կըտրեր էր:
Երբոր տեսաւ՝ որ իրա՛ւի՝ Պողվատ–Սիւն՝
Իր առաջին մէկ հարուածով կըտրեր է՝
Կըտուրն իր տեղ կըտորի վրա՛յ է կայներ,
Շուռ չ՚ա՛ռեր, —
Ուրախացա՛ւ, դարձաւ ըսաւ Ինք՚իրեն. —
«Այնպէ՛ս հարուած մ՚ զարկեր եմ Ես այդ Սիւնին՝
Որ Սիւն կըտրեր՝ կըտուրն իր տեղ կայներ է վեր՚–կըտորին՝
Ու Ես չե՛մ ալ իմացեր···:—
«Ողորմի՛» Ձո Շինողին, հէ՛յ Իմ Թըրիկ–Կէծակին,
Որ կըտրեցի՛ր Սիւն–Պողվըտին՝ կըտրած Թողիր վեր՚–կըտրածին»:
Իր Ձին նորէն լեզո՛ւ եկաւ ու ըսաւ. —
— «Դաւի՛թ, ինչո՞ւ անիծեցիր Քեզ դուր տեղ··· .
Ձու կըտրած Սիւն ինկաւ վա՛ր···:
Ձեր Ազգի մէջ՝ Երկնո՛ւց տըրուած չընորհ է, —
Ի՛նչ որ ըսեն՝ կըկատարուի՛ տեղնիտեղ·
Դուն Քեզ օրհնէ՛՝ կ՚առողջանաս Դուն նորէն···»:

---

1) Ե·632, 1015՝ յուշիկ, թեթեւ, Ե·809՝ բարակ (*քամի մ՚*): *) Փոթորկաչունչ: *) Թրահար, *թուրով զարնուած*:

Ան ալ՝ Դաւիթ 2)՝ դարձաւ պօռաց, ինքզինք օրհնեց ու ըսաւ. —

— «Զեռնի՛կ, Դու կանա՛չ կեցայիր, = Որ կեցայի՛ր··· 3).
Ի՛նչ զարկ էր՝ զարկիր այն փորձաքարին, = Որ զարկի՛ր,
Կըտրե՛ց Նշանը–Մըհէրին, = Ու Մըհէրին···:
Մեզ սիվտակ–երես *) դարձուցիր, սեւ–երես *) չ'ըրի՛ր···,—
Իմ գոհա՛ր անուն՝ մէջ–Աշխըրհին չ'ատեցի՛ր···:
— Աչքի՛կ, Դու լուսո՛վ կեցայիր, = Որ կեցայի՛ր···,
Որ տեսար ու զարկի՛ր այն փորձաքարին,
= Զարկի՛ր որ զարկիր···:
— Ոտնի՛կ, Դուն ուժո՛վ կեցայիր···, բարո՛վ գացիր այստեղ· —
Ես զարկե՛ր եմ՝ Պողվըտէ–Սի՛ւնն եմ կըտրեր,
Կըտուրը վեր'–կըտորի՛ է կանգներ՝ Ես չե՛մ իմացեր··· .
— Մէջքի՛կ, Դու կանա՛չ կեցայիր···,
Թըրի՛կ, Դու կըտրո՛ւն կեցայիր···,
Աստուած Քեզ աւելի՛ ուժ տայ···,—
Ի՛նչ զարկ էր՝ զարկիր այս-փորձաքարին, = Զարկի՛ր որ զարկիր···:
Ցիշա՛մ Մարութայ–Բա՛րձր–Ասպարածին՝
Որ լըսէ՛ Դաւթի խընդիրքին···»:—

605. «Զեռ կանչա՛ւ Դաւիթին. Աչք լուսովցա՛ւ Դաւիթին»

ՁՍ·670,515, Ճ·110, Խ·33, Զ·՝Խ·32, Ե·23,576,632,778,777,745, 1006,746,716,514,578,912,973,633,715,809,1007, 1015,1114,1115, (Ե·746,826,1007,973), Զ·՝Ե·576,745,1015,1006,716,Հ·35,445,379, Զ(Հ·378),Զ·,Զկ·534,Զ·՝կ·122,կ·30,Զ·՝Ս·162,Զվ·2,Ա·24,60,(Ա·58).

Տըղայ–Դաւիթ այդ մաղթանքը իր Աստուծմէն որ ըրաւ՝ Զեռ կանչա՛ւ, Աչքը լուսցա՛ւ, Անձն ուժովցաւ՝ Աստուծով:
Ան ալ երգեց ու ըսաւ. —

— «Զեռ կանչա՛ւ Դաւիթին. Աչք լուսովցա՛ւ Դաւիթին.
Թեւ ժըրեցա՛ւ Դաւիթին. Ոտն ամրացա՛ւ Դաւիթին.
Մէջքն ուժովցա՛ւ Դաւիթին···»:

Դաւիթ այնտեղ բըժըշկուեցաւ ու եկա՛ւ,

---

2) Ե·778,809՝ Զին. *Մխաներուն մէջ՝* Դաւիթ: 3) *Երգով:*
*) Սիվտակերես, *Գարշերես, Հպարտ:* *) Սեւերես, *Ամօթահար:*

Կըտըրճացա՛ւ՝ առաջըընէ՛ աւելի,
Մէկը՝ երկո՛ւ դարճաւ այնտեղ՝ իրեն ուժ։
Իր Զին՝ Քուռկիկ-Ջալալի՛ն ալ՝ բաշեր տընկեց, խըրխընջա՛ց...,
Իր Գըլուխը զարկաւ Դաւթի Սըրտին դէ՛մ,
Լեղու ելաւ, ըսաւ, — «Դաւի՛թ, բարո՛վ 1) երթաս Քո ճամբան.
Ջըլլա՛յ վախնաս..., չուտ մը գընա կըռիւի՛...»։
Դաւիթ այնտեղ ուրախացա՛ւ, խընդացա՛ւ,
Այս անգամիս՝ ալ դէ՛մ ըրաւ դէպի Մըսրայ Մեծ-Բանակ,
Քըշե՛ց Իր Զին՝ ու գընա՛ց, —
Գընաց դէպի Լորայ-Դա՛շտ.
Գընաց ելաւ Լորայ-Դաշտի Սարին-Գլուխ 2)՝ ու կեցա՛ւ։

606. Դաւիթ՝ Բարձուցիչն Կ'դիտէ Մըսրայ Զօրքը

Ց·110,111, Չ·՝Ց·111, Չվ·2, (Չվ·2), Չկ·534, ՉՍ·516, Հ·380,431, Խ·33, Չ·՝Խ·33 Ա·24, Չ·՝Ա·24, Ե·23,633,745,778,809,912,24,514, 578,973,1015,1115, (Ե·716), Կ·70,21, (Կ·70), Ս·162, (Ս·162), Չ·

Դաւիթ երբոր գընաց հասաւ Լորայ-Դա՛շտ՝
Եօ՛թ օր մէջտեղ՝ Մըսրամէլիք որ տըւե՛ր էր՝ լըրացա՛ւ 1)։
Սարին Գլուխէն՝ Դաւիթ նայեց Կըռւի-Դաշտը՝ լի՛նչ տեսաւ...,—
Ինք, իր տեղը՝ բարձր ու վեր, բանակին տեղ՝ ցա՛ծըր էր։
Տեսաւ որ լի՛նչ..., — որչափ Ա՛սաղ որ կայ երկինք՝
Այնչափ Վըրան զարկեր է հոն՝ Մըսրամէլիք՝ Դաշտին մէջ,
Զօրք ու Վըրան՝ կըճըվըլա՛ն Աստղի պէս...։ —
Ու երկինքի Աստղերուն ալ՝ հաշիւ կա՛յ,
Վըրաններուն, մէջի Զօրքին՝ ոչ հաշի՛ւ կայ, ոչ համա՛ր...,—
*Մըսրայ-Երկիր՝ Աշխարք կըտրեր *) Մա՛րդ ու Զո՛րք...՝*
Բի՛ւր-հազարով թափած է Դաշտ 2), ու կեցա՛ծ...։ —

---

1) Ե·716՝ պիրոզ ըլլայ (*բարո՛վ-ս*)։ 2) ՉՍ515՝ Լեռայինն Սարի գլուխ, Խ·33՝ Լիւռայ դաշտի գլուխ, Հ·35,382՝ վրաններու դէմ, Ե·912՝ բարձր սար մը, Ե·973՝ Մըսրամէլիքի զօրքին դիմաց, Ե·809, 1007՝ կուի դաշտ, Ե·778՝ բարձր ժայռի մը, Կ·21՝ հեծելի դիմաց, բանակին հասատ, Ե·1115՝ Թաթմանայ բերան, Ե·578,809՝ Հովայ դաշտ, մէկ բարի մը վրայ։

1) *Տե՛ս Հատ.* 538,541,551։ *) Կտրեր, *Դարձեր եղեր է*։ 2) *Այսինքն՝* Կուի Դաշտ, Լորայ-Դաշտ։

Մըսրամէլիք Զօ՛րք է բերեր…, Զօ՛րք է բերեր…, ու բերե՛ր…՝
Վըրաններու տակ լըցե՛ր…, —
Մէկ ժամ ձամբայ՝ Սեղան–Սարի Գօտին բըռնե՛ր՝ նըստե՛ր է…:

607. Դաւիթի Վախճ Ու Երգը՝ «Ասո՛ղի Ըլլաս Գզած Բամպակ»

ՁՍ·517, Ե·24,716,778,826,1007,514,578,633,912,973, 745,717,974, 514ա·,913,779,827, (Ե·1007),779,745,24), Կ·21,70,22, (Կ·70,21), Զ·՝Կ·21, Հ·35,431,382, (Հ·431), ՁՎ·2,3, Ճ·110,111ա·,110ա·, Խ·33, Ա·24, (Ա·58), ՁԿ·534·

Որ իրիկնեց՝ Դաւիթ՝ տեսաւ այդչափ Վըրան ու Զօրքե՛ր…՝
Քան'ըզ Ծովու Աւազ չա՛տ…,—
Սարսա՛փ եկաւ Իրեն վըրայ…, դիժարացա՛ւ, վա՛ր իջաւ,
Նըստաւ այնտեղ, Իր վիճակին վրայ խորհեցաւ ու նայե՛ց,
*Գըլուխը քա՛փ տըւաւ *), լացա՛ւ ու ըսաւ· — 1)*

— «Ողորմա՛ծ, բարերա՛ր 2) Աստուած 3)…, Քո խնա՛մքին էր շա՛տ,
Ասո՛ղի ըլլաս Գառն ու Մաքին 4), Ու ե՛ս ըլլամ Սոված–Գայլեր 5),
Ես չեմ կը՛րնար Ասոնք կըճռել *), արնոտել…,
= Որ չեմ կը՛րնար՝ ու չե՛մ կըրնար…:
— Ասո՛ղի ըլլաս Գըզած–Բամպակ, Ու ե՛ս ըլլամ Աստծո՛ւ–կըրակ *),
Ես չեմ կը՛րնար Ասոնք խանձել, մըշահոտել *)…,
= Որ չեմ կը՛րնար՝ ու չե՛մ կըրնար…:

---

*) Թափ տալ, *Ալլէն ձախ, ձախէն աջ՝ երերցնել*: 1) *Երգով*: 2) Ե·717՝ պարարած՝ *ուղղել՝* պարերար: 3) *Մէկ–քանի պատում–ներ՝ « Ողորմած, բարերար Աստուած»–ը կըկրկնեն ամեն հատուա–ծին սկիզբը*: 4) Խ·33, Կ·21, Ե·24,514,633՝ Գարնան մատղաշ գառ–ներ: 5) Խ·33, Կ·21, Ե·24,514ա·,633, Ա·24՝ Գարնան անօթի (սո–ված, ֆաղցած, կատղած) գայլեր, Ճ·111ա·՝ գայլն ի գեալին (*ձոր*): *) Կճռել, *Ակռաները կճրտացնելով՝ յափշտիկ–ուտել, պատառ–պա–տառ ընել*: *) Աստծու–կրակ, *Շանթ, կայծակ*· Հ·431՝ Աստծու մահառն կրակ, Ե·514ա·, 633՝ բոց ու կրակ, Ե·578՝ այն տապակի բարկ կրակ: *) Մշահոտել, *Խանձել*, Կ·21՝ մշախարե(լ) *ուղղելի՝* մշախոտե(լ), Հ·382՝ վառելով չեմ կրնար անոնք պրծուցեր:

— Աստ'ՈՒմ ըլլան բոց-բո'ց կըրակ, Ու ե'ս ըլլամ Գա'րնան-Գետեր 6),
ես չեմ կը'րնար ԱստՈՒմ մարեր, անցուներ···,
= Որ չեմ կը'րնար՝ ու չե'մ կըրնար···:
— Աստ'ՈՒմ ըլլան կանգնաքըռուկ *), Ցարդի-Մոծիր *),
Ու ե'ս ըլլամ Հարաւ-Քամին 7), Հըրեղէ'ն-Հով···՝
ես չեմ կը'րնար 8) երնել *) ԱստՈՒմ, լըցել Ջորեր··,
= Որ չեմ կը'րնար՝ ու չե'մ կըրնար···:
— Աստ'ՈՒմ ըլլան Փուշըր-Բալախ *), Ամրան չոր-ցա'խ···,
Ու ե'ս ըլլամ Բալանայ-բոց *)···՝
Ցիսո'ւն տարի՝ ես չեմ կը'րնար ԱստՈՒմ վառեր,
= Որ չեմ կը'րնար՝ ու չե'մ կըրնար···:
— Աստ'ՈՒմ ըլլան Կորեկի-Հատ, Ու ե'ս ըլլամ Մե'ղր ու Գազպին՝
ես չեմ կը'րնար ԱստՈՒմ Գե'տնէն վերցընել···:
— Աստ'ՈՒմ ըլլան Բարակ-Աւազ, Ու ե'ս ըլլամ Հե'ղեղ-Անձրեւ՝
ես չեմ կը'րնար ԱստՈՒմ թանար··· *),
= Որ չեմ կը'րնար՝ ու չե'մ կըրնար···:
— Աստ'ՈՒմ ըլլան Ա'րտ-Կորընկան, Աւտո'յտի-Դաշտ,
Ու ե'ս ըլլամ՝ եօ'թը տարի՝ Մարդն 'ի Մանգաղ՝
ես Ձեմ կը'րնար ԱստՈՒմ խաղել···:
Որ ես ԱՈՒՈՒմ խաղեցի···՝ Ձեմ կը'րնար ԱՈՒՈՒմ լեթել *)···:
Որ ես ԱՈՒՈՒմ լեթեցի···՝ Ձեմ կը'րնար ԱՈՒՈՒմ կըրնել···:
Որ ես ԱՈՒՈՒմ կըրնեցի···՝ Ձեմ կը'րնար ԱՈՒՈՒմ դիզել···:
Որ ես ԱՈՒՈՒմ դիզեցի···՝ Ձեմ կը'րնար ԱՈՒՈՒմ վառել···,
= Վառել ու տալ Հովերուն···: —
Ի՞նչպէս պիտի երթամ կըռուիմ Աստուց հետ···, —
Բարերա'ր Աստուած, Դո'ւ գաս ինձի օգնութեան···»:

---

6) ՁԿ·534՝ ծով: *) Կանգնաքռուկ, *Կռիգի չորցած փետրագունդ* (*որ հովէն կ'տարուի*), Ե·578,913՝ աշնան կնգրբուկ·: *) Մոծիր, *Մանրուք*: 7) Ե·514ա·,578՝ գարնան *կմ*. աշնան՝ (հրւ· էմի·): 8) Հ·431՝ խոտուն տարի, Ե·745՝ եօթ տարի: *) Երնել, *Հովին դէմ հոսել* (*յարդը*): *) Բալախ, *Ջոր խոտ*, *խար*, Հ·431՝ Աւտոյտի դէգեր, Ե·1007՝ չար փուշ: *) Բալանայ-բոց, *Կուտակ-կուտակ*, *սաստկաշունչ բոց*, Կ·21՝ բոցուկրակ, Հ·431՝ Աստծու մահւան կըրակ: *) Թանալ, *Թրջել*: *) Լեթել, *Խուրձ կապել*, Ե·745՝ խուրմել:

608. Ձին Կ'խոսխոսէ՝ Դաւիթը

Ե·717,24,514,578,633,715,717,746,779,807,827,913,974,1007,514ա·, 575,875,515ա·,776, Զ·՝Ե·974,717, (Ե·578,24,514,1007,974), ՁՍ·518, Զ·՝ՁՍ·518, Կ·22,70,121, (Կ·70), Խ·33, ՁՎ·4, ՁԿ·535, (ՁԿ·535), Ց·111, Հ·35,382,431,383, (Հ·382,431), Ա·24·60, (Ա·60, 24,58), Զ·՝Ա·24, Լ·28, (Լ·28), Զ·՝Լ·28, Զ·

Դաւիթն ալ որ դիժարացաւ՝ այդ խաղն ըսաւ կըսկիծով՝
Այն ժամանակ ի՞նչ եղաւ· —
Ձին խմացա՛ւ որ Դաւիթը չուարե՛ր է ու կեցեր,
Չի՛ դիտեր թէ ի՞նչ ընէ···, —
Աստծո՛ւ կամով՝ լեզո՛ւ եկաւ ու ըսաւ 1)· —
— «Դաւի՛թ,—ըսաւ—, Դու Մըհէրի 2) Տըղան չե՞ս·՞·՞·՞·
Զոլ–Մըհէրի 3) Թոռը չե՞ս·՞·՞·՞·
Ափսո՛ս,—ըսաւ—, որ Քեզ կ'ըսեն «Սասմանց–Մհէրի Լաճ) Դաւիթ»····*
Տնաւե՛ր,—ըսաւ—, ինչո՞ւ այդպէս 4) կըվախնաս,
*Տեղըդ ահէն կըտրե՛ր ես·՞·՞·՞**)»:
= «Դեռ չըվախնա՞մ,—ըսաւ Դաւիթ—, ա՛յսքան Զօրքէ ու Մարդէ···»:
Ձին ալ ըսաւ, — «Դաւի՛թ, Քո Հայր չէ՞ որ կըտրիճ Դիւցա՛զն էր·
Քո Թուր որ կայ՝ կէծակէ՛ն է, տըննա՛չէն···,
Քո Շապիկն ու Քո Դուդիկը՝ զըրահա՛ծ 5),
Մ՛ի երկմըտիր, Դաւի՛թ,—ըսաւ—, մի՛ վախնար·
Ելի՛ր՝ Ինձի կեր ու Զո՛ւր տուր, Ձիս խընամի՛, քերոցէ՛,
Աչքերս դեղէ՛ *)՝ լուսովցո՛ւր,
Ել Ձիս հեծի՛ր, Քեզ պի՛նդ բըռնէ Քամկիս վրա՛յ՝
Ու կանչէ՛ Քո Տէր–Աստուած՝
Քըշե՛նք երթանք մէջ Զօրքին···, —
Մէջ այդ բի՛ւր–բիւր Հեծելին *)···: —
Դուն՝ ԱՋՆԱ՛ՆՑ–ՑՆՂ, ես՝ հըրեղէ՛ն–ծովեղէ՛ն···,
Առոնք՝ ամեն՝ հողածէն···, —*

---

1) Լ·28՝ *Ըսողը* Քեռի–Թորոսն է, *պատումին քերոմովը*· Ց·111՝ լեզու եկաւ՝ *ուղղել*՝ լեզու եղաւ: 2) *Այսինքն*՝ Դաւիթ–Մըհէրի: 3) *Այսինքն*՝ Առիւծ–Մըհէրի: *) Լաճ, *Մանչ, զաւակ, որդի, տըղայ (արու)*: 4) Ե·746՝ ըսկոտ՝ *ուղղել* ըսկոմ (*այդքան մ՛*): *) Ահեղ կտրիճ, *Սարսափահար ըլլալ*: 5) *Ուրեմն*՝ Սպաղատարտ *զլխանոց*: *) Աչքեր դեղել, *Ծարիր քաշել (աչքերուն)*: *) Հեծնել, *Հեծելազօրք*:

Ի՛նչքան որ Քո Թուր–կէծակի՛ն ըսպանէ՝
Երկո՛ւ այնքան՝ ե՛ս կըճըղնեմ՝ իմ Շունչո՛վ.
Այնքան ալ Քո Թուրէն կըրա՛կ պիտի թափի աչ ու ձախ՝
Անոր կայծե՛րն 6) ըսպանեն...:
Ի՛նչքան որ Դուն զարնես–բըրդես Քո Թուրով՝
Երե՛ք այնքան՝ ես իմ Պոչը փարատելո՛վ 7) կըջարդեմ...:
Ի՛նչքան որ Դուն զարնես–փըշրես Քու Գորգո՛վ՝
*Չո՛րս այնքան ալ՝ ե՛ս կըփըռեմ՝ իմ չո՛րս Ոտաց Սմբերով *):*
Ի՛նչքան որ Քու Հօր Նիզակո՛վ ըսպանես՝
Երկո՛ւ այնքան՝ իմ Բաչերո՛վ կըկըտրեմ...:
Ի՛նչքան որ Քո Թուր–կէծակի՛ն ըսպանէ՝
Այնքան ալ Քո Աչ–Փետրագի՛ն կըզարնէ. —
*Այնքան ալ իմ Թափի *) Քամի՛ն կըթալէ *). —*
Այնքան ալ ես Առամներո՛վս կըջարդեմ. —
Այնքան ալ ես իմ Գըլուխո՛վ կ'ըսպանեմ. —
*Այնքան ալ իմ Սի՛րտ *) կըկըտրէ՝ կընետէ...: —*
Հապա՛ր–Հապար Մա՛րդ կ'ըսպանուի ու կ'իյնայ...,
Արնէ–Հեղի՛ղ պիտի ելնէ՝ Գետի նըման՝ ու երթա՛յ...,
Ողջ Մարդերն ու Դիակնե՛րը մէջ տանի...»: —

609. Ձիւղ խորհո՛ւրդ կուտայ Դաւիթի

Ն·515ս·,1007,514,578,634,913,1008,717,24, Չ(Ե·974), Չ·՝Ե·913, 717, Ա·24, Հ·431, Չվ·4, Կ·22,Չ·՝Կ·22, Խ·34, Չ·, ՉՍ·518·

— «Դաւի՛թ, Դաւի՛թ, Դուն մի՛ վախնար, երկմըտութիւն մի՛ ըներ, –Ըսաւ Իր Ձին՝ հրեղէն Քուռկի՛կ–Ջալալին–.
*Տնաշէ՛ն,–ըսաւ–, Աստնք նոյնիսկ մէկ փա՛ռը *) չեն ա՛յն Զօրքին՝*
Որ կուգայիս Քու Հօր վըրայ կըռիւի 1)...:

---

6) Ե578՝ Պծտուձեր (*կայծեր*): 7) Ց·111, Կ·70, Ե·717,746, 776,779,807՝ Իմ պոչի մազերով: Փարատել՝ *աչ ձախ թափով չարժել*: *) Սըմ, *Սմբակ*: *) Թափ, *Արագութիւն*: *) Թալել, *Նետել, տապալել*: *) Սիրտ, *Կուրծք*: *) Փառ, *Թեւ, մաս*:

1) *Փաստ մը եւս՝ որ Թլոլ–Դաւիթի Հօր՝ Դաւիթ–Մըհէրի՝ Ճիւղը աւելի ընդարձակ եղած ըլլալու է* (*Տե՛ս Հատուած 268՝ ստրջ.՝ Ե.*):

Ցիչա՛՝ Հա՛ց–Դինին, Ասուա՛ծ–կենդանին 2),
Ման՛չ–փետրագին՝ վեր՛–Դաւիթի Ա՛ջ–թևին,
Մարութայ–Բա՛րձր–Աստարածին,
Օգնակա՛ն կանգնին Թաւլան–Դաւթին, —
Հեծի՛ր Քու Զին, քաշէ Թո՛ւրը–կէծակին 3),
Քըշէ՛–դընա՝ մէջ–այդ բի՛ւր–բիւր Հեծելին: —
*Աչու դընա՛, ճախու *) եկո՛ւր՝ Ջօրք չըմընա՛յ կըտակըտ *)...:*
Դաւի՛թ,–ըսաւ–, Քեզի խըրա՛տ մ՝ ալ կուտամ՝
Դուն իմ խօսքէն դուրս չ՛ելնե՛ս. —
Ի՛նչ որ բերեն հանեն Քու դէմ՝ անոր դիմաց չըկենա՛ս... .
Թէ Հարսնիս ալ բերեն Քու դէմ, Թէ նըւա՛դ ալ՝ չըկենա՛ս...:—
Հանես Անոնց նըւէ՛ր մը տաս՝ ու անցնի՛ս...,
Թէ չէ՝ Անոնք Քեզ կըխաբեն՝ կըբըռնեն...:
Մէկ ալ,–ըսաւ–, Դուն չըխաբուի՛ս Անոնցմէ,
Իմ Քամակէս վար չիգա՛ս... .
Քեզ պի՛նդ բըռնէ Իմ վըրաս՝
Ձիո՛ւ վըրայ կըռւի ըրէ Անոնց հետ:
*Ինչ առեն որ Դուն կըռւի մէջ նեղն ինկար *)՝*
Ես Քեզ կ՛առնեմ՝ կ՛ելնեմ բարձրիկ Սարն՝ի վե՛ր,
Պաղ–պաղ Ջուրե՛ր, Աղբիւրնե՛ր...,
Կ՛ուտե՛ս–խըմե՛ս, կըհանգչի՛ս...,
*Էլմէլ *) կուգանք՝ կըզարնե՛նք ու կըզարնուի՛նք...»:*

610. Դաւիթ Կ՛խոսի՝ «Ձայն Ցամ՝ Այնպէ՛ս Ցարձակիմ»

ՁՍ·519, Ձ·՝ՁՍ·519, Կ·22, Հ·383,432, Ձ·՝Հ·432, Խ·34, Ե·24, Ա·24,

Որ Դաւիթին այդպէ՛ս ըսաւ՝ Իր Զին Քուռկիկ–Ջալալին՝
Դաւիթի Սիրտ՝ Իրեն Ձիուն այդ խօսքերովն ամրացա՛ւ,
Ուրախացա՛ւ, ելաւ Ձիուն ճակատ բըռնեց ու պագա՛ւ,
Լաւ խընամե՛ց, Աչքեր դեղե՛ց, Բաշեր սանրեց ու չոյե՛ց,

---

2) Ե·913՝ Մըսէ Խաչ: 3) Ե·913,916,923՝ Ձաճա Թուր–Պարճաղկին (կամ՝ Պէրճաղկին), Քաշա–Թուր–Կէծակին· (Տե՛ս Բ. Հատորով): *) Աջու, ճախու, Աչքէն, ճախէն, աչ ու ճախ: *) Կըտակըտ, Հատ–հատ, ոչ մէկ հատ: *) Ինկար, Իյնալու ըլլաս, Իյնաս: *) Էլմէլ, Նորէն:

Ու մի՛ոք ըրաւ ինքիրենը՝ «Դէ՛, ես,–ըսաւ–, ի՞նչ ընեմ…,—
Գաղտո՛ւկ երթամ Ատոնց վըրայ ու զարնե՛մ…՝
*Պիտի ըսեն՝ «Դաւիթ դող է, գող *) եկաւ ու գող գընա՛ց»·*
Գաղտո՛ւկ չ՚երթամ…՝ ես Անոնցմէ կըվախնա՛մ… ·
Զէ՛,–ըսաւ–, ես՝ պէտք է մէկ խո՛սք ըսեմ Ատոնց առաջուց,
*Արթընցընեմ *)՝ ապա՛ երթամ այդ Զօրքին հետ կըռիւի…:*
Տըմարդութի՛ւն կ՚ըլլայ,–ըսաւ–, իմ կողմէ՝
Թէ ես այսպէս՝ առանց լուրի՝ քընեմ երթամ իրենց մէջ…: —
Որը պառկած՝ քընո՛ւկ է դեռ, որը Հագո՛ւստ կըմաքրէ…,
Որն ալ Իր Զի՛ն կըքերցէ, կըխընամէ, Դաշտին մէ՛ջ: —
*Կեցի՛ր, ձա՛յն տամ՝ Ամեն զարթին *)՝ ելնեն վե՛ր…,*
Իրենց ամեն պատրաստութիւն տեսնեն՝ չուտով՝ ու կանգնի՛ն…»:

611. Ցարձակել Առաջ՝ Դաւիթ Ձա՛յն կուտայ Մըսրայ–Զօրքն

Կ·22,29, (Կ·22), Հ·432, Չ·՝Հ·432, Ա·24,25, Ց·112,34, Չ·՝Ց·112, (Ց·112), Ե·1115,24,974,578,1008,913,579, (Ե·1115), Խ·34·

Ան ալ ելաւ՝ Սարին–Գլխէն՝ այդ Հեծելին ձա՛յն տըւաւ,
Ամրով կանչից այդ Մըսըրի–Զօրքերուն· —

— Վե՛ր ելէք, ասօր, վե՛ր ելէք· Մըսրա՛յ–Զօրքեր, վե՛ր ելէք·
= Ա՛խ, դեռ վե՛ր ելէք·
Ով Ձեր մէջէն Մօրէ–մե՛կ *) էք՝ զատուեցէ՛ք, = Ա՛խ, ջոկուեցէ՛ք:
Ով բընա՛ծ էք՝ արքո՛ւն կացէք· = Ա՛խ, արքո՛ւն կացէ՛ք·
Ով արքո՛ւն էք՝ ելէք ընտէ՛ք· = Ա՛խ, ելէք ընտէ՛ք·
Ով ընտած էք՝ Ոտի՛ ելէք· = Ա՛խ, ոտի՛ ելէք·
Ով կայնա՛ծ էք՝ Ձեր Ձեմե՛րը կապեցէք· = Ա՛խ, կապեցէ՛ք·
Որ կապե՛ր էք՝ Ձեր Ձիերը թամբեցէք· = Ա՛խ, թամբեցէ՛ք·
Որ թամբե՛ր էք՝ ելէք հեծէ՛ք Ձեր Ձիաձ· = Ա՛խ, հեծէ՛ք Ձեր Ձիաձ·
Որ հեծե՛ր էք՝ պատրա՛ստ կացէք ու ելէ՛ք· = Ա՛խ, ելէ՛ք· —
Չ՚ըսէ՛ք՝ «Դաւիթ գո՛ղ եկաւ ու գո՛ղ գընաց»…:
Ես Դաւի՛թն եմ…՝ կըռւո՛ղ կ՚ուզեմ Իմ դիմաց…,

---

*) Գող, *Գողի պէս, գաղտագողի*: *) Արթնցնել, *Իմաց տալ, զգուշացնել*: *) Զարթիլ, *Արթննալ*: *) Մօրէ մէկ, *միամօր (զաւակ)*:

Լոր, ճըճըղուկ չե՛մ ուզեր ես, կըսո՛ղ կ՚ուզեմ իմ դիմաց· —
Ելէ՛ Ոտի՛, Չէճիեր առէ՛ֆ՝ կայճեցէ՛ֆ, —
Անման 1)՝ Ձեզ մա՛հ իմ բերեր...,
Անգըրող *)՝ Ձեր հոգի՛ն կ՚առնեմ ես այսօր...»:

612. Դաւիթ «Ծիսամ»ը Կ՚բսէ Ու Կ՚յարձակի

Ե·974,579,913,1008,810,779,746,25,1015, (Ե·810), ՀԿ·536,537, Հ(ՀԿ·536), ՀՍ·519,520, Ա·59,58,60,24,25, (Ա·58,60), Ճ·112,36, Կ·22,23,29, Հ·383,431, (Հ·431), Խ·34, (Խ·34), Լ·28·

Այն ժամանակ՝ Դաւիթ Քըռա՛ւ՝ ելաւ հեծաւ Իրեն Ձին,
Հրեղէն Քուռկի՛կ-Ջալալին...,
կանչե՛ց ըսաւ՝ մէկ ձայնով 1)·—

—«Օրհնեա՛լ, բարերա՛ր Աստուած, խնամը շա՛տ էր Մեծ-Թագաւորին· = Մեծ-Թագաւորին:
Կամքն օրհնեա՛լ այն Արարողին· = Հա՛ Արարողին·
Ծիշա՛մ Աստուած..., = Հա՛ Աստուած... .
Ծիշամ՝ Հա՛ցն ու Գինին, Տէ՛ր-կենդանին 2)· = Ու կենդանին·
Ծիշամ՝ Մարութայ-Բա՛րձր-Ապարածին· = Հա՛ Ասպարածին·
Ծիշամ՝ Խա՛չ-Փետրագին 3)՝ Իմ Աչ-Թևին· = Ու Թևին·
Դուք օգնական-պահապա՛ն կենաք Սասմանց-Դաւթին 4)·
= Հա՛ Դաւթին·
Աչո՛ւ երթայ ու ձախո՛ւ գայ՝ կըտակըտ Ձո՛րք չըթողու,
Որ կոտորուի՛ Ձորքը Մըսրայ Մէլիքին..., = Ու Մէլիքին...,
Ու Դաւիթի Թեւ չ՚իմանա՛յ...՝ մինչեւ վե՛րջը Աշխարհին...»:

Հեծելն այնտեղ Իր պէտք եղած պատրաստուքի՛ւն որ տեսաւ՝

---

1) Ա·25՝ Առանց մահ էֆ՝ ձեզ մահ իմ բերեր: *) Անգրող, *Առանց մահաբեր Գրողի*:

1) *Երգով*· մէկ-ձայնով, *Որոտուն ձայնով մը*: 2) Ե·779՝ Խէն-կենդանին· Խէն = *Հայն*, *Հայը*, Ե·1008՝ Աստուած-կենդանին, Կ·22, Ե·746՝ Հայր-կենդանին, իշամս Խէր կենդանից՝ ուզել՝ իշամ զ՚Խէր կենդանին: 3) Ե·913՝ Ա·58՝ Մըսէ-Խաչ: 4) Ա·58՝ կանչենք Սաբերու Սրբեր, ձորերու կոյս Մայր-Աստուածածին, դու օգնական պահապա՛ն ըլես՝ այս Դառնիկ-Որբիկին:

Ալ՝ Դաւի՛թն էր…, — քաշե՛ց Թուրը–կէծակին,
*Գլուխտրաւ *), կործըւեցա՛ւ *)՝ քըշեց իչաւ Դաշտին մէ՛ջ·*
Գընաց հասաւ այդ Զօրքերուն· — Մըսրայ–Տիրոջ Բանակին: —

613. Դաւիթ Կ՚իչնայ Մըսրայ-Զօրքին Վրայ

Ե·1115,914,514,579,634,717,746,779,827,974,1015,1008,771,25,810, 718, (Ե·810), Զ·՝Ե·1115,914,1008, Զ·, Ա·60,25, (Ա·58,60), Է·383. 432,35, Ը·112, Կ·69,70,23,29, Ջ·՝Կ·70,69, Խ·34, ՋՎ·5, ՋԿ·537, ՋՈ·521, Լ·28,29, (Լ·28,29)·

Ան որ կանչէց՝ ձայնը իննկաւ Զօրքին մէջ,
*Զըղըլոցը *) իննկաւ մէջներ *), խառնըւեցան իրարու…,—*
Շատեր իրենց Զիւռն Սանձը կըղարնէին եռեւէ՚ն…:
Զօրքեր տեսա՛ն Տըղայ–Դաւիթ՝ զարմացա՛ն…:
Զարմացան ու ի՞նչ ըսին· —
— «Ասի Մա՞րդ է…՝ թէ՞ չէ հըսկա՛յ մէկ Դիւցազն… ·
*Կըռուի՞լ կ՚ըլլայ *) Ասոր հետ…»:*
Ու Դաւիթն ալ՝ երբոր տեսա՛ւ Մըսրայ–Զօրք՝
Քըշե՛ց հասաւ, գընա՛ց իննկաւ Անոնց մէ՛ջ… 1)·
Պօ՛ռա՛ց, կանչե՛ց, յարձակեցաւ մէ՛կ Թափով…:—
Հաղա՛ր Հոդի ըսպաննե՛ց ու մէկի վըրայ դադրեցա՛ւ·
Նորէն՝ Հաղա՛ր ալ ըսպաննեց՝ մէկի վըրայ դադրեցաւ:
Ալո՛ւ զարկաւ, ձախո՛ւ զարկաւ Իր Թուրով,
Երկո՛ւ դևհէն 2)՝ Թուր–կէծակին տարաւ–բերա՛ւ 3) Զօրքին մէջ
*Մա՛րդ կըտրելով՝ երկո՛ւ–դըլուխ *) դընա՛ց–եկաւ՝ փարատե՛ց,*
*Զարկաւ կըտրե՛ց, փողոց–փողո՛ց ըրաւ *) Ամենք ու փըռե՛ց…:*

---

*) Գլուխտրիլ, կործուիլ, *վերէն՝ վար խուժել, արշաւել:* *) Զլզոց, *Սարսափի սարսուռ:* *) Մէջներ, *Անոնց մէջ, մէջերնին:* *) Կ՚ըլլայ, *կարելի է:* 1) Կ·29՝ *պատուհին բերումովը՝* Պարաճ (*կամ* Բարաճ) Պոօշի հեծելին վրայ: 2) Ե·974՝ տեղէն՝ *ուղղել՝* դեհէն (*կողմէն*): 3) Ե·974՝ Շարժեց: *) Երկու գլուխ, *Մայրէ մի ծայր՝ երկու անդամ,* ՋՎ·5՝ երեք փաթ, Կ·69, Է·383՝ մէկ գլուխ: *) Փողոց–փողոց ըրաւ, *կոտորած չարքերը դիղուեցան, մէկ չարքէն միւսը՝ փողոցի պէս բաժանումներ ձեւացան: Հմմտ.՝ Տրդատ Ար–քայի մասին Խորենացիի Գրածը* (Բ. Զե· 342)՝ «… յերկու ճեղքէ զ՚ամբոխ թշնամեացն…»:

Գընաց մինչեւ Վըրաններուն մէկալ դըլուխ՝ ու դարձաւ,
Զարկաւ ա՛յնքան Մարդ ըսպանեց, կըտրե՛ց, կըտրե՛ց ու կըտրե՛ց...՝
*Որ Արիւնէ-Հեղե՛ղ 4) ելաւ՝ կայնեցա՛ւ *)...,—*
Այդ Զօրքերուն Թէ Ողջերը Թէ Մեռածնե՛ր կըտանէր...,—
Այնպէ՛ս Անոնք կուտակուեցան, դիզուեցան...:
Արիւն այնպէ՛ս լերդացաւ ու Թանձրացա՛ւ՝
Որ ողջ Մարդեր կըխըրուէին Արեան մէջ...՝
Չէ՛ն կըրնար դուրս ելնել...:
Դէ՛հ, երե՛ք օր՝ Դաւիթ կըտրեց ի՛ր դեհէն...,
Ու Չին կըտրեց ի՛ր դեհէն...,—
Անթիւ Չինուր՝ ըրին ա՛լ-ձախ ցիրուցա՛ն...:—
Ինչքան Դաւիթ Սուրով-Թուրով եւ իր Գուրղո՛վ կոտորեց՝
Այնքան Մարդ ալ 5) Չիուն Շունչէ՛ն դըլորուեցան, փըռուեցա՛ն...,
Իր Ոտներով ու Բերանո՛վ մահ դըտան...:
*Ինչպէս խումբ մը Բոլո՛ճ *) իյնան Աչքի տակ,*
Մարդ Իր Ոտքը զարնէ վըրան՝ տըրորէ...՝
*Այնպէս՝ Դաւիթ՝ այդ Զօրք խըճղեց *), տըրորեց...,*
*Արիւն ելաւ՝ զարկաւ մինչեւ Ձիուն Մի՛րտ *)...:*
Եւ Ինք մըտաց մինչեւ Մունկեր՝ Արիւնին մէջ Թաթըխուած...
Կէսօր չ'եղած՝ անթի՛ւ Մարդեր 6) ջարդե՛ց, ձըղեց ու փըռեց:—
Ա՛յդքան Զօրքեր՝ չըւարեցա՛ն, չ'իմացա՛ն Թէ ի՞նչ եղաւ...,—
Ինչօքն Ան էր՝ ինչ Իր Տունէն դուրս չ'ելա՛ւ...:

ԺԲ. ԴԱՒԻԹԻ ԿՌԻՒԸ ՄԸՄՐԱՄԷԼԻՔԻ ՀԵՏ

614. Եօթ-Ցղու Հայրը՝ «Փըսս.Փըսս» Կ'ըսէ Որ Մօտենայ Դաւիթին

Չկ·552,Չ·,կ·23,71,72,Չ·՝կ·71,72,Չվ·6,ՉՍ·522,ճ·112,խ·34,Ա·25,
Հ·35,383,432,ն·25,515,579,634,780,827,914,974,1008,515ս·,
(ն·25,579,634)·

Դաւիթ երբոր՝ աջէ՛ն-ձախէն՝ Մէլիքի Զօրք կոտորեց,

---

4) *Մէկ-քանի պատուհաններով՝* Արիւնէ-Գետ(եր): *) *Կայծիլ, բարձրանալ (հեղուկի):* 5) ն·974՝ *չորս այնիսան ալ:* *) *Բոլոճ, Մէջատ:* *) *Խեղդել, ճզմել:* *) *Սիրտ, կուրծք, լանջ:* 6) *Հասկընա՞լ արդեօք՝ Մըսրամէլիքի բանակին յառաջապահ մասը:*

Զօրքին մէջէն սիմակամուրուս Ալեւո՛ր մը 1) *դուրս եկաւ*։ —
Այդ ծերունուկ Մարդն ալ ունէր՝ եօ՛թ Տըղայ,
Մըսրամէլիք՝ եօթ Տըղան ալ առեր կըռւի՛ քերեր էր։
Եօթ-Տըղու Հայր այդ Ծերուկն ալ՝ չա՛տ կըսիրէր Իր Տըղաք,
Ըսեր էր որ՝ «Ե՛ս ալ Ձեզ հետ պիտի գամ.
Ո՛ր տեղ ալ որ ըսպաննեն Ձեզ՝ Ձիս ալ մէկտե՛ղ թող զարնեն...»։
Չէ՞ որ Դաւիթ ընկաւ այդչափ Զօրքերուն մէջ՝ կըջարդէ՝
Զատնու նայեց, տեսա՛ւ եղածն՝ ու վախցա՛ւ, —
— «*Ա՛յ, վա՛խ, ա՛յ-վա՛խ...*,—ըսաւ լալով—, *Աստուած Ձեր Տո՛ւն*
[*չ'աւերէ...*,
Մենք Այս Մարդէն ազատուելու ճար չունի՛նք...,—
Այս Ձիաւոր պիտի զարնէ՝ Իմ Տըղա՛ք ալ ըսպաննէ...։
Թող երթայ հո՛ն՝ ու Հովիւը 2) *մեռցընէ,*
Ոչխարն 3) *արդէն Իրե՛ն է...»*։
Ան ալ՝ Այդ Մարդ՝ Տըղա՛ք ապով *)՝ *մըտմըտաց ու խե՛լք մ' ըրաւ*.—
Բուռ մը Գազ *) *ու փառեր զարկաւ Գըլխուն չուրջ* 4),
Զօրքին մէջէն վազեց եկաւ 5) *Դաւթի կողմ*.—
Չէ՞ որ այնտեղ Զօրքը չա՛տ է, ճամբայ չե՛ն տար որ անցնի,
Ան ալ պօռա՛ց,— «*Փը՛ստ, փը՛ստ*» *կ'ըսէ, դըրե՛ր լինե**) *ու կուգա՛յ* 6),
Որ այդ Զօրքը Ինքզինք ե՛տ տայ՝ տե՛ղ բացուի.—
— «*Ճամբա՛յ տըւէք*,—ըսաւ—, *որ Ես երթամ Հասնիմ Դաւթի մօտ,*
Մէկ խօ՛սք ըսեմ՝ այս Զօրքերը կոտորուելէ ազատե՛մ...»։—

---

1) Ե·515՝ տաս մարդու չափ ծերունիներ (*դուրս եկան*)։ 2) *Այսինքն՝* Մըսրամէլիքը։ 3) *Այսինքն՝* Զօրքը։ *) Ապով, *Պատճառով*։ *) Գազ, *փուչի տեսակ մը*, astragale։ 4) Կ·23՝ մէյմէկ ականջ։ *Կ'թուի թէ՝ Փուչ* (Կ·23) *կամ Փետուր* (Ե·914 փառ) *երբ ցցուն կըկապէին Գլխին չուրջը, բաղմութեան մէջէն ճամբայ բանալու համար. Տե՛ս Ծնթ.* 6։ 5) Ե·1008՝ ելաւ fարի մը վրայ՝ կաճեցաւ։ *) Դնել լինե, *Միշտ կրկնել, յաղթղթել*։ 6) Փը՛ստ, փըստ (*կոչական նմանաձայնութիւն*), *կեցէ՛ք, է՛յ ձեզի՛ եմ, Սրտանձտեանի, իմ Կարկառի եւ Սպարկերտի, եւ* Ե·1118–*ի փոխոխակներէն զատ՝ մխաներուն մէջ կըդտնենք միայն* փօ՛շտ, փօ՛շտ *ձեւովը*։ *Ու չուրջն՝ անխուսափելի բառախաղով մը՝* փօշտ (= *փօստա*, poste), փուշտ (= *ցոփ, կնամոլ*) *բառերը, եւ Ծերունիին ու Դաւթի մէջ փոխանակուած խօսքերը, յիշուած նաեւ Հոլխաղի առիթով* (*Հատ*· 303)· *Տեսնել նաեւ Բ. Հոր*·։

615. Ծերուկին Աղաչաճը Ու Խորհուրդը

Կ·72,23, (Կ·72), Ե·25,827,1118,579,515,634,975,1008,515ա·,914, 748,780,635,781, (Ե·634,914,1008,780,25,515ա·,975), Զ·՝Ե· 515, Ա·2, (Ա·25), Զ·՝Ա·25, ՉՎ·6, Զ·՝ՉՎ·6, (Խ·35), Խ·35, Հ·35,383, 432 (Հ·383,35,432), Զ·՝Հ·432, Ց·113, (Ց·113), Զ·՝Ց·113, ՉԿ·552, 553, (ՉԿ·552), ՉՍ·522, (ՉՍ·522)·

Ճամբա՛յ տըւին, այդ Մարդն եկաւ ու մօտեցաւ Դաւիթին։
Դաւիթ կեցաւ՝ նայեց որ մէկ խեղճ ալեւոր Մա՛րդ մըն է·
Կըռւի Մարդ չ՚է՛ այդ Ծերուկ։
Երբոր եկաւ կեցաւ իր դէմ, չընչհասաւ,
Դաւիթին ըսաւ, — «է՛յ ալեւոր Պապի՛կ,–ըսաւ–, ի՞նչ կ՚ըսես··· ·
Ես իմ Մօրմէն Գառն անարատ որ ելե՛ր եմ՝ մինչեւ օրս՝
Ոչ մէկ յանցանք՝ ես իմ վըրայ չե՛մ տեսեր···»։
Ծերուկն ալ թէ, = «Դաւի՛թ, Որդի՛, ես դէչ խօսք մը չե՛մ ըսեր·
Ըսել կ՚ուզեմ՝ «Դաւի՛թ, Քո Զին դադրեցո՛ւր՝
Անոր քամին Զիս չընեսէ՛, ես դամ խօսի՛մ Քեղի հետ»···»։
Դէ՛, Դաւի՛թն էր, — դո՛ւք ինկաւ Սիրտ, կանչեց Մարդը՝ մօտեցաւ,
— «Արի տեսնե՛մ, Ծերո՛ւկ,–ըսաւ–, ի՞նչ բան ունիս ինձի հետ···»։
Մա՛րդն ալ եկաւ, ըսաւ, = «Դաւի՛թ, Դըլխո՛ւդ մեռնիմ՝ Արեւո՛ւդ,
Ալ հերի՛ք է՝ Դուն այդ խեղճեր անմեղ տեղը կոտորես····
Ես ինկեր եմ Քու բախտի՛ն···,
Այդ Մարդերու Արիւնին տակ մի՛ մըտներ···,—
Շատերն Իրենց Հօր ու Մօրը մէկ հա՛տն են··· ·
կան՝ որ դեռ նո՛ր նըշանուած են, որը դեռ չ՚է՛ պըսակուած··· ·
*Շատեր ալ նոր ուխտի *) վըրայ՝ պիտի երթան կարգըւի՛ն··· ·*
կան ալ՝ դեռ նոր–փեսա՛յ են··· ·
կան որ մարած Տան ճըրա՛գ են մինակուկ···,—
Մէկ կի՛ն ունին՝ թողեր են Տուն՝ ծարա՛ւ, քաղցա՛ծ աննեցո՛ւկ···,
*Տըղայ *) չունի՛ն· Աղջիկ չունի՛ն· մէկ չունի՛ն···,*
*Շատ–չատերը՝ Տունտե՛ղ *) ունին, կընիկ–Տըղի տէ՛ր ալ են···,—*
Դաւի՛թ, ինչո՞ւ Դուն այդ Մարդեր կոտորես···,
Անոնց մե՛ղքը եւ ճիժերուն՝ դուր տեղ իյնայ Քո վիզին···,—

---

*) Ուխտ, Ա·25՝ մրազ (*մուրատ, մուրազ*)։ *) Տղայ, *Մանչ զաւակ*։ *) Տունտեղ, *Ընտանեկան՝ բոյն, յարկ*։

Չէ՞ որ Անոնք ալ Մեղի՛ պէս Մարդու–Տըղայ ու Մա՛րդ են…,
Աղքատ ու խե՛ղճ Մարդիկ են…»:
— «Ապա ինչո՞ւ եկեր են ու կըռի՛ւ կ՚ընեն Ինձի՛ հետ·՞·՞·»:
= «Մէ՛կը չ՚եկե՛ր Իրեն կամով…, ա՛յ Դաւիթ·
Ձու եղբայրը՝ Մըսրամէլիք՝ բըռնի՛ բերած է Ամեն… ..
Աստծո՛ւ սիրոյն…, Մեղ մի՛ փակիր, մի՛ Ջարդեր… .
Այնչա՛փ կընիկ որբեւայրի դարձուցի՛ր… .
Այնչա՛փ Քոյրեր՝ Դուն ան–եղբայր դարձուցի՛ր… .
Այնչա՛փ Մայրեր՝ Դուն ան–որդի *) դարձուցի՛ր…:
Աստուա՛ծ Քո Տուն չ՚ակռլէ՛… *),
Քեզ հետ կըռւող՝ Մենք չե՛նք երբեք, ա՛յ Դաւիթ… .
Կըռի՛ւ կ՚ուզես՝ դընա հո՛ն է Քու Ոսո՛խը, Քու եղբա՛յր… .
Թէ կըտրի՛ճ *) ես՝ կըռիւդ ըրէ Անո՛ր հետ… .
Քու Թըշնամին ո՞րն է՝ աղէ՛կ ճանչըցիր· —
Հօրէ եղբայրդ 1) Մըսրամէլիք այնտե՛ղ է…,
Դէ՛, հո՛ն, Սասնայ–Սարին մէ՛ջը2), կանաչ–Վրանին3) տակ նըստա՛ծ,
Իրեն Միսն ու Զաւա՛ր *) կ՚ուտէ, ու դըրեր է Գինեխո՛ւմ… .
Ա՛ն է Ոսոխդ…, դընա Անո՛ր հետ կըռէ…:—
Զարկէ՛ք Իրա՛ր, կըռի՛ւ ըրէ՛ք Ան եւ Դուն·
Թէ որ Աստուած Քեզի՛ տըւաւ՝ ըսպաննեցի՛ր Դուն Մէլիք՝
Մենք կ՚ըլլանք Քու Հըպատակները, Դո՛ւն կը դառնաս Մեր Իշխան·
Եթէ Աստուած Անո՛ր տըւաւ՝ Անոր ծառա՛յ ենք արդէն·
Դուն՝ կամ եղբայրդ՝ Մեղի համար տարբերութիւն չըկա՛յ մէջ…
Ձեզմէ ո՞ր մէկդ Իշխանութիւն որ առաւ՝
Մենք Ամենս ալ՝ Անոր հըլու Հըպատա՛կ ենք ու Ծառայ…:
Քու՛ք եղբա՛յր էք, կըկըռուի՛ք ու կըհաչտըւի՛ք՝ Դո՛ւք դիտէք…
Ալ Դուն ինչո՞ւ այս Մարդերու Մեղքին, Աբեան տա՛կ մըտնես…:
Ապա որ Դուն, Դաւի՛թ, երթաս՝ Քո Թըշնամին ըսպաննես՝

---

*) Անորէդ, Անորդի, անժառանգ: *) Ակռլել, Աւերել: *) Կըտրիճ, Դիւցազն, ըմբիշ: 1) Թլոլ–Դաւիթի հայրը՝ Դաւիթ–Մըհէր՝ Մըսրայ–Տիկին Իսմիլ–Խաթունէն ունեցեր էր Մըսրամէլիքը, ապա՝ իր հայ կնոջմէն՝ Դաւիթը· Տե՛ս Հուշ· 242–252: 2) Կ·72՝ Դաշտին մէջ: 3)Կ·23՝ կապոյտ վրանին: *) Զաւար, Եփած ու կտրած ցորեն եւ անով եփած փիլաւ, պուլղուր (փիլաւ)՝ վրան հալած կարագով:

Այդ Ջօրքերը Ամենք պիտի աղօ՛թք ընեն Քեզ համար,
Ուրախանան՝ որ ամենմէկ պիտի երթայ Իրեն Տո՛ւն . . .
Գընա այնտեղ՝ Ջոջ–Հովի՛ւը ըսպասէ,
Ոչխարն արդէն Քո՛ւկըդ է . . .»:

616. Ծերուկը Ցուցմունքներ Կ'ընէ Մէլիքի Վրաճի Մասին

Կ·72,23, Ա·25, (Հ·432), Հ·35,383, Ե·781,749,25,1118,748,827, 515,579,1008,914, (Ե·914,634), ՀՍ·522, Ց·113·

Դաւիթ լըսե՛ց Ալեւորին ըսածները,
— «Պապի՛կ,–ըսաւ–, Դուն չա՛տ աղէկ խըրատնե՛ր մը տըւիր Ինձ.
Ես Քու խօսքը պիտի ընե՛մ իրաւի.
Ինչո՞ւ Ինձի այդ բաները չուտ չըսիր . . .՝
Որ Ես Ձեզի այդչափ վրնաս չհասայի . . .:
Ըսէ՛ Ինձի՝ ո՞ւր է Մէլիք . . ., Անոր Վըրան ո՞րմէկն է . . .»:
= «Նայէ՛, Դաւի՛թ,–ըսաւ Ծերուկ–, ա՛հա՛ն այդ Մեծ Վըրա՛ն է . . ., Այն Դաշտի մէջ 1), կանաչ–կարմիր Վըրա՛ն մը կայ, Մո՛ւխ կ'ելնէ . . .
Մըսրամէլիք պատկեր է այդ Վըրանին տակ՝ քընե՛ր է. —
*Եօ՛թ Աղախին Անոր Ոտքե՛ր կըմաժեն *),*
Քառասուն Աղջիկ՝ Անոր Ճանճե՛ր կըքըշեն . . .:
Ոսկի–Խնճոր՝ կա՛խ է տըւեր Իր Վըրանին Մեծ–Սիւնէ՛ն 2).
*Քառասուն Լիտր ալ Արճիճ *) դըրեր Սըրտին Վըրայ՝ քընացե՛ր . . .:*
Այն ժամանակ որ Ան Իր Շունչ կըհանէ՝
Այդ Արճիճը վե՛ր կըթըռի, կըպարծրանայ Սիւնին Գլո՛ւխ,
Կ'ելնէ մինչեւ այդ Վըրանին Առաստաղ:
Ինչպես՝ն որ Շունչը քաշէ դէպի Նե՛րս՝
Այդ Արճիճը 3) կ'իջնէ մինչեւ Սըրտին վրա՛յ:
Այդ Մուխն ալ որ կ'ելնէ Անոր Վըրանէն դուրս՝ հօ Մո՛ւխ չ'է, —
*Անոր Բերնի Շոգե՛լքն *) է . . .:*
Գընա այնտե՛ղ, Քու Ոսոխի՛ն հետ կըռուէ . . .,
*Զարկ ըսպանէ՛ Քու Թըշնամին՝ Մենք ալ Քեզ հետ ազատուի՛նք»:—

---

1) Ե·634՝ բլուրի գլուխ: *) Մածիլ, Շփել, մարձել: 2) Ոսկի–խնճոր՝ նաեւ Պղնձէ–Քաղքի Թագուհիին Պալատին մէջ՝ Տե՛ս Հուշ. 149,154,156,158,159 եւ 176: *) Արճիճ, Կապար: 3) Ե·1009՝ Ոսկի խնճորը: *) Շոգիլ, Շոգի որ կ'ելնէ բերանէն, շնչառութիւն, Ե·634՝ շօրանի:

617. Դաւիթ՝ Ծպտուած՝ Իր Վրանը Կ'զարնէ Մէլիխի Վրանին Քով

Ե·1009,25,515,579,635,803,828,914,975,1118,781, Կ·23, Խ·35,
Շ·՝Խ·35, Ա·25, Շ·՝Ա·25, Շ(Ա·25), Հ·432,35,383, ՁԿ·553, 350,
ՁՍ·524, (Լ·100),Լ·77,72, Ց·113,36,Ց·36, ՁՎ·10,Ս·162, Շ·՝Ս·162·

*Դաւիթն ըսաւ, — «Աբի՛մ, Պապի՛կ, ինձի՛ նըշա՛նց *) տուր·*
Ես չե՛մ գիտեր՝ Մըսրամէլիք ո՞ր Վըրանի ներքեւն է···,—
Դընա կեցիր իր Վըրանին բոլորտիքը՝ որ ես գիտնամ ո՞րմէկն է,
Ու դատնացի՛ր՝ որ Իմ Ձիու Քամին ալ Քեզ չընետէ՛,
Ախո՛ս Մարդ ես, ա՛յ Պապիկ···»:
Ալեւորն ալ՝ ըսաւ, = «Դաւի՛թ, ես կ'երթամ ու Դուն նայէ՛,
Ո՛ր Վըրանին քովը կենամ՝ Իմ Գըլխարկը նետեմ վե՛ր՝
Այդ Վըրանին տակը պառկա՛ծ է Անիկ···»:
Մերուկն ելաւ՝ գընաց այնտեղ, Վըրանին չուրջ կա՛ն եկաւ,
Ու Մէլիքի Վըրանին քով՝ Իր Գըլխարկը վե՛ր նետեց,
Նըշա՛նց տըւաւ Դաւիթին,
Ինքն ալ գընաց՝ գատ կեցա՛ւ···:
Դաւիթ նայեց, տեղն իմացաւ ու ճըշդեց,
Ելաւ այնպէս՝ արիւնթաթա՛խ՝ Զին Բանակին մէջէն հանեց ու քըշե՛ց,
Քըշե՛ց գընաց 1) ու Մէլիքի Վըրանին Դուռ կանգնեցա՛ւ···:—
Երե՛ք օր ու երե՛ք գիշեր՝ Բանակին մէջ չո՛ւռ եկաւ՝
Հազի՛ւ գըտաւ Մէլիքի Իր կանաչ–կարմիր Մեծ–Վըրան:
Նայեց տեսաւ՝ որ այդ Վըրան՝ կըպարծրանա՛յ՝ կըցածնա՛յ,—
Ինքնին ըսաւ՝ «կա՛յ ու չըկայ, այս՝ Մէլիքի Վըրա՛նն է»:
Ան ալ՝ Ձիուն Սանձը դարձուց՝ զարկաւ գընաց այդ տեղէն՝
*Շորեր փոխեց՝ Արեւպըտոց Դեհէն *) դարձաւ՝ ե՛տ եկաւ,*
Ու Մէլիքի Վըրանին դէմ կանգնեցա՛ւ ,
*Եկաւ Անոր Վըրանին կուշտ *)՝ ու վա՛ր իջաւ Իր Ձիէն·*
Իբեն պըզտիկ Վըրա՛ն մը կար, հանեց զարկաւ Անոր քո՛վ,
Իր Ձին կապեց Վըրանին Դուռ, մըտաւ ներսը՝ քընացա՛ւ 2):
Զօրքերն այնտեղ Այդ Ձիաւորն երբ տեսան՝
Սարսափ բըռնե՛ց ու վախցա՛ն···:—

---

*) Նշանց տալ, *Ծուցնել*: 1) Լ·77՝ ձոչ Մելբոն (*այսինքն՝ Դաւիթ*)։ *) Դեհ, *կողմ, դին*: *) կուշտ, *քով*: 2) Նման իր *մեծհօր*· *Տե՛ս Հատ*· 205:

618. Մըսրամէլիքի Գոյրը կ'երթայ Ջուր Բերելու

Զ.՝ 6·36, (Ե·803), 6·36,37

Մըսրամէլիք ծարաւցա՛ծ էր, քընած տեղէն արթընցա՛ւ,
Գոյրը ղըրկեց որ Աղբիւրէն Ջո՛ւր բերէ։
Գոյրն ալ տեսաւ՝ որ Վըրա՛ն մը զարկեր էին իրենց քով,
Վերցուց ըսաւ, «Ատ ի՞նչ Վըրան պիտի ըլլայ այս տեղեր.՞.՞.՞»։
Գընաց նայեց՝ որ մէկ Մա՛րդ մը՝ Վըրանին տակ պառկա՛ծ էր,
Մօտեցա՛ւ ու տեսաւ որ չա՛տ խօրո՛տ էր, —
Ալ մըտահա՛ն ըրաւ Իրեն Ջուր տանել(ն),
Կուժը դատա՛րկ՝ ելաւ դարձաւ Եղբօր քով։
Մէլիք հարցուց՝ ըսաւ, — «Աղջի՛կ, Դուն ինչո՞ւ Ջուր չըբերիր,
Դատարկ կո՛ւժը ներս բերիր.՞.՞.՞»։
= Մէլի՛ք,–ըսաւ, Մա՛րդ մ՝ է եկեր Մեր քովերը,
Իր Վըրանն ալ՝ Մեր Վըրանին դէ՛մ զարկեր...,—
Գացի տեսա՛յ Ես Այդ Մարդը, մոռցայ՝ ա՛լ Ջուր չըբերի՛»։
— «Որ այդպէ՛ս է,–ըսաւ Մէլիք–, դընա կանչէ՝ բե՛ր Այդ Մարդ»։—

619. Դաւիթ՝ Եօր Օր՝ Մէլիքի Վրացին Ցակ Կերուխումի Մէջ

6·37, Ս·162, Ե·803, (Կ·30), Խ·35·

Մէլիքի–Գոյր՝ դընաց կանչեց, առաւ բերա՛ւ Դաւիթը։
Մէլիք հարցուց 1), — «Դուն ի՞նչ Մարդ ես, ինչի՞ համար ես եկեր·
Կապուտ–Կողի Թագաւորին Մա՛րդն ես Դուն...»։
Դաւիթն ալ Թէ, = «Աբեւալտոց Թագաւորի Տըղա՛ն եմ...,
Եկեր եմ Ձեզ օգնութեան...»։
Մըսրամէլիք Վըրա՛ն զարկաւ՝ նե՛րս հըրամցուց Իր նոր Հիւր·
Ան ալ՝ Դաւիթ՝ մըտաւ նե՛րսը, Մէլիքի քով նըստեցա՛ւ,
Գառու–Միսով Բըրինձ–Փիլա՛ւ կերան մէկտեղ՝ եօ՛թը օր 2)։—

---

1) Կ·30՝ Հարցնողները Պրե· Պոօշ, Պրե· Բվէֆ Ֆըռընցտայ դէ–վերն են։ 2) Ըստ Դաւիթի ըրած ուխտին· Տե՛ս Հատ· 572։

620. «Ես Դաւիթի Կռակ-Ծուռոյն Եմ»

Ց·37, Ս·162,163, (Լ·100,78), Լ·78,88, Զ(Լ·78), Ե·803,781,811, 828,582,749,516, (Ե·719,803), Զ·՝ Ե·828(Ե·35),Զվ·10,Հ·383(Հ·35)·

*Եօթերո՛րդ օր որ լըրացաւ, — վեր՝ ուրիշն *),*
Դաւիթ վերցո՛ւց իր վըրանը, ցտակից հեծա՛ւ Իրեն Ձին,
Զարկաւ դընաց Տէրտերոչ Տունը, Հազուստ փոխեց՝ նո՛ր հագաւ,
Ելաւ հեծաւ ուրի՛շ Ձի մ՛,
Քըշե՛ց եկաւ՝ ու Մէլիքի Վըրանին Դուռ կանգնեցա՛ւ,
— «Մէլի՛ք,–ըսաւ–, Ձու առնելին պատրա՛ստ կաց...»:
Մըսրամէլիք չըճանչըցա՛ւ, հարցուց Իրեն, = «Ո՞վ ես Դուն...,
Ո՞րկէ կուգաս, ո՞ր երկրէն ես, ո՞ւր կ՝երթաս...»:
— «Ես՝ Սասունէն՝ ու Դաւիթի Կըրակ–Տըու՛ղն 1) եմ»,–ըսաւ:
= «Տըղա՛յ,–ըսաւ Մըսրամէլիք–, ինչքա՛ն ալ մե՛ծ ե Ձու Տէր...»:
Ըսաւ, — «Իմ Տէր՝ քան Ձո ձախ Ձուն կայ–չըկա՛յ... 2)»:
= «Տըղա՛յ,–ըսաւ–, սուտ մի՛ ըսեր, չ՛ըլլա՞յ որ Դուն Դաւիթն 3) ես.
Շիտա՛կն ըսէ, թէ որ Դո՛ւն ես՝ եկուր բա՛խտ տանք մէկմէկու 4),
Ցետո՛յ ելնենք ու կըռուինք...»:
— «Չէ՛,–ըսաւ–, Ես Դաւիթ չե՛մ...»:
Մըսրամէլիք նորէ՛ն ըսաւ, = «Արի՛ շիտա՛կն ըսէ Ինձ,
Դուն Սասնայ–Տան 5) Դաւիթ չե՞ս...
Ես երազո՛վ իմացեր եմ՝ որ այն Տունէ՛ն պիտի գայ Իմ Թըշնամին.
*Մեր Գըրեանց *) մէջ գըրո՛ւվ ալ է՝ որ Սասնայ–Տան կըտրիճներ*
Պիտի յաղթե՛ն Մեզ՝ վերջէն...:—
Է՛հ, որ այսպէ՛ս գըրուեր է Մեր ճակատին...՝
Ա՛լ այն Գիրը չ՛ա՛ւըրուիր...»:
— «Ճիշդ որ կ՝ուզես,–ըսաւ Դաւիթ–, Ես Սասունայ–Տունէ՛ն եմ»:
Ու դարձաւ ե՛տ, եկաւ Իր տե՛ղ, Քուռկիկ–Ջալալ դո՛ւրս քաշեց,
Թամբը դըրա՛ւ, Սանձը զարկա՛ւ, կապե՛ց Իր Հօր Ձէն–ու–Ձա՛րդ,
Սուրբ–Նըշանը համբուրե՛ց,

---

*) վեր՝ ուրիշն, *Ուրիշերորդ օրուան առտուն կանուխէն, մուրճուլուսին:* 1) Ձրպուրճի (Ց·37): 2) Ձախ ձուին չափ հազիւ կայ: 3) Լ·78՝ ձոչ Մելիքոն: 4) Իրարու հետ պայման ընենք: 5) Հմմտ.՝ Պաղնատուն, *ինչպէս* եթէ ըսուէր Սասնատուն: *) Գրեանց, Գիրքերու:

Հեծա՛ւ Իր Ձին, քըշե՛ց գընաց դէպի Իր Մե՛ծ Թըշնամին։ —
Գընաց զարկաւ Գետի՛ մէջէն՝ այնպէ՛ս անցաւ ու գընաց.
Իր Հօրեղբայր Ձէնով–Օհան՝ Իրեն այնպէ՛ս ըսեր էր. —
«Մըսրամէլիք Հո՛ր է վորեր Քեզ համար...,
Չ'երթա՛ս Անոր Հորին վրայէն՝ իյնաս մէջ...,
Գետի՛ մէջով զարկ անցիր»... 6)։
Ու Դաւիթն ալ՝ Գետի՛ մէջէն կըտրեց անցաւ ու գընաց՝
Քըշեց գընաց ու Մէլիքի Վըրանին Դուռ կանգնեցա՛ւ։ —

621. Մըսրամէլիք՝ Վրացին Ցակ Պառկած

Կ·72,23, ՁՍ·524, Լ·77, Ձ·՝Լ·77, Ե·914,515,635,828,781,803,811, 749, (Ե·803,749,811,812,781,1008), ՁԿ·350, Խ·35, Ա·25, Հ·432, 433,383, (Հ·383), Ց·113·

Վըրանին Դուռ կանգնեցա՛ւ, —
*Նայեց տեսաւ՝ Վըրանին տակ Վերմակ, Պառկոց *) կոլոնած *),*
*Մէկ պէ՛տ *) Մարդ մը — Մըսրամէլիք — պառկեր այնտեղ՝ քընե՛ր է,*
Գըլուխն այստե՛ղ 1)՝ Ոտքեր կ'երթան կո՛ Արարք 1)...՝
*Քա՛ռասո՛ւն նետ *) հետո՛ւ՝ անդին փըռուե՛ր է... 2)։*
Այն ժամանակ որ Իր Շունչը կըհանէ՝
Իր Վըրանը՝ Բերնի Շունչէն կըբարձրանայ եօ՛թ կանգուն.
Դուն կ'ըսես Թէ՝ մէկ ահագին Քամի՛ մըն է որ կ'ելնէ...՝
Երկինք–Գետինք կըսարսի՛...։

---

6) *Տե՛ս Հուծ.* 598՝ Ձէնով–Օհանի *խրատները։* *) Պառկոց, *Անկողինի՝ վրան պառկելիք մաս,* տէօշէկ։ *) Կոլոնած, *Դիզած, կուտակած։* *) Պէտ, *Մեծդի, խոշոր։*

1 եւ 1) Այստեղ՝ (ՁՍ·524)՝ *Վանայ քաղաքամէջը,* Արաբ՝ *Վանայ արուարձաններէն մէկը։ Սպարկերացի պատմիչս այս չափովը՝ Մըսրամէլիքի հասակը՝ պառկած դիրքի մէջ՝ կ'ներկայացնէ չուրջ եօթ–ուք քիլոմեթրի երկարութիւն մը...։ Չի Վանայ Քաղաքամէջը — ուր էր մեր տունը՝ երբ ան կը պատմէր ու ես դրի կ'առնէի «Սասմանց–Տուն»ը — հետու է Արարքէն (ուր կ'բնակէր պատմիչս)՝* 7–8 *քիլոմեթրով։* *) Նետ, *Նետաչափ, կանգնաչափ։* 2) *Ուրեմն Սպարկերացի պատմիչս՝* 7–8 *քիլոմեթրի ու* 40 *նետաչափի մէջտեղ... կը հաշտեցնէ Մըսրամէլիքի երկարութիւնը։*

Ինչ առնէն որ Բևրնի Շունչը կըքաշէ Իր փորին մէջ 3)՝
Վըրան կուգայ՝ Իր Սիւներուն վըրայ կ'իջնէ կըկանգնի...:—
Այդ Շունչն ալ որ Մըսրամէլիք կըհանէ՝
Քառասուն Լիտրնոց Աբգիճը որ Վըրանին Դուռ կախած էր՝
Դէ՛ն կըսանի, դէ՛ս կըբերէ՝ կըհովահրէ՛ Իր երես...:
Վըրանին ալ Դըրան առջեւ՝ մէկ ահագի՛ն փի՛ղ մը կայ.
Երկու հատ ալ Ադաբ Ծառա՛յ կայներ են.
Մէլիքի-Մայր նըստեր է հոն՝ Տըղուն Գըլո՛ւխ կըմաժէ,
Կընիկ նըստեր՝ Անոր Ոտքե՛ր կըմաժէ...:
Քառասուն 4) Աղջիկ ու կընիկ ալ՝ ինչ Սասունէն չե՞ն բերած, —
Վըրանին տակ՝ քըսան 5) մէ՛կ կողմ, քըսան մէ՛կ կողմ նըստած են,
Որն ինչ Սի՛րտը կըմաժէ...,
Որն ինչ Գըլո՛ւխ կըմաժէ...,
Որն ինչ Ոտքե՛ր կըմաժէ...,
Որն ալ Ուրի կանաչ Ճիւղով՝ Անոր Ճանճե՛ր կըքըշէ...՝
Որ Մէլիքի քունը տանի, քընանայ...:—

ՃՁԸ. Գերի Կիներուն Ըսածները

Զ.՝ Հ.433, Հ.433, Ց.113.

Աղջիկներէն մէկը վերցուց՝ Ընկերներուն ի՞նչ ըսաւ.—
*— «Դաւթի՛ն մեռնիմ..., հաւտա՛ որ *) Ան եկեր է՝*
Որ Ձիս առնէ ու փախի՛...»:
Մէկալը թէ, — «Իր նորահաս Անճի՛ն մեռնիմ ես...,—ըսաւ—.
Եկեր է որ Ձի՛ս փախցընէ ու տանի...»:
Ամենմէկը մէկ բա՛ն ըսաւ Դաւիթին, —
Դաւիթ երբեք Անոնց խօսքին ականջ չըրա՛ւ՝ չըլըսեց.—
— «Աղջիկ,—ըսաւ—, ես Ձեզ համար չե՛մ եկեր...,
Ես Մէլիքի համա՛ր է որ եկեր եմ...,—
Վե՛ր հանեցէք՝ որ կըտուինք...»:
Աղջիկները՝ թէ, = «Մենք չե՛նք կըրնար վեր հանել...»:

---

3) Տես եւ Հուշ. 205 (Առիւծ-Մըհէր): 4) Կ.23՝ ճօր, Կ.72՝ կնիկներ, Ե.749՝ fսաե: 5) Հ.433՝ հիճգ... հիճգ:

*) Հաւտա՛ որ, Շատ հաւանական է, այսպէս հաւտալու իրաւունք ունիմ:

628. Դաւիթի Եւ Մէլիքի-Մօր Տեսակցութիւնը

Կ·72,73,23,71, Զ·՝Կ·73, Զ·, Ե·781,914,1009,579,515, 828,516,25, 635,1118,582, (Ե·749,781,1008), Լ·88,71,79,77, Զ·՝Լ·71, Զ(Լ·77), ԶՍ·525,526, Ա·25, Հ·433,432,35,383, Խ·36, ԶԿ·350,553·

Դաւիթն ալ որ Մայրը տեսաւ՝ բարե՛ւ տըւաւ 1) Իր Խորթ–Մօր, —
Ան՝ որ դ'Ինքը ազատե՛ր էր Մէլիքէն —,
— «Մարէ՛,–ըսաւ–, բարի՛ն Քեզի, ի՞նչպէս ես...»:
Մէլիքի–Մայր բարեւն առաւ ժըպիտով...,
=«Աստծու բարի՛ն,–ըսաւ–, Դաւի՛թ, Իմ քա՛ղցր Տըղաս, Դուն եկա՞ր·
Բարի՛ եկար, հազա՛ր բարի եկար Դուն...,—
Աչքի՛ս վըրայ, Գըլխո՛ւս վըրայ եկար Դուն...,
Ձու կարօ՛տը կըքաշէի՝ երբաւ որ...»:
*Մէլիքի–Մայրն 2) ալ Իր վըրայ Հըրսուքի՛ն *) էր դըրեր,*
Սըրտին ցաւը երբեք յայտնի չէ՛ր ըներ: —
Ինչքան սըրտանց Թըշնամի՛ էր Դաւիթին 3)՝
Բայց երեսանց Ինքզինք ուրա՛խ ցոյց կուտար:
Անոր համար՝ երբոր տեսաւ՝ Դաւիթ Իր Զին՝ Արեան մէջ...՝
Այնտեղ Ինքը Տըղուն համար չա՛տ վախցաւ.
Շուտ մը Դաւթի դիմա՛ցն ելաւ ու ըսաւ. —
*= «Դաւի՛թ, մօրտո՛ւն *), Զինէն իջի՛ր, եկուր տա՛կ...»:*
Դաւիթն ըսաւ, — «Մարէ՛,–ըսաւ–, Ես չե՛մ իջներ· գո՛րծ ունիմ... .
Ո՞ւր է Մէլիք··· 4), գործըս տեսնեմ՝ չուտ երթա՛մ...»:
Մայրը նորէն ըսաւ, = «Դաւի՛թ, իջիր տա՛կ...,—
Ճամբէ՛ կուգաս, նեղացե՛ր ես, յոգնե՛ր ես...,
Հիմա անշուշտ անօթի ու ծարա՛ւ ես...,
Իջիր նըստէ՛, քիչ մը հա՛ց կեր՝ ու հանգչէ՛...,
Ձու եղբայրը քունէն ելնէ՝ տեսնըւի՛ք...,
*Ելէք մէկտեղ Ձեր Հողերը կխոսեցէ՛ք *),*

---

1) Լ·88՝ բարեւմընայ եղաւ (*որ կ'ըսուի սակայն հրաժեշտ առած առեն, ոչ թէ նոր եկած պահուն*): 2) Լ·71՝ Խառնակ պատուհին բերումովը՝ Սօք–Ձօղ–Ծամ–Գոհար: *) Զլսուքիւն, կամով խլուքիւն, անլսուքիւն: 3) Լ·71՝ Սանասարին ու Բաղդասարին (*սխալով*): *) Մօրտուն, *Մօրը՝ սիրակատ, հոգեհատոր*: 4) Լ·77՝ մարդագել պառաւ: *) Կիսել, *կէս առ կէս բաժնել, երկու բաժին ընել*:

Թէ չըկըրցաք՝ նոր կըկըռուի՛ք, ի՛նչ որ ուզէք՝ ա՛ն կ՚ընէք...»:
— «Մարէ՛,–ըսաւ–, չնորհակա՛լ եմ ես ֆենէ՛...,
Ես իմ Հա՛ցն ալ կերեր եմ,
Ջո՛ւրն ալ խըմեր՝ այնպէ՛ս ելեր-եկեր եմ... .—
Վա՛ր հան Մէլիք — իմ եղբայրը —· իմ օր՝ Անոր՝ ասօ՛ր է... *);—*
Կամ Աստուածը ինձի՛ կուտայ՝ կամ Անո՛ր...»:
Մայրն ալ 5) Դաւթին ի՞նչ ըսաւ, —
= «Դարձիր դընա՛...,–ըսաւ–, Սասնու Շաղղըմակեր Մո՛ւռ-Դաւիթ·
Գընա՛,–ըսաւ–, Քեզ ազա՛տ եմ ըրեր ես...՝
Իմ Հաց Քարին մի՛ զարներ...»:
— «Ագաս-մագաս չըկա՛յ այստեղ...,–պօռաց Դաւիթ 6)՝ Իր
[Խորթ-Մօր-,
Վա՛ր հանեցէք Այդ-Անասուած՝ Քող գայ դո՛ւրս...,
Կըռի՛ւ ընենք Իրար հետ... . —
Ես եկեր եմ՝ Անոր հոգի՛ն պիտի առնեմ այս անգամ... .
Անմահ՝ Անոր մա՛հ եմ բերեր ես այս օր,
Առանց Գրօղի՝ Անոր Գըրո՛ղ եմ եկեր...»:

624. Մէլիքի-Մօր Պատրուակները

ՁԿ·556,351,554,557, 555,352, Ա·25, (Ա·25), Ե·25, 516,582,914,515, 1118,828,26,635,1009, Զ(Ե·579), (Ե·26,914,1118, 828), (Լ·79,77), Լ·79,77, Կ·73,23, Խ·35,39, (Խ·40), ՁՈ·526,527, (Ը·113), Ը·113, (Հ·35,383), Զ·՝Հ·433, Հ·35, 383,433·

Մէլիքի-Մայր՝ Իսմիլ-Խաթուն 1)՝ Նորէն ըսաւ, — «Ա՛յ Դաւիթ,
Որդի՛,–ըսաւ–, չէ՞ ես Քեզի Մի՛ծ եմ տըւեր, խընամե՛ր... .
Գիտե՛մ, այդչափ կըռիւի մէջ, Դուն յաղնա՛ծ ես, չարչարուա՛ծ...,
Նըստի՛ր քիչ մը, հանդըստացի՛ր ու Հա՛ց կեր...,
Մինչեւ Մէլիք արթընա՛յ... .
Ան ալ Քու Զոկ եղբա՛յրն է...»:
Դաւիթն ալ թէ, = «Գիտե՛մ Իմ Զոկ եղբայրն է,
Բայց Դուն Նորէն վե՛ր հանէ...»:

---

*) Իմ օր՝ Անոր, *Իմ կամ Անոր վերջին օրը* (*ասօր է*): 5) Լ·79՝ Սիվտակ դեվ: 6) Լ·77՝ Ճոչ Մելիոն:

1) ՁԿ·556՝ Խանդուտ-Խաթուն:

— «Մօրաո՛ւն,–ըսաւ–, դեռ քընա՛ծ է իմ Տըղան…,
Մե՛ղք է Իրեն…, թող քընանա՛յ տակաւին…»։
=«Օ՛ֆ, իմ Գըլուխ՝ ա՛լ ցաւցուցի՛ր, վե՛ր հանեցէք այդ Մէլիք…,—
Թէ չէ՝ կուգամ՝ քընած տե՛ղը կ'ըսպանեմ…»։
— «Որ պղպէ՛ս է,–ըսաւ Մայր 2)–,
Իմ Տըղան ալ՝ նոր այսօ՛ր 3) է քընացեր…,
Մինչեւ եօ՛թ օր ու եօ՛թ դիշեր չըքընի՝
Անի քունէն չի՛ արթընար՝ չ'ե՛լներ վեր·
Ինչո՞ւ այսօր կ'արթընցընես իմ Տըղան…,—
Եօթ օր պէտք է որ Ան քընի՝ նո՛ր ելնէ…»։
Դաւիթն ըսաւ, = «Ես չե՛մ դիտեր, ու ժամանա՛կ ալ չ'ունիմ՝
Ներսիմ եօ՛թ օր ու եօ՛թ դիշեր գ'ինք աչքեմ *)·
Մինակ մէկ մա՛րդ եմ ես ալ… ·
Ա՛–հա՛ պիտի հանէք վե՛ր…,
Ես չե՛մ կենար՝ մինչեւ Անիկ իր ուղածով վե՛ր ելնէ·
Շո՛ւտ ինձ համար արթընցուցէ՛ք՝ թող ելնէ,
Ու խօ՛սք մ' ըսէ այդ անհոգին՝ ես լըսե՛մ…»։
Մայրն ալ ըսաւ, — «ես չե՛մ կըրնար Մըտրամէլիք հանել վեր…»։
Դաւիթն ալ թէ, = «Ապա ի՞նչպէս պիտի ըլլայ աւտր ճա՞ր·՞·՞»։
– – «կա՛մ,–ըսաւ Մայր–, եօ՛թ օր պիտի քընանայ ու վե՛ր ելնէ,
կա՛մ՝ թէ որ Դուն կըրնաս գ'ինքը արթընցընել՝ վե՛ր հանէ…»։

ՃՁ5. Դաւիթ Ցէգով Կ'ծակէ Մէլիքի Ոտքը՝ Ու Արթընցայ

Ե·812,515,1119,749,1118,582,26,(Ե·749,582),Կ·23,24, Զ(Կ·23,24), Լ·77, (Հ·433,36), Ս·163, Չ·՝Ճ·37·

Դաւիթ այլեւս չըհամբերե՛ց աւելի…,—
Գընաց հասաւ Վըրանին ծայր՝ կեցաւ եղբօր Շունչին վրա՛յ,
Ֆաչե՛ց Տէգը 1) — Իր Հօր Տէ՛գը–Զոլային —,
Ու մէ՛կ զարկաւ Մէլիքի Ձ Ոտքին տա՛կ,—
Տէգը՝ կէս նետ *) մըտաւ Աւտր Ոտքին 2) մէ՛ջ,

---

2) Լ·79՝ Աղջիկ: 3) Հ·35՝ աՁիկ շա՛տ կըբընի, Ե·914,1118, Խ·35՝ երեք օր, Խ·39, Հ·383՝ չորս օր, Լ·77, 79՝ երկու օր:
*) Աչքեն, Սպասել:
1) Հ·433, Ե·749՝ Թուրը: *) Նետ, Նետաչափ: 2) Կ·24՝ Ձեռքին:

Ծակե՛ց, բերաւ Լիսր մ՝ Ա՛ղ լեցուց վէրքին մէջ…։
Մէլիքի Ոտ որ մըրմըռաց՝ կըծկեց, ըսաւ, — «Աղջիկնե՛ր,
Այստեղ Լո՛ւ կայ…, լաւ չէ՛ք մաքրեր պատճած տեղս…
*Լըւեր իմ քուն խըրտեցուցի՛ն, ա՛յ Քաճեր *)…»։*
*Դաւիթ Անոր Ոտ որ ծակեց՝ ողջանց մ՝ *) դընա՛ց Մէլիքէն…,*
Ան ալ պօռաց, — «Ասի՛կ ի՛նչ էր…, իմ Ողջա՛նցը պակսեցաւ…»։
Դաւիթն ալ հոն կանչեց ըսաւ, = «Մէլի՛ք, ինչո՞ւ պատճեր ես…,
Բա՛ւ է քընիս· ոտքի՛ ելիր· Լու չ՛է՛՝ Լըւի Եղբա՛յրն է… ·
Ելի՛ր,–ըսաւ–, ե՛ս եմ եկեր՝ Քեզ հետ կըռի՛ւ ընելու… ·
Դեռ մինչեւ ե՞րբ պիտի ուտես Դուն իմ Պապու Կալուածները… ·
Կըռիւ ի՛մն է՝ ու Քուկի՛ն…»։
Մայր–ու–Քոյրը ըսին, — «Մէլի՛ք, ելի՛ր, Դաւի՛թն է եկեր…»։
Ըսաւ, = «Դաւիթն ի՛նչ բան է…,
Ես չե՛մ դիտեր՝ ո՞վ է Ան… ·
Է՛…, Թողէք որ հանդըստանամ ու քընե՛մ…»։
Ու վեր չ՛ելա՛ւ· կո՛ղ եղաւ հոն, Ֆը՛ւշա՛ց՝ նորէն քընացա՛ւ…։—

626. Հրաշէկ խոփով՝ Կ՛արբցնեն Մըրամէլիքը

Ե·1119,915,828,26,635,1009,582,781,812,749, (Ե·915, 1009,781, 828,749,582), ԶՍ·528,529, (Լ·79,77,78), Զ·՝Լ·77,79, Լ·77,79,78, (Հ·433,383), Հ·433,36, 383,Զ·՝Հ·36,(Խ·40,35),Խ·35,40,36,Ճ·113, (Կ·70,73),ՉԿ·353,355,558,559, (ՉԿ·355,559),Ա·26,(Ա·26)·

*Տեսան չ՛և՛իներ՝ ըսին, — «Ապա ի՞նչպէս ընենք, ի՞նչ չընենք·՞·՞·՞· Մայրը 1) ելաւ՝ Խաչերկա՛թ *) մը բերաւ ձըղեց Դաւիթի 2) Ոտք, — = «Այս Խաչերկաթ 3),–ըսաւ–, նետէ կըրակին մէ՛ջ՝ կարմըրցո՛ւր, Այնպէս կարմիր ու կըրակցած *)՝ դիր Մէլիքի Ոտաց տա՛կ, Որ արթըննայ՝ ելնէ վե՛ր…,— Թէ չէ՝ Անիկ՝ օրը չ՛եկած՝ չի՛ ելներ…»։*

---

*) Քաճ, Էդ, կին, աղջիկ, անարդական։ *) Ողջանց, կարողութիւն, ուժ։

1) Լ·77՝ մարդագէլ պառաւ (*խառնակ պատուհովը՝ հէքիաթացած*)։ *) Խաչերկաթ, *Թոնիրի բերնին իբր կասկարայ ծառայող խաչաձեւ երկաթ*։ 2) Լ·77՝ Մելխոն։ 3) Խ·39, Հ·433, Ե·915, 1009՝ գուրնի խոփ, Լ·79՝ թաս, Ե·635՝ շիշ։ *) Կրակցած, *Շիկացած, հրաշէկ*։

Դաւիթն այնտեղ ի՞նչ ըսաւ. —
— «Դուք քաշուեցէ՛ք,–ըսաւ–, մէկ կո՛ղմ տըւէք Ձեզ,
Ես կարո՛ղ եմ Մըսրամէլիք հանել վեր...»:
Ամենք մէկդի՛ քաշուեցան,
Դաւիթն ըսաւ, — «Բերէ՛ք,–ըսաւ–, Գուբքնի Ո՛ւխ 4) մը ինձ համար»:
Ելան բերին՝ մեծ Գուբքանի Ո՛ւխ մը 5) դըրին կրակին մէ՛ջ
Դարբիններու Հընոցի՛ն պէս մեծ Փուքսով մը փըչեցին,
Կարմըրցուցին ու քաշեցին՝ գարկին Անոր 6) Ոտաց տա՛կ.—
*Ջը՛ղո՛ց *) ինկաւ Ոտաց տա՛կը..., Մէլիքի Ոտք այրեցա՛ւ...:*
*Երկո՛ւ անգամ՝ Ուխը գարկին Անոր Ոտաց Մըսանին *),*
*Մըսրամէլիք Ոտը քաշե՛ց, իրա՛ր առաւ *) ու պօռա՛ց, —*
— «Օ՛ֆ, օ՛ֆ, Մարէ՛, ասօր,–ըսաւ–, Իմ Տեղ բընա՛ւ հանգիստ չե՛ր 7).
Այստեղ ի՞նչքան Լու կայ,–ըսաւ–, լաւ աւելուածք չե՛ն ըրած...,—
Լըւեր 8) Իմ Ոտք խորովեցին ու կերա՞ն... 9),
Ձե՛ն Թողներ որ ես քընեմ...:
Շա՛ն Աղջիկներ, ինչո՞ւ,–ըսաւ–, Իմ Ոտքերը չէ՛ք մաժեր՝
Որ Իմ Քունը հանգիստ տանի՝ քընանամ...»: —

627. Մըսրամէլիք կրկառծէ թէ՝ Եկողը Դաւիթն Սպաճողն է

Ե·26,828,915,635,781,1009,812,749,582,1119,516,(Ե·803,516,1009), ՉԿ·356,560,561, Լ·78,68,79, (Լ·79,100), ՉՍ·530,531, Ճ·114,37, (Ճ·37), Ս·26, Խ·36,40, Հ·433,383,36, (Հ·36), Կ·73,23, (Կ·73), Չ՝Կ·23·

Մայրը 1) ըսաւ, — «Մէլի՛ք, Որդի՛, չէ՛, Քու վըրայ Լու չըկա՛յ...,
Ելիր տեսնե՛նք, Դաւի՛թն եկեր, Քեզ հետ կըռիւ ընելու.
Նայինք Դուն ի՞նչ պիտի ընես Իրեն հետ...»:

---

4) Խոփ, Գուբքանի՝ պողպատէ հատտ ու ծանր եւ սրածայր գործիքը՝ որ հողը կ'ակօսէ, socle: 5) ՉՍ·528՝ Գուբքանի շղթայ, Ե·26, 635՝ շիշ (երկաթէ ձող): 6) Լ·79՝ Սիվտակ դէվի (այսինքն՝ Մըսրամէլիքի): *) Ջղղոց, ձեռնճերելու ձայն: *) Մսաճ, կակուղ միս, դնդեր: *) Իրար առնել, Շարժիլ: 7) Խ·36՝ չէր՝ ուղղել՝ չէի (չիներ), ինչպէս է անդ՝ էջ 40: 8) Ե·915՝ Սու լուեր: 9) Տե՛ս յաջորդ՝ 627 Հատ. [Ապա Մէլիք ինչ քընած չէր՝ արթուն էր,....]:

1) Լ·68՝ սխալով՝ եօթ ցօղ ծամ Գիւհար, Լ·79՝ Ալխաճ:

Դաւիթն ալ չուտ կանչեց ըսաւ, — «Մէկի՛ք, վե՛ր ել, Աչքըդ բա՛ց,
*Պաուու–Տուրիկ *) դուրս մի՛ տար· · ·*
Լու չ'է՛, ե՛ս եմ, եւ Քո տեղը չատ հանդի՛ստ է ու մաքո՛ւր· · ·
Ել վե՛ր,–ըսաւ–, ե՛ս եմ եկեր՝ Քեզ հետ կըռի՛ւ ընելու·
Քու առենին պատրա՛ստ կաց· · ·—
Անմահ՝ Քեզի մա՛հ եմ բերեր ես այսօր· · ·,
Քու անասուած Հոդին պիտի՝ առա՛նց Գըրող ես առնե՛մ· · ·,
Ասուած ասօր կամ Ի՛նձ կուտայ՝ կամ Քեզի՛· · ·,
Ասօ՛րն է որ ասօ՛րը· · ·»:
[Ապա՝ Մէկիք Ինք քընած չէ՛ր, արթո՛ւն էր,
Ի՛նչ որ Իր Մայր ըսե՛ր էր հոն Դաւիթին՝
Ու Դաւիթն ալ՝ Իրեն Մօր՝
Ամեն լըսե՛ր էր Մէկիքը՝ ու դիտէ՛ր]: –
Մըսրամէկիք 2) յօրանջելով՝ Աչքը բացա՛ւ՝ նըստեցա՛ւ,
Մէկ Ձեռ դըրաւ մէ՛կ Աչքին վրայ, մէկ Ձեռ դըրաւ մէ՛կ Աչքին,
«Օ՛ֆ» մը ըրաւ՝ հանած Շունչով՝ երկինք–երկիր սարսեցո՛ւց· · ·
Քընաթաթախ սա՛նկ իրիկուայ, Աչքեր ճմռե՛ց ու տեսաւ՝
Հը՛սկայ Մարդ մը՝ Ձիուն վըրայ՝ Արիւնի մէջ թաթխըւե՛ր· · ·,
Գըրողի՛ պէս՝ Իր Վըրանին Դուռ կանգնե՛ր· · ·:
Քա՛նի նայեց՝ Ձիուն վըրայ Դաւթի Գըլուխ չըտեսա՛ւ, —
Մ՛ընքան բարձր էր Դաւթի Ձին 3)· · ·:
Լեղին Փորին մէջ կըտրեցա՛ւ· · ·, սարսափ կոխե՛ց Մէկիքին· · ·:
Դողդըղալով կանչեց ըսաւ, = «Դուն ո՞վ ես որ եկեր ես՝
Իմ Վըրանիս Դուռը կեցեր՝ Չիս Քունէս վե՛ր կըհանես·՞·՞·՞»:
*Ու դիտցաւ *) որ՝ Դաւիթ զարնող ըսպանո՛ղն է՝ ետ դարձեր՝*
Եկեր է որ Պարգե՛ւ առնէ Իր Ձեռքէն· · ·:—
Ան ալ՝ Մէկիք՝ վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ 4)·—

— «Թէ որ Դուն, Կըտրի՛ճ, Արեւելքո՞ց ես՝ Տամ Քեզ մեծուքի՛ւն· · ·

---

*) Պաուու–Տուրիկ, Ջաւանցանք, զրաբանութիւն, պառաւաշունչ: 2) Լ·78՝ Ջանիթլատ, Լ·65՝ այն դէվը, Լ·66՝ կարմիր դէվը (*խառնակ պատումովը*): 3) *Գեղեցի՛կ պատկեր՝ Հայոց Այրուձիուն (հնծեալ բանակին) բաղմութեան և զերպաղանցութեանը· · ·:* *) Գիտնալ, կարծել: 4) Երգով· Կ·23՝ կ՝սկսի «Օրհնեալ է բարերար Աստուած, եւն·»–ով՝ որ սխալ է: Այդ ձեւը՝ Սասմանց Քաջերուն միայն յատուկ է:

Արեւմուտքո՞ւն ես՝ Տամ Քեզի Գանձե՛ր... .
Թէ որ Հիւսիսո՞ւն կամ Հարաւո՛ւն ես՝ Տամ Քեզ ճոխութի՛ւն...»:

Դաւիթն ըսաւ, — Մէլի՛ք, ես Քո ըսածներէդ մէ՛կն ալ չե՛մ...,
Ու ոչ ալ Քո երկիրներէդ՝ն եմ եկեր...,—
Ես Սասմանց–Տան՝ Մըհէրի Լաճ Դաւի՛թն եմ...,—
Դու Քեզ ան–Մա՛հ դիտես մէջըդ...՝ Ես Քեզի Մա՛հ եմ բերեր...»:

628. Մըսրամէլիք՝ վախէն՝ կ'ճախաւէ Դաւիթը

Ե·26,1119,812,915,749, 1009,635,582,516,781,583,976,(Ե·812,915), Զ·՝Ե·1119, Լ·65,68,78, Զ·՝Լ·68, (Լ·68), Ը·114, Զ(Ը·37), Հ·433, 383,36,434, Զ·՝Հ·433,36, (Հ·36), Ա·26, Զ·՝Ա·26·

Մըսրամէլիք տեսա՛ւ Դաւիթ 1)՝ խընդա՛ց վըրան ու ըսաւ· —
— «Բարո՛վ եկար..., Դուն..., Նո՛ր–Մանուկ, Հողածի՛ն... .
Կ'երեւա՛յ որ՝ Աստուածուքիւն՝ Քեզ Ինձ համա՛ր ուղարկեց...:
*Հը՛..., Սասունայ Շաղգըմակեր պըմպո՛ւտ *) Դաւիթ եկե՛ր է...՝*
Մըսրայ–Տէրոջ Մէլիքի՛ հետ այսօր կըռի՛ւ պիտի ընէ՝ Իր Թելքով:
Հողածինը՝ Ի՛ր Աբիւնով Ինձի Մատա՛ղ է եկեր...:
Շո՛ւնչա՛նո՛րդի՛,–ըսաւ ապա՝ դէպի Դաւիթ դառնալով–,
Շուտ ե՛տ դարձիր՝ ու դընա՛...,
Այդ անունն ալ բաւական՛ է Քեզ համար՝
Որ Դուն ըսե՛ս՝ ժամանակ մը՝ պարծանքով՝
Թէ «Ես՝ Զիով՝ դացի կեցայ Մէլիքի Ի՛ր Վրանին Դո՛ւռ...,
Մըսրամէլիք վախեցա՛ւ ու Իր Վըրանէն դուրս չե՛լա՛ւ...»:
Դաւիթն այնտեղ ըսաւ, = «Մէլի՛ք, խօսքըդ Քեզի՛ կըդառնայ...,
Շուն Մարդ ա՛ն է՝ որ ուրիշին Շունիշանորդի՛ կըկանչէ... .
Ես չե՛մ երթար· եկեր եմ հոս՝ կըռի՛ւ ընենք Ես ու Դուն...,
Նայինք տեսնենք՝ Աստուածուքիւն Մեղնէ ո՞րը բաժին կ'ընէ Մէկալին:
Քեզ լո՛ւր կուտամ..., կանգնէ՛,–ըսաւ–, դո՛ւրս եկուր...,
*Չ'ըսե՛ս՝ «Դաւիթ դո՛ղ եկաւ ու դո՛ղ դընաց... *).*
կանգնէ՛,–ըսաւ–, Թէ չէ կ'իջնեմ Իմ Ձիէն՝
*Հի՛մա–հիմա՛՝ Ջոջ–քուն *) վըրա՛դ կըթափեմ...,*

---

1) Լ·65՝ Սաճասար–Պազտասար, Լ·78՝ Մելքոն (*խառնակ պատումին բերումովը*): *) Պմպլուտ, *Ալինքոտ*· Հ·383՝ պըլպլուտ?: *) Գող եկաւ ու գող գնաց, Գաղտագողի, գողի նման՝ եկաւ–գնաց:

Հոգիդ կ'յանձնեմ Դըժոխքի'ն...»:
Մըսրամէլիք վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ.—
*— «Իմ սիրելի՛ Գառնուկ,–ըսաւ–, եւ Իմ Տան հի՛ն լակակը... *)*
Հա՛յ–հօ՛յ,–ըսաւ–, Իմ Հոգին ալ ի՞նչպէս պիտի առնես Դուն...
Դո՞ւն ես եղեր՝ որ Դըժոխքի'ն պիտի յանձնես Իմ Հոգին...
*Ձա՛ր–Դահիճը Քու վի՛զ տանի *)..., Շա՛ն Տըղա՛յ...,*
Ձի չ'ունէ՛ր..., ո՞ւրկէ եղար Ձիաւոր...,
Եկար կեցար Դըլխիս վրայ...
Դուն՝ ի՞նչ կերպով՝ ա՛յդքան Ջօրքի ձեռքէն պըրծար՝ հո՛ս եկար...:
ես Քեզ ուտեմ իրբեւ Ակռա՛ստ... *)՝ Ճաշի՛ համար ո՞ւստ բերեմ 2).
ես Քեզ ուտեմ՝ Ինձ Ճաշի՛–Հաց՝ Հըրամեցի՛ն *) ո՞ւստ բերեմ...
ես Քեզ ուտեմ Հըրամեցիին՝ Ընթրիքիս Հաց ո՞ւստ բերեմ...
Թէ Քեզ ուտեմ Իմ Ընթրիքիսին՝ Առաւօտեա՛ն չի մընար...,—
Ա՛յնքան որ Դու պըղտիկ ես...
Ալ Դուն ի՞նչպէս Ինձ հետ կըռւի՛ ես եկեր...
Այդ ո՞ր Քամին՝ Իմ Ո՛տ բերաւ Քեզ, Որբո՛ւկ...»:
= «Ի՞նչ կըվախնաս, դէ՛ վե՛ր ելիր, Մէլի՛ք,–ըսաւ Դաւիթն ալ–.
Ո՛ւր է Քու Ջօրք..., Ամեն կըտրեր բըրդե՛ր եմ...
ես Քեզ համար Ակռա՛ստ ալ կամ, դեռ Ճաշի՛ն ալ աւելի՛... 2).
ես Քեզ համար Ճա՛շ ալ կ'ըլլամ, Հըրամե՛ցը ալ աւելի՛...
ես Քեզ համար դեռ կ'աւելնա՛մ՝ կաճուխտա՛ն *) ալ կըմըլնա՛մ...
Կե՛ր ու յետո՛յ գոհացիր...»: —

629. «Ես Քորուկ Ձեմ, Որ Դուն Փչես...՝ Եւ Ուռես»

Լ·65,78, Զ·՝Լ65, (Ե·1119), Ե·26,782,812, Զ·՝Ե·26, ՁՍ·531,532, 533,534,535, Զ·՝ՁՍ·532, Ց·114·

Այս խօսքին վրայ՝ Մըսրամէլիք Շունչը քաշեց դէպի նե՛րս...,
Քաշեց–քաշե՛ց...՝ դարձաւ Դաւիթին՝ մէ՛կ փըչե՛ց...,—
Իրեն մըտքով՝ Դաւիթ պիտի Քը՛ուէր երթար՝ Իր Շունչէն...:
Որ Ան փըչեց...՝ Անոր փուքը քակեց տարա՛ւ Իր առջեւ՝
Լորայ–Դաշտի Հողն ու Փոշին՝ դէպի վե՛ր...,

---

*) Ջոջ–Քուն, *Մահ*: Լակակեր, *Սեղանի փշրանքներովը անած*:
*) Տանիլ, *Ջարնել–Քոչնել* (*սուրով*): *) Ակռաստ, *Նախաճաշիկ*:
2) *Երգով*: *) Հրամեցը, *Նախընթրիք*: *) Կաճուխտան, *Միւս առաւօտեան*:

Արեգական դէմը Երկինք մըթնեցա՛ւ...,—
Ըսաւ, — «Մարէ՛, Հողածինը՝ Հո՛ղ էր՝ նորէն Հո՛ղ դարձաւ...,
Ալ ո՞վ գիտէ ո՞ր տեղ տարաւ Իմ Քամին...»:
Փոշին իջա՛ւ՝ գընա՛ց Երկնից Երեսէն...,
Բացուեցա՛ւ ու լուսացա՛ւ...,
Մէկէք երբոր նըստած տեղէն իրիկնաց՝
Տեսաւ Դաւիթ Աչքին առջեւ կանգնած է...՝
Այնպէ՛ս վախցաւ...՝ տա՛ս Գոմշի ուժ՝ Իրեն մօտէն պակսեցա՛ւ...:
Ի՞նչ է ըրեր այդ Փուքն ալ՝ որ՝ Մըսրամէլիք փըշեր է՞...՞...՞,—
*Զարկեր Զիւն Ոտաց կուշտեր *)՝ Հողը քանդեր տարե՛ր է,*
Ոտքերուն դէմ Հողն ըրեր Սիւն՝ ու կեցեր...,
Չ'կ՛ կըրցեր Զին չուտ տըւեր...:
Դաւիթ այնտեղ կանչեց ըսաւ, = «Մըսրա՛մէլիք, Ի՛նձ նայէ...,
*Ես Փըշրուկ *) չե՛մ, որ Դուն փըշես՝ Ես պաղիմ ու Դուն ուտես...*
Ես եկեր եմ..., պիտի ելնես կըռի՛ւ ընենք՝ Ես ու Դուն...»:—

630. Մըսրամէլիք՝ խաբելով՝ Դաւիթ Զիէն վար կ'իջեցնել:

Ե·26,635,582,825,828,515,579,580, Զ·՝Ե·26,(Ե·515,747,579,1116, 26), ՉՍ·536,537, Խ·36,35, (Խ·36), Հ·434,435, Լ·68,78, Զ·՝Լ·78, (Լ·78),(Կ·70,24), Զ·՝Կ·70, Կ·24, ՉՎ·10,(ՉՎ·10),Ց·39ա·, ՉԿ·565·

Մըսրամէլիքն ըսաւ, — «Դաւի՛թ, Զիէն իմիր՝ արի տա՛կ,
Հաց–մաց ուտենք, զըրո՛յց ընենք, կ'ելնենք քիչ մը կըհանդչի՛նք,
Նորէն կ'ելնենք՝ կըռի՛ւ կ'ընենք ես ու Դուն,
Տեսնենք Աստուած ի՞նչ կուտայ...»:
Դաւիթ ըրաւ որ վա՛ր իջնէր Իր Զիէն՝
Զին չէ՛ր թողուր, չուտ կըփախէր դէս ու դէն 1).—
Սըրդողեցա՛ւ, կ'ուզէր թողուր՝ փախէր երթար Սարն 'ի վեր,
Կամ Դաւիթը վերցընէր տար Արեգական՝ ու վառէր...:
Իմաստո՛ւն էր, գիտէր «Մէկէք Հո՛ր էր փորեր Վրանին քով,
Ամբողջ՝ Գուբենի–Շըղթաներով ցա՛նց էր քաշեր Հորին վրայ,
Քառասուն Գոմշու չոր կաշի ալ՝ Անոր վըրա՛յ փըռեր էր,

*) Կուշտ, Քով, կող: *) Փշրուկ, Մմորի սխտոնաչափ–կամ կաղինաչափ գնդիկներով ապուր մը, որ առանց փչելով–պաղեցնելու՝ դժուար կ'ուտուի: Մմորը՝ տաք ապուրին մէջ՝ դիւրին չի՛ պաղիր:
1) Հնչեցէք dès ու dén:

Ու կապերանքն ալ վըրան՝
Որ Դաւիթ դար՝ նըստէր՝ իյնար Հորին մէջը՝ ըսպանուէր . . . .
Ու Դաւիթն ալ՝ չըւարե՛ր էր՝ ինչ ընելը չէ՛ր դիտեր»:
*Մըսրամէլիք 2) չատ կախա՛րդ էր, Թուղթ-Թանաքով կա՛պս *) ըրաւ,*
Անուշ խօսքով խաբե՛ց Դաւիթ՝ ու վա՛ր բերաւ Իր Զիէն:
Դաւիթ Զիէն իջաւ տա՛կ,
Զիւն Սանձը վաթթեց Վրանի մէկ ցիցին,
Մէլիքի հետ դացին՝ Սեղա՛ն նըստեցան.
Մըսրամէլիք բերաւ այնտեղ եօ՛թը տարւան հին Գինին,
Նըստեցան հո՛ն, Հաց-մա՛ց կերան, խըմեցին ու դինուէցան: —

681. Խաղեր Եւ Վտանգ Դազերու Դաւը

ՀՍ·537,538, (Կ·70), Հ·՝Կ·70, Հ·՝Ե·746,1116, Ե·718,746,810,747, 1119,1115,780,1116, (Ե·1119,718,1115,1116), ՀՎ·10·

Դաւիթ, Մէլիք՝ ելան ապա՝ որ խաղա՛ն: —
*Տողի *) խաղցին՝ Դաւիթ տարա՛ւ *) Մըսրամէլիք ու տարա՛ւ.*
Ճանի՛ խաղցին՝ ու տարա՛ւ . . . .
Ուրիշ Խաղե՛ր խաղցին այնտեղ, Դաւիթ՝ Մէլիք մի՛չտ տարաւ.
Ի՛նչ որ խաղցին՝ Դաւիթ յաղթե՛ց Մէլիքին . . .:
Դաւիթ որ չատ Խաղե՛ր խաղաց՝ յոգնեցաւ,
Իր Հըրեղէն Զին ալ կեցնէր՝ Մարդ չ'ը՛սպաներ, չի՛ Ջարդեր . . .՝
Ամէնք ըսին՝ «Ի՞նչպէս ընենք՝ Դաւիթ բըռնենք կապկըպենք՝
Որ Մեզ Թողուն՝ երթանք Ամէնքս Մեր Տուներ . . .»:—
Ելան բերին՝ Թըմբուկ-Զարնող ու Փող-Փըչո՛ղ կանչեցին,
Թըմբո՛ւկ զարկին, Փողը ամուր փըչեցին,
Թէ, — «Դաւիթը Զօրք կոտորե՛ց . . . , Ի՞նչ ընենք որ դ'Ինք բըռնենք,
Ա՛լ ճար չըկա՛յ Աւտար հետ . . .»:
Շատ խելացի Մարդե՛ր կային Զօրքին մէջ,
Ըսին, = «Դաւիթ կըկոտորէ՛ Մեզ Ամէնքս . . . ,
Ի՞նչպէս ընենք, ի՞նչպէս չընենք՝ Իրեն հետ . . .»:—
*Մէկ Ծերունի Զըռում-Հեծնող *), կախարդ Պառա՛ւ մ' կար այնտեղ,*

---

2) Լ·78՝ Ջանիթլատ: *) Կապս, *կախարդութիւն*: *) Տողի, *ճատրակի խաղ*: *) Տաճիկ, *ճաղթել*: *) Զռում-հեծնող, *կախարդ (պառաւ)*:

— «Բերենք,–ըսաւ–, ուրիշ խա՛ղ մը խաղանք Դաւիթի դէմ ուխին. —
Գազե՛ր վառենք՝ նետենք երկինէ երեսին,
Վերէն թող գայ իշնայ տա՛կ,
կանչենք ըսենք «Դաւի՛թ, ա՛յնքան Մարդ կըտրեցիր, չարդեցիր՝
Որ Աստըծուն դիժա՛ր եկաւ՝ կըրա՛կ թափեց Քու վըրայ»,
կենանք Իր հետ՝ ըսե՛նք–խօսինք, համոզե՛նք...,
Ան ալ դառնայ նայի դէպ վեր՝ զարմանայ...,
Մենք չորս կողմէն կեռ ու երկաթ, Շըղթա՛յ նետենք՝ դ՚ինք կապե՛նք,
Ձեռ–ոտ կապած՝ առնենք տանինք Մէլիքի մօտ՝ ըսպանե՛նք... .
Թէ չէ՝ գըլուխ չի՛ ելլուիր այդ քուռ ու ծուռ *) Տըղի հետ...»:
Բերին Գազեր բըռընկցուցին ու նետեցին երկի՛նք–վեր,
Գազեր վերէն եկան տա՛կ... 1),
Գացին Իր մօտ՝ ու կանչեցին ըսին, — «Դաւի՛թ, ի՞նչ կ՚ընես...,
Ա՛յնքան կըտրիճ նորմանուկ–Մա՛րդ ըսպանեցիր, կըտրեցիր՝
Ա՛յնքան ծանըր մեղք դիղեցիր Քու Վըրին՝
Որ Աստըծուն դիժա՛ր եկաւ՝ կըրա՛կ թափեց Քու վըրայ...:
կեցիր նայէ՛...՝ տես ի՞նչ օրի հասեր ես...՝
Որ Աստուածմէ Գըլխուդ կըրա՛կ կըթափի...»:
Դաւիթ դընաց եւ իրիչկեց երկինէ երես՝ ու տեսաւ՝
Վերէն կըրա՛կ կուգայ վար...:
Երբոր այդպէս կըրա՛կ տեսաւ...՝ չըատրեցա՛ւ ու կեցաւ...,
Դաւիթ մըժլաւ *), արդիլուեցա՛ւ ու մընաց... .
Բայց չե՛ն իշխեր՝ դան Իր վըրայ՝ ըսպանեն...:

682. Ճոպաճխադի Դաւը

Ե·1119,828,1120,580,26,635,1116,976, (Ե·515,26,635, 718,747),
Ջ·՝Ե·635, ՋՍ·539,540,539ա·,541, ՋՎ·10, (ՋՎ·1՛0), (Կ·30),
(Ճ·125,39ա·), Խ·35,36, (Խ·36), Ջ·՝Խ·36·

Մըսրամէլիք կանչե՛ց Իրեն Մեծամեծներ հաւաքե՛ց,
Ըսաւ, — «Մարդի՛կ, ի՞նչպէս ընենք՝ Դաւիթ ձգենք փոսի մ՚ մէ՛ջ»:
Մեծերն ալ թէ, = «Քառասուն կանգուն խորունկ Հո՛ր մը փորել տանք,
Գորգեր փըռենք Հորին Բերան, Դաւիթ բերենք թող նըստի,

---

*) Քուռ ու ծուռ, Խենթ ու խելառ: 1) Մեր օրերու օդային ռումբերու նախնական մէկ ձեւը...: *) Մծլիլ, Շլանալ:

Իյնայ երթայ այդ Հորին մէջ՝ ըսպանե՛նք...»:
Ելան բերին Քառասուն կանգո՛ւն խորա՛նդը Հո՛ր մը փորեցին.
Դորդեր բերին ու փըռեցին Հորին վրա՛յ,
Այն առաւօտ՝ Դաւիթ պիտի Հի՛ւր կանչեն...:
Մըսրամէլիք 1) այն ժամանակ՝ վերցուց Դաւիթին ի՞նչ ըսաւ. —
— «Դաւի՛թ,–ըսաւ–, եկուր ես Դուն՝ քիչ մ՝ ալ Զիո՛վ դուրս ելլենք,
Ճոպանխա՛ղ 2) մը խաղանք այսօր՝ Դաշտին մէջ...»:
*Դաւիթն ալ Հոն վըրան չ՝առա՛ւ *), չ՝ըսա՛ւ «Իմ Զին չի՛ դիտեր,*
Ե՛ս ալ Այդ Ճաղ ի՞նչպէս խաղալ չե՛մ դիտեր»...,
*Ալ «Զէ՛» չ՝ըրա՛ւ, կանչեց Իր Զին, ելաւ առին *) Հոն խաղա՛լ...,*
Մոռցա՛ւ ինչ որ Իր Հօրեղբայր սորվեցուցեր՝ ըսե՛ր էր՝
«Մըսրամէլիք Ինչ «Ճոպանխա՛ղ խաղանք» ըսէ՝ մի՛ խաղար»:
Ճոպանխաղն ալ ի՞նչ է որ, —
Հորի նըման խոշոր փո՛ս մը փորած են,
Շըղթայ մ՝ ա՛յն կողմ՝ Պատին մէջէն է ամրացած,
Մէկ՝ ա՛յն կողն է ամրացած.
Շըղթային ալ Գլուխները՝ Ցանցի նըման Օղա՛կ են.
Մէկ Օղակը Դաւիթի՛ Ձիուն Ոտը դըրին, մէկ՝ Մէլիքի՛ Ձիուն Ոտ 3),
Ու կըդառնա՛ն Հորին մէջ... . —
Ո՛վ որ յաղթեց՝ Մէկալն Իրեն գերի՛ է...:
Դաւիթի Ձին Ճաղը խաղալ չըգիտցա՛ւ,
Փաթ մը՝ երկու՝ դարձա՛ւ թէ չէ՝ դըրո՛մփ... ինկաւ՝ մընաց մէ՛ջ 4),
Շըղթաները վախթըւեցան Ոտքերուն ու Թեւերուն,
Կապկըպուեցաւ Փոսին մէջը, կեցաւ այնպէս չըղթայով 4),—
Դաւիթ ոչ ե՛ւ կըրնայ երթալ՝ ոչ առա՛ջ...,
Ոչ ա՛յս կողմը կըրնայ չարժիլ՝ ոչ ա՛յն կողմ... 5).
— «Այս խեղճո՛ւկն էր,–ըսաւ Մէլիք խընդալով–,
Որ եկեր էր՝ պիտի կըտուէ՛ր Ինձի հետ... .
Թող կենայ հո՛ս, մինչեւ առտուն՝ ելնեմ զարնեմ ըսպանե՛մ...,
Կամ՝ մինչեւ որ Ոսկորները փըտի՛ն Թափի՛ն՝ կեցած տեղ...»:

---

1) Հ·389՝ Սեւ թգւր.: 2) Ե·828՝ Ճոպան–Ճոպան: *) Վրան չ՝առնել, Չ՝խոստովանիլ: *) Առին, Սկսան: 3) Ց·125՝ «Շղթայի գլուխ՝ մէկ Օղան Թաղաւորի ձեռ, մէկ՝ Տողան Թագաւորի ձեռ»: 4) Խ·36՝ Մածկուած Թակարդ–Հորին մէջ է որ կ՝իյնայ Դաւիթ: 4) Զվ·10՝ Անդան լարով: 5) Նման Սանասարին՝ Պղնձէ–Քաղքի մէջ, Տե՛ս Հատ. 160:

638. Դաւիթ՝ Զիւռւն Հետ՝ Հօրին Մէջ Կապուած

ՀՍ·543,542,544, Հ·434,389, (Հ·434), Ջ·Հ·434, (Ծ·125,39ա·), Ծ·125, Լ·28, Կ·70,22, (Կ·24,70), ՀԿ·565,538,539, (ՀՎ·10), ՀՎ·10, Ն·780,810,1116,747,580,635, (Ն·747,1120), Ջ·Ն·1116, (Ա·60,61)·

Մըսամէլիք կանչեց Իր Զօրքն ու Բազմութիւն, եւ ըսաւ· —
— «Հէ՛յ, Դաւիթը բըռնեցէ՛ք···, Հէ՛յ, Դաւիթը բըռնեցէ՛ք··· ·
Եկէք տեսէ՛ք՝ Սասնայ–Դաւիթ ի՞նչ վիճակի մէջ ինկաւ···»:
Ու կայնեցաւ Բանակին մէ՛ջ, — հազա՛ր են թէ տա՛ս–հազար —,
Պօռաց ըսաւ, — «Հա՛ մատա՛ղ Ձեզ···, դէ՛ Դաւիթը բըռնեցէ՛ք···»:
Կըռւի–Թըմբուկ զարնե՛լ տըւին Հրապարակ,
Ու բըռնեցի՛ն ամեն կողմէ՝ Զօրք Թափեցա՛ն ու եկա՛ն··· 1),—
Կեռ–Շըղթաներ՝ Թեւերուն վրայ այնպէ՛ս ամուր ձըգեցին,
*Անիւները չուտ դարձուցի՛ն, Բընաստաներ *) պըրկեցի՛ն՝*
Որ Դաւիթի Ձիուն Ոտքեր՝ չոր Գետնի մէ՛ջ խըրուեցան:
Շըղթաներուն Գլուխները՝ մէ՛կ ժամ ճամբայ՝ Դաւիթէն հեռո՛ւ
[բըռներ են 2),
Ձե՛ն իշխենաը դան մօտենան Դաւիթին···:
*Դաւիթ ինքն ալ՝ Ձիուն վըրայ հեծո՛ւկ *) այնպէս ու կապո՛ւկ *)···:*
Ու կըզարնե՛ն Դաւիթի Գլխուն՝ ամեն կողմէ, հեռուէ՛ն···,
Քարով կ'զարնե՛ն, փայտով կ'զարնե՛ն, նետով կ'զարնե՛ն Դաւիթին 3),
Թո՛ւր ալ կ'զարնեն, Անոր Շորեր Թուր չի՛ կըտրեր մէկ կերպով 4)···:
Դաւիթ այնտեղ չատ խե՛ղճ եղաւ, մըննաց Փոսին մէջ 5) կապած···,
Ձին ալ՝ այնպէս՝ Գլուխ զարկաւ Դաւիթի Սըրտին՝ ու կեցաւ 6),
Ոչ մէկ կերպով ձայն չի՛ տար···,—
Մնացին այնտեղ՝ Արեւին տակ՝ կապկըպած··· ·
Արեւ ճընշեց՝ տաքցո՛ւց Ցանցն ու Շըղթաներ,
*Կըրընձեցո՛ւց *) Ձին ու Դաւիթ՝ Իրենց տեղ···:*
*Դարձան ըսին՝ «Ի՞նչպէս ընենք որ Այս–Մարդը Նեխուենք *)···»:—*

---

1) Ծ·125՝ Օղաճ, Տօղաճ թագաւոր(ներ): *) Բնաստա, Գուբանի հասատ չղթան: 2) Փշաթելի նախնական ձեւ մը: *) Հեծուկ, կապուկ, Հեծած, կապուած վիճակի մէջ: 3) Նման բաղդատարին (Հատ· 71): 4) Զրահ–Պողվըտիճ չապիկն էր հագեր Դաւիթ: 5) Հ·434՝ Հօր գոմշի կաշիէ պիտոցի մէջ: 6) Սանասարի պէս (Հատած 160: *) Կռնճեցնել, Կռնճել, Զորցնել, մաչկ դարձնել: *) Նեխուտել, Նեխեցնել, փտեցնել:

Ելան բերին Դիակնե՛ր 7), հա՛յյ···, դէզ–դէզ վերա՛ն լեցուցին,
Երին ինչպէս Պաբի՛սպ քաշեն բոլորտին···:
Դաւիթն ալ չէ՛ Իր Աստուածը մոռցեր էր ու չէ՛ր Ցիշար,
Մարութայ–Բա՛ղբ–Ասպարածին չէ՛ր Ցիշար···,
Նաչ–Փեսրաղին չէ՛ր Ցիշար···,
Ամե՛ն բան ալ մոռցե՛ր էր···,—
Իրե՛ն ալ ու Իրեն Հիւն կըտըրհուԹիւն կըտրե՛ր էր···՝
Մընաց այնտեղ Դիակներուն մէջ բըռնըւած ու անշարժ···,
Մխայն Իր Հին՝ Իրեն Պոչի Մազերո՛վը կրկըռուի՝
Ու չի՛ Թողուր որ Դաւիթին վրնասեն···:
Իրիկո՛ւն է, — Մըսրամէլիք ինկաւ Իր տեղ քընացա՛ւ··· .
Դաւիթ այնտեղ՝ փոսին մէջը՝ չա՛տ նեղուեցաւ կապկրպուած,
Ձայնը ձըգեց՝ ամուր պօռա՛ց դէպ Սասուն 8),
Դաւիթի ձայնը դընաց հասաւ մինչ Սասուն···:

684. Ձէնով–Օհան Նրազով Կ'իմացայ Որ Դաւիթ Վասպի Մէջ Է

ՀՍ·545,546,547, Ա·34,35,51, (Ա·51), Ե·580,826,1015,636,27,1116, 516,1119, (Ե·27,580,636,27), Զ·՝Ե·826,27, Ի·37,36, Զ·՝Ի·37, (Լ·83), ՀԿ·566,540, (Ց·125,126), Ց·125,126, Զ·՝Ց·126, Զ·, Կ·70, Հ·389, Զ·՝Հ·389·

Ձրրոյցն ո՞ւստ տանք, — ղըրոյցը տանք Սասմանց Ձէնով–Օհանէ՛ն:
Այդ պիւհըը՝ երազի՛ մէջ՝ Օհան 1) տեսաւ որ՝ «Մէ՛կէն՝
«Տըղայ–Դաւիթ Նետ–Աղեղը՝ պատէն ինկաւ՝ եկաւ տա՛կ··· .
«Մըսրայ Աբեւ չատ պայծա՛ռ էր, Սասմանց վըրայ մըթնե՛ր էր··· .
«Ու Դաւիթի ձա՛յնը լըսեց···, զարհուրեցա՛ւ քընած տեղ···»:
Աըթընցաւ ու ելաւ Իր տեղ նըստեցա՛ւ,
«Տէ՛ր վերկայ,–ըսաւ Ինքնին–, որ Դաւիթը 2) նե՛ղն ինկեր···»:
Ան ալ զարձաւ Իրեն կընկան ու ըսաւ. —
— «կընի՛կ 3), ել վե՛ր՝ ձըրա՛գ վառէ՝ երթամ Ախոռ՝ Ձիուն մօ՛տ,
Ու դո՛ւրս հանեմ Մուրազ–Ձին···,—

---

7) Ե·747՝ ջաղցի էար, *Տե՛ս Հատուած* 678: 8) *Պաշարուած բա–նակի մը՝ օդնական ոյժ կանչելու պատկեր:*

1) Ա·51՝ Իշխան՝ ի Ծովասար: 2) Լ·83՝ Մելիոն: 3) Ա·34՝ Շիրին Անահուն Գոհար:

Տունս աւրեցա՛ւ..., քիչ է մնացեր որ ըսպանե՛ն Մեր Տըղան... .
Դաւիթ հիմա բըռնե՛ր են հոն, պիտի առնեն տանին Մը՛սր... .
Ձըլլա՛յ որ մէկ վորձանք բերեն Իր Գըլխին...,
Ա՛լ չե՛մ կըրնար որ հասնիմ...,
Ձըրա՛դ ըրէ՝ երթամ Ախոռ՝ Ձիուն կե՛ր տամ որ ուտէ՛.
Դաւիթ չատ նեղ վիճակի մէ՛չ է ինկեր... .
Կա՛մ Դաւիթի Դիակի՛ն է կըհասնիմ, կա՛մ Դաւըղին...»:
Կընիկն ըսաւ, = «Մըսըր կ՛տանին՝ ո՛ւր կըտանին Թող տանին....
Դուն ատ ի՞նչքան Դաւիթի համար հոգ կ՛ընես... .
Ան ո՞վ էր որ՝ մինակ դընաց Մէլիքի դէմ կըռւի...:
Տընաւե՛ր Մարդ, Դուն չե՛ս քընիր, չես Թողո՛ւր ալ՝ որ քընեն...»:
Ձէնով–Օհան ինկաւ Իր տեղ՝ ու քընչի՛կ մ՛ ալ քընացաւ: —
Երազի մէջ՝ նորէն տեսաւ՝ որ «Դաւիթը նեղ–մուխ տե՛ղ էր՝ ու
[կապա՛ծ... .
«Մըսրայ–Աչխարհ լուս–Արե՛ւ էր, Սասուն մո՛ւխ էր ու խաւա՛ր...»:
Արթընցա՛ւ ու քունէն ելաւ նըստեցա՛ւ, —
— «կընի՛կ 4),–ըսաւ–, ել լո՛յս ըրէ· Դաւիթ նե՛ղն է, կ՛ըսեմ ֆե՛ղ·
Ձարմանալու երա՛զ մ՛ տեսայ այս գիշեր...:—
Ես տեսա՛յ որ՝ «Մըսրայ Արեւ պայծա՛ռ էր,
«Սասմայ Արեւ մըժուա՛ղ էր...» .—
Ձեռքէ դընա՛ց Մեր Տըղան...»:
= «Քո Տո՛ւն չ՛աւրի՛,–ըսաւ կընիկ–, չե՛ս Թողուր որ քընանանք... .
Քունը ֆեղի՛ կըքընանաս՝ երազ կ՛տեսնես Դաւիթի՛ն...,—
Այդ Դաւիթն ալ՝ նեղ տեղ իյնայ՝ ես հաւատա՛մ... .
Ո՞վ գիտէ որ՝ հիմա Դաւիթ ո՞ր 5) կընիկի ծոցը պառկեր՝ քըներ է,
Կամ թէ նըստեր՝ կ՛ուտէ, կ՛խմէ, վայե՛լք կ՛ընէ Իր համար,
Չ՛ը՛սեր բընաւ՝ «Հօրեղբայր կա՞յ՝ կամ չկա՛յ...».
Դուն Դաւիթի հո՞ղը կ՛ընես..., արի քընի՛ր Քու տեղը...»:
Ձէնով–Օհան է՛լմէլ *) ինկաւ Իրեն տեղը քընացա՛ւ,
Երազի մէջ՝ տեսաւ՝ «Դաւիթ՝ Ձիուն վըրայ հեծո՛ւկ է...,
«Քուռկիկ–Ջալալ՝ Դաւիթ հաներ Արեգական՝ կըվառէ՛... .
«Կանչեց ըսաւ, — «Ա՛յ Իմ Քուռկիկ–Ջալալի՛ն,
«Վա՛ր արի, վա՛ր, վա՛ր արի...,

---

4) Ա·51՝ Արլաղ (պատումին բերումովը): 5) Խ·37՝ մօր՝ ուղ–
ղել՝ վի՞ր (որո՞ւ): *) Է՛լմէլ, Նորէն; կրկին, դարձեալ:

«Դաւիթը դևո խեղճ անիմայ 6) Տըղա՛յ է··· ·
«Վա՛ր արի, վա՛ր, Քուռկի՛կ–Ջալալ, վա՛ր արի···»:
«Քուռկիկ–Ջալալ՝ Դաւիթ բերաւ ղըրաւ վա՛ր·
«Ինքն ալ բսաւ՝ «Քո Տո՛ւն չաւրի՛, Դաւի՛թ, ասի Քուռկի՛կն է···,
«Դուն ալ Անոր ոչ կո՛ր տըւիր, ոչ ալ Դըլո՛ւխ պագեցիր···,
«Ան Քեզ կուտայ Արեգական՝ կըվառի՛··· ·
«Քու հըրեղէն Զէու խօսքին՝ Ականջ դիր···» 7)»:
Տեսաւ նաեւ՝ որ «Դաւիթի Ոտը ինկեր կուպրի մէ՛ջ···,
«Ի՛նչ որ կ՚ընէ՝ Ոտը կուպրէն դուրս չի՛ դար···»:
Մէ՛կ ալ տեսաւ՝ «Մըսրայ Աստղը մեծցա՛ւ–մեծցաւ՝ ու եկաւ՝
«Սասմայ Աստղը կո՛ւլ տըւաւ···»:
Աքլորկանչին *) արթընցաւ ու ելաւ Իր տեղ նըստեցա՛ւ,
Ըսաւ, — «Կընի՛կ, վե՛ր ել, Դաւիթ նեղ տե՛ղն է···,
Երթանք Ախոռ՝ ու Մուրազ–Ձին հանեմ դո՛ւրս···,
Կամ Դաւիթի Դիակի՛ն է կըհասնիմ կամ Դաղաղին···»:
Կընիկն ըսաւ, = «Տընա՛ւեր Մարդ, Դուն չե՛ս Թողուր քընանանք···,
Ուռնը Քնկի՛ կըքընանաս՝ երբոր կ՚տեսնես Դաւիթի՛ն···,—
Ո՞վ դիտէ որ՝ Դաւիթ կըուի մէջ հասե՞ր է՝ չէ՞ հասեր···՝
Թէ գացեր է կերեր–խմեր՝ ո՞ր կընիկի ծոց մըտեր···» 8):

635. Զէնով-Օհան Կ՚տեսնէ՝ Դաւիթի Աստղը Մրցեր Է

ՀՍ·547,Ա·35,34,58, Հ·՝Ա·34,35, Խ·37,38, Ե·27,580,636,811,780, 748,810,719, (Ե·580,1119), Հ·՝Ե·719, Կ·70,22,24,30, Ց·126,125, (Ց·39ա·,125), (Հ·434,445), Հ·434, ՀԿ·566,567, Հ·՝Լ·83, Լ·83·

Կընիկ չ՚ելա՛ւ···,—
Զէնով–Օհան ալ բարկացա՛ւ՝ «Ախ՛ոթ 1) է,–ըսաւ–, այս կընիկ···,

---

6) Ե·826՝ անիմանա՝ ուղղել՝ անիմայ (անդիտակից): 7) Տես Հատ· 574: *) Ա֊ֆրրկանչին, Հաւախօսի պահուն, լուսաբացին: 8) Զէնով–Օհանի կնկան. — հաւանաբար երիտասարդ տարիքին բռնութեամբ — Դաւիթի համար ունեցած դաղտնի սիրոյն՝ Դաւիթէն մեծ ժուխլը [պատմուած Ե·13–14] կը բացատրէ Օհանի կնկան այս բոլոր չկամութիւնները: Տեսնել Հատ· 713:

1) Ե·580՝ բաղալ (= փոխած, խոթ· փոխած(ուրիկ)՝ ակնարկութիւն Արտաւազդի պարադային, — «Մանուկն Արտաւազդ դողացան՝ եւ դեւ փոխանա՛կ եդին», Խրնկ·:

*Գո՛մփ *) մը զարկաւ՝ կոտրե՛ց կընկան կողաշար,*
— «Քա՛ծ անպիտան կընի՛կ,—ըսաւ—, Քեզի կ՚ըսեմ վե՛ր ելլիր,
Երթանք Ախոռ՝ ու Մուրազ–Ջին դո՛ւրս հանենք...,
Ու Դուն կ՚ըսես «Քունը Քեզի՛ կըքընանաս՝ Երազ կ՚տեսնես Դաւիթին»
Չէ՞ որ օտա՛ր Աղջիկ ես Դուն, Քու Սիրտ վըրան 2) չի՛ ցաւիր... .
Բայց Դաւիթ Իմ Արիւնէ՛ն է, Իմ Սիրտ վըրան կըցաւի՛...»:
Ջէնով–Օհան կընկան վըրայ ըսփռե՛ց,
Ատոր վըրայ՝ կընիկն ելաւ ձըրաղ վառե՛ց՝ տըւաւ Ձի՛ու,
Հագուստները բերաւ՝ Օհան հագուեցա՛ւ:
Ջէնով–Օհան նայեց Իրեն Մատնիին վրայ՝ սեւցե՛ր էր...:
Չէ՞ գիշեր է, Աստղեր երկինք կ՚երեւան՝
Ելաւ դուրսը՝ կեցաւ Տանիս՝ ու նայեց,
Ինքն ալ 3) աղէ՛կ կըհասկընար երկնից բոլոր Աստղերէն,
Դաւիթի Աստղ կըճանչընա՛ր ո՞ր տեղ էր, —
*Նայեց տեսաւ՝ Անոր Աստղը խոնարհեր էր՝ մըժուաղեր... *),*
Քա՛նի երթար՝ ա՛–հա՛, ահա՛ կըհանգէր...:—
Ա՛լ Իր Սիրտը դադար չի՛տար, կըրակն ինկաւ մէջ՝ կ՚այրի՛... .
Հօրեղբա՛յր է, Սիրտը վըրան կըցաւի՛...:

636. Ծառին Փարթած՝ Ջէնով-Օհան Դաւիթին Կ՚ձայնէ

Ե·780,719,636,748,810,580,594,811,1120, 581,637, Կ·70, ՁԿ·566, 567, Ը·125,39ա·, (Ա·58), (Լ·83), Լ·83, (Հ·390)·

Ջէնով–Օհան չուտ նէ՛րս եկաւ ու ըսաւ,—
— «Կընի՛կ,–ըսաւ–, պիտի երթամ Մեր Դաւիթին տեսնե՛ն,
Մըժուաղե՛ր է Անոր Աստղ...,—
Բան մ՚ ըրա՛ծ են Մեր Տըղին...:
Շուտ վե՛ր ելլիր, Գուբէնի–Շըղթան ա՛ռ երթանք,
Ան Իր չընորք ցոյց տըւա՛ւ՝
Ես ալ պէտք է Ի՛մ չընորքը ցուցընեմ...:—
Ձիս այդ Բարդի 1) Ծառին վըրա՛յ փաթթէ՝

---

*) Գումփ, կոտոր, բռունցք: 2) Այսինքն՝ Դաւիթի վրայ: 3) Ե·1119՝ Ջէնով–Օհանի կնիկը (որ) աստղաբաշխ էր: *) Մժուաղիլ, Մշուշիլ:

1) Հնչեցէք bardi (պարտի ?):

Եվնեմ՝ ամուր ձայնով կանչեմ Դաւիթին,—
Մարութայ-Խաչէր-Աստպատածին Դաւիթ մըտքէն ելե՛ր է...,
Խաչ-Փետրաղին մոռցե՛ր է...,
Դաւիթն ալ չա՛տ նեղութեան մէջ է ինկեր,
Քիչ է մնացեր ըսպաննեն...:—
Ապա Անոր «Զէյնով-Օհան»ն անուն կուտան՝ զուր տեղ չէ՛ր,—
Երբոր պօռար՝ ևօ՛թ Գիւղ կ'անցնէ՛ր Անոր ձայն...:
Անիկ Ծառի՛ կրկապէին Շըղթայով՝
Որ իր կոկորդ չըպատռէ՛ր...:
*Կընիկն ըսաւ, = «Քո Տո՛ւն ակո՛ղ *), տնաւե՛ր Մար՛դ,*
Դաւիթ հիմա ուրիշի հետ նըստեր կ'ուտէ-կըխըմէ...՝
Դուն կ'ուզես որ՝ Շըղթան կապեմ Քու վըրա՛դ...»:
— «Կընի՛կ,-ըսաւ-, ա՛ռ այդ Շըղթան՝ չուտ արի՛,
Դուն օտարի Աղջի՛կ ես՝
Քու Սիրտ Ինձ պէս Դաւիթի համար չի՛ ցաւիր...»:
Կընիկ՝ Շըղթան առաւ բերաւ Սարին-Գըլուխ՝ Ծառին մօ՛տ,
Այդ Շըղթայով՝ Զէյնով-Օհան կապեց Ծառին ու փաթթեց 2).
Ոտքէն փաթթեց՝ ելաւ մինչեւ Իր Գըլուխ.
Ան ալ ի՛նչքան ձայն որ ունէր՝ մէ՛կ պօռա՛ց...,
Աչխարհի չորս կողմ դառնալով՝ կանչեց ըսա՛ւ Դաւիթին,—
— «Հօ՛-օ՛, Դաւի՛թ, օ՛ Դաւի՛թ...,
Քու վիճակը ի՞նչպէս է...,
«Ցիչամ»-դ ըսէ՛՝ Քեզ թա՛փ տուր...»:

637. Դաւիթ կ'ուսուցնայ Հօրեղբօր ձայնը

Ն·637,719,811,748, (Ն·1120), ՉԿ·568,569,570,571, (Հ·390).

Երկա՛ր կանչե՛ց Իր Ձայնով... .—
Օհանի ձայն գընաց հասաւ Դաւիթին,
Ինկաւ Անոր Ականջին մէ՛ջ, Հօրեղբօր ձայն ճանչըցա՛ւ,
Խելքը Գըլուխն եկաւ նորէն եւ ըսաւ.—
*— «Ա՛-ւա՛ր... *), ասիկ Իմ Հօրեղբօր ձա՛յնն էր եկաւ՝ Ականջիս»:*
Այդ Մէլիքի Մարդերն ըսին, = «Է՛ Դաւի՛թ...,
Քուն Քե՛զ քընէր՝ Երազը տես ուրիշի՛ն... .

---

*) Ակոլ, Աւերուած, քանդած: 2) Ց·39ա·՝ Հօր գոմշի կաշիով փաթթուեցաւ: *) Աւա՛ր, է՛յ, Հէյ՛ (բացագանչութիւն):

Անո՛ւշ ըրէ, Քեզ Բաժա՛կ մ՝ ալ Գինի լեցուր ու խըմէ՛...,
Հօրեղբա՛յրդ ո՛ւր՝ ու Դո՛ւն ո՛ւր...»:
*Պըղինճները հոն դեղա՛ծ *) են. մէջը Դեղրո՛ւնք *) ճըղաճ են,*
Որ Դաւիթին խըմցընե՛ն ու գինովնայ...:
Մեքենաներ նորէն-նորէ՛ն դարճուցին.
Իր Զին այնպէ՛ս ճընշըւեցաւ՝ փորը դըպաւ Գետինին,—
Զորս Ոտները խըրուեցան հոն՝ չոր ապառաժ Գետնի մէջ,
Դաւիթ Զիուն վըրայ հեծուկ ու կապո՛ւկ...:

688. Ջէնով-Օհան Կ'փորձէ Իր Ճերմակ Ու Կարմիր Ձիերը

Ջ·, ՋՍ·548,549,550,551,552,553, (Կ·70), Կ·71, Ե·1116,27,580, 636,28,1015,581,1117,1016, (Ե·1015,580,581,636,1016,28), Ջ·՝Ե·581, Ց·126, Ջ·՝Ա·61,51, (Ա·58,35), Ա·58,61,51,35,36, Ջ·՝Խ·38, Խ·38, (Հ·434), Հ·434,390, Ջ·՝Հ·434, (Հ·390,445,446)·

Ջէնով-Օհան երբոր կանչեց լըմընցաւ՝
Կապեր քակե՛ց Իր վըրայէն՝ ելաւ վազեց դէպ Ախո՛ռ:—
Երէք Ձի՛ կայր այնտեղ կապած, — Ճերմակ, Կարմիր, մէկ ալ Սեւ:—
Նայեց տեսաւ՝ որ Ձիերը 1)՝ Մըսուրին տակ կըքանդե՛ն... .
Եւ այնպէ՛ս ալ կըքանդեն որ՝ կըրա՛կ կ'ելնէ Պայտերէն...,—
Կ'ըսես՝ Այրին Առաստաղը՝ Գըլուխներո՛ւն կըբերեն...:
«Վա՛յ-վա՛յ...,—ըսաւ Ջէնով-Օհան—, Դաւիթ 2) չատ նեղ օրի՛ է...:
*Դէ՛, Մեր Ագռին տըւուի՛ *) է· Մեր Ձիերն ալ իմաստո՛ւն են իրենցմէ·*
Ինչ աաեն որ Մեր Ագռէն Մէկ՝ նեղութեան մէ՛ջ գըտնըւի՝
Ձիանք Իրենց Մըսուրին տակ կըքանդե՛ն...:—
Պէտք է ելնե՛մ՝ ու չուտ հասնի՛մ Դաւիթին... .
Երե՛ք անգամ Երազի մէջ տեսայ Դաւիթ նեղ տե՛ղն է...
Ու Ձիերն ալ՝ մէկ Ծունկի չափ՝ Մըսուրի տակ քակե՛ր են...»:
Ան ալ հասաւ՝ Ձեռը կոխեց Ճերմակ-Ձիու 3) Քամակին·
Սիվտակ-Ձի՛ն էր, — Փորը տըւաւ՝ի Գետին...:
— «Հոգո՛ւդ մեռնիմ եւ Արեւո՛ւդ,—ըսաւ Օհան—, Սիվտա՛կ-Ձի,

---

*)Դեղել, Թունաւորել: *) Դեղրուճ, Թոյն, Թունաւոր նիւթեր:
1) Ա·61՝ Կարմիր ձին, եւ նայողը Իշխանի ծառան է (պատումին բերումով): 2) Ա·58՝ Արլաղ: *) Տըւավի, Երկնատուր, բնատուր, ինքնայատուկ: 3) Ց·126՝ Սեւ ձի, Հ·390՝ Սեւ մատակ:

Որ Քառասո՛ւն Լիտր Արճի՛ճ տամ Քեզ՝ Դուն ուտես՝
Ձիս մինչեւ ե՞րբ կըհասցընես Դաւիթի Կըռւին՝ Լորայ–Սար 4),
Դաւիթ Նեղ տե՛ղն է ինկեր…»:
Ձին ալ ըսաւ, = «Դաւիթի տեղ հետո՛ւ է… .
Որ Դուն հիմա Քառասուն Լիտրը Արճիճ տա՛ս Ինձ՝ ես ուտեմ՝
Վաղ այս տունն՝ պահէիպահ՝ Քեզ կըտանիմ Լորայ–Սա՛ր…»:
— «Քու Վի՛ղ կոտրի՛,–ըսաւ Օհան–, ոչ Դո՛ւն ըլլաս՝ ոչ անո՛ւնդ…,
Ի՛նչքան խընամք տըւեր եմ Քեզ՝ Աչքի՛դ բըռնէ՝ ու Բերա՛նդ…,
Քու Ոտքի՛րը չորանան… .
Այս Դանակը պիտի զարնեմ՝ Քու Փոր պատռեմ՝ Թափեմ վա՛ր…,—
Մինչեւ վաղը ես Դաւիթի ինչի՞ն հասնիմ, Դիակի՞ն՝ Թէ՞ Դազաղին,
Ա՛լ Դաւիթը կըտանին ու կ՝ըսպասնե՛ն…,
Հօ՛ տարի մը չե՛ն պահեր… .—
Ա՛լ չեմ հասնիր…, ի՞նչ օգուտ…»:
«Ախ չ՝նղա՛ւ· Երթամ,–ըսաւ–, կարմիր–Ձիո՛ւն հարցընեմ…»:
Թողուց դընաց՝ կարմի՛ր–Ձիու Մէջքին վըրայ Ձեռ կոխեց,
Կարմիր–Ձի՛ն 5) ալ Փորը տըւաւ ՝ի Գետին… .
— «Ի՛ կարմիր–Ձի՛ 6),–ըսաւ Օհան Իր Ձիուն–,
Քեզ երկու–կօտ Գարի՛ որ տամ՝ Դուն ուտես՝
Ձիս մինչեւ ե՞րբ կըհասցընես Մըսրայ–Սարի Գըլուխին…»:
Կարմիր–Ձին ալ ի՞նչ ըսաւ,—
= «Որ երկու–կօտ Գարի՛ տաս Ինձ՝ ես ուտեմ՝
Վաղ Էսօրին 7)՝ Քեզ կըտանիմ կըհասցընեմ Դաւիթին…»:
— «Հէ՛յ–վա՛խ…,–ըսաւ–, Քու Վի՛ղ կոտրէը, Բերա՛նդ փակուէը,
[Կարմի՛ր–Ձի·
Մինչեւ Էսօր՝ հասնիմ Դաւիթ Դիակի՞ն՝ Թէ՞ Դազաղին… .
Ի՛նչքան խընամք տըւեր եմ Քեզ՝ Աչքի՛դ Բերնիդ դէ՛մը գայ… .
Այս Դանակը պիտի զարնեմ՝ Քու Փոր ցըրուեմ՝ Թափեմ տա՛կ…,
Մինչեւ Էսօր՝ չէ՞ որ Դաւիթ կ՝ըսպասնե՛ն…»:—

---

4) Ե·636՝ Մըսրայ Սար: 5) Ե·1016՝ Սեւ ձին: 6) Հ·434՝ Մուրատ ձի: 7) Խ·38, Հ·434՝ մինչեւ սիկար մ՝ Էշիս, Կ·71, Ե·1117՝ մինչեւ արեւը տաքնայ, Ե·28, 636՝ մինչեւ ժամ մը:

639. Զէյնով-Օհան՝ Սեւ-Լազիկով Կ'հասցի Լարայ-Սար

Ե·639,28,1117,1016,581,1119,637,780,516, (Ե·580,581,1117,1016), Կ·71,22,24,30, (Կ·71), Ց·126, Զ·՝Ց·126, (Ց·126), Զ·, ԶՍ·549, 555,554,556, Խ·38,39, Հ·434,390, (Հ·434,390,446), Ա·36, ԶԿ·540,541·

Ան ալ Թողուց՝ վազեց հիմա Սե՛ւ-Զիւն·
Զիւն անուն Սեւ-Լազիկ 1) էր, ու հըրեղէ՛ն Քուռկիկ էր·
Անոր Զի՛ն ալ ութ-ոտնէն էր՝ երբոր ծընաւ Իր Մօրէն·
Ծովէն ելաւ՝ Մըրջիւնները կերա՛ն Անոր մէկ Ոտը,
Զին ալ մընաց եօ՛թ-ոտնէն... 2):
Օհան Իր Ձեռ կոխեց Զիւն Քամակին՝
Սեւ-Զին Իր Փոր չ'իջո՛ւց երբեք դէպ Գետին:
Օհան ըսաւ, — «է՛ Սեւ-Լազին՝ հրեղէ՛ն Զի...,
Հոգո՛ւդ մեռնիմ եւ Արեւո՛ւդ..., Դաւիթի Աստղ մըթնե՛ր է...,
Ես՝ Քառասուն-Լիսր Արճիճ որ տամ՝ Դուն ուտես՝
Զիս մինչեւ ե՞րբ կըհասցընես Դաւիթին...»:
*Սեւ-Զին 3) ըսաւ, = «Փարա՛խ *), փըլխա՛ծ *) Ալեւոր,*
Որ Քառասուն-Լիսր Արճիճ տաս Ինձ՝ ես ուտեմ՝
Ու կարենաս՝ Քեզ պի՛նդ բըռնես Մէջքիս վրայ՝
Մինչեւ որ Դուն մէկ Ոտ դընես Ասպանդակ՝
Քու մէուս Ոտ չուռ տաս մէկա՛լ Ասպանդակ՝
Ձեռ տաս Քու Ծոց, Քո Տուխ հանես ու Սիկա՛ր մը փաթաթես՝
Քու Զէնահաս 4) հանես դընես Բերանիդ՝
*Աչքըխըփո՛ց *) մէջ՝ Քեզ կըհանեմ Լորայ-Դաշտի Սարին Գլո՛ւխ»:*
Այն ժամանակ Զէնով-Օհան ուրախացաւ ու ժըպտա՛ց,
Բըռնեց այնտեղ Զիւն Ճակատ համբուրե՛ց,

---

1) Սեւ-Լազիկ *կամ* Սեւ-Լավազիկ՝ *Սեւ-Արծուի՛(ն)...*, Կ·22, 24,30՝ Սեւ լայնեղ եւ 22ս·՝ *բացատրուած՝* արծաթի, վայելուչ՝ *սխալ ընթերցումներ են. ուղղել՝* Սեւ-Լազիկ (Բ.Հատորով): 2) *Հմմտ.* Հատ. 493՝ Կուզբադինի եւ Հատ. 588՝ Դաւիթ-Մըհէրի՝ Զիերուն Մննդոցը: 3) Ե·1117՝ Սեւուկ-Ձիւն: *) Փարախ (*փառահե՛ղ*), կլորիկ, փափուկ ծերունի: *) Փլխած, կքած, քայքայուած, կոբացած: 4) Ե·581՝ մինչեւ երբ-ատ տուն՝ Ֆո խօրքում առնես գաս, *Քեռեւս Փող-Պղտրիճի մէկ տեսակը· Տե՛ս* Հատ. 449, եւ 545՝ *ատրչ. Մնք.* 10: *) Աչխփոց, *Ակնթարթ*, Ց·126՝ մինչեւ պօթրան:

Քառասուն–Լիտրը Արճի՛ճ բերաւ՝ լեցուց Ձիուն Տուրկին մէջ,
Կախեց Ձիուն՝ Սեւ–Լաղինի՝ Դըլուխէն։
Ձին Իր Արճիճ–Դարին կըտրե՛ց ու կերա՛ւ,
Ձէնով–Օհան՝ ելաւ՝ Իր Ձին դո՛ւրս քաշեց,
Որը դըրաւ Ասպանդակին՝ Թրաւ Ձիուն Մէջքին վրա՛յ,
Մինչեւ մէկալ Որը չըրջեց՝ դըրաւ մի՛ւս Ասպանդակ՝
Ու Ձեռ տարաւ՝ Իրեն Ծոցէն Սիկարի Տուփ հանեց դո՛ւրս՝
Սեւ–Ձին ըսաւ, — «Օհա՛ն, խըփէ՛ Քու Աչքեր…»։
Խըփեց՝ մէ՛կ ալ Սեւ–Ձին ըսաւ, — «Աչքըդ բա՛ց…»։
Բացա՛ւ Քէ չէ՝ Լորայ–Դաշտի Սարին Դըլուխ՝ Ձին կեցա՛ւ…, —
Քառասո՛ւն ժամու Համբան այդպէս աչքախըփո՛ց ղընաց Ձին,—
Ըսաւ, = «Իջի՛ր, հասա՛ծ ենք… .
Կանչէ՛ Դաւիթին՝ Ան կըլըսէ՛ Քո Ձայնը…»։—

640. Ձէնով–Օհան Կ'պատայ Որ Իրեն Սպասեն

Ձ·, Կ·71,24, (Ե·780,719,1119), Ե·780,1016,637,581, Ձ·՝Հ·434, Հ·434,390, (Հ·390), ՁՍ·557,559,558, Ձ·՝ՁՍ· 558, ՁԿ·572, Լ·83·

Դեռ դիշե՛ր էր՝ երբոր Օհան հասաւ Լորայ Սարին Գլո՛ւխ։ —
Իրաւանցո՛ւմ, չըփոթուի՛ւն՝ հա՛յյ…, ինկեր է Ձօրքին մէ՛ջ… .
Ժըխոր կ'ներթայ չո՛րս կողմ, մինչեւ ևօ՛թը Գինը…։—
Անոնց ձայնէն՝ Օհան վախցա՛ւ կեցած տեղ…,—
Ալ չիշեցա՛ւ՝ Իր Ձին քըշէր իջնէր երթար Ձօրքին մէջ։
Ձէնով–Օհան բարձր ու դոռուն ձա՛յն ունէր 1) *·—*
Կեցաւ այնտեղ ու մըտածեց, ըսաւ՝ «Հիմա ի՞նչ ընեմ…,—
Թէ որ կանչեմ՝ Դաւիթ լըսէ ելնէ վեր՝
Շատ Մարդերու Մուրուն՝ ահէն՝ պիտի թափի՛ տեղնիտեղ… .
*Եւ Իմ ձայնէն՝ Տըղով *) կիներ պիտի ձրգե՛ն Իրենց Սաղմ…։*
Թէ չըպատամ…՝ վա՛յ, կ'ըլլա՛յ որ չըհասնի՛մ…,
Տըղան ձեռքէ պիտի երթա՛յ…,— կըվախնամ…։
Կանչե՛մ,–ըսաւ–, որ Իմ ձայնը Դաւիթ լըսէ՝ չ'ըպատանե՛ն՝
Մինչեւ հասնի՛մ Ես Իրեն…»։
Ձէնով–Օհան՝ հե՛ղ մ' ալ ելաւ Սարին Գըլխէն իրիկվա՛ց,
Նայեց որ ի՞նչ…, — Դաւիթի Աստղ բոլորովին մըթներ է…,

---

1) *Տե՛ս Հատուած* 240 *եւ* 636։ *) Տղով, *Ճղի*։

Ա՛լ մէջ օրէնք չ՚է՛ մընացեր…, մեռնելու դո՛ւռն է հասեր…,—
Ասե՛ն էր որ՝ ժողովուե՛ր են չորս կողմէն՝
Դաւիթ պիտի ըսպանե՛ն…։—
Ան ալ վերցուց Իր Ձէնահաս 2) դըրաւ Բերնին՝ ու կանչեց.—
— «Է՛յ Մարդիկնե՛ր…, Այն Մարդը որ բըռնե՛ր էք՝
Դեռ չըսպանէ՛ք…՝ մինչեւ ե՛ս ալ դամ տեսնեմ…՝
Մէկ հարուած ալ ե՛ս զարնեմ Իր Գլուխին…՝
Անկէ՛ յետոյ ըսպանէ՛ք…»։—

641. Ձէնով-Օհան Կ՚պօռայ Դաւիթ՝ Որ Ցիսարն Ըսէ

ՁՍ·559,560,561, Ե·1016,780,1117,1120,28,516,581,29, 637,584, (Ե·1119,1016,516), Զ·՝Ե·1117,1016,28, (Է·435), Է·390,434,435, Ը·126,127, (Ը·126), ՁՎ·10,11, ՁԿ·541,572,542, Ի·39, Կ·24,71, (Կ·71,30,24), Ա·36, (Ա·36), Լ·83, (Լ·83)·

Սարին Գլխէն Զայնը երբոր լըսեցին՝
Կեցա՛ն, ըսին, — «Թող Ա՛ն ալ դայ ու տեսնէ՝
Սասնու-Դաւիթ ի՞նչ վիճակի մէ՛ջ ինկեր…»։
Ձէնով-Օհան վերէն նայեց՝ ի՞նչ տեսնէ… 1).—
Որ Դաւիթը այդ ձեւին մ՚էջ, — կապա՛ծ, փաթթա՛ծ, Շըղթայո՛վ…,
Արիւնի մէջ լո՛ղ կուտայ…։
Ան ալ վերցո՛ւց՝ Ձէնով-Օհան 2)՝ Ձիուն վրայէն մէ՛կ կանչեց.—
Զայնը ինկաւ Սա՛ր ու Զո՛ր…,
— «Դաւի՛թ, Դու ո՞ւր ես, Դաւի՛թ, Դու ո՞ւր ես… 3),
Քանըզ Դումշու կըռուեցա՛ր…, քանըզ Իշու կապուեցա՛ր…»։
Տո՛ւնըս աւրէր…, Շըղթայի-Խաղ 4) չ՚ուսուցի Քեզ՝ սորվէիր…
Որդի՛, Քեզ ալ Շըղթաներով բըռնե՛ր են ու կապկըպե՛ր…։

---

2) Գալարափող, trompette, haut-parleur. Ե·581՝ խօրթում, Ե·637՝ Թուրգում (*Թերեւս աղաւաղը՝ խօրթում-ին*)։

1) *Ա՛լ լոյսը բացուած էր, կրնա՛ր Սարին Գլխէն՝ տեսնել Դաւիթին մէջ անցած-դարձածը։* 2) *Այսինքն՝* Ձէնով-Օհանն ալ՝ վերցուց… կանչեց։ *Սպարկերացի պատմիչիս ոճին դեղեցկութիւններէն մէկն է, —* Ան ալ՝ Դաւիթ՝ (*այսինքն՝* Դաւիթն ալ), Ան ալ՝ այդ Մարդ՝ (*այսինքն՝* այդ Մարդն ալ), *եւն.*։ 3) *Երգով*։ 4) Ե·1119՝ չանգլի կռիւ (չէնկէլ-*ի*)։

Կուչան՛ըդ նայէ, արթո՛ւն եղիր, ըղդո՛ւշ կաց··· ·
Դրո՛ղ Քեզ տանի՛···, Բնբանդ չորցն՛ը է,–ըսաւ–,
Ինչո՞ւ մոռցար Քու Աղօթք···,—
կանչէ՛՝ «Ցիշամ Հացն ու Գինին, Տէ՛ր–կենդանին 3),
Մարութայ–Բա՛րձր–Աստպարածին, Խաչ–Փետրազին՝ Աչ–Թեւին,
Օգնական եւ պահապա՛ն կանգնին Սասմանց–Դաւթին···»:
կանչէ՛,–ըսաւ–, ու Քեզ Թա՛փ տուր՝ մէկ անդամ 5),
Շըղթաները կըտոր–կըտո՛ր Քող ըլլան···,
Ամէն Օդակ՝ տաս–քըսան Մա՛ըդ ըսպանէ···:
Ասպանդակով խրթէ՛ Քուռկիկ–Ջալալին՝
Որ աղաո՛ս այդ Ճոպանէն՝ ու դո՛ւրս դաս···»:
Սև–Լադի՛ն 6) ալ ուրախացաւ, խըրխընջա՛ց···,
Ձայնը հասաւ Դաւթի 7) Ականջ՝ Հորին մէջ 8),
Հասկըցա՛ւ որ Իրենց Սասմանց Չիներու ձա՛յնն էր տուիկ··· ·
Քուռկիկ–Ջալա՛լն ալ խըրխընջա՛ց, — տեսա՛ւ Օհան եւ Իր Ձին···:
Դաւիթ այնտեղ՝ Իր Հօրեղբօր կանչն ու ձայնը ճանչըցա՛ւ, —
Հորին մէջէն ձա՛յն տըւաւ,—
Ըսաւ, = «Հա՛յ–հօ՛յ···, Իմ Հօրեղբա՛յրս ալ եկեր է այստեղեր··· ·
Հայրենական ձա՛յն է եկաւ Ականջիս···,—
Իմ Հօրեղբայր եկեր է Ինձ օդնութեա՛ն···»:

642. Դաւիթ «Ցիշամ»ը Կ'ըսէ Ու Հոգին Կ'ազատի

Ե·29,516,581,582,637,748,811,1117,1120,719,780,826, Զ·՝Ե·29, 1016,811,748,637, (Ե·1016,1120,1117,1118,29), Կ·71,24,30,25,31, (Կ·30,25,71), (Ը·127), Ը·127,39ա·, Լ·83,84, (Լ·83,84), ԶԿ·573, 542,543,574, Զ·, ԶՎ·10,11, ԶՍ·562,563, Զ(ԶՍ·563), Խ·39, (Խ·39), Զ(Խ·39), Ա·36,60, (Ա·36,58,60), Զ·՝Ա·58,36, Հ·435, 390, (Հ·435,390), Զ·՝Հ·435, Ս·163·

Չ'ըսե՞ս՝ Դաւիթ դեռ տըղա՛յ էր ու մոռցե՛ր էր Իր «Ցիշամ»···,
Ու չէ՛ր դիտեր ի՞նչ էր Անոր զօրութիւն···,—
Դաւիթ 1) լըսե՛ց Հօրեղբօր ձայն՝ ու նո՛ր Իրեն միտն բնկաւ:

---

5) Խ·39՝ Տիրն՝ *ուղղել՝* Դիր մ՛ (*Անդամ մը*): 6) Ե·1016՝ Կարմիր ձին: 7) Լ·83՝ Մելիոնի: 8) *Պտիկ–Մըհէրի (Դաւիթի Տղուն) պատգամ. Տե՛ս իր կարգին՝ եւ· ճիւղ:* 3) *Երգով:*
1) Լ·83՝ Մելիոնն:

Հե՛ղ մ՝ ալ այսպէս ինչ իրիկւայ Իր Թեւերուն՝ աչ ու ձախ՝
*Նայեց տեսաւ՝ ինչպէս *) Դուքնի Բընաւոռներ *)՝ բերբեր են՝*
Ու ձրդեր են Իր Թեւերո՛ւն, պըրկեր–պըրկե՛ր՝ դարձուցեր, —
Վերցուց ըսաւ՝ «ես իմ ցիշամ մոռցե՛ր եմ...՝
Անոր համա՛ր այս փորձանքին մէ՛չ ինկեր եմ Իմ Զիով...:
*Գայլի նըման Զիս բընաւո՛ռ են, ու Շունի պէս տոռանա՛ռ *)...»:*
Ան ալ չուտ մը դարձաւ կանչեց մէ՛կ ձայնով.—

— «ցիշամ Հացն ու Գինին, Տէ՛ր–Կենդանին,
Մարութ–Բա՛րձր–Ասպարածին, Խաչ–Փետրազին՝ Աչ Թեւին,
Օգնական ու պահապա՛ն կանգնին Սասմանց–Դաւ(ի)թին 2),
Դո՛ւխ ինձ հասնիք..., խընդիր Զեզնէ՛ եմ ըրեր...,—
Զիս ազատէ՛ք այս երկաթէ ճոպանէն...»:

Ըսա՛ւ Դաւիթ, կըտըրճացա՛ւ ինչ իր մէջ,
Ու ը՛ինչ մէ՛կ դիր թա՛փ տըւաւ...:
Թեւերն այդպէս երբոր չարժեց ու թա՛փ տըւաւ՝ նետեց վեր՝
Աստծու կամով՝ այդ Դուքանի Բընաւոռներ 3) կըտըրտե՛ց,
Ամեն Օղակ արձակուեցա՛ւ, ու ցըրուեցաւ մէյմէկ կողմ...,
Մաս մ՝ Արեւե՛լ, մաս մ՝ Արեւմո՛ւտ՝ եղան հազար, բի՛ւր կըտոր...,
Շըղթաներուն կըտորները՝ երկնուց ինկան Զօրքին մէ՛ջ,—
Ամեն կըտոր դըպաւ Մարդո՛ւ մ՝՝ ըսպանե՛ց...,
Հազա՛ր–հազա՛ր Զօրքե՛ր ինկան, փըռուեցա՛ն...,—
Քուռկիկ–Ջալալ Զին ալ իր տեղ խընդացա՛ւ,
Այն Դիակներ՝ մէյմէկ կո՛ղմ մը բացուեցան՝
Դաւիթ պըրծա՛ւ ճոպանի իր կապերէն,
Աստծու կամով՝ այդ Հորն եղաւ դաշտ ու դուրան՝ իր առջեւ,
Իր Զիուն հետ՝ Դաւիթ Հորէն Թըռաւ դո՛ւրս:
Քուռկիկ–Ջալալ Զին ալ Դաւթին բարկացա՛ծ էր առաջէն՝
Որ Հօրեղբօր խօսքը մըտիկ ըրած չէ՛ր՝
Ճոպանխա՛ղ էր խաղացեր՝ եւ ինկեր էր Հորին մէ՛ջ.

---

*) Ինչպէս,... չափ, ... նման (դուքանի չղթային չափ՝ հաստ, ամուր, անխզելի): *) Բնաւտա, Աբօրի հաստ չղթայ. Պատկերը՝ Տեսնել՝ Ամէնուն Տարեցոյցը, 1908, էջ 357: *) Տոռանա, կապ. չուան: 2) 6·39ս.՝ Պարոն Դաւիթին: 3) Կ·25՝ ճոպանախաղի (չղթայ)՝ ուղղելի՝ հաւանաբար՝ ճոպանախաղի (չղթայ):

*Ինքն ալ՝ ըսես՝ տարինեռով յո՛ռ *), անկապել *), հրեղէ՛ն Զի՝*
Վերցուց Դաւիթ 4)՝ Արեգական դէմ տըւաւ.
Այնպէ՛ս թըռաւ Օդին մէջ որ Իր մըտքով՝
Ըսաւ՝ «Տանիմ Սև-Ծովի ու Սիվասլաք-Ծովի մէ՛ջ ձըգեմ...» 5):
Դաւիթ դ'ինքը չուտ մը դարձուց Փորին տա՛կ.
*Զին ալ բերաւ որ Դաւիթը տար *) Գետին՝*
Դաւիթ դ'ինքը չըրջկց Զիու Մէջքին վրա՛յ...,
Քուռկիկ-Ջալալ՝ այս անդամիս՝ բերաւ Գետի՛ն դըրաւ դ'ինք:
Դաւիթ՝ Զիով՝ նկաւ մէջտեղ կանդնեցա՛ւ...:
Տեսաւ քըրտինք ա՛յնքան լեցուեր է վըրան՝
Բիչ է մնացեր՝ խեղդըւի...:—
— «Հէ՛յ կեղծաւոր եղբայր,—ըսաւ Մէլիքին—,
Այս Քու ըրած տըմարդութիւն ի՞նչ էր ըրեր Ինձի հետ...:—
Դուն նէնդութեա՛մբ Զիս կապեցիր, է՛ չար Մարդ...
Այդ կերպո՞վ է որ Դուն պիտի յաղթես Զիս... —
Դուն չե՛ս կըրնար Իմ վըրաս...»:
Մըսրամէլիք վախցա՛ւ այնտեղ..., ալ չ'իշխեցա՛ւ 6) մօտենար,
Եկաւ առաջ՝ ու ըսաւ,—
= «Դաւի՛թ, եղբա՛յր 7), Քեզի ես ի՞նչ տըմարդութիւն եմ ըրեր...»:
*— «'Պա *) ինչո՞ւ Զիս բըռներ էիր Ծանցի մէջ՝*
Ըրեր էիր Արեւին...»:
Մէլիքն ալ թէ, = «Ինչ Դուն Զիուդ վըրայ հեծուկ՝ քունդ եկաւ՝
Ես վախցայ որ՝ Դուն մըսէիր..., Քեզ Փըռոցին մէ՛ջ առի... .
*Հո՛է, Դուն հիմա՝ վախչո՞ն *) ես որ՝ կ'ելլես վախի՛ս Տըղու պէս...»:*
Դաւիթ՝ Զիով՝ Ասպարէզ մը դընաց-եկա՛ւ՝ ու ըսաւ,—
— «Մէլի՛ք,—ըսաւ—, չէ՛, չե՛մ վախիր, հո՛ս եմ ես,
Միայն՝ դիտցի՛ր, դաւով չ'է՛ որ Մարդ կ'ըսպանեն Կըտրիճներ...,—
Արի՛ կանդնիր բա՛ց Դաշտի մէջ՝ կըռի՛ւ ընենք Մարդու պէս...»:

---

*) Ցոռ. (յէօռ), Ցուռքի, արձակ ազատ՝ աճած: *) Անկապել, Արձակ, առանց կապի: 4) Ա.36՝ պատուհին բերումովը՝ ՁԷնով-Օհան: 5) Ա.60ա.՝ «Սև Ծով = Ստամբօլի ծով, որու Ջրի մէկ կողմը սպիտակ է, միւսը սեւ»: *) Տալ, Ձարնել: 6) Ե.29՝ չգիտցաւ՝ ուղղել՝ չ'իշխըցաւ, կամ՝ չ'դշխեցաւ (չ'համարձակեցաւ): 7) Աղուէսի՛ եղբայրութիւն..., Տե՛ս իմ խաղաշխարհ, Կակօ-Մրտօ, Հիւանդ-եղբայր: *) 'Պա, Ապա, Հապա: *) Փախչան, Փախուստ տուող, դասալիք:

643. Դաւիթ կ'ելնէ Սարիճ Գլուխը՝ կ'հանգչի

Զ.՝Ա.60, Ա.60, Հ.390, 391, Զ.՝Հ.390, 391, (ՉՍ.518), Զ.՝ՉՍ.518, Զ.՝Ճ.39ա.

Արեւ մըտաւ, Դաւիթ 1) ելաւ՝ քընչեց Իր Ձին ու դընաց.
Ըսաւ, — «Քուռկի՛կ, ապա Դուն ինձ կ'ըսէիր՝
Քեզ կըհանեմ կըխաղցընեմ հետ–Ամպերուն, երկնից հե՛տ...,
Կ'առնեմ–կ'ելնեմ բարձրիկ Սարե՛ր..., պաղ–պաղ Ջուրե՛ր...,
[Աղբիւրնե՛ր...» 2).—
Հիմա ե՛ս ալ անօթի եմ՝ ու Դո՛ւն ալ...,
Թուր–կէնաակին՝ Արիւն բըռներ...՝ ա՛լ չի խաղար որ կըտրէ...,
Կ'ուզեմ ասօր՝ Դուն Ձիս հանես՝ խաղցընես հետ–Ամպերուն,
Առնես–ելնես բարձրիկ Սարեր, պաղ–պաղ Ջուրեր, Աղբիւրնե՛ր...»:
*= «Ի՞նչ կ'ուզես, Հա՛յ... *), տեսնե՛մ...»,–ըսաւ՝ հրեղէն Քուռկիկ–*
[Ջալալին:
— «Քուռկի՛կ,–ըսաւ Դաւիթն ալ–,
Քենէ կ'ուզեմ՝ Ձիս Թըռցընես՝ տանիս վեր՝ բո՛ւխ Ջըրերուն...,
Թուրըս լըւամ Իր Արիւնէն..., Քեզ ալ Թողնեմ արածա՛ս...,
Դո՛ւն ալ հանդչիս, Ես ալ Իմ Հացն ուտեմ պառկիմ ու հանդչիմ...,
Կ'ելնենք ապա կ'երթանք նորէն կըռիւի...»:
Քուռկիկ–Ջալալ՝ առա՛ւ Դաւիթ, Թըռաւ հասնեց Ամպերուն...,
Տարաւ անդին՝ Սարին Գլուխ՝ իջաւ վար...,
Դըրաւ վեր՝ բո՛ւխ Ջըրերո՛ւն...:—
Դաւիթ այնտեղ Քուռկիկ–Ջալալ լըւաց՝ Թողուց արածայ,
Թուրն ալ լըւաց ու մաքրեց,
Ինքն ալ մըտաւ Գիլ–Գետակի 3) պաղ Ակին մէջ՝ լողացաւ,
Ելաւ հագա՛ւ Իր կըռիւի Հագուստներ,
Իր Հաց կերաւ, Ջուր խըմեց...,
Ինքն ալ, Ձին ալ՝ աղէկ մ' այնտեղ հանդչեցա՛ն,—
Անքո՛ւն կեցած, յոգնա՛ծ, անփորձ, խա՛ղ Տըղայ՝
Իր Կուրդիկը 4) քաշեց Գըլխին՝ ինկաւ այնտեղ քընացաւ... 5):

---

1) Ա.60՝ Տղաք: 2) Տե՛ս Հատ. 591 եւ 609: *) Հա՛յ, Ո՛վ Հայ, ա՛յ մարդ: 3) Գիլ 'ի գլոր վազո՛ղ գետ՝ թէ՛ Գայլ–Գետ: 4) Կուրդիկ–Տիրացին, վերարկուն: 5) Տե՛ս Հատուած 598:

644. Մբսրամէլիմ Զօրք Կ'դրկէ՝ Որ Դաւիթը Սպաննեն

Զ(Կ·24), Զ·՝Ա·60, Ա·60,61·

Մբսրամէլիք 1) իմացա՛ւ որ Դաւիթ գընաց ելաւ Սա՛ր,
Կանչեց Իրեն Մարդիկներուն ի՞նչ ըսաւ·—
— «Վա՛յ Մարդիկներ, խակ տըղա՛յ է այդ Տըղան···,
Ասի հիմա չա՛տ յողներ է, ինկած տեղը քընացեր···:—
Ասոր Զիւռ հետք բըռնեցի՛ք ու դացէք·—
Անոր Զիւռն եղունդները՝ Գուբանի պէս՝ Հողը քանդած դացա՛ծ են:
Ի՛նչ Մարդ որ Այդ Տըղան դարնէ՝ Գըլուխն առնէ բերէ ինձ՝
Անուն՝ Ի՛մըս, երկիրն Անո՛ր Թող ըլլայ···»:
Ելան Ասոնք՝ հետք բըռնեցին ու դացին,
Դացին տեսան որ Այդ–Տըղան ի՞նչ ըրեր,—
Իր Վէրարկուն Գըլխին քաշեր՝ քընե՛ր է:—
Զոր–բոլորը պաշարեցին, Նետաղեղով առին զարնե՛լ Տըղային:
Տըղան,— Դաւիթ—, յողնած, ջարդուվ)՝ Իր Ֆունին մէջ լո՛ւր չունի:*
*Ֆուռկիկ–Ջալալ կըֆըրֆըռա՛յ *) Իրեն Տիրոջ բոլորտին՝*
Ամէն անգամ հարիւրաւոր Մա՛րդ կըջարդէ կըփրռէ,
Կուգայ նորէն՝ ու Դաւիթի Գըլխուն վըրայ կըկենա՛յ՝
Որ չըզարնեն Նետաղեղով ըսպանեն··· 2):

645. Զէնով-Օհան՝ Իր Ուժը Կ'փորձէ Բարդի-Ծառով

Ա·61, Զ·՝Ա·61, Զ(Ա·61), Կ·22, Ե·627·

Զէնով–Օհան 1) նայեց տեսաւ որ Իրեն Զին՝ Սեւ–Լազին 2)՝
Մըսուրին տակ՝ Իր Ոտքերով կըքանդէ,
— «Վա՛յ, վա՛յ,–ըսաւ–, Տըղան նորէն նեղ տե՛ղն է··· .
Կամ քընե՛ր է՝ կամ Թէ ուրիշ նեղութեան մէ՛ջ է ինկեր···,—
Զին պատրաստեմ՝ վազեմ դո՛ւրս···»:
Իր Զին Թամբեց՝ քաշեց դո՛ւրս՝

---

1) Ա·60՝ Բաղդատայ խալիփան: *) Ջարդուկ, *Ծոզնաբեկ, Ջարդուած*: *) Ֆրփռալ, *Դառնալ ու դառնալ*: 2) *Տե՛ս Հատ*. 598՝ *Հօրեղբօր խրատները*:

1) Ա·61՝ *Պատումին բերումովը*՝ Իշխանի ծառան: 2) Ա·61՝ *կարմիր ձին*:

Թրա՛ւ Իրեն Զիւն Քամա՛կ, կանչեց Աստուա՛ծ՝ ու դընա՛ց։
Քըշե՛ց Իր Զին, տեսաւ երկար Բարդի–Ծառ մը՝ ճամբուն մէ՛ջ,
*«Փորձե՛մ,–ըսաւ–, երկու դըլուխ *) Իմ Զին քըշեմ՝ տաքցընեմ,*
*Այն Թափի հետ՝ դամ՝ այս Ծառը խըտտե՛մ *) հանե՛մ Արմատով.*
Եթէ կըրցայ՝ կ՚երթա՛մ Տըղին օգնութեան.
Թէ չկըրցայ՝ չե՛մ երթար...»։
Ա՛լ ծերունի Զէնով–Օհա՛ննէր այնտեղ...,—
Քըշե՛ց Իր Զին՝ ու Թափի՛ն հետ՝ Ծառն Արմատով քաշեց դո՛ւրս,
Բարդի–Ծառը դըրաւ Ուսին, Իր Զին քըշե՛ց ու դընաց։—

646. Զէնով-Օհան՝ Zorfbrուն Հեռ՝ Դէպի Սարը

Ա·61, Զ·՝Ա·61, (Կ·22)·

Գընաց տեսա՛ւ որ Մըսրայ–Զօրք՝ մէկ–մի՛ուսի՛ եռեւէն՝
Կ՚երթան կ՚ելնեն դէպի Սա՛ր...։
Ան ալ հարցո՛ւց այդ Բանակի Մարդերուն,—
Ո՞ւր է այդպէս դէպի Սա՛րը կ՚երթաք Դուք·՞·՞·՞»։
Թէ, = «Մէկ մի՛ մէկ Թըշնամին փախեր ելեր Սարին Գլո՛ւխ,
Կ՚երթանք՝ Թերեւս ըսպանե՛նք...»։
Ատոնք՝ Օհան չե՛ն ճանչընար, «Բանակէ՛ն է»՝ կըկարծեն...։
Զէնով–Օհան Իր Զին քըշե՛ց՝ դընաց հասաւ Դաւիթի՛ն 1)։—
Նայեց տեսաւ՝ Տըղան այնտեղ քընե՛ր է,
Իրեն Զին ալ՝ քըրտինքի մէջ՝ վըրան կ՚երթայ ու կուգա՛յ...։
Զօրքը եկեր ժողովուե՛ր է՝ քընած Դաւիթի չորս–բո՛լոր...,
Ջուռկիկ–Ջալալ կըՓըՓըռա՛յ ու կըդառնա՛յ Անոր շուրջ...,
Երե՛ք–Հարիւր, չորս–Հարիւր Մա՛րդ կ՚ըսպանէ՝
Կուգայ նորէն Դաւիթի վըրայ կըկենա՛յ...։
Երբոր Զօրքը դարձեա՛լ կուգայ՝ Զին ալ նորէն կըՁարդէ՛...։
Տըղա՛ն ըսես՝ քըներ է...։—

---

*) Երկու գլուխ, Մէկ ծայրէն մի՛ւս ծայրը, երկու անգամ։
*) Խտտել, ճնցել։

1) Ա·61՝ Դաուիկ–Որբիկիճ։

647. Զէյնով-Օհանի Եւ Դաւիթի խօսակցութիւնը

Ջ.՝Ա.61, Ա.61, (Կ.22), Ջ.՝Կ.22, (Ե.29,627), Ջ.՝Լ.28, Լ.28, Ջ(Լ.28), ՋՍ.584.

Զէյնով-Օհան՝ Զօրքին մէջէն՝ Ծառը պարզեց Դաւիթի՛ն,
Դըրդե՛ց 1), Դաւիթ արթընցաւ ու ելաւ վե՛ր,
Նայեց տեսաւ՝ որ Զօրքերը իր չորս-բոլորն առե՛ր են,
Ցառկեց ելաւ՝ հնձա՛ւ իր Ձին՝ հրեղէն Քուռկի՛կ-Ջալալին՝
Քըշե՛ց՝ թափով՝ Զօրքին մէջէն ելաւ դո՛ւրս:
Հօրեղբայրը՝ քըշեց եկաւ Դաւիթի մօ՛տ,
Դաւիթ դարձաւ Իր Հօրեղբօրն 2) ու ըսաւ.—
— «Ո՛վ Հօրեղբայր, աս ի՞նչ ըրիր Իմ Գլուխ...»:
Ըսաւ, = «Ի՞նչ...»:
— «Այն առե՛ն որ,—ըսաւ Դաւիթ՝ Օհանին—,
Ձիս դըրկեցիր՝ Արաբըստո՛ւն գացի ես՝
Դէպի Մըսը՛ր ալ կ՛երթայի՝ չըթողի՛ր... 3),—
Հիմա այսչափ Ուժան չէ՛ր դար Իմ վըրայ...»:
Զէյնով-Օհան 4) ըսաւ, = «Դաւի՛թ, Ձոջ-Մըհէրի Թոռը չէ՞ս... .
Մըհէր-Դաւիթ 5) Տըղան չէ՞ս Դուն, տընա՛ւեր... .—
Կըվախնա՞ս .՞.՞.՞»:
*— «Բա *) չէ՞մ վախնար, այդ անհոգի Ուժանէն...»:*
Զէյնով-Օհան՝ Ուսին դըրած Բարդի-Ծա՛ռը ցոյց տըւաւ,
Ըսաւ, = «Դաւի՛թ, կեցիր ես Քեզ կըռիւ ընե՛լ ցուցընեմ...,—
Այս Բարդի-Ծառ՝ ես Արմատով քաշեր եմ ու դո՛ւրս հաներ...,
Քա՞ջ Մարդ եմ .՞.՞.՞»:
—«Բա՛ Թո՞յլ Մարդ ես,—ըսաւ Դաւիթ—, Ծառն Արմատով հանե՛ր ես»:

648. «Ես Ծորիմ՝ Դուն Ծորըփէ»

Ջ.՝Լ.28, Լ.28, ՋԿ.584, Ա.61,59, Ջ(Ե.29).

Զէյնով-Օհան վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ.—
— «Մարդիկ կան որ երկրագո՛րծ են, կ՛երթան Արտը կըքաղեն՝

---

1) Ա.61՝ բրդեց՝ *ուղղել՝* դրդեց: 2) Լ.28՝ Քեռի-Թորոսին: 3) *Տե՛ս Հատ.* 479–482 *եւ* 485: 4) Լ.28՝ Քեռի-Թորոս: 5) Լ.28՝ Աբամէլիխի: *) Բա, *բա՛հ*, նաեւ՝ ապա, հապա:

Ու կըթերեն՝ կըլեցընեն կալատե՛ղ,
Ամեն Խուրձեր ու Հասկերը՝ իրար վըրա՛յ կըդիզեն,—
Կալ-Ջըշողը կըմըտնէ մէջ՝ կըջարդէ...:
Տըղա՛յ,—ըսաւ—, այս քառասո՛ւն տարի է՝
*Ես Սուր ու Թուր չե՛մ բանցուցեր *), նորէն չե՛մ ալ բանցըներ,—*
Ո՛ւխտ եմ ըրեր Աստըծուն 1).—
Հրեղէն Քուռկիկ-Ջալալի Ձին Քո՛ւ տա՛կն է...,
Հըմայեկը Քու Ծո՛ցն է...,
Թուր-Կէծակին Քո Զե՛ռն է...,
Կանչէ՛՝ մէկ դիր՝ Մարութենի Ասպարածին Սուրբ-Նըշան,—
Այս Զօրքերուն մէ՛ջ մըտիր...,—
*Ես այս Ծառով՝ Ափներ *) ժողվեմ տամ վըրա՛յ՝*
Դուն Քո Թուրով զարկ՝ բըրդէ՛... .
*Ես ծորե՛մ *), Դուն՝ ծորթըփէ՛ *)... 2)»:*

649. «Դուն Ծորէ՝ Ես Ծորթըփեմ»

Ս·163, ե·627,1118,780, (ե·627), Զ·, լ·28, (լ·28), Զ·՝լ·28, Զ·543, 544,550,551, Ա·58,61, (Ա·58), (կ·22), կ·22.

*Կըռիւն այնտեղ կըցեցի՛ն *),—*
Դաւիթ կանչեց՝ «Հացն ու Գինին, Տէ՛ր-Կենդանին»՝
Ու Ձին քըշեց Զօրքին մէ՛ջ,
*Առաւ *) բոլոր Այդ-Մարդիկներն ըսպաննե՛լ...:—*
Ի՛նչքան որ Ինք այդ Զօրքերը կըջարդէր՝
Բանակ նորէն կըհաստատուէր՝ կըշատնա՛ր...:
Դաւիթն ըսես՝ անփո՛րձ Տըղայ՝ կըռիւն ի՞նչ է՝ չէ՛ տեսեր,
*Անփորձուե՛լ *) Մարդ՝ քըշեց եկաւ Քարի մ՝ տակ 1):*
Ձէնով-Օհան 2)՝ Բարդի-Ծառը վեր՝ փիճին՝

---

*) Բանցընել, Դործածել: 1) Ըսել կ՝ուզուի՝ Թերեւս՝ պատուոյ խօսք էր տուեր Մըսրայ-Տիրոջ՝ որ զէնք չ՝վերցնէ Անոնց դէմ. Համմալ. նաեւ Պրճ. Տ. Ներսէսի հետ (Զ·Ճիւղ): *) Ափներ, Զորս կողմի՝ (խուրձ)եր, (զօրք)եր, բոլորչի եղածներ: *) Ծորել, Հոսեցնել, քշել: *) Ծորթփել, Զարնել-կոտորել: 2) Տես եւ Հուշ. 688: *) Կցել, Վերսկսիլ: *) Առաւ, Սկսաւ: *) Անփորձուել, Չփորձուած, անվարժ: 1) Ա·58՝ Պարիսպին տակ: 2) Ս·163՝ Քեռի-Թորոս:

Եկեր կեցեր Զորի Դրլխուն՝ կըդխէ 3),
Առոնք՝ վարը՝ Զորին մէջեր կըկըռուին։—
Ո՛րն որ վախի իջնէ վար՝
Դաւիթ կ՚պօռայ, — «Հօ՛րեղբայր,
Դուն հո՛դ կեցիր՝ ես ալ երթամ՝ Անոնց համբուն դէմ կըտրեմ՝
Որ այդ Մարդեր չըփախին,
Դուն ծորէ՛, ես՝ ծորթըվի՛մ...»։
Երեք օր ու երե՛ք դիշեր՝ կըռի՛ւ բրին Զօրքին հետ,
Զէնով-Օհան հա՛տ չըթողուց, տըւաւ վըրան՝ Ան չարդե՛ց... .—
Է՛, մէ՛կ խօսքով՝ այդ Զօրք այնպէ՛ս կոտորեցին, բըրդեցին՝
Որ Մէլիքին լըրաւե՛ր մ՚ իսկ չըմընա՛ց...։—

650. Զէնով-Օհան Ու Դաւիթ՝ Իրար Չեն Ճանչցար «Չիս Մրնէրի՛ն Է, Դուս Մրնէրը Չես»

Ե·1016,1118, (Ե·1016), ՉԿ·544,545ս·,551,546,547,548, (ՉԿ·545), Չ·՝ՉԿ·548, Չ·՝Ա·58,59, Չ(Ա·59)·

*Մէկ ճոթէն *) որ Դաւիթ դարկաւ, մէկալ ճոթէն Հօրեղբայր,—*
Անոնց Ձիեր 1) հասան իրար, Զօրքը ամեն վըռուռեցան,
Դիակներուն մէջ՝ երկուսն ալ՝ արնոտեցա՛ն ողջ Մարմնով,
Եղան այնպէ՛ս՝ որ ա՛լ այդտեղ Մէկը Մէկալ չէ՛ր ճանչնար։
Օրը այլեւս տարաժամե՛ց, դիշե՛ր էր,—
*Առին *) երկուս Իրա՛ր գարնել...,— Զէնով-Օհան՝ ու Դաւի՛թ։*
Դաւիթ բըռնե՛ց Զէնով-Օհան՝ ու վա՛ր քաշեց Իր Ձիէն,
*Ֆռչուեր *) դարկաւ Սըրտին վըրայ՝ պիտի մորթէ՛ր Հօրեղբայր՝*
Զէնով-Օհան 2) լալով ըսաւ, — «Ա՛յ կըտրիճ,
Ձիս՝ Մրնէրի՛ն է 3), Դու՝ Մրնէրը 4) չե՛ս... 5)·
Ֆօղ՝ Մրնէրի՛ն է, Դու՝ Մրնէրը չե՛ս... .
Կուրդիկ՝ Մրնէրի՛ն է, Դու՝ Մրնէրը չե՛ս... .
Թուր՝ Մրնէրի՛ն է, Դու՝ Մրնէրը չե՛ս... .
Գուրզ՝ Մրնէրի՛ն է, Դու՝ Մրնէրը չե՛ս...»։

---

3) *Չմմալ·՝ Ձիրաւի Դաշտին կուիւը· Մեծն Ներսէսի Նպատ Լեռան դլուխէն դիտելն ու ձեռամբարձ աղօթելը* [*Արնցի· Գ· Լէ· 456*]։

*) Ճոթ, *Մայր, կողմ*։ 1) Ե·1016՝ *Թրեր*։ *) Առին, *Սկսան*։ *) Ֆռչուեր, *Մունկեր*։ 2) Ա·59՝ Իշխաձ։ 3) Ա·59՝ Արլաղին է։ 4) *Այսինքն՝ Դաւիթ-Մըհէր*։ 5) *Երդով*։

Ապա վերցուց Մարդուն ըսաւ, — «Ձիս մի՛ զններ, ա՛յ կըտրիճ,
Ես Քեզի մէկ բա՛ն մը ըսեմ՝ նո՛ր զննէ...»·—
Ու մէ՛կ Իրեն ձայնով պօռաց ու ըսաւ,— 6)

— «Ա՛փսո՛ս..., ու հա՛զա՛ր ա՛փսո՛ս, = Ո՛ր ա՛փսո՛ս...,
Գը՛նա՛ց Ձէ՛ն՛վ–Օ՛հա՛ն՝ Սա՛սո՛ւմա՛ց Տը՛նէ՛ն, = Ո՛ւ Տընէն...»:

Դաւիթ այնտեղ Ոտքի՛ ելաւ ու ըսաւ·—

= «Ձին՝ Մըհէրի՛ն է 7), Ես՝ Մըհէրը չե՛մ... 8)·
Փօղ՝ Մըհէրի՛ն է, Ես՝ Մըհէրը չե՛մ... ·
Կուրդիկ՝ Մըհէրի՛ն է, Ես՝ Մըհէրը չե՛մ... ·
Թուր՝ Մըհէրի՛ն է, Ես՝ Մըհէրը չե՛մ... ·
Գուրզ՝ Մըհէրի՛ն է, Ես՝ Մըհէրը չե՛մ...,—
Ես՝ Մըհէրի Դառնիկ–Որրի՛կն եմ... 9)·

Վա՛յ..., քի՛չ մընաց՝ ես Իմ Աչքեր կուրցընէի՛ Իմ Ձեռքով...,
Իմ Հօրեղբայր ըսպանէի՛ օտ՛րի պէս... 10)»:
Ձէնով–Օհան իմացա՛ւ որ Դաւի՛թն է,
Ոտքի ելաւ՝ ու դո՛ւրս եկան Դիակներու կոյտերէն...:

651. «Հարս Ու Փեսայ» Կ՚դրկեն Դաւիթի Առաջ

Ե·718, Զ(Ե·718,781), (Լ·100)·

Լուրը տարան Մէլիքին 1) թէ, — «Ելիր Նայինք ի՞նչ կ՚ընես...,
Արնէ–Գետը կանգնեցաւ հոս, կարգադրութի՛ւն մ՚ըրէ ալ·
Ո՞ւր է Քո Զօրք..., Դաւիթ ամեն կըտրե՛ր է...»:
Մըսրամէլիք ելաւ հիմա «Հարս–ու–Փեսա՛յ» 2) չինեց հոն,
Ու Նըւագով բըռնեց ղըրկեց Դաւթի դէ՛մ,
Ըսաւ, — «Նայինք չե՞նք կըրնար զ՚Իրենք դադրեցնել՝ ու բըռնել»:
«Հարս–ու–Փեսան» ելան գացին Դաւթի դէ՛մ,
Ի՛նչ որ ըրին՝ Դաւիթ բըռնել ու կեցընել չըկըրցա՛ն,—
Շո՛ւտ–չուտ Անոնց Նըւէ՛ր նետեց՝ ու անցա՛ւ...:—

---

6) *Երգով*: 7) Ա·59՝ Աբլաղին է: 8) Ա·59՝ Աբլաղը չե՛մ: 9) *Տե՛ս Հատ*· 267 *եւ* 267 *տարբ*, *Մնթ*· †): 10) *Նման՝ Սանասար–Բաղդասարի, Հատ*· 35 *եւ* 86:

1) Ե·718՝ վհաբէ Կարին, Լ·100՝ Զաճիօլատին: 2) *Հարսանեկան թափօր՝ նուագով ու պարուհիներով*:

652. Դաւիթ Ու Մէլիք Զիով Կրկրուսին

Ս·163, Շ·՝Ս·163, Շ·՝Հ·435, Հ·435,36, Ե·915,975, Շ·՝Ե·975, Ա·26, Ե·40, Լ·69,65, (Լ·29,88,100), ՀԿ·357,358, (ՀԿ·357)·

Ա՛ս ալ չեղաւ· Զօրք կանդնեցան՝ խընդի՛ր ըրին ու ըսին,—
— «Պէտք է մինակ Դուք երկո՛ւքդ կըռիւ ընէք Իրար հետ·
Ո՛րն որ ուժե՛ղ դուրս գայ կըռւէն՝ Թող Մե՛ծ ըլլայ Միւսին»:
Մէլիքն ըսաւ, — «Դաւի՛թ, եղբա՛յր, ես Իմ Ոսը կըտրե՛ր եմ··· 1),
Դեռ չե՛մ կըրնար Զի՛ հեծնել···,
*Իջի՛ր՝ կըպնենք *) Գօտեմա՛րտ···:—*
Դէ՛, Աստուած ալ՝ կամ ի՛նձ կուտայ՝ կամ Քեզի՛···»:
Հօրեղբայրն 2) ալ՝ եկաւ բըռնե՛ց Դաւիթ Զին,
Ըսաւ, — «Չ՚ը՛լլար···, Զիո՛ւ վըրայ կըռուեցէք··· ·
Ելէք՝ մէկ դիր՝ Զիաւորի՛ կըռիւ ըրէք Իրար հետ···,—
Աստուած Զեզնէ որի՛ն որ տայ՝ մէկ դի՛ւհ կ՚ըլլայ Զեր վէճը 3)»:
Մէլիքն ըսաւ, — «Դաւի՛թ, ի՞նչպէս կըռուինք Մենք···,
Դաւիթն ալ թէ, = «ի՛նչպէս Հոգիդ որ կ՚ուզէ···
կ՚ուզես՝ ելնենք՝ Գամչի՛ նըման Գըլխո՛վ դարնենք մէկմէկի,
Թէ չէ՝ կ՚ուզես՝ Զիո՛վ կըռուինք ես ու Դուն»:
Երկուսով ալ հեծա՛ն Զիանք, — Մըսրամէջիք ու Դաւիթ —,
Մէլիք 4) Ի՛ր Զին, Դաւիթ Ի՛ր Զին, — եկան դըպան Իրարու,
Առին այնտեղ Զիո՛ւ վըրայ կըկըռուին···:—
Երե՛ք օր ու երեք գիշեր՝ Զիու վըրայ՝ կըռուեցան··· ·
Շա՛տ կըռուեցա՛ն ու կըռուեցան, Աչխարք իրա՛ր անցուցին···,—
— «Երկինք աւրա՛ւ···», — ըսին այնտեղ քանիներ,
*Ամենք ըսին, = «Գետինք *) աւրա՛ւ վերջացա՛ւ···»:*
Մինչեւ վերջը՝ Զիու քամակ՝ կըռի՛ւ ըրին Իրար հետ՝
Մէկ Միւսին չըյաղթե՛ց··· ·—
Անոնց ուժը՝ Զիերո՛ւն ալ՝ հաւասա՛ր են Իրարու:—

---

1) Կ՚ամչնայ ըսելու թէ՝ Դաւիթն է ծակեր իր ոտքին տակը· Տե՛ս Հաւուած 625: *) Կպնել, Փակիլ: 2) Հ·435՝ Հօրեղբայրներ (Եկան): 3) Այսինքն՝ Զեզնէ մէկուն մահովը՝ ձեր վէճն ալ կը վերջանայ: 4) Լ·100՝ Ջանիոլատ: *) Գետինք, Երկիր:

653. Դաւիթ Ու Մէլիք՝ Գօռեմարտի

ԶԿ·359,360, (ԶԿ·359), Զ·, Ե·915,975, (Ե·975), Կ·30, Հ·435, Զ·՝Հ·435, (Լ·29,100), Լ·100,29·

Այս անգամխս՝ Մէլիքն ըսաւ 1), — «Մեր Զիւերը ա՛լ մե՛ղք են...,
Անոնց Հոգին Մենք չե՛նք տըւեր՝ որ Մենք առնենք Մեր Զեռքով,
Զիէն իջնենք՝ հասնինք Իրա՛ր, Զեռքո՛վ կըռուինք ես ու Դուն.
Զիու վըրայ չըկըռուի՛նք...,
Գօռեմարտի՛ մըտնենք այստեղ, Դաշտի մէջ...»:
= «Այո՛...»: — «Այո՛...»:
Իջա՛ն՝ երկուք, Զիեր տարան՝ ու կապեցին մօտիկ տե՛ղ մ՛,
Մըսրամէլիք Դաւիթի հետ կըպաւ Զեռքով Գօռեմա՛րտ.
*— «Մի՛ր տայ *) Գետին՝ Ան Միուսը ըսպանէ...»:*
Ինչ առեն որ Դաւիթ՝ ուժով՝ Զեռ կընեաէր Մէլիքին՝
Իր Մատները կըմըտնէին Անոր Մարմնի Միսին մէ՛ջ,
Կ՛ըսէիր թէ՝ Խըմորէ՛ էր չինուած Անոր Միսն ու Մորթ...:—
Մըսրամէլիք Անոր ուժին դիմաց կենալ չէ՛ր կընար.
Գուքանի պէս՝ Ոտքերուն տեղ՝ Հող կըճեղքէր՝ ու կ՛երքա՛ր...,
Այն դեհէն ալ՝ Մըսրամէլիք Դաւիթ վըրա՛յ կըդառնար՝
Ամեն կողմէ՝ Զեռքո՛վ կ՛զարնէր, Ոտքո՛վ կ՛զարնէր կըբերէր՝
Կըհասցընէր մինչեւ Դաշտի միուս Դեհ 2):
Ինչ Դաւի՛թն էր՝ ուժո՛վ էր.
Ինչ Մէլի՛քն էր՝ կըռապա՛չտ 3) էր, խարդա՛խ ձեւով կըկըռուէր:
Դէ՛հ, երե՛ք օր, Դաւիթ՝ Մէլիք՝ կըպան այնտեղ Գօռեմարտ՝
Մէկըզմէկը չըյաղթեցի՛ն, Իրար այնտեղ թո՛ղ տըւին:

654. Դաւիթ Ու Մէլիք՝ Խոյաճակ Ու Գոմաճակ Կըկռուին

Հ·383, Զ·՝Հ·383, Կ·24, Զ(Ե·915), Զ·՝Ե·915, Զ·

*Ելան ապա՝ զարկին Իրար՝ ու խոյանա՛կ *) կըռուեցան.—*
Աքցանի պէս՝ Իրենց ձանկեր Մէկ-Մէուսի՛ն կըզարնեն,

---

1) Ե·975՝· Դաւիթն ըսաւ: *) Տալ, *Զարնել–տապալել*:
2) Հ·435՝ միջնեւ էջմիածին (*խօսքի համար*): 3) Հ·435՝ զըզըլ–պաշ (*արեւորդի՞, արեւապա՞չտ*):
*) Խոյաճակ, *Խոյի պէս՝ գլուխ գլխի դէմ (կռուիլ)*:

Մէկ Մէկալէն Յոյն մը Մի՛ս կըփըրցընեն Իրարմէ··· .—
Մինչեւ Ճաշին՝ Մէկը Մէկին չըյաղթե՛ց···:
*Այս անգամ ալ՝ Լեան ոտքի՛՝ ու Դոմշանա՛կ *) կըռուեցան: —*
Ինչպէս Ծանրիկ Դուքան դընես Մարդի մէջը՝ ու ճեղքես՝
Այնպէս Անոնց Ոտներուն տակ՝ Հող կըճեղքի ու կ'երթայ···:
Ըմբշամարտո՛վ 1) ալ կըռուեցան՝ չըյաղթեցի՛ն Մէկ Մէկի:
Ալ վերջապէս՝ մէկմէկի հետ՝ թէ՛ Գօտեմա՛րտ բըռնելով,
Կամ Յոյնտակ ու Դոմշանակ, Ըմբշամարտով, ամեն կերպ՝
Այդ Հողին վրայ՝ ա՛յնքան գացին ու եկան՝
Որ ահագի՛ն Արտի՛ մը չափ ընդարձա՛կ տեղ, ծայրէ՝ծայր,
*Այդ երկուսի Ոտքերուն տակ՝ եղաւ ինչպէս դուբնավա՛ր *):—*

655. Մor Եւ Տղու Հաճոյութիւն Խօսիերն Ու Դաւիթի Միջոցը

Ե·975,915,976,29,516,26,635,583, Զ·՝Ե·915,976,516,583, (Ե·975), (Է·383,435), Զ(Է·36), Է·383,434, Զ·՝Է·383, (Լ·29,100), Լ·29, (Կ·25,30), Խ·36·

Դաւիթ՝ Մէլիք 1)՝ տեսան որ չէ՛, անօգո՛ւտ է, ճար չըկա՛յ՝
Դարձան ըսին, — «Մենք չե՛նք կըրնար Իրար յաղթել այս կերպով,
Ելնենք,–ըսին–, Սուրով, Դուրսո՛վ կըռուինք Մենք»:
Մէլիքի–Մայր՝ եկաւ դէմը, Մխիթր բացաւ՝ ու ըսա՛ւ.—
— «Որդի՛ք, Զաւա՛կ, չէ՞ որ–ըսաւ–, Երկո՛ւդ ալ՝
Այս Իմ Ծրծի կա՛թն էք կերեր՝ ու միասի՛ն Ջոջացեր···,
Ինչո՞ւ կըռուիք Իրար հետ···»:
Դաւիթ վերցուց ըսաւ, = «Մարէ՛, ճար չըկա՛յ···,
Քա՛նի որ Իմ մի՛տը կ'իյնայ՝ Յաչ–Մարութայ–Բա՛ժըր Վանք 2)՝
Ես չե՛մ կըրնար Մէլիքի հետ չըկըռուիլ···,—
Ես Գըրո՛ղ եմ եկեր Անոր Հոդիին···»:
— «Որդի՛,–ըսաւ–, կոտորուած ու մեռածները՝ Ամե՛ն ալ՝
Օտարներու Տըղա՛ք են···,

---

*) Դոմշանակ, *Դոմչըլի նման՝ կոտոշ–կոտոշի դարնելու ձեւով (կռուիլ)· Տե՛ս իմ ՀԱՂԱՇՀԱՐՀ՝ Դոմշակութ: 1) Է·383՝ փերը–զանակ: *) Դուբնավար, *Դուբանով վարածի պէս, ակօսած:

1) Է·435՝ Հօրեղբայրներ: 2) Վանքին աւերումը՝ *Մէլիքի զօրա–վար Պիրաթաղինի ձեռքովը· Հատ· 463:

Դուն եւ Մէլիք՝ զոյգ եղբա՛յր էք, ի՞նչ է կ՚ուզէք Իրարմէ… .
Եկո՛ւր Դաւի՛թ, արի՛ նըստի՛ր, հաչըւեցէ՛ք Իրար հետ 3),
Ձեր Տեղերը *) *կ՚իմացէ՛ք.—*
Սասուն՝ Քեզի՛, Մըսըր մընայ Մէլիքի՛ն…,
կերէ՛ք, խըմէ՛ք՝ Ձեր կեանքն ըրէ՛ք՝ ուրախ–ղըւարթ, եղբո՛ր պէս»:
= «Չէ՛, Մարէ՛, չէ՛,–Դաւիթն ըսաւ Իր Խորթ Մօր–,
Ա՛յնքան Մարդու Արիւնին տակն եմ մըտե՛ր,—
Ես ու Մէլիք պէտք է կըռուի՛նք Իրար հետ…»:
Մէլիքն ըսաւ, — «Դաւի՛թ, եկուր՝ քիչ մը նըստի՛ր՝ չունչ առնենք,—
Դուն Քու Տեղը՝ Ես ալ երթամ Իմ Վըրանի՛ն տակ հանդչիմ՝
Կ՚ելնենք նորէն կըռի՛ւ կ՚ընենք Իրար հետ…»:
= «Լա՛ւ,–ըսաւ–, Ձիս խաբեցիք՝ դէր մը Ձիէս իջայ վար՝
Ձիս ճըղեցիք Հորի մէ՛ջ…,—
Դի՞ր մ՚ալ խաբուիմ…՝ իջնեմ երթանք ուրիչ տեղ.՞.՞.՞ ,—
Չէ՛, չե՛մ նըստիր…, Ես եկեր եմ կըռուելո՛ւ…,
Կանգնէ՛…՝ թէ չէ կըղարնե՛մ…»:
Մէլիքն ըսաւ, — «Տօ Շա՛ն Տըղայ, Թլո՛ւ–Դաւիթ,
Ըսել է Դուն՝ դէր մ՚ինկեր ես Հորնիվար ու ելեր դո՞ւրս…»:

656. Մօր Երազն Ու Մէլիքի Միտքը՝ Գեղի-Թորոսին Դիմելու

Լ·88,29, Զ·՝Լ·29, Կ·24, Հ·384,383, Զ·՝Հ·383,384·

Բանը եկաւ կըռուելո՛ւ,—
Մէլիքի–Մայր Դէ՛մը ելաւ՝ Խաղով ըսա՛ւ Իր Տըղուն.— 1)

— «Որդի՛, արի՛՝ Դուն ու Դաւիթ՝ մի՛ կըռուիք…,—
Գիշեր Երա՛զ մ՚ Իմ տեսեր, Երազիս մէջ զարհուրե՛ր Եմ…:—
Երազիս մէջ տեսա՛յ Ես…՝
Լուսնակ վեր՝ Սասմայ պայծա՛ռ էր…, վեր՝ Մըսրայ խաւա՛ր էր… .
Արի մի՛ կըռուիք, Որդի՛, խըճդի՛ր կ՚ընեմ Քեզ…»:

Մըսրամէլիք միտք ըրաւ ու ի՞նչ ըսաւ,—
= «Մարէ՛,–ըսաւ–, գիտե՛մ որ Ես Դաւթի վըրայ չե՛մ կըրնար… .

---

3) Ե·29,516՝ *Ըսողը Մըսրամէլի՛քն է:* *) *Տեղեր, Հողամասեր, երկիրներ:*

1) *Երդով:*

Իմ Զօրքերը ամէն ջարդե՛ց, կոտորե՛ց···»:
Մայրն ալ ըսաւ, — «Ելիր Զիս ա՛ռ՝ երթանք Մը՛սր···»:
= «Ի՞նչպէս երթամ,–ըսաւ Մէլիք–, ես չե՛մ կըրնար ապրիլ այլեւս՝
[երկրին մէջ·
Աչքա՛րք քաշեր բերեր եմ հոս՝ բըրդե՛լ տըւեր եմ Ամենք··· ·
Պէտք է կըռուի՛մ Դաւիթի հետ եւ ըսպանե՛մ···, բայց ի՞նչպէս···,—
Հոդին քա՛ղցր է, ոչ Ան կ'իյնայ, ոչ ալ ե՛ս··· ·
Առաւօտէն մինչեւ կէսօր՝ կըռի՛ւ կ'ընեմ Իրեն հետ՝
Կէսօրէն ետք կըկեցընե՛մ կըռիւը···:
Քեռի–Թորոս,–կ'ըսեմ–, Մարէ՛, խելքո՛վ Մարդ է՝ ու խըղճո՛վ,
Կ'երթամ կ'ըսեմ՝ «Քեռի՛–Թորոս, Դաւի՞թ չոքի՝ քէ՞ չէ ես»·
Խըղճո՛վ Մարդ է, դիտէ՛ որ ես Դաւիթէն մե՛ծ եմ տարիքով,
Կ'ըսէ՝ «Դաւի՛թ, Դո՛ւ չոքիր···»·—
Դաւիթ չոքի՝ կըզարնեմ հոն՝ կ'ըսպանե՛մ···,
Քեռի–Թորոս եւ Օհա՛նն ալ կ'ըսպանեմ···,
Հայաստանը կըկըտրե՛մ···՝
Կ'առնեմ Մայրըս՝ ու կ'երթա՛մ···»:

ՃՏՐ. «Այս Ամենը՝ Քու Հառաջադ Հիւրե՛րն Են...»

Ե·583,812,516,1120,637, (Ե·749), Ճ·37,114, (Ճ·37,114), Զ·՝Ճ·37, Լ·69,65, (Լ·100), ԶԿ·561,562,563,564, Զ(ԶԿ·562), Հ·36,435,436·

Մըսրամէլիք Դուրդը առաւ ու դո՛ւրս եկաւ Վըրանէն 1),
Դաւիթի հետ եկան ելան Հրապարա՛կ 2):—
Մէլիքն ըսաւ, — «Դաւի՛թ,–ըսաւ–, ինչո՞վ կըռուինք ես ու Դուն·
Ես լըսեր եմ՝ կէծակէ՛ն է Քո Թուրը···,—
Թող որ երեք Հարուա՛ծ զարնեմ ես Քեզի,
Թէ որ օդուտ ըրաւ՝ ըրա՛ւ···, Քէ չ'ըրաւ՝
Այս անդամ Դո՛ւն երեք Հարուած զարկ Ինձի···»:
Ապա լեղուն դարձընելով՝ ըսաւ, — «Դաւի՛թ, ա՛յ եղբայր,
Բայց ես ու Դուն ինչո՞ւ համար պիտի կըռուինք Իրար հետ···,—
Ես եկեր եմ՝ Քեզ պըսակեմ ու դառնա՛մ···,

---

1) Լ·29՝ Առաւօտուն, Լ·69՝ հացէն վերջ: 2) Ե·749,812՝ գացին մէջ Քարէկալին: *Բայց Քարէկալը յիշուած է Մըսրայ մէջ՝ Հոլխաղի առեն. Տե՛ս Հատ·* 291, 298 եւն·:

Այս Ամենը՝ Քու Հարսնաւի Հիւրե՛րն է որ բերեր եմ... .
Եկեր եմ որ Քու Հարսանի՛քն ընեմ ես...»:
Դաւիթն ըսաւ, = «Տէ՛ր վըկայ 3)՝ չըդիտցա՛յ...՝
Քանի մը Մարդ ճամբուս վըրայ ջարդե՛ր եմ...»:
— «Վընաս չըկա՛յ,—ըսաւ Մէլիք—, մատա՛ղ Քեզի՝ այն Մարդերը...,
Չէ՞ որ Դուն իմ Եղբա՛յրն ես...,
Եկեր եմ՝ Քու Հարսնի՛քն ընեմ՝ մեծ չուքով... .
Ես չե՛մ եկեր՝ Քեզ հետ կըռի՛ւ ընելու... .
Արի՛՝ ես Դուն կըռիւ չ'ընե՛նք ի դուր տեղ...»:
Դաւիթն ըսաւ, = «Ջ'ը՛լլար, Մէլի՛ք, պէտք է կըռուի՛նք ես ու Դուն»:
Մըսրամէլիքն ըսաւ, — «Դաւի՛թ, Ի՛նձ լըսէ,—
Արի՛, ես Քեզ Մատա՛յ կ'ըլլամ...՝ կըռիւ չ'ընե՛նք Իրար հետ...»:
*= «Չէ՛, չ'եղնելո՛ց *) բան է ատիկ,—ըսաւ Դաւիթ՝ Մէլիքին—.*
Քա՛նի որ Դուն Չիս խաբեցիր՝ ու կա՛պեցիր Հորի մէջ՝
Պէտք է կըռուի՛նք ես ու Դուն...,—
Տեսնենք Աստուած Ինձի՞ կուտայ՝ Թէ՞ Քեզի...»:—

658. Կռիւի Հերթն Ու Չէմբը Կ'որոշեն

ՀՍ·564,566, Հ·, Հ·384,36, (Հ·36,384), Ս·163, Հ·՝Ս·163, Լ·29,65, 100,69, (Լ·65,69,29), Հ·՝Լ·29,69, ՀԿ·575,576,562, Ե·29,637,828, 915,1009,749,516,583,782,1120,1122, (Ե·1009,749,1122), Հ·՝Ե·29, 1122, Ա·26, (Ա·26), Հ·՝Ա·26, Խ·40, Հ·՝Խ·40, Ճ·114,37, (Կ·74,30), Կ·74,25,30·

Մըսրամէլիք՝ ա՛լ այս անգամ՝ Դաւիթի դէմ կանգնեցա՛ւ...:—

---

3) «Տէ՛ր վըկայ» եւ «Ցիշա՛մ Հացն ու Գինին՝ Տէ՛ր–կենդանին» *ձեւերը՝ խորհիլ կուտան Թէ՝* Chanson de Roland*ի մէջ յաճախ յիշուած՝* կուի Ցիշամներէն — Mahom, Apolin et Tervagant*ի՝ ցարդ անլուծելի մնացած* Tervagant*-ը [զոր Մ. Ս. Դաւիթ–Բէկ փորձեր է բացատրել Հայ Տէր–Վահկայն ձեւովը] արդեօ՞ք Սասմանց Տան Ցիշամին աղաւաղ արձագանգն է, Սարակինոսներու մէջ անցած. — Այս մասին՝ Բ. Հատորով: Տես եւ* Rev. des Etudes Arméniennes 1922, *եւ Ապագայ Հաբաթաթերթի 19 Մեպտ. 1931ի Թիւին մէջ՝ իմ յօդուածը:*
*) Չ'եղնելոց, Չ'ըլալիք, *անկարելիութեան ստիճանի մէջ մտնող (բան):*

Ան կ'ըսէ, — «Դո՛ւն Մունկի եկուր՝ ես զարնեմ...»:
Ան ալ կ'ըսէ, — «Դո՛ւն նըստիր...»:
Առաւօտուն՝ եկան մըտան Հրապարա՛կ,
Մըսրամէլիք ու Դաւիթը՝ կըռի՛ւ ըրին Իրար հետ,
Ոչ Ա՛ն չոքաւ, ոչ ալ Ա՛ն...:
Մէլիքն ըսաւ, — «Բրունի՛ կըռուինք՝ թէ՞ հերթով...
Առաջին Զարկ ո՞վ զարնէ...»:
Քեռի–Թորոս կեցած էր հոն՝ կըդիտէր,—
Մէլիք դընաց Թորոսի քով ու ըսաւ,— 1)
— «Քեռի–Թորո՛ս, վերեւ՝ Աստուա՛ծ, ներքեւ Դո՛ւ...,—
Արի՛՝ ուղիղ դատաստա՛ն մը ըրէ Մեզ,—
Ես ու Դաւիթ հերթո՞վ կըռուինք՝ թէ՞ բըռնի...
Ե՞ս չոքեմ ու Դաւի՛թ զարնէ Իր հարուած՝
Թէ՞ Դաւի՛թը չոքի ու նախ Ե՛ս զարնեմ...:
Որ հերթով է՝ Ջոջը Ե՞ս եմ՝ թէ՞ Դաւիթ...,
Հերթը որո՞ն է ուրեմն...»:
Քեռի–Թորոս՝ միտք ըրաւ ու ըսաւ, = «կըռիւ հերթո՛վ է 2),
Մէլիք մե՛ծն է. Աստուած հաւան չի՛ ըլլար...
Հերթ Քեզի՛ է. Թող Դաւի՛թը չոքի նախ»:
Որոշեցին՝ պըզտիկ–եղբայր Դաւի՛թ պիտի նըստի նախ:
Դաւիթ 3) Ի՛նքն ալ ըսաւ, — «Մէլի՛ք, առաջ Դո՛ւն զարկ քո հարուած,
Դո՛ւն ես որ Ձիս հոս կըռուի ես կանչեր 4).
Դուն Իմ երէց Եղբա՛յրն ալ ես վերջապէս,—
Հերթը Քո՛ւդ է՝ իրաւունքով ու խըղճով...:
Ես մէկ Ո՛րբ եմ, ոչ Մա՛յր ունիմ, ոչ Հա՛յր ունիմ, ոչ Եղբայր.
Ձիս ըսպանես՝ Մարդ չ'ունի՛մ լայ Իմ վըրայ...
Դուն Մա՛յր ունիս ու Քո՛յր ունիս եւեւէդ.—
Եղա՛ւ որ Քեզ ըսպաննեցի՝ Անոնք կուլա՛ն Քու վըրայ...
Քու Զօրքերն ալ՝ կըմընան հոս առանց Պետ...»:
— «Շա՛տ լաւ,–ըսաւ Մըսրամէլիք 5)՝ Դաւիթին–,

---

1) *Տե՛ս Հաւուած* 656: 2) Ե·29՝ *Ըսողը Դաւիթն է*: 3) Լ·69՝ *(սխալով)՝* Սաճասար: 4) *Փոխադարձ առաջարկի այս ձեւերը՝ կ'գտնենք նաեւ Իլիականի մէջ, ինչպէս՝ օրինակ՝ Հէկտորի առաջարկը Յոյներուն* [Iliade, VII. 94]: 5) Լ·69,100՝ *խառնակ պատմին բերումովը՝* կարմիր դէվ, Ջանփօլատ:

Որ այդպէ՛ս է՝ առաջ պիտի ե՛ս զարնեմ.
Ես Քո երէց եղբա՛յրն ալ եմ, Ծո՛ւռ–Դաւիթ... .
Ըսէ նայի՛մ՝ ինչո՞վ կ՚ուզես որ զարնենք...,
Թուրո՞վ զարնենք՝ թէ՞ Գուրզով...»:
Ու մըտքին մէջ ըսաւ՝ «Մէկի՛ք, տընա՛ւեր,
Դաւիթ Գուրզով եթէ զարնէ՝ Իր տեղէն՝
Անոր Գուրզին դէ՞մ կըդըրուի՝ որ ես դընել կարենամ...
Ան Իր Թուրով մէ՛կ հեղ զարնէ՛–չըզարնէ՝
Կ՚ելնե՛մ խակոյն՝ ու կըմըտնեմ Գահարանը՝ կ՚աղաւաւիմ...»:
Դաւիթն ըսաւ, = «Ի՛նչպէս որ Քու Հոգին կ՚ուզէ՝ անո՛վ զարկ...,
ես Իմ Թուրո՛վ կըզարնեմ...»:
Մէլիքն ալ թէ, — «Որ Դուն՝ ապա՝ Քո Թուրովը կըզարնես՝
Ես ալ Գուրզո՛վ պիտի զարնեմ Մարդու պէս...»:

ՃՏԹ. «Ջի՛ Ալ Հնծիր, կե՛ր ու խըմէ՝ Նոր Կռուիճի»

Զ(Կ·30,25,74,24), Կ·24,30,74,73, Զ·՝Կ·73,24, Ճ·37,114, Ա·26, Հ·36,384, Ե·812,516,583,782,1009,637,749,1122,915,(Ե·976,1120, 782,828,915), ՉՍ·565,567, (Լ·69,100), Լ·69, Ս·163, Խ·40·

Հաւանեցան որ իրենցմէ Մէկը Գուրզով, Մէկը Թուրո՛վ պիտ՝ զարնէ:
— «Ես կըկենա՛մ,–ըսաւ Դաւիթ–, նախ 1) Դո՛ւն ինձ զարկ Քո
[Հարուած.
Թէ որ ինկայ՝ Իմ Վիշ կըտրէ՛, Իմ Արիւնը Քեզ արդա՛ր... .
Դուն Իմ Ձեռքէն կըպըրծիս...:
Թէ ո՛ղջ կացի՝ հերթն այնատեն Ի՛նձ կուգայ,
Ե՛ս կըզարնեմ. — Թէ ինկար՝
Ե՛ս Քո Վիզը պիտի կըտրեմ, Քո Արիւնը Ի՛նձ արդար...»:
Մըսրամէլիք ուրախացա՛ւ եւ Ինքիրեն ի՞նչ ըսաւ,—
Երեք Հարուած որ ես զարնեմ Դաւիթին՝
Անի պիտի ո՞ղջ մընայ...»:
Որոշեցին՝ որ ամենմէկ՝ երե՛ք Հարուա՛ծ պիտ՝ զարնէ:
—«Լա՛ւ, ես կենա՛մ,–ըսաւ Դաւիթ–, երե՛ք Հարուած Դուն ինձ զա՛րկ,
Վերջ Դո՛ւն կեցիր՝ Երեք Հարուած Ե՛ս տամ Քեզ...,—
Տէր–Աստուածն ալ՝ կամ Քե՛զ կուտայ՝ կամ Ինձի՛...» 2):

---

1) Կ·30՝ Դաշ = Նախ եւ առաջ: 2) Տե՛ս այս մասին Բ. Հրվ.:

Մըսրամէլիքն ըսաւ, = «Դաւի՛թ, Դուն չե՞ս թողուր Զիս հեծնեմ…»:
Ըսաւ, — «Մէլի՛ք, ես Քեզի պէս տըմարդ չե՛մ,
Մենք եղբա՛յր ենք…, Թըշնամի չե՛նք Իրարու…,—
Քո Զին հեծի՛ր…, լըւացուի՛ ալ…, անօթի՞ ես՝ Հա՛ց ալ կեր…,
Թէ ծարաւ ես՝ Ջո՛ւր խըմէ…,
Ելիր հազուի՛ Քու Հագուստներ…, հանդըստացի՛ր մէկ–երկ՝ օր…՝
Նոր եկ Ինձ հետ կըռուի՛…» †):
Մայրը նորէ՛ն ըսաւ, — Մէլի՛ք, «Մեղա՛յ» ըրէ Դաւիթին,
Քո եղբա՛յրն է, հաշտըւեցէ՛ք՝ մի՛ կըռուիք…»:
Մըսրամէլիք սըրդողեցա՛ւ…, = «Չէ՛, ասօ՛ր է,–ըսաւ Մօր–,
Կամ ե՛ս Դաւիթ կ՚ըսպանեմ…,
Կամ Դաւի՛թը Զիս կ՚ըսպանէ՝ վերջացա՛ւ…,—
Ե՞րբ կ՚ըլլայ որ՝ ես Մէլիքըս դերի՛ ըլլամ Դաւիթին…»:
Մըսրամէլիք ոչ Հա՛ց կերաւ, ոչ Ջո՛ւր խըմեց, ոչ կեցաւ·
Ելաւ խակոյն Իր Կըրակէ–Ձին Թամբեց,
Ըսաւ, — «Դաւի՛թ, դընա կեցիր այդ բաց տե՛ղը 3)՝ Դաշտին մէ՛ջ,
Դուն Քու տեղէն չըշարժի՛ս որ ես զարնե՛մ…»:
Որոչեցին՝ երե՛ք Հարուած պիտի զարնէ Ամենմէկ:—
Դաւիթ 4) վերցուց Իր Վահանը քաշեց Գըլխուն, Մուրբ–Նըշանը [բըռնեց տակ,
Ձիո՛ւն վըրայ՝ ըսաւ, = «Մէլի՛ք, դէ՛հ արի զա՛րկ Քո Հարուած…»:

660. Մըսրամէլիք՝ Իր Առաջին Հարուածը Կ՚զարճէ

Հ·436,36,384, ՁՍ·567,568, Ձվ·11, Ձկ·561,577,579, Ց·114,37, 115, Խ·40,41, Ա·26, (Լ·29,69,65), Լ·29,69,65, Կ·73,74,30,25, (Կ·74,30), Ն·516,583,637,749,782,812,1120,29,638,750,1121,828, 915,976,1009,30,829, (Ն·975), (Ս·163), Ս·163, Ջ·՝Ս·163·

Մըսրամէլիք 1) Իր Ձին հեծաւ, Գուրզը վերցուց բըռնեց Ձե՛ռ:—
Երե՛ք–Հարիւր–վաթսուն 2) Լի՛սր էր Անոր Գուրզ·—

---

†) *Տե՛ս Հատուած* 679՝ *Մնթ·* 2: 3) *Տե՛ս Հուծ·* 662 *եւ* 664, *սրտրջ· Մնթ·* 2: 4) Լ·69՝ Սաճասար:

1) Լ·69՝ Կարմիր Դէվ, Կ·30՝ Բարաճ Պոօծ (*միջադէպը՝ սխալ տեղ յիշուած*): 2) Ձկ·577՝ Խրխ–Հարիւր, *Տե՛ս եւ Հուծ·* 292, 302՝ *սրտրջ· Ծնթթնրվը·*:

Ձա՛խ պըտըտացուց՝ Ա՛Ջ բերաւ.
Ա՛Ջ պըտըտացուց՝ բերաւ Ձա՛խ՝
Տասերկո՛ւ–Լիսր կըրա՛կ թափաւ Անոր Գուրգէն՝ Գետնի վրայ...:
Իր Ձին քըշեց՝ դընաց ելաւ Դաշտին Գլո՛ւխ 3),
Երե՛ք–ժամու Ասպարէզէն թափով 'արձաւ ու եկաւ՝
*Իր Ձին լեցո՛ւց *)՝ Դաշտին մէջէն մէ՛կ Գորդ 4) դարկաւ Դաւիթին 5):*
Այն պահուն որ Մէլիք զարկա՛ւ Իրեն Գուրգ՝
Գուրգը եկաւ Դաւթի Դըլխուն վերևէն,
Հրեշտակները Ձեռքը տըւին Գուրգին դէմ՝
Բան մը չ'եղա՛ւ Դաւիթին...:
Գուրգը դընաց դըպաւ Գետին՝ Դաւթի կեցած տեղին մօտ,
Գետին քանդե՛ց՝ քառասո՛ւն կանդուն դընաց մըտաւ Հողին մէ՛Ջ,—
Սա՛ր–Քար Թընդա՛ց..., Փոշին ու Մէդ ելաւ Երկնից Երեսին...,
*Պահէցիպահ *) Փոշին բըռնեց Արեւի դէմ, Դաւթի վրա՛յ...:*
Դաւիթն ալ որ կորսըւեցա՛ւ Փոշու մէջ՝
Մըսրամէլիք 6) ուրա՛խ–ուրախ ի՞նչ ըսաւ,—
— «Դաւի՛թ,–ըսաւ–, է՛ Հողածին, իմա՛չ ես... .
Հաղա՛ր ափսոս, այս Մեր Սասնայ Շաղդըմակեր Տո՛ւռ–Դաւիթ...՝
Որ չահեցինք ու պահեցինք՝ դարկինք այսօր ըսպանեցի՛նք՝
[կեցած տեղ...:
*Տըղա՛յ էիր՝ Ֆո վիճակը չ'իմացա՛ր *)...,*
Հո՛ղ էիր Դուն...՝ Հո՛ղ դարձուցի Ֆեզ՝ Նորէն...:
Թէ–հէ...՛,–ըսաւ–, Ա՞ս էր եկեր՝ պիտի կըռուէ՛ր Ինձի հետ...»:—

---

3) Ց·114, ե·1121՝ Լօռայ Դաշտէն հշեց գնաց Դիարբաքրու հա–դամ, ե·638՝ միևչեւ Էջմիածին, կ·30՝ միևչեւ Հալապ, ե·782՝ վեր–դի, ե·1120՝ միևչև Ֆարղին: *) Լեցնել, *Սանձարձակ քշել*: 4) Ց·37՝ Լ·29, կ·73,74՝ Թուր՝ *ուղղել*՝ Գուրգ, ե·638՝ Կունդ: 5) ե·828՝ *«Դաւիթ եղաւ ճանճ՝ մտաւ ձիու քիթնիվեր»՝ չփոթում է. Տե՛ս Հայծ. 567ա.՝ Մնթ. 9:* *) Պահէցիպահ, *Քսանչորս ժամ, առաւօտէն մինչեւ միւս առաւօտ*, ե·1121՝ տասերկու ժամ: 6) կ·30՝ Տէր (Դէվ, Dév): *) Չ'իմացար, Չ'կշռեցիր, չ'հասկցար:

ՃԿ1. Առաջին Հարուածը՝ Պարա՛պ...

ԶՍ·568,569, Զկ·578,580, Հ·436,36,384, (Հ·36,384), Ե·915,1009, 516,583,30,517,782,1121,638,812,829, 813,750, (Ճ·114), Ճ·115,37, 38, Լ·78,69,65,66, (Լ·78), (Կ·74), Կ·74,30, Խ·41, Ա·26· Ս·164, Զ·՝Ս·164·

Դաւիթի Զին հըրեղէ՛ն էր, կըբարձրանաը դէպի վե՛ր,
Գուրզ չէ՛ր դըպըր, բա՛ն չէր դըպըր՝ Իրեն վըրայ Հեծնողին.—
Այն ժամանակ որ Մէլիքը Իրեն Հարուած կըզարնէր՝
Դաւիթն ալ չուտ մ՝ Իրեն Աղօթ որ ըսաւ՝
Առաւ Դաւիթ՝ թըռցո՛ւց հանեց երկինքներ 1),
Կըրա՛կ ցայտեց Սըմերէն... 2),
*Ժում *) մը յետոյ՝ Փոչին իջաւ պարզուեցաւ՝*
Զին չուտ բերաւ՝ կեցուց Դաւիթ Փոչիին մէջ՝ Իրեն տեղ... .
Մըսրամէլիք տեսաւ որ Ի՛նչ..., — Դաւիթ Իր տեղ կեցե՛ր է...:
Դաւիթն 3) ըսաւ, = «Հապա՞..., Մէլի՛ք, մի՛ վախնար...,—
Ես Հո՛ղ էի՝ ու Հողին ալ Զիս հաւասա՛ր դարձուցիր... .
Զէ՞ Քու ըսած Հողածին՝
Առիւծի պէս, ողջ ու առողջ, Քու առջեւը կեցե՛ր է...,
Ես չե՛մ մեռեր..., ի՞նչ ըրիր որ Դուն Ինձի... .
Դեռ Հարուածի՛ մ՝ ալ կուզամ...:
Հաւատա՛մ ու խոստովանի՛մ՝ Մարուքայի՛ Սուրբ–Նըշան՝
Որ պահապան եւ օգնակա՛ն է Դաւիթին՝
«Ես իմա՞լ եմ»..., — կըհարցընես Դուն Ինձի—...,
= Այնպէ՛ս ինչպէս Բըրինձ–փիլա՛ւ կ՛ուտէի Ես Քեզի հետ՝
Կանաչ–կարմիր Քո Վըրանին տակ նըստա՛ծ... .
Սուրբ–Նըշանի զօրութիւնով՝ ինչպէս Լո՛ւ մը խածնէ Զիս... 4).
Եկո՛ւր,–ըսաւ–, երկրո՛րդ Հարուածդ զարկ Ինձի...»:

---

1) Ե·750,782՝ Հրեշտակներ՝ Դաւիթը վերցուցին՝ ուրիշ տեղ դրին: *Համմալ.՝ Իլիականի հերոսներէն Պարիսի՝ նման բարձրացուցին հետ*, Iliade III. 46, V. 65–66: 2) Ե·915՝ Կրակ ցարէն թափեց: *) Ժում, Պահ, 3) Լ·69՝ Սաճապար (*սխալով*): 4) *Տե՛ս Հատ.* 667 (Վիգին Ծռուիլը՝ Մըսրամէլիքի Հարուածին թափէն...):

662. Մբսրամէլիճ՝ Իր Երկրորդ Հարուածը Կ՚զարնէ

Ձկ·581,582,583, Ճ·115, (Լ·69,29), Լ·69,70, Շ·՝Լ·29, Հ·384,37, Ե·583,517,750,782,915,1121,976,638,829,916, (Ե·750), Ա·26, Կ·74,30, (Կ·30), Խ·41·

Մէլիքն ըսաւ, — «Հէ՛յ վուճ կենայ իմ Ձին ա՛լ···,—
Աս իմ Ձիու Ասպարէզը կա՛րճ եկաւ···,
Օգուտ չ՚ըրա՛ւ···, պէտք է երթամ չատըննեմ···:
–Ըսաւ–, Դաւի՛թ, ատի եղաւ մէ՛կ Հարուած···»:
= «Այո՛,–ըսաւ–, մէ՛կ Հարուած···»:
Մէլիքն ալ թէ, — «Բայց որոշում 1) երե՛ք է···,
երկու դի՛ր ալ պիտի զարնեմ օրէնքով···,—
Դընա կեցիր այդ Ջո՛ջ–Քարին 2)՝ ես զարնե՛մ»:
Դաւիթ դընաց՝ կեցաւ այդ Ջոջ–Քարին վրա՛յ,
= «եկո՛ւր,–ըսաւ–, մէկ Հարուա՛ծ ալ զարկ Ինձի···»:
Մբսրամէլիք դայրացա՛ւ···,—
Իր Ձին խաղցուց՝ դընա՛ց–դընաց՝ Ասպարէ՛զ մ՚ ալ հեռացաւ,
Քըշե՛ց անկէ՝ Դաւթի մօտէն երկու ժամ ալ զատացո՛ւց,
Դընաց հասաւ Հալապ–Քաղաք 3)···՝ եկաւ դո՛ւրս,
Ասպանդակով զարկա՛ւ Ձիուն, ու Ձին քըշեց Դաւթի վրա՛յ···:
Մբսրամէլիք որ այն կողմէն Իր Ձին լեցո՛ւց ու եկաւ՝
Աչքերն այնպէ՛ս կարմըրեր են՝ արիւներ···,—
Չէ՞ որ Դաւիթ Իր Թըշնամին ու Ոսոխն է՝ Իր մըտքով՝
Քա՛նի ուժ որ կայ Իր վըրայ՝ եկաւ զարկա՛ւ Իրեն Գուրզ 3),
Է՛լ մէկ ըսաւ, — «Հաղա՛ր ափսոս Թըւլա՛ն–Դաւիթ Սասունցի՛ն···,
*Շահեցի՛նք Քեզ ու պահեցի՛նք՝ Մեր Հաց *) ասօր կորուսի՛նք···,—*
Տըղա՛յ էիր՝ Քու վիճակը չիմացա՛ր···,
Է՛ Հողածին, Հո՛ղ էիր ու Հո՛ղ դարձար···» 4):—

---

1) Լ·29՝ մանկան՝ *ուղղելի թերեւս*՝ պայման: 2) Ե·915՝ չոր՝ *ուղղելի* ջոջ (*քարին*)· *Տե՛ս եւ Հաւծ*· 659 *եւ* 664: 3) Կ·30՝ Պաղտատ, Պասրա, Ե·638՝ *մինչեւ* Իգդիր, Ե·782՝ Արտաշատ, Ե·813՝ մինչեւ Վաճ, Ե·1121՝ Դիարբաքըր: Ե·813ս·՝ «*Աչխարհագրական անուններըը՝ Վէպին հետ կապ չ՚ունին: Անոնք բերուած են* (*պատմողներէն*) *տարածութեան հեռաւորութիւնը ցոյց տալու համար*»: 3) Կ·74՝ Թուր: *) Հաց, *երախտիք, բարիք*: 4) *Հմմտ*·՝ Իլիականի՝ *նման ձեւերը*· —« O! mortel. Toi, le plus intéressé de tous les mortels. O! mortel audacieux» (Iliade, I. 6, 7):

668. Երկրորդ Հարուածը՝ Պարապ...

Ե·584,1009,813,30,637,517,638,782,916,750,829,1121,976,915, (Ե·782,813,975,1121), Ճ·115, (Ճ·115), (Կ·74), Լ·70,69, Հ·36,384, Ա·26, ՁԿ·583,580, Խ·41·

Դաւիթի Ձին՝ հրեղէ՛ն Քուռվիկ–Ջալալին՝
Նորէ՛ն թըռաւ՝ Դաւիթ հանեց երկինից հետ 1)·
Հրեշտակներն ալ՝ Ձեռքը տըւին Դուրգին դէ՛մ,
Դուրգը դընաց իննկաւ Դաւիթին Քառսո՛ւն կանգնուն հեռուներ...,
Ու Դաւիթի մէ՛կ Մազն անգամ չըխոռեց,
Փոչին ու Մէգ՝ Արեգական երես բըռնեց ու կեցա՛ւ...,—
Երկու օր ու երկո՛ւ դիշեր՝ երկինք–Գետինք մըթնեցա՛ւ....
Փոչին երբոր վերցըւեցա՛ւ մէջտեղէն՝
Ձին՝ Դաւիթը բերաւ կեցուց Իրեն տեղ:
Դաւիթն ըսաւ, — «Մէլի՛ք, չէ՞ որ Ես Իմ տեղը կեցո՛ր եմ... .
Ես ո՛ղջ եմ դեռ, Քու Հարուածով չե՛մ մեռեր... .
Ես Քու Հոգին Առնո՛ղն եմ...
Քու Հարուածի՛ մ՝ ալ կա՛մ դեռ...,—
Գընա Քո տեղ՝ զա՛րկ Քո Երրորդ Հարուա՛ծն ալ...»:—

664. «Ինչի Կ'ըլլամ Փոսխուճ...»

Խ·41, Ճ·115,38, Զ·՝Ճ·38, Ե·782,1122,916, Լ·66,70, (Լ·66), Զ(Ա·27), Կ·74, Զ·՝Կ·30·

Մըսրամէլիք 1) *տեսա՛ւ Դաւիթ՝ Ձիուն վըրայ՝ Իրեն տեղը կեցե՛ր է,*
Զարմացա՛ւ ու վախը բըռնե՛ց Իր Մարմին...,—
Ա՛լ այս անգամ՝ երկինք–Գետինք Իր Աչքերուն մըթնեցա՛ւ...,

---

1) Քանի մը վոխոխակներով՝ Հրեշտակներն են Դաւիթը վեր բարձրացնողները: Համմալ· Հէկթորի պարագան, Աստուածներու ամպովը ծածկուած ու փրկուած՝ երեք անգամ, Iliade XX. 287: Իսկ V. 65–66՝ նժոյգներուն համար կ'ըսուի, — « Tu verras les chevaux..., poursuivre l'ennemi, ou lui échapper» : Աստնցմէ Արիոն ձին՝ հրեղէն ու ծովեղէն էր Ք–Ջալալիի պէս (Il. XXIII 322u·) :

1) Լ·70՝ Դէվը:

*Խեղճ–խեղճ *) ըսաւ,—«Դաւի՛թ, եղբա՛յր, ինչի՛ կ'ըլլամ փոշեհա՞ն*),*
Եկուր այլեւս կըռիւ չ'ընե՛նք ես ու Դուն...,
Այսօր հանդչի՛նք...՝ վա՛ղ կըռուինք...»:
= «Չէ՛, չեղնեւո՛ց բան է սաւ, Մխի՛թ,–ըսաւ Դաւիթն ալ–,
Երկու Հարուած զարկի՛ր ինձի, մէ՛կ ալ ջարկ...,
–Ըսաւ–, Մխի՛թ, աղ երկո՛ւս...»:
— «Այո՛, Դաւի՛թ, աս երկո՛ւս... .
Մէկ Հարուա՛ծ ալ պիտի զարնեմ, պատրա՛ստ կաց... .
Գընաս կեցիր այդ Ջոր–կոճին 2)՝ որ ես զարնե՛մ իմ Հարուածդ»:
Գընաց կեցաւ այդ կոճին վրայ՝ Դաշտին մէջ,
Ըսաւ,=«Մխի՛թ, դէ՛ չո՛ւտ ըրէ՝ մէկ Հարուա՛ծ ալ զարկ՝ պըրծի՛ր»:—

665. Մըսրամէլիք Իր Երորդ Հարուածը Կ'զարնէ

ՁԿ·584,585, Ճ·115,38, Ձ·՝Ճ·38,115, Կ·30,74, Հ·384,37, Ե·517, 584,638,750,782,813,829,916,976,1121,30, (Ե·782), Ա·26, Ձ·՝Ա·26, Խ·41, (Լ·29), Լ·70·

Մըսրամէլիք դի՛ր մ՝ ալ ըսաւ, — «Հէ՛յ Իմ Ձիու Վի՛զ կոտրէք...,
Իմ Ասպարէզ չատ կա՛րճ եղաւ՝ Թաւի չըմընաց Իմ Գորղին...,
Անոր համար օդուտ չ'ըրա՛ւ Իմ Հարուած... .
Այս անդամ ես պիտի ելնեմ հետ–Երկնո՛ւց՝
Այնպէ՛ս զարնեմ՝ որ Դաւիթը իմնէ մինչեւ Անդունդնե՛ր...»:—
Իր Գուրզն առաւ բըռնեց Ձե՛ռ,
Քըշե՛ց Իր Ձին, Թաւո՛վ դընաց՝ զատնացա՛ւ ու զատնացա՛ւ...,
Գընաց հասաւ Մըսրայ–Քաղա՛ք 1)՝ ելաւ դո՛ւրս,

---

*) Խեղճ–խեղճ, *խղճալի ձեւով*: *) Փոշեհան, *թունէրի մոխիրը հանող դուրս թափող*: *Համեմատել՝ Սուրբ կարապետ Վանքի փոշեհան կաղ–Դեւի գրոյցը (թունէրի մոխիրները փրէ–բաթման Գետ թափելու պաշտօն ստանձնած՝ Գր. Լուսաւորչէն), — ուրիշ տուեալ մը՝ Դաւիթի՝ Տրդատ ըլլալու վարկածիս. Տեսնել Բ. Հատորով:*
2) *Հատուած 659, 662 եւ այս 664–ի համաձայն՝ Մըսրամէլիք միշտ տեղ փոխել կուտայ Դաւիթին, կասկածելով որ Դաւիթ իրեն նպաստաւոր դիրքի մը վրայ կեցած կ'ըլլայ եւ կրնայ ճողոպրիլ իր հարուածէն:*

1) Ե·782՝ Երեւան, Ե·813՝ Մասիս Սար, Ե·1121՝ Բիլէճիկ՝ (*պատմողներուն երեւակայութեանը համեմատ*):

Երկու ժամ 2) ալ աւելի, —
Իր Զին խաղցո՛ւց, Ասպանդակով զարկաւ Զիուն Կողերուն,
Ելա՛ւ հասաւ հետ–երկնո՛ւց...՝
Ջըշեց եկաւ՝ մէկ Հարուա՛ծն ալ զարկաւ Դաւիթին՝ ու ըսաւ.—
— «Ա՛լ այս անգա՛մ...՝ իմա՞լ ես Դու, Տո՛ւռ–Դաւիթ... .—
Հազա՛ր ափսոս...՝ Մեր Սասունայ Շաղգըմակե՛ր Ո՛րբ–Դաւիթ...,
Ձեզ չահեցինք ու պահեցինք՝ ասօր զարկինք մեռցուցի՛նք...:—
Տըղա՛յ էիր՝ Դու վիճակը չ՛իմացա՛ր...,
Հո՛ղ էիր ու այս անգամիս Հո՛ղ դարձար...»:—

666. Տրոյդ Հարուածը՝ Պառա՛պ...

Կ·74,24, (Հ·36), Հ·384,436,37, Խ·41, (Խ·41), Ե·584,30,638,1009, 916,583,783,829,976,1121,750,782, (Ե·813), Ճ·115, 38, Լ·70,29, Զ·՝Լ·70, Ա·26, ՉԿ·586,587·

*Մըսրամէլիք ինչ *) Գուրզ զարկաւ Դաւիթին՝*
Դաւիթի Ձին՝ ղ՛ինքը վերցուց նորէն հանեց Երկինք–վե՛ր...,
Մէլիքի Գուրզ ղընաց ինկաւ հեռունե՛ր...,—
Փոչին ու Մէդ, Հող ու Քարը խառնըվեցան Իրարո՛ւ...,
Երկնից Երես մըթնեցա՛ւ...,—
Երե՛ք ղիչեր ու երե՛ք օր՝ Փոչին կեցաւ Օդին մէ՛ջ...:—
*Ծաչ–Փեսրազին՝ Ծառա՛յ կ՛ըլլամ Իր Զօրքին *)՝*
Ձինքը նետեց Գուրզին դէմ՝
Նորէն՝ այնտեղ՝ բան մը չ՛եղա՛ւ Դաւիթին:
*Քիչ որ մընաց՝ Փոչին առաւ բարակիլ *)...,*
Իր Ձին նորէն բերաւ Դաւիթ՝ Իրեն տեղը կանգնեցո՛ւց:
Մէլիք տեսաւ՝ որ Դաւիթը՝ Ձիուն վըրայ՝ Իրեն տեղը կեցա՛ծ է... 1)·
Դաւիթն ըսաւ, — «Է՛–հէ՛, Մէլի՛ք, Ես դեռ այստեղ կեցե՛ր եմ...,
Սուրբ–Նըշանի զօրութիւնով՝ ինչպէս Լո՛ւ մը Ձիս խածնէ՛... 2)·
Ողջ–առո՛ղջ եմ..., Ինձի բան մը չ՛է՛ եղեր... .

---

2) *Այսինքն՝* երկու ժամու ճամբայ· Հ·384՝ երկու օր(*ուան ճամբայ*): *) *Ինչ, Ինչ տեսեն որ, երբոր:* *) *Զօրք* (*դէօրք*), *Հրաշագործ կարողութիւն:* *) *Բարակիլ, Անօսրանալ:*

1) *Նոյնը՝ Աքիլլէսի համար՝ տեսնելով Հեկտորը անվնաս կեցեր է իր հարուածներուն առաջ.* Iliade, XX. 285: 2) *Տե՛ս Հուծ.* 661՝ *ստրջ. Մնթ.* 4 *եւ* 667 (*Վիքին Ծառութիւնը*):

Քու ճա՛րն ըրէ Դուն հիմա…,—
Առանց Գըրող՝ հոգիդ Առնո՛ղ եմ եկեր,
Ե՛ս սլիտի Քեղ Հո՛ղ դարճնեմ…:
Դուն Քու երեք Հարուած զարկիր՝ լմընցա՛ւ,
Հիմա հերթը Ինձի՛ եկաւ, օրէնքով…»:
Մէլիքն ըսաւ, = «Ի՛նչ սընաւեր, մէ՛կ ալ երթամ դամ՝ զարնեմ…»:
— «Չէ՛,—ըսաւ—, ո՛ւր պիտի երթաս…, հերթն Իմս է… .
Կըտիւ ըսածդ՝ հերթո՞վ կ՚ըլլայ Աչխարհի մէջ՝ թէ՞ բըռնի… .
Մէլի՛ք,—ըսաւ—, դընա կեցի՛ր՝ Ե՛ս զարնեմ…,
Թէ չէ՝ հերթը կըդարձընեմ բըռունցքի…»:
= «Ո՛ր Դուն ո՛ղջ ես,—ըսաւ Մէլիք—, վի՛ր ելիր,
Երեք Հարուած՝ Ես զարկի՛…,
Եղբա՛յր,—ըսաւ—, հերթը Քո՛ւկդ է այս անգամ,
Ի՛նչ որ կ՚ուզես՝ ան ըրէ՛…»:—

667. Ծուռ-Վիզ Դաւիթը

Չ·՝Ա·27, Ա·27, Ց·38, Լ·29, (Ե·783), Ե·783, (Կ·30), Կ·30·

Դաւիթ՝ Չիւլ՝ Թը՛ռա՛ւ՝ մէջտեղ կանգնեցա՛ւ,—
Տեսաւ Վիզը ծըռուե՛ր էր 1)…:
*Ան ալ դոմի *) մը զարկաւ Վըզին՝ ու չըտկե՛ց,*
*— «Վըրէ՞ *),—ըսաւ—, հարուածի դէմ չե՛ս կենար·՞·՞·՞»:—*

668. «Գիւաղ Գրիչ՝ Գրեցին…»

Ե·1009,638,517,829,813,976,1010, Չ·՝Ե·638, Ս·164, Չ(Ս·164), Կ·24,25, Հ·37,436, (Հ·436,38), ՉՍ·570. Ց·115, (Ց·38), (Լ·70), Չ·՝Լ·66, Լ·66, ՉԿ·588·

Երե՛ք անգամ՝ Մըսրամէլիք գընաց–եկաւ՝ ու զարկա՛ւ,
Երե՛ք անգամ ըսաւ՝ «Դաւի՛թ, Հո՛ղ էիր ու Հո՛ղ դարձար»…,

---

1) Պատճա՞ռը՝ Տեսնել Հատ· 661՝ Մնթ· 4 եւ 666՝ Մնթ· 1: Տեսնել նաեւ ՉՍ·630՝ Դաւիթի վիզին ծռուքեան մասին, եւ Ծուռ-Դաւիթ կոչումին համեմատել՝ Տրդատ Թագաւորի վիզին ծռուքեան առնդուքիւնը: Վանայ Քաղաքամէջի Ս· Պօղոս եկեղեցու ձախ խորանին քով՝ կախուած նկարի մը մէջ՝ Տրդատ Թագաւորը ցուցուած էր վիզը բիչ մը ծռած· (Տե՛ս եւ Բ· Հատ·)։ *) Դոմի, կռուի։ *) Վրէ՞, Ինչո՞ւ, ի՞նչպէս կ՚ըլլայ որ…։

Ու Դաւիթն ալ՝ երե՛ք անգամ՝ Իրեն «Ճիչամ» չըմոռցա՛ւ,—
Անոր երե՛ք Հարուածներն ալ՝ պարա՛պ գացին, չըդըպա՛ն։
Երբոր երե՛ք Հարուած զարկաւ՝ ու բան չ'ե՛ղաւ Դաւիթին՝
Կանչեցին՝ հոն, Դիւա՛ն դըրին, Դի՛ր դըրեցին Քէ, — «Իրա՛ւ,
Մըսրամէլիք զարկա՛ւ Իրեն երեք Հարուած՝ ու պըրծա՛ւ»։
*— «Հերթը ո՞ւմն *) է,—ըսին հիմա—, = Հերթը հասաւ Դաւիթի՛ն...»։*
Դաւիթն 1) ըսաւ, — «Հերթն Իմ հե՛րթն է այս անգամ.
Քանի որ Դուն՝ երեք Հարուած զարկի՛ր Ինձի՝ ու պըրծար՝
Հիմա ալ ե՛ս՝ երեք Հարուած պիտի զարնեմ՝ Իմ կարգին...,—
Ապա նըստի՛նք՝ ու եղբօր պէս զըրուցե՛նք...»։
Մըսրամէլիք՝ Գուրզը տըւաւ Դաւիթին,
Դաւիթն ըսաւ, — «Ես Քու Գորգին պէտք չ'ունի՛մ...,
Ես Իմ Թուրո՛վ կըզարնեմ...»։—

669. Մըսրամէլիք Զիւնաիր, Մայրը Դաւիթի Կ'աղաչէ

Ե·517,1121,813,750, Զ·՝Ե·1121, (Ե·750,813), Ս·164, Զ(Ս·164), ԶՍ·571,572, Հ·436, (Կ·75,24), Պ·75,24, Զ·՝Կ·24, Զ·

Հերթը հասաւ Դաւիթին... որ՝ Ա՛ն պիտ՝ զարնէ Մէլիքին,—
Ու կենալու հերթը եկաւ Մէլիքի՛ն,—
*Մըսրամէլիք զընկռա՛ւ *) կեցա՛ւ, չէ՛ր նըստեր...։*
Մեղադրեցի՛ն զ'Ինք Իր Մեծերն ու Զօրքեր...,—
*Մէլիք գընաց՝ Գըլուխ խոթեց՝ մըտաւ Իր Մօր Ադու *) տա՛կ,*
Ըսաւ, — «Մարէ՛, ես Դաւիթին երեք Հարուա՛ծ իջուցի՝
Դաւիթն երբեք բան չ'եղա՛ւ... 1).—
Հիմա՝ Դաւիթ կուգայ այստեղ՝ Ինձ կըզարնէ՛ Իր հերթին...»։
Տեսաւ չ'ը՛լլար, — առաւ Վահան՝ դըրաւ Գըլխուն ու եկա՛ւ,
Եկաւ մէջտեղ՝ որ Դաւիթի Հարուածներուն տակ կենա՛ր...։—

---

*) Ո՞ւմ, Որո՞ւ։ 1) Լ·70՝ (սխալով) Սաճասար։

*) Զնկռիլ, Հնգռիլ, Գլուխ տնկել, դիմադրել։ *) Ագի, Քղանց։ 1) ԶՍ·573–574՝ «Անկէ (մօրը Ադին տակէն) ելաւ Մըսրամէլիք՝ դընաց մտաւ իր կնկան ադու տակ, Դաւիթն ըսաւ՝ Ան մէկ առաջին Հարուածը իմ մօր սիրոյն, ու մէկն ալ՝ Աստծու սիրոյն. կնկանը բաչխել չ'կայ. մէկ Հարուած պիտի զարնեմ»։

Այս անգամ ալ՝ Մէլիքէ-Մայր՝ եկաւ Դաւիթին աղաչե՛ց,
Ըսաւ, — «Դաւի՛թ, Աստծո՛ւ սիրոյն, մատա՛ղ Գըլխուդ՝ Արեւի՛դ...,
Որդի՛,–ըսաւ–, չէ՞ որ Ատ ալ Քու եղբա՛յրն է՝ մէկ հօրէ...,
*Անբախտութիւն *) մ'ը'նեը այսօր..., Մէլիք խե՛ղճ է, մի՛ դարնեը 2).*
Թող դայ՝ հօթ դիր՝ Թըրիդ տակէն՝ Գըլուխ ծըռէ եւ անցնի՛...,
Գերի՛ ըլլայ..., Քեզի Տո՛ւրք տա՛յ՝ ու նըստի՛...»:
= «Հէ՛յ անօրէն,–ըսաւ Դաւիթ–, անբախտութիւն ե՞ս կ'ընեմ.՞.՞.՞.
Մինչեւ հիմա որ Մէլի՛քն էր Հարուած կուտար Իմ Գըլխուն՝
Ինչո՞ւ Իրեն չ'էլի՛ր ըսեր՝ «Դաւիթը Քու եղբա՛յրն է...,
Մե՛ղք է, խե՛ղճ է, մի՛ դարնեը...»:
Բայց՝ թող՝ Մարէ՛, այդպէ՞ս ըլլայ. անբախտութիւն չե՛մ ընեը...,
Մէլի՛ք, եղբա՛յր.՞.՞.՞, ի՞նչպէս կ'ուզես որ ընեմ...»:—

670. Մըսրամէլիք Միջոց Կ'ուզէ. Ծակ Կ'փնտռէ՝ Պահուելու

Զ.՝Խ.41, Խ.41, Ե.30,638,1121,783,976,637, (Ե.30,783), Զ.՝Ե.916, 638,1122), Հ.37,436,384, (ԶԿ.598), ԶԿ.598, Ց.116,38, (Ց.38,116), Զ.՝Ա.27, (Ա.27), Ա.27, Կ.74, (Լ.66,69), Լ.99, Զ(Լ.99,30).

Մէլիքն ըսաւ, — «Դաւի՛թ, եղբա՛յր..., հերքը Քո՛վիդ է վերջապէս,
Բայց կըխընդրեմ՝ հօ՛թ օր մէջո՛ց տաս Ինձի...՝
Ես տե՛ղ չինեմ՝ մըտնեմ տա՛կ...»:
Դաւիթն ըսաւ,—«Չէ՛ թէ հօ՛թ օր՝ քառասո՛ւն օր ալ՝ Քեզ մէջոց...,—
Գընա Քու Հողն ու Քա՛րն ըրէ՝ տանէնին.... .
Ի՛նչ ալ ընես՝ երեք Հարուա՛ծ պիտի զարնեմ Ես Քեզի...»:
Մըսրամէլիք նայեց Դաւիթին՝ ու ըսաւ,—
— «Դաւի՛թ,–ըսաւ–, Ես կըվախնա՛մ Քո Աչքերէն ու Թուրէն...,—
Ինձ թող կուտա՞ս՝ երթամ մըտնեմ Վըրանին տակ՝ ու պառկիմ... .
Կամ թէ Ջիուս Ջորս Ոտքերուն մէ՛ջ մըտնեմ...՝
Դուն գաս զարնե՛ս Քո Հարուած.՞.՞.՞»:
=«Գընա՛,–ըսաւ–, ո՛ւր որ կ'ուզես՝ Հո՛ն պառկէ... .
Որ կըվախնաս՝ քառասուն կանգնուն Հո՛ր մը փորէ՝ մըտիր մէ՛ջ... 1),
Քառասուն Ջաղջի-Քա՛ր բերել տուր՝ դիր վըրա՛ն,

---

*) Անբախտութիւն, Տմարդութիւն: 2) Կ.34՝ վիզը մի՛ կտրեր:
1) Լ.66՝ Սաթասարն է՝ կարմիր-Դէվին կ'ըսէ, Լ.99՝ Դաւիթն է՝ Մէլիքի մօրը կ'ըսէ (պատումին խառնակութեան բերումովը):

Քառասուն Գոմշու–կաշի՛ ճըղէ Քու վըրա՛յ,
Քո Զին ալ բե՛ր՝ Թող գայ կայնի Քու վըրա՛յ,—
Ապահո՛վ կաց՝ այս մէկ դէր···:—
Երե՛ք անգամ պիտի զարնե՛մ Իմ թուրով·
Ես Իմ բախտի՛ն, Քու բախտի՛ն···:—
*Պըրծա՞ր՝ պըրծար···, Թէ չըպըրծար՝ հո գացի՛ր··· *)»:—*

671. Քառասուն Կաճգուն Խորունկ Հոր

Ե·30,1122,584,917,1010,783, (Ե·1122,915), Զ·՝Ե·584, (Լ·70), Լ·70,99, Զ·՝Լ·70, (Հ·436), Հ·436,384,37, ԶԿ·598, (ԶԿ·595), (Կ·75), (Ը·38), ԶՍ·576, Խ·41· Ա·27,

— «Հապա՞,–ըսաւ Մըսրամէլիք–, հրեղէն Քուռա՛կ է Քու Զին,
Քեզ կըհանէր կըթըղըշնէր Երկինք–վեր,
Անոր համար Իմ Հարուածներ չ՝ազդեցի՛ն··· ·
Ես ալ իջնեմ Քառասուն–կանգուն Խորունկ Ցորնի–Հորի մ՝ տակ,
*Քառասուն Ջաղցի անծակել *) Քար՝ բերեն դընեն Անոնց վրա՛յ 1),*
Քառասուն 2) Գոմշու կաշի՛ բերեն՝ քաշեն Հորի Բերանին,
Քառասուն Թաղիս Թըրջեն դընեն Իր վըրա՛յ,
Եւ Իմ Զին ալ՝ Թամբո՛վ–բանով՝ բերեն կենայ Իմ Գլխին,
Նոր Դուն Ինձ զա՛րկ Քո Թուրով,—
Հասուցի՛ր՝ լա՛ւ, չըհասուցի՛ր՝ Ես կ՝ելնեմ դո՛ւրս Իմ Հորէն,
Այս անգամ ալ՝ Ե՛ս կըզարնեմ՝ նո՛ր հերթով···»:
=«Դէ՛, չուտ ելի՛ր,–ըսաւ Դաւիթ՝ Մէլիքին 3),—
Ի՛նչպէս կ՝ուզես՝ ան ըրէ՛,—
Քո Ցորենը դո՛ւրս հանել տուր այդ Հորէն
Ու Դուն մըտիր Անոր մէ՛ջ···,—
Ջաղցի–Քարեր վըրա՛ն քաշէ, Քու կաշիներ դէր վըրա՛ն,
Քո Թաղիսը Թըրջէ՛–ճըղէ՛ Հորին վրայ,
Որ Իմ Հարուած երբոր զարնեմ՝ Քեզի վրնաս չըհասնի՛···»:

---

*) Գացիր, կեանքդ վերջացաւ:

*) Անծակել, Մէջտեղը չ՝ծակած: 1) Ե·30՝ վար իմ՝ *ուղղել՝* վար ձի (*իմ վրայ*): 2) Հ·436՝ հօթը: 3) Լ·70 (*խառնակ պատուհմովը*)՝ Սաճասար կ՝ըսէ կարմիր–Դէվին:

Մէլիքէ–Մայր՝ այս խօսքերը որ լսեց՝
*Ուրախացա՛ւ, ելաւ չուտ մը կանչեց բերա՛ւ Քանքաններ *),*
Հորին մէջէն դո՛ւրս հանեցին՝ լի՛նչքան Ցորեն որ կար մէջ,
Ու փորեցին՝ մինչեւ Քառասուն 4) կանգուն խորո՛ւնկ՝ իշան վա՛ր.
Ըրին այնպէ՛ս՝ ինչպէս Մէլիք ուզե՛ր էր...:—

672. Մըսրամէլիի՝ Քառասուն-Կանգուն Հորի Ցակ Քառասուն-Քառասուն Ծածկոյթով

Ե·517,829,638,1010,916,584,30,1122, (Ե·584,719), Ջ·՝Ե·638, Հ·37,436, Ջ·՝Հ·37, (Կ·75), Ջ(Կ·75), Կ·75, Ա·27, Լ·70, (Լ·99), Լ·99, ՋԿ·595,599, (ՋԿ·599), ՋՍ·576, (ՋՍ·576), Խ·41, Ճ·116·

Մըսրամէլիք իշաւ մըտաւ Հորին մէ՛ջ 1),
Ապահովուած՝ դընաց իշաւ Հորին տակը՝ ու կեցա՛ւ 1):—
Մայրը կանչեց՝ բերին Քառասուն Ջաղացքա–քար 2)՝ անծակել,
Ու քաշեցին այդ մեծ Հորի Բերնին վրա՛յ.
Քառասուն Թաղիս 3)՝ կըպրած–Թըրջած՝ դըրին Քառասուն Քարին վրա՛յ.
*Բերին Քառասուն Գոմշու–կաշի 4)՝ խաղախած *)՝*
Ու քաշեցին՝ վեր՝ այդ Քառասուն Թաղիքին.
Զին ալ՝ Թամբով՝ կեցուցին հոն Գըլխին վրա՛յ 5):—
Ա՛յնքան բարձըր եղաւ այնտեղ, դիզուեցաւ՝
Որ չե՛ս ըսեր Թէ Մէլիքը՝ անոնց տակն է՝ Հորին մէջ...:—

---

*) Քանքան, *Հոր փորող արհեստաւոր.* ՋՍ·576, Հ·37,436, Ե·1122՝ լաղըմչի, և *փորել տուողը Մըսրամէլիքն է:* 4) Հ·37՝ Խօքը: 1 և 1) Ե·719՝ Վըհարէ–Կօր փախա...՝ մէջ Քարէ–Կալին: *Տե՛ս եւ Տնէ.՝* 5: 2) Ե·638՝ Խօք պռովըտէ սպի: 3) Կ·75՝ վերմակներ: 4) Լ·99՝ ըղտաճ կաշի (*ուղտի*): *) Խաղախած, *Դեղերով կարծրացած*, tanné: 5) Հ·436՝ ձին ալ թամբով՝ հորին մէջ: *Հմմտ.՝ հին յունական աւանդութիւնը, որով մեռնող հերոսին դամբանին վրայ կ՝դնէին սիւներ՝ կառքերուին ու ձիերովը,* — « colonnes inébranlables». [Iliade, XVII. 248 եւ 248ս·]:

673. Մայրը կ'ըսէ «Այդ Մէկ Հարուածն Ինձ Բաւախ»

Խ·42, Ե·638,584,517,916,1122,30,829,750,783,813, (Ե·584,813, 1122,719), Լ·99,29,70, (Լ·29), Հ·37,436,384, ՁԿ·589,590, (Կ·75), Ձ·՝Ը·38,37,115,116, ՁՍ·577,572·

Մըսրամէլիքն ըսաւ, — «Դաւի՛թ, եկո՛ւր ու զա՛րկ Քո Հարուածդ»։
Դաւիթ ելաւ՝ Ձիուն վըրայ՝ Ասպարէ՛զ մը որ առաւ՝
Խաղցո՛ւց Իր Ձին, — հրեղէն Քուռկիկ–Ջալալին,
Ձեռը զարկաւ՝ քաշեց Թո՛ւրը–Կէծակին,
Իր Ձին քըշեց՝ եկաւ կեցաւ Հորին Բերան 1)՝ որ զարնէր՝
Մէլիքի–Մայր 2)՝ որ այնտեղը կանգնած է՝
Տեսա՛ւ Դաւիթ՝ Ձին խաղցընել՝ քըշել–գալ,—
Ըսաւ՝ «Դաւիթ՝ տունը կ'աւրէ՛ Մէլիքին...»։—
Վազեց դընաց Դաւիթի առաջ, Իր Ծըծերը լա՛յն բացաւ 3),
Ինկաւ Դաւիթի Ոտքերուն,
Ըսաւ, — «Դաւի՛թ, Հոգո՛ւդ մեռնիմ, Աւետո՛ւդ...,
*Քի՞չ ես ծըծեր այս Ծըծուներ *)... .*
Իւղով–Մեղրո՛վ Քեզ պահեր եմ՝ այնքան ամիս ու տարի...
Քեզ չահեր եմ ու պահե՛ր եմ..., քաղցրիկ քո՛ւն եմ խանգարեր...
Քեզ քաղցը Մի՛ծ եմ տըւեր...,—
Այս Մի՞ծերուն յարդ չըկա՞յ... .
Քու Աչքերուդ դէ՛մը բըռնէ 4)՝ Թէ Դուն Մէլիք ըսպանես... .
Քու Եղբա՛յրն է..., Քեզի կ'ըսեմ մի՛ զարներ... .
Որդի՛,–ըսաւ–, այդ մէկ Հարուածն Ի՛նձ բաւախ...,—
Տուր Իմ սիրո՛յն եւ Իմ կաթի՛ն...՝ այդ մէկ Թուր... .
Տուր Իմ քունի՛ն, չարչարանքի՛ն ու խնամքի՛ն...»։—

---

1) Ե·719՝ Դաւիթ գնաց դէպ Վհաբէ–կօր, ընկաւ հետեւ։ 2) Ե·30՝ Դաւիթի մայր (*խորթ*)։ 3) *Հմմտ. Հեկտորի մօր ըրածը՝ նոյն ձեւով՝ որպէսզի համոզէ տղան՝ պարիսպէն ներս գայ, Աքիլլէսէն չ'սպանուելու համար.* [Iliade, XXII. 303–4]։ *) Ծծուներ, Մի՛ծերը, ստինքները։ 4) *Անէծքի ձեւ մը, — Իմ քու վրայ ունեցած երախտիքը թէ մոռնաս՝ աչքերդ կուրանա՛ն։*

674. «Այս Մէկ Թուրը՝ Ինչ Սիրոյն»

Հ·436,37,384, Ջ·՝Հ·384, Լ·29,70,99, Կ·75, Ե·783,829,976,517,750, 813,1010,1122,916,30,584,638,585, (Ե·813,1122), Խ·42, ՉԿ·590, (Ա·27), Ջ(Ա·27), Ց·38,116, ՉՍ·573·

Դաւիթն այնտեղ ա՛լ չդարկա՛ւ, ըսաւ, — «Մարէ՛, բաչխեցի՛··· .
Այս մէկ Հարուածՙ ինչ այն Սիվասո՛ւկ կաթի սիրո՛յն կուտամ ես,
Ինչ ծըծե՛ր ենք՝ ես ու Մէլիք՝ ինչ կուրծքէն,
Եւ իմ կերած Հացի՛ն համար ու խընամքին՝ Ձեր Տան մէջ,
Ձեզ խանդարած քաղցրիկ քունի՛ն, չարչարանքի՛ն՝ ինձ համար,
Ու ինչ սիրոյն՝ որ այն օր ինչ Մէլիք կ՚ուզէր Ձես խեղդել 1)՝
Դուն դէ՛մ կեցար՝ չըթողի՛ր··· 2)»:
Շնորհե՛ց Դաւիթ՝ մէկ Հարուածՙ—
*Թուր տարաւ թեւ *)՝ բերաւ պադեց՝ դըրաւ իրեն Գըլխին վրայ,*
*Դարձուց դըրաւ իր կալան *),—*
Ըսաւ, — «Մարէ՛, այս մէկ Թուրը՝ ինչ սիրո՛յն···»:—

675. Մեծ-Ինչ Կ՚ըսէ «Մէկ Հարուածը Ալ Ինձ Շնորհէ»

Ե·30,585,638,829,916,517,31, Հ·436, ՉԿ·591,592, Ց·38, Խ·42, (Խ·42), Լ·70,75·

Դարձաւ դի՛ր մ՚ալ՝ Իր Ձին խաղցո՛ւց ու եկաւ,
Թուր–կէծակին քաշեց հանեց որ զարնէ՝
Այս անգամ ալ՝ Ջո՛ջ–Ինչն 1) եկաւ Իր առաջ,
Ըսաւ, — «Դաւի՛թ, այնքա՛ն ես Ինչ չալկեր ե՛մ···,
*Այս Թեւերուս վըրայ կա՛ն եմ ածեր *) Ինչ՛ը···,*
Ինչ Լաթերը լըսացի՛ր եմ՝ չորցուցի՛ր···,—
Ինձ յարդ չըկա՛յ Ինչ քովըդ·՛·՛· .
Մէկ Հարուածՙն ալ ի՛նձ չնորհէ··· 2)»:
Դաւիթ Թուրը տարաւ մինչեւ Իր Ուսին՝

---

1) *Տե՛ս Հատ* 314,290,310,313: 2) Ա·27՝ *Դաւիթ՝ Մէլիքին է կ՚ուզէ իր խօսքը:* *) Թեւ, *Ուս:* *) Կալան, *Պատեան (սուրի):*

1) Ե·585՝ *Ինչերը:* *) *Կաճ ածել, Պատցնել:* 2) Ե·829՝ *Մայրն է չնորհ ուզողը՝ այս անգամ Դաւիթի եկած երկար ճամբու սիրոյն:*

Բերաւ պաղեց՝ դըրաւ Իրեն Գըլխուն վրայ՝
Թուրը դըրաւ կալանին մէջ, չըզարկա՛ւ,—
= «Այս Հարուածն ալ, Քուրի՛կ,—ըսաւ—, ես բաշխեցի Քո՛ սիրոյն,
Ինձ կըմընայ մէ՛կ Հարուած...»:
Այդ Հարուածն ալ Քըրոջ սիրոյն որ բաշխեց՝
Դաւիթ մընաց Ինք Իր Աստուած՝ մէ՛կ Հարուած...:—

676. Երրորդ Հարուածին՝ Կիւնհուն Պարճ Ու Խազը

ՁԿ·593, Հ·384, Ե·813,916, (Ա·27), Ձ(Ա·27), Ա·27, Ձ·՝Ա·27, Ձ·, Ձ(Ց·116), (Ց·116), Ձ·՝Ց·116, Ց·116, Կ·24,75, Ձ(Կ·75), Ձ·՝Կ·75·

Դաւիթ՝ դի՛ր մ՝ ալ՝ քըշե՛ց Իր Ձին՝ դընաց հեռո՛ւ 1) որ դառնայ,
Ձարնէ երբո՛րդ Իր Հարուած,—
Մէլիքի-Մայրն ի՞նչ ըրաւ.—
Մայրը ելաւ չուտ մը կանչե՛ց Իր հետ բերած Աղջիկներ 2),
Հորին դիմաց բերաւ կեցուց՝ տասերկու Հա՛րս ու Աղջի՛կ,
*Ըսաւ, — «Աղջի՛կ *), ելէք Ամենքդ Թաչկինակներ բըռնեցէ՛ք՝*
*Պա՛ր-պարեցէք, խաղցէ՛ք ու Մէ՛ջք նետեցէք *).—*
Դաւիթ որ կայ՝ դեռ տըղա՛յ է, կընայի Ձեզ՝ կըթուչնա՛յ...,
Իր Հարուածն ալ՝ թո՛յլ կըզարնէ, չի՛ վընասեր Մէլիքին...»:
Աղջիկները ելան Իրենց Թաչկինակներ բըռնեցին 3),
*Հորի Բերնին բոլորտիքը Ձեռնախա՛ղ *) ու Պա՛ր խաղցին:—*
Մայրը կանչեց Թըմբուկ-Զարնող մէկա՛լ Խումբ՝
*Թըմբուկները զարնե՛լ տըւաւ՝ որ Դաւիթը չըչկըտի՛ *)՝*

---

1) Ե·813՝ Շուշի-Ղարաբաղ: 2) *Տե՛ս Հատ.* 535: *) Աղջիկ-(ներ), *յոքնակի է, ուղղուած է ամենուն:* *) Մէջք ձետել, *Պորտը երերցնելով՝ ցոփօրէն պարել,* կէօպէք աթմաք: 3) Ա·27՝ «*բռնէք Հայլի խաղ ըրէք*»՝ *ուղղելի՝* «*բռնէք Հայլուխ (Թաչկինակ)՝ խա՛ղ ըրէք*», Կ·75ա·՝ *Ֆեաֆկտիր = պղնձէ չերեփ՝ ծակոտիներով* [չփոթուած՝ *Ֆէֆկիր-ի հետ*], եւ Կ·85ա·՝ *Ֆեաֆիկ = «վերնազգեստ՝ կարճ եւ անթեւ»* [չփոթուած՝ *Ֆաֆթան-ի հետ*]՝ *ուղղել՝* մետաքսէ գոյնզգոյն թաչկինակ: *) Ձեռնախաղ, *Ձեռքի երեք մատներուն մէջ բռնած Թաչկինակին համաչափ շարժումներովը՝ առանձին պար:* *) Շշկռիլ (*չուշ-կռիլ, սոսկում-ռիլ*), *Գլխուն զարնուածի պէս՝ չըփոթիլ, չուարիլ:*

Ջըկարենա՛յ Իր Հարուածը ճի՛շդ զարնէ…։—
Ու դառնալով Շաւեղ–Քաչող կընիկներուն՝ ի՞նչ կ՚ըսէ.—
*— «Շո՛ւտ չուտ՝ Շաւի՛ղ *) քաշեցէ՛ք…»։*
*Փողի–Տէրոջ *) — «Շո՛ւտ Ձեր փողե՛ր փըչեցէ՛ք…»։*
Թըմբուկ–Զարնող կընիկներուն՝ — «Ձեր Թըմբուկներ չո՛ւտ զարկէ՛ք»։
Աղջիկներուն, — «Թաչկինակներ չուտ բըռնեցէ՛ք ու խաղցէ՛ք։
Ամէնքդ մէկտեղ չուտ պարեցէ՛ք՝ երգեցէ՛ք…՝
Թերես 4) Դաւիթ իրիշկայ Ձեղ՝ ու տեսնայ՝
Մէյլէի տեղ ճիշդ չըգըտնէ, Հարուածն Անոր չըգըպի՛…»։—

677. Դաւիթ Զիխաբուիր, Բայց Ասպարէզը Կուտայ Պզտիկ-Ծռոջն Ու Անոնցուն

Ջ.՝Կ·75, Կ·75, (Կ·75), Ջ.՝Ճ·116, Ճ·116,115,38, ՉԿ·593,594, Ս·164, Խ·42, (Հ·384,436,437), Հ:384,436,37,437, (Ա·27), Ա·27, Ե·31,584,813,916,1010,1122,976,750,783, 517,585,638,829,639, (Ե·813), Ջ.՝Ե·639, Լ·99,100,30,70, ՉՍ·574·

Ապա Դաւիթ դիտէ՛ որ Մայր՝ դիտումո՛վ է որ կ՚ընէ,—
«Ա՛ռ՝ ինձ համա՛ր կ՚ընեն,–կ՚ըսէ–, որ Զիս խաբեն՝ Թուլցընեն»…
Ականջ չ՚ըրա՛ւ այդ չըփոթիչ Խաղերուն.—
Զիւն վըրայ՝ Թաւիով եկաւ մինչեւ Հորի Բերնին մօտ,
Ձեռը տարաւ՝ քաշեց Թո՛ւրը–կէծակին,
Որ Իր երրորդ՝ վերջին Հարուա՛ծ պիտ՝ զարնէ…՝
Պըզտի՛կ–Ծոյրը 1) եկաւ առաջ՝ ու ըսաւ.—
— «Դաւի՛թ,–ըսաւ–, այն երկուքին Ծու մօտ յարդ կա՛յ՝ ինձ չըկա՞յ·
*Ես ալ՝ չէ՞ որ՝ Ծեզ հետ ա՛յնքան խաղացե՛ր եմ՝ տըղակուե՛ր *),*
*Հըտրաց *) այնքա՛ն Ծա՛ղ խաղցեր ենք ու վազե՛ր…,—*
Մէկ Հարուածդ ալ՝ Աստծո՛ւ սիրոյն՝ ի՛նձ չնորհէ…»։
*Դաւիթն ըսաւ, = «Ասպարէզը *), Ծոյրի՛կ, տըւի Ծո սիրո՛յն,*

---

*) Շաւեղ, կիթառի, ջութակի նման լարաւոր գործիք մը, կամ Թերեւս ձեռքի տաւիղ (եւ տաւիղին աղաւաղը)։ *) Փողի–Տէրերուն (յաջկէ·)։ 4) Կ·75՝ բալի՝ ուղղել՝ բալէի (պէտի, Թերեւս)։

1) Ե·31՝ Մըսրամէլիէի ֆոյրը։ *)· Տղակուք, տղակուց, Տղայ տարիքէն։ *) Հըտրաց (հետ իրեարց), Մէկտեղ, միասին։ *) Ասպարէզ, Ջէլ–երթալ՝ հեռուէն սրարշաւ գալու՝ Թափը։

Քո սիրոյն ու Հօր–Աստծո՛ւն՝ որ Ձիս ու Քե՛զ ըստեղծեր,
Եւ Իմ կըռիւ Իր Ձեռքո՛վն է կ՚աջողի,—
Մխայն Ի՛մ տեղ՝ կենամ զարնեմ՝ մէ՛կ Հարուած...:—
Մէկ Հարուածը ես տըւի Իմ Մո՛ր սիրոյն... .
Մէկն ալ տըւի Մե՛ծ–Քըրոջս... 2),
ես մընացի Իմ մէ՛կ Աստուած՝ մէ՛կ Հարուած...,—
Այդ Իմ վերջին մէ՛կ Հարուածը՝ պիտի զարնե՛մ Մէլիքին 3).
Ան ալ մընաց Իր Բախտի՛ն...,—
Աստուած Ինձի տըւա՞ւ՝ տըւա՛ւ..., չըտըւա՞ւ... 4)՝
Մէլիք Իր տեղ՝ կա՛մ կըմեռնի, կա՛մ կըպըրծի՝ կըմընա՛յ...:—
Անիկ Ինձի երեք Հարուած որ զարկաւ...՝
ես ալ Իրեն՝ ապա մէկ Թուր չըզարնե՞մ...»:
*Ու Թուր տարաւ Թեւին *) վըրայ՝ բերաւ հասուց մինչեւ կէ՛ս՝*
Ըսաւ,— «Այս կէս՝ Աստծո՛ւ անուն 5)՝ որ կըզարնե՛մ Մէլիքին...»:—

678. «Ի՛նչ Ալ Ըլնես՝ Պիտի Զարնեմ Այս Մէկ Թուր»

2(ն·1122), ն·1122,829, 2·՚ն·750, խ·42, 2·՚խ·42, 2(կ·25), կ·24,25,75, 2·, լ·30, 2·՚լ·30, 8·116, (8·38), 2·՚8·38, 2կ·594.

Մէլիքի–Մայր՝ վազեց նորէն՝ ըսաւ,— «Դաւի՛թ, մատա՛ղ Քեզ...,
Այս մէկ Հարուա՛ծն ալ մի զարներ..., ի՛նձ չնորհէ...:
Թէ Դուն՝ այստեղ՝ Մըսրամէլիքն ըսպանես...՝
Իմ Ծըծի–կաթ թող ջո՛ւր դառնայ Քու Բերնին...՝:
Դաւի՛թ այնտեղ ի՞նչ ըսաւ.—
= «Ա՛յ անօրէն, այդ Թըմբուկի ձայն կըտրե՛լ տուր՝ որ ըսե՛մ...,—
Ես մէկ Հարուած չընորհեցի Քու Մայրութեան ու սիրո՛յն...,
Որ Դուն Մեզի՝ երկուսի՛ս ալ՝ քաղցը Մայրի՛կ ես եղած... .
Մէկ Հարուածըս չընորհեցի Իմ Մեծ–Քըրո՛ջ ու սիրոյն... .
Ասպարէզն ալ՝ Հօր–Աստծուն՝ եւ Իմ Փո՛քըր Քոյրիկին...,—
Ես մընացի՝ Իմ մէ՛կ Աստուած՝ մէ՛կ Հարուած...,
Այդ մէկ Զա՞րկն ալ Դուն Իմ Ձեռքէն կըհանես...;—

---

2) ն·813՝ «Մըսրամէլիք ինձմէ ջոջ է՝ տուր եմ անոր ջոջութեան սիրոյն»: 3) լ·99՝ (Դաւի՛թ՝ մօրը խօսելով)՝ Քու լաճուն: 4) Եթէ յաջողեցայ՝ աղէ՛կ, եթէ չ՚յաջողեցայ...՝ (նորէն կըկռուինք): *) Թեւ, Ուս: 5) Աստծու անո՛ւնը վկայ:

Չէ՛, Մարէ՛, չէ՛, Աչխա՛ր–Երկիր պիտի խընդա՛ն Իմ վըրայ···,
Պիտի ըսեն՝ «Դաւիթ ճի՛ժ է···՝ բան չի՛պիտեր կեանքի մէջ···»·
Ի՛նչ ալ ըսես եւ ընես···՝
Այն Հրեշտակը սըկըրտալէն *) որ իջնէ···՝
Չե՛մ խընայեր···, պիտի զարնե՛մ այս մէկ Թուր···:
Թէ կըվախնաս՝ ի՛նչքան Զօրքի Դիա՛կ որ կայ՝ բերե՛լ տուր 1),
Ի՛նչքան Վերմակ ու Կապե՛րտ կայ՝ բերե՛լ տուր,
Ու կոլոնէ՛ *), դիզէ՛, լեցո՛ւր Տըղուդ վրա՛յ 1)·
Մէյլիքի պէս ես չե՛մ երթար հեռուէն դառնար՝ թաւիով դար,
Կեցա՛ծ տեղէս՝ ես Իմ Հարուած կըզարնե՛մ·—
Բըռնեց–չ՛բըռնե՛ց···՝ Իր բախտի՛ն··· ·—
Մէյլիքն Իր տեղ եթէ ինկաւ՝ ես կըկըսրե՛մ Անոր Վիզ··· ·
Եթէ չ՛ինկաւ՝ ուրի՛շ տեսակ կըկըռուինք···»:

679. «Կէս Հարուած է, Ս՛դպի Կամ Զի՛դպիր...»

Լ·30, Զ·՝Լ·30, Ց·38, Զ·՝Կ·75, Զ·, Զ·՝ ՉՍ·576, ՉՍ·575, Զ(ՉՍ·575), Ե·750·

Մէյլիքի–Մայր բերել տըւաւ՝ ի՛նչքան Զօրքի Դիա՛կ կար···,
Ի՛նչքան Ձիու, Անասունի Դիա՛կ կար···,
Ի՛նչքան Վերմակ ու Կապե՛րտ կար Զօրքին հետ···՝
Ձըգել տըւաւ դիզեց Հորի Բերնի՛ն վրայ,
Այդ Քարերո՛ւն, Թաղիսներո՛ւն, Կաշիներուն Դէզի՛ն վրայ,—
Դարձաւ ինչպէս մէկ Բլուր···,
Մըսրամէլիք Աստնց տակը՝ Քառասո՛ւն Կանդուն Հորի մէ՛ջ···:
Մէյլիքի–Կնիկ վերցուց այնտեղ ի՞նչ ըրաւ,—
Ձեռքը զարկաւ Ծունկին վըրա՛յ ու կանչեց,—
— «Սե՛ւ դայ Գըլխո՛ւդ, Մըսրամէլի՛ք···, ի՞նչ ես կեցեր Հորին տակ,
Երեք Հարուած՝ մէկը տըւաւ Մո՛րդ սիրոյն,

---

*) Սկրտալէն, Զգրտալով· փոխաբերաբար՝ խուճապով, ձեռքին Աստուածային ստիպողական հրաման ալ եթէ ունենայ···: 1 և 1) Ներքամիտ փոխադարձութիւն՝ Ճոպանխաղի դաւին առեն իր վրայ դիզուած դիակներուն, Տե՛ս Հատ· 633: *) Կոլոնել, Կուտակել, բլրաձեւ բարձրացնել:

Մէկը տըւաւ Մե՛ծ–Քըրոջդ,
Ասպարէզն ալ տըւաւ Աստծուն եւ Քու Պըղտիկ Քրո՛ջ սէրոյն 1),
Կէ՛ս Հարուածէ՛ս···, կըդըսկի՛ կամ չի՛դըպիր··· 2),—
Հարուածով մը Ան Քեզ պիտի ըսպաննէ՞···,
Դո՛ւրս եկ Հորէն՝ կըռիւ ըրէ Մարդո՛ւ պէս···»:

680. Դաւիթ Իր «Ցիօամ»ը Կ'ըսէ Որ Ջարճէ

Լ·70,30,66,99,100, (Լ·66), Զ(Լ·70), Կ·121,24,25, (Կ·75), Հ·37,437, Զ·՝Հ·437, Ե·750,829,1122,31,517,585,783,976,1010,916,977,917, Զ·՝Ե·917, Զ(Ե·585,783), (Ե·1122), Ա·27, Ճ·38, (Ճ·38), ՁԿ·600, (ՁԿ·600)·

Այս դըրի՛ս ու այս դըրի՛ս *) *էր,— Թէ Հե՛րթ ըլլայ՝ Թէ բըռնի···:—*
Դաւիթ եկաւ՝ Ձիուն վըրայ՝ կեցաւ Հորի Բերնին մօտ,
Վերցո՛ւց Իր Թուր՝ Թո՛ւր–կէծակին՝ ու կանչեց·— 1)

— «Ցիշամ Հա՛ցն ու Գինին, Տէ՛ր–կենդանին,
Մարութ–այ–Բա՛րձր–Ասպարածին, Սուրբ–Նըշան,
Խաչ–Փետրացին՝ պատրա՛ստ վեր՝ Իմ Ա՛ջ–Թեւին 2),—
Օգնակա՛ն կանգնին Սասմանց–Դաւթին,—
Որ զարնէ Թո՛ւր–կէծակին 3),
Սասմանց–Դաւթի Թեւ չ'իմանա՛յ՝ մինչեւ վե՛րջը Աշխըրհին·
Որ չ'ըլլա՛յ թէ՝ Իր Հարուածը պարա՛պ երթայ Քամի՛ն·—
Կըտրէ՛ Թամբը, կըտրէ՛ Ձին,
Կըտրէ՛ բոլոր վերմակնե՛րն ու կապերտնե՛ր,
Կըտրէ՛ բոլոր Դիակնե՛րը վեր՝ Հորին,
Կըտրէ՛ Քառասուն Գոմշու Կաշին՝ ու ածցի՛ն,
Կըտրէ՛ Քառասուն կըպրած Թաղիս՝ իրենց տե՛ղ,

---

1) *Մեր վէպին հերոսը՝ չնորհած է այդքան բան, մինչ Աքիլլէս անգթօրէն կ'մերժէ մահամերձ Հէկտորի խնդրանքները,* [Iliade, XXII. 309–310]: 2) Ե·750՝ *Ըսողը Մէլիքն է:* *) *Այս դրիս, ըսդրիս, Այս անգամիս·* [*Վանեցի ժողովուրդը՝ ըսդրիս–ըսդրիս–ը՝ բառախաղ ալ կ'ընէ պատարագի «գ'դրուն», գ'դրուն»ին հետ*]:

1) *Երգով:* 2) Կ·121, Ե·916՝ որ Մըսէ Խաչ պատրաստեց Դաւիթի աջ թեւին: 3) Լ·70՝ Թուրն–ի–Լաիօնին, Ե·916՝ Թուր–Պարճաղկին:

Կըտրէ՛ Քառասուն Ջաղցի–Քարեր՝ վեր՝–Հոդին.
Երբայ իյնայ՝ վեր՝ Մէլիքի Գագաթի՛ն,
Իրեն մըտոքով՝ ինչպէս Լո՛ւ մը գ՝ինիք խածնէ՛,—
Կըտրէ՛ իջնայ՝ Փորին մէջէն՝ Ոտերո՛ւն,
Երբայ Անոր Պըճեղներէն դո՛ւրս ելնէ,
Աւելի ու պակաս չ՝ըլլա՛յ՝ մէկ Կողը վեր՝մէկ Կողին,
Դեռ եօ՛ք Անտ *) ալ՝ մըտնէ՛ երբայ խո՛ր Գետին··· 4)»:

681. «Թուրդ Նետս՝ Մըսրամէլիքը կիսես»

Ջ·՝Ե·31,517,585,639, Ե·517,585,639, Ա·27, Ջ·՝Ա·27, Ջ(Լ·30),· Լ·30, Ջ·՝Լ·30·

Դաւիթ երբոր Իր Թուր չարժեց որ զարնէր՝
Մէլիքի–Մայր տեսա՛ւ Իր՝նչպէս Կըրակները Թուրին Բերնէն Թափեցան,
Ա՛լ մէկ ձայնով կանչեց ըսաւ, — «Աղջիկնե՛ր,
Թողէ՛ք Ձեր Գարն ու Խաղեր···,
Ես կըտեսնե՛մ Թէ ինչպէ՛ս···՝
Թուր–Կէծակին պիտի քանդէ՛ Տըղուս Տուն···»:

Քեռի–Թորոսն ալ ի՞նչ ըրաւ այդ ժամին,—
Երբոր Դաւիթ Թուրը վերցուց՝ կըզարնէր՝
Քեռի–Թորոս ուզեց որ Ձեռ դէ՛մը տայ···:—
Դաւիթին ըսաւ, — «Ինչո՞ւ Ձեռըդ կուտաս դէմ···»:
= «Կ՝ուզեմ,–ըսաւ–, որ կամ Դըլխէ՛ կողմը կայնիս՝ կամ Ոտքի՛ն,
Որ Թուր Նետս՝ Մըսրամէլիք կիսե՛ս Մարմնին մէջտեղէն,
Տապակները ձըգեմ կըշիռ՝ ու տեսնեմ՝
Կըտըրճուքեանդ հաւասար կուգա՞ն կըտորներ···»:
Դաւիթին ըսաւ, — «Ա՛յսքան դիպած Դիակներու վըրայէն՝
*Ես Իմ Թուրը ի՞մալ *) Թալեմ *)՝ որ Ան կըտրե՛մ ու կիսեմ··· *)»:*
= «Դաւի՛թ,–ըսաւ Քեռի–Թորոս–, կըտըրճուքի՛նդ կըփորձեմ,—
Թէ որ Նետս ու կիսես՝
*Նոր ես դիտեմ *) որ Դուն կըտրի՛ճ Տըղայ ես···» 1):*

---

*) Նետ, Նետաչափ: 4) Ցիշամ–ի մասին՝ Տե՛ս Բ. Հատորով, եւ Հուշ. 734ս.: *) Ի՞մալ, Ի՞նչպէս: *) Թալել, Նետել, ճահ բերել (Հարուածը): *) Կիսել, Երկու հաւասար մասի բաժնել: *) Դիտեմ, կըգիտնամ, պիտի հաւատամ: 1) Տե՛ս Հուշ. 685 և 686:

688. Թուր-Կէծակին կտրեց Գնաց Սեւ-Ջուրը

ՉԿ·596,601,360,361, Հ·37,385,437, (Հ·437), Ե·31, 1123,916,783, 813,1010,639,517,585,515,829, (Ե·750,719, 585,813), Լ·66,100,99, 70, (Լ·66,70), Ս·164,165, ՉՍ·578, (ՉՎ·11), Ց·38,116,39ա·, (Ց·116,38), Խ·42, (Ա·27), Ա·27, Կ·24,25,75,76, (Կ·75).

Դաւիթ այնտեղ «Անո՛ւնը–Հօ՛ր» ըրաւ՝ Ծիշաց՝ ու կանչեց՝
— «Աստուածը մէ՛կ, ես իմ տեղ ՝մէ՛կ, Իմ Հարուածն ալ
[մէ՛կ ու մէ՛կ···» 1),
Եւ Իր Թուրը 2) մէ՛կ զարկա՛ւ··· 3):—
*Դաւիթի Թուր՝ կէծակէ՛ն *) էր, — որ զարկաւ···՝*
Թուրին Բերնէն կըրա՛կ էր որ Թափեցաւ···,—
*Պըծաւ մը հո՛ս, պըծաւ *) մը հո՛ն՝ ինկաւ Թուրին Բերանէն,*
Աստծո՛ւ կամով՝ Թուր–Կէծակին՝ կըտրեց Թա՛մբը, կըտրեց Ձի՛ն 4),
կըտրեց 5) բոլո՛ր Դիակները, կըպրած Քառասուն Թաղիքնե՛ր,
կըտրեց 5) չորցած Քառասուն Գոմշու Կաշինե՛ր,
կըտրեց 5) Քառասուն Ջաղջխա–Քա՛ր 6),
Թուրին կըրակն ինկաւ գընաց Հորին մէ՛ջ,
Գընաց դըպաւ 5)՝ Մէլիքին ալ ճիշդ Գագաթի՛ Ցըցունքին 7),
*Գընաց Անոր երկու Ջուի *) մէջէնիվար՝ դո՛ւրս ինկաւ,*
Մինչեւ Ոտքեր՝ կըտրե՛ց ըրաւ երկու ճի՛ւղ,

---

1) *Թուրքերէն առածին պէս*, — «Պի՛ր օլսուն, փի՛ր օլսուն (*մէ՛կ ըլայ, ուժե՛ղ ըլայ*)։ 2) ՉՎ·11, Ս·164, Կ·24, Ե·31,719,750,813՝ Գուրզը։ 3) Ց·116՝ Թուրը յուշիկ դրաւ ճիու համկին։ *) Կէծակէն, *կայծակի, կայծակնային, կայծակ տուող, կայծակի նմանող, երկնային կայծակի տեսակ (Թուր)։ *) Պծաւ, *կայծ, պէծ*։ 4) *Տե՛ս Հաւծ*· 672, 678 և 679։ 5) Ե·585՝ ծակեց։ 6) Ե·639՝ Պռղվտէ Սալ։ 7) Լ·99՝ գայթեց կտրեց, Լ·100՝ պայթեց կդրեց՝ [*Նման եղերուաքաղներ՝ կ'վխտա՞ն Լալայեանի փուփոխակներուն մէջ*] *ուղղել՝ գայթից (գագաթէն) կտրեց։ Ցցուն, Գլխուն վրայ, ճակատին կողմը, Թողուած մազերու երկար փունջ, փէրչէմ։ *) Ջուի, *Երկուորիքի, Ամորճիքի*։

Մըսրամէլիք 8) *տապկեց* 9) *ըրաւ Երկու–Կէս*... 10),
Թուրին չաղիը *)՝ *եօթ կանդուն ալ* 11) *դընաց մըտաւ Անդունդնե՛ր,*
Մինչեւ Արդար Կո՛յս Գետին... 12):—
Չէ՞ կէծա՛կ էր Անոր Թուր՝
Գետին կըտրե՛ց՝ տարաւ հասուց Սեւ–Ջուրին 13).
Հրեշտակն Իր Թեւ տըւաւ առաջ՝ ու կեցո՛ւց.—
Թէ չէ՝ Սեւ–Ջուր պիտի ելնէր՝ Աշխարք ամեն ողողէ՛ր... 13):

683. «Ինչպէս Լու Մը գ'Ինճ խածնէր...»

Ե·917,585,31,639,1123,783, Զ·՝Ե·639, Խ·42, Զ·՝Խ·42, Ա·27, Զ·՝Լ·99,70, Հ·37,437, Զ·՝Հ·437, Ճ·116, Զ·

Դաւիթ զարկա՛ւ Թուր–Կէծակին՝ ու կանչեց,—
— «Է՛ Հողածին, Մէլի՛ք,–ըսաւ–, Հո՛ղ էիր ու Հո՛ղ դարձար»:
Բայց Ան երբեք չ'իմացա՛ւ որ Դաւիթ զարկեր՝ կըտրեր էր.
Անոր խելքով՝ ինչպէս Լո՛ւ մը գ'Ինչ խածեց...,

---

8) Լ·66, 70, 100՝ Կարմիր Դէվ, Ջանիօլատ: 9) Հ·37՝ երկու–տակեց: 10) Ե·750, 813–814՝ «Դաւիթ դուրգը նետեց երկինց երես, դուրգը վերէն եկաւ դըպաւ Մէլիքի գլխուն, Մէլիքի գլուխը կտրուեցաւ դպաւ գետին, բարձրացաւ դիր մ' ալ գետնէն, որ պիտի դար դպէր Դաւիթի գլխուն մէջ, հրեշտակները Դաւիթն այդ Քաբէկալէն հեռացուցին, ատոր գլուխը դպաւ գետին, գետին փոսացաւ: Հիմա ալ դեռ՝ չափ մը ցորեն՝ ատոր գլխուն տեղը կ'ծեծուի». Համմալ. Յանդուտ–Յաթունի գլխու տեղին հետ, Հաւծ. 820: Մէլիքը միջակըտուր ընելու պարագան՝ համեմատել՝ Տրդատ Թագաւորի՝ Բասլաց Թագաւորը միջակտուր ընելուն հետ. Խրնկի. Բ. Զե. 343: *) Շաղփ, թափած կայծերուն վերջամասը, ծայրը: 11) Հ·385՝ fառուն կանգուն: 12) Ե·1010՝ կպամ կայնաւ վեր' կալմին՝ ջնջել. կապ ունի՝ Պողվրտէ'–Սիւնին հետ (Հաւծ. 601–605): Արդար, կոյս՝ գետին՝ Երկրի այն խոր խաւը՝ ուր բուսական ու կենդանական հետք չկայ: 13) Ժողովրդական աւանդութիւնով՝ Երկրի ընդերքներուն մէջ եղող Սեւ–Ջուրը՝ — որմէ անդին երբ թէ ամեն բան հալած վիճակի մէջ կ'եռայ —՝ օր մը պիտի ելնէ՝ կուլ տայ երկիրը: Յոյներուն մէջ ալ նոյն հաւատքը. —«Scamandre, fleuve qui roule dans des gouffres profonds...» [Iliade, XX. 279,. XXI. 291]:

Հորին տակէն ճայնեց Դաւթին՝ ու ըսաւ.—
= «Դաւի՛թ, չէ՞ ես դեռ այստե՛ղն եմ, ողջ-առողջ…,
Ինչո՞ւ,—ըսաւ—, Դուն Քու Հարուած չե՛ս զարներ…,
*Ցըրտու *) մեռա՛յ ես այս խորո՛ւնկ Հորին մէջ… .*
Զա՛րկ Քու Թուրը՝ վերջանայ…»:
Դաւիթն ըսաւ, — «ես զարկե՛ր եմ Իմ Հարուած…»:

684. Դաւիթ Հորին Բերանը Բանալ Կուտայ՝ Կ'ելնայի

ՀՍ·579,580,581, Հ·՝ՀՍ·581, Հ·՝Կ·75,76, Կ·76, Ե·585,917,1010, 586,783,31,639,784,1123, Հ(Ե·917,1010), Հ·՝Ե·585, (Ե·1010), (Լ·70), Լ·70,100,99, Հ·437,37, Ը·116, Խ·43, Ա.28·

Դաւիթ 1) այնտեղ հրաման ըրաւ 2), — «Հորը բացե՛ք՝ ես տեսնե՛մ.
Դէ՛հ, քակեցե՛ք այդ Թաղիսներ, Գոմշու-Կաշի՛ք ու Քարեր՝
Նայինք տեսնենք՝ Մէկի՛ք ո՞ղջ է՝ թէ՞ մեռած…»:
Ըսին, = «Դաւի՛թ, Դու գընա դէ՛ն՝ Մենք բանա՛նք»:
Դաւիթ Իր Ձին քաշեց մէկ կողմ՝ Քարի մ՝ վըրա՛յ՝ ու կեցա՛ւ.
*Անոնք չո՛ւտ մը Ձեռ տըւին Դէզ *)՝ Դիակները դէ՛ն առին,—*
Տեսան՝ ամեն՝ կըտրած՝ եղած երկո՛ւ մաս…:
Վերմակները, կապերտները վերցուցին՝
Տեսան որ ի՛նչ, — Թուրին առջեւ կըտըրտուած 3) են ամենն ալ… .
Դէ՛ն նետեցին Գոմշու-Կաշիք՝ … կըտըրտա՛ծ… 3).
Թաղիքնե՛րը ետ քաշեցին՝ … կըտըրտա՛ծ… .
Ջաղցի-Քարե՛ր ետ քաշեցին՝ … մէջեր կըտրա՛ծ ու անցած 3).
Ամեն բաներ կըտրած եղած երկու մա՛ս…:—
Հորին Բերան որ բացուեցաւ՝ Դաւիթ եկաւ մօտեցաւ,
*Կըզուեցաւ *) վար՝ Հորին Բերնէն նայեցաւ,*
Տեսաւ Մէկի՛ք՝ Հորին տակը՝ կանգնած՝ Իր տեղ կեցե՛ր է… 4),—
Կանչեց ըսաւ, — «Մէկի՛ք, Մէկի՛ք, ո՞ղջ ես Դուն…»:
= «Հապա՞…,—ըսաւ—, ես ո՛ղջ եմ… .
Ինձի բա՛ն մ՝ ալ չ'է՛ եղած…»:

---

*) Ցրտու, *Ցուրտէն*, տեղին պաղութենէն (չեմ դիմանար):

1) Լ·70՝ չփո՛թով՝ Սանասար: 2) Կ·75՝ Դաւիթ իր մօրուքին է որ կ'ըսէ՝ «Մարէ՛, բացէ՛ք ե՛տ…»: *) Ձեռ տուին դէզ, *Սկսան դէզը քակել*: 3) Ե·585՝ ծակ: *) Կզուիլ, Գլխիվար ծռիլ: 4) Ե·917՝ միեւնոյն ոստեր հորին մէջ:

— «Մըսրա՛մէլիք,–ըսաւ Դաւիթ–, բան մը ֆեզի չ՚էր՞ դըպեր.՞.՞.՞ .
Զարկըս բըռնե՞ց ֆեզ՝ թէ՞ չէ՛... .
Նայէ՛, իրաւ ֆեզ վընաս մը չ՚էր՞ եղեր...»:
Մէլիքն ըսաւ, = «Իրա՛ւ, Դաւի՛թ, ինձի բա՛ն մ՚ալ չ՚էր՝ եղած.
Միայն ինչպէս լո՛ւ մը Գըլխուս Մազերուն մէջ կըծե՛ր *) է... .
Կըտրի՛ճ,–ըսաւ–, ֆո Հարուածը ըրէ երկո՛ւ, մէ՛կ ալ զարկ 5)»:
Դաւիթն ալ թէ, — «Կըտրիճի Զարկ՝ մէ՛կ կ՚ըլլայ...,
Իմը զարկի՛..., այդ մէ՛կն էր... .
Եթէ որ ֆեզ «Լու մը,–կ՚ըսես–, կըծեր է»՝
Ֆեզ մէկ թա՛փ առը՝ որ այն առե՛ն տեսնես Դուն... .
Ու թէ ողջ ես՝ արի դո՛ւրս ել՝ հերթը նորէն ֆեզի՛ է...»:

685. Մըսրամէլիք Երկու Տօր Կ՚ըլլայ

ՀԿ·597, ՀՍ·582, Ճ·116, Խ·43, Ա·28, Լ·70,99,100,101, Հ·37,437, Ն·31,586,639,784,1123,917,1010,977,751,814, (Ն·977, 813,31,586, 639), Շ·՝Ն·586,585, Կ·76·

Մըսրամէլիք 1) ղ՚Ինք թա՛փ տըւաւ՝ որ ելնէ...,—
Թուր–կէնճակին այնպէ՛ս կըտրեր եւ անցե՛ր էր Իր Մարմին՝
Որ Տապակներ *) չէ՛ն բացուեր իրարմէ...:
Երբոր Ինքզինք իրա՛ր տըւաւ *) մէկ անգամ՝
Տապկաւ *) եղաւ երկու կըտո՛ր՝ ինկաւ Իր տեղ, Հորին մէ՛ջ 2):—
Գըլխէն մինչեւ Իր Ոտքերը՝ կէ՛ս մասն ինկաւ մէ՛կ կողմը,
Կէսն ալ ինկաւ մէկա՛լ կողմ... .—
Մըսրամէլիք՝ այնտեղ ինկաւ, մէ՛կ Հարուածով վերջացա՛ւ *):
Դաւիթ սակայն դէ՛ր մ՚ալ կանչեց, — «Մէլի՛ք, Մէլի՛ք, արի դո՛ւրս»:
Իր Մարդե՛րն ալ կըզուեցան վա՛ր՝ Հորին Բերնէն կանչեցին.—
— «Մըսրամէլի՛ք, Մըսրամէլի՛ք, արի Հորէն դո՛ւրս ելիր...»
Մէլիք այլեւս ձայն չըտըւա՛ւ Իր տեղէն...:—

---

*) Կծել, Խածել: 5) Իբր թէ՝ երկրորդ Հարուածէ մը կ՚ողջնայ ըմբիշը· մէկ Հարուածով է որ մահ կը գտնէ:

1) Լ·70, 99՝ Կարմիր Դէվ, Ջանփօլատ: *) Տապակ, Կէս եղած մաս: *) Իրար տալ, Ծնցել, Թոթուել: *) Տապկաւ, Տապկուեցաւ, Ճեղքուեցաւ: 2) Ն·813՝ Քարէ-Կապի մէջ: *) Վերջանալ, անդրկն·՝ Մեռնիլ, սատկիլ:

Նայեցան որ՝ Մըսրամէլիք ըսպանուե՛ր է Իրեն տեղ···,
Ինկեր Գետին՝ ու մեռե՛ր··· 3)։
Իր Աչքերով Դաւիթ տեսաւ՝ հաւատա՛ց,
Թուրը պադեց՝ զարկաւ Պատեան՝ կախեց կո՛ղ։—

686. Մըսրամէլիքի Երկու Կօրճերը, Ձուն Ու Գորգը

2(Լ·100,70,30), Լ·70, 2·՝Լ·30, (Կ·76), Ե·917,586,719,814,750, (Ե·917), 2(Ե·814,750,829), 2·՝Ե·750, (Հ·437), Հ·437,438, 2(Ճ·39ա·), 2·՝Ճ·39ա·, 2·՝Ա·61, Ա·61, 2·՝Խ·43, 2Ս·583·

Դաւիթ Ձիէն իջաւ տա՛կ,
Հրամա՛ն տըւաւ՝ որ Մէլիքը քաշեն Հորէն՝ հանեն դո՛ւրս 1),
*— «Ամոլները *) բերէ՛ք,—ըսաւ—, դո՛ւրս քաշեցէք Մէլիքը···»։*
Ամոլ բերին՝ դո՛ւրս քաշեցին Անոր 2) Մարմնի մէկ կըտոր՝
Միուս կէսն ալ որ հանեցին դըրին Հորի եզերքին,—
Իմա՛ց տըւին Մէլիքի–Մօր 3), Իր Քոյրերո՛ւն ու Կընկան·
Մայրն ու Քոյրեր՝ եկան նըստան Մարմնին վըրայ՝ ու լացի՛ն····։
Մէլիքի–Մայր երբ տեսաւ որ՝ կըտոր–կըտոր դուրս հանեցին Իր
[*Տըղան՝*
Գըլուխ վերցուց՝ անէ՛ծք տըւաւ Դաւիթին·—
— «Դաւի՛թ,—ըսաւ—, Ես Աստըծո՛ւն կանչեր եմ՝
*Որ Քու Մէջկապ *)՝ Խըլաթայ Հող՝ Արիւնի մէ՛ջ չաղախուի՛··· ·*
Դուն Ջմբըղկի(կ)–Տիկնոջ Ձեռքո՛վ ըսպանուի՛ս···» 4)։

Քեռի–Թորոսն ալ Մէլիքի երկու տապակ կըտորներ՝
Վերցուց բերաւ՝ ձըդեց կըշիռ(ք)՝ ու կըշռե՛ց՝
Հաւասա՛ր տեսաւ երկուքն ալ··· 5)։—
Ան ալ հասաւ ամուր պաչե՛ց Դաւիթի Երեսն ու ըսաւ,—
— «կեցցէ՛ Իմ Թոռ՝ կըտրիճ Դաւի՛թ···, չա՛տ կեցցէ՛···»։

---

3) Տե՛ս Հատուած 620՝ (*Մեր Գրեանց մէջ գրուկ է···*)։

1) Լ·100, Հ·437՝ Դուրս հանողը Դաւիթն է։ *) Ամոլ, Գուբանի զոյգ եղներ կամ դոմէչներ· Հոս՝ հաւանաբար՝ նաեւ Գուբանի ջղթաները։ 2) Լ·70՝ կարմիր Դէվի։ 3) Լ·70՝ Հօր ցաւ ծամ Գոհարին (*սխալով*)։ *) Մէջկապ, *Մէջքի կապ*, Գօտի, նաեւ՝ *մէջք*, *մարմին*, անձ։ 4) *Մօրուին անէծքը կը կատարուի*, Տե՛ս Հատ· 816։
5) Ե·917՝ կտոր մ՝ բանզ մէկալը հօր լիտր ատլի էր։

Ու կ'ըսեն թէ, — «Հորին մէ՛ջը՝ կամ այնտե՛ղ՝
«Մէլիքի այդ կիսուած երկու կըտորներէն ձա՛յն եկաւ՝
«Ըսաւ, — «Զախով տեղը փորէ՛՝ Աջով թաղէ՛՝ ծածկըւի...»:
«Սակայն Դաւիթ՝ Աջո՛վ փորեց՝ Զախո՛վ թաղեց՝ վերջացա՛ւ... 6)»:
Քեռի-Թորոսն ըսաւ, — «Դաւի՛թ, Ինձ լըսէ՛՝
Արի՛ Դուն Այս Մարդուն Գլուխ կըտրէ՛-Նետէ՛՝ լըմընցո՛ւր,
Վընաս չիգա՛յ Քեզ Անկէ...» †):
Դաւիթ եկաւ քաշե՛ց Իր Թուր՝ ու զարկա՛ւ՝
կըտրեց-Նետե՛ց Մէլիքի այդ երկո՛ւ տապակ Գլուխները 7):
Գուրզն ալ բըռնեց՝ նետեց երկնուց դէմնիվե՛ր 8).—
Կ'ըսեն եօ՛թ օր ու եօ՛թ գիշեր անցաւ՝ ապա՛ երկնուց եկաւ ինկաւ վար:
Գուրզը վերէն եկաւ դըպաւ Մէլիքի Ի՛ր Գլուխին,
Ձըղմեց տարաւ Գետնի մէջը՝ Հող փոսցա՛ւ,—
Դեռ հիմա՛ ալ՝ Ձախ մը Ցորեն Աւտր Գլխուն տեղը հանգիստ
[կըծեծուի 7):
Դաւիթ ապա Դանակ զարկա՛ւ՝ Մէլիքի ձախ Ձուն կըտրեց՝
Բերին այնտեղ դըրին կըշխո(ք)՝ Քառասո՛ւն-Լիտրը 9) կըշըռեց 10).—
[Ալ չե՛նք գիտեր՝ Այն Մարդ ո՞րքան խոշոր էր...]:—

687. Մէլիքի Աջ Ու Ձախ Կեսրևներն Ու Ցուան-Վէգին

Ե·586,829, Չ·՝Ե·586, Ա·28, Չ·՝Ա·28, Կ·25, Լ·100, Խ·43, Հ·437, Չ·՝Հ·437·

Աջակողմը Դաւիթ դըրաւ Ձիու վըրայ՝ ու բերաւ՝
*Ժամարարով, Գատարագով հորե՛լ *) տըւաւ բա՛րձըր տեղ մ՛ 1),*

---

6) *Ձի իբր թէ՝ սպանուածին ըսածը եթէ ընէր՝ ան նորէն կ'ողջնար:*

†) *Հմմտ. Ագամեմնոնի ըսածը՝ իր եղբօր Մենելասին, — «Ո՛վ Մենելաս, դո՞ւն ես որ մեր թշնամիները մահէ ազատելու հոգը կ'ստանձնես...» (Iliade, VI. 82).* 7) *Տե՛ս Հատ. 682՝ ստրջ. Ծնթ. 10:* 8) Ե·814՝ *Մէլիքի գլուխն է որ կ'բարձրանայ երկինք-վեր (Տե՛ս Ծնթ. 6):* 9) ՁՍ·583՝ *եօթ լիտր, Հ·437՝ տասերկու լիտր:* 10) *Տե՛ս Հատ. 579, 699, 700. Հմմտ.՝ Ոդիսեւսի մէջ՝ նման պարագան, — «... et arrachera les parties viriles et les donnera à ses chiens voraces». (Odys, XVIII. 271, XXII. 339):*

*) *Հորել, թաղել (Հորի մէջ):* 1) *Մինչդեռ Դաւիթ՝ աշնուական մեծհոգիութեամբ վերցնել՝ պատուով թաղել կուտայ Մըսրամէլիքի դիակը, յոյն հերոսը՝ «երկնային Աքիլլէս»՝ ամեն տեսակ անարգանքի կ'ենթարկէ իր զոհին՝ Հեկտորի՝ դիակը.* (Iliade, XXIII. 314).

Ըսաւ՝ «Աս իմ Հօր փոխա՛ն է···, Մեզի՛ 2) կ՚իյնայ Այս–կըտորը»։
Ձախ–կըտորն ալ՝ Մօ՛րը տըւաւ, — «Տարէ՛ք,–ըսաւ–, Ձե՛զ համար·
Ի՛նչ որ կ՚ուզէք՝ ա՛ն ըրէք··· ·
Ա՛լ ուրիշ բան չե՛մ ըներ Ձեզ՝ ասկէ ետք,—
Մինակ՝ իմ Հօր կապած Տուրքեր՝ կ՚ուզե՛մ Ձենէ՝ անպակաս»։
Մէլիքի այդ Ձախ–կըտորը՝ մընաց այնտեղ առանց տէր,—
Շուներ, Գայլեր ու Գաղաններ՝ պատըռտեցի՛ն ու կերա՛ն···։

Դաւիթ ելաւ՝ ու Մէլիքի Ձախ–Ձուն զարկաւ Տէդին ծայր՝
Վերցուց դըրաւ Իր Ուսի՛ն,
Առաւ բերաւ Հօրեղբօր մօտ, դըրաւ վա՛ր,
Նըստեցաւ հոն, Ձեռնով սըրբե՛ց Իր քըրտինք։—
Ձէնով–Օհան եկաւ քո՛վը, ըսաւ, — «Դաւի՛թ, տընա՛չէն,
Ինչո՞ւ այդպէս քըրտներ ես···»։
Ցըռան–Վէդին՝ Ձեռը նետեց՝ կըզուեցաւ՝
Բըռնե՛ց Դաւթի Թուրին կոթէն՝ քաշեց դո՛ւրս,
Ետ–ե՛տ դընաց, Ֆամկի վըրայ՝ ինկաւ Գետին՝ ու մընա՛ց···։
Դաւիթն ըսաւ, — «Ի՛ Հօրեղբայր, որ Դուն այդպէս ուժեղ ես···՝
Ինչո՞ւ չես զար այդ Ձօրքին մէջ՝ կըռի՛ւ ըներ Ինձի հետ···»։
Ըսաւ, = «Դաւի՛թ, Հօրեղբա՛յրը մեռնի Քեզ···,
Ես Քենէ՛ ալ՝ Քու Հօրմէ՛դ ալ ուժեղ եմ···՝
Բայց երբ կըռւի անո՛ւն կուտան՝ կ՚իմանամ···՝
*Ես Ոտաշորս *) կ՚ապականե՛մ կեցած տեղս···»։*

ԺԸ. ԿՈՒԻՒՆ ՅԵՏՈՑ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՒՄԱՐՔ

688. «Ելիր Որ Մեր Կալն Ըցնըմ»

ՁՍ·584,585, Ձ·՝ՁՍ·585, (Ե·719), Ե·748, Ց·39, ՁԿ·549·

Ձըրոյցն ո՞ւստ տանք, — ղըրոյցը տանք Սասմանց Ձէնով–Օհանէ՛ն։—
— «Դաւի՛թ,–ըսաւ–, Մեր Ցանք հիմա հասե՛ր է···,
*Ու Մեր Որան *) չորցե՛ր է···,—*

---

2) Լ·100՝ Իմ հօր կ՚հասնի։ *) Ոտաշոր, Վարտիք։
*) Որայ, Ցորենի կապոց։

Ելի՛ր որ Մեր կա՛յն ընենք…» 1):
Ան ալ — Օհան — ի՞նչ ըրաւ.—
*Բարդի-Ծառը որ մըղեղանց *) հաններ էր ու բըռներ Ձե՛ռ 2),*
Ելաւ բըռնեց այդ մընացած Զօրքին դէ՛մ,
Ու Դաւիթն ալ՝ Իր Ձին հնծաւ՝ Թուրը քաշեց՝ իննկաւ մէ՛ջ…:—
Անոնք ո՛ր կողմ որ կըփախչին՝ աջ ու ձախ՝
Ձէնով-Օհան Այդ-Մարդերը Ծառով կուտայ Դաւթի կո՛ղմ,
Դաւիթ Անոնք կ՛ըսպանէ՛…:
Այդքան Զօրքէն՝ ո՛րն ինչ այնտեղ ըսպանուեցաւ ու իննկա՛ւ,
Ո՛րն ինչ մընաց՝ մէյմէկ կողմ մը փախան դացին՝ ու պըրծա՛ն…:—

689. Նորէն Կուզբադին

ՁՍ·586,589,590,591,592, Զ·՝ՁՍ·586,588, 590, Զվ·7, Զ·

Կուզբադին ալ՝ որ Հազարի Գըլխաւո՛րն էր Զօրքին մէջ 1),
*Ինքզինք զողցաւ *) Դիակներուն դէզի՛ն տակ,*
Այս անգա՛մ ալ չըսպանուեցաւ, փախաւ գընա՛ց՝ դիշերով…:
Գաղտագողի ճամբաներէ գընաց Մըսըր՝ դո՛ւրս ելաւ:
Մըսրայ-կիներ՝ եկան՝ վըրա՛ն թափեցան,
Նորէն ըսին, թէ, — «կո՛ւզբադին, ո՞ւր են ապա Մեր Մարդեր 2):
Ան ալ ըսաւ, = «Ձե՛մ դիտեր…»:
Կընկտիքն այնտեղ Նորէ՛ն ըսին ծաղրանքով.— 3)

— «Կուզբադին, ցեխաբերա՛ն, զ՛ինի կըգովար Շահի Դիւան՝
Կ՛երթամ Սասուն՝ բերեմ առ-թալան…,
Կոլոտ կընկտիի՝ երկա՛նի աղան, երկայն կընկտիի՝ Ուղտե՛ր բառնան·
Կարմիր կովեր՝ կըթա՛ն, Սեւուկ եզներ՝ լըծա՛ն… .
Շատ Մըրջա՛ն, շատ Ապըրջա՛ն… 4)»:

Կուզբադին ալ՝ վերջուց Իրեն ե՛րդն ըսաւ.—

---

1) *Տե՛ս եւ Հատ.* 648: *) Մզեղանց, *Արմատով*: 2) *Տե՛ս Հատ.* 645:

1) *Տե՛ս Հատ.* 493–500, 505–512, 514–521: *) Գողնալ, *Ծածկել, պահել*: 2) *Այսինքն՝ Էրիկներ, եղբայրներ, որդիներ, եւն.*: *Նոյնը կ՛ընեն՝ Տրովադայի կիներ՝ երբ Հեկտոր քաղաք կ՛մտնէ* [Iliade, VI. 86]: 3) *Երգով*:

= «Նեխա՛ծ կընկտեր՝ մազմազական··· 4)·
Անոնց Նետեր կուգան իբ՚ևչպէս մէյմէկ Գերա՛ն··· 5)·
Կըզարնեն մէկ՝ կ՚իճգեն բըսա՛ն··· ·
Զուր գայ հասնի՝ Անոնց խոտե՛րն ալ կըծա՛ն··· 6)·
Ձըմրան՝ Ձիւն կուգայ, Գարնան՝ Անձրեւ,
Ձեր Մարդերու Ձըւեր բերէ՝ Իւղ ու Ձորքա՛ն···»:

Այդ կընկտիքն ալ ի՞նչ ըրին,—
Կուզբադինի Գըլխո՛ւն զարկին եւ ըսին 7)·—

— «Հո՛ղ վեր՝ Քու Գըլխո՛ւն···,
Դու եկար Մեզի սերմա՛ն··· *)»:

Ու կուզբադին ծեծով այնտեղ մեռցուցի՛ն···:

690. Դաւիթ Ու Պաճիկ Թագաւորը Ուխտ Կ՚ընեն

8·39,40,41ա·, 2·՝8·39,41ա·, 8·54–55, (8·41ա·)·

Դաւիթ երբոր Ձօրքը ջարդեց ու դընա՛ց՝
Գընաց տեսաւ՝ որ մէկ Մարդ մը՝ Ձին հեծուկ,
Տէդը Ձեռին, Բանակին մէջ կեցե՛ր է,—
Քըշե՛ց Ատոր Ձօրքին վրա՛յ···:
Այդ Մարդն ըսաւ,— «Դաւի՛թ, եղբա՛յր, Դուն Իմ Ձօրքին մի՛ դըպիր»:
Դաւիթ հարցուց, = «Դուն ո՞ր կողմի Մարդն ես որ···»:
— «Արեւելքց Կողմի Մա՛րդն եմ Ես,—ըսաւ—,
Իմ անուն ալ՝ կ՚ըսեն «Պաճի՛կ–Թագաւոր» 1)·
Դաւի՛թ, եղբա՛յր, Իմ Բանակին մի՛ դըպիր,—
Արի՛ ես Դուն Ո՛ւխտ ու պայմա՛ն ընենք Հոս···»:
= «Ի՞նչ Ուխտ, Պայման ընենք»՝ ըսաւ Դաւիթն ալ:
— «Հիմա,—ըսաւ—, Ես ալ՝ Դուն ալ՝ ամուրի՛·

---

4) *Մնթթիր·՝ Տե՛ս Հատ· 497, 516:* 5) *Ակնարկութիւն՝ Ձէնուլ–Օհանի դործածած Բարդի–Մտուին, եւ մանաւանդ՝ Պիրաբադինի եսեւէն Դաւիթի նետած Մտո–Սըլաքին, (Հատ· 476):* 6) *Տե՛ս Հատ· 514 եւ 516:* 7) *Երգով:* *) Սերման, *Սերմի, սերմնցու:*
1) 8·41ա·՝ «Բաղդըդու խալիֆան, որ Դաւթի նման իր նշանածը բերելու կ՚երթար» (*պատումին բերումով*):

*Մենք որ *) կարդուինք՝ Աստուած տա՛յ,—*
Քեղի Տըղայ՝ ինձի Աղջի՛կ որ եղաւ՝
Իմ Աղջիկ տամ Քու Տըղի՛ն։—
Քեղի՛ Աղջիկ քէ որ եղաւ, ի՛նձ Տըղայ՝
Քու Աղջի՛կ տուր Իմ Տըղին...»։
Ու վերի՛ դին՝ Աստուա՛ծ վրկայ բըռնեցին,
Ներքի դին ալ՝ Դաւթի տակի հրեղէն Զի՛ն...;
Ուխտ ու պայմա՛ն կապեցին հոն, այդ կերպով.—
Մէկին Տղա՛յ եթէ լինի՝ եւ Մէկալին ալ Աղջի՛կ՝
Տան Իրարու՝ դառնան միմեանց խընամի 2)։
Եւ այդ Գաճիկ Թագաւորը՝ քաշեց Բանակն ու գընա՛ց 3)։

691. Մնացած Ջորիքէն Դաւիթ խոսում կ'առնէ

Ե·811,639,748,1123,749, Չ·՝Ե·639, (Ե·639,749), Չ(Ե·39ս·), (Հ·37,438), Հ·438,383, Չ·՝Հ·383, ՉՎ·11, Կ·76, (Կ·76), Ե·116, Չ·՝Ե·116, (Ե·116), ՉԿ·363·

Մըսրամէլիք՝ Դաւթի Ձեռքով՝ Իր պատիժը դըտա՛ծ էր·—
Դաւիթ կըուին վե՛րջ տըւաւ,
Ելաւ դարձո՛ւց Ձիուն Գըլուխ՝ եւ Իր տեղէն գընաց դո՛ւրս,
Բերել տըւաւ՝ Ջորքերն ամեն հաւաքե՛ց,
Թուրը վերցուց՝ կանչեց ըսաւ, — «Մարդի՛կներ,
Ո՛վ կուգայ Իմ Թըրի՛ տակէն կ'անցնի՝ Թող գայ՝ ու երթա՛յ... .
Թէ չէ՝ Ամեն կըկըտրե՛մ ու կըջարդե՛մ...»։
Ամենք եկան՝ իննկան Դաւթի Ձե՛ռք ու Ո՛տքը պադեցին,
Շընորհակա՛լ եղան Դաւթի երե՛ան՝իվեր՝ ու լացի՛ն...,
Գլո՛ւխ իջուցին Թուրին տակէն ու անցա՛ն։
Ջորքը ամբողջ՝ կըուէն իւ՛նչ որ ազատուեր էր՝ մընացեր՝
Եկան անցա՛ն Թուրին տակէն՝ քաշուեցա՛ն։
Դաւիթն ըսաւ, — «Ինչո՞ւ կուլաք, Մարդի՛կներ,

---

*) Որ, երբոր։ 2) *Խմմալ·՝* Իլիականի հերոսներէն Գլոկոսի եւ Դիոմէդի զինադադարին ու բարեկամութեան ուխտին [Iliade, VI. 85–86]։ 3) *Խմմալ· Տրդատ Թագաւորի* եւ *Մամգունի պարագան· Խրնգէ· Բ· Ձև· 332։*

Դուք Մարդո՛ւ պէս 1) *այստեղ Ինձի խօսք կուտա՞ք՝*
Որ ասկէ ետք՝ Ինձ Թըշնամի չէ՛ք դառնար·՞·՞·՞»:
= «Այո՛···,–ըսին Զօրքերն ամեն՝ մէ՛կբերան···»:
— «Որ այդպէ՛ս է,–ըսաւ Դաւիթ–, բան չե՛մ ըներ Ձեզ այլեւս·
Ամենմէկդ ո՛ր դեհէն որ եկե՛ր էք՝
Ձեզ Ամենիդ հրամա՛ն տըւի, թողէք դացէք Ձեր երկիր·
Ելէք դարձէք Ձեր Տունե՛րը, հանգիստ նըստէք Ձեր տեղե՛ր·
Աղո՛թք ըրէք Իմ Հօր Հոգւո՛յն եւ Իմ Մո՛ր,
Ու «Ողորմի՛» տըւէք Մեր Տան Զոհերո՛ւն··· ·
Ձեր Ծախսերն ալ՝ Ձե՛զ կըբաշխեմ, գընացէ՛ք···»:
Ամօնութի՛ւն տըւաւ անոնց, — այդ ահագի՛ն բանակին,
Զօրքը՝ ամեն՝ ելան կ'երթան Իրենց տեղ:
Այդ Զօրքերն ալ՝ օրհնեցին ու չատ փա՛ռք տըւին Դաւիթին,
Բայց չեն հաւատար՝ թէ Մէլիքը ըսպանուե՛ր է՝ ու մեռե՛ր···:—
= «Մատա՛դ Քեզի՝ ու Քո Գըլխո՛ւն,–ըսին Անոնք Դաւիթին–·
Աստուած Քեզ հե՛տ···, յաջողութիւն ու ողջութի՛ւն տայ Քեզի·
Դէ՛, Դուն գընա Քո բանի՛ն··· ·
Աստուած՝ քաղցրիկ Արքայութի՛ւն տայ Քու Հօր–Մօր, Զոհերո՛ւն»:
Դաւիթ այնտեղ ուրախացաւ ու փա՛ռք տըւաւ Աստըծուն,
Իր Ձին քըշե՛ց ու գընա՛ց:—

692. Զօրապետները՝ Մէլիքի Մահն Սուգելով՝ Բանակը Կ'ցրուեն

Կ·76,77,25, Զ·՝Կ·76, Զ(Կ·76), ՁԿ·602,361,363,603, Ե·517,830, 751, (Լ·85), Հ·438, Ց·40,117·

Այդ Բանակին Գըլխաւորները՝ հրաման չե՛ն տար Զօրքերուն՝
Որ ամենմէկ Իր Տո՛ւն երթայ՝ ու հանգչի···:
Պօռացին Թէ, — «Դեռ մի՛ երթաք, է՛յ Մարդեր···,
կեցէ՛ք երթանք՝ Մէլիք տեսնե՛նք, նայինք սո՞ւտ է՝ Թէ՞ ողորդ···»:
Մէկը Մէկին կ'ըսէ, = «Հապա՞, Անոնց խօ՛սքն է, մէյ մ' տեսնե՛նք»:
Եկան Առանք — Մեծաւորները —՝ Մէլիքի տե՛ղ կընային,—
Տեսան որ չ՛կայ···, — Մըսրամէլիք երկու Տապա՛կ եղեր է···,
Այդ ահագի՛ն Մարդու Մարմնէն՝ պըղտիկ կըտո՛ր մ' մընացեր···,
Ու կըտո՛րն ալ՝ այրած, մըրկած կաչի՛ է··· ·

---

1) Հ·383՝ ինչպէս ֆրխստոնեայ:

Ինչպէս փայտը՝ կըրակի՛ մէջ դընես վառուի սեւանայ՝
Այնպէս վառուե՛ր ու սեւցե՛ր է այդ Մարմին…։
Վերցուցին՝ հոն՝ թաղեցին այդ Սեւ–կըտոր։
Մեծաւորներ՝ այնտեղ այլեւս իրենց Զօրքին ձա՛յն տըւին,—
— «Ամենմէկըդ ելէք դացէք Ձեր Տունե՛ր,
Մըսրամէլիք ըսպանուե՛ր է…, Ձեր Տո՛ւն դացէք Ամենքդ ալ։
Դարձէք դացէ՛ք…, Մըսրամէլիք մեռեր է ու լըմընցե՛ր…»։
Ա՛լ այնտեղէն ձայնը ինկաւ Բանակին մէջ, ամե՛ն կողմ,—
— «Սասմանց Դաւիթ՝ Մըսրամէլիքն ըսպանե՛ր է, Վիզ կըտրե՛ր…»։
Ամենմէկը՝ մէյմէկ կողմ մը ցըրուըտեցա՛ն ու դացի՛ն…։
Դաւիթ՝ այսպէս՝ Իր Հօր Ուխտը կատարե՛ց 1),—
Մըսրամէլիքն ըսպանեց ու Սասուն ամբողջ ազատե՛ց։
Այդ Մեծերն ու անթիւ Զօրքեր՝ որ ցըրուեցան ամեն կո՛ղմ՝
Լուրը տարան տարածեցին՝ հեռու թէ մօտ երկիրներ,—
Թէ, — «Դաւիթը՝ այսպէ՛ս–այսպէս կըտըրճուքի՛ւն ըրած է,—
Մըսրամէլիք ըսպանե՛ր է՝ Անոր երկիր դըրաւե՛ր…,
Ա՛լ Աչխարքը այդպէս ղօրեղ Մա՛րդ կ՚ըլլայ…»։—
Այսպէս ըսին ու պատմեցի՛ն ամեն տեղ…։

693. Մայրը Դաւիթին Կ՚առաջարկէ Որ Մէլիքի-Կիցն Առնէ

Զ·՝ն·977, ն·977, Հ·385, Զ(Հ·385), Զ·՝Հ·385, կ·76·

Անկէ յետոյ՝ Դաւիթ դարձաւ Մէլիքի–Մօրն ու ըսաւ,—
— «Մարէ՛,—ըսաւ—, եկուր ինձ հետ՝ Սասմայ–Երկի՛ր տանիմ Քեզ·
Մօրուն ալ թէ, = «Որդի՛, Դաւի՛թ, ի՞նչ կ՚ըսես…,
Դուն որ զարկիր ըսպանեցի՛ր Քու եղբայր…՝
Ձես Քու ձեռքով պիտի չահես ու պահե՞ս… .
Ձէ՛, ես չե՛մ դար Սասմայ–Երկիր, որ օտա՛ր է ինձ համար։
Բայց, դէ՛, Որդի՛, վընաս չըկա՛յ, Մըսրամէլիք ըսպանեցիր,
[վերջացա՛ւ·
Դուն ալ՝ սկսէ՛՝ Իմ Տըղա՛ն ես մէկ ձեւով,—
Արի՛ Անոր կընիկն առ Քե՛զ՝ կարգըւէ՛ 2)։
Իշխանութիւն մընայ Քեզի՛, Նըստէ Մըսը՛րն ալ տիրէ,

---

1) *Տե՛ս Հատ·· 259 եւ 266։* 2) *Մինչեւ վերջին փորձ՝ ցեղին պահպանման մտահոգութիւնը։*

Սասում արդէն Քեզի՛ է…»:
Դաւիթ այնտեղ ի՞նչ ըսաւ,—
— «Ես Մօրէ որ ծընե՛ր եմ…՝
Գառն–Անարատ 3) Տըղա՛յ եմ…,—
Ես չե՛մ բերեր՝ իմ այս Արդա՛ր–Մարմինը՝
Ձեր ամմաբուր Մարմիններուն հետ խառներ…»:
Մէլիքէ–Կին 4)՝ այնտեղ Դաւիթն անիծե՛ց…,—
Ըսաւ, = «Ինչպէս Մըսրամէլիք նո՛ր կարգըւած Տըղա՛յ էր,
Ըսպանեցիր՝ անոէ՛ր մընաց Իր կընիկ՝
Դուն ալ երբոր պըսակուիս՝
Քու կընիկն ալ՝ որբեւայրի՛, անոէ՛ր մընայ՝ Իր կարգին…»:
Դաւիթն ըսաւ, — «կընճմընճա՛, կ՛ը, կընճմընճա՛…),*
Ես ալ ահա՝ կ՛երթամ դէպի Մեր Սասո՛ւմ…»:

694. Ճաղրական Դաւիթ՝ Դէպ Սասուն

ՁՍ·593, Խ·42, Հ·438,385,37, Լ·30, ՁՎ·11, Ե·751,1010,586,829, 517,639, Ճ·116, Կ·76·

Դաւիթ առաւ Հօրեղբայրներն ու Քեռին,
Առա՛ւ Իր հետ՝ Մէլիքէ–Մայր՝ Նաժիշներո՛վ, Մառայո՛վ,
Մըսրայ–Տեղաց 1) ա՛ռ ու աւար, ի՛նչ կայ՝ չկայ, ամե՛ն բան,
Քաշեց տարաւ Իրեն հե՛տ,—
Հեծա՛ւ Իր Ձին, ելան կուգան դէպ Սասո՛ւն:—

695. «Ակնջկլա» Կ՚ասնին Սասուն՝ Թէ Դաւիթ Կուգայ

Կ·77, Ձ·՝Կ·77, Լ·100,84, (Լ·100), Ե·1010·

Ձէ՞ որ Օհան այդ Ձօրքն ամեն տեսե՛ր է,
Մեծ ու պըղտիկ ա՛յդքան անթիւ Վըրաններըը տեսե՛ր է,
Առաջըրնէ քանի մ՚ անգամ Քաղաք գացեր՝ եկե՛ր է,
Ժողովըրդին ըսե՛ր է որ՝ «Այսքան Ձօ՛րք կայ ու Վըրա՛ն…»:

---

3) Հ·385՝ գառնաբատ՝ *ուղղել՝* գառն–անարատ (= *գառնուկի պէս միամիտ, անմեղ, մարդկային կիրքերը դեռ չ՚ճանչցած*):
4) Հ·385՝ Մայր: *) կնճմընճալ,, *Խաղկանճել (չունի)*:
1) *Այսինքն՝* Բանակին:

Ժողովուրդն ալ՝ «Ա՛խ–վա՛խ,–կ՝ըսէ–, Դաւիթ պիտի ըսպանեն…,
Գան Մեր բոլո՛ր կընիկ–Տըղան առնեն տանին Գերուքի՛ւն…,
Ա՛խ–վա՛խ, ա՛խ–վա՛խ…, Դո՛ւ ճար ընես, Տէ՛ր–Աստուած…»:
Քաղքի Մարդիկ՝ ատոր վըրայ՝ ի՞նչ ըրեր են այս անգամ,—
Բարձըր Սարի մ՝ Գըլխուն վըրայ՝ բերած Պահա՛կ են ղըրած,—
*— Ի՞նչ ապով… *),—*
= Որ իրիկան նային ճամբան՝ Զօ՞րքն է կուգայ՝ թէ՞ Դաւիթ…:
Ո՛րը չուտ գայ՝ լո՛ւր տան Քաղքի Մարդերուն,—
Անոնք Իրենց պատրաստութիւն տեսնեն պո՛ր համեմատ…:
Պահակները Դիտա՛կ ունին. Դաշտի ճամբա՛ն կընային,
Մէ՛կ ալ տեսան՝ Զիաւո՛ր մը՝ ճամբուն մէջտեղ՝ որ կուգա՛յ…:
*Պահակնե՛րն են, — ելան Քաղաք Թո՛ւղթ ղըրկեցին Քամիով *),—*
— «Մէկ Զիաւո՛ր մ՝ կուգայ,–ըսին–, ճամբուն մէջ,
Հաւաստա՛ որ Դաւի՛թն է Այդ Զիաւորը…» 1):
Դաւիթ՝ ճամբուն կէսը հասա՛ւ–չըհասաւ՝
Լուրը տարան Սասմանց Զէնով–Օհանին 2),
Ըսին, — «Ահա՛ Դաւիթ 3) եկա՛ւ ողջ–առողջ…,
Մըսրամէլիքն ըսպանե՛ր է…, ու Զօրքերն ալ կոտորե՛ր…,
Մեր «Ակընջկլաչն Քու վըրա՛դ…» 4):—

696. Բաճակի Ձափ Բազմութիւն՝ Դաւիթը Դիմաւորելու Կ՝երթայ

Ե·1011,720,Կ·77,78,Զ·՝Կ·77,78,Զ(Կ·78),Լ·84,100,Զ·՝Լ·100,ՁՍ·593·

Զէնով–Օհան Հօրեղբայրը՝ ելաւ գընաց Դաւթի դէ՛մ·
Գիւղականն ալ՝ կընիկ ու Մա՛րդ, Պառա՛ւ, Հալտը, ճիժուպիժ՝
Դաւթի գալու(ն) լուրը երբոր լըսեցին՝
Քաղքցո՛ւ հետ՝ մէկ Մարդո՛ւ պէս՝ Ո՛տք ելան,

---

*) Ապով, Պատճառով: *) Քամիով, Հովին թեւերով, ճեպընթաց: 1) Հասկնալի է որ Զէնով–Օհանին է ուղղուած՝ պահակներուն Գիրը: 2) Կ·77՝ Ցեվարին՝ ուղղել՝ Ցեվաքին (Օհանին, Ցովանին): Կը թուի թէ՝ Սասնոյ Քաղքի մեծաւորի իր հանգամանքով՝ Զէնով–Օհան սկիզբէն մինչեւ վերջ Դաւթի քով չէ կեցեր: Եւ կռիւին վերջը չ՝առած՝ Սասո՛ւն դարձեր է, իր փոխարէն՝ Քեռի–Թորոսիկը ղրկելով Դաւթի քով: 3) Լ·84՝ Ճոչ–Միլհոն: 4) Մեր աւետաղէքը՝ դո՛ւն պէտք է տաս:

Բազմութիւնով, Նրաձևերով՝ գացին Դաւիթին ընդառա՛ջ։
Դաւիթ վերէն նայեց որ ի՛նչ կըտեսնէ...,—
Մե՛ծ բանակի մ՝ նըման Մա՛րդ է՝ որ Ալիքի պէս կ՝աճի՛...,—
«Արդեօք,–ըսաւ–, այդ Զօ՞րքն ի՛նչ է որ կուգայ.՞.՞. .
Այս ո՛րքա՞ն ալ չատ Թըշնամի՛ կայ ինձի՛...»։
Ան ալ — Դաւիթ — իր Ձին քըշե՛ց ու ըսաւ.—
— «Է՛ Ձի՛, քալէ՛..., Աստուած ինչե՛ր ըրած է...»։
Քըշե՛ց Իր Ձին, մօտեցա՛ւ այդ Բազմութեան,
Իրիկնե՛ց որ՝ Զէնով–Օհան՝ հոն Ամենուն առա՛ջն է...,—
Նայեց տեսաւ՝ Աղջի՛կ, Տըղա՛յ, Գիւղակա՛ն...՝
Ամե՛ն ելեր եկե՛ր են...,—
կանչեց ըսաւ, — «Հօքա՛ր, Դո՞ւն ալ՝ ինձ հետ կըուի՛ ես եկեր...»։
Հօրեղբայրը պօռաց, = «Դաւի՛թ, Գըլխո՛ւդ մեռնիմ՝ Արեւո՛ւդ...,
Մենք եկեր ենք՝ կ՝ուրախանա՛նք Քու վըրայ,
Եւ Աստծուն փա՛ռք կուտանք որ՝ Դուն անվընաս եկե՛ր ես...»։
Դաւիթն ալ թէ, — «Այդ կընիկնե՞րն ի՛նչու համար եկեր են...»։
= «Որդի՛,–ըսաւ Զէնով–Օհան–, ինչ Դու գացիր՝ մինչեւ օրս՝
Այդ խեղճերը՝ ամեն օր ալ՝ Աստծուն Աղո՛ք կ՝ընէին,—
Կըվախնային՝ Մըսրամէլիք Քեզ չըզարնէ՛ ըսպանէ...,
Անհաւատները գային Քաղքի Մարդերն ամեն չարդէին...,
Կընիկ–Տըղայ՝ առուգերի՛ քաշէին ու տանէին...։
Բայց Քու գալը որ լըսեցին՝ ուրախացա՛ն Ամենն ալ,
Մեծ ու Պըզտիկ՝ ելան եկան Քու առա՛ջդ...»։
— «Որ այդպէ՛ս է,–ըսաւ Դաւիթ Ամենուն–,
Դարձէ՛ք գացէ՛ք՝ Աղո՛ք ըրէ՛ք Ինձ համար,
*Ու Սամանց–Տան Ջոջա՛նց *) ալ.—*
Մըսրամէլիք ըսպանե՛ր եմ, գացէ՛ք հանգի՛ստ նըստեցէ՛ք»։
Այդ խե՛ղճ Մարդեր՝ ա՛լ ապահով՝ դարձան գացին Իրենց Տո՛ւն.—
Ոչ մէկ դեհէ չե՛ն վախնար։—

697. Bopն Or Bop Գիտեր՝ Խաղ Ու Պար

Զ·՝Լ·100,84, Լ·100,84,29; (Լ·29,100,84), Ե·1011,31,720, 614,977,784, (Ե·1011), ՀՍ·593, Խ·43, ՀԿ·364·

Դաւիթ երբոր եկաւ հասաւ Բազմութեան՝

*) Ջոջանց, Ջոջերուն, մեծերուն, պատկերուն։

Ձէնով–Օհան ուրախացա՛ւ, խընդացա՛ւ,—
Շա՛տ կըսիրէր Դաւիթը,
Վազեց առաջ՝ Դաւիթի Գըլուխ համբուրե՛ց,
Ջըրտինք սըրբե՛ց, փոխե՛ց Անոր արիւնոտած Հագուստները։—
Առօ՛ք–փառօք, Նըւագներով, Դաւիթն առին ու եկա՛ն,
Բերին Նորէն Դըրին՝ Հօր տեղ՝ Թագաւոր։—
Եօ՛թ ցերեկ ու եօ՛թը գիշեր՝ զարկին–խաղցին Պարերո՛վ,
Հրավառութի՛ւն 1) ըրին, կերան՝ խըմեցին...։
Ու Դաւիթի Մեծ–Մայրիկն ալ 2)՝ այն օր՝ Տունէն դո՛ւրս ելաւ,—
Ըրած Ուխտը տե՛ղն եկաւ... 3)։
Ձէնով–Օհան՝ առաւ Դաւիթ՝ տարաւ Տո՛ւն.
Քեռի–Թորոս՝ Քուռկիկ–Ձիուն Սանձը բըռներ՝ կըտանի՛,
Տարան՝ լա՛ւ մը լըւացին ու մաքրեցի՛ն,
Աւին տարան ու կապեցին Իրեն տե՛ղ։—
Նըստեցան հոն՝ Սասմա–Քաղաք, վայելեցին Իրենց կեանք։—

698. Գիւնի Ու Ուռ

Ե·720,1011, Չ(Ե·1011), Չ·՝Ե·1011, Չ·

*Դաւիթ երբոր Զո՛ւլ *) եղաւ հոն, գընաց Իր Տեղ Նըստեցաւ՝*
— «Դէ՛հ, մէկ Գաւաթ 1) Գինի՛,–ըսաւ–, տըւէք Ինձ...»։
*Աման մ՝ 1) Գինի լըցին *) տըւին Դաւիթին,*
Առաւ խըմե՛ց՝ մէ՛կ ալ ուղեց, ան ա՛լ տըւին՝ ու խըմե՛ց·
Մէ՛կ ալ ուղեց՝ ան ա՛լ առաւ ու խըմե՛ց,—
Երե՛ք Աման 1) Գինի՛ ուղեց, տըւին Իրեն՝ ու խըմե՛ց,—
Պառկեցաւ հոն՝ ու քընացա՛ւ երեք օր։
Երե՛ք օր ու երե՛ք գիշեր քընացաւ։—
Երեք օրը որ լըրացաւ՝ ելաւ վե՛ր,
Հեծա՛ւ Իր Ձին՝ հրեղէն Քուռկի՛կ–Ջալալին,
*Գընաց ելաւ Իր Հօր Սեւ–Սար՝ Նէճիբի *)։—*

---

1) Լ·100՝ դօնամա։ 2) Ե·720՝ մայր՝ *ուղղել՝* մամ (*Տե՛ս Հատ·* 580ա· *Ծ·* 3)։ 3) *Տե՛ս Հատ·* 580։

*) Զոլ, *Մեծ, իշխանաւոր*։ *) Լըցին, *Լեցուցին* (*Համմալ·՝ դրբր· համաճեալը՝ «լցաւ բարութեամբ Տեառն»*)։ 1) Ե·1011՝ մէկ կադախ (*գաւաթ*), մէկ փունթ։ *) Նէճիբ (*նախճիր*), *Որսորդութիւն, որս*։

Զարկաւ եղներ, Վէրի–Ոչխա՛ր ու եղնիկ 1),
կախեց Քուռկիկ–Ջալալիէն՝ ու Տո՛ւն բերաւ ամեն մէկ,
Բաժնեցին ու խորովեցին՝ նըստան այնտեղ Գինեխում։—
Ձէնով–Օհան կանչե՛ց ձայնով ու ըսաւ,—
— «Փա՛ռք Քեզ, Ա՛ստուած..., Սասմանց Ճըրագ վառեցիր...»։

699. Մըսրամէլիի Ջուն Ու Ծառն-Վէգոյի Վախը

Չ·՝Ց·116,44ա·, Ց·116, (Ց·116), (ՉԿ·607), ՉԿ·604,607,605,606, 608, Ե·31,830, (Ե·31)·

Դաւիթ երբոր Մըսրամէլիէն ըսպաննեց՝
Անոր Ձախ–Ջուն կըտրե՛ց դըրաւ մէկ անկիւն,
Բերաւ Քառասուն Ամոլ Գոմէ՛չ՝ լըծեց Սա՛յլ,
Անոր Ձախ–Ջուն թալեց վըրան, Մէկը ձըղեց եռեւէ՛ն 1),
Գոմէշները Սայլ քաշեցի՛ն, քաշեցի՛ն...՝
Աւին բերին՝ Սասմայ–Քաղա՛ք հասուցին։
Ուշ ժամանակ՝ դիւերուա՛ն մէջ՝ Սայլէն երբոր աւին վա՛ր՝
*Բերին՝ Սըրա՛հ *) իջուցին·—*
Դաւիթն ըսաւ,— «Թող մընայ հո՛ն՝ մինչեւ առաուն՝ լոյս բացուի,
Իմ Հօրեղբօր կընիկը գա՛յ՝ ի՛նչ որ կ՛ուզէ՝ ան ընէ՛...»։
Լուրը տարան Իր Հօրեղբօր Վէգոյին,—
— «Ծըռա՛ն–Վէգօ, ելի՛ր,–ըսին–, Դաւիթ կըռւէն դարձե՛ր է,
Մըսրամէլիէն ըսպաննե՛ր է, երկու տապա՛կ է ըրեր,
Անոր Ձախ–Ջուն կըտրեր Թալեր Սայլի վըրայ՝ բերե՛ր է...»։
Ծըռան–Վէգին՝ ելաւ գընաց դիտելո՛ւ,
Մո՛ւթ էր, գընաց ինկաւ վըրան՝ չա՛տ վախցաւ...,
Մէկիկէն Ջուն երբոր տեսաւ՝ վախէն ցըռե՛ց իր Վըրան...,—
Հէ՛ռ՝լըսողաց...)՝ Եօ՛թ Գիւղ Անոր Ծեռին առջեւ աւրեցա՛ն...։*
Ծըռան–Վէգին հրսկա՛յ Մարդ էր..., չա՛տ կ՛ուտէր... 2)·

---

1) *Հմմտ·՝ պատմական «Որսալ Ճիւ եւ պարարտ երէ...»։*

1) *Այսինքն՝ հսկողի մը յանձնեց՝ սայլը քշել–բերելու հոգը։*
*) *Սրահ, Տունին նախասենեակ· Ե·830՝ երեսքաց։* *) *Հեռ՝լսողաց (հեռլսողաց), Լսողներէն հեռո՛ւ ըլլայ..., [ունկնդիրներուն հանդիպ՝ չքմեղանքի ձեւ մը]։* 2) *Հմմտ·՝ «Շարայի որկորը...», Gargantua:*

երբ կըցըռէր՝ Սա՛ր–Զո՛ր պիտէր)՝ որ չարաբրէ՛ր*) Անոր ցեռ*).—*
Անոր համար՝ ցրռան–վէգօ 3) կըկանչէին իր անուն։

700. Ցռան-վէգի Ամոլին Զհմեղացիը

Չկ·609,610,611,612,613, ց·116,117, (ց·117), ե·31, խ·43, կ·78·

Լուսաբացին՝ Դաւիթ կանչեց իր Հօրեղբայրն ու կընիկ,—
— «է՛ Հօրեղբօր–կընի՛կ,–ըսաւ–, այն օր ինչ ես պիտ՝ երթայի կըռւի՛
Դուն ինձ ըսիր՝ «Մըսրամէլիքն ըսպանես...՝
Անոր Զախ–Զուն բերես ընենք Աչքի–Դե՛ղ»·—
Աչից–Դեղ չ՛է՛..., Դուն ինձ այնօր հե՛դըն տըւիր 1) այդ խօսքով.... .
Ահա՛ն,–ըսաւ–, Մէլիքի Զուն Քեղի համար բերե՛ր եմ.
Աչքի–Դե՞ղ է՝ ինչի՞ դեղ է..., ի՛նչ որ կ՛ընես՝ ա՛ռ ըրէ՛...»։
Ցրռան–վէգօն ու կընիկն ալ ի՞նչ ըսին,—
= «Դաւի՛թ,–ըսին–, որ Մենք այն օր Քեղի այնպէս չըսէինք՝
Այդ հեղնանքը Քեզի տըւած չ՛ըլլայինք՝
կ՛ըլլայ որ այդ կըտրըճուքիւն չ՛էի՛ր կըրնար ընել Դուն...»։

Մընա՛ց՝ Սըրահ հոտեցա՛ւ...,
Դաւիթն ըսաւ, — «Հօրեղբօ՛ր–կին, ի՛նչ որ կ՛ընես՝ ալ ըրէ՛...,—
*Անոր հոտէն՝ ա՛լ չենք չահուիր *) այս Տան մէջ...»։*
Ան ալ ըսաւ, = «Ի՞նչ պիտի–Նեմ ես Անիկ...,
Անօր մէկ բա՛ն մ՛ էր՝ ըսի՛նք... .—
Ինձի պէտք չ՛է՛..., տարէք անդի՛ն Նետեցէք...»։
Առին տարան՝ դո՛ւրս Նետեցին Սըրահէն։
Դաւիթ եկաւ ու նըստեցաւ Իրեն Տո՛ւն։

701. Կորեկարտի Պառաւը՝ Դաւիթին Խորհրդատու

Չ(կ·78,63), կ·78, Չ.՝կ·78, Չ.

Չըրո՞յցն ուրկէ, — ղըրոյցը տանք Կորեկ–Արտի Պառաւէ՛ն,
Որ Դաւիթի Հօրը Սէրո՛ղն էր եղեր։—

---

*) Պիտէր, Պէտք էր։ *) Շարաբրել, Պարտկել, բաւել, տեղ տալ։ *) ցեռ, Կղկղանք (վազուն, լոյծ վիճակի մէջ)։ 3) ե·830՝ Ցռան–Սեվդօ։

1) խ·43՝ չաճայ տուիր՝ խ·43ս·՝ «Ինձ համար չարը կամեցար»՝ ուղղել՝ հեգնեցիր, ծաղր ըրիր։ *) Շահուիլ, Դիմանալ։

Այդ Պառաւը՝ ելաւ եկաւ Դաւթի մօտ,
Ըսաւ, — «Դաւի՛թ, բարո՛վ եկար. Դաւի՛թ, Դու բարո՛վ եկար...»
= «Աստծու բարի՛ն Քեզ, Մամի՛կ...»:
— «Տեսա՞ր, Որդի՛, որ Քեզ ամե՛ն ճար–ճամբաներ ցո՛յց տըւի...:
Ապա որ ես չ'ըսէի՛ Քեզ Այդ Բաները... 1)՝
Դուն այդ օրը՝ ելեր էիր՝ մերկուբոպիկ, առանց Ձէնք՝
Բարդի–Ծա՛ռ մը առեր էիր՝ ու կ'երթայիր Մէլիքի դէմ կըռիւի՛...:
Տեսա՞ր լ'ինչպէս դըժուա՛ր բան է կըռիւը... .—
Ես Քու Հօրը սիրո՛յն համար՝ Քեզ ամեն բան ցո՛յց տըւի...»:
= «Մամի՛կ,–ըսաւ–, երախտապա՛րտ եմ Քեզի.—
Ես Մայր չ'ունի՛մ, կուգա՞ս կ'ըլլաս Ինձի Մայր...»:
— «Դաւի՛թ, Որդի՛,–ըսաւ Մամիկ–, Ես Նորէ՛ն ալ Քեզ Մա՛յր եմ,
Իմ Տուն կ'երթամ՝ կընըստիմ,
*Ի՛նչ որ լըսեմ՝ Նորէն կուգամ Քեզի կ'ըսե՛մ, մի՛ վախնար *):*
Դաւի՛թ, Որդի՛, Ծըլի՛ս–Ծաղկի՛ս, չա՛տ ապրիս... .
Մինչեւ հիմա պըղտո՛ւկ էիր՝ հիմա այլեւս ջոջացա՛ր... .
Թէ Տո՛ւռ էիր՝ խելքովցա՛ր...,—
Ա՛լ Դուն այստեղ մի՛ նըստիր...»:
= «Ապա ո՞ւրտեղ նըստիմ...»,–ըսաւ Դաւիթն ալ:
*— «Քու Հօրեղբօր Օհանի վրա՛յ կըղընես *),*
Կ'ըսես՝ «Իմ Հօր Պալատ չըմկէ՛, պատրաստէ՛,
Որ Ես երթամ՝ նըստիմ Իմ Հօր չինած Տե՛ղ.—
Աղէ՛կ չըմկէ, յարդարէ...:
Քու Հօր Արկղեր, ամե՛ն բաներ՝ այնտե՛ղն է որ պահած են:
Դուն Քու Զեռքով՝ Քու Հօր Լաթեր կըհանե՛ս,
Մաքրե՛ս, ծալե՛ս, Նորէն դընես Իրենց տե՛ղ:
Թուրն ալ՝ Զեռքովդ՝ կ'առնես՝ Պատէ՛ն կըկախես:
*Մէկ ալ՝ պէտք է՝ Մա՛րդ մը բըռնէ *) Քու առաջ,*
Որ լըսէ Քեզ՝ ու կատարէ՛ ըսածներդ:
Մէկ Մըչա՛կ ալ կըբըռնես որ՝ Քո Ձին աղէ՛կ խընամէ:
Որդի՛, Դաւի՛թ, մնացիր բարի՛, Ես կ'երթա՛մ...»:—

---

1) Կ'ակնարկէ՝ Հօրը Ձէնուղարդերուն, որոնք ձեռք բերելու մի–ջոցները ցոյց տուեր էր Դաւիթին. Տե՛ս Հատ. 544–545: *) Մի՛ վախնար, Հոգ մի՛ ըներ: *) Վրա(ն) դնել, ճնշում բանեցնել, ստիպել: *) Բռնել, կեցնել, յատկացնել, վարձել:

702. «Պէօհ Էֆ Տրթամ Հօրս Պալատին Մէջ, Նսթիմ»

Չ(Կ·78), Կ·78, Չ·՝Կ·78, Չ·

Դաւիթ այսքան չըլըսէ՛ր…,—
Կանչեց քերա՛ւ Ջէնով–Օհան՝ ու ըսաւ·—
— «Է՛յ Հօրեղբայր, իմ Հօր Պալատ պատրաստե՛լ տուր ու չըտկէ՛,
Լա՛ւ յարդարէ, ու դընե՛լ տուր՝ փըռո՛ց, բազմո՛ց ու բարձե՛ր,—
Շա՛տ բարձեր դիր Մեծ–Դահլիճ… 1)·—
Ասկէ յետոյ՝ պէտք է երթամ՝ Հօրս Պալատին մէ՛չ նըստիմ…»:
= «Հապա, Որդի՛,–ըսաւ Օհան–, կ՝երթամ կ՝ընե՛մ ամեն ինչ·—
*Սասմանց–Ձըրագ մինչեւ հիմա անցուկ *) էր…,*
Հիմա նորէն, Սասում՝ Ձըրա՛գ վառուեցաւ·—
Ապա ես դեռ չըպատրաստե՞մ այդ բաներ…:
Ձու ըրածը որ Դո՛ւն ըրիր, մատա՛ղ Քեզի՝ Հօրեղբայրդ,
Շատ մեծ վա՛ռք է՝ ու խընդուքի՛ւն Մեզ համար…:
Դուն որ ա՛յդքան կըտրիճ ես՝
Ես դիտեմ թէ՝ Աչխա՛րք ամեն ինձի՛ է…:
*Ես կըխընդա՛մ *), կ՝ուրախանա՛մ՝ երբ Դուն ըսես՝ ու լըսենք…»:—*

703. Ջէնով-Օհան Կ՝պատրաստէ Պալատն Ու Պատօճախներ

Չ·՝Կ·79, Կ·79, (Կ·79), Չ·

Ջէնով–Օհան ելաւ դընաց՝ ու Պալատը պատրաստե՛ց·—
Թէ Դաւիթը մէ՛կ բան ուզեր՝ ըսեր էր՝
Ջէնով–Օհան դընաց ըրաւ երկո՛ւ բան:—
Պալատը ճո՛խ յարդարեց…,
Եկաւ ըսաւ, — «Դաւի՛թ, կանգնէ որ երթա՛նք 1)»:
Առաւ Դաւիթ՝ ելան գացին Հօր Պալատ,
*Դաւիթն ըսաւ, — «Մե՛ղք է, Հօրա՛ր, որ Դուն Ինձի Հա՛ց *) բերես·*
Մա՛րդ մը բընէ՝ դի՛ր իմ առա՛ջ՝ Ինձի Հաց–Ջուր Թող բերէ·
Դուն իմ Հօրը փոխարէ՛ն ես, իմ Մե՛ծն ես,
Հաց–Ջուր բերես՝ ես չե՛մ ուտեր, չե՛մ խըմեր·—

---

1) Անշուշտ «Բարձի Տէր» Նախարարներու Թիւը չատ էր: *) Անցուկ, Անցած, մարած: *) Խնդալ, Հրճուիլ, Խնդութիւն զգալ:
1) Կ·79՝ ըսողը Դաւիթն է: *) Հաց, ճաշ, սեղան:

Մէ՛կը բըռնես՝ Զիս խընամէ ու պահէ.
Մըչակ մըն ալ՝ Իմ Զի՛ն չահէ ու պահէ»:
Հօրեղբայրը՝ Զէնով–Օհա՛ն՝ գընաց բըռնեց ու բերա՛ւ,
Թէ, — «Դաւիթը ի՛նչ որ կ՛ըսէ՝ պիտի ընէ՛ք Անոր խօսք...»:
Մըչակին ալ՝ Թէ, — «Դաւիթի Զին խընամե՛ս ու նայի՛ս...»:
Դաւիթն ըսաւ,— «Այդ Մարդերուն ի՞նչ Վարձ կուտաս, Հօ՛րեղբայր»:
Ըսաւ, = «Ամիս՝ հինգ կօտ Ցորեն, հինգ Արծա՛թ...»:
Դաւիթն ալ Թէ, — «Կ՛ուզեմ որ տաս՝ Ատոնց Վարձ՝
Ամենմէկին տա՛ս կօտ Ցորեն, տաս Ոսկի՛...»:
Օհան Թողուց գընաց Տուն:—

704. Մօակն Ու Դաւիթի Զին

Զ.՝Կ·79,80, Կ·79,80, Զ·

Դաւիթ դարձաւ Իր Մըչակին եւ ըսաւ.—
— «Մըչա՛կ, գընա՝ Իմ Զին ջըրէ՛՝ Ես տեսնե՛մ... .
Ա՛ռ Սափորը՝ գընա՛ Աղբիւր, Անուշ–Ջո՛ւր բեր Իմ Զիուն.
*Պըղինձ *) հո՛ն է· դիր առջե՛ւը՝ Թող խըմէ»:*
Մըչակն ելաւ՝ առաւ կուժը, գընաց Աղբիւր, Ջո՛ւր բերաւ,
Տարաւ Ախոռ, լեցուց Պըղինձ՝ ու վերցուց՝
Բերաւ դըրաւ Զիուն առջեւ՝ որ խըմէ:—
*Զին մէկ այնպէ՛ս Իր Գըլուխը Թախթըփեց... *)՝*
*Որ Մըչակը Գետի՛ն ընկաւ խել(ք)ամաղ... *):*
Դաւիթ նայեց՝ Մըչակ չ՛եկա՛ւ, ուշացա՛ւ...,—
Մըտքուն ըսաւ՝ «Մըչակ չ՛եկա՛ւ..., բան մը եղե՛ր է Իրեն...»:
Գընաց տեսաւ՝ Մըչակ երկա՛յն պառկե՛ր է...,—
կանչեց, — «Մըչա՛կ, ծօ Մըչա՛կ...»:
*Մըչակն իսկի՛ *) ձայն չի՛ տար...:*
Ֆիչ մը պաղ Ջո՛ւր Թափեց Ճակտին, Մըչակ բացա՛ւ Իր Աչքեր,
Դաւիթ բըռնեց կայնեցուց,
— «Տըղա՛յ,–ըսաւ–, ի՞նչ եղաւ Քեզ..., վախցե՞ր ես...»:
= «Դաւի՛թ,–ըսաւ–, կ՛ելնեմ՝ Իմ Տո՛ւն կ՛երթամ Ես...»:

---

*) Պղինձ, պղնձէ մեծ կաթսայ: *) Թախթփել, թոթուել:
*) Խել(ք)ամաղ, խելքը մաղելու ձեւով, ուշագնաց: *) Իսկի՛, երբեք, բնաւ:

— «Ինչո՞ւ կ'երթաս…,–ըսաւ Դաւիթ–, ա՛յ Մըշակ…»։
= «Ո՛ր Զին օր մը կ'ըսպանէ՛ Զիս, ուշ–կանուխ… .—
Գըլուխն այնտեղ ինչ թախթըփե՛ց, վըռըշտա՛ց…՝
Անոր թաւիշն՝ ես վախեցա՛յ, քի՛չ էր մնացեր՝ մեռնէ՛ր… .
Նորէն աղէ՛կ որ Դուն հասա՛ր առենին…»։
Դաւիթ դարձաւ իր Քուռակին՝ վերցուց ըսաւ, — «Ճիմա՛ր Զի…,
Այդ Մըշակը ես բըռնե՛ր եմ՝ Քեզի Զո՛ւր տայ, Գարի՛ տայ…,
Քու Քամակը աղէ՛կ քորէ, խընամէ՛…,—
Ինչո՞ւ Իրեն Քով չե՛ս տար որ Քեզ նայի… *)։
Ես ուրիշ տե՛ղ կըրնամ երթալ՝ Դու կըմընաս անօթի՛…,
Քեզի Գարի ու Ջուր տըւող չի՛ ըլլար… .—
Հէ՞…, ճանչըցի՛ր այդ Քեզ պահող խընամող…,
Աղէկ նայէ՝ ճանչընա՛ս…»։
Ապա դարձաւ Մըշակին,—
— «Տըղա՛յ,–ըսաւ–, Գըլխնիդ վերցո՛ւր՝ տար դէր առջե՛ւ՝ որ խըմէ»։
= «Ես կըվախնա՛մ…», — ըսաւ Ան։
— «Ալ մի՛ վախնար,–ըսաւ Դաւիթ–, տա՛ր ու դի՛ր…»։
Մըշակ վերցուց Ջըրին–Աման, Զին քաշուեցաւ դէպի ե՛տ,
Աման դըրաւ Զիուն առաջ՝ եկաւ խըմեց Իրեն Ջուր,
Ա՛լ բան չ'ըրա՛ւ Մըշակին։
Մըշակ գընաց Գարի՛ բերաւ՝ լեցուց Մըսուր ու Թողուց,
Զին քաշուեցաւ՝ ետ–ե՛տ գընաց, ապա՛ եկաւ ու կերաւ։
— «Տըղա՛յ,–ըսաւ–, Զին որ ուտէ լըմընցընէ՛ իր Գարին՝
Կ'երևնես աղէկ խընա՛մ կուտաս ու կըմաքրե՛ս Քորոցով *)»։
= «Դուն որ երթաս,–ըսաւ Մըշակ–, ես Այս Զիէն կըվախնա՛մ…»։
— «Զէ՛,–ըսաւ–, ա՛լ բան չ'ը՛ներ Քեզ՝ Իմ Քուռակ…»։
Գարին կըտրե՛ց *), պըրծա՛ւ Քուռկիկ–Զալալին,
Մըշակն ելաւ՝ Զիուն Քամակ պիտի քորէր՝ կըվախնա՛ր…. —
Զին ալ Կրոնակ բերաւ մօտիկ՝ որ Մըշակը լա՛ւ քորէ։
Մըշակն իր Ձեռ յուշիկ–յուշիկ՝ Քամկին վըրա՛յ կըդընէ՝
Քորոցովը կըքերծէ՝ ու կըկենայ…, Զին բան չ'ը՛ներ, ձայն չի՛ տար։
Քորից պըրծաւ՝ Աւե՛լ բերաւ ու աւե՛ց.

---

*) Նայիլ, Ինամք տանիլ։ *) Քորոց, երկաթէ, աղոցաւոր՝ դործիք, Ձիերը քորելով մաքրելու յատուկ, Քաշտու։ *) Կտրել, Ուտել–լմնցնել։

Մեծ կապերտ մ՚ ալ քաշեց Զիուն կըռնակին,—
Ուրախացա՛ւ՝ ելաւ եկաւ Դաւիթի մօտ,
Ըսաւ, = «Դաւի՛թ, Քու Զին այլեւս ինձ չըզարկա՛ւ այս անգամ»։
Դաւիթն ալ թէ, — «Ալ Իմ Զիէն Դուն մի՛ վախնար, ա՛յ Տըղայ,
Երթաս Անոր փորին տա՛կն ալ քընանաս՝
Ոտ չի՛ դըներ Քու վըրայ···,
Քեզ կըպահէ կըպաշտպանէ՛ մինչեւ իսկ···»։

705. Մեծամեծները՝ Դաւիթի Քով Կուգան

Կ·80, Զ·՝Կ·80·

Մընա՛ց իրկո՛ւն···, — Քաղաքի ու Գեղի Մեծերն, Իշխաններ 1),
Ժողովուեցան՝ ելան եկան Դաւիթի մօտ, Նոր–Պալատ։
Դաւիթն ըսաւ, — «Ինչո՞ւ համար Ինձի չէք գար ամեն օր,
Աս՛ր միայն եկաք հոս·՞·՞·՞»։
Անոնք ալ թէ, = «Մինչեւ այս օր՝ Մեր Ճըրագը մարա՛ծ էր,
Այսօր Սասմանց Նոր–Ճրագը վառուեցա՛ւ·—
Ասկէ յետոյ՝ Մենք ամե՛ն օր պիտի գա՛նք՝
Նըստինք Քեզ հետ՝ ու խօսի՛նք··· 2)»։
Անկէ յետոյ՝ չաբթի–շաբաթ, կանոնով՝
Իշխանները Դաւիթի մօտ միշտ ղըրկէին կ՚երթային 2),
Կըխօսէին՝ կըդառնային Իրենց Տո՛ւն 3)։

706. Մէլիքի-Մայրը Կ՚ուզէ Մըսըր Վերադառնալ

Զ·՝Լ·30, Լ·30 Զ·՝Ե·977·

Դաւիթ՝ Իր հետ՝ Մէլիքի–Մայր առած՝ Սասո՛ւն բերած էր։
Մէկ ժամանակ պահեցին,—
Մէ՞կ՝ թէ երկու, չո՛րս տարի —,
Օրերէն մէկ՝ Մէլիքի–Մայր վերցուց ըսա՛ւ Դաւիթին·—

---

1) Աւագանին, Նախարարները, Քարճի Տէրերը։ 2) Արքունիքի, Պետական Խորհուրդի պատկեր։ 3) Ինչպէս կ՚տեսնուի՝ 701–705՝ հինգ Հատուածները՝ պատմուած են մի մխիթարեան մէկ փոփոխակէ մը, Կանայեանի տպածը (Կ·37–101), Ս· Հայկունիէն գրի առնուած, Մուկացի Թումաս Պետրոսեանէ պատմուած· (Տե՛ս Ծոլքն·՝ Դ· 18)։

— «Որդի՛, Դաւի՛թ, ինձ լաւութի՛ւն որ ընես՝
Ձիս կըտանիս Մըսրայ–Տէղ.
ես չե՛մ կըրնար՝ հո՛ս Հայու մէջ՝ դիմանալ...»:
Դաւիթն ըսաւ, = «Մարէ՛,–ըսաւ–, որ այդպէ՛ս է, չե՛ս կենար՝
Մըսրայ–Տէղը Քեղի՛ կուտամ, Քեզ կըտանիմ հո՛ն ապրէ՛ք»:
Քեռի–Թորոսն ըսաւ, — «Դաւի՛թ, Դուն մի՛ տանիր, տե՛ղըդ կաց,
Ես Անոր հետ Մա՛րդ կըղրկեմ՝ թող երթա՛յ...»:
= «Չ'ը՛լաւ,–ըսաւ–, ե՛ս կ'երթամ...»:
— «Իմա՞լ երթաս,–ըսաւ Թորոս՝ պընդելով–.
Այնտեղի Ջուր՝ այտտեղի վրայ ղօրե՛ղ է...,
Քեզ անպատճառ կըվընասե՛ն, Սասմայ–Ճըրագ կըհանդի՛...:
Ես կեցե՛ր եմ Մըսրայ–Երկիր 1), ա՛յ Որդի,
Այդ Երկիրի Բոլո՛ճն *) անգամ՝ կոտոշո՛վ է ու զարկա՛ն *).
Ես չե՛մ ուզեր՝ այնտեղ վընա՛ս դայ Քեզի...»:
Դաւիթն ըսաւ,= «Հա՛յն ու Գինին, Տէ՛ր–Կենդանին...՝ ե՛ս կ'երթամ.
Երդո՛ւմ ըրեր՝ ըսեր եմ որ՝ Մէլիքի–Մայր ես պահե՛մ...,—
Զարկեր Տըղան ըսպանե՛ր եմ...՝ մէկ չըկա՛յ որ Մայր պահէ...»:—

707. Դաւիթ 'ի Մըսր. խոստովը Թագաւոր. Պատանիներով, Ցուրիերով վ.Երուսաղէմ

Ջ.՝Լ.30, Լ.30, (Ճ.40ա.), Ճ.40ա.,116, Ս.165, Ե.784,1010,1123, 814,720,719,977, Ջ.՝Ե.1010, Հ.438, Կ. 25, Ջ.՝Կ.25, Զվ.11.

Դաւիթ ելաւ հրաժե՛շտ առաւ Հօրեղբայրէն, Քեռիէն,
Կանչեց բոլոր ժողովուրդը՝ հրաժե՛շտ առաւ Անոնցմէ,
— «Կացէ՛ք բարո՛վ..., ես կ'երթա՛մ... 1)»:
Մէկ Ձի բերին՝ Մէլիքի–Մայր Ի՛նք հեծաւ,
Ու Դաւիթն ալ հեծաւ Ի՛ր Ձին՝ ու գացի՛ն,
Կապուտ–Կողով՝ գացին Մըսըր դո՛ւրս եկան:
Դաւիթ տիրե՛ց Մըսրայ–Երկիր, Նըստաւ հո՛ն ալ Թագաւոր:

---

1) Լ.30՝ Կապուտ–Կող (անշուշտ վրէպով): *) Բոլոճ, Մէջատ: Հոս՝ պատմութեան ընթացքին պիտի հասկնանք՝ Գոմէշի՛ն է կ'ակնարկուի: *) Զարկող, Զարնող, խթող, դուպարող:

1) Դաւիթ կ'երթայ՝ թէ՛ իր մանկութեան շրջանի երկիրը տեսնելու, թէ՛ զայն իրեն հպատակ դարձնելու:

Մէլիքի–Մայրն ըսաւ, — «Դաւի՛թ, ալ ո՞ւր կ'երթաս..., կեցիր հո՛ս.
Նըստէ Մըսըր, այստեղին ալ Թագաւորը Դո՛ւն եղիր.—
Վան, կաղզըւան, կապուտ–կողը՝ մընայ Քու Ձեռ՝ Մըսրայ հե՛տ,
Ու Սասուն ալ մընայ Ծըռան–Վէգոյին»:
Դաւիթ դարձաւ Մէլիքի–Մօրն ըսաւ, — «Մարէ՛, ես կ'երթա՛մ.
Մըսրայ–Քաղաք տըւեր եմ Քեզ՝ մինչեւ մահ.—
Կանչէ՛ բոլոր Քո ժողովուրդ հաւաքէ՛,
Նըստէ՛ այստեղ՝ քանի որ Դուն ողջ ըլլաս...»:
Ըըրկեց կանչե՛ց, իր մօ՛տ բերաւ Անոր Մեծերն, Իշխաններ,
Ու Մէլիքի խոսրով անուն 2) Տըղան ալ՝
Ինք իր Ձեռքով Թուրը կապեց՝ դըրաւ Երկրին Թագաւոր.
Պարգե՛ւ տըւաւ Զինուորներուն: Մեծերուն,
Ելան գացին Իրենց տե՛ղ...:
Մըսրայ–Քաղաք՝ Դաւիթ տըւաւ Իրեն Մօ՛ր 3),
Մայրը առաւ Իրեն Ջօրքեր՝ մընաց Մը՛սր.
Դաւիթ ելաւ Մըսրայ–Երկրէն ամեն Տուրքեր հաւաքեց,
Պատանդներով ու Աւարով՝ պիտի դառնայ դէպ Սասո՛ւն:
Հեծա՛ւ իր Ձին, այդ Ամենը տըւաւ առջեւ՝ ու եկաւ.
Քըշե՛ց կուգայ՝ Խլաթի վրայով՝ դէպ հայրենի Իր Սասուն:—

705. Խլաթի-Ցէրը կամ Կ'ուզէ Դաւիթը

Զ(Լ·100), Զ·Լ·100, Լ·100·

Ջրեհ–Պողվա՛տ 1) կար, Ախլաթի 2) Տէր եւ Ըմբիշ.—
Երբոր լըսեց թէ Դաւիթը՝ Մըսրամէլիքն ըսպանե՛ր է կըռւի մէջ՝
Անոր պատիւ՝ Աչխարքի մէջ՝ կըթարճրանա՛յ օրէ օր՝
Եւ՝ օրին մէկ՝ կարելի է՝ Ան Իրե՛ն ալ վընաս տայ,—
Ելաւ Խլաթէն Քո՛ւղթ մը դըրեց՝ տըւաւ Քամուն ուղարկեց.

---

2) Տրդատ Արքայի հօր՝ Մեծն Խոսրովի, եւ որդիին՝ Փոքր Խոսրովի [Տրնցի· Գ·Ը·՝ էջ 395] անունին ու պարապանեորուն պահպանումը Հայ ժող· վէպին մէջ՝ նոր փաստ մըն է՝ Թլուլ–Դաւիթի եւ Տրդատ Թագաւորի նոյնութեանը. (Տես Բ. Հատոր·): 3) Ծորթ մօրը:

1) Լ·100՝ Ջանիթոլատ (մարմրին ղրահած, պողվատած): 2) Ախլաթ, խլաթ, կլաթ՝ վանայ լիճին հիւսիս–արեւմուտք՝ հին պատմական նահանգիստ:

Քամին այդ թուղթ տարաւ հասուց Դաւթի Ձի՛ուն։—
*Թուղթին մէջը դրրուկ *) էր թէ՝ «Պէտք է որ դաս՝ Մենք կըռուի՛նք»։*
Դաւիթ երբոր Գիրը առաւ ու կարդաց՝
*Պատասխանեց թէ՝ «Պատրա՛ստ կաց՝ ես եկա՛յ... *)»։—*

709. Դաւիթ Կ'ապանէ՝ Խլարի-Ցէր Զրեհ-Պողվասը

Լ·100, Զ·՝Լ·100, Զ(Լ·100)·

Դաւիթ հնծաւ՝ քշե՛ց Իր Ձին՝ հրեղէն Քուռկիկ–Ջալալին,
Քշե՛ց դընա՛ց, դընա՛ց մինչեւ Ախլաթ մէ՛կ... 1)։
Իմաց տուաւ Զրե՛հ–Պողվրաին՝ թէ «Եկե՛ր եմ..., ել մէջտե՛ղ...»։
Զրեհ–Պողվասը՝ ելաւ հնծաւ Իր հրեղէն Ձին՝ ու եկաւ՝
Քշեց դընաց վեր՛–Դաւթին...։
Երե՛ք օր ու երե՛ք դիշեր՝ երկուս մէկտեղ կըռուեցա՛ն։—
*Վեր՛–Երկքին *)՝ Դաւիթ կանչեց Իր Ցիշամը՝ ու թըռաւ՝*
Քաշե՛ց Իր Թուր՝ Թո՛ւր–Կէնճակին՝ ու զարկաւ,
Զրեհ–Պողվասը Իր Գաղաթէն կըտրե՛ց 2) ըրաւ երկո՛ւ կըտոր՝
[Նետեց հոն... 3)։—

710. Դաւիթ՝ Խլարի Դէվերը Սրակոծոր Ըճելով՝ Ժամ Ու Պատա Կ'օգնէ Իրենց Համար

Լ·101, Զ·՝Լ·101·

Լուրը դընաց մինչեւ Ախլաթ՝ ու չորս կո՛ղմ,—
Ախլաթայ–Երկրի Ժողովուրդներ՝ ուրախացա՛ն Մեծ ու Փոքր,
Ելան եկան Դաւթի առաջ՝ առին կուգան Քաղքին մէջ։—
Մէ՛կ ալ տեսնես՝ այդ Քաղաքի Դէվերն ելան Դաւթի դէ՛մ ‡),

---

*) Գրուկ, Գրուածք։ *) Ես եկա՛յ, Ահա կուգա՛մ։

1) *Այսինքն՝ քշել մինչեւ Ախլաթ երթալը՝ մէ՛կ եղաւ. առանց տեղ մը կենալու՝ շիտակ Ախլաթ դնաց։ *) Վեր՛–Երեխիճ, Երբորդ օրուան վրայ։ 2) Լ·100՝ պայքից, կդրեց՝ ուղղել՝ գայքից (գազա–թէն) կտրեց։ 3) Լ·100–101՝ Մըսրամէլիքին վերաբերած մասը՝ Տե՛ս Հատ. 684–685։ ‡ եւ ‡) Նորատաց քրիստոնէական կրօնին հուրովը՝ կռապաշտ կեդրոնները մաքրելու՝ վիպական պատմուածք։ Նման՝ Տրդատ Արքայի եւ Գր. Լուսաւորչի ըրածներուն՝ Աշխիշա–ոի քուրմերուն դէմ։ Նկատել որ՝ Ախլաթ հեռու չէ՛ Աշխիշատէն։

կըսի՛ւ կ'ըննեն, չե՛ն թողներ որ իրենց Քաղքէն նե՛րս մըտնէ…։
Դաւիթ քաչե՛ց Թուր–Կէծակին՝ այդ Դէվերուն մէ՛չ ինկաւ…,—
Ամեն չարչրեց ու կոտորեց, քանդե՛ց աւրե՛ց Անոնց Տեղ…
Դարձաւ ասա՝ այդ Քաղաքի Ժողովուրդին Հայ–հաւատը 1)
[*սրբվեցուց* ‡)·
Ժա՛մ ալ չինեց Անոնց համար՝ կանդնեցուց·
Իր համար ալ՝ մեծ Պալա՛տ մը չինեց հոն,
Այնտեղ ըրաւ Իրեն համար Ամառանոց ծովային։

711. « Սասմաց ճրագ Նորէն Պայծառ կըվառի »

Լ·101,100, Զ·՝ Ե·814,1011, Ե·1011·

Ըղլաթէն ալ՝ եկաւ Դաւիթ՝ քըշե՛ց դընաց 'ի Սասուն,
Մըսրայ–Տեղէն բերածները 1)՝ *տարաւ լեցուց Սասնոյ մէջ։*
Հասա՛ւ Քաղաք՝ չըհասաւ… 2)՝
Ժողովուրդը՝ Ամեն(ք) եկան Իր առա՛ջ.—
Մինչեւ երե՛ք տարու Տըղաք՝ եկան Իր Ձեռ պաղեցին։
Առո՛ք–փառօք՝ Դաւիթն առին բերին Քաղաք՝ Իրեն Տե՛ղ 3)։
Ու չա՛տ օրեր՝ ուրախութի՛ւն ըրին, կերան՝ խըմեցին։—
Ջէնով–Օհան ըսաւ, — «Փա՛ռք Քեզ, Տէ՛ր–Աստուած,
Սասմաց ճըրագ Նորէն պայծա՛ռ կըվառի… .—
Դէ՛, հիմա թող «Դաւիթ» երթայ՝ Աշխարհ պըտտի՛ Իր Գլխու *),
կընի՛կ մ' գըտնէ Իրեն համար, բերէ՝ տանիքի *) պըսակի՛ճ…»։—*
Այս Իմ խօսքին հաւանութի՛ւն կուտա՞ք»՝ ըսաւ Ամենուն։
Իշխաններն ու Ժողովուրդն ալ՝ ըսին, = «Հապա՞…, ինչո՞ւ չէ·
*Պէտք է երթայ՝ Իր ուզածով կընի՛կ մ' գըտնէ Իր համար»։

---

1) Լ·101՝ էրիտռոնէութիւն։

1) *Գառանդներ, գերիներ ու աւարը·* (*Տե՛ս Հատ·* 707)։ 2) *Քաղաքը հառնելուն պէս։* 3) *Արքունիքը, Պալատը։* *) *Իր գլխու, Ազատօրէն, ինքնագլուխ, անկաշկանդ։* *) *Տանիճ* (*եկեղեցին, տաճար*)։

ԹՂԼՈՂ-ԴԱՒԻԹ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԱՄՈՒՍՆԱՑԱԾ (1)

ՁՍ·594–657,670–674,689–734, ՁԿ·389–390,615–619, Ս·165–179, Ճ·40–52, Ճ·117–136, Խ·44–55, Ա·28–34,36–42, Ա·53ս·,68–73, Լ·30–44, Լ·82,85,89,90,100,101, Կ·25–33, Կ·80–101, Կ·121–123, Հ·37–50, Հ·385–393,397–398, Հ·438–450, Ն·13,32–45, Ն·517–522, Ն·586–598, Ն·639–647, Ն·720, Ն·746–747,751–752, Ն·917–931, Ն·1011–1014,1016–1020, Ն·1123–1126, և՝ Ձ·

ԺԹ. ԽԱՆԴՈՒԽՏ-ԽԱԹՈՒՆԻ ՍԻՐՈՑ-ԳԻՐՔ ԴԱՒԻԹԻՆ

718. Դաւիթի Հարսնացուները

Դաւիթ երբոր Մըսրամէլիքն ըսպանեց ու հանդչեցաւ,
Ելաւ եկաւ Սասմայ-Քաղաք՝ ու նըստեցաւ իր Հօր Տեղ։

Դաւիթն 2) ալ հոն՝ իր հաճոյքին ի՞նչ կ'ընէ։—
Զին կըհեծնէ՝ լուսուն կ'երթայ՝ եւ իրիկուն կուգայ Տուն,
Մարուքայ եւ Ահա՛զ-Սարը՝ Ո՛րս կըզարնէ Իր համար։
Մէկ առեն մը վըրան անցա՛ւ այս կերպով,—
Մէկ-երկու Օ՛ր, մէկ Ամի՛ս՝ քէ մէկ Տարի՛...,—

---

1) 1943–ի կէսն ենք՝ ու ՍԱՂՄՈՒՆԱԿԱՆԻս տպագրութիւնը կ'չարունակուի։ Բայց՝ Պատերազմի հարկադրիչ աղմուկներուն բերումովը՝ այս երրորդ Մասին սկսած՝ ստիպուեցայ Ընդհանուր Գլուխին տակ դնել Աղբիւրները մէկ անգամէն, փոխանակ ամէն մէկ Հատուածին տակը զատ-զատ յիշելու՝ ինչպէս ըրած եմ սակէ առաջնոց մասերը։ 3) Լ·85՝ Մելխոճ։

Այս անգամիս՝ Հօրեղբայրներ ժողովուեցան եւ ըսին,—
— «Բերենք Դաւիթ պըսակենք...»:
= «Որո՞ւ Աղջիկ բերենք,–ըսին–, որո՞ւ Աղջիկ չըբերենք...»:—
Այդ Սասմայ մէջ՝ մէկ Իշխա՛ն կար՝ Մխքայէ՛լ էր իր անուն՝
Անոր ալ մէկ Աղջիկ մը կայ՝ շատ խօրոտիկ ու կըտրիճ...,
եւ անուն ալ՝ ՇՈՒՇԱՆ է...,—
— «երթանք,–ըսին–, Անի՛ բերենք Դաւիթին...»:
Ջէնով–Օհան ելաւ դընաց Դաւիթի մօտ՝ ու ըսաւ,—
— «Դաւի՛թ,–ըսաւ–, Դու Մեզ Ամենքս, Մեր երկիրը, Մեր ճըժիր՝
Ազատեցի՛ր Մըսրայ–Տիրոջ զերութենէն ու ձեռքէն...,—
Պիտի երթամ՝ կընի՛կ ճարեմ Քեզ համար,
Բերենք՝ փառքով՝ Քեզ պըսակե՛նք այս անգամ...»:
Դաւիթն ալ թէ, = «Լա՛ւ, Հօրեղբա՛յր, կըպըսակուիմ ես, սակայն՝
Որո՞ւ Աղջիկ պիտի ուզես Ինձ յարմար...»:
Ըսաւ, — «Որդի՛, ո՞րը կ'ուզես որ բերենք...,—
*Սասմայ Իշխան Մխքայէլի Շուշան անուր *) Աղջի՛կը,*
Այդ Խըլաթի Շըմշիկ–Տիկի՛ն 2) բերեմ Քեզի՝ Թէ՞ ուրիշ մ'...»:
Ըսաւ, = «Հօրա՛ր, Շըմշիկ–Տիկին ես չե՛մ առներ Ինձի կին... 3),
Սասմայ Իշխան Մխքայէլի Աղջիկ Շուշան՝ կընայի՛նք...»:—

718. Ջէնով–Օհանի Դեռատի Կնկան Սէրը

Ըսե՛ս ապա Իր Հօրեղբօր Օհանի–կին՝ Սարօն 1) ալ՝
Իր մէջ գաղտուկ՝ ա՛չք է դըրեր Դաւիթին...:—
Դաւիթն ըսես՝ չատ խօրոտիկ, կըտրիճ, սիրուն Տըղա՛յ էր:
Օհանի–կին՝ ելաւ օր մը՝ Շաքարեղէն–Հա՛յց Թըխեց,
Գաղտուկէն ալ՝ Հա՛ւ մը դըրաւ մորթեց, եփեց, կարմըրցո՛ւց,
Մեղր ու կարա՛գ, Սե՛ր պատրաստեց մանաւանդ,

---

*) Ա.ունր, Անունով: 2) Խ·44, Ե·32՝ Զմշկիկ Սուլթան, 32ա·՝ Զմուցկիկ, Կ·121՝ Մշու Սուլթան: *Մուշեցի փէհլիվանները (լաթախաղաց)՝ պարանին վրայ ելնելէ առաջ՝ մինչեւ մեր օրերը դեռ կը կանչէին — իրենց ցիշամը կ'ըսէին ա՛յսպէս.* — «Է՛ Մըշու Սուլթան՝ Սուրբ Կարապետ...»: 3) Կ·121, Ե·32՝ հաւնեցաւ՝ բաւ կ'առնեմ, Խ·44՝ Դաւիթ եւ Զմշկիկ–Սուլթան՝ մատնիներ իրարու հետ փոխանակեցին:

1) Ե·13՝ Սառա:

Եօ՛ք տարւան Դինի՛ լեցուց կանաչիկ *),
Ելաւ հագաւ իր ամենէ՛ն խօրտա աղէ՛կ հագուստներ,
Աչքեր դեղեց *), Գանդուրները կախեց դո՛ւրս,
Հագաւ դըրուց *) կարմիր կըճըա *) Իր Սօլեր,—
Զէնով–Օհան քընո՛ւմ է,—
կընիկն առա՛ւ այդ Բաները 2), Մոմը վառեց ու ելաւ՝
եկաւ դէպի Դաւիթի Դուռ 3):
Դաւիթն ալ՝ նոր՝ Դուռը փակեր՝ քըներ է:—
կընիկն ըսաւ, — «Դաւի՛թ, ելիր Դուռը բա՛ց...»:
Դաւիթն ալ թէ, = «Դուն ո՞վ ես որ Դուռ բանամ...»:
— «Զէնով–Օհան Քու Հօրեղբօր կընի՛կն եմ ես..., Սարօ՛ն եմ»:
Դաւիթ ելաւ՝ Դուռը բացաւ, կընիկն եկաւ Նըստաւ Նե՛րս,
— «Դաւի՛թ,–ըսաւ–, ես Քեզ չառո՛նց չեմ տեսեր...,
Քու կարօտո՛ւն էի մեչս... .
Ու չե՛մ կըրցեր՝ անուշ–անուշ բաներ չինել՝ բերել Քեզ...,
Ա՛ռ է, ահա՛, Քեզի համար բերեր եմ...»:
Այնտեղ բացաւ՝ ու Սըփռոցով դըրաւ Դաւիթ Զեռքին տակ,
Կուժով Դինին ու Գաւաթ մը՝ ան ալ դըրաւ Իր առջեւ,
— «Հրա՛մէ, Դաւի՛թ, անո՛ւշ ըրէ *)..., մառա՛ղ ըլլամ Երեսիդ...»:
Դաւիթ նայեց եւ Ինքիրմէ միտք ըրաւ ու ի՞նչ ըսաւ.—
«Ես Մայր չ՛ունի՛մ, Ասիկ Իմ Մօր տե՛ղն ըլլայ...»,
Երախտագի՛տ եղաւ Անոր՝ ու ըսաւ,—
= «Որ *) Դու ասօր՝ Զիս ճանչըցար՝ ելար եկար Ինձի տես *),
Իմ Մօր տե՛ղն ես՝ Ինձ համար...»:
Ըսաւ, — «Դաւի՛թ, մառա՛ղ եմ Քեզ՝ Քու Դէմքի՛ն...,
Սասունի մէջ՝ Քեզ պէս Տըղայ ոչ եղեր է՝ ոչ կ՛ըլլայ...»:
Ապա՝ Դաւիթ՝ որը մէկ Տըղայ, երբ դէռ կըռիւ չէ՛ր գացեր՝

---

*) Կանաչիկ, կանաչ արծնած, Քրծած՝ գինիի կուժ: *) Դնդել, Մարուր քաշել (աչքերուն մէջ): *) Դրուց, Դուրսի, ուն օրերու յատուկ: *) Կճըռ, Ճոճուացող: 2) Այսինքն՝ ուտելիքները: 3) Համեմատել Ակնայ սիրոյ երգերէն մէկ քանիին հետ: Վերինին շատ նման երգ մը՝ ես ինքս գրի առած եմ Վանայ մէջ: Սիրային այս միջադէպը՝ նաեւ ՊԱՅՏԻԿ–ՄԸՀԷՐԻ հետ՝ ուրիշ ձեւով (Հատ. 873): *) Ա՛ռ՝ւշ ըրէ, կե՛ր, անո՛ւշ ըլլայ: *) Որ, Շնորհակալ եմ որ...: *) Տես, Տեսութեան, այլի:

Ջինք խընամող ու պահացող 4), *ականջ ընող* *)՝ *Մէ՛կ չ՚ունէր*·—
Հիմա որ ա՛լ կըսի՛ւ գընաց ու դարձաւ՝
Այնպէս լեցուա՛ծ *), *կըսրի՛ճ Տըղայ է դարձեր՝*
Որ Մարդ նայի Դաւիթի երես՝ կ՚ամչընա՛յ…:—
Անոր խօրո՛տ վառո՛ղ Աչքե՛րն ըսեմ ես…,
Սիվատակ–կարմիր երեսնե՛րը, Քիթ(ն) ու Բերա՛ն՝ ո՞րն ըսես… 5):
Ու Դաւի՛թն էր, — Իր Հաց կերա՛ւ, Ներա՛ն Գինին ալ խըմե՛ց,
Է՛հ…, Գինին ալ՝ եօ՛թը տարւան Հի՛ն Գինի…,
Դաւիթ խըմե՛ց ու խըմե՛ց…,
Ուրախացաւ, ըսաւ, — «Խըմե՛մ 6) *այս Գինին…,—*
Իմ Հօրեղբօր Կընիկն ասօր Ինձի պատի՛ւ *) *է ըրեր…»*:
Լա՛ւ մը խըմեց…՝ Դաւիթ այնտեղ դինուվցա՛ւ…,
Գլուխ դըրաւ Բարձին վըրայ՝ քընացա՛ւ,
Ալ չի՛ կըրնար գըրուցել…:
Օհանի–կին՝ Սարօն ըսես՝ Դաւիթի ճակա՛տ կըպադէ…,
Երեսնե՛րը, Աչքերն ու Վի՛զ կըպադէ…,—
Կ՚իմիչկէ որ՝ Դաւիթ քըներ՝ Ինք Իր մօտէն տեղեա՛կ չ՚է…,
Ելաւ դարձաւ՝ գընաց Իր Տուն, — Ջէնով–Օհան՝ դեռ քընուկ:

714. «Ցեցչայ Սաթիճիկ Ցիկին՝ Ցեցչաճս…»

Այդ Օհանի–կընիկ այդպէս վարժըւեցա՛ւ Դաւիթի քով·
Ու մէ՛կ չաբաթ՝ այսպէս գաղտուկ՝ գընաց–եկա՛ւ Անոր մօտ:
Այն մէկ օրը՝ միտք ըրաւ ու ի՞նչ ըսաւ.—
«Ինչո՞ւ համար՝ եօ՛թը տարւան այդ Հին Գինին կըտանիմ՝
Դաւիթ կ՚խըմէ՝ կըգինուվնայ՝ կըպառկի,
Ես Իր մօտէն համ չե՛մ առներ՝ ու բան մը չե՛մ հասկընար…»:
Միւս օրը՝ ելաւ առաւ՝ տարւան մը նոր Քարմ Գինի,
Ու Գինին ալ՝ քի՛չ տարաւ,—
Գընաց ելաւ Դաւիթի Սենեակ՝ նըստեցաւ:
Անուշ–անուշ Ուռելիքներ նորէն ըզրաւ Դաւիթ ղէմ,

---

4) Կ·81ա·՝ Պահացող = Զգաստ, ուշիմ, ժուժկալ՝ *ուղղել՝* խնամող: *) Ականջ ընող, *Ուշադիր, հոգատար*: *) Լեցուած, *Գիրցած*: 5) *Դաւիթի անձին նկարը՝ երկու պարզ դիծով՝* Կ·81 (Ե·444)։
6) Կ·81՝ *Իմ՝ ուղղել՝* Խմիմ (Ե·444)։ *) Պատիւ, *Ինչոյք*։

Ու Գինին ալ մխաւեղ։—
Դաւիթ վերցուց իր Հայց կերա՛ւ, Գինին խըմեց վըրայէ՛ն,
Դաւիթ Գըլուխ՝ ա՛լ չըբըռնեց այդ Գինին,
Ջըքընացա՛ւ այս անգամ։
Կընիկ նըստաւ Դաւիթի Գո՛գ, Ձեռքը նետեց Անոր Վիզ,
Բերաւ գըրկեց՝ ու կ՚ընէ՛ որ՝ Դաւիթ երես բերէ Իրեն ու պաղնէ։
Չէ՞ որ նըստաւ Դաւիթի Գոգ, — Դաւիթ այնտեղ բարկացա՛ւ...,
Ջըթողո՛ւց որ Իր երեսներ համբուրէր։—
— «Հօրեղբո՛ր–Կին,–ըսաւ–, Դուն Իմ Մօրը տե՛ղն ես վերջապէս,
Ու ես ալ Քու Զաւկի՛ տեղն եմ, սեպէ Քէ։—
Ելի՛ր՝ կարգով նըստէ՛ այնտե՛ղ՝ գըրուցե՛նք...»։
= «Դաւի՛թ,–ըսաւ–, ինչո՞ւ ես Քու Մօր տեղն եմ...։
Օտա՛ր Տունէ՝ ես մէկ օտար Աղջի՛կ եմ...,
Ու որպէս Քէ՝ ես եկեր եմ՝ Քու Հօրեղբայրն եմ առեր...,
Դաւի՛թ, մտատո՛ղ..., Քեզի՞ ի՛նչ...»։
— «Որ Դուն օտա՛ր մէկ Աղջիկ ես...՝ ինչո՞ւ այստեղ ես եկեր...»։
= «Քու Հօրեղբօր Կընի՛կն եմ...»։
— «Է՛...., Հօրեղբօր Կընիկ ու Մայր՝ մէկ բա՛ն է,
Ան ալ ինձի Մա՛յր ըսել է։ տարբերութիւն կա՞յ այնտեղ...»։
= «Դաւի՛թ,–ըսաւ–, կըտեսնեմ որ՝ դեռ Տըղա՛յ ես, չե՛ս գիտեր...,
Ես մէկ օտար Աղջի՛կ եմ հոս՝ Քեզ համար։—
Այսքա՛ն տաեն՝ Քու Հօրեղբո՛ր ձեռքն էի ես իբրեւ Կին,
Հիմա այլեւս Քու Հօրեղբայր չե՛մ ուզեր 1),
Քե՛զ կ՚ուզեմ... 1),—
Պէտք է դաս Իմ Ձեռաց հետ 2)...»։
Դաւիթ այնտեղ մըտածմունքի մէ՛ջ մընաց։—
«Ելնեմ հիմա՝ զարնեմ Այս Կին ըսպանե՛մ...՝
Իմ Հօրեղբայր պիտ՝ դանգատի՝ «Դաւիթ Իմ Կին ըսպանե՛ց»...,

---

1) Ուզել, *Սիրել*, ըղձալ, տենչալ։ Համեմատելի՝ եւ Անգիերուվը *աւելի դիւրին լուծելի՝ մատենագրական անլոյծ հատուածը*, — «Տեն–չայ՝ Սաթինիկ Տիկին՝ տենչանս, զ՚արտախուր խաւարտ եւ զ՚տիկ խաւարծի՝ ՚ի բարձիցն Արտաւանայ» [Արնցի. Ա. Լ. 125]։ 2) *Այ–սինքն*՝ իմ ըղձալիը գոհացնես։ — Ե.13՝ Դաւիթի անունով յիշուած 117–152րդ տողերուն մասը՝ ՊԶՏԻԿ–ՄԸ ՀԷՐԻ ձիւղին կը պատկանի, ոչ Քէ Թըլոլ–Դաւիթին։ Տե՛ս Հատ. 873–876։

Թէ չ'ըսպանե՛մ...՝ Այս կընիկը չի՛ դադրիր իմ մօտէն...»:
Ան ալ՝ Դաւիթ՝ վերցուց ըսաւ մեղմօրէն,—
— «Իմ Հօրեղբօ՛ր կընիկ,–ըսաւ–, ելիր գընա՛, ես քընեմ,
Մինչեւ վաղը՝ ես Գեզի մէկ բան կ'ըսե՛մ...»:
Խաբե՛ց այդպէս՝ ճամբու դրաւ, չարը իրմէ հեռացո՛ւց...:

715. Կարեկարաի Մամիկին Ըսածներն Ու Ցուցմունքները

Առաւօտուն՝ Դաւիթ չուտ մը ելաւ գընաց դէպ Աղբիւր,
Լըւացուելու, նըստաւ այնտեղ՝ մըտածե՛ց ու մըտածեց...,—
— «Ի՞նչ ընեմ ես..., Տէ՛ր–Աստուած...»:
Մէկ ալ տեսաւ՝ Այն Գառաւը՝ դէ՛հան *) այնտեղ երեւաց...:
Դաւիթ կանչեց, — «Է՛հէ՛ Մամի՛կ, արի այստե՛ղ, եկ այս կո՛ղմ...»:
Ձեռքո՛վ ըրաւ, Գառաւն ելաւ եկաւ այնտեղ՝ Դաւիթի քով,
Դաւիթ ելաւ՝Իր Հօրեղբօր Օհանի–կնի՝ Իրեն ի՛նչ որ ըրեր էր՝
Ամեն պատմե՛ց Մամիկին.—
Ըսաւ, — «Մամի՛կ, Դուն Իմ Մօր տե՛ղն ես Ինձի՝
Անոր համար մէկի՛կ–մէկիկ Գեզ ըսի...»:
Կորեկարաի բարի Մամիկ՝ վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ.—
= «Դաւի՛թ,–ըսաւ–, Ես Օհանի կընկան մե՛ղ ալ չեմ ըներ...,
Ասկէ առաջ Դու փոքր էիր ու տըղա՛յ...,
Հիմա մեծցեր՝ ու դարձեր ես քըսան տարու Կըտրիճ Մա՛րդ՝
Ու դեռ ազա՛ր *) ես մնացեր...:—
Ով Գեզ Նայի՝ խելքը կ'երթա՛յ Գըլուխէն...,
Կ'ուզէ Գու Մոց գայ–պառկի...»:
— «Ապա, Մամի՛կ,–ըսաւ Դաւիթ–, Ես ի՞նչ ընեմ որ պըրծիմ...»:
= «Դաւի՛թ,–ըսաւ–, Կընի՛կ մը բեր՝ պըսակուէ՛...:
Երբոր Գեզի Կընիկ ըլայ, ա՛յ Որդի,
Ալ մէ՛կ Կընիկ չի՛ կըրնար Գեզ Հակառ իյնալ՝ անկէ ետք.
Հիմա ով որ Գեզի Նայի՝ խելքը կ'երթա՛յ...:
Մարդ չի՛ կըրնար Կըտրիճ Տըղին ըսէ՝ «Դուն ի՛նչ խօրոտ ես...»,—
Կ'երթայ Սիրո՛ղ 1) կըբռնէ...:
Դաւի՛թ, Որդի՛, ես Գեզ վաղո՛ւց պէտք էր ասոնք խօսէի,—

---

*) Դէհաճ, Ահա՝ հոն, հեռուն: *) Ազաթ, Ամուրի, կոյս:
1) Կ·83՝ Խոր:

«Գընա՝ կընի՛կ բեր, կարգըվ՛...»՝ ըսէի։
Հապա՞, Որդի՛, այսպէս բանե՞ր կան Աչխարհ,
Խօրո՛ւս, կըտրի՛ճ *) կընի՛կ մը բեր ինձ յարմար...»։
— «Մամի՛կ, ըսաւ—, ինձի յարմար աղէկ կընիկ մ՚՝ Դո՛ւն դըտիր.
Ես չե՛մ դիտեր ո՞րկէ կընիկ ճարեմ ինձ...»։
= «Դաւի՛թ, ըսաւ Կորեկաբոսի Մամիկն ալ—,
Ինձի յարմար՝ կըտրի՛ճ կընիկ՝ Խանդուտ–Խաթո՛ւն է մ՚իայն» †)։
— «Մամի՛կ, ըսաւ—, Խանդուտ–Խաթուն՝ ես չե՛մ դիտեր ո՞րտեղն է»։
= «Կապուտ–Բե՛ղդը 2), դէ՛ Իրանայ Հողին մէ՛ղ...,
Ինձ պէս կըտրի՛ճ, ինձ պէս խօրո՛ւս է՝ Ան ալ...» †)։
Դաւիթ հարցուց ըսաւ, — «Մամի՛կ, Կապուտ–Բե՞ղդը ո՛ր կողմն է»։
Մամիկն ալ թէ, = «Հարցո՛ւր Արլաթ՝ ու դընա՛.
Գացի՞ր Արլաթ՝ հարցո՛ւր Արճէշ՝ ու դընա՛.
Գացի՞ր Արճէշ՝ հարցո՛ւր Բերկրի՝ ու դընա՛.
Հասա՞ր Բերկրի՝ հարցո՛ւր Գործոթ՝ ու դընա՛.
Հասա՞ր Գործոթ՝ դընա մինչեւ Աբաղա 3),
Կապուտ–Բերդը հեռու չ՚է՛՝։—
Հարցընելով–հարցընելով մինչեւ Բաղդա՛դ կ՚երթայ Մարդ»,—
Ըսա՛ւ Մամիկ, «Բարեւմընա՛յ» ըրաւ Դաւիթին՝ ու դընա՛ց։

916. Խանդուտ–Խաթունի Երկու Ուզընկացներ

Ձըրոյցն ո՞ւստ տանք, — Կապուտ–Բերդի 1) Խանդուտ–Խաթուն 2)
[Տիկինէն,
Որ այդ Բաղքի Թագաւորին 3) Աղջի՛կն է,—

---

*) Կտրիճ, *ճեղակաւ*, *աղնուատոհմ*, *դիւցազն*, նաեւ *քաջասիրտ* ու *յաղթակազմ*։ 2) Կ·83՝ Խոյայ Բաղամ։ †–†) *Տե՛ս Հատ*. 723՝ *Մնթ*. 11։ 3) *Հին*՝ Աւաբայր։

1) ՀՍ·595՝ Բօհտանի կողմը կ՚իյնայ, նաեւ՝ Խաբրերդու կողմն է, Ց·40ա·՝ Բերդ–Կապուտին (Կաղզուանի մօտերը), Ա·28՝ Խոյայ էդէ·, Լ·31՝ Կաղզուան՝ (որուն թգւրն· էր՝ Աբաս–Միրզա), Կ·25՝ Կապուտ–Կող, Հ·438՝ Կ·–Կող էդէ·, Ե·917՝ Հալաբ էդէ·, Ե·1011՝ Դէվըստաճ էդէ· [Դաղըստա՞ն]։ 2) *Մաս մը պատումներով*՝ Խանդուտ–Խաթունէ։ [*Տե՛ս Մնթ*·*Բ*· *Հատ*.]։ 3) Ա·165՝ Գաղզուանի Ամիրին, Կ·122՝ Հնդու–Նամանայ թգւրի·, Հ·385՝ Օղաճ, Տօղաճ թգ·ի։

Շա՛տ խօրոտիկ, սիրո՛ւն, կըտրի՛ճ ,ու դեռ չ'էի՛ ալ պըսակուած։
Լօռու-Համզէն 4), մէկ ալ՝ Շապկով-Խորասանի Ըմբիշներ՝
Մէկ Միուսէն լուր չ'ունեցած՝ եկեր էին կապուտ-Բերդ։—
Լօռո'ւ-Համզէն՝ եկեր էր որ Խանդուտն ուզէր Իր Տըղի'ն.
*Միուս՝ Շապկո'վ-Խորասանին՝ ուզընկան *) էր Ի'ր Տըղին։*
*Լօռայ-Համզի վարի Պըռուկ *)՝ կուրծքին վըրա՛յ էր կախուեր,*
*Ա՛յնքան որ պէտ *) Մարդ էր Ան...։*
Մէկալ՝ Շապկով-Խորասանի՛ն ալ ըսեռ...՝
Իր Աչքերուն Թարթափները՝ կեռով եռե՛ւն էր քաշեր՝
*Պուճուճակին *) վըրա՛յ տարեր՝ կապե՛ր էր...։*
Ձամբուն մէջտեղ՝ եկան Ատոնք՝ հանդիպեցան Իրարու,—
Լօռու-Համզա՛ն եւ այդ Շապկով-Խորասանի Իշխաններ,—
Բարե՛ւ տըւին Իրարու.—
Լօռու-Համզէն՝ ըսաւ Շապկով-Խորասանի Իշխանին,—
— «Մո՞ւր կ'երթաս Դուն, Թագաւո՛ր...»։
Ըսաւ, = «Կ'երթամ Կապուտ-Բերդ...» 5)։
— «Ինչո՞ւ կ'երթաս Կապուտ-Բերդ...»։
= «Կապուտ-Կողի Թագաւորի Աղջիկն ուզեմ Իմ Տըղին»։
— «Ե՛ս ալ կ'երթամ՝ որ այդ Աղջիկ ուզեմ տանիմ Ի՛մ Տըղին»։
Իրենք Իրենց խօսեցան ու ըսին, — «Աղէ՛կ, Թագաւո՛ր,
Ո՛ր Մէկին որ բախտը կըտրեց՝ Թող Ան'ո՛ր տայ Իր Աղջիկ...»։—

717. Ուզընկաններր, Թագաւորն Ու Խանդուտ

Ուզընկաններ՝ եկան հասան այդ Խանդուտի Հօր Պալատ,
Ձե՛ռք տըւին Հոն, բարեւեցին, Ծանօթացա՛ն Իրար Հետ.—
Թագաւորը՝ այդ Երկուսին տե՛ղ տըւաւ Հոն՝ Նըստեցան,
Ու Հարցուց Թէ, — «Թագաւորներ, ինչո՞ւ Համար Էք եկեր»։
= «Ձե՞ս Իմանար Ինչի՞ Համար եկեր ենք...»։
Լօռու-Համզէն՝ Թէ, — «Եկեր եմ՝ Աղջիկդ ուզեմ Իմ Տըղուն»։
Ան ալ ըսաւ, = «Մէկ Հո'գի կայ, Երկո՞ւն Ի'նչ է՝ եկեր Էք»։
— «Մենք Իրարմէ անտեղեա՛կ ենք եկեր,—ըսաւ—, այդ բանին,

---

4) Լ·31՝ Լօռու կամ Լօռայ-Համզէն։ *) Ուզընկաւ, Խնդրարկու, Թեկնածու-Հրաւիրակ։ *) Պռուկ, Շրթունք։ *) Պէտ, Հոչոր, մեծդի։ *) Պուճուճակ, Մոծրակ։ 5) Լ·31՝ Կազդուաճ։

Ճամբուն մէջը՝ եկեր Իրա՛ր ենք առեր 1)»։
= «Թագա՛ւորներ, մատա՛ղ,–ըսաւ–, Ձեր Գըլխուն…,
Իմ Աղջկա՛ն վերաբերած բան է այդ։—
Ձեր ո՞ր Մէկի Տըղան կ՚առնէ՝ Թող առնէ՛.
Ես չե՛մ կըրնար Մէկըդ Մէկէն վե՛ր բըռնել,—
Թագաւո՛ր էք երկուքդ ալ…»։
— «Մենք կըխընդրե՛նք,–ըսաւ Շապկով–Խորասանին այս անգամ–,
Ձո Աղջիկը դայ ու կայնի Մեր կըշտին,
Մեզնէ որմէ՞ Տըղան առնէ՝ Թող առնէ»։
Թագաւորը կանչեց բերաւ Խանդուտ–Խաթուն Իր Աղջիկ,
Հարցուց ըսաւ, — «Աղջի՛կ, Խանդո՛ւտ, որմէ՞ Տըղան կ՚առնես Դուն»։
Աղջիկն ալ թէ, = «Ես ոչ Աստ՛ր Տըղան կ՚առնեմ՝ ոչ Աստ՛ր…»։
— «Ինչո՞ւ համար չես առներ.՞.՞.՞»։
Ըսաւ, = «երկու Թագաւորներ Ես չե՛մ ջոկեր *) Իրարմէ…,
Ես Աղջի՛կ մ՚ եմ, Մէկը կ՚առնե՛մ ՝ի հարկէ…,—
Ոչ Թող Շապկով–Խորասանի՛ն սըրդոխի…՝
Ոչ ալ՝ Լօռայ–Համզէն Մեզի քե՛ն պահէ…,
Թող երկուան ալ՝ Մատնիները դընեն Իմ քով՝ ու երթա՛ն՝
Իրենց Ջօրքը բերեն Իմ Հօր Հողերուն մէջ՝ ու կըռուին.
Ո՛ր Մէկը որ Իրենց մէջէն յա՛ղթ *) ելաւ՝
Անոր Տըղան Ես առնե՛մ…»։
Ատոնք ելան՝ Թողին գացին Իրենց Տեղ։—

718. Խաճդուս՝ Սիրոյ-Դիր Ու Պաակեր Կ՚ղրկէ Դաւթին

Այդպէս մընա՛ց ժամանակ մ՚…,—
Դաւթի անուն ու հըռչակը տարածուեցաւ ամե՛ն կողմ.
Ձայնը գընաց՝ ինկաւ մինչեւ Խանդուտի՛ ալ Ականջին.—
Թէ, — «Մասունայ՝ Դաւիթ անուր՝ քըսա՛ն տարու մէկ Տըղայ…՝
Շա՛տ կըտրիճ է, Մըսրամէլիքն ըսպանե՛ր է ու կըտրե՛ր…,
Ա՛յսպէս կըտրիճ *) հըսկա՛յ Մարդ է դուրս եկեր…,
Մէջ Աչխըրքին՝ Դաւիթ՝ կըտրիճ, կըռի՛ւ–Ընող Դիւցա՛զն է…»։

---

1) Իրարո՛ւ հանդիպեր ենք։ *) Ջոկել, Ջանազանել, ն.·31՝ ընխտի՝ ուղղել՝ ջոկի (խորէն)։ *) Յաղթ, Յաղթական, ուժեղ։ *) Կտրիճ, (Սուրով զարնող կտրող), Դիւցազն։

Խանդուտ–Խաթուն լսե՛ց Դաւթի զօրութիւն,
Ու երազի մէջ ալ տեսաւ Դաւիթի պէս մէկ կըտրիճ...՝
Այդ Աղջկան մէտքը այնտեղ փոխուեցա՛ւ...,—
«Աղէկն ա՛ն է,–ըսաւ–, որ ես Աստր լո՛ւր տամ՝ գայ այստեղ,
Իրար տեսնե՛նք ու հաւնինք,
Դաւիթ ու ես՝ իրար առնե՛նք· Ա՛ն է ինձի արժանի...»:
Ան ալ ելաւ ի՞նչ ըրաւ.—
Բերաւ հանեց իրեն խօրո՛ց մէկ Պատկեր,—
Խանդուտին ալ՝ հինգ նետ լա՛յնքն է, տաս՝ երկայնք,— 1)
Ըսաւ, — «Ո՛վ որ իմ Պատկերը տանի Սասուն՝ Դաւթի՛ն տայ՝
*Իրեն քաշով *) Ոսկի՛ կուտամ ես Անոր...»:*
Ելաւ կանչեց՝ բերե՛լ տըւաւ իր Նաժիշտ 2)՝
Ըսաւ, — «Գըրէ՝ Սէրոյ–Գի՛ր մը՝ ղրկեմ Կըտրիճ–Դաւիթին·
Որ գայ այստե՛ղ՝ իրար առնե՛նք՝ ըլլանք էրիկ ու կընիկ...»:
Նաժիշտ նըստաւ՝ Գի՛ր մը գրեց, հանեց Քառասո՛ւն Օրինակ,
Խանդուտ–Խաթուն ելաւ կանչեց՝ Քառասո՛ւն Զոյգ Աչուղներ 3)·
Մէկ բուռ Ոսկի՛ տըւաւ Անոնց, ամենմէկը զոհացո՛ւց,
—«Առէ՛ք այս Գիրն ու այս Պատկեր, գացէք,–ըսաւ–, մէյմէկ կո՛ղմ4),
Դաւիթ անուն մէկ Կըտրիճ Մա՛րդ կայ Աչխարհ,
Պատկե՛րս տըւէք, իմ զովասա՛նքն ըրէք Իրեն, երդեցէ՛ք,
Որ գայ այստեղ՝ Ձիս կի՛ն առնէ Իր համար»:
Զո՛յգ–զոյգ ճամբեց 5) երկրէ–երկիր՝ քառասո՛ւն տեղ,—
*Կըտրիճ–Դաւիթ անուր *) Մարդեր ժողվեն բերեն՝ Ինք տեսնայ՝*
Թէ ո՞ր Մէկն է՝ այդ անուանի՛ Քաջ–Դաւիթ՝
Ինքը առնէ՝ ըլլան էրիկ ու կընիկ:
Մէ՛կ Զոյգ մէյն՝ Աչուղներէն՝ վերցուց ըսաւ, — «Ա՛յ Խանդուտ,
Քու փընտրած Կըտրիճ–Դաւիթ՝ Սասունէ՛ն է, ու հեռո՛ւ...,
Մենք ալ՝ կընիկ–Տըղի տէ՛ր ենք, ի՞նչպէս երթանք այդչափ տեղ...»:

---

1) Հսկաներու մասին՝ Բ. Հատորով: *) Քաշով, Ծանրութեանը չափով: 2) Ց·40՝ Աղջախըզ: 3) Աչուղ (Ասղ), երգիչ, Գուսան, հին՝ Գողթան–երգիչներ· [Գողթն գաւառը՝ Վէպին ճամբուն վըրայ է]: Կ·25էն դատ՝ միւս պատումները՝ կ'յիշեն մէկ կամ երկու Աչուղ: 4) ՉՍ·595, Ց·117, Հ·438, Ե·517,917՝ Սասում՝ Դաւթի մոլ: 5) Կ·25՝ Ճամբողը՝ Խանդուտի հայրն է, Կապուտ–Կողի Թագաւորը: *) Ամուր, Անունաւոր, անունով:

Բերաւ՝ զա՛ս–զատ՝ կըչխոքի մէկ Աչքին *) մէ՛ջը նըստեցուց,
Մէկալ Աչքը Ոսկի՛ լեցուց՝ կըլըռե՛ց,
= «Տարէ՛՛ք,ըսաւ–, Ձեր ճիժե՛րը պահեցէք,
Գացէք Սասո՛ւ՝ Ինձի՛ բերէք Քաջ–Դաւիթ...»:
Աչուղները ելան առին Խանդուտի Գիրն ու գացին,
Առին Իրենց Ընկուզները *)՝ ինկան ճամբայ՝ մէյմէկ դէհ:—
Քառասո՛ւն Զոյգ Աչուղները՝ ամէն դէհէ մէյմէկ հատ՝
Քառասո՛ւն հատ «Դաւիթ» պիտի գըտնեն բերեն Խանդուտին,
Ոը Անոնց մէջ՝ Սասնու Դաւիթէ՛ն ալ կըտրիճ Մարդ Քէ տեսնայ՝
Հաւնի առնէ՝ ըլլան էրիկ ու կընիկ:—

719. Սասուն Սկոզ Զոյգ-Աչուղներն Ու Շմօիկ-Տիկինը

Այդ Քառասո՛ւն–Զոյգ Աչուղներէն՝ երկուքն ելան Ի՞նչ ըրին,—
Խանդուտ–Տիկնոջ Գլուխերն ու Գիրն առին դըրին Իրենց Մոց,
Ընկուզները Իրենց Թեւէ՛ն կախեցին,
Ինկան ճամբայ՝ ու դէ՛մ ըրին դէպ Սասուն:
Եկան Խըլաթ՝ դո՛ւրս ելան 1),
Այդ Խըլաթի Մարդիկներն ալ՝ հարցուցին Քէ, — «Ո՞ւսուից էք»:
Անոնք ալ Քէ, = «Աչո՛ւղ ենք,
Հեռո՛ւ երկրէ կուգանք Մենք...»:
Կեցան ըսին, — «Որ Աչուղ էք՝ ղըրո՛յց ըրէք՝ Մենք լըսե՛նք»:
= «Դէ՛, Մեր բանի անո՛ւն *) Ի՞նչ է որ...»,–ըսին:
Ու կայնեցան Թագաւորի Առաջքին *) տակ՝ երգեցին:
Այդ Քաղաքի Թագաւորն ալ՝ Շըմշիկ–Տիկին է անուն,—
Մարդը մեռեր՝ Ինք նըստեր է Անոր տեղը Թագաւոր *).—
Ու կախա՛րդ ալ Աղջիկ է...,—

---

*) Աչք, Նժար (կշիռի): *) Ձակուռ, Լարաւոր նուագարան, քնար: Տե՛ս եւ Հատ. 722ա.՝ Մնք. 3:

1) Նկատել որ՝ Քէ՛ Խանդուտի ղրկած Աչուղները, Քէ՛ Դաւիթ Ինքը՝ Վանայ Լիճին հիւսիսի գիծը կըբռնեն՝ Սասուն երթուղարձին, մինչ Մոկացի եւ Սպարկերտ–Կաւկասցի պատմիչները՝ հարաւէն ցուցնել կ'սիրեն: *) Բանի անուն, Գործ, զբաղում, (... մեր գործն Ի՞նչ է արդէն, — չէ՞ որ երգելն է): *) Առաջք, Պատշգամ: *) Թագաւոր, Թագուհի, կին–Թագաւոր:

Նայեց տեսաւ՝ Աչուղին Ծոց Թո՛ւղթ մը կայ,
Կանչեց վերը, տեղ տըւաւ ու ներստեցան,
Ու հարցուց թէ, «Մո՞ւր կ'երթաք···»։
Աչուղներն ալ՝ ըսին, = «Կ'երթանք Սասնոյ դեհ»։
— «Այդ Ձեր Ծոցի Թո՞ւղթն ի՛նչ է···»։
Ըսին թէ, = «Մենք ի՞նչպէս դիտնանք, մէկ Պատկեր է Գիրքին հետ»։
— «Բացէ՛ք,–ըսաւ–, մէկ տեսնե՛մ···»։
Շըմշիկ–Տիկին առաւ Ձեռը նայեցա՛ւ···՝
Ինչք Թըղթընող 2) բա՛ն է առ···։—
Շըմշիկ–Տիկին մի՛տք ըրաւ հոն՝ ի՞նչ ըսաւ,—
Թէ՝ «Աչուղներ երթան Սասում՝ Դաւիթ բերե՛ն այս ճամբով,
Ես՝ Ինդուտի ձեռքէն առնեմ՝ պահեմ ի՛նձ···»։
Ու դառնալով՝ — «Դէ՛հ, Աչուղներ,–վերցուց ըսաւ Այդ–Մարդոց–,
Ի՛նչ փափաքով որ Դուք կ'երթաք՝ գացէ՛ք, Տէ՛րը կատարէ···»։
Երկու Հոդի բըռնեց դըրաւ՝ ճամբուն վըրա՛յ կայնեցուց 3),
Պատուիրեց թէ, — «Դաւիթ անուր Տըղա՛յ մ' կուգայ այս կողմէն՝
Ըսէք Իրեն՝ «Թագաւորը Քեզ կըկանչէ Իր Պալատ»···»։

ՃՀՕ. Ծառն-Վէգին Ն'ծեծէ Երկու Աւուղները

Զոյգ Աչուղներ՝ հարցընելով՝ եկան հասան 'ի Սասում 1)·
Եկան–եկան՝ Սասմայ–Քաղաք՝ դո՛ւրս ելան,
Գիտէին թէ՝ հը՛յ··· 2)՝ Դաւիթը Սասուն էր·—
Կըհարցընեն, — «Դաւիթի Տուն ո՞ր տեղն է»։
Երբ ցո՛յց տըւին՝ գացին Դաւթի Տունին կողմ՝
Տեսան որ մէկ ձիաւորած Որսո՛րդ մ' կուգայ այնդեհէն,
Ջ'իմացա՛ն որ Հօրեղբայրն է, դիտէին թէ Դաւիթն է։
Մի՛ ըսեր որ՝ Ծըռան–Վէգի՛ն է եկող···։
Ան ալ հարցուց, — «Դուք ի՞նչ մարդ էք՝ կա՛ն կուգաք»։
= «Մենք Աչո՛ւղ ենք,–ըսին Անոնք–, Դաւթի համա՛ր ենք եկեր»։

---

2) Լ·32՝ ազրի զարար (մեծ չափազանց)՝ *ուղղել՝* ագլի զարար (խելքի վնասող)։ 3) *Այսինքն՝* հսկելու պաշտօն տուաւ անոնց, նման՝ Գործոթի Գիւղապետի Աղջկան (Հատուած 736)։

1) Ս·165՝ Ծառն–Վէգու Բերդ, Ճ·40՝ Մըսր։ 2) Ս·165,167, 172՝ խը՛յ· [Տեսնել նաեւ՝ Բ. Հատորով]։

— «Ո՞ր կողմէն էք…»: = «Կաղղըւանա՛յ կողմերէն»:
— «Կաղղըւա՞նը ո՛ր կողմն է…»: = «Կապուտ–Կողի վըրա՛ն է»:
Որսորդն Իրեն մխաքին մէջը լո՞նչ ըսաւ.—
«Առոնց Բոլոճ՝ կոտշո՛վ է» 3)՝ կ՚ըսէր Գեռի–Թորոսը…,
Կեցիր լշնեմ՝ տըփո՛ց մը տամ այս Մարդո՛ց…»:—
Իջա՛ւ Զիէն, քաշեց Առոնք հարուածի տակ՝ ու տըփե՛ց…,
Տըփե՛ց՝ նետեց ճամբուն վըրայ՝ փոսի մ՚ մէ՛ջ:—
Ելաւ դընաց՝ հըպա՛րտ–հըպարտ ըսա՛ւ Զէնով–Օհաննին 4),
Թէ, — «Տըփեր *) եմ երկու Աշուղ՝ ու նետեր եմ փոսի մէ՛ջ…»:
= «Ուսո՞ց էին…, ինչո՞ւ համար այդ Աշուղները տըփեցիր…»:
— «Կապուտ–Կողա՛յ էին,–ըսաւ–, ծեծելի՛…»:
= «Հո՛ղն իմ Գըլխին…,–ըսաւ Զէնով–Օհանն ալ–.
Դաւիթ դընաց՝ Աչխա՛ր(հ) քանդեց՝ չ՚եկա՛ւ Ինձի պարծենար՝
Ասի գացեր՝ երկու Աշո՛ւղ է ծեծեր՝
Ու եկեր է՝ կըպարծենա՛յ իմ առջեւ…»:

721. Աշուղները Զէնով-Օհանի Առաջ՝ Ու Վռնտուած

Իրիկուն է,
Հօտաղները՝ Իրենց եղներ հեծած կուգան դէպի Գիւղ,
Մէկ եղ խըրտա՛ւ՝ Հօտաղն ինկա՛ւ վըրայէն.—
Ոլըրտեցան՝ տեսա՛ն երկու Աշուղներ,
Անոնք լացին, աղաչեցին Հօտաղներուն եւ ըսին,—
— «Այդ Բերդի մէջ ո՞վ է նըստեր՝ իրրեւ Մեծ…»:
Հօտաղներն ալ՝ ըսին, = «Ցըռան–Վէգի՛ն է»:
Աշուղները Ոսկի՛ մ՚ տըւին Հօտաղներուն՝ ու գացին,
Գացին նըստան ճամբուն եղերք, կըմըտըտան՝ «Ի՞նչ ընեն»…:
Զէնով–Օհան 1) դարձաւ՝ այնտեղ՝ երկու կըտրիճ Մա՛րդ ղրկեց,
— «Գացէ՛ք,–ըսաւ–, այդ Աշուղներ բերէ՛ք պահե՛նք *), ամօ՛թ է…»:
Եկան առին Աշուղները՝ որ տանին,
— «Ձեզի,–ըսին–, ո՞վ է տըփեր, ա՛յ Մարդիկ…»:

---

3) Տե՛ս Հատուած 728: 4) Լ·33՝ Գեռի–Թորոսին: *) Տփել, Ծեծել:

1) Լ·33՝ Գեռի–Թորոս: *) Պահել, խնամել, կերակրել, հիւրասիրել:

Թէ, = «Դաւի՛թն է Մեզ տըփեր…»։
Ըսին, = «Դաւիթ չէ՞ որ Տուն չ՚է՛, Սարը Որսի՛ է գացեր 2)»։
Այդ Աչուղներ ոտքի՛ ելան՝ գացին մըտան Քաղքին մէ՛ջ,
Շըւարեցան, ալ չըգտան՛ն Դաւթի Տուն,
Գացին տեսան որ մէկ Մարդ մը նըստե՛ր է՝
— «Դաւթի Տունը ա՞ս է»,–ըսին՝ ու կեցա՛ն։
= «Ա՛ս է»,–ըսաւ Զէնով–Օհան, հոն նըստած։
Ըսին, — «Դաւիթ ցո՛յց տուր Մեզի, բա՛ն ունինք»։
= «Դաւիթը որ կըհարցընէք՝ ե՛ս եմ»,–ըսաւ Օհան ալ–.
Ինչի՞ համար եկեր էք Դուք…, ի՞նչ ունիք Ինձ ըսելիք… .
Ըսէք տեսնե՛մ Իմ առջեւ…»։
Ըսին, — «Հիմա՝ Դաւիթ Դո՞ւ ես…»։ = «Հա՛»,–ըսաւ։
— «Դէ՛հ, որ Դո՛ւն ես»,–ըսին Երկու Աչուղներ–,
Նըստիր Քո տեղ՝ որ Մենք դովե՛նք Խանդուտ–Խաթունն՝ Քեզ համար.
Կապուտ–Կողի Թագաւորի Աղջի՛կն է Մեզ ուղարկեր,
Եկեր ենք որ Անոր դովե՛ստն ընենք Կըտրիճ Դաւիթին,
Հասնեցընենք՝ որ Դաւիթ գայ՝ Անիկ առնէ Իր համա՛ր.
Ա՛ս ալ ահա՝ Իրեն Թո՛ւղթը՝ որ գըրեր է Դաւիթին…»։
Ու մէկ Գիրը հանին տըւին Օհանին։
Զէնով–Օհան առաւ Գիրը ու կարդաց·—
— «Կապուտ–Բերդի Թագաւորի Աղջիկ Խանդուտ–Խաթունէն՝
«Շա՛տ կարօտով բարե՛ւ՝ Սասնու Դաւիթին…,—
«Ես մինչեւ ե՞րբ կենամ այստեղ՝ Քեզ համար… .
«Արի Ձիս ա՛ռ՝ Դուն Ինձ էրի՛կ, Ես Քեզ կընի՛կ, օրէնքով…,
«Որ գաս այստեղ՝ ու Ձիս տանիս Քեզ համար…»։
Ու բըռնեցին Իրենց Ըընկուզ՝ որ նըւագեն ու դուլեն…։—
Այն ժամանակ՝ Հօրեղբայրը Զէնով–Օհան 3) ի՞նչ ըրաւ·—
Միտք ըրաւ թէ՝ «Այս Աչուղներ՝ Դաւիթ խելքէ կըհանեն»,
Վախցաւ, ըսաւ՝ «Դաւիթ չ՚երթա՛յ օտար երկիր՝ ըսպանեն»,—
Նեղացաւ ու Ան ալ ելաւ կանգնեցա՛ւ,
Աչուղներուն Ձեռքէն առա՛ւ Ըընկուզները՝ կոտրտե՛ց,—
— «Ելէ՛ք,–ըսաւ–, կորսըւեցէ՛ք այս տեղէն…,
Գացէք նորէն ա՛յնտեղ՝ ուրկէ եկեր էք… .
Դուք եկեր էք՝ Իմ Եղնիկի Սիրտը կ՚աւրէք իզուր տեղ… .

---

2) Լ·33՝ Մըսըրն է։ 3) ՋՍ·599՝ Մաճուկ։

Ինձի պէտք չ'է՛ ..., ես չե՛մ ուզեր այդ Տիկին ...,
Ես չե՛մ դար ...»:
Աչուղները լացին՝ ելան Տունէն դո՛ւրս,
Ջընկուռներուն կըտորները Իրենց Տուրի՛կ լեցուցին,
Ու նետեցին Իրենց Թևէն, լացով–լոցով ինկան դո՛ւրս.
Անէ՛ծք տալով, յիշո՛ց տալով՝ ինկան ճամբայ՝ ու գացին:
*Ու հե՛տ կ'երթան՝ հե՛տ *) կ'անիծեն՝ ու կ'ըսեն.—*
— «Աստուած Դաւիթի Տո՛ւնը քանդէ, աւերի՛ ...,
*Իր Արեւը *) կա՛րճ ընէ ...,—*
Թէ՝ Դուն ինչո՞ւ Մեր Ջընկուռներ կոտրեցիր ...,
Դաւիթ, Քու վի՛զ Թող փըրթի ...,
Մենք Քեզի ի՞նչ ըրեր ենք որ՝ Մեր Դործիքներ ջարդեցիր ...,
Ու Մեզ այսպէս ճամբո՛ւ դըրիր անօթի ...»:

722. Դաւիթ՝ ճամբան՝ Աւուղներուն Կ'հանդիպի

Դաւիթ այդ օր Իր Տունը չ'է՛ր, — Սարը Որսի՛ էր գացեր.
Աւազ–Սարին Որսը կախած Ձիուն վըրայ, Տուն դարձին՝
Նայեց տեսաւ խեղճ ու օտար երկու Մարդ՝
Սասունէն դուրս՝ ճամբուն վըրայ՝ կըփախի՛ն ...:
Երկու Աչուղն ալ տեսան որ՝ մէկ Ձիաւո՛ր մ' է՝ կուգայ.
Ձիաւորը — Դաւիթ — եկաւ, եկաւ հասաւ Այդ–Մարդոց,
Տեսաւ որ ի՛նչ ..., — երկու Մա՛րդ են՝ ու կուլա՛ն ...,
Կուլա՛ն–կուգան՝ ու կ'անիծե՛ն մէկ կողմէն ...,—
*Դաւիթին՝ Հայր–Մա՛յր, Մեռե՛լ, Հատա՛ծ *) կըքաշեն *) ...:*
Կանչեց՝ կեցա՛ն Այդ–Մարդեր,
Մօտեցաւ ու ըսաւ, — «Մարդի՛կ, բարե՛ւ Ձեզ ...»:
= «Աստծու բարի՛ն Քեզի,–ըսին–, Ձիաւո՛ր ...»:
— «Մարդի՛կ,–ըսաւ–, այդպէս ինչո՞ւ կըփախիք ...,
Ի՞նչ պատճառով Դուք Դաւիթը կ'անիծէք ...:
Ես դիտե՛մ որ՝ Իմ ժամանակ՝ Սասնու մէջ՝
Մա՛րդ բըռնութիւն չ'ը՛ներ ուրիշ Մարդու վրայ ...,

---

*) Հե՛տ ..., հե՛տ, Թէ՛ ..., Թէ՛, մէկ կողմէն (կ'երթան)՝ մէկ կողմէն (կ'անիծեն): *) Արեւ, կեանք: *) Հատած, Ննջեցեալ (անրգ.): *) Քաշել, Հայհոյանքով յիշել:

Այդ ո՞վ է որ՝ Ձեզ տըփեր է, անիրաւո՛ր Ձեզի հետ...՝
Որ Դուք կուլաք կըփախի՛ք...»:
Մարդերն ալ թէ,—«Քակուի՛ Սասում, Աստուած Դաւթի Տո՛ւն աւրէ,
Պա Մենք Դաւթին յիշոց չիտանք՝ որո՞ւն տանք...
Մենք Աչո՛ւղ ենք երկուքս ալ...,
կապոյտ-Բերդի Յանդուտ-Ծաթուն՝ ելաւ Գի՛ր մը տըւաւ Մեզ,
«Առէ՛ք,—ըսաւ—, տարէք Սասո՛ւմ, տըւէք կըտրիճ-Դաւիթին,
«Գայ Ձիս տանի, որ Ան ու Ես ըլլանք էրիկ ու կընիկ»...
Մենք ալ ելանք՝ եկանք գացինք Դաւթի Տո՛ւն,
Շիվա՛ր-Ճամբուդ-Մա՛րդ ենք Մենք ալ, անծանո՛թ...,
Մըտանք Իր Տուն՝ որ Յանդուտի գովե՛ստն ընենք ու լըսէ՛,
Մէկ ջոջագլուխ երկար Հա՛յ մը կար այնտե՛ղ,
Վի՛զը կոտրէ...,— Մեր Գործիքներ զարկաւ Գետին՝ կոտրըտե՛ց...,
Ու Մեզ տըփեց՝ հանեց դո՛ւրս...,—
«Կորսըւեցէ՛ք՝ գացէ՛ք,—ըսաւ—, Ձեր Քաղա՛ք...,
«Ես այն երկիր չե՛մ գար,—ըսաւ—, ու չե՛մ ուզեր Ան-Կընիկ»...»:
Այն ժամանակ՝ Դաւիթ այնտեղ լո՞ւռ ըսաւ.—
Իր մըտքին մէջ ըսաւ՝ «Անշուշտ Իմ Հօրեղբա՛յրն է Ասի...,
Ասոնք օտար անխորճ Մա՛րդ են՝ Հօրեղբօրս Տո՛ւն են գացեր»:
Եւ այդ երկու Աչուղներո՛ւն դառնալով՝
— «Անի՛կ,—ըսաւ—, Իմ Հօրեղբայր Ջինով-Օհա՛ն է եղեր.
Դաւիթ որ կա՛յ՝ ե՛ս եմ մինակ՝ Սասնայ մէջ.
Դո՛ւրս հանեցէ՛ք՝ նայի՛մ Ձեր այդ Գործիքներ...»:
Ընկուզները՝ ջա՛րդ ու փըշուր՝ դո՛ւրս հանեցին Տոպրակէն՝
Դաւթի առջե՛ւ լեցուցին...:
— «Ի՞նչ են ասոնք...»,—ըսաւ Դաւիթ՝ Մարդերուն:
= «Անի՛կ Տամբո՛ւր է,—ըսին—.
Անուշ-անուշ ձայնե՛ր կ'ելնեն Իր մօտէն...:
Բայց ի՞նչ ընենք՝ որ այդ չո՛ղ Հայ՝ Մեր Գործիքներ կոտրըտեց...
Առանց Տամբուր 1)՝ ալ Մենք ի՞նչպէս ե՛րդ ընենք...:
Ո՛ւհ, ոչ-ու-չի՛ք ըլլայ Այդ-Մարդ, Մեր Ընկուզներ կոտրըտե՛ց,
Մեր ապրուստը՝ չէ՞ որ Աստոնց վըրա՛յ էր...»:
Դաւիթ Ձիէն իջաւ տա՛կ,
Թուրը նետեց՝ Իր Ձեռ կըտրե՛ց, Աբի՛ւն Թողուց Ափին մէջ,

---

1) Տամբուր, համառ. tambour:

Այդ Տամբուրներ՝ կըտոր տըւաւ կըտորի՛,
Արիւնովը կըցեց փակցուց Իրարո՛ւ,
Աղէ՛կ մ՝ Անոնց Գործիքները չինե՛ց՝ տըւաւ Իրենց Զեռք 2),
— «Դէ՛հ,–ըսաւ–, մէկ զարկէք ձա՛յն տայ՝ Ձեր Տամբուր,
Տեսնեմ Ատոնց ձայն ի՞նչպէս է՝ Խանդուտն Ինձի դուվեցէ՛ք»:
Աչուղներն ալ՝ Զընկուտները դըրին Իրենց Ծունկին վրա՛յ 3),
*Կըռընտոցը *) անցուցին Մա՛տ՝ զարկին Անոնց Լարերուն,*
Շատ անուշ ձա՛յն ելաւ Ատոնց Ջընարէն 4).
Ու Դաւիթին չա՛տ դիւր եկաւ այդ ամեն,—
Ըսաւ, — «Մարդի՛կ, Ձեզ կըտանիմ Ինձի Հի՛ւր...»:—

728. Աչուղները խաճդուսի Դուվը կ'ըճնեն Դաւիթին

Ու Դաւի՛թն էր, — Այդ Աչուղներ առաւ տարաւ Իրեն Տուն,
*Ներստեցուց Հո՛ն, Գատի՛ւ *) ըրաւ առանձին:*
Հանեցին ու Գատկերին հետ՝ Գիրը տըւին Դաւիթի՛ն,
Դաւիթն առաւ նայե՛ց Գատկեր՝ ու նայե՛ց...,
Ու Խանդուտի՝ Իրեն դըրած Գիրը կարդաց մէկ չունչով.—
— «Կապուտ–Բերդի Թագաւորի Աղջիկ Խանդուտ–Խաթունէն՝
«Շատ կարօտով բարեւ՝ Սասնու Դաւիթի՛ն...,—
«Ես մինչեւ ե՞րբ կենամ այստեղ՝ Քեզ համար...:
«Արի Ձիս ա՛ռ՝ Դուն Ինձ էրի՛կ, Ես Քեզ կընի՛կ, օրէնքով...,
«Որ գաս այստեղ՝ ու Ձիս տանիս Քեզ համար...»:
Դաւիթ կարդաց Խանդուտի Գիր՝ պատճէ դըրաւ Իր Գըլխին,
*Գատկերին վրայ շատ խընդացաւ,՝ դըրաւ Ծո՛ց *),*
Ըսաւ, — «Մարդի՛կ, դէ՛, Խանդուտի դուվե՛տն ըրէք Ինձ համար,
Տեսնեմ ի՞նչպէս եւ ի՞նչպէս է Ձեր Խանդուտ...:
Ձեր Տամբուրին՝ առէք աղուոր Ոսկի–Թելե՛ր անցուցէք,
Խանդուտի պո՛վքն ըրէք Ինձի չուսուէչուտ...»:

---

2) Պ·26՝ Հ·438, Ն·587,918՝ «Դաւիթի տուած դըրամովը՝ չուկայէն նոր նուագարան գնեցին»: 3) Կ'թուի թէ՝ վանայ մէջ քաջածանօթ բաճոն–ին փոքր մէկ տեսակն է Ջընկուտ–Տամբուրը, Սազ: 4) Հմմտ.՝ Փշրմբր· (Ծվ·) էջ 21՝ երկրորդ տունը:

*) Կռնտոց, Հարիւր քնարի (մատնոցի ձեւով է), dé, pectre, թազեվ: *) Գատի, Ննջոյքով մեծարանք, ճաշ (տալ): *) Ծոց, Գրպան (որ ծոցն է):

Աշուղները աւին Իրենց Զընկուններըը՝ նըստեցա՛ն,
Աւին Դաւթէն՝ Ոսկի–Թել՛ր անցուցին,
Դաւթի առջեւ՝ կըսընտոցով զարկին Անոնց Լարերուն,
Անուշ ձայնով՝ Դաւթի համար Խանդուտի դո՛վք զովեցին·—

— «Նկա՛ծ ու Եկա՛ծ՝ կապուտկող–Բերդէն՝ Երկո՛ւ Ուզընկան 1),
Խանդուտ–Խաթունի գովե՛ստը կ՛ընեն Դաւիթի համար·—
Կ՛ըսե՛մ, կըգովե՛մ՝ Խանդուտ–Խաթուն(ը)՝ Դաւիթի՛ն···,—
— Անոր Հասա՛կը···, Քե՛զ կ՛ըսեմ, Դաւի՛թ,
Կընայիմ՝ Քառսո՛ւն կանգո՛ւն է, մէկ ալ աւելի՛···,—
Նըման կուտայ՝ Ջըրի–Եղէգի՛ն, Բըրջա–Բալաֆի՛ն 2)···,
= Ա՛խ, դեռ Բըրջա–Բալաֆին···:
— Աղջկան Տամե՛րը···, Քե՛զ կ՛ըսեմ, Դաւի՛թ,
Կընայիմ՝ Քառասուն–Ձիւղ–Տա՛մ է, մէկ ալ աւելի՛···,
= Ա՛խ, դեռ մէկ ալ աւելի՛···:
— Անոր Ճակտի լա՛յնքն ըսեմ···, Դաւի՛թ,
Կընայիմ՝ Երկու–Թիզուկէ՛ս 3) է՝ մէկ ալ աւելի՛···,
= Ա՛խ, դեռ մէկ ալ աւելի՛···:
— Անոր Ցօնքե՛րը···, Քե՛զ կ՛ըսեմ ,Դաւի՛թ,
Կընայիմ՝ Փետուրով *) Քաշած Կամա՛ր է···,
= Ա՛խ, դեռ կամա՛ր է···:
— Անոր (Աչքի) Թարթափնե՛րն ըսեմ, Դաւի՛թ,
Կընայիմ՝ Կըռընկո՛ւ–Ցըցուն 4) է···,
= Ա՛խ, դեռ Կըռընկո՛ւ–Ցըցուն է··· 5)·
— Անոր Աչքե՛ր···, Քե՛զ կ՛ըսեմ, Դաւի՛թ,
Կ՛իրիշկեմ՝ Չինի–Գաւաթի՛ 6) նըման է···,
= Ա՛խ, դեռ (Գինու)–Գաւաթի՛ նըման է···:

---

1) *Երգով*: Խ·44, Ե·32՝ կապուզան՝ (*Թերեւս* կազ՝ ուզընկան, կազ ուզան)։ 2) Բրջա–Բալաֆ = *քրդ· պրս·*՝ Սպիտակ–Բերդ, *Սպարկերացի պատմիչներուս ըսածովը՝ Մ֊իջագետքի Խառնուրդին վրայ է*։ 3) *Փուխռխակներ*՝ Եօթ թիզ, Եօթ կանգուն, Հայաբայ գազ, Երեք գազ, Ե·32՝ Եօթ ակում՝ *ուղղելի*՝ ադում (*քայլ*)։ *) Փետուր, *փետուրէ գրիչ*։ 4) Հ·385–386՝ Կըռնկու ջղդա, panache՝ *ճակոի վրայ*։ 5) *Այսինքն*՝ Երկար թարթիչներ ունի։ 6) Կ·26՝ Գինու կթխա։

— Աճոր ֆըք֊ի՛կն ըսե՛մ···, Դաւի՛ք,
կը ճայիմ՝ աճըմաճ սոք *) ու ողորկ է···,
= Ա՛խ, դեռ սոք ու ողորկ է···:
— Աճոր երեսի կարմրութի՛ւնն ըսեմ, Դաւի՛ք,
կըճայիմ՝ բաճ՛ըզ Նըռա՛ճ֊Գինի է···,
= Ա՛խ, դեռ Նըռա՛ճ֊Գինի է···:
— Աճոր Բերա՛ճը···, ֆե՛զ կ՛ըսեմ, Դաւի՛ք,
կըճայիմ՝ Աս(ե)ղով 7) ծակած՝ կեռա՛ս է···,
= Ա՛խ, դեռ Ասղո՛վ ծակած է···:
— Ադջկաճ 8) Ատամնե՛ր···, ֆե՛զ կ՛ըսեմ, Դաւի՛ք,
կըճայիմ՝ Մարգըրտի֊Շարո՛ց *) է···,
= Ա՛խ, դեռ Մարգըրտէ֊Շարո՛ց է···:
— Աճոր Դէմֆի ձե՛ւն ըսեմ···, Դաւի՛ք,
կըճայիմ Մոլուտիկ֊Խըճօղի՛ *) ճըմաճ է···,
= Ա՛խ, դեռ Մոլուտիկի ճըմաճ է···:
— Աճոր վիզի երկարութի՛ւն ըսեմ, Դաւի՛ք,
կըճայիմ՝ երկու֊ֆի՛զ է՝ մէկ ալ աւելի՛···,
= Ա՛խ, դեռ մէկ ալ աւելի···:
— Աճոր Մորքի սիվտակութի՛ւն, ֆե՛զ կ՛ըսեմ, Դաւի՛ք,
կըճայիմ՝ բաճ՛զ մէկ օրուան Ձիւն՝ սպիտա՛կ է···,
= Ա՛խ, դեռ սպիտա՛կ է···:
— Աճոր Մարմնի փափկութի՛ւնն ըսեմ, Դաւի՛ք,
կը ճայիմ՝ գըզած Բամպակի՛ գուլա *) է···,
= Ա՛խ, դեռ Բամպ՛կի գուլա՛ է···:
— Խաճդուտի Մըծե՛ըը՝ մէջ Մոցիճ···, Դաւի՛ք,
ֆաճ՛ըզ Հալաբայ֊Շահաբը ֆա՛ղցր է 9)···,
= Ա՛խ, դեռ Շահաբէ՛ճ աւելի բաղցր է···:

---

*) Սոք, *Ուղղորդ*, «*ՔՔիկ սո՛ք գալ, բերան պզտի՛կ գալ*» ծղվ. *Բնհսքն*.: 7) Ե·640,918՝ մօխրով, մովրով (= *կնիքով*)· *Ժողովուրդը՝ պզտիկ բերանի համար՝ կ՛ըսէ* ասղո՛վ ծակած է: 8) *Փոփոխակէ փոփոխակ՝* Աճոր, Խաճդուտի, *կամ* Ադջկաճ: *) Շարոց, *Շարք*· (*մարգրիտի կամ մարգրիտէ մանեակի՝ չարք են ակռաները*): *) Մոլուտիկ, Մըլըտիկ, *Աշնայինն, անուտոի խնձոր մը՝ վայելչապէս* ճուռճէու: *) Գուլա, *Դէզ, կոյտ*: 9) Ա·29, կ·26, Ե·587,918՝ բամպըկի գուլա է:

— Աճոր Սըրտի լա՛յնիճ ըսեմ···, Դաւի՛թ,
Կըճայիմ՝ նօ՛թը-կանգուն է՝ մէկ ալ ասկի՛···,
= Ա՛խ, դեռ մէկ ալ ասկի՛···:
— Աղչկաց Սըրտի ճա՛խրը 10), ինչ՛ կ'ըսեմ, Դաւի՛թ,
Բուռնկիկ-Ջալալո՛ւ ճախրիկ թըռիչն է···,
= Ա՛խ, դեռ Աճոր թըռի՛չն է···:
— Խանդուտի Ձեռ ու Ո՛տը···, ինչ՛ կ'ըսեմ, Դաւի՛թ՝
Կըճայիմ՝ Գրիչո՛վ գըծած է···,
= Ա՛խ, դեռ Գրիչով գըծա՛ծ է···:
— Աճոր Եղունգնե՛րն ըսեմ···, Դաւի՛թ,
Կ'իրիշկեմ՝ Ինչո՛վ տաշած *) է···,
= Ա՛խ, դեռ Ինչով տաշա՛ծ է···:
— Աճոր Մէ՛չը···, ինչ՛ կ'ըսեմ, Դաւի՛թ,
Կըճայիմ՝ Դաշոյնի Բուռի՛ նըմա՛ն է··· .
= Ա՛խ, դեռ Բուռի նըմա՛ն է···:
— Խանդուտի Գալուա՛ծը···, ինչ՛ կ'ըսեմ, Դաւի՛թ,
Կը ճայիմ՝ Լորի-Կաֆաի՛ նըմա՛ն է···,
= Ա՛խ, դեռ Կաֆաի՛ նըմա՛ն է···:
— Կ'ըսե՛մ *) ու կըգովա՛մ *) Խանդուտ-Խաթո՛ւնը՝ Դաւ(ի)թին,
Ան արժան չէ՛՝ Մեզ նըմա՛ն աճուն-պաճուճին *),
Ան արժան է՝ Ինչ նըմա՛ն կըտրի՛ճ Թավգատրին 11).
Ան ալ Ին տեսուն *) շա՛տ-շատ կարօ՛տ է, Դաւի՛թ,
Ինչի՛ կըսպասէ, ու Ին յուսո՛վն է···:
— Կ'ըսե՛մ ու կըգովա՛մ՝ Խանդուտ-Խաթո՛ւնը՝ Դաւթի՛ն.—
Խանդուտ՝ գեղեցիկ Հասա՛կ ունի: Խանդուտ՝ հըսկայ Մարմի՛ն ունի.
Խանդուտ՝ կլոր Աչքե՛ր ունի: Խանդուտ՝ կամար Ունքե՛ր ունի.
Երեսներ՝ Շուշան ու Նո՛ւռ կ'ըսեմանի···,

---

10) Ե·587՝ մէջդան (*ասպարէզ, ճախրի չափը՝ ձիու*). *Տե՛ս նաեւ* Բուռնկիկ-Ջալալի՝ *Բ. Հարվ.*: *) Տաշած, *Ճղկած, խնամած*, manucuré: *) Ըսել, *Բառերով երգել, դիւցազներգօրէն պատմել*: *) Գովալ, *Ժողովուրդը երբեք չ'ը՛սեր* գովել, *այլ՝* գովալ: *) Ա–ճուն-պաճուն, *Գաճաճ, Գոգ-Մագոգ*: 11) *Խանդուտի անձին նը–կարն ու Կորեկարտի Գառաւին ըսածները* [*Հուշ·* 715՝ *տող* † *եւ* †)՝ *Հմմտլի. Տրդատ Մեծ Արքային հարսնցու եկող՝ «Աչխէնին* [*դուստր Աչխադարայ*]···՝ *որ ոչինչ նուազ էր՝ կոյսն՝ Արքային հասակի···»* [*Խրնց. Բ. ճգ.* 335–6]: *) Տեսուն, *Տեսութեան, դէմքին*:

Աշխարհիս մէջ՝ աճ–հա՛տ *) է, ըրմա՛ճ չունի...:—
Հազարատո՛ր ուզո՛ղ ունի խաճդուտ...՝
Մէ՛կը չ'ո՛ւզեր, մէ՛կ չի՛ հաւնիր, միայն Քե՛զ կ'ուզէ, Դաւի՛թ,
Քու աճո՛ւմն ու կըտըրուքի՛ւնը լըսեր է՝ խաճդուտ՝
Աշխարհի գեղեցի՛կն է խաճդուտ, ըրմա՛ճ չ'ունի,
Ան յաւմար է՝ միայն Քեզի՛...»:

724. Դաւիթ՝ Աւուղներու Երգին՝ և'պատասխանէ Երգով

Դաւիթ այս երգ Աչուղներէն որ լըսեց...՝
— «է՛–է՛...,–ըրաւ–, բարո՛վ եկաք, Աչո՛ւղներ...,
Խանդուտ–Խաթուն ինձի համար գովեցիք,
Սիրտըս մէկէն պըղտորեցի՛ք Իր Սիրով...:
Ան ալ՝ Ջընկուտն առաւ Իր Ձեռք՝ ու ըսաւ,— 1).

— «Իմ Սիրտ՝ բաճ'զ Աւագ–Նովեր՝ հաճդա՛րտ էր 2)...՝
Քաճ'զ Գարնաճ–Գետեր՝ պըղտորեցի՛ք 2)...:
Իմ Սիրտ՝ բաճ'զ վաճայ–Բերդ՝ աճառի՛կ էր...՝
Բըրի՛չ առիք՝ (Իմ) Հի՛մը բաճդեցիք...:
Իմ Սիրտ՝ բաճ'զ Գա՛թճ՝ աճարա՛տ էր...՝
Մէրա՛ճ *) թալեցիք ու մակարդեցի՛ք... 2):—
Աշուղնե՛ր, Դուք բարո՛վ եկաք՝ ու հազա՛ր բարով...,—
Քաճ'զ Գո՛ռճ ու Մաքիճ՝ աճարա՛տ էի...՝
Գայլի՛ ըրմաճակ՝ ահա կառղեցա՛յ...:
Քաճ'զ Աշճա՛ճ–Ջուրեր՝ պա՛րզ *) էր Իմ Սըրտիկ...՝
Գարնա՛ճ–Հեղեղի ըրմա՛ճ պըղտորաւ...:
Վարպե՛տ Գուսաճներ, Ես դեռ ճորահաս մէկ Տըղա՛յ մըճ էմ 3),
Խաճդուտի՛ սիրոյճ՝ Ես կ'ելճեմ կ'երթամ Իրեճ տեսութեաճ...:
Դէ՛հ, Դուք գըճացէ՛ք՝ լո՛ւր տարէք Իրեճ,—

---

*) Աճ–հատ, *Անզոյգ, աննման, մէկ հատիկ*: *Հոգոց–Վանքի գըրչագրով մը՝* Աճահիտ *դիցուհին կոչուած է նաեւ՝* Աճ–Հատ Տիկին:
1) *Երգով. նման՝ քնարահար Դաւիթ Թագաւորին* (Ածշճ.):
2) Հ·439՝ աճարատ՝ *ուղղելի՝* հաճդարտ, պղտորիկ՝ *ուղղել՝* պղտորիք (*պղտորեցիք*), մկնտիք՝ *ուղղել՝* մկրդիք (*մակարդեցիք*):
*) Մէրաճ, *Մակարդ*: *) Պարզ, *Վճիտ, յստակ*: 3) Հ·38՝ Եօթ տարեկաճ էմ:

ՃԱՇՑ ուտեմ ՃԱԺՎԱՆ, ՀՂՐԱՄԵՆՑՑ ուտեմ ԳՈՐԾՈՔԻ Դա՛շտը 4),
ԸՆՔՐԻՍԻՆ՝ Հի՛ւր եմ կապուտկոզի–ԲԵՐԴ՝ ՁԵՐ ՍԷ՛Ր–ՏԻԿԻՆԻՆ...»:

725. ԵՐԿՈՒ ԱՀՈՒՂՆԵՐԸ՝ ԽԱՆԳՈՒԱԾ ՄՕՏ Կ'ԴՈՒՐՑԱՑ

Դաւիթ հարցո՛ւց Աչուղներուն՝ թէ, — «Մարդի՛կ,
Դուք քանի՞ օր եկաք–հասաք Ձեր երկիրէն մինչեւ հոս...»:
Անոնք ալ թէ, = «Ճառասո՛ւն օր 1)...,
Ճառասուն օր ալ՝ հազի՛ւ երթանք ու Խանդուտի մօտ հասնինք» 2):
Դաւիթն ըսաւ, — «Դէ՛հ, Դուք կ'երթաք ձանապարհ,
Եօսունին օր ձամբա՛յ կ'երթաք՝ ու լո՛ւր կուտաք Խանդուտին,
Ես այն օրը 3) ձամբա՛յ կ'ելնեմ՝ Ձեզ կը հասնի՛մ Աստուծով...»:
Հանեց՝ Աստնց՝ Ճըլսակներով Ոսկի՛ տըւաւ՝ ու պարգե՛ւ,
Ըսաւ, — «Գացէ՛ք, ասկէ յետոյ յիշոց մի՛ տաք Դաւիթին...,—
Այլ Ողորմի՛ տըւէք Իր Հօր–Մօր Հոգուն...»:
Գաւի՛ւ ըրաւ, նորէն կերա՛ն խըմեցին...,
Ելան Գիշեր հոն պառկեցան՝ քընացան:
Մընա՛ց Լուսուն, — Լուսուն՝ Դաւիթ ձամբա՛յ դըրաւ Աչուղներ 4),
— «Գացէ՛ք,–ըսաւ–, բարե՛ւ տարէք Խանդուտին,—
Ես պիտի գամ՝ եկնեմ Իրեն տեսութեան...»:
Աչուղները՝ ուրա՛խ–ուրախ՝ ելան ինկան ճանապարհ,
Ճառասո՛ւն օր ձամբա՛յ գացին, գացին հասան Իրենց Տե՛ղ:
Ելան գացին Խանդուտի մօտ՝ Իրենց գըրոյց լա՛ւ մ' ըրին,
Ու պատմեցին՝ ինչ որ այնտեղ Իրենց Գըլուխն եկե՛ր էր.—
Թէ, — «Տըփեցի՛ն Մեզ երկուքիս, ու Ձընկուններ կոտրեցի՛ն...,
Դաւիթ եկաւ՝ Իր Արիւնով փակցո՛ւց չինե՛ց կըտորներ...,
Տարաւ Իր Տուն՝ Մեզ լաւ պատուե՛ց ու պահե՛ց...,

---

4) Ց·119, Հ·439՝ Բանդիմահու (Կամուրջ), *որմէ հետու չ'է՛* Գործոք: Հ·439՝ Ընքրիսը՝ *սխալով՝ յիշուած է* Հրամեցցէն առաջ: Բանդիմահու Գիտը՝ *Փաւստոս Բիւզանդի յիշած* Ձկնատեսան *կամ* Ձկնատեաց–Առեստն է, [*Փաւս.՝ էջ* 32 *եւ* 181]:

1) Ե·919՝ ութ օր: 2) Կ·26՝ Էրթաք կ'հասնինք՝ *ուղղել՝* Էրթաք հասնինք: 3) Նոյնպիսիներուն օրը (Կ·26, Զ·), ՁՍ·609՝ վաղ չէ՝ մէկալ օր: *Հաւտւած 727–728ով՝* հոսանուքերուն օրը կը մեկնի: 4) Ց·40՝ Ախզախըչ՝ *ուղղել՝* Ախչախըզ (*Աղչիկ մանուկ*):

Քո Գիր կարդաց՝ պաղեց դըրաւ Իր Գըլխո՛ւն...,
Քո Պատկերը՝ նայե՛ց–նայե՛ց՝ ուրախացաւ դըրաւ Մո՛ց...,
Ոսկի–Թևե՛ր տըւաւ Մեզի՝ Մեր Զընկուտի՛ն անցուցինք...,
Ընտեցանք հոն՝ Քու Դո՛ւքն ըրինք 5) մէկ–բերան...»:
Ա՛մե՛ն ըսին ու պատմեցին Խանդուտին.
Ըսին, — «Վաղը 6)՝ Դաւիթ կուգա՛յ, Աչքըդ բըռնէ Իր Ճամբան»:

726. Զէնով Օհանի Ծուցմուցիները՝ Խանդուտի Մասին

Դաւիթ ելաւ ու պատուիրե՛ց Տընեցոց 1),—
— «Իմ Լաթերը լըսա՛ք,–ըսաւ–, պատրաստէ՛ք,
Քանի մ՝ օրէն Ճամբա՛յ կ՝ելնեմ, պիտի երթամ հետու տե՛ղ...»:
Ապա դընաց Զէնով–Օհան Հօրեղբօր մօտ՝ ու ըսաւ.—
— «Շըմչիկ–Տիկին՝ ես չե՛մ ուզեր, Հօ՛րեղբայր...,
Պիտի երթամ՝ Խանդուտ–Խաթո՛ւն տեսնեմ՝ բերեմ Ինձ համար...,
Կարելի է՝ Աչուղները ճի՛շդ կ՝ըսեն...»:
Զէնով–Օհան ալ մի՛տք ըրաւ՝ եւ ի՞նչ ըսաւ Ինքիրեն.—
«Կա՛յ ու չըկայ՝ այդ երկու չո՛ւն Աչուղները՝
Դաւիթ տեսեր՝ ճամբէն հանե՛ր են Տըղան...»:
Դաւիթն ալ չուտ Ձեռը տարաւ՝ Պատկերն հանե՛ց Իր Մոցէն,
— «Ա՛ռ, Հօրեղբա՛յր 2), նայէ՛,–ըսաւ–, այս Պատկեր...»:
Զէնով–Օհան առաւ նայեց՝ զարմացա՛ւ...,
Ըսաւ, = «Դաւի՛թ, Ասի ո՞ւստից եկաւ ինկաւ Ձեռքիդ մէջ...»:
— «Կապուտ–Բերդի 3) Թագաւորի Աղջի՛կն է Ինձ ուղարկեր... .
Արտօնութիւն կուտա՞ս՝ երթամ բերեմ Ի՛նձ...»:
Ըսաւ, = «Դաւի՛թ, աղէ՛կ, Որդի՛, Դո՛ւն գիտես...,
Բայց ասի եօ՛թ տարի է որ՝ լըսա՛ծ ենք՝
Կըտրիճ Մարդեր, Իշխան, Ըմբիշ, Թագաւորի Տըղաներ 4)՝

---

5) Գովքն ընել, *երգելով՝* թուել՝ *ենթակային արժանիքները,* — *ահա թէ ի՞նչ են՝ Յորենացու յիշած՝* Թուելոց Երգերը: 6) Ե·919՝ *Ասօր:*

1) Հ·386՝ Իր Հօրեղբօր կնկան: 2) Լ·34՝ Քեռի–Թորոս: 3) Լ·34՝ Աբաս–Միրզի աղջիկ: *Հմմտ.՝* Աբաս–Միրզա եւ Աշխատա–ր(այ) *անունները* (*Հուշ.* 723՝ *Մնթ.* 11): 4) Ա·28, Ե·33՝ Քառասուն փէհլիվան:

Եկած՝ Անոր Դրրան առաջ նըստա՛ծ են՝
«Տեսնենք՝ Խանդուտ ո՞ր Մէկն առնէ՝ թէ հաւնի»,—
Այդ Մարդերէն՝ Խանդուտ՝ Մէ՛կն ալ չ՛է՛ հաւներ։
Որ Դուն կ՛երթաս՝ Այդ Աղջկան Պատըշգամին տակ կեննա՛ս,
Եթէ Անիկ իր Ծընճորը՝ կամ Նըւէր մը՝ նետէ Քեզ՝
Կ՛երթա՛ս կ՛ելնես Իր Սենեակ.
Թէ չընետէ՝ ե՛տ կըդառնաս ու կուգա՛ս... .—
Քեզ կըխաբեն, կըտանին Հոն՝ կ՛ըսպաննե՛ն...»։
— «Է՛ Հօրեղբա՛յր,—ըսաւ Դաւիթ՝ Օհանին—,
Դուն Ինձ կ՛ըսես «Մի՛ երթար...,
Այնտեղ կըտրիճ Հմբիչնե՛ր կան, կըխաբեն Զիս՝ կ՛ըսպաննեն»,—
Ալ Ես ու Իմ կըտրըճութիւն ի՞նչ արժեն որ Ես չ՛երթամ... .
Տէ՛րը վրկայ՝ պիտի երթամ Խանդուտ-Խաթուն մէկ տեսնե՛մ...»։
Ելաւ կանչե՛ց Ժողովուրդը, Մեծ ու Փոքր,—
— «Է՛ Եղբայրնե՛ր,—ըսաւ Անոնց Ամենուն—,
Մենք Իրար հետ Հա՛ց ենք կերեր, Ջո՛ւր խըմեր,
Երթալն Ի՛մ Չեռ՝ դալն Աստծո՛ւ Չեռ, — Աղո՛թք ըրէք Ինձ համար,
Երկար Ճամբա՛յ ունիմ Ես ալ Իմ առջեւ...»։

Ի. ԴԱՒԻԹ ԴԻՊ ԽԱՆԴՈՒՏ ԵՐԹԱԼՈՒ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՑ

787. Դաւիթ՝ Եըմշիկ-Ցիկիճիճ Հիւր

Ջըրոյցն ո՞ւստ տանք, — նորէն Դաւիթ՛ն տանք ղըրոյց։—
Դաւիթ՝ Իր Խօսք Ինչպէս Երկու Աչուղներուն տըւա՛ծ էր՝
Եռասունին օր չըլըրացած՝ Ճամբա՛յ ելաւ՝ որ երթայ։—
Երկու օր էր 1)՝ Հաց չ՛է՛ր կերեր, ոչ ալ պուտ մը Ջո՛ւր խըմեր...,—
Չէ՞ Խանդուտի Պատկերն ու Գիրն ունէր քով...։—
Դաւիթ ելաւ՝ գընաց Սենեակ՝ բացա՛ւ Իր Մեծ Պահարան,
Հագաւ Իրեն Չէն-ու-Զարդով Հագուստները,
Թուրը կապեց Իր վրան,
Գընաց Ախոռ՝ դո՛ւրս քաշեց Ձին, հրեղէն Քուռկիկ-Ջալալին,

---

1) Կ·83՝ «Դաւիթ որ եկեր Աղբիւրի վրայ լուացուեր էր»։

Թամբը զարկաւ Ձիուն Քամակ, Սանձը դըրաւ Բերանին,
Թըռաւ հեծաւ, կանչեց Աստուած, ինկաւ Ճամբայ՝ ու գընա՛ց.
Քըշեց գընաց Մըծմակայ-Քիթ, որ երթայ դէպ Կապուտ-Կող.
Խանդուտի Գիրն ու Պատկերը Իրեն Մոց։—
Գընաց հասաւ Ոըլաթայ-Գե՛ա, պիտի անցնի Կամուրջէն 2)՝
Երկու Կըտրիճ՝ դէ՛մը կեցան եւ ըսին.—
— «Դուն ո՞վ ես...»։
Ըսաւ Թէ., = «Ես Դաւի՛թն եմ...»։
— Սասմայ Դաւի՛թն ես...»,—ըսին։
Թէ՝ = «Հա՛, Սասմանց Դաւի՛թն եմ...»։
— «Հըրամէ՛»,—ըսին—, Մեր Թագաւոր Քեզ կըկանչէ Իրեն մօտ»։
Աւին գացին՝ տարան վե՛ր,
Ձին քաշեցին Արքունական Մեծ Ախո՛ռ,
Դաւիթ գընաց Ներսեցաւ վե՛ր, Իրեն Տեղ,
Նայեց տեսաւ՝ մէկ կընի՛կ է՝ Թագաւորին տեղ Ներսեր,—
Դաւիթ կեցաւ, հարցուց ըսաւ, — Ձեր Թագաւո՞րն ո՛ւրտեղ է...»։
Շըմշիկ-Տիկինն 3) ըսաւ, = «Ապա՝ Մեր Թագաւոր մեռե՛ր է,
Ե՛ս եմ Քաղքին Թագաւոր....
Հաց կե՛ր,—ըսաւ—, ուր որ կ՝երթաս՝ նոր գընա՛...»։
Ան ալ Իրեն Նոր-Հագուստներ Հագե՛ր էր...,
Գըլուխ չըտկեր՝ այնպէ՛ս ելեր Դաւթի դէմ,—
Բերաւ այնտեղ՝ Սեղա՛ն դըրաւ, Հա՛ց կերցուց...,
Լաւ Գինեխո՛ւմ ըրին հոն։
Դաւիթ որ Իր Հացը կերաւ լըմընցուց՝
Ըսաւ, — «Իմ Ձին դո՛ւրս քաշեցէ՛ք՝ ես երթամ»։
Շըմշիկ-Տիկին ըսաւ, = «Մո՛ւռ է, ո՞ւր կ՝երթաս...
Արի մ՝ե՛րթար. առօր Ինձի Հի՛ւր եղիր...»։
Դաւիթն ըսաւ, — «Ձիս Ճամբայէս եւ մի՛ ձըզեր, ես կ՝երթա՛մ...»։
Շըմշիկ-Տիկին՝ ըսաւ, = «Դաւի՛թ, Իմ խելքովը ես գիտե՛մ՝
Որ Դուն կ՝երթաս Այդ Պատկերին եւեւէ՛ն...,—
Քեզ կըխաբե՛ն՝ որ տանին Քեզ վըհասե՛ն....
Այդ մեծութեան Աղջիկ չըկա՛յ..., մի՛ հաւատար....

---

2) Ս·166, Լ·33՝ Դաւիթ՝ Մըսրէն Սասուն դարձի՛ն է որ կ՝անցնի Ոլաթէն։ 3) Ց·41՝ Զմլկեր Սուլթան (դուցէ Զմշկիկին աղաւաղը, կամ սխալ տպագրուածը)։

Խանդուտ-Խաթուն՝ Իմ ձկըոյթիս չա՛փ ալ չըկայ, թէ գիտնաս...»:
— «Պիտի երթա՛մ, չ'ը՛լլար-ըսաւ-, խո՛սք եմ տըւեր Խանդուտին»:
Շըմշիկն ալ թէ, = «Արի՛ դիշեր կա՛ց այստեղը՝ ու Զիս ա՛ռ,—
Թագաւորի թէ՛ Աղջիկ եմ, թէ լաւ կի՛ն,
Ինչո՞ւ պիտի Զիս չըհաւնիս ու չ'առնե՛ս Զիս Քեզ համար....
Կա՛ց այս Քաղաք, Իշխանութիւն ու Ժողովուրդն ալ Քեզի՛...»:
Ու խաբուեցա՛ւ Դաւիթ, մընաց Առոր քո՛վ,
Շըմշիկ-Տիկին՝ առա՛ւ Դաւիթ, նորէն կերցո՛ւց ու խըմցուց,
Գըլուխ-Գըլխի՝ ելան մէկտեղ քընացան:—

728. Դաւիթ, Կոտօվ-Պլոճներն Ու Գուրճուորը

Մընաց լուսուն՝ Դաւիթ զըղջա՛ց Իրեն բըռնած այդ գործէն.—
«Այդ ի՞նչ բան էր ես բըռնեցի...,-ըսաւ Ինքնին՝ մըտածկոտ-.
Մեր Աղգ պիտի չըխաբուէ՛ր... .
Ես մէկ կընկան մ' խօսքէն ի՞նչպէս խաբուեցայ...»:
Ու Խանդուտի Պատկերն առաւ Իրեն Քե՛ռ՝
Ըսաւ՝ «Ա՛յ-հա՛յ..., ասի չ'եղա՛ւ..., Իմ Հօրեղբայր ի՞նչ կ'ըսէ.—
Կոյս-Աղջիկը Թողնեմ ու գամ՝ Որբեւայրի-կի՛ն առնեմ...»:
Ելաւ՝ չուտ մը, Շըմշիկ-Տիկին Թողուց Իր Տեղ՝ ու գընա՛ց.
Ոչ Շըմշիկին իմա՛ց տըւաւ, ոչ Հա՛ց կերաւ, ոչ խըմեց,
Զին քաշեց դո՛ւրս, հեծաւ՝ քըշեց՝ ու գընա՛ց:
Շըմշիկ-Տիկին՝ երբ արթընցաւ ու վե՛ր ելաւ Իր Տեղէն՝
Տեսաւ՝ Դաւիթ Զինքը Թողեր՝ Իր Զին հեծեր գացեր է՝
— «Կեցի՛ր,-ըսաւ-, եկար Իմ քո՛վ՝ Զիս խաբեցիր՝ ու կ'երթա՛ս...»:
Ու քէ՛ն պահեց Դաւիթի դէմ...:
Դաւիթ ինկաւ ճամբա՛յ կ'երթայ, — չատ ու քիչը՝ Տէ՛ր գիտէ,—
Քըշեց գընաց՝ ու Խըլաթէն ելաւ դո՛ւրս 1):—
Սասունէն ալ մինչեւ Խըլաթ՝ եօթ օ՛ր է.
Ու Խըլաթէն մինչեւ Բերկրի՝ եօթ օ՛ր է.
Բերկրիէն երթաս մինչեւ Կապուտ-Բերդ՝
Նոյնպէս եօ՛թ օրւան՝ Քիու-ճամբա՛յ է 2).—

---

1) Լ·34՝ Ղլաթին մօտեցաւ (պատումին բերումովը): 2) Օրաչափով այս հեռաւորութիւնները՝ հասկնալու է վիպական սահմանի մէջ:

*Դաւիթ Ակռաստին *) ելա՛ւ Ծըլաթէն՝*
Ինչպէս՝ հարցնելով՝ եկած էր Ծըլաթ՝
Այնպէս հարցփորձով՝ գընաց դէպ Արճէշ.—
Հարցուց ճամբան՝ թէ «Արճէշը ո՞ր կողմն է...»:
Նըշանց տըւին՝ գընաց Արճէշ, հարցուց՝ «Բերկրի ո՞ր կողմն է»:
Ըսին, = «Ահա այդ ճանապարհ բըռնէ գընա՛, այնտե՛ղն է»:
Դաւիթ քըշեց՝ գընաց Բերկրի 3)՝ Գործոթի–Դաշտ՝ ելաւ դո՛ւրս,
Ճամբուն վըրայ՝ մէկ Գոմէշի կո՛ւ տեսաւ,—
Ինքիրենը միտք ըրաւ ու ըսաւ՝ «Ասի կ՚ըլլա՛յ որ՝
Իմ Մօրեղբօր 4) ըսած Կոտշով Պըլո՛ճն 5) է որ կուլեր 6) է... .
Աւտոր կուն ալ՝ որ ա՛յսքան է...՝ Ի՞նքը ապա ո՛րքան է.՞.՞.՞,—
Ինձի վընա՛ս մ՚ թէ որ ըլլայ՝ այդ կուն 6) կուլուղ 6) Տաւրէ՛ն է...,
Ան Ձիս կըրնայ ըսպանե՛լ...» 7):
*Փիչ մ՚ ալ գընաց՝ տեսաւ Գոմէշ մ՚ ուխտի *) մէջէն դո՛ւրս ելաւ.*
Դաւիթ այդպէս բան որ իսկի չ՚է՛ր տեսեր...՝
Փաչե՛ց Թուրը 8)՝ ու կանգնեցաւ որ զարնէր այդ Գոմէշին,
Տեսաւ Հօտաղ պըղտիկ Տըղայ մ՚՝ չորս հատ Գոմէ՛շ կըքըշէ,
Կըհայհոյէ՛ Գոմէշներուն՝ ու կուգա՛յ...:—
Դաւիթ դիտցաւ թէ Իրե՛ն է կըհայհոյէ այդ Հօտաղ 9)՝
— «Տըղա՛յ,–ըսաւ–, ես Քեզի ի՞նչ ըրեր եմ որ՝ յիշո՛ց կուտաս
[Դուն Ինձի»:
Հօտաղն ըսաւ, = «Քեզ հետ ո՞վ է...), ա՛յ Եղբայր...,*

---

*) Ակռաստ, Նախաճաշիկ: 3) Դաւիթ՝ երկու Աչուղներուն մեկնումի առեն ըսած ուղիովը չ՚է՛ր որ կ՚երթայ դէպ Ծանդուստ (Հատ. 724). Ճաժվանի՝ վանայ Լիճին հարաւն է. մինչդեռ Ծլաթ, Արճէշ՝ հիւսիս–արեւմուտը կ՚իյնան: Հետեւածը՝ Կորեկարտի Մամիկին ցուցած ուղեգիծն է: 4) Լ·34՝ Քեռի–Թորոսի: 5) Պըլոճ, Բոլոճ, Մ՚իջատ. բայց հոս՝ հաւանաբար՝ Պըլէճ (գոմէշի ձագ). համմալ.՝ Պլէնկերի–Տղայ անարգականը, Հատ. 484, (Բ. Հատորով): 6) Կուլել, Գէտք ընել, արտածել (կովի, եզի, գոմէշի), Ս·166՝ բրբել, բրիբ, բրբոզ՝ սխալ է (ձիուն, իշուն, ջորիին է յատուկ), ուղղելի՝ կուլել, կու, կուլոզ: 7) Հեղնաբար կ՚ըսէ Դաւիթ: *) Տիլ, Տիղմ, ճահիճ, ցեխ: 8) Ս·167՝ կուրզը: 9) Նման կիրակոսի մէջադիպին (Հատուած 389): *) Քեզ հետ ո՞վ է, Ծօսքս քեզի չ՚է՛ (քեզ հետ խնկող, հակառակող չկայ):

Գոմէշներո՛ւն է կ'ըսեմ…։
Դու Սասունայ Ծրոեբէ՞ն ես…, երբեք Աչխար՝ չե՞ս տեսեր…»։
Դաւիթն ըսաւ, — «Տըղա՛յ, յորի՞ կ'ըռըկիս…)·*
*Ամո՞թ բան է…, ես հըմլա *) բան չե՛մ տեսեր…,*
Ատկէ չատ կա՞յ Ձեր երկիը…»։
Հօտաղն ալ թէ, = «Արի՛ Քեզի նըշա՛նց տամ»։
Ու՝ հե՛տ-կ'երթան, հե՛տ Դաւիթն ալ հարցո՛ւմ կ'ընէ Հօտաղին·—
— «Պըղտի՛կ,–ըսաւ–, կոտչուվ-Գոլո՞ճ են այդ սեւերը 10)՝ թէ ի՞նչ են»։
= «Չէ՛, Գոմէ՛շ են», — ըսաւ Ան։
— Ինչի՞ համար կըտանիք Դուք՝ Ատոնք ալ…»։
*= «Կըտանինք որ Գուբա՛ն լըծենք՝ վա՛ր *) ընենք»։*
— «Քըշէ երթա՛նք,–ըսաւ Դաւիթ–, տեսնեմ ի՞նչպէս կըլըծէք…»։
Ու մըտքին մէջ ըսաւ՝ «Ասի Գուբա՛ն է,
*Գուբան ըսած՝ Աստծու օրհնած վաստա՛կ է *)…,*
Ես ալ՝ Չի՛ս ալ՝ սուվա՛ծ ենք…,—
երթամ այնտեղ՝ Հաց-մա՛ց կ'ըլլայ՝ քիչ մը ուտեմ կըշտանա՛մ,
Եւ Իմ Ձին ալ թողնեմ արօտ՝ արածա՛յ…,
Ապա ելնե՛մ ու երթա՛մ…»։
Դարձաւ հարցուց Հօտաղին թէ, — «Մինա՞կ ես»։
Ան ալ թէ, = «Չէ՛, ահա այնտեղ՝ կըտեսնե՞ս…,
[Ու Ձեռքովը նըշանց տըւաւ Դաւիթին]
Գոմչավարներ 11) ու Մաճկալը՝ չուքին պառկած՝ քընուկ են·
Լուծերը հոն Գետին փըռուկ են թողեր·
Գուբան ա՛յսպէս կըլըծեն(ք) ու կըքըշեն(ք)»։
Դաւիթն ալ թէ, — «Հանես առնես գան՝ տեսնե՛մ…»։
Հօտաղն ըսաւ, = «Արի երթա՛նք՝ Քեզի ցո՛յց տամ որ տեսնես»։
Գացին մըտան Աւղուտայ-Դաշտ 12), արեգդէմ,
Դաւիթ տեսաւ՝ եօ՛թը 13) Գուբան՝ Գոմէշները լըծե՛ր են,

---

*) Ցորի՞ կ'ուրկիս, Ինչո՞ւ կ'բարկանաս։ *) Հմլա, Այդպէս, ատոր նման։ 10) Գոմէշներ՝ որ միշտ սեւամորթ են։ *) Վար, Հերկ, վարուցանք։ *) Վաստակ, Աչխատանք՝ (յատկապէս՝ հոգործական, համմալ·՝ Քիրք վաստակոց)։ 11) Լ·35՝ գիշերաթածներ՝ ուղղելի՝ թերեւս գոմշարածներ կամ գոմշավարներ։ 12) Կ·84՝ Գործոցի դաշտ։ 13) ՁՍ·718, Ճ·119՝ տասներկու, Կ·26՝ Քառասուն։

Գուբան թալեր՝ ու վա՛ր կ՚ընեն Դաշտին մէջ։
Գուբաններն ալ՝ այդ Գործոթի Գիւղապետի՛ն են ամեն։
Հօտաղ կանչեց՝ բերա՛ւ Իրեն Ընկերները,
*Դաւիթ դընաց բարե՛ւ տըւաւ Գուբընուրին *) ու ըսաւ.—*
— «Բար՚աջողո՛ւմ Ձեզ, Գուբընու՛ր եղբայրներ»։
Այդ Մարդիկն ալ՝ Դաւթի բարեւն առին՝ ըսի՛ն միաւեղ.—
= «Աստծու բարի՛ն, բարո՛վ եկար, օտա՛ր եղբայր, Ձիա՛ւոր»։
Դաւիթն ըսաւ, — «Գուբընուրներ, ճամբորդ եմ ես, քաղցա՛ծ եմ,
կըտոր մ՚ Հաց կո՛յ՝ տաք ես ուտեմ՝ ու երթամ...»։
Մաճկալն ալ թէ, = «Ձիէն արի իջիր ցա՛ծ,
Քիչ մը հանդչէ՛, թող Քու Ձին ալ՝ կանաչ Աբօտ արածա՛յ,
Հիմա՝ ճաշին՝ Մեր Հաց Սայլով կըբերե՛ն,
Դուն ալ Մեզ հետ կո՛ւշտ Հաց կ՚ուտես՝ կ՚ելնես կ՚երթաս Քու
[ճամբան»։
Դաւիթ այնտեղ Ձիէն իջա՛ւ, թողուց Աբօտ՝ արածայ,
Ինքն ալ դընաց Մաճկալին քով՝ Գուբան ընե՛լ կըդիտէ։—

729. Հայու Գութաւ՝ «Հողին Փառքը» (1)

— «Ահա ա՛յսպէս,—Մաճկալն ըսաւ Դաւիթին—,
Գործոթ–Գեղի Գիւղապետին Վա՛րն է կ՚ընենք այս չաբթուն։—
Տասերկու մեծ, ծա՛ներըր Գութան, ամեն Գուբան եօ՛թը Լուծ.
*Գոմէշ թէ եզ, կամ թէ Ա՛ձառ *), — իրարու զո՛յգ ու կընջակ։*

---

*) Գուբնուր, յբն., Գուբնուրներ, գուբնուր խումբը։

1) *Տեսնել յատկապէս «Հողին Փառքը» խորագրով իմ գրուածքը, իմ ձեռագիծ պատկերներովն ու համադրական անուններովը։ Թէոդիկ գրած էր նամակով մը թէ՝ «Ձեր Հողին Փառ՚ը՝ պիտի կազմէ Փա՛ռ՚ը Տարեցոյցիս»։ Եւ Կովկասահայոց մէջ՝ հիացումի առարկա՛յ եղած էին այդ մշակական գրուածքն ու պատկերները։ Ահէկ կազմած եմ այս 729–րդ Հատուածը, ընդլայնելով՝ Լ.35–ի հետեւեալ տողերը, — «Ջա՛ւ էքանք տենանք՝ ի՞մալ էք լծում էք։ Տղէն նշանց ա տալում ա, ասըմ ա՝ լծները փոռվ ա, գուբանը էսենց լծում ենք, քշում ենք»։ Այս Հատուածին՝ հաղագործական աւծաւոր բառերուն բացատրութիւնն ալ՝ Տեսնել անդ, Ամէնուն Տարեցոյցը, 1908, էջ 356–367։ Հոս դնելը՝ անհարկի խճողում. պիտի ըլլար։ *) Ա՛ձառ, Արջառ։*

Գոմէչները՝ Գուբենի Գըլուխ՝ Աւօրի հի՛մն են ուժով.
Ջըղալ եղներ՝ մինչի՛ն Լուծերն են՝ հաստաւիզ ու չարքաշ.
*Ամառները՝ ծայրի՛ Լուծն են՝ դեռ նորաւարժ ու խեռուն *):*
Առաջի՛ն Լուծ՝ Բրնատայէն՝ զոյգ մը ուժե՛ղ Գոմէչներ՝
Ամոլ-Լուծն է, ձախակողմը՝ Ամոլակորդ, Ամոլակօսն ա՛լ դեհէն.
Լուծը վարող՝ Ամոլվարը՝ խարազանով վեր՛-Լուծին:
Երկրորդ Տունը՝ Սարծի՛լ-Լուծն է, Արմատայէն հետ կապած.
Սարծիլակորդ՝ ձախի՛ն քաշող, Սարծիլակօսն իր աջի՛ն:
Երրորդ կարգը՝ Ոժտուճի՛ն է, — Ոժտուճակորդ՝ կորդի՛ն վրայ,
Ակօսին մէջ՝ Ոժտուճակօս, Ոժտըվարը վեր՛-Վըզին:
Առաջընթաց Լուծն է՝ խուրիկ, Ոժտաճ Լուծին կըղանած.
Կորդէն կ՛երթայ խուրիկակորդ, խուրիկակօսն՝ ակօսէն.
Խուրիկվարը Լուծի՛ն նըստած, խուրկան-Քարը՝ Լուծէն կախ:
Մեծ Գուբանին ու լե՛րճ Հողին՝ հիմնակա՛ն են այս Զորս Լուծ,—
Ինչպէս Շէնքի մ՛՝ անհրաժեշտ՝ կառոյց կազմեն Զորս Պատեր:
Զորսին վրայ, պարագային համեմատ՝
Տունէ՛ ի Տուն՝ նո՛ր Լուծեր.—
Ամոլ-Լուծէն՝ Սարծիլին մէջ, կամ Ոժտունէն՝ Խուրիկին՝
Ուրի՛շ Լուծեր կըկապենք,—
Ա՛յն է, — Սասկե՛փ, խարազանտուն, խրճնորտուն,
Կամ Մըկըճտուն թէ փոշխտուն՝ Իրենց Սարքո՛վն ու Երգո՛վ...»:
= «Ի՞նչպէս Երգո՛վ.՞.՞.՞», — հարցուց Դաւիթ, հըրապուրուած
[այդ կեանքէն:
Գուբըճտրին ա՛յդ ալ բաւ էր՝ Իր Լարերուն դըպչելու.—
— «Հապա՞, Որդի՛, Ե՛րդ ալ ունինք՝ Մեր Գուբանի Աղբիւրէն,
Ինչպէս Հողը՝ Փոխինդի՛ պէս՝ դո՛ւրս կըբըխայ Իր Ակէն.—
*— «Գուբա՛ճ, Գուբա՛ճ..., Աստուա՛ծպառճ... *),*
Ելաւ իճկաւ՝ հետ Առ-Ափաճ *), հետ Ակօսին, Աւօսին *):
Գուբաճ կուլայ՝ Իր գի՛ճ կ՛ուզէ. Գուբճի ծըլիկ՝ կըռի՛ւ կ՛ուզէ.
Շէկիկ կըրտճ՝ կըճճա՛կ կ՛ուզէ, չոմճ ի Գետին, կուզ ի Սամին.
Շէկճ է տըւեր՝ դըրսի Սամին 2), իմա՛ց ըրէք Գաճճապահին:

---

*) Խեռուն, *Խեռ, լուծի հետ:* *) Աստուածծառճ, *Աստուածային՝ դործ, երկունք, վաստակ, օրհնեալ աշխատանք:* *) Առ-ափ, Առ՝ւ ափ, *կանաչուտ վայր:* *) Աւօս, *Խոպան հող:* 2) *Շէկ եզը՝ դրսի Սամիքին վրայ է ճնշեր:*

Հորեւո՛ր, Է՛յ Հորեւո՛ր, Հացն ու Գինին Քեզ համարո՛ր:
Փոշետուն՝ փոշին Գըլխուն. Մըկըննուն՝ Մո՛ւկն ի Բերան.
Խըճձորտուն՝ Խըճձո՛ր Գոտին. Խարզըննուն՝ Խարզա՛ն Ձեռին.
Ոժտուրը՝ ո՛ւժն ի Թեւեր, Սարծիլը՝ ծիլն ի Սարեր.
Սերն ու Պաճիր՝ Ամոլուրին, Ազաբ Աղչիկ՝ Ոժտըւորին.—
Առա՛ւ եյա՛ւ՝ բերքն ու բարին, բերքն ու բարին՝ Սո՛ւրբ Գուքանին,
Մեր Մաճկալին, Գուքըննուրին, Կա՛լ-Կալուրին...,—
Առաւե՛լ, հա՛յ, առաւե՛լ··· 3),
Գործն առաւ՝ ե՛լ··· *), դէ՛ ե՛լ, ե՛լ, ե՛լ···,
Հոռովե՛լ···, հոռովե՛լ···» 3):

Ու կըտեսնե՞ս՝ Լուծէ ի Լուծ, Տունէ ի Տուն՝ Եօ՛ղը Լուծ.—
Լըծափայտին երկու ծայրէն՝ Սամինները զոյդ ի զոյդ,
Երկու կողմէն՝ Թուլ գըրկե՛ր են՝ հաստ Վիզե՛րը Լըծկանին,
Տակի կողմէն՝ Սամինները Սամիք-Եղով պիրկ ու կե՛ռ:
Մէկ Փոխը՝ ուղի կամ տասնըչո՛րս Լըծկանով՝
Հոն, Բըլուրին կողերն ի վեր, կանաչուտին կ'արածա՛ն՝
Որ կէսօրէն ետքի՛ ժուռին՝ յոգնածներուն տեղը դան:
«Հա՛ ե՛լ, հա՛ ե՛լ···, ելի՛ր Խուրի՛կ, ելի՛ր Մարա՛լ···, հա՛ եզո՛···»՝
Գոռ, զըրընկուն կըբարձրանա՛յ Լըծվարներէն՝ Տունէ Տուն *),—
Խուրիկվարէն, Ոժտըվարէն, Ամոլվարէ՛ն՝ քաղցրահունչ.—
Խուրիկը ցո՛ւնց կուտայ Ոժտան, Ոժտուն կուտայ Սարծիլին.
Սարծիլն՝ Սո՛ւլ չուտ Թաւի կուտայ, կըճըրճըռա՛յ Խարիղան,
Ու կըճըղէ՛, պիրկ կըքաշէ՝ ծա՛նր Սարուած Գուքանին:
Շերփաւոր Բընատայէն կըճըղուի ի՛նքն Արմատան,
Էշին վըրայ՝ Ոտ, Ոտնաղրէր՝ դէմառդէմ,
կաճաւով ու Թուրով իրար ամրակից.
Խոփտունով՝ Առատամին կամ Ծըռնօտին վըրայ անցած
[Երկաթ Խոփը, սուր Թեւով՝
Գըլուխ կուտայ Մայր-Հողին ծոց, Մաճկալէն քալ ղեկավար,—
Ալ Ոտքովը Մնօտին Գըլխուն յենած, վարպետ ուշադիր,
Ալ Ձեռքին տակ՝ Մա՛ղը ղեկած, ճախով Ձեռնտաճ բըռնելով,—

---

3) Առաւել, Հոռովել (Հօ՛–առաւ–ել), քալէ՛, եզո՛, վերջը մօտ է. գործը լմնալու վրայ է: Երգի մասերը քաղած եմ ազգագրական ժողովածուներէ: *) Ել, ելք, վերելք, ուելացում, վերջ: *) Տուն, Մէկ լուծէն միւս լուծ եղած միջոց:

*Կ'ակօսէ՛ կորդ Հողին կուրծը, կ'երթայ՝ տեղին *) Մուտ ու Սողք:*
Հակառակով վիակուած Տախտակ՝ դէմ կըդընէ Գուղձերուն.
Ու Ձեւիչն ալ՝ Տապարի պէս՝ Հողին կողեր պատա՛ռ–պատառ
*[կըճեւէ *):*
Առատամի Տասան՝ անիւդ՝ կըյեսանուի Ակօսին ու Հողի՛ն հետ.
Կընգուղէն ճիղ ճամբարակը՝ ճրդտած Ինքն ալ Խարազանին
[Պըտիզէն՝
Կըծանրանայ՝ էչին դըլխով՝ Սաճտրակներուն Սըռնիին.
Ու Սըռնին ալ՝ զոյգ մը կուռդով՝ Փառ՛ը չարած փետրաճեւ,
Զոյգ Ակերուն Հեցերուն վրայ ու Հեցին հետ կըդառնա՛յ,—
Զախ Անիւը՝ կորդի՛ն վրայէն, աջը՝ պեղուած՝ ակօսէն:
Այսպէս 'ի գործ՝ ամբո՛ղջ Սարուած՝ կըճըրճըռա՛յ լըծաքաշ,
Զը՛ղջ–ու–զըրը՛ղջ Թաւալելով ակօսին մէջ, կորդին վրայ,—
Օրհնա՛ծ Գուքան՝ Ա՛րտ կըվարէ, Հո՛ղ կըհերկէ, ակո՛ս–ակօս
[կըչարէ՛ ...,
*Վարած Հողը՝ շը՛ռ–շըռ *) դէպ ա՛լ կըշըրջըւի, Նաւուն ճեղքած*
[Զուրի՛ն պէս:—
Հերկին մէկ մաս՝ բո՛ւխ–բուխ կուգայ՝ ու կըհոսի Աղբիւրէն,—
[Թողած միջոցն՝ Առատամին, կաքաւին,
Հիմերն Ոտին ու Ոռնաղբօր կամուրջին]:
Այսպէս, Մաճկալն ու Գութընտր, — Լըծվարները Լուծերուն,
Արօրն ու Խուի, Եղն ու Գոմէշ, — Մարդ ու Սարուած ու Տաւար,
«Երկի՛ր գործեն», կըճըռընչա՛ն, ճակտի քրտի՛նի թափելով.—
Առո՛ւ–առու՝ Հո՛ղ կըբանան, բո՛ւմբ–բումբ չարեն հաւասար,
Արտին դըլխէն մինչեւ մեւս ծայր՝ փաթ մը կ'երթան հետհետի,
Ու կըդառնա՛ն, փութը փութի՛ կըյաջորդէ՝ երեւելէ երեւել,—
Ուր Խուի՝ Հողէն դո՛ւրս կ'երեւայ՝ ընդքարշ կ'երթայ՝ կ'ոլորի,
Մէկ ակօսէն մէկալ ակօս՝ ամեն փաթին՝ գիրկ մ' աւելի՛ նեղցընելով
[կորդ Միջնակ:—
Ու փաթէ–փաթ՝ իրա՛ր հետեւ, կ'առաւելնա՛յ՝ Արտը Հերկի
[դիրերով·
Երեւելէ երեւել ալ՝ կ'ոգեւորին Գութընտրը եւ Մաճկալ,
Կորդ ու կըռէն Դաշտին երես՝ կըծածկեն Թո՛ւխ Ակօսները,

---

*) Տեղիւն, Պարագային համեմատ: *) Ձեւել, ճեղքել (Տե՛ս Առիւծամէտ Մըհէր, Հատ· 201): *) Շըռ–շըռ, Բո՛ւխ–բուխ:

Մարդն ու Տաւար՝ Արեւին տակ՝ իրենց ֆըրտի՛նք կըթափեն,
Որ «ճակատի Սո՛ւրբ ֆըրտինքով» պահեն իրենց Սերունդները...»:
Ըսաւ Մաճկալն՝ ու ոլորե՛ց Դուքնի երդ,—
— «Հօ՛, Ե՛զօ, հօ՛..., առաւ ե՛լ...,
Ե՛լ, ե՛լ, ե՛լ...»:

730. Դաւիթ՝ Բերկրիի Դուրբնեւորեուց Հետ

Դաւիթ նայեց ու տեսա՛ւ որ՝ Գոմէչներ 1)՝
Օրւան չոգէն՝ իրենց Լեզուն դո՛ւրս կախեր են՝ կըհեւա՛ն,
Խեղճը) եկա՛ւ Աստնց վըրայ, ըսաւ, — «Մարդի՛կ, կէսօ՛ր է,*
Այդ Գոմըչտան(ք)՝ մե՛ղք են այլեւս, կեցէ՛ք՝ Հովի՛ն) վար ըրէք,*
Այս տապ օրին՝ խի՞) կըջարդէք ի զուր տեղ...,*
Արձակեցէ՛ք այդ Տաւարը, ալ մե՛ղք են...»:
Մաճկալը Թէ, = «Մաստա՛ղ Ֆեզի, Ակնակո՛ս) է եղեր Արտ,*
Ֆի՛չ է մնացեր, դործը առնենք)՝ նոր*) Տաւարը Թո՛ղ կուտանք»:*
— «Ա՛, չէ՛,—ըսաւ—, Անասուններ Թողէք հանդչի՛ն, ալ մե՛ղք են...»:
=«Ա՛յ, Մա՛րդ,—ըսին—, Աստծո՛ւ սիրոյն, ձըդէ վարե՛նք այս պատառ.
Արտաւէրը կընեղանայ..., Գուքան Թողուլ չե՛նք կըրնար...»:
Դաւիթ հասաւ՝ Գոմէչները իրենց Լուծէն արձակե՛ց,
Տարաւ անդին՝ Լըճի եզերք, Ուռի-Ծառի(ն) չուքերուն:
Մաճկալ դարձաւ՝ մէկ կ'անիծէ՛, մէկ կընայի Դաւիթի՛ն:
— «Մաճկա՛լ,—ըսաւ—, Չիս մ' անիծեր. հօ սեւ չ'եկա՛ւ Ձեր Գլխուն.
Ես Ձեր մեղաց տակ չե՛մ իյնար՝ պարապ տեղ,—
Հիմա կ'երթամ՝ ե՛ս կ'ընեմ Ձեր Գուքընվար)...»:*
Մաճկալը Թէ, = «Ա՛յ Մարդ, ըսիր «Քաղցա՛ծ եմ»...,
Գընա փորըդ մէկ կըշտացո՛ւր, հոն Գետի մօտ Հաց-մա՛ց կայ»:
Ու դառնալով Հօտաղին՝
— «Տըղա՛յ,—ըսաւ—, տա՛ր հոն ցո՛յց տուր, Թող նըստի կուշտ
[Հա՛ց ուտէ՝

---

1) Ս·167, Ա·71՝ Գոմըշտան(ք)։ *) Խեղճ, Աղճալը, մեղքենալը, դուք։ *) Հովին, Ջով առնելը։ *) Խի՞, Ինչո՞ւ։ *) Ակնակոս ըլլալ, Աբօրին անիւը՝ ակօսին մէջ դրուած ըլլալ։ *) Առնել, Լմընցընել, աւարտել։ *) Նոր, Ցետոյ, եաքը։ *) Գուքընվար, Գուքանով հերկելու աշխատանք։

Ելնէ երթայ իր ճամբու հետ..., Աստուած իր բա՛ն պղողէ...»:
Դաւիթ վերցուց եւ ի՞նչ ըսաւ Մաճկալին, — 1)
*= «Եղբա՛յր,–ըսաւ–, այս Գուբանը որ կըթալէք *) այս տաքին,—*
Ձեր Արտ քանի՛ դուքնավար տեղ է ամեն...,—
*եթէ առնեմ 2)՝ եօ՛թը փաթ *) ալ ե՛ս պըտոյտ տամ, վա՛ր ընեմ՝*
Կուչտ փորով Հաց կուտա՞ք Ինձի՝ ես ուտեմ...»:
— «Ճամբո՛րդ,–ըսին–, երբոր եօ՛թ փաթ պըտըտեցար՝ վարն ըրէր՝
Աւօր Մեղի՝ եօ՛թ Հոդու Հա՛ց՝ Փիլա՛ւ կուզայ, տանք ուտե՛ս... 3).
Մեր Արտ՝ Քառասուն Գուբանի տե՛ղ է ամեն...,
Դաշտ՝ բոլորով՝ մէկ չաբաթէ՛ն պիտի Գուբան ընենք Հոս»:

781. Դաւիթ Ձիով Ու Մինճակ՝ Դուբան Կ'ըճէ

Ան ալ՝ Դաւիթ՝ ելաւ այնտեղ ի՞նչ ըրաւ.—
— «Տըղա՛յ,–ըսաւ–, այս Գուբանի Շըղթաները տուր իմ Ձե՛ռ.
Մաճկա՛լ,–ըսաւ–, արի՛՝ Դուն ալ Մա՛ճ բըռնէ,
Գուբընտո՛րներ, Դուք ալ գացէք Ձեր Հա՛յց կերէք, հանգչեցէ՛ք,
Ես Ձեր Արտը մէ՛կ անգամէն կըվարեմ...»:
Գուբընտորներ թողի՛ն Գուբան, գացին Տաւի չուքին տա՛կ,
Մաճկալ կեցաւ Գուբանի վրայ՝ Մա՛ճ բըռնեց,
Դաւիթ բըռնեց հաստ Բընատան 1)՝ հեծաւ Ձին 2),
Կանչե՛ց Իրեն Մարուքենի Աստարածին՝ ու քըշե՛ց,
Ձարկա՛ւ Գուբան, ա՛յս Գըլուխէն քաշեց հանեց Սարնիվեր,
*Ա՛յն դեհէն ալ՝ գըլխըլորաւ *)՝ իջուց բերաւ Դարնիվա՛ր,—*
եօ՛թ փաթ՝ այդպէս՝ տարա՛ւ Գուբան՝ ու բերա՛ւ:

---

1) *Այս հարցական ձեւը*, — Դաւիթ ի՞նչ ըսաւ..., Ան ալ ի՞նչ ը-*րաւ...*, *եւն.*՝ *մինակ մեր ծղվ. Վէպին յատուկ չ'է՛*: Իլիականի մէջ *յաճախ կ'հանդիպինք նման հարցաձեւերու*, — «Par qui commença le carnage..?», «Qui fut le premier... qu'Hector immola...?» [Iliade, V. 76, XI. 152]: *) Թալել, Ձգել, բաներցնել. [*կ'ըսուի՝ Գուբան թա-լել, Գուբան զարնել, Գուբան ընել*]: 2) *Այսինքն՝ Գուբանը* (*առ-նեմ*): *) Փաթ, Դարձ, *շրջան*: 3) *Տե՛ս Հատ.* 732, *Մնթ.* 3:

1) Ա.30՝ Պալատին՝ *ուղղել՝* պնատան, բնատան (*չղթան*): 2) Ճ.120, Ա.30, Լ.35, Կ.26,84, Հ.39,439,440՝ շղթան կապեց ձիուն՝ (*վիզին, կողերուն, ասպանդակներուն կամ պոչին*): *) Գլխըլորիլ, *Գլխիվար, գառիվար հերկելով՝ գալ*:

Եւ ա՛յդ կերպով՝ Աւազ–Սարէն 3) մինչեւ Մառնիկ–Գեղի հուն 4)
Ի՛նչքան տեղ է՝ արտաչափ՝
Այնչափ տեղը մէ՛կ անգամէն Գուբա՛ն ըրաւ՝ ու դարձուց,
Կէսօր չ՛եղած՝ Աչխա՛րհ մը տեղ՝ Դաշտ սեւցուց... *):
Է՛, ամառուան չո՛ր Գետի՛ն է, Հողը կըռէ՛ճ *) ու դըժուա՛ր...,
Մընացեր էր մէ՛կ Գուբինալար՝ որ Արտ վարէ լըմընայ՝
Նայեց տեսաւ՝ Ձին յոդնե՛ր է ու քըրտներ՝
Իջաւ Ձիէն, Թաշկինակը 5) հանե՛ց Ծոցէն ու բըռնեց՝
Ձիուն քըրտինք լաւ մը չորցո՛ւց՝ Թող տըւաւ,
Գուռկիկ–Ջալալ դընաց արօտ՝ կանաչին *) մէջ արածալ:
Մըշակները դարձան եկան՝ չիվա՛ր մնացին՝ երբ տեսան...:—
Մէկն ըսաւ թէ՝ «Իր չընո՛րքն է», Մէկալը թէ՝ «Իրեն չ՛է՛՝
Իրեն Ձիո՛ւն չընորքն է...»:
Գըզտիկ Հօտաղն ալ՝ Դաւիթին ի՞նչ ըսաւ,—
— «Այդ Գո ուժ չ՛է՛ր՝ Գո Ձիուն ո՛ւժն էր վարեց... .
Առանց Ձիո՛ւ քալէ տեսնե՛նք՝ Գու չընո՞րքն է՝ թէ՞ Ձիուդ» 6):
Դաւիթ այդ խօսք Մըշակներէն ու Հօտաղէն որ լըսեց՝
Այն ժամանակ՝ ելաւ այնտեղ ի՞նչ ըրաւ...,—
= «Բերէ՛ք,–ըսաւ–, Ձեր տասերկու Գուբաննները միասի՛ն...»:
Առին բերին..., — Ձեռքը զարկաւ Գուբաններուն՝ ամեն մէ՛կ,
Վեց Գուբանի Բընատաներ իրա՛ր բերաւ՝ զա՛տ կապեց,
Վեց Գուբանին զա՛տ կապեց,
Տասերկու հա՛ստ Բընատաներ՝ կէսը ձըղեց մէ՛կ Թեւէն,
Կէսն ալ ձըղեց միո՛ւս Թեւ,—
Ինքը մինա՛կ զարկաւ Գուբան, տարաւ–բերաւ՝ ու հերկե՛ց,—
Տա՛սը վաթ ալ՝ առա՛նց Ձիու՝ Ինք իր ուժո՛վ պըտըտցուց 6),
Մինչեւ Հացի Սայլը հասաւ՝ կէսօրին՝
Վեց–զոյգ Գուբինի մէ՛կ շաբաթուան Վարը վարեց՝ ու պըրծո՛ւց:
Արտը պըրծաւ՝ մընաց միայն մէ՛կ Ակօս,
Գուբընտրը ըսաւ, — «Կըտրի՛ճ, այդ Ակօսը հա՛ն Արտէն...»:

---

3) Ս·166՝ Սեւ Սարէճ: 4) Պատմողը Մուշէն է՝ եւ Մուշի՛ գիւղերու անունը կուտայ: *) Սեւցնել, հերկել, ակօսել, դարձնել: *) Կռէճ, ժեռուտ, կրուտ: 5) Կ·85՝ բեռափիկ, տարբ. ծնքինը՝ ուղղել՝ թաշկինակ: *) Կանաչ, կանաչուտ վայր, մարգագետին:
6–6) Հ·397–398՝ Պատմուած է ՊՋՏԻԿ–ՄԸՀԷՐԻ անունովը:

Դաւիթն ըսաւ երգելով.—

= «Սէ՛ր ունիմ Սըրտիս...,
Թէ եղա՛ւ Սէրն ի Սըրտէս...՝
Կը հանե՛մ Ակօսն ի Արտէս...»:

Այն երկիրը 7)՝ մինչեւ այսօր, մինչեւ վերջ՝
Ակօսը չե՛ն կրնար հանել Արտերէն.—
Միջնակ–Ակօս՝ նըշանակ է Դաւիթին.—
Դուքընտրներ՝ ի՛նչ որ կ՚ընեն՝ Արտէն հանել չե՛ն կրնար...:

782. Դուրանէն Ետք՝ Դաւիթ Ճաօ Կ՚ըլլէ

Դաւիթ այնտեղ՝ մինչեւ ճաշին՝ Արտը վարե՛ց ու պըրծաւ,
Վերցուց ըսաւ, — «Մաճկա՛լ, Ձեր Արտ լըմընցա՛ւ.՞.՞.՞»:
= «Հա՛, լըմընցա՛ւ, Որդի՛,–ըսաւ–, կանաչէ՛ս...,
Աստուած Քեզի ա՛լ աւելի ուժիկ տա՛յ...»:
*Դաւիթ դարձաւ չընորհկըլե՛ց *), ուղեց հեծնէր Ձին՝ երթար՝*
— «Մաստա՛ղ Քեզի, կըտրիճ Տըղա՛յ,–ըսաւ Մաճկալ՝ Դաւիթին–.
Դուքանի Հացն եկա՛ւ ահա, կէսօ՛ր է,—
Եկուր նըստի՛ր ու ճաշը կե՛ր, Ջուր խըմէ՛,
Անկէ յետոյ՝ կ՚երթա՛ս՝ Աստուած Քո բա՛ն աջողէ»:
*= «Չէ՛, ես կ՚երթա՛մ,–ըսաւ Դաւիթ–, վըտա՛ղն եմ... *).*
Հացը թող Ձեր ձըժո՛ւրն ուտեն, Մըչակնե՛րն ու այս Հօտա՛ղ... 1)».
Ես որ ուտեմ՝ ա՛լ Իրենց բան չի՛ մընար... .
Դուք ալ՝ առի՛ք Ձեր Դուքաններ ու գացի՛ք...»:
Մէկ ալ տեսան՝ Հացւոր–Մայրը մօտեցա՛ւ,—
*Երկու կընիկ՝ Մէկը Հա՛ցն է առեր Շալակ, Մէկը՝ ճա՛շ *),*
Բերին դըրին՝ որ Մըչակներ դան ուտեն:
Հաց–Բերողներ՝ տեսան որ ի՛նչ..., — Դաշտը տեղով վարե՛ր են...,
Ու հեռուէն տեսեր էին՝ որ մէ՛կ Մարդ՝

---

7) Պատումէ պատում՝ խլաք կամ Բերկրի: *) Շնորհակալել, Շնորհակալութիւն յայտնել: *) Վռազն եմ, կ՚աճապարեմ:

1) Պըտիկ Հօտաղը՝ որ մխանէրէն աւելի յանդուգն խօսած էր: *) Ճաշ, Մեծած ցորենով, կամ կորեկով, կամ բրինձով՝ խիւսաձեւ կերակուր մը՝ տաք կարագով:

Ինքը մինակ՝ Գուբաններըը կըքաշէր...՝
Զարմացա՛ն Այդ Մարդու ուժին՝ ու կեցա՛ն...:—
— «Կըտրի՛ճ,—ըսին—, արի նըստի՛ր՝ Դո՛ւն ալ Հաց կեր, քաղցա՛ծ ես»:
Գուբընտրներ՝ Գուբան Թողին ու եկա՛ն,
Հացը դըրին՝ ու նըստեցա՛ն Ամենքով:—
Այդ տասերկու Գուբաններուն ամենմէկը Զորս-Հինդ Լուծ,
Ամենմէկին՝ Մաճկալ, Լըծվար, նոյնչափ Մըշակ ու Հօտաղ,—
Եւսուն-Քառասուն Գուբընտրի Հացն ու Թացը երբ դըրին՝
Կանչեցին ու Դաւիթ եկաւ Նըստեցաւ,
Զորս լըտրանոց Ամանով Ճաշ՝ Դաւիթ առաջ որ դըրին,
Երկու լօչ Հաց 2) ալ մէկտեղ՝
Դաւիթ փըրթաւ *) Ճաշին վըրայ, Հացով սըրբեց ու մաքրե՛ց՝
Ամենը՝ մէ՛կ բըրդուճ ըրաւ՝ ու կերա՛ւ...,—
Ա՛յնքան որ Ան քաղցած էր...:
Հարցուց ասպա, — «Շատ Հաց ունի՞ք դեռ այդտեղ...»:
= «Ի՞նչպէս թէ չէ՛, Տա՛սը Գուբինի մէկ Շաբաթուան Հա՛ց ունինք»:
Հացն ու Ճաշը դըրին առաջ՝ ամեն ժողվե՛ց ու կերա՛ւ,—
Ք'րսա՛ն Հոդու 3) Հացն ու Ճաշը՝ կերաւ՝ բըրդո՛ւճ չըթողուց...:
Գըզտիկ-Հօտաղն ըսաւ, — «Ա՛յ-հա՛յ..., ելէք վախե՛նք այս տեղէն,
Ասի հապա Մա՛րդ ալ կ'ուտէ...՝ այդ ճեւով... ։
Փըչո՛ւր մը Հաց չըթողո՛ւց որ Մենք ուտենք...»:
Դաւիթն այնտեղ ի՞նչ ըսաւ...,—
= «Տըղա՛յ,—ըսաւ—, Գուբան քաշող՝ հարկաւ այսպէս Հա՛ց կ'ուտէ,
Դուն կարծեցիր՝ ի՞նչ կ'ընէ...»:
Հանեց մէկ հատ Ոսկի՛ տըւաւ Հօտաղին,
— «Առո՛նք,—ըսաւ—, չըխօսեցան...՝ Դո՛ւն մինա՛կըդ խօսեցար»:—

788. Մօակնեւրուն Ու Հացտարեւրուն Ըսածնեւրը

Գուբընտրը 1) դարձաւ տեսաւ բան չկա՛յ...,
Անճա՛ր մընաց ալ այնտեղ... :

---

2) 8·42՝ խաչ՝ ուղղել՝ խաց (հաց)· լօչ՝ չօթ (բարակ հաց):
*) Փրթիլ, Յարձակիլ: 3) Փոփոխակէ փուփոխակ՝ 3, 7, 12, 40 մարդու:

1) Ոչնակիւ է (գուբընտր խումբը, գուբընտրներըը՝ տեսան...):

Մըչակներէն քանիներն ալ դարձան ըսին Մէկ Մէկի,—
— «Մեզի այլեւս Հա՛ց չըմընաց, ի՞նչպէս պիտի վար ընենք…,
*Այդ Մարդ՝ ամեն ժողվեց կերա՛ւ, Մա՛ս–Մանանայ *) չըթողուց…,*
Մենք մընացինք հոս՝ անօթի…, Տուն չե՛նք երթար իրիկուն,
Մեր եառւէն՝ այսօր այլեւս Հաց բերո՛ղ ալ չըկայ Մեզ… ,—
Մենք ճամբենք Տուն՝ նոր Հա՛ց ուղենք Մեզ համար՝
Պիտի ըսեն՝ «Կէս–օրւան մէջ՝ Զեր Հաց ու Թաց չ'է՛ հասեր»…:
Եթէ ըսենք՝ «Ճամբորդ մէկ Մարդ՝ Հի՛ւր է եկեր Մեզ այսօր»՝
Ձի՛ն հաւատար, ծաղրի՛ կ'առնեն Մեր խօսքեր…:
Թէ որ ըսենք՝ «Գոմէ՛չն եկեր կերա՛ր է…»՝
Նորէն պիտի չըհաւատա՛ն, իրաւ որ…»:
Մէկն ալ ըսաւ, — «Քու Ո՛ր կոտրէր՝ չիգայի՛ր հոս, տնաւե՛ր Մարդ,
Մենք Քեզ ըսինք՝ «Աւրի Հա՛ց կեր, քաղցա՛ծ ես…»,
Չ'ըսին՛ք՝ «Եկուր ա՛յսչափ Դուքնի կէս օրւան ճաշ՝ կեր Հասցո՛ւր»:
Դուն եկար Մեր Հացեր կերա՛ր պըրծուցի՛ր…,
Պա Մենք ի՞նչպէս՝ չարաթ մ' ամբողջ՝ անհաց անջուր՝ վա՛ր ընենք,
Պայմա՛ն ունինք Մարդոց հետ…,—
Մեր վարձքերը ո՞վ կուտայ…»:—
[Երկուշաբթի էր օրը,
Մինչեւ Շաբաթ՝ Դա՛շտը պիտի մընայինն,
Իրենց վարձքեր պիտ՝ առնէին Շաբաթ օր]:
Դաւիթ լըսե՛ց…, վերցուց Աստոնց ի՞նչ ըսաւ.— 2)
— «Ի՛ Դուքընտր Մարդի՛կ,–ըսաւ–, դեռ զոհ չէ՞ք.՞.՞. .
Ա՛յ Աղբըրտի՛ք, ես Զեր մեղաց տա՛կ կ'իյնայի՝ իրա՛ւի՝
Եթէ Զեր մէ՛կ չաբթըւան գործ՝ ես մէ՛կ ժամէն՝ այսօր ըրած
[չըլլայի·
Հիմա ես Զեր բոլո՛ր Հողեր՝ Դուքա՛ն զարկի՝ վարեցի՛,
Զեր Արտերը՝ դըմխէ–դըլուխ հերկեցի…,—
Ալ գործ չ'ունի՛ք· իրկուն կ'երթաք՝ ու Զեր Հացին կըհասնի՛ք,
Ընթրիս կ'ուտէք, ա՛լ անօթի չէ՛ք մընար…,
Դէ՛հ, կանդնեցէ՛ք, Դուքան, Տասար՝ առէք գացէք Զեր Տունե՛ր»:

---

*) Մաս–Մանանայ, *փչրանք, ոչ մէկ կտորիկ:* 2) Զայնով ը–սել, խաղով ըսել, բարձր ձայնով վերցնել՝ ըսել, *նման ոճ է՝ paroles ailées՝ Ոդիսականի մէջ,* [Odyssée, Notes XVII. 155 v. 57]:

784. Դաւիթ՝ Թուրով Գուբանցիները Կ'կտրէ Ու Կ'վճարէ

Դաւիթ դարձաւ Մըշակներուն՝ ու հարցուց,—
— «Իրիկուն որ կ'եղնէք կ'երթաք՝ ի՞մալ կ'սարքէք՝ կ'երթաք Տուն»։
*Բերին այնտեղ՝ Գուբինի Ակներ *) մէկիկ–մէկիկ կեցուցի՛ն,*
Գուբաններըը վերցուցին ու կըռքընցուցին Ակներուն,
*Ճամբարակ, Լուծ ու Բընատա, Խոփ ու Լոխ *)՝*
Ամեն Գուբան իրե՛ն Սարքով՝ դըրին վըրան կապեցին,—
= «Ահա այդպէ՛ս կ'ընենք,–ըսին–, Տաւար լըծած՝ կըտանինք»։
Ան ալ՝ Դաւիթ՝ իր մըտքին մէջ խորհո՛ւրդ ըրաւ ու ըսաւ,—
«Գողվատ–Սիւնի փորձանիշ 1) մ՚ալ՝ այս Գուբաննե՛ր Թող ըլլան»,
Եւ ի՞նչ ըրաւ Շէկ–Տըղան... 2),—
*Բերաւ այնտեղ՝ այդ Տասերկո՛ւ Գուբինի Սարուած կոլոնե՛ց *),*
«Ես իմ Թուրը մէկ կըզարնե՛մ»,–ըսաւ ինքը իր մըտքով–,
Թէ որ կըտրե՛ց այս Գուբաններն ու Սարուած...՝
կ'եղնե՛մ կ'երթամ Ծանդուտ բերեմ Ինձ համար...,
Թէ չըկըտրեց...՝ ե՛ւս կըզառնամ, չե՛մ երթար...»։
Ու Մարդերո՛ւն դառնալով՝
— «կեցէ՛ք,–ըսաւ–, որ Իմ Թըրի չընո՛ւքն ալ Ձեզ նըշա՛նց տամ»։
Թուրը քաշե՛ց՝ ու կանդնեցաւ Գուբաններու դէմին քո՛վ,
Մըտքով Ճիշաց 3) «Մարութայ–Բա՛րձր–Ասպարածին՝ օգնակա՛ն»՝
Ու Թո՛ւր զարկաւ..., Թո՛ւր–Հէծակին, — մէ՛կ Թափով...,
Այդ Տասերկո՛ւ Գուբա՛ն–Սարուա՛ծ մէկ՝ կըտրե՛ց...՝
Մէկ կանգուն ալ՝ ամբունաչոր Գետի՛ն դընաց՝ Թուրին Թափ... 4)։
Մըշակները՝ — «է՛յ, հա՛յ...,–ըրին, կանդնեցա՛ն–,
Միայն Տէ՛րը Ձո Տուն քակէ՛...,–պօռացին–.
*Ցորի՛ն Դուն Մեր Գուբաննները Թըրփեցիր... *),*

---

*) Ակ, Անիւ։ *) Լոխ, կաշիէ հաստ պարան։ 1) Տե՛ս Հատ. 587, 601 եւն.։ 2) Շէկ–Տղայ՝ Դաւիթին տրուած մակդիրներէն մէկն է (Հատ. 498 տրջ. Ծնթ., եւ Բ. Հատ.)։ *) Կոլոնել, Իրաւունք վրայ դիզել, կուտակել՝ բարձրացնել (colonne-էլ)։ 3) Իլիականի հերոսներն ալ՝ Յաղթութեան համար՝ կոչում կ'ընեն (invocation) իրենց նախընտրած Աստծուն [Iliade, XI. 139]։ 4) Ձմռոց. Հատ. 84 (ամռնաչոր գետին)։ *) Թրփիլ, Թրաքափ ընել, Թուրով կտրել Թափիլ։

Ա՛յդքան Սարուած Չարդեցի՛ր Դուն Մխասին…։
Մըշակ–Մա՛րդ Ենք, Գութաններէն Չատը՝ Վարճո՛վ Ենք Բերեր…,
Դուն Ինչո՞ւ Ինծ Թուրը Զարկիր՝ Կըտրեցիր…»։
— «Հապա՞…,–ըսաւ–, Իմ Զինու Չնորհ Եւ Իմ Ո՛ւժը՝ Դուք Տեսա՛ք,
Պէտք Էր Որ Իմ Թըրի Ո՛ւժն Ալ Տեսնէիք…»։
Մարդիկ Նորէն՝ Իրար Ըսին, = «Իմա՞լ Ընենք Մենք Հիմա՞…»։
Դաւիթն Ըսաւ, — «Առէք՝ Զեզի՝ Կուց Մը Ոսկի՛՝ Ու Տարէ՛ք՝
Ձեր Գութաններ՝ Այս Չարքուն Մէջ՝ Չինեցէք Ու Լըմընա՛յ…»։
Ձեռ Տարաւ Մոց՝ Հանեց Մէկ Բուռ Ոսկի՛ Տըւաւ Ու Ըսաւ,—
— «Կըշինէ՞…»։
Գութընուր՝ Թէ, = «Կըշինէ՛…»։
Գութընուրներ Դարձան Դաւթին՝ Ու Ըսին.—
— «Ա՛յ Կըտրիճ Մա՛րդ, Դու Ո՞ւստա Ես…»։
= «Ես՝ Սասունէ՛ն Եմ…»,–ըսաւ։
— «Զըլլա՞յ,–ըսին–, Դաւիթն Ես…»։
Ըսաւ, = «Ողո՛րդ, Ան Ե՛ս Եմ…»։
— «Տըղայ–Դաւիթ Որ Կ՛ըսեն՝ Հա՛յյ…, Աչխարքի Մէջ՝ Ան
[Դո՞ւն Ես…»։
Դէ՛հ, Որ Դո՛ւն Ես…՝ Բարո՛վ Եկար, Հաղա՛ր Բարով Եկար Դուն…,
Նո՛ր Մենք Գիտենք՝ Որ Դուն Կըտրիճ Դաւի՛թն Ես…,—
Դէ՛, Բարո՛վ Ես Եկեր Դուն…,
Ո՛ւր Որ Երթաս՝ Քու Ոտ Քարին Չըդըպի՛…,
Աստուած Քեզի Բընաւ Վատ Օր Ցոյց Չիտա՛յ…,
Բարո՛վ Երթաս Քո Ճամբան՝…»։
Հաց–Բերողներ, Դեռ Զարմացած…, Ի՞նչ Ըսին.—
— «Մօր Կաթին Պէս Արդա՛ր Ըլլայ՝ Կերած–Խըմածն Այդ–Մարդուն,
Թէ՛ Իր Ո՛ւժը…, Թէ՛ Ուսո՛ւլը…, Թէ՛ Խըմի՛լ…։—
Որ Կ՛ըսէին՝ «Սասում Ա՛յս Կերպ՝ Ազնանց–Ցեղէն Ա՛յսպէս Կըտրիճ
[*Մարդիկ Կան»։՝*
Չէ՛նք Կըրնար Հաւատալ…,—
Աչքով Տեսանք՝ Հաւատացի՛նք…»։

735. Դաւիթ՝ Զին Կ՛ողացնէ Ու Կ՛մեկնի Դուրացի Ցեղէն

Դաւիթ Ելաւ Հեծա՛ւ Իր Ձին՝ Որ Երթայ՝
Գութընուրի Մեծը Դարձաւ Ի՞նչ Ըսաւ.—

— «Կանա՛չ–Կըտրիճ Տըղա՛յ,–ըսաւ–, տբի՛ երթանք Տուն՝ հանդչէ՛,
Քո Հայցը կո՛ր, նո՛ր դընաս: Հիմա նորէն քաղցա՛ծ ես...,
Այս տաք օդին՝ ո՞ւր պիտ՝ երթաս Դուն հիմա...»:
= «Չէ՛, Տուն չե՛մ դար,–ըսաւ Դաւիթ–, պէտք է երթամ ձամբուս
[հետ»:
— «Որ Տուն չե՛ս դար՝ կեցիր ճամբեմ՝ Հա՛յց բերեմ,
Առնես Քու հետ՝ ճամբան չըլլայ անօթնա՛ս...»:
Դաւիթ կեցա՛ւ, = «Մաճկա՛լ,–ըսաւ–, որ այդպէ՛ս է՝ Դուն ղրկէ՛՝
Մինչեւ ես իմ Քուռկիկ տանիմ՝ Գետի մէջը 1) լըւանամ,
Առնեմ նորէն՝ դամ այստե՛ղ...»:
Առաւ Իր Ձին՝ քաշեց տարաւ՝ լա՛ւ մը լըւա՛ց Գետի մէջ,
Ելաւ՝ թամբը դըրաւ Քամկին, կապերն ալ՛կ մ՝ ամրացո՛ւց,
Սանձը զարկաւ, հեծա՛ւ՝ եկաւ Մաճկալին,
Ճամբու Հացը՝ կոխեց Տուրիկ *), չընորհկըլե՛ց *) Ամենուն,
— «Մնացիք բարո՛վ,–ըսաւ–, ահա՝ ես գացի՛...»:—
Լսա՛ւ...՝ քըչե՛ց ու գընա՛ց...:

736. Բերկրի-Դարձորի Գիւղապետին Աղջիկը

Գուքընտրը պիտի բանէր՝ մինչեւ Շաբա՛թ իրիկուն.
Օրը ըսես՝ երկուշաբթի՛, աշխատած են կէ՛ս օրիկ մ՛,—
Ելան Ամենք՝ ուրախ–ուրա՛խ՝ դարձան եկան Մեծին Տուն:
Գիւղապետը չա՛տ զարմացա՛ւ..., ու բարկացա՛ւ Անոնց դէմ.—
Ըսաւ, — «Ինչո՞ւ Իմ Արտերը Թողիք անվար *) ու եկաք.՞.՞.՞»:
Մեծ Գուքընտր՝ թէ, = «Իրա՛ւի, Դաշտը վարեր՝ պըրծե՛ր ենք...»:
Զըհատատա՛ց Գիւղապետը. ի՞նչպէս հատար..., հըրաշք է...:
— «Մէկ օրւան մէջ՝ չաբթու մը գործ չ'ը՛ըւիր,–ըսաւ–, Տըղա՛յ էք»:
Լուսուն ելաւ, Իր Ձին հեծա՛ւ, Աղջկան հետ՝ գընաց Արտ,—
Տեսաւ բոլո՛ր՝ Գուքան գարկած ու պըրծա՛ծ...:—
— «Ասիկ,–ըսաւ–, Ձեր բանը չ'է՛...., ըսէք նայի՛մ՝ ո՞վ ըրաւ...»:
Մաճկալն այնտեղ պատմեց ամեն՝ ի՛նչ որ Դաւիթ ըրած էր:
Գիւղապետն ալ կըտրի՛ճ Մարդ էր՝ եւ իշխա՛ն.
Իր Աղջիկն ալ՝ այնպէ՛ս խօրոտ, այնպէ՛ս քաջ...,

---

1) Կ·85՝ Բաւնտը–Մահու· հին՝ Առեստ: *) Տուրիկ, Մախաղ, տոպրակ: *) Շնորհակալութիւն յայտնել:
*) Անվար, Առանց վարելու:

Այնքան կ'ուզեն՝ դեռ ոչ մէկի չ'է՛ տըւած։
Աղջիկն ալ ո՛ւխտ ըրաւ ըսաւ՝ — «Որ Այն-Մարդը Զիս չ'առնէ՝
Ալ ուրիշ Մարդ չ'ե՛մ առներ... .—
Բաբո՛ *),—ըսաւ—, արի՛ Զիս տուր Այդ-Մարդո՛ւն...»։
Դարձաւ հարցուց,— «Ա՛յ Դուքընուր, Այն-Մարդ որ Արտ գուքանեց,
Հացը կերաւ... լըմընցո՛ւց..,— Այն Մարդն ելաւ ո՞ւր գընաց»։
= «Դէ՛... այն կո՛ղմը.— Իր Զին քըշե՛ց ու գընաց...»։
Աղջիկ Հըսկո՛ղ ըըրաւ այնտեղ, պատուիրեց՝ 1)
— «Ի՛նչ առեն որ Այդ-Մարդ դառնայ գայ Մեր Հող՝
Վազէք Ինձի լմա՛ց տաք...»։

ԻԱ. ԴԱԻԻԹ ԵՒ ԽԱՆԴՈՒՏ-ԽԱԹՈՒՆ ՔՈՎ-ՔՈՎԻ

737. Դաւիթ՝ Կապուտ-Կողի Բերդին Առաջ

Զըրոյց հիմա ո՞ւրկէ տանք..., — զըրոյցը տանք Դաւիթ՛ին,
Որ դէ՛մ ըրեր՝ կ'երթայ դէպի Կապուտ-Բերդ...:—
Հեծե՛ր է Իր Քուռկիկ-Ջալալ, Նետաղեղը ձըգեր թե՛ւ,
Կապեր է Իր Թո՛ւր-Կէծակին, Գորգ-Մըհէրին բըռներ Զե՛ռ,
Մըտքով կ'ըսէ՝ «Զէ՛, Հօրեղբա՛յր, Շըմշիկ-Տիկին չե՛մ առներ.
Ես պիտ՝ երթամ՝ Խանդուտ-Խաթուն գըտնեմ բերեմ Ինձ համար»։
Եւ Ականջին մի՛շտ կըլըսէ՝ Հօրեղբօր ձայն որ կ'ըսէ,—
«Դաւի՛թ, Որդի՛, դէ՛հ՝ որ կ'երթաս՝ Դո՛ւն դիտես...,
Բայց մինչեւ որ Խանդուտ-Խաթուն Քեզ չընետէ Իր Ընձեռ՝
Չ'ելնե՛ս Իրեն քով երթաս...»: 1):
Ան Իր ձամբան տըւաւ առա՛ջ, կանչեց Աստուած՝ ու գընա՛ց,
Շատ ու քիչը՝ Աստուա՛ծ գիտէ, քըշեց գընա՛ց Մեր Դաւիթ.
Հարցընելով՝ գընա՛ց-գընա՛ց, իրիկւան դէմ մօտեցաւ՝

---

*) Բաբո՛, Հայրի՛կ։ 1) Շըմշիկ-Տիկինին ըրածին պէս (Հատուած 719)։

1) Հմմտ.՝ Սիրսէի ըրած հմայանքները [Odyssée X. 151]։

կապուտ–Բերդի Քաղքին առալ՝ կեցո՛ւց Ձին։
Լուսուն ելեր էր Խըլաթէն, ճաշին Բերկրի՛ էր կեցեր,
Գուբան ըրեր՝ Հըրամենցին եկեր հասեր Կապուտ–կող 2)։

738. Խաճդուռ՝ Դաւիթին Ակնդէս

*Խանդո՛ւտն ըսես՝ քանի՛ օր է...՝ սըրտմաշ կ՚աչքէր *) Անոր գալ։*
Եւ իրիկան ժամի պահուն՝ Դիտակ դըրեր՝ կընայի՛... .
Իր Նաժիշտն ալ դըրեր միուս Պատըշդամին՝ որ հըսկէր,
Թէ՝ հեռուէն՝ մէկ Ձիաւոր Մարդ կ՚երեւա՞յ ճամբուն մէջ... 1)։
*Նաժիշտն եկաւ՝ Տիկնոջն ըսաւ, — «Ակընջկլա՛ս։... *),*
Ձիաւոր մը՝ ա՛–հա՛ն կուգա՛յ...՝ մէջ–երկի՛նք ու մէջ–Գետի՛նք...2),
Մէ՛կն ու Փոչի՛ն ինկեր Ձիուն Ոտներուն տա՛կ՝ իր ճամբան...,
Կըրա՛կ կուտայ Պայտերէն...
Ու հազի՛ւ թէ կ՚երեւայ... 3)»։—
Ծօսքը դեռ եւս Բերա՛նն էր...՝
Դաւիթ Ձիով՝ հասաւ Բերդին Դըրան դէ՛մ...։

739. Դաւիթ՝ Իր Ձիով՝ Խաճդուռի Պատէգին Մէջ

Դաւիթ դընաց Խանդուտի–Հօր Քաղքին Դուռը՝ իջաւ վա՛ր,
Նայեց տեսաւ՝ չորս–բոլորը Սիվտակ Պարի՛սպ ու Բե՛րդ է...,
Դու մի՛ ըսե՛ր...՝ որ Խանդուտի Պալա՛տն է...։—
Ինքն ալ օտար, Բերդի–Դուռը ո՛ր կողմէն է՝ չի՛ գիտեր,
Մուքը վըրա՛ն տըւաւ, ո՛ւշ էր, դընաց՝ Այգի՛ մ՚ եկաւ դէմ,—

---

2) ՁՍ·611՝ Կ· Բերդ, Ց·42ա·՝ Պղնձէ–Քղ·, Ց·121, Ա·30, Կ·85՝ Իրան, Խոյայ Քղ·, Հ·39, Ե·587՝ Թաւրէզ, Հ·386, Օղև· Տղն· թգ·ի տուն, Հ·440՝ Կպտկղ·–Քղ·, Ե·1011՝ Դէվըստան Քղ. (Դաղըստա՞ն)։

*) Աչքիլ, *Ակնկատոյց՝ նայիլ, սպասել։* 1) *Նման՝ Իր Հօր Դաւիթ–Մըհէրի ժամանումին սպասող՝ Մըսրայ–Տիկին Խամիլ–Խաթունին, Իր ապագայ խորթ մօրը* (Հատ· 249)։ *) Ակընջկլա՛ս, *Աւետողէ՛քս կ՚ուզեմ, աչքդ լո՛յս։* 2) *Այսինքն՝* երկինք–երկիր՝ իրա՛ր խառներ է, օդին մէջ ճախրելո՛վ կուգայ։ 3) *Այսինքն՝* դեռ բառական հեռու է։

«Մ'ւտնեմ,–ըսաւ–, Պարտէզին մէջ, Իմ Զին Թող հոն արածա՛յ,
Ես ալ՝ գիշեր պատըսպարուիմ, կենամ մինչեւ՝ Լոյս բացուի։
Աքացի՛ մը զարնեմ,–ըսաւ,– ու Պարխպը փըլցընե՛մ...,—
Իմ անունի՛ս վայել չ'է՛...»։—
Ըսա՛ւ՝ ու Զին Թըռցուց ելաւ՝ Պարտէզին մէջ՝ վա՛ր իջաւ 1)։
Մի՛ ըսե՛ր որ՝ այդ Պարտէզն ալ՝ Թագաւորի 2) Արքունական
[Պարտէ՛զն է...։—
Զին լողուց մէ՛ջ, Ան ալ ինկաւ՝ Թուփե՛ր քանդեց..., Վարդ–
['ւ–Ըռըհա՛ն տըրորե՛ց...
Ինքն ալ դընաց Աղբիւրին վրայ՝ կերաւ–խըմեց՝ ինկաւ այնտեղ
[քընացա՛ւ... 3)։

740. «Ան Դաւիթն է..., Գացէ՛ Ըսէ՛ Թող Գայ Հոս»

Նաժիշտ նայեց Պատըշդամէն՝ տեսաւ մէկ Զի՝ բա՛ց Թողած,
Մսուղիներու, Վարդ–Ռեհանի Պարտէզին մէջ կ'արածա՛յ...,
Զիուն–Տէրն ալ՝ Աղբիւրին մօտ՝ երկընցեր է՝ քընացեր...,—
Վայեց եկաւ Իր Տիրուհուն, — «Թէ, իրա՛ւ, օտա՛ր Զի մ'...՝
Առա՛նց կապի, անարհո՛ւն... *),
Պարտէզին մէջ Թո՛ղ տըւեր են՝ կ'արածի՛...,
Զիուն–Տէրն ալ՝ Աղբիւրին վրայ՝ երկընցեր է՝ քընացե՛ր...»։
= «Կո՛յ ու չըկայ՝ Դաւի՛թն է Ան...»,–ըսաւ Խանդուտ՝ Նաժիշտին։
Եւ Ինք իր մէջ՝ «Կ'ըսեն Դաւիթ խեղ ու ծո՛ւռ է՝ իրա՛ւ է»։
Ան Դաւի՛թն է..., Իր Զիովը եկեր–մըտեր Իմ Այգին...
Ա՛ւ ի՛նչ յանդուգն, անխի՛ղ *) Մարդ է՝ այդ Դաւիթ...
Որ այդ կոպիտ բընոյթին տէ՛րն է Անիկ՝
Գացէ՛ք,–ըսաւ–, Հաց–մա՛ց տըւէք՝ Թող ուտէ՝
Նոր ըսէք որ՝ «Ելնէ երթայ այստեղէն»,—

---

1) Իր մեծ–պապ Մանասարի նման՝ որ Պղնձէ–Քաղքի Ք.–Ճ.–Ե.–Գուհարի Պարտէզն իջաւ Զիով. (Հուշ. 135)։ 2) Լ.35՝ Արաս–Միրզի։ 3) Հէքիաթներու մէջ անցած, շատ տարածուած՝ Թափա–ռիկ կուռը մը՝ իջնել Արքունի Պարտէզ, ուտել–խմել, Աղբիւրին վրայ ննջաճալ։

*) Անարհուն, կատաղի, ամեհի, անզուսպ, վրնջող։ *) Անխիղ, Անխղճել, Խղճիկ չգիտցող, անփափկանկատ, sans gêne։

Մեր Տիրուհին Խանդուտ-Խաթուն՝ ա՛յս կ՚ըսէ ...»:
*Համոզին ալ՝ պատուէր տըւաւ՝ ըսաւ,— «Հա՛մոզ, Դուռը զա՛րկ *),*
Սասնու-Մուրը Բե՛րդն է հասեր ..., չընորքդ ցո՛յց տուր կանուխէն՝
Նո՛ր Քաղաքին Դարպասը բա՛ց՝ ներս մըտնէ,—
Զիզա՛յ ելնէ մինչեւ Իմ Դուռ՝ եւ անպատի՛ւ ընէ Զիս ...»:
*Ելան առին՝ Ակռաստ *) տարան՝ Դաւթի առջեւ վա՛ր դըրին:*
Երբոր կերաւ ու լըմընցուց՝ ըսին, — «Ա՛յ Մարդ, Զիա՛ւոր,
Մեր Տիրուհին Խանդուտ-Խաթուն կ՚ըսէ՛ որ՝
«Շո՛ւտ Թող ելնէ՝ Իր Զին քաշէ ու երթա՛յ ...,—
*Իրեն ո՞վ է հրաման *) տըւեր՝ գայ Իմ Այդին նե՛րս մըտնէ,*
*Զին Թողու մէջ՝ Վարդ-ի-Լուրհա՛ն տըրորկըլսէ՝ ու փա՛լ տայ ... *).*
Իր Հօր Դա՞չն է՝ որ Զին Թողեր՝ Պարտէզին մէջ արածէ ...:
*Օձն Իր Գորտուվ, Հաւքն *) Իր Թեւով՝ Իմ Պարտէզը չե՛ն լըսած ...,*
Ան ո՞վ կ՚ըլլայ ...՝ Ինք Իր զըլխու՝ գայ ու մըտնէ Իմ Այդին ...՝
Զին Թողու մէջ՝ արածայ ...:—
Ի՛նչքան անկիրթ Մարդ է եղեր այդ Դաւիթ ...,
Շո՛ւտ Թող ելնէ՝ դո՛ւրս երթայ ...՝
Թէ չէ՝ Տիկնոջ Ըմբիշնե՛րը որ եկան ...՝
Ջոջ կըտորը՝ Անոր Ակա՛նջ կըթողնեն ...,— 1)
Մե՛ղք է Իրեն երիտասարդ հասակին ...»:
Դաւիթ վերցուց ի՞նչ ըսաւ ...,—
= «երանի՛ թէ՝ Ինձ առաջո՛ւց ըսէիք ...՝
Ֆա՛նի Իր Հաց չէի՛ կերեր, Ջուր՝ խըմեր ... .
Ալ ի՞նչ օդուտ ..., Հացը կերայ լըմընցուցի՝ նո՛ր կ՚ըսէք ...:—
Որ այդպէ՛ս է՝ ես չե՛մ երթար այստեղէն,
Անոնց ձեռքէն ի՛նչ որ կուգայ՝ Թող ընեն ...,—
Դուք ալ գացէք՝ Ձեր Խանդուտին ա՛յս ըսէք ...»:
Նաժիշտները ելան եկան՝ ու Խանդուտին պատմեցի՛ն,—
— «Այսպէ՛ս կ՚ըսէ Այդ Ձիու-Տէր՝ օտար Մարդ ...»:
= «ելէ՛ք,–ըսաւ–, Ան Դաւի՛թն է ...2) · գացէք ըսէք՝ Թող դայ հո՛ս»:

---

*) Զարնել, Գոցել: *) Ակռաստ, Նախաճաշ: *) Հրամանք, Արտօնութիւն: *) Փալ տալ, Փոուիլ, տապլտկիլ: *) Հաւք, Թռչուն(ներ): 1) Հէքիաթային Թափառիկ գիծ: 2) Այսինքն՝ Այդ անվախ խօսքերն ըսողը՝ Դաւիթէն զատ ուրիշ մէկը չէ՛ կրնար ըլլալ:

741. Համաօղլ-Թարգիզ՝ Կապուտ-Բեղդիճ Դռնապան

Դաւիթ Ելաւ՝ իր Ձին քաշեց՝ որ Խանդուտի Դո՛ւռն երթայ,—
*Այնտե՛ղն է որ՝ Ուղընկաններ *) ամեն կուգան՝ ու կ՚իջնեն։*
Դրան առաջ երբոր հասաւ՝ նայեցաւ վեր՝ ի՛նչ տեսնէ...,—
Որ ահագի՛ն եւ այլակե՛րպ, սեւուկ Մա՛րդ մը՝ Գուրզը Ձե՛ռք՝
*Այդ Դարպասին Դրան վերայ՝. կանգներ Անոր Դրընբաց *),*
*Պըռուկ *) մ՚ երկինք՝ մէկն ալ Գետին է իջեր...,—*
*Վերին–Պըռուկ Դարպա՛ս–Դրան Ճակտընոցի՛ն *) կըհասնի...,*
Ներքին–Պըռուկ՝ կախուեր Սըրտին՝ Դրան Շեմքի՛ն է հասեր...։—
Դաւիթ այնտեղ վախցա՛ւ Ատոր բա՛ց Բերնէն... 1)։—
Մօրէն ծըներ՝ մինչեւ այդօր՝ Մարդո՛ւ բարեւ չէ՛ր տըւեր 2),
Իր մըտքին մէջ ի՞նչ ըսաւ.—
«Թէ բարեւ տա՛մ՝ խո՛ց պիտի ՚ըլայ՝ էյնայ Իմ Սիրտ՝ ըսպանէ՛...,—
*Ինչ Իմ Մօրէս մեկնե՛ր *) եմ ես՝ մինչեւ՛ օրս՝*
Վախով՝ երբե՛ք Մարդո՛ւ բարեւ չ՚եմ տըւեր —.
Բարև չիտա՛մ՝ քըչե՛մ երթամ՝ վա՛յ Թէ Այս Մարդ՝ կո՛ւլ տայ Ձիս 3)։
Ու երկիւղէն՝ բարե՛ւ տըւաւ Այդ Մարդուն,
Ըսաւ, — «Բարե՛ւ Քեզ ,Տըղա՛յ...»։
Այդ Մարդուն ալ՝ անուն Համաօլ–Թորգի՛զ է 4)·
Սեւաեղունդ–Դէ՛մ կ՚ըսեն...,
Քառասո՛ւն· տարի՝ Կապուտ–Բեղդի Դրնապա՛ն էր կեցեր հոն,
Մօրէն ծըներ՝ Մարդո՛ւ բարեւ չէ՛ր տըւեր,
Այն օր որ Աչքն ինկաւ Դաւթին՝ վախեցա՛ւ,
= «Աստծու բարի՛ն, Քեզի, Դաւի՛թ»,–ըսաւ՝ երկո՛ւ Ձեռքերով 5),

---

*) Ուղընկաց, Հարսնցուին ձեռքը խնդրելու եկող, խնդրակ, թեկնածու։ *) Դրընբաց, Դուռը բացող–գոցող պահակ։ *) Պռուկ, Շրթունք։ *) Ճակտնոց, Դրան չրջանակի վերի փայտը, Հ·441՝ վերի շեմք, վարի շեմք, սխալ է, չ՚ը՛սուիր։ 1) Արաբու–պըռկօշ (բաց բերան խափչիկ) անունով՝ ծանօթ հատուածներ կան՝ Հէքեաթներու մէջ։ 2) Վախի երեսէն· Ոչ ոքէ չէր վախցած՝ որ վախ ազդեցութեան տակ բարեւ տուած ըլլար։ *) Մեկնիլ, Մնալ՝ աշխարհ գալ։ 3) Հեգնաբար կ՚ըսէ։ 4) Լ·35՝ Գորգէն (Տե՛ս Բ. Հատորով)։ 5) Քուրդերու մէջ՝ չատ սովորական է՝ հիւրին բարեւն առնել՝ երկու ձեռքը տանելով աչքերուն ու ճակատին։

Ահէն Անոր բարեւն առաւ՝ մըտաւ նե՛րս,
Փեղկեր զարկա՛ւ, Դուռը կըղպեց ու կեցա՛ւ,
Զըթողո՛ւց որ Դաւիթ մըտնէր՝ երթար վե՛ր։—

742. «Համասլի Դրոշ» Սասնու Դաւիթ՝ Բարեւ Ցալուն Կ'զղջայ

Դաւիթ այնտեղ բարեւ տալուն չո՛տ զըղջաց...,—
*Վերցուց խազով *) ի՞նչ ըսաւ.—*

— «Ա՛յսչափ տարի՝ որ ես Մօրէ մեկնե՛ր եմ՝
Մարդո՛ւ բարեւ չե՛մ տըւեր...,—
Ասօր եկեր՝ Կապուտ–Բերդի Դըռնապա՛նը տեսեր եմ՝
Ես Իմ Ձիով՝ Անոր Բերան կ'երթ-այինիմ ու կուգայինիմ...,—
Ահէն՝ բարե՛ւ եմ տըւեր... .
= Ա՛խ, դեռ բարե՛ւ եմ տըւեր...:
Սեւ–Օձի՛կ մը ըլլայի ես՝ ինչ ծըռնայ...,
Ու Քաշուէի Քըռանե՛ր... *)»:

Ալպ դարձաւ՝ Հարցուց Աստր՝ ու ըսաւ,—
— «Կըտրի՛ճ Տըղայ, ըսէ՛ ի՞նչ է Քո անուն,
Որ Դուռն Ինձի չե՛ս բանար...»:
= «Համասլ–Գորգի՛ղ, Քեզ ծառայ... .
Քո անո՞ւն ի՛նչ է ասպ...»:
— «Համասլի–Գրո՛ղ» Քեզ ծառայ...,
*Ես ալ Սասմանց Տըղայ–Դաւի՛թն եմ ասպ... *).*
Իմ Մայր երբ Ձիս վե՛ր կընեուէր՝ Ձեռքին վըրայ՝ անդադար՝
«Համսո՛լի–Գրող, Համսո՛լի–Գրող» կ'ըսէր կ'երգէր Ինձ համար 1)»:
Համսլ–Գորգիղն ալ ի՞նչ ըսաւ՝ Դարպաս–Դըրան եռեւէն,—

= «Լըրացաւ Իմ Քառասո՛ւն տարին՝ ինչ Ես այս Դուռ կեցե՛ր եմ,
Մինչեւ հիմա Մարդո՛ւ բարեւ չե՛մ առեր...,

---

*) Խազով, *երգով*: *) Քոռ, *քարքարուտ վայր*: *Ժողովրդական երգի մը մէջ կ'ըսուի, — «Սեւ օ՛ձ կար Սարեր, պտտուկէր Քարեր»: Իսկ Վանայ արեւելա–հիւսիս՝ կայ պատմական բլուր մը՝ որ կըկոչուի Սեւ–Քոռ: *) Ապա, *եթէ գիտնալ կ'ուզես*: 1) *Տե՛ս Հատ. 281–ի երգը: Ե·988՝ պատմուած է Մանասարի անունովը (Ա. ճիւղի մէջ)*:

Ասօր Սասնու Շաղգըմակեր Տըղայ–Դաւիթն եմ տեսեր՝
Ահէն՝ բարե՛ւն եմ առեր... .
= Ա՛խ, դեռ բարե՛ւն եմ առեր...,—
կօտ–կըրըրա՛յ *) ըլլայի ես՝ ինչ *) ծրնայ...» †):

Դաւիթն ըսաւ, — «Իմ բարեւը՝ չէ՞ որ Անիկ Իմ ահէ՛ն էր որ առաւ,
Դէ՛հ, ես ալ թող Անոր ահէ՛ն տըւած ըլլամ Իմ բարեւ...»·—
*Ու Դաւիթի Սըրտին առաջ՝ առով ծողէ Սի՛ւն *) առաւ...:*

743. «Սանհայր-Դաւիթ, Գաւոր-Դորգիզ»

Դաւիթ կանչեց, — «Համա՛օլ, բա՛ց Դուռ՝ որ նե՛րս 1) գամ»:
= «Չէ՛,–ըսաւ Ան–, որ մեռնի՛ս ալ՝ Դուռ Քու վըրայ չե՛մ բանար...,
Հրաման չըկա՛յ. չե՛մ թողներ Դուն ներս մըտնես...,—
Խանդուտ–Խաթուն պատուիրե՛ր է՝ «Ով զայ՝ Դուռը մի՛ բանար»:»
Ան ալ — Դաւիթ — ի՞նչ ըրաւ.—
Ըսաւ, — «Ա՛յ Մարդ, ես Քեզ խընդիրք չե՛մ ըներ որ Դուռ բանաս.
*Զեմ դարներ ալ՝ կըշտանոցով *) Դուռը հաներ՝ մըտնար ներս...,*
Միայն Քո Զեռ՝ Դուռին կողէն՝ քիչ մը դո՛ւրս բեր, երկընցո՛ւր,
ես՝ Դու բըռնե՛նք Իրար Զեռքը՝ բարե՛ւ տանք,
փախաքո՛վ եմ՝ Քո Մա՛տ տեսնեմ, Սիրտըս հովնայ՝ նո՛ր երթամ...:
Ես Խանդուտի համա՛ր է որ՝ ելեր եկեր եմ այստեղ.
կընըստիմ հոս՝ մինչեւ Լոյսը բացուի՝ ապա՛ կուգամ ներս...»:
Ան ալ Դըրան կըշտանոցի մէկ ճեղքէն դո՛ւրս հանեց Զեռ,
Դաւիթ նետեց՝ ու Համօղլի Մատը բըռնեց՝ ու քաշե՛ց...,—
Տեսաւ որ հա՛..., Սեւաեղունդ–Դէվ Համօ՛ղլն է Դըռնապան.
— «Դէ՛, Դուռը բա՛ց, հիմա, տեսնե՛մ...»,–ըսաւ դըրսէն ու կըքե՛ց:
Մատ որ քաշեց...՝ Անոր Ոտքի Երակները կըտրեցա՛ն...,
Եղունդն ինկա՛ւ, Մատէն արիւն ու արընչուր դո՛ւրս նետեց...:

---

*) Կօտ–կըրըրայ, *պատեանով կրեայ*: *) Ինչ, *Ինչ առեն որ, երբոր*: †) *Երգով*: *) Ծողէ սիւն, *Անզօր նեցուկ, փուճ մխիթարանք (յարդի չիւղի պէս դիւրաբեկ)*:

1) Ա.·30՝ առնես՝ *ուղղել՝ ա՛ռ ներս*: *) Կշտանոց, *Դրան չըքսանակի երկու ուղղորդ փայտ(եր)ը*: Ե·1012՝ կշտանոցն ալ տարաւ հետ: *Նման՝ երախայ տարիքին՝ Մըսրայ մէջ ըրածին (Հատ. 289)*:

= «Ա՛յ, Իմ Մա՛տը...,–պօռաց ներսէն–. Աստծո՛ւ սիրոյն,
[Դաւի՛թ, թո՛ղ,
Իմ Թեւ՝ կ'ըսես՝ տը՛կմանց *) ելա՛ւ..., Մատըս կըտրա՛ւ երակով...
Տըղա՛յ, Դաւի՛թ, ես՝ Դուն եղբա՛յր. թող՝ Դուռ բանա՛մ Ու վըրայ.
Աբի՛ Ու Ձին քըշէ դընա՝ մըտիր նէ՛րս...:
Թէ Ու բանը դըլո՛ւխ դընաց, Աստուած ինքը աջողցուց՝
Խանդուտ–Խաթուն կընի՛կ առիր Ինձ համար՝
Ձիս կ'ընես Ինձ կընքահայր...»:
Այն ժամանակ՝ Դաւիթ թողո՛ւց Սեւաեղունդ–Դէվի Մատ,
Ան ալ Դարպաս–Դուռը բացա՛ւ, Դաւիթ մըտաւ Դուռնէն ներս,
— «Գորգի՛ղ,–ըսաւ–, ես Դաւի՛թն եմ. Խանդուտ երբոր ես առի *)՝
Ինձ ալ կ'ընեմ Ինձ Քաւար *).
Որ այդպէ՛ս է՝ Սանհայր–Դաւիթ, Քաւար–Գորգիղ ու եղբայր»: 2)

744. Դաւիթի Նեռած Դուրգն Ու Քառասուն Ջիներուն Ախոռը

Ներս որ մըտաւ՝ Ձիէն լըսաւ՝ Բակին մէջ,
Դաւիթ հարցուց, — «Քաւո՛ր Գորգիղ, ո՞վ կայ ներս...»:
Ան ալ չարե՛ց մէկ չունչով,—
= «Շըրըգա՛ն–Խորասական, Լօռայ–Համզա՝ Ուզընկաննե՛րն են եկած,
Ես ի՞նչ դիտնամ, ես՛թն Աչխարհէ՝ Քառասուն կըտրի՛ճ են եկած...»:
— «Համո՛ւլ,–ըսաւ–, ատ ի՞նչ Դուրգ 1) է՝ դըրած են Ու Ձեռքին մէջ,
Նայիմ տեսնե՛մ...»,–ըսաւ Դաւիթ՝ Համոլին:
Ու Դաւի՛թն էր, — Ձեռքէն առաւ Դուրգը նեռե՛ց 2) մէկ թափով...,
Դուրգը դընա՛ց..., ու դեռ կ'երթայ՝ նոյն թափով... 3):
Ալա դարձաւ՝ ըսաւ, — «Քաւո՛ր, Իմ Ձին քաշէ՝ կապէ նե՛րս»:
= «Սանհա՛յր–Դաւիթ,–ըսաւ Գորգիղ–, տեղ չ'ունի՛մ...»:
Ըսաւ, — «Ինչո՞ւ տեղ չունիս...»:

---

*) Տկմանց, Տակէն, արմատէն: *) Երբոր առի, Երբոր առնեմ: *) Քաւար (Կնքաւոր), Կնքահայր: 2) Գորգիղ անունն ու Համոլի դերը՝ մեր Վէպին կ'միացնէ՝ դրացի, հաւատակից եւ յաճախ զինակից Վրացի ազգը (Տե՛ս Բ. Հտրվ.):

1) Ե·617, 638՝ կիւնդ (Գունդ): 2) Լ·35՝ Բահը թպւեց՝ կէս տուր ճամբայ գնաց: 3) Երկրագունդի յաւիտենական Թաւալման պատկերը:

= «Քառասուն հատ Զի՝ ներսը կապո՛ւկ են»,–ըսաւ։
— «Ի՞նչ քառասուն Զի…՝ ներս կապուկ են…, որո՞ց են»։
= «Քառասուն Երկրէ՝ Ուղղնկաններ՝ Խանդուտն ապով *) եկեր են,
Անոնց Զիեր՝ ամենն Ախոռ կապեր են,—
Ա՛լ տեղ չ՛ունի՛մ որ Քո Զին ալ նե՛րս կապեմ»։
— «Որ այդպէ՛ս է,–ըսաւ Դաւիթ–, քա՛յէ՛ Իմ Զին տար Ախո՛ռ,
Սանձը հանէ՛՝ Թո՛ղ՝ Զիերուն մէ՛ջ երթայ…,—
Անիկ Իրեն տեղ կըբանա՛յ…, չկըըցա՞ւ՝ Թող դո՛ւրս մընայ…»։
Ծառաները եկան հասան Դաւիթի մօտ՝
Որ Իր Զիուն Գլուխը բըռնեն՝ տանին կապեն Զիանոց *),
Դաւիթ Անոնց Թող չըտըւա՛ւ որ մօտենան Իր Զիուն,
— «Դուք Իմ Զիուն դարման *) տըւող չէ՛ք»,–ըսաւ։
Քաշեց Գուռիկ, Համօլի հետ դընաց դէպի Զիանոց,
Դուռը բացաւ, իրիշկեց ներս՝ ու տեսաւ՝
Քառասուն Զի, քառասո՛ւն տեսակ 4)՝ Ախոռին մէջ կապուկ են,—
Քառասո՛ւնն ալ՝ Մըսուրին դէմ՝ Գարի, Աւո՛ւյտ կըկըտրեն *)։
Տեղ մը չկա՛ր 5) որ Իր Զին ալ հոն կապէր,—
Սանձը հանեց՝ այնպէս արձա՛կ մըլեց *) նե՛րս,—
— «Զի՛, թէ կըրնա՛ս,–ըսաւ Դաւիթ–, Գարի, Աւո՛ւյտ խըլէ՛՝ կե՛ր…,
Թէ չկըրնաս…՝ կաց անօթի՛, առանց կեր… *)։
Ու թէ որ Դուն այդ Զիերը յաղթեցի՛ր՝
Ես ալ պիտի յաղթեմ Առանց Տէրերուն…»։
Գուռիկ–Ջալալ՝ երբ Ախոռէն ներս մըտաւ ու խըրխընջաց…՝
Իրեն ահէն՝ քառասո՛ւն Զին ալ՝ փախան անկի՛ւն մ՝ կըծկեցան,—
Գարին, Դարման, ամե՛ն Թողին ու փախո՛ն…։
Գուռիկ՝ Անոնց քառասո՛ւնն ալ՝ Վիզով–Ոտքով հըրեց դէ՛ն,
Ճըղթե՛ց *) տարաւ՝ կըպցուց Դըրան Պատին դէ՛մ,
Այդ Քառասունի կերն ու Դարման խըլե՛ց Անոնց Մըսուրէն՝
Ինքը մինակ՝ կեցա՛ւ հանդարտ՝ ու կերա՛ւ… 6)։

---

*) Ապով, (ապաւէն–ով), Ծոյսով, համար, վասն։ *) Զիանոց, Զի կապելու տեղ, ախոռ։ *) Դարման, Ցարդ, խոտ, գարի։ 4) Ե·1012՝ «հարիւր մի՝ մէկ փարա»՝ ուղղել՝ մէկ բարա (միաչափ)։ *) կտրել, Ակռաներով կտրել, ծամել, աղալ (ճիւս)։ 5) Կ·86՝ չէր՝ ուղղել՝ չ'կէր (չ'կար)։ *) Մլել (մղել), Խոթել, քշել։ *) կեր, Ուտելիք։ *) ճղթել, Հրել, սղմել։ 6) Իրաւունքը հզօրին է։

Ա՛լ այն Զիկր՝ մէկը չ՛ի՛չխեր մօտենայ...:
Դաւիթ տեսաւ՝ ու զո՛հ մընաց Իր Զիէն,
«Զին՝ Զիկրը յաղթե՛ց,–ըսաւ–, Տէրը՝ մընաց Իր Աստուա՛ծ...»:
Նաժիշտները լուրը տարան Խանդուտին,—
— «Դաւիթի Զին Իր չընորհը ցո՛յց տըւաւ...,
Մընաց Դաւիթ՝ որ նըշանց տայ Իրենն ալ...»:
Դաւիթ նայեց տեսաւ որ Զին՝ չո՛ւտ ճար ըրաւ Իր Գըլխուն՝
Ինքն ալ դարձաւ՝ — «Քաւո՛ր Գորգիզ, հիմա,–ըսաւ–, երթանք վե՛ր,
Նըստինք ընենք կեր–ու–խում...»:—

745. Համաօլի Կազմած Ջամբիւղը՝ Դաւիթի Մահճին Մէջ

Համաօլ–Գորգիզն ալ ի՞նչ ըսաւ Դաւիթին,—
— «Դի՛հ, որ Դուն ինձ Քաւոր ըսիր ու Եղբայր՝
Ես ալ՝ Խանդուտ–Խաթուն բերեմ Քեզ համար.
Ես Խանդուտի Պարտիզպա՛նն եմ ու Մառան»:
Ան ալ՝ Համաօլ՝ ելաւ այնտեղ ի՞նչ ըրաւ.—
Գընաց Այդին և ամենմէկ թա՛րմ Պըտուղէն քաղեց չարեց Որթի*) մէջ,
Ու Խանդուտի Պատկերն առա՛ւ Դաւիթէն,
Բերաւ՝ Ան ալ՝ Պըտուղներուն հե՛տ դըրաւ.
Վարդ ու Ռեհան–Մաղի՛կ դըրաւ վըրայէն,
Վառ–Ծիրանի Թաշկինակ մ՝ ալ՝ Դաւթի Մատնին ճոթ կապած՝
Բերաւ փըռեց Անոնց վրա՛յ,—
Առաւ այդպէս՝ տարաւ Խանդուտ–Խաթունին,—
— «Հրամէ՛,–ըսաւ–, Տէրո՛ւհի...»:
= «Շնորհակա՛լ եմ,–ըսաւ Խանդուտ–, Պըտո՛ւղ բերիր Այդիէն»:
Բացաւ տեսաւ՝ որ Իր Պատկեր՝ ինչ ղըրկեր էր Աշուղով՝
Եկեր՝ Իրե՛ն է հասեր...:
Հանեց մէկ ճանկ Ոսկի՛ տըւաւ Պարտիզպանին՝ ու ըսաւ.—
— «Այս Պատկերը ո՞վ է բերեր՝ մինչեւ այստեղ հասուցեր՝...»:
= «Դէ՛, եկեր է՝ Ճա՛նկս*) է ինկեր, Տէրո՛ւհի...»:
— «Գըլուխդ Մարմնէդ կըտրե՛լ կուտամ...՝ Քէ չ՛ըսես»:
= «Թաշկինակին ճոթը,–ըսաւ–, Մատնի՛ մը կայ, ա՛ռ՝ տեսի՛ր»:
Առաւ նայեց՝ շա՛տ հաւնեցաւ, — «Մե՛ր է,–ըսաւ–, Ասոր Տէր»:

---

*) Որթ, Ջամբիւղ, լ·36՝ բոթինոց?: *) Ճանկ, Չեռք:

= «Դէ՛, Տէրո՛ւհի,–ըսաւ Համոլ–, այդ Սասմանց Դաւի՛թն է՝
Ինչ մըտեր էր Քո Պարտէզ...»։—
Ու «Աւետի՛ս» տըւաւ այնտեղ՝ Խանդուտին։

746. Դաւիթ՝ Ուզըկանցներու Սրահին Մէջ

Արեւ մըտաւ, ելան գացին՝ Քաւոր–Գորգիզ կեցաւ Դո՛ւռ,
Դաւիթ մըտաւ դընաց ներս։—
Այն Սըրա՛հն է՝ ուր Քառասո՛ւն 1) Ուզընկաններն իջեր են,—
Ան կ'ըսէ՝ «Ե՛ս առնեմ Խանդուտ», Ան ալ՝ կ'ըսէ՝ «Ե՛ս առնեմ».
Քառասուն Մա՛րդ են՝ ամեն–Մէկը կ'ըսէ՝ «Ե՛ս...»։
Թագաւորը Անոնց ոճի՛կ է կապեր,
կ'ուտե՛ն–կ'խըմեն, կ'ուրախանան, կընըստին ու կըպառկին 2)։
Դաւիթ մըտաւ՝ դընաց ներս ու ի՛նչ տեսնէ։—
Նայեց տեսաւ՝ հոն նըստեր են՝ Քառասուն Ըմբիշ Մարդիկներ,
Քառասունին ալ՝ Թուրեր՝ շարան *)՝ Գատէն կա՛խ,
Սեղան դըրուի, Սըփռոցն ալ տակ՝ նըստե՛ր են,
Հա՛ց կ'ուտեն ու Իրենց Գինի՛ն *) կըխըմեն...։—
Աստուածո՛ւթիւն ի՛նչ որ տըւեր՝ այդ Սեղանին վըրայ կա՛յ...,
Եօ՛թը տաբատ Գինի՛ն անգամ այդտեղ կա՛յ...։—
Կ'ուտեն–կ'խըմե՛ն, կ'ըսպասեն որ՝ Նայինք Դաւիթ ե՞րբ կուգայ...։
Գընա՛ց Դաւիթ, անբարիլոյս եւ անբարեւ չըմըտա՛ւ՝
Բարե՛ւ տըւաւ Ամենուն.
Ամենք առի՛ն Իր բարեւ։
Անոնց Աչքը երբոր իննկաւ Դաւիթին...՝
Քառասունի՛ն ալ՝ Ձեռ–Ոտ Թուլցա՛ւ..., Դաւիթ ահէն դողացի՛ն...։
Տե՛ղ տըւին հոն, Դաւիթ դընաց՝ Ամենէ՛ն վեր նըստեցաւ.
Ամեն կողմէ՝ պատի՛ւ կ'ընեն Դաւիթին։
Համոլ–Գորգիզ՝ Ինքը կեցաւ Դուռին քո՛վ.
Խանդուտ–Խաթուն Ականատին *) ետե՛ւն է։—

---

1) Կ·27՝ եռտունիւն։ 2) Հմմտ.՝ Պենելոպէի ու թեկնածուներուն պարագան (Odyssée, XVI., XX., եւն.)՝ Բ. Հատորով։ *) Շատ, Շարքով, շարիշար։ *) Իրենց (հաց), իրենց (գինին)..., Իրենց ուզածին պէս (կ'ուտեն կ'խմեն)։ *) Ականատ, Փոքր պատուհան։

Տեսա՛ւ Դաւիթ..., — «Այնպէ՛ս հըսկայ կըտրիճ է...՝
Մխուանները՝ Անոր առաջ՝ ինչպէս ճիժե՛ր են կ՚ըսես...»։—
Պատուէ՛ր տըւաւ Համօլին որ՝ «Դաւիթի վըրայ լա՛ւ հըսկէ,
Օտար Տըղա՛յ է Անոնց մէջ, վընաս չիտա՛ն մէկ կերպով...»։
Դաւիթին ղըրկեց ձեռք մը մաքուր Անկողին,
Ըսաւ՝ «Ապա՝ Իմ Նոր–Տէրը տեսա՛յ ես...»։—
Սէրը ձեզեց Դաւիթի վըրայ, Աչքէ հանե՛ց Մէկալները...։

747. Դաւիթ կ՚խմէ Ու կ՚հարցափնդրէ

Առոնք բերին՝ Գաւաթները Գինու–կարա՛ս կըզարնեն *)՝
կըհանեն ու կարդով կուտան Իրարո՛ւ...։
կարգը եկաւ Դաւիթին,
Ֆառատնն ալ մէ՛կ՝ Իրենց Գինին դէպ Դաւի՛թը պարզեցին։—
Դաւիթ՝ յոդնած, անօթի ու ծարա՛ւ էր,
Ա՛լ չի՛ կըրնար համբերել,—
Ան ալ դարձաւ՝ այդ Մարդերուն ի՞նչ ըսաւ։—
— «Աս ի՞նչ կոզ՚վի կորճ *) էք բերեր Ինձ համար...,
Մէկ խըմեմ՝ չե՛մ կըշտանար։
Երկո՛ւ խըմեմ՝ չեմ կըշտանար...,
Վեց, եօ՛թ Գաւաթ՝ անհա՛մ կ՚ըլլայ, ամօ՛թ է...,
Առով Մարդու Բերա՛ն անդամ չի թացուիր...,—
Ջոջ Աման մը բերէք՝ խըմենք՝ Մարդու Բերան Թըրջըւի՛...։
Ապա,–ըսաւ–, ես՝ մէ՛կ ու մէկ Ֆառատն Սախով *) չե՛մ խըմեր...,
Լըցէ՛ք այնպէս՝ մէկ Տաշտ մէջ՝ տըւէք մէ՛կ–դիր *) ես խըմե՛մ...»։
Լեցուցին Տաշտ՝ ու տըւին,
Դաւիթ մէ՛կէն վերցուց Տաշտը՝ դըրաւ Բերնին՝ ու խըմե՛ց...։
Խըմե՛ց–խըմե՛ց...՝ ու ըսաւ։—
— «Դէ՛հ, ըսէք՝ «Նո՛ւշ, նո՛ւշ *) եղաւ»...»։
= «Անո՛ւշ եղաւ...» որ ըսին ու՝ Ան ալ քամե՛ց *) Գինու Տաշտ՝
Մէկալները՝ Թէ՛ զարմացան՝ Թէ՛ վախցա՛ն... .

---

*) Զարնել, Գաւաթը Թաթխել (կարասին մէջ)՝ գինի առնելու համար։ *) Կոգովի կորճ, Ընկուզի կճեպ։ *) Սախ, սաֆ, Հողէ Թակոյկ։ *) Մէկ դիր, Մէկ անգամէն։ *) Նո՛ւշ, նո՛ւշ, Անո՛ւշ, անո՛ւշ՝ ըլլայ։ *) Քամել, Մինչեւ յատակը ծծել, խմել, հատցնել։

— «Այս Մարդ,–ըսին–, ի՞նչպէս Մարդ է, որ հանդարտ՝
Տա՛չ մը Գինի՝ դըրաւ Բերնին՝ ու խըմե՛ց…»:
Գինին ալ երբ Դաւթի Գլուխ քիչ–քիչ բըռնեց, անուշցաւ… *)՝
Դարձաւ հարցո՛ւց Ամենին.—
— «Դուք Ամենքըդ՝ ինչի՞ համար եկեր այստեղ նըստեր էք.՞.՞.՞»:
Քառասուն Մարդէն Մէկը՝ թէ,—
= «Մենք Ամե՛նքս ալ Խանդուտն ապո՛վ ենք եկեր,
Խանդուտ–Խաթուն Մէկի՛ն ալ խօսք չէ՛ տըւեր…»:
— «Վաղո՞ւց է որ Դուք այստեղը եկեր էք…»:
= «Ես՝ մէկ ամի՛ս է որ այստեղ եմ եկեր.
Շատեր կան որ՝ տարիո՛վ է՝ նըստեր են…»:
—«Խանդուտ–Խաթուն Ձեզ չի՞ ըսեր՝ «Ինչո՞ւ այստեղ կեցեր էք»…»:
= «Չէ՛,–ըսաւ Մարդ–, Մէկին հետ ալ չի՛ խօսիր…»:
— «Է՛, որ այսքան ժամանակ է՝ Դուք եկեր էք այս Քաղաք,
Խանդուտ–Խաթուն Ձեզի բառ մը չի՛ ըսեր…՝
Ապա Դուք ի՞նչ *) այստեղ 1) նըստեր՝ կեցեր էք…:—
Կըրնայ ըլլալ՝ Խանդուտը Ձեզ չի՛ ուզեր՝
Անոր համար՝ չիխօսի՛ր ալ՝ Ձեզի հետ:—
Ելէք Ամենքդ՝ Ձեր Տո՛ւն գացէք…, ալ ի՞նչ այստեղ կեցե՛ր էք…»:
= «Ինչո՞ւ երթանք…, կ՚ըսպասենք որ՝ տեսնանք թէ՝
Խանդուտ Մեզնէ ո՞վ կ՚առնէ…»:
Դաւիթ այնտեղ Իրեն համար մխոք ըրաւ ու ի՞նչ ըսաւ.—
— «Է՛,՛–ըսաւ–, Դուք՝ ելէք գացէք Խանդուտի մօտ՝ եւ ըսէ՛ք՝
«Կամ՝ Մէկը ա՛ռ, կամ ճամբո՛ւ դիր Մեզ Ամենքս…,
Նըստած այստեղ ի՞նչ ընենք»…»:
= «Հա՞…, Դո՞ւն ես որ՝ պիտի երթաս Դուռ քանաս…,
Ո՞վ կ՚իյնէ որ մօտենայ՝ Իր Դուռ քանայ…,—
Ո՛ր Մարդ երթայ՝ Իր Դուռ քանայ ու նայի՝
Խանդուտ–Խաթուն կ՚ելնէ այդ Մարդ կ՚ըսպանէ…»:
Այն ժամանակ՝ Դաւիթ ելաւ կանգնեցա՛ւ,—
— «Ես պիտ՝ երթամ,–ըսաւ–, բանա՛մ Անոր Դուռ,
Խանդուտ–Խաթուն թող գայ ու Ձիս ըսպանէ…»:—

---

*) Անուշցնալ, Գինովութեան առաջին նշանները ցուցնել: *) Ի՞նչ, ինչ բանի համար, ի՞նչ իրաւունքով: 1) Կ·86՝ ըստա (այստեղ):

748. « Ուղո Դգալո՞վ Կըջրեց »

Դաւիթ ելաւ որ Խանդուտի Դո՛ւռն երթայ՝
Այդ Քառասուն Մարդ՝ դարճան այնտեղ ի՞նչ ըրին.—
Անոնք տեսան որ Դաւիթը Իրենցմէ քա՛ջ, խօրո՛տ էր՝
*Ոխակալա՛ն *) Իր վըրայ,—*
Մէկմէկու հետ փըսփըսացին ու ըսին,—
— «Դաւիթ եթէ նե՛րսը երթայ՝ ու Խանդուտի քովն ելնէ՝
Ա՛լ Խանդուտը Մեղնէ ոչ Մէկ չի՛ առներ...,—
Դաւիթ Մեղնէ Ամենքէ՛ս ալ մեծ Ըմբիշ է ու Կըտրի՛ճ...,
Է՛, ապա Մենք ի՞նչ ընենք...»:—
= «Բերենք,—ըսին—, Դաւիթ այստեղ դինովցնե՛նք՝ դընենք վա՛ր,
Ամենմէկըս Մեր Թուրերը քաշենք դընենք Սեղնին տա՛կ,
Մուխ որ իյնայ, Դաւիթ ինչ դայ՝ երթայ քընի Իրեն Տեղ՝
Ելնենք զարնենք՝ ըսպանենք...,
Խանդուտ–Խաթուն Դաւիթ չ'առնէ՝ Մե՛նք առնենք... 1).
Դաւիթ չ'առնէ՛...՝ Մեղնի ո՛ր Մէկ ուղէ առնել՝ Ա՛ն առնէ...»:
Իրենց խօսքեր Իրարու հետ մէ՛կ ըրին, Ամենք զարճան Դաւիթին:—
*Խանդուտին մե՛ծ կարաս մը կար՝ մարդաչափ *),*
Մէջը լեցուն՝ եօ՛թը տարեան հի՛ն Գինի...,—
Մէյմէկ Գաւաթ զարկին տըւին Դաւիթին,
— «Դէ՛, Խանդուտի կենա՛ց խըմէ..., անո՛ւշ ըլլայ», — ձայնեցին:
*Դաւիթ առաւ այդ քառասո՛ւնն ալ՝ լեցուց Պոզիկ *) ու խըմեց,*
Դարճաւ պօռա՛ց՝ կէս–գինով,—
= «Է՛, Մարդիկնե՛ր, Ուղո Դըգալո՛վ կըջրեն... .
*Ես ճըննդուկ չե՛մ...՝ որ ինձ պո՛ւտ–պուտ *) Ջո՛ւր կուտաք...,*
Չե՛մ կըշտանար ես Ձեր տըւած Գաւաթով...,
Գինու–կարասն ո՞ւր է՝ ինձի ցո՛յց տըւէք...,
Բերէք խըմե՛մ՝ որ Իմ Սըրտի փոչիները սըրբըվի՛ն... 2),
Գինի՛ խըմեմ՝ ու դամ նըստիմ՝ Հա՛ց ուտենք...»:
Ելան՝ Դաւիթին՝ եօ՛թը տարեան քացա՛խ–Գինին ցոյց տըւին,—

---

*) Ոխակալիլ, Ոխով լեցուիլ, ոխ բռնել: 1) Լռելեայն հասկնալի՝ Մենք առնենք՝ Խանդուտը: *) Մարդաչափ (վան՝ մարդաբոյ), Մարդու հասակին չափով խորունկ: *) Պոզիկ, Պոզատոր, կանթով՝ գինու աման: *) Պուտ–պուտ, կաթիլ–կաթիլ, ումպ–ումպ: 2) Կ'ակնարկէ իր անցած ճամբու փոչիներուն:

—«Մառան լի՛քն է, Դաւի՛թ,–ըսին–, հաստա՛տ ըլլայ Մեր Խանդո՛ւտ»:
Դընաց Դաւիթ՝ Ձեռքը նետեց՝ կարաս վերցուց՝ ու կոնծե՛ց...,
Այդ մէ՛կ կարաս Գինին խըմե՛ց..., պարապ Աման նետեց դէ՛մ,
Աման դընաց՝ Դըրան ճակտին, Ծամոնի պէս փակաւ Գա՛տ... 3):
Դաւիթ Ձեռքով սըրբե՛ց Բեբանն ու Բեխեր,
Եկաւ նորէն՝ Սեղանին գլուխ՝ ու միամիտ նըստեցաւ,
= «Դէ՛, Եղբայրներ, բերենք,–ըսաւ–, կարգով խըմենք Ամենքս ալ,
Ո՛վ դինովնայ՝ Թող պառկի...,
Ձըգինովցող՝ ուրախութի՛ւն ընէ Թող...»:

749. Դաւիթ Սեղան Կ'օրհնէ Մէկ-Առաջու Անունով

Սեղանին ալ՝ Սըփոռո՛ցն ըսես՝ երե՛ք Գոմշու կաշի՛ է.
Դաւիթն ըսաւ, — «Քաւո՛ր-Գորգիզ, Հա՛ց բեր Մեզի՝ ճա՛շ ընենք...»:
Ծառաները՝ Հացը բերին ու դըրին,
Դաւիթն ըսաւ, — «Դէ՛, Մարդիկներ, մօտեցէ՛ք,
«Անուն Աստուած, Տէ՛ր-Կենդանին» ըսէ՛ք ու Հացն օրհնեցէ՛ք,
Նըստինք հանդարտ Հա՛ց ուտենք...»:
Այդ Քառասուն Ուղընկաններ ի՞նչ ըսին.—
=«Մեր բարի՛ Հիւր, Մեծը Դո՛ւն ես, Դո՛ւն օրհնէ ու նախ Դո՛ւն կեր»:
Դաւիթն ալ թէ, — «Ես օրհնեմ ու ես ուտեմ...՝
Դուք Ամենքդ ալ՝ Ձեր տեղ սուա՛ծ կըմընաք...»:
= «Է՛հ, Դուն օրհնէ՛ ու Դուն կե՛ր...,
Թէ որ մընաց՝ Մենք ալ կ'ուտենք..., որ չըմընաց՝ չե՛նք ուտեր...»:
Դաւիթ օրհնեց ու ըսաւ.— 1)

— «Հա՛յր Մեր՝ երկին, տո՛ւրր եղեցի, անունը Քո՛ եկեսցի...,
Արքայութիւն Քո եղիցի, կամ Քու երկնից ու երկրից...,
Հաց մեծազօր՝ տո՛ւր Մեզ ասօր, եւ թող Մեզի՝ ըզպարտըս Մեր...,
Որպէս եւ Մեզ՝ փորձութենէ, այլ եւ փըրկէ՛ ’ի չարէ...,
Զի ’ի Քո՛ է Արքայութիւն եւ զօրութիւն, յաւիտեան...,
Անուն Աստծուն, մէ՛կ Աստուած...»:

---

3) Ց·121՝ «բռնեց երկու փալխան, մէկը զարկաւ ա՛յն պատ, մէկ ա՛յն պատ, Ծամոնի պէս լըրզուան պատին»:

1) Անգրագէտ գիւղացու «Հայր մեր»էն նմուշ մը:

Մեղան օրհնե՛ց՝ Դաւիթ՝ Իրեն դիտացածով... 2),
Նըստաւ այնտեղ Իր Հաց կերա՛ւ՝ Մարդու պէս...,
Անոնք Իրենց Բերա՛ն չ՛առնեն, չըկերա՛ն.
Դաւիթ բոլո՛ր այդ Հացերը քաշեց առջեւ՝ ու կերաւ 3),
Երկու կարաս նոր Գինի՛ ալ՝ բերին՝ խըմեց վըրայէն...:
Այդ Քառասունն ալ կըռապա՛չտ են, Աստծու անուն չե՛ն լըսած.
Դաւիթն ըսաւ,— «Կ՛ուզէ՞ք կանչեմ՝ Հա՛յց բերել տամ՝ Դուք ուտէք»:
=«Ձէ՛, բարի՛ Հիւր,—ըսին Առնք—, Դուն կերար՝ Մենք կըշտացանք»:
— «Իմ ըսածը որ Դուք ըսէք, Տէր—Աստծու անուն տաք՝
Դուք ալ ինձ պէս՝ ամեն անդամ՝ կըկըշտանաք, անկասկած» 4):
=«Մենք չե՛նք Թողուր Մեր Աստուածները՝ Ձո Աստըծու անո՛ւն տար»:
Դաւիթ այնտեղ վերցուց Անոնց իւ՛նչ ըսաւ.—
— «Որ Դուք Աստծու անուն չէք տար, ա՛յ Մարդեր,
Ես չե՛մ Թողուր՝ Աստուած Պաշտող Դուք առնէք,—
Ե՛ս կ՛առնեմ...»:
Խանդուստ—Խաթուն կըռապաչտ չ՛է՛ր, կըճանչնար մէ՛կ Աստուած.
Երբոր լըսեց՝ Դաւիթն ըսաւ այդ Մարդոց՝
«Ես չե՛մ Թողուր՝ Աստուած Պաշտող Դուք առնէք»՝
Ան ալ Իրեն մըտքին մէջը ուրախացաւ, իւ՛նչ ըսաւ.—
«Եթէ Դաւիթ Իմ մօ՛տն ըլլար այս պահուս՝
Կըհանէի եւ Իր Գըլուխ կըպատնէի եօ՛թ տեղով...»:

7ՏՕ. Գինի, կապիճ, վճասուց

Դաւիթն ըսես՝ ա՛յնչափ խըմեց, Գըլուխն եկաւ վեր՝ Ծոցին
Գինին վերցուց՝ Գըլուխն առաւ ու տարա՛ւ...:—
Ոտքեր պարզեց՝ իւ՛նչքան Ըմբիշ կար այնտեղ՝
Քըշեց տարաւ այդ Սըրահին Անկիւնները...:
Դահլիճին մէջ կըկընտռտա՛յ..., կամ կըպարէ՛ Պատէ–Պատ.
Մէյ մը Դըրա՛ն կըզարնըւի..., կամ Սեղա՛նը կըփընտռէ...:
Պահ մը՝ Դաւիթ այսպէս գինով՝ վա՛ր կ՛իյնայ,—
Իր Գըլուխը կ՛իջեցընէ վեր՝ Սըրահն,

---

2) Նորահաւատ Տրդատ Թագաւորի սորվածին չափովը: 3) Ինչպէս իր Զին ըրած էր՝ մինա ձիերուն հանդէպ (Հատուած 744): 4) Տրդատի եւ Լուսաւորչի՝ նորահաւատ ժողովրդին՝ մէկ Աստուծոյ կրօնը ուսուցանելու՝ վիպական պատկերը:

Նորէն Գլուխ վե՛ր կըբլռնէ՝ կըչըտկէ…:
Այն ժամանակ ի՞նչ կ'ըլլայ…,—
Երբ՝ Գինիէն՝ Գլուխ Սըրտի՛ն կըծըռէ՝
Այդ Քառասուն Մարդ՝ Իրենց Թուրեր կ'ուզեն առնեն 1) որ զարնեն…:
Երբոր Գլուխ վե՛ր կ'առնէ՝
Այդ Մարդերը՝ Թուրին չ'հասած՝ Իրենց Թևեր ե՛տ կըքաշեն՝
[կըկախեն…:
Ծանդուտի Աչք չէ՞ վըրան է, կըտեսնէ,—
Իրիկո՛ւց որ՝ այդ Մարդերը՝ Դաւիթ պիտի ըսպաննեն,
Ու Դաւիթն ալ քանի՛ Ամենը խօրոտ, Կըտրի՛ճ Տըղայ է, —
Պարկ մը կաղի՛ն բերաւ ղըրաւ Իրեն քով,
Այն առեն որ՝ Դաւիթ Գլուխ կ'իյնայ կուզայ Ծոցն 'ի վար,
Ըմբիշները Ձեռք կըտանին դէպ Իրենց Թուր՝ Պատէն կախ՝ 2)
Ծանդուտ վերէն (Իր երդիսէն)՝ կաղի՛ն մ' կ'զարնէ Սեղանին,—
Սինին այնպէ՞ս կըղըրընդայ Դաւիթ առջեւ, Աչքին տակ…,—
Մէկ ժամ Անոր ղըրընդցն ու ձայնը կ'ելնէ օդին մէջ,—
Դաւիթ Աչքեր կըբանայ հոն՝ կ'իրիկայ…,
Իր Գլուխը կըվերցընէ, կ'ըսթափի…,
Ըմբիշները կըսարսափի՛ն, կըղողա՛ն…,
Իրենց Թևեր՝ պարզած տեղէն՝ կըթուլանա՛ն, կըկախուի՛ն… 3):
Ծանդուտ՝ այսպէս՝ մէ՛կ Պարկ կաղին՝ մէ՛կ-մէկ նետեց՝ լըմընցուց:
Մինչեւ Դաւիթի գինովութիւն թող տըւաւ ու լըրջացաւ: 4)
Հեղ մըն ալ որ այդպէ՛ս ըրին այդ Մարդիկ՝
Համոզ նայեց՝ ըսաւ՝ «Դաւիթ արբած է…,
Այս Մարդերը պիտի զարնեն ըսպաննեն…»,
Դարձաւ Դաւիթին ի՞նչ ըսաւ՝—
—«Ծանհա՛յր-Դաւիթ, Ծանհա՛յր-Դաւիթ, արի՛ քիչ մը դո՛ւրս երթանք,
[Ձէ՞ որ Եղբայր են եղած],
Այդտեղ վնաստուն ու մահտո՛ւն է…, Հարսնեստուն կամ
[վրաստուն *) չ'է՛»:

---

1) Պատին վրայ կախուած տեղէն (Հուծ· 746): 2–3) Ե·519, 589–90, 641, 920–21՝ Իրենց Թրեր դուրս հանած են ու զարնելու կ'աչխատին: — Իրենց Թրեր սեղանին տակ կ'պահեն: 4) Օփէրէթի ի՞նչ սքանչելի նիւթ է՝ վերի այդ փոքրիկ Հատուածը: *) Վրաստուն, Վրան կոթենելիք, վստահելիք՝ տուն: Թերեւս նաեւ՝ բառախաղով՝ Վրաստանի ակնարկուած:

Առա՛ւ Դաւիթ ու Դարպասէն դուրս ելան,
*Դաւիթ գընաց Ոտաց–Ձամբան *), պըտըտեցաւ՝ օ՛դ առաւ,*
Գինին Թողուց Գըլուխէն…:
Ելաւ գընաց՝ Զին քաշեց դո՛ւրս, մաքրեց, ճակատ համբուրեց.
*Քուռկիկ–Ջալալ լեզո՛ւ ելաւ՝ ըսաւ,— «Դաւի՛թ, արթո՛ւն *) կաց…,*
Այդ Մարդիկներ ոխակալա՛ծ են Քեզ հետ…,
Իրենց Թըրեր մերկացուցեր՝ Սեղանին տա՛կն են դըրեր…,
Որ ի՛նչ առեն Դուն քընանաս՝ զարնեն ու Քեզ ըսպանե՛ն…,—
*Թէ չես հաւատար՝ գընա աչքի՛ *)՝ կը տեսնա՛ս…»:—*

751. Ծուվիզ Համօլ, Ծուվիզ Դաւիթ՝ Դէպի Ներս

Զըրոյցն ո՞ւրկէ…,— այդ Քառասուն Ըմբիշէ՛ն,
Որ Դաւիթի երթալէն ետք՝ ներս նըստեր են՝ Հա՛ց կ՚ուտեն…:—
Առոնք զարճան եւ ի՞նչ ըսին Իրարու,—
— «Երդուի՛նք,–ըսին–, Դաւիթ երբ գայ՝ նե՛րս մըտնէ՝
Մենք Քառասո՛ւն ալ՝ Մեր Թուրերը Հանենք զարնենք Դաւիթին,
Վիզը կըտրե՛նք, Խանդուտ–Խաթուն Մեղի՛ մընայ՝ Մե՛նք առնենք…,
‡) ~~*Թէ չես հաւատար՝ գընա աչքի՛ *)՝ կը տեսնա՛ս»:—*~~
Երդուեցան ու Իրենց խօսքեր մէ՛կ ըրին,
Թուրեր Գաւէն առին վա՛ր,
Եկան Դուռին վըրա՛յ կեցան Քառասունն ալ,
Ու Մէկ–Մէկու ի՞նչ կ՚ըսեն…,—
Ան կ՚ըսէ «Դո՛ւն զարկ Դաւիթին», Ան կ՚ըսէ «Դո՛ւն զարկ Դաւ՚թին»·
Իրենցմէ Մէկ չ՚ի՛չխեր ըսէ՝ «ե՛ս կըզարնեմ Դաւիթին»…:
Համօլ գիտցա՛ւ որ Դաւիթին պիտի զարնե՛ն այդ Մարդիկ,
Թէ առաջէ՛ն ներս մըտնէ՝,—
Ըսաւ, «Դաւի՛թ, Դուն կաց ետե՛ւ՝ ե՛ս անցնիմ…»:
Համօլ անցաւ՝ Դաւիթ ետեւ, մըտան Դուռէն՝ զացին նե՛րս,
Այդ Քառասուն Ըմբիշ–Մարդեր՝ տեսան Համօ՛լն է առջեւ՝
Անոնք ալ չէ՞ երդուած էին երդումով,—
Մէյմէկ Ապտակ 1)՝ քաշո՛ւն Ապտա՛կ զարկին այնտեղ Համօլին,

---

*) Ոտաց–Ձամբայ, Գէտքարան: *) Արթուն, Զգուշ (կաց): Աչքիդ, Նայիլ, զննել: 1) Մ·170՝ ջոք, Ց·44՝ ջլիգ (գուցէ ջոքին աղաւաղը), մէկ կամ միւսը՝ ցնծութիկ կամ չալափա ձեւերէն սխալագրուած:

‡) Թէ չէ՝ Դաւիթ՝ Խանդուտ–Խաթուն պիտի խըլէ՛ Մեր մօտէն…»:

*Համոզի Վիզ քէթրեցաւ... *):*
Դաւիթ նայեց եռեւէն որ՝ Համոզ քէթրե՛ր է Իր Վիզ՝
Չ'իմացա՛ւ որ ներսի Մարդեր Անոր Ապտա՛կ են զարկեր՝
Ինչքն ալ Ապտակ մ' զարկաւ մէկա՛լ երեսին, — 2)
Ըսաւ, — «Համո՛զ, իմ վըրա՞ս է կըխընդաս...,
Քիչ մը ծո՛ւռ է Իմ Վըզիկ...,—
Կեցի՛ր՝ Քու Վիզ ես չըտկե՛մ...»:—
*Ու մէ՛կ Ապտակ *) զարկաւ մէո՛ւս երեսի՛ն... 2):*
Համոզն ըսաւ,— «Աստուած Քո Տո՛ւն աւրէ, Տըղա՛յ, ի՞նչ ըրեր...,
Անոնք քառասո՛ւն Ապտակ զարկին՝ Իմ Վիզ հազի՛ւ քէթրեցին,
Դուն մէ՛կ Ապտակ տըւեր ինձի՝ մեռցուցի՛ր...,
Ուշքըս կ'երթա՛ր վըրայէս...,—
Քիչ մընաց որ Իմ Վիզ տեղէն հանէի՛ր...»:
Դաւիթն ալ թէ,— «Վա՛յ Համո՛զ, վա՛յ, Քեզ մահապա՛րտ կ'ըլլայի՛»:

758. Հացւոր Նաժիշտն Ու Դաւիթի Մտածիւն

Դաւիթ անցաւ՝ մըտաւ նէ՛րս,
Իր Ծօնքերը խառնըւեցա՛ն, տեսաւ Մարդիկ ծո՛ւռ կընային Իրեն դէհ:
Այդ Քառասո՛ւն-Մարդն ի՞նչ ըրին...,—
*Ալ չըկըրցա՛ն Իրենց Թուրեր կալանի *) մէջ դընէի՛ն,*
*Շուտ պարզեցին — տըկլո՛զ *) Թըրեր — Հացի Սեղ'նի Լաթին տա՛կ:*
Դաւիթ դընաց նըստաւ Իր Տեղ՝ վերի՛ կողմ·
Համոզ դիտէ՛...՝ Թըրեր տկըլոզ՝ Սըփռոցին տա՛կ են դըրեր,
Վերցուց ըսաւ, — «Նորեկ Հիւրին՝ պէտք է Սեղան նորոգե՛նք»:
Այդ Քառասուն-Մարդ՝ թէ, = «Շէ՛ն մընաս, պէտք չըկա՛յ...
Մեր Սեղանը՝ Աստուած տըւեր՝ ի՛նչ որ ըսես կայ՝ կ'ուտենք...»:
— «Մարդի՛կ, Դուք ա՛լ,–Համոզ կ'ըսէ–, աս ի՞նչ խօսք է որ կ'ընէք,
Նոր Հիւրի հետ՝ Սեղան պէտք է նորոգուի՛...»:
Անոնք ալ թէ, = «Ուտենք, խըմենք՝ ապա՛ Սեղան վերցընեն...»:
*Խանդուտ-Խաթուն ելաւ Հրամե՛նց *) ուղարկեց·*

---

*) Քէթրիլ, Թեղիլ, Ծռիլ: *) ՄԷԿ (ապտակ), Թափո՛վ, ուժո՛վ (ապտակ մը): 2–2) Պատմողին ոճն է· կըկրկնէ՝ քաղցրութիւն եւ ուժգնութիւն տալու վէպին: *) Կալած, Պատեան: *) Տկլոզ, Մերկ: *) Հրամեցց, Նախընթրիք:

Կերան պըրծան՝ մէյմէկ Պարգե՛ւ-տըւին Հացը Բերողին։
Դաւիթն ալ ի՞նչ տըւաւ Անոր՝ Ի՛ր կողմէն, —
Մատնին հանե՛ց Իր ձըկոյթէն 1)՝ եւ Ախսէին մէ՛ջ նետեց։
Հացւոր–Աղջիկ՝ Ախսէն Ձեռքին վրա՛յ բըռնած՝
Այդ Մատնիին ծանրութեան տակ չըտոկա՛ց,
Ախսէն Ձեռքէն վա՛ր ձըղեց...,—
*Ձըրընդո՛ցը *) ելա՛ւ Դետնէն..., Ախսէին հետ թըրթըռա՛ց...,*
Իրեն Տեղէն՝ Խանդուտ–Խաթո՛ւն ալ լըսեց։
Դաւիթ Սինին Դետնէն վերցուց՝ Հաց–Բերողին Ձե՛ռք տըւաւ.
Մատնին առաւ՝ անցուց Անոր աջ Թեւի՛ն,
*Եկաւ հասաւ Վըղին քովը՝ ինչպէս Սայլի երկաթ Օղ *) —*
— «Դէ՛, տա՛ր,–ըսաւ–, Պարգե՛ւ ըլլայ այդ՝ Բեղի...»։
[Ինք դիտէ՛ր որ Իր Մատանին Խանդուտի Ձեռ պիտ՛հանէր]։
Նաժիշտ մինչեւ Ներսի Սենեակ Իր Տիրուհու քո՛վ դընաց՝
Այդ Մատնիին ծանրութենէն յոդնեցա՛ւ...։
— «Աղջի՛կ,–ըսաւ Խանդուտ–Խաթուն–, ի՞նչ ղըրընդոց էր ելաւ»։
= «Ասծո՛ւ սիրոյն, Տիկի՛ն,–ըսաւ–, այդ Սայլի–Օղ՝ Թեւէս հա՛ն»։
Ըսաւ, — «Ա՛ս ո՞վ է տըւեր...»։
= «Այդ Նորեկ Հի՛ւր տըւաւ Ինձ՝
«Դըրամի տեղ՝ Բեղի Նըւի՛ր տար» ըսաւ...»։
Խանդուտ–Խաթուն ըսաւ, — «Աղջի՛կ, Բեղի՛ մընան Դըրամներ,
Մինակ՝ Մատնին տուր Ինձի՛...»։
Մատնին Թեւէն հանեց դո՛ւրս՝
Անցուց Իրեն Բութ–Մատին 2)։

188. Աղաճդերին՝ Դաւիթ ե՛տ առնել Թուրերը՝ ե՛փօրէ ե՛լեցնել Պարկ

*Դաւի՛թն ըսես...՝ Գինու չոգոլը *) դեռ Գըլուխ *)՝*
— «Համո՛ւլ,–ըսաւ այս Տունին մէջ՝ Գըտուր–մըտուր, բան չկա՛յ,
Մէկ Զըմերուվ, կամ մէկ Սեխ մը, — բերի՛ր Սեղան՝ որ ուտե՛նք...»։

---

*) Ձրնգոց, դետին ինկած մետաղի հանած ձայն։ *) Օղ, դօղ, (ողն), Սայլի ծանր անիւներու երկաթէ չրջանակը (գետինին քսուող մասը)։ 1–2) Խանդուտի բթամատին հաստութիւնը՝ հաւասար էր ուրեմն՝ Դաւիթի ճկոյթին...։ *) Շոգոլ, Շոգի, կազ, ալքոլ։ *) Գլուխ, Գլուխին մէջը, գլխէն չ'ելած։

Գացին բերին խոշոր Սեխ ու Զմեռուկ,
Դաւիթն ըսաւ, — «Դանակ մը կամ թո՛ւր մը տըւէք՝ որ կըտրենք»:
Այդ Ֆառաւունները՝ «Դանակ ու Թուր չ'ունի՛նք» ըսին, ուրացա՛ն:
Դաւիթ Աչքը ինկաւ Պատին ու տեսաւ՝
Որ այդ Ֆառաւն Մարդիկներու Կալաններըը 1) կախո՛ւկ են՝
Բայց Թուրերը՝ մէջ չըկա՛ն...
Ո՛ր կողմ նայեց՝ Անոնց Թուրեր չըտեսա՛ւ..,—
Ինքիրենը ըսաւ՝ «Ատոնք Թուրերն ինչո՞ւ պահեցին...»:
Դարձաւ կանչեց, — «Տըղա՛յ,–ըսաւ–, եկէք Սեղան վերցուցէ՛ք,
Այդ Հացերը՝ մե՛ղք է՝ կ'երթան Ոտքի տակ...»:
Այդ Ֆառաւուններն ըսին, = «Սըփոռոց Թող մընայ՝
Հաց կըբերեն՝ Սեղանին վրա՛յ կըդընենք...»:
Դաւիթ վերցուց՝ ըսաւ, — «Սըփոռո՛ց կ'երթայ Հացին ետեւէն,
Հացը չի՛դար այդ Սըփոռոցին ետեւէն...»:
Համոզն ըսաւ, = «Սանհա՛յր–Դաւիթ, այդ Սըփոռոցը տուր ասդի՛ն,
Ճանճը Գըլխիդ վրայէն կ'անցնի՝ զարկ Քըցո՛ւր...»:
Դաւիթի խելքն եկաւ Գըլո՛ւխ, հասկըցա՛ւ...,—
Ձեռքը նետեց Սեղանին,
Սըփոռոց վերցուց՝ դէ՛ն տըւաւ,
Մէկ ալ նայեց...՝ ի՛նչ տեսնէ...,—
Ֆառաո՛ւն Թուրեր՝ տըկլո՛ր՝ դըրած Լաթին տա՛կ...—
Թուր մի՛ ըսե՛ր..., — մէյմէկ Շեղփիկ ու Դանա՛կ...:—
— «Օ՛–օ՛...,–ըսաւ–, դըրեր են տակ՝ որ զարնեն՝ Չիս ըսպանե՛ն...,
Անո՛ր համար՝ չէին ուզեր որ Սեղանը վերցընեն...»:
Ու Ձեռ տըւաւ՝ այդ Թուրերը Ժողվե՛ց Ամեն՝ մի՛ացուց,
Ֆառաո՛ւն Թուրեր՝ բոլո՛րը մէկ՝ կանեփի պէս ոլորեց...,—
Բուռ մը Լուցկի՝ ինչպէս կոտրես, կամ ինչպէս Թուղթ կըծալես,—
[Ինչ կոտրեցաւ, ինչ *) մըլրեց... *)],
Ֆառաո՛ւն Թուրն ալ՝ Իր Ձեռքին մէջ՝ այնպէս ծըռեց, ծըռմըռկեց,
Փաթթեց ըրաւ Ապարանջա՛ն պողվատէ,
— «Համո՛զ,–ըսաւ–, եղբա՛յր Համոզ, արի վերցո՛ւր այս երկաթ,
Տար ձըգէ՛ Իմ Ձիուս Պա՛րկը՝ ինչ Թամբին վրայ կապա՛ծ է,

---

1) Կ·87՝ կալուն՝ ուղղել՝ կապան (պատեան): *) Ինչ, Մաս մը: *) Մշրել, փչրել, մանրել:

Աղէկ բեւեռ ու Պա՛յտ կ՚ըլլայ Իմ Ձիուն։
Երբոր Աստուած յաղողըննէ՝ Տո՛ւն երթամ՝
Ինչ ժամանակ Իմ Ձին պայտեմ՝ կ՚ընենք Իրեն Պայտ 2) ու Դամ...,—
Տարւան Պայտին ու Բեւեռին կըբաւէ՛...։
Ասոնք աղէկ Ըո՛ւմ ալ կ՚ըլլան Գուբանի...,
*Ու Տըղոց ալ՝ Մախաթ, Հերիւն, ու կանկըռհան *) կըչինենք,*
*Կամ թէ կ՚ընենք Քաղհանիչ *),—*
*Կ՚երթան կ՚խաղան, Իրենց համար Գըռդի՛կ *), Բանչա՛ր կըհանեն...»։*
Համոլ առաւ՝ տարաւ կոխեց Ձիուն Տոպրակն ու կըղպե՛ց,
Եկաւ Իր տեղ՝ Դուռը բըռնեց ու կեցաւ։—

764. Դաւիթ Կ՚ուզէ Որ Խաղցուս Իր Ըճարեիքն Ըճարէ

Դաւիթ կանչեց, — «Քաւո՛ր–Գորգիզ, ա՛լ արի Դուն Նե՛րս մըտիր,
Տուն մընաց Մե՛զ, Բակը մընաց Հաւերո՛ւն...»։
Այդ Քառասուն Մարդե՛րն ըսես՝ այնպէ՛ս վախցան Դաւիթէն՝
Սարսափ տըւաւ Իրենց վըրայ, Մէկը չ՚ինչխե՛ր՝ ձայն հանէ... .
Մէկմէկու Աչքէ իրիչկացին 1), ըսին Իրենց մըտքին մէջ,—
«Աղէ՛կ որ Մենք չ՚ելա՛նք զարկինք Դաւիթին...,
Թէ խարուէինք՝ Իրեն զարկա՛ծ ըլլայինք...՝
Դաւիթ հիմա՝ Մեզ Ամե՛նքս ալ կ՚ըսպանէր...»։
*Բայց՝ Քըթուեցան *), ըսին, — «Ա՛յ Մարդ, ի՞նչ ըրիր...,*
Դուն ի՞նչ Մարդ ես, որ Մեր Թըրեր կոտըրտեցիր՝ նեռեցիր...»։
Դաւիթն ըսաւ, = «Ջ՚ըլա՞յ որ Դուք դըժգոհ էք.՞.՞.՞»։
Ու Համոլին դառնալով՝
— «Համո՛լ,–ըսաւ–, կանչէ՛ Ծանդուտ Քող վա՛ր գայ,
Նայինք ի՞նչպէս Քառասո՛ւն Ըմբիչ հոս անհարկի կըբռնէ...,
Մեղա՛ն կուտայ, Հա՛ց կըկերցնէ, կըպահէ...։
Քող գա՛յ այստեղ, ո՛ր Մարդ որ Ինք կ՚ուզէ ընորել՝ Քող բըռնէ՛,
Մէկալները էլնեն երթան Իրենց Տո՛ւն...»։

---

2) Հ·40՝ սօլ՝ *ուղղել՝* Ծալ (պայտ)։ *) կաճկռհան, կանկառ հանելու գործիք։ *) Քաղհանիչ, Բանչար հանող գործիք։ *) Գըռզիկ, Գարնանային ուտելի կոճղէզ մը (գետնախնձորի վայրին)։

1) Իրարու աչքին նայեցան։ *) Թքուիլ, Մրդոխել։

Ան ալ՝ Համօլ՝ ելաւ դընաց Խանդուտի քով՝ ու պատմեց՝
— «Այդ հաստակողն եկեր,–ըսաւ–, այսպէ՛ս այսպէ՛ս կըխօսի…,
Մարդերուն ալ՝ Թըրերն առեր՝ ամենքմէ՛կ կոտրտե՛ր,
Լեցուցեր է Զիւն Տոպրակն ու կ՛ըսէ,—
«Խանդուտ–Խաթուն թող վա՛ր գայ,
*Ո՛ր Մարդ որ ինձ բըռնել կ՛ուզէ՝ թող պահէ *),*
Մէկալները դառնան երթան Իրենց Տո՛ւն»…»:—

755. Խանդուտ Իր Մատնին Կ՛ընետ Դաւիթին

Այն ժամանակ՝ Խանդուտ–Խաթուն ի՞նչ ըսաւ.—
— «կանչէ՛ թող դան՝ Իմ Առաջքին տա՛կ կենան,
Եւ ամեն Մարդ՝ Իրեն Գըղակ բըռնէ Ձե՛ռ,
Ես ալ վերէն Իմ Մատանին կընետեմ,
Ո՛ր Գըղակին մէջ որ իյնայ՝ Ես այն Մարդը կըբռնեմ,
Մէկալները թող երթա՛ն…»:
Ան ալ՝ Համօլ՝ կանչեց ըսաւ, — «Ա՛յ Մարդեր,
Ելէք եկէ՛ք՝ Պատըշդամին տա՛կ կեցէք,
Ձեր Գըղակները՝ Ամենամէկըդ՝ Ձեր Ձեռքին մէ՛ջ բըռնեցէք·
Խանդուտ–Խաթուն Իր Մատանին կընետէ՛,
Ո՛ր Գըղակին մէջ որ իյնայ՝ Ինք այն Մա՛րդը կըբռնէ,
Մէկալներըդ կ՛երթաք Տո՛ւն…»:
Այն ժամանակ՝ Քառասուն–եւ–մէկ Մարդ՝ կանգնեցան մէկ շարքով,
Խանդուտի դէմ՝ Պատուհանին տակ կեցա՛ն,
Ամենամէկը Ի՛ր Գըղակն ալ՝ բըռնեց Իր Ձեռք՝ ըսպասե՛ց:
Խանդուտ–Խաթուն՝ Պատըշդամէն նայեց՝ Դաւիթ՝ երբ տեսաւ՝
«Ի՛նչ կըտրիճ Մա՛րդ, ի՛նչ խօրո՛ժ է…»,–ըսաւ Իրեն մըտքին մէջ:
Եւ Իր Մատնին ձըգեց Դաւթի բա՛ց Գըղակին մէջ իննկաւ:
Այդ Քառասունն ի՞նչ ըսին.—
— «Մենք հաճ–հաւան չե՛նք ասոր…,—
Ան՝ դիտումո՛վ նետեց Դաւթի Գըղակը…»:
Մատնին տարան՝ մէ՛կ ալ ձըգեց՝ նորէն իննկաւ Իր 1) Գըղակ…:
Այդ Քառասուն–Մարդ՝ նորէն ըսին, — «Ան՝ դիտումո՛վ է կ՛ընէ»:

---

*) Պահել, վար դնել: 1) Դաւիթի (գղակին մէջ):

756. Խաճդուռ՝ Սիրոյ-Խճճորը Կ'ընեէ Դաւիթին

Խանդուռն եկաւ՝ այս անգամիս՝ Համոզել ղըրկեց ու ըսաւ,—
— «Երթան,—ըսաւ—, Քառասուն Մարդիկ, Դաւիթն ալ հետ միատեղ,
Պարտէզին մէջ, Աղբիւրին քով թող կենան,
Ու դուն՝ մէկ–մէկ՝ անցնին տեսնեմ՝ Լուսամուտիս առջեւէն,
Ես իմ Խընճոր Պատըշդամէն կընետե՛մ...,
Որ՛ Սըրտին վըրայ զարնեմ իմ Խընճոր՝
Իմ՝ հաւնածը այն Մա՛րդն է...»:
Եկան Քառասուն այդ Հմբիչներ՝ զարդարուեցա՛ն, կոկուեցա՛ն,
Գացին Պարտէզ՝ ու կանգնեցան Աղբիւրին քով՝ կ'ըսպասեն:
Խանդուտ տեսաւ որ Դաւիթը Անոնց հետ չ'է՛, պակա՛ս է,
Իմա՛ց տըւաւ որ «Դաւի՛թն ալ գայ այնտեղ»:
Եկաւ Ա՛ն ալ կանգնեցաւ.—
Ամենք՝ մէ՛կ–մէկ՝ անցան գացին Պատըշդամին առջեւէն:—
Խանդուտ–Խաթուն՝ երե՛ք անգամ վերէն նետե՛ց Իր Խընճոր,
*Երե՛ք դիրն *) ալ՝ Իր Խընճորը զարկաւ դըպցուց Դաւիթին:*
Այդ Հմբիչներ այս որ տեսան՝ ըսի՛ն դըժդոհ բերանով.—
— «Ա՛յսքան տարի եւ ամիս է՝ որ Մենք այստեղ կ'ըսպասենք՝
Խանդուտ–Խաթուն Իր Խընճորը Մեզնէ Մէկի՛ն չընետեց,—
Ասօր Նետեց Սասնու Թըլոր–Դաւիթին...»:
Դաւիթ դարձաւ այդ Մարդերուն՝ ըսաւ, — «Դուք ի՞նչ կ'ընէք հոդ,
Ելէք գացէ՛ք. Խանդուտ–Խաթուն Ձեզնէ ոչ մէկ չի՛ ուզեր... .
Ձ'ըլլա՞յ նորէն դըժդոհ էք...,—
Կեցէք՝ Ձեզի դըժդոհի՛լ մը նըշանց տամ...»:
Ան ալ այնտեղ ի՞նչ ըրաւ.—
Մէյմէկ Ապտա՛կ զարկաւ Անոնց ամենմէկուն երեսին,
Քառասուն Մարդուն՝ քառասո՛ւն Ապտակ որ զարկաւ՝
Քառասունին ալ՝ Վիզեր Ծըռեց վեր'Ուսին...,—
— «Ելէ՛ք հիմա, դարձէ՛ք,—ըսաւ—, գացէ՛ք Ամենքդ Ձեր Տուներ...»:
Եկան Ատոնք՝ Ծըռվիդ–Ծըռվիդ՝ որ երթան՝
Դաւիթ վերցուց ըսաւ, — «Մարդի՛կ, դէ՛հ, կեցէ՛ք,
Ձեր Վիզ չըտկեմ՝ այնպէ՛ս գացէք Ձեր Տեղեր...»:
Ու Քառասունին մէյմէկ Ապտակ նորէ՛ն զարկաւ մի՛ւս կողմէն՝
Քառասունին ալ՝ Ծուռ Վիզերը չըտկըեցա՛ն Իրենց տեղ...:

---

*) Դիր, Հեղ, անգամ:

Ելան Դաւթի Զեռ–Ոտ պագին, հրաժե՛շտ առին Իր մօտէն՝
= «Մենք գնդ եղբա՛յր, Դաւի՛թ»,–ըսին Ամենմէկը մէկ–բերան,
*Ու կանդնեցան՝ ինկան ճամբայ դացին Մէյմէկ *) Իրենց Տեղ 1)։*

757.– Վարդնոցի Ցեսակցութեան Նախօրին

Յանդուտ–Յաթուն՝ այդ Գառասուն Ըմբիշներէն Դաւիթին էր
[հաւնեցաւ,
Ըսաւ՝ «Դաւիթ Թող գայ Իմ մօտ ձա՛շ ընէ,
Մէկալներուն՝ Թէ կեցեր են՝ Հացը տանին Իրենց տեղ»։
Այն ժամանակ՝ Դաւիթ քըշե՛ց՝ ուղեց երթալ Յանդուտին,
«Ձէ՞ որ ահա՝ Սիրոյ–Ըընձաղն Ինձի՛ նետեց Իր կափքով»,—
Ըսաւ Դաւիթ՝ Իր Հօրեղբօր խըրատն այնտեղ յիշելով։
Ան ալ դարձաւ եւ ի՞նչ ըսաւ Համոզին.—
—«Քաւո՛ր–Դորդիզ, ես ու Յանդուտ՝ Մենք ե՞րբ Իրար պիտ՛տեսնենք,
Մէկմէկու հետ զըրո՛յց ընենք առանձին...։
Գընա ըսէ՛՝ «Մէկ դո՛ւրս եկուր՝ որ Քու Հասակ ես տեսնե՛մ...,
Դուն Ինձ Պատկեր ու Քո Գի՛րը ճամբեցիր,
Իմ եռեւէն Մա՛րդ զըրկեցիր..., ելայ եկա՛յ Քեզ համար»...»։
Համոզ զընաց Յանդուտի քով՝ Թէ՝ — «Դաւիթը ա՛յս կ'ըսէ,—
«Ես ու Յանդուտ Մենք ե՞րբ Իրար պիտ՛տեսնենք,
Մէկմէկու հետ զըրո՛յց ընենք առանձին.
Թող մէկ դո՛ւրս գայ՝ որ Իր Հասակ ես տեսնե՛մ...»։
*Յանդուտն ալ Թէ, = «Դաւիթին ըսէ՛՝ «Մի՛ վըռազնար *) այդչափ ալ,*
Այսօր ուշ է, իրիկուն է, գընա Տեղդ՝ ու քընի՛ր,
Վաղ առաւօտ՝ Ուխտի օ՛ր է՝ ես Ո՛ւխտ ունիմ՝ դո՛ւրս կուգամ,
Լուսուն Թող գայ Իմ Վարդընոց 1)՝ Աղբիւրին քով՝ Ձիս գըտնէ 2)։

---

*) Մէյմէկ, Ամենմէկը։ 1) Կ·90՝ «Յանդուտ մէկ–մէկ բռնեց այդ ըմբիշները՝ պատուհանէն նետեց դո՛ւրս, ինկան գետին՝ մեռան։ — «Վա՛յ, վա՛յ, ըսաւ, այդ Մարդերը եկեր էին որ զիս տանէի՛ն...»։ Դաւիթ նայեց՝ ծծղաց ըսաւ՝ «Փա՛ռք քեզ Աստուած, իմ կնիկը ինձմէ՛ ալ կտրիճ է»...»։ *) Վռազցող, Շտապել։

1) Վարդերու պարտէզ, վարդաստան. գիւղ–բաղի։ 2) Կ·28՝ *Բաղնիքէ դարձի ճամբուն վրայ է որ կ'հանդիպին, Յանդուտի հօր կողմէն թելադրուած։*

Ես ու Դաւիթ Իրար տեսնենք, Մէկմէկու հետ գըրո՛յց տանք...:
*Ես հոն կուգամ՝ Իմ Քառասո՛ւն Աղջիկներու *) հետ մէկտեղ.—*
Քըսան Աղջիկ Իմ առջե՛ւն է, ու Քըսան ալ Իմ ետե՛ւ...,
Թէ որ Դաւիթ Չիս չի՛ ճանչնար առաջէն՝
Ես՛Քը Թիզ 3) ալ՝ Մխուանէրէն Ես բա՛րձր եմ,— 4)
Թող իմանայ որ Ե՛ս եմ...»:
Չե՛ս ըսեր ո՛ր՝ այդ Աղջիկն ալ ի՞նչ Աղջիկ է եւ ո՞վ է...:—
Չէ՞ Աստնք ալ՝ Բաղդատ–Քաղքի Իշխաններու ցեղէ՛ն են:—
Առիւծ–Մըհէր՝ Սասնոյ վըրայ երբ կ՛իշխէր՝
Աստնք ցեղով–ցեղականով՝ Ամբառնո՛ց կուգային,
Իրենց Վըրան կըզարնէին Մովսասարի բարձունքներ:
Առիւծ–Մըհէր՝ Աստր Մեծ–Մօր, — Խանդուտի Մեծ Մո՛րը հետ —
Նըստեր–կայներ, տեսնըւեր էր՝ ամիսներո՛վ, տարիո՛վ 4),
Եւ այդ Աղջիկ,–Խանդուտ Խաթուն–, Ջոջ–Մըհէրի արի՛ւնն էր.
Ջոջ–Մըհէրի Սերունդէ՛ն էր՝ ու մէ՛կ Աստուած կըպաշտէր:

758. Դաւիթ Ու Խանդուտ՝ Արդուզարդ ըրած՝ Կուգան Վարդընոց

Մընա՛ց մինչեւ Աղօթքան,—
Լուսաբացին՝ Դաւիթ ելաւ կանգնեցա՛ւ:—
Լաթեր Թոթուե՛ց, Զեռք ու երես լըւաց–մաքրեց, հագուեցաւ,
Համոզի հետ ելան գացին Արքունական մեծ Գարտէզ 1).
*Գացին ողման *) Վարդընոցի Աղբիւրին դէմ՝ ու կեցա՛ն:*
Խանդուտն ըսես՝ իրիկունէն Բաղնի՛ք մըտաւ լողացա՛ւ,
Լուսաբացին՝ չուտ մը ելաւ՝ Իր Գըլուխը յարդարեց,
Բուրմունք քըսեց, Հայլին Զեռքը՝ նայեց՝ դարձաւ, չըտկըտեց,
Եղաւ ինչպէս Գարնան–Ծաղիկ, հուրնի–հրեղէ՛ն մէկ Աղջիկ,—
Որ օրերո՛վ չ՛ուտե՛ս–չ՛խըմե՛ս...՝ նըստիս նայիս երեսին...:

Օրն առաւօտ է...: Արեւ նո՛ր տաքցաւ.
Խանդուտ–Խաթունը ելաւ կանգնեցա՛ւ.—

---

*) Աղջիկնե՛ր, նաժիշտներ, պատուոյ օրիորդներ: 3) Հ·442–3՝ բառարան ամիսնիմ (կանգո՛ւն): 4) Ինչպէս է Դիդօն (Didon) դիցուհին՝ Ենէականի մէջ [I· 244]: 4) Տե՛ս Հատ· 205–208 և 219:
1) Փափրակներուն մէջ՝ խաս–բաղչէն: *) Ողմիլ, թիկնիլ, կռթնիլ:

Առաւ իր ֆառսունն նաժի՛շտ Աղջիկները՝ ու վերջին իջա՛ւ։—
Ֆըսան Աղախին առջի՛ւն է ձըգեր, Ֆըսան ալ ետե՛ւ,
Կըքալէ Ինքը ֆառսունին մէջտեղ։
Այդպէս չըքաւոր՝ գընաց ու մըտաւ Արքունի–Պարտէզ,
Վարդերուն մէջէն քալեց դէպ Աղբիւր։
Դաւիթ նայեցաւ Աղբիւրին գովէն, — «Իմ ֆառո՛ր–Գորգիզ,–ըսաւ [Համտօլին–,
Խանդուտ–Խաթունը ո՞ր Մէկն է,–ըսաւ–, ֆառսունին մէջէն...»։
= «Ա՛ն է որ, ահա՝ ինչ եօ՛թ Թիզ բա՛րձր է՝ Ամենուն վերայ»։—
Տըւաւ նըշաններ, — Դաւիթ կընայի՛...։—
*Տեսաւ որ Աղջիկ մ՝՝ հուրնի՛–հըրեղէն... *),*
Շար բըռնած կուգայ՝ ֆառսունին մէջտեղ...։—
Անոր հասակն ալ՝ եօ՛թը Թիզ բա՛րձր է՝ Իր Նաժիշտներէն։—
«Կա՛յ–չըկայ...,–ըսաւ–, այդ մէջտեղինը՝ Խանդուտ–Խաթունն է.
Ա՛ն է՝ ու Ա՛ն է...,—
Գաւակերին նըմանը..., անկէ՛ ալ խօրտո...։
Աչուղներն իրեն ինչքան գովեր են՝ դեռ կէ՛ս չեն ըսեր...»։—
Դաւիթ այնտեղ մէկ Սըրտով չէ՛, — տա՛սը Սըրտով Խանդուտի [վրայ սիրուեցաւ...։—

759. Դաւիթ Ու Խանդուտ՝ Աղբիւրին Վրայ

Խանդուտը եկա՛ւ...։ Ինչ տեսաւ կուգայ՝ Դաւիթ գընաց դէ՛մ։
Դաւիթ որ գընաց Խանդուտի առաջ՝ Նաժիշտներ՝ մէկ–մէկ՝ եկան [ու անցան։
Եկաւ Խանդուտը՝ Տառի՛ հասակով, Թեւերը ա՛յսպէս Կողերէն [կախած,
Վարդի՛ բուրմունքով..., այնպէ՛ս գեղեցիկ...,
Կ՝ըսես Բաղնիքէն դեռ նո՛ր է ելած...։—
Դաւիթ քայլ նետեց՝ գընաց ու հասաւ Խանդուտի առաջ,
Հիմա չի՛գիտեր՝ ուրախութենէն ի՞նչ ընէ այլեւս...,—
Հասաւ Ձեռք նետեց Խանդուտի Վիզին,
Գիրկ բերաւ բոլոր՝ Գըլուխը գըրկեց,
Համբուրեց Անոր ճակատին մէջտեղ...,

*) Հուրքի (հուրենի), Արեւափայլ, արփիապեղ։

Ու դարձաւ՝ երկու երեսն ալ պադեց...,
Այնպէ՛ս պինդ պադեց...՝ որ Բերանին տեղ՝ կապուտցա՛ւ Պադէն 1).
Խանդուտ-Խաթունը՝ բա՛ն չ՛ըսաւ այնտեղ...:
*Դաւիթի Սիրտը դեռ չ՛հովացաւ *)...՝ Մըռո՛ւթն *) ալ պադեց,—*
Ճակատ, երեսներ՝ ու Մըռուէթ պադեց՝ — Ա՛խ չ՛ըրաւ Պադով...:
Դեռ չ՛դիմացաւ...՝ Վի՛դը խըտրտեց, Բերա՛նը պադեց...
Զեռքերէն բըռնեց՝ տարաւ Բերանին՝ Մատնե՛րն ալ պադեց:—
Գըրկուեցաւ՝ ո՛չ մէկ, ո՛չ երկու անդամ...՝ երե՛ք-չորս անդամ...,
Իրարու վըրայ...՝ հարի՛ւր դիր պադեց...,
Ու Խանդուտ-Խաթուն՝ նորէ՛ն բան չ՛ըսաւ...:
Դաւիթն էր, — ելաւ՝ Խանդուտի Զեռքէն բըռնեց ու տարաւ՝
Աղբիւրին վըրայ՝ քովէքով նըստան, Թեւերը ձըղած Մէկմէկի
[*Վըզին,—*
*Դաւիթ՝ Խանդուտի Երեսներէն կաթ, ինչպէս Հերնիկ *) Զագ՝*
[*Իր Մօր Մի՛ծերէն:*
Ալ ան՛ո՛ւշ-անո՛ւշ դըրո՛յց է կ՛ընեն, — Դաւիթն ու Խանդուտ.—
Խանդուտ կ՛ըսէ, — «Ձէ՞ որ Սասմանց Դաւի՛թն ես Դուն իրաւէն...»
= «Ձէ՞ որ Դուն ալ՝ Իմ Խանդո՛ւտն ես...,—կ՛ըսէ Դաւիթ Իր կողմէն—.
Ես՝ Սասմանց Դաւիթ, Դուն՝ Խանդուտ-Խաթուն...»:
— «Դուն ալ ինձ պէս՝ մէ՛կիկ Աստուած կըպաշտես...»:
= «Մէկիկ Աստու՛ած կըպաշտեմ ես, ու կըսիրեմ մէ՛կ կընիկ...» 2):

760. Խանդուտ՝ Դաւթի Թուին Նշանները Կ՛տեսնէ:

Դաւիթ որ այդ խօսք տըւաւ Խանդուտին՝
Խանդուտ Դաւիթի Գըլուխ համբուրեց ու դարձաւ ըսաւ,—
— «Իմ Հայրն ու Եղբայր՝ Աստուած չե՛ն պաշտեր.
Այդ Քառասուն Մարդոց պէս Կըռապա՛չտ են,
Կ՛ուզէին Զիս տան՝ Անոնցմէ Մէկին...:

---

1) *Ժողովրդական երգ մը կ՛ըսէ, — «Կո՛վուլիկո՛ւ, կուվլեմ ձեր տուն: Ձեր կարմիր հարս ճա՛մբէ մեր տուն: Ըսկո՛ւն պադեմ՝ ձէն գայ ձեր տուն»:* *) *Հովանալ, Զովանալ, զոհանալ:* *) *Մռութ, Դունչ, ծնօտ:* *) *Հերնիկ, Հորթի մէկ տարեկան ճագ:* 2) *Ուշադրութիւն՝ չափերուն պէտպիտութեանը՝ այս եւ յաջորդ քանի մը Հատուածներուն մէջ:*

Բայց ես կըպաշտեմ մէ՛կ Աստուած միայն,—
Զեմ ուզեր առնել ո՛չ մէկ կըռապաշտ։
Այդ Քառասուն Ըմբիշ՝ որը մէ՛կ տարով,
Որը հի՛նգ, որ՝ եօ՛թ, որը տա՛ս տարով...՝
Եկեր էին հոս՝ ու ծառայութի՛ւն կ՚ընէին ինձի...,—
Որ ես իրենցմէ Մէկը հաւնէի՝ եւ իմ Աըընճռորը նետէի Անոր...։
Ես յոյս ունէի՝ որ օր մը չէ՛ օր մ՚...՝
Աստուած ճանչըցող կըտրի՛ճ մէկ Ըմբիշ իմ առա՛ջ կ՚ելնէր՝
Ես Ա՛ն կ՚առնէի...։
Հիմա այդ կըտրիճ՝ Աստըծու Տըղան՝ Դո՛ւն ես որ եկար,
Ես իմ Աըընճռորը զարկի Քու Սըրտին,
Քու Ճակատ պագի՛, — Քի՛չ է որ կ՚առնեմ...»։
= «Ու ես ալ՝ չէ՞ որ,–Դաւի՛թն է ըսող–,
Քեզի համա՛ր է որ հոս եմ եկեր...»։
— «Ա՛յ, Դաւի՛թ, ըսէ՛, Քու Նըշա՞ն ի՛նչ է...՝
Որ Դուն Դաւի՛թն ես՝ ու Աստուածապաշտ...»,—
Խանդո՛ւտն է կ՚ըսէ։
= «Ես Ա՛ն եմ,–ըսաւ Տըղայ Դաւիթը–,
Ճիշտ Հա՛յ–Գինին, Տէ՛րը–կենդանին,
Ու Մարութեայի Բա՛րձր Աստուածածին,
Ա՛յր–Փեսրազին՝ որ Իմ Ա՛յ Թեւին...»։
— «Ինձ ցո՛յց տուր,–ըսաւ–, կարո՛ղ եմ տեսնուն *)»։
Դաւիթն ալ Իր Թեւ բացաւ ցո՛յց տըւաւ։—
*Որ Նըշանք *) տըւաւ՝ Մըսէ–Խաչ Անոր Թեւին վըրա՛յ էր,*
Խանդուտն ալ հասաւ՝ բըռնեց Անոր Թեւ՝ Մըսէ–Խաչ պագաւ։—
Այս ալ մէ՛կ Նըշան՝ որ Դաւիթ կ՚առնէ...։—

761. «Հիմա Պագէ՛...՝ Եօ՛թ Տեղով...»

Խանդուտ–Խաթուն դարձաւ մէկ ալ ի՞նչ ըսաւ.—
— «Գիտե՞ս, Դաւի՛թ, այդ Մարդերուն ի՛նչ որ ըսիր Դուն երէկ՝
Իմ Սըրտէ՛ս էր որ ըսիր...»։
= «Ի՞նչ ըսի որ...՝ Քու Սըրտէդ...»։
— «Ըսիր՝ «Որ Դուք Աստծու անուն չէ՛ք յիշեր՝

*) Տեսուի, Տեսքին, տեսնելուն։ *) Նշանի՛ք, ծոյց (տալ)։

Ես չե՛մ թողուր՝ Աստուած–Պաշտող Դուք առնէք» 1)։
Ես լըսեցի՛…, ու մըտքովըս՝ Դաւի՛թ, դիտե՞ս ի՞նչ ըսի…,—
«Եթէ Դաւիթ իմ մօ՛տն ըլլար այս պահուս՝
Կըհասնէի՝ եւ իր Գլուխ կըպագնէի՝ եօ՛թ տեղով…»։
= «Հիմա՛ պագէ…,–ըսաւ Դաւիթ–, եօ՛թը անգամ եօ՛թ տեղով…,
Այդ Ձո պըղտի՛կ Բերանով…»։
Ծանդուտ պագեց՝ եօ՛թը անգամ…՝ կարօտո՛վ…։—

768. Նործիլ Ցղայ՝ Ձդիմացաւ՝ Ծիծեռուն Մէջն Ալ Պագեց

Դանի՛թն ըսես…, նործի՛լ Տըղայ, ի՛նչ որ պագաւ չըբաւե՛ց…,—
*Սիրտը նորէ՛ն չըհովացաւ, նորէ՛ն–նորէն պը՛ռչ *) պագեց…։—*
Զախ Ձեռքովը՝ Ծանդուտ Վիզէն պի՛նդ դըրկած՝
*Ալ Ձեռ պարզեց դէպ Անոր Սիրտն *) ու Ծիծեր,*
Ուզեց երկու Ծիծին մէջտե՛ղն ալ պագնէր…։—
երբոր Դաւիթ ուզեց երկու Ծիծին մէջտե՛ղն ալ պագնէ՛ր…՝
Ծանդուտ–Ծաթուն չո՛տ ամըչցաւ…, բարկացա՛ւ…՝
*Մէ՛կ բըռընցքի *) զարկաւ Դաւթի Ջիթ–Բերնին…,—*
— «Դեռ չե՛ս եկած,–ըսաւ–, իմ մօտ…՝ կ՝ուզես Ձիս Հա՞յ դարձընես,
Ձիս խաչաձե՛ւ կըպագնես…։
Այն մէկ Պագը որ Դուն առիր Իմ Ճակատէն, երեսէն՝
Ես տըւի Ձո կըտրըճուքեան՝ ու Ձո երկա՛ր Ճամբային՝
Որ Դուն կըտրեր ու եկեր ես, — բարո՛վ եկեր՝ Ինձ համար…։
Այն Պագերն ալ՝ որ Դուն առիր, թէ երեքո՛վ, թէ տասո՛վ…՝
Անոնք ալ Ձո սիրո՛յն համար Ես տըւի,
Որ Դու նործիլ Տըղա՛յ էիր՝ չըդիմացա՛ր, պագեցի՛ր…։—
Ա՛լ այդ մէկը…՝ Դուն ի՞նչ ըրիր…, չ՝ամըչցար…՝
Որ Իմ երկու Ծիծերուն մէջ՝ Իմ Սիրտ պագե՛լ ուզեցիր…։
երե՛ս, Ճակա՛տ, Աչք ու Բերան՝ համբուրելու հրաման կա՛ր,
Բայց անկէ վար…՝ հրաման չըկա՛ր պագելու…։
Ինչ ժամանակ որ Ես ու Դուն պըսակուինք՝
Ես Ձո՛ւկդ եմ ու Դուն Ի՛մս ես,—
Ո՛ր տեղ պագես՝ Դո՛ւն գիտես… .

---

1) Տե՛ս Հատ. 749։ *) Պը՛ռչ, Շաչուն ձայնով (համբուրել)։
*) Սիրտ, կուրծք, լանջ։ *) Բռնցքի, բռունցք, կռուի։

Հիմա ինչ ո՞վ արտօնեց որ՝ Մինձերուս մէ՛ջն ալ պագնես...»։
Խանդուտն ալ հոն մէ՛կ իրըննչքի որ զարկաւ...՝
Դաւիթի Մօր Ծըծի կաթը՝ իր Պինչերէն դո՛ւրս եկաւ...,
Դաւիթ Բերնէն ու Պինչերէն՝ արիւն փըլա՛ւ ու գընա՛ց...։—
Ինչպէս Աղբիւր՝ Ծորակներէն Ջո՛ւր կընեաէ դէպի վա՛ր՝
*Այնպէս՝ արիւն ու արընջուր *) Դաւիթի Բիթէն ու Բերանէն*
[բըխբըխաց։
Խանդուտ–Խաթուն՝ դեռ բարկացած՝ աւելցուց,—
— «Ալ չե՞ս ըսեր..., Օղան, Դօղան Թաղաւորնեը՝ Ինձի Գերի՛
[ես բերեր,
կամ թէ Արքատ–Թաղաւորի Գըլո՛ւխն է որ բերեր ես...» 1)։

768. Դաւիթ՝ Զայրացած՝ Կ'ուզէ Մեկնիլ

*Դաւիթ՝ այդ տեղ՝ մէ՛կ ժամու չափ մեռուկ *) ինկաւ ու մընաց...։—*
Ուշը գացե՛ր էր...։ Երբ խելքն եկաւ Իր Գըլուխը՝ վի՛շտ 1) ըրաւ...,
— «Համոօ՛լ, Համոօ՛լ,–կանչեց սըրտնեղ, զայրացած–,
Գուտ մը Ջո՛ւր բեր՝ Իմ Բիթ–Բերան ես լըսամ...»։
Համոօլ վազեց չուտ Ջո՛ւր բերաւ, Դաւիթ լըա՛ց Բիթ–Բերան.
— «Քաւո՛ր–Գորգիս, քաչէ՛,–ըսաւ–, Իմ Ձին բե՛ր,
Ելնեմ բըրդե՛մ...՝ քանի Աստնց Մարդերուն Աչը դեռ խուճ են...
Մէկ Աղջի՛կ մը զարկաւ Ինձի..., ալ ո՛ւր կ'մընան Տղամարդե՛ր,—
Իրա՛ւ Աստնց Գըլոճ 2) կոտչո՛վ է եղեր...։
Քաչէ՛ Իմ Ձին՝ ելնեմ աւրե՛մ այդ Քաղաք...»։
Գորգիս Դաւիթին աղաչեց ու Սիրտն առաւ,—
= «Մընդի՛րք կ'ընեմ Բենէ,–ըսաւ–, ասօր ո՛ւշ է, Թող մընա՛յ,
Լուսուն ելի՛ր՝ Քաղաք կ'աւրե՛ս՝ ի՛նչ որ կ'ընես՝ Դո՛ւն գիտես.
Հիմա կ'երթամ՝ Խանդուտ կ'առնեմ՝ կըբերեմ...,
Թէ չ'եկաւ՝ Ձիս ըսպանէ՛...»։

---

*) Արիւնոտ Թարախ։ 1) Հ·440՝ կ'պակսի՝ (այսինչ) Թագաւորի գլուխն ես բերեր։ Համմտ.՝ Տրդատ արքայէն բռնուած–բերուած՝ Գոթաց Հուչէ Թագաւորի պարագան՝ (Պլան· 128), Տե՛ս Հատ· 777 և 782։ *) Մեռուկ, Մեռածի պէս, ուշագնաց։*

1) Կ·28՝ «կայր = երդում»՝ ուղղել՝ վիշտ, (գահր)։ 2) Տե՛ս Հատ· 728, ծնթ· 5։

Խանդո՛ւտն ըսես՝ երբոր Դաւիթ իր Արիւնին հետ տեսաւ՝
Փախաւ դընաց Մարմար–Աղբիւր՝ որ մէ՛կ մըտնար՝ լըւացուէր։
Դաւիթ՝ իր տեղ՝ բարկութենէն՝ Մահճին վըրայ պառկե՛ր է,
Ձուն չի՛ տանիր..., թէ՝ «ե՞րբ լոյսը կըբացուի...՝
Ելնեմ բըրդե՛մ Քաղաք–Քաղքով, աւրեմ ձըդեմ՝ ու երթամ...
Աղջիկ մը որ Արի՛ւն հանեց Իմ Քըթէն...՝
Ալ Իմ ապրիլն անպէ՛տք է...»։—

764. Խանդուտ Դաւիթի Մօտ Կ'երթայ՝ Կ'աղաչէ Որ Մնայ

Գորգիզ ելաւ՝ կաղ–Նաժիշտը Խանդուտի քով ուղարկեց։
Խանդուտն ըսես՝ Պարտէզին մէջ՝ մըտմըտալով մա՛ն կուգայ։
Ներ–Նաժիշտը դընաց ըսաւ, — «Տիրո՛ւհի,
Սեւ պըտո՛ւյտը եկեր վըրաղ..., ի՞նչ կ'ընես...,—
*Շա՛տ լեցուեր *) է այդ Հաստակող, Ամենքս ալ մէկ՝ կ'ըսպանէ՛...*
*Հա՛–հա... *) կուգայ Քու Հօր Քաղաք կ'ընէ Դաւթի Աւերած...,*
Ու Քո Պապու Երկիրները ամեն կ'աւրէ ու կ'երթայ...»։
Համտօլ եկաւ՝ Ի՛նքն ալ ըսաւ Խանդուտին,—
— «Ինչպէս Անոր Սիրտ կուտրեցիր՝ այնպէս երթաս Սիրտն առնես» 1)։
= «Ես կ'երթամ, բայց,–ըսաւ Խանդուտ–, վախնամ զարնէ ըսպանէ»։
— «Դուն մի՛ վախնար, Տիկի՛ն,–ըսաւ–, ես հո՛ս եմ...,—
Եթէ զարնէ՝ Ի՛նձ կըզարնէ..., Դուն կըփախիս դէպի Նե՛րս»։
*Ելաւ Խանդուտ՝ առաւ փունջ մը Քափուր–Վարդ *),*
Նաժիշտին ու Համտօլին հետ՝ եկան Դաւթի Դուռ զարկին։
— «Ուհա՛, ուհա՛,–ըրաւ Դաւիթ–, ի՞նչ աներես են Աստնք...,
Չե՛ն ըսպասեր մինչեւ առաւոն՝ լոյս բացուի...,—
Կ'ըսեն՝ «Հի՛մա ելիր աւրէ ու գընա՛»...»։
Համտօլ վերցուց եւ ի՞նչ ըսաւ Դաւիթին,—
*= «Աստնք քօ՛ղ *) են, կուշով չե՛ն...»։*
Դուռը բացաւ, Խանդուտ գընաց Դաւթի մօտ,
Շա՛տ գորովեց ու փայփայեց..., Վարդն ալ տըւաւ Իր 2) Քըթի՛ն,

---

*) Լեցուիլ, բարկութիւնով բորբոքիլ։ *) Հա՛–հա (ահա–ահա), Մէկ վայրկեանէն միւս, հիմա–հիմա։ 1) Կ·28՝ Թագաւոր–Հայրն է ըսողը։ *) Քափուր–Վարդ, Բազմաթերթ, չատ հոտաւէտ, կարմիր Վարդ, Rosa Centifolia։ *) Քօղ, Անկոտոշ (այծ, ոչխար)։ 2) Դաւթի՝ Իր (Քթին)։

Զեռքէն բռնեց՝ կը քաշքշէր, կո՛ւղէ հանէ՝ տանի վե՛ր,—
Դաւիթ չ՚ե՛րթար, սըրդողե՛ր է: Համոզ, Նաժիշտ՝ կընայի՛ն.—
Ի՛նչքան Խանդուտ Զեռ կընտէ՝ Դաւթի թեւէն կը քաշէ՝
Ուժ չի՛ կըտրեր՝ Դաւիթ Գետնէն հանէ վե՛ր...:—
— «Դաւի՛թ,—կ՚ըսէ—, ինչո՞ւ չես գար...»: = «Էհ՛, չե՛մ գար... .
Ես պիտ՝ ելնեմ,—կ՚ըսէ Դաւիթ—, իմ Զին հեծնեմ՝ ու երթա՛մ...»:
Խանդուտ այնտեղ չա՛տ աղաչեց, — «երթանք Տո՛ւն... .
Ա՛յ տընաչէ՛ր, ի՛նչքան ալ չո՛ւտ կըսըրդոդիս՝ քէ՛ն կ՚ընես... .
երթանք իմ մօտ, երկու խօ՛սք կայ՝ ինձ ըսե՛մ...՝
Նորէն կ՚երթաս՝ Դո՛ւն գիտես...,—
Ես բռնի չե՛մ պահեր ինձ...»: — 3)

765. Խանդուտ կըզգուէ Որ Դաւիթը Համոզէ

Հանեց տարաւ, Հայց-մաց կերան, Սիրտն առաւ.
Խանդուտ-Խաթուն դարձեր Դաւթին ի՞նչ կ՚ըսէ.—
— «Դաւի՛թ,-կ՚ըսէ-, Գըլխո՛ւդ մեռնիմ՝ Արեւի՛դ...,
Ես գիտեմ որ՝ ինձ Սիրտն այնտեղ ելա՛ծ էր...,
Շատ սիրելէդ՝ չէի՛ր գիտեր ի՞նչ ընես...:—
Երբ ինձ Զեռքը Դուն խոթեցիր իմ Սիր-Մոց...՝
Իմ Մէծերը երբոր ինձ Զե՛ռք կ՚առնէիր,
կըճըլթէիր, ու ինձ ուժը՝ ես գիտե՛մ քէ ի՛նչ ուժ է...,—
Իմ Մօր Մըծի կաթը Բերնէս կուգար տա՛կ...,—
Ես նորէն ձա՛յն չըհանեցի, բա՛ն չ՚ըսէ...:
Դու Պա՛գ մ՚ առիր՝ այդ ինձ ճամբուդ համա՛ր էր.
Մէ՛կ ալ առիր՝ կըտրըճուքեա՛նդ համար էր.
Մէ՛կ ալ առիր՝ Աստծո՛ւ սիրոյն համար էր.
Աւելի Պագն ինչո՞ւ առնել ուզեցիր...,—
Հասար՝ երկու Մէծերուս մէ՛ջն ալ պագիր... .
Մինակ Մըծկեր Տըղա՛ն է որ Իրեն Մօրը Մէծերուն մէջ կըպագէ...:
Դուն ինձ՝ Պապու կըտրիճն ես՝ Հոն, ես ալ չէ՞ որ ի՛մ Պապուն...:—

---

3) Դաւիթ՝ հաստակող, Խանդուտ՝ կամակոր, ծնունդ պիտի տային Մհէրի պէս արտակարգ զաւակի մը, Տե՛ս Գտիկ-Մհէրի մասին՝ Հատ. 793, եւ իր ճիւղին վերջին մասերը:

Հասած են որ՝ «Աղջիկ առնես եղդիէ՝
Որ Տըղան դայ Քեռինե՛ր...» 1):
Որ պադեցիր՝ է՛, ես ալ հոն չա՛տ ամըչցայ, բարկացա՛յ...,
*Իմ Ձեռ՝ թափով սանկ չարժեցի՝ Քըթի՛դ առաւ *)՝ արիւնե՛ց...,*
Երեք կաթիլ Արի՛ւն կաթեց Քո Պինչէն...,—
Շա՞տ մեծ բան էր..., տընա՛չէն...»:
Դաւիթ այնտեղ վերցուց Անոր ի՞նչ ըսաւ.—
= «Խանդո՛ւտ,—ըսաւ—, վեր՝ իմ Հոգուն Ո՛վխտ ըլլայ...՝
*Մինչեւ որ ես Իմ վիրս չընեմ *)՝ Քեզ չըտանի՛մ այստեղէն...»:*
—Դաւի՛թ, տնաչէ՛ն, ի՛նչ ալ այդպէս չո՛ւտ սըրդոխի՛լ դիտես Դուն»:
Դաւիթն ըսաւ, = «ես Սասունէն ա՛յսքան ճամբա՛յ կըտրեցի...՝
Քեզի համա՛ր միայն եկայ, հասայ Քեզի ու Քո Դի՛րկ...,
Մէ՛կ դիր Քենէ՝ համբոյր առի՝ Դուն Բըռընցքի՛ մ՝ զարկիր Ինձ...,—
է՛, ես ի՞նչպէս չըսըրդոխիմ ու չերթամ...»:
Խանդուտ–Խաթուն ի՞նչ ըսաւ.—
— «Դաւի՛թ, մե՛ղք որ դեռ Տըղա՛յ ես, Դուն խակի՛ քան չե՛ս տեսեր.
Ձե՛մ ըսեր թէ «Ծանցաւո՛ր ես», կ՚ըսեմ «Դեռ Դուն անփո՛րձ ես»:—
Դուն տեսա՞ր այն Քառասուն Ըմբիչ Մարդիկները՝ կանուխէն,—
Որ Ինձ համար եկեր էին Նըստեր հոս.՞.՞.՞»:
Դաւիթն ալ թէ, = «Հա՛ տեսայ...»:
— «Շատեր կային՝ որ մէ՛կ տարի եկեր էին Նըստեր հոս,—
Այն Մարդերէն Մէ՛կն ալ դեռ Ձիս չէ՛ տեսեր:
*Արեւաել *) Թագաւորի Աղջիկ Խանդո՛ւտն եմ Ես ալ,—*
Արեւմուտի Թագաւորը՝ տակէ առաջ՝ Ձիս ուզեց,
Ես Անո՛ր ալ «Այո՛» չ՚ըսի՛, ու չ՚առի՛...,—
Դուն՝ գալո՛ւդ պէս՝ որ Ձիս տեսա՛ր–չըտեսար,
Դեռ Իրար հետ բարեւ տըւա՛ծ ու չ՚առած...՝
Մէ՛կէն հասար՝ Ձիս գըրկեցիր՝ ու պա՛գ առիր չո՛րս տեղով,
Իմ Երեսը Ցա՛ւ ըրիր... .
Մէկ Մարդ այդպէս բան չի՛ ըներ..., Իմ խելքով...:

---

1) Ըսել կ՚ուզուի՝ «Դուն քո՛ ցեղովդ կըպարծենաս, ես ալ Ի՛մ ցեղովը: *) Առնել, Դպիլ, Հանդիպիլ: *) Փոխ ընել, Փոխվրէժ առնել: *) Արեւաել, Արեւելեան. (Ե·752՝ Արավայել եւ Արավմուտ: Իսկ 880–903 տողերով պատմուած կտորը՝ նման է Զրեհ–Գողվասի եւ Սանասարի մէջադէպին՝ Հատ. 186):

Բայց Դուն տեսա՛ր որ ես այնտեղ ձայն չըհանի, բա՛ն չըսի…։
Հարցընէ՛ր ու տեսնէ՛ր՝ «Մ՛ամ Աղջիկն եմ…, ես ո՞վ եմ…,—
*Կըրնար ըլլալ՝ կըտապալուի՛ր Աղջիկ էի, Հայ *) չ՛էի՛…։*
Որ նըստէիր՝ իրարու հետ խօսէի՛նք…,
Ես Քու խօսա՛ծ կ՛իմանայի, ու Դուն ալ Չի՛ս կըփորձէիր խօսքերէս,—
*Որ իմ խօսքը Քեզի դուր գար *)՝ ու Քո խօսքն ալ Ի՛նձ դուր գար՝*
Նո՛ր այնտեղն պաղ առնէիր, ես ալ Քեզնէ՛ առնէի՝
Այն տեղ Մենք Իրա՛ր եկած՝ Նո՛ր Մէկմէկո՛ւ կ՛ըլայինք,
Կընըստէինք կապուտ-Բերդը, կամ կ՛երթայինք Ձեր Սասուն…»

966. Խանդուտ Կ՛համոզէ, Դաւիթ Կ՛յամառի

— «Դաւի՛թ,—ըսաւ Խանդուտ-Ծաթուն—, ակա՛նջ տուր,—
*Աչուղներուն կըշրջանքով *) Ոսկի՛ կըշռեր տըւեր եմ…,*
Գի՛ր եմ գըրեր՝ Պատկերիս հետ ելեր Քեզի՛ եմ ղրկեր…։—
Որ ես հաւան չ՛ըլլայի՛ Քեզ՝ կ՛ուղարկէի՛ Քեզ Իմ Թուղթ…։
Օղան, Գօղան Թաղաւորներ՝ Ինձ Ուզընական ղրկի՛ր են,
Երկուսին ալ Մատանիներ՝ գըրեր եմ հոն՝ կըմընայ,—
«Որ Երկուքով կըռւիւ՛ գան, ո՛րը յաղթէ՝ Ա՛ն առնեմ…։
Ապա՝ Քո ձայն եկաւ հասաւ Իմ Ականջը այս օրեր,—
Գիր գըրեցի՝ եկար՝ տեսայ՝ Քեզ սիրեցի՛, Քի՛զ կ՛առնեմ…,
Ա՛լ Անոնցմէ եւ ոչ Մէկը չի՛մ ուզեր…»։
Աստուած ալ Քեզ տըւաւ Ինձի՛, Ձիս՝ Քեզի՛,
Ես Քեզ կընիկ, Դուն՝ Ինձ Մարդ…»։
Դաւիթ այնտեղ վերցուց նորէն լո՛ռնէ ըսաւ.—
= «Խանդո՛ւտ,—ըսաւ—, երդում ըրի՝ «Ես Քեզ չ՛առնեմ Ինձի կին՝
Մինչեւ որ գան այդ երկու մեծ Թաղաւորներ՝ ու կըռւին,
Եւ Անոնցմէ յաղթողին հետ՝ ե՛ս ալ կըռւիմ ու տեսնենք՝
Ո՛ր Մէկին որ Աստուած տըւաւ՝ այդ կըտրի՛ճը Դուն կ՛առնես»։
Խանդուտն ըսաւ Դաւիթին,—
— «Առանց կըռւի՝ Ես Քեզ կ՛առնե՛մ, — ինչո՞ւ երթաս կըռւիւ…,
Ես չե՛մ ուզեր կըռւիւ երթաս…, Իմ Սիրտ արիւն մի՛ դարձներ…»։

---

*) Հայ, Հայկական, քրիստոնեայ, աստուածապաշտ։ *) Դուր (դիւր) գալ, Հաճելի, դիւրեկան ըլլալ։ *) Կըշռանիւով, կչիռքով, իրենց ծանրութիւնովը։

Դաւիթ վերցուց ի՛նչ ըսաւ.—
= «Առանց կըռւի՝ ես գեղ առնեմ՝ էրիկ–Մարդ չե՛մ, դընա տե՛ղդ.—
Սասունէն մինչ կապուտ–բերդը, երե՛ք ամսու ճանապարհ՝
Իմ անունը դո՛ւրս է ինկեր՝ երկրէ–երկիր՝ եօ՛թ Աչխարհ...,
Կուտա՞մ ես իմ կըտըրճուքիւն՝ կընկայ մէ՛կ թիզ Լաչակին...,—
Չէ՛, Խանդո՛ւտ, չէ՛...,— գեղ անկըռիւ չե՛մ առներ...»:

ԻԲ. ԴԱՒԻԹ՝ ԽԱՆԴՈՒՏԻ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒՆ ԴԷՄ

767. Կռռւի Համար Մաղթանք Կ'ընեն Դաւիթ

*Դաւիթն ըսես՝ հաստակո՛ղ *) էր, չըկակղեցա՛ւ Իրեն Սիրտ.—*
Իրիկուն երբ մուխն ինկաւ՝
*Ելաւ կըտուր *)՝ վե՛ր նայեցաւ, Գըղակ Գըլխէն առաւ վա՛ր,—*
*— «Բա՛ն չե՛մ ըսեր *)..., է՛ ողորմած Տէ՛ր,–ըսաւ–,*
Ինչքան Աստըղ որ կայ երկինք՝ ա՛յնքան Զօրք ու Զիւռոր,—
Օղան, Դօղան 1), Պարան–Պըռօշ, Սեւ–Թաղաւոր,–ամե՛ն ալ՝
Գան Քաղաքին չուրջը պատեն, Բանա՛կ դընեն՝ ու նըստին,
Կըռի՛ ուզեն Անոր Հօրմէն, տեսնենք ո՞վ է դ'ինք փըրկող... .
դ'ինք առնողն ալ՝ երե՛ք–Հարիւր տարու Հալտը Մա՛րդ ըլլայ...,
Խանդուտ–Խաթուն Իրեն ճարը Ի՛նձ նեռէ...՝
Ելնեմ երթամ Անոնց դէմը կըռիւի...» 2):—
Այն ատեն ալ՝ արդա՛ր էին Մարդիկները,
Ի՛նչ Մաղթանք ալ որ ընէին՝ Աստուած կ'լըսէ՛ր Անոնց ձայն.—
Դաւթի ըրած այդ Մաղթանքն ալ՝ Աստուած լըսեց՝ կատարեց 3):

768. Դաւիթի Զին Ու Խաճդուտ

Դաւիթ՝ լուտուն՝ կանչե՛ց Համոլ, որ Զին քաշէ՝ բերէ դո՛ւրս,
Խանդուտ–Խաթուն վաղեց Դաւթի ետեւէն՝,—

---

*) Հաստակող, Ծամառ, կամապաշտ: *) Կտուր, Տանիք, երդիք: *) Բան չե՛մ ըսեր, Ուրիշ բան չե՛մ խնդրեր, մաղթանքս միայն ա՛յս է որ...: 1) Օղան՝ Ալա՞ն, Դօղան՝ Դաղըստանի՞ իշխանութիւն: 2) Համոլ՝ Ողիսեւսի՝ [XVIII. 279]՝ նոյն ձեւի զայրալից մաղթանքը: 3) Տե՛ս Հատ. 772:

— «Դաւի՛թ, Դաւի՛թ, կեցի՛ր,–ըսաւ–, ես գամ Քու Ձին քաշեմ
[դո՛ւրս»։
Դաւիթ կեցա՛ւ, Խանդուտ դընաց մըտաւ Ախոռ՝ ի՞նչ տեսնէ...,—
Մխուս Քառա՛ուն Մարդոց Ձիեր՝ մէյմէկ Անկիւն կըծկա՛ծ են,
Ձի՛ն իչխեր որ դո՛ւրս փախչին...,—
Դաւիթի՛ Ձին՝ մէկ Սարի՛ չափ՝ Ախոռին մէջ կեցո՛ր է...։
Խանդուտ–Խաթուն Իր Ձեռ նետեց Ձիուն Վիզը՝ որ բըռնէր,
Ձին խըրխընջա՛ց՝ չըճանչըցա՛ւ..., Վիզ չըտըւա՛ւ Անոր Ձեռ,
Գըլուխն այնպէ՛ս թոթուեց նետեց դէպի վեր՝
Որ Խանդուտը թըրը՛փալէն *) եկաւ դըպաւ չոր Գետինն...,
—«Վա՛յ, Դաւի՛թ, վա՛յ,–ըսաւ–, Քո Ձին Ձիս ըսպանե՛ց մէկ դիրուվ»։
Դաւիթ վազեց մըտաւ ներսը՝ Խանդուտ գըրկեց հանեց վե՛ր,—
— «է՛, Ձի,–ըսաւ–, Աստուած Քու խո՛ղք կըտրէ,–ըսաւ, Մարդ՝
[կընիկի կըզարնէ՞...,
Դու չըտեսա՞ր՝ Ան կընի՛կ էր, ես ալ այծտեղ կեցեր էի Դըրան քովի»։
Ըսաւ, = «Խանդո՛ւտ, հիմա Ձեռ տո՛ւր՝ քաշէ դո՛ւրս...»։
— «Հա՞..., միտք ունիս,–ըսաւ Խանդուտ–, Ձիս Քու Ձիով
[ըսպանե՞լ տաս անպատճառ...»։
= «Չէ՛, Ձին այլեւս ձայն չի ՚հաներ. քաշէ դո՛ւրս.
Ան դիտցաւ որ՝ օտա՛ր էիր Դուն ինձի...»։
Խանդուտ դընաց՝ Ձեռը տըւաւ Ձիուն Գըլուխ՝ քաշեց դո՛ւրս,
Փուռկիկն այլեւս բան մը չըրա՛ւ Խանդուտին,
Թամբը դըրին, Դաւիթ ինքը՝ կապեր քաշեց ամրացո՛ւց,
Ելաւ հեծաւ՝ որ երթայ...։—

769. «Եթէ Չ'նկայ՝ Իմ Մարմինը Դիակնեւէց Կ'ըսկէ»

Դաւիթ ելաւ Ձին հեծնելու՝ որ երթայ,
Խանդուտ–Խաթուն կանչեց ըսաւ, — «Համա՛ռ, Անիկ ո՞ւր կ'երթայ»։
= «Ես ո՛ւր կ'երթա՛մ.՛.՛.՛,— Դաւիթն ըսաւ հեգնօրէն —.
Կ'երթամ Արքատ Թագաւորի Գըլուխ բերեմ Գեղ ընձա՛յ...
Օղան, Դօղան՝ Գերի բերեմ՛ Ձեռքիդ տակ...,—
Զուր *) չըբերեմ՝ Դուն ինձ Քոյր ու Մա՛յր ըլլաս *)...»։

---

*) Թրըփալէն, Թրը՛փ ձայնով (իյնալ)։ *) Զուր, Մինչեւ որ։
*) Քոյր ու մայր ըլլաս (ինձի), Գեղի՛ իբր կին՝ չ'մերձենամ. Քրոջ ու մօր պէս նուիրական մնաս ինձ համար։

Ու դառնալով Գորգիղին,—
— «Համո՛ւլ,–ըսաւ–, ահա կ՚երթամ ես Կըռի՛ւ... 1).
Ուրբաթ օրը,–երեք օրէն– 2)՝ եկա՞յ՝ եկա՛յ, — թէ չ՚եկա՛յ...՝
Կուգաք այնտեղ՝ իմ Մարմինը Դիակներէն կըշոկէք։—
Եղաւ որ այդ Թըշնամիները ուժե՛ղ փըրթին իմ վըրայ...՝
Ես չըկըրցա՛յ յաղթեր էի՝ զարնեն ու Զիս ըսպանեն...։
Զեզի ցո՛յց տամ՝ որ իմ Մարմին ճանչընա՛ք.—
Իմ 3) Ձախ Թեւին՝ Մըսէ՛–Խաչն է, Ալ Թեւին՝ Ա՛ստ–փետրագին 4).
Մոմը զարնես Թուղթի վըրայ՝ յայտնի՛ կ՚ընէ Անոր 5) տեղ...։—
Իմ նըշաններն ահա ա՛յդ են՝ Մարմնիս վրայ,—
Զիս կըզատէք՝ ու կըբերէք կըպահէ՛ք 6).
ԶըԹողո՛ւք՝ իմ մաքուր Մարմին՝ Աբեւին տակ չորանայ...,
Կամ Թըռչունի կե՛ր դառնայ...։
Թէ ո՛ղջ մնացի՝ կուգամ՝ Իրար կըտեսնե՛նք...»։—

770. Խաչդուս Ծուցմուցիցներ Կ՚ըճէ Դաւիթին՝ Կուի-Խոտամին Ու Կաճառչուոի Մասին

Ան ալ ճամբան առնե՛ւ տըւաւ՝ ու կ՚երթա՛յ,—
Խանդուտ–Խաթուն ի՞նչ ըսաւ.—
— «Համո՛ւլ,–ըսաւ–, կանչէ՛՝,–ըսաւ–, Այն Հաստակող՝ որ չ՚երթա՛յ»։
Կանչեց...՝ Դաւիթ չըկեցա՛ւ...։—
Ան ալ չուտ մը...՝
— «Համո՛ւլ,–ըսաւ–, որ չի՛ կենար...՝ պօռա–ըսէ՛ Դաւիթին՝
Ինձմէ Իրեն խընդրե՛րք է 1),—
Մեծ փո՛ս մը կայ Ճամբուն վըրայ՝ կըտեսնես՝
«Կըռւի–Ծըրա՛մ» է անուն 2).—

---

1) Ց·46ա.՝ *Դաւիթ՝ Խանդուտի առաջարկովն է որ կ՚երթայ կըռւի։* 2) Կ·29, Հ·443՝ *Հօթ օրէն։* 3) Ա·34՝ *մի՝ ուղղել՝ իմ։* 4) Հ·444՝ *բազպինդ (քազպանդ)։* 5) Կ·90՝ *Խաչ–պատրաստիլ։* 6) *Պահել, թաղել· զմռսելով՝ արքայական կարգի համեմատ, մասնաւոր դամբարանի մէջ, մարմինը ծրարել, կնքել ու պահել։ Համմտ· Թովմա Արծրունիի (էջ 267) մէկ հատուածը (Բ· Հտրվ·)։*

1) Հ·389՝ *Ընճի ֆիլէ ամանէ՝ ուղղել՝ Ընճմէ ֆեզի էմանէք։* 2) Ց·46ա.՝ *Ջանգռուայ դուրան։ ՀՍ·657–670, Կ·29, Հ·389,444, եւն.՝ յիշուած է նաեւ Պողվըռէ–Սիւնի փորձը, որ յատուկ է Մըսրամէլիքի դէմ կռիւի երթալու պարագային· (Հտուծ· 587)։*

Երբոր հասաւ՝ Քու Զին լեցո՛ւր ու քշէ՛,
Թէ թըռա՛ւ անցաւ՝ Դուն գընա՛ կըռիւ,
Թէ չ՛թըռա՛ւ չ՛անցաւ՝ դարձիր՝ ե՛տ եկուր…:
Մէկ ալ ըսէ՛՝ «Երբոր կըռուի՛ս Անոնց հետ՝
Օղան, Դօղան 3) Շըղթայ–կոտրող 4) Թագաւորներ Քեզ ըսեն՝
«Եկուր իմիր Քարադա՛շը 5)՝ որ կըռունք»՝
Դուն ըսէ՝ «Չէ՛՝ կանաչուտի՛ն 6) մէջ կըռունք»·—
Զըլա՛յ իմնես Քարադաշտին մէջ կըռուիս…,—
Օղան, Դօղան՝ եօ՛թ–Գըլխանի կախարդնե՛ր են, կ՛ելնեն երկինք
[ու կ՛իջնեն,
Մէ՛կ կըզարնեն՝ ու Թըշնամին թաւալգըլոր կըփըռուի…» 7):
Դաւիթ լըսեց, Գըլուխ դարձուց եւ ըսաւ·—
= «Յանդո՛ւտ,–ըսաւ–, մէկ խօսք մ՛ արդէն ըսե՛ր էիր՝ եւ Իմ
[Սիրտը դեռ կ՛այրի՛…,
Ա՛ս ալ եղաւ երե՛ք այրող խօսք ու խոց…,—
Թէ ողջ դարձայ ու եկայ…՝ ա՛լ այնուտեն Ե՛ս գիտեմ…»:
Ան ալ — Դաւիթ —՝ քշե՛ց Իր Զին՝ ու գընա՛ց…:—
Զին քշեց ու անցաւ գընա՛ց…, հասաւ մէկ մե՛ծ փոսի քով:
Դաւիթ այնպէ՛ս ապշանդակեց…՝ Ձիուն կողեր մըտան փո՛ր…,
Ոտովին–Ձալալ Թըռա՛ւ Փոսը ու անցա՛ւ:
Քշե՛ց գընաց՝ հասաւ Արքատ Թագաւորի Քաղքին տակ,
Գալատին դէմ՝ Սարին վըրայ կանգնեցաւ:
Ի՞նչ ըրաւ…,—
Մուրթ որ կոխեց՝ կըրա՛կ կըկ(ց)ուց՝ նըստեցաւ,
Ինք ու Իր Զին՝ այդտեղ երկուք մէկ՝ կեցան…:—

---

3) Գաւուռները՝ յաճախ կըթուին միացած ձեւով՝ Օղան–Դօղան՝ իբր մէ՛կ Թագաւորի անուն: 4) Ց·46ա·՝ Ջանջլխոտան (շղթայ կոտրող): Ց·125, 127, Հ·389–90՝ Շղթայ ճետող–կապող դերով է պատմուած: Ա·34՝ Համանդ (շինափոկ պարան) յիշուածքովը՝ համեմատելի Արտաշէս Բ·ի հետ: 5) Ց·46ա·՝ Քարայ դաշտ, Կ·29՝ Քարէկալ (Տե՛ս սակայն Հատ· 291): 6) Ց·46ա·՝ Չիմանին: 7) Այլաբանօրէն՝ ակնարկութիւն ամրոպային չանթի, որ քարաշատ դաշտի մը մէջ կռուողին վտանգաւոր է, ժայռերը չանթաձիգ են, մինչդեռ մարգաստանը զերծ է այդ վտանգէն:

771. Դաւիթ՝ Աճեղի Պահաճըճեռով՝ Կռիւի կ'գրգռէ Արաբա-Թազաւորը 1)

Ջըրո՛յցն ո՛ւրկէ ...,— ղըրոյցը տանք Թազաւորէն՝ Արքատէ՛ն։—
Անոնց Քաղքի կարդ–կանոնն ալ ի՞նչպէս է ։—
*Երբոր տեսան *) Սարին վըրայ Կըրա՛կ կըպաւ՝ կըվառի՝*
Անոնք այնտեղ կըհասկընան՝ որ եկողը Թըշնամի՛ է անկասկած 2)։
Թազաւորը՝ Արքատ՝ տեսա՛ւ որ Կըրակը Սարին Գլուխ կըվառի՝
Իր Մարդիկներ 3) կանչեց ժողվեց, բերաւ Թէ ,—
— «Ի՞նչ Կըրակ է՝ Սարին Գլուխ կըվառի... .
Ելէք՝ երկու Մա՛րդ ղըրկեցէք՝ երթան տեսնեն ի՞նչ Մարդ է...»։
Ելան՝ երկու Մարդ ղըրկեցին՝ ու գացին ,—
Գացին տեսան որ մէկ Մա՛րդ է եւ Իր Ձին ,
Կըրակ ըրեր՝ ու նըստե՛ր է , Ձին ալ կեցեր Իրեն քո՛վ։
Կանչեցին այդ Մարդուն վըրայ՝ եւ ըսին ,—
— «Դուն ի՞նչ Մարդ ես..., այդտեղ Կըրա՛կ ես ըրեր...»։
= «Թէ իրա՛ւի , ես ալ Մարդու մ՝ Տըղա՛յ եմ... .
Եւ Իմ Հայրը Վաճառական մեծ Մա՛րդ էր... .
Ձիս ուղարկեց հեռու Քաղաք գընումի...,
Աւազակներ յարձակեցան Մեր վըրայ...,—
Իմ Ծառաներն ըսպանեցի՛ն, կողոպտեցի՛ն Մեզ Ամե՛նքս...,
Իմ Ուղտերն ու Իրենց Բեռները՝ զարկին տարա՛ն բոլորն ալ...։—
*Կ'ուզեմ որ Ձեր Թազաւորը հա՛–հի՛մա... *)՝*
Քառասո՛ւն Ուղտ՝ Բեռներ Լողակ՝ Ինձի համար ուղարկէ...»։
Այդ Երկու Մարդ՝ դարձան եկա՛ն այդտեղէն՝
Իմաց տըւին Թազաւորին «Թէ մէկ այսպէ՛ս բան մըն է՛...»։
Թազաւորն ալ՝ ժողվեց բերա՛ւ Իր Մեծեր ,—
— «Ապա , Մարդի՛կ ,–ըսաւ Անոնց Ամենին–.
Այդ Մարդն եկեր՝ Ինձմէ կ'ուզէ որ ղըրկեմ՝

---

1) *Այս մի՛ջադէպը պատմուած կըտեսնենք մի՛այն մէկ փոփոխակի մէջ, — ՁՍ·673–689· միւս պատումներէն եւ ոչ մէկը չ'ունի։* Արբատ *անունի մասին՝ Բ. Հատորովը։* *) *Երբոր տեսաւ, Երբոր տեսնեն (որ...)։* 2) *Եկողը երբ բարեկամի պէս քաղաքին դուռը չի դիմեր, սարին վրայ կրակ կ'ընէ՝ կ'նշանակէ որ՝ եկեր բաղաքը պաշարեր՝ բանակ է դրեր։* 3) *Այսինքն՝ Աւազանին, մեծերը։*
*) Հա՛–հի՛մա, հիմա՛–հիմա, անյապաղ։

Քառասո՛ւն Ուղտ՝ Բեռներ բոլորն ալ Լողա՛կ…,—
Դուք ի՞նչ կ՚ըսէք…, ի՞նչ ընեմ…»։
Կէսն ըսին «Տա՛նք», կէսն ալ ըսին Թէ՝ «Չի տա՛նք…»,
Թագաւորն ալ վերջուց ըսաւ՝ — «Պէտք է տա՛նք…»։
*= «Ի՞նչ ապով *) տաս…, Տէ՛ր Թագաւոր…», — հարցուցին։*
— «Է՛, կ՚ըլլա՛յ որ՝ Վաճառական, մեծ Մարդու մը Տըղա՛յ է…,
Կողոպտուե՛ր է ,այսօր եկեր Մեզի կարօ՛տ է ինկեր…,—
Ելնենք ու տանք՝ Թող երթա՛յ… .
Եթէ չիտանք՝ պիտի երթայ ու ըսէ՝
«Այս Թագաւոր չ՚ունեւո՛ր էր՝ անոր համա՛ր չըտըւաւ»…»։
Այն ժամանակ՝ ելաւ բերաւ Քառասո՛ւն Ուղտ,
Քառասունին ալ Բեռներ Լողակ ու կապած՝
Ղըրկեց տարան այդ մէկ Մարդո՛ւն, — Դաւիթին։
Որ տարան հոն, այդ Մարդուն Ձե՛ռք հասուցին՝
Դաւիթ վերջուց ի՞նչ ըսաւ.—
*— «Կ՚ուղե՛մ ,–ըսաւ–, Քառասո՛ւն Ուղտ՝ Բեռներն ամեն Արփըչում *)՝*
Ինձի համար ղըրկէք գա՛յ…»։
Ելան դարձան՝ Թագաւորին լո՛ւր տըւին,—
— «Այս անգամ ալ՝ Քառասուն Բեռ Արփըչո՛ւմ է Իր ուզած…»։
Թագաւորը ի՞նչ ըսաւ.—
= «Եթէ ղըրկե՛նք…՝ պիտի ըսէ որ՝ «Վախցա՛ւ…» 4).
Թէ չ՚ուղարկե՛նք…՝ պիտի ըսէ՝ «Չ՚ունեւո՛ր է՝ չկըրցա՛ւ…» 4) —
Որ ան տըւինք՝ պէտք է որ ա՛ս ալ ղըրկենք…»։
Ելան բերին Քառասո՛ւն Ուղտ՝ Բեռներ բոլոր Արփըչում՝
Տարան այնտեղ յանձնեցին…։
Դաւիթ դարձաւ՝ ի՞նչ ըսաւ.—
— «Կ՚ուղե՛մ ,–ըսաւ–, Քառասուն Հատ Կո՛յս–Աղջիկ,
Ու Քառասուն Ագա՛ր–Տըղայ մխասին՝ 5)
Ինձի համար ուղարկէ՛ք…»։
Ելան դարձան՝ Թագաւորին պատմեցի՛ն,—
— «Որ այսկերպ բա՛ն, Քառասուն Տըղայ, Քառասուն Աղջի՛կ է ուզած»։
Այն ժամանակ այդ Թագաւորն ի՞նչ ըսաւ.—

---

*) Ապով, Պատճառով։ *) Արփըչում, Մետաքս։ 4) Թագաւո՛րը (վախցաւ, չ՚կրցաւ)։ 5) Կուզբաղինի եւ Մըսրամէլիքի պահանջներուն վերյիչո՛մը (Հատուած 496)։

— «Անիկ,–ըսաւ–, պատճառա՛նք է կըփընտռէ…,
Ան այս ձեւով՝ կըռի՛ւ կ՚ուզէ Մեր մօտէն…:—
Աչխարհի մէջ՝ լըսուա՞ծ բան է…, — կա՞յ Մարդ՝ որ դայ եւ ըսէ՝
«Քառասուն Աղջիկ, Քառասուն Տըղայ՝ Ինձի համար ղըրկեցէ՛ք»…,—
Ու եղնեն տա՛ն…, ու տանի՛…:
Աւիկ Մե(գ)նէ կըռի՛ւ կ՚ուզէ…, ա՛յ Մարդիկ…,
Ելէք երթանք՝ կըռի՛ւ ընենք Աստր հետ…»:
Ելան՝ Քաղքէն Զօ՛րք կապեցին *) ու դացին.
Երե՛ք գիշեր ու երե՛ք օր զարնըւեցան Դաւիթի հետ,
Դաւիթ՝ մինակ՝ այդ ամեն Զօրք կոտորե՛ց ու լըմընցուց…,
Վերջին օրը՝ Թագաւորին Գլո՛ւխն ալ կըտրեց ու պըրծաւ,
Եկաւ Նըստաւ Աղբիւրի մ՚ վրայ՝ Հա՛ց կ՚ուտէ…:
Թող Ան Իր Հաց — Նըշխարք մ՚ երկու՝ ի՛նչ որ կա՛ր հետ — ա՛ն ուտէ՝
Մենք ալ դառնանք Խանդուտին…:—

772· Խանդուտ Ու Հայրը՝ Օղան-Դօղանի Ցարձակումին Առաջ 1)

Օղան, Դօղան, Սեւ–Թագաւոր, Հեծելով *)՝
Ուղընկաններ ղըրկեր էին Կապուտ–Բերդ՝
Խանդուտ–Խաթուն Իրենց համար կ՚ուզէի՛ն…:—
Երբ իմացան որ Մասունայ Դաւիթի՛ն է Նըշանուեր՝
Ելան առի՛ն Իրենց Զօրքեր, — Աւազի՛ չափ անհամար…,
Ու քըշեցին՝ եկան հասան Կապուտ–Բերդի չուրջ–բոլոր.—
Վա՛յ Խանդուտին եւ Իր Հօ՛ր…:—
Թըշնամիի Զօրքը եկաւ՝ Վըրան՚ զարկաւ Քաղքին չուրջ.
Մեծերն ելան Գի՛ր ճամբեցին Թագաւորին ու ըսին.—

---

*) Զօրք կապել, բանակ կարգաւորել:

1) Դաւիթի՝ Խանդուտին հարուած մ՚ ուտելու միջադէպէն մինչեւ կռիւի երթալ–դառնալը՝ փոփոխակները չփոթ ու ճապաղ են, եւ Պռովընտէ–Սիւնի փորձին, Ջէնով–Օհանի իրեն օգնութեան հասնելու, Դաւիթ չղթաներու մէջ բռնուելու նման՝ կրկնութիւններ ունին:
*) Հեծել, Հեծելազօրք: Փոփոխակներուն մէջ՝ Լօռա–Համզէն, Շըրըգան–Խորասական, Շապկով–Խորասան, Սեւ–Թագաւոր, Ամու–Շահ, Չինստանի–Թագաւոր, Պապէ–Ֆրանկիա (անուն՝ Զմըշկէ Սուլթան):

— «Ծանդուտ–Ծաթուն հազուեցընես–Ծըփուեցընես՝ ղըրկես զա՛յ...:
Սարի–Գազան Սասնու–Դաւիթն ինչո՞ւ բերեր կապեր ես հոդ՝
[Մեզի դէմ...
Մենք եկեր ենք՝ կըռի՛ւ կ'ուզենք Դաւիթի հետ...,—
Ո՞ր Մէկս յաղթէ՝ Ծանդուտ–Ծաթուն Ա՛ն առնէ:
Թէ չըղըրկես՝ կուգանք բըռնի կըտանի՛նք...»:
Ծանդուտի Հայր Թագաւորն ալ՝ լուսուն նայեց ու տեսաւ՝
Ա՛յնքան Զօրք ու Վըրաննե՛ր կան Քաղքին չուրջ...՝
Վախէն իրեն Թաչկինակը Ձեռքէն Թողուց՝ ինկաւ վա՛ր...:
Ան ալ ելաւ՝ Աւազանին կանչեց իր գով՝ ի՞նչ ըսաւ,—
— «Բերենք Աղջիկ հազուեցընենք–Ծըփուեցընենք ու ճամբե՛նք...»:
Թագաւորի Պըղտիկ–Տըղան՝ վերցուց Իր Հօրն ի՞նչ ըսաւ.—
= «Թագաւո՛ր Հայր, թէ Դուն Ծանդուտ ճամբես երթայ Օղանին...,
Մըհէրի–Քոռ Դաւիթի հետ ի՞նչպէս պիտի գըլուխ ելնես Դուն
[վերջէն...»:
— «Որդի՛,–ըսաւ Թագաւորը Իր Տըղուն–,
Այդ ալ հօ՛ Իմ արուեստը *) չէ՞...,— Ծանդուտի Ի՛ր արուեստն է.
Ես չե՛մ գիտեր ո՞ստա է Դաւիթ, ո՞ստակ չէ՛... .
Եթէ Ծանդուտ՝ Դաւի՛թն ունի Իրեն Տէր...՝
Ի՞նչ կ'ըսպասէ՝ Թըշնամու դէմ չի՛ ղըրկեր...»:
Մեծերն ալ թէ, = «Այդ բոլորը՝ Քոռ Աղջըկան համա՛ր է որ եկած են.
Ալ Մենք Քեզի Զօրք չե՛նք տար որ Դուն կըռուիս... .
Քո Աղջիկը Թող ելնէ գայ՝ ու ե՛տ քըշէ այդ Զօրքեր...:—
Քառասուն Ըմբիշ եկան հասան՝ չըհաւնեցա՛ւ ոչ Մէկին,
Փախցուց Անոնք մէյմէկ կողմ...,
Համտօ՛լ կանչեց՝ Ա՛ն ալ Իրեն դուր չ'եկաւ 2),—
Ասի քանի՛ տարի է որ՝ ըրեր Իրեն Թըռնապան...:
Մէկ՝ քան'զ Սասնայ Դաւի՛թ 3) բերաւ՝ Անոր ալ Միրտ կոտրե՛ր է...
Քոռ Աղջի՛կը գիտէ հիմա՝ Ի՛ր կըռի՛ւ...,
Ուղընկանն ալ՝ այս անգամիս՝ երե՛ք–հարիւր տարո՛ւ է... 4):

---

*) Արուեստ, Արարք, գործ, ըրած բան, արուես(ք): 2) Ուրեմն իր թեկնածուներէն էր նաեւ Համտօլ: 3) Սասնայ Դաւիթի նման՝ հսկայ, կտրիճ մ' ալ՝ (բերաւ): 4) Ժողովրդի առածին պէս՝ «Ընտրուես–ընտրուես՝ ընտրուեցք (մնացորդը, ամենէն անյարմարը) կըզտնես»:

Խանդուտ-Խաթուն ինքն ալ այնտեղ ի՞նչ կ'ընէ.—
— «Հէ՛յ, վա՛խ,–կ'ըսէ–, ես ի՞նչ ըրի, ի՛նչ սեւ բերի իմ Գըլխին...,
Իմ Խընձորը Դաւիթի՛ն զարկի, «Դաւի՛թ կ'առնեմ» ըսի ես,
Դաւիթն ալ չուտ սըրդողցուցի՛..., Ան ալ կըռւի՛ գացեր է...
Մխուս Քառասուն Հմբրիչները Քողին փախա՛ն՝ Իրեն պէս...,—
Հիմա Իմ քով Մէ՛կ չմընաց՝ երթայ կըռւի Աստնց դէմ...»:

Ի՞նչ ընեն ու ի՞նչ չընե՛ն...,—
Ելան բերին Մունեաիկները՝ կանչել տըւին Քաղքին մէջ,—
— «Մո՛վ կըտրիճ է՝ Քող գայ իյնայ Զօրքին առաջ՝ Գըլխաւոր *),
Առնէ երթայ Թըշնամու դէմ կըռւի՛...»:
Քաղաք-Քաղքով իրա՛ր անցան ու ըսին,—
= «Մո՛վ Խանդուտի Խընձորն առեր Իր Զեռքէն,
Գացեր Անոր Մոց պառկեր է ու քըներ՝
Անի Քող գայ՝ անցնի երթայ կըռւի...»:
Խանդուտ-Խաթուն՝ ճար որ կըտրա՛ւ Իր վըրայ՝
Ըսաւ, — «Աղէ՛կ, Իմ կըռւիը՝ ե՛ս գիտեմ ու Իմ Դաւիթ...»:—
Ելաւ ղըրկեց Երկու Հոգի՝ Քաղաքէն դուրս՝ այդ Մարդոց,—
— «Ինձ երթ՛ք օր, ըսաւ–, միջո՛ց Թէ կուտաք՝
Պատասխան մը կուտա՛մ Զեզի՝ Իմ կողմէ...»:
Անոր միտքն ալ՝ Թէ «Մէկ չէ՝ մէկ, օրէ՛ մ՚՝ ժամէ՛ մ՚՝ Դաւիթ
[կուգար կըհասնէր»:

778. Դաւիթ Ու Սուրբ-Սարգիս

Ջըրոյց հիմա ո՞ւրկէ տանք, — ղըրոյցը տանք Դաւիթի՛ն:—
Աւաւ Աբքատ-Թազաւորի Գըլուխ դըրաւ Գարկին մէջ 1),
Հեծաւ Իր Ձին՝ Քուռկիկ-Ջալալ՝ քըշեց որ գայ Խանդուտին.
Գընաց հասաւ կըռւի-Ծըրամ 2)՝ Դուրան Դաշտ,
Մէկ ալ տեսաւ՝ Իր առջեւէն՝ փոշի՛ մ՚ կ'ելնէ երկինքներ...:—
Եկաւ հասա՛ւ այդ Ձիաւոր, տեսաւ որ Սուրբ Սարգի՛սն է:
Ան ալ ըզնաց որ համբուրէ՛ր Սուրբ-Սարգիս՝
Սուրբ-Սարգիս Թէ, — «Հանի՛ նախ ե՛ս Քո Սուրբ-Նըշան համբուրեմ՝

---

*) Գլխաւոր, Զօրագլուխ, զօրավար:

1) Տե՛ս Հատ· 762 եւ 771: 2) Ց·64ա·՝ Ջանգռուայ Դուրան (Աբաբանի եւ Լօռու մէջ):

Ապա՛ Դուն Զիս համբուրէ՛...»:
Դաւիթ հանո՛ց Սուրբ-Նըշանը՝ ու Սուրբ-Սարգիս համբուրե՛ց,
Ինքն ալ դարձաւ՝ Սուրբ-Սարգի՛սը համբուրեց:
— «Դէ՛ եկ դընա՛,—ըսաւ Իրեն Սուրբ-Սարգիս—,
Աստուած Ինծ բա՛ն աչողէ...»:
Ու Դաւիթն ալ՝ քըշեց Իր Ձին՝ ու դընա՛ց:—

774. Դաւիթ, Ձէնով-Օհան Ու Գևռի-Թորոսիկ

Գընաց տեսաւ՝ որ առջեւէն՝ Իր կողմ կուգայ նո՛ր Փոչի մ'...:—
Եկա՛ւ-եկաւ այդ Ձիաւոր..., Դաւիթ նայեց՝ ի՛նչ տեսնէ...,—
Իր Հօրեղբայր Ձէնով-Օհա՛ն..., հետն ալ Գևռի-Թորոսի՛կ...:
Ձէնով-Օհան վերցուց Դաւիթին ի՞նչ ըսաւ,—
*— «Էյ՛ հաստակող Պըէճկերի՛ *) Դու Տըղայ...,—*
Մէթէ Սասուն Աղջիկ չըկա՞ը՝ որ Դու եկար Կապուտ-Բերդ՝
Մէկ Աղջկան մ՝ պատճառով...:
Գիտես Ախ՝ Պիրբաղի՞ն է..., Կուզբաղի՞ն է, վախցընե՞ս... 1).
Գու Մեծ-Եղբայր (Մըսրամէլի՞ք է վախկոտ...,
Թէ՞ չէ Հընդու-Ամիրա՛ն է, կամ Բաղդադի-Խալիֆան...:—
Ախ այլեւս Լօռու-Համզա Թագաւո՛րն է զօրաւոր,
Եւ զինակից՝ մէկ Օղանա՛յ, մէկ Դօղանա՛յ Թագաւո՛ր.—
Առանց Պըզոյ՛-Մատի Մատնին՝ Գեզի կ'ըլլայ Ապրանջա՛ն...» 2):
Դաւիթն ըսաւ, = «Դէ՛, Հօրեղբա՛յր, բա՛ն է, եղեր՝ պըրծե՛ր է...,
Իմ կըռիւը՝ կըռի՛ւ է միշտ, Օղան ըլլայ Թէ Դօղանը կամ Համզան,—
Գիտի կըռուի՛մ,— Տէր-Աստուածն ալ կամ ի՛նձ կուտայ՝ կամ Անո՛նց»:

775. Դաւիթ՝ Թօնամի Մեծ Բաճակիճ Դէմ

Ու քըշե՛ց Ձին, Հօրեղբայրն ու Գևռի-Թորոս եռեւի՛ն:
Եկա՛ն-եկան՝ կըմօտենան Կապուտ-Կողի Քաղաքին.
Օղան, օղան՝ Թագաւորներ՝ նայեցան ու ի՞նչ տեսնեն...,—

---

*) Պէճկեր, Գոմէշի ճագի միս ուտող, նաեւ՝ արմատեղէն (շողգամ, գետնախնձոր, եւն.) ուտող, հոմանիշ՝ շաղգմակերի: 1) Որ վախուստի մատնելը քեզի դիւրին եկաւ. Տե՛ս Հատ. 476 եւ 511: 2) Տե՛ս Հատ. 775 (6):

Մէկ Զիաւոր վերէն կուգա՛յ...՝ Զիւն փոչին երկնուց հե՛տ...:
— «Այդ Զիաւոր,—ըսին Իրար—, կըռւի համա՛ր է կուգայ... .
Չե՛նք գիտեր Թէ՝ այդ՝ Սըրգօի Զարմերէ՞ն 1) է՝ Թէ ո՞վ է...»:
Դաւիթ գընաց ու մօտեցաւ, ի՞նչ տեսնէ...,—
Սեւ ու Դեղին, հըսկա՛յ Մարդիկ, եօ՛թգըլխէն 2),—
Թագաւորներ՝ մէկը Օղան, մէկ՝ Դօղան,
Պարան–Պըռօշ 3), Պարան–Բըւէք–Ֆըռընտա 4),
Ու Շըրըգան–Ֆորտասական, Լօռու–Համզան, այս ու այն...:—
Մէկուն Ճօնքը այնպէ՛ս կախուեր՝ եկեր հասեր վեր–Սըրտին...՝
Որ կեռերով քաշեր ետեւ՝ Ծոծրակին վրա՛յ է կապեր... 5).
*Միւսին ալ՝ Վարի–Մըռուք *)՝ Գետին կ՛աւլէ ու կ՛երթա՛յ... 5):*
Զօրքի՛ն ըսե՛ս, հէ՛յ Աստուած իմ, — երկնից Աստղին հաշիւ կա՛յ...,
Ծովի–Աւա՛զին հաշիւ կա՛յ...,—
Այդ Զօրքերուն՝ ոչ հաշի՛ւ կայ՝ ոչ համրա՛նք...,—
Քան՛ըզ Մըսրայ Մէկի՛ն ալ չատ՝ Զօրք առեր են՝ ու եկեր,
Կապուտ–Բերդի չորս–բոլորը բըռնե՛ր են...:
Առնք դարձան ու կանչեցի՛ն Դաւիթին.—
— «Ա՛յ Մարդ,—ըսին—, Դուն ի՞նչ Մարդ ես, ո՞ւր կ՛երթաս...:
Չենք գիտեր Թէ՝ Կապուտ–Բերդի Խանդուտ–Խաթուն կըճանչնա՞ս...,
Այս Մատանին՝ Դուն չե՞ս կըրնար՝ Իրեն տանիս հասցընես...»,
= «Ես չատ աղէ՛կ կըճանչընամ»,—ըսաւ Դաւիթ, ժըպտելով—,
Ու Մատանին վերցուց առաւ՝ որ անցունէ ձըկոյթին... 6),—
Ա՛յնչափ մեծ էր...՝ ելաւ մինչեւ Իր Արմունկ...,
Հաննց նետե՛ց..., — «Ա՛ռ այդ Օղակ,—ըսաւ Մարդուն—, ի՞նչ ընեմ»:
*— «Ապ՝ ի՞նչ կ՛ուզես՝ որ տամ տանիս Ընշանարա՛ն *) Խանդուտին»:*
= «Ես չե՛մ եկեր,—ըսաւ Դաւիթ—, Մատնի՛ տանիմ Ձեր կողմէ...,—
Ես եկեր եմ որ Ձեր Թըլո՛ւվա տանիմ Իրեն՝ Ի՛մ կողմէ...»:
Երբոր Անոնք՝ այդ Խօսք Դաւիթէն լըսեցին՝

---

1) Ս·173՝ Սրգօի (Սուրբ Սարգսի) ջորդերո՞ւցն է: 2) Թերեւս՝ Եօթը պտո ունեցող՝ մեծ բռնակ: 3) Բերաւ պուկօ՞շ (Հասած ու կախուած չրթունքով. համմալ.՝ Արաբու–Պուկօշ): 4) Պարոն–Բէ՞կ, (Փարանգպայի իչխան = Ղարաբաղ), Թէ՞՝ Բերաւը բեկ (ճեղքած բերնով): Տեսնել՝ այդ անուններու մասին՝ Բ. Հատվ.: *) Մռուք, Շրթունք: 5) Տե՛ս Հատ·716: 6) Տե՛ս Հատ·774՝ տող 13րդ (3): *) Նշանարան, Խօսքկապի՝ գրաւ, առհաւատչեայ:

Սըրդողեցա՛ն ու քարկացա՛ն…, վըրվրեցա՛ն…,
Ելան ինկան Դաւթի վրա՛յ…,—
— «Ծուռ–Սըրդօի Պոկերչ՛ն 7) ես Դուն…», — ըսին։
Դաւիթն ալ թէ, = «ես Սասմայ Ջոջ–Մըհէրի Թոռ՝ Դաւի՛թն եմ,
Սանասարի 8) ցեղէն՛ ե՛մ…»։—

776. Դաւիթ կ՚ապանէ կամ Գերի կ՚բռնէ Թօճամի Պեսերը

— «Որ Դու Սասմայ Մըհէրի Թոռ Դաւի՛թն ես՝
[Ըսին Իրեն՝ Օղան, Դօղան, Լօռու–Համզան, Պարան–Պօչ],—
Եկուր երթանք այս Քարադաշտ՝ ու կըռուի՛նք…»։
Դաւիթ վերցուց ի՞նչ ըսաւ.—
= «Ա՛յ Մարդիկներ, թէ կըռուո՛ղ էք՝ կանաչո՛ւտն ալ կըռաւէ…»։
Մխտքը ինկաւ Խանդուտի խօսք…1), Ինքն ալ մըտքով ի՞նչ ըսաւ.—

—«Օրհնեա՛լ, բարերար Աստուա՛ծ, Ասօր՝ կրնկայ «ա՛հ» եմ տեսեր2),
Կա՛մ ինձ մա՛հ տուր՝ մեռանիմ, կա՛մ կըռի՛ւ տուր՝ ես կըռուիմ…,—
Խանդուտին մէկ Գլո՛ւխ տանիմ…» 3)։

Ապա դարձաւ՝ ուժեղ կանչեց ու ըսաւ.— 3)

— «Է՛ հաւատամ, խոստովանիմ, Բա՛րձր Մարաթ–ուկ Սուրբ–Նըշա՛ն,
Դո՛ւ հասնիս ինձ օգնական… .
Ցիշա՛մ Հացն ու Գինին՝ Տէ՛ր–կենդանին,
Խաչ–Փետրազին՝ Իմ Ա՛ջ–Թեւին…,—
Օգնական ու պահապա՛ն կանգնիր Սասմանց–Դաւթին…»։—

Ըսա՛ւ 4)…՝ քաշե՛ց Թուր–կէծակին՝ եւ Ջօրքերուն մէ՛ջ ինկաւ…։—
Ինչպէս որ մէկ անօթի՛ Գայլ՝ իյնայ Գառան Հօտի մէջ…,
Ու Գառները մէկ–մէկ խեղդէ ու թալէ…,—
Այնպէս՝ Դաւիթ՝ ինկաւ այդտեղ, այդ ահագին Ջօրքին մէ՛ջ…՝
կարգով բըռներ՝ կըջարդէ՛…։—

---

7) Ց·48ա.՝ Փոկ։ 8) Լ·38՝ Արամէլիմի տղեն եմ։

1) *Տե՛ս Հատ·* 762–ի *վերջի երկու տողերը։* 2) Ահ, *Սարսափ, երկիւղ։* Հ·443՝ *տես տուած եմ՝ ուղղելի՝ տեսած եմ, կամ՝ կնկայ յայտնուած եմ։* 3) *Երդով։* 4) Հ·42՝ *թես պաու՝ ուղղել՝ դէմ կամ* էս (*ըրաւ*)։

Մէկ՝ Շըրըղան–Խորասանէն, մէկը՝ Պարան–Բըւէքէն...,
Սեւ–Թագաւոր 5)՝ թէ Պաբսիկ–Շահ, Լօռա–Համզան՝ ո՛րն ըլլայ՝
Հասաւ զարկաւ՝ Դեմի՛ն փըռեց Ամենն ալ 6):
Գըլուխները զարկաւ Քըոցուց Զորին մէջ...:
Ի՛նչ սեւադէմ Գըլուխ եկաւ՝ մէ՛կ չըմընա՛ց Ուսին վրայ,—
Կաղամբի պէս՝ զարկաւ Քըոցո՛ւց, Թափեց փըռեց Դաշտին մէջ...:
Ալ՝ մէ՛կ խօսքով՝ փախող փախա՛ւ, ըսպանուողը ինկաւ մընաց
[*Իրեն տեղ:*
Արիւն՝ ելաւ հասաւ մինչեւ Ձիուն փորը, պաղեցաւ...,
Ձին չէ՛ր կըրնար Արիւն ճըղել ու քալել...:

Սեւ Մըռութը Դեմին աւլող Պարան–Պըռո՞չն ի՛նչ ըրաւ.—
Ելաւ Քըոաւ՝ ու բարձրացաւ երկինուց հետ... †)՝
Որ վար իջնայ՝ զարնէ Թափով՝ Դաւիթ տանի Անդունդնե՛ր
Դաւիթ տեսա՛ւ...,—
*Իր Նիզակին Մայրը դեղեց *)՝ տընկեց Ճակտին՝ ու կեցա՛ւ:*
*Պարան–Պըռոչ փոթորկեցա՛ւ՝ երկինքներէն վա՛ր սըլլաց... *),*
Եկաւ ինկաւ Դաւիթի Տէգին Մայրին վրա՛յ †),—
Սիրտէն ծակեց՝ ու դո՛ւրս ելաւ Քամակէն,
Մարմինն եկաւ՝ Սարի՛ նըման՝ ինկաւ Դաւիթ Ձեռքին վրա՛յ...:
Դաւիթ՝ իր Տէգ սանկ մը Թոթուեց՝ ղէպի վե՛ր,
Սեւ–Արքային ծակած Դիակ՝ նետեց հեռո՛ւն՝ Խուրձի՛ պէս,
*Ներքնակի *) պէս դըլորուեցաւ՝ դընաց ինկաւ Զորին մէջ...:—*

777. «Զրեղէն Ու Հրեղէն Է Աճոց Ագգ...»

Ապա հասաւ՝ Օղան, Դօղան Թագաւորնե՛րն ալ բըռնեց,
Ձեռ–Ոտ կապեց՝ դըրաւ Քարի մ՝ Գըլուխին,

---

5) Հ·389՝ Սեւ Թագաւոր՝ շղթաներով՝ Դաւիթը կապեց սիւներու (*Տե՛ս Հատ.* 633): 6) Ց·48ա·՝ Լօռայ–Համզի եւ Շապգոնց Խորասանու գլուխները կտրեց: *) Դնդել, *Թոյն քսել*: *) Սըլլալ, *Սուլոցով ու չողալով սուրալ*: †–†) *Այլաբանական պատկեր՝ ամպրոպատ–կայծակին՝ երկրի վրայ — մանաւանդ սուր–սուր լեռնեբուն վրայ — իյնալուն*: *) Ներքնակ, *Ջաղացի երկու քարերէն վերինը՝ որ մէջտեղէն ծակ է*, meule gisante:

«Տանիմ,–ըսաւ–, նըւէ՛ր՝ Խանդուտ–Խաթունին» 1):—
Ապա կանչեց, — «Ի՛ Հօրեղբայր, Արեւ տաքցա՛ւ, Հոգիս տաքցա՛ւ,
[քըրտնեցա՛յ,
Դուք 2) հըսկեցէ՛ք՝ Օղան–Դօղան չըփախչին՝
ես՝ մէկ երթամ՝ Ջո՛ւրը մըտնեմ 3) ու դառնամ...»:
Այդ Ջօրքերուս Գուշակներն ալ ի՞նչ ըրին.—
Բերին այդտեղ՝ ու Թո՛ւղթ բացին՝ նայեցան,—
— «Ատոնց Ազգը,–ըսին Անոնք–, Ջըրէ՛ յղացք *) է առեր... .
Ջըրէ՛ ծընած՝ Իրենց ուժը Ջըրէ՛ կ՚առնեն ամեն հեղ... .
Դիւցազո՛ւն են. Ջրերէն ու Հըրեղէ՛ն է Անոնց Ազգ...:—
Ջըրի ճամբան Ատոնց վըրայ Թէ կըտրեն,
Թէ չըթողո՛ւն՝ Ատոնց Մարդիկն երթան Ջուր՝
Անոնք այլեւս ուժ չե՛ն առներ՝ ու կ՚իյնան...:
Անոնց Ազգին՝ Տըւածուրիկ *)՝ ա՛յդ է ահա, ըսկիզբէն.—
— Ջո՛ւրմ *) իրիկուն՝ կըռի՛ւ կ՚ընեն, Թէ վիրաւոր, մահամերձ,
կ՚երթան Ջուրը, Աղբիւրի մէ՛ջ կընետուին,—
Անոնց Վէրքեր կ՚մխաւորի՛ն, բո՛ւժ կ՚ըստանան ու կ՚ելնե՛ն,
Առաւօտուն նորէ՛ն կուգան կըկըռուին...:
Հաւքն իր Թեւով Թէ գայ անցնի Իրենց Վէրքին ընդմէջէն՝
Անոնք երբեք «Օ՛ֆ» *) չե՛ն ըներ, կըժըրին *)» 4):

778. «Դուխ Իննամէ Շաս Աւուցի Ըրնր Էմ»

Դաւիթ դընաց Ջո՛ւր նետուեցաւ՝ կըլողնար...,
Այդ Ջօրքերուն Մեծաւորներ՝ վախէն՝ վըրան չե՛ն երթար.—

---

1) Տե՛ս Հատ· 762 եւ 782: Ա·34՝ «Օղան–Տօղան Խամանդ (փոխ) թալեց, Դաւիթը բռնեց, բերին տախտակ ծակին, Դաւիթի գլոխ մէջէն դուրս հանին...»՝ չփոթում է Սանասար–Բաղդասարի ճիւղին հետ (Հատ· 3): 2) Ձէնով–Օհան եւ Քեռի–Թորոս: 3) Վազուն ջուրի, — դետի, աղբիւրի մէջ լողանալ: *) Ցղացք, Ցղացում, սաղմնում, ծագում: *) Տուածուրիկ, Բնատուր, երկնաճիր: *) Ջուրմ, Մինչեւ: *) Օֆ, Ցաւի ճիչ: *) Ժրիլ, Ժիր դառնալ, վերակենդանանալ, կաղդուրուիլ: 4) Տե՛ս Ցոջրց· էջ 41–42: Ջրածնութեան, Ջրապաշտութեան ու Ջրաբուժութեան երեակ դաղափար: Վազուն Ջրի մէջ լողանալու պէտքը՝ հին դիւցազներու քով՝ կ՚տեսնենք նաեւ Ենէականի մէջ [Բ· 304]· — «Ես չեմ կրնար անոր դպիլ՝ կենդանի ջուրի Աղբիւրի մը մէջ մաքրուելէ առաջ»:

— «Երթանք,–կ'ըսեն–, կ'ելնէ Մե'զ ալ՝ ամե'ն մէկուեղ՝ կ'ըսպանէ'»։
Ապա՝ Դաւիթ այնպէ՛ս յոգներ, դադրե՛ր է,
Ձար–ձամբաներ վըրան կըտրեր՝ խեղճացեր է եւ ինկե՛ր...՝
Որ Տըղա՛յ մ' ալ եթէ երթայ՝ կըզարնէ զ'ինք կ'ըսպանէ...։
Ան իր ցաւո՛վն 1) է չըշկըռեր *)..., ի՛նչ ընելը չի՛ դիտեր...,
Անոնք՝ վախէն՝ վըրա՛ն անգամ չե՛ն քըշեր...։
Դաւիթ մըտաւ Աղբիւրի մէ՛ջ, լըւացուեցաւ *), առուդցա՛ւ,
Ջուրէն ելաւ՝ վազեց եկաւ դէպ Հօրեղբայր, դէպ Քեռին,—
Նայեց այնտեղ Մա՛րդ չըկա՛յ...,—
Օղան, Դօղան...՝ թէ դըրե՛ր ես՝ արի տա՛ր... 2)։
Ու Սարին մէջ, երկո՛ւ կողմէն, Իրա՛ր առած՝ կըջարդե՛ն...։
Աչքը ինկաւ Դարի Դըլխին՝ տեսաւ Քեռի–Թորոսիկ,
— «Քեռի՛,–ըսաւ–, այդ կողմ փախող Մարդ տեսա՛ր...»։
=«Զե՛մ տեսեր՝ բայց՝ քանի մ' ժըժմունք*) լըցած է այդ Ձորն ի վար»։
Գընաց տեսաւ՝ որ Հօրեղբայրն ու Իր Քեռին՝ միատեղ՝
Իրմէ՛ ալ չատ Արուեստ *) ըրեր՝ թողեր են... 3),—
— «Տընա՛չէննե՛ր...,—ըսաւ Ան ալ–, կըռիւը ե՛ս եմ ըրեր՝
Դուք ինձմէ՛ չատ Արուեստ ըրեր էք այստեղ...»։

779. Ջէնով-Օհան՝ Օղան-Դօղանի վիզը կտրեր է, Դաւիթ՝ Ծիրանի Տուտով Կ'ցաւցնէ Հօրեղբայրը

Դաւիթ այնտեղ չատ բարկացաւ՝ երբոր դարձաւ ու տեսաւ՝
Որ Օղանին, Դօղանին ալ՝ Գըլուխ կըտրեր նետեր են...։—
— «Ծօ՛ Հօրեղբա՛յր,–պօռաց ըսաւ Օհանին–,
Դուն այդ երկու Թաչաւորի Գըլուխն ինչո՛ւ կըտրեցիր...,
Օղան–Դօղան՝ ես Ջանդուտին՝ Գերի՛ պիտի տանէի...։
Ջո Տո՛ւն չ'աւրի՛..., Քեզ պէս Մեռել–Ըսպանո՛ղ...,

---

1) Այսինքն՝ Ջանդուտի սիրուն ու անկէ զգացած սարկացումի մտմտուքովը (ապտակին անարդանքը)։ *) Շկռիլ, Շփոթիլ, չուարիլ։ *) Լուացուիլ, Լողանք առնել, լողանալ։ 2) Այսինքն՝ ձեռքովդ դրածի պէս՝ կըփնտռես ու չե՛ս գտներ, անհետացեր է (դրածդ, փնտռածդ)։ *) Ժժմունիմ, Զարդ ու փշուր եղած մարմիններ (մարդու, ձիու), որոնք որդերու պէս կ'զեռան իրենք իրենց վրայ։ *) Արուեստ, Արիւնհեղութիւն, նախճիր։ 3) 6·48՝ Քեռի–Թորոսն ալ՝ օգնեց Դաւիթին՝ այդ կռուին մէջ։

Անոնց Ձեռ–Ոտ կապո՛ւկ էին, ինչո՞ւ վախնաս կապածէն…,—
կապուկ Մարդը՝ կէս–ըսպանա՛ծ է արդէն…»:
= «Որդի՛,–ըսաւ Ձէնով–Օհան, դիտե՞ս ի՛նչ…,—
*Անոնք՝ Աչքեր բա՛լ–բա՛լ *) ըրին՝ եկան դէպ ինձ՝ ես վախցա՛յ…,*
Ելայ դարկի՝ Անոնց Վիզեր կըտրեցի…,—
Ոտք պըռտեցի Անոնց վըրայ՝ տըրորեցի՝ ու եկայ…:
Ապա…, Որդի՛…, Մարդ երբեմ ոդջ կրծրգէ՞ Իր Թըշնամին…»1):
Դաւիթն ալ հոն՝ Սըրտին ցաւէն ի՞նչ ըրաւ.—
*Մէկ մէջոց մը՝ Միրան կերեր՝ կողինճ *) Գըրպա՛ն մոռցեր էր.*
Առաւ կողինճ՝ նետեց դէպի Հօրեղբայր,
*Գընաց դըպաւ Անոր Ձուին՝ վըթղեցո՛ւց… *),*
Ուշքը գընաց…, ինկաւ այնտեղ՝ կէս–մեռուկ…,—
Մինչեւ Քեռի–Թորոսիկը եկաւ հասնեց՝ տարաւ Գետ,
Երկուքով ալ Ջո՛ւր նետուեցան, ու ժըրացան ելան դո՛ւրս:
Դաւիթ բերաւ Օղան–Դօղան Թագաւորի Դըլուխներ՝
Ճակտի երկար ցըցուններէն իրա՛ր կապեց Սոխի ճեւ 2),
*Աբուկի *) պէս ձըղեց Ձիուն Գաւակին:—*
Ատոնց երկու Լեզուներն ալ՝ Իրենց Բերնէն դո՛ւրս կախուած՝
Գուբանի պէս՝ Գետինները կ'ակօսէին՝ կ'երթայի՛ն…:
Ելաւ՝ Արքատ–Թագաւորի 3) Գլո՛ւխն ալ զարկաւ Տէդին Մայր՝
Դըրաւ Ուսին որ երթայ…:—

780. Խաղցուս Ու Համաօլ՝ Դաւիթի Մարմինը Կ'փճեռնեն

Շաբաթ օ՛ր է…, Դաւիթ նայեց ի՞նչ տեսնայ…,—

---

*) Բալ–բալ, ձերմակ, փայլուն: 1) Փորձառու ալեւորը՝ Ձէնով–Օհան՝ յօժարակամ զ'Ինք վախկոտ կ'ցուցնէ, դեռատի անփորձ Դաւիթին խրատ մը — խորունկ ցեղապաշտ խրատ մը — տալու համար: *) կողինճ, կորիզ, կուտ (ծիրանի, սալորի, դեղձի, ճէթապտուղի): Առօրեայ կեանքի մէջ՝ շատ խաղ ու կատակ կ'ընեն պատանիներ՝ կողինճով: *) Փքղեցնել, պայթեցնել (ամորձիքը): 2) Ակնարկութիւն՝ աչնան երկար տերեւներով սոխերը իրարու հետ հանգրիճելու սովորութեանը (փայտի վրայ կախելու համար): *) Աբուկա, Մէջտեղը ճեղքած՝ երկխորշ պայուսակ, besace: 3) 8·48՝ Համզա Փլւմ·ի գլուխը:

Որ երկու Մարդ՝ Ձիու վըրայ, մէջ–երկի՛նք ու մէջ–Գետինք... 1),
Եկան հասա՛ն, ու Տէղերով Դիակները կըվերցընեն՝ կընեռե՛ն...:—
Դաւիթ նայեց՝ ու ճանչըցա՛ւ Խանդուտ–Խաթուն ու Համոլ:
Այն օրէն որ՝ Դաւիթ քըշեր՝ ու գացեր էր կըռիւի՝
Երե՛ք օր ու երե՛ք գիշեր անցեր էր:— 2)
Խանդուտ–Խաթուն տեսաւ Դաւիթ չըդարճաւ՝
Գիտցաւ՝ Դաւիթ ըսպաներ են, — Անոր Սիրտը վառուեցա՛ւ,
— «Պիտի երթամ,–ըսաւ–, այնտեղ՝ ու փընտռե՛մ...,
Դաւթի Մարմին՝ Դիակներու մէջէն զատեմ՝ առնեմ գամ...,—
Դիւրի՛ն պիտի ճանչընամ ես Իր Մարմին,—
Աչ–Փետրազին ու Մըսէ–Աչ՝ Իր Թեւերուն վըրա՛յ են...»:
*Ելաւ առաւ Մարդահագուստ՝ ու հագուեցաւ մարդանակ *),*
[Մէկ այնտեսա՛կ Հագուստ որ Մա՛րդ երբեք այնպէս չէ՛ր տեսեր...],
Ձէն–ու–Ձարդեր կապեց վըրա՛ն, Տէգը բըռնեց Իրեն Ձեռ,
Ձին քաշեց դո՛ւրս, աղէկ Թամբը դրաւ վըրա՛ն,
Համոլի հետ քըշեց դընաց Կըռւի տեղ:—
Դաւթի ձամբով չըգընա՛ց. ուրի՛չ կողմէ դընաց հասաւ այդ Ձօրքին:
Մէ՛կ անգամէն՝ Տէգ կըզարնէ Դիակներու կոյտին մէ՛ջ՝
Եոսո՛ւն Դիակ մէ՛կէն կ՝առնէ՝ վեր կըհանէ ղէպ երկին(ք),—
[Տո՛ւնդ չըքանդուի..., ա՛յ՝ Քեզ ո՛ւժ...]
Կընայի որ՝ Թեւին վըրայ Աչ չըկայ՝
Վար կընետէ Եոսուն Դիակ միասին...,—
Դաւթի խոշոր Մարմի՛նն է որ կըփընտռէ:
Նորի՛ն կ՝զարնէ՝ Եոսուն Դիակ կըվերցընէ՝ կընայի.—
Ձախէն կ՝առնէ կընայի՝ ու՝ ղէպի աջ կո՛ղմ կընետէ...:—

781. Դաւիթ Ու Խանդուտ Դէմ-դէմի Ու Դաւիթի Փոխվրէժը

Դաւիթ տեսաւ, խընդաց ներսէն՝ ու ըսաւ.—
«Փա՛ռք Քեզ Աստուած..., իմ կընիկը ինձմէ՛ ալ վեր կըտրիճ է»:
Ապա տեղէն կանչեց՝ դոռուն ձա՛յն տըւաւ.—
— «Է՛յ, աս Դուն ի՞նչ կ՝ընես այդտե՛ղ, Հեծելին մէջ՝ Տէգը Ձեռ....
*Այն Մարդ՝ որուն եոեւէն կա՛ն կուգաս *) Դուն՝*
Ասօր ահա երե՛ք օր է՝ Քեզի մատա՛ղ եմ ըրեր...,

---

1) Կ·31՝ կէտին ի՝ *ուղղել՝* կէտիմէ: 2) *Տե՛ս Հատ.* 769:
*) Մարդաճակ, *Այր մարդու պէս, առնական տարազով, այրակերպ:*
*) կաճ գալ, *Պատիլ, վնտռել:*

*Ու ձըղեր եմ այդ դիմացի Փըլին *) մէ՛ջ··· .*
Դուն եկեր ես՝ այսօր այստե՛ղ կըփընտռես··· .
Հիմա Դուն ո՞ւր պիտի փախիս Իմ Ձեռքէն···,
Պատրա՛ստ կեցիր Ձո ժամին···»:
[Դիտմա՛մբ կ'ըսէ, — Իր կընի՛կը կըփորձէ···]
Ծանդուտ–Ծաթուն···՝ Աչքերուն սեւ–սիլտակն իրա՛ր խառնեցան 2):
Դաւիթ ա՛յնքան կըուլ ըրեր՝ արնո՛տ եղեր էր այնտեղ···՝
Որ Ծանդուտը՝ չըճանչըցա՛ւ Իր էրիկ···,
*Դիր մ' ալ Իր մէջ լեցուեցա՛ւ··· *),*
Գուրգը Ձեռքին՝ խուժեց վըրա՛ն՝ ու ըսաւ.—
= «Հօ՛···, Ձո՛ւ Բերան չատ մի՛ ցըրուեր···, անիրա՛ւ···,
Ինկնիկ վե՛ր է՝ Դուն Այդ–Մարդը ըսպաննես···:
Հարի՛ւր Ինձի պէս՝ երկու–հարի՛ւր ալ Ինձի՛ պէս կըտրիճներ՝
Մատա՛ղ կ'ընեմ ես Այն–Մարդու Եղունգի՛ն··· .
Անոր մեռած Դիա՛կին անդամ՝ Ինկնիկ վե՛ր է՝ Ինձ համար···:
Դէ՛, Ինկ հիմա պատրա՛ստ բըռնէ Ձո պահին···:
Հէ՛ ‡), Շըրըղա՛ն–Ծորասական, Լօռու–Համզա Թաղաւորներո՛ն ես
[գըտեր՝
Գըլուխները զարնես կըտրե՛ս, Ջօրքեր չարդես անհամար···»:—
Ըսա՛ւ Ծանդուտ՝ եւ Իր տեղէն՝ այրած Սըրտով՝ Գուրգ զարկա՛ւ:
*Դաւի՛թն էր, — չո՛ւտ՝ Իր Ձիու Թամբ դատարկեց··· *),*
*Գուրգը առաւ *) Ասպանդակին՝ տարաւ վա՛ր···,*
Դաւիթ նորէն չըտկըւեցաւ վեր–Թամբին,—
«Մէկ զարկ,–ըսաւ–, Ինձի զարկե՛ր է Իմ կին··· †).
*Ես ալ մէ՛կ զարկ պիտի զարնեմ՝ Իրեն վո՛ւխ··· *),—*
Թէ ողջ մընա՛ց···՝ Անիկ միւռ ալ կընի՛կս է··· .
Թէ չըմընաց···՝ զարճաւ Հո՛ղ···»:—
Ըսա՛ւ Դաւիթ՝ ու Թուր 3)ի խաղցուց՝ մէ՛կ զարկաւ···,—

---

*) Փուլ, Փլատակ, աւերակ՝ տեղ: 2) Աչքը զարճաւ, աչքին ամեն բան մուխ երեւցաւ: *) Լեցուիլ, Ջայրոյթով ուռիլ: *) Թամբը դատարկել, Ձիուն մէկ կողմին վրայ կամ փորին տակը սահիլ՝ (հարուածէ փուսափելու): *) Առաւ, Հանդիպեցաւ, դպաւ: *) Փոխ, Փոխադարձ: 3) կամ՝ Գուրգ: ‡) Ս·172՝ Խը՛յ (Հէ՛յ···,)՝ Մնկ· Ա–բեղեան՝ սխալմամբ՝ Խոյ քաղաք Թարգմանելով (Ազգ· Հնդս· 46ս· եւ 98)՝ իրեն հետ սխալի մէջ գլորեր է նաեւ իր յաջորդները [այս մասին՝ Բ· Հարվը·]:

Խանդուտ դըճա՛ւ..., Գըղակ–մըղակ եկան տա՛կ...,
Դէմքն երեւաց, Ծամեր թափեց իր առջեւ...,
Կուրծք բացուեցա՛ւ, երկու–Միծեր թըռան մէջտեղ՝ իրկան դո՛ւրս...:
Դաւիթն ալ հոն՝ թեւն օդին մէջ՝ ի՞նչ ըսաւ...,—
— «Ա՛յդքան Զօրքն ու Իրենց Պետե՛ր չըդիմացան Իմ առջե՛ւ...,
*Արմա՛տ *),–ըսաւ–, Դո՞ւն ես պիտի դիմանաս...»:*
Ու խընդալով՝ հասաւ բըռնեց՝ Խանդուտն առաւ Գըրկին մէջ,
Ամո՛ւր սըղմեց..., այնպէ՛ս քամեց Իր Միծեր...՝
*Որ երեք պուտ *) Արիւն Միծէն դո՛ւրս տըւաւ...:*
Ու տեսա՛ւ որ՝ Իր Թուր զարկեր եւ անցեր՝
Երե՛ք ճիւղ Ծամ՝ Անոր Գըլխէն կըտրե՛ր էր...,—
— «Ա՛ս ալ՝ Իմ վո՛խ...,–Դաւիթն ըսաւ Խանդուտին–, †)
Ինչ Դուն բըռո՛ւնց մ՝ զարկիր Իմ Ջիք–Բերանին...՝
Արընջուրը Իմ Գինչերէս դո՛ւրս եկաւ...»:—

783. Դաւիթի Եւ Խանդուտի Ըսի-ըսաւը

Ու խօսքին հետ՝ Դաւիթ՝ Արքատ–Թագաւորի Գըլուխը՝
Իրեն Գարկէն հանեց նետեց Խանդուտին,—
— «Ա՛ռ Քեզ Արքա՛տ–Թագաւորի Գըլուխն,–ըսաւ–, բերե՛ր եմ,
Տար դիր այնտեղ՝ ուր կ՝ուզես...»:
Օղան, Դօղան Թագաւորներն ալ՝ մեռած տեղ՝ Քեզ Գերի՛...» 1):
Ան ալ՝ Խանդուտ՝ առաւ վերցուց՝ ու խընդա՛ց...,—
= «Ա՛տ Դո՞ւն էիր..., Դաւի՛թ,–ըսաւ–, Դու Քո Վրէժի փոխն առի՛ր»:
Գլուխը նետե՛ց, ժողվե՛ց կըտրած Իր երեք ճիւղ չէկ Ծամեր,—
= «Դաւի՛թ,–ըսաւ–, Դէմքի՛դ մեռնիմ՝ Արեւտո՛ւդ...,
Գիտե՛մ, Քու Սիրտ ելա՛ծ էր...՝
Ինչ երեք պուտ Արի՛ւն Քիքէդ կաթեցաւ...:—
Ես ունէի վե՛ց ճիւղ այսպէս աղտոր Ծամ,
Վեց ալ՝ եղբա՛յր ունիմ ես.
Ամեն եղբայր — հեռո՛ւ ամեն երդիքէ ալ —՝ որ մեռնէր՝
Իմ Ծամերէս մէկ ճիւղ պիտի եղբօրս վըրայ կըտրէի՛:

---

*) Արմատ, կին–էակ, էգ· [Արմ–էն, արմատէն պակաս, արմ–հատ, Թրք·՝ էֆսիհ էթէկ]: *) Պուտ, կաթիլ, չիք: †–†) Ե·747՝ այս միջադէպը չիոթումով յիշած է Զէնով–Օհանի եւ Դաւիթի մէջեւ:

1) Տե՛ս Հատ· 762ի վերջին տողերը:

Հիմա Դուն Քու երեք կաթիլ Արիւնին դէմ՝ իբրեւ փոխ՝
Երեք կաթիլ Արի՛ւն հանիր *) Իմ Մեծերէս՝ Քու Ձեռքով,
Վըրայէն ալ՝ Թուրով զարկիր՝ Իմ երեք Տամ կըտրեցի՛ր...:—
Ամենմէկ Տամ՝ Քու մէկ կաթիլ Արիւնի գի՛ն ըլլայ Թող,
Իմ Մեծերէս հանած Արիւնն ալ վըրան...»:
—«Վա՛յ,–ըսաւ–, Դուն ատ ի՞նչ ըրիր, Քո Տո՛ւն չ'աւրի՛, ա՛յ Աղջիկ»:
Յանդուտն ալ թէ, = «Դուն ինձ չըսի՞ր՝ «Երեք օրէն թէ չիգամ՝
Կուգաք այնտեղ՝ Իմ Մարմինը Դիակներէն կըջոկէք» 2) —
Ես ալ ահա՝ ելայ եկա՛յ Քեզ համար...»:
— «Ինչո՞ւ,–ըսաւ–, Մարդու Հագո՛ւստ ես հագեր:...,
Կընի՛կ էիր, Կընկայ Շորե՛ր հագնէիր...»:
Յանդուտն այնտեղ ի՞նչ ըսաւ.—
= «Դաւի՛թ, ես Քո կըտրըճուքի՛ւն փորձեցի...» 3):—

788. Դաւիթ Նորէն Կ'արդոի Խաճդուսի Դէմ

Հաշտըւեցան ու խընդացան, գըրկըւեցա՛ն Իրար հետ,
Դաւիթ առաւ՝ Իր Հօրեղբօր, Քեռու–Տըղուն քո՛վ տարաւ,—
— «Յանդո՛ւտ,–ըսաւ–, Իմ Հօրեղբայր Ձինով–Օհա՛նն է Ասիկ,
Աս ալ՝ Քեռի–Թորոսիկ...,—
Աղէ՛կ, կարգո՛վ՝ Ընծտես–կանչես Իրենց դէմ»:
Յանդուտ հասաւ՝ Երկուսին ալ Ձեռքեր բըռնեց՝ համբուրեց:
Ելան հեծան՝ Հինգը 3) մէկտեղ՝ ու քըշեցին դէպ Քաղաք:
Դաւիթ վերցուց ի՞նչ ըսաւ.—
— «Յանդո՛ւտ,–ըսաւ–, Իմ Հօրեղբայր Մեզնէ տարեց, մեծի՛կ *) է.
Ան Թող քալէ Մենի՛ առաջ, Իր Ձիով,
Անոր քամկէն *) Մենք կըքալենք քովէքով...»:
Երբ մօտեցան Կապուտ–Բերդին՝ Յանդուտն ըսա՛ւ Ինքիրեն.—
«Այս Երկու Մարդ՝ Ինձի Հի՛ւր են, Տուն Մա՛րդ չըկայ 4), լուր չ'ունի՛ն.

---

*) Հաճիր, Հանեցիր: 2) Տե՛ս Հատ. 769: 3) Կ·93, եւ ուրիշ փոփոխակներ՝ կ'պատմեն՝ Մանասարի հետ կռուող Ջրեհ–Պողատի մէջադէպին նման ձեւերովը (Հատ. 186): 3) Համտոլ (կամ 6·46–48՝ Խաճդուտի փոքր եղբայր) միասին: *) Մեծիկ, ջոջիկ, Մեծարելի, յարգելի, իշխանաւոր: *) Քամկէն, ետեւէն: 4) Ընդհանուր մատակարար Համտոլ–Գորգիլ իրենց հետ էր՝ անո՛ր կ'ակնարկուի:

Ես առջևէն քըշեմ երթամ՝ պէտք եղածներ պատրաստեմ՝
Մինչեւ Ասոնք դան հասնին...»։—
Ու Զին քըշեց՝ անցա՛ւ Ամենն ու դընա՛ց...։
Դաւիթ այնտեղ սըրդոխեցաւ..., Զիուն Գըլուխ ե՛ւ դարձուց,—
— «Ա՛լ Մենք,—ըսաւ—, կապուտ-բերդը չե՛նք երթար... .
Ան քըշե՛ց Զին՝ առա՛ջ անցաւ. ականջ չըրա՛ւ իմ խօսքին... .
*Մեծ ամօթա՛նք *) է Մեզ համար, Հօրեղբա՛յր,*
Մէկ Աղջիկ է...՝ Մեզ ե՛ւ Թողուս՝ Ինքն առջևէն Տո՛ւն երթայ.՞.՞.՞ .
Ես Այդ-Աղջիկ՝ ալ չե՛մ ուզեր Ինձի կին... 5)»։

784. Խանդուս՝ Բոպիկ Ոսքով՝ Դաւիթի Եռեւէն

Ու բըռնեցին Իրենց ճամբան՝ դէպի Սասուն որ երթան՝
Համոզ վազեց ու լո՛ւր տարաւ Խանդուտին,—
—«Տնա՛ւե՛ր...,—ըսաւ—, Դաւիթ գընա՛ց..., ի՞նչ կ՛ընես...»։
Ալ Խանդո՛ւտն էր..., այս որ լըսեց՝ չըկեցա՛ւ...,
Զիէն իջա՛ւ, Ոտքէն հանե՛ց Իր Սօլիկներն ու արպըշմէ Գուլպաներ՝
*Բոպի՛կ Ոտքով ու թաթացի *) ինկաւ Դաւթի եռեւէ՛ն...,*
*Վազեց տըւաւ *) Հերկին մէ՛ջ...,—*
Ու կըպօռայ՝ «Դաւի՛թ, կեցի՛ր, Դաւի՛թ, կեցի՛ր՝՝ ե՛ս ալ գա՛մ...»։
Դաւիթն ըսես՝ Թէ՛ կ՛երթայ՝ Թէ՛ ականջ կ՛ընէ մէկ կողմէն...,—
*Կընայի որ՝ ձա՛յն մը կուգայ, հա՛ *) կըպօռա՛յ եռեւէն,—*
— «Դաւի՛թ, կեցի՛ր..., Դաւի՛թ, կեցի՛ր..., ե՛ս ալ գա՛մ...»։
Ու կըդառնայ՝ Զիուն վրայէն՝ կըտեսնէ որ Խանդո՛ւտն է,—
Գուլպաները պատա՛ռ-պատա՛ռ եղեր են...,
Բոպի՛կ Ոտքով ինկեր ճամբան՝ Իր եռեւէն կըվազ՛է...

---

*) Ամօթանք, Անպատուութիւն, յարդանքի պակաս, այպանելի ընթացք (մեզի հանդէպ)։ 5) Նոր կարգուողի ի՞նչ առնական կեցուածքով դաս՝ Եւայի Թոռնուհիներուն, հոմանիշ՝ առաջաստի դէշերը կատու ճեղքելու աւանդութեանը։

*) Թաթացի, Գուլպաներով (այն առեն՝ պէտք է ընդունիլ որ մետաքս գուլպաներուն տեղ կամ տակէն՝ բուրդ գուլպայ ունէր) եւ կամ՝ մերկ Թաթերով։ *) Տալ, Նետուիլ, խուժել։ *) Հա՛, Անդադար, շարունակ։

Դաւիթ՝ մըտքով՝ ջ՛ին է ըրեր, ետ չի՛ դառնար, չի՛ կենար…:
Յանդուտ կանչեց, — «Աստծո՛ւ սիրոյն…, հերի՛ք է… .
*Դաւի՛թ,–ըսաւ–, մեռնի՛մ ես Քո Արեւո՛ւն… *),*
*Դարձիր ետե՛ւ՝ մէկ էրիշկա *) ղէպ ինձի՛…,*
Նորէն կ՛երթա՛ս…, Աստուած Քու քա՛ն աղողէ…,
Բայց քա՛նի որ Հոգիս Բերնէս չ՛էլ՝ ելեր՝
Ես Քու ետե՛ւ պիտի գամ…:
Իմ մեղք Քու վի՛զ մի ճըղեր,
Կա՛ց որ երթանք միասե՛ղ…»:
Դաւիթ դարձաւ՝ ի՞նչ տեսնէ…,—
Որ Աղջկան բոպի՛կ Ոտքեր՝ փուշերուն ու Հերկին մէջ՝
*Ա՛յնքան տըփեր *), Արի՛ւն վազեր՝ ու լեցուեր է Ոտքին տե՛ղ…:*
Է՛…, Յանդուտն ալ՝ ա՛յնքան ատեն՝ բոպիկ՝ Գետին չ՛էլ՝ կոխեր,
Հիմա բոպիկ՝ Դաշտերու մէջ կըվազէ՛…,—
Ոտքերն ըսես՝ ճաթըռտե՛ր են, պատըռտե՛ր…,
Արիւն(ն) ելեր՝ Հերկ ծածկե՛ր…:
Դաւիթի Սիրտ քիչ մը իջա՛ւ, մեղմացա՛ւ…,
Ըսաւ,—«Հօրա՛ր1), Քեզ տէր մ՛ը՛ներ2)՝ ես Յանդո՛ւտը կըփորձեմ:—
Դարձա՛ւ այնտեղ՝ Յանդուտ վերցուց՝ դըրաւ Իրեն Ձիուն վրա՛յ,
Ու կ՛ուզէ որ՝ քըշեն երթան դէպ Սասուն…:
Յանդուտ–Խաթուն ըսաւ, — «Դաւի՛թ, մի՛ երթար…,—
Դառնանք Մեր Տուն՝ ու պըսակուի՛նք ես ու Դուն,
*Ապա կ՛առնենք Մեր Ինչն ու Գանձ *) ու կ՛երթա՛նք…»:*
Դաւիթ վերցուց ի՞նչ ըսաւ·—
= «Դուն Ինձի եւ Իմ Հօրեղբօր՝ մեծ ամօթա՛նք ես տըւեր…,—
Ես այդ Քաղաք ա՛լ չե՛մ կըրնար Ոտք դընել…,
Կ՛ուզե՞ս Ինձ հետ Սասուն երթալ՝ եկ երթա՛նք… .
Ձի՛ս ուզեր գալ՝ է՛տ դարձիր ու դընա Ներստէ Քո Հօր Տո՛ւն…»:
— «Դաւի՛թ,–ըսաւ–, Հոգո՛ւդ մեռնիմ՝ Արեւո՛ւդ…,

---

*) Արեւ, կեանք, էութիւն: *) Իրիշկալ, երեսը դարձնել՝ նայել: *) Տփիլ, մեծնել: 1) Ա·36–37՝ «Դաւիթ ց՛խրօխպէրն ըսաց», դրաբար ձեւ: Ը·90ա·՝ «խառնեց ց՛նախիր»՝ «քերականօրէն անհասկընալի» ըսեր է Գրգն. Սրկ. Ծովսէփեան, մինչդեռ հարազատ դրաբար է: 2) Դուն գիտցած մի՛ ըլլար: *) Ինչն ու Գանձ, Ամբողջ օժիտ:

*Ապա ինչի խո՛սք մ՝ ալ ըսեմ...՝ չե՞ս ուրկիր... *)»:*
=«Չէ՛, չե՛մ ուրկիր,-Դաւիթն ըսաւ, խօսէ՛, Յանդո՛ւտ, մի՛ վախնար»:
— «Է՛, Դուն այսպէս բոպի՛կ Ոտքով որ Չիս առնես ու տանիս՝
Երթանք Սասուն, Ձեր երկրացին ի՞նչ կ՝ըսէ...,—
Պիտի ըսեն՝ «Դաւիթ դընաց՝ Ո՛րբ մը դըտաւ Դաշտերէն՝
Բոպի՛կ Ոտքով՝ առաւ բերաւ Իրեն կի՛ն...»:—
Չէ՞ որ ես ալ՝ Թագաւորի Աղչի՛կ եմ...,
Տունի տէ՛ր եմ, Հայր–Մա՛յր ունիմ, Քոյր–եղբա՛յր...,
Դուն Քո՛ պապու կըտրիճն ես՝ հոն, ես ալ չէ՞ որ Ի՛մ պապուն...3),—
Ամօ՛թ է ինձ՝ որ այս ձեւով Մենք երթանք...:
Դառնանք Մեր Տո՛ւն, օր–մը–երկուք կըկենա՛նք,
Իմ բաներն ալ կըպատրաստե՛մ՝ ու կ՝ելնենք՝
Չին կըհեծնենք՝ կ՝իյնանք ճամբայ՝ Սասո՛ւն կ՝երթանք միասին»:
Դաւիթ այնտեղ ա՛լ «Չէ» չ՝ըսա՛ւ, ընդունե՛ց,—
Ճամբայ ելան՝ Հինգը մէկտեղ՝ դէպ Յանդուտի Հօր Քաղաք.—
Հօրեղբայրը Իրենց առա՛ջ, Ինքն ու Քեռին՝ եռեւէ՛ն,
Յանդուտ–Յաթուն՝ Համոզի հետ՝ Իր զովչն ու եռեւէ՛ն 4),—
Գացին հասան Կապուտ–Բերդը՝ Նե՛րս մըտան:—

785. Դաւիթի Ու Խանդուտի Կէս-Պատկը՝ Կապուտ-Բերդի Մէջ

Կապուտ–Բերդը որ հասան՝
Թագաւորը՝ Իր Մեծերով՝ ելաւ եկաւ Անոնց դէ՛մ,
Առաւ տարաւ եւ իջեցուց Իր Գալատ,
Ամեն մէկտեղ նըստան կերան ու խըմեցին, խընդացա՛ն:—
Յանդուտ–Յաթուն՝ կանչեց Հայր–Մայր, Եղբայրներ,
Վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ.—
— «Այս Մա՛րդն է որ՝ Ինձի համար՝ ելեր Կըռի՛ է գացեր,
Ըսպաներ է Օղան, Դօղան, Սեւ–Թագաւոր՝ Իր Զօրքով,
Մեր Քաղաքն ու Քաղաքացին առ–ու–փախէ ազատեր,
Եւ դեռ Աբքատ–Թագաւորի Գլուխն ալ բերեր՝ Ինձ նըւի՛ր...:

---

*) Ուկիւ, ըռըկիւ, Ռուվիւ, սրդողիւ, բարկանալ: 3) Տե՛ս եւ Հատ. 765: 4) Յանդուտ իրենց եռեւ ձգելու այս պատկերի եւ տեղական բարքի մասին՝ Բ. Հատորովը:

Ըսէք նայի՛մ, իրրեւ Նըւէր՝ Դո՞ւք ի՛նչ կուտաք Այս-Մարդուն…»:
Անոնք այնտեղ ի՞նչ ըսին·—
=«Յանդո՛ւտ,-ըսին-, Դուն Մեր պատիւն ու Մեր գո՛նձն ես կենդանի,
Ինդ տըւեր ենք իրրեւ Նըւի՛ր Այս-Մարդուն,
Երանէն ալ մինչեւ Առեստ 1) Օժի՛տ տըւեր ենք Քեզի…»:
Յանդուտի Հայր՝ Թագաւորն ալ վերցուց Դաւիթին ի՞նչ ըսաւ·—
— «Ապա, Որդի՛, խընդի՛րք մ՝ ունիմ Ես Քենէ,—
Յանդուտն առնես՝ մընաս Մեր քով՝ կապուտ-Բի՛րդ·—
Իմ Թըչնամին չո՞ւտ է, կուգան՝ ու կ՝աւերե՛ն Իմ Քաղաք…,—
Այնքա՞ն Սիրու տէ՛ր են եղեր՝ Իմ Աղջկան՝ Յանդուտին…» 2):
Դաւիթն ալ թէ, = «Ես ու Յանդուտ՝ առեն մ՝ մընանք Զեզի Հի՛ւր,
Ապա կ՝ելլենք մէկտեղ կ՝երթանք Մեր Սասո՛ւն…:—
Ես ալ Սասմա-Ծռերի Տէ՛րն եմ վերջապէս,
Ու չե՛մ կըրնար հեռու մընալ Իմ Երկրէս…:—
Հէ՛, Հօրեղբա՛յր…, կէս-Գըսակը 3) հո՛ս կ՝ընենք,
Թագ-Գըսակն 4) ալ՝ կ՝երթանք Սասուն՝ հո՛ն կ՝ընենք…»:
Ասոր վերայ՝ դըրին Հարսնիք ու խընջոյք…,—
Յանդուտ-Խաթուն հազուեցուցին՝ Դաւթի եռե՛ւ ճըզեցին 5),
Տարան Մասուռ, կէս-Գըսակով պըսակեցին՝ բերին Տո՛ւն 6).

---

1) Ց·128՝ էրանայ չուր Բանդիւմահի(ն)· *Երան (Իրան, Ճէրան)՝ = Իրան, կամ՝ նախկին Պարսկահայքի հողային չրջանը:* 2) *Դաւիթի ուժէն օգտուելու պարագան՝ համեմատելի Տրդատի հետ·— երբ դեռ Հոռոմայեցիներու քով էր՝ կ՝ղրկէին ամեն մըցումի, կամ կ՝օգտագործէին իր զերազանց ոյժը՝ թշնամիներու դէմ:* 3) *Կէս-Պսակ, Պսակումի կէս արարողութիւն՝ Հարսին տանը մէջ կատարուած: Հայաշխարհի մէջ ծանօթ սովորութիւն է:* 4) *Թագ-պսակ (Թագնիպսակ), Որանին առաջ կատարուած վերջնական պսակը, — հին աւեններ՝ անշուշտ՝ թագով կամ պսակով օծուած, յետոյ՝ ճարտար ձեւին վերածուած:* 5) *Գիւղական սովորութիւն է, հարս-փեսան՝ եկեղեցի երթալդարձին՝ փեսան առջեւէն կըտարուի, հարսը եռեւէն:* 6) ԶՍ·, Ս·, Ց(2), Խ·, Կ·, Հ·(2), եւն.՝ *Դաւիթի եւ Յանդուտի ամուսնութիւնը կ՝յիշեն Կապուտ-Բերդի մէջ: Հոն կ՝մնան քանի մը տարի, հոն ալ կ՝ծնի Մըհէրը: Իսկ մաս մը պատումներուն համաձայն (ինչպէս ԶԿ·, Ա·(2), Կ·, Հ·, Լ·, եւն.)՝ Սասուն կուգան՝ հարսնիք կ՝ընեն, Մըհէրն ալ կ՝ծնի Սասնոյ մէջ:*

Համօլ-Գորգիզ՝ Քաւո՛ր եղաւ Գլսակին 7)։
Զէնով-Օհան՝ Իր խընամի Թագաւորին քովը մընաց երեք օր,
Ապա ելան՝ Թորոսի հետ՝ ձամբո՛ւ դըրին Քաղաքէն,
Անոնք ելան դարձան եկան՝ Ի Սասուն։

ԻԳ. ԴԱԻԻԹ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՆ ՄԸՀՒՐ.— ԴԱԻԻԹԻ ՄԱՀԸ

786. Դաւիթ Ու Խանդուտ՝ Կ'մեկնին Դէպ Սասուն

Եղբօ՛րս ըսե՛մ..., — թէ մէ՛կ, երկո՛ւ, հի՛նգ չաքաթ...,—
Դաւիթ Խանդուտ՝ մէկ ժամանակ՝ մնացին այնտեղ, կապուտ-բերդ1)։
Օրերէն մէկ՝ Դաւիթ դարձաւ Իրեն կընկան Խանդուտին,—
— «Խանդո՛ւտ,—ըսաւ—, արի երթանք Մեր երկիր ու Մեր Քաղաք.
Թէ Դուն չե՛ս գար՝ ես կ'երթա՛մ.
Ես չե՛մ կընար Իմ երկիրը ձըդել անտէր, անխընամ...»։
Խանդուտ-Խաթուն ի՞նչ ըսաւ.—
= «Դաւի՛թ,—ըսաւ—, Քեզ առի որ՝ Քեզ հե՛տ ապրիմ ամեն տեղ.
Ո՛ւր ալ տանիս՝ մէկտեղ կուգամ Քեզի հե՛տ...»։
Ելաւ Դաւիթ, Խանդուտի Հայր Թագաւորէ՛ն ալ խընդրեց,—
— «Ես պէտք է որ երթամ,—ըսաւ—, Իմ երկիր.
Ես չե՛մ կընար՝ երկար տանեն՝ անտէ՛ր թողուլ Իմ Հողեր.—
Խընդրեմ՝ Քո՛յլ տաս՝ Խանդուտի հետ ձամբա՛յ ելնենք Մեր Քաղաք»։
= «Որդի՛,—ըսաւ Թագաւորն ալ—, Թէ որ կ'երթաք՝ Դո՛ւք դիտէք...,
Ես չե՛մ կընար Ձեզի ըսել «Մի՛ երթաք»։—
Դէ՛հ, որ կ'երթաք՝ Աստուած Ձեզ հե՛տ Թող ըլլայ...
Երբ կարենաք՝ հարկաւ Նորէ՛ն կընդառնաք...»։
Ելան՝ ի՛նչ բան կար Խանդուտին,—Հազուստ-կապուտ, Զէն-ու-Զարդ
Ընձաներով ու Գանձերով՝ բերին Ուղտե՛ր բեռցուցին,—
Հարի՛ւր ըսեմ՝ երկո՛ւ-հարիւր՝ Ուղտաբեռ բա՛ն՝ լե՛ւլեցուն,

---

7) Տե՛ս Հատուած 743։

1) Նման պարագայ է՝ Համզա-Գահլաւանի իր կնկան հետ՝ աներոջ քով մնալը (Հատուած 926)։

Ու հեծնելու Զիւերն ալ դա՛տ՝ պատրա՛ստ ըրին սարքերով,—
Դաւիթ առա՛ւ Խանդուտ-Աթաուն՝ ճամբա՛յ ինկան դէպ Սասուն:
Խանդուտի Հայրն ու Եղբայրները՝ Մեծերով՝
Աւուր մ՝ ճամբայ՝ Բազմութեան հե՛տ գընացին:

787. Գործոթի Գուբընատրոջ Աղջիկը

Ելան ճամբա՛յ՝ Դաւիթ, Խանդուտ եւ Կարաւա՛ն՝ Իրենց հետ,
Եկան հասան Գործոթի-Դաշտ՝ Ի Բերկրի:—
Այդ Գուբընատէր Իշխա՛ն-Մարդու Աղջի՛կն ալ՝
Բանիկ-Տիկին 1)՝ այն օրէն՝
Ճամբուն վրայ Հըսկող դըրեր՝ դէռ կ՚ըսպասէր Դաւիթի՛ն 2):
Իմա՛ց տըւին, Աղջիկն եկաւ՝ հասաւ Դաւիթի դէմ կըտրե՛ց:—
— «Դաւի՛թ,—ըսաւ—, Իմ Հօր Գուբ՚նի Հա՛ցը կերար 3)՝ Քե՛զ անուշ,
Բայց Իմ երես չ՚եկա՛ր-ելար՝ Ձիս տեսնէիր մէկ անգամ...,
Գացիր՝ օտար Խանդուտ-Աթաուն Քեզի համար կի՛ն բերիր...—
Կա՛մ վար կուգաս՝ Կըռի՛ւ ընենք Ես ու Դուն՝
Կա՛մ չե՛մ Թողուր որ այստեղէն ողջ անցնիս...»:
= «Ախո՛ր Աղջիկ,—ըսաւ Դաւիթ—, Ես Քեզ երբեք չե՛մ տեսեր,
Մխայն Քու Հօր Գուբանի Հացն ու Թաց կերեր՝ խըմե՛ր եմ...:
Ինձ հետ՝ այսօր՝ Կընիկ, Տըղայ, Մա՛րդ ունիմ... .
Ես Իմ Կընիկ Սասո՛ւն տանիմ՝ Իրեն տե՛ղը հասցընեմ...՝
Նոր դառնամ դամ՝ Կըռի՛ւ ընենք Իրար հետ...»:

788. Խլաթցիի Դաւիթի Դէմը Կ՚ելնեն

Դաւիթն առաւ Իր Կընիկը՝ ելաւ ճամբայ՝ ու կ՚երթա՛յ...,—
Լուր չ՚ունի՛ Թէ՝ Թըշնամիներ ի՞նչ են ըրեր Իրեն դէմ...:—
Մըսը՛ր, Խլա՛թ, Կաղզըվա՛նը՝ ամենով՝
Գըլո՛ւխ բըռներ՝ վե՛ր ելած են չորս դեհէն,—
Տա՛ս-հազարով...՝ եկեր-բըռնե՛ր են ճամբան՝
Որ Դաւիթը՝ զարնեն թեբեւա՝ ըսպանեն...,

---

1) Ց·134–135՝ Բանայ-խառնըմ: [Բանի կամ Փանի՝ լեռ եւ գիւղ՝ Սիփան Լերան հիւսիսը, Զ.]. Տե՛ս եւ Հատուած 816: 2) Տե՛ս Հատուած 736: 3) Հատուած 732:

Վըրչ՛ժ առնեն իր ժօտէն...։—
Որովհետեւ Դաւիթ գացեր՝ Մըսրամէլիքն ըսպանե՛ր...,
Որովհետեւ եկեր Խըլաթ՝ Շըմչիկ–Տիկին սիրե՛ր է...,
Ա՛ս ըսպաներ, Ա՛ն ըսպաներ՝ Երկիրներուն տիրե՛ր է...։—
Ատոր համար՝ ո՛խ կապեր են Դաւիթի դէմ...։
Խըլաթցիք ալ Զօ՛րք են ժողվեր՝ ու կեցեր են վեր՛–ճամբուն,
Սայլերով ալ Գաւանէշ չիներ՝ Դաւիթի գալո՛ւն կ՛ըսպասեն,
Որ գարնեն դ՛ինք ըսպանեն կամ վըճասեն,—
Դաւիթ այլեւս չըկարենա՛յ անցնիլ երթալ դէպ Սասուն։
— «Հէ՛ը՛..., Սամսոյ Ծուռ Դաւի՛թն ըլլաս...,–կ՛ըսէին–,
Գաս Մեր Շըմչիկ–Տիկին սիրես իբրեւ կին...՝
Զըդես երթաս՝ օտար–Աղջի՛կ առնես բերես Գեղ համա՛ր...։—
Մեր կըռիւը կըռի՛ւ է, հա՛...», — կ՛ըսէր ամեն Խըլաթցին...։
Դաւիթ՝ իր կին՝ եկան հասան Գաւանէշին ու Զօրքերուն,
Խանդուտն ըսաւ, — «Ես Նիշակով Գաւանէ՛շ քանդեմ՝ Դուն ալ
[Զօրքե՛ր կոտորէ»։
Խանդուտ–Խաթուն՝ Տէգին Մայրով կ՛զարնէ՝ Գաւանէ՛շ կըքակէ,
Ու Սայլերը երկու ժամուան ճամբայ հեռո՛ւ կընետէ...,
Դաւիթն ալ Զօրք կըկոտորէ՛ ու կ՛անցնէ՛...։
Դաւիթ դարձաւ այդ Մարդերուս Երեսին,—
— «Է՛ Խըլաթցիք,–ըսաւ–, Դուք ի՞նչ անպատիւ ու տըմա՛րդ էք...՝
Որ եկեր էք՝ Կընիկի դէմ կըկըռուիք...։
Այսօր՝ Կընիկ եւ Ընտանիք, Բեռ ու Կապո՛ց կայ Ինձ հետ,
Ճամբա՛յ ըրէք, Թողէք Իմ կին տանիմ Տո՛ւն՝
Ու նոր դառնամ՝ գամ Ձեզի հետ հոս կըռուի՛նք...»։
Ան՝ Գաւանէ՛շը քակեց–քանդեց, Սայլեր նետե՛ց, տե՛ղ բացաւ,
Ան՝ Զօրքե՛րը՝ ալէկո–ձախէն Ջարդե՛ց փըռեց՝ ու անցա՛ւ,
Մէկտեղ անցան՝ ու դո՛ւրս եկան Խըլաթէն...։—

789. Շըմօյկ-Տիկին Ու Դաւիթի Երդումը

Խըլաթէն որ դո՛ւրս եկան՝
Տեսան որ մէկ կըտրի՛ճ Տըղայ՝ Արեւի պէս խորոտի՛կ՝
Իր Ձին հեծած, Տա՛ս Ձիաւոր Ըմբիշներու հետ մէկտեղ՝
Կամուրջին վրայ կանգներ՝ բըռնե՛ր է ճամբան։
Առանք եկան՝ Դաւիթի դէմ կըտրեցին,—

— «Հէ՛յ,–ըսին–, Դուք ո՞րտեղ կ'երթաք եւ ո՞վ էք…»:
— «Ի՞նչ կը հարցնես,–ըսաւ Դաւիթ–, ո՛վ կ'ըլլամ ես՝ թող ըլլամ…»:
= «Զէ՛,–ըսաւ Մարդ–, ըսէք տեսնեմ ուստի՞ց էք…»:
= «Ես Սասնա՛յ *) եմ,–ըսաւ Դաւիթ–, իմ կընիկս ալ Ինձ հե՛տ է»:
— «Ես՝ այստեղը՝ պէտք է կըռի՛ւ ընեմ Քեզ հետ…»,–ըսաւ Մարդ:
= «Դուն ի՞նչ ես որ,–ըսաւ Դաւիթ–, կըռի՛ւ ընես Ինձի հետ…»:
— «Գիտի ընե՛մ,–ըսաւ Մարդը–, ի՛նչ ըլլամ ես՝ թող ըլլամ…»:
Դաւիթ Աստր վայել չըրա՛ւ, ըսաւ, = «Ես ալ՝ Քեզ հետ կըռիւ
[չե՛մ ըներ.
Գընա՝ առ բե՛ր՝ Տա՛սը–հազար Ձիաւոր…՝
Որ Ես Քեզ հետ կըռի՛ւ ընեմ Մարդու պէս…»:
— «Ես՝ Տա՛ս–հազար Ձիաւոր–Զօրք բերող չե՛մ…,
Ես ալ Քենէ պակաս Մարդ չե՛մ…,–ըսաւ Ան–.
Մինա՛կ պիտի կըռիւ ընեմ Քեզի հետ…»:
Այն ժամանակ՝ Դաւիթ այնտեղ Ինքը Իրեն ի՞նչ ըսաւ.—
«Աստուա՛ծ վըկայ…՝ այս Ձիաւոր կըտրիճն ալ՝
Էրիկ–Մարդ չ'է՛…, կայ ու չըկայ՝ Աղջի՛կ է…,—
Եկեր կեցեր Կամուրջին դէմ՝ Իմ ճանապա՛րհ կըկըտրէ»:
Ու դառնալո՛վ Ձիաւորին՝ ի՞նչ ըսաւ.—
— «Ես՝ Իմ կընիկ՝ նոր Հարս–Փեսա՛յ ենք ասօր.
Ապա այստեղ Ես չե՛մ կրնար կըռիւ ընել Քեզի հետ,
Ես՝ Իմ կընիկ՝ Մեր Տո՛ւն կ'երթանք, եօ՛թ օր պահկինք Իրար Մոց,
Վեր՝–ո՛ւթ օրւան *) դառնամ–կուգամ՝ կըռի՛ւ կ'ընենք Ես ու Դուն»:
Մի՛ ըսե՛ր որ՝ այդ Կըտրիճն ալ՝ Էրիկ–Մարդո՛ւ Հագուստով՝
Շըմչիկ–Տիկին Ի՛նքն է եղեր, — Դաւիթի դէմ ո՛խ կապած —,
Եկեր Դաւթի ճամբա՛ն կեցեր՝ կըռի՛ւ կ'ուզէ Անոր հե՛տ…:
— «Դաւի՛թ,–ըսաւ–, չըճանչըցա՞ր Ես ո՞վ եմ…,—
Ծըլաթի–Տէր՝ Շըմչիկ–Տիկին, — Ֆո չ'հաւնած Աղջի՛կն եմ…:—
Եկար կեր՛ր ու խըմեցի՛ր…, Գրլուխդ Ինձ հետ մէ՛կ ըրիր *),
Մեր Մատնիներ կըփոխէ՛նք Իրար հետ…,—
Իմ վըրայէն *) գացիր օտար Ծանդուտ–Ծաթո՛ւն կին բերիր…:
Եկած եմ որ կըռի՛ւ ընենք Ես ու Դուն,—

---

*) Սասնայ, Սասունէն: *) Վեր՝–ուր օրւան, Ուրեքորդ օրը: *) Գլուխը իրարու հետ մէկ ընել, Միասին պահկիլ՝ (այր եւ կնոջ պէս): *) Իմ վրայէն, Իմ վրայ կոխելով, դիս ընդոտնելով:

Երէկ Դուն Չիս ըսպանեցիր Կըռւի մէջ՝
Գընա՝ հանգի՛ստ՝ Խանդուտի Մոց քընացի՛ր... .
Թէ որ Ե՛ս Քեզ ըսպանեցի՝ հօ՛ պըրծա՛նք...,—
Խանդուտ–Խաթուն ու ես՝ մէկտեղ՝ Որբեւայրի՛ Թող մընանք...»:
= «Այսօր Ինձ հետ Ընտանի՛ք կայ,–ըսաւ Դաւիթ Շըմշիկին–,
Իմ եօթ օրը որ լըրանայ՝ կուգամ Քեզ հետ կըռւի՛...»:
— «Որ այդպէս է՝ եկուր Ինձի երդո՛ւմ ըրէ Քո Աչով՝
Որ Ես հաւատամ՝ ուրիս *)՝ դամ հոս՝ ըսպասե՛մ...»:
Դաւիթ այնտեղ՝ ա՛լ երդումով խօ՛սք տըւաւ,—
— «Մարութայ–Բա՛րձր–Ասպարածին, Մըսէ–Աչէ Իմ Զա՛խ Թեւին,
Ուրիս այսօ՛ր՝ Ես գամ այստե՛ղ, կըռի՛ւ ընենք Իրար հետ»:
Ու Ձեռ զարկաւ Սանրին վըրա՛յ...՝ Իր խելքով՝
Որ Իր Սանրո՛վ երդըւէր...,—
Ձեռքը առաւ *) Մըսէ–Աչի՛ն, երդումն ըրաւ Նըշանո՛վ 1):—
Սուրբ–Նըշանի գօրքն *) ալ ա՛յն էր՝ որ զ'Ինք պիտի չ'երդըւէ՛ր...:
Երդումն ըրաւ, Շըմշիկ–Տիկին Թողուց՝ անցան ու գացին:

990. Դիմաւորում Եւ Աչքալոյս

Դաւիթ՝ Խանդուտ՝ ելան եկան ու մօտեցան Սասունին:—
Եկող–գացող ձամբորդներէն՝ Մարդիկ հասան լո՛ւր տըւին,—
Թէ, — «Դաւիթը՝ Խանդուտ–Խաթուն առեր կուգայ մեծ շըքով...»:
Ձէնով–Օհան, Ցըռան–Վէգօն, հետը Քեռի–Թորոսիկ,
Եւ Սասունէն՝ Իշխա՛ն–Մարդեր, ելան եկան Դաւիթի դէմ,
Բարեւեցին, համբուրուեցան, խընդացա՛ն...:—
Աչքալուսա՛նք *) ըրին Ամենք Իրար հետ,—
Թէ՝ «Դաւիթը՝ առաւ կընիկն ու եկա՛ւ...»:
Ժողովուրդն ալ Խանդուտի վրայ հիացա՛ւ...,—
— «Ա՛յս տեսակ ալ կընի՞կ կ'ըլլայ...,—ըսին Ամենք՝ Իրարու–,
Ա՛յսպէս Կըտրիճ, ա՛յսպէս խելօք, պատուակա՛ն...»:
Քեռի–Թորոս, — Թորոսիկին ծերուկ Հայրը՝ ի՞նչ ըսաւ.—

---

*) Ուրիս, Այս օրէն՝ ուր օր յետոյ: *) Առաւ, Դպաւ, Հանդիպեցաւ: 1) Պատումներուն նայելով՝ Միսէ–Աչ եւ Սուրբ–Նշան՝ նոյն են: *) Զօրք, Հրաշագործ կարողութիւն, Չնորք, յուռութք:
*) Աչքալուսանք, Աչքը լոյս ընելը, Խնդակցութիւն:

Դաւիթին ալ՝ Յանդուտին ալ՝ ճակատները համբուրեց,
Ձեռքը դըրաւ Անոնց Գլխուն՝ Հօր պէս օրհնեց՝ ու ըսաւ.—
— «Դաւի՛թ, Որդի՛, Քե՛զ ալ մատաղ ըլլայ Քեռիդ՝ կընկա՛նդ ալ...,
*Որ այստեսակ Հօր–Որդի *) Հա՛րս ես բերեր...»:*
Ձէնով–Օհան–Հօրեղբօր կի՛նն ի՛նչ ըրաւ.—
Ըսաւ՝ «Ա՛յսքան որ կըդովէն Յանդուտին՝
Մէյ մը երթամ՝ տեսնեմ ի՞նչպէս կընիկ է...՝
Որ այդ Դաւիթ հասներ առեր բերեր է...»:
Գընաց տեսաւ որ խորոտիկ ու Մեծ կընիկ է Յանդուտ,
Սիրտը այնտեղ պատռեցա՛ւ...,—
«Զո՛ւր է,–ըսաւ–, Դաւիթ այլեւս իմ Երեսը չի՛ նայիր...»:
Եկաւ Իր Տուն, հիւանդ ինկաւ Անկողին...,
Երեք օրէն — չորսի վըրայ — Շունչը փըշեց՝ ու մեռաւ...:—

791. Դաւիթ Ու Խաչդուտ՝ «Թագնիպսակ» Կ'Խաճեն
Եօթն Օր Ու Եօթ Գիշեր Հարսնիք Կ'ընեն

Բերդին ասլա՝ Յանդուտ–Յաթուն ու Դաւիթ՝
Առին տարան Դաւթի չինած Մարութենի–բա՛ղըր–վանք,
Առօք–փառօք պըսակեցի՛ն Իրար հետ,—
*Թագնիպըսա՛կ հանեցին *),—*
Նոր՝ Թագաւոր ու Թագուհի՛ օծեցին 1):
Հարսնի՛ք դըրին՝ եօ՛թը գիշեր ու եօ՛թ օր,
Կերան Ամէնք ու խըմեցին, ուրախացա՛ն, Տօ՛ն ըրին.
Ֆաղաք–Ֆաղքով՝ պարեց–ցատկեց՝ եօ՛թը գիշեր ու եօ՛թ օր...:
Անոնք՝ այնտեղ՝ հասան Իրե՛նց փափաքին,
Դուք ալ հասնիք Ձեր փափաքին ու փառքի՛ն...:

---

*) Հօր–որդի, Լաւ ընտանիքէ եւ պարկեշտ:

*) Հաճիլ, Հասցնել, տանիլ արժանացնել (Թագին, պսակին):
1) Զի նախապէս (Հատ. 455) Դաւիթ արդէն օծուած էր Թագաւոր: Հիմա՝ ամուսնաւոր վիճակով կրկին կ'օծեն, կինն ալ Թագուհի օծելով իրեն հետ: Համմալ.՝ Տրդատի մասին Խորենացու ըսածը [Բ. ձղ. 335]. — «Եւ հրամայէ զրել զ'նա (Աշխէն՝ դուստր Աշխադարայ) Արշակունի, եւ զգիցուցանել ծիրանիս եւ թագ կապել, զի հաստատացի Արքայիկ (Տրդատ)»:

792. Նորածին Մքիէրն Ու Դայեկը

Դաւիթ՝ Խանդուտ՝ այդպէս սիրով կարգըւեցա՛ն իրար հետ.
*Ջոբս–հինգ ամիս վըրան անցաւ՝ Խանդուտի Ոտք ծանր մընաց *).*
Ին ամիս՝ ու ին օր, ին ժամ լըրացաւ՝
Խանդուտ–Խաթուն պառկեցա՛ւ,
*Աստուած տըւաւ՝ եղաւ Անոնց Լա՛ճ *) Տըղայ մ՝:*
*Մընելո՛ւն պէս՝ Տատմօրն *) ըսին որ դայ Տըղուն Ջորս կըտրէ:*
Տատմէրն եկաւ որ Տըղային Ջորը կըտրէ ու կապէ՝
Այդ երախան՝ Ձեռքը նետեց Մանկաբարձի Օձիքին՝
Քաշեց՝ ձըդեց Իր վըրան...:
Տատմէր վը՛ժա՛ց..., սարսափեցա՛ւ ու փախա՛ւ...,—
—«Վիշա՞պ էշ) Ա...., ի՞նչ է...,–ըսաւ–, Չիս քաշե՛ց ու կըձեւէ՛ր):*
= «Չէ՛, Մեր Թո՛ռն է,–ըսին Մեծեր–, դընա կըտրէ՛ Իրեն Ջորս»:
Երկու Հոգի՝ Տըղուն Ձեռ–Ոտ ամո՛ւր–ամուր բըռնեցին՝
Տատմէրն եկաւ՝ հապի՛ւ կըտրեց Աւտր Ջորս...:
Դաւիթ վերցուց հոն ի՞նչ ըսաւ Խանդուտին,—
— «Թէ ինձմէ՛ է Այդ–Տըղան՝
Ջօրուքի՛ւն մը, մէկ նըշա՛ն մը պիտի ըլլայ Իր վըրան...»:
*Բերին Տըղան՝ բալո՛ւլ *) ըրին՝ որ կապեն,*
*Գուբնի–Շըղթայ՝ Պինդերու *) տեղ՝ Տըղուն վըրա՛յ փաթթեցին:*
*Երախա՛ն էր, — ձըղօրին *) մէջ երբոր լացա՛ւ, ճըմըլ(կ)տաց... *)՝*
Իրեն վըրայ փաթթած Շըղթան՝ կըտո՛ր–կըտո՛ր ըրաւ՝ նետեց
[տեղն ղին:
Ու Մըհէրի ծընած օրն ալ, — կ'ըսեն որ—,
Հրեղէն Գուռկիկ–Ջալալին ալ՝ Գուռա՛կ մ՝ բերաւ Իրեն պէս:

793. «Գզիկ-Մքիէր, Մքիէրիկ»

Ելան Դաւիթին իմա՛ց տըւին՝ «Տըղան չա՛տ լաւ Տըղայ է...,—

---

1) Ոտք ծանր մնալ, *Ծղի մնալ*: *) Լաճ, *Մանչ, արու*: *) Տատմէր, *Մանկաբարձ, դայեկ–կին*: 2) *Չմմալ. Արտաւազդի ծննդեան հետ, «վիշապազունք գողացան..., եւ դեւ փոխանակ եղին» [Արնցի. Բ. կա. 287]*: *) Ձուել, *Գաւտռել, բզքտել, ճղդել (Տե՛ս Ախտածո Մըհէր, Հատ. 201)*: *) Բալուլ, *Խանճարուր*: *) Պինդեր, *Խանճարուրի կամ օրրոցի պնդիչ–կապեր.*: *) Ճղօր, *կախօրրան*: *) Ճմլ(կ)տալ, *Տռմռփել, ճգտուիլ*:

Գուբենի-Շըղթան կըտըրտե՛ց ու ղէ՛ն նետեց…,—
*Ապա՝ մէկ Ձեռ վընասուա՛ծ է, խըփո՛ւկ *) է…,*
Դըրեր ենք որ լողացընենք Ֆո Տըղան,—
Մա՛րդ չի՛ կըրնար բանալ Աւոր Ձեռն ու Ախ…»:
Դաւիթ եկաւ ու նըստեցաւ Տըղուն քով,
*Ձեռքը բըռնեց՝ մաժե՛ց-մաժե՛ց *) ու բացա՛ւ,*
Տեսաւ որ ի՛նչ…, — պուտ) մի Արուճ՝ լեզուի նըման՝ Ափին մէ՛ջ1).*
— «Հա՛յ-հա՛յ…,–ըսաւ–, Աչխարք ըրեր պուտ մի Արուն՝ դըրեր է
[իր Ձեռքին մէջ….
Թէ որ Ախ ողջ մընաց…՝
Աւոր քովէն զարմանալի բանե՛ր պիտի տեսնըւին…:—
Ախ ինձմէ՛ ալ աւելի՝ Արունք կ՚ընէ անկասկած…,—
*Արունխո՛ւմ *) Մարդ պիտ՚ըլլայ…»:*
Ձեռքը թողուց, ապա վերցուց ի՞նչ ըսաւ.—
— «է՛-է՛… Որդի՛, ֆա՛րը ֆեզի թող մուտ տայ…,
Հող՝ էրկրընա՛յ ֆեզ պահել…»:
Դաւիթ բերաւ կընքե՛լ տըւաւ Իր Տըղան,—
Ըսին, — «Անուն ի՞նչ դընենք…»:
Դաւիթն ըսաւ, = «Պապիս Անո՛ւն՝ ու Հօրս Անո՛ւն կըդընեմ՝
Գետին չ՚մընա՛յ Իրենց Անուն, միչտ յիշուի…:—
Պապուն ու Հօր Անունովը՝ Տըղին Անուն դրաւ ՄՂՀԷՐ 2),
ո՛Ինք կանչեցին՝ ՊՂԶՏԻ(Կ)-ՄՂՀԷՐ 3), ՄՂՀԷՐԻԿ…:

794. Մրհէր՝ Գառատուճի Երջանիկ

Մըհէրհէկի Ֆառատնէք դեռ չէ՛ր լըրացեր,—
Դաւիթ օր մը Սեննեակ մըտաւ՝ տեսա՛ւ որ՝

---

*) Խփուկ, Գոց, փակած: *) Մաժել, Շոյել, չփել, մարժել: *) Պուտ, կաթիլ (Ս·176՝ կաթ = կաթիլ): 1) Ե·927՝ «Հայրն եւ-կաւ ձեռքը բացաւ, ափին մէջ դրուկ է· — Դու անմահ որդի ես, քու դիրը վանայ-քաղաքն է, քու տեղը Ակռիու-քարն է, որ գետին քու ճիու առջեւ տուկայ, որ երկիր քու առջեւ տուկայ»: *) Արուճ-խում, Արիւնարբու: 2) Նման՝ Տրդատ Արքային, — հօրը եւ զա-ւակին անուններըը՝ Խոսրով: 3) Ա·73՝ Մեծ Մհէր՝ ուղղել՝ Պզտիկ Մհէր. (վերջին երեք տողերուն մէջ խառնուած են ճիւղերը):

Մըհէր իր Տեղ քընացեր է, չի՛ երեւար իր ճըղօր…,
*Եւ իր Շունչը հանած՝ աւեն՝ երեսլաթը *) վեր չե՛ր ներ…:*
Կասկածեցաւ թէ՝ «Այս Տըղան՝ իրեն Մէջքին Գլուխ չ՛է՛…»:
Ան ալ վերցուց ու իՙնչ ըսաւ Խանդուտին.—
— «Երբոր ես իմ տըղայութեան ժամանակ՝
Շունչ կուտայի ու կ՛առնէի՝ ճըղօրիս մէջ քընացած՝
Երեսիս լաթ կ՛ելնէր մինչեւ Ուսերիս Կամարն՝ ու կ՛իջնէր…:
Այս երախան իմ մօտէն չ՛է՛…՝ ա՛յսպէս թո՛յլ է Իրեն Շունչ»:
Խանդուտ–Խաթուն իՙնչ ըսաւ.—
= «Կա՛ց մինչեւ որ Ֆառասունք Հանէ՝ ապա եկուր ու դիտէ՛…»:
Տըղուն Ֆառասունք լըմընցաւ՝
Դաւիթ եկաւ մըտաւ Սենեակ՝ իՙնչ տեսնէ…,—
Որ Մըհէրի Երես ծածկող Լաթին հետ՝
Օրորոցին Ծածկո՛ցն ալ վե՛ր՝ մինչեւ Ուսերին Առաստաղ՝
Կե՛յնէ–կ՛իջնէ՝ Շունչ առնելու եւ Շունչ տալու ժամանակ…:
Խանդուտ–Խաթուն Նե՛րս կըմըտնէր, Դաւիթ դարձաւ ու ըսաւ.—
*— «Անցած օրը՝ իմ Խանդուտիս մե՛ղքը առի *)՝ ի զուր տեղ՝*
Հիմա սակայն կըտեսնե՛մ որ Մեր Տըղան՝
Մեր Զարմի՛ն է՝ ու Մեր Շընո՛րքն ունի ամեն կողմերով…»:
Ու հանեց Իր Ոսկի–Կաքաւ 1) Մըհէրիկի Թե՛ւն անցուց:
Մըհէրն ըսես՝ Գազերուն ու Հօ՛ր Նըման 2),
Ուրիշ Տըղաք թէ տարի՛վ կըմեծնային՝ Ինք կըմեծնար մի՛կ օրէն.
Ուրիշները թէ ամի՛սով՝ Ինք կըմեծնար մի՛կ ժամէն…:—

795. Խանդուտ՝ «Դարձ» Կ՛երթայ Իր Ծնողքին Քով

Մըհէր եղաւ չորս–հինգ ամսու՝ մեծ Տըղայ,
*Խանդուտ ուղեց որ Իր Հօր–Մօր Դա՛րձ *) երթայ:*
Ելան առին՝ Դաւիթի հետ՝ ճամբա՛յ ինկան ու·դացին,
Գացին հասան Կապուտ–Բերդը, Թագաւոր–Հօր Հի՛ւր եղան:

---

*) Սրեսլաթ, երեսի չղարչ (որմով նորածիններուն երեսը կ՛ծածկեն՝ լոյսէ ու փոշիէ պահպանելու): *) Մեղքը առնել, Մեղադրել՝ անհիմն կասկածներով: 1) Տե՛ս եւ Հուշ. 799: 2) Հուշ. 27, 193, 239 եւ 282: *) Դարձ երթալ, Ամուսնութենէն քիչ յետոյ՝ նորահարսը իր ծնողքին տունը կ՛երթայ մէկ–երկու շաբաթ, ասոր կ՛ըսեն դարձ երթալ:

Կապուտ-Բերդի ծեր Թագաւորը, Խանդուտի Մայրը, Եղբայրներ,
Ուրախացան ու խընդացան, տեսան Մըհէր՝ Իրենց Թոռ:
Դաւիթ՝ Խանդուտն ալ՝ մէկ առեն՝ մընացին հոն՝ Կապուտ-Բերդ:

796. Պապէ-Ֆըրընկի Սպառնագիրը

Զըրոյցն ո՞ւրկէ տանք..., — Իրանի Տէրէ՛ն:—
Թուղթ գըրեց ճամբեց Պապէ-Ֆըրընկին,— †)
— «Մէկ Մարդ՝ Սասունէն՝ անունը Դաւիթ,
Իմ բոլոր Զօրքեր ջարդեց, կոտորե՛ց՝ հարի՛ւր-հազարո՛վ...,
*Եկաւ գըրաւեց Իմ Հողն ու Երկիր *):*
Խանդուտ-Խաթո՛ւն կար՝ Կապուտ-Կողի Բերդ,
Շատ ու չա՛տ խօրատ՝ ինչպէս Արեգակ,
Այդ Մարդը եկաւ՝ Խանդո՛ւտն ալ տարաւ...:
Դաւիթի անուն՝ չա՛տ մեծացեր է...,
Ինք Իրմէ չոջցե՛ր, եղեր է Դիւցա՛զն...,—
Սասունէ՛ն ալ դուրս՝ քաջ մէկ Թագաւոր...» †):
Պապէ-Ֆըրը՛նկին էր, — Գիրը որ կարդաց՝
Կանչեց Իր Մեծեր՝ բերաւ Իր առաջ,—
— «Կարդացէ՛ք,–ըսաւ–, Իրանի այս Թուղթ,
Տեսէք ի՞նչ կ'ըսէ..., իրա՞ւ է՝ թէ՞ սուտ...,—
Մէկ Մարդ՝ Ինք մինակ՝ կըրնա՞յ ըսպանել հարի՛ւր-հազա՛ր Մարդ»:
Որ Թուղթ կարդացին՝ Ամենք խընդացի՛ն...,—
= «Սո՛ւտ է, Թագաւո՛ր, մի՛ հաւատար,–ըսին–.
Մենք չե՛նք հաւատար...:—
Այդ ո՞վ է լըսեր, ո՞ւրտեղ է տեսեր՝
Մէկ Մարդ՝ Ինք մինակ՝ կըրնայ ըսպանել հարի՛ւր-հազա՛ր Մարդ»:
Պապէ-Ֆըրընկին 1)՝ Ինքն ալ Թագաւոր՝ վերցուց ի՞նչ ըսաւ.—
— «Հէ՛ն..., Թագաւոր մը...՝ Ինք սուտ կ'ըսէ՞ որ...»:

---

*) Երկիր, ժողովուրդ, երկիրն ու բնակչութիւնը: †–†) Պարսից եւ Հռոմայեցոց (վերջէն Բիւզանդիոնի) հակամարտութիւնը եւ երբեմն դինակից-դաւադրութիւնը՝ Հայաշխարհի հանդէպ: 1) Ես ինքս ալ գրի առած եմ Պապէ-Ֆըրընկ անունով հէքիաթ մը, որով անձամբ գիտեմ թէ՝ պատմող գիւղացիները կըգործածեն հաւասարապէս՝ Պապէ-Ֆըրընկ եւ Պապէ-Ֆըրընկի ձեւերը:

= «Մե՛նք ալ կըխորհինք որ սուտ չի ըսեր···,
Բայց խելքի բան չ՚է՛, Թազատո՛ր,–ըսին–:
Մէկ Թո՛ւղթ մը դըրենք՝ ուղարկենք Սասուն՝
Ու հարցո՛ւմս ընենք···,—
Սո՞ւտ է՝ թէ՞ ողորդ···՝ այնատե՛ն հաւտանք···»:
Ելան ու այնտեղ Թո՛ւղթ մը դըրեցին՝ Սասմանց Դաւիթին,—
— «Դաւի՛թ,–դըրեցին–, լըսեր ենք որ Դուն՝ չատ Հըսկա՛յ Մարդ ես,
Թէ չիտա՛կ է այս՝ եկուր Մեզ կըռի՛ւ···.
Թէ չի դաս այստեղ՝ Մեզ հետ կըռի՛ւ տաս՝
Ես Զօրք կըժողվեմ՝ կուգամ Քու վըրա՛յ···,
Քու Հողն ու երկիր քարուքա՛նդ կ՚ընեմ···,
Ի՛նչ կայ ու չըկայ՝ կ՚առնեմ կըտանիմ···,
Թուղթը դըրեցին՝ ղըրկեցին Սասուն,
Սասունէն առին՝ բերին կապուտ–բերդ՝ տըւին Դաւիթին:—

787. Խաճդուռ՝ Պատասխան Կ՚գրէ Պապէ-Ծրըցկից

Դաւիթ Գիրն առաւ՝ տըւաւ Խանդուտին,
— «Խանդո՛ւտ, մէկ կարդա՛՝ ի՞նչ Թուղթ է»,–ըսաւ:
Խանդուտ որ կարդաց՝ ըսաւ, = «Այս Թուղթը՝ Քեզ ո՞վ է բերեր»:
— «Երկու Թըղթաբեր Մարդի՛կ են բերեր»:
= «Տա՛ր այդ երկու Մարդ,–ըսաւ Խանդուտը–, ու նե՛րս հըրամցուր·
Մի՛ կըռուիր հեռներ *), աղէկ պատի՛ւ տուր···»:
Դաւիթ չի՛ գիտեր թէ ի՞նչ հաշիւ է 1)···,—
Ելաւ՝ Խանդուտի ըսածներուն պէս՝
Տարաւ Այդ Մարդիկ՝ ու պատի՛ւ տըւաւ:
Մընաց մինչ լուսուն, Խանդուտ-Խաթուն ալ՝ Թուղթ դըրեց ա՛յսպէս.—
— «Էյ՛ Պապէ–Ծըրընկ, Դու Մեզ ծանօթ չե՛ս, Քեզ չե՛նք ճանչընար·
Քեզ ի՞նչ ենք ըրե՛ր որ կ՚ելլես կուգաս՝ Մեր վըրայ կըռիւ···:
Դէ՛հ, որ պիտի գաս՝ Դուն մինակ մի՛ գար···,
Մինակ՝ չե՛ս կըրնար Դաւիթի վըրայ···,—
Քեզ հետ միասին՝ ուրի՛չ եւ ուրիչ Թազատո՛ր ալ ա՛ռ՝ ու բեր Մեր
[վըրա՛յ,

---

*) Մի կռուիր հետները, հետերնին խիստ մի խօսիր: 1) Կ·95՝ պակաս է՝ ուղղել՝ բաս է, կամ՝ կիյաս է (խնդիր, հաշիւ):

Թող Ա՛նո՛նք ալ դան ու Քեզի օգնեն՝ կըռւի իբր Ընկեր…»։
Թուղթ ծալեց՝ Յանդուտ՝ դըրաւ Պահարան,—
— «Ա՛ռ, Դաւի՛թ,—ըսաւ, տո՛ւր Այդ Մարդերուն,
Աղէկ հազուեցո՛ւր՝ ու Ոսկի՛ ալ տուր.
Երկու ալ՝ նոր Զի՛ տուր Անոնց համար, Թող հեծնեն երթան…»։
Այսպէս ալ ձամբու դըրաւ ու գացին։
*Յանդուտ՝ Դաւիթին խակի՛ *) բան չ՚ըսա՛ւ՝*
Թէ ի՞նչ էր դըրեր՝ Թուղթին պատասխան…։
Երկու Մարդերն ալ՝ Գիրն առին դարձան՝ ու բերին Քաղաք,
Թագաւոր կանչեց Իրեն Իշխաններ,
Թուղթը կարդացին,
Ու դեռ չե՛ն դիտեր՝ իրա՞ւ է՝ Թէ՞ սուտ, ի՛նչ որ դըրուած էր…։
— «Դեռ Իրանի Զօ՛րք մէյն չարդեր է՝ Մենք չե՛նք հաւատա՛ր…,
Ան կ՚ըսէ՝ «Շատուր՝ Ընկերո՛վ եկէք…»,— 2)
Այդ ի՛նչքան ուժեղ ու կըտրիճ Մարդ է…»։
Ու դարձան դեռ եւս ոմանք ալ ըսին՝
— «Զին–ու–Մաչինայ Թագաւորին ալ՝ Մարդ ղըրկենք Թող գայ՝
Աւելի՛ ուժով՝ երթանք Դաւիթի վրայ…»։
= «Ամօ՛ր է,—ըսին՝ մէկ քանիներն ալ—, Մեր ուժ կըբաւէ՛…»։
Թագաւորն ելաւ՝ չաստ Զօ՛րք հաւաքեց,
Անթիւ–անհամար՝ քան՚զ երկինց Աստղեր,
Ու Թո՛ւղթ ալ դըրեց՝ ղըրկեց Դաւիթին,— «Ա՛–հա՛՝ Ես եկա՛յ» 3)։—

798. Խաճդուս Կ՚ուզէ՝ Կռիւին Մասնակցիլ

Թուղթը որ բերին՝ տըւին Դաւիթ Ջեռ՝
Յանդուտն ալ ըսաւ՝ որ — «ի՛նչքն էր դըրեր՝
«Երկու Թագաւո՛ր եկէք Դաւիթ վրայ»,—
Որ Պապէ–Ծըրընկ Թագաւոր վախնար՝ Կըռիւի չիգար…։
Հիմա՝ երկու չէ՛՝ երե՛ք Թագաւոր ելեր են Քու դէմ, Կըռիւի կուգան»։

---

*) Իսկի, երբեք, բնաւ։ 2) Ճշդրիտ պատկեր՝ այն պետական վարիչներուն՝ որ դրացի կամ թշնամի ուժերուն վրայ իրական տեղեկութիւն չ՚ունեցած՝ պատերազմի կ՚մտնեն։ Արդիւնքը յաճախ ա՛յն է՝ ինչ որ կը տեսնենք հոս, — բնաջնջում կամ գերութիւն։ 3) Կ·96՝ Կռիւը պիտի ըլլայ՝ Մըշու–Դաշտ (պատումին բերումով)։

Դաւիթն ի՞նչ ըսաւ, — «Դուն ինչո՞ւ Ինձի կանուխէն չ'ըսիր՝
Որ ես երթայի ու չըթողնէի...»:
— «Ես չէի՛ դիտեր թէ պիտի գայիր...,—
Թուղթ եկաւ՝ դիտցա՛յ՝ ու ֆեզ լո՛ւր տըւի.
Թէ կ'ուզես՝ Դաւի՛թ, ե՛ս ալ ֆեզ հետ գամ...»:
= «Հա՛,—ըսաւ Դաւիթ—, Ջօրքն Ինձի բաւո՛ց, որ մընայ ֆի՛զ ալ...
Դուն գաս ի՞նչ ընես..., այդ քանի մ' Ջօրքեր ի՞նչ են Ինձ համար....
Ամօթ չ'էՙ Ինձի՝ որ Դուն Ինձ հետ գաս...»:—

999. Դաւիթ՝ Մեկնելէ Առաջ՝ «Ոսկի-կաֆաս»ը Կը յանձնէ Իր Եղբօր

Դաւի՛թն էր, — այդտեղ՝ ա՛լ չըդադրեցաւ...,—
Ելաւ ու կապե՛ց Իր Ջէնուզարդեր,
Իր Ձին քաշեց դո՛ւրս, թամբ վըրա՛ն դըրաւ,—
Ելաւ որ հեծնէր՝ — «Դի՛ՀՀ, մընաս բարո՛վ,—ըսաւ, Ի՛մ Յանդուտ,
Ջ'ելնե՛մ—չ'իմանա՛մ՝ որ Իմ հետեւ գաս...:
Դուն Իմ հետեւ գաս՝ ա՛լ Իմ կընիկ չ'ե՛ս...:
Իմ Աստուած մե՛ծ է, Դուն մի՛ վախենար...»:
*Ապա արձըկեց *)՝ Յանդուտի՛ն տըւաւ՝*
Անդին Քարեբոյ մէկ Ոսկի-կաֆաս 1),
Ու Կընկան ըսաւ.—
— «Թէ որ Լա՛ճ ծընի՝ այս Ոսկի-կաֆաս կապես Ալ Թեւին,
Թէ Աղջի՛կ ծընի՝ ծախես տաս Իրեն,—
Անոր Տըղայի Տըղա՛ն ալ ուտէ՝ դեռ եւս չի՛ հատնիր...»:—

1000. Դաւիթ՝ Պապէ-Ծրցնկը Ալ Կ'ապտակէ

Ու հեծա՛ւ Իր Ձին Քուռկիկ-Ջալալին,—
Մէկ Ոտը դըրած ձա՛խ Ասպանդակին՝ մինչեւ չըրջուեցաւ ա՛լ [կողմին վրայ՝
Արդէն Կըւի-Դաչտ փըռուած էր առջին...:
Ու նայեց որ ի՞նչ..., — անթիւ Վըրաններ Դաչտին մէջ զարկա՛ծ...,
Ու դեռ հեռուէն Ջօ՛րք է որ կուգայ...:

---

*) Արձակել, Հանել (Թեւին վրայէն): 1) Ց·129, Հ·44՝ բազբանդ, Ա·38–40՝ Ոսկի-կաֆաս, որմէ հատ մը կապած էր Մըհէրի Թեւին (Հատ· 794)· Ոսկի-կաքաւի մասին՝ Բ· Հատորովը:

Դաւիթ կընայի՝ քան'ղ Ա'սորդ երկինք՝ Զօ'րք է որ կուգա'յ...:
Դաւիթն ալ՝ ա'յսքան ժամանակ անցեր,
Եկեր է Տո'ւնը, տարին լըրացեր՝ կըռիւ չ'է՝ ըրեր...,—
Կանչե'ց մէկ ձայնով, — «ծիշտ Հա'ց–Դինին, Տէ'րը–Կենդանին,
Ո'վ Մարութ–այի–Բա'րձր–Աստպարածին,
Խա'չը–Փետրազին՝ որ Իմ Ա'ջ–Թևիս...,
Օգնակա'ն կանգնի՛ Սամանց Դաւիթ–ին...»:—
Լսա'ւ՝ ու քաշեց Թո'ւրը–Կէծակին, — քըշե'ց մէջ–Զօրքին... —
Վա'յ այդ խե'ղճ Զօրքին...:—
Դաւիթ այդ Զօրքեր այնպէ'ս կոտորեց...՝
Որ Արիւնն ելաւ՝ Դիա'կ կըտանի...:
Այդ Զօրքի Մեծերն ելան լո'ւր տըւին,—
— «Թագաւո'ր,–ըսին–, Օգնակա'ն ղըրկէ...,
Այդ Մարդ՝ Մեր Զօրքեր ամեն կոտորե'ց...»:
Թագաւոր լըսեց ու շա'տ զարմացաւ...,—
= «Դարձէ'ք՝ ե'տ եկէ'ք,–ըսաւ–, մի' կըռուի'ք...»:
Անոնք ալ ելան որ վախին ե'տ դան...՝
Ապա *) կ'ազատուի՞ն Դաւիթի Ձեռքէն...,—
Ան կըկոտորէ'...., Անոնք կըփախի'ն...,—
Դաւիթ ինկեր է Անոնց ետեւէ'ն...:—
Կանչեց, — «Է'յ,–ըսաւ–, մի' փախի'ք այդպէս· ա'լ չե'մ ըսպաներ,
Ձեր Թագաւո'րը Ինձի ցոյց տըւի'ք...»:
Անոնք ալ ըսին, = «Գընա՛ Մեր Քաղա'ք, Հո'ն է Թագաւոր»:
Դաւի'թն էր, — քըշեց Քուռկիկ–Ջալալին՝
Գընա'ց ու հասաւ Պապէ–Ծերըննկին:—
Ելաւ՝ Մա'րդ ղըրկեց՝ ու կանչել տըւաւ,—
— «Ձեր Թագաւորին ըսէ'ք՝ դայ այսոե'ղ...»:
Թագաւորն եկա'ւ, — կըրնա՞յ որ չէ՞դայ...:—
Տեսաւ որ Հըսկա'յ մէկ Մարդ՝ կո այնտեղ՝ Ձիուն վրայ նըստած,
Որ Ատոր նըման՝ ոչ Մարդ տեսեր է՝ ոչ անուն լըսեր...:
Վախցա'ւ Թագաւոր..., ուզեց որ փախչ'ը...՝
Դաւիթ Զին քըշեց՝ Թագաւորին վրայ,
Հասաւ ու բըռնեց՝ զարկաւ ըսպաննեց:
Անոնք որ մնացին այդ Քաղաքին մէջ՝

---

*) Ապա, Սակայն, բայց:

Դաւիթ՝ Անոնց ալ՝ նոր Թագաւո՛ր մը դըրաւ Գահին վրայ։
Արդէն, ամեն տեղ, Դաւիթն այդպէ՛ս էր,—
Մեծեր կ՚ըսպանէր՝ Գըզոտիկներ՝ Անոնց Տէ՛ղը կըդընէր··· 1)։
Մինչեւ այդ Քաղաք, ուրիշներ ալ հետ,
կարգ–կանո՛ն դըրաւ, կապեց Իր Գահին,
Մինչեւ Ջոջ–Գըզոտիկ Իրար ճանչըցան՝
Դաւիթի կեանքէն չո՛ր–տարի անցաւ։
Անոնց Ամենուն պատուիրեց ըսաւ,—
*— «Քա՛նի ես ժիր *) եմ 2)՝ կըռիւ մի՛ երթաք·*
Երբոր նեղ իյնաք՝ դըրեցէ՛ք Ինձի՝
Ես կուգամ կ՚հասնիմ՝ Զեզի օգնակա՛ն···»։
Այդ Քաղաքներն ալ Դաւիթէն կըվախնա՛ն.—
=«Հա՛,-կ՚ըսեն-, Դաւի՛թ, Քու խօսք պիտի՛ննենք՝ մինչեւ օր մահուն»։
Ու Դաւիթ ելաւ՝ ինկաւ Իր ճամբան՝
Դէպի Կապուտ–Կող···։

901. Մըհէրի Մանկական խաղերը...

Զըրոյց հիմա ո՞ւրկէ տանք···,—
Զըրոյցը տանք՝ Դաւիթ–Տըղայ Մըհէրէ՛ն 1),—
Որ չորս տարին բոլորե՛ր է՝ եղեր Կըտրի՛ճ մէկ Հըսկա՛յ···։—
Քաղաքին մէջ ինչե՛ր չ՚ըներ՝ երբ Տըղոց հետ կըխաղայ···։—
Իր տարեկից երախաներ կըկեցընէ՝ մէկ կարգով՝
Եւ որպէս թէ Հո՛լ կըզարնէ Իր փայտով···՝
Երկո՛ւ–հարիւր Տըղայ մէկէն՝ Հոլին առաջ կ՚ըսպանէ՛···։
Զեռ կընետէ բա՛ր–ձըր Մատեր՝ ու կըկօտէ դէպի վա՛ր,
Տըղաք վըրա՛ն կըհեծցընէ՝ ու Թո՛ղ կուտայ Մատին Մայր,—

---

1) *Հմմտ.՝ Բիւզանդական Հայ կայսրերէն Վասիլ Հայկազնի հօր տուած լուռ խրատը՝ իր կայսր–ըլալէն՝ (իր ղրկած պատգամաւորներուն ձեռքով)*, — մեծ կաղամբները բ–ոցնել՝ փոքրերը տնդը դնել···։ *) *ժիր, Ողջ ու գործօն*։ 2) Կ·97՝ Դուք *ժիր էք՝ ուղղելէ՝ ես ժիր եմ*։

1) Դաւթի տղայ Մհէր, Ջոջ–Մըհէրի բոռ, Սաճատարի բոռ, եւն. *այս ձեւէ արեւմակցական կոչումներ՝ կ՚տեսնենք ծայրէծայր՝ նաեւ՝ Իլիականի, Ոդիսականի ու Ենէականի մէջ*։

Ամենմէկը մէկ կողմ նետած՝ Գետի՛ն կ'իյնան կըմեռնի՛ն...:
Մըհէր կ'երթար ճան կըխաղար Տըղոց հետ,
Վէ՛ճ կըծագէր, — ո՛ր մէկ Տըղի երեսին որ Ապտակ տար՝
Գըլուխ ու Թեւ, Աչք ու Ականջ չէ՛ր մընար,—
Կ'իյնային հոն՝ կա՛մ խեղանդամ՝ կամ մեռած... 2):
Քաղաք–քաղքե՛վ գանգա՛տ կ'ընեն Խանդուտին՝
Թէ, — «Մեր Ցեղի Սերմը կըտրե՛ց Քո Տըղան...»:
Ու խաղէն դուրս՝ ի՞նչ Չի հեծնել, ի՞նչ Սար երթալ՝ Որս ընե՛լ...,
Վէրի–Ոչխար, եղնիկ ու Այծ՝ նետով զարնել՝ Տուն բերե՛լ...:
Օր մ՝ ալ ելաւ՝ Տըղայ–Մըհէրն ի՞նչ ըրաւ.—
Քաղքին քովէն Գե՛տ մը կ'անցնէր ու կ'երթար.—
Մըհէր բերաւ՝ կամո՛ւրջ կապեց վէր՝–Գետին:—
Երբոր Մարդիկ կուգային որ այդ կամուրջէն անցնէին՝
Մըհէր կ'երթար կըբռնէ՛ր այդ Անցորդները՝ կըծեծէ՛ր,—
— «Մարդի՛ր,–կ'ըսէր–, այս կամուրջը՝ Ձեզի՛ համար եմ կապեր...,
Ինչո՞ւ կուգաք՝ կ'անցնիք–կ'երթաք Իմ կամուրջիս վըրայէն...»:
Մարդիկ կ'դառնան՝ կըզարնեն որ Ջուրէ՛ն անցնին ու երթան՝
Մըհէր կ'երթար նորէ՛ն կ'ծեծէր ու կ'ըսէր,—
— «Այդ կամուրջը ես կապեր եմ...՝ Ձեզի՛ համար եմ կապեր,
Ինչո՞ւ կուգաք Գետի մէջէն կ'անցնիք Դուք...,
Ջուր Ձեզ տանի...՝ մեղքը իյնայ Իմ Վըզին...» 3):

809. Մըհէր կ'երթայ՝ Հայրը Գտնել–Բերելու

Օր մ՝ ալ Մըհէր՝ զարճաւ Մօրը ի՞նչ ըսաւ.—
— «Մարէ՛,–ըսաւ–, ես Հայր ունի՞մ, ո՞ւր է Իմ Հայր՝ ինձ ըսէ՛.—
Ձըժէր՝ Ինձի կ'ըսեն «Ո՛րբ ես..., Հայր չ'ունի՛ս»...»:
Ու Մայրը թէ, = «Դու Հա՛յր մ՝ ունի՛ս...՝ Անոր նըման քալ՝ չըկա՛յ·
Քու Հայր ելեր՝ ու կըռիւի՛ զացեր է,
Ուշացեր է, դեռ չ'եկա՛ւ...»:
Մըհէրն ալ ի՞նչ ըրաւ այդտեղ՝ Իր Մօր մօտէն զաղտուկով.—
Ելաւ Ան ալ Իր Ձին հեծաւ՝ որ երթայ Իր Հայր գըտնէ:—

---

2) Իր հօրն ու մեծ պապուն ըրածներուն պէս· (Հուշ· 27,193, 284 եւ 288): 3)Խ·52ս·՝ կամուրջ կապելու միջադէպը՝ կ'պատմուի Բաբակ–Շախ Թագաւորագունեին անունով:

Մըհէրի՛ն է, — ինկեր ձամբայ՝ Զին կըքըշէ՛ մէկ թափով...,—
— Ախ Հայր,–կ'ըսէ–, մինակ ելեր՝ ու գացեր է կըռիւի՛,
Երթամ հասնիմ Հօրըս կըռւին՝ չըզարնե՛ն գ'ինք ըսպանեն...»:
Գընա՛ց–գընա՛ց՝ մինչեւ հասաւ Կըռւի–Դաշտին մօտիկները 1),
*Անվէրվէրի *) եւ ահագի՛ն մեծ Սարի մը դէ՛մ եկաւ...:—*
Նայեց տեսաւ՝ մէկ Զիւռոր՝ Սարէն կուգայ՝ դէպ իր կողմ:
Մըհէ՛րն ըսես՝ վախը ի՞նչ է՝ չի՛ գիտեր...,—
Իր Զին քըշեց դէպ առա՛ջ,
Կ'ուզէ երթայ՝ կըռի՛ւ ընէ Մարդուն հետ...:

803. Դաւիթ Դէպ Գուրջիստան

Զըրո՞յցն ուրկէ..., — զըրոյցը տանք Դաւիթի՛ն:—
Որ իր ձամբան բըռներ կուգա՛յ՝ միամիտ,—
Ճամբուն վըրայ՝ Ինքիրենը ի՞նչ ըսաւ.—
«Ծանդուտ–Խաթուն ինքը մինակ՝ ու ձըժերու տէ՛ր եղած՝
Շա՛տ կըյոդնի ու չի՛ կըրնար Տուն դարձընել՝ առանց կնի,—
Երթամ ուժեղ կընի՛կ մ' ճարեմ Գուրջիստանի կողմերէն,
Առնեմ տանիմ՝ ծառայութի՛ւն ընէ Տան մէջ, Ծանդուտին»:
Ան ալ՝ ճամբան տըւաւ առաջ՝ ու դընա՛ց...:
Գընաց հնկաւ այդ Ֆառասուն Ըմբիշներու Երկիրներ՝
Ինչ Ուղընկա՛ն էին եկած Ծանդուտին՝
Եւ Անոր Տուն Հի՛ւր եղեր:
— «Նկէ՛ք,–ըսաւ–, Զեզ Գուրջիստա՛ն տանիմ Ինձ հետ, ու կարգի՛մ.
Ո՛ր Աղջիկը որ Դուք ուզէք՝ Ան պըսակեմ Զեզի հետ»:
Առա՛ւ Ֆառասուն այդ Ըմբիշներ, — Եղբա՛յր դարձած՝ Ամենն ալ —,
Հեծան Ձիեր՝ ու քըշեցին՝ գացին դէպի Գուրջիստան:—

804. Ֆառասուն Կռապատ Աղջիկները

Գացի՛ն–գացին...՝ Աղըրբէջան ու Գուրջիստան դո՛ւրս ելան 1),
Տեսան Ֆառասուն խօրո՛տ Աղջիկ՝ կ'երթան դէպի Այդիները,
Ֆառասունէն զատ՝ ուրիշ Մէկն ալ՝ Մարդու Հագո՛ւստ է հագեր:

---

1) Կ·98՝ կ'երթայ՝ Մըշու Դաշտը կըլմընցնէ: *) Անվէրվէրի (անվայրի), Ամայի, անբնակ, խիստ վայրի:

1) Ե·130՝ Հադրբէջան, Գիւրջիստան, Ռուսբստան:

Բարե՛ւ տըւին՝ բարե՛ւ առին՝ ղէմ–ղիմաց,—
— Դուք ի՞նչ Մարդ էք…,–հարցուց այդ Մարդ Դաւիթին–,
Ի՞նչ կըփընտռէք…, այդ կըտիճներ՝ ինչ ի՞նչ են…»։
Դաւիթն ալ թէ, = «Այդ Քառասունն ալ՝ Իմ Եղբայրնե՛րս են»,–ըսաւ։
Ապա դարձաւ՝ Մարդուն հարցուց, — «Այդ Աղջիկնե՞ր ինչ ի՛նչ են»։
= «Ամենքն ալ Իմ Քոյրերս են…»։
—Բնաւ այդ Քո Քառասուն Քոյրեր տաս Իմ Քառասո՛ւն Ազբըրտաց)»։*
= «Տըւի՛,–ըսաւ–, Քո Քառասուն Ազբըրտաց…,—
Դուք ուժ ունի՞ք՝ որ Մեզ յաղթէք ու տանի՞ք։՞։՞»։
— Է՛հ, Աստուծով կըտանի՛նք…»։
Մարդ–Աղջիկը՝ դարձաւ Դաւիթին ու ըսաւ.—
= «Աստուա՞ծ ի՛նչ է…, ա՛յ Տըղայ…»։
— «Աստուած ա՛յն է՝ որ Մեզ Ամենքս ըստեղծեր է՝ կըպահէ՛…»։
Մարդն ալ ըսաւ, = «Դուք Մեր Կուռքեր չէ՞ք պաշտեր…»։
— «Կուռք չե՛նք պաշտեր, Մենք մէ՛կ Աստուած կըպաշտենք»։
= «Որ Դուք տանի՛ք Իմ Քոյրերը,–ըսաւ Մարդ–,
Մեր Կուռքերը կուշտ Ձեզ հետ կըկըռւի՛ն,
Ու Ձեր մօտէն՝ Իմ Քոյրերը կըխըլե՛ն…»։
Ելաւ տըւա՛ւ. Քառասուն Աղջիկ առին եկա՛ն այնտեղէն։—

805. Դաւիթ Երկիրները Կ'բաժնէ Եւ Կուռքերը Կ'ջարդէ

Քառասունի Մեծ այդ Աղջի՛կն ալ՝ որ Մարդու պէ՛ս էր հագուած՝
Ելաւ վազեց Կուռքերուն մօտ եւ ըսաւ.—
—«Կուռքե՛ր,–ըսաւ–, Քառասուն Մարդիկ՝ Մեր Աղջիկներ փախցուցի՛ն,
Կըրնա՞ք՝ գացէ՛ք ու դարձուցէ՛ք՝ բերէ՛ք ե՛ւ…»։
Կուռքերէն ալ՝ ձայնե՛ր ելան, պօռացին ու կանչեցին,—
— «Աստուածապաշտ Մարդերն եկան…՝
Ջ'աստուածապաշտ Աղջիկները փախցուցի՛ն…»։
*Քաղա՛ք–Քաղքով ձիաւորան *) ու ելա՛ն՝*
Թուրերն առին՝ իննա՛ն Մարդոց եռեւ՛էն…։
Դաւի՛թն ըսես՝ Իր Քառասո՛ւն Մարդերով,
Ու Քառասուն ալ՝ այդ Կըռապա՛չա Աղջիկներ՝

---

*) Աղբրտիք, Աղբրտոց, Եղբայրներ(ուն)։
*) Ձիաւորաւ, Ձիաւորուեցան, ձի հեծան։

Եկեր են ու Աղբիւրին վրայ նըստե՛ր են՝
Կ՚ուտեն–կ՚խմեն, խա՛ղ կ՚ընեն։—
Թէ հարցընէք, — «Դաւիթ այնտեղ ի՞նչ կ՚ընէ»,—
= «Երկիրնե՛րը կըբաժնէ...»։
Ֆառատուն բաժի՛ն ըրաւ այնտեղ՝ Իր կամով,
Տըւաւ Անոնց՝ Ամենմէկին՝ մէկ երկիր ու մէկ Աղջիկ,—
— «Գացէ՛ք,–ըսաւ–, Ամենմէկդդ՝ Ձեր երկիր,
Նըստէ՛ք՝ կերէ՛ք ու խըմեցէ՛ք, լա՛ւ պահեցէք ժողովուրդ» 1)։
Անոնք ելան՝ «Մընաս–բարո՛վ» ըսին Դաւիթին՝ ու գացին.
Դաւիթ այնտեղ մընաց մինակ Ինք իր Ձին։—
Մէկ ալ տեսա՛ւ...՝ այդ Ֆաղաքի Մեծն ու Պզտիկ՝ Ձիաւոր՝
Ով կըըցեր է Թո՛ւր վերցընել՝ վազել–հասնիլ Ֆաղքին Դուռ՝
Եկան՝ Իրեն չորս–բոլորը բըռնեցի՛ն...։
Դաւիթ ելաւ՝ Իր Ձին հեծաւ ու քըշե՛ց,
Անոնք փախա՛ն...՝ Ինքը զարկաւ՝ կոտորե՛ց...,
Որն ըսպանեց, որը փախցուց Թափեց Ծո՛վ... 1),
Մէ՛կ չըպըրծաւ Իրեն Ձեռքէն՝ որ Կուռքերուն լուր տանէր...։

806. Դաւիթ, Թագաւորի-Աղջիկն Ու Մրիէր

Դաւիթ ելաւ՝ պըտըտեցա՛ւ Ֆաղքին մէջ,
Նայեց տեսաւ որ Աղջի՛կ մը ելաւ այնտեղ Իր դիմաց,—
Այդ Աղջիկան պէս ալ խօրո՛տ...՝ տեղ մը չկա՛յ Երկրի վրայ...։
Ջըսե՞ս՝ Ան ալ Աղըրբէջան Երկիրներու Թագաւորին Աղջի՛կն է՝
Որ Մարդու պէս Հագուստ հագած էր առած,
Միւս Ֆառատուն Աղջիկներն ալ՝ Իր Նաժիշտնե՛րն են եղե՛ր...։
Դաւիթ վերցուց այդ Աղջիկը՝ դըրաւ Ձիուն Գաւակին,
Ֆըշեց կուգայ դէպի Տուն։
Մինչեւ եկաւ հասաւ այնտեղ՝ ուր կըթացուի Կըուի–Դաշտ 1)՝
Իր չորս տարին 2) լըմընցեր էր՝ ինչ ելե՛ր էր Իր Տունէն։
Սարէն ՚ի վար երբոր կ՚իջնէր՝ Աղջկան հետ՝ Ձիուն վրայ,—
*Նայեց տեսաւ՝ Կըտրի՛ճ Տըղայ մ՚ Ա՛հա–Ա՛հա *) կ՚իջնայ Ձիէն վա՛ր։*

1–1) Ակնարկութիւն՝ Վիրք, Աղուանք, Փայտակարանի երկրամասին, եւ Համալի՝ Տրդատի չրջանին գործերուն հետ, — [Բ. Համառով]։

1) Կ·98՝ Մըշու Դաշտը։ 2) Ճ·132՝ Երք տարիի, Ե·645՝ տաս տարիի։ *) Ա՛հ–հա, Ահա։

Ինք իր մտոքով ըսաւ՝ «Ամէն Ջիս չի՛ ճանչնար՝ ես ո՛վ եմ,
Ինչամ բըռնեմ՝ թեւը կապեմ՝ տանիմ ինձ հետ՝ Մեր Քաղաք»:
Չի՛ դիտեր որ Իրեն Տըղա՛ն Մըհէ՛րն է...,—
Զորս տարեկա՛ն՝ ոտը ձըղեր մէջ-հինդին 3),
Մնծացո՛ր է՝ եղեր կըտրի՛ճ մէկ Տըղայ...:—

807. Դաւիթ Ու Մըհէր՝ Ճակատ-Ճակատի

Մըհէրն ալ դընաց Դաւիթի առաջ, նայեց ի՛նչ տեսնայ...,—
*Տարիքոտ մէկ Մարդ՝ խօրտուիկ Աղջիկ մ' առեր Ջիւն դարք *)՝*
Ու վերէն կուգայ...:
— «Ի՛ Հալա՛ր,—պօռաց Դաւի՛թի երեսին—,
Դուն ծերունի-Մարդ, Ա՛ռ՝ խօրտո Աղջի՛կ...,
Քեզ ի՞նչ վայել է՝ այդպէս թարմ կընիկ...»:
*Դաւիթ իրիւկաց, Սիրտն այնտեղ ելա՛ւ... *) դողա՛ց ու ըսաւ.—*
= «Տըղա՛յ, Դուն մէկ ճի՛ժ..., Քեզի վայի՛լ է...՝
ես ուժեղ մէկ Մարդ՝ ինձ չի՞ վայելեր...»:
— «Ինձ կը վայելէ,—ըսաւ Մըհէրիկ—, անո՛ր համար որ՝
ես Նոր-Մանո՛ւկ եմ, Ան՝ մաղաչ Աղջի՛կ...,
Քեզ ի՞նչպէս վայլէ..., — Ան՝ ի՛նձ յարմար է...»:
Դաւիթն ալ ըրաւ՝ որ պիտի անցնէր՝
Մըհէր Զեռ նետեց՝ — «Չե՛մ ձըղեր,—ըսաւ—, կ'առնե՛մ Քո մօտէն»:
Դաւիթն ալ այնտեղ կանչեց ու ըսաւ.—
= «կեցի՛ր, որ ես դամ՝ Քու Հաց տամ Քո Ձի՛ու... 1),
*Հա՛յ-հօ՛յ, ու հա՛յ-հօ՛յ..., մէկ իրիւկացի՛ք... *),—*
— Շա՛տ Ծովեր ու Գետե՛ր եմ տեսեր, շա՛տ՝ Ձըրի՛ցն եմ ացեր...2),
*Ջուր չ'ա՛ռեր Իմ Ձիու ճաներ... *):*
Ասօր Բարակ-Առու մ' 3) եմ տեսեր...՝ չի՛ բաղուր՝ ացնիմ...,
= Իմ ճա՛րս է կըտրեր...:
— Շա՛տ Դաշտ ու Ձոր եմ կըտրեր, շա՛տ Հեղեղ եմ տեսեր...,

---

3) *Ձորսը լրացուցիր՝ մտեր է հինդերորդ տարւանը մէջ*: Ց·132՝ վերջէն հոթի մէջ մտեր է:

*) Դարբ (*դար, ուտած, բարձր՝ մասեր, ինչպէս* բարձբ, *ոչ՝ Թրք.* թէրբի *բառէն, Գաւակ*: *) Ելաւ, Փղձկեցաւ: 1) *Այսինքն՝* Քեզի արժանի դասը տամ: *) Իրիշկալ, Նայիլ, տեսնել: 2) *Երդով*: *) Ճաներ՝ *Ոտքներ*: 3) Ց·132՝ բադաճ՝ *ուղղել՝ առու*:

Փոշին ու Ջուրը չ'Է՛ տըւեր *) Իմ Ձիու Սըմեր··· 4),
Ասօր պըզտիկ Աղբի՛ւր մ' եմ տեսեր՝ Իմ ճա՛րս է կըտրեր···,
= Մէջ՝ պիտի խեղդուիմ···:
— Շա՛տ Սար ու Ֆա՛ր եմ կաճ եկեր՝ Մա՛րդ Իմ առաջ չ'Է՛ կանգներ,—
Ասօր Բարակ–Առո՛ւ մ' եմ տեսեր···՝ չի՛ թողուր՝ անցնիմ···,
= Մօտէ՛ն եմ վախցեր···:
— Շա՛տ կըտրիճ եմ տեսեր, շատե՛րն եմ Գետին փըռեր···,
Ասօր պըզտիկ Տըղայ մ' եմ տեսեր···՝ Իմ ճա՛րս է կըտրեր···:
Սարե՛ր, Ձորե՛ր, Դո՛ւք Ինձ օգնութեան հասնիք···՝
Ձիս այս փորձանքէն ազատէք···» 5):

Մըհէրն ալ վերցուց լո՞նչ ըսաւ այնտեղ···,—
— «Թագաւորի հե՛տ կըռւեր է, կ'ըսե՛ս, Մա՛րդ դ'Ինք չ'Է՛ յաղթե՛ր,
Բարակ–Առուն ալ՝ ե՛ս եմ··· իրեւ թէ···:
Ձիէն վա՛ր իջիր՝ որ «Բարակ–Առուն» Քեզի ցուցընէ՝
Թէ ի՛նչ Ակէ է···»:
Ու Ձեռքը նետեց՝ Աղջիկ բերաւ վա՛ր···:
Աղջիկ որ Ձիէն քաշեց վա՛ր առաւ՝
Մըհէր ու Դաւիթ խառնուեցան Իրա՛ր···,—
Գօտեմա՛րտ տըւին···, դարձա՛ն ու դարձա՛ն···,
Հայր–Տըղայ այնտեղ ինչպէ՛ս կըկըռուին···,—
Ինչպէս որ Գուբան՝ զարնեն ամառան չոր Գետին՝ երթա՛ն···:
Գետի՛ն, Սա՛ր ու Ֆա՛ր՝ փըչրած կըհալի՛ն···,—
Փոշին՝ Ամպի՛ պէս՝ ելաւ ու բըռնեց Երկինքի երես···:—

808. Գեաւաճար Դաւիթ՝ Կ'աճիւծէ Մըհէրը

Քամին ալ զարկաւ՝ խըլե՛ց Թաշկինակ Դաւիթի Ձեռքէն՝
Թըւցո՛ւց ու տարաւ՝ ձըգեց Խանդուտի Երդիքին առաջ:—
Խանդուտ–Խաթուն ալ՝ դո՛ւրս եկաւ նայեց՝
Տեսաւ որ Փոշին՝ Ամպի՛ պէս ելեր բըռնե՛ր է Աչխարհ···:

---

*) Տալ, *Բարձրանալ*, *դպիլ*: 4) Սմբակներ: 5) Ե·132ս·՝ «Ափսո՛ս, հազար ափսո՛ս: Այնքա՛ն տուի Ծովեռ՝ Ջուր չ'թողեց Իմ Ձիու Ճամբեր: Այս·, ի· ափ·, Այնքա՛ն Ֆալեցի Դաշտեր՝ Փոշին չ'տեսաւ Իմ Ձիու Պայտեր: Եկայ հասայ Իմ Հէրանց–Հէրանցին՝ Վախճամ այս Բարակ–Առուն Ձիս խեղդէ···»:

Նայեցաւ Գետին՝ տեսա՛ւ Թաշկինակ,
Տեսա՛ւ ու վերցո՛ւց, հոտոտա՛ց՝ ըսաւ,—
— «Ըհը՛ր···, Աա,–ըսաւ–, Դաւի՛թի Սըրբի՛չն է···»։
Նայեց՝ զոռզոռոցն իննկեր է Դար–Դա՛շտ···՝
Ու Մըհէր Տուն չ'է՛···։—
Ա՛լ չըդադրեցա՛ւ···, ելաւ Ձին հեծա՛ւ՝ քըշե՛ց ու գընա՛ց։
Եւ ի՛նչ կըտեսնէ···, — Փոշին է՝ կ'ելնէ՛, զոռզոռոցը կա՛յ···,
Ու Ձիաններու խըրխընջոց կուգա՛յ···՝
Մէջտեղ Մա՛րդ չըկա՛յ···։—
Ետնդուտն ալ այնտեղ կանչե՛ց ու ըսաւ,— 1)

— Սարե՛ր, օգնութեա՛ն եկէք···, Ձորե՛ր, օգնութեա՛ն եկէք···,
Դուք՝ Հայրն ու Տըղան Իրարմէ բաժնէք···»։

Սարեր ու Ձորեր՝ օգնութե՞ան կուգան···,—
— Սարեր ու Ձորեր օգնութեան չե՛ն գար···։—
Ետնդուտն ալ ըսաւ·—

— «Սարեր ու Ձորեր ըստեղծո՛ղ Աստուած, Քեզի՛ եմ կաձչեր 1),
Դու հրամա՛ն ընես՝ Գաբր'էլ–Հրեշտակին 2)՝ երկինքէն իջնէր,
Տըղան ու Հայրը Իրարմէ բաժնէ՛ր···։

Որ կանչե՛ց՝ այդտեղ՝
Աստծո՛ւ հրամանով՝ Գաբր'էլ–Հրեշտակը երկնուց վա՛ր իջաւ,
*Տըղան ու Հայրը Իրարմէ կըտրե՛ց *),—*
Ինչպէս Դու Ձե՛ռ տաս՝ երկու Ուլերը իրարմէ զատես···,
Կամ՝ ինչպէս երկու Աքաղաղ կըռուին,
Մէկը երթայ մօտ՝ Իրարմէ զատէ···։
Իրարմէ զատե՛ց···, — Մըհէր չըկեցա՛ւ,
Մըհէրը հասա՛ւ՝ վե՛ր վերցուց Դաւիթ՝
Ու մէ՛կ Իր ուժով՝ զարկաւ չոր Գետին···։—
Այնպէ՛ս մը զարկաւ Քամակին վըրայ՝
Որ Դաւթի Մէջքին երակ՝ փըրթեցա՛ւ···,
Մարմին՝ մինչեւ կէս՝ գընաց Հողին մէջ···,
Կողի մէկ Ոսկոր՝ տեղէն խախտեցաւ···։

---

1) երգով։ 2) Ց·133՝ Ինը դաս հրեշտակ(ներ)։ *) Կտրել, ետ կտրել, բաժնել, զատել։

Մըհէրն ալ՝ չուտ մը՝ Ձեռ տարաւ Գօտին՝ որ Դանակ հանէր՝
Դաւիթի Վիզը՝ Ծոյլ պէս կըտրէ՛ր...,—
Դաւ՛թին՝ լա՛ց եկաւ, — «Ա՛յ կըտրիճ,—ըսաւ—, Դուն Ձիս ըսպանես՝
Ապա իմ մէ՛կ հատ կըտրիճիս Ձեռքէ՞ն ո՛ւր պիտի պըրծնես...»:
= «Քու կըտրի՞ճն ո՛վ է...», — հարցուց Մըհէրիկ:
— «Իմ կըտրիճն Ա՛ն է՝ ինչ Ոսկի–կաքա՛ւ ունի Ալ–Թեւին...:—

Ե՛ս եմ Տղա՛յ–Դաւիթ՝ Սասմա՛նց Թագաւոր...,—
Շա՛տ կըտրիճ եմ տեսեր, շատե՛րն ըսպաներ...,
Ասօր այս Տըղա՛ն եմ տեսեր...՝ Իմ ճա՛րս է կըտրեր...»:

*Մըհէր նայեցաւ Ոսկի–Թեւկալին *)՝ ճանչըցա՛ւ Իր Հայր,—*
= «Դուն Սասմանց–Տունի Դաւի՞թն ես...»,–ըսաւ:
— «Սասմանց Դաւի՛թն եմ..., հա՛»,–ըսաւ Ան ալ:
= «Ես ալ Մըհէ՛րն եմ...,–ըսաւ–, Քո Տըղա՛ն...,
Ոսկի–Կաքաւն ալ՝ կապած է Թեւի՛ս...,—
Հա՛յր,–ըսաւ–, ինչո՞ւ Ձիս ալ չըտարիր՝ այդ Մարդոց Կըռւին...»:
Ու հասաւ Դաւիթի Ձեռքերը պագեց՝ եւ լալով ըսաւ,—
= «Դուն Իմ Հայրի՛կն ես..., ես Քեզի մեղա՛յ...»:
Թողուց՝ Հայրն ելա՛ւ...:—
Դաւիթ՝ Իր Տըղան Մըհէրը առաւ Իրեն Դըրկին մէջ,
Ուրախութենէն՝ երեք օր այնտեղ ուշաղնա՛ց եղաւ... 2):
Հայրն ելա՛ւ Գետնէն՝ ու Բերան բացաւ՝ անիծե՛ց Տըղան,—
Կանչեց 'սաւ, — «Մըհէ՛ր, որ Դու Ինձի հետ կըռւի՛ մըտար,
Ձիս Աչխարհի մէջ ամօթո՛վ ըրիր՝
Կանչե՛ր եմ Աստուած,—անմա՛հ՝ ան–ժառա՛նգ մընաս Դուն, Մըհէ՛ր,
Մըտնե՛ս ու մընա՛ս՝ կերպած–Քարի 3) մէ՛ջ...,
Աչխարհ չըտեսնա՛ս Դու, անմա՛հ–Կայէն...,
*Օր՝ երե՛ք Նըշխար(ք)՝ Քո խորա՛կն *) ըլլայ...:*
Աստուա՛ծն եմ կանչեր...՝
Որ հրամա՛ն ընէր Գաբր՛է՛լ Հրեշտակին՝

---

*) Թեւկապ, *Արքայական տոհմի նշան*, բազրանիզ: 2) *Ճէրան–Թուրանի (Շահնամէի) հերոս՝ Ռոստամի պէս, գաւակի մահուան առիթով*: 3) *կերպած–Քար, Տաշած, յղկած ժայռ*: Կ'ակնարկուի *Ավռիլի Մըհէրի Դուռ ըսուած ժայռին* (*Հուշ.* 885, 888 եւ 892):
*) *Խորակ, Խոռելիք, ուռելիք, պարէն*:

Երկնուց վա՛ր իջնէր,—
*Մըհէրի Քամկէն Մարդ–երակ *) քաչէ՛ր՝*
Ժառանդ չըճըդէ՛ր··· 4)»։
Անոնց Աղջին ալ՝ Բերանը կրա՛կ էր···,—
Ի՛նչ անիծէլին կամ թէ օրհնէլին՝ այնպէս ալ կ՛ըլլար·—
Աստուած ալ լըսե՛ց Դաւիթի Անէծք,
Վերջին Մըհէրը Ժառանդէ ղըրկե՛ց···;—
Որ այնպէս ըսաւ՝ Հրեշտակներն իջան,
Մարդուբեան–երակ հաննեցին այնտեղ Մըհէրի Քամկէն
Պըտուղը *) Մէջքէն քաշեցին տարան···,
Որ Անոր մօտէն Ժառանդ չ՛իյնա՛յ դուրս՝ Աչխարհն աւերէ···։
Դաւիթ ու Մըհէր, Աղջիկն 5) Իրենց հետ՝
Ելան քըշեցին՝ եկան Կապուտ–Բերդ։
Դաւիթ կարօտով ղըրկե՛ց Իր Կընիկ,
Ու դեռ չըտեսած նորածին Աղջիկ։
Աղըրէջանի այդ Թագաւորի Աղջիկ նըշանեց Իր Մըհէրի հետ 6)։—
Նըստեցան այնտեղ, Ամենք միասին,
Կերան, խըմեցին···։

809. Մըհէրի Ոտն Ու Վէց Գեւիները

Խանդուտ–Խաթուն ալ՝ ունէր վե՛ց Եղբայր,— 1)
Ամեն օր՝ կանուխ՝ Որսի՛ կ՛երթային։
Խանդուտ–Խաթունի փափաքին վըրայ՝
Տըղայ–Մըհէրն ալ կ՛երթար միասին։

---

*) Մարդ–երակ, *Առնութեան ջիղ։* 4) *Այսինքն՝ Մըհէր՝ սերունդ չ՛արտադրէր, իրեն յաջորդ չ՛ունենար, իր աշխարհաւեր–մարդու արիւնը՝ նոր սերունդի մը չ՛անցնէր։ Համմալ՝ Արտաշէսի եւ Արտաւազդի պարագան։* *) Պտուղ, *Սաղմ։* 5) *Այսինքն՝ Թագաւորի Աղջիկը։* 6) *Ց·134՝ Հադրբէջանի Թագաւորի Աղջիկը պսակեց Մըհէրի վրայ։*

1) 809, 810, 811 *Հատուածները՝ տուած եմ համառօտած, զի կրկնութիւնն է Մհէրի Հօր՝ Դաւիթի համար պատմուածներուն* (*Հատ·* 333 *եւ* 334), — *Օրեղբայրներուն հետ Որսի երթալ, Օրեղբայրներն սպանել, Տառի–Խաղ, եւայլն։*

Մըհէր դեռ տըղայ՝ բայց կըտրի՛ճ դարձած՝
Մօրեղբայրներէն յաջող Ո՛րս կ՚ընէր.
Եւ ամեն իր՛կուն Որսը չալակած՝
Անոնցմէ ալ չուտ՝ Տո՛ւնը կըհասնէր:
Ամենք կ՚ուտէին, Դաւիթին Իրեն՝ բան մը չէ՛ր մընար...:
Դաւիթն ալ կընկան ըսաւ, — «Է՛ Խանդուտ,
Ես երբոր եղայ Մըհէրի չափին՝
Ամեն օր՝ Սարէն՝ մէկ վէրի–ոչխար Նէճի՛ր կ՚ընէի,
Կըբերի Տուն՝ Ամենք կ՚ուտէի՛ն:
Մըհէր՝ ամեն օր՝ Սար Որսի՛ կ՚երթայ՝
Մէկ ձընճըղո՞ւկ ալ՝ չի կըրնար բերել...,—
Աս ի՞նչ հաչիւ է..., — Ան Մեր Զարմէն չէ՞...»:
Մըհէրն ալ Դրան ետեւ կեցեր է՝ ու մըտի՛կ կ՚ընէ...:—
Ներս մըտաւ՝ գընաց՝ տըրտում Երեսով, ինկաւ քընացաւ:
Առաւօտուն՝ ինչ՝ Մըհէր վե՛ր եկաւ՝ կ՚երթար Նէճիրի՝
Մայր՝ Խանդուտ–Խաթուն գընաց Տըղուն մօտ,
Մըհէրին հարցուց, — «Դուն ալ Որս կ՚ընե՞ս...»:
= «Որսը ե՛ս կ՚ընեմ,–ըսաւ Մըհէրն ալ–,
Մօրեղբայրները միայն կըպատռվի՛ն...,
Կ՚ուտեն–կըխըմեն, կ՚ելնե՛նք Տո՛ւն կուգանք...»:
Մայրը պատուիրեց որ մէկ անգամ ալ՝
Իր ըրած Որսը չիտակ Տո՛ւն բերէր,—
Խորոված ընէր՝ մէկտեղ ուտէին...»:
Մէուս օր՝ Մըհէր՝ Վէրի՛ *) մը զարկաւ,
Եւ Ուսին դըրած՝ կուգայ դէպի Տուն,—
Մօրեղբայրները՝ ամե՛ն օրւան պէս
Ուղեցին Որսը Մըհէրէն առնեն,
Մըհէր չըթողո՛ւց, Անոնք պընդեցի՛ն,—
Վե՛ց մէկտեղ հասան՝ Թեւը պըրկեցին՝
Որ բըռնի՛ առնեն...:
Մըհէր բարկացա՛ւ՝ Թեւերը ցընցեց,
Ու հասաւ բըռնե՛ց Իր Մօրեղբայրները՝
Վերցո՛ւց մէկ–առ–մէկ...՝ ու Գետի՛ն զարկաւ.—
Այնպէ՛ս մը զարկաւ՝ չորցուց դըրաւ վա՛ր...:—

*) Վէրի, վայրի ոչխար, եղջերու:

Վեցն ալ՝ մինչեւ Մէջք՝ թաղուեցան Գետին,
Կ'ըսես «բերանքաց՝ այնտեղ կըխընդա՛ն...»:
Մըհէր վերցուց Որս՝ դըրաւ վեր–Ձիուն,
Շիտակ բերաւ Տուն՝ Մօր առա՛ջ դըրաւ...:—

§10. Դաւիթ Երեք Անգամ Կ'ապտակէ Մըհէրը

Դաւիթ քըներ է·—
Խանդուտն ալ ըսաւ, — «Դաւի՛թ, ելիր վե՛ր,
Տե՛ս՝ Մըհէր այսօր ի՛նչ Որս մ' է բերեր...»:
*Դաւիթ իր Աչքեր ինչ *) բացաւ նայեց՝*
Տեսաւ ահագին Վէրկ մ' իր առջե՛ւ...:—
— «Ո՛ր Ջուխ՞քն *) ո՛ւր են...», — հարցուց Մըհէրին:
Մըհէրն ալ պատմեց՝ ինչ որ եղած էր:
Դաւիթ իր Ձեռքեր զարկաւ Ծունկերո՛ւն,—
— «Վա՛յ, Տըղա՛յ,–ըսաւ–, ո՛չ ու վո՛ւճ ըլլաս...,
Օրհդրայրներըդ Վեցն ալ Ջարդե՛ր ես...»:
Գընաց ու տեսաւ՝ Վեցն ալ մեռա՛ծ են...,
Ետ դարձաւ եկաւ՝ Մըհէ՛ր կըխընտռէ...:—
Մըհէր՝ Թոնիրին կողը երկարեր՝
Ջիքուրներնի վրայ ինկեր պառկեր է:
Խանդուտ–Խաթունը՝ Օձիքէն քաշեց՝ որ Մըհէր հանէ՝
Ջըկըրցա՛ւ, ճըգե՛ց,—
— «Դաւի՛թ, Դո՛ւն եկուր, Ասի հա՛ն...»,–ըսաւ:
Դաւիթ մօտեցաւ որ Ինք վե՛ր հանէ՝
Ինչքան որ քաշեց՝ չըկըրցա՛ւ հանէր,—
Լաթեր կըխըրթի՛ն Մհէրի վըրայէն՝
Ինքը չի՛ փըրթիր Իր պառկած տեղէն...:
Ան ալ մէկ Ապտա՛կ տըւաւ Մըհէրին...,—
*Մըհէր՝ պառկած տեղ՝ Լրա՛ր չըդըպաւ... *):*
Մէ՛կ ալ երբ զարկաւ՝ Նո՛րէ՛ն չ'երերաց...,—
Դաւիթն ի՞նչ ըսաւ...,—
— «Ես Իմ Ապտակը Եթէ զարնէի Պողվըտէ–Սիւնին 1)՝

---

*) Ինչ, Ինչ տաեն որ, երբ: *) Ջուխ(ք), Օրհդրայր(ներ): *) Իրար չ'դպիլ, Չ'երերալ, չ'շարժիլ: 1) Կ·100՝ քրիւն՝ ուղղել՝ Սիւնին: Կ'ակնարկէ իր կտրած Պողվըտէ–Սիւնին (Հատ· 601–604):

Սիւնը չո՛ւռ կ՚առնէր…,
Եթէ զարնէի Քառասո՛ւն Ըմբիչի՝ Վի՛զը կը ծըռէ՛ր… 2),
Այս տընաւեր ձիւ՛ժ՝ ի՛նչքա՛ն ուժեղ է…՝
*Որ իրա՛ր չ՚առներ… *)»:*
Ու բարկութենէն՝ Ապտա՛կ մ՚ալ տըւաւ…:
Մըհէ՛րն էր…, դարձաւ՝ Քիթ-Բերնին վրայէն, ելաւ նըստեցաւ,
= «Հա՛յր,–ըսաւ խըստիւ–, այդ մէկ Ապտակը Դուն ինձի զարկիր՝
Զայն չըհանեցի…՝ որ Դուն իմ Հա՛յրն ես.
Մէկն ալ՝ լըռեցի…՝ Աստըծո՛ւ սիրոյն.—
Երրորդ Ապտակը ինչո՞ւ զարկիր Դուն…»:—
Ու՝ ձըստա՛ծ տեղէն՝ Ձեռք նետեց իր Հօր՝
*Մէջկապէն *) բըռնեց՝ վերցուց օդին մէջ,—*
= «Ինչպէս իմ Քեռիք,–ըսաւ–, տեղնիտեղ՝ զարկի չորցուցի…՝
Քե՛զ ալ Անոնց պէս՝ Գետի՛ն կըզարնեմ…»:—
Ըսա՛ւ…՝ չըզարկա՛ւ…, — յուշի՛կ վա՛ր դըրաւ…:—

811. «Դաւի՛թ, Մի՛ Զարներ…, Մրհէ՛ր, Մի՛ Զարներ…»

Դաւիթն ալ հասաւ՝ Մըհէրը բըռնե՛ց…,—
*Հայր–Տըղայ, Նորէ՛ն, առին Իրարո՛ւ… *):*
Խանդուտ–Խաթուն ալ՝ տեսաւ ճար չըկա՛յ…,
Իրա՛ր վրակած են՝ այդտեղ՝ Հայր–Տըղայ,—
Ինչպէս Երկո՛ւ Սա՛ր…՝
Կ՚երթա՛ն ու կուգա՛ն՝ կըղըզին Իրա՛ր…,—
Ու Մա՛րդ չի՛ կըրնար՝ Անոնց մօտենալ…
Ան ալ ձայն ձըղեց՝ կանչե՛ց ու ըսաւ,— 1)

— «Դաւի՛թ, մի՛ զարներ Իմ Տըղին…, = Մի՛ զարներ…,
Մի՛ զարներ՝ Մեր Նոր–Ալուկ *) մէկ–տակ *) Մանուկին…,—
Ան՝ Իմ կաթըննկեր Տըղայ–Մըհէ՛րն է…»:

Դաւիթն ի՞նչ ըսաւ…,—

---

2) *Ակնարկութիւն՝ իր ապտակած Քառասուն Ուղընկաններուն.* (*Հմմտ.* 756): *) Իրար չ՚առնել, Զ՚չարժիլ: *) Մէջկապ, *Մէջքի գօտի*: *) Առին իրարու, *Իրարու օձիքը բռնեցին, կռիւի մտան իրարու հետ*: 1) *Երդով*: *) Ալուկ, *Մէլ* (*ծառի արմատին քով*), *ելուկ*: *) Մէկ–տակ, *Չ՚ամուսնացած, պատանի*:

= «Պիտի զարնե՛մ, խանդո՛ւտ, պիտի զարնե՛մ…,
Ան Քու վեց եղբայրնե՛րն է ըսպաներ… .
Պիտի զարնեմ՝ Քու վեց եղբայրներուն փո՛խն առնեմ…»:

Դաւիթ չի՛ զարներ…, ինկեր է միայն Իր Հոգու ցա՛ւը… 2),
Անոր ահէ՛ն է՝ կ'զարնէ Մըհէրին՝ բայց չի ցաւցներ…:
Խանդուտ՝ այս անգամ՝ զարճաւ Իր Տըղո՛ւն,—

— «Որդի՛, մի՛ զարներ Քու Հօր…, = Մի՛ զարներ…,
Մեր Թուխ-Մուրո՛ւսն է…, Քու Հա՛յրն է՝ այսօր *)…»:

Մըհէրն ալ ըսաւ.—

= «Մէրի՛կ մ'ի՛յնար մէջտեղ…, = Մի՛ իյնար… .
Պիտի զարնե՛մ այսօր…, = Ու պիտի զարնե՛մ…՝
Այդ Թուխ-Մուրուսը գըլխիվա՛յր բերեմ…» 3):
Անոր Հարուածը՝ կըճըմանի Ծովասարի Քամիի՛ն…՝
Որ կ'առնէ Իմ Մազերուն…:
Հոգ մ'ը՛ներ, Մարէ՛, Դու մ'ի՛յնար մէջտեղ…»:

Դաւիթ չի՛ զարներ, Մըհէր կըղարնէ՛…:—
Մըհէր ուժո՛վ էր…,— Հայրն ինկա՛ւ այնտեղ…,—
— «Աս,—ըսաւ—, Խանդո՛ւտ, դեռ մա՛տ մը ճի՛ժ է…՝
*Չիս այսպէ՛ս ձըգե՛ց *), անպատի՛ւ ըրաւ…,*
Քու վե՛ց եղբայրներ ո՛ղջ-ողջ ըսպանե՛ց…,—
Ա՛լ ասկէ յետոյ՝ ես ի՞նչպէս նայիմ Քու Հօր երեսին… .
Մ'չ ու փո՛ւճ ըլլայ…՝ այդպիսի Ջաւակ… .
Թող մընայ այստեղ՝ Քո Աղբըրտոց տե՛ղ…,
Մենք դառնանք Սասո՛ւն…»:
Ու զարճաւ՝ նորէն՝ անիծե՛ց Տըղան,—

— «Է-հէ՛…, Մըհէ՛ր, Դուն որ իմկար Իմ Խտու *)…՝
Աստուծմէ կ'խընդրեմ՝ Պըտուղ չ'իյնա՛յ Քո Խտու… *):—
Ի՛նչ Պըտուղ որ իյնայ Քու Խտու…՝
Աշխարհ պիտի աւերէ՛ Քու Խտու…»:

---

2) *Հոգիովը կ'ցաւի՝ զաւկէն կրած սորվացումին համար:* *) *Այսօր, Ինչ ալ ըլլայ, վերջապէս:* 3) *Տեսնել՝ Բ. Հատորով:* *) *Զգել, Տապալել, զգետնել:* *) *Դուն որ իմկար իմ Խտու, Դուն որ ինձմէ՝ ծնար, սերեցար: Երգով է:* *) *Պտուղ չ'իյնա՛յ Քո Խտու. Սերունդ չ'ունենա՛ս, անպտո՛ւղ ըլլաս:*

Մըհէր քէ՛ն ըրաւ՝ ու ձըդեց դընա՛ց,
Ընկերներու հետ դըրաւ Գինեխո՛ւմ...:

812. Դաւիթ Ու Խանդուտ՝ Սասուն Կ'դառնան

Դաւիթ ու Խանդուտ՝ եկան այս անգամ՝
Մըհէրը Թողին Խանդուտի Հօր քով՝ Կապուտ–Բերդի մէջ,
Իրենք Զի՛ հեծան՝ որ դառնան Սասուն:
Խանդուտի–Հայրն ալ իրաւո՛ւնք տըւաւ.—
— «Դուք կ'երթաք՝ գացէ՛ք, ես Ձեզ չե՛մ բըռներ.
Մինակ ի՛նձ Թողէք իմ Թոռնիկ Մըհէր:—
Դուք կըրնա՛ք նորէն Տըղայ ունենալ,
Ես՝ ծերացե՛ր եմ, ա՛լ Տըղայ չ'ունի՛մ,
Մըհէր կըպահեմ՝ կ'ընեմ ինձ Տըղա՛յ,—
Իմ վե՛ց Տըղայոց փոխա՛ն Թող ըլլայ...»:
Թողին Մըհէրը՝ Խանդուտի–Հօր քով,
Ու ձամբա՛յ ինկան՝ Իրենք՝ երեքով 1)՝
Եկան ՝ի Սասուն,—
Դաւիթ Նըստեցաւ Իր Տեղ՝ Սասմանց–Տուն:

813. «Ասիկ Մըհէրի Հարուածներէն Չ'է՛...»

Դաւի՛թն էր, — օր մը՝ Իրեն Տո՛ւն կուգար,
*Ինչ Գըլուխ կօռնց *)՝ որ ներս կըմտնէր՝*
Աչքն ինկաւ Թեւին՝ ու տեսաւ որ ի՛նչ...,—
Իր Մըսէ–Աչքին Գլուխը սեւցե՛ր է...:—
— «Է՛յ–վա՛խ..., աս ի՞նչ է...,–ըսաւ Ինքիրեն–.
Ասիկ...՝ Մըհէրի հարուածներէն չ'է՛...,—
Աչ–փետրազի՛ն է՝ ինձի կըզարնէ...:
Ես պատժըւեցա՛յ..., ձեռաց դընացի՛...,
Երդո՛ւմ ըրի ես...՝ երդումս կոտրեցի՛...,—
*Կեր *) եղաւ՝ ինկաւ՝ Իմ Թեւի Աչքին...,*

---

1) *Աղջիկ դաւիթին հետ:* *) Կօռնել, կորացնել, ծռել (դէպ առաջ):
*) կեր, վէրք, կեղ:

*Երդմնակոտո՛ր *) եղայ..., ուշացա՛յ...՝*
Շըմչիկ-Տիկինի կըռ՛ւին չըղացի՛...»:—

814. «Երդմնակոխ Եմ, Ա՛լ Փուճ Է Իմ Բան...»

Դաւիթն ալ վերցուց՝ Խանդուտին ըսաւ,—
— «Ա՛յ, կընի՛կ,—ըսաւ—, երկիր չըմընա՛ց՝ Իմ Ոտ չըդըպչէր...,
Թըչնամի չ՛մընա՛ց՝ Իմ Թուր չըկըտրէր... †):
Մըհէրն ալ՝ հիմա Իր չափը առա՛ւ, կարդեցինք պըրծանք,
Ճամբեցի՝ դընաց՝ նըստաւ Գուրջիստան,—
Թագաւորութի՛ւնն առաւ Այդ-երկրին,
Աղըրբէջանին ու Թուրքիստանին 1),
Ամէնքն ալ Իրեն հարկատո՛ւ եղան ու ղ'Ինք սիրեցին.
Սիրտըս հանդի՛ստ է..., բայց յոդնա՛ծ եմ քիչ մ'...,
*Ելիր մէկ Պըղինճ *) Ջո՛ւր դիր ու տաքցուր 2),*
Ու Ձիս լողացուր՝ Մէջքիս ցաւ կըտրի...:—
[Ջէ՞ Մէջքին երակ Մըհէր կոտրե՛ր էր... 3)]
Ու թէ պակսութի՛ւն մ' տեսնես Իմ վերաս՝ Իմ երես չի՛ տաս...»:
Խանդուտ՝ Ջո՛ւր տաքցուց՝ լողացո՛ւց Դաւիթ,—
Տեսաւ մէկ երակ՝ Վիդէն կապուտցեր...՝
Գացեր-հասեր է՝ մինչեւ վեր՝-Մէջքին...,
Ու Մըսէ-Ծաչն ալ՝ Թեւին՝ սեւցե՛ր է,,—
Ինչպէս կերն իյնայ՝ Մորթին Միան ուտէ՛...:
Դաւիթ լողացաւ ու ելա՛ւ Ջուրէն,
Բայց տեսաւ որ չէ՛...՝ ցաւ Մէջքէն չ'ելա՛ւ...:—
Ելաւ Ձին քաշեց՝ որ երթայ կըռ՛ւի,—
— «Ես կ'երթա՛մ,—ըսաւ—, բայց Ձիս կ'ըսպանե՛ն... .
Ա՛լ Իմ բան փո՛ւճ է..», ճար չըկա՛յ ինձի՛...:—

---

*) Երդմնակոտոր, Երդումը՝ կոտրած, կոտրող:

†) Նման՝ իր մեծ-հօր՝ Առիւծ-Մըհէրին. (Հատ. 224, 226, 235): 1) Ե·134 և 137՝ մանրամասնուած, եւ «եօթ տարի այնտեղ թագաւորութիւն ըրաւ»: «Հաղըրքէջան, Գիւրջիստան, Ռուսըստան եւ Թիւրքիստան՝ (= կովկասեան Լեռներու բնակիչները)»: *) Պղինճ, Պղնձէ խոշոր կաթսայ՝ երկուքէ-չորս կանթով: 2) Կ'համառօտեմ այս միջադէպը՝ որ նման է իր հօրը Դաւիթ-Մըհէրի պարագային (Հատուած 264): 3) Հատուած 808:

*Երդմնակո՛խ *) եմ..., ըրած երդումըս Իմ վըրա՛յ մընաց,*
Երթա՛մ ալ՝ գո՛ւր է..., չ'երթա՛մ ալ՝ գուր է...:—
Անի 4) կընի՛կ է..., ես կընիկի հետ կըռիւ չե՛մ ըներ...,
Անիկ՝ Զիս դաւով պիտի ըսպանէ՛...:—
Բայց պէտք է երթա՛մ... :—
Երթամ՝ Ոտ դընեմ Անոր Ոտաց վրայ՝ ճը'դե՛մ՝ թալեմ...՝ դա՛մ...»:
Խանդուտն ալ ըսաւ.—
= «Որ գիտես թէ Քեզ պիտի ըսպանեն՝ Դուն ալ մի՛ երթար...»:
Դաւիթ ի՞նչ ըսաւ,—
*— «Թէ ըսպանուի՛մ ալ՝ Գի՛ր *) է, այ կընիկ, պէտք է որ երթա՛մ...:*
Ուխտ ըրի եօ՛թ օր՝ գընաց եօ՛թ տարի՛...
Ա՛լ ի՞նչ է իմ բան...»:—
[Այն օրերու Մարդ՝ սուտ չէ՛ր երդըւեր]:—

815. «Ես Մուխճ Առաւ Քար...»

Ելաւ ու հեծաւ՝ գարկաւ որ երթայ Շըմշիկի 1) կրո՛ւին՝
Զէնով-Օհանը՝ Իրեն դէմն ելաւ, նայեց՝ Դաւիթի Ձայնը 2) սեւցե՛ր է,
— «Որդի՛, Դուն,—ըսաւ—, ո՛ւտ ես երդըւեր...,
Ես Մուխն առաւ քա՛ր... 3),—
Ա՛լ Դուն չե՛ս կըրնար Կըռիւ երթալ...,
Արի՝ ե՛տ կեցիր, մի՛ երթար կըռիւ...»:
Դաւիթ՝ Հօրեղբօր՝ Ականջ չըրաւ՛...՝ քշե՛ց ու գընա՛ց...,
Գընաց դէպ Խըլաթ 4):—

816. Շմօխկ-Տիկինը՝ Շիկացած Խոփով Կ'զարնէ Դաւիթին

Խըլաթն ալ՝ Գիլ-Գետ 1) առջևէ՛ն կ'երթայ,—
Կամուրջո՛վ պէտք է անցնի 2) դէպ Խըլաթ:—
Տեսաւ մէկ կընիկ՝ այդ կամուրջին տակ, Նիղակը Ձեռքին,

---

*) Երդմնակոխ, *երդումը ոտնակոխ ըրած*: 4) Շմշիկ-Տիկին:
*) Գիր, *ձակատագիր*:

1) Ց·134՝ Բանայ-Խաճըմի, Կ·33՝ Սուլթան-Զըմռուսի: 2) Լ·43՝ ծոցը: 3) *Այսինքն՝ քո կրակն ա՛լ չի կրնար այրել, անզօր ես այլևս*: 4) Ա·72՝ ձապաղչրի տի ?:

1) Ց·51ա·՝ Մեղրագետ: 2) *Դաւիթ*:

Դաւիթ Ինք վախցա՛ւ...,—
Իր մրտքին մէջէն՝ «Իմ Հոգու–Առնող՝ Ատե՛կ է»,–ըսաւ։
Զին խմասո՛ւն էր՝ չ՚անցա՛ւ կամուրջէն,—
Դաւիթի տեսած ու չ՚առած Աղջիկ՝ կամուրջին տակն էր,
Թունաւոր Նետը՝ Ձեռքին մէջ բռնած...։

Ջօրքեր ժողվեցան՝ եկան որ կըռուին,
Դաւի՛թն էր, — այնտեղ՝ ի՞նչպէս կըկըռուի...,—
Մինչեւ կէսօրին Իր Կըռի՛ւ կ՚ընէ, կէսօրին կուգայ՝ Ջո՛ւրը կընետուի,
Վէրքեր կըժըրին՝ կըդառնայ կըռո՛ւի։
Այդ կընիկն ալ որ՝ կամուրջին տակն է՝
Զըսե՞ս որ՝ ծըպտած 3)՝ Շմշիկ–Տիկի՛ն է...,—
կախա՛րդ Աղջիկ է...։—
*Վարավո՛ւրտ *) ըրաւ՝ տեսաւ՝ ամեն օր,*
Դաւիթ Գե՛տ կուգայ՝ վիրաւոր Մարմնով 4),
Ինքիրեն ըսաւ՝ «Ես կըռիւի մէջ՝ չե՛մ կըրնար զարնել՝ Դաւիթն
[*ըսպանել.*
կեցի՛ր՝ գայ մըտնէ այդ Ջըրին մէջը՝ զարնեմ ըսպանեմ...»։—
Ան ալ ի՞նչ ըրաւ,—
*Լացքի՛ անունով՝ կըրա՛կ ըրաւ հոն՝ Գետապըռո՛ւկը *),*
Գուբնի–Խոփ 5) բերաւ նետեց Փուռին մէջ 6).—
Խոփն ալ՝ Քառասո՛ւն–Լիտր՝ ծա՛նրը Պողպա՛տ էր —,
Փըչե՛ց ու փըչե՛ց..., կրակցո՛ւց–կարմըրցո՛ւց...,
Ինչ Դաւիթ եկաւ՝ մըտաւ Ջուրի մէջ՝
*Խոփը՝ կըրակէն՝ հանե՛ց կրակաթթախ... *)՝*

---

3) *Տե՛ս Հատ.* 719 *եւ* 841։ *Շմշիկին՝ կախարդ ըլլալը՝ չէչտուած է Ա.* 42–*ի մէջ։* *) Վարավուրտ (*վար–վէր*) ընել, *Քննել, հետազօտել։* 4) *Զրաբուժութեան կամ երիտասարդացման նկատմամբ՝ Բ. Հատորովը։ Տե՛ս նաեւ՝* Գրոց–Բրոց (*Մրւնճտեն.*) *էջ* 86–87։ *) Գետապռուկ, *Գետափ, գետեզերք։* 5) *Ց.*135՝ «*Իր հօր գուբնի խոփը՝ ինչ Դաւիթ անով գուբան ըրաւ*», — *Որով՝* Շմշիկ–Տիկին, Սալթան–Գրմիժ, Բանիկ–Տիկին (*Գործոթի Գուբնաւորոջ Աղջիկը*)՝ *մէկ անձ կ՚ըլլան (Տե՛ս Բ. Հատորովը)։* 6) *Ց.*51*ա.*, *Լ.*43, *Կ.*33, *ՁՍ.*732՝ *թունաւորած ներսով զարկաւ։ Թունաւորումի պարագան՝ հմմտալի.՝ Տրդատի մահուան հետ։* *) *Կրակաթթախ, Կրակով թաթախուն, չիկակարմիր վիճակով։*

Զարկաւ Դաւիթ՛ին...,— †)
Ու Թի(կ)նամէջէն ծակեց՝ դո՛ւրս տըւաւ... 7):—
Դաւիթ՛ն էր, — պօ՛ռա՛ց, ելաւ կանգնեցա՛ւ Գետի–Ջուրին մէջ...,
Արիւնը ծածկեց Գե՛տն ու բոլոր Շամբ... 8):—

817. Դաւիթ Ու Պօռաց՝ Ամենքը Հասան...

Որ պօռա՛ց այնտեղ՝ եօ՛թը Գոմէշի ձա՛յն ելաւ մօտէն...,—
Զայն՝ դըներց Սասո՛ւն... 1):—
Գետի–Թորոսիկ ու Ցըռան–Վէգօն,
Ճընճղատիտիկ, Մանուէլ, Խոր–Գուսան,
Ու Զէնով–Օհան՝ իրար քո՛վ եկան...,—
— «Վա՛յ ու վո՛ւյ...,–ըսին–, Դաւի՛թ ձա՛յնն էր այս...,—
ղ՝ինչ ըսպանեցի՛ն...»:
Զէնով–Օհան ալ՝ Սասունէն պօ՛ռա՛ց...,—
= «Դաւի՛թ..., Մենք եկա՛նք...»,
Ու հասա՛ն՝ եկան, վե՛ց եղբայրներով, մէկ հարի՛ւր Հոգով...,
եկան կանգնեցան այդ Ջըրին եզերք...:—
Տեսան որ Դաւիթ՝ լաթերը հաներ՝ ճըդեր Թիկունքին...,
Արեւին առաջ՝ մա՛ն կուգայ այնտեղ...:—
— «Դաւի՛թ,–կանչեցին–, ո՞վ է Քեզ զարկեր...»:
= «Այնտե՛ղ..., Շամբին մէ՛ջ..., Փուլերու *) եղե՛րք...,
Շըմչիկ–Տիկի՛ն է՝ որ ինձի զարկաւ...
Կախա՛րդ Աղջիկ է..., մէկ գացէք տեսէ՛ք...,—
Երբ ես պօռացի, Դուն ալ պօռացիր, է՛ Զէնով–Օհան,
Առի սարսափէն չորցե՛ր է հիմա..., վըրնտռեցէք՝ բերէ՛ք...»:
Գացին Շամբին մէջ փընտռեցին զըտա՛ն,—
Տեսան՝ մէկ Աղջի՛կ՝ չինի՛ *) Աչքերով...,—
Դաւթի պօռալէն՝ այնպէ՛ս վախեր է...՝ կ՝ըսէք մեռա՛ծ է...,—

---

†) Ինքը՝ չիկացած Խոփով արբենցուցած էր Մըսրամէլիքը (Հատ. 626): 7) Տե՛ս Մօրուին անէծքը՝ Հատ. 686: 8) Դաւադրութիւնով սպանուիլը՝ նման Տրդատ Թագաւորի վախճանին, — չըլլապատի մարդերուն ձեռքովը բունաւորուած [Խրնց. Բ. դր. 372, Գլան.՝ 151]:
1) Հմմտ.՝ Աքիլլէսի պօռալը՝ Պատրոկլի մահուան կսկիծէն, եւ իր մօր լսելը՝ ծովուն խորերէն [Իլկն. 18]: *) Փուլ, Փլիլկած ե–զերք (գետի): *) Չինի, Ճախճապակիի, խաժ–կապոյտ (աչքերով):

Առին ու բերին Դաւիթի առա՛ջ... 2)։—
— «Անասուա՛ծ...,–ըսաւ՝ Դաւիթն՝ Աղջկան–,
Դուն ինչո՞ւ զարկիր՝ Չիս ըսպաննեցիր...»։
Շմշչիկ–Տիկինը վերցուց ի՞նչ ըսաւ...,—
= «Օրին՝ Քեզ ըսի՛, Դաւի՛թ, կըւիշե՞ս...,—
«Թէ որ Չիս չ՛առնես՝ վընա՛ս կուգայ Քեզ»...,
Վընասը ա՛յս է, Դաւի՛թ, ի՞նչ ընեմ...։—
Դէ՛, բեր Քո վէրքեր՝ քանի դեռ տաք են՝
Դե՛ղ ընեմ՝ կապե՛մ՝ որ երթաս հասնիս, Դուն՝ ա՛լ չե՛ս ապրիր...»։
Բերաւ՝ վէրքերուն դե՛ղ ըրաւ, կապե՛ց, մէկ կողմէն պատմե՛ց.—
— «Ինձ երդո՛ւմ ըրիր՝ «Ծօթ օրէն կուգամ»՝ ըրիր ծօ՞թ տարի՛...,
Ու ես՝ Քո՛ յուսով մնացի անէրիկ...։—
*Ծօթը տարի է՝ Քու ճամբա՛ն կ՚աչքեմ *)՝ թէ կուգաս կըս՛ւի՛...,*
Քո երդում մոռցա՛ր՝ ու չ՚եկա՛ր, Դաւիթ...։
Ես ալ Քո Ազգէն ու Արիւնէ՛ն եմ, Ձեր Ազնանց–Ցեղէ՛ն... 3)։
*Լըսելովս *)՝ Քու Պապ Մեր–երկրէն անցեր՝*
Եւ Իմ Մօրըս հետ՝ նըստեր–կանգնե՛ր է...,—
Ես Քու Պապէ՛ն եմ..., ուրիշ Հօրէ չե՛մ...»։—

818. «Ճրւոխս-Ճապկիս» Ու Քուռկիկ-Ջալալին

Դաւի՛թն էր, ելաւ՝ Ձեռք նետեց Աղջիկ,
«Այդ Մեր Սե՛րմն է,–՚սաւ–, որ Չիս ըսպաննեց...»։—
Ու Ոտը դըրաւ մէկ Ոտքին վըրայ՝ քաշե՛ց ու ճըւտեց... 1),

---

2) Ա·73՝ *Աղջիկ ինքն է՝ Դաւիթը եղէգնուտէն հանող՝ գետափը բերող։* *) Աչքեր, *Ակնկառոյց սպասել։* 3) *Ամեն կողմ, ամեն դարուն, Հայուն իր արիւնէն են ելեր՝ իրեն վնաս տուեր։ Որդը իր ծոցէն է ելեր միշտ։ Նոյն ատեն՝ Հայը իր սաղմերը ճըգեր է ամեն կողմ՝ ժողովրդի անգիր յուշերուն ալ համաձայն. Տե՛ս Հուշ. 206, 208, 218, 219, 242–252։* *) Լսելովս, *Լսածիս համեմատ։*

1) Ե·136՝ *«Ձէնով–Օհան՝ Բանակ–Խանըմը բերաւ, անոր ծամերը կապեց Քուռկիկ–Ջալալու պոչը, Քուռկիկ–Ջալալին՝ ամեն բըրդուճ մէկ երկիր քալեց, ծամերը մնացին պոչին կապուած, բերաւ Խանդուտի մօտ՝ տեսաւ». Համմալ.՝ Տրդատ Արքայի չրջանին՝ Գրիգորիս Կաթողիկոսի նոյն ձեւով նահատակութիւնը՝ Վատնեան Դաշտին մէջ. [Ծրնց· Գ· էջ· 387]։*

Նետեց Սարին կող՝ մինչեւ տակի Գեղ...։—
Գիւղին անունն ալ՝ այն օրէն՝ ի վեր՝ կոչուեցաւ մընաց՝
ՃԸԻՏԻՍ ու ՃԱՊԿԻՍ...,—
*Այնտե՛ղ, Զորին մէ՛ջ, Զուխուրայ 2) բերան *)։*
— «Դէ՛ դընա՛,—ըսաւ—, է՛ կախարդ—Աղջիկ, Սիրտըս հովացաւ.
Չիս կ՚ըսպանէլ՞ր..., Ինճմէ չո՛ւտ մեռար...»։

Չին ալ ի՞նչ ըրաւ..., — Քուռկիկ—Ջալալին,—
Թուրը—կէնճակին ու Գուրզը վըրան...՝
Իր կապը կըտրեց 3)՝ փախաւ ինկաւ դո՛ւրս...,—
Ի՛նչքան որ Հովի՛ւ եկաւ Իրեն դէմ...,
Ի՛նչքան որ Նախրո՛րդ եկաւ Իրեն դէմ...,
Ի՛նչքան Զի՛, Տաւա՛ր՝ եկաւ Իրեն դէմ...,—
Ամե՛ն կոխոտեց, կոտորեց՝ գընա՛ց...՝
Գընաց կանգնեցաւ՝ Ծանդուտ—Ծաթունի Իր Դուռին առաջ,
Ու մէ՛կ... խըրխընջա՛ց...։—
Ծանդուտ—Ծաթո՛ւնն էր...՝ վազեց նայեցաւ՝
Տեսաւ Չին եկեր..., Տէրը հետ չըկա՛յ...։—
*Լո՛ւր տըւաւ խոկոյն, — «Դաւիթ կորո՛ւան *) է...,*
Չին եկաւ Իր Դուռ, բայց Ինքը չըկա՛յ...»։
Քուռկիկ—Ջալալին նորէն է՛ւտ դարձաւ,
Եկաւ Դաւթի քով՝ խըրխընջաց, կեցաւ...։

819. Դաւիթի Մեծաւուր Ճուղարկաւորութիւնը, «Ասխարհ Այսպէս Եկեր Է, Այսպէս Ալ Կ՚երթայ...»

Դաւիթ ի՞նչ եղաւ...,—
Դարձաւ Օհանին, — «Հօրեղբա՛յր,—ըսաւ—,
Ես գիտե՛մ որ Իմ մեռնելուս օ՛րն է...,—
*Չիս կըվերցընէք *)...՝ Իմ Չին առջեւէ՛ս...։*

---

2) Ս·178՝ Լօխօրայ՝ *ուղղելի* Թերեւս՝ Զուխուրայ (Գրց· Բրց· 128)։ *) Բերան, *Եղերք*։ 3) Ճ·135՝ Ծռակապ կտրեց՝ *ուղղել՝* Ծռաւ՝ կապ կտրեց (*խենթեցաւ՝ կապը կտրեց՝ փախաւ*)։ *) Կորուս, *Կորուստ*։

*) Վերցնել, *Ճուղարկաւորութեամբ տանիլ* (դիակը)։

Ու Դաղաղէս դուրս՝ Ձեռըս 1) կա՛խ թողէ՛ք...»:
Ձէնով–Օհա՛նն էր...,—
Դաւիթի Գլուխ վերցուց ու դըրաւ Իր Ծունկին վըրա՛յ,
Դաւիթ՝ Իր Աբեւ տըւաւ Ֆո Որդուն...2):
*Սասմանց–Տունին ալ՝ սովորութի՛ւն *) էր,—*
Գլուխ դընէին Ցեղին Ծունկին վրա՛յ՝ ու Հոգին տայի՛ն... †):—
Թլոլ–Դաւիթն ալ՝ Հոգին աւանդեց Աստըծու Ձեռքը...:
«Աստուած Ողորմի՛»ն ըսէք Իր Հոգուն, Սասմանց Զոլերուն...:

Բերին վերցուցին՝ Ոսկի՛ Դաղաղով...,
Ֆուռկիկ–Ջալալին՝ Իր Ձին՝ առնեւէն... 3),
Ու Ժողովուրդի անհո՛ւն Բազմութիւն՝ Իրա՛ր եռեւէն...:
Դաղաղը՝ տեղ–տեղ՝ հերթով կըտանին՝
Վեց–վեց կըտրիճներ՝ Իրենց Ուսերով...,
Դաւիթի Ա՛ղ Ձեռք՝ Դաղաղէն կախուած՝
Մէկ առա՛ջ կ՚երթայ՝ մէկ դէպի ետե՛ւ...,—
զ՚Ինք տանողներուն Ֆայլերուն չափով...:
Ճամբուն երկո՛ւ կողմ՝ Դուքա՛ն են դըրեր,
Ուժեղ Մըշակներ՝ Հո՛ղը կըվարեն...:
Մըշակներ կեցան..., զարմացա՛ն՝ ըսին,—
— «Աւոր Ձի՞ն ինչու՝ դո՛ւրսը թողեր են...»:
Գիտցողները թէ, = «Անոր մէյնքն ա՛յս է՝
«Ալխարհը՝ ա՛յսպէս...՝ Ձեռքիս մէ՛ղ եկաւ...՝
Ա՛յսպէս ալ դընաց»...» 4):—

ՑԶՕ. Խանգուս՝ Պաեզգամէն զ՚Ինք Վար Կ՚Ցնէ

Առին ու գացին՝ Մօտեցան Սասուն,
Ցըռան–Վէգո՛ն էր՝ առջե՛ւը անցաւ,

---

1) Ա՛ղ ձեռը, (Տես քիչ վար): 2) Այսինքն՝ Հոգին աւանդեց, մեռաւ: *) Սովորութիւն, Աւանդութիւն, օրէնք †) Տե՛ս եւ Հատ. 860, Պարոն–Աստղիկի համար: 3) Ց·51ա·՝. «Ֆուռկիկ–Ջալալին՝ Դաւիթի դիակը՝ բերանով՝ մինչեւ Սասուն կը տանի», — հասկնա՞լ արդեօք՝ Հայոց Այրուձիուն շքերթովը, երգով ու նուագով...: 4) Նոյն միջադէպը՝ Ցէրան–Թուրան (Ռոստամ–Զալ) դիւցազնավէպին՝ Ֆոլըկ–Սլէմին ճիւղին մէջ:

Որ դայ չուտ հասնի Խանդուտ–Խաթունին։
Խանդուտն ալ՝ չուտ–չուտ՝ իր Պատըշդամէն՝
Հարցուց, — «Աղբարի՛կ, Դաւիթը ո՞ղջ է···,
Ի՞նչպէս է···»,–ըսաւ։
Ցըռան–Վէգօն ալ՝ վերցուց ու ըսաւ,—
— «Մեռնի կընիկ՝ ապրի էրիկ··· 1)»,—
Դաւիթ մեռաւ···՝ ե՛ս ինչ անուշ···» 2)։

Խանդուտ–Խաթուն՝ մեռնելո՛ւ խօսք որ լսեց···,
Ու Վէգօի 3) ըսածները իմացաւ···՝
— «Ա՛յ–հա՛յ···,–ըսաւ–, Դաւիթէն ետք՝ Աստնք ա՛լ Չիս պահող չե՛ն,
*Ասկէ յետոյ՝ արեւալոյս *)՝ ինձ համար չ'է՛ այս Աշխարհ···»։*
Ու Դաւիթի Դաշտէն ալ որ Արիւններո՛ւ մէջ տեսա՛ւ···՝
Ձըդհմացա՛ւ···, Սըրտին ցաւէն՝ ղ'ինչ Երդիքէն վա՛ր նետեց 4)։

Իր Երդիքն ալ՝ քառասուն նետ՝ բա՛րձր էր Գետնէն.
Մե՛ծ ահագին Քար մ' ալ Անոր Պատըշդամին առջե՛ւն էր.—
Ա՛յնքան մեծ էր այդ առջեւի լերճ Քարն ալ՝
Որ տասերկո՛ւ Գոմէշ մէկտեղ՝ Քարին վըրայ կ'լըսային։

Խանդուտ–Խաթուն՝ ինչ ղ'ինչ վերէն՝ Գըլխի վըրայ՝ վա՛ր նետեց՝
Գըլուխ դըպաւ այդ մեծ Քարին, փոսցուց մըտաւ մինչեւ Ուս 5)։
Երկրին Քարէն դո՛ւրս հանեցին, Գըլխուն տեղը մընաց փո՛ս···,—
*Մինչեւ հիմա՝ Գըլխին տեղը՝ ինչպէս Սանդ *)՝*

---

1) Լ·44՝ «Մեռնի բաշ (կինը), ապրի բուդէն (այրը)», — կովի եւ ցուլի նմանողութիւն՝ այլաբանօրէն։ 2) Այսինքն՝ ե՛ս ողջ մընամ՝ քեզի էրիկ եմ։ 3) Լեզուին օրէնքովը՝ Վէրդոյի· բայց ոյ երկբարբառին՝ ուշ կամ ոհ հնչուելէն խուսափելով՝ նախընտրելի է գրել օ (Վէրդօի)։ *) Արեւալոյս, կեանք, ապրիլը։ Իլիականի մէջ՝ յաճախ նոյն ոճը, — lumière du jour։ 4) Ե·45՝ մէկ գաւաթ բոյն խմեց՝ մեռաւ, Ե·522՝ պատշգամէն գինիը զարկաւ (Դաւիթի) դագաղին վրայ։ 5) Ե·750՝ պատմուած է Մըսրամէլիքի անունովը։ Խանդուտի գլուխին տեղը քարի մէջ փոսանալու պարագան՝ համմալ՝ Տրդատ թագաւորի (անշուշտ նաեւ իր թագուհի կնոջը) մարմարէ, «Հինհայ տապանի» մէջ թաղուելուն հետ, [Գլան· 151]։ *) Սանդ, Մէջը ցորեն, կորեկ եւն. ծեծելու քար։

Եօթ չափ ծորեն կըլլեցընեն ու կըծեծեն՝ կարդէ կարդ··· ·
Իր վէ՛ց–ճըղէն 6) Ծամերուն տեղն ալ կ՛երեւայ մինչեւ օրս,
Ու հիմա՛ ալ՝ Բերդին առա՛ջն է այդ Սանդ···:—

§21. Խանդուս–Խաթուն Ցղով Էր

Դաւիթն առին՝ բերին մինչեւ Սասմանց–Տուն,
Եկան տեսան՝ որ Խանդուտն ալ՝ ինկեր է հոն ու մեռեր···,—
Չէնով–Օհան կանչեց ըսա՛ւ Ամենուն,—
— «Այդ ո՞վ եկաւ՝ ըսաւ Ամոր, դ՛ինք վա՛ր նետեց ու մեռաւ···»:
= «Ծըռան–Վէգո՛ն 1) է···»,–ըսին:
— «Ինչո՞ւ,–ըսաւ–, չ՛ըսպասեցիր՝ մինչեւ զայինք նայէինք՝
Ու տեսնէինք՝ տըղո՞վ էր թէ՝ տըղո՞վ չէ՛ր···:—
Թէ Մեր–Հարսէն ու Դաւիթէն Տըղա՛յ կայ···՝
Աչխա՛րք ամեն՝ Իր Ձեռքին մէ՛չ կըբըռնէ···»:
Դացին տեսան 2) որ Խանդուտի Միծերէն դեռ կա՛թ կուդայ···,
= «Որ այդպէս է,–ըսին Ամենք–, Խանդուտ–Խաթուն Տըղո՛վ էր»:

§22. Դաւիթի Թաղումը

Ելան բերին՝ Խանդուտ–Խաթուն ալ Դագաղի մէ՛չ դըրին,
Ու երկուսի Ոսկի–Դագաղն իրարու հե՛տ կապեցին,
Քառասուն–քառասուն Վարդապետով, Սարկաւագով, մեծ շըքով,
Տէրտէրներով, Տիրացուով վերցուցին:—
Ժողովուրդն ալ, մեծ ու պըղտիկ, Քաղաքացի՛, Գիւղացի՝
Լացո՛վ–լոցով, Շարականով, Պատարագով ու Ժամով,
Առին՝ մէկտեղ՝ Մարութքայ–Բարձր–Ասպարտծին Վա՛նք տարան,
— «Ինք Իր Ձեռքո՛վ չինեց,–ըսին–, այս Մեծ–Վանք»,—
Ու Քաղեցին Ժամին մէջ···,
Դարձան եկան՝ եօ՛թը շաբաթ Սո՛ւգ դըրին···:—

---

6) Ս·180՝ եօթ ճիւղ, *բայց Տե՛ս Հատ·* 782:

1) Լ·44՝ սխալով՝ Չէնով–Օհան: 2) Լ·44՝ «Խանդուտի քովը՝ *չորս կնիկ կանգնած են եղեր*, ըսին՝ «Ատոր Միծերէն կաթ Քալեց»:

Ու Սասուն ալ՝ այդ աւե՛րն էր՝ որ աւրա՛ւ... 1):

* 1. *

Դաւիթի կեանքն ալ՝ ինչ ապրեցա՛ւ այս Աշխարհ՝
Եօ՛թը–հարիւր–յիսուն տարու չափ եղաւ...:—

* 2. *

Դաւիթի Ազգ՝ Դիւցազներու 2)–Աստուածներու ցեղէ՛ն էր.
Անոնց ցեղը՝ Աղնա՛նց–ցեղ է, — Աղնաւո՛ր են Ամենն ալ 3).
Անոնք՝ հրսկայ Դեւերէ՛ն է առաջ եկած՝ սերած են.—
Իրենց ցեղի Մարդիկներն ալ՝ այդպէս հրսկա՛յ, Պարթե՛ւ են 3).
Այժմու Մարդիկ՝ Անոնց Գըրպա՛ն կըմըռնային բազմութեամբ 3):

* 3. *

Դաւիթի Ձին՝ հրեշտա՛կն իջաւ ու պայտեց:—
Դաւիթն ըսաւ, — «Աղէ՛կ պայտէ՛ Իմ Քուռակ...»:
= «Աղէ՛կ պայտեմ...,–ըսաւ–, հրեշտակ՝ անդրէն...;—
Բայց Քու Ձիուն ու Քու կեանքը՝ մէ՛կ ըլլայ...»:

* 4. *

Աստուած Ողբումի՛ն 4) *ըսէք՝ Սասմանց–Տան Ջոջին ու Պըզտիկին:*
Ցեղին ու վերջին խօ՛սք...:

---

1) *Այսինքն՝ Դաւիթի մահէն յետոյ՝ Սասուն՝ իր նախկին փայլը չունեցաւ.* ☛ *Ինչպէս Տրդատ մեծագործ ու «երկաբեւի» Արքայէն յետոյ՝ Հայաստանը:* 2) Հ·49՝ Դիւցազնաւիպերէն, [Դեւ = deus, dieu, Աստուած]: 3–3) Ա·53ա·, Հ·50՝ չեչտուած են այս կէտերը: *Տե՛ս նաեւ Հատ.* 890: 4) *Տեսնել* Ողբումի՛ն՝ *Հատ.* 1 եւ 270:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՃԻՒԼԻՆ

ՊԱՏԻԿ-ՄԸՀԷՐԻ

	Հատուած
Ա. Մըհէր Կապուտ-Կողի Ու Սասնոյ Մէջ	823
Բ. Մըհէրի Քաջագործութիւնները	838
Գ. Մըհէր Ու Գոհար-Խաթուն	855
Դ. Մըհէրի Վախճանը	873

ՓՆՏՐԵՑԷ՛Ք ՈՒ ԿԱՐԴԱՑԷ՛Ք

ՀԱՑԱԳԻՏՈՒՄ ՄԱՏԵՆԱՇԱՐ՝ ԹԻՒ 9

ԲԻ՛ՒՐ ԱԿ..., ՀԱՋԱ՛Ր ԱԿ...

Եօթը Այլազան Բաժիններով, 232 Էջ
Երկու Լուսանկարով

ԳԻՆ 75 ՖՐԱՆՔ

ՀԱՑԱԳԻՏՈՒՄ ՄԱՏԵՆԱՇԱՐ՝ ԹԻՒ 10

ՋՈՑԳ ՍԻՐԱՀԱՐՆԵՐ

Թատերական Ջորս Արար

ԳԻՆ 20 ՖՐԱՆՔ

ՍԱՍՈՒՆԱԿԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՃԻՒՂ

ՊՋՏԻԿ–ՄՐՀԷՐ

(Տղայ-Մրհէր, Ցեսին-Մրհէր, Վերջին-Մրհէր, Դաւրի-Տղայ-Մրհէր, Արէցու-Ծաջ-Տղաճ, Ջեռու-Տղաճ, Մրհէրիկ)

ՁԿ·620–644, ՁՍ·735–743, Մ·132–135, 180–184, Ճ·51–60, Ճ·137–151, Խ·55–74, Ա·38–45, Ա·55–58, Լ·40–41, 44–48, Լ·85, 90, 100–101, Կ·33–36, 76, Կ·97–101, Հ·48–50, Հ·392–398, Ղ·448–460, Ն·45–51, Ն·491, Ն·522–524, 546, Ն·598–600, Ն·647–648, Ն·931–933, Ն·1018, 1021–1022, Ն·1125–1126, Դտ·.*), Ազգ· Հ·՝Ժ·27, Ջ·՝ՑՐՆ·–ԹՐՆ·՝ 288, 438, 448, եւ Ջ·

Ա. ՄՐՀԷՐ ԿԱՊՈՒՏ-ԿՈՂԻ ՈՒ ՍԱՍՆՈՑ ՄԷՋ

ՏՋՁ. «ՈՂՈՐՄԻ»Ն

—Օրհնեա՛լ, բարերա՛ր Աստուած, խընամը չատ էր Մեծ–թագաւորին։
Դառնանք՝ «Ողորմիյն տանք, = Հաղա՛ր «Ողորմիյ»...,—
Մեր կապուտ–Կողի Պապ–թագաւորին,
Մամ–թագուհիին, Լուսիկ–թագուհուն,
Մեր Սասումանց–Տան՝ Ջոջ–Մանասարին, ու Բաղդասարին։
Տանք «Ողորմիյն՝ Գըզտիկ–Մըհէրին...,
Խաղանք Ճիւղէ–Ճիւղ՝ գանք դաշտինք՝ վեր՝ Մըհէրկի Ճիւղին,
Ըսենք գըրոյցը՝ Գըզտիկ–Մըհէրին,—
— Որ Անիկ Թըլոլ–Դաւիթի Որդին է՛ր...։
Անունն եւս Աղնանց–Քաջին, = Հա՛ Քաջին...
Ով լըսեր էր՝ չէ՛ր հաւատար, —Աչքով տեսան՝ հաւատացի՛ն...։

---

*) Դառեան Ա՛չկ· Վրդ·։

823 Ա. Դաւիթի Զաւակն Ու Ծաղրողը՝ Մըհէրիկը Կ'փնտռեն

Թլլոլ–Դաւիթ երբ մեռաւ՝
Հօրեղբայրներ իրա՛ր եկան ու ըսին,—
— «Ի՞նչպէս ընենք···, Մեր–երկիրը մընաց անտէր, առանց Մեծ···.
*Սասմանց–Տընէն որճեղէնը *) կըտրեցաւ···»:*
Զէնով–Օհան վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ·—
= «Չէ՞ որ Մեզի Մըհէ՛ր մը կար, — Դաւ՛թի Տըղայ Մըհէրի՛կ,—
Ա՛յնքան կըսի՛ւ ըրաւ Հօր հետ՝ ու դընա՛ց···:
Երթանք նայինք ո՞րտեղ է··· .
Մարդու որ Հա՛ւ մը կորսընի՝ կ'իյնայ եռեւ՝ կըփընտռէ···,—
Աւի՝ չէ՞ Մեր Տըղան է···,
Ու Սասմանց–Տան՝ Նո՛ր–Ճըրագ···,—
Երթանք փընտռե՛նք ու բերե՛նք···»:
— «Ո՞րտեղ փընտռենք···»,— ըսաւ Ծըռան–Վէգօն ալ:
= «Ելնենք,–ըսաւ Զէնով–Օհան–, Սարին Գըլուխ՝ ես կանչեմ,
Ո՛րտեղ որ է՝ եթէ ողջ է՝ Մեզի նըշան մը կուտայ···»:
Ելան գացին՝ Սարի Գըլուխ բարձրացան,
Զէնով–Օհան՝ Դոմչու–կաչին Մէջքի՛ն վաթթեց ու պոռա՛ց,—

— «Տըղա՛յ–Մըհէ՛ր, Տըղա՛յ–Մըհէ՛ր, Դուն ո՞ւր ես··· 1).
Դուն խըմէ՛ Նըռան–Գինին ու խըմէ՛···,
Սասմանց–Ճըրագ մարե՛ր է···,—
Չէ՞ Փո Հայրը ըսպաներ են···, այսօր Իր ե՛ր *) եմ ըներ···»:

824. Զէնով-Օհանի Զայնը Կ'հասնի Մըհէրին

Մըհէ՛րն ըսաւ՝ Ընկերներով Գինեխումի՛ է նըստեր,—
— «Տըղա՛ք,–ըսաւ–, է՛ Աղջիկներ, լո՛ւռ կացէ՛ք···,
Զայնի՛կ մ' եկաւ Իմ Ականջին···, Իմ Հօրեղբօր1) ձա՛յնն է ատ···,2)

---

*) Որճեղէն, *Արու սերունդ*: 1) *Երդով*: *) *Երթ* ընել, *Մահ–ան երթնօրհակը կատարել*:

1) Նկատել որ՝ Մըհէրն ալ Հօրեղբայր կ'ըսէ Զէնով–Օհանին, թէեւ ան իր Հօրը (Թլլոլ–Դաւիթի) եղբայրը չ'էր (Հատ· 278ա·, 444ո· ‡): 2) *Երդով*:

Ջեմ գիտեր թէ՝ Արեւե՛լքն էր, Արեւմո՛ւտ...,
Հարա՛ւն էր՝ թէ՛ Հիւսիս էր...»:

Հօրեղբօր ձայն նորի՛ն դըպաւ Ականջին.—

= «Մէջ Հիւսի՛ս էր, մէջ Հարա՛ւ, մէջ Արեւմո՛ւտ, Արեւե՛լք... 2),
Սասմանց–Ճըրագ մարե՛ր է...,—
Ջէ՛ Ֆո Հա՛յրը ըսպաներ ես...,— այսօր Իր ճո՛թն եմ ըրեր...»:

*Մըհէրն ըսաւ,, — «Ֆո՛յր–եղբայրներ, Դուք կերկ՛ք ու խըմեցէ՛ք,
Ուրախութի՛ւն ըրէ՛ք մէկտեղ, Ձեզ համար,
Ես պիտ՝ երթա՛մ..., Իմ Հօրեղբօր ձա՛յնն է կ'ուզայ Ականջիս...»:*

*Մի՛ ըսեր ո՛ր՝ Ձէնով–Օհան երբոր պօռա՛ց Սասունէն՝
Ձայնը գընաց՝ կապուտ–Բերդի Քեռի–Պապո՛ւն 3) ալ հասաւ...:—
Ան ալ վերցուց ըսաւ, — «Մարդի՛կ, եկան Մըհէր կըտանի՛ն...,
Բերէ՛ք տանինք՝ եօ՛թ Դուռնով ներս՝ Մառանին մէջ ղ'ինք պահենք,
Թըմբուկները կըշտին զարկէ՛ք, պօռացէ՛ք...,
Որ Հօրեղբօր ձայնը չ'առնէ՛, Մըհէր չ'ելնէ՛ Իր Տեղէն...:
Տարէ՛ք,–ըսաւ–, Մառանին մէջ չուտ փակեցէ՛ք Մըհէրը †).
Բայց որ Իրեն Հա՛ց *) տանիք...՝
Մխս թէ կայ մէջ՝ Ոսկորները հանեցէ՛ք...,
Ջիր թէ կայ մէջ՝ կոճ–կողինճներ հանեցէ՛ք...,—
Որ չ'ըլլա՛յ թէ՝ Տըղայ–Մըհէրն՝ ականջ՝յ՝
Ոսկորներն ու կոճերը *) հանէ բըռնէ Ձեռք՝
Դէս–դէ՛ն զարնէ Նետի նըման՝ ու ծակէ...,
Կամ վընա՛ս տայ Իր Անճին...»:
Ելան առին՝ տարա՛ն Մըհէր, խաբելով,
Գետնի տակեր՝ եօ՛թը–Դուռնով Մառանի մէջ փակեցի՛ն...,—
Արեւե–Լոյս չ'ա՛նցնիր Անոր Պատերով...:

*Ու մէկ անգամ՝ լ'ինչպէս եղաւ՝ ճաշ որ բերին Մըհէրին՝
Միսին մէջը Ոսկո՛ր կար... .—
Մըհէր առաւ Միսը կերա՛ւ, Ոսկոր զարկաւ Երդիքին.—
Երդիս փըլա՛ւ՝ Արեւի Շողն ինկաւ եկաւ Տախտին մէ՛ջ:
Մըհէրն ելաւ՝ այդ Շողին հետ կըկըռուի՛...՝*

---

2) Երդով: 3) *Այսինքն՝ Մըհէրի մօրը–Խանդուտ Խաչունի–Հայրը*, Լ·44՝ Արաս–Միրզա: *) Հաց, Ուտելիք, ճաշ: *) կոճ, Միրանի պատուին՝ կարծր մասը, կորիզ:

Որ դո՛ւրս հանէ Մառանէն…,— բայց չըկըրցա՛ւ դուրս հանէը…,
*Պահապանը հասաւ կալե՛ց *) Շողին Ծակ… †):*

825. Պապը Կ'ծածկէ Մրհէրը, Ջէնով-Օհան Կ'պահանջէ

Ջէնով–Օհան, Քեռի–Թորոս՝ ելան զացին կապուտ–Բերդ,
Խանդուտի–Հօր երե՛ան ելան ու ըսին,—
— «Եկեր ենք որ՝ Մեր երախայ Մըհէրն առնենք ու տանինք:—
Իր Հայր Դաւիթ՝ ըսպանեցին, զայ Ի՛նքն առնէ Հօր վըրէժ…,
Եւ Մոսուն ալ անոէր չ'մընա՛յ, Տէ՛ր ըլլայ Մեր Ջոջանց–Տան…»:
= «Ինամի՛ Օհան,–ըսաւ Ծերուկ Թագաւորն–,
Դաւ՛թի Զաւակ Մըհէր վաղո՛ւց է մեռեր…»:
— «Թէ մեռեր է՝ Իր Գերեզման Մեղի ցո՛յց տաս՝ որ տեսնե՛նք…,
Նըշա՛ն կայ Մեր Մեռելներուն. չափենք նայե՛նք Իր 1) Տապան…:
*Մենք Մեր Ցեղի Գերեզմանը կըճանչընանք վարուվեր… *),—*
Մեր Տան Մարդը երբոր մեռնի մէ՛կ տարու՝
*Անոր Տապան տաս չէ՛նք *) է·*
Երկու տարու թէ որ մեռնի՝ քըսա՛ն չէնք է Իր երկայնք·
Քա՛նի տարու որ մեռնի՝
Ամեն տարւան՝ տաս–տաս չէ՛նք է Իր Տապան:
Թէ որ հարցնես՝ Մեր Տան Մարդը՝ յիսուն տարու որ մեռնի՝
Ցիսուն 2) կանդուն՝ դեռ աւելի՛՝ պիտի ըլլայ Իր Տապան:
Իմ Թոռ Մըհէր՝ եօ՛թ–տարու 3) է այս տարի…,—
Եոսո՛ւն–կանդուն 4) պիտի ըլլայ Իր Դամբան…»:
Ելան զացին՝ Գերեզմաններ նայեցան,—

---

*) Կալել, Դոցել, Խցել: †–†) Այս հատուածը քաղեր եմ Աղբ· Հ· Թե· էջ 27–էն, ուր Մնկ· Աբեղեան մէջ բերած է՝ Ազգ· Վրդ· Դաւեանի «Տղայ Դաւիթ եւ Աղջիկ Խանդուտի Հէքիաթը» կոչուած պատումէն (5–րդ պատմուածք՝ Ժմնկզրկն· կարգով), զոր դժբախտաբար չեմ կրցած աչքի առջէ ունենալ (ինչպէս ըսած եմ Ցոջքն· էջ 69): Պատումին մէջ՝ Դաւիթն է՝ վոխանակ Մրհէրի, որ ճիշդ չ'է՛: 1) Այսինքն՝ Մըհէրի: *) Վար ու վեր, Մօտաւոր հաշուով: *) Շէմբ, Քայլաչափ, Հ·393՝ Հալաբայ կեազ (կանդուն): 2) Հ·393՝ հարիւր: 3) Հ·393՝ երեք տարեկան, Լ·45՝ երեք ամսական: 4) Ց·52՝ եօթ շէմբ, Լ·45՝ երեք շէմբ:

Իրենց ցեղի չափին նըման Գերեզման մը չըկա՛յ հոն.
— «Ինամի՛,–ըսաւ Ջէնով–Օհան–, Դուն Մեզ ինչո՞ւ կըխաբես...
Իմ Թոռ ևթէ երեք տարու է մեռեր՝
Անոր Դամբան՝ Եռսո՛ւն Կանգուն սլիտի ըլլար, օրէնքով.—
Եռսուն–Կանգուն Գերեզման մը չըկա՛յ այս Ձեր Գերեզմնոց...,
Ինչո՞ւ Դուն Ձիս կըխաբես...»:
= «Ինամի՛,–ըսաւ–, սուտ չե՛մ ըսեր. մեռե՛ր է...»:
— «Ես գիտե՛մ որ Ան չ'է՛ մեռեր..., Դո՛ւն չես տար...,
Այս Քաղքըցու մեղք մի՛ քաշեր, Թագաւո՛ր...,
Ո՛ւր է՝ Մըհէր, տո՛ւր Մեր Տըղան՝ Մենք տանի՛նք...»:
= «Սուտ չե՛մ ըսեր...», — պնդեց նորէն Թագաւոր:
Ջէնով–Օհան՝ ճարը հատած՝ դարձաւ այնտեղ ի՞նչ ըսաւ,—
— «Ես կըպօռա՛մ հիմա,–ըսաւ–, մեղքը կ'իյնայ Քո ձիտին *),—
Ի՛նչքան ծանր–ոտք *) կընիկ որ կայ՝ անցո՛ւցք *) կ'ընեն իմ ձայնէն.
Ի՛նչքան Հալւոր կայ Ձեր Քաղաք՝ կըմեռնին... .
Ի՛նչքան Գառաւ կայ Ձեր Քաղաք՝ կըմեռնին... .
Ի՛նչքան Մատակ *) կայ Գոմի մէջ՝ կըձագոտի՛ *) Իրեն տեղ... .
Ի՛նչքան Կով կայ՝ կըհորթկըտի՛ *) Իրեն տեղ... .
Ի՛նչքան Ձի կայ՝ կըջուկըտի *) վեր՝–Մըսրին *)... .
Արի՝ Ատոնց մեղքին տակը մի՛ մըտներ...,—
Բե՛ր Մեր Թոռը՝ տուր տանի՛նք...»:—

826. «Մըհէ՛ր, Ո՞ւր Ես..., Գո՛ւրս Ելի՛ր...»

Տեսաւ որ չէ՛, Թագաւորը տալ չո՛ւզեր՝
Ջէնով–Օհան՝ եօ՛թը Գոմչու կաչին վրաթթեց իր Մէջքին,
Որ Իր փորը՝ ձայնին ուժէն չըպատռի...,
Բընաւով *) ալ՝ ամուր կապեց–կապկըպեց,
Եւ Իր ձայնով՝ մէկ պօռա՛ց...,—
— «Մըհէ՛ր..., ո՞ւր ե՛ս...,

---

*) Ճիտ, Վիզ: *) Ծանր–Ոտ, Ծղի: *) Անցուցք, Վիժում: *) Մատակ, Էգ–գոմէշ: *) Ձագոտիլ, Ձագը վիժել: *) Հորթկտիլ, Հորթիկը վիժել: *) Գուռկտիլ, Գուռակը վիժել: *) Վեր–Մըսրին, Մսուրին վրայ, խոտ կերած տեղը:
*) Բնաւտա, Գուբանի հատած չղթայ:

Դաւիթի՛ լաճ Մըհէ՛ր, ո՞ւր ես..., դո՛ւրս ելիր...»:

Օհանէ ձայն՝ քառասուն աւուր•ճամբա՛յ կ'երթար, երբ պօռաց...,
Պօռալո՛ւն պէս՝ ձայնը լինկաւ Մըհէրիկի Ականջին...:
Մըհէ՛րն ըսես՝ եօ՛թ Դուռով ներս՝ խոր Մառանի մէջ պահած,
Իբրեւ վըրայ Պահապաննե՛ր են դըրած,
Դափ ու Շեփոր զարնել կուտան՝ որ չըլըսէ՛ Ծեղին ձայն...:
Մըհէր լըսեց ու ճանչըցա՛ւ Իր Հօրեղբօր դոռուն ձայն,—
*— «Սո՛ւս,–ըսաւ–, սո՛ւս *), Իմ Հօրեղբօր ձա՛յնն է աս...»:*
Եւ ըրա՛ւ որ՝ պիտի ելնէր վազէր դո՛ւրս...՝
*Ջոջիկն *) Իրեն ի՞նչ ըսաւ,—*
= «Ա՛ռ Քու Ծեղին ձայնը չ'է՛...,
Ձիժե՛րն են ու Թըմբուկնե՛րը..., Անոնց ձայնն է՝ Դուն կ'առնես...
Մեռնի՝ Մեր տեղ՝ նըւազո՛վ է որ կըտանին կըթաղեն... ‡).
Քու Հօրեղբայրն ո՛ւր է, Հոգի՛ս..., վեց ամիս զա՛տն է Մենէ...»:
Ջէնով–Օհան նորէ՛ն դարձաւ ու պօռաց,—
— «Մըհէ՛ր, արի՛..., Դաւի՛թի Տըղայ՝ Մըհէ՛ր, արի դո՛ւրս ելի՛ր....
Քու Հայր՝ Դաւիթ՝ ըսպաննե՛ր են..., արի երթանք՝ վըրէ՛ժն ա՛ռ»:

ՏԶՁ. Պապը Նորէն Կ'ծածկէ Մըհէրը

Ջէնով–Օհան այնպէ՛ս դոռուն, զարմանելի՛ ձայն ունէր՝
Որ երբ պօռաց՝ Գատ ու Գարխոյ՝ ձայնին առաջ խըրուեցա՛ն...,
Ու Մըհէրի Գահարանին 1) Գատն ալ՝ իր տեղ՝ խըրուեցա՛...:—
Մըհէր՝ Մօրէն ինչ ծըներ էր ու ելեր՝
Բիւրեղ–Գատով Սենեակի մէ՛ջ էր մեծցեր,
Լուս–Արեւը չատ չէ՛ր տեսեր Իր Աչքով...:—
Բանտին Գատը որ խըրեցաւ, տեսաւ Արեւ ցաքեց ներս՝
Ու Հօրեղբօր ձայնը լըսեց՝ զ'ինչ կըկանչէ՛ անունով...,—
— «Գապի՛կ 2),–ըսաւ–, ասի Ձի՛ս է կըկանչե՛ն...,
Աստուա՛ծ վըկայ...՝ Իմ Հօրեղբօր ձա՛յնն է աս...»:
*= «Ոդէ՛, Մըհէ՛ր,–ըսաւ Գապիկ, կապուտ–Բերդի Իր Քեռհայր *)–,*

---

*) Սուս (ը՛սս) ումնճյնքն. Լո՛ւռ կաց(էք): *) Ջոջիկ, Պապ:
‡) Հմմտ.՝ Կանաչ–Քաղքի Թագաւորի Աղջկան պարագան՝ Հատ. 55:
1) Հասկնալ՝ գետնափոր բանտ, արգելոց: 2) Հ·394՝ Օղոն–Տօղոն թագաւորին (սխալով): *) Քեռհայր, Մօրեղբօր հայր, պապ՝ (մօր կողմէ):

Մենք Մեր սիրոյն համա՛ր է որ Քեզ այստե՛ղը բերեր ենք...,
Դուրս չե՛նք հաներ, Քեզ փափկութեան մէջ կըպահենք ամեն օր·
Մենք քանի որ Տըղայ չ'ունի՛նք, բան չունի՛նք՝
Դուն Մեր Թոռն ես, Քեզնէ՛ կ'առնենք Մեր վախճաք...:
Դուրսը՝ Արև, աստուր), լո՛յս կայ, Մա՛րդ կայ Քաղաք, ամեն կողմ,*
Հաղա՛ր Մըհէր, հաղա՛ր Դաւիթ կայ՝ Աչխարհ...,—
*Մինակ Դո՞ւն ես Մըհէր անուր *) ու Դաւիթի ալ զաւակ... .*
Ճիժե՛րն են՝ դուրս՝ կըպօռպըռան կըկանչեն...,—
Քու Հօրեղբայր ուսկի՞ց եկաւ այստեղեր...»:

828. Զէնով-Օհան Նորէն Կ'ձայնէ՝ «Մըհէ՛ր, Դո՛ւրս Եկուր»

Զըրո՞յցն ուրկէ..., — զըրոյցը տանք Քաղաքէ՛ն.—
Քաղաքացին ելաւ եկաւ Թագաւորին դանդըտու՛ր,—
—«Ապրա՛ծ կենաս, Տէր-Թագաւո՛ր, այդ ի՞նչ հանիր Մեր գըլուխ...,
*Ինչ Պառա՛ւն *) է՝ Պառաւ 1) մեռա՛ւ...,*
Ինչ Հալտո՛րն 1) է՝ Հալտոր մեռա՛ւ...,
Ան ինչ Տըղով-Կընիկնե՛րն են՝ երախաներ վիժեցի՛ն...,
Ինչ Մատա՛կն 1) էր՝ ձագտուեցա՛ւ...,
Ինչ Կովե՛րն են՝ հորթկըտեցա՛ն...,
Ձիերն ամեն քուռկըտեցա՛ն...»:
Զէնով-Օհան ալ ի՞նչ ըսաւ այդ Մարդոց.—
= «Գանգատի՛ք ու չըգանգատիք...՝ այս մէկ Բերա՛նն է մնացեր,
Մէկ անգա՛մ ալ պիտի պօռամ Մեր Տըղուն...»:
Զէնով-Օհան՝ մէ՛կ ալ պօռաց Իր ձայնով...,—
Մըհէր մէ՛կ ալ՝ Իր Հօրեղբօր ձայնը առաւ՝ որ կ'ըսէր,—
— «Մըհէ՛ր, Մըհէ՛ր, Դաւի՛թի Որդի, Դու Մըհէ՛ր...,
Խանդո՛ւտ-Խաթուն՝ Մո՛րդ անուն...,
Կապո՛ւտ-Բերդի Թագաւորի Թո՛ռ Մըհէ՛ր...,
Քե՛զ կըկանչեմ..., չե՞ս լըսեր...:—

---

*) Աստուր, կեանք, խնծիղ: *) Անուր, Անունաւոր, անունով, (Մհէր) կոչուող:

*) Պառաւ, Միջին տարիքի կին, նաեւ ալեւոր կին· հոս՝ յոքնակի (պառաւներ): 1-1) Պառաւներ, Հալտորներ, մատակներ (բացատրութիւնները՝ Հատ· 825ա·):

Քու Հայր Դաւիթ՝ ըսպանե՛ր են..., Սասմանց–Ճըրաղ մարե՛ր է...,
*Փոխը *) Գնա՛ն է մնացեր...,*
Չի՞ս զար Երթանք՝ վըրէժն առնենք, ա՛յ Մըհէր...:
*Չէ՞ որ Դո՛ւն ալ Սասմանց–Տունէ Խոյերէն *) ես Քո Ցեղով,*
Ջոջանց Մեծ Տան՝ Խոյի Դա՛ռն ես, ե՛կ գո՛ւրս ե՛լ...»:

829. Մբեէր՝ Նօր Դուռ Ջարդելով՝ Դուրս Կ'ելնէ

Հօրեղբայրը մէկ անգա՛մ ալ որ պօռաց,
Ձայնը եկաւ հասաւ մինչեւ Մըհէրին՝
*Թըմբուկ–ղարնող, փող–փըչողներ՝ ա՛լ աւելի սըրեցին... *),*
Մըհէրն ըսաւ, — «Առոնց ձայնը կըտրեցե՛ք...,
Ա՛ռ Իմ Ցեղի ձա՛յնն է եկաւ՝ Ականջիս...»:
Փող ու Թըմբուկ՝ առաջըննէ ա՛լ աւելի գոռացին...:—
Մըհէր այլեւս չըկեցա՛ւ...,—
*Թըմբկահարը փողահարի՛ Գըլխուն տըփեց *) ու անցաւ...,*
*Մէկը Միւսի Գըլխո՛ւն զարկաւ՝ ու հոլընդեց *) դէսուդէ՛ն...,*
Իր տարիքին՝ ի՛նչ Տըղայ որ ձա՛նկը ինկաւ՝ տըփեց Պա՛տ,
*Դուռը քաշեց՝ ու ծըղնեհան *) գո՛ւրս բերաւ...,*
Զարկաւ փըչրե՛ց Ոտքին տակ,
Դուռով՝ միւս Դո՛ւռը կոտրեց ու անցաւ:—
Աքացիով՝ առջի Դուռին որ զարկաւ՝
Անիկ առաւ Մէկալի՛ն, Մէկա՛լ Դուռը Մէկալի՛ն,—
Եօ՛թը Դուռն ալ՝ Ջարդեց–փըչրեց՝ ելաւ գո՛ւրս...:—
*Իր Աչքն ըսես՝ Լուսնի նըման բա՛ց *) տըւաւ...,*
*Եօթ տարեկան Գոմէշի պէս լեցուեցաւ... *),*
Ու նետուեցաւ դէպ առա՛ջ:—
Հասաւ դըրկե՛ց Իր Հօրեղբայրն ու Թորոս,—
Այնպէ՛ս ամուր բռնեց դըրկե՛ց Թորոսիկ՝

---

*) Փոխ, Փոխվրէժ: *) Խոյ, Արու եւ յատկապէս խոշոր եղ–ջիւրներով ու դուլպարող ոչխար: *) Սրել, Սուր ու բարձր հնչեցը–նել: *) Տփել, Զարնել, Նետել: *) Հոլընդել, Հոլի, գնդակի պէս՝ գլորել, տապալել: *) Ծղնեհան, Մղնիով մէկուեղ հանուած: *) Բակ տալ, Լոյսի մեծ ծիրով չորցալ: *) Լեցուիլ, Ուժգնին ճիգով ամբարուիլ (առաջ նետուելու):

*Որ կողերը կըպան իրա՛ր, լալկըւեցա՛ւ *) իր Լեզուն...:*
Բերին Պորտը ոլորեցի՛ն, ու Ջո՛ւր գարկին երեսին...,
Աչքը բացաւ Քեռի–Թորոս, ու Մըհէրի՛ն նայեցաւ,—
—«Թող ո՛չ ու վո՛ւճ ըլլայ,–ըսաւ–, Քեզ պէս Տըղայ ու ծառանդ...»:
= «Ինչո՞ւ համար...»,–ըսաւ Պապը զարմացած:
*— «Իմ Կողրանքը *),–ըսաւ Թորոս–, ճըխթեց Ջարդե՛ց այս Տըղան»:*
= «Ե՞ս ապա ի՛նչ ընեմ...,–ըսաւ խեղճ Պապն ալ–,
Իմ վե՛ց Տըղա՛ք ն է Ջարդեր...»:
— «Է՛հ, Քո՛ւն է...»,–ըսաւ Օհան՝ Իր կողմէն:
= «Հայրը՝ Աթիկ Ինձի՛ տըւաւ՝ Իմ վե՛ց Ջաւիկի փոխարէ՛ն,
Եկար հիմա՝ Դուն Իմ Ձեռքէն կըխըլե՛ս... .—
Որդի՛, Մըհէ՛ր, Իմ Աղ ու Հաց՝ Քեզի արդա՛ր կ'ընեմ ես...»:

830. Մըհէր Կ'աղրայ Իր Հօր Մահը

Հօրեղբայրներ՝ առին Մըհէր՝ դո՛ւրս ելան,
Մըհէր տեսաւ Իր Զարմիկներ՝ Ամեն մէկուեղ՝ եկե՛ր են,
Իր Հայր Դաւիթ չէ՛ եկած...,—
— «Մո՞ւր է Իմ Հայր..., ո՞վ ըսպաննեց...»,–ըսաւ հոն:
Երբ իմացաւ որ Սըլաթցի՛ք են ըսպաններ Իրեն Հայր...՝
Լացա՛ւ, ինկաւ Քիթ–Բերնի վրա՛յ, Արցո՛ւնք Թափեց ու լացա՛ւ...:
Հօրեղբայրներ՝ եկան վըրա՛ն Թափեցան...,
Ի՛նչ որ ըրին՝ չկըրցա՛ն գ'ինք չըտկէին 1)...:—
Անոր Արցունք՝ Գետին փորե՛ց, Առո՛ւ ըրաւ՝ ու գընա՛ց...:
*Մըհէր այնտեղ՝ երե՛ք գիշեր ու երե՛ք օր՝ լա՛ց իլաց *)... 2):—*

831. Դաւիթի Մահէն Ճեռոյ՝ Գլուխ Վերցնողները

Երեք օրը երբ լըրացաւ՝ Մըհէր ելաւ նըստեցաւ:
Ձինով–Օհան վերցուց ըսա՛ւ Տըղային,—
— «Որդի՛, Մըհէ՛ր, Քո Հօր մահուան եառէն՝

---

*) Լալկուիլ, Բռնուիլ, համր կորիլ, լալու չափ ցաւ զգալ:
*) Կողրանիք, Կող(ոսկր)եր:

1) Այսինքն՝ դարձնէին կռնակին վրայ: *) Իլաց (գրբր.՝ եւլաց), Լացաւ: 2) Գարսիկ դիւցազնավէպին մէջ՝ հա՛յրն է որ երեք օր կ'ողբայ իր տղուն մահուան վրայ:

Կուշ–Բադինի Տըղաները կըտըրճացեր ելե՛ր են,
Եկեր Սասմայ Քաղքի վէ՛ճը կըհանեն…։
Շարէ–Արքան ալ՝ Իր կողմէ՝ Գըլո՛ւխ բըռներ՝ Հո՛ղ կ՚ուզէ…
Ու դեռ Քուլիկ, Կուշ–Դեւ, Պաճիկ, աս ու ան…՝
Մէյմէկ կողմէ՝ կըռի՛ւ կ՚ուղեն Սասունէն…։
Ես չե՛մ կըրնար…, Իմ ուժն այլեւս չի՛ յաղթեր…,—
Քեզ կանչեցի՝ որ դաս ու Դո՛ւն առնես Քու Հօր փոխ–վըրէժ…»։
Ա՛լ Մըհէրին այնպէ՛ս եկաւ՝ թէ Հօր Մարմի՛ն կըտեսնէ…,
Եւ Արիւնը՝ Դիակին տեղ՝ ե՛ռ կուգայ… 1)·
Ան ալ վերցուց լո՛ւռ ըսաւ.—
— «Է՛ Երկնայի–Տէ՛ր…,–ըսաւ–,
Ալ ի՛նչքան որ էպեղէն ու Որճեղէ՛ն կայ այդ Երկիր…՝
Շըմչիկ–Տիկնոջ Ցեղն ալ մէկտեղ՝ Ես բըրդե՛մ…,
Ապա՛ նոր Իմ Հօր Արիւնը դաղարի… 1)·
Է՛ Հօրեղբայր, Հաց ու Գինին, Տէ՛ր–Կենդանին,
*Ելնեմ սիրտ ասկէ բըրդեմ՝ ու երթա՛մ… *)»։—*

838. Մըհէր՝ Իր Գուրգին Է Վստահեր Քաղաքը

Զէյնով–Օհան հարցուց այնտեղ Մըհէրին,—
— «Ինչո՞վ,–ըսաւ–, սիրտ բըրդես այդ ամեն…»։
= «Ասկէ՝ մէկ Գուրզ առնեմ՝ բըրդեմ ու երթա՛մ…։—
*Իմ Գուրզ,–ըսաւ–, Գուրջիստանէն ինչ *) ելայ՝*
Գուռիս առջե՛ւ դըրի՝ ըսի՛ Իմ Կընկան,—
«Թըշնամիներ երբ դան տեսնեն՝ Գուրզը դըրած է Դըրան՝
Քեզ նեղութիւն չե՛ն տար, կ՚ըսեն՝ «Մըհէրը Տուն քընա՛ծ է»…»։
Ապա դարձաւ՝ ձայնով ըսաւ Հօրեղբօր,—

1–1) Եռ գալ, *եռալ*· Ե·930՝ (*Մհէր*) կ՚ելնէ կ՚երթայ կուռ տեղը, կ՚երթայ հօր դիակին վրայ, արիւն կ՚եռա՛յ տեղը։ *Եւ ոճրագործներն սպանելէն յետոյ՝ «Կ՚նայի՛ տեղը արիւն էլմէկ կ՚եռայ…»* (*վերջին մնացորդ պատուան ալ կ՚սպանէ*)՝ *արիւնը կ՚հանդարտի*· — *վրէժը լուծուած էր…։ Հմմտ*·՝ Ցէրաճ–Թուրաճի՝ (համար 59) նոյն ձեւի *միջադէպին՝* «արիւն կումկում–վէ կ՚եռայ»։ *) Երթալ, *Առաջ տանիլ* (*ջարդը*), *շարունակել* (*մինչեւ յետին կէտ*)։

*) Ինչ, *ինչ առեն որ*։

= «Հայրաիո՜տ Հօրեղբա՛յր, հայրաիո՜տ Հօրեղբա՛յր 1),
Իմ թագաւորութիւն՝ Գետի՛ն եմ դըրեր,
Ջաղաքն իմ Գուրգի՛ն եմ վըստահեր...,
Գուրջի–Աղջըկան՝ իմ Գո՛ւրգն եմ յանձներ...»:

Հօրեղբայրը՝ Ջէնով–Օհան՝ ի՞նչ ըրաւ.—
Վազեց դընաց՝ Մըհէրիկի Գըլուխ պաղեց ու ըսաւ.—
— Ելո՛ղ՛,–ըսաւ–, ի՞նչպէս Քո Գուրգ վըստահեր ես Աղջըկայ մ՛,
Քո Գետուքին Թողեր՝ ելեր եկեր ես...»:
= «Ես այնպէ՛ս եմ ելեր–եկեր,–ըսաւ Մըհէր՝ Օհանին–,
Որ մէ՛կ՝ Աստուած եւ Իր Հրեշտա՛կ Իմ մեկնելէն լուր ունին»:
— «Քո Գուրգը որ դըրեր ես Դուռ, նըշա՞ն ի՞նչ է, Մըհէրի՛կ»:
= «Գոհար–Քարեր երեսի՛ն են, Արեւի տակ՝ լո՛յս կուտայ...,
Մարդ չի՛ իշխեր՝ դայ Իմ Դուռը վընաս տայ...
Իրիկուն ալ՝ Մեղրէ–Մոմեր Գուրգին վըրայ կըվառի՛ն...,
Իմ Ծանրիկ–Գուրգ՝ Արեւի պէս լո՛յս կուտայ...,—
Մա՛րդ չի՛ իշխեր՝ քըշէ ու դայ Իմ վըրայ...»:
— «Որ այդպէ՛ս է,–ըսաւ Օհան՝ Մըհէրին–,
Հազա՛ր բարո՛վ եկար, Որդի՛, շա՛տ ապրիս...,
Հիմա գիտե՛մ՝ Քու Հօր Դաւ՛թի տեղ կըբռնե՛ս լիովին.
Քեզի պէտք է՝ ասկէ յետոյ՝ Քո Հօր ամե՛ն Ջէն–ու–Ջարդ,
Թուր–կէծակին, Գուրզն ու Աղեղ, Նաչ–Փետրազին, Ոսկի–Թաղ...»:

888. Ջէնով-Օհանի Ցուցմունքները՝ Մըհէրին

— «Դէ՛, Հօրեղբայր,–ըսաւ Մըհէր, անհամբեր–,
Ի՞նչպէս ընենք..., երթանք բերե՛նք այդ ամեն...»:
= «Որդի՛,–ըսաւ–, այդպէս չ՛ը՛լլար, կարգ–ու–օրէ՛նք կայ անոր.—
Սասուն հասնինք, կ՛առնենք քըսան անծին Երինջ՝ կըտանինք,
Մարութայ–Բարձր–Ասպարածին կըհանենք,
Ժողովուրդով, Քահանայով՝ կ՛ընենք այնտեղ Մաս–Մատա՛ղ,
Նոր Քու վըրայ Սուրբ–Նըշանի Դուռը բացուի ու մըտնես՝
Առաջ Թագը Գըլխի՛դ դընես, Գօտին կապես Քու Մէջքի՛դ,
Թուր–կէծակին կախես Կողի՛դ, Նաչ–Փետրազին Ձի՛–Թեւի՛դ,
Հըմայեկն ալ՝ դընես Ծո՛ցդ, Մոյկեր քաշես Ոտքերո՛ւդ,

1) Երգով:

Ֆու Հօր Դուրդը՝ Ձեռքի՛դ բըռնես, հեծնե՛ս Ֆուռկիկ–Ջալալին,
Նոր այն առեն՝ Դուն կըղառնաս Կըարի՛ճ–Մարդ 1),
Կ՚երթաս Կըռի՛ւ, Ֆո Թըշնամին կըբըրդես...»:
Մըհէր՝ այնտեղ՝ վերջուց ըսա՛ւ՝ երգելով.—

— «Աչէ՛ի՛կ, Դու կուրնայի՛ր..., տըղայ–տըղայ *) չըորբանայի՛ր...,
Խընդանայի՛ր վեր՚–Ֆու Հօր Գըլխու–Գուդիկին...:
Աչէ՛ի՛կ, Դու կուրնայի՛ր..., տըղայ–տըղայ չըորբանայի՛ր...,
Խընդանայի՛ր վեր՚–Ֆու Հօր Ոսկի–Գօտիին...:
Աչէ՛ի՛կ, Դու կուրնայի՛ր..., տըղայ–տըղայ չըորբանայի՛ր...,
Խընդանայի՛ր վեր՚–Ֆու Հօր Զրեհէ–Շապիկին...:
Աչէ՛ի՛կ, Դու կուրնայի՛ր..., տըղայ–տըղայ չըորբանայի՛ր...,
Խընդանայի՛ր վեր՚–Ֆու Հօր Կէծակէ–Թուրին...:
Աչէ՛ի՛կ, Դու կուրնայի՛ր..., տըղայ–տըղայ չըորբանայի՛ր...,
Խընդանայի՛ր վեր՚–Ֆու Հօր Ծանտըրիկ–Դորգին...:
Աչէ՛ի՛կ, Դու կուրնայի՛ր..., տըղայ–տըղայ չըորբանայի՛ր...,
Խընդանայի՛ր վեր՚–Ֆու Հօր Ոտի–Մոյկերուն...:
Աչէ՛ի՛կ, Դու կուրնայի՛ր..., տըղայ–տըղայ չըորբանայի՛ր...,
Խընդանայի՛ր վեր՚–Ֆու Հօր Ֆուռկիկ–Ջալալիին...» 2):

834. Մրեէր կ՚օծեն Թագաւոր՝ Իր Հօրը Տեղ

Առին Մըհէր՝ ելան եկան Սասմանց–Տուն,
Առին քըսան անձի՛ն երինջ՝ մատաղցու,
Ֆահանայով, Վարդապետով, Ժողովուրդո՛վ միասին,
Տարան Մըհէր՝ ու մեծ չըքով՝ Մարութեայ–Վանք վե՛ր ելան,
[Ձեր ամենո՛ւդ փափաքներուն տայ լըրո՛ւմ...]
Երինջները մատա՛ղ ըրին, ժամ–Պատարա՛գ մատուցին,
Սուրբ–Ընշանի Դուռը այնտեղ բացուեցա՛ւ,—
Մըհէր՝ ինկած Ծունկի վըրայ՝ առաջացաւ մինչ՝ Խորան,
Երեք անգամ գըլուխ ծըռեց՝ ու համբուրե՛ց Սուրբ–Ընշան,
Թագը բերին՝ Գլուխ դըրաւ, Գլուխ մեծ է՝ չի՛ մտաներ...,
Գօտին կապեց Իրեն Մէջքին՝ ծայրը ծայրին չի՛ հասնիր...,

---

1) *Իր հօրը սէկս*, Տես Հատ. 569: *) Տղայ–տղայ, *Տղայ տարիքի մէջ*, դեռ չատ փոքր: 2) Նախորդ (Թ.–Դաւիթի) ձիւղին մէջ՝ սովորաբար Զէյնով–Օհանի բերնով է որ կ՚երգուին երգերը:

Թուր–Կէնճակին, Խաչ–Փետրազին՝ պըղտի՛կ եկան Հասակին...,
Մոյկերուն մէ՛չ կըկոխէ Ոտք՝ չի՛ մըտներ...,
Գուրգը վերցուց՝ Իրեն Թեւին Թեթե՛ւ է...,—
Ան ալ վերցուց, — «Է՛ Հօրեղբայր,–ըսաւ–, աս ի՞նչ ընեմ ես,—
Թագն Իմ Գըլուխ չի՛ մըտներ..., Գօտին Մէջքիս կա՛րճ կուգայ...,
Թուրն ու Կապարճ պըղտիկ են..., Մոյկերը Ոտքս չե՛ն մըտներ...,
Գուրգն ալ ըսես՝ քառասո՛ւն լիտրը Արճի՛ճ հալեն Թափեն մէջ՝
Նոր Իմ Զեռքիս՝ Տըղամարդու Գո՛րգ կ'ըլլայ...» 1):
= «Որդի՛,–ըսաւ Քեռի–Թորոս՝ անդիէն–,
Փըճանա՛ս Դու..., ինչ Քեզ տեսեր՝ զարմացեր եմ ու կեցե՛ր...,
Քո քամի՛ն ալ կըբաւէ որ՝ Մեզ դըլորէ՛ Իր առջե՛ւ...,
Սասմանց–Տունի Խոյը Դո՛ւ ես մընացեր...»:
Զէնով–Օհան ալ՝ Իր կողմէն ի՞նչ ըսաւ,—
— «Որդի՛, Մըհե՛ր, ի՛նչ որ պէտք է Քեզ համար՝
Ալ Ես կըրնա՞մ խընայել...»:
Եւ Իր Զեռքը տըւաւ Գետի՛ն 2)՝ չըտկըւեցաւ ու ըսաւ.—
— «Փա՛ռք Աստծու... 3), որ Նորէն՝
Մեր Սասմանց–Տան՝ Ժառա՛նգ մ' ելաւ, այսպէս քա՛ջ...»:—

825. Մըհէրի «Ողորմի»ն

*Մըհե՛ր ելաւ՝ Իր Հօր Հոգին Հոգա՛ց *) այնտեղ ու կանչեց, — 1)*
— «Օրհնեա՛լ, բարերա՛ր Աստուած, խընամքը շա՛տ էր
[Մեծ–Թագաւորին,
Դառնամ «Ողորմի»ն կուտամ՝ Իմ Հէ՛րիկ *) Դաւթին,
Որ Ձիս պըսակեց՝ Մա՛րդ եղայ վեր'–Աշխըրհին.
Ու շատ խելքե՛ր ալ տարվեցուց Ինձի.
Ես Ակռջ չըրի՛ Իմ Հօր խօսքերուն...:
Դառնամ «Ողորմի»ն կուտամ Իմ Մէ՛րիկ Խանդուտ–Խաթունին,

---

1) *Մինչդեռ՝ իր հօրը մեծ կուգային հայրենի Ձէն–ու–Ձարդերը* (*Հատ.* 561): 2) *Այսինքն՝* երկրպագելու պէս ըրաւ: 3) Ե·522՝ *փա՛ռք Իմ Աստըծուց, ինչպէս ժողովրդի բերնին մէջ յաճախ լսուած՝ «փառք Եմ քենէ Աստուածը»:*

*) Հոգին հոգալ, *Հոգեհանգիստ կատարել–տալ՝ ու մատաղ բաժանել:* 1) *Երգով:* *) Հէրիկ, *Հայրիկ, Հայր՝ փղձկն.:*

Եօթ ամիս խըճամեց Ձիս՝ վեր՛-Իր էա՛ղգր Սըրտին···:
Ողորմին կուտամ Ձոջի՛կ Սասմանց-Տան՝ Մեծին ու Պզտկին»:

826. Մբիէր Եւ Քուռկիկ-Ձալալին

Ելան ապա կարդադրեցի՛ն Ձէն-ու-Ձարդեր՝ մէկ առ մէկ,
Դաւ՛Թի-Տըղայ Մըհէրիկի Անճէին վըրայ ճեւեցին:—
Մըհէր ելաւ հագա՛ւ Իր Հօր Ձէն-ու-Ձըրահ՝ լայնցուցած,
Քուռկիկ-Ձալալ Ձին քաշեցին ու բերին,
Քևռի-Թորոս բըռնե՛ց Գրլուխ, Թուրը կախեց Գօտիէն,
Մըհէր Քըռաւ՝ ելաւ հնծաւ՝ հրեղէն Քուռկիկ-Ձալալին:
Ձին խըրխընջա՛ց···, Բաշեր տընկեց՝ ու ըսաւ·—
— «Տըղա՛յ,—ըսաւ—, ի՞նչ ուժ ունիս՝ ցտակես նըստիս Իմ Քամակ···
Քի՞զ է ինկեր՝ որ Քուն եղնես՝ Ձիս հեծնաս···»:
= «Քուռկի՛կ-Ձալալ,—ըսաւ Մըհէր—, անդրադարձութիւն *) մի՛ ըներ,
Ես ալ Սասմանց-Խոյերէ՛ն եմ···, Թըլը-Դաւ՛Թի Լաճ՝ Մըհէ՛ր···»:
Քուռկիկ-Ձալալ Ձին ալ վերցուց ի՞նչ ըսաւ·—
— «Այդ մէ՛կ խօսքին ու Դաւ՛Թի սէրո՛յն համար՝ Քեզ Ձի՛ եմ···
*Ձիս կըհեծնես՝ նայէ՛ որ Ձիս լա՛ւ տիրես··· *)»:*

827. Մբիէր Իր Թուրը Կ'փորձէ Ծառի Վրայ

Մըհէրի՛կն էր···, — տեսաւ Բարդին՝ հոն կայնուկ,—
— «Քևռի-Թորո՛ս,—ձայնեց Ան ալ—, Ես դեռ կըռիւ ըրած չե՛մ···,
Առաջ այս Ծա՛ռ կ'ուզեմ փորձել Իմ Թըրով,
Թէ Իմ Թուրը կըտրե՛ց այս Ծառ՝ ու ձըղեց՝
Կանաչի՛ Մէջքն ու Քամակը՝ Իմ Հօր-Մօր··· .
Թէ չըկըտրեց···՝ չորանա՛յ···»:
Թուրը նետե՛ց···, — Թո՛ւր-կէծակին···, Ծառն Իր կէսէն կըտրեցաւ,
Կանգո՛ւն մընաց Իր Արմատի մասի՛ն վրայ···,—
—«Իմ Հօր Մէ՛ջքն ալ կտրի՛ր,—ըսաւ—, Մօրըս Մէ՛ջքն ալ հաւասար···,
Թուր չըկըտրե՛ց Բարդի-Ծառ···»:
Մէյ մ' ալ՝ Քամին՝ Արաբատէն 1) փըչեց զարկաւ՝ Ծառ չըրջե՛ց:

---

*) Անդրադարձութիւն, *Անարդար չհամութիւն*: *) Տիրել, *Ինամել*, տիրութիւն ընել:

1) *Փոփոխակի մը մէջ՝ Ցարտտայ Քամին*:

Ծառ որ ինկաւ՝ Մըհէր Աստծուն փա՛ռք տըւաւ,—
Ըսաւ,— «Իմ Հօր Մէջք կանայէ՛ ..., Մօրըս Մէջքն ալ հաւասա՛ր» 2):
Ու Ձին քըշեց դէպ կըռի՛ւ ..., — ինկաւ Աչխա՛րհ՝ ջարդելու ...,
Ալ չի՛ նայիր թաց ու չոր ...:—

Բ. ՄԸՀԷՐԻ ԲԱՋԱԿՈՐԾՈՒԹԻՒՆԵՐԸ

888. «Սասմանց-Ցաւ Խոյերէն...»

Մըհէրն ելաւ՝ ինկաւ ճամբայ՝ դէպ Խըլաթ:
Հօրեղբայրը իր առջեւէն, կ'երթան Շըմշիկ–Տիկնոջ Հող,—
Զէնով–Օհան վերցուց՝ ճամբան՝ ի՞նչ ըսաւ,—
— «Ես ի՞նչ ընեմ ..., Մըհէրիկը դեռ տըղա՛յ է անխմայ *),
Ես ալ ապա՛ծ ելայ եմ ..., կըռիւ չի՛ դար իմ Ձեռքէս ...»:
Հրեղէն Քուռկիկ–Ջալալի՛ն էր, — լեզո՛ւ ելաւ ու ըսաւ.—
= «Փարա՛խ *),—ըսաւ—, ի՞նչ կըվախնաս խզուրտեղ ...,
Ի՛նչքան անթիւ Զօրք ալ ըլլայ՝ չի՛ դիմանար Իմ առաջ ...:
Ինձի համար ի՛նչ է որ ...,—
Շունչի՛ս առջեւ, Պո՛չի՛ս առջեւ, Ոտքի՛ս տակ՝
Կըկոտորե՛մ Ես Բոլոր ...»:
Մըհէր Ինքն ալ՝ վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ.—
— «Ի՛ Հօրեղբայր, Մենք ալ Սասմանց–Տունէն չե՞նք ...,
Չէ՞ «Մենք Սասմանց–Տան Խոյերէ՛ն ենք» ըսիր ...:
Մենք երկրի վրայ մեռնի՛նք ալ ...՝
Մեր ցեղի Տան Գերեզմանին վրա՛յ անգամ՝
Թաւուրներ չե՛ն կըրնար գալ, կըվախնա՛ն ...,—
Ջըչէ՛ երթանք՝ Մենք Մեր կըռի՛ւն ընենք ալ ...»:—

889. Խլաթի-Պառաւը Ու Մըհէր

Գացին Խըլաթ, կըմօտենան Քաղաքին,—

---

2) Նման՝ իր մեծ–պապուն եւ իր հօրը (Հատ. 225, 601–604):
*) Անխմայ, Անխելահաս: *) Փարախ, Պատկառելի Ծերուկ:

*Մըհէր տեսաւ՝ թափո՛ւռ–թուփուռ *) Զօրքեր կ՚երթան դէպ Սասուն,*
Ամէնէն վերջ՝ կաղ–Պառաւ մ՚ալ՝ կուգայ ճամբուն մէջտեղէն,
*Մածունաթթախ *) Շերեփ Ձեռ,—*
Տաք–տաք Ապուր նո՛ր խառներ,
Շերեփ հաներ՝ դուրը կ՚ելնէ՛ Շերեփէն···:
Մըհէրն ըսաւ, — «Պառա՛ւ,–ըսաւ–, այդ ո՞ւր կ՚երթաս ըշտապով···»:
= «Ո՛ւր կ՚երթամ ե՛ս···,–ըսաւ Պառաւ կաղալէն–,
Լըսեցի որ Դաւ՚թի–Տըղան եկե՛ր է,
*«Երթամ,–ըսէ–, չուտով հանիմ այն Գըրոզիդ *) Մըհէրին,*
Քա՛նի Զօրքը դեռ չ՚է՛ հասեր՝ ըսպաներ,—
*Երկու Շերե՛փ տամ *) վեր՚–Գըլխին՝ ե՛ս ըսպանեմ իմ Ձեռքով,*
Որ իմ Սիրտը հովանա՛յ···,—
Դաւիթ մէկէ՛ն լարդեր է Իմ եօ՛թ Տըղաք 1)՝
Մըսրամէլ՚քի կըռիւ՛ն···»:
Մըհէրն ըսաւ, — «Աւե՛, Մամի՛կ, ե՛կ ինձ մօտ···,
Իմ Ականջներ ծանրացե՛ր են···, չե՛մ լըսեր···»:
Ըսա՛ւ Մըհէր՝ ու Ձեռ նետեց Պառաւին,
Բըռնեց դըրաւ Գետնի վրայ,
Մէկ Ոտ դըրաւ մէ՛կ Ոտին, մէկ Ձեռ նետեց մէկա՛լ Ոտ՝
*Քաշե՛ց ճըւտեց *)՝ քալեց Գետ···:—*

840. Խլաբէց Դաւիթի վրէժը կ՚առնեն

Երբոր հասան Քաղքին Դուռ՝
Մըհէր կանչեց, — «Հօ՛րեղբայրներ, ըսէ՛ք ինձ,—
Կ՚ուզէ՞ք երթաք դէպի Զօ՞րքը՝ քաշէք Սո՞ւր···՝
Թէ՞ չէ երթաք Քաղա՛քն աւրէք՝ մինչեւ տակ···»:
Հօրեղբայրներ՝ մըտածեցին՝ ի՞նչ ըսին,—
= «Դէպի Զօ՛րքը թէ երթանք···՝
Զօրքը չա՛տ է, Անոնց յաղթելն ուժէ վե՛ր··· .

---

*) Թափուռ–թուփուռ (*թափ եւ դուփ*), Զօրքերուն՝ ոտքը գետին զարնելով (*քալելու ձայնը*), դուխիւնով: *) Մածունաթթախ, Մածունով թաթխուած: *) Գրոզիդ, Այդ՝ գրողի արժանի: *) Տալ, թափով իջեցնել, զարնել: 1) Տե՛ս Հատ. 614: Խ·57՝ սխալով՝ Մըհէր–ն է սպանողը: *) Ճըւտել, ճիւերէն ճեղքել, ճուտաել:

Դէպի Քաղա՛ք թէ երթա՛նք...՝
*Քաղաք ծա՛նր *) է, Մենք չե՛նք կրընար աւերեր...»:*
— «Ամենմէկըդ,–ըսաւ Մըհէր–, երկո՛ւ Ինձ չա՛փ կըկըշռէք...,
Ես Ձեզ երկուսդ՝ մէ՛կ կողմ կըռա՛մ կըղըրկեմ,
Ես միւնակըս՝ մէ՛կ կողմ կ'երթամ, ու Ձեր Սըրտով չ'է՛ դեռեւս...»:
Հօրեղբայրները՝ թէ, = «Մենք կ'երթանք դէպ Քաղա՛ք...»:
Անոնք դացին դէպ Քաղա՛ք:—
Ձէնով–Օհան՝ հեծե՛ր-է Իր Սեւ–Լաղին,
Շըմշիկ–Տիկնոջ Քաղաքի՛ն մէ՛ջ է ինկեր,
*Կիսասպանել *) կ'ընէ կ'ձըգէ Թորոսին,—*
— «Որդի՛,–կ'ըսէ–, ես կէս կ'ընեմ՝ Դուն ալ հասիր՝ լըմընցո՛ւր»:
Ու ջարդեցի՛ն, կոտորեցի՛ն, հա՛ դացի՛ն...:—
— «Ա՛ս ի՛նչ անուշ բա՛ն է, Տըղա՛յ,–Օհան կ'ըսէ Թորոսին–.
*Դաւ'Թի փո՛խն *) է՝ իրաւունքով, — կ'ըսես Բանջա՛ր կըբըրդեմ...»:*
= «Դուն կըբըրդես,–ըսաւ Թորոս– 1), ես ալ Քենէ՛ կըսորվիմ,
Դաւ'Թի փո՛խն է..., ա՛լ աւելի կըբըրդե՛մ...»:
*Դարճան ապա՝ մըտան Ժամատուն *)՝ Դուռ դըրի՛ն,—*
Կընի՛կ, Տըղա՛յ, ա՛լ էդեղէն ու Որճեղէն չըԹողի՛ն...,
Ամե՛նն այնտեղ կոտորեցի՛ն ու բըրդեցի՛ն Հաւի պէս...:

841. Կ'սպանեն Կաթուն Ու Սուսամն-Դըմիճն Ալ

Մըհէ՛րն ըսես՝ քըշեց հասաւ Զօրքերուն,—
Թուրը քաշեց՝ ինկաւ մէջերն ու զարկա՛ւ...:—
Ալո՛ւ 1) զարկաւ, ձախո՛ւ 1) զարկաւ, կոտորե՛ց...,
Ոչ մեծ Թողուց, ոչ ալ պըղտիկ, ոչ էրիկ Մարդ, ոչ կընիկ,—
*Ամեն մէկտեղ՝ ջարդեց, փըռեց ու սալարկեց *) չոր Գետին.*
Զըմըշկիկի Զօրքին արմատ կըտրի՛ց՝ ու մէ՛կ չըԹողուց...,
*Ըսաւ, — «Օխէ՛ր... *), իմ Հօր Փոխը 2) ես առի՛...»:*

---

*) Մաեր, Մանրանիստ, մեծանիստ, դժուար գանդելի, անառիկ:
*) Կիսասպանել, կիսով սպանած: *) Փոխ, փոխարէժ: 1) Հ·395՝ Մըհէր, (եւ խօսակցութիւնը կ'անցնի Հօրեղբօր ու Մըհէրի մէջ, փոխան Քեռի-Թորոսի): *) Ժամատուն, եկեղեցի, տաճար, մեհեան:
1–1) Ալէն, ձախէն: *) Սալարկել, Սալաքարի նման փռել–տաբածել, սպանել–փռել: *) Օխէ՛ր, Սիրաս հանդարտեցո՛ւ, դոհացո՛յ: 2) Հ·395՝ Թօլ, (հմմտ. duel, duellum):

Ապա ըսաւ, — «Երթամ տեսնեմ՝ Հօրեղբայրնե՛րս ի՛նչ ըրին»։
*Գընաց տեսաւ՝ ֆաղաք–ֆաղքով աւերեր են ու սըրբեր *),*
Մընացեր է մէ՛կ կատու...,—
Ան ալ թըռեր՝ ու ելեր է Ծառի 3) ծա՛յր...,
*Հօրեղբայրներ դաղրած *)՝ այնտեղ՝ կընայի՛ն...։*
—. «Ի՞նչ կեցեր էք,–կանչեց Անոնց–, ողջ թողեր էք այդ կատուն,
*Շըմչիկ–Տիկին, իր Խըլաթցիք, կախարդ *) Մարդի՛կ են Ամենք,*
Կատո՛ւ կ'ըլլան, Աղուէ՛ս կ'ըլլան, կ'ըլլան Ոչխա՛ր, ամե՛ն բան...,
Ինչ՛ որ տեսնէք՝ ըսպաննեցէ՛ք, մի՛ թողուք...»։
*Ու Զեռ նետեց՝ Բարդի–Ծառը մըղեղախառ *) քաշեց դո՛ւրս,*
Նետի նըման՝ զարկաւ՝ կատուն վա՛ր բերաւ,
Ան ալ այնտե՛ղ ըսպաննեց...։—
— «Հօրըս Արիւն,–ըսաւ Մըհէր–, դեռ չ'է՛ դաղրած եռալէ...»։
Եաե՛ւ դարձաւ՝ նայեց որ ի՛նչ..., — մէկ Պառա՛ւ...։—
Մի՛ ըսե՛ր որ՝ հըմայք ընող Սուտտան–Գըմիժն է Ան ալ...,—
*Ջըրաղացի–Քարը Առչկա՛ն *) է չիներ՝*
*Թե՛լ կըմանէ սուտմանցիկ *)...։—*
Հասաւ բըռնեց, երկու կըտո՛ր ըրաւ Գըմիժ՝ ու ձըգեց...։—

848. Նեմրութ–Սարի Պառաւն Ալ...

Զարկաւ ապա՝ ելաւ Նեմրութ–Սարի Գլո՛ւխ,—
Վերէն նայեց ֆաղքին վըրայ, տեսաւ որ մէկ Ծո՛ւխ կ'ելնէ,
*Ոլո՛ր–ոլոր կըթուըրի *)՝ ինք իր վըրայ կըդառնայ...,—*
Վազեց իջաւ՝ գընաց տեսաւ՝ մէկ Պառաւ,
Նըստեր է հա՛ց կըթըխէ...,
*Մըծեր թաւեր վեր՝–Ուսերուն, ինչղ *) Շան–Լակատ՝ կըչարժի՛ն,—*

---

*) Սրբել, *Ամբողջովին հարթել*։ 3) Ե·54, Խ·58՝ միմապէի։
*) Դադրած, *Դաղար առած, կեցած*։ *) կախարդ, *Հմայող, խաբեբայ, դաւադիր (ակնարկութիւն՝ իր հայրը դաւադրաբար սպանելուն)*։ *) Մզեղախառ, *Արմատով*։ *) Առչկան, *Բուրդ մանելու պուչաւոր գործիք, րոք, քարման (Ե·53ս·)*։ *) Սուտմանցիկ, *Սուտ կերպով (որմէ իր անունը՝ Սուտտան Գմիժ)*։
*) Բալըրիլ, *Թանձրանալ, կուտակ–կուտակ բարձրանալ (ծուխի)*։
*) Ինչղ, *Ինչպէս, զերդ*։

Մըհէր՝ այդտեղ՝ այդ Պառաւէն վախեցա՛ւ...,—
Ըսաւ՝ «Եթէ դաղտնի հասնիմ՝ բըռնե՛մ Աստը Մինձերէն՝
Ու՛ղց կըդառնայ՝ եւ իմ Սըրտիս մէ՛չ կ'իյնայ... .
Թէ իմա՛ց տամ՝ վախնամ Աւի Զիս յաղթէ՛...»—
Ան ալ՝ դողդուղ՝ Քամկի՛ դեհէն՝ Ձեռ Թալեց՝
Այդ Պառաւի Մինձեր բըռնեց ու քամե՛ց...,
Սեւ–Աբընջուր՝ բըխա՛ց Աստը Մինձերէն...:
Պառաւն այնտեղ ի՞նչ ըսաւ.—
— «Ա՛խ,–ըսաւ–, ես իմացեր եմ՝ ըսպանե՛ր են այդ Դաւիթ...,
Ասի Դաւի՛թի Զարմին հարուա՛ծն է որ այստեղ ինձ հասաւ... .
Թո՛ղ տուր,–ըսաւ–, իմ Մինձերը, ա՛յ կըտրիճ...,
Աղջիկ մ' ունիմ՝ Գոհար–Խաթո՛ւն է անուն,
Եօ՛թ տարի է՝ Հալաբայ–Տէր՝ Թըրի վրայ է 1)՝ չե՛մ տըւեր,
Թո՛ղ տուր Մինձերս, իմ Աղջիկը տամ Քեզի՛...» 2):
Մըհէր Աստը մըտիկ չ'ընե՛ւ, բըռնեց Պառաւ՝ քաշեց դո՛ւրս,
Երկու Բարդի–Ծառեր ծըռեց դէմ–դէմի,
Պառա՛ւս մէկ Ոտ կապեց մէ՛կ Ծառ, ու մէկ Ոտը մի՛ւս Ծառ,
Ծառի ծայրեր՝ հո՛ւռ... բա՛ց թողուց, Ան ալ ա՛յդպէս ըսպանեց,
Ու Խըլաթի մո՛ւխը կըտրեց Երդիքէն... 3):
— «Օխէ՛ր...,–ըրաւ Զէնով–Օհան, ուրախացած՝ հոգիով–,
Մեր Թոռ Մըհէր՝ Մեզի հասա՛ւ, այլեւս բանէ՛ չե՛մ վախնար...,
Մեր Սասմանց–Տան ճըրագ նորէն մընաց վա՛ռ...»:

848. Խուզ-Բաղիճի Տղաներ

Մըհէր ապա դարձաւ ըսաւ Օհանին,—
— «Ալ որո՞նք են Քեզ նեղ դըրեր, Հօ՛րեղբայր...»:
= «Կուզբաղինի Չորս Տըղաներ..., Չորսն ալ Նըման Գազանի՛...»:
— «Լ՛ Հօրեղբայր, երթամ,–ըսաւ–, Չորսն ալ բըռնե՛մ՝ բերեմ Քե՛զ,
Թէ՞ ըսպանեմ ու ճըղեմ...»:
= «Երկուսէն մէկն ըրէ՛, Որդի՛..., Դո՛ւն գիտես...,—
Կամ ըսպանէ՛, կամ ա՛ռ ու բե՛ր՝ Ես տեսնե՛մ...»:
Մըհէր՝ լուսուն ելաւ քընէ՛ց Հօրեղբօր հետ ու դընա՛ց,

---

1) Թուրով, կռիւով՝ կ'սպառնայ: 2) Տե՛ս եւ Հատ. 854:
3) Բնաջինջ ըրաւ:

Գընաց հասաւ Լըհօռայ–Դաշտ՝ դո՛ւրս ելաւ,
Նայեց՝ տեսա՛ւ կուզ–Բաղինի երկու երէց Տըղաները։—
Անոնց Ձինքն ալ՝ ուրիշ բան չ'էի՛, — Նետ–Աղե՛ղ 1)։—
Որ քաշեցին Իրենց Աղեղ՝ ու Նետ զարկին դէպ Մըհէր՝
Եկաւ դըպաւ Մըհէրի Ի՛ր Ձիու Ոտքի Սըմբակին,—
Մըհէր ելաւ Թուրը զարկաւ՝ կէսը կըտրեց, կէսը մընաց Ոտքին մէջ։
Հասաւ բըռնե՛ց Երկու–Տըղաք՝ առաւ բերաւ Հօրեղբօր,
*Մէկը փընչեց *) Դըրան ա՛յս կողմ, մէկ՝ ա՛յն կողմ...,—*
— «Է՛ Հօրեղբայր, ալ կա՞յ,–ըսաւ–, քէ՞ ա՛ս է...»։
= «Երկու Տըղա՛յ ալ կան,–ըսաւ–, քան այս Երկուս՝ Գազա՛ն են...։
Ասոնք ուրի՛չ կընիկէ են, այն Երկուքը զա՛տ կինէ...։
Մըսրայ–Երկրէն Էն են միուս Երկուքները։
Ասոնք ասդի՛ն դըբաւեր են, Անոնք անդի՛ն են տիրեր»։

844. Քուռկիկի Սմբակին Վէրը

Ձէնով–Օհան տեսաւ Քուռկիկ–Ջալալին՝
Իր մէկ Ոտը կըվէրցընէ՝ կըկախէ,—
— «Ատիկ,–ըսաւ–, ի՞նչ է եղեր՝ Քու Ձիու մէկ Սըմբակին»։
*Ա՛չքեց *) տեսաւ՝ Նետի կըտոր մընացեր է Ոտքին մէջ,—*
*Ելաւ բերաւ՝ Ջըմբուխտ–Ցակինէ քուրայեց *),*
*Հալեց լեցուց Անոր Սըմբ *) Վէրքին մէջ,*
*Ժըրաւ *) եղաւ առաջըընէ՛ ալ աղէկ...։*

845. Մարդակեր-Պառաւին Աւերը

Հօրեղբայրները դարձան գացին դէպ Սասուն,
Մըհէր ելաւ՝ հեծա՛ւ Իր Ձին, քըշեց գընաց դէպ Մըսըր։
Մըսրըն անցաւ՝ գընաց դէ՛ն.— 1)

---

1) Ց·139՝ Տիրկաւան (*պրակ· թիր–էէման*), *համառօտ· Ալաչ–փետրոպոլինի հետ։* *) Փընչել, *փինչի, սեպի պէս՝ զարնել, վարսել։*
*) Ա՛չքել, *Ձննել, քննել։* *) Քուրայել, *Քուրայով՝ դնել կրակի մէջ։* *) Սըմ, *Սմբակ։* *) Ժրաւ, *Բուժուեցաւ։*
1) Ց·140–143՝ *երկուքուկէս էջի հէքիաթային կտորը խտացնելով՝ կուտամ միայն դիւցազներգական գիծերը, որ կապ ունին Մըհէրի հետ։*

Տեսաւ որ այդ կուզ-Բաղինի երկու մի՛ւս Տըղաներ՝
*Քառասուն-Քաջի ընկե՛ր եղած, Իրենց Հեծելն *) ալ Ո՛ւղտ է,—*
Թողին վախա՛ն՝ երբ լմացան որ Դաւ՝Քի-լաճ Մըհէրն է։
Քառասուն-Քաջեր՝ եկան հասան Մըհէրին,
Բարե՛ւ տըւին, բարե՛ւ առին, եղան Ընկեր միասին։
Ու պատմեցին որ Հալաբայ-Թագաւորին Թոռնե՛րն են,
Թագաւորն ալ՝ Իրենց Հայրն կ՚ապրի դ՚է՛ս է։
Ելան դացին՝ Հալաբ-Քաղաք դո՛ւրս եկան,—
Մա՛րդ-մարդասանք չըկա՛յ Քաղաք..., Հա՛ւք մը չըկայ. աւե՛ր է։
Քառասուն-Քաջեր ելան դացին Սար՝ Որսի,
Մըհէր մընաց՝ Ալի՛ւր Թըրեց, Ջո՛ւր հանեց 1) ու Հա՛ց Թըխեց։
*Մէկ ալ տեսաւ՝ բա՛ր ձըր Պառա՛ւ *) մ՚ եկաւ Նէրս,*
«Բարե՛ւ Քեզի, Քեռո՛ւ-Տըղայ» ըսաւ Իրեն, Հա՛ց ուզեց,
Ու մօտեցաւ՝ Քառասո՛ւն-Մարդու Հացը բոլոր՝ Ինք կերա՛ւ...։
— «Վա՛յ..., Մարդակեր Պառաւ կ՚ըսեն՝ Ա՛ս է եղեր մէջ-Քաղքին»,—
*Ըսա՛ւ Մըհէր՝ ու Պառաւին մէկ Գըլընթրե՛կ *) մը գարկաւ...,*
Պառա՛ւն Գըլուխ Վիզէն Թըռա՛ւ...՝ Աստուա՛ծ դիտէ՝ ո՛ւր գընաց։
Մընաց իր՛կուն, Քառասուն-Քաջեր Իրենց Որսէն երբ դարձան՝
Տեսան Իրենց Քըրոջ Դիակ հոն փըռուած՝
Հասան՝ այնտեղ՝ Մըհէրի Ձեռն ու Ոտ պագին Ամէնմէկ։—
— «Թէ հարցընես՝ Եղբա՛յր-Մըհէր,—ըսին Քառասուն՝ մէ՛կ Բերան—,
Օրէ ծընած այս Մարդակեր 2) Պառաւն, աւա՛ղ, Մեր Քո՛ւրն է.
Մեր Հայրն ու Մայր, բոլո՛ր Քաղաք, Ա՛ն է կերեր միսմինակ...։
*Այս մէկ Աստամ *)՝ Հալաբ-Քաղքէն մինչեւ Մըսըր՝ աւե՛ր է...»։*

---

*) Հեծել, Հեծանելիք, Հեծած անասուն։ 1) Ց·141՝ Գետէն առու հանեց՝ ջուր բերաւ (քառասունէն մէկը)։ *) Պառաւ, Մէջին կամ Հասուն տարիքի կին։ *) Պլընթրեկ, Մէջնամատին եղունգը բթամատին դէմ պրկելով՝ տրուած Հարուած։ 2) Անշուշտ՝ ոչ իրր մարդու միս ուտող, այլ գազանաբարոյ բռնապետ, միահեծան ինքնակալ՝ որ իր չուրջը արեան բաղնիքներու մէջ կըխեղդէ ամեն ընդդիմադիր ուժ։ *) Աստամ, Կլափ, երախ։

846. ՋՈՋԱՑԻ ՄԵԾ ՅԱՒ ԲԱՂԴԱՍԱՐԻ ԴԻՒԶՄԱՆՑԻ ՈՒ ԻՐ ՍԻՐՈՒՑԻՆ 1)

Մըհէր, Աստնք, ելան անկէ՝ ու քըշեցին դընացին,
Գացին իջան 'ի Բաղդադ։—
— «Երթանք Բաղդադ՝ որ ես տեսնե՛մ,–ըսաւ Մըհէր՝ Քառասնին–,
Մեր Ջոջանց–Տան մեծ–Հօրեղբայր՝ Բաղդասարի Գերեզման։
Ժամանակին՝ Պղընձէ–Քաղքէն՝ Ան եկեր է այս կողմեր,
Քաղաք չկնե՛ր, ու քաղաքն ալ ԲԱՂԴԱ՛Դ կոչեր՝ Իր անուան,
Թագաւորե՛ր, հոն ալ մեռեր՝ ու թաղուեր է Քաղքին մէ՛ջ։—
Երթանք տեսնե՛նք Իմ Հօրեղբայր Բաղդասարի Գերեզման...»։
Քառասունով ելան գացին՝ Բաղդադ–Քաղաք դո՛ւրս եկան,
Տեսան Քաղաք՝ այնպէ՛ս չկնուի, կատարեալ ու ընդարձա՛կ։
Մէկ ծերունուկ Մարդու մ՝ այնտեղ հարցուցին,—
— «Ի՞նչ կայ–չկայ Բաղդադի մէջ. ո՞վ է հիմա Թագաւոր...
Բաղդասարի Գերեզմանն ալ՝ Մեզի ցո՛յց տաս՝ որ տեսնե՛նք»։
= «Թագաւորը,–ըսաւ Ծերուկ–, ես չե՛մ դիտեր թէ ո՛վ է,
Բայց կ'ըսեն որ՝ Քաղքին Տէրեր՝ Բաղդասարի Թոռնե՛րն են։—
Այն ժամանակ՝ ինչ Սանասար ու Բաղդասար կըղատուին՝
Մուս–Բաղդասար կ'ելնէ կուգայ Էրան–Թուրան 2)՝ այս կողմեր
Պարսի՛կ 3) կ'ըլլայ, այստեղ նորէ՛ն կըպըրսակուի Իր համար,
*Իր Տըղաներ՝ էլմէլ *) կ'ըլլան կըռապա՛չտ...։—*
Բաղդասարէն իրմէ ելաւ՝ կալ–կալա՛ն,
Կալէն՝ Ջա՛լը, Ջալէն՝ Ռոստամ Մեծ Ըմբիշ։—
*Ռոստամ–Ջալը 4)՝ որ Էրանայ Գլո՛ւխն *) է՝*

---

1) Ց·143–144, Ե·491, Ե·546 եւ Զ·«Ցրն·–Թրն·» 288, 438 եւ 448՝ պատումներուն այս եւ յաջորդ (847, 848) Հատուածներէն կը տեսնուի որ, — ինչպէս Ց·143ս· ալ չեշտուած է —, «Բաղդասարի ճիւղը՝ շատ աւելի ընդարձակ եղած պիտի ըլլայ եւ պատմական ակնարկներով աւելի հարուստ»· [Տե՛ս Հուշ· 219 եւ Ցոյցն՝ 4–ի վերջը, ատորիկ 1 եւ 2 ծանօթութեամբը, նաեւ՝ Բ· Հտրվ·]։ 2) Հմմտ·՝ պատմական Երան եւ Տանիէրան։ 3) Այսինքն կռապաշտ, ոչ–հայհայուստ։ *) Էլմէլ, Դարձեալ, նորէն։ 4) Այսինքն Զալի որդի Ռոստամ, քրդերէն բնագրովը Ռոստամ կոչէ Զա՛լ, կամ Ռոստամ–է–Զա՛լ (Իմ դրի առած Էրան–Թուրան, 210 ձեռագիր մեծ էջ, եւ Ծովսէփեան Գ· Վրդպտ· Ռոստամ Զալ, 43 էջ)։ *) Գլուխ, Մեծաւոր, պետ։

Բաղդասարի ձեղէ՛ն է.—
Անոր ձիւղէ՛ն 5) աւելցեր է ու ելեր...:
Բաղդասարի Գերեզմանն ալ՝ Պալատին դէ՛մն է չինած,—
Ես չե՛մ կրնար ցոյց տալ ինձ...»:—

847. «Մեր Դիւանին Մէջը Կա՛յ...»

Մըհէր ելաւ ու դէ՛մ ըրաւ դընաց դէպի Ազարանք,
Նայեց տեսաւ՝ մխուս կողմէն Թաղաւորն ալ վա՛ր իջաւ:—
Իջաւ վա՛րը..., — կանչնեցաւ ու նայե՛ց–նայեց Մըհէրին...՝
Շա՛տ վախցաւ...,—
կանչեց ըսաւ, — «Դուն ի՞նչ Մարդ ես՝ Պալատիս դէմ ման կուգաս»:
= «Դուն չե՞ս պիտեր՝ Ես ի՞նչ Մարդ եմ...,–ըսաւ Մըհէր ապիէն–.
Ես Մըհէ՛րն եմ, Սասմանց–Տունէ՛ն, Սանասարի Սերունդէ՛ն...»:
*Թաղաւորն ալ մխոք ըրաւ *) ու ի՞նչ ըսաւ.—*
*— «Հէյ՛..., իրա՛ւ է..., Մեր Դիւանին–Թըւականին *) մէջը կա՛յ 1),*
Սասմայ–Տունէն՝ մէկ Մա՛րդ պիտի գայ այստեղ,
Եւ այս Թաղաք պիտի առնէ՛ Մեր Ձեռքէն...»:
Մըհէր այնտեղ երբոր լսե՛ց Թաղաւորին այդ խօսքեր՝
= «Թաղաքն,–ըսաւ–, ես Քու Ձեռքէն չե՛մ առներ.—
Ո՛ւխտ կ՛ընեմ որ՝ «Ձեր Թաղաքին չըղըպի՛մ»...,—
Բաղդասարը՝ Մեր Ազգէ՛ն է. Սասմանց–Տունէ՛ն եկեր հոս...,
Իր Գերեզման ինձի ցո՛յց տաս՝ որ տեսնե՛մ...»:—

848. Մըհէրի Ձեռքին Դրօշը՝ Բաղդասարի Թամբաքին Վրայ

Առաւ ըընաց՝ Բաղդասարի Գերեզմանը ցո՛յց տըւաւ:—

---

5) *Սերունդէն, ղերդաստանէն:*

*) Միտք ընել, *Մտմտալ, յիշողութեանը մէջ վիճառել:* *) Թըւական, *ժամանակագրութիւն, քրոնիկ:* 1) *Մեր ազգին անցեալ մեծութիւններուն 'ի նպաստ՝ քանի՛ քանի Դիւաններու մէջ պահուած՝ ինչքա՛ն թանկագին նիւթեր կորսուած են:*

Մըհէր այնտեղ Զիէն լ՚լաւ, Պարտէղին մէջ, ու քալեց 1),
Ծունկի՛ եկաւ՝ ու համբուրե՛ց Դերեզման,
Աղօ՛թք ըրաւ, Զեռքը դարկաւ Դամբանին,—
Մինչեւ հիմա՝ Զեռքին տեղը դեռ կ՚երեւա՛յ Քարին վրայ…:
Թաղաւորը՝ յուզուց նաեւ՝ Բաղդասարի Գըլխուն–Գա՛նկ,
— «Անիկ,–ըսաւ–, Մեր Ջո՛ջ–Պալիկ Սասո՛ւմ–Կըռակ եկեր հո՛ս,
Անոր Բերնի կօ՛ղկին *) է՝ այտեղ պահեր են…:—*
Ալ հաշուէ՛ Թէ՝ Սասում–Կըռակն Լ՛ինչ մեծ Ըմբիշ է եղեր»:
Թաղաւորը վերցուց ապա Լ՛ինչ ըսաւ.—
— «Ես Նըստեր եմ այս Քաղքի մէջ՝ բայց Դաղարա՛նք *) ալ չ՚ունիմ,*
Շա՛տ 2) *Թըշնամի կուգայ վըրաս Կըռիւի…»:*
= «Ո՞վ է կուգայ,–ըսաւ Մըհէր–, այս Քաղքի վրայ Կըռիւի…»:
— «Կուպ–Դե՛ւ 3) կ՚ըսեն ու Քուլընկ 3)…,—
Մէկ Զեռ կըտրած ու կաղլիկ…,
Քառասո՛ւն–Մարդ ալ Իրեն հետ…»:—

849. Կուպ–Դեւ Ու Մըհէր

Մըհէր եկաւ՝ առաւ Քառասուն Իր Ընկերներն ու Դընաց,—

---

1) *Մըհէր՝ Սասմանց–Տան հրեղէն Քուռկիկ–Ջալալիով՝ Բաղդասարի Դամբանին քով՝ Արքունի Պարտէղին մէջ՝ի Բաղդատ…, — Լ՚ինչ գմայլելի նիւթ՝ բանաստեղծօրէն մշակելի: — Զին կ՚խրխնջայ, Մհէր Ողորմի կուտայ, Բաղդասար անոնց ձայնէն դլուխը կ՚վերցնէ՝ ու կը խօսին…՝ Սանասարի, Աւիւճ–Մըհէրի, Դաւիթի ու Թլոլ–Դաւիթի վտանգերէն, Քեռի–Թորոսէն ու Զէնով–Օհանէն…, Պապ–Թադեւորէն ու Լուսիկ–Թադուհիէն, Քառասուն–Ճիւղ–Մամէն ու Խանդուտէն…, եւն·, եւն·: *) Կօղկ, Գանկ, դլխուն կմախքը, գանկոսկր (որուն մէջ մարդ կ՚մտնէ–կ՚ելնէ եղեր՝ ինչպէս քարանձաւի մը մէջ… · Տե՛ս Իմ ՅՐՆ.–ԹՐՆ· հմր· 284–288): *) Դադարանիվ, Հանդասուածքիւն, դադար: 2) Ց·144՝ կ՚պակսին Թշնամի կոչու բառերը՝ որ խօսքը լրանայ: 3–3) Կուպ, Կոպ, Մատ կտրած· [Արճէճի կողմը՝ քուրդ մեծաւոր մը՝ կըկոչուէր Կօպ–Մահմադ, ձեռքին մատները կտրուած ըլլալուն համար]: Քուլընկ, Քոլընկ անունին վերջամասը՝ լընկ՝ կ՚նշանակէ կապ: Որով՝ Ց·144–ի եւ Հ·454–ի յիշած այդ երկու անձերը՝ կընոյնանան, — կուպ–լընկ: Համեմատել՝ Թիմուր–Լէնկ կամ Լէնկ–Թիմուր անունին հետ, եւս՝ Քոլըկ–Սլէմիճ՝ ԾԷՐԱՆ–ԹՈՒՐԱՆԻս մէջ յիշուած, հմր· 650–941:

Գընա՛ց հասաւ Կուպ-Դեւին...։—
[Մէկ օրւան մը ճամբա՛յ դացին սըրընթաց]։
Այդ Կուպ-Դեւն ալ՝ այնպէ՛ս սաստիկ ո՛ւժ ունէր...՝
Ջաղացի-Քար՝ մէ՛կ Ձեռնովը կընետէր...՝
Աւո՛ւր մ՝ ճամբայ հետո՛ւ կ՝երթար՝ նո՛ր կ՝էյնար...։
Քա՛նի նետեց Մըհէրի կողմ՝ Մըհէր Ականջ չըդըրա՛ւ,
Գընաց հասաւ Դեւին քո՛վ։—
Տեսաւ որ լո՛ւռ, — մէկ Բարդի-Ծառ քաշէր դըրեր իր Թեւին *),
Վերին ճիւղեր՝ Վէրի-Ոչխար, Վէրի-Տաւա՛ր է չարեր...,
Վարի ճիւղեր՝ քերքաշ կ՝աւե՛ր չոր Գետին,—
Փոշին ելեր՝ Ամպի նըման՝ երկինքը եր՛ան է բըռներ...։
Կուպ-Դեւ՝ չուտ մը՝ Ծառը ձըղեց, վարեց մըտաւ Այրէն ներս։—
Այնչափ մեծ որ՝ հազար Ոչխար կ՝առնէ մէջը, թէ դոմես... 1)։
Ինչ *) Մըհէրը Դուռին հասաւ՝ Կուպ-Դեւն առա՛ւ Ձեռը հոտ,—
— «Ա՛յ-վա՛յ,—ըսաւ—, ասի Սասմայ-Տան հո՛տն է...,
Բաղդասարի հոտէ՛ն է...»։—
Ահէն՝ Գըլուխ դըրաւ Գետին՝ ու սուտ հեւա՛նդ ձեւացաւ...։
=«Ի՞նչ կըհեծաս *),—ըսաւ Մըհէր—. Քարը թևիդ ծա՞նր եկաւ.՞.՞.՞»։
Կուպ-Դեւն այնտեղ լո՞ւռ ըսաւ...,—
— «Արեւի տակ չա՛տ եմ քըներ...՝ Գըլխես ցաւէ՛ն կըհեծամ...»։
=«Ալ մի՛ հեծար,—ըսաւ Մըհէր—, ոչ չօռ *) ունիս ոչ ալ ցաւ...,
Դուն սուտ-հեւա՛նդ ես միայն...,
Ե՛լ պատրա՛ստ կաց՝ որ կըռուի՛նք...»։
— «Ես չե՛մ կըռուիր,—ըսաւ Կուպ-Դեւ—, ի՞նչ ունիմ որ Քեզի հետ...,
Ջատնու *)՝ մինակ՝ Քա՛ր կընետեմ ինձ համար...,
Թուր չ՝ունի՛մ որ՝ ելնեմ կըռի՛նք իրար հետ...»։

850. Մրհէր կ՝սպանէ Կուպ-Դեւը

Մըհէր՝ այնտեղ՝ Իր Հայր Դաւի՛թն ինկաւ միտ,
Ըսաւ՝ «Իմ Հայր՝ ինձի խըրա՛տ տըւեր է,—

---

*) Թեւ, Ուս։ 1) Համառ.՝ Ոդիսեւսի հանդիպած կիկլոպին եւ քարայրին տարողութեանը հետ (Ոդս.՝ երդ Թ.)։ *) Ինչ, ինչ առեն որ, երբ որ։ *) Չծաղ, Չեծեծալ, ոքալ։ *) Չօռ, Անհանդըստութիւն, խոց, ցաւ։ *) Ջատնու, Հեռուէն։

— «Ճիշա՛ *) Հացն ու Գինին, Տէ՛ր–Կենդանին,
Մարութայ–Բա՛րձր–Աստլաբածին, Խաչ–Փետրաղին՝ Աչ–Թեւին»:
Թուրն լինչ վերցուց որ զարնէ՝ կուպ–Դեւ լացաւ ու ըսաւ·—
= «Բաղդասարի Տըղա՞ն ես Դուն···,— «Հացն ու Գինի՛ն» յիշացիր»:
— «Բաղդասարի Տըղան չէ՛մ ես, — Դաւ՛թի Տըղան՝ Մըհէ՛րն եմ»:
Ինչ *) ըսաւ՝ «ես Դաւ՛թի–Տըղայ Մըհէ՛րն եմ»՝
Կուպ–Դեւ ելաւ կանգնեցա՛ւ,—
= «Տըղա՛յ,–ըսաւ–, Դուն իմ անուն չե՞ս լսած···,—
Ես Քուլընկի Կուպ–Դե՛ւն եմ···,
Հաւքն իր Թեւով, Օձն իր Պորտով չի՛ կըրնար դալ իմ սահմանս,
Դուն ի՞նչպէս ալ՝ սիրտ ըրեր ես՝ եկեր հասեր մինչեւ հոս···
Թո՛ղ իմ Սահմանս՝ չուտ դընա՛···»:
Մըհէրը վերցուց՝ ի՞նչ ըսաւ,—
— «Է՛ Դեւ Աղբա՛ր···, Աստծու չընորք չա՛տ ըլլայ···,—
Մեր Աղդ,–ըսաւ–, Աստուծմէն զատ՝ Մարդէ բընաւ չե՛նք վախնար»:
Դեւը փորձեց որ Մըհէրը ներս տանի··· 1)
Կերցընէ ու դինովցընէ՝ ըսպանէ···,—
Տեսաւ չ'ը՛լլար՝ առին իրա՛ր···, ու երե՛ք օր կըռուեցան···,
Մըհէր զարկաւ՝ կըտրե՛ց Գլուխ Կուպ–Դեւին:—

851. Բաղդասարի Դամբանին Վրայ՝ Մրհէր Քառասուն-Խորաճ Ժամ Կ'օթևնէ

Մըհէր հասաւ՝ որ Կուպ–Դեւի Քառասուն–Մարդե՛րն ալ կըտրէր,
Իրենց կուրծքեր չուտ մը բացին՝ տեսաւ Անոնք Աղջի՛կ են···:
Ամենմէկը՝ հօրենական Իրենց անուն երբ տըւին՝
Մըհէր տեսաւ՝ Քառասունն ալ՝ Թագաւորի Աղջի՛կ են:
Առա՛ւ Իր հետ՝ այդ Քառասուն–Աղջիկները,
Ու Կուպ–Դեւի Գլո՛ւխն ալ հետ մխասին,
Բերաւ տըւաւ այդ Բաղդադի–Թագաւորին ու ըսաւ,—
— «Քո Թըշնամին ըսպանեցի՛, հանգի՛ստ նըստիր Քո Քաղաք»:
= «Որ Դուն,–ըսաւ–, ըսպանեցիր Մեր Քաղաքի Թըշնամին՝
Քո՛վրդ է երկրի Իշխանութիւն. Քե՛զ վայել է Անոր Գահ···»:

---

*) Ճիշա՛, (գրբր·Ճիշեա՛), Ճիչէ՛, յիշատակէ՛, կանչէ՛, (՝ի նեղութեան խմում՝ հս առ ՏԷ՛ր կարդացից): *) Ինչ, Ինչ առեն որ, երբոր: 1) Է·454–455՝ պատմուած է հէքիաթ-յիշի ձեւերով:

— «Չէ՛,–ըսաւ–, ես՝ Դաւ՛թի–Տըղան՝ Մըհէ՛րն եմ...,
Ես չե՛մ կըրնար նըստիլ այստեղ թագաւոր...,—
Ոչ ժառանգ կայ՝ ինձի յաջորդ..., ու ոչ ալ ես մա՛հ ունիմ...» 1):
= «Ապա,–ըսաւ–, Դուն ի՞նչ կ՛ուզես..., ըսէ՛՝ տա՛մ...»:
— «Կ՛ուզեմ,–ըսաւ–, ժա՛մ մը չինես ինձ համար.
Քառասուն Տէրտէ՛ր կանչես բերես՝ գան այստե՛ղ,
Այս իմ քառասուն եղբայրներն ու այս քառասուն Աղջիկները՝
Բերենք կարգենք ու պըսակե՛նք իրար հետ» 2):
Բաղդասարի Գերեզմանին վըրայ բերին՝ տեղնիստեղ՝
Քառասուն–Կորան ժա՛մ չինեցին վառաւոր,—
Անուն դըրին ՍՈՒՐԲ–ՍԱՐԳԻՍ...,
[Ու հիմա՛ ալ՝ Սուրբ–Սարգիս է իր անուն 3)]:
Քառասուն Երէց՝ բերին մէկտեղ կեցուցին,
Քառասուն Աղջիկ, քառասուն Կըրիճ՝ պըսակեցին իրար հետ:—

852. Մըհէր՝ ’ի Մէհէ-Մէհին

Թագաւորը 1) վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ.—
— «Մըհէ՛ր, Որդի՛, Դուն բերիր՝ հոս՝ Քու եղբայրներ կարգեցիր,
Աղջիկ մ’ ունիմ՝ Ան ալ Քե՛զ տամ, պըսակուէ՛ ու կաց այստե՛ղ»:
= «Ես չե՛մ ուզեր,–ըսաւ Մըհէր–, Կընիկ մ’ ունի՛մ Գուրջիստան» 2):
[Իր Կընիկը մի՛տն ինկաւ...,—
Ըսաւ՝ «Ե՛ս ալ Կընկան տէ՛ր եմ...՝ չե՛մ յիշեր...]:—
Ելաւ առա՛ւ Իր այդ քառասուն–Եղբայրներ,
Դարձան եկան Հալաբ–Քաղաք, Մէկը 3) Նըստաւ Թագաւոր,
Մէկալները ելան գացին՝ Մէջէ–Մէհին՝ դո՛ւրս ելան,
Կուշ–Բաղինի Երկու–Թոռներ Բըռնեցին,
Անոնց Ցե՛ղն ալ՝ հոն կըտրեցին ու գոռեցին *) չեղջուչեղջ,
Տեղին անուն դըրին Մէհէ ու Մէհին... 4):

---

1) *Ակնարկութիւն՝ իր հօր անէծքին* (Հատուած 808): 2) *Ամեն տեղ՝ տո՛ւն կ՛չինեն, ժա՛մ կըկառուցեն, պսակ ու կնո՛ւնք կ՛ընեն, ընտանի՛ք կը կազմեն՝ Զոլանց–Տան Սասմայ Ծուռերը...*: 3) *Տես–նել այս մասին՝ Բ. Հատորովը*:

1) *Բաղդադի–Թագաւորը*: 2) *Ց. 54ս.՝ Մհէր կ՛առնէ թագաւորին աղջիկը*: 3) *Ց. 146՝ Մէկ եղբայրը*: *) *Գոռել, Թաղել՝ հասարակաց փոսերու մէջ* (աւրգկն.): 4) *Հարցասիրելի խնդիր՝ պատմական գիծե–րով տարաբախտ*:

853. Զըզիրու-Շաո, Բրջա-Բալաֆ, Ակն-Աճաճիճ

Մըհէր ելաւ՝ քըշեց եկաւ դէպ Զըզիր 1):—
Գետ՝ մը կայ հոն, Զըզիրու-Շաո 2)՝ թէ Խառնուրդ,
Հարիւր-քառասուն Գե՛տ կըխառնուի իրարու՝
Կուգայ կ'ըլլայ մե՛ծ մէկ Գետ...:—
Այդ Գետն լսես՝ երե՛ք անգամ՝ այդ Քաղաքը աւերե՛ց...:
Մըհէր բերաւ լո՞նչ ըրաւ.—
*Ահագի՛ն մեծ Քա՛ր *) մը բերաւ Քաղքին մօտ,*
Զըզեց Գետի ճիւղ մէջտե՛ղը, Գետը եղաւ երկու ճի՛ւղ,—
Մէկ ճիւղ կ'երթայ ա՛յն կողմէն, մէկ ճիւղ՝ ա՛յն,—
Ալ Քաղաքը չի՛ աւրեր:
Բըրջա-Բալաք 3) Բերդն ալ չինեց Գետամէջ՝
Այդ Քարի՛ն վրայ՝ որ ինք նետեց Գետին մէջ:—
Այդ Բերդին ալ՝ աւրիլ չըկա՛յ...՝ մինչեւ վե՛րջը-Աշխարհին:
Բայց կ'ըսե՛ն որ՝ ժամանա՛կ մը պիտի գայ՝
Պիտի ելնէ՛ Ակն-Աչանին՝ աւրէ՛ Քաղաքն-Զըզիրին...:

854. Մըհէր կ'առնէ Պաճիկ-Թագաւորի Աղջիկը

Մըհէր ելաւ՝ հեծաւ Իր Ձին՝ ու քըշեց,
Քըշեց դընաց, դընաց Պաճիկ-Թագաւորի Քաղքին վրայ:
Իմաց տըւին Թագաւորին՝ թէ՝ — «Հի՛մա՝
Սասման-Դաւ՝թի-Տըղայ Մըհէր՝ Քու Քաղաքը կ'աւերէ...»:
Թագաւորն ալ՝ ելաւ առաւ Իր Իշխաններն ու Մեծերը,
Եկաւ ելաւ Մըհէրի դէմ՝ ու ըսաւ,—
— «Մըհէ՛ր,—ըսաւ—, Իմ Քաղաքին մի՛ դըպիր...» 1):
= «Ինչո՞ւ համար չըդըպիմ...»:
— «Այն ժամանակ լինչ Քու Հայրը՝ Մէլիքի հետ կըռուեցաւ՝
Քու Հայր ու Ես՝ Ո՛ւխտ ենք ըրեր միասին...»:
= «Ի՞նչ տեսակի Ուխտ ըրեր էք միասին...»:

---

1) Զէզիրէ, [տրր.՝ կղզի], Մուսուլի նահանգին հիւսիսը: 2) Տիգրիսէն զատ՝ կրնայ հասկցուիլ նաեւ՝ Գետախառնուրդը, Շաթ-իւլ-Արաբ: *) Քար, ժայռ: 3) Բրջա-Բալաֆ (= ճերմակ բերդ), Գրի առած եմ համանուն դիւցազներգը:

1) Նման՝ Աւիւծ-Մըհէրի պարագային (Հատ. 234):

— «Քու Հօր հետը Ուխտ ու Պայմա՛ն ըրեր ենք՝՝
«Որ Ինձ Աղջիկ՝ Քեղի Տըղայ Թէ ըլլայ՝
«Իմ Աղջիկ տամ Քու Տըղին.
«Որ Քե՛զ Աղջիկ՝ Ինձի՛ Տըղայ Թէ ըլլայ՝
«Քո՛ւ Աղջիկ տաս Իմ Տըղին» 2)։—
Հիմա՝ Աստուած Քեզ Քու Հօ՛րն է պարգեւեր,
Ինձ ալ տըւեր՝ մէկ Աղջիկ.—
Տեսնենք հիմա՝ Դուն ալ կ՚առնե՞ս Իմ Աղջիկ...»։
Մըհէր այնտեղ ի՞նչ ըսաւ.—
= «Տեսնե՛մ,—ըսաւ—, Թէ հաւնեցայ Քո Աղջիկը՝ Ես կ՚առնե՛մ,
Չհաւնեցայ...՝ հօ՛ չեմ առներ, — ու Քաղաքըդ կ՚աւերե՛մ»։
Առաւ Մըհէր՝ գացին Իրեն Աղջկան քով,—
Աղջկան ալ՝ անուն ԳՈՀԱՐ–ԽԱԹՈՒՆ է,—
Մըհէր երբոր Աղջիկ տեսաւ՝ հաւնեցա՛ւ.
Աղջիկ Ինքն ալ՝ Տըղա՛ն սիրեց հաւնեցաւ,—
Իրար առին, կարդըւեցան, մնացին հո՛ն 3)։—

Գ. ՄԸՀԷՐ ՈՒ ԳՈՀԱՐ-ԽԱԹՈՒՆ

ՁՏՏ. Գոհար-Խաթուն՝ Մըհէրի Աստղը Կ՚ուսոյի

Գոհար–Խաթուն աստղագէ՛տ էր. բախտ կըբանար՝ կընայէր։
Օրերէն մէկ, իրիկուն մը, Մըհէր դարձաւ Իր Կընկան,—
— «Գոհա՛ր,—ըսաւ—, ե՛լ Իմ Աստղը նայէ՛ տե՛ս...,
Տեսնենք Իմ Աստղ ի՞նչպէս է...»։
Գոհար–Խաթուն ելաւ նայեց Մըհէրի Աստղն ու ըսաւ.—
= «Քու Աստղն,—ըսաւ—, չատ պայծա՛ռ է ու գըւարթ.
Բայց Քու Աղբի մէկէն մէկ Մարդ՝ պիտի նեղուի՛ Քո Ձեռքէն...,
Ա՛հա՛, լուսուն, կամ իրիկուն, Անոր Գլուխ կըզարնեն...»։

---

2) Տե՛ս Հատ. 690՝ ստորէջ ծանօթութիւններովը 2 եւ 3, ու Բ. Հատորովը։ 3) Ե·48՝ Գոհար–Խաթուն՝ Նեմրութի Պատուիրն (Հատուած 842) աղջիկն է, եւ Մըհէր՝ Անո՛ր հետ է որ կըկարգուի։

856. Սասնու Պարոն-Աստղիկ Երգնկացին

Մընաց լուսուն, մէկ ալ ելան՝ ի՞նչ տեսնեն...,—
*Հըսկա՛յ Ըմբիչ մէկ Զիւռը՝ Իր Հեծելով *) կանդներ Դո՛ւռ...:*
— «Կա՛յ ու չըկայ,—ըսաւ Գոհարը—, Ատիկ Շաբէ–Արքա՛ն է 1)»:
Մի՛ ըսե՛ր որ՝ Շաբէ–Արքան անդիէն՝
Ելեր Պաճիկ–Թագաւորէն Անոր Աղջի՛կն ուզեր էր·
Պաճիկ ելեր՝ Մա՛րդ ղըրկեր էր 'ի Սասուն,—
— «Թէ՝ մէկ Ըմբիչ՝ Ա՛չք է ղըրեր Իմ Աղջըկան Գոհարին 2),
Մէկ Կըռա՛ւի–Մա՛րդ ղըրկէք Թող գայ՝ Մեզ օգնէ,—
Եօթը–Քաղաք՝ վոխա՛ն կուտամ Սասունին» 3):
Չէնով–Օհան ալ ելեր էր ու ղըրկեր՝
Ցըտան–Վէդու 4) կըտրիճ Տըղան՝ Պարոն–Աստղիկ 5) Հեծելով:
Մինչեւ Պաճիկ՝ Մարդ ղըրկեր էր Սասմանց–Տուն,
Մինչեւ Օհան՝ Պարոն–Աստղիկ կանչեր, գիներ, ղըրկեր էր,—
Մըհէր՝ հեռու եւ անտեղեակ՝ եկեր առե՛ր էր Գոհարն,
*Ու հիմա ալ՝ չէ՛ր գիտեր որ՝ եկած Ըմբիչ(ն)՝ Սասնո՛ւ *) էր,*
կարծեր էր թէ՝ Շաբէ–Արքա՛ն էր եկող...:—

857. Մըհէր՝ Ցեղին Հոսի Առած՝ Զի՛ուգեր Կռիւի Երթալ

Արեւը դեռ նո՛ր էր ծագեր, ելաւ Մըհէր՝ Զին հեծաւ,

---

*) Հեծել, Հեծելազօրք: 1) Հնչել Chabi (Արքան): 2) Որ Դաւիթի եւ Պաճիկի խօսքակցութիւնը (Հուշ· 690 եւ 854) Սասունի հարսնացուն կընկատուէր: 3) Պարոն–Աստղիկի եւ Մըհէրի միջադէպը պատմուած է երեք վոխոխակէ՝ Թերուդէմ: 8·55–57՝ (Աստղիկ Երզընկացի, կամ Երկրացի, կամ Զար–Աստղիկ), Խ·64–67 եւ Ե·36–39: Այս վերջինին մէջ՝ նոյնիսկ Թլոր–Դաւիթի՛ հետ է որ կըկռուի Պ· Աստղիկը, եւ Գոհարի տեղը՝ Խանդուտն է: Իսկ առաջինին մէջ՝ Աստղի՛կն է Գոհարն ուզողը: Պատմուածքին էութիւնն այն է սակայն՝ որ Գոհարն ուզողը՝ Շաբէ–Արքան է, որուն դէմ կռուելու համար՝ Սասունէն ուզուած Պ· Աստղիկը (8·–վէդօի որդին, ոչ թէ Չ–Օհանին)՝ զոհ կ'երթայ Մըհէրի հարուածին, աղէտաւոր սխալով մը (Հուշ· 860): 4) Ե·110ա·՝ վերգոյի որդին, Խ·64՝ Չէնով–Օհանի որդին, որ սխալ է, Տե՛ս Ե·106/41: 5) Պարոն–Աստղիկ՝ Երզնկացի, հաւանաբար՝ իշխան Երզնկայ–Երիզայի կալուածին, որ հայ արքանեբու դամբաններուն քաղաքն էր: *) Սասնու, Սասունէն:

Չէնուդարդը վըրան կապած՝ քըշեց կ'երթար Մարդուն ղէմ,
Իր ճեղի հո՛ան առաւ մէկէն..., Դէմքը կախեց՝ նէ՛րս եկաւ...:
Գոհար–Խաթուն՝ տեսա՛ւ Մըհէր՝ Դէմքը կախեր՝ չի՛ խոսիր,—
— «Մըհէ՛ր,–ըսաւ–, ի՞նչ է եղեր..., ինչո՞ւ այսօր չե՛ս խոսիր...:
Ուրիշ օրեր՝ Դուն կուզայիր՝ կըխօսէի՛ր–խընդայի՛ր...,
Այսօր ինչի ի՞նչ է եղեր՝ Դուն չե՛ս խոսիր, տար–առներ *)...»:
= «Առաւօտուն,–ըսաւ Մըհէր–, ես կըռնւի չե՛մ երթար...»:
Գոհար–Խաթուն՝ վերցուց այնտեղ ի՞նչ ըսաւ.—
— «Դուն Քու վըրադ եթէ կ'առնես կըռիւ չ'երթայ՝ ե՛ս կ'երթամ...»:
= «երթա՛ս, մընա՛ս,–ըսաւ Մըհէր–, ի՛նչ որ ընես՝ Դո՛ւն գիտես,—
Առաւօտուն ես կըռիւի չե՛մ երթար...»:—

858. «Ռո՛ւս-քո՛ւս. Կռա՛կ կ'թափի վե՛ր'-Մատալին...»

Լուսուն ելա՛ն, Գոհար–Խաթուն նորէն ըսա՛ւ Մըհէրին,—
— «Մըհէ՛ր,–ըսաւ–, Դուն չե՛ս երթար կըռիւ ըներ՝ ե՛ս կ'երթամ...»:
= «եթէ խօսք տաս,–ըսաւ Մըհէր–, Լուսամուտներ գո՛ց պահես՝
Մինչեւ երթամ կըռիւ ընեմ ու դառնամ..., — կ'երթա՛մ ես...,
Թէ չե՛ս գոցեր՝ չե՛մ երթար...»:
— «Աղէ՛կ,–ըսաւ Գոհար–Խաթուն–, ես Գաւուհան կըգոցեմ՝
Մինչեւ որ Դուն կըռւէն գա՛ս...:
Այսօր Արեւ–լուս չե՛մ տեսներ. Մո՛մ կըվառեմ՝ կընըստի՛մ...,
Իմ կարկա՛ճը *) կըքաշեմ...»:
Գոհար–Խաթուն ելաւ գոցեց Գաւուհաններ, Մո՛մ վառեց,
Մըհէր ելաւ՝ Իր Մատալը *) դըրաւ Իրեն Գըլխուն վրա՛յ,
Իր Նետ–Աղեղ բըռնեց Ձե՛ռ,
Գընաց իջաւ Ասպարէզին ծայր՝ կեցա՛ւ:
Գարոն–Աստղիկ՝ Ձիուն վըրայ՝ եկաւ ելաւ Անոր ղէմ,
Ան ալ գիտէ՝ Շաբթ–Արքա՛ն է՝ կանգներ է Քաղքին–Դուռ:
Գարոն–Աստղիկ՝ Իր հըրեղէն Ձիուն վրայ՝
կ'երթ-այ–կուգա՛յ վեր'-Մըհէրի Գըլուխին,— †)
Թուր կըշարժէ վեր'-Մատալին,

---

*) Տալ–առնել, Զուարթօրէն խօսակցիլ:
*) Կարկաճ, Աչեղնագործ աշխատանք: *) Մատալ, Ասպար, վահան, խ·66ս·՝ սաղատարտ· [մատալ՝ համմալ·՝ մեհտալ]:

Բո՛ւռ–բուռ կըրա՞կ կըլեցուի վեր'–Մատալիճ,
Վեր'–Մըհէրի Գըլուխին...,
Մատալէճ շո՛ւռ կ'առնէ Գետին...'
Կ'երթայ մինչեւ Անդունդնե՛ր...:
Գացին–եկաւ՝ կըռի՛ւ ըրին չո՛ւր՝ *) կէսօրին,
Թուրի Շառաւիղք *) տըւաւ Լուսամուտին,
Գընաց շողաց մէջ–Տախտին...:
Գոհար–խաթուն՝ նայեց տեսաւ՝ Լո՛յս եկաւ մէջ–Սենեկին,
Զարմացաւ ու վերցուց ըսաւ՝ «Աս ի՛նչ բան է...,—
Ասօր Ամպ չ'է'..., Անձրեւ չի՛ գար...,—
Գիշեր չ'է'...' Կայծա՛կ կուտայ··· 1),—
Աս ի՞նչ Շառաւիղք է՝ կուտայ մէջ–Մեր–Տախտին...»:
Գոհար–խաթուն չըդիմացա՛ւ, ելաւ վե՛ր,
Լուսամուտներ բացաւ ու դո՛ւրս նայեցաւ,
Տեսաւ՝ մէկ Մարդ՝ Իր հերթէն ու թեւատոր Ձին հեծեր՝
Կ'երթա՛յ–կուգայ՝ վեր'–Մըհէրի Գըլուխին,
Հալուճի–Թուր 2)՝ կըշարժէ վեր'–Մատալիճ,
Բո՛ւռ–բուռ կըրակ՝ Թուրէն կ'ելեցուի վեր'–Մատալիճ,
Վեր'–Մըհէրի՛ Գըլուխի՛ն...,—
Մատալէճ՝ շուռ կ'առնէ Գետին, կ'երթայ մինչեւ Անդունդնե՛ր †):
Մըհէր Անոր բա՛ն չ'ը՛սեր...:—

Մարդը վերէ՛ն կըկըռւէր, Մըհէրիկը ներքեւէն·
Մըհէր Իր Նետ որ կըղարնէր՝ Պարոն–Աստղին չէ՛ր դըպիր·
Ան ալ կ'գարնէր՝ Սուրբ–Նըշանը չէ՛ր Թողուր որ Մըհէրիկին
[վընաս դայ...:

859. Գոհարի Երգը. Մըհէր՝ Սխալով կ'սպանէ Պարոն-Աստղիկը

Գոհար–Խաթուն այս որ տեսաւ՝ Իր Մըտքին մէջ ի՞նչ ըսաւ.—
— «Ասոր համա՛ր Մըհէր կըռւի չէ՛ր երթա՛ր...,

---

*) Ձուր(մ), *Մինչեւ*: *) Շառաւիղք, *Շողիւն*: 1) Ե·37՝ չի՛ տա՝ *ուղղել՝* կի տայ (*կուտայ*): 2) *Տե՛ս Հատ·* 215 *ստորջ*, եւ՝ *Բ. Հատորովը*: †–†) *Այս հատուածը՝ «Մոկաց–Մըրզա» երգին չափերուն կ'մօտենայ: Հաւանաբար երգ է եղեր՝ մաշեր մնացեր է այդ ձեւովը:*

Ես ալ՝ ապա՝ չէի՛ դիտեր՝ ինչո՞ւ համար չէր երթա՛ր...»։
*Գոհար–Խաթուն՝ կարդացո՛ր էր եւ իմաստուն աստղապա՛շտ *).*
*Գիրքը բերաւ դրաւ առջեւ՝ ու կարդաց *)՝*
Տեսաւ՝ այդ Մարդ՝ Մըհէրի Հօր–եղբօր Տըղա՛ն է եղեր,—
Ան ալ կանչեց Լուսամուտին վերեւէն,—

— «Հօրեղբա՛յր, Դու բարո՛վ եկար, Հազա՛ր բարով եկար Դուն 1),
Կրա՛կ թափեցիր՝ վեր՛–Մըհէրկի Դըլուխին, Տո՛ւնն աւրեցի՛ր
[Գոհարին։
Մըհէր անփորձ Տըղա՛յ է, երբեմ կըռի՛ չ'է՛ ըներ, շատ մի՛ ծեղեր
[Մըհէրին»։

Գոհար–Խաթուն դո՛ւրս կախեց իր սիվտակ Միծերն ու ըսաւ.— 1)

— «Քեզ այս սիվտակ Միծերու մէ՛ջ կըպահեմ...,
Շատ մի՛ ծեղեր Մըհէրին...»։

Զայնը լսկաւ Մըհէրկի Ականջին,
*Ան ալ ուրկա՛ւ *), — «Իրա՛ւ,–ըսաւ–, կընիկ–աղջին բախտ *) չկա՛յ.*
Ես դիտէի՛ որ Դուն երբեք չէի՛ մընար Տանը մէ՛ջ...։
Ես ըսի՝ որ՝ «Պատուհաններ դո՛ց պահես՝
Մինչեւ Ես իմ կըռո՛ւէն գա՛մ»...,—
Գոհար ելաւ Պատուհաններ լայն բացա՛ւ...» 2)։
Պարոն–Աստղիկ՝ երբոր տեսա՛ւ Անոր սիվտակ Միծերը՝
Ա՛լ չըզարկաւ..., Թուրը կախե՛ց ու կեցաւ...։
*Մըհէ՛րն ըսես՝ կընկա՛ն ուրկուն *)՝ Նետ դէ՛մ ըրաւ Զիւն Փոր 3),*
Տակէն զարկաւ՝ Զիւն Փորը ծակեց տըւաւ դէպ կըռնա՛կ,

---

*) Աստղապաշտ, Աստղադէտ, աստղեր ճանչցող, աստղաբաշխ։ *) կարդաց, Հոս՝ հասկնալու է՝ ծայեցաւ, զննեց (աստղերը՝, բախտագիրքը)։ 1) Երդով։ *) Ուկիլ, Մրդողիլ։ *) Բախտ, Վատահուքիւն, հաւատարմուքիւն։ 2) Գոհար՝ Մըհէրը փրկելու դիտումով եւ նոյն ատեն երկու հօրեղբօրորդիներու մէջ կռիւը դադրեցնելու մտքով կ'ելարժի, Մըհէր կըկարծէ թէ Շաբի–Աբքանի՛ 'ի նպաստ է...։ *) Ուրկուն, (հակառակ–ին), 'ի հեճուկս, հակառակելու մըտքով, իր եսին, կտրճուքեանը դէ՛մ չարժած ըլլալէն՝ վիրաւորուած (Մըհէր անփորձ տղայ է..., եւն.)։ 3) Նետը՝ չէշտակի Գ. Աստղիկի ձիուն փորին ուղղեց։

Պարոն–Աստղի Գագաթն–իվեր՝ դո՛ւրս ելաւ...:
Մըհէր վիտցաւ թէ չըղըպաւ Իրեն Նետ՝
— «Հաղի՛ւ,–ըսաւ–, իմ զարկիս ղէ՛մն եկած էր՝
Դու չըթողի՛ր ճիշդ զարնէի, ա՛յ կընիկ...,—
երդո՛ւմ կ՝ընեմ՝ «ծօթը տարի՝ Դուն Մայր ու Քո՛յր մընաս Ինձ» 4):
Ըսա՛ւ–չ՝ըսա՛ւ...՝ մէկ ալ նայեց՝ Ձին Պարոն–Աստղ վերցուց վեր՝
երկուք մէկտեղ՝ ինկան Գետին, փըռուեցա՛ն...:

860. Աղէտաւոր Սխալը Կ՝հասկցուի

Պարոն–Աստղիկ՝ ինկաւ Գետին՝ ձա՛յն տըւաւ,—
— «Վա՛յ, Աստուած Քո Տո՛ւնը չ՝աւրէ..., ա՛յ Տըղայ...,
Այս Մեր Աղէի հարուա՛ծն էր որ՝ Ինձ հասաւ...,
Մըհէրէն դաս՝ ուրիչ կըտրիճ՝ չէ՛ր կըրնար Զիս վար բերել...»:
Մըհէրն ալ թէ,= «Մըհէրի զար՛կն էր Քեզ հասաւ..., Դո՛ւն ով ես»:
— «Պարոն–Աստղիկ, Ցըտան–Վէրդի Տըղա՛ն եմ ես»,–ըսաւ Ան:
Մըհէրն ըսաւ, = «ես Իմ Աչքեր կուրցուցի՛...»:
Պարոն–Աստղի վերջին խօսքը ի՞նչ եղաւ...,—
— «Մահմանց օրէնք, սովորութիւն,–ըսաւ–, Մըհէ՛ր, ա՛յն է որ՝
Գըլուխ դընեն... Իրար Ծընկան...)՝ Հոգին տա՛ն...» 1):*
Մրհէր վերցուց՝ Պարոն–Աստղի Գըլուխ դըրաւ Իր Ծունկին.
Պարոն–Աստղի՛կն էր, խըսխըրա՛ց)՝ Հոգին տըւաւ, ինկաւ հո՛ն:*
Պարոն–Աստղիկ երբոր տըւա՛ւ Իր Հոգին՝
*Մըհէրի ուշ(ք) Գըլխէն դընա՛ց՝ կըսկըծու... *):*
Դոհար–Խաթուն՝ իջաւ վազեց՝ չուտ Քո՛ւր զարկաւ Երեսին,
Մըհէր ելաւ՝ Աչքը դարձուց ու ըսաւ.—
— «Ամէ՛ն ինչո՛ւ եկեր էր հոս կըռիւի...»:
= «եկեր էր որ՝ երթար կըռի՛ւ՝ Շաբէ–Արքան ըսպանէ՛ր... .
Շաբէ–Արքան՝ Զիս ուղեր էր Իր համա՛ր,
ես չ՝ուզեցի՛, Իմ Հայր վախցաւ թէ զայ զարնէ ու տանի,—

---

4) Իբր կին չ՝մօտենամ քեզի, մօր ու քրոջ սրբութեան պէս ըլլաս դուն՝ ինձ համար:

*) Ծնկաւ, Ծունկին: 1) Դաւթի նման (Հատուած 819): *) խոխոռալ, Հոգեվարքի հռնդիւն արձակել, հռնդալ: *) կակծու, կսկիծէն:

Ելաւ մէկ Թո՛ւղթ ղըրկեց ղըրկեց Սասնայ–Տուն,
*Թէ՝ «Սասնայ–Տեղ *)՝ կըտրի՛ճ *) կ'ըլլայ եւ Ըմբի՛չ,*
Մէկը ղըրկէք՝ այս Մարդ յաղթէ՝ չըտանի՛»...,—
Սասնայ–Տունէն՝ ելեր այս Քա՛ջն են ղըրկեր,—
Մենք ալ պիտցանք՝ Շաբի–Արքա՛ն 2) է եկեր...»:
Մըհէր ելաւ՝ Պարոն–Աստղի Մարմին վերցուց ու թաղեց,
Ա՛լ չըկեցաւ..., — հեծա՛ւ Իր Ձին ու քըշեց... 3):—
Երթար պիտի Կըռի՛ւ ընէր՝ դէս ու դէն՝
Մինչեւ որ եօթ տարւան երդում՝ տե՛ղ բերէր...:—

961. Մըհէր՝ Շաբի-Արքային Կ'րճուի Ու Հօրի Մէջ Կ'ձգուի

Ի՛նչ֊ց Լօռու(այ) Շաբի–Արքան Թագաւորի Քաղքին վրայ,
*Ու մէկ ճոթէն *) առաւ Ջարդի՛լ ու երթալ...:*
Շաբի–Արքան՝ չատ Զօ՛րք ժողվեց, Մըհէրի հետ կըռուեցա՛ւ.
Ի՛նչքան Բանակ ու Զօրք բերաւ՝ Մըհէր Ջարդե՛ց Ամենն ալ 1):
Ճար կըտրեցաւ՝ Շաբի–Արքան հարցուց փընտռեց՝ իմացաւ՝
Թէ՝ «Մըհէրը՝ դաւո՛վ միայն կարելի է Ձեռք ձըգել...,
Ասիկ Սասմայ–Մըռընչի՛ն է..., կըռո՛ւով յաղթել չի՛նք կըրնար 2).
Անոր ուժը՝ Իր Թեւե՛րն են..., Թէ կարենան կտակըպել...»:
Ելան ըսին, — «Մըհէ՛ր, Տըղա՛յ, Թագաւորի հրամա՛ն է,—
Գօտեմարտի՛ մըտնէք պիտի Իրար հետ,
Ո՛վ որ յաղթէ՝ Ան Տէ՛ր դառնայ այս Երկրին...»:
Եկան որ Թէ՝ պիտի մըտնեն Գօտեմարտ՝

---

*) Տեղ, երկիր, հող: *) Կտրիճ, կարիճներ, դէւացպունք (յոյճակի): 2) Շաբի–Արքան անունը՝ հմմտլի՝ պարսիկ Շապուհ–Արքայի հետ (Բ. Հարվ.): 3) Ե·49՝ Գառնուն տարի անցաւ, Գոհարխաթուն մեռաւ՝ (առոր վրայ՝ Մըհէր Թողուց գնաց):

*) Ճոթ, Նայր, կողմ: 1) Հ·457–458՝ պատմուած է Հալապայ Թագաւորի անունով, որ սակայն աւելի չատ՝ Պաճիկ–Թագաւորի դէրին մէջ է: 2) Ինչպէս Դաւիթի եւ Շըմչիկի պարագային (Հատ· 816), Դաւիթի եւ Մըսրամէլիքի կռիւին (Հատ· 631–633, 644, 657), Պարոն–Տէր–Ներսէսին (Հատ· 907–908)՝ ու Համզա–Պահլաւանին (Հատ· 934–944) եւ Բաղդասարին (Հատ· 71):

*Բերին Քեմուխտ *)՝ ու նետեցին՝ Մըհէր այնտեղ բըռնեցին,*
Շըղթաներով կապկըպեցին, փաթթեցին,—
— «Թագաւորի–ցե՛ղ է,–ըսին–, Ատ ըսպանել արդար չ՚է՝,
*Տարէք Թալէք *) քառասուն կանդուն խորունկ Հո՛ր,*
Թող մընայ հոն ու մեռնի՛ ...»:
Բերին՝ այնտեղ՝ Ձէն–ու–Զարդերն ամեն առի՛ն վըրայէն,
Տարան՝ խորունկ Հորի մը մէ՛ջ ձըգեցին 3),
Մալը դըրին Հորին Բերան՝ ու եկան:—
Հորն ալ ըսես՝ քառասո՛ւն կանդուն խորունկ Հո՛ր է ահագին ...:
Գուռկիկ–Զալալ՝ Թուրը խըլե՛ց ու գընաց ... 4),
*Ճամբան կըտրե՛ց *), Մարդ որ երթար՝ Ձին կըզարնէր կ՚ըսպանէր:*
Շարի–Աբքան՝ Զօրքը դըրկեց որ երթան՝
Գոհար–Ղաթուն բըռնեն բերեն Իր համար ... 5):
Գոհար՚ն ըսես՝ Բերդէն կ՚ելլէր՝ Ձէն–ու–Զարդով, Մարդու պէս,
Հարիւրաւո՛ր Մա՛րդ կըկըտրէր՝ կ՚երթար–մըտնէր Բերդէն ներս 6):

868. Քառասուն Այծի Տէր Պառաւին Մեռածումը

Զըրո՞յցն ուրկէ՛ ..., — զըրոյցը տանք Պառաւէ՛ն՝
Որ քառասո՛ւն հատ Ա՛յծ ունէր ..., — †)
Ունէր նաեւ՝ եօ՛թ Աղջիկ,
Պզտիկ Աղջիկ՝ հարի՛ւր տարու էր հազիւ ...,—
— «Ես դիտե՛մ որ,–ըսաւ Մամիկ–, Մըհէր Վիրա՛պ ձըգեր են,
Առանց Ջուրի, անհաց, այնտեղ պիտի մեռնի Հորին մէջ ...,

---

*) Քեմուխտ, 6·57, Հ·457՝ fեռաման(տ), Ռորենացիի՝ «Ներդեայ քիմիտատպատ պարան», «Շիկափոկ պարան», [Բ· ձե·, Բ· ծ·], լատս: *) Թալել, Զրել, դահավիժել, Թողուլ: 3) Արտաւազդի պէս: Ե·49՝ Որսորդները բռնեցին Մհէրը՝ տարան ձգեցին հորն ի վար, Խ·68՝ քառասուն կանգուն հոր(ի) մէջ նետեցին: 4) Այլաբանական պատկեր, — Մըհէրի բանակին Այրուձին (հեծելազօրքը) ինքզինք ետոդոքսից՝ պաշարումէ: *) Ճամբան կտրել, Անցքերը բռնել, արդիլել որ մարդ չ՚կրնայ անցնիլ: 5) Այստեղ՝ Վէպը կ՚ծաոեննայ պատմական Արշակ Բ·ի՝ Անյուշ Բերդին մէջ նետուելու, եւ իր կնոջ Փառանձեմ Թագուհիին զերութեան՝ մասերուն: 6) Արտագերսի կամ Կապոյտ–Բերդի մէջ ամրացած՝ ու մարտնչող՝ Փառանձեմ Թագուհիին նման:

Ես՝ Ատոր՝ Հա՛ց պիտի տանիմ պահէպահ 1)՝
Թող չըմեռնի՛…, մընայ մինչեւ քառասուն օր 2),
Այդ մէկ Աղջիկս՝ տանիմ ձըզիմ Անոր մօ՛տ,
Ու Մըհէրէն Զատա՛կ մ՝ ելնէ՝ Սասմայ-ցեղ…,
Իր չընորհիւ՝ Մենք ալ թերեւս Հա՛ց մ՝ ուտենք…»:
Ան ալ՝ օր մէկ Ա՛յծ կըմորթէր՝ ու մէկ չալակ Հացի՛ հետ՝ †
Կըտանէր հոն, ու Պարանով կ՛ինջեցնէր Հորին մէջ,
Մըհէր կ՛ուտէր՝ չէ՛ր մեռներ…:—

868. Կուպր Ու Բուրդ՝ Հալած Արճիճին Դէմ

Շաբի-Արքան՝ եօ՛թն օր Արճիճ ժողվեց բերաւ՝ կըհալէ՛…:
Պառաւն եկաւ՝ ու Մըհէրին լո՛ւր տըւաւ,—
— «Մըհէ՛ր,—ըսաւ—, Արճիճ ժողվեր՝ կըհալեն՝
Որ լեցընեն Քու վըրադ…»:
= «Ապա, Մամի՛կ, ես ի՞նչ ընեմ…,—ըսաւ Մըհէր՝ վիրապէն—.
Գընա՛,—ըսաւ—, ինձ բա՛հ մը բեր՝ ձըզէ վա՛ր…»:
Պառաւ գընաց՝ բա՛հ մը բերաւ, ձըզեց Հո՛ր,—
—«Այդ Հորին կէց,—ըսաւ վերէն—, մէկ աւերակ Հո՛ր մը կայ,
Բահով ծակէ՛՝ անցիր մէկալ Հորին մէ՛ջ…»:
Մըհէր ձայնեց՝ Հորին տակէն՝ այդ Պառաւին՝ ու ըսաւ,—
=«Մէկ Պարկ կուպրը՝ ու եօ՛թ Պարկ ալ՝ անլըւայ Բո՛ւրդ բեր ինձի»:
Պառաւ գընաց՝ ճարեց բերաւ՝ Ատոնք թալեց Հորին մէջ:
Մըհէր առաւ՝ այդ անլըւայ Բուրդը զարկաւ ծակին դէ՛մ,
*Կուպրը խոթեց Բուրդին տա՛կ, Իր Պառեկը *) տըւաւ դէ՛մ…:*

---

1) Հոս՝ նման է Գրիգոր Լուսաւորչի՝ Նոր-Վիրապ ձգուելուն, եւ պառաւէ մը դաղտնի սնունդ ստանալու աւանդութեանը: 2) Որպէս զի՝ քառասնօրեայ ժուժկալ դադարէ եւ սննդառութենէ յետոյ՝ Մըհէր աւելի ուժեղ սերունդ արտադրէր: †-†) Հմմտ.՝ վիպական Մըհէրի՝ Շաբի-Արքանէն բռնուելու եւ այծերով սնանելու այս պատկերը՝ պատմական Աբշակ Բ.ի (Տրդատի յաջորդներէն՝ ինչպէս Մըհէրը՝ Թլ-Դաւիթին) եւ Պարսիկ Շապուհ Արքայի փոխադարձ պայքարին հետ: Մանաւանդ՝ «Այծի՛ց Հայոց Արքայ» անարգական կոչումը՝ Շապուհի Ախոռապետէն՝ Աբշակ Թագաւորին ուղղուած [փաստ. Դ. ժդ]: *) Պառեկ, կոնք, յետոյքի մասը:

Շաբի–Արքան՝ Արճի՛ճ հալեց, բերաւ լեցուց Հորին մէջ…։
*Մընաց մինչեւ Արճիճ պաղաւ *)՝ Առոնք 1) թողին ու գացին,*
Պառաւն եկաւ կեցաւ Հորին Բերնին վրայ՝ ու ձայնեց,—
— «Մըհէ՛ր,–ըսաւ–, Արճիճ լըցին Հորին մէջը՝ պաղեցա՛ւ…,
Ա՛լ վախ չ՛ունի՛ս…, հանդի՛ստ կաց…»։—

864. Պառաւն Իր Աղջիկը Մրիէրին Կ՚ուզեն

Քառասո՛ւն օր, օրը մէ՛կ Այծ՝ մորթեց տարա՛ւ, Հացի հետ։
Քառասուն օրը որ լըրացաւ՝ Պառաւն եկաւ ի՞նչ ըսաւ.—
—«Մըհէ՛ր,–ըսաւ–, Ձո Սիրտ երթիք մատղաշ1) կընիկ չի՞ ուզեր…»։
= «Ինչո՞ւ համար կըհարցընես…»,–ըսաւ Մըհէրը՝ զարմացած։
— «Ես նորահաս Աղջի՛կ մ՚ունիմ…, բերեմ Քե՛զ…»։
Մըհէրն ալ մի՛տք ըրաւ, ըսաւ, = «Գընա ղըրկէ՝ Թող Ի՛նձ գայ»։
Պառաւն ելաւ՝ առա՛ւ Աղջիկն ու բերա՛ւ։
Եկան կեցան Հորին Բերան, Սալը քըշեց տարաւ դէ՛ն,
Պառաւ կանչեց, — «Մըհէ՛ր,–ըսաւ–, Քեզի Աղջի՛կ մ՚եմ բերեր…»։
Մըհէրն ըսաւ, = «Մամի՛կ, բարո՛վ ես բերեր…,
Կախէ՛ Թող գայ Հորին մէջը, Ձիս արճըկէ՝ քաշէք վե՛ր…»։—

865. «Նոր Էր Իջաւ Գիւղ Մօտը, Ան Ի՛նչ Շուխ Ալ Ծաւերացաւ…»

Պառաւ բերաւ Իր Աղջիկը կախեց դընաց Հորն ի վար։
Մըհէրն ըսաւ, — «Աղջի՛կ, կապերս արճըկէ՛…»։
Աղջիկ՝ Մըհէրն արճըկեց 1),
Մըհէր ելաւ՝ Պարան քակե՛ց Աղջկան Մէջքէն՝ ու առաւ՝
*Կապեց Իրեն Մէջքին չո՛ւրջն ու Թեւէ–Թեւ *),*
Երե՛սն անդամ չընայեցա՛ւ Աղջըկան։
Մէկ ժամ մընա՛ց–չըմընաց…,—

---

*) Պաղաւ, Պաղեցաւ։ 1) Այսինքն՝ Արճիճ լեցնողները։

1) Մատղաշ (նորատի) որակուածը՝ հարիւրամեայ էր, ըօթը քոյրերէն ամենէն փոքրը, չ՚մոռնա՛նք· (Հուշ· 862)։

1) Կ·76–ի 222–րդ համարուածին վերջամասը՝ պատմուած Մըսրա–մէլիքի եւ Դաւիթի կռիւին՝ կապ ունի մանաւանդ Մըհէրի հետ։
*) Թեւէ թեւ, Մէկ ուսէն մէկալ ուս՝ խաչաձեւ։

— «Աղջի՛կ,–ըսաւ–, Քու Մօրն ըսէ՝ «Ձիս վե՛ր քաշէ՝ հանէ դո՛ւրս»,
Թէ չէ՝ այստեղ Քեզ կ'ըսպանեմ, կըճըդե՛մ...»:
Աղջիկն ահէն՝ կանչեց ըսաւ, — «Մարէ՛, քաշէ՛՝ դո՛ւրս հան Ձիս»:
Մըհէր ծա՛ռը էր..., Պառաւն ըսաւ՝ չէ՛ր դիտեր Թէ Մըհէրն է,
Քաշե՛ց–քաշեց, տեսաւ ծա՛ռը է՝ չի՛ կըրնար...,—
Ոտներ Գետի՛ն կուտայ՝ ճիգո՛վ կըքաշէ,— 2)
— «Մեռնի՛մ,–ըսաւ–, Քու չընորքի՛ն ու Մէջքի՛ն...,
Նո՛ր էր լըսաւ դընաց մօտը, ան լի՛նչ չուտ ալ ծանրացաւ... *)»:
Ու ճի՛գ կուտայ..., կըճըկըտուի՛ *), կըքաշէ՛...:
Մըհէր Իր Մէջք տըւաւ Հորին՝ մէ՛կ կողմէն,
Ոտներով ալ կըոթընեցաւ դէմի՛ Պատ,
Պառաւն ալ՝ հա՛ վե՛ր կըքաշէ ու կ'ըսէ,—
—«Փա՛ռք Քեզ, Աստուած, Իմ Աղջիկը դեռ չէ՛ր դացեր *) Ատոր մօտ՝
Երկու Հոգո՛վ *) է եղած...»:
Քաշեց մինչեւ Հորին Բերան՝ նայեց տեսաւ Մըհէ՛րն է...:
Մըհէր չո՛ւտ մը Զեռքեր Նետեց Հորին Թումբ՝
Մինչեւ Արմուկ՝ Հողին մէ՛ջը խըրուեցաւ...:
Պառաւն ուղեց՝ Մըհէր ճըղէ Հո՛րն ՚ի վար,—
— «Դուն Իմ Աղջիկ Թողէր,–ըսաւ–, Հորին մէ՛ջ,
Խաբելութեամբ *) վե՛ր եկար...,
Ալ ես կըրնա՞մ Իմ Աղջիկը վե՛ր քաշել...:
Քառասուն օր է՝ քառասո՛ւն Այծ մորթեր՝ ու Քեզ պահե՛ր *) եմ...՝
Որ Ինձ փեսա՛յ ըլլայիր...»:
Մըհէրն ալ դո՛ւրս ելաւ Հորէն ու վերցուց՝
Պարան կախեց Հորին մէջը, դարճաւ Պառւին՝ ու ըսաւ.—

---

2) Յ·58՝ Պառաւն իր եօթ աղջիկներովը մէկտեղ վեր կ'քաշէ Մըհէրը, որ գ'անոնք կ'լեցնէ Հորին մէջ: Խ·69՝ «Մըհէր ռտը դրաւ վեր՝ աղջկան ուտաց, աղջիկը ցըղեց թալեց այնտեղ», որ չփոթումն է՝ Դաւիթի ըրածին (Հատ· 818): *) Ծանրացալ, Ծուխ մնալ եւ ածիլ: *) Ճկռտիլ, Ոտները բացատել եւ գետին կոթընեցնել (ուժով քաշելու): *) Դեռ չէր գացեր, Հաղի՛ւ գացեր էր: *) Երկու հոգով, Երկու չունչով, Երկու Հոգի եղած, յղի· [սաղմին հետ՝ մայրը երկու հոգի կ'հաշուին]: *) Խաբելութեամբ, Խաբէական ձեւով: *) Պահել, Մնուցել, ապրեցնել:

= «Մամի՛կ,–ըսաւ–, ես Քո ըրած աղէկութիւն չե՛մ մոռնար.
Մեր Ալպի մէջ՝ այդ բան չըկա՛յ, ու երբեք ալ չի՛ լինիր,—
Դողութիւն է՝ թէ բողութիւն, կամ սուտ խօսիլ՝ չե՛ն դիտեր 3).
Մեր ցեղի Մարդ՝ չիտա՛կ խօսիլ դիտէ միշտ.—
Քու Աղջիկը՝ իմ Մայր Յանդուտ–Յաթունի պէ՛տ է Ինձի 4)»:
Ու ձայն տըւաւ, — «Աղջի՛կ, Պարան կապէ Մէջքիդ՝ վե՛ր քաշեմ»:
Աղջիկ՝ Պարան կապեց Մէջքին, Մըհէր քաշեց. հանեց դո՛ւրս.—
Ելան՝ այնտեղ՝ Արճիճին վրայ՝ ձեռք մը ճատրա՛կ խաղացին...:—

866. Մըհէր Հիւր Կ'ըլլայ Զուլհակ-Ուէցիի

Թողին եկան՝ մըտան Քաղաք, երեքով *).—
Մըհէր տեսաւ որ մէկ Զուլհակ՝ հինա՛ծ *) կ'ընէր Քաղքին–Դուռ †),
Թէ՛ կըհինէր՝ Թէ՛ կուլա՛ր...,
Հինածին ալ՝ կէսը սեւ էր, կէս՝ սիվտակ...:
Հարցուց Մարդուն, — «Ինչո՞ւ՝ մէկ սեւ, ու մէկ սիվտա՛կ կըհիննես,
Թէ՛ կըհիննես՝ Թէ՛ կուլաս.՞.՞.՞»:
Գործըրարը *) ի՞նչ ըսաւ.—
= «Ես Սասնո՛ւ եմ..., Մեր Մըհէրիկ բըռներ են ու Հո՛ր ձըգեր,
Գոհար–Յաթուն ալ այս քանի՛ չարաթ է՝
Զօրքերուն դէմ՝ Ինքը մինակ՝ կըռի՛ւ կ'ընէ համարձակ,
Անոր համար՝ ես ալ մէկ սեւ, ու մէկ սիվտա՛կ կըհիննեմ,
Մէկ կըհինե՛մ՝ մէկ կուլա՛մ...» †):
Մըհէր այնտեղ վերցուց ըսա՛ւ Զուլհակին.—
— «Վարպե՛տ,–ըսաւ–, Հիւր չե՞ս ուղեր այս իրկուն...»:
= «Եղբա՛յր,–ըսաւ Գործըրարն ալ–, Հիւրը՝ Աստծո՛ւ Հիւրն է միշտ,
Ի՛նչ որ ունիմ՝ մէկտեղ կ'ուտենք..., ինչո՞ւ չէ՛...»:
Մըհէր ելաւ՝ Դըրա՛մ տըւաւ Զուլհակին,—

---

3) Հ·456՝ Թագաւորին ներկայութեանն է կ'ըսուի, երբ Մըհէր Միրանի Կորիզով կ'սպանէ ներկայ մեծաւորները՝ (Հուծ· 868՝ փոխարինուած նաեւ՝ Այծի Կողաշարներովը), նման իր Հօր՝ Դաւիթի ըրածին (Հուծ· 779): 4) Այսինքն՝ Սրբուքեան մը պէս է:

*) Երեքով, երեքը միասին: *) Հինած, Հիւսուածք, ոստայն: *) Գործ'րար, Գործուածք ընող, ոստայնանկ: †–†) Եղանակ յօրինելու արժանի կտոր մը:

— «Ես ալ,–ըսաւ–, կըտեսնեմ որ Քու Տան մէջը քի՛չ բան կայ,
Ա՛ռ տար ու տուր Հացի–Թացի՝ բեր ուտե՛նք,
Աւելցածովն ալ Պահակնի՛ք դընէ որ մէջ քընանանք,
Մենք որ երթանք՝ ուրի՛չ Հիւր դայ՝ Ան ալ մէ՛ջը քող քընի»:

867. Մրիէր Կռիւի Կ'երթայ՝ Ջուլհակ-Սրէցիի Փոխած

Հերթը եկաւ Գործըրարին, պէտք է երթայ կըռիւի՛:—
Մի՛ ըսեր ո՛ր՝ Ան ալ երէց է եղեր,—
Պարապ ատեն Իրեն Հինա՛ծ կըհիւսէ...:
Երէցն ըսաւ, — «Ո՞վ է տեսեր՝ երէցն երթայ կըռիւի...»:
= «Ինձի՛ ձըղէ,–ըսաւ Մըհէր–, Քու փոխարէն ե՛ս կ'երթամ» 1),
Երէցն ալ Քէ, — «Որդի՛, Դուն դեռ պըզտի՛կ ես...,
երթաս կըռիւ՝ Քեզ ըսպաննեն՝ մեղքը կ'ինայ Իմ Վըզի՛ն...»:
= «Կ'երթամ–պահուիմ Քարի մը տակ՝ իրիկունը Տո՛ւն կուգամ.
Պէ՛տք է երթամ կըռիւի՝ բայց՝ չե՛մ երթար...»:
Լուսուն՝ Մըհէր ելաւ վե՛ր,
Մէկ Անքրո՛ց *) մը բըռնեց Իր Ձեռ՝ ելաւ դընաց կըռիւի՛:
Ինք Զի չ'ունէ՛ր, — քըշեց դընաց՝ տեսաւ որ մէկ Իչխան–Մարդ՝
Չէնքեր կապեր՝ ու հեծեր է Իրեն Ձին,
Կ'երթայ՝ Գոհար–Ճաթունին կըմօտենայ՝ ու ե՛տ կուգայ...:—
Մըհէրն ըսաւ՝ «Ես Դաւ'թի–Լաճ՝ Մըհէ՛րն ըլլամ ու դեռ ո՛ղջ...՝
Զի չ'ունենա՛մ Ոտքիս տա՛կ...»:—
Ան ալ հասա՛ւ, մէ՛կ Ապտակով Մարդը Ձիէն վա՛ր բերաւ,
Վերցուց Անոր Լաթեր հագաւ, Չէնքեր կապեց, Ձին հեծաւ 2),
Գընաց Գոհար–Ճաթունի դէմ կըռիւի՛...:
Գոհար–Ճաթուն որ Աչքն ինկաւ Մըհէրին՝

---

1) Շատ հէքիաթներ կան՝ որոց մէջ Գայլիկ (Ջաչլիկ, հէչէլ–իկ) անուն առած Տղան՝ երէցի կամ Գօշի (հէօսէ) որդեգիր կ'դառնայ՝ ու կըռիւի կ'երթայ, կ'յաղթէ ու թագաւոր կ'նստի քաղաքին, ինքն ալ արդէն ծագումով արքայազուն ըլլալով: Կասկած չ'կայ որ՝ այդ եւ ուրիշ հէքիաթներ՝ մեր Ազգային Ժողովրդական Դիւցազնավէպին փրթած թափառիկ մասեր են: *) Անքրոց, երկար ձող: Մըհէր՝ իր հօրը ըրածը կ'ընէ (Հատ. 474, 544): 2) Մպատամի՝ նոյն պարագան՝ իր հօրը քով (Հատուած 617):

Ճանչցա՛ւ ու ըսաւ, — «Մըհէ՛ր, բարո՛վ եկար Դուն Ինձի...»:
Մըհէր խընդաց, = «Գոհա՛ր–Ինաթուն, դա՛րկ»,–ըսաւ:
Կըսի՛ւ ըրին մինչեւ իրկուն, — Գոհար–Ինաթուն՝ Բե՛րդ դարձաւ,
Մըհէր եկաւ Քաղքին մէջ:—

868. Այծի Կողաշարներն Իր Սլաք՝ Ա֊ու-Ջախ...

Եկաւ Քաղա՛ք, Մըհէր դընաց Ի՞նչ ըրաւ.—
*Այծ մը Մորթեց՝ Կողաշարներ *) Քերաւ Մէջքին Բոլորտիք,*
Դարձաւ դընաց Մըտաւ Տո՛ւն:
Իրիկո՛ւն է, — Երէցու–Լաճ 1) առին տարան Թագաւորի Մեծ Դիւան
Ամեն Կողմէ Կըհարցընեն՝ Երկու Չարքով Նըստածները,—
— «Երէցո՛ւ–Լաճ, դէ՛, Մեզ պատմէ՛, Ի՞նչպէս Կըռիւ ըրիր Դուն...»:
Այդ Մեծերն ալ՝ Ինչ Մըհէրը Բըռներ Էին՝ Նետեր Հոր՝
Կէսը ա՛յս Կողմ, Կէսը ա՛յն Կողմ՝ Նըստա՛ծ են:—
*Մըհէր Մէջքէն *) Կողաշա՛ր Մը Կըքաշէր՝*
Կըղարնէր աջ, Մարդո՛ւ մ՝ Սըրտին, Քամակն Ի վեր Կուտար դո՛ւրս,
Կ՚ըսէր, — «Այսպէ՛ս Կըզարնէի Ես ալ Գոհար–Ինաթունին...» 2):
Մարդն Իր տեղը Կըմեռնէր...:
Կողաշա՛ր մ՝ ալ Իրեն Մէջքէն Կըքաշէր՝
Ու Կըզարնէր Մէկա՛լ Մարդու Սըրտին վրայ՝
Ու Քամակէն դո՛ւրս Կուտար,—
Կ՚ըսէր, — «Այսպէ՛ս Կըզարնէր Ինձ՝ Գոհար–Ինաթուն՝ Կըռւի Մէջ...»:
Ի՛նչքան Այծի Կողաշար կար Մէջքին Բոլոր՝ Քաշեց դո՛ւրս,
*Մէկ–մէկ զարկաւ՝ այդ Մեծերը Կարգով ամե՛ն պառկեցուց... *):*
Դարձաւ ապա՝ Գըրպաններէն Ի՞նչ Հանէ...,—
*— Մէյընի–Զի՛ր *) Էին եւիեր՝ Մըհէր Ճաշին Կերե՛ր Էր,*
*Կողինճները *) Ժողվեր՝ Գըրպա՛նն Էր պահեր...:—*

---

*) Կողաշար, Կողոսկր: 1) Այսինքն՝ Մըհէր, Երէցին որդեգիր–տղայ Ճանչցուած: *) Մէջք, Գօտի, Մէջքի լայն կապ: 2) Հ·456՝ միայն Տիրացի–Կորիզով է որ Մըհէր Ի գործ Կ՚դնէ այս խաղ–սպանումները, իր հօրը նման (Հատուած 779): *) Պառկեցնել, Տապալել, սպաննել (Թափով նետուած առարկայով մը): *) Զիր, Արեւին առաջ՝ կորիզով մէկտեղ չորցուած՝ Ծիրան: *) Կողինճ, Կորիզ:

Մէկ–մէկ առա՛ւ այդ կոճերէն *), բըռնեց երկու Մատի մէջ 3)՝
Երբ Մատներուն մէջ կըսեղմէ՛ր այդ կոճեր՝
Կոճը թափով դո՛ւրս կըթըռէր՝ կ՚դըպչէր Մարդոց մէկ կողին՝
Մէկալ կողէն դո՛ւրս կուտար,—
Այն Մարդ՝ իր տե՛ղ կ՚իյնար կ՚մընար *) բոպէէն...:
Այս անգամ ալ՝ մէո՛ւս չարքին կ՚բըռնեցընէր իր կողինճ՝
Ա՛յդ չարքի Մարդ՝ կողը ծակած...՝ կըթաւալէր իրեն տեղ...:—
Այսպէս՝ մէկ ա՛լ, ու մէկ՝ ձա՛խ կողմ, մէ՛կ ու մէկ՝
Զարկա՛ւ կոճեր, Մարդիկ ինկան մէկ առ մէկ...:
Ամենամէկ կոճ որ կըզարնէր Մարդերուն՝
Այդպէ՛ս կ՚ըսէր՝ կըզարնէր,—
— «Այսպէ՛ս ահա, ինճ կըզարնէր՝ Գոհար–Խաթուն՝ կըուի մէջ»,
— «Այսպէ՛ս ահա, կըզարնէի ես ալ Գոհար–Խաթունի՛ն...»:—
Մէ՛կը չ՚ի՛չխեր *) բան մը ըսէ՝ երէցու–Ղա՛լ–Տըղայէն...:—

869. «Երէցու-Լաճը»՝ Մրիէրի Զէն-ու-Զարդերուն Մէջ

Թափաւորը՝ իր Տեղ՝ մինակ՝ մըտմըտալով ի՞նչ ըսաւ.—
«Երէցու–Լաճ պիտի երթա՛յ՝ Գոհար–Խաթուն ի՛նճ բերէ...»:
— «Կըտրի՛ճ Տըղայ,–ըսաւ այնտեղ, Շաբէ–Արքան Թափաւոր–,
Առաւօտուն պիտի երթա՞ս կըուիւի...»:
= «Շաբէ–Արքա՛ն,–ըսաւ Մըհէր–, ես Սասունայ–երկրէ՛ն եմ,
Ու Մըհէրին՝ Իր Զիուն ալ՝ մըշակութի՛ւն *) եմ ըներ...:—
Մըհէրի Ի՛ր Հագուստները տո՛ւր հագնիմ,
Անոր Զէնքեր տուր ես կապե՛մ ու երթամ՝
Մըհէրի Զին բըռնեմ բերեմ Ֆեզ ընճա՛յ...:
Բաւաչափ ալ Զօ՛րք տուր Ինճի օգնական՝
Գոհար–Խաթուն բըռնեմ բերեմ Ֆո առա՛ջ...»:
Զէնուզարդերն ու Զօրք տըւաւ, Մըհէր առաւ ու գընա՛ց,

---

*) Կոճ, Գաւազի մէջի փայտէ մասը, կորիզ: 3) Ցուցամատի եւ բթամատի մէջ, ինչպէս կ՚ընեն տղաք՝ կեռասի կամ սալորի կուտերով: *) Մնալ, Մեռնիլ, անշարժ իյնալ՝ վերջանալ: *) Իշխել, Ժտիլ, համարձակիլ:

*) Մշակութիւն, Ծառայութիւն, ոպասարկութիւն:

Տարաւ Զօրքեր ճըդեց մէկ նե՛ղ Զորի մէջ 1),
Ինքը կեցաւ Զօրքին առեւ, կանչեց՝ Զիւռն ձա՛յն տըւաւ.
Զին ճանչըցա՛ւ Մըհէրի ձայն, վազեց եկաւ Իրեն մօտ 2)
Դարձաւ բըռնե՛ց Զօրքին առջեւ, Մըհէր Ինքն ալ՝ եռեւ՛ն,
Զօրքը մէջտեղ կոտորեցին, մէ՛կ չըթողին լըրաբեր...,
եկան հասան Իրարու մօտ, մնացին Ի՛նքը եւ Իր Զին...:—

870. «Դգալ-Բռնող Ամեն Մարդը՝ Հարսնաւէ»

Մըհէր հասաւ՝ Գուռվիկ–Ջալալ Զիւռն աչքեր համբուրե՛ց,
Թուրն առաւ Ձեռ 1), հեծա՛ւ Իր Զին հըրեղէն,
Եկաւ դըռա՛ւ Դոհար–Խաթուն՝ Իր Բերդին մէջ, ու ըսաւ.—
— «Դոհա՛ր,–ըսաւ–, վաղ ես կ'երթամ Թագաւորին՝ ու կ'ըսեմ՝
«Դոհար–Խաթուն կամքը տըւա՛ւ, յօժա՛ր է Գեղ Հարս գալու,
*Միայն կ'ըսէ որ՝ «Քաղաքէն՝ Դըգալ–Բըռնող *) ամե՛ն Մարդ՝*
*Պէտք է որ գայ՝ Իմ Հարսնաւին *) չո՛ւք տալու.*
Թէ գան՝ կուգա՛մ..., չի գան՝ ես ալ չե՛մ գար դուրս»:—
Հարսնաւ Քաղքէն երբ կըտրի...՝
Ես Քաղաքէ՛ն կըտրեմ երթամ, Դուն ալ Բերդէ՛ն զարկ եկուր՝
Մինչեւ որ գանք՝ եւ Իրարու մօ՛տ հասնինք»:—

871. Քաղաքացիք Կուգան Մըհէրի Թուրին Ցակէճ Կ'ածցնին

Մըհէր եկաւ՝ գընաց Քաղաք, Թագաւորին ի՞նչ ըսաւ.—
— «Ապրա՛ծ կենաս, Տէր–Թագաւոր, Մըհէրի Զին բըռնեցի՛... .
Դոհար–Խաթուն ալ կա՛մք տըւաւ, Գեղ Հարս գալու յօժա՛ր է...,
Միայն կ'ըսէ՝ որ «Քաղաքէն Դըգալ–Բըռնող ամե՛ն Մարդ՝
Պէտք է որ գայ՝ Իմ Հարսնաւին՝ չո՛ւք տալու... .
Թէ գան՝ կուգա՛մ, չի գան՝ ես ալ չե՛մ գար դուրս»...»:

---

1) Նման՝ Վահան Մամիկոնեանի եւ Գայլ–Վահանի (Պլան. 205–210, 219–220): 2) Զին ճամբան կտրեր կեցեր էր՝ ըստ 861րդ Հատուածին: Այլաբանական պատկեր՝ Հեծելազօրքին, կամ արագահաս օդնական ուժերուն՝ Ե·րդ եւ Զ·րդ Դարերու Հայ–պարսիկ կռիւներու շրջանին:

1) Զին՝ Թուրը խլելով փախեր էր՝ Մըհէրը բռնուած առեն (Հուծ. 861): *) Դգալ բռնող, Դգալով ուտելու չափին հասած: *) Հարսնաւ, Հարսնցուն՝ իր ծնողքին տունէն առնելու եկող հարսնեւոր–բազմութիւնը:

Շաբէ–Արքան չա՛տ խընդացաւ ու ըսաւ.—
= «Շա՛տ ապրի Մեր Երէցուս–Լաճ..., Գոհար–Խաթուն ո՛ղջ մընայ,
Առաւօտուն՝ ե՛լ Քաղ՛քի մէջ ձա՛յն տուր՝ կանչէ՛ ամէն Մարդ,
Ով կարող է Դրժալ բըռնել՝ գան ու երթան Հարսնառի...»:
Լուսաբացին՝ Մըհէբ ելաւ՝ դընաց Քաղաք՝ ձա՛յն տըւաւ,
Մարդեր ամէ՛ն հաւնեց տարաւ Հարսնառի...:
Հետքը երբոր Քաղքին–Դուռէն կըտրեցաւ՝
Մըհէբն առաւ Քաղքէն բըրդե՛լ այդ Մարդեր,
Գոհար–Խաթուն ալ՝ Բերդէ՛ն...:
Գոհար–Խաթուն՝ կանչեց ըսա՛ւ Ամէնին,—
— «Ով Մըհէբի Թուրին տակէն դայ եւ անցնի՝ չե՛մ զարներ...
Ով ո՛ր չ՛անցնի՝ կ՛ըսպանե՛մ...»:
Ամէնն ալ հոն՝ եկան անցա՛ն Թուրին տակէն՝ ու դացին:—

378. Մրիէր Կ'ասպանէ Շաբէ-Աբքան Եւ Ջուլհակն Անոր Ցեղը Կ'դնէ

Մըհէբ քըշեց՝ դընաց Շաբէ–Արքանի դէմ՝ ձայն տըւաւ,—
— «Դէ՛հ, Քու ժամին՝ պատրա՛ստ կեցիր, անիրա՛ւ...»:
Շաբէ–Արքան դո՛ւրս ելաւ Թէ, = «Դուն ո՞վ ես...» 1):
— «Ես Մըհէ՛բն եմ...»,–ըսաւ Ան ալ պօռալով:
= «Չէ՞ որ,–ըսաւ–, եօ՛թն օր Արճիճ հալեցուցի՝ ու լեցուցի Քու [վըրայ»:
— «Ես Արճիճը ծակեցի ու դո՛ւրս եկայ...»:—
Ըսա՛ւ. Մըհէ՛բ...,— զարկաւ Շաբէ–Արքանի Վի՛զն ալ կըտրեց:—
Գընաց Գառւոյ Աղջիկ բերաւ, Գործըրարն ալ միասին,
Բերաւ Անոնք Իրարու հետ պըսակե՛ց,
Դըրաւ՝ Շաբէ–Արքանի տեղ՝ այդ Երկրին վրայ Թագաւոր,
Ինքը առաւ Գոհար–Խաթուն՝ զարձան եկան Իրեն(ց) Բերդ,
Ներսեան կերան ու խմեցին, տօ՛ն ըրին:
Մըհէբ այնտեղ Թագաւորեց՝ Թէ տարի մը Թէ քըսան...,
Տարի մ՝՝ խաղաղ, երկու–տարին կըռիւ՛վ...,—
Գոհար–Խաթուն չատ չ՛ապրեցա՛ւ, Իր Արեւը տըւաւ Զե՛զ,
Մըհէբ ելաւ՝ քըշեց եկաւ Սասմանց–Տուն:

---

1) Մըհէբի եւ Շաբէ–Արքանի միջադէպերը՝ էական կիծերուն մէջ՝ նման են Թլոլ–Դաւիթի եւ Մըսրամէլիքի հանդիպումին՝ անոր կանաչ–Վրանին առջեւ. (Հատ. 617–620, 625–627):

Դ. ՄԸՀԷՐԻ ՎԱԽՃԱՆԸ

878. Զէնով–Օհանի կնիկը՝ Լոզանցիի Պաեռուակով՝ Կ'ուզէ Հրապուրել Մըհէրը

Մըհէ՛րն ըսե՛ս...՝ չատ կըտրի՛ճ էր ու հըսկա՛յ...,
*Եօ՛թը նետ *) էր կուրծքին լայնք...,*
Շատ տեսակո՛վ, սիվտակակերպ ու քաղցրարի՛ւն Տըղայ էր։
Ամեն առտուն Որսի՛ կ'երթար՝ ու կըղառնա՛ր իրիկուն 1)։
Զէնով–Օհան՝ Գոհար անուն կընի՛կ մ՝ ունէր նորատի 2)։
Մինչեւ այդ օր՝ ա՛յդ կընկան ալ՝ ժառանգ–Զաւակ չէ՛ր եղեր։—
Ա՛յդը ինկաւ Մըհէրին, Սիրտը վըրան մեղաւորցա՛ւ այս կընկան։
«Ինձի այլեւս Տըղայ չե՛ղներ Օհանէն,–ըսաւ կընիկն ինքիրեն– 3),
Ասիկ — Մըհէր —՝ ի՛նձ կըվայլէ տարիքով...,—
Դայ ինձի հետ՝ թերեւս Տըղա՛յ մ՝ ունենամ ես իր ծեղէն...»։
Ան ալ, մէկ օր, վերցուց ըսա՛ւ էրիկին,—
— «Օհա՛ն,–ըսաւ–, ասօր Դո՛ւն դաս՝ երթաս Որսի, Մի՛ս բերես,
Մըհէրիկը թող մընայ Տո՛ւն՝ իր Լաթերը լըւանա՛նք...»։
Զէնով–Օհան Որսի՛ դընաց, Մըհէր այդ օր մընաց Տո՛ւն։
Կընիկ — Գոհար — ելաւ այնտեղ ի՞նչ ըրաւ.—
Բերաւ, չուտ մը, մեծ Պըղինճով Ջո՛ւր տաքցուց,
Կանչեց Մըհէր՝ որ դայ այնտեղ՝ Ջուր լեցընէ իր Գըլխուն,
Ինք լողանայ՝ Մըհէր տեսնէ՝ մեղաւորնայ դայ իր հե՛տ 4)։
*Կընիկ լաթեր հանեց՝ եղաւ մօրէ–մերկ *),—*
— «Մըհէ՛ր,–ըսաւ–, դէ՛հ, Ջո՛ւր լեցուր Իմ Գըլուխիս, լողանա՛մ»։

---

*) Նետ, Նետաչափ։ 1) Մըհէրի մանկութեան չրջանը՝ Տես–նել Հատ. 801–802, 806–812։ 2) Զէնով–Օհանի Սարօ կինը (Հատ. 713) մեռնելէն յետոյ (Հատ. 790)՝ ենթադրելու է որ Օհան նոր կին մ՝ առած է։ Կամ կընայ նոյն Սարօն ըլլալ՝ որ ողջ է եւ ըստ փոփոխակի կոչուած է Գոհար, Սառեա, Շերին–Անախտն–Գոհար։ 3) Կ'ակնարկէ՝ Զէնով–Օհանի տարիքոտ ըլլալուն, Տե՛ս քիչ վա–ռը։ 4) Զէնով–Օհանի կնկան գաղտնի սիրոյ միջադէպը՝ ե·13–14 պատմուած է Դաւիթի անունով՝ որ սխալ է։ Սասմանց–Տունէն Մը–հէրի ժառանգապուրկ հանուիլն ու յաջորդող դէպքերը՝ չեն արդա–րացներ Դաւիթի ճիւղին վերագրումը։ Անոր հետ անցած սիրոյ մա–սը Տես Հատ. 713–715 և 790։ *) Մօրէ–մերկ, Մնած բոլէին պէս մերկ, անծածկոյթ։

Մըհէր մէկ Ձեռ դըրաւ Աչքին, մէկալ Ձեռնով Ջո՛ւր լեցուց։
Օհանի կին դարձաւ ըսաւ՝ «Տեսնեմ ինձի կընայի՞...»։
Տեսաւ՝ Մըհէր մէկ Ձեռ դըրեր Աչքերուն,
Մէկալ Ձեռնով՝ Ջո՛ւր կըթափէ 5) իր վըրայ,—
Ըսաւ, — «Մըհէ՛ր, ինչո՞ւ այդպէս Ձո Աչքերը խըփեր ես...»։
= «Հարսա՛ *),—ըսաւ—, չէ՞ որ մե՛ղք է՝ որ ես տեսնեմ Ձու Մարմին.
Իմ Հօրեղբօր–կընի՛կն ես Դուն, կ՚ամըչնա՛մ...»։
—«Ա՞ո ի՛նչ խօսք է, քա Մըհէրի՛կ, Դուն ինձի չա՛ո դուր *) կուգաս»։
Ու Ձեռ նետեց Մըհէրի Վիզ, որ իր կամքը կատարէ.—
— «Գաս ինձի հետ,—ըսաւ Անոր—, Մեր Գըլուխը մէ՛կ ընենք...,
Թերեւս ինձի Տըղա՛յ մ՚ ելնէ Ձու Մէջքէն...,—
Ձու Հօրեղբայր Ջէնով–Օհան՝ ծերացեր է՝ չի՛ կըրնար...»։
= «Ա՛յ Հօրեղբօ՛ր–կընիկ,—ըսաւ—, ես այդպէս բան չե՛մ ըներ.—
Դուն իմ Քըրոջ ու Մօր տե՛ղն ես, ես Ձու Տըղա՛ն եմ, սեպէ...»։
Ի՛նչ որ ըսաւ Օհանի–Կին, ի՛նչ որ ըրաւ՝ անօգո՛ւտ...,—
= «ես չե՛մ խլար *) Ձու Ձեռաց հետ...»,—ըսաւ Մըհէր, վերջացուց,
Թողուց փախաւ՝ պընաց Քաղաք, մինչեւ իր՛կուն չ՚եկա՛ւ Տուն։
«Աղէ՛կ, Մըհէ՛ր...,—ըսաւ Գոհար—, Իմն ու Ձուկըդ Թող մընա՛յ»։
Եւ ի՞նչ ըրաւ Օհանի–Կինն՝ երբ Մըհէրը «Ձէ՛» ըսաւ,—
Ելաւ այնտեղ Իր Շապիկի–Օձիք պատռեց ու հազաւ,
Տամերն եկնեց *) Գըլխուն վըրայ, Դէմքը ճանկեց՝ արիւնեց,
Անըզգամի նըման գընաց՝ Գըլուխ ծածկեց՝ նըստեցաւ...։—

874. «Կամ Ե՛ս Այս Տուն Պիտի Մնամ՝ Կամ Մըհէր...»

Իրիկուն որ Ջէնով–Օհան Ըսէն դարձաւ՝ եկաւ Տուն՝
Տեսաւ՝ Կընիկ՝ Գըլուխ ծածկեր, Դէմքը կախեր՝ նըստե՛ր է։—
— «Կընի՛կ,—ըսաւ—, ի՞նչ է եղեր, Դէմքըդ կախեր՝ նըստեր ես...,
Վեր չե՛ս եկներ՝ Որսը առնես իմ Ձեռքէն...»։
Նայեց տեսաւ՝ Ծամեր Գըլխուն փետրըտա՛ծ...,
Շապկին–Օձիք պատըռտած է, Դէմքն արնա՛ծ...,—

---

5) Ջուրը՝ լողացողին գլխուն կ՚թափեն ամանիկով մը՝ զայն թաթխելով ջրալից (տաք) կաթսային մէջէ։ *) Հարսա՛, Ա՛յ հարս։ *) Դուր գալ, Հաճելի թուիլ, ըղձալի ըլլալ։ *)-Ձեմ խգար, Ձեմ դար (չեմ յօժար ՝ի գալ)։ *) Երթել, Ծրուել։

— «Կընի՛կ,–ըսաւ–, աս ի՞նչ եղեր է Քեզի՛... .
Օր ջոջութիւն՝ առակութի՛ւն *)..., ի՞նչ է կ'ընես Դուն ինձի՛...,
Ինչո՞ւ երեսդ արիւնած է, Վըրայ–Գըլուխդ պատըռտած...»:
Կընիկ վերցուց ի՞նչ ըսաւ.—
= «Այդ չըլըրա՛ծ *) Տըղայ–Մըհէր՝ թողեր ես Տուն սերմացո՞ւ...
Դուն կ'ըսէիր՝ «Եղբօրս–Տըղան այսպէ՛ս աղէկ Տըղա՛յ է...».
Ես կ'ըսէի՝ «Իմ Տըղա՛ս է...», Զաւակի տե՛ղ կ'առնէի...,—
Չէ՛ դիտեր՝ թէ Դուն ինձի ուրի՛շ էրի՛կ մ' ես բերեր...:—
Այսօր Գըլո՛ւխս կըլըտայի *)՝ եկաւ Ինձի Զե՛ռք նետեց...,
Չիս Ջրրիս մէջ խայտառակե՛ց Այդ Տըղան...:
Ես ալ Օձիքս Չեմ չըտրի՛՝ այս վիճակի՛ն հասցուց Ձիս...,—
Կամ ե՛ս այս Տուն պիտի մընամ՝ կամ Մըհէ՛ր...» 1):
— «Կընի՛կ,–ըսաւ Ձէնով–Օհան–, ե՛ս՝ իմ Աստուած...՝ սո՛ւտ կ'ըսես.
Իմ Եղբօր–Լաճ 2) Մըհէր՝ չէ՛ր նեղ այդպէս բան...:
Մեր Տան կըտրիճ՝ Դուն իմ Զեռքէս մի՛ հաներ...:
Դուն կըտեսնես՝ Սասմանց–Տունէն մընացեր է այդ մէկ Գառ 3),—
Սասմանց–Ջո՛ջ–Տան Ըմբիշներու ծիլն ու արմատ մի՛ կըտրեր...,
Ախո՛ւս է որ՝ Մըհէր(ն) երթայ՝ իյնայ օտա՛ր դո՛ց Դուռներ...,
Սասուն՝ անտէր, ո՛րբ մընայ...»:
= «Որ այդպէ՛ս է,–ըսաւ Կընիկ–, ես այս Տունէն դո՛ւրս կ'երթամ,
Մըհէր կենայ Քեզ համա՛ր...»:
Ձէնով–Օհան՝ դարձաւ Կընկան ի՞նչ ըսաւ.—
— «Գոհա՛ր,–ըսաւ–, Մեր Հայ–Ազգի օրէնքին մէջ, դիտե՛ս ալ,
Կընիկ թողնել չի՛ ըլլար...:—
Ես ալ՝ Սասմանց–Ջո՛ջ–Տունէ՛ն եմ, իմ պատիւին ամօ՛թ է...,
Ապա իմ ուժն ալ չի՛ յաղթեր, ես չե՛մ կըրնար Իր վըրան...»:

---

*) Օր ջոջութիւն՝ առակութիւն, Հասուն տարիքի մէջ՝ խայտառակութիւն (... սէ՛տք էր որ պար): *) Ձըչըրա՛ծ, Չ'մեծնալի՛ք, չ'զօրանալի՛ք, փճանալու արժանի: *) Գլուխ լուալ, (կիներու) ամբողջ մարմնով լոգանք առնել: 1) Մըհէրի համար՝ Ձէնով–Օհանի կնկան ունեցած սէրը, մերժուելին ու զրպարտումը՝ հմմտ.՝ Անթէի ունեցած սիրոյն՝ Բէլլէրոփոնի հանդէպ, — «... il a voulu me contraindre à souiller ta couche», [Iliade, VI. 84]: 2) Այսինքն՝ հօր–եղբօր լաճ· զի Ձէնով–Օհան՝ Մըհէրի հօր Թլը–Դաւիթի եղբայրը չ'էր: 3) Աւելի ճիշդ՝ Խոյ՝ Տե՛ս Հատ· 836, 838:

Եւ Ինքիրեն մխաք ընելով՝ Կընկան ըսա՛ւ՝ ճարահատ,—
— «Դու՝ Քո Աստուա՛ծ..., ելիր վակէ՛ Դարպասներ՝
Մըհէր այլեւս սիրտ չի՛ ըներ՝ աւերէ ու նեղս մըտնէ... 4).
Ու գայ՝ կ՚ըսենք՝ «Գընա ա՛յնտեղ՝ ո՛րտեղէն որ եկեր ես...»,—
Ու թող երթայ՝ ո՛ւր որ կ՚ուզէ՝ հո՛ն ապրի...,
Ա՛լ Ան՝ նորէն՝ Սասմանց–Ճըրագ պիտի վառէ՝ ես տեսնե՞մ...»:

875. Մըհէրի Ու Ջէնով-Օհանի Բացատրութիւնները

Ելան՝ Մըհէր դեռ չէ՛ր եկած՝ Դուռներ ամուր փակեցի՛ն:
Մըհէր՝ իրկուն՝ եկաւ որ գայ մըտնէ Տո՛ւն՝
Զեր տըւաւ Դուռ՝ նայեց տեսաւ փակե՛ր են...,—
Հասկըցա՛ւ որ՝ Իր Հօրեղբօր–Կընկան ըրա՛ծն է այդ խաղ,
Նըստաւ Դրան Շեմքին վըրայ, լացով կանչեց՝ ու ըսաւ.—

— «Հայրահո՛տ Հօրեղբա՛յր, հայրահո՛տ Հօրեղբա՛յր... 1),
Ասօր Հա՛յր չ՚ունիմ՝ ըրէ՛ Ինձի հայրութիւն...:
Հայրահո՛տ Հօրեղբա՛յր, հայրահո՛տ Հօրեղբա՛յր...,
Ասօր աւտէ՛ր եմ մընացեր, ըրէ՛ Ինձի հայրութիւն...:
Հայրահո՛տ Հօրեղբա՛յր, հայրահո՛տ Հօրեղբա՛յր...,
Ասօր ես ո՛րբ եմ մընացեր, ըրէ՛ Ինձի հայրութիւն...»:

Հօրեղբօր Սիրտն ալ այդտեղը՝ լեցուեցա՛ւ...,
Ելաւ Բերդի Դըլիէն կանչեց ու ըսաւ.—
= «Որդի՛,–ըսաւ–, այդ բան ինչ Դո՛ւն ես բըռներ՝
Մեր Ազգի մէջ՝ բընա՛ւ մէկը չի՛ բըռներ...,—
Գընա այնտե՛ղ՝ ո՛րտեղէն որ եկեր ես...:
Մեր Ազգի մէջ՝ այդտեսակ բան չ՚է՛ լըսուած...
Քեզ չե՛մ պահեր..., ե՛լ դո՛ւրս գընա Այս Տունէն...:
Քու Հօր հե՛տ ալ կըռիւ ըրէր..., չա՛ր–ժառանգ...,
Ելիր գընա՛ Մեր Քաղաքէն, ալ մի՛ կենար Այս–Երկիր...,
Գընա Քո՛ւ Հօրն ու Մո՛ր հարցուր՝ ի՛նչ կ՚ըսեն...,—
Դուն գըրկուա՛ծ ես Մեր Սասմանց–Տան Բաժինէն...»:

---

4) Տե՛ս Հատուած 876՝ Մըհէրի ըսածները, նախատեսուած՝ Ջէնով–Օհանէն:

1) Երդով:

Մըհէր կանչեց Իր Հօրեղբօրն ու ըսաւ 1) —

— «Քու կընիկը՝ Իմ Մօր Խանդուտ–Խաբուսի տե՛ղն է եղած,
Ես ատոր մէջ՝ մեղմ չ'ուսի՛մ...:
Քու կընիկը՝ Ինձի համար՝ մաճուր ու սո՛ւրբ է եղած,
Ինչպէս Իմ Հօր Թառլան–Դաւթի Գերեզմա՛ն...,
Ես ատոր մէջ՝ մեղմ չ'ուսի՛մ...:
Քու կընիկը՝ Իմ Բերանի Մաս–Սըրբուքի՛ւնն է եղած,
Ես ատոր մէջ՝ մեղմ չ'ուսի՛մ...:
Քու կընիկը՝ Իմ Ճակտի սուրբ կաճաչ Մեռո՛ւնն է եղած,
Ես ատոր մէջ՝ մեղմ չ'ուսի՛մ...:
Քու կընիկը՝ Ինձի համար՝ Լուս–Արեգա՛կ է եղած...,
Ես ատոր մէջ՝ մեղմ չ'ուսի՛մ...:
Հազա՛ր ափսոս, հազա՛ր ափսոս, Իմ հայրահո՛տ Հօ՛րեղբա՛յր,
Քու կընիկիդ խարուա՛ծն ես Դու, Հօ՛րեղբա՛յր,
Դէ՛, կաց բարի՛, ես ալ կ'երթա՛մ, Հօ՛րեղբա՛յր...»:

876. Մըհէր՝ Լալով Կ'հեռանայ Սասմանց–Տունէն

Հօրեղբայրը՝ Զէնով–Օհան՝ Դուռը բացաւ՝ Նե՛րս կանչեց:—
Մըհէրն ըսաւ, — «Է՛յ Հօրեղբայր, երդո՛ւմ ըրի՝ Ներս չե՛մ գար:
*Հիմա կըրնա՛մ աքո՛ւց *) մը տամ Ձեր Փականքին ու Դրան,*
Քու Բերդն ու Քո կընիկին երթան Գետնի տակը՝ Անդունդնե՛ր...,
Բայց ապա Դուն Իմ հայրահոտ Հօրեղբա՛յրն ես՝ չե՛մ ըներ...,
Եւ այս բոլո՛ր՝ Իմ Հօր Ձեռքո՛վն է չինած,—
Սըրտէս չի՛ դար որ աւրեմ...:
Ես Իմ Հօր հետ կըռի՛ւ 1) ըրի...՝ կուշտ չըկերա՛յ կեանքիս մէջ...,
Իմ Հօրեղբօր հետն ալ կըռիւ 1) չե՛մ ըներ...»:
Մըհէրն ելաւ՝ Թողուց կ'երթա՛յ՝ դէշերով,—
Հօրեղբայրը ի՛նչքա՛ն կանչեց...՝ Մըհէր չ'եկա՛ւ, ու գընա՛ց:—
Լալո՛վ կ'երթայ, ու մէչտ կ'ըսէ՛ Ինքիրեն...,—
— «Ինչ դա՛ռ(ն) ձեւով Ձիս հանեցին այսօր Սասմանց–Զո՛լ–Տունէն»:

---

1) Երդով: *) Ախուց, Աքացի, ոտքի հարուած: 1–1) Կուի՝ ՍԱՍՈՒՆԱԿԱՆԻս մէջ՝ դրած եմ գլխագրով (Կռիւ) երբ պատերազմ կ'նշանակէ. դրած եմ պարզ (կռիւ)՝ երբ վէճ է: Վրիպած առալչին մասերուն մէջ՝ ուղղել ըստ այնմ:

877. Մրհէր՝ Դուրջիստանէն Սասուն Կ'երթէ Իր Կնոջ Մարմինը

Մըհէր դընաց որ երթայ Իր Հօրն ու Մօրը Գերեզման՝
Միտքը ինկաւ Դուրջիստանի Իր Կընի՛կ,—
Դարձաւ եկաւ՝ Իր Զին հեծաւ՝ քըշե՛ց դընաց Դուրջիստան։
Գընաց տեսաւ՝ Դուրզը ի՛նչպէս որ Թողեր էր Դըրան դէմ՝
Այնպէս Իր տեղ մընացեր էր, Մա՛րդ չէ՛ր գացեր Տունին կողմ։
Ֆաղաքն ըսես՝ աւերա՛կ է, Մա՛րդ—մարդասանք չըկա՛յ մէջ...։
Մըտաւ Իր Տուն, երբոր դընաց ելաւ վեր՝
Տեսաւ կընիկ՝ Գահլին վըրայ, Իր Տեղ նըստուկ, մեռե՛ր է... 1)։
Զեռը տարաւ կընկան Զեռքին՝ տեսաւ Գի՛ր մը Ափին մէջ...,—
Առաւ կարդաց՝ Գըրին մէջը ա՛յս կ'ըսէր.—
— «Մըհէ՛ր, Քենէ խընդի՛րք մ' ունիմ՝ կատարե՛ս...,—
«Ինչ ժամանակ որ Դուն կուգաս՝ Զիս կըտեսնես՝ չունչ փըչած...՝
«Առնես տանիս Իմ Մարմին ալ՝ Քեզի հետ...,
«Տանիս Սասո՛ւն, այնտեղ Խանդուտ–Խաթունի քո՛վ՝ Զիս թաղե՛ս...
«Զիս չըթողո՛ւս այս Կըտապաչտ Հողի մէջ...»։
Ելաւ առա՛ւ Կընկան Մարմին՝ բնդուց բերաւ Սասմանց–Տո՛ւն,
Տարաւ՝ Խանդուտ–Խաթունի քո՛վ՝ Դամբան չինեց՝ մէ՛ջ դըրաւ.
Ժամ–Պատարա՛գ ընել տըւաւ՝ Իր Հօրն ու Մօր Հոգիին,
Ու Սասմանց–Տան՝ Մեծին, փոքրին, — Ամենո՛ւն...։—

878. Մրհէր՝ Դէրվիշի Տպաւորմով՝ Զէյով-Օհանի Ցուցք

Մըհէր դընաց՝ մէկ ժամանակ՝ երկրէ–երկիր մա՛ն եկաւ,
Դարձաւ նորէն՝ եկաւ հասաւ Սասմայ քովէ։—
Իմացա՛ւ որ Իր Հօրեղբօր Օհանի կին հիւա՛նդ է,—
Հաղուստ փոխեց, երեսն ուրի՛շ դո՛յն քըսեց,
Դէրվիշի ձե՛ւ մըտաւ՝ գընաց Սասնու մէջ.—
Լուր տարածեց թէ՝ «Ես ճարտար Բըժի՛շկ եմ,
Ի՛նչ վիրաւոր, հիւանդ ըլլայ՝ դե՛ղ կ'ընեմ ես, կըրուժե՛մ...»։

---

1) Պզտիկ–Մըհէրի ձիւղին վերջամասը (Վախճանը)՝ մեծվայելուչ դամբանականի մը տպաւորութիւնը կըթողու։ Ընթերցողը կ'ըզգայ որ՝ մեր զմայլելի Դիւցազնավէպին փլուզումն է...՝ դէպի Մըհէրի–Դուռը, կերպած–Քարը։

Ահեղ տարան Օհանի Տուն, մըտաւ նե՛րս,
Ձէնով–Օհան հարցուց ըսա՛ւ Բըժիշկին,—
*— «Դէրվի՛շ–բաբա, բանը դըլուխ կըհանե՞ս... *)»:*
= «Ինձի նըման,–ըսաւ Դէրվիշ–, Բըժիշկ չըկա՛յ այս երկիր...»:
— «Դի՛ւ հ, իմ կընիկ՝ Տիկին–Գոհար՝ վէրքերու մէջ, քըրքըրուե՛ր,
Աստուած հետո՛ւն ու ե՛տ ընէ, անըուժելի՛ է դարձեր... .
Լուացընես ու վե՛ր հանես՝ ինչ որ ուզես՝ կուտա՛մ ձեզ...»:
= «Կըբըժըշկե՛մ,–ըսաւ Դէրվիշ–, միայն՝ Հիւանդ՝ պէտք է որ՝
Իր Գըլուխէն բ՛նչ է անցեր՝ ինձի ըսէ՛ մանրամասն...»:
Դարձաւ ապա՝ հիւանդ պառկած Իր Հօրեղբօր–կընիկին,—
*— «Ընանէ՛ *) ,–ըսաւ–, մանկութենէն բ՛նչ եկեր է Քո Գըլուխ՝*
Մէկիկ–մէկիկ ըսէ՛ չիտակ, որ դե՛ղ ընեմ՝ լաւանաս...»:—

879. Դոհար Կ'խոսուվանի Իր Դաղտնի Սէրը

— «Ատեն մ' ,–ըսաւ Տիկին–Գոհար–, Մեր Տունին մէջ՝ Մէ՛կը կար...,
*Իմ էրիկիս եղբօր–Տըղա՛ն..., չատ տեսակով *) Տըղա՛յ էր...:*
Աչքըս ինկաւ այդ Տըղայի՛ն, վա՛յ ինձ, մեղա՛յ..., ի՞նչ ըրի...,—
Ելայ մէկ օր՝ Մարդուս ըսի՝ «Այսօր՝ Որսի՝ Դո՛ւն դընա...,
Մըհէր ինքը Քող մընայ Տո՛ւն...՝ որ Իր Լաթեր լըւանա՛մ»...:
Իմ Մարդն ելաւ՝ Որսի՛ դընաց..., ես Զո՛ւր դըրի տաքցուցի...,
Տարայ Գոմը, ըսի՝ «Մըհէ՛ր, արի Գըլխիս Զո՛ւր լեցուր»...:
Տեսայ՝ Մըհէր մէկ Ձեռ դըրեր Իր Աչքերուն՝ պինդ փակեր՝
Մէկալ Ձեռնով Զո՛ւր կըլեցնէ Իմ Գըլխուն...:
Ըսի՝ «Մըհէ՛ր, Քեզ բերի որ՝ Իմ Մարմինը Դուն տեսնես...,
Քու Սիրտ փոխուի...՝ ինձ հետ Գըլուխ մէ՛կ ընենք»...:
Մըհէրն ըսաւ՝ «Ի՛մ Մայր..., չէ՞ Դուն Իմ Մօր տե՛ղն ես՝ վերջապէս,
Իմ Հօրեղբօր–կընի՛կն ես Դուն..., ինձի համար Դուն սո՛ւրբ ես...,
Մեր Ազգի մէջ այդ բան չ'ե՛ղեր, ի՞նչպէս ընեմ ես այդ բան...».
Ես ալ՝ այնտեղ...՝ Ձեռ նետեցի Մըհէրի Վիզ՝ որ բըռնե՛մ...,
Մըհէր փախաւ՝ Տունէն դընա՛ց, մինչեւ իրկուն չ'երեւա՛ց...:
Ալ բարկացած...՝ ես իմ Շապիկ պատռտեցի, ճեղքեցի՛...,
Ծամերս Գըլխո՛ւս փետրըտեցի..., արիւնեցի՛ երեսներս...,

---

*) Բանը գլուխ հանել, *Բուժումն իրագործել, ստուգապէս բուժել–կրնալ: *) Նաեւ՛, *Քոյրի՛կ: *) Տեսակով, *Տեսքոտ, դեղեցիկ:*

Իրիկուն որ Իմ Մարդ Որսէն Տո՛ւն դարձաւ՝
Ես Իմ Մարդուն զանգատեցայ՝ թէ՝ «Մըհէր Ինձ Չե՛ռք նետեց...,
Այսպէ՛ս ըրաւ..., այս վիճակի՛ն հասցուց Զիս...»:—

880. Մրհէր՝ Դէրվիշի Իր Ծպտումը Ե՛թողու

Հիւանդ Գոհար՝ երբոր ըսա՛ւ այս ամենը՝ լըմընցուց,—
Մըհէրիկը — Դէրվիշ-բարան — դարձաւ այնտեղ ի՞նչ ըսաւ.—
— «Է՛ Հօրեղբայր..., Դուն Ձո երկո՛ւ Ականջներո՛վդ լըսեցիր...:
Մէկ Ջո՛ւր բերէք,—ըսաւ—, Ձեռքերս լըւանա՛մ,
Մաքուր ըլլան՝ որ դե՛ղ ընեմ Վէրքերուն...»:
Բերին Ջուրը, Ձեռքեր լըւաց, ու երեսներն ալ մէկտեղ...,—
*Դեղրունքը *) որ Դէմքին քըսեր՝ սեւցուցե՛ր էր Ձեռք-ե՛րես...՝*
Մաքրեց հաննց, իր սիվտակ Մորթ մէջտե՛ղ ելաւ Վարդի պէս,
Դէրվիշի Իր Հագուստները հաննց նետեց՝ եղաւ Ի՛նք,—
— «Հօրեղբա՛յր, չէ՞՝ Ես Մըհէրն եմ...»,—ըսաւ՝ Անոնց դառնալով:
Նայեցան որ՝ իրա՛ւ Աի Մըհէ՛րն է...:
— «Է՛ Հօրեղբա՛յր,—ըսաւ Մըհէր—, Ձու Ականջո՛վդ լըսեցիր... .
Այն օր Կընկանդ Հաւատացի՛ր, ու փակեցի՛ր Ձո Դուռները,
Ես դիշերով մընացի դո՛ւրս՝ դացի Ինկայ Դուռնէ-Դո՛ւռ...»:

881. Մրհէր Տեղի Չի՛տար Չէնով-Օհանի Խնդրաճիրճ

Չէնով-Օհան՝ հասաւ այնտեղ՝ փաթթըւեցաւ Մըհէրին,
Համբուրուեցան ու լացի՛ն...:
Կընկին Ինկաւ Իր Ոտքերուն՝ ըսաւ, — «Մեղա՛յ Ձեզ, Մըհէ՛ր...,
Ես Իմ Հոգին կորսընցուցի..., անբախտութի՛ւն բերի Ձեզ...:
*Ադամորդին *) չո՛ւտ կըխաբուի, կըմոլորի՛ չարի ճեռք... .*
Մաւ չըկա՛յ որ Ձամի չ՚առնէ..., մեղա՛յ Ձեզ...»:
Չէնով-Օհան Նորէն-Նորէն փաթթըւեցաւ Մըհէրին,—
— «Որդի՛,—ըսաւ—, բարո՛վ եկար, Մեր Տո՛ւն դարձար՝ Դուն կըրկին.
*Այն օր Իմ Աչք Ես կուրցուցի՝ ու խաբուեցա՛յ այս Ձածէն *),*
Ինչպէս Ադամ Ինք խաբուեցաւ Եւայէն...:

---

*) Դեղրունք, Ներկերու եւ իւղերու բաղադրութիւն՝ դէմքի ծըպտումին համար: *) Ադամորդի, Մարդ-էակ: *) Ձած, Էդ, կին (աեարգական):

Աբի՛, ես ալ՝ իմ կընիկն ալ՝ մատա՛ղ ըլլանք Քու Ոտքին…,
Մեր Տունին մէջ՝ ասկէ յետոյ՝ Մեր Գըլխուն վրայ տէ՛ղ ունիս»։
Մըհէր վերցուց իւ՛նչ ըսաւ.—
= «Զէ՛, Հօրեղբա՛յր, Իմ Սիրտ այլեւս չի՛ տանիր որ մընամ հոս,
Քու կընիկը՝ անբախտութի՛ւն ըրաւ Ինձ հետ, Սիրտն աւրե՛ց,
Պէտք է որ ես դո՛ւրս երթամ…»։
Զէնով–Օհան 1) ի՛նչքան խընդրեց ու աղաչեց՝ ճար չ'եղա՛ւ։
Տեսաւ՝ Մըհէր՝ ալ չի՛ կենար, ու կ'երթա՛յ՝
Ան ալ կանչե՛ց Իր եռեւէն ու ըսաւ.—
— «Որդի՛, Մըհէ՛ր, ես Աստուածմէ՛ն կըխընդրեմ՝
*Քու Տեղ՝ Վանայ–Քա՛րն *) ըլլայ…։—*
Գընաց Քու Հօրն ու Մո՛ր հարցուր Անոր տեղ…,—
Դուն ղըրկուա՛ծ ես՝ Մեր Սասմանց–Տան Փարախէն… 2)»։

882. Մրհէր Իր Հօր Դամբանին Վրայ

Մըհէր քաշե՛ց Իր Ձին՝ Քուռկիկ–Ջալալին,
Գընաց Աարեր, դընաց Քարեր՝ մա՛ն եկաւ…,—
— Աստուա՛ծ դիտէ՝ քանի՛ չարաթ, քանի՛ ամիս Որս ըրաւ,—
Գընաց ելաւ Նորէն Սեւ–Սար, հասաւ Իր Հօր Գերեզմանն։
Պառկեցաւ հոն՝ երա՛զ մ' տեսաւ, քուն–արթուն.—
Երազի մէջ՝ Իրեն ըսին, — «Մըհէ՛ր, Մըհէ՛ր, ա՛յ Մըհէր…,
Քու Հայր Դաւիթ՝ Քեզի անէ՛ծք է տըւեր,—
Մահ չե՛ս տեսներ…, ու Ժառանգէ զըրկուա՛ծ ես… .
Գընա հասիր Ակըռիու–Քա՛ր, մըտիր մէ՛ջ…,՝
Մընա՛ս այնտեղ…՝ մինչեւ Վերջին–Դատաստան…»։
Մըհէր ցատկեց Իրեն տեղէն, Աչքեր չըփեց՝ ու ելաւ,
Ինկաւ Իր Հօր Դամբանին վրայ, լացաւ, կանչե՛ց ու ըսաւ 1).—

— «Հէրի՛կ *), վե՛ր ելիր, Հէրի՛կ, վե՛ր ելիր· Քո ամո՛ւշ Քուռիկն [վե՛ր ելիր,

---

1) Ձկ·620–621՝ ձեռագրախոխիկ։ –*) Վաճայ–Քար, Վանայ Ժայռը, Ակըռիու–Քար, Մըհէրի–Դուռը։ 2) Ե·932՝ օրինակն։ Զէնով–Օհան՝ այդ վերջի խօսքերովը՝ Մըհէրին կ'յիշեցնէ Իր Հօրմէն անիծուած ըլլալու պարագան (Հատ· 808)։

1) Երգով։ *) Հէրի՛կ, Հայրի՛կ, հա՛յր իմ։

Ասօր Սասմանց–Տունէն Ձիս ամմա՛սն են հասներ...,
Դարպասները վըրա՛ս են գոցեր...,
Ռու Տըղան ասօր ասնա՛ր (է) մնացեր...:
Հէրի՛կ, վե՛ր եկիր, Հէրի՛կ, վե՛ր եկիր· Ռո ասո՛ւշ հունէն վե՛ր եկիր,
Ասօր մըռմուռ *) Ձի՛ւն է եկեր...՝
Ռո Տըղայ Մրհէրի Ոտքե՛րն է կըտրեր... *):
Հէրի՛կ, վե՛ր եկիր, Հէրի՛կ, վե՛ր եկիր· Ռո ասո՛ւշ հոտին փափա՛ք
Ռա՛ղերը խօսքերուդ կարօ՛տ մընացի...:— [մընացի·
Այնքա՛ն երկիրներ՝ ես մինա՛կ գացի...,
Չ'տեսա՛յ ինձ պէս խաղցրի՛կ Հայր, ո՛ւր որ գընացի...:
Ասօր Սասմանց–Տունէն Ձիս ամմա՛սն են հասներ...,
Ե՛լ Մըսըրը տուր՝ երթամ մէ՛չ ընստիմ...,
Դունէն–Դուռ՝ ասնէր, ո՛րր եմ մընացեր...»:

Ասածո՛ւ հրամանով՝ Իր ձայնը լինկաւ Հօրը Գերեզմա՛ն,
Դաւիթ փըրընգտաց՝ ելաւ նըստեցա՛ւ Իր Տապանին մէջ 2),
Իր կօսը *)՝ *լեզո՛ւ ելաւ ու ըսաւ* 3):—

= «Որդի՛, ի՛նչ ընեմ..., Որդի՛, ի՛նչ ընեմ...,—
Գացե՛ր է ո՛ւժն 'ի Ջեռէս..., թափե՛ր է Մա՛զն 'ի Մօրուքէս...,
Փախե՛ր է գոյն–կե՛րպն երեսէս, կըտրե՛ր է Լո՛յսն Իմ Աչքերէս...,
Օձ–կարիճ *) բո՛յն են դըրեր Իմ մէջ...:—
Որդի՛, Մըսըրն է՝ Մըսրա՛յ–Մէլիքի՛ն...,
Գընա՛ Ակռափու–Քա՛ր..., գընա Ակռափու–Քա՛ր 4),
Ռո Հաց թըխո՛ւկ է..., ռո Կերն եփո՛ւկ է... 5),
Այն օր՝ ինչ Դո՛ւն ծընար, Որդի՛, ռո Գլուխ 6) Ակռա՛փն է գըրուեր,
Գընա Ակռափու–Քարը՝ վեր՛ Տոսպա՛ն–Բլուրին:

---

*) Մռմուռ, *Մրմռացնող, խայթող, ցրտաշունչ*: *) Կտրել, *Սառեցնել* (*յուրտի*): 2) *Արտաչէսի եւ Արտաւազդի նամանութիւն*: *) Կօս, *Գանկ*: 3) *երգով*: *) Օձ–կարիճ, *Օձը՝ այսուհետ՝ ցուղկ միջատն է, գըրգայագ, scolopendre, ոչ թէ օձ–գեռունը*: 4) *Փոխոխակներ՝ Հալաբայ–քաղաք, կամ* Ակռափու–Քար, Ագռաւու–Քար, *Տե՛ս այս մասին՝ Բ. Հասրօվը*: 5) *Ի՛ակնարկուի երկինքէն իջած Մանանայի՝ որ Մըհէրի՝ տարեկան միակ անունդն է*. (*Հատ*. 887): 6) *Ե*. 932՝ *Ռու Գիր* (*ճակատագիրը*):

Գընա՛, Անմա՛հ–կայէն···, դեռ Իմ կողը կըցաւի՛··· 7).—
Անիծե՛ր Եմ Քեզ, մահ չըկա՛յ Քեզ՝ վեր՛–երկրին···,
Գընա՛ մըտիր Կերպած–քա՛րը···՝ մէջ վաճա՛յ–Դաշտին···»:

Մըհէրն ալ՝ լացա՛ւ···, ու ըսաւ երգով.—

— «Ակռափու–քարը՝ ես քաժին չ'ունի՛մ···,
Իմ մասն ու քաժին՝ Ձեռքէ հանե՛ր Եմ···,
Իմ խօսքն ու պատուէր բոլոր տըւե՛ր Եմ···»:

Մըհէր չա՛տ լացաւ···, այլեւս ձայն չ'ե՛լաւ Իր Հօր Տապանէն,
Դաւիթը նորէն պառկեցաւ Իր Տե՛ղ···,
Գերեզման էրար եկաւ՝ փակուեցա՛ւ··· 8):

888. Մրիէր Իր Մօր Դամբանին Վրայ

Մըհէրը եկաւ՝ գընաց այս անգամ՝
Ինկաւ Իր Մօրը՝ Խանդուտ–Խաթունի՝ Տապանե՛ն վըրայ,
Լացաւ ու ըսաւ 1),—

— «Վե՛ր եկիր, Մէրիկ, վե՛ր եկիր· Քո անո՛ւշ քունէն վե՛ր եկիր···,
Ե՛ս Եմ, Քո Որդի կաթնակե՛ր Որդին···,
Ոօք ամիս Ձիս շահեր *) ես՝ վեր՝ Քո փա՛փուկ Սըրտին···,—
Շատ ցա՛ւ ես քաշեր՝ մէջ Աստըւրին··· *):
Շատ մա՛ճ Եմ եկեր Աշխարհ, ու շատ Մա՛րդ տեսեր···,—
Չ'տեսա՛յ Քու պէս քաղցրիկ Մէրիկ՝ վեր՝ այս Աշխըրհին···:
Եկիր՝ Թէհրա՛ճ 2) տուր, երթ-ամ Ոըստիմ մէջ,
Այսօր Սաամանց–Տունէն Ձիս անմա՛սն եճ հաներ···,—
Դուռնէ–Դուռ՝ անտէր, ո՛րբ Եմ մընացեր··· .—
Ըսէ՛ ինձ, Մէ՛րիկ···, ըսէ՛՝ ի՞նչ ընեմ···»:

Աստծո՛ւ հրամանով՝ Իր ձայնը հինաւ Մօ՛րը Գերեզման,
Խանդուտ փըռընգատա՛ց՝ եկաւ նըստեցաւ Իր Տապանին մէջ,

---

7) *Տե՛ս Հատուած 808:* 8) *Այլաբանական պատկեր՝ Մըհէրի Իր մխիթին մէջ տեսածին, — իր կսկիծէն տարուած:*

1) *Երգով:* *) *Շահիլ, Ինամել, անուշել, դիւեցնել:* *) *Աստուր, Այս կողմը, աշխարհ:* 2) *Ակնարկութիւն՝ Իր մօր Խանդուտի՝ այդ կողմերէն բերուած ըլլալուն:*

Իր կօտը՝ լեզո՛ւ ելաւ ու բսաւ 3).—

= «Որդի՛, ի՛նչ ընեմ..., Որդի՛, ի՛նչ ընեմ...,
Թափե՛ր է Տամե՛րն ի Գըլխէս, գացե՛ր է Գոհար՛ն 4) Երեսէս...,
Կըտրե՛ր է Լո՛յսն Աչ֊էերէս, թըռե՛ր է շընո՛րհը Ձեռ֊էս...,—
Օձ֊կարի՛ն՝ բո՛յն են դըրեր Իմ մէջ...:
Որդի՛, Թէհրանն է՝ Պարսի՛կ֊Շահին...,
Ռո Գըլուխ գըրուած է՝ Ակը՛ոփու֊Ռարին...,
Գընա՛ Ակըոփու֊Ռար...; գընա՛ Ակոոփու֊Ռար,—
Ռո Տե՛ղն ատլուկ է, ռո Լաթե՛ր փըռուկ...,
Հերի՛ք է՝ մա՛ն գաս՝ վեր'֊Ա՛ստըւարին...:
Ռա՛նի ռո Ձին չի՛ խըրուիր՝ մէջ֊չո՛ր Գետինին...՝
(Դու) Ազատ մա՛ն գաս՝ վեր'֊Աստըւարին... .
Երբ ռո Ձի՛ն խըրուի՝ մէջ֊չո՛ր Գետինին՝
Ալ Դու կըմընաս՝ մէջ կերպա՛ծ֊Ռարին...,—
Ռեզ՝ Հոգ մուտ չընկա՛յ ...5), գընա՛ Վանայ֊Ռար՝ վեր' Տոսպա՛ն֊
[Բլուրին»:

Մըհէրն ալ՝ դառնիկ *)՝ *երգե՛ց ու բսաւ*.—

— «Մեռնիլ չ'ուզի՛մ վեր'֊Աշխըրհին..., անժառանգ ու անմա՛հ
[եմ, Մէրի՛կ,
Մեռնիլ չ'ուզի՛մ վեր'֊Աշխըրհին..., ի՛նչդ *) ընեմ, Մէրի՛կ...»:

Մայր՝ Խանդուտ֊Խաթուն ալ բսա՛ւ կըրկին 6),—

= «Մո՛րտուն *), ի՛նչ ընեմ..., Որդի՛, ի՛նչ ընեմ...,
Ռու Հա՛յրը՝ Ռեզի անէ՛ծք է տըւեր...,—
Մօր անէծքը՝ Տո՛ւն կ'աւերէ..., Հօր անէծքը՝ Հո՛ւր արկանէ...,
Աստուածուքիւն դաւանո՛ւմ *) կուտայ Ռեզ, դաւանես՝ միւնչեւ
[օր գալուն 7):

---

3) *Երգով*: 4) Գոհար, *կամ* գոյն֊կերպ, *Դէմքի հրապուրիչ ցոլքը*: 5) *Այսինքն՝ քեզի մեռնիլ՝ հողի մէջ մտնել չկա՛յ, մահ չ'ունի՛ս*: *) Դառնիկ, *Դառնօրէն, դառնիկ ձայնով*: *) Ի՞նչդ, *Ի՞նչպէս*: 6) *Երգով*: *) Մօրտո՛ւն, *Հոգեա՛կ, հոգեսո՛ւն(ս)*: *) Դաւանում, *Հաւատ, յոյս, համբերութիւն*: 7) Օր գալըստեան (*Վերջին Դատաստանին*):

Գրնա՛ վանայ–ջա՛ր…, գրնա՛ վանայ–ջա՛ր…,—
Ջո Հա՛ց(ը) թրխուկ *) է, Ջո Կի՛րը եփուկ…:
Այն ճամբան՝ ինչ Դո՛ւն պիտի երթաս՝ ջա՛րը բաղած է, Աւա՛զը [մաղած,—
Գրնա՛ ու մըտի՛ր՝ մէջ կի՛րպած–ջարիճ…,
Ակռափո՛ւ–ջա՛րը 8)՝ մէջ վանա՛յ–Դաշտին,—
Ջուր *) աճիճն ծրնանի՛, ամմահը մեռանի՛… 9),
Աշխարհ աւերուի՝ ու դի՛ր մ՚ ալ *) շինուի…,—
Որ՝ Գետին՝ դէ՛մ տայ Ջո՛ւ առջեւ, — ելնես երեսան…»:

Մըհէր չա՛տ լացաւ…, այլևս ձայն չ՚ելաւ իր Մօր Տապանէն,—
Խանդուտ–Խաբուսը՝ Աստծո՛ւ հրամանով՝
Մըտաւ Գերեզման, պառկեցաւ իր Տեղ,
Դամբանն ալ իրա՛ր եկաւ՝ փակուեցա՛ւ…:—

884. Մրհէր ՚ի Ոստանայ-Կապան

Բարե–լո՛յս Քող դայ Ամենո՛ւդ վըրա՛յ, Մըհէրի վրա՛յ ալ՝ եկաւ [բարելոյս,—

— «Ողորմա՛ծ, բարերա՛ր, Տէ՛ր–Աստուա՛ծ,–ըսաւ–, 1)
Ես ի՛նչ գիտնամ թէ՝ Ակռա՛փը ո՛ւր է…,—
Իմ Հա՛յրն է Ակռափու–ջա՛ր, Իմ Մա՛յրն է Ակռափու–ջա՛ր…,
Ինձ ո՛վ կայ Ակռափու–ջար…՝ որ Ես երթամ Այդ–ջար…,—
Ես դեռ Տղա՛յ եմ…, ելնեմ ո՛ւր երթամ…»:

1·

Մըհէ՛րն էր…, — հեծա՛ւ Գուռիկիկ–Ջալալին,
Սասմայ–Քաղաքէն դո՛ւրս ելաւ՝ գրնա՛յ,

---

*) Թխուկ, *թխած, եփած*: 8) ՁԿ·642ա·՝ Արճակու–ջար· [*Արճակը՝ կ՚էյնայ Մըհէրի–Դուռին մօտերը*]: *) Ջուր, *Մինչեւ*: 9) *Այսինքն՝* մինչեւ յաւիտեան, անվերջ· — *քանի որ՝ ոչ անծինը կ՚ծնի, ոչ անմահը կ՚մեռնի*: *) Դիր մ՚ ալ, *Անգամ մ՚ ալ*:

1) *Երգով*:

Գընա՛ց ու հասաւ՝ Ոստանայ–կապա՛ն 2)։
Որ գընաց հասաւ Ոստանայ–կապան՝
Մէկ Ըմբիչ Մա՛րդ կար 3)՝ *կապ նետից բըռնե՛ց,*
Մըհէր՝ իր Ձիով՝ ինկաւ կապի մէջ…։
Ձին որ ինկաւ կապ՝ Մըհէր ինք ելաւ՝
Դարձաւ ու եկաւ Հօր–Մօր Գերեզման 4),
Ձայն ձըղեց՝ կանչեց իր Մօր անունէն.—

— «Մէրի՛կ, վե՛ր եկիր…, Մէրի՛կ, վե՛ր եկիր… 5),
Ե՛ս եմ, Քո Ծըծի կաթնակե՛ր Տըղան…,
Քուռկիկ–Ջալալին՝ կա՛պ ինկեր Ոստան…»։

Մայրն ալ՝ ձա՛յն տըւաւ իր Գերեզմանէն,—

= «Որդի՛, Մըհէրի՛կ, Որդի՛ Մըհէրի՛կ, — ճիշա՝ Հա՛ց–Դինիւ,
[Տէ՛րը–Կենդանիւ,
Խաչ–Փետրազիւը՝ վեր՝Մըհէրի Ա՛յ–Թուիւ,
Մարուքայ–Բա՛րձր–Ասպարածիւ,
Քաշէ՛ Թուրը–Կէծակիւն…՝ զա՛րկ Ոստանայ–կապանիւ… 6),
Կըտրէ՛ Երկաթն ու Ոսկիւն…, Քու կ՝երթաս՝ հետ Քու Հաջիւ»։

2.

Դարձաւ ու եկաւ Ոստանայ–կապան,
Ու քաշեց Իր Թուր…, Թո՛ւրը–Կէծակին,
Կանչեց ու ըսաւ, — «Ճիշա՛մ՝ Հաց–Դինիւ, Տէ՛րը–Կենդանիւ,

---

2) *Պատմուածքները՝ մինչեւ այս կէտը՝ Սասնոյ Քաջերուն չարժումները կ՝ցուցնէին՝ դէպ Վանայ–Մոշի հիւսիս–արեւելք։ Այս տեղ առաջին անգամ է որ՝ անունցմէ մէկը — վերջին Մըհէր —՝ Սասունէն դէպ Վանայ հարաւ–Արեւելքը կ՝երթայ։ Նկատի չեմ առներ՝ Հալաբայ–Բազաճ սխալ պատումները՝ (ի. Հատորովը պարզաբանուած)։* 3) *Անունը չ՝է յիշուած Ց·149–է։ Թերեւս ըլլայ Թոռը՝ ՀԸ–ՄԱՆԻ–ԴՈՒՄԱՆ Ըմբիչին՝ որ գործ ունեցեր է՝ ՉԿ·371–377–ի համաճայն՝ Դաւիթ–Մըհէրի հետ (Հատուած 257)։* 4) *Նկատել որ՝ Մըհէր՝ կ՝երթայ ու չի՛ երթար…, մինչ իր հայրենի հողը կ՝փնտռէ. աչքը չարունակ հոսէն է…։* 5) *Երգով։* 6) Ց·149՝ Աւերակապանիւ։

Մարութայ–Բա՛րձր–Ասպարածիև, Խաչ–Փետրազիև՝ Իմ Աչ–Թևիև»·—
Ճիշա՛ց Մըհէր···՝ ու զարկաւ,—
Կըտրե՛ց Երկաթն ու Ոսկին···,
Ծըրուեց՝ մէջ Հող–ու–Քարին···,
Հանե՛ց Գուռկիկ–Ջալալին···:—

§§5. Մըհէրի Կռիւը Հրեշակներու Հետ Եւ Դէպի Ցասպան-Ձարը

Հնձա՛ւ Մըհէր, Իր Ձին Քըշե՛ց՝ ու Դընա՛ց ··:—
Անօթի՛ էր···, Սիրտ Ե՛տ Կուշտ···, Ան ալ Այնտեղ Ի՞նչ Ըրաւ,—
—· Ասուա՛ծ···,–Ըսաւ–, Կամ Կըռի՛ւ տուր Մըհէրին···,
*Կամ՝ Իր Աւանդ *)՝ այս Աշխարհէն Վերցուր Ա՛ռ···»:*
Ասուած Ղըրկեց՝ Եօ՛թ Ձիաւոր Հրեշտակ Իջան Վեր՝–Ճամբուն՝
Մըհէրի Հետ Կըռուելո՛ւ···:—
Կէսօրւընէ Մինչեւ Իրկուն՝ տըւի՛ն–առին, Կըռուեցա՛ն···
Ինչ Մըհէ՛րն Էր՝ Թուր–Կէծակին Կըզարնէր՝
*Հրեշտակներուն Չ՝Է՛ր Բըռներ··· *)՝—*
Հրեշտակներն ալ՝ Չա՛տ Նեղեցին, Չարչարեցի՛ն Մըհէրը···:
Ձարը Հասաւ՝ Մըհէր Իր Աչք Վերցուց Երկինք՝ աղաչեց·—
— «Ո՛վ Տէր–Աստուա՛ծ···, Իմ Հօր անէծք՝ Ինձ Հասա՛ւ··· 1)·—
Քաշե՛ր են Իմ Մէջքէ–Երակ՝ Հանե՛ր են···,
Աչխարքի Մէջ՝ Ժառանգ Չ՝Ինկաւ՝ Իմ Մօտէն···,
Մա՛հ ալ Չըկա՛յ Ինձի Համար՝ Մինչեւ Վերջին–Դատաստան···:—
Քե՛զ եմ Կանչեր···, Տէ՛ր–Աստուա՛ծ···,
Ողորմութեան Դո՛ւռը բանաս Մըհէրին···,—
Այնպէ՛ս ընես՝ զ՝Ինքը Ձըգես Վանայ–Քա՛ր···,
Մինչեւ՝ Վերջի՛ն–Դատաստանին՝ Իրեն Հոգւոյն Ճա՛ր Ըլլայ···»:
Աչքը Դարձուց Վեր՝–Երկրի՛ն···,—
Տեսաւ որ Ձին՝ Տոսպան–Բըլո՛ւրն է Հասեր··· 2):
Քըշե՛ց Գուռկիկ, գընաց Հասաւ Վանայ–Դա՛շտ:—
Դաշտին Մէջէն՝ Նայեց որ Ի՞նչ, — Ագռաւ Մ՝ անդին՝ Կ՝ընէր «Կը՛ռ»·

---

*) Աւանդ, Շունչ, Հոգին: *) Բռնել, Դպիլ, Հանդիպիլ:
1) Տէ՛ր Դաւիթի անէծքը՝ Հասուած 808: 2) Կ·35՝ Ակռիու–Քարի տակ հասեր է· Լ·35՝ Ղլաթայ վերեւ՝ մէկ սար կար, ըսին «Էսի կերպած–քար է»:

Նեա–Աղեղով զարկաւ դըպցո՛ւց, Ագռաւն ըրաւ վիրաւո՛ր… .
Ագռաւ փախա՛ւ…, Մըհէրն ալ Զին քըշե՛ց Անոր ետեւէ՛ն…,—
Գընաց հասաւ՝ մէկ Ջո՛ջ–Քարի մ՚), որ անունն ալ՝ ԿԵՐՊԱՄ–ՔԱՐ3),*
Քար բացուեցա՛ւ՝ Այրի՛ կըմտան…, Նայեց՝ Ագռաւ մըտաւ նե՛րս,
*Մըհէր ինքն ալ՝ զարճո՛ւց Իր Զին, ետեւանցիկ *), վեր՛–Հողին։—*
Երբոր զարճուց՝ ա՛լ Զիւն Ոտք չըղաղրեցա՛ւ վեր՛–Հողին,
Մինչեւ Ծունկը՝ կըթաղուէին Հողի մէ՛ջ…։—
— «Հա՛յ–հո՛յ…,–ըսաւ–, ի՞նչպէս ընեմ…, Տէ՛ր–Աստուա՛ծ…,—
Գետին՝ Իմ Զին չի՛ վերցըներ Իր վըրայ…,
Մերացե՛ր է 4), չի՛ դիմանար ա՛լ Իմ Զիու Ոտից տակ…»։
Վանայ–Քարին վըրայ՝ այսօր՝ երկու Սանդո՛ւղ կայ դըրսէն,
Առ՝ «Քուռկիկ–Ջալալիի Ոտքերուն տե՛ղն է»՝ կ՚ըսեն… 5)։—

886. Մըհէր՝ Կերպած-Քարին Մէջ Փակուած

Օր կէսօ՛ր էր· չուքը լինկեր Ոտքի տա՛կ.—
Մըհէր Իր Զին քա՛նի քըշեց՝ Զին Թաղուեցաւ Հողի մէ՛ջ…։
Ճարը հատած, Զին՝ իրիկուն՝ քաշեց տարաւ Այրին դէ՛մ,—
Կեցաւ Քարին երեսն ՚ի վեր՝ ու լացա՛ւ…։—
Աստծու հրամա՛ն, — Քար՝ բացուեցա՛ւ, Մըհէր Զիով մըտաւ նե՛րս,
— «Վուսուն՝ ելնեմ, հեծնեմ երթա՛մ…»,–ըսաւ Ինքը Իրեն մէջ։
Երբ ներս մըտաւ, Զիէն իջաւ ու կապեց՝

---

*) Քար, ժայռ։ 3) Կերպած, Տաշած, յղկած, եւ կերպ, ձեւ՝ տուած։ Մըհէրի–Դո՛ւռն է այդ կերպած–Քար ըսուածը։ Այս տողերուն Հեղինակը՝ տեսած է. այդ վիթխարի քարաժայռը, որուն առեզդէմ երեսը յղկուած է՝ հսկայ քառանկիւն չրջանակի մը մէջ, դուռի ձեւով, — առկէ իր անունը՝ ՄԸՀԷՐԻ–ԴՈՒՌՆ, թրքերէն՝ Մըհէր–խափուսու։ Շրջանակին մէջի հարթութիւնը ծածկուած է բեւեռագիր արձանագրութիւններով։ Ժողովուրդը կըկոչէ նաեւ Ակըփուքար, Ակոփի գիւղին անունովը։ Առկէ Թերեւս՝ Ագռաւու–Քար աղաւաղ ձեւը եւ անոր վրայէն՝ Ագռաւ Թռչունի միջամտութիւնը՝ վէպին մէջ։ Աւանդութիւնը կ՚ըսէ թէ՝ «Մըհէր իր ձիով այդ ժայռին մէջն է, Զախրի–Ֆելէկն ալ դէմը, եւ օր մը պիտի ելնէ՝ աւերէ աշխարհը»։ *) Նախաւնցիկ, Դէպի ետեւ, ետ–ետ։ 4). ե·ՅՕ՝ թուլացեր է։ 5) Տե՛ս եւ յաջորդ Հատուածը։

Դուռը եկաւ իրա՛ր առաւ..., Ինք իր Զիով՝ մընաց նե՛րս...:
Զայն մ՝ ալ եկաւ Քարին վերէն՝ ու ըսաւ.—
— «Մըհէ՛ր,—ըսաւ—, Դուն՝ Քու Զիով՝ պիտի մընաս Քարին մէ՛ջ,—
*Մինչեւ Ցորնի-Հատը մեծնայ քան՛ղ Մասուր *)...,*
Գետին պընդի՛ եւ ամրանայ, Զիուն Ոտից դիմանա՛յ...»:
Երբոր հասնի՛ այդ մէկ օր՝
Նո՛ր՝ այնատեն՝ Մըհէր՝ Իր Զին՝ կուգան Քարէն դո՛ւրս կ՛ելլենէն...
Մըհէր պիտի Աչխարհ-Երկիր իրա՛ր անցնէ ծայրէ-ծայր...,
Կատորո՛ւմ տայ... ու մեռնի՛...:
Անոր Զիու Պայտն ալ՝ ըսես՝ մէկ Սեղանի չափ մե՛ծ է,
Ո՛ր Հող բըռնէ՝ այն Հող կ՛աւրէ կըտանի՛... 1):
Աստուած չ՛ուզե՛ց որ Մըհէր դար՝ դո՛ւրս ելնէր,—
*դ՛Ինք՝ մարմնաւոր *)՝ կերպած-Քարին մէ՛ջ փակեց,—*
Որ՝ Մըհէրը՝ քա՛նի կեանք կայ՝ չըմեռնի՛...,
Մընայ այնտեղ՝ մինչեւ վե՛րջ դայ Աչխարհին,
Մինչեւ Գետին պինդ քարանայ ու տակա՛յ՝
Իրեն Զիուն Ոտից տակ...:—

887. Մրհէրի-Դուռն Ու Իր Նապաստները

Տարին մէ՛կ դիր, կէս-դիչերին, Համբարձումէ Համբարձում 1),
[«Հրաչքի-Գիչե՛րն է»՝ կ՛ըսեն],—
Երկինք-Գետին՝ Իրա՛ր կուգան՝ կըհամբուրուի՛ն լուսու մէջ 2),
Եւ այդ պահուն՝ Մըհէրի-Դուռն ալ կըբացուի՛ հըրաչքով,
Մըհէր կ՛ելնէ՛, Իր Զիուն հետ, եւ Աչխարհը կըդիտէ՛...:—
Գառատո՛ւն աւուր ճամբա՛յ կ՛երթայ մէ՛կ ժամէն...,—
Եօթ քայլի չափ 3) կըհեռանա՛յ Իր տեղէն,—
Գետին՝ Զիուն Ոտից տակը չի՛ դիմանար, կակո՛ւղ է...,
*Ի՛նչ Գետնի վըրայ կ՛իյնայ *)՝ Զին չի՛ բըռներ, կըխրի՛... .*

---

*) Մասուր, վարդենիի կարմիր պտուղը՝ ձիթապտուղի ձեւով: 1) Տե՛ս նախորդ Հատուածին վերջի ղոյզ տողերը: *) Մարմնատոր, ողջ-ողջ, կենդանւոյն:

1) Այսինքն՝ Համբարձման տօնին օրը: 2) Տե՛ս իմ ՄԱՑՐԵՆԻ-ԱՇԽԱՐՀ՝ էջ 135–141՝ Հրաչքի Գիշեր (Ծաղիկներուն Բարբառը): 3) Լ·48՝ օխտը շէմ (= քայլաչափ): *) Իյնալ, Հանդիպիլ:

Հողը դեռ ո՛ինչ չի՛ վերցըներ. Ոտքեր Գետի՛ն կըճըկին.—
Մըհէր՝ այնտեղ՝ «Ա՛խ» կըքաշէ խորունկէն՝
Ե՛տ կըդառնայ՝ կուգայ–քաշուի Քարին նե՛րս,—
Դուռը կուգայ իրա՛ր կ՚առնէ՝ կըփակուի՛...:
Այդ Գիշերը՝ ունի–չ՚ունի՝ Մըհէրն ունի երկո՛ւ ժամ,—
Մէկ ժամ կ՚երթա՛յ..., մէկ՝ կըդառնայ՝ ե՛տ կուգայ...:
Ման՛րդ չի՛ տեսներ..., — հրաման չըկա՛յ՝ Մարդ տեսնէ...:
Ան ալ՝ ըսէք՝ «Ինչո՛ւ համար կըրացուի...»,—
— Երկինքէն վար, հոն, Մանանա՛յ կըթափի...,
Ինք ու իր Ձին՝ կ՚ուտե՛ն–կ՚ուտե՛ն այդ Նըշխար...,
Կ՚ուտե՛ն մինչեւ կըշտանան...,—
Տարին մէ՛յ մը՝ կ՚ուտեն Անոնք, մխա՛ռ,
Տարին ՚ի բուն՝ ա՛լ բընաւ չե՛ն քաղցընար... *):
Ո՛վ որ արթո՛ւն մընացեր է այդ Գիշերը՝ ու տեսեր՝
Ի՛նչ որ Իր Սիրտ փափաքեր է՝ կըկատարուի՛ հըրաշքով...,—
Մըհէրի–Դուռ բա՛ց է առջեւ, ո՛վ ներս մըտնէ համարձակ՝
Որքան Ոսկի ուզէ՝ կ՚առնէ՝ կ՚ելնէ դո՛ւրս...:—
Հոն՝ Աչխըրքի՛ *) Ոսկին ու Գա՛նձ կայ դիզած...:—
Քանի՛ Մարդիկ՝ փորձե՛ր են ու նե՛րս մըտեր,
Ագահացեր՝ «Շա՛տ վերցընենք...» ըսեր են եւ ուշացեր...,—
Դուռ դռցուեր է Իրենց վըրայ՝ մընացեր են Այրին մէ՛ջ...:

Մինչեւ այսօր՝ Մըհէր Ինքը եւ իր Ձին ալ՝ դեռ ո՛ղջ են,—
— Տեսնողաց չ՚ե՛նք..., լըսողա՛ց ենք՝ այդ բանին 4),
Գիշեր–ցերեկ՝ մէյմէկ Մոմ ալ ՝երկու քովեր կըվառի՛.....
Մինչեւ այսօր՝ Մըհէր այնտեղ Ձի՛ուն վըրայ՝ կ՚ըսպասէ՛... .—
Եօ՛թը կանգուն՝ կուրծքին լա՛յնքն է վիթխարի...,
Իր Մարմինի Մա՛զը,–կ՚ըսեն–, ելեր ծածկե՛ր է Մարմին...:
Իր Ձիուն ալ՝ Աուտյան առջեւ դըրա՛ծ է,—
Ամառ–Ձըմեռ՝ կանա՛չ է հոն՝ մըշտակայ...:
Անոր Ձիու Նըշանակն ալ՝ ա՛յն է որ՝
Շաբթէ–չաբաթ՝ Ձիուն Շեռը *)՝ Քարին մէջէն դո՛ւրս կուգայ...,—

---

*) Գաղցնալ, Անօթենալ: *) Աչխարհի, Ամբաւ, չա՛տ ու չատ:
4) Այսինքն՝ աչէով տեսած չե՛նք, միայն լսեր ենք (պատմողներէն՝ որ տեսած են հարկաւ...): *) Շեռ, Մէզ:

*Դըրան տակէն՝ Սեւ-Ջուր մ՛ կաթ-կա՛թ *) կըվազէ...,—*
Այդ Ջուրն՝ ահա՝ Մըհէրի Իր Ձիու-Շե՛ն է կըծորայ...:

888. Մըհէրը Ցեսնող Աղջկան Պատմածները

Ու մէկ տարի, — տարւան կարմիր—կիրակի՛ն,
Պատարագի իրիկուն,—
Մարդ մ՛ իր Աղջիկ կըղըրկէ ժամ՝ ու կ՛ըսէ.—
— «Դընա՛՝ ժամէն՝ Մոմը վառէ՛, Օրհնած-կըրակ 1) ա՛ռ ու բե՛ր»:
Աղջիկ կ՛ելնէ՝ կ՛երթայ դո՛ւրսը, կըտեսնէ՝
*Որ այդ կեռպած-ձարին մէջէն՝ ճըրագի մը բո՛ւխ *) կ՛ելնէ...,—*
Ան ալ կ՛երթայ դէպ այդ ճըրագ՝ ա՛յն հաւատքով թէ ժա՛մն է:
Կըմբռնէ հոն՝ որ Մոմ վառէ՝ դառնայ Տո՛ւն՝
Դուռ կըփակուի, նո՛ր կըմընայ այդ Աղջիկ...:—
*Կըտեսնէ որ՝ երկնուց՝ Նըշխա՛րք *), Մանանա՛յ է թափեր վար,*
Մըհէր կերա՛ւ, Իր Ձին կերա՛ւ, ի՛նքն ալ կերաւ, կըշտացա՛ն...,—
Մինչեւ տարին բոլորեցաւ՝ անօթութիւն չ՛իմացա՛ն...:
Այն օրւան օր՝ որ Իր տարին լըրացաւ՝
Դուռ բացուեցա՛ւ, Աղջիկն առա՛ւ վառած Մոմը՝ դարձաւ Տո՛ւն:
Հայրը հարցուց, — «Աղջի՛կ, տարին բոլորա՛ւ...,—
Ո՞ւրտեղ էիր դացեր Դուն...»:
Աղջիկն ալ թէ, = «ի՞նչպէս, Հայրի՛կ, չէ՞ որ նո՛ր էր՝ ես դացի...,
Մոմ վառեցի, չընըստեցա՛յ, ե՛տ եկայ...»:
— «Ո՞վ կար այն Տուն՝ ուր Դուն դացիր»,—ըսաւ Հայրը:
= «Մէկ մե՛ծ Մա՛րդ էր՝ եւ Իր Ձի՛ն...»:
— «Դուռին վըրայ ի՞նչ տեսար...»:
= «Մէկ Ընկուզի բա՛րձր Ծառ կար..., այլեւս ուրիշ բան չըկա՛ր»:
— «Է՛..., ի՞նչ կերար Դուն այնտեղ...»:
= «երկնուց,—ըսաւ—, Նըշխարքի պէս՝ մէկ կըլորակ բա՛ն կուգար,
Ե՛ս ալ կերայ, Մա՛րդն ալ կերաւ, Իր Ձի՛ն ալ,—

---

*) կաթ-կաթ, կաթկթելով:

1) Եկեղեցւոյ խորանին լոյսերէն վառուած մոմը՝ տուն կ՛բերեն, եւ անով կ՛լուսաւորեն տան ճրագը, օրհնութիւն մտցնելով յարկէն ներս:

*) Բուխ, Շունչ, բխումը, գոլորշի՝ որ կ՛բխի՛: *) Նշխարք, Նըշխարքի պէս կլոր հաց:

Ու անկէ վերջ անօթութիւն չ'իմացա՛նք...»:
Աղջիկ՝ տարին՝ մընաց քաղցած, բա՛ն չըկերաւ, ու կո՛ւշտ էր.—
Նոր հասկըցան՝ թէ Մըհէ՛րն է եւ իր Ձին...:

889. Մըհէր՝ Աղջիկը Կ'փորձէ Ջիւն Ցոպրակովը

Մէկ Աղջիկ ալ՝ Զո՛ւ կըլեցնեն Ջամբուղի մէջ 1) կուտան Զե՛ռ,—
— «Տա՛ր՝ Քաւորի Տո՛ւնը յանձնէ՝ եկո՛ւր» կ'ըսեն Աղջկան:
Աղջիկ կ'ելնէ՝ Ջամբուղ Թեւին՝ դէպ Շահբաղու–Քա՛ր 2) կ'երթայ,
Կըտեսնէ որ Դուռը բա՛ց է՝ Ինքն ալ կ'երթայ Այրին նե՛րս:
Մըհէր կ'ելնէ՝ Աղջիկն այնտեղ կըփորձէ.—
— «Աղջի՛կ,–կ'ըսէ–, ե՛լ Իմ Ձիուն քիչ մը Ցո՛տ տուր՝ Թող ուտէ»:
Է՛..., Մըհէրի Ձին ալ այնքան բա՛րձր է ո՛ր...,—
Աղջիկ կ'Նայի՛...՝ ու Մըհէրին ի՞նչ կ'ըսէ...,—
= «Քու Նիզակ տո՛ւր՝ Ես Ցոտ զարնեմ Անոր Ծա՛յր՝
Դընեմ Ձիուդ Բերնին առաջ՝ Թող ուտէ՛...,—
Ձին չա՛տ բարձր է, Իմ Ձեռ Իրեն չի՛ հասնիր...»:
Մըհէր կ'ըսէ, — «Ձ'ո՛ւղեր..., Իմ Ձին Ցոտ չ'ո՛ւտեր...»:
Կըհասկընա՛յ՝ որ Աչխարհը դեռ չա՛ր է...,—
— «Թէ ելնեմ դուրս,–կ'ըսէ Ինքնին–, Աչխըրքի մէջ չի՛մ ապրիր...»:

890. Մըհէր՝ Հովիւին Մէջ՝ Մարդոց Խելքը Կ'փորձէ

Ուրիշ օր մ' ալ, մէկ Հովի՛ւ–Մարդ՝ Լուս–Համբարձման Գիշերով՝
Կըտեսնէ որ՝ Մըհէրի–Դուռ կըբացուի՛...,—
Ինքն ալ կ'երթայ՝ Նե՛րս կըմտնէ երկիւղով...,
Կընայի որ ի՞նչ տեսնէ...,—
— Հըսկա՛յ Մարդ մը՝ այդ Քարին մէջ, ու մէկ Ձի՛...:
Մըհէր տեսա՛ւ՝ այդ հողածին պըղտի՛կ Մարդը Իր առջե՛ւ,
Վերցուց բըռնեց Ափին մէ՛ջը, ապա դըրաւ Իր Գըրպան,

---

1) Խ·74՝ թաշկինակ(ի մէջ), որ սխալ է· լաթով կ'ծածկե՛ն միայն ջամբուղին երեսը: Եթէ լաթի մէջ լեցնեն՝ փոխադրելու համար՝ հաւկիթները կըկոտրտին: 2) Շահբաղու–Քար [Խ·74՝ Շա՛–բաղու–Քար] ալ կըկոչուի Մըհէրի–Դուռին ժայռը՝ մօտը ւյտնուող Շահբաղի Գիւղին անունովը:

Նորէն հանեց՝ բըռնեց Իրեն Ափին վրայ,—
— «Ախիկ ի՛նչ է···,–ըսաւ Ինքնին, զարմացած–,
Ֆիթ ու Բերան, Աչք ու Ծնքը՝ ինձ նըմա՞ն,
Ձեռքեր, Ոտքեր, ամէն–մէկ բան ինձ նըմա՞ն,—
Ու կընայիմ···՝ Ախիկ ա՛յդչափ պըզտի՛կ է···՝
Որ կըմըտնէ Իմ Գըրպա՞ն···»։
Հարցո՛ւց Մարդուն, — «Ի՞նչպէս կ'ապրիք Աչխարհի մէջ՝ այդ
[Մարմնով»։
Մարդն ալ ըսաւ Թէ, = «Խելքո՛վ··· ·
Ձեր ժամանակ՝ Դուք Ձեր Ուժո՛վ կ'ապրէիք,
Մեր ժամանակ՝ Մենք ալ կ'ապրինք Մեր Խելքո՛վ···»։
— «Դուք ի՛նչ էք որ···՝ Ձեր Խո՛ւք պիտի ի՛նչ ըլլայ···»։
= «Չէ՛, Մա՛րդ,–ըսաւ այդ Հովիւը Մըհէրին–,
Մենք Ձեզմէ չա՛տ խելքով ենք···»։
Մըհէր վերցուց՝ Մարդը դըրաւ Գետնի վրա՛յ,
— «Որ Դուք,–ըսաւ–, Մեղնէ խելքո՛վ պիտի ըլլաք՝ այս Աչխարհ՝
*Դէ՛հ, իմ Ձիու Տոպրակ վերցո՛ւր՝ զարկ Գըլո՛ւխս *)···»։*
Ձիուն Պարկն ալ՝ քառսո՛ւն լիտրը Արճիճ–Գարի՛ էր լըցած···,—
Հովիւն ելաւ՝ ի՛նչ որ ըրաւ՝ Պարկ վերցընել չկըրցա՛ւ···։
Գետնի վրայ քաչե՛լ ուզեց՝ ու չկըրցա՛ւ Պարկ խախտէր···։
— «Որ չի՛ կըրնար,–ըսաւ Մըհէր–, Տոպրակ տանիլ դէպի Ձին,
Ի՞նչպէս ապա պիտի կըրնայ՝ կախել Ձիուն Գըլուխէն···»։
Նայեց տեսաւ Թէ «Պըզտի՛կ Մարդն» ի՛նչ կ'ընէ···,—
— Ձին Տոպրակին քո՛վը բերաւ, Ձեռքը նետեց կապ՝ քաչեց,
«Ըչո՛, չըչո՛» ըրաւ Ձիուն, Աչքը լինկաւ Տոպրակին,
Եկաւ Բերանՙ խոթեց Տոպրակ՝ Ինքն ալ Թևլը ձըգեց Վի՛ղ,
Ձին Իր Գըլուխ որ բարձրացուց՝ Պարկը մընաց Վիղէն կա՛խ··· 1),
Մարդն ալ քաչեց՝ տարաւ կապեց Իրեն տե՛ղ,—
= «Մեր Խելքն,–ըսաւ–, այս տեսա՛ւ է···, այսպէ՛ս կ'ուտենք
[Մենք Աչխարհ»։

891. «Ագաս՝ Ապրէ՛ Քու Խելքով···»

Մըհէր տեսաւ՝ որ իրա՛ւ է, — Իր Ափի՛ն մէջ սըղմող Մարդ՝

---

*) Զարկ գլո՛ւխս, կախէ գլուխէ՛ն, վիղի՛ն անցուր։ 1) Տե՛ս եւ Հատուած 588ի վերջամասը։

Իրմէ խելքո՛վ դուրս եկաւ...,—
— «Ան՝ Մեղնէ՛ ալ,–ըսաւ–, հանդիսոտ պիտի ապրի այս Աշխարհ.
Մենք՝ Մեր Ուժով՝ ու Կըռիւո՛վ՝ կ'ապրէինք,—
Ասոնք Իրենց Խելքո՛վն է որ պիտի ապրին ապահով...»:
Հարցուց Մարդուն, — «Աշխարք ի՞նչ կայ, ի՞նչ չըկայ...»:
= «Աշխարք,–ըսաւ–, այն տեսա՛կ է Մեր օրով՝
Որ Հըրացան ու Թընդանօ՛ք է ելեր,—
Հեռուներէն Ո՛րս կըզարնեն, Մա՛րդ կըզարնեն՝ կ'ըսպանե՛ն»:
— «Նետ ու Աղեղ չըկա՞յ...»,–հարցուց Մըհէրն ալ:
= «Ձըկա՛յ...»,–ըսաւ այդ Հովիւ:
Ասոր վըրայ Մըհէր վերցուց ու ըսաւ,—
— «Որ Հրացէնը մէկ[1]տե՛ղ ելաւ...՝ կըտրըճուքիւն փըճացա՛ւ...» 1):
Ապա հարցուց Հովիւին, — «Ծորենի–Հատ՝ Մասուրի չափ եղե՞ր է»:
= «Չէ՛,–ըսաւ Մարդ–, Ծորեն՝ այսչա՛փ է նորէն»:
— «Մարդեր, հիմա, ո՞րչափ մեծ են..., մէկ նետ *) կա՞ն...,
Ալուճ–Մալո՞ւճ են՝ թէ՞ ջիչ մ' ալ դեռ պըզուիկ...»:
= «Չէ՛, Մա՛րդ,–ըսաւ Հովիւն ալ–.
Մարդիկ հիմա Իմ հասակին չափո՛ւն են...»:
Մըհէր այնտեղ հասկըցա՛ւ որ՝ Աշխարք դեռեւս չ'է՛ փոխուեր...:
Ան ալ վերցուց՝ նայեցաւ ու Գետի՛ն դըրաւ այդ Մարդուկ,—
— «Գընա՛,–ըսաւ–, ազա՛տ՝ ապրէ՛ Քու Խելքո՛վ...»:
Մարդն ալ այնտեղ ճանչըցա՛ւ որ Մըհէ՛րն է,—
Հարցուց ըսաւ, = «Մըհէ՛ր, Դուն ե՞րբ դուրս պիտի գաս Քու Այրէն»:
= «Երբոր Ծորեն Մասուրի մը չա՛փ ըլլայ,
Ու Գարին ալ՝ խոշոր ինչպէս մէկ Ալուճ *)...»:
Ասածու կամքով՝ Քարը նորէն բացուեցա՛ւ...,
Հովիւն Այրէն ելաւ դո՛ւրս..., — եկաւ Աշխարհ՝ ու պատմե՛ց...:

ՁԹ. Մըհէրն Ու Ճախարի-Ձկէկ

Մըհէր հո՛ն է, — վանայ–Քարի Այրին նե՛րս 1) —
ՄԸՀԷՐԻ–ԴՈ՛ՒՌ է անունն ալ այդ Ձէրին *),

---

1) Չկ·643՝ «ինչ թվակ իջաք եղաւ՝ իգիտըզդ բաբ-ալ եղաւ»:
*) Նետ, Նետաչափ: *) Ալուճ, Մալոր (երկարաճեւ), դամոն, pruneau:

1) Ե·1125՝ Ակռիտ–Քարի (մէջ): *) Ձէր, Այր, անձաւ:

*ՃըՆըվըզի–Գիրեր *)՝ սո՛ւր–սուր՝ փորած Քարի Դուռին վրա՛յ։*
ՃԱԽՐԻ–ՓԼԼԿ 2) այդ Դըռնով Ներս կըդառնա՛յ,—
Նըշանակ է՝ օր ու դիշեր ճախըող–դարձող Արեւո՛ւն,
Որ հըրեղէ՛ն Զիո՛ւ Նըման՝ վեր–վե՛ր, վեր–վե՛ր կըԹըռի՛...։—
Երկրագունդի ճախրող Անի՛ւն է Աւիկ,
Ու Մըհէրը՝ մէյտ ալ Անո՛ր կընայէ...,—
Երբ այդ ճախրը դադրի՛ օր մը, չըդառնայ...՝
Մըհէրի–Դուռ կըբացուի՛...,
Այն օր Մըհէր կ'ազատի՛ եւ դո՛ւրս կ'ելնէ...,—
Եւ Աչխարհը կ'աւերէ՛...։—
Այդ ալ ապա՝ Նայինք ե՞րբ է...՝ որ վերջ կուդայ Աչխարքին...։

* * *

«Աստուած Ողորմիչն տանք Սասմանց–Ջոջի՛կ–Տան,—
Շէն ու պայծա՛ռ կենայ Մարութայ–քա՛րձր–Աստղարածին՝
*Վեր'–Հիման... *)։*

---

*) ՃըՆըվըզի–Գիր, *Բեւեռագիր արձանագրութիւն։* 2) Մըհէրի–Դուռէն Ներս՝ կայ, կ'ըսեն, Ջախրի–Ֆալագ (= *Աչխարհի– Անիւ, Տիեզերքի ճախարակ*), — Արեւի հոլովոյթին *խորհրդանչանը*։
*) Հիման, Հիմին, Հիմունքին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՎԵՑԵՐՈՐԴ ՁԻՒՂԻՆ

ՊԱՐՈՆ-ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԻ



Հատուած

Ա. Պարոն–Տէր–Ներսէս եւ Իր Տղաք՝ Աբլաղ Ու Իշխան 893

Բ. Պարոն–Տէր–Ներսէս եւ Աբլաղ Ու Իշխան՝ Աղբօր Դէմ 903

Գ. Պարոն–Տէր–Ներսէսի Թոռ՝ Որբիկ–Պարման 910

ՍԱՍՈՒՆԱԿԱՆ

ՎԵՑԵՐՈՐԴ ՃԻՒՂ

ՊԱՐՈՆ–ՏԷՐ–ՆԵՐՍԷՍ [1]

(Պարոն-Տէր-Ներսէս, Աբլաղ Ու Իշխաձ, Որբիկ-Պարմաձ)

ՀՍ·744–867, Հ(Ա·49–50, 52–54, 59), Հ(Լ·74–75), Հ·

Ա. ՊԱՐՈՆ-ՏԷՐ-ՆԵՐՍԷՍ ԵՒ ԻՐ ՏՂԱՔ՝ ԱԲԼԱՂ ՈՒ ԻՇԽԱՆ

598. Պարոն-Տէր-Ներսէս՝ ճգնաւոր Կ'դառնայ

*Մըհէրէն հաք՝ Սասունի մէջ՝ ելաւ *) ՊԱՐՈՆ ՏԷՐ–ՆԵՐՍԷՍ 2):*
Այդ Պարոն–Տէր–Ներսէ՛ան ըսես՝ կըտրիճ Հմբի՛չ էր հըսկայ,—
Աչխա՛րքն ըրաւ քարուքանդ··· ·
Գիչէ՛ր–ցերեկ կըռի՛ւ կ'ընէ, ու Մա՛րդ է որ կ'ըսպանէ՛···:
Ինչ երէ՛ց է···՝ ու ժամ–ժամատուն չի՛ մընաեր···:
Օրին մէկը՝ Տիրուհի՛ն էր, վերցուց ըսաւ, — «Ա՛յ Տէրտէ՛ր,
Հերի՛ք է որ Մարդ ըսպանես···, եւ այդ բաներդ ընես Դուն··· ·
Չէ՞ որ մե՛ղք է, Դու Տէրտէ՛ր ես, Քահանա՛յ ես, կարգի տէ՛ր··· ·
Ալ ժա՛մ ըրէ, Աղո՛թք ըրէ, որ Թողութի՛ւն ընէ Աստուած՝ Քո Հոգուն»:

---

1) Պարոն–Տէր–Ներսէսի եւ Համզա–Պահլաւանի ճիւղերը՝ կ'դըտնենք միայն մէ՛կ պատումի մէջ, — ՀՍ·744–867 եւ 868–1051՝ Սպարկերացի կանչօք, դրի առնուած ի՛մ կողմէ: Միւս փոփոխակները չունին մեր վէպին այս 6–րդ եւ 7–րդ ճիւղերը: Ա·49–59 միայն, բանի մը գիծերով կ'մօտեցնայ՝ ԱԲԼԱՂ եւ ԻՇԽԱՆ ու ԴԱՒՈՆԻԿ–ՈՐԲԻԿ խոբագրին տակ: Լ·74–75ի տուածը՝ աննշան դիծեր են լոկ: *) Ելաւ, իչխեց, իչխանութեան գլուխն ելաւ, գահ բարձրացաւ: 2) Պարոն Տէր–Ներսէս, կամ՝ Պարոնտէր–Ներսէս:

Ըսաւ, = «կընի՛կ, ես քա՛նի ողջ ու կանդուն եմ Ոտքիս վրայ՝
Պէտք է որ ես կըռի՛ւ ընեմ, Մա՛րդ ըսպանեմ մինչեւ վերջ...:
*Ես՝ օրէ *)՝ որ կըռիւ չընեմ՝ չե՛մ ապրիր...»:*
Կընիկ՝ դի՛ր մ՚ալ ըսաւ էրկան, երկու անգա՛մ ալ ըսաւ,
*Երեքի՛ վրայ՝ Պարոն–Տէր–Ներսէս ոը՛կ ըրաւ *) Իր կընկան,*
Գընաց ելաւ Սարի–ժամը 3), Դուռը դըրաւ՝ մըտաւ նե՛րս 4):

894. Պարոն-Տէր-Ներսէսի Երկու Ցղաճերը Ու Կռապաշտի Աղջիկը

Պարոն–Տէր–Ներսէսն ալ ունէր երկու լաճ,
Մէկի անուն՝ ԱԲԼԱՂ, մէկուն՝ ԻՇԽԱՆ էր,— 1)
Ամեհմէկը կըտրիճ, քըսա՛ն տարեկան:
Աբլաղ, Իշխան՝ չա՛տ լաւ Ձիե՛ր ունէին... .—
Ծովասա՛ր կար, կ՚երթային հոն՝ Ո՛րս ընելու Ընկերով:
Այն ժամանակն ալ՝ Բաղդատի–Մեծաւորը, կռապա՛շտ էր.
*Ատոր տակի *) ժողովուրդն ալ՝ Ծովասարը Ամառանո՛ց կուգային:*
Երբոր Իշխան ու Աբլաղը՝ գացին այդ Սար պըտոյտի՝
Գացին ընկան կըռապաշտի այդ Մարդերու Վըրաններ,
Տեսան որ ի՛նչ..., մէկ Վըրանին Դըրան մէջ՝
Աղջի՛կ մը կա՛յ՝ չա՛տ խօրոտիկ, գեղեցի՛կ...:
Աբլաղն ըսաւ, — «Իշխա՛ն,–ըսաւ–, ես այդ Աղջիկ պիտի առնեմ
[Ինձի կի՛ն.
Թէ որ չ՚առնեմ՝ ես կըմեռնի՛մ..., ձար չըկա՛յ...»:
Իշխանն ըսաւ, = «Մենք Հայհաւա՛տ ենք, եղբա՛յր,
Մեզ կըվայլէ՞՝ այդ կըռապաշտ Աղջիկն ուզենք՝ ու տանինք...»:
Աբլաղն այնտեղ ի՞նչ ըսաւ.—
*— «Որ Մենք չ՚երթա՛նք՝ կըռապաշտէն Աղջի՛կ տանինք հայցըննք *);*

---

*) Օրէ, Ամեն օր: *) Ուրկ ընել, Մրդոխիլ, բարկանալ:
3) Հաւանաբար՝ Մարութայ–Բարձր–Ասպարածին վաճը: Հմմտ.՝ Գր.. Լուսաւորիչ Հայրապետի ճգնումը՝ Մեպուհ Լերան Մանէ Այրին մէջ: 4) Ա.53–54՝ Իշխանն է ճգնութեան մտնողը՝ Սարերու մէջ:
1) ՁՍ.745՝ եւ պատումի ընթացքին՝ Հասաձ, Հուսէճ (կամ Ցասաձ, Ցուսէճ)՝ քրդական միջավայրի մէջ պատմութիւն համար: Ա.49՝ Մանասարի տղաներն են՝ (պատումին բերումով): *) Տակի, Հպատակութեան մէջ եղող: *) Հայցնել, Հայ դարձնել, Հայացնել:

Թևքենք *) Մեր Հա՛յ–Հաւատի վրայ՝ մէկ ու մէկ,—
Ինչո՞վ պէտք է Մեր Սասունը հաստատենք...:—
Մենք Մեր քաղցրիկ մէ՛կ–Աստուա՛ծը կանչելով՝
Պէտք է որ Մեր Թուրին ուժով՝ կըտապաշաններ դարձընե՛նք,
Զուգենք *), չինենք ու մնծցընե՛նք՝ Սասուն–Քաղաք 2)՝ Գիւղերով»:
— «Դէ՛, Դո՛ւ դիտես, եղբա՛յր»,–ըսաւ Իչխանն ալ:
Ու ղընացին Մարդուն Վըրան՝ Իր Աղջիկը ուղեցին.—
Այդ Քոչւորն *) ալ՝ անձի՛ն վախէն՝ «Չէ՛» չ'ըսա՛ւ:
Ասա՛ք տըւին որ՝ մէկ ամիսէն դան ու տանի՛ն այդ Աղջիկ,
Քա՛նի որ դեռ Քոչը Բաղդատ չ'է՛ դացեր:
Այդ Աղջիկն ալ՝ Դուռ մի՛ ըսեր որ Բաղդատի–Մեծին հետ՝
Առաջընէ Նըշա՛ն դըրուած է եղեր...:
Այդ տեղ Իրար խօսք–կա՛պ ըրին, դարձան եկան 'ի Սասուն,
Իրենց ըրած այդ խօսքակապը՝ Մօրեղբօրը 3) յայտնեցին:
Քեռի–Թորոսն ըսաւ, — «Մըրդի՛, լա՛ւ ըրեր էք, բայց պէտք է՝
Ձեր դործերը չուտ աւարտէք՝ երթաք բերէ՛ք այդ Աղջիկ,
Որ Քոչւոր–Ցեղ՝ չ'ելնէ՛ երթայ 'ի Բաղդատ,
Մեծաւորն ալ՝ Աղջիկն առնէ Ձեր Ձեռքէն... 4):
Դուն ալ, Աբլա՛ղ, Բաղաքն անոնց՛ը է մընացեր, Մե՛ծ պէտք է.
Դուն պիտի դաս՝ օծուխս ըլլաս Թագաւո՛ր.—
Գընա՝ Աղջիկն ա՛ռ ու կարդուէ՛, դարձիր եկո՛ւր՝ որ ներսիս»:—
Այն առեն ալ՝ ամուրի Մարդ՝ չէ՛ին օծեր Թագաւոր:—

895. Աբլաղի Հարսնցուն Կ'բերեն

Աբլաղ, Իչխան՝ պատրաստուեցան, դացին դէպի այդ Աղջիկ,—
Դէպի Ծաղկուն Մովսասո՛ր,
Որ Բաղդատի–Տէրոջ Ձե՛ռն էր այն առեն:
Գացին հասան այդ Վըրանին, բարե՛ւ տըւին, ներսեցան:
Աղջկան Հայրը հարցուց ըսաւ, — «Ինչի՞ համար եկեր էք...»:

---

*) Թեւել, Դարձնել, բերել: *) Զուգել, Զարդարել, պճնել, ճոխացնել: 2) Քաղաք՝ յաճախ կ'առնուի Երկիրի տեղ (Սասնոյ Քաղաք՝ Սասնոյ Երկիր, Մըսրայ Քաղաք՝ Մըսրայ Երկիր, եւն.): *) Քոչւոր, Վրանաբնակ մարդ: 3) Ա.50՝ Քեռի Թորոսին: 4) Նըմանի՝ Թլոլ–Դաւիթին (Հատոր 419):

Անոնք ալ ըՀ, = «Եկեր ենք որ Մեր–Հարսն առնենք ու գանինք»։
Այդ Մարդն ըսաւ, — «Դէ՛, Դուք հիմա՝ Իմ Օձիքի՛ս կըպեր էք՝
Առնին ալ՝ Դուք պէտք է որ Ձիս պաշտպանէք ու պահէք.—
Բաղդատի–Տէր՝ Իմ արմա՛տը կըվառէ...,
Իմ Աղջիկը Իր նըշանա՛ծն է այնօր...»։
Իշխանն ըսա՛ւ Իր Մեծ Եղբօր Աբլաղին,—
— «Ո՛նի՛ր որ Ան Խօսեցա՛ւն է՝ այդ Բաղդատի–Մեծիկին՝
Ձեռ քաշէ՛ *) Դուն՝ այդ Աղջիկէն, արի երթա՛նք այստեղէն.
Աղջկան Սիրտն ալ՝ Թերեւս Անո՛ր կապուած է...»։
Աբլաղն ըսաւ, = «Ես այդ Աղջիկ պիտի տանի՛մ, ճար չըկա՛յ...,—
Բաղդատի–Տէր՝ ի՛նչ որ կըրնայ՝ Թող ընէ՛...»։
Երկու Եղբայր՝ առին Հարսը ու գացին...։—

896. Աբլաղ կ'օձնի Թագաւոր

Երբոր բերին՝ հասան Սասուն եւ իջան,
Քեռի–Թորոս՝ Տէրտէ՛րը բերաւ եւ Աղջիկը մըկըրտեց ու հայացո՛ւց,
Ու պըսակեց Աբլաղի հետ՝ Անոր կո՛չն։
Գըսակ պըրծաւ՝ բերին Աբլաղն ըրին Երկրին Թագաւոր։
Աբլաղ երբոր նըստաւ Երկրին Թագաւոր՝
Իրեն ուժով՝ Ծովասարը խըլեց առա՛ւ Բաղդատէն։—
Դէմ դըներով՝ Սուրբ՛ անցուց, Մնացողներուն՝ «Աբդիլեց՝
Որ՝ Ամառներ՝ մէյ մ՛ ալ չիգա՛ն Ծովասարը Ձովոցի 1).—
Բաղդա՛տ ո՛րտեղ..., Ծովասա՛րը ո՛րտեղ է՛...,
Ձե՛մ տար Ձեզի,–ըսաւ Աբլաղ–, դէ՛ն գացէ՛ք...» 2)։
Եւ այնպէ՛ս ալ սովորութի՛ւն ըրեր էին Ձորչ–Եղբայր՝
Որ Մայիսի 3) երե՛ք ամիս՝ Ծովասարը Ամառանո՛ց 4) կ'երթային.
Ուրիշ Մարդ ալ չէի՛ն տաներ Իրենց հետ,—
Իրենց Ձիանք կըհեծնէին՝ կ'երթային։

---

*) Ձեռ քաշել, ե՛տ կենալ, հրաժարիլ։ 1) Ա.50՝ հայլաղ։ 2) Ծովասարի, կամ Սեղան–Սարի, կամ Սեւ–Սարի, կամ Աւազ–Սարի վէմը՝ կար Առիւծ–Մըհէրի եւ Դաւիթի՛ օրերէն (Հատ. 224 եւ 417–420)։ 3) Այսինքն՝ Գարնան։ 4) Ամառանոց՝ աւելի ճիշդ է՝ ըստ իս՝ քան ամարանոց։

Մէկը Բաց էր, մէկը Կարմիր, ու հըրեղէ՛ն Զի էին...,—
Մովէ՛ն էին դուրս եկեր... 5):

897. Բաղդասայ-Ցէրը կուգայ Ա.ու-Գերի Կ՚առնի

Բաղդասի–Տէր երբոր լըսեց իմացաւ՝
Թէ Այդ–Մարդիկ 1)՝ երեք ամիս՝ Զովո՛ց կուգան Մովսեր,
Ըսաւ՝ «Բաղաք մընացեր է առանց Մեծի եւ անոէր,
Երթամ զարնեմ՝ Ա.ու–Գերի՛ ընեմ՝ քաշեմ ու բերե՛մ»:
Այն ժամանակ ժողվե՛ց իր Զօրք՝ քըշեց եկաւ Սասնու չո՛ւրջ,
Զոր–բոլորը առաւ կեցա՛ւ Բանակով:—
Ելաւ այնտեղ Իր Մարդերը ճամբեց Քեռի–Թորոսին,—
— «Կամ Մա՛րդ ղըրկէ՝ որ գայ Ինձ հետ Կըռիւի՛,
Կամ Թէ կուգամ՝ Ա.ու–Գերի՛ կ՚ընեմ Քաղաք՝ կըտանի՛մ...»:
Քեռի–Թորոսն ալ ի՞նչ ըսաւ այդ Մարդոց,—
= «Կըռուող չ՚ունի՛մ՝ որ ղըրկեմ գայ՝ Կըռի՛ւ ընէ Իրեն հետ...,
Ի՞նքը գիտէ՝ Իրեն Աստուա՛ծ..., ի՛նչ որ կըընայ՝ Թող ընէ՛...»:
Զօրքը եկաւ ու լեցուեցաւ Սասնայ մէ՛ջ.
Ի՛նչքան որ էգ ու Որճեղէ՛ն կար Քաղաք՝
Ամէն Ամէն՝ Գերի՛ ըրին ու գացին...:—

898. Աբլաղի Եւ Իշխանի Տեսած Երազը

Այդ պիչերն ալ՝ Մովսեսրը, Իշխան՝ երա՛զ մը տեսաւ.—
Երազի մէջ՝ տեսաւ որ ի՞նչ..., «Աչխարհ՝ լո՛ւս էր ու Արե՛ւ...,
Սասուն՝ մո՛ւթ էր՝ ու խաւա՛ր...»:
*Զարթաւ *) կանչեց Իր Մեծ–Եղբօր Աբլաղին,*
Թէ, — «Վե՛ր եկիր..., զարմանալի Երա՛զ մ՚ տեսայ այս գիչեր»:
Պատմե՛ց եղբօր՝ Իր Երազ,
Թէ, — «Ես տեսայ՝ Աչխարհ լո՛ւս էր ու Արե՛ւ...,
Սասուն՝ մո՛ւթ էր՝ ու խաւա՛ր...»:
Աբլաղն ըսաւ, = «Եղբա՛յր, ե՛ս ալ՝ այդ Երազը տեսեր եմ...»:

---

5) *Սասմանց–Տան բոլոր Քաղերու Զիևերուն պէս:*
1) *Այսինքն՝ Աբլաղ ու Իշխան:*
*) Զարթիլ, Արթննալ, զարթնուլ:

Ըսաւ, — «Ապա, Մեր Ազդին ալ՝ տըւովի՛ *) է ըսկիզբէն,
Մեր Զիանքը իմաստո՛ւն են Իրենցմէ.—
Երբոր Մեր Ազդ նեղուքեան մէ՛ջ գըտնըւի՝
Զիանք Իրենց Մըսուրին տակ կըքանդո՛ն...,
Վե՛ր ելլը...»:
Իշխան ելաւ գընաց Ախոռ՝ տեսաւ որ՝
Իրենց Զիանք՝ ամենմէկը Իրենց տեղ՝
Մէկ Ծունկի չափ՝ Մըսուրին տակ քանդո՛ր են...:—

999. Հարէն Հաճուած Պատուիր Ըսածները

Առաւն՝ լոյսը որ բացուեցաւ, Զիանք հեծան՝ քըշեցի՛ն,
Եկան հասան՝ ի՛ Սասուն,
Տեսան՝ Քաղաք Մա՛րդ չ'է՛ մնացեր..., Գերի՛ տարեր են Ամեն...:
Դէ՛ս ման եկան, դէ՛ն ման եկան, տեսա՛ն որ՝
Հորի մ' մէջէն՝ Մարդու նըւո՛ց *) կուգայ վեր...,—
Զին քըշեցին՝ գացին Հորի Բերնին վըրայ կայնեցան,
Տեսան որ մէկ կընիկ—Աբմա՛տ է կուլայ...,
Այդ Զօրքերու Զիերուն հետ՝ եկեր ինկեր այդ Հո՛րը...:
Պառաւ Հորէն դո՛ւրս հանեցին՝ հարցուցին,—
Թէ, — «Այս Քաղքի Մարդը ո՞ւր է..., ա՛յ Կընիկ...»:
Պառաւն ալ հոն ի՞նչ ըսաւ.—
= «Ո՛չ Իշխա՛ն՝ ոչ Աբլա՛ղն ըլլան, ոչ ալ Իրենց Տէրութի՛ւն...,
Ելան գացին՝ Կըռապաշտի այդ լերը Աղջիկ Հա՛րս բերին...,
Բաղդատի—Տէր՝ այդ Աղջիկն ալ նըշաներ էր Իր համա՛ր...,
Գացին բերին՝ Իրենք Թոզին Քաղքէն ելա՛ն եկուքն ալ...,
Բաղդատի—Տէր իմացա՛ւ որ Անոնք Քաղքին մէջը չէ՛ն՝
Եկաւ՝ այդ մէկ Կընկան համար՝ բըռնեց Քաղքին չորս–բոլոր՝
Առ–ու–Դերի՛ ըրաւ Ամեն՝ ու գընա՛ց...»:
Ըսաւ, — «Մամի՛կ, ո՞ր կողմ քըշեց ու տարաւ...»:
Թէ, = «Ա՛յս կողմը...»,–ըսաւ Կընիկ՝ Աբլաղին:
Անոնք ալ հոն՝ Զօրքին հետքը բըռնեցի՛ն ու չուտ գացի՛ն...:

---

*) Տըւովի, տուովի, ինաւուր, երկնաւուր, ինքնայաւուկ:
*) Նուագ, հեծեծանք, ողբի ձայն:

900. Արլաղ՝ Պօղոս Կ'ըսէ Թօնամի Բանակին Մէջ

Գացին մէկ օր, երկո՛ւ օրւայ ճանապարհ,
Տեսան որ մէկ հա՛րթ Դաշտի մէջ՝ Բաղդատի–Տէր լճա՛ր է,
Իր Բանակը Վրաններու տակ դրած՛ր...,—
Կ'ուտե՞ն, կ'խմե՞ն, կ'ուրախանա՞ն, խա՛ղ կ'ընե՞ն...:
Դեռ Բաղդատը չե՛ն հասեր...:
Երկու Եղբայր՝ գացին հասան Զօրքերուն,
Իշան Իրենց Զէյերէն վա՛ր, թող տըւին որ արածա՛ն,
Իրենք ալ հոն Հայ–մաց կերան, հանդչեցա՛ն,
Մինչեւ Արեւ մա՛ր մըտաւ:
Երբոր Արեւ մըտաւ, եղաւ մութ գիշեր՝
*Արլաղն ըսաւ, — «Իշխա՛ն,–ըսաւ–, Դուն հոս նայէ՛ *) Զէյերուն,*
Ես ալ երթամ՝ Բանակին մէջ պըտո՛յտ մ՝ ընեմ՝ դառնամ գա՛մ»:
Իր Նետ–Աղեղն ու Գուրզն առաւ՝ դընաց մըտաւ Զօրքին մէ՛ջ 1):—
Տեսաւ որ Զօրք՝ Մէկը Իր Զի՛ն կըկապէ...,
Մէկ՝ քընե՛ր է, Մէկ՝ Հա՛ց կ'ուտէ, Մէկ–Երկուքն ալ կըխօսի՛ն...,—
Զօրքին մէջէն՝ գ'Ինք ճանչցող Մա՛րդ չըկայ...,—
Պըտըտելով՝ դընաց հասաւ Մեծաւորի Վրանին,
Նայեց տեսաւ՝ Բաղդատի–Տէր եւ Իր Կընիկ՝ կըխաղա՛ն,
Դարձաւ եկաւ Իշխանի քով ու պատմեց Թէ ի՛նչ տեսաւ:—

901. Արլաղ Ու Իշխան՝ Զօրքը Կ'ջարդեն

Երկու Եղբայր՝ եկան Իրենց Զէյերուն քով քընացան:—
Լուսաբացին՝ Արլաղն ըսաւ, — «Իշխա՛ն,–ըսաւ–, ի՛նձ լըսէ,
Դու՝ Բանակին վարի՛ կողմը կըկենաս,
Ես ալ կ'երթամ վերի՛ կողմը, — առնենք ջարդե՛լ այդ Զօրքեր» 1):
Երբոր գացին կեցան Զօրքին մէյմէկ կողմ՝
Ինչպէս Իրենց Զոջանց–Օրէ՛նք էր վաղուց՝
Իրենց Աղո՛թքն ըրին առաջ, երկուսն ալ:—
Իշխան կանչե՛ց այս մէկ կողմէն ու ըսաւ,—

---

*) Նայիլ, Հսկել: 1) Նման՝ Տրովադայի հերոսներուն, բանակները փոխադարձ լրտեսելու մտքով:

1) Մանասարի Բաղդասարի ըրածին պէս, երբ Վիշապին դէմ՝ ճակատ կըյարդարեն (Հատուած 57):

— «Օրհնեա՛լ, բարերա՛ր Աստուա՛ծ, կամքը օրհնեա՛լ՝ Արարողին,
Կանչենք Սարերու Սուրբեր, Ձորերու Մա՛յր–Աստուածածին,
Դուք օգնական ու պահապա՛ն ըլլաք Իշխանին...»:

Ե՛ւ Արլաղն ալ՝ մի՛ւս կողմէն՝ կանչեց ըսաւ Ի՛ր «Ճիչամ».—

— «Օրհնեա՛լ, բարերա՛ր, Աստուա՛ծ, կամքը օրհնեա՛լ՝ Արարողին,
Կանչենք Սարերու Սուրբեր, Ձորերու Մա՛յր–Աստուածածին,
Դուք օգնական ու պահապա՛ն ըլլաք Արլաղին...» 2):

Ես ըսկըսան ջարդե՛լ այդ Ձօրք, — Մէկ՝ ա՛յս կողմէն, Մէկը՝ ա՛յն.
Թէ որ Իրենք՝ մէյմէկ կողմէ՝ յիսունական թէ վաթսուն՝
Մա՛րդ կ'ըսպանեն Իրենց Սըրով ու Թըրով,—
Իրենց Ձիերն ալ՝ Բերանով ու Ոտքերով՝ հարի՛ւր Հոգի կ'ըսպանեն:
Դէ՛, մէկ խօսքով՝ այդ Ձօրքերուն այնպէ՛ս սաստիկ ջա՛րդ տըւին՝
Որ Բաղդատե–Ցէրը՝ մինակ՝ հազի՛ւ փախաւ ու պըրծաւ...:—

90֊. Սրկու Եղբայր Թէմ-Թէմի Կրկառին Ու Գերիները Կ'ազատեն

Երկու Եղբայր՝ Ձօրքը այդպէս երբ ջարդեցին ու պըրծան՝
Եկան հասան՝ հանդիպեցան Իրարու:—
Երկուքն Իրար չըճանչըցա՛ն ալ այնտեղ,—
*Աչքերները *) Արի՛ւն լըցուած..., Իրենց Ձիեր Արիւնի մէջ կորսըւա՛ծ,*
Ա՛յնքան որ Մա՛րդ ջարդեր էին եւ Արիւնի մէ՛ջ մըտած...:
Իշխան Իր Ձին քըշեց դընաց դէպ Արլաղը՝ ու կանչեց,—
— «Է՛ Հոզածի՛ն, արդեօք Դուն ալ ի՞նչքան ուժով Մարդ ես որ՝
Զե՛ս ըսպանուեր..., ու չե՛ս փախիր ազատուիր...»:
Ըսաւ, = «Քենէ փախչող Տըղայ չըկա՛յ հոս...,
Զեռքէդ ի՛նչ որ կուգայ՝ ըրէ՛, մի՛ քաշուիր...»:
Եւ Իշխանը՝ մէ՛կ Գուրզ զարկաւ Արլաղի՛ն...:
Որ զարկաւ Գուրզն՝ Արլաղ գիտցաւ՝ Սա՛րը եկաւ Իր վըրայ...,—
Ըսաւ, — «Ասի՛ կա՛յ ու չըկայ՝ Մեր Ազգէ՛ն է, Ագնանց–Ցեղէ՛ն,
[Արիւնէ՛ն...»:
Արլաղն այնտեղ վերցուց ըսաւ, — «Հերքն Ի՛մս է...»:

---

2) Նախորդ ձիւղերուն յատուկ Ճիշամը (Հատ. 84, 171, 172, 437, 598, եւն.) մաչեր, փոխուեր՝ եղեր է այս ձեւը:

*) Աչքրներ, Իրենց աչքերուն մէջ:

Իշխանն ալ Թէ, = «Քենէ վախցող Տըղայ չըկա՛յ, դէ՛ արի՛...»:
Ալ Աբլա՛ղն էր, — պըրդըռուեցա՛ւ, ասպանդակե՛ց Իրեն Ձին,
Ձինն ու Ինքը թափով դացին՝ Դո՛ւրդ մը իջուց Իշխանի՛ն...,
Իշխան Ձիէն վա՛ր ինկաւ...:
Աբլաղն իջաւ՝ որ Թուրքովը դարնէր կըտրէ՛ր Անոր Վիզ՝
*Իշխանն ըսաւ, — «Կըտրի՛ճ,–ըսաւ–, Դուն Իմ Գըլուխ կըտրեցիր *),*
Բայց Աբլաղի՛ Գըլուխն ի՛նչպէս պիտ՝ կըտրես...;—
Հիմա կուգա՛յ Աբլաղը...»:
= «Դուն ի՞նչ Մարդ ես,–ըսաւ Ան ալ–, որ Աբլաղը կըճանչնաս...»:
— «Ձի՞ ես,–ըսաւ–, Անոր պըղտիկ եղբա՛յրն եմ...»:
Աբլաղ՝ այնտեղ՝ նո՛ր ճանչըցաւ՝ Ատի Իրեն եղբայրն է 1).—
= «Քո Տո՛ւն չ'աւրի՛,–Աբլաղն ըսաւ Իշխանին–,
Այն Գուրդ որ Դուն Ինձի զարկիր՝ ես դիտցա՛յ որ Մեր Աղէն էր [ու Ցեղէն,
Միայն՝ Աչքերս ա՛յնքան Արիւն լեցուած էր՝
Որ Քիզ մէկէն չըճանչըցա՛յ՝ Թէ Դո՛ւն ես...»:
Շուտ վե՛ր վերցուց Իր եղբայրը, համբուրուեցա՛ն երկուսով,
Ելան հեծա՛ն Իրենց Ձիանք, առի՛ն բոլոր Գերիներ,
Անոնց հետ ալ՝ Աբլաղ բերաւ Իր կընի՛կ,
Դարձան եկան Իրենց Տեղը՝ ի Սասուն:

Բ. ՊԱՐՈՆ–ՏԷՐ–ՆԵՐՍԷՍ ԵՒ ԱԲԼԱՂ ՈՒ ԻՇԽԱՆ՝ ԽԴՐՕՅ ԴԷՄ

903. Խդրօ Կուգայ Սասունի Վրայ

Զըրոյցն ո՞ւստ տանք, — Մըսրէ՛ն 1) տանք:—
Մըսրայ–Տիրոջն ալ Հազարի–Գըլխաւորը մէկ Մարդ կայ՝
Ատոր անուն Խըդը՛ր է:

---

*) Կտրեցիր, եթէ կարես, սպանիր թէ կտրեցիր: 1) Նման պարագանէր՝ Սանասարի եւ Բաղդասարի մէջ (Հատ. 35), Դաւիթի ու Ձինով–Օհանի մէջ (Հատ. 650), Դաւիթի եւ Մըհէրի մէջ (Հատ. 808), եւ Ռոստամ–Զալի մէջ՝ (Ցրն.–Թրն.):

1) Մըսր, Մուսուլ = հին Ասորեստան, կամ՝ Մըսըր–Եգիպտոս:

Զայնը գընաց լինկաւ Մըսըր՝ որ թէ «Գարոն–Տէր–Ներսէս՝
Եղեր է կոյս *) ճըշնաւոր,
Մըտեր է ժամ՝ դուրս չի՛գար...» 2):
Այդ Խըդրօն ալ՝ Մըսրայ–Տիրոջ ի՞նչ ըսաւ.—
— «Ապրա՛ծ կենաս, Մեր Մեծաւո՛ր, տո՛ւր ինձի Մարդ ու Զօրքեր,
Երթանք Սասուն՝ ամեն չարդենք ու կողոպտենք ու բերե՛նք»:
Մըսրայ–Տէրն ալ՝ ըսաւ, = «Խըդրօ՛, ինչի՞ համար պիտ՝ երթաս»:
— «Ապա, Տէ՛ր իմ,–ըսաւ Խըդրօ 3)–, ո՛ղջ ըլլաս...,
Մենք լըսեր ենք որ այդ Գարոն–Տէր–Ներսէս՝
Կըռիւ չի՛ գար՝ ու ճըշնաւո՛ր է եղեր,
Երդում ըրեր՝ մըտեր է ժամ, դուրս չե՛ւ ըներ:—
Երթանք Սասուն՝ կըտրենք, քակենք, առնենք գա՛նք»:
Բաղդատի–Տէր՝ Թո՛ւղթ ուղարկեց Իր Հողին մէջ՝ ամեն կողմ,
«Իր Թուրին տակ՝ Դըզել–Բրնոց ի՛նչքան Մարդ կայ որձեղէն՝
Գէտք է որ դան՝ երթան Սասուն՝ կըռիւ՛...»:
Եկա՛ւ Զօրքը, գացին նորէն Սասնու վըրայ կըռիւ...:—

904. Երիցուհին կ'աղաչէ Պ.-Ց.-Ներսէսին՝ Որ Օգնութիւն Հասցի

Զօրք որ եկաւ Սասնու վրայ՝
Գարոն–Տէր–Ներսէսի լաճեր՝ Աբլաղ, Իշխան՝ ելան դո՛ւրս,
Շուտ մը հեծա՛ն Իրենց Ձիեր, Զօրքը առին գացին դէմ:—
Եօ՛թը ցերեկ, եօ՛թը գիշեր՝ զարկին Իրա՛ր, կըռուեցա՛ն,
Հընար չ'եղա՛ւ՝ Մէկ Միուսը յաղթելու...:
Ճար կըտրեցաւ՝ Երիցուհին տեսա՛ւ որ թէ պիտի չարդե՛ն Ամենն ալ,
Լացաւ՝ ելաւ դընաց մըտաւ Սարի–ժամ,
— «Աստծո՛ւ սիրուն,–ըսաւ–, Գարո՛ն–Տէր–Ներսէս,
Սասում առի՛ն..., Աստծո՛ւ սիրուն, ել հասի՛ր...,
Գիտէ սպանե՛ն Քո Տըղաք...,
Եկեր եմ Քեզ զո՛ւժը կուտամ՝ որ դաս հասնիս օգնութեա՛ն...»:
Գարոն–Տէր–Ներսէսն ալ ըսաւ, = «Ես չե՛մ զար դուրս, որ չե՛մ զար.
Ձեզ օգնութիւն չըկա՛յ Ինձմէ..., Ես եղեր եմ ճըշնաւոր...:

---

*) կոյս, Միանձն, աչխարհէ հրաժարած: 2) Ա.54՝ «Աբլաղ մեռեր է, Իշխանն ալ գնացեր է Սարերը ճգնութիւն ընելու» (պատառիկին բերումովը): 3) Խըդրը անունի մասին՝ Բ. Հատորովը:

Ասիկ քանի տարի՛ է որ՝ Սուր չե՛մ առեր ես իմ Ձեռ...,
Աստծու հետ ալ ո՛ւխտ եմ ըրեր՝ որ քա՛նի դեռ ողջ եմ ես՝
Ասկէ ետք ալ Սուր–Թուր չ՛առնե՛մ ես իմ Ձեռ...»:
Կընիկ լացաւ ու աղաչեց, — «Աստծո՛ւ սիրուն, Մա՛րդ,–ըսաւ–,
Պիտի սպանե՛ն իմ Տըղաները..., եւ ու հասի՛ր՝ ազատէ՛...» 1):
— «Կընի՛կ,–ըսաւ–, քա՛նի կըռիւ կ՛ընէի ես՝ աչ ու ձախ՝
Մէկը կուգա՛ր Սասնու վըրայ պօռալու...:
Ասօր ալ ես «Մեղա՛յ» կուտամ իմ Աստըծուն, կըճըղնի՛մ...,
Ա՛լ այդ բաներ ես չե՛մ ըներ, ու կըռիւի չե՛մ երթար...:
Ի՛նչպէս այն օր՝ որ ես կըռի՛ւ կ՛երթայի՝
Դու՝ սըրդոզած՝ կուգայիր ինձ կ՛ըսէիր՝
«Դուն Տէրտէ՛ր ես, Քահանա՛յ ես..., այդ բաները մի՛ ըներ...
Տէրտէր ըսած՝ իր ժամու մէ՛չ կընըստի...,
Իր Պատարագն ու Աղո՛ւքքը կ՛ընէ Իրեն Աստըծուն»...,
Ասօր որ ես եկեր եմ ու իմ ժամ–ժամատո՛ւն նըստեր եմ...՝
Դուն նորէն ալ՝ չե՛ս դադրիր, իմ Հոգիէ՛ն կախուեր ես...,
Նորէն ինձի կ՛ըսես՝ «Ելլէր՝ գընա դուրսը կռի՛ւի՛...,
Մա՛րդ ըսպանէ, նորէն կենդիր մեղաց տա՛կ»...»:
Կընիկն այնտեղ ի՞նչ ըսաւ.—
— «Աստծո՛ւ սիրո՛ւն,–ըսաւ–, Պարո՛ն–Տէր–Ներսէս,
Իմ Տըղաներ պիտի սպանե՛ն..., եւ ու հասի՛ր՝ ազատէ՛...»:—

905. Պարոն-Տէր-Ներսէս՝ Իր Տղաներուն Օգնութեան Կերած

Ան ալ՝ Պարոն–Տէր–Ներսէսը՝ ելաւ այդտեղ կանգնեցա՛ւ...,
*Սըրդոխեցա՛ւ Իր Կընիկին..., քաշեց ձեւե՛ց *) Իր Շապիկ...,*
Սարի–ժամէն ելաւ եկաւ, իջաւ Քաղաք եւ ըսաւ,—
— «Իմ Ձին, Իմ Թուր՝ բերէք ի՛նձ...»:
Ձին բերի՛ն...,—
Ելաւ առաւ՝ Թուրը կապե՛ց, հեծաւ Իր Ձին՝ ու դընա՛ց...:
Գընաց տեսաւ՝ որ Ամենը ըսպանե՛ր են ու փըռե՛ր...,

---

1) Համեմատելի նման պարագաներ՝ Տրդատի եւ Աքիլլէսի հետ [Գլան. 151, եւ Իլիական՝ Թ. 127–130]՝ Բ. Հատորովը:

*) Ձեւել, ճեղքել, պատռտել:

Մընացեր են՝ Աբլաղ, Իշխան 1), — Իր այդ երկու Տըղանե՛ր...:
Ան ալ քըշե՛ց ու գընա՛ց...:
Գընաց կեցաւ Անոնց առջեւ՝ առաւ կըռի՛ւ ընել հոն...:
Հիմա՝ Տըղաք չե՛ն դիտեր թէ՝ Իրենց Հա՛յրն է՝ եկեր դո՛ւրս,
Տեսան որ մէկ Ըմբիշ–Մարդ մը՝ եկաւ Իրենց օգնակա՛ն,
Այդ Մըսրայ–Զօրք կըկոտորէ–լեցնէ Գետի՛ն, կըթողո՛ւ...:
Աբլաղն ըսաւ, — «Իշխա՛ն, Ախիկ ի՞նչ Մարդ է որ եկեր է՝
Այդ Զօրքերը կըկոտորէ՝ Մենք չե՛նք ճանչնար ո՞վ է Ան...,—
Մեր Սասնո՛ւ *) է՝ ու Մենք Ախ չե՛նք ճանչնար...»:
Իշխանն ըսաւ, = «Աբի՛, ըսաւ–, քըշենք կրթանք Իր վըրա՛յ...,
Թէ Անիկ Մեր Սասունէն է՝ կըճանչընա՛նք իհարկէ... .
Թէ Սասնու չէ՛՝ չե՛նք ճանչընար ո՛վ է Ան...»:—

906. Հայր Ու Ցոտ՝ Խդրօի Ջօրը Կ'ջարդեն

Աբլաղ, Իշխան՝ այդ Տըղաքն ալ՝ կըսրի՛ճ են,—
Ելան Իրենց Ձիանք հեծան՝ քըշեցին,
Գացին կեցան այդ Ըմբիշին դէմ–ու–դէ՛մ,—
Կընային թէ՝ «Ա՛խ ի՞նչ Մարդ է՝ որ Օգնակա՛ն եկեր Մեզ...՝
Ու Մենք Անիկ չե՛նք ճանչընար Իր ձեւէն...»:—
Տեսան որ ի՞նչ..., — Իրենց Հա՛յր...:—
Ճանչըցա՛ն որ՝ «Իրենց Հա՛յրն է՝ Արիւնի մէջ չաղախուե՛ր...,
Ա՛յնքան որ Մա՛րդ ըսպաններ է ու փըռեր...:
Այն ժամանակ Հայրն ալ դիտցա՛ւ որ Իր Տըղաք դեռ ողջ են,—
— «Օրհնեալ Աստուա՛ծ»,–ըրաւ այդտեղ՝ ու փա՛ռք տըւաւ Աստըծուն
Ուրախացաւ՝ «Որ Իմ Տըղաք դեռ ո՛ղջ են»:
Ան ալ՝ Իրեն երկու Տըղաք տըւաւ մէ՛կ կողմ, Ինք մէ՛կ կողմ,
Երկու դեհէն քըշեցին ու տըւին Մըսրայ–Զօրքին վրա՛յ,
Կոտորեցին ու ջարդեցի՛ն Ամենն ալ...,—
Մընաց միայն այդ Հաղարի–Գլխաւորը՝ Խըդըրիկ...:
Խըդրօն ալ դ'Ինք Դիակներուն մէջ պահե՛ր է ու կեցե՛ր 1):
Գարոն–Տէր–Ներսէ՛ս են է, — առաւ Իրեն երկու Տըղաներ,
Դարձաւ որ գան դէպի Տուն,
Եկան նըստան Աղբիւրի մ' վրայ Հա՛ց կերան:—

---

1) ՀՍ·767՝ Ցատաղ, Ցուսէփ: *) Սասնու, Սասունէն:
1) Կուզրազինի պէս (Հատուած 689):

907. Խրոճ՝ Զանգակաւոր Խոյի Մորթով Ծպտուած

Ձըրոյցն ո՞ւստ տանք,— դառնանք նորէն այդ Ալըրօչ'ն տանք ղըրոյց,
Որ Հազարի–Գըլխաւո՛րն է՝ Մըսրոյ–Տէրոջ Զօրքերուն։—
Ելաւ բերաւ մէկ Խոյի՛ Մորթ՝ իր անճո՛վ,
Ամէն Մազէն մէյմէկ հատ վոզբ Զանգա՛կ ոլրեց ու կախեց,
Մըտաւ մէջը՝ ու հագուեցա՛ւ Խոյի պէս †),
Եկաւ Պարոն–Տէր–Ներսէսի եւ Իր Տըղոց ետեւէ՛ն։
Եկու տեսաւ՝ որ Նըստած են Աղբիւրի վրայ՝ Հա՛ց կ'ուտեն.
Ան ալ դ'ինքը երևրկըտա՛ց, թա՛փ տըւաւ,
Չընդրընդո՛ցը լինկաւ այդ Դա՛շտ..., Սասմանա–Դա՛շտը՝ ծայրէծայր։
Պարոն–Տէր–Ներսէ՛սն էր, այնտեղ՝ ոլրուեցաւ ու նայե՛ց՝
Տեսաւ որ մէկ բա՛ն մը եկաւ,— Մորթն ու Հագուածք՝ Խոյի՛ պէս...,
Ամէն Մազէն Զանգա՛կ մ' կախեր, կըզընգըզընգա՛յ ու կուգա՛յ...։
Պարոն–Տէր–Ներսէսը վերցուց կանչեց ըսաւ,— «Դուն ո՞վ եեե՛ս...»։
Ան ալ՝ թէ = «Ես Հրեչտա՛կն եմ...,—
*Մենք լըսեցինք՝ որ Դուն այլեւս մըտեր էիր Ժամ–իննե՛... *),*
Ու Ճըղնաւո՛ր էիր եղեր, դացեր–եկեր Սարի մէ՛ջ...,
Ասոր ահա լըսեցինք որ՝ դո՛ւրս եկեր ես Դուն նորէն...՝
Ա՛յդչափ Մա՛րդ ես կոտորե՛ր...։—
Ասուածն ալ՝ չա՛տ բարկացե՛ր է Քու վըրադ...՝
Ձիս ուղարկեց՝ ըսաւ՝ «Գընա՛՝ Անոր Հոգին ա՛ռ՝ եկո՛ւր»...»։
Ան ալ Պարոն–Տէր–Ներսէսը ի՞նչ ըսաւ.—
— «Ծօ Հըրեչտա՛կ, Դուն եկեր ես՝ Հոգուս համար եկեր ես...՝
Որ իմ Հոգին Դուն առնե՞ս...»։
= «Հա՛–ա՛...,–ըսաւ–, Աստուած Քենէ սըրդոխե՛ր է այս անգամ,
Որ Դու՝ Ժամէն ելար եկար՝ ու նորէն Մա՛րդ կ'ըսպանես...։
Ես՝ Քու Հոգին պիտի առնե՛մ այս անգամ...»։
Պարոն–Տէր–Ներսէսն ալ ըսաւ,— «Դո՛ւն պիտես...,
Կ'առնես...՝ ա՛ռ...։—
Որ Աստուած Քեզ ուղարկեր է՝ պիտի առնե՛ս Իմ Հոգին...,
Ի՞նչ պիտի'նեմ Ես Քեզի...,—

---

†) Մամիկոնեան Տոհմին Զինանշանն էր Խոյը, անով ծպտուեցաւ։ *) Ժամ–իննե (Ժամ 'ի ներքս), Ժամու մէջ։

Դուն Հրեչտա՛կ մ՝ ես..., ես ի՞նչ պիտի ընեմ Քեզ...,—
Կ՝առնես...՝ ա՛ռ...» 1):—

908. Խդրօն՝ Պ.-Ց.-Ներսէսի Թուրովը՝ Երեխեն Վիզերն Ալ Կ՝կտրէ

Ան ալ՝ Խըդրօն՝ ի՞նչ ըրաւ,—
Քաչե՛ց Իր Թուր, Պարոն–Տէր–Ներսէսն ալ կտո՛ւց Իրեն Վիզ,
Եւ Ան՝ Իր Թուր՝ Անոր Վիզին կըգըսէ՛՝
Որ կըտրէ՛...:—
Հիմա՝ Թուրը Պարոն–Տէր–Ներսէսի Վիզը չի՛ կըտրե՛ր...:
— «Տօ՛, Դուն,–ըսաւ–, ի՞նչ Հրեչտակ ես՝ Քո Թուր Իմ Վիզ
[չի՛ կըտրե՛ր... .
Քու Աստուածը ի՞նչ Աստուած է...՝ որ այսօր՝
Իր Հրեչտակի Թուրը՝ Իմ Վիզ չի՛ կըտրե՛ր.՞.՞.՞ .—
Ոչ Դո՛ւն ըլլաս...՝ ոչ Քու Աստուա՛ծ..., [մեղա՛յ Տէ՛ր...],
Արի այստե՛ղ՝ Քեզի Թո՛ւր տամ՝ գո՛րկ ու կըտրէ Իմ Վիզը...» 1):
Ան ալ առաւ Պարոն–Տէր–Ներսէսի Թո՛ւրը–Կէծակին՝
Զարկաւ կըտրե՛ց Անոր Վիզ...:
Տըղաներն ալ՝ այնտեղ ըսին՝ Թէ, — «Հրե՛չտակ...,
Որ Դուն Մեր Հօր Հոգին առիր...՝ Մե՛րն ալ առ...»:
Այդ Երկուսի Վի՛զն ալ զարկաւ ու կըտրե՛ց...,—
Երե՛քն ալ Հոն՝ մէ՛կ անգամէն ըսպանե՛ց...:—

909. Խըդրօ՝ Նորէն Սասունի Վրայ. Իօխաճի Կինը՝ Գերի

Խըդրօն երբոր Երե՛քն ալ մէկ՝ ըսպանեց՝
Իմա՛ց տըւաւ Մըսրայ–Տիրոջ՝ Թէ՝ «Զօ՛րք ղըրկէ Ինձ համար,
Սասուն քակենք, քար–քա՛նդ ընենք՝ առնենք գա՛նք.—

---

1) Չ՛մտածեց Թէ՝ «գառինքն գայլք եղեն եւ արեան ճապաղիս հանէին»՝ Լաստիվերտցիի ըսածին պէս (էջ 97): Կամ՝ ինչպէս Աւետարանը կ՝ըսէ, — «Զդոյլ լերուք՝ ի սուտ մարգարէիցն որ գան առ ձեզ՝ ի հանդերձս գառանց, եւ՝ ի ներքոյ են գայլք յափշտակողք»:

1) Այնտեղ՝ Վարդանանցին՝ «Սուր՝ Քո եւ Պարանոց՝ Մեր», այստեղ՝ խաբէութեան առաջ՝ «Մո՛ւրն ալ Մեր, Պարանո՛ցն ալ», — փոխանակ՝ մեծազօր Դաւիթի օրերու՝ «Սուրը՝ Մե՛ր, Պարանոցը՝ չար Թշնամիին»...:

Պարոն–Տէր–Ներսէս մորթե՛ր եմ՝ իրեն երկու լաճերով…,
Ֆո Հաղարթ–Դըլխաւորը, ե՛ս՝ Խըդրօ՛…»։

Մըսրայ–Տէրն ալ՝ ելաւ ղըրկեց նո՛ր Զօրքեր,
Եկան տըւին Սասնու վըրա՛յ, ըսպանեցին, աւերեցի՛ն ամեն կողմ,
Կըտըրտեցի՛ն, բաժանեցի՛ն իրա՛մէ…։
Մէկ կընի՛կ մը, — այդ ալ Պարոն–Տէր–Ներսէսի Պըղտիկ–Հարս՝
*Անուն ՍԱՆԴՈՒԽ(Տ), շա՛տ խօրո՛տ էր, ու տըղո՛վ *) էր այդ օրեր,*
Խըդրօն իր Աչք նետեց Ատոր՝ եւ ըսաւ,—
— «Ի՛նչ կընիկ, Մարդ՝ որ կ'ըսպանէ՛ք՝ ըսպանէ՛ք…,
Այս մէկ կընիկ մի՛ ըսպանէք· պիտի տանիմ ինձ համա՛ր…»։
Ֆար–քա՛նդ ըրին Սասուն՝ Դիւղո՛վ, Քաղաքով…,
Մէկ Հայ–կընիկ՝ Սանդուխն 1) առին՝ Գերի՛ տարան 'ի Մըսըր,
Խըդրօն տարաւ՝ ու պըրսակեց Իրեն հե՛տ…։

Գ. ՈՐԲԻԿ–ՊԱՐՄԱՆ

910. Որբիկ–Պարմանի Ծնունդը՝ Դերութեան Մէջ

Մըսրայ–Տիրոջ Հաղարապետ Խըդրօն ալ՝
Սասուն երբոր քար–քա՛նդ ըրաւ, առաւ տարաւ այդ կընիկ,—
Պարոն–Տէր–Ներսէսի պըղտիկ Տըղուն կին,—
Բերաւ Մըսըր, կարդուեցա՛ւ հետ, ըրաւ Իրեն Հարճ–կընիկ։
Զըրոյցն ո՞ւստ տանք, — այդ կընիկէ՛ն զըրոյց տանք·—
Տըրտո՛մ, Ձեռ–Մո՛ց, Ափն երեսի՛ն՝ մընաց այնտեղ ժամանա՛կ մ'։—
Աստուած տըւաւ՝ Իրե՛ն օրին՝ Սանդուխ բերաւ Լաճ–Տըղա՛յ մ',
ՈՐԲԻԿ–ՊԱՐՄԱ՛Ն 1) դըրաւ Անոր անունը։

---

*) Տղով, Ծղի, ՀՍ·794՝ յիվով (յղի, տղով)։ 1) Լ·74՝ Սանդուխ՝ Սանասար–Պաղտասարի մայրը՝ Ճոչ–Մէլքոնի մեծ–մայրն է։ 1) ՀՍ·799՝ «Ֆարման, — թէ կո՛ ֆէրման (հրաման) ըրին՝ ան ծնող մէրը բերին», կ'բացատրէր պատմիչս։ Բայց ստէպ կըհնչէր նաեւ Փարման, որ հաւանաբար աղաւաղն է Պարմանի, ուրիշ ձեւով՝ Տղայ, ինչպէս Տղայ–Դաւիթ, Տղայ–Մըհէր, եւն.։ Ջ'չփոթել՝ Դաւիթ–Որբիկի հետ (Հատ· 267 եւ տրջ· ծնթ· †)։ Լ·74՝ Ճոչ–Մէլքոն (խառնակ պատումին բերումով)։

Աչխարքի ձիժ՝ կըջողանայ տարիւ՛վ՝
Այդ Որբ–Տըղան՝ կըջողանար մէ՛կ օրով...,—
Ազնուց–ցեղէ՛ն էր Որբիկ:
Տարին դէռ չէ՛ր լըրացեր՝
Այդ Որբիկը մեծցաւ՝ կ՛երթայ Քաղքին մէ՛ջ,
Ճիժերուն հետ խա՛ղ կըղընէ՝ կըխաղա՛յ...,
Տըղաները կըկոտորէ՝ կուգայ Տո՛ւն,
Ինչպէս Դաւիթ՝ Ի՛նք կ՛ընէր... 2):
Արդրօ 3)՝ հիմա՝ որ Հազարի–Գըլխաւո՛ր է Մըսրայ մէջ՝
Կուգան Իրեն կըգանգատին ու կ՛ըսեն,—
— «Արդրօ՛,–կ՛ըսեն–, Քո այդ Որբուկ՝ Մեր ճիժերը կ՛ըսպանէ՛,
Դուն ատ ի՞նչ բան է կ՛ընե՛ս...»:

911. Խդրօի Սպառնալիքը Եւ «Սասնու-Պատակ»ին Հարցփորձը

Չըրոյցն ո՞ւսա տանք, — դըրոյցը տանք Արդրօէ՛ն.—
Արդրօն ըսաւ, — «կընէ՛կ,–ըսաւ–, ես Քու սիրոյն չե՛մ դըպիր...,
Չէ՞ Իմ Սիրտն ալ չի՛ տանիր... —
կըտեսնես որ՝ այդ Քո Տըղան՝ Քաղքի ճիժեր կըջարդէ՛...,
Դուն պատուէ՛ր տուր...: ես Քու պատո՛վ ճայն չեմ հաներ, չեմ խօսիր.
Թէ ոչ՝ ես Ան կընետեմ Իմ Թուրիս բերան՝ կ՛ըսպանե՛մ...,—
Սասնու–Մե՛րն է..., ի՞նչ օգուտ է ինձ համար...»:
Տըղան ալ՝ Դուռ՝ Ակա՛նջ կ՛ընէ գաղտուկէն.
Ան գիտէր որ՝ Այդ Մարդ Իրեն բուն Հա՛յրն էր...:
Արդրօն այդտեղ պատուէ՛ր տըւաւ ու ըսաւ.—
— «Որ անգա՛մ մ՛ ալ այդպէ՛ս ընէ Քու Տըղան՝
Կըրակի մէջ կըվառե՛մ...»:
Պատուէր տըւաւ, Տունէն ելաւ ու դընա՛ց:
Տըղան մըտաւ Սենեակէն ներս ու ըսաւ,—
— «Մարէ՛,–ըսաւ–, ես վի՞ր *) Լաճն եմ, ո՞վ է Իմ Հայր, ինձ ըսէ՛»:
Մայրն ալ ըսաւ, = «Որդի՛, Հոգեա՛կ 1), Դու Ո՛րբ ես...»:

---

2) Տե՛ս Հատուած 284, եւ Մըհէրի պէս՝ (Հատուած 794), կամ Սանասար–Բաղդասարի պէս (Հատուած 27): 3) Խդրօ անունը հմմտլի՛ Գեթոռհոռ անունին հետ. [Բ. Հտրվ.]: *) Վի՞ր, Որո՞ւ, ո՞ւմ: 1) ՀՍ·808՝ Մո՛րտուն (մօրը հոգեառն):

— «Ի՞նչպէս…, Մարէ՛, ես Ո՛րբ եմ…,—
Դուն իմ Մա՛յրն ես, Ան ալ իմ Հա՛յրն է,–դիտեմ–,
Ի՞նչպէս Որբ եմ ես այստեղ·՞·՞·» 2):
Թէ՝ [ցա՛ծ ձայնով] ,=«Տըղա՛յ, Որդի՛-, Դու Սասունա՛յ–վաստակն ես·
Պարոն–Տէր–Ներսէսի Թո՛ռն ես· Անոր Տըղուն–Տըղա՛ն ես… .
[Կիներ իրենց էրկան անուն չե՛ն խոսը] —
Այս Մարդն եկաւ՝ դաւով՝ դարկաւ՝ Քու Պապիկը ըսպանե՛ց…,
Քո Հօրեղբայրն ու Քո Հա՛յրն ալ ըսպանեց…,
Սասուն առաւ, Զէյս ալ Գերի՛ բերաւ հոս…,—
Դուն իմ Փորիս *) մէ՛ջն էիր… .
Քու Հօր մահէն յետո՛յ է որ Դուն ծընար,
Եւ Այս Մա՛րդն է որ ըսպանեց Քո բուն Հայր… .
Դուն այս օսար Մարդէն չե՛ս…:
Որդի՛,–ըսաւ [բարձրր ձայնով]–, ե՛լ՝ Տաւ՛րի հետ դընա Դա՛շտ…»:

913. Գոմէօբ Ծակող Կայծակի-Քարը

Աստւ 1) Տաւար — Գոմէշնե՛րը — որ տանէին Դաշտ՝ արածեն,
Երեք Տըղայ՝ եղան Ընկեր՝ տարան Դա՛շտ:
Դաշտին մէջը՝ երկու Գոմէշ կըռուեցան,
Այն մէկ Տըղան՝ ծըռեցաւ վա՛ր՝ Քար մը վերցուց ու զարկա՛ւ,
Քարը դըպաւ Գոմէշներէն մէկի Փո՛ր՝
Իր մէկ կուշտէն դըպա՛ւ Քարը՝ մէկալ կուշտէն դո՛ւրս ելաւ,
Գընաց դէմը՝ դըպաւ Գետին՝ մէկ Քար է՛…,—
Ու կա՛ն եկաւ *)՝ կըրա՛կ ցայտեց Քարին վրայ…,
Գոմէշն ինկաւ սատկեցա՛ւ…:—
[Զի այդ Քարը՝ կայծակի հետ՝ Երկինքէ՛ն էր ինկեր վար,
Անոր համար՝ Իր զօրութիւնն ալ չա՛տ էր…]
Լուր բերին Գիւղ, դացին չուտ մը այդ Գոմէշը ղննեցին:
Տըղան՝ Պարման ալ՝ վազէվազ *)՝ եկաւ պատմե՛ց Իրեն Մօր,—
— «Մարէ՛, դիտե՞ս ի՛նչ եղաւ»: = «Ի՞նչ կայ, Որդի՛»,–ըսաւ Մայր:

---

2) Կ՛յիշեցնէ Սանասար–Բաղդասարի որբութիւնը (Հատ· 64):
*) Փոր, Արգանդ:
1) Լ·74՝ Ճոչ Մէլքոն: *) Կաճ գալ, Պատահիլ, ինքն իր վրայ՝ դառնալ: *) Վազէվազ, Վազնիվազ, Վազելով:

— «Մարէ՛,–ըսաւ–,... երկու Գոմէշ կըուեցա՛ն...,
Իմ մէկ Ընկերը՝ Գետնէն Քա՛ր մը վերցուց զարկաւ Գոմէշի՛ն...,
Ըլպաւ մէկ Կո՛ւշտ, մէկալ Կուշտէն Ծակե՛ց՝ զարկաւ մէկ Քարի՛...,
Ու կա՛ն եկաւ՝ կըրա՛կ ցայտեց Քարին վըրայ՝ ու մընա՛ց...»:
Մայրը երբոր այս բան լըսե՛ց Տըղայէն՝
Ուրախացա՛ւ, խընդաց՝ ըսաւ Իր Տըղուն.—
= «Որդի՛,–ըսաւ–, Այն Քար դիտե՞ս ո՛ւր ինկաւ... .
Դուն որ երթաս՝ կըրնա՞ս հիմա՝ Այն Քար գըտնես ու բերես...»:
[Գաղտիկ–գաղտի՛կ խօսեցաւ Մայրն Իր Տըղուն...]:
— «Մարէ՛,–ըսաւ–, չա՛տ Մարդ կայ հոն, այդ Գոմէշ՛ը կըմորթեն»:
= «Օրտո՛ւն,–ըսաւ–, Որդի՛, դիտե՞ս ի՛նչ ըրէ...,—
Շուտ վազէ Դա՛շտ՝ Այն Քար գըտիր՝ բեր Ինձի՛.—
Գընա այնտե՛ղ՝ պատճառն ըրէ «Մի՛ս ուղել»,
Ըսէ՝ «կըտոր մ՝ Մի՛ս տըւէք Ինձ»՝ եւ Այդ Քարը առ ու բե՛ր.
Մարդո՛ւ չ՝ըսե՛ս..., գողտուկ առ բե՛ր՝ ւոուր Ինձի՛...,
Մարդ չ՝իմանա՛յ..., կըլըսե՞ս...»:—

918. Մայրը խորհուրդ կուտայ Ցուցն

Ան ալ՝ Տըղան՝ չուտ մը վազեց գընաց Դա՛շտը, Քար գըտա՛ւ,
Առաւ բերաւ՝ գողտուկ տըւաւ Իրեն Մո՛ր...:
Մայրն ալ ըսաւ, — «Որդի՛,–ըսաւ–, դիտե՞ս հիմա ի՛նչ կ՝ընես...»:
Ըսաւ, = «Մարէ՛, ի՛նչ ընեմ...»:
Մայրն ալ դարձաւ՝ [ցած ձայնով],—
— «Որդի՛,–ըսաւ–, կ՝ելլես Այս Քար կըտանի՛ս...,
Այդ Մէկ–Աչքէն *) Դարբի՛նը կայ՝ Թուր–Շինող...,
Տանիս կուտաս ու կ՝ըսես՝ «Ա՛ռ՝ Թո՛ւր մը չինէ Ինձ համար».
Ան Քու Ձեռնէն Քարը 1) կ՝առնէ որ նայի՛... .
Որդի՛, երբ Ան՝ Այդ Քար կ՝առնէ՝ Քու Ձեռքէդ՝
Դուն ալ կ՝ըսես՝ «Վարպե՛տ, չուտով Ինձի Հերի՛ւն մ՝ չինէ նախ,
Ահկէ կըտրէ՛..., տանիմ Ինձի Սօ՛ղ կարեմ՝
Մինչեւ Իմ Թուր չինես՝ կուգամ կըտանի՛մ...».
Ան Քեզ կ՝ըսէ՝ «Առ Քեզ Հերիւն մ՝, ահա պատրաստ չինո՛ւկ է.

---

*) Մէկ–աչքէն, Միականի, մէկ աչքը փճացած: 1) Գիտի հասկընանք՝ երկաթահանքի կտոր մը:

Ահ հիմա տա՛ր, մինչեւ որ ես Թուրը չինեմ՝ դաս տանիս»։
Դուն ալ ըսէ՝ «Չէ,–ըսէ–, ես՝ այդ Հերիւնները չե՛մ առներ։
Դուն իմ Քարէ՛ն կըտրէ–չինէ՛ իմ Հերիւն»,—
Ա՛լ այն առեն՝ «Չէ՛» չի՛ կըրնար ըսել Ան,
Կըկըտրէ ու Քեզի Հերի՛ւն մ՝ կըչինէ,
Կ՛առնես–բերես՝ կըպահե՛նք,
Մինչեւ երթաս՝ Թուրը բերես՝ Քեզի ցո՛յց տամ ընելիքդ···»։
Մայրը այսպէս՝ պատուէ՛ր տըւաւ Իր Տըղուն,
Զըլա՛յ Դարբին խաբէ Տըղան՝ ուրի՛շ Թուր տայ Անոր 2) տեղ։—

214. Ցղայ-Ոբիկ՝ Քարը Կ՛ուզի Դարբինին՝ Որ Թուր Մը Շինէ

Տըղան՝ Քարը առաւ դընաց այդ Մէկ–Աչքէն Դարբինին,
Մօր ցուցմունքով՝ դընաց հասաւ Վարպետին քովն ու ըսաւ,—
— «Վարպե՛տ,–ըսաւ–, ա՛ռ այս Քարը՝ Թո՛ւր մը չինէ Ինձ համար»։
Վարպետն ըսաւ Թէ, = «Աղէ՛կ···»։
Առաւ Քարը՝ բըռնեց Իր Ձեռ՝ ու ըսաւ,—
= «Դէ՛, Դուն դընա՛, հինդ օր յետոյ կուգաս՝ Թուրը կըտանիս»։
Ըսաւ, — «Վարպե՛տ, Հերի՛ւն մ՝ չինէ Ինձ համար,
Տանիմ ես իմ Սօղեր կարե՛մ առաջուց,
Մինչեւ որ իմ Թուրը չինես՝ դամ տանի՛մ»։
Դարբինն ալ հոն՝ Ձեռը պարզեց՝ Հերի՛ւն մ՝ վերցուց եւ ըսաւ,—
= «Որդի՛, առ տա՛ր՝ Քու Սօղ կարէ՛, գործդ տե՛ս,
Մինչեւ որ ես Թուրը չինեմ՝ դաս տանի՛ս»։
[Վարպետն ալ՝ չէ՞՝ հասկըցաւ որ Կէծակէ՛ն էր Այդ Քարը.—
Մօր խօսքերը՝ մէ՛կ–մէկ եղա՛ն այդ կերպով]։
Տըղան ըսաւ Թէ, — «Չէ՛, Վարպե՛տ, Նոյն բան չէ՛՛···,
Այդ Իմ Քարէ՛ն կըտրէ չինէ Իմ Հերիւն.
Ես այդ միւս Հերիւնները չե՛մ առներ»։
Դարբին՝ Անկէ կըտրոր մ՝ կըտրե՛ց՝ չինեց Հերիւն մ՝ ու տըւաւ,
Տըղան առաւ այդ Հերիւնը ու եկաւ,
Բերաւ տըւաւ Իրեն Մօ՛րը, Ան ալ առաւ ու պահե՛ց.
Տըղան գընաց՝ Իրեն համար կա՛ն եկաւ։

---

1) Այսինքն՝ Կայծ–Քարին փոխան։

915. Մայրը Նոր խոհուրդներ կուտայ Տղուն

Հինգերորդ օր՝ Մայրը եկաւ Տըղան ղըրկեց ու ըսաւ.—
— «Որդի՛,—ըսաւ—, հիմա գընա դէպ Ֆո Թո՛ւր...:
Տըղա՛ս,—ըսաւ—, կ՚երթաս այնտեղ՝ Դարբինին՝
Ան Ֆեղ այնպէ՛ս Թուր կըբերէ՝ որ Աղաւնու Վիզի՛ պէս՝
Անոր փողփող *) կըդըրվըրա՛յ կըհալի՛...,
Որ նայիս մէջ...՝ լո՛յս կուտայ...,—
Բայց Դուն չ՚առնե՛ս այդ Թուրը:
Ան Ֆեղ կ՚ըսէ, — «Որդի՛, ա՛ռ է Ֆո Թուրը,
Ածո՛ւռ, ամո՛ւր, փալփըլո՛ւն...»:
Դուն ալ Անոր Զեռքէն կ՚առնե՛ս բերած Թուր,
Ֆու Հերիւնը դաղտնի կ՚զարնես այն Թուրի՛ն,
Թէ որ ծակե՛ց այն Թուրը՝
Նետէ՛՝ ըսէ՛՝ «Վարպե՛տ, Աւի Իմ Թուր չ՚է՛»·
Թէ չըծակեց, Հերիւն Թուրին չըբըռնեց՝
Կ՚առնես կուգա՛ս այն Թուրը:
Գիտե՞ս, Որդի՛, այդ Հերիւնը ինչո՞ւ չինել տըւեր եմ,—
Այդ Հերիւնը՝ անո՛ր համար չինել տըւի Դարբինին՝
Որ Ֆո Թուրը Ան չըպահէ՛ր, ուրի՛չ Թուր մը տար Ֆեղի.—
Զի այդ Հերիւն՝ ո՛ր Թուրի տաս՝ կըծակէ՛...,
— կէՇՄԱ՛Կ է... .
Որ Ֆո Թո՛ւրը առնէ բերէ՝ չի՛ կըրնար 1) այն Թուր ծակել,
Կ՚առնես այն Թուր՝ կուգաս Տո՛ւն...»:

916. Ծղայ-Որբիկ՝ Կ՚երթայ Իր Թուրը Կ՚բերէ

Տըղան եկաւ ու գընաց:—
Գընաց հասաւ այդ Թուր-Շինող Դարբինին,
— «Վարպե՛տ,—ըսաւ—, Իմ Թուր տա՛ս...»:
Դարբին եկաւ՝ Թո՛ւր մը բերաւ...՝ Արեւու պէս կըփըրփռա՛յ...,
Աղաւնիի Վիզի՛ն նըման կըդըրվըրա՛յ, հալումալը կ՚իյնայ մէ՛ջ...,—
Թէ, = «Ա՛ռ, Որդի՛, Ֆո Թուրը...»:
Տըղան առաւ ու բըռնեց Զեռ՝ նայեցա՛ւ,
Հերիւն դաղտուկ զարկաւ Թուրին՝ տեսա՛ւ որ՝

---

*) Փողփող, ՀՍ·830՝ չէհվէր: 1) Մտքով հասկնալի՝ այդ Հերիւն (չի կրնար այդ Թուրը ծակել):

Ինչպէս Դանակ՝ վարուընդ կ՚ածէ *) մէկ դէրովի՝
Այդ Հերիւն ալ՝ Թուրը ծակե՛ց ու ճըղե՛ց...:—
Ըսաւ, — «Վարպե՛տ, Ա՛ս Իմ Թուր չ՚է՛..., Իմ Թո՛ւր բեր»:
Դարբինը դընաց՝ Ոսկի Թո՛ւր մ՚ալ բերաւ տըւաւ Տըղայինը,
Տըղան փորձե՛ց Իր Հերիւնով՝ Ա՛ն ալ ծակեց՝ դուրս ելաւ,
Ըսաւ, — «Ա՛ս ալ Իմ Թուր չ՚է՛...»:
Ալ չե՛մ կըրնար Ձեր Գըլուխը ցաւցընել...,—
Եօ՛թ Թուր բերաւ՝ Հերիւն ծակեց Ամե՛նն ալ...:
Ըսաւ, — «Վարպե՛տ, Իմ Թո՛ւր բեր...»:
Դարբինն ըսաւ, = «Տըղա՛յ,–ըսաւ–, Դուն ծո՛ւռ ես...,
Ապա Ինծ Թուր ո՞րն է որ Ես չե՛մ գիտեր...»:
Վարպետին ճարն երբոր կըտրաւ, նե՛ղ մընաց՝
Ուրի՛չ Թուր մը բերաւ տըւաւ Տըղայինը,
Տըղան չուտ մը Հերիւն զարկաւ այդ Թուրին՝
Հերիւն մինչեւ կէսը միա՛յն մըտաւ մէջ.—
Այդ մէկ Թուրը՝ Փարին քըլքո՛վն *) էր չինած,
Անոր համար՝ Հերիւն Անոր կէ՛ս ծակեց...:—
Տըղան ըսաւ, — «Վարպե՛տ, Ա՛ս ալ Իմ Թուր չ՚է՛...»:
Վարպետին ճարն երբոր կըտրաւ՝ նե՛ղ մընաց՝
Գընաց այլեւս Թուրը բերաւ Տըղային,
Տըղան Հերիւն զարկաւ Թուրին՝ Հերիւն Թուրին չկըպա՛ւ...:
Տըղան ըսաւ, — «Վարպե՛տ, Ասիկ Իմ Թո՛ւրն է...»:
Վարպետն ալ հոն մըտածե՛ց որ՝ «Այս Տըղան՝
Մըսրայ–Սերմ չ՚է՛, Սասնո՛ւ–վաստակ պիտ՚ըլլայ...,—
Ամըրօն Ինչ Այն Կընիկ բերեր՝ Անոր Տըղա՛ն պիտ՚ լինի...,
[Ճիւղ չի՛ գիտեր, խելքո՛վ կ՚ըսէ Ինչքերեն],
Ասի,–ըսաւ–, չա՛տ–չատ բաներ պիտի ընէ Մըսրայ–մէ՛ջ...»:
Դարձաւ ըսաւ, = «Տըղա՛յ,–ըսաւ–, Ինծ Թուր քիչ մը կիսա՛տ է...,
Տուր աւարտեմ՝ առ ու տա՛ր...»:
Առա՛ւ Թուրը՝ կալանին վրայ Բեւե՛ռ մ՚ զարկաւ ու զամե՛ց,
Թուրը զըմռե՛ց՝ որ չկըրնա՛յ Իր Պատեանէն դուրս բերէ...:
Տըղան այնտեղ չըհասկըցա՛ւ ի՞նչ բան էր...,—
Առաւ Իր Թուրն ու դարձա՛ւ:

---

*) Կածել (հմմտ.՝ Ֆր. casser), կտրել, ճեղքել: *) Քլիֆ (կղկղանք, քարք), Դիրտ, հալածէն մնացած անմաքուր մասը:

917. Տղան կ'փնտռեն՝ Ան կ'փախի

Զըրոյցն ո՞ւստ տանք,— զըրոյցը տանք այդ Մէկ–Աչեայ Դարբինէն.—
Իմա՛յ տըւաւ Մըսրայ–Տէրոջ՝ թէ՝ «Այսպիսի Տըղա՛յ մ՝ կայ...,
Եւ այս տեսակ Թո՛ւր մը չինել տըւաւ ինձ...,
Փընտրեցէք՝ ըսպաննեցէ՛ք Այդ Տըղան...,—
Այդ Թուրովը՝ Այս Քաղաքը պիտի քակէ՛ Այդ Տըղան...»:
Այդ Տըղան ալ՝ Որբիկ–Պարման՝ ի՞նչ ըրաւ.—
Առա՛ւ Թուրը՝ ու զընաց Տուն, հանեց Մօրը յո՛յց տըւաւ.
Ալ Մայր չ'ըսա՛ւ՝ «Բեր, անգամ մը փորձե՛նք Թուր»,—
Ըսաւ,—«Վերցո՛ւր, տա՛ր Քո Թուրը,—չիգա՛ն տեսնեն Մեր Տան մէջ»:
Լուրը ինկաւ Մըսրայ մէջ՝ ինկան մա՛ն զալ Այդ Տըղային ետեւէն...:
Մայրը լըսեց՝ ըսաւ, — «Տըղա՛ս, Աստծո՛ւ սիրուն, ել փախի՛ր,
Ա՛ռ Քո Թուրը՝ փախիր զընա զէպ Սասո՛ւն...,—
Ինկիր Քո Հօր–Հայրենական Սահմաննե՛ր...:
Տըղան ելաւ ու փախա՛ւ...:—

918. Որբիկ-Պարման՝ Իր Հազուստը Կ'փոխէ Հովիւին Հետ

Զըրո՞յցն ուրկէ, — այդ Մէկ–Աչեայ Դարբինէ՛ն տանք զըրոյցը.—
Տեսաւ որ Զօրք կանգնե՛ր է ու կ'երթան Տըղուն ետեւէ՛ն.—
Ինքն ալ՝ ըսես՝ ի՞նչ է ըրեր առաջուց,—
— Մէկ Դանա՛կ է զողցեր–չիներ՝ այդ Քարէն,
Պատեհանաւո՛ր Դանակ 1) չիներ՝ զարկեր Մէ՛ջը,
Ի՞նչ կըխօսի այդ ծեր Մարդը, այդ Վարպետ,—
«Թէ՝ իրա՛ւի, ես ըշտապո՛վ պիտի երթամ Այն Տըղային ետեւէ՛ն,
Ես Անոր Թուր բեւեռե՛ր եմ..., Ան չի՛ կըրնար դուրս բերել...,—
Այս Դանակով՝ պիտի ձեւե՛մ ու վա՛ր թափեմ Անոր Փոր...,
Եւ Այն Թուրն ալ՝ պիտի առնե՛մ Իր քովէն...»:

Տըղան փախա՛ւ..., Զօրքը ինկեր ետեւէ՛ն...:
Տըղան գընաց ու բարձրացաւ Սարի մէ՛ջ...,
Տեսաւ՝ այնտեղ՝ որ մէկ Հովիւ՝ Իր Ոչխա՛րը կ'արածայ,—
Ըսաւ, — «Հովի՛ւ, կըխընդրե՛մ Քեզ, կ'աղաչե՛մ...,
Որ Հովիւի Քո Լաթեր տաս՝ ես հագնի՛մ...,
Իմ Թանկագին Հագուստները՝ Դո՛ւն առ հագիր՝ ու փախի՛ր...»:

---

1) ՉՍ·846՝ կպանձի դաշնակ:

Հովիւն ըսաւ, = «Ի՞նչ ապով...»:
— «Դէ՛, դիտե՞ս ի՛նչ..., Հովի՛ւ–Աղբար..., ըսե՛մ ինձ...,—
Թագաւորի Աղջիկ՝ բըռնի՝ կըբերեն ու կըպըղատակեն ինձի հե՛տ...,
ես չե՛մ ուզեր պըսակուիլ...
Ա՛ռ իմ Շորեր հագի՛ր վախի՛ր՝ Թող գան բըռնեն՝ տանի՛ն Քեզ,
Թագաւորին Փեսա՛յ ընեն, — Հա՛ց մը կ՛ուտես՝ կ՛օրհնե՛ս Զիս...,
ես կըմընամ՝ Հովի՛ւ կ՛ըլլամ այդ Ոչխարին առջեւը...»:
Ան ալ՝ Որբիկ՝ խաբե՛ց այդ տեղ՝ այդ Հովիւ,
Հովուս Լաթեր ի՛նքը հագաւ, Ան ալ հագաւ Իր Լաթեր,
Եղաւ Պարման՝ ու կըփախի՛..., Զօրքն ալ բըռնեց եռեւ՛ն...:
Կուգան կ՛անցնին Հովուս կըշտէն՝ ու կ՛երթա՛ն,
— «Հովի՛ւ,–կ՛ըսեն–, Այդ Մարդ դընաց դէպի ո՞ւր...»:
= «Դուք չէ՞ք տեսներ՝ դէպ ո՞ւր կ՛երթայ Այդ Տըղան...,—
Զօրքը կ՛երթայ Իր եռեւ՛ն..., Դուք ալ դացէ՛ք եռեւ՛ն...»:—

919. Տղան Ու Ագռոս-Շերեփով Պառաւը

Մընա՛ց..., մինչեւ Մըսրայ–Քաղաք 1) դատարկուեցա՛ւ ու եկա՛ւ՝
Ու դընացին եռեւ՛ն...:
Վերջ ու վերջը՝ մընացեր է մէ՛կ Պառաւ,
Այդ Պառաւն ալ՝ Ագռո՛ւի–Շերեփի բըռներ Զե՛ռ,
Դեռ ապուրոտ ու տա՛ք է... 2):
— «Մամի՛կ,–ըսաւ Հովիւ Պարման–, Դուն ո՞ւր կ՛երթաս
[այդպէս շուտ»:
= «Գիտե՞ս ի՛նչ կայ, Հովի՛ւ...»,–ըսաւ Պառաւն ալ:
— «Ի՞նչ կայ..., Մամի՛կ, չե՛մ գիտեր...»:
= «Հըմ՛..., Որդի՛, Դուն չե՛ս գիտեր Թէ ի՛նչ կա՛յ...,—
Այն Կընիկը՝ ինչ Սասունէն Ըզդրօն Իր հե՛տ բերեր է՝
Անոր Տըղան՝ Դիւցազնի–Ցե՛ղ է եղեր...,
Մինչեւ գիտցան...՝ քի՛չ էր մնացեր՝ Քաղաքն ամեն ըսպանէ՛ր...,
Մեր Քաղաքը պիտի առնէ՛ր Մեր մօտէն...:
Հիմա Զօ՛րք է գացեր եռեւ՝ բըռնե՛ն բերեն՝ ըսպանե՛ն...
ես ալ երթամ հասնիմ Ատոր՝ ու Շերեփ մ՛ալ ե՛ս գտնեմ» 2):

---

1) ՀՍ·853՝ Երկիր: 2–2) Գտիկ–Մըհէրի պարագային պէս (Հատուած 839):

Տըղան ըսաւ, — «Մամի՛կ,–ըսաւ–, ուրիչ Զօրք կա՞յ եռեւէն»։
= «Չէ՛, Մամի՛կը մեռնի՛կ եմ մընացեր...,
Ամենք եկած ու դացա՛ծ են Զօրքին հետ...»։
Ան ալ ըսաւ, — «Կեցի՛ր, Մամի՛կ, քեզ բա՛ն մ՚ ըսեմ՝ ե՛ս ալ գամ»։—
*Ու մէ՛կ Կոճան *) զարկաւ Պաուռ Վիզին վրա՛յ,*
Ըսպանեց ու թողուց իր տե՛ղ, ինկաւ Զօրքին եռեւէ՛ն... .
Ըսպանե՛ց ու դընա՛ց՝ կոճ՚նոյ..., Թուրը դեռ չէ՛ բանցուցեր...։—

220. Տղայ-Ուրիկ՝ Կ՚ապաքէ Թուր-Շինող Դարբինը

Ու Որբի՛կն էր...,—
Ա՛յդչափ Մարդիկ՝ եօ՛ կողմէն Չարդե՛ց դընաց դէպ առա՛ջ,
Չընայեցա՛ն իրենց եռեւ որ տեսնէին թէ ի՞նչ է...։—
Տըղան Չարդե՛ց՝ դընաց առա՛ջ, ու կոտորե՛ց այդ Ամենք,
Մընաց մինակ այդ Դարբինը որ Իր Թու՛րը չիներ էր։
Դարբին դարձաւ նայեց եռեւ՝ ի՞նչ տեսնէ...,—
Այդ Որբ–Տըղան՝ եօ՛ կողմէն՝ այդ ամեն Զօրք կոտորե՛ր,
Ըսպանե՛ր է՝ ու եկեր է՝ հասեր Իրեն, — Վարպետի՛ն...։
Դարբին այնտեղ ի՞նչ ըսաւ.—
«Տեսա՞ր,–ըսաւ Ինք Իրեն մէջ–, Ան՝ Կոճանո՛վ կ՚ըսպանէ... .
Իրեն Թուրը՝ ինչ կալանին վըրայ ամուր զամե՛ր եմ՝
Չ՚էլ կըրցեր դուրս քաշել Անիկ, Իր Կոճանո՛վ կ՚ըսպանէ»։
Այն ժամանակ՝ Վարպետ՝ քաշե՛ց Իր Դանակը՝ որ այդ Թուրէ՛ն
[է չիներ,
Ու զարձաւ դէպ Այդ Տըղա՛ն...։—
Տըղան՝ Զարման՝ ի՞նչ ըրաւ, — Զեռը նետեց Իր Թուրի՛ն,
Ըսաւ՝ «Այդ Մարդ՝ ես չե՛մ կըրնար այս Կոճանով ըսպանել...,
Կա՛յ ու չըկայ՝ Իմ Թուրէ՛ն է չիներ Անիկ Իր Դանակ...՝
Որ զարնէ՝ Չիս ըսպանէ՛...,—
Ես Իմ Թուրո՛վ պիտի երթամ Անոր դէմ,
Կոճանովը չե՛մ երթար...»։
Ան ալ վերէն՝ զօրեց եկա՛ւ՝ այդ Վարպետ՝
Որ դայ Տըղան ըսպանէ...։

---

*) Կոճան, Մահակ, ձեռնափայտ (Հովիւի), pedum, (Տե՛ս Բ. Հատորովը)։

Տըղան — Պարման — Ձեռքը նետեց Իր թուրքին՝
Որ քաշէ դո՛ւրս՝ քըշէ նրթայ դէպ Վարպետ,—
Տեսաւ որ Թուրն Իրեն Բոյնէն, Իր Կալանէն՝ դուրս չի՛գար...:
Ան ալ վերջուց ի՞նչ ըսաւ,—
— «Տօ Թո՛ւր,–ըսաւ–, Թէ որ Դուն Իմ տեսածն է՛ս...՝
Ինչպէս որ այդ Գոմշի Կողը ծակեցի՛ր...՝
Դուն Կալ՛նո՛վ ալ պիտի կըտրես Ասոր Վիզ...»:—
Լսա՛ւ Տըղան՝ եւ Իր Թուրը վերցուց զարկաւ Պատեանո՛վ...,
Կալան մընաց այդ Վարպետի Ուսին վրա՛յ,
Թուրը կըտրե՛ց Անոր Մարմին՝ տարաւ տա՛կ...:—

981. Որբիկ-Պարմամ Մայրը Կ'առնէ Կուզայ Սասուն

Տըղան — Որբիկ —՝ դարձաւ եկաւ Քաղքին մէ՛ջ,
Մօրը պատմեց՝ ի՛նչ որ անցեր–դարձեր էր:—
Մայրն ալ՝ Սանդուխ՝ ուրախացա՛ւ ու ըսաւ,—
— «Որդի՛,–ըսաւ–, աղէ՛կ ըրեր՝ որ մեռցուցի՛ր այդ Դարբին.
Թէ չէ՝ Անիկ չա՛տ փորձանքնե՛ր պիտի բերէր Քո Գլխին...:—
Հիմա, Որդի՛, ալ Քե՛զ տեսնեմ..., ի՛նչ որ կըրնաս՝ ան ըրէ՛...»:
Որբիկն այնտեղ ի՞նչ ըրաւ.—
Ինկաւ Քաղա՛ք, էդն ու Որձը կըտրե՛ց Մըսրէն՝ լըմընցո՛ւց...,
Առաւ Իր Մայր՝ դարձան Սասուն, ազատ Նըստան Սասնոյ մէջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՕԹԵՐՈՐԴ ՁԻՒՂԻՆ

ՀԱՄԶԱ-ՊՍՀԼԱՒԱՆԻ

Հատուած

Ա. Համզա–Գահլեան կ'ամուսնանայ Ու կ'ըբաւէ [Կռալ–Թագաւորի Բերդը 922

Բ. Համզա–Գահլեան՝ Կախարդ–Գառաւէն Կապուած 934

Գ. Համզա–Գահլեան եւ Իր Տղան Դերնիկ 946–956

ՍԱՄՈՒՆԱԿԱՆ

ԵՕԹԵՐՈՐԴ ՃԻՒՂ

ՀԱՄԶԱ–ՊԱՀԼԱՒԱՆ [1]

(Համզա-Փալաւաճ, Համզի-Փալավաճ, Եւ Իր Որդիճ՝ ԴԵՐՆԻԿ կամ Ցղայ-Դերճիկ)

ՁՄ·868–1051, (Ա·61–64), Զ·

Ա. ՀԱՄԶԱ-ՊԱՀԼԱՒԱՆ Կ'ԱՄՈՒՍՆԱՆԱՅ ՈՒ Կ'ԳՐԱԻԻ ԿՌԱԼ-ԹԱԳԱՒՈՐԻ ԲԵՐԴԸ

ՁՁՁ. Աւեւելայ Եւ Աւեւմտայ Թագաւորճեռուճ Խնամախօսք

Կա՛ր ու չկա՛ր...՝ Թագաւո՛ր մ'կար՝ Աւեւելա՛յ Քաղքին մէջ,
Թագաւոր մ' ալ՝ Աւեւմըտա՛յ Քաղքին մէջ... 2):—
Այդ երկու զա՛տ Թագաւորի Կընիկներն ալ՝ Տըղո՛վ էին այդ օրեր:
Իմաց ուլաւ Մէկը Մէկին՝ «Որ Թէ Ինձի Տըղայ եղաւ, Քեզ՝ Աղջիկ,
*Տանք Իրարու եւ Մա՛րդ ըլլանք *) Իրար հետ»:—*
Առին անցաւ՝ Աւեւելայ–Թագաւորին եղաւ արու մէկ Տըղայ,
Աւեւմըտայ–Թագաւորին՝ մէկ Աղջիկ:
Մանչուն անուն՝ ղըրին ՀԱՄԶԱ–ՊԱՀԼԱՒԱՆ 3),
Աղջկան անուն՝ ՓԱՐԻՇԱՆ... 3):—

---

1) *Տե՛ս Հատուած 893, ՊԱՐՈՆ–ՏԷՐ–ՆԵՐՍԷՍ՝ ստրջ· ծնթ· 1:*
2) *Արդէն կ'տեսնուի որ՝ եօթերորդ ճիւղին վրայ՝ մեր Ազգային ժողովրդական Դիւցազնավէպը կը գտնատի ու կ'մտնէ հէքիաթի գիծերուն մէջ:* *) *Մարդ ըլլալ, ԽնամիանալԻ* 3–3) *Համզա–Պահլաւան եւ Փարիշան անուններու մասին՝ Բ· Հատորովը:*

923. Համզա-Պահլուանց Կ'երթայ Աշխարհ Պտտելու

Շա՜տ մընաց՝ թէ չի՛չ մընաց, Տըղան մեծցաւ՝ եղաւ քըսան
[տարեընեկ,
Օր մը՝ վերցուց իրեն Հօրը — թագաւորին — ի՞նչ ըսաւ,—
—«Հա՛յր, Քի մ' ուր ինձ, ու Դըրա՛մ ալ, երթամ Աշխարհ պըտըտիմ,
Նայինք Աշխարք ի՞նչ կայ-չըկայ..., մէկ տեսնե՛մ...»:
Հայր՝ թագաւորն ալ ի՞նչ ըսաւ Իր Տըղուն —,
— «Որդի՛, ըսաւ—, դընա Ախոռ՝ մէկ Քի՛ ընտրէ Քեզ համար,
Ու մէկ Պարկ ալ Ոսկի՛ առ,
Հեծի՛ր Ձի՝ ու դընա՛, — Աստուած Քու հե՛տ Թող ըլլայ...»:
Տըղան՝ Համզէն՝ հեծաւ Իր Ձին՝ ու դընա՛ց:—
Շատ ու քիչը՝ Աստուա՛ծ դիտէ, — գընաց դէպի Արեւմուտ,
Արեւմըտայ-Թագաւորի Քաղաք հասաւ եւ իջա՛ւ:
Զըգիտցա՛ւ թէ՝ ո՞ր Տուն երթայր՝ Հի՛ւր ըլլար,
Ինչ՝ մի՛տք ըրաւ ու ըսաւ.—
— «Ձին ըսածը մուրա՛զ *) է...,—
Ես ալ Իմ Ձին պիտի քըշեմ՝ ու երթա՛մ,
Իր Գըլուխը ո՞ր Դուռին տայ ու կենայ՝
Այն Տուն ես Հի՛ւր պիտի ըլլամ Գիշերը»:
Ու Ձին քըշեց՝ ու դընա՛ց:—

924. Համզա-Պահլուանց՝ Արեւմտայ-Թագաւորի Աղջիկը Կ'առնէ

Ձին Իր Գլուխ չիտակ բըռնեց ու դընաց՝
Թագաւորի Դըրա՛ն տըւաւ ու կեցա՛ւ:
Դուռը բացին՝ տեսան որ մէկ Ձիաւո՛ր...,
Զարմանալի՛ մէկ Մա՛րդ մը...:
Նե՛րս առին զ'ինք եւ Իրեն Ձին, տարան Տո՛ւն,
Մընաց այդտեղ՝ ու քընացաւ մինչեւ լոյս:
Լուսուն՝ ըսաւ, — «Քիչ մը Ինձի Զո՛ւր տըւէք՝
Երթամ դուրսը լըւացուի՛մ...»:
Տարան վերցուց Աման մը Զուր՝ առաւ դընաց եռեւի՛ն:
Գացին Բա՛կը, Մարդ Զո՛ւր լեցուց Ջեռքերուն,
Ու Համզան ալ՝ Իրեն Ջեռքերն ու Երեսը հոն լըւա՛ց:

---

*) Մուրազ, փափաքի լըւմ:

Դեռ չե՛ն գիտեր ի՞նչ Մարդ է…։
Համզա–Պահլաւ 1) վե՛ր նայեցաւ Պատուհան՝
*Տեսաւ որ մէկ Աղջիկ նըստեր Պատըշգամը, լուսով հե՛տ *),*
Անոր նման խօրոտ չըկա՛յ այս Աշխարհ… 2)։
Համզայինն ալ՝ Աչք որ ինկաւ այդ Աղջկան երեսին…՝
Խելքը գընա՛ց Իր Գլուխէն՝ մարեցա՛ւ…։
Ջուբ–լեցընողն՝ հասաւ Անոր Սիրտը մաժեց ու ըսաւ,—
— «Ա՜ռ ի՞նչ եղաւ Քեզի, եղբա՛յր…, Դուն ինկար…»։
*= «Թէ՝ իրա՛ւ, մէկ Աղջի՛կ կար այդ Առաջ… *),*
Որ Իմ Աչքը ինկաւ Անոր երեսին…՝
Իմ Խելք գընա՛ց Գլուխէս…,—
Իմ Սիրտն ինկաւ Այդ Աղջկա՛ն…, Տէր վրկա՛յ…»։
Ջուբ–լեցընող Մտաւն այնտեղ ի՞նչ ըսաւ.—
— «Լըռէ՛, Տըղա՛յ, Ատծո՛ւ սիրոյն. այդ ի՞նչ խօսք է՝ Դուն կ'ընես.
Որ լըսեցին՝ Քեզ կըպատժե՛ն…, ու մե՛ղք ես…։—
Անիկ, ա՛յ Մարդ, գիտե՞ս որո՛ւ Աղջիկն է.՞.՞.՞,—
— Անիկ այս Մեր Արեւելոց–Թագաւորի Աղջի՛կն է…,
Արեւելոց–Թագաւորի Տըղայի՛ն է Նըշանուեր… ..
Անիկ՝ Համզա–Պահլաւանի Կընի՛կն է…»։—

925. Թագաւորն Իր Աղջիկը Ն'պաստակէ Համզա-Պահլաւանի Հետ

Համզա–Պահլաւն ալ ի՞նչ ըսաւ այդ Մարդուն.—
— «Եթէ Համզա–Պահլաւա՛ն մ' կայ այս Աշխարհը՝ Ան ե՛ս եմ…,
Արեւելոց–Թագաւորի Տըղա՛ն կ'ըսես՝ Ան ե՛ս եմ…»։
Այդ Մարդն այդտեղ ի՞նչ ըրաւ.—
Վազեց՝ չուտ մը՝ իմա՛ց տըւաւ Թագաւորին ու ըսաւ,—
— «Ա՜պրած կենաս, Թագաւո՛ր…,
Այն իրիկւան Մարդը որ հո՛ս եկած է՝
Անիկ՝ ասա՝ Արեւելոց–Թագաւորի Տըղա՛ն է,
Անիկ Համզա–Պահլաւա՛նն է՝ սակայն Դուն չե՛ս իմացե՛ր…»։
*= «Տըղա՛յ, ատ Դուն ի՞նչ կրնասե՛ս՝ անմըտած… *),*

---

1) Ոտանաւորի չափին պատճառով՝ Պահլաւ, փոխանակ Պահլաւան։ *) Լուսոյ հետ, Արշալոյսին, կանուխէն։ 2) Նման՝ Լուսիկ–Թագուհիին (Հատ. 5–6)։ *) Առաջ, Պատչգամ։ *) Անմըտած, Անմտածում, առանց խորհելու։

Արեւելայ–Թագաւորի Տըղան ի՞նչպէս եկաւ հոս...»:
Շուարեցա՛ւ Թագաւորը՝ Իրեն Տեղ,—
կանչեց Տըղան՝ տարաւ վե՛ր քէ՝ — «Դուն ո՞վ ես...»:
Տըղան դընաց Թագաւորի Ձեռը պաղեց ու ըսաւ,—
= «Ապրա՛ծ կենաս, Թագաւո՛ր,
Արեւելայ–Թագաւորի Տըղա՛ն եմ,—
Անունս՝ Համզա–Պահլաւան...»:
Ան ալ բերաւ Իր Աղջիկը՝ Այդ Տըղուն հետ պըսակե՛ց:

226. Համզա-Պահլաւան՝ Կնոջ Ու Երկու Զաւակներուն Հետ Կ'մեկնի

Շատ մընաց քէ քի՛չ մընաց, — ո՞վ գիտէ քէ քանի՞ տարի անցաւ հոն,
Դէ՛հ, այդ Համզա–Պահլաւանին եղաւ այդտեղ՝ մէկ Աղջիկ ու [մէկ Տըղայ,
Աղջկան անուն ԴՈՀԱՐԻԿ էր, Տըղուն անուն ալ՝ ԴԵՐՆԻԿ 1):
Ան ալ՝ Համզա–Պահլաւանը՝ ի՞նչ է Անոր կերակուր,—
— Օր քառասո՛ւն Լիտր Բըրի՛նճ կ'ուտէ, Հըսկա՛յ է... .
Օր քառասուն ալ Ոչխա՛ր կ'ուտէ՝ ու չատ Հա՛ց...,—
Ֆա՛նի երթայ՝ կընիհարնա՛յ, կ'անուժի՛...:
Աւուր մէկը՝ Թագաւորն ալ ի՞նչ ըսաւ.—
— «Որդի՛, Համզա–Պահլաւան,
*Ես կընայիմ՝ Քո կերն ու Խում *) պակաս չ'է՛,*
Ալ Դուն ինչո՞ւ՝ քա՛նի երթայ՝ կընիհարնաս, կ'անուժի՛ս...»:
*Թէ, = «Հրամա՛նք *) ես, Թագաւո՛ր,*
Այստեղ՝ ոչ Իմ կե՛րն է պակաս, ոչ Իմ Խո՛ւմ...,
Շնորհակա՛լ եմ, բայց ես այստեղ չե՛մ ապրըւիր, չե՛մ աճիր 2):
Ես եթէ որ կըռիւ չընե՛մ ամեն օր՝
Ֆա՛նի երթամ՝ եռե՛ւ կ'երթամ, կ'անուժի՛մ... .
*Ցիվի՛ կ'ընեմ *) որ Դուն Ինձի արտօնութիւն տաս՝ երթա՛մ...»:*
Ան ալ վերցուց — այդ Թագաւորն — ի՞նչ ըրաւ,
կանչեց մէկ Վաչտ Ձինո՛ր բերաւ, Ձիաւոր,

---

1) Ա.54, 63՝ Դառնիկ (Որբիկ), հաւանաբար աղաւաղը՝ Դերենիկ կամ Թոռնիկ անունին. (Տե՛ս Բ. Հատորովը): *) Խում, Խմելը, խմելիք: *) Հրամա՛նք, Իրա՛ւ, ճիշդ է ըսածդ: 2) Նման՝ Սանասար–Բաղդասարին (Հատուած 44): *) Ցիվի ընել, Խնդրել:

Ելաւ Համզա–Պահլաւանը ճամբո՛ւ դըրաւ ու ըսաւ.—
— «Տարէ՛ք,–ըսաւ–, փեսաս՝ Համզա–Պահլաւան՝
Արեւելոց–Թագաւորին յանձնեցէ՛ք ու ե՛տ դարձէ՛ք...»:
Ան ալ՝ Համզա–Պահլաւանը՝ ելաւ հեծա՛ւ Իրեն Ձին,
Իր Տըղաներն ու Կընիկը՝ հեծան Իրենց Ջո՛կ Ձիեր,
Այդ Զօրքին հետ՝ ինկան ճամբայ ու գացի՛ն:
Գացին՝ Քաղքէն դո՛ւրս ելան,—
Թագաւո՛րն ալ ճամբու կ՝դընէ Իր Փեսան.—
Երբոր Քաղքէն ելան դո՛ւրս՝
Դարձաւ Համզա–Պահլաւանը Թագաւորին՝ ի՞նչ ըսաւ.—
— «Ապրա՛ծ կենաս, Թագաւո՛ր,
Ես ալ Համզա–Պահլաւա՛ննն եմ, անունս ելեր՝ Հըսկայի՛...,
Աչխա՛րհ՝ առջեւ իմ Աչքերուն չ՝երեւիր... .
Մարդի՛ն ըսես՝ Աչքիս առջեւ՝ ճանճի նըման կ՝երեւան...;—
Ա՛ռ Քու Զօրքերն ու Քո Մարդիկ՝ դարձիր դընա Քո Պալա՛տ»:
Ան ալ՝ այնտեղ «Մընաք–բարով» ըրաւ Անոնց Ամենուն,
Թագաւորը առաւ Իր Զօրքն ու Իր Մարդիկ՝ դարձաւ Տուն:

987. Համզա-Պահլաւան՝ Դաշտի Մէջի Տունը Կ՝մտնէ

Ան ալ Համզա–Պահլաւա՛ննն էր, — ինկաւ ճամբայ ու գընա՛ց:
Շա՛տ ու քիչը Աստուա՛ծ գիտէ՝ քըշեց գընաց՝ ու գընա՛ց...՝
Բերդի նըման մէկ Ջո՛ջ Տունի մ՝ հանդիպեցաւ՝ Դաշտի մէջ:
Դարձաւ Համզա–Պահլաւանն ալ՝ ըսաւ, — «կընի՛կ, Փարիշա՛ն,
Արի՛ երթանք այս Տուն՝ նայինք՝ ի՞նչ կայ մէջ... .
Դուրը բանանք՝ մըտնենք Այդին՝ նայինք ի՛նչ կայ՝ ի՛նչ չըկայ...,
Հաց–մաց ուտենք՝ ելնենք դառնա՛նք այդ տեղէն,
Ու դանք նորէն՝ ճամբան բըռնենք ու երթա՛նք»:
Կընիկ վերցուց՝ ըսաւ, = «Համզա–Պահլաւան,
Աստծո՛ւ սիրոյն, յիմի՛ կ՝ընեմ, Այդ Տունին մէջ մի՛ մըտներ...,
Կուգան–գարնեն՝ կ՝ըսպանի՛ն Քեզ, Ձիս կըխըլե՛ն Քու Ձեռքէն...»:
— «Է՛հէ՛..., Կընի՛կ,–ըսաւ Համզա–Պահլաւան–,
Այդպէս բա՞ն ալ կայ Աչխարհ.՞.՞.՞ .
Թագաւորի՛ Աղջիկ,–ըսաւ–, գիտե՞ս ի՛նչ...,—
Հիմա որ ես իմ Թուր բըռնեմ Ձեռքիս մէջ՝
Աչխա՛րք ամբողջ կըքակե՛մ...,—

Այս մէկ Տան մէջ՝ պիտի կըրնան ըսպանե՛լ Ջիս...՝ Քեզ առնե՞ն....
Մինչեւ որ ես չըմըտնեմ ներս ու նայիմ՝
Ես չե՛մ երթար այստեղէն...»:—
Կրնկան խօսքը չըրա՛ւ Համզա–Պահլաւանը, մըտաւ նե՛րս:—

928. Կռալ-Թազաւորի Մարդերը

Գացին մըտան Այդ Տունէն ներս՝ ի՞նչ տեսնեն,—
Տեսան որ պա՛ղ, անո՛ւշ Աղբիւր մ՝՝ Այդիին մէջ կըվազէ՛...,
— «Օ՛խ..., այստեղը, կընի՛կ,–ըսաւ–, ի՛նչ Դըրախտ է որ տեսանք.
Արքայութեան մէ՛ջ ալ չըկա՛յ այսպէս բան...,—
Այսպէս Ջըրե՛ր, այսպէս Ծաղի՛կ, Ծա՛ռ՝ չըկա՛ն...»:
Ներստեցան հոն՝ Աղբիւրին Բերան՝ ու նայեցան Տան Դո՛ւռը՝
Տեսան որ ի՛նչ..., — Քառասուն հըսկա՛յ Ըմբիշներ,
*Ամէն Մարդու Թուրը՝ տկըլոզ *)՝ Գըլուխներուն, քընացա՛ծ...:*
Կընի՛կն էր՝ որ՝ Ատոնք տեսաւ՝ չա՛ս–չատ վախցաւ ու ըսաւ,—
— «Հոգի՛ս, Համզա–Պահլաւան, ելիր երթա՛նք այստեղէն...,
Այդ Մարդերը որ արթընցան՝ ո՛ղջ–ողջ կ՝ուտե՛ն Մեզ այստեղ...»:
Ան ալ Կընկան Ականջ չ՝ընդա՛ւ, առին *) Իրենց Հա՛յց ուտել,
Թէ, = «Փարի՛չան, դիտե՞ս Ատոնք ի՛նչ Մարդ են...,—*
Ատոնք Կըռալ–Թագաւորի 1) Մարդե՛րն են...»:—

929. Համզա-Պահլաւան Ըմբիշները Կ՝սպանէ՝ Ու Ջուրը Կ՝գտնէ

Այն ժամանակ՝ Անոնց մէջէն Մէկն արթընցաւ ու կանչեց,—
— «Դուն ո՞վ եեե՛ս...,
Օձն Իր Պորտով, Հաւքն Իր Թեւով՝ այստեղ ի՞նձ չե՛ն կընար,
Դուն ի՞նչ Մարդ ես՝ որ եկեր ես այդ Աղբիւրը՝ Հա՛յց կ՝ուտես...,
Քու հո՛ղն ըրէ ու Քո քա՛րը՝ կըռի՛ւ ընենք Քեզի հետ...»:
Ան ալ՝ Համզա–Պահլաւանը՝ ի՞նչ ըսաւ,—
= «ես ալ՝ օրէ *) ա՛ն կ՝ուզեմ..., կանչէ՛ վե՛ր հան Քու Մարդեր»:
Կանչեց՝ Քառասուն–Ըմբիշները կանգնեցա՛ն,
Առի՛ն Թուրեր՝ եկան Համզա–Պահլաւանի հետ կըռի՛ւ...:

---

*) Տկլոզ, Մերկ, պատեհանէն դուրս հանուած: *) Առին, Սկըսան: 1) Տե՛ս Իմ Սասմաց–Ցուց՝ աշխարհաբար՝ էջ 111ս., եւ Բ. Հատորովը: *) Օրէ, Ամեն օր:

Ան ալ՝ կեցաւ Անոնց մէջէր, կըսի՛ ըրին Իրար հետ,—
Եռասունըին Մարդու Վիզը կըտրեց Թողուց Իրենց տե՛ղ,
Մէ՛կը մեայն ազա՛տ ձըդեց ու ըսաւ,—
— «Գընա՛ եւ Քու Թագաւորին իմա՛ց տուր,—
«Մէկ կըտրի՛ճ կայ, անուն՝ Համզա–Պահլաւան,
Եկաւ ու Քո ամե՛ն Մարդերն ըսպաննեց...,
Բերդը առաւ՝ Նըստեցաւ»...»:
Ինքն ալ՝ Համզա–Պահլաւանը՝ առաւ կընիկն ու Տըղաք՝
*Գաշուեցաւ *) այդ Բերդին մէ՛ջը, գընաց Ներս:*
Գընաց նե՛րսը՝ պըտըտեցաւ՝ լի՛նէ տեսնէ...,—
*— Հարի՛ւր տաբան ապրումս ու կուռ *) կա՛յ ինե *):*
Ի՛նչ որ ուզես՝ Աստծու տըւած՝ լեցո՛ւն է...,—
*Հացէ՛ն, Թացէ՛ն *), ամե՛ն բանէ լեցո՛ւն է այդ Բերդին մէջ...:*
— «Կընի՛կ,–ըսաւ–, ասիկ աղէ՛կ Տեղ ինկանք...,
Կընըստինք հոս, կ՚ուտե՛նք–խըմենք...՝ մինչեւ օրը մեռնելուն»:
Եւ այդտեղ ալ Նըստեցա՛ն...:
Ըսէ՛ք՝ Համզա–Պահլաւանի զո՞րծն ի՛նչ է...,—
— Առտուն որ լոյս կըբացուի՝
Զին կըհնծնէ, Նիզակ կ՚առնէ Իրեն Զեռք,
*Նետ–Աղեղը Թե՛ւ կըձըգէ՝ ու կ՚երթայ Սար՝ Նէճիրի *):*

980. Կռալ-Թագաւոր՝ Զorf կ՚դրկէ Համզա-Պահլաւացի վրայ

Զըրո՞յն ուրկէ, — վըրայ՝ Կըռալ–Թագաւորէ՛ն տանք հիմա.—
Այդ մէկ Ըմբիշ՝ գընաց ըսա՛ւ Իր Տէրոջ,—
— «Մէկ Մա՛րդ եկաւ, անուն՝ Համզա–Պահլաւա՛ն...,
Եռասունըին Ըմբիշ Քեզի 1) ըսպաննե՛ց...,
Բերդը առաւ՝ Նըստաւ մէ՛ջ...,
Ձիս չ՚ըսպաննե՛ց, ազա՛տ թողուց եւ ըսաւ,
«Ի՛նչ պատճառով Քեզ ալ հոս չե՛մ ըսպաններ...,—
Գընա՛ եւ Քու Թագաւորին իմա՛ց տուր,
Ըսէ՛՝ ահա այստեղակ Մա՛րդ կայ Աչխարհ,

---

*) Գաշուիլ, Տեղաւորուիլ: *) Ապրումս ու կուռ, Ապրուելիք եւ ուտելիք: *) Ինե, Մէջ: *) Թաց, Ըմպելիք: *) Նէճիր, Որս:
1) Քեզի պատկանող Մարդերէն:

Այնպէ՛ս Մարդ է...՝ որ Քու եռասնեակ՛ն Ըմբիշ ըսպանեց...,
Քու Բերդն առաւ՝ նըստեցա՛ւ...»:
Կռալ–Թագաւորն ի՞նչ ըրաւ.—
— Ձըգեց Աչխա՛րհ՝ Իր Ոտիկան–Ըսպայները՝
Որ Զօ՛րք ժողվեն Իրեն համար՝ ու բերե՛ն...:—
Ի՛նչքան Մարդ կար՝ Զօ՛րք առաւ...,
Ի՛նչքան Տըղայ՝ հօրէ–մօրէ մէ՛կ հատ՝ Ա՛ն ալ Զօրք առաւ,
Ամեն ժողվեց՝ տարաւ Համզա–Պահլաւանի դէմ՝ կըռի՛ւ...:
Ու դիւերով՝ զացին Անոր Բերդին մօտ,
Զօրս–բոլորը բըռնեցին ու նըստեցան...:—

981. Համզա-Պահլաւան՝ կնիկը կ'հանէ Ցանիւ՝ Իմբը կռիւ կ'երթայ

Լուսաւն՝ Համզա–Պահլաւանը դուրս որ ելաւ՝ ի՞նչ տեսնէ...,—
— Աչխա՛րհ ամեն կըտրեր Մա՛րդ...,
*Ինչ՝ *) Աստղ երկինք՝ Զօ՛րք է կեցեր Բերդին չուրջ...:—*
Ամեն՝ Համզա–Պահլաւանի համա՛ր ելեր եկեր են...:
Ան ալ մըտաւ Տունէն ներսը եւ ըսաւ,—
— «Կընի՛կ,–ըսաւ–, Հա՛յ բեր ուտեմ..., Ես պիտ՝ երթամ կըռիւ՛»:
= «Որո՞ւ դէմ է,–ըսաւ Կընիկ–, պիտի երթաս կըռիւ...»:
— «Ելի՛ր,–ըսաւ–, Բերդի–Տանիս՝ իրիկա՛ւ,
Ու կըտեսնե՛ս կըռիւ որի՛ հետ կ'ընեմ...»:
Կընիկն ելաւ Բերդի–Տանիս 1)՝ ի՛նչ տեսնէ...,—
Որ Աչխա՛րքը կըտրեր է Մա՛րդ ու Ձինւո՛ր...,
Ինչ՝ Աստղ երկինք, Գետին բըռներ՝ նըստո՛ր են...:
Կընիկն իջաւ՝ դարձաւ եկաւ էրկան քով,
Ըսաւ, = «Հա՛մզա–Պահլաւան,
Քեզի ըսի՛՝ «Այստեղերը մի՛ կենար...»,—
Հիմա կ'ելնեն կ'ըսպանե՛ն Քեզ, Մեզ ալ Գերի՛ կըտանին...»:
— «Կընի՛կ,–ըսաւ–, ինչո՞ւ այդպէս կըվախնաս...,
Ես Քեզ հանեմ Բերդի–Տանիս, Տըղաս Աղջիկս միասին,
Կընըստիք հոն՝ Ձեր Աչքերը Դուք կըբռնէք իմ վըրա՛յ,

---

*) Ինչ՝, ինչդ, Ինչպէս, ինչքան: 1) «Կօտուիէս կորեկ ունիմ ցանելու համար, ... Քոան զացին Բերդի–Տանիս՝ գանգտեալու համար»՝ ժողովրդական ծանօթ երգին սկիզբն:

Ես ալ երթամ կըսի՛ր ընեմ, Դուք նայիք ու չըվախնա՛ք...
Տեսնէք թէ ես ի՞նչ Մարդ եմ...»:
Առաւ իր կին, իր Աղջիկը եւ Տըղան,
Տարաւ հասնեց Բերդի–Տանխ՝ նըստեցուց,
Իջաւ եկաւ՝ Իր Ձին հնծաւ, կանչեց Աստուած՝ ու գընա՛ց,
Այդ Զօրքին դէմ կեցաւ, կանչեց ու ըսաւ 2),—

— «Է՛յ Դուք կըռակ–թագաւորի Զինուորնե՛ր,
Ով բընո՛ւկ էք՝ աբթընցէ՛ք. Ով աբթուն էք՝ Հա՛ց կերէք...,
Ով ծարա՛ւ էք՝ Ջո՛ւր խըմէք...,
Ասօր չ'ելնէ՛ք ընէ՛ք՝ «Համզա–Պահլաւան՝
Գողտուկ եկաւ Մեր վըրայ..., ու Մեզ գողտուկ ըսպանեց»,
Ես ահա Ձեզ իմա՛ց կուտամ Մարդու պէս...» 3):

Ու կանգնեցան կըռիւի՛...:
Ան ալ՝ Համզա–Պահլաւանը ի՞նչ կ'ընէ.—
Ձին կըքըշէ ա՛յն Գըլուխէն մինչեւ մէկալ գըլուխը՝
Հազարաւո՛ր Մա՛րդ կըլեցնէ 'ի Գետին...,
Կըզարնէ՛ ու կըկըտրէ՛...:

988. Երեք Անգամ Թուրին Առաջ Եկող Անձը

Զըրոյցն ո՞ւստ տանք, — զըրոյցը տանք մէկ Մարդէ՛,
Որ երի՛ք դիր՝ եկաւ Համզա–Պահլաւանի Թուրին դէ՛մ,
Սակայն Համզա–Պահլաւանը երբեք Անոր չըզարկա՛ւ... 1)
Տըղան ալ չա՛տ խօրատ էր,
Ինքն ալ՝ Համզա–Պահլաւանը՝ ի՞նչ միտք ըրաւ Իրեն մէջ,—
Թէ՝ «Այս Տըղան՝ կ'ըլլայ որ Իմ կընի՛կն է...,—
Ելէր՝ Մարդու Շո՛ր է հագեր, եկեր է որ Զիս փորձէ՛... 2),—
«Նայինք՝ Համզա–Պահլաւանը Զիս կըճանչնա՞յ Ծըպտըւած...,
Թէ չի՛ ճանչնար՝ ու զարնէ՝ Զիս վա՛ր բերէ»...»:
Այդ պատճառով ահա Համզա–Պահլաւան որ մի՛տք ըրաւ՝

---

2) Նման՝ Թլոլ–Դաւիթին՝ Մըսրամէլքի զօրքերուն հանդէպ (Հատոր 611): 3) Երդով:

1) Համալ.՝ Աղուանից Ուռնայր Թագաւորի եւ Մուշեղ Մամիկոնեանի հետ [Բ. Հատորովը]: 2) Նման՝ միւս ամազոններուն (Հուշ. 183–187 եւ 780–781):

Ա՛լ Այդ Տըղուն չըզարկա՛ւ,—
Զօրքերն Ամեն ըսպանուեցա՛ն, Այդ Մարդ պըրծաւ ու դընա՛ց։
Այլեւս Համզա–Պահլաւն ալ՝ դարձաւ եկաւ մըտաւ Տուն,
— «Թաղաւորի՛ Աղջիկ,–ըսաւ–, տեսա՞ր ի՛նչպէս կըռուեցայ...,
Ես կըտրի՞ճ եմ՝ Թէ՞ կըտրիճ չե՛մ..., հաւնեցա՞ր...։—
Դու կ'ըսէիր՝ «Վա՛յ, Մա՛րդ, Համզա–Պահլաւան,
Քեզ կ'ըսպանե՛ն, Մեզ ալ Գերի՛ կըտանին»...,—
Տեսա՞ր Թէ ես ի՛նչ Մարդ եմ...։
Տնա՛չէն,–ըսաւ–, հիմա՛ որ ես իմ Թուր քաշեմ՝ իմնամ դուրս՝
Աչխա՛րք ամեն՝ Թուրիս առջեւ քարքա՛նդ կ'ընեմ կըփըշրե՛մ...,
Կուգամ իմ Տեղ կընըստիմ...»։
Ես որ կ'ելնեմ հրապարակ...՝
Մարդեր՝ Աչքիս՝ Մըժեղի պէ՛ս կ'երեւան...,
Ես այդ Մարդեր չե՛մ տեսներ...» 2)։—

988. «Կար Ու Չկար՝ Իմ Թօռամիճ Աճիկ Էր...»

Եկան Տունը Նըստեցան որ Հա՛ց ուտեն՝
Կընիկն ըսաւ, — «Ան չ'է՛ *)՝ Համզա–Պահլաւան,
Իմ Աչք միչտ ալ Քու վըրա՛դ էր՝ Երդիքէն,—
Քա՛նի որ Դուն կըկըտրէի՛ր այդ Զօրքեր՝
Ես ալ վերէն կըդիտէի՛ Քո ըրած...,—
Տեսայ՝ Մարդ մը երե՛ք անգամ եկաւ ելաւ Թուրիդ դէմ,
Ինչո՞ւ համար Դուն այդ Մարդուն չըզարկիր...»։
= «Վա՛յ, Քու Աչքե՛ր կուրնան,–ըսաւ–, ա՛յ Կընիկ...,
Կա՛ր ու չկար՝ Իմ Թըշնամին Անի՛կ էր...,—
Ես գիտցայ Թէ՝ այդ Դո՛ւն էիր՝ Մարդու Հագո՛ւստ Հագեր էիր
[դիտումով՝
Եկեր էիր որ Զիս փորձե՛ս..., — այդ պատճառո՛վ չըզարկի...,
Ան ալ Քեզ պէս խօրո՛ւտ էր...։—

---

2) Նոյն ձեւով կ'արտայայտուի նաեւ՝ Գաբսիկ Հերոս՝ Թոստամ–Զալ (իմ Ցէրան–Թուրան, Համար 3)։

*) Ան չ'է, Ըսէ՛ սակայն, բայց Դուն ա՛յս ըսէ (... ի՞նչպէս կ'ըլայ որ...)։

Կա՛յ ու չկայ *)՝ Անիկ կըռալ-Թագաւորի Տըղա՛ն էր··· 1),
Պըրծա՛ւ գընա՛ց Իմ Ձեռքէն···»:

Ան ալ՝ Համզա-Պահլաւանը՝ ի՛նչքան կըռիւ որ ընէ՝
Կըղօրանա՛յ կըմեծնա՛յ···,
Ա՛լ աւելի կըտրիճ, հըսկա՛յ կըղառնայ···:

Բ. ՀԱՄԶԱ-ՊԱՀԼԱՒԱՆ՝ ԿԱԽԱՐԴ-ՊԱՌԱՒԻՆ ԿԱՊՈՒԱԾ

934. Կախարդ-Պառաւին Առաջարկը

Զըրոյցն ո՞ւստ տանք, — ղըրոյցը տանք այդ Թագաւոր Կըռալէն:—
Նորէն Մարդի՛ր ձըղնց Աչխարհ՝ Զօ՛րք կըժողվէ՝ Կըռիւ···:
Զըճում-հնծնող Պառա՛ւ մ՝ եկաւ Հրապարակ,
Թագաւորին առջե՛ւ կեցաւ ու ըսաւ,—
— «Թագաւո՛ր···, Դուն ի՞նչ կ՝ընես···,—
Աչխա՛րք տանիս՝ Անոր վըրայ չե՛ն կըրնար···»:
= «Ա՛ւ՝ ի՞նչ ընենք, Մամի՛կ»,—ըսաւ Թագաւոր:
Թէ, — «Գիտե՞ս ի՛նչ պէտք է ընես, Թագաւո՛ր···,
Ի՞նչ կուտաս Ինձ՝ որ Ես Համզա-Պահլաւանը կապկըպեմ՝
Բերեմ դընեմ Քու առջեւ···,—
Ոչ Քեզի մէկ Մա՛րդ ըսպանուի, ոչ ալ վընա՛ս գայ Քեզի···»:
Թագաւորն ալ, = «Մամի՛կ,—ըսաւ—, որ Դուն այդ բան կատարես՝
Գա՛հ կըշինեմ Իմ Գըլխէս վեր՝ Քեզ Ինձմէ վե՛ր կըդընեմ,
Ուտես-խըմե՛ս, ազա՛տ ապրիս՝ մինչեւ օրը մեռնելուն···»:
Պառաւն այնտեղ ի՞նչ ըսաւ·—
— «Դէ՛, Թագաւո՛ր, տո՛ւր Ինձ քառասուն-ու-մէ՛կ Մարդ,
Այն մէկն ալ ինչ աւելի է՝ Քու Տըղա՛ն 1)
Տո՛ւր Ինձի որ առնեմ երթամ Իմ գործին,
Ա՛լ Մեզի հետ Դու բան չ՝ունի՛ս, մինչեւ նայինք ի՞նչ կ՝ըլլայ···»:

---

*) կա՛յ ու չկայ, Անկասկած: 1) Կռալ-Թագաւորի Տղուն աչքառու դեղեցկութիւնը, Համզա-Պահլաւանէն ու կնոջմէն չեշտուած, յատակօրէն կ՝բացատրէ յաջորդ դէպքերը (Հուշ. 939–956):

1) Այսինքն՝ «Քառասունէն զատ՝ մէկ մարդ ալ աւելի որ կ՝ուզեմ՝ քու տղան պէտք է ըլլայ:

935. Պառաւն Ու Իր Քառասնըմէկ Մարդերը

Թագաւորը բերաւ տըւաւ՝ Քառասուն Մարդ եւ Իր Տըղան,
Պառաւն առաւ այդ Մարդիկներն ու գընաց։
Գընաց ելաւ Սարի մ'Կ,—
Սարն ալ՝ Համզա-Պահլաւանի Տան դիմա'ց...։
Պառաւ վերցուց՝ այդ Քառասուն-ու-մէկ Մարդուն ի՞նչ ըսաւ,—
— «Մարդի'կ,—ըսաւ—, Դուք կընըստիք Սարին մէ'Կ...,
Ես ալ Համզա-Պահլաւանի Տո'ւն կ'երթամ...։—
Ինչ առեն որ՝ տեսաք Անոր բարձըր Տանիք՝ կըրակ կըպաւ) կըվառի՝*
Այն ժամանակ եւ ա'յդ ժամին՝ կուգաք Ինձի կըհասանի'ք...։
Ի'նչքան առեն կըրակ կըպած-վառած չ'Է՝
Մէ'կ տարի ալ այստեղ նըստիք՝ իրար չ'առնի'ք) ու չիգա'ք...*
Երբոր տեսաք կըրակ կըպաւ՝ կըվառի՝
Գիտցէք որ Քէ՝ այլեւս Համզա-Պահլաւանը բըռնե'ր եմ,—
Շուտով կուգաք կըհասանի'ք...»։—

936. Պառաւը Համզա-Պահլաւանի Դուռին Առաջ

Պառաւ Թողուց ու գընա'ց։
Գընաց՝ Համզա-Պահլաւանի Տունին առջեւ կանգնեցա'ւ,
Դուռը զարկաւ ու կանչեց,—
— «Աթո'ւն), արի՛, Աստծո'ւ սիրոյն, Դուռը բա'ց...»։*
Փարիշան ալ՝ եկաւ վերէն նայեցաւ որ՝ մէկ Պառա'ւ...,
= «Մամի'կ,—ըսաւ—, ի՞նչ կ'ուզես...»։
Թէ, — «Ծու Գըլխի'ն մեռնիմ, Տիկի'ն, Դուռ բանա'ս...,
Խեղճ կընի'կ մ' եմ..., Չես նե'ր ես առնես այս գիշեր...։—
Երուսաղէ'մ կ'երթայինք Մենք ուխտաւոր...,
Իմ Ընկերներս երիտասա'րդ էին Ինձմէ, չո'ւտ գացին...,
Ես ծե'ր էի..., ու չըկըրցա'յ երթալ Անոնց ոտքին հետ...
Նե'ր ես առնես Չես, — Ծու չընորքին ու գըթութեա'ն կըդիմեմ...»։
Այդ փարիշան ի՞նչ ըսաւ.—
— «Դէ՛ կորսըւէ՛ ու ե'տ ընկեր..., չա'ր Պառա'ւ...,
Որ մեռնի'ս ալ՝ Դուռ չե'մ բանար Ծու վըրադ...

---

*) Կպիլ, Բռնկիլ։ *) Իրար չ'առնել, Չ'շարժիլ։ *) Խաթուն, Տիկին։

Դու Պառաւ չէ՛ս..., — Սատանա՛յ ես, չա՛ր ես Դուն...»:
Ի՛նչ որ ըրաւ, Պառաւն ի՛նչ ալ որ ըսաւ՝
Տիկին Իր Դուռն Անոր վրայ չըբացա՛ւ...:
Մընա՛ց, Պառաւն ի՛նչ ըսաւ.—
«Մարդու Սի՛րտը որ կայ,–ըսաւ–, կընկան Սըրտէն աղէ՛կ է...,
կենամ այստեղ՝ մինչեւ Համզա–Պահլաւանը իր՛կուն գայ՝
Ինձ մեղքնայ՝ նե՛րս առնէ...»:—

987. Կնիկը Կ՛զգուշացնէ, Համզա-Պահլաւան Ներս Կ՛առնէ Պառաւը

Մընաց մինչեւ իրիկո՛ւն,—
Իր՛կուն՝ Համզա–Պահլաւանը Սարէն եկաւ՝ ի՞նչ տեսնէ.—
— Որ Պառաւ–կին մ՛՝ նըստեր Դըրան Շեմքին վրայ, կըծկտե՛ր:
Հարցուց ըսաւ, — «Մամի՛կ,–ըսաւ–, Դուն ո՞վ ես...»:
Պառաւն ալ Թէ, = «Որդի՛, Քենէ ի՞նչ պահեմ...,
Երուսաղէ՛մ կ՛երթայինք Մենք՝ ուխտաւո՛ր...,
Իմ Ընկերներ՝ երկուասա՛ր էին՝ անցան ու գացին...,
Ես Ծե՛ր էի...՝ մընացի ե՛տ..., եկայ ինկայ այստեղե՛ր...,
*Տիկնոջ ի՛նչքան յիվի կ՛ընեմ *), կուլամ կ՛խնդրեմ՝ ներս չ՛ա՛ռներ,*
Գիշեր պառկիմ՝ որ առաւօտ ելնեմ երթամ ուրիշ տե՛ղ...»:
Այդտեղ Համզա–Պահլաւանը ի՞նչ ըրաւ.—
կանչե՛ց կընկան, — «Տիկի՛ն, Խաթո՛ւն–Փարիչա՛ն...,
Արի Դուռ բա՛ց՝ որ նե՛րս դանք...»:
Տիկին՝ Համզա–Պահլաւանին ի՞նչ ըսաւ.—
= «Է՛ Մա՛րդ,–ըսաւ–, այդ Պառաւը ներս չ՛առնե՛ս....
*Ասի՛ կախա՛րդ *) Պառաւ է...,—*
Մեր Գըլուխը Թէ որ ցաւի՝ գիտնաս որ այդ Պառ՛ւէ՛ն է...
Լաւ է որ Դուն Առոր Գըլուխ Թըողընե՛ս...,
Առկէ՝ Քեզի վընա՛ս միայն կըրնայ գալ...» 1):
*— «Կընի՛կ,–ըսաւ–, Աչխա՛րհ *) որ գան՝ Իմ Գըլուխը չի՛ ցաւիր...,*
Այս մէկ Պառ՛ւէ՛ն պիտի ցաւի Իմ Գըլուխս...

---

*) Ցիվի ընել, Խնդրել, աղաչել: *) կախարդ, Ջարամխոր: 1) Ա·61–62՝ Հօրեղբայրն ու Քեռի–Թորոսն են ըսողները, եւ Պառաւին տեղ՝ Բաղդատի–Խալիֆան է (պատումին բերումովը): *) Աշխարհի բոլոր մարդիկ:

Է՛ տընաշէ՛ն, Անիկ ի՞նչ է…՝ որ Իրմէ ալ վընա՛ս դայ…»։
Կընիկն ըսաւ, = «Աղէ՛կ, Հա՛մզա–Պահլաւան,
Ես ձեզ ըսի…՝ Դուն Իմ խօսքը չե՛ս ըներ…,—
Ձո մեղք՝ Ձո վի՛զ…, Դո՛ւն դիտես…»։
Այն ժամանակ՝ Խաթուն եկաւ՝ Դուռ բացա՛ւ,
Ան ալ՝ Համզա–Պահլաւանը՝ առաւ Մամիկ՝ գացին նե՛րս։—

938. Պառաւը՝ Տունին Մէջ Աօխասաւար

Ներս որ մըտաւ՝ այդ Պառաւը՝ Ահել բըռնեց Իրեն Ձե՛ռ՝
Տան չորս–բոլոր, Տախտերն աւլեց ու մաքրե՛ց…,
Գընակները լըւաց–սըրբե՛ց, Աման–չ՛աման՝ դըրաւ տե՛ղ…։
Ասոնք Համզա–Պահլաւանը երբ տեսաւ՝
— «Մամի՛կ,–ըսաւ–, երանի՛ Քէ Դուն մընայիր Մեր քովի՛կ,
Ու Խաթունին ծառայութի՛ւն ընէիր…»։
Կախարդ–Պառաւն ի՞նչ ըսաւ.—
= «Մեռնի՛մ Ձեզի, Որդի՛, Հա՛մզա–Պահլաւան,
Ես ալ այդպէս բա՛ն մը կ՛ուզեմ…՝ Ձու չընորհիւ հոս ապրի՛մ…,
Երուսաղէմ ա՛լ չե՛մ երթար…, չե՛մ կըընար…»։
Ըսաւ, — «Մամի՛կ, կեցիր Մեր Տո՛ւն՝ ասկէ ետք,
Ընտի՛ր այստեղ, կե՛ր ու խըմէ՛՝ մինչեւ մահ…,
Իմ Տիկինիս առջեւ կեցի՛ր՝ աշխատէ՛…»։
Լուսուն՝ Համզա–Պահլաւանը դընաց Սարեր՝ Նէճիրի,
Այդ Պառաւը մընաց Տան մէջ, կընկան քո՛վ։
Այդպէս՝ Համզա–Պահլաւանը՝ լուսուն կ՛երթայ Իր Որսին,
Եւ իրիկուն կուգայ Տո՛ւն,
Այդ Պառաւն ալ՝ Տունին մէջը կ՛աշխատի՛…։

939. Պառաւը՝ Փարիսաց-Խաթունի Դուխը Կ՛լուայ

Մէկ–քանի օր որ մընա՛ց…՝
Օրին մէկ ալ՝ Պառաւ վերցուց ի՞նչ ըսաւ.—
— «Խաթո՛ւն,–ըսաւ–, քանի՛ օր է՝ որ Ես այստեղ եկեր եմ՝
Դուն Քո Գըլուխ ինչո՛ւ համար չե՛ս լըւար…»։
Տիկինն ալ Թէ, = «Մամի՛կ, ասօր բեր լըւա՛նք»։
Պառաւն ելաւ՝ Գըղինճներով Ջո՛ւր տաքցուց,
Առաւ տարա՛ւ Իր Խաթունը՝ Փարիշան,

Ջուրը լեցուց՝ Գըլուխ լըւա՛ց ու սանրեց,
Վերցուց՝ ապա՝ ի՞նչ ըսաւ.—
— «Ի՞նչ խօրոտիկ Ծամե՛ր ունիս..., մեռնի՛մ ֆե՛զ...,
Ախտս չէ՞ որ՝ Դուն այս փափուկ Մազի տէր...՝
Երթաս՝ Համզա–Պահլաւանի Ծո՛ց պառկիս...:—
Անիկ այսպէ՛ս մարդակե՛ր *) է..., Աչխարք ամեն կոտորե՛ց...,
Շաղաղուեցաւ Արիւնի մէ՛ջ..., ա՛յդչափ մեղքի տա՛կ ինկաւ... 1).
Դուն ախտս չե՞ս՝ որ կըպառկիս Անոր կուշտ *)... .
Դուն պառկէ՛ր՝ հիմա՝ կըռաք–թաղաւորի Տըղո՛ւն քով...՝
Որ ֆեզի պէս խօրոտի՛կ է..., չա՛տ խօրոտ...,—
Դուն Անոր քով ի՞նչ խօրոտ ես..., «խօրոտ» կ՚ըսեն՝ Անի՛կ է...»:
Երբոր Պառաւն այդ խօսքն ըսաւ Տիկինին՝
Փարիչա՛ն էր, — չատ բարկացա՛ւ, յանդիմանեց ու ըսաւ,—
— «Կախա՛րդ–Պառա՛ւ, դէ՛ Դուն,–ըսաւ–, Ֆու խօսքերուդ
[տէ՛ր եղիր 2),
Մինչեւ Համզա–Պահլաւանը իրիկուն գայ՝ մըտնէ Տո՛ւն,
Իրեն ըսեմ՝ որ Ֆեզ դարնէ Շամխուրին ծայր՝ Ուղի պէ՛ս,
Ու Ֆեզ բըռնէ վեր՝–կըրակին խորովէ...՝
Ըլնէ Իրեն Աո՛մին տակ,
Մէկալ Առամ չ՚իմանա՛յ թէ՝ Խորոված–Մի՛ս է կերեր...՝
Ֆեզ կո՛ւլ տայ...»:
Որ Փարիչան այդ խօսքն ըսաւ լըմընցուց՝
Պառա՛ւուս Լեղուն պապանձեցա՛ւ կեցած տեղ,—
«Վա՛յ..., իրիկուն,–ըսաւ–, Համզա–Պահլաւանը որ գայ Տո՛ւն՝
Խթուն՝ Անոր պիտի խօսի՛..., երկէ ու Չխ ըսպանէ՛...»:

940. Փարիչան՝ Բան Մը Չի՛բաներ Իր Էրկան

Մընաց իրկո՛ւն, երբոր Համզա–Պահլաւանը եկաւ Դուռ՝
Կանչեց, — «Մամի՛կ, Մամի՛կ, արի՝ Դուռը բա՛ց...»:
Մամիկն ըսես՝ Դէմքը կախե՛ր..., զոյն նետե՛ր է, ու սըմքի՛ր...,
Թո՛ւլ-Թուլ Ոտնով, յուշի՛կ–յուշիկ՝ իջաւ գընաց՝ Դուռ բացաւ:

---

*) Մարդակեր, Ջարդարար: 1) կ՚Թուի Թէ՝ այդ պառաւն ալ անձի կորուստ ունեցեր էր Համզա–Պահլաւանի դէմ դրկուած զօրքերուն մէջ, ինչպէս Դաւիթի դէմ եկող ծերուկը (Հատ. 614–615):
*) Կուշտ, Ֆով, մօտ: 2) Այսինքն՝ Խօսքերդ չ՚ուրանա՛ս:

Բացա՛ւ..., Համզա–Պահլաւանը մըտաւ նէ՛րս,
Նայեց ըսաւ, — «Մամի՛կ,–ըսաւ–, ասօր հօ Դուն հիւանդ չէ՞ս»:
Պառաւն ըսաւ, = «Որդի՛,–ըսաւ–, չէ՛, մըսե՛ր եմ քընէիկ մը...,
Ու Գըլուխը՛ս կըցաւի...»:
Գընաց՝ Համզա–Պահլաւանը նըստեցա՛ւ,
Հաց–մա՛ց բերին՝ կերա՛ն այնտեղ, խըմեցի՛ն.—
Ու Պառաւն ալ իր մըտքին մէջ ի՞նչ կ'ըսէ...,—
*«Հա՛ հիմա՛ է..., հա՛ *) քիչ յետոյ...՝ որ Խաթունն՝*
Գիտի ըսէ՛ Իր էրիկին՝ եկնէ ու Զիս ըսպանէ՛...»:—
Տիկին չըսա՛ւ Իր էրկան...:—

941. Երկրորդ Անգամ Գլուխ Լսելն Ու Պառաւին Սպրանքները

Մընա՛ց՝ քանի մ' օր անցա՛ւ...,—
Նորէն Գըլխու կարգը եկա՛ւ որ լըսա՛յ,—
«Խաթո՛ւն,–ըսաւ–, Ձո Գըլուխիդ կարգը ասօր եկե՛ր է...,
Ելիր երթանք՝ որ լըսամ...»:
Ելաւ առաւ՝ տարա՛ւ Նորէն Փարիչեան,
Գըլուխ լըսա՛ց, Մամեր սանրեց՝ ըստըկե՛ց...,
Նորէն ըսաւ, — «Մեռնի՛մ,–ըսաւ–, Ձո խօրոտիկ Մազերո՛ւն,
Գըլխիդ վըրայ լո՛յս կուտան...,—
Ձու Մազերը արժան էին՝ ապա՝ կըռալ–Թագաւորի Տըղայի՛ն...
Անոնք Համզա–Պահլաւանին արժան չե՛ն... 1):
Այն ժամանակ Փարիչեանն ալ ի՞նչ ըսաւ.—
= «Մամի՛կ,–ըսաւ–, Դուն՝ անցած օր 2)՝ Ինձի ըսի՛ր մէկ անգամ...,
Ես Իմ էրկան չըխօսեցա՛յ..., ասօր Նորէ՛ն կ'ըսես Դուն...,
Դէ՛, որ կըրնաս...՝ բան մ' ըրէ՛...,—
Ըսածդ կըռալ–Թագաւորի Տըղային Զե՛ռք ձըդէ Զիս...»:
[Սիրտը վըրան փոխուեցա՛ւ...].
Պառաւն ալ չուտ, — «Ողո՛րդ...,–ըսաւ–, խօսք կուտա՞ս»:
= «Հա՛..., որ կըրնաս՝ Զիս ձըդէ՛ այդ Թագաւորի Տըղուն Զե՛ռք»:
— «Որ այդպէ՛ս է,–ըսաւ Պառաւ–, երթանք վե՛ր,

---

*) Հա՛, Ահա՛, հիմա–հիմա՛:

1) Թերեւս՝ Համզա–Պահլաւան դեղադէմ մարդ չէ՛ր: 2) ՀՍ·973՝ եռանդ:

*Տաս–տասներհինգ օրւան չոր Լօշ *)՝ Ներքեւակիդ *) տա՛կ փըռեմ...,*
Դուն ալ վըրա՛ն կըպառկիս...,
Իրիկուն որ՝ Սարէն Համզա–Պահլաւանը կուգայ ներս՝
Ան կըկանչէ՛ Դուտին վըրայ..., քա՛նի կանչէ՝ Թող կանչէ...,
Ես ալ ամեն օրւայ նըման՝ չուտ չե՛մ երթար՝ Դուռ բանար... .
Երբ շա՛տ կանչէ՝ անկէ յետոյ՝ Ես լալէն ու դոռալէն կ'երթամ վա՛ր,
Ու ոչ կըրա՛կ կ'ընեմ ասոր, ոչ ճըրադ...:
Ես որ Դուռը բանամ ու լամ՝ Ան կ'ըսէ՝
«Ի՞նչ է եղեր, Մամի՛կ..., Դուռը չե՛ս բանար...,
Ու ճըրա՛գ ալ չէ՛ք ըներ...»·—
Ես ալ կ'ըսեմ՝ «Տըղա՛ս, Համզա՛–Պահլաւան,
Ինչ առաւօտ Դու գացեր ես՝ մինչեւ հիմա, ամբո՛ղջ օր՝
Մեր Խաթունը լեղու չ'ունի՛... 3), մեռածի պէս ինկե՛ր է...,—
*Ալ չե՛մ դիտեր...՝ հրեշտակազա՛րկս *) է եղեր...,*
*Թէ՞՝ քառասուն մատ *) Սանդուղէ՛ն է վար ինկեր...,—*
Բերեր եմ ղ'Ինք պառկեցուցեր Անկողին,
Խըրխըռոցը ինկեր Անոր Ոսկորնե՛ր... .
Ոչ կըխօսի, ոչ ալ կ'առնէ ու կուտայ...»·—
Այն ժամանակ որ Ան՝ Համզա–Պահլաւանը՝ կուգայ Տո՛ւն՝
Կընըստի Ինծ Գրլուխին քով, Ինձ կընեղէ–չարչարէ,
Ու կըկանչէ կ'ըսէ Ինձի՝ «Փարի՛չան...,
Աստծո՛ւ սիրոյն, Ի՞նչ է եղեր Ինձ՝ այսօր...»,
Դուն մի՛ խօսիր, չուտ առ Ինծ Տեղ՝ Թող Հացերը կոտրըտուի՛ն...,
Ես ալ կ'ըսեմ՝ «Մա՛հա՛ն, Համզա՛–Պահլաւան,
Մէ՞ջքն է կոտրե՛ր..., Ի՞նչ է եղեր, — չե՛մ դիտեր...,
Խըրխըռոցը ինկեր Անոր Ոսկորնե՛ր...»:
Որ շա՛տ պընդէ Ինծ վըրայ՝
Վե՛րջ–վերջ խօսի՛, ըսէ՝ «Համզա՛–Պահլաւան,
Ես ժըրէ՛ր..., Ես ու Դուն ալ՝ Մեր Տանի՛ս ելնէինք...,
Մէկ Գօտեմա՛րտ բըռնէինք հոն՝ տեսնայի՛...՝
Ես Ինծ ուժը խմանայի՛ մէկ անգամ...,

---

*) Լօշ, բարակ հաց, չօթ, Թոնիրի մէջ եփուած (որ կ'պահուի 15–20–30 օր): *) Ներքեւակ, Վրան պառկելիք անկողին, դէօշէկ: 3) Այսինքն՝ խօսելէ դադրած է: *) Հրեշտակազարկս, Հրեշտակէն հարուածեալ: *) Մատ, Աստիճան (սանդուղի):

Նոր անկէ ետք՝ Աստուած Հոգիս թող առնէ՛ր...».
Որ Դուն այդպէ՛ս ըսես Իրեն՝ վերջին դիր՝
Այն ժամանակ՝ ես ալ կ՛ըսեմ՝ «Դէ՛, ե՛լ, Համզա–Գահլաւան,
Թէւ մ՝ Դո՛ւն բըռնէ, մէկ ե՛ս բըռնեմ՝ Խաթունին,
Հանենք Տանիս՝ Դուն ու Տիկին Գօտեմա՛րտ մը բըռնեցէք...,
Ջիչ մը թերեւս իմ Խաթունի Սիրտը բացուի՛, աղէկնա՛յ...
Այնտեղ կ՛ըսեմ՝ «Ա՛հա՛ն, Համզա–Գահլաւան,
Ո՛րմէկդ իյնաք՝ ես կըկապե՛մ Շըղթայով...
Հիւա՛նդն իյնայ՝ կըկապե՛մ..., Թէ Դո՛ւն իյնաս՝ կըկապե՛մ».
Դուն ալ հօ չե՛ս կըրնար Անիկ Գետի՛ն զարներ Քո ուժով...,
Ինչը Համզա–Գահլաւա՛նը կամո՛վ կ՛իյնայ՝ կըկապե՛մ...»:—

942. Կնիկը կեղծ Հիւանդ Պառկած

Պառաւն այդպէս պատուէր ըրաւ Տիկինին,
Ելաւ՝ Խաթունն այնտեղ հիւա՛նդ պառկեցուց...,
Զոր Լօշերը փըռեց տա՛կ...:
Իրկուն՝ Համզա–Գահլաւանը՝ Սարէն զարձաւ եկաւ Տո՛ւն,
Կանչեց ,ըսէն, — «Մամի՛կ, արի՝ Դուռը բա՛ց...»:
Մէկ դիր կանչեց՝ այդ Պառաւը չըլսե՛ց...
Երկո՛ւ կանչեց՝ չըլսե՛ց..., երե՛ք կանչեց՝ չըլսե՛ց...,—
Զորսին վերջայ՝ ըսաւ, — «Մամի՛կ,..., մեռե՞ր էք.՞.՞.՞,
Դուռը բացէ՛ք՝ որ նե՛րս գամ...»:
Մամիկն իջաւ, լացո՛վ–լոցով ու լալկէ՛ն *)՝ Դուռ բացա՛ւ:
— «Մամի՛կ,–ըսաւ–, է՞ր կուլաս.՞.՞.՞»:
= «Ապա՛...՝ Համզա–Գահլաւան...,
Առաւօտուն ինչ Դուն գացիր՝ մինչեւ հիմա՝ ամբո՛ղջ օր՝
Իմ Խաթունը առանց–լեզու՝ ինկե՛ր է...»:
— «Ի՞նչ է եղեր..., ա՛յ Մամիկ...»:
= «Ալ չե՛մ գիտեր..., հիւա՛նդ է...,—
Որոխրոտը ինկեր Անոր Անձին մէ՛ջ...,
Ծօյք ու ղըրոյց չի՛ տար չ՛ուներ..., ի՛նչ որ կ՛ըսեմ՝ չի՛ լըսեր...»:
Այնտեղ Համզա–Գահլաւանի Ոտքեր Թուլցա՛ն կըսկըծու... *),

---

*) Լացով–լոցով ու լալկէն, կըկրկնէն՝ պատմուածքին քաղցրութիւն տալու համար: *) Կսկծու, կսկիծէն:

Իր հրեղէն Զին 1) թողուց իր տեղ անօթի՛…,
*Քոչւերուն *) վրայ դընաց վեր…,*
Տնաւ կինը կըտըքտըքա՛յ, Դէմքը կախեր՝ պառկե՛ր է…,—
— «Իմ փարի՛չան–Ալթունն,–ըսաւ–, ի՞նչ է եղեր քեզ՝ այսօր…»:
Ինչ որ ըրաւ՝ Տիկին երբեք ձայն չըհանե՛ց իր բերնէն…:
Շա՛տ որ կանչեց, չա՛տ ըստիպեց՝ ձայն չըտըւա՛ Փարիչան,
Ան ալ ըսաւ, — «Ադէ՛կ,–ըսաւ–, հօ՛ չըմեռա՛ր…, Տընաչէ՛ն,
Մէ՛կ աւուր ցաւ՝ հօ՛ չ'ըսպանե՛ց քեզ՝ մէկէն…»:
Վերջին անդամ՝ Անիկ այդպէ՛ս որ ըսաւ՝
Կինը՝ Տիկին փարիչան ալ՝ չուռ–մո՛ւռ առաւ վեր'–Կողին,
=«Վա՛յ…,–ըսաւ–, Մա՛րդ…, ի՞նչ աղէկ էր՝ որ ես քիչ մը ժըրէ՛ի,
Ես ու Դուն ալ՝ Բերդի–Տանի՛ս ելնէինք…,
Մէկ Գօռեմա՛րտ բըռնէինք հոն՝ Իրար հե՛տ…» 2):
Պառաւն այնտեղ ի՞նչ ըսաւ.—
— «Ա՛հա՛ն, Համզա–Պահլաւան…, ելիր՝ առնենք ու երթա՛նք,
Թերեւս քիչ մը Մեր Ալթունին Սիրտը բացուի՛, աղէկնա՛յ»:—

943. Համզա-Պահլաւան՝ կրկին Դուբաթի Եղբայրին կապերը

Ելան աւին հիւանդ Ալթուն…՝ տարան Բերդի–Տանիսը:
Պառաւն ալ հոն կը պայմանէ՛ երկուստեք.—
— «Գիտե՞ս՝ ապա՝ ի՞նչ կայ, Համզա–Պահլաւան…»:
= «Ի՞նչ կայ, Մամի՛կ…, ըսէ՛ չուտ…»:
— «Ալթունն ըսես՝ հիւա՛նդ է, Դուն՝ առո՛ղջ ես Ախոռածո՛վ…,
Ալթո՛ւն իյնայ՝ կըկապե՛մ…, ու Դո՛ւն իյնաս՝ կըկապե՛մ…»:
[Ու մէկ կողմէն՝ Աչքո՛վ կ'ընէ Համզային…].
Ան ալ՝ Համզա–Պահլաւանը՝ ի՞նչ ըսաւ,—
= «Մամի՛կ, ապա, Դո՛ւն գիտես…»:
Է՛…, Տիկինը կըրնա՞յ Համզա–Պահլաւանը դըլորել…,—
— Չի՛ կըրնար…:
Այդտեղ՝ Համզա–Պահլաւանը հասաւ դըրկե՛ց իր Ալթուն,
Դարձաւ–դարձա՛ւ՝ ու կամովին՝ ինկաւ Իրեն Քամկին վրա՛յ,
Որ Տիկինին Սիրտը բացուի՛, չունչը դայ տեղ՝ աղէկնա՛յ…:

---

1) Անշուշտ՝ Քուռկիկ–Ջապալիճ: *) Քոչւեր, Թուռկեր:
2) Ա·62՝ Սատրանջ խաղայիմ:

Երբոր ինկաւ՝ գառաւ վազեց ի՞նչ ըսաւ,—
— «Ա՛հա՛ն, Համ՛զա–Գահլաւան...,
Ինկող Դո՛ւն ես՝ պէտք է կապե՛նք ձեզ հիմա...»:
Ըսաւ, = «Մամի՛կ, Դո՛ւն դիտես...»:
Ելաւ բերաւ Դուքանի հա՛ստ Շըղթաներ,
կապե՛ց Համզա–Գահլաւանը՝ ու փաթթե՛ց,
կանչեց ըսաւ, — «Դէ՛, հասէ՛ք...» 1):
Այնտեղ Համզա–Գահլաւանը չըկըռա՛ւ... *).
Որ չըշկըռաւ...՝ ինքզինք մէ՛յ մը իրա՛ր տըւաւ, ցընցկըտե՛ց...,
Շըղթաներուն ամեն կըտոր՝ թըռաւ դընաց մէյմէկ կո՛ղմ... 2),
Ցատկեց ելա՛ւ Իր տեղէն,
Ըսաւ, = «Մամի՛կ, ատ որո՛ւ էր որ Դուն ըսիր՝ «Դէ՛ հասէք»,
Չ'ըլլա՞յ Դուն Զիս ըսպանելո՛ւ ես եկեր.՞.՞.՞»:
Ըսաւ, — «Համ՛զա–Գահլաւան,
Որդի՛,–ըսաւ–, ես Քո ո՛ւժը փորձեցի...,—
Դուն մէկ–քի՛չ ալ չըկեցա՛ր որ՝ Սիրտը բացուէ՛ր Խաթունին,
Մէ՛կ անագմէն՝ չո՛ւտ մը Շըղթան կըտրեցի՛ր...,—
Քեզ ապա ի՞նչ կըբըռնէ...»:
Թէ, = «Մամի՛կ, Զիս քա՞ն չի՛ բըռներ Երկրի վրայ...,—
Մէկ *)՝ իմ Անդան–Լա՛րն 3) է որ Զիս կըբըռնէ,—
Թէ իմ Ձեռքիս Բո՛յթ–Մատերը իրա՛ր կապեն՝ հուսանց...,
Թէ ոչ՝ Աչխարհ ամե՛նն ալ դան՝ Զիս յաղթելու կ'արդ չե՛ն» 4):

944. Համզա-Գահլաւան՝ Անդան-Լարով՝ Բոյթերէն կապուած

Այդ Գառաւն ալ ի՞նչ ըրաւ,—
— վազեց գընաց՝ Աղեղ խոթեց կըրակի մէջ՝ Լարը քակեց ու փըրցուց՝
Բերաւ՝ Համզա–Գահլաւանի Թեւերը տարաւ Իամակի՛ն,
Անդան–Լարով Իրա՛ր կապեց՝ Ձեռքին երկու Բոյթ–Մատերը,
կանչեց ըսաւ, — «Դէ՛, հասէ՛ք...»:
Դի՛ր մ' ալ Համզա–Գահլաւանը սո՛նկ ըրաւ...,

---

1) Ա.·62՝ «Բաղդադայ Խալիֆա՛, դէ տըէ՛ Թուրը քաշի՝ տղի գլուխը կտրէ՛»: *) Շկռիլ, Զարմանահար ըլլալ, չուարիլ: 2) Նըմանի՝ Թըռ–Դաւիթի (Հատ.· 642): *) Մէկ, Միայն, մինակ: 3) Աղեղաձ լար: 4) Հմմտ.՝ Սամսոն–Դալիլայի պարագան (Աստուածշունչ·):

Երկու Ձեռքը թափով քաշե՛ց իրարմէ···,
Լարը՝ Մատին Միսեր կըտրե՛ց···՝ դընաց հասաւ Ոսկորի՛ն···:
Պառաւն ալ չուտ, — «Դէ՛, Քեզ թափ տուր,–ըսաւ–, Հա՛մզա–
[Պահլաւան»:
= «Մամի՛կ,–ըսաւ–, ալ չե՛մ կըրնար իրար տալ···,—
Միսը կըտրեր՝ ու հասեր է Ոսկորի՛ն···»:
*Մամիկ վազեց՝ Հացհան *) մ՝ առաւ բըռնեց Ձեռը՝ ու հասա՛ւ,*
Ջարկաւ Համզա–Պահլաւանի Գըլխուն վըրայ եւ ըսաւ,—
*— «Հո՛ղ տամ Գըլխո՛ւդ···, չ՛ըսե՞ս··· *)՝ կորե՛կ եմ ցաներ···՝*
Նըստեր եմ Բու երեսնիվեր՝ մինչեւ հասնի՝ որ քաղե՞մ.՞.՞.՞»:—

945. Համզա-Պահլաւան՝ Մորի Մէջ Եւ Ինկնիր Կապած

Պառաւն ելաւ ի՞նչ ըրաւ·—
— Քիչ մը կըրա՛կ վառեց Տանիս, բորբոքե՛ց···,—
Այն ժամանակ՝ Քառասունըմէկ Մարդերն ելան ու հասա՛ն···:
Մէկը ըսաւ՝ «Ըսպանե՛նք···». Մէկը ըսաւ Թէ՝ «Մորթե՛նք···».
Մէկն ալ ըսաւ՝ «Կըտըրտե՛նք···».—
Գուքը նորէն Թագաւորի–Տըղո՛ւն Սըրտին մէջը կար,
Ըսաւ Թէ, — «Ձէ՛, չե՛նք ըսպաներ···, ի՞նչ կ՛ընենք,—
*— Մէկ Տաւարի *) Մո՛րթ կըհանենք կըբերենք՝*
Այսպէս Համզա–Պահլաւանը կըմըտցընենք Մորթին մէ՛ջ,
Կապենք այնտեղ Սուննի՛վե՛ր···,—
Ճըրագ ըրնենք Գըլխուն վըրայ՝ ընենք Մեղի ճըրագտե՛ղ··· 1),
Որ Դանակով ըսպանելէ՛ն ալ դէշ է···»:—
Ելան բերին ու մըտցուցին Մորթի մէ՛ջ···,
Կապեցին Սիւն՝ նըստեցա՛ն···:
Պառա՛ւին Տեղն ալ՝ պատրաստեցին Վերի–Ճա՛րկ,
Ելաւ դընաց՝ Թագաւորի–Տըղուն Գըլուխ՝ նըստեցա՛ւ···:—
[Այդ բաները որ յաղողցո՛ւց՝ այդ Պառաւ՝
Անոր համար՝ դընաց այնտեղ՝ Ամենէն վե՛ր նըստեցաւ,
Ջոջացա՛ւ···]:

---

*) Հացհան, Հացը Թոնիրէն հանելու՝ կեռ–Թաթաւոր երկաթէ գործիք: *) Չ'ըսե՞ս, Մի՞ դուցէ, այնպէ՞ս կըկարծես···:
*) Տաւար, Դուար, արջառ (եղ, դոմէշ): 1) Ինչպէս Սանասարն ըրաւ՝ Կռապաշտ (Սենեքերիմ) Թագաւորի համար (Հատ· 65):

Թադաւորի–Տըղան նըստա՛ւ, մընաց այնտեղ՝ Բերդին մէ՛ջ,
Այդ Քառասուն Մարդիկներն ալ՝ ջո՛կ Սենեակի մէ՛ջ զացին։
Երբոր լուսցաւ՝ ելան՝ Քառասուն Մարդերուն հետ միասին՝
Թըմբուկներով ու Շեփորով՝ զացին Դաշտը խաղալո՛ւ...։
Իր՛կուն. եկան, գաուաւ նորէն ի՞նչ ըրաւ,—
— Հացհան մ՝ զարկաւ 2)՝ կապած Համզա–Պահլաւանի Գլուխին՝
Ելաւ դընաց Իր Վերին–Տեղ՝ նըստեցաւ։

Գ. ՀԱՄԶԱ-ՊԱՀԼԱՒԱՆ ԵՒ ԻՐ ՏՂԱՆ ԴԵՐՆԻԿ

946. Կռալ-Թագաւորի Տղան, Փարիսաց Ու Համզա-Պահլաւանը

Զըրոյցն ո՞տտ տանք, — զըրոյցը տանք Թագաւորին Տըղայ էն.
Այդ Փարիշան՝ այդտեղ՝ Համզա–Պահլաւանի Աչքի՛ն դէմ՝
Կըգըրկէ՛ մի՛շտ՝ ու կըպատուի՛ն՝ ուրախութի՛ւն կ՝ընեն հոն...՝
Ինչպէս էրիկ ու կընիկ...,—
կատա՛ղ կ՝ընեն..., ու կըխօսի՛ն Իրար հետ...։
Եւ այդ Կըռա՛լ–Թագաւորի Տըղան՝ ծաղրով ի՞նչ կ՝ըսէ,—
— «Է՛յ, Համզա–Պահլաւա՛ն..., ի՞նչ մըտքի ես..., աղէ՞կ ես...»։
Ան ալ կ՝ըսէ, = «Փա՛ռք Աստըծու..., աղէ՛կ եմ...։
Այն ժամանակ որ Ան 1) Ի՛մս էր՝ ուրախացող ե՛ս էի...,
Աւօր Աստուած Քե՛զ է տըւեր՝ Դո՛ւն կըվայլես, կ՝ուրախ՛նաս...»։
Այդպէս մընա՛ց ժամանակ մ՝։—
Լուսուն կ՝երթան՝ եւ իրիկուն՝ Տո՛ւն կուգան։—

947. Համզա-Պահլաւանի Աղջիկը՝ Աւօրեցած՝ Մօրն Ու Հօրը Կ՝ղիմէ

Օր մ՝ ալ՝ Համզա–Պահլաւանի Աղջիկ մընաց անօթի...,
Գընաց Մօր քով՝ ըսաւ, — «Մարէ՛, քաղցե՛ր եմ...,
կըտոր մ՝ Հա՛ց տուր՝ ես ուտե՛մ...»։
Ի՞նչ ըսաւ Մայրը..., ըսաւ, — «Կորսուէ՛ ու հեռացի՛ր, փո՛ւճ Աղջիկ.
Գընա Քու Հօ՛րն ըսէ՝ Թող տայ..., Դուն ուտես...»։
Աղջիկն ելաւ դընաց Հօր մօտ՝ ըսաւ, — «Հա՛յր,

---

2) Հացհանովը՝ հարուած մը տուաւ։
1) Այսինքն՝ Փարիշաց–Խաբուն։

Գացի Մօրմէս Հա՛ց ուղեցի՝ Ան ալ Ինձի ա՛յս ըսաւ,—
«Գընա Քու Հօ՛րն ըսէ՝ Թող տայ, Դուն ուտես»··· 1),
Է՛, Դուն Ի՞նչպէս Հաց պիտի տաս՝ այդ տեղէն···»:
Հայրն ալ ըսաւ, = «Աղջիկ՛ս,–ըսաւ–, Քեզ մէկ բան մը որ ըսեմ···՝
Դուն Իմ խօսքը պիտի ընե՞ս···, ա՛յ Որդի՞·՞·՞»:
Ըսաւ, — «Ի՞նչ···, Հա՛յր···»:
= «Հօ՛ր–Աղջիկը···,–ըսաւ Ան ալ՝ ցած ձայնով–·
Արի՛ ելիր Թեւիս վըրա՛յ···, Իմ Թուրը հոն՝ Ախո՛ռն է···,
Դեռ ոչ–մէկը չէ՛ տեսեր··· ,
Իմ Թուր բեր տա՛կ···, Լարը կըտրէ՛ Իմ Ձեռքէն···,
Ես ելնեմ դո՛ւրս···՝ կո՛ւշտ Հա՛ց տամ Քեզ՝ Դուն ուտե՛ս···,
Երթաս խաղա՛ս Եղբօրդ հետ···»:
— «Ա՛հա՛···,–ըսաւ Աղջիկն ալ–, Ես ելնեմ Քո Թուրը տա՛մ···՝
Որ Դուն երթաս՝ Իմ խօրոտ Հայրն ըսպանե՞ս·՞·՞» 2):—
Ըսա՛ւ Աղջիկ՝ Թողո՛ւց Հայրը ու դընաց:—
Քառասո՛ւն մաո՝ Սանդուղէն որ կ՛իջնէր տա՛կ՝
Այնտեղ Համզա–Պահլաւանը Ի՞նչ ըսաւ,—
—«Օ՛ Տէր–Աստուա՛ծ, այս մէկ դի՛րն ալ՝ Դուն Ձիս չարչն ազատե՛ս»:
Հրեշտակ դարկաւ Աղջկան Գըլխուն՝ վա՛ր գըլորեց Սանդուղէն···,
Աղջիկն ինկաւ՝ գըլո՛ր–մըլոր գընաց տա՛կ···,
Իր Մարմինը կոտըրտուեցա՛ւ՝ չորս–կողմն եղաւ վիրաւո՛ր···,—
Մըտքէն ելա՛ւ Հօր խօսքը···:—

948. Աճօրութեան Կարգը՝ Ցոյժին Կուգայ Ու Հօր Լարերը Կ՛կտրէ

Մէկ–քանի օր ու ժամանա՛կ մ՛ ալ մընաց,
Տըղան՝ Դերվիկ՝ անօթեցա՛ւ, գընաց Մօրմէն Հա՛ց ուզեց,
Ըսաւ, — «Մարէ՛, Հա՛ց տուր՝ ուտենք· քաղցե՛ր ենք···»:
*= «Դէ՛ կորսըւէ՛···,–ըսաւ Մայրը–, Փորո՛վ վորձուի՛ս *), Քեզ [պէս Լա՛ճ···,*
Գընա Քու Հօր մօտէ՛ն ուղէ՝ Հա՛ց տայ Քեզ···,—

---

1) Խօսքի այս կրկնաւոր ձեւերը՝ որ մեր Վէպին մէջ կան, Իլիականի, Ողիսականի ու Ենէականի մէջ ալ կ՛տեսնենք ծայրէ ի ծայր:
2) Ակռէ ալ կ՛հետեւի՝ որ Համզա–Պահլաւան՝ դեղաղէմ մարդ չէ՛ր:
*) Փորով վորձուի՛ս, Անբուժելի վորացաւէ բռնուի՛ս:

Ինչպէս որ Քո Քո՛յրը եղաւ...՝ Դո՛ւն ալ կ'ըլլաս Անոր պէս...,
Կըլըմընաս՝ կ'ազատուի՛նք...» 1):
Տըղան եկաւ՝ գընաց Հօ՛ր մօտ՝ ու ըսաւ,—
— «Հայրի՛կ,—ըսաւ—, կընայիմ Քե՛զ՝ Իմ Սիրտ կ'այրի՛ կըվառուի՛,
Կ'երթամ Իմ Մո՛ր...՝ ու Հա՛ց կ'ուզեմ Իր մօտէն...՝
Կ'ըսէ՝ «Գընա Քու Հօր մօտէ՛ն ուզէ՝ տա՛յ...»:
Է՛...՝ որ կուզամ ես ալ Քենէ՛ Հաց ուզեմ...՝
Այդ Մորթ չորցեր՝ Քու Թեւերուդ վըրայ փակեր՝ կեցե՛ր է...»:
Ըսաւ, = «Տըղա՛յ, կորի՛ր,—ըսաւ—, ու Ե՛տ ընկնիր՝ Իմ Աչքէն...
Եռա՛նդ *) էր որ՝ ես Քու Ջըրոջ՝ խօ՛սք մ' ըսի...՝
Աստուած հազի՛ւ փըրկեց Զիս...,—
Ա՛լ այսօրը ես չե՛մ խլխեր՝ Քեզի ըսեմ..., — կըվախնա՛մ...»:
Տըղան ըսաւ, — «Հա՛յր, մի՛ վախնար, Ի՛նչ որ կ'ըսես՝ ըսէ՛ Ինձ...,
Հոգիս՝ Աստծո՛ւն ու Քեզ է...»:
= «Որդի՛,—ըսաւ կամաց ձայնով—, որ Դուն այդ կերպ Զաւա՛կ ես...՝
Արի եկիր՝ Թեւիս վըրա՛յ բարձրացիր...,
Ձեւս տուր Իմ Թո՛ւր, — Գըլխիս վերեւ՝ Աւի՛ւքն է,—
Բե՛ր ու կըտրէ՛ Իմ Լարերը..., [ա՛լ աւելի ցա՛ծ ձայնով],
Ելնեմ՝ կո՛ւչտ Հաց տամ Իմ Տըղուս՝ Թող ուտէ՛...,
Երթայ խաղա՛յ..., չըխօսի՛...»:
Տըղան այնտեղ ի՞նչ ըսաւ,—
— «Վա՛ւ կ'ըսես, Հա՛յր..., բայց այս քանի՛ ժամանակ է՝ որ այդպէս՝
Քեզ բըռներ են ու մըտցուցեր կապեր են այդ Մորթին մէ՛ջ...,
Քու Թեւերուն վըրայ չորցեր ու փակե՛ր է այդ Կաշին...,—
Ես Աստուծմէ կարողութիւն չ'ունի՛մ որ դամ այս պահուն՝
Ելնեմ Քու չոր Թեւերուն *) վրայ՝ Քո Թուր բըռնեմ՝ վա՛ր բերի՛մ...,
Քո Թեւերը կըցաւի՛ն...»:
Հայրը՝ Համզա-Պահլաւանն ալ՝ ի՞նչ ըսաւ,—
= «Որդի՛,—ըսաւ—, եկի՛ր, հրաման ե՛ս եմ տըւեր՝ Աստուծմէ...»:
Դէ՛, Տըղան ալ՝ Ձեռքեր թափեց՝ եկաւ Հօրը Թեւին վրա՛յ,
Թուրն առաւ վա՛ր՝ կըտրե՛ց Իր Հօր Լարերը...:—
Հայրն այդ Մորթէն քաշուեցաւ ու եկաւ դո՛ւրս,
Գացին նեռսը՝ Հա՛ց Ինկաւ Ձեռք՝ հոն կերա՛ն...,

---

1) Նոր էրկան սիրոյն մէջ՝ մայրական սիրոյ ամեն սրբութիւնը՝ տեղի տուած էր: *) Եռանդ, Անցած օր, քանի մ' օր առաջ:
*) Թեւ, Ուս:

Ալի՛ր ինկաւ Իրենց Ձեռքը՝ հոն կերա՛ն…,
Բրբի՛նճ ինկաւ Իրենց Ձեռքը՝ հոն կերա՛ն…,—
Ուսկի՛ք մը չըթողուցի՛ն Տանը մէջ…՝
Սըրբեցի՛ն ու կերա՛ն ամէն՝ տեղնիտեղ…,—
Ի՛նքը՝ Համզա–Պահլաւա՛ն ու Իր Տըղան…:—

949. Համզա-Պահլաւան՝ Քառասունին Վիզերը Կրկտէ

Զըրօյցն ո՞ւստ տանք, — Հօր մօտի՛ն,
— «Տըղա՛ս…,–ըսաւ–, Որդի՛, կ'ուրթաս կըխաղա՛ս…՝
Ականջէն՝ ո՛չ–մէկ Մարդու չըխօսի՛ս…»:
Նորէն ելաւ մըտաւ Իրեն Մորթին մէ՛ջ…,
Թուրը դըրաւ Իրեն կըշտի՛ն, ճըրագ ղըրաւ վեր՝–Գըլխո՛ւն,
Այնպէս մընա՛ց մինչեւ իր՝կուն՝ մուրճն ինկա՛ւ…:
Իր՝կուն՝ Դաշտէն որ եկան՝
Պառաւ Հացհա՛ն մ' ղարկաւ Համզա–Պահլաւանի Գըլուխի՛ն,
Գընաց Իր Տեղ նըստեցաւ·—
[Օր՝ մէ՛կ Հացհան կըղարնէ]:
Թագաւորի–լա՛ճն ալ եկաւ՝ մըտաւ նե՛րս,
Փարիչանը առաւ գըրկեց՝ պառկեցաւ,
Էրկան՝ Համզա–Պահլաւանի Աչքին դէ՛մ…:
Երբոր Առոնց Քունը տարաւ՝ քընացան,
Շուտ մը՝ Համզա–Պահլաւանը Մորթին մէջէն դո՛ւրս եկաւ,
Գընաց մըտաւ Քառասուն Մարդոց Սենեակները,
Քառասունին ալ Վիզը կըտրեց ու Թողուց,
Դարձաւ եկաւ՝ նորէն մըտաւ Տիկնի մէ՛ջ…:—

950. «Քառասուն-Ճճնդուկի Եւ Բազէի Երազը»…

*Կէս–Գիշերը կոտրեցա՛ւ *),*
Թագաւորի–լաճն արթընցա՛ւ՝ փարիչանի հետ մէկտեղ,
Կանչեց ըսաւ, — «Է՛հէ՛, Համզա–Պահլաւան,
Գիշերս Երազ մ' չե՞ս տեսեր…»:
Ան ալ թէ, = «Հա՛, Թագաւորի՛ Տըղայ,–ըսաւ–, դիտե՞ս ի՛նչ…,
Ասօր կ'ըլլայ քառասո՛ւն օր է՝ Դուն Ձիս այստեղ բըռնե՛ր ես…,

---

*) Կէս–գիշերը կոտրեցաւ, կէս–գիշերն անցնելէ յետոյ:

Իմ քուն չէ՛ր դար, չէի՛ կըրնար քընանալ... .
Աւօր՝ մէկ ժամ՝ իմ քուն տարաւ, ու երազ մ՛ալ տեսայ ես,—
*— «Քառասուն–Ձընճղուկ՝ թառած էին Թուփ մը չորիկ փուշի *) վրա՛յ,*
*«Բաշող *) մ՛ եկաւ՝ զարկաւ մէկ–դի՛ր՝ Քառասունի Վիզն ալ կըտրե՛ց,*
«Քառասուն–Ձընճղուկն ալ կերա՛ւ...» :»
— «Ա՛հա՛ն...,–ըսաւ Թազաւորի–Տըղան ալ–,
Այն ժամանակ ինչ ազա՛տ էր, դիտե՞ս Խաթո՛ւն–Փարիչան,
Որսի՛ կ՛երթար՝ Լոր–Ձընճըղո՛ւկ կ՛ըսպանէր...՝
Աւօր երա՛զն է տեսեր...» :
Պառաւ լըսե՛ց Վերի–Տեղէն՝ ու կանչեց,—
— «Թազաւորի Տըղա՛յ,–ըսաւ–, աւտ երազ չէ՛ի, Աչքըդ բա՛ց...,
Եվ ու դընա՛՝ Քու Սենեակնե՛ր նայէ մէյ մ՛... :—

951. Համզա–Պահլաւան՝ Թազաւորի Տղուն Վիզը Կըկտրէ Եւ Աւրիւնը Կ՛խմէ

Թազաւորի–Տըղան ելաւ՝ դընաց նայե՛ց Սենեակները...՝
Ի՛նչ տեսնէ..., — որ Մարմիններ Մարմինի քով դիզե՛ր են...,
Դիակները Դիակներու վըրայ դիզե՛ր...՝ Թոզե՛ր են...,—
Ան ալ՝ վախէն՝ Դիակներուն տա՛կը մըտաւ՝ պահուեցա՛ւ... :
Մընա՛ց..., Համզա–Պահլաւանը՝ Մորթին մէջէն եկաւ դո՛ւրս...,—
Պառաւ՝ վերէն՝ այս որ տեսաւ՝ ահէն Լեղուն կապուեցա՛ւ... :
Այնտեղ՝ Համզա–Պահլաւա՛ննէր, — դո՛ւրս վազեց՝
Գընաց՝ Կըռաւ–Թազաւորի Տըղան դըտա՛ւ՝ պահուած տե՛ղ,—
Դիակներուն մէջէն քաշեց՝ դո՛ւրս հանեց,
Բերաւ ա՛յնտեղ՝ ինչ ամեն օր՝ Փարիչանի հետ զըրկուած՝
Կըպահէին ու կ՛ընէին՝ Աչքին դէմ... :
Տա՛չտ մը բերաւ, Թազաւորի–Տըղուն Վիզը հոն կըտրե՛ց...,
*Արիւն ճէրեց *) Տաշտին մէ՛ջ...,*

---

*) Թուփ մը չորիկ փուշ, Զորնալու վրայ գտնուող՝ փուշի Թուփ մը: Զոր ու սուր փուշեր ունեցող Թուփ մը.— Ակնարկութիւն՝ իրեն Համզա–Պահլաւանին՝ որ չորցած Մորթի մէջ էր եւ իր կեանքի չորցած օրերուն մէջ կ՛գտնուէր, ու չոր եւ սուր փուշի ուժն ունէր դեռ: Եւ որուն վրայ՝ հանդիստ՝ Թառած էին այդ քառասուն Մարդերը: *) Բաշող, Բազէ: *) Ճէրել (Ծորել), Ծռելով հոսեցնել:

Դըրաւ Բևբնևն՝ ու խըմե՛ց…,—
Մարմևն տարաւ ջո՛կ տևղ հորևց, Գըլուխ թաղևց Շեմքևն տա՛կ 1):

958. Համզա-Պահլաւան՝ Պառաւն Օղը Կ'հանէ

Ապա Համզա–Պահլաւանը ի՞նչ ըրաւ.—
Կանչևց Պառա՛ւևն՝ ըսաւ, — «Մամի՛կ, ցա՛ծ արի…,
Ես չա՛տ ու շատ քաղցա՛ծ եմ… .
Դուն ամե՛ն օր կըտևսնէի՛ր թէ ես ինչքա՛ն կ'ուտէի…,—
Այօր՝ ահա քառասո՛ւն օր է՝ որ Ձիս այստեղ՝ բըռնե՛ր են…՝
Բա՛ն չե՛մ կևրեր, անօթի՛ եմ…, արի Հա՛ց բեր՝ ես ուտե՛մ… .
Նորէն Դուն իմ Մամի՛կն ես…,
Դուն վատուքի՛ն ըրիր ինձի՝ բայց ես նորէն լա՛ւ Մարդ եմ,
Իմ ևկո՛ւր, Հաց բեր՝ ուտե՛նք միասին…»:
Պառաւն իմաւ՝ եկաւ դընաց Ավիւրի եւ Հացի Տո՛ւն,
*Տեսաւ որ Թո՛ւ… *) բա՛ն մը չըկա՛յ…, ամեն կերե՛ր է արդէն,*
Դարձաւ եկաւ, ա՛լ Լեղուտով չըխօսե՛ց…,—
*Ձևռնո՛վ ըրաւ *) թէ՝ «Ուտելիք բա՛ն մը չըկայ…, չ'է՛ մնացեր…»:*
Ան ալ՝ Համզա–Պահլաւանը ի՞նչ ըրաւ,—
— Բըռնե՛ց Մամիկ՝ տարաւ Տանիս՝ այնտե՛ղն իսկ՝
Ինչ դ'ինք խաբեր՝ Անդան–Լարով կապե՛ր էր,—
Բևբնևն՝ վառո՛դ լեցուց Փորը… 1), Վարչն 2) կըրակ Թո՛ղ տըւաւ,
Անիկ այլևւս Աստուա՛ծ դիտէ՝ ո՞ւր գընա՛ց…:—

959. Համզա-Պահլաւան՝ Ագռաւիկը Ծեփացի Պէս կ'զարնէ Պատին

Անկէ՝ Համզա–Պահլաւանը՝ իմաւ չո՛ւտ մը՝ եկաւ Տո՛ւն,
Ըսաւ, — «Աղջի՛կ, Դռհա՛րիկ…, գընա Ինձի Ջո՛ւր մը բեր…»:
Աղջիկ վաղևց՝ Ջըրի–Աման վերցո՛ւց որ Ջո՛ւր տայ Իր Հօր՝
Միտքը ինկաւ այն խո՛սք որ Հօրն ըսե՛ր էր… 1),

---

1) *Իբր անարգանք, — տունէն անցնող–դարձողներուն ոտքին կոխան ըլլալու:*

*) Թո՛ւ, բնա՛ւ, երբե՛ք: *) Ձեռնով ընել, Նշանացի բացատրել:
1) *Պիտի հասկնանք որ՝ պատմող դիւղացին՝ վիպական ոստումով մը՝ վառոդի գիւտին կը հասցնէ իր հերոսը:* 2) *ՁՍ·1043՝ Ոռէն:*
1) *Տե՛ս Հատուած 947:*

Ջուր չըտըւա՛ւ Իրեն Հօր Ձեռ, վախցա՛ւ ու ե՛տ քաշուեցաւ...։
Հայրը ըսաւ, — «Արի՛,—ըսաւ—, Ի՛մ Աղջիկ...,
Ես Քու Հա՛յրդ եմ, Դուն ալ Իմին Աղջի՛կս ես...,
Ինչո՞ւ Ինձմէ կըվախնաս...»։
Աղջիկն եկաւ մօտահաս...՝
Հօր Ձեռն ինկաւ Իր Աղջկան Թեւերո՛ւն՝
Բըռնե՛ց Աղջիկ՝ վերցուց Թախո՛վ տըվեց Պա՛տ...,
Եղաւ Մեխան *)՝ մընաց այնպէս Պատնիվեր...։—
[Կուչ–Մեխան՝ ապա՝ Համզա–Պահլաւանէ՛ն է մնացեր...]։

954. Ցղաւ Զի՛բոդաւր Որ Մայրն Ալ Սպաննէ

Այն ժամանակ՝ ելա՛ւ Համզա–Պահլաւան՝
Թուրը քաշեց՝ որ Իր Կընիկին ըսպանէ(ր)՝
Տըղան ըսաւ, — «Հա՛յր, ինձ չնորհէ, մի՛ ըսպաններ Իմ Մայրը,—
Ան Քեզ չըսա՞ւ՝ «Թող մի՛ տար որ այդ Պառաւը նե՛րս մընէ,
Մեր Դըղուխը այդ Պառաւէ՛ն պիտի ցաւի ուշ–կանուխ...»։—
Պառաւն իւ՛նչպէս՝ Քեզ չուտ խաբեց, Դուն Թող տըւիր՝ եկաւ նե՛րս,
Որ եկաւ ներս՝ Ան ալ խաբե՛ց Իմ Մայրը...,—
Դէ՛, Կընի՛կ էր..., այդպէս բաներ ալ եղա՞ն... .
Մի՛ ըսպաններ Իմ Մայրը...,—
Ելիր ա՛ռ Ձիս՝ ու դո՛ւրս էլնենք այս Տունէն,
Երթանք Քու Հօր Հայրենական Երկիրը·
Դուռը չինէ՛ *) Իմ Մօր վըրայ, Բանլիքներն ա՛ռ՝ ու երթա՛նք·
Իմ Մայրը Թող այստեղ կենա՛յ..., մի՛ ըսպաններ Իմ Մայրը...»։
Հայրն ալ լըսե՛ց Իր Տըղուն,—
= «Տըղա՛յ,–ըսաւ–, լոկ Քո՛ սիրոյն՝ այդ տեսակ ալ Թող ըլլայ...,
Չե՛մ ըսպաններ Քո Մայրը... —
Շաբաթ մը դ'Ինձ հո՛ս կըԹո՛ղուն՝ կընայի՛նք,
Տեսնենք Ատիկ ի՞նչ կ'ընէ...»։
Ելան՝ Մայրը — այդ Փարիչան —՝ Թողին այնտե՛ղ, Բերդին մէ՛ջ,
Դուռ–Դարպասներ ամո՛ւր–ամուր գոցեցի՛ն...,
Հայր ու Տըղայ՝ ելան գացին Սար՝ Որսի՛։—

---

*) Մեխան, Գիւղերու մէջ՝ կուչէ չաղախուած ու պատերուն փակցուելով՝ արեւին չորցուած բլիթ(ներ), իբր վառելիք։

*) Շինել, Գոցել, փակել։

Առաւօն կ'երթան՝ եւ իրիկուն Տ՛ուն կուգան,
Բերդին մէջը՝ առանձին տեղ՝ Հայր ու Տըղայ միասին՝
Կ'ուտեն, կ'խըմեն, կըպատրիկին։—

955. Գանկին Վրայ՝ Ողբ...

Եօթ–ութ օր մը որ անցաւ՝
Առաւօտ մը՝ Հայրը 1) ելաւ...՝ որ մէկ լացի ձա՛յն կուգայ...։—
Գընաց նայե՛ց Պատուհանէն, ի՛նչ տեսնէ...,—
Դէրնիկի Մայր՝ Փարիչան՝
Թագաւորի–Տըղուն Գլուխ՝ Շեմքին տակէն հանե՛ր է...,
*Աչքեր դեղե՛ր *), օրինաւո՛ր մ՝ զարդարե՛ր է՝ դըրեր Գո՛գ...,*
Նըստեր՝ Ամոր դո՛վքը կ'ընէ՝ մէկ ձայնով...,—

— «Այն Սուրը՛ որ՝ Քեզի՛ Հաշեցի՛ն...՝ Հաշէին Համզա–
[Պահլաւանի՛ն, Դե՛րնիկի՛ն...
Այն Թուրը՛ որ՝ Քեզի՛ տըւի՛ն... *)՝ տային Համզա–
[Պահլաւանի՛ն, Դե՛րնիկի՛ն...
Այն Գերեզմա՛ն՝ ինչ Քե՛զ կապեցի՛ն...՝ կապէին Համզա–
[Պահլաւանի՛ն, Դե՛րնիկի՛ն...» 2)։

Այս որ լսե՛ց՝ այնտեղ՝ Համզա–Պահլաւան՝
Ա՛լ չըդընա՛ց Սար՝ Որսի,—
Դարձաւ գընաց Տըղուն ըսաւ, — «Դէրնի՛կ, Որդի՛, եկուր տե՛ս...,—
Մայրըդ ի՛նչ լաւ Գովքե՛ր կ'ընէ...՝ Քեզ համար...»։
Տըղան ելաւ՝ Իրեն Հօր հետ գացին Երդիք՝ նայեցա՛ն,—
Հայրը ի՛նչպէս որ տեսե՛ր էր ու լըսեր՝
Այնպէս՝ Տըղան ալ նայեցա՛ւ ու լսե՛ց.—

— «Այն Սուրն ինչ Քե՛զի՛ Հաշեցի՛ն...՝ Հաշէին Համզա–
[Պահլաւանի՛ն, Դե՛րնիկի՛ն...
Այն Թուրը՛ որ՝ Քեզի՛ տըւի՛ն...՝ տային Համզա–
[Պահլաւանի՛ն, Դե՛րնիկի՛ն...

---

1) Ա·63՝ Քեռի–Թորոս (*պատուհին բերումովը*)։ *) Դեղել, Ծարուրել։ *) Տըւին, Զարկին։ 2) *Եղանակը՝ իմ գրի առած Վասպուրականի ժողովրդական երգերէն՝* «Զըրեր Կամի Խաղ»ին *նըմանի,* — «*Առաւօտուն՝ աղօթըրնին, վա՛խ, իրիկուն՝ կէս–գիշերին, ա՛յ–ա՛յ...*»։

Այն Գերեզմա՛ն ինչ Քե՛զ կապեցի՛ն... *) կապէին Համզա-
[Պահլաւանի՛ն, Դե՛րնիկի՛ն...»:

Որ նե՛րս մըտան...՝ այդ Փարիչան ի՞նչ ըրաւ.—
*Թագաւորի-Տըղուն Գըլուխ պահեց Իրեն Ադու *) տա՛կ...:*
Տըղան ըսաւ, — «Մարէ՛, վե՛ր ել՝ Զո՛ւր մը տուր...»:
Ըրա՛ւ որ Քէ Ոտքի՛ ելնէ ու կանգնի...՝
*Թագաւորի-Տըղուն Գանկը՝ Թըրը՛խկալով *)՝ ինկաւ վա՛ր...:*
— «Մարէ՛,—ըսաւ—, այդ ի՞նչ է որ՝ Ադուդ տակէն վա՛ր ինկաւ...»:
= «Ոչի՛նչ..., Որդի՛...,—ըսաւ Մայրը՝ Փարիչան-.
Այդ Շան-Գլո՛ւխն էր..., կատուները Հողին մէջէն հանե՛ր են...,
Ես ուզեցի որ տանէի ու Թաղէի Հողին մէ՛ջ...,—
Ամօթանքէս...՝ Ադիւս տա՛կ պահեցի...,
Ըսի՝ «Թող այդ Շան-Գըլուխը չըտեսնե՛ն»...»:
— «Ապա այն ի՞նչ Գովասա՛նք էր որ կ'ընէիր Մեզ համար...,—
Թէ՝ «Այն Սո՛ւրը..., եւ այն Թո՛ւրն ու Գերեզմա՛ն...».—
Ըսա՛ւ Դերնիկ, քաչե՛ց Դանակն՝ ու հասաւ՝
Զարկաւ կըտրե՛ց իր անարժան Մօր Գլուխն...,
Դիակ տարան Թաղեցին... 3):—

956. Համզա-Պահլաւան Ու Դերճիկ՝ Սասուն Կ'դառնան

Հայր ու Տըղայ՝ ալ չըկեցա՛ն այդ տեղեր...,—
Ձամբան դէպի Արեւելայ-Քաղա՛քն ըրին ու դացի՛ն.
Գացին հասան Թագաւորի՛ն, Թագուհո՛ւն:
Անոնք տեսա՛ն Իրենց Տըղան՝ կըտրի՛ճ Համզա-Պահլաւան.
Տեսան Իրենց կըտրի՛ճ Թօռը, — Դերենիկ,
Ուրախացա՛ն ու խընդացի՛ն, Հարսնի՛ս ըրին՝ նոր-նորէն,
Եօ՛թը գիշեր ու եօ՛թ օր ալ Մաղ-ու-Հարսնի՛ս դըրին հոն,
Տըղան նորէն պըսակեցին ու պըրծա՛ն:—
Արեւելայ-Թագաւորը հասաւ Իրեն փոխանքին...,
Դուք ալ հասնիք Ձեր փոխանքին ու փառքին...:
— Զը՛մէ՛ն...:

---

*) Գերեզման կապել, Դամբան յարդարել: *) Ագի, Քղանց, փէշ: *) Թրխկալով, Թըը՛խկ ձայն հանելով: 3) Մօր եւ զաւկի այս ցաւագին կտորը՝ կ'պատմուի չատ մը հէքիաթներու մէջ:

Ա. ՍԱՍՈՒՆԱԿԱՆԻ ՆԻՒԹԵՐՈՒՆ ՑԱՆԿԸ

Էջ

Ա. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄՇՈՒՇԻՆ 5

Բ. ԾՈՐԴՈՐԱԿ 7

Գ. ԾԱՌԱՋԱԲԱՆ, Հայ ժող. Դցզնվպ., *Տարբ, Աճն ու կեանքը* 15
1. Ազգային Դիւցազնավէպ. — 2. Շարոյը. — 3. — Փոփոխակներուն Թագուհին. — 4. Մատենագրական Փոփոխակ. — 5. Մեր Վէպին Ակնարկութիւնը. — 6. Մեր Ազգային Իտէալը՝ Վէպին Մէջ Ցոլացած. — 7. Վեհանձնութեան Դիծը՝ Վէպին մէջ. — 8. Վէպին Գրական-Գեղարուեստական Արժէքը. — 9. Հազարամեակի Տօնը. — 9ա. Փոքրիկ Փակագիծ մը. — 10. Կեդրոնական Սեւեռուն Նպատակս. — 11. ՍԱՍՈՒՆԱԿԱՆԻՍ Խմբագրումը. — 12. Խմբագրական Մանրամասնութիւններ՝ Ա.–Լ.

Դ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՒՑԱԶՆԱՎԷՊԻՆ ՓՈՓՈԽԱԿՆԵՐԸ 62
(Իրենց Գրի Առնուելու եւ Տպագրումի Թուականներովը, Պատմող Գիւղացիներուն ու Գրի Առնողներուն Յիշատակութեամբ), *Թիւ* 1–35:

Ե. ՄԵՐ ԴԻՒՑԱԶՆԱՎԷՊԻՆ ՊԱՏՄՈՂՆԵՐԸ, *Թիւ* 1–38 66

Զ. ՄԵՐ ԴԻՒՑԱԶՆԱՎԷՊԻՆ ԳՐԻ ԱՌՆՈՂՆԵՐԸ, *Թիւ* 1–18 67

Է. ՍԱՍՈՒՆԱԿԱՆԻՍ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ, *Թիւ* 1–35 68

Ը. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՒՑԱԶՆԱՎԷՊԸ՝ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՆ [ԿԱՐԳՈՎ 70
(1. Այբենական ցանկ. — 2–4. Թուական ցանկ. — 5. Լեզուական Արժէքով).

Թ. ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, 1–2 71

1.— ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝ Ա. *Ճիւղին, Սանասար-Բաղդասարի Առաջին Ճիւղ, ՍԱՆԱՍԱՐ-ԲԱՂԴԱՍԱՐ* 72 73
Ա. Հայրենի Հողէն Դուրս, Ա–Ը, Հատուած 1–92.
Բ. Հայրենի Հողին Վրայ, Թ–ԻԴ, Հատուած 93–190.

2.— ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝ *Երկրորդ Ճիւղին, Առիւծ-Մըհէրի Երկրորդ Ճիւղ, ԱՌԻՒԾ-ՄԸՀԷՐ*, Ա–Զ, Հատուած 191–236. 296

3.— ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝ *Երրորդ Ճիւղին, Դաւիթ-Մըհէրի Երրորդ Ճիւղ, ԴԱՒԻԹ-ՄԸՀԷՐ*, Ա–Ե, Հատուած 237–269. 343

էջ
4.— ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝ Զօրբորդ ձիւղին, Թըլոլ–Դաւիթի Զօրբորդ ձիւղ, ԹԸԼՈԼ–ԴԱՒԻԹ,
Ա. Մաս, Օտարութեան մէջ, Ա–Զ, Հատ. 270–354
Բ. Մաս, Հայրենիքին մէջ, Է–ԺԸ, Հատ. 355–711
Գ. Մաս, Ամուսնացած, ԺԹ–ԻԳ, Հատուած 712–822 376
5.— ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝ Հինգերորդ ձիւղին, Գոտիկ–Մըհէրի Հինգերորդ ձիւղ, ԳՕՏԻԿ–ՄԸՀԷՐ, Ա–Դ, Հատ. 823–892 1029
6.— ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝ Վեցերորդ ձիւղին, Գրն.–Տ.–Նբսպ. Վեցերորդ ձիւղ, ԳԱՐՈՆ–ՏԷՐ–ՆԵՐՍԷՍ, (ԱԲԼԱՂ ու ԻՇ–ԽԱՆ, ՈՐԲԻԿ–ԳԱՐՄԱՆ), Ա–Գ, Հատուած 893–921. 1098
7.— ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝ Եօթերորդ ձիւղին, Համդա–[Գահլաւանի Եօթերորդ ձիւղ, ՀԱՄԶԱ–ԳԱՀԼԱՒԱՆ, (ԴԵՐՆԻԿ), Ա–Գ, Հատուած 922–956. 1124
Ժ. (Այս ցանկը) 1155–1156
ԺԱ. ԵՐԳՈՎ ՀԱՏՈՒԱԾՆԵՐԸ 1156
ԺԲ. ՄԱՏԵՆԱԳԱՆԿ 1157–1160
ԺԳ. ՏՊԱԳՐԱԿԱՆ ՎՐԻՊԱԿՆԵՐՆ ՈՒ ԳԱՒԵԼՈՒՄՆԵՐԸ 1161–1164
ԺԴ. ԺՄՆԱԿԷՏԻՆ, ԱՒԱՐՏԱԿԱՆ ԳԱՐՏԻ ՄԸ 1165
— «Հայագիտում» Հրատարակչականը 1165–1168

ԺԱ. ԵՐԳՈՎ ՀԱՏՈՒԱԾՆԵՐԸ

Գ7, 9ա., 11, — Հատուած՝ 1, 95, 120, 134, 171, 172, 182, 190, 191, 236, 237, 246, 253, 262, 270, 281, 354 (*Մբսրամէլիքի երազը*), 385, 400, 405, 407, 421, 437–39, 441, 442, 445–49, 453, 456, 457, 466–69, 471, 473, 487, 497, 498, 515, 516, 520, 524, 525, 527, 528, 530, 531, 533, 536, 545, 546, 551, 553, 556, 558, 567, 576 (*Զ.–Օհանի Ափսոսները*), 578, 582, 597, 600–605, 607, 611, 627, 628, 641, 642, 650, 656, 680, 689, 723, 724, 729, 731, 742, 749, 776, 800, 807, 808, 811, 823, 824, 832, 833, 835, 858, 859, 875, 882–84, 901, 931, 955 (*Ընդամէն՝ 119 երգ՝ ՍԱՍՈՒՆԱԿԱՆի Բնագրին մէջ*):

☛ *ԱՆՈՒՆԱԳԱՆԿ, ԵՐԳԵՐՈՒՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ, ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԳԱՆԿԸ., ՔԱՐՏԷՍՆԵՐ, եւն., եւն.՝ Բ. Հատորին հետ:*

ԺԲ. ՄԱՏԵՆԱԳԻՏԱՐԱՆ

[Ծաւալաբանական Դ. Գլուխին մէջ, երես 62–65, մանրամասնօրէն յիշուած 35 Աղբիւրներէն, եւ լրագրական անհամար էջերէ զատ՝ ՍԱՄՈՒՆԱԿԱՆի Ա. եւ Բ. Հատորներուն կազմուտրման ընթացքին՝ նկատի առնուած գիրքերէն կարեւորները։]

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԵՐ, Չիթունի, ձեռագիր, Տեառ Ա–ԻԶ եւ հազարաւոր թերթիկներ (fiches), 3–4000 *էջ։*
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ, Ե. Լալայեան, Ա–Ի Գիրքեր, 1896–1910, Թիֆլիս։
ԱՆԱՀԻՏ Ամագր., Ա. Զօպանեան, 1898–1935, Փարիզ։
ԱՆՑԱՑԵ ԴԱԻԱՌՆԵՐ ՀԻՆ ՀԱՑԱՍՏԱՆԻ, Մեսրոպ Կանայեանց, 1914, Էջմիածին, 184 էջ։
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՑԱՍՏԱՆԻ, Ցուհ. Մեղմուելի, 1914, Մարզպետական, 112 էջ։
ԱՍԻԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՀԱՑՐԵՆԻՍ, Պետ. Ծ. Վ. Կալհոկեցի, 1881, Կ. Պոլիս, 150 էջ։
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ Հին եւ Նոր Կտակրն. աշխրբր. 1914 Պլ., 1268 էջ։
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽԱՂԱՇԽԱՐՀ, Չիթունի, Ա. եւ Բ. Հատոր, 1919, Կ. Պոլիս, 384 էջ։
ԲԱԶՄԱՎԷՊ Ամսագիր, Վենետիկ, բազմաթիւ մասեր։
ԲԻՒԶԱՆԴԻ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՆԵՐԸ, Հ. Ն. Անդրիկեան, 1904, Վենետիկ, 164 էջ։
ԲԻՒՐ ԱԿ, ՀԱԶԱՐ ԱԿ, Չիթունի, 1941, Փարիզ, 231 էջ։
ԲԻՒՐԱԿՆ, Ազգագր. Շրթթրթ., Մ. Դաւթեան, Պլս. 1897, 1898, 1899։
ԲՈՒԼԱՆԸԼ կամ ՀԱՐՒԱՌ ԴԱԻԱՌ, Բենսէ, Ազգ. Հանդէս Ե.։
ԳԻՇԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ ԼՈՒՍԱԲԱՑ, Կ. Սիամանթօ, 1931 Ֆլորիդա., 168 էջ։
ԳԻՐՔ ՎԱՍՏԱԿՈՑ (Géoponiques), 1877, *Վենետիկ, 263 էջ։*
ԳՈՒՍԱՆԵՐԳԵՐ, Կ. Սիամանթօ, 1919, Նիւ–Եորք, 123 էջ։
ԳՐՈՑ ԲՐՈՑ, Գ. Վ. Սրուանձտեան, 1874, Կ. Պոլիս, 184 էջ։
ԴԱՍԱՐԱՆ ՀԱՑԿԱՁՆ ՄԱՆԿԱՆՑ, Ճանիկ Արամեան, 1860 Փրզ. 228 էջ։
ԵՂԵ ԱՂԱՆԴՈՑ, ԵՋՆԻԿԻ, 1926, Վենետիկ, Գ. տիպ, 359 էջ։
ԵՒՍԵԲԻՈՍԻ ՔՐՈՆԻԿՈՆ, Ա. եւ Բ., ... ։
ԶԵՆՈԲ ԳԼԱԿ, Փրոֆ. Գր. Խալաթեանց, 1893, Վիեննա, 78 էջ։
ԷՄԻՆԵԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ, 1901–1911, Մոսկվա–Վաղարշապատ, Ա–Թ. Հատոր։
ԹՈՐՈՄ ԱՂԲԱՐ, Բ. Հատոր, Գ. Վ. Սրուանձտ., 1884, Կ. Պոլիս, 488 էջ։
ԻՐԱՆԻ ՀԵՐՈՄՆԵՐ ՀԱՑ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ, Բ. Խլբ. 1901 Փրզ. 79 էջ։
ԼԻՑԼԻ–ՄԷՋՐՈՒՄ, Չիթունի, 1911 Մրզն., 1922 Վիեննա, 1941 Փրզ.։
ԾՐԱԳԻՐ ՀԱՑ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ, Գր. Խլբից., 1887 Մոսկվ., 115 էջ։
ԿԱՐՆԱՄԱԿ, Ե. Թլրեաքեան, 1907 Փարիզ, 137 էջ։
ՀԱԶԱՐՈՒՄԷԿ ԳԻՇԵՐՆԵՐ, Արաբական Վէպեր, Թարգմանութիւն։

ՀԱՄՈՎ–ՀՈՏՈՎ, Գ. Վ. *Սրուանձտեան*, 1884 Կ. Պոլիս, 384 էջ։
ՀԱՑԱՍՏԱՆ (Armenia Travels and Studies), *Լինչ, Թարգմ.՝ Լ. Լաբենց, Բ. Հատոր*, Կ. Պոլիս, 376 էջ։
ՀԱՑԱՍՏԱՆԻ ՄԷՋԸՆ, Հօֆմայսթըր, Թրդ.՝ Ետան, 1913 Պլ., 300 էջ։
ՀԱՑ ԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ՝ ՍԵՒ ԾՈՎԸՆ ՄԻՆՉԵՒ ԿԱՐԻՆ, Հ. Յակոբոս Տաչեան, 1921 Վիեննա, 84 էջ։
ՀԱՑ–ԲՈՒՍԱՆ, Չիթունի, սեւադիր վիճակի մէջ, Herbier-ով։
ՀԱՑ ԺՂՎ. ԴՅՋՆՎՊ., Բ. *Խլբենց.*, 1903 Վիեննա, 67 էջ։
ՀԱՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԻՊԸ, Մ. Աբեղեան, Ազգգր. Հնդս. 1906–1908, *Գիրք ԺԹ–ԺԸ*, 207 էջ։
ՀԱՑԿԱԿԱՆ ՏԱՂԱՁԱՓՈՒԹԻՒՆ, Տք. Յ. Թրեքեն., Ն–եորք, 102 էջ։
ՀԱՑ ՄՇԱԿՈՑԹ ՕՐԸ, 1932 *Փարիզ*, 155 էջ։
ՀԱՑՈՑ ԲԱՌ ՈՒ ԲԱՆ, Սհկ. Վ. Ամատունի, 1912 Վաղչպտ., 707 էջ։
ՀԱՑՈՑ ՀՊՆՍԿՆ. ԿՐՆ., Կ. Կոստանեանց, 1879 Վաղչպտ., 37 էջ։

Հայ Պատմիչներէն՝

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, 1709 Պոլիս եւ 1930 Վենետիկ, Գ. տպ., 672 էջ։
ԱՌԱՔԵԼ ԴԱՒՐԻԺԵՑԻ, 1669 *Ամսթերտամ*։
ԵՂԻՇԷԻ ՊՏՄ. ՎԱՐԴԱՆԱՆՑ, 1764 եւ 1871 Կ. Պոլիս, 130 էջ։
ԿԻՐԱԿՈՍ ՎՐԴ. ԳԱՆՁԱԿԵՑԻ, 1865 Վենետիկ, 265 էջ։
ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ ԹԱԹԱՐԱՑ, 1842 Վենետիկ, 90 էջ։
ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, ...։
ՄԱՂԱԿԻԱ ԱԲԵՂԱՑ, 1870 *Մ. Պորբրդ.*։
ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, 1827 Վենետիկ, 632 էջ։
ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՑԵՑԻ, ...։
ՅՈՎՀ. ԵՊՍԿ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, 1719 Պլ., ...։
ՊՏՄ. ԱՐԻՍՏԿՍ. Վ. ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻՈՑ, 1901 Վնակ. Բ. տպ. 144 էջ։
ՊՏՄ. ՏԱՆՆ ԱՐԵՐՈՒՆԵԱՑ, Թուխմա Աբեղեանի, ... ։
ՊՏՄ. ՏԱՐՕՆՈՑ, Չէնոբ Գլակ, Բ. տպ. 1719 Պլ. և 1889 Վնկ. 68 էջ։
ՊՏՄ. ՎԱՐԴԱՆԱՑ ՎՐԴՊՏԻ. (Աբրահակն), 1862 Վենետիկ, 184 էջ։
ՓԱՒՍՏՈՍԻ ԲԻԶԱՆԴԱՑԻՈՑ՝ Պտմ. Հյց., 1730 Պլ. եւ Գ. տպ. 1914 Վենետիկ, 360 էջ։

Հայոց Պատմութեան Գիրքերէն՝

ԴԱՍԸՆԹԱՑ ՀՑՑ. ՄՏՆԳՐՔՆ., Բ. տպ. (*Վիմատիպ, Մտ. Մալխասեանց*, 1908 Թիֆլիս, 286 էջ։
ՄՈՎՍ. ԽՈՐՑՈՒ. ՀՑԿ. ՊՏՄ.՝ ԱՇԽՐՔՐ., Խ. Ե. Վ. *Ստեփանէ*, 1889 *Պորբրդ.*։
ՋԱՄՋԵԱՆԻ ՀԱՑՈՑ ՊԱՏՄՔՆ. Ա. Բ. Գ. Հատորները, 1876 Վենետիկ։
ՊՏԿՐՋՐԴ. ՀԱՑՈՑ ՊՏՄՔՆ. (Մ. Պլանեն.), 1911 Պլ., 523 էջ։
ՊՏՄ. ՀԱՑ ԼԵԶՒԻ ԵՒ ԲՆՀՄՔԵՆ., Գ. Օզնեն., 1913 *Մրզն.*, 367 էջ։
ՀԱՑՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ, Խրն. Խրիմեան, 1883 Վան, 267 էջ,

ՀԱԳՐԵՆԻԿ՝ Ամագր. եւ Օրթրթ., Պոսթըն, բազմաթիւ յօդուածներ:
ՀԱՆԴԻՍ ԱՄՍՕՐԵԱՑ, Վիեննա, բազմաթիւ դրուածքներ:
ՀԱՆԳԵՐ՝ Հայաստանի, Փոքր-Ասիոյ եւ Կիլիկիոյ, Ցակոբ Խարա-ճեան, 1919 Նիւ-Եորք, 80 էջ:
ՀԵՏԱՋՕՏՈՒԹԻԻՆ ՀԱՑ ԴԻՑԱԲԱՆՈՒԹԵԱՆ, Հենրիկոս Գելզեր, Թրգմ.՝ Հ. Ցոլհ. Թորոսեան, 1897 Վենետիկ, 136 էջ:
ՀԻՆ ՀԱԻԱՏՔ կամ ՀԲՆԱ. Կրնք. Հյց., Ալիշան, Բ. տպ. 1910 Վենետիկ 560 էջ:
ՀՆԱՒՕՍՈՒԹԻՒՆ ՀՑՍՏՆԻ., Հ. Մնձ. Քաջունի, 1855 Վնտ., 303 էջ:
ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ԲԱԲԵԼՈՆ՝ ԸՆԴ ՀԱՑԱՍՏԱՆ, Բարսեղ Պէյ Ծէրուխան, 1876 Ամասիա Վանք, 260 էջ:
ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՀԱՑԱՍՏԱՆ՝ Մ. ՎԱԿՆԷՐԻ, Հ. Փիլիպպոս Ջամճեան, 1851 Վիեննա, 218 էջ:
ՄԱՑՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ, Զէյթունի, 1913 Պլս., 144 էջ:
ՄԱՆԱՆԱՑ, Գ. Վ. Սրուանձտեան, 1876 Պլս., 457 էջ:
ՄՇԱԿՈՒԿԱՆՔ, Վէրդիկլեոս, Թրգ. Հ. Աբգէն Բզդունի. 1847 Վնտ. 49 էջ:
ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ ԵՒ ՀԻՆ ՀԱՑԿԱԿԱՆ ՎԷՊ, Մ. Էմին, Թրգմ. Խաչատուր Ցովհաննէսեանց, 1887 Թիֆլիս, 71 էջ:
ՅԷՐԱՆ-ԹՈՒՐԱՆ, Զէյթունի, ձեռագիր Ե+218 էջ:
ՅՈՒՇԻԿՔ ՀԱՑԱՍՏԱՆԻ, Զէյթունի, 1919 Պոլիս, 88 էջ:
ՅՈՒՇԻԿՔ ՀԱՑԵՐԵՆԵԱՑ ՀԱՑՈՑ, Ալիշան, 1869 Վենետիկ, 537 էջ:
ՆԻԲԵԼՈՒՆԳՆԵՐՈՒՆ ԵՐԳԸ (Das Nibelungenlied), Թրգմ. Հ. Աբգէն Ղազիկեան, 1925 Վենետիկ, 463 էջ:
ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՑԱՍՐՆԱԿ ԳԱՒԱՌՍ, Մ. Մխիթարեան, Ա. Բ. Գ. Հտր., 1885 Կ. Պոլիս:
ՇԱՀՆԱՄԱԿ, Ֆէրդուսի, Թրգ. Յ. Թլորեանքեան, 1909 Ն.-Երք. 82 էջ:
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ, Մեսրոպ Ս. Թաղիադեանց, 1841 Կալկաթա, 238 էջ:
ՊՏՄ. ՊԱՇՏԱՄԱՆՑ եւն., Խրն. եպ. Մխիթարեն., 1890 Պլս., 160 էջ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊՂՆՋԻ ԴԱՂԱՒԻՆ Որ է Օրինակ Աչխարհին, 1835 ? Թերթաթափ 3–174 էջ:
ՊՂՆՋԻ ԴԱՂԱՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Զէյթունի, 1919 Կ. Պոլիս, 64 էջ:
ՋՈՋԱՆՑ ՏԱՆ ՄԱՄՄԱՑ ԾՌԵՐ (Պատմականը), Ս. Կանայեանց, 1907 Վաղարշապատ, 50 էջ:
ՌՈՍՏԱՄ-ԶԱԼ, Ժղվր. Վպ., Գ. Վ. Ցոլսէփեան, 1905 Թֆլս., 39 էջ:
ՍԱՄՈՒՆ, Քալանթար, ... :
ՍԱՄՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ, Սէրաս, Հյրնիֆ. Օրթ., 1939 Օդ., Թերթօն 1–12:
ՍԱՄՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ ԴԻՑԱԶՆԱՎԻՊՔ՝ ԲԵԻԵՌԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԼՋ, ՆԱԵՒ ՀԱՑՈՑ ԽԻԿԱՐ ԻՄԱՍՏՈՒՆՔ, Տքթ. Ասատուր Ցակոբեան, Հայրենիք Օրաթերթ Պոսթըն, 1939 Հոկտ.–Նոյեմ.՝ Թերթօն 1–38:

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ ԵՒ ՄՀԵՐԻ ԴՈՒՌ, փրֆ. Գ. Պատկանեան, 1875 ? *Մոսկվ.–Պարբրդ.* ? *Թերթաթափ* 12+62 էջ։
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԸ, Ցոլհ. Թումանեան, 1904 Թիֆլիս, 40 էջ։
ՍԻՄՈՒԱՆ, Ալիշան, 1885 Վենետիկ, 592 էջ։
ՎԱՆԲԱՐԲԱՌ կամ Գաւառիկ բառարան, Վանայ եւ Բարձր Հայոց, Զէյթունի, Ժեռադիր 1585 *մեծ* էջ, պատկերազարդ։
ՎԱՐԱԳԱՑ ՅՈՒՐԵԼԵԱՆ, Ցիչատակարան եւ Կոչ, 1910 Պլս., պատկերազարդ, *մեծադիր* 30 էջ։
ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՑՈՑ ՄԵԾԱՑ, Ալիշան, 1855 Վենետիկ, 105 էջ։
ՏԷՄՍԻՄ, Անդրանիկ, 1900 Թիֆլիս, 287 էջ։
ՓՇՐԱՆԿՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆԻՑ, Գ. Սարկաւագ Ցովսէփեան, 1893 Թիֆլիս, 139 էջ։
ՖԷՐԴՈՎՍԻՆ ԵՒ ԻՐ ՇԱՀՆԱՄԷՆ, Ռ. Աբրահամեան, 1934 Թիֆլիս, 160 էջ։
ՖԻՐԴՈՒՍԻ, Մ. Աբեղեան, Կ. Մկը. Օհանջանեան, Երեւան, 1934։
ՖԻՐԴՈՒՍԻ ԹՈՒՍԻ ԵՒ ԻՐ ՇԱՀՆԱՄԷՆ, Ա. Կոթիկեան, 1935 Փարիզ, 60 էջ։

ՖՐԱՆՍԵՐԷՆՈՎ

ARMÉNIE, Kurdistan et Mésopotamie, Le Cte de Cholet, 1892 Paris 394 pages.
ARMÉNIENS (Les), Prof. R. Khéroumian, 1941 Paris, 127+24 pg.
BUCOLIQUES, Emile Pessonneaux, 1865 Paris, 68 pg.
CHANSON DE ROLAND (La), Poème de Théroulède, 1926 Paris 314 pg.
Bibliogr. des Chanson de Geste, L. Gautier, 1897 Paris 316 pg.
Les Légendes Epiques, Jos. Bédier, 1921 Paris.
Les Romans de Nos Aïeux, Albert Meyrac, 1910 Paris, 284 p.
Nos Vieilles Epopées, Jl. Arnoux, 1905 Paris, 294 p.
Romances Populaires de la France, 1904 Paris? 522 p.
CHRONICA, Antonin archiepis. de Florentin, Bibl. Nat. Nº G 1777, Tome III, Chp. XX, Prgr. IX.
CHRONOLOGIE DE L'HISTOIRE D'ARMÉNIE, K. J. Basmadjian, 1915 Paris, 31 p.
ENÉIDE, Emile Pessonneaux, 1865 Paris, 213-394 p.
GÉORGIQUES, Emile Pessonneaux, 1865 Paris 69-210 p.
HIST. DES ANCIENS ARMÉNIENS, Noel Dolens et A. Khatch (*Աստուածաշունչ Պատմութեան*), 1907 Genève. 226 p.
HIST. DU PEUPLE ARMÉNIEN, Jacques de Morgan, 1923? Paris 410 p.

HIST. MODERNE DES ARMÉNIENS, K. J. Basm., 1917 Paris, 174 p.
HIST. SAINTE, Anc et Nv., 1924 Bruxelles, 224 p.
ILIADE, Homère, 1929 Paris, Flamrn., 354 p.
MIRÉIO (Mireille), Fr. Mistral, provençal et traduction vis-à-vis, 1924 Paris, 511 p.
ODYSSÉE, Homère, M. Dufour et J. Raison, 1935 Paris, 407 p.
REVUE DES ETUDES ARMÉNIENNES, 1920 1921 1922-23, Paris.
RIG-VEDA (Quarante Hymnes du), Abel Berguignan, 1895 Paris.
RIG-VEDIE INDIA (Das Abienas Chandata), 1921 Calcutta, 2 volumes.
SAINTE BIBLE (La), L. Segond, Anc. et Nv. Test., 1925 Paris, 1083 p.

ԹԳ. ՏՊԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐՆ ՈՒ ՑԱՒԵԼՈՒՄՆԵՐԸ (1)

Էջ		Տող	Սխալ
8	վարչն	5րդ	*Գամերք* ուղղել՝ *Գամիրք*
41	վերչն	12րդ	*Թաուերաերմն* ուղղել՝ *Թաուերաիմն*
41	վերչն	19րդ	աւելցնել՝ *Հաստուած* 777
59	վարչն	20րդ	*երեսքիլ* ուղղել՝ *երեսքել*
68	վերչն	1րդ	*Ը.* ուղղել՝ *է.*
70	վերչն	1րդ	*է.* ուղղել՝ *Ը.*
73	վերչն	6րդ	«*ՈՂՈՐՄԻ*»ն լրացնել՝ 1· «*ՈՂՈՐՄԻ*»ն
131	վերչն	7րդ	*երբայր* ուղղել՝ *եղբայր*
131	վարչն	8րդ	= «*Մանասար...*»: ուղղել՝ = «*Մանասար...*»:
135	վերչն	13րդ	*... Որդի՛* ուղղել՝ *... Որդի»*
156	վարչն	9րդ	*ինչ* լրացնել՝ *ինչ* *)

(1) *Պատերազմի օրըստօրէական արհաւիրքներուն ընթացքին տըպուած ՍԱՄՈՒՆԱԿԱՆԻս պէս մեծածաւալ ու բծախնդիր երկի մը մէջ՝ այսքան մը տպագրական վրիպակ՝ ներողամիտ աչքով նայելու է: Շարող, փորձերը նայող, մեքենավար ու մեքենայ՝ եթէ իրենց պատասխանատուութիւնն ունին, մեծագոյն չափով սակայն կ'չքմեղանան՝ Պատերազմին սարսափներուն բերումովը:*

☛ *Կարդալու սկսիլ՝ Վրիպակներն ուղղելէ յետոյ:* Զ.

Էջ Տող Սխալ

158 *վարչն* 7րդ ... *Դուն վերե՛ւ ...* :— ուղղել՝ ... *Դուն վերե՛ւ ...*,—
159 *վերչն* 5րդ —«*Շա՛տ լաւ, եղբա՛յր*, ուղ·՝ —«*Շա՛տ լաւ, եղբա՛յր*»,
171 *վարչն* 1րդ *դործնիք* ուղղել՝ *դործիք*
190 *վարչն* 8րդ *Ինձ չըսես* ուղղել՝ *Ինձ չըսե՞ս*
199 *վարչն* 16րդ *ըսպաներ* ուղղել՝ *ըսպանէր*
199 *վարչն* 4րդ *որ Աստուած ո՛ր* ուղղել՝ *ո՛ր Աստուած որ*
201 *վերչն* 7րդ «*Սասուն*» *դրքոյկ*՝ *Տոմաշէկի*: ուղղել՝ «*Տէրսիմ [դրքոյկ*՝ *Անդրանիկի*:
209ա· *վարչն* 3րդ *Տեսնել Հատուածիս* ուղ·՝ *Տեսնել*՝ 97րդ *Հատուածին*
213ա· *վարչն* 5րդ *Ծեփարար լրացնել*՝ *) Ծեփարար
225՝ 7րդ *աեւլի* ուղղել՝ *աեվլի*
247 *վերչն* 7րդ *Քենզ* ուղղել՝ *Քենէ*
263 *վերչն* 14րդ ... *դըրեր Ծոց* ուղղել՝ ... *դըրեր Ծոց*»:
297 *վերչն* 10րդ ... *բարերար Աստուած* *) լրացնել՝ ... *բարերար [Աստուած*
308ա· *վարչն* 1րդ[1] (*Հուծ*. ...) լրացնել՝ (*Հուծ* 583)
316 *վերչն* 16րդ *ըսպանե՛ց* ուղղել՝ *ըսպանե՛ց*
325ա· *վարչն* 5րդ *Հատուած 4–ի վերջը*: լրացնել՝ *Հատուած 4–ի [վերջը եւ՝ Հուծ*· 846–848:
329 *վարչն* 12րդ Ե·614, լրացնել՝ Ե·614,1093,
330 *վերչն* 4–5րդ տողերուն մէջ՝ աւելցնել երկու տող,—
Սեւըրահչէն մինչեւ Համիթ, Արդընի եւ Բալաճուկ ...,
Գընաց հասաւ մինչեւ Մըսըր, ամեն կողմ,—
330ա·, *վարչն* 2րդ *) սրարչաւ*, հանել՝ *աստղանիշն ու փակագիծը*:
339 *վերչն* 3րդ Զ·՝94, ուղղել՝ Զ·՝Լ·94,
377 *վերչն* 5րդ ☛ *աւելցնել*՝ Շէկ–Տղայ, Դաւիթ–Որբիկ,
384 *վերչն* 9րդ *տողը*՝ *Ա՛ւ՝ Մըհէրի* †) *սիրոյն համար*՝ *խընամի՛*, ☛ *դնել առաջին տող*
389ա· *վարչն* 2րդ *Հատուած* ... լրացնել՝ *Հատուած* 742
395 *վարչն* 10րդ *Եղաւ Տըղայ–Դաւիթ*... ուղղել՝ *Եղաւ այնտեղ՝ [Տըղայ– Դաւիթի պատասխան*·
434 *վարչն* 8րդ ☛ *հանել*՝ *կրկնուած տողը*՝ Մօրուս բըռնեց *Տըղայ–* [ու ցըցխեց,
438 *վարչն* 8րդ — «*Քեռի–Թորոս*, ուղղել՝ — «*Քեռի–Թորո՛ս*,
439 *վարչն* 4րդ *սրտին* ուղղել՝ *սըրտին*
440ա· *վարչն* 8րդ *Վայրի–նց լրացնել*՝ *) Վայրի–նց
446 *վերչն* 10րդ *Բայց քու Մայրը* ուղղել՝ *Բայց Քու Մայրը*
447ա· *վարչն* 3րդ *Կուլ–Բաղինի* ուղղել՝ *Գիր(ա)բաղինի*
447ա· *վարչն* 1րդ *Հուծ*· ... լրացնել՝ *Հուծ*· 462
451ա· *վարչն* 5րդ *աւելցնել*՝ *) Զատ, Հեռու, անջատուած*:
456ա· *վարչն* 1րդ *Տեսնել Հուծ*· ... լրացնել՝ *Տեսնել Հուծ* 511

Էջ Տող Սխալ

460 *վարէն* 9րդ *Ա՛լ քիչ դե՛ղջ* ուղղել՝ *Ա՛լ քիչ մը դե՛ղջ*
468 *վերէն* 1–2 *երկրորդ Մաս Թլ. Դւթ.* ուղղել՝ Թլլոլ–Դաւիթ [երկրորդ Մաս
473ա. *վարէն* 2րդ *կ՚արաչեմ* ուղղել՝ *կ՚աղաչեմ*
494 | 495*ի վերջին տողը՝* Անգըրտող *)՝ Իմ հոգին կ՚առնեն...՝ բե–*
495) *րել՝* 494*ի սկիզբը՝ իբր առաջին տող*
511 *վերէն* 2րդ Ց·27,90, *լրացնել՝* Ց·27,90,92, Զ·՝Ց·91,92,
512 *վերէն* 6րդ *Աղբիւրին մօր* ուղղել՝ *Աղբիւրին մօտ*
512 *վերէն* 8–9 *աւելցնել՝* Ց·93, Զ·՝Ց·93,
515ա. *վարէն* 1րդ *) կտրել, Ջուրկ ձդել:* ☛ Դնել՝ 516 *տողէն*
522 *վերէն* 2րդ *Դաւիթ* ուղղել՝ *Դաւի՛թ*
529 *վերէն* 17րդ *յորի* ուղղել՝ *յորի՞*
540 *վերէն* 12րդ ☛ ուղղել՝ = «*Դնու կէսօ՛ր է, Դաւի՛թ,–ըսաւ–,* [*ո՞ւր կըտանիս այս տունն*»:
542 *վերէն* 8րդ ☛ ուղղել՝ *Ջէնով–Օհաննէս ալ՝* = «*Դէ՛,–ըսաւ–,* [*չուտ քալէ՛*... .
544 *վարէն* 9րդ *Թզ տըղղեցաւ* ուղղել՝ *Թէ տըղղեցաւ*
546 *վերէն* 1րդ *Հատուած*... լրացնել՝ *Հատուած* 545–548, 553–557:
548 *վերէն* 9րդ ... *չե՛մ ըսեր*... լրացնել՝ ... *չե՛մ ըսեր*...»:
551 *վարէն* 10րդ *իմաց տըւաւ* ուղղել՝ *իմաց տըւաւ*
557 *վարէն* 5րդ *Հուժ*. ... լրացնել՝ *Հուժ*· 586
561 *վարէն* 4րդ *Հուժ*... լրացնել՝ *Հուժ*· 429 եւ 483:
596 *վար*·13րդ ..·*Քարերն ու ըսին՝* †) *ուղ*·՝ ...*Քարերն ու ըսին՝* §–§)
603 *վարէն* 9րդ ☛ աւելցնել՝ Ա·11, Ց·100·
604 *վարէն* 8րդ ☛ աւելցնել՝ Խ·18, Ե·52·
605 *վարէն* 9րդ ☛ աւելցնել՝ (Կ·14,15), (Լ·26), Խ·19·
607 *վերէն* 12րդ ☛ աւելցնել՝ Խ·19, Ա·14·
608ա. *վարէն* 3րդ *կեդրոնիի մ՚ լրացնել՝* ... *կեդրոնիի մ՚*, Խ·19՝ [*վիշապի մ՚*, Ա·14՝ *արջու մ՚*
616 *վերէն* 16րդ *Ոսկի, Գաւազան* ուղղել՝ *Ոսկի–Գաւազան*
640 *վարէն* 8րդ *Տուն*...:— ուղղել՝ *Տուն*...,—
653ա. *վարէն* 3րդ *Շնորհուր, ուղղել՝* Շնոհուր
668 *վերէն* 4րդ *Գ. եկաւ երեւցաւ* ուղղել՝ *Գ. եկաւ երեւցաւ*
668 *վարէն* 6րդ *տաք զըրոյց* ուղղել՝ *տաճք զըրոյց*
693 *վերէն* 8րդ *անահմար*...՝ ուղղել՝ *անհամար*...՝
694 *վերէն* 13րդ *կ՚ըսպաննեմ*..., ուղղել՝ *կ՚ըսպաննեմ*...,
706 *վերէն* 11րդ *որ ես կ՚երթամ կըռիւ՛* ուղղ·՝ *որ ես երթամ կըռիւ՛*
708 *վարէն* 8րդ *Մէլիքի դէպ կըռիւ* ուղղել՝ *Մէլիքի դէմ կըռիւ*
712 *վարէն* 10րդ *Գաւիթ* ուղղել՝ *Դաւիթ*
718 *վերէն առաջին տողը «Քու հօր ի՞նչ կայ...»* դնել՝ 717րդ *էջը՝* [554րդ *Հատուածին վերջը*

էջ Տող Սխալ

718 *վարէն* 16րդ *Աւազն առաւ* ուղղել՝ *Աղանձն առաւ*
719 *վարէն* 13րդ *այդ Աւա՛զ»* : ուղղել՝ *այդ Աղա՛նձ»* :
720 *վարէն* 6րդ *բուլած Աւազին*, ուղղել՝ *բուլած Աղանձին*,
754ա· *վարէն* 3րդ 1) *Ժողովրդ*· *վէպերու մէջ*՝ ուղղել՝ 1) Հ·445՝
[*եւ Ժողովրդ*· *Վէպերու մէջ*՝
757 *վերէն* 5րդ *վըրայ* ուղղել՝ *վրայ*
760 *վերէն* 14րդ ☛ տեղացնել՝ Հ·389,444, (Հ·389)·
777 *վերէն* 2րդ եւ 5րդ ☛ տեղացնել՝ Ե·923,924, Հ·389, (Հ·389)·
778 *վերէն* 7րդ եւ 8րդ՝ ☛ տեղացնել՝ Հ·389, (Հ·389), Ե·923,924·
781 *վերէն* 2րդ եւ 4րդ՝ ☛ տեղացնել՝ Ե·924, Հ·389,445, (Հ·389)·
782 *վարէն* 12րդ՝ ☛ տեղացնել՝ Ե·924·
791 *վերէն* 6րդ՝ ☛ տեղացնել՝ Հ·389·
801 *վարէն* 8րդ — «*Աղջիկ,–ըսաւ–*, ուղղել՝ — «*Աղջի՛կ,–ըսաւ–*,
804 *վարէն* 12րդ *Որ Արընայ* ուղղել՝ *Որ Արբննայ*
809ա· *վարէն* 4րդ *) Ջոջ–ֆուն, Մահ*: ☛ դնել 808 *ստորէ*
809ա· *վարէն* 4րդ Լակակեր, *լրացնել՝ *) Լակակեր*,
822 *վարէն* 12րդ *Աչքըխըփոց մէջ* ուղղել՝ *Աչքխըփոց մէջ*
826 *վարէն* 6րդ *Ճոպանխա՛ղ* ուղղել՝ *Ճոպանխաղ*
844 *վերէն* 5րդ *Թախով 'արճաւ* ուղղել՝ *Թախով դարճաւ*
887 *վերէն* 12րդ *Զինւորներուն*: *Մեծերուն* ուղղել՝ *Զինւորներուն*,
[*Մեծերուն*
890ա· *վարէն* 1րդ 3) Լ·85՝ *Մելֆոն*: *ուղղել՝* 2) Լ·85՝ *Մելֆոն*:
895 *վերէն* 6րդ *Կոբեկարախ ուղղել՝ Կոբեկարտխ*
895 *վարէն* 6րդ *... խելք կ'երթա՛յ...*: ուղղել՝ *... խելքը կ'երթա՛յ*
[*Գըլուխէն...*:
904 *վերէն* 11րդ *Դաւիթ, Քու Վի՛զ* ուղղել՝ *Դաւի՛թ, Քու Վիզ*
948ա· *վարէն* 3րդ Աչֆել, *Նայիլ, քննել*: ուղ·՝ *) Աչֆել, *Նայիլ, քննել*:
960 *վերէն* 9րդ *Դաձի՛թն* ուղղել՝ *Դաւի՛թն*
975 *վարէն* 5րդ , *օղան՝* ուղղել՝ , *Դօղան՝*
976 *վարէն* 2րդ (3) *ջնջել*
1000 *վերէն* 12րդ *լրացնել՝ »*:
1142 *վերէն* 17րդ *'ըրսէն* ուղղել՝ *դըրսէն*
1144 *վերէն* 17րդ *անագմէն* ուղղել՝ *անգամէն*

ՎԵՐՋ
ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻՆ

Թ. ԹՄԵՆԱԿԷՏԻՆ

Ձեռագիրը՝ (*Առաջին Հատորը* 1168 էջ) *խմբագրել սկսայ՝* 1939 *Հոկտեմբեր 7ին, չարաթ օրը, Պատերազմի արհաւիրքին մէջ։ Միեւնոյն տեղն՝ կրցայ մամուլին յանձնել եւ անձամբ նայիլ տպագրական փորձերը՝ օրը օրին, երկու, երեք եւ աւելի անգամներ։ Աւարտեցի՝* 1943 *Յուլիս 7–ին, չորեքշաբթի։*

Տպագրութիւնը՝ *սկսաւ* 1942 *Յունվարի կէսին ու վերջացաւ* (73 *պրակով*) 1943 *Հոկտեմբերի սկիզբը։*

Աւստրական Պարտէզ Մը. — Հազարէջեան այս Գիրքին կենդանի տպագրութիւնը երէկ կարելի եղաւ՝ նուագադոյն թերիներով՝ ի գլուխ հանել՝ այդ կը պարտիմ Գրն. Զաւէն Փափազեանի պէս բանիբուն Գրաշարի մը։

Իսկ Տպագրիչս, Գրն. Բիւզանդ Թօփալեան, բանաստեղծ–նկարիչի եւ ընկերական ազնիւ մարդու իր կրկնակ խմորին ամեն չնորքն ու զգօնութիւնը դրաւ այս երկարաշունչ գործին տպագրական անսայթաք յաջողութեանը, — եղերական տարիներուն ընթացքին։ Նոյնպէս եւ իր եղբայրը Գրն. Համբարձում։

Փոքրիկն Գլէման Քէչեճեան ալ՝ իր բարեհամբոյր սպասարկութեամբը, ամեն կերպով դիւրացուց առօրեայ մազկռինչ փորձերուն եւ տպագրութեան գործը։

Ամենուն ալ՝ սրտագին չնորհակալութիւններս։

1 *Հոկտեմբեր* 1943, *Փարիզ* ԶԻԹՈՒՆԻ

ԶԻԹՈՒՆԻ
«ՀԱՑԱԳԻՏՈՒՄ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
Հիմնուած 1913ին
վաճ – կ. Պոլիս

Տէր,

«Հայագիտում» Հրատարակչականը հիմնուած է անձնական համեստ ձախաձեռնութիւնով եւ զուտ *հայագիտական* խնամուած աշխատութիւններ լոյս ընծայելու նպատակով։

Հիմնագիր–Հեղինակին ունեցած նիւթական միջոցներովը ցարդ տպուած են տասնըհինգի չափ հատորներ։ Դեռ անտիպ կը մնան երեսնեակ մը ձեռագիր ստուար գործերը (*տեսնել ծանկը*)։

Որպէսզի կարելի ըլլայ ունել մեծ չափով օգտակար դառնալ *վերածնուող* Հայաստանի գիտական եւ գրական պահանջներուն, անհրաժեշտ է որ գրասէր հայրենակիցներ իրենց աջակցութիւնը ընծայեն այս հանրօգուտ ձեռնարկին:

Ամենէն հիմնական կարգադրութիւնը կ'ըլլայ անշուշտ՝ կարեւոր *Ցանկ* մը յատկացնել «Հայագիտում»ին համար, որուն յաջորդական հրատարակութիւններուն մէջ դրամը շրջաբերի եւ վաճառման գուտ շահէն դրամագլուխը շարունակ վերակազմուի:

Այս առողջ հիմերուն վրայ դրուած գործը՝ թէ՛ մշտական եւ արդիւնաւոր պիտի ըլլայ, ապրեցնելով ոյոն ատեն գրական մշակը, եւ թէ՛ Հիմնադիր–Վարիչին մահէն ետքը՝ Հրատարակչականն իր աճած Դրամագլուխովը կը դառնայ ազգին օգտակար մէկ սեփականութիւնը՝ Հայաստանի մէջ:

Կարելի է ոյոն ատեն ընդառնել գործին՝ հետեւեալ ձեւերէն մէկ կամ միւսովը. —

1.— Տարեկան կամ միանուագ նուէրներով.

2.— Պարբերաբար կամ միանուագ վճարելի թոշակով մը.

3.— «Հայագիտում»ին հրատարակութիւնները մեծաքանակ գնել–տարածելով:

Լիայոյս եմ որ սիրով ընդառնէք իմ այս բազմամեայ ձեռնարկին ազգօգուտ անվիճելի հանգամանքը, եւ զայն ձեր ու ձեր ծանօթներուն գուրգուրանքին առարկայ դարձնելով՝ կը բացակերէք գիս՝ *հայագիտական* տճնութիւններուս համար:

Հիմնադիր–Տնօրէն
«ՀԱՑԱԳԻՏՈՒՄ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆԻՆ
ՉԻԹՈՒՆԻ

Հասցէ. —
D. TCHITOUNY
13, Rue Caumartin, Paris (9e) — France

ՉԻԹՈՒՆԻԻՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. — ԱՆՏԻՊՆԵՐԸ

1.— ՎԱՆԲԱՐԲԱՌ կամ ԳԱԻԱՌԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ, պատկերազարդ, 1905ին Իզմիրեանց Ա. Մրցանակով պսակուած. 1585 մեծադիր, սեղմ տողերով: Սովորական տողերով՝ 2500 էջ:

2.— ՍԱՄՄԱՆՑ ՏՈՒՆ, Հայ ժողովրդական վէպին *հօրը ճիւղին* ամբողջական պատմութիւնը, պատկ. եւ բարտիտատր. 808 մեծադիր էջ. չորս փոփոխակ՝ Սպարկերտի, կարկառի՝ (գոյգ) եւ վանի բարբառներովը:

3.— ՃԷՐԱՆ–ԹՈՒՐԱՆ, Սասմանց Տունին լրացուցիչը. 210 մեծադիր էջ. Սպարկերտի բարբառովը:

4.— ՀԱՑ ԲՈՒՍԱՆ (Flora Armena), Հայաստանի բոյսերու Herbier-ով եւ բազդատական ուսումնասիրութիւններով· միակը՝ Հայերուս մէջ, Ալիշանի *Հայրուսակէն* յետոյ:

5.— ՎԱՆԱՇԵԱՐՀ, վասպուրականի ընդարձակ ազգագրութիւնը, *հատորաւոր*, պատկերազարդ, *բարեխսաւոր*:

6.— ՍՊԱՐԿԵՐՏ, Մանրամասն ազգագրութիւնը՝ Սպարկերտ գաւառին, պատկերազարդ եւ *բարեխսաւոր*:

7.— ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԻՊԱՇԵԱՐՀ, հայկական հրաշալի *հէքեաթներ*, վէպեր եւ զրոյցներ, վանայ, Սպարկերտի ու Կարկառի բարբառներով: 200–ի չափ, 3000 էջի մօտ:

8.— ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՒԱԿԱՆԻ, Հայ ժողովրդական *առածներ* եւ առակներ, բացատրութիւններով ու համեմատութիւններով:

9.— ՀԱՑ ՓՆԱՐ, ժողովրդական աւետիս երգեր, տաղեր, պարերգներ, Կոմիտաս վարդապետէ ձայնագրուած:

10.— ԱՐԴԻ ՀԱՑ–ԲԱՐԲԱՌ, լիակատար բառարան՝ արդիական Հայերէնի, Larousse-ի մեթոտով, պատկերազարդ:

11.— ԱՆՁԵՐ ՈՒ ԱՆՑՔԵՐ, Ցատուկ Անուններու պատկերազարդ *բարեխսաւոր* բառարան:

12.— ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՆՍԿՐԻՏԱՀԱՑ ԲԱՌԱՐԱՆ, 500 էջ· Սանսկրիտ ու Հայ՝ արմատ բառերովը:

13.— ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ, Հայերէն արմատներու համեմատական բառարան:

14.— ՀԱՑ ԴԻՑԱՆ, կամ Հայկ· Դիցաբանութիւնը:

15.— ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ, ժողովրդական երգասացմներ՝ մշակուած ու ձայնագրուած Կոմիտաս վարդապետի աշխատակցութեամբ:

16.— ՀԱՑ ԱԽԱՆԴԱՐԱՆ կամ ԱՆԴԻՆ ԱՆԴԻՐ, Հայկական առաքինութիւններու գանձարան:

17.— ԲՆԻԿ ԱՐՀԵՍՏՆԵՐ, Հայ Բնաշխարհի արհեստները:

18.— ՍԱՍՈՒՆԱԿԱՆ, Բ· Հատոր, Հայ ժողովրդական վէպին Ծագօրութիւններու *բաժինը*:

19.— ԱՌԵՏՐԱԿԱՆ ՀԱՑԱՍՏԱՆ, պատկերազարդ ու *բարեխսաւոր* Աշխարհագրութիւն:

20.— ԱՆԴԻՐ ՏԱՐԵՑՈՑՑ (Օրացոյցի էջերուն *հետ*):

21.— ՀԱԲԲԱՆ, Ջան–Գիւլիւմներու ամբողջութիւնը՝ վերականգնած իր սիրավիպային ոճման մէջ:

22.— ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏ, թատերակ 4 արար:

23.— ՄԵՐ ՃԻՒՂԱԴԻՐ, Աճմնական ու գրական նիշեր:

24.— ՆՇԱՐՔ ԵՒ ՆՇՄԱՐՔ, Մատենագրական եւ Անգիր համեմատութիւններ:

25.— ԱԶԳԱՑԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Նոր ճշմարիտ Հայոց Պատմութիւն:

26.— ԿԵԱՆՔԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԷՊԸ:

27.– ՀԱՑՐՆՆԻՔԻՍ ԾՈՑԷՆ:
28.– ԻՄ ԿԵԱՆՔԸ. Ցուշեր ու Նիշեր: Եւն., Եւն.:

2.– ՖՐԱՆՍԵՐԷՆՈՎ

Inédit

29.- ASTRES D'ARMÉNIE (Scénario), 1920, Paris.
30.- MOTS RADICAUX ARMÉNO-FRANÇAIS, Paris.
31.- PARADIS RÉEL, roman, Paris.
32.- ANGÈME VIVANTE, roman, Paris.
33.- [illegible], roman, Paris,
34.- SASSOUNACAN, F.

3.– ՏՊՈՒԱԾՆԵՐԸ

1.– ՄԱՑՐՆՆԻ ԱՇԽԱՐՀ, 1913, Կ. Պոլիս (Սպառած):
2.– ՑՈՒՇԻԿՔ ՀԱՑԱՍՏԱՆԻ, պատկերազարդ, բարտիսաւոր, 1919, Կ. Պոլիս (Սպառած):
3.– ԱՐԵՒԵԼԵԱՆ կամ ՀՑԿ. ԽԱՂԱՇԽԱՐՀ, Ա. եւ Բ. հատոր, 1919, Կ. Պոլիս [Իզմիրեանցէն պսակուած], (Սպառած):
4.– ՀԱՑԱՍՏԱՆԻ ՈՍԿԵՀԱՆՔԵՐ, 1919, Կ. Պոլիս (Սպառած):
5.– ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՎԻՃԱԿ, 1919, Կ. Պոլիս (Սպառած):
6.– ՊԼՆՋԷ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, 1919, Կ. Պոլիս (Սպռ.):
7.– ԱՍՈՒԼԻՍ ՀԱՑԱՍՏԱՆԻ, 1919, Կ. Պոլիս (Սպառած):
8.– ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐ (Տպարան մնաց կիսով տպուած, ու կորսուեցաւ գումարտ քանիներուն հետ, 1920ին, Կ. Պոլիս):
9.– ԼԷՑԼԻ ՄԷՋԲՈՒՄ, Սիրերգ, Մարզուան, 1911 (Սպառած):
10.– ՍԱՍՄԱՆՑ ՏՈՒՆ, Աշխարհաբար, Կ. Պոլիս, 1910 (Սպռ.):
11.– ԼԷՑԼԻ ՄԷՋԲՈՒՄ, Սիրերգ եւ ծանօթութիւններ, Վիեննա, 1922 (Սպառած):
12.– [illegible] (Սպառած). [illegible], 1919.
13.– «ՊՁԻՆԿՈ», երգ, ձայնագրուած հինգ երգահանձներու տարբեր եղանակներով: («Նորեան» երգի Մրցումին Ա. Մրցանակովը պսակուած):
14.– L'HERBIER ARTISTIQUE TCHITOUNY, G. Azn., Միջազգային Բուսաբանական կաճառին կողմէ տպուած, Ֆրանսերէն եւ Լատիներէն, 1917ին Պուտափէշտ:
15.– ՍԱՍՈՒՆԱԿԱՆ, Ա. Հատոր, Հայ ժողովրդական Դիւցազնավէպի ծօքը ճիւղերուն լիակատար բնագիրը, աշխարհաբար, ոտանաւոր. 1166 մեծադիր էջ. Փարիզ, 1943:
16.– ՎԱՐԱԳԱՑ ՑՈՐՔԼԵԱՆ, պտկրզրդ., 1910 Պս., 30 մեծ էջ:
17.– ԲԻ՛ՒՐ ԱԿ, ՀԱԶԱ՛Ր ԱԿ..., Պտկզրդ., 1941 Փարիզ, 132 էջ:
18.– ՁՈՑԳ ՍԻՐԱՀԱՐՆԵՐ, թատերակ 4 Արար, 1941 Փրգ., 56 էջ:

☛ Տեսնել նաեւ ՁԻՒՈՒՆԻՒՆԻՔԻ Մրցանակի Արժանացած երկերը՝ ՍԱՍՈՒՆԱԿԱՆի Ա. հատորին ներքեւը (էջ 4):



ՓՆՏՐԵՑԷ՛Ք ՈՒ ԿԱՐԴԱՑԷ՛Ք

ՍԱՍՈՒՆԱԿԱՆԷՑ Առաջ Տպուած «Հայագիտում»ի երկու Գիրքեր՝

ԲԻ՛ՒՐ ԱԿ..., ՀԱԶԱ՛Ր ԱԿ...

Նօթը Այլազան Բաժիններով, 232 էջ
երկու Լուսանկարով

ԳԻՆ 75 ՖՐԱՆՔ

ԶՈՑԳ ՍԻՐԱՀԱՐՆԵՐ

Թատերակ Զորս Արար

ԳԻՆ 30 ՖՐԱՆՔ

★

Հասցէ՝ —
D. TCHITOUNY
13, Rue Caumartin, Paris (9e) — France

ԳԻՆ՝ սովորական թուղթի վրայ 500 ֆրանք

Թուագրուած 1-էն 25 օրինակ՝ luxe թուղթի վրայ 1000 ֆրանք

Պատերազմին դժուարութիւններուն բերումովը՝ այս Գիրքէն տպուած է սովորական թուղթով միմիայն 500 օրինակ:

Հասցէ՝ —

D. TCHITOUNY

13, Rue Caumartin, Paris (9e) — France

Imprimerie « ARAXES », 46, Rue Richer - Paris (9e)

[7n]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220030376

II
A30376